ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄԱՏԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վերահրատարակութիւն

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
2010

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ISBN 978-99941-75-03-1 E73FGTI
978-99941-75-04-8 E75BLGZTIb1
978-99941-75-05-5 E75BLGb2
978-99941-75-06-2 E73HG
978-99941-75-12-3 E73H
978-99-41-75-18-5 E73HGb2W
978-99-41-75-19-2 E73HGb2B

Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների
Արեւելահայերէն նոր թարգմանութիւն

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 1994

Հեղինակային իրաւունքները պաշտպանուած են օրէնքով: Առանց հրատարակչի հետ նախնական գրաւոր համաձայնեցման չի թոյլատրուում պատճէնահանել գրքի ցանկացած մասը, պահել այն ԷՀՄ-ում, փոխանցել ցանկացած տեսքով կամ ցանկացած միջոցներով էլեկտրոնային, մեխանիկական, ֆոտոպատճէնի կամ այլ ձեւով:

Holy Bible
Eastern Armenian - New Translation

© 1994 The Armenian Apostolic Church, Catholicosate of All Armenians and The Bible Society of Armenia

ԽՕՍՔ ՀԱՅՐԱԿԱՆ

Հաւատաւոր կաւակներ մեր,

Աստուծոյ ողորմութեամբ, աւելի քան տասը տարիներ առաջ, Մենք ձեռնամուխ եղանք լոյս ընծայելու Սուրբ Գրքի մի նոր աշխարհաբար թարգմանութիւն արեւելահայերէն լեզուով, մեր ժողովրդի հոգեւոր շինութեան ի խնդիր:

Այդ տքնաջան աշխատանքը իր լրումին հասաւ այս տարի: Եւ ահա հոգեւոր մխիթարութիւնն ունենք այսօր ձեր ձեռքը տալու Աստուածաշունչ Մատեանի ամբողջական թարգմանութիւնը:

Երջանիկ ենք, որ մեր հայրապետութեան շրջանում յաջողութեամբ պսակուեց մեր այս ձեռնարկումը՝ աշխատակցութեամբ մի խումբ հայրենի գիտնականների եւ մեծահոգի օժանդակութեամբ Սուրբ Գրոց միացեալ ընկերակցութեան:

Յայտնում ենք բոլորին մեր շնորհակալութիւնը եւ բերում մեր հայրապետական օրհնութիւնը:

Մեր օրհնութիւններն ենք բերում նաեւ ձեզ՝ հաւատացեալ հայորդիներ, հայրական բարի մաղթանքներով, որ այս Սուրբ Մատեանից ճառագայթող հոգեւոր լոյսը Յիսուսի Քրիստոսի, պայծառակերպի ձեր հոգիները եւ լուսաւորի ձեր կեանքի ճանապարհը:

Զի Փրկիչն մեր Քրիստոս մնում է «լոյսն աշխարհի» ինչպէս երէկ, նաեւ այսօր եւ յաւիտեան:

Սոյն Մատեանի լոյսով թող «նորոգուի ձեր ներքին մարդը օրըստօրէ» (Բ Կորնթ. Դ. 16): Ամէն:

14 Օգոստոս 1994
Ս. Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՑԱՆԿ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐԻ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

	Գիրք	Էջ
1.	ԾՆՆԴՈՅ	3
2.	ԵԼՔ	63
3.	ՂԵՒՏԱԿԱՆ	117
4.	ԹՈՒԵՐ	155
5.	ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ	207
6.	ՅԵՍՈՒ	253
7.	ԴԱՏԱՒՈՐՆԵՐ	284
8.	ՀՌՈՒԹ	314
9.	ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ա	319
10.	ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Բ	359
11.	ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Գ	392
12.	ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Դ	432
13.	Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ	470
14.	Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ	505
15.	Ա ԵԶՐԱՍ	549
16.	Բ ԵԶՐԱՍ	570
17.	ՆԷԵՄԻ	583
18.	ԵՍԹԵՐ	600
19.	ՅՈՒԴԻԹ	614
20.	ՏՈՐԻԹ	633
21.	Ա ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐ	646
22.	Բ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐ	688
23.	Գ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐ	720
24.	ՍԱՂՄՈՍ	735
25.	ԱՌԱԿՆԵՐ	833
26.	ԺՈՂՈՎՈՂ	874
27.	ԵՐԳ ԵՐԳՈՑ	884
28.	ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ	892
29.	ՍԻՐԱՀ	916
30.	ՅՈՒՐ	956
31.	ԵՍԱՅԻ	996
32.	ՕՍԷԻ	1076
33.	ԱՄՈՍ	1089
34.	ՄԻՔԱԻԱ	1100
35.	ՅՈՎԷԼ	1108
36.	ԱԲԴԻՈՒ	1114
37.	ՅՈՎՆԱՆ	1117
38.	ՆԱՒՈՒՄ	1120
39.	ԱՄԲԱԿՈՒՄ	1124
40.	ՍՈՓՈՆԻԱ	1129
41.	ԱՆԳԷ	1134
42.	ԶԱԿԱՐԻԱ	1137
43.	ՄԱԼԱԳԻԱ	1150
44.	ԵՐԵՄԻԱ	1154
45.	ԲԱԲԻՒՔ	1240
46.	ՈՂԲ	1248
47.	ԴԱՆԻԷԼ	1258
48.	ԵԶԵԿԻԷԼ	1283

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Գիրք	էջ
1. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ	4
2. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ	46
3. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ	74
4. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ	119
5. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ	152
6. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ	194
7. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ	212
8. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ	229
9. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ	241
10. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ	248
11. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻՆ	255
12. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ	260
13. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ	265
14. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ	270
15. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ	273
16. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ	279
17. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՏԻՏՈՍԻՆ	284
18. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՄՈՆԻՆ	287
19. ԹՈՒՂԹ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ	289
20. ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ	303
21. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ	309
22. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ	315
23. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ	319
24. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ	325
25. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ	327
26. ՅՈՒԴԱ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ	329
27. ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ	332

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Տարիների ընթացքում այս թարգմանութիւնը պատրաստելիս մենք յաճախ մտածել ենք ձեր մասին: Մենք միշտ հարց էինք տալիս մեզ. «Նրանք, ովքեր, գուցէ առաջին անգամ լինելով, բաց են անելու այս Աստուածաշունչը, պիտի հասկանա՞ն արդեօք, թէ ինչ է ուզում ասել այն, պիտի կարողանա՞ն իրենք իսկ յայտնաբերել այն անգնահատելի գանձը, որ պարունակում է այս Գիրքը»:

Արդարեւ, խօսքը վերաբերում է մի մեծարժէք գանձի: Այն մեզ՝ թարգմանիչներիս, այնքան ուրախութիւն պատճառեց, որ մենք ցանկացանք այդ ուրախութիւնը բաժանել ձեզ հետ, ինչպէս դուք էլ, ձեր հերթին, վստահաբար, ցանկութիւն պիտի ունենաք այն բաժանելու ուրիշների հետ:

Երբ դուք բաց անէք ձեր Աստուածաշունչը եւ սկսէք կարդալ չորս աւետարանների մէկն ու մէկը, այնտեղ կը գտնէք մէկին, որի հետ ոչ ոք չի կարող համեմատուել. դա Յիսուս Նազովրեցին է: Դուք կը բացայայտէք այն մեծ նորութիւնը, որ նա եկաւ բերելու մարդկութեանը՝ փրկելու համար նրան իր բոլոր մահկանացու պատրանքներից:

Թերթելով այնուհետեւ Աստուածաշնչի առաջին մասը՝ Հին Կտակարանը, դուք կը տեսնէք, թէ ինչպէս իսրայէլացի ժողովրդի տառապանքներն ու յոյսերը նախապատրաստեցին այդ Փրկչի գալուստը:

Վերջապէս, նորից կանգ առնելով Նոր Կտակարանի վրայ, մասնաւորապէս աւետարաններին յաջորդող կանոնական գրուածքների վրայ, դուք կը տեսնէք, թէ ինչպէս Յիսուսի պատգամներն ու գործը վերափոխում են բոլոր նրանց կեանքը, ովքեր արձագանքում են նրա կոչին:

Մէկ խօսքով՝ դուք ձեզ կը գտնէք բազում վկաների առաջ՝ պատմիչներ, մարգարէներ, բանաստեղծներ, իմաստուններ, աւետարանիչներ, առաքեալներ, որոնք բոլորն էլ ներկայանում են մեզ որպէս վկաները Աստծու, վկաները նրա Խօսքի, քանի որ, վերջին հաշուով, այն ամէնը, ինչ Աստուած ասում է մարդկանց եւ այն ամէնը, ինչ նա անում է նրանց համար, խտացուած է Յիսուս Քրիստոսի անձի մէջ:

Թարգմանիչներ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ» (Ղուկաս, Դ, 4):

Յիսուս Քրիստոսի պատգամած այս ճշմարտութիւնը թերեւս ոչ մի ժամանակ հայ ժողովրդի համար այնքան կենսական մեծ նշանակութիւն չի ունեցել, որքան այժմ հայոց պետական անկախութեան վերածնման այս ծանր եւ դժուարին տարիներին:

Ինչպէս յայտնի է, 301 թուականին քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուեց պետական կրօն: Հայ ժողովուրդը թեւակոխեց քաղաքակրթութեան կարգացման նոր դարաշրջան՝ դիմուղղուելով դէպի քրիստոնէական կրօնի բարոյական սկզբունքների եւ գաղափարների անեղծ ճշմարտութիւնը:

Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի պատմական, ընկերային եւ հոգեւոր մշակութային կեանքում տեղի ունեցած այդ վիթխարի իրադարձութեան 1700-ամեակի կապակցութեամբ երջանկայիշատակ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մեծագոյն մտահոգութիւններից մէկն էր հաւատացեալ հայ ժողովրդին տալ քրիստոնէական Եկեղեցու սուրբ գրքի՝ Աստուածաշնչի լիակատար մի թարգմանութիւն՝ արեւելահայերէն ժամանակակից գրական լեզուով:

Աստուածաշունչը հայերէն է թարգմանուել հինգերորդ դարում հայոց գրերի գիւտից անմիջապէս յետոյ: Դեռեւս 18-րդ դարում օտարալեզու հնագոյն թարգմանութիւնների շարքում հայերէն այդ թարգմանութիւնը արժանացել է բարձր գնահատականի՝ համարուելով «թագուհի թարգմանութեանց»:

Հայերէն Աստուածաշունչն ունեցել է բազմաթիւ տպագրութիւններ: Առաջին անգամ այն տպագրուել է Ամստերդամում 1666 թուականին Հայ Առաքելական Եկեղեցու սպասաւոր մեծավաստակ Ոսկան վարդապետ Երեւանցու աշխատասիրութեամբ: Հայերէն Աստուածաշնչի քննական-համեմատական հրատարակութեան առաջին փորձը կատարել է Յովհաննէս վարդապետ Զօհրապեանը: 1805 թ. նա հրատարակել է Աստուածաշունչը՝ հիմք ընդունելով 1319 թ. Կիլիկիայում ընդօրինակուած մի գրչագիր մատեան եւ համեմատելով այն Աստուածաշնչի հայերէն ինը այլ ձեռագրերի հետ:

1860 թ. լոյս է տեսել Հայր Արսէն Բագրատունու պատրաստած Աստուածաշունչը «ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց»: Յարդ այս հրատարակութիւնը մնում է լաւագոյնը: Աստուածաշնչի արեւելահայերէն ներկայ թարգմանութիւնը, որը Էջմիածնի Մայր Աթոռի կողմից իրագործուած լիակատար առաջին թարգմանութիւնն է, կատարուել է վենետիկեան այդ հրատարակութիւնից:

Դժբախտաբար մինչեւ այժմ չկայ հայերէն Աստուածաշնչի գիտաքննական եւ համեմատական մի հրատարակութիւն, որը հնարաւորութիւն կ'ընձեռէր ունենալու ճշգրտուած բնագիր եւ որը հիմք կը հանդիսանար աւելի հարապատ եւ բարձրարժէք թարգմանութեան համար:

Բագրատունու հրատարակութիւնը Աստուածաշնչի իւրաքանչիւր գրքից առաջ ունի առաջաբան՝ «Նախադրութիւն»: Ներկայ թարգմանութեան մէջ այդ նախադրութիւնների փոխարէն տրուած են հակիրճ ներածութիւններ՝ ըստ Աստուածաշնչի ժամանակակից օտարալեզու հրատարակութիւնների: Բացի այդ, Բագրատունու հրատարակութեան մէջ Աստուածաշնչի գրքերն ունեն վերնագրերի ցանկեր, որոնք նախորդում են տուեալ գրքերին: Թէեւ այդ վերնագրերը չեն թարգմանուած, սակայն խմբագիրները նպատակայարմար են համարել հետեւել աւանդոյթին՝ վերնագրելով թէ՛ առանձին գլուխները եւ թէ՛ գլուխների առանձին հատուածները ըստ նիւթի բովանդակութեան՝ ընթերցողի համար այն դիւրընկալելի դարձնելու նպատակով:

Ներկայ թարգմանութեան մէջ, ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքում, սեղմ ծանօթութիւններ են տրուած էջատակին, երբեմն նաեւ նշուած են այն տարբերութիւնները, որ ունեն եբրայերէն եւ յունարէն բնագրերը: Պահպանուած են սուրբգրական անձնանունների եւ տեղանունների գրութեան նոյն ձեւերը: Պահպանուած է նաեւ Հին Կտակարանի գրքերի յաջորդական կարգը ըստ Բագրատունու հրատարակութեան եւ, ընդհակառակը, չի պահպանուած Նոր Կտակարանի գրքերի յաջորդականութիւնը: Այս դէպքում նկատի է առնուած Նոր Կտակարանի գրքերի ընդունուած աւանդական կարգը:

Թարգմանական եւ խմբագրական աշխատանքների ընթացքում, ըստ հարկի, իբրեւ օժանդակ աղբիւրներ օգտագործուել են Աստուածաշնչի եբրայական եւ յունական ճշգրտուած բնագրերից կատարուած անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ ռուսերէն նորագոյն հրատարակութիւններ:

Աստուածաշնչի աշխարհաբար սոյն թարգմանութիւնը կատարել են՝ Անդրանիկ Զէյթունեանը, Պաւէլ Շարաբխանեանը, Արամ Տէր-Ղեւոնդեանը, Արշալոյս Ղապինեանը, Գէորգ Տէր-Վարդանեանը, Լեւոն Տէր-Պետրոսեանը, Յակոբ Քէօսէեանը, Պօղոս Խաչատրեանը, Երուանդ Մելքոնեանը, Պետրոս Բէդիրեանը, Պարգեւ Շահբազեանը, Սամուէլ Անթոսեանը եւ Արթուն Հատիտեանը:

Թարգմանութիւնը խմբագրել են Պարգեւ Շահբազեանը, Արշալոյս Ղապինեանը:

Խմբագրական աշխատանքներին իր գործուն մասնակցութիւնն է բերել Աստուածաշնչի Միացեալ Ընկերութեան թարգմանական գործերի վարիչ Վերապատուելի Մանուէլ Ճինպաշեանը:

Աստուածաշնչի շարուածքը, ձեւաւորումը կատարուել է Մայր Աթոռում Սարգիս Մայիլեանի կողմից՝ համակարգիչների միջոցով:

«Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմոթ., Գ, 16-17):

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

ԾՆՆԴՈՑ

Ներածութիւն

Աստուածաշնչի առաջին գիրքը կոչւում է «Ծննդոց», այսինքն՝ սկիզբ, ծագում, որովհետեւ նրա բովանդակութիւնը կապվում է աշխարհի, մարդկութեան եւ իսրայէլացի ժողովրդի ծագումը, նրանց առաջացումը:

Ինչպէ՞ս հասկանալ այն աշխարհը, որի մէջ ապրում ենք: Ի՞նչ է մարդը: Ո՞րն է նրա տեղը աշխարհում: Ինչո՞ւ մարդկանց յարաբերութիւնները միմեանց հետ յաճախ թշնամական են լինում: Կա՞յ մի միջոց դրանք վերացնելու: Ահա մշտապէս այժմէական այս հարցերին է պատասխանում «Ծննդոցի» առաջին մասը. տղամարդը եւ կինը արարչագործութեան մէջ, նրանց հեռացումը Աստծուց, Կայէնը եւ Աբէլը, Նոյը ջրհեղեղի ժամանակ, Բաբելոնի աշտարակը: Այս պատումներում նկարագրուած եղելութիւնները հնարաւոր չէ ճշգրիտ կերպով տեղադրել մարդկային պատմութեան տոմարի մէջ:

12-50 գլուխներում պատմւում է, թէ ինչպէս Աստուած փրկութիւն է բերում մարդկութեանը՝ իր ծառայութեանը կանչելով Իսրայէլի նախնիներին՝ Աբրահամին, որը Աստծու հանդէպ իր հաւատով եւ հաւատարմութեամբ միշտ մնում է որպէս տիպար անձնաւորութիւն, նրա որդի Իսահակին, ապա նրա թոռ՝ Յակոբին, որին տրուեց նաեւ Իսրայէլ անունը, Յովսէփին՝ Յակոբի որդիներից մէկին, երկու ցեղերի նախնին, որը գտնւում է այն իրադարձութիւնների կենտրոնում, որոնք Յակոբին եւ նրա միւս որդիներին ստիպեցին իրենց ընտանիքներով գնալ եւ ապրել Եգիպտոսում:

«Ծննդոցը» ամենից առաջ եւ մանաւանդ մի ուսուցում է Աստծու կատարած գործի մասին: Այս գիրքն աւարտւում է այն խոստումով, թէ Աստուած շարունակելու է հոգ տանել իր ժողովրդին: Գրքի մէկ ծայրից միւսը Նա է գլխաւոր գործող անձը. Նա ճանաչել է տալիս իրեն, դատում է, առաջնորդում եւ օգնում իր ժողովրդին, ձեւաւորում նրա պատմութիւնը:

Փոխարէնը Աստուած պահանջում է, որ նրանք հաւատան իրեն եւ իր խոստումներին, հնազանդուեն իր հրամաններին եւ օրէնքներին:

ԳԻՐՔ ԾՆՆԴՈՅ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1 Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: 2 Երկիրն անձեւ ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրայ, եւ Աստծու հոգին շրջում էր ջրերի վրայ: 3 Եւ Աստուած ասաց. «Թող լոյս լինի»: Եւ լոյս եղաւ: 4 Աստուած տեսաւ, որ լոյսը լաւ է, եւ Աստուած լոյսը բաժանեց խաւարից: 5 Աստուած լոյսը կոչեց ցերեկ, իսկ խաւարը կոչեց գիշեր: Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր առաջին:

6 Աստուած ասաց. «Թող տարածութիւն առաջանայ ջրերի միջեւ, եւ ջրերը թող բաժանուեն ջրերից»: Եւ եղաւ այդպէս: 7 Աստուած ստեղծեց տարածութիւնը, որով Աստուած տարածութեան ներքեւում եղած ջրերը անջրպետեց տարածութեան վրայ եղած ջրերից: 8 Աստուած տարածութիւնը կոչեց երկինք: Աստուած տեսաւ, որ լաւ է: Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր երկրորդ:

9 Աստուած ասաց. «Թող երկնքի տակ գտնուող ջրերը հաւաքուեն մի տեղ, եւ երեւայ ցամաքը»: Եւ եղաւ այդպէս. երկնքի տակի ջրերը հաւաքուեցին մի տեղ, ու երեւաց ցամաքը: 10 Աստուած ցամաքը կոչեց երկիր, իսկ հաւաքուած ջրերը կոչեց ծով: Աստուած տեսաւ, որ լաւ է: 11 Աստուած ասաց. «Թող երկիրը իր տեսակի ու իր նմանութեան սերմը պարունակող դալար բոյս եւ իր տեսակի ու իր նմանութեան սերմը պարունակող, իր տեսակի միրգ տուող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրայ»: Եւ եղաւ այդպէս. 12 հողը ամբողջ երկրի վրայ ցանելու սերմը իր մէջ պարունակող դալար բոյս եւ իր տեսակի սերմը իր մէջ պարունակող, միրգ տուող ծառ աճեցրեց: Աստուած տեսաւ, որ լաւ է: 13 Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր երրորդ:

14 Աստուած ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածութեան մէջ, որպէսզի լուսաւորեն երկիրը եւ իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպէսզի ցոյց տան տարուայ եղանակները, տօնական օրերն ու տարիները, 15 թող լինեն, ծագեն երկնքի տարածութեան մէջ՝ երկիրը լուսաւորելու համար»: Եւ եղաւ այդպէս: 16 Աստուած ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպէս նաեւ աստղեր: 17 Աստուած դրանք դրեց երկնքի տարածութեան մէջ՝ երկիրը լուսաւորելու համար, 18 ինչպէս նաեւ ցերեկուայ ու գիշերուայ վրայ իշխելու եւ լոյսն ու խաւարը իրարից բաժանելու համար: Աստուած տեսաւ, որ լաւ է: 19 Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր չորրորդ:

20 Աստուած ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանութեան շունչ ունեցող զեռուններ, եւ երկրի վրայ ու երկնքի տարածութեան մէջ թող թեւաւոր թռչուններ լինեն»: Եւ եղաւ այդպէս: 21 Աստուած ստեղծեց խոշոր կէտեր, կենդանութեան շունչ ունեցող ամէն տեսակ զեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, եւ ամէն տեսակ թեւաւոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստուած տեսաւ, որ լաւ է: 22 Աստուած օրհնեց դրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցրէ՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրայ»: 23 Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր հինգերորդ:

24 Աստուած ասաց. «Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ եւ գազաններ իրենց տեսակներով»: Եւ եղաւ այդպէս: 25 Աստուած ստեղծեց երկրի գազաններն իրենց տեսակներով, անասուններն իրենց տեսակներով եւ երկրի բոլոր սողուններն իրենց տեսակներով: Աստուած տեսաւ, որ դրանք լաւ են:

26 Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»: 27 Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց: 28 Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան, իշխեցէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների,

ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի
վրայ սողացող բոլոր սողունների վրայ»:
29 Աստուած ասաց. «Ահա ձեզ
տուեցի ողջ երկրի վրայ տարածուած
սերմանելի բոլոր բոյսերի սերմերը եւ
իրենց մէջ պտուղ սերմանելու սերմ
պարունակող բոլոր ծառերը: Դրանք
թող ձեզ համար սնունդ լինեն, 30 իսկ
բոլոր կանաչ խոտերը երկրի բոլոր
գազանների, երկնքի բոլոր թռչունների
եւ երկրի վրայ սողացող բոլոր սողուն-
ների՝ բոլոր կենդանիների համար թող
լինեն կեր»: Եւ եղաւ այդպէս:
31 Աստուած տեսաւ, որ այն ամէնը,
ինչ ստեղծել էր, շատ լաւ է: Եւ եղաւ
երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր վեցերորդ:

ԵԴԵՄԻ ՊԱՐՏԷԶԸ

2 Այսպիսով Աստուած ստեղծեց եր-
կինքն ու երկիրը եւ կարգաւորեց
դրանք: 2 Աստուած վեցերորդ† օրն
աւարտեց արարչագործութիւնը եւ իր
կատարած բոլոր գործերից յետոյ՝ եօթ-
ներորդ օրը, հանգստացաւ: 3 Աստուած
օրհնեց եօթներորդ օրը եւ սրբագործեց
այն, որովհետեւ այդ օրը Աստուած
հանգստացաւ իր այն բոլոր գործերից,
որ սկսել էր անել:
4 Այս է երկնքի ու երկրի արարչու-
թեան պատմութիւնը: Այն օրը, երբ
Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը,
5 երկրի վրայ դեռ ոչ մի տունկ չէր
բուսել, դեռ ոչ մի դաշտային բոյս չէր
աճել, որովհետեւ Տէր Աստուած անձրեւ
չէր տեղացրել երկրի վրայ, եւ մարդ
չկար, որ մշակէր հողը, 6 բայց աղբիւր
էր բխում երկրից եւ ոռոգում ողջ
երկիրը: 7 Տէր Աստուած մարդուն
ստեղծեց երկրի հողից, նրա դէմքին
կենդանութեան շունչ փչեց, եւ մարդն
եղաւ կենդանի էակ:
8 Աստուած դրախտ տնկեց Եդեմում՝
արեւելեան կողմը, եւ այնտեղ դրեց իր
ստեղծած մարդուն: 9 Տէր Աստուած
երկրից բուսցրեց նաեւ ամէն տեսակի
գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տուող
ծառեր, իսկ կենաց ծառը՝ բարու եւ
չարի գիտութեան ծառը, տնկեց դրախ-
տի մէջտեղում: 10 Գետ էր բխում Եդե-
մից, որպէսզի ոռոգէր դրախտը, եւ
այնտեղից բաժանւում էր չորս ճիւղերի:
11 Մէկի անունը Փիսոն էր: Նա է, որ
պատում է ամբողջ Եւիլատ երկիրը,
այնտեղ, ուր ոսկի կայ: 12 Այդ երկրի
ոսկին ազնիւ է: Այնտեղ կայ նաեւ սու-
տակ եւ դահանակ ակնաքարը: 13 Երկ-
րորդ գետի անունը Գեհոն է: Նա պա-
տում է ողջ Եթովպացւոց երկիրը: 14 Եր-
րորդ գետը Տիգրիսն է: Սա հոսում է
դէպի Ասորեստան: Չորրորդ գետը
Եփրատն է: 15 Տէր Աստուած իր ստեղ-
ծած մարդուն տեղաւորեց բերկրութեան
դրախտում, որպէսզի սա մշակի ու
պահպանի այն: 16 Տէր Աստուած պա-
տուիրեց Ադամին ու ասաց. «Դրախ-
տում ամէն ծառի պտուղներից կարող
ես ուտել, 17 բայց բարու եւ չարի
գիտութեան ծառից մի՛ կերէք, որով-
հետեւ այն օրը, երբ ուտէք դրանից,
մահկանացու կը դառնաք»:
18 Տէր Աստուած ասաց. «Լաւ չէ, որ
մարդը միայնակ լինի: Նրա նմանու-
թեամբ մի օգնական ստեղծենք նրա
համար»: 19 Տէր Աստուած ստեղծեց
նաեւ դաշտային բոլոր գազաններին,
երկնքի բոլոր թռչուններին եւ բերեց
Ադամի մօտ, որ տեսնի, թէ Ադամը ինչ
անուն կը տայ դրանց: Եւ Ադամն ինչ
անուն որ տար ամէն մի կենդանուն, այն
էլ կը լինէր դրա անունը: 20 Ադամը
բոլոր անասուններին, երկնքի բոլոր
թռչուններին եւ դաշտային բոլոր գա-
զաններին տուեց անուններ, բայց Ադա-
մը չգտաւ իր նմանութիւնն ունեցող մի
օգնական: 21 Տէր Աստուած թմրութիւն
բերեց Ադամի վրայ, եւ սա քնեց:
Աստուած հանեց նրա կողոսկրերից մէկը
եւ այդ տեղը մաշկով ծածկեց: 22 Տէր
Աստուած Ադամից վերցրած կողոսկրից
կին արարեց եւ նրան բերեց Ադամի
մօտ: 23 Ադամն ասաց. «Այժմ սա
ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ
մարմնից: Թող սա կոչուի կին,
որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց»:
24 Այդ իսկ պատճառով տղամարդը
թողնելով իր հօրն ու մօրը՝ պէտք է
միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է
լինեն մի մարմին: 25 Եւ երկուսն էլ՝
Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին
ամաչում:

†Եբրայերէն՝ եօթներորդ:

ՄԱՐԴՈՒ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

3 Օձը երկրի վրայ Աստծու ստեղծած
բոլոր գազաններից աւելի խորամանկ†
էր: Օձն ասաց կնոջը. «Ինչո՞ւ Աստուած
ասաց, թէ դրախտում գտնուող բոլոր
ծառերի պտուղներից չէք կարող
ուտել»: 2 Կինն ասաց օձին. «Դրախտի
ծառերի պտուղներից կարող ենք ուտել:
3 Սակայն դրախտի մէջտեղի ծառի
պտղի համար Աստուած ասաց. "Դրա-
նից չուտէք եւ չմօտենաք, որպէսզի
չմեռնէք"»: 4 Օձն ասաց կնոջը. «Չէք
մահանայ, 5 որովհետեւ Աստուած գի-
տէր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը
բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք
աստուածների նման՝ կ'իմանաք բարին
ու չարը»:
6 Կինը տեսաւ, որ ծառի պտուղը լաւ
է ուտելու համար, ակնահաճոյ է եւ
գրաւիչ՝ ըմբռնելու համար‡: Նա առաւ
նրա պտղից, կերաւ եւ տուեց իր մօտ
կանգնած ամուսնուն, եւ նրանք կերան:
7 Երկուսի աչքերն էլ բացուեցին, եւ
նրանք հասկացան, որ մերկ են: Նրանք
թզենու տերեւներն իրար կարեցին եւ
իրենց համար գոգնոց շինեցին: 8 Երե-
կոյեան նրանք լսեցին Տէր Աստծու՝
դրախտում շրջագայելու ոտնաձայնը, եւ
Ադամն ու իր կինը Տէր Աստծուց թաք-
նուեցին դրախտի ծառերի մէջ: 9 Տէր
Աստուած կանչեց Ադամին ու ասաց
նրան. «Ո՞ւր ես»: 10 Ադամը պատաս-
խանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝
դրախտում, ամաչեցի, որովհետեւ մերկ
էի, եւ թաքնուեցի»: 11 Աստուած
ասաց նրան. «Ո՞վ յայտնեց քեզ, թէ
մերկ ես: Արդեօք կերա՞ր այն ծառի
պտղից, որից պատուիրել էի, որ
չուտես»: 12 Ադամն ասաց. «Այս կինը,
որ տուեցիր ինձ, նա՛ տուեց ինձ ծառի
պտղից, եւ ես կերայ»: 13 Տէր Աստուած
ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Կինն
ասաց. «Օձը խաբեց ինձ, եւ ես կերայ»:

ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ

14 Տէր Աստուած ասաց օձին. «Քանի
որ այդ բանն արեցիր, անիծեալ լինես
երկրի բոլոր անասունների ու գա-
զանների մէջ: Քո լանջի ու որովայնի
վրայ սողաս, ողջ կեանքումդ հող ուտես:
15 Թշնամութիւն պիտի դնեմ քո եւ այդ
կնոջ միջեւ, քո սերնդի ու նրա սերնդի
միջեւ: Նա պիտի ջախջախի† քո գլուխը,
իսկ դու պիտի խայթես նրա գարշա-
պարը»: 16 Իսկ կնոջն ասաց. «Պիտի
անչափ բազմացնեմ քո ցաւերն ու քո
հառաչանքները: Ցաւերով երեխաներ
պիտի ծնես, քո ամուսնուն պիտի
ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ
վրայ»: 17 Աստուած Ադամին ասաց.
«Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին եւ
կերար այն ծառի պտղից, որի՛ց միայն
քեզ պատուիրեցի չուտել, բայց կերար
դրանից, թող անիծեալ լինի երկիրը քո
արածի պատճառով: Տանջանքով հայ-
թայթես քո սնունդը քո կեանքի բոլոր
օրերին: 18 Փուշ ու տատասկ թող
աճեցնի քեզ համար երկիրը, եւ դու
դաշտային բոյսերով սնուես: 19 Քո երե-
սի քրտինքով ուտես հացդ մինչեւ հող
դառնալդ, որից ստեղծուեցիր, որով-
հետեւ հող էիր եւ հող էլ կը դառնաս»:
20 Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց
Կեանք, որովհետեւ նա է բոլոր
մարդկանց նախամայրը: 21 Տէր
Աստուած Ադամի ու նրա կնոջ համար
կաշուից զգեստներ պատրաստեց եւ
հագցրեց նրանց:

ԱԴԱՄՆ ՈՒ ԵՒԱՆ ԱՐՏԱՔՍԻՈՒՄ ԵՆ ԴՐԱԽՏԻՑ

22 Տէր Աստուած ասաց. «Ահա Ա-
դամը դարձաւ մեզ նման մէկը, նա գիտի
բարին եւ չարը: Արդ, գուցէ նա ձեռքը
մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի եւ
անմահ դառնայ»: 23 Եւ Տէր Աստուած
արտաքսեց նրան բերկրութեան դրախ-
տից, որպէսզի նա մշակի այն հողը, որից
ստեղծուել էր: 24 Աստուած դուրս
հանեց Ադամին, բնակեցրեց բերկրու-
թեան դրախտի դիմաց եւ հրամայեց
քերովբէներին ու բոցեղէն սրին շուր-
ջանակի հսկել դէպի կենաց ծառը
տանող ճանապարհները:

†Գրաբարում՝ սպասեսցէ:

†Գրաբարում՝ իմաստնագոյն:
‡Եբրայերէնում՝ իմաստուն դարձնելու համար:

ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ

4 Ադամը պառկեց իր կին Եւայի հետ, սա յղիացաւ, ծնեց Կայէնին ու ասաց. «Մարդ ծնեցի Աստծու զօրութեամբ»: 2 Դրանից յետոյ նա ծնեց նրա եղբայր Աբէլին: Աբէլը դարձաւ ոչխարների հովիւ, իսկ Կայէնը հող էր մշակում: 3 Որոշ ժամանակ անց Կայէնը երկրի բարիքներից ընծայ բերեց Աստծուն, 4 իսկ Աբէլը բերեց իր ոչխարների առաջնեկներից ու գէրերից: Աստուած բարի աչքով նայեց Աբէլին ու նրա ընծաներին, 5 իսկ Կայէնի ու նրա ընծաների վրայ ուշադրութիւն չդարձրեց: Կայէնը շատ տրտմեց, նրա դէմքը մռայլուեց: 6 Տէր Աստուած Կայէնին ասաց. «Ինչո՞ւ տրտմեցիր, ինչո՞ւ մռայլուեց դէմքդ: 7 Չէ՞ որ եթէ արդար ես զոհաբերում, բայց արդար չես բաժանում, մեղանչած ես լինում: Հանգի՛ստ եղիր, դու կարող ես մեղքից ազատուել, դու ի վիճակի ես այն յաղթահարելու»:

8 Կայէնն ասաց իր եղբայր Աբէլին. «Արի գնանք դաշտ հասան, Կայէնը յարձակուեց իր եղբայր Աբէլի վրայ եւ սպանեց նրան: 9 Տէր Աստուած հարցրեց Կայէնին. «Ո՞ւր է քո եղբայր Աբէլը»: Սա պատասխանեց. «Չգիտեմ, մի՞թէ ես իմ եղբօր պահակն եմ»: 10 Աստուած ասաց. «Այդ ի՞նչ արեցիր, քո եղբօր արեան կանչը երկրից բողոքում է ինձ: 11 Արդ, անիծեալ լինես երկրի վրայ, որը բացեց իր բերանը եղբօրդ՝ քո ձեռքով թափած արիւնն ընդունելու համար: 12 Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանայ քեզ տալ իր արդիւնքը: Ահ ու դողի եւ երերման մէջ պիտի լինես երկրի վրայ»: 13 Կայէնն ասաց Աստծուն. «Գործած մեղքս մեծ է թողութեան արժանի լինելու համար: 14 Եթէ այսօր ինձ հանես երկրից, ես կը թաքնուեմ քեզնից, ահ ու դողի եւ երերման մէջ կը լինեմ երկրի վրայ, եւ ով հանդիպի, կը սպանի ինձ»: 15 Տէր Աստուած ասաց նրան. «Այդպէս չէ: Նա, ով կը սպանի Կայէնին, եօթնապատիկ վրէժի կ'արժանանայ»: Եւ Տէր Աստուած նշան դրեց Կայէնի վրայ, որպէսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի:

ԿԱՅԷՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

16 Կայէնը հեռացաւ Աստծու մօտից եւ բնակուեց Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց: 17 Կայէնը պառկեց իր կնոջ հետ, սա յղիացաւ ու ծնեց Ենոքին: Կայէնը քաղաք կառուցեց եւ քաղաքը կոչեց իր որդու՝ Ենոքի անուամբ: 18 Ենոքը Գայերիդադ անուամբ որդի ունեցաւ: Գայերիդադը ծնեց Մայիէլին, Մայիէլը ծնեց Մաթուսաղային, Մաթուսաղան ծնեց Ղամէքին: 19 Ղամէքն առաւ երկու կին. մէկի անունը Ադդա էր, իսկ երկրորդի անունը՝ Սէլլա: 20 Ադդան ծնեց Յոբէլին: Սա խաշնարածների վրաններում բնակուողների նախահայրն է: 21 Նրա եղբօր անունը Յոբաղ է: Նա է յօրինել երգն ու քնարը: 22 Սէլլան ծնեց Թոբէլին, որը պղնձի ու երկաթի հմուտ դարբին էր: Թոբէլի քոյրը Նոյեման էր: 23 Ղամէքն ասաց իր կանանց՝ Ադդային ու Սէլլային. «Լսեցէ՛ք իմ խօսքը, Ղամէքի կանայք, ակա՜նջ դրէք իմ ասածին: Ես մի երիտասարդ մարդ սպանեցի, որովհետեւ նա ինձ վիրաւորել եւ հարուածել էր: 24 Եթէ սպանութեան համար Կայէնից եօթն անգամ վրէժ է պահանջւում, ապա Ղամէքից՝ եօթանասունեօթն անգամ»:

ՍԷԹ ԵՒ ԵՆՈՍ

25 Ադամը պառկեց իր կին Եւայի հետ, սա յղիացաւ, ծնեց որդի, նրա անունը դրեց Սէթ եւ ասաց. «Կայէնի սպանած Աբէլի փոխարէն Աստուած ինձ ուրիշ զաւակ պարգեւեց»: 26 Սէթն ունեցաւ որդի եւ նրա անունը դրեց Ենոս: Նա յուսալով կանչում էր Տէր Աստծու անունը:

ԱԴԱՄԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1. 1-4)

5 Սա մարդկանց ազգաբանութեան այն օրերի պատմութիւնն է, երբ Աստուած ստեղծեց Ադամին: Ըստ Աստծու պատկերի ստեղծեց նրան, 2 արու եւ էգ ստեղծեց նրանց, օրհնեց եւ ադամ, այսինքն՝ մարդ անուանեց նրանց այն օրը, երբ ստեղծեց նրանց:

3 Ադամը երկու հարիւր երեսուն† տարեկանին իր նման ու իր կերպարանքով որդի ծնեց եւ անունը դրեց Սէթ: 4 Սէթին ծնելուց յետոյ Ադամն ապրեց եւս եօթը հարիւր տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 5 Ադամը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր երեսուն տարի:

6 Սէթը երկու հարիւր հինգ տարեկանին ծնեց Ենոսին: 7 Ենոսին ծնելուց յետոյ Սէթն ապրեց եւս եօթը հարիւր եօթը տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 8 Սէթը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր տասներկու տարի:

9 Ենոսը հարիւր իննսուն տարեկանին ծնեց Կայնանին: 10 Կայնանին ծնելուց յետոյ Ենոսն ապրեց եւս եօթը հարիւր տասնհինգ տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 11 Ենոսը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր հինգ տարի:

12 Կայնանը հարիւր եօթանասուն տարեկանին ծնեց Մաղաղայէլին: 13 Մաղաղայէլին ծնելուց յետոյ Կայնանն ապրեց եւս եօթը հարիւր քառասուն տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 14 Կայնանը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր տասը տարի:

15 Մաղաղայէլը հարիւր վաթսունհինգ տարեկանին ծնեց Յարէդին: 16 Յարէդին ծնելուց յետոյ Մաղաղայէլն ապրեց եւս եօթը հարիւր երեսուն տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 17 Մաղաղայէլը մեռաւ՝ ապրելով ութ հարիւր իննսունհինգ տարի:

18 Յարէդը հարիւր վաթսուներկու տարեկանին ծնեց Ենոքին: 19 Ենոքին ծնելուց յետոյ Յարէդն ապրեց եւս ութ հարիւր տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 20 Յարէդը մեռաւ՝ ապրելով ինը հարիւր վաթսուներկու տարի:

21 Ենոքը հարիւր վաթսունհինգ տարեկանին ծնեց Մաթուսաղային: 22 Ենոքը Մաթուսաղային ծնելուց յետոյ սիրելի եղաւ Աստծուն երկու հարիւր տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 23 Ենոքը ապրեց երեք հարիւր վաթսունհինգ տարի: 24 Ենոքը սիրելի եղաւ Աստծուն: Նա անյայտացաւ, որովհետեւ Աստուած նրան տարաւ իր մօտ:

25 Մաթուսաղան հարիւր ութսունեօթը տարեկանին ծնեց Ղամէքին: 26 Ղամէքին ծնելուց յետոյ Մաթուսաղան ապրեց եւս ութ հարիւր երկու† տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 27 Մաթուսաղան մեռաւ՝ ապրելով ինը հարիւր վաթսունինը‡ տարի:

28 Ղամէքը հարիւր ութսունութ տարեկանին ծնեց որդի: 29 Նա նրա անունը դրեց Նոյ: Ղամէքն ասաց. «Սա մեզ կը հանգստացնի մեր գործերից, մեր ձեռքերի ցաւերից եւ այն երկրից, որ անիծեց Տէր Աստուած»: 30 Նոյին ծնելուց յետոյ Ղամէքն ապրեց եւս հինգ հարիւր վաթսունհինգ տարի եւ ծնեց ուստրեր ու դուստրեր: 31 Ղամէքը մեռաւ՝ ապրելով եօթը հարիւր յիսուներեք տարի:

32 Նոյը հինգ հարիւր տարեկանին ծնեց երեք որդի. Սէմին, Քամին եւ Յաբէթին:

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ

6 Երբ սկսեցին մարդիկ բազմանալ երկրի վրայ եւ դուստրեր ունեցան, 2 Աստծու որդիները, տեսնելով որ մարդկանց դուստրերը գեղեցիկ են, կին առան նրանց, ում ընտրեցին: 3 Տէր Աստուած ասաց. «Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետեւ նրանք մարմնաւոր են: Նրանց կեանքի սահմանը թող լինի հարիւր քսան տարի»: 4 Այդ օրերին հսկաներ էին ապրում երկրի վրայ: Երբ Աստծու որդիները մարդկանց դուստրերի հետ պառկեցին, իրենց համար որդիներ ծնեցին: Նրանք այն հսկաներն էին, որոնք հնուց ի վեր անուանի մարդիկ էին: 5 Երբ Տէր Աստուած տեսաւ, որ մարդկանց չարագործութիւնները բազմանում են երկրի վրայ, եւ ամէն ոք իր մտքում ամէն օր խնամքով չարագործութիւններ է նիւթում, 6 զղջաց Աստուած, որ մարդ է ստեղծել երկրի վրայ, եւ տրտմեց իր հոգու խորքում: 7 Տէր Աստուած ասաց.

---

†Եբրայերէնում՝ *հարիւր երեսուն*: Թուականների նման տարբերութիւններ շատ կան Ծննդոցի նաեւ այլ գրքերի մէջ:

†Եբր. նաեւ Զոհրաբեան՝ «*եօթը հարիւր ութսուն երկու*»:

‡Թուական անճշտութիւն է: Կա՛մ պէտք է լինի «*ինը հարիւր ութսունինը*», կա՛մ 26-րդ տան թուականը պէտք է լինի «*եօթը հարիւր ութսուներկու*», ինչպէս ունեն մի քանի այլ ձեռագրեր ու հայերէն ձեռագրեր:

«Երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամէն մի էակ՝ մարդուց մինչեւ անասուն եւ սողուններից մինչեւ երկնքի թռչունները, որովհետեւ զղջացել եմ, որ ստեղծել եմ նրանց»: 8 Նոյը, սակայն, արժանացել էր Տէր Աստծու սիրուն:

ՆՈՅ

9 Այս է Նոյի պատմութիւնը: Նոյը կատարեալ եւ արդար մարդ էր իր ազգի մէջ: Նոյը սիրելի եղաւ Աստծուն: 10 Նոյը ծնեց երեք որդի. Սէմին, Քամին, Յաբէթին: 11 Ապականուեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցուեց անարդարութեամբ: 12 Տէր Աստուած տեսաւ, որ երկիրն ապականուած է, որովհետեւ երկրի վրայ ամէն էակ ապականել էր իր ճանապարհը: 13 Տէր Աստուած ասաց Նոյին. «Բոլոր մարդկանց վերջը հասել է, որովհետեւ երկիրը լցուել է նրանց անիրաւութիւններով: Ես կ'ոչնչացնեմ նրանց ու երկիրը: 14 Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կը շինես: Տապանը բաժանմունքներով կը պատրաստես եւ ներսից ու դրսից կուպրով կը ծեփես: 15 Տապանն այսպէս կը շինես. թող երեք հարիւր կանգուն լինի տապանի երկարութիւնը, յիսուն կանգուն՝ լայնութիւնը, եւ երեսուն կանգուն՝ բարձրութիւնը: 16 Տապանն աստիճանաբար նեղացնելով կը շինես, այնպէս, որ նրա ծածկը մի կանգուն լինի†: Տապանի դուռը կողքից կ'անես. ներքնայարկ, միջնայարկ ու վերնայարկ թող ունենայ տապանը: 17 Իսկ ես, ահա, ջրով կը հեղեղեմ երկիրը՝ ոչնչացնելու համար երկնքի տակ գտնուող ամէն մի շնչաւոր էակ. եւ այն ամէնը, ինչ կայ երկրի վրայ, կ'ոչնչանայ: 18 Ես իմ ուխտը կը հաստատեմ քեզ հետ, եւ տապան կը մտնես դու, քեզ հետ նաեւ՝ քո որդիները, քո կինը եւ քո որդիների կանայք: 19 Բոլոր կենդանիներից, բոլոր գազաններից ու բոլոր էակներից երկու-երկու կը մտցնես տապան, որ նրանք կերակրուեն քեզ հետ: Թող դրանք արու եւ էգ լինեն: 20 Ամէն տեսակ թռչուններից, ամէն տեսակ կենդանիներից, երկրի ամէն տեսակ սողուններից՝ բոլորից երկու-երկու, արու եւ էգ, թող մտնեն քեզ հետ, որ կերակրուեն քեզ հետ: 21 Եւ դու կը վերցնես բոլոր այն ուտելիքներից, որոնցով պիտի սնուէք: Դրանք կը կուտակես քեզ մօտ, որպէսզի քեզ ու նրանց համար կերակուր լինեն»: 22 Եւ Նոյն արեց այն ամէնը, ինչ պատուիրեց նրան Տէր Աստուած: Նա այդպէս էլ արեց:

ՋՐՀԵՂԵՂ

7 Տէր Աստուած ասաց Նոյին. «Դու եւ քո ողջ ընտանիքը մտէ՛ք տապան, որովհետեւ մարդկային ցեղի մէջ միայն քե՛զ գտայ արդար իմ հանդէպ: 2 Անպիղծ բոլոր կենդանիներից եօթը-եօթը՝ արու եւ էգ, կը մտցնես քեզ հետ, իսկ պիղծ բոլոր կենդանիներից երկու-երկու՝ արու եւ էգ, 3 նաեւ երկնքի անպիղծ թռչուններից եօթը-եօթը՝ արու եւ էգ, իսկ պիղծ թռչուններից երկու-երկու՝ արու եւ էգ, որ սերունդ պահպանուի ողջ երկրի վրայ: 4 Եօթը օր յետոյ ես քառասուն օր ու քառասուն գիշեր անձրեւ պիտի թափեմ երկրի վրայ եւ երկրի երեսից պիտի ջնջեմ իմ ստեղծած ամէն մի էակ»: 5 Նոյն արեց այն ամէնը, ինչ պատուիրեց Տէր Աստուած: 6 Նոյը վեց հարիւր տարեկան էր, երբ ջրհեղեղ եղաւ երկրի վրայ: 7 Ջրհեղեղի պատճառով Նոյի հետ տապան մտան նրա որդիները, նրա կինն ու նրա որդիների կանայք: 8 Անպիղծ թռչուններից ու պիղծ թռչուններից, երկրի վրայ սողացող բոլոր սողուններից 9 երկու-երկու՝ արու եւ էգ, Նոյի հետ մտան տապան, ինչպէս պատուիրել էր նրան Տէր Աստուած: 10 Եօթը օր յետոյ երկրի վրայ ջրհեղեղ եղաւ: 11 Նոյի կեանքի վեցհարիւրերորդ տարում, երկրորդ ամսի քսանեօթին ժայթքեցին ստորգետնեայ բազում աղբիւրներ, բացուեցին երկնքի ջրվէժները: 12 Երկրի վրայ անձրեւ թափուեց քառասուն օր ու քառասուն գիշեր: 13 Այդ օրը Նոյի հետ տապան մտան Սէմը, Քամը, Յաբէթը՝ Նոյի որդիները, Նոյի կինը եւ նրա որդիների երեք կանայք: 14 Նրանք եւ ամէն

†Ըստ այլ բնագրերի՝ ծածկի տակ մէկ կանգուն բարձրութեամբ լուսամուտներ լինեն:

տեսակ գազան, ամէն տեսակ անասուն, երկրի վրայ սողացող ամէն տեսակ սողուն եւ ամէն տեսակ թռչուն 15 մտան տապան՝ Նոյի մօտ, երկու-երկու բոլոր այն էակներից, որոնց մէջ կենդանութեան շունչ կար: 16 Տապան մտնող էակները արու եւ էգ էին, ինչպէս պատուիրել էր Աստուած Նոյին: Տէր Աստուած նրա ետեւից փակեց տապանը: 17 Երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղաւ: Յորդացաւ ջուրն ու բարձրացրեց տապանը, եւ տապանը կտրուեց գետնից: 18 Ջուրն աւելի ու աւելի վարարեց, ողողեց երկիրը, եւ տապանը լողաց ջրերի վրայ: 19 Ջուրն այնքան սաստկացաւ երկրի վրայ, որ ծածկեց երկնքի տակ գտնուող բոլոր բարձրաբերձ լեռները: 20 Տասնհինգ կանգուն աւելի վեր բարձրացաւ ջուրը եւ ծածկեց բոլոր լեռները: 21 Մեռան երկրի վրայ շարժուող բոլոր կենդանի էակները՝ թռչունները, անասուններն ու գազանները, երկրի վրայ սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ: 22 Ցամաքի վրայ եղած ամէն բան, որ կենդանի շունչ ունէր իր ռունգերի մէջ, ոչնչացաւ: 23 Աստուած բնաջնջեց երկրի երեսին գտնուող ամէն մի էակ՝ մարդուց մինչեւ անասուն, սողուններից մինչեւ երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաեւ նրանք, որ նրա հետ տապանում էին: 24 Ջուրը հարիւր յիսուն օր ողողեց երկիրը:

ՋՐՀԵՂԵՂԻ ՎԵՐՋԸ

8 Աստուած յիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնուող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին: Աստուած հողմ բարձրացրեց երկրի վրայ, եւ անձրեւը դադարեց: 2 Փակուեցին ստորգետնեայ աղբիւրներն ու երկնքի սահանքները, դադարեց նաեւ երկնքից թափուող անձրեւը: 3 Ջուրը գնալով իջնում, քաշւում էր երկրի վրայից, եւ հարիւր յիսուն օր անց այն նուազեց: 4 Եօթներորդ ամսի քսանեօթին տապանը նստեց Արարատ լեռան վրայ: 5 Ջուրը մինչեւ տասներորդ ամիսը քաշւում էր, նուազում: Տասնմէկերորդ ամսի առաջին օրը երեւացին լեռների գագաթները:

6 Քառասուն օր յետոյ Նոյը բացեց իր կառուցած տապանի պատուհանը: 7 Նա արձակեց մի ագռաւ, որը գնաց, բայց չվերադարձաւ, մինչեւ որ ջուրը ցամաքէր երկրի վրայից: 8 Յետոյ նա արձակեց մի աղաւնի՝ տեսնելու, թէ ջրերը քաշուե՞լ են երկրի երեսից: 9 Աղաւնին իր ոտքը դնելու տեղ չգտնելով՝ վերադարձաւ նրա մօտ՝ տապան, որովհետեւ ջուրը դեռ ծածկել էր ողջ երկիրը: Նոյը երկարեց ձեռքը, բռնեց նրան եւ բերեց իր մօտ՝ տապան: 10 Նա սպասեց եւս եօթը օր ու տապանից դարձեալ արձակեց աղաւնուն: 11 Աղաւնին նրա մօտ վերադարձաւ երեկոյեան: Նրա կտուցին ձիթենու մի շիւղ կար: Նոյը դրանից հասկացաւ, որ ջրերը քաշուել են երկրի վրայից: 12 Նոյն սպասեց եւս եօթը օր ու նորից արձակեց աղաւնուն, որն այլեւս նրա մօտ չվերադարձաւ:

13 Նոյի կեանքի վեցհարիւրմէկերորդ տարում, առաջին ամսի առաջին օրը ջրերը քաշուեցին երկրի վրայից: Նոյը բացեց իր կառուցած տապանի ծածկը եւ տեսաւ, որ ջուրը քաշուել է երկրի երեսից: 14 Երկրորդ ամսի քսաներեքներորդ օրը երկիրը ցամաքեց:

15 Տէր Աստուած Նոյին ասաց. 16 «Դո՛ւրս եկէք այդ տապանից դու, քո կինը, քո որդիները եւ քո որդիների կանայք, 17 նաեւ քեզ հետ եղող բոլոր գազանները, բոլոր էակները՝ թռչուններից մինչեւ անասունները: Դո՛ւրս հանիր քեզ հետ նաեւ երկրի վրայ սողացող բոլոր սողուններին, նրանք թող սողան երկրի վրայ: Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք երկրի վրայ»: 18 Դուրս ելան Նոյը, նրա հետ նաեւ իր կինը, իր որդիներն ու իր որդիների կանայք: 19 Երկրի բոլոր գազանները, բոլոր սողուններն ու բոլոր թռչունները՝ իրենց տեսակներով, դուրս ելան տապանից:

ՆՈՅԻ ԶՈՀ Է ՄԱՏՈՒՑՈՒՄ

20 Նոյը զոհասեղան շինեց Աստծու համար: Նա առաւ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի

անպիղծ թռչուններից եւ ողջակիզեց զոհասեղանի վրայ: 21 Եւ Տէր Աստուած հոտոտեց անուշ բոյրը: Տէր Աստուած իր մտքում ասաց. «Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլեւս չեմ անիծի, որովհետեւ մարդկանց միտքը մանկուց չարի ծառայութեան մէջ է: Ես այլեւս ոչ մի կենդանի էակի չեմ պատուհասի, ինչպէս արեցի: 22 Այսուհետեւ, քանի դեռ կայ երկիրը, թող չդադարեն սերմն ու հունձը, ցուրտն ու տօթը, ամառն ու գարունը, ցերեկն ու գիշերը»:

ԱՍՏԾՈՒ ՈՒԽՏԸ ՆՈՅԻ ՀԵՏ

9 Աստուած օրհնելով Նոյին ու նրա որդիներին՝ ասաց նրանց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրն ու տիրեցէ՛ք դրան: 2 Ձեր ահն ու երկիւղը թող լինի երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների, երկրի բոլոր զեռունների եւ ծովի բոլոր ձկների վրայ, որ ենթարկել եմ ձեզ: 3 Ամէն մի կենդանի զեռուն թող կերակուր լինի ձեզ, ինչպէս խոտն ու բանջարն եմ տուել: 4 Կենսատու արիւն պարունակող միս չուտէք, 5 քանզի ես էլ ձեր կենսատու արիւնը կը պահանջեմ, բոլոր գազանների, ինչպէս նաեւ մարդու միջոցով կը պահանջեմ այն: Մարդու միջոցով պիտի պահանջեմ իր եղբօր հոգին: 6 Ով թափի մարդու արիւնը, նրա արեան փոխարէն թող թափուի իր արիւնը, որովհետեւ Աստծու պատկերով եմ ստեղծել ես մարդուն: 7 Իսկ դուք աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը եւ բազմացէ՛ք դրա վրայ»:

8 Տէր Աստուած, դիմելով Նոյին ու նրա որդիներին, որոնք նրա հետ էին, ասաց. 9 «Ահա ես ուխտ եմ դնում ձեզ հետ, ձեզնից յետոյ եկող ձեր սերունդների հետ, 10 ձեզ հետ եղող բոլոր կենդանի էակների հետ՝ թռչունների, անասունների, երկրի բոլոր գազանների, այդ տապանից դուրս եկած բոլորի եւ երկրի բոլոր կենդանիների հետ: 11 Ես ուխտ եմ դնում ձեզ հետ. այլեւս ոչ մի էակ չի մեռնի ջրհեղեղից, ողջ երկիրը ոչնչացնող ջրհեղեղ չի լինի այլեւս»: 12 Տէր Աստուած ասաց Նոյին. «Իմ ու ձեր միջեւ, ձեզ հետ եղող ամէն կենդանի էակի միջեւ գալիք բոլոր սերունդների համար իմ հաստատած ուխտի նշանն այս է. 13 իմ ծիածանը կը կապեմ ամպերի մէջ: Եւ դա թող լինի իմ ու ողջ երկրի միջեւ յաւիտենական ուխտի նշանը: 14 Երբ երկրի վրայ ամպեր կուտակեմ, իմ ծիածանը թող երեւայ ամպերի մէջ: 15 Այնժամ ես կը յիշեմ իմ ուխտը, որ հաստատել եմ իմ ու ձեր միջեւ եւ շնչաւոր բոլոր էակերի միջեւ: Այլեւս ջրհեղեղ չի լինի, որպէսզի բոլոր էակները չոչնչանան: 16 Թող իմ ծիածանը լինի ամպերի մէջ, որպէսզի ես տեսնեմ այն եւ յիշեմ իմ ու երկրի վրայ գտնուող բոլոր շնչաւոր էակների միջեւ իմ հաստատած յաւիտենական ուխտը»: 17 Տէր Աստուած ասաց Նոյին. «Այս է նշանն այն ուխտի, որ հաստատեցի իմ ու ձեր միջեւ եւ երկրի վրայ գտնուող բոլոր էակների միջեւ»:

ՆՈՅԸ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ

18 Նոյի՝ տապանից դուրս եկած որդիներն էին Սէմը, Քամը եւ Յաբէթը: Քամը Քանանի հայրն էր: 19 Այս երեքն էին Նոյի որդիները, եւ ժողովուրդները սրանցից սերուելով տարածուեցին ողջ երկրի վրայ:

20 Նոյը՝ հողագործ այդ մարդը, առաջինն էր, որ հող մշակեց եւ այգի տնկեց: 21 Նա խմեց դրա գինուց, հարբեց ու մերկացաւ իր տան մէջ: 22 Քամը՝ Քանանի հայրը, տեսաւ իր հօր մերկութիւնն ու դուրս գնալով՝ այդ մասին պատմեց իր երկու եղբայրներին: 23 Սէմն ու Յաբէթը, երկուսն էլ, հագուստներ առան իրենց ուսերին եւ, յետ-յետ գնալով, ծածկեցին իրենց հօր մերկութիւնը: Նրանք մէջքով էին կանգնած, այնպէս որ իրենց հօր մերկութիւնը չտեսան: 24 Նոյը սթափուելով գինովութիւնից՝ իմացաւ, թէ ինչ է արել իր նկատմամբ իր կրտսեր որդին, 25 եւ ասաց. «Անիծեալ լինի ստրուկ Քանանը եւ իր եղբայրների ծառան թող լինի»: 26 Նա աւելացրեց. «Օրհնեալ լինի Տէր Աստուած՝ Սէմի Աստուածը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան: 27 Աստուած թող բարգաւաճեցնի Յաբէթին, նա թող բնակուի Սէմի տանը, իսկ

Քանանը թող լինի նրա ծառան»:

28 Ջրհեղեղից յետոյ Նոյը ապրեց երեք հարիւր յիսուն տարի: 29 Նոյը ինը հարիւր յիսուն տարի ապրելուց յետոյ մեռաւ:

ՆՈՅԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1. 5-23)

10 Սրանք են Նոյի որդիների՝ Սէմի, Քամի, Յաբէթի սերունդները. ջրհեղեղից յետոյ որդիներ ծնուեցին նրանց:

2 Յաբէթի որդիներն են Գամերը, Մագոգը, Մադան, Յաւանը, Ելիսան, Թոբէլը, Մոսոքը եւ Թիրասը: 3 Գամերի որդիներն են Ասքանազը, Ռիփաթը եւ Թորգոման: 4 Յաւանի որդիներն են Ելիսան ու Թարսիսը, կիտացիներն ու ռոդացիները: 5 Սրանցից է, որ բաժանուեցին եւ ծովեզերքում բնակութիւն հաստատեցին ժողովուրդները՝ իւրաքանչիւրն ըստ իր երկրում ունեցած լեզուների եւ տոհմերի:

6 Քամի որդիներն են Քուշն ու Մեստրեմը, Փուդն ու Քանանը: 7 Քուշի որդիներն են Սաբան, Եւիլան, Սաբաթան, Ռեգման եւ Սաբակաթան: Ռեգմայի որդիներն են Սաբան եւ Յուդադանը: 8 Քուշը ծնեց Նեբրոթին: Նա առաջին հսկան էր երկրի վրայ: 9 Նա քաջ որսորդ էր Աստծու առաջ: Դրա համար էլ ասոյթ դարձաւ. «Նեբրոթի պէս քաջ է Տէր Աստծու առաջ»: 10 Նրա թագաւորութիւնն սկիզբ առաւ Բաբելոնում եւ ընդգրկում էր Որէքը, Աքադն ու Քաղանէն, որոնք գտնուում էին Սենաար երկրում: 11 Նեբրոթն ելաւ այդ երկրից ու գնաց Ասուր, կառուցեց Նինուէն, Ռոբոթ քաղաքը, Քաղանը, 12 ինչպէս նաեւ Նինուէի ու Քաղանի միջեւ գտնուող Դասեմանը: Սա մեծ քաղաք էր: 13 Մեստրեմը սերեց լուդիմացիներին, սենիմացիներին, սաղբիմացիներին, հեփթաղիմացիներին, 14 պատրոսոնիմացիներին եւ քասղոնիմացիներին, որոնցից սկիզբ առան փղշտացիներն ու կափթորիմացիները: 15 Քանանը ծնունդ տուեց Սիդոնին՝ իր անդրանիկ որդուն, քետացիներին, 16 յեբուսացիներին, ամորհացիներին, գերգեսացիներին, 17 խեւացիներին, արուակացիներին†, ամինացիներին, 18 արադիոնացիներին, սամարացիներին եւ ամաթացիներին: Դրանից յետոյ սփռուեցին քանանացիների ցեղերը: 19 Քանանացիների սահմանները ձգուեցին Սիդոնից մինչեւ Գերարա, որ Գազայի մօտ էր, մինչեւ Սոդոմ եւ Գոմոր, Ադամայից ու Սեբոյիմից մինչեւ Լասա: 20 Ահա սրանք են Քամի որդիներն ըստ իրենց ցեղերի, ըստ իրենց լեզուների, իրենց երկրների ու իրենց տոհմերի:

21 Յաբէթի երէց եղբայրը՝ Սէմը, որ Եբերի բոլոր որդիների նախահայրն էր, նոյնպէս ծնեց որդիներ: 22 Սեմի որդիներն են Ելամը, Ասուրը, Արփաքսադը, Լուդն ու Արամը: 23 Արամի որդիներն են Հուսը, Եմուղը, Գադերն ու Մոսոքը: 24 Արփաքսադը ծնեց Կայնանին, Կայնանը ծնեց Սաղային, իսկ Սաղան ծնեց Եբերին‡: 25 Եբերը ծնեց երկու որդի. մէկի անունը Փաղէկ էր, որովհետեւ նրա օրօք ցրուեցին մարդիկ, իսկ եղբօր անունը Յեկտան էր: 26 Յեկտանը ծնեց Էլմոդադին, Սալէքին, Ասարմոդին, Յարաքին, 27 Յոդորամին, Եզէլին, Դեկլային, 28 Գեբաղին, Աբիմէլին, Սաբէիին, 29 Ուփիրին, Եւիլային ու Յոբաբին: Սրանք բոլորը Յեկտանի որդիներն են: 30 Նրանք բնակութիւն հաստատեցին Մասէից մինչեւ Սոփերա, որ գտնուում էր արեւելեան լերան կողմը: 31 Ահա սրանք են Սէմի որդիներն ըստ իրենց ցեղերի, ըստ իրենց լեզուների, իրենց երկրի ու տոհմերի: 32 Այս է Նոյի որդիների ցեղերի ծննդաբանութիւնն ըստ իրենց տոհմերի: Ջրհեղեղից յետոյ աշխարհով մէկ սփռուած ժողովուրդները սրանցից են առաջացել:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

11 Այն ժամանակ ողջ երկիրը մէկ լեզուով, մէկ բարբառով էր խօսում: 2 Արեւելքից տեղաշարժուելու ժամա-

†Այլ բնագրերում եւ հայերէն մի քանի ձեռագրերում՝ *արուկացիներին*:

‡Բազմաթիւ ձեռագիր օրինակներում պակասում են "զ Կայնան, եւ Կայնան ծնաւ" (Փ, 24) եւ "զ Կայնան: եւ եկեաց. . . . ծնաւ զ Սաղա" (ԺԱ, 12) հատուածները, որոնք առկայ են միայն երկու օրինակներում: Տե՛ս Ա Մնաց. Ա, 18, Ղուկաս, Գ, 36:

նակ նրանք Սենաար երկրում մի դաշտ գտան եւ բնակուեցին այնտեղ: 3 Նրանք միմեանց դիմելով՝ ասացին. «Եկէք աղիւս շինենք ու այն թրծենք կրակով»: Աղիւսը նրանց համար ծառայեց իբրեւ քար, իսկ կուպրը՝ իբրեւ շաղախ: 4 Նրանք ասացին. «Եկէք մեզ համար քաղաք կառուցենք եւ աշտարակ, որի գագաթը հասնի մինչեւ երկինք: Համբաւ ձեռք բերենք ողջ աշխարհով մէկ սփռուելուց առաջ»: 5 Տէրն իջաւ, որպէսզի տեսնի այն քաղաքն ու աշտարակը, որ կառուցում էին մարդկանց որդիները: 6 Տէրն ասաց. «Սրանք մէկ ժողովուրդ են, ունեն մէկ լեզու եւ սկսել են այդ գործն անել: Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կառուցեն այն, ինչ կամենում են: 7 Արի իջնենք եւ խառնենք նրանց լեզուն այնպէս, որ ոչ մէկը չհասկանայ իր ընկերոջ ասածը»: 8 Տէր Աստուած այնտեղից նրանց սփռեց աշխարհով մէկ, եւ նրանք դադարեցին քաղաքն ու աշտարակը կառուցելուց: 9 Դրա համար այն կոչուեց Խառնակութիւն (Բաբելոն), որովհետեւ Տէր Աստուած այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները եւ այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մէկ:

ՍԷՄԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1. 24-27)

10 Սէմի սերունդները սրանք են. Սէմը հարիւրամեայ հասակում, ջրհեղեղից երկու տարի յետոյ ծնեց Արփաքսադին: 11 Սէմն Արփաքսադին ծնելուց յետոյ ապրեց եւս հինգ հարիւր տարի: Նա ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 12 Արփաքսադը հարիւր երեսունհինգ տարեկան հասակում ծնեց Կայնանին: 13 Արփաքսադը Կայնանին ծնելուց յետոյ ապրեց եւս չորս հարիւր տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: Կայնանը հարիւր երեսուն տարեկան հասակում ծնեց Սաղային: Կայնանը Սաղային ծնելուց յետոյ ապրեց եւս երեք հարիւր երեսուն տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 14 Սաղան հարիւր երեսուն տարեկան հասակում ծնեց Եբերին: 15 Սաղան Եբերին ծնելուց յետոյ ապրեց եւս երեք հարիւր երեսուն տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 16 Եբերը հարիւր երեսունչորս տարեկան հասակում ծնեց Փաղէկին: 17 Եբերը Փաղէկին ծնելուց յետոյ ապրեց եւս երկու հարիւր եօթանասուն տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 18 Փաղէկը հարիւր երեսունչորս տարեկան հասակում ծնեց Ռագաւին: 19 Փաղէկը Ռագաւին ծնելուց յետոյ ապրեց եւս երկու հարիւր ինը տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 20 Ռագաւը հարիւր երեսուներկու տարեկան հասակում ծնեց Սերուքին: 21 Ռագաւը Սերուքին ծնելուց յետոյ ապրեց եւս երկու հարիւր եօթը տարի, ծնեց ուստրեր ու դուստրեր եւ մեռաւ: 22 Սերուքը հարիւր երեսուն տարեկան հասակում ծնեց Նաքորին: 23 Սերուքը Նաքորին ծնելուց յետոյ ապրեց եւս երկու հարիւր տարի, ծնեց տղաներ ու աղջիկներ եւ մեռաւ: 24 Նաքորը եօթանասունինը տարեկան հասակում ծնեց Թարային: 25 Նաքորը Թարային ծնելուց յետոյ ապրեց եւս հարիւր քսաներկու տարի, ծնեց տղաներ ու աղջիկներ եւ մեռաւ: 26 Թարան եօթանասուն տարեկան հասակում ծնեց Աբրամին, Նաքորին եւ Առանին:

ԹԱՐԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ

27 Թարայի սերունդը այս է. Թարան ծնեց Աբրամին, Նաքորին ու Առանին, իսկ Առանը ծնեց Ղովտին: 28 Առանը մեռաւ իր հայր Թարայի կենդանութեան օրօք, իր ծննդավայրում՝ Քաղդէացւոց երկրում: 29 Աբրամն ու Նաքորը ամուսնացան: Աբրամի կնոջ անունը Սարա էր, իսկ Նաքորի կնոջ անունը՝ Մեղքա: Սա Առանի՝ Մեղքայի եւ Յէսքայի հօր դուստրն էր: 30 Սարան ամուլ էր՝ երեխայ չէր ունենում:

31 Թարան իր որդի Աբրամին, իր որդի Նաքորին, իր որդի Առանի որդի Ղովտին ու իր հարսին՝ իր որդի Աբրամի կնոջը, Քաղդէացւոց երկրից առաւ տարաւ Քանանացւոց երկիրը: Նրանք հասան Խառան ու բնակուեցին այնտեղ: 32 Խառանում Թարան դարձաւ

երկու հարիւր հինգ տարեկան. Թարան Խառանում էլ մեռաւ:

ԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ԱԲՐԱՄԻՆ

12 Աստուած ասաց Աբրամին. «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հօր տնից եւ գնա՛ այն երկիրը, որ ցոյց կը տամ քեզ: 2 Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ, պիտի օրհնեմ քեզ, պիտի փառաւորեմ քո անունը, եւ դու օրհնեալ պիտի լինես: 3 Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, իսկ քեզ անիծողներին պիտի անիծեմ: Քեզնով պիտի օրհնուեն աշխարհի բոլոր ժողովուրդները»: 4 Եւ Աբրամը գնաց, ինչպէս ասել էր նրան Աստուած: Նրա հետ գնաց նաեւ Ղովտը: Աբրամը եօթանասունհինգ տարեկան էր, երբ հեռացաւ Խառանից: 5 Աբրամն առաւ իր կին Սարային, իր եղբօրորդի Ղովտին, Խառանում ձեռք բերած ողջ ունեցուածքն ու ստրուկներին: Նրանք ճանապարհ ընկան, որ գնան Քանանացւոց երկիրը: Նրանք եկան Քանանի երկիրը: 6 Աբրամը կտրեց անցաւ երկիրն իր երկարութեամբ մինչեւ Սիւքէմ վայրը՝ Բարձր կաղնին: Այդ ժամանակ, սակայն, քանանացիներն էին բնակւում այդ երկրում: 7 Տէրը երեւաց Աբրամին եւ ասաց նրան. «Քո յետնորդներին եմ տալու այս երկիրը»: Աբրամն իրեն երեւացած Տիրոջ համար զոհասեղան շինեց այդտեղ: 8 Այդտեղից նա գնաց Բեթէլի արեւելեան կողմում գտնուող լեռը: Այնտեղ՝ Բեթէլում, խփեց իր վրանը, ծովի դիմաց, իսկ արեւելքում Անգէն էր: Այնտեղ Տիրոջ համար զոհասեղան շինեց ու կանչեց Աստծու անունը: 9 Աբրամը հեռացաւ, գնաց ու բնակուեց անապատում:

ԱԲՐԱՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

10 Երբ սով եղաւ երկրում, Աբրամն իջաւ Եգիպտոս, որ այնտեղ ապրի պանդխտութեան մէջ, քանի որ սովը սաստկացել էր երկրում: 11 Երբ Աբրամը մօտեցաւ Եգիպտոսին, իր կին Սարային ասաց. «Գիտեմ, որ դու գեղեցիկ կին ես: 12 Արդ, եթէ պատահի, որ եգիպտացիները տեսնեն քեզ եւ ասեն՝ սա նրա կինն է, ու սպանեն ինձ, իսկ քեզ ողջ թողնեն, 13 կ՚ասես, թէ՝ նրա քոյրն եմ, որպէսզի քո շնորհիւ ես չտուժեմ եւ քո շնորհիւ կենդանի մնամ»: 14 Երբ Աբրամը մտաւ Եգիպտոս, եգիպտացիները տեսան, որ նրա կինը շատ գեղեցիկ է: 15 Տեսան նրան նաեւ փարաւոնի իշխանները, գովեցին նրան փարաւոնի առաջ ու նրան տարան փարաւոնի պալատը: 16 Սարայի համար նրանք լաւ վերաբերմունք ցոյց տուեցին Աբրամին: Եւ նա ոչխարների, կովերի, էշերի, ծառաների եւ աղախինների, ջորիների եւ ուղտերի տէր դարձաւ:

17 Աբրամի կին Սարայի պատճառով Աստուած փարաւոնին ու նրա ընտանիքի անդամներին պատժեց մեծամեծ ու դաժան պատուհասներով: 18 Փարաւոնը կանչեց Աբրամին ու ասաց նրան. «Այս ի՞նչ փորձանք բերեցիր իմ գլխին, ինչո՞ւ չյայտնեցիր, թէ նա քո կինն է: 19 Ինչո՞ւ ասացիր, թէ "Իմ քոյրն է", ես էլ նրան կնութեան առայ: Արդ, ահա քո կինը քո առաջ է, ա՛ռ նրան ու հեռացի՛ր»: 20 Փարաւոնն իր մարդկանց պատուիրեց, որ Աբրամին, իր ունեցուածքով, նրա կնոջը, ինչպէս նաեւ Ղովտին ճանապարհ դնեն:

ԱԲՐԱՄԸ ԵՒ ՂՈՎՏԸ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՐԻՑ

13 Եգիպտոսից Աբրամն ելաւ գնաց անապատ, ինքը՝ իր ամբողջ ունեցուածքով, իր կինը եւ Ղովտն էլ նրա հետ: 2 Աբրամը շատ հարուստ էր անասուններով, արծաթով եւ ոսկով: 3 Նա իր հասած տեղից՝ անապատից, գնաց Բեթէլ, որտեղ նախապէս նրա վրանն էր խփած, Բեթէլի եւ Անգէի միջեւ գտնուող վայրը, 4 ուր սկզբնապէս նա զոհասեղան էր կառուցել: Այդտեղ Աբրամը կանչեց Տէր Աստծու անունը:

5 Աբրամի հետ գնացող Ղովտը նոյնպէս ունէր արջառներ, ոչխարներ, անասուններ, 6 բայց երկիրը նրանց չէր բաւականացնում միասին ապրելու համար, քանի որ նրանք մեծ ունեցուածքի տէր էին, ուստի հնարաւոր չէր համատեղ ապրել: 7 Կռիւ եղաւ Աբրամի

հօտերի հովիւների ու Ղովտի հօտերի հովիւների միջեւ: Քանանացիներն ու փերեզացիներն այդ ժամանակ բնակւում էին այդ երկրում: 8 Աբրամն ասաց Ղովտին. «Թող կռիւ չլինի իմ ու քո եւ իմ հովիւների ու քո հովիւների միջեւ, որովհետեւ մենք եղբայրներ ենք: 9 Մի՞թէ ողջ երկիրն առաջդ չի փռուած. հեռացի՛ր ինձնից: Եթէ դու ձախ գնաս, ես աջ կը գնամ, իսկ եթէ դու աջ գնաս, ես ձախ կը գնամ»: 10 Ղովտն աչքերը բարձրացրեց ու տեսաւ, որ Յորդանանի բոլոր շրջաններն էլ ոռոգելի են: Քանի դեռ Աստուած չէր կործանել Սոդոմն ու Գոմորը, մինչեւ Զոորայի սահմանը Աստծու դրախտի նման էր, Եգիպտացւոց երկրի նման: 11 Ղովտն ընտրեց Յորդանանի ողջ շրջանը եւ գնաց դէպի արեւելք: Այսպիսով եղբայրները բաժանուեցին միմեանցից: 12 Աբրամը պանդխտեց Քանանացւոց երկրում, իսկ Ղովտը հաստատուեց այդ կողմերում գտնուող մի քաղաքում՝ ապրեց Սոդոմում: 13 Սոդոմացիները չար մարդիկ էին եւ Աստծու հանդէպ բազում մեղքեր էին գործում:

ԱԲՐԱՄԸ ԳՆՈՒՄ Է ՔԵԲՐՈՆ

14 Ղովտի հեռանալուց յետոյ Աստուած Աբրամին ասաց. «Կանգնածդ տեղից քո աչքերով նայի՛ր դէպի հիւսիս ու հարաւ, դէպի արեւելք ու ծով: 15 Որքան աչքդ կտրում է, այդ ողջ երկիրը յաւիտեան քեզ եմ տալու եւ քո սերունդներին: 16 Քո յետնորդներին պիտի բազմացնեմ երկրի աւազի չափ. եթէ որեւէ մէկը ի վիճակի լինի հաշուելու երկրի աւազը, ապա քո յետնորդներն էլ թիւ կ'ունենան: 17 Իսկ արդ, արի շրջի՛ր այդ երկիրն իր երկարութեամբ ու լայնութեամբ, որովհետեւ այն քեզ եմ տալու»: 18 Աբրամը ճանապարհ ընկաւ, եկաւ բնակուեց Քեբրոնում գտնուող Մամբրէի կաղնու մօտ եւ այնտեղ Տէր Աստծու համար զոհասեղան շինեց:

ԱԲՐԱՄԸ ՓՐԿՈՒՄ Է ՂՈՎՏԻՆ

14 Սենաարի արքայ Ամարփաղի թագաւորութեան ժամանակ Սելլասարի արքայ Արիոքը, Ելամի արքայ Քոդողագոմորը եւ ազգերի արքայ Թարգաղը 2 պատերազմեցին սոդոմացիների արքայ Բաղակի, գոմորացիների արքայ Բարսայի, ադամացիների արքայ Սենայի, սեբոյիմացիների արքայ Սիմոբորի, ինչպէս նաեւ Բաղակի՝ Նոյն ինքը Սեգոր թագաւորի դէմ: 3 Սրանք բոլորը հաւաքուեցին Աղի ձորում, որ Աղի ծովն է: 4 Նրանք տասներկու տարի ենթարկուել էին Քոդողագոմորին եւ տասներեքերորդ տարում ապստամբեցին: 5 Տասնչորսերորդ տարում եկան Քոդողագոմորն ու նրա հետ եղած թագաւորները եւ կոտորեցին Աստարոթ Կառնայիմում գտնուող հսկաներին ու նրանց հետ եղած հզօր ցեղերին, ինչպէս նաեւ սոմացիներին՝ նրանց Շաւէ քաղաքում, 6 կոտորեցին նաեւ Սէիրի լեռներում բնակուող քոռացիներին եւ հասան մինչեւ անապատում գտնուող Բեւեկնի ձորը: 7 Նրանք վերադարձան Դատաստանի աղբիւրը, այսինքն՝ Կադէս, եւ կոտորեցին Ամաղէկի բոլոր իշխաններին ու Ասասանթամարում բնակուող ամորհացիներին: 8 Սոդոմացիների արքան, գոմորացիների արքան, ադամացիների արքան, սեբոյիմացիների արքան ու Բաղակի՝ այսինքն Սեգորի արքան ելան եւ Աղի ձորում ճակատամարտ տուեցին 9 Ելամի արքայ Քոդողագոմորի, ազգերի արքայ Թարգաղի, Սենաարի արքայ Ամարփաղի, Սելլասարի արքայ Արիոքի դէմ. չորս թագաւոր՝ հնգի դէմ: 10 Աղի ձորում հորեր կային՝ կուպրի հորեր: Սոդոմացիների արքան ու գոմորացիների արքան փախուստի դիմելիս ընկան դրանց մէջ, իսկ մնացածները փախան լեռան կողմը: 11 Նրանք բռնագրաւեցին սոդոմացիների ու գոմորացիների ողջ աւարն ու բոլոր պաշարները եւ գնացին: 12 Նրանք գերեցին նաեւ Սոդոմում բնակուող Ղովտին՝ Աբրամի եղբօրորդուն, բռնագրաւեցին նրա ունեցուածքը եւ գնացին: 13 Ճողոպրածներից մէկն եկաւ ու այդ մասին պատմեց միւս կողմում գտնուող Աբրամին: Նա բնակւում էր Աբրամի դաշնակիցներ Եսքողի եղբօր եւ Օնանի եղբօր՝ ամորհացի Մամբրէի կաղնու մօտ: 14 Երբ Աբրամն իմացաւ, թէ գերեվարուել է իր եղբօրորդի Ղովտը, հաւաքեց իր երեք հարիւր տասնութ ընդոծիններին†, 15 ինքն ու իր ծառաները գիշերով հարուածեցին նրանց, քշեցին մինչեւ Քոքաղ, որ Դամասկոսի ձախ կողմում է գտնւում: 16 Աբրամը ետ առաւ սոդոմացիների ամբողջ աւարը, ազատեց իր եղբօրորդի Ղովտին, նրա ամբողջ ունեցուածքը, ինչպէս նաեւ կանանց ու ժողովրդին:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿԸ ՕՐՀՆՈՒՄ Է ԱԲՐԱՄԻՆ

17 Երբ նա վերադառնում էր Քոդողագոմորին եւ նրա հետ եղած թագաւորներին կոտորելուց, Շաւէի ձորում, այսինքն՝ Թագաւորների դաշտում նրան ընդառաջ գնաց սոդոմացիների արքան:

18 Շաղէմի արքայ Մելքիսեդեկը հաց ու գինի հիւրասիրեց նրան, որովհետեւ ինքը բարձրեալ Աստծու քահանան էր: 19 Նա օրհնեց Աբրամին՝ ասելով. «Օրհնեալ է Աբրամը բարձրեալ Աստծու կողմից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը: 20 Օրհնեալ է բարձրեալն Աստուած, որ քո թշնամիներին մատնեց քո ձեռքը»: Աբրամը նրան տասանորդ տուեց ամէն ինչից: 21 Սոդոմացիների արքան, սակայն, ասաց Աբրամին. «Դու ինձ տուր այդ մարդկանց, իսկ աւարը թող մնայ քեզ»: 22 Աբրամն ասաց սոդոմացիների արքային. «Երդւում եմ երկինքն ու երկիրը ստեղծած բարձրեալ Աստուծով, 23 որ քեզ պատկանող ոչ մի բանից՝ թելից մինչեւ կօշիկի կապն անգամ ես չեմ վերցնի, որպէսզի չասես, թէ՝ "ես հարստացրի Աբրամին", 24 բացի ծառաների կերածից: Իսկ ինձ հետ եկած մարդիկ՝ Օնանը, Եսքողն ու Մամբրէն, իրենք թող ստանան իրենց բաժինը»:

ԱՍՏԾՈՒ ՈՒԽՏԸ ԱԲՐԱՄԻ ՀԵՏ

15 Այս դէպքերից յետոյ Աբրամը երազում լսեց Տիրոջ խօսքը, որն ասում էր. «Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, ես քեզ հովանաւոր պիտի լինեմ, եւ քո վարձը չափազանց շատ պիտի լինի»: 2 Աբրամն ասաց. «Տէ՛ր ամենակալ, ի՞նչ ես անելու ինձ, չէ՞ որ ես անորդի եմ կորչում, եւ ինձ ժառանգելու է Եղիազար Դամասկացին՝ իմ ընդոծին Մասեկի որդին»: 3 Աբրամն աւելացրեց. «Քանի որ ինձ զաւակ չտուեցիր, ուստի իմ ընդոծինն է ինձ ժառանգելու»: 4 Նրան իսկոյն հասաւ Աստծու ձայնը, որն ասում էր. «Նա չէ, որ ժառանգելու է քեզ, այլ քեզնից ծնուածն է ժառանգելու քեզ»: 5 Աստուած դուրս հանեց նրան ու ասաց. «Նայի՛ր երկնքին ու հաշուի՛ր աստղերը, եթէ կարող ես հաշուել դրանք»: Նա աւելացրեց. «Այդքան է լինելու քո սերունդը»: 6 Աբրամը հաւատաց Աստծուն, եւ այդ հաւատը իր համար արդարութիւն համարուեց:

7 Աստուած ասաց նրան. «Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, որ քեզ դուրս հանեցի Քաղդէացւոց երկրից, որպէսզի այս երկիրը քեզ տամ որպէս ժառանգութիւն»: 8 Աբրամն ասաց. «Տէ՛ր ամենակալ, ինչի՞ց գիտենամ, որ ժառանգելու եմ այն»: 9 Աստուած ասաց նրան. «Դու ինձ համար ա՛ռ երեք տարեկան երինջ, երեք տարեկան նոխազ, երեք տարեկան խոյ, տատրակ եւ աղաւնի»: 10 Աբրամն առաւ այդ ամէնը, կտրեց մէջտեղից ու կտորները դրեց իրար դիմաց, իսկ թռչունները չկտրատեց: 11 Գիշակեր թռչուններ էին իջնում դրանց կտրտուած մարմինների վրայ, բայց Աբրամը հսկում էր կտրտուած մարմինները: 12 Արեւի մայր մտնելու ժամանակ Աբրամը թմբիրի մէջ ընկաւ, սարսափելի վախ համակեց նրա սիրտը: 13 Տէրն ասաց Աբրամին. «Լա՛ւ իմացիր, որ քո յետնորդները պանդուխտ են լինելու օտար երկրում: Նրանց պիտի ստրկացնեն, պիտի չարչարեն, պիտի տանջեն չորս հարիւր տարի, 14 բայց ես դատաստան պիտի տեսնեմ այն ազգի հետ, որը պիտի ստրկացնի նրանց: Դրանից յետոյ նրանք այստեղ պիտի վերադառնան բազում հարստութեամբ: 15 Դու խաղաղ հոգով պիտի գնաս քո նախնիների գիրկը՝ խոր ծերութեան հասնելով: 16 Չորրորդ սերունդը պիտի վերադառնայ

†1. Տոհմում ծնուած ծառաների զաւակներ. 2. որդեգիրներ:

այստեղ, որովհետեւ ամորհացիների մեղքերը դեռ իրենց լրումին չեն հասել»: 17 Երբ արեւը մայր մտնելու մօտ էր, կրակ բոցավառուեց, երեւաց ծխացող մի հնոց, եւ կրակի լեզուները անցան անասունների կտրտուած մարմինների միջով: 18 Այդ օրը Տէրն ուխտ դրեց Աբրամի հետ եւ ասաց. «Քո յետնորդներին եմ տալու այդ երկիրը՝ եգիպտացիների գետից մինչեւ Եփրատ մեծ գետը, 19 նրանց պիտի ենթարկուեն կինեցիները, կենեզացիները, կեդմոնացիները, 20 քետացիները, փերեզացիները, ռափիմացիները, 21 ամորհացիները, քանանացիները եւ յեբուսացիները»:

ԱԳԱՐԸ ԵՒ ԻՍՄԱՅԷԼԸ

16 Աբրամի կին Սարան նրան երեխայ չէր պարգեւում: Սարան ունէր մի եգիպտացի աղախին, որի անունն Ագար էր: 2 Սարան Քանանացւոց երկրում ասաց Աբրամին. «Քանի որ Տէրն ինձ զրկել է երեխայ ունենալուց, պառկի՛ր իմ աղախնի հետ, որպէսզի նրա միջոցով որդի ունենամ»: Եւ Աբրամն անսաց Սարայի ասածին: 3 Սարան՝ Աբրամի կինը, եգիպտացի աղախին Ագարին կնութեան տուեց իր ամուսնուն՝ Աբրամին, Քանանացիների երկրում տասը տարի նրա ապրելուց յետոյ: 4 Աբրամը պառկեց Ագարի հետ, եւ սա յղիացաւ: Երբ Ագարը տեսաւ, որ ինքը յղի է, տիրուհին ընկաւ նրա աչքից: 5 Այն ժամանակ Սարան ասաց Աբրամին. «Անիրաւ ես դու իմ նկատմամբ. ե՛ս իմ աղախնուն յանձնեցի քո գիրկը. իսկ նա տեսնելով, որ ինքը յղիացել է, արհամարհում է ինձ: Աստուած թող իմ ու քո դատաստանը տեսնի»: 6 Աբրամն ասաց Սարային. «Քո աղախինն ահա քո ձեռքում է, վարուի՛ր նրա հետ այնպէս, ինչպէս հաճոյ է քեզ»: Սարան չարչարեց նրան, եւ աղախինը փախաւ նրա մօտից: 7 Տիրոջ հրեշտակը նրան գտաւ անապատում, ջրի աղբիւրի մօտ, այն աղբիւրի, որ Սուր տանող ճանապարհի վրայ է: 8 Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Ագա՛ր, Սարայի աղախին, որտեղի՞ց ես գալիս, կամ ո՞ւր ես գնում»: Նա պատասխանեց. «Իմ տիրուհի Սարայի մօտից եմ փախչում ես»: 9 Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Վերադարձի՛ր քո տիրուհու մօտ եւ հնազա՛նդ եղիր նրան»: 10 Տիրոջ հրեշտակն աւելացրեց. «Ես անչափ բազմացնելու եմ քո սերունդը, այնքան, որ հաշուել հնարաւոր չլինի»: 11 Տիրոջ հրեշտակը ասաց նաեւ. «Դու արդէն յղի ես, որդի պիտի ունենաս եւ նրա անունը Իսմայէլ պիտի դնես, որովհետեւ Տէրը իմացաւ քո տառապանքները: 12 Նա վայրագ մարդ է լինելու: Նա ձեռք է բարձրացնելու բոլորի դէմ, եւ բոլորը ձեռք են բարձրացնելու նրա դէմ: Նա բնակուելու է իր բոլոր եղբայրների դիմաց»: 13 Ագարն իր հետ խօսող Տիրոջը դիմելով՝ ասաց. «Դու այն Աստուածն ես, որ ինձ զօրավիդ եղաւ. – քանզի ասաց, – ես իմ առաջ տեսայ նրան, ով երեւացել է ինձ»: 14 Այդ իսկ պատճառով ջրհորը կոչուեց Ջրհոր, այսինքն՝ «որի դիմաց տեսայ Աստծուն»: Այն գտնւում է Կադէսի ու Բարադի միջեւ: 15 Ագարը Աբրամի համար ծնեց մի որդի, եւ Աբրամը Ագարի՝ իր համար ծնած որդու անունը դրեց Իսմայէլ: 16 Աբրամը ութսունվեց տարեկան էր, երբ Ագարը նրա համար ծնեց Իսմայէլին:

ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒԽՏԻ ՆՇԱՆ

17 Երբ Աբրամը իննսունինը տարեկան եղաւ, Տէր Աստուած երեւաց Աբրամին ու ասաց նրան. «Ես եմ քո Աստուածը, հնազա՛նդ եղիր ինձ, եղի՛ր անարատ: 2 Ուխտ եմ դնելու իմ եւ քո միջեւ. ես անչափ բազմացնելու եմ քո սերունդը»: 3 Աբրամը երկրպագեց, իսկ Աստուած, դիմելով նրան, ասաց. 4 «Այս է իմ՝ քեզ հետ դրած ուխտը. բազում ազգերի նախահայր պիտի դառնաս: 5 Սրանից յետոյ քո անունը Աբրամ պիտի չլինի, այլ Աբրահամ պիտի լինի քո անունը, որովհետեւ բազում ազգերի նախահայր եմ դարձնելու քեզ: 6 Քո սերունդը շատ եմ աճեցնելու, քեզնից բազում ազգեր պիտի սերեմ, թագաւորներ պիտի ծնուեն քեզնից: 7 Իմ ուխտը պիտի հաստատեմ իմ եւ քո միջեւ, քեզնից յետոյ գալիք քո սերունդների ու նրանց ցեղերի միջեւ որպէս յաւիտենական ուխտ, որով ես եմ լինելու քո եւ քեզնից յետոյ գալիք սերունդների Աստուածը: 8 Քեզ ու քո սերունդներին իբրեւ յաւիտենական սեփականութիւն տալու եմ այս երկիրը, ուր դու բնակւում ես պանդխտութեան մէջ, Քանանացիների ամբողջ երկիրը: Ես լինելու եմ նրանց Աստուածը, 9 իսկ դու եւ քեզնից յետոյ գալիք քո զաւակները, սերնդից սերունդ, պէտք է պահէք իմ ուխտը: 10 Այս է իմ ուխտը, որ պիտի պահես իմ եւ քո միջեւ ու քեզնից յետոյ գալիք քո զաւակների միջեւ, սերնդից սերունդ: 11 Ձեր բոլոր արու զաւակները պիտի թլփատուեն, պիտի թլփատէք ձեր անդամների թլփիները, եւ դա թող լինի իմ եւ ձեր միջեւ ուխտի նշանը: 12 Ձեր մանուկները՝ ձեր ցեղերի բոլոր արուները, ընդոծինն ու արծաթով գնուած ստրուկները, ամէն մի օտարածին, որ քո սերնդից չէ, ութօրեայ հասակում պէտք է թլփատուեն: Պէտք է անպայման թլփատուեն քո տան ընդոծինն ու արծաթով գնուած քո ստրուկը: 13 Ձեր թլփատութեան մասին իմ ուխտը թող յաւիտենական ուխտ լինի: 14 Ութերորդ օրը թլփը չթլփատուած արուն թող վերանայ իր ցեղի միջից, որովհետեւ խախտած կը լինի իմ ուխտը»:

15 Աստուած ասաց Աբրահամին. «Քո կին Սարայի անունն այլեւս Սարա թող չլինի, այլ Սառա թող լինի նրա անունը: 16 Ես կ'օրհնեմ նրան եւ նրա միջոցով քեզ զաւակ կը պարգեւեմ, ես կ'օրհնեմ նրան, նա ազգերի նախամայր կը դառնայ, նրանից ցեղերի թագաւորներ կը ծնուեն»: 17 Աբրահամը երկրպագեց, ծիծաղեց ու ինքն իրեն ասաց. «Կարո՞ղ է հարիւր տարեկան մարդը որդի ունենալ, իննսունամեայ Սառան կարո՞ղ է ծնել»: 18 Աբրահամն ասաց Աստծուն. «Այս Իսմայէլը թող ապրի քո առաջ»: 19 Աստուած պատասխանեց Աբրահամին. «Այո՛. ահա քո կին Սառան քեզ համար որդի է բերելու, եւ իմ ուխտը, որպէս յաւիտենական ուխտ, հաստատելու եմ նրա հետ ու նրանից յետոյ գալիք սերունդների հետ†: 20 Ինչ

†Երրայերէնը յաւելեալ ունի՝ Նրա անունը Իսահակ պիտի դնես:

վերաբերում է Իսմայէլին, ապա ընդառաջում եմ քեզ: Նրան կ'օրհնեմ, նրան կ'աճեցնեմ եւ անչափ կը բազմացնեմ նրա սերունդները: Նա տասներկու ազգ է սերելու, եւ նրան մեծ ազգի նախահայր եմ դարձնելու, 21 բայց իմ ուխտը ես հաստատելու եմ Իսահակի հետ, որին կը ծնի Սառան քեզ համար միւս տարի այս ժամանակ»:

22 Աստուած վերջացրեց իր խօսքը Աբրահամի հետ եւ հեռացաւ նրա մօտից: 23 Աբրահամը իր որդի Իսմայէլի, իր բոլոր ընդոծինների, արծաթով գնուած իր բոլոր ստրուկների եւ Աբրահամի տանն եղած բոլոր արու մարդկանց թլփը նոյն օրն իսկ թլփատեց, ինչպէս ասել էր նրան Աստուած: 24 Աբրահամը իննսունինը տարեկան էր, երբ թլփատեց իր թլփը, 25 իսկ իր որդի Իսմայէլը տասներեք տարեկան էր, երբ թլփատուեց նրա թլփը: 26 Այդ օրը թլփատուեցին Աբրահամն ու իր որդի Իսմայէլը: 27 Նա թլփատեց իր տան բոլոր տղամարդկանց՝ ընդոծիններ լինեն նրանք թէ արծաթով գնուած օտարածին ստրուկներ:

ԱԲՐԱՀԱՄԻՆ ՁԱՒԱԿ ԽՈՍՏԱՑՈՒԵՑ

18 Աստուած Աբրահամին երեւաց Մամբրէի կաղնու մօտ, երբ սա կէսօրին դեռ նստած էր իր վրանի դռան մօտ: 2 Աբրահամը բարձրացրեց աչքերը եւ իր դիմաց տեսաւ երեք տղամարդկանց: Տեսնելով նրանց՝ նա իր վրանի դռան մօտից ընդառաջ գնաց, գլուխը խոնարհեց մինչեւ գետին ու ասաց նրանց. 3 «Տէ՛ր, եթէ չնորհ գտայ քո առաջ, քո ծառային անտես մի՛ արա, 4 թող մի քիչ ջուր բերեն, լուան ձեր ոտքերը, ապա հովացէ՛ք ծառի տակ: 5 Հաց բերեմ, կերէ՛ք եւ ապա գնացէ՛ք ձեր ճանապարհով, որովհետեւ ձեր ծառայի մօտ գալու համար շեղեցիք ձեր ճանապարհը»: Նրանք պատասխանեցին. «Արա՛ այնպէս, ինչպէս ասացիր»: 6 Աբրահամն շտապեց դէպի վրանը՝ Սառայի մօտ, եւ ասաց նրան. «Շտապի՛ր, երեք գրիւ ընտիր ալիւր հունցի՛ր ու նկանակ պատրաստի՛ր»: 7 Աբրահամը գնաց դէպի նախիր, վերցրեց մի մատղաշ, լաւ

հորթ, տուեց ծառային ու շտապեցրեց, որ կերակուր պատրաստի: 8 Նա վերցրեց կարագ, կաթ ու հորթի մսից պատրաստուած կերակուրը եւ դրեց նրանց առաջ: Նրանք կերան, իսկ ինքը կանգնած մնաց նրանց առաջ, ծառի տակ: 9 Նրանք հարցրին. «Ու՞ր է քո կին Սառան»: Նա պատասխանեց. «Վրանում է»: 10 Նրանցից մէկն ասաց. «Ես եկող տարի նոյն այս օրերին կը գամ քեզ մօտ եւ քո կին Սառան որդի կ'ունենայ»: Սառան ականջ էր դնում վրանի դռանը՝ նրա ետեւում կանգնած: 11 Աբրահամն ու Սառան ծերացել էին, նրանց տարիքն առաջացել էր, եւ Սառան կորցրել էր ծննդաբերելու յատկութիւնը: 12 Միծաղեց Սառան իր մտքում եւ ասաց. «Այն, ինչ մինչեւ այժմ չկարողացայ անել, հիմա՞ պիտի կարողանամ: Իսկ իմ ամուսինն էլ ծերացել է»: 13 Տէրն ասաց Աբրահամին. «Այդ ինչո՞ւ է ծիծաղում Սառան իր մտքում եւ ասում, թէ՝ "Իրո՞ք կը ծնեմ, չէ՞ որ ես պառաւել եմ": 14 Մի՞թէ Աստծու համար անկարելի բան կայ: Եկող տարի այս ժամանակ՝ այս օրերին ես կը վերադառնամ քեզ մօտ, եւ Սառան որդի կ'ունենայ»: 15 Ժխտեց Սառան՝ ասելով. «Ես չծիծաղեցի»: Նա վախեցել էր: Տէրը ասաց. «Ո՛չ, այդպէս չէ, ծիծաղեցիր»:

ԱԲՐԱՀԱՄԸ ԽՆԴՐՈՒՄ Է ԽՆԱՅԵԼ ՍՈԴՈՄԻՆ

16 Նրանք այդտեղից վեր կենալով ճանապարհ ընկան դէպի Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկիրը, իսկ Աբրահամը գնաց նրանց ճանապարհելու: 17 Տէրն ասաց. «Մի՞թէ ես իմ ծառայ Աբրահամից գաղտնի պիտի պահեմ այն, ինչ անելու եմ: 18 Աբրահամը, հաստատապէս, մեծ եւ բազմանդամ ազգի նախահայր է լինելու, եւ նրա միջոցով պիտի օրհնուեն երկրի բոլոր ազգերը. 19 որովհետեւ ես գիտէի, որ նա իր որդիներին ու իր յետնորդներին կը պատուիրի, որ նրանք Տիրոջ ճանապարհով ընթանան՝ պահպանելով արդարութիւնն ու իրաւունքը: Տէր Աստուած կը կատարի այն ամէնը, ինչ խոստացել է Աբրահամին»:

20 Այնուհետեւ Տէրն ասաց. «Սոդոմացիների ու գոմորացիների աղաղակը ահագնացել, հասել է ինձ. նրանց մեղքերը խիստ շատացել են: 21 Արդ, իջնեմ տեսնեմ, թէ ինձ. հասած նրանց աղաղակը համապատասխանո՞ւմ է նրանց կատարածին, թէ՞ ոչ: Այդ եմ ուզում գիտենալ»: 22 Այնտեղից շրջուելով՝ այդ մարդիկ եկան Սոդոմ: Աբրահամը կանգնած էր Տիրոջ դիմաց:

23 Աբրահամը մօտեցաւ Տիրոջն ու ասաց. «Մի՞թէ դու արդարին ամբարշտի հետ կ'ոչնչացնես, եւ արդարը նոյն բանին կ'ենթարկուի, ինչ որ ամբարիշտը: 24 Եթէ քաղաքում յիսուն արդար լինի, կ'ոչնչացնե՞ս նրանց, չե՞ս խնայի ամբողջ քաղաքը յանուն այնտեղ գտնուող յիսուն արդարների: 25 Քա՛ւ լիցի, չանես այդ բանը՝ արդարին սպանես ամբարշտի հետ, եւ արդարը ենթարկուի նոյն բանին, ինչ որ ամբարիշտը: Ո՛չ, դու, որ դատում ես ամբողջ աշխարհը, այդպիսի դատաստան չես անի»: 26 Տէրն ասաց. «Եթէ Սոդոմում՝ այդ քաղաքում գտնուի յիսուն արդար, յանուն նրանց ես կը խնայեմ ամբողջ քաղաքը»: 27 Պատասխան տուեց Աբրահամն ու ասաց. «Հիմա համարձակւում եմ խօսել Տիրոջ հետ, թէեւ ես հող եմ ու մոխիր: 28 Իսկ եթէ յիսուն արդարները պակասեն հինգ հոգով, այդ հնգի պատճառով դարձեա՞լ կը կործանես ողջ քաղաքը»: Տէրն ասաց. «Չեմ կործանի, եթէ այնտեղ գտնուի քառասունհինգ արդար»: 29 Աբրահամը շարունակեց խօսել նրա հետ ու ասաց. «Իսկ եթէ այնտեղ գտնուի քառասո՞ւն»: Նա ասաց. «Չեմ կործանի յանուն այդ քառասունի»: 30 Աբրահամն ասաց. «Տէ՛ր, ինձ որեւէ բան կը պատահի՞, եթէ շարունակեմ խօսել. իսկ եթէ այնտեղ գտնուի երեսո՞ւն»: Տէրը պատասխանեց. «Չեմ կործանի, եթէ այնտեղ գտնուի երեսուն»: 31 Աբրահամն ասաց. «Քանի սկսել եմ խօսել Տիրոջ հետ, ասեմ. իսկ եթէ այնտեղ գտնուի քսա՞ն»: Տէրը պատասխանեց. «Չեմ կործանի յանուն այդ քսանի»: 32 Աբրահամն ասաց. «Տէ՛ր, ինձ որեւէ բան կը պատահի՞, եթէ դարձեալ

խօսեմ. իսկ եթէ այնտեղ գտնուի տա՞սը»: Տէրը պատասխանեց. «Չեմ կործանի յանուն տասի»: 33 Եւ Տէրը, վերջացնելով Աբրահամի հետ խօսակցութիւնը, գնաց, իսկ Աբրահամը վերադարձաւ իր բնակատեղին:

ՄԵՂՍԱԼԻՑ ՍՈԴՈՄԸ

19 Երկու հրեշտակները երեկոյեան եկան Սոդոմ: Ղովտը նստած էր Սոդոմի դարպասի մօտ: Երբ Ղովտը տեսաւ նրանց, ընդառաջ գնաց, գլուխը խոնարհեց մինչեւ գետին ու ասաց. 2 «Համեցէ՛ք, տիա՛րք, եկէք մտէ՛ք ձեր ծառայի տունը եւ գիշերեցէ՛ք այստեղ: Ես կը լուամ ձեր ոտքերը, եւ դուք վաղ առաւօտեան կը շարունակէք ձեր ճանապարհը»: Նրանք ասացին. «Ո՛չ, մենք այստեղ՝ քաղաքի հրապարակում կը գիշերենք»: 3 Ղովտը նրանց շատ ստիպեց, եւ նրանք դարձան նրա կողմը ու մտան նրա տունը: Ղովտը ընթրիք պատրաստեց, բաղարջ հաց եփեց նրանց համար, եւ նրանք կերան:

4 Երբ դեռ նրանք քուն չէին մտել, սոդոմացիների քաղաքի տղամարդիկ՝ երիտասարդից մինչեւ ծերը, ամբողջ ժողովուրդը միասին պաշարեցին տունը, 5 Ղովտին դուրս կանչեցին ու հարցրին նրան. «Ո՞ւր են այն տղամարդիկ, որ գիշերը քեզ մօտ եկան: Նրանց բե՛ր մեզ մօտ, որ կենակցենք նրանց հետ»: 6 Ղովտը դռնից դուրս՝ նրանց մօտ եկաւ եւ դուռը փակեց իր ետեւից: 7 Նա նրանց ասաց. «Քա՛ւ լիցի, եղբայրնե՛ր, մի՛ գործէք այդ չարիքը: 8 Ես երկու դուստր ունեմ, որոնց տղամարդ չի մօտեցել: Բերեմ նրանց ձեզ մօտ, եւ նրանց հետ արէք այն, ինչ հաճոյ է ձեզ, միայն թէ այդ մարդկանց նկատմամբ որեւէ մեղք մի՛ գործէք, որովհետեւ նրանք մտել են իմ յարկի տակ»: 9 Նրանք ասացին. «Հեռո՛ւ կաց: Դու մեր երկիրը մտար իբրեւ պանդուխտ բնակուելու. միթէ դատաստա՞ն էլ ես ուզում տեսնել: Հիմա քեզ աւելի շատ կը չարչարենք, քան նրանց»: Նրանք շատ էին բռնանում այդ մարդու՝ Ղովտի վրայ, եւ քիչ էր մնացել, որ ջարդէին դուռը: 10 Ներսի մարդիկ, իրենց ձեռքերը մեկնելով, Ղովտին իրենց մօտ՝ տուն քաշեցին եւ տան դռները փակեցին, 11 դռան մօտ գտնուող մարդկանց՝ փոքրից մինչեւ մեծը կուրացրին, եւ սրանք յոգնեցին դուռը փնտռելուց:

ՂՈՎՏԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՍՈԴՈՄԻՑ

12 Այդ մարդիկ Ղովտին հարցրին. «Այս քաղաքում դու փեսայ, որդիներ, դուստրեր կամ ուրիշ որեւէ մէկն ունե՞ս: Հանի՛ր նրանց այս վայրից, 13 որովհետեւ մենք կործանելու ենք այս քաղաքը, քանի որ սրանց աղաղակը հասել է Տիրոջը, եւ Տէրը մեզ ուղարկել է, որ կործանենք այն»: 14 Ղովտը գնաց իր փեսացուների մօտ, որոնք առնելու էին իր դուստրերին, եւ ասաց նրանց. «Հեռացէ՛ք այստեղից, որովհետեւ Տէրը կործանելու է այս քաղաքը»: Փեսացուներին թուաց, թէ նա կատակ է անում:

15 Երբ լոյսը բացուեց, հրեշտակներն սկսեցին շտապեցնել Ղովտին՝ ասելով. «Ա՛ռ քո կնոջը, երկու դուստրերիդ եւ հեռացի՛ր այստեղից, որ դու էլ չկորչես այս քաղաքի անօրէնութեան մէջ»: 16 Նրանք իրար անցան. եւ քանի որ Տէրը խնայել էր Ղովտին, հրեշտակները բռնեցին նրա, նրա կնոջ ու երկու դուստրերի ձեռքերից եւ քաղաքից դուրս հանեցին: 17 Երբ նրանց դուրս հանեցին, հրեշտակներն ասացին. «Փրկի՛ր անձդ, ետ չնայես, կանգ չառնես այս երկրի որեւէ շրջանում: Փախի՛ր լեռը, որ միւսների հետ չտուժես»: 18 Ղովտն ասաց նրանց. «Աղաչում եմ, Տէ՛ր, 19 թէեւ իմ անձին փրկութիւն պարգեւելով դու ողորմեցիր քո ծառային եւ նրա հանդէպ ցուցաբերեցիր քո մեծ արդարութիւնը, բայց ես չեմ կարող փախչել լեռը, որովհետեւ գուցէ ինձ էլ հասնի փորձանքը, եւ ես մեռնեմ: 20 Ահա մօտակայքում գտնուող այս քաղաքում կարելի է ապաստանել, այն փոքր է, կարելի է այնտեղ փրկուել: Չէ՞ որ այն փոքր է: Քո շնորհիւ ես կը փրկուեմ»: 21 Տէրն ասաց նրան. «Ահա ես շնորհ եմ անում քեզ ու քո այդ ասածին անսալով՝ չեմ կործանի այն քաղաքը, որի մասին ասացիր: 22 Արդ,

չտապ փախի՛ր այնտեղ, որովհետեւ ոչինչ անել չեմ կարող. մինչեւ որ դու այնտեղ հասնես»: Դրա համար էլ նա այդ քաղաքի անունը կոչեց Սեգոր:

ՍՈԴՈՄԻ ՈՒ ԳՈՄՈՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

23 *Արեւ ծագեց երկրի վրայ, եւ Ղովտը մտաւ Սեգոր: 24 Տէրը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի ու Գոմորի վրայ, 25 կործանեց այդ քաղաքներն ու դրանց ամբողջ շրջակայքը, ոչնչացրեց քաղաքների բոլոր բնակիչներին ու երկրի ամբողջ բուսականութիւնը: 26 Ղովտի կինը ետ նայեց ու դարձաւ աղէ արձան:*

27 *Աբրահամը վաղ առաւօտեան գնաց այնտեղ, ուր ինքը կանգնել էր Տիրոջ առաջ, 28 նայեց սոդոմացիների ու գոմորացիների կողմը, ամբողջ շրջակայքը եւ տեսաւ, թէ ինչպէս երկրի բոցը բարձրանում է հնոցի ծխի պէս:*

29 *Երբ Տէրը կործանեց այդ բոլոր քաղաքներն իրենց շրջակայ բնակավայրերով, յիշեց Աբրահամին եւ քաղաքից հանեց ու կորստից փրկեց Ղովտին, երբ կործանում էր այն քաղաքները, ուր Ղովտն էր բնակուել:*

ՄՈՎԱԲԻ ԵՒ ԱՄՄԱՆԻ ԾՆՈՒՆԴԸ

30 *Ղովտը ելաւ Սեգորից եւ լեռը բարձրացաւ, որովհետեւ վախենում էր մնալ Սեգորում: Նրա հետ էին նաեւ իր երկու դուստրերը: Ինքն ու իր երկու դուստրերը միասին բնակուեցին այդ լերան մի քարայրում: 31 Աւագ դուստրն ասաց կրտսերին. «Մեր հայրը ծերացել է, եւ երկրում չկայ մէկը, որ մեզ հետ պառկի, ինչպէս ողջ աշխարհի կարգն է: 32 Արի գինի խմեցնենք մեր հօրը, պառկենք նրա հետ ու մեր հօրից զաւակ ունենանք»: 33 Նրանք իրենց հօրը գինի խմեցրին այդ գիշեր: Աւագ դուստրն այդ գիշեր պառկեց իր հօր հետ, իսկ Ղովտը չիմացաւ նրա պառկելն ու վեր կենալը: 34 Առաւօտեան աւագն ասաց կրտսերին. «Ես երէկ պառկեցի իմ հօր հետ: Նրան այս գիշեր էլ գինի խմեցնենք, եւ դու մտի՛ր, պառկի՛ր նրա հետ, որ զաւակ ունենանք մեր հօրից»: 35 Այդ գիշեր էլ գինի խմեցրին իրենց հօրը, եւ կրտսերը պառկեց իր հօր հետ: Ղովտը չիմացաւ նրա պառկելն ու վեր կենալը: 36 Ղովտի երկու դուստրերն էլ յղիացան իրենց հօրից: 37 Աւագը ծնեց որդի եւ նրա անունը դրեց Մովաբ, որ նշանակում է «Իմ հօրից»: Նա է մովաբացիների նախահայրը մինչեւ այսօր: 38 Կրտսերը նոյնպէս ծնեց որդի եւ նրա անունը դրեց Ամման, որ նշանակում է «Իմ ազգատոհմի որդի»: Նա է ամոնացիների նախահայրը մինչեւ այսօր:*

ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԱԲԻՄԵԼԷՔ

20 *Աբրահամն այդտեղից գնաց երկրի հարաւը, բնակուեց Կադէսի ու Սուրի միջեւ, ապա տարաբնակուեց Գերարայում: 2 Աբրահամն իր կին Սառայի մասին ասում էր, թէ նա իր քոյրն է: Գերարացիների արքայ Աբիմելէքն ուղարկեց իր մարդկանց եւ կին առաւ Սառային:*

3 *Գիշերն Աստուած Աբիմելէքին երեւաց երազում եւ ասաց. «Դու մեռնելու ես այն կնոջ պատճառով, որին առար, որովհետեւ այդ կինը ամուսին ունի»: 4 Սակայն Աբիմելէքը, որ չէր մերձեցել նրան, ասաց. «Տէ՛ր, մի՞թէ դու կը սպանես բանից անտեղեակ ու արդար մարդկանց: 5 Չէ՞ որ նա ասաց ինձ՝ "Իմ քոյրն է", իսկ սա ասաց ինձ՝ "Իմ եղբայրն է": Ես մաքուր սրտով ու արդար ձեռքով արեցի դա»: 6 Աստուած երազի մէջ ասաց նրան. «Գիտեմ, որ դու մաքուր սրտով ես արել այդ, դրա համար էլ ես խնայեցի քեզ, որ չմեղանչես իմ դէմ: Այդ պատճառով էլ թոյլ չտուեցի, որ մերձենաս նրան: 7 Արդ, կնոջը վերադարձրո՛ւ իր ամուսնուն, որովհետեւ նա մարգարէ է, աղօթք կ'անի քեզ համար, եւ դու կենդանի կը մնաս: Եթէ չվերադարձնես, իմացի՛ր, որ դու եւ բոլոր նրանք, ովքեր քո իւրայիններն են, կը մեռնէք»:*

8 *Աբիմելէքն առաւօտեան վաղ վեր կացաւ, կանչեց իր բոլոր ստրուկներին եւ նրանց պատմեց այս բոլոր բաները: Ամէնքը խիստ վախեցան: 9 Աբիմելէքը կանչեց Աբրահամին ու ասաց նրան.*

«Այդ ի՞նչ փորձանք բերեցիր դու մեր գլխին: Մենք ի՞նչ մեղք էինք գործել քո դէմ, որ իմ ու իմ թագաւորութեան վրայ այդպիսի մեծամեծ մեղքեր բարդեցիր: Դու ինձ հետ արեցիր այն, ինչ ոչ ոք չէր արել»: 10 Աբիմելէքն ասաց Աբրահամին. «Ի՞նչ մտածեցիր, որ նման բան արեցիր»: 11 Աբրահամը պատասխանեց. «Ես կարծեցի, թէ գուցէ այս վայրում էլ աստուածապաշտութիւն չկայ, եւ հնարաւոր է, որ ինձ սպանեն իմ կնոջ պատճառով: 12 Բայց նա, արդարեւ, իմ քոյրն է իմ հօր եւ ոչ թէ մօր կողմից, եւ դարձաւ իմ կինը: 13 Երբ Աստուած ինձ հանեց իմ հօր տնից, ես կնոջս ասացի. "Այս արդար քայլն արա՛ ինձ համար. ուր էլ գնանք, իմ մասին կ'ասես, թէ՝ իմ եղբայրն է"»: 14 Աբիմելէքն առաւ հազար սատեր†, արջառ ու ոչխար, ստրուկներ ու ստրկուհիներ եւ տուեց Աբրահամին: Նրան վերադարձրեց նաեւ նրա կին Սառային: 15 Աբիմելէքն ասաց Աբրահամին. «Ահա քո դիմաց փռուած է իմ երկիրը, ուր հաճելի է քեզ, այնտեղ էլ բնակուի՛ր»: 16 Իսկ Սառային դիմելով՝ ասաց. «Ահա հազար սատեր եմ տալիս քո եղբօրը: Այն թող պատուի վկայութիւն լինի քեզ եւ քեզ հետ գտնուող բոլոր կանանց համար: Այսուհետեւ կը պատմես ամբողջ ճշմարտութիւնը»: 17 Աբրահամն աղօթեց Աստծուն, որը բուժեց Աբիմելէքին, ինչպէս նաեւ նրա կնոջն ու նրա աղախիններին: Նրանք արդէն կարողանում էին երեխայ ունենալ: 18 Մինչ այդ Տէրը Աբրահամի կին Սառայի պատճառով Աբիմելէքի ողջ տան կանանց զրկել էր երեխայ ունենալու կարողութիւնից:

ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ

21 *Տէրն այցելեց Սառային, ինչպէս ասել էր, եւ կատարեց Սառային տուած իր խոստումը: 2 Սառան յղիացաւ ու Աբրահամի համար ծեր տարիքում որդի ծնեց ճիշտ այն ժամանակ, ինչպէս Աստուած յայտնել էր Աբրահամին: 3 Աբրահամն իր որդու անունը, որին ծնեց Սառան նրա համար, դրեց Իսահակ: 4 Աբրահամն ութերորդ օրը թլփատեց իր որդի Իսահակին, ինչպէս պատուիրել էր նրան Տէր Աստուած: 5 Աբրահամը հարիւր տարեկան էր, երբ ունեցաւ իր որդի Իսահակին: 6 Սառան ասաց. «Աստուած ուրախութիւն պարգեւեց ինձ, եւ ով որ լսի այդ մասին, ինձ հետ կ'ուրախանայ»: 7 Նա աւելացրեց. «Ո՞վ կ'ասէր Աբրահամին, թէ Սառան երեխայ կը սնուցանի, քանի որ ծեր հասակում որդի ծնեցի»: 8 Մանուկն աճեց, նրան կրծքից կտրեցին, եւ Աբրահամն իր որդի Իսահակի կրծքից կտրուելու առթիւ մեծ խնջոյք արեց:*

ԱԳԱՐԸ ԵՒ ԻՍՄԱՅԷԼԸ ՀԵՌԱՑՒՈՒՄ ԵՆ

9 *Երբ Սառան տեսաւ, որ եգիպտուհի Ագարից Աբրահամի ունեցած որդին խաղում է իր որդի Իսահակի հետ, ասաց Աբրահամին. 10 «Հեռացրո՛ւ քո աղախնին եւ նրա որդուն, որպէսզի քո աղախնի որդին իմ որդի Իսահակի հետ հաւասար ժառանգութիւն չստանայ»: 11 Իր որդու մասին ասուած այդ խօսքերը ցաւ պատճառեցին Աբրահամին: 12 Աստուած ասաց Աբրահամին. «Մանկան եւ աղախնի մասին ասուած խօսքերը թող քեզ ցաւ չպատճառեն: Ինչ որ ասի քեզ Սառան, լսի՛ր նրան, որովհետեւ Իսահակի միջոցով ես դու սերունդդ շարունակելու, 13 բայց քո աղախնի որդու սերունդն էլ ես նշանաւոր կը դարձնեմ, որովհետեւ նա էլ քո սերմից է»: 14 Առաւօտեան վեր կացաւ Աբրահամը, առաւ հաց ու մի տիկ ջուր, տուեց Ագարին, մանկանը դրեց նրա շալակին եւ տնից դուրս հանեց: Ագարը թափառում էր անապատում, Երդման ջրհորի մօտ: 15 Տիկի ջուրն սպառուեց, մայրը մանկանը դրեց մի եղեւնու տակ 16 եւ գնաց նստեց նրա դիմաց, մի նետընկեց հեռաւորութեան վրայ՝ ասելով. «Թող ես չտեսնեմ իմ որդու մահը»: Նա նստել էր նրա դիմաց: Երեխան բարձրաձայն լալիս էր: 17 Աստուած լսեց երեխայի ձայնը, որ գալիս էր այնտեղից: Աստուած երկնքից Ագարին ձայն տուեց ու ասաց. «Ի՞նչ է պատահել, Ագա՛ր: Մի՛ վախեցիր, որովհետեւ Աստուած լսեց քո որդու ձայնը այնտեղից, ուր նա գտնուում է: 18 Բռնի՛ր*

†Արծաթ դրամ:

քո մանկան ձեռքից, որովհետեւ ես նրան մեծ ազգի նախահայր եմ դարձնելու»: 19 Աստուած բացեց Ագարի աչքերը, սա տեսաւ ըմպելի ջրի մի ջրհոր, գնաց, տիկը լցրեց ջրով ու խմեցրեց երեխային: 20 Եւ Աստուած երեխայի հետ էր. սա աճեց, դարձաւ աղեղնաւոր† 21 եւ բնակուեց Փառանի անապատում: Մայրը նրա համար Եգիպտացիների երկրից կին առաւ:

ԱԲՐԱՀԱՄԻ ԵՒ ԱԲԻՄԵԼԷՔԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

22 Այդ ժամանակներում Աբիմելէքը, նրա սենեկապետ Ոքոզաթն ու նրա զօրքերի սպարապետ Փիքոլը, խօսելով Աբրահամի հետ, ասացին. «Աստուած քեզ հետ է բոլոր այն գործերում, ինչ դու անում ես: 23 Արդ, Աստծու անունով ինձ երդուի՛ր, որ ո՛չ իմ, ո՛չ իմ զաւակի, ո՛չ իմ անուան դէմ չես մեղանչի, այլ կը վարուես այնպէս արդար, ինչպէս ես վարուեցի քո նկատմամբ, նոյնպէս եւ իմ երկրի նկատմամբ, ուր դու բնակւում ես»: 24 Աբրահամն ասաց. «Երդւում եմ»: 25 Աբրահամն Աբիմելէքին յանդիմանեց այն ջրհորի համար, որ Աբիմելէքի ծառաները խլել էին: 26 Աբիմելէքն ասաց նրան. «Ես չեմ իմացել, թէ ով է արել այդ բանը, իսկ դու էլ ինձ բան չես ասել: Ես միայն այսօր եմ լսում այդ մասին»: 27 Աբրահամն առաւ արջառներ ու ոչխարներ, տուեց Աբիմելէքին, եւ երկուսն իրար հետ հաշտութիւն կնքեցին: 28 Աբրահամը եօթը որոջ‡ առանձնացրեց: 29 Աբիմելէքը հարցրեց Աբրահամին. «Ի՞նչ են նշանակում այս եօթը որոջները, որոնց առանձնացրիր»: 30 Նա պատասխանեց. «Այս եօթը որոջները ստացիր ինձնից ի հաւաստումն այն բանի, թէ ես եմ փորել այդ ջրհորը»: 31 Դրա համար էլ այդ վայրը կոչուեց Երդման ջրհոր, 32 որովհետեւ նրանք երկուսով միմեանց երդում տուեցին այնտեղ. Երդման ջրհորի մօտ հաշտութիւն կնքեցին: Աբիմելէքը, նրա սենեկապետ Ոքոզաթն ու նրա զօրքերի սպարապետ Փիքոլը այնտեղից վերկացան ու վերադարձան Փղշտացւոց երկիրը:

33 Աբրահամը Երդման ջրհորի մօտ ծառ տնկեց, այնտեղ պաշտեց Տիրոջը, նրան կոչեց Աստուած յաւիտենական: 34 Աբրահամը Փղշտացւոց երկրում պանդուխտ մնաց երկար ժամանակ:

ԱՍՏՈՒԱԾ ՓՈՐՁՈՒՄ Է ԱԲՐԱՀԱՄԻՆ

22 Այս դէպքերից յետոյ Աստուած փորձեց Աբրահամին: Նա ձայն տուեց նրան. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ»: Սա պատասխանեց. «Այստեղ եմ»: 2 Աստուած ասաց նրան. «Ա՛ռ քո միակ որդուն՝ քո սիրելի Իսահակին, գնա՛ մի բարձրադիր տեղ եւ այնտեղ՝ լերան վրայ, որ ցոյց կը տամ քեզ, ողջակիզի՛ր նրան»: 3 Աբրահամն առաւօտեան վեր կացաւ, համեստը դրեց իր էշի վրայ, հետը վերցրեց երկու ստրուկ ծառաներ, իր որդի Իսահակին, ողջակիզութեան համար փայտ կոտրեց եւ ճանապարհ ընկաւ, եկաւ այն տեղը, որ Աստուած ասել էր նրան: 4 Երրորդ օրը Աբրահամը բարձրացրեց իր աչքերը եւ հեռուից տեսաւ այդ տեղը: 5 Աբրահամն ասաց իր ծառաներին. «Նստեցէ՛ք այստեղ՝ էշի մօտ, իսկ ես ու այս պատանին գնանք այնտեղ, երկրպագութիւն անենք ու վերադառնանք ձեզ մօտ»: 6 Աբրահամը վերցրեց ողջակիզութեան փայտը, դրեց այն իր որդի Իսահակի մէջքին, իր ձեռքն առաւ կրակն ու դանակը, եւ երկուսով գնացին: 7 Իսահակը դիմեց իր հօրը՝ Աբրահամին. «Հա՛յր»: Սա ասաց. «Ի՞նչ է, որդի՛ս»: Նա հարցրեց. «Ահա կրակը, եւ ահա փայտը, հապա ո՞ւր է ողջակիզելու ոչխարը»: 8 Սա պատասխանեց. «Աստուած կը հոգայ իր ողջակիզելու ոչխարի մասին, որդեա՛կ»: Նրանք երկուսով գնացին 9 եւ հասան այն տեղը, որ նրան ցոյց էր տուել Աստուած: Աբրահամն այնտեղ զոհասեղան չինեց, վրան դրեց փայտը, իր որդի Իսահակին կապեց եւ դրեց զոհասեղանի փայտի վրայ: 10 Աբրահամը երկարեց ձեռքը, որ վերցնի դանակն ու մորթի իր որդուն: 11 Տիրոջ հրեշտակը երկնքից ձայն տուեց նրան ու ասաց. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ»: Սա պատասխանեց նրան. «Այստեղ եմ»: 12 Նա ասաց. «Ձեռք մի՛ տուր պատանուն, նրան որեւէ վնաս մի՛ պատճառիր, որովհետեւ այժմ համոզուեցի, որ դու երկիւղ ունես Աստծու նկատմամբ եւ ինձ համար չես խնայի քո որդուն»: 13 Աբրահամը բարձրացրեց իր աչքերը եւ տեսաւ, որ մացառուտ թփի մէջ եղջիւրներից մի խոյ է կախուած: Աբրահամը գնաց, առաւ խոյն ու այն ողջակիզեց իր որդի Իսահակի փոխարէն: 14 Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տէրը տեսաւ», եւ մինչեւ այսօր էլ ասում են՝ «Այդ լեռան վրայ երեւաց Տէրը»: 15 Տիրոջ հրեշտակը երկնքից երկրորդ անգամ ձայն տալով՝ ասաց Աբրահամին. 16 «Անձովս եմ երդւում, - ասում է Տէրը, - քանի որ դու արեցիր այդ բանը՝ ինձ համար չխնայեցիր քո սիրելի որդուն, 17 անչափ պիտի օրհնեմ քեզ եւ երկնքի աստղերի, ծովեզերքի աւազի չափ պիտի բազմացնեմ քո սերունդը: Քո սերունդը պիտի տիրանայ իր թշնամիների քաղաքներին, 18 քո սերնդի շնորհիւ պիտի օրհնուեն աշխարհի բոլոր ազգերը այն բանի համար, որ անսացիր իմ ձայնին»: 19 Աբրահամը վերադարձաւ իր ծառաների մօտ: Նրանք միասին ելան գնացին դէպի Երդման ջրհորը, եւ Աբրահամը բնակուեց Երդման ջրհորի մօտ:

ՆԱՔՈՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ

20 Այս դէպքերից յետոյ Աբրահամին յայտնեցին, որ ահա Մեղքան եւս քո եղբայր Նաքորի համար ծնել է որդիներ՝ 21 անդրանիկ որդի Ովքին, նրա եղբայր Բաւին, ասորիների նախահայր Կամուէլին, 22 Քասադին, Ազաւին, Փալդասին, Յետդափին եւ Բաթուէլին: 23 Եւ Բաթուէլը ծնել է Ռեբեկային: Սրանք են այն ութ որդիները, որոնց ծնեց Մեղքան Աբրահամի եղբայր Նաքորի համար: 24 Նրա հարճը, որի անունը Ռեէմա էր, նա էլ ծնեց Տաբեկին, Դաամին†, Տոքոսին եւ Մոքային:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ եւ բնակուեց անապատում:

‡Էգ գառ:

†Պէտք է լինի Գաամ:

ՍԱՌԱՅԻ ՄԱՀԸ

23 Սառան դարձաւ հարիւր քսանեօթը տարեկան: 2 Նա մեռաւ Կիրճի մէջ գտնուող Արբոկ քաղաքում: Սա Քանանացիների երկրում գտնուող Քեբրոնն է: Աբրահամը եկաւ, որ ողբայ ու սգայ Սառայի մահը: 3 Աբրահամը հեռացաւ իր հանգուցեալի մօտից եւ դիմելով Քետի որդիներին՝ ասաց. 4 «Ես ձեր մէջ պանդուխտ ու օտարական եմ: Արդ, որպէս սեփականութիւն ինձ մի գերեզմանի հող տուէ՛ք ձեզ մօտ, որ թաղեմ իմ հանգուցեալին»: 5 Քետի որդիները պատասխան տուեցին Աբրահամին՝ ասելով. 6 «Լսի՛ր մեզ, տէ՛ր: Դու մեր մէջ Աստծու նշանակած թագաւորն ես: Քո հանգուցեալին թաղի՛ր մեր լաւագոյն գերեզմաններից մէկում, որովհետեւ մեզնից ոչ մէկը չի հրաժարուի քեզ չիրիմի համար տեղ տրամադրելուց»: 7 Աբրահամը ելաւ եւ գլուխ տուեց այդ երկրի ժողովրդին՝ Քետի որդիներին: 8 Աբրահամը նրանց դիմելով՝ ասաց. «Եթէ դուք յօժար էք, որ իմ հանգուցեալին ես անձամբ թաղեմ, լսեցէ՛ք ինձ եւ իմ մասին բարեխօսեցէ՛ք Սահառի որդի Եփրոնին, 9 որ ինձ տայ իր ագարակի սահմաններում գտնուող զոյգ քարայրը այնքան արծաթով, որքան արժէ այն: Թող այն ձեր ներկայութեամբ ինձ տայ որպէս չիրմավայր»: 10 Եփրոնը քետացիների հետ նստած էր ժողովատեղում: Եփրոն քետացին պատասխան տուեց Աբրահամին եւ ի լուր Քետի որդիների ու բոլոր նրանց, ովքեր մտնում էին նրա քաղաքի դարպասով, 11 ասաց. «Նայի՛ր ինձ, տէ՛ր, եւ լսի՛ր ինձ: Ագարակը տալիս եմ քեզ, քեզ եմ տալիս նաեւ այնտեղ գտնուող քարայրը: Իմ բոլոր համաքաղաքացիների ներկայութեամբ այն քեզ եմ յանձնում: Թաղի՛ր քո հանգուցեալին»: 12 Աբրահամը գլուխ տուեց երկրի ժողովրդի առաջ, 13 Եփրոնի հետ խօսեց ի լուր երկրի ժողովրդի եւ ասաց. «Քանի որ անսացիր ինձ, ուրեմն լսի՛ր ինձ: Ես քեզ կը տամ ագարակի փոխարժէքը: Վերցրո՛ւ այն ինձնից, եւ ես այնտեղ կը թաղեմ իմ հանգուցեալին»: 14 Եփրոնն Աբրահա-

մին պատասխանեց եւ ասաց. 15 «Ո՛չ, տէ՛ր իմ, լսել եմ, որ հողմասը չորս հարիւր սատեր արծաթ արժէ: Դա ի՞նչ է որ իմ ու քո միջեւ: Դու թաղի՛ր քո հանգուցեալին»: 16 Աբրահամը Եփրոնին լսելուց յետոյ կշռեց եւ նրան վճարեց չորս հարիւր սատեր արծաթը, ինչպէս խոստացել էր ի լուր Քետի որդիների, վաճառականների մօտ ընդունուած գնով: 17 Եփրոնի ագարակը, որ Մամբրէի կաղնու հանդիպակաց զոյգ քարայրի մօտն էր, այսինքն՝ ագարակն ու նրա մէջ գտնուող քարայրը, ագարակի եւ նրա շրջակայքի բոլոր ծառերը դարձան Աբրահամի սեփականութիւնը, 18 Քետի որդիների ներկայութեամբ, որոնք մտնում էին քաղաքի դարպասով: 19 Դրանից յետոյ Աբրահամն իր կին Սառային թաղեց ագարակի զոյգ քարայրում, որ Մամբրէի կաղնու դիմաց էր գտնւում, այսինքն՝ Քեբրոնում՝ Քանանացիների երկրում: 20 Ագարակն ու նրա մէջ գտնուող քարայրը Քետի որդիների կողմից տրուեցին Աբրահամին իբրեւ նրա սեփական գերեզմանոց:

ԻՍԱՀԱԿԻ ԿԻՆԸ

24 Աբրահամը ծերացել էր, տարիքն առել: Եւ Տէրն օրհնեց Աբրահամին ըստ ամենայնի:

2 Աբրահամն ասաց իր տան աւագագոյն ծառային՝ իր ամբողջ ունեցուածքի կառավարչին. «Ձեռքդ դի՛ր իմ ազդրի տակ եւ 3 քեզ երդուեցնեմ Տիրոջ՝ երկնքի Աստծու եւ երկրի Աստծու անունով, որ իմ որդի Իսահակի համար կին չես առնի քանանացիների դուստրերից (որոնց մէջ եմ բնակւում ես), 4 այլ կը գնաս այն երկիրը, որտեղ ծնուել եմ, իմ տունը, եւ այնտեղից իմ որդի Իսահակի համար կին կ՚առնես»: 5 Ծառան նրան պատասխանեց. «Գուցէ կինը չցանկանայ ինձ հետ գալ այս երկիրը: Այդ դէպքում ես տանե՞մ քո որդուն այն երկիրը, որտեղ ծնուել ես դու»: 6 Աբրահամն ասաց. «Զգո՛յշ եղիր, իմ որդուն այնտեղ չվերադարձնես: 7 Երկնքի Տէր Աստուածը եւ երկրի Տէր Աստուածը, որն ինձ հանեց իմ հօր տնից ու այն երկրից, ուր ծնուել եմ, որը խօսեց ինձ հետ, երդուեց ինձ ու ասաց, թէ՝ "Քո սերունդներին եմ տալու այդ երկիրը", նա իր հրեշտակին կ՚ուղարկի քո առաջ, եւ այնտեղից կին կ՚առնես իմ որդի Իսահակի համար: 8 Իսկ եթէ կինը չուզենայ քեզ հետ գալ այս երկիրը, քո տուած երդումից անպարտ համարուես, միայն թէ իմ որդուն այնտեղ չվերադարձնես»: 9 Աբրահամի ծառան ձեռքը դրեց իր տիրոջ ազդրի տակ եւ երդուեց նրան այդ բանի համար: 10 Ծառան առաւ իր տիրոջ տասը ուղտ եւ գնաց՝ իր հետ ունենալով իր տիրոջ բոլոր բարիքներից: Նա ելաւ գնաց Միջագետք, Նաքորի քաղաքը: 11 Երեկոյեան ուղտերին նստեցրեց քաղաքից դուրս, ջրհորի մօտ այն պահին, երբ ջրուորը դուրս է գալիս ջրի: 12 Նա ասաց. «Իմ տէր Աբրահամի Տէր Աստուած, այսօր ինձ յաջողութիւն պարգեւի՛ր եւ ողորմի՛ր իմ տէր Աբրահամին: 13 Ահա ես ջրի աղբիւրի մօտ եմ, եւ այս քաղաքի բնակիչների դուստրերը գալիս են ջուր հանելու: 14 Թող լինի մի կոյս, որին ասեմ՝ "Թեքի՛ր սափորդ, որ խմեմ", իսկ նա ինձ պատասխանի՝ "Խմի՛ր, քո ուղտերին էլ ջուր կը տամ, մինչեւ որ յագենան խմելուց"՝: Թող նրան էլ նախատեսած լինես քո ծառայ Իսահակի համար, եւ դրանով էլ իմանամ, որ բարեհաճ ես եղել իմ տէր Աբրահամի նկատմամբ»: 15 Նա մտքում դեռ չէր վերջացրել իր խօսքը, երբ եկաւ Ռեբեկան, որը Աբրահամի եղբայր Նաքորի Մեղքա կնոջ որդի Բաթուէլի դուստրն էր: Նա ուսին սափոր ունէր: 16 Կոյսը դէմքով շատ գեղեցիկ էր, մի աղջիկ, որին դեռ տղամարդ չէր մօտեցել: Նա իջաւ աղբիւրի մօտ, լցրեց իր սափորն ու ելաւ: 17 Ծառան ընդառաջ գնաց նրան ու ասաց. «Այդ սափորից ինձ մի քիչ ջո՛ւր տուր խմելու»: 18 Նա պատասխանեց. «Խմի՛ր, տէ՛ր»: Նա իր սափորը փութով իջեցրեց իր թեւերի վրայ, 19 ջուր տուեց նրան, մինչեւ որ դադարեց խմելուց: Ապա աւելացրեց. «Քո ուղտերի համար էլ ջուր կը հանեմ, այնքան, որ բոլորն էլ յագենան»: 20 Նա սափորի ջուրն իսկոյն թափեց գուռի մէջ

եւ նորից գնաց ջրհորը՝ ջուր հանելու: Նա նրա բոլոր ուղտերի համար ջուր հանեց: 21 Մարդն ուշադիր հետեւում էր նրան ու լուռ մտածում, թէ Տէրը կը յաջողեցնի՞ իր գործը, թէ՞ ոչ: 22 Երբ բոլոր ուղտերը յագեցան, մարդը նրան տուեց ոսկէ գինդեր՝ իւրաքանչիւրը մէկ դահեկանի քաշով, եւ տասը դահեկանի քաշով երկու ապարանջան դրեց նրա ձեռքերին: 23 Նա հարցրեց նրան ու ասաց. «Ու՞մ դուստրն ես դու, յայտնի՛ր ինձ, քո տանը մեզ համար իջեւանելու տեղ կա՞յ»: 24 Սա պատասխանեց նրան. «Ես Մեղքայի եւ Նաքորի որդի Բաթուէլի դուստրն եմ»: 25 Ապա աւելացրեց. «Յարդ ու խոտ շատ ունենք, նաեւ իջեւանելու տեղ»: 26 Մարդն ուրախացաւ, երկրպագեց Աստծուն եւ ասաց. 27 «Օրհնեալ է իմ տէր Աբրահամի Տէր Աստուածը, որ իմ տիրոջը չզրկեց իր արդարութիւնից ու ճշմարտութիւնից: Տէրն ինձ յաջողութիւն պարգեւեց իմ տիրոջ եղբօր տանը»: 28 Գնաց աղջիկն ու կատարուածի մասին պատմեց իր մօր տանը: 29 Ռեբեկան ունէր Լաբան անունով մի եղբայր: Լաբանը գնաց դուրս՝ դէպի աղբիւրը, այդ մարդու մօտ: 30 Երբ նա տեսաւ գինդերն ու իր քրոջ ձեռքերի ապարանջանները, եւ իր քոյր Ռեբեկայից լսած լինելով, թէ՝ «Այսպէս խօսեց ինձ հետ այդ մարդը», 31 մօտեցաւ մարդուն, որ դեռ կանգնած էր իր ուղտերի կողքին, աղբիւրի մօտ, եւ ասաց նրան. «Արի տուն մտի՛ր, Տիրոջով օրհնեալ, ինչո՞ւ ես մնացել դրսում: Ես քեզ համար տուն եւ քո ուղտերի համար տեղ եմ պատրաստել»: 32 Մարդը մտաւ տուն, իսկ Լաբանը ուղտերի վրայից հանեց թամբերը: Ուղտերին յարդ ու խոտ տուեցին եւ ջուր՝ նրա ու նրա հետ եկածների ոտքերը լուալու համար: 33 Նրանց առաջ հաց դրեցին, որ ուտեն: Ծառան ասաց. «Չեմ ուտի, մինչեւ չասեմ ասելիքս»: Նրանք ասացին. «Խօսի՛ր»: 34 Նա ասաց. «Ես Աբրահամի ծառան եմ: 35 Տէրը մեծապէս օրհնեց իմ տիրոջը, եւ նա մեծ մարդ դարձաւ: Աստուած նրան արջառ ու ոչխար, արծաթ ու ոսկի, ծառաներ ու աղախիններ, ուղտեր ու էշեր տուեց: 36 Սառան՝ իմ տիրոջ կինը, ծերունական հասակում գտնուող իմ տիրոջը պարգեւեց մի որդի, որին իմ տէրը յանձնեց այն ամէնը, ինչ ունէր: 37 Իմ տէրն ինձ երդուեցնելով ասաց. "Իմ որդի Իսահակի համար քանանացիների աղջիկներից կին չառնես, այն քանանացիների, որոնց երկրում ես պանդխտեցի, 38 այլ կը գնաս իմ հօր տունը, իմ տոհմի մէջ եւ այնտեղից կին կը բերես իմ որդու համար"՝: 39 Ես իմ տիրոջն ասացի. "Գուցէ կինն ինձ հետ չգայ"՝: 40 Նա ասաց ինձ. "Իմ Տէր Աստուածը, որի հանդէպ վարուեցի այնպէս, ինչպէս հաճոյ էր նրան, քեզ հետ կ՚ուղարկի իր հրեշտակին, կը յաջողեցնի քո գործը, եւ դու իմ որդու համար կին կ՚առնես իմ ազգից ու իմ հօր տնից: 41 Ա՛յն ժամանակ դու ազատուած կը լինես իմ նզովքից[†]: Իսկ եթէ գնաս իմ տոհմի մէջ, եւ կին չտան, ինձ տուած երդումից ազատ կը լինես"՝: 42 Երբ այսօր աղբիւրի մօտ եկայ, ասացի. "Իմ տէր Աբրահամի Տէր Աստուած, եթէ յաջողեցնելու ես իմ գործը, որի համար ես այժմ եկել եմ, 43 ահա հասել եմ ջրի աղբիւրի մօտ, եւ քաղաքի մարդկանց դուստրերը գալիս են ջուր հանելու: Եւ այն կոյսը, որին ասեմ, թէ՝ 'Քո սափորից մի քիչ ջուր տո՛ւր խմելու', 44 եւ նա ասի ինձ, թէ՝ 'Խմի՛ր, քո ուղտերի համար էլ ջուր կը հանեմ', նա էլ կը լինի այն կինը, որին նախատեսել է Տէրը իր ծառայ Իսահակի համար, որովհետեւ դրանից էլ կ՚իմանամ, որ բարեհաճ ես եղել իմ տէր Աբրահամի նկատմամբ"՝: 45 Դեռ իմ մտքում չէի վերջացրել իմ խօսքը, երբ իսկոյն երեւաց Ռեբեկան: Նա իր ուսին սափոր ունէր: Նա իջաւ աղբիւրը եւ ջուր հանեց: Ես ասացի նրան. "Ինձ ջուր տո՛ւր խմելու"՝: 46 Նա իր ուսից փութով իջեցրեց սափորն ու ասաց. "Դու խմի՛ր, յետոյ քո ուղտերին էլ ջուր կը տամ"՝: Ես խմեցի, եւ նա իմ ուղտերին էլ ջուր տուեց: 47 Ես նրան հարցրի ու ասացի. "Դու ո՞ւմ դուստրն ես, ասա՛ ինձ"՝: Նա պատասխանեց. "Ես Մեղքայի եւ Նաքորի որդի Բաթուէլի դուստրն եմ"՝: Ես գինդեր դրեցի նրա ականջներին,

[†]Գրաբարում՝ նզովքից, եբրայերէնում՝ երդումից:

ապարանջաններ՝ նրա ձեռքերին եւ
ուրախացայ, 48 երկրպագեցի Տիրոջը,
օրհնեցի իմ տէր Աբրահամի Տէր Աստ-
ծուն, որ յաջողութիւն պարգեւեց իմ
ազնիւ գործին՝ իմ տիրոջ եղբօր աղջկան
կին առնելու նրա որդու համար:
49 Արդ, եթէ իմ տիրոջ նկատմամբ շնորհ
եւ արդար գործ էք անելու, ասացէ՛ք
ինձ: 50 Իսկ եթէ ոչ, ցո՛յց տուէք ինձ,
ա՞ջ գնամ, թէ՞ ձախ»: Պատասխան
տուեցին Լաբանն ու Բաթուէլը եւ
ասացին. «Տէրն է այսպէս կարգադրել,
մենք չենք կարող դրական կամ բացա-
սական պատասխան տալ: 51 Ահա Ռե-
բեկան առաջդ կանգնած է, ա՛ռ եւ
գնա՛: Նա թող լինի քո տիրոջ որդու
կինը, ինչպէս կարգադրել է Տէրը»:
52 Երբ Աբրահամի ծառան լսեց նրանց
խօսքերը, երկրպագեց Տիրոջը: 53 Ծա-
ռան հանեց ոսկէ ու արծաթէ զարդեր եւ
զգեստներ, տուեց Ռեբեկային: Նա
նուէրներ տուեց նաեւ նրա եղբայրներին
ու մօրը: 54 Կերան ու խմեցին նա եւ այն
մարդիկ, որոնք նրա հետ էին, եւ ապա
քնեցին: Առաւօտեան վեր կենալով՝ նա
ասաց. «Ճանապարհեցէ՛ք ինձ, որ գնամ
տիրոջս մօտ»: 55 Ռեբեկայի եղբայրներն
ու մայրը ասացին. «Թող աղջիկը մեզ
մօտ մնայ մի տասը օր, յետոյ թող
գնայ»: 56 Ծառան ասաց նրանց. «Ինձ
մի՛ պահէք, որովհետեւ Տէրը յաջողու-
թիւն է պարգեւել իմ գործին: Թողէ՛ք որ
գնամ տիրոջս մօտ»: 57 Ռեբեկայի
եղբայրներն ասացին. «Կանչենք աղջ-
կան եւ նրան հարցնենք»: 58 Նրանք
կանչեցին Ռեբեկային ու հարցրին. «Կը
գնա՞ս այս մարդու հետ»: Նա պատաս-
խանեց. «Կը գնամ»: 59 Նրանք ճանա-
պարհեցին իրենց քոյր Ռեբեկային իր
ունեցուածքով, ինչպէս նաեւ Աբրահամի
ծառային ու նրանց, ովքեր նրա հետ
էին: 60 Նրանք օրհնելով Ռեբեկային՝
ասացին նրան. «Քո՛յր մեր, հազար ու
բիւր դառնաս: Քո յետնորդները թող
տիրանան քո թշնամիների քաղաքնե-
րին»: 61 Ռեբեկան ու իր նաժիշտները
վեր կացան, նստեցին ուղտերի վրայ եւ
այդ մարդու հետ ճանապարհ ընկան:
Ծառան Ռեբեկային առնելով գնաց:
62 Իսահակը եկել էր անապատ՝ Տեսիլքի
ջրհորի մօտ, որովհետեւ բնակւում էր
երկրի հարաւային կողմում: 63 Իսահակը
երեկոյեան ելաւ դաշտ՝ զբօսնելու: Նա
իր աչքերը բարձրացնելով՝ տեսաւ, որ
գալիս են տասը ուղտեր: 64 Աչքերը վեր
բարձրացրեց նաեւ Ռեբեկան եւ տեսաւ
Իսահակին: Նա անմիջապէս իջաւ ուղ-
տից 65 եւ հարցրեց ծառային. «Ո՞վ է
այն մարդը, որ դաշտում մեզ ընդառաջ
է գալիս»: Ծառան պատասխանեց. «Նա
իմ տէրն է»: Ռեբեկան առաւ քողն ու
գցեց իր վրայ: 66 Ծառան Իսահակին
պատմեց այն ամէնը, ինչ արել էր ինքը:
67 Իսահակը մտաւ իր մօր՝ Սառայի
տունը, առաւ Ռեբեկային, եւ սա դար-
ձաւ նրա կինը: Իսահակը սիրեց նրան եւ
մխիթարուեց իր մօր՝ Սառայի սգից:

ԱԲՐԱՀԱՄԻ ՄԻՒՍ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1. 32-33)

25 Աբրահամն առաւ մի կին էլ, որի
անունը Քետտուրա էր: 2 Սա նրա
համար ծնեց Զեմրանին, Յեկսանին,
Մադանին, Մադիանին, Յեսբոկին եւ
Սովիւէին: 3 Յեկսանը ծնեց Սաբային,
Թեմանին եւ Դադանին: Դադանի
որդիներն էին Ռագուէլը, Նաբդեէլը,
Ասուրիիմը, Լատուսիիմը եւ Լովովմիմը:
4 Մադիամի որդիներն էին Գեփարը,
Ափերը, Ենոքը, Աբիդան եւ Եղրագան:
Սրանք բոլորը Քետտուրայի որդիներն
էին: 5 Աբրահամն իր ողջ ունեցուածքը
տուեց իր որդի Իսահակին, 6 իսկ իր
հարճերի որդիներին, որոնք Աբրահամից
էին, պարգեւներ տուեց եւ, քանի դեռ
կենդանի էր, նրանց հեռացրեց իր որդի
Իսահակի մօտից դէպի արեւելք՝
արեւելեան երկիրը:

ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

7 Աբրահամն ապրեց հարիւր եօթա-
նասունհինգ տարի: 8 Աբրահամը հոգին
աւանդեց ու մեռաւ երջանիկ ծերութեան
մէջ, զառամեալ, ալեւորած տարիքում,
եւ գնաց միացաւ իր նախնիներին: 9 Նրա
որդիներ Իսահակն ու Իսմայէլը նրան
թաղեցին քետացի Սահառի որդի
Եփրոնի ագարակի զոյգ քարայրում,
10 որը գտնւում է Մամբրէի կաղնու

դիմաց: Աբրահամին ու նրա կին
Սառային թաղեցին այն ագարակում ու
քարայրում, որ Աբրահամը Քետի
որդիներից էր գնել: 11 Աբրահամի
մահից յետոյ Աստուած օրհնեց նրա
որդի Իսահակին, եւ Իսահակը բնակուեց
Տեսիլքի ջրհորի մօտ:

ԻՍՄԱՅԷԼԻ ՍԵՐՈՒՆԴԸ

12 Սրանք են սերուղները Աբրահամի
որդի Իսմայէլի, որին ծնեց եգիպտուհի
Ագարը՝ Սառայի աղախինը, Աբրահամի
համար: 13 Ահա Իսմայէլի որդիների
անուններն ըստ նրանց ցեղերի. Իսմա-
յէլի անդրանիկը՝ Նաբեոթ, ապա Կե-
դար, Աբդեէլ, Մաբսամ, 14 Մասմա,
Իդումա, Մասէ, 15 Քոլդադ, Թեմա,
Յետուր, Նափէս եւ Կեդմա: 16 Սրանք
են Իսմայէլի որդիները, եւ սրանք են
նրանց անուններն ըստ իրենց բնակա-
վայրերի եւ իրենց վրանների, նրանց
տասներկու իշխաններն ըստ իրենց
ցեղերի: 17 Իսմայէլն ապրեց հարիւր
երեսունեօթը տարի: Նա հոգին աւան-
դեց ու մեռաւ եւ գնաց միացաւ իր
նախնիներին: 18 Նա բնակութիւն հաս-
տատեց Եւիլայից մինչեւ Սուր, որը
գտնւում է Եգիպտոսի դիմաց, մինչեւ
Ասորեստանի սահմանները: Նա բնա-
կուեց իր բոլոր եղբայրների դէմ յան-
դիման:

ԵՍԱՒԻ ՈՒ ՅԱԿՈԲԻ ԾՆՈՒՆԴԸ

19 Սրանք են Աբրահամի որդի Իսա-
հակի սերունդները. Աբրահամը ծնեց
Իսահակին: 20 Իսահակը քառասուն
տարեկան էր, երբ ամուսնացաւ Ասո-
րական Միջագետքում ապրող ասորի
Բաթուէլի դուստր Ռեբեկայի հետ, որը
ասորի Լաբանի քոյրն էր: 21 Իսահակն
աղաչեց Տիրոջը իր կին Ռեբեկայի
համար, որովհետեւ սա ամուլ էր:
Աստուած լսեց նրան, եւ նրա կին
Ռեբեկան յղիացաւ: 22 Նրա արգանդում
իրար էին բախւում երեխաները: Նա
ասաց. «Եթէ այսպէս էր լինելու ինձ,
հապա ինչո՞ւ յղիացայ»: Եւ նա գնաց
այդ մասին Տիրոջը հարցնելու: 23 Տէրը
նրան ասաց. «Քո արգանդում երկու ցեղ
կայ, քո արգանդից երկու ժողովուրդ
պիտի ծնուի: Մի ժողովուրդը միւս
ժողովրդին պիտի գերիշխի, եւ աւագը
կրտսերին պիտի ենթարկուի»: 24 Երբ
հասան նրա ծննդաբերելու օրերը, նրա
որովայնում երկու երեխաներ կային:
25 Անդրանիկ որդին ծնուեց բոլորովին
շէկ, թաւամազ մորթով, եւ հայրը նրան
կոչեց Եսաւ: Ապա Եսաւի գարշապարից
բռնած ծնուեց նրա եղբայրը: Սրան էլ
կոչեց Յակոբ: 26 Իսահակը վաթսուն
տարեկան էր, երբ Ռեբեկան ծնեց
նրանց: Մանուկները մեծացան: 27 Ե-
սաւը հմուտ որսորդ էր եւ վայրե-
նաբարոյ, իսկ Յակոբը մեղմաբարոյ էր
ու տնակեաց: 28 Իսահակը սիրեց
Եսաւին, որովհետեւ նրա որսը կերակուր
էր իր համար, իսկ Ռեբեկան սիրեց
Յակոբին:

ԵՍԱՒԻ ՎԱՃԱՌՈՒՄ Է ԻՐ ԱՆԴՐԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

29 Յակոբը մի անգամ ապուր էր
եփել, երբ Եսաւը դաշտից եկաւ քաղցից
թուլացած: 30 Եսաւն ասաց Յակոբին.
«Այդ կարմրաւուն ապուրից տուր
ուտեմ, որովհետեւ քաղցից թուլացած
եմ» (դրա համար էլ նրան Եդոմ
կոչեցին): 31 Յակոբն ասաց Եսաւին. «Կը
տամ, եթէ այսօր ինձ վաճառես քո
անդրանկութիւնը»: 32 Եսաւը պա-
տասխանեց. «Ես մեռնելու վրայ եմ, էլ
ինչի՞ս է պէտք անդրանկութիւնը»:
33 Յակոբն ասաց նրան. «Հէնց այսօր
երդուի՛ր ինձ»: Եւ նա երդուեց նրան:
Եսաւն իր անդրանկութիւնը վաճառեց
Յակոբին, 34 իսկ Յակոբը Եսաւին տուեց
հաց ու ոսպապուր: Սա կերաւ, խմեց ու
վեր կացաւ գնաց: Այսպիսով Եսաւն
արհամարհեց իր անդրանկութիւնը:

ԻՍԱՀԱԿԸ ԲՆԱԿՈՒՄ Է ԳԵՐԱՐԱՅՈՒՄ

26 Սով եղաւ երկրում. ոչ այն սովը,
որ եղել էր Աբրահամի ժամանակ: 2 Ի-
սահակը գնաց փղշտացիների արքայ
Աբիմելէքի մօտ, Գերարա: Նրան երե-
ւաց Տէրն ու ասաց. «Եգիպտոս մի՛
իջիր, այլ բնակուի՛ր այն երկրում,
որտեղ ասացի քեզ. 3 իբրեւ պանդուխտ

ապրի՛ր այս երկրում, որ ես լինեմ քեզ
հետ եւ օրհնեմ քեզ, որովհետեւ քեզ ու
քո սերունդներին եմ տալու այս ողջ
երկիրը: Ես հաստատ կը պահեմ այն
երդումը, որ տուեցի քո հայր Աբրահա-
մին: 4 Ես բազմացնելու եմ քո
սերունդները երկնքի աստղերի չափ, քո
զաւակներին եմ տալու այս ամբողջ
երկիրը, եւ քո սերունդների միջոցով
օրհնուելու են երկրի բոլոր ազգերը 5 ի
հատուցումն այն բանի, որ քո հայր
Աբրահամը լսեց իմ խօսքը, պահեց իմ
հրամանները, իմ պատուիրանները, իմ
կանոններն ու օրէնքները»: 6 Իսահակը
բնակուեց գերարացիների հետ: 7 Տեղի
մարդիկ հարցրին նրա կին Ռեբեկայի
մասին, եւ նա ասաց. «Իմ քոյրն է»: Նա
վախեցաւ ասել «Իմ կինն է». գուցէ
Ռեբեկայի պատճառով տեղի մարդիկ
սպանէին իրեն, որովհետեւ Ռեբեկան
դէմքով գեղեցիկ էր: 8 Նա այնտեղ մնաց
երկար ժամանակ: Փղշտացիների արքայ
Աբիմելէքը պատուհանից դուրս ձգուեց
ու տեսաւ, որ Իսահակը կատակում է իր
կին Ռեբեկայի հետ: 9 Աբիմելէքը կան-
չեց Իսահակին եւ ասաց նրան. «Ուրեմն
նա քո կինն է: Ինչո՞ւ, սակայն, ասա-
ցիր, թէ՝ "Իմ քոյրն է"»: Իսահակն ասաց
նրան. «Որովհետեւ մտածեցի, թէ գուցէ
նրա պատճառով սպանուեմ»: 10 Աբի-
մելէքը նրան ասաց. «Ինչո՞ւ այդ բանն
արեցիր մեզ հետ: Քիչ էր մնում, որ իմ
ազգակիցներից մէկը պառկէր քո կնոջ
հետ եւ մեզ մեղքի մէջ գցէիր»: Եւ
Աբիմելէքը հրաման արձակեց իր ողջ
ժողովրդին՝ ասելով. 11 «Բոլոր նրանք,
ովքեր կը դիպչեն այդ մարդուն կամ
նրա կնոջը, մահուան կը դատապար-
տուեն»: 12 Իսահակը գարի ցանեց այդ
երկրում եւ նոյն տարում էլ հարիւ-
րապատիկ բերք ստացաւ: Տէրն օրհնեց
նրան, 13 եւ սա հարստացաւ: Նա առա-
ջադիմում էր, հարստանում այն աստի-
ճան, որ մեծահարուստ դարձաւ: 14 Նա
ունեցաւ ոչխարի ու արջառի հօտեր,
բազում կալուածքներ: 15 Փղշտացիները
նախանձեցին նրան եւ խցանեցին այն
բոլոր ջրհորները, որ նրա հօր՝ Աբրա-
համի օրօք փորել էին նրա ծառաները.
փղշտացիները 16 դրանք լցրին հողով:
Աբիմելէքն ասաց Իսահակին. «Հե-
ռացի՛ր մեր մօտից, որովհետեւ մեզնից
շատ աւելի զօրաւոր եղար»: 17 Իսա-
հակն այդտեղից գնաց ու վրան խփեց
գերարացիների ձորում: Նա բնակուեց
այնտեղ:

18 Իսահակը դարձեալ փորեց այն
ջրհորները, որ փորել էին նրա հօր՝
Աբրահամի ծառաները, իսկ փղշտա-
ցիները նրա հայր Աբրահամի մահից
յետոյ խցանել էին: Իսահակն այդ
ջրհորները կոչեց այն անուններով, որ
տուել էր դրա նց իր հայր Աբրահամը:
19 Իսահակի ծառաները հող փորեցին
գերարացիների ձորում եւ այնտեղ
գտան ըմպելի ջրի աղբիւր: 20 Գեր-
արացիների հովիւները կռուեցին Իսա-
հակի հովիւների հետ՝ ասելով, թէ
իրենցն է այդ ջրհորը: Նրանք ջրհորը
կոչեցին Անիրաւութիւն , քանի որ նրա
հանդէպ անիրաւութիւն էին գործել:
21 Իսահակը գնաց այդտեղից ու փորեց
մի այլ ջրհոր եւս: Վէճ ծագեց սրա
համար էլ: Իսահակը այն կոչեց Թշնա-
մութիւն: 22 Նա գնաց այդտեղից եւ
փորեց մի այլ ջրհոր եւս: Դրա շուրջ վէճ
չառաջացաւ, եւ այդ պատճառով այն
կոչեց Անդորրութիւն՝ ասելով, թէ՝
«Այժմ մեզ ընդարձակ տեղ տուեց Տէրը
եւ բազմացրեց մեզ երկրի վրայ»:
23 Իսահակն այդտեղից գնաց Երդման
ջրհորի մօտ: Տէրն այդ գիշեր երեւաց
նրան ու ասաց. 24 «Ես քո հօր
Աստուածն եմ: Մի՛ վախեցիր, որով-
հետեւ քեզ հետ եմ, ես օրհնելու եմ քեզ,
բազմացնելու եմ քո սերունդները ի սէր
քո հայր Աբրահամի»: 25 Իսահակն
այդտեղ զոհասեղան շինեց ու երկրպա-
գեց Տիրոջը: Նա այդտեղ խփեց իր
վրանը: Իսահակի ծառաները այդտեղ
ջրհոր փորեցին:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԻՍԱՀԱԿԻ ԵՒ ԱԲԻՄԵԼԷՔԻ ՄԻՋԵՒ

26 Գերարայից նրա մօտ գնացին
Աբիմելէքը, նրա սենեկապետ Ոքոզաթը
եւ նրա զօրքերի սպարապետ Փիքողը:
27 Իսահակը նրանց ասաց. «Ինչո՞ւ
եկաք ինձ մօտ, չէ՞ որ դուք ատեցիք
ինձ եւ հալածեցիք ձեր մօտից»:
28 Նրանք պատասխանեցին. «Մենք

պարզիպարզոյ տեսանք, որ Տէրը քեզ
հետ է, ուստի ասացինք. "Հաշտութիւն
թող լինի մեր եւ քո միջեւ: Մենք
պայման թող դնենք քեզ հետ. 29 մեր
նկատմամբ որեւէ վատ բան չանես,
քանի որ մենք չենք մեղանչել քո դէմ,
քեզ բարերարութիւն ենք արել եւ քեզ
խաղաղութեամբ ճանապարհ դրել,
որովհետեւ դու Տիրոջ օրհնած մարդն
ես"»: 30 Իսահակը նրանց պատուին
խնջոյք սարքեց, նրանք կերան, խմեցին
31 եւ առաւօտեան վաղ վեր կենալով՝
երդուեցին միմեանց: Իսահակը ճանա-
պարհ դրեց նրանց, եւ նրանք իր մօտից
հաշտ ու խաղաղ գնացին: 32 Այդ օրը
եկան Իսահակի ծառաները եւ յայտ-
նեցին նրան իրենց փորած ջրհորի
մասին, թէ՝ «Ջուր չենք գտել† »: 33 Ի-
սահակն այդ ջրհորն անուանեց
Երդումն: Դրա համար էլ այդ քաղաքը
մինչեւ այսօր կոչւում է Երդման ջրհոր:

ԵՍԱՒԻ ՕՏԱՐ ԿԱՆԱՅՔ

34 Եսաւը քառասուն տարեկան հա-
սակում կին առաւ քետացի Բէերի
դուստր Յուդիթին եւ խեւացի Ելոմի
դուստր Մասեմաթին, 35 որոնք վշտաց-
նում էին Իսահակին եւ Ռեբեկային:

ԻՍԱՀԱԿԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՅԱԿՈԲԻՆ

27 Երբ Իսահակը ծերացաւ, եւ
վատացաւ նրա աչքի տեսողութիւնը,
կանչեց իր աւագ որդի Եսաւին ու ասաց
նրան. «Որդե՛կ իմ»: Սա ասաց.
«Այստեղ եմ»: 2 Նա ասաց նրան. «Ահա
ես ծերացել եմ եւ չգիտեմ, թէ երբ կը
մեռնեմ: 3 Արդ, ա՛ռ քո զէնքը՝ աղեղն ու
կապարճը, գնա՛ դաշտ եւ ինձ համար
ո՛րս արա, 4 ինձ համար պատրաստի՛ր
իմ սիրած խորտիկները եւ բե՛ր, մա-
տուցի՛ր ինձ, որ ուտեմ եւ օրհնեմ քեզ,
քանի դեռ կենդանի եմ»: 5 Ռեբեկան
լսեց այն, ինչ ասաց Իսահակն իր
որդուն: Եսաւը գնաց դաշտ, որ որս անի
իր հօր համար, 6 իսկ Ռեբեկան, դիմելով
իր որդի Յակոբին, ասաց. «Ես քո հօրից
լսեցի այն, ինչ նա ասում էր քո եղբօրը:
Նա նրան ասաց. 7 "Ինձ ո՛րս բեր եւ ինձ
համար խորտիկներ պատրաստի՛ր, որ
ուտեմ եւ օրհնեմ քեզ Տիրոջ առաջ,
քանի դեռ կենդանի եմ": 8 Արդ,
որդեա՛կ իմ, լսի՛ր, թէ ինչ եմ ասում
քեզ: 9 Գնա՛ եւ հօտի միջից ինձ երկու
մատղաշ ու ընտիր ուլ բե՛ր, որ դրանցով
քո հօր համար նրա սիրած խորտիկները
պատրաստեմ: 10 Դու այն կը մատուցես
քո հօրը, որ ուտի եւ քեզ օրհնի քո
հայրը, քանի դեռ կենդանի է»: 11 Յա-
կոբն ասաց իր մայր Ռեբեկային. «Իմ
եղբայր Եսաւը մազոտ մարդ է, իսկ ես՝
լերկ: 12 Գուցէ շօշափի ինձ իմ հայրը,
ես խայտառակ լինեմ նրա առաջ, եւ
օրհնութեան փոխարէն անէծք թափուի
գլխիս»: 13 Մայրը նրան ասաց. «Թող
ինձ վրայ լինի այդ անէծքը, որդեա՛կ,
միայն թէ լսի՛ր իմ ասածը, գնա դրանք
բե՛ր ինձ»: 14 Նա գնաց եւ ուլերը բերեց
իր մօր մօտ, 15 իսկ սա նրա հօր սիրած
խորտիկները պատրաստեց: Ռեբեկան
առաւ աւագ որդու ընտիր պատմու-
ճանը, որ կար իր տանը, հագցրեց իր
կրտսեր որդի Յակոբին, 16 ուլի մորթին
փաթաթեց նրա թեւերին ու մերկ
պարանոցին: 17 Նա իր պատրաստած
խորտիկներն ու հացը տուեց իր որդի
Յակոբի ձեռքը: 18 Սա տարաւ դրանք
իր հօրն ու ասաց. «Հա՛յր իմ»: Նա
ասաց. «Այստեղ եմ»: Հայրը հարցրեց.
«Դու ո՞վ ես, որդեա՛կ»: 19 Յակոբը
պատասխանեց հօրը. «Ես Եսաւն եմ՝ քո
անդրանիկ որդին: Արեցի այնպէս,
ինչպէս ասացիր ինձ: Արի նստի՛ր ու
կե՛ր իմ որսից, որ օրհնես ինձ»: 20 Ի-
սահակն ասաց որդուն. «Այդ ինչպէ՞ս է,
որ այդքան շուտ որս գտար, որդեա՛կ»:
Նա պատասխանեց. «Ինչպէս Աստուած
ինքը դրեց իմ առաջ»: 21 Իսահակն
ասաց Յակոբին. «Մո՛տ արի, որ
շօշափեմ քեզ, որդեա՛կ, որպէսզի իմա-
նամ, թէ դո՞ւ ես իմ որդի Եսաւը, թէ՞
ոչ»: 22 Յակոբը մօտեցաւ իր հայր
Իսահակին, սա շօշափեց նրան ու ասաց.
«Ձայնդ Յակոբի ձայնն է, բայց ձեռքերդ
Եսաւի ձեռքերն են»: 23 Իսահակը
չճանաչեց նրան, որովհետեւ նրա ձեռ-
քերը իր եղբայր Եսաւի ձեռքերի նման
մազոտ էին: Նա օրհնեց նրան ու ասաց.

†Եբրայական եւ ասորական բնագրում, ինչպէս նաեւ յունարէն եւ հայերէն մի քանի ձեռագրերում ու տպագիրներում նախադասութիւնս հաստատական է՝ Ջուր նոր գտել:

24 «Դո՞ւ ես իմ որդի Եսաւը»: Նա պա-
տասխանեց. «Ես եմ»: 25 Իսահակն
ասաց. «Մատուցի՛ր ինձ, որ ուտեմ քո
որսից, որդեա՛կ, որպէսզի օրհնեմ քեզ»:
Յակոբը մատուցեց նրան, եւ նա կերաւ:
Նրան գինի բերեց, եւ նա խմեց: 26 Նրա
հայր Իսահակը ասաց նրան. «Մո՛տ արի
եւ համբուրի՛ր ինձ, որդեա՛կ»: 27 Յա-
կոբը մօտեցաւ, համբուրեց նրան:
Իսահակն առաւ նրա հագուստի հոտը
եւ օրհնելով նրան՝ ասաց. «Իմ որդին
Տիրոջ օրհնած բերրի արտի հոտն ունի:
28 Թող Աստուած քեզ մաս հանի երկնքի
ցօղից, երկրի պարարտութիւնից եւ
ցորենի ու գինու առատութիւն պար-
գեւի: 29 Թող քեզ ծառայեն ժողո-
վուրդները, եւ իշխանները թող քեզ
երկրպագեն: Քո եղբօր տէրը լինես, թող
քեզ երկրպագեն քո հօր որդիները: Ով
անիծի քեզ, ինքն անիծեալ թող լինի,
իսկ ով օրհնի քեզ, ինքն օրհնեալ թող
լինի»:

ԵՍԱՒԸ ԽՆԴՐՈՒՄ Է ԻՍԱՀԱԿԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

30 Երբ Իսահակը իր որդի Յակոբին
օրհնելը վերջացրեց, եւ Յակոբը գնաց իր
հայր Իսահակի մօտից, որսից եկաւ նրա
եղբայր Եսաւը: 31 Սա եւս խորտիկներ
պատրաստեց եւ մատուցելով իր հօրը՝
ասաց. «Թող վեր կենայ իմ հայրը, ուտի
իր որդու որսից, որպէսզի օրհնի ինձ»:
32 Եսաւի հայր Իսահակը հարցրեց
նրան. «Ո՞վ ես դու»: Սա պատաս-
խանեց. «Ես Եսաւն եմ՝ քո անդրանիկ
որդին»: 33 Իսահակը մեծապէս զարմա-
ցաւ ու ասաց. «Իսկ այն ո՞վ էր, որ ինձ
համար որս որսաց, բերեց մատուցեց, ես
կերայ ամենից, երբ դեռ դու չէիր եկել,
օրհնեցի նրան, եւ նա թող օրհնեալ
լինի»: 34 Երբ Եսաւը լսեց իր հայր
Իսահակի խօսքերը, անչափ դառնացաւ,
մեծ աղմուկ բարձրացրեց ու ասաց իր
հօրը. «Արդ, ի՛նձ էլ օրհնիր, հա՛յր»:
35 Իսահակն ասաց նրան. «Քո եղբայրը
եկաւ նենգութեամբ եւ առաւ քեզ
համար սահմանուած օրհնութիւնը»:
36 Եսաւն ասաց. «Իրաւամբ նրա անունը
Յակոբ է դրուել, որովհետեւ այս
երկրորդ անգամն է, որ խաբում է ինձ.
նախ խլեց իմ անդրանկութիւնը, իսկ
այժմ խլեց ինձ համար սահմանուած
օրհնութիւնը»: Եսաւն ասաց իր հօրը.
«Եւ ոչ մի օրհնութիւն չթողեցի՞ր ինձ,
հա՛յր»: 37 Պատասխան տուեց Իսահակն
ու ասաց նրան. «Քանի որ նրան
դարձրի քո տէրը եւ նրա բոլոր եղբայր-
ներին դարձրի նրա ծառաները եւ նրան
ապահովեցի ցորենով ու գինով, քե՛զ
համար ինչ անեմ, որդեա՛կ»: 38 Եսաւը
հարցրեց հօրը. «Միթէ մէ՞կ օրհնութիւն
ունես, հա՛յր. ի՛նձ էլ օրհնիր, հա՛յր»:
Երբ Իսահակի սիրտը կսկծաց, Եսաւը
բարձրաձայն լաց եղաւ: 39 Նրա հայր
Իսահակը պատասխանեց նրան ու
ասաց. «Երկրի պարարտութիւնից եւ
վերեւից՝ երկնքի ցօղից պիտի լինի քո
ապրուստը: 40 Քո սրով պիտի ապրես եւ
քո եղբօրը պիտի ծառայես: Բայց պիտի
գայ ժամանակ, որ դու պիտի քանդես եւ
շպրտես նրա լուծը քո պարանոցից»:
41 Եսաւը պահում էր Յակոբի նկատ-
մամբ ունեցած ոխը այն օրհնութեան
պատճառով, որ իր հայրը տուել էր
նրան: Եսաւն ասաց իր մտքում. «Թող
մօտենան իմ հօր մահուան սգի օրերը, որ
սպանեմ Յակոբին՝ իմ եղբօրը»: 42 Ռե-
բեկային տեղեկացրին իր աւագ որդի
Եսաւի խօսքերը, եւ նա մարդ ուղարկեց,
կանչեց իր կրտսեր որդի Յակոբին ու
ասաց նրան. «Ահա քո եղբայր Եսաւը
սպառնում է սպանել քեզ : 43 Արդ,
լսի՛ր իմ խօսքը, որդեա՛կ. ելիր գնա՛
Միջագետք, իմ եղբայր Լաբանի մօտ,
Խառան: 44 Նրա մօտ կ'ապրես երկար
ժամանակ, մինչեւ որ անցնի եղբօրդ
զայրոյթն ու ցասումը քո դէմ, 45 եւ նա
մոռանայ այն, ինչ արել ես դու նրան:
Յետոյ մարդ կ'ուղարկեմ, կը կանչեմ
քեզ այնտեղից. չլինի թէ ձեր երկուսից
էլ զրկուեմ նոյն օրը»:

ԻՍԱՀԱԿԸ ՅԱԿՈԲԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԼԱԲԱՆԻ ՄՕՏ

46 Ռեբեկան ասաց Իսահակին. «Յոգ-
նել եմ Քետի ցեղի դուստրերից»: Եթէ
Յակոբը կին առնի Քետի ցեղի
դուստրերից՝ ա՛յս երկրի դուստրերից, էլ
ինչո՞ւ եմ ապրում ես»:

28 Իսահակը կանչեց Յակոբին,
օրհնեց նրան ու պատուիրեց՝ ասելով.
«Քանանացիների դուստրերից կին
չառնես: 2 Գնա՛ Ասորիների Միջագետք,
քո մօր հօր՝ Բաթուէլի տունը եւ այն-
տեղից, քո մօրեղբայր Լաբանի
դուստրերից քեզ կին ա՛ռ: 3 Իմ Աս-
տուածը թող օրհնի քեզ, աճեցնի քեզ,
բազմացնի քեզ, բազում ժողովուրդների
նախահայր լինես: Նա քեզ եւ քեզնից
յետոյ գալիք քո սերունդներին թող տայ
իմ հայր Աբրահամի օրհնութիւնը,
4 որպէսզի ժառանգես քո պանդխտու-
թեան երկիրը, որ Աստուած տուել էր
Աբրահամին»: 5 Իսահակը ճանապարհ
դրեց Յակոբին, եւ սա գնաց Ասորիների
Միջագետք, ասորի Բաթուէլի որդի
Լաբանի մօտ, որը Ռեբեկայի՝ Յակոբի ու
Եսաւի մօր եղբայրն էր:

ԵՍԱՒԸ ՈՒՐԻՇ ԿԻՆ Է ԱՌՆՈՒՄ

6 Երբ Եսաւը տեսաւ, թէ Իսահակն
օրհնեց Յակոբին, եւ սա գնաց
Ասորիների Միջագետք, որ այնտեղից
կին առնի, ինչպէս հայրը Յակոբին
օրհնելիս պատուիրել էր ու ասել, թէ՝
«Քանանացիների դուստրերից կին
չառնես», 7 Յակոբն էլ անսալով իր հօր
ու մօր խօսքերին՝ գնացել էր Ասորիների
Միջագետք, 8 համոզուեց, որ քանա-
նացիների դուստրերը իր հայր Իսահակի
աչքին հաճոյ չեն, 9 ուստի գնաց
Իսմայէլի մօտ եւ ի յաւելումն իր
ունեցած կանանց, կին առաւ նաեւ
Աբրահամի որդի Իսմայէլի դուստր
Մայելէթին՝ Նաբէութի քրոջը:

ՅԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ ԲԵԹԷԼՈՒՄ

10 Յակոբը Երդման ջրհորի մօտից
ելաւ գնաց Խառան: 11 Հասնելով մի
տեղ՝ նա քնեց այնտեղ, որովհետեւ
արեւն արդէն մայր էր մտել: Նա առաւ
այնտեղի քարերից մէկը, դրեց գլխի
տակ ու քնեց այնտեղ: 12 Նա երազ
տեսաւ. երկրի վրայ հաստատուած էր
մի սանդուղք, որի ծայրը հասնում էր
երկինք, իսկ Աստծու հրեշտակները
դրանով ելնում իջնում էին: 13 Տէրը
կանգնած էր սանդուղքի վրայ: Նա
ասաց. «Ես Տէրն եմ, քո հայր Աբրա-
համի Աստուածը եւ Իսահակի Աստուա-
ծը: Մի՛ վախեցիր, որովհետեւ այն հողը,
որի վրայ քնել ես դու, քեզ եմ տալու եւ
քո սերունդներին: 14 Քո սերունդները
երկրի աւազի չափ շատ են լինելու,
տարածուելու են դէպի ծովակողմ, դէպի
արեւելք, դէպի հիւսիս ու հարաւ: Քո
շնորհիւ եւ քո սերունդների շնորհիւ
օրհնուելու են աշխարհի բոլոր ազգերը:
15 Ես ահա քեզ հետ եմ, որ պահպանեմ
քեզ քո բոլոր ճանապարհներին, որոն-
ցով գնալու ես: Քեզ վերադարձնելու եմ
այս երկիրը, որովհետեւ քեզ չեմ լքելու,
մինչեւ որ չկատարեմ այն ամէնը, ինչ
խոստացել եմ քեզ»: 16 Զարթնեց
Յակոբն իր քնից ու ասաց. «Տէրն
այստեղ է, իսկ ես չգիտէի»: 17 Նա
վախեցաւ եւ ասաց. «Սարսռազդեցիկ է
այս վայրը, եւ սա այլ բան չէ, եթէ ոչ
Աստծու տունը, իսկ սա էլ երկնքի
դուռն է»: 18 Առաւօտեան Յակոբը վեր
կացաւ, վերցրեց այն քարը, որ դրել էր
իր գլխի տակ, եւ այն կանգնեցրեց
իբրեւ կոթող: Նա իւղով օծեց քարի
գագաթը: 19 Յակոբն այդ վայրը կոչեց
Աստծու տուն. նախկինում այդ քաղաքի
անունը Ուլմաւուս էր: 20 Յակոբն ուխտ
անելով՝ ասաց. «Եթէ Տէր Աստուած ինձ
հետ լինի եւ ինձ պահպանի այն
ճանապարհին, որով գնում եմ ես, ինձ
ուտելու հաց տայ եւ հագնելու
հագուստ, 21 ինձ ողջ-առողջ վերա-
դարձնի իմ հօր տունը, ուրեմն թող նա
լինի ինձ Տէր Աստուած, 22 իսկ այն
քարը, որ իբրեւ կոթող կանգնեցրի, թող
ինձ համար լինի Աստծու տուն: Այն
ամենից, Տէ՛ր, ինչ կը տաս ինձ, քեզ
տասանորդ կը հանեմ»:

ՅԱԿՈԲԸ ՀԱՍՆՈՒՄ Է ԼԱԲԱՆԻ ՏՈՒՆԸ

29 Յակոբը վեր կացաւ գնաց արե-
ւելեան երկիրը, ասորի Բաթուէլի որդի
Լաբանի մօտ, որը Ռեբեկայի՝ Յակոբի ու
Եսաւի մօր եղբայրն էր: 2 Նա դաշտում
մի ջրհոր տեսաւ: Այնտեղ մակաղել էր
ոչխարների երեք հօտ. այդ ջրհորից ջուր

էին տալիս ոչխարներին: 3 Ջրհորի բերանին մի մեծ քար կար: Բոլոր հոտերն այնտեղ էին հաւաքւում: Հովիւները գլորում էին ջրհորի բերանը ծածկող քարը, ջուր էին տալիս ոչխարներին եւ ապա քարը դարձեալ դնելով իր տեղը՝ փակում էին ջրհորի բերանը: 4 Յակոբը հարցրեց նրանց. «Եղբայրնե՛ր, որտեղի՞ց էք»: 5 Նրանք պատասխանեցին. «Խառանից ենք»: Նա հարցրեց նրանց. «Դուք ճանաչո՞ւմ էք Նաքորի որդի Լաբանին»: Նրանք պատասխանեցին. «Ճանաչում ենք»: 6 Նա հարցրեց նրանց. «Նա ողջ-առո՞ղջ է»: Նրանք պատասխանեցին. «Ողջ-առողջ է»: Հէնց այդ պահին նրա դուստր Ռաքէլը գալիս էր ոչխարների հետ: 7 Յակոբն ասաց. «Օրը դեռ առջեւում է, ոչխարները հաւաքելու ժամանակը չէ, ջուր տուէ՛ք ոչխարներին եւ տարէ՛ք էլի արածեցնելու»: 8 Նրանք ասացին. «Դա անհնար է, քանի դեռ չեն հաւաքուել բոլոր հովիւները եւ ջրհորի բերանից քարը չեն գլորել. դրանից յետոյ ջուր կը տանք ոչխարներին»: 9 Մինչ նա խօսում էր նրանց հետ, ահա Լաբանի դուստր Ռաքէլը եկաւ իր հօր ոչխարների հետ, որովհետեւ նա էր արածեցնում իր հօր ոչխարները: 10 Երբ Յակոբը տեսաւ իր մօրեղբայր Լաբանի դուստր Ռաքէլին եւ իր մօրեղբայր Լաբանի ոչխարները, մօտեցաւ, ջրհորի բերանից գլորեց քարը եւ ջրեց իր մօրեղբայր Լաբանի ոչխարները: 11 Յակոբը համբուրեց Ռաքէլին ու բարձրաձայն լաց եղաւ: 12 Յակոբը Ռաքէլին յայտնեց, որ ինքը նրա հօրեղբայրն† է՝ Ռեբեկայի որդին: Ռաքէլը գնաց ու հօրը պատմեց այն, ինչ պատահել էր: 13 Երբ Լաբանը լսեց իր քրոջ որդի Յակոբի անունը, ընդառաջ գնաց, գիրկն առաւ նրան, համբուրեց ու տարաւ իր տունը: Յակոբը Լաբանին պատմեց այդ բոլոր բաները: 14 Լաբանն ասաց նրան. «Իմ ոսկորներից եւ իմ միս ու արիւնից ես դու»: Յակոբը նրա մօտ մնաց մի ամբողջ ամիս:

†Իրականում՝ *հօրաքրոջ որդին:*

ՅԱԿՈԲԸ ԾԱՌԱՅՈՒՄ Է ԼԱԲԱՆԻՆ ՌԱՔԷԼԻ ՈՒ ԼԻԱՅԻ ՀԱՄԱՐ

15 Լաբանն ասաց Յակոբին. «Քանի որ դու իմ եղբայրն ես, ինձ ձրի չես ծառայի: Ասա՛ ինձ, ի՞նչ է քո վարձը»: 16 Լաբանն ունէր երկու դուստր: Աւագի անունը Լիա էր, իսկ կրտսերինը՝ Ռաքէլ: 17 Լիայի տեսողութիւնը թոյլ էր, իսկ Ռաքէլը բարեկազմ էր ու դէմքով գեղեցիկ: 18 Յակոբը սիրեց Ռաքէլին. նա ասաց. «Քեզ եօթը տարի կը ծառայեմ քո կրտսեր դուստր Ռաքէլի համար»: 19 Լաբանն ասաց նրան. «Աւելի լաւ է նրան քե՛զ տամ, քան օտար մարդու: Ապրի՛ր դու ինձ մօտ»: 20 Յակոբը Ռաքէլի համար ծառայեց եօթը տարի, բայց նրա աչքին այդ տարիները օրեր թուացին, որովհետեւ սիրում էր նրան: 21 Յակոբն ասաց Լաբանին. «Տո՛ւր ինձ իմ հարսնացուին, որպէսզի պառկեմ նրա հետ, որովհետեւ սահմանուած ժամկէտը վերջացել է»: 22 Լաբանը հաւաքեց տեղի բոլոր մարդկանց ու հարսանիք արեց: 23 Երբ գիշերը վրայ հասաւ, Լաբանն առաւ իր դուստր Լիային, տարաւ Յակոբի մօտ, եւ Յակոբը պառկեց նրա հետ: 24 Լաբանն իր աղախին Զելփային իբրեւ նաժիշտ տուեց իր դուստր Լիային: Առաւօտեան Յակոբը տեսաւ, որ իր կողքինը Լիան է: 25 Յակոբն ասաց Լաբանին. «Այս ի՞նչ արեցիր, մի՞թէ Ռաքէլի համար չծառայեցի քեզ, ինչո՞ւ խաբեցիր ինձ»: 26 Լաբանն ասաց. «Մեր երկրում ընդունուած չէ մեծից առաջ կրտսերին ամուսնացնել: 27 Արդ, սրա՛ համար էլ եօթը տարի ծառայիր, եւ ինձ համար աշխատած այդ եօթը տարուայ աշխատանքիդ համար սրա՛ն էլ քեզ կին կը տամ»: 28 Յակոբն այդպէս էլ արեց. նա եօթը տարի եւս ծառայեց սրա համար, եւ Լաբանն իր դուստր Ռաքէլին կնութեան տուեց նրան: 29 Լաբանն իր աղախին Բալլային իբրեւ նաժիշտ տուեց իր դուստր Ռաքէլին: 30 Յակոբը մտաւ Ռաքէլի ծոցը եւ Ռաքէլին սիրեց աւելի, քան Լիային: Նա սրա համար ծառայեց եւս եօթը տարի:

ՅԱԿՈԲԸ ԶԱՒԱԿՆԵՐ Է ՈՒՆԵՆՈՒՄ

31 Երբ Տէրը տեսաւ, որ Լիան Յակոբի համար ատելի է, նրա արգանդը բեղմնաւոր դարձրեց, իսկ Ռաքէլը ամուլ մնաց: 32 Յղիացաւ Լիան եւ Յակոբի համար ծնեց որդի: Նա նրան կոչեց Ռուբէն՝ ասելով. «Տէրը տեսաւ իմ տառապանքները: Արդ, ինձ պիտի սիրի իմ ամուսինը»: 33 Դարձեալ յղիացաւ Լիան, Յակոբի համար ծնեց երկրորդ որդի եւ ասաց. «Քանի որ Տէրը լսեց, որ ատելի եմ, սրան էլ պարգեւեց ինձ»: Եւ նրա անունը դրեց Շմաւոն: 34 Նա նորից յղիացաւ, ծնեց որդի եւ ասաց. «Այլեւս իմ կողքին կը լինի իմ ամուսինը, որովհետեւ նրա համար երեք որդի ծնեցի»: Դրա համար էլ նրան կոչեց Ղեւի: 35 Նա մի անգամ էլ յղիացաւ, ծնեց որդի եւ ասաց. «Այս անգամ էլ պիտի գոհանամ Տիրոջից»: Եւ նրա անունը դրեց Յուդա: Դրանից յետոյ նա դադարեց երեխայ ունենալուց:

30 Երբ Ռաքէլը տեսաւ, որ ինքը Յակոբի համար որդի չի ծնում, նախանձեց իր քրոջը եւ Յակոբին ասաց. «Ինձ զաւակներ պարգեւի՛ր, այլապէս կը մեռնեմ»: 2 Բարկացաւ Յակոբը Ռաքէլի վրայ ու ասաց նրան. «Մի՞թէ Աստծու փոխարինողն եմ ես, որ զրկել է քեզ ծննդաբերելուց»: 3 Ռաքէլն ասաց Յակոբին. «Ահա իմ աղախին Բալլան: Մտի՛ր նրա ծոցը, նա թող ծննդաբերի իմ ծնկների վրայ, որ ես նրա միջոցով որդիներ ունենամ»: 4 Եւ նա իր աղախին Բալլային տուեց նրան կնութեան: Յակոբը մտաւ նրա ծոցը: 5 Յղիացաւ Ռաքէլի նաժիշտ Բալլան եւ որդի ծնեց Յակոբի համար: 6 Ռաքէլն ասաց. «Աստուած ինձ արդար դատեց, լսեց իմ ձայնը եւ ինձ որդի պարգեւեց»: Դրա համար էլ նրա անունը դրեց Դան: 7 Դարձեալ յղիացաւ Ռաքէլի նաժիշտ Բալլան եւ երկրորդ որդի ծնեց Յակոբի համար: 8 Ռաքէլն ասաց. «Աստուած ինձ օգնեց, որովհետեւ ընդհարուեցի քրոջս հետ եւ յաղթեցի»: Եւ որդու անունը դրեց Նեփթաղիմ: 9 Երբ Լիան տեսաւ, որ ինքը դադարել է ծնելուց, իր նաժիշտ Զելփային տուեց Յակոբին կնութեան: 10 Լիայի նաժիշտ Զելփան յղիացաւ եւ Յակոբի համար ծնեց որդի: 11 Նա ասաց. «Ես երջանիկ եմ»: Եւ նրա անունը դրեց Գադ: 12 Յղիացաւ Լիայի նաժիշտ Զելփան եւ երկրորդ որդի էլ ծնեց Յակոբի համար: 13 Լիան ասաց. «Ես բախտաւոր եմ, որովհետեւ կանայք ինձ երանի են տալու»: Եւ որդու անունը դրեց Ասեր՝ Մեծութիւն: 14 Ռուբէնը ցորենի հնձի օրերին գնաց, դաշտում մանրագորի խնձոր գտաւ եւ այն բերեց իր մայր Լիային: Ռաքէլը դիմելով իր քոյր Լիային՝ ասաց. «Քո որդու մանրագորներից մի քիչ տո՛ւր ինձ»: 15 Լիան պատասխանեց. «Բաւական չէ՞, որ խլեցիր իմ ամուսնուն, հիմա էլ իմ որդու մանրագո՞րն ես ուզում առնել»: Ռաքէլն ասաց. «Այդպէս չէ: Քո որդու մանրագորների փոխարէն թող նա այս գիշեր պառկի քեզ հետ»: 16 Երբ երեկոյեան Յակոբը դաշտից վերադարձաւ տուն, նրան ընդառաջ գնաց Լիան ու ասաց. «Այսօր իմ ծոցը պիտի մտնես, որովհետեւ իմ որդու մանրագորների փոխարէն վարձել եմ քեզ»: Եւ նա գիշերը պառկեց նրա հետ: Աստուած անսաց Լիային: 17 Սա յղիացաւ եւ Յակոբի համար ծնեց հինգերորդ որդի: 18 Լիան ասաց. «Աստուած տուեց իմ վարձը այն բանի համար, որ իմ աղախին տուեցի իմ ամուսնուն»: Եւ նա նրա անունը դրեց Իսաքար, որ նշանակում է վարձ: 19 Մի անգամ էլ յղիացաւ Լիան եւ Յակոբի համար ծնեց վեցերորդ որդի: 20 Լիան ասաց. «Աստուած ինձ լաւ նուէր պարգեւեց. սրանից յետոյ ամուսինս ինձ կը սիրի, որովհետեւ նրա համար վեց որդի ծնեցի: Եւ նա նրա անունը դրեց Զաբուղոն: 21 Դրանից յետոյ նա աղջիկ ծնեց եւ նրա անունը դրեց Դինա: 22 Աստուած յիշեց Ռաքէլին, անսաց նրան եւ բեղմնաւոր դարձրեց նրա արգանդը: 23 Սա յղիացաւ եւ Յակոբի համար ծնեց որդի: Ռաքէլն ասաց. «Աստուած ինձնից վերացրեց իմ ամլութեան նախատինքը»: 24 Եւ նրա անունը դրեց Յովսէփ: Նա ասաց. «Աստուած թող ինձ պարգեւի մի որդի եւս»:

ՅԱԿՈԲԸ ՍԱԿԱՐԿՈՒՄ Է ԼԱԲԱՆԻ ՀԵՏ

25 Երբ Ռաքէլը ծնեց Յովսէփին,
Յակոբն ասաց Լաբանին. «Ինձ թո՛յլ
տուր, որ գնամ իմ բնակավայրն ու իմ
երկիրը: 26 Տո՛ւր կանանց, որոնց համար
ծառայեցի քեզ, ու իմ որդիներին,
որպէսզի գնամ: Դու ինքդ էլ գիտես, թէ
ինչ ծառայութիւն մատուցեցի քեզ»:
27 Լաբանը պատասխանեց նրան. «Քա-
նի որ արժանացայ քո բարեհաճու-
թեանը, փորձով համոզուեցի, որ
Աստուած ինձ օրհնեց իմ տուն քո ոտք
դնելու առթիւ»: 28 Լաբանն աւելացրեց.
«Ասա՛ ինձ քո վարձը, եւ ես կը տամ»:
29 Յակոբն ասաց նրան. «Դու գիտես,
թէ որքան ծառայեցի քեզ, եւ թէ որքան
ոչխար էիր յանձնել ինձ: Իմ գալուց
առաջ դրանք փոքրաթիւ էին, 30 իսկ
այժմ դրանք անչափ աճել են: Տէր
Աստուած քեզ օրհնեց քո տուն իմ ոտք
դնելու առթիւ: Արդ, ե՞րբ եմ ես տուն-
տեղ ունենալու»: 31 Լաբանը հարցրեց
նրան. «Ի՞նչ տամ քեզ»: Յակոբը
պատասխանեց. «Ինձ ոչինչ մի՛ տուր,
բայց միայն հետեւեալն արա՛. ես դար-
ձեալ արածեցնեմ ու պահպանեմ քո
ոչխարները: 32 Այսօր թող քո առաջով
անցնի քո ամբողջ հօտը, եւ դու ջոկի՛ր
իրարից բոլոր խատուտիկ ու գորշ
ոչխարները եւ արածող բոլոր թուխ
ոչխարները: Բոլոր խատուտիկ ոչխար-
ներն ու պտաւոր այծերը թող լինեն իմ
վարձը: 33 Իմ արդար լինելը կ'երեւայ
վաղը, որ ես վարձ ունեմ քեզնից
ստանալիք: Այն բոլոր այծերը, որոնք
բծաւոր ու պտաւոր չեն, եւ ոչխարները,
որոնք խայտաճամուկ չեն, թող ինձ
գողօն համարուեն»: 34 Լաբանն ասաց
նրան. «Թող քո ասածը լինի»: 35 Լա-
բանն այդ օրը առանձնացրեց մոխ-
րագոյն ու պտաւոր նոխազները, բոլոր
մոխրագոյն ու պտաւոր այծերը,
սպիտակ ու թուխ ոչխարները, 36 տուեց
իր որդիներին եւ նրանց ուղարկեց
Յակոբից հեռու երեք օրուայ
ճանապարհ: Յակոբն արածեցնում էր
Լաբանի մնացած հօտերը: 37 Յակոբն
առաւ խնկենու, ընկուզենու եւ սօսու
դալար ճիւղեր, հանեց դրանց կեղեւը, եւ
երեւաց սպիտակը: Գաւազաններից կա-
նաչ մասը քերծելուց յետոյ գաւա-
զանների քերծուած սպիտակը դունա-
գեղ էր երեւում: 38 Քերծած
գաւազանները նա դրեց ջրի գուռերի
մէջ, որ երբ հօտերը գան ջուր խմելու,
այդ գաւազանների մօտ բեղմնաւորուեն:
39 Մաքիները գաւազանների մօտ
բեղմնաւորւում էին եւ ծնում խայտա-
ճամուկ, պտաւոր ու խատուտիկ գառ-
ներ: 40 Յակոբը էգ գառներն առանձ-
նացնում էր ու դնում մաքիների դիմաց,
նաեւ՝ մոխրագոյն խոյերը եւ բոլոր
խայտաճամուկ ոչխարները: Նա իր
հօտն առանձնացնում էր, չէր խառնում
Լաբանի հօտերին: 41 Երբ գալիս էր մա-
քիների զուգաւորուելով յղիանալու ժա-
մանակը, Յակոբը գաւազանները դնում
էր մաքիների դիմաց, գուռերի մէջ,
որպէսզի նրանք բեղմնաւորուեն գաւա-
զանների մօտ, 42 իսկ երբ մաքիները
ծնում էին, այլեւս չէր դնում: Նշան
չունեցողները լինում էին Լաբանի
սեփականութիւնը, իսկ նշան ունեցող-
ները՝ Յակոբի: 43 Այսպիսով Յակոբը
չափազանց շատ հարստացաւ. նա
ունեցաւ շատ ոչխարներ ու արջառներ,
ծառաներ ու աղախիններ, ուղտեր ու
էշեր:

ՅԱԿՈԲԸ ՓԱԽՉՈՒՄ Է ԼԱԲԱՆԻՑ

31 Յակոբի ականջին հասան Լաբա-
նի որդիների ասածները, թէ՝ «Յակոբը
տէր դարձաւ մեր հօր ողջ ունե-
ցուածքին, մեր հօր ունեցուածքի
շնորհիւ նա դիզեց մեծ հարստութիւն»:
2 Յակոբը նայելով Լաբանի դէմքին՝
հասկացաւ, որ նա իր հետ այնպէս
բարեացակամ չէ, ինչպէս առաջներում
էր: 3 Տէր Աստուած ասաց Յակոբին.
«Վերադարձի՛ր քո հօր երկիրը, քո ցեղի
մօտ, եւ ես կը լինեմ քեզ հետ»: 4 Յա-
կոբը մարդ ուղարկեց եւ Ռաքէլին ու
Լիային կանչեց այն դաշտը, ուր հօտերն
էին գտնւում: 5 Նա նրանց ասաց.
«Նայելով ձեր հօր դէմքին՝ զգում եմ, որ
նա ինձ հետ այնպէս բարեացակամ չէ,
ինչպէս առաջներում էր: Սակայն իմ հօր
Աստուածը ինձ հետ է: 6 Դուք ինքներդ
էլ գիտէք, որ իմ ամբողջ ուժով ես

ծառայեցի ձեր հօրը, 7 բայց ձեր հայրը
խաբեց ինձ, իմ վարձից տասը գառներ
խլեց, սակայն Աստուած թոյլ չտուեց,
որ նա ինձ վատութիւն անի: 8 Եթէ նա
ասի, թէ՝ "Երանգաւոր մաքիները թող
լինեն քո վարձը", ապա բոլոր մաքիները
երանգաւոր գառներ կը ծնեն, իսկ եթէ
ասի, թէ՝ "Սպիտակները թող լինեն քո
վարձը", ապա բոլոր մաքիները սպիտակ
գառներ կը ծնեն: 9 Աստուած ձեր հօր
բոլոր մաքիները առաւ ու ինձ տուեց:
10 Երբ մաքիները բեղմնաւորւում էին,
ես երազում, իմ աչքերով տեսնում էի,
թէ ինչպէս նոխազներն ու խոյերը ել-
նում էին պտաւոր, խատուտիկ ու
խայտաճամուկ մաքիների ու այծերի
վրայ: 11 Երազի մէջ Աստծու հրեշտակն
ինձ ասաց. "Յակո՛բ": Ես պատասխա-
նեցի. "Ի՞նչ է": 12 Նա ասաց. "Քո աչ-
քով նայի՛ր ու տե՛ս, որ մաքիների ու էգ
այծերի վրայ ելնող խոյերն ու արու
այծերը ինչպէ՛ս պտաւոր են, խայտա-
ճամուկ ու խատուտիկ: Զէ՞ որ ես
տեսայ, թէ ինչքան անարդար վարուեց
քեզ հետ Լաբանը: 13 Ես այն Աստուածն
եմ, որ երեւացի քեզ Աստծու տուն
կոչուող վայրում, ուր ինձ համար կոթո-
ղը իւղով օծեցիր եւ ուխտ արեցիր: Արդ,
դո՛ւրս արի այս երկրից, գնա՛ քո
ծննդավայրը, եւ ես կը լինեմ քեզ
հետ"»: 14 Պատասխան տուեցին Ռա-
քէլն ու Լիան եւ ասացին նրան.
«Մի՞թէ սրանից յետոյ մենք մեր հօր
ունեցուածքից բաժին եւ ժառանգութիւն
կ'ունենանք. 15 չէ՞ որ նա մեզ օտար
համարեց, քանի որ վաճառեց մեզ եւ
մեր փողը կերաւ: 16 Այն հարստութիւնն
ու փառքը, որ Աստուած առաւ մեր հօր
ձեռքից, թող մերը լինի ու մեր որդի-
ներինը: Արդ, ինչ որ ասել է քեզ
Աստուած, արա՛»:

17 Յակոբը վեր կացաւ, առաւ իր
կանանց ու երեխաներին եւ նրանց
նստեցրեց ուղտերի վրայ: 18 Նա իր հետ
վերցրեց իր ողջ ունեցուածքն ու
հարստութիւնը, որ կուտակել էր Ա-
սորիների Միջագետքում, որպէսզի գնայ
Քանանացիների երկիրը՝ իր հայր
Իսահակի մօտ: 19 Լաբանը գնացել էր
իր ոչխարները խուզելու: Ռաքէլը
գողացաւ իր հօր կուռքերը, 20 իսկ
Յակոբը չեղեց իր աներոջ Լաբանի
ուշադրութիւնը, որովհետեւ չէր ուզում
յայտնել նրան, որ պիտի գնայ: 21 Եւ նա
գնաց իր ամբողջ ունեցուածքով: Նա
անցաւ գետը եւ ուղղուեց դէպի Գա-
ղաադ լեռը: 22 Երրորդ օրը ասորի Լա-
բանին յայտնեցին, որ Յակոբը գնացել
է: 23 Նա իր հետ վերցրեց իր եղբայր-
ներին, հետապնդեց նրան՝ անցնելով
եօթը օրուայ ճանապարհ եւ նրան հա-
սաւ Գաղաադ լեռան մօտ: 24 Գիշերը
երազում Աստուած երեւաց ասորի Լա-
բանին ու ասաց նրան. «Զգո՛յշ եղիր,
չլինի թէ Յակոբի հետ չարութեամբ խո-
սես»: Լաբանը հասաւ Յակոբին: 25 Յա-
կոբն իր վրանը խփել էր լեռան վրայ,
իսկ Լաբանն իր եղբայրներին դադար
տուեց Գաղաադ լեռան վրայ: 26 Լա-
բանն ասաց Յակոբին. «Ինչո՞ւ արեցիր
դու այդ բանը, ինչո՞ւ ինձնից գաղտնի
հեռացար, կողոպտեցիր ինձ, իսկ իմ
դուստրերին իբրեւ ռազմագերի տարար:
27 Եթէ տեղեակ պահէիր ինձ, քեզ
ճանապարհ կը դնէի ուրախութեամբ,
թմբուկների ու քնարների նուագակ-
ցութեամբ: 28 Մի՞թէ ես արժանի չէի,
որ համբուրէի իմ որդիներին ու
դուստրերին: Արդ, անմիտ բան ես արել:
29 Ես հիմա կարող էի քեզ վատութիւն
անել, բայց քո հօր Աստուածը երէկ
ասաց ինձ. "Զգո՛յշ եղիր, չլինի թէ
Յակոբի հետ չարութեամբ խօսես":
30 Արդ, գնում ես, որովհետեւ շատ ես
ցանկանում գնալ քո հօր տունը: Բայց
ինչո՞ւ գողացար իմ աստուածները»:
31 Պատասխան տուեց Յակոբն ու ասաց
Լաբանին. «Որովհետեւ վախեցայ:
Մտածեցի, թէ գուցէ դու քո դուստ-
րերին, նաեւ իմ ողջ ունեցուածքը կը
խլես ինձնից»: 32 Յակոբն աւելացրեց.
«Ում մօտ որ գտնես քո աստուածները,
թող նա մեր եղբայրների ներկայու-
թեամբ սպանուի: Արդ, քո ունեցածից
ինչ որ գտնես ինձ մօտ, վերցրո՛ւ»: Նա
ոչինչ չգտաւ նրա մօտ: Յակոբը, սա-
կայն, չգիտէր, որ Ռաքէլն էր գողացել
դրանք: 33 Լաբանը, մտնելով, խուզար-
կեց Յակոբի կացարանը, Լիայի կացա-
րանն ու երկու հարճերի կացարանը,
բայց ոչինչ չգտաւ: Դուրս գալով Լիայի
կացարանից՝ Լաբանը մտաւ Ռաքէլի

կացարանը: 34 Ռաքէլն առնելով կուռ-
քերը՝ դրանք դրել էր ուղտի թամբի
տակ եւ նստել դրանց վրայ: Լաբանը
խուզարկեց ողջ վրանը, բայց ոչինչ
չգտաւ: 35 Նա ասաց իր հօրը. «Մի՛
բարկացիր, տէ՛ր, որ քո ներկայութեամբ
չեմ կարող ոտքի ելնել, որովհետեւ
կանանց յատուկ վիճակի մէջ եմ»:
Լաբանը խուզարկեց ողջ կացարանը,
բայց կուռքերը չգտաւ: 36 Յակոբը
զայրացած վիճում էր Լաբանի հետ:
Յակոբը, պատասխան տալով Լաբանին,
ասաց. «Ի՞նչ վնաս եմ տուել ես, կամ
ո՞րն է իմ յանցանքը, որ հետապնդեցիր
ինձ 37 եւ խուզարկեցիր իմ ողջ ունե-
ցուածքը: Իմ տանը քո ունեցուածքից
որեւէ բան գտա՞ր. դի՛ր այն իմ
եղբայրների ու քո եղբայրների առաջ, եւ
նրանք թող դատ անեն մեր երկուսի
միջեւ: 38 Քսան տարի է, ինչ քեզ հետ
էի, քո մաքիներն ու այծերը
չստերջացան, եւ քո մաքիների խոյերը
ես չկերայ: 39 Գազաններից յօշոտուած
կենդանիները ես չբերեցի քեզ մօտ, այլ
ես ինքս էի հատուցում ցերեկը գողա-
ցուածի ու գիշերը գողացուածի վնասը:
40 Ցերեկը տանջւում էի շոգից, իսկ
գիշերը՝ ցրտից: Քունը փախել էր
աչքերիցս: 41 Քսան տարի է, որ քո
տանն էի: Տասնչորս տարի քո
դուստրերի համար աշխատեցի եւ վեց
տարի՝ քո հօտերի համար, բայց դու
խաբեցիր ինձ եւ իմ բաժնից տասը
ոչխար խլեցիր†: 42 Եթէ ինձ հետ
չլինէին իմ հօր Աստուածը, Աբրահամի
Աստուածն ու Իսահակի երկիւղը, այժմ
գուցէ ինձ ձեռնունայն յետ ուղարկէիր:
Աստուած, սակայն, տեսաւ իմ
չարչարանքն ու իմ ձեռքի գործը եւ
երէկ քեզ յանդիմանեց»:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲԻ ԵՒ ԼԱԲԱՆԻ ՄԻՋԵՒ

43 Պատասխան տուեց Լաբանն ու
ասաց Յակոբին. «Դուստրերդ իմ
դուստրերն են, որդիներդ իմ որդիներն
են, հօտերդ իմ հօտերն են: Այն ամէնը,
ինչ տեսնում ես դու, իմն են ու իմ
դուստրերինը: Արդ, հիմա ես ինչպէ՞ս
կարող եմ վատութիւն անել իմ դուստ-
րերին ու նրանց որդիներին†: 44 Արի
պայման դնենք ես ու դու: Դա թող
վկայութիւն լինի իմ ու քո միջեւ»: Նա
իր խօսքը շարունակելով՝ ասաց նրան.
«Ահա մեր միջեւ որպէս վկայ Աստծուց
բացի ոչ ոք չկայ»: 45 Եւ Յակոբը
վերցրեց մի քար եւ կանգնեցրեց որպէս
կոթող: 46 Դիմելով իր եղբայրներին՝ նա
ասաց. «Քարեր հաւաքեցէ՛ք»: Նրանք
քարեր կուտակեցին, քարակոյտ սար-
քեցին եւ այդ քարակոյտի վրայ կերան
ու խմեցին: 47 Լաբանն այն կոչեց
Վկայութեան կարկառ, իսկ Յակոբը
կոչեց Վկայ կարկառ: 48 Լաբանն ասաց
նրան. «Այս քարակոյտն այսօր վկայ է
իմ ու քո միջեւ»: Ահա թէ ինչու
Լաբանն այն կոչեց Վկայութեան քա-
րակոյտ, իսկ Յակոբն այն կոչեց Վկայ
քարակոյտ: Լաբանն ասաց Յակոբին.
«Ահա այս քարակոյտն ու այս կոթողը,
որ կանգնեցրի իմ ու քո միջեւ. վկայ է
այս քարակոյտը, վկայ է այս կոթողը»:
Դրա համար էլ քարակոյտը կոչուեց
Վկայութիւն 49 եւ Դիտանոց, որի մա-
սին ասաց, թէ՝ «Աստծու աչքը թող ինձ
ու քեզ վրայ լինի, որովհետեւ մենք,
ահա, բաժանւում ենք միմեանցից: 50 Ե-
թէ վշտացնես իմ դուստրերին, եթէ իմ
դուստրերի կենդանութեան օրօք կա-
նայք առնես, զգո՛յշ եղիր, քանի որ
մարդ չկայ, որ այդ բանը տեսնի, բայց
Աստուա՛ծ վկայ կը լինի իմ ու քո
միջեւ»: 51 Լաբանն ասաց Յակոբին.
«Ահա այս քարակոյտն ու այս կոթողը,
որ կանգնեցրինք իմ ու քո միջեւ.
52 վկայ թող լինի այս քարակոյտը, վկայ
թող լինի այս կոթողը, որ ես չեմ անցնի
քարակոյտից այն կողմ, իսկ դու էլ չես
անցնի քարակոյտից ու կոթողից այս
կողմ չար դիտաւորութեամբ: 53 Մեր
դատաւորը Աբրահամի Աստուածը,
Նաքորի Աստուածը, նրանց հայրերի
Աստուածը թող լինի»: 54 Եւ Յակոբը
երդուեց իր հայր Իսահակի երկիւղով:
Յակոբը զոհ մատուցեց լեռան վրայ եւ
կանչեց իր եղբայրներին, որ հաց ուտեն:
Նրանք կերան, խմեցին ու գիշերեցին
լեռան վրայ: 55 Լաբանն առաւօտեան
վեր կացաւ, համբուրեց իր որդիներին ու

†Գրաբարում՝ տասնապատիկ, եբրայերէնում՝ տասն անգամ:

†Գրաբարն աւելացնում է՝ որ ես ծնեցի:

դուստրերին, օրհնեց նրանց եւ վերա-
դառնալով՝ գնաց իր բնակատեղին:

ՅԱԿՈԲԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՀԱՆԴԻՊԵԼ ԵՍԱՒԻՆ

32 Յակոբն էլ գնաց իր ճանապար-
հով:
Նա տեսաւ Աստծու հրեշտակների
բանակը. նրան ընդառաջ եկան Աստծու
հրեշտակները: 2 Յակոբը տեսնելով
նրանց՝ ասաց. «Սա Աստծու բանակն
է». եւ այդ վայրի անունը դրեց
Բանակատեղի: 3 Յակոբն իրենից առաջ
բանագնացներ ուղարկելով իր եղբայր
Եսաւի մօտ, Սէիր գաւառը, Եդոմի
երկիրը՝ պատուէր տուեց նրանց ու
ասաց. 4 «Այսպէս կ'ասէք իմ տէր
Եսաւին, թէ այսպէս է ասում քո ծառայ
Յակոբը. "Լաբանի մօտ ապրեցի եւ
մինչեւ հիմա այնտեղ մնացի: 5 Ունեցայ
արջառներ, ոչխարներ, էշեր, ծառաներ
ու աղախիններ: Հիմա մարդ եմ
ուղարկում իմ տէր Եսաւին՝ խնդրելու,
որ քո ծառան շնորհ գտնի քո առաջ"»:
6 Բանագնացները Յակոբի մօտ վերա-
դառնալով՝ ասացին. «Գնացինք քո
եղբայր Եսաւի մօտ. նա, նրա հետ նաեւ
չորս հարիւր տղամարդիկ, քեզ ընդա-
ռաջ են գալիս»: 7 Վախեցաւ Յակոբն ու
կսկածանքի մէջ ընկաւ: Նա իր հետ
եղած ժողովրդին, արջառները, ոչխար-
ները եւ ուղտերը բաժանեց երկու խմբի:
8 Յակոբը մտածեց. «Եթէ Եսաւը յար-
ձակուի առաջին խմբի վրայ եւ ջարդի
այն, ապա կը փրկուի երկրորդ խում-
բը»: 9 Եւ Յակոբն ասաց. «Իմ հայր
Աբրահամի Աստուա՛ծ, իմ հայր Իսա-
հակի Աստուա՛ծ, Տէ՛ր, ինձ ասացիր, թէ՝
"Գնա՛ քո ծննդավայրը եւ բարիք կ'ա-
նեմ քեզ": 10 Ես արժանի չեմ բոլոր այն
արդարութիւններին ու ճշմարտութիւն-
ներին, որ արեցիր քո ծառային, որով-
հետեւ ցուպը ձեռքիս անցայ Յորդա-
նանի այս կողմը, իսկ հիմա բաժանուել
եմ երկու մասի: 11 Փրկի՛ր ինձ իմ
եղբայր Եսաւի ձեռքից, որովհետեւ ես
նրանից վախենում եմ. գուցէ նա գայ եւ
հարուածի ինձ ու մայրերին՝ իրենց
երեխաների հետ: 12 Դու ասացիր, թէ՝
"Բարիք կ'անեմ քեզ եւ քո սերունդները
աւազի պէս կը բազմացնեմ, այնքան, որ
անթիւ ու անհամար կը լինեն նրանք"»:
13 Եւ նա այդ գիշեր քնեց այդտեղ: Նա
բերածներից իր ձեռքով, իբրեւ ընծայ,
իր եղբայր Եսաւին ուղարկեց 14 երկու
հարիւր այծ, քսան նոխազ, երկու հա-
րիւր մաքի, քսան խոյ, 15 երեսուն ուղտ՝
իրենց նորածին ձագերի հետ, քառասուն
կով եւ տասը ցուլ, քսան էշ եւ տասը
քուռակ: 16 Նա իր ծառաներին յանձնեց
հօտերն առանձին-առանձին եւ ասաց
նրանց. «Դուք գնացէ՛ք ինձնից առաջ,
հօտերն առանձին-առանձին՝ իրարից
հեռու կը տանէք»: 17 Նա առաջինին
պատուիրեց՝ ասելով. «Եթէ քեզ հան-
դիպի իմ եղբայր Եսաւը եւ հարցնի, թէ՝
"Ո՞վ ես եւ ո՞ւր ես գնում, ո՞ւմ է
պատկանում այն, ինչ քո առջեւից է
գնում", 18 կ'ասես. "Քո ծառայ Յակոբի
ընծաներն են, որ նա ուղարկում է իր
տէր Եսաւին, իսկ ինքը գալիս է մեր
ետեւից"»: 19 Նա պատուիրեց առաջինին,
երկրորդին, երրորդին եւ բոլոր նրանց,
ովքեր հօտերի հետ գնում էին առջեւից,
եւ ասաց. "Երբ կը հանդիպէք Եսաւին,
կ'ասէք նրան այն, ինչ ասացի ես ձեզ:
20 Դուք կ'ասէք. "Ահա քո ծառայ Յա-
կոբը գալիս է մեր ետեւից"»: Նա ինքն
իրեն մտածում էր. «Նրան կը մեղմեմ
այն ընծաներով, որ ուղարկում եմ
ինձնից առաջ, եւ ապա անձամբ կը
հանդիպեմ նրան, թերեւս բարեացակամ
լինի իմ նկատմամբ»: 21 Ընծաներն
ուղարկուեցին իրենից առաջ, իսկ ինքն
այդ գիշեր քնեց այդտեղ՝ Բանակա-
տեղիում: 22 Նոյն գիշերը վեր կենալով՝
նա առաւ իր երկու կանանց, երկու
աղախիններին ու տասնմէկ որդիներին,
անցկացրեց Յոբոկ գետի ծանծաղուտով:
23 Նա նրանց ու իրեն պատկանող ամէն
ինչ վերցրած՝ անցկացրեց գետով:

ՅԱԿՈԲԸ ԳՕՏԵՄԱՐՏՈՒՄ Է ՓԱՆՈՒԷԼՈՒՄ

24 Յակոբը մնաց միայնակ: Մի մարդ
նրա հետ մարտնչեց մինչեւ առաւօտ:
25 Երբ մարդը տեսաւ, որ չի կարո-
ղանում յաղթել նրան, կռուի ընթացքում
բռնեց Յակոբի ազդրի ջլերը եւ
անզգայացրեց դրանք: 26 Մարդն ասաց
նրան. «Թո՛յլ տուր գնամ, որովհետեւ
արդէն լուսացաւ»: Յակոբը պատաս-

խանեց. «Թոյլ չեմ տայ, որ գնաս, մինչեւ ինձ չօրհնես»: 27 Մարդն ասաց նրան. «Ի՞նչ է քո անունը»: Նա պատասխանեց նրան՝ Յակոբ: 28 Մարդն ասաց նրան. «Այսուհետեւ քեզ Յակոբ թող չկոչեն, այլ Իսրայէլ թող լինի քո անունը, որովհետեւ դիմացար Աստծու հետ մաքառելիս, ուստի մարդկանց նկատմամբ էլ ուժեղ լինես»: 29 Յակոբը հարց տուեց. «Ասա՛ ինձ քո անունը»: Նա ասաց. «Ինչո՞ւ ես հարցնում իմ անունը»: Եւ նա տեղնուտեղը օրհնեց նրան: 30 Յակոբն այդ տեղն անուանեց Երեւումն Աստուծոյ, որովհետեւ, – ասում է, – Աստծուն տեսայ դէմ առ դէմ, եւ փրկուեց հոգիս»: 31 Երբ անյայտացաւ Աստծու տեսիլքը, նրա վրայ արեւ ծագեց, իսկ նա իր ազդրի պատճառով կաղալով էր գնում: 32 Դրա համար էլ իսրայէլացիները մինչեւ օրս կենդանիների ազդրի ջլերը չեն ուտում, քանի որ Աստուած բռնել էր Յակոբի ազդրի ջլերը եւ անզգայացրել դրանք:

ՅԱԿՈԲԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԵՍԱՒԻՆ

33 *Յակոբն աչքերը բարձրացրեց ու տեսաւ իր եղբայր Եսաւին, որ գալիս էր չորս հարիւր հոգով: Յակոբն իր երեխաներին բաժանեց Լիայի, Ռաքէլի եւ երկու աղախինների միջեւ: 2 Նա երկու աղախիններին ու նրանց որդիներին ուղարկեց առջեւից, Լիային ու նրա որդիներին՝ նրանցից յետոյ, իսկ Ռաքէլին ու Յովսէփին՝ ամենավերջում: 3 Ինքն անցաւ նրանցից առաջ եւ եօթն անգամ գետին խոնարհուեց մինչեւ իր եղբօրը մօտենալը: 4 Եսաւն ընդառաջ գնաց նրան, գրկեց եւ համբուրեց, փաթաթուեց վզին եւ համբուրեց նրան: Նրանք երկուսով լաց եղան: 5 Եսաւը վեր նայելով տեսաւ կանանց ու երեխաներին եւ հարց տուեց. «Սրանք քո ի՞նչն են»: Նա պատասխանեց. «Իմ երեխաներն են, որոնցով Աստուած ողորմեց ինձ՝ քո ծառային»: 6 Աղախիններն ու նրանց որդիները մօտեցան ու խոնարհուեցին նրա առաջ: 7 Մօտեցան նաեւ Լիան ու իր որդիները եւ խոնարհուեցին նրա առաջ: Յետոյ մօտեցան Յովսէփն ու Ռաքէլը եւ խոնարհուեցին նրա առաջ: 8 Եսաւը հարց տուեց. «Ի՞նչ է այս մեծ շարանը, որ ինձ հանդիպեց»: Նա պատասխանեց. «Որպէսզի քո ծառան շնորհ գտնի քո առաջ»: 9 Եսաւն ասաց. «Ես էլ շատ ունեմ, եղբա՛յր, քոնը քեզ թող մնայ»: 10 Յակոբն ասաց. «Այդպէս չի լինի: Եթէ շնորհ եմ գտել քո առաջ, ուրեմն ընդունի՛ր ինձնից ընծաները. որովհետեւ քո դէմքը տեսայ այնպէս, ինչպէս մարդ Աստծու դէմքը տեսնի: Ուրախացի՛ր ինձ հետ 11 եւ ընդունի՛ր իմ ընծաները, որ մատուցեցի քեզ, որովհետեւ ողորմեց ինձ Աստուած, եւ ես ամէն ինչ ունեմ»: Յակոբն ստիպեց նրան, եւ սա ընդունեց: 12 Եսաւն ասաց. «Ելնենք գնանք ուղիղ ճանապարհով»: 13 Յակոբն ասաց նրան. «Իմ տէրն ինքը գիտի, որ երեխաներս փոքր են, իսկ ոչխարն ու արջառը արդէն ծնել են: Եթէ դրանց ստիպեմ մի օրուայ ճանապարհ գնալ, ապա բոլոր անասունները կը սատկեն: 14 Ուրեմն իմ տէրն իր ծառայի առջեւից թող գնայ, իսկ ես ըստ իմ կարողութեան ու անասունների ընթացքի, ըստ իմ երեխաների զօրութեան կը շարժուեմ, մինչեւ որ Սէիրում հասնեմ իմ տիրոջը»: 15 Եսաւը հարցրեց. «Քեզ մօտ թողնե՞մ ինձ հետ եղած մարդկանց մի մասին»: Սա պատասխանեց. «Ի՞նչ կարիք կայ: Բաւական է, որ շնորհ գտայ քո առաջ, տէ՛ր»: 16 Այդ օրը Եսաւը իր ճանապարհով վերադարձաւ Սէիր, 17 իսկ Յակոբը գնաց դէպի վրանը, այնտեղ իր համար տներ կառուցեց, իսկ իր հօտերի համար փարախ շինեց: Դրա համար էլ այդ վայրը կոչեց Վրան:*

18 Վերադառնալով Ասորիների Միջագետքից՝ Յակոբն եկաւ սիկիմացիների Սաղէմ քաղաքը, որը գտնուում էր Քանանացիների երկրում, եւ բնակուեց քաղաքի դիմաց: 19 Նա Սիւքեմի հայր Եմորից հարիւր ոչխարով մի կալուածք գնեց, ուր եւ խփեց իր վրանը: 20 Նա այնտեղ զոհասեղան կառուցեց եւ երկրպագեց Իսրայէլի Աստծուն:

ԴԻՆԱՅԻ ԲՌՆԱԲԱՐՈՒՄԸ

34 *Լիայի՝ Յակոբի համար ծնած դուստրը՝ Դինան, ելաւ այդ կողմի աղջիկներին տեսնելու: 2 Նրան տեսաւ քոռեցի Եմորի որդի Սիւքեմը, որը երկրի իշխանն էր, առեւանգեց նրան, պառկեց նրա հետ եւ պղծեց նրան: 3 Սիւքեմը, ամբողջ հոգով կապուելով Յակոբի դուստր Դինայի հետ, սիրեց աղջկան եւ քաղցրութեամբ խօսեց նրա հետ: 4 Սիւքեմը, դիմելով իր հայր Եմորին, ասաց. «Այս աղջկան ինձ համար կնութեան ա՛ռ»: 5 Յակոբն իմացաւ, որ Եմորի որդին պղծել է իր դուստր Դինային: Այդ ժամանակ իր որդիները դաշտում՝ անասունների մօտ էին: Յակոբը լուռ մնաց մինչեւ նրանց գալը: 6 Սիւքեմի հայր Եմորը գնաց Յակոբի մօտ՝ հետը խօսելու: 7 Դաշտից եկան նաեւ Յակոբի որդիները: Երբ տղամարդիկ իմացան կատարուածի մասին, զայրացան: Նրանք շատ տխրեցին, որովհետեւ Սիւքեմը, Յակոբի դստեր ծոցը մտնելով, մեծ նախատինք էր հասցրել Իսրայէլին: Դա չպէտք է լինէր: 8 Եմորը նրանց դիմելով՝ ասաց. «Իմ որդի Սիւքեմը ամբողջ հոգով սիրել է ձեր դստերը: Արդ, աղջկան տուէ՛ք նրան կնութեան եւ խնամութիւն արէ՛ք մեզ հետ. 9 ձեր դուստրերին տուէ՛ք մեզ եւ մեր դուստրերին առէ՛ք ձեր որդիներին: 10 Բնակուեցէ՛ք մեզ հետ: Մեր ընդարձակ երկիրը փռուած է ձեր առաջ, բնակուեցէ՛ք այնտեղ, վաստակեցէ՛ք եւ կալուածքներ ձեռք բերէք դրա մէջ»: 11 Սիւքեմն ասաց նրա հօրն ու եղբայրներին. «Թող շնորհ գտնեմ ձեր առաջ: Ինչ էլ պահանջէք, կը տանք: 12 Ինչքան ուզէք, աւելացրէ՛ք պարգեւագինը եւ օժիտը, որքան էլ ասէք, կը տամ, միայն թէ այդ աղջկան տուէ՛ք ինձ կնութեան»: 13 Յակոբի որդիները խորամանկութեամբ պատասխանեցին Սիւքեմին ու նրա հայր Եմորին, քանի որ Սիւքեմը պղծել էր իրենց քոյր Դինային: 14 Լիայի որդիները՝ Դինայի եղբայրներ Շմաւոնն ու Ղեւին, ասացին. «Չենք կարող անել այդ բանը՝ մեր քրոջը տալ անթլփատ մի մարդու, որովհետեւ դա մեզ համար նախատինք կը լինի: 15 Մենք կը համակերպուենք ձեզ հետ եւ կը բնակուենք ձեր երկրում միայն այն դէպքում, եթէ դուք նմանուէք մեզ՝ թլփատուեն ձեր բոլոր արու զաւակները: 16 Միայն այն ժամանակ մեր դուստրերին կը տանք ձեզ եւ ձեր դուստրերից մեզ կին կ'առնենք: 17 Մենք կը բնակուենք ձեզ հետ եւ կը լինենք իբրեւ մէկ ժողովուրդ: Իսկ եթէ չլսէք մեզ՝ չթլփատուէք, մեր դուստրերին կ'առնենք ու կը հեռանանք»: 18 Եմորին ու Եմորի որդի Սիւքեմին հաճելի թուացին այս խօսքերը: 19 Երիտասարդը չյապաղեց անել այդ բանը, որովհետեւ շատ էր սիրում Յակոբի դստերը: Նա իր հօր ընտանիքի անդամների մէջ ամենից աւելի յարգանք էր վայելում: 20 Եմորն ու իր որդի Սիւքեմը եկան իրենց քաղաքի դարպասի մօտ եւ, դիմելով իրենց քաղաքի տղամարդկանց, ասացին նրանց. 21 «Այդ մարդիկ հաշտ ու խաղաղ են մեզ հետ: Արդ, թող բնակուեն այս երկրում եւ վաստակ ձեռք բերեն այստեղ, որովհետեւ այս ընդարձակ երկիրը փռուած է նրանց առաջ: Նրանց դուստրերին մեզ կին առնենք եւ մեր դուստրերին տանք նրանց: 22 Այդ մարդիկ մեզ նման լինելով՝ կը բնակուեն մեզ հետ, եւ մենք կը լինենք իբրեւ մէկ ժողովուրդ միայն այն պայմանով, որ մեր բոլոր զաւակները թլփատուեն, ինչպէս որ իրենք են թլփատուած: 23 Միթէ այդ ձեւով նրանց ունեցուածքը, նրանց անասունը եւ նրանց չորքոտանին մերը չե՞ն լինի: Եթէ նրանց այդ պայմանն ընդունենք, նրանք կը բնակուեն մեզ հետ»: 24 Եմորի ու նրա որդի Սիւքեմի հետ համաձայնեցին բոլոր նրանք, ովքեր անցնում էին իրենց քաղաքի դարպասով, եւ թլփատուեցին բոլոր տղամարդիկ, ովքեր անցնում էին այդ քաղաքի դարպասով: 25 Երրորդ օրը, երբ դեռ նրանք ցաւերի մէջ էին, Յակոբի երկու որդիները՝ Դինայի եղբայրներ Շմաւոնն ու Ղեւին, ամէն մէկն առնելով իր սուրը, կազմ ու պատրաստ մտան քաղաքն ու կոտորեցին բոլոր արուներին: 26 Նրանք սրի քաշեցին նաեւ Եմորին ու նրա որդի Սիւքեմին, իսկ Սիւքեմի տնից առան*

Դինային ու գնացին: 27 Յակոբի միւս որդիները յարձակուեցին վիրաւորների վրայ եւ կողոպտեցին այն քաղաքը, ուր պղծել էին իրենց քոյր Դինային: 28 Նրանք վերցրին քաղաքում եւ դաշտում գտնուող նրանց արջառն ու ոչխարը, նրանց էշերը, 29 գերեվարեցին ողջ մնացած մարդկանց ու նրանց կանանց, աւար առան նրանց ամբողջ գոյքը: Նրանք յափշտակեցին ե՛ւ քաղաքում, ե՛ւ տներում եղած ամէն ինչ: 30 Այն ժամանակ Յակոբն ասաց Շմաւոնին ու Ղեւիին. «Դուք ինձ ատելի դարձրիք: Ես երկրի բոլոր բնակիչներին՝ քանանացիներին ու փերեզացիներին անխիղճ մարդ պիտի թուամ: Մենք սակաւաթիւ ենք: Եթէ նրանք հաւաքուեն, ինձ վրայ յարձակուեն ու հարուածեն ինձ, ապա կ'ոչնչանամ ե՛ւ ես, ե՛ւ իմ տոհմը»: 31 Նրանք պատասխանեցին. «Հապա ինչպէ՞ս է, որ նրանք իբրեւ բոզ վարեցին մեր քրոջը»:

ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆՈՒՄ Է ՅԱԿՈԲԻՆ

35 Աստուած ասաց Յակոբին. «Վե՛ր կաց գնա՛ բնակավայրդ՝ Բեթէլ, բնակուի՛ր այդ վայրում եւ այնտեղ զոհասեղան կառուցի՛ր Աստծուն, որ երեւաց քեզ քո եղբայր Եսաւից փախչելու ժամանակ»: 2 Յակոբն ասաց իր տնեցիներին ու իր հետ եղած բոլոր մարդկանց. «Վերացրէ՛ք ձեր միջից ձեզ մօտ եղած օտար աստուածները, մաքրուեցէ՛ք, փոխեցէ՛ք ձեր զգեստները, 3 որ վեր կենանք գնանք Բեթէլ, այնտեղ զոհասեղան կառուցենք Աստծուն, որը լսեց ինձ նեղ օրերին, ինձ հետ եղաւ եւ ինձ պահպանեց իմ ուղեւորութեան ընթացքում»: 4 Նրանք Յակոբին յանձնեցին իրենց մօտ եղած օտար աստուածներն ու իրենց ականջօղերը: Յակոբը դրանք թաղեց բեւեկնի ծառի տակ, Սիկիմում, այնպէս, որ դրանք կորած են մինչեւ այսօր: 5 Իսրայէլը չուեց Սիկիմից: Աստծու երկիւղը պատեց դրա շուրջը գտնուող քաղաքները, եւ նրանց բնակիչները չհետապնդեցին Իսրայէլի որդիներին: 6 Յակոբն ինքը եւ իր հետ եղած ամբողջ ժողովուրդը եկան Լուզ, այսինքն՝ Բեթէլ, որը գտնուում է Քանանացիների երկրում: 7 Նա այնտեղ զոհասեղան շինեց, եւ այդ վայրը կոչեց Բեթէլ, որովհետեւ այնտեղ էր, որ Աստուած երեւացել էր նրան, երբ նա փախչում էր իր եղբայր Եսաւից:

8 Մեռաւ Դեբորան՝ Ռեբեկայի դայեակը, եւ թաղուեց Բեթէլից ներքեւ, կաղնու տակ: Յակոբն այդ վայրի անունը դրեց Սգոյ կաղնի: 9 Աստուած երեւաց Յակոբին, երբ սա Լուզում էր: Երբ Յակոբը Ասորիների Միջագետքից եկաւ Լուզ, Աստուած օրհնելով նրան՝ 10 ասաց. «Քո անունը Յակոբ է, բայց այլեւս Յակոբ չես կոչուելու, այլ Իսրայէլ կը լինի քո անունը»: Եւ նա կոչուեց Իսրայէլ: 11 Աստուած ասաց նրան. «Ես եմ քո ամենակարող Աստուածը: Աճի՛ր եւ բազմացի՛ր: Ցեղեր ու ցեղախմբեր պիտի ծնուեն քեզնից, եւ թագաւորներ պիտի ելնեն քո կողից: 12 Այն երկիրը, որ տուել եմ Աբրահամին ու Իսահակին, քեզ եմ տալու, քոնը թող լինի: Քեզնից յետոյ քո սերնդին եմ տալու այդ երկիրը»: 13 Եւ Աստուած վերացաւ նրանից, այն վայրից, որտեղ խօսել էր նրա հետ, 14 իսկ Յակոբը կոթող կանգնեցրեց այն տեղում, որտեղ խօսել էր նրա հետ, քարէ կոթող, նրա վրայ գինի թափեց, իւղով օծեց կոթողը 15 եւ այն տեղը, որտեղ Աստուած խօսել էր իր հետ, կոչեց Բեթէլ:

ՌԱՔԷԼԻ ՄԱՀԸ

16 Նա գնաց Բեթէլից, եւ երբ մօտեցաւ Քաբրաթա երկրին†, որ մտնի Եփրաթա, Ռաքէլը ծննդաբերեց: 17 Նրա ծննդաբերութիւնը դժուարին եղաւ, եւ երկունքի ժամանակ մանկաբարձն ասաց նրան. «Արիացի՛ր, որովհետեւ էլի տղայ ես ունենում»: 18 Հոգին աւանդելիս, քանի որ մեռնում էր, նա որդու անունը դրեց Իմ վշտերի որդի, իսկ հայրը նրան կոչեց Բենիամին: 19 Մեռաւ Ռաքէլն ու թաղուեց Եփրաթայի՝ նոյն ինքը Բեթղեհէմի ճանապարհի վրայ: 20 Յակոբը նրա շիրիմի վրայ կոթող կանգնեցրեց: Դա մինչեւ այսօր էլ յայտնի է իբրեւ Ռաքէլի շիրիմի կոթող:

†Եբրայերէնում չկայ մօտեցաւ Քաբրաթա երկրին:

21 Իսրայէլը գնաց եւ իր վրանը խփեց Գադերի աշտարակից այն կողմ: 22 Երբ Իսրայէլը բնակուեց այդ երկրում, Ռուբէնը գնաց ու պառկեց իր հօր հարճի՝ Բալլայի հետ: Իսրայէլն իմացաւ, եւ այդ բանը վատ թուաց նրան:

ՅԱԿՈԲԻ ՈՐԴԻՆԵՐԸ
(Ա Մնաց. 2.1-2)

Յակոբն ունէր տասներկու որդի: 23 Լիայից ծնուած որդիներն էին՝ Յակոբի անդրանիկ որդին՝ Ռուբէնը, Շմաւոնը, Ղեւիին, Յուդան, Իսաքարը, Զաբուղոնը: 24 Ռաքէլից ծնուած որդիներն էին՝ Յովսէփն ու Բենիամինը: Ռաքէլի նաժիշտ Բալլայից ծնուած որդիներն էին՝ Դանն ու Նեփթաղիմը: 25 Լիայի նաժիշտ Զելփայից ծնուած որդիներն էին՝ Գադն ու Ասերը: 26 Ահա սրանք են Յակոբի որդիները, որ նա ունեցաւ Ասորիների Միջագետքում:

ԻՍԱՀԱԿԻ ՄԱՀԸ

27 Յակոբը եկաւ իր հայր Իսահակի մօտ, Մամբրէի կողմերում դաշտային մի քաղաք, այսինքն՝ Քեբրոն, որ գտնուում է Քանանացիների երկրում, ուր պանդխտեցին Աբրահամն ու Իսահակը: 28 Իսահակն ապրեց հարիւր ութսուն տարի: 29 Իսահակը հոգին աւանդեց ու մեռաւ տարիքն առած, խոր ծերութեան մէջ, նա գնաց միացաւ իր նախնիներին: Նրան թաղեցին իր որդիները՝ Եսաւն ու Յակոբը:

ԵՍԱՒԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1.34-37)

36 Այս է Եսաւի, այսինքն՝ Եդոմի ծննդաբանութիւնը: 2 Եսաւը կին առաւ քանանացիների դուստրերից Ադդային՝ քետացի Ելոնի դստերը, Ոլիբամային՝ խեւացի Սեբեգոնի որդի Անայի դստերը, 3 եւ Բասեմաթին՝ Իսմայէլի դստերը, որը Նաբէութի քոյրն էր: 4 Ադդան Եսաւի համար ծնեց Ելիփազին, իսկ Բասեմաթը ծնեց Ռագուէլին 5 Ոլիբաման ծնեց Յէուսին, Եգղոմին ու Կորխին: Սրանք Եսաւի այն որդիներն են, որ նա ունեցաւ Քանանացիների երկրում: 6 Եսաւն առաւ իր կանանց, տղաներին ու աղջիկներին, իր տան բոլոր մարդկանց, ողջ ունեցուածքն ու անասունները, այն ամէնը, ինչ ստացել, ձեռք էր բերել Քանանացիների երկրում, եւ հեռացաւ իր եղբայր Յակոբի մօտից՝ Քանանացիների երկրից, 7 որովհետեւ նրանց անասուններն այնքան շատ էին, որ պանդխտութեան երկիրը ի վիճակի չէր նրանց բաւարարելու: 8 Ուստի Եսաւը՝ նոյն ինքը Եդոմը, հաստատուեց Սէիր լերան վրայ:

9 Այս է Եսաւի՝ Եդոմայեցիների նախահօր սերունդը Սէիր լերան վրայ: 10 Սրանք են Եսաւի որդիների անունները. Ելիփազ՝ Եսաւի կին Ադդայի որդին, Ռագուէլ՝ Եսաւի կին Բասեմաթի որդին: 11 Ելիփազի որդիներն են՝ Թեմանը, Ոմարը, Սոփարը, Գոթոմն ու Կենէզը: 12 Թամարը Ելիփազի՝ Եսաւի որդու հարճն էր եւ Ելիփազի համար ծնեց Ամաղէկին: Սրանք Ադդայի՝ Եսաւի կնոջ որդիներն են:

13 Ռագուէլի որդիներն են՝ Նաքոթը, Զարեհը, Ամման եւ Մեզան: Սրանք Բասեմաթի՝ Եսաւի կնոջ որդիներն են:

14 Ոլիբամայի՝ Սեբեգոնի որդի Անայի դստեր եւ Եսաւի կնոջ որդիներն են Յէուսը, Եգղոմն ու Կորխը: 15 Եսաւի ցեղապետ յետնորդներն են. Եսաւի անդրանիկ որդու՝ Ելիփազի որդիները՝ ցեղապետ Թեմանը, ցեղապետ Ոմարը, ցեղապետ Սոփարը, ցեղապետ Կենէզը, 16 ցեղապետ Կորխը, ցեղապետ Գոթոմը, ցեղապետ Ամաղէկը: Սրանք Ադդայից ծնուած Ելիփազի ցեղապետերն են Եդոմացիների երկրում: 17 Եսաւի որդի Ռագուէլի որդիներն են՝ ցեղապետ Նաքոթը, ցեղապետ Զարեհը, ցեղապետ Ամման, ցեղապետ Մոզէն: Սրանք Եսաւի կին Բասեմաթից ծնուած Ռագուէլի ցեղապետերն են Եդոմի երկրում: 18 Եսաւի կին Ոլիբամայի որդիներն են՝ ցեղապետ Յէուսը, ցեղապետ Եգղոմը, ցեղապետ Կորխը: Սրանք Եսաւի կին՝ Անայի դուստր Ոլիբամայից ծնուած ցեղապետերն են: 19 Սրանք են Եսաւի որդիները, եւ սրանք են նրանց ցեղապետերը՝ Եդոմի որդիները:

ՍԷԻՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Ա Մնաց. 1. 38-42)

20 Սէիրում[†] բնակուող քոռեցի Սէիրի
որդիներն են՝ Ղոտանը, Սեբաղը, Սեբե-
գոնը, Անան, 21 Դեսոնը, Ասերը եւ Ռի-
սոնը: Սրանք քոռեցու՝ Սէիրի որդու ցե-
ղապետերն են Եդոմի երկրում: 22 Ղո-
տանի որդիներն են Քոռին, Եմման, իսկ
Ղոտանի քոյրը Թամնան էր: 23 Սոբաղի
որդիներն են՝ Գաղոմը, Մանաքաթը,
Գեբաղը, Սոփարը եւ Ոնանը: 24 Սեբե-
գոնի որդիներն են՝ Այիէն եւ Ոնանը: Սա
այն Ոնանն է, որ անապատում աղբիւր
գտաւ, երբ արածեցնում էր իր հայր
Սեբեգոնի էշերը: 25 Անայի որդիներն
են՝ Դեսոնը եւ Ոլիբաման՝ Անայի
դուստրը: 26 Դեսոնի որդիներն են՝ Ա-
մադանը, Եսբանը, Յեթրանը եւ Քառա-
նը: 27 Ասերի որդիներն են՝ Բալլանը,
Զուկանը, Ոնիկանը եւ Ուկամը: 28 Ռի-
սոնի որդիներն են՝ Ոսը եւ Առանը:
29 Քոռի ցեղապետերն են՝ ցեղապետ
Ղոտանը, ցեղապետ Սոբաղը, ցեղապետ
Սեբեգոնը, ցեղապետ Անան, 30 ցեղա-
պետ Դեսոնը, ցեղապետ Ասերը, ցեղա-
պետ Ռիսոնը: Սրանք Քոռի ցեղապե-
տերն են իրենց գաւառներում, Եդոմի
երկրում:

ԵԴՈՄԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ
(Ա Մնաց. 1. 43-54)

31 Սրանք են այն թագաւորները,
որոնք թագաւորեցին Եդոմայեցիների
երկրում, երբ դեռ որեւէ թագաւոր չէր
թագաւորում Իսրայէլում: 32 Եդոմում
թագաւորեց Սեպփորի որդի Բաղակը.
նրա քաղաքի անունը Դեննաբա էր:
33 Մեռաւ Բաղակը, եւ նրա փոխարէն
թագաւորեց Զարեհի որդի Յոբաբը, որ
Բոսորայից էր: 34 Մեռաւ Յոբաբը, եւ
նրա փոխարէն թագաւորեց Ասոմը, որը
Թեմանացիների երկրից էր: 35 Մեռաւ
Ասոմը, եւ նրա փոխարէն թագաւորեց
Բարադի որդի Ադադը: Սա էր, որ
Մովաբացիների դաշտում կոտորեց
Մադիամին: Նրա քաղաքի անունը
Գեթէմ էր: 36 Մեռաւ Ադադը, եւ նրա
փոխարէն թագաւորեց Սամաղան՝ Մա-
սեկկայից: 37 Մեռաւ Սամաղան, եւ նրա
փոխարէն թագաւորեց Սաուղը՝ Ռոբո-
թից, որը գտնւում է գետի եզերքին:
38 Մեռաւ Սաուղը, եւ նրա փոխարէն
թագաւորեց Ողոբորի որդի Բալլայե-
նոնը: 39 Մեռաւ Ողոբորի որդի Բալլա-
յենոնը, եւ նրա փոխարէն թագաւորեց
Բարադի որդի Ադադը: Նրա քաղաքի
անունը Փոգով էր, իսկ նրա կնոջ
անունը՝ Մետաբէէլ: Սա Մազոբի որդի
Մատրէթի դուստրն էր: 40 Սրանք են
Եսաւի սերունդների, Եսաւի ցեղապե-
տերի անուններն ըստ իրենց ցեղերի,
ըստ իրենց վայրերի՝ իրենց աշխարհում,
եւ ըստ իրենց տոհմերի, համաձայն
նրանց անունների. ցեղապետ Թամանա,
ցեղապետ Ղոտան, ցեղապետ Յեթաթ,
41 ցեղապետ Ոլիբամասա, ցեղապետ
Հեղա, ցեղապետ Փենոն, 42 ցեղապետ
Կենէզ, ցեղապետ Թեման, ցեղապետ
Մազար, 43 ցեղապետ Մագեդիէլ, ցե-
ղապետ Զաբոյին: Սրանք եդոմայեցի-
ների ցեղապետերն են ըստ երկրում
իրենց ստացած բնակավայրերի, եւ այս
Եսաւն է, որ դարձաւ Եդոմի նախա-
հայրը:

ՅՈՎՍԷՓԸ ԵՒ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

37 Յակոբը բնակւում էր Քանա-
նացիների երկրում՝ այնտեղ, ուր
պանդխտել էր իր հայրը[†]: 2 Յակոբի
սերունդը հետեւեալն է. Յովսէփը
տասնեօթը տարեկան էր, երբ իր եղ-
բայրների հետ ոչխարներ էր արածեց-
նում: Իր հօր կանանց՝ Բալլայի որդի-
ներից եւ Զելփայի որդիներից փոքր էր
նա: Որդիներն իրենց հայր Իսրայէլի
մօտ վատաբանում էին Յովսէփին[‡],
3 բայց Իսրայէլը Յովսէփին աւելի շատ
էր սիրում, քան մնացած բոլոր որդի-
ներին, որովհետեւ Յովսէփը նրա ծեր
տարիքում ծնուած որդին էր: Նա նրա
համար կարել էր տուել ծաղկազարդ մի
պատմուճան: 4 Երբ նրա եղբայրները
տեսան, որ իրենց հայրը նրան սիրում է
իր բոլոր որդիներից աւելի, ատեցին
նրան եւ նրա հետ հանդիստ խօսել չէին

[†]Եօթանասնից բնագրում՝ երկրում:

[†]Մի քանի օտարալեզու հրատարակութիւն-
ներում այս համարը ԼԶ գլխի 44-րդ համարն է:

[‡]Եբրայերէնում՝ Յովսէփը չարախօսում էր:

կարողանում: 5 Երազ տեսաւ Յովսէփն
ու այն պատմեց իր եղբայրներին: Դրա
համար եղբայրները առաւել եւս ատե-
ցին նրան: 6 Նա ասաց նրանց. «Լսեցէ՛ք
իմ տեսած երազը: 7 Թւում էր, թէ մի
դաշտում հասկերի խուրձ էինք կապում:
Իմ խուրձը բարձրացաւ, կանգնեց ուղիղ,
իսկ ձեր խրձերը դարձան ու երկրպա-
գեցին իմ խրձին»: 8 Եղբայրներն ասա-
ցին նրան. «Միթէ որպէս թագաւո՞ր
պիտի թագաւորես մեզ վրայ, կամ տէր
դառնալով պիտի տիրե՞ս մեզ»: Եւ
նրանք առաւել եւս ատեցին նրան այդ
երազների ու խօսքերի համար: 9 Նա
տեսաւ մի այլ երազ եւս եւ այն
պատմեց իր հօրն ու եղբայրներին: Նա
ասաց. «Ահա մի այլ երազ եւս տեսայ:
Իբրեւ թէ արեգակն ու լուսինը եւ
տասնմէկ աստղեր երկրպագում էին
ինձ»: 10 Հայրը սաստեց նրան ու ասաց.
«Այդ ի՞նչ երազ է, որ տեսել ես: Հիմա
ես, քո մայրը եւ եղբայրները պիտի
գանք եւ երկրպագե՞նք քեզ»: 11 Վրդո-
վուեցին նրա եղբայրները, բայց հայրը
մտքում պահեց նրա պատմածը:

ՅՈՎՍԷՓԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՒ ՏԱՐՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍ

12 Նրա եղբայրները գնացին Սիւքեմ՝
իրենց հօր ոչխարներն արածեցնելու:
13 Իսրայէլն ասաց Յովսէփին. «Չէ՞ որ
հիմա քո եղբայրները ոչխարներ են
արածեցնում Սիւքեմում: Արի՛ քեզ
ուղարկեմ նրանց մօտ»: 14 Յովսէփն ա-
սաց նրան. «Ես պատրաստ եմ»: Իսրա-
յէլն ասաց նրան. «Գնա տե՛ս, թէ ողջ-
առո՞ղջ են քո եղբայրներն ու ոչխար-
ները, եւ ինձ լուր բեր»: Եւ Յակոբը
նրան ուղարկեց այնտեղ Քեբրոնի հով-
տից: 15 Յովսէփը եկաւ Սիւքեմ եւ մի
մարդ տեսաւ նրան դաշտում մոլո-
րուած: Սա հարցրեց. «Ի՞նչ ես
փնտռում»: 16 Նա պատասխանեց. «Իմ
եղբայրներին եմ փնտռում: Ասա՛ ինձ,
որտե՞ղ են նրանք ոչխարներ արածեց-
նում»: 17 Մարդն ասաց նրան. «Նրանք
այստեղից քոչեցին գնացին, բայց ես
լսեցի, որ նրանք ասում էին. "Գնանք
Դոթայիմ"»: Յովսէփը գնաց իր եղբայր-
ների ետեւից եւ նրանց գտաւ Դոթա-
յիմում: 18 Նրա եղբայրները հեռուից
առաջինը իրենք նկատեցին նրան, երբ
նա դեռ չէր մօտեցել իրենց: Նրանք
իրար մէջ չար խորհուրդ արեցին, որ
սպանեն նրան: 19 Իւրաքանչիւրն իր
եղբօրը դիմելով՝ ասում էր: 20 «Ահա
երազատեսը գալիս է: Եկէք սպանենք
նրան, նետենք այստեղի հորերից մէկի
մէջ եւ ասենք, թէ՝ "Վայրի գազան է
կերել նրան": Այն ժամանակ տեսնենք,
թէ ի՞նչ կը լինեն նրա երազները»:
21 Երբ Ռուբէնը լսեց դա, նրանց ձեռքից
փրկեց նրան. նա ասաց. «Չսպանենք
նրան»: 22 Ռուբէնն աւելացրեց. «Չթա-
փենք նրա արիւնը, այլ նետեցէ՛ք նրան
այս անապատի հորերից մէկի մէջ: Ձեռք
մի՛ տուէք նրան»: Դա ասում էր, որ-
պէսզի նրան փրկի նրանց ձեռքից եւ
հասցնի իր հօրը: 23 Երբ Յովսէփն եկաւ
իր եղբայրների մօտ, նրանք նրա վրայից
հանեցին ծաղկազարդ պատմուճանը
24 եւ նրան նետեցին հորի մէջ: Հորը
դատարկ էր, մէջը ջուր չկար: 25 Նրանք
նստեցին հաց ուտելու: Աչքերը վեր
բարձրացնելով՝ տեսան, որ իսմայէլացի
ճանապարհորդներ են գալիս Գա-
ղաադից, ուղտերը խնկերով, ռետինով
ու խէժով բարձած, որպէսզի դրանք
տանեն Եգիպտոս: 26 Յուդան իր
եղբայրներին ասաց. «Ի՞նչ օգուտ, եթէ
սպանենք մեր եղբօրը եւ թաքցնենք նրա
արիւնը: 27 Եկէք նրան վաճառենք
իսմայէլացիներին, եւ մեր ձեռքը նրա
արեամբ չպղծուի, որովհետեւ ի վերջոյ
նա մեր եղբայրն է՝ նոյն միս ու
արիւնից»: Եւ իր եղբայրները լսեցին
նրան: 28 Այնտեղից անցնում էին մա-
դիանացի վաճառականներ: Եղբայրները
Յովսէփին քաշեցին-հանեցին հորից եւ
քսան դահեկանով վաճառեցին իսմայէ-
լացիներին: 29 Իսմայէլացիները Յովսէ-
փին տարան Եգիպտոս: Ռուբէնը վերա-
դարձաւ դէպի հորը եւ Յովսէփին հորի
մէջ չգտաւ: 30 Նա պատառոտեց իր
հագուստները, վերադարձաւ իր եղ-
բայրների մօտ ու ասաց. «Պատանին
այնտեղ չէ, ես այժմ ո՞ւր գնամ»:
31 Նրանք առան Յովսէփի պատմու-
ճանը, մի ուլ մորթեցին, պատմուճանը
թաթախեցին ուլի արեան մէջ, 32 ապա
ծաղկազարդ պատմուճանն ուղարկեցին

իրենց հօրն ու ասացին. «Գտել ենք սա, տե՛ս, քո՞ որդու պատմուճանն է սա, թէ՞ ոչ»: 33 Նա ճանաչեց այն ու ասաց. «Այս պատմուճանը իմ որդունն է, վայրի գազան է կերել նրան, մի գազան է յօշոտել Յովսէփին»: 34 Եւ նա պատառոտեց իր հագուստները, քուրձ կապեց իր մէջքին եւ երկար ժամանակ սուգ էր պահում իր որդու համար: 35 Հաւաքուեցին նրա բոլոր որդիներն ու դուստրերը, եկան նրան մխիթարելու, բայց չէր կամենում մխիթարուել: Նա ասում էր. «Ես այս սգով էլ կ'իջնեմ գերեզման՝ իմ որդու մօտ»: Եւ հայրը ողբաց նրան: 36 Իսկ մադիանացիները Եգիպտոսում Յովսէփին վաճառեցին փարաւոնի դահճապետին՝ ներքինի Պետափրէսին:

ՅՈՒԴԱՆ ԵՒ ԹԱՄԱՐԸ

38 Այդ ժամանակ Յուդան հեռացաւ իր եղբայրներից եւ եկաւ Իրաս անունով ոդոդոմացի մի մարդու մօտ: 2 Յուդան այնտեղ տեսաւ քանանացի մի մարդու դստերը, որի անունը Շաւա էր: Նա ամուսնացաւ նրա հետ եւ մտաւ նրա ծոցը: 3 Սա յղիացաւ, ունեցաւ որդի եւ անունը դրեց էր: 4 Շաւան նորից յղիացաւ, ունեցաւ որդի եւ նրա անունը դրեց Օնան: 5 Նա մի որդի էլ ունեցաւ եւ նրա անունը դրեց Սելոմ: Շաւան Քասբիում էր, երբ ծնեց նրան: 6 Յուդան իր անդրանիկ որդի Էրի համար մի կին առաւ, որի անունը Թամար էր: 7 Յուդայի անդրանիկ որդի Էրը հաճելի չթուաց Տիրոջը, եւ Աստուած առաւ նրա հոգին: 8 Յուդան ասաց Օնանին. «Մտի՛ր քո եղբօր կնոջ ծոցը, ամուսնացի՛ր նրա հետ եւ զաւա՛կ պարգեւիր քո եղբօրը»: 9 Երբ Օնանը հասկացաւ, որ զաւակը իրենը չի լինի, իր եղբօր կնոջ ծոցը մտնելիս սերմը թափեց գետին, որպէսզի զաւակ չտայ իր եղբօրը: 10 Օնանի արածը Աստծուն դուր չեկաւ, ուստի նրա հոգին էլ առաւ: 11 Յուդան ասաց իր հարս Թամարին. «Այրի՛ մնա քո հօր տանը, մինչեւ որ մեծանայ իմ որդի Սելոմը»: Յուդան վախենում էր, որ նա էլ կը մեռնի իր եղբայրների պէս: 12 Թամարը գնաց ու ապրեց իր հօր տանը: Շատ օրեր անցան, եւ մեռաւ Յուդայի կին Շաւան: Յուդան սգից դուրս գալուց յետոյ իր ոդոդոմացի հովիւ Իրասի հետ գնաց Թամնա՝ իր ոչխարները խուզելու: 13 Այդ մասին իմացաւ նրա հարս Թամարը, որովհետեւ նրան յայտնել էին, թէ՝ «Ահա քո սկեսրայրը գալիս է Թամնա՝ իր ոչխարները խուզելու»: 14 Թամարն իր վրայից հանեց այրիութեան զգեստները, քող նետեց երեսին, զարդարուեց ու նստեց Ենանի դարպասի մօտ, Թամնա տանող ճանապարհի վրայ, որովհետեւ տեսաւ, որ Սելոմը մեծացել է, բայց Յուդան իրեն կնութեան չի տալիս նրան: 15 Երբ Յուդան տեսաւ նրան, կարծեց, թէ բոզ է, որովհետեւ նա երեսը ծածկել էր, ուստի ինքը նրան չճանաչեց: 16 Իր ճանապարհը թեքելով՝ Յուդան գնաց դէպի նա եւ ասաց. «Թո՛յլ տուր մտնեմ ծոցդ»: Նա չգիտէր, որ դա իր հարսն է: Սա ասաց. «Ի՞նչ կը տաս ինձ, եթէ մտնես ծոցս»: 17 Նա պատասխանեց. «Քեզ իմ հօտից այծի ուլ բերել կը տամ»: Սա ասաց. «Իսկ մինչեւ բերել տալդ գրաւ կը տա՞ս»: Նա ասաց. «Ի՞նչ գրաւ տամ քեզ»: 18 Սա ասաց. «Տո՛ւր մատանիդ, մանեակդ եւ այն գաւազանը, որ քո ձեռքին է»: Եւ նա մտաւ նրա ծոցը: Թամարը յղիացաւ նրանից 19 եւ վեր կացաւ գնաց: Նա իր վրայից հանեց քողը եւ հագաւ այրիութեան իր զգեստները: 20 Յուդան իր ոդոդոմացի հովուի միջոցով այծի ուլ ուղարկեց, որպէսզի այդ կնոջից յետ ստանայ գրաւը, բայց հովիւը չգտաւ նրան: 21 Դիմելով տեղի մարդկանց՝ նա հարցրեց նրանց. «Ու՞ր է այն բոզը, որ Ենանում էր, ճանապարհի վրայ»: 22 Նրանք պատասխանեցին. «Այստեղ ոչ մի բոզ չի եղել»: Վերադառնալով Յուդայի մօտ՝ նա ասաց. «Նրան չգտայ: Տեղի մարդիկ էլ ասացին. "Այստեղ բոզ չկայ"»: 23 Յուդան ասաց. «Գրաւը նրան թող մնայ, միայն թէ ծաղրի առարկայ չդառնանք: Ես ուլը տուել եմ, որ տանես, դու էլ այդ կնոջը չես գտել»: 24 Երեք ամիս յետոյ Յուդային յայտնեցին, թէ՝ «Պոռնկացել է քո հարս Թամարը եւ ահա պոռնկանալու պատճառով յղիացել է»: Յուդան ասաց. «Դո՛ւրս հանեցէք նրան, թող ողջ-ողջ այրուի»:

25 Իրեն տանելու ճանապարհին Թամարը գրաւներն ուղարկեց իր սկեսրայրին՝ ասելով. «Ես յղիացել եմ այն տղամարդուց, որին պատկանում են այս գրաւները»: Եւ աւելացրեց. «Ճանաչի՛ր, ո՞ւմն են այս մատանին, մանեակը եւ գաւազանը»: 26 Յուդան ճանաչեց դրանք ու ասաց. «Նա աւելի արդար է, քան ես, որովհետեւ նրան իմ որդի Սելոմին կնութեան չտուեցի»: Եւ այլեւս չմտաւ նրա ծոցը: 27 Երբ Թամարը ծննդաբերելու վրայ էր, նրա որովայնում երկու զաւակներ կային: 28 Ծննդաբերութեան պահին զաւակներից մէկն աւելի շուտ հանեց իր ձեռքը: Մանկաբարձը նրա ձեռքին կարմիր թել կապեց ու ասաց. «Անդրանիկը սա թող լինի»: 29 Երբ սա ձեռքը յետ տարաւ, անմիջապէս դուրս ելաւ նրա եղբայրը: Մանկաբարձն ասաց. «Ինչո՞ւ ճեղքեցիր պատնէշը»: Եւ նա նրա անունը դրեց Փարէս: 30 Ապա դուրս ելաւ նրա եղբայրը, որի ձեռքին կարմիր թել էր կապուած, եւ նրա անունը դրեց Զարա:

ՅՈՎՍԷՓԸ ԵՒ ՊԵՏԱՓՐԷՍԻ ԿԻՆԸ

39 Յովսէփին տարան Եգիպտոս: Ոմն եգիպտացի՝ փարաւոնի ներքինի դահճապետ Պետափրէսը, նրան գնեց նրան Եգիպտոս տարած իսմայէլացիներից: 2 Տէրը Յովսէփի հետ էր, նրա գործերը բարեյաջող էին, եւ նա մնաց իր տիրոջ տանը՝ Եգիպտոսում: 3 Երբ իր տէրը տեսաւ, որ Տէրը նրա հետ է, եւ ինչ էլ որ ինքն անում է, Տէրը յաջողութիւն է տալիս նրան, Յովսէփը շնորհ գտաւ տիրոջ առաջ, քանի որ հաճելի էր եղել նրան: 4 Դրա համար էլ նա նրան իր տան վերակացու կարգեց եւ իր ողջ ունեցուածքը վստահեց Յովսէփին: Երբ տէրը նրան իր տան եւ իր ունեցած ամէն ինչին վերակացու կարգեց, 5 Աստուած Յովսէփի համար օրհնեց եգիպտացու տունը, եւ այդ օրհնութիւնը տարածուեց նրա տանն ու դաշտում եղած ամբողջ ունեցուածքի վրայ: Այն ամէնն, ինչ տէրն ունէր, թողեց Յովսէփի տնօրինութեանը: 6 Պետափրէսը չգիտէր, թէ ինչ կայ իր տանը, բացի իր կերած հացից: Յովսէփը դէմքով շատ գեղեցիկ էր ու վայելչակազմ: 7 Այս բոլորից յետոյ նրա տիրոջ կինն իր աչքը գցեց Յովսէփի վրայ ու ասաց նրան. «Պառկի՛ր ինձ հետ»: 8 Բայց նա մերժեց՝ իր տիրոջ կնոջն ասելով, թէ՝ «Եթէ իմ տէրը իր տան ողջ ունեցուածքը վստահել է ինձ, 9 եւ այս տանը ինձնից աւելի մեծ մարդ չկայ, ու ինձ ոչինչ չի արգելուած, քեզնից բացի, որովհետեւ նրա կինն ես, ապա ես ինչպէ՞ս կարող եմ անել այդ չար ու սոսկալի բանը եւ մեղանչել Աստծու առաջ»: 10 Թէեւ նա ամէն օր այդ մասին էր խօսում Յովսէփի հետ, բայց Յովսէփը չէր համաձայնում պառկել նրա հետ, ոչ իսկ մօտենալ նրան:

11 Այնպէս պատահեց, որ մի օր Յովսէփը իր ինչ-որ գործով տուն մտաւ: Ընտանիքի անդամներից ոչ ոք չկար տանը: 12 Կինը բռնեց նրա շորերից ու ասաց. «Պառկի՛ր ինձ հետ»: Յովսէփը թողնելով իր շորերը նրա ձեռքում՝ դուրս փախաւ: 13 Երբ կինը տեսաւ, որ նա շորերը իր ձեռքում թողած դուրս է փախել, տան անդամներին կանչելով՝ ասաց. 14 «Տեսէ՛ք, ամուսինս եբրայեցի ծառայ բերեց տուն, որ մեզ խայտառակ անի: Նա, մտնելով իմ սենեակը, ասաց. "Պառկի՛ր ինձ հետ": Ես բարձրաձայն աղաղակեցի, 15 իսկ նա, լսելով իմ բարձրաձայն աղաղակը, շորերն ինձ մօտ թողած՝ փախաւ, գնաց դուրս»: 16 Նա շորերը պահեց մօտը մինչեւ ամուսինը տուն եկաւ, նրա հետ խօսեց այս բաները՝ ասելով, թէ՝ 17 «Սենեակս մտաւ քո բերած եբրայեցի ծառան, որպէսզի խայտառակի ինձ: Նա ասաց՝ "Պառկի՛ր ինձ հետ": 18 Իսկ երբ լսեց, որ ձայնս բարձրացրի, շորերն ինձ մօտ թողած՝ փախաւ, գնաց դուրս»: 19 Երբ տէրը լսեց իր կնոջ պատմածը, թէ՝ «Այսպէս վարուեց ինձ հետ քո ծառան», խիստ բարկացաւ: 20 Յովսէփի տէրը բռնեց ու բանտ նետեց նրան, այնտեղ, ուր արքունի կալանաւորներ էին բանտարկուած: 21 Բայց Աստուած Յովսէփի հետ էր. նա ողորմութիւն պարգեւեց նրան, եւ այնպէս արեց, որ նա բանտապետի բարեհաճութեանն արժանանայ: 22 Բանտապետը բանտն ու բանտում եղած բոլոր կալանաւորներին

վստահեց Յովսէփին: Եւ ինչ էլ որ լինում էր այնտեղ, նա էր անողը: 23 *Բանտապետը նրա շնորհիւ բանտի գործերին չէր խառնւում, որովհետեւ ամէն ինչ յանձնուած էր Յովսէփի ձեռքը: Աստուած նրա հետ էր, եւ ինչ էլ որ ինքն անում էր, Տէրը յաջողութիւն էր տալիս նրան:*

ՅՈՎՍԷՓԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ԵՐԱԶՆԵՐԸ

40 *Այս դէպքերից յետոյ Եգիպտոսի արքայի տակառապետն ու մատակարարը մեղանչեցին իրենց տիրոջ՝ Եգիպտացիների արքայի հանդէպ:* 2 *Բարկացաւ փարաւոնն իր երկու ներքինիների՝ տակառապետի եւ մատակարարի վրայ,* 3 *նրանց բանտ նետեց դահճապետի մօտ, այն բանտը, ուր Յովսէփն էր արգելափակուած:* 4 *Դահճապետը նրանց յանձնարարեց Յովսէփին. սա սպասարկում էր նրանց: Նրանք որոշ ժամանակ մնացին բանտում:* 5 *Միեւնոյն գիշերը բանտում երազ տեսան Եգիպտացիների արքայի տակառապետն ու մատակարարը՝ ամէն մէկն իր երազը:* 6 *Առաւօտեան Յովսէփը մտաւ նրանց մօտ եւ տեսաւ, որ նրանք յուզուած են:* 7 *Նա հարց տուեց փարաւոնի ներքինիներին, որոնք իր հետ իր տիրոջ բանտում էին. «Ինչո՞ւ ձեր դէմքերն այսօր մռայլ են»:* 8 *Նրանք պատասխանեցին. «Երազ ենք տեսել, եւ չկայ մէկը, որ կարողանայ մեկնել այն»: Յովսէփն ասաց նրանց. «Չէ՞ որ Աստծու օգնութեամբ հնարաւոր է դրանց մեկնութիւնը: Պատմեցէ՛ք ինձ»:* 9 *Տակառապետը Յովսէփին պատմեց իր երազը եւ ասաց. «Երազում իմ առաջ երեւաց մի որթատունկ:* 10 *Որթատունկն ունէր երեք շատ կանաչ ճիւղեր եւ հասունացած խաղողի երեք ողկոյզներ:* 11 *Փարաւոնի բաժակն իմ ձեռքին էր. վերցնում էի խաղողը, ճմլում փարաւոնի բաժակի մէջ եւ բաժակը տալիս էի փարաւոնի ձեռքը»:* 12 *Յովսէփն ասաց նրան. «Դրա մեկնութիւնը հետեւեալն է. երեք ճիւղերը երեք օրեր են:* 13 *Կ'անցնի երեք օր, փարաւոնը կը յիշի քո նախկին իշխանութիւնը եւ քեզ նոյն տակառապետի պաշտօնին կը նշանակի: Դու փարաւոնի բաժակը կը տաս նրա ձեռքը՝ ըստ քո նախկին իշխանութեան, ինչպէս անում էիր տակառապետ եղած ժամանակ:* 14 *Իսկ երբ գործդ յաջող ընթանայ, դու յիշի՛ր ինձ, ողորմած եղի՛ր իմ հանդէպ, յիշի՛ր ինձ փարաւոնի առաջ* 15 *եւ ինձ ազատի՛ր այս բանտից, որովհետեւ առեւանգելով՝ ինձ բերեցին Եբրայեցիների երկրից. եւ այստեղ ոչինչ չարեցի, բայց ինձ նետեցին այս բանտախուցը»:* 16 *Երբ մատակարարը տեսաւ, որ նա երազին ուղիղ մեկնութիւն տուեց, ասաց Յովսէփին. «Ես էլ եմ երազ տեսել: Երազիս մէջ գլխիս վրայ ընտիր ալիւրով լի երեք զամբիւղ կար:* 17 *Վերեւի զամբիւղի մէջ կային մատակարարների պատրաստած այն բոլոր ուտելիքները, որ ուտում էր փարաւոն արքան: Թռչուններն ուտում էին իմ գլխի վրայ գտնուող զամբիւղից»:* 18 *Յովսէփը, դիմելով նրան, ասաց. «Այս է դրա մեկնութիւնը. երեք զամբիւղները երեք օրեր են:* 19 *Երեք օր յետոյ փարաւոնը կը կտրի քո գլուխը, իսկ մարմինդ կը կախի ծառից, եւ երկնքի թռչունները կը յօշոտեն քո մարմինը»:*

20 *Երեք օր յետոյ փարաւոնի ծննդեան տարեդարձի օրն էր: Փարաւոնը խնջոյք էր կազմակերպել իր բոլոր ծառաների համար: Ի թիւս իր ծառաների, նա յիշեց իր պաշտօնեաներ տակառապետին ու մատակարարին:* 21 *Նա տակառապետին վերականգնեց իր պաշտօնում, եւ սա բաժակը տուեց փարաւոնի ձեռքը,* 22 *իսկ մատակարարին կախեց ծառից, ինչպէս մեկնել էր Յովսէփը:*

23 *Տակառապետը, սակայն, չյիշեց Յովսէփին. նա մոռացաւ նրան:*

ՅՈՎՍԷՓԸ ՄԵԿՆՈՒՄ Է ՓԱՐԱՒՈՆԻ ԵՐԱԶԸ

41 *Երկու տարի անց փարաւոնը երազ տեսաւ: Երազում ինքը կանգնած էր գետի եզերքին,* 2 *իսկ գետից դուրս էին գալիս տեսքով գեղեցիկ ու մարմնով պարարտ եօթը երինջներ, որոնք արածում էին այնտեղ՝ ճահճուտում:* 3 *Դրանցից յետոյ գետից դուրս էին գալիս տեսքով տգեղ ու մարմնով նիհար եօթը այլ երինջներ եւ միւս երինջների հետ արածում գետի եզերքին:* 4 *Տեսքով տգեղ ու մարմնով նիհար եօթը երինջներն ուտում էին տեսքով գեղեցիկ ու պարարտ եօթը երինջներին: Զարթնեց փարաւոնը: Նորից քուն մտաւ:* 5 *Նա տեսաւ մի երկրորդ երազ. ահա մէկ ցօղունից բուսնում էին ընտիր ու գեղեցիկ եօթը հասկեր:* 6 *Ապա բուսան չորուկ ու խորշակահար եօթը այլ հասկեր,* 7 *եւ չորուկ ու խորշակահար եօթը հասկերը կուլ տուեցին ընտիր ու լի եօթը հասկերը:* 8 *Զարթնեց փարաւոնը եւ տեսաւ, որ երազ էր: Առաւօտեան խռովուեց նրա հոգին: Նա մարդ ուղարկեց, կանչել տուեց Եգիպտոսի բոլոր երազահաններին, երկրի բոլոր իմաստուններին եւ պատմեց իր երազները, բայց չգտնուեց մէկը, որ կարողանար մեկնել փարաւոնի երազները:* 9 *Տակառապետը, դիմելով փարաւոնին, ասաց. «Այսօր յիշեցնեմ իմ յանցանքը:* 10 *Երբ փարաւոնը բարկացել էր իր ծառաների վրայ, ինձ ու մատակարարին արգելափակել էր դահճապետի տանը:* 11 *Մենք երկուսս էլ երազ տեսանք միեւնոյն գիշերը. իւրաքանչիւրս տեսաւ ի՛ր երազը:* 12 *Այնտեղ մեզ հետ էր դահճապետի ծառայ եբրայեցի մի պատանի: Պատմեցինք նրան,* 13 *եւ նա մեկնեց մեզ մեր երազները՝ տալով իւրաքանչիւրիս իր երազի մեկնութիւնը: Եւ եղաւ, որ ինչպէս մեկնել էր մեզ, այնպէս էլ կատարուեց. ես եկայ հասայ իմ պաշտօնին, իսկ նրան կախեցին ծառից»:* 14 *Փարաւոնը մարդ ուղարկեց ու կանչել տուեց Յովսէփին: Հանեցին նրան բանտից, երեսն ածիլեցին, փոխեցին նրա պատմուճանը, եւ նա ներկայացաւ փարաւոնին:* 15 *Փարաւոնն ասաց Յովսէփին. «Երազ եմ տեսել, եւ չկայ մէկը, որ մեկնի այն: Ես լսել եմ քո մասին: Ասում են, որ եթէ երազները պատմեն քեզ, դու կը մեկնես դրանք»:* 16 *Պատասխան տալով՝ Յովսէփն ասաց փարաւոնին. «Առանց Աստծու օգնութեան փարաւոնի համար փրկարար ոչ մի պատասխան չի լինի»:* 17 *Փարաւոնը, դիմելով Յովսէփին, ասաց. «Երազումս ինձ թւում էր, թէ կանգնած էի գետի եզերքին,* 18 *եւ, իբրեւ թէ, գետից ելնում էին մարմնով պարարտ ու տեսքով գեղեցիկ եօթը երինջներ, որոնք արածում էին այնտեղ՝ ճահճուտում:* 19 *Ապա, դրանցից յետոյ գետից դուրս էին գալիս տեսքով շատ այլանդակ ու զզուելի եւ մարմնով նիհար եօթը երինջներ, որոնցից աւելի զզուելին չեմ տեսել ողջ Եգիպտացիների երկրում:* 20 *Յոթը նիհար ու զզուելի երինջներն ուտում էին գեղեցիկ ու պարարտ առաջին եօթը երինջներին:* 21 *Նրանք թէեւ կուլ էին տալիս վերջիններիս, բայց չէր երեւում, որ նրանք սրանց կուլ են տուել*[†]*. Նրանց տեսքը առաջուայ պէս զզուելի էր: Զարթնեցի ու նորից քնեցի:* 22 *Դարձեալ երազում տեսայ, որ, իբրեւ թէ, մէկ ցօղունից բուսնում էին լի ու գեղեցիկ եօթը հասկեր:* 23 *Նրանց կողքին բուսան բարակ, չորուկ ու խորշակահար եօթը այլ հասկեր,* 24 *եւ չորուկ ու խորշակահար եօթը հասկերը կուլ էին տալիս գեղեցիկ ու լի հասկերը: Երազներս պատմեցի երազահաններին, բայց ոչ մէկը չկար, որ դրանք մեկնէր ինձ»:* 25 *Յովսէփն ասաց փարաւոնին. «Փարաւոնի տեսած երազները մէկ իմաստ ունեն. Աստուած փարաւոնին յայտնել է այն, ինչ անելու է:* 26 *Եօթը գեղեցիկ երինջները եօթը տարի են նշանակում, եւ եօթը գեղեցիկ հասկերը նոյնպէս եօթը տարի են նշանակում: Փարաւոնի տեսած երազները մէկ իմաստ ունեն:* 27 *Դրանցից յետոյ ելած տգեղ ու վտիտ եօթը երինջները եօթը տարի են նշանակում, իսկ չորուկ ու խորշակահար եօթը հասկերը նշանակում են, որ եօթը տարի սով է լինելու:* 28 *Փարաւոնին ասածիս իմաստն այն է, որ Աստուած փարաւոնին յայտնել է այն, ինչ անելու է:* 29 *Ահա ողջ Եգիպտացիների երկրում լինելու են բերքառատ եօթը տարիներ:* 30 *Դրանցից յետոյ կը գան սովի եօթը տարիներ, եւ կը մոռացուի երկրում եղած բերքի առատութիւնը:* 31 *Սովը կը սպառի երկիրը, եւ մարդիկ չեն իմանայ բերքի առատութիւնը դրան յաջորդող սովի պատ-*

[†] *որ նրանց սրանց կուլ են տուել* հատուածը չի հանդիպում հայերէն բնագրերում: Ցաւելումն՝ ըստ յունարէն բնագրի:

ճառով, քանի որ սովը շատ սաստիկ է լինելու: 32 Փարաւոնի երազի երկու անգամ կրկնուելը վկայում է, որ Աստծու խօսքը հաստատապէս կատարուելու է, եւ Աստուած չի յապաղի այն ի կատար ածելուց: 33 Արդ, տե՛ս, գտի՛ր խոհեմ ու իմաստուն մի մարդու, որ դառնայ փարաւոնի խորհրդականը, եւ նրան վերակացու նշանակի՛ր Եգիպտացիների երկրի վրայ: 34 Փարաւոնը երկրի վրայ նաեւ գործակալներ թող նշանակի, որ Եգիպտացիների երկրի առատութեան եօթը տարիների ընթացքում բերքի մէկ հինգերորդ մասը հարկ վերցնեն: 35 Նրանք թող հաւաքեն առաջին եօթը տարիների բերքի ամբողջ պաշարը, ցորենը թող դրուի փարաւոնի տրամադրութեան տակ, եւ պարէնը թող պահուի քաղաքներում: 36 Երկրի պարէնը թող պահուի Եգիպտացիների երկրի վրայ տարածուելիք սովի եօթը տարիների համար, որպէսզի երկիրը սովից չկոտորուի»:

ՅՈՎՍԷՓԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

37 Յովսէփի խօսքերը հաճելի թուացին փարաւոնին ու նրա բոլոր պաշտօնեաներին: 38 Փարաւոնն ասաց իր բոլոր պաշտօնեաներին. «Մի՞թէ կը գտնենք այսպիսի մի մարդ, որ իր անձի մէջ կրի Աստծու ոգին»: 39 Եւ փարաւոնն ասաց Յովսէփին. «Քանի որ Աստուած քեզ յայտնեց այդ ամէնը, ուրեմն քեզնից աւելի իմաստուն ու խելացի մարդ չկայ: 40 Դո՛ւ եղիր իմ տան վերակացուն, եւ քո հրամանին թող ենթարկուի իմ ամբողջ ժողովուրդը: Իմ գահո՛վ միայն ես քեզնից բարձր կը լինեմ»: 41 Փարաւոնն ասաց Յովսէփին. «Ահա այսօր քեզ վերակացու եմ կարգում Եգիպտացիների երկրի վրայ»: 42 Եւ փարաւոնը մատից հանելով իր մատանին՝ դրեց Յովսէփի մատին, նրան հագցրեց բեհեզեայ պատմուճան, ոսկէ մանեակ անցկացրեց նրա պարանոցին, 43 նրան նստեցրեց իր երկրորդ կառքը: Մունետիկը Յովսէփի առաջից գնալով՝ այդ մասին ազդարարեց, եւ նա վերակացու կարգուեց Եգիպտացիների երկրի վրայ: 44 Փարաւոնն ասաց Յովսէփին. «Ահա ես փարաւոնն եմ: Ամբողջ Եգիպտացիների երկրում ոչ ոք իրաւունք չունի նոյնիսկ իր ոտքը կամ ձեռքը բարձրացնելու առանց քո հրամանի»: 45 Եւ փարաւոնը Յովսէփի անունը դրեց Փսոմփթոմբանէ, իսկ Արեգ քաղաքի քուրմ Պետափրէսի դուստր Ասանէթին նրան տուեց կնութեան: Եւ Յովսէփը գնաց փարաւոնի մօտից:

46 Յովսէփը երեսուն տարեկան էր, երբ ներկայացաւ Եգիպտացիների փարաւոն արքային: Յովսէփը, գնալով փարաւոնի մօտից, շրջեց ողջ Եգիպտոսում: 47 Երկիրը առատութեան եօթը տարիների ընթացքում հարուստ բերք տուեց: 48 Յովսէփը հաւաքեց Եգիպտացիների երկրի առատութեան եօթը տարիների ողջ բերքը՝ ամէն մի քաղաքի շուրջը գտնուող դաշտերի բերքը ամբարելով այդ քաղաքում: 49 Յովսէփը ծովի աւազի չափ շատ ցորեն հաւաքեց ու ամբարեց այնտեղ այնքան, որ հնարաւոր չէր հաշուել, քանի որ անթիւ-անհամար էր: 50 Երբ դեռ չէր եկել եօթը տարուայ սովը, Յովսէփն ունեցաւ երկու որդի, որոնց ծնել էր Արեգ քաղաքի քուրմ Պետափրէսի դուստր Ասանէթը նրա համար: 51 Յովսէփն անդրանիկ որդու անունը դրեց Մանասէ, «Որովհետեւ, - ասում է, - Աստուած ինձ մոռացնել տուեց իմ ու իմ հօր բոլոր վշտերը»: 52 Երկրորդ որդու անունը դրեց Եփրեմ, «Որովհետեւ, - ասում է, - Աստուած ինձ բազմացրեց իմ տառապանքների երկրում»:

53 Անցան Եգիպտացիների երկրի առատութեան եօթը տարիները, 54 եւ վրայ հասան սովի եօթը տարիները, ինչպէս ասել էր Յովսէփը: Սով եղաւ ամբողջ երկրում, որովհետեւ ողջ Եգիպտացիների երկրում հաց չէր գտնուում†: 55 Սովի մատնուեց համայն Եգիպտացիների երկիրը, եւ ամբողջ ժողովուրդը հացի համար աղաղակ բարձրացրեց փարաւոնի առաջ: Փարաւոնն ասաց բոլոր եգիպտացիներին. «Գնացէ՛ք Յովսէփի մօտ, եւ ինչ որ ասի նա ձեզ, կատարեցէ՛ք»: 56 Սով էր ամբողջ երկրում: Յովսէփը բացեց ցորենի բոլոր շտեմարանները եւ ցորեն էր վաճառում բոլոր

†Եբրայերէնում՝ հաց կար:

եգիպտացիներին: Սովը սաստկացաւ Եգիպտացիների երկրում: 57 Եւ բոլոր երկրներից գալիս էին Եգիպտոս՝ Յովսէփից հաց գնելու, որովհետեւ սովը սաստկանում էր ամբողջ աշխարհում:

ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ

42 Յակոբը իմանալով, որ ցորենի վաճառք կայ Եգիպտացիների երկրում, ասում է իր որդիներին. «Ինչո՞ւ էք յապաղում: 2 Իմացել եմ, որ Եգիպտոսում ցորեն կայ: Գնացէ՛ք այնտեղ եւ մեզ համար մի քիչ պարէն գնեցէ՛ք, որ ապրենք, սովամահ չլինենք»: 3 Յովսէփի տասը եղբայրները իջան Եգիպտոսից ցորեն գնելու: 4 Յակոբը Յովսէփի եղբայր Բենիամինին չթողեց, որ գնայ իր եղբայրների հետ, որովհետեւ ասում էր, թէ՝ «Գուցէ նա կը հիւանդանայ»:

5 Իսրայէլի որդիներն այլ ճանապարհորդների հետ եկան ցորեն գնելու, քանի որ Քանանացիների երկրում սով էր: 6 Յովսէփը երկրի իշխանն էր, ուստի ինքն էր ցորեն վաճառում երկրի ողջ ժողովրդին: Յովսէփի եղբայրները, գալով, գլուխները խոնարհեցին մինչեւ գետին: 7 Երբ Յովսէփը տեսաւ իր եղբայրներին, ճանաչեց նրանց, բայց օտար ձեւացրեց իրեն, խստագոյնս խօսեց նրանց հետ եւ ասաց. «Որտեղի՞ց էք գալիս»: Նրանք պատասխանեցին. «Քանանացիների երկրից. եկել ենք պարէն գնելու»: 8 Յովսէփը ճանաչեց իր եղբայրներին, բայց նրանք չճանաչեցին իրեն: 9 Յովսէփը յիշեց իր տեսած երազները եւ ասաց նրանց. «Դուք լրտեսներ էք եւ եկել էք երկիրը հետախուզելու»: 10 Նրանք ասացին. «Ո՛չ, տէ՛ր: Մենք՝ քո ծառաները, եկել ենք ցորեն գնելու: 11 Մենք ամէնքս մի մարդու զաւակներ ենք: Խաղաղասէր մարդիկ ենք մենք, քո ծառաները լրտեսներ չեն»: 12 Յովսէփն ասաց նրանց. «Ո՛չ, դուք եկել էք երկիրը հետախուզելու»: 13 Նրանք պատասխանեցին. «Մենք՝ քո ծառաները, տասներկու եղբայրներ էինք, Քանանացիների երկրում մի մարդու որդիներ: Այս պահին մեր կրտսեր եղբայրն իր հօր մօտ է, իսկ միւսն այլեւս չկայ»: 14 Յովսէփն ասաց նրանց. «Ահա թէ ինչպիսի փորձի պիտի ենթարկուէք. հէնց դրա համար ասացի ձեզ՝ դուք լրտեսներ էք: 15 Երդւում եմ փարաւոնի արեւով, որ այստեղից դուրս չէք գայ, քանի ձեր կրտսեր եղբայրն այստեղ չի եկել: 16 Արդ, ձեզնից մէկին ուղարկեցէ՛ք, որ այստեղ բերի ձեր եղբօրը, իսկ դուք կը մնաք արգելարանում, մինչեւ որ պարզուի, թէ ճի՞շտ էք ասում, թէ՞ ոչ: Հակառակ դէպքում, երդւում եմ փարաւոնի արեւով, որ դուք լրտեսներ էք»: 17 Եւ երեք օր նրանց բանտարկեց:

18 Յովսէփը երրորդ օրն ասաց նրանց. «Այսպէս արէք, որպէսզի փրկուէք. ես ինքս էլ աստուածավախ մարդ եմ: 19 Եթէ խաղաղասէր մարդիկ էք, ձեր եղբայրներից մէկն այստեղ՝ բանտում կը մնայ, իսկ մնացածներդ կը տանէք ձեր գնած ցորենը: 20 Ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ կը բերէք, որ հաւատամ ձեր ասածներին, ապա թէ ոչ՝ մահուան կը դատապարտուէք»: 21 Նրանք այդպէս էլ արեցին: Նրանք՝ եղբայրները, միմեանց ասացին. «Այո՛, մենք մեր եղբօր նկատմամբ մեղաւոր ենք, որովհետեւ անտեսեցինք նրա հոգու մղձաւանջը, երբ նա մեզ աղաչում էր, իսկ մենք նրան չլսեցինք: Դրա համար էլ մեր գլխին է իջնում այս պատուհասը»: 22 Պատասխան տուեց Ռուբէնն ու ասաց նրանց. «Ես ձեզ չասացի՞, թէ՝ "Մեղք մի՛ գործէք պատանու դէմ", իսկ դուք ինձ չլսեցիք: Հիմա նրա արեան գինն է պահանջւում»: 23 Նրանք չգիտէին, որ Յովսէփը հասկանում էր նրանց, որովհետեւ թարգմանիչ ունէր: Եւ նրանցից մեկուսանալով՝ Յովսէփը լաց եղաւ: 24 Նա դարձեալ եկաւ նրանց մօտ եւ խօսեց նրանց հետ: Ապա նրանցից առանձնացնելով Շմաւոնին՝ նրանց ներկայութեամբ շղթայեց նրան:

25 Յովսէփը հրամայեց, որ նրանց պարկերը լցնեն ցորենով, իւրաքանչիւրի արծաթը դնեն իր պարկի մէջ եւ ճանապարհի պաշար տան: Այդպէս էլ արեցին: 26 Նրանք բարձելով իրենց էշերը՝ գնացին այնտեղից: 27 Նրանցից մէկը, իջեւանում իր գրաստին կեր տալու համար բացելով իր պարկը, տեսաւ, որ իր արծաթի քսակը դրուած է իր պարկի բերանին: 28 Այն ժամանակ

նա ասաց իր եղբայրներին. «Դրամը վերադարձրել են ինձ, ահա իմ պարկի մէջ է»: Նրանք զարմացան, իրար անցան ու ասացին. «Այս ի՞նչ արեց մեզ Աստուած»:

ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՔԱՆԱՆ

29 Նրանք եկան իրենց հայր Յակոբի մօտ, Քանանի երկիրը, պատմեցին նրան այն ամէնը, ինչ պատահել էր իրենց հետ, եւ ասացին. 30 «Մարդը, որ երկրի տէրն էր, մեզ հետ շատ խիստ խօսեց եւ մեզ, իբրեւ այդ երկրի լրտեսներ, բանտ նետեց: 31 Մենք նրան ասացինք. "Մենք խաղաղասէր մարդիկ ենք, լրտեսներ չենք: 32 Մենք տասներկու եղբայրներ ենք՝ մեր հօր որդիները: Մէկը չկայ, իսկ կրտսերն այս պահին մեր հօր մօտ է՝ Քանանացիների երկրում": 33 Երկրի տէրը մեզ ասաց. "Ձեր խաղաղասէր լինելը սրանով կ'իմանամ, եթէ ձեր մի եղբօրն այստեղ՝ ինձ մօտ թողնէք, ձեր գնած ցորենը վերցնէք տանէք ձեր տուն 34 եւ ձեր կրտսեր եղբօրը բերէք ինձ մօտ: Այն ժամանակ ես կ'իմանամ, որ դուք լրտեսներ չէք, այլ խաղաղասէր մարդիկ էք, եւ ձեր այս եղբօրն էլ կը վերադարձնեմ ձեզ, եւ դուք այս երկրում առեւտուր կ'անէք"»: 35 Երբ նրանք դատարկում էին իրենց պարկերը, իւրաքանչիւրի արծաթի քսակը իր պարկում էր: Եւ երբ նրանք տեսան իրենց արծաթի քսակները, իրենք եւ իրենց հայրը խիստ վախեցան: 36 Նրանց հայրը՝ Յակոբը, ասաց նրանց. «Ինձ անզաւակ էք թողնում: Յովսէփը չկայ, Շմաւոնը չկայ, հիմա էլ Բենիամինի՞ն էք վերցնելու: Այս բոլորը իմ գլխին են թափւում»: 37 Ռուբէնը, դիմելով հօրը, ասաց. «Դու իմ երկու որդիներին կը սպանես, եթէ նրան չվերադարձնեմ քեզ: Դու Բենիամինին վստահիր ինձ, եւ ես նրան կը վերադարձնեմ քեզ»: 38 Նա ասաց. «Իմ որդին ձեզ հետ չի իջնի, որովհետեւ սրա եղբայրը մեռաւ, եւ միայն սա է մնացել†: Եթէ սա հիւանդանայ ձեր գնացած ճանապարհին, ապա դուք ինձ վշտով այս ծեր հասակում գերեզման կ'իջեցնէք»:

†Ռաքէլից ծնուած երկու զաւակներից միակը:

ԲԵՆԻԱՄԻՆԸ ՏԱՐԻՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍ

43 Սովը աւելի ու աւելի էր սաստկանում երկրում: 2 Երբ կերան-սպառեցին Եգիպտացիների երկրից բերած ցորենը, հայրն ասաց նրանց. «Դարձեալ գնացէ՛ք եւ մի քիչ պարէն գնեցէ՛ք»: 3 Յուդան, դիմելով նրան, ասաց. «Մարդը մեզ կտրուկ ու յստակ ասաց. "Իմ աչքին չերեւաք, եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չլինի": 4 Արդ, եթէ թողնես, որ մեր եղբայրը գայ մեզ հետ, կը գնանք եւ պարէն կը գնենք, 5 իսկ եթէ մեր եղբօրը մեզ հետ չթողնես, չենք գնայ, որովհետեւ այդ մարդը մեզ հետ խօսեց ու ասաց. "Իմ աչքին չերեւաք, եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չլինի"»: 6 Իսրայէլն ասաց. «Այդ ի՞նչ փորձանք բերեցիք իմ գլխին, ինչո՞ւ յայտնեցիք այդ մարդուն, թէ եղբայր ունէք»: 7 Նրանք ասացին. «Այդ մարդը հարցուփորձ արեց մեր եւ մեր ընտանիքի մասին, թէ՝ "Տակաւին կենդանի՞ է ձեր հայրը", թէ՝ "Եղբայր ունէ՞ք": Եւ մենք յայտնեցինք նրան ըստ նրա հարցերի: Ի՞նչ իմանայինք, թէ ասելու է մեզ. "Բերէ՛ք ձեր եղբօրը"»: 8 Յուդան ասաց իր հայր Իսրայէլին. «Թո՛յլ տուր, որ պատանին գայ ինձ հետ, վեր կենանք գնանք, որպէսզի ե՛ւ մենք, ե՛ւ դու, ե՛ւ մեր ընտանիքի անդամները ապրենք, սովամահ չլինենք: 9 Ես նրա համար պատասխանատու եմ. ինձնի՛ց կը պահանջես նրան: Եթէ նրան յետ չբերեմ ու քո առաջ չկանգնեցնեմ, թող մեղաւոր լինեմ իմ ամբողջ կեանքում: 10 Որովհետեւ եթէ չդանդաղէինք, ապա երկու անգամ գնացած-եկած կը լինէինք»: 11 Իրենց հայր Իսրայէլն ասաց նրանց. «Ճիշտ էք ասում: Այդպէս էլ արէք: Մեր երկրի բարիքներով լցրէ՛ք ձեր ամանները, այդ մարդուն իբրեւ նուէր տարէ՛ք կնդրուկ, մեղր, խունկ, խէժ, բեւեկն եւ ընկոյզ: 12 Կրկնակի արծաթ վերցրէ՛ք ձեզ հետ, ինչպէս նաեւ այն արծաթը, որ ձեր պարկերի մէջ յետ բերեցիք, տարէ՛ք ձեզ հետ, գուցէ դա սխալմունք էր: 13 Վերցրէ՛ք նաեւ ձեր եղբօրն ու գնացէ՛ք այդ մարդու մօտ: Իմ Աստուածը թող այնպէս անի, որ շնորհ

գտնէք այդ մարդու մօտ, եւ նա կ'արձակի ձեզ հետ ձեր միւս եղբօրն ու Բենիամինին: 14 Բայց ես ինչպէս անզաւակացայ, այնպէս էլ անզաւակ մնացի»†:

15 Եւ մարդիկ, առնելով նուէրներ ու կրկնակի արծաթ, Բենիամինի հետ գնացին իջան Եգիպտոս եւ ներկայացան Յովսէփին: 16 Երբ Յովսէփը տեսաւ նրանց եւ իր եղբայր Բենիամինին՝ ասաց պալատի կառավարիչին. «Այս մարդկանց տուն տա՛ր, անասուն մորթի՛ր եւ ճաշ պատրաստի՛ր, որովհետեւ այս մարդիկ կէսօրին ինձ հետ են ճաշելու»: 17 Մարդն արեց այնպէս, ինչպէս ասել էր Յովսէփը, եւ մարդկանց տարաւ Յովսէփի տունը: 18 Այս մարդիկ տեսնելով, որ իրենց տարան Յովսէփի տունը, ասացին. «Նախորդ անգամ մեր պարկերում մեզ վերադարձուած արծաթի պատճառով է, որ մեզ բերեցին այստեղ, որպէսզի մեզ խուզարկեն: Նրանք մեզ վրայ կը յարձակուեն, մեզ կը ստրկացնեն եւ կը տիրանան մեր էշերին»: 19 Մօտենալով Յովսէփի պալատի կառավարիչին՝ նրանք դռան մօտ ասացին նրան. 20 «Աղաչում ենք քեզ, տէ՛ր, լսի՛ր մեզ: Երբ առաջին անգամ եկանք պարէն գնելու 21 եւ վերադառնալիս իջեւան հասանք, բացելով մեր պարկերը՝ տեսանք, որ իւրաքանչիւրիս արծաթը իր պարկի մէջ է: Արդ, արծաթը նոյն կշռով յետ ենք բերել, ահա այն մեր ձեռքին է: 22 Ուրիշ արծաթ էլ ենք բերել մեզ հետ, որ պարէն գնենք: Մենք չգիտենք, թէ ով է արծաթը դրել մեր պարկերի մէջ»: 23 Նա ասաց նրանց. «Խաղաղութիւն ընդ ձեզ, մի՛ վախեցէք: Ձեր եւ ձեր հայրերի Աստուածն է դրել գանձերը ձեր պարկերի մէջ, իսկ ես արդէն ստացել եմ ձեր արծաթը եւ գոհացել եմ»: Եւ նա բանտից հանեց ու նրանց մօտ բերեց Շմաւոնին: 24 Մարդը նրանց տարաւ ներս՝ Յովսէփի տունը: Ջուր բերեցին, որ նրանք լուանան իրենց ոտքերը, եւ նա նրանց գրաստներին կեր տուեց: 25 Նրանք պատրաստեցին ընծաները, երբ Յովսէփը դեռ չէր եկել կէսօրին, որովհետեւ լսել էին, որ այնտեղ է ճաշելու: 26 Յովսէփը տուն մտաւ, եւ նրանք այդ տանը նրան մատուցեցին իրենց ձեռքերում բռնած ընծաները եւ գլուխ խոնարհեցին նրան մինչեւ գետին: 27 Յովսէփը, դիմելով նրանց, հարցրեց. «Ինչպէ՞ս էք, ողջ-առո՞ղջ է ձեր ծերունի հայրը, որի մասին ասել էիք, թէ տակաւին կենդանի է»: 28 Նրանք պատասխանեցին. «Ողջ-առողջ է քեզ ծառայ մեր հայրը, տակաւին կենդանի է»: Նա ասաց. «Այդ մարդն օրհնեալ է Աստծուց»: Եւ նրանք խոնարհուելով գլուխ տուեցին նրան: 29 Յովսէփը բարձրացրեց իր աչքերը եւ, տեսնելով իր համայր եղբայր Բենիամինին, հարցրեց. «Սա՞ է ձեր կրտսեր եղբայրը, որի մասին ասել էիք, թէ կը բերէք ինձ մօտ»: Եւ ասաց. «Աստուած թող ողորմի քեզ, որդեա՛կ»: 30 Յուզուեց Յովսէփը, իր եղբօր համար ճմլուեց սիրտը եւ ուզում էր լաց լինել: Եւ, մտնելով իր սենեակը, նա լաց եղաւ: 31 Յետոյ նա լուաց երեսը, դուրս եկաւ եւ, զսպելով իրեն, ասաց. «Ճա՛շ մատուցէք»: 32 Քանի որ եգիպտացիները զզւում էին եբրայեցիներից եւ նրանց հետ սեղան չէին նստում, ուստի նրան եւ նրանցից իւրաքանչիւրին, ինչպէս նաեւ նրա հետ ճաշող եգիպտացիներից իւրաքանչիւրին ճաշ մատուցեցին առանձին-առանձին: 33 Նրա դիմաց նստեց անդրանիկը՝ ըստ իր աւագութեան, իսկ կրտսերը՝ ըստ իր կրտսերութեան: Եւ մարդիկ զարմացել էին իւրաքանչիւրն իր եղբօր համար: 34 Նրանք Յովսէփից ստացան իրենց ճաշի բաժինը, եւ Բենիամինի բաժինը բոլորի բաժնի հնգապատիկը դարձաւ: Նրանք նրա հետ խմեցին ու գինովցան:

ԿՈՐԱԾ ՍԿԻՀԸ

44 Յովսէփն իր պալատի կառավարչին հրաման տուեց եւ ասաց. «Այդ մարդկանց պարկերը լցրէ՛ք պարէնով այնքան, որքան կարող են տանել, եւ իւրաքանչիւրի արծաթը դրէ՛ք իր պարկի բերանին: 2 Իմ արծաթէ սկիհը դրէ՛ք կրտսեր եղբօր պարկի մէջ: Այնտեղ դրէ՛ք նաեւ նրա ցորենի գինը»: Եւ

†Ցուցարէն եւ այլ բնագրերում՝ եթէ վիճակուած է անզաւականալ, ուրեմն կ'անզաւականամ:

արուեց ըստ Յովսէփի ասածի:
3 Առաւօտեան թոյլ տուեցին, որ նրանք գնան իրենց էշերով: 4 Երբ նրանք քաղաքից դուրս ելան, բայց դեռ հեռու չէին գնացել, Յովսէփն ասաց իր պալատի կառավարիչին. «Վե՛ր կաց, հետապնդի՛ր այդ մարդկանց, հասի՛ր նրանց ու ասա՛. "Ինչո՞ւ էք լաւութեան դիմաց վատութիւն անում: 5 Ինչո՞ւ գողացաք արծաթէ սկիհը: Չէ՞ որ դրանով էր խմում իմ տէրը եւ դրանով էր գուշակութիւն անում: Արդ, ձեր արածը չար գործ է"»: 6 Երբ նա հասաւ նրանց, այդպէս էլ ասաց: 7 Նրանք պատասխանեցին նրան. «Ինչո՞ւ է տէրը այդպիսի բաներ ասում: Քա՛ւ լիցի, որ քո ծառաները նման բան արած լինեն: 8 Եթէ մեր պարկերում գտնուած արծաթը Քանանացիների երկրից մենք վերադարձրել ենք ձեզ, էլ ինչո՞ւ քո տիրոջ տնից արծաթ կամ ոսկի պիտի գողանայինք: 9 Արդ, քո ծառաներից ում մօտ որ գտնուի սկիհը, թող մահուան դատապարտուի, իսկ մենք՝ մնացածներս, լինենք մեր տիրոջ ստրուկները»: 10 Նա ասաց. «Թող լինի այնպէս, ինչպէս ասացիք. ում մօտ որ գտնուի սկիհը, թող նա դառնայ իմ ստրուկը, իսկ մնացածներդ համարուէք անպարտ»: 11 Եւ նրանցից իւրաքանչիւրն շտապ իջեցնելով իր բեռը՝ բացեց իր պարկը: 12 Կառավարիչը, աւագից սկսած մինչեւ կրտսերը, խուզարկեց եւ սկիհը գտաւ Բենիամինի պարկի մէջ:
13 Նրանք պատառոտեցին իրենց զգեստները, եւ իւրաքանչիւրն իր բեռը բարձելով իր էշի վրայ՝ վերադարձաւ քաղաք: 14 Յուդան ու իր եղբայրները ներկայացան Յովսէփին, երբ նա դեռ տանն էր, եւ նրա առաջ երեսի վրայ ընկան գետին: 15 Յովսէփն ասաց նրանց. «Այս ի՞նչ է ձեր արածը, մի՞թէ չգիտէք, որ այնպիսի մի մարդ, ինչպիսին ես եմ, գուշակելու կարողութիւն ունի»: 16 Յուդան ասաց. «Ի՞նչ պատասխան տանք մեր տիրոջը, ի՞նչ ասենք կամ ինչպէ՞ս արդարանանք: Աստուած բռնեց քո ծառաների գործած յանցանքը: Արդ, ահա մեր տիրոջ ստրուկներն ենք ե՛ւ մենք, ե՛ւ նա, ում մօտ գտնուեց սկիհը»: 17 Նա ասաց. «Քա՛ւ լիցի, ես այդպիսի բան չեմ անի: Այն մարդը, որի մօտ գտնուել է սկիհը, նա՛ թող լինի իմ ստրուկը, իսկ դուք ողջ ու անվնաս գնացէ՛ք ձեր հօր մօտ»:

ՅՈՒԴԱՆ ԱՂԱՉՈՒՄ Է ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱՄԱՐ

18 Յուդան, մօտենալով նրան, ասաց. «Աղաչում եմ, տէ՛ր, թո՛յլ տուր, որ քո ծառան մի բան ասի քո առաջ: Մի՛ բարկացիր քո ծառայի վրայ, որովհետեւ փարաւոնից յետոյ դո՛ւ ես: 19 Տէ՛ր, դու հարցրեցիր քո ծառաներին եւ ասացիր, թէ՝ "Հայր կամ եղբայր ունէ՞ք": 20 Եւ մենք պատասխանեցինք մեր տիրոջը. "Ունենք տարիքն առած մի հայր եւ մի կրտսեր եղբայր, որ նա ունեցել է ծեր տարիքում: Սրա եղբայրը մեռել է, եւ սա մնացել է իր մօր միակ որդին, եւ հայրը սիրում է նրան": 21 Դու քո ծառաներին ասացիր. "Նրան բերէ՛ք ինձ մօտ, եւ ես կը հոգամ նրա մասին† ": 22 Մենք ասացինք մեր տիրոջը. "Երեխան չի կարող բաժանուել իր հօրից, որովհետեւ եթէ բաժանուի իր հօրից, հայրը կը մեռնի": 23 Դու ասացիր քո ծառաներին. "Եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չիջնի, չհամարձակուէք երեւալ իմ աչքին": 24 Երբ մենք գնացինք քո ծառայի՝ մեր հօր մօտ եւ յայտնեցինք նրան մեր տիրոջ խօսքերը, 25 մեր հայրն ասաց. "Նորից գնացէ՛ք եւ մի քիչ պարէն գնեցէ՛ք": 26 Մենք ասացինք. "Չենք կարող այնտեղ իջնել, եթէ մեր կրտսեր եղբայրը մեզ հետ չիջնի: Մենք միայն այդ պայմանով կ'իջնենք: Եթէ մեր կրտսեր եղբայրը մեզ հետ չլինի, ապա այդ մարդուն ներկայանալ չենք կարող": 27 Քո ծառան՝ մեր հայրը, մեզ ասաց. "Դուք ինքներդ էլ գիտէք, որ իմ կին Ռաքէլն ինձ համար երկու որդի ծնեց: 28 Մէկը տնից հեռացաւ, եւ դուք ասացիք, թէ նա գազանի բաժին դարձաւ: Նրան այլեւս չեմ տեսել մինչեւ հիմա: 29 Արդ, եթէ սրան էլ տանէք իմ մօտից, եւ ճանապարհին նա հիւանդանայ, ապա դուք ինձ վշտով այս ծեր հասակում գերեզման կ'իջեցնէք": 30 Արդ, եթէ մենք գնանք քո ծառայի՝

†Գրաբարում՝ կը խնամարկեմ, եբրայերէնում՝ աչս վրան կը պահեմ:

մեր հօր մօտ, եւ պատանին մեզ հետ չլինի, ապա մեր հօր կեանքը կախուած կը լինի սրա կեանքից: 31 Այնպէս որ, եթէ նա այդ երեխային մեզ հետ չտեսնի, կը մեռնի, եւ մենք՝ քո ծառաները, քո ծառային՝ մեր հօրը, ծեր հասակում խոցուած սրտով գերեզման կ'իջեցնենք: 32 Ես՝ քո ծառան, այդ մանկանն իր հօրից ստացել եմ իմ երաշխաւորութեամբ: Ես ասել եմ. "Եթէ նրան չվերադարձնեմ ու չներկայացնեմ քեզ, ապա իմ ամբողջ կեանքում թող յանցաւոր լինեմ հօրս առաջ": 33 Արդ, այս մանկան փոխարէն ես՝ քո ծառան, լինեմ իմ տիրոջ ստրուկը, իսկ պատանին թող գնայ իր եղբայրների հետ: 34 Որովհետեւ ինչպէ՞ս կարող եմ իմ հօրը ներկայանալ, եթէ այս պատանին մեզ հետ չլինի: Թող ես չտեսնեմ այն դժբախտութիւնը, որ հօրս է վիճակուելու»:

ՅՈՎՍԷՓԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԻՆՔՆ ԻՐԵՆ

45 Յովսէփը չկարողացաւ իրեն զսպել իր շուրջը գտնուող բոլոր եգիպտացիների ներկայութեամբ եւ ասաց. «Բոլորին դո՛ւրս հանէք»: Երբ նրանցից ոչ ոք չմնաց նրա մօտ, նա եղբայրներին յայտնեց իր ով լինելը: 2 Նա բարձրաձայն լաց եղաւ այնպէս, որ դա լսեցին եգիպտացիները, եւ եղելութիւնը յայտնի դարձաւ փարաւոնի արքունիքում: 3 Յովսէփն ասաց իր եղբայրներին. «Ես Յովսէփն եմ: Իրօք, դեռ կենդանի՞ է իմ հայրը»: Նրա եղբայրները չէին կարողանում նրան պատասխանել, որովհետեւ տակնուվրայ եղան նրա ներկայութիւնից: 4 Յովսէփն ասաց եղբայրներին. «Մօտեցէ՛ք ինձ»: Նրանք մօտ գնացին: Յովսէփն ասաց. «Ես ձեր եղբայր Յովսէփն եմ, որին դուք վաճառեցիք, որ Եգիպտոս տանեն: 5 Բայց դուք մի՛ տրտմէք, մի՛ նեղուէք, որ ինձ վաճառել էք այստեղ բերելու համար, որովհետեւ Աստուած ձեզ փրկելու համար է ուղարկել ինձ այստեղ ձեզնից առաջ: 6 Հիմա երկրի վրայ եղած սովի երկրորդ տարին է, եւ հինգ տարի եւս կայ, որ ո՛չ վար է լինելու, ո՛չ հունձ: 7 Աստուած ձեզնից առաջ ինձ ուղարկել է այստեղ, որ երկրի վրայ պահպանի ձեր սերնդին եւ կերակրի ձեզ՝ մնացածներիդ մեծ մասին: 8 Արդ, ոչ թէ դուք էք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստուած: Նա ինձ դարձրեց փարաւոնի գործերի վերակացու, նրա ողջ տան տէրը եւ համայն Եգիպտացիների երկրի իշխանը: 9 Արդ, շտապ գնացէ՛ք իմ հօր մօտ եւ ասացէ՛ք նրան. "Այսպէս է ասում քո որդի Յովսէփը. Աստուած ինձ ողջ Եգիպտացիների երկրի տէր է դարձրել: Արի իջի՛ր ինձ մօտ եւ մի՛ դանդաղիր: 10 Դու կը բնակուես Գեսեմ երկրում՝ Արաբիայում եւ մօտ կը լինես ինձ, դու, քո որդիները, քո որդիների որդիները քո ոչխարներով ու արջառներով, ամբողջ ունեցուածքով: Ես քեզ կը կերակրեմ այստեղ, 11 որովհետեւ դեռ հինգ տարի եւս սով է լինելու, որպէսզի չկոտորուէք† դու, քո որդիները, եւ չոչնչանայ քո ամբողջ ունեցուածքը: 12 Ահա դուք եւ Բենիամինը ձեր սեփական աչքերով տեսնում էք, որ անձամբ ես եմ խօսում ձեզ հետ": 13 Իմ հօրը պատմեցէ՛ք այն փառքի մասին, որին ես հասել եմ Եգիպտոսում, նաեւ այն մասին, ինչ տեսել էք: Իմ հօրը շտապ բերէ՛ք այստեղ»: 14 Եւ նա փաթաթուեց իր եղբայր Բենիամինի պարանոցին ու լաց եղաւ. Բենիամինն էլ լաց եղաւ նրա պարանոցին փաթաթուած: 15 Յովսէփը համբուրեց նաեւ իր բոլոր եղբայրներին եւ գրկախառնուած լաց եղաւ: Դրանից յետոյ միայն իր եղբայրները խօսեցին նրա հետ:
16 Լուրը հասաւ փարաւոնի պալատ. ասացին. «Յովսէփի եղբայրներն են եկել»: Ուրախացան փարաւոնն ու նրա պաշտօնեաները: 17 Փարաւոնն ասաց Յովսէփին. «Քո եղբայրներին ասա՛՝ "Այսպէ՛ս արէք. լցրէ՛ք ձեր պարկերը, գնացէ՛ք Քանանացիների երկիրը 18 եւ, վերցնելով ձեր հօրն ու ձեր ունեցուածքը, եկէ՛ք ինձ մօտ: Ես ձեզ կը տամ Եգիպտոսի բոլոր բարիքներից, եւ դուք կը վայելէք երկրի սերուցքը": 19 Դու այսպիսի կարգադրութիւն կ'անես. "Եգիպտացիների երկրից առէ՛ք սայլեր ձեր մանուկների ու կանանց համար եւ ձեր հօրը վերցնելով՝ բերէ՛ք

†Եբրայերէնում՝ չմաւորութիւն չմաշէմ:

այստեղ: 20 Ձեր աչքերը թող ագահութեամբ չնայեն ձեր ունեցուածքի վրայ, որովհետեւ ողջ Եգիպտացիների երկրի բարիքները ձերն են լինելու"»:

21 Այդպէս էլ արեցին Իսրայէլի որդիները: Յովսէփը փարաւոն արքայի կարգադրութեան համաձայն՝ նրանց տուեց սայլեր ու ճանապարհի պաշար: 22 Նա բոլորին երկուական պատմուճան տուեց, իսկ Բենիամինին տուեց երեք հարիւր դահեկան եւ հինգ պատմուճան՝ փոխնիփոխ հագնելու: 23 Նոյնպէս եւ, հօրը տանելու համար, նա տուեց տասը էշի վրայ բեռնուած Եգիպտոսի բոլոր բարիքներից, պարէնով բեռնաւորուած տասը ջորի, նաեւ՝ հօր համար ճանապարհի պաշար: 24 Նա ճանապարհեց իր եղբայրներին, եւ սրանք գնացին: Նա նրանց ասաց. «Ճանապարհին չվիճէք»:

25 Նրանք Եգիպտոսից ելան-գնացին Քանանացիների երկիրը, իրենց հօր՝ Յակոբի մօտ: 26 Պատմեցին նրան եւ ասացին. «Քո որդի Յովսէփը կենդանի է, նա ողջ Եգիպտացիների երկրի իշխանն է»: Յակոբը զարմացաւ†, որովհետեւ չէր հաւատում նրանց: 27 Նրանք իրենց հօրը հաղորդեցին այն ամէնը, ինչ ասել էր Յովսէփը: Նրանց հայր Յակոբը, տեսնելով այն սայլերը, որ Յովսէփն էր ուղարկել՝ իրեն տանելու համար, վերակենդանացաւ: 28 Իսրայէլն ասաց. «Բաւ է ինձ, որ իրօք տակաւին կենդանի է իմ որդի Յովսէփը: Քանի ողջ եմ, գնամ տեսնեմ նրան»:

ՅԱԿՈԲՆ ԸՆՏԱՆԻՔՈՎ ԳՆՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍ

46 Իսրայէլն իր ամբողջ ունեցուածքով ճանապարհ ընկաւ եւ եկաւ Երդման ջրհորի մօտ: Նա զոհ մատուցեց իր հայր Իսահակի Աստծուն:

2 Գիշերը Աստուած տեսիլքի մէջ Իսրայէլին ասաց. «Յակո՛բ, Յակո՛բ»: Սա հարցրեց. «Դու ո՞վ ես»: 3 Նա պատասխանեց. «Ես քո հայրերի Աստուածն եմ: Մի՛ վախեցիր Եգիպտոս իջնելուց, որովհետեւ քեզ այնտեղ մեծ ազգ եմ դարձնելու: 4 Ես քեզ հետ կ'իջնեմ Եգիպտոս, եւ ինքս էլ քեզ ընդմիշտ կը հանեմ այնտեղից: Եւ Յովսէփն իր ձեռքով կը փակի քո աչքերը»: 5 Յակոբը Երդման ջրհորի մօտից ելաւ, եւ Իսրայէլի որդիներն իրենց հայր Յակոբին, կահկարասին ու կանանց տեղաւորեցին այն սայլերի վրայ, որ Յովսէփն էր ուղարկել՝ նրան բերելու համար: Վերցնելով իրենց ունեցուածքն 6 ու Քանանացիների երկրում ձեռք բերած ամէն ինչ, Եգիպտոս մտան Յակոբն ու նրա ողջ սերունդը՝ 7 իր որդիներն ու որդիների որդիները, իր դուստրերն ու դուստրերի դուստրերը: Նա իր ողջ սերունդը բերեց Եգիպտոս:

8 Սրանք են Իսրայէլի այն որդիների անունները, որոնք Եգիպտոս մտան. այն է՝ Յակոբն ու իր որդիները: Յակոբի անդրանիկ որդին էր Ռուբէնը: 9 Ռուբէնի որդիներն են՝ Ենոքը, Փալլուսը, Ասրոնն ու Քարմին: 10 Շմաւոնի որդիներն են՝ Յամուէլը, Յամինը, Ահոդը, Յաքինը, Սահառն ու քանանացի կնոջից ծնուած Սաւուղը: 11 Ղեւիի որդիներն են՝ Գերսոնը, Կահաթն ու Մերարին: 12 Յուդայի որդիներն են՝ Էրը, Օնանը, Սելոմը, Փարէսն ու Զարան: Էրն ու Օնանը մեռան Քանանացիների երկրում: Փարէսի որդիները եղան Ասրոմն ու Յամուէլը: 13 Իսաքարի որդիներն են՝ Թողան, Փուդը, Յասուբն ու Զամմը: 14 Զաբուղոնի որդիներն են՝ Սերեդը, Ալլոնն ու Էելը: 15 Սրանք Լիայի որդիներն են, որոնց, նաեւ իր դուստր Դինային, նա ծնեց Յակոբի համար՝ Ասորիների Միջագետքում. բոլորը՝ որդիներն ու դուստրերը, երեսուներեք հոգի էին: 16 Գադի որդիներն են՝ Սափոնը, Մեդիսը, Սաւնիան, Թաւսոբամը, Այեդիսը, Արոյէլիսը եւ Արիէլիսը: 17 Ասերի որդիներն են՝ Յեմնան, Յեսուան, Յէուլը, Բարիան եւ նրանց քոյր Սարան: Բարիայի որդիներն են՝ Փոբորը եւ Մելքիէլը: 18 Սրանք որդիներն են Զելփայի, որին Լաբանը տուել էր իր դուստր Լիային: Սա Յակոբի համար ունեցաւ այս տասնվեց որդիներին: 19 Ռաքէլի՝ Յակոբի կնոջ որդիներն են՝ Յովսէփն ու Բենիամինը: 20 Եգիպտացիների երկրում Արեգ քաղաքի քուրմ Պետափրեսի դուստր Ասանէթից Յովսէփն ունեցաւ իր Մանասէ ու Եփրեմ որդիներին: Մանասէն ասորի հարճից

†Եբրայերէնում՝ սիրտը նուաղեց:

ունեցաւ որդիներ, որոնցից մէկն էր Մաքիրը: Մաքիրը ծնեց Գաղաադին: Եփրեմի՝ Մանասէի եղբօր որդիներն են՝ Սուտաղաամն ու Տաամը: Սուտաղաամի որդին է Եդեմը: 21 Բենիամինի որդիներն են՝ Բաղան, Բոքորն ու Ասբէէն: Բաղան ծնեց որդիներ՝ Գէերային, Նէեմանին, Անաքիսին, Ռոսին, Մամփիմին ու Ոփիմինին: Գէերան ծնեց Արադին: 22 Սրանք Ռաքէլի որդիներն են, որոնց նա ծնեց Յակոբի համար. բոլորը՝ տասնուութ հոգի: 23 Դանի որդիներից մէկն է Ասոմը: 24 Նեփթաղիմի որդիներն են՝ Ասիէլը, Գոնին, Ասարն ու Սիլլեմը: 25 Սրանք որդիներն են Բալայի, որին Լաբանը տուեց իր դուստր Ռաքէլին. Բալլան ծնեց սրանց Յակոբի համար. բոլորը՝ եօթը հոգի: 26 Յակոբի կողից ծնուած եւ նրա հետ Եգիպտոս մտած բոլոր մարդկանց թիւը, չհաշուած Յակոբի որդիների կանանց, վաթսունվեց է: 27 Յովսէփը Եգիպտոսում ունեցաւ երկու որդի: Այսպիսով Յակոբի ընտանիքի՝ Եգիպտոս մտած բոլոր տղամարդկանց թիւը եօթանասունհինգ է:

ՅԱԿՈԲՆ ՈՒ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

28 Յակոբը իրենից առաջ Յուդային ուղարկեց Յովսէփի մօտ, որպէսզի սա ընդառաջ գայ նրան Քաջաց քաղաքի մօտ՝ Ռամէսի երկրում, իսկ ինքն եկաւ Գեսեմ երկիրը: 29 Յովսէփը լծեց իր կառքը եւ Քաջաց քաղաքի մօտ ընդառաջ գնաց իր հայր Իսրայէլին: Երբ Յովսէփը հանդիպեց նրան, փաթաթուեց նրա վզին եւ հեկեկալով լաց եղաւ: 30 Իսրայէլն ասաց Յովսէփին. «Այսուհետեւ կարող եմ մեռնել, որովհետեւ տեսայ քո երեսը, եւ դու տակաւին կենդանի ես»: 31 Յովսէփն ասաց իր եղբայրներին ու իր հօր ընտանիքին. «Գնամ յայտնեմ փարաւոնին, որ Քանանացիների երկրում բնակուող իմ եղբայրներն ու հօրս ընտանիքը եկել են ինձ մօտ: 32 Նրանք խաշնարածներ են եւ իրենց անասունները, արջառներն ու ողջ ունեցուածքը բերել են այստեղ: 33 Արդ, եթէ փարաւոնը կանչի ձեզ ու հարցնի, թէ՝ "Ի՞նչ է ձեր գործը", 34 կ'ասէք, որ "Մենք՝ քո ծառաները, մանուկ հասակից մինչեւ այժմ խաշնարածներ ենք, մենք եւ մեր հայրը", որպէսզի նա թոյլ տայ ձեզ բնակուել Գեսեմ երկրում, որովհետեւ եգիպտացիները խորշում են ոչխարների հովիւներից»:

47 Յովսէփն եկաւ եւ այդ մասին պատմեց փարաւոնին: Նա ասաց. «Իմ հայրն ու եղբայրները իրենց ոչխարներով ու արջառներով, իրենց ամբողջ ունեցուածքով եկել են Քանանացիների երկրից եւ ահա Գեսեմում են»: 2 Նա իր եղբայրներից հինգին հետն առնելով՝ ներկայացրեց փարաւոնին: 3 Փարաւոնը հարցրեց Յովսէփի եղբայրներին. «Ի՞նչ գործ էք անում»: Նրանք պատասխանեցին փարաւոնին. «Թէ՛ մենք, թէ՛ մեր հայրերը՝ քո ծառաները, ոչխարների հովիւներ ենք»: 4 Նրանք ասացին փարաւոնին. «Պանդխտութեան ենք եկել այս երկիրը, որովհետեւ քո ծառաների ոչխարները կեր չունեն, քանի որ Քանանացիների երկրում սաստկացել է սովը: Արդ, թո՛յլ տուր, որ մենք՝ քո ծառաները, բնակուենք Գեսեմ երկրում»: 5 Փարաւոնը, դիմելով Յովսէփին, ասաց. «Քո հայրն ու քո եղբայրները եկել են քեզ մօտ: 6 Ահա Եգիպտացիների երկիրը քո առջեւ է. արգաւանդ մի շրջանում բնակեցրո՛ւ քո հօրն ու եղբայրներին: Նրանք թող բնակուեն Գեսեմ երկրում: Իսկ եթէ գիտես, որ նրանց մէջ կան կարող մարդիկ, իմ ոչխարների հօտերի վրայ վերակացու կարգի՛ր»:

7 Յովսէփն իր հայր Յակոբին բերեց ու ներկայացրեց փարաւոնին: Եւ Յակոբն օրհնեց փարաւոնին: 8 Փարաւոնը հարցրեց Յակոբին. «Քանի՞ տարեկան ես»: 9 Յակոբը պատասխանեց փարաւոնին. «Պանդխտութեան մէջ անցկացրած տարիներիս թիւը հարիւր երեսուն է: Քիչ ու դժուարին են եղել իմ ապրած տարիները եւ չեն հասել իմ նախնիների պանդխտութեան մէջ անցկացրած տարիներին»: 10 Յակոբն օրհնեց փարաւոնին եւ հեռացաւ նրա մօտից:

11 Յովսէփը իր հօրն ու եղբայրներին

բնակեցրեց Եգիպտացիների երկրի բարեբեր մի շրջանում՝ Ռամէսի երկրում, ինչպէս հրամայել էր փարաւոնը: 12 Յովսէփը օրապահիկ էր տալիս իր հօրն ու եղբայրներին, իսկ իր հօր ընտանիքի բոլոր անդամներին՝ ցորեն ըստ շնչի:

13 Պարէնն սպառուել էր ողջ երկրում, քանի որ սովը խիստ սաստկացել էր: Սովից հիւծուեցին Եգիպտացիների երկիրն ու Քանանացիների երկիրը: 14 Յովսէփը ցորեն վաճառելով հաւաքեց Եգիպտացիների երկրի ու Քանանացիների երկրի ողջ արծաթը, որի դիմաց այդ երկրների մարդկանց պարէն էր տալիս: Յովսէփը ամբողջ արծաթը տարաւ փարաւոնի արքունիքը: 15 Արծաթն սպառուեց Եգիպտացիների երկրից ու Քանանացիների երկրից: Բոլոր եգիպտացիները եկան Յովսէփի մօտ ու ասացին. «Մեզ հա՛ց տուր. ինչո՞ւ մեռնենք քո աչքի առաջ, քանի որ արծաթը վերջացաւ»: 16 Յովսէփն ասաց նրանց. «Եթէ արծաթն սպառուել է, բերէ՛ք ձեր անասունները, եւ ես ձեր անասունների փոխարէն հաց կը տամ ձեզ»: 17 Նրանք անասունները բերեցին Յովսէփի մօտ, իսկ Յովսէփը ձիու, ոչխարի, արջառի եւ էշի փոխարէն նրանց հաց էր տալիս: Նա այդ տարի նրանց բոլոր անասունների փոխարէն նրանց կերակրեց հացով:

ՍՈՎԸ

18 Այդ տարին անցաւ. նրանք երկրորդ տարին եկան Յովսէփի մօտ եւ ասացին. «Արդեո՞ք կորստի կը մատնուենք մեր տիրոջ կողմից: Տէ՛ր, եթէ արծաթ կար, վերջացաւ, եթէ ոչխարներ եւ անասուններ՝ քեզ մօտ են: Մենք այլեւս ոչինչ չունենք մեր տիրոջը տալու, բացի մեր անձերից ու մեր հողից: 19 Արդ, որպէսզի քո աչքի առաջ սովամահ չլինենք, եւ երկիրն էլ չկործանուի, ստացի՛ր մեզ եւ մեր հողը հացի փոխարէն. մենք ու մեր հողը թող լինենք փարաւոնի սեփականութիւն: Սերմացու տո՛ւր, որ ցանենք, ապրենք ու չմեռնենք, եւ երկիրն էլ չկործանուի»: 20 Եւ Յովսէփը գնեց ողջ Եգիպտացիների երկիրը փարաւոնի համար, որովհետեւ եգիպտացիներն իրենց հողերը վաճառեցին փարաւոնին, քանի որ սովը սաստիկ սպառնում էր նրանց կեանքին: Այսպիսով երկիրը դարձաւ փարաւոնի սեփականութիւն, 21 եւ սա Եգիպտոսի մի ծայրից մինչեւ միւս ծայրը բնակուող ժողովրդին դարձրեց իր ստրուկը†, 22 բացի քրմերի կալուածքներից, որովհետեւ Յովսէփը դրանք չգնեց, քանի որ փարաւոնը քրմերին առատօրէն պարգեւատրում էր, եւ նրանք սնւում էին այն պարգեւներով, որ նրանց էր տալիս փարաւոնը: Այդ է պատճառը, որ նրանք չվաճառեցին իրենց կալուածքները: 23 Յովսէփը բոլոր եգիպտացիներին ասաց. «Ահա ձեզ եւ ձեր հողը ես գնեցի փարաւոնի համար: Առէ՛ք ձեր սերմացուն եւ ցանեցէ՛ք ձեր հողերում: 24 Երբ բերքը կը ստանաք, փարաւոնին կը տաք դրա մէկ հինգերորդ մասը, իսկ չորս հինգերորդը թող ձեզ լինի իբրեւ հողի սերմացու եւ սնունդ՝ ձեզ, ձեր ընտանիքի բոլոր անդամների ու ձեր երեխաների համար»: 25 Նրանք ասացին. «Մեզ փրկեցիր, մենք արժանացանք մեր տիրոջ գթութեանը, ուստի թող լինենք փարաւոնի ստրուկները»: 26 Յովսէփը նրանց համար օրէնք սահմանեց, որ մինչեւ այսօր էլ գործում է Եգիպտացիների երկրում. բերքի մէկ հինգերորդ մասը տուրք տալ փարաւոնին, բացի քրմական հողերից, որոնք փարաւոնին չէին պատկանում:

ՅԱԿՈԲԻ ՎԵՐՋԻՆ ԽՆԴՐԱՆՔԸ

27 Իսրայէլը բնակուեց Եգիպտացիների երկրում՝ Գեսեմում: Նրանք այնտեղ կալուածքներ ստացան, խիստ աճեցին ու բազմացան:

28 Յակոբը Եգիպտացիների երկրում ապրեց տասնեօթը տարի, եւ նա դարձաւ հարիւր քառասունեօթը տարեկան: 29 Երբ մօտեցան Իսրայէլի մահուան օրերը, նա կանչեց իր որդի Յովսէփին ու ասաց նրան. «Եթէ ես շնորհ գտայ քո առաջ, ապա ձեռքդ դի՛ր իմ զիստի տակ

†Եբրայերէնում՝ *ֆաղամից ֆաղամ տեղափոխեց:*

ու խոստացի՛ր, որ իմ նկատմամբ արդար եւ ողորմած կը լինես եւ ինձ Եգիպտոսում չես թաղի. 30 երբ միանամ իմ նախնիներին, ինձ թող տանեն Եգիպտոսից ու թաղեն նրանց գերեզմանում»: Յովսէփն ասաց. «Կ՚անեմ ինչպէս ասացիր»: 31 Յակոբն ասաց. «Երդուի՛ր ինձ»: Եւ նա երդուեց նրան, մինչ Իսրայէլը խոնարհուեց նրա գաւազանի† գլխի վրայ:

ՅԱԿՈԲՆ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՓՐԵՄԻՆ ՈՒ ՄԱՆԱՍԷԻՆ

48 Այս դէպքերից յետոյ Յովսէփին յայտնեցին, թէ՝ «Քո հայր Յակոբը հիւանդ է»: Յովսէփը վերցնելով իր երկու որդիներին՝ Մանասէին ու Եփրեմին, եկաւ Յակոբի մօտ: Այդ մասին Յակոբին տեղեակ պահեցին՝ ասելով. 2 «Ահա քո որդի Յովսէփը քեզ մօտ է գալիս»: Իսրայէլն ուժերը հաւաքեց ու նստեց անկողնում: 3 Յակոբն ասաց Յովսէփին. «Իմ Աստուածն ինձ երեւաց Լուզում՝ Քանանացիների երկրում, օրհնեց ինձ 4 ու ասաց. "Ահա ես կ՚աճեցնեմ ու կը բազմացնեմ քեզ, բազում ազգերի նախահայր կը դարձնեմ: Այս երկիրը քեզ կը տամ իբրեւ յաւիտենական ժառանգութիւն": 5 Արդ, մինչեւ իմ Եգիպտոս գալը Եգիպտոսում ծնուած քո երկու որդիները իմն են: Եփրեմն ու Մանասէն ինձ համար թող լինեն ինչպէս Ռուբէնն ու Շմաւոնը, 6 իսկ միւս զաւակները, որոնց ծնունդ կը տաս սրանցից յետոյ, թող քոնը լինեն: Նրանք իրենց ժառանգութիւնն ստանալու համար թող կոչուեն իրենց եղբայրների անուամբ: 7 Երբ ես գալիս էի Ասորիների Միջագետքից ու մի ասպարէզի չափ մօտեցել էի Քաբրաթա երկրին, Քանանացիների երկրում մեռաւ քո մայր Ռաքէլը: Ես նրան թաղեցի ճանապարհին, Եփրաթա չհասած. դա Բեթղեհէմն է»:

8 Երբ Իսրայէլը տեսաւ Յովսէփի որդիներին, հարց տուեց. «Սրանք քո ի՞նչն են»: 9 Յովսէփը պատասխանեց հօրը. «Իմ որդիներն են, որոնց Աստուած պարգեւեց ինձ այստեղ»: Յակոբն ասաց. «Նրանց բե՛ր ինձ մօտ, որ օրհնեմ նրանց»: 10 Իսրայէլի աչքերը ծերութեան պատճառով տկարացել էին, նա լաւ չէր տեսնում: Յովսէփը նրանց մօտեցրեց նրան, Յակոբը համբուրեց նրանց ու իր գիրկն առաւ: 11 Իսրայէլն ասաց Յովսէփին. «Ահա ոչ միայն կարօտս առայ քեզնից, այլեւ Աստուած ինձ ցոյց տուեց նաեւ քո զաւակներին»: 12 Յովսէփը նրանց վերցրեց նրա ծնկներից, եւ նրանք մինչեւ գետին խոնարհուեցին նրա առաջ: Յովսէփը առաւ իր երկու որդիներին՝ 13 Եփրեմին ունենալով իր աջ կողմում, այսինքն՝ Իսրայէլի ձախ կողմում, եւ Մանասէին իր ձախ կողմում, այսինքն՝ Իսրայէլի աջ կողմում, ու մօտեցրեց նրան: 14 Իսրայէլը մեկնելով իր աջ ձեռքը՝ դրեց Եփրեմի գլխին, որ կրտսերն էր, իսկ ձախը՝ Մանասէի գլխին եւ փոխեց ձեռքերի տեղը, քանի որ Մանասէն էր անդրանիկը: 15 Օրհնեց նրանց եւ ասաց. «Աստուած, որին հաճոյ եղան իմ նախնիները՝ Աբրահամն ու Իսահակը, Աստուած, որ պահպանեց ինձ իմ մանկութիւնից մինչեւ այսօր, 16 Հրեշտակը, որ փրկեց ինձ ամէն տեսակ փորձանքներից, թող օրհնի այս մանուկներին, թող սրանց մէջ վերապրի իմ անունը եւ իմ նախնիների՝ Աբրահամի ու Իսահակի անունը, նրանք օրհնեալ լինեն երկրի վրայ եւ շատ բազմանան»: 17 Յովսէփը տեսաւ, որ հայրն իր աջը դրել է Եփրեմի գլխին, եւ դա ծանր թուաց նրան: Յովսէփն ուզեց օգնել հօրը, որ նա իր ձեռքը հանի Եփրեմի գլխի վրայից եւ դնի Մանասէի գլխին: 18 Յովսէփն ասաց իր հօրը. «Կարգն այդպէս չէ, հա՛յր, որովհետեւ սա է անդրանիկը: Քո աջը դիր սրա՛ գլխին»: 19 Հայրը, սակայն, այդ չկամեցաւ, այլ ասաց. «Գիտեմ, որդեա՛կ, գիտեմ: Սա նոյնպէս ժողովուրդ թող դառնայ, փառաւորուի, բայց սրա կրտսեր եղբայրը նրանից մեծ կը լինի: Նրա որդին բազում ազգերի նախահայր կը լինի»: 20 Յակոբն այդ օրը օրհնեց նրանց՝ ասելով. «Իսրայէլը թող ձեր միջոցով օրհնեալ լինի: Թող ասեն. "Աստուած քեզ հետ թող վարուի այնպէս, ինչպէս Եփրեմի ու Մանասէի հետ"»: Եւ նա Եփրեմին աւելի առաջ

†Եբրայերէնում՝ *մահճակալի սնարին:*

դասեց, քան Մանասէին:
21 Իսրայէլն ասաց Յովսէփին. «Ահա մեռնում եմ: Աստուած ձեզ հետ լինի եւ ձեզ վերադարձնի ձեր նախնիների երկիրը: 22 Ես քեզ իբրեւ սեփականութիւն տալիս եմ իմ սրով ու աղեղով ամորհացիներից գրաւած Սիկիմը, որն աւելի մեծ է, քան քո եղբայրների բաժինը»:

ՅԱԿՈԲԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐԸ

49† Յակոբը կանչեց իր որդիներին ու ասաց. «Հաւաքուեցէ՛ք, որ ձեզ յայտնեմ այն, ինչ պատահելու է ձեզ հետագայում:
2 Հաւաքուեցէ՛ք եւ լսեցէ՛ք, Յակոբի որդիներ,
լսեցէ՛ք ձեր հայր Իսրայէլին:
3 Ռուբէ՛ն, իմ անդրանիկ որդի,
իմ զօրութիւն ու իմ որդիների սկիզբ.
դու ինձ հետ խիստ վարուեցիր
եւ մեծ յանդգնութեամբ կշտամբեցիր ինձ:
4 Ջրի նման մի՛ եռա,
քանզի մտել ես մահիճը քո հօր
ու պղծել այնժամ մահիճը նրա:
5 Եղբայրներ Շմաւոնն ու Ղեւին
անիրաւութիւն գործեցին կամովին:
6 Խորհրդին նրանց մասնակից չի լինի անձն իմ.
Նրանց դաւին յօժար չէ սիրտն իմ.
ցասումով իրենց մարդ սպանեցին
հաճոյքի համար ջլակոտոր արեցին ցուլեր:
7 Անիծեալ լինի ցասումը նրանց,
քանզի յանդուգն էր.
անիծուի նրանց ոխն ու մոլուցքը,
քանզի սաստիկ էր:
Կը բաժանեմ ես նրանց Յակոբի մէջ,
կը ցրեմ նրանց Իսրայէլի մէջ:
8 Յուդա՛, քեզ կ'օրհնեն եղբայրները քո.
ձեռքը քո կ'իջնի թիկունքի վրայ թշնամիներիդ:
Հօրդ որդիներն գլուխ խոնարհեն պիտի քո առաջ:
9 Յուդա՛, կորի՛ւն առիւծի,
իմ շառաւիղից ելար, որդեա՛կ իմ,
Ելար, բազմեցիր, ննջեցիր դու որպէս առիւծ,
որպէս կորիւն առիւծի:
Ո՞վ պիտի արդեօք արթնացնի նրան:
10 Յուդայից իշխան չի պակասելու,
ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից,
մինչեւ որ գայ նա, ում պատկանում են հանդերձեալները:
Նրա՛ն են սպասում ժողովուրդները:
11 Իր աւանակին կը կապի որթից,
իսկ որթի ոստից՝ էշի քուռակին:
Իր պատմուճանը կը լուայ գինով
եւ իր հագուստը՝ խաղողի արեամբ:
12 Գինուց զուարթ են աչքերը նրա,
իսկ ատամներն սպիտակ՝ կաթից աւելի:
13 Զաբուղոնը կը բնակուի ծովի եզերքին,
որպէս նաւերի նա նաւահանգիստ
ու կը տարածուի նա մինչեւ Սիդոն:
14 Իսաքարը բարուն ցանկացաւ
եւ հանգիստ ապրեց իր տարածքներում:
15 Տեսնելով, որ հանգիստը լաւ է, հողը՝ բարեբեր,
ուսերը դրեց աշխատանքի տակ
ու դարձաւ բարիք ստեղծող մի մարդ:
16 Դանը կը դատի իր ժողովրդին Իսրայէլի մէջ մէկ մարդու նման.
17 Դանը թող լինի օձ դարանակալ ճանապարհի վրայ՝
խայթելու համար ձիու գարշապարն ու ցած գցելու հեծեալին նրա:
18 Մնա՛լ, սպասե՛լ Տիրոջ փրկութեան:
19 Գադն աւազակների ծուղակը կ'ընկնի
եւ ինքն էլ, սակայն, կը հետապնդի աւազակներին:
20 Ասերի հացը առատ կը լինի,
իշխաններին էլ նա պարէն կը տայ:
21 Նեփթաղիմը բարձրուղէշ ծառ է,
որ իր բազում ճիւղերով գեղեցկութիւն է սփռում:
22 Փառքի բարձրացած որդեա՛կ իմ Յովսէփ,
որդեա՛կ իմ՝ դարձած դու նախանձելի,
դարձի՛ր դու ինձ մօտ, որդեա՛կ իմ մատաղ,
բանսարկուները բամբասում էին, դատափետում քեզ:

†Այս գլխում կան զգալի տարբերութիւններ գրաբար եւ ԵՐԲայական բնագրերի միջեւ:

23 Նրա դէմ ոխով բորբոքւում էին աղեղնաւորներ:
24 Փշրուեցին զօրութեամբ աղեղները նրանց,
ու թուլացան ջլերը նրանց բազուկների
Յակոբի հզօր Աստծու ձեռքով,
25 Նրա՛ կողմից, ով զօրացրեց Իսրայէլին՝
Աստծուց քո հօր:
Եւ քեզ օգնեց Աստուածն իմ,
նա օրհնեց քեզ ի վերուստ օրհնութեամբ մի երկնային,
ամէն ինչով լի երկրի օրհնութեամբ
եւ օրհնեց նաեւ ստինք ու արգանդ:
26 Քո հօր օրհնութիւնն ու մօր օրհնութիւնն
առաւել ուժեղ, քան օրհնանքը յաւերժական լեռների,
քան օրհնանքը յաւիտենական բլուրների,
իջնի թող գլխի վրայ Յովսէփի ու գլխին նրա եղբայրների,
որոնց առաջնորդեց նա:
27 Բենիամի՛ն՝ յափշտակող գա՛յլ,
առաւօտեան իր որսն ուտող,
երեկոյեան պատառ բաշխող»:
28 Այս բոլորը՝ Յակոբի որդիները, տասներկու ցեղերն են: Սա է ահա, ինչ որ խօսեց նրանց հայրը իրենց հետ: Նա իւրաքանչիւրին օրհնեց իրեն արժանի օրհնութեամբ: 29 Նա պատուիրեց նրանց՝ ասելով. «Ես գնում եմ իմ նախնիների գիրկը: Ինձ թաղեցէ՛ք իմ նախնիների մօտ, այն քարայրում, որ քետացի Եփրոնի ագարակում է, այն զոյգ քարայրում, որ այդ դաշտում է, 30 Մամբրէի կաղնու դիմաց, Քանանացիների երկրում: Այդ քարայրը Աբրահամը գնել էր քետացի Եփրոնից իբրեւ սեփական շիրմավայր: 31 Այնտեղ են թաղել Աբրահամին ու նրա կնոջը՝ Սառային: Այնտեղ են թաղել Իսահակին ու նրա կնոջը՝ Ռեբեկային: Այնտեղ են թաղել Լիային. սա ագարակի եւ նրա մէջ գտնուող քարայրի այն կալուածքն է, որ գնուեց Քետի որդիներից:
32 Յակոբը դադարեց իր որդիներին պատուիրան տալուց, ոտքերը յետ բերեց մահիճի մէջ, մեռաւ եւ գնաց իր նախնիների գիրկը:

50 Յովսէփն ընկնելով իր հօր երեսին՝ լաց եղաւ նրա վրայ եւ համբուրեց նրան: 2 Յովսէփը հրամայեց դի զմռսող իր սպասաւորներին զմռսել իր հօրը. զմռսողները զմռսեցին Իսրայէլին: 3 Լրացան նրա քառասուն օրերը. այդքան էր տեւում թաղելու կարգը: Եգիպտոսը եօթանասուն օր սգաց նրան: 4 Սգոյ օրերն անցնելուց յետոյ Յովսէփը խօսեց փարաւոնի իշխանների հետ եւ ասաց. «Եթէ շնորհ եմ գտել ձեր առաջ, ապա դիմեցէ՛ք փարաւոնին եւ ասացէ՛ք, 5 որ իմ հայրը երդուեցրել է ինձ ու ասել. "Ահա ես մեռնում եմ: Ինձ կը թաղես այն շիրիմում, որ ես ինձ համար փորել եմ Քանանացիների երկրում": Արդ, թո՛յլ տուր գնամ, թաղեմ իմ հօրն ու վերադառնամ»: 6 Փարաւոնն ասաց. «Գնա՛, թաղի՛ր քո հօրը, ինչպէս որ նա երդուեցրել է քեզ»:
7 Յովսէփը գնաց, որ թաղի իր հօրը: Նրա հետ գնացին նաեւ փարաւոնի բոլոր ծառաները, նրա պալատի աւագանին, Եգիպտացիների երկրի բոլոր աւագները, 8 Յովսէփի ամբողջ ընտանիքը, նրա եղբայրները, նրա հօր ընտանիքի բոլոր անդամները: Իսկ մերձաւորներին, ոչխարներին ու արջառներին թողեցին Գեսեմ երկրում: 9 Նրա հետ գնացին նաեւ կառքերն ու հեծեալները եւ դարձան մի հսկայ բանակ: 10 Նրանք հասան Յորդանանի այն կողմը գտնուող Ատադի կալը եւ այնտեղ սաստիկ ողբ ու կոծ արեցին նրա վրայ: Նա հօր համար եօթը օր սուգ արեց: 11 Քանանացիների երկրի բնակիչները, տեսնելով Ատադի կալում արուած սուգը, ասացին. «Եգիպտացիները մեծ սգի մէջ են»: Դրա համար էլ այդ վայրը կոչուեց Եգիպտոսի Սուգ. այն Յորդանանի միւս կողմն է: 12 Իսրայէլի որդիները նրա դիակի հետ վարուեցին այնպէս, ինչպէս նա էր պատուիրել իրենց. 13 վերցրին նրան ու թաղեցին այնտեղ: Նրա որդիները նրան տարան Քանանացիների երկիրը եւ թաղեցին Մամբրէի կաղնու դիմաց, զոյգ քարայրում, որ Աբրահամը գնել էր քետացի Եփրոնից իբրեւ սեփական շիրմավայր: 14 Յովսէփը վերադարձաւ Եգիպտոս. ինքը, իր

*եղբայրները եւ իր հօրը թաղելու համար
իր հետ գնացած բոլոր մարդիկ:*

ՅՈՎՍԷՓԸ ՀՈԳ Է ՏԱՆՈՒՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

15 *Երբ Յովսէփի եղբայրները տեսան,
որ իրենց հայրը մահացել է, ասացին.
«Գուցէ Յովսէփը ոխ է պահել մեր դէմ
եւ վրէժ կը լուծի այն բոլոր չարիքների
համար, որ մենք պատճառեցինք նրան»:
16 Նրանք եկան Յովսէփի մօտ ու ասա-
ցին. «Քո հայրը երբ դեռ չէր մեռել, մեզ
երդուեցրել էր 17 ու ասել. "Այսպէս
կ'ասէք Յովսէփին. Նրանք չարիք գոր-
ծեցին քո դէմ, բայց դու կը ներես
նրանց յանցանքներն ու մեղքերը": Արդ,
ների՛ր քո հօր Աստծու ծառաների
յանցանքները»: Յովսէփն իրեն ասուած
այս խօսքերի համար լաց եղաւ: 18 Նրա
եղբայրները գալով իր մօտ՝ ընկան նրա
ոտքերն ու ասացին. «Ահա մենք քո
ծառաներն ենք»: 19 Յովսէփը նրանց
ասաց. «Մի՛ վախեցէք, որովհետեւ ես էլ
Աստծու մարդն եմ: 20 Դուք մտածեցիք
ինձ չարիք պատճառել, բայց Աստուած
իմ նկատմամբ բարի վարուեց, ինչպէս
որ եղաւ այսօր, որովհետեւ մարդկանց
մեծ բազմութիւն կերակրեցի ես»: 21 Նա
ասաց նրանց. «Մի՛ վախեցէք: Ես կը
կերակրեմ ձեզ եւ ձեր ընտանիքները»:
Յովսէփը մխիթարեց եւ հանգստացրեց
նրանց:*

ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ

22 *Եւ Եգիպտոսում բնակուեցին Յով-
սէփն ինքը, իր եղբայրներն ու իր հօր
ողջ գերդաստանը: Յովսէփն ապրեց
հարիւր տասը տարի:* 23† *Յովսէփը տե-
սաւ Եփրեմի որդիների մինչեւ երրորդ
սերունդը: Մանասէի որդի Մաքիրի
որդիները ծնուեցին Յովսէփի ծնկներին:
24 Յովսէփը, դիմելով իր եղբայրներին,
ասաց. «Ահա ես մեռնում եմ: Աստուած
թող այցելի ձեզ, հանի այս երկրից ու
տանի այն երկիրը, որ Աստուած երդուել
է տալ մեր նախնիներին՝ Աբրահամին,
Իսահակին ու Յակոբին»: 25 Յովսէփը
երդուեցրեց Իսրայէլի որդիներին ու
ասաց. «Այն ժամանակ, երբ Աստուած
ձեզ կ'այցելի, այստեղից կը հանէք նաեւ
իմ ոսկորները եւ կը տանէք ձեզ հետ»:
26 Յովսէփը վախճանուեց հարիւր
տասը տարեկան հասակում: Թաղեցին
նրան ու տապանի մէջ դրեցին Եգիպ-
տոսում:*

†Այս տունը Բագրատունեան հրատարակու-
թեան մէջ 22-րդ տան մաս է կազմում, որով եւ
պայմանաւորուած է Բագրատունեան եւ հայերէն
ու օտարալեզու մի քանի հրատարակու-
թիւններում տնամատակների տարբերութիւնը:

ԵԼՔ

Ներածութիւն

«Ես եմ քո Տէր Աստուածը, ես քեզ դուրս հանեցի Եգիպտոսից, ուր դու գերի էիր տարուել»:

«Ելք» գրքի այս կենտրոնական հատուածը բացայայտում է գրքի վերնագրի իմաստը եւ նրա էական բովանդակութիւնը, այն է՝ Աստուած ազատարարն է իր ժողովրդի: Այս հատուածը միաժամանակ «Տասնաբանեայ պատուիրանների» հիմքն է կազմում. Աստուած, որ իր սիրով ազատեց իսրայէլացիներին, առաջարկում է նրանց արտայայտել իրենց սէրը իր նկատմամբ՝ հնազանդուելով իր օրէնքներին:

Իսրայէլացիները Եգիպտոսում ապաստան գտնելուց յետոյ, այնտեղ, դարերի ընթացքում, դառնում են բազմամարդ մի ժողովուրդ, սակայն գերութեան դատապարտուած՝ Եգիպտոսի թագաւորի կողմից: Աստուած անտարբեր չի մնում իսրայէլացիների տառապանքների նկատմամբ. նա նրանց միջից ընտրում է Մովսէս անունով մի մարդու, որպէսզի սա դառնայ նրանց առաջնորդը: Ապա բազում ազդու միջամտութիւններով ստիպում է եգիպտացիներին ազատութիւն տալ այդ ժողովրդին եւ թոյլատրել նրանց մեկնել իրենց երկրից: Սինայի անապատը կտրելու ամբողջ ընթացքում, Աստուած իսրայէլացիներին առաջնորդելուց ու պաշտպանելուց յետոյ, նրանց դարձնում է իր ժողովուրդը՝ դաշինք կնքելով նրանց հետ Սինայի լեռան վրայ եւ յայտնելով նրանց իր օրէնքները: Այնուհետեւ, մինչ Մովսէսն ստանում է սրբարանի շինութեան համար անհրաժեշտ բոլոր ցուցումները, իսրայէլացիները, տարերային մի մղումով, Աստծուն ներկայացնում են ոսկէ հորթի կերպարանքով, որը պատճառ է դառնում Աստծու խիստ միջամտութեանը (գլ. 32-34): Գիրքն աւարտւում է սրբարանի կառուցման պատմութեամբ, որտեղ Աստուած գալիս է յայտնելու իր ներկայութիւնը:

«Ելքը» գերութեան բոլոր ձեւերին դատապարտուած մարդկանց, բոլոր ժամանակներում, ցոյց է տալիս, թէ ինչ է ճշմարիտ ազատագրութիւնը, այն ազատագրութիւնը, որ իրականացնում է Աստուած՝ թոյլ տալով մարդուն հաղորդութեան մէջ լինել իր եւ ուրիշների հետ:

ԵԼՔ

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԱՆԳԹՈՒԹԻՒՆԸ

1 Սրանք են Իսրայէլի այն որդիների անունները, որոնք իրենց հօր հետ մտան Եգիպտոս, իւրաքանչիւրն իր ամբողջ ընտանիքով մտաւ. 2 Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, 3 Իսաքար, Զաբուղոն եւ Բենիամին, 4 Դան եւ Նեփթաղիմ, Գադ եւ Ասեր: 5 Յակոբից սերուած բոլոր մարդիկ եօթանասունհինգ† հոգի էին: Յովսէփը գտնւում էր Եգիպտոսում: 6 Վախճանուեց Յովսէփը. նաեւ նրա բոլոր եղբայրներն ու ամբողջ սերունդը: 7 Իսրայէլի որդիները, սակայն, աճեցին ու բազմացան: Նրանք խիստ բազմացան ու հզօրացան, որովհետեւ երկիրը նպաստում էր նրանց բազմանալուն‡:

8 Գահ բարձրացաւ մի ուրիշ թագաւոր, որը Յովսէփին չէր ճանաչում: Նա իր ժողովրդին ասաց. 9 «Իսրայէլի որդիների սերունդը մեծ է զօրութեամբ եւ զօրանում է մեզնից աւելի: 10 Արդ, եկէք ինչ-որ բան հնարենք նրանց դէմ, գուցէ աւելի բազմանան, եւ երբ պատերազմ ծագի, նրանք միանան թշնամիներին ու մեր դէմ կռուելով՝ դուրս ելնեն այս երկրից»: 11 Եւ նա վերակացուներ կարգեց նրանց վրայ, որ գործի լծելով՝ չարչարեն նրանց: Նրանք փարաւոնի համար կառուցեցին Փիդոն, Ռամեսէ եւ Ովն անառիկ քաղաքները: Ովնը Արեգ քաղաքն է: 12 Բայց որքան ճնշում էին նրանց, նրանք այնքան աւելի էին բազմանում ու անչափ հզօրանում: 13 Եգիպտացիները զզուեցնում էին Իսրայէլի որդիներին§, բռնութիւն գործադրելով նեղում էին նրանց, տաժանակիր աշխատանքի էին լծում, 14 նրանց կեանքը մաշում կաւի, աղիւսաշինութեան ու դաշտային բոլոր գործերի մէջ՝ բռնութեամբ ստիպելով նրանց, որ ծառայեն:

15 Եգիպտացիների արքան դիմեց եբրայեցիների մանկաբարձներին. նրանցից մէկի անունը Սեփորա էր, իսկ երկրորդի անունը՝ Փուա: Եւ արքան 16 ասաց. «Երբ երկունքով բռնուած եբրայեցի կանանց մօտ գնաք ծննդաբերութեան օգնելու, եթէ ծնուածը արու լինի, սպանեցէ՛ք նրան, իսկ եթէ էգ լինի, ո՛ղջ թողէք»: 17 Մանկաբարձները, աստուածավախ լինելով, չարեցին այն, ինչ եգիպտացիների արքան հրամայել էր իրենց. նրանք ողջ էին թողնում նաեւ արուներին: 18 Եգիպտացիների արքան կանչեց մանկաբարձներին ու ասաց նրանց. «Ինչո՞ւ էք այդպէս վարւում, ինչո՞ւ էք ողջ թողնում արուներին»: 19 Մանկաբարձները պատասխանեցին փարաւոնին. «Եբրայեցի կանայք եգիպտացի կանանց նման չեն. նրանք ծննդաբերում են մինչեւ որ մանկաբարձները իրենց մօտ գան»: 20 Նրանք ծննդաբերում էին, եւ Աստուած բարութիւն էր անում մանկաբարձներին, ուստի ժողովուրդը խիստ բազմանում էր ու անչափ հզօրանում: 21 Քանի որ մանկաբարձները աստուածավախ էին, նրանք տուն-տեղ դրին: 22 Փարաւոնն իր ամբողջ ժողովրդին հրամայելով՝ ասաց. «Եբրայեցիներից ծնուած բոլոր արու զաւակներին գե՛տը նետեցէք, իսկ բոլոր աղջիկ զաւակներին ո՛ղջ թողէք»:

ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ

2 Այնտեղ էր գտնւում Ղեւիի ցեղից մի մարդ, որն ամուսնացաւ Ղեւիի դուստրերից մէկի հետ: 2 Սա յղիացաւ ու ծնեց մի արու զաւակ: Տեսնելով, որ նա գեղեցիկ է, երեք ամիս թաքցրին նրան: 3 Երբ այլեւս չէին կարող նրան թաքցնել, նրա մայրն առաւ եղէգից հիւսուած մի զամբիւղ, այն ծեփեց կպրաձիւթով, դրա մէջ դրեց մանկանը եւ զամբիւղը դրեց ծանծաղուտ մի տեղ, գետափին մօտիկ: 4 Մանկան քոյրը հեռուից հետեւում էր՝ տեսնելու համար, թէ ինչ կը պատահի նրան: 5 Այդ ժամանակ էր, որ փարաւոնի դուստրն եկաւ գետում լողանալու, իսկ նրա նաժիշտները քայլում էին գետի ափով: Ծանծաղուտի մէջ զամբիւղ նկատելով՝ նա մի նաժիշտ ուղարկեց, որ վերցնի այն: 6 Նա բացեց եւ տեսաւ երեխային: Երեխան լաց էր լինում զամբիւղում: Փարաւոնի դուստրը, խղճալով նրան, ասաց. «Եբրայեցիների երեխաներից է դա»: 7 Մանկան քոյրն ասաց փարաւոնի դստերը. «Ուզո՞ւմ ես, որ եբրայեցիներից մի դայեակ կին կանչեմ, նա թող կերակրի այդ մանկանը»: 8 Փարաւոնի դուստրն ասաց՝ «գնա՛»: Աղջիկը գնաց ու կանչեց մանկան մօրը: 9 Փարաւոնի դուստրը նրան ասաց. «Վերցրո՛ւ այդ մանկանը եւ կերակրի՛ր նրան ինձ համար: Ես կը տամ քո վարձը»: Կինը վերցրեց մանկանը եւ կերակրեց նրան: Երբ մանուկը մեծացաւ, կինը նրան բերեց փարաւոնի դստեր մօտ, 10 եւ մանուկը նրան որդեգիր դարձաւ: Նա նրան Մովսէս կոչեց ասելով՝ ջրից եմ հանել նրան:

11 Շատ օրեր յետոյ, երբ Մովսէսը մեծացաւ, գնաց իր ազգակիցների՝ իսրայէլացիների մօտ, ականատես եղաւ նրանց չարչարանքներին: Նա նկատեց, որ մի եգիպտացի ծեծում էր իր եբրայեցի եղբայրներից մէկին՝ մի իսրայէլացու: 12 Մովսէսն այս ու այն կողմ նայեց եւ ոչ ոքի չտեսնելով, սպանեց եգիպտացուն եւ նրան թաղեց աւազի տակ: 13 Յաջորդ օրը նա տեսաւ իրար հետ կռուող երկու եբրայեցիների եւ անիրաւութիւն անողին ասաց. «Ինչո՞ւ ես ծեծում ընկերոջդ»: 14 Սա պատասխանեց. «Ո՞վ է քեզ իշխան ու դատաւոր կարգել մեզ վրայ, թէ՞ ինձ էլ ես ուզում սպանել, ինչպէս որ երէկ սպանեցիր եգիպտացուն»: Մովսէսը վախեցաւ՝ մտածելով, որ եղելութիւնը յայտնի է դարձել:

15 Երբ փարաւոնը լսեց այդ դէպքի մասին, պահանջեց, որ սպանեն Մովսէսին: Մովսէսը փախաւ փարաւոնի պատճառով ու բնակուեց Մադիամի երկրում: 16 Մադիամի երկիրը գալով՝ նա նստեց մի ջրհորի մօտ: Մադիանացիների քուրմն ունէր եօթը դուստր, որոնք արածեցնում էին իրենց հօր ոչխարները: Նրանք եկել էին ջուր հանելու եւ լցնելու աւազանները, որպէսզի ջրեն իրենց հօր ոչխարները: 17 Բայց եկան ուրիշ հովիւներ եւ աղջիկներին հեռու քշեցին: Մովսէսը ոտքի ելաւ եւ պաշտպանեց նրանց, ջուր հանեց ու ջրեց նրանց ոչխարները: 18 Աղջիկներն եկան իրենց հօր՝ Հռագուէլի մօտ: Սա նրանց հարցրեց. «Ինչո՞ւ այսօր օրը ցերեկով վերադարձաք»: 19 Նրանք պատասխանեցին. «Մի եգիպտացի տղամարդ մեզ փրկեց այդ հովիւների ձեռքից, ջուր հանեց ու ջրեց մեր ոչխարները»: 20 Հայրը հարցրեց իր դուստրերին. «Իսկ ո՞ւր է նա, ինչո՞ւ թողեցիք այդ մարդուն: Արդ, կանչեցէ՛ք նրան, որ հաց ուտի»: 21 Եւ Մովսէսը բնակուեց այդ մարդու մօտ, եւ սա իր դուստր Սեփորային Մովսէսին կնութեան տուեց: 22 Կինը յղիացաւ ու ծնեց որդի, որին Մովսէսը Գերսամ անուանեց ասելով՝ ես պանդուխտ եմ օտար երկրում:

23 Շատ օրեր անց մեռաւ եգիպտացիների թագաւորը: Իսրայէլացիները, որոնք տանջւում էին տաժանակիր աշխատանքի մէջ, աղաղակ բարձրացրին. նրանց աղաղակը հասաւ Աստծուն: Եւ Աստուած լսեց նրանց հեծութիւնը, 24 յիշեց իր ուխտը, որ կապել էր Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ: 25 Աստուած իր հայեացքն ուղղեց իսրայէլացիներին: Նա յայտնուեց նրանց:

ԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ՄՈՎՍԷՍԻՆ

3 Մովսէսն արածեցնում էր իր աներոջ՝ Յոթորի՝ մադիանացիների քրմի ոչխարները: Նա ոչխարները տարաւ անապատ† ու հասաւ Աստծու լեռը՝ Քորէբ: 2 Տիրոջ հրեշտակը երեւաց նրան մորենու միջից կրակի բոցով: Մովսէսը տեսնում էր, որ մորենին հրով վառւում էր, բայց չէր այրւում: 3 Մովսէսն ինքն իրեն ասաց. «Գնամ տեսնեմ այս մեծ տեսարանը: Ինչպէ՞ս է, որ մորենին չի այրւում»: 4 Երբ Տէրը նկատեց, որ Մովսէսը տեսնելու համար մօտ է գնում, մորենու միջից ձայն տուեց նրան ու ասաց. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս»: Սա ասաց. «Ի՞նչ է»: 5 Աստուած ասաց. «Մի՛ մօտեցիր այստեղ: Կօշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետեւ այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է»: 6 Եւ աւելացրեց. «Ես քո հօր Աստուածն եմ, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը»: Եւ Մովսէսը շուռ տուեց իր երեսը, որով-

†Եբրայերէնում՝ *եօթանասուն:*

‡Եբրայերէնում՝ *երկիրը նրանցով լցուեց:*

§Եբրայերէնում՝ *եգիպտացիները իսրայէլացիներից զզուում էին:*

†Եբրայերէնում՝ *անապատից այն կողմ:*

հետեւ վախենում էր նայել Աստծուն:
7 Տէրն ասաց Մովսէսին. «Ես ակա-
նատես եղայ Եգիպտոսում գտնուող իմ
ժողովրդի կրած տառապանքներին,
8 լսեցի վերակացուների պատճառով
նրանց բարձրացրած աղաղակը, տեղեակ
եմ նրանց վշտերին: Ես իջայ, որ նրանց
փրկեմ եգիպտացիների ձեռքից, նրանց
հանեմ այդ երկրից, նրանց տանեմ մի
լաւ ու ընդարձակ երկիր՝ Քանանա-
ցիների, Քետացիների, Ամորհացիների,
Փերեզացիների, Խեւացիների, Գերգե-
սացիների ու Յեբուսացիների երկիրը,
ուր կաթ ու մեղր է հոսում: 9 Արդ,
ահաւասիկ իսրայէլացիների աղաղակը
հասել է ինձ. ես տեսայ այն տառա-
պանքները, որ նրանք կրում են եգիպ-
տացիների ձեռքից: 10 Արդ, արի՛ քեզ
ուղարկեմ եգիպտացիների արքայ փա-
րաւոնի մօտ, որ իմ ժողովրդին՝ իսրա-
յէլացիներին հանես Եգիպտացիների
երկրից»:
11 Մովսէսն ասաց Աստծուն. «Ես ո՞վ
եմ, որ գնամ եգիպտացիների արքայ
փարաւոնի մօտ եւ իսրայէլացի-
ներին հանեմ Եգիպտացիների երկրից»:
12 Աստուած ասաց. «Ես քեզ հետ կը
լինեմ, եւ երբ այս լերան վրայ Աստծուն
պաշտէք, այդ քեզ համար նշան կը լինի,
որ ե՛ս եմ ուղարկել քեզ, որպէսզի իմ
ժողովրդին հանես Եգիպտացիների
երկրից»:
13 Մովսէսն ասաց Աստծուն. «Ես կը
գնամ իսրայէլացիների մօտ ու նրանց
կ'ասեմ. "Ձեր հայրերի Աստուածն է
առաքել ինձ ձեզ մօտ": Եւ եթէ նրանք
հարցնեն ինձ, թէ ի՞նչ է նրա անունը,
ես ի՞նչ պատասխան տամ նրանց»:
14 Աստուած ասաց Մովսէսին. «Ես այն
Աստուածն եմ, որ է»: Եւ աւելացրեց.
«Այսպէս կ'ասես իսրայէլացիներին. "Որ
է-ն առաքեց ինձ ձեզ մօտ"»: 15 Աս-
տուած դարձեալ ասաց Մովսէսին.
«Այսպէս կ'ասես իսրայէլացիներին.
"Ձեր հայրերի Տէր Աստուածը՝ Աբրա-
համի Աստուածը, Իսահակի Աստուածը
եւ Յակոբի Աստուածն է առաքել ինձ
ձեզ մօտ": Այս է իմ յաւիտենական
անունը, որ յիշատակ է ազգից ազգ:
16 Արդ, գնա հաւաքի՛ր իսրայէլացի
ծերերին ու նրանց ասա՛. "Ձեր հայրերի
Տէր Աստուածը՝ Աբրահամի Աստուածը,
Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աս-
տուածը երեւաց ինձ ու ասաց. "Ես այ-
ցելեցի ձեզ ու գիտեմ, թէ ինչ բաներ
պատահեցին ձեզ հետ Եգիպտոսում:
17 Ես ասում եմ. "Ձեզ հանելու եմ
Եգիպտացիների՝ չարչարանքների երկ-
րից եւ տանելու եմ Քանանացիների,
Քետացիների, Ամորհացիների, Փերեզա-
ցիների, Գերգեսացիների, Խեւացիների
ու Յեբուսացիների երկիրը, ուր կաթ ու
մեղր է հոսում"": 18 Նրանք կը լսեն քեզ:
Դու իսրայէլացի ծերերի հետ կը մտնես
եգիպտացիների արքայ փարաւոնի մօտ
եւ կ'ասես նրան. "Եբրայեցիների Տէր
Աստուածը մեզ կանչում է իր մօտ[†]:
Հիմա պիտի գնանք երեք օրուայ ճանա-
պարհ դէպի անապատ, որպէսզի մեր
Աստծուն զոհ մատուցենք": 19 Ես գի-
տեմ, որ եգիպտացիների արքան թոյլ չի
տայ, որ դուք գնաք, բայց հզօր մի ձեռք
կը ստիպի նրան: 20 Ես ձեռքս մեկնելով
պիտի հարուածեմ Եգիպտոսին իմ բոլոր
զարմանահրաշ գործերով, որ պիտի
գործեմ նրանց մէջ, եւ դրանից յետոյ
միայն նա պիտի ազատ արձակի ձեզ:
21 Ես եգիպտացիների ներկայութեամբ
շնորհներ եմ տալու իմ ժողովրդին, որ
երբ դուրս գաք, ձեռնունայն դուրս
չգաք: 22 Ամէն մի կին իր հարեւանից
կամ իր հարեւանութեամբ բնակուողից
թող ուզի ոսկէ ու արծաթէ անօթներ եւ
զգեստներ: Դուք կը զարդարէք ձեր
տղաներին ու ձեր աղջիկներին եւ այդ-
պիսով կողոպտած կը լինէք եգիպ-
տացիներին»:

ԱՍՏՈՒԱԾ ՄՈՎՍԷՍԻՆ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ Է ՏԱԼԻՍ

4 Պատասխան տուեց Մովսէսն ու
ասաց. «Եթէ ինձ չհաւատան, իմ ասածը
չլսեն, (քանի որ նրանք կարող են ասել,
թէ՝ Աստուած քեզ չի երեւացել), ես ի՞նչ
ասեմ նրանց»: 2 Տէրն ասաց նրան.
«Այդ ի՞նչ է քո ձեռքին»: Սա ասաց.
«Գաւազան»: 3 Նա ասաց. «Գետի՛ն
գցիր դա»: Մովսէսը գետին գցեց գա-
ւազանը, այն օձ դարձաւ, եւ Մովսէսը
փախաւ դրանից: 4 Տէրն ասաց Մովսէ-

†Եբրայերէնում՝ Տէր Աստուած մեզ երեւաց:

սին. «Երկարի՛ր ձեռքդ եւ բռնի՛ր դրա
պոչից»: Նա երկարեց ձեռքն ու բռնեց
պոչից, եւ օձը գաւազան դարձաւ իր
ձեռքում: 5 «Այդպէս կ'անես, որպէսզի
քեզ հաւատան, որ քեզ երեւացել է
նրանց հայրերի Աստուածը՝ Աբրահամի
Աստուածը, Իսահակի Աստուածը եւ
Յակոբի Աստուածը»:
6 Տէրը նորից ասաց նրան. «Ձեռքդ
ծոցդ դի՛ր»: Նա ձեռքը դրեց իր ծոցը,
ապա հանեց այն իր ծոցից, եւ ձեռքը
ձեան նման սպիտակեց, ինչպէս
բորոտների մօտ է լինում: 7 Աստուած
ասաց. «Ձեռքդ ծոցդ դի՛ր»: Նա ձեռքը
դրեց իր ծոցը, յետոյ հանեց այն իր
ծոցից, եւ ձեռքը վերստացաւ իր մարմնի
նախկին գոյնը: 8 Աստուած ասաց.
«Եթէ չհաւատան քեզ եւ չունկնդրեն
առաջին նշանի ձայնին, ապա կը
հաւատան քո երկրորդ նշանին: 9 Եթէ
պատահի, որ չհաւատան երկու նշան-
ներին էլ, չանսան քո ասածին, ապա
գետից ջուր կը վերցնես, կը թափես
գետին, եւ գետից քո առած ջուրը
գետնի վրայ արիւն կը դառնայ»:
10 Մովսէսն ասաց Տիրոջը. «Աղաչում
եմ քեզ, Տէ՛ր, մինչեւ օրս ես պերճախօս
չեմ եղել, ոչ իսկ երբ սկսեցիր խօսել քո
ծառայի հետ, որովհետեւ անվարժ եմ
խօսում, ծանրախօս եմ»: 11 Տէրն ասաց
Մովսէսին. «Ո՞վ է մարդուն բերան
տուել, կամ ո՞վ է ստեղծել խուլին ու
համրին, տեսնողին ու կոյրին: Մի՞թէ ոչ
ես՝ Աստուածս: 12 Արդ, գնա՛, ես կը
բացեմ քո բերանը, քեզ կը սովորեցնեմ,
որ ասես այն, ինչ պէտք է ասել»:
13 Մովսէսն ասաց. «Աղաչում եմ քեզ,
Տէ՛ր, մի այլ կարող մարդու ընտրիր,
նրան ուղարկիր»: 14 Տէրը խիստ բար-
կացաւ Մովսէսի վրայ ու ասաց.
«Մի՞թէ ղեւտացի Ահարոնը քո եղբայրը
չէ: Գիտեմ, որ նա քո փոխարէն
փայլուն կը խօսի: Նա քեզ ընդառաջ
կ'ելնի եւ քեզ տեսնելով՝ ամբողջ հոգով
կ'ուրախանայ: 15 Կը խօսես նրա հետ եւ
իմ պատգամները կը դնես նրա շրթնե-
րին: Ես կը բացեմ քո բերանն ու նրա
բերանը, ձեզ կը սովորեցնեմ այն, ինչ
պէտք է անէք: 16 Ժողովրդի հետ քո
փոխարէն նա կը խօսի, նա կը լինի քո
խօսափողը, իսկ դու նրա համար կը
լինես ներշնչող Աստուած: 17 Այն գա-
ւազանը, որ օձ դարձաւ, կ'առնես ձեռքդ
եւ դրանով նշաններ կը գործես»:

ՄՈՎՍԷՍԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍ

18 Մովսէսը գնաց իր աներոջ՝ Յոթորի
մօտ ու ասաց նրան. «Վերադառնամ
Եգիպտոսում գտնուող իմ եղբայրների
մօտ եւ տեսնեմ, թէ տակաւին կենդանի՞
են»: Յոթորն ասաց Մովսէսին. «Բարի
ճանապարհ»:
19 Այս դէպքերից բազում օրեր անց,
երբ վախճանուել էր եգիպտացիների
արքան, Տէրը Մադիամում ասաց Մով-
սէսին. «Գնա՛, վերադարձի՛ր Եգիպտոս,
որովհետեւ արդէն մեռել են բոլոր
նրանք, ովքեր ուզում էին խլել քո
կեանքը»: 20 Մովսէսը, առնելով իր
կնոջն ու երեխաներին, նրանց նստեցրեց
գրաստների վրայ ու վերադարձաւ
Եգիպտոս: Մովսէսն իր ձեռքն առաւ
գաւազանը, որ Աստուած էր տուել
իրեն: 21 Տէրն ասաց Մովսէսին.
«Եգիպտոս գնալիս ու վերադառնալիս
փարաւոնի առաջ ջանա՛, որ անես բոլոր
այն նշանները, որոնք անելու շնորհը
տուել եմ քո ձեռքը: Ես խստասիրտ կը
դարձնեմ փարաւոնին, եւ նա ազատ չի
արձակի ժողովրդին: 22 Դու կ'ասես
փարաւոնին. "Այսպէս է ասում Տէրը. իմ
անդրանիկ որդին Իսրայէլն է: 23 Քեզ
ասացի՝ ազա՛տ արձակիր իմ ժողովրդին,
որ պաշտի ինձ: Իսկ եթէ չուզենաս
ազատ արձակել նրան, այդ դէպքում ես
կը սպանեմ քո անդրանիկ որդուն"»:
24 Ճանապարհին, իջեւանում, Մովսէ-
սին հանդիպեց Տիրոջ հրեշտակը, որն
ուզում էր սպանել նրան: 25 Սեպփորան,
վերցնելով մի սուր քար, թլփատեց իր
անթլփատ որդուն եւ հրեշտակի ոտքերն
ընկնելով[†] ասաց. «Ահա կատարուեց
իմ մանկան թլփատութեան կարգը»:
26 Հրեշտակը հեռացաւ[‡] նրանից, քանի
որ նա ասել էր, թէ՝ «Կատարուեց[§] իմ
մանկան թլփատութեան կարգը»:

†Եբրայերէնում՝ մօտեցրեց նրա ոտքերին եւ ասաց. «Արդարեւ արեան փեսայ ես դու ինձ համար»:

‡Եբրայերէնում՝ թողեց նրան:

§Եբրայերէնում՝ թլփատութեան պատճառով դու ինձ համար արեան փեսայ ես::

27 Տէրն ասաց Ահարոնին. «Գնա՛ անապատ՝ Մովսէսին ընդառաջ»: Նա գնաց, նրան հանդիպեց Աստծու լեռան վրայ ու համբուրեց նրան: 28 Մովսէսն Ահարոնին յայտնեց իրեն ուղարկող Տիրոջ բոլոր պատգամներն ու բոլոր այն նշանները, որ պատուիրել էր իրեն կատարել: 29 Մովսէսն ու Ահարոնը գնացին եւ հաւաքեցին իսրայէլացիների ամբողջ ծերակոյտը: 30 Ահարոնը նրանց հաղորդեց բոլոր այն պատգամները, որ Տէրը յայտնել էր Մովսէսին, եւ Մովսէսը նշաններ գործեց ժողովրդի առաջ: 31 Ժողովուրդը հաւատաց եւ ուրախացաւ, որ Աստուած այցելել է իսրայէլացիներին, ականատես եղել իրենց տառապանքներին: Ժողովուրդը խոնարհուեց ու երկրպագեց:

ՄՈՎՍԷՍԸ ԵՒ ԱՀԱՐՈՆԸ ՓԱՐԱՒՈՆԻ ԱՌՋԵՒ

5 Այնուհետեւ Մովսէսն ու Ահարոնը եկան փարաւոնի մօտ ու ասացին նրան. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Արձակի՛ր իմ ժողովրդին, որ իմ պատուին տօն կատարի անապատում"»: 2 Փարաւոնն ասաց. «Ո՞վ է նա, որի ձայնին անսալով՝ պիտի ազատ արձակեմ իսրայէլացիներին: Այդ Տիրոջը ես չեմ ճանաչում եւ իսրայէլացիներին էլ չեմ արձակում»: 3 Նրան ասացին. «Եբրայեցիների Աստուածն է կանչել[†] մեզ իր մօտ: Արդ, երեք օրուայ ճանապարհ պիտի գնանք անապատով, որպէսզի զոհ մատուցենք մեր տէր Աստծուն, այլապէս մեզ մահ կամ սպանութիւն է սպասում»: 4 Եգիպտացիների արքան նրանց ասաց. «Մովսէս եւ Ահարոն, դուք ինչո՞ւ էք մարդկանց կտրում իրենց գործից: Ամէն մէկը թող գնայ իր գործին»: 5 Եւ փարաւոնը շարունակեց. «Ահա երկրիս մէջ խիստ բազմանում է ժողովուրդը, նրանց գործից չկտրենք»:

6 Փարաւոնն այդ օրը ժողովրդի գործավարներին ու նրանց վերակացուներին հրամայեց՝ ասելով. 7 «Այդ մարդկանց այլեւս յարդ չտաք աղիւս չինելու համար, ինչպէս տալիս էիք մինչեւ օրս: Իրենք թող գնան ու իրենց համար յարդ հայթայթեն: Եւ ստիպեցէ՛ք, 8 որ, որքան առաջ էին նրանք աղիւս չինում, նոյնքան էլ չինեն այսուհետեւ. բան չպակասեցնէ՛ք: Անգործ մնալու պատճառով է, որ նրանք աղաղակում են ու ասում. "Գնանք, զոհ մատուցենք մեր Աստծուն"»: 9 Թող մարդկանց գործն է՛լ աւելի ծանրանայ, որպէսզի դրանով զբաղուեն եւ ոչ թէ դատարկ բաների մասին մտածեն»: 10 Ժողովրդի գործավարները եւ նրանց վերակացուները խիստ ծանր աշխատանքի լծեցին նրանց եւ, դիմելով ժողովրդին, ասացին. «Այսպէս է ասում փարաւոնը. "Ձեզ այլեւս յարդ չեմ տայ: 11 Դուք ինքներդ գնացէ՛ք, ձեզ համար յարդ հաւաքեցէ՛ք, ուր որ գտնէք, բայց սահմանուած չափից ոչինչ չպիտի պակասի"»: 12 Ժողովուրդը սփռուեց ամբողջ Եգիպտոսով մէկ, որպէսզի եղէգ հաւաքի յարդ պատրաստելու համար: 13 Գործավարներն ստիպում էին նրանց անընդհատ աշխատել՝ ասելով. «Ձեր ամենօրեայ գործն արէք այն չափով, ինչպէս որ երբ յարդ էին տալիս ձեզ»: 14 Եւ իսրայէլացի գործավարները տանջանքի էին ենթարկւում փարաւոնի՝ իրենց վրայ նշանակած վերակացուներից, որոնք ասում էին. «Ինչո՞ւ այսօր էլ աղիւս չէք չինում այնքան, որքան մինչեւ օրս»:

15 Իսրայէլացի գործավարները գնացին բողոքեցին փարաւոնին՝ ասելով. «Ինչո՞ւ ես այդպէս վարւում քո ծառաների հետ: 16 Քո ծառաներին յարդ չեն տալիս, բայց հրամայում են, որ աղիւս չինենք: Քո ծառաներն, ահա, տանջանքի մէջ են: Դու կեղեքում ես քո ժողովրդին»: 17 Փարաւոնը նրանց ասաց. «Դուք ծոյլ ու անբան մարդիկ էք, դրա համար էլ ասում էք. "Գնանք զոհ մատուցենք մեր Աստծուն"»: 18 Արդ, գնացէք աշխատեցէ՛ք, որովհետեւ ոչ ոք ձեզ յարդ չի տալու, բայց դուք աղիւսի սահմանուած քանակը պէտք է տաք»:

19 Իսրայէլացիների գործավարները, տեսնելով իրենց այս ծանր կացութիւնը, իրար մէջ ասացին. «Ոչ ոք չի նուազեցնի աղիւս չինելու մեր ամենօրեայ քանակը»: 20 Նրանք հանդիպեցին Մովսէսին ու Ահարոնին, որոնք փարաւոնի պալատից ելնելով՝ գալիս էին իրենց մօտ: 21 Նրանք ասացին նրանց. «Թող Աստուած աչքի առաջ ունենայ ձեզ եւ դատի, քանի որ մեր հօտը գարշելի դարձրիք փարաւոնի ու նրա պաշտօնեաների աչքին: Դուք սուր տուեցիք նրա ձեռքը, որ նա մեզ սպանի»:

[†]Եբրայերէնում՝ պատահել է մեզ:

ՄՈՎՍԷՍԸ ԳԱՆԳԱՏՈՒՄ Է ԱՍՏՈՒՈՒՆ

22 Դիմելով Տիրոջը՝ Մովսէսն ասաց. «Տէ՛ր, ինչո՞ւ չարչարեցիր քո ժողովրդին եւ ինչո՞ւ ուղարկեցիր ինձ: 23 Այն պահից, երբ մտայ փարաւոնի պալատը քո անունից նրա հետ խօսելու համար, նա չարչարեց ժողովրդին, իսկ դու երբեք չես փրկում քո ժողովրդին»:

6 Տէրն ասաց Մովսէսին. «Հիմա կը տեսնես, թէ ինչ եմ անելու փարաւոնին: Նա հզօր ձեռքի միջոցով պիտի արձակի նրանց, եւ բարձրացուած բազուկով նրանց պիտի հանի նաեւ իր երկրից»:

ԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ՄՈՎՍԷՍԻՆ

2 Աստուած խօսեց Մովսէսի հետ եւ ասաց նրան. «Ե՛ս եմ Տէրը: 3 Ես երեւացի Աբրահամին, Իսահակին ու Յակոբին: Նրանց Աստուածը ես եմ, իմ անունը Տէր է, բայց ես դա նրանց չյայտնեցի[†]: 4 Ես նրանց հետ ուխտ եմ կնքել, որ նրանց տամ Քանանացիների երկիրը, ուր նրանք պանդխտեցին: 5 Ես լսեցի հեծեծանքը իսրայէլացիների, որոնց եգիպտացիները ստրկացրել են, եւ յիշեցի ձեզ տուած իմ ուխտը: 6 Գնա՛ իսրայէլացիների մօտ ու ասա՛ նրանց. "Ե՛ս եմ Տէրը: Ես ձեզ ազատելու եմ եգիպտացիների բռնութիւնից, ձեզ փրկելու եմ նրանց ծառայելուց, ձեզ ազատելու եմ իմ հզօր բազկով ու նրանց գլխին մեծամեծ պատիժներ հասցնելով: 7 Ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը եւ պիտի լինեմ ձեր Աստուածը: Դուք պիտի գիտենաք, որ ե՛ս եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ ազատելու եմ եգիպտացիների բռնութիւնից 8 եւ ձեզ տանելու եմ այն երկիրը, որ երդուեցի տալ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին: Այն ձեզ եմ տալու որպէս ժառանգութիւն, որովհետեւ ե՛ս եմ Տէրը"»: 9 Մովսէսը այս բանը հաղորդեց իսրայէլացիներին, բայց նրանք չլսեցին նրան վհատութեան եւ տաժանակիր աշխատանքի պատճառով:

10 Տէրը, խօսելով Մովսէսի հետ, ասաց. «Մտի՛ր ու խօսի՛ր եգիպտացիների արքայ փարաւոնի հետ, 11 որ նա իսրայէլացիներին արձակի Եգիպտացիների երկրից»: 12 Մովսէսը, Տիրոջը դիմելով, ասաց. «Իսրայէլացիներն իսկ ինձ չլսեցին, փարաւոնն ինձ ինչո՞ւ պիտի լսի: Ես ճարտարախօս չեմ»: 13 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ իսրայէլացիներին ու եգիպտացիների արքայ փարաւոնին ուղղուած հրաման տուեց՝ հանելու իսրայէլացիներին Եգիպտացիների երկրից:

ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ԱՀԱՐՈՆԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

14 Ահա Մովսէսի ու Ահարոնի ընտանիքների առաջնորդների անունները. Իսրայէլի անդրանիկ որդի Ռուբէնի որդիներն են՝ Ենոքն ու Փալլուսը, Ասրոնն ու Քարմին: Սա Ռուբէնի ազգատոհմն է: 15 Շմաւոնի որդիներն են՝ Յամուէլը, Յամինը, Ահոդը, Յաքինը, Սահառն ու Սաւուղը, որը փիւնիկեցի[†] կնոջից էր ծնուել: Սրանք Շմաւոնի որդիների տոհմերն են: 16 Ղեւիի որդիների անունները, ըստ իրենց ընտանիքների, հետեւեալն են. Գեթսոն, Կահաթ եւ Մերարի: Ղեւին ապրեց հարիւր երեսունեօթը տարի: 17 Գեթսոնի որդիներն են՝ Լոբենին եւ Սեմէին՝ իրենց նահապետների ընտանիքներով: 18 Կահաթի որդիներն են՝ Ամրամը, Սահառը, Քեբրոնն ու Ոզիէլը: Կահաթն ապրեց հարիւր երեսուներեք տարի: 19 Մերարիի որդիներն են՝ Մոոլին ու Մուսին: Սրանք Ղեւիի ընտանիքներն են ըստ իրենց ցեղերի: 20 Ամրամն ամուսնացաւ իր հօրեղբօր դուստր[‡] Յոքաբեդի հետ,

[†]Եբրայերէնում՝ իմ Եհովա անունով նրանց չներկայացայ:

[†]Եբրայերէն՝ քանանացի:
[‡] Եբրայերէն՝ քոյր:

եւ սա նրանից ունեցաւ Ահարոնին, Մովսէսին ու նրանց քոյր Մարիամին: Ամրամն ապրեց հարիւր երեսուներեք տարի: 21 *Սահառի որդիներն են՝ Կորխը, Նափեգն ու Զեքրին:* 22 *Ոզիէլի որդիներն են՝ Միսայէլը, Ելիսափանն ու Սեթրին:* 23 *Ահարոնն ամուսնացաւ Ամինադաբի դուստր, Նաասոնի քոյր Եղիսաբէթի հետ: Սա նրանից ունեցաւ Նաբադին, Աբիուդին, Եղիազարին ու Իթամարին:* 24 *Կորխի որդիներն են՝ Ասիրը, Եղկանան ու Բիասափը: Սրանք Կորխի յետնորդներն են:* 25 *Ահարոնի որդի Եղիազարը ամուսնացաւ Փուտիէլի դուստրերից մէկի հետ, եւ սա նրանից ունեցաւ Փենեէսին: Սրանք են ղեւտացիների ընտանիքների առաջնորդները ըստ իրենց ցեղերի:*

26 *Այս Ահարոնին ու Մովսէսին էր, որ Աստուած ասաց՝ իսրայէլացիներին հանել իրենց զօրքով հանդերձ Եգիպտացիների երկրից:* 27 *Եւ սրանք էին, որ դիմեցին եգիպտացիների արքայ փարաւոնին՝ դուրս հանելու Եգիպտոսից իսրայէլացիներին:*

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԸ ՄՈՎՍԷՍԻՆ ՈՒ ԱՀԱՐՈՆԻՆ

28 *Սրանք այն Մովսէսն ու Ահարոնն են, որոնց օրօք Տէրը Եգիպտացիների երկրում խօսելով Մովսէսի հետ՝* 29 *ասաց նրան. «Ե՛ս եմ Տէրը: Եգիպտացիների արքայ փարաւոնին հաղորդի՛ր այն ամէնը, ինչ ասում եմ քեզ»:* 30 *Եւ Մովսէսը, դիմելով Տիրոջը, ասաց. «Զէ՞ որ ես անվարժ եմ խօսում, փարաւոնն ինձ ինչպէ՞ս կը լսի»:*

7 *Տէրն ասաց Մովսէսին. «Ահա ես քեզ փարաւոնի համար մի աստուած դարձրի, իսկ քո եղբայր Ահարոնը թող լինի քո մարգարէն*† *:* 2 *Դու Ահարոնին կը յայտնես այն ամէնը, ինչ կը պատուիրեմ քեզ, իսկ քո եղբայր Ահարոնը թող դիմի փարաւոնին, որ սա իսրայէլացիներին արձակի իր երկրից:* 3 *Ես կը կարծրացնեմ փարաւոնի սիրտը, բայց եւ կը բազմապատկեմ իմ նշանները ու զարմանահրաշ գործերը Եգիպտացիների երկրում,* 4 *փարաւոնը ձեզ չի լսի, ես իմ ձեռքը կը դնեմ Եգիպտոսի վրայ եւ իմ զօրութեամբ մեծապէս վրէժխնդիր լինելով՝ Եգիպտացիների երկրից կը հանեմ իմ ժողովրդին՝ իսրայէլացիներին:* 5 *Եւ եգիպտացիները կ՚իմանան, որ ե՛ս եմ Տէրը: Ես իմ ձեռքը կը մեկնեմ դէպի Եգիպտոս եւ իսրայէլացիներին դուրս կը հանեմ նրանց միջից»:* 6 *Մովսէսն ու Ահարոնը արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր պատուիրել իրենց. նրանք այդպէս էլ արեցին:*

7 *Մովսէսն ութսուն տարեկան էր, իսկ Ահարոնը՝ ութսուներեք տարեկան, երբ նրանք խօսեցին փարաւոնի հետ:*

ԱՀԱՐՈՆԻ ԳԱՒԱԶԱՆԸ

8 *Տէրը, դիմելով Մովսէսին ու Ահարոնին, ասաց.* 9 *«Եթէ փարաւոնը խօսի ձեզ հետ ու ասի՝ "Մեզ նշան կամ զարմանահրաշ գործ ցոյց տուէ՛ք", այն ժամանակ քո եղբայր Ահարոնին կ՚ասես. "Ա՛ռ քո գաւազանը, այն գետին գցի՛ր փարաւոնի ու նրա պաշտօնեաների առաջ, եւ դա վիշապ կը դառնայ"»:*

10 *Մովսէսն ու Ահարոնը մտան փարաւոնի մօտ եւ արեցին այնպէս, ինչպէս իրենց պատուիրել էր Տէրը: Ահարոնը գաւազանը գցեց փարաւոնի ու նրա պաշտօնեաների առաջ, եւ դա վիշապ դարձաւ:* 11 *Փարաւոնը կանչեց եգիպտացի իմաստուններին ու կախարդներին: Եգիպտացի մոգերը նոյնն արեցին իրենց կախարդութեամբ:* 12 *Իւրաքանչիւրն իր գաւազանը գցեց գետին, եւ դրանք վիշապներ դարձան, բայց Ահարոնի գաւազանը կուլ տուեց նրանց գաւազանները:* 13 *Կարծրացաւ փարաւոնի սիրտը, եւ նա չլսեց նրանց, ինչպէս որ ասել էր Տէրը:*

ՏԱՍԸ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ

Արիւն

14 *Տէրն ասաց Մովսէսին. «Փարաւոնի սիրտը կարծրացել է. նա որոշել է չարձակել ժողովրդին:* 15 *Առաւօտեան գնա՛ փարաւոնի մօտ: Երբ նա դէպի գետը կը գնայ, կանգնի՛ր գետի եզերքին, նրա դիմաց, եւ քո ձեռքն ա՛ռ այն գաւազանը, որ օձ դարձաւ:* 16 *Դու նրան կ՚ասես. "Եբրայեցիների Տէր Աստուածն է ուղարկել ինձ քեզ մօտ՝ ասելով. "Արձակի՛ր իմ ժողովրդին, որ նա պաշտի ինձ անապատում: Մինչեւ հիմա ինձ չլսեցիր":* 17 *Տէրն այսպէս է ասում. «Սրանով կ՚իմանաս, որ ե՛ս եմ Տէրը. ահա ես իմ ձեռքի գաւազանով կը հարուածեմ գետի ջրին, եւ այն կը վերածուի արեան:* 18 *Գետի մէջ եղած ձկները կը սատկեն, գետը կը նեխի, եւ եգիպտացիները չեն կարողանայ գետից ջուր խմել»:*

19 *Տէրն ասաց Մովսէսին. «Ահարոնին ասա՛, որ առնի գաւազանը եւ ձեռքը մեկնի Եգիպտոսի ջրերի վրայ՝ նրանց գետերի վրայ, նրանց լճերի վրայ, նրանց ջրաւազանների վրայ, նրանց ջրակոյտերի վրայ, եւ ջուրը կը վերածուի արեան: Արեան պիտի վերածուի ողջ Եգիպտացիների երկրում գտնուող անգամ փայտէ ու քարէ ամանների մէջ եղած ջուրը»:* 20 *Մովսէսն ու Ահարոնը արեցին այնպէս, ինչպէս որ իրենց պատուիրել էր Տէրը. փարաւոնի ու նրա պաշտօնեաների առաջ Ահարոնը վեր բարձրացնելով իր գաւազանը՝ հարուածեց գետի ջրին եւ գետի բոլոր ջրերը վերածեց արեան:* 21 *Գետում եղած ձկները սատկեցին, գետը նեխեց, եւ եգիպտացիները չէին կարողանում գետից ջուր խմել: Եգիպտացիների ամբողջ երկրում արիւն էր:* 22 *Իրենց կախարդութեամբ նոյնն արեցին նաեւ եգիպտացի մոգերը: Կարծրացաւ փարաւոնի սիրտը, եւ, ինչպէս որ ասել էր Տէրը, նա չլսեց նրանց:* 23 *Փարաւոնը վերադարձաւ, մտաւ իր պալատը: Այս դէպքը չէր ազդել նրա վրայ:* 24 *Բոլոր եգիպտացիները հորեր փորեցին գետի շուրջը, որպէսզի խմելու ջուր ունենան, որովհետեւ գետից չէին կարողանում ջուր խմել:* 25 *Եօթը օր էր անցել, որ Տէրը հարուածէր հասցրել գետին:*

Գորտեր

8 *Տէրն ասաց Մովսէսին. «Մտի՛ր փարաւոնի մօտ ու ասա՛ նրան. "Այսպէս է ասում Տէրը. արձակի՛ր իմ ժողովրդին, որ նա պաշտի ինձ:* 2 *Եթէ չուզենաս արձակել, ես, ահա, գորտերով կ՚ապականեմ քո բովանդակ երկիրը:* 3 *Գետի մէջ գորտեր կը վխտան, եւ դրանք, գետից դուրս գալով, կը մտնեն քո պալատները, քո սենեակների պահարանները*† *, քո անկողինները, քո պաշտօնեաների ու քո ժողովրդի տները, քո թոնիրներն ու քո խմորի զանգուածների մէջ:* 4 *Գորտերը կը բարձրանան նաեւ քեզ վրայ, քո ժողովրդի ու քո պաշտօնեաների վրայ"»:*

5 *Տէրն ասաց Մովսէսին. «Քո եղբայր Ահարոնին ասա՛. "Ձեռքիդ գաւազանը մեկնի՛ր գետի վրայ, ջրանցքների, ճահիճների վրայ եւ գորտեր դուրս բե՛ր Եգիպտացիների երկրի վրայ"»:* 6 *Ահարոնն իր ձեռքը մեկնեց եգիպտացիների ջրերի վրայ ու գորտեր դուրս բերեց: Գորտերն ելան ու ծածկեցին Եգիպտացիների երկիրը:* 7 *Իրենց կախարդութիւններով նոյնն արեցին նաեւ եգիպտացի մոգերը եւ գորտեր դուրս բերեցին Եգիպտացիների երկրի վրայ:*

8 *Կանչելով Մովսէսին ու Ահարոնին՝ փարաւոնն ասաց. «Աղօթեցէ՛ք Տիրոջը, որ նա գորտերը հեռացնի ինձնից ու իմ ժողովրդից, որ ես արձակեմ ձեր ժողովրդին, նրանք գնան զոհ մատուցեն Տիրոջը»:* 9 *Մովսէսն ասաց փարաւոնին. «Ժամանակ սահմանի՛ր, թէ ե՛րբ աղօթեմ քեզ համար, քո պաշտօնեաների ու քո ժողովրդի համար, որպէսզի գորտերը չքանան քո, քո ժողովրդի մօտից ու ձեր տներից եւ մնան միայն գետում»:* 10 *Նա ասաց. «Վաղը»: Սա ասաց. «Թող ասածիդ պէս լինի, եւ դու կ՚իմանաս, որ մեր տէր Աստծուց բացի մի ուրիշ աստուած չկայ:* 11 *Գորտերը կը չքանան քո պալատներից, քո, քո ծառաների, քո ժողովրդի մօտից եւ կը մնան միայն գետի մէջ»:* 12 *Մովսէսն ու Ահարոնը դուրս ելան փարաւոնի մօտից: Մովսէսն աղօթեց Տիրոջը, որպէսզի գորտերը հեռանան, ինչպէս որ խոստացել էր փարաւոնին:* 13 *Տէրն արեց այնպէս, ինչպէս որ խնդրել էր Մովսէսը: Գորտերը չքացան տներից, բակերից ու դաշտերից:* 14 *Դրանք հաւաքեցին կոյտ-կոյտ, եւ երկիրը լցուեց գարշահոտութեամբ:* 15 *Երբ փարաւոնը տեսաւ,*

†Իմա՝ պատգամախօսը:

†Եբրայերէն՝ *fn ննջասենեակները:*

որ դժուարութիւնը վերացել է, նորից կարծրացաւ նրա սիրտը, նա չլսեց նրանց, ինչպէս որ ասել էր Տէրը:

Մժեղ

16 Տէրն ասաց Մովսէսին. «Ահարոնին ասա՛, որ ձեռքի գաւազանը մեկնի ու հարուածի գետնին, որպէսզի մժեղ լինի մարդկանց, անասունների եւ Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ»: 17 Այդպէս էլ արեցին. Ահարոնն իր գաւազանը մեկնեց ու հարուածեց գետնին: Մժեղ եղաւ մարդկանց, անասունների ու Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ: 18 Իրենց կախարդութիւններով նոյնը ուզեցին անել նաեւ մոգերը, որպէսզի մժեղ հանեն, բայց չկարողացան: Մժեղ լցուեց մարդկանց ու անասունների վրայ: 19 Մոգերն ասացին փարաւոնին. «Սրա մէջ Աստծու մատը խառն է»: Կարծրացաւ փարաւոնի սիրտը, եւ նա, ինչպէս որ ասել էր Տէրը, չլսեց նրանց:

Շնաճանճ

20 Տէրն ասաց Մովսէսին. «Առաւօտեան վե՛ր կաց, գնա կանգնի՛ր փարաւոնի առաջ, երբ նա դէպի գետը կը գնայ: Նրան կ'ասես. "Այսպէս է ասում Տէրը. արձակի՛ր իմ ժողովրդին, որ նա պաշտի ինձ: 21 Իսկ եթէ չուզենաս արձակել իմ ժողովրդին, ես, ահա, շնաճանճեր կ'ուղարկեմ քեզ վրայ, քո պաշտօնեաների ու քո ժողովրդի վրայ եւ ձեր տների վրայ: Եգիպտացիների տներն ու նրանց բնակեցրած երկիրը կը լցուեն շնաճանճերով: 22 Նոյն օրը ես զարմանահրաշ գործեր կ'անեմ իմ ժողովրդի բնակած Գեսեմ երկրում, եւ այնտեղ շնաճանճեր չեն լինի, որպէսզի իմանաս, որ ե՛ս եմ Տէրը՝ ամբողջ երկրի Տէրը: 23 Ես պիտի բաժանեմ իմ ժողովրդին քո ժողովրդից: Վաղն իսկ այդ նշանը կը կատարուի քո երկրում"»: 24 Եւ Տէրն այդպէս էլ արեց: Բազում շնաճանճեր թափուեցին փարաւոնի պալատների, նրա պաշտօնեաների տների ու Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ: Շնաճանճերից կործանուեց երկիրը:

25 Կանչելով Մովսէսին ու Ահարոնին՝ փարաւոնն ասաց. «Գնացէ՛ք, այս երկրում զո՛հ մատուցէք ձեր տէր Աստծուն»: 26 Մովսէսն ասաց. «Ընդունուած չէ, որ եգիպտացիների պիղծ անասունները զոհ մատուցենք մեր տէր Աստծուն, քանի որ, եթէ եգիպտացիների պիղծ անասունները զոհ մատուցենք նրան, մեզ կը քարկոծեն: 27 Ուրեմն՝ երեք օրուայ ճանապարհ գնանք դէպի անապատ եւ զոհ մատուցենք մեր տէր Աստծուն, ինչպէս որ մեզ ասել է Տէրը»: 28 Փարաւոնն ասաց. «Ես արձակում եմ ձեզ, անապատում զո՛հ մատուցէք ձեր տէր Աստծուն: Միայն թէ հեռու չգնաք: Արդ, նաեւ ինձ համար աղօթեցէ՛ք Տիրոջը»: 29 Մովսէսն ասաց. «Ես քեզնից կը հեռանամ, կ'աղօթեմ Աստծուն, եւ վաղն իսկ շնաճանճերը կը չքանան փարաւոնի, նրա պաշտօնեաների ու ժողովրդի վրայից: Միայն թէ փարաւոնը ժողովրդին նորից չխաբի՝ չարգելի նրան գնալ ու Տիրոջ համար զոհ մատուցել»: 30 Մովսէսը փարաւոնի մօտից դուրս ելաւ եւ աղօթեց Աստծուն: 31 Տէրն արեց այնպէս, ինչպէս որ ասել էր Մովսէսը. շնաճանճերը վերացրեց փարաւոնի, նրա պաշտօնեաների ու ժողովրդի վրայից: Մի շնաճանճ անգամ չմնաց: 32 Բայց դրանից յետոյ էլ փարաւոնի սիրտը կարծրացաւ, եւ նա չուզեց արձակել ժողովրդին:

Անասունների կոտորածը

9 Տէրն ասաց Մովսէսին. «Գնա՛ փարաւոնի մօտ ու նրան ասա՛, որ այսպէս է ասում եբրայեցիների Տէր Աստուածը. "Արձակի՛ր իմ ժողովրդին, որ պաշտեն ինձ: 2 Իսկ եթէ չուզենաս արձակել իմ ժողովրդին եւ դեռ պահես նրան, 3 Տիրոջ ձեռքը, ահա, կ'իջնի դաշտում գտնուող քո անասունների հօտերի՝ ձիերի, էշերի, ուղտերի, արջառների ու ոչխարների վրայ, եւ շատ մեծ կոտորած կը լինի: 4 Ես զարմանահրաշ գործեր կ'անեմ՝ եգիպտացիների հօտերը եւ իսրայէլացիների հօտերը կը զատորոշեմ, եւ ոչ մի իսրայէլացու անասուն չի

կորչի"»: 5 Եւ Աստուած ժամկէտ նշանակեց ու ասաց. «Վաղն իսկ Տէրը կ'իրագործի այդ բանը երկրի վրայ»: 6 Եւ Տէրը յաջորդ օրն իսկ արեց այդ բանը. եգիպտացիների բոլոր անասունները սատկեցին, իսկ իսրայէլացիների ոչ մի անասուն չոչնչացաւ: 7 Երբ փարաւոնը տեսաւ, որ իսրայէլացիների ոչ մի անասուն չի ոչնչացել, կարծրացաւ նրա սիրտը, եւ նա ժողովրդին չարձակեց:

Ուռուցքներ

8 Տէրը Մովսէսին ու Ահարոնին ասաց. «Լիքը ձեռքով հնոցի մոխիր վերցրէ՛ք, Մովսէսը փարաւոնի ու նրա պաշտօնեաների առաջ այն թող շաղ տայ դէպի երկինք: 9 Մոխիրը թող թափուի Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ: Խոցեր թող առաջանան մարդկանց ու անասունների վրայ եւ ուռուցքներ՝ Եգիպտացիների ամբողջ երկրի մարդկանց ու անասունների վրայ»: 10 Նրանք վերցրին հնոցի մոխիրը, եւ Մովսէսը փարաւոնի առաջ այն շաղ տուեց դէպի երկինք: Մարդկանց ու անասունների վրայ խոցեր եւ ուռուցքներ առաջացան: 11 Մոգերը խոցերի պատճառով չէին կարողանում Մովսէսի առաջ կանգնել, որովհետեւ խոցեր առաջացան նաեւ մոգերի ու Եգիպտացիների ամբողջ երկրի մարդկանց վրայ: 12 Տէրը կարծրացրեց փարաւոնի սիրտը, եւ, ինչպէս որ ասել էր Տէրը Մովսէսին, փարաւոնը չլսեց նրանց:

Կարկուտ

13 Տէրն ասաց Մովսէսին. «Առաւօտեան վե՛ր կաց, կանգնի՛ր փարաւոնի առաջ ու նրան ասա՛, որ այսպէս է ասում եբրայեցիների Տէր Աստուածը. "Արձակի՛ր իմ ժողովրդին, որ պաշտի ինձ, 14 այլապէս այս անգամ ամէն տեսակ փորձանքներով պիտի պատուհասեմ նաեւ քեզ, քո պաշտօնեաներին ու քո ժողովրդին, որպէսզի իմանաս, որ ամբողջ աշխարհում ինձ նման ուրիշ մէկը չկայ: 15 Որովհետեւ իմ ձեռքը մեկնելով՝ մահացու հարուածած պիտի հասցնեմ քեզ ու քո ժողովրդին, եւ դու պիտի վերանաս երկրի երեսից: 16 Ես քեզ խնայեցի այն նպատակով, որ քեզ ցոյց տամ իմ զօրութիւնը, եւ իմ անունը յայտնի լինի ողջ երկրում, 17 բայց դու դեռեւս ձեռքիդ տակ ես պահում իմ ժողովրդին եւ չարչարում նրան[†]: 18 Ես, ահա, վաղն իսկ, հէնց այս ժամին այնպիսի սաստիկ կարկուտ տեղացնեմ, որպիսին դեռեւս չի եղել Եգիպտոսում իր գոյութեան օրուանից մինչեւ այսօր: 19 Արդ, շտապի՛ր հաւաքել քո անասունները եւ այն ամէնը, ինչ ունես դաշտում, որովհետեւ դաշտում գտնուող ու դեռեւս տուն չմտած մարդկանց ու անասունների վրայ կարկուտ է թափուելու եւ ոչնչացնելու է նրանց"»: 20 Փարաւոնի պաշտօնեաներից նա, ով մի անգամ տեսել էր Տիրոջ սարսափը, իր ծառաներին ու անասունները հաւաքեց տան մէջ, 21 իսկ ով չանսաց Տիրոջ խօսքերին, դաշտում թողեց իր ծառաներին ու անասունները:

22 Տէրն ասաց Մովսէսին. «Ձեռքդ մեկնի՛ր դէպի երկինք, եւ թող կարկուտ թափուի Եգիպտացիների երկրի վրայ, ինչպէս նաեւ մարդկանց ու անասունների եւ Եգիպտացիների երկրի դաշտերի բոլոր բոյսերի վրայ»: 23 Մովսէսը ձեռքը[‡] մեկնեց դէպի երկինք, Տէրը որոտ ու կարկուտ ուղարկեց, եւ երկրի վրայ սկսեց կրակ թափուել: Տէրը կարկուտ տեղացրեց Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ: 24 Կարկուտ էր տեղում, բայց կարկուտի մէջ բորբոքուած կրակ կար: Կարկուտն այնքան խոշոր էր, որ նմանը չէր եղել Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ ազգի առաջացումից ի վեր: 25 Կարկուտը հարուածեց Եգիպտացիների ամբողջ երկիրը, այն ամէնը, ինչ դաշտում էր մնացել՝ մարդուց սկսած մինչեւ անասուն: Կարկուտը հարուած հասցրեց դաշտում եղած ամբողջ բուսականութեանը, ջարդուփշուր արեց դաշտում եղած բոլոր ծառերը: 26 Իսրայէլացիների ապրած Գեսեմ երկրում, սակայն, կարկուտ չտեղաց: 27 Փարաւոնը

[†]Եբրայերէնում՝ խրոխտանո՞ւմ ես իմ ժողովրդի վրայ՝ նրան չարձակելով:

[‡]Եբրայերէնում՝ գաւազանը:

մարդ ուղարկելով՝ կանչեց Մովսէսին ու Ահարոնին եւ ասաց նրանց. «Մեղք եմ գործել: Այսուհետեւ Տէրն արդար է, իսկ ես ու իմ ժողովուրդը ամբարիշտներ ենք: 28 Ինձ համար աղօթեցէ՛ք Տիրոջը, որ Աստծու որոտը, կարկուտն ու կրակը դադարեն մեզ վրայ թափուելուց: Ես ձեզ կ՚արձակեմ, այլեւս դուք այստեղ չէք մնայ»: 29 Մովսէսն ասաց նրան. «Երբ դուրս կը գամ այս քաղաքից, ձեռքս կը մեկնեմ առ Աստուած, եւ ձայները կը դադարեն, կարկուտ ու անձրեւ այլեւս չեն տեղայ, որպէսզի դու համոզուես, որ երկիրը Տիրոջն է պատկանում: 30 Բայց գիտեմ, որ դու եւ քո պաշտօնեաները դեռեւս չէք վախենում տէր Աստծուց»: 31 Կտաւատն ու գարին կարկտահարուեցին, որովհետեւ գարին հասած էր, կտաւատը՝ սերմնակալած, 32 իսկ ցորենն ու հաճարը կարկտահար չեղան, որովհետեւ դեռ չէին հասունացած:

33 Մովսէսը փարաւոնի մօտից ելաւ ու գնաց քաղաքից դուրս, ձեռքը մեկնեց Տիրոջը, եւ ձայներն ու կարկուտը դադարեցին, անձրեւ այլեւս չտեղաց երկրի վրայ: 34 Երբ փարաւոնը տեսաւ, որ անձրեւը, կարկուտն ու ձայները դադարել են, դարձեալ մեղք գործեց. նա կարծրացրեց իր ու իր պաշտօնեաների սիրտը: 35 Կարծրացաւ փարաւոնի սիրտը, եւ նա իսրայէլացիներին չարձակեց, ինչպէս որ յայտնել էր Տէրը Մովսէսի միջոցով:

Մորեխներ

10 Դիմելով Մովսէսին՝ Տէրն ասաց. «Մտի՛ր փարաւոնի մօտ, որովհետեւ ես կարծրացրել եմ նրա ու նրա պաշտօնեաների սիրտը, որպէսզի իմ նշանները հերթով թափուեն նրանց գլխին, 2 որպէսզի դուք պատմէք ձեր որդիներին ու ձեր որդիների որդիներին, թէ որքան եմ ես ծաղրուծանակի ենթարկել եգիպտացիներին, ինչպէս նաեւ պատմէք իմ այն նշանների մասին, որ կատարեցի նրանց մօտ, որպէսզի ճանաչէք, թէ ե՛ս եմ Տէրը»:

3 Մովսէսն ու Ահարոնը մտան փարաւոնի մօտ եւ ասացին նրան. «Այսպէս է ասում եբրայեցիների Տէր Աստուածը. "Մինչեւ ե՞րբ չես պատկառելու ինձնից: Արձակի՛ր իմ ժողովրդին, որպէսզի պաշտի ինձ: 4 Եթէ չկամենաս արձակել իմ ժողովրդին, ես, ահա, վաղն իսկ, հէնց այս ժամին շատ մորեխ կը թափեմ քո սահմաններից ներս: 5 Դրանք կը ծածկեն ողջ երկրի երեսը, եւ դու չես կարողանայ տեսնել երկիրը: Դրանք կը խժռեն բոլոր մնացած այն բաները, որ ձեզ թողել է կարկուտը, կը խժռեն բոլոր տունկերը, որ բուսել են երկրի վրայ ձեզ համար: 6 Քո պալատները, քո պաշտօնեաների եւ Եգիպտացիների ամբողջ երկրի բոլոր տները այնպէս կը լցուեն մորեխներով, որ ո՛չ ձեր հայրերը, ո՛չ էլ նրանց նախահայրերը երբեք չեն տեսել երկրի վրայ իրենց ծնուած օրից մինչեւ այսօր"»: Եւ Մովսէսը դուրս եկաւ փարաւոնի մօտից:

7 Փարաւոնի պաշտօնեաներն իրեն ասացին. «Այս խոչընդոտը մինչեւ ե՞րբ պիտի լինի մեր առաջ: Արձակի՛ր մարդկանց, որպէսզի պաշտեն իրենց տէր Աստուծուն: Գուցէ ուզում ես տեսնել, թէ ինչպէ՞ս է կործանւում Եգիպտոսը»: 8 Եւ նրանք Մովսէսին ու Ահարոնին վերադարձրին փարաւոնի մօտ: Փարաւոնը նրանց ասաց. «Գնացէք պաշտեցէ՛ք ձեր տէր Աստծուն: Գնացողները, սակայն, ովքե՞ր են լինելու»: 9 Մովսէսն ասաց. «Կը գնանք մենք մեր երիտասարդներով ու ծերերով, մեր տղաներով ու աղջիկներով, կը գնանք մեր արջառների ու ոչխարների հետ, որովհետեւ մեր տէր Աստծու տօնն է»: 10 Փարաւոնն ասաց նրանց. «Թող այդպէս լինի: Տէրը ձեզ հետ: Քանզի արձակում եմ ձեզ. բայց մի՞թէ ձեր ունեցուածքն էլ եմ ազատ արձակում: Տեսնո՞ւմ էք, որ չարութիւն կայ ձեր մէջ: 11 Այդպէս չի լինի: Նախ թող գնան միայն տղամարդիկ եւ պաշտեն Աստծուն, քանի որ դուք հէնց այդ էիք ուզում»: Եւ նրանց վռնդեցին փարաւոնի մօտից:

12 Տէրն ասաց Մովսէսին. «Ձեռքդ մեկնի՛ր Եգիպտացիների երկրի վրայ, եւ մորեխ պիտի ելնի Եգիպտացիների երկրի վրայ եւ պիտի խժռեն երկրի այն ողջ բուսականութիւնն ու ծառերի պտուղները, որ փրկուել են կարկտից»:

13 Մովսէսը ձեռքը մեկնեց դէպի երկինք, եւ Տէրը մի ամբողջ ցերեկ ու գիշեր հարաւային հողմ բարձրացրեց երկրի վրայ: Երբ առաւօտ եղաւ, հարաւային հողմն առաւ մորեխն 14 ու ցրեց Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ, նրա սահմաններից ներս: Ո՛չ դրանից առաջ էր այդքան մորեխ եղել, եւ ո՛չ էլ դրանից յետոյ այդքան մորեխ եղաւ: 15 Մորեխը ծածկեց ամբողջ երկիրը, եւ երկիրը† բուսականութիւնից զրկուեց: Մորեխը կերաւ երկրի այն ողջ բուսականութիւնն ու ծառերի պտուղները, որ փրկուել էին կարկտից: Եգիպտացիների ամբողջ երկրում կանաչ բան չմնաց ո՛չ ծառերի, ո՛չ էլ դաշտային տունկերի վրայ:

16 Փարաւոնն շտապ կանչեց Մովսէսին ու Ահարոնին եւ ասաց. «Ես մեղք գործեցի ձեր տէր Աստծու եւ ձեր դէմ: 17 Արդ, ներեցէ՛ք իմ այս յանցանքը եւս եւ աղաչեցէ՛ք ձեր տէր Աստծուն, որ ինձ ազատի այս մորեխներից»: 18 Մովսէսը գնաց փարաւոնի մօտից եւ աղօթեց Աստծուն: 19 Աստուած ծովի‡ կողմից սաստիկ հողմ բարձրացրեց, հողմն առաւ մորեխն ու լցրեց Կարմիր ծովը: Եգիպտացիների ամբողջ երկրում մորեխ չմնաց: 20 Տէրը կարծրացրեց փարաւոնի սիրտը, եւ նա չարձակեց իսրայէլացիներին:

Թանձրամած խաւար

21 Տէրն ասաց Մովսէսին. «Ձեռքդ մեկնի՛ր դէպի երկինք, եւ Եգիպտացիների երկրի վրայ թող խաւար լինի՝ թանձրամած խաւար»: 22 Մովսէսը ձեռքը մեկնեց դէպի երկինք, եւ Եգիպտացիների ամբողջ երկրի վրայ երեք օր խաւար, մէգ ու մութ եղաւ: 23 Երեք օր եղբայրն իր եղբօրը չտեսաւ, երեք օր ոչ ոք իր անկողնուց վեր չելաւ, մինչդեռ բոլոր իսրայէլացիների բոլոր բնակավայրերում լոյս էր:

24 Փարաւոնը, կանչելով Մովսէսին ու Ահարոնին, ասաց նրանց. «Գնացէք պաշտեցէ՛ք ձեր տէր Աստծուն, ձեր ունեցուածքը վերցրէ՛ք ձեզ հետ, բայց ձեր արջառն ու ոչխարը թողէ՛ք այստեղ»: 25 Մովսէսն ասաց. «Ողջակիզութեան ու զոհաբերութեան անասուններ դու ի՛նքդ մեզ պիտի տաս, որ մատուցենք մեր տէր Աստծուն: 26 Մեր անասուններն էլ մեզ հետ պիտի գնան, մենք մի կճղակ անգամ չենք թողնելու այստեղ, որովհետեւ մեր տէր Աստծուն դրանցից պիտի զոհ մատուցենք: Մինչեւ մեր այնտեղ հասնելը մենք դեռ չգիտենք, թէ ինչ պիտի զոհաբերենք մեր տէր Աստծուն»: 27 Տէրը կարծրացրեց փարաւոնի սիրտը, եւ փարաւոնը չուզեց արձակել նրանց: 28 Փարաւոնն ասաց. «Հեռացի՛ր ինձնից, զգո՛յշ եղիր, այլեւս չհամարձակուես իմ աչքին երեւալ, որովհետեւ այն օրը, որ երեւաս ինձ, կը սպանուես»: 29 Մովսէսն ասաց. «Դու արդէն ասացիր. այլեւս աչքիդ չեմ երեւայ»:

Անդրանիկների մահը

11 Տէրն ասաց Մովսէսին. «Մի պատուհաս էլ պիտի հասցնեմ փարաւոնին ու Եգիպտոսին, որից յետոյ փարաւոնը ձեզ կ՚արձակի այստեղից: Բայց երբ նա արձակի ձեզ, կ՚արձակի ձեր ամբողջ ունեցուածքով: 2 Արդ, ժողովրդին գաղտնի յայտնի՛ր, որ իւրաքանչիւր տղամարդ եգիպտացի իր ընկերոջից եւ իւրաքանչիւր կին իր եգիպտացի հարեւանուհուց թող խնդրի ոսկեայ եւ արծաթեայ զարդեր ու զգեստներ»: 3 Տէրը շնորհ պարգեւեց իր ժողովրդին եգիպտացիների առաջ, եւ սրանք զարդեր տուին նրանց: Մովսէսը եգիպտացիների, փարաւոնի, նրա բոլոր պաշտօնեաների առաջ ու ժողովրդի աչքին շատ յարգարժան դարձաւ:

4 Մովսէսն ասաց փարաւոնին. «Այսպէս է ասում Տէրը. "Կէս գիշերին ես կը մտնեմ Եգիպտոս, 5 եւ Եգիպտացիների երկրում կը մեռնեն բոլոր անդրանիկ զաւակները՝ իր գահին բազմած փարաւոնի անդրանիկ որդուց սկսած մինչեւ երկանքի մօտ աշխատող աղախնի անդրանիկ որդին, բոլոր անասունների առաջնածինները: 6 Եւ Եգիպտացիների ամբողջ երկրում այնպիսի մեծ աղաղակ կը բարձրանայ, որի նմանը չի եղել, եւ

†Եբրայերէնում՝ երկիրը մթնեց:
‡Եբրայերէնում՝ արեւմուտքի:

այդպիսին չի էլ լինի: 7 Բայց իսրայէլացիների շրջանում մի շուն անգամ չի կանչելու մարդկանց ու անասունների վրայ, որպէսզի իմանաս, թէ ինչպիսի զարմանահրաշ գործեր է անում Տէրը† եգիպտացիների ու իսրայէլացիների մէջ: 8 Այս բոլոր ծառաներդ պիտի գան ծնրադրեն իմ առաջ, երկրպագեն ինձ ու ասեն. "Ելէք գնացէ՛ք դու եւ քո ողջ ժողովուրդը, որին դու ես առաջնորդում: Այդ ժամանակ էլ ես կ'ելնեմ"»:

9 Եւ Մովսէսը փարաւոնի մօտից դուրս ելաւ խիստ զայրացած: Տէրն ասաց Մովսէսին. «Փարաւոնը ձեզ չպիտի լսի, որպէսզի ես Եգիպտացիների երկրում է՛լ աւելի շատ նշաններ ցոյց տամ ու զարմանահրաշ գործեր անեմ»: 10 Մովսէսն ու Ահարոնը Եգիպտացիների երկրում փարաւոնի առաջ արեցին այս բոլոր նշաններն ու զարմանահրաշ գործերը: Տէրը կարծրացրեց փարաւոնի սիրտը, եւ փարաւոնը չուզեց իսրայէլացիներին Եգիպտացիների երկրից արձակել:

ՋԱՏԻԿԸ

12 Տէրը Եգիպտացիների երկրում խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 2 «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարուայ առաջին ամիսը լինի: 3 Դու խօսի՛ր իսրայէլացի ողջ ժողովրդի հետ ու ասա՛. "Այս ամսի տասներորդ օրը ամէն մարդ թող մի ոչխար առնի ըստ իր ընտանիքի՝ ամէն մի տան համար մէկ ոչխար: 4 Եթէ մի ընտանիքի անդամները այնքան քիչ են, որ չեն կարող մէկ ոչխար ուտել, ապա ընտանիքի մեծը, ըստ ընտանիքի թուի թող միանայ իր հարեւանի կամ ընկերոջ հետ, եւ իւրաքանչիւրը թող ստանայ ոչխարի համապատասխան բաժինը: 5 Ձեր այդ ոչխարը որեւէ պակասութիւն թող չունենայ, լինի արու, մէկ տարեկան ու անարատ: Այն կարող է գառ կամ ուլ լինել: 6 Այն կը պահէք մինչեւ այս ամսի տասնչորսերորդ օրը, եւ իսրայէլացիները այն թող մորթեն երեկոյեան: 7 Թող վերցնեն նրա արիւնից ու քսեն այն տան դռան սեմին երկու տեղ ու դռան շրջանակի վերեւը այն տան, ուր այն ուտելու են: 8 Այդ գիշեր թող ուտեն կրակի վրայ խորոված միսը, այն թող ուտեն բաղարջ հացով ու դառն խոտերով: 9 Դրանք հում կամ խաշած չուտէք, այլ՝ կրակի վրայ խորովելով: Կ'ուտէք նաեւ ոչխարի գլուխը, ոտքերն ու փորոտիքը: 10 Առաւօտեան դրանից ոչինչ թող չմնայ: Ոչխարի ոսկորները մի՛ ջարդէք†, այլ, ինչ որ աւելանայ դրանից, կրակով կ'այրէք: 11 Եւ կ'ուտէք այսպէս. ձեր գօտիները թող ձեր մէջքին լինեն, ձեր կօշիկները՝ ձեր ոտքերին, ձեր ցուպերը՝ ձեր ձեռքին: Արագ կ'ուտէք, որովհետեւ Տիրոջ զատիկն է: 12 Այդ գիշեր ես պիտի անցնեմ Եգիպտացիների ամբողջ երկրով եւ պիտի պատուհասեմ Եգիպտացիների երկրի բոլոր արու առաջնածիններին՝ թէ՛ մարդկանց, թէ՛ անասունների: Եգիպտացիների բոլոր աստուածներից վրէժ պիտի լուծեմ, որովհետեւ ե՛ս եմ Տէրը: 13 Եւ նշուած արիւնը այն տների վրայ, ուր ուտելու էք, թող ձեզ նշան լինի: Ես, տեսնելով այդ արիւնը, պիտի խնայեմ ձեզ, եւ ձեր գլխին չեն իջնի մահաբեր այն հարուածները, որոնցով պիտի պատուհասեմ Եգիպտացիների երկիրը: 14 Այդ օրը ձեզ համար յիշարժան թող լինի, եւ դուք, իբրեւ Տիրոջ տօն, այդ օրը տօնեցէ՛ք սերնդէսերունդ: Դա, իբրեւ կարգ, յաւիտեան կը տօնէք»:

ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԸ

15 «Եօթը օր բաղարջ հաց կ'ուտէք, առաջին իսկ օրից սկսած ձեր տնից կը վերացնէք թթխմորը: Բոլոր նրանք, ովքեր առաջին օրից մինչեւ եօթներորդ օրը թթխմորով հաց կ'ուտեն, կը վերացուեն իսրայէլացիների միջից: 16 Առաջին օրը թող սուրբ հռչակուի‡: Ձեզ համար թող սուրբ լինի նաեւ նուիրական եօթներորդ օրը: Այդ օրերին ոչ մի աշխատանք չկատարէք, այլ կատարեցէք միայն այն, ինչ կապուած է իւրաքանչիւր մարդու անձնական կարիքների հետ: 17 Իմ այս պատուիրանները կը պահէք, որպէսզի այդ օրը ես ձեր ժողովրդին հանեմ Եգիպտացիների երկրից: Այդ օրը, իբրեւ կարգ, ձեր ժողովրդի մէջ կը նշէք յաւիտենապէս: 18 Առաջին ամսուայ տասնչորսերորդ օրուայ երեկոյից սկսած բաղարջ հաց կ'ուտէք մինչեւ ամսի քսանմէկերորդ օրուայ երեկոն: 19 Եօթը օր ձեր տներում թթխմոր չպիտի լինի: Բոլոր նրանք, ովքեր թթխմորով հաց կ'ուտեն, կը վերացուեն Իսրայէլի ժողովրդի միջից: 20 Ձեր երկիրն եկած եկուորներ լինեն թէ տեղաբնակներ, ոչ ոք թթխմորով հաց թող չուտի: Ձեր բոլոր բնակավայրերում բաղարջ հաց պիտի ուտէք»:

ԱՌԱՋԻՆ ՋԱՏԻԿԸ

21 Մովսէսը կանչեց բոլոր իսրայէլացի ծերերին ու նրանց ասաց. «Գնացէ՛ք, ձեր իւրաքանչիւր ընտանիքի համար մի ոչխար առէ՛ք եւ մորթեցէ՛ք զատկի համար: 22 Վերցրէ՛ք մի խուրձ ծոթրին, այն թաթախեցէ՛ք դռան մօտ եղած արեան մէջ եւ դրանով նշան արէ՛ք դռան սեմին երկու տեղ եւ դռան շրջանակի վերեւը: Բայց ձեզնից ոչ ոք մինչեւ առաւօտ իր տան դռնից դուրս չգայ: 23 Տէրն անցնելու է եգիպտացիներին կոտորելու համար: Նա, տեսնելով դռան սեմին երկու տեղ եւ դռան շրջանակի վերեւում եղած արիւնը, կ'անցնի կը գնայ այդ դռնով եւ Ոչնչացնողին թոյլ չի տայ մտնել ձեր տներն ու կոտորել ձեզ: 24 Այս խօսքերը մինչեւ յաւիտեան օրէնք թող լինեն քեզ եւ քո որդիների համար: 25 Երբ կը մտնէք այն երկիրը, որ Տէրը, իր խոստման համաձայն, տալու է ձեզ, կը կատարէք այդ ծիսակատարութիւնը: 26 Եթէ պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ, թէ՝ "Ի՞նչ է նշանակում այս ծիսակատարութիւնը", 27 նրանց կը պատասխանէք, որ Տիրոջ համար զատկի զոհն է սա, այն Տիրոջ, որ Եգիպտոսում եգիպտացիներին կոտորելիս խնայեց իսրայէլացիներին, փրկեց մեր ընտանիքները»: Ժողովուրդը խոնարհուեց ու երկրպագութիւն արեց: 28 Իսրայէլացիները գնացին ու արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր պատուիրել Մովսէսին ու Ահարոնին. նրանք այդպէս էլ արեցին:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՄԱՀԸ

29 Երբ կէս գիշեր եղաւ, Տէրը եգիպտացիների երկրում կոտորեց եգիպտացի բոլոր անդրանիկ զաւակներին՝ իր գահին բազմած փարաւոնի անդրանիկից մինչեւ բանտի մէջ արգելափակուած գերի կնոջ անդրանիկը, նաեւ անասունների բոլոր առաջնածինները: 30 Գիշերը վեր կացան փարաւոնն ինքը, նրա բոլոր պաշտօնեաներն ու բոլոր եգիպտացիները: Եգիպտացիների ամբողջ երկրում մեծ աղաղակ բարձրացաւ, որովհետեւ տուն չկար, որտեղ մեռել չլինէր:

31 Փարաւոնը գիշերով կանչեց Մովսէսին ու Ահարոնին եւ ասաց նրանց. «Դուք եւ իսրայէլացիներդ վեր կացէք գնացէ՛ք իմ ժողովրդի միջից, գնացէք պաշտեցէ՛ք ձեր տէր Աստծուն, ինչպէս որ ասացիք: 32 Ձեզ հետ տարէ՛ք նաեւ ձեր արջառն ու ոչխարը, ինչպէս որ ասացիք, բայց ինձ էլ օրհնեցէ՛ք»: 33 Եւ եգիպտացիներն ստիպում էին իսրայէլացի ժողովրդին, որ շտապ դուրս գան երկրից, որովհետեւ ասում էին. «Նրանց պատճառով մենք բոլորս էլ կը մեռնենք»:

34 Ժողովուրդն իր հունցած, բայց դեռեւս չհասած խմորը շորերի մէջ փաթաթելով՝ ուսն առաւ: 35 Իսրայէլացիներն արեցին այնպէս, ինչպէս իրենց հրամայել էր Մովսէսը. եգիպտացիներից նրանք ուզեցին ոսկեայ, արծաթեայ զարդեր ու զգեստներ: 36 Տէրը շնորհ պարգեւեց իր ժողովրդին եգիպտացիների առաջ. սրանք զարդեր տուին նրանց: Այսպիսով նրանք կողոպտեցին եգիպտացիներին:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԵԳԻՊՏՈՍԻՑ

37 Իսրայէլացիները՝ վեց հարիւր հազար տղամարդ, հետիոտն, բացի

†Եօթանասնից՝ որքան խտրութիւն է դնելու Տէրը:

†Եբրայերէնում չկայ Ոչխարի ոսկորները մի՛ ջարդէ՛:

‡Եբրայերէնում՝ սուրբ ժողով լինի:

մնացած բազմութիւնից, Ռամեսից մեկնեցին Սոկքոթ: 38 Նրանց հետ ճանապարհ ընկաւ մի խառնիճաղանջ բազմութիւն, մեծ քանակութեամբ արջառ, ոչխար ու այլ անասուն: 39 Նրանք Եգիպտոսից բերած ու դեռ չհասած խմորով բաղարջ հաց եփեցին, որովհետեւ այն դեռ չէր խմորուել, քանի որ եգիպտացիները երկրից հանել էին իրենց, եւ իրենք չէին կարողացել սպասել ու իրենց ճանապարհի պաշար չէին արել:

40 Իսրայէլացիներն իրենք ու իրենց հայրերը Եգիպտացիների երկրում եւ Քանանացիների երկրում† ապրեցին չորս հարիւր երեսուն տարի: Երբ չորս հարիւր երեսուն տարին վերջացաւ, նոյն օրն իսկ 41 Տիրոջ ամբողջ ժողովուրդը գիշերով Եգիպտացիների երկրից դուրս եկաւ: 42 Իսրայէլացիները Տիրոջ հրամանով այդ գիշերը անքուն մնացին, որպէսզի նա նրանց դուրս բերի Եգիպտացիների երկրից. դա Տիրոջ անքուն մնալու այն գիշերն էր, որ բոլոր իսրայէլացիները սերնդէսերունդ պիտի յիշեն:

ՋԱՏԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

43 Տէրը Մովսէսին ու Ահարոնին ասաց. «Սա է զատկի կարգը. ոչ մի օտարական չպիտի ուտի դրանից: 44 Որեւէ մէկը իր ծառային ու փողով գնուած ստրուկին թող թլփատի եւ թլփատուելուց յետոյ միայն թող նա ուտի դրանից: 45 Պանդուխտն ու վարձկանը թող չուտեն դրանից: 46 Տա՛ն մէջ պէտք է ուտուի այն. միսը տնից դուրս չպիտի հանէք եւ դրա ոսկորը չպիտի ջարդէք: 47 Իսրայէլի ողջ ժողովուրդը պէտք է կատարի դա: 48 Եթէ մի օտարական մօտենայ ձեզ եւ ուզենայ կատարել Տիրոջ զատիկը, դու պէտք է թլփատես նրա բոլոր արու զաւակներին, եւ դրանից յետոյ միայն նա կարող է մօտենալ կատարելու զատիկը: Նա կը համարուի երկրի տեղաբնակ: Ոչ մի անթլփատ դրանից չպէտք է ուտի: 49 Օրէնքը հաւասարապէս տարածւում է եւ՛ տեղաբնակի, եւ՛ ձեզ մօտ ապրել ցանկացող օտարականի վրայ»: 50 Բոլոր իսրայէլացիներն արեցին այնպէս, ինչպէս պատուիրել էր Տէրը Մովսէսին ու Ահարոնին. նրանք այդպէս էլ արեցին: 51 Ահա այդ օրն էր, որ Տէրը բոլոր իսրայէլացիներին հանեց Եգիպտացիների երկրից:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՆՈՒԻՐՈՒՄԸ

13 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Ինձ նուիրաբերի՛ր բոլոր իսրայէլացիների անդրանիկ զաւակներին, ամէն մի նախածին, մարդ թէ անասուն, որովհետեւ իմն է»:

ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԸ

3 Մովսէսն ասաց ժողովրդին. «Յիշեցէ՛ք այս օրը, երբ դուք դուրս եկաք Եգիպտոսից՝ ստրկութեան այս տնից, որովհետեւ Տէրը ձեզ իր հզօր ձեռքով հանեց այստեղից: Թթխմորով հաց չպիտի ուտէք, 4 որովհետեւ դուք այսօր, գարնանային վաղահաս բերքի ամսին էք դուրս գալիս: 5 Երբ քո Տէր Աստուածը քեզ տանի քո հայրերին խոստացած Քանանացիների, Քետացիների, Ամորհացիների, Խեւացիների, Յեբուսացիների, Փերեզացիների ու Գերգեսացիների երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում, ապա հէնց այդ ամսին այս ծիսակատարութիւնը կ'անես: 6 Եօթը† օր բաղարջ հաց կ'ուտէք, իսկ եօթներորդ օրը Տիրոջ տօնը կը լինի. բաղարջ հաց կ'ուտէք: 7 Ձեր տանը թթխմորով հաց չլինի, քո ողջ երկրի սահմաններում թթխմոր չերեւայ: 8 Այդ օրը քո որդուն կը պատմես՝ ասելով. "Դա կատարւում է ի յիշատակ այն բանի, ինչ արել է ինձ Տէր Աստուածը, երբ դուրս էի գալիս Եգիպտոսից»: 9 Ասածս նշան արա՛ ձեռքիդ վրայ, նաեւ նշան՝ ճակատիդ, որ յիշես: Տիրոջ օրէնքները թող քո բերանում լինեն, քանի որ Տիրոջ հզօր ձեռքն է հանել քեզ Եգիպտոսից: 10 Այս օրէնքները կը պահպանէք տարէցտարի ձեր կեանքի բոլոր օրերում»:

†Եբրայերէնում չկայ *եւ Քանանացիների երկրում:*

†Եօթանասնից՝ *վեց:*

ԱՆԴՐԱՆԻԿԸ

11 «Երբ քո Տէր Աստուածը քեզ կը տանի Քանանացիների երկիրը, ինչպէս խոստացել է քեզ ու քո հայրերին, եւ այն կը տայ քեզ, 12 Տիրոջ համար կ'առանձնացնես անդրանիկ բոլոր արու ծնունդներին եւ քո արջառների ու ոչխարների առաջնածիններին, որոնք պիտի ծնուեն: Դրանք բոլորը Տիրոջը կը նուիրաբերես: 13 Առաջնածին էշը կը փոխանակես ոչխարի հետ, իսկ եթէ չուզենաս փոխանակել, ապա դա փրկագին կը տաս†: Քո որդիների բոլոր անդրանիկ զաւակներին կը փրկագնես: 14 Եթէ դրանից յետոյ որդիդ հարցնի քեզ ու ասի, թէ՝ "Ի՞նչ է այս", նրան կ'ասես, թէ՝ "Տէրը հզօր ձեռքով է հանել մեզ Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից: 15 Երբ փարաւոնի սիրտը կարծրացաւ ու մեզ չարձակեց, Տէրը Եգիպտացիների երկրում կոտորեց բոլոր անդրանիկներին՝ մարդկանց անդրանիկ զաւակներից մինչեւ անասունների առաջնածինները: Հէնց դրա համար էլ ես Տիրոջն եմ նուիրաբերում բոլոր առաջնածին արուներին, իսկ իմ որդիներից բոլոր անդրանիկ զաւակներին փրկագին կը տամ": 16 Ասածս նշան արա՛ ձեռքիդ վրայ, նաեւ նշան՝ ճակատիդ, որ յիշես, թէ Տէրը ինչպէս է հզօր ձեռքով մեզ հանել Եգիպտոսից»:

ԱՄՊԻ ԵՒ ԿՐԱԿԻ ՍԻՒՆԸ

17 Երբ փարաւոնն արձակեց ժողովրդին, Աստուած նրանց կարճ ճանապարհով՝ Փղշտացիների երկրով չառաջնորդեց, որովհետեւ Աստուած մտածեց, թէ ժողովուրդը պատերազմի բռնուելով՝ գուցէ վախենայ ու Եգիպտոս վերադառնայ: 18 Դրա համար Աստուած ժողովրդին շրջանցիկ՝ անապատի ճանապարհով տարաւ դէպի Կարմիր ծով: Իսրայէլացիները Եգիպտացիների երկրից դուրս եկան հինգերորդ սերնդի ժամանակ‡: 19 Մովսէսն իր հետ տարաւ Յովսէփի ոսկորները, որովհետեւ Յովսէփը, երդուեցնելով Իսրայէլի որդիներին, ասել էր. «Երբ Տէրը ձեզ այցի գայ, իմ ոսկորները կը հանէք այստեղից ու կը տանէք ձեզ հետ»:

20 Սոկքոթից դուրս գալով՝ իսրայէլացիները եկան եւ կայք հաստատեցին Ոթոմում՝ անապատի եզրին: 21 Աստուած ցերեկը նրանց առաջնորդում էր ամպի սիւնով, որպէսզի ճանապարհ ցոյց տայ նրանց, իսկ գիշերը՝ հրէ սիւնով, որպէսզի գիշեր-ցերեկ նրանք ուղեցոյց ունենան: 22 Ցերեկը ամպի սիւնը, իսկ գիշերը հրէ սիւնը միշտ ամբողջ ժողովրդի աչքի առաջ էր:

ԱՆՑՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՎ

14 Տէրը, խօսելով Մովսէսի հետ, ասաց. 2 «Իսրայէլացիներին ասա՛, որ վերադառնան, կայք հաստատեն Մագդոլի ու ծովի միջեւ գտնուող Հանգրուանում, Բեէլզեպփոնի դիմաց: Դրանց† դիմաց՝ Կարմիր ծովի եզերքին կայք կը հաստատես: 3 Փարաւոնը իսրայէլացիներիդ մասին կ'ասի, թէ՝ "Մոլորուել են այս երկրում, որովհետեւ անապատը շրջափակել է նրանց": 4 Ես պիտի կարծրացնեմ փարաւոնի սիրտը, նա պիտի հետապնդի նրանց, 5 իսկ ես պիտի փառաւորուեմ փարաւոնի ու նրա ամբողջ զօրքի առաջ: Եւ բոլոր եգիպտացիները պիտի իմանան, որ ե՛ս եմ Տէրը»: Եւ այդպէս էլ արեցին:

6 Եգիպտացիների արքային յայտնեցին, թէ՝ «Ժողովուրդը փախել է»: Փարաւոնի ու նրա պաշտօնեաների սրտերն ըմբոստացան ժողովրդի դէմ, եւ նրանք ասացին. «Այդ ի՞նչ արեցինք, ինչո՞ւ թոյլ տուեցինք, որ իսրայէլացիները գնան, եւ մենք զրկուենք մեր ստրուկներից»: 7 Փարաւոնը լծեց իր կառքը եւ իր հետ տարաւ իր ամբողջ ժողովրդին: Նա վերցրեց վեց հարիւր ընտիր կառքեր, եգիպտացիների ամբողջ հեծելազօրն ու դրանց զօրավարներին: 8 Տէրը կարծրացրեց եգիպտացիների արքայ փարաւոնի սիրտը‡, եւ սա հետապնդեց իսրայէլացիներին: Իսրայէլացիները գնում էին՝ ձեռքները բարձր

†Եբրայերէնում՝ *վիզը կը կտրես կամ կը մորթես:*

‡Եբրայերէնում՝ *գունդ կազմած:*

†Իմա՞ *Այդ վայրի:*

‡Եօթանասնից՝ *եւ նրա պաշտօնեաների սիրտը:*

պահած: 9 Եգիպտացիները հետապնդեցին նրանց ու նրանց գտան ծովեզերքի մոտ՝ կայք հաստատած: Փարաւոնի ողջ հեծելազօրն ու կառքերը, նրա հեծեալներն ու բանակը կանգնեցին հանգրուանածների դիմաց, Բեէղսեպփոնի դէմ առ դէմ:

10 Փարաւոնը մօտեցաւ: Իսրայէլացիները բարձրացնելով իրենց աչքերը՝ տեսան, որ եգիպտացիները կայք են հաստատել իրենց թիկունքում†. սաստիկ վախեցան: 11 Իսրայէլացիները աղաղակ բարձրացրին առ Աստուած ու Մովսէսին ասացին. «Իբր թէ Եգիպտացիների երկրում գերեզմաններ չկա՞յին, որ մեզ բերեցիր այստեղ՝ անապատում սպանուելու: Այս ի՞նչ բերեցիր մեր գլխին, ինչո՞ւ մեզ հանեցիր Եգիպտոսից: 12 Մի՞թէ Եգիպտացիների երկրում քեզ չասացինք, թէ՝ "Թո՛յլ տուր, որ ծառայենք եգիպտացիներին": Մեզ համար աւելի լաւ կը լինէր, որ ծառայէինք եգիպտացիներին, քան մեռնէինք այս անապատում»: 13 Մովսէսն ասաց ժողովրդին. «Քաջալերուեցէ՛ք, պի՛նդ կացէք եւ կը տեսնէք Տիրոջ արած փրկութիւնը, որ նա պարգեւելու է ձեզ այսօր, քանզի այսօր ձեր տեսած եգիպտացիներին այլեւս յար յաւիտեան չէք տեսնելու: 14 Տէ՛րը պիտի պատերազմի ձեր փոխարէն, դուք լո՛ւռ մնացէք»:

15 Տէրն ասաց Մովսէսին. «Ինչո՞ւ ես կանչում ինձ: Ասա՛ իսրայէլացիներին, որ շարժուեն գնան: 16 Իսկ դու ա՛ռ գաւազանդ, ձեռքդ մեկնի՛ր ծովի վրայ, ճեղքի՛ր այն, եւ իսրայէլացիները թող մտնեն ծովի մէջ ու անցնեն ինչպէս ցամաքով: 17 Ես կը կարծրացնեմ փարաւոնի եւ բոլոր եգիպտացիների սիրտը, սրանք նրանց յետեւից ծով կը մտնեն, եւ ես կը փառաւորուեմ փարաւոնի, նրա ամբողջ զօրքի, կառքերի ու հեծելազօրի առաջ: 18 Բոլոր եգիպտացիները կը գիտենան, որ ե՛ս եմ Տէրը, երբ փառաւորուեմ փարաւոնի, նրա կառքերի ու հեծելազօրի առաջ»:

19 Իսրայէլացիների բանակի առջեւից գնացող Աստծու հրեշտակը ելաւ ու անցաւ գնաց նրանց յետեւը: Վերացաւ ամպի սիւնը նրանց առջեւից ու կանգնեց նրանց թիկունքին: 20 Ամպի սիւնը մտաւ եգիպտացիների ու իսրայէլացիների բանակների միջեւ: Խաւար ու մէգ պատեց†: Գիշերն անցաւ, բայց ողջ գիշերը բանակները իրար չմօտեցան:

21 Մովսէսը ձեռքը մեկնեց ծովի վրայ, եւ հարաւային հողմի ուժով ողջ գիշեր ծովը յետ մղուեց. բացուեց ծովի յատակը, ջուրը երկուսի բաժանուեց: 22 Իսրայէլացիները մտան յատակը բացուած ծովի մէջ ու առաջ շարժուեցին ինչպէս ցամաքով: Ջուրը նրանց աջ ու ձախ կողմերից պարիսպ էր դարձել:

23 Եգիպտացիները հետապնդեցին նրանց, եւ փարաւոնի ամբողջ հեծելազօրը, նրա կառքերն ու հեծեալները նրանց յետեւից մտան ծովը: 24 Առաւօտեան Տէրը հրի ու ամպի սեան միջով նայեց եգիպտացիների բանակին եւ խուճապի մատնեց եգիպտացիների բանակը. 25 նա կաչկանդեց նրանց կառքերի անիւները, եւ նրանք դժուարութեամբ էին առաջ շարժուում: Եգիպտացիներն ասացին. «Հեռո՛ւ փախչենք իսրայէլացիներից, որովհետեւ Տէրը յօգուտ նրանց է պատերազմում եգիպտացիներիս դէմ»:

26 Տէրն ասաց Մովսէսին. «Ձեռքդ մեկնի՛ր ծովի վրայ, եւ ջրերը թող միանան ու ծածկեն եգիպտացիներին, նրանց կառքերն ու հեծեալներին»: 27 Մովսէսը ձեռքը մեկնեց ծովի վրայ, եւ ջրերն առաւօտեան վերադարձան իրենց տեղը: Եգիպտացիները փորձեցին փախչել ջրից, բայց Տէրը եգիպտացիներին թափեց ծովը 28 եւ, նորից իրար միացնելով ծովի ջրերը, ծածկեց կառքերը, հեծեալներին եւ փարաւոնի բոլոր զօրքերին, որոնք ծով էին մտել նրանց հետ: Նրանցից ոչ ոք կենդանի չմնաց: 29 Իսրայէլացիները ծովի միջով կարծես ցամաքի վրայով էին գնում, իսկ ջուրը նրանց աջ ու ձախ կողմերից պարիսպ էր դարձել: 30 Տէրն այդ օրը իսրայէլացիներին փրկեց եգիպտացիների ձեռքից:

31 Իսրայէլացիները տեսան եգիպտացիների դիակները, որոնք ծովի ափ էին նետուած: Իսրայէլացիները տեսնելով Տիրոջ հզօր ձեռքը, եգիպտացիների գլխին բերած փոձանքը՝ վախեցան Տիրոջից, հաւատացին Աստծուն ու նրա ծառայ Մովսէսին:

†Եբրայերէնում՝ նրանց յետեւից էին գալիս:

†Եբրայերէնում՝ եգիպտացիների համար ամպ ու խաւար եղաւ:

ՄՈՎՍԷՍԻ ԵՐԳԸ

15 Այդ ժամանակ Մովսէսն ու իսրայէլացիները հետեւեալ օրհներգն ուղղեցին Աստծուն՝ ասելով.

«Օրհնենք Տիրոջը, որ փառքով է փառաւորուած:
Նրանց երիվարներն ու հեծեալներին թափեց ծովը:
2 Տէրը ինձ համար ընդունելի օգնական եղաւ,
նա ինձ համար փրկութիւն եղաւ:
3† Նա՛ է իմ Աստուածը,
եւ ես նրան եմ փառաւորելու:
Նա իմ հօր Աստուածն է,
եւ ես պիտի մեծարեմ նրան:
Տէրը խորտակում է պատերազմները‡,
նրա անունը Տէր է:
4 Նա փարաւոնի կառքերն ու զօրքերը ծովը թափեց,
նաեւ ընտիր հեծեալներին ու զօրավարներին:
Նրանք ջրասոյզ եղան Կարմիր ծովում:
5 Ծովը ծածկեց նրանց,
նրանք քարի պէս ընկղմուեցին ծովի յատակը:
6 Քո աջը, Տէ՛ր, զօրութեամբ փառաւորուեց,
քո աջը, Տէ՛ր, խորտակեց թշնամուն:
7 Դու փառքի հզօրութեամբ ջարդուփշուր արեցիր հակառակորդներին,
առաքեցիր քո բարկութիւնը,
եւ այն հրոյ ճարակ դարձրեց նրանց ինչպէս եղէգ:
8 Քո զայրոյթի հողմից ճեղքուեցին ջրերը,
պարիսպների նման դիզուեցին ջրերը,
ծովի մէջ քարացան ալիքները:
9 Թշնամին ասաց. "Հետապնդեմ ու հասնեմ նրանց,
բաժանեմ աւարը եւ դրանցով յագուրդ տամ ինձ:
Սրի քաշեմ նրանց, որ իմ ձեռքը տիրի նրանց":
10 Դու քո հողմն առաքեցիր, նրանց ծածկեց ծովը,
եւ նրանք կապարի նման սուզուեցին ջրերի խորքը:
11 Աստուածների մէջ, Տէ՛ր, ո՞վ կայ քեզ նման,
եւ կամ ո՞վ կարող է նմանուել քեզ՝
փառաւորեալդ սրբերի մէջ,
փառքով սքանչացեալդ, որ նշաններ ես գործում:
12 Աջ ձեռքդ մեկնեցիր, եւ երկիրը կուլ տուեց նրանց:
13 Արդարութեամբ առաջնորդեցիր քո այս ժողովուրդին, որին փրկեցիր,
քո զօրութեամբ մխիթարեցիր† նրան քո սուրբ բնակավայրում:
14 Ժողովուրդները լսեցին լուրն այս ու բարկացան‡:
Սարսափը պատեց Քանանացիների§ երկրի բնակիչներին:
15 Խուճապահար եղան Եդոմի դատաւորներն ու մովաբացիների իշխանները:
Դող բռնեց նրանց, հալումաշ եղան Քանանացիների երկրի բոլոր բնակիչները:
16 Թող պատեն նրանց ահն ու սարսափը,
քո բազկի հզօրութեամբ թող քարանան նրանք,
մինչեւ որ անցնի քո ժողովուրդը,
Տէ՛ր, մինչեւ որ անցնի քո այս ժողովուրդը, որին ստացար:
17 Տա՛ր, բնակեցրո՛ւ նրանց այն լեռան վրայ,
որ ժառանգութիւնն է քո,
քո պատրաստած բնակավայրում, որ սրբութիւն ես դարձրել, Տէ՛ր:
Տէ՛ր, քո ձեռքե՛ր պատրաստեցին այդ:
18 Տէրը յաւիտենական, առաւել քան յաւիտենական թագաւոր է»:

†Եբրայերէնում՝ նրանց յետեւից էին գալիս:

†Այլ բնագրերում եւ հրատարակութիւններում 3-րդ տունն սկսւում է Տէրը խափանում է... - ով:

†Եբրայերէնում՝ Տէրը պատերազմիկ է: Եհովա է:

†Եբրայերէնում՝ բերեցիր:

‡կամ՝ խռովուեցին:

§Եբրայերէնում՝ փղշտացիների:

19 Երբ փարաւոնի հեծելազօրն իր
կառքերով ու հեծեալներով ծով մտաւ,
Տէրը նրա վրայ թափեց ծովի ջրերը, իսկ
իսրայէլացիները յատակը բացուած
ծովի միջով անցան գնացին:

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԷԻ ԵՐԳԸ

20 Մարիամ մարգարէն՝ Ահարոնի
քոյրը, իր ձեռքն առաւ թմբուկը, եւ
բոլոր կանայք գնացին նրա յետեւից՝
թմբուկ խփելով ու պարելով: 21 Առաջից
գնում էր Մարիամն ու ասում.
«Օրհնենք Տիրոջը, քանզի նա փառ-
քով է փառաւորուած.
նա երիվարներն ու հեծեալներին ծովը
թափեց»:

ԴԱՌՆ ՋՈՒՐԸ

22 Մովսէսը իսրայէլացիներին կար-
միր ծովից տարաւ հասցրեց Սուր կո-
չուած անապատը: Նրանք երեք օրուայ
ճանապարհ գնացին անապատի միջով,
բայց խմելու ջուր չգտան: 23 Եկան
Մեռա, բայց Մեռայում էլ չկարողացան
ջուր խմել, որովհետեւ այն դառն էր:
Դրա համար Մովսէսն այդ վայրն
անուանեց Դառնութիւն: 24 Ժողովուրդը
տրտնջաց Մովսէսի դէմ ու ասաց. «Ի՞նչ
խմենք»: 25 Մովսէսն աղաղակեց առ
Աստուած. եւ Տէրը նրան մի փայտ ցոյց
տուեց: Մովսէսն այն նետեց ջրի մէջ, եւ
ջուրը քաղցրահամ դարձաւ: Այնտեղ
Աստուած ժողովրդին տուեց օրէնք ու
իրաւունք եւ այնտեղ էլ փորձութեան
ենթարկեց նրան: Նա ասաց. 26 «Եթէ
ուշադիր լսես քո տէր Աստծու ձայնը,
նրա համար հաճելի գործեր կատարես,
ունկնդիր լինես նրա պատուիրաններին
ու ենթարկուես նրա բոլոր հրաման-
ներին, քեզ վրայ չեմ թափի բոլոր այն
հիւանդութիւնները, որ թափեցի եգիպ-
տացիների վրայ, քանզի ես եմ քեզ
բժշկող Տէրը»:
27 Եւ եկան հասան Եղիմ: Այնտեղ
կային ջրի տասներկու աղբիւր ու
եօթանասուն արմաւենի: Նրանք կայք
հաստատեցին այնտեղ, ջրի մօտ:

ՄԱՆԱՆԱՆ ԵՒ ԼՈՐԱՄԱՐԳԻՆԵՐԸ

16 Իսրայէլացի ամբողջ ժողովուրդը
Եղիմից ճանապարհ ընկաւ ու եկաւ Սին
անապատը, որը գտնւում է Եղիմի ու
Սինայի միջեւ:
2† Եգիպտացիների երկրից դուրս
գալու երկրորդ ամսուայ տասնհին-
գերորդ օրը իսրայէլացի ողջ ժողովուրդը
անապատում դժգոհեց Մովսէսից ու
Ահարոնից: 3 Իսրայէլացիներն ասացին
նրանց. «Աւելի լաւ կը լինէր Տիրոջ
հարուածների զոհը դառնայինք Եգիպ-
տացիների երկրում, երբ մսով լի կաթ-
սաների մօտ էինք նստում ու կուշտ հաց
ուտում, քան բերէիք մեզ այս անա-
պատը, որ ողջ ժողովրդին սովամահ
անէք»:
4 Տէրն ասաց Մովսէսին. «Ահա ես
ձեզ հաց կը թափեմ երկնքից: Իմ ժողո-
վուրդը թող վեր կենայ ու այն հաւաքի,
ինչքան անհրաժեշտ է իւրաքանչիւր
օրուայ համար: Ես այդ կերպ կը փորձեմ
նրանց, թէ կ'ենթարկուե՞ն իմ օրէնք-
ներին, թէ ո՞չ: 5 Վեցերորդ օրը թող
պատրաստեն նախորդ իւրաքանչիւր
օրուայ համար հաւաքածի կրկնապա-
տիկը»:
6 Մովսէսն ու Ահարոնը ասացին իս-
րայէլացի ամբողջ ժողովրդին. «Երեկո-
յեան կ'իմանաք, որ Տէրն է ձեզ հանել
Եգիպտացիների երկրից, 7 իսկ առաւօ-
տեան ականատես կը լինէք Տիրոջ
փառքին, որովհետեւ նա լսել է Աստծու
հանդէպ ձեր տրտունջը: Մենք ովքե՞ր
ենք, որ տրտնջում էք մեր դէմ»: 8 Մով-
սէսն ասաց. «Տէրը լսեց մեր դէմ
ուղղուած ձեր տրտունջը, դրա համար էլ
նա երեկոները ձեզ ուտելու միս, իսկ
առաւօտները յագենալու չափ հաց պիտի
տայ: Մենք ովքե՞ր ենք, որ ձեր տրտուն-
ջը մեր դէմ էք ուղղում. ձեր տրտունջը
Աստծու դէմ է ուղղուած»: 9 Մովսէսն
ասաց Ահարոնին. «Իսրայէլացի ամբողջ
ժողովրդին յայտնի՛ր. "Մօտեցէ՛ք Տիրո-
ջը, որովհետեւ նա լսեց ձեր տրտունջը"»:
10 Մինչ Ահարոնը խօսում էր իսրա-
յէլացի ամբողջ ժողովրդի հետ, նրանք
նայեցին դէպի անապատ, եւ ահա Տիրոջ

†Եօթանասնից եւ հայերէն այլ հրատարակու-
թիւններում 2-րդ համարն սկսւում է դժգոհեց-
ից:

փառքը երեւաց ամպի ձեւով: 11 Տէրը
խօսելով Մովսէսի հետ՝ ասաց. 12 «Լսե-
ցի իսրայէլացիների տրտունջը: Արդ,
խօսի՛ր նրանց հետ ու ասա՛. "Երեկոները
միս կ'ուտէք, իսկ առաւօտները հացով
կը յագենաք: Եւ կ'իմանաք, որ ես եմ
ձեր Տէր Աստուածը"»:
13 Երեկոյեան լորամարգիներ թա-
փուեցին ու ծածկեցին բանակատեղին:
14 Առաւօտեան, երբ ցօղը վերանում էր
բանակատեղիի շրջապատից, անապատի
երեսին գինձի սպիտակ սերմի նման
մանր եւ երկրի վրայի եղեամի նման մի
բան կար: 15 Երբ իսրայէլացիները
տեսան այն, իրար ասացին. «Ի՞նչ է
սա»: Որովհետեւ չգիտէին, թէ դա ինչ
է: Մովսէսն ասաց նրանց. «Դա այն
հացն է, որ Տէրը ձեզ տուել է ուտելու:
16 Տէրը հետեւեալն է պատուիրել. "Իւ-
րաքանչիւր ոք դրանցից թող հաւաքի
այնքան, որքան անհրաժեշտ է մէկ
մարդու համար, ըստ ձեր ընտանիքների
շնչերի թուի: Հաւաքեցէ՛ք ըստ վրանում
գտնուող իւրաքանչիւր մարդու թուի"»:
17 Իսրայէլացիներն այդպէս էլ արեցին.
հաւաքեցին ոմանք շատ, ոմանք քիչ:
18 Չափեցին եւ տեսան, որ ումը որ շատ
էր, սահմանուած չափից չաւելացաւ,
իսկ ումը՝ քիչ, սահմանուած չափից
չպակասեց: Իւրաքանչիւրը իր կարիքի
չափով էր հաւաքել: 19 Մովսէսն ասաց
նրանց. «Ոչ ոք մինչեւ առաւօտ դրանից
աւելցուկ չթողնի»: 20 Ոմանք, սակայն,
Մովսէսին չլսեցին. դրանից աւելցուկ
մնաց առաւօտեան: Դա որդնոտեց ու
նեխեց: Մովսէսը զայրացաւ նրանց
վրայ: 21 Դրանից յետոյ ամէն առաւօտ
իւրաքանչիւրը հաւաքում էր իրեն
պէտք եղածի չափ: Երբ արեւը տաքաց-
նում էր, այն հալւում էր: 22 Վեցերորդ
օրը հաւաքեցին պէտք եղածի կրկնա-
պատիկը՝ ամէն մէկի համար երկուական
բաժին: Ժողովրդի բոլոր առաջնորդները
գնացին Մովսէսի մօտ ու նրան յայտ-
նեցին այդ մասին:
23 Մովսէսն ասաց. «Այս է Տիրոջ
ասածը. "Վաղը շաբաթ է, Տիրոջ
հանգստեան սուրբ օրը: Ինչ որ եփելու
էք, եփեցէ՛ք, ինչ որ թխելու էք, թխե-
ցէ՛ք այսօր, իսկ մնացած ամէն ինչ թող-
էք՛ ամանների մէջ մինչեւ առաւօտ"»:
24 Եւ դա թողեցին մինչեւ առաւօտ,
ինչպէս նրանց հրամայել էր Մովսէսը.
այն չնեխեց, չորդնոտեց: 25 Մովսէսն
ասաց. «Այդ կերէ՛ք այսօր, քանի որ
Տիրոջ շաբաթ օրն է այսօր, դրանից
այսօր դաշտում չէք գտնի: 26 Վեց օր կը
հաւաքէք դա, իսկ եօթներորդ օրը՝
շաբաթ օրը դրանից չի լինի»: 27 Եօթ-
ներորդ օրը ժողովրդի միջից ոմանք
ելան դրանից հաւաքելու, բայց չգտան:
28 Տէրն ասաց Մովսէսին. «Մինչեւ ե՞րբ
չպիտի անսաք իմ պատուիրաններին ու
օրէնքներին: 29 Տեսաք, որ Տէրը ձեզ
հանգստեան օր նշանակեց այս շաբաթ
օրը: Դրա համար էլ նա վեցերորդ օրը
ձեզ երկու օրուայ հաց տուեց՝ ասելով.
"Ձեզնից իւրաքանչիւրը թող նստի իր
տանը, եօթներորդ օրը թող ոչ ոք չելնի
այդ տեղից"»: 30 Եւ ժողովուրդը եօթ-
ներորդ օրը հանգստացաւ: 31 Իսրայէ-
լացիները իրենց կերածի անունը դրեցին
ման: Դա գինձի սերմի նման սպիտակ
էր ու մեղրախորիսխի համ ունէր:
32 Մովսէսն ասաց. «Ահա թէ ինչ
հրամայեց Աստուած. "Մի ամանի մէջ
մէկ չափ մանանայ լցրէ՛ք եւ այն պա-
հեցէ՛ք ձեր սերունդների համար, որ-
պէսզի աչքի առաջ ունենաք այն հացը,
որ դուք կերաք անապատում, երբ Տէրը
ձեզ հանեց Եգիպտացիների երկրից"»:
33 Մովսէսն ասաց Ահարոնին. «Մի ոսկէ
սափոր ա՛ռ, դրա մէջ մէկ չափ մա-
նանայ լցրո՛ւ եւ դի՛ր Աստծու առաջ՝
պահելու ձեր սերունդների համար,
ինչպէս Տէրն է հրամայել Մովսէսին»:
34 Եւ Ահարոնն այն ի պահ դրեց Կտա-
կարանների արկղի առաջ: 35 Իսրայէ-
լացիները քառասուն տարի մանանայ
կերան, մինչեւ որ հասան մի բնակե-
ցուած շրջան: Նրանք մանանայ էին
ուտում, մինչեւ որ հասան փիւնիկեցի-
ների† կողմերը: 36 Մէկ չափը հաւասար
է երեք գրիւի մէկ տասներորդ մասի:

ՋՈՒՐ ԱՊԱՌԱԺԻՑ
(Թուոց 20.1-13)

17 Իսրայէլացի ամբողջ ժողովուրդը
Տիրոջ կարգադրութեան համաձայն
խումբ-խումբ գնաց Սին անապատից եւ

†Եբրայերէնում՝ Քանանացիների երկրի:

կայք հաստատեց Ռափիդիմում: Այստեղ, սակայն, ջուր չկար, որ ժողովուրդը խմէր: 2 Ժողովուրդն սկսեց մեղադրել Մովսէսին՝ ասելով. «Մեզ ջո՛ւր տուր, որ խմենք»: Մովսէսը նրանց ասաց. «Ինչո՞ւ էք ինձ մեղադրում, ինչո՞ւ էք փորձում Տիրոջը»: 3 Ժողովուրդն այնտեղ ծարաւ զգալով՝ տրտնջաց Մովսէսի դէմ ու ասաց. «Ինչո՞ւ մեզ հանեցիր Եգիպտոսից, որ ծարաւից կոտորուե՞նք մենք եւ մեր երեխաներն ու անասունները»:

4 Մովսէսը պաղատագին խնդրելով Տիրոջը՝ ասաց. «Ի՞նչ անեմ ես այս ժողովրդին: Մի քիչ էլ մնայ՝ ինձ կը քարկոծեն»: 5 Տէրն ասաց Մովսէսին. «Գնա՛ ժողովրդի առջեւից, քեզ հետ վերցրո՛ւ ժողովրդի ծերերին, ձեռքդ ա՛ռ քո այն գաւազանը, որով հարուածեցիր գետին, եւ ճամփայ ընկի՛ր: 6 Ես քեզնից առաջ այնտեղ հասնելով՝ կը կանգնեմ Քորէբի ժայռի վրայ: Կը հարուածես ժայռին, դրանից ջուր կը բխի, եւ քո ժողովուրդը կը խմի»: 7 Մովսէսն իսրայէլացիների ներկայութեամբ այդպէս էլ արեց: Նա այդ վայրը կոչեց Փորձութիւն եւ Մեղադրանք, որովհետեւ իսրայէլացիները մեղադրել էին եւ Տիրոջը փորձել՝ ասելով. «Տէրը մեր մէ՞ջ է, թէ՞ ոչ»:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄԱՂԷԿԻ ԴԷՄ

8 Ամաղէկացիներն եկան ու Ռափիդիմում պատերազմեցին իսրայէլացիների դէմ: 9 Մովսէսն ասաց Յեսուին. «Ուժեղ տղամարդիկ ընտրի՛ր եւ առաւօտեան վեր կենալով պատերազմի՛ր ամաղէկացիների դէմ: Ես կը գամ ու կը կանգնեմ բլրի գագաթին, եւ Աստծու գաւազանը կը լինի իմ ձեռքին»: 10 Յեսուն արեց այնպէս, ինչպէս իրեն ասել էր Մովսէսը. նա պատերազմեց ամաղէկացիների դէմ: Մովսէսը, Ահարոնն ու Ովրը բարձրացան բլրի գագաթը: 11 Երբ Մովսէսը բարձր էր պահում ձեռքերը, առաւելութեան էին հասնում իսրայէլացիները, իսկ երբ իջեցնում էր ձեռքերը, առաւելութեան էին հասնում ամաղէկացիները: 12 Եւ քանի որ Մովսէսի ձեռքերը յոգնելուց ծանրանում էին, Ահարոնն ու Ովրը մի քար առան եւ նրա տակը դրեցին: Մովսէսը նստեց դրա վրայ, իսկ Ահարոնն ու Ովրը՝ մէկն այս կողմից, միւսն այն կողմից նրա ձեռքերը բռնած բարձր էին պահում: Այսպիսով Մովսէսի ձեռքերը մինչեւ արեւի մայր մտնելը բարձրացած մնացին: 13 Յեսուն սրակոտոր արեց ամաղէկացիներին ու նրանց ողջ զօրքը: 14 Տէրն ասաց Մովսէսին. «Այս դէպքը որպէս յիշատակ գրի՛ առ: Հաղորդի՛ր Յեսուին, որ ամաղէկացիների յիշատակը ջնջելու եմ երկրի վրայ՝ երկնքի ներքոյ»: 15 Մովսէսը Տիրոջ համար զոհասեղան շինեց եւ դրա անունը դրեց՝ "Տէրն իմ ապաւէնն է": 16 Նա ասաց. «Այսպէս կոչեցի, քանի որ Տէրն իր անտեսանելի ձեռքով† պատերազմում է ամաղէկացիների դէմ սերնդից սերունդ»:

ՅՈԹՈՐԻ ԱՅՑԸ ՄՈՎՍԷՍԻՆ

18 *Մադիամի քուրմ Յոթորը՝ Մովսէսի աները, իմացաւ այն ամէնը, ինչ Տէրն արել էր Մովսէսին ու իսրայէլացի ժողովրդին. այն, որ Տէրը իսրայէլացիներին հանել էր Եգիպտոսից: 2 Երբ Մովսէսն իր կին Սեփորային յետ ուղարկեց, Մովսէսի աները՝ Յոթորը, իր հետ վերցրեց Սեփորային 3 ու նրա երկու որդիներին, որոնցից մէկի անունը Գերսամ էր եւ նշանակում էր՝ "Պանդուխտ էի օտար երկրում", 4 իսկ երկրորդի անունը՝ Եղիազար, որ նշանակում էր՝ "Իմ հօր Աստուածը իմ օգնականն է եւ նա փրկեց ինձ փարաւոնի ձեռքից": 5 Յոթորը, որ Մովսէսի աներն էր, նրա կնոջ եւ նրա որդիների հետ եկաւ Մովսէսի մօտ՝ անապատ, ուր նա բնակւում էր Աստծու լերան վրայ: 6 Յայտնեցին Մովսէսին՝ ասելով. «Ահա քո աներ Յոթորը, կինդ ու երկու որդիներդ նրա հետ գալիս են քեզ մօտ»: 7 Մովսէսն ընդառաջ գնաց իր աներոջը, ծնրադրեց նրա առաջ եւ համբուրեց նրան: Նրանք ողջագուրուեցին խաղաղութեամբ, եւ Մովսէսը նրան տարաւ իր վրանը: 8 Մովսէսն իր աներոջը պատմեց այն ամէնը, ինչ իսրայէլացիների համար Տէրն արել էր*

†Եբրայերէնում՝ երդում արեց:

փարաւոնի ու եգիպտացիների դէմ, բոլոր այն չարչարանքները, որ իրենք կրել էին ճանապարհին, եւ թէ ինչպէս էր Տէրը փրկել իրենց: 9 Յոթորը զարմացաւ այն բոլոր բարեգործութիւնների համար, որ Տէրն արել էր նրանց, եւ թէ ինչպէս էր նրանց ազատել եգիպտացիների ու փարաւոնի ձեռքից: 10 Յոթորն ասաց. «Օրհնեալ լինի Տէրը, որ փրկել է սրանց եգիպտացիների ու փարաւոնի ձեռքից, որ ժողովրդին ազատել է եգիպտացիների ձեռքից: 11 Հիմա գիտեմ, որ Տէրն աւելի մեծ է, քան բոլոր աստուածները: Դա երեւաց, երբ եգիպտացիները բռնանում էին նրանց վրայ†: 12 Մովսէսի աները՝ Յոթորը, ողջակէզ ու զոհ մատուցեց Աստծուն: Մովսէսը, Ահարոնն ու իսրայէլացի բոլոր ծերերը Մովսէսի աներոջ հետ գնացին Տիրոջ առաջ ճաշելու:

ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

(Բ Օր. 1. 9-18)

13 Առաւօտեան Մովսէսը նստեց ժողովրդին դատելու: Ողջ ժողովուրդը առաւօտից մինչեւ երեկոյ կանգնել էր Մովսէսի շուրջը: 14 Յոթորը տեսնելով այն ամէնը, ինչ Մովսէսն անում էր ժողովրդի համար, ասաց. «Այդ ի՞նչ ես անում դու ժողովրդին: Ինչո՞ւ ես դու միայն նստած, իսկ ժողովուրդը առաւօտից մինչեւ երեկոյ կանգնած է շուրջդ»: 15 Մովսէսն ասաց աներոջը. «Որովհետեւ ժողովուրդը գալիս է ինձ մօտ Աստծուց իրաւունք հայցելու համար: 16 Երբ նրանց միջեւ վէճ է ծագում, գալիս են ինձ մօտ: Ես դատում եմ նրանցից իւրաքանչիւրին եւ յայտնում Աստծու հրամաններն ու օրէնքները»: 17 Մովսէսի աները նրան ասաց. «Արածդ ճիշտ չէ»: 18 Սոսկալի տանջանքներով ես տանջւում դու եւ քեզ հետ եղող ամբողջ ժողովուրդը: Քեզ համար ծանր է այդ գործը, դա միայնակ անել չես կարող: 19 Արդ, լսի՛ր ինձ, ես քեզ խորհուրդ պիտի տամ, եւ Աստուած քեզ հետ կը լինի: Աստծու մօտ եղի՛ր ժողովրդի ներկայացուցիչը եւ մարդկանց

†Եբրայերէնում՝ *ինչով որ ամբարտաւանում էին, իրենց դէմ եղաւ:*

ասածը հաղորդի՛ր Աստծուն: 20 Նրանց տեղեակ կը պահես Աստծու հրամաններին ու օրէնքներին, նրանց ցոյց կը տաս այն ճանապարհը, որով ընթանալու են, եւ այն գործերը, որ պէտք է կատարեն: 21 Դու ողջ ժողովրդի միջից ընտրի՛ր ուժեղ տղամարդկանց՝ աստուածապաշտ, արդարադատ, գոռոզութիւն† ատող մարդկանց ու ժողովրդի վրայ սրանց հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ կարգի՛ր: 22 Նրանք մշտապէս թող դատեն ժողովրդին, կարեւոր գործերը թող յանձնեն քեզ, իսկ փոքր դատաստանները թող անեն իրենք. դրանով կը թեթեւացնես քո գործերը, եւ նրանք կը լինեն քո օգնականները: 23 Եթէ այս բանն անես, Աստուած կը զօրացնի քեզ, դու կը կարողանաս տոկալ, եւ ողջ ժողովուրդը խաղաղութեամբ կը վերադառնայ իր տեղը»:

24 Մովսէսն անսաց իր աներոջ ասածին եւ արեց այն ամէնը, ինչ նա ասաց իրեն: 25 Մովսէսը բոլոր իսրայէլացիների միջից ընտրեց ուժեղ տղամարդկանց, ժողովրդի վրայ նրանց հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ կարգեց: Սրանք ամբողջ ժամանակ պատրաստ էին ժողովրդին դատելու: 26 Նրանք կարեւոր գործերը յանձնում էին Մովսէսին, իսկ փոքր գործերը դատում էին իրենք: 27 Մովսէսը ճանապարհ դրեց իր աներոջը, եւ սա գնաց իր երկիրը:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՍԻՆԱ ԼԵՐԱՆ ՄՕՏ

19 *Եգիպտացիների երկրից իսրայէլացիների դուրս գալուց երեք ամիս անց, առաջին իսկ օրը նրանք հասան Սինայի անապատը: 2 Նրանք դուրս գալով Ռափիդիմից, եկան Սինայի անապատը եւ կայք հաստատեցին այնտեղ, անապատում: Իսրայէլացիները կայք հաստատեցին այնտեղ, լերան դիմաց: 3 Մովսէսը բարձրացաւ Աստծու լեռը: Աստուած լերան վրայից կանչեց նրան ու ասաց. «Այսպէս կ՚ասես Յակոբի յետնորդներին եւ կը յայտնես Իսրայէլի որդիներին. 4 "Դուք ինքներդ*

†Եբրայերէնում՝ *ագահութիւն:*

տեսաք, թէ ինչեր բերեցի եգիպտացիների գլխին, իսկ ձեզ, ինչպէս արծիւն է իր թեւերի վրայ առնում, բարձրացրի ինձ մօտ: 5 Արդ, եթէ ուշադիր լսէք իմ ասածը եւ պահէք իմ դրած ուխտը, դուք բոլոր ազգերի մէջ կը լինէք իմ ընտրեալ ժողովուրդը, որովհետեւ իմն է ամբողջ երկիրը: 6 Դուք կը լինէք ինձ համար որպէս թագաւորութիւն, որպէս քահանայութիւն եւ որպէս սուրբ ազգ: Իմ այս ասածները դու կը հաղորդես իսրայէլացիներին»:

7 Մովսէսը վերադարձաւ, կանչեց ժողովրդի ծերերին եւ նրանց հաղորդեց բոլոր այն խօսքերը, որ նրան պատուիրել էր Աստուած: 8 Ժողովուրդը միահամուռ պատասխան տուեց ու ասաց. «Այն ամէնը, ինչ ասել է Աստուած, կը կատարենք ու կը հնազանդուենք»: Մովսէսը ժողովրդի ասածը հաղորդեց Աստծուն:

9 Տէրն ասաց Մովսէսին. «Ահա ես քեզ մօտ պիտի գամ ամպի սեան մէջ†, որ ժողովուրդը լսի այն, ինչ ես ասելու եմ քեզ, եւ նա յաւիտեան պիտի հաւատայ քեզ»: Մովսէսը ժողովրդի ասածը հաղորդեց Աստծուն: 10 Տէրն ասաց Մովսէսին. «Իջի՛ր, կարգադրի՛ր ժողովրդին, մաքրի՛ր նրանց այսօր եւ վաղը, նաեւ թող լուանան իրենց զգեստները, 11 որպէսզի երրորդ օրը պատրաստ լինեն, որովհետեւ երրորդ օրը Տէրը ողջ ժողովրդի աչքի առաջ իջնելու է Սինա լեռան վրայ: 12 Ժողովրդի ու լեռան միջեւ տարածութիւն կը թողնես եւ կ՚ասես. "Զգո՛յշ եղէք, լեռան վրայ մարդ չբարձրանայ ու դրան չմօտենայ, որովհետեւ ով մօտենայ լեռան, մահուամբ պիտի պատժուի: 13 Լեռան մօտեցողին որեւէ ձեռք չդիպչի, որովհետեւ դրան դիպչողը կը քարկոծուի կամ նետահար կը լինի. անասուն լինի, թէ մարդ՝ չի ապրի: Նրանք կարող են լեռը բարձրանալ միայն այն ժամանակ, երբ որոտները, շեփորահարութիւնն ու ամպը վերանան լեռան վրայից†»:

14 Մովսէսը լեռից իջաւ ժողովրդի մօտ ու մաքրեց նրանց: Նրանք լուացին իրենց զգեստները: Մովսէսն ասաց ժողովրդին. 15 «Պատրա՛ստ եղէք, երեք օր կանանց չմերձենաք»:

16 Երրորդ օրն առաւօտեան Սինա լեռան վրայ որոտներ լսուեցին, փայլատակումներ ու միգախառն ամպ երեւաց. եւ շեփորի ձայնը ուժգին հնչում էր: Բանակատեղում գտնուող ողջ ժողովուրդը զարհուրեց: 17 Մովսէսը ժողովրդին բանակատեղիից տարաւ Աստծուն ընդառաջ եւ կանգնեցրեց Սինա լեռան ստորոտի շուրջը: 18 Սինա լեռն ամբողջովին ծխում էր, քանի որ Աստուած նրա վրայ իջել էր իբրեւ հուր: Նրա ծուխը բարձրանում էր ինչպէս հնոցի ծուխ: Բոլոր մարդիկ խիստ զարհուրեցին, 19 որովհետեւ շեփորի ձայնը տարածւում էր աւելի հեռու եւ հնչում էր չափազանց ուժեղ: Մովսէսը խօսում էր, իսկ Աստուած որոտաձայն պատասխանում էր նրան: 20 Տէրն իջաւ Սինա լեռան վրայ, լեռան կատարին: Տէրը Մովսէսին կանչեց լեռան գագաթը, եւ Մովսէսը բարձրացաւ այնտեղ: 21 Աստուած խօսեց Մովսէսի հետ՝ ասելով. «Իջի՛ր, կարգադրի՛ր քո ժողովրդին. Աստծուն տեսնելու համար չմերձենան եւ այդ պատճառով նրանցից շատերը չկորչեն: 22 Աստծուն մօտեցող քահանաներն էլ թող մաքրուեն, որպէսզի Տէրը կորստեան չմատնի նրանց»: 23 Մովսէսն ասաց Աստծուն. «Ժողովուրդը չի կարող Սինա լեռը բարձրանալ, որովհետեւ դու ինքդ ես մեզ պատուիրել եւ ասել, թէ՝ "Մարդկանց ու լեռան միջեւ տարածութիւն կը թողնես եւ լեռը սուրբ կը հռչակես"»: 24 Տէրն ասաց նրան. «Գնա՛, իջի՛ր ու յետոյ այստեղ բարձրացի՛ր Ահարոնի հետ, բայց քահանաներն ու ժողովուրդը թող չյանդգնեն բարձրանալ Աստծու մօտ, որպէսզի Տէրը նրանց կորստեան չմատնի»: 25 Մովսէսն իջաւ ժողովրդի մօտ եւ ասաց նրանց.

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

20 Տէրը յայտնեց հետեւեալ բոլոր պատգամները՝ ասելով.

2 «Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, որ քեզ հանեցի Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից:

3 Ինձնից բացի այլ աստուածներ չպիտի լինեն քեզ համար:

4 Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքի ջրերի մէջ եղած որեւէ բանի նմանութեամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: 5 Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց, որովհետեւ ե՛ս եմ քո Տէր Աստուածը՝ մի նախանձոտ Աստուած. հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին, ինձ ատող մարդկանց նոյնիսկ երրորդ ու չորրորդ սերնդին, 6 իսկ ինձ սիրող ու իմ հրամանը կատարող մարդկանց մինչեւ հազարերորդ սերնդին ողորմում եմ:

7 Քո տէր Աստծու անունն զուր տեղը չպիտի արտասանես, որովհետեւ Տէրը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում:

8 Յիշի՛ր շաբաթ օրը, որպէսզի սուրբ պահես այն: 9 Վեց օր պիտի աշխատես եւ պիտի կատարես քո բոլոր գործերը: 10 Եօթներորդ օրը քո տէր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես, ոչ էլ քո տղան ու աղջիկը, քո ծառան ու քո աղախինը, քո էշն ու քո եզը, քո բոլոր անասունները, քեզ մօտ գտնուող օտարականն ու քեզ մօտ բնակուող պանդուխտը, 11 որովհետեւ Տէր Աստուած վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամէնը, ինչ դրանց մէջ է, իսկ եօթներորդ օրը հանգստացաւ: Դրա համար էլ Տէրն օրհնեց եօթներորդ օրը եւ այն սուրբ հռչակեց:

12 Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը, որպէսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրայ, որ Տէր Աստուած տալու է քեզ:

13 Մի՛ սպանիր:

14 Մի՛ շնացիր:

15 Մի՛ գողացիր:

16 Քո հարեւանի դէմ սուտ վկայութիւն մի՛ տուր:

17 Ո՛չ քո մերձաւորի տան, ո՛չ նրա ագարակի վրայ աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձաւորի կնոջ վրայ, ո՛չ նրա ծառայի վրայ, ո՛չ նրա աղախնու վրայ, ո՛չ նրա եզան վրայ, ո՛չ նրա էշի վրայ, ո՛չ նրա անասունի վրայ, ո՛չ այն ամենի վրայ, ինչ քո մերձաւորինն է, աչք մի՛ ունեցիր»:

ԺՈՂՈՎՐԴԻ ՎԱԽԸ
(Բ Օր. 5. 22-33)

18 Ողջ ժողովուրդը լսում էր որոտը, շեփորի ձայնը, տեսնում փայլատակումներն ու ծխացող լեռը: Ողջ ժողովուրդը զարհուրեց, ընկրկեց ու կանգնեց հեռու: 19 Մարդիկ ասացին Մովսէսին. «Դո՛ւ խօսիր մեզ հետ, եւ մենք կը հնազանդուենք: Աստուած թող չխօսի մեզ հետ, թէ չէ կարող ենք մեռնել: 20 Մովսէսն ասաց նրանց. «Սրտապնդուեցէ՛ք, որովհետեւ Աստուած ձեզ փորձելու համար եկաւ ձեզ մօտ, որպէսզի նրա երկիւղը լինի ձեր մէջ, եւ դուք մեղք չգործէք»: 21 Ժողովուրդը լեռից հեռու էր կանգնած, իսկ Մովսէսը մտաւ մառախուղի մէջ, ուր գտնուում էր Աստուած:

ՕՐԷՆՔՆԵՐ ԽՈՐԱՆԻ ՄԱՍԻՆ

22 Տէրն ասաց Մովսէսին. «Այսպէս կ՚ասես Յակոբի սերնդին եւ կը հաղորդես Իսրայէլի որդիներին. "Դուք ինքներդ տեսաք, որ ես երկնքից խօսեցի ձեզ հետ: 23 Ձեզ համար ոսկէ ու արծաթէ աստուածներ չպատրաստէք: 24 Ինձ համար հողաշէն զոհասեղան կը պատրաստէք եւ դրա վրայ, ամէն տեղ, ուր կը դնեմ իմ անունը, կը մատուցէք ձեր ողջակէզներն ու ձեր խաղաղութեան զոհերը, ձեր ոչխարներն ու ձեր արջառները: Ես կը գամ քեզ մօտ ու կ՚օրհնեմ քեզ: 25 Իսկ եթէ զոհասեղանը քարից կառուցես, դրա քարերը յղկուած թող չլինեն, որովհետեւ եթէ քո ձեռքի գործիքը դիպցնես դրան, ապա դա պղծուած կը լինի: 26 Իմ զոհասեղանի վրայ աստիճաններով չբարձրանաս, որպէսզի դրա վրայ քո ամօթոյքը չերեւայ"»:

ԳԵՐԻՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՈՒԵԼԸ
(Բ Օր. 15. 12-18)

21 «Սրանք են այն կանոնները, որ պիտի յայտնես նրանց.

†Եբրայերէնում՝ մթան մէջ:

†Եբրայերէնում՝ երբ փողի ձայնը երկար հնչի:

2 Եթէ գնես եբրայեցի մի ստրուկ, վեց տարի նա թող ծառայի քեզ եւ եօթներորդ տարում առանց փրկագնի ազատ թող արձակուի: 3 Եթէ նա միայնակ է տունդ մտել, միայնակ էլ թող գնայ, իսկ եթէ իր կնոջ հետ է մտել, կինն էլ թող գնայ նրա հետ: 4 Եթէ իր տէրը նրան կին տայ, եւ կինը նրա համար տղաներ եւ աղջիկներ ծնի, ապա կինն ու զաւակները թող պատկանեն նրա տիրոջը, իսկ նա թող գնայ միայնակ: 5 Եթէ ստրուկն առարկելով ասի, թէ՝ "Սիրեցի իմ տիրոջը, իմ կնոջն ու իմ զաւակներին եւ ազատութիւն չեմ ուզում", ապա նրա տէրը նրան թող կանգնեցնի Աստծու ատեանին, 6 այնուհետեւ բերի իր տան դռան սեմի մօտ, հերիւնով ծակի նրա ականջը, եւ նա նրան թող ծառայի ցմահ:

7 Եթէ որեւէ մէկն իր աղջկան որպէս աղախին վաճառի, ապա այդ աղջիկը թող չազատագրուի, ինչպէս ազատագրւում են ստրկուհիները: 8 Եթէ այդ աղախինը, որը սահմանուած էր իր տիրոջ համար, այլեւս հաճելի չլինի նրան, ապա Տէրը թող փրկագնով վաճառի նրան, բայց օտարազգի մարդու վաճառելու իրաւունք չունի, թէ չէ նրան անարգած կը լինի: 9 Եթէ նա իր գնած աղախինն սահմանել է իր որդու համար, նրա հետ թող վարուի այնպէս, ինչպէս վարւում է իր դուստրերի հետ: 10 Եթէ ամուսնացած մի մարդ ամուսնանայ նաեւ մի ուրիշ կնոջ հետ, թող չզրկի նախկին կնոջը գոյութեան միջոցներից, զգեստներից ու ամուսնական պարտականութիւնից: 11 Եթէ ամուսինն այս երեք պահանջները չկատարի նրա նկատմամբ, ապա կինն առանց փրկագնի՝ ձրի, ազատ թող արձակուի»:

ՄԱՀՈՒԱՆ ԱՐԺԱՆԻ ՄԵՂՔԵՐ

12 «Եթէ որեւէ մարդ հարուածի մէկին, եւ սա մահանայ, ապա հարուածողը մահապատժի թող ենթարկուի: 13 Եթէ սպանութիւնը կատարուել է ոչ թէ սպանողի կամքով, այլ Աստուած է մատնել նրան նրա ձեռքը, ապա սպանողին թող ցոյց տրուի մի տեղ, ուր նա ապաստան թող գտնի: 14 Եթէ մէկը չարանենգօրէն սպանի իր մերձաւորին եւ փախուստի դիմելով ապաստանի իմ զոհասեղանին, դարձեալ կ'առնես նրան ու կը սպանես:

15 Ով որ հարուածի իր հօրը կամ մօրը, մահապատժի թող ենթարկուի:

16 Եթէ մէկը գողանայ մի իսրայէլացու եւ վաճառի, եւ կամ իր մօտ գտնեն նրան, ապա սա մահապատժի թող ենթարկուի:

17 Ով որ վատաբանի† իր հօրն ու իր մօրը, մահապատժի թող ենթարկուի:

18 Եթէ երկու մարդիկ կռուեն, եւ նրանցից մէկը քարով կամ բռունցքով հարուածի միւսին, եւ սա ոչ թէ մահանայ, այլ անկողին ընկնի, 19 ապա եթէ տուժածը ոտքի կանգնի եւ կարողանայ ցուպի օգնութեամբ քայլել, հարուածողը թող անպարտ լինի, բայց տուժածի աշխատանքից զրկուելու վնասի ու բժշկութեան համար թող հատուցում վճարի:

20 Եթէ մէկը գաւազանով հարուածի իր ստրուկին կամ իր ստրկուհուն, եւ սրանք մեռնեն նրա հարուածից, ապա տէրը վրէժխնդրութեան պիտի ենթարկուի դատաստանով, 21 իսկ եթէ նրանք մէկ կամ երկու օր ապրեն, տէրը վրէժխնդրութեան չի ենթարկուի, քանի որ նա նրանց իր արծաթով է գնել:

22 Եթէ երկու տղամարդիկ կռուելիս զարնուեն մի յղի կնոջ, եւ կինը պտուղը դեռ չձեւաւորուած վիժի‡, հարուածողը թող հատուցի վնասը. ինչ որ պահանջի կնոջ ամուսինը, նա թող վճարի ըստ սահմանուած կարգի եւ տայ աղաչելով: 23 Իսկ եթէ պտուղը ձեւաւորուած լինի, ապա թող հատուցի ըստ այս կարգի. կեանքի դիմաց՝ կեանք, աչքի դիմաց՝ 24 աչք, ատամի դիմաց՝ ատամ, ձեռքի դիմաց՝ ձեռք, ոտքի դիմաց՝ ոտք, 25 խարանի դիմաց՝ խարան, վէրքի դիմաց՝ վէրք, հարուածի դիմաց՝ հարուած:

26 Եթէ մէկը հարուածի իր ստրկի կամ իր ստրկուհու աչքին ու կուրացնի նրան, ապա իր կուրացրած աչքի համար նրանց ազատ թող արձակի: 27 Եթէ ջարդի իր ստրկի կամ ստրկուհու ատամը, ապա իր ջարդած ատամի համար նրանց ազատ թող արձակի»:

†Եբրայերէնում՝ անիծի:

‡Եբրայերէնը յաւելեալ ունի եւ կինն ուրիշ վնասուածք ստացած չլինի:

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

28 «Եթէ մի ցուլ հարուածի մի տղամարդու կամ կնոջ, եւ սրանք մեռնեն, ապա ցուլը թող քարկոծուի, նրա միսը թող չուտեն, իսկ ցուլի տէրը անպարտ թող լինի: 29 Եթէ ցուլը նախկինում եւս հարուածող է եղել, եւ այդ առթիւ նրա տիրոջը բողոքած են եղել, բայց սա ցուլին մէջտեղից չի վերացրել, եւ եթէ ցուլը տղամարդ կամ կին սպանի, ապա ցուլը թող քարկոծուի, իսկ ցուլի տէրը միաժամանակ մահապատժի թող ենթարկուի: 30 Իսկ եթէ տիրոջ վրայ փրկագին նշանակուի, ապա իր խլած կեանքի դիմաց տէրը թող վճարի նշանակուած փրկագինը: 31 Եթէ ցուլը մի տղայի կամ մի աղջկայ հարուածի, նոյն կերպ թող վարուեն նրա հետ: 32 Եթէ ցուլը մի ստրուկի կամ ստրկուհու հարուածի, ցլատէրը նրանց տիրոջը երեսուն սիկղ արծաթ թող վճարի, իսկ ցուլը թող քարկոծուի:

33 Եթէ մէկը փոս բացելուց կամ ջրհոր փորելուց յետոյ դրանք չծածկի, եւ դրանց մէջ արջառ կամ էշ ընկնի, 34 փոսի տէրը արծաթ թող վճարի անասունի տիրոջը, իսկ լէշը թող յանձնուի իրեն:

35 Եթէ մէկի ցուլը հարուածի մի ուրիշ մարդու ցուլին, եւ սա սատկի, կենդանի մնացած ցուլը թող վաճառեն եւ դրա արժէքը թող բաժանեն: Թող բաժանեն նաեւ սպանուած ցուլը: 36 Իսկ եթէ նախկինում էլ գիտէին, որ ցուլը հարուածող է եղել, եւ այդ մասին դրա տիրոջը բողոքած են եղել, բայց նա իր ցուլը մէջտեղից չի վերացրել, թող ցուլ հատուցուի ցուլի փոխարէն, իսկ սպանուած ցուլը թող տրուի տիրոջը»:

ՕՐԷՆՔՆԵՐ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22 «Եթէ մէկը արջառ կամ ոչխար գողանայ, մորթի կամ վաճառի այն, ապա մէկ արջառի փոխարէն հինգ արջառ թող հատուցի, իսկ մէկ ոչխարի փոխարէն՝ չորս ոչխար:

2 Եթէ գողին մահացու հարուածհասցնեն տան պատին անցք բացելիս, թող դա սպանութիւն չդիտուի: 3 Իսկ եթէ դէպքը արեւածագից յետոյ կատարուի, սպանողը մահապարտ կը դիտուի եւ մահուան կ'ենթարկուի†: Եթէ գողը հատուցելու ոչինչ չունի, ապա ինքը թող վաճառուի, որպէսզի հատուցի իր գողացածի փոխարէն: 4 Իսկ եթէ նա բռնուի, եւ գողօնը՝ արջառ, էշ եւ ոչխար, գտնուի իր մօտ, ապա նա կրկնակին թող հատուցի:

5 Եթէ մէկն իր անասունն արածեցնելիս թոյլ է տալիս, որ անասունն արածի ուրիշի հանդում, ապա իր հանդից թող հատուցի ըստ փչացրած բերքի չափի: Իսկ եթէ հանդը փչացրել է ամբողջութեամբ, ապա թող հատուցի իր հանդի ու իր այգու ընտիր հատուածով:

6 Եթէ մէկը իր հանդի փշերը վառելու համար կրակ անի, եւ նրա վառած կրակը տարածուի ու այրի մէկ ուրիշի կալը կամ ցորենի շեղջը կամ հանդը, ապա վնասը թող հատուցի նա, ով հրդեհի համար մեղաւոր է:

7 Եթէ մէկը մի մարդու արծաթ կամ որեւէ այլ իր տայ պահելու, եւ այն գողացուի այդ մարդու տնից, եթէ գողը գտնուի, թող կրկնակին հատուցի, 8 իսկ եթէ գողը չգտնուի, ապա տան տէրը թող Աստծու առաջ երդուի, որ ինքն ամենեւին չի իւրացրել այդ մարդու իրեն պահ տուած իրը: 9 Արջառի ու էշի, ոչխարի ու հագուստի եւ ամէն տեսակ բաների կորուստներին վերաբերող եւ վէճ յարուցող խնդիրների իսկութիւնը պարզելու նպատակով երկու կողմերը թող կանգնեն Աստծու դատաստանի առաջ: Նրանցից ում որ Աստուած մեղաւոր ճանաչի‡, նա կրկնակին թող հատուցի միւսին:

10 Եթէ մէկը մի մարդու էշ, եզ, ոչխար կամ որեւէ այլ անասուն ի պահ տայ եւ պահ տրուածը վնասուածք ստանայ, սատկի կամ յափշտակուի, եւ այդ բանը հաստատող ոչ մի վկայ չլինի,

†Եբրայերէնում՝ լրիւ կը հատուցի:

‡Եբրայերէնում՝ դատաւորները ճշտեն յանցաւորին, գրաբարում՝ Աստծու ձեռքով բացայայտուի:

11 ապա երկուսի միջեւ Թող Աստծուն տրուած երդումը որպէս վկայութիւն լինի: Նա, ում մօտ անասունը պահ է տրուած եղել, եթէ երդուի, որ երբեք նենգ մտադրութիւն չի ունեցել միւսի տուած աւանդի նկատմամբ, ապա տէրը Թող բաւարարուի դրանով, իսկ պահողը Թող չտուգանուի: 12 Իսկ եթէ ապացուցուի, որ իրօք իր մօտից են գողացել, ապրանքի տիրոջը Թող հատուցի վնասը: 13 Իսկ եթէ պահ տրուած անասունին մի գազան է յօշոտել, որպէս ապացոյց նա Թող բերի անասունի լէշը եւ վնասը չհատուցի:

14 Եթէ մէկը մի իր կամ անասուն խնդրի մէկ ուրիշից, եւ դրանք ջարդուեն, սատկեն կամ յափշտակուեն, իսկ տէրը դրանց մօտ ներկայ չլինի, ապա աւանդը վերցնողը Թող հատուցի վնասը: 15 Եթէ դէպքը կատարուելիս տէրը աւանդի մօտ ներկայ լինի, աւանդ վերցնողը վնասը Թող չհատուցի: Եթէ դա վարձով է փոխ առել, վնասն այդ վարձով էլ Թող հատուցի»:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

16 «Եթէ մէկը խաբի չնշանուած մի կոյսի եւ պառկի նրա հետ, գլխագին Թող վճարի ու ամուսնանայ նրա հետ: 17 Եւ եթէ աղջկայ հայրը չհամաձայնի նրան կնութեան տալ իր աղջկան, խաբողը նրա հօրը արծաթ Թող վճարի այնքան, ինչքան գլխագին է սահմանուած կոյսերի համար:

18 Մի՛ Թողէք, որ կախարդներն ապրեն:

19 Ով որ կենակցի անասունի հետ, նրան մահապատժի ենթարկեցէ՛ք:

20 Ով որ կուռքերին զոհ մատուցի, մահապատժի Թող ենթարկուի: Զոհ մատուցեցէ՛ք միայն Տիրոջը:

21 Պանդուխտին մի՛ չարչարէք, մի՛ նեղէք նրան, որովհետեւ դուք եւս պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում:

22 Ոչ մի այրի կնոջ կամ որբի մի՛ տանջէք: 23 Եթէ տանջէք նրանց, եւ նրանք բողոք բարձրացնելով դիմեն ինձ, ես կը լսեմ նրանց ձայնը, 24 սաստիկ կը բարկանամ, սրակոտոր կ'անեմ ձեզ, ձեր կանայք կ'այրիանան, իսկ ձեր զաւակները որբ կը դառնան:

25 Եթէ արծաթ ես փոխ տալիս աղքատ եղբօրդ†, նեղը մի՛ գցիր նրան եւ տոկոսներ մի՛ պահանջիր նրանից:

26 Եթէ գրաւ վերցնես մէկի բաճկոնը, մինչեւ արեւի մայր մտնելը վերադարձրո՛ւ այն, 27 որովհետեւ դա նրա եւ՛ վերարկուն է, եւ՛ նրա մերկութիւնը ծածկող հանդերձը, որով եւ նա քնում է: Եւ եթէ նա բողոքի ինձ, ես կը լսեմ նրան, որովհետեւ ողորմած եմ:

28 Քո աստուածներին‡ մի՛ վատաբանիր եւ քո ժողովրդի առաջնորդին մի՛ հայհոյիր:

29 Քո կալի ու հնձանի արդիւնքը մի՛ կտրիր§ ինձնից:

30 Քո որդիներից անդրանիկներին ինձ կը նուիրաբերես: Նոյն կերպ կը վարուես քո արջառի, ոչխարի ու էշի առաջնածինների հետ: Դրանք եօթը օր Թող մնան իրենց մօր մօտ, իսկ ութերորդ օրը դրանք կը նուիրաբերես ինձ:

31 Իմ այս ասածները կատարելով՝ դուք ինձ համար սուրբ մարդիկ կը լինէք: Գազանի յօշոտած կենդանու միս մի՛ կերէք, այլ շա՛ն նետեցէք»:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

23 «Ականջ մի՛ դիր սուտ լուրերին:

Ցանձն մի՛ առ յօգուտ անիրաւի անիրաւ վկայ լինել:

2 Մեծամասնութեանը հետեւելով՝ չար գործերի յետեւից մի՛ ընկիր:

Բազմութեանը մի՛ խառնուիր՝ անիրաւութիւն գործելու համար նրան ենթարկուելով, 3 եւ դատի տակ ընկածին յանիրաւի մի՛ խղճա դատաստանի ժամանակ:

4 Եթէ հանդիպես քո թշնամու մոլորուած եզան կամ էշին, դրան կը դարձնես ու կը հասցնես իր տիրոջը: 5 Եթէ տեսնես, որ մէկի* գրաստը բեռան ծանրութեան տակ ընկել է, նրա կողքից անտարբեր մի՛ անցիր, այլ նրան օգնելով բարձրացրո՛ւ այն:

†Եբրայերէն՝ իմ ժողովրդից մէկին:

‡Եբրայերէն՝ աստուածներին կամ դատաւորներին:

§Եբրայերէն՝ մի՛ ուշացրու:

*Այլ բնագրերում՝ թշնամուդ:

6 Մի՛ չեղիր դատի ընթացքը, եթէ նոյնիսկ դատաւորը քո ծանօթն է: 7 Հեռու կը մնաս ամէն տեսակ անիրաւ գործերից†: Մահուան չդատապարտես անպարտին ու արդարին: Մեղաւորին կաշառուելով չարդարացնես‡:

8 Կաշառք չվերցնես, որովհետեւ կաշառքը կուրացնում է անգամ պայծառատեսների աչքերը եւ աւերում արդար գործերը§:

9 Պանդուխտին մի՛ ճնշիր. դուք գիտէք պանդուխտ մարդկանց վիճակը, որովհետեւ դուք եւս պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում»:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԵՒ ՕՐԸ

10 «Վեց տարի կը մշակես քո հողը եւ կը հաւաքես դրա բերքը: 11 Եօթներորդ տարում չես մշակի այն եւ կը Թողնես, որ հանգստանայ: Քո ցեղի աղքատները Թող ուտեն ինքնաբոյս բերքը, իսկ դրանից աւելացածները Թող ուտեն վայրի գազանները: Այդպէս կը վարուես քո այգու եւ քո ձիթաստանի հետ:

12 Վեց օր կ'աշխատես, իսկ եօթներորդ օրը կը Թողնես, որ հանգստանան քո եզն ու էշը, հանգստանան նաեւ քո աղախնու եւ օտարականի որդիները:

13 Ինչ որ ասացի ձեզ, կը կատարէք: Օտար աստուածներ մի՛ պաշտէք, նրանց անունները ձեր բերանից չլսուեն»:

ԵՐԵՔ ՄԵԾ ՏՕՆԵՐ

(Ելք 34. 18-26, Բ Օր. 16. 1-17)

14 «Տարուայ մէջ երեք անգամ ինձ համար տօն կը կատարէք: 15 Բաղարջակերաց տօնը կը պահէք: Նոր բերքի ամսին եօթը օր բաղարջ հաց կ'ուտէք, ինչպէս պատուիրել եմ ձեզ, որովհետեւ դուք ա՛յդ ժամանակ ելաք Եգիպտացիների երկրից: Իմ առաջ դատարկաձեռն չերեւաս: 16* Ինչ էլ որ ցանած լինես քո հանդում, կը կատարես ամառուայ քո առաջին բերքը քաղելու տօնը: Տօն կը կատարես նաեւ տարուայ վերջում, երբ հանդից հաւաքած կը լինես քո բերքը: 17 Քո ժողովրդի բոլոր արու զաւակները տարուայ մէջ երեք անգամ պէտք է ներկայանան տէր Աստծուն:

18 Քո† արած զոհաբերութեան արիւնը թթխմորով հացի վրայ չթափես, եւ իմ տօնին արուած զոհաբերութեան ճարպը մինչեւ առաւօտ չպահես: 19 Քո առաջին բերքի արդիւնքը կը բերես քո տէր Աստծու տունը: Գառը իր մօր կաթի մէջ չեփես»:

ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ

20 «Եւ ահա ես իմ հրեշտակին ուղարկում եմ քեզ մօտ, որպէսզի նա քո առաջից գնալով՝ քեզ պահպանի ճանապարհին ու տանի այն երկիրը, որ պատրաստեցի քեզ համար: 21 Զգո՛յշ եղիր անձիդ նկատմամբ, լսի՛ր ու հնազանդուի՛ր նրան, որպէսզի նա չխորշի քեզնից, որովհետեւ նա իմ անունով է գործելու: 22 Եթէ‡ ուշադիր լսես իմ խօսքը եւ կատարես այն ամէնը, ինչ ասել եմ քեզ, ես կը լինեմ քո թշնամիների թշնամին եւ կը դառնամ քո հակառակորդների հակառակորդը, 23 որովհետեւ իմ հրեշտակը քեզ առաջնորդ կը լինի, քեզ կը տանի ամորհացիների, քետացիների, փերեզացիների, քանանացիների, գերգեսացիների, խեւացիների ու յեբուսացիների մօտ, որոնց ես կոտորելու եմ: 24 Չերկրպագես նրանց աստուածներին, չպաշտես նրանց եւ չկատարես այն, ինչ նրանք են կատարում, այլ քարուքա՛նդ արա դրանք եւ ջարդիր փշրի՛ր նրանց յուշարձանները: 25 Պաշտի՛ր քո տէր Աստծուն, եւ ես կ'օրհնեմ քո հացն§ ու ջուրը եւ ձեզնից կը վանեմ հիւանդութիւնները: 26 Քո

†Եբրայերէնում՝ սուտ բաներից:

‡Եբրայերէնում՝ պիտի չարդարացնես:

§Եբրայերէնում՝ արդարների իրաւունքները:

*Եբրայերէնում այլ կերպ է:

†Յունարէնում այս բառից առաջ կայ. երբ օտարազգիներին կ'արտաքսեմ քո մօտից ու կ'ընդարձակեմ քո սահմանները ...:

‡Այս բառից առաջ յունարէն բնագրում ունեմ. եթէ ուշադիր լսես իմ ասածը եւ կատարես այն ամէնը, ինչ պատուիրում եմ քեզ, ու կատարես իմ պատուիրանները, ապա բոլոր ազգերի մէջ կը լինես իմ ընտրեալ ժողովուրդը, որովհետեւ ողջ երկիրը ինձ է պատկանում: Դուք կը կազմէք քահանայութեան իմ թագաւորութիւնն ու կը լինէք իմ սուրբ ազգը: Այս խօսքերը հաղորդիր իսրայէլացիներին:

§Եօթանասնից՝ քո հացը, քո գինին ու քո ջուրը:

երկրում անսեռունակ տղամարդ եւ ամուլ կին չեն լինելու: Ես աւելացնելու եմ քո կեանքի տարիները: 27 Ես պիտի ուղարկեմ իմ ահը, որ դա առաջնորդի քեզ, պիտի սարսափեցնեմ բոլոր այն ազգերին, որոնց երկիրը ոտք պիտի դնես: Քո բոլոր հակառակորդներին փախուստի պիտի մատնեմ: 28 Քո առաջից իշամեղուներ պիտի ուղարկեմ, որ քեզնից հեռու քշեն ամորհացիներին, խեւացիներին, քանանացիներին ու քետացիներին: 29 Մի տարուայ ընթացքում չէ, որ պիտի հեռացնեմ նրանց քեզնից, որպէսզի երկիրը անապատի չվերածուի, եւ քո շրջակայքում չբազմանան երկրի գազանները: 30 Կամաց-կամաց պիտի հեռացնեմ դրանց քեզնից, մինչեւ որ բազմանաս ու ժառանգես երկիրը: 31 Քո երկրի տարածքը սահմանելու եմ Կարմիր ծովից մինչեւ Փղշտացիների ծովը եւ անապատից մինչեւ Եփրատ մեծ գետը: Ձեր ձեռքը պիտի յանձնեմ այդ երկրի բնակիչներին ու նրանց հեռու պիտի քշեմ քեզնից: 32 Դու նրանց ու նրանց չաստուածների հետ ուխտ չդնես: 33 Նրանք քո երկրում չպիտի բնակուեն, որպէսզի իմ նկատմամբ յանցանքի չմղեն քեզ, որովհետեւ, եթէ ծառայես նրանց չաստուածներին, նրանք գայթակղութիւն կը լինեն քեզ համար»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ ԿՆՔՈՒԱԾ ՈՒԽՏԸ

24 Աստուած ասաց Մովսէսին. «Բարձրացէ՛ք Տիրոջ մօտ դու, Ահարոնը, Նաբադը, Աբիուդն ու Իսրայէլի ծերերից եօթանասուն տղամարդ: Նրանք Տիրոջը թող երկրպագեն հեռուից: 2 Աստծուն թող մօտենայ միայն Մովսէսը, իսկ միւսները թող չմօտենան: Ժողովուրդը նրանց հետ թող չբարձրանայ»:

3 Մովսէսն եկաւ ու ժողովրդին յայտնեց Աստծու բոլոր պատգամներն ու կանոնները: Ողջ ժողովուրդը միաձայն պատասխան տուեց ու ասաց. «Կը կատարենք բոլոր այն պատգամները, որ տուել է Տէրը, կ'ենթարկուենք դրանց»:

4 Մովսէսը գրի առաւ Տիրոջ բոլոր պատգամները: Մովսէսն առաւօտեան վեր կենալով՝ զոհասեղան կառուցեց լերան ստորոտին եւ տասներկու վէմ կանգնեցրեց՝ ըստ Իսրայէլի տասներկու ցեղերի թուի:

5 Նա ուղարկեց իսրայէլացի երիտասարդներ, որոնք ողջակէզներ մատուցեցին, փրկութեան† համար Աստծուն հորթեր զոհաբերեցին: 6 Մովսէսն առնելով զոհերի արեան կէսը՝ լցրեց ամանների մէջ, իսկ արեան միւս կէսը հեղեց զոհասեղանի առաջ: 7 Նա, վերցնելով ուխտի գիրքը, կարդաց ի լուր ժողովրդի: Ժողովուրդն ասաց. «Այն ամէնը, ինչ ասել է Տէրը, կը կատարենք, կ'ենթարկուենք»: 8 Մովսէսը, վերցնելով արիւնը, շաղ տուեց ժողովրդի վրայ ու ասաց. «Սա այն ուխտի արիւնն է, որ կնքեց Տէրը ձեզ հետ, որպէսզի կատարէք նրա բոլոր պատգամները»:

9 Մովսէսը, Ահարոնը, Նաբադը, Աբիուդն ու իսրայէլացի ծերերից եօթանասուն տղամարդ բարձրացան 10‡ եւ տեսան այն տեղը, ուր կանգնել էր Իսրայէլի Աստուածը§: Նրա կանգնած տեղը կարծես շափիւղայի աղիւսներով էր զարդարուած, եւ դա ջինջ երկնքի նմանութիւնն ունէր: 11 Իսրայէլացի ընտրեալներից ոչ մէկը չմեռաւ: Նրանք յայտնուեցին այնտեղ, ուր գտնուում էր Աստուած: Եւ կերան ու խմեցին:

ՄՈՎՍԷՍԸ ՍԻՆԱ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

12 Տէրն ասաց Մովսէսին. «Բարձրացի՛ր ինձ մօտ՝ լեռը, այնտեղ եղի՛ր, եւ քեզ պիտի տամ քարէ այն տախտակները, որոնց վրայ գրելու եմ իմ օրէնքներն ու պատուիրանները: Դրանք նրանց համար օրէնսդրութիւն պիտի լինեն»: 13 Մովսէսն ու նրա սպասաւոր Յեսուն բարձրացան Աստծու լեռը: 14 Մովսէսն ասաց ծերերին. «Հանգստացէ՛ք այստեղ, մինչեւ որ մենք վերադառնանք ձեզ մօտ: Ահարոնն ու Ողը ձեզ հետ են: Եթէ որեւէ մէկը վէճ ունենայ, թող գնայ նրանց մօտ»: 15 Մովսէսը բարձրացաւ լեռը, եւ ամպը ծածկեց լեռը: 16 Տիրոջ փառքն իջաւ Սինա լերան վրայ, եւ ամպն այն ծածկեց վեց օր: Տէրը եօթնե-

†Եբրայերէնում՝ խաղաղութեան:

‡Եբրայերէնում 10-11 համարները այլ կերպ են:

§Եբրայերէնում՝ տեսան Աստծուն:

րորդ օրը Մովսէսին կանչեց ամպի միջից: 17 Տիրոջ փառքի տեսիլքը բորբոքուած կրակի նման իջաւ Իսրայէլի որդիների առաջ, լերան գագաթը: 18 Մովսէսը մտաւ ամպի մէջ ու բարձրացաւ լեռը: Մովսէսը լերան վրայ մնաց քառասուն օր ու քառասուն գիշեր:

ԸՆԾԱՆԵՐ ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ
(Ելք 35. 4-9)

25 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Իսրայէլի որդիներին կ'ասես, որ առնեն ինձ սահմանուած ընծաները†: Թող առնեն նրանցից, ում սրտից են բխում: 3 Սրանք են այն ընծաները, որ դուք կ'առնէք նրանցից. ոսկի, արծաթ, պղինձ, 4 կապոյտ, ծիրանի եւ կրկնակի կարմիր կտաւ, նրբահիւս բեհեզ, այծի մազ, 5 խոյերի կարմիր ներկուած մորթիներ, կապոյտ ներկուած մորթիներ եւ կարծր փայտեր, 6 լոյսի համար ձէթ եւ օծութեան իւղի ու խնկի համար բաղադրանիւթեր, 7 սարդիոնի քարեր, վակասի վրայ ագուցուելու քարեր եւ պատմուճան:

8 Ինձ համար սրբարան կը կառուցես, եւ ես կ'երեւամ ձեզ: 9 Դու խորանն ու նրա ամբողջ սպասքը ինձ համար կը պատրաստես ըստ այն օրինակի, որ լերան վրայ ցոյց կը տամ քեզ: Այսպէս կը պատրաստես.

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՊԱՆԱԿԸ
(Ելք 37. 1-9)

10 Վկայութեան տապանակ կը պատրաստես կարծր փայտից: Երկուսուկէս կանգուն թող լինի դրա երկարութիւնը, մէկուկէս կանգուն՝ դրա լայնութիւնը, մէկուկէս կանգուն՝ դրա բարձրութիւնը: 11 Այն կը պատես մաքուր ոսկով՝ ներսից ու դրսից կ'ոսկեզօծես այն: Դրա վրայ շուրջանակի կը դնես ոսկէ պսակ: 12 Դրա համար չորս ոսկէ օղակներ կը ձուլես եւ կը դնես դրա չորս կողմերին. երկու օղակները՝ մի կողմից, եւ երկու օղակները՝ միւս կողմից: 13 Կարծր փայտից լծակներ կը պատրաստես եւ դրանք կը պատես ոսկով: 14 Լծակները կ'անցկացնես տապանակի կողքերին ամրացուած օղակների մէջ, որպէսզի դրանցով բարձրացնեն տապանակը: 15 Լծակները վկայութեան տապանակի օղակների մէջ թող մնան՝ լինեն դրան ամրացուած: 16 Տապանակի մէջ կը դնես այն պատուիրանները, որ ես պիտի տամ քեզ:

17 Քաւութեան խնկամանի կափարիչը կը պատրաստես մաքուր ոսկուց: Երկուսուկէս կանգուն թող լինի դրա երկարութիւնը, մէկուկէս կանգուն՝ դրա լայնութիւնը: 18 Կոփածոյ երկու ոսկեայ քերովբէներ կը պատրաստես եւ դրանք կը դնես կափարիչի երկու ծայրերին: 19 Քերովբէներից մէկը թող լինի կափարիչի մի ծայրին, իսկ միւսը՝ միւս ծայրին: 20 Երկու քերովբէներ կը դնես դրա երկու ծայրերին. թող քերովբէները դէպի վեր տարածեն իրենց թեւերը եւ իրենց թեւերով հովանի անեն կափարիչի վրայ: Նրանց գլուխները թող լինեն միմեանց յանդիման, որպէսզի քերովբէների երեսները նայեն կափարիչին: Կափարիչը կը դնես տապանակի վրայ՝ վերեւի կողմից: 21 Տապանակի մէջ կը դնես այն պատուիրանները, որ ես պիտի տամ քեզ: 22 Ես քեզ կը յայտնուեմ այնտեղ եւ վկայութեան տապանակի կափարիչի վրայ գտնուող երկու քերովբէների արանքից քեզ հետ կը խօսեմ այն ամենի մասին, ինչ պատուիրելու եմ քեզ Իսրայէլի որդիների վերաբերեալ»:

ԱՍՏՄՈՒՆ ԸՆԾԱՑՈՒԱԾ ՀԱՑԻ ՍԵՂԱՆԸ
(Ելք 37. 10-16)

23 «Սեղան կը պատրաստես կարծր փայտից†: Երկու կանգուն թող լինի դրա երկարութիւնը, մէկ կանգուն՝ դրա լայնութիւնը, եւ մէկուկէս կանգուն՝ դրա բարձրութիւնը: 24 Այն կը պատես մաքուր ոսկով: Դրա վրայ շուրջանակի կը դնես ոսկէ պսակ: 25 Դրա չորս կողմը մէկ թզաչափ բարձրութեամբ շրջանակ‡ կը դնես եւ այն չորս կողմից կը պատես ոսկով: 26 Եւ չորս ոսկէ օղակներ կը պատրաստես եւ օղակները կը դնես չորս

†Եբրայերէնում՝ ընծայ, գրաբարում՝ պտուղ:

†Եօթանասնից՝ Ոսկէ սեղան կը պատրաստես մաքուր ոսկուց:

‡Եբրայերէնում՝ ոսկէ շրջանակ:

անկիւններին, ուր, պակից ներքեւ, դրա չորս ոտքերն են: 27 Օղակները կը ծառայեն այն բանին, որ լծակները դրանց մէջ անցկացնելով՝ կը բարձրացնեն սեղանը: 28 Լծակները կը պատրաստես չփչացող փայտից եւ դրանք կը պատես մաքուր ոսկով: Դրանցից բռնելով՝ կը բարձրացուի սեղանը: 29 Կը պատրաստես դրա խնկամաններն ու սկուտեղները†, դրա գաւաթներն ու սկիհները, որոնցով գինի պիտի մատուցես: Մաքուր ոսկուց կը պատրաստես դրանք:

30 Սեղանի‡ վրայ, իմ առաջ, մշտապէս կը դնես առաջաւորութեան հաց»:

ԱՇՏԱՆԱԿԸ
(Ելք 37. 17-24)

31 «Մաքուր ոսկուց աշտանակ կը պատրաստես: Քանդակազարդ կ'անես աշտանակը եւ այնպէս, որ բունը, ճիւղերը, սկահակները, գնդիկներն ու շուշանաձեւ ծաղիկները միաձոյլ լինեն: 32 Վեց ճիւղեր պէտք է տարածուեն նրա կողքերից. աշտանակի երեք ճիւղերը պէտք է լինեն մի կողմից, իսկ աշտանակի միւս երեք ճիւղերը՝ միւս կողմից: 33 Ամէն մի ճիւղ պէտք է ունենայ գնդիկից ու ծաղկից բաղկացած երեք ընկուզաձեւ§ սկահակներ: Միւս ճիւղերն էլ պէտք է ունենան գնդիկից ու ծաղկից բաղկացած երեք ընկուզաձեւ սկահակներ: Այսպէս թող լինեն աշտանակի կողքերից դուրս եկած վեց ստեղները. 34 աշտանակի բունը պէտք է ունենայ գնդիկից ու ծաղկից բաղկացած չորս սկահակներ: 35 Իրենց բնի կողքերից դուրս եկած երկու ճիւղերի տակ պէտք է լինի մի գնդիկ: Իրենց բնի կողքերից դուրս եկած երկու միւս ճիւղերի տակ նոյնպէս պէտք է լինի մի գնդիկ: Նոյն ձեւով կը պատրաստես աշտանակի կողքերից դուրս եկած վեց ճիւղերը, 36 այնպէս, որ նրանց գնդիկներն ու ճիւղերը դուրս եկած լինեն իրենց բնի կողքերից՝ ամբողջութեամբ քանդակազարդ, մէկ կտոր մաքուր ոսկուց: 37† Դրա համար կը պատրաստես եօթը կանթեղ եւ կանթեղները կը դնես աշտանակի վրայ այնպէս, որ դրանք լուսաւորեն դէմից: 38 Դրա ունելիներն ու պատուանդանը կը պատրաստես մաքուր ոսկուց: Այս ամբողջ սպասքը մի տաղանդ մաքուր ոսկուց կը պատրաստես: 39 Ուշադի՛ր եղիր, կ'անես ըստ այն օրինակի, որ քեզ ցոյց տրուեց լերան վրայ»:

ԱՍՏՎՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԸ
(Ելք 36. 8-38)

26 «Նրբահիւս բեհեզից, կապոյտ, ծիրանի եւ կրկնակի կարմիր կտաւից տասշերտանի վարագոյրով խորան կը պատրաստես: Այն կը զարդարես ասեղնագործ քերովբէներով: 2 Վարագոյրի ամէն շերտի երկարութիւնը պէտք է լինի քսանութ կանգուն, իսկ լայնութիւնը՝ չորս կանգուն: Բոլոր շերտերի չափը նոյնը պէտք է լինի: 3 Հինգ շերտերը պէտք է միացած լինեն իրար: Իրար պէտք է միացած լինեն նաեւ միւս հինգ շերտերը: 4 Շերտերի կցուածքի մի կողմից մէկ շերտի եզերքին կապոյտ ճարմանդներ պէտք է դնես: Նոյնը պէտք է անես նաեւ երկրորդ կցուածքի արտաքին շերտի եզերքին: 5 Յիսուն ճարմանդ կը դնես մի շերտի վրայ, յիսուն ճարմանդ էլ՝ կը դնես երկրորդ կցուածքի շերտի կողմից: Բոլոր ճարմանդները միմեանց դիմաց պէտք է լինեն: 6 Կը պատրաստես յիսուն ոսկէ օղակներ եւ շերտերը իրար կը միացնես կեռիկներով: Այսպիսով կը ստացուի մի խորան:

7 Խորանի համար այծի մազից հիւսուած ծածկոց կը պատրաստես: Տասնմէկ շերտերից թող բաղկացած լինի այն: 8 Ամէն մի շերտի երկարութիւնը պէտք է լինի երեսուն կանգուն, իսկ լայնութիւնը՝ չորս կանգուն: Տասնմէկ շերտերի չափը նոյնը պէտք է լինի: 9 Հինգ շերտերը իրար կը միացնես առանձին եւ վեց շերտերը՝ առանձին: Վեցերորդ շերտը իբրեւ կրկնակի ծածկոց թող կախուի խորանի ճակատի կողմից: 10 Յիսուն ճարմանդ կը պատրաստես կցուածքի ամէն շերտի եզերքին, յիսուն ճարմանդ էլ՝ երկրորդ կցուածքի շերտի եզերքին: 11 Կը պատրաստես յիսուն պղնձէ օղակներ եւ ճարմանդները օղակների մէջ անցկացնելով՝ իրար կը միացնես շերտերը: Կը ստացուի մի ամբողջութիւն: 12 Շերտերի աւելացած մասերը կը տեղաւորես վրանի տակ. շերտի այդ աւելացած մասի կէսով կը ծածկես վրանի ծայրամասերը՝ յետեւի կողմից: 13 Վրանի վարագոյրների երկարութեան աւելացած մասից մի կանգուն թող կախուի այս կողմից եւ մի կանգուն՝ այն կողմից: Վրանի ծայրերը թող ծածկուեն այս ու այն կողմից: 14 Վրանի ծածկը կը պատրաստես խոյերի շիկակարմիր մորթուց, իսկ դրա վրայ էլ մի ծածկ կը դնես կապոյտ մորթուց: 15 Վրանի ուղղահայեաց մոյթերը կը պատրաստես կարծր փայտից: 16 Ամէն մոյթի երկարութիւնը տասը կանգուն թող լինի, իսկ ամէն մոյթի հաստութիւնն ու լայնութիւնը մէկուկէս կանգուն թող լինի: 17 Ամէն մի մոյթ թող ունենայ իրար ագուցուած երկու ծղնի: Այդպէս կը պատրաստես վրանի բոլոր մոյթերը: 18 Վրանի հիւսիսային կողմում կը դնես քսան մոյթեր 19 եւ այդ քսան մոյթերի համար կը պատրաստես քառասուն արծաթէ խարիսխներ. երկու խարիսխ՝ վրանի մի մոյթի երկու կողմերի համար եւ երկու խարիսխ՝ մի մոյթի երկու կողմերի համար: 20 Վրանի միւս՝ հարաւային կողմում նոյնպէս կը դնես քսան մոյթեր իրենց քառասուն արծաթէ խարիսխներով: 21 Երկու խարիսխ՝ մի մոյթի երկու կողմերի համար: 22 Վրանի յետեւի՝ ծովահայեաց կողմում վեց մոյթ կը դնես: 23 Երկու մոյթ կը դնես խորանի անկիւնների՝ յետեւի կողմից: 24 Ներքեւի կողմից դրանք պէտք է իրար հաւասար† լինեն: Նոյն ձեւով հաւասար թող լինեն դրա իրար ագուցուած զոյգ խոյակները: Նոյն ձեւով կը շինես երկու անկիւնների մոյթերը: 25 Այսպիսով կը ստացուի ութ մոյթ: Դրանց խարիսխները արծաթից թող լինեն. տասնվեց խարիսխ: Երկու խարիսխ՝ մի մոյթի համար նրա երկու կողմերից, եւ երկու խարիսխ էլ՝ միւս մոյթի համար: 26 Կարծր փայտից նիգեր կը պատրաստես. հինգ նիգ՝ վրանի մի կողմի մոյթի համար, 27 հինգ նիգ՝ վրանի երկրորդ կողմի միւս մոյթի համար եւ հինգ նիգ՝ վրանի թիկունքի՝ ծովահայեաց կողմի մոյթի համար: 28 Մի նիգ էլ մոյթերի մի ծայրից մինչեւ միւսն անցկացուելով՝ դրանք թող միացնի իրար: 29 Մոյթերը կը պատես ոսկով: Կը պատրաստես ոսկէ օղակներ, որոնց մէջ կը հագցնես նիգերը: Նիգերը կը պատես ոսկով: 30 Վրանը կը կանգնեցնես այն ձեւով, որ ցոյց տրուեց քեզ լերան վրայ:

31 Կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից վարագոյր կը պատրաստես: Այն կը զարդարես ասեղնագործուած քերովբէով: 32 Այն կ'ամրացնես կարծր փայտից շինուած եւ ոսկով պատած չորս մոյթերի վրայ: Դրանց խոյակները թող լինեն ոսկուց, իսկ խարիսխները՝ արծաթից: Վարագոյրը կը ձգես մոյթից մոյթ: 33 Վկայութեան տապանակը կը տանես այնտեղ, վարագոյրի ներսի կողմը, եւ վարագոյրը ձեզ համար սրբութիւնը կ'առանձնացնի սրբութիւնների սրբութիւնից: 34 Սրբութիւնների սրբութեան տեղում վկայութեան տապանակը կը ծածկես վարագոյրով:

35 Զոհասեղանը կը դնես վարագոյրի դրսի կողմը, իսկ աշտանակը՝ զոհասեղանի դիմաց, վրանի հարաւային կողմում: Զոհասեղանը կը դնես վրանի հիւսիսային կողմում:

36 Կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից կը պատրաստես վրանի դռան առագաստը՝ նկարազարդ մի գործ: 37 Առագաստի համար կարծր փայտից հինգ մոյթ կը պատրաստես եւ դրանք կ'ոսկեզօծես: Դրանց խոյակները թող լինեն ոսկուց: Դրանց համար հինգ պղնձէ խարիսխ կը ձուլես»:

†Եօթանասնից՝ *ափսէներն ու խնկամանները:*

‡1860 թ. հրատարակութիւնում՝ *Հացի սեղանի վրայ...:* Այս հատուածը թարգմանել են ըստ 1805 թ. հրատարակութեան եւ եօթանասնից բնագրերի:

§Եօթանասնից՝ *նշաձեւ:*

†Եբրայերէնում այլ կերպ է:

†Այլ բնագրերում՝ *ագուցուած, միացուած:*

ՎՐԱՆԸ
(Ելք 38. 1-7)

27 «Կարծր փայտից զոհասեղան կը պատրաստես: Հինգ կանգուն թող լինի դրա երկարութիւնը, հինգ կանգուն՝ լայնութիւնը: Քառակուսի թող լինի զոհասեղանը: Երեք կանգուն թող լինի դրա բարձրութիւնը: 2 Դրա չորս անկիւնների վրայ եղջիւրներ կ'անես այնպէս, որ դրանք միաձոյլ լինեն զոհասեղանի հետ: Դրանք կը պատես պղնձով: 3 Զոհասեղանի համար շրջանակ կը պատրաստես: Դրա խուփը, տաշտերը, մեծ պատառաքաղները, կրակարանները եւ ամբողջ սպասքը պղնձից կը պատրաստես: 4 Դրա համար պղնձից վանդակաւոր կասկարայ կը պատրաստես: Կասկարայի համար չորս կողմից չորս պղնձէ օղակներ կը պատրաստես: 5 Դրանք կը դնես զոհասեղանի կասկարայի տակ՝ ներքեւի մասում: Կասկարան թող հասնի մինչեւ զոհասեղանի մէջտեղը: 6 Զոհասեղանի համար լծակներ կը պատրաստես՝ լծակներ կարծր փայտից, եւ դրանք կը պատես պղնձով: 7 Լծակները կը մտցնես օղակների մէջ: Լծակները թող լինեն զոհասեղանի երկու կողմերից, որպէսզի հնարաւոր լինի այն բարձրացնել: 8 Փայտեայ շինուածքների մէջը դատարկ թող լինի: Կը պատրաստես ըստ այն օրինակի, որ ցոյց է տրուել քեզ լերան վրայ: Այդպէս կը պատրաստես այն»:

ՏԻՐՈՋ ՎՐԱՆԻ ԲԱԿԸ ԵՒ ՎԱՐԱԳՈՅՐԸ
(Ելք 38. 9-20)

9 «Վրանի առաջ բակ կը շինես, բակի հարաւային կողմում՝ նրբահիւս բեհեզից պատրաստուած առագաստ: Հարիւր կանգուն թող լինի բակի մի կողմի երկարութիւնը: 10 Մոյթերը թող լինեն քսան հատ, դրանց պղնձէ խարիսխները՝ քսան հատ: Դրանց օղակներն ու խոյակները թող արծաթից լինեն: 11 Նոյն ձեւով հիւսիսային կողմում առագաստների երկարութիւնը թող լինի հարիւր կանգուն: Դրանց պղնձէ մոյթերը թող լինեն քսան հատ, դրանց պղնձէ խարիսխները՝ քսան հատ: Դրանց գալարազարդերը, մոյթերը եւ խարիսխները թող լինեն արծաթապատ: 12 Ծովահայեաց բակի առագաստների լայնութիւնը թող լինի յիսուն կանգուն: Դրանց մոյթերը թող լինեն տասը հատ, դրանց խարիսխները՝ տասը հատ: 13 Արեւելեան կողմի առաջին բակի առագաստների լայնութիւնը թող լինի յիսուն կանգուն: Դրանց մոյթերը թող լինեն տասը հատ, դրանց խարիսխները՝ տասը հատ: 14 Առագաստների մի կողմի բարձրութիւնը թող լինի տասնհինգ կանգուն: Դրանց մոյթերը թող լինեն երեք, դրանց խարիսխները՝ երեք: 15 Առագաստների միւս կողմի բարձրութիւնը թող լինի տասնհինգ կանգուն: Դրանց մոյթերը թող լինեն երեք հատ, դրանց խարիսխները՝ երեք հատ: 16 Բակի դռան վարագոյրի բարձրութիւնը թող լինի քսան կանգուն: Կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից պատրաստուած թող լինի այն՝ նկարագեղ ասեղնագործութեամբ: Դրանց մոյթերը թող լինեն չորս հատ, խարիսխներն էլ՝ չորս հատ: 17 Բակի շրջակայ բոլոր մոյթերը արծաթապատ թող լինեն, դրանց խոյակները՝ արծաթից, դրանց խարիսխները՝ պղնձից: 18 Բակի երկարութիւնը հարիւր կանգուն թող լինի, լայնութիւնը՝ յիսուն, իսկ բարձրութիւնը՝ տասնհինգ կանգուն: Առագաստը նրբահիւս բեհեզից թող լինի: Դրանց խարիսխները պղնձից թող լինեն: 19 Վրանի ամբողջ սպասքը, դրա բոլոր գործիքները եւ բակի բոլոր ցիցերը պղնձից թող լինեն»:

ՁԷԹ ՃՐԱԳԻ ՀԱՄԱՐ
(Ղեւտ. 24. 1-4)

20 «Իսրայէլացիներին կարգադրի՛ր, որ քեզ ձիթենու զուլալ, անարատ, ծեծուած ձիթապտղի ձէթ բերեն լոյսի համար, 21† որպէսզի մշտավառ ճրագ լինի վկայութեան խորանում, ուխտի վարագոյրից դուրս: Եւ Ահարոնն ու նրա որդիները երեկոյից մինչեւ առաւօտ թող այն վառեն Տիրոջ առաջ:

†Զոհերաբեռն հրատարակութիւնում եւ այլ բնագրերում 21-րդ համարն սկսւում է վկայութեան բառից:

Դա Իսրայէլի որդիների կողմից հաստատուած յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների մէջ»:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԶԳԵՍՏՆԵՐԸ
(Ելք 39. 1-7)

28 «Դու Իսրայէլի որդիներից քեզ մօտ կը բերես քո եղբայր Ահարոնին, նրա հետ նաեւ նրա որդիներին՝ Նաբադին ու Աբիուդին, Եղիազարին ու Իթամարին, որպէսզի ինձ համար քահանայութիւն անեն: 2 Ի պատիւ եւ ի փառս քո եղբայր Ահարոնի սրբազան զգեստներ կը պատրաստես: 3 Դու կը խօսես մտքով իմաստուն բոլոր մարդկանց հետ, որոնց ես իմաստութեան ոգով եմ լցրել, որ նրանք Ահարոնին սրբազան զգեստներ պատրաստեն սրբութեան համար, որոնցով էլ նա քահանայութեան պաշտօն է կատարելու ինձ համար: 4 Սրանք են այն զգեստները, որ նրանք պիտի պատրաստեն. մինչեւ ոտքի թաթերը հասնող երկարաւուն զգեստ, ուսի ու լանջի վակասներ, բեհեզէ պատմուճան, խոյր եւ գօտի: Սրբազան զգեստներ թող պատրաստեն քո եղբայր Ահարոնի ու նրա որդիների համար, որպէսզի ինձ համար քահանայութիւն անեն:

5 Նրանք թող վերցնեն ոսկի, կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւ եւ նրբահիւս բեհեզ: 6 Վակասը թող պատրաստեն մաքուր ոսկուց, կապոյտ, ծիրանի ու կարմիր նրբահիւս բեհեզից՝ այն զարդարելով նուրբ ասեղնագործութեամբ: 7 Երկու վակասները թող իրար միանան՝ երկու կողմերից իրար կապուելով: 8 Վակասի վերեւի մասը նոյն ձեւով պէտք է պատրաստուած լինի՝ մաքուր ոսկուց, կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից: 9 Զմրուխտէ երկու ակնաքար կ'առնես եւ դրանց վրայ կը փորագրես Իսրայէլի որդիների անունները. նրանցից վեցի անունները կը փորագրես մի ակնաքարի վրայ եւ միւս վեցինը՝ երկրորդ ակնաքարի վրայ, ըստ իրենց ցեղերի: 10 Դա ակնագործների արուեստին վայել մի գործ պէտք է լինի: 11 Իսրայէլի որդիների անունները կը քանդակես երկու ակնաքարերի վրայ այնպէս, ինչպէս կնիքներն են քանդակում: Դրանց շուրջը ոսկով կը զարդարես†: 12 Երկու ակնաքարերը կը գետեղես ուսի վրայ դրուող վակասի վրայ, որպէսզի դրանք Իսրայէլի որդիների յիշատակի ակնաքարերը լինեն: Ահարոնը, ի յիշատակ նրանց, Աստծու առաջ իր երկու ուսերի վրայ պէտք է կրի Իսրայէլի որդիների անունները:

13 Օղակ ու ճարմանդ կը պատրաստես մաքուր ոսկուց: 14 Մաքուր ոսկուց կը պատրաստես այդ երկու կապիչները, որոնք ծաղկազարդ մանուածքով հիւսկէններ պէտք է լինեն: Կապիչները կ'ամրացնես ուսանոցի երկու օղակներին՝ 15 նրանց վտաւակների մօտ, առջեւի կողմից»:

ԼԱՆՋԱՊԱՆԱԿԸ
(Ելք 39. 8-21)

«Դատաստանի լանջապանակը նկարազարդ կտորից կը պատրաստես. վակասի նման՝ ոսկուց, կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից: 16 Քառակուսի կը պատրաստես այն՝ մէկ թիզ երկարութեամբ եւ մէկ թիզ լայնութեամբ: 17 Դրա վրայ ակնաքարերը կը շարես չորս շարք ընդելուզուածքով: Ակնաքարերի շարքերը այսպէս թող լինեն. առաջինը՝ զմրուխտ, սարդիոն եւ տպազիոն՝ մէկ շարք: 18 Երկրորդ շարքը՝ նռնաքար, շափիւղայ եւ յասպիս: 19 Երրորդ շարքը՝ գոճազմ, ագատ եւ սուտակ: 20 Չորրորդ շարքը՝ յակինթ, բիւրեղ եւ եղնգաքար: Դրանք թող դասաւորուեն ըստ իրենց նշուած շարքերի՝ ընդելուզուած, ոսկով ամրացուած: 21 Իսրայէլի որդիների անուններով փորագրուած ակնաքարերը թող լինեն թուով տասներկու՝ ըստ նրանց անունների թուի: Իւրաքանչիւրն ըստ այդ տասներկու ցեղերի թող ունենայ իր անունը: 22 Լանջապանակի վրայ մաքուր ոսկուց չինուած ոլորուն շղթայ կը պատրաստես‡: 23 Լանջապանակի

†Եօթանասնից բնագրում վերջին նախադասութիւնը բացակայում է:

‡Բագրատունեան բնագրում այս տունը խիստ աղաւաղուած է: Թարգմանել ենք ըստ այլ բնագրերի:

վրայ երկու ոսկէ օղակներ կը պատրաստես եւ երկու օղակներ կ'ամրացնես լանջապանակի երկու ծայրերին: 24 Երկու ոսկէ շղթաներ կ'անցկացնես լանջապանակի ծայրին գտնուող երկու օղակներուն մէջ: 25 Երկու շղթաներուն երկու ծայրերը կը մտցնես երկու օղակներուն մէջ եւ վակասի առջեւի կողմից տանելով՝ կ'անցկացնես վակասի ետեւի կողմը: 26 Երկու ոսկէ օղակներ էլ կը պատրաստես եւ դրանք կ'ամրացնես լանջապանակի ներքեւի երկու ծայրերին, վակասին կցուած եզրերին: 27 Երկու ոսկէ այլ օղակներ կը պատրաստես եւ դրանք կ'անցկացնես վակասի երկու ուսերին, ներքեւի կողմից, միմեանց դէմ դիմաց: Դրա կոճակները թող լինեն վակասի գօտու վրայ: 28 Լանջապանակի ու վակասի օղակների միջով կապոյտ թել անցկացնելով՝ դրանք թող պինդ ամրացուեն իրար այնպէս, որ լանջապանակը լինի վակասի գօտու վրայ եւ վակասից չառանձնանայ[†]*: 29 Երբ Ահարոնը սրբարան կը մտնի, նա իր կրծքի վրայ թող կրի Իսրայէլի որդիների անուններով քանդակուած դատաստանի լանջապանակը, որպէսզի Աստծու առաջ յաւիտենապէս պահպանի նրանց յիշատակը: 30 Դատաստանի լանջապանակին կ'ամրացնես շղթաների ծայրերը եւ լանջապանակի երկու կողմերից կը կապես: Երկու վահանաձեւ կոճակ կը դնես վակասի երկու ուսերին, առջեւի կողմից եւ ներքեւից: Դատաստանի լանջապանակի վրայ կը դնես յանդիմանութիւնն ու ճշմարտութիւնը*[‡]*: Դա թող լինի Ահարոնի կրծքի վրայ, երբ նա սրբարան մտնելով՝ ներկայանայ Տիրոջը: Եւ Ահարոնը Տիրոջ առաջ իր կրծքի վրայ միշտ թող կրի Իսրայէլի որդիների դատաստանի լանջապանակը»:*

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՅԼ ՍՐԲԱԶԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

(Ելք 39. 22-31)

31 *«Պճղնաւոր ներքին պատմուճան կը պատրաստես ամբողջութեամբ կապոյտ թելով հիւսուած կտաւից: 32 Դրա վերին մասը շուրջանակի կլոր կտրելով՝ բացուածք կը թողնես: Միացման տեղերը ամբողջական՝ մէկ կտոր թող լինեն, որպէսզի այդ զգեստը չպատռուի: 33 Ներքին պատմուճանների քղանցքներին, ներքեւի մասում մանուած կապոյտ, ծիրանի ու կարմիր թելերով եւ նրբահիւս բեհեզով նռան ծաղկաբողբոջներ կը գործես: Դրանք կը գործես ներքին պատմուճանների քղանցքների շուրջբոլորը: Այդ զարդերը թող ունենան նռան ծաղկաբողբոջի ձեւը, եւ դրանց միջեւ շուրջանակի ոսկէ զանգակներ թող լինեն: 34 Ոսկէ զանգակներն ու նռան ծաղկաբողբոջները շուրջանակի թող զարդարեն ներքին պատմուճանների քղանցքները: 35 Դա թող հագնի Ահարոնը, որպէսզի, երբ պաշտամունք է կատարում, Տիրոջ առաջ սրբարան մտնելիս ու ելնելիս լսուեն դրանց արձակած ձայները, եւ Ահարոնը չմեռնի:*

36 *Մաքուր ոսկուց թիթեղ կը պատրաստես եւ դրա վրայ, ինչպէս կնիքի վրայ են փորագրում, «Սրբութիւն Տեառն» կը փորագրես: 37 Այն կ'ամրացնես նրբահիւս կապոյտ ժապաւէնի վրայ: 38 Դա կը կապես Ահարոնի գլխին դրուող խոյրի վրայ՝ ճակատի կողմից: Ահարոնը պէտք է կրի Իսրայէլի որդիների նուիրած բոլոր ընծաները, եթէ նոյնիսկ նրանք անօրէնութիւններ գործած լինեն դրանք նուիրելիս: Դա միշտ Ահարոնի ճակատին պէտք է լինի, որպէսզի այդ ընծաները ընդունելի լինեն Տիրոջը:*

39 *Մինչեւ ոտքի թաթերը հասնող երկարաւուն պատուճանը բեհեզից կը պատրաստես: Բեհեզից կը պատրաստես նաեւ ապարօշն ու նախշազարդ գօտին: 40 Ահարոնի որդիների համար պատմուճաններ, գօտիներ եւ խոյրեր*[†] *կը պատրաստես պատուի եւ փառքի համար: 41 Դրանք կը հագցնես քո եղբայր Ահարոնին ու նրա որդիներին: Կ'օծես նրանց, կ'օրհնես ու կը սրբագործես նրանց, որպէսզի ինձ համար քահանայութիւն անեն: 42 Նրանց համար կտաւից անդրավարտիքներ կը պատրաստես, որպէսզի դրանք նրանց մէջքից մինչեւ սրունքները հասնելով՝ ծածկեն նրանց ամօթոյքը: 43 Ահարոնն ու նրա որդիները թող հագնեն այն, երբ մտնեն վկայութեան խորանը, կամ երբ պաշտամունք կատարելու համար մօտենան սուրբ սեղանին: Նրանք մեղք թող չգործեն, որպէսզի չմեռնեն: Դա թող լինի յաւիտենական օրէնք իր եւ իրեն յաջորդող սերնդի համար»:*

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԱՀԱՐՈՆԻՆ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻՆ

(Ղեւտ. 8. 1-36)

29 *«Ահա թէ ինչպէս կը վարուես նրանց հետ*[†]*: Կը սրբագործես նրանց, որպէսզի ինձ համար քահանայութիւն անեն: Հօտից կը վերցնես ոչ արատաւոր մի զուարակ եւ ոչ արատաւոր երկու խոյ, 2 նաեւ բաղարջ հաց, իւղով հունցուած բաղարջ կարկանդակներ ու իւղով շաղուած բաղարջ բլիթներ: Այդ բոլորը իւղով հունցուած ընտիր ալիւրով կը պատրաստես: 3 Դրանք կը դնես մի սկուտեղի վրայ եւ սկուտեղով էլ կը նուիրաբերես դրանք, ինչպէս նաեւ զուարակն ու երկու խոյերը: 4 Ահարոնին ու նրա որդիներին կը բերես վկայութեան խորանի դռան մօտ եւ նրանց կը լուանաս ջրով: 5 Զգեստներն առնելով՝ քո եղբայր Ահարոնի ներքնազգեստի վրայ կը հագցնես երկարաւուն պատուճանը, վակասն ու լանջապանակը: Լանջապանակը կ'ամրացնես վակասին: 6 Խոյրը կը դնես նրա գլխին, իսկ թիթեղեայ սուրբ պսակը կը դնես խոյրի վրայ: 7 Կը վերցնես օծութեան իւղից, կը քսես նրա գլխին եւ կ'օծես նրան: 8 Մօտ կը բերես նրա որդիներին, նրանց նոյնպէս կը հագցնես զգեստները, 9 Ահարոնի ու նրա որդիների մէջքին կը կապես գօտիները, ապարօշները կը դնես նրանց գլխին եւ նրանց քահանայութիւնը ինձ համար յաւիտենական կը լինի: Այսպէս կը սրբագործես դու Ահարոնին ու նրա որդիներին:*

10 *Զուարակը կը բերես վկայութեան խորանի դռան մօտ, եւ Ահարոնն ու նրա որդիները վկայութեան խորանի դռան մօտ իրենց ձեռքերը կը դնեն զուարակի գլխին Տիրոջ առաջ: 11 Զուարակը կը մորթես Տիրոջ առաջ, վկայութեան խորանի դռան մօտ: 12 Կը վերցնես զուարակի արիւնից քո մատով ու կը քսես զոհասեղանի եղջիւրաձեւ անկիւններին, իսկ մնացած ամբողջ արիւնը կը հեղես զոհասեղանի յատակին: 13 Կը վերցնես փորոտիքը ծածկող ամբողջ ճարպը, լեարդի տակի բլթակը եւ երկու երիկամներն իրենց ճարպի հետ, կը դնես*[†] *զոհասեղանի վրայ: 14 Զուարակի միսը, նրա մորթին ու կղկղանքը*[‡] *թող այրեն բանակատեղիից դուրս: Դա հէնց մեղքերի համար է:*

15 *Կ'առնես խոյերից մէկը, եւ Ահարոնն ու նրա որդիները իրենց ձեռքերը կը դնեն խոյի գլխին: 16 Կը մորթես խոյը եւ վերցնելով նրա արիւնը՝ կը հեղես զոհասեղանի շուրջը: 17 Խոյը կը բաժանես մասերի, ջրով կը լուանաս նրա փորոտիքն ու ոտքերը եւ դրանք նրա գլխի հետ կը դնես կտրտած մասերի վրայ: 18 Զոհասեղանի վրայ դրուած ամբողջ խոյը կը լինի Տիրոջն առաքուած անուշահոտ ողջակէզ: Դա Տիրոջը մատուցուած զոհն է:*

19 *Կ'առնես երկրորդ խոյը, եւ Ահարոնն ու նրա որդիները իրենց ձեռքերը կը դնեն խոյի գլխին: 20 Կը մորթես խոյը, կը վերցնես նրա արիւնից եւ կը քսես Ահարոնի աջ ականջի բլթակին, նրա որդիների աջ ականջի բլթակին, Ահարոնի աջ ձեռքի ծայրերին, նրա աջ ոտքի ծայրերին, նրա որդիների աջ ականջների բլթակներին, նրանց աջ ձեռքերի ծայրերին, նրանց աջ ոտքերի ծայրերին: Մնացած արիւնը կը հեղես զոհասեղանի շուրջը: 21 Կ'առնես զոհասեղանի վրայ գտնուող արիւնից ու օծութեան իւղից եւ կը ցանես Ահարոնի ու նրա զգեստների վրայ, նրա որդիների ու նրա որդիների զգեստների վրայ: Թող սրբագործուեն Ահարոնն ու իր զգեստները, նրա հետ նաեւ՝ նրա որդիներն ու նրա որդիների զգեստները: Խոյի արիւնը կը հեղես զոհասեղանի շուրջը: 22 Կ'առնես խոյի ճարպը, դմակը, փորոտիքը ծածկող ճարպը, լեարդի տակի բլթակը,*

[†]Եօթանասնից բնագրում չկան 23-28 համարները:

[‡]Եբրայերէնում՝ *Ուրիմն ու Թուրիմը:*

[†]Եբրայերէնում՝ *շապիկ, գօտի, ապարօշ:*

[†]Նկատի ունի Ահարոնին ու նրա յետնորդներին:

[†]Եբրայերէնում՝ *կ'այրես:*

[‡]Իմա՞՝ *աղիքները, փորոտիքը:*

երկու երիկամներն իրենց ճարպի հետ եւ
աջ զիստը»: Դա սրբազան նուիրա-
գործութիւնն է: 23 «Տիրոջ առաջ
դրուած բաղարջների սկուտեղից կը
վերցնես մի հաց, իւղով հունցուած մի
կարկանդակ ու մի բլիթ, 24 այդ ամէնը
կը դնես Ահարոնի ձեռքերի վրայ, նրա
որդիների ձեռքերի վրայ եւ որպէս ըն-
ծայ կը նուիրաբերես Տիրոջը: 25 Դրանք
կը վերցնես նրանց ձեռքերից եւ ողջա-
կէզների զոհասեղանի վրայ կ'այրես
իբրեւ անուշահոտ զոհ Տիրոջ առաջ»:
Դա Տիրոջ համար կատարուող զոհա-
բերութիւն է:
26 «Կ'առնես Ահարոնին քահանայ
օծելու համար զոհուած խոյի կուրծքը եւ
այն որպէս ընծայ կը նուիրաբերես
Տիրոջը, իսկ մնացեալը կը լինի քո բա-
ժինը: 27 Կը սրբագործես խոյի կուրծքը
որպէս նուիրաբերութիւն, ինչպէս նաեւ՝
նրա զիստը, որը նուիրագործուեց: 28 Եւ
այն ամէնը, ինչ Ահարոնի եւ նրա որ-
դիների կողմից որպէս բաժին կը հանուի
խոյից, յաւիտենական օրէնք պիտի լինի
Ահարոնի եւ նրա որդիների համար
իսրայէլացիների մօտ, քանզի դա է ըստ
օրինի նրանց հասանելիք բաժինը: Եւ
դա իսրայէլացիների՝ իրենց փրկութեան
համար Տիրոջ առաջ զոհաբերուելիք
ընծան թող լինի:
29 Ահարոնի սրբազան զգեստները
իրենից յետոյ թող պատկանեն իր
որդիներին, որպէսզի նրանք օրհնուեն ու
օծուեն այդ զգեստները հագած: 30 Եօթը
օր այդ զգեստները թող հագնի այն
քահանան, որը նրա որդիներից լինելով՝
պիտի փոխարինի նրան, որպէսզի
վկայութեան խորան մտնի սրբարանում
պաշտամունք կատարելու համար:
31 Կը վերցնես նուիրագործութեան
խոյը եւ դրա միսը կ'եփես մի սուրբ
վայրում: 32 Ահարոնն ու նրա որդիները
թող ուտեն խոյի մսից: Վկայութեան
խորանի դռան մօտ թող ուտեն նաեւ
սկուտեղի վրայի բաղարջ հացերը եւ
33 այն բաները, որ իրենց ձեռնադրու-
թեան եւ սրբագործութեան որպէս քա-
ւութիւն ծառայեցին: Որեւէ օտարական
թող դրանցից չուտի, որովհետեւ դրանք
սրբութիւններ են: 34 Եթէ նուիրագոր-
ծութեան զոհի մսից ու հացից մնայ
մինչեւ առաւօտ, ապա մնացորդները
կ'այրես կրակով. այն թող չուտուի,
որովհետեւ Տիրոջ սրբութիւնն է:
35 Այն ամէնը, ինչ կարգադրում եմ
քեզ Ահարոնի ու նրա որդիների վերա-
բերեալ, կը կատարես: Եօթը օր կը կա-
տարես նրանց օրհնութիւնը: 36 Մեղ-
քերի քաւութեան զուարակը կը զոհես
սրբութեան օրը:
37 Զոհ մատուցելու համար զոհասե-
ղանը պէտք է սրբագործուած լինի: Զո-
հասեղանը սրբագործելու համար եօթը
օր պէտք է այն մաքրես, օծես, եւ
զոհասեղանը կը լինի սրբութիւն սրբոց:
Զոհասեղանին դիպչող ամէն ոք կը
սրբագործուի»:

ԱՄԷՆՕՐԵԱՅ ԸՆԾԱՆԵՐ

(Թուոց 28. 1-8)

38 «Ահա թէ ինչ պիտի զոհես զո-
հասեղանի վրայ. մշտնջենապէս, ամէն
օր մէկ տարեկան ոչ արատաւոր երկու
գառ պիտի զոհես զոհասեղանի վրայ.
դա մշտնջենական զոհաբերութիւն է
լինելու: 39 Մի գառ կը զոհես առաւօ-
տեան, իսկ երկրորդ գառը կը զոհես
երեկոյեան: 40 Ամէն մի գառան հետ կը
բերես նաեւ շուրջ մէկուկէս լիտր
զտուած իւղ՝ շաղուած երեք կիլոգրամ
ընտիր ալիւրի հետ, ինչպէս նաեւ մէ-
կուկէս լիտր գինի իբրեւ ընծայ: 41 Երկ-
րորդ գառը կը զոհես երեկոյեան այն-
պէս, ինչպէս առաւօտեան զոհուած
գառը՝ բերելով նոյն ընծաները: Այն
որպէս անուշահոտ զոհ կը մատուցես
Տիրոջը: 42 Ձեր ազգի մէջ դա պիտի լինի
վկայութեան խորանի դռան մօտ, Տիրոջ
առաջ կատարուող մշտնջենական զոհա-
բերութիւն: Ես քեզ յայտնուելու եմ այն-
տեղ, որպէսզի խօսեմ քեզ հետ: 43 Այն-
տեղ պիտի երեւամ Իսրայէլի որդիներին
ու պիտի սրբագործուեմ իմ փառքով:
44 Ես պիտի սրբագործեմ վկայութեան
խորանն ու զոհասեղանը, պիտի սրբա-
գործեմ Ահարոնին ու նրա որդիներին,
որպէսզի նրանք ինձ համար քահանա-
յութիւն անեն: 45 Ես պիտի անուա-
նուեմ† Իսրայէլի որդիների մէջ եւ պիտի

†Եբրայերէնում՝ պիտի բնակուեմ:

լինեմ նրանց Աստուածը: 46 Նրանք
պիտի գիտենան, որ ե՛ս եմ իրենց Տէր
Աստուածը, որ իրենց հանեց Եգիպտա-
ցիների երկրից, որպէսզի նրանք տան իմ
անունը, եւ ես լինեմ իրենց Տէր
Աստուածը»:

ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԸ

(Ելք 37. 25-28)

30 «Խնկարկութեան սեղան կը պատ-
րաստես կարծր փայտից: 2 Այն կը
լինես մէկ կանգուն երկարութեամբ եւ
մէկ կանգուն լայնութեամբ. քառակուսի
թող լինի: Երկու կանգուն թող լինի դրա
բարձրութիւնը: Դրա եղջիւրաւոր ան-
կիւնները սեղանի հետ միաձոյլ թող
լինեն: 3 Մաքուր ոսկով կը պատես այն,
ինչպէս նաեւ դրա կասկարան, չորս
եզերքներն ու եղջիւրաւոր անկիւնները:
Դրա շուրջբոլորը ոսկէ պսակ կը
պատրաստես: 4 Պսակի ներքեւի մա-
սում, երկու կողմերին մաքուր ոսկուց
երկուական օղակներ կը պատրաստես:
5 Դրանք կ'ամրացնես նրա երկու կող-
մերին, որպէսզի լծակները օղակների մէջ
անցկացնելով կարելի լինի բարձրացնել
խնկարկութեան սեղանը: 6 Լծակները կը
պատրաստես կարծր փայտից ու դրանք
կը պատես ոսկով: 7 Խնկարկութեան
սեղանը կը դնես վկայութեան տապա-
նակի առջեւ գտնուող վարագոյրի դի-
մաց (վկայութեան վրայ գտնուող քա-
ւութեան դիմաց†), ուր ես երեւալու եմ
քեզ: 8 Ահարոնը դրա վրայ, իբրեւ կարգ,
ամէն առաւօտ մանր աղացած խունկ
թող ծխի. թող խունկ ծխի դրա վրայ երբ
կանթեղներն է պատրաստում: 9 Երբ Ա-
հարոնը երեկոյեան վառի կանթեղները,
Տիրոջ առաջ, խնկարկութեան սեղանի
վրայ միշտ խունկ թող ծխի: Դա նրանց
ազգի մէջ խնկարկութեան մշտնջենա-
կան կարգ թող լինի: 10 Խնկարկութեան
սեղանի վրայ օտար խունկ մի՛ ծխէք,
ողջակէզներ, ուտուելիք ու խմուելիք
ընծաներ մի՛ մատուցէք: 11 Ահարոնը
տարին մէկ անգամ խնկարկութեան սե-
ղանի եղջիւրաւոր անկիւնների վրայ
քաւութեան ծէս պէտք է անի. նա այն
պէտք է մաքրի մեղքերի քաւութեան
համար զոհուող կենդանու արեամբ:
Նրա սերունդները տարին մէկ անգամ
թող սրբագործեն այն, որովհետեւ դա
Տիրոջ սրբութիւնների սրբութիւնն է»:

†Եբրայերէնից բնագրում չիք վկայութեան վրայ գտնուող քաւութեան դիմաց:

ՍՐԲԱՐԱՆԻ ՏՈՒՐՔԸ

12 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. «Երբ Իսրայէլի որդիների թիւն
իմանալու համար մարդահամար կը
կատարես, նրանք Տիրոջը պէտք է տան
իրենց հոգու փրկագինը՝ ըստ իրենց
անձերի թուի: Մարդահամարի ժամա-
նակ մահացութեան դէպքեր չպիտի լի-
նեն: 13 Մարդահամարի ենթարկուող-
ները պէտք է փրկագին վճարեն
սրբարանի երկդրամեանի կէսը: Երկ-
դրամեանը քսան դանգի է հաւասար:
Երկդրամեանի կէսը թող լինի Տիրոջը
հասանելիք տուրքը: 14 Քսան տարեկան
եւ աւելի բարձր տարիք ունեցող բոլոր
նրանք, ովքեր կ'անցնեն մարդահա-
մարով, Տիրոջը հասանելիք տուրքը
պէտք է վճարեն: 15 Մեծահարուստը
թող չաւելացնի, իսկ աղքատը թող
չպակասեցնի իսրայէլացիների՝ Տիրոջը
որպէս տուրք հասանելիք կէսդրամեա-
նը, որպէսզի դա ձեզ համար քաւութիւն
լինի: 16 Որպէս տուրք Տիրոջ հասանե-
լիք դրամը կը վերցնես Իսրայէլի որդի-
ներից եւ այն կը յատկացնես վկայու-
թեան խորանի սպասաւորութեանը: Դա
Տիրոջ առաջ Իսրայէլի որդիների համար
յիշատակ կը լինի ի քաւութիւն նրանց»:

ՊՂՆՁԷ ԱՒԱԶԱՆԸ

17 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ա-
սաց. 18 «Պղնձէ լուացարան պատրաս-
տի՛ր: Պղնձից չինի՛ր նրա պատուան-
դանը, որպէսզի լուացուեն նրա մէջ: Այն
կը դնես վկայութեան խորանի ու
զոհասեղանի միջեւ: Դրա մէջ ջուր կը
լցնես: 19 Ահարոնն ու նրա որդիները
այդ ջրով կը լուանան իրենց ձեռքերն ու
ոտքերը. 20 երբ մտնեն վկայութեան
խորանը, ջրով թող լուացուեն, որպէսզի
չմեռնեն: Կամ երբ պաշտամունք կա-
տարելու եւ Տիրոջը ողջակէզներ մա-
տուցելու համար մօտենան զոհասե-

ղանին, 21 թող լուանան իրենց ձեռքերն ու ոտքերը, որպէսզի չմեռնեն: Դա նրանց համար, նրա եւ նրանից յետոյ գալիք նրա յետնորդների համար յաւիտենական կարգ թող լինի»:

ՕՄՈՒԹԵԱՆ ԻՒՂԸ

22 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 23 *«Վերցրո՛ւ անուշահոտ համեմունքներ. զմռնենու*[†] *հինգ հարիւր սիկղ*[‡] *ընտիր ծաղիկներ, դրա կէսի չափ՝ երկու հարիւր յիսուն սիկղ անուշաբոյր կինամոն, երկու հարիւր յիսուն սիկղ անուշաբոյր խնկեղէգ,* 24 *հինգ հարիւր սիկղ սրբարանի հիրիկ եւ ձիթապտղի շուրջ վեց լիտր ձէթ:* 25 *Դրանցից կը պատրաստես սուրբ օծութեան համար իւղ այնպէս, ինչպէս վարպետ իւղագործները ձէթ են պատրաստում: Այն սուրբ օծութեան համար իւղ թող լինի:* 26 *Դրանով կ'օծես վկայութեան խորանը, վկայութեան տապանակը,* 27 *զոհասեղանն ու նրա ամբողջ սպասքը, աշտանակն ու նրա ամբողջ սպասքը, խնկարկութեան սեղանը,* 28 *ողջակէզների սեղանն ու նրա ամբողջ սպասքը, աւազանն ու նրա պատուանդանը:* 29 *Կը սրբագործես դրանք, եւ դրանք կը լինեն սրբութիւնների սրբութիւն: Ամէն ոք, որ դիպչի դրան, կը մաքրուի:* 30 *Կ'օծես Ահարոնին ու նրա որդիներին, կը սրբագործես նրանց, որպէսզի նրանք ինձ համար քահանայութիւն անեն:* 31 *Կը խօսես Իսրայէլի որդիների հետ ու կ'ասես. "Այս իւղը ձեր սերունդների մէջ ձեր սուրբ օծութեան համար թող լինի:* 32 *Մարդու մարմնին թող չքսուի այն: Ձեզ համար նոյն բաղադրութեամբ նման բան չպատրաստէք, որովհետեւ դա սրբութիւն է եւ ձեզ համար սրբութիւն էլ թող մնայ:* 33 *Ով այդպիսի բան պատրաստի, եւ ով դրանից օտարականի տայ, թող վերանայ իր ժողովրդի միջից"»:*

ԽՈՒՆԿԸ

34 *Տէրն ասաց Մովսէսին. «Վերցրո՛ւ անուշաբոյր համեմունքներ. ստաշէս, եղնգաքար, անուշաբոյր քաղբան եւ մաքուր կնդրուկ: Դրանք թող քաշով իրար հաւասար լինեն:* 35 *Դրանք իրար խառնելով՝ մաքուր, սուրբ խունկ կը պատրաստես, ինչպէս վարպետ իւղագործներն են պատրաստում:* 36 *Դրանք մանր կ'աղաս եւ կը դնես վկայութեան դիմաց՝ վկայութեան խորանի մէջ, ուր պիտի երեւամ քեզ: Ձեր պատրաստած այդ խունկը ձեզ համար սրբութիւնների սրբութիւն թող լինի:* 37 *Ձեզ համար նոյն բաղադրութեամբ խունկ մի՛ պատրաստէք, որովհետեւ դա ձեզ համար սրբութիւն պիտի լինի Տիրոջ առաջ:* 38 *Այն մարդը, որ հոտոտելու համար այս բաղադրութեամբ խունկ կը պատրաստի, կը վերանայ իր ժողովրդի միջից»:*

ՍՐԲԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐԸ

(Ելք 35. 30-36. 1)

31 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 2 *«Ես, ահա, Ցուղայի ազգից ընտրեցի Բեսելիէլին, որը որդին է Ուրիի, իսկ սա՝ որդին Ովրի:* 3 *Ես նրան լցրի ամէն գործի համար անհրաժեշտ գիտութեան, հանճարի եւ իմաստութեան աստուածային ոգով,* 4 *որպէսզի նա մտածի ու ստեղծագործի,* 5 *որպէսզի մշակի ոսկին, արծաթն ու պղինձը, մանի կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւը, զբաղուի արհեստի կատարելութիւն հանդիսացող ակնագործութեամբ, նաեւ ատաղձագործութեամբ, որ գործի դնի ամէն մի արհեստ:* 6 *Ահա ես նրան օգնական եմ տալիս Դանի ցեղից Աքիսամի որդի Եղիաբին: Ամէն մի ուշիմ մարդու հոգու մէջ դրի շնորհ, որպէսզի անի այն, ինչ պատուիրել եմ քեզ, այսինքն՝* 7 *պատրաստի վկայութեան խորանը, կտակարանների տապանակն ու նրա կափարիչը, խորանի ամբողջ սպասքն ու զոհարանը,* 8 *զոհասեղանն ու նրա ամբողջ սպասքը, սուրբ աշտանակն ու նրա բոլոր զարդերը, խնկարկութեան սեղանը,* 9 *ողջակէզների սեղանն ու նրա բոլոր մասերը, աւազանն ու նրա պատուանդանը,* 10 *ծիսակատարութեան զգեստները, Ահարոն քահանայի սրբազան զգեստներն ու նրա որդիների՝ ինձ համար քահանայութիւն անելու զգեստները,* 11 *օծութեան իւղն ու սրբարանի խնկի համեմունքները: Այս բոլորը, ինչ մի անգամ պատուիրել եմ քեզ, կը պատրաստես»:*

ՇԱԲԱԹԸ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՕՐ

12 *Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Իսրայէլի որդիներին հաղորդի՛ր հետեւեալը. "Զգո՛յշ եղէք, պահեցէ՛ք իմ շաբաթ օրերը,* 13 *որովհետեւ դա ձեր սերնդի մէջ իմ ու ձեր միջեւ դրուած պայմանն է, որպէսզի ճանաչէք, թէ ե՛ս եմ ձեզ սրբագործող Տէրը:* 14 *Կը պահէք շաբաթ օրերը, որովհետեւ Տիրոջ եւ ձեզ համար դա սրբութիւն է: Ով այն պղծի, թող մահուան դատապարտուի: Ամէն ոք, ով այդ օրը գործ կ'անի, թող վերանայ իր ժողովրդի միջից:* 15 *Վեց օր գործ կ'անես, իսկ եօթներորդ օրը Տիրոջ սուրբ հանգստեան շաբաթ օրն է: Ով որ շաբաթ օրը գործ կ'անի, թող մահուան դատապարտուի:* 16 *Իսրայէլի որդիները թող պահեն շաբաթ օրերը, որպէսզի դրանք ձեր սերնդի մէջ ի կատար ածուեն որպէս յաւիտենական ուխտ* 17 *իմ ու Իսրայէլի որդիների միջեւ: Դա իմ յաւիտենական պայմանն է, որովհետեւ Տէրը վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, իսկ եօթներորդ օրը դադար տուեց եւ հանգստացաւ"»:*

18 *Երբ Աստուած Սինա լեռան վրայ աւարտեց իր խօսքը, Մովսէսին տուեց վկայութեան երկու տախտակները՝ Աստծու մատով գրուած քարէ տախտակները:*

ՈՍԿԷ ՀՈՐԹԸ

(Բ Օր. 9. 6-29)

32 *Ժողովուրդը տեսնելով, որ Մովսէսն ուշացաւ լեռից իջնելու, հաւաքուեց Ահարոնի մօտ ու ասաց նրան. «Դե՛հ, մեզ առաջնորդող աստուածներ ստեղծի՛ր, որովհետեւ չգիտենք, թէ ինչ եղաւ այն մարդը՝ Մովսէսը, որ մեզ Եգիպտոսից դուրս բերեց»:* 2 *Ահարոնն ասաց նրանց. «Ձեր կանանց, ձեր տղաների ու աղջիկների ականջներից հանեցէ՛ք ոսկէ գինդերը եւ բերէ՛ք ինձ»:* 3 *Բոլորը իրենց ականջներից հանեցին ոսկէ գինդերը եւ բերեցին տուեցին Ահարոնին:* 4 *Ահարոնը դրանք առնելով նրանցից՝ կաղապարի մէջ ձուլեց եւ կերտեց ձուլածոյ մի հորթ: Նրանք ասացին. «Սա՛ է քո աստուածը, Իսրայէ՛լ, որ քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից»:* 5 *Երբ Ահարոնն այդ տեսաւ, կուռքի առաջ զոհասեղան շինեց: Ահարոնը յայտարարեց. «Վաղը Տիրոջ տօնն է»:* 6 *Առաւօտեան վեր կենալով՝ նա ողջակէզներ արեց եւ փրկութեան զոհեր մատուցեց: Ժողովուրդը նստեց, որ կերուխում անի, ապա վեր կացաւ, որ պարի:*

7 *Տէրը Մովսէսին ասաց. «Շո՛ւտ արա, գնա իջի՛ր այստեղից, որովհետեւ անօրինութիւն է կատարում քո ժողովուրդը, որին դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից:* 8 *Նրանք շատ շուտ շեղուեցին այն ճանապարհից, որ ցոյց տուեցիր նրանց: Նրանք ձուլածոյ հորթ են կերտել, երկրպագում են նրան, զոհեր մատուցում ու ասում. "Սա՛ է քո աստուածը, Իսրայէ՛լ, որ քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից"»:*

9 *Տէրն ասաց Մովսէսին. «Ես տեսնում եմ, որ այս ժողովուրդը կամակոր է:* 10 *Արդ, թո՛յլ տուր ինձ, որ նրանց վրայ թափեմ իմ զայրոյթը՝ կոտորեմ նրանց, իսկ քեզ մեծ ազգ դարձնեմ»:* 11 *Մովսէսն աղաչեց իր տէր Աստծուն՝ ասելով. «Տէ՛ր, ինչո՞ւ ես այդպէս խիստ զայրանում քո ժողովրդի վրայ, որին քո մեծ զօրութեամբ ու հզօր բազկով դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից:* 12 *Այնպէս չլինի, որ եգիպտացիներն ասեն. "Չար մտադրութեամբ դուրս բերեց նրանց, որպէսզի լեռների վրայ կոտորի, երկրի երեսից վերացնի նրանց": Մեղմացրո՛ւ քո զայրոյթը, հրաժարուի՛ր քո ժողովրդին չարիք պատճառելուց:* 13 *Յիշի՛ր քո ծառաներ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, որոնց անձովդ երդուեցիր, խօսեցիր նրանց հետ՝ ասելով. "Երկնքի աստղերի չափ պիտի բազմացնեմ ձեր սերունդը": Եւ այն երկիրը, որ խոստացար տալ նրանց զաւակներին, նրանք յաւիտեան պիտի տիրանան դրան»:* 14 *Եւ Տէրը*

†Զմուռս արտադրող ծառ:

‡Մանրութեան չափ, որ հաւասար է 6,8 գրամի:

հրաժարուեց պատճառել այն չարիքները, որոնցով սպառնում էր պատժել ժողովրդին:
15 Մովսէսը վերադարձաւ եւ իջաւ լեռից: Նրա ձեռքին էին վկայութեան երկու տախտակները: Քարէ տախտակների երկու երեսին՝ այս ու այն կողմից գրուած էր: 16 Տախտակներն Աստծու գործն էին, իսկ տախտակների վրայ գրուած գիրը Աստծու արձանագրած գիրն էր: 17 Յեսուն, լսելով աղաղակող ժողովրդի ձայնը, Մովսէսին ասաց. «Բանակատեղիից պատերազմի ձայն է գալիս»: 18 Մովսէսն ասաց. «Դա ո՛չ յաղթանակած կտրիճների ճիչ է, ո՛չ էլ պարտուած զօրքի աղաղակ: Գինուց ընդարմացած մարդկանց ձայնն է, որ լսում եմ ես»: 19 Երբ Մովսէսը մօտեցաւ բանակատեղիին եւ տեսաւ հորթն ու պարողներին, խիստ զայրացաւ, նետեց ձեռքում եղած երկու տախտակներն ու ջարդուփշուր արեց դրանք լերան ստորոտին:
20 Վերցնելով նրանց կերտած հորթը՝ Մովսէսը կրակը նետեց այն, ապա մանրեց, փոշու վերածեց, փոշին խառնեց ջրի մէջ ու տուեց ժողովրդին, որ խմի:
21 Մովսէսն ասաց Ահարոնին. «Ի՞նչ է արել քեզ այս ժողովուրդը, որ նրան այդպիսի մեծ մեղքերի մղեցիր»: 22 Ահարոնն ասաց Մովսէսին. «Մի՛ զայրացիր, տէ՛ր իմ, որովհետեւ դու ինքդ էլ գիտես, որ քո ժողովուրդը չարամէտ է: 23 Նրանք ասացին. "Մեզ համար առաջնորդող աստուածներ ստեղծիր, որովհետեւ չգիտենք, թէ ինչ պատահեց այն մարդուն՝ Մովսէսին, որը Եգիպտոսից դուրս բերեց մեզ": 24 Ես նրանց ասացի. "Եթէ որեւէ մէկը ոսկի ունի, նրանից հանեցէ՛ք դա եւ բերէ՛ք": Նրանք ինձ տուեցին ոսկին, ես այն նետեցի կրակը, եւ ահա ստացուեց այս հորթը»:
25 Մովսէսը տեսաւ, որ ժողովուրդը պատուիրանազանց է եղել, որովհետեւ Ահարոնը նրանց յանցագործութեան էր մղել ի չարախնդութիւն իրենց թշնամիների: 26 Մովսէսը, կանգնելով բանակատեղիի մուտքի մօտ, ասաց. «Ով Տիրոջն է պատկանում, ինձ մօտենայ»: Նրա շուրջը հաւաքուեցին Ղեւիի բոլոր որդիները: 27 Մովսէսը նրանց ասաց. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Իւրաքանչիւրը իր սուրը թող կապի իր ազդրին: Բանակատեղիի մի մուտքից միւսը գնացէք-եկէք, եւ ձեզնից իւրաքանչիւրը թող սպանի իր եղբօրը, իւրաքանչիւրը՝ իր ընկերոջը, իւրաքանչիւրը՝ իր մերձաւորին"»: 28 Ղեւիի որդիներն արեցին այնպէս, ինչպէս ասել էր Մովսէսը: Այդ օրը ժողովրդի միջից չուրջ երեք հազար մարդ կոտորուեց: 29 Մովսէսն ասաց նրանց. «Այսօր իւրաքանչիւրդ ձեր ձեռքով ծառայեցիք Տիրոջը. մէկն սպանեց իր որդուն, միւսն՝ իր եղբօրը, որի համար այսօր ձեզ վրայ կ'իջնի Տիրոջ օրհնութիւնը»:
30 Յաջորդ օրը Մովսէսն ասաց ժողովրդին. «Դուք մեծ մեղք էք գործել, բայց ես հիմա կը բարձրանամ Աստծու մօտ, որպէսզի ձեր մեղքերի համար քաւութիւն խնդրեմ նրանից»: 31 Մովսէսը վերադարձաւ Տիրոջ մօտ ու ասաց նրան. «Աղաչում եմ քեզ, Տէ՛ր, այդ ժողովուրդը մեծ մեղք է գործել, որովհետեւ իր համար ոսկէ աստուածներ է կերտել: Արդ, եթէ ներելու ես իրենց մեղքերը, ների՛ր, 32 իսկ եթէ չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջի՛ր քո մատեանից, ուր գրել ես ինձ»:
33 Տէրն ասաց Մովսէսին. «Ես իմ մատեանից կը ջնջեմ նրան, ով մեղանչել է իմ դէմ: 34 Բայց հիմա գնա՛, իջի՛ր եւ այդ ժողովրդին առաջնորդի՛ր այն վայրը, որի մասին ասել եմ քեզ: Իմ հրեշտակը կը գնայ քո առաջից: Այն օրը, սակայն, երբ պիտի այցելեմ ձեզ, նրանց մեղքերը իրենց վրայ պիտի դնեմ»: 35 Եւ Տէրը ժողովրդին պատուհասեց այն հորթի համար, որ կերտել էր Ահարոնը:

ՄԵԿՆՈՒՄԻ ՀՐԱՄԱՆ

33 Տէրն ասաց Մովսէսին. «Ելէ՛ք այստեղից դու եւ քո ժողովուրդը, որին դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից, եւ գնացէ՛ք այն երկիրը, որ երդուել եմ տալ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին՝ ասելով՝. "Ձեր սերնդին եմ տալու այն": 2 Ես քո առաջից կ'ուղարկեմ իմ հրեշտակին, որ հալածի քանանացիներին, ամորհացիներին, քետացիներին, փերեզացիներին, գերգեսացիներին, խեւացիներին ու յեբուսացիներին†, 3 քեզ կը տանեմ այն երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում: Բայց ես, կամակո՛ր ժողովուրդ, քեզ հետ դուրս չպիտի ելնեմ, որպէսզի ճանապարհին քեզ չկոտորեմ»:
4 Ժողովուրդը, լսելով այդ խիստ խօսքերը, մեծ սուգ արեց, սգաւորի զգեստներ հագաւ, ոչ ոք իր վրայ զարդ չկրեց: 5 Տէրն ասաց Մովսէսին. «Դու իսրայէլացիներին ասա՛. "Դուք կամակոր ժողովուրդ էք: Զգո՛յշ եղէք, թէ չէ մի այլ պատուհաս էլ կը բերեմ ձեր գլխին եւ կը կոտորեմ ձեզ: Արդ, հանեցէ՛ք ձեր չքեղ պատմուճանները, ձեր զարդերը, որպէսզի ցոյց տամ ձեզ, թէ ինչ եմ անելու ձեզ"»: 6 Իսրայէլացիները Քորեբ լեռան մօտ հանեցին իրենց զարդերն ու պատմուճանները:

ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԸ

7 Մովսէսն իր վրանը խփեց բանակատեղիից դուրս՝ առանձին մի տեղում: Դա կոչուեց Վկայութեան վրան: Ով ինչ հայցում էր Տիրոջից, գալիս էր բանակատեղիից դուրս գտնուող Վկայութեան վրանը: 8 Երբ Մովսէսը դէպի վրանն էր գնում, ողջ ժողովուրդը՝ ամէն մէկն իր վրանի դռան մօտ կանգնած, ուշադիր դիտում էր նրան. նրանք հայեացքով հետեւում էին Մովսէսին, մինչեւ որ նա գնում մտնում էր իր վրանը: 9 Երբ Մովսէսը մտնում էր վրանը, ամպի մի սիւն էր իջնում ու կանգնում վրանի դռան մօտ, եւ Տէրը խօսում էր Մովսէսի հետ: 10 Ողջ ժողովուրդը, տեսնելով վրանի դռան մօտ կանգնած ամպի սիւնը, ոտքի էր կանգնում, իւրաքանչիւրը երկրպագում էր իր վրանի դռան մօտ: 11 Տէրը Մովսէսի հետ խօսում էր դէմ յանդիման, ինչպէս մէկը կը խօսէր իր բարեկամի հետ, եւ ապա Մովսէսը վերադառնում էր բանակատեղի: Բայց նրա սպասաւոր Յեսուն՝ Նաւէի որդին, վրանից դուրս չէր գալիս:

ՏԷՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԼԻՆԵԼ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

12 Մովսէսն ասաց Տիրոջը. «Ահա ինձ ասում ես. "Տա՛ր այս ժողովրդին", բայց դու չես յայտնել, թէ ում ես ուղարկելու ինձ հետ: Դու ինձ ասացիր՝ "Քեզ բոլորից բարձր եմ դասում, դու վայելում ես իմ շնորհը": 13 Արդ, եթէ քո շնորհին եմ արժանացել ես, ինձ յայտնապէս երեւայ, որպէսզի իմանամ, թէ ինչով եմ արժանացել քո շնորհին, իմանամ, որ քո այս ժողովուրդը մեծ ազգ է լինելու»: 14 Տէրն ասաց. «Ես ինքս պիտի գնամ քո առաջից ու պիտի տեղաւորեմ քեզ»: 15 Մովսէսն ասաց նրան. «Եթէ դու ինքդ մեզ հետ չգնաս, ուրեմն ինձ այստեղից մի՛ հանիր: 16 Եւ ինչի՞ց պիտի իմացուի, թէ ես ու քո ժողովուրդն, իրօք, քո շնորհին ենք արժանացել: Եթէ դու մեզ հետ գնաս, ես ու քո ժողովուրդը կը փառաւորուենք շատ աւելի, քան երկրի վրայ եղած բոլոր ազգերը»:
17 Տէրն ասաց Մովսէսին. «Այդ քո ասածն էլ կը կատարեմ, որովհետեւ դու իմ շնորհին ես արժանացել, եւ քեզ աւելի եմ ճանաչում, քան մնացած բոլորին»: 18 Մովսէսն ասաց. «Ցո՛յց տուր ինձ քո փառքը»: 19 Տէրն ասաց. «Ես իմ փառքով կ'անցնեմ քո առաջից, քո առաջ կը կոչեմ իմ անունը՝ Տէր, կ'ողորմեմ նրան, ում ողորմելու եմ, եւ կը գթամ նրան, ում գթալու եմ»: 20 Եւ Տէրն աւելացրեց. «Դու չես կարող տեսնել իմ երեսը, որովհետեւ մարդ չի կարող տեսնել իմ երեսն ու կենդանի մնալ»: 21 Տէրը շարունակեց. «Ահա իմ առաջ մի տեղ կայ, կանգնի՛ր այս ժայռի վրայ: 22 Երբ ես անցնեմ իմ փառքով, քեզ կը դնեմ ժայռի ծերպի մէջ եւ իմ ձեռքով կը ծածկեմ քեզ, մինչեւ որ անցնեմ: 23 Իմ ձեռքը քո վրայից կը վերցնեմ, եւ ապա դու ինձ կը տեսնես թիկունքից: Բայց իմ դէմքը քեզ չի երեւայ»:

†Գրաբար բնագրում այս ցեղանունները դրուած են եզակի թուով:

ՆՈՐ ՔԱՐԷ ՏԱԽՏԱԿՆԵՐԸ
(Բ Օր. 10. 1-15)

34 Տէրն ասաց Մովսէսին. «Դու ինքդ նախկին տախտակների նման քարէ երկու տախտակներ կոփի՛ր եւ ինձ մօտ՝ լեռը բարձրացի՛ր: Տախտակների վրայ կը գրեմ այն պատգամները, որ արձանագրուած էին քո ջարդուփշուր արած նախկին տախտակների վրայ: 2 Պատրա՛ստ եղիր վաղը, որ վաղ առաւօտեան բարձրանաս Սինա լեռը եւ այնտեղ ինձ սպասես լերան գագաթին: 3 Հետդ ոչ ոք թող չբարձրանայ, ոչ ոք ամենեւին չերեւայ լերան վրայ: Արջառ ու ոչխար չարածեն լերան մօտ»: 4 Մովսէսը նախկինների նմանութեամբ քարէ երկու տախտակներ կոփեց: Առաւօտեան վեր կենալով՝ Մովսէսը բարձրացաւ Սինա լեռը, ինչպէս Տէրն էր հրամայել նրան: Մովսէսն իր հետ վերցրեց քարէ երկու տախտակները: 5 Տէրն իջաւ ամպի մեջ, կանգնեց այնտեղ՝ նրա դիմաց, ու կոչեց իր անունը՝ Տէր: 6 Տէրն անցաւ Մովսէսի առաջ՝ ասելով. «Տէր Աստուած եմ, գթացող եւ ողորմած, համբերատար, բարեգութ ու ճշմարիտ, որ 7 արդարութիւնն է պաշտպանում, իր ողորմածութիւնն է ցուցաբերում հազարաւոր սերունդների հանդէպ, վերացնում անօրէնութիւնները, անիրաւութիւններն ու մեղքերը, մեղաւորին չի ազատում պատժից, հայրերի գործած մեղքերը բարդում է որդիների եւ որդիների որդիների վրայ մինչեւ երրորդ ու չորրորդ սերունդը»: 8 Մովսէսն իսկոյն խոնարհուելով՝ երկրպագութիւն արեց 9 ու ասաց. «Տէ՛ր, եթէ քո շնորհին եմ արժանացել, ուրեմն իմ Տէրը մեզ հետ թող գնայ, որովհետեւ այս ժողովուրդը կամակոր է: Դու կը ներես մեր անօրէնութիւններն ու մեղքերը, եւ մենք կը լինենք քոնը»:

ՈՒԽՏԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ
(Ելք 23. 14-19, Բ Օր. 7. 1-5, 16. 1-17)

10 Տէրն ասաց Մովսէսին. «Ահա ես քո ու ամբողջ ժողովրդի առաջ քեզ հետ ուխտ եմ դնում: Ես այնպիսի զարմանահրաշ գործեր պիտի անեմ, որ ամբողջ երկրի վրայ եւ բոլոր ազգերի մէջ չեն կատարուել: Ամբողջ ժողովուրդը, նրանց թւում նաեւ դու, ականատես պիտի լինէք Տիրոջ գործերին: Որովհետեւ ձեզ համար ես զարմանահրաշ գործեր պիտի անեմ: 11 Ըստ ամենայնի դու ուշադիր եղիր, թէ ինչ եմ կարգադրելու քեզ այսօր: Ես, ահա, ձեզնից հեռացնելու եմ ամորհացիներին, քանանացիներին, քետացիներին, փերեզացիներին, խեւացիներին, գերգեսացիներին ու յեբուսացիներին: 12 Զգո՛յշ եղիր, ուխտ չկապես այն երկրի բնակիչների հետ, ուր մուտք ես գործելու: Չլինի թէ գայթակղուէք: 13 Քարուքանդ կ'անէք նրանց բագինները, ջարդուփշուր կ'անէք նրանց արձանները, ամբողջովին կը կտրէք նրանց սրբազան անտառները† եւ կրակի կը տաք նրանց աստուածների արձանները: 14‡ Օտար աստուածների չերկրպագէք, որովհետեւ Տէր Աստուածը նախանձոտ է, այո՛, Աստուած նախանձոտ է: 15 Չլինի թէ ձեր մարդիկ ուխտ կապեն այդ երկրի բնակիչների հետ եւ նրանց աստուածներին պաշտամունք մատուցելով՝ պոռնկանան, զոհեր մատուցեն նրանց աստուածներին, եւ նրանց հրաւէրն ընդունելով՝ չլինի թէ դու էլ ուտես նրանց զոհաբերած անասունների մսից, 16 քո տղաներին ամուսնացնես նրանց դուստրերի հետ, քո դուստրերին կնութեան տաս նրանց տղաներին, քո դուստրերը նրանց աստուածներին պաշտամունք մատուցելով՝ պոռնկանան ու պոռնկացնեն նաեւ քո՛ տղաներին՝ աստուածներին պաշտամունք մատուցելով: 17 Քեզ համար աստուածների կուռքեր չձուլես:

18 Կը պահես Բաղարջակերաց տօնը. նոր բերք քաղելու ամսին, ինչպէս պատուիրել եմ քեզ, եօթը օր բաղարջ հաց կ'ուտես, քանի որ նոր բերք քաղելու ամսին ես դուրս եկել Եգիպտոսից:

19 Ինձ պիտի պատկանեն բոլոր մարդկանց անդրանիկ արու զաւակները, 20 նաեւ՝ քո անասունների՝ արջառի ու ոչխարի առաջնածին արուները: Էշի

†Եբրայերէնն ունի՝ Աշերա, որ նշանակում է աստուածուհու կոթող:

‡Եբրայերէնում հակառակ իմաստն ունի:

առաջնածինին կը փոխանակես գառով, իսկ եթէ չփոխանակես այն, ինձ կը տաս դրա փոխարժէքը: Քո որդիների բոլոր անդրանիկների փրկագինը կը տաս ինձ: Իմ առաջ ձեռնունայն չերեւաս:

21 Վեց օր կ'աշխատես, իսկ եօթներորդ օրը կը հանգստանաս: Կը հանգստանաս նաեւ ցանքի ու հնձի ժամանակ:

22 Եօթնօրեակի տօնը ինձ համար կը կատարես ցորենի հնձի սկզբում, իսկ բերքահաւաքի տօնը՝ տարուայ կէսին:

23 Տարին երեք անգամ քո բոլոր արու երեխաները† թող ներկայանան Իսրայէլի տէր Աստծուն, 24 որովհետեւ ես ազգեր պիտի հեռացնեմ քո մօտից, պիտի ընդարձակեմ քո սահմանները, ոչ ոք աչք չպիտի ունենայ քո երկրի վրայ, եթէ տարուայ մէջ երեք անգամ ներկայանաս տէր Աստծուն:

25 Ինձ զոհաբերած անասունի արիւնը թթխմորով հացի վրայ չթափես, եւ զատկի տօնի զոհը մինչեւ առաւօտ չմնայ:

26 Քո երկրի առաջին բերքը կը տանես քո տէր Աստծու տունը:

Գառը իր մօր կաթի մէջ չեփես»:

27 Տէրն այնուհետեւ ասաց Մովսէսին «Գրի՛ առ այդ պատգամները, որովհետեւ այդ խօսքերով եմ ես ուխտ կապում քեզ հետ եւ Իսրայէլի հետ»:

28 Մովսէսը Տիրոջ հետ էր քառասուն օր ու քառասուն գիշեր: Նա հաց չկերաւ, ջուր չխմեց եւ տախտակների վրայ գրի առաւ ուխտի խօսքերը՝ տասը պատուիրանները:

ՄՈՎՍԷՍՆ ԻՋՆՈՒՄ Է ՍԻՆԱ ԼԵՌԻՑ

29 Երբ Մովսէսն իջնում էր Սինա լեռից, ուխտի երկու տախտակները Մովսէսի ձեռքին էին: Լեռից իջնելիս Մովսէսը չգիտէր, որ Տիրոջ հետ խօսելու պատճառով իր երեսը ճառագում է: 30 Ահարոնն ու բոլոր իսրայէլացիները, տեսնելով Մովսէսի ճառագող երեսը, վախեցան մօտենալ նրան: 31 Մովսէսը կանչեց նրանց. Ահարոնն ու ժողովրդի բոլոր առաջնորդները գնացին նրա մօտ, եւ Մովսէսը խօսեց նրանց հետ: 32 Ապա նրան մօտեցան բոլոր իսրայէլացիները, եւ Մովսէսը պատմեց նրանց այն ամէնը, ինչ Տէրը խօսել էր իր հետ Սինա լեռան վրայ: 33† Երբ Մովսէսը նրանց հաղորդած իր խօսքը վերջացրեց, երեսը ծածկեց քողով: 34 Երբ Մովսէսը Տիրոջ հետ խօսելու համար ներկայանում էր նրան, հանում էր քողը մինչեւ այնտեղից հեռանալը: Եւ երբ հեռանում էր այնտեղից, նա բոլոր իսրայէլացիներին հաղորդում էր այն, ինչ Տէրը հրամայել էր իրեն: 35 Իսրայէլացիները տեսնում էին, որ Մովսէսի երեսը ճառագում է: Մովսէսն այն ժամանակ քողով ծածկում էր երեսը մինչեւ խօսելու համար նրա մօտ մտնելը:

ՇԱԲԱԹԸ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՕՐ

35 Մովսէսը հաւաքեց ամբողջ իսրայէլացի ժողովրդին ու ասաց նրանց. «Ահա այն բաները, որ Տէրն ասաց, որ պէտք է անել. 2 "Վեց օր պիտի աշխատէք, իսկ եօթներորդ օրը պիտի հանգստանաք. շաբաթ օրը սուրբ է՝ Տիրոջ հանգստեան օրը: Ով որ այդ օրն աշխատի, կը մեռնի: 3 Շաբաթ օրը ձեր բոլորի տներում կրակ չպիտի վառուի, որովհետեւ ե՛ս եմ Տէրը»:

ՎՐԱՆԻ ԸՆԾԱՆԵՐ
(Ելք 25. 1-9)

4 Մովսէսը, դիմելով իսրայէլի ամբողջ ժողովրդին, ասաց. «Այս է այն պատգամը, որ պատուիրել է Տէրը՝ ասելով. 5 "Դուք ձեր մէջ տուրք հաւաքեցէ՛ք Տիրոջ համար: Ում սրտով ինչ անցնի, այն թող նուիրի Տիրոջը. ոսկի, արծաթ, պղինձ, կապոյտ, 6 ծիրանի եւ կրկնակի կարմիր գոյնի մանուած թելեր, նրբահիւս բեհեզ, այծի մազ, 7 խոյի կարմիր ներկուած մորթի, կապոյտ ներկուած մորթիներ, կարծր փայտեր, 8 լուսաւորութեան համար ձէթ, օծութեան իւղի համար համեմունքներ, խնկի բաղադրամասեր, 9 սարդիոն քարեր, զմրուխտ քարեր, վակասի եւ երկարաւուն պատմուճանի համար քարեր"»:

†Եբրայերէնում հակառակ իմաստն ունի:

†Մի քանի բնագրերում՝ տղամարդիկ:

ՏԻՐՈՋ ՎՐԱՆԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ
(Ելք 39. 32-43)

10 «Ձեր միջի խելահասները թող գան
ու անեն այն ամէնը, ինչ պատուիրել է
Տէրը. 11 վրանն ու նրա ծածկը, նրա ծո-
պաւոր վարագոյրներն ու օղակները, նրա
տախտակներն ու նիգերը, նրա մոյթերն
ու խարիսխները, 12 վկայութեան տա-
պանակը, նրա լծակները, կափարիչը,
քողը, բակի առագաստն ու նրա մոյ-
թերը, զմրուխտ քարերը, խնկերը, օծու-
թեան իւղը, 13 զոհասեղանն ու նրա ամ-
բողջ սպասքը, զոհասեղանի ամպհովա-
նին, նրա լծակներն ու ամբողջ սպասքը,
առաջաւորութեան հացը, 14 լոյսի
աշտանակն ու նրա բոլոր մասերը, նրա
կանթեղներն ու լուսաւորութեան ձէթը,
15 խնկարկութեան սեղանն ու նրա
լծակները, օծութեան իւղը, խնկերի
համեմունքները, վրանի դռան վարա-
գոյրը, 16 ողջակէզների զոհասեղանն ու
նրա պղնձէ կասկարան, նրա լծակներն
ու ամբողջ սպասքը, 17 աւազանն ու
նրա պատուանդանը, բակի առագաստը,
նրա մոյթերն ու խարիսխները, 18 բակի
դռան առագաստը, վրանի ցցերն ու
բակի ցցերը, դրանց պարանները, 19 այն
զգեստները, որոնցով սրբազան պաշ-
տամունք պիտի կատարեն սրբարանում,
Ահարոն քահանայի սրբազան զգեստ-
ներն ու Ահարոնի որդիների քահանա-
յութեան զգեստները»:

ԸՆԴԱՆԵՐԻ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄ

20 Բոլոր իսրայէլացիները գնացին
Մովսէսի մօտից, 21 եւ ամէն մէկը բերեց
իր սրտից բխածը. նրանք Տիրոջն էին
նուիրաբերում այն ամէնը, ինչ անհրա-
ժեշտ էր վկայութեան խորանի, նրա
կահաւորանքի, բոլոր սրբազան զգեստ-
ների համար: 22 Բոլոր տղամարդիկ, ում
մտքով ինչ որ անցնում էր, բերեցին:
Ոմանք՝ իրենց կանանց թանկագին
քարերը, գինդերը, մատանիները, ծա-
մակալները, մանեակներն ու ամէն տե-
սակ ոսկէ զարդեր: Բոլոր տղամարդիկ
իրենց ունեցած ոսկէ իրերը նուիրա-
բերում էին Տիրոջը: 23 Ամէն տղամարդ,
ում մօտ կային կապոյտ, ծիրանի եւ
կարմիր գոյնի մանուած թելեր, նրբա-
հիւս բեհեզ, այծի մազ, խոյերի կարմիր
ներկուած մորթիներ, կապոյտ ներկուած
մորթիներ, բերում էր: 24 Նուիրա-
բերողները արծաթէ ու պղնձէ նուէրներ
էին բերում Տիրոջը: Ում մօտ կահոյքի
համար պիտանի կարծր փայտ կար,
բերում էր: 25 Բոլոր շնորհալի կանայք
իրենց ձեռքով կապոյտ, ծիրանի ու
կարմիր գոյնի թելեր ու բեհեզ էին
հիւսում եւ նուէր բերում: 26 Բոլոր
կանայք յօժարակամ այծերի մազ էին
մանում հմտութեամբ: 27 Ցեղապետները
բերում էին զմրուխտէ քարեր, վակասի
ու լանջապանակի համար անհրաժեշտ
քարեր, 28 խնկերի համար համեմունք-
ներ, լուսաւորութեան համար ձէթ ու
օծութեան իւղ: 29 Բոլոր տղամարդիկ ու
կանայք յօժարակամ գալիս էին կատա-
րելու այն բոլոր գործերը, որ Տէրը
պատուիրել էր անել Մովսէսի միջոցով:
Իսրայէլացիները նուէրներ էին մա-
տուցում Տիրոջը:

ՏԻՐՈՋ ՎՐԱՆԻ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ
(Ելք 31. 1-11)

30 Մովսէսն ասաց իսրայէլացիներին.
«Տեսէ՛ք, Աստուած ընտրել է յատկա-
պէս Յուդայի ցեղից Բեսելիէլին՝ Ուրիի
որդուն, որը որդին էր Ովրի: 31 Աս-
տուած նրան լցրել է ամէն ինչի համար
անհրաժեշտ աստուածային իմաստու-
թեան ոգով, հանճարով եւ գիտութեամբ,
32 որպէսզի նա ամէն մի գործ կատարի
հմտութեամբ, մշակի ոսկին, արծաթն ու
պղինձը, 33 տաշի թանկարժէք քարերը,
մշակի փայտը եւ ամէն մի գործ
կատարի վարպետօրէն, որովհետեւ Տէրը
նրան իմաստութիւն է պարգեւել, 34
ինչպէս որ Դանի ցեղից Աքիսամի որդի
Եղիաբին, 35 որոնց իմաստուն միտք
պարգեւեց, որպէսզի սրանք սովորեն ու
կատարեն սուրբ գործի համար անհրա-
ժեշտ ամէն տեսակ գործեր՝ ոստայ-
նանկութիւն անեն կապոյտ, ծիրանի ու
կարմիր ներկուած թելերով եւ բեհեզով,
նկարեն, քանդակեն»:

36 Բեսելիէլը, Եղիաբն ու ընդունակ
բոլոր տղամարդիկ, որոնց Տէրը գործի
մէջ խելամուտ լինելու համար իմաս-
տութիւն եւ գիտութիւն էր պարգե-
ւել, ըստ ամենայնի կատարեցին սրբա-
րանը հանդերձաւորելու աշխատանք-
ները այնպէս, ինչպէս հրամայել էր
Տէրը:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲԵՐՈՒՄ Է ՇԱՏ ԸՆԴԱՆԵՐ

2 Մովսէսը կանչեց Բեսելիէլին, Ե-
ղիաբին ու բոլոր նրանց, ովքեր ըն-
դունակ էին գործ անելու, եւ որոնց
Աստուած իմաստութեան ոգի էր պար-
գեւել, բոլորին, ովքեր յօժար կամքով
ուզում էին ձեռնարկել ու աւարտել այդ
գործը: 3 Նրանք Մովսէսից ստացան
այն բոլոր նուէրները, որ իսրայէ-
լացիները բերել էին սրբարանը հան-
դերձաւորելու համար: Ամէն առաւօտ
նրանք ընդունում էին նաեւ նուիրա-
տուների բերած նուէրները:
4 Գալիս էին սրբարանի գործերը
կատարող բոլոր վարպետները, որպէսզի
իւրաքանչիւրն ըստ իր մասնագիտու-
թեան գործադրի իր վարպետութիւնը:
5 Նրանք խօսեցին Մովսէսի հետ ու
ասացին. «Ժողովուրդը շատ աւելին է
բերում, քան անհրաժեշտ է Աստծու
հրամայած գործը կատարելու համար»:
6 Մովսէսը կարգադրեց բանակատե-
ղիում յայտարարութիւն անել եւ ասել.
«Տղամարդ լինի թէ կին, սրբարանի
համար այլեւս նուէրներ չպատրաստի»:
Դրանից յետոյ ժողովրդին արգելեցին
նուէրներ բերել: 7 Բերում էին միայն
իրենց արդէն իսկ գործածները, որպէսզի
աւարտեն բոլոր գործերը: Եւ մարդիկ
դադարեցին բերելուց†:

ՏԻՐՈՋ ԽՈՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՆԸ
(Ելք 26. 1-37)

8 Գործի ընդունակ բոլոր մարդիկ
արհեստաւորների հետ Նրբահիւս բեհե-
զից, կապոյտ, ծիրանի ու կրկնակի կար-
միր կտաւից պատրաստեցին տասչեր-
տանի խորանը, այն զարդարեցին
ասեղնագործ քերովբէներով: 9 Մէկ
շերտի երկարութիւնը քսանութ կան-
գուն էր, իսկ լայնութիւնը՝ չորս կան-
գուն: Բոլոր շերտերի չափը նոյնն էր:
10 Հինգ շերտերը միացուած էին միւս
հինգ շերտերին, իսկ միւս հինգ շերտերն
էլ միացուած էին միւս հնգին: 11 Նա
կապոյտ ճարմանդներ դրեց մի շերտի
եզրին՝ միացման տեղում: 12 Նոյնն արեց
միացուող երկրորդ շերտի արտաքին
կցուածքի վրայ: 13 Յիսուն ճարմանդ
դրեց մի շերտի եւ յիսուն ճարմանդ էլ
դրեց երկրորդ կցուածքի շերտի կողմից,
որպէսզի ճարմանդներից իւրաքանչիւրը
միանայ միւսին: Պատրաստեց ոսկէ
յիսուն օղակներ եւ դրանցով շերտերը
միացրեց միմեանց: Ստացուեց մի
խորան:
14 Խորանի համար այծի մազից հիւ-
սուած ծածկեր պատրաստեց. տասնմէկ
շերտից շինեց դրանք: 15 Մէկ շերտի
երկարութիւնը երեսուն կանգուն էր, իսկ
լայնութիւնը՝ չորս կանգուն: Տասնմէկ
շերտերի չափը նոյնն էր: 16 Հինգ շեր-
տերը միացրեց առանձին, եւ վեց շեր-
տերն էլ՝ առանձին: 17 Միացման տեղում,
շերտերի եզրին դրեց յիսուն ճարմանդ
եւ յիսուն ճարմանդ էլ դրեց երկրորդ
կցուածքի շերտի եզրին: 18 Պատրաստեց
յիսուն պղնձէ օղակներ, եւ դրանք իրար
կցեց, որ վրանը միակտուր դառնայ:
19 Խորանի ծածկը պատրաստեց խոյերի
կարմիր ներկուած մորթիներից, իսկ կա-
պոյտ մորթուց պատրաստուած ծածկը
դրեց վերին կողմից:
20 Խորանի երկու մոյթերը պատ-
րաստեց կարծր փայտից եւ դրեց ուղ-
ղահայեաց դիրքով: 21 Մէկ մոյթի եր-
կարութիւնը տասը կանգուն էր, իսկ
հաստութիւնն ու լայնութիւնը՝ մէկուկէս
կանգուն: 22 Ամէն մի մոյթի վրայ դրեց
իրար ագուցուած երկու ծղնի: Այդպէս
պատրաստեց նաեւ խորանի բոլոր մոյ-
թերը: 23 Խորանի համար մոյթեր
պատրաստեց. քսան մոյթ դրեց
հարաւային կողմում եւ այդ քսան մոյ-
թերի համար պատրաստեց քառասուն
խարիսխ. 24 մէկ մոյթի երկու կողմերի
համար՝ երկու խարիսխ եւ միւս մոյթի
երկու կողմերի համար էլ՝ երկու

†Եբրայերէն՝ մի բան էլ աւելացաւ:

խարիսխ: 25 Վրանի երկրորդ՝ հիւսիսային կողմի համար պատրաստեց քսան մոյթ 26 եւ արծաթէ քառասուն խարիսխ. մէկ մոյթի համար՝ երկու խարիսխ, եւ միւս մոյթի համար էլ՝ երկու խարիսխ: 27 Վրանի յետեւի՝ ծովահայեաց կողմում դրեց վեց մոյթ 28 եւ երկու մոյթ էլ դրեց վրանի անկիւններին՝ յետեւի կողմից: 29 Ներքեւի կողմից նրանք իրար հաւասար էին: Նոյն ձեւով հաւասար էին գլխի՝ իրար միացուած կողմից: Նոյն ձեւով չինեց նաեւ երկու անկիւնների մոյթերը: 30 Այսպիսով ստացուեց ութ մոյթ: Դրանց խարիսխներն արծաթից էին, ընդամէնը տասնվեց խարիսխ. մէկ մոյթի համար՝ երկու խարիսխ, եւ երկու խարիսխ էլ՝ միւս մոյթի համար: 31 Կարծր փայտից նիգեր պատրաստեց. հինգ նիգ՝ վրանի մի կողմի մի մոյթի համար, 32 հինգ նիգ՝ վրանի երկրորդ կողմի միւս մոյթի համար, եւ հինգ նիգ՝ վրանի թիկունքի՝ ծովահայեաց կողմի մոյթի համար: 33 Մէջտեղի նիգը մոյթերի մի ծայրից մինչեւ միւսն անցկացնելով՝ միացրեց իրար: 34 Երկու մոյթերը† պատեց ոսկով: Ոսկուց պատրաստեց նրանց երկու օղակները, որոնց մէջ մտնում էին նիգերը: Նիգերը պատեց ոսկով:

35 Կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից վարագոյր պատրաստեց: Այն զարդարեց ասեղնագործուած քերովբէով 36 եւ ամրացրեց կարծր փայտից շինուած չորս մոյթերի վրայ: Դրանց խոյակները ոսկուց էին, իսկ չորս խարիսխները՝ արծաթից: 37 Վկայութեան խորանի դռան առագաստը պատրաստեց կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից եւ նրբահիւս բեհեզից՝ վրան ասեղնագործուած քերովբէ: 38 Շինեց խորանի հինգ մոյթերն ու դրանց օղակները, դրանց խոյակները պատեց ոսկով: Դրանց պղնձէ խարիսխները հինգն էին:

†Ըստ Ի2 29-ում տրուած կարգադրութեան, ոսկով պէտք է պատուէին բոլոր մոյթերը, մինչդեռ այստեղ ոսկով են պատուում միայն երկու մոյթերը:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 25. 10-22)

37 Բեսելիէլը տապանակը կառուցեց կարծր փայտից. երկուսուկէս կանգուն էր դրա երկարութիւնը, մէկուկէս կանգուն էր դրա լայնութիւնը, մէկուկէս կանգուն էր դրա բարձրութիւնը: Այն ներսից ու դրսից պատեց ոսկով, 2 դրա վրայ շուրջանակի ոսկէ պսակ շինեց: 3 Չորս ոսկէ օղակներ ձուլեց դրա չորս կողմերի համար. երկու օղակներ՝ մի կողմից, եւ երկու օղակներ՝ միւս կողմից: Դրանք հագցրեց լծակներին: 4 Լծակները շինեց կարծր փայտից եւ դրանք պատեց ոսկով: 5 Լծակները տապանակի կողքերից մտցրին օղակների մէջ, որպէսզի դրանցով բարձրացնեն այն:

6 Տապանակի կափարիչը պատրաստեցին մաքուր ոսկուց. երկուսուկէս կանգուն էր դրա երկարութիւնը, մէկուկէս կանգուն՝ դրա լայնութիւնը: 7 Կափարիչի երկու ծայրերի երկու քերովբէները պատրաստեց ոսկուց. կատարեալ մի գործ շինեց դրանք: 8 Մի քերովբէն դրուած էր կափարիչի մի ծայրին, իսկ միւս քերովբէն՝ կափարիչի միւս ծայրին: Երկու քերովբէները միաձոյլ էին կափարիչի երկու ծայրերի հետ: 9 Քերովբէները դէպի վեր էին տարածել իրենց թեւերը եւ իրենց թեւերով հովանի էին անում կափարիչի վրայ: Կափարիչի վրայ քերովբէների դէմքերը իրար դէմ դիմաց էին:

ԱՍՏՎՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՀԱՅԻ ՍԵՂԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 25. 23-30)

10 Առաջաւորութեան սեղանը պատրաստեց մաքուր ոսկուց†: Դրա համար ոսկէ չորս օղակներ ձուլեց. երկուսը՝ մի կողմի, եւ երկուսը՝ միւս կողմի համար: Պատրաստեց նաեւ լծակներ, որպէսզի դրանցով բարձրացնեն սեղանը: Տապանակի ու սեղանի լծակները պատրաստեց կարծր փայտից եւ դրանք պատեց ոսկով: Երկու կանգուն էր սեղանի երկարութիւնը, մէկուկէս‡ կանգուն՝ դրա

†Եբրայերէն՝ *սատիմ փայտից:*

‡Իե 23-ում՝ *մէկ:* Այստեղ էլ *մէկուկէս*-ը պէտք է գրքագրել *մէկ,* ինչպէս որ է եբրայերէն բնագրում:

լայնութիւնը, եւ մէկուկէս կանգուն՝ դրա բարձրութիւնը: 11 Այն պատեց մաքուր ոսկով եւ դրա համար շուրջանակի ոսկէ պսակներ պատրաստեց: 12 Դրա վրայ շուրջանակի, մէկ թզաչափ բարձրութեամբ շրջանակ դրեց եւ դրա շրջանակի չորս կողմը ոսկէ պսակներ դրեց: 13 Սեղանի համար ոսկէ չորս օղակներ պատրաստեց եւ օղակներն ամրացրեց չորս անկիւններին, 14 որոնք նրա չորս ոտքերի վրայ էին՝ պսակի տակ: Օղակները լծակների համար իբրեւ ագոյց ծառայեցին, որպէսզի մարդիկ լծակներից բռնած բարձրացնեն սեղանը: 15 Կարծր փայտից երկու լծակներ պատրաստեց, որպէսզի դրանցով բարձրացնեն սեղանը, եւ դրանք պատեց ոսկով: 16 Մաքուր ոսկուց պատրաստեց սեղանի անօթները՝ դրա խնկամաններն ու սկուտեղները, դրա գաւաթներն ու սկիհները, որոնցով գինի են մատուցում:

ԱՇՏԱՆԱԿԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 25. 31-40)

17 Ոսկուց պատրաստեց լոյսի միաձոյլ աշտանակը՝ բունն ու նրա երկու կողմերի ճիւղերը†: Աշտանակի բնից բաժանւում էին ճիւղերը՝ երեքը մի կողմից, եւ երեքը միւս կողմից՝ իրար հաւասար: Ոսկուց պատրաստեց դրա բոլոր միաձոյլ, ընկուզաձեւ ծայրեր ունեցող լուսակալները, դրա ճրագակալները, որոնց վրայ ճրագամաններն են դրւում, եւ աշտանակի եօթներորդ կանթեղը, որը բնի ամենավերին մասում է դրւում: Մաքուր ոսկուց պատրաստեց դրա վրայ գտնուող եօթը ճրագամանները, ունելիներն ու մոխրակալները: Քանդակազարդ արեց աշտանակը, բունն ու նրա ճիւղերը, նրա սկահակները: Գնդիկներն ու շուշանաձեւ ծաղիկները միաձոյլ էին: 18 Վեց ճիւղեր էին բաժանւում նրա երկու կողմերից. երեք ճիւղը՝ աշտանակի մի կողմից, եւ երեք ճիւղը՝ աշտանակի միւս կողմից: 19 Մի ճիւղն ունէր գնդիկից ու շուշանաձեւ ծաղկից բաղկացած երեք ընկուզաձեւ սկահակ, եւ միւս ճիւղն էլ ունէր գնդիկից ու շուշանաձեւ ծաղկից բաղկացած երեք ընկուզաձեւ սկահակ: Այսպէս բոլոր վեց ճիւղերը բաժանուած էին աշտանակի երկու կողմերից: 20 Աշտանակի բնի վրայ քանդակուած էին ընկուզաձեւ չորս սկահակներ իրենց գնդիկներով ու շուշանաձեւ ծաղիկներով: 21 Երկու ճիւղերի տակ մէկական գնդիկ ու ծաղիկ՝ բնին ձուլուած: Այսպէս էին բնից բաժանուած վեց ճիւղերը: 22 Դրանց գնդիկներն ու ծաղիկները միաձոյլ էին՝ բոլորը քանդակուած մի կտոր մաքուր ոսկուց: 23 Դրա եօթը ճրագամանները, ունելիներն ու մոխրակալները մաքուր ոսկուց էին: 24 Մի տաղանդ† մաքուր ոսկուց պատրաստեց աշտանակն ու դրա բոլոր մասերը:

ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 30. 1-5)

25 Նա ոսկեպատ զոհասեղանը պատրաստեց կարծր փայտից: Այն քառակուսի էր. հինգ‡ կանգուն էր երկարութիւնը, հինգ‡ կանգուն՝ լայնութիւնը, եւ երեք§ կանգուն՝ բարձրութիւնը: Դրա եղջիւրաւոր անկիւնները զոհասեղանի հետ միաձոյլ էին: 26 Մաքուր ոսկով պատեց այն, ինչպէս նաեւ դրա կափարիչը, բոլոր կողերն ու եղջիւրաւոր անկիւնները: 27 Դրա չորս կողմերի համար պատրաստեց ոսկէ պսակներ, պսակների տակ, երկու կողմերին երկու ոսկէ օղակներ ամրացրեց, որպէսզի այն բարձրացնելիս լծակները մտցնեն այդ օղակների մէջ: 28 Լծակները պատրաստեց կարծր փայտից եւ դրանք պատեց ոսկով:

ՕԾՈՒԹԵԱՆ ԻՒՂԻ ԵՒ ԽՆԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
(Ելք 30. 22-38)

29 Նա վարպետ իւղագործների՝ նման պատրաստեց օծութեան սուրբ իւղը եւ խնկերի համեմունքները:

†Եբրայերէն՝ *չիք բունն ու նրա երկու կողմերի ճիւղերը:*

†*Մի տաղանդը հաւասար է շուրջ 30 կիլոգրամի:*

‡ Եբրայերէն՝ *մէկ:*

§ Եբրայերէն՝ *երկու:*

ԶՈՀԱՍԵՂԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 27. 1-8)

38 Զոհասեղանը պղնձապատեց այն բուրվառների պղնձով, որոնք Կորխի ժողովրդի հետ ապստամբած մարդկանց ձեռքին էին†: Կարծր փայտից պատրաստեց այն: Զոհասեղանը քառակուսի էր. հինգ կանգուն էր դրա երկարութիւնը, հինգ կանգուն՝ լայնութիւնը, իսկ երեք կանգուն՝ բարձրութիւնը: 2 Զոհասեղանի չորս կողմը պատրաստեց եղջիւրաւոր անկիւններ, որոնք զոհասեղանի հետ միաձոյլ էին: Նա դրանք պատեց պղնձով: 3 Նա պատրաստեց զոհասեղանի ամբողջ սպասքը՝ խարիսխները, կափարիչը, տաշտերը, մեծ պատառաքաղներն ու բուրվառները: Դրա ամբողջ սպասքը պատրաստեց պղնձից: 4 Նա բուրվառներից պատրաստեց զոհասեղանի ցանցաւոր կասկարաները, որոնք շրջանակի տակից հասնում էին մինչեւ զոհասեղանի մէջտեղը: 5 Զոհասեղանի կասկարայի չորս կողմերին ամրացրեց պղնձէ չորս օղակներ, որպէսզի լծակներն անցկացնեն այդ օղակների մէջ: 6 Լծակները շինեց կարծր փայտից եւ դրանք պատեց պղնձով: 7 Լծակներն անցկացրին զոհասեղանի կողքերին գտնուող օղակների մէջ, որպէսզի զոհասեղանը դրանցով բարձրացնեն: Այն ամբողջովին պատրաստուած էր տախտակներով‡:

ՊՂՆՁԷ ՍԵՂԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 30. 18)

8 Պղնձէ աւազանն ու դրա պղնձէ պատուանդանը պատրաստեց ուխտաւոր այն կանանց հայելիների պղնձից, որոնք վրանը խփած օրը վկայութեան խորանի դռան մօտ էին հաւաքուել:

ԲԱԿԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Ելք 27. 9-19)

9 Կառուցեց մի բակ, որ դէպի հարաւ էր նայում: Բակի առագաստները նրբահիւս բեհեզից էին՝ հարիւր կանգուն երկարութեամբ: 10 Դրանց սիւները քսան հատ էին, դրանց պղնձէ խարիսխները՝ քսան հատ: Սիւների խարիսխներն ու խոյակները արծաթից էին: 11 Հիւսիսային կողմի առագաստն ունէր հարիւր կանգուն երկարութիւն: Դրա սիւները քսան հատ էին, պղնձէ խարիսխները՝ քսան հատ: Սիւների խարիսխներն ու խոյակները արծաթից էին: 12 Մովահայեաց բակի առագաստները յիսուն կանգուն էին: Դրանց սիւները տասը հատ էին, խարիսխները՝ տասը հատ: Սիւների խարիսխներն ու խոյակները արծաթից էին: 13 Արեւելեան կողմի բակի առագաստը յիսուն կանգուն էր, 14 յետեւի կողմի բակի առագաստները տասնհինգ կանգուն էին: Դրանց սիւները երեք հատ էին, խարիսխները՝ երեք հատ: 15 Բակի դռան միւս կողմի առագաստները տասնհինգ կանգուն էին: Դրանց սիւները երեք հատ էին, խարիսխները՝ երեք հատ: 16 Խորանի չորս կողմերի բոլոր առագաստները նրբահիւս բեհեզից էին: 17 Սիւների խարիսխները պղնձից էին, սիւների դրուագներն ու դրանց գալարազարդերը՝ արծաթից, դրանց խոյակները՝ արծաթապատ, բակի բոլոր սիւները՝ արծաթապատ‡: 18 Բակի դռան վարագոյրները կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից էին եւ նրբահիւս բեհեզով զարդարուած: Քսան կանգուն էր դրանց երկարութիւնը, տասնհինգ կանգուն՝ բարձրութիւնը: Դրանց լայնութիւնը հաւասար էր բակի առագաստների լայնութեանը: 19 Դրանց մոյթերը չորս հատ էին, դրանց պղնձէ խարիսխները՝ չորս հատ: Դրանց գալարազարդերը արծաթից էին, իսկ դրանց խոյակները՝ արծաթապատ: 20 Բակի ու խորանի չորս կողմերի բոլոր ցցերը պղնձից էին:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

21 Ահա վկայութեան խորանի կառուցման պայմանը†. կառուցել այնպէս, ինչպէս Աստուած հրամայել էր Մովսէսին, որպէսզի ղեւտացիները Ահարոն քահանայի որդի Իթամարի միջոցով այնտեղ պաշտամունք կատարեն: 22 Յուդայի ցեղից Բեսելիէլը՝ Ուրիի որդին, որը որդին էր Ովրի, արեց այնպէս, ինչպէս Տէրը հրամայել էր Մովսէսին: 23 Բեսելիէլին օգնում էր Դանի ցեղից Աքիսամի որդի Եղիաբը, որը կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւ եւ նրբահիւս բեհեզ գործածելով՝ կատարում էր ոստայնանկութեանը, ասեղնագործութեանն ու նկարչութեանը վերաբերող աշխատանքներ:

24 Սրբարանի բոլոր գործերի համար օգտագործուած ոսկու կշիռը, որը գոյացած էր նուէրներից, եղաւ քսանինը տաղանդ եւ եօթը հարիւր երեսուն սիկղ†՝ ըստ սրբարանի սիկղի: 25 Մարդկանցից հաւաքուած արծաթէ նուէրները կշռում էին հարիւր տաղանդ եւ հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղ‡՝ ըստ սրբարանի սիկղի. մարդագլուխ մի դրամ§՝ սրբարանի սիկղի հետ համեմատած կէս սիկղ: Քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող մարդիկ, ովքեր անցնում էին մարդահամարից, վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին: 26 Հարիւր տաղանդ* արծաթ ձուլուեց խորանի հարիւր խոյակների եւ վարագոյրի խոյակների համար. 27 հարիւր տաղանդ հարիւր խոյակի համար, մէկ տաղանդ ամէն մի խոյակի համար: 28 Հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղը** գործածուեց մոյթերի գալարազարդերի համար, ոսկով պատուեցին դրանց խոյակները եւ զարդարուեցին: 29 Նուիրուած պղինձը եօթանասուն տաղանդ եւ երկու հազար չորս հարիւր սիկղ էր***: 30 Դրանով պատրաստուեցին վկայութեան խորանի դռան խարիսխները, պղնձէ զոհասեղանը, պղնձէ զոհասեղանի կասկարան, զոհասեղանի ամբողջ սպասքը, բակի չորս կողմերի խարիսխները, բակի դռան խարիսխները, 31 խորանի բոլոր ցցերը, բակի չորս կողմի բոլոր ցցերը, եւ կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւից ու նրբահիւս բեհեզից հիւսուած պարանների ծայրերի օղերը:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԶԳԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
(Ելք 28. 1-14)

39 Պատրաստեց ծիսական զգեստներ, որպէսզի սրբարանում դրանցով պաշտամունք կատարեն: Պատրաստեց նաեւ սրբարանում Ահարոն քահանայի հագնելիք զգեստներն այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

2 Վակասը պատրաստեցին ոսկով, կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւով եւ նրբահիւս բեհեզով: 3 Ոսկու թերթերը թել-թել կտրում էին, որպէսզի դրանք կապեն կապոյտ, ծիրանի ու կարմիր ժապաւէնով եւ նրբահիւս բեհեզով: Նկարազարդ վակասի համար պատրաստեցին փոկեր, 4 որպէսզի այն ամրացնեն երկու կողմից: 5 Նոյն ձեւով՝ ոսկով եւ կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւով եւ նրբահիւս բեհեզով պատրաստեցին թիկնոցը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

6 Ոսկով ժապաւինուած եւ ընդելուզուած զմրուխտէ երկու ակնաքարերի վրայ փորագրեցին Իսրայէլի որդիների անուններն այնպէս, ինչպէս կնիքներն են փորագրում, եւ դրանք ամրացրեցին վակասի վրայ: 7 Իսրայէլի որդիների յիշատակի ակնաքարերը ամրացրին վակասի ուսին, ինչպէս որ հրամայել էր Տէրը Մովսէսին:

ԼԱՆՋԱՊԱՆԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
(Ելք 28. 15-30)

8 Լանջապանակը պատրաստեցին ոսկով, կապոյտ, ծիրանի ու կարմիր կտաւով եւ նրբահիւս բեհեզով, բանուածքով, այնպէս, ինչպէս վակասն էին պատրաստել: 9 Քառակուսի եւ կրկնածալ արեցին լանջապանակը. այն ունէր մի թզաչափ երկարութիւն եւ մի թզաչափ լայնութիւն: 10 Դրա վրայ կար ակնաքարերի չորս շարք: Առաջին շարքի վրայ կային սարդիոն, տպազիոն եւ

†Եբրայերէն բնագիրը տալիս է այլ իմաստ:
‡Եբրայերէնը յաւելեալ ունի՝ Դրա մէջը ամբողջութեամբ դատարկ էր:

‡Եբրայերէնը յաւելեալ ունի՝ Գաւիթի բոլոր սիւները իրար էին կցուած արծաթէ գօտիներով:
†Եբրայերէնում հաշիւ:

†Իմա՞ շուրջ 900 կգ:
‡Իմա՞ 3018 կգ:
§Իմա՞ հինգ գրամ արծաթ:
*Իմա՞ 3000 կգ:
**Եօթանասնից բնագրում՝ հազար հինգ հարիւր: Իմա՞ ընդամէնը շուրջ 18 կգ:
***Իմա՞ շուրջ 2125 կգ:

զմրուխտ: Դա առաջին շարքն էր:
11 Երկրորդ շարքը նռնաքար էր, շափիւղայ եւ յասպիս: 12 Երրորդ շարքը սուտակ էր, մեղեսիկ եւ ագատ: 13 Չորրորդ շարքը ոսկեքար էր, եղնգաքար եւ բիւրեղ՝ ոսկով պատուած եւ ընդելուզուած: 14 Ակնաքարերն ըստ Իսրայէլի որդիների անունների էին: Նրանց տասներկու անունները գրուած եւ փորագրուած էին ըստ տասներկու ցեղերից իւրաքանչիւրի անունների: 15 Լանջապանակի երկու օղակների վրայ ամրացրին մաքուր ոսկուց պատրաստուած հիւսկէն շղթաներ: 16 Պատրաստեցին ոսկէ երկու կոճակներ եւ ոսկէ երկու օղակներ. ոսկէ երկու օղակներն ամրացրին լանջապանակի վերին երկու ծայրերին: 17 Հիւսկէն շղթաները լանջապանակի երկու կողմերից ամրացրին երկու օղակների մէջ, իսկ երկու շղթաների ծայրերը մտցրին երկու անցքերի մէջ: Լանջապանակը դրեցին վակասի ուսերին՝ երեսի կողմից իրար դէմ դիմաց: 18 Պատրաստեցին ոսկէ երկու այլ օղակներ եւ լանջապանակի ներսի կողմից ամրացրին վակասին կցուած մասի երկու ծայրերին: Պատրաստեցին ոսկէ երկու այլ օղակներ եւ դրեցին վակասի երկու ուսերին՝ ներսի կողմից՝ վակասի առջեւի միացման տեղում: 19 Լանջապանակի օղակների ու վակասի օղակների միջով կապոյտ ժապաւէն անցկացնելով՝ այդ երկուսը միացրին իրար այնպէս, որ լանջապանակն ու վակասը միմեանցից չառանձնանան, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՅԼ ԶԳԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
(Ելք 28. 31-43)

20 Վակասից բացի ամբողջութեամբ կապոյտ ժապաւէններով հիւսուած կտաւից ներքին պատմուճաններ պատրաստեցին: 21 Դրանց օձիքը հիւսածոյ գործուածքի ճիշտ մէջտեղից էր, օձիքի բացուածքը շուրջանակի չքանդուող եզերք ունէր: 22 Դրանց քղանցքներին մանուած կապոյտ, ծիրանի ու կարմիր ժապաւէններով եւ նրբահիւս բեհեզով նռան ծաղկաբողբոջներ գործեցին:
23 Մաքուր ոսկուց զանգակներ պատրաստեցին եւ զանգակները ներքին պատմուճանների քղանցքներին, շուրջանակի, դրեցին նռնազարդերի միջեւ:
24 Նռնազարդերն ու զանգակները ներքին պատմուճանների քղանցքներին, շուրջանակի, յաջորդում էին միմեանց: Քահանաները պաշտամունք կատարելիս այդ զգեստները պէտք է հագնէին, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:
25 Նրանք բեհեզէ հիւսածոյ զգեստներ պատրաստեցին Ահարոնի ու նրա որդիների համար, 26 ինչպէս նաեւ բեհեզէ ապարօշներ, բեհեզէ խոյր, 27 բեհեզէ անդրավարտիք: 28 Նրանց համար պատրաստեցին բեհեզից եւ մանուած կապոյտ, ծիրանի ու կարմիր ժապաւէններով հիւսուած գօտիներ՝ զարդանախշ մի գործ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: 29 Սուրբ պսակի թիթեղը պատրաստեցին մաքուր ոսկուց եւ դրա վրայ փորագրեցին «Սրբութիւն Տեառն»:
30 Այն կապեցին կապոյտ մի ժապաւէնով, որպէսզի վերեւի կողմից ամրացնեն խոյրի վրայ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

ԳՈՐԾԻ ԱՒԱՐՏԸ
(Ելք 35. 10-19)

31 Աւարտուեց վկայութեան խորանի ամբողջ գործը: Իսրայէլի որդիներն արեցին ամէն ինչ. ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին, այդպէս էլ արեցին: Նուէրներից աւելացած ոսկին նրանք վերածեցին սպասքի, որոնցով Տիրոջ առաջ պաշտամունք են կատարում: 32 Մովսէսի մօտ, խորան բերեցին զգեստները, վրանի ծածկն ու դրա բոլոր մասերը, դրա ճարմանդները, փայտերը, միջաձողերը, դրա մոյթերը, վերջինիս խարիսխները, 33 խոյերի կարմիր ներկուած, մշակուած եւ անմշակ մորթիները, կապոյտ վարագոյրները, 34 կտակարանների տապանակը ծածկող վարագոյրը, 35 լծակները, կափարիչը, առաջաւորութեան սեղանն ու դրա ամբողջ սպասքը, առաջաւորութեան հացը, 36 սուրբ աշտանակն ու դրա ճրագամանները, կանթեղներն ու դրա բոլոր

մասերը, լուսաւորութեան ձէթը, 37 ոսկէ սեղանը, օծութեան իւղը, խնկերի համեմունքները, 38 վրանի դռան վարագոյրը, վրանը, 39 պղնձէ զոհասեղանը, դրա լծակներն ու ամբողջ սպասքը, աւազանն ու դրա պատուանդանը, բակի առաստը, դրա սիւներն ու խարիսխները, 40 վրանի դռան եւ բակի դռան վարագոյրները, պարաններն ու ցցերը, վկայութեան խորանի ամբողջ սպասքը, 41 սրբարանում պաշտամունք կատարելու սրբազան զգեստները, Ահարոն քահանայի սրբազան զգեստներն ու նրա որդիների քահանայութեան համար նախատեսուած զգեստները: 42 Ինչ Տէրը պատուիրել էր Մովսէսին, Իսրայէլի որդիներն այդ ամէնը կատարեցին:
43 Մովսէսը տեսաւ բոլոր գործերը, որ նրանք կատարել էին այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: Նրանք ճիշտ նոյն ձեւով էին կատարել: Եւ Մովսէսն օրհնեց նրանց:

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԻ ԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ

40 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Առաջին ամսի առաջին օրը կը կանգնեցնես վկայութեան խորանը, 3 այնտեղ կը դնես վկայութեան տապանակը եւ տապանակը կը ծածկես վարագոյրով: 4 Ներս կը տանես սեղանը եւ դրա վրայ կը դասաւորես հացը†: Ներս կը տանես աշտանակը, դրա վրայ կը դնես նրա ճրագամանները: 5 Կը տեղաւորես ոսկէ սեղանը, որպէսզի խունկ ծխես վկայութեան տապանակի առաջ: Վարագոյրի քօղը կ'իջեցնես վկայութեան խորանի դռան վրայ: 6 Ողջակէզների զոհասեղանը կը դնես վկայութեան խորանի դռան մօտ եւ շուրջանակի կ'օծես վրանն ու այն ամէնը, ինչ նրա մէջ է. դրանց չորս բոլորը կը սրբես: 7 Աւազանը կը դնես վկայութեան խորանի ու զոհասեղանի միջեւ եւ դրա մէջ ջուր կը լցնես: 8 Բակը շուրջանակի կ'օծես եւ կ'իջեցնես բակի դռան քօղը: 9 Կ'առնես օծութեան իւղը, կ'օծես խորանն ու այն ամէնը, ինչ դրա մէջ է. կը սրբագործես դա ու դրա ամբողջ սպասքը. այնուհետեւ դրանք սրբութիւն կը լինեն: 10 Կ'օծես ողջակէզների զոհասեղանն ու դրա ամբողջ սպասքը: 11 Կը սրբագործես զոհասեղանը, եւ դա սրբութիւնների սրբութիւն կը լինի: Կ'օծես աւազանն ու նրա պատուանդանը եւ կը սրբագործես այն: 12 Ահարոնին ու նրա որդիներին կը բերես վկայութեան խորանի դուռը եւ նրանց կը լուանաս ջրով: 13 Ահարոնին կը հագցնես սրբազան պատմուճանը, կ'օծես նրան, կը սրբագործես նրան, եւ նա ինձ համար քահանայութիւն կ'անի: Կը բերես նրա որդիներին, նրանց կը հագցնես պատմուճաններ, կ'օծես նրանց այնպէս, ինչպէս օծեցիր նրանց հօրը, եւ նրանք ինձ համար քահանայութիւն կ'անեն: Նրանց քահանայական օծումը իրենց ցեղերի մէջ յաւիտենական թող լինի»:
14 Մովսէսն արեց այն ամէնը, ինչ Տէրը պատուիրել էր իրեն. նա հէնց այդպէս էլ արեց: 15 Եգիպտացիների երկրից նրանց դուրս գալու երկրորդ տարուայ առաջին ամսին, ամսուայ սկզբին վրանը կանգնեցուեց: 16 Մովսէսը կառուցեց վրանը, դրեց դրա խարիսխները եւ կանգնեցրեց դրա մոյթերը, դրանց վրայ ամրացրեց խոյակները, 17 տեղադրեց միջաձողերը, տաշերտանի վարագոյրը տարածեց վրանի վրայ: Վրանի ծածկոցները գցեց դրա վրայ եւ ամրացրեց վրանի ծածկերը վերեւից†, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: 18 Առաւ օրէնքի քարէ տախտակները, դրեց տապանակի մէջ, նիգերն անցկացրեց տապանակի վրայ եւ կափարիչը դրեց տապանակի վրայից: 19 Տապանակը տարաւ խորանի ներսը, վրան քաշելով վարագոյրը՝ ծածկեց վկայութեան տապանակը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: 20 Սեղանը դրեց վկայութեան խորանի մէջ՝ խորանի հիւսիսային կողմից, խորանի վարագոյրից դուրս: 21 Դրա վրայ Տիրոջ առաջ դասաւորեց առաջաւորութեան հացը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: 22 Աշտանակը դրեց վկայութեան խորանի մէջ, սեղանի

†Այլ բնագրերում՝ կահերը:

†Այս համարի տեղադրեց միջաձողերը եւ ամրացրեց վրանի ծածկոցները հատուածները բացակայում են այլ բնագրերում:

դիմաց, խորանի հարաւային կողմից:
23 *Ճրագամանները դրեց դրա վրայ, Տիրոջ առաջ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:* 24 *Ոսկէ սեղանը դրեց վկայութեան խորանի մէջ, վարագոյրի դիմաց:* 25 *Համեմունքներից պատրաստուած խունկը դրեց դրա վրայ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:* 26 *Նա կախեց խորանի դռան վարագոյրը:*
27 *Ողջակէզների զոհասեղանը դրեց վկայութեան խորանի դռան մօտ եւ դրա վրայ ողջակէզներ ու զոհեր մատուցեց, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:*
28 *Աւազանը դրեց վկայութեան խորանի ու զոհասեղանի միջեւ եւ դրա մէջ ջուր լցրեց,* 29 *որպէսզի Մովսէսը, Ահարոնն ու նրա որդիները դրանով լուանան իրենց ձեռքերն ու ոտքերը,* 30 *երբ վկայութեան խորանը մտնեն կամ երբ զոհասեղանին մօտենան պաշտամունք կատարելու: Նրանք լուացւում էին դրա միջի ջրով, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:* 31 *Բակ կառուցեց խորանի ու զոհասեղանի չորս կողմը եւ քաշեց բակի դռան վարագոյրը: Այսպիսով Մովսէսն աւարտեց իր ամբողջ գործը:*

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԸ՝ ԼՑՈՒԱԾ ՏԻՐՈՋ ՓԱՌՔՈՎ

32 *Ամպը ծածկեց վկայութեան խորանը, եւ խորանը լցուեց Տիրոջ փառքով:*
33 *Մովսէսը չէր կարողանում մտնել վկայութեան խորան, որովհետեւ ամպը ծածկել էր այն, եւ խորանը լցուած էր Տիրոջ փառքով:*
34 *Երբ ամպը վերանում էր խորանի վրայից, Իսրայէլի որդիները չէում էին իրենց ամբողջ բազմութեամբ,* 35 *իսկ երբ ամպը չէր վերանում, չէին չէում մինչեւ այն օրը, որ ամպը վերանար,* 36 *որովհետեւ Իսրայէլացիների ողջ երթի ընթացքում Տիրոջ ամպը ցերեկները կանգնում էր խորանի վրայ, իսկ գիշերները Իսրայէլացիների առաջ դրա վրայ կրակ էր վառվում:*

ՂԵՒՏԱԿԱՆ

Ներածութիւն

«Ղեւտական»-ի առաջին համարը մեզ ցոյց է տալիս Աստծուն, որը հանդիպման վրանից կանչում է Մովսէսին՝ խօսելու նրա հետ: Գրքի ամբողջ երկայնքին Աստուած Մովսէսին հաղորդում է իսրայէլացիներին սահմանուած բազմաթիւ օրէնքներ ու կանոններ այն խոստումով, որ «նա, ով կատարի դրանք, կ'ապրի դրանցով» (18, 5, տե՛ս Հռոմ. 10, 5): Այլ կերպ ասած՝ Աստուած բացատրում է իսրայէլացիներին, թէ ինչպէս պէտք է վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսանում հաղորդուելու իր հետ, եւ թէ ինչպէս պէտք է գործել, որպէսզի «վրանն» իսկապէս լինի «հանդիպման» վայր. հարկաւոր է, որ նրանք, ովքեր զոհեր են մատուցում, մատուցեն ըստ սահմանուած կանոնների, որ քահանաները յարգուեն եւ, փոխադարձաբար, իրենք էլ ազնուութեամբ վարուեն, որ ժողովրդի իւրաքանչիւր անդամը հնարաւորին չափ հեռու մնայ մարմնական անմաքրութիւնից եւ բարոյական ու ծիսական կարգի անհաւատարմութիւնից: Սրբութեան Աստուածը, սիրոյ եւ կեանքի Աստուածը ուզում է իր ժողովրդին մասնակից դարձնել իր սրբութեանը, որպէսզի նա էլ իր հերթին դառնայ կրողը կեանքի, սիրոյ եւ սրբութեան: Ահա այս ոգով է, որ նա իսրայէլացիներին տալիս է իր պատուիրանը, որի հիմնական առանձնայատկութիւնը Յիսուս յիշեցրեց իր հետեւեալ խօսքով. «Ձեզնից իւրաքանչիւրը պիտի սիրի իր ընկերոջը, ինչպէս իր անձը» (19, 8, տե՛ս Մատթ. 5, 22-39):

Այս օրէնքները, որոնք կարող են զարմանալի թուալ ժամանակակից ընթերցողին, յիշեցնում են բոլոր երկրների եւ բոլոր ժամանակների հաւատացեալներին, որ Աստծու հետ հաղորդութիւնը կենսական անհրաժեշտութիւն է մարդու համար:

ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

1 Տէրը կանչեց Մովսէսին, խօսեց նրա հետ վկայութեան խորանից՝ ասելով. «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց. 2 "Եթէ ձեզնից որեւէ մէկը անասուններից զոհ է մատուցելու, ապա խոշոր կամ մանր եղջերաւոր անասուն թող մատուցի:

3 Եթէ նա արու արջառ է մատուցելու որպէս ողջակէզ, ապա այն թող լինի ոչ արատաւոր: Վկայութեան խորանի դռան մօտ թող բերի այն, որպէսզի Տիրոջ համար ընդունելի լինի որպէս քաւութիւն նրան: 4 Նա իր ձեռքը թող դնի զոհուող անասունի գլխին, որպէսզի այն Տիրոջ համար ընդունելի լինի, իսկ իր անձի համար՝ քաւութիւն: 5 Զուարակը թող մորթեն Տիրոջ առաջ: Քահանաները՝ Ահարոնի որդիները, արիւնը թող բերեն ու շաղ տան վկայութեան խորանի դռան մօտ գտնուող զոհասեղանի շուրջը: 6 Ողջակիզուելիք անասունը մորթազերծ անելուց յետոյ թող բաժանեն մասերի: 7 Քահանաները՝ Ահարոնի որդիները, զոհասեղանի վրայ կրակ թող վառեն եւ փայտ դիզեն կրակի վրայ: Ահարոնի որդիները՝ քահանաները, 8† կտրտուած մասերը, գլուխն ու ճարպը թող դնեն զոհասեղանի կրակի համար դիզուած փայտի վրայ: 9 Փորոտիքն ու ոտքերը թող լուանան ջրով, քահանաներն այդ բոլորը թող դնեն զոհասեղանի վրայ, որովհետեւ ողջակիզուող զոհը Տիրոջ համար անուշահոտ է: 10 Իսկ եթէ Տիրոջ համար ողջակիզուող մանր եղջերաւոր անասունը գառ կամ ուլ է, թող այն լինի արու եւ ոչ արատաւոր: 11 Զոհ մատուցողն իր ձեռքը թող դնի նրա գլխին, այն թող մորթեն զոհասեղանի հիւսիսային կողմում, Տիրոջ առաջ, եւ Ահարոնի որդիները՝ քահանաները, արիւնը թող շաղ տան զոհասեղանի շուրջը: 12 Զոհը թող բաժանեն մասերի, նոյնպէս գլուխն ու ճարպը. քահանաները թող այն դնեն զոհասեղանի կրակի համար դիզուած փայտի վրայ, 13 իսկ փորոտիքն ու ոտքերը թող լուանան ջրով: Թող քահանան այդ ամէնը բերի ու դնի զոհասեղանի վրայ, որովհետեւ ողջակիզուող զոհը Տիրոջ համար անուշահոտ է:

14 Իսկ եթէ Տիրոջ համար ողջակիզուողը թռչուն է, ապա տատրակ կամ աղաւնի թող լինի զոհաբերուողը: 15 Քահանան այն թող բերի զոհասեղանի մօտ, պոկի գլուխը, թող դնի† սեղանի վրայ եւ արիւնը շաղ տայ զոհասեղանի յատակին: 16 Թող հանի նաեւ քարճիկը‡ եւ նրան կից մասերը նետի այնտեղ, ուր մոխիրն են թափում՝ զոհասեղանի մօտ: 17 Ապա թող ջարդի թեւերը, բայց երկու մասի թող չբաժանի: Քահանան այն թող դնի զոհասեղանին, կրակի համար դիզուած փայտի վրայ, որովհետեւ ողջակիզուող զոհը Տիրոջ համար անուշահոտ է»:

ՀԱՑԻ ԸՆԾԱՑ

2 «Եթէ մէկը անարիւն զոհ է մատուցում Տիրոջը, նրա մատուցածը ընտիր ալիւր թող լինի: Դրա վրայ թող իւղ լցնի ու կնդրուկ դնի: Դա անարիւն զոհաբերութիւնն է: 2 Այն թող տանի քահանաների՝ Ահարոնի որդիների մօտ, քահանան թող վերցնի իւղած ընտիր ալիւրից մի բուռ ու բերուած ամբողջ կնդրուկը եւ դրանք իբրեւ յիշատակ դնի զոհասեղանի վրայ: Դա Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ է: 3 Այդ զոհաբերութիւնից մնացածը պէտք է պատկանի Ահարոնին ու նրա որդիներին: Դա Տիրոջը մատուցուող ամենասուրբ զոհաբերութիւններից է:

4 Եթէ մէկը որպէս անարիւն զոհ է մատուցում թոնրի մէջ եփուածը, ապա Տիրոջը որպէս զոհ թող մատուցի իւղած ընտիր ալիւրից պատրաստուած բաղարջ կարկանդակ եւ իւղած բաղարջ հաց:

5 Եթէ քո զոհաբերածը տապակի մէջ եփուած բան է, ապա իւղած ընտիր ալիւրի բաղարջ թող լինի: 6 Դա մասմաս կ'անես, դրանց վրայ իւղ կը լցնես, որովհետեւ դա Տիրոջը մատուցուող զոհաբերութիւն է:

7 Եթէ քո մատուցած անարիւն զոհաբերութիւնը կասկարայի վրայ է եփուած, ապա ընտիր ալիւրը պէտք է իւղած լինի: 8 Այսպէս պատրաստուած եւ Տիրոջը մատուցուող նուիրաբերութիւնը կը տանես քահանայի մօտ: Քահանան զոհասեղանին մօտենալով՝ 9 մի կտոր թող կտրի Աստծուն իբրեւ յիշատակ նուիրաբերուող զոհից եւ այն դնի զոհասեղանին: Դա Տիրոջը մատուցուող անուշահոտ նուիրաբերութիւն է: 10 Ինչ որ մնայ այդ նուիրաբերութիւնից, թող պատկանի Ահարոնին ու նրա որդիներին: Դա ամենասուրբ զոհաբերութիւններից է:

11 Տիրոջը մատուցուող բոլոր անարիւն զոհաբերութիւնները առանց թթխմորի կը պատրաստէք: Թթխմորով ու մեղրով պատրաստուած որեւէ ընծայաբերում Տիրոջը չմատուցէք: 12 Այն կը մատուցէք Տիրոջը իբրեւ երախայրիքի ընծայաբերում, բայց զոհասեղանի վրայ այն չայրէք, ինչպէս որ այրում էք Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհը: 13 Ձեր ամէն մի զոհաբերութիւնը Տիրոջը թող աղով աղուի. ձեր զոհաբերութիւններից չպակասեցնէք Աստծու ուխտի աղը. բոլոր զոհաբերութիւնների ժամանակ ա՛ղ մատուցեցէք:

14 Եթէ Տիրոջը զոհաբերութիւն պիտի անես նոր բերքից, ապա դա թող լինի մաքրած, բոված ու խոշոր աղացած ցորենը: 15 Դրա վրայ իւղ կը լցնես ու կնդրուկ կը դնես: Դա զոհաբերութիւն է: 16 Քահանան թող վերցնի ցորենի եւ իւղի մի մասը որպէս յիշատակի բաժին, ինչպէս նաեւ ամբողջ կնդրուկը. դա Տիրոջն ընծայաբերուող զոհաբերութիւն է»:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԶՈՀԱԲԵՐՈՒՄ

3 «Եթէ Տիրոջը մատուցուող զոհաբերութիւնը փրկութեան† համար է, եւ մատուցուողը արջառ է, ապա այն, արու լինի թէ էգ, Տիրոջ առաջ պէտք է լինի ոչ արատաւոր: 2 Զոհ մատուցողն իր ձեռքը թող դնի զոհաբերուող անասունի գլխին եւ մորթի վկայութեան խորանի դռան մօտ: Ահարոնի որդիները՝ քահանաները, արիւնը թող շաղ տան ողջակէզների զոհասեղանի չորս բոլորը: 3 Փրկութեան համար զոհաբերուածից Տիրոջը թող ընծայ մատուցեն փորի ճարպաթաղանթն ու փորոտիքի ողջ ճարպը, 4 թող պոկեն երկու երիկամները, դրանց վրայի ճարպը եւ լեարդի բլթակը երիկամներով հանդերձ: 5 Ահարոնի որդիները՝ քահանաները, այն որպէս ողջակէզ թող դնեն զոհասեղանին, կրակի համար դիզուած փայտի վրայ: Դա Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհաբերութիւն է:

6 Եթէ Տիրոջը մատուցուող զոհաբերութիւնը փրկութեան համար է, եւ մատուցուողը ոչխար է, արու լինի թէ էգ, թող անարատ մատուցեն այն: 7 Եթէ զոհաբերուողը գառ է, այն թող մատուցեն Տիրոջ առաջ: 8 Զոհ մատուցողն իր ձեռքը թող դնի զոհաբերուող կենդանու գլխին եւ այն մորթի վկայութեան խորանի դռան մօտ: Ահարոնի որդիները՝ քահանաները, արիւնը թող շաղ տան զոհասեղանի շուրջը: 9 Փրկութեան համար զոհաբերուող անասունից Տիրոջը ընծայ թող մատուցեն. թող հանեն կենդանու ամբողջ դմակն ու մէջքը զիստերով հանդերձ, 10 փորի ճարպաթաղանթը, փորոտիքի ամբողջ ճարպը, երկու երիկամներն† ու դրանց վրայի ճարպն ու լեարդի բլթակը երիկամներով հանդերձ: 11 Այս ամէնը քահանան թող դնի զոհասեղանին որպէս Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ:

12 Եթէ զոհաբերուողը այծ է, ապա զոհ մատուցողն այն թող բերի Տիրոջ առաջ 13 եւ իր ձեռքը թող դնի կենդանու գլխին: Թող դա մորթեն վկայութեան խորանի դռան մօտ, Տիրոջ առաջ, իսկ Ահարոնի որդիները՝ քահանաները, արիւնը թող շաղ տան զոհասեղանի շուրջը: 14 Նրանք Տիրոջը դրանից որպէս ընծայ թող մատուցեն փորի ճարպաթաղանթը եւ փորոտիքի ամբողջ ճարպը, 15 երկու երիկամներն ու դրանց վրայի ճարպը: Լեարդի բլթակը թող պոկեն երիկամներով հանդերձ: 16 Քահանան դրանք թող դնի զոհասեղանին իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ:

---

†Այլ բնագրերում 8-րդ համարն սկսւում է 7-րդ համարի *կրակի վրայ* բառերից յետոյ:

†Եբրայերէնում՝ *այրի:*

‡Գրաբար բնագրում՝ *արմունկն ու թեւերը:*

†Եբրայերէնում՝ *խաղաղութեան:*

†Այլ բնագրերում 10-րդ համարն սկսւում է *երկու երիկամները*-ով:

Բոլոր ճարպերը Տիրոջը պիտի պատկանեն. 17 ուր էլ բնակուելիս լինէք, դա յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների համար: Ճարպ եւ արիւն երբեք չպիտի ուտէք»:

ՈՂՋԱԿԷԶՆԵՐ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

4 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլիացիների հետ ու ասա՛. "Եթէ մէկն ակամայ մեղք է գործում Տիրոջ հանդէպ, Տիրոջ որեւէ պատուիրանի դէմ անում է բաներ, որ չպէտք է կատարէր, բայց կատարում է, 3 եւ եթէ նա օծուած քահանայապետ է, ապա նրա գործած մեղքը տարածւում է ամբողջ ժողովրդի վրայ: Իր գործած մեղքը քաւելու համար նա Տիրոջը ոչ արատաւոր զուարակ պիտի մատուցի: 4 Նա զուարակը թող բերի վկայութեան խորանի դռան մօտ, Տիրոջ առաջ, իր ձեռքը թող դնի զուարակի գլխին Տիրոջ առաջ, եւ զուարակը թող մորթեն Տիրոջ առաջ: 5 Օծեալ քահանան իր ձեռքով առնելով զուարակի արիւնից, այն թող տանի վկայութեան խորան: 6 Քահանան իր մատը թող թաթախի արեան մէջ, այդ արիւնից թող եօթն անգամ իր մատով շաղ տայ Տիրոջ առաջ, սրբարանը բաժանող վարագոյրի մօտ: 7 Քահանան Տիրոջ առաջ զուարակի արիւնից թող քսի վկայութեան խորանում գտնուող խնկարկութեան սեղանի եղջիւրաւոր անկիւններին: Զուարակի մնացած արիւնը թող շաղ տայ վկայութեան խորանի դռան մօտ գտնուող ողջակէզների զոհասեղանի յատակին: 8 Նա թող հանի գործուած մեղքերի քաւութեան համար զոհաբերուող զուարակի ամբողջ ճարպը, թող հանի նաեւ փորի ճարպաթաղանթը եւ փորոտիքի ամբողջ ճարպը: 9 Թող պոկի երկու երիկամներն ու դրանց վրայի ճարպը եւ լեարդի բլթակը երիկամներով հանդերձ: 10 Թող անի այնպէս, ինչպէս վարւում էր փրկութեան համար զոհաբերուող զուարակի դէպքում. քահանան այս ամէնը թող դնի ողջակէզների զոհասեղանին: 11 Զուարակի մորթը, նրա ամբողջ մարմինը գլխի ու ոտքերի, փորի ու կղկղանքի հետ՝ 12 զուարակն ամբողջութեամբ թող հանեն բանակատեղիից դուրս, մի մաքուր տեղ, ուր մոխիրն են թափում, եւ փայտի կրակի վրայ թող այրեն այն: Զուարակը պէտք է այրուի մոխրակոյտի վրայ:

13 Եթէ իսրայէլացի ողջ ժողովուրդն անգիտակցաբար ակամայ մոլորուի, եւ այդ բանը վրիպած լինի ժողովրդի աչքից, եթէ խախտի Տիրոջ պատուիրաններից մէկնումէկը, այսինքն՝ անի մի բան, որ չպէտք է կատարէր, բայց կատարի, 14 իսկ դրանից յետոյ գիտակցի իր կատարած մեղքը, ապա ժողովուրդն իր գործած մեղքը քաւելու համար նախիրից ոչ արատաւոր մի զուարակ թող զոհաբերի: Այն թող բերեն վկայութեան խորանի դուռը, 15 ժողովրդի ծերերը Տիրոջ առաջ իրենց ձեռքը թող դնեն զուարակի գլխին եւ զուարակը թող մորթեն Տիրոջ առաջ: 16 Օծեալ քահանան զուարակի արիւնից թող տանի վկայութեան խորան, 17 եւ մատը թաթախելով զուարակի արեան մէջ՝ Տիրոջ առաջ եօթն անգամ թող շաղ տայ սրբարանի վարագոյրի դիմաց: 18 Քահանան այդ արիւնից թող քսի վկայութեան խորանում Տիրոջ առաջ դրուած խնկարկութեան սեղանի եղջիւրաւոր անկիւններին, իսկ մնացած արիւնը թող շաղ տայ վկայութեան խորանի դռան մօտ գտնուող ողջակէզների զոհասեղանի յատակին: 19 Ամբողջ ճարպը թող պոկի կենդանուց եւ դնի զոհասեղանին: 20 Այդ զուարակի հետ թող վարուի այնպէս, ինչպէս վարւում էր մեղքերի քաւութեան համար զոհաբերուող զուարակի դէպքում: Նոյն կերպ թող վարուի նաեւ դրա հետ: Մեղքերի քաւութեան համար մատուցուող այս զոհաբերութիւնը քահանան է կատարելու, որից յետոյ նրանք մեղքերի թողութիւն կը ստանան: 21 Զուարակն ամբողջութեամբ պէտք է հանեն բանակատեղիից դուրս եւ այրեն այն, ինչպէս նախորդ զուարակն այրեցին, որովհետեւ դա ժողովրդի մեղքերի համար է:

22 Եթէ իշխանն է մեղք գործում՝ խախտում է Տէր Աստծու պատուիրաններից մէկնումէկը, այսինքն՝ անում է մի բան, որ չպէտք է կատարէր, բայց ակամայ գործում է այդ մեղքը, 23 բայց

եւ գիտակցի իր կատարած մեղքը, ապա նա թող զոհաբերի մի նոխազ, արու եւ ոչ արատաւոր: 24 Նա իր ձեռքը թող դնի նոխազի գլխին, թող այն մորթեն այնտեղ, ուր ողջակէզներ են մորթում Տիրոջ առաջ, քանի որ սա մեղքերի քաւութեան զոհ է: 25 Քահանան մեղքերի քաւութեան համար զոհաբերուող կենդանու արեան մէջ մատը թաթախելով՝ թող քսի ողջակէզների զոհասեղանի եղջիւրաւոր անկիւններին: Նրա մնացած ամբողջ արիւնը թող շաղ տայ ողջակէզների զոհասեղանի յատակին: 26 Նրա ամբողջ ճարպը թող դնի զոհասեղանին, ինչպէս փրկութեան համար զոհաբերուող կենդանու ճարպն են դնում: Քահանան այդ կերպ քաւութիւն տուած կը լինի նրանց մեղքերին, եւ նրանք իրենց մեղքերի թողութիւն կը ստանան: 27 Եթէ երկրի ժողովրդից մի մարդ ակամայ մեղք գործի՝ խախտի Տիրոջ պատուիրաններից մէկնումէկը, մի բան, որ չպիտի անէր, եթէ որեւէ յանցանք գործի, 28 բայց գիտակցի, որ ինքը մեղք է գործել, իր գործած մեղքը քաւելու համար ոչ արատաւոր մի այծ թող մատուցի որպէս զոհ: 29 Նա ձեռքը թող դնի այծի գլխին, եւ մեղքերի քաւութեան համար զոհաբերուող այծը թող մորթեն այնտեղ, ուր ողջակէզներն են մորթում: 30 Քահանան մեղքերի քաւութեան համար զոհաբերուող կենդանու արիւնից մատով առնելով՝ թող քսի ողջակէզների զոհասեղանի եղջիւրաւոր անկիւններին: Մնացած ամբողջ արիւնը թող շաղ տայ ողջակէզների զոհասեղանի յատակին: 31 Նա թող պոկի ամբողջ ճարպն այնպէս, ինչպէս փրկութեան համար ողջակիզուող կենդանուց են պոկում, եւ քահանան թող այն հանի զոհասեղան իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշահոտութիւն: Քահանան այդ կերպ քաւութիւն տուած կը լինի նրանց մեղքերին, եւ նրանք իրենց մեղքերի թողութիւն կը ստանան: 32 Եթէ իբրեւ զոհ ոչխար է մատուցւում, ապա այն ոչ արատաւոր էգ ոչխար թող լինի: 33 Զոհաբերողն իր ձեռքը թող դնի մեղքերի քաւութեան համար զոհաբերուող կենդանու գլխին, եւ այն թող մորթեն այնտեղ, ուր ողջակէզներն են մորթում: 34 Քահանան մեղքերի քաւութեան համար զոհաբերուող կենդանու արիւնից մատով առնելով՝ թող քսի ողջակէզների զոհասեղանի եղջիւրաւոր անկիւններին: Մնացած ամբողջ արիւնը թող շաղ տայ ողջակէզների զոհասեղանի յատակին: 35 Նա թող պոկի նրա ամբողջ ճարպն այնպէս, ինչպէս պոկում են փրկութեան համար ողջակիզուող ոչխարի ճարպը: Քահանան այն թող դնի զոհասեղանին իբրեւ Տիրոջը մատուցուող ողջակէզ: Քահանան այդ կերպ քաւութիւն տուած կը լինի նրանց մեղքերին, եւ նրանք իրենց մեղքերի թողութիւն կը ստանան»:

ՁՈՀԱԲԵՐՈՒՄՆԵՐ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

5 «Ցանցաւոր է այն մարդը, որ լսում է մէկի երդումը, վկայ է լինում դրան, տեսնում է դա կամ դրան տեղեակ է լինում եւ այդ մասին չի յայտնում: Այդ մարդը մեղքի տակ է ընկնում: 2 Նա, ով կը դիպչի պիղծ իրերի կամ դիակի կամ գազանից յօշոտուած կենդանու կամ մի պիղծ բանի կամ անասունների ու պիղծ սողունների դիակների, թէկուզեւ չանդրադառնալով դրան, ինքն էլ պղծուած ու մեղանչած է լինում: 3 Եթէ մէկը դիպչի մի մարդու պղծութեան կամ նրա բազում պղծութիւններին, որոնց դիպչելիս մարդ կեղտոտւում է, եւ եթէ նա մոռանայ, իսկ յետոյ յիշի այդ, ուրեմն նա մեղանչած է լինում: 4 Նա, ով խոստանայ չար կամ բարի գործ կատարել եւ այդ խոստումը հաստատի երդմամբ, եւ եթէ նա մոռանայ, իսկ յետոյ յիշի այդ, միեւնոյն է, նա մեղանչած է լինում: 5 Նա պէտք է խոստովանի իր մեղքերին: 6 Տիրոջ նկատմամբ կատարած իր յանցանքների ու գործած մեղքերի համար նա հօտից մի էգ գառ կամ մի էգ ուլ թող զոհ մատուցի: Քահանան դրանով քաւութիւն պիտի տայ նրա մեղքերին, եւ նա թողութիւն պիտի ստանայ:

7 Իսկ եթէ կարողութիւն չունի ոչխար զոհ մատուցելու, իր գործած մեղքերի համար երկու տատրակ կամ աղաւնիների երկու ձագ թող զոհ մատուցի.

մէկը մեղքերի թողութեան համար,
միւսը՝ որպէս ողջակէզ: 8 Նա դրանք
թող բերի քահանայի մօտ: Քահանան
նախ թող ներս տանի այն, որ մեղքերի
քաւութեան համար է, գլուխը պոկի,
բայց մարմնից չանջատի: 9 Նա զոհա-
սեղանի պատի վրայ թող շաղ տայ
մեղքերի համար զոհ մատուցուածի
արեան մի մասը, իսկ մնացած արիւնը
թող թափի զոհասեղանի յատակին, քա-
նի որ դա մեղքերի քաւութեան համար
է: 10 Երկրորդ թռչունը թող ողջակէզ
անի, ինչպէս որ կարգն է: Այդպէս
քահանան քաւութիւն կը տայ նրա
գործած մեղքերին, եւ նա թողութիւն կը
ստանայ:

11 Եթէ նա ի վիճակի չէ զոյգ տատ-
րակներ կամ աղաւնիների երկու ձագեր
մատուցելու, իր գործած մեղքերի
թողութեան համար որպէս զոհ թող
նուիրաբերի մէկ տասներորդ գրիւ
ընտիր ալիւր†: Դրա վրայ թող իւղ
չլցնի, դրա վրայ կնդրուկ թող չդնի,
քանի որ դա մեղքերի թողութեան
համար է: 12 Նա այն թող տանի
քահանայի մօտ, եւ քահանան դրանից
մի բուռ վերցնելով իբրեւ յիշատակի
բաժին՝ թող դնի Տիրոջ ողջակէզների
զոհասեղանին, քանի որ դա մեղքերի
թողութեան համար է: 13 Այդպէս
քահանան քաւութիւն կը տայ նրա
գործած մեղքին, եւ նա թողութիւն կը
ստանայ: Մնացեալը թող պատկանի
քահանային, ինչպէս որ ընտիր ալիւրի
նուիրաբերութեան դէպքում էր»:

ՀԱՏՈՒՑՄԱՆ ՁՈՒԱՐԵՐՈՒՄ

14 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. 15 «Նա, ով կը սխալուի ու Տիրոջ
սրբութիւնների հանդէպ ակամայ մեղք
կը գործի, իր յանցանքի համար թող
Տիրոջը մատուցի իր հօտից ոչ արա-
տաւոր մի խոյ վկայութեան խորանում
գործածուող յիսուն արծաթ սիկղ
արժողութեամբ: 16 Նա թող հատուցի
սրբութիւններին հասցրած վնասները,
դրան աւելացրած նաեւ սրբազան իրերի
արժէքի մէկ հինգերորդ մասը, եւ տայ
քահանային: Քահանան յանցանքի թո-
ղութեան համար զոհաբերուած խոյով
թող քաւութիւն տայ նրա յանցանքին եւ
թողութիւն՝ նրան:

17 Նա, ով մեղանչում է ու խախտում
Տիրոջ պատուիրաններից մէկնումէկը,
այսինքն՝ անում է մի բան, որ չպէտք է
անէր, բայց չիմանալով գործում է այդ
մեղքը, ուրեմն մեղաւոր է: 18 Իր յան-
ցանքի թողութեան համար իր հօտից նա
քահանայի մօտ թող բերի մէկ արծաթ
արժողութեամբ ոչ արատաւոր մի խոյ,
որով քահանան քաւութիւն պիտի տայ
անգիտակցաբար նրա գործած մեղքին,
եւ նա թողութիւն պիտի ստանայ, քանի
որ նա 19 յանցանք էր գործել Տիրոջ
հանդէպ»:

6 † Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.
2 «Ով մեղք գործի, ով արհամարհելով
խախտի Տիրոջ պատուիրանները, ով իր
մերձաւորին խաբի նրա տուած աւանդի,
իրեն ի պահ տրուած կամ իր
յափշտակած որեւէ իրի համար, կամ
որեւէ վնաս հասցնի իր մերձաւորին եւ 3
կամ կորած մի բան գտնի, բայց
ուրանայ, որ գտել է, եւ դրա համար
սուտ երդում տայ, այսինքն՝ անի այն
ամէնը, 4 որոնցով նա մեղք է գործած
լինում, բայց գիտակցի, որ մեղանչել,
յանցանք է գործել, նա պէտք է հա-
տուցի իր կատարած յափշտակութեան
համար, 5 իր հասցրած վնասի համար,
իրեն ի պահ տրուած աւանդը կորցնելու
համար, կորած բանը գտնելը ուրանալու
եւ սուտ երդում տալու համար: Իր
հասցրած ամէն մի վնաս նա պէտք է
հատուցի ամբողջութեամբ, դրան աւե-
լացրած նաեւ վնասուած իրի արժէքի
մէկ հինգերորդը: Նա տիրոջը թող
հատուցի հէնց իր մեղքը գիտակցած
օրը: 6 Իր գործած մեղքի համար նա
Տիրոջը զոհ պէտք է մատուցի մէկ
արծաթ արժողութեամբ‡ ոչ արատաւոր
մի խոյ, քանի որ մեղք գործեց: 7 Քա-
հանան Տիրոջ առաջ քաւութիւն եւ
թողութիւն թող տայ նրան այն մեղքերի
համար, որ նա գործել է»:

†Շուրջ չորս կիլոգրամ:

†Որոշ բնագրերում Զ 1–7 համարները տեղափոխուած են Ե գլուխ՝ իրբեւ դրա 20–27 համարներ:

‡Եբրայերէնում՝ մեղմի ծանրութեանը համապատասխանող:

ՈՂՋԱԿԻԶՈՒՄ

8 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. «Կարգադրի՛ր Ահարոնին ու նրա
որդիներին եւ ասա՛. 9 "Այս է ողջակէզի
կարգը. զոհասեղանի վրայ այն պէտք է
մնայ ամբողջ գիշեր՝ մինչեւ առաւօտ, եւ
զոհասեղանի վրայ այրուող կրակը
չպէտք է հանգի: 10 Քահանան կտաւէ
պատմուճան պիտի հագնի եւ կտաւէ
անդրավարտիք՝ իր մարմնի վրայ†:
Կրակից առաջացած ողջակէզի ճարպա-
մոխիրը նա պիտի վերցնի զոհասեղանի
վրայից ու դնի զոհասեղանի մօտ: 11 Նա
պիտի հանի իր պատմուճանը, պիտի
հագնի մի այլ պատմուճան ու ողջա-
կէզը‡ պիտի տանի բանակատեղիից
դուրս, մի մաքուր տեղ: 12 Զոհասեղանի
վրայ վառուող կրակը պիտի չհանգի:
Դրա համար քահանան առաւօտները
դրա վրայ փայտ պիտի աւելացնի, դրա
վրայ պիտի այրի ողջակէզները, իսկ
դրանց վրայ էլ՝ փրկութեան զոհի
ճարպը: 13 Կրակը միշտ պիտի վառուի
զոհասեղանի վրայ ու երբեք չհանգի»:

ՀԱՑԻ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄ

14 «Այս է Տիրոջ առաջ, զոհասեղանի
վրայ Ահարոնի որդիների՝ քահանաների
զոհ մատուցելու կարգը. 15 քահանան
իբրեւ յիշատակ մի բուռ պիտի առնի
նուիրաբերուող ընտիր ալիւրից՝ նրա
վրայ դրուած իւղով ու կնդրուկով
հանդերձ, եւ ընծան դնի զոհասեղանին
իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշա-
հոտ զոհ: 16 Մնացած ալիւրը պիտի
ճաշակեն Ահարոնն ու նրա որդիները:
Բաղարջը պիտի ուտուի մի սուրբ
վայրում, այն պիտի ուտեն վկայութեան
խորանի բակում: 17 Թթխմորով պիտի
չեփուի այն. դա Տիրոջը մատուցուող
ընծաների մի մասն է կազմում: Դրանք
սրբութիւնների սրբութիւն են: Նոյն
կերպ պէտք է վարուել մեղքերի ու
յանցանքների զոհաբերումների դէպ-
քում: 18 Քահանաների ընտանիքների
բոլոր արու անդամները թող ուտեն
դրանից: Այս թող լինի ձեր սերունդների
մէջ Տիրոջը մատուցուելիք նուիրաբե-
րութեան յաւիտենական կարգը: Եւ ինչ
որ դիպչի դրանց, կը սրբանայ"»:

19 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. 20 «Այս է Ահարոնի եւ նրա
որդիների ընծան, որ նրանց օծուելու օրը
պիտի մատուցուի Տիրոջը: Մէկ տաս-
ներորդ գրիւ† ընտիր ալիւր՝ իբրեւ հա-
նապազօրեայ հացի ընծայ. դրա կէսը՝
առաւօտեան, իսկ միւս կէսը՝ երեկո-
յեան: 21 Իւղով հունցելուց յետոյ տա-
պակի մէջ պիտի պատրաստուի այն:
Դա կտրտուած, մաքուր վիճակում
պիտի մատուցուի իբրեւ Տիրոջն ընծա-
յաբերուող անուշահոտ զոհ: 22 Այս
բանը պիտի կատարի այն քահանան,
որն Ահարոնի որդիներից է եւ օծուել է
նրա փոխարէն: Տիրոջ հաստատած այս
յաւիտենական օրէնքը պէտք է կատա-
րուի ամբողջութեամբ: 23 Քահանայի
բոլոր զոհաբերութիւնները ողջակէզ
պէտք է լինեն, դրանցից ոչ մի բան
չպիտի ուտուի»:

ԹՈՂՈՒԹԵԱՆ ՁՈՒԱՐԵՐՈՒՄ

24 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. 25 «Դիմի՛ր Ահարոնին ու նրա
որդիներին եւ ասա՛. "Մեղքերի թողու-
թեան համար զոհ մատուցելու կարգը
այս է. մեղքերի թողութեան համար
Տիրոջ առաջ մորթուելիք անասունները
պէտք է մորթուեն այնտեղ, որտեղ
ողջակիզուող անասուններն են մորթում:
Դա սրբութիւնների սրբութիւն է: 26 Զոհ
մատուցող քահանան դրանից պէտք է
ուտի: Թող նա ուտի սուրբ վայրում՝
վկայութեան խորանի բակում: 27 Ով որ
ձեռք տայ դրա մսին, կը սրբանայ, եւ
ում զգեստի վրայ ցանեն դրա արիւնից,
նա պէտք է լուացուի սուրբ վայրում:
28 Կաւէ այն անօթը, որի մէջ կ'եփուի
միսը, պէտք է ջարդել, իսկ եթէ պղնձէ
անօթի մէջ եփուի, պէտք է այն քերել ու
ջրով ողողել: 29 Քահանաների ընտա-
նիքների բոլոր արու անդամները թող
ուտեն դրանից, որովհետեւ դա Տիրոջը
մատուցուող սրբութիւնների սրբութիւն
է: 30 Այն ամէնը, ինչ զոհ է մատուցւում

†Եբրայերէնում չկայ անդրավարտիք իր մարմնի վրայ:

‡Եբրայերէնում՝ ճարպամոխիրը:

†Շուրջ երեք կիլոգրամ

մեղքերի քաւութեան համար, նոյնպէս անասունների արիւնը, որ վկայութեան խորան է բերւում, չպէտք է ուտուի, այլ կրակով պէտք է այրուի»:

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԶՈՀԱԲԵՐՈՒՄ

7 «Ցանցանքի համար խոյ զոհաբերելու կարգը հետեւեալն է. դա սրբութիւնների սրբութիւն է: 2 Այնտեղ, ուր ողջակէզներն են մորթում, Տիրոջ առաջ պէտք է մորթեն նաեւ յանցանքի համար զոհաբերուող խոյը: Նրա արիւնը շուրջանակի թող թափեն ողջակէզների զոհասեղանի յատակին: 3 Քահանան թող առնի նրա ամբողջ ճարպը, դմակը, ճարպաթաղանթը, փորոտիքի ամբողջ ճարպը, 4 պոկի որովայնում գտնուող երկու երիկամները, դրանց վրայի ճարպն ու լեարդի բլթակը երիկամներով հանդերձ: 5 Քահանան այդ բոլորը թող դնի զոհասեղանին իբրեւ Տիրոջը մատուցուող զոհ, քանի որ դա յանցանքի քաւութեան համար է: 6 Քահանայի ընտանիքի բոլոր արու անդամները թող ուտեն դրանից. սուրբ վայրում թող ուտեն, քանի որ դա սրբութիւնների սրբութիւն է: 7 Ցանցանքի համար զոհուող անասունի հետ թող վարուեն այնպէս, ինչպէս մեղքերի համար զոհուող անասունի: Դրանց կատարման կարգը նոյնը թող լինի: Զոհաբերուած անասունի մնացորդը թող պատկանի քահանային, որը դրանով քաւութիւն է տալիս: 8 Որեւէ մէկի ողջակէզը մատուցող քահանան թող ստանայ ողջակէզի մորթին: 9 Թոնրի, կասկարայի կամ տապակի մէջ պատրաստուած հացեղէնը, որ զոհաբերւում է, թող պատկանի այն քահանային, որ կատարում է զոհաբերումը, 10 իսկ իւղով հունցուած, ինչպէս նաեւ չհունցուած բոլոր զոհաբերումները պիտի հաւասարապէս պատկանեն Ահարոնի որդիներից իւրաքանչիւրին»:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԶՈՀԱԲԵՐՈՒՄ

11 «Փրկութեան համար Տիրոջը մատուցուելիք զոհաբերութեան կարգը այս է. 12 եթէ գոհութեան համար է մատուցւում այն, որպէս գոհութեան զոհաբերում թող մատուցեն իւղով հունցուած ընտիր ալիւրի բաղարջ կարկանդակ, վրան իւղ քսած բաղարջ հաց եւ իւղով հունցուած ընտիր ալիւր: 13† Փրկութեան համար գոհութեան այս զոհաբերութեան հետ ընծայ թող մատուցեն նաեւ բաղարջ կարկանդակներ: Տիրոջը մատուցուող բոլոր զոհաբերութիւնների մի մասը 14 փրկութեան համար արիւն հոսեցնող քահանային թող պատկանի: Նրան թող պատկանի նաեւ փրկութեան համար մատուցուող գոհութեան զոհի միսը, 15 որը պիտի ուտուի նույն օրը, երբ զոհ է մատուցւում. Յաջորդ օրուայ համար դրանից բան չպէտք է մնայ:

16 Եթէ մէկը կամովին է խոստանում Տիրոջ համար զոհ մատուցել, ապա զոհի միսը թող ուտուի զոհի մատուցման օրը եւ յաջորդ օրը, իսկ զոհի մսի այն մասը, որ կը մնայ 17 մինչեւ երրորդ օրը, կրակով թող այրուի: 18 Եթէ նա իր փրկութեան համար զոհաբերած անասունի մսից ուտի երրորդ օրը, մատուցուածը ընդունելի զոհաբերութիւն չի լինի, քանի որ դա ապօրինի է ու պիղծ: Ով ուտի դրանից, մեղք գործած կը լինի: 19 Այն միսը, որ կը դիպչի որեւէ աղտեղութեան, թող չուտուի, այլ կրակով թող այրուի: Միայն մաքուր մարդն իրաւունք ունի միս ուտելու:

20 Տիրոջը մատուցուած փրկութեան զոհից ճաշակած անմաքուր մարդը պիտի կորչի իր ժողովրդի միջից: 21 Նա, ով կը դիպչի որեւէ պիղծ բանի՝ մարդու պղծութեան կամ պիղծ անասունների եւ կամ ամէն մի գարշելի բանի, եւ ապա կ'ուտի Տիրոջը մատուցուած փրկութեան զոհի մսից, այդ մարդը կը կորչի իր ժողովրդի միջից"»:

22 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 23 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ ասա՛. "Արջառի, ոչխարի ու այծի ճարպ պիտի չուտէք: 24 Սատկած ու գազանի յօշոտած անասունների ճարպը թող օգտագործուի ամէն ինչի համար, բայց ոչ ուտելու համար: 25 Ով որ ուտի Տիրոջը զոհաբերուած անասունների ճարպից, կը կորչի իր ժողովրդի միջից:

† Այլ բնագրերում՝ տարբեր տնատում:

26 Ձեր բոլոր բնակարաններում թռչունների եւ ամէն տեսակ անասունների արիւնը պիտի չուտէք: 27 Արիւն ուտող ամէն ոք կը կորչի իր ժողովրդի միջից"»:

28 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 29 «Իսրայէլի որդիներին ասա՛. "Ով որ փրկութեան զոհ կը մատուցի Տիրոջը, նա իր փրկութեան զոհից Տիրոջը մաս պիտի հանի: 30 Նա իր ձեռքով պիտի զոհը մատուցի Տիրոջը. կրծքի ճարպն ու լեարդի բլթակը պիտի դնի Տիրոջ առաջ, 31 իսկ քահանան այն պիտի հանի զոհասեղան, կուրծքը պիտի տրուի Ահարոնին ու նրա որդիներին: 32 Բացի այդ, ձեր փրկութեան զոհերի աջ թեւը որպէս հասանելի տուրք† կը տաք քահանային: 33 Ահարոնի որդիներից ով որ փրկութեան արիւն ու ճարպ է մատուցում, նրան էլ բաժին թող հասնի աջ թեւը: 34 Որովհետեւ Իսրայէլի որդիներից ես առայ ձեր փրկութեան համար ինձ մատուցուած անասունների կուրծքն ու թեւը եւ դրանք տուեցի Ահարոնին ու նրա որդիներին: Դա Իսրայէլի որդիների համար յաւիտենական կարգ թող լինի"»:

35 Ահարոնի ու նրա որդիների քահանայ օծուելու օրը Տիրոջը նուիրաբերուող ընծաներից իրենց հասանելիք բաժինը այս է: Այս է պատուիրել Տէրը, որ տրուի նրանց, 36 երբ Իսրայէլի որդիների միջից քահանայ օծեց նրանց: Դա նրանց մէջ յաւիտենական կարգ է սերնդից սերունդ: 37 Այս է ողջակէզների, մեղքերի, յանցանքների ու փրկութեան համար զոհեր մատուցելու կարգը: 38 Այսպէս պատուիրեց Տէրը Իսրայէլի որդիներին Սինա լեռան վրայ այն օրը, երբ նա Սինայի անապատում կարգադրեց Տիրոջ համար զոհեր մատուցել:

ԱՀԱՐՈՆԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻ ՕԾՈՒՄԸ
(Ելք 29. 1-37)

8 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Ա՛ռ Ահարոնին ու նրա որդիներին, նրանց զգեստներն ու օծութեան իւղը, մեղքերի քաւութեան համար զոհաբերուելիք զուարակը, երկու խոյերն ու բաղարջների սկուտեղը 3 եւ ամբողջ ժողովրդին հաւաքի՛ր վկայութեան խորանի դռան մօտ»: 4 Մովսէսն արեց այնպէս, ինչպէս Տէրը հրամայել էր իրեն. նա հաւաքեց ժողովրդին վկայութեան խորանի դռան մօտ:

5 Մովսէսն ասաց ժողովրդին. «Այս բանն է կարգադրել Տէրը»: 6 Մովսէսն Ահարոնին ու նրա որդիներին տարաւ եւ ջրով լողացրեց նրանց: 7 Նա Ահարոնին հագցրեց պատմուճանը, գօտի կապեց նրա մէջքին, դրա վրայ հագցրեց թիկնոցը, յետոյ դրա վրայ դրեց վակասը, 8 վակասի ժապաւէնով զգեստներն ամրացրեց միմեանց: Դրա վրայ կապեց լանջապանակը, վերջինիս վրայ դրեց Ցանդիմանութիւնն ու Ճշմարտութիւնը: 9 Նրա գլխին դրեց խոյրը, խոյրի վրայ, երեսի կողմից՝ նուիրագործուած եւ մաքուր ոսկէ թիթեղը, ինչպէս Տէրն էր պատուիրել Մովսէսին: 10 Մովսէսն առնելով օծութեան իւղից՝ եօթն անգամ ցանեց զոհասեղանի վրայ: 11 Նա օծեց զոհասեղանը, սրբագործեց այն ու դրա ամբողջ սպասքը, ինչպէս նաեւ լուացարանն ու դրա պատուանդանը. նա սրբագործեց դրանք: Նա, օծելով վրանն ու դրա մէջ գտնուող ամէն ինչ, սրբագործեց դրանք: 12 Մովսէսն օծութեան իւղ ածեց Ահարոնի գլխին, օծեց ու սրբագործեց նրան: 13 Մովսէսը մօտիկ բերեց Ահարոնի որդիներին, նրանց հագցրեց պատմուճանները, նրանց մէջքերին կապեց գօտիները, գլուխներին դրեց խոյրերը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

14 Մովսէսն այնուհետեւ մօտ բերեց մեղքերի քաւութեան համար զոհաբերուելիք զուարակը: Ահարոնն ու նրա որդիները իրենց ձեռքերը դրեցին մեղքերի քաւութեան համար սահմանուած զուարակի գլխին, եւ Մովսէսը մորթեց այն: 15 Մովսէսն առաւ նրա արիւնից եւ իր մատով շուրջանակի քսելով զոհասեղանի եղջիւրաւոր անկիւններին՝ սրբագործեց զոհասեղանը: Եւ նա մնացած արիւնը թափեց զոհասեղանի յատակին: 16 Նա սրբագործեց այն, որպէսզի քաւութեան զոհաբերութիւն

† Եբրայերէնում՝ բարձրացնելու ընծայ:

կատարի դրա վրայ: Մովսէսն առաւ
փորոտիքի ամբողջ ճարպը, լեարդի
բլթակը, երկու երիկամներն ու դրանց
վրայի ամբողջ ճարպը եւ դրեց զոհա-
սեղանին: 17 Նա զուարակի մնացած
մասերը՝ մորթին, միսն ու կղկղանքը
բանակատեղիից դուրս այրեց կրակով,
ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

18 Մովսէսը մօտ բերեց ողջակէզի
համար նախատեսուած խոյը: Ահարոնն
ու նրա որդիները իրենց ձեռքերը դրե-
ցին խոյի գլխին, 19 եւ Մովսէսը մորթեց
խոյը, նրա արիւնը թափեց զոհասեղանի
շուրջը: 20 Նա խոյը բաժանեց մասերի,
առաւ գլուխը, կտրտուած մասերն ու
ճարպը, փորոտիքն ու ոտքերը լուաց
ջրով: 21† Մովսէսը խոյն ամբողջ-
ութեամբ դրեց ողջակէզների զոհասե-
ղանին որպէս Տիրոջն ընծայաբերուող
անուշահոտ զոհ, քանի որ դա Տիրոջը
մատուցուող ընծայ էր: Այդպէս էր Տէրը
հրամայել Մովսէսին:

22 Մովսէսը մօտ բերեց երկրորդ
խոյը, որպէսզի կատարուի քահանա-
ներին սրբագործելու ծէսը: Ահարոնն ու
նրա որդիները իրենց ձեռքերը դրեցին
խոյի գլխին, 23 եւ Մովսէսը մորթեց
այն: Մովսէսն առաւ դրա արիւնից,
քսեց Ահարոնի աջ ականջի բլթակին,
նրա աջ ձեռքի բթամատին ու նրա աջ
ոտքի բթամատին: 24 Մովսէսը մօտ
բերեց Ահարոնի որդիներին, այդ
արիւնից քսեց նրանց աջ ականջների
բլթակներին, նրանց աջ ձեռքերի բթա-
մատներին ու նրանց աջ ոտքերի
բթամատներին, իսկ մնացած արիւնը
թափեց զոհասեղանի շուրջը: 25 Նա
առաւ ճարպը, դմակը, ճարպաթա-
ղանթը, լեարդի բլթակը, երիկամներն ու
դրանց վրայի ճարպը եւ աջ թեւը: 26 Նա
Տիրոջ առաջ գտնուող եւ քահանաներին
սրբագործելու ծէսի համար նախա-
տեսուած մի բաղարջ կարկանդակ
վերցրեց սկուտեղից, ինչպէս նաեւ իւղով
հունցուած մի բաղարջ հաց, եւ դրեց
ճարպի ու աջ թեւի վրայ‡: 27 Նա այդ
ամէնը դրեց Ահարոնի ձեռքերի ու նրա
որդիների ձեռքերի վրայ եւ դրանք
ընծայաբերեց Տիրոջ առաջ: 28 Մովսէսը
դրանք վերցնելով նրանց ձեռքերից՝
զոհասեղանի վրայ դրեց որպէս նրանց
քահանայ ձեռնադրելու համար կատա-
ռուած ողջակէզ: Դա անուշահոտ ընծայ
է, որ արւում է Տիրոջ համար: Այդպէս
էր պատուիրել Տէրը: 29 Մովսէսն առաւ
խոյի կուրծքը եւ Տիրոջ առաջ խոյի
նուիրաբերման շարժում արեց: Դա
եղաւ Մովսէսին յատկացուած բաժինը,
ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:
30 Մովսէսը, վերցնելով օծութեան իւղից
ու զոհասեղանի վրայի արիւնից, ցանեց
Ահարոնի ու նրա զգեստների, նրա
որդիների ու նրանց զգեստների վրայ:

31 Նա սրբագործեց Ահարոնին ու
նրա զգեստները, նրա հետ նաեւ՝ նրա
որդիներին ու նրանց զգեստները: Մով-
սէսն ասաց Ահարոնին ու նրա որդինե-
րին. «Միսը եփեցէ՛ք վկայութեան խո-
րանի բակում, մի մաքուր վայրում, եւ
այնտեղ էլ կերէ՛ք այն, ինչպէս նաեւ
սկուտեղի բաղարջ կարկանդակները, որ
քահանաների օծութեան համար են
նախատեսուած, ինչպէս Տէրն է հրա-
մայելով ասել, թէ՝ "Ահարոնն ու նրա
որդիները թող ուտեն այն": 32 Հացի ու
մսի մնացորդները կրակով կ'այրէք:
33 Վկայութեան խորանի դռնից եօթն օր
դուրս չգաք, մինչեւ չլրանայ ձեր քա-
հանայ օծուելու համար սահմանուած
օրը, որովհետեւ եօթը օր պէտք է ձեր
քահանայութեան լրումի համար 34 (ինչ-
պէս եւ կատարուեց իսկ): Տէրը այդպէս
է պատուիրել կատարել, որպէսզի
քաւուեն ձեր մեղքերը: 35 Վկայութեան
խորանի դռանը եօթն օր՝ գիշեր ու
ցերեկ կը նստէք եւ Տիրոջ պահպա-
նութեան կարգը կը կատարէք, որպէսզի
չմեռնէք: Այդպէս է ինձ պատուիրել
Տէրը»: 36 Ահարոնն ու նրա որդիները
կատարեցին այն ամէնը, ինչ Տէրն էր
կարգադրել Մովսէսին:

ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲ

9 Ութերորդ օրը Մովսէսը կանչեց Ա-
հարոնին, նրա որդիներին ու Իսրայէլի
մեծերին: Մովսէսն ասաց Ահարոնին.
2 «Քեզ համար նախրից, մեղքերի քա-
ւութեան համար, ոչ արատաւոր մի զուա-
րակ ու ողջակէզի համար ոչ արատաւոր

†Այլ հրատարակութիւններում եւ թնագրե-
րում՝ տարբեր տեսակում:

‡Այլ թնագրերում՝ նաեւ բլիթ:

մի խոյ վերցրո՛ւ եւ դրանք զո՛հ մատու-
ցիր Տիրոջ առաջ: 3 Դիմի՛ր Իսրայէլի
մեծերին† ու նրանց ասա՛. "Այծերի
միջից վերցրէ՛ք մեղքերի քաւութեան
համար մի նոխազ, ինչպէս եւ ողջակէզի
համար մէկ տարեկան ոչ արատաւոր
խոյ, զուարակ եւ գառ: 4 Նաեւ զուա-
րակ ու խոյ՝ Տիրոջ առաջ փրկութեան
ողջակէզ մատուցելու համար, ինչպէս եւ
նուիրաբերման համար իւղով հունցուած
ընտիր ալիւր, որովհետեւ այսօր Տէրը
պիտի երեւայ ձեր մէջ"»: 5 Նրանք
առան ու վկայութեան խորանի առաջ
բերեցին, այն ամէնը, ինչ որ Մովսէսն
էր հրամայել: Ամբողջ ժողովուրդը մո-
տեցաւ ու կանգնեց Տիրոջ առաջ: 6 Մով-
սէսն ասաց. «Տէրը հրամայեց, որ ա՛յս
բանը պէտք է կատարէք. եւ Տիրոջ
փառքը պիտի երեւայ ձեզ»: 7 Իսկ
Ահարոնին Մովսէսն ասաց. «Մօտեցի՛ր
զոհասեղանին եւ քո ողջակէ՛զն արա քո
մեղքերի համար, որպէսզի քաւութիւն
լինի քեզ եւ քո տան համար: Ապա
մատուցի՛ր քո ժողովրդի ընծաները եւ
քաւութի՛ւն արա նրանց, ինչպէս Տէրն է
պատուիրել ինձ՝ Մովսէսիս»: 8 Ա-
հարոնը մօտեցաւ զոհասեղանին եւ մոր-
թեց իր մեղքերի քաւութեան զուարակը:
9 Ահարոնի որդիները արիւնը բերեցին
նրա մօտ, նա իր մատը թացացրեց
արեան մէջ, քսեց զոհասեղանի եղջիւ-
րաւոր անկիւնների, իսկ մնացած
արիւնը թափեց զոհասեղանի յատակին:
10 Մեղքերի քաւութեան զոհի ճարպը,
երիկամները եւ լեարդի բլթակը դրեց
զոհասեղանին, ինչպէս Տէրն էր պա-
տուիրել Մովսէսին: 11 Միսն ու մորթին
կրակով այրեցին բանակատեղիից
դուրս: 12 Ապա մորթեց ողջակէզի հա-
մար նախատեսուած անասունը, Ահա-
րոնի որդիները արիւնը բերեցին նրա
մօտ, եւ նա այն թափեց զոհասեղանի
շուրջը: 13 Ողջակէզը նրա մօտ բերեցին
կտոր-կտոր արած: Մովսէսը դա,
ինչպէս նաեւ գլուխը, դրեց զոհասե-
ղանին: 14 Փորոտիքն ու ոտքերը նա
լուաց ջրով եւ դրեց զոհասեղանին,
ողջակէզի վրայ:

15 Դրանից յետոյ մատուցեցին‡
ժողովրդի ընծաները: Նա առաւ ժո-
ղովրդի մեղքերի քաւութեան համար
սահմանուած նոխազը եւ այն մորթեց
նախորդի նման: 16 Նա մատուցեց նաեւ
ողջակիզուելիք անասունը: 17† Նա արեց
այնպէս, ինչպէս կարգն էր: Նա մօտեց-
րեց ողջակէզը, մի բուռ վերցրեց դրանից
եւ դրեց զոհասեղանին, որպէս յաւելում
առաւօտուայ ողջակէզի: 18 Նա մորթեց
ժողովրդի փրկութեան համար զոհուելիք
զուարակն ու խոյը: Ահարոնի որդիները
արիւնը բերեցին նրա մօտ, եւ նա այն
թափեց զոհասեղանի շուրջը: 19 Բերեցին
նաեւ զուարակի ճարպը, խոյի ճարպն ու
դմակը, ճարպաթաղանթը, երկու երի-
կամները ճարպով հանդերձ, լեարդի
բլթակը 20 եւ ճարպերը դրեցին
անասունների կրծքերի վրայ: Ապա
կտրեցին հանեցին ճարպը կրծքերի հետ
միասին: Ճարպը դրեցին զոհասեղանի
վրայ: 21 Նա կրծքերը եւ աջ թեւերը
նուիրաբերեց Տիրոջ առաջ, ինչպէս Տէրն
էր պատուիրել Մովսէսին:

22 Ահարոնն իր ձեռքերը բարձ-
րացնելով՝ օրհնեց ժողովրդին եւ ներքեւ
իջաւ մեղքերի քաւութեան, ողջակէզի ու
փրկութեան համար զոհեր կատարելուց
յետոյ: 23 Մովսէսն ու Ահարոնը մտան
վկայութեան խորանը եւ այնտեղից
դուրս գալով՝ օրհնեցին ամբողջ ժո-
ղովրդին: Եւ Տիրոջ փառքը երեւաց
համայն ժողովրդին: 24 Կրակ բխեց
Տիրոջից եւ այրեց այն ամէնը, ինչ կար
զոհասեղանի վրայ՝ ողջակէզներն ու
ճարպը: Ամբողջ ժողովուրդը տեսաւ դա,
սարսափեց ու ընկաւ երեսի վրայ:

ՆԱԲԱԴԻ ԵՒ ԱԲԻՈՒԴԻ ՄԵՂՔԸ

10 Ահարոնի երկու որդիները՝ Նա-
բադն ու Աբիուդը, ամէն մէկը մի բուռ-
վառ վերցնելով, դրանց մէջ կրակ դրե-
ցին, դրա վրայ խունկ լցրին եւ Տիրոջ
առաջ անմաքուր կրակ մատուցեցին, մի
բան, որ Տէրը նրանց չէր պատուիրել:
2 Կրակ բխեց Տիրոջից, այրեց նրանց, եւ
նրանք մեռան Տիրոջ առաջ: 3 Մովսէսն
ասաց Ահարոնին. «Ահա թէ ինչ ասաց
Տէրը. "Ինձ պաշտողների մէջ պիտի ցոյց

† Եբրայերէնում՝ որդիներին:

‡Եբրայերէնում՝ մատուցեց:

†Այլ թնագրերում 17-րդ համարն սկսւում է
ընտիր ալիւր մատուցեց-ով:

տամ իմ սրբութիւնը եւ իմ ամբողջ ժողովրդի առաջ պիտի փառաւորուեմ"»: Ահարոնը տխրեց: 4 Մովսէսը կանչեց Միսադայիին եւ Ելիսափանին՝ Ահարոնի հօրեղբայր Ոզիէլի որդիներին, եւ ասաց նրանց. «Գնացէ՛ք եւ ձեր եղբայրների դիակները իրենց զգեստներով հանդերձ սուրբ վայրից ու բանակատեղիից դո՛ւրս հանեցէք»: 5 Նրանք գնացին եւ բանակատեղիից դուրս հանեցին նրանց իրենց զգեստներով հանդերձ, ինչպէս Մովսէսն էր ասել:

6 Մովսէսն ասաց Ահարոնին ու նրա ողջ մնացած որդիներ Եղիազարին եւ Իթամարին. «Ձեր գլխարկները չհանէք եւ ձեր հագուստները չպատառոտէք, որպէսզի չմեռնէք, եւ ժողովրդի վրայ Տիրոջ բարկութիւնը չիջնի: Միայն ձեր եղբայրներն ու բոլոր իսրայէլացիները թող ողբան հրոյ ճարակ դարձածներին՝ նրանց, ովքեր այրուեցին Տիրոջ կողմից: 7 Եւ դուք վկայութեան խորանի դռնից դուրս չգաք, որպէսզի չմեռնէք, որովհետեւ Տիրոջ օծութեան իւղը դեռեւս ձեր վրայ է»: Եւ նրանք արեցին այնպէս, ինչպէս Մովսէսն էր ասել:

ԿԱՆՈՆՆԵՐ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

8 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 9 «Երբ վկայութեան խորան մտնէք կամ երբ զոհասեղանին մօտենաք դու եւ քեզ հետ եղած որդիներդ, գինի կամ օղի չխմէք, որպէսզի չմեռնէք: Դա յաւիտենական կարգ թող լինի ձեր սերնդի մէջ: 10 Լինելով սթափ, դուք կը կարողանաք տարբերել սուրբը պիղծից, մաքուրը անմաքուրից, 11 ի վիճակի կը լինէք իսրայէլացիներին սովորեցնելու այն բոլոր օրէնքները, որ Տէրը Մովսէսի միջոցով տուեց նրանց»:

12 Մովսէսն ասաց Ահարոնին ու նրա ողջ մնացած որդիներին՝ Եղիազարին եւ Իթամարին. «Տիրոջը մատուցուած անարիւն զոհից աւելացածն առէ՛ք եւ բաղարջ հաց պատրաստելով՝ կերէ՛ք զոհասեղանի առաջ, որովհետեւ դա սրբութիւնների սրբութիւն է: 13 Այն կ'ուտէք մի սուրբ վայրում, որովհետեւ քեզ եւ քո որդիների համար օրէնք է, որ ուտէք Տիրոջը մատուցուած զոհերից: Այդպէս է ինձ հրամայել Տէրը: 14 Զոհ մատուցուած անասունի կուրծքը եւ թեւը դու, քո որդիները եւ քո ընտանիքի անդամները քեզ հետ մի սուրբ վայրում պիտի ուտէք, որովհետեւ քեզ եւ քո որդիների համար սահմանուած կարգ է, որ դուք պէտք է ուտէք իսրայէլացիների մատուցած փրկութեան զոհից: 15 Զոհուած անասունի թեւը եւ կուրծքը, որ նուիրուելու են Աստծուն, ինչպէս նաեւ այրուելու ճարպը Տիրոջ առաջ թող նուէր մատուցեն: Դա քեզ եւ քեզ հետ եղած քո որդիներին ու քո դուստրերին պիտի պատկանի յաւիտեանս սահմանուած օրէնքի համաձայն, ինչպէս Տէրն է հրամայել Մովսէսին»:

16 Մովսէսը շատ փնտռեց մեղքերի քաւութեան համար զոհաբերուած նոխազը, բայց այն արդէն այրուած էր: Մովսէսը բարկացաւ Եղիազարի ու Իթամարի՝ Ահարոնի ողջ մնացած որդիների վրայ 17 եւ ասաց. «Ինչո՞ւ սուրբ վայրում չկերաք մեղքերի քաւութեան համար արուած ողջակէզը: Չէ՞ որ այն սրբութիւնների սրբութիւն է, այն տուել էի ձեզ, որ ուտէք, վերացնէք ժողովրդի մեղքերը եւ քաւութիւն տաք նրան Տիրոջ առաջ, 18 բայց զոհի արիւնից սրբարանից ներս չբերուեց: Արդ, պէտք է ուտէք մի սուրբ վայրում, ինչպէս ինձ է հրամայուած»: 19 Ահարոնը պատասխանեց Մովսէսին եւ ասաց. «Այսօր, երբ մեղքերի քաւութեան համար զոհաբերութիւն արեցին եւ ողջակէզներ մատուցեցին Տիրոջ առաջ, եւ ինձ հետ տեղի ունեցան այս դժբախտ դէպքերը, որքան աւելի Տիրոջը հաճելի պիտի չլինէր, եթէ ես ուտէի մեղքերի քաւութեան համար սահմանուած զոհից»: 20 Մովսէսը լսեց նրա ասածը եւ դա հաճելի թուաց նրան:

ՄԱՔՐՈՒՐ ԵՒ ՊԻՂԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ
(Բ Օր. 14.3-21)

11 Տէրը խօսեց Մովսէսի եւ Ահարոնի հետ ու ասաց. 2 «Դիմեցէ՛ք Իսրայէլի որդիներին եւ ասացէ՛ք. "Սրանք են երկրի վրայ եղած այն անասունները, որ կարող էք ուտել: 3 Կ'ուտէք բոլոր կճղակաբաշխ՝ թաթերը երկուսի բաժանուած եւ որոճացող կենդանիները: 4 Մի՛ կերէք այն կենդանիները, որոնք թէեւ որոճում են, բայց կճղակաբաշխ չեն, ինչպէս ուղտը, որը թէեւ որոճում է, բայց երկկճղակ չէ, ուրեմն նա ձեզ համար պիղծ է, 5 նապաստակը, որը թէեւ որոճում է, բայց երկկճղակ չէ, ուրեմն նա ձեզ համար պիղծ է, 6 ճագարը, որը թէեւ որոճում է, բայց երկկճղակ չէ, ուրեմն նա ձեզ համար պիղծ է, 7 խոզը, որը թէեւ կճղակաբաշխ է՝ կճղակներ ունի, բայց չի որոճում, ուրեմն նա ձեզ համար պիղծ է: 8 Ո՛չ դրանց միսը կերէք, ո՛չ էլ դրանց դիակին մօտեցէք, քանի որ դրանք ձեզ համար պիղծ են:

9 Ահա թէ ինչ պիտի ուտէք ջրերի մէջ եղած կենդանիներից. նրանք, որ ունեն լողակներ ու թեփուկ եւ ապրում են ջրերում, ծովերում եւ վտակներում: 10 Ջրերում, ծովերում ու վտակներում ապրող, բայց լողակներ ու թեփուկ չունեցող կենդանիներ մի՛ կերէք, նոյնպէս եւ՝ այն կենդանիները, որ ջրերից են բխում եւ կամ կենդանի շունչ ունեն ջրերում, քանի որ դրանք պիղծ են եւ պիղծ կը լինեն ձեզ համար: 11 Դրանց միսը չուտէք եւ դրանց դիակներից գարշեցէ՛ք, 12 որովհետեւ ջրի մէջ եղած բոլոր այն կենդանիները, որոնք լողակներ ու թեփուկ չունեն, թող ձեզ համար պիղծ համարուեն:

13 Սրանք են այն թռչունները, որոնցից պէտք է գարշէք եւ որոնց միսը պիտի չուտէք, որովհետեւ ձեզ համար պիղծ են. արծիւ, պասկուճ[†], գետարծիւ, 14 անգղ, ցին եւ այն, ինչ սրանց նման է: 15 Նաեւ ագռաւ եւ այն, ինչ սրա նման է, 16 ջայլամ, բու, որոր եւ այն, ինչ սրանց նման է, 17 բազէ եւ այն, ինչ սրա նման է, հաւապատիր[‡], հողամաղ, 18 քաջահաւ, սոխակ, հաւալուսն, կարապ, 19 արագիլ, քարաղր[‡] եւ այն, ինչ սրանց նման է, այլեւ՝ յոպոպ եւ չղջիկ:

20 Չորս ոտքով քայլող ամէն մի թռչնազգի զեռուն թող պիղծ համարուի ձեզ համար: 21 Թռչնազգի զեռուններից կ'ուտէք դրանք, որոնք քայլում են չորս ոտքով, որոնց ոտքերը գետնի վրայ ոստոստելու համար սրունք ունեն: 22 Կ'ուտէք հետեւեալները. ջորեակ[†] եւ այն, ինչ սրա նման է, խարագուլ[†] եւ այն, ինչ սրա նման է, մորեխ եւ այն, ինչ սրա նման է, օձամարտ մորեխ եւ այն, ինչ սրա նման է:

23 Թռչնազգի ամէն մի այլ զեռուն, որ չորս ոտք ունի, պիղծ է ձեզ համար. դրանցով չպղծուէք: 24 Դրանց դիակին դիպչող ամէն ոք մինչեւ երեկոյ թող պիղծ համարուի: 25 Ամէն ոք, ով ձեռք կը տայ դրանց դիակին, պէտք է լուանայ իր հագուստները եւ պիղծ համարուի մինչեւ երեկոյ: 26 Կճղակաւոր այն բոլոր անասունները, որոնց կճղակը կիսուած չէ, եւ չեն որոճում, ձեզ համար թող պիղծ համարուեն: Ով որ դիպչի դրանց դիակին, մինչեւ երեկոյ թող պիղծ համարուի: 27 Չորքոտանի բոլոր այն կենդանիները, որոնք միայն առջեւի թաթերի վրայ են քայլում, ձեզ համար թող պիղծ համարուեն: Ով դիպչի դրանց դիակին, մինչեւ երեկոյ թող պիղծ համարուի: 28 Ով ձեռք տայ դրանց դիակին, պէտք է լուանայ իր հագուստները. նա պիղծ պէտք է համարուի մինչեւ երեկոյ, որովհետեւ այդ բոլորը ձեզ համար պիղծ է:

29 Երկրի վրայ փորսող գնացող բոլոր կենդանիներից ձեզ համար պիղծ են. աքիսը[‡], մուկը, տիտեռը[§], 30 առնէտը, քամելէոնը, բծաւոր մողէսը, մողէսն ու խլուրդը: 31 Երկրի վրայ փորսող գնացող այս բոլոր կենդանիները պիղծ են ձեզ համար: Ով որ դիպչի դրանց դիակին, թող պիղծ համարուի մինչեւ երեկոյ:

32 Ինչի վրայ որ ընկնի դրանց դիակը, թող պիղծ համարուի, լինի դա փայտից պատրաստուած ամէն տեսակի անօթ, զգեստ, կաշի կամ քուրձ. ամէն մի անօթ, որն ինչ-որ բանի համար կը գործածուի, թող լուացուի ջրով: Այդ անօթը թող պիղծ համարուի մինչեւ երեկոյ, որից յետոյ այն թող մաքուր համարուի: 33 Եթէ խեցէ որեւէ անօթի մէջ դրանցից ընկնի, անօթի մէջ եղածը թող պիղծ համարուի, իսկ անօթը թող

[†]Կեռ կտուցով թռչուն:
[‡]Թռի տեսակ:

[†]Մորեխի տեսակներ:
[‡]Յօթանասնից բնագրում՝ կատուն:
[§]Մողէսի տեսակ:

ջարդեն:
34 Ամէն մի կերակուր, որի վրայ
կ'ընկնի այդպիսի պղծուած անօթի
ջուրը, թող պիղծ համարուի: Այդպիսի
անօթի մէջ գտնուող ամէն մի խմիչք
թող պիղծ համարուի: 35 Ինչի վրայ որ
ընկնի դրանց դիակը, թող պիղծ
համարուի: Թոնիրներն ու կասկարան-
ները թող ջարդուեն, քանի որ պղծուած
են լինում, եւ պիղծ թող համարուեն ձեզ
համար:
36 Ջրի աղբիւրները, ջրհորներն ու
ջրակոյտերը թող մաքուր համարուեն
ձեզ համար†: Ով որ դիպչի դրանց մէջ
ընկած դիակին, թող պիղծ համարուի:
37 Եթէ դրանց դիակն ընկնի ցանելու
սերմացուի վրայ, ապա սերմացուն
մաքուր թող համարուի, 38 իսկ եթէ
սերմացուի վրայ ջուր թափելուց յետոյ
դրա վրայ ընկնեն պիղծ կենդանիների
դիակներ, ապա այդ սերմացուն թող
անմաքուր համարուի ձեզ համար:
39 Եթէ ձեզ համար ուտելու ենթակայ
անասուններից որեւէ մէկը սատկի,
ապա դրա դիակին դիպչողը թող մինչեւ
երեկոյ պիղծ համարուի: 40‡ Ով ձեռք
տայ դրա դիակին, նա պէտք է լուանայ
իր զգեստները. նա պիղծ պէտք է հա-
մարուի մինչեւ երեկոյ:
41 Երկրի վրայ փոքրսող գնացող ամէն
մի կենդանի թող պիղծ համարուի ձեզ
համար, ուրեմն եւ թող չուտուի: 42 Մի՛
կերէք բոլոր այն կենդանիները, որոնք
սողում են իրենց որովայնի վրայ, բոլոր
այն կենդանիները, որոնք սողում են
չորս ոտքով, նաեւ բազմոտանիները,
երկրի վրայ սողացող բոլոր զեռունները,
քանի որ դրանք ձեզ համար պիղծ են:
43 Մի՛ ապականէք ձեզ երկրի վրայ
սողացող սողուններով, դրանցով մի՛
պղծուէք եւ դրանց պատճառով անմա-
քուր մի՛ դարձէք:
44 Ե՛ս եմ ձեր Տէր Աստուածը:
Սրբուեցէ՛ք եւ սո՛ւրբ եղէք, որովհետեւ
ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ: Դուք
ձեզ մի՛ պղծէք երկրի վրայ սողացող
զեռուններով: 45 Ե՛ս եմ, Տէր Աստուածը,
որ ձեզ դուրս բերեց Եգիպտացիների
երկրից, որպէսզի ձեզ համար Աստուած
լինեմ: Դուք սուրբ եղէք, որովհետեւ ես
սուրբ եմ:
46 Ահա այս է անասունների եւ
թռչունների, ջրերում եւ ցամաքում
շարժուող բոլոր շնչաւորների վերաբե-
րեալ օրէնքը, 47 որպէսզի դուք կարո-
ղանաք զանազանութիւն դնել մաքուրի
եւ անմաքուրի միջեւ, եւ որպէսզի Իս-
րայէլի որդիներին սովորեցնէք, թէ
որոնք են ուտելի կենդանիները, եւ
որոնք են ոչ ուտելի անասունները"»:

ԿԱՆԱՆՑ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

12 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների
հետ եւ ասա՛ նրանց. "Եթէ որեւէ կին
յղիանայ եւ արու զաւակ ծնի, թող նա
անմաքուր համարուի եօթը օր, այսինքն՝
այնքան, ինչքան իր դաշտանի շրջանի
համար է անմաքուր համարւում: 3 Ու-
թերորդ օրը նա թող թլփատի իր
որդուն: 4 Դրանից յետոյ երեսուներեք
օր էլ նա պէտք է սպասի, որպէսզի
մաքրուի իր արիւնը: Նա ոչ մի մաքուր
բանի ձեռք չպիտի տայ եւ սրբարան
չպիտի մտնի, մինչեւ լրանան նրա
մաքրուելու օրերը: 5 Իսկ եթէ նա աղջիկ
զաւակ ունենայ, թող եօթը օր† անմա-
քուր համարուի, այսինքն՝ այնքան,
ինչքան իր դաշտանի շրջանի համար է
անմաքուր համարւում: Դրանից յետոյ
վաթսունվեց օր էլ նա պէտք է սպասի,
որպէսզի մաքրուի իր արիւնը: 6 Երբ
լրանան որդու կամ դստեր ծննդից յետոյ
նրա մաքրութեան համար սահմանուած
օրերը, նա մէկ տարեկան գառ թող
ողջակէզ անի, մի զուլգ աղաւնի կամ
տատրակ թող բերի մեղքերի քաւու-
թեան համար վկայութեան խորանի
դուռը, քահանայի մօտ: 7 Քահանան
այն թող զոհ մատուցի Տիրոջ առաջ,
քաւութիւն տայ նրան, եւ նա կը
մաքրուի իր արեան բխումից: Սա կարգ
է նրանց համար, ովքեր արու կամ
աղջիկ զաւակ են ունենում: 8 Եթէ
ծննդկանն ի վիճակի չէ գառ բերելու,

†Այլ բնագրերում յաւելեալ կայ. *եթէ անգամ պիղծ կենդանիներ ընկած լինեն դրանց մէջ:*

‡Եբրայերէնում համարի սկզբում կայ՝ *որ ուտի դրա դիակից, թող լուայ իր հանդերձները եւ մինչեւ երեկոյ անմաքուր համարուի:*

†Այլ բնագրերում, նաեւ յունարէն եօթանասնիցում՝ *երկու անգամ եօթը օր:*

թող առնի երկու տատրակ կամ աղաւ-
նու երկու ձագ՝ մէկը ողջակէզի, իսկ
միւսը՝ մեղքերի քաւութեան համար:
Քահանան թող զոհ մատուցի դրանք ի
քաւութիւն, որով ծննդկանը կը հա-
մարուի մաքրուած"»:

ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՇԿԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահա-
րոնի հետ եւ ասաց. 2 «Եթէ որեւէ մէկի
մարմնի մաշկի վրայ սպի, պալար,
բշտիկ եւ կամ բորոտութեան ախտա-
նշան երեւայ, թող դիմի Ահարոն քահա-
նային կամ նրա քահանայ որդիներից
մէկին: 3 Քահանան թող զննի նրա
մաշկի վրայի վէրքը: Եթէ վէրքի շուրջն
եղած մազերն սպիտակել են, եւ վէրքն
աւելի խորն է երեւում քան մաշկը,
ուրեմն դա բորոտութեան ախտանշան
է: Քահանան պէտք է զննի եւ նրան
անմաքուր համարի: 4 Եթէ նրա մարմնի
մաշկի վրայի վէրքը մաշկից սպիտակ է
եւ նրանից խորը չի երեւում, ու մազի
գոյնն էլ սպիտակ չէ, այլ մուգ գոյն
ունի, ապա քահանան ախտակրին եօթն
օր պէտք է մեկուսացնի: 5 Քահանան
եօթներորդ օրը պէտք է զննի նրան, եւ
եթէ վէրքը նոյն վիճակում է մնացել,
մաշկի վրայ չի տարածուել, ապա
քահանան նրան պէտք է մեկուսացնի
եւս եօթը օր: 6 Քահանան եօթներորդ
օրը պէտք է մի անգամ եւս զննի, եւ երբ
տեսնի, որ վէրքը մգացել է, մաշկի
գոյնը չի փոխուել, նրան պէտք է
մաքուր համարի, որովհետեւ դա քոսի
նշան է: Նա թող լուանայ իր զգեստները
եւ համարուի մաքուր: 7 Իսկ եթէ քա-
հանայի զննելուց եւ մաքուր համա-
րելուց յետոյ վէրքը տարածուի մաշկի
վրայ, նա պէտք է վերստին դիմի քա-
հանային, եւ սա եթէ նկատի, որ վէրքը
տարածուել է մաշկի վրայ, 8 նրան
պէտք է անմաքուր համարի, որովհետեւ
դա բորոտութեան ախտանշան է:
9 Ուրեմն, եթէ մարդը բորոտութեան
վէրք ունենայ, ապա պէտք է գայ
Ահարոն քահանայի մօտ: 10 Քահանան
պէտք է զննի: Եթէ մաշկի վրայ սպի-
տակ պալար կայ, դրա շուրջն եղած
մազն սպիտակել է, բայց պալարի մէջ
առողջ ու կենդանի միս կայ, 11 ուրեմն
բորոտութիւնը հնացել է նրա մարմնի
մաշկի վրայ: Քահանան պէտք է
անմաքուր համարի եւ մեկուսացնի†
նրան, որովհետեւ նա անմաքուր է:
12 Եթէ բորոտութիւնը գնալով տա-
րածուի նրա մաշկի վրայ, բորոտութիւնը
ծածկի մարմնի ամբողջ մաշկը՝ գլխից
մինչեւ ոտքերը, եւ քահանան նկատի
դա, 13 տեսնի, որ բորոտութիւնը տա-
րածուել է մարմնի ամբողջ մաշկի վրայ,
ապա մաքուր թող համարի հիւանդին,
որովհետեւ նրա մարմինն ամբողջու-
թեամբ սպիտակել է: Եւ նա մաքուր է:
14 Այն օրը, երբ այդ մարդու մաշկի
վրայ գործող վէրք նկատուի, նա թող
անմաքուր համարուի: 15 Քահանան
տեսնելով մաշկի վրայ գործող վէրքը՝
թող նրա ամբողջ մարմինը անմաքուր
համարի, որովհետեւ դա բորոտութիւն
է: 16 Եթէ մաշկի առողջ մասը դարձեալ
փոփոխութեան ենթարկուի եւ սպիտա-
կի, 17 հիւանդը պէտք է գայ քահանայի
մօտ, եւ քահանան պէտք է զննի նրան:
Եթէ նրա վէրքը սպիտակել է, քահանան
թող հիւանդին մաքուր յայտարարի,
որովհետեւ նա մաքուր է:
18 Եթէ մարդ իր մարմնի մաշկի վրայ
խոց ունենայ, եւ դա լաւանայ, 19 բայց
խոցի տեղում սպիտակ-փայլուն, լուս-
նասպիտակ կամ կարմրաւուն հետք ա-
ռաջանայ, ապա նա պէտք է դիմի քա-
հանային: 20 Քահանան պէտք է զննի
նրան: Եթէ վէրքն աւելի խորն է երե-
ւում, քան մաշկը, իսկ վէրքի շուրջն
եղած մազերն էլ սպիտակել են, ապա
քահանան նրան թող անմաքուր համա-
րի: Դա լուսնասպիտակ կամ կարմրա-
ւուն հետքով բորոտութիւն է բորբո-
քուած խոցով: 21 Եթէ քահանան նկա-
տի, որ վէրքի շուրջն եղած մազերը
սպիտակ չեն, այլ՝ մուգ, եւ վէրքն էլ
մաշկից խորը չէ, ապա քահանան
հիւանդին եօթն օր թող մեկուսացնի:
22 Իսկ եթէ խոցը տարածուի մաշկի
վրայ, ապա քահանան նրան թող ան-
մաքուր համարի, քանի որ դա վէրքից
առաջացած բորոտութիւն է: 23 Իսկ եթէ
փայլ ունեցող վէրքը տեղում մնայ՝
չտարածուի, ապա դա սպի է. քահանան
նրան թող մաքուր համարի:

†Եբրայերէնում՝ *չմեկուսացնի:*

24 Եթէ մարմնի մաշկը կրակով այրուած լինի, նրա մաշկն այրուածքից ապաքինուի, իսկ այրուածքի տեղում փայլուն, սպիտակ, կարմրաւուն կամ լուսնասպիտակ բշտիկ առաջանայ, 25 եւ քահանան տեսնի այն ու նկատի, որ մազն սպիտակ՝ փայլուն է դարձել, բշտիկի տեղն աւելի խորն է, քան մաշկը, ուրեմն դա այրուածքից առաջացած բորոտութիւն է: Քահանան հիւանդին թող անմաքուր համարի, որովհետեւ դա բորոտութեան հիւանդութիւն է: 26 Իսկ եթէ քահանան տեսնի, որ դրա վրայ որեւէ փայլուն հետք կամ սպիտակ մազ չկայ, եւ բշտիկի տեղը մաշկից խորը չէ, գոյնը մուգ է, ապա քահանան նրան եօթը օր թող մեկուսացնի: 27 Եօթներորդ օրը քահանան թող զննի նրան. եթէ տեսնի, որ վէրքը տարածուել է մաշկի վրայ, ուրեմն նրան թող անմաքուր համարի, որովհետեւ դա վէրքից առաջացած բորոտութիւն է: 28 Եւ եթէ վէրքը նոյն տեղում մնայ՝ չտարածուի մաշկի վրայ, եւ գոյնն էլ մուգ լինի, ուրեմն դա այրուածքի սպի է: Քահանան մաքուր թող համարի նրան, որովհետեւ դա այրուածքի հետք է միայն:

29 Եթէ տղամարդու կամ կնոջ գլխի կամ կզակի վրայ բորոտութեան վէրք լինի, եւ քահանան զննի այն ու նկատի, 30 որ վէրքի տեղն աւելի խորն է, քան մաշկը, դրա վրայի մազը վերածուել է խարտեաշ աղուամազի, ապա քահանան նրան թող անմաքուր համարի, քանի որ դա գոնջութիւն է՝ գլխի կամ կզակի բորոտութիւն: 31 Եթէ քահանան նկատի գոնջութեան նշանները, այն, որ վէրքի տեղն աւելի խորը չէ, քան մաշկը, եւ ոչ էլ մազն է խարտեաշ դարձել, ապա գոնջացածին թող մեկուսացնի եօթը օր: 32 Քահանան եօթներորդ օրը թող զննի գոնջութեան հետքերը եւ տեսնելով, որ այն չի տարածուել մաշկի վրայ, մազը խարտեաշ չի դարձրել, ոչ էլ վէրքի տեղն է աւելի խորը, քան մաշկը, 33 թող սափրի մաշկի առողջ մասի մազերը, իսկ հիւանդ մասի մազերը թող չսափրի: Քահանան հիւանդին թող մեկուսացնի եւս եօթը օր: 34 Քահանան եօթներորդ օրը վէրքը թող զննի եւ տեսնելով, որ սափրելուց յետոյ վէրքը մաշկի վրայ չի տարածուել, եւ վէրքի տեղն էլ աւելի խորը չէ, քան մաշկը, ուրեմն նրան մաքուր թող համարի, իսկ այդ մարդն իր զգեստները լուանալով՝ մաքուր թող համարուի: 35 Բայց եթէ նրան սափրելուց յետոյ վէրքը տարածուի նրա մաշկի վրայ, եւ քահանան տեսնի, որ վէրքը տարածուել է մաշկի վրայ, 36 նա խարտեաշ մազերի համար թող դարմանուած չհամարի այն, քանի որ հիւանդը անմաքուր է: 37 Եթէ վէրքը մաշկի վրայ չի տարածուել, իսկ դրա շուրջը թուխ մազ է բուսել, ուրեմն հիւանդութիւնն անցել է, հիւանդը մաքուր է: Քահանան թող մաքուր համարի նրան:

38 Եթէ տղամարդու կամ կնոջ մարմնի մաշկի վրայ որեւէ փայլուն, լուսնասպիտակ պսպղուն ախտանշան լինի, 39 եւ քահանան զննելով տեսնի, որ մարմնի մաշկի վրայ փայլուն, լուսնասպիտակ պսպղուն ախտանշան կայ, ապա դա մարմնի մաշկի վրայ տարածուած թեփուկ է, ուրեմն այդ մարդը մաքուր է:

40 Եթէ որեւէ մէկի գլխի մազերը թափուեն, նա հերաթափ է լինում, բայց մաքուր է: 41 Իսկ եթէ նրա գլխի առջեւի մասի մազերը թափուեն, ուրեմն նա ճաղատ է, բայց մաքուր է: 42 Եթէ նրա հերաթափ կամ ճաղատ գլխի վրայ սպիտակ կամ կարմրաւուն վէրք լինի, ապա նրա հերաթափութեան կամ ճաղատութեան տակ բորոտութիւն է թաքնուած: 43 Երբ քահանան զննի այն եւ տեսնի, որ հիւանդի ճաղատութեան վէրքը մարմնի մաշկի բորոտութեան նման սպիտակ է կամ կարմրաւուն, ուրեմն մարդը բորոտ է: Նա անմաքուր է: Քահանան խիստ անմաքուր պէտք է համարի նրան, քանի որ ախտը հէնց նրա գլխի վրայ է:

44† Ով բորոտ է, 45 նա պէտք է պատռուած զգեստներ կրի, գլուխը բաց լինի, բերանը՝ ծածկուած, եւ նա անմաքուր պէտք է համարուի‡: 46 Քանի դեռ հիւանդութիւնը նրա վրայ է, նա անմաքուր պէտք է համարուի: Նա անմաքուր է: Նա պէտք է մեկուսացած մնայ, նրա բնակավայրը բանակատեղիից դուրս պէտք է լինի»:

†Այլ բնագրերում՝ տարբեր տնատումներ:

‡Եբրայերէնում՝ պէտք է բացականչի՝ անմաքուր եմ:

ՕՐԷՆՔՆԵՐ ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆԻՑ ԱԽՏԱՒՈՐՈՒԱԾ ԶԳԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

47 «Եթէ զգեստի վրայ բորոտութեան ախտանշան կայ, լինի այն բրդէ կամ կտաւէ զգեստ, 48 լինի երկար գործուածք, թէ թեւքով, լինի կտաւից թէ բրդից գործուած, անմշակ կամ մշակուած կաշուից կարուած, 49 եթէ այդ ախտանշանը կանաչաւուն կամ կարմրաւուն լինի անմշակ կաշուէ զգեստի, երկար գործուածքի կամ թեւքով զգեստի, ամէն տեսակի աշխատուած կաշուի կամ իրի վրայ, ուրեմն դա բորոտութեան ախտանշան է: Այդ զգեստը պէտք է ցոյց տրուի քահանային: 50 Քահանան պէտք է զննի ախտանշանը եւ ախտաւորուած զգեստը եօթն օր պէտք է մեկուսացնի: 51 Քահանան եօթներորդ օրը պէտք է զննի ախտահարուած զգեստը: Եթէ ախտանշանը տարածուել է զգեստի, երկար, թեւքով, կտաւէ, բրդէ կամ անմշակ ու մշակուած կաշուից պատրաստուած զգեստների, ամէն տեսակ առարկաների վրայ, ուրեմն դա իսկական բորոտութիւն է†: Դա անմաքուր է: 52 Քահանան պէտք է վառի ախտահարուած այդ զգեստները, դրանք լինեն երկար թէ թեւքով, բրդից թէ կտաւից պատրաստուած զգեստներ կամ ամէն տեսակ կաշուէ առարկաներ: Քանի որ դա իսկական բորոտութիւն է, ուրեմն կրակով պէտք է այրուի: 53 Եթէ քահանան տեսնի, որ վարակը չի տարածուած զգեստի վրայ, դա լինի երկար թէ թեւքով, լինի բրդից կամ կտաւից պատրաստուած զգեստ կամ ամէն տեսակ կաշուէ առարկայ, 54 թող նա հրամայի, որ լուանան ախտակիր զգեստը: Այնուհետեւ քահանան ախտակիր զգեստը թող մեկուսացնի եւս եօթը օր: 55 Քահանան թող զննի լուացուած ախտակիր զգեստը: Եթէ ախտանշանի տեսքը չի փոխուել, ուրեմն այն անմաքուր է, նոյնիսկ եթէ ախտը չի տարածուել: Թող այն կրակով այրուի, քանզի ախտը բուն է դրել զգեստի՝ երկար կամ թեւքով հագուստի մէջ: 56 Իսկ եթէ քահանան տեսնի, որ ախտահարուածը լուացուելուց յետոյ մուգ գոյն է ստացել, ապա այդ մասը թող կտրի-անջատի զգեստից, կաշուէ առարկայից, երկար կամ թեւքով հագուստից: 57 Եթէ ախտանշանը նորից երեւայ երկար կամ թեւքով զգեստի, ամէն տեսակ կաշուէ առարկայի վրայ, ուրեմն դա սաստկացող բորոտութեան նշան է. ախտով վարակուածը կրակով թող այրուի, դա լինի երկար կամ թեւքով զգեստ, 58 կաշուից պատրաստուած ամէն տեսակ առարկայ: Եթէ լուացուելուց յետոյ ախտանշանը դուրս գայ դրանից, թող մի անգամ եւս լուացուի, ապա մաքուր համարուի»: 59 Ահա այս թող լինի բրդէ, կտաւէ հագուստի, երկար կամ թեւքով զգեստի կամ ամէն տեսակ կաշուէ առարկայի բորոտութեան մասին օրէնքը, որով այս կամ այն առարկան մաքուր կամ անմաքուր են համարում:

ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆԻՑ ՄԱՔՐՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Այս թող լինի մաքրուելուց յետոյ բորոտի հետ վարուելու կարգը: Նրան թող բերեն քահանայի մօտ: 3 Քահանան թող դուրս գայ բանակատեղիից, զննի նրան եւ համոզուելով, որ բորոտութեան ախտանշանը նրա վրայից վերացել է, 4 թող հրաման տայ, որ ապաքինուածի համար բերեն երկու կենդանի մաքուր թռչուն, եղեւնու փայտ, կարմիր մանուածք† եւ ծոթրին: 5 Քահանայի հրամանով թռչուններից մէկը թող մորթեն խեցէ անօթի մէջ, ակնաղբիւրի հոսող ջրի վրայ: 6 Ապա քահանան թող վերցնի կենդանի մնացած թռչունը, եղեւնու փայտը, կարմիր մանուածքն ու ծոթրինը եւ դրանք, ինչպէս նաեւ կենդանի մնացած թռչունը, թող թաթախի ակնաղբիւրի հոսող ջրի վրայ մորթուած թռչունի արեան մէջ: 7 Նա բորոտութիւնից ապաքինուածի վրայ դրանից

†Եբրայերէնում չկայ կտաւի կամ բրդի վրայ:

†4, 6, 49, 51 համարներում եբրայերէնում՝ կրկնակի:

եօթն անգամ թող ցանի եւ մաքրի նրան, իսկ կենդանի մնացած թռչունը թող բաց թողնի դէպի դաշտ: 8 Մաքրուածը թող լուանայ իր զգեստները, ածիլի իր մարմնի բոլոր մազերը, լուացուի ջրով եւ դրանից յետոյ թող մաքուր համարուի: Ապա նա թող մտնի բանակատեղի, բայց իր վրանից դուրս ապրի եօթը օր: 9 Եօթներորդ օրը նա թող ածիլի իր մարմնի բոլոր մազերը. ե՛ւ գլուխը, ե՛ւ մօրուքը, ե՛ւ յօնքերը. այո՛, պէտք է ածիլի մարմնի բոլոր մազերը: Թող ջրով լուանայ իր զգեստները, մարմինը, որից յետոյ նա մաքուր թող համարուի:

10 Ութերորդ օրը նա թող առնի մէկ տարեկան ոչ արատաւոր երկու գառ, մէկ տարեկան ոչ արատաւոր մի էգ գառ, իւղով հունցուած երեք տասներորդական գրիւ[†] ընտիր ալիւր անարիւն զոհաբերութեան համար եւ մէկ բաժակ իւղ: 11 Մաքրող քահանան մաքրուող մարդուն եւ զոհաբերութեան ընծաները թող բերի վկայութեան խորանի առաջ: 12 Քահանան թող վերցնի մի գառը, այն թող զոհաբերի մեղքերի քաւութեան համար, վերցնի նաեւ մէկ բաժակ իւղը եւ այն որպէս ընծայ մատուցի Տիրոջ առաջ: 13 Միւս գառը թող մորթի այն վայրում, ուր մորթում են ողջակէզն ու մեղքերի քաւութեան զոհը, այսինքն՝ սուրբ վայրում: Մեղքերի քաւութեան համար արուած զոհը, ինչպէս եւ յանցանքի քաւութեան համար արուած զոհը, պատկանում է քահանային, եւ դա սրբութիւնների սրբութիւն է: 14 Քահանան թող վերցնի յանցանքների քաւութեան համար արուած զոհի արիւնից եւ քսի մաքրուողի աջ ականջի բլթակին, նրա աջ ձեռքի բթամատին ու նրա աջ ոտքի բթամատին: 15 Քահանան վերցնելով բաժակի միջի իւղից՝ այն թող լցնի իր ձախ ձեռքի ափի մէջ: 16 Քահանան իր ձախ ձեռքի ափի իւղի մէջ թող թաթախի աջ ձեռքի մատը եւ այդ մատով եօթն անգամ ցանի Տիրոջ առաջ: 17 Իր ձախ ձեռքի ափի մնացած իւղը քահանան թող քսի մաքրուածի աջ ականջի բլթակին, նրա աջ ձեռքի բթամատին եւ նրա աջ ոտքի բթամատին՝ այն տեղերը, որտեղ քսւում է յանցանքների համար զոհաբերուածի արիւնը: 18 Քահանան իր ձեռքի ափի մէջ մնացած իւղը թող քսի մաքրուողի գլխին: 19 Քահանան նրան թող քաւութիւն տայ Տիրոջ առաջ: Քահանան մեղքերի քաւութեան զոհաբերութիւնը կատարելով՝ մաքրուողին քաւութիւն է տուած լինում իր մեղքերից: Դրանից յետոյ քահանան թող մորթի ողջակէզը եւ ողջակիզուածն ու զոհաբերուածը դնի զոհասեղանին, Տիրոջ առաջ: 20 Քահանան թող այդպէ՛ս քաւութիւն տայ մաքրուողի մեղքերին, եւ այդ մարդը թող մաքրուի:

21 Եթէ նա աղքատ է եւ չունի այդ կարողութիւնը, իր կատարած յանցանքի քաւութեան համար թող զոհաբերի մէկ գառ, իւղով հունցուած մէկ տասներորդական գրիւ ընտիր ալիւր, մէկ բաժակ իւղ 22 եւ երկու տատրակ կամ աղաւնու երկու ձագ՝ այն, ինչ կարող է: Մէկը պիտի մատուցուի մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը՝ որպէս ողջակէզ: 23 Այս բոլորը նա ութերորդ օրը թող տանի քահանայի մօտ, որ նրան մաքրեն Տիրոջ առաջ, վկայութեան խորանի դռան մօտ: 24 Քահանան, վերցնելով յանցանքի քաւութեան համար զոհաբերուելիք գառն ու իւղի բաժակը, թող մատուցի Տիրոջ առաջ»: 25 Քահանան թող մորթի յանցանքի քաւութեան գառը, ապա, վերցնելով յանցանքի քաւութեան համար զոհաբերուածի արիւնից, թող քսի մաքրուողի աջ ականջի բլթակին, նրա աջ ձեռքի բթամատին ու նրա աջ ոտքի բթամատին: 26 Քահանան այդ իւղից թող լցնի իր ձախ ձեռքի ափի մէջ, 27 եւ աջ ձեռքի մատով ձախ ձեռքի ափի մէջ եղած իւղից եօթն անգամ թող ցանի Տիրոջ առաջ: 28 Քահանան իր ձեռքում եղած իւղից թող քսի մաքրուողի աջ ականջի բլթակին, նրա աջ ձեռքի բթամատին եւ նրա աջ ոտքի բթամատին՝ այն տեղերը, որտեղ քսւում է յանցանքների համար զոհաբերուածի արիւնը: 29 Իր ձեռքի ափի մէջ մնացած իւղը քահանան թող քսի մաքրուողի գլխին եւ քաւութիւն տայ նրան Տիրոջ առաջ: 30 Իր կարողութեան չափով տատրակներից կամ աղաւնիների ձագերից մէկը 31 թող զոհ մատուցի մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը անարիւն զոհաբերութեան հետ ողջակէզ անի Տիրոջ առաջ: Քահանան թող այսպէ՛ս քաւութիւն տայ մաքրուողին Տիրոջ առաջ: 32 Այս է չափաւոր կարողութեան տէր բորոտի մաքրուելու կարգը»:

[†]Շուրջ ինը կիլոգրամ:

ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆ ՏՆԵՐԻ ՄԷՋ

33 Տէրը խօսեց Մովսէսի եւ Ահարոնի հետ ու ասաց. 34 «Երբ դուք մտնէք Քանանացիների երկիրը, որը ես ձեզ իբրեւ սեփականութիւն եմ տալու, եւ ձեր սեփականութիւնը հանդիսացող այդ երկրի տներում բորոտութեան վարակ տարածեմ, 35 այն ժամանակ տանտէրը թող գայ եւ քահանային պատմի ու ասի, թէ՝ "Ինչ-որ ախտանշան երեւաց իմ տանը": 36 Քահանայի հրամանով տունը կը դատարկեն, մինչ քահանան այդ տունը կը մտնի զննելու համար, որպէսզի տան մէջ գտնուող ոչ մի բան անմաքուր չլինի: Դրանից յետոյ քահանան թող մտնի տունն ստուգելու: 37 Քահանան տան պատերին կը տեսնի ախտանշանը՝ տեղ-տեղ խորն ընկած կանաչաւուն կամ կարմրաւուն բծեր, որոնց մակերեսն աւելի խորն է, քան պատինը: 38 Քահանան, ելնելով տան դռնից դուրս, թող կարգադրի, որ տունը եօթն օր փակի տակ պահուի: 39 Քահանան եօթներորդ օրը նորից թող գայ եւ զննի տունը: Եթէ տեսնի, որ ախտանշանները տարածուած են տան պատերին, 40 հրաման թող տայ, որ քանդեն-հանեն այն քարերը, որոնց վրայ ախտանշան կայ: Թող այդ քարերը հանեն քաղաքից դուրս, մի անմաքուր տեղ: 41 Թող ամբողջութեամբ քերեն տան ներսը եւ քերուածը հանեն քաղաքից դուրս, մի անմաքուր տեղ: 42 Այնուհետեւ թող առնեն յղկուած այլ քարեր, դրանք տեղադրեն հանուած քարերի տեղում, ուրիշ հող բերեն ու ծեփեն տունը: 43 Եթէ քարերը տեղահանելուց, պատերը քերելուց եւ նորից ծեփելուց յետոյ տան մէջ վերստին երեւայ ախտանշանը, 44 ապա քահանան նորից թող մտնի ու զննի. եթէ ախտանշանը տարածուած է տան մէջ, ուրեմն տան մէջ իսկական բորոտութիւն կայ. այդ տունը անմաքուր է: 45 Պէտք է քանդել տունը եւ նրա փայտերը, նրա քարերն ու տան ամբողջ հողը պէտք է հանել քաղաքից դուրս, մի անմաքուր տեղ: 46 Փակի տակ պահուած բոլոր օրերին ով որ մտնի այդ տունը, մինչեւ երեկոյ թող անմաքուր համարուի: 47 Ով որ քնի այդ տան մէջ, պէտք է լուանայ իր զգեստները: Նա անմաքուր պէտք է համարուի մինչեւ երեկոյ: Ով որ ուտի այդ տան մէջ, պէտք է լուանայ իր զգեստները: Նա անմաքուր պէտք է համարուի մինչեւ երեկոյ: 48 Եթէ քահանան գայ մտնի, զննի ու տեսնի, որ այդ տունը ծեփուելուց յետոյ ախտանշանը չի տարածուել տան մէջ, թող այն մաքուր յայտարարի, քանի որ ախտը բուժուած է: 49 Տունը մաքրելու համար քահանան թող առնի երկու կենդանի մաքուր թռչուն, եղեւնու փայտ, կարմիր մանուածք եւ ծոթրին: 50 Քահանան թռչուններից մէկը թող մորթի խեցէ անօթի մէջ, ակնաղբիւրի հոսող ջրի վրայ: 51 Ապա քահանան թող վերցնի եղեւնու փայտը, կարմիր մանուածքը, ծոթրինն ու կենդանի մնացած թռչունը եւ դրանք թող թաթախի ակնաղբիւրի հոսող ջրի վրայ մորթած թռչունի արեան մէջ: Նա այդ տան վրայ եօթն անգամ թող ցանի այն: 52 Տունը թող մաքրի թռչունի արեամբ, աղբիւրի ջրով, կենդանի մնացած թռչունով, եղեւնու փայտով, ծոթրինով եւ կարմիր մանուածքով, 53 իսկ կենդանի մնացած թռչունը բաց թողնի քաղաքից դուրս, դէպի դաշտ: Երբ քահանան այդ տան համար քաւութեան զոհաբերութիւն կատարի, եւ տունը մաքրուի, այդ տունը մաքուր կը լինի: 54 Ահա ա՛յս թող լինի բորոտութեան ու գոնջութեան բոլոր ախտանշանների համար կիրառուող կարգը, 55 նաեւ զգեստի ու տան բորոտութեան, 56 սպիի, ուռուցքի ու բշտիկի, 57 թէ ո՛ր օրը մարդն անմաքուր է եւ ո՛ր օրը՝ մաքուր: Այս է բորոտութեան վերաբերեալ կարգը:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

15 *Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի*

*որդիների հետ ու ասա՛ նրանց. "Եթէ
որեւէ այր մարդու մարմնից սերմի
ծորում† լինի, նրա այդ ծորումը անմա-
քուր է: 3 Մարմնից սերմ ծորող եւ
սերմի ծորումից մարմինը հիւծուող
մարդու մաքրուելու կարգը այս է. իր
մարմնից ծորում լինելու եւ ծորումից
մարմինը հիւծուելու բոլոր օրերը
անմաքրութեան շրջան թող համարուեն
իր համար: Դա մարմնի անմաքրութիւն
է: 4 Ամէն անկողին, որի մէջ սերմի
ծորում ունեցողն է քնում, անմաքուր
թող համարուի. այն ամէնը, որի վրայ
նա կը նստի, թող անմաքուր համարուի:
5 Ով որ դիպչի նրա անկողնին, պէտք է
լուանայ իր զգեստները, իսկ ինքը
լուացուի ջրով: Նա անմաքուր է հա-
մարւում մինչեւ երեկոյ: 6 Ով որ նստի
սերմի ծորում ունեցողի նստած առար-
կայի վրայ, պէտք է լուանայ իր զգեստ-
ները, իսկ ինքը լուացուի ջրով: Նա
անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ:
7 Ով որ դիպչի սերմի ծորում ունեցողի
մարմնին, նա պէտք է լուանայ իր
զգեստները, իսկ ինքը լուացուի ջրով:
Նա անմաքուր է համարւում մինչեւ
երեկոյ: 8 Եթէ սերմի ծորում ունեցողի
թուքը դիպչի մաքուր մարդու, սա
պէտք է լուանայ իր զգեստները, իսկ
ինքը լուացուի ջրով: Նա անմաքուր է
համարւում մինչեւ երեկոյ: 9 Էշի թամ-
բը, որի վրայ նստած է եղել սերմի ծո-
րում ունեցողը, անմաքուր է համարւում
մինչեւ երեկոյ: 10 Ով որ դիպչի սերմի
ծորում ունեցողի տակ գտնուող որեւէ
իրի, անմաքուր է համարւում մինչեւ
երեկոյ‡: 11 Եթէ սերմի ծորում ունեցողը
առանց ձեռքերը լուանալու դիպչի
որեւէ մէկին, սա պէտք է լուանայ իր
զգեստները, իր մարմինը լուայ ջրով: Նա
անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ:
12 Խեցէ որեւէ անօթ, որին կը դիպչի
սերմի ծորում ունեցողը, պէտք է
ջարդուի, իսկ փայտէ բոլոր ամանները
պէտք է լուացուեն ջրով, որպէսզի
մաքուր լինեն:*

†Այլ բնագրերում խօսքը տրիպերի (գոնոր-
բեայի) մասին է:

‡Ցուցաբէնը յաւելեալ ունի. *Ով որ դիպչի
այդ իրին, պէտք է լուանայ իր զգեստները, իսկ
ինքն էլ լուացուի ջրով: Նա պիղծ է համարւում
մինչեւ երեկոյ:*

*13 Երբ սերմի ծորում ունեցողի ծո-
րումը դադարի, նա պէտք է եօթն օր
յատկացնի իր մաքրութեան համար.
լուանայ իր զգեստները, մարմինը լուայ
հոսող ջրով, որից յետոյ մաքուր կը հա-
մարուի: 14 Ութերորդ օրը պէտք է առնի
երկու տատրակ կամ աղաւնու երկու
ձագ, բերի Տիրոջ առաջ, վկայութեան
խորան եւ տայ քահանային: 15 Քահա-
նան դրանցից մէկը պէտք է զոհի
մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը
զոհի իբրեւ ողջակէզ: Քահանան այդ
ձեւով Տիրոջ առաջ պէտք է քաւութիւն
տայ նրան իր ծորումի համար:*

*16 Եթէ որեւէ տղամարդ սերմնահո-
սութիւն ունենայ, նա իր ամբողջ մար-
մինը պէտք է լուայ ջրով: Նա անմա-
քուր է համարւում մինչեւ երեկոյ: 17 Ա-
մէն հագուստ կամ մորթեղէն, որին կը
դիպչի տղամարդու սերմը, պէտք է
լուացուի ջրով: Դա անմաքուր է հա-
մարւում մինչեւ երեկոյ: 18 Երբ մի կին
ընդունի տղամարդու սերմը, երկուսն էլ
պէտք է լուացուեն ջրով: Նրանք անմա-
քուր են համարւում մինչեւ երեկոյ:*

ԿՆՈՋ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*19 Այն կինը, որից արիւն է հոսում, եւ
այդ արեան հոսումն իր մարմնից է, նա
եօթն օր կը լինի իր դաշտանի մէջ: 20 Ով
որ դիպչի նրան, անմաքուր է համար-
ւում մինչեւ երեկոյ: 21 Ինչի վրայ որ
պառկի այդ կինն իր դաշտանի ընթաց-
քում, եւ ինչի վրայ էլ նստի նա, ան-
մաքուր է համարւում: 22 Ով որ դիպչի
նրա անկողնին, պէտք է լուանայ իր
զգեստները, իր մարմինը լուայ ջրով: Նա
անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ:
23 Ով որ դիպչի մի առարկայի, որի վրայ
այդ կինը նստել է, պէտք է լուանայ իր
զգեստները, լուացուի ջրով: Նա անմա-
քուր է համարւում մինչեւ երեկոյ: 24 Ե-
թէ որեւէ մէկը դիպչի այն անկողնին,
որի վրայ պառկել է այդ կինը, կամ այն
առարկային, որի վրայ նստել է նա,
անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ:
Եթէ որեւէ մէկը պառկի նրա հետ, երբ
նրա անմաքրութիւնը դեռ իր մէջ է,
եօթը օր թող անմաքուր համարուի:
Մինչեւ երեկոյ թող անմաքուր համա-*

*րուի նաեւ այն անկողինը, որի վրայ այդ
մարդը կը քնի:
25 Եթէ մի կնոջ դաշտանն անկանոն
է, եւ արիւնը սահմանուած ժամանակից
աւելի երկար է հոսում, նրա այդ բոլոր
օրերը թող համարուեն որպէս դաշտանի
օրեր: Այդ բոլոր օրերի ընթացքում նա
թող անմաքուր համարուի: 26 Այն
անկողինը, որի մէջ նա կը պառկի իր
արիւնահոսութեան օրերին, կանոնաւոր
դաշտանի օրերում իր պառկած անկողնի
նման անմաքուր թող համարուի: Ամէն
առարկայ, որի վրայ նա կը նստի այս
շրջանում, թող անմաքուր համարուի,
ինչպէս որ անմաքուր էր համարւում իր
կանոնաւոր դաշտանի օրերին: 27 Ով որ
դիպչի նրան, թող անմաքուր համարուի:
Նա պէտք է լուանայ իր զգեստները եւ
իր մարմինը լուայ ջրով: Նա անմաքուր
է համարւում մինչեւ երեկոյ: 28 Երբ
դադարի կնոջ արիւնահոսութիւնը, նա
պէտք է հաշուի եօթը օր, ապա մաքուր
կը համարուի: 29 Ութերորդ օրը պէտք է
առնի երկու տատրակ կամ աղաւնու
երկու ձագ, բերի քահանայի մօտ,
վկայութեան խորանի դուռը: 30 Քահա-
նան դրանցից մէկը պէտք է զոհի
մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը՝
իբրեւ ողջակէզ: Քահանան այդ ձեւով
Տիրոջ առաջ պէտք է քաւութիւն տայ
նրան իր արիւնահոսութեան համար, որ
նրան անմաքուր էր դարձրել"»:
31 Իսրայէլի որդիներին խստօրէն
զգուշացրէ՛ք իրենց անմաքրութիւն-
ներից, որպէսզի իրենց մէջ գտնուող իմ
խորանը չպղծեն ու իրենց այդ
անմաքրութեան պատճառով չմեռնեն:
32 Այս է կարգը սերմի ծորում ունեցողի,
33 երազախաբութեան պատճառով ան-
մաքուր դարձածի, արիւնահոսութիւն
ունեցող կնոջ, ծորում ունեցողի, տղա-
մարդ լինի թէ կին, ինչպէս նաեւ
դաշտանի մէջ եղող կնոջ հետ պառկող
տղամարդու մասին:*

ՄԵՂՔԵՐԻ ՔԱՒՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՕՐԸ

16 *Տիրոջը օտար կրակ մատուցելիս†
Ահարոնի որդիների մեռնելուց յետոյ
Տէրը խօսեց Մովսէսի հետ: 2 Տէրն
ասաց Մովսէսին. «Քո եղբայր Ահարո-
նին ասա՛. "Թող ամէն վայրկեան վկա-
յութեան տապանակի առաջ գտնուող
վարագոյրից ներս անցնելով՝ սրբարան
չմտնեն, որպէսզի չմեռնեն. ես տապա-
նակի վրայ երեւալու եմ ամպի մէջ: 3 Եւ
ապա Ահարոնը կը մտնի սրբարան
մեղքերի քաւութեան համար նախրի մի
զուարակով եւ ողջակէզի համար մի
խոյով: 4 Նա սրբագործուած կտաւէ
պատմուճանը թող հագնի, մարմնի
վրայ՝ կտաւէ անդրավարտիքը, մէջքին
կապի կտաւէ գօտին, գլխին դնի կտաւէ
խոյրը, որովհետեւ դրանք սրբագոր-
ծուած հանդերձանք են: Իր ամբողջ
մարմինը թող լուայ ջրով եւ թող հագնի
դրանք:
5 Իսրայէլացիների հօտերի միջից նա
մեղքերի քաւութեան համար երկու նո-
խազ թող առնի եւ մէկ խոյ էլ՝ ողջա-
կէզի համար: 6 Ահարոնը մեղքերի
քաւութեան համար պիտի զոհաբերի
զուարակը եւ դրանով պիտի քաւի իր ու
իր ընտանիքի մեղքերը: 7 Նա թող
վերցնի երկու նոխազները, դրանք
կանգնեցնի Տիրոջ առաջ՝ վկայութեան
խորանի դռան մօտ: 8 Ահարոնը երկու
նոխազների համար թող վիճակ գցի. մի
վիճակը՝ Տիրոջը զոհաբերուելիք նոխա-
զի համար, իսկ միւսը՝ ազատ արձա-
կուելիք նոխազի համար: 9 Ահարոնը
թող մօտեցնի իրեն այն նոխազը, որի
վրայ արձակուելու վիճակ էր ընկել†,
10 թող այն կենդանի կանգնեցնի Տիրոջ
առաջ եւ այն արձակելով ու բաց թող-
նելով դէպի անապատ՝ նրան քաւութիւն
թող անի: Եւ թող նոխազն իր վրայ
վերցնի նրանց անօրէնութիւնները‡:
11 Ապա Ահարոնը թող առնի զուա-
րակը իր մեղքերի քաւութեան համար եւ
թող քաւութիւն տայ իր եւ իր ընտա-
նիքի մեղքերին: Նա իր մեղքերի քա-
ւութեան համար թող մորթի զուարակը:
12 Նա Տիրոջ առաջ գտնուող զոհասե-
ղանի վրայից թող առնի վառուած
ածուխներով լի բուրվառը, իր բուռը
լցնի մանր աղացած խունկ եւ տանի*

†Եբրայերէնում չկայ *օտար կրակ մատու-
ցելիս:*

†Եբրայերէնը յաւելեալ ունի *Տիրոջը մատու-
ցուելու վիճակը* եւ *մեղքերի քաւութեան համար*
այն զոհաբերի Տիրոջը հատուածը:

‡Եբրայերէնում չկայ եւ թող նոխազն իր
վրայ վերցնի նրանց անօրէնութիւնները:

վարագոյրից ներս: 13 Նա խունկը թող դնի կրակի վրայ, Տիրոջ առաջ. խնկի ծուխը կը ծածկի վկայութիւնների տապանակի վրայ գտնուող կափարիչը: Եւ դուք չէք մեռնի: 14 Նա թող առնի զուարակի արիւնից եւ իր մատով ցանի քաւութեան արեւելեան կողմից, իսկ քաւութեան դէմ յանդիման այդ արիւնից իր մատով թող ցանի եօթն անգամ:

15 Տիրոջ առաջ նա թող մորթի ժողովրդի մեղքերի քաւութեան նոխազը եւ դրա արիւնից թող տանի վարագոյրից ներս: Նա այդ արեան հետ թող վարուի այնպէս, ինչպէս վարուեց զուարակի արեան հետ. նա դրա արիւնը թող ցանի զոհասեղանի վրայ, քաւութեան դէմ յանդիման: 16 Նա այդ կերպ սրբարանը թող մաքրի իսրայէլացիների պղծութիւններից՝ նրանց կատարած անիրաւութիւններից ու գործած բոլոր մեղքերից: Նոյն կերպ թող վարուի իրենց աղտեղութեամբ պղծուած վկայութեան խորանի հետ: 17 Երբ Ահարոնը վկայութեան խորան մտնի եւ քաւութիւն անի, ոչ ոք վկայութեան խորանում չպէտք է լինի, մինչեւ որ նա դուրս գայ: Նա քաւութիւն թող անի իր, իր ընտանիքի եւ Իսրայէլի ամբողջ ժողովրդի համար: 18 Այնուհետեւ նա թող դուրս գայ եւ գնայ դէպի Տիրոջ առաջ գտնուող զոհասեղանը եւ քաւութեան ծէս կատարի դրա վրայ: Նա թող առնի զուարակի արիւնից ու նոխազի արիւնից եւ շուրջանակի թող քսի զոհասեղանի եղջիւրաւոր անկիւններին: 19 Նա այդ արիւնից իր մատով եօթն անգամ թող ցանի դրա վրայ եւ Իսրայէլի որդիների պղծութիւնից թող մաքրի այն ու սրբացնի:

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՆՈԽԱԶԸ

20 Նա այսպիսով թող աւարտի վկայութեան խորանի ու զոհասեղանի սրբագործութիւնը: Նա թող սրբագործի նաեւ քահանաներին: Նա թող մօտ բերի կենդանի նոխազը: 21 Ահարոնն իր ձեռքերը թող դնի կենդանի նոխազի գլխին, խոստովանի Իսրայէլի որդիների գործած բոլոր անօրէնութիւնները, նրանց բոլոր յանցանքներն ու բոլոր մեղքերը: Նա դրանք թող թափի կենդանի նոխազի գլխին եւ յարմար մի մարդու միջոցով այն ազատ արձակի դէպի անապատ: 22 Այս նոխազն իր վրայ պիտի վերցնի իսրայէլացիների գործած բոլոր մեղքերը անմարդաբնակ մի վայրում: Ահարոնն այդ նոխազը պիտի արձակի դէպի անապատ:

23 Ահարոնն այնուհետեւ պիտի մտնի վկայութեան խորանը, պիտի հանի կտաւէ պատմուճանը, որը հագել էր սրբարան մտնելու ժամանակ, եւ այն պիտի թողնի այնտեղ: 24 Նա սրբարանում իր մարմինը պիտի լուայ ջրով, հագնի իր պատմուճանը եւ, դուրս գալով, զոհաբերի իր ողջակէզն ու ժողովրդի ողջակէզը, որով նա քաւած պիտի լինի իր, իր ընտանիքի եւ ժողովրդի, ինչպէս նաեւ քահանաների գործած մեղքերը: 25 Մեղքերի քաւութեան համար զոհաբերուող կենդանիների ճարպը թող դնեն† զոհասեղանի վրայ:

26 Մեղքերի քաւութեան համար նոխազն ազատ արձակողը թող լուանայ իր զգեստները, իր մարմինը լուայ ջրով եւ ապա մտնի բանակատեղի:

27 Մեղքերի քաւութեան համար զոհաբերուած զուարակն ու նոխազը, որոնց արիւնը քաւութիւն անելու համար բերուած էր սրբարան, պէտք է հանեն բանակատեղիից դուրս եւ ամբողջութեամբ՝ մորթով, մսով ու կղկղանքով այրեն: 28 Դրանք այրողն այնուհետեւ պէտք է լուանայ իր զգեստները, իր մարմինը լուայ ջրով եւ ապա մտնի բանակատեղի:

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ

29 Սա ձեզ համար յաւիտենական օրէնք թող լինի.

Եօթներորդ ամսուայ տասներորդ օրը զրկանքի պիտի ենթարկէք ձեր մարմինը, այդ օրը ոչ մի գործ չպէտք է անէք: Դա վերաբերում է ե՛ւ տեղաբնակ իսրայէլացուն, ե՛ւ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած պանդխտին: 30 Այդ օրը ձեզ համար մեղքերի քաւութեան օր պիտի լինի,

†Եբրայերէնում՝ թող այրի:

որպէսզի Տիրոջ առաջ մաքրուէք ձեր գործած բոլոր մեղքերից. արդարեւ պիտի մաքրուէք, 31 որովհետեւ դա շաբաթների Շաբաթ է: Սա ձեզ համար պիտի լինի հանգստեան օր, եւ դուք զրկանքի պիտի ենթարկէք ձեր մարմինները: Դա յաւիտենական օրէնք է: 32 Մեղքերի քաւութիւն կարող է տալ այն քահանան, որին օծել են եւ որին իր հօրից յետոյ քահանայագործելու կարո՛ղ կը համարեն: Նա կը հագնի կտաւէ պատմուճանը՝ սուրբ պատմուճանը, 33 կը սրբագործի սրբութիւնների սրբութիւնը, վկայութեան խորանն ու զոհասեղանը, քաւութիւն կը տայ քահանաներին եւ ամբողջ իսրայէլացի ժողովրդին: 34 Իսրայէլի որդիների գործած բոլոր մեղքերի քաւութեան համար սա յաւիտենական օրէնք թող լինի ձեզ»: Այդ արարողութիւնը տարին մէկ անգամ թող կատարուի, ինչպէս Տէրը հրամայեց Մովսէսին:

ԿԱՆՈՆՆԵՐ ԱՐԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

17 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Ահարոնի, նրա որդիների ու բոլոր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց. "Տէրը այս բանը պատուիրեց ձեզ ու ասաց. 3 Իսրայէլացիներից† որեւէ մէկը, եթէ բանակատեղիում արջառ, ոչխար կամ այծ կը մորթի եւ փրկութեան ողջակէզ անելու համար վկայութեան խորանի դուռը չի բերի այն իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ, նաեւ նա, որ դրսում կը մորթի 4 եւ Տիրոջ վկայութեան խորանի դիմաց Տիրոջը զոհ մատուցելու համար վկայութեան խորանի դուռը չի բերի, ապա այդ մարդը արիւնապարտ պիտի համարուի: Նա պիտի սպանուի իր ժողովրդի կողմից որպէս արիւն թափող մարդ: 5 Եւ այս նրա համար, որ Իսրայէլի որդիները իրենց զոհելիք անասունները դաշտում մորթելու փոխարէն բերեն Տիրոջ առաջ, վկայութեան խորանի դուռը, քահանայի մօտ, եւ դրանք մորթեն այստեղ որպէս Տիրոջը մատուցուելիք փրկութեան զոհ: 6 Քահանան արիւնը թող թափի զոհասեղանի շուրջը, Տիրոջ դիմաց, վկայութեան խորանի դռանը, ճարպը թող այրի իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ: 7 Նրանք այլեւս իրենց զոհերը թող չզոհաբերեն կուռքերին, որոնց հաւատալով մարդիկ պոռնկանում էին: Դա ձեզ ու ձեր սերունդների համար յաւիտենական օրէնք թող լինի": 8 Նրանց կ'ասես. "Իսրայէլի որդիներից կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատածներից որեւէ մէկը եթէ ողջակէզ կամ զոհ է մատուցում 9 եւ դա Տիրոջը զոհելու համար վկայութեան խորանի դուռը չի բերում, այդ մարդը թող վերացուի իր ժողովրդի կողմից:

10 Եթէ Իսրայէլի որդիներից կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատածներից մէկը որեւէ կենդանու արիւն ուտի, ես իմ զայրացած հայեացքը կ'ուղղեմ արիւն ուտող այդ մարդու վրայ եւ նրան կը վերացնեմ իր ժողովրդի միջից, 11 որովհետեւ ամէն մի մարմնի շունչը իր արիւնն է: Այդ արիւնը ես եմ տուել ձեզ՝ զոհասեղանի վրայ քաւելու համար ձեր մեղքերը, որպէսզի նրա՛ արիւնով քաւուեն ձեր մեղքերը: 12 Դրա համար էլ Իսրայէլի որդիներին ասել եմ. "Ձեզնից ոչ ոք արիւն թող չուտի: Արիւն թող չուտի նաեւ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած մարդը": 13 Իսրայէլի որդիներից կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած մէկը եթէ որեւէ երէ կամ ուտելի թռչուն որսայ, պէտք է թափի դրա արիւնն ու այն ծածկի հողով, 14 որովհետեւ ամէն մի մարմնի շունչը իր արիւնն է: Ես Իսրայէլի որդիներին ասել եմ. "Ոչ մի մարմնի արիւն չուտէք", որովհետեւ ամէն մի մարմնի շունչը իր արիւնն է: Ով որ ուտի դա, կը վերանայ:

15 Ով մեռելոտի կամ գազանից յոշոտուած կենդանու միս ուտի, լինի նա տեղաբնակ թէ եկուոր, պէտք է լուանայ իր զգեստները, լուայ իր մարմինը: Նա անմաքուր է համարուում մինչեւ երեկոյ: Միայն դրանից յետոյ նա մաքուր կը համարուի: 16 Իսկ եթէ նա իր զգեստները չլուանայ եւ իր մարմինը չլուայ

†Յունարէն բնագրում յաւելեալ կայ. կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած: Տե՛ս ԺԷ, 8, 10:

ՂԵՒՏԱԿԱՆ 18, 19 141

ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

18 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ ու նրանց ասա՛. "Ես եմ ձեր Տէր Աստուածը: 3 Մի՛ արէք այն, ինչ արեցիք Եգիպտացիների երկրում, որտեղ պանդուխտ էիք: Մի՛ արէք այն, ինչ արեցիք նաեւ Քանանացիների երկրում, ուր ձեզ տանելու եմ, եւ նրանց օրէնքներով մի՛ առաջնորդուէք: 4 Կը կատարէք իմ պատգամները եւ կը պահպանէք իմ հրամանները. դրանցով կ'առաջնորդուէք: Ես եմ ձեր Տէր Աստուածը: 5 Պիտի պահպանէք իմ բոլոր հրամաններն ու իմ բոլոր պատգամները. պիտի կատարէք դրանք: Դրանք կատարող մարդը միայն պիտի փրկուի դրանցով: Ես եմ ձեր Տէր Աստուածը:

6 Որեւէ մէկն իր արիւնակից հարազատին թող չմօտենայ նրա ամօթոյքը բանալու նպատակով, որովհետեւ ես եմ Տէրը: 7 Քո հօր ամօթոյքը կամ քո մօր ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո մայրն է: Նրա ամօթոյքը չբանաս: 8 Քո հօր կնոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ դա նաեւ քո հօր[†] ամօթոյքն է:

9 Քո հօրից կամ մօրից ծնուած, քո տան մէջ կամ դրսում ծնուած քրոջդ ամօթոյքը չբանաս: 10 Քո որդու աղջկայ ամօթոյքը կամ քո աղջիկ թոռան ամօթոյքը չբանաս, որովհետեւ դա նաեւ քո՛ ամօթոյքն է: 11 Քո հօր կնոջ դստեր ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա նոյն հօրից ծնուած քո քոյրն է: Նրա ամօթոյքը չբանաս:

12 Քո հօրաքրոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո արիւնակից հարազատն է: 13 Քո մօրաքրոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո մօր արիւնակից հարազատն է: 14 Քո հօրեղբօր ամօթոյքը չբանաս եւ նրա կնոջը չմերձենաս, որովհետեւ նա քո ազգականն է: 15 Քո հարսի ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո որդու կինն է. նրա ամօթոյքը չբանաս: Նրա որդու աղջկայ կամ աղջիկ թոռան հետ չամուսնանաս, որպէսզի չբանաս նրանց ամօթոյքը, որովհետեւ նրանք քո արիւնակից հարազատներն են: Դա ամբարշտութիւն է: 16 Քո եղբօր կնոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ նրա ամօթոյքը քո եղբօրն է պատկանում: 17 Նրա կնոջ եւ դստեր ամօթոյքը չբանաս: Նրա որդու աղջկայ եւ նրա աղջիկ թոռան հետ չամուսնանաս, որպէսզի չբանաս նրանց ամօթոյքը. նրանք քո արիւնակից հարազատներն են: Դա ամբարշտութիւն է: 18 Քեռնուդ հետ չամուսնանաս, քանի դեռ կինդ ողջ է, որովհետեւ մէկի ներկայութեամբ միւսի ամօթոյքը բանալով՝ խանդ կ'առաջացնես:

19 Դաշտանի մէջ գտնուող կնոջ ամօթոյքը բանալով՝ նրա հետ չպառկես:

20 Քո ընկերոջ կնոջ հետ մի՛ պառկիր, որպէսզի նրա հետ չպղծուես:

21 Քո սերնդից ոչ մէկին օտար իշխանի ծառայութեանը չյանձնես[†] եւ դրանով իմ անունը չպղծես, քանզի ես եմ Տէրը:

22 Այր մարդու հետ չպառկես, ինչպէս պառկում ես կնոջ հետ, որովհետեւ դա պղծութիւն է: 23 Ոչ մի անասունի հետ չխառնակուես՝ պղծուելով նրա հետ: Կինը որեւէ անասունի առաջ չկանգնի՝ նրա հետ մերձենալու մտադրութեամբ. դա գարշելի է:

24 Այս ամէն տեսակ անմաքուր արարքներով մի՛ պղծուէք, որովհետեւ նման արարքներով պղծուած ժողովուրդներին ես ձեր առջեւից պիտի վանեմ: 25 Նրանց պատճառով երկիրը գարշելի դարձաւ, ես վեր հանեցի նրա անօրէնութիւնները, եւ երկիրը զզուեց իր բնակիչներից: 26 Պահպանեցէ՛ք իմ օրէնքներն ու իմ բոլոր պատգամները: Ո՛չ տեղաբնակը, ո՛չ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած պանդուխտը չպէտք է կատարի այդ բոլոր պղծութիւնները, 27 որովհետեւ այդ բոլոր պղծութիւնները կատարեցին ձեզնից առաջ այստեղ ապրած մարդիկ, եւ երկիրը պղծուեց: 28 Խուսափեցէ՛ք նրանց կատարած պիղծ արարքներից, որպէսզի երկիրը ձեր գործած արարքների համար ձեզնից նողկանք չզգայ, ինչպէս որ նողկանք զգաց ձեզնից առաջ այստեղ ապրած սերունդներից: 29 Ով որ կատարի նման պիղծ արարքներ, նա կը վերանայ իր ժողովրդի միջից: 30 Կատարեցէ՛ք իմ պահանջները, որպէսզի չկատարէք այն բոլոր օրինազանցութիւնները, որ ձեզնից առաջ կատարուել են այստեղ, եւ մի՛ պղծուէք դրանցով, քանզի ես եմ ձեր Տէր Աստուածը"»:

ՍՐԲՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

19 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ նրանց ասա՛. "Սո՛ւրբ եղէք, քանզի ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ:

3 Թող իւրաքանչիւրդ ակնածի իր հօրից ու իր մօրից:

Պահեցէ՛ք իմ շաբաթ օրերը, քանզի ես եմ ձեր Տէր Աստուածը:

4 Մի՛ հետեւէք կուռքերին եւ ձեզ համար ձուլածոյ աստուածներ մի՛ կերտէք: Ես եմ ձեր Տէր Աստուածը:

5 Եթէ ձեր փրկութեան համար Տիրոջը զոհ մատուցէք, ընդունելի՛ն մատուցեցէք: 6 Զոհը պէտք է ուտուի զոհամատուցման օրն ու յաջորդ օրը, եւ եթէ որեւէ բան մնայ երրորդ օրուան, այն կրակով պէտք է այրուի: 7 Իսկ եթէ մէկն ուտի երրորդ օրը, այն զոհամատուցում չի լինի եւ ընդունելի չի համարուի: 8 Ով երրորդ օրը ուտի այն, մեղք գործած կը լինի, որովհետեւ Տիրոջ սրբութիւնն է պղծած լինում: Իրենց ժողովրդի միջից թող վերանան նրանք, ովքեր կ'ուտեն այդ օրը:

9 Դուք՝ ձեր դաշտերի հնձուորներդ, հունձ անելիս ձեր դաշտերը մինչեւ վերջ մի՛ հնձէք եւ հնձի ժամանակ ընկած հասկերը մի՛ հաւաքէք: 10 Ձեր այգում ճռաքաղ մի՛ արէք, եւ ոչ էլ այգեկութից յետոյ ձեր այգում մնացած խաղողի ողկոյզները հաւաքէք: Դրանք թող մնան տնանկին ու պանդխտին: Ես եմ ձեր Տէր Աստուածը:

11 Մի՛ գողացէք, մի՛ ստէք, ոչ մէկն իր ընկերոջը թող չզրպարտի:

12 Իմ անունով սուտ երդում մի՛ տուէք եւ ձեր Տէր Աստծու անունը մի՛ պղծէք: Ես եմ ձեր Տէր Աստուածը:

13 Քո ընկերոջը մի՛ զրկիր իր իրաւունքից եւ նրա ունեցածը մի՛ յափշտակիր:

Վարձկանի վարձը մինչեւ յաջորդ առաւօտ թող քեզ մօտ չմնայ:

14 Համրին[†] մի՛ վիրաւորիր, կոյրի ոտքերի առջեւ խոչ ու խութ մի՛ դիր: Երկնչի՛ր քո Տէր Աստծուց, քանզի ես եմ քո Տէր Աստուածը:

15 Դատ դատաստանի ժամանակ անիրաւութիւն մի՛ արա, աղքատի հանդէպ աչառութիւն մի՛ արա, հարուստին մի՛ շողոքորթիր: Արդա՛ր դատիր քո ընկերոջը:

16 Քո ազգակիցների հանդէպ նենգութիւն չգործես եւ քո ընկերոջ արեան թափուելուն պատճառ չդառնաս:

Ես եմ ձեր Տէր Աստուածը: 17 Քո հոգում եղբօրդ չատես: Խստագոյնս յանդիմանի՛ր քո ընկերոջը, որպէսզի նրա պատճառով մեղքեր չգործես:

18 Վրէժխնդիր մի՛ լինիր եւ քո ժողովրդի դէմ ոխ մի՛ ունեցիր:

Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպէս ինքդ քեզ, քանզի ես եմ Տէրը: 19 Պիտի պահպանէք իմ այս օրէնքները.

Զթողես, որ քո անասունը այլ տեսակի անասունի հետ խառնակուի:

Քո այգում տարբեր սերմեր մի՛ ցանիր: Երկու տարբեր նիւթերից գործուած գարշելի զգեստներ մի՛ հագիր:

20 Եթէ մի տղամարդ կենակցի մի անազատ կնոջ հետ, որը փրկագնով չի փրկագնուած եւ նրան ազատութիւն չի շնորհուած, եւ որը նախատեսուած է եղել մէկ այլ տղամարդու համար, ապա երկուսն էլ պէտք է հարցաքննուեն, բայց մահուան չպիտի դատապարտուեն, քանի որ կինն անազատ է: 21 Տղամարդը, իր գործած յանցանքը քաւելու համար, վկայութեան խորանի դռան առաջ մեղքերի քաւութեան խոյ պիտի մատուցի Տիրոջը: 22 Քահանան յանցանքների քաւութեան խոյը պիտի զոհաբերի Տիրոջ առաջ՝ որպէս քաւութիւն նրա կատարած մեղքերի, եւ թողութիւն պիտի տայ նրա կատարած մեղքերին:

23 Երբ մտնէք այն երկիրը, որ Տէր Աստուած տալու է ձեզ[‡], ամէն տեսակի

[†]Այլ բնագրերում՝ մօր:

[†]Երրայերէն՝ Մոդոմի համար կրակի միջով չանցկացնես:

[†]Ցունարէն եւ այլ բնագրերում՝ խուլին:

[‡]Երրայերէնում չկայ որ Տէր Աստուած տալու է:

պտղատու ծառեր տնկեցէ՛ք եւ նրա անմաքրութիւնը մաքրեցէ՛ք: Առաջին երեք տարիների բերքը թող անմաքուր լինի ձեզ համար, եւ այն չուտէք: 24 Չորրորդ տարում նրա բոլոր պտուղները պիտի սրբագործուեն Տիրոջ օրհնութեան համար: 25 Հինգերորդ տարում կ'ուտէք դրա պտուղը: Այդ տարուց սկսած կարող էք դրա բերքը ուտել եւ պահեստաւորել:

26 Ես եմ ձեր Տէր Աստուածը[†]: Լեռների վրայ մի կերէ՛ք[‡]: Կախարդութեամբ մի՛ զբաղուէք: Գուշակութիւններ մի՛ արէք թռչունների թռիչքները դիտելով: 27 Ձեր գլխի մազերը մի՛ հիւսէք եւ ձեր մօրուքին ձեւ մի՛ տուէք: 28 Մահացած որեւէ մէկի յիշատակի համար ձեր մարմնի վրայ կտրուածքներ մի՛ արէք: Ձեր մարմնի վրայ դաջուածքներ մի՛ արէք:

29 Ես եմ ձեր Տէր Աստուածը: Մի՛ պղծիր քո դստերը՝ նրան պոռնկացնելով, որպէսզի երկիրը պոռնկութեան մէջ չընկնի ու անօրէնութեամբ չլցուի:

30 Իմ շաբաթ օրերը կը պահէք եւ իմ սրբարանին երկիւղածութեամբ կը մօտենաք, քանզի ես եմ Տէրը:

31 Վհուկներին մի՛ հետեւէք եւ ոգեհմաների հետ մի՛ առնչուէք, որպէսզի նրանցով չպղծուէք:

32 Ես եմ ձեր Տէր Աստուածը[§]: Ալեհեր մարդկանց առաջ ոտքի կը կանգնէք եւ կը պատուէք ծերերին: Պիտի երկնչես քո Աստծուց: Ես եմ քո Տէր Աստուածը:

33 Եթէ ձեր երկրում օտարական հաստատուի, նրան չնեղէք: 34 Ձեր երկրի տեղաբնակի պէս ընդունեցէ՛ք նրան, եւ եկուորը թող բնակուի ձեզ մօտ: Նրան սիրի՛ր քո անձի պէս, որովհետեւ դուք էլ պանդուխտ եղաք Եգիպտացիների երկրում: Ես եմ ձեր Տէր Աստուածը:

35 Դատ դատաստանի ժամանակ որեւէ մէկի հանդէպ անիրաւութիւն մի՛ արէք: Անիրաւութիւն մի՛ արէք նաեւ չափելու, կշռաքարերի ու կշռելու մէջ: 36 Կշեռքները ճիշտ պէտք է լինեն, կշռաքարերը՝ ճշգրիտ, չափամանները՝ ճշգրիտ, հեղուկաչափը՝ ճշգրիտ: Ես եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ հանեց Եգիպտացիների երկրից: 37 Կը պահպանէք իմ բոլոր օրէնքները, իմ բոլոր հրամանները. դրանք կը կատարէք, քանզի ես եմ Տէր Աստուածը"»:

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ

20 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ ու նրանց ասա՛. "Եթէ որեւէ իսրայէլացի կամ իսրայէլացիների մէջ բնակութիւն հաստատած որեւէ պանդուխտ իր զաւակներից որեւէ մէկին ծառայութեան տայ կռապաշտ իշխանի, նա պէտք է մահապատժի ենթարկուի: Այդ երկրի մարդիկ թող քարկոծեն նրան: 3 Ես իմ հայեացքը կը սեւեռեմ նրա վրայ եւ նրան կը վերացնեմ իմ ժողովրդի միջից, քանի որ նա իր զաւակներից մէկին կռապաշտ իշխանի ծառայութեանը յանձնելով՝ պղծել է իմ սրբարանը եւ անարգել իմ սուրբ անունը: 4 Եթէ տեղացի բնակիչները անուշադրութեան մատնեն իր զաւակներից որեւէ մէկին կռապաշտ իշխանի ծառայութեանը յանձնած մարդու արարքն ու չսպանեն նրան, 5 ապա ես իմ հայեացքը կը սեւեռեմ այդ մարդու եւ նրա ցեղի վրայ, իր ժողովրդի միջից կը վերացնեմ նրան ու նրա հետ բոլոր միաբանածներին, ովքեր կռապաշտ իշխանի հետ պոռնկանալու պատճառ դարձան:

6 Վհուկներին ու ոգեհմաներին հետեւելով՝ նրանց հետ պոռնկացող մարդկանց պիտի հետապնդեմ ու վերացնեմ նրանց իրենց ժողովրդի միջից: 7 Սրբագործուեցէ՛ք ու սո՛ւրբ եղէք, քանզի ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ: 8 Պահպանեցէ՛ք ու կատարեցէ՛ք իմ հրամանները: Ես ձեզ սրբագործող Տէր Աստուածն եմ:

9 Եթէ որեւէ մէկը անիծի իր հօրը կամ իր մօրը, նա մահապատժի թող ենթարկուի: Եթէ նա բամբասել է իր հօրը

[†]Այլ բնագրերում ես եմ ձեր Տէր Աստուածը հատուածը կազմում է նախորդ համարի վերջին մասը:

[‡]Եբրայերէն՝ 26 Միսը արեամբ չուտէք:

[§]Այլ բնագրերում ես եմ ձեր Տէր Աստուածը հատուածը կազմում է նախորդ համարի վերջին մասը:

կամ իր մօրը, մահապարտ է:

10 Եթէ որեւէ տղամարդ շնանայ ամուսնացած մի կնոջ կամ իր ընկերոջ կնոջ հետ, մահապատժի թող ենթարկուեն ե՛ւ շնացողը, ե՛ւ շնացեալը:

11 Այն տղամարդը, որ կը պառկի իր հօր կնոջ հետ, ուրեմն նա բացած է լինում իր հօրը ամօթոյքը: Երկուսն էլ թող մահուան դատապարտուեն, քանի որ նրանք ամբարշտացել են եւ մահապարտ են:

12 Եթէ որեւէ մէկը պառկի իր հարսի հետ, թող երկուսն էլ մահուն դատապարտուեն, քանի որ նրանք ամբարշտացել են եւ մահապարտ են:

13 Եթէ որեւէ տղամարդ մի այլ տղամարդու հետ պառկի, ինչպէս կնոջ հետ, նրանք պղծութիւն գործած կը լինեն: Երկուսն էլ մահուան թող դատապարտուեն, որովհետեւ մահապարտ են:

14 Եթէ որեւէ տղամարդ կին առնի մի աղջկայ ու նրա մօրը, դա անօրէնութիւն է: Կրակի մէջ թող այրուեն նա եւ աղջիկն ու նրա մայրը, որպէսզի ձեր մէջ անօրէնութիւն չլինի:

15 Կենդանու հետ կենակցող տղամարդը թող մահապատժի ենթարկուի, իսկ կենդանուն պէտք է սատկեցնել: 16 Խառնակուելու նպատակով որեւէ կենդանու մերձեցող կնոջն ու կենդանուն սպանեցէ՛ք: Նրանք թող սպանուեն, քանի որ մահապարտ են:

17 Եթէ տղամարդն ամուսնանայ իր հօրից կամ մօրից ծնուած խորթ քրոջ հետ եւ տեսնի նրա ամօթոյքը, իսկ խորթ քոյրն էլ տեսնի նրա ամօթոյքը, ապա դա նախատինք է. նրանք պէտք է վերանան իրենց ժողովրդի միջից, որովհետեւ նա իր խորթ քրոջ ամօթոյքն է բացած լինում: Նրանք պիտի ընդունեն իրենց մեղքերի հատուցումը:

18 Եթէ տղամարդը պառկի դաշտանի մէջ գտնուող կնոջ հետ եւ բանայ նրա ամօթոյքը, քանի որ բացել է նրա արեան աղբիւրը, իսկ սա էլ նրան ցոյց է տուել իր արեան աղբիւրը, ուրեմն երկուսն էլ թող վերանան իրենց ժողովրդի միջից:

19 Քո հօրաքրոջ եւ մօրաքրոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ բացած ես լինում մերձաւորներիդ ամօթոյքները: Նրանք իրենց գործած մեղքի համար պատիժ թող կրեն եւ անժառանգ մեռնեն[†]:

20 Եթէ որեւէ տղամարդ պառկի իր քեռու կնոջ հետ, ուրեմն նա բացած է լինում իր քեռուն պատկանող ամօթոյքը: Նրանք իրենց գործած մեղքի համար պատիժ թող կրեն եւ անժառանգ մեռնեն:

21 Եթէ որեւէ տղամարդ պառկի իր եղբօր կնոջ հետ, դա պղծութիւն է. նա բացած է լինում իր եղբօրը պատկանող ամօթոյքը, ուրեմն նրանք անժառանգ թող մեռնեն:

22 Կը պահպանէք իմ բոլոր հրամաններն ու իմ բոլոր պատուիրանները եւ կը կատարէք դրանք: Թող ձեզ չմերժի այն երկիրը, ուր ես տանելու եմ ձեզ՝ այնտեղ բնակուելու համար: 23 Մի՛ հետեւէք այն ժողովուրդների օրէնքներին, որոնց ես վանելու եմ ձեր միջից, որովհետեւ նրանք կատարեցին բոլոր այդ վատ արարքները, եւ ես նողկանք զգացի նրանց հանդէպ: 24 Ես ձեզ ասացի. "Դուք կը ժառանգէք այդ երկիրը, եւ ես ձեզ այն կը տամ իբրեւ սեփականութիւն, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում": Ես եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ առանձնացրեց բոլոր ժողովուրդներից: 25 Ինքնե՛րդ տարբերակեցէք մաքուր եւ անմաքուր անասունները, մաքուր եւ անմաքուր թռչունները, ձեզ մի՛ պղծէք անմաքուր անասուններով, թռչուններով ու երկրի ամէն տեսակ սողուններով, որոնց ես առանձնացրել եմ ձեզ համար իբրեւ անմաքուրների: 26 Ինձ համար սուրբ եղէք, որովհետեւ ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ: Ես ձեզ առանձնացրի բոլոր ժողովուրդներից, որպէսզի իմը լինէք:

27 Եթէ որեւէ տղամարդ կամ կին վհուկ կամ ոգեհմայ լինի, թող մահապատժի ենթարկուի. թող նրանց քարկոծեն, որովհետեւ մահապարտ են"»:

[†]Յունարէն բնագրում եւ (ուրեմն նրանք) անժառանգ մեռնեն չկայ:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

21 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. «Խօսի՛ր Ահարոնի որդիների՝ քահանաների հետ եւ նրանց ասա՛. “Թող նրանք անմաքուր չհամարուեն իրենց ազգականի, բարեկամի կամ իրենց հարեւանի† դիակներին դիպչելով՝ 2 բացառութեամբ երբ կը դիպչեն հօր կամ մօր, որդու կամ աղջկայ, եղբօր կամ քրոջ, չամուսնացած եւ իրենց մօտ ապրող քրոջ դիակներին: Եթէ սրանց դիպչեն, անմաքուր կը համարուեն: 4 Քահանան գլխաւոր դէմք լինելով՝ թող անմաքուր չլինի չթոյլատրուող դիակի դիպչելով: 5 Քահանաները ի նշան սգի իրենց գլուխը թող չածիլեն, մօրուքների ծայրերը չկտրեն եւ իրենց մարմնի վրայ դաջուածքներ չանեն: 6 Թող սուրբ լինեն իրենց Աստծու առաջ եւ չարատաւորեն իրենց Աստծու անունը, որովհետեւ իրենք՝ քահանաներն են, որ զոհ են մատուցում իրենց Տէր Աստծուն: Նրանք սուրբ պէտք է լինեն:

7 Քահանաները պոռնիկ կամ պղծուած կին չպէտք է առնեն: Չպէտք է առնեն նաեւ ամուսնուց բաժանուած կին, որովհետեւ քահանան սուրբ պէտք է լինի իր Տէր Աստծու համար եւ պիտի մաքրի իրեն: 8 Սրբագործուած քահանան է, որ պիտի մատուցի ձեր Տէր Աստծու պատարագը: Նա սուրբ պէտք է լինի, քանզի ես՝ Տէրս, որ սրբագործում եմ քահանաներին, սուրբ եմ: 9 Եթէ քահանայի դուստրը պոռնկութեամբ պղծուի, նա արատաւորած կը լինի իր հօր անունը. նա պէտք է հրով այրուի:

10 Գլխին օծութեան իւղ ունեցող, պատմուճան հագնելու արժանացած եւ իր եղբայրների մէջ աւագ եղող քահանան ի նշան սգոյ գլխարկը թող չհանի, իր հագուստները չպատառոտի, 11 վախճանուած մարդուն չդիպչի, – եթէ նոյնիսկ դա իր հայրը կամ մայրն է, – եւ իրեն չպղծի: 12 Ցուղարկաւորութեանը մասնակցելու համար սրբարաններից թող դուրս չգայ, որպէսզի իր Աստծու սրբարանը չպղծի, որովհետեւ նա իր վրայ կրում է Աստծու օծութեան սուրբ իւղը: Այո՛, ես եմ Տէրը: 13 Աւագ քահանան իր ժողովրդի միջից կոյս աղջիկ պիտի առնի: 14 Այրի, ամուսնալուծուած կամ պոռնիկ կին չպիտի առնի, այլ իր ժողովրդի միջից մի կոյս աղջիկ պիտի առնի որպէս կին: 15 Նա իր սերմը չպիտի պղծի իր ժողովրդի մէջ, որովհետեւ ես եմ Տէրը, որ սրբագործում եմ նրան”»:

16 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց ասաց. 17 «Խօսի՛ր Ահարոնի հետ եւ նրան ասա՛. “Եթէ քո գալիք սերունդներից որեւէ մէկը մարմնական արատ ունենայ, ուրեմն իր Աստծուն նա թող պատարագ չմատուցի: 18 Արատ ունեցող որեւէ մարդ, լինի նա կաղ կամ կոյր, կարճ քթով կամ ականջատ, 19 ձեռքը կամ ոտքը կոտրած, 20 կուզ կամ չիլ†, աչքը վնասուած, քոս, քաղցկեղ կամ մէկ ամորձիք ունեցող, 21 մի խօսքով՝ Ահարոն քահանայի սերնդի մէջ մարմնական արատ ունեցող որեւէ մարդ թող չմօտենայ քո Աստծուն զոհ մատուցելու, որովհետեւ նա մարմնական արատ ունի: Աստծուն զոհ մատուցելու համար նա չպէտք է մօտենայ զոհասեղանին, որովհետեւ Աստծու ընծաները սրբութիւն սրբոց են: 22 Այդ սրբութիւններից նա կարող է ուտել, 23 բայց վարագոյրին թող չմօտենայ եւ զոհասեղանին չդիպչի, որովհետեւ նա մարմնական արատ ունի: Իր Աստծու սրբարանը նա չպէտք է պղծի, քանզի ես եմ Տէրը, որ սրբագործում եմ քահանաներին”»:

24 Մովսէսը Ահարոնին, նրա որդիներին ու բոլոր իսրայէլացիներին հաղորդեց Աստծու այս պատգամները:

ԶՈՀԵՐԻ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

22 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Ահարոնին ու նրա որդիներին ասա՛, որ զգուշութեամբ վարուեն իսրայէլացիների ինձ մատուցած սրբութիւնների հետ, որպէսզի իրենց մատուցած զոհերով չարատաւորեն իմ սուրբ անունը, քանզի ես եմ Տէրը: 3 Նրանց կ՚ասես. “Ձեր յետնորդներից մի մարդ, ինչ սերնդի էլ պատկանի, եթէ անմաքուր վիճակում մօտենայ վկայութեան խորանին, որպէսզի զոհ մատուցի այն, ինչ իսրայէլացիներն են մատուցում Տիրոջը, ապա ես նրան կ՚ոչնչացնեմ, քանզի ես եմ Տէրը: 4 Եթէ Ահարոն քահանայի որդիներից մէկը բորոտ է կամ սերմնահոսութիւն ունի, իրաւունք չունի զոհաբերութիւնների մսից ուտելու, մինչեւ որ չմաքրուի: Ով որ դիպչի մեռելից պղծուած որեւէ բանի, ով որ առնական սերմի կորուստ ունենայ, 5 ով որ մօտենայ մի պիղծ սողունի կամ մի մարդու, որը պղծուած է ամէն տեսակ պղծութիւններով, 6 ով որ դիպչի դրանց, թող անմաքուր համարուի մինչեւ երեկոյ: Նա մատուցուած զոհաբերութիւններից չպէտք է ուտի, մինչեւ որ իր մարմինը չլուայ ջրով: 7 Արեւը մայր մտնելուց յետոյ նա մաքուր թող համարուի եւ դրանից յետոյ միայն նա կարող է ուտել մատուցուած սրբութիւններից, որովհետեւ դա է նրա ուտելիքը: 8 Քահանան սատկած կամ գազանից յօշոտուած կենդանու միս չպէտք է ուտի, որպէսզի անմաքուր չդառնայ: Ես եմ Տէրը: 9 Նրանք պէտք է կատարեն իմ կարգադրութիւնները, որպէսզի մեղք գործած չլինեն եւ իմ պատգամները զանց առնելու պատճառով մահապատժի չենթարկուեն: Ես եմ քահանաներին սրբագործող Տէրը:

10 Որեւէ օտարազգի այդ սրբագործուած ուտելիքից չպէտք է ուտի: Ո՛չ քահանայի մօտ եկած պանդուխտը, ո՛չ էլ վարձկանը այդ սրբագործուած ուտելիքից չպէտք է ուտեն: 11 Իսկ եթէ քահանան դրամով մարդ է գնել, այդ մարդը կարող է ուտել այդ ուտելիքից: Նրա աղախիններից ծնուածները եւս կարող են ուտել նրա ուտելիքից:

12 Եթէ քահանայի դուստրը ամուսնանայ քահանայական ընտանիքից չսերած մի տղամարդու հետ, ապա նա չի կարող ուտել սրբութիւններից: 13 Իսկ եթէ քահանայի դուստրը այրիանայ կամ ամուսնալուծուած լինի եւ առանց զաւակ ունենալու վերադառնայ հայրական տունը, ապա, ինչպէս իր մանկութեան օրերին, կարող է ուտել իր հօր ուտելիքներից: Քահանայական ընտանիքին չպատկանող մարդը իրաւունք չունի դրանից ուտելու:

14 Եթէ որեւէ մէկն անգիտակցաբար ուտի սրբութիւններից, թող իր կերածի արժէքի վրայ աւելացնի դրա մէկ հինգերորդը եւ վերադարձնի քահանային: 15 Թող նրանք չպղծեն այն սրբութիւնների սրբութիւնները, որ Իսրայէլի որդիներն առանձնացրել են Տիրոջ համար: 16 Նրանք սրբութիւնների սրբութիւնն ուտելով՝ իրենց վրայ բերում են մեղքեր ու յանցանքներ: Ես եմ դրանք սրբագործող Տէրը”»:

17 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 18 «Խօսի՛ր Ահարոնի, նրա որդիների ու իսրայէլացի ամբողջ ժողովրդի հետ եւ ասա՛ նրանց. “Եթէ Իսրայէլի որդիներից կամ իսրայէլացիների մէջ բնակութիւն հաստատած եկուորներից մէկը ըստ իր ուխտի կամ ըստ իր ցանկութեան բերի իր նուէրը, որ պիտի մատուցուի Տիրոջը որպէս ողջակէզ, 19 ապա դա թող ընդունելի լինի ձեր կողմից, եթէ այն նախրից բերուած արու եւ ոչ արատաւոր արջառ է, ոչխար կամ այծ: 20 Արատաւոր անասուն չմատուցէք Տիրոջը, որովհետեւ ձեր արածը ընդունելի չի լինի: 21 Եթէ որեւէ մէկը Տիրոջը փրկութեան զոհ մատուցի ըստ իր ուխտի կամ ըստ իր ցանկութեան, լինի դա արուած ուխտ թէ կամաւոր զոհաբերութիւն եւ կամ տօնի առթիւ արուած զոհաբերութիւն, ապա արջառների կամ ոչխարների նախրից բերուած կենդանին ընդունելի կը լինի, եթէ այն արատաւոր չէ: Այն ոչ մի արատ չպէտք է ունենայ: 22 Կոյր, կաղ, ջարդուածք ունեցող, լեզուն կտրած կամ ուռուցք ունեցող, քոսոտ կամ քոր ունեցող անասուն թող չմատուցեն Տիրոջը. դրանցից Տիրոջ զոհասեղանին ողջակէզ չբերէք: 23 Ականջը կտրած կամ պոչատ արջառն ու ոչխարը կարող ես իբրեւ կամաւոր ընծայ մորթել, բայց դա քո արած ուխտի համար ընդունելի չէ: 24 Ամորձիքը ճմլուած, ճզմուած, կռտած կամ կտրած կենդանին Տիրոջը չմատուցէք եւ ձեր բնակած երկրում նման բաներ չանէք: 25 Այլազգի մարդուց նման կենդանիներ չառնէք ձեր Աստծուն զոհաբերելու համար, որովհետեւ դրանք թերութիւններ եւ արատներ

†Եբրայերէնում չկայ հարեւանի բառը:

†Ցուցարէն բնագրում շիլ չկայ:

ունեն: Ձեր կողմից արուած այդ զոհերը ընդունելի չեն լինի ինձ համար»:

26 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 27 *«Նորածին հորթը, գառը կամ ուլը եօթը օր պէտք է մնայ մօր մօտ: Ութերորդ օրից սկսած եւ դրանից յետոյ այն կարող է ընդունելի լինել՝ Տիրոջը զոհաբերուելու համար:* 28 *Կովը, ոչխարը եւ դրանցից ծնուածները միեւնոյն օրը մի՛ մորթէք:*

29 *Եթէ Տիրոջը գոհութեան զոհ ես մատուցում, ապա այն մատուցի՛ր այնպէս, որ քո զոհածը ընդունելի լինի:* 30 *Զոհի միսը պէտք է ուտուի նոյն օրը. այդ մսից յաջորդ օրուան չթողնէք: Ես եմ Տէրը:*

31 *Կը պահպանէք իմ պատուիրանները եւ կը կատարէք դրանք, քանզի ես եմ Տէրը:* 32 *Իմ սուրբ անունը մի՛ արատաւորէք, քանզի ես եմ Տէրը: Ես սուրբ կը լինեմ Իսրայէլի որդիների մէջ: Ես եմ ձեզ սրբագործող Տէրը,* 33 *որ ձեզ հանեց Եգիպտացիների երկրից, որպէսզի ձեր Աստուածը լինի: Ես եմ Տէրը»:*

ԻՍՐԱՅԷԼԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

23 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 2 *«Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ նրանց ասա՛. "Տիրոջը նուիրուած այն տօները, որ սուրբ պիտի կոչէք, հետեւեալներն են*[†]*.*

3 *Վեց օր պիտի աշխատես, իսկ եօթներորդ՝ շաբաթ օրը հանգստեան օր է եւ սուրբ՝ Տիրոջը նուիրուած: Այդ օրը ոչ մի աշխատանք չէք կատարի, որովհետեւ այն Տիրոջը նուիրուած շաբաթ օրն է, երբ հանգստանում են բոլոր տներում:*

ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԸ
(Թուեր 28. 16-25)

4 *Տիրոջը նուիրուած տօները, որոնք սուրբ են հռչակուած եւ որոնք պիտի նշէք, հետեւեալներն են.*

5 *Առաջին ամսի տասնչորսերորդ օրուայ երեկոյեան Տիրոջ Զատիկն է:* 6 *Նոյն ամսի տասնհինգերորդ օրը Տիրոջը նուիրուած Բաղարջակերաց տօնն է. եօթը օր բաղարջ հաց պիտի ուտէք:* 7 *Նշուած առաջին օրը ձեզ համար սուրբ է: Ոչ մի առտնին գործ չպիտի անէք:* 8 *Եօթը օր ողջակէզներ պիտի մատուցէք Տիրոջը, իսկ եօթներորդ օրը սուրբ պէտք է լինի ձեզ համար: Ոչ մի առտնին գործ չպիտի անէք»:*

9 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 10 *«Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ նրանց ասա՛. "Երբ կը մտնէք այն երկիրը, որ ես տալու եմ ձեզ, եւ կը հնձէք նրա հունձը, առաջին խուրձը՝ ձեր հնձի բերքը, կը բերէք քահանային:* 11 *Նա խուրձը պէտք է ընծայաբերի Տիրոջը իբրեւ ձեր կողմից արուած ընդունելի նուէր: Քահանան այն պէտք է ընծայաբերի շաբաթին յաջորդող առաջին օրուայ առաւօտեան:* 12 *Խուրձը ընծայաբերելու օրը նաեւ մէկ տարեկան ոչ արատաւոր ոչխար պէտք է ողջակիզէք Տիրոջ համար:* 13 *Նաեւ զոհաբերուածը՝ իւղով հունցուած երկու տասներորդ գրիւ*[†] *ընտիր ալիւր պիտի մատուցէք: Դա Տիրոջը մատուցուող զոհաբերութիւն է՝ Տիրոջն ընծայաբերուող անուշահոտ զոհ: Իբրեւ նուէր՝ նաեւ մէկ քառորդ դորակ*[‡] *գինի:* 14[§] *Մինչեւ այդ նուէրները ձեր Աստծուն չընծայէք, բաղարջ կարկանդակ, աղացած աղանձ չուտէք: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների մէջ, ձեր բոլոր տներում:*

ՀՆՁԻ ՏՕՆԸ
(Թուեր 28. 26-31)

15 *Հաշուեցէ՛ք. ուխտի խուրձ մատուցելու շաբաթ օրուայ յաջորդ օրուանից ամբողջ եօթը շաբաթ,* 16 *մինչեւ վերջին շաբաթուայ յաջորդ օրն անում է յիսուն օր: Այդ յաջորդ օրն էլ Տիրոջը նոր զոհ կը մատուցէք:* 17 *Ձեր տներից կ'ընծայաբերէք ձեր նուէրը՝ երկու բաղարջ կարկանդակ: Իւրաքանչիւր կարկանդակը պիտի հունցուած լինի երկու տասներորդական գրիւ ընտիր ալիւրով: Թթխմորով պիտի եփուեն դրանք, Տիրոջը տրուող առաջին բերքից:* 18 *Հացերի հետ պիտի մատուցէք մէկ տարեկան ոչ արատաւոր եօթը գառ, նախրից՝ մէկ հորթ եւ ոչ արատաւոր երկու խոյ: Դրանք ողջակէզ պիտի լինեն Տիրոջը: Անարիւն զոհաբերութիւններն ու գինին Տիրոջը մատուցուած անուշահոտ բուրմունք են:* 19 *Առաջին հնձից պատրաստուած բաղարջ կարկանդակների հետ կը մատուցէք մեղքերի քաւութեան համար մէկ նոխազ եւ մէկ տարեկան երկու գառ՝ իբրեւ փրկութեան զոհաբերութիւն:* 20 *Քահանան դրանք առաջին բերքից պատրաստուած բաղարջ կարկանդակների հետ որպէս նուէր պիտի ընծայաբերի Տիրոջ առաջ: Դրանք երկու գառների հետ պէտք է ընծայաբերուեն Տիրոջը եւ պատկանեն մատուցող քահանային:* 21 *Այդ օրը կը համարէք անուանի օր, դա սուրբ թող լինի ձեզ համար: Այդ օրը ոչ մի առտնին գործ չանէք: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների մէջ, ձեր բոլոր տներում:*

22 *Ձեր արտերը հնձելիս կրկին չվերադառնաք չհնձուածը հնձելու կամ հնձի ժամանակ ընկած հասկերը հաւաքելու համար, այլ դրանք աղքատին ու պանդխտին կը թողնէք: Ես եմ ձեր Տէր Աստուածը»:*

ՓՈՂ ՀՆՁԵՑՆԵԼՈՒ ՕՐ
(Թուեր 29. 1-6)

23 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 24 *«Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ ասա՛. "Եօթներորդ ամսի առաջին օրը ձեզ համար հանգստեան օր թող լինի՝ Տիրոջը նուիրաբերուած մի սուրբ տօն, որ շեփորներով է ազդարարւում:* 25 *Այդ օրը ոչ մի առտնին գործ չպիտի անէք, այլ Տիրոջը ողջակէզ պիտի մատուցէք"»:*

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՕՐ
(Թուեր 29. 7-11)

26 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 27 *«Եօթներորդ ամսի տասներորդ օրը Քաւութեան օր է: Այն ձեզ համար անուանի եւ սուրբ օր թող լինի: Ամսի իններորդ օրուայ երեկոյից սկսած ձեր անձը զրկեցէ՛ք եւ Տիրոջը ողջակէզներ մատուցեցէ՛ք:* 28 *Այդ օրը ոչ մի առտնին գործ չանէք, քանզի դա Քաւութեան օր է ձեզ համար, որպէսզի դուք ձեր մեղքերը քաւէք ձեր Տէր Աստծու առաջ:* 29 *Ով այդ օրը իր մարմինը չի զրկի, կը վերանայ իր ժողովրդի միջից:* 30 *Ով այդ օրը գործ կ'անի, կը վերանայ իր ժողովրդի միջից:* 31 *Ոչ մի առտնին գործ չանէք: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների մէջ, ձեր բոլոր տներում:* 32 *Դա շաբաթների շաբաթ թող լինի ձեզ համար: Ամսի իններորդ օրուայ երեկոյից մինչեւ յաջորդ օրուայ երեկոն զրկեցէ՛ք ձեր մարմինը եւ հանգստացէ՛ք»:*

ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆ
(Թուեր 29. 12-40)

33 *Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց.* 34 *«Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ նրանց ասա՛. "Եօթներորդ ամսի տասնհինգերորդ օրը ի պատիւ Տիրոջը եօթը օր պիտի նշէք Տաղաւարահարաց տօնը:* 35 *Առաջին օրը թող սուրբ համարուի, այդ օրը ոչ մի առտնին գործ չանէք:* 36 *Այդ եօթը օրերին ողջակէզներ պիտի մատուցէք Տիրոջը, իսկ եօթներորդ*[†] *օրը ձեզ համար անուանի եւ սուրբ օր թող լինի: Ողջակէզ կը մատուցէք Տիրոջը, որովհետեւ դա տօնի վերջին օրն է: Այդ օրը ոչ մի առտնին գործ չանէ՛ք:* 37 *Սրանք են Տիրոջ պատուին կատարուող տօները, որ դուք պիտի նշէք եւ դրանք սուրբ պիտի համարէք, որպէսզի ամէն օր Տիրոջը ընծայ մատուցէք ձեր ողջակէզները, անարիւն զոհաբերութիւններն ու գինին:* 38 *Սրանք պիտի մատուցուեն բացի այն ընծաներից, որոնք ընծայաբերւում են Տիրոջը շաբաթ օրերը, բացի ձեր ուխտի ընծաներից եւ ձեր միւս կամաւոր զոհաբերութիւններից, որոնք մատուցւում են Տիրոջը:* 39 *Եօթներորդ ամսի տասնհինգերորդ օրը, երբ հաւաքէք արտերի բերքը, Տիրոջ պատուին եօթը*

[†]Գրաբար բնագրում այս նախադասութիւնը հնչում է այլ կերպ: Թարգմանել ենք ըստ այլ բնագրերի:

[†]Շուրջ վեց կիլոգրամ:

[‡]Շուրջ մէկուկէս լիտր:

[§]Գրաբար բնագրում 13-14 համարների կէտադրութեան շփոթութիւն, հետեւաբար իմաստի աղաւաղում կայ: Ուղղել ենք ըստ յունարէն եւ այլ բնագրերի:

[†]Եբրայերէնում՝ *ութերորդ օրը:*

օր տօն պիտի կատարէք: Առաջին եւ ութերորդ օրը պիտի հանգստանաք:
40 Առաջին օրը կ'առնէք ծառերի գեղեցիկ պտուղներ, արմաւենու ճիւղեր, տերեւախիտ ծառերի եւ ուռենիների ճիւղեր, ձորի բարդիների ճիւղեր, որպէսզի Տիրոջ առաջ եօթը օր ուրախանաք: 41 Տարուայ այդ եօթը օրը որպէս Տիրոջ տօն կը տօնէք[†]: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեր սերունդների մէջ: Եօթներորդ ամսին կը կատարէք այդ տօնը: 42 Եօթը օր վրաններում կ'ապրէք: Իսրայէլացի բոլոր տեղաբնակները վրաններում թող ապրեն, 43 որպէսզի ձեր բոլոր սերունդներն իմանան, որ, երբ ես իսրայէլացիներին հանում էի Եգիպտացիների երկրից, վրաններում էի բնակեցրել նրանց: Ես եմ ձեր Տէր Աստուածը"»: 44 Եւ Մովսէսը իսրայէլացիներին պատմեց Տիրոջ տօների մասին:

ՍՐԲԱՐԱՆԻ ԱՇՏԱՆԱԿԸ
(Ելք 27. 21-21)

24 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Իսրայէլի որդիներին պատուիրի՛ր, որ լուսաւորութեան համար ձիթապտղի նոր ճզմած մաքուր ձիթաւիղ բերեն քեզ, 3[‡] որպէսզի կանթեղը միշտ վառ մնայ վկայութեան խորանի մէջ, վարագոյրի դրսի կողմը: Ահարոնն ու նրա որդիները երեկոյից մինչեւ առաւօտ այն տեւապէս թող վառ պահեն Տիրոջ առաջ: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեզ համար ձեր սերունդների մէջ: 4 Տիրոջ առաջ, սուրբ աշտանակի վրայ մինչեւ առաւօտ վա՛ռ պահեցէք կանթեղները:

ԱՍՏԾՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՀԱՑԸ

5 Կը վերցնէք ընտիր ալիւր եւ դրանից տասներկու բաղարջ կարկանդակ կը պատրաստէք: Ամէն մի կարկանդակի քաշը երկու տասներորդական հիմն[§] թող լինի: 6 Տիրոջ առաջ, սուրբ սեղանի վրայ դրանք կր դնէք երկու շարքով. ամէն մի շարքի վրայ՝ վեց կարկանդակ: 7 Իւրաքանչիւր շարքի վրայ կը դնես մաքուր կնդրուկ եւ աղ: Դրանք Տիրոջն ընծայաբերուող հացեր են ի յիշատակ Իսրայէլի տասներկու ցեղերի: 8 Իբրեւ իսրայէլացիների կողմից յաւիտենական ուխտ, իւրաքանչիւր շաբաթ այդ տասներկու հացերը միշտ Տիրոջ առաջ կը դնէք: 9 Այդ հացերը պատկանում են Ահարոնին ու նրա որդիներին: Նրանք թող այդ հացերը ուտեն մի սուրբ տեղում, քանի որ դա Տիրոջն ընծայաբերուող նուէրների մէջ ամենասուրբն է: Դա յաւիտենական օրէնք է»:

ԱՐԴԱՐ ԵՒ ՈՒՂԻՂ ՊԱՏԺԻ ՕՐԻՆԱԿ

10 Իսրայէլացիների մէջ մի մարդ էր ապրում, որը որդին էր եգիպտացի մի տղամարդու, բայց մայրը իսրայէլացի էր: Բանակատեղիում կռիւ արեցին իսրայէլացի կնոջից ծնուած այս մարդն ու մի ուրիշ իսրայէլացի: 11 Իսրայէլացի կնոջ որդին տուեց Տիրոջ անունը եւ հայհոյեց: Նրան բերեցին Մովսէսի մօտ: Նրա մօր անունը Սալամիթ էր: Նա Դանի ցեղից Դաբրիի դուստրն էր: 12 Այդ մարդուն հսկողութեան տակ պահեցին, որպէսզի Աստծու հրամանով դատեն նրան: 13 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 14 «Հայհոյող այդ մարդուն հանեցէ՛ք բանակատեղիից դուրս, եւ նրանք, ովքեր լսել են նրա հայհոյանքը, որպէս վկայ թող իրենց ձեռքերը դնեն նրա գլխին, եւ ամբողջ ժողովուրդը թող քարկոծի նրան: 15 Կը խօսես Իսրայէլի որդիների հետ եւ նրանց կ'ասես. "Ով որ կը հայհոյի Աստծուն, իր մեղքի պատիժը կը կրի: 16 Ով որ կը հայհոյի Տիրոջ անուան, թող մահապատժի ենթարկուի: Ամբողջ ժողովուրդը թող քարկոծի նրան: Աստծուն հայհոյողը, օտարական լինի նա թէ տեղաբնակ, մահապատժի թող ենթարկուի: 17 Եթէ որեւէ մէկը մարդ ծեծի, եւ սա մեռնի, ծեծողը մահապատժի թող ենթարկուի: 18 Ով անասուն կը սպանի, անասունի տիրոջը նոյնպիսի անասունով թող հատուցի: 19 Եթէ որեւէ մէկը խեղանդամ դարձնի իր մերձաւորին, ինչ որ արել է, նոյնն էլ թող անեն իրեն: 20 Ջարդուածքի դիմաց՝ ջարդուածք, աչքի դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ: Ինչ խեղուածք որ մէկը միւսին պատճառի, նոյնով թող պատժուի: 21 Եթէ մարդ է ծեծել, եւ սա մահացել է, ծեծողը մահապատժի թող ենթարկուի: 22 Միեւնոյն օրէնքը թող կիրառուի ե՛ւ օտարականի, ե՛ւ տեղաբնակի նկատմամբ: Ես եմ ձեր Տէր Աստուածը"»:

23 Մովսէսը խօսեց իսրայէլացիների հետ, եւ բանակատեղիից դուրս հանեցին այն մարդուն, որ հայհոյել էր: Ամբողջ ժողովուրդը քարկոծեց նրան: Իսրայէլացիներն արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր պատուիրել Մովսէսին:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ
(Բ Օր. 15. 1-11)

25 Տէրը Սինա լերան վրայ խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Իսրայէլի որդիներին ասա՛. "Եթէ[†] մտնէք այն երկիրը, որ ես տալու եմ ձեզ, թող[‡] հանգստանայ նաեւ այդ հողը, քանի որ Տիրոջ շաբաթն է: 3 Վեց տարի կը մշակես քո արտը, վեց տարի կ'էտես քո այգին եւ կը հաւաքես դրանց բերքը: 4 Եօթներորդ տարին հանգստեան շաբաթ թող լինի այդ հողի համար, քանի որ շաբաթը Տիրոջն է պատկանում: Քո արտը չես մշակի, քո այգին չես էտի: 5 Քո արտում ինքն իրեն աճած բոյսը չես հնձի, Տիրոջը նուիրաբերուելիք խաղողը չես քաղի, քանի որ այդ հողի հանգստեան տարին է: 6 Հանգստեան տարուայ ինքնաբոյս բերքը կերակուր թող լինի ձեզ՝ քո ծառայի, քո աղախնու, քո վարձկանի, քեզ մօտ բնակութիւն հաստատած օտարականի, 7 քո անասունի եւ քո երկրի գազանների համար: Նրա տուած ամբողջ բերքը թող կերակուր լինի նրանց համար:

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

8 Հանգստեան տարուց սկսած՝ կը հաշուես եօթն անգամ եօթը տարի, եւ եօթն անգամ եօթը տարին կը լինի

[†]Եբրայերէն՝ երբ:
[‡]Եբրայերէն՝ թող այդ հողը եւս շաբաթը պահի Տիրոջ համար:

քառասունինը տարի: 9 Յիսուներորդ տարուայ եօթներորդ ամսի տասներորդ օրը շեփոր հնչեցնելով կ'ազդարարէք ձեր ամբողջ երկրին: Քաւութեան օրը ձեր ամբողջ երկրում շեփոր կը հնչեցնէք: 10 Կը սրբագործէք յիսուներորդ տարին եւ ձեր երկրի բոլոր բնակիչների համար ազատագրում կը յայտարարէք: Դա ազատագրման տարի ազդարարելու նշան թող լինի: Իւրաքանչիւր ոք պէտք է վերադառնայ իր կալուածքը, իւրաքանչիւր ոք պէտք է գնայ իր ազգատոհմին, 11 որովհետեւ դա ազատագրման ազդարարն է: Յիսուներորդ տարին թող ձեզ համար յոբելեանական տարի լինի: Չպէտք է ցանէք, չպէտք է հնձէք ինքն իրեն աճած բոյսը, Տիրոջն ընծայուած խաղողը չպէտք է քաղէք, 12 քանզի այդ տարին ազատագրում ազդարարող յոբելեանական տարի է: Այն թող սուրբ լինի ձեզ համար: Արտում ինքն իրեն բուսած եւ աճած բերքը կերէ՛ք: 13 Ազատագրում հռչակուած յոբելեանական տարում իւրաքանչիւր ոք թող վերադառնայ իր կալուածքը: 14 Եթէ որեւէ մէկը իր մերձաւորին որեւէ բան է վաճառում կամ իր մերձաւորից որեւէ բան է գնում, թող նրան չխաբի: 15 Յոբելեանական տարուց յետոյ եղած տարիների հաշուով պիտի գնես քո մերձաւորից, եւ նա էլ հնձի տարիների հաշուով պիտի վաճառի քեզ: 16 Ինչքան շատ են լինում մինչեւ ազատագրման տարին ընկած տարիները, այդքան թանկ պիտի գնես, եւ ինչքան քիչ լինեն տարիները՝ այդքան էժան, որովհետեւ արդիւնքի քանակով է, որ նա վաճառելու է քեզ: 17 Եւ ոչ ոք իր մերձաւորին չպէտք է խաբի: Երկնչի՛ր քո Տէր Աստծուց. ես եմ ձեր Տէր Աստուածը:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՀԱՐՑԸ

18 Կը կատարէք իմ բոլոր պատգամներն ու վճիռները: Կը պահպանէք ու կը կատարէք դրանք եւ երկրում կ'ապրէք ապահով. 19 հողը կը տայ իր բերքը, դուք կուշտ կ'ուտէք եւ երկրում կ'ապրէք ապահով: 20 Իսկ եթէ ասէք, թէ՝ ի՞նչ պիտի ուտենք այդ եօթներորդ

տարում, եթէ չցանենք եւ մեր բերքը
չհաւաքենք, 21 ապա իմացէ՛ք, որ վեցե-
րորդ տարում ես ձեզ կ'ուղարկեմ իմ
օրհնութիւնը, եւ հողը երեք տարուայ
չափ բերք կը տայ: 22 Ութերորդ տա-
րում կը ցանէք, իսկ հին բերքը կ'ուտէք
մինչեւ իններորդ տարին: Մինչեւ իններ-
որդ տարուայ բերքը հասնելը կ'ուտէք
հին բերքը:

ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

23 Հողը վերջնականապէս չպէտք է
վաճառուի, քանզի հողը իմն է, իսկ դուք
ինձ մօտ պանդուխտ ու նժդեհ էք:
24 Ձեր կալուածքը եղող ամբողջ հողի
համար փրկագին պիտի տաք: 25 Եթէ
աղքատանայ քեզ մօտ ապրող եղբայրդ
եւ վաճառի իր կալուածքի մի մասը,
ապա իր մօտիկ ազգականը կարող է
գալ ու վերստին գնելով փրկել իր եղբօր
վաճառած արտը: 26 Իսկ եթէ արտ
վաճառողը ունեւոր ազգական չունենայ,
ու ինքը յետոյ ի վիճակի լինելու գնելու,
ապա կարող է իր արտը յետ գնելով
փրկել: 27 Նա պէտք է հաշուի եւ հանի
վաճառքից յետոյ անցած տարիները եւ
մնացածը վճարի նրան, ով գնել էր այն,
որից յետոյ արտը նորից կը պատկանի
իրեն: 28 Իսկ եթէ նա այդքան
կարողութիւն չունենայ, որ կարողանայ
հողի տիրոջը հատուցել փոխարժէքը,
ապա վաճառուածը մինչեւ ազա-
տագրման տարին թող պատկանի նրան,
ով այն գնել էր: Ազատագրման տարում
արտը պէտք է վերադարձուի նախկին
տիրոջը:
29 Եթէ որեւէ մէկը վաճառի
պարսպապատ քաղաքում գտնուող մի
բնակելի տուն, ապա նա կարող է այն
յետ գնել վաճառքի օրուանից յետոյ մէկ
տարուայ ընթացքում: Մէկ տարուայ
ընթացքում պէտք է լինի յետգնումը:
30 Իսկ եթէ վաճառողը մէկ տարուայ
ընթացքում ի վիճակի չլինի այն յետ
գնելու, ապա պարսպապատ քաղաքի
մէջ եղած տունը թող առյաւէտ պատ-
կանի գնողին՝ իբրեւ իր ու իր սերունդ-
ների սեփականութիւն: Դա յետ գնելու
ենթակայ չէ անգամ ազատագրման
տարում: 31† Պարիսպ չունեցող աւան-
ներում գտնուող տները թող ագարակ-
ներ համարուեն: Դրանք միշտ ենթակայ
են յետգնման, եւ այնտեղ բնակուողները
ազատագրման տարում պէտք է դուրս
գան: 32 Ղեւտացիների քաղաքներում
գտնուող տները, որոնք նրանց կա-
լուածքներն են այդ քաղաքում, կարող
են միշտ յետ գնուել ղեւտացիների
կողմից: 33 Եթէ որեւէ մէկը ղեւտացու
տուն է գնում, ապա ազատագրման
տարում նա նրանց քաղաքներում
գտնուող կալուածքների տներից դուրս
պէտք է գայ, որովհետեւ ղեւտացիների
քաղաքներում գտնուող կալուածքների
տները նրանց ժառանգական սեփա-
կանութիւնն են Իսրայէլի որդիների մէջ:
34 Ղեւտացիների ագարակները, որոնք
քաղաքների շուրջն են գտնուում, վա-
ճառքի ենթակայ չեն, որովհետեւ դրանք
նրանց յաւիտենական կալուածքներն
են:

ՓՈԽԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ

35 Եթէ եղբայրդ աղքատանայ եւ ի
վիճակի չլինի աշխատելու, նրան պիտի
պատսպարես իբրեւ եկուորի ու
պանդխտի: Նա քեզ մօտ պիտի մնայ ու
ապրի: 36 Նրանից վաշխ ու տոկոս
չպիտի վերցնես: Վախեցի՛ր քո Տէր
Աստծուց, քանզի ես եմ Տէրը: Քո եղ-
բայրը թող քեզ մօտ ապրի: 37 Նրան
տոկոսով դրամ չպիտի տաս եւ աւելին
ստանալու ակնկալութեամբ չէ, որ նրան
պիտի կերակրես: 38 Ես եմ ձեր Տէր
Աստուածը, որ ձեզ հանեց Եգիպտա-
ցիների երկրից, որպէսզի ձեզ տայ
Քանանացիների երկիրը եւ լինի ձեր
Աստուածը:

ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

39 Եթէ քեզ մօտ ապրող եղբայրդ
աղքատանայ եւ քեզ վաճառուի որպէս
ծառայ, ապա թող քեզ ստրուկի ծառա-
յութեամբ չծառայի: 40 Նա իբրեւ վարձ-
կան, իբրեւ պանդուխտ թող լինի քեզ
մօտ եւ աշխատի մինչեւ ազատագրման
տարին: 41 Ազատագրման տարում ինքն
իր երեխաների հետ թող ազատ արձա-
կուի եւ վերադառնայ իր ցեղի մօտ, թող
գնայ իր հայրենի կալուածքը: 42 Իմ
ծառաներն են նրանք, որոնց ես հանել
եմ Եգիպտացիների երկրից: Դրա
համար էլ նրանք իբրեւ ստրուկ չեն
վաճառուելու: 43 Ջարչարանքով չպիտի
տանջես նրան: Երկնչի՛ր քո Տէր
Աստծուց: 44 Ինչ ծառայ կամ աղախին
էլ որ ուզենաս ունենալ, քո շուրջը եղող
ազգերից կը վերցնես, 45 ինչպէս եւ ձեր
մէջ ապրող օտարականների զաւակ-
ներից ու նրանց ազգականներից: Որ-
քան զաւակ ունենան ձեր երկրում, բո-
լորը թող դառնան ձեր սեփականու-
թիւնը: 46 Նրանց իբրեւ ժառանգութիւն
կը յանձնէք ձեր գալիք սերունդներին,
նրանք առյաւէտ ձեր ստրուկները թող
լինեն: Ձեզնից ոչ ոք իր եղբայրներին՝
Իսրայէլացիներին, չարչարանքով թող
չտանջի:
47 Եթէ հարստանայ քեզ մօտ հաս-
տատուած եկուորը կամ պանդուխտը,
եւ քո աղքատացած եղբայրը վաճառուի
քեզ մօտ հաստատուած այդ եկուորին
կամ պանդուխտին կամ վերջիններիս
ընտանիքներում ծնուածին, 48 ապա
վաճառուելուց յետոյ նա պէտք է յետ
գնուի. նրա եղբայրներից մէկնումէկը
փրկավճարով թող գնի նրան: 49 Նրան
փրկավճարով պէտք է գնի նրա
հօրեղբայրը, հօրեղբօր որդին կամ իր
ցեղի արիւնակից ազգականներից մէկը:
Իսկ եթէ ինքը հարստանայ, թող
փրկավճարով գնի ինքն իրեն: 50 Նա,
սկսած իր վաճառուելու տարուանից
մինչեւ ազատագրման տարին, թող
հաշուի այն պարտքը, որ ինքն ունի
իրեն գնած մարդուն: Պարտքի գումարը
թող հաշուուի վարձու աշխատողի
վարձի չափով, նրա մօտ աշխատած
տարիների քանակով: 51 Եթէ դեռ շատ
ժամանակ կայ մինչեւ ազատագրման
տարին, որպէս փրկագին թող հատուցի
իր անձի վաճառքի գնի մէկ մասը:
52 Իսկ եթէ մինչեւ ազատագրման
տարին քիչ ժամանակ է մնացել, թող
հաշուի եւ ըստ մնացած տարիների տայ
իր փրկագինը: 53 Նա վարձկան պիտի
համարուի այնքան ժամանակ, որքան
տարի որ եղել է նրա մօտ: Ջարչա-
րանքով չպիտի տանջես նրան: 54 Իսկ
եթէ այս ձեւերից որեւէ մէկով չի
փրկագնուած, ապա ազատագրման
տարում թող ազատ արձակուեն ինքն ու
իր զաւակները, 55 քանզի իսրայէլա-
ցիներն իմ ստրուկներն են, իմ ծառա-
ները, որոնց ես հանել եմ Եգիպ-
տացիների երկրից"»:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ
(Բ Օր. 7. 12-24, 28. 1-14)

26 Ես եմ ձեր Տէր Աստուածը†:
«Ձեզ համար ձեռակերտ կամ քան-
դակուած կուռքեր մի՛ ստեղծէք, ձեզ
համար արձան մի՛ կանգնեցրէք եւ ձեր
երկրում քարակոթող մի՛ դնէք դրան
երկրպագելու համար: Ես եմ ձեր Տէր
Աստուածը:
2 Իմ շաբաթ օրերը պիտի պահէք եւ
իմ սրբարաններից երկիւղածութիւն
պիտի զգաք, քանզի ես եմ Տէրը: 3 Եթէ
ըստ իմ հրամանի ընթանաք, իմ պա-
տուիրանները պահպանէք ու կատարէք
դրանք, ապա անձրեւ կ'ուղարկեմ ձեզ
իր ժամանակին: 4 Հողն իր բերքը կը
տայ, իսկ դաշտերի ծառերը կը տան
իրենց պտուղները: 5 Ձեր կալերում
աշխատանքը կը տեւի մինչեւ այգե-
կութ, իսկ ձեր այգեկութները կը տեւեն
մինչեւ նոր ցանքսի ժամանակը: Դուք
կուշտ հաց կ'ուտէք եւ ձեր երկրում
անհոգ կ'ապրէք: 6 Ձեր երկրին խաղա-
ղութիւն կը պարգեւեմ, եւ ձեր երկրում
պատերազմ չի լինի: Կը քնէք, եւ չի
լինի մէկը, որ ձեզ վախեցնի: Ձեր երկրից
կը վերացնեմ չարիք պատճառող
գազաններին: 7 Դուք հալածական կ'ա-
նէք ձեր թշնամիներին, եւ նրանք
սպանուած կ'ընկնեն ձեր առաջ: 8 Ձեր
հինգ հոգին հալածական կ'անի հարիւր
հոգու, իսկ ձեր հարիւրը՝ բիւրաւորների,
ձեր թշնամիները սրի հարուածներից
կ'ընկնեն ձեր առաջ: 9 Ես բարի աչքով
կը նայեմ ձեզ, կ'աճեցնեմ ու կը
բազմացնեմ ձեզ եւ կը կատարեմ ձեզ
տուած իմ խոստումը: 10 Այնքան բերք
կը ստանաք, որ նախորդ ու դրանից էլ
առաջ ստացած բերքը կը բաւարարի
ձեզ, բայց հին բերքը չտեմարանից միշտ
պիտի հանէք նոր բերքով լցնելու

†Այլ թնագրերում՝ տարբեր տնատում:

†Այլ թնագրերում այս նախադասութիւնը Իե 55-րդ համարի վերջին մասն է կազմում:

համար: 11 Ես իմ ուխտատեղին պիտի հաստատեմ ձեր մէջ, եւ ես ձեզնից չեմ խորշելու: 12 Ես պիտի քայլեմ ձեր մէջ եւ պիտի լինեմ ձեր Աստուածը, իսկ դուք պիտի լինէք իմ ժողովուրդը: 13 Ես եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ հանեց Եգիպտացիների երկրից, երբ դեռ ստրուկ էիք, քանդեց ձեր ստրկական լծի կապանքները եւ ձեզ համարձակ այստեղ բերեց»:

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺԸ
(Բ Օր. 28. 15-68)

14 «Բայց եթէ չլսէք ինձ եւ չկատարէք իմ այս բոլոր հրամանները, 15 արհամարհէք դրանք, իմ կարգադրութիւններից ձանձրանալով չկատարէք իմ պատուիրանները, վերացնէք իմ հաստատած ուխտը, 16 ապա ես նոյնը կ'անեմ ձեր նկատմամբ. տագնապալից տառապանքների կը մատնեմ ձեզ, քոսով ու դեղնախտով կը հիւանդացնեմ ձեզ, որ պակասի ձեր աչքի լոյսը, եւ դուք հալումաշ լինէք: Այնժամ զուր տեղը պիտի ցանէք ձեր սերմերը, եւ ձեր արտերի բերքը ձեր հակառակորդները պիտի ուտեն: 17 Ես իմ զայրացած հայեացքը ձեզ վրայ պիտի յառեմ, եւ դուք պիտի ընկնէք ձեր թշնամիների առաջ: Ձեզ ատողները ձեզ հալածական պիտի անեն, եւ դուք փախստական պիտի լինէք, եթէ անգամ որեւէ մէկը չհալածի ձեզ: 18 Եթէ նման պատիժներից յետոյ էլ ինձ չլսէք, ձեր գործած մեղքերի համար եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ: 19 Ես պիտի խորտակեմ ձեր ամբարտաւան պարծենկոտութիւնը, երկինքը ձեզ վրայ երկաթի պէս ծանր պիտի դարձնեմ, իսկ ձեր հողը՝ պղնձի պէս կարծր: 20 Ձեր զօրութիւնը ի չիք պիտի դառնայ, հողը ձեր ցանած սերմի չափով իսկ բերք պիտի չտայ, ոչ էլ երկրի ծառերը պտուղ պիտի տան:

21 Իսկ եթէ դուք շարունակէք շեղուել ուղիղ ճանապարհից ու չկամենաք լսել ինձ, ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 22 Ձեզ վրայ պիտի ուղարկեմ երկրի վայրի գազաններ, նրանք պիտի լափեն ձեզ ու պիտի յօշոտեն ձեր անասունները: Այսպիսով պիտի պակասեցնեմ ձեր թիւը, եւ ձեր ճանապարհները ամայի պիտի դառնան: 23 Իսկ եթէ դրանից յետոյ էլ չխրատուէք ու հակառակուէք ինձ, 24 ես դարձեալ, զայրանալով, պիտի հակառակուեմ ձեզ եւ ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 25 Ձեզ սրակոտոր պիտի անեմ՝ լուծելու համար իմ ուխտի վրէժը: Եւ եթէ ամրանաք ձեր քաղաքներում, ես ձեզ մահ պիտի ուղարկեմ, եւ դուք պիտի մատնուէք թշնամիների ձեռքը: 26 Երբ ձեզ նեղեմ հացի պակասութեամբ, տասը կին ձեզ հաց պիտի եփեն մէկ թոնրի մէջ եւ ձեզ հաց պիտի բաժանեն հաշուած կշռով: Պիտի ուտէք ու չպիտի կշտանաք: 27 Եթէ դրանից յետոյ էլ ինձ չանսաք ու հակառակ գնաք ինձ, 28 ես էլ, զայրանալով, պիտի հակառակուեմ ձեզ եւ ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 29 Դուք պիտի ուտէք ձեր տղաների ու ձեր աղջիկների միսը: 30 Ես պիտի կործանեմ ձեր արձանները, պիտի խորտակեմ ձեր փայտեայ ձեռակերտ կուռքերը: Ձեր դիակները պիտի նետեմ ձեր ջարդուփշուր եղած կուռքերի բեկորների վրայ, եւ իմ հոգին պիտի խորշի ձեզնից: 31 Ձեր քաղաքները աւերակ պիտի դարձնեմ, պիտի ամայացնեմ ձեր սրբարանները եւ ձեր զոհաբերութիւնների անուշ բոյրը այլեւս չպիտի հոտոտեմ: 32 Պիտի աւերեմ ձեր երկիրը, եւ նրա մէջ ապրող ձեր թշնամիները պիտի զարմանան դրա վրայ: 33 Ձեզ պիտի ցրեմ տարբեր ժողովուրդների մէջ, եւ ձեզ վրայ իջած սուրը պիտի կոտորի ձեզ: Ձեր երկիրը աւերակ պիտի դառնայ, իսկ ձեր քաղաքները՝ ամայի: 34 Այնքան ժամանակ, որ երկիրը աւերակ պիտի մնայ, պիտի վայելի իր հանգստեան օրերը, 35 իսկ դուք պիտի լինէք ձեր թշնամիների երկրում՝ օտար երկրում: Այնքան ժամանակ, որ երկիրը աւերակ պիտի մնայ, պիտի վայելի իր հանգստեան օրերը, պիտի հանգստանայ այն շաբաթ օրերի փոխարէն, որ չհանգստացաւ ձեր այնտեղ բնակուելու ժամանակ: 36 Ձեր թշնամիների երկրում

վերապրածներիդ սրտում վախ պիտի գցեմ. նրանք պիտի սարսռան տերեւների սօսափիւնից, նրանք փախուստի պիտի դիմեն, ինչպէս փախչում են ռազմի դաշտից, եւ պիտի ընկնեն առանց որեւէ մէկից հալածուած լինելու: 37 Եղբայրը պիտի լքի իր եղբօրը, ինչպէս ռազմի դաշտում, առանց որեւէ մէկից հետապնդուած լինելու: Դուք չպիտի կարողանաք դիմադրել ձեր թշնամիներին: 38 Դուք պիտի կորչէք ժողովուրդների մէջ, եւ ձեր թշնամիների երկիրը ձեզ կուլ պիտի տայ: 39 Ձեզնից վերապրածները իրենց գործած մեղքերի համար պիտի կոտորուեն իրենց թշնամիների երկրում եւ իրենց հայրերի մեղքերի համար նրանց հետ միասին հալումաշ պիտի լինեն: 40 Այդ ժամանակ է, որ նրանք պիտի խոստովանեն իրենց ու իրենց հայրերի գործած մեղքերը, պիտի համոզուեն, որ յանցանք են գործել եւ արհամարհել են ինձ. 41 նրանք հակառակուեցին ինձ, ես էլ նրանց հակառակուեցի բարկութեամբ եւ ոչնչացրի նրանց իրենց թշնամիների երկրում: Այնժամ պիտի ամաչի նրանց հեթանոս սիրտը, եւ իրենք պիտի զգան իրենց գործած մեղքերի ծանրութիւնը: 42 Ես պիտի յիշեմ Յակոբին, Իսահակին եւ Աբրահամին տուած իմ խոստումը, պիտի յիշեմ նաեւ այն երկիրը, 43 որը լքուելով նրանց կողմից, պիտի վայելի իր հանգստեան օրերը, քանի որ այն աւերակ էր դարձել իր բնակիչների պատճառով: Նրանք պիտի պատժուեն իրենց կատարած անօրէնութիւնների համար, այն բանի փոխարէն, որ արհամարհեցին իմ պատուիրանները, եւ իմ հրամանները նրանց համար տաղտկալի դարձան:

44 Երբ նրանք իրենց թշնամիների երկրում էին, ես նրանց անտես չարեցի եւ ոչ էլ զզուեցի նրանցից նրանց հետ իմ կապած ուխտը լուծելու համար, որպէսզի չոչնչացնեմ նրանց, քանզի ես եմ նրանց Տէր Աստուածը: 45 Ես պիտի յիշեմ նրանց հետ կապած իմ նախկին ուխտը, երբ բոլոր հեթանոս ժողովուրդների աչքի առաջ նրանց հանում էի Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան բնակավայրից, որպէսզի լինեմ նրանց Աստուածը, քանզի ես եմ Տէրը»:

Սրանք† են այն պատգամները, հրամաններն ու օրէնքները, որ Տէրը Սինա լեռան վրայ Մովսէսի միջոցով հաստատեց իր եւ Իսրայէլի որդիների միջեւ:

ՕՐԷՆՔՆԵՐ ԱՍՏՈՒՆ ՏՐՈՒԵԼԻՔ ՆՈՒԷՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

27 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 2 «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ եւ նրանց ասա՛. "Եթէ մէկը ուխտանի Տիրոջը նուէր մատուցելու մի անձի արժէքի չափով, գները հետեւեալը թող լինեն. տղամարդու դէպքում՝ 3 քսան տարեկանից մինչեւ վաթսուն տարեկանը՝ սրբարանում գտնուող կշեռքով կշռուած յիսուն երկդրամեան արծաթ: 4 Կնոջ դէպքում՝ երեսուն երկդրամեան: 5 Հինգ տարեկանից մինչեւ քսան տարեկան մանչ զաւակի դէպքում՝ քսան երկդրամեան, իսկ նոյն տարիքի աղջկայ դէպքում՝ տասը երկդրամեան: 6 Մէկ ամսականից մինչեւ հինգ տարեկան մանչ զաւակի դէպքում՝ հինգ երկդրամեան արծաթ, իսկ նոյն տարիքի աղջկայ դէպքում՝ երեք երկդրամեան արծաթ: 7 Եթէ վաթսուն տարեկանից բարձր է տղամարդը, նրա գինն է տասնհինգ երկդրամեան արծաթ, իսկ նոյն տարիքի կնոջը՝ տասը երկդրամեան: 8 Եթէ որեւէ մէկը աղքատ լինի եւ ի վիճակի չլինի վճարելու այդ գինը, նա պէտք է կանգնի քահանայի առաջ, եւ քահանան նրա համար գին պիտի նշանակի: Ինչ կարողութիւն որ ունի ուխտ անողը, ըստ այդմ էլ նրա համար գին թող նշանակի քահանան:

9 Եթէ մէկը Տիրոջը ուխտ անի զոհուելու սահմանուած անասուններից զոհ մատուցելու, ինչ էլ որ լինի դա, Տիրոջ համար ընդունելի է: 10 Միայն թէ լաւը վատի տեղ չպիտի մատուցի, ոչ էլ վատը՝ լաւի: Եթէ իր ուխտած կենդանու փոխարէն մի այլ կենդանի բերի, ապա ուխտած կենդանու նման թող սուրբ համարուի նաեւ դրա փոխարէն բերուածը: 11 Եթէ ուխտած կենդանին զոհաբերութեան ենթակայ անասուններից չէ, որոնք չի կարելի Տիրոջը զոհ

†Այլ բնագրերում, նաեւ յունարէնում, ԻԶ գլխի 46-րդ համարն սկսւում է այս բառով:

մատուցել, այդ կենդանին թող կանգ-
նեցուի քահանայի առաջ, 12 քահանան,
ըստ լաւի ու վատի, թող գին սահմանի.
ըստ քահանայի սահմանած արժէքի
պէտք է գնահատուի այդ կենդանին:
13 Եթէ ուխտ անողը ցանկանայ վճարել
իր ուխտած կենդանու արժէքը, ապա
դրա վրայ պէտք է աւելացնի նաեւ
որոշուած արժէքի մէկ հինգերորդ մասը:
14 Եթէ մէկը ցանկանայ իր տունը
նուիրել Տիրոջը, քահանան թող գին
սահմանի՝ նկատի ունենալով տան լաւ
կամ վատ վիճակը. ըստ քահանայի
սահմանած արժէքի թող գնահատուի
այդ տունը: 15 Իսկ եթէ նուիրաբերողը
ցանկանայ յետ գնել իր տունը, ապա
տան արժէքի վրայ թող աւելացնի դրա
մէկ հինգերորդ մասը, եւ տունը կը լինի
իրենը: 16 Եթէ մէկն իր կալուածքը
հանդիսացող ագարակն է ուխտում
նուիրել Տիրոջը, ապա դրա արժէքը թող
լինի ըստ դրա վրայ ցանուած սերմի:
Եթէ սերմը մէկ քոռ† է, ուրեմն թող
վճարի յիսուն երկդրամեան արծաթ:
17 Եթէ ագարակը նուիրաբերի ազա-
տագրման տարուայ սկզբին, նրա ամ-
բողջ արժէքը պէտք է հաշուուի: 18 Իսկ
եթէ իր հանդը նուիրաբերում է ազա-
տագրման տարուց յետոյ, ապա քահա-
նան պէտք է հաշուի մինչեւ ազա-
տագրման տարին ընկած տարիների
համար վճարելիք դրամը եւ դրա համե-
մատ այն հանի ագարակի արժէքից:
19 Եթէ ագարակը նուիրողը ցան-
կանայ այն յետ գնել, դրա գնի վրայ
թող աւելացնի գնահատուածի մէկ հին-
գերորդ չափով արծաթ, որից յետոյ
ագարակը կը լինի իրենը: 20 Իսկ եթէ
նուիրաբերողը չցանկանայ‡ յետ գնել իր
ագարակը, այլ վաճառի մի ուրիշ
մարդու, ապա այն յետ գնելու
իրաւունք չունի, 21 բայց վաճառուած
ագարակը ազատագրման տարում
սրբագործուած նուիրաբերում թող լինի
Տիրոջը: Դա քահանային պատկանող
սեփականութիւն է:
22 Եթէ նա Տիրոջը նուիրաբերի իր
կալուածքը չհանդիսացող, այլ դրամով
գնած ագարակ, 23 քահանան պիտի
հաշուի մինչեւ ազատագրման տարին
մնացած տարիները, եւ յետ գնել
ցանկացողը այդ օրը Տիրոջը պիտի
վճարի որոշուած արժէքը: 24 Ազա-
տագրման տարում կալուածքի նախկին
տէրը այն յետ պիտի ստանայ: 25 Բոլոր
գները պիտի սահմանուեն ըստ սրբա-
զան կշեռքների. մէկ երկդրամեանը
քսան դանգ† թող լինի:
26 Քո անասունների բոլոր առաջին
ծնունդները Տիրոջն են պատկանում:
Այն ոչ ոք չի կարող նուիրաբերել, քանի
որ, լինի դա արջառ թէ ոչխար, պատ-
կանում է Տիրոջը: 27 Եթէ անմաքուր
չորքոտանի նուիրաբերի, դրա արժէքի
վրայ պէտք է աւելացնի մէկ հին-
գերորդը, որից յետոյ այն կարող է
պատկանել իրեն: Իսկ եթէ յետ չգնի,
ապա թող վաճառի իր արժէքով: 28 Ով
որ իր ունեցածից որեւէ բան է նուի-
րաբերում Տիրոջը՝ մարդուց սկսած
մինչեւ անասուն, ագարակից սկսած
մինչեւ սեփական կալուածք, իրաւունք
չունի այն ուրիշին վաճառելու կամ յետ
գնելու: Նման բոլոր նուիրաբերումները
սրբութիւն սրբոց են Տիրոջ համար:
29 Իւրաքանչիւր մարդ, որը, որպէս
ուխտ, Տիրոջն է նուիրաբերում, չի կա-
րող յետ գնուել, այլապէս նա մահուան
կը դատապարտուի:
30 Հողի բերքի, ծառերի պտուղների
մէկ տասներորդ մասը Տիրոջն է պատ-
կանում: Դրանք Տիրոջն են նուիրա-
բերուում: 31 Եթէ մէկը ցանկանայ յետ
գնել իր տասանորդը, նա պէտք է դրա
վրայ աւելացնի դրա արժէքի մէկ հին-
գերորդ մասը, որից յետոյ տասանորդը
կը լինի իրենը: 32 Տասը արջառից ու
ոչխարից մէկը, ինչպէս եւ հովուի
գաւազանի տակով անցնող տասը
անասունից մէկը պատկանում են Տի-
րոջը: 33 Խտրութիւն թող չլինի լաւի ու
վատի միջեւ, եւ լաւը վատով չփո-
խարինես: Իսկ եթէ այնուամենայնիւ
փոխարինես, ե՛ւ նա, ե՛ւ փոխարինուողը
պէտք է նուիրաբերես եւ իրաւունք
չպիտի ունենաս դրանք յետ գնելու"»:
34 Սրանք են այն պատուիրանները,
որ Տէրը Սինա լեռան վրայ Մովսէսի
միջոցով հաղորդեց իսրայէլացիներին:

†Շուրջ 300 կիլոգրամ:

‡Գրաբար բնագրում՝ *ցանկանայ:*

†Շուրջ երկու հարիւր գրամ:

ԹՈՒԵՐ

Ներածութիւն

Իսրայէլացիները Մովսէսից ստանալուց յետոյ այն բոլոր օրէնքները, որ Աստուած հաղորդել էր նրան Սինայի լեռան վրայ, պատրաստւում են ճանապարհ ընկնել դէպի աւետեաց երկիրը: Այդ ճանապարհորդութիւնը նախ նրանց տանում հասցնում է Կադէս-Բառնեա կոչուած երկիրը, որի մուտքի մօտ նրանք կանգ են առնում, որովհետեւ վախենում են այնտեղ մտնել: Այդպիսով, դատապարտուած լինելով մնալու այնտեղ, նրանք քառասուն տարի անցկացնում են անապատում: Ի վերջոյ շարժւում են դէպի հարաւ եւ երկար թափառումներից յետոյ վերջապէս հասնում Մովաբ կոչուած երկիրը, Մեռեալ ծովի արեւելքում:

Գրքի վերջին գլուխներում յիշատակւում են զանազան իրադարձութիւններ, որոնք տեղի են ունենում Մովաբում: Այստեղից է, որ, աւելի ուշ, իսրայէլացիները կարողանում են մտնել Քանանի երկիրը:

Այս գիրքը շարունակութիւնն է կազմում Ելք եւ Ղեւտական գրքերի եւ ցոյց է տալիս իսրայէլացի ժողովրդի մարդկային բնութիւնն իր իսկութեան մէջ, ուր վստահութիւն եւ կասկած, եռանդ եւ յուսահատութիւն, մեծութիւն եւ ստորութիւն փոխնիփոխ յաջորդում են միմեանց: Դրան հակառակ, գրքում ցոյց է տրուած նաեւ Աստծու անայլայլ հաւատարմութիւնն իր ժողովրդի հանդէպ, հաւատարմութիւն, որ, սակայն, չի բացառում Նրա խստութիւնն ու արդարութիւնը:

ԹՈՒԵՐ

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

1 Տէրը Սինայի անապատում, վկայութեան խորանում, Եգիպտացիների երկրից իսրայէլացիների դուրս գալու երկրորդ տարուայ երկրորդ ամսի առաջին օրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Մէկ առ մէկ հաշուառման ենթարկեցէք իսրայէլացի ամբողջ ժողովրդին ըստ ազգատոհմերի, ըստ նահապետների տների: 3 Դու եւ Ահարոնը հաշուառման կ'ենթարկէք քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող արական սեռի բոլոր մարդկանց, որոնք կարող են զէնք վերցնել Իսրայէլի բանակի համար: 4 Ձեզ հետ ամէն մի ցեղից՝ նահապետների ընտանիքներից մէկական իշխան թող լինի:

5 Սրանք են այն մարդկանց անունները, որոնք պիտի ներկայանան ձեզ. 6 Ռուբէնի ցեղից՝ Սադիուրի որդի Եղիսուրը, 7 Շմաւոնի ցեղից՝ Սուրիսադայի որդի Սաղամիէլը, 8 Յուդայի ցեղից՝ Ամինադաբի որդի Նաասոնը, 9 Իսաքարի ցեղից՝ Սոգարի որդի Նաթանայէլը, 10 Զաբուղոնի ցեղից՝ Քելոնի որդի Եղիաբը, 11 Յովսէփի որդիներից Եփրեմի ցեղից՝ Եմիուդի որդի Եղիսաման, Մանասէի ցեղից՝ Փադասուրի որդի Գամաղիէլը, 12 Բենիամինի ցեղից՝ Գեդէոնի որդի Աբիդանը, 13 Դանի ցեղից՝ Միսադանի որդի Աքիեզերը, 14 Ասերի ցեղից՝ Եքրանի որդի Փագիէլը, 15 Գադի ցեղից՝ Ռագուէլի որդի Եղիսափանը, 16 Նեփթաղիմի ցեղից՝ Ենանի որդի Աքիրէն»:

17 Սրանք են իսրայէլացի նահապետների ցեղերի իշխանները, հազարապետները: 18 Մովսէսն ու Ահարոնը վերցրին յականէ յանուանէ թուարկուած այս այրերին եւ երկրորդ տարուայ երկրորդ ամսի առաջին օրը հաւաքելով ամբողջ ժողովրդին՝ հաշուառման ենթարկեցին ըստ իրենց ցեղերի, ըստ նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ՝ քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող արական սեռի բոլոր մարդկանց: 19 Ինչպէս որ Տէրը հրամայել էր Մովսէսին, հաշուառման ենթարկեցին մարդկանց Սինայի անապատում:

20 Իսրայէլի անդրանիկ որդի Ռուբէնի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 21 կազմեց քառասունվեց հազար հինգ հարիւր հոգի: 22 Շմաւոնի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 23 կազմեց յիսունինը հազար երեք հարիւր հոգի:

24 Յուդայի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 25 կազմեց եօթանասունչորս հազար վեց հարիւր հոգի: 26 Իսաքարի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 27 կազմեց յիսունչորս հազար չորս հարիւր հոգի:

28 Զաբուղոնի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 29 կազմեց յիսունեօթը հազար չորս հարիւր հոգի: 30 Յովսէփի որդիներից Եփրեմի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 31 կազմեց քառասուն հազար հինգ հարիւր հոգի:

32 Մանասէի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 33 կազմեց երեսուներկու հազար երեք հարիւր հոգի:

34 Բենիամինի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ

իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 35 կազմեց երեսունհինգ հազար չորս հարիւր հոգի:

36 Գադի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 37 կազմեց քառասունհինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի: 38 Դանի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 39 կազմեց վաթսուներկու հազար եօթը հարիւր հոգի: 40 Ասերի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 41 կազմեց քառասունմէկ հազար հինգ հարիւր հոգի:

42 Նեփթաղիմի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ որդիների թիւը ըստ իրենց ցեղերի, գնդերի, նահապետների ընտանիքների, յականէ յանուանէ, մէկ առ մէկ 43 կազմեց յիսուներեք հազար չորս հարիւր հոգի:

44 Ահա այս է աշխարհագիրը, որ կատարեցին Մովսէսը, Ահարոնն ու իսրայէլացի տասներկու իշխանները, որոնցից ամէն մէկը մի ցեղից էր՝ իրենց նահապետների ընտանիքներից՝ ըստ ցեղերի: 45 Կատարուեց քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող, զէնք կրելու ընդունակ իսրայէլացիների մարդահամարը[†]: 46 Հաշուառման ենթարկուածների ընդհանուր թիւը կազմեց վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի: 47 Ղեւտացիների ցեղին պատկանողները, սակայն, իսրայէլացիների հետ հաշուառման չենթարկուեցին:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

48 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 49 «Տե՛ս, մարդահամար կատարելիս Ղեւիի ցեղը հաշուառման չենթարկես, նրանց թիւը իսրայէլացիների վրայ չգումարես: 50 Ղեւտացիներին կը նշանակես վկայութեան խորանի սպասարկութեան վերակացու, նրա սպասքի եւ այն ամէնի վերակացու, ինչ գտնւում է դրա մէջ: Նրանք կը բարձեն խորանն ու նրա ամբողջ կահկարասին, հոգեւոր սպասարկութիւն կ'անեն նրա մէջ եւ կը բնակուեն խորանի շուրջը: 51 Խորանը տեղափոխելիս այն կը քանդեն ղեւտացիները, խորանը տեղաւորելիս այն կը կանգնեցնեն ղեւտացիները: Եթէ մի այլազգի մօտենայ դրան, թող մեռնի:

52 Իսրայէլացիներից իւրաքանչիւրն իր զօրքով թող վրան խփի ըստ իր ցեղի, ըստ նահապետների կարգի: 53 Ղեւտացիները վրանները թող խփեն վկայութեան խորանի շուրջը, Տիրոջ դիմաց, միւս իսրայէլացիները չդիպչեն վրանին, որպէսզի մեղք գործած չլինեն: Վկայութեան խորանի պահպանութիւնը թող ղեւտացինե՛րը յանձն առնեն»:

54 Եւ իսրայէլացիներն արեցին այն ամէնը, ինչ Տէրը պատուիրել էր Մովսէսին ու Ահարոնին. նրանք այդպէս էլ արեցին:

ՑԵՂԵՐԻՆ ՏՐՈՒԱԾ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՋԵՒԱՆՈՒՄ

2 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 2 «Ամէն մէկը թող գնայ իր գնդի դրօշակի ետեւից, ըստ իր նահապետական տների: Իսրայէլացիներից իւրաքանչիւրը թող բանակատեղի հաստատի ըստ իր բանակի:

3 Արեւելեան կողմում առաջինը թող Յուդայի ցե՛ղը բանակատեղի հաստատի իր զօրքով: Յուդայի ցեղի գնդի հրամանատարը Ամինադաբի որդի Նաասոնն է: 4 Հաշուառման ենթարկուած նրա զօրքը բաղկացած է եօթանասունչորս հազար վեց հարիւր հոգուց: 5 Նրանցից յետոյ թող բանակատեղի հաստատի Իսաքարի ցեղը: Իսաքարի ցեղի գնդի հրամանատարը Սոգարի որդի Նաթանայէլն է: 6 Հաշուառման ենթարկուած նրա զօրքը բաղկացած է յիսունչորս հազար չորս հարիւր հոգուց: 7 Նրա կողքին թող բանակատեղի հաստատի Զաբուղոնի ցեղը: Զաբուղոնի ցեղի գնդի հրամանատարը

[†]Ըստ իրենց հայրերի տների:

Քելոնի որդի Եղիաբն է: 8 Հաշուառման
ենթարկուած նրա զօրքը բաղկացած է
յիսունեօթը հազար չորս հարիւր
հոգուց: 9 Յուդայի ցեղի հաշուառման
ենթարկուած ամբողջ զօրքը բաղկացած
է հարիւր ութսունվեց հազար չորս
հարիւր հոգուց: Ճանապարհ ընկնելիս
նրանք իրենց զօրքով թող առաջինը
գնան:

10 Ռուբէնի ցեղի գունդն ու զօրքը
հարաւային կողմում թող լինեն: Ռու-
բէնի ցեղի գնդի հրամանատարը Սա-
դիւրի որդի Եղիսուրն է: 11 Հաշուառ-
ման ենթարկուած նրա զօրքը բաղկա-
ցած է քառասունվեց հազար հինգ հա-
րիւր հոգուց: 12 Նրա կողքին թող
բանակատեղի հաստատի Շմաւոնի
ցեղը: Շմաւոնի ցեղի գնդի հրամանա-
տարը Սուրիսադայի որդի Սաղամիէլն
է: 13 Հաշուառման ենթարկուած նրա
զօրքը բաղկացած է յիսունինը հազար
երեք հարիւր հոգուց: 14 Նրա կողքին
թող բանակատեղի հաստատի Գադի
ցեղը: Գադի ցեղի հրամանատարը
Ռագուէլի որդի Եղիասփանն է: 15 Հա-
շուառման ենթարկուած նրա զօրքը
բաղկացած է քառասունհինգ հազար
վեց հարիւր յիսուն հոգուց: 16 Ռուբէնի
ցեղի հաշուառման ենթարկուած ամբողջ
զօրքը բաղկացած է հարիւր յիսունմէկ
հազար չորս հարիւր յիսուն հոգուց:
Ճանապարհ ընկնելիս նրանք իրենց
զօրքով թող երկրորդը գնան:

17 Վկայութեան խորանը տեղափո-
խելիս ղեւտացիների բանակատեղին
թող գտնուի բանակատեղիների մէջ-
տեղում: Ինչ կարգով որ բանակատեղի
են հաստատել, նոյն կարգով էլ իւրա-
քանչիւրն ըստ իր իշխանութեան[†] թող
ճանապարհ ընկնի:

18 Եփրեմի ցեղի գունդն իր սպա-
ռազինութեամբ հանդերձ թող բանակա-
տեղի հաստատի արեւմտեան կողմում:
Եփրեմի ցեղի գնդի հրամանատարը
Էմիուդի որդի Եղիսման է: 19 Հա-
շուառման ենթարկուած նրա զօրքը
բաղկացած է քառասուն հազար հինգ
հարիւր հոգուց: 20 Նրանցից յետոյ թող
բանակատեղի հաստատի Մանասէի ցե-
ղը: Մանասէի ցեղի հրամանատարը
Փադասուրի որդի Գամաղիէլն է: 21 Հա-
շուառման ենթարկուած նրա զօրքը
բաղկացած է երեսուներկու հազար երեք
հարիւր հոգուց: 22 Նրանցից յետոյ
բանակատեղի հաստատողը Բենիամինի
գունդը թող լինի: Բենիամինի գնդի
հրամանատարը Գեդէոնի որդի Աբի-
դանն է: 23 Հաշուառման ենթարկուած
նրա զօրքը բաղկացած է երեսունհինգ
հազար չորս հարիւր հոգուց: 24 Եփրեմի
ցեղի հաշուառման ենթարկուած ամբողջ
զօրքը բաղկացած է հարիւր ութ հազար
երկու հարիւր հոգուց: Ճանապարհ
ընկնելիս նրանք իրենց զօրքով թող
երրորդը գնան:

25 Դանի ցեղի գունդն իր սպառա-
զինութեամբ թող բանակատեղի հաս-
տատի հիւսիսային կողմում: Դանի ցեղի
գնդի հրամանատարը Ամիսադայի որդի
Աքիեզերն է: 26 Հաշուառման ենթար-
կուած նրա զօրքը բաղկացած է վաթ-
սուներկու հազար եօթը հարիւր հոգուց:
27 Նրանցից յետոյ բանակատեղի
հաստատողը Ասերի ցեղը թող լինի:
Ասերի ցեղի գնդի հրամանատարը
Եքրանի որդի Փագիէլն է: 28 Հաշուառ-
ման ենթարկուած նրա զօրքը բաղկա-
ցած է քառասունմէկ հազար հինգ հա-
րիւր հոգուց: 29 Նրանցից յետոյ բանա-
կատեղի հաստատողը Նեփթաղիմի ցեղը
թող լինի: Նեփթաղիմի ցեղի գնդի
հրամանատարը Ենանի որդի Աքիրէն է:
30 Հաշուառման ենթարկուած նրա
զօրքը բաղկացած է յիսուներեք հազար
չորս հարիւր հոգուց: 31 Դանի ցեղի
հաշուառման ենթարկուած զօրքը բաղ-
կացած է հարիւր յիսունեօթը հազար
վեց հարիւր հոգուց: Ճանապարհ ընկ-
նելիս նրանք, ըստ իրենց գնդի կարգի,
իրենց զօրքով վերջինը թող գնան»:

32 Այս է իսրայէլացիների զօրքի թիւն
ըստ իրենց նահապետների ընտանիք-
ների: Հաշուառման ենթարկուած
զօրքերի ընդհանուր թիւը բաղկացած է
վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր
յիսուն հոգուց: 33 Ղեւտացիները, սա-
կայն, վերոյիշեալ հաշուառման ենթար-
կուածների մէջ չեն մտնում, ինչպէս որ
Տէրն էր պատուիրել Մովսէսին: 34 Իս-
րայէլացիներն արեցին այն ամէնը, ինչ
Տէրը հրամայել էր Մովսէսին: Նրանք

[†]Եբրայերէնում՝ ըստ իր դրօշի:

բանակատեղիներ հաստատեցին ըստ
իրենց գնդերի, եւ ամէն մէկը ճանա-
պարհ էր ընկնում իր ցեղի հետ, ըստ իր
նահապետների ընտանիքների:

ԱՀԱՐՈՆԻ ՈՐԴԻՆԵՐԸ

3 Երբ Տէրը Սինայի լեռան վրայ խո-
սում էր Մովսէսի հետ, Ահարոնի ու
Մովսէսի յետնորդները հետեւեալներն
էին. 2 Ահարոնի որդիների անուններն
են. անդրանիկի անունը՝ Նաբադ, միւս-
ներինը՝ Աբիուդ, Եղիազար եւ Իթամար:
3 Ահա սրանք են Ահարոնի քահանայ
օծուած, քահանայանալու շնորհքին ար-
ժանացած որդիների անունները: 4 Նա-
բադն ու Աբիուդը վախճանուեցին Տիրոջ
առաջ, երբ Սինայի անապատում պիղծ
կրակ էին մատուցում Տիրոջը: Սրանք
զաւակներ չունէին, ուստի իրենց հօր՝
Ահարոնի հետ քահանայացան Եղիա-
զարն ու Իթամարը:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԸ ԿԱՐԳԻՈՒՄ ԵՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

5 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 6 «Ղեւիի ցեղի մարդկանց բե՛ր
Ահարոն քահանայի մօտ, որ ծառայեն
նրան. 7 թող կատարեն նրա պահպա-
նութիւնն ու իսրայէլացիների պահպա-
նութիւնը վկայութեան խորանի առջեւ
եւ ծառայեն խորանին: 8 Նրանք թող
պահպանեն վկայութեան խորանի ամ-
բողջ սպասքը, թող կատարեն իսրա-
յէլացիների պահպանութիւնը եւ խորա-
նի ամբողջ ծառայութիւնը: 9 Ղեւտացի-
ներին կը յանձնես քո եղբայր Ահարոնին
ու նրա քահանայ որդիներին. թող
նրանք ինձ ընծայուած լինեն իսրա-
յէլացիներից: 10 Ահարոնին ու նրա
որդիներին կը նշանակես վկայութեան
խորանի սպասարկութեան վրայ, որ
կատարեն իրենց քահանայական պաշ-
տօնը եւ այն ամէնը, ինչ վերաբերում է
զոհասեղանին ու վարագոյրից ներս
եղածին: Եթէ վկայութեան խորանին մի
այլազգի մօտենայ, թող մեռնի»:

11 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու
ասաց. 12 «Ես, ահա, իսրայէլացիների
միջից ղեւտացիներին առանձնացրի
բոլոր այն անդրանիկների փոխարէն,
որոնք իսրայէլացի կանանց արգանդն
են բացել: Ղեւտացիները թող լինեն
իսրայէլացիների անդրանիկների փրկա-
գինը եւ ինձ պատկանեն, 13 որովհետեւ
ամէն անդրանիկ ծնունդ ինձ է պատ-
կանում: Այն օրը, երբ Եգիպտացիների
երկրում կոտորեցի բոլոր անդրանիկ
զաւակներին, սրբագործեցի ինձ համար
իսրայէլի բոլոր անդրանիկ ծնունդ-
ներին, մարդ թէ անասուն, որպէսզի ինձ
պատկանեն, քանզի ես եմ Տէրը»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

14 Տէրը Սինայի անապատում խօսեց
Մովսէսի հետ ու ասաց. 15 «Ղեւիի
որդիներին հաշուառման ենթարկի՛ր
ըստ իրենց նահապետների ընտանիք-
ների, ըստ իրենց գնդերի ու իրենց
ցեղերի: Հաշուառման ենթարկի՛ր մէկ
ամսական եւ դրանից բարձր բոլոր արու
զաւակներին»: 16 Մովսէսն ու Ահարոնը
հաշուառումը կատարեցին ըստ Տիրոջ
խօսքի, այնպէս, ինչպէս Տէրն էր
հրամայել իրենց: 17 Սրանք են Ղեւիի
որդիների անունները. Գեթսոն, Կահաթ
եւ Մերարի: 18 Սրանք են Գեթսոնի
որդիների անունները ըստ իրենց գնդե-
րի. Ղոբենի եւ Սեմէի: 19 Կահաթի
որդիներն ըստ իրենց գնդերի սրանք են.
Ամրամ, Իսահառ, Քեբրոն եւ Ոզիէլ:
20 Մերարիի որդիներն ըստ իրենց
գնդերի սրանք են. Մոողի եւ Մուսի:

21 Սրանք են ղեւտացիների գնդերն
ըստ իրենց նահապետների ընտանիք-
ների. Գեթսոնի տոհմից՝ Ղոբենիի
գունդն ու Սեմէիի գունդը: Սրանք
Գեթսոնի գնդերն են: 22 Մէկ ամսական
ու դրանից բարձր տարիք ունեցող արու
զաւակների ընդհանուր թիւը կազմում է
եօթը հազար հինգ հարիւր հոգի: 23 Գեթ-
սոնի այս գնդերը խորանի յետեւի
մասում՝ արեւմտեան կողմում բանա-
կատեղի պիտի հաստատեն: 24 Գեթսոնի
գնդի նահապետների ընտանիքների
առաջնորդը Գեիղի որդի Եղիասփանն է:
25 Վկայութեան խորանում Գեթսոնի
որդիների պահպանութեանն են
յանձնւում 26 խորանը, վկայութեան

խորանի արտաքին վարագոյրները, քօղերը, սրահի առագաստները, խորանի դռան վարագոյրները եւ նրանց բոլոր բաղկացուցիչ մասերը:

27 Կահաթից սերուեցին նախ Ամրամի գունդը, յետոյ՝ Իսահառի գունդը, յետոյ՝ Քեբրոնի գունդը, յետոյ՝ Ոզիէլի գունդը: 28 Սրանք Կահաթի գնդերն են: Այս գնդերի մէկ ամսական եւ աւելի բարձր տարիք ունեցող արու զաւակների թիւը կազմում է ութ† հազար երեք հարիւր հոգի, որոնք եւ պիտի հսկէին սրբազան իրերը: 29 Կահաթի որդիների գնդերը բանակատեղի պիտի հաստատեն խորանից հարաւ: 30 Կահաթի գնդի նահապետների ընտանիքների առաջնորդը Ոզիէլի որդի Եղիսափանն է: 31 Նրանց պարտականութիւնն է տապանակի, զոհասեղանի, աշտանակի, զոհարանների եւ ծիսակատարութեան արբազան սպասքի, խորանի վերին ծածկոցի եւ դրանց բոլոր բաղկացուցիչ մասերի պահպանութիւնը: 32 Ղեւտացիների իշխանաց իշխանը Ահարոն քահանայի որդի Եղիազարն է, որի պարտականութիւնն է սուրբ իրերի պահպանութիւնը:

33 Մերարիից սերուեցին Մոողիի գունդն ու Մուսիի գունդը: Սրանք Մերարիի գնդերն են: 34 Սրանց մէկ ամսական եւ աւելի բարձր տարիք ունեցող բոլոր արու զաւակների թիւը կազմում է վեց հազար երկու հարիւր‡ հոգի: 35 Մերարիի գնդի նահապետների ընտանիքների իշխանը Աբիքիի որդի Սուրիէլն է: Նրանք թող բանակատեղի հաստատեն խորանից հիւսիս: 36 Մերարիի որդիների պահպանութեանը թող յանձնուեն խորանի խոյակները, նիգերը, սիւները, խարիսխներն ու դրանց բոլոր բաղկացուցիչ մասերը, 37 բակի չորս կողմի բոլոր սիւները, սրանց խարիսխները, ցցերը եւ պարանները:

38 Վկայութեան խորանի դիմաց՝ արեւելեան կողմում թող բանակատեղի հաստատեն Մովսէսն ու Ահարոնը: Վերջինիս որդիները իսրայէլացիներին ծառայելու համար պէտք է պահպանեն սրբութիւնները: Եթէ վկայութեան խորանին մի այլազգի մօտենայ, թող մեռնի: 39 Տիրոջ խօսքով Մովսէսի ու Ահարոնի կողմից հաշուառման ենթարկուած մէկ ամսական եւ աւելի բարձր տարիք ունեցող արական սեռի ղեւտացիների թիւը, ըստ իրենց գնդերի, կազմեց քսաներկու հազար հոգի:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԸ ԴՐԱՒՈՒՄ ԵՆ ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՏԵՂԸ

40 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. «Հաշուառման ենթարկի՛ր իսրայէլացիների մէկ ամսական եւ աւելի բարձր տարիք ունեցող արական սեռի բոլոր անդրանիկներին եւ ստացի՛ր նրանց թիւն ըստ իրենց անունների: 41 Իսրայէլացիների բոլոր անդրանիկների փոխարէն ղեւտացիներին ինձ պիտի շնորհես, քանզի ես եմ Տէրը, ինչպէս եւ ղեւտացիների անասունները՝ իսրայէլացիների անասունների առաջին ծնունդների փոխարէն»: 42 Մովսէսը հաշուառման ենթարկեց իսրայէլացիների բոլոր անդրանիկ որդիներին, ինչպէս պատուիրել էր Տէրը: 43 Իսրայէլացիների յականէ յանուանէ հաշուառման ենթարկուած մէկ ամսական եւ աւելի բարձր տարիք ունեցող արական սեռի բոլոր անդրանիկների թիւը կազմեց քսաներկու հազար երկու հարիւր եօթանասուներեք հոգի: 44 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 45 «Ղեւտացիներին կ՛առնես իսրայէլացիների բոլոր անդրանիկ զաւակների փոխարէն, ինչպէս նաեւ ղեւտացիների անասունները՝ նրանց անասունների փոխարէն: Ղեւտացիներն ինձ պիտի պատկանեն, քանզի ես եմ Տէրը: 46 Ղեւտացիների թուի համեմատ թուով աւելի իսրայէլացի երկու հարիւր եօթանասուներեք անդրանիկների դիմաց փրկագին կը վերցնես. 47 իւրաքանչիւրի դիմաց՝ հինգ սիկղ†. ըստ սրբարանում ընդունուած սակագնի մէկ սիկղը հաւասար է քսան դանգի: 48 Դրամը իբրեւ փրկագին կը տաս Ահարոնին ու նրա որդիներին՝ ղեւտացիների թուի համեմատ իսրայէլացիների թուով աւելի անդրանիկների դիմաց»: 49 Ղեւտացիների թուի համեմատ իսրայէլացիների թուով աւելի անդրանիկների դիմաց դրամն իբրեւ

†Ցունարէնում՝ վեց:

‡Ցունարէնում՝ յիսուն:

†Հինգ արծաթ դրամ:

փրկագին առաւ Մովսէսը: 50 Իսրայէլացիների թուով աւելի անդրանիկ որդիների դիմաց նա հազար երեք հարիւր վաթսունհինգ սիկղ դրամ ստացաւ ըստ սրբարանում ընդունուած սիկղի: 51 Իսրայէլացիների թուով աւելի անդրանիկների դիմաց ստացած փրկագինը, ըստ Տիրոջ խօսքի, Մովսէսը յանձնեց Ահարոնին ու նրա որդիներին: Տէրը այսպէս էր հրամայել Մովսէսին:

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԻՑ ԿԱՀԱԹԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 2 «Ղեւիի ցեղից հաշուառման ենթարկի՛ր Կահաթի որդիներին ըստ իրենց գնդերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների՝ 3 քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանց, ովքեր սպասաւորելու են վկայութեան խորանում եւ կատարելու են բոլոր անհրաժեշտ գործերը: 4 Ղեւիի որդիների միջից Կահաթի որդիների գործը վկայութեան խորանում ըստ իրենց գնդերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների թող լինի սրբազան իրերի պահպանութիւնը: 5 Երբ բանակատեղին տեղափոխուելու լինի, Ահարոնն ու իր որդիները պիտի մտնեն վրան, իջեցնեն վարագոյրը եւ դրանով ծածկեն վկայութեան տապանակը: 6 Նրանք դրա վրայ պիտի դնեն կաշուէ կապոյտ ծածկոցը, իսկ նրա վրայ էլ պիտի գցեն համակ կապոյտ կերպասը, ապա պիտի տեղադրեն տապանակի ձողերը: 7 Նուիրաբերութեան սեղանի վրայ պիտի փռեն համակ ծիրանի կերպասը, իսկ դրա վրայ էլ պիտի դնեն ափսէները, տուփերը, գաւաթները եւ մատուցարանները, որոնցով նուիրաբերում են կատարում: Դրա վրայ պիտի դնեն նաեւ հանապազօրեայ հացը, 8 սեղանը պիտի ծածկեն կարմիր կտորով, սրա վրայ էլ պիտի դնեն կաշուէ կապոյտ ծածկոց եւ պիտի տեղադրեն ձողերը: 9 Նրանք պիտի առնեն կապոյտ կերպաս եւ դրանով ծածկեն լոյսի աշտանակը, նրա երկու կանթեղները, նրա ունելիները, նրա ճրագակալները եւ իւղի բոլոր ամանները, որոնցով սպասարկում են: 10 Աշտանակն ու նրա ամբողջ սպասքը պիտի առնեն կաշուէ կապոյտ ծածկոցի տակ եւ դնեն ձողերի վրայ: 11 Ոսկէ զոհասեղանը պիտի ծածկեն կապոյտ կերպասով, դրա վրայ պիտի գցեն կաշուէ կապոյտ ծածկոց եւ պիտի տեղադրեն ձողերը: 12 Պիտի վերցնեն պաշտամունքի ամբողջ սպասքը, որոնցով պաշտամունք են կատարում սրբարանում, եւ պիտի դնեն կապոյտ կերպասի մէջ: Այնուհետեւ դա պիտի ծածկեն կաշուէ կապոյտ ծածկոցով եւ պիտի դնեն ձողերի վրայ: 13 Զոհասեղանի վրայ ծածկոց պիտի փռեն, ապա այն պիտի ծածկեն համակ ծիրանի կերպասով: 14 Վրան պիտի դնեն այն սպասքը, որով պաշտամունք են կատարելու դրա վրայ. այն է՝ կրակամանները, մեծ պատառաքաղները, տաշտերը, ծածկիչներն ու զոհասեղանի ամբողջ սպասքը: Դրա վրայ պիտի գցեն կաշուէ կապոյտ ծածկոցը եւ պիտի տեղադրեն ձողերը†: 15 Ապա պիտի վերցնեն ծիրանի կերպաս ու դրանով ծածկեն լուսարանն ու նրա պատուանդանները, դրա վրայ էլ պիտի գցեն կապոյտ կաշուէ ծածկոց եւ դնեն ձողերի վրայ: Երբ բանակատեղիի բնակիչները ճանապարհ ընկնեն, Ահարոնն ու նրա որդիները պիտի աւարտած լինեն սրբազան ամբողջ սպասքը ծածկելու գործերը: Դրանից յետոյ միայն պիտի գան Կահաթի որդիները, որ դրանք վերցնեն տանեն: Նրանք, սակայն, սրբազան առարկաներին չպիտի դիպչեն, որպէսզի չմեռնեն: Կահաթի որդինե՛րը պիտի վերցնեն վկայութեան խորանի բոլոր իրերը, 16 իսկ բոլորի վերակացուն պիտի լինի Ահարոն քահանայի որդի Եղիազարը: Նա պիտի հոգայ լուսաւորութեան իւղի, անուշահոտ խնկերի, հանապազօրեայ զոհամատուցման, օծութեան իւղի, խորանին վերաբերող ամէն ինչի, դրա մէջ եղած սրբազան առարկաների ու այնտեղ կատարուող ամէն ինչի մասին»:

17 Տէրը խօսեց Մովսէսի եւ Ահարոնի հետ ու ասաց. 18 «Ղեւտացիներից Կահաթի տոհմի մարդկանց չվերացնէք: Այնպէս արէք, որ նրանք ապրեն եւ սրբազան իրերին մերձենալիս չմեռնեն:

†Եբրայերէնում չկայ:

19 Ահարոնն ու նրա որդիները միայն պիտի մտնեն ներս եւ որոշեն, թէ նրանցից իւրաքանչիւրը ինչ պաշտօն է կատարելու: 20 Կահաթի որդիները հէնց այնպէս թող ներս չմտնեն սրբութիւնները տեսնելու համար, թէ ոչ կը մեռնեն»:

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԻՑ ԳԵՐՍՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

21 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 22 «Հաշուառման ենթարկի՛ր Գերսոնի որդիներին ըստ իրենց նահապետների ընտանիքների, ըստ իրենց գնդերի՝ 23 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանց, ովքեր սպասաւորութեան համար վկայութեան խորան պիտի մտնեն: 24 Այս է Գերսոնի գնդի մարդկանց պարտականութիւնը ծառայելիս եւ բեռներ բարձելիս: 25 Նրանք պիտի վերցնեն խորանի ծածկոցը, վկայութեան խորանը, դրա արտաքին վարագոյրները, դրա վրայ գցուող կապոյտ ծածկոցը, վկայութեան խորանի դռան վարագոյրը, սրահի առագաստը, 26 այն, ինչ դրուած է վկայութեան խորանի վրայ, պարանները եւ այն ամբողջ սպասքը, որով պաշտամունք են կատարում: 27 Գերսոնի որդիները պիտի վարուեն այնպէս, ինչպէս կը կարգադրեն Ահարոնն ու նրա որդիները. սպասաւորութիւնը պէտք է կատարուի ըստ նրանց կարգադրութեան: Նրանց հաշուառումը եւ նրանցից իւրաքանչիւրի կրելիք իրերի հաշուառումը կատարեցէ՛ք յականէ յանուանէ: 28 Ահա այս է Գերսոնի որդիների պարտականութիւնը վկայութեան խորանում, որի վերակացուն է Ահարոն քահանայի որդի Իթամարը»:

ՂԵՒԻԻ ՈՐԴԻՆԵՐԻՑ ՄԵՐԱՐԻԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

29 «Հաշուառման կ՚ենթարկէք Մերարիի որդիներին ըստ իրենց գնդերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների՝ 30 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանց, ովքեր սպասաւորութեան համար վկայութեան խորան պիտի մտնեն: 31 Նրանց պարտականութիւնն է կրել խորանի հետեւեալ իրերը. խորանի խոյակները, նրա նիգերն ու սիւները, նրա խարիսխները, վարագոյրը, նրա խարիսխները, սիւները, 32 խորանի դռան վարագոյրը, բակի չորս կողմերի սիւները, դրանց խարիսխները, բակի դռան վարագոյրի սիւները եւ սրանց խարիսխներն ու ցցերը, պարանները, ամբողջ կահ-կարասին ու սպասքը: Մէկ առ մէկ կատարեցէ՛ք նրանց եւ փոխադրութեան ենթակայ ամբողջ կահ-կարասու հաշուառումը: 33 Այս է լինելու վկայութեան խորանում Մերարիի տոհմին պատկանող մարդկանց պարտականութիւնն իրենց յանձնարարուած գործերում, որ պիտի կատարուեն Ահարոն քահանայի որդի Իթամարի հսկողութեան ներքոյ»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

34 Մովսէսը, Ահարոնն ու իսրայէլացի հրամանատարները հաշուառման ենթարկեցին Կահաթի որդիներին ըստ նրանց տոհմերի, ըստ նրանց նահապետների ընտանիքների՝ 35 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանց, ովքեր ենթակայ էին ծառայութեան մէջ մտնելու եւ վկայութեան խորանում սպասաւորութիւն կատարելու: 36 Նրանց թիւը ըստ իրենց տոհմերի եղաւ երկու հազար եօթը հարիւր յիսուն հոգի: 37 Այս է Կահաթի տոհմին պատկանող մարդկանց թիւը, բոլոր նրանց, ովքեր ենթակայ էին մտնելու վկայութեան խորան՝ սպասաւորութիւն կատարելու, հաշուառում, որ կատարեցին Մովսէսն ու Ահարոնը ըստ այն խօսքի, որ Տէրն ասել էր Մովսէսին:

38 Հաշուառման ենթարկուեցին Գերսոնի որդիներն ըստ իրենց տոհմերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների՝ 39 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկան, բոլոր նրանք, ովքեր ենթակայ էին մտնելու վկայութեան խորան՝ սպասաւորութիւն կատարելու: 40 Նրանց թիւն ըստ իրենց տոհմերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների եղաւ երկու հազար վեց հարիւր երեսուն: 41 Այս է Գերսոնի տոհմին պատկանող մարդկանց թիւը, բոլոր նրանց, ովքեր սպասաւորելու էին վկայութեան խորանում, հաշուառում, որ կատարեցին Մովսէսն ու Ահարոնը ըստ այն խօսքի, որ Տէրն ասել էր Մովսէսին:

42 Հաշուառման ենթարկուեցին նաեւ Մերարիի որդիներն ըստ իրենց տոհմերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների՝ 43 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանք, ովքեր ենթակայ էին մտնելու վկայութեան խորան՝ սպասաւորութիւն կատարելու: 44 Նրանց թիւն ըստ իրենց տոհմերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների եղաւ երեք հազար երկու հարիւր: 45 Այս է Մերարիի տոհմին պատկանող մարդկանց թիւը, որոնց հաշուառումը կատարեցին Մովսէսն ու Ահարոնը ըստ այն խօսքի, որ Տէրն ասել էր Մովսէսին:

46 Մովսէսի, Ահարոնի ու իսրայէլացի հրամանատարների հաշուառման ենթարկած բոլոր ղեւտացիների թիւը ըստ իրենց տոհմերի, ըստ իրենց նահապետների ընտանիքների՝ 47 սկսած քսանհինգ տարեկանից մինչեւ յիսուն տարեկանները, բոլոր նրանց, ովքեր իրաւունք ունէին սպասաւորութիւն կատարելու եւ վկայութեան խորանն ու դրա կահ-կարասին փոխադրելու, 48 Տիրոջ խօսքի համաձայն բոլոր հաշուառման ենթարկուածների թիւը եղաւ ութ հազար հինգ հարիւր ութսուն: 49 Տէրը նրանց հաշուառման ենթարկեց Մովսէսի ձեռքով: Իւրաքանչիւր մարդու համար նշուեց իր կատարելիք սպասաւորութիւնն ու փոխադրելիք կահ-կարասին: Նրանք հաշուառման ենթարկուեցին, ինչպէս որ Տէրը հրամայել էր Մովսէսին:

ԱՆՄԱՔՈՒՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

5 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Հրամայի՛ր իսրայէլացիներին, որ բանակատեղիից հեռացնեն բոլոր բորոտներին, սերմի ծորում ունեցող բոլոր մարդկանց եւ բոլոր նրանց, ովքեր դիակի ձեռք տալով պիղծ են դարձել, 3 այր լինեն նրանք թէ կին: Բանակատեղիից արձակեցէ՛ք նրանց, որպէսզի չպղծեն իրենց բանակատեղիները, ուր ինքնում բնակւում եմ ես»: 4 Այդպէս էլ արեցին իսրայէլացիները. նրանք բանակատեղիից հեռացրին նրանց: Ինչպէս որ ասել էր Տէրը Մովսէսին, այդպէս էլ արեցին իսրայէլացիները:

ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԽԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՐԷՆ

5 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 6 «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց. "Այն տղամարդը կամ կինը, որ մարդկային որեւէ մեղք է գործում, խիստ արհամարհած կը լինի Տիրոջը եւ յանցանք գործած կը լինի: 7 Թող նա խոստովանի իր մեղքերը, թող լրիւ հատուցի նրան, ում վնաս է պատճառել եւ վնասի մէկ հինգերորդ մասն էլ աւելացնի հատուցածի վրայ: 8 Եթէ վնաս կրած մարդը մերձաւոր որեւէ մէկը չունի, որ նրան հատուցի իր պատճառած վնասը, ապա յանցանքի դիմաց Տիրոջը հատուցուածը թող պատկանի քահանային, բացի քաւութեան նոխազից, որով նա պէտք է քաւի իր մեղքը:

9 Իսրայէլացիների՝ Տիրոջը մատուցած բոլոր տեսակի պտուղները պիտի պատկանեն քահանային: 10 Տիրոջը մատուցուող ամէն ինչ քահանային պէտք է պատկանի: Իսրայէլացիների՝ քահանային մատուցած ամէն ինչ նրան թող պատկանի"»:

ՕՐԷՆՔ ԱՆԱՌԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԱՍԿԱԾՈՒՈՂ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

11 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 12 «Դիմի՛ր իսրայէլացիներին եւ ասա՛ նրանց. "Եթէ պատահի, որ ամուսնացած մի կին յանցանք գործի՝ դաւաճանի ամուսնուն, 13 կենակցի մէկի հետ, եւ դա վրիպի ամուսնու աչքից, կինը թաքցնի եղածը, եւ այդ բանի մասին վկայ չլինի, ու կինն էլ յղի չմնայ, միեւնոյնն է, կինը պղծուած է: 14 Նոյնպէս եւ՝ եթէ խանդի ոգին տիրի ամուսնուն, եւ նա խանդի իր կնոջը, բայց կինը

մաքուր լինի, կամ եթէ խանդի ոգին տիրի ամուսնուն, ու նա խանդի իր կնոջը, եւ կինը պղծուած լինի, – 15 ապա երկու դէպքում էլ ամուսինն իր կնոջը Թող բերի քահանայի մօտ եւ նրա համար մէկ տասներորդ գրիւ† գարու ալիւր մատուցի: Դրա վրայ իւղ չպէտք է ածել, կնդրուկ չպէտք է դնել, որովհետեւ դա խանդի ընծայաբերում է, յիշատակի ընծայաբերում, մեղքը յիշեցնող ընծայաբերում: 16 Քահանան կնոջը պէտք է բերի ու կանգնեցնի Տիրոջ առջեւ: 17 Քահանան խեցէ մի ամանով սուրբ ջուր պիտի առնի եւ վկայութեան խորանի յատակի հողից մի բուռ վերցնելով՝ պիտի լցնի ջրի մէջ: 18 Քահանան կնոջը պիտի կանգնեցնի Տիրոջ առջեւ, հանի կնոջ գլխաշորը, նրա ձեռքը տայ մեղքը յիշեցնող ընծայաբերումը, խանդի ընծայաբերումը: Քահանայի ձեռքին պիտի լինի նզովքի յանդիմանութեան ջուրը: 19 Քահանան պիտի երդուեցնի կնոջը եւ ասի նրան. "Եթէ ուրիշի հետ չես կենակցել, յանցանք չես գործել, չես դաւաճանել ամուսնուդ, ապա անմասն լինես նզովքի այս յանդիմանութեան‡ ջրից": 20 Իսկ եթէ ամուսին ունենալով հանդերձ է անառակութիւն արել, դաւաճանել ամուսնուն, 21 այն ժամանակ քահանան Թող երդուեցնի կնոջը այս նզովքի երդմամբ եւ ասի նրան. "Տէրը Թող քեզ նզովքի ու երդման ենթակայ դարձնի քո ժողովրդի մէջ, հիւծի քո զիստերը եւ ուռեցնի քո որովայնը: 22 Նզովեալ ջուրը Թող լցուի քո որովայնը, ուռեցնի քո մէջքը եւ հիւծի քո զիստերը": Կինը Թող պատասխանի. "Թող այդպէս լինի, Թող այդպէս լինի": 23 Քահանան այս նզովքը Թող գրի առնի, ապա այդ գրուածքը լուայ նզովքի յանդիմանութեան ջրի մէջ, 24 յանդիմանութեան նզովքի այդ ջուրը խմել տայ կնոջը, որպէսզի այդպիսով նրա մէջ լցուի յանդիմանութեան նզովեալ ջուրը: 25 Թող քահանան կնոջ ձեռքից առնի խանդի ընծայաբերումը, դնի§ Տիրոջ առջեւ եւ մատուցի զոհասեղանի վրայ: 26 Քահանան բռով Թող առնի կնոջ մեղքը յիշատակող ընծայաբերումից եւ այն դնի զոհասեղանի վրայ: Դրանից յետոյ կնոջը Թող խմել տայ յանդիմանութեան ջուրը: 27 Եթէ կինն իրօք պղծուած է, եւ նա իր արարքը թաքցրել է ամուսնուց, ապա յանդիմանութեան նզովեալ ջուրը Թող լցուի նրա մէջ, ուռեցնի նրա որովայնը, հիւծի նրա զիստերը, եւ կինը նզովուած լինի իր ժողովրդի մէջ: 28 Իսկ եթէ կինը պղծուած չէ, մաքուր է, ապա Թող նա քաւութիւն գտնի եւ կենակցի իր ամուսնու հետ: 29 Այս է խանդի օրէնքը, երբ կինն ամուսնացած լինելով դաւաճանում է ամուսնուն, 30 կամ երբ խանդի զգացում է տիրում տղամարդուն, եւ նա խանդում է իր կնոջը: Այս դէպքում նա կնոջը պիտի կանգնեցնի Տիրոջ առջեւ, իսկ քահանան նրա նկատմամբ պէտք է կիրառի վերոյիշեալ օրէնքը: 31 Եթէ կինը յանցաւոր դուրս գայ, այդ դէպքում ամուսինն անմեղ է, իսկ կինը Թող կրի իր գործած մեղքի պատիժը»:

†Շուրջ երեք կիլոգրամ:

‡Եբրայերէնում՝ լեղի:

§Եբրայերէնում՝ երերցնի:

ՈՒԽՏԵԱԼՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

6 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ նրանց ասա՛. "Այն տղամարդը կամ կինը, որ Տիրոջը նուիրուելու մեծ ուխտ է անում†, 3 պէտք է հրաժարուի գինուց եւ ոգելից խմիչքից: Նա գինուց կամ ոգելից խմիչքից պատրաստուած քացախ չպէտք է խմի, խաղող եւ չամիչ չպէտք է ուտի: 4 Իր ուխտի ամբողջ ընթացքում նա որթատնկից ստացուող ոչ մի բան չպէտք է օգտագործի՝ ոչ գինի, ոչ չամիչ, ոչ իսկ խաղողի կորիզ: 5 Իր ուխտի ամբողջ ընթացքում իր գլխին ածելի չպէտք է կպցնի, մինչեւ Տիրոջն ուխտած օրերը վերջանալը նա մաքուր պէտք է մնայ. իր գլխի մազերին ձեռք չպիտի տայ 6 Տիրոջն ուխտած բոլոր օրերին: Նա չպէտք է մօտենայ 7 հօր կամ մօր, եղբօր կամ քրոջ դիակին: Նրանց դիակին մօտենալով՝ նա չպէտք է պղծուի, որովհետեւ Տիրոջն արած ուխտը իր գլխի վրայ է: 8 Իր ուխտի բոլոր օրերին նա սուրբ պէտք է

†Եբրայերէնում՝ իր անձը Տիրոջը նուիրի:

լինի Տիրոջ համար: 9 Իսկ եթէ որեւէ մէկը յանկարծ մեռնի իր մօտ, ապա այդ դէպքում պղծուած կը լինի նրա ուխտ արած գլուխը. այդ օրն իսկ նա պէտք է ածիլի իր գլուխն ու մաքրուի, իսկ յաջորդ անգամ պէտք է ածիլուի եօթը օր անց: 10 Ութերորդ օրը նա քահանայի մօտ, վկայութեան խորան Թող բերի երկու տատրակ եւ աղաւնու երկու ձագ: 11 Քահանան մէկը պէտք է զոհի մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը պէտք է ողջակիզի: Այդպիսով քահանան Թող քաւած լինի նրա մեղքը, որ կատարել էր դիակ տեսնելով: Նա այդ օրն իսկ Թող սրբագործի իր գլուխը, 12 որովհետեւ նա այդ օրն է նուիրուում Տիրոջը իր ուխտի բոլոր օրերում: Դրանից յետոյ նա մի տարեկան գառ Թող նուիրաբերի իր մեղքերի քաւութեան համար: Իր ուխտին նախորդած օրերը հաշուի պիտի չառնուեն, որովհետեւ նրա ուխտ արած գլուխը պղծուեց:

13 Այս է ուխտեալին վերաբերող օրէնքը. երբ վերջանան նրա ուխտի օրերը, քահանան նրան վկայութեան խորան Թող բերի 14 եւ Տիրոջը մատուցած նրա զոհերն ու նուէրները, այն է՝ մի տարեկան ոչ արատաւոր գառ՝ ողջակէզի համար, մի տարեկան ոչ արատաւոր էգ գառ՝ մեղքերի քաւութեան համար, ոչ արատաւոր մէկ խոյ՝ փրկութեան համար, 15 մէկ զամբիւղ ընտիր ալիւրով հունցուած բաղարջ կարկանդակներ, իւղով շաղուած բաղարջ բլիթներ եւ իւղով հունցուած բաղարջ հացիկներ: 16 Քահանան այս բոլորը Թող դնի Տիրոջ առջեւ, կատարի մեղքերի քաւութեան պատարագը: 17 Այնուհետեւ նրա ողջակէզը եւ խոյը բաղարջ հացի զամբիւղի հետ Թող մատուցուի Տիրոջը որպէս փրկութեան զոհաբերութիւն, եւ քահանան Թող մատուցի զոհն ու ընծաները: 18 Վկայութեան խորանի մուտքի մօտ ուխտաւորը Թող ածիլի իր ուխտ արած գլուխը եւ մազը դնի այն կրակին, որի վրայ փրկութեան զոհն է: 19 Քահանան Թող վերցնի խոյի եփուած թեւը, զամբիւղից վերցնի մի բաղարջ հաց ու մի բաղարջ կարկանդակ եւ դնի ուխտաւորի ձեռքերի վրայ, երբ նա արդէն ածիլած կը լինի իր գլուխը: 20 Քահանան այն իբրեւ ընծայ Թող բերի Տիրոջ առջեւ, որից յետոյ ուխտեալը մաքրուած է համարւում: Քահանային են հասնում ողջակէզի կուրծքն ու ազդրը: Դրանից յետոյ ուխտեալը կարող է գինի խմել: 21 Ահա սրանք են իրեն Տիրոջը ուխտած մարդու մասին օրէնքը եւ դրան վերաբերող ծէսը, բացի այն դէպքերից, երբ ուխտեալը ի վիճակի է իր ուխտի համար աւելին անելու: Սա Տիրոջն արած իր ուխտը իր նուիրաբերումի չափով պէտք է կատարի"»

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

22 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 23 «Խօսի՛ր Ահարոնի ու նրա որդիների հետ եւ ասա՛. "Այսպէ՛ս օրհնեցէք իսրայէլացիներին եւ ասացէ՛ք նրանց. 24 (իմ անունը Թող դնեն իսրայէլացիների վրայ, եւ ես՝ Տէրս, կ'օրհնեմ նրանց). 25 Տէրն օրհնի քեզ ու պահպանի քեզ, 26 իր երեսը ցոյց տայ քեզ ու ողորմի քեզ: 27 Տէրն իր երեսը դէպի քեզ դարձնի եւ քեզ խաղաղութիւն պարգեւի"»:

ՍՐԲԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԱՅԼԵՐ

7 Երբ հասաւ այն օրը, որ Մովսէսն աւարտեց խորանի կառուցումը, եւ այն պատրաստ էր կանգնեցուելու, նա օծեց այն ու դրա ամբողջ սպասքը, զոհարանն ու դրա ամբողջ սպասքը, օծեց ու սրբագործեց դրանք: 2 Իսրայէլացի իշխանները՝ նրանց նահապետների ընտանիքների տասներկու հրամանատարները, որոնք գործակալների վերակացուներ էին, նուէրներ մատուցեցին: 3 Նրանք Տիրոջ առջեւ որպէս ընծայ մատուցեցին վեց զարդարուած սայլ ու տասներկու եզ. մէկական սայլ երկու իշխանների կողմից եւ մէկական զուարակ ամէն մի իշխանի կողմից: Նրանք այդ ընծաները բերեցին խորանի առջեւ: 4 Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց. 5 «Ընդունի՛ր նրանցից այդ ընծաները: Դրանք Թող ծառայեն վկայութեան խորանի սպասաւորութեանը: Դրանք կը տաս ղեւ-

տացիներին՝ ամէն մէկին ըստ իր սպասաւորութեան»: 6 Եւ Մովսէսն ընդունելով սայլերն ու եզները՝ տուեց ղեւտացիներին: 7 Նա երկու սայլ ու չորս եզ տուեց Գերսոնի որդիներին՝ ըստ նրանց պաշտօնի: 8 Չորս սայլ եւ ութ եզ տուեց Մերարիի որդիներին՝ ըստ նրանց պաշտօնի: Մովսէսն այդ արեց Ահարոն քահանայի որդի Իթամարի միջոցով: 9 Կահաթի որդիներին նա ոչինչ չտուեց, որովհետեւ նրանց պարտականութիւնը սրբազան սպասքը իրենց ուսերի վրայ կրելն էր:

10 Զոհասեղանի նաւակատիքի օրը, երբ նա օծեց այն, իշխաններն իրենց ընծաները բերեցին զոհասեղանի առջեւ: 11 Տէրն ասաց Մովսէսին. «Օրական միայն մի իշխան թող մատուցի իր ընծաները զոհասեղանի նաւակատիքին»:

12 Առաջին օրն իր ընծաները մատուցեց Ամինադաբի որդի Նաասոնը՝ Յուդայի ցեղի իշխանը: 13 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ[†] քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ[‡] քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 14 խնկով լցուած տասը դահեկան[§] արժողութեամբ մէկ ոսկէ տուփ, 15 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 16 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 17 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Ամինադաբի որդի Նաասոնի ընծան:

18 Երկրորդ օրն իր ընծաները մատուցեց Սոգարի որդի Նաթանայէլը՝ Իսաքարի ցեղի իշխանը: 19 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 20 խնկով լցուած տուփ՝ տասը դահեկան արժողութեամբ, 21 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 22 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 23 որպէս փրկութեան զոհաբերում երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Սոգարի որդի Նաթանայէլի ընծան:

24 Երրորդ օրն իր ընծաները մատուցեց Քելոնի որդի Եղիաբը՝ Զաբուղոնի որդիների իշխանը: 25 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 26 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 27 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 28 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 29 որպէս փրկութեան զոհաբերում երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Քելոնի որդի Եղիաբի ընծան:

30 Չորրորդ օրն իր ընծաները մատուցեց Սեդիուրի որդի Եղիսուրը՝ Ռուբէնի որդիների իշխանը: 31 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 32 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 33 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 34 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 35 որպէս փրկութեան զոհաբերում երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Սեդիուրի որդի Եղիսուրի ընծան:

36 Հինգերորդ օրն իր ընծաները մատուցեց Սուրիսադայի որդի Սաղամիէլը՝ Շմաւոնի որդիների իշխանը: 37 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն

[†]Շուրջ հազար երեք հարիւր գրամ:
[‡]Շուրջ եօթը հարիւր գրամ:
[§]Շուրջ հարիւր գրամ մաքուր ոսկի:

սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 38 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 39 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 40 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 41 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Սուրիսադայի որդի Սաղամիէլի ընծան:

42 Վեցերորդ օրն իր ընծաները մատուցեց Ռագուէլի որդի Եղիսափանը՝ Գադի որդիների իշխանը: 43 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 44 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 45 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 46 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 47 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Ռագուէլի որդի Եղիսափանի ընծան:

48 Եօթներորդ օրն իր ընծաները մատուցեց Եմիուդի որդի Եղիսաման՝ Եփրեմի որդիների իշխանը: 49 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 50 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 51 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 52 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 53 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Եմիուդի որդի Եղիսամայի ընծան:

54 Ութերորդ օրն իր ընծաները մատուցեց Փադասուրի որդի Գամաղիէլը՝ Մանասէի որդիների իշխանը: 55 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 56 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 57 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 58 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 59 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Փադասուրի որդի Գամաղիէլի ընծան:

60 Իններորդ օրն իր ընծաները մատուցեց Գերսոնի որդի Աբիդանը՝ Բենիամինի որդիների իշխանը: 61 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 62 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 63 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 64 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 65 որպէս փրկութեան նուիրաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Գերսոնի որդի Աբիդանի ընծան:

66 Տասներորդ օրն իր ընծաները մատուցեց Ամիսադայի որդի Աքիեզերը՝ Դանի որդիների իշխանը: 67 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերութիւն, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 68 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 69 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ

գառ, 70 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 71 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Ամիսադայի որդի Աքիեզերի ընծան:

72 Տասնմէկերորդ օրն իր ընծաները մատուցեց Եքրանի որդի Փագեէլը՝ Ասերի որդիների իշխանը: 73 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 74 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 75 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 76 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ, 77 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Եքրանի որդի Փագեէլի ընծան:

78 Տասներկուերորդ օրն իր ընծաները մատուցեց Ենանի որդի Աքիրանը՝ Նեփթալիմի որդիների իշխանը: 79 Նա որպէս ընծայ մատուցեց հարիւր երեսուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ կոնք, ըստ սրբարանի սիկղի եօթանասուն սիկղ քաշ ունեցող մէկ արծաթէ տաշտ՝ երկուսի մէջ էլ, իբրեւ նուիրաբերում, իւղով հունցուած լիքը ընտիր ալիւր, 80 խնկով լցուած տասը դահեկան արժողութեամբ մէկ տուփ, 81 ողջակէզի համար նախրից բերուած մէկ զուարակ, մէկ խոյ, մի տարեկան մէկ գառ, 82 մեղքերի քաւութեան համար այծերի հօտից մէկ նոխազ,† 83 որպէս փրկութեան զոհաբերութիւն երկու երինջ, հինգ խոյ, հինգ նոխազ, մէկ տարեկան հինգ էգ գառ: Այս է Ենանի որդի Աքիրանի ընծան:

84 Ահա սրանք են զոհասեղանի նաւակատիքի օրը իսրայէլացիների իշխանների մատուցած ընծաները. տասներկու արծաթէ կոնք, տասներկու արծաթէ տաշտ, տասներկու տուփ: 85 Իւրաքանչիւր կոնքի քաշը հարիւր երեսուն սիկղ էր, իւրաքանչիւր տաշտի քաշը՝ եօթանասուն սիկղ: Սպասքի ամբողջ արծաթը, ըստ սրբարանի սիկղի, երկու հազար չորս հարիւր սիկղ էր†: 86 Խնկով լցուած ոսկէ տուփերի թիւը տասներկու էր: Խնկամանների ամբողջ ոսկին հարիւր քսան դահեկան‡ էր: 87 Ողջակէզի հորթերի ընդհանուր թիւը տասներկու էր, զուարակներինը՝ տասներկու, խոյերինը՝ տասներկու, մէկ տարեկան ոչ արատաւոր գառներինը՝ տասներկու, դրանց վրայ գումարած անարիւն ընծաները եւ մեղքերի քաւութեան համար այծերի հօտերից բերուած տասներկու նոխազները: 88 Որպէս ողջակէզի զոհաբերութիւն՝ արջառների ընդհանուր թիւը տասներկու էր, երինջներինը՝ քսանչորս, խոյերինը՝ վաթսուն, նոխազներինը՝ վաթսուն, մէկ տարեկան ոչ արատաւոր էգ գառներինը՝ վաթսուն: Ահա սրանք են զոհասեղանի ընծաները, որ բերուեցին նաւակատիքից յետոյ:

89 Երբ Մովսէսը մտաւ վկայութեան խորան Տիրոջ հետ խօսելու համար, նա լսեց Տիրոջ ձայնը, որ խօսում էր իր հետ քաւութեան սեղանի վերեւից, երկու քերովբէների միջեւ դրուած վկայութեան տապանակի վրայ գտնուող տեղից: Երկու քէրովբէների մէջտեղից էր խօսում Տէրը նրա հետ:

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

8 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Խօսի՛ր Ահարոնի հետ եւ ասա՛ նրան. "Երբ կանթեղները տեղադրես, այնպէս արա, որ դրանք լուսաւորեն աշտանակն առջեւի կողմից"»: 3 Ահարոնն այդպէս էլ արեց. նա աշտանակի առջեւի կողմից վառեց կանթեղները, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: 4 Այսպիսին էր աշտանակի կառուցուածքը. նրա բունն ու շուշանաձեւ ծաղիկները համակ ձոյլ ոսկի էին: Աշտանակը պատրաստուած էր ըստ այն օրինակի, որ Տէրն էր ցոյց տուել Մովսէսին:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ ըստ սրբարանի սիկղի:

‡Նուրջ քանչորս կիլոգրամ:

§Նուրջ 1200 գրամ մաքուր ոսկի:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄԸ

5 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Ղեւտացիներին առանձնացրո՛ւ իսրայէլացիների միջից եւ սրբագործի՛ր նրանց: 6 Այսպէս կը կատարես նրանց սրբագործումը. 7 նրանց վրայ սրբագործման ջուր կը ցանես: Նրանք թող ածիլեն իրենց ամբողջ մարմինը, լուան իրենց զգեստները եւ մաքուր լինեն: 8 Նրանք նախրից թող վերցնեն մէկ զուարակ, իւղով հունցուած ընտիր ալիւր՝ իբրեւ նուիրաբերում: Նախրից կը վերցնես մեղքերի քաւութեան համար մէկ տարեկան հորթ, 9 ղեւտացիներին կը տանես վկայութեան խորանի առջեւ, կը հաւաքես իսրայէլացի ամբողջ ժողովրդին, 10 ղեւտացիներին կը բերես Տիրոջ առջեւ, եւ իսրայէլացիներն իրենց ձեռքերը կը դնեն ղեւտացիների վրայ: 11 Ահարոնը իսրայէլացիներից կ'առանձնացնի ղեւտացիներին՝ Տիրոջը նուիրաբերելու համար նրանց, եւ նրանք կը ստանձնեն Տիրոջ սպասաւորութեան գործը: 12 Ղեւտացիներն իրենց ձեռքերը կը դնեն զուարակների գլխին: Դրանցից մէկը կը զոհես մեղքերի քաւութեան համար, իսկ միւսը Տիրոջը ողջակէզ կ'անես, որպէսզի քաւուեն նրանց մեղքերը: 13 Ղեւտացիներին կը կանգնեցնես Տիրոջ, Ահարոնի ու նրա որդիների առջեւ եւ կը նուիրաբերես Տիրոջը իբրեւ ընծայ: 14 Ղեւտացիներին կ'առանձնացնես իսրայէլացիների միջից, եւ նրանք կը պատկանեն ինձ: 15 Այնուհետեւ ղեւտացիները կը մտնեն վկայութեան խորան, որպէսզի կատարեն խորանի սպասաւորութեան գործը: Կը սրբես նրանց եւ, իբրեւ ընծայ, կը նուիրաբերես Տիրոջ առաջ, 16 որովհետեւ նրանք ինձ ընծայ են տրւում իսրայէլացիների միջից: Ես նրանց ընդունել եմ ի դիմաց իսրայէլացի բոլոր անդրանիկ ծնունդների, որոնք արգանդ են բացում, 17 քանի որ իսրայէլացի բոլոր անդրանիկ ծնունդները, մարդ թէ անասուն, ինձ են պատկանում: Այն օրը, երբ Եգիպտացիների երկրում կոտորեցի բոլոր անդրանիկներին, ես ինձ համար սրբագործեցի նրանց 18 եւ ղեւտացիներին վերցրի ի դիմաց իսրայէլացիների բոլոր անդրանիկների: 19 Իսրայէլացիներից ես առանձնացրի ղեւտացիներին եւ նրանց տուեցի Ահարոնին ու նրա որդիներին, որպէսզի վկայութեան խորանում կատարեն իսրայէլացիների սպասաւորութեան գործը եւ սրբութիւններին մերձենալով՝ իսրայէլացիների մեղքերի քաւութեան համար զոհեր մատուցեն»:

20 Մովսէսը, Ահարոնն ու իսրայէլացի ամբողջ ժողովուրդը ղեւտացիների հանդէպ վարուեցին այնպէս, ինչպէս Տէրն էր պատուիրել Մովսէսին: Իսրայէլացիներն այդպէս էլ վարուեցին նրանց հանդէպ: 21 Ղեւտացիները մաքրուեցին, լուացին իրենց զգեստները եւ իրենք իրենց յանձնեցին Ահարոնին իբրեւ նուիրաբերում Տիրոջ առաջ: Եւ Ահարոնը կատարեց նրանց մեղքերի քաւութիւնը՝ սրբագործելու համար նրանց: 22 Այնուհետեւ ղեւտացիները մտան վկայութեան խորան, որպէսզի իրենց սպասաւորութիւնը կատարեն Ահարոնի ու նրա որդիների առջեւ: Ինչպէս Տէրը պատուիրել էր Մովսէսին ղեւտացիների վերաբերեալ, այդպէս էլ արեցին նրանց:

23 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 24 «Այս է ղեւտացիներին վերաբերող կարգը. քսանհինգից բարձր տարիք ունեցողները միայն իրաւունք ունեն վկայութեան խորան մտնելու, որպէսզի սպասաւորութիւն կատարեն: 25 Յիսուն տարին լրանալուց յետոյ նրանք պարտաւոր են հեռանալ սպասաւորութիւնից եւ այլեւս չեն աշխատելու: 26 Նրանք կարող են օգնել իրենց ղեւտացի եղբայրներին՝ կատարելու վկայութեան խորանի պահպանութեան գործը, բայց սպասաւորութիւն անելու իրաւունք չունեն: Այսպէս կը կարգաւորես ղեւտացիների սպասաւորութեան գործը»:

ՋԱՏԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԸ

9 Տէրը Սինայի անապատում, Եգիպտոսից իսրայէլացիների դուրս գալու երկրորդ տարուայ առաջին ամսին, խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Ասա՛, որ իսրայէլացիները զատիկը թող կատարեն իր ժամանակին: 3 Առաջին ամսի տասնչորսերորդ օրուայ երեկոյեան թող

կատարեն այն. իր ժամանակին, ըստ օրէնքի, ըստ ձեզ տուած իմ պայմանի թող կատարեն»: 4 Մովսէսն այդ յայտնեց իսրայէլացիներին եւ նրանք զատիկը կատարեցին 5 ամսուայ տասնչորսերորդ օրուայ սկզբին†, Սինայի անապատում: Ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին, այդպէս էլ արեցին իսրայէլացիները:

6 Սակայն այնտեղ եկան այնպիսիներ, որոնք մարդու դիակի հետ շփուելու պատճառով պղծուած էին եւ իրաւունք չունէին զատիկ կատարելու այդ օրը: 7 Այդ իսկ պատճառով նրանք այդ օրը եկան Մովսէսի ու Ահարոնի մօտ եւ ասացին նրանց. «Մենք մարդու դիակի հետ շփուելու պատճառով անմաքուր ենք: Արդ, իսրայէլացիների մէջ իր ժամանակին Տիրոջը զոհ մատուցելուց յետ չմնանք»: 8 Մովսէսը նրանց ասաց. «Այդտեղ սպասեցէք, տեսնեմ, թէ Տէրը ի՞նչ հրաման կը տայ ձեր վերաբերեալ»:

9 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 10 «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց. "Եթէ ձեզանից մէկը մարդու դիակի հետ շփուելու պատճառով պղծուելու է եւ կամ ձեր սերնդից մէկը զատկի օրը հեռաւոր ճանապարհի վրայ գտնուելու պատճառով անմաքուր է, 11 նա Տիրոջ զատիկը թող կատարի երկրորդ ամսուայ տասնչորսերորդ օրուայ երեկոյեան՝ զատկուայ գառն ուտելով բաղարջ հացով ու դառը խոտով: 12 Գառից յաջորդ առաւօտեան ոչինչ չպէտք է մնայ, դրա ոսկորները չպէտք է ջարդեն: Ըստ զատկի օրէնքի թող կատարեն այն: 13 Բայց այն մարդը, որ մաքուր է ու հեռու ճանապարհի վրայ չի գտնուում եւ ուշանում է զատիկը կատարելուց, թող վերանայ իր ժողովրդի միջից, քանի որ նա Տիրոջ զոհաբերութիւնը իր ժամանակին չի կատարել: Այդ մարդը թող կրի իր պատիժը: 14 Եթէ ձեր երկիրը գայ որեւէ օտարական եւ ցանկանայ կատարել Տիրոջ զատիկը, ապա այն թող կատարի ըստ զատկի օրէնքի: Ըստ այդ պայմանի թող կատարի այն: Նոյն օրէնքն է ձեզ համար՝ եկուոր լինէք թէ բնիկ"»:

†Եբրայերէն՝ երեկոյեան:

ՀՐԵՂԷՆ ԱՄՊԸ
(Ելք 40. 34-38)

15 Այն օրը, երբ կանգնեցուեց խորանը, ամպը ծածկեց խորանը՝ վկայութեան տունը: Երեկոյից մինչեւ առաւօտ ամպը խորանի վրայ կրակի տեսք ունէր: 16 Այդպէս լինում էր մշտապէս. ամպն այն ծածկում էր ցերեկը, իսկ գիշերը կրակի տեսք էր ունենում: 17 Երբ ամպը վերանում էր խորանից, իսրայէլացիները ճանապարհ էին ընկնում եւ բանակատեղի դնում ամպի կանգ առած տեղում: 18 Իսրայէլացիները բանակատեղի էին դնում ըստ Տիրոջ հրամանի եւ ըստ Տիրոջ հրամանի էլ ճանապարհ էին ընկնում: 19 Այն բոլոր օրերին, երբ ամպը հովանի էր լինում խորանի վրայ, իսրայէլացիները պէտք է բանակատեղի դնէին, իսկ եթէ ամպը բազում օրեր էր մնում խորանի վրայ, իսրայէլացիները պէտք է պահէին Տիրոջ պատուէրը եւ ճանապարհ չընկնէին: 20 Եթէ պատահէր, որ ամպը խորանի վրայ հովանի անէր քիչ օրեր, նրանք բանակատեղի պէտք է դնէին: Նրանք Տիրոջ հրամանով միայն պէտք է ճանապարհ ընկնէին: 21 Եթէ պատահէր, որ ամպը ծածկէր խորանը երեկոյից մինչեւ առաւօտ, կամ ամպը վերանար առաւօտեան, ապա ճանապարհ պէտք է ընկնէին կա՛մ ցերեկը, կա՛մ գիշերը: Քանի դեռ ամպը չէր վերացել, նրանք չպէտք է ճանապարհ ընկնէին: 22 Եթէ անգամ մէկ ամիս մնար ամպն ու հովանի անէր խորանի վրայ, իսրայէլացիները բանակատեղի պէտք է դնէին ու ճանապարհ չընկնէին: 23 Նրանք միայն Տիրոջ հրամանով պէտք է ճանապարհ ընկնէին: Իսրայէլացիները պահպանեցին Տիրոջ այս հրամանը, որ նա Մովսէսի միջոցով տուել էր իրենց:

ԱՐՄԱՓԷ ՇԵՓՈՐՆԵՐԸ

10 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Արծաթից երկու կռածոյ շեփոր կը պատրաստես: Դրանք թող ծառայեն ժողովրդին ի մի հաւաքելու եւ բանակատեղիների բնակիչներին երթի հանելու համար: 3 Երբ երկու շեփոր

հնչեցնեն, ամբողջ ժողովուրդը պէտք է հաւաքուի վկայութեան խորանի դռանը: 4 Եթէ մէկ շեփոր հնչեցնեն, թող քեզ ներկայանան իշխանները՝ իսրայէլացիների հրամանատարները: 5 Երբ շեփորը առաջին անգամ հնչեցնեն, ճանապարհ թող ընկնեն արեւելեան մասում բանակատեղի դրած գնդերը: 6 Երբ երկրորդ անգամ հնչեցնեն շեփորը, ճանապարհ թող ընկնեն հարաւային մասում բանակատեղի դրած գնդերը: Երբ երրորդ անգամ հնչեցնեն շեփորը, ճանապարհ թող ընկնեն արեւմտեան մասում բանակատեղի դրած գնդերը: Երբ չորրորդ անգամ հնչեցնեն շեփորը, ճանապարհ թող ընկնեն հիւսիսային մասում բանակատեղի դրած գնդերը: Գնդերը թող ճանապարհ ընկնեն ըստ շեփորի ազդարարութեան: 7 Երբ ժողովրդին հաւաքելու լինէք, շեփոր կը հնչեցնէք, բայց ոչ տագնապի: 8 Շեփորը պէտք է հնչեցնեն քահանաները՝ Ահարոնի որդիները: Դա սերնդէսերունդ փոխանցուող յաւիտենական օրէնք պէտք է լինի ձեզ համար: 9 Եթէ ձեր երկրում պատերազմի ելնէք ձեզ ընդդիմադիր թշնամիների դէմ, շեփոր կը հնչեցնէք, կը յիշուէք Տիրոջ առաջ եւ կը փրկուէք ձեր թշնամիներից: 10 Շեփոր կը հնչեցնէք ձեր ուրախութեան օրերին, ամսուայ առաջին օրերին†, ինչպէս նաեւ ողջակէզներ եւ փրկութեան համար զոհեր մատուցելիս: Եւ Աստուած կը յիշի ձեզ: Ես եմ ձեր Տէր Աստուածը»:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ԼՔՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ

11 Եգիպտոսից իսրայէլացիների դուրս գալու երկրորդ տարուայ երկրորդ ամսի քսանին ամպը վերացաւ վկայութեան խորանի վրայից: 12 Իսրայէլացիներն իրենց ամբողջ բազմութեամբ դուրս եկան Սինայի անապատից: Ամպը կանգ առաւ Փառանի անապատում: 13 Իսրայէլացիները ճանապարհ էին ընկնում, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսի միջոցով: 14 Նախ ճանապարհ ընկան Յուդայի ցեղին պատկանող գնդերն իրենց զօրքով: Սրանց զօրքի առաջնորդը Ամինադաբի որդի Նաասոնն էր: 15 Իսաքարի ցեղի զօրքի առաջնորդը Սոգարի որդի Նաթանայէլն էր: 16 Զաբուղոնի ցեղի զօրքի առաջնորդը Քելոնի որդի Եղիաբն էր: 17 Սրանց հետեւեցին Գերսոնի ու Մերարիի որդիները, որոնք իջեցնում կամ ուսերի վրայ կրում-տանում էին խորանը: 18 Ապա իրենց զօրքով շարժուեցին Ռուբէնի ցեղի գնդերը: Նրանց զօրքի առաջնորդը Սեդիուրի որդի Եղիսուրն էր: 19 Շմաւոնի ցեղի զօրքի առաջնորդը Սուրիսադայի որդի Սաղամիէլն էր: 20 Գադի ցեղի զօրքի առաջնորդը Ռագուէլի որդի Եղիսափանն էր: 21 Շարժուեցին նաեւ Կահաթի որդիները, որոնք պէտք է փոխադրէին սուրբ սպասքը եւ կանգնեցնէին խորանը, մինչեւ որ հասնէին միւսները: 22 Ապա իրենց զօրքով շարժուեցին Եփրեմի բանակի գնդերը: Նրանց զօրքի առաջնորդը Եմիուդի որդի Եղիսաման էր: 23 Մանասէի ցեղի զօրքի առաջնորդը Փադասուրի որդի Գամաղիէլն էր: 24 Բենիամինի ցեղի զօրքի առաջնորդը Գեդէոնի որդի Աբիդանն էր: 25 Դանի ցեղի գնդերն իրենց զօրքով ճանապարհ ընկան բոլորից յետոյ: Նրանց զօրքի առաջնորդը Ամիսադայի որդի Աքիեզերն էր: 26 Ասերի ցեղի զօրքի առաջնորդը Եքրանի որդի Փագեէլն էր: 27 Նեփթաղիմի ցեղի զօրքի առաջնորդը Ենանի որդի Աքիրանն էր: 28 Ահա սրանք են իսրայէլացիների զօրքերը: Իսրայէլացիները ճանապարհ ընկան իրենց զօրքով:

29 Մովսէսը մադիանացի Ռագուէլի որդի Յոբաբին՝ իր աներոջը, ասաց. «Ահա մենք շարժւում ենք դէպի այն տեղը, որ Աստուած խոստացաւ մեզ տալ: Դու էլ արի՛ մեզ հետ, մենք քեզ լաւութիւն կ'անենք, որովհետեւ Տէրը բարիք է խոստացել իսրայէլացիներին»: 30 Նա պատասխանեց. «Ես չեմ գնայ այնտեղ, այլ կը գնամ իմ երկիրն ու իմ ազգականների մօտ»: 31 Մովսէսն ասաց նրան. «Մեզ մի՛ լքիր, չէ՞ որ մեզ հետ էիր անապատում: Որպէս աւագ մեր խորհրդատուն կը լինես: 32 Եթէ մեզ հետ գաս, ինչ բարիք որ մեզ անի Տէրը, նոյն բարիքն էլ մենք քեզ կ'անենք»:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ եւ ձեր տօների ժամանակ:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

33 Իսրայէլացիները Տիրոջ լեռից հեռացան երեք օրուայ ճանապարհ: Այդ երեք օրուայ ընթացքում Տիրոջ ուխտի տապանակը գնում էր առջեւից՝ նրանց համար հանգստանալու տեղ գտնելու նպատակով: 35 Տապանակը ճանապարհ ընկնելիս Մովսէսն ասում էր. «Վե՛ր կաց, Տէ՛ր, որ ցանուցիր լինեն քո թշնամիները, փախուստի մատնուեն բոլոր քեզ ատողները»: 36 Իսկ երբ տապանակը դադար էր առնում, ասում էր. «Տէ՛ր, դարձի՛ր դէպի հազարաւոր ու բիւրաւոր իսրայէլացիները»: 34† Բանակատեղիից հեռանալու ժամանակ ամպը ցերեկը հովանի էր անում նրանց վրայ:

ԱՅԴ ՎԱՅՐԸ ԿՈՉՈՒԵՑ ՀՐԱՅՐԵԱՑ

11 Ժողովուրդը դառնօրէն տրտնջում էր Տիրոջ դէմ: Տէրը լսեց դա, խիստ բարկացաւ եւ նրանց վրայ կրակ թափելով՝ ոչնչացրեց բանակատեղիի բնակիչների մի մասը: 2 Ժողովուրդն աղաղակ բարձրացրեց Մովսէսի առաջ, Մովսէսն աղօթքով դիմեց Տիրոջը, եւ կրակը դադարեց: 3 Այդ վայրը կոչուեց Հրայրեաց, որովհետեւ Տէրը նրանց վրայ կրակ էր թափել:

4 Նրանց մէջ գտնուող խառնամբոխը սկսեց շատ պահանջներ ներկայացնել: Իսրայէլացիները նստած լաց էին լինում եւ ասում. «Ո՞վ մեզ ուտելու միս կը տայ: 5 Մենք յիշեցինք ձուկը, որ Եգիպտոսում ձրի էինք ուտում, սեխը, ձմերուկը, պրասը, սոխն ու սխտորը: 6 Եւ արդ, մենք կորչում ենք, մեր աչքերը մանանայից բացի ուրիշ ոչինչ չեն տեսնում»: 7 Մանանան գինձի սերմի նման սպիտակ էր ու սառոյցի տեսք ունէր: 8 Ժողովուրդը շրջում էր, մանանան հաւաքում, երկանքով աղում, սանդի մէջ ծեծում, կաթսայի մէջ եփում եւ բլիթ էր պատրաստում: Նա քաղցր էր իւղով ու մեղրով պատրաստուած խորիզի նման: 9 Երբ գիշերը բանակատեղիի վրայ ցօղ էր իջնում, մանանան էլ նրա վրայ էր իջնում:

ՄՈՎՍԷՍՆ ԸՆՏՐՈՒՄ Է ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

10 Մովսէսը լսեց գնդերի անդամներից իւրաքանչիւրի լացն իր վրանի դռան մօտ: Տէրը դրա համար խիստ բարկացաւ, եւ դա Մովսէսին չարագուշակ երեւաց: 11 Մովսէսը հարցրեց Տիրոջը. «Տէ՛ր, ինչո՞ւ չարչարեցիր ինձ՝ քո ծառային, ինչո՞ւ քո առաջ շնորհք չգտայ, եւ այս ժողովրդի բարկութիւնն ինձ վրայ թափեցիր: 12 Միթէ ե՞ս յղացայ այս ամբողջ ժողովրդին կամ թէ ե՞ս ծնեցի նրան, որ ինձ ասում ես, թէ՝ "Առ նրան քո գիրկը, ինչպէս դայեակն է իր գիրկն առնում ծծկեր երեխային, որպէսզի նրան տանեմ այն երկիրը, որը դու խոստացար իրենց հայրերին": 13 Արդ, ես որտեղի՞ց միս գտնեմ, որ տամ այս ամբողջ ժողովրդին, չէ՞ որ նրանք լաց են լինում ինձ մօտ եւ ասում. "Մեզ մի՛ս տուր, որ ուտենք": 14 Ես միայնակ չեմ կարող կրել այս ժողովրդի բեռը, որովհետեւ իմ ուժերից վեր է դա: 15 Եթէ այդպէս ես վարուելու ինձ հետ, սպանի՛ր ինձ միանգամից, եթէ դա հաճելի է քեզ, եթէ շնորհ գտայ եւ ողորմութիւն քո կողմից, որպէսզի չտեսնեմ իմ չարչարանքները»: 16 Տէրը պատասխանեց Մովսէսին. «Իսրայէլացի ծերերի միջից ինձ համար հաւաքի՛ր եօթանասուն տղամարդ, որոնց ճանաչում ես իբրեւ ժողովրդի մէջ ամենածեր մարդիկ եւ իսրայէլացիների գրագիրներ: Նրանց կը բերես վկայութեան խորան, եւ նրանք այնտեղ կը կանգնեն քեզ հետ: 17 Ես կ'իջնեմ այնտեղ, կը խօսեմ քեզ հետ եւ քեզ տուածս ոգուց կ'առնեմ ու կը դնեմ նրանց մէջ: Նրանք ի վիճակի կը լինեն կրելու այդ ժողովրդի յանդգնութեան բեռը. եւ դու միայնակ չես կրի դա: 18 Ժողովրդին կ'ասես. "Մաքրուեցէ՛ք վաղուայ համար, որ միս ուտէք, որովհետեւ լաց լինելով Տիրոջ առջեւ՝ ասում էիք. "Ո՞վ մեզ միս կը տայ ուտելու: Մեզ համար լաւ էր Եգիպտոսում": Տէրը ձեզ միս կը տայ ուտելու, եւ դուք միս կ'ուտէք: 19 Կ'ուտէք ոչ թէ մէկ, երկու, հինգ օր, ոչ էլ տասը կամ քսան օր, 20 այլ կ'ուտէք ամբողջ ամսուայ բոլոր օրերին, մինչեւ որ ձեր քթից դուրս գայ, մինչեւ որ զզուէք, որովհետեւ արհամարհեցիք Տիրոջը, որ միշտ ձեր մէջ է, լաց լինելով նրա՝ առջեւ՝ ասացիք. "Մեր ինչին էր պէտք Եգիպտոսից դուրս գալ"»:

21 Մովսէսն ասաց. «Ժողովուրդն ունի վեց հարիւր հազար հետեւակ, որոնց մէջ եմ նաեւ ես, եւ դու ասում ես, թէ՝ "Միս տամ նրանց, որ մէկ ամիս ուտեն": 22 Եթէ անգամ մորթենք բոլոր արջառներն ու ոչխարները, կը բաւարարե՞նք նրանց, կամ եթէ հաւաքուի ծովի ամբողջ ձուկը, կը բաւարարե՞նք նրանց»: 23 Տէրը պատասխանեց Մովսէսին. «Մի՞թէ Տիրոջ ձեռքը ի վիճակի չէ դրան: Հիմա կը համոզուես, թէ իմ ասածը կը կատարուի՞, թէ՞՝ ոչ»: 24 Մովսէսն ելաւ ու ժողովրդին հաղորդեց Տիրոջ ասածը: Նա ժողովրդի ծերերի միջից հաւաքեց եօթանասուն տղամարդկանց ու նրանց կանգնեցրեց խորանի շուրջը: 25 Տէրն իջաւ ամպի մէջ, խօսեց Մովսէսի հետ, առաւ նրան տրուած ոգուց եւ դրեց եօթանասուն ծեր տղամարդկանց մէջ: Երբ ոգին հանգչեց նրանց վրայ, նրանք մարգարէացան բանակատեղիում, բայց դա այլեւս չկրկնուեց: 26 Բանակատեղիում այդ ծերերից մնաց երկու մարդ. մէկի անունը Ելդադ էր, իսկ երկրորդինը՝ Մոդադ: Ոգին հանգչեց նրանց վրայ էլ: Նրանք եւս այդ եօթանասուն գրանցուածների մէջ էին, խորան չէին եկել, բայց մարգարէութիւն էին անում բանակատեղիում: 27 Մի պատանի, գալով Մովսէսի մօտ, այդ մասին պատմեց նրան ու ասաց. «Ելդադն ու Մոդադը մարգարէութիւն են անում բանակատեղիում»: 28 Նաւէի որդի Յեսուն՝ Մովսէսի ընտրեալ պաշտօնեան, ասաց. «Տէր Մովսէս, արգելի՛ր նրանց մարգարէութիւն անել»: 29 Մովսէսը նրան պատասխանեց. «Իմ փոխարէն դու մի՛ նախանձիր նրանց†: Երանի թէ Տէրը ամբո՛ղջ ժողովրդին մարգարէներ դարձնէր՝ իր ոգին տալով նրանց»: 30 Դրանից յետոյ Մովսէսն ու իսրայէլացի ծերերը գնացին բանակատեղի:

†34–36 համարները այսպիսի հերթականութիւն ունեն նաեւ Զոհրաբեան եւ Septuaginta հրատարակութիւններում:

†Եօթանասնից եւ այլ բնագրերում նախադասութիւնն ունի հարցական բնոյթ:

ՏԷՐԸ ԼՈՐԱՄԱՐԳԻՆԵՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ

31 Տէրը քամի բարձրացրեց եւ ծովի կողմից լորամարգիներ բերեց-թափեց բանակատեղիի շուրջը մէկ օրուայ ճանապարհի երկարութեամբ ու գետնից երկու կանգուն բարձրութեամբ: 32 Ժողովուրդը ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշերը, նաեւ յաջորդ օրը մինչեւ երեկոյ լորամարգի էր հաւաքում: Ամենաքիչ հաւաքողը տաս քոռ† հաւաքեց: Մորթեցին, ապխտեցին ու փռեցին բանակատեղիի շուրջը: 33 Դեռ միսը նրանց ատամի տակ էր ու դեռ չէին ծամել, որ Տէրը, ժողովրդի վրայ զայրացած, մեծամեծ հարուածներ հասցրեց նրանց: 34 Այդ վայրը կոչուեց Յանկութեան գերեզմաններ, որովհետեւ այնտեղ թաղեցին բազում անկուշտ մարդկանց: Յանկութեան գերեզմաններից ժողովուրդը ճանապարհ ընկաւ դէպի Ասերոթ:

ՄԱՐԻԱՄԸ ՊԱՏԺԻՈՒՄ Է

12 Մարիամն ու Ահարոնը վատաբանեցին Մովսէսին, քանի որ նա կնութեան էր առել մի եթովպուհի: Մովսէսն, իրօք, եթովպացի կնոջ հետ էր ամուսնացել: 2 Նրանք ասացին. «Միթէ Տէրը միայն Մովսէ՞սի հետ խօսեց, նա նաեւ մեզ հետ չխօսե՞ց»: Տէրը լսեց դա: 3 Մովսէսը, սակայն, շատ աւելի հեզ էր, քան երկրի վրայ ապրող բոլոր մարդիկ: 4 Տէրը միաժամանակ ասաց Մովսէսին, Ահարոնին ու Մարիամին. «Դուք երեքդ էլ վկայութեան խորան գնացէք:» Նրանք երեքով գնացին վկայութեան խորան: 5 Տէրն իջաւ սիւնակերպ ամպի մէջ եւ կանգնեց վկայութեան խորանի դռան մօտ: Նա կանչեց Ահարոնին ու Մարիամին, եւ նրանք երկուսով դուրս եկան: 6 Տէրն ասաց նրանց. «Լսեցէ՛ք իմ խօսքերը. եթէ ձեզանից որեւէ մէկը Տիրոջ մարգարէ դառնայ, ես տեսիլքով կ'երեւամ նրան եւ երազի մէջ կը խօսեմ նրա հետ: 7 Ո՛չ այնպէս, ինչպէս իմ ծառայ Մովսէսի հետ, որը իմ ամբողջ տան մէջ իմ հաւատարիմ մարդն է: 8 Ես նրա հետ դէմ առ դէմ, բացէիբաց եմ

†Մի բանի հազար կիլոգրամ:

խօսելու եւ ոչ թէ առակներով: Նա
ականատես է եղել Տիրոջ փառքին:
Եւ ինչպէ՞ս դուք առանց երկիւղի վա-
տաբանեցիք իմ ծառային՝ Մովսէսին»:
9 Տէրը խիստ բարկացաւ նրանց վրայ:
Նրանք գնացին եւ 10 ամպը վերացաւ
խորանի վրայից, իսկ Մարիամը բորոտ
դարձաւ ձեան նման: Ահարոնը նայեց
Մարիամին եւ տեսաւ, որ նա բորոտ է
դարձել: 11 Ահարոնն ասաց Մովսէսին.
«Խնդրում եմ քեզ, տէ՛ր, մեզ վրայ մեղ-
քեր մի՛ բարդիր, որովհետեւ չիմացանք,
որ մեղք գործեցինք: 12 Մարիամը թող
չնմանուի այն մեռելածին երեխային,
որը, որպէս վիժուածք, ելնում է մօր ար-
գանդից, բայց կիսատ մարմնով: 13 Մով-
սէսը, աղերսելով Տիրոջը, ասաց.
«Խնդրում եմ քեզ, Աստուա՛ծ, բուժի՛ր
նրան»: 14 Տէրն ասաց Մովսէսին. «Եթէ
Մարիամի հայրը թքէր նրա երեսին,
մի՞թէ նա եօթը օր չէր ամաչելու:
Ուրեմն եօթը օր նա թող հեռանայ
բանակատեղիից եւ յետոյ վերադառ-
նայ»: 15 Մարիամը եօթը օր հեռու
պահուեց բանակատեղիից: Ժողովուրդը
ճանապարհ չընկաւ, մինչեւ որ
մաքրուեց Մարիամը:

ՀԵՏԱԽՈՅԶՆԵՐԸ
(Բ Օր. 1. 19-33)

13 Դրանից յետոյ ժողովուրդը Ասե-
րոթից ճանապարհ ընկաւ եւ բանա-
կատեղի դրեց Փառանի անապատում:
2 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. «Մարդիկ ուղարկի՛ր, որ հետա-
խուզեն Քանանացիների երկիրը: 3 Դա
ես իսրայէլացիներին եմ տալու իբրեւ
կալուածք: Ամէն ցեղից, ըստ իրենց
նահապետների ընտանիքների, որպէս
գլխաւոր, մէկական մարդ ուղարկիր»:
4 Մովսէսը, ինչպէս Տէրն էր ասել, այդ
մարդկանց ուղարկեց Փառանի անա-
պատից: Նրանք բոլորը իսրայէլա-
ցիների գլխաւորներն էին: 5 Սրանք են
նրանց անունները. Ռուբէնի ցեղից՝
Աքուրի որդի Սաղամիէլ, 6 Շմաւոնի
ցեղից՝ Սուրիի որդի Սափատ, 7 Յուդայի
ցեղից՝ Յեփոնէի որդի Քաղէբ, 8 Իսա-
քարի ցեղից՝ Յովսէփի որդի Գաղամ,
9 Եփրեմի ցեղից՝ Նաւէի որդի Օսէս,
10 Բենիամինի ցեղից՝ Ռափուի որդի
Փաղտի, 11 Զաբուղոնի ցեղից՝ Սուդիի
որդի Յուդիէլ, 12 Յովսէփի ցեղից՝
Մանասէի յետնորդներից՝ Գադդէ, որ
որդին է Սուսիի, 13 Դանի ցեղից՝
Գամայի որդի Ամիէլ, 14 Ասերի ցեղից՝
Միքայէլի որդի Սաթուր, 15 Նեփթա-
ղիմի ցեղից՝ Յաբիի որդի Աբի, 16 Գադի
ցեղից՝ Մակքիի որդի Գուդիէլ:
17 Սրանք են այն մարդկանց անուն-
ները, որոնց Տէրն† ուղարկեց Քանա-
նացիների երկիրը հետախուզելու: Մով-
սէսը Նաւէի որդի Օսէսին վերանուանեց
Յեսու: 18 Մովսէսը սրանց առաքեց
Փառան անապատից, որպէսզի հետա-
խուզեն Քանանացիների երկիրը, եւ
ասաց նրանց. «Անապատով բարձ-
րացէ՛ք լեռը եւ տեսէ՛ք, թէ դա ինչ
երկիր է. 19 այդտեղ բնակուող ժողո-
վուրդը հզո՞ր է արդեօք, թէ՞ առանց
զեկավարի, սակաւաթի՞ւ են, թէ՞ բազ-
մամարդ, 20 ի՞նչ վիճակում է այն
երկիրը, որտեղ նրանք բնակւում են, այն
բարեբե՞ր է, թէ՞ անբերրի, ի՞նչ վիճա-
կում են այն քաղաքները, ուր բնակւում
են նրանք, պարսպապա՞տ են դրանք,
թէ՞ անպարիսպ, 21 ինչպիսի՞ն է հողը,
պարա՞րտ է, թէ՞ անպէտք, այնտեղ
ծառեր կա՞ն, թէ՞՝ ոչ: Աշխատեցէ՛ք
հաւաքել երկրի պտուղներից»:
Գարնան վերջն էր՝ խաղողի հասու-
նանալու ժամանակը: 22 Նրանք գնացին
ու հետախուզեցին երկիրը Սինայի
անապատից մինչեւ Ռոոբ՝ Եփրաթի‡
մուտքը: 23 Ապա վերադարձան անա-
պատ եւ եկան մինչեւ Քեբրոն, որտեղ
բնակւում էին Աքիմանը, Սեսին եւ
Թալամին՝ Ենակի յետնորդները: Քեբ-
րոնը եօթը տարի առաջ էր կառուցուած,
քան եգիպտացիների Տայանիս բնա-
կավայրը: 24 Նրանք եկան մինչեւ
Ողկոյզի ձորը, հետախուզեցին այն,
այնտեղից կտրեցին խաղողի ողկոյզ
ունեցող որթատնկի մի ճիւղ եւ ձողերի
վրայ դրած տարան: Առան նաեւ նուռ
ու թուզ: 25 Իսրայէլացիներն այդ վայրն
անուանեցին Ողկոյզի ձոր այն ողկոյզի
պատճառով, որ այնտեղից կտրել-
տարել էին: 26 Իսրայէլացիները, երկիրը

†Եբրայերէնում՝ Մովսէսը:
‡Եբրայերէնում՝ Եմաթ:

քառասուն օր հետախուզելուց յետոյ,
վերադարձան: 27 Նրանք եկան-հասան
Մովսէսի, Ահարոնի ու իսրայէլացիների
ամբողջ ժողովրդի մօտ, Փառան անա-
պատը, Կադէս: Հետախոյզները տեղե-
կութիւններ հաղորդեցին նրանց ու ամ-
բողջ ժողովրդին: Նրանք ցոյց տուեցին
երկրի բարիքները, պատմեցին նրանց
28 ու ասացին Մովսէսին. «Մենք գնա-
ցինք այն երկիրը, ուր ուղարկեցիր մեզ,
մի երկիր, ուր կաթ ու մեղր է հո-
սում: Ահա սրանք են նրա բարիքները:
29 Այնտեղ բնակուող ժողովուրդը, սա-
կայն, հզօր է, քաղաքները շատ ամուր
են, պարսպապատ ու շատ մեծ: Ենակի
յետնորդներին էլ տեսանք այնտեղ:
30 Ամաղէկացիները բնակւում են երկրի
հարաւային մասում, քետացիները, խե-
ւացիները, յեբուսացիները եւ ամոր-
հացիները՝ լեռնային շրջանում, իսկ քա-
նանացիները՝ ծովեզերքին ու Յորդանան
գետի ափին»: 31 Քաղէբը լռեցրեց
Մովսէսից դժգոհող ժողովրդին՝ ասելով.
«Ո՛չ, առաջ պէտք է շարժուենք ու տի-
րենք այդ երկրին, որովհետեւ կարո՛ղ
ենք նրանց յաղթել»: 32 Նրա հետ հե-
տախուզութեան գնացած մարդիկ, սա-
կայն, ասացին. «Չենք յարձակուի այդ
ժողովրդի վրայ, որովհետեւ նրանք մե-
զանից շատ աւելի հզօր են»: 33 Նրանք
իսրայէլացիներին վախեցրին այն երկ-
րով, որ հետախուզել էին, ասելով. «Այն
երկիրը, ուր գնացինք հետախուզելու,
իր բնակիչներին լափող երկիր է: 34 Այն-
տեղ մեր տեսած բոլոր մարդիկ ածգա-
հաներ են: Այնտեղ տեսանք նաեւ
հսկաներ, որոնց համեմատութեամբ մենք
մորեխներ ենք»:

ԺՈՂՈՎՐԴԻ ՏՐՏՈՒՆՋԸ

14 Ամբողջ ժողովուրդը աղաղակ
բարձրացրեց ու լաց եղաւ այդ ամբողջ
գիշեր: 2 Բոլոր իսրայէլացիները
տրտնջացին Մովսէսից ու Ահարոնից եւ
ասացին. «Աւելի լաւ կը լինէր Եգիպ-
տացիների երկրում մեռած լինէինք կամ
հէնց այստեղ՝ անապատում մեռնէինք:
3 Ինչո՞ւ է Տէրը մեզ տանում այդ եր-
կիրը, որպէսզի պատերազմում ընկնենք,
իսկ մեր կանայք ու մեր զաւակները
յափշտակուեն: Արդ, աւելի լաւ է վե-
րադառնանք Եգիպտոս»: 4 Նրանք իրար
ասացին. «Հրամանատար ընտրենք եւ
Եգիպտոս վերադառնանք»: 5 Մովսէսն
ու Ահարոնը երեսնիվայր ընկան բոլոր
իսրայէլացիների առջեւ: 6 Երկիրը հե-
տախուզողներից Նաւէի որդի Յեսուն եւ
Յեփոնէի որդի Քաղէբը, պատառոտելով
իրենց զգեստները, 7 ասացին բոլոր
իսրայէլացիներին. «Մեր հետախուզած
երկիրը չափազանց լաւ է: 8 Եթէ
Աստծուց բարեհաճութիւն ունենանք,
նա մեզ կ'առաջնորդի այդ երկիրը եւ
այն կը տայ մեզ: Դա մի երկիր է, ուր
կաթ ու մեղր է հոսում: 9 Միայն թէ
Տիրոջ դէմ չապստամբէք եւ այդ երկրի
ժողովրդից չվախենաք, որովհետեւ մենք
կը լափենք նրանց: Տէրն արդէն լքել է
նրանց, նա մեզ հետ է: Մի՛ վախեցէք
նրանցից»: 10 Ամբողջ ժողովուրդն
ասաց. «Եկէք քարկոծենք նրանց»: Այն
ժամանակ Տիրոջ փառքը ամպի մէջ
երեւաց վկայութեան խորանի վրայ,
բոլոր իսրայէլացիների դիմաց:

ՄՈՎՍԷՍԸ ԱՂՕԹՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

11 Տէրն ասաց Մովսէսին. «Մինչեւ
ե՞րբ պիտի ինձ զայրացնի քո այդ
ժողովուրդը, մինչեւ ե՞րբ պիտի
չհաւատայ այն բոլոր հրաշքներին, որ
կատարեցի նրանց մէջ: 12 Թո՛յլ տուր
ինձ, որ հարուածեմ մահուամբ եւ
կորստեան մատնեմ նրանց, իսկ քեզ ու
քո հօր տունը այս ժողովրդից աւելի մեծ
ու բազմանդամ դարձնեմ»: 13 Մովսէսն
ասաց Տիրոջը. «Այժմ եգիպտացիները
իմացան, որ դու ես քո մեծ ուժով այս
ժողովրդին հանել իրենց միջից, 14 եւ
այս երկրի ամբողջ բնակիչները հասու
են դարձել, որ դու ես այս ժողովրդի մէջ
այն Տէրը, որ դէմ յանդիման ես
երեւում: Տէ՛ր, քո ամպը հովանի է
նրանց վրայ, եւ ցերեկը դու ես
սիւնակերպ ամպի մէջ գնում նրանց
առաջից, իսկ գիշերը՝ կրակէ սեան
նման: 15 Արդ, եթէ դու այդ ժողովրդին
մի մարդու պէս ոչնչացնես, ապա քո
անունը լսած ազգերը կ'ասեն. 16 "Քանի
որ Տէրը չկարողացաւ այս ժողովրդին

տանել իր խոստացած երկիրը, նրանց դիակները այս անապատում գետին փռեց”: 17 Արդ, թող բարձրանայ քո ձեռքը, Տէ՛ր, ինչպէս որ խօսեցիր ու ասացիր, 18 թէ՝ “Տէրը համբերատար է, ողորմած ու ճշմարիտ, որ ներում է անօրէնութիւնները, անիրաւութիւններն ու մեղքերը, բայց եւ ամենեւին չի ներում մեղսագործներին, հայրերի մեղքերը հատուցել է տալիս նրանց զաւակներին մինչեւ երրորդ ու չորրորդ սերունդը”: 19 Քո մեծ ողորմութեամբ ների՛ր քո ժողովրդին, ինչպէս ներել ես նրանց Եգիպտոսից ելնելուց մինչեւ հիմա»: 20 Տէրն ասաց Մովսէսին. «Կը ներեմ նրանց, ինչպէս դու ասացիր, 21 բայց կենդանի եմ ես, կենդանի է իմ անունը, եւ Տիրոջ փառքը պիտի լցնի ամբողջ երկիրը: 22 Թէեւ իմ փառքը եւ Եգիպտոսում ու այս անապատում իմ գործած հրաշքները տեսան բոլոր մարդիկ, բայց տասն անգամ փորձեցին ինձ, ու չհաւատացին, 23 թէ կը տեսնեն այն երկիրը, որ ես խոստացայ նրանց հայրերին: Ես երկիրը կը տամ նրանց այն որդիներին, որ այստեղ՝ ինձ հետ են, անտեղեակ են չարին ու բարուն, կը տամ բոլոր անփորձ մանուկներին: Բոլոր նրանք, ովքեր բարկացրին ինձ, այդ երկիրը չեն տեսնի: 24 Բայց ուրիշ հոգի ունեցող եւ ինձ հետեւած իմ ծառայ Քաղէբին ես կը տանեմ այն երկիրը, ուր նա մտաւ հետախուզելու, իսկ նրա յետնորդները կը ժառանգեն այն: 25 Ամաղէկացիներն ու քանանացիները բնակւում են ձորում, բայց դուք վաղը կը վերադառնաք եւ անապատով կը գնաք դէպի Կարմիր ծով»:

ՏԷՐԸ ՊԱՏԺՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ

26 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 27 «Մինչեւ ե՞րբ պիտի հանդուրժեմ այս վատ ժողովրդին, եւ դրանք պիտի տրտնջան իմ առջեւ: 28 Ես լսեցի իսրայէլացիների տրտունջը ձեր դէմ: Արդ, նրանց կ'ասես. “Կենդանի եմ ես, – ասում է Տէրը, – եւ ես կը վարուեմ ձեզ հետ այն խօսքերի համաձայն, որ հասան իմ ականջներին. 29 այս անապատում ցրիւ պիտի գան ձեր ոսկորները, գնդերը, հաշուառման ենթարկուած քսան տարեկանից բարձր եւ իմ դէմ բողոքած բոլոր մարդիկ պիտի կոտորուեն այստեղ: 30 Նրանք չպիտի մտնեն այն երկիրը, որի վրայ բարձրացնելով իմ ձեռքը՝ երդուեցի, թէ՝ “Ձեզ կը բնակեցնեմ այնտեղ, բացի Յեփոնէի որդի Քաղէբից ու Նաւէի որդի Յեսուից: 31 Իսկ ձեր զաւակները, որոնց մասին ասացիք, թէ կը յափշտակուեն, նրանց կը տամ այդ երկիրը, նրանք կը ժառանգեն այն, որից դուք նողկանքով յե՛տ քաշուեցիք: 32 Ձեր ոսկորները ցրիւ կը գան այս անապատում, 33 իսկ ձեր զաւակները քառասուն տարի խոտ կը ճարակեն այս անապատում եւ կը հատուցեն ձեր հոգու պոռնկութեան դիմաց, մինչեւ որ ձեր ոսկորները փտեն այս անապատում: 34 Երկիրը հետախուզելու քառասուն օրերի թուի համեմատ ձեր գործած մեղքերի համար քառասուն տարի պիտի պատժուէք, որպէսզի ճանաչէք իմ բարկութիւնն ու ցասումը: 35 Ես՝ Տէրս, ասել եմ, որ իմ դէմ դուրս եկած վատ ժողովրդի նկատմամբ այդպէս էլ կը վարուեմ: Նրանք այս անապատում պիտի հիւծուեն եւ այստեղ էլ պիտի մեռնեն”»: 36 Եւ այն մարդիկ, որոնց Մովսէսն ուղարկել էր երկիրը հետախուզելու, եւ որոնք, վերադառնալով, ժողովրդի մէջ չարախօսեցին այդ երկրի դէմ՝ վատ համբաւ տարածելով նրա մասին, 37 Տիրոջ առաջ չարաչար մեռան: 38 Բոլոր այն մարդկանցից, որոնք գնացել էին այդ երկիրը հետախուզելու, փրկուեցին միայն Նաւէի որդի Յեսուն եւ Յեփոնէի որդի Քաղէբը:

ԿՐԿԻՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ
(Բ Օր. 1. 41-46)

39 Մովսէսը բոլոր իսրայէլացիներին հաղորդեց Տիրոջ այս պատգամները, եւ ժողովուրդը մեծապէս սգաց: 40 Վաղ առաւօտեան վեր կենալով՝ մարդիկ բարձրացան լեռան գագաթը եւ ասացին Մովսէսին. «Մենք, ահա, պատրաստ ենք գնալու այն տեղը, որ Տէրը խոստացել է մեզ, որովհետեւ մեղք ենք գործել»: 41 Մովսէսը պատասխանեց.

«Ինչո՞ւ զանց առաք Տիրոջ խօսքը: Դուք յաջողութիւն չէք ունենայ: 42 Մի՛ գնացէք, որովհետեւ Տէրը ձեզ հետ չէ, դուք կ'ընկնէք ձեր թշնամիների ձեռքից: 43 Ամաղէկացիներն ու քանանացիները այնտեղ՝ ձեր առջեւն են, եւ դուք կ'ընկնէք նրանց սրից: Քանի որ հեռացաք Տիրոջից եւ նրան չանսացիք, Տէրը ձեզ հետ չի լինի»: 44 Նրանք, սակայն, չլսեցին ու բարձրացան լեռան գագաթը, բայց Տիրոջ ուխտի տապանակն ու Մովսէսը բանակատեղիից չշարժուեցին: 45 Լեռան վրայ բնակուող ամաղէկացիներն ու քանանացիները իջան, հարուածելով սրակոտոր արեցին նրանց՝ հետապնդելով մինչեւ Հերմա: 46 Վերապրածները վերադարձան բանակատեղի:

ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄԻ ԿԱՆՈՆՆԵՐ

15 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Խօսի՛ր իսրայէլացիներին եւ ասա՛ նրանց. “Երբ մտնէք ձեր բնակութեան երկիրը, որ ես տալու եմ ձեզ, 3 ողջակէզներ արէ՛ք Տիրոջ համար, լինեն դրանք ուխտի առիթով արուող կամաւոր եւ կամ ձեր տօնակատարութիւնների առթիւ մատուցուող նուիրաբերութիւններ, որպէսզի դրանք, որպէս անուշ բուրմունք, Տիրոջը ընդունելի լինեն: Եթէ զոհաբերութիւնը արջառ է կամ ոչխար, 4 զոհաբերողը Տիրոջը թող մատուցի նաեւ քառորդ հիմէն[†] իւղով հունցուած մէկ տասներորդ գրիւ[‡] ընտիր ալիւր: 5 Ողջակէզ եւ զոհ մատուցելիս կը նուիրաբերէք նաեւ քառորդ հիմէն գինի. իւրաքանչիւր զոհաբերուող գառան համար կը զոհաբերես նրան հասնող չափով գինի, որպէսզի դա Տիրոջ համար անուշ բուրմունք լինի: 6 Խոյ ողջակիզելիս կամ զոհաբերելիս մէկ երրորդ հիմէն իւղով հունցուած երկու տասներորդ ընտիր ալիւր[§] կը նուիրաբերես: 7 Կը մատուցես կէս հիմէն գինի որպէս անուշ բուրմունք Տիրոջ համար: 8 Եթէ Տիրոջ փրկութեան ուխտը փառաւորելու համար ողջակէզ կամ զոհ կը մատուցես արջառներից, 9 զուարակի հետ կէս հիմէն իւղով հունցուած երեք տասներորդ ընտիր ալիւր կը նուիրաբերես, 10 որպէս նուէր կէս հիմէն գինի՝ իբրեւ անուշ բուրմունք Տիրոջ համար: 11 Նոյն կերպ կը վարուես մէկ զուարակի, մէկ խոյի, մէկ գառան, մէկ ոչխարի կամ այծի դէպքում, ըստ դրանց թուի: 12 Ինչ որ անէք մէկի համար, նոյնը կ'անէք միւսի համար, ըստ դրանց թուի: 13 Բոլոր իսրայէլացիները այդպէս պէտք է վարուեն՝ նոյնպիսի ընծաներ պէտք է մատուցեն իբրեւ անուշ բուրմունք Տիրոջ համար: Եթէ որեւէ օտարական գայ ձեր երկիրը ձեր մէջ բնակուելու համար կամ ծնուած լինի ձեր երկրում, ընծայ թող մատուցի որպէս անուշ բուրմունք Տիրոջ համար: 14 Ինչպէս դուք էք անում, նոյնպէս թող անեն օտարականն ու Տիրոջ ժողովուրդը: 15 Միեւնոյն օրէնքը պէտք է գործի ե՛ւ ձեզ համար, ե՛ւ ձեզ հետ բնակուող օտարականների համար: Դա յաւիտենական օրէնք պէտք է լինի ձեր բոլոր սերունդների համար: Ինչպիսին դուք էք, այդպիսին էլ պէտք է լինի օտարականը Տիրոջ առջեւ: Միեւնոյն օրէնքը պէտք է գործի, միեւնոյն պարտականութիւնը պիտի ունենաք ե՛ւ դուք, ե՛ւ ձեր մէջ բնակուող օտարականը”»:

16 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 17 «Խօսի՛ր իսրայէլացիներին եւ ասա՛ նրանց. 18 “Երբ դուք մտնէք այն երկիրը, ուր պիտի տանեմ ձեզ, 19 եւ ուտէք երկրի հացից, 20 Տիրոջը որպէս հաս կը տաք թթխմորով հունցուած հացից: Տիրոջը որպէս հաս հաց կը տանէք, այն կը յատկացնէք Տիրոջը իբրեւ կալից ստացուած ու մատուցուած հաս: 21 Այդ հացը Տիրոջը նուիրաբերուող հաս թող լինի: Այդպէս կը վարուէք սերնդէսերունդ:

22 Եթէ մեղանչէք եւ չկատարէք այն բոլոր պատուիրանները, որ Տէրը տուեց Մովսէսին, 23 ինչպէս նաեւ այն հրամանները, որ Տէրը Մովսէսի միջոցով տուեց ձեզ այն օրը, երբ Տէրը այս պատուիրանները տուեց ձեզ եւ ձեր յետագայ սերունդներին, 24 եթէ ժողո-

[†]Մէկուկէս լիտր:
[‡]Շուրջ երեք կիլոգրամ:
[§]Շուրջ վեց կիլոգրամ:

վուրդն ակամայ մեղանչի, ապա ժողովուրդը նախրից բերուած ոչ արատաւոր մի զուարակ թող ողջակէզ անի իբրեւ Տիրոջն ընծայաբերուող անուշ բուրմունք: Նուիրաբերումը պէտք է լինի անարիւն, այլեւ՝ մի նոխազ մեղքերի քաւութեան համար: 25 Քահանան դրանով քաւած կը լինի իսրայէլացի ամբողջ ժողովրդի մեղքերը եւ թողութիւն կը տայ նրանց, որովհետեւ ակամայ էր մեղանչել ժողովուրդը: Նրանք Տիրոջ հանդէպ ակամայ գործած իրենց մեղքերի համար որպէս ընծայ պէտք է Տիրոջը զոհ մատուցեն: 26 Այսպէս թող քաւուեն բոլոր իսրայէլացիների եւ օտարականների մեղքերը, որովհետեւ ակամայ գործած մեղքերը վերաբերում են ամբողջ ժողովրդին:

27 Եթէ մէկը ակամայ մեղք գործի, թող մի տարեկան էգ ուլ մատուցի մեղքերի քաւութեան համար: 28 Քահանան դրանով քաւած կը լինի ակամայ մեղանչած անձի՝ Տիրոջ առջեւ ակամայ մեղք գործողի մեղքերը, որպէսզի քաւութիւն լինի նրա համար: 29 Տեղաբնակ իսրայէլացիների եւ նրանց մէջ բնակութիւն հաստատած օտարականի համար թող գործի միեւնոյն օրէնքը, եթէ նրանցից որեւէ մէկը ակամայ մեղք է գործել:

30 Եթէ տեղաբնակը կամ օտարականը մեղանչի մեծամտաբար կամ գիտակցօրէն, ապա նա զայրացրած կը լինի Աստծուն: Այդ մարդը թող վերանայ իր ժողովրդի միջից, 31 որովհետեւ անարգում է Տիրոջ խօսքը եւ խախտում նրա պատուիրանները: Ջնջուելով թող ջնջուի այդ մարդը իր ժողովրդի միջից, որովհետեւ իր մեղքերի համար ինքն է մեղաւոր"»:

ՇԱԲԱԹԸ ԽԱԽՏՈՂ ՄԱՐԴԸ

32 Իսրայէլացիներն այնտեղ՝ անապատում էին: Նրանք տեսան մի մարդ, որ շաբաթ օրը փայտ էր հաւաքում: 33 Նրան տեսնողները շաբաթ օրը փայտ հաւաքողին բերեցին Մովսէսի, Ահարոնի ու իսրայէլացի ամբողջ ժողովրդի մօտ 34 եւ բանտարկեցին, որովհետեւ չէին կարողանում որոշել, թէ ինչ անեն նրան: 35 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Մահուան թող դատապարտուի այդ մարդը: Ամբողջ ժողովուրդը քարերով թող քարկոծի նրան»: 36 Ամբողջ ժողովուրդը նրան բանակատեղիից դուրս բերեց եւ քարկոծեց նրան, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

ԾՈՊԱՒՈՐ ԶԳԵՍՏՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

37 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 38 «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց, որ իրենց զգեստների ծայրերին ծոպեր կարեն, իսկ փեշերի ծոպերի վրայ կապոյտ թել դնեն: 39 Այս ծոպերը ձեր զգեստների վրայ պիտի լինեն, որպէսզի տեսնելով դրանք՝ յիշէք Տիրոջ պատուիրանները եւ կատարէք դրանք: Այսպիսով դուք չէք շեղուի ձեր մտքի ու աչքերի ցանկութիւններին հետեւելով ու չէք պոռնկանայ: 40 Կը յիշէք ու կը կատարէք իմ բոլոր պատուիրանները, ձեր Աստծու առջեւ մաքուր կը լինէք, 41 քանզի ես եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ հանեցի Եգիպտացիների երկրից, որպէսզի ձեր Աստուածը լինեմ: Ես եմ ձեր Տէր Աստուածը»:

ԿՈՐԽԻ, ԴԱԹԱՆԻ ԵՒ ԱԲԻՐՈՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

16 Խօսեցին Ղեւիի որդի Կահաթի, սրա որդի Իսահառի որդի Կորխը, Ռուբէնի որդի Եղիաբի որդիներ Դաթանն ու Աբիրոնը, Ռուբէնի որդի Փաղէթի որդի Օնանը, եւ իրար հետ պայմանաւորուելով՝ 2 ըմբոստացան Մովսէսի դէմ: Սրանց միացան նաեւ իսրայէլացիներից երկու հարիւր յիսուն տղամարդիկ՝ ժողովրդի առաջնորդներ, խորհրդականներ ու անուանի մարդիկ: 3 Նրանք միացան Մովսէսի ու Ահարոնի դէմ եւ ասացին. «Բաւակա՛ն է, հասկացէ՛ք, որ ժողովուրդը մաքուր է, եւ Տէրը նրա մէջ է: Արդ, ինչո՞ւ էք ձեզ Տիրոջ ժողովրդից բարձր դասում»: 4 Այդ լսելով՝ Մովսէսը երեսնիվայր ընկաւ գետին 5 եւ դիմելով Կորխին ու նրա բոլոր մարդկանց՝ ասաց. «Աստուած այցի եկաւ, ճանաչեց իւրայիններին եւ մաքուրներին ու նրանց իր մօտ առաւ: 6 Ում որ չընտրեց, իր

մօտ չառաւ: Արդ, այսպէ՛ս արէք. Կո՛րխ, դու եւ քո մարդիկ բուրվառներ առէք, դրանց մէջ կրակ դրէք, կրակի վրայ խունկ, 7 որ վաղը խնկարկէք Տիրոջ առաջ: Տէրը ում որ ընտրի, նա՛ է սուրբ: Բաւակա՛ն է ձեզ, Ղեւիի՛ որդիներ»: 8 Մովսէսն ասաց Կորխին. «Լսեցէ՛ք ինձ, Ղեւիի՛ որդիներ: 9 Մի՞թէ քիչ բան է ձեզ համար, որ Իսրայէլի Աստուածը ձե՛զ առանձնացրեց իր ժողովրդի միջից եւ ձե՛զ մերձեցրեց իրեն, որպէսզի սպասաւորէք Տիրոջ խորանում եւ ժողովրդին ծառայելու համար կանգնէք նրա առջեւ: 10 Չէ՞ որ նա քեզ եւ քեզ հետ քո բոլոր եղբայրներին՝ Ղեւիի յետնորդներին իր մօտ վերցրեց: Հիմա պահանջում էք քահանա՞յ էլ դառնալ: 11 Դրանով դու եւ քո մարդիկ Աստծու դէմ էք ելնում: Մի՞թէ չգիտէք, թէ ով է Ահարոնը, որ նրա դէմ էք տրտնջում»: 12 Եւ Մովսէսը մարդ ուղարկեց, որ կանչեն Եղիաբի որդիներ Դաթանին ու Աբիրոնին: Սրանք ասացին. «Չենք գայ: 13 Մի՞թէ քիչ բան է այն, որ մեզ հանեցիր Եգիպտոսից, ուր կաթ ու մեղր էր բխում, որպէսզի սպանես մեզ այստեղ՝ անապատում: Իսկ հիմա մեզ սաստո՞ւմ ես եւ դո՞ւ ես ղեկավարը: 14 Մի՞թէ դու մեզ բերել ես մի երկիր, ուր կաթ ու մեղր է բխում, եւ մեզ դաշտեր ու այգիներ ես ժառանգութիւն տուել այնտեղ: Մեր աչքերն էլ փորես, քեզ մօտ չենք գայ»: 15 Մովսէսը խիստ դառնացաւ եւ Տիրոջն ասաց. «Մի՛ ընդունիր նրանց զոհաբերութիւնները, որովհետեւ նրանցից ես ոչինչ չեմ առել եւ նրանցից որեւէ մէկի հանդէպ անարդար բան չեմ արել»: 16 Եւ Մովսէսն ասաց Կորխին. «Մաքրի՛ր քո մարդկանց, եւ առաւօտեան Տիրոջ առաջ պատրաստ եղէք դու եւ Ահարոնը: 17 Իւրաքանչիւրը թող առնի իր բուրվառը եւ դրա մէջ խունկ թող դնի: Իւրաքանչիւրն իր բուրվառը մատուցի Տիրոջը՝ ընդամէնը երկու հարիւր յիսուն բուրվառ: Դու եւ Ահարոնը նոյնպէս մատուցեցէ՛ք ձեր բուրվառները»: 18 Նրանք կրակ դրեցին դրանց մէջ, կրակի վրայ խունկ լցրին, եւ Մովսէսն ու Ահարոնը կանգնեցին վկայութեան խորանի դռանը: 19 Կորխն իր բոլոր մարդկանց հաւաքեց նրանց դիմաց, վկայութեան խորանի դռան մօտ: Եւ Տիրոջ փառքը երեւաց ամբողջ ժողովրդին:

20 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 21 «Հեռացէ՛ք այդ ժողովրդի մօտից, որ ես միանգամից կոտորեմ սրանց»: 22 Մովսէսն ու Ահարոնը երեսնիվայր ընկնելով՝ ասացին. «Ո՛վ Աստուած, հոգիների ու բոլոր մարմինների Աստուած, եթէ մի մարդ մեղք է գործում, միթէ ամբողջ ժողովրդի՞ վրայ պիտի թափուի Տիրոջ զայրոյթը»: 23 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 24 «Խօսի՛ր ժողովրդի հետ եւ ասա՛. "Հեռացէ՛ք Կորխի, Դաթանի ու Աբիրոնի բնակավայրի շրջապատից"»: 25 Մովսէսը վեր կացաւ եւ գնաց Դաթանի ու Աբիրոնի մօտ: Նրա հետ գնացին նաեւ իսրայէլացիների բոլոր ծերերը: 26 Մովսէսը դիմեց ժողովրդին եւ ասաց. «Հեռացէ՛ք այդ խստասիրտ մարդկանց վրաններից, նրանց ոչ մի իրին ձեռք չտաք, որպէսզի կորստեան չմատնուէք դրանց գործած մեղքերի պատճառով»: 27 Նրանք հեռացան Կորխի վրանի շուրջը գտնուող ժողովրդից, բայց Դաթանն ու Աբիրոնը, նրանց կանայք, երեխաներն իրենց իրերով դուրս եկան ու կանգնեցին իրենց վրանների դռան մօտ: 28 Մովսէսն ասաց. «Սրանով դուք կ'իմանաք, որ Տէրն է ուղարկել ինձ այս բոլոր գործերը կատարելու համար, եւ ոչ թէ ես ինձանից եմ անում դրանք. 29 եթէ Դաթանն ու Աբիրոնը մեռնեն մարդկային սովորական մահով, կամ դրանց պատիժը մարդկային սովորական պատժի նման լինի, ապա Տէրը չէ, որ ուղարկել ինձ: 30 Իսկ եթէ որեւէ նոր նշան ցոյց տայ Տէրը, երկիրն իր երախը բացելով կուլ տայ նրանց, նրանց ընտանիքներին վրաններով ու դրանցում եղած ամէն ինչով, ողջ-ողջ դժոխք իջնեն նրանք, ուրեմն իմացէք, որ այդ մարդիկ զայրացրել են Տիրոջը»: 31 Երբ Մովսէսն աւարտեց այս խօսքերը, նրանց ոտքի տակ պատռուեց երկիրը, 32 բացուեց գետինը եւ կուլ տուեց նրանց ու նրանց ընտանիքներին, Կորխին յարած

մարդկանց ու նրանց անասուններին:
33 Նրանք եւ նրանց ունեցածները ողջ-
ողջ իջան դժոխք, երկիրը ծածկեց նրանց,
եւ նրանք վերացան ժողովրդի միջից:

ԿՐԱԿԸ ՍՊԱՌՈՒՄ Է ՆՐԱՆՑ

34 Նրանց շուրջը գտնուող բոլոր
իսրայէլացիները նրանց ճիչը լսելով՝
փախուստի դիմեցին, որովհետեւ հաւա-
տացած էին, թէ գուցէ երկիրն իրենց էլ
կուլ տայ: 35 Տիրոջ ուղարկած կրակն
իջաւ ու ճարակեց այն երկու հարիւր
յիսուն մարդկանց, որոնք խնկարկում
էին:
36 Տէրն ասաց Մովսէսին ու Ահարոնի
որդի Եղիազար քահանային. 37 «Վերց-
րէ՛ք հրոյ ճարակ դարձած մարդկանց
պղնձէ բուրվառները, իսկ օտար կրակը
սփռեցէ՛ք հեռու, 38 որովհետեւ իրենց
հոգիների դէմ մեղք գործողների այդ
բուրվառները սրբագործուեցին: Այդ
բուրվառները դրուագածոյ թիթեղների
վերածի՛ր եւ դրանցով ծածկի՛ր զոհա-
սեղանը, որովհետեւ դրանք մատու-
ցուած լինելով Տիրոջը, սրբագործուած
են: Դրանք իսրայէլացիների համար
ազդանշան պիտի լինեն»: 39 Ահարոն
քահանայի որդի Եղիազարն առաւ հրոյ
ճարակ դարձած մարդկանց մատուցած
պղնձէ բուրվառները, 40 դրանցից զո-
հասեղանի համար թիթեղ պատրաստեց,
որպէսզի իսրայէլացիներին յիշեցնի, որ
Ահարոնից չսերած որեւէ օտար մարդ
խունկ դնելու համար չմօտենայ Տիրոջը,
որպէսզի նրա հետ էլ չպատահի այն,
ինչ պատահեց Կորխի ու նրան յարած
ամբոխի հետ: Այդ էր Տէրը յայտնել
Մովսէսի միջոցով:

ԱՀԱՐՈՆԸ ՓՐԿՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ

41 Հետեւեալ օրն իսրայէլացիները
տրտնջացին Մովսէսի ու Ահարոնի դէմ՝
ասելով. «Դուք կոտորեցիք Տիրոջ
ժողովրդին»: 42 Երբ ժողովուրդը խուժեց
Մովսէսի ու Ահարոնի վրայ, նրանք
դիմեցին դէպի վկայութեան խորան:
Ամպը իսկոյն ծածկեց խորանը, եւ
երեւաց Տիրոջ փառքը: 43 Մովսէսն ու
Ահարոնը կանգնեցին վկայութեան
խորանի առջեւ: 44 Տէրը խօսեց Մով-
սէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 45 «Հե-
ռացէ՛ք այդ ժողովրդի միջից, որ ես
միանգամից ոչնչացնեմ նրանց»: Մով-
սէսն ու Ահարոնը երեսնիվայր ընկան
գետին, 46 եւ Մովսէսն ասաց Ահա-
րոնին. «Վերցրո՛ւ բուրվառը, դրա մէջ
զոհասեղանի վրայից վերցրած կրակ
դի՛ր, դրա վրայ խունկ լցրո՛ւ, շտապ
տա՛ր բանակատեղի եւ քաւութիւն
խնդրի՛ր նրանց մեղքերի համար, որով-
հետեւ Տէրը զայրացել է եւ սկսել է
կոտորել ժողովրդին»: 47 Ահարոնն
առաւ բուրվառը, ինչպէս իրեն ասել էր
Մովսէսը, եւ գնաց ժողովրդի մօտ:
Մարդկանց կոտորածն արդէն սկսուել
էր: Ահարոնը խունկ դրեց եւ քաւութիւն
խնդրեց ժողովրդի գործած մեղքերի
համար: 48 Նա կանգնեց սպանուած ու
կենդանի մարդկանց միջեւ, եւ կոտոր-
ածը դադարեց: 49 Կոտորուածների
թիւը հասաւ տասնչորս հազար եօթը
հարիւր հոգու՝ չհաշուած Կորխի պատ-
ճառով մեռածները: 50 Ահարոնը վերա-
դարձաւ Մովսէսի մօտ, վկայութեան
խորանի դուռը, եւ կոտորածը դադարեց:

ԱՀԱՐՈՆԻ ԾԱՂԿՈՂ ԳԱՒԱԶԱՆԸ

17 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 2 «Դիմի՛ր իսրայէլացիներին եւ
նրանցից՝ նրանց ցեղերի բոլոր իշխան-
ներից մէկական գաւազան ա՛ռ ըստ
իրենց նահապետների ընտանիքների
թուի՝ ընդամէնը տասներկու գաւազան:
Իւրաքանչիւր իշխանի անունը կը գրես
իր գաւազանի վրայ: 3 Ահարոնի անունը
կը գրես իր գաւազանի վրայ: Իսրայէլի
ամէն մի ցեղ մէկ գաւազան է տալու
ըստ իր նահապետների ընտանիքների:
4 Դրանք կը դնես վկայութեան
խորանում, որով պիտի երեւամ քեզ
այնտեղ: 5 Թող ծաղկի այն մարդու
գաւազանը, որին ես կ'ընտրեմ: Դրանով
կը վերացնեմ ձեր դէմ ուղղուած
իսրայէլացիների տրտունջը»:
6 Մովսէսն այդ հաղորդեց իսրա-
յէլացիներին, եւ նրանց իշխանները
նրան տուեցին իրենց գաւազանները.
ամէն մի իշխան տուեց մէկ գաւազան՝
ըստ իրենց նահապետների ընտանիք-

ների, ընդամէնը տասներկու գաւազան:
Դրանց մէջ էր նաեւ Ահարոնի գաւա-
զանը: 7 Մովսէսն այդ գաւազանները
դրեց Տիրոջ առջեւ, վկայութեան
խորանում: 8 Յաջորդ օրը Մովսէսն ու
Ահարոնը մտան վկայութեան խորան եւ
տեսան, որ ծաղկել է Ղեւիի տան
կողմից տրուած Ահարոնի գաւազանը.
նա ճիւղեր էր արձակել, ծաղկել եւ
ընկոյզ բռնել: 9 Մովսէսը գաւազաններն
առաւ Տիրոջ առաջից եւ ցոյց տուեց
բոլոր իսրայէլացիներին: Նրանք տեսան
այդ: Ամէն մէկն առաւ իր գաւազանը:
10 Տէրն ասաց Մովսէսին. «Ահարոնի
այդ գաւազանը դի՛ր միւս վկա-
յութիւնների կողքին ի պահ, որպէս
նշան անհնազանդ որդիների, որպէսզի
դադարի նրանց տրտունջն իմ դէմ, եւ
նրանք չմեռնեն»: 11 Մովսէսն ու
Ահարոնը արեցին այնպէս, ինչպէս Տէրն
էր հրամայել Մովսէսին. նրանք այդպէս
էլ արեցին: 12 Իսրայէլացիներն ասացին
Մովսէսին. «Մենք կոտորուում, կորչում,
նուազում ենք: 13 Ով որ մօտենում է
Տիրոջ խորանին, մեռնում է: Մի՞թէ
մենք իսպառ պիտի ոչնչանանք»:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

18 Տէրը խօսեց Ահարոնի հետ եւ
ասաց. «Դու, քո որդիներն ու քո նահա-
պետական ընտանիքը պատասխա-
նատու էք սրբարանի սպասաւորութեան
նկատմամբ կատարուող մեղսագոր-
ծութիւնների համար, բայց միայն դու եւ
քո որդիներն էք կրելու ձեր քահա-
նայագործութեան ժամանակ ձեր կա-
տարած զանցանքների պատասխանա-
տուութիւնը: 2 Քեզ մօտ վերցրու քո
եղբայրներին՝ քո նախորդը եղող Ղեւիի
սերնդից՝ քո հօր ցեղից, եւ նրանք թող
միանան ու թող ծառայեն քեզ: Վկայու-
թեան խորանում, սակայն, պիտի սպա-
սաւորէք դու եւ քեզ հետ քո որդիները:
3 Ղեւտացիները պիտի ծառայեն քեզ եւ
վկայութեան խորանի պահապանները
պիտի լինեն, բայց նրանք իմ սուրբ
սպասքին ու զոհասեղանին չպէտք է
մերձենան, որպէսզի ե՛ւ նրանք, ե՛ւ դուք
չմեռնէք: 4 Նրանք պիտի միանան քեզ,
որ կատարուի վկայութեան խորանի
պահպանութիւնն ըստ խորանի բոլոր
ծառայութիւնների: Ոչ մի օտարազգի
մարդ քեզ չպիտի մօտենայ: 5 Դուք
ինքներդ կը սպասարկէք սրբութիւններն
ու զոհասեղանը, որպէսզի իսրայէլա-
ցիների վրայ այլեւս չիջնի Տիրոջ
բարկութիւնը: 6 Ես իսրայէլացիների
միջից, որպէս Տիրոջը տրուած ընծայ,
վերցրի ձեր ղեւտացի եղբայրներին,
որպէսզի նրանք սպասարկեն վկայու-
թեան խորանում, 7 իսկ դու եւ քեզ հետ
քո որդիները վարէք քահանայութեան
պաշտօնը, անէք զոհասեղանին
վերաբերող բոլոր գործերը, վարագոյրի
յետեւում գտնուող մասում կատարէք
քահանայական ձեր պարտականու-
թիւնները, իսկ այլ ազգի մարդը եթէ
մօտենայ, մահուամբ պիտի պատժուի»:
8 Տէրը խօսեց Ահարոնի հետ եւ
ասաց. «Ահա ես ձեզ յանձնեցի ինձ
նուիրաբերուած ընծաների պահպանու-
թիւնը. իսրայէլացիների ինձ նուիրած
ամէն ինչ իբրեւ պարգեւ տալիս եմ քեզ
ու քո յետնորդներին. եւ սա թող յաւի-
տենական օրէնք լինի: 9 Ահա սրանք են
սուրբ ընծաներից ձեզ պատկանող
բաները. նրանց բոլոր զանցանքների,
նրանց բոլոր մեղսագործութիւնների
համար ինձ նուիրաբերուող նրանց բոլոր
նուէրներից, նրանց բոլոր զոհերից քեզ
եւ քո որդիներին բաժին պիտի հասնի:
10 Սուրբ վայրերում կ'ուտէք դրանք. ով
որ արու է, կարող է ուտել այն. միայն
դու եւ քո արու զաւակները. եւ քեզ
համար դրանք սուրբ պիտի լինեն:
11 Ձեզ պիտի պատկանեն նաեւ իս-
րայէլացիների մատուցած բերքի առա-
ջին պտուղները: Բոլոր զոհաբերութիւն-
ները տալիս եմ քեզ եւ քեզ հետ՝ քո
տղաներին ու աղջիկներին: Սա թող
յաւիտենական օրէնք լինի: Քո տանը
ամէն մաքուր մարդ թող ուտի այն:
12 Տիրոջը մատուցուած բերքի ընտիր
իւղը, ընտիր գինին եւ ընտիր ցորենը
քեզ եմ տալիս: 13 Իրենց երկրի
հացաբոյսերի ամէն առաջին բերքը, որ
Տիրոջն են մատուցում, թող քեզ
պատկանի: Քո տանը ամէն մաքուր
մարդ թող ուտի այն: 14 Իսրայէլա-
ցիներից ինձ նուիրաբերուող ամէն ինչ

քեզ թող պատկանի: 15 Ամէն մի առաջ-
նածին, մարդ թէ անասուն, որ Տիրոջն
են նուիրում, թող քեզ պատկանի: Ցետ
կը գնես միայն մարդկանց անդրա-
նիկներին: Ցետ կը գնես նաեւ անմա-
քուր անասունների առաջնածինները:
16 Ցետգնումը թող տեղի ունենայ
ծննդից մէկ ամիս անցնելուց յետոյ, իսկ
դրա գինը, ըստ սրբարանի սիկղի, հինգ
սիկղ թող լինի, որը հաւասար է քսան
դանգի: 17 Արջառների, ոչխարների ու
այծերի առաջնածինները յետ չգնես,
որովհետեւ մաքուր են: Նրանց արիւնը
կը հեղես զոհասեղանի մօտ, իսկ ճարպը
ընծայ կ'անես իբրեւ անուշ բուրմունք
Տիրոջ համար: 18 Միսը թող պատկանի
քեզ, ինչպէս եւ կուրծքն ու աջ թեւը:
19 Սրբութիւններից այն ամէնը, ինչ որ
իսրայէլացիները Տիրոջն են տալիս
որպէս տուրք, քեզ եմ տալիս, քո
զաւակներին եւ քեզ հետ՝ քո տղաներին
ու աղջիկներին: Դա յաւիտենական
օրէնք թող լինի, որովհետեւ դա Տիրոջ
առաջ Աղի ուխտ է քեզ համար եւ
քեզնից յետոյ քո սերնդի համար»:
20 Տէրը խօսեց Ահարոնի հետ եւ ասաց.
«Նրանց երկրում ոչ մի ժառանգութիւն
չպիտի ունենաս, եւ դու նրանց հետ ոչ
մի բաժին չպիտի ունենաս, որովհետեւ
ես եմ քո բաժինն ու ժառանգութիւնը
իսրայէլացիների մէջ»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ

21 «Ես Ղեւիի որդիներին իբրեւ ժա-
ռանգութիւն եմ տալիս իսրայէլացիների
բոլոր եկամուտների տասանորդները
նրանց այն ծառայութեան համար, որ
նրանք պիտի կատարեն վկայութեան
խորանում: 22 Միւս իսրայէլացիները
չպէտք է մերձենան վկայութեան
խորանին, որպէսզի մահացու մեղքեր
գործած չլինեն: 23 Միայն ղեւտացիները
թող սպասարկեն վկայութեան խորա-
նում եւ պատասխան տան իրենց գոր-
ծած մեղքերի համար: Դա յաւիտե-
նական օրէնք թող լինի իսրայէլացիների
մէջ իրենց բոլոր սերունդներում:
Ղեւտացիները ժառանգութիւն չպէտք է
ունենան, 24 որովհետեւ իսրայէլա-
ցիների եկամուտների տասանորդները,
որ յատկացնելու են Տիրոջը իբրեւ
տուրք, տուեցի ղեւտացիներին որպէս
ժառանգութիւն: Դրա համար էլ ասացի,
որ նրանք ժառանգութիւն չպիտի
ունենան իսրայէլացիների մէջ»:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՏԱՍԱՆՈՐԴԸ

25 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 26 «Խօսի՛ր ղեւտացիների հետ ու
ասա՛ նրանց. "Եթէ իսրայէլացիներից
տասանորդ ստանաք, որը ես որպէս
ժառանգութիւն ձեզ եմ տուել, դուք էլ
դրանից պէտք է տուրք տաք Տիրոջը՝
տասանորդի մէկ տասներորդը: 27 Ձեր
տուրքը պիտի ընդունուի իբրեւ կալում
գտնուող ցորեն եւ հնձանում եղած
գինի: 28 Ըստ այդմ էլ դուք մաս պիտի
հանէք Տիրոջը այդ տուրքից, որ պիտի
ստանաք իսրայէլացիներից իբրեւ
տասանորդ, եւ դրանից տուրք պիտի
տաք Տիրոջը, Ահարոն քահանային:
29 Ձեր ստացած տասանորդներից
Տիրոջը մաս պիտի հանէք նաեւ առաջին
բերքից: 30 Դու ղեւտացիներին ասա՛.
"Երբ դրանից ընտիրը նուիրաբերէք
Տիրոջը, դա պէտք է ընդունուի իբրեւ
կալում գտնուող ցորեն եւ հնձանում
եղած գինի: 31 Դուք եւ ձեր ընտա-
նիքները դա կարող էք ուտել ամէն տեղ,
որովհետեւ դա ձեր վարձն է վկայու-
թեան խորանում ձեր մատուցած ծառա-
յութեան փոխարէն: 32 Եւ դրա համար
դուք մեղք կրած չէք լինի. երբ որ
դրանից տուրք հանէք որպէս սրբութիւն
Իսրայէլի որդիներին, սրբութիւնները
պղծած չէք լինի եւ չէք մեռնի"»:

ԿԱՐՄԻՐ ԵՐԻՆՋԻ ՄՈԽԻՐԸ

19 Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարո-
նի հետ եւ ասաց. 2 «Սա է այն ծի-
սակարգը, որ Տէրը պատուիրեց Մովսէ-
սին՝ ասելով. "Իսրայէլացիներին ասա՛,
որ քեզ մօտ բերեն ոչ արատաւոր մի
կարմիր երինջ, որ բծաւոր ու լծի տակ
մտած չլինի: 3 Այն կը յանձնես
եղիազար քահանային: Թող հանեն դա
բանակատեղիից դուրս մի մաքուր տեղ
եւ մորթեն նրա առջեւ: 4 Եղիազարը թող

առնի նրա արիւնից եւ եօթն անգամ
ցանի վկայութեան խորանի դիմաց†:
5 Երինջը թող այրեն նրա առջեւ. դրա
մորթը, միսն ու արիւնը թող այրեն իր
աղտեղիքի հետ: 6 Քահանան թող
վերցնի մի եղեւնու փայտ, զոպայ ու
կարմիր թել եւ նետի այրուող երինջի
վրայ: 7 Քահանան իր հագուստներն ու
մարմինը լուանալուց յետոյ թող մտնի
բանակատեղի: Քահանան, սակայն,
մինչեւ երեկոյ անմաքուր թող համա-
րուի: 8 Երինջն այրողը ջրով թող
լուանայ իր հագուստներն ու մարմինը
եւ անմաքուր համարուի մինչեւ երեկոյ:
9 Մի մաքուր մարդ թող հաւաքի այ-
րուած երինջի մոխիրը եւ կուտակի
բանակատեղիից դուրս մի մաքուր տեղ:
Իսրայէլացի ժողովրդի համար դա պիտի
պահուի որպէս մեղքերի մաքրման ջուր,
քանի որ դա սրբութիւն է: 10 Երինջի
մոխիրը հաւաքողը թող լուանայ իր
մարմինն ու հագուստները եւ անմաքուր
համարուի մինչեւ երեկոյ: Դա իսրայէ-
լացի ժողովրդի ու նրա մօտ ապրող
օտարականների համար յաւիտենական
օրէնք թող լինի»:

ՕՐԷՆՔ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

11 «Ով որ դիպչի մեռած մարդու
դիակին, եօթն օր թող անմաքուր
համարուի: 12 Նա պէտք է մաքրուի
երրորդ ու եօթներորդ օրերը, որից յետոյ
մաքուր կը համարուի: Իսկ եթէ երրորդ
ու եօթներորդ օրերը չմաքրուի, մաքուր
չի համարուի: 13 Ով որ դիպչի մեռած
կամ մեռնելու վրայ եղող մարդու դիակի
ու չմաքրուի, նա պղծած է լինում Տիրոջ
խորանը: Այդ մարդը թող վերանայ
իսրայէլացիների միջից: Քանի որ մեղ-
քերի մաքրման ջուր չցանուեց նրա
վրայ, նա անմաքուր է, որովհետեւ նրա
անմաքրութիւնը մնում է նրա մէջ:
14 Տան մէջ մեռնող մարդու մասին
ծիսակարգը հետեւեալն է. ով որ մտնի
այդ տունը, եւ ինչ որ կայ այդ տան մէջ,
թող անմաքուր համարուի եօթը օր:
15 Բաց, կափարիչով չծածկուած կամ
բերանը չկապած որեւէ ման անմա-
քուր թող համարուի: 16 Ով որ դաշտում
բնական կամ բռնի մահով մեռած
մարդու դիակի, ոսկորի կամ գերեզմանի
դիպչի, եօթն օր թող պիղծ համարուի:
17 Անմաքուր համարուածի համար թող
առնեն մեղքերի մաքրման համար
այրուած երինջի մոխրից, դնեն մի
ամանի մէջ եւ վրան ջուր աւելացնեն:
18 Մաքուր մի մարդ թող վերցնի զոպան
եւ այն սուրբ ջրի մէջ թաթախելով՝
ցանի տան, կահկարասու, ամանների,
այնտեղ գտնուող մարդկանց վրայ,
ինչպէս նաեւ մարդու ոսկորին, բնական
կամ բռնի մահով մեռած մարդու
դիակին կամ գերեզմանին ձեռք տուած
մարդու վրայ: 19 Մի մաքուր մարդ
երրորդ ու եօթներորդ օրերը այդ
անմաքուր մարդու վրայ ջուր թող ցանի,
եւ նա եօթներորդ օրը մաքուր թող
համարուի: Նա ջրով թող լուանայ իր
հագուստներն ու մարմինը եւ մինչեւ
երեկոյ անմաքուր թող համարուի:
20 Այն մարդը, որ անմաքուր է, բայց չի
ցանկանայ մաքրուել, թող վերանայ իր
ժողովրդի միջից, որովհետեւ նա Տիրոջ
սրբարանն է պղծել, մեղքերի մաքրման
ջրով չի լուացուել եւ անմաքուր է:
21 Դա ձեզ համար յաւիտենական օրէնք
թող լինի: Մեղքերի մաքրման լուացում
կատարողը պէտք է լուանայ իր հա-
գուստները: Ով որ դիպչում է մեղքերի
մաքրման այդ ջրին, նա մինչեւ երեկոյ
անմաքուր թող համարուի: 22 Ինչի էլ
որ դիպչի անմաքուրը, մինչեւ երեկոյ
թող դա անմաքուր համարուի, իսկ ով
դիպչի անմաքուր մարդուն, նա էլ
մինչեւ երեկոյ անմաքուր թող համա-
րուի»:

ԿԱԴԷՍԻ ԴԷՊՔԵՐԸ
(Ելք 17. 1-7)

20 Իսրայէլացիները ամբողջ ժո-
ղովրդի հետ առաջին ամսին եկան Սի-
նայի անապատ, եւ ժողովուրդը բանա-
կատեղի դրեց Կադէսում: Մարիամը
վախճանուեց այնտեղ ու այնտեղ էլ
թաղուեց:

2 Ժողովուրդը խմելու ջուր չունէր,
ուստի հաւաքուեց Մովսէսի ու Ահա-
րոնի գլխին: 3 Մովսէսի դէմ գան-
գատուելով՝ մարդիկ ասում էին. «Աւելի

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ իր մատով:

լաւ կը լինէր, եթէ մենք էլ մեռնէինք,
երբ Տիրոջ առջեւ կոտորուում էին մեր
եղբայրները: 4 Ինչո՞ւ Տիրոջ ժողովրդին
բերեցիք այս անապատը, որ կոտո-
րուենք մենք ու մեր անասունները: 5 Ին-
չո՞ւ հանեցիք մեզ Եգիպտացիների
երկրից, որ գանք հասնենք այս վատ
տեղը, ուր ո՛չ սերմ կը լինի ցանել, ո՛չ
սեխ† կայ, ո՛չ այգիներ, ո՛չ նռենիներ
եւ ո՛չ իսկ խմելու ջուր»: 6 Մովսէսն ու
Ահարոնը ժողովրդի մօտից գնացին
վկայութեան խորանի դուռը եւ երեսնի-
վայր ընկան գետին: Եւ Տիրոջ փառքը
երեւաց նրանց:

7 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 8 Վերցրո՛ւ գաւազանը, դու եւ
քո եղբայր Ահարոնը ժողովրդին հաւա-
քեցէ՛ք, նրանց ներկայութեամբ ասա-
ցէ՛ք այդ ապառաժին, եւ նա կը տայ իր
ջուրը: Այդ ապառաժից ջուր կը հանէք
եւ կը խմեցնէք ժողովրդին ու նրանց
անասուններին»: 9 Մովսէսն առաւ Տի-
րոջ առջեւ գտնուող գաւազանը, ինչպէս
Տէրն էր հրամայել իրեն: Մովսէսն ու
Ահարոնը ժողովրդին հաւաքեցին ապա-
ռաժի դիմաց: 10 Մովսէսն ասաց նրանց.
«Լսեցէ՛ք ինձ, ապստամբնե՛ր, հնարա-
ւո՞ր է, որ այս ապառաժից ձեզ համար
ջուր հանենք»: 11 Եւ Մովսէսն իր ձեռքը
բարձրացնելով՝ երկու անգամ հարուա-
ծեց ապառաժին: Առատ ջուր բխեց, եւ
ժողովուրդն ու անասունները խմեցին:

12 Տէրն ասաց Մովսէսին ու Ահա-
րոնին. «Քանի որ դուք ինձ չհաւա-
տացիք, որ ես կարող եմ ինձ սրբացնել
իսրայէլացիների առջեւ, ուստի դուք
այդ ժողովրդին չէք առաջնորդի այն
երկիրը, որ դրանց եմ տուել»: 13 Այդ
աղբիւրը կոչուեց Հակաճառութեան
ջուր, որովհետեւ իսրայէլացիները
հակաճառել էին Տիրոջ առջեւ: Եւ նա
սրբացաւ նրանց մէջ:

ԵԴՈՄԻ ԹԱԳԱՒՈՐԸ ԱՐԳԵԼՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ ԱՆՑՆԵԼ

14 Մովսէսը Կադէսից պատգամա-
ւորներ ուղարկեց եդոմացիների արքայի
մօտ եւ ասաց. «Այսպէս են ասում քո
եղբայր իսրայէլացիները. "Դու ինքդ
տեղեակ ես այն բոլոր նեղութիւններին,
որ կրեցինք մենք, 15 թէ ինչպէս մեր
հայրերը գնացին Եգիպտոս, ուր պան-
դուխտ էինք երկար ժամանակ, թէ
եգիպտացիները ինչքան չարչարեցին
մեզ ու մեր հայրերին: 16 Մենք բողոք
բարձրացրինք Տիրոջ առջեւ, նա լսեց
մեր ձայնը եւ հրեշտակ ուղարկելով՝ մեզ
հանեց Եգիպտոսից: Եւ հիմա մենք
Կադէս քաղաքում ենք, քո երկրի սահ-
մանների մօտ: 17 Արդ, պիտի անցնենք
քո երկրով: Մենք ո՛չ քո դաշտերով
կ'անցնենք, ո՛չ քո այգիներով, ո՛չ իսկ
ջուր կը խմենք քո ջրհորներից: Արքունի
ճանապարհներով կը գնանք, աջ կամ
ձախ չենք շեղուի, մինչեւ որ դուրս
գանք քո սահմաններից"»: 18 Եդոմա-
ցիների արքան նրանց ասաց. «Իմ
երկրով չանցնէք, ապա թէ ոչ պատեր-
ազմի կ'ելնեմ ձեր դէմ»: 19 Իսրա-
յէլացիներն ասացին նրան. «Լերան
մօտով կ'անցնենք: Եթէ մենք ու մեր
հօտերը խմենք քո ջրից, քեզ դրա գինը
կը տանք: Մենք շատ բան չենք
պահանջում, թող անցնենք լերան
մօտով»: 20 Նա պատասխանեց. «Չանց-
նէք իմ երկրով»: Եւ եդոմացիները
իսրայէլացիների դէմ ելան մեծ ու լաւ
զինուած զօրքով: 21 Եդոմացիները
չցանկացան իսրայէլացիներին ճանա-
պարհ տալ իրենց երկրի սահմանների
միջով, ուստի իսրայէլացիները խուսա-
փեցին նրանցից: 22 Նրանք Կադէսից
դուրս գալով՝ եկան Հոր լեռը:

ԱՀԱՐՈՆԻ ՄԱՀԸ

23 Տէրը Հոր լերան վրայ, Եդո-
մացիների երկրի սահմանի մօտ, խօսեց
Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. 24
«Ահարոնը մեռնելով թող միանայ իր
նախնիների մեռելներին: Նա չի մտնելու
այն երկիրը, որ ես տուել եմ իսրա-
յէլացիներին, որովհետեւ դուք ինձ
բարկացրիք Հակաճառութեան ջրի
հարցում: 25 Ահարոնին ու նրա որդի
Եղիազարին ամբողջ ժողովրդի ներկա-
յութեամբ բարձրացրո՛ւ Հոր լեռը: 26 Ա-
հարոնի վրայից հանի՛ր նրա պատ-
մուճանը եւ այն հագցրո՛ւ նրա որդի
Եղիազարին, եւ Ահարոնն այնտեղ թող

†Եբրայերէնում՝ բգենի:

մեռնի ու միանայ իր նախնիների
մեռելներին»: 27 Մովսէսն արեց այն-
պէս, ինչպէս Տէրն էր հրամայել իրեն.
նա ամբողջ ժողովրդի ներկայութեամբ
Ահարոնին բարձրացրեց† Հոր լեռը,
28 նրա վրայից հանեց նրա զգեստները
եւ դրանք հագցրեց նրա որդի Եղիա-
զարին: 29 Ահարոնը մեռաւ լերան գա-
գաթին, իսկ Մովսէսն ու Եղիազարը
իջան լեռից: 30 Ամբողջ ժողովուրդը
տեսաւ, որ վախճանուեց Ահարոնը, եւ
բոլոր իսրայէլացիները երեսուն օր
ողբացին Ահարոնի մահը:

ԻՍՐԱՅԷԼԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

21 Արադի քանանացի արքան, որը
բնակւում էր անապատում, լսեց, որ
իսրայէլացիները գալիս են Աթարիմի
ճանապարհով: Նա պատերազմ մղեց
իսրայէլացիների դէմ եւ նրանցից
գերիներ վերցրեց: 2 Իսրայէլացիները
Տիրոջ հետ ուխտ անելով՝ ասացին.
«Եթէ մեր ձեռքը յանձնես այդ ժո-
ղովրդին, մենք նրան ու նրա քա-
ղաքները կը կործանենք‡»: 3 Տէրը լսեց
իսրայէլացիներին եւ քանանացիներին
մատնեց նրանց ձեռքը: Իսրայէլացիները
նրանց ու նրանց քաղաքները կործա-
նեցին եւ այդ վայրը կոչեցին Նզովք:

ՊՂՆՁԷ ՕՁԸ

4 Հոր լեռից շարժուելով դէպի Կար-
միր ծովը տանող ճանապարհով, նրանք
շրջանցեցին Եդոմը: Ժողովուրդը յուսա-
հատուեց ճանապարհին 5 եւ սկսեց
գանգատուել Աստծուց ու Մովսէսից:
Նրանք ասացին. «Ինչո՞ւ մեզ հանեցիր
Եգիպտոսից, որ մեզ այս անապատում
կոտորես: Ո՛չ հաց կայ եւ ո՛չ ջուր:
Մենք զզուել ենք այս խղճուկ սննդից»:
6 Տէրը կոտորող§ օձեր ուղարկեց
ժողովրդին, որոնք խայթում էին մարդ-
կանց. իսրայէլացիներից շատերը մե-
ռան: 7 Իսրայէլացիները գալով Մով-
սէսի մօտ՝ ասացին. «Մեղք ենք գործել,
որովհետեւ չարախօսել ենք Տիրոջն ու
քեզ: Արդ, աղօթի՛ր Տիրոջը, որ նա մեր
միջից վերացնի այդ օձերը»: Մովսէսն
աղօթեց Տիրոջը ժողովրդի համար: 8 Տէրն
ասաց Մովսէսին. «Դու մի պղնձէ օձ
պատրաստի՛ր եւ այն դի՛ր ձողի վրայ:
Երբ օձը մարդ խայթի, եւ օձից խայ-
թուողը նայի քո սարքած օձին, կը
փրկուի»: 9 Մովսէսը պղնձէ օձ պատ-
րաստեց եւ այն դրեց ձողի վրայ: Օձից
խայթուողը, նայելով պղնձէ օձին, կեն-
դանի էր մնում:

ՀՈՐ ԼԵՌԻՑ ԴԷՊԻ ՄՈՎԱԲԻ ՀՈՎԻՏ

10 Իսրայէլացիները ճանապարհ ըն-
կան ու բանակատեղի դրեցին Օբոթում:
11 Օբոթից դուրս գալով՝ բանակատեղի
դրեցին Աբեզգայում՝ անապատի այն
կողմում, որը Մովաբի դիմաց է
գտնուում, նրանից արեւելք: 12 Այն-
տեղից էլ դուրս գալով՝ բանակատեղի
դրեցին Զարեդ ձորում:

13 Այնտեղից էլ դուրս գալով՝ բա-
նակատեղի դրեցին Առնոնից այն կողմ,
անապատում, ամորհացիների սահման-
ների ելքի մօտ. Առնոնը գտնուում է
մովաբացիների ու ամորհացիների սահ-
մանների միջեւ: 14 Դրա համար էլ
գրքում† գրուած է. «Տիրոջ պատերազմը
կրակի մատնեց Զովոբն ու Առնոնի
ձորը: 15 Նա ձորում բնակուողներին
տարաւ բնակեցնելու Էրում, որը սահ-
մանակից էր Մովաբին»:

16 Դրանից այն կողմ Ջրհորն էր: Դա
այն ջրհորն է, որի մասին Տէրն ասաց
Մովսէսին. «Հաւաքի՛ր ժողովրդին, որ
ես նրանց խմելու ջուր տամ»: 17 Այն
ժամանակ իսրայէլացիները ջրհորի մօտ
այս երգը երգեցին.

18 «Փառաբանեցէ՛ք այն ջրհորը, որ
փորեցին իշխանները,
այն խորացրին յղկեցին ազգերի թա-
գաւորները
իրենց թագաւորութեան եւ տիրա-
պետութեան ժամանակ»:

Իսրայէլացիներն այդ ջրհորի մօտից
գնացին դէպի Մանթանին, 19 Մանթա-
նինից՝ Մանայէլ, Մանայէլից՝ Բամոթ,
20 Բամոթից՝ Անայէն, որը գտնուում է
Մովաբացիների դաշտում՝ Կոփածոյ կո-

†Եբրայերէնում՝ բարձրացան:
‡Կամ՝ կը նզովենք:
§Եբրայերէն՝ կիզիչ:
†Եբրայերէն՝ Տիրոջ պատերազմների գրքում:

չուած լերան գագաթի մօտ, որ նայում է դէպի անապատ:

ԱՆԴՐՅՈՐԴԱՆԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ

21 Մովսէսն‡ ամորհացիների արքայի մօտ պատգամաւորներ ուղարկեց խաղաղութեան խօսքերով: Նա ասաց. «Թո՛յլ տուր անցնենք քո երկրով: 22 Ճանապարհով կը գնանք, չենք շեղուի ո՛չ դաշտերի, ո՛չ էլ այգիների մէջ եւ ո՛չ իսկ քո ջրհորներից ջուր կը խմենք: Արքունի ճանապարհով կը գնանք, մինչեւ որ անցնենք քո սահմաններից»: 23 Սեհոնն իսրայէլացիներին թոյլ չտուեց անցնել իր սահմաններով: Սեհոնը հաւաքեց իր ամբողջ ժողովրդին ու իսրայէլացիների դէմ պատերազմելու ելաւ անապատում: Նա եկաւ Սիասար եւ պատերազմ մղեց իսրայէլացիների դէմ: 24 Իսրայէլացիները նրանց կոտորեցին եւ տիրեցին նրա երկրին Առնոնից մինչեւ Յաբոկ, մինչեւ Ամմոնացիների երկիրը, որովհետեւ Յազերը ամոնացիների սահմանն էր: 25 Իսրայէլացիները գրաւեցին այդ շրջանի բոլոր քաղաքները եւ բնակուեցին ամորհացիների բոլոր քաղաքներում՝ Եսեբոնում ու նրա ամբողջ շրջակայքում, 26 որովհետեւ Եսեբոնը ամորհացիների արքայ Սեհոնի քաղաքն էր: Նա անցեալում պատերազմ էր մղել մովաբացիների արքայի դէմ ու գրաւել նրա ամբողջ երկիրը Արոյերից մինչեւ Առնոն: 27 Դրա համար բոլոր վիպերգակներն ասում են.

«Եկէ՛ք Եսեբոն,
որ կառուցուի ու բարեկարգուի Սեհոնի քաղաքը,
28 քանզի հուր ելաւ Եսեբոնից,
եւ բոց՝ Սեհոնի քաղաքից, այրեց մինչեւ Մովաբ
եւ լափեց Առնոնի արձանները:
29 Վա՜յ քեզ, Մովա՛բ,
կորա՛ր, Քամոսի՛ ժողովուրդ:
Նրանց այրերը փախուստի մատնուեցին,
նրանց դուստրերը գերի ընկան
ամորհացիների թագաւորի ձեռքը:
30 Նրանց սերունդները թող կոտորուեն Եսեբոնից մինչեւ Դեբոն,
եւ նրանց կանայք կրակով բորբոքուեցին
Մովաբի վրայ»:

31 Իսրայէլացիները բնակուեցին ամորհացիների բոլոր քաղաքներում: 32 Մովսէսը մարդ ուղարկեց, որ հետախուզեն Յազերը: Իսրայէլացիները գրաւեցին այն ու նրա աւանները եւ դուրս քշեցին այնտեղ բնակուող ամորհացիներին:

33 Այնտեղից իսրայէլացիները դուրս եկան ու գնացին Բասան տանող ճանապարհով: Եդրինայում նրանց դէմ պատերազմի ելաւ Բասանի թագաւոր Օգը իր ամբողջ ժողովրդով: 34 Տէրն ասաց Մովսէսին. «Մի՛ վախեցիր նրանից, որովհետեւ քո ձեռքն եմ մատնել նրան, նրա ամբողջ ժողովրդին ու նրա ամբողջ երկիրը: Նրա հետ կը վարուես այնպէս, ինչպէս վարուեցիր Եսեբոնում բնակուող ամորհացիների արքայ Սեհոնի հետ»: 35 Եւ իսրայէլացիները հարուածեցին նրան, նրա որդիներին ու նրա ամբողջ ժողովրդին, մինչեւ որ նրանցից ոչ մի մարդ կենդանի չմնաց, եւ իրենք սեփականացրին նրանց երկիրը:

ՄՈՎԱԲԻ ԹԱԳԱՒՈՐԸ ԲԱՂԱԱՄԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ

22 Իսրայէլացիներն այնտեղից դուրս գալով՝ բանակատեղի դրեցին Մովաբի արեւմտեան մասում, Յորդանան գետի մօտ, Երիքովի դիմաց:

2 Սեպփորի որդի Բաղակը տեսաւ այն ամէնը, ինչ իսրայէլացիներն արել էին ամորհացիներին: 3 Մովաբացիները խիստ վախեցան այդ ժողովրդից, որովհետեւ նրանք շատ էին: Մովաբացիները վախեցան իսրայէլացիներից, 4 ուստի նրանք ասացին Մադիամի ծերակոյտին. «Հիմա իսրայէլացիները մեր շրջակայքում գտնուող ամէն ինչ լափում են այնպէս, ինչպէս արջառն է խժռում դաշտի դալար խոտը»: Սեպփորի որդի Բաղակն այդ ժամանակ մովաբացիների արքան էր: 5 Նա պատգամաւորներ ուղարկեց Բէորի որդի Բաղաամի մօտ, Փաթուրն քաղաքը, իր ազգակիցների երկիրը, գետեզերքի մօտ, որպէսզի

կանչի նրան ու ասի. «Ահա մի ժողովուրդ է դուրս ելել Եգիպտոսից, ծածկել երկրի երեսը եւ իջեւանել ինձ մօտ: 6 Արդ, արի՛ ինձ համար անիծի՛ր այս ժողովրդին, որովհետեւ ինձանից ուժեղ է նա: Թերեւս կարողանանք կոտորել նրանցից շատերին ու հալածել մեր երկրից: Գիտեմ, որ այն, ինչ դու օրհնում ես, օրհնուած է, եւ ինչ դու անիծում ես՝ անիծուած է»:

7 Մովաբացիների ծերակոյտն ու Մադիամի ծերակոյտը գնացին: Նրանց ձեռքում կար բախտագուշակութիւնների համար տրուելիք վարձը: Նրանք եկան Բաղաամի մօտ եւ յայտնեցին Բաղակի պատգամները: 8 Բաղաամն ասաց նրանց. «Այս գիշեր մնացէ՛ք այստեղ, եւ ես պատասխան կը տամ այն բաների մասին, ինչ Տէրը կը յայտնի ինձ»: Եւ մովաբացի իշխանները գիշերեցին Բաղաամի մօտ: 9 Աստուած եկաւ Բաղաամի մօտ եւ նրան ասաց. «Ովքե՞ր են այս մարդիկ, որ քեզ մօտ են»: 10 Բաղաամը պատասխանեց Աստծուն. «Մովաբացիների արքայ Սեպփորի որդի Բաղակն է ուղարկել նրանց ինձ մօտ եւ ասել. 11 "Ահա մի ժողովուրդ է դուրս ելել Եգիպտոսից, ծածկել երկրի երեսը եւ իջեւանել ինձ մօտ: Արդ, արի՛ ինձ համար անիծի՛ր նրանց, որպէսզի թերեւս կարողանամ նրանց կոտորելով՝ հալածել իմ երկրից"»: 12 Աստուած ասաց Բաղաամին. «Մի՛ գնա նրանց հետ եւ մի՛ անիծիր ժողովրդին, որովհետեւ նա օրհնեալ է»: 13 Առաւօտեան վեր կենալով՝ Բաղաամն ասաց Բաղակի իշխաններին. «Վերադարձէ՛ք ձեր տիրոջ մօտ, որովհետեւ Աստուած թոյլ չի տալիս ինձ, որ գամ ձեզ հետ»: 14 Մովաբացի իշխանները, վեր կենալով, եկան Բաղակի մօտ ու ասացին. «Բաղաամը չկամեցաւ գալ մեզ հետ»:

15 Բաղակը սրանցից էլ աւելի շատ եւ պատուաւոր իշխաններ ուղարկեց: 16 Բաղաամի մօտ գալով՝ նրանք ասացին. «Այսպէս է ասում Սեպփորի որդի Բաղակը. "Աղաչում եմ քեզ, շտապ ինձ մօտ արի՛, 17 որովհետեւ մեծապէս պատուելու եմ քեզ, եւ ինչ էլ ասես, կ'անեմ քեզ համար: Արդ, արի՛ ինձ համար անիծի՛ր այս ժողովրդին"»: 18 Պատասխան տալով՝ Բաղաամն ասաց Բաղակի իշխաններին. «Եթէ Բաղակն ինձ անգամ իր տնով լիքը արծաթ ու ոսկի տայ, ես չեմ կարող ոտնահարել Տէր Աստծու խօսքը, Տիրոջը հակառակ մեծ կամ փոքր բան կատարել: 19 Արդ, այս գիշեր մնացէ՛ք այստեղ, որպէսզի իմանամ, թէ Տէրը էլ ինչ կ'ասի ինձ»: 20 Գիշերն Աստուած եկաւ Բաղաամի մօտ եւ ասաց նրան. «Քանի որ քեզ կանչելու համար են եկել այս մարդիկ, վեր կաց գնա՛ նրանց հետ, բայց կ'անես այն, ինչ ես կ'ասեմ քեզ»:

ԲԱՂԱԱՄԻ ԷՇԸ ԽՕՍՈՒՄ Է

21 Բաղաամն առաւօտեան վեր կենալով՝ համբուրեց իր էշը եւ գնաց մովաբացի իշխանների հետ: 22 Աստուած խիստ բարկացաւ, որ նա գնում է: Աստծու հրեշտակը եկաւ, կանգնեց նրա առաջ որպէս հակառակորդ: Բաղաամը նստել էր իր էշի վրայ, եւ նրա հետ էին իր երկու ծառաները: 23 Երբ էշը տեսաւ, որ Աստծու հրեշտակը մերկացրած սուրը ձեռքին փակել է ճանապարհը, մի կողմ քաշուեց ճանապարհից եւ գնում էր դաշտի միջով: Բաղաամը գաւազանով հարուածեց էշին, որպէսզի ուղղի նրան դէպի ճանապարհը: 24 Աստծու հրեշտակը կանգնեց այգիների առուամիջին: Այգիները այս ու այն կողմից ցանկապատեր ունէին: 25 Էշը տեսնելով Աստծու հրեշտակին՝ նեղուեց պատի կողմը եւ ճզմեց Բաղաամի ոտքը: Նա սկսեց աւելի սաստիկ հարուածել էշին: 26 Աստծու հրեշտակը դարձեալ գնաց կանգնեց նեղ տեղում, որտեղից էշն այլեւս չէր կարող աջ կամ ձախ թեքուել: 27 Էշը տեսնելով Աստծու հրեշտակին՝ կքեց Բաղաամի տակ: Բաղաամը բարկացաւ եւ էշին հարուածեց գաւազանով: 28 Աստուած բացեց էշի լեզուն, եւ էշն ասաց Բաղաամին. «Քեզ ի՞նչ եմ արել, որ երրորդ անգամ հարուածում ես ինձ»: 29 Բաղաամն էշին ասաց. «Որովհետեւ ինձ ծաղրուածանակի ենթարկեցիր: Եթէ սուր լինէր ձեռքիս, կը խոցոտէի քեզ»: 30 Էշն ասաց Բաղաամին. «Ես այն էշը չե՞մ, որի վրայ

‡Եբրայերէնում՝ իսրայէլացիները:

դու հեծել ես քո մանկութեան օրից մինչեւ այսօր: Ես երբեւէ ծուլացե՞լ եմ ու քեզ այսպէս ծառայել»: 31 Նա պատասխանեց՝ ո՛չ: Աստուած բացեց Բաղաամի աչքերը, եւ նա տեսաւ, որ Տիրոջ հրեշտակը մերկացրած սուրը ձեռքին կանգնած է ճանապարհի վրայ: Նա երեսնիվայր ընկնելով՝ երկրպագեց: 32 Աստծու հրեշտակն ասաց նրան. «Ինչո՞ւ երրորդ անգամ հարուածեցիր քո էշին: Ես, ահա, քեզ խանգարելու եմ, որովհետեւ դու ուղիղ ճանապարհի վրայ կանգնած չես: 33 Էշդ ինձ տեսաւ ու երրորդ անգամ լինելով մի կողմ քաշուեց, եւ եթէ ինձնից չխուսափէր, հիմա ես քեզ սպանած կը լինէի, իսկ դրան կը թողնէի կենդանի»: 34 Բաղաամն ասաց Տիրոջ հրեշտակին. «Մեղք եմ գործել, որովհետեւ չգիտէի, թէ դու էիր ճանապարհս փակողը: Արդ, եթէ քեզ ցանկալի չէ գնալս, կը վերադառնամ»: 35 Աստծու հրեշտակն ասաց Բաղաամին. «Գնա՛ այս մարդկանց հետ, բայց զգո՛յշ եղիր եւ խօսի՛ր այն, ինչ ասելու եմ քեզ»: Բաղաամը գնաց Բաղակի իշխանների հետ:

ԲԱՂԱԿԻ ԵՒ ԲԱՂԱԱՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

36 Բաղակը լսելով, որ գալիս է Բաղաամը, ընդառաջ գնաց նրան Մովաբացիների քաղաքում, որը Առնոնի՝ Մովաբացիների սահմանի մօտ է: 37 Բաղակն ասաց Բաղաամին. «Մարդ չե՞մ ուղարկել, որ քեզ կանչեն ինձ մօտ: Ինչո՞ւ չէիր գալիս ինձ մօտ. կարծում էիր, թէ ի վիճակի չէ՞ի քեզ պատուելու: 38 Բաղաամը պատասխանեց Բաղակին. «Ահա եկել եմ քեզ մօտ: Արդ, կարո՞ղ եմ մի բան ասել: Բայց կ'ասեմ այն, ինչ Աստուած կը դնի իմ բերանը»: 39 Բաղաամը գնաց Բաղակի հետ եւ հասաւ ամարանոցային քաղաքը† : 40 Բաղակը արջառ ու ոչխար մորթեց եւ ուղարկեց Բաղաամին ու այն իշխաններին, որ նրա հետ էին:

41 Երբ առաւօտ եղաւ, Բաղակն իր հետ առնելով Բաղաամին՝ նրան հանեց Բահաղի սեան‡ մօտ եւ այնտեղից նրան ցոյց տուեց իսրայէլացի ժողովրդի մի մասը:

ԲԱՂԱԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

23 Բաղաամն ասաց Բաղակին. «Այստեղ ինձ համար եօթը բագին կառուցի՛ր եւ այստեղ ինձ համար եօթը զուարակ ու եօթը խոյ պատրաստի՛ր»: 2 Բաղակն արեց այնպէս, ինչպէս իրեն ասել էր Բաղաամը. նա մէկական զուարակ ու խոյ ողջակէզ արեց ամէն մի բագինի վրայ: 3 Բաղաամն ասաց Բաղակին. «Դու կանգնի՛ր քո զոհի մօտ, իսկ ես գնամ. գուցէ Աստուած ընդառաջ գալով՝ երեւայ ինձ: Այն, ինչ նա ցոյց կը տայ ինձ, կը հաղորդեմ քեզ»: Բաղակը կանգնեց իր մատուցած զոհի մօտ: Բաղաամը գնաց Աստծուն հարցում անելու: 4 Նա ուղիղ առաջ էր գնում: Աստուած երեւաց Բաղաամին, եւ Բաղաամն ասաց նրան. «Եօթը բագին պատրաստեցի եւ ամէն մի բագինի վրայ մէկական զուարակ ու խոյ ողջակիզեցի»: 5 Աստուած Բաղաամի բերանը դրեց այս խօսքերը. «Վերադարձի՛ր Բաղակի մօտ եւ յայտնի՛ր նրան այն, ինչ ասացի»: 6 Բաղաամը վերադարձաւ Բաղակի մօտ, որը կանգնած էր իր ողջակէզների մօտ: Այնտեղ էին նաեւ մովաբացի բոլոր իշխանները: 7 Աստծու հոգին իջաւ Բաղաամի վրայ, եւ նա առակի ձեւով ասաց.

«Մովաբացիների Բաղակ արքան ինձ կանչեց Միջագետքից՝
Արեւելքի լեռներից, եւ ասաց.
"Արի նզովի՛ր Յակոբին ինձ համար,
նզովի՛ր նաեւ Իսրայէլին ինձ համար"»:
8 Բայց ես ինչպէ՞ս նզովեմ նրան,
որին Տէրը չի նզովում,
կամ ի՞նչն անիծեմ,
որ Աստուած չի անիծում:
9 Լեռներից եմ տեսնում նրան,
բլուրների բարձունքից եմ նայում նրան:
Ահա կայ մի ժողովուրդ,
որ առանձին պիտի բնակուի,
ազգերի մէջ չպիտի դասուի:
10 Ո՞վ է ճշտել Յակոբի սերնդի թիւը,

†Եբրայերէն՝ Կարիաթ-Յուսոթ:
‡Եբրայերէնում՝ Բահաղի սեան փոխարէն կայ բարձունք բառը:

ո՞վ է հաշուել Իսրայէլի ցեղերը: Երա՞նի թէ ես մեռնէի այդ արդար մարդկանց հետ,
եւ իմ յետնորդները լինէին նրա յետնորդների նման»:
11 Բաղակն ասաց Բաղաամին. «Այդ ի՞նչ արեցիր: Ես քեզ կանչեցի իմ թշնամիներին անիծելու համար, իսկ դու օրհնելով օրհնեցիր նրանց»: 12 Բաղաամն ասաց Բաղակին. «Մի՞թէ քեզ չասացի, թէ ինչ որ Աստուած իմ բերանը դնի, այն էլ կը հաղորդեմ քեզ»:

ԲԱՂԱԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

13 Բաղակն ասաց նրան. «Դարձեալ ինձ հետ արի՛ մի ուրիշ տեղ, որտեղից իսրայէլացիներին ամբողջութեամբ չես տեսնի, այլ կը տեսնես նրանց մի մասը: Այնտեղից նրանց անիծի՛ր ինձ համար»: 14 Նա վերցրեց նրան ու գնաց բարձրանիստ մի ագարակ, Կոփածոյ լերան գագաթը, այնտեղ կառուցեց եօթը բագին եւ ամէն մի բագինի վրայ զոհեց մէկական զուարակ ու խոյ: 15 Բաղաամն ասաց Բաղակին. «Դու կանգնի՛ր քո զոհի մօտ, իսկ ես գնամ Աստծու մօտ հարցում անելու»: 16 Աստուած ընդառաջ եկաւ Բաղաամին, խօսք դրեց նրա բերանը՝ ասելով. «Վերադարձի՛ր Բաղակի մօտ եւ յայտնի՛ր ասելիքս»: 17 Բաղաամը վերադարձաւ Բաղակի մօտ, որը կանգնած էր իր ողջակէզի մօտ: Նրա հետ էին նաեւ մովաբացի բոլոր իշխանները: Բաղակը հարցրեց նրան. «Ի՞նչ խօսեց Տէրը»: 18 Բաղաամն առակի ձեւով պատասխանեց նրան.

«Վե՛ր կաց, Բաղա՛ք, եւ լսի՛ր,
իբրեւ վկայ ակա՛նջ դիր, ո՛վ Սեպփորի որդի:
19 Աստուած մարդու նման չէ, որ արթնանայ,
եւ ոչ էլ մարդու որդու նման, որ սպառնայ:
Դու ասացիր, թէ չի անի,
կ'ասի, բայց չի իրականացնի† :
20 Արդ, ես հրաման եմ ստացել, որ օրհնեմ,
ուրեմն կ'օրհնեմ եւ չեմ հրաժարուի դրանից:
21 Յակոբի սերունդները թող նեղութիւն չկրեն,
Իսրայէլի յետնորդները յոգնութիւն չզգան:
Նրանց Տէր Աստուածը իրենց հետ է,
իշխանների փառքն ու պատիւը՝ նրանց մէջ:
22 Աստուա՛ծ նրանց հանեց Եգիպտոսից,
եւ նա միեղջերուի նման իր վրայ փառք է կրում:
23 Յակոբի յետնորդների մէջ կախարդութիւն անող չկայ,
ոչ էլ Իսրայէլի յետնորդների մէջ՝ մոգութիւն:
Ժամանակին թող յայտնուի Յակոբի ու Իսրայէլի սերունդներին,
ինչ որ կատարելու է Աստուած:
24 Ահա այդ ժողովուրդն իբրեւ առիւծի կորիւն
ոտքի պէտք է ելնի
եւ իբրեւ առիւծ պէտք է պարծենայ:
Նա չի քնելու, մինչեւ չլափի իր զոհին,
չխմի խոցոտուածների արիւնը»:
25 Բաղակն ասաց Բաղաամին. «Ինձ համար նրան անիծելով մի՛ անիծիր, եւ ոչ էլ օրհնելով օրհնիր նրան»: 26 Պատասխան տալով՝ Բաղաամն ասաց Բաղակին. «Քեզ հետ չխօսեցի՞, չասացի՞, թէ՝ "Ինչ որ Աստուած կ'ասի ինձ, այն էլ կ'անեմ"»:

ԲԱՂԱԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

27 Բաղակն ասաց Բաղաամին. «Արի՛ քեզ տանեմ մի այլ տեղ, գուցէ դա հաճոյ լինի Աստծուն, եւ ինձ համար դու այնտեղից անիծես իսրայէլացիներին»: 28 Բաղակը Բաղաամին տարաւ կատարը Փոգոր լերան, որը դէպի անապատ է ձգւում: 29 Բաղաամն ասաց Բաղակին. «Ինձ համար այստեղ եւս եօթը բագին կառուցի՛ր եւ ինձ համար այստեղ եօթը զուարակ ու եօթը խոյ պատրաստի՛ր»: 30 Բաղակն արեց այնպէս, ինչպէս նրան ասել էր Բաղաամը. նա մէկական զուարակ ու խոյ ողջակիզեց բագինների վրայ:

†Եբրայերէն՝ Նա ասաց. բայց չպիտի՞ կատարի, խոստացաւ, բայց խօսքին տէր չպիտի՞ լինի:

24 Բաղաամը տեսնելով, որ Տիրոջը
հաճելի է Իսրայէլին օրհնելը, այլեւս
հմայութիւնների չդիմեց, ինչպէս սովոր
էր, այլ երեսը դարձրեց դէպի անա-
պատ: 2 Բաղաամն իր աչքերը բարձ-
րացնելով՝ տեսաւ, որ Իսրայէլացիները
բանակատեղի են դրել ըստ ցեղերի:
Աստծու հոգին իջաւ նրա վրայ, 3 եւ նա
առակի ձեւով ասաց.
«Բէորի որդի Բաղաամն ասում է.
4 "Ես՝ ճշմարտատես այրս,
որ Աստծու տեսիլը տեսաւ քնի մէջ
իր բաց աչքերով:
5 Ինչքա՜ն գեղեցիկ են քո տները,
Յակո՛բ,
եւ քո վրանները, Իսրայէ՛լ:
6 Դրանք նման են հովանի անող
անտառների,
գետերի ափին գտնուող բուրաստան-
ների,
Տիրոջ կանգնեցրած վրանների,
վազող ջրերի ափին գտնուող մայրի-
ների:
7 Այդ սերնդից պիտի ծնուի մի մարդ,
որ պիտի տիրի բազում ազգերի:
Նրա թագաւորութիւնը Գոգի[†]
թագաւորութիւնից հզօր պիտի լինի,
նրա թագաւորութիւնը պիտի բար-
գաւաճի:
8 Աստուած ժողովրդին առաջնորդեց
Եգիպտոսից,
եւ նա միեղջերուի նման իր վրայ
փառք է կրում:
Նա պիտի լափի իր թշնամի
ժողովուրդներին,
նրանց գիրութիւնը պիտի հիւծի
եւ իր նետերով նետահար պիտի անի
իր թշնամիներին:
9 Նա փռուած պիտի հանգստանայ
նման առիւծի,
նման առիւծի կորիւնի:
Ո՞վ կը համարձակուի զարթնեցնել
նրան:
Իսրայէ՛լ, թող օրհնուեն քեզ
օրհնողները,
եւ անիծուեն քեզ անիծողները"»:
10 Բաղակը բարկացաւ Բաղաամի
վրայ եւ ափերն իրար զարկեց: Բաղակն
ասաց Բաղաամին. «Ես քեզ կանչեցի,
որպէսզի անիծես իմ թշնամիներին, իսկ
դու, ահա, օրհնելով օրհնեցիր նրանց
երեք անգամ: 11 Արդ, թող ու փախի՛ր
քո տեղը: Ուզում էի պատուել քեզ, բայց
Տէրը զրկեց քեզ փառքից»: 12 Բա-
ղաամն ասաց Բաղակին. «Մի՞թէ ինձ
մօտ ուղարկած քո բանագնացներին
չասացի. 13 "Եթէ Բաղակն ինձ իր տնով
լիքը արծաթ ու ոսկի էլ տայ, ես չեմ
կարող ոտնահարել Տիրոջ խօսքը եւ ոչ
էլ կարող եմ ինձնից լաւ կամ վատ
դարձնել այն: Ինչ որ ասի Աստուած,
այն էլ խօսելու եմ":

ԲԱՂԱԱՄԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

14 Իսկ հիմա ահա գնում եմ իմ տեղը:
Արի՛ քեզ յայտնեմ, թէ ինչ է անելու
այդ ժողովուրդն առաջիկայում քո
ժողովրդին»: 15 Եւ նա առակի ձեւով
ասաց.
«Խօսում է Բէորի որդի Բաղաամը՝
ճշմարտատես այն մարդը,
16 որ լսել է Աստծու պատգամները
եւ հմուտ է Բարձրեալի գիտութեանը,
քնի մէջ բաց աչքերով է տեսել
Աստծու տեսիլը:
17 Ես ցոյց եմ տալու նրան, բայց ոչ
հիմա,
երանելի եմ դարձնելու նրան, բայց ոչ
մօտ ժամանակում:
Ծագելու է Յակոբի աստղը,
մի մարդ է բարձրանալու
իսրայէլացիներից
եւ կոտորելու է Մովաբի իշխան-
ներին,
գերեվարելու է Սէթի բոլոր յետ-
նորդներին:
18 Նա պիտի ժառանգի Եդոմացիների
երկիրը,
որ պատկանում է իր թշնամի
Եսաւին:
Եւ այդ ամէնը իսրայէլացիները պի-
տի իրականացնեն իրենց ուժով:
19 Յակոբի ցեղից պիտի կանգնի այդ
այրը
եւ պիտի կոտորի այդ քաղաքից
փրկուածներին»:
20 Ամաղէկացիներին տեսնելով՝ նա
առակի կարգով ասաց. «Ամաղէկա-
ցիները ազգերի գլուխն են,

[†]Եբրայերէնում՝ Ագագի:

բայց կորստեան պիտի մատնուի
նրանց սերունդը»:
21 Կինեցիներին տեսնելով՝ նա առա-
կի կարգով ասաց.
«Ամուր է քո բնակավայրը,
բայց եթէ քարանձաւներում էլ դնես
քո բոյնը,
22 եթէ անգամ Բէորի հմտութեամբ
կառուցուի ձեր բոյնը,
միեւնոյնն է, ասորեստանցիները
գերեվարելու են ձեզ»:
23[†] Ապա առակի կարգով ասաց.
Ո՞վ ողջ կը մնայ, եթէ Աստուած այս
բաներն անի:
24 Կիտացիները կը գան ու կը չարչարեն
ասորեստանցիներին ու եբրայեցի-
ներին,
բայց իրենք էլ գլխովին կը կորչեն»:
25 Եւ վեր կենալով՝ Բաղաամը վերա-
դարձաւ, գնաց իր տեղը, իսկ Բաղակն էլ
գնաց իր երկիրը:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

25 Իսրայէլացիները բանակատեղի
դրեցին Սատտիմում եւ պղծուեցին այն-
տեղ մովաբացիների դուստրերի հետ
պոռնկանալով: 2 Մովաբացի կանայք
իսրայէլացիներին հրաւիրեցին իրենց
կուռքերի պատուին զոհ մատուցելու
ծէսին: Իսրայէլացիները կերան մովա-
բացիների մատուցած զոհերից ու
երկրպագեցին նրանց կուռքերին: 3 Իս-
րայէլացիները յարեցին Բէլփեգորին,
որի համար Տէրը խիստ բարկացաւ
իսրայէլացիների վրայ: 4 Տէրն ասաց
Մովսէսին. «Վերցրո՛ւ քո ժողովրդի
բոլոր իշխաններին եւ կախի՛ր նրանց
Տիրոջ առջեւ՝ արեգակի դէմ, որպէսզի
Տիրոջ զայրոյթը վերանայ իսրայէլա-
ցիների վրայից»: 5 Մովսէսն ասաց
իսրայէլացիներին. «Ամէն մէկը թող
կոտորի Բէլփեգորին յարած իր հարա-
զատին»:
6 Մի անգամ մի իսրայէլացի մարդ
Մովսէսի ու իսրայէլացի ամբողջ ժո-
ղովրդի ներկայութեամբ իր եղբօրը
բերեց մի մադիանացի կնոջ մօտ:
Իսրայէլացիները լաց էին լինում
վկայութեան խորանի դռանը: 7 Ահարոն
քահանայի որդի Եղիազարի որդի Փե-
նեէսը, տեսնելով դա, վեր կացաւ
ժողովրդի միջից եւ իր ձեռքն առնելով
տէգը՝ 8 այդ տղամարդու յետեւից մտաւ
անառակ կնոջ սենեակն ու խոցեց
երկուսին էլ՝ իսրայէլացի տղամարդուն
ու այդ կնոջը՝ իր արգանդից: Այդ
ժամանակ էլ դադարեց իսրայէլացիների
կոտորածը: 9 Այդ կոտորածից քսանչորս
հազար մարդ մեռաւ:
10 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 11 «Փենեէսը՝ Ահարոն քահա-
նայի որդի Եղիազարի որդին, վերացրեց
իսրայէլացիների նկատմամբ ունեցած
իմ զայրոյթը, քանի որ նա նրանց
նկատմամբ նոյնքան անհաշտ էր, որքան
ես: Եւ ես իսրայէլացիներին իմ բար-
կութեամբ չոչնչացրի: 12 Եւ հիմա այս-
պէս կ'ասես. "Ես, ահա, նրա հետ խա-
ղաղութեան ուխտ եմ կնքում: 13 Նրան
եւ նրա յետնորդներին յաւիտենական
քահանայութիւն եմ խոստանում ի
դիմաց այն բանի, որ նա իր Աստծու
փոխարէն վրէժխնդիր լինելով՝ քաւեց
իսրայէլացիների մեղքերը"»: 14 Մա-
դիանացի կնոջ հետ սպանուած իսրա-
յէլացի տղամարդու անունը Զամբրի էր:
Նա Սաղոմի որդին էր՝ Շմաւոնի յետ-
նորդներին պատկանող ընտանիքի իշ-
խանը, 15 իսկ սպանուած մադիանացի
կնոջ անունը Քազբի էր: Նա մադիա-
նացի նահապետական ընտանիքից
Ամոթի ցեղի Սուր իշխանի դուստրն էր:
16 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 17 «Խօսի՛ր իսրայէլացիների հետ
եւ ասա՛. "Դարձէ՛ք մադիանացիների
թշնամին, հարուածեցէ՛ք նրանց, 18 ո-
րովհետեւ նրանք ձեր նենգ թշնամիներն
են. նրանք ձեզ դաւեցին Փոգորի
պատճառով, նաեւ մադիանացի իշխանի
դուստր Քազբիի՝ իրենց քրոջ պատ-
ճառով, որն սպանուեց Փոգորի համար
սկսուած կոտորածների օրը"»:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

26 Այդ կոտորածից յետոյ Տէրը խո-
սեց Մովսէսի ու Եղիազար քահանայի
հետ եւ ասաց. 2 «Հաշուառման

[†]Եօթանասնից բնագիրը համարի սկզբում ունի՝ Օգին տեսնելով:

ենթարկեցէ՛ք իսրայէլացիների քսան տարեկանից բարձր մարդկանց ըստ իրենց նահապետների ընտանիքների, բոլոր նրանց, ովքեր ընդունակ են պատերազմելու»: 3 Մովսէսն ու Եղիազար քահանան Մովաբացիների երկրի Ռաբոթ շրջանում, Յորդանան գետի մօտ, Երիքովի դիմաց ասացին իսրայէլացիներին. 4 «Դուք՝ Եգիպտոսից ելած իսրայէլացիներդ, հաշուառման ենթարկեցէ՛ք քսան տարեկանից բարձր մարդկանց, ինչպէս Տէրը հրամայել է Մովսէսին: 5 Հաշուառման ենթարկուեցին Ռուբէնը՝ Իսրայէլի անդրանիկ որդին, Ռուբէնի որդիներ Ենոքը եւ Ենոքի ընտանիքը, Փալլուսը եւ Փալլուսի ընտանիքը, 6 Ասրոմը եւ Ասրոմի ընտանիքը, Քարմին եւ Քարմիի ընտանիքը: 7 Սա Ռուբէնի տոհմն է. նրանց թիւը քառասուներեք հազար եօթը հարիւր երեսուն է: 8 Փալլուսի որդի Եղիաբը, Եղիաբի որդիներ Յամուէլը, Դաթանը եւ Աբիրոնը: 9 Սրանք իսրայէլացիների մէջ երեւելի մարդիկ էին. սրանք են, որ Տիրոջ դէմ ապստամբել էին, երբ Կորխի յետնորդների հետ յարձակուել էին Մովսէսի ու Ահարոնի վրայ, 10 եւ երկիրը բացելով իր երախը՝ կուլ էր տուել նրանց ու Կորխին իր ժողովրդի հետ: Կրակը լափել էր երկու հարիւր յիսուն հոգի, որպէսզի միւսների համար դաս դաս լինի: Կորխի որդիները, սակայն, չմեռան:

11 Հաշուառման ենթարկուեցին Շմաւոնի որդիները եւ Շմաւոնի որդիների տոհմերը. 12 Յամուէլը եւ Յամուէլի շառաւիղը, Յամինը եւ Յամինի շառաւիղը, Յաքինը եւ Յաքինի շառաւիղը, 13 Զարան եւ Զարայի շառաւիղը, Մաւուլը եւ Մաւուլի շառաւիղը: 14† Սրանք են Շմաւոնի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին քսաներկու հազար երեք հարիւր հոգի:

19 Հաշուառման ենթարկուեցին Յուդայի որդիները՝ Էրը, Օնանը, Սելոմը, Փարէսը եւ Զարան: Էրն ու Օնանը մեռան Քանանացիների երկրում: 20 Յուդայի որդիներն ու նրանց շառաւիղներն են՝ Սելոմը եւ Սելոմի շառաւիղը, Փարէսը եւ Փարէսի շառաւիղը, Զարան եւ Զարայի շառաւիղը: 21 Փարէսի որդիներ Ասրոնը եւ Ասրոնի շառաւիղը, Յամուէլը եւ Յամուէլի շառաւիղը: 22 Սրանք են Յուդայի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին եօթանասունվեց հազար հինգ հարիւր հոգի:

23 Հաշուառման ենթարկուեցին Իսաքարի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Թողան եւ Թողայի շառաւիղը, Փուան եւ Փուայի շառաւիղը, Յասուբը եւ Յասուբի շառաւիղը, Ամրանը եւ Ամրանի շառաւիղը: 25 Սրանք են Իսաքարի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին վաթսունչորս հազար երկու հարիւր հոգի:

26 Այնուհետեւ՝ Զաբուղոնի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Սարեդը եւ Սարեդի շառաւիղը, Ալլոնը եւ Ալլոնի շառաւիղը, Ադէլը եւ Ադէլի շառաւիղը: 27 Սրանք են Զաբուղոնի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին վաթսուն հազար հինգ հարիւր հոգի:

15 Այնուհետեւ՝ Գադի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Սափոնը եւ Սափոնի շառաւիղը, Անգին եւ Անգիի շառաւիղը, Սունին եւ Սունիի շառաւիղը, 16 Ազենին եւ Ազենիի շառաւիղը, Ադդին եւ Ադդիի շառաւիղը, 17 Արուադին եւ Արուադիի շառաւիղը, Արիէլը եւ Արիէլի շառաւիղը: 18 Սրանք են Գադի որդիների տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին քառասունչորս հազար հինգ հարիւր հոգի:

44 Այնուհետեւ՝ Ասերի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Յամինը եւ Յամինի շառաւիղը, Յեսուն եւ Յեսուի շառաւիղը, Բարիան եւ Բարիայի շառաւիղը, 45 Քոբէրը եւ Քոբէրի շառաւիղը, Մելքիէլը եւ Մելքիէլի շառաւիղը: 46 Ասերի դստեր անունն էր Սարա: 47 Սրանք են Ասերի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին քառասուներեք հազար վեց հարիւր հոգի:

28 Այնուհետեւ՝ Յովսէփի որդիները եւ նրանց շառաւիղները՝ Մանասէն եւ Եփրեմը: 29 Այնուհետեւ՝ Մանասէի որդիներ Մաքիրը եւ Մաքիրի շառաւիղը:

†Բագրատունեան հրատարակութիւնը այս համարներից յետոյ բնագիրը շարունակում է ըստ Յակոբ-Իսրայէլի որդիների հերթականութեան:

Մաքիրը ծնեց Գաղաադին: Գաղաադը եւ Գաղաադի շառաւիղը:

30 Այնուհետեւ՝ Գաղաադի որդիներ Աքիեզերը եւ Աքիեզերի շառաւիղը, Քեղէգը եւ Քեղէգի շառաւիղը, 31 Եսրիէլը եւ Եսրիէլի շառաւիղը, Սիւքէմը եւ Սիւքէմի շառաւիղը, 32 Սիմային եւ Սիմայիի շառաւիղը, Ոփերը եւ Ոփերի շառաւիղը: 33 Ոփերի որդի Սաղպաադը արու զաւակներ չունեցաւ, այլ՝ դուստրեր: Սաղպաադի դուստրերի անուններն են՝ Մաաղա, Նուա, Էգղա, Մեղքա եւ Թերսա: 34 Սրանք են Մանասէի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին յիսուներկու հազար եօթը հարիւր հոգի:

35 Այնուհետեւ՝ Եփրեմի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Սուտաղան եւ Սուտաղայի շառաւիղը, Տանաքը եւ Տանաքի շառաւիղը: 36 Սուտաղայի որդի Եդենը եւ Եդենի շառաւիղը: 37 Սրանք են Եփրեմի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին երեսուներկու հազար հինգ հարիւր հոգի: Ահա սրանք են Յովսէփի որդիներն ու նրանց շառաւիղները:

38 Այնուհետեւ՝ Բենիամինի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Բալէն եւ Բալէի շառաւիղը, Ասիբերը եւ Ասիբերի շառաւիղը, Յաքիրանը եւ Յաքիրանի շառաւիղը, 39 Սափանը եւ Սափանի շառաւիղը: 40 Բալէի որդիներն են՝ Ադարը, Նոյեմանը եւ Նոյեմանի շառաւիղը: 41 Սրանք են Բենիամինի որդիներն ու նրանց շառաւիղները, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին երեսուն-հինգ հազար հինգ հարիւր հոգի: 42 Այնուհետեւ՝ Դանի որդիներն ըստ իրենց շառաւիղների. Սամին եւ Սամիի շառաւիղը: Սրանք են Դանի տոհմերը ըստ իրենց շառաւիղների: 43 Սամիի տոհմերը, ըստ հաշուառման, կազմեցին վաթսունչորս հազար վեց հարիւր հոգի: 48 Այնուհետեւ՝ Նեփթաղիմի որդիներն ու նրանց շառաւիղները՝ Ասիէլը եւ Ասիէլի շառաւիղը, Գօնին ու Գօնիի շառաւիղը, 49 Յեսերը եւ Յեսերի շառաւիղը, Սելլեմը եւ Սելլեմի շառաւիղը: 50 Սրանք են Նեփթաղիմի ցեղի տոհմերը, որոնք, ըստ հաշուառման, կազմեցին քառասուն հազար երեք հարիւր հոգի:

51 Իսրայէլացիների ընդհանուր թիւը, այսպիսով, եղաւ վեց հարիւր մէկ հազար եօթը հարիւր երեսուն:

52 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 53 «Ըստ մարդկանց թուի սրանց միջեւ թող բաժանուի երկիրը որպէս սեփականութիւն: 54 Նրանց քանակին համապատասխան պէտք է աւելանայ նրանց բաժինը եւ, սակաւութեան համեմատ, նուազի նրանց բաժինը: Թող իւրաքանչիւրին ժառանգութեան բաժին տրուի ըստ հաշուառման: 55 Երկիրը թող բաժանուի վիճակ գցելով. ըստ անունների, ըստ իրենց նահապետների ցեղերի թող բաժին ստանան: 56 Բազմանդամ ու սակաւաթիւ ընտանիքները վիճակ գցելով թող ստանան իրենց բաժինը:

57 Ահա հաշուառման ենթարկուած Ղեւիի որդիներն ըստ իրենց տոհմերի. Գեթսոնը եւ Գեթսոնի շառաւիղը, Կահաթը եւ Կահաթի շառաւիղը, Մերարին եւ Մերարիի շառաւիղը: 58 Սրանք են Ղեւիի որդիների ենթատոհմերը. Ղոբենիի շառաւիղը, Քեբրոնի շառաւիղը, Կորխի շառաւիղը եւ Մուսիի շառաւիղը: 59 Կահաթը ծնեց Ամրամին: Նրա կնոջ անունն էր Յոքաբեթ, որ Ղեւիի դուստրն էր եւ որը Ղեւիի ցեղի համար Եգիպտոսում Ամրամից ունեցաւ Ահարոնին, Մովսէսին ու Մարիամին՝ նրանց քրոջը: 60 Ահարոնը ծնեց Նաբադին ու Աբիուդին, Եղիազարին ու Իթամարին: 61 Նաբադն ու Աբիուդը մեռան, երբ Տիրոջ առաջ օտար կրակ էին մատուցում Սինայի անապատում: 62 Ղեւիի ցեղի մէկ ամսականից բարձր արական սեռին պատկանողների թիւը, ըստ հաշուառման, կազմեց քսաներեք հազար հոգի: Սրանք հաշուառման ենթարկուած իսրայէլացիների մէջ չընդգրկուեցին, քանի որ, ի տարբերութիւն իսրայէլացիների, հողաբաժին չէր հասնում նրանց:

63 Այս է Մովաբացիների երկրի Ռաբոթ շրջանում, Յորդանան գետի մօտ, Երիքովի դիմաց Մովսէսի ու Եղիազար քահանայի կատարած իսրայէլացիների հաշուառումը: 64 Սրանց մէջ չկար իսրայէլացիներից որեւէ մարդ, որ

հաշուառման ենթարկուած չլինէր Սինայի անապատում Մովսէսի եւ Ահարոնի կողմից, 65 քանի որ Տէրը նրանց մասին ասել էր, թէ՝ «Անապատում իսպառ պիտի մեռնեն»: Եւ, իրօք, նրանցից ոչ ոք չմնաց, բացի Յեփոնէի որդի Քաղէբից ու Նաւէի որդի Յեսուից:

ՍԱՂՊԱԱԴԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

27 *Մովսէսի մօտ եկան Յովսէփի որդի Մանասէից սերուած Մաքիրի որդի Գաղաադի որդի Ոփերի որդի Սաղպաադի դուստրերը, որոնց անունները էին՝ Մաաղա, Նուա, Էգղա, Մեղքա եւ Թերսա: 2 Նրանք կանգնելով Մովսէսի, Եղիազար քահանայի, իշխանների եւ ողջ ժողովրդի առաջ, վկայութեան խորանի դռանը, ասացին. 3 «Մեր հայրը մեռաւ այնտեղ՝ անապատում: Նա Կորխի՝ Տիրոջ դէմ ընդվզած ամբոխի մէջ չէր: Նա մեռաւ իր այլ մեղքի համար՝ առանց որդիներ ունենալու: 4 Արդ, թէեւ նա որդի չունեցաւ, բայց մեր հօր անունը թող չջնջուի իր ցեղի միջից նրա համար, որ որդի չունեցաւ: Մեզ բաժին տուէ՛ք մեր հօր եղբայրներին հաւասար»: 5 Մովսէսը նրանց պահանջը ներկայացրեց Տիրոջ առաջ: 6 Տէրը խօսելով Մովսէսի հետ՝ ասաց. 7 «Ճիշտ են ասում Սաղպաադի դուստրերը: Նրանց նոյնպէս բաժին տո՛ւր իրենց հօր եղբայրներին հաւասար. իրենց հօր հասանելիք բաժինը կը յատկացնես նրանց: 8 Իսրայէլացիներին բացատրելով՝ կ'ասես. "Եթէ մեռնող մարդը որդի չի ունենում, նրա ժառանգութիւնը պէտք է անցնի իր դստերը: 9 Եթէ նա դուստր չունի, նրա ժառանգութիւնը տուէ՛ք իր եղբօրը: 10 Եթէ նա եղբայր էլ չունի, նրա ժառանգութիւնը տուէ՛ք իր հօրեղբօրը: 11 Եւ եթէ հօրեղբայրներ էլ չունի, նրա ժառանգութիւնը տուէ՛ք նրա մերձաւոր ազգականին: Նրա ունեցածը իր ցեղից որեւէ մէկը թող ժառանգի: Դա իսրայէլացիների համար դատաստանական օրէնք թող լինի, ինչպէս Տէրն է հրամայել Մովսէսին"»:*

ՄՈՎՍԷՍԻ ՅԱՋՈՐԴՆ Է ԸՆՏՐՈՒՄ ՅԵՍՈՒՆ
(Թ Օր. 31. 1-8)

12 *Տէրն ասաց Մովսէսին. «Բարձրացի՛ր այն կողմում գտնուող Նաբաւ լեռը եւ դիտի՛ր Քանանացիների երկիրը, որը ես իսրայէլացիներին եմ տալու որպէս կալուածք: 13 Կը տեսնես այն, որից յետոյ դու եւս մեռնելով՝ կը միանաս քո նախնիներին, ինչպէս քո եղբայր Ահարոնը մեռաւ Հոր լեռան վրայ, 14 որովհետեւ ոտնակոխ արեցիք իմ պատգամները Սին անապատում, երբ ժողովուրդը չցանկացաւ ինձ սրբացնել. նրա ներկայութեամբ դուք ինձ չսրբացրիք, եւ մարդիկ ջրի պակասութիւն զգացին» (Խօսքը վերաբերում էր Սին անապատի Հակաճառութեան ջրին):*

15 *Մովսէսն ասաց Տիրոջը. 16 «Հոգիների ու բոլոր էակների ո՛վ Տէր Աստուած, այս ժողովրդի վրայ մի մարդ նշանակի՛ր, 17 որ կարողանայ առաջնորդել նրան, որ հանի եւ տանի նրան այստեղից, որպէսզի Տիրոջ այս ժողովուրդը չնմանուի այն ոչխարներին, որոնք հովիւ չունեն»:*

18 *Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Վերցրո՛ւ Նաւէի որդի Յեսուին, որի մէջ Հոգի կայ, եւ ձեռքդ դի՛ր նրա վրայ: 19 Նրան կը կանգնեցնես Եղիազար քահանայի առջեւ եւ ամբողջ ժողովրդի ներկայութեամբ պատուէր կը տաս նրան: Այո՛, պատուէր կը տաս նրան նրանց առաջ: 20 Քո իշխանութիւնից որոշ բաժին կը տաս նրան, որպէսզի իսրայէլացիները հնազանդուեն նրան: 21 Նա թող կանգնի Եղիազար քահանայի առաջ, եւ թող նրան հարցեր տան Տիրոջ իրաւունքների մասին: Եղիազարի խօսքով պիտի շարժուեն, գործեն բոլորը՝ Յեսուն եւ իսրայէլացի ամբողջ ժողովուրդը միաբան»: 22 Մովսէսն արեց այնպէս, ինչպէս Տէրը պատուիրել էր իրեն: Յեսուին վերցնելով՝ Մովսէսը նրան բերեց Ահարոն քահանայի որդի Եղիազարի ու ամբողջ ժողովրդի առջեւ: 23 Նա իր ձեռքերը դրեց նրա վրայ եւ առաջնորդ կարգեց նրան, ինչպէս Տէրն էր պատուիրել Մովսէսին:*

ԿԱՆՈՆԱՒՈՐ ԸՆԾԱՆԵՐ
(Ելք 29. 38-46)

28 *Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Պատուիրի՛ր իսրայէլացիներին եւ նրանց ասա՛. "Հետամո՛ւտ եղէք, որ իբրեւ անուշ բուրմունք ինձ մատուցուող ընծաները, զոհաբերութիւնները եւ կերակուրները մատուցուեն իմ սահմանած տօներին": 3 Նրանց կ'ասես. "Սրանք են այն զոհաբերութիւնները, որ պիտի մատուցուեն Տիրոջը. մշտապէս օրական երկու ոչ արատաւոր գառ՝ իբրեւ ողջակէզ: 4 Մի գառը կը զոհես առաւօտեան, իսկ երկրորդ գառը կը զոհես երեկոյեան: 5 Ապա կը մատուցես քառորդ դորակ† իւղով հունցուած մէկ տասներորդ գրիւ‡ ընտիր ալիւր: 6 Սրանք են այն ողջակէզները, որ իբրեւ անուշ բուրմունք ամէն օր մատուցւում էին Տիրոջը Սինա լեռան վրայ: 7 Պիտի ընծայաբերես նաեւ քառորդ դորակ գինի ամէն մի գառան համար: Գինին սուրբ վայրում կը մատուցես Տիրոջը: 8 Երկրորդ գառը երեկոյեան կը զոհես, որի հետ կը մատուցես ընտիր ալիւրն ու գինին իբրեւ անուշ բուրմունք Տիրոջը»:*

ՇԱԲԱԹ ՕՐՈՒԱՅ ԸՆԾԱՆ

9 «Շաբաթ օրը կը մատուցես նաեւ մի տարեկան ոչ արատաւոր երկու գառ եւ իւղով հունցուած երկու տասներորդ գրիւ§ ընտիր ալիւր: 10 Ողջակէզի յաւելեալ նուէրն է դա իւրաքանչիւր շաբաթ օրուայ համար, բացի ամէն օրուայ ողջակէզից ու գինուց»:

ԱՄՍՈՒԱՅ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒԱՅ ԸՆԾԱՆ

11 «Ամսուայ առաջին օրերին Տիրոջը ողջակէզ կը մատուցէք նախրից բերուած երկու զուարակ, մէկ խոյ, մի տարեկան ոչ արատաւոր եօթը գառ: 12 Ամէն մի զուարակի հետ պէտք է լինի իւղով հունցուած երեք տասներորդ գրիւ ընտիր ալիւր, ամէն մի խոյի հետ՝ իւղով հունցուած երկու տասներորդ գրիւ ընտիր ալիւր, 13 ամէն մի գառան հետ՝ իւղով հունցուած մէկ տասներորդ գրիւ ընտիր ալիւր՝ իբրեւ անուշ բուրմունք՝ առաքուած Տիրոջը: 14 Ամէն մի զուարակի հետ պէտք է ընծայաբերէք կէս դորակ գինի, իսկ ամէն մի գառան հետ՝ մէկ քառորդ դորակ գինի: Այս ողջակէզները պիտի մատուցէք իւրաքանչիւր ամսուայ առաջին օրը, տարուայ բոլոր ամիսներին: 15 Ամէն օրուայ ողջակէզից ու նուէրից բացի, մեղքերի քաւութեան համար Տիրոջը պէտք է մատուցուի մէկ նոխազ»:

ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԻ ԸՆԾԱՆԵՐԸ
(Ղեւտ. 23. 5-14)

16 «Առաջին ամսի տասնչորսերորդ օրը Տիրոջ զատիկն է: 17 Նոյն ամսի տասնհինգերորդ օրը տօն է: 18 Եօթը օր բաղարջ կ'ուտէք: Առաջին օրը սուրբ է ձեզ համար. այդ օրը ոչ մի աշխատանք չկատարէք: 19 Նախրից բերուած երկու զուարակ, մէկ խոյ, մի տարեկան ոչ արատաւոր եօթը գառ կը մատուցէք Տիրոջն իբրեւ ողջակէզ ու ընծայ: 20 Ամէն մի զուարակի հետ պէտք է մատուցուի իւղով հունցուած երեք տասներորդ գրիւ ընտիր ալիւր, իսկ ամէն մի խոյի համար՝ երկու տասներորդ: 21 Եօթը գառներից ամէն մէկի հետ մէկ տասներորդ գրիւ ընտիր ալիւր կ'ընծայաբերէք, 22 իսկ մեղքերի քաւութեան համար կ'ընծայաբերէք նաեւ մէկ նոխազ: 23 Եւ դա կ'անէք բացի ամէն օր առաւօտեան կատարուող ողջակէզից: 24 Դա, իբրեւ անուշ բուրմունք, ողջակէզ կը մատուցէք Տիրոջը ամէն մի եօթներորդ օրը, ըստ նշուած կարգի: Ողջակէզի մշտական զոհը† գինու հետ կը մատուցէք: 25 Եօթներորդ օրը նոյնպէս սուրբ է ձեզ համար: Այդ օրը ոչ մի աշխատանք չկատարէք»:

ՀՆՁԻ ՏՕՆԻ ԸՆԾԱՆԵՐԸ
(Ղեւտ. 23. 15-22)

26 «Երախայրիքների օրը, երբ Տիրոջը շաբաթական նուէր էք մատուցում, թող

†Շուրջ մէկուկէս լիտր:
‡Երեք կիլոգրամ:
§Վեց կիլոգրամ:
†Եբրայերէնում՝ *ընծայ:*

սուրբ լինի ձեզ համար. դուք ոչ մի
աշխատանք չպէտք է կատարէք: 27 Տի-
րոջն իբրեւ անուշ բուրմունք նախրից
բերուած երկու զուարակ, մէկ խոյ եւ մի
տարեկան ոչ արատաւոր եօթը գառ
ողջակէզ պիտի մատուցէք: 28 Ամէն մի
զուարակի հետ պիտի նուիրաբերէք
իւղով հունցուած երեք տասներորդ գրիւ
ընտիր ալիւր, ամէն խոյի հետ՝ մէկ
տասներորդ գրիւ ընտիր ալիւր: 29 Եօթը
գառներից ամէն մէկի համար մէկ
տասներորդ գրիւ ընտիր ալիւր կը
բերէք: 30 Կը նուիրաբերէք նաեւ մէկ
նոխազ մեղքերի քաւութեան համար:
31 Այդ բոլորը կ'ընծայաբերէք, բացի
ամենօրեայ ողջակէզից: Սրանց հետ
նաեւ՝ ընտիր ալիւրն ու գինին: Զոհա-
բերուող բոլոր կենդանիները պէտք է
լինեն ոչ արատաւոր»:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ԸՆԾԱՆԵՐԸ
(Ղեւտ. 23. 23-25)

29 «Եօթներորդ ամսի առաջին օրը
ձեզ համար սուրբ հաւաքի օր թող լինի:
Այդ օրը ոչ մի աշխատանք չկատարէք:
Ցիշատակելի† օր թող լինի դա ձեզ
համար: 2 Տիրոջը իբրեւ անուշ բուր-
մունք ողջակէզ կ'անէք նախրից բե-
րուած մէկ զուարակ, մէկ խոյ եւ մի տա-
րեկան ոչ արատաւոր եօթը գառ: 3 Ի-
րաքանչիւր զուարակի հետ կը մատու-
ցէք իւղով հունցուած երեք տասներորդ
գրիւ ընտիր ալիւր, իւրաքանչիւր խոյի
հետ՝ երկու տասներորդ գրիւ ընտիր
ալիւր 4 եւ եօթը գառներից իւրա-
քանչիւրի հետ՝ մէկ տասներորդ գրիւ
ընտիր ալիւր, 5 իսկ մեղքերի քաւու-
թեան համար՝ մէկ նոխազ: 6 Իւրա-
քանչիւր ամսուայ առաջին օրը կատա-
րուող ողջակէզից բացի, ըստ սահմա-
նուած կարգի, կը մատուցէք նաեւ
ընտիր ալիւրն ու գինին իբրեւ Տիրոջ
համար անուշ բուրմունք»:

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ԸՆԾԱՆԵՐԸ
(Ղեւտ. 23. 26-32)

7 «Այդ եօթներորդ ամսուայ տաս-
ներորդ օրը եւս ձեզ համար սուրբ
հաւաքի օր թող լինի: Այդ օրը ծոմ կը
պահէք եւ ոչ մի աշխատանք չէք
կատարի: 8 Տիրոջ համար իբրեւ անուշ
բուրմունք ողջակէզ կը մատուցէք
նախրից բերուած մէկ զուարակ, մէկ
խոյ եւ մի տարեկան ոչ արատաւոր
եօթը գառ: 9 Իւրաքանչիւր զուարակի
հետ կ'ընծայաբերէք իւղով հունցուած
երեք տասներորդ գրիւ ընտիր ալիւր,
իւրաքանչիւր խոյի հետ՝ երկու տաս-
ներորդ գրիւ ընտիր ալիւր, 10 իսկ եօթը
գառներից իւրաքանչիւրի հետ՝ մէկ
տասներորդ գրիւ ընտիր ալիւր: 11 Մեղ-
քերի քաւութեան համար կը զոհաբերէք
մէկ նոխազ: Բացի մեղքերի քաւութեան
զոհերից, ըստ սահմանուած կարգի, կը
մատուցէք նաեւ ամենօրեայ ողջակէզը,
ընտիր ալիւրն ու գինին իբրեւ Տիրոջ
համար անուշ բուրմունք»:

ՏԱՂԱՒԻԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆԻ ԸՆԾԱՆԵՐԸ
(Ղեւտ. 23. 33-44)

12 «Նոյն այդ եօթներորդ ամսուայ
տասնհինգերորդ օրը ձեզ համար սուրբ
հաւաքի օր թող լինի. ոչ մի աշխատանք
չկատարէք եւ եօթը օր Տիրոջ տօնը կը
տօնէք: 13 Իբրեւ Տիրոջ համար անուշ
բուրմունք հետեւեալ ընծաները կ'անէք.
առաջին օրը՝ նախրից բերուած տաս-
ներեք զուարակ, երկու խոյ եւ մի տա-
րեկան ոչ արատաւոր տասնչորս գառ:
14 Տասներեք զուարակներից իւրա-
քանչիւրի հետ կ'ընծայաբերէք իւղով
հունցուած երեք տասներորդ գրիւ
ընտիր ալիւր, երկու խոյերից իւրա-
քանչիւրի հետ՝ երկու տասներորդ գրիւ
ընտիր ալիւր, 15 տասնչորս գառներից
իւրաքանչիւրի հետ՝ մէկ տասներորդ
գրիւ ընտիր ալիւր: 16 Կը զոհաբերէք
նաեւ մէկ նոխազ մեղքերի քաւութեան
համար, բացի ամենօրեայ ողջակէզից,
ընտիր ալիւրից ու գինուց:

17 Երկրորդ օրը կը մատուցէք
տասներկու զուարակ, երկու խոյ եւ մի
տարեկան ոչ արատաւոր տասնչորս
գառ: 18 Զուարակների, խոյերի ու
գառների հետ մատուցուող ընտիր
ալիւրն ու գինին, ըստ սահմանուած
կարգի, թող լինեն նրանց քանակին
համապատասխան: 19 Մէկ նոխազ էլ կը

մատուցէք մեղքերի քաւութեան համար,
բացի ամենօրեայ ողջակէզից, ընտիր
ալիւրից ու գինուց:

20 Երրորդ օրը կը մատուցէք
տասնմէկ զուարակ, երկու խոյ եւ մի
տարեկան ոչ արատաւոր տասնչորս
գառ: 21 Զուարակների, խոյերի ու
գառների հետ մատուցուող ընտիր
ալիւրն ու գինին թող լինեն նրանց
քանակին համապատասխան: 22 Մէկ
նոխազ էլ կը մատուցէք մեղքերի քա-
ւութեան համար, բացի ամենօրեայ ող-
ջակէզից, ընտիր ալիւրից ու գինուց:

23 Չորրորդ օրը կը մատուցէք տասը
զուարակ, երկու խոյ եւ մի տարեկան ոչ
արատաւոր տասնչորս գառ: 24 Զուա-
րակների, խոյերի ու գառների հետ մա-
տուցուող ընտիր ալիւրն ու գինին, ըստ
սահմանուած կարգի, թող լինեն նրանց
քանակին համապատասխան: 25 Մէկ
նոխազ էլ կը մատուցէք մեղքերի քա-
ւութեան համար, բացի ամենօրեայ ող-
ջակէզից, ընտիր ալիւրից ու գինուց:

26 Հինգերորդ օրը կը մատուցէք ինը
զուարակ, երկու խոյ եւ մի տարեկան ոչ
արատաւոր տասնչորս գառ: 27 Զուա-
րակների, խոյերի ու գառների հետ
մատուցուող ընտիր ալիւրն ու գինին,
ըստ սահմանուած կարգի, թող լինեն
նրանց քանակին համապատասխան:
28 Մէկ նոխազ էլ կը մատուցէք մեղ-
քերի քաւութեան համար, բացի ամե-
նօրեայ ողջակէզից, ընտիր ալիւրից ու
գինուց:

29 Վեցերորդ օրը կը մատուցէք ութ
զուարակ, երկու խոյ եւ մի տարեկան ոչ
արատաւոր տասնչորս գառ: 30 Զուա-
րակների, խոյերի ու գառների հետ մա-
տուցուող ընտիր ալիւրն ու գինին, ըստ
սահմանուած կարգի, թող լինեն նրանց
քանակին համապատասխան: 31 Մէկ
նոխազ էլ կը մատուցէք մեղքերի
քաւութեան համար, բացի ամենօրեայ
ողջակէզից, ընտիր ալիւրից ու գինուց:

32 Եօթներորդ օրը կը մատուցէք եօթը
զուարակ, երկու խոյ եւ մի տարեկան ոչ
արատաւոր տասնչորս գառ: 33 Զուա-
րակների, խոյերի ու գառների հետ մա-
տուցուող ընտիր ալիւրն ու գինին, ըստ
սահմանուած կարգի, թող լինեն նրանց
քանակին համապատասխան: 34 Մէկ
նոխազ էլ կը մատուցէք մեղքերի քա-
ւութեան համար, բացի ամենօրեայ ող-
ջակէզից, ընտիր ալիւրից ու գինուց:

35 Ութերորդ օրը ձեր տօնի վերջին
օրը թող լինի: Ոչ մի աշխատանք
չկատարէք այդ օրը: 36 Իբրեւ Տիրոջ
համար անուշ բուրմունք ողջակէզ կը
մատուցէք մէկ զուարակ, մէկ խոյ եւ մի
տարեկան ոչ արատաւոր եօթը գառ:
37 Զուարակների, խոյերի ու գառների
հետ մատուցուող ընտիր ալիւրն ու
գինին, ըստ սահմանուած կարգի, թող
լինեն նրանց քանակին համապատաս-
խան: 38 Մէկ նոխազ էլ կը մատուցէք
մեղքերի քաւութեան համար, բացի
ամենօրեայ ողջակէզից, ընտիր ալիւրից
ու գինուց:

39 Այս զոհաբերութիւնները կը մա-
տուցէք Տիրոջը ձեր տօների ժամանակ՝
չհաշուած ըստ ուխտի ձեր մատուցած-
ները, ձեր ինքնաբուխ ողջակէզները, ձեր
անարիւն ընծաները, գինին եւ փրկու-
թեան համար արած զոհերը"»:

ՕՐԷՆՔՆԵՐ ՈՒԽՏԵՐԻ ՄԱՍԻՆ

30 Մովսէսն իսրայէլացիներին հա-
ղորդեց Տիրոջ հրամանը, ինչպէս Տէրն
էր պատուիրել Մովսէսին: 2 Մովսէսն
իսրայէլացիների իշխաններին ասաց.
3 «Ահա թէ ինչ է հրամայել Տէրը ուխտ
արած մարդուն. "Եթէ որեւէ մէկը
Տիրոջը ուխտ է անում, երդւում կամ
խոստանում է մի բան, որ ինքը
երդումով պարտաւորուած լինի անել,
ապա նա չպէտք է դրժի իր երդումն ու
խոստումը. նա պէտք է կատարի այն
ամէնը, ինչ դուրս է եկել նրա բերանից:
4 Եթէ մի կին իր հօր տանը դեռեւս
երիտասարդ հասակում Տիրոջը ուխտ է
արել, որեւէ բան խոստացել, 5 եւ եթէ
նրա հայրը լսել է նրա ուխտը կամ
խոստումը եւ լռելեայն հաւանութիւն
տուել դրան, ապա այդ կնոջ բոլոր
ուխտերն ու խոստումը ուժի մէջ պէտք
է մնան եւ կատարուեն:

6 Իսկ եթէ նրա հայրը, լսելով նրա
ուխտը, հաւանութիւն չի տուել այն օրը,
երբ լսել էր նրա բոլոր ուխտերն ու
խոստումը, ապա անվաւեր թող լինեն

†Եբրայերէնում՝ շեփոր հնչեցնելու:

դրանք, եւ Տէրը այդ կնոջը թող անպարտ համարի, քանի որ յանձնառու չեղողը նրա հայրն է: 7 Եթէ կինն ամուսնանայ եւ նախքան ամուսնանալը Տիրոջը ուխտ արած կամ խոստում տուած լինի, 8 ու եթէ այդ մասին իմանայ նրա ամուսինը եւ լռելեայն հաւանութիւն տայ այն օրը, երբ լսել էր այդ մասին, ապա նրա բոլոր ուխտերն ու խոստումը պէտք է մնան ուժի մէջ եւ կատարուեն:

9 Իսկ եթէ նրա ամուսինը հաւանութիւն չի տալիս այն օրը, երբ լսել էր նրա բոլոր ուխտերն ու խոստումները, ապա դրանք անվաւեր են, քանի որ յանձնառու չեղողը ամուսինն է: Տէրը այդ կնոջը անպարտ թող համարի: 10 Այրի կամ բաժանուած կնոջ ուխտերն ու խոստումը, որ նա ինքնաբուխ է արել, պէտք է կատարուեն: 11 Իսկ եթէ կինն իր ամուսնու տանն է ուխտ արել կամ երդումով խոստումներ տուել, 12 եւ եթէ նրա ամուսինը լսել է այդ մասին եւ լռելեայն հաւանութիւն տուել, ապա այդ կնոջ բոլոր ուխտերն ու խոստումը, որ նա ինքնաբուխ է արել, ուժի մէջ են. դրանք պէտք է կատարուեն: 13 Իսկ եթէ նրա ամուսինը լսած օրը կտրականապէս խափանի կնոջ շուրթերով արուած ուխտերն ու խոստումը, ապա դրանք անվաւեր են, կարող են չկատարուել, քանի որ զանց անողը նրա ամուսինն է, ուստի Տիրոջ առջեւ այդ կինն անպարտ է: 14 Ինքն իրեն նեղութիւն տալու գնով ամուսնացած կնոջ արած ուխտին կամ խոստումին ամուսինը կարող է հաւանութիւն տալ կամ չտալ: 15 Եթէ կնոջ ուխտի կամ խոստումի մասին տեղեակ լինի ամուսինը եւ բազում օրեր լռի, ուրեմն հաստատած եւ ընդունած է լինում կնոջ ուխտն ու խոստումը, քանի որ լսած օրը դրանց համար չի առարկել: 16 Եւ եթէ նրա ամուսինը իր լսած օրից յետոյ առարկի, ուրեմն ինքն է իր վրայ կրում մեղքը"»:

17 Սրանք են այն պատգամները, որ Տէրը տուեց Մովսէսին ամուսնու եւ նրա կնոջ, հօր եւ նրա դստեր մասին, որը դեռեւս երիտասարդ հասակում իր հօր տանն է գտնւում:

ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԱԴԻԱՆԱՑԻՆԵՐԻ ԴԷՄ

31 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Իսրայէլացիների վրէժը մադիանացիներից ա՛ռ եւ դրանից յետոյ միացի՛ր քո ժողովրդի մեռելներին»: 3 Մովսէսը, դիմելով ժողովրդին, ասաց. «Ձեր միջից մարդկանց զինեցէ՛ք, որ պատերազմեն մադիանացիների դէմ Տիրոջ առաջ, որպէսզի լուծուի մադիանացիների դէմ Տիրոջ վրէժը: 4 Իսրայէլացիների բոլոր տոհմերից մարդ ուղարկեցէ՛ք, որպէսզի նրանք պատերազմ մղեն»: 5 Բազմահազար իսրայէլացիների ամէն մի ցեղից ընտրեցին հազար տղամարդ, ընդամէնը տասներկու հազար մարդ՝ զինուած պատերազմելու համար: 6 Մովսէսը իւրաքանչիւր ցեղից ուղարկեց հազարական տղամարդ իրենց զէնքով հանդերձ, նրանց հետ նաեւ Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդի Փենեէսին՝ նրանց ձեռքը յանձնելով սուրբ սպասքն ու ազդարարութեան շեփորները: 7 Եւ նրանք ճակատամարտ մղեցին մադիանացիների դէմ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին: Նրանք կոտորեցին արական սեռի բոլոր մարդկանց. 8 բացի սրախողխող եղած մադիանացիներից, նրանք սպանեցին նաեւ մադիանացիների թագաւորներ Եւինին, Սուրին, Ռեկոմին, Ուրին եւ Ռոբոքին՝ Մադիամի հինգ թագաւորներին: Բացի նրանց կոտորելուց, սրախողխող արեցին Բէորի որդի Բաղաամին, 9 գերեվարեցին Մադիամի կանանց, նրանց զաւակներին, քշեցին տարան նրանց անասունները, նրանց ամբողջ ունեցուածքն ու գոյքը աւար առան: 10 Հրկիզեցին նրանց բոլոր քաղաքները՝ տներով հանդերձ, ինչպէս նաեւ նրանց աւանները: 11 Գերեվարեցին ու աւար առան նրանց ամէն ինչը՝ մարդ թէ անասուն: 12 Գերիներին, բանակի կողոպուտն ու աւարը բերեցին Մովսէսի, Եղիազար քահանայի եւ բոլոր իսրայէլացիների մօտ՝ Մովաբի Ռաբոթ կոչուող վայրը, որը գտնւում է Երիքովի դիմաց, Յորդանան գետի եզերքին:

ԲԱՆԱԿԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

13 Մովսէսն ու Եղիազար քահանան եւ ժողովրդի բոլոր իշխանները բանակատեղիից դուրս ելան նրանց ընդառաջ: 14 Մովսէսը բարկացաւ զօրահրամանատարների՝ ռազմադաշտից վերադարձած հազարապետների ու հարիւրապետների վրայ՝ ասելով. 15 «Ինչո՞ւ էք կենդանի թողել բոլոր կանանց: 16 Զէ՞ որ սրանք էին, որ Բաղաամի խորհրդով կոտորեցին իսրայէլացիներին, որոնք յանուն Փոգորի չեղուեցին Տիրոջից եւ արհամարհեցին նրա խօսքը, եւ Տիրոջ ժողովուրդն ստացաւ այդ պատիժը: 17 Արդ, կոտորեցէ՛ք արական սեռի բոլոր մարդկանց, նաեւ այն բոլոր կանանց, որոնք կենակցել են տղամարդու հետ: 18 Կը խնայէք միայն այն կանանց, որոնք տղամարդու հետ չեն կենակցել: 19 Իսկ դուք եօթը օր բանակատեղիից դուրս կը բնակուէք: Ով որ սպանել է կամ ձեռք տուել դիակի, թող մաքրուած համարուի երրորդ կամ եօթներորդ օրը: Մաքրուեցէ՛ք դուք եւ ձեր գերիները, 20 մաքրեցէ՛ք բոլոր հագուստները, կաշուէ բոլոր անօթները, մազից գործած ու փայտից պատրաստուած ամէն ինչ»:

21 Եղիազար քահանան ասաց ռազմադաշտից վերադարձած զինուորներին. «Այս է Օրէնքի կարգը, որ Տէրը տուել է Մովսէսին: 22 Ոսկուց, արծաթից, պղնձից, երկաթից, կապարից ու անագից բացի, 23 այն ամէնը, ինչ հրակայուն է, թող հրով մաքրուի, ապա եւ սրբազան ջրով, իսկ ինչ որ կրակի չի դիմանայ, թող ջրով մաքրուի: 24 Ձեր զգեստները եօթներորդ օրը լուալով՝ մաքուր կը լինէք, որից յետոյ կը մտնէք բանակատեղի»:

ԱՒԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

25 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 26 «Դու, Եղիազար քահանան եւ ժողովրդի ցեղերի իշխանները կազմեցէ՛ք գերուածների եւ աւարի ցանկը՝ մարդուց մինչեւ անասուն: 27 Աւարը բաժանեցէ՛ք պատերազմին մասնակցածների եւ ամբողջ ժողովրդի միջեւ: 28 Պատերազմին մասնակցածներին բաժին ընկած հինգ հարիւր գերիներից մէկին կ'ընծայէք Տիրոջը: Նոյնը նաեւ անասունների վերաբերեալ՝ լինի արջառ, ոչխար ու այծ: 29 Այս ամենի կէսը կ'առնես ու կը տաս Եղիազար քահանային իբրեւ Տիրոջը մատուցուելիք նուէր, 30 իսկ իսրայէլացիներին հասնող բաժնի կէսի ամէն յիսուն գերիներից եւ բոլոր անասուններից՝ արջառից, ոչխարից, էշից մէկը կը յանձնես ղեւտացիներին, որոնք սպասարկում են Տիրոջ խորանը»:

31 Մովսէսն ու Եղիազար քահանան արեցին այնպէս, ինչպէս Տէրը հրամայել էր Մովսէսին:

32 Պատերազմին մասնակցած տղամարդկանց բերած աւարի մնացած մասը կազմեց վեց հարիւր եօթանասունհինգ հազար ոչխար, 33 եօթանասուներկու հազար արջառ, 34 վաթսունմէկ հազար էշ: 35 Գերեվարուած աղջիկների թիւը երեսուներկու հազար էր, որոնք դեռ չէին կենակցել տղամարդու հետ:

36 Պատերազմին մասնակցածներին հասած աւարը կազմեց երեք հարիւր երեսունեօթը հազար հինգ հարիւր ոչխար, 37 որոնցից Տիրոջը որպէս հաս տրուեց վեց հարիւր եօթանասունհինգ ոչխար, 38 երեսունվեց հազար արջառից Տիրոջը որպէս հաս տրուեց եօթանասուներկու արջառ, 39 երեսուն հազար հինգ հարիւր էշից Տիրոջը որպէս հաս տրուեց վաթսունմէկ էշ, 40 իսկ գերեվարուած մարդկանց թիւը կազմեց տասնվեց հազար, որից Տիրոջը որպէս հաս տրուեց երեսուներկու հոգի: 41 Մովսէսը Տիրոջ հասը՝ Աստծու նուէրը յանձնեց Եղիազար քահանային, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

42 Դա ստացուել էր իսրայէլացիներին հասնող աւարի կէսից, որ Մովսէսն առանձնացրել էր պատերազմի մասնակիցների բաժնից: 43 Դա կազմեց երեք հարիւր երեսունեօթը հազար հինգ հարիւր ոչխար, 44 երեսունվեց հազար արջառ, 45 երեսուն հազար հինգ հարիւր էշ 46 եւ տասնվեց հազար մարդ: 47 Մովսէսը իսրայէլացիներին հասնող աւարի կէսի իւրաքանչիւր յիսուն մար-

դուց եւ անասունից վերցրեց մէկին եւ տուեց դեւտացիներին, որոնք սպասարկում էին Տիրոջ խորանը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին:

48 Մովսէսին ներկայացան բոլոր զօրահրամանատարները՝ հազարապետներն ու հարիւրապետները, 49 եւ ասացին նրան. «Մենք՝ քո ծառաները, հաշուառման ենթարկեցինք ռազմիկներին եւ տեսանք, որ նրանցից ոչ ոք չի պակասում: 50 Դրա համար Տիրոջը որպէս ընծայ բերել ենք ինչ որ գտնուում է իւրաքանչիւրիս մօտ՝ ոսկէ տուփ, ապարանջան, մատանի, մանեակ եւ ընդելուզուած ծամկալ, որպէսզի Տիրոջից քաւութիւն ստանանք: 51 Մովսէսն ու Եղիազար քահանան նրանցից վերցրին ոսկեղէնը՝ ձեռագործ բոլոր անօթները: 52 Հազարապետների կողմից Տիրոջը որպէս հաս տրուած ամբողջ ոսկին կազմեց տասնվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկղ†: 53 Իւրաքանչիւր ռազմիկին աւարից մաս հասաւ: 54 Մովսէսն ու Եղիազար քահանան, հազարապետներից ու հարիւրապետներից առնելով ոսկին, տարան վկայութեան խորան որպէս իսրայէլացիների յիշատակ Տիրոջ առաջ:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ՏԵՂԱՒՈՐՈՒԱԾ ՑԵՂԵՐԸ

(Բ Օր. 3. 12-22)

32 Իսրայէլացիները բազում անասուններ ունէին, բայց Ռուբէնի ու Գադի ցեղերի ունեցածները չափազանց շատ էին: Նրանք տեսան, որ Յազերի ու Գաղաադի շրջանները հօտերի համար յարմար արօտավայրեր են: 2 Ռուբէնի ու Գադի ցեղերի մարդիկ գալով Մովսէսի, Եղիազար քահանայի ու ժողովրդի իշխանների մօտ՝ ասացին. 3 «Ատարոթը, Դեբոնը, Յազերը, Նեմբրան, Եսեբոնը, Էլէալէթը, Սեբաման, Նաբաւը եւ Բէանը՝ 4 այն վայրերը, որ Տէրը յանձնել է իսրայէլացիների ձեռքը, անասուն սնուցող արօտներ ունեն, իսկ մենք՝ քո ծառաները, անասուններ ունենք»: 5 Նրանք աւելացրին. «Եթէ քո առաջ շնորհ են գտել, այդ վայրերը մեզ՝ քո ծառաներին իբրեւ կալուածք տո՛ւր եւ մեզ Յորդանան գետից այն կողմ մի՛ անցկացրու»:

6 Մովսէսը Գադի ու Ռուբէնի ցեղերի մարդկանց պատասխանեց. «Ձեր եղբայրները գնան պատերազմելու, իսկ դուք այստեղ նստէ՞ք: 7 Ինչո՞ւ էք պղտորում իսրայէլացիների հոգին, այնպէս անում, որ չուզենան անցնել այն երկիրը, որը Տէրը տալու է նրանց: 8 Ձեր հայրերը նոյն կերպ չվարուեցի՞ն, երբ նրանց ուղարկում էի Կադէս-բառնէից, որպէսզի հետախուզեն երկիրը: 9 Նրանք հասան Ողկոյզի ձորը, հետախուզեցին երկիրը, բայց վերադառնալով յեղաշրջեցին իսրայէլացիների մտքերը, որ չմտնեն այն երկիրը, որ Տէրը տուել էր նրանց: 10 Այդ պատճառով Տէրը խիստ զայրացաւ այդ օրը եւ երդուելով ասաց. 11 "Եգիպտոսից դուրս եկած քսան տարեկանից բարձր մարդիկ, որոնք գիտեն չարն ու բարին, թող չտեսնեն այն երկիրը, որ երդուեցի տալ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, քանի որ ինձ չհետեւեցին: 12 Նրանցից ոչ ոք չի մտնելու այդ երկիրը, բացի Յեփոնէի որդի Քաղէբից ու Նաւէի որդի Յեսուից, քանի որ նրանք հետեւեցին Տիրոջը": 13 Տէրը, խիստ զայրանալով իսրայէլացիների վրայ, քառասուն տարի նրանց թափառել տուեց անապատում, մինչեւ որ մեռան Տիրոջ առաջ ամբարիշտ գտնուող բոլոր մարդիկ: 14 Հիմա էլ դուք էք ելել ձեր հայրերի փոխարէն, ո՛վ մեղաւոր մարդկանց վոհմակներ, որպէսզի է՛լ աւելի բորբոքէք Տիրոջ բարկութիւնը իսրայէլացիների վրայ: 15 Քանի որ դուք խոտորուել էք Աստծուց, նա դարձեալ կը թողնի ձեզ այս անապատում, եւ դուք պատճառ կը դառնաք, որ ամբողջ ժողովուրդը անօրինութիւն գործի»:

16 Նրանք, դիմելով Մովսէսին, ասացին. «Ուզում ենք մեր ոչխարների ու միւս անասունների համար գոմեր շինել, մեր ընտանիքների համար՝ քաղաքներ: 17 Մենք ինքներս կը զինուենք Տիրոջ առջեւ, կը գնանք միւս իսրայէլացիների առջեւից, մինչեւ որ հաստատենք նրանց

†Նուրջ 170 կիլոգրամ:

իրենց տեղերում: Մեր ժողովուրդը, որպէսզի ապահով լինի այս երկրի բնակիչներից, թող բնակուի պարսպապատ քաղաքներում: 18 Մենք չենք վերադառնայ մեր տները, մինչեւ որ իսրայէլացիները իրենց ժառանգութեան տէր դառնան: 19 Մենք ակնկալութիւն չունենք Յորդանան գետի այն կողմում եւ աւելի հեռու տեղերում միւս իսրայէլացիների հետ բաժին ստանալու, որովհետեւ մենք մեր բաժինն ստացել ենք Յորդանան գետի այս կողմում՝ արեւելքում»:

20 Մովսէսն ասաց նրանց. «Եթէ անէք այնպէս, ինչպէս ասում էք, այսինքն՝ Տիրոջ հրամանով պատերազմի համար զինուէք, 21 ձեր բոլոր ռազմիկները Տիրոջ կարգադրութեան համաձայն անցնեն Յորդանան գետի այն կողմը, մասնակցեն պատերազմին, մինչեւ Տիրոջ առջեւ ոչնչանայ նրա թշնամին, 22 եւ երկիրը նուաճուի ըստ Տիրոջ ցանկութեան, ապա կը վերադառնաք, Տիրոջ ու իսրայէլացիների առջեւ անպարտ կը լինէք, եւ այս երկիրը Տիրոջ առաջ ձեր կալուածքը կը լինի: 23 Իսկ եթէ այդպէս չվարուէք, մեղաւոր կը համարուէք Տիրոջ առջեւ եւ ձեր մեղքերը կը ճանաչէք, երբ չարիքը հասնի ձեզ: 24 Արդ, դուք քաղաքներ շինեցէ՛ք ձեր մարդկանց համար եւ գոմեր՝ ձեր անասունների համար, եւ ինչ որ դուրս է եկել ձեր բերանից, կատարեցէ՛ք»:

25 Ռուբէնի ու Գադի ցեղերի մարդիկ, դիմելով Մովսէսին, ասացին. «Մենք՝ քո ծառաները, կը վարուենք այնպէս, ինչպէս դու՝ մեր տէրը, հրամայեցիր մեզ: 26 Մեր երեխաներն ու կանայք, մեր բոլոր անասունները թող մնան Գաղաադի քաղաքներում, 27 իսկ մենք՝ քո ծառայ տղամարդիկդ, զինավառ ու պատրաստ, Տիրոջ առջեւից կ'անցնենք-կը գնանք պատերազմի, ինչպէս դու՝ մեր տէրը, ասում ես»: 28 Մովսէսը հրահանգ տուեց նրանց մասին Եղիազար քահանային, Նաւէի որդի Յեսուին եւ իսրայէլացի ցեղերի նահապետների ընտանիքների իշխաններին: 29 Մովսէսն ասաց նրանց. «Եթէ Ռուբէնի ու Գադի ցեղերի մարդիկ բոլորն էլ Տիրոջ առջեւ սպառազինուած ձեզ հետ անցնեն Յորդանան գետի այն կողմը, եթէ դուք նուաճէք այդ երկիրը, ապա նրանց իբրեւ կալուածք կը տաք Գաղաադի երկիրը: 30 Իսկ եթէ սպառազինուած ձեզ հետ պատերազմի չելնեն Տիրոջ առջեւ, ապա նրանց երեխաներին, կանանց ու անասուններին, նախքան ձեր անցնելը, կը փոխադրէք Քանանացիների երկիրը, եւ նրանք եւս ձեզ հետ թող ժառանգութիւն ստանան Քանանացիների երկրում»: 31 Ռուբէնի ու Գադի ցեղերի մարդիկ պատասխան տալով՝ ասացին. «Ինչ որ հրամայես դու՝ մեր տէրը, քո ծառաներին, այդ էլ կը կատարենք: 32 Սպառազինուած կ'անցնենք Քանանացիների երկիրը, եւ մեզ կալուածքներ կը տաք Յորդանան գետի այս կողմում»: 33 Եւ Մովսէսը Գադի, Ռուբէնի ցեղերին, Յովսէփի որդիներից Մանասէի կէս ցեղին տուեց ամորհացիների Սեհոն արքայի թագաւորութիւնը, Բասան երկրի Օգ արքայի թագաւորութիւնը, այդ երկիրը՝ իր սահմաններում գտնուող բոլոր քաղաքներով, ինչպէս նաեւ սահմանամերձ քաղաքներով:

34 Գադի մարդիկ կառուցեցին Դեբոնը, Ատարոթը, Արոյերը, 35 Սոփորն ու Յազերը, դրանք շրջապատեցին բարձր պարիսպներով: 36 Կառուցեցին նաեւ Նամրանը, Բեթառանը, ամուր քաղաքներ ու անասունների գոմեր: 37 Ռուբէնի ցեղի մարդիկ կառուցեցին Եսեբոնը, Էլէալէթը, Կարիաթեմը, 38 Բէելմէոնը՝ չորս կողմից պարսպապատ, եւ Սեմաբան: Իրենց կառուցած քաղաքներն անուանեցին իրենց իսկ անուններով:

39 Մանասէի որդի Մաքիրի յետնորդները գնացին Գաղաադ, գրաւեցին այն ու ոչնչացրին այնտեղ բնակուող ամորհացիներին: 40 Մովսէսը Գաղաադը տուեց Մանասէի որդի Մաքիրին, որը եւ բնակուեց այնտեղ: 41 Մանասէի որդի Յայիրը գրաւեց նրանց քաղաքները, որոնք կոչեց «Յայիրի աւաններ»: 44 Նաբաւը գնաց գրաւեց Կանաթն ու նրա աւանները, որոնք իր անունով կոչեց Նաբաւթ:

ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒՑ ՅԵՏՈՅ

33 Սրանք են այն բանակատեղիները, որ դրեցին իսրայէլացիները, երբ Մովսէսի եւ Ահարոնի գլխաւորութեամբ, իրենց զօրքով հանդերձ դուրս եկան Եգիպտոսից: 2 Մովսէսը Տիրոջ հրամանով գրի առաւ իսրայէլացիների չուերթն ու նրանց բանակատեղիները: Ահա սրանք են իրենց երթի ժամանակ նրանց դրած բանակատեղիները: 3 Իսրայէլացիները Ռամեսէսից մեկնեցին առաջին ամսի տասնհինգերորդ օրը: Զատկի յաջորդ օրը նրանք, բոլոր եգիպտացիների աչքի առջեւ, Աստծու հզօր պաշտպանութեամբ ելան Եգիպտոսից, 4 երբ եգիպտացիները թաղում էին իրենց բոլոր անդրանիկ որդիներին: Տէրը կոտորել էր Եգիպտացիների երկրի բոլոր անդրանիկ զաւակներին: Տէրը նրանցից վրէժ էր լուծել իրենց չաստուածների համար:

5 Իսրայէլացիները Ռամեսէսից մեկնելով բանակատեղի դրեցին Սոկքոթում: 6 Սոկքոթից մեկնելով բանակատեղի դրեցին Բոթանում, որն անապատի մի մասն է: 7 Մեկնեցին Բոթանից եւ բանակատեղի դրեցին Եպիրոթի մօտ, որը գտնւում է Բեէլսեպփոնի դիմաց, եւ բանակատեղի դրեցին Մագդոլի դիմաց: 8 Մեկնեցին Եպիրոթի դիմաց ընկած շրջանից, Կարմիր ծովի միջով անցան դէպի անապատ, անապատի միջով երեք օրուայ ճանապարհ կտրեցին եւ բանակատեղի դրեցին Դաւն աղբիւրների մօտ: 9 Մեկնեցին Դաւն աղբիւրների մօտից եւ եկան Ելիմ: Ելիմում տասներկու ջրի աղբիւր կար եւ արմաւի եօթանասուն ծառ: Նրանք բանակատեղի դրեցին այնտեղ՝ ջրի մօտ: 10 Մեկնեցին Ելիմից եւ բանակատեղի դրեցին Կարմիր ծովի ափին: 11 Մեկնեցին Կարմիր ծովից եւ բանակատեղի դրեցին Սին անապատում: 12 Մեկնեցին Սին անապատից եւ բանակատեղի դրեցին Ռափայում: 13 Մեկնեցին Ռափայից եւ բանակատեղի դրեցին Ելիմում: 14 Մեկնեցին Ելիմից եւ բանակատեղի դրեցին Ռափիդինում: 15 Այստեղ ժողովուրդը խմելու ջուր չունէր, ուստի մեկնեցին Ռափիդինից եւ բանակատեղի դրեցին Սինայի անապատում: 16 Մեկնեցին Սինայի անապատից եւ բանակատեղի դրեցին Ցանկութեան գերեզմաններում: 17 Մեկնեցին Ցանկութեան գերեզմաններից եւ բանակատեղի դրեցին Ասերոթում: 18 Մեկնեցին Ասերոթից եւ բանակատեղի դրեցին Ռաթամայում: 19 Մեկնեցին Ռաթամայից եւ բանակատեղի դրեցին Ռեմոնփարէսում: 20 Մեկնեցին Ռեմոնփարէսից եւ բանակատեղի դրեցին Ղեբոնայում: 21 Մեկնեցին Ղեբոնայից եւ բանակատեղի դրեցին Դեսսայում: 22 Մեկնեցին Դեսսայից եւ բանակատեղի դրեցին Մակեղդաթում: 23 Մեկնեցին Մակեղդաթից եւ բանակատեղի դրեցին Սոփարում: 24 Մեկնեցին Սոփարից եւ բանակատեղի դրեցին Քարադաթում: 25 Մեկնեցին Քարադաթից եւ բանակատեղի դրեցին Մակելոթում: 26 Մեկնեցին Մակելոթից եւ բանակատեղի դրեցին Կատտաթում: 27 Մեկնեցին Կատտաթից եւ բանակատեղի դրեցին Տարաթում: 28 Մեկնեցին Տարաթից եւ բանակատեղի դրեցին Մատեկայում: 29 Մեկնեցին Մատեկայից եւ բանակատեղի դրեցին Սելմոնայում: 30 Մեկնեցին Սելմոնայից եւ բանակատեղի դրեցին Մասուրութում: 31 Մեկնեցին Մասուրութից եւ բանակատեղի դրեցին Բանէյում: 32 Մեկնեցին Բանէյից եւ բանակատեղի դրեցին Գադգադ լեռան վրայ: 33 Մեկնեցին Գադգադ լեռից եւ բանակատեղի դրեցին Եոտեբաթայում: 34 Մեկնեցին Եոտեբաթայից եւ բանակատեղի դրեցին Եբրոնայում: 35 Մեկնեցին Եբրոնայից եւ բանակատեղի դրեցին Գեսիոնգաբերում: 36 Մեկնեցին Գեսիոնգաբերից եւ բանակատեղի դրեցին Սին անապատում:

37 Մեկնեցին Սին անապատից եւ բանակատեղի դրեցին Փարանի անապատում, այսինքն՝ Կադէսում: Մեկնեցին Կադէսից եւ բանակատեղի դրեցին Հոր լեռան վրայ՝ Եդոմի երկրի մօտ: 38 Ահարոն քահանան Տիրոջ հրամանով բարձրացաւ լեռը եւ մեռաւ այնտեղ իսրայէլացիների՝ Եգիպտացիների երկրից դուրս գալու քառասուներորդ տարուայ հինգերորդ ամսի մէկին: 39 Ահարոնը հարիւր քսաներեք տարեկան էր, երբ մեռաւ Հոր լեռան վրայ: 40 Քանանացիների երկրում բնակուող Արադի արքայ Քանանէսը տեղեկացաւ, որ իսրայէլացիները մուտք են գործում իր երկիրը:

41 Իսրայէլացիները, սակայն, Հոր լեռից հեռանալով՝ բանակատեղի դրեցին Սելմոնայում: 42 Մեկնեցին Սելմոնայից եւ բանակատեղի դրեցին Փենովում: 43 Մեկնեցին Փենովից եւ բանակատեղի դրեցին Օբոթում: 44 Մեկնեցին Օբոթից եւ բանակատեղի դրեցին Գայիում՝ Յորդանան գետի այն կողմը, Մովաբի սահմաններում: 45 Մեկնեցին Գայիից եւ բանակատեղի դրեցին Դեմոնգադում: 46 Մեկնեցին Դեմոնգադից եւ բանակատեղի դրեցին Գեղմոնդեբղաթէմում: 47 Մեկնեցին Գեղմոնդեբղաթէմից եւ բանակատեղի դրեցին Աբարիմ լեռների վրայ՝ Նաբաւի դիմաց: 48 Մեկնեցին Աբարիմի լեռներից եւ բանակատեղի դրեցին Մովաբացիների երկրից արեւմուտք, Յորդանան գետի մօտ, Երիքովի դիմաց: 49 Նրանք բանակատեղի դրեցին Յորդանան գետի մօտ, Եսիմոթում, որ ձգւում էր մինչեւ Մեղսատով՝ Մովաբացիների երկրից արեւմուտք:

ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

50 Տէրը Մովաբացիների երկրի արեւմտեան մասում, Յորդանան գետի մօտ, Երիքովի դիմաց, խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 51 «Դիմի՛ր իսրայէլացիներին եւ ասա՛ նրանց. "Ահա դուք Յորդանան գետով անցնում էք Քանանացիների երկիրը: 52 Երկրի բոլոր բնակիչներին կը քշէք ձեր առջեւից, կը կործանէք նրանց կոթողները†, ձուլածոյ բոլոր կուռքերը, նրանց բոլոր յուշասիւները կը վերացնէք մէջտեղից: 53 Կ'ոչնչացնէք երկրի բնակիչներին եւ կը բնակուէք այնտեղ, որովհետեւ նրանց երկիրը ձեզ եմ տալու իբրեւ սեփականութիւն: 54 Ըստ ձեր ցեղերի անդամների թուաքանակի, կը բաժանէք այդ երկիրը‡. բազմանդամներին մեծ բաժին կը յատկացնէք, իսկ սակաւանդամներին՝ փոքր բաժին: Իւրաքանչիւր ցեղ թող ստանայ այն, ինչ կը հասնի նրան: Բաժանումը պէտք է կատարուի ըստ ձեր նահապետութեան ցեղերի: 55 Եթէ երկրի բնակիչներին չոչնչացնէք, ձեր կենդանի թողածները փուշ կը լինեն ձեր աչքերին եւ նետեր՝ ձեր կողերին: Նրանք ձեր թշնամիները կը լինեն այն երկրում, որտեղ դուք էք բնակւում: 56 Եւ կը լինի այնպէս, որ ինչ վճռել էի անել նրանց նկատմամբ, կ'անեմ ձեր նկատմամբ"»:

ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

34 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Պատուիրի՛ր իսրայէլացիներին ու նրանց ասա՛. "Դուք, ահա, մտնում էք Քանանացիների երկիրը: Այն իր սահմաններով հանդերձ թող ձեր սեփականութիւնը լինի: 3 Նրա հարաւային սահմանը թող լինի Սին անապատից մինչեւ Եդոմի երկրի մերձակայքը: Հարաւային սահմանները թող անցնեն Մեռեալ ծովի արեւելեան կողմից: 4 Սահմանները հարաւից թող շրջանաձեւ բարձրանան դէպի Ակրաբբինի սարը, անցնեն դէպի Ենակ, ապա դարձեալ դէպի հարաւ մինչեւ Կադէսբառնէ, ապա Արադի աւանը եւ հասնեն Ասեմոն: 5 Այս սահմանները, սկսած Ասեմոնից դէպի եգիպտացիների ձորը, շրջան պիտի կազմեն եւ դուրս գան ծով: 6 Ձեր ծովահայեաց սահմանը թող լինի Մեծ ծովը. դա ձեր ծովահայեաց սահմանն է:

7 Ձեր հիւսիսային սահմանը թող լինի հետեւեալը. Մեծ ծովից ուղիղ գծով մինչեւ Լեռը, 8 այդ լեռից ուղիղ գծով մինչեւ Եմաթի մուտքը: Այն հասնելու է մինչեւ Արադաքի սահմանները: 9 Սահմանագիծն այնտեղից թող անցնի մինչեւ Եփրոնի մերձակայքը եւ հասնի մինչեւ Ասիռնային: Սրանք թող լինեն ձեր հիւսիսային սահմանները:

10 Ձեր արեւելեան սահմանները պէտք է անցնեն Ասիռնայինից մինչեւ Սեպփամար: 11 Այս սահմանագիծը Սեպփամարից թող ձգուի մինչեւ Բեղա՝

†Եբրայերէնում՝ պատկերազարդ կոթողները:
‡Եբրայերէնում՝ երկիրը կը ժառանգէք վիճակ գցելով ...

աղբիւրների արեւելեան կողմը, Բեղայից
Թող ձգուի մինչեւ Քենարի ծովի
արեւելեան կողմը: 12 Սահմանագիծն
այնուհետեւ Թող ձգուի մինչեւ
Յորդանան գետը՝ հասնելով մինչեւ
Մեռեալ ծով: Այդ բովանդակ երկիրն ու
նրա շրջակայքը ձեզ Թող պատկանեն»:
13 Մովսէսը պատուիրեց իսրայէլ-
ցիներին ու ասաց. «Սա է այն երկիրը,
որ պիտի ժառանգէք վիճակ գցելով:
Ինչպէս Տէրն է հրամայել, այն պիտի
տրուի ինը ցեղերին ու Մանասէի կէս
ցեղին, 14 որովհետեւ Ռուբէնի ու Գադի
ցեղերը, ըստ իրենց նահապետների
ընտանիքների, 15 եւ Մանասէի կէս
ցեղը իրենց բաժինն ստացել էին
Յորդանան գետի այն կողմում, Երիքովի
դիմաց, հարաւից դէպի արեւելք ձգուող
մասում»:

ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

16 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. «Սրանք են այն մարդկանց
անունները, 17 որոնք ձեզ պիտի բա-
ժանեն Քանաան երկիրը. Եղիազար քա-
հանայ եւ Նաւէի որդի Յեսու: 18 Ամէն
մի ցեղից վերցրէ՛ք մէկական իշխան,
որոնք երկիրը պիտի բաժանեն ձեր
միջեւ: 19 Սրանք են այդ մարդկանց
անունները. Յուդայի ցեղից՝ Յեփոնէի
որդի Քաղէբ, 20 Շմաւոնի ցեղից՝ Էմիու-
դի որդի Սաղամիէլ, 21 Բենիամինի ցե-
ղից՝ Քասղոդի որդի Ելդադ, 22 Դանի
ցեղից՝ Եգղիի որդի իշխան Բակքիր,
23 Յովսէփի որդիներից Մանասէի ցե-
ղից՝ Սուփիցի[†] որդի իշխան Անիէլ,
24 Եփրեմի ցեղից՝ Սաբաթի որդի իշխան
Կամուէլ, 25 Զաբուղոնի ցեղից՝ Փառ-
նաքի որդի իշխան Եղիսափան, 26 Իսա-
քարի ցեղից՝ Ոզիայի որդի իշխան
Փաղտիէլ, 27 Ասերի ցեղից՝ Սելեմիի
որդի իշխան Աքիոր, 28 Նեփթաղիմի
ցեղից՝ Մէսուդի որդի իշխան Փագայէլ:
29 Տէրը սրանց հրամայեց Քանանա-
ցիների երկիրը բաժանել իսրայէլա-
ցիների միջեւ»:

[†]Եբրայերէնում՝ Եփոդ:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԸ

35 Տէրը Մովաբացիների երկրի
արեւմտեան մասում, Յորդանան գետի
եզերքին, Երիքովի դիմաց, խօսեց
Մովսէսի հետ եւ ասաց. 2 «Հրամայի՛ր
իսրայէլացիներին, որ իրենց բաժին
հասած կալուածքներից բնակուելու
համար քաղաքներ, ինչպէս եւ իրենց
քաղաքների շուրջն ընկած արօտա-
վայրերը տան ղեւտացիներին: 3 Այդ
քաղաքները նրանց բնակութեան
վայրերը Թող լինեն, իսկ առանձ-
նացուած արօտավայրերը Թող լինեն
նրանց ոչխարների հօտերի եւ ամէն
տեսակ չորքոտանիների համար արա-
ծելու վայրեր: 4 Քաղաքների շուրջը
գտնուող արօտավայրերը, որ տալու էք
ղեւտացիներին, իւրաքանչիւր քաղաքի
պարիսպներից սկսած շուրջանակի
պէտք է ունենան երկու հազար
կանգուն տարածութիւն: 5 Քաղաքից
դուրս, արեւելեան կողմում չափեցէ՛ք
երկու հազար կանգուն, ծովի կողմում՝
երկու հազար կանգուն, հիւսիսային
կողմում՝ երկու հազար կանգուն,
հարաւային կողմում՝ երկու հազար
կանգուն: Դրանց մէջտեղում գտնուող
քաղաքը, ինչպէս եւ նրա շուրջն ընկած
տարածքը պէտք է պատկանեն
ղեւտացիներին: 6 Ղեւտացիներին, բացի
յիշեալ քաղաքներից, պէտք է տրուի
վեց քաղաք եւս, որոնք ապաստան
պիտի ծառայեն սպանութիւն գործած
մարդկանց: Այս բոլոր քաղաքներից
բացի, նրանց պիտի տաք քառա-
սուներկու քաղաքներ: 7 Ղեւտացիներին
տրուելիք քաղաքների թիւը կազմելու է
քառասունուութ՝ իրենց արօտավայրերով
հանդերձ: 8 Իսրայէլացիների ժառան-
գած կալուածքներից ղեւտացիներին
տրուելիք քաղաքները պիտի լինեն ըստ
նրանց ստացած քաղաքների թուի. շատ
ստացողը շատ պիտի տայ, քիչ
ստացողը՝ քիչ: Իւրաքանչիւր ցեղ ըստ
ժառանգա՛ծ տարածութեան քաղաքներ
Թող տայ ղեւտացիներին»:

ԱՊԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐ
(Բ Օր. 19. 1-13, Յեսս. 20. 1-9)

9 Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ
ասաց. 10 «Դիմի՛ր իսրայէլացիներին ու
նրանց ասա՛. "Դուք, ահա, Յորդանան
գետի վրայով անցնում էք Քանա-
նացիների երկիրը: 11 Այնտեղ առանձ-
նացրէ՛ք քաղաքներ, որոնք ձեզ համար
որպէս ապաստան պիտի ծառայեն, երբ
մի մարդասպան այնտեղ փախչի: Ով
ակամայ մէկին սպանի, այդ քաղաքները
սպանողի արեան վրէժխնդրութիւնից
փրկուելու համար ապաստան Թող
լինեն: 12 Սպանողը Թող մահուան չդա-
տապարտուի, մինչեւ ժողովրդի
դատաստանի առջեւ չկանգնի: 13 Ղեւ-
տացիներին տրուելիք քաղաքներից
վեցը որպէս ապաստան Թող ծառայեն:
14 Երեք քաղաք տուէ՛ք Յորդանան
գետի այն կողմում, երեք քաղաք՝
Քանանացիների երկրում: 15 Այդ
քաղաքներն իբրեւ ապաստան Թող ծա-
ռայեն իսրայէլացիներին, այլեւ օտա-
րականների ու ձեր մէջ պանդխտելու
եկածների համար: Այդ քաղաքներն
իբրեւ ապաստան Թող ծառայեն,
որպէսզի այնտեղ փախչեն բոլոր նրանք,
ովքեր ակամայ մարդ են սպանել:
16 Եթէ որեւէ մէկը երկաթէ առար-
կայով հարուածի ու սպանի մէկին, նա
մարդասպան է. մահուան Թող դատա-
պարտուի մարդասպանը: 17 Եթէ որեւէ
մէկը քարով հարուածի ու սպանի մէ-
կին, նա մարդասպան է. մահուան Թող
դատապարտուի մարդասպանը: 18 Եթէ
փայտէ առարկայով հարուածի ու
սպանի մէկին, նա մարդասպան է.
մահուան Թող դատապարտուի մար-
դասպանը: 19 Սպանուածի մերձաւորը
Թող սպանի մարդասպանին. երբ որ
հանդիպի նրան, Թող սպանի: 20 Եթէ
որեւէ մէկը թշնամութեան հողի վրայ
հրի մի մարդու, չարամտութեամբ նրա
վրայ որեւէ իր նետելով սպանի 21 կամ
քինախնդրութեան համար հարուածի
ձեռքով ու սպանի նրան, նա մահուան
Թող դատապարտուի: Նա մարդասպան
է. մահուան Թող դատապարտուի
մարդասպանը: Սպանուածի մերձաւորը
ուր որ հանդիպի նրան, Թող սպանի:

22 Իսկ եթէ սխալմամբ եւ ոչ թէ
թշնամութեան հողի վրայ է հրել նրան,
նրա վրայ նետել որեւէ իր ոչ չար
դիտաւորութեամբ, 23 կամ մահ պատ-
ճառող քարով առանց չարամտութեան
է հարուածել նրան ու սպանել, սակայն
սպանուողը նրա թշնամին չէր, եւ նա
չէր ցանկանում նրան չարիք պատ-
ճառել, 24 այդ դէպքում ժողովուրդը
հարուածողին սպանուածի մերձաւորի
ներկայութեամբ դատ Թող անի ըստ
հետեւեալ դատաստանի. 25 ժողովուրդը
սպանողին Թող փրկի սպանուածի
մերձաւորների ձեռքից: Թող ժողովուրդը
նրան ուղարկի ապաստան-քաղաք, ուր
նա ապաստանել էր: Նա Թող բնակուի
այնտեղ, մինչեւ որ վախճանուի սուրբ
իւղով օծուած քահանայապետը: 26 Իսկ
եթէ սպանողը դուրս գայ այն քաղաքի
սահմաններից, որտեղ ապաստանել էր,
27 եւ սպանուածի մերձաւորը նրան
գտնի նրա ապաստանած քաղաքի սահ-
մաններից դուրս, ապա սպանուածի
արիւնակիցը Թող սպանի մարդասպա-
նին եւ մահապարտ չդիտուի: 28 Դրա
համար էլ մարդասպանը պէտք է
բնակուի իր ապաստանած քաղաքում,
մինչեւ որ վախճանուի քահանա-
յապետը: Քահանայապետի վախճա-
նուելուց յետոյ միայն մարդասպանը
Թող վերադառնայ իր կալուածքը: 29 Սա
ձեր սերունդների մէջ արդարադատու-
թեան օրէնք Թող լինի ձեր բնակութեան
բոլոր վայրերում:
30 Ով որ մէկին սպանի, վկաներո՛վ
Թող սպանեն մարդասպանին: Մէկ հո-
գու վկայութիւնը բաւարար չէ մահուան
վճիռ արձակելու համար: 31 Մահա-
պարտ մարդասպանից փրկագին չպէտք
է վերցնէք: Նա պէտք է մահապատժի
ենթարկուի: 32 Ապաստան-քաղաք
փախչելու համար մարդասպանից
փրկագին չպէտք է վերցնէք, նոյնպէս
եւ՝ մինչեւ քահանայապետի վախ-
ճանումը իր երկրում նորից բնակուելու
համար: 33 Մի՛ պղծէք երկիրը. երկիրն
իր վրայ թափուած արեան համար այլ
հատուցում չի պահանջում, քան
հեղումը նրա՛ արեան, ով արիւն է
թափել: 34 Մի՛ պղծէք այն երկիրը, ուր
բնակւում էք, եւ ուր բնակւում եմ ես

ձեր մէջ, քանզի ես եմ Տէր Աստուածը, որ բնակւում է իսրայէլացիների մէջ"»:

ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԿԱՆԱՆՑ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

36 *Յովսէփի որդիներից Մանասէի որդի Մաքիրի որդի Գաղաադի ընտանիքի իշխանները, դիմելով Մովսէսին, Եղիազար քահանային ու իսրայէլացիների նահապետների ընտանիքների իշխաններին, ասացին.* 2 *«Տէրը մեր տիրոջը՝ Մովսէսին հրամայել է, որ վիճակ գցելով՝ Քանանացիների երկիրը բաժանուի իսրայէլացիների միջեւ: Տէրը մեր տիրոջը հրամայել է նաեւ, որ մեր եղբայր Սաղպաադի բաժինը տրուի նրա դուստրերին:* 3 *Արդ, եթէ նրանք ամուսնանան իսրայէլացի մի այլ ցեղի տղամարդկանց հետ, ապա նրանց բաժին պիտի յատկացուի իրենց ցեղի սեփականութիւնից եւ աւելանայ այն ցեղի ժառանգութեան վրայ, որոնց կնութեան կը գնան: Այսպիսով մեր ժառանգութիւնից այդ բաժինը պիտի վերանայ:* 4 *Եւ երբ գայ իսրայէլացիների փրկութեան տարին, նրանց ժառանգութիւնը վերջնականապէս կը գումարուի այն ցեղի ժառանգութեան վրայ, որոնց կնութեան են գնացել, որով մեր ցեղի ժառանգութիւնից նրանց բաժին ընկած ժառանգութեան մասը պիտի վերանայ»:*

5 *Մովսէսը, Յովսէփի մարդկանց ասածի մասին, Տիրոջ հրամանով իսրայէլացիներին ասաց.* 6 *«Սաղպաադի դուստրերին Տէրը հետեւեալ հրամանն է տուել եւ ասել. "Նրանք թող ամուսնանան այն տղամարդկանց հետ, որոնք իրենց աչքին հաճելի կը թուան, պայմանով որ այդ տղամարդիկ իրենց հայրակա՛ն ցեղից լինեն:* 7 *Իսրայէլացիների ժառանգութիւնը ցեղից ցեղ թող չանցնի, որպէսզի իսրայէլացիներից իւրաքանչիւրը ի՛ր ցեղի հայրենի ժառանգութեանը կապուի:* 8 *Իսրայէլացիների որեւէ ցեղից ժառանգութիւն ստացած ամէն մի աղջիկ թող դառնայ իր հայրակա՛ն ցեղին պատկանող որեւէ տղամարդու կինը, որպէսզի իսրայէլացիները ամուսնանալուց յետոյ էլ պահպանեն իրենց հայրենի ժառանգութիւնը:* 9 *Ժառանգութեան բաժինը մի ցեղից միւսը չպէտք է անցնի, իսրայէլացիներից իւրաքանչիւրը պէտք է կապուի իր ժառանգած կալուածքին"»:*

10 *Եւ ինչպէս Տէրը հրամայել էր Մովսէսին, այդպէս էլ արեցին Սաղպաադի դուստրերը:* 11 *Թերսան, Էգղան, Մեղքան, Նուան եւ Մաաղան՝ Սաղպաադի դուստրերը, ամուսնացան իրենց հօրեղբայրների որդիների հետ:* 12 *Նրանք Յովսէփի որդիներից Մանասէի ցեղի տղամարդկանց կանայք դարձան, եւ նրանց ժառանգութիւնը մնաց իրենց հօր ազգատոհմին:*

13 *Սրանք են այն պատուիրանները, օրէնքներն ու դատաստանները, որ Տէրը Մովաբացիների երկրի արեւմտեան մասում, Յորդանան գետի եզերքին, Երիքովի դիմաց տուեց Մովսէսի միջոցով:*

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ

Ներածութիւն

Թուոց գրքի վերջում ներկայացուած է աւետեաց երկիր հասած իսրայէլացի ժողովուրդը: Երկրորդումն Օրինաց գիրքը, որը նրա շարունակութիւնն է, պարունակում է նախ երեք ճառ, որ Մովսէսն ուղղում է իսրայէլացիներին: Դրանցում Մովսէսը յիշեցնում է այն բոլոր գործերը, որ Աստուած կատարեց իր ժողովրդի համար՝ նրա հանդէպ ունեցած իր անսպառ սիրով. նա դաշինք կնքեց նրա հետ, քառասուն տարի առաջնորդեց նրան անապատն անցնելիս, պաշտպանեց թշնամիներից եւ նրան տուեց իր պատուիրաններն ու խոստումները: Սակայն սա սոսկական կրկնութիւնը չէ նախորդ գրքերից արդէն ծանօթ եղելութիւնների եւ օրէնքների: Մովսէսն այստեղ խօսում է որպէս եռանդուն մի քարոզիչ, որ հրաւիրում է իր ունկնդիրներին՝ յիշելու Տիրոջ հաւատարմութիւնը եւ, հետեւաբար, ընտրելու հաղորդական կեանքը ճշմարիտ Աստծու հետ. «Լսի՛ր, ժողովո՛ւրդ Իսրայէլի. Տէրը, միայն Տէրն է մեր Աստուածը: Դու պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ զօրութեամբ»: Այս խօսքը հանդիսանում է իսրայէլացի հաւատացեալների հաւատոյ հանգանակի եւ նրանց ամենօրեայ աղօթքի սկիզբը:

Գրքի վերջին չորս գլուխները պարունակում են երկու բանաստեղծական հատուածներ եւ երկու պատմութիւններ. դրանք են մի կողմից՝ գովաբանական մի երգ, որ ծանօթ է «Մովսէսի երգ» անունով, ինչպէս նաեւ մի շարք օրհնաբանութիւններ, որ Մովսէսն արել է Իսրայէլի տասներկու ցեղերի մասին, իսկ միւս կողմից՝ այն հատուածը, որը ցոյց է տալիս, թէ ինչպէս Յեսուն նշանակուեց Մովսէսի յաջորդը՝ իսրայէլացիներին առաջնորդելու համար դէպի աւետեաց երկիրը, ապա Մովսէսի մահուան պատմութիւնը:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1 Սրանք են այն պատգամները, որ Մովսէսը տուեց բոլոր իսրայէլացիներին Յորդանան գետի այն կողմում՝ անապատի արեւմտեան մասում, Կարմիր ծովի մօտ, Փառանտիփողի, Ղոբանի, Հանգրուանների ու Ոսկեկի միջեւ: 2 Սէիր լերան վրայով տասնմէկ օրուայ ճանապարհ է Քորեբից Կադէսբառնեայ: 3 Քառասուներորդ տարուայ տասնմէկերորդ ամսուայ առաջին օրը Մովսէսը բոլոր իսրայէլացիներին ասաց այն ամէնը, ինչ Տէրը նրանց վերաբերեալ պատուիրել էր իրեն: 4 Եսեբոնում բնակուող ամորհացիների արքայ Սեհոնին եւ Աստարոթում ու Եդրայինում բնակուող Բասանի արքայ Օգին հարուածելուց յետոյ 5 Յորդանան գետի այն կողմում՝ Մովաբի երկրում, Մովսէսն սկսեց յայտնել այս օրէնքներն՝ ասելով.

6 «Մեր Տէր Աստուածը մեզ հետ խօսելով Քորեբում՝ ասաց. "Բաւական է որքան բնակուեցիք այս լերան վրայ: 7 Ելէք գնացէ՛ք դուք այստեղից, մտէ՛ք ամորհացիների լեռը, նրանց մօտ, ովքեր բնակւում են Արաբայի շուրջը՝ դէպի լեռները ու դաշտերը, դէպի հարաւ ու Քանանացիների երկրի ծովեզերքը, դէպի Անդրլիբանան, մինչեւ Մեծ կամ Եփրատ գետը: 8 Տեսէ՛ք, ահա ձեզ յանձնեցի այդ երկիրը. մտէ՛ք ու իբրեւ սեփականութիւն ստացէ՛ք այդ երկիրը, որը ես երդուեցի տալ ձեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, նրանց ու նրանց յետնորդներին, մի երկիր, ուր մեղր ու կաթ է հոսում"»:

ՄՈՎՍԷՍԸ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ Է ԿԱՐԳՈՒՄ
(Ելք 18. 13-27)

9 «Ես ձեզ հետ խօսել եմ դեռ այն ժամանակ եւ ասել. 10 "Ես միայնակ չեմ կարող ձեզ առաջնորդել: Մեր Տէր Աստուածը ձեզ բազմացրել է, եւ ահա դուք այսօր երկնքի աստղերի չափ շատ էք: 11 Մեր հայրերի Տէր Աստուածը, ինչպէս որ կաք, հազարապատիկ թող աւելացնի եւ օրհնի ձեզ, ինչպէս խոստացել է ձեզ: 12 Ես ինչպէ՞ս կարող եմ միայնակ կրել ձեր նեղութիւնները, քաշել ձեր հոգսերն ու հանդուրժել ձեր հակամարտութիւնները: 13 Արդ, ձեր ցեղերի միջից առանձնացրէ՛ք իմաստուն, խոհեմ ու շրջահայեաց մարդկանց, որպէսզի նրանց ձեզ վրայ իշխաններ կարգեմ: 14 Դուք ինձ պատասխան տուեցիք եւ ասացիք, թէ՝ "Լաւ է, եթէ քո ասածը անես": 15 Այն ժամանակ ես ձեզանից վերցրի ցեղապետներ, իմաստուն, շրջահայեաց ու խոհեմ մարդկանց, նրանց նշանակեցի ձեզ առաջնորդներ՝ հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ եւ ձեր դատաւորների գրագիրներ:

16 Դեռ այն ժամանակ ես պատուիրելով ասացի ձեր դատաւորներին. "Լսեցէ՛ք ձեր եղբայրների միջեւ եղած խնդիրները եւ ամէն մարդու դատը՝ թէ՛ իր եղբօր եւ թէ՛ եկուորի հետ, արդարութեամբ վճռեցէ՛ք: 17 Դատաստան անելիս կողմնակալութիւն չանէք: Հաւասարապէս կը դատէք փոքրին ու մեծին: Ոչ մէկի հանդէպ աչառութիւն մի՛ արէք, որովհետեւ դատաստանը Աստծունն է: Ձեր ուժից վեր գործը կը յանձնէք ինձ, որ ես լսեմ": 18 Դեռ այն ժամանակ ես ձեզ պատուիրել եմ այն ամէնը, ինչ պէտք է անէք»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՀԱՒԱՏ ՉԻ ԸՆԴԱՅՈՒՄ ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ԵՐԿՐԻՆ
(Թուեր 13. 1-33)

19 «Քորեբից չուելով ու ամորհացիների լեռնային ճանապարհով, ինչպէս մեր Տէր Աստուածը պատուիրել էր մեզ, անցանք ձեր տեսած մեծ, անծայրածիր անապատը եւ եկանք մինչեւ Կադէսբառնեայ: 20 Ես ձեզ ասացի. "Եկաք մինչեւ ամորհացիների լեռը, որ մեր Տէր Աստուածը տալիս է ձեզ: 21 Տեսաք, որ ահա մեր Տէր Աստուածը երկիրը ձեր աչքի առջեւ բաժանել է մեր միջեւ: Ելէ՛ք եւ ժառանգեցէ՛ք երկիրն այնպէս, ինչպէս մեր հայրերի Տէր Աստուածն է ասել ձեզ: Մի՛ վախեցէք եւ մի՛ սարսափէք":

22 Բոլորդ, սակայն, մօտենալով ինձ՝ ասացիք. "Մեզանից առաջ մարդիկ ուղարկենք, թող հետախուզեն երկիրը, մեզ թող յայտնեն մեր գնալիք ճանապարհի եւ այն քաղաքների վիճակը, ուր մտնելու ենք": 23 Ինձ ընդունելի թուացին այդ խօսքերը: Ես ձեզանից վերցրի տասներկու մարդ՝ ամէն մի ցեղից մէկ տղամարդ: 24 Նրանք գնացին դէպի լեռը, հասան մինչեւ Ողկոյզի ձորն ու հետախուզեցին այն: 25 Նրանք վերցրին երկրի պտուղներից, վերադարձան մեզ մօտ եւ մեզ տեղեկութիւն բերելով՝ ասացին. "Լաւ է այն երկիրը, որ Տէր Աստուածը տալու է մեզ": 26 Դուք չկամեցաք գնալ, չլսեցիք մեր Տէր Աստծու խօսքը 27 եւ տրտնջալով ձեր վրաններում՝ ասացիք. "Տէրը մեր հանդէպ իր ունեցածատելութիւնից է, որ մեզ դուրս հանեց եգիպտացիների երկրից, որպէսզի մեզ մատնի ամորհացիների ձեռքը, կոտորի մեզ: Արդ, ո՞ւր ենք գնում: 28 Ձեր եղբայրները վախ գցեցին ձեր սրտերն՝ ասելով. "Այդ երկրի մարդիկ մեզանից մեծ, բազմանդամ ու հզօր են, նրանց քաղաքները մեծ են ու մինչեւ երկինք հասնող պարիսպներ ունեն: Բացի այդ, հսկաների սերունդ տեսանք մենք այնտեղ": 29 Ես ասացի ձեզ. "Մի՛ վախեցէք, մի՛ զարհուրէք նրանցից: 30 Մեր Տէր Աստուածը, որ գնում է ձեր առջեւից, ձեր փոխարէն կը պատերազմի նրանց դէմ, ինչպէս ձեր աչքի առջեւ ձեզ համար դա արեց Եգիպտացիների երկրում 31 եւ այս անապատում, ինչպէս որ տեսաք: Որովհետեւ քո Տէր Աստուածը խնամեց քեզ այնպէս, ինչպէս ծնողն է խնամում իր որդուն: Այդ արեց ձեր ամբողջ երթի ընթացքում, մինչեւ որ եկաք հասաք այս վայրը: 32 Այս խօսքից յետոյ էլ չհաւատացիք, 33 որ ձեր Տէր Աստուածը ձեր երթի ժամանակ գնում է ձեր առջեւից, որպէսզի ձեզ համար տեղ ընտրի, որպէսզի ձեր ուղին ցոյց տալու համար գիշերը ձեզ առաջնորդի հրով, իսկ ցերեկը՝ ամպով"»:

ՏԷՐԸ ՊԱՏԺՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ
(Թուեր 14. 20-45)

34 «Տէրը լսեց ձեր խօսքերը, բարկացաւ ու երդուեց՝ ասելով. 35 "Այս մարդկանցից ոչ ոք[†] չի տեսնելու այն լաւ երկիրը, որ երդուել էի տալ նրանց հայրերին, 36 բացի Յեփոնէի որդի Քաղէբից: Նա պիտի տեսնի այն, ես նրան ու նրա որդիներին պիտի տամ այն երկիրը, ուր պիտի հասնեն, որովհետեւ նա հնազանդ է եղել Տիրոջը": 37 Եւ Տէրը ձեր պատճառով բարկանալով ինձ վրայ՝ ասաց. "Դու էլ չես մտնի այնտեղ, 38 այլ Նաւէի որդի Յեսուն՝ քո սպասաւորը. նա՛ պիտի մտնի այնտեղ: Նրան զօրացրո՛ւ, որովհետեւ նա է այդ երկիրը յանձնելու իսրայէլացիներին: 39 Ձեր յետնորդներն ու որդիները, որոնց վերաբերեալ ասացիք, թէ իբր գերի կ'ընկնեն նրանք, եւ բոլոր մատաղ այն մանուկները, որոնք այսօր դեռեւս չգիտեն չարն ու բարին, նրանք թող մտնեն այնտեղ, նրանց պիտի տամ այն, եւ նրանք են, որ պիտի ժառանգեն այն: 40 Դուք վերադարձէ՛ք եւ Կարմիր ծով տանող ճանապարհով գնացէ՛ք անապատը":

41 Այն ժամանակ դուք պատասխան տուեցիք ինձ՝ ասելով. "Մեղք գործեցինք մեր Տէր Աստծու առջեւ: Ելնենք ու պատերազմ տանք, ինչպէս մեզ պատուիրել է մեր Տէր Աստուածը": Եւ իւրաքանչիւրդ, առնելով ձեր պատերազմելու զէնքը, հաւաքուեցիք ու բարձրացաք լեռը: 42 Տէրն ինձ ասաց. "Նրանց ասա՛. մի՛ բարձրացէք լեռը, պատերազմ մի՛ մղէք, քանի որ ես ձեզ հետ չեմ: Ձեզ կը ջախջախեն ձեր թշնամիները": 43 Տիրոջ խօսքերը յայտնեցի ձեզ, բայց դուք չլսեցիք ինձ, զանց առաք Տիրոջ խօսքը, ընդվզեցիք եւ լեռը բարձրացաք: 44 Այդ լերան վրայ բնակուող ամորհացիները մեղուների պէս ձեր դէմ ելնելով՝ հալածեցին, կոտորեցին ձեզ Սէիրից մինչեւ Հերմա: 45 Դուք նստած լաց էիք լինում Տիրոջ առջեւ, բայց Տէրը չլսեց ձեր ձայնը, ձեզ չանսաց: 46 Դուք

[†]Եբրայերէնը յաւելեալ ունի՝ այս անօրէն ազգից:

Կադէսում նստեցիք երկար ժամանակ, այնքան, որքան նախկինում էիք նստել այնտեղ»:

ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

2 «Կարմիր ծով տանող ճանապարհով մենք վերադարձանք, եկանք անապատ, ինչպէս Տէրն էր ասել ինձ, եւ շատ օրեր պտտուեցինք Սէիր լեռան շուրջը:
2 Տէրն ինձ ասաց. "Բաւական է որքան պտտուեցիք լեռան շուրջը: Այժմ ուղղութիւն վերցրէ՛ք դէպի հիւսիս: 3 Ժողովրդիդ պատուիրի՛ր՝ ասելով. 4 "Դուք, ահա, անցնում էք Սէիրում բնակուող ձեր եղբայրների՝ Եսաւի որդիների սահմանը: Նրանք ձեզանից պիտի վախենան: 5 Խիստ զգո՛յշ եղէք, նրանց դէմ պատերազմ չհրահրէք, որովհետեւ նրանց երկրից մի ոտնաչափ անգամ հող չեմ տալու ձեզ, քանի որ Սէիր լեռը Եսաւին եմ տուել իբրեւ սեփականութիւն: 6 Ուտելիքը նրանցից գնեցէ՛ք ու կերէ՛ք, ջուրը նրանցից առէ՛ք արծաթով ու խմեցէ՛ք: 7 Մեր Տէր Աստուածը քեզ օրհնել է քո ձեռնարկած բոլոր գործերում: Իմացի՛ր, թէ ինչպէս անցար մեծ ու հսկայական անապատը: Ահա քառասուն տարի է, ինչ քո Տէր Աստուածը քեզ հետ է, եւ այդ ընթացքում ոչ մի բանի պակասութիւն չես զգացել":

8 Մենք Սէիրում բնակուող մեր եղբայրների՝ Եսաւի որդիների կողքով, Արաբայի ճանապարհով անցանք Եղոմից ու Գասիոնգաբերից, շրջուեցինք ու անցանք նաեւ Մովաբի անապատ տանող ճանապարհով: 9 Տէրն ինձ ասաց. "Թշնամութիւն մի՛ արէք մովաբացիների հետ, նրանց դէմ պատերազմ մի՛ հրահրէք, որովհետեւ նրանց երկրից ձեզ բաժին չեմ տայ, քանի որ Սէիրը Ղովտի որդիներին եմ տուել իբրեւ սեփականութիւն: 10 (Նախկինում Օմմինի յետնորդներն էին ապրում այնտեղ՝ մի մեծ, բազմանդամ ու հզօր ազգ, նման Ենակիմի որդիների: 11 Սրանք էլ Ռափիմի ցեղին էին պատկանում, ինչպէս եւ Ենակիմի որդիները, եւ մովաբացիները նրանց անուանում են օմմինեաններ: 12 Սէիրում նախ բնակւում էին քոռեցիները: Եսաւի որդիները, սակայն, կոտորեցին նրանց, հալածեցին եւ բնակուեցին նրանց երկրում, ինչպէս Իսրայէլը վարուեց իր ժառանգած այն երկրի բնակիչների հետ, որ Տէրը տուել էր նրան):
13 Արդ, վե՛ր կացէք գնացէ՛ք ու անցէ՛ք Զարեդ ձորով":

14 Կադէսբառնեայից մինչեւ Զարեդ ձորն անցնելը տեւեց երեսունութ տարի: Այդ ընթացքում պատերազմող բանակի բոլոր տղամարդիկ կոտորուեցին, ինչպէս որ Աստուած երդուել էր նրանց: 15 Աստծու ձեռքը նրանց վրայ էր, որպէսզի նրանց կորստեան մատնի բանակատեղիում: Եւ նրանք բոլորն էլ ընկան:

16 Երբ ժողովրդի միջից վերացան պատերազմող բոլոր տղամարդիկ, Տէրը խօսեց ինձ հետ եւ ասաց. 17 "Դու այսօր Մովաբի սահմանով կ'անցնես Սէիր: 18 Դուք կը մօտենաք Ամոնացիների երկրի սահմաններին: 19 Նրանց հետ թշնամութիւն մի՛ արէք, նրանց դէմ պատերազմ մի՛ հրահրէք, որովհետեւ Ամոնացիների երկիրն իբրեւ սեփականութիւն ձեզ չեմ տայ. դա վիճակ գցելով Ղովտի որդիներին եմ տուել: 20 (Երկիրը Ռափնային էր պատկանում, քանի որ նախ ռափայինեան ցեղերն† էին բնակւում այնտեղ: Ամոնացիները նրանց անուանում էին զոմզոմեաններ: 21 Նրանք ենակիմեանների նման մեծ, բազմամարդ ու հզօր ազգ էին: Տէրը սրանց վերացրեց մէջտեղից, եւ ենակիմեանները բնակուեցին այդտեղ՝ նրանց փոխարէն: 22 Տէրն ինչ որ արեց Եսաւի՝ Սէիրում բնակուող յետնորդների նկատմամբ, նոյնն արեց քոռեցիների նկատմամբ. կոտորեց նրանց, եւ Եսաւի յետնորդներն ստանալով այդ երկիրը՝ նրանց փոխարէն բնակւում են այդտեղ մինչեւ այսօր: 23 Խեւացիները, որոնք բնակւում էին Ասիրոթից մինչեւ Գազա, ու Գամիրքից դուրս եկած գամիրցիները կոտորեցին նրանց ու նրանց փոխարէն բնակուեցին այդ երկրում):
24 Արդ, վե՛ր կացէք գնացէք Առնոնի

†Իմա՞ հսկայամարմին մարդիկ:

ձորը: Ահա քո ձեռքն եմ յանձնում Եսեբոնի արքայ ամորհացի Սեհոնին: Սկսի՛ր տիրել նրա երկրին եւ պատերազմ հրահրել նրա դէմ: 25 Այսօրուանից սկսի՛ր ահ ու սարսափ տարածել երկնքի տակ գտնուող բոլոր ազգերի վրայ: Ով որ լսի քո անունը, պիտի դողայ, եւ քո սարսափը պիտի պատի նրանց"»:

ՍԵՀՈՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ
(Թուեր 21. 21-30)

26 «Կեդմոթի անապատից բանագնացներ ուղարկեցի Եսեբոնի արքայ Սեհոնի մօտ խաղաղութեան առաջարկով եւ ասացի. 27 "Պիտի անցնեմ քո երկրով: Ճանապարհով կը գնամ, աջ կամ ձախ չեմ թեքուի: 28 Արծաթով պարէն վաճառի՛ր ինձ, որ ուտեմ, արծաթով ջուր վաճառի՛ր ինձ, որ խմեմ, միայն թէ քայլելով անցնեմ: 29 Թող լինի այնպէս, ինչպէս որ Սէիրում բնակուող Եսաւի յետնորդները եւ Արոյերում բնակուող մովաբացիները վարուեցին ինձ հետ, մինչեւ որ Յորդանան գետով անցնեմ այն երկիրը, որ Տէր Աստուածը տալու է մեզ": 30 Եսեբոնի արքայ Սեհոնը, սակայն, չկամեցաւ, որ մենք անցնենք նրա երկրով, որովհետեւ մեր Տէր Աստուածը խստացրել էր նրա ոգին ու կարծրացրել նրա սիրտը, որպէսզի նրան այդ օրը յանձնի քո ձեռքը: 31 Տէրն ինձ ասաց. "Ահա սկսել եմ Եսեբոնի արքայ ամորհացի Սեհոնին ու նրա երկիրը յանձնել քեզ: Սկսի՛ր վիճակ գցելով ժառանգել նրա երկիրը":

32 Եսեբոնի արքայ Սեհոնն ինքն ու իր ժողովուրդը Սիասարում պատերազմի ելան մեր դէմ: 33 Մեր Տէր Աստուածը նրան մատնեց մեր ձեռքը, մենք կոտորեցինք նրան, նրա որդիներին ու նրա ամբողջ ժողովրդին: 34 Այդ ժամանակ նուաճեցինք նրա բոլոր քաղաքները, մէկ առ մէկ աւերեցինք նրա բոլոր քաղաքները, սպանեցինք նրա կանանց ու երեխաներին: Նրանցից ոչ ոքի կենդանի չթողեցինք: 35 Միայն հօտերը աւար վերցրինք եւ կողոպտեցինք Առնոնի ձորի եզերքին գտնուող Արոյերի քաղաքներն 36 ու ձորում գտնուող քաղաքը, մինչեւ Գաղաադի սահմանները: Քաղաք չմնաց, որ փրկուէր մեր ձեռքից. բոլոր քաղաքները Տէր Աստուածը մատնեց մեր ձեռքը, 37 բացի Ամոնացիների երկրից, որին չմօտեցանք, ինչպէս նաեւ Յաբոկի ձորի բոլոր աւաններից ու լեռնային բոլոր քաղաքներից, ինչպէս որ մեր Տէր Աստուածն էր պատուիրել մեզ»:

ՕԳԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ
(Թուեր 21. 31-35)

3 «Այդտեղից վերադառնալով գնացինք Բասան տանող ճանապարհով: Բասանի արքայ Օգը, ինքն ու իր ամբողջ ժողովուրդը Սեդրայինում պատերազմի ելան մեր դէմ: 2 Տէրն ինձ ասաց. "Նրանից մի՛ վախեցիր, որովհետեւ քո ձեռքն եմ մատնելու նրան, նրա ամբողջ ժողովրդին ու նրա ամբողջ երկիրը: Նրա հետ կը վարուես այնպէս, ինչպէս վարուեցիր Եսեբոնում բնակուող ամորհացի արքայ Սեհոնի հետ": 3 Եւ մեր Տէր Աստուածը Բասանի արքայ Օգին ու նրա ամբողջ ժողովրդին մատնեց մեր ձեռքը: Մենք կոտորեցինք նրանց այնպէս, որ նրանցից ոչ ոք կենդանի չմնաց: 4 Այդ ժամանակ մենք նուաճեցինք նրա բոլոր քաղաքները: Քաղաք չկար, որ նրանից խլած չլինէինք: Բասանի Օգ թագաւորը Արգոբ գաւառի շրջակայքում ունէր ընդամէնը վաթսուն քաղաք: 5 Բոլոր քաղաքներն ամրացրել էին բարձր պարիսպներով, դարպասներով ու դռնափակերով, բացի փերեզացիների չամրացուած քաղաքներից, որոնք բաւական շատ էին: 6 Նրանց կոտորեցինք այնպէս, ինչպէս Եսեբոնի արքայ Սեհոնին: Մէկ առ մէկ աւերեցինք բոլոր քաղաքները, կոտորեցինք կանանց ու մանուկներին: Ոչ մէկը մազապուրծ չեղաւ: 7 Բոլոր անասունները աւար առանք ու քաղաքները կողոպտեցինք: 8 Այդ ժամանակ ամորհացիների երկու թագաւորներից գրաւեցինք Յորդանան գետի այն կողմում գտնուող երկիրը Առնոնից մինչեւ Հերմոն: 9 Փիւնիկեցիները Հերմոնն

անուանում էին Սանիր, իսկ ամորհացիները՝ Սանիր: 10 Միսորի բոլոր քաղաքները, ամբողջ Գաղաադը, ամբողջ Բասանը մինչեւ Եղքա ու Եդրային Օգի թագաւորութեան քաղաքներն էին Բասանում: 11 Ռափայիմներից մնաց միայն Բասանի թագաւոր Օգը: Նրա մահճակալը, որ երկաթից էր, հիմա գտնւում է Ամոնի յետնորդների ամրոցում: Հսկաների կանգունով չափած՝ ինը կանգուն էր դրա երկարութիւնը, եւ չորս կանգուն՝ դրա լայնութիւնը»:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՑԵՂԵՐԸ
(Թուեր 32.1-42)

12 «Այդ երկիրն այն ժամանակ ժառանգեցինք Առնոնի ձորի եզերքում գտնուող Արոյերից սկսած: Գաղաադի ձորի կէսն ու նրա քաղաքները տուեցի Ռուբէնի ու Գադի ցեղերին: 13 Գաղաադի մնացած մասն ու ամբողջ Բասանը՝ Օգի թագաւորութիւնը, նաեւ Արգոբի ամբողջ գաւառն ու ամբողջ Բասանը, որը ռափայիմների երկիր էր համարւում, տուեցի Մանասէի կէս ցեղին: 14 Մանասէի որդի Յայիրը գրաւեց Արգոբի ամբողջ գաւառը մինչեւ Գարգասիի ու Ոմքատիի սահմանները, եւ Բասանն այն իր անունով կոչեց Աւոթիեր, եւ մինչեւ այսօր էլ կոչւում է այդպէս: 15 Ես Մաքիրին տուեցի Գաղաադը, 16 իսկ Ռուբէնի ու Գադի ցեղերին տուեցի Գաղաադից մինչեւ Առնոնի ձորն ընկած երկիրը, որի սահմանն անցնում է ձորի միջով եւ հասնում մինչեւ Յաբոկ: Զորը ամոնացիների սահմանն է: 17 Արաբան ու Յորդանան գետը նրա սահմանն են Քիներեթից մինչեւ Արաբայի ծովը՝ Աղի ծովը, որը գտնւում է Փասգայից արեւելք՝ Ասեդոթում:

18 Այն ժամանակ ես ձեզ պատուիրեցի՝ ասելով. "Մեր Տէր Աստուածը այս երկիրը ձեզ տուեց որպէս ժառանգութիւն: Ձեզանից ով խիզախ է, թող սպառազինուի ու անցնի իր եղբայրների՝ իսրայէլացիների գլուխը: 19 Իսկ ձեր կանայք, երեխաները եւ անասունները (գիտեմ, որ շատ անասուն ունէք) թող բնակուեն ձեր այն քաղաքներում, որ ես տուել եմ ձեզ, 20 մինչեւ որ մեր Տէր Աստուածը տեղաւորի ձեր եղբայրներին, ինչպէս որ ձեզ տեղաւորեց, որպէսզի նրանք էլ ժառանգեն այն երկիրը, որ մեր Տէր Աստուածը տալու է նրանց Յորդանան գետի այն կողմում: Այն ժամանակ կը վերադառնաք ժառանգութիւն ստացած ձեր այն երկիրը, որ ես տուել եմ ձեզ":

21 Այն ժամանակ ես Յեսուին պատուիրեցի՝ ասելով. "Ձեր աչքերով իսկ տեսաք այն ամէնը, ինչ Տէր Աստուածն արեց այդ երկու թագաւորներին: Տէրը նոյն կերպ կը վարուի բոլոր այն թագաւորութիւնների հետ, որոնց վրայ կը յարձակուես դու: 22 Մի՛ վախեցէք, որովհետեւ մեր Տէր Աստուածն ինքն է պատերազմելու ձեր փոխարէն"»:

ՄՈՎՍԷՍԻՆ ՉԻ ԹՈՅԼԱՏՐՈՒՈՒՄ ՄՏՆԵԼ ՔԱՆԱԱՆ

23 «Այդ ժամանակ աղաչեցի Տէր Աստծուն՝ ասելով. 24 "Տէ՛ր, Տէ՛ր, դու սկսեցիր քո ծառային ցոյց տալ քո մեծութիւնն ու զօրութիւնը, ամուր ձեռքն ու հզօր բազուկը: Երկնքում կամ երկրի վրայ գտնուող այդ ո՞ր աստուածն է, որ կարող է անել այն, ինչ դու արեցիր քո զօրութեամբ: 25 Արդ, շնո՛րհ արա, որ անցնեմ, տեսնեմ Յորդանան գետից այն կողմ գտնուող լաւ երկիրը, սքանչելի լեռն ու Անդրլիբանանը": 26 Տէրը ձեր պատճառով զայրացաւ ու ինձ չլսեց: Տէրն ինձ ասաց. "Բաւական է, այլեւս ինձ հետ այդ մասին չխօսես: 27 Բարձրացի՛ր Կոփուած† լերան գագաթը, աչքերովդ նայի՛ր ծովի, հիւսիսի, հարաւի ու արեւելքի ուղղութեամբ, աչքերովդ տե՛ս, որովհետեւ Յորդանան գետի այն կողմը չես անցնելու դու: 28 Քո պատուէրները տո՛ւր Յեսուին, զօրացրո՛ւ, քաջալերի՛ր նրան, որովհետեւ նա է անցնելու իմ այդ ժողովրդի գլուխը, եւ նա է քո տեսած երկիրն իբրեւ սեփականութիւն յանձնելու նրանց": 29 Այն ժամանակ մենք հաստատուեցինք հովտում, Փոգորի տան մօտ»:

†Եբրայերէնում՝ *Փասգայի:*

ՄՈՎՍԷՍԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԵԼ

4 «Արդ, Իսրայէ՛լ, լսի՛ր այն օրէնքներն ու կանոնները, որ այսօր ուսուցանում եմ քեզ: Դրանք պէտք է կիրառէք, որպէսզի ապրէք, մտնէք ու ժառանգէք այն երկիրը, որ մեր Տէր Աստուածը տալու է ձեզ: 2 Ոչ մի բառ չաւելացնէք իմ ասածին ու ոչ մի բառ չկրճատէք դրանից: Պահպանեցէ՛ք մեր Տէր Աստծու այն պատուիրանները, որ ես պատգամում եմ ձեզ: 3 Դուք ձեր աչքերով տեսաք, թէ Տէրն ինչ արեց Բելփեգորին: Մեր Տէր Աստուածը ձեր միջից վերացրեց նրանց, ովքեր հետեւում էին Բելփեգորին, 4 իսկ դուք, որ յարեցիք ձեր Տէր Աստծուն, բոլորդ էլ կենդանի էք մնացել մինչ այսօր: 5 Տեսէ՛ք, ես ձեզ օրէնք ու կանոն սովորեցրի այնպէս, ինչպէս Տէրն ինձ պատուիրել էր, որպէսզի դրանք կիրառուեն այն երկրում, ուր մտնելու էք ու ժառանգելու այն: 6 Պահպանեցէ՛ք ու կիրառեցէ՛ք այդ պատուիրանները, որովհետեւ դրանց մէջ է ձեր իմաստնութիւնն ու խոհեմութիւնը բոլոր ազգերի առաջ, որոնք լսելով այս բոլոր օրէնքները՝ պիտի ասեն. "Ահա՛ւասիկ մի իմաստուն ժողովուրդ, մի խոհեմ ու մեծ ազգ": 7 Որովհետեւ այդ ո՞ր մեծ ազգն է, որի Աստուածն իր մօտ, իր մէջ է, ինչպիսին մեր բոլորի Տէր Աստուածն է, որին կարող ենք դիմել: 8 Եւ այդ ո՞ր մեծ ազգն է, որն ունի այնպիսի արդար օրէնքներ ու կանոններ նման այս օրէնքներին, որ ես այսօր հաղորդում եմ ձեզ»:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՔՈՐԷԲ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

9 «Նայի՛ր ինքդ քեզ եւ եղի՛ր չափազանց զգոյշ. մի՛ մոռացիր այն բոլոր բաները, որ տեսան քո աչքերը. քո կեանքի բոլոր օրերում քո սրտից թող դուրս չգան դրանք: Դրանք կը հաղորդես քո որդիներին ու որդիների որդիներին: 10 Կը պատմես այն օրուայ մասին, երբ ձեր Տէր Աստծու առջեւ ի մի հաւաքուելու համար կանգնեցիք Քորէբում: Այդ ժամանակ Տէրն ինձ ասաց. "Քո մարդկանց հաւաքի՛ր ինձ մօտ, որ նրանք լսեն իմ այն պատգամները, որ սովորեցնելու եմ նրանց, որպէսզի, այնքան ժամանակ որ ապրեն նրանք երկրի վրայ, թող երկնչեն ինձանից ու դրանք սովորեցնեն իրենց որդիներին": 11 Դուք, մօտենալով, կանգնեցիք լերան ստորոտին: Լեռն այրւում էր, եւ կրակը բարձրանում էր մինչեւ երկինք: Խաւար, մէգ ու մառախուղ էր ... 12 Տէրը կրակի միջից խօսեց ձեզ հետ: Դուք լսեցիք պատգամախօսի ձայնը, բայց նրա կերպարանքը չտեսաք, այլ միայն ձայնը լսեցիք: 13 Նա հաղորդեց իր ուխտը, պատուիրեց, որ կատարէք տասը պատուիրանները, եւ դրանք գրեց քարէ երկու տախտակների վրայ: 14 Այդ ժամանակ նա ինձ պատուիրեց, որ ձեզ ուսուցանեմ օրէնքներն ու կանոնները, եւ դուք դրանք կիրառէք այն երկրում, ուր մտնելու էք ու ժառանգելու էք այն»:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԻՑ

15 Զգո՛յշ եղէք. այն օրը, երբ Տէրը Քորէբ լերան վրայ կրակի միջից խօսում էր ձեզ հետ, դուք նրա կերպարանքը չտեսաք: 16 Անօրէնութիւն մի՛ արէք, կուռքեր չստեղծէք տղամարդու կամ կնոջ կերպարանքով, 17 երկրի վրայ գտնուող որեւէ անասունի կերպարանքով, երկնքի տակ թռչող որեւէ թռչունի կերպարանքով, 18 երկրի վրայ սողացող որեւէ սողունի կերպարանքով, երկրի տակ՝ ջրերի մէջ գտնուող որեւէ ձկան կերպարանքով, 19 կամ դէպի երկինք նայելով. արեգակը, լուսինը, աստղերն ու երկնքի բոլոր զարդերը տեսնելով չմոլորուէք, դրանց չերկրպագէք ու դրանք չպաշտէք: Տէր Աստուածը դրանցից բաժին է հանել երկնքի տակ ապրող բոլոր ժողովուրդներին: 20 Աստուած իր հովանաւորութեամբ ձեզ հանեց երկաթէ հնոցից՝ Եգիպտոսից, որպէսզի լինէք իր սեփական ժողովուրդը, ինչ որ է՛ք մինչեւ այսօր:

21 Տէրը ձեր ասած խօսքերի համար բարկացաւ ինձ վրայ եւ երդուեց, որ ես չեմ անցնի Յորդանան գետի այն

կողմը եւ չեմ մտնի այն երկիրը, որ քո Տէր Աստուածը տալու է քեզ իբրեւ ժառանգութիւն: 22 Արդ, ես ահա մեռնում եմ այս երկրում՝ առանց անցնելու Յորդանան գետի այն կողմը: Դուք, սակայն, պիտի անցնէք ու ժառանգէք այդ լաւ երկիրը: 23 Զգո՛յշ եղէք, չլինի թէ մոռանաք մեր Տէր Աստծու ձեզ տուած այն ուխտը, թէ՝ "Որեւէ արարածի կերպարանք ունեցող կուռք չստեղծէ՛ք ձեզ համար": Դա պատուիրել է քեզ քո Տէր Աստուածը, 24 որովհետեւ քո Տէր Աստուածը լափող կրակ է, նախանձոտ Աստուած:

25 Եթէ որդիներ, որդիների որդիներ ծնես ու այդ երկրում երկար ժամանակ ապրես եւ անօրինութիւն անես՝ որեւէ արարածի կերպարանքով կուռք ստեղծես, ձեր Տէր Աստծուն բարկացնելու համար չար գործեր կատարես, 26 ապա այսօր երդւում եմ ձեզ երկինքն ու երկիրը վկայ, որ կը վերանաք Յորդանան գետի այն կողմում գտնուող երկրից, ուր դուք գնում էք, որպէսզի ժառանգէք այն: Երկար կեանք չէք ունենայ այդտեղ, անպայման կը կոտորուէք: 27 Տէրը ձեզ կը ցրի բոլոր ազգերի մէջ, սակաւաթիւ կը լինէք այն ազգերի մէջ, ուր Տէրը կը տանի ձեզ: 28 Այնտեղ կը պաշտէք մարդու ձեռքով կերտուած ուրիշ աստուածներ՝ փայտից ու քարից պատրաստուած, որոնք ո՛չ տեսնում են, ո՛չ լսում, ո՛չ ուտում են եւ ո՛չ էլ հոտառութիւն ունեն: 29 Եթէ այնտեղ նեղութեան մէջ գտնուելով ձեր ամբողջ հոգով ու էութեամբ ցանկանաք փնտռել ու գտնել ձեր Տէր Աստծուն, ապա նրան կը գտնէք: 30 Այս բոլորը իրականութիւն կը դառնայ վերջին օրերին, եւ դու կը դիմես քո Տէր Աստծուն, կը լսես նրա ձայնը, 31 որովհետեւ Աստուած ողորմած է. նա քեզ չի լքի ու քեզ չի կործանի, չի մոռանայ քո հայրերին տուած եւ երդումով հաստատած ուխտը:

32 Երկնքի մի ծայրից սկսած մինչեւ երկնքի միւս ծայրը հարցրէ՛ք ձեզանից առաջ եղած այս օրերի մասին (երբ Աստուած մարդ էր ստեղծել երկրի վրայ), թէ՝ "Այսպիսի մեծ բան կատարուե՞լ է", թէ՝ "Այսպիսի բան լսուե՞լ է", 33 թէ՝ "Մի որեւէ ազգ կրակի միջից խօսող կենդանի Աստծու ձայնը լսե՞լ է", ինչպէս դու լսեցիր ու կենդանի մնացիր, 34 թէ՝ "Աստուած յօժա՞ր էր մտնել ու ազգերի միջից իր համար ազգ ընտրել փորձութեամբ, նշաններով, հնարքներով, պատերազմով, ամուր ձեռքով ու հզօր բազկով, մեծամեծ տեսիլներով՝ այն բոլոր միջոցներով, որ մեր Տէր Աստուածը գործադրեց Եգիպտոսում քո իսկ առջեւ, որպէսզի տեսնես: 35 Ուստի պէտք է իմանաս, որ նա է Տէր Աստուածը, եւ նրանից բացի այլ Աստուած չկայ: 36 Երկնքից լսելի եղաւ նրա խօսքը, որպէսզի խրատի քեզ, երկրի վրայ ցոյց տուեց քեզ իր մեծ կրակը, եւ դու կրակի միջից լսեցիր նրա պատգամները, 37 որովհետեւ նա սիրում է քո հայրերին: Նա բոլոր ազգերի միջից նախընտրեց նրանց յետնորդներին՝ ձեզ, եւ ինքն իր մեծ զօրութեամբ քեզ հանեց Եգիպտոսից, 38 որպէսզի դու հալածես մեծամեծ ու քեզանից հզօր ազգեր, որպէսզի նա քեզ տանի ու իբրեւ սեփականութիւն քեզ տայ նրանց երկիրը, մի բան, որ դու ունես այսօր: 39 Արդ, իմացի՛ր այսօր եւ ի մտի ունեցիր, որ քո Տէր Աստուածը Աստուած է վերեւում՝ երկնքում, եւ ներքեւում՝ երկրի վրայ, եւ նրանից բացի այլ Աստուած չկայ: 40 Պահպանի՛ր նրա օրէնքներն ու պատուիրանները, որոնք ես պատգամում եմ քեզ այսօր, որպէսզի լաւ լինի քեզ ու քեզանից յետոյ գալիք քո որդիների համար, որպէսզի երկար ժամանակ մնաս այն երկրում, որ Տէր Աստուածը առ միշտ քեզ է տալու»:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

41 Այն ժամանակ Մովսէսը Յորդանան գետի այն կողմում, արեւելեան մասում առանձնացրեց երեք քաղաքներ, 42 որպէսզի այնտեղ փախչի այն մարդասպանը, որ իր մերձաւորին սպանում է անգիտութեամբ, եւ որին չէր ատում նախապէս, որպէսզի նա ընկնելով այդ քաղաքներից մէկնումէկը՝ կարողանայ իր կեանքը փրկել:

43 Դրանք են՝ Ռուբէնի երկրի դաշտում գտնուող անապատային Բոսոր քաղաքը, Գադի երկրի Գաղաադում գտնուող Ռամոթ քաղաքը եւ Մանասէի երկրի Բասանում գտնուող Գաղոն քաղաքը:

44 Սա է այն օրէնքը, որ Մովսէսը հաղորդեց իսրայէլացիներին: 45 Սրանք են այն պատուիրանները, օրէնքներն ու կանոնները, որ Մովսէսը յայտնեց իսրայէլացիներին, երբ սրանք դուրս էին գալիս Եգիպտացիների երկրից, 46 Յորդանանի գետի այն կողմում, Փոգորի տան մօտ գտնուող ձորում, Եսեբոնում ապրող ամորհացիների արքայ Սեհոնի երկրում, եւ որի բնակիչներին սպանել էին Մովսէսն ու իսրայէլացիները, երբ սրանք դուրս էին գալիս Եգիպտացիների երկրից: 47 Իսրայէլացիները գրաւեցին ամորհացի երկու թագաւորների՝ Սեհոնի երկիրն ու Բասանի Օգ թագաւորի երկիրը, որոնք գտնուում էին Յորդանան գետից այն կողմ՝ արեւելեան մասում, 48 Առնոնի ձորի եզերքին գտնուող Արոյերից սկսած մինչեւ Սեհոնի լեռը, այսինքն՝ Հերմոնը, 49 ամբողջ Արաբան, որ գտնուում է Յորդանան գետից այն կողմ՝ արեւելեան մասում, մինչեւ Արաբայի ծովը՝ Կոփածոյ լերան ստորոտը:

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ
(Ելք 21. 1-17)

5 Մովսէսը կանչեց բոլոր իսրայէլացիներին եւ ասաց նրանց. «Իսրայէ՛լ, լսի՛ր այն օրէնքներն ու կանոնները, որ ես այսօր հաղորդելու եմ քեզ: Սովորեցէ՛ք եւ հետեւէ՛ք, որ կիրառէք դրանք: 2 Մեր Տէր Աստուածը ուխտ արեց ձեզ Քորէբում: 3 Տէրն այդ ուխտը արեց ոչ թէ ձեր հայրերին, այլ՝ ձեզ, իսկ դուք բոլորդ կենդանի էք այսօր: 4 Տէրը դէմ յանդիման խօսեց ձեզ հետ լերան վրայ, կրակի միջից: 5 Ես այն ժամանակ կանգնած էի Տիրոջ ու ձեր միջեւ, որպէսզի ձեզ յայտնեմ Տիրոջ պատգամները, որովհետեւ դուք վախենում էիք կրակից ու լեռը չբարձրացաք: Տէրն ասաց.

6 "Ես եմ քո Տէր Աստուածը, որ քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից:

7 Իմ առջեւ օտար աստուածներ չունենաս, 8 վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրայ, երկրի տակ՝ ջրերի մէջ գոյութիւն ունեցող որեւէ արարածի կերպարանքով քեզ համար կուռքեր չշինես, 9 դրանց չերկրպագես ու դրանց չծառայես, որովհետեւ ես եմ քո Տէր Աստուածը՝ մի նախանձոտ Աստուած: Ես հայրերի գործած մեղքերի համար հատուցում եմ պահանջում նրանց որդիներից, ինձ ատողների երրորդ ու չորրորդ սերունդներից: 10 Դրա փոխարէն ես ողորմածութիւն եմ ցուցաբերում ինձ սիրողների ու իմ հրամանները կատարողների հազար սերունդների նկատմամբ:

11 Քո Տէր Աստծու անունը սուտ բանի համար չարտասանես, որովհետեւ քո Տէր Աստուածը չի արդարացնի նրան, ով իր անունը սուտ բանի համար է արտասանում:

12 Հետեւի՛ր, որ շաբաթ օրը սուրբ պահես, ինչպէս պատուիրել է քեզ քո Տէր Աստուածը: 13 Վեց օր կ՚աշխատես եւ կը կատարես քո բոլոր գործերը, 14 իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստծու շաբաթ օրն է. դու, քո տղան ու աղջիկը, քո ծառան ու աղախինը, քո եզը, էշն ու բոլոր անասունները, քո յարկի տակ գտնուող եկուորը այդ օրը ոչ մի գործ չպէտք է անէք, որովհետեւ քո ծառան ու աղախինը պէտք է հանգստանան, ինչպէս եւ դու: 15 Յիշի՛ր, որ դու էլ ստրուկ էիր Եգիպտացիների երկրում, եւ քո Տէր Աստուածը այնտեղից քեզ դուրս բերեց ամուր ձեռքով ու հզօր բազկով, որի համար քո Տէր Աստուածը քեզ պատուիրեց պահել շաբաթ օրն ու սրբագործել այն:

16 Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը, ինչպէս պատուիրել է քեզ քո Տէր Աստուածը, որպէսզի լաւ լինի քեզ համար, եւ երկար ապրես այն երկրի վրայ, որ քո Տէր Աստուածը տալու է քեզ:

17 Մի՛ չնացիր:

18 Մի՛ սպանիր:

19 Մի՛ գողացիր:

20 Քո մերձաւորի մասին սուտ վկա-

յութիւն մի՛ տուր:
21 *Քո մերձաւորի կնոջը մի՛ ցանկացիր. աչք մի՛ ունեցիր ո՛չ քո ընկերոջ տան, ո՛չ նրա հանդի, ո՛չ նրա ծառայի, ո՛չ նրա աղախնի, ո՛չ նրա եզան, ո՛չ նրա էշի, ո՛չ նրա որեւէ անասունի, ո՛չ այն ամէնի վրայ, ինչ քո մերձաւորին է պատկանում":*
22 *Տէրը կրակի միջից բարձր ձայնով այս պատգամները յղեց ձեր ժողովրդին լերան վրայ, որը խաւարով, մէգով ու մառախուղով էր պատուած, եւ այլեւս ոչինչ չաւելացրեց: Նա դրանք գրեց քարէ երկու տախտակների վրայ ու տուեց ինձ»:*

ՄՈՎՍԷՍՆ ԱՍՏԾՈՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ
(Ելք 20. 18-21)

23 *«Երբ դուք կրակի միջից ձայնը լսեցիք, եւ լեռը բորբոքուած էր կրակով, ձեր ցեղերի իշխաններն ու ձեր ծերերը ինձ մօտենալով՝ ասացին.* 24 *"Տէր Աստուածը, ահա, մեզ ցոյց տուեց իր փառքն ու իր մեծութիւնը, նրա ձայնը լսեցինք կրակի միջից: Այդ օրը համոզուեցինք, որ Աստուած է խօսում մարդու հետ, եւ մարդը կենդանի է մնում:* 25 *Արդ, չմեռնենք, որովհետեւ այս մեծ կրակը մեզ կը սպանի. եթէ միւս անգամ դարձեալ լսենք մեր Տէր Աստծու ձայնը, ապա կը մեռնենք:* 26 *Որովհետեւ միս ու արիւնից կազմուած այդ ո՞ր մարդն է, որ կրակի միջից լսել է կենդանի Աստծու ձայնը, ինչպէս մենք ենք լսել, ու կենդանի է մնացել:* 27 *Մօտեցի՛ր ու լսի՛ր, ինչ որ մեր Տէր Աստուածը կ'ասի եւ մեզ հաղորդի՛ր այն ամէնը, ինչ մեր Տէր Աստուածը կ'ասի քեզ: Մենք կը լսենք ու կը կատարենք":* 28 *Տէրը լսեց ինձ ասած ձեր խօսքերը, եւ Տէրն ասաց ինձ. "Լսեցի ժողովրդի այն խօսքերը, որ ասացին քեզ: Նրանք ամէն ինչ ճիշտ ասացին:* 29 *Ո՞վ կարող է նրանց սրտերը այնպէս անել, որ երկնչեն ինձանից ու պահեն իմ պատուիրանները բոլոր օրերում, որպէսզի յաւիտեան լաւ լինի նրանց ու նրանց որդիների համար:* 30 *Արդ, գնա՛ եւ ասա՛ նրանց. "Վերադարձէ՛ք ձեր տները":* 31 *Դու մնա՛ այստեղ, ինձ մօտ, որպէսզի քեզ հաղորդեմ այն պատուիրանները, օրէնքներն ու կանոնները, որ պիտի սովորեցնես նրանց, եւ նրանք պիտի գործադրեն այն երկրում, որ ես նրանց տալու եմ իբրեւ ժառանգութիւն":*
32 *Հետեւեցէ՛ք, որ դրանք գործադրէք այնպէս, ինչպէս պատուիրել է ձեզ ձեր Տէր Աստուածը: Չշեղուէք ո՛չ աջ, ո՛չ ձախ,* 33 *գնացէ՛ք այն ճանապարհով, որ պատուիրել է ձեզ մեր Տէր Աստուածը, որպէսզի տեղաւորի ձեզ ու բարիք գործի ձեզ համար, եւ դուք երկար ապրէք այն երկրում, որ ստանալու էք իբրեւ ժառանգութիւն»:*

ՄԵԾ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

6 *«Սրանք են այն պատուիրանները, օրէնքներն ու կանոնները, որ մեր Տէր Աստուածը հրամայեց ուսուցանել ձեզ, որպէսզի դրանք գործադրէք այն երկրում, ուր պիտի մտնէք իբրեւ ժառանգութիւն ստանալու համար:* 2 *Դու, քո որդիներն ու քո որդիների որդիները ձեր կեանքի բոլոր օրերին պէտք է երկնչէք մեր Տէր Աստծուց, պէտք է պահէք նրա բոլոր օրէնքներն ու կանոնները, որ ես պատգամում եմ ձեզ այսօր, որպէսզի երկար ապրէք:* 3 *Լսի՛ր, Իսրայէ՛լ, եւ հետեւի՛ր, որ կատարես դրանք, որպէսզի լաւ լինի քեզ համար, ու դուք չափազանց բազմանաք, ինչպէս քո հայրերի Աստուածն է խոստացել, որպէսզի նա քեզ տայ այն երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում»:*
Սրանք են այն օրէնքներն ու կանոնները, որ Մովսէսն անապատում հաղորդեց իսրայէլացիներին, երբ նրանք դուրս էին գալիս Եգիպտացիների երկրից:
4 *Մովսէսն այնուհետեւ շարունակեց. «Լսի՛ր, Իսրայէ՛լ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է:* 5 *Քո Տէր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էութեամբ ու քո ամբողջ ուժով:* 6 *Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կը պահես մտքիդ ու հոգուդ մէջ:* 7 *Դրանք կը հաղորդես քո որդիներին եւ դրանց մասին կը խօսես, երբ տանը նստած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս:* 8 *Դրանք որպէս նշան կը կապես քո ձեռքին, որ մնան անշարժ քո աչքերի առջեւ,* 9 *դրանք կը գրես քո տների մուտքին ու դռների վրայ»:*

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԷՄ

10 *«Եւ երբ քո Տէր Աստուածը քեզ տանի այն երկիրը, որ երդուեց տալ քո հայր Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, եւ քեզ տայ մեծամեծ ու գեղեցիկ քաղաքներ, որոնք դու չես կառուցել,* 11 *ամէն տեսակի բարիքներով լցուած տներ, որոնք դու չես լցրել, փորուած ջրհորներ, որոնք դու չես բացել, այգիներ ու ձիթաստաններ, որոնք դու չես տնկել,* 12 *եւ ուտես ու յագենաս,* 13 *ապա այն ժամանակ զգո՛յշ եղիր, որ չմոռանաս Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից քեզ դուրս բերած քո Տէր Աստծուն: Երկնչի՛ր քո Տէր Աստծուց, միայն նրա՛ն պաշտիր, նրա՛ն հետեւիր ու նրա՛ անունով երդուիր:* 14 *Օտար աստուածների, ձեր շուրջը գտնուող ժողովուրդների աստուածների յետեւից մի՛ գնա,* 15 *որովհետեւ քո Տէր Աստուածը որ ձեր մէջ է, նախանձոտ Աստուած է: Այնպէս չլինի, որ քո Տէր Աստուածը սրտմտելով բարկանայ ու քեզ վերացնի երկրի երեսից:*
16 *Քո Տէր Աստծուն մի՛ փորձիր, ինչպէս փորձեցիք Փորձութեան վայրում*† *:* 17 *Անսասա՛ն պահիր քո Տէր Աստծու քեզ հաղորդած պատուիրանները, օրէնքներն ու կանոնները:* 18 *Կատարի՛ր այն, ինչ բարի ու հաճելի է քո Տէր Աստծու առջեւ, որպէսզի լաւ լինի քեզ համար, եւ դու մտնես ու ժառանգես այն լաւ երկիրը, որ Տէրը երդուեց տալ մեր հայրերին,* 19 *որպէսզի Նա հալածի բոլոր թշնամիներին քո առջեւից, ինչպէս ասել է:*
20 *Եւ երբ վաղը քո որդին քեզ հարցնի ու ասի, թէ՝ "Այդ ի՞նչ պատուիրաններ, օրէնքներ ու կանոններ են, որ մեր Տէր Աստուածը պատուիրել է մեզ",* 21 *ապա քո որդուն կ'ասես. "Եգիպտոսում փարաւոնի ստրուկներն էինք մենք, եւ Տէր Աստուածը ամուր ձեռքով ու հզօր բազկով մեզ դուրս բերեց այնտեղից:* 22 *Տէրը Եգիպտացիների երկրում փարաւոնի ու նրա տան վրայ մեր ներկայութեամբ սոսկալի նշաններ եւ մեծագործութիւններ արեց:* 23 *Նա մեզ դուրս բերեց այդտեղից, որպէսզի բերի այստեղ, մեզ տայ այն երկիրը, որ երդուել էր տալ մեր հայրերին:* 24 *Տէրը մեզ պատուիրեց գործադրել բոլոր այս օրէնքները, յաւիտեանս երկնչել մեր Տէր Աստծուց, որպէսզի լաւ լինի մեզ համար մեր կեանքի բոլոր օրերում, եւ ապրենք, ինչպէս որ ապրում ենք այսօր:* 25 *Մեզ համար ողորմածութիւն կը լինի, եթէ հետեւենք, որ մեր Տէր Աստծու առջեւ գործադրուեն բոլոր այս պատուիրանները, ինչպէս որ Տէրը կարգադրել է մեզ"»:*

ՏԻՐՈՋ ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
(Ելք 34. 11-16)

7 *«Երբ քո Տէր Աստուածը քեզ տանի այն երկիրը, ուր պիտի մտնես այն ժառանգելու համար, եւ քո առջեւից հալածի մեծ ու բազմաթիւ ազգերին՝ քետացիներին, գերգեսացիներին, ամորհացիներին, քանանացիներին, փերեզացիներին, խեւացիներին ու յեբուսացիներին՝ քեզանից մեծ ու հզօր եօթը ազգերին,* 2 *եւ քո Տէր Աստուածը նրանց մատնի քո ձեռքը, կը հարուածես, կ'ոչնչացնես նրանց: Նրանց հետ ուխտ չդնես եւ նրանց չխնայես:* 3 *Նրանց հետ խնամութիւն չհաստատես. քո աղջկան նրա որդուն չտաս, նրա աղջկան քո որդու համար կին չառնես,* 4 *որովհետեւ քո որդուն իմ դէմ կ'ապստամբեցնեն. նա օտար աստուածներ կը պաշտի, եւ Տէրը սաստիկ կը բարկանայ ձեզ վրայ ու անմիջապէս կը կոտորի ձեզ:* 5 *Այսպէս կը վարուէք նրանց հետ. քարուքանդ կ'անէք նրանց բագինները, ջարդուփշուր կ'անէք նրանց արձանները, կը կոտորէք նրանց անտառները, կրակի կը մատնէք նրանց կուռքերը:* 6 *Դու ես քո Տէր Աստծու սուրբ ժողովուրդը, եւ քո Տէր*

†Եբրայերէն՝ Մասսայում:

Աստուածը քե՛զ է ընտրել, որ դու լինես
իր սեփական ժողովուրդը, քան թէ
երկրի վրայ ապրող մնացած բոլոր
ազգերը: 7 Տէրը բարեհաճեց ու ընտրեց
ձեզ ոչ նրա համար, որ դուք բոլոր
ազգերից բազմամարդ էք, քանի որ
դուք բոլոր ազգերից սակաւաթիւ էք,
8 այլ նրա համար, որ Տէրը սիրում էր
ձեզ եւ ուզում էր պահել այն երդումը,
որ նա տուել էր ձեր հայրերին: Տէրն
ամուր ձեռքով ու հզօր բազկով ձեզ
դուրս բերեց, ձեզ փրկեց ստրկութեան
տնից՝ եգիպտացիների արքայ փա-
րաւոնի ձեռքից: 9 Պէտք է իմանաս, որ
քո Տէր Աստուածն է Աստուածը, հա-
ւատարիմ Աստուածը: Նա պահում է
իրեն սիրող եւ իր պատուիրանները
պահող մարդկանց հետ արած ուխտն
ու ողորմածութիւնը մինչեւ հազար
սերունդ, 10 իսկ իրեն ատողներին
փոխհատուցում է՝ նրանց սպանելով:
Նա իրեն ատողներին պատժում է
առանց յապաղելու, ուղղակի փոխ-
հատուցում նրանց:

11 Պէտք է պահես քեզ հաղորդած
իմ պատուիրանները, օրէնքներն ու
կանոնները»:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Բ Օր. 28.1-4)

12 «Եթէ ենթարկուես այս բոլոր
օրէնքներին եւ պահես ու գործադրես
դրանք, ապա քո Տէր Աստուածը կը
կատարի իր արած ուխտն ու ողոր-
մածութիւնը, ինչպէս որ երդուել է մեր
հայրերին: 13 Նա կը սիրի, կ'օրհնի ու
կը բազմացնի քեզ: Նա կ'օրհնի քո
որովայնի ծնունդները, քո երկրի բեր-
քը՝ ցորենը, գինին ու իւղը, քո ար-
ջառների նախիրները, քո ոչխարների
հօտերը այն երկրում, որ երդուեց Տէրը
տալ քո հայրերին: 14 Օրհնեալ կը
լինես դու, քան բոլոր ազգերը: Դու եւ
քո անասունները ամուլ ու ստերջ չէք
լինի: 15 Տէրը քեզանից կը վերացնի
բոլոր հիւանդութիւնները: Եգիպտա-
ցիների բոլոր սոսկալի ցաւերը, որոնք
դու տեսար եւ իմացար, Տէրը քեզ վրայ
չի բերի, այլ դրանք կը տայ քո
թշնամիներին եւ բոլոր քեզ ատողնե-
րին: 16 Դու կը սպառես աւարն այն
բոլոր ազգերի, որոնց քո ձեռքն է
մատնել քո Տէր Աստուածը: Քո աչքը
թող չխնայի նրանց, եւ չպաշտես
նրանց կուռքերը, որովհետեւ նրանք
քեզ համար որոգայթ են»:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՊԱՇՏՊԱՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ

17 «Եթէ քո մտքում ասես, թէ՝ "Այդ
ազգի մարդիկ մեզանից շատ են, ես
ինչպէ՞ս կարող եմ կոտորել նրանց",
18 ապա մի՛ վախեցիր նրանցից: Լաւ
յիշի՛ր, թէ քո Տէր Աստուածը ինչ բերեց
փարաւոնի, նրա ծառաների ու բոլոր
եգիպտացիների գլխին. 19 ինչպիսի մե-
ծամեծ փորձանքներ, որ քո աչքերը
տեսան, ինչպիսի նշաններ, մեծագոր-
ծութիւններ, որ նա արեց ամուր ձեռ-
քով եւ հզօր բազկով: Ինչպէս որ քո
Տէր Աստուածը քեզ դուրս բերեց այն-
տեղից, նոյնը կ'անի քո Տէր Աստուածը
այն բոլոր ազգերի նկատմամբ, որոն-
ցից վախենում ես դու: 20 Քո Տէր Աս-
տուածը նրանց վրայ իշամեղուներ
կ'ուղարկի, մինչեւ որ կոտորուեն վե-
րապրողները եւ նրանք, որ թաքնուել
են քեզանից: 21 Մի՛ վախեցիր նրանց
ներկայութիւնից, որովհետեւ քո մեծ ու
հզօր Տէր Աստուածը քո մէջ է: 22 Քո
Տէր Աստուածը այդ ազգերին քո ներ-
կայութիւնից կը վերացնի սակաւ առ
սակաւ: Դու չես կարող նրանց միան-
գամից կոտորել, որպէսզի երկիրն ա-
մայի չդառնայ, եւ անապատի գազան-
ները չբազմանան քո շուրջը: 23 Քո
Տէր Աստուածը նրանց կը յանձնի քո
ձեռքը եւ նրանց կը կոտորի մեծ
պատուհասների մատնելով, մինչեւ որ
մէջտեղից վերացնի նրանց: 24 Նա
նրանց թագաւորներին կը յանձնի քո
ձեռքը, եւ դու նրանց անունները կը
ջնջես երկրի երեսից: Ոչ ոք չի կանգնի
քո դէմ, մինչեւ որ բնաջնջես նրանց:
25 Նրանց կռածոյ աստուածները կ'այ-
րես հրով: Դրանց վրայ եղած արծաթի
ու ոսկու վրայ աչք չունենաս, չվերց-
նես դրանք, որպէսզի դրանով մեղք
գործած չլինես. դա քո Տէր Աստծու
համար գարշելի է: 26 Այդպիսի պիղծ
բան չտանես քո տունը, որպէսզի դու

էլ դրա նման նզովուած չլինես: Դու
պէտք է բոլորովին զզուես եւ պիղծ
համարես դա, որովհետեւ դա նզո-
վուած է»:

ԱՆԱՊԱՏԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

8 «Տեսէ՛ք, որ կատարուեն ձեզ հա-
ղորդած իմ բոլոր պատուիրանները,
որպէսզի ապրէք, բազմապատկուէք,
մտնէք ու ժառանգէք այն երկիրը, որ
Տէրը երդուեց տալ մեր հայրերին:
2 Յիշի՛ր այն ամբողջ ճանապարհը,
որով Տէրը քեզ առաջնորդեց անա-
պատի միջով†, որպէսզի քեզ տանջելով
փորձի ու իմանայ, թէ ինչ կայ քո
սրտում, թէ պահո՞ւմ ես նրա պատուի-
րանները, թէ՞ ոչ: 3 Նա տանջեց քեզ,
սովահար արեց, կերակրեց քեզ
մանանայով, որին ծանօթ չէիր, եւ
որին ծանօթ չէին նաեւ քո հայրերը,
որպէսզի քեզ ցոյց տայ, թէ մարդը
միայն հացով չէ, որ ապրում է, այլ
մարդն ապրում է նաեւ այն ամէն
խօսքով, որ ելնում է Աստծու բերանից:
4 Քո զգեստները չմաշուեցին, քո
ոտքերը քառասուն տարի կոշտուկ-
ներով չպատուեցին:
5 Հոգուդ մէջ պիտի համոզուես, որ
ինչպէս մարդ խրատում է իր որդուն,
այնպէս էլ քո Տէր Աստուածը պիտի
խրատի քեզ: 6 Պահի՛ր քո Տէր Աստծու
պատուիրանները, որպէսզի գնաս նրա
ճանապարհներով եւ երկիւղ կրես նրա-
նից: 7 Քո Տէր Աստուած քեզ կը տանի
լաւ ու բերրի մի երկիր, ուր ջրերի
վտակներ ու երկրի խորքերից աղբիւր-
ներ են բխում դաշտերում ու լեռնե-
րում: 8 Դա ցորենի, գարու եւ գինու,
այգիների ու նռենիների երկիր է, ձի-
թենիների, իւղի ու մեղրի երկիր, 9 ուր
առանց նեղութիւն զգալու քո հացը
պիտի ուտես եւ նրանում ոչ մի բանի
կարօտ պիտի չլինես: Դա մի երկիր է,
որի քարերը երկաթ են, իսկ նրա
լեռներից կարող ես պղինձ ստանալ:
10 Կ'ուտես, կը յագենաս ու կ'օրհնես քո
Տէր Աստծուն այն լաւ երկրում, որ նա
տուել է քեզ:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ մ Տէր Աստուածը քառասուն տարի:

11 Զգո՛յշ եղիր, չլինի թէ մոռանաս
քո Տէր Աստծուն, չպահես նրա պա-
տուիրանները, նրա այն կանոններն ու
օրէնքները, որ ես հաղորդում եմ քեզ:
12 Այնպէս չլինի, որ ուտելուց ու
կշտանալուց յետոյ, գեղեցիկ տներ
կառուցելուց ու դրանց մէջ բնա-
կուելուց յետոյ, 13 քո արջառն ու
ոչխարը բազմանալուց յետոյ, քո
արծաթն ու ոսկին շատանալուց յետոյ,
քո ունեցած ամէն ինչը բազմանալուց
յետոյ, 14 գոռոզամտանաս ու մոռա-
նաս քո Տէր Աստծուն, որը քեզ դուրս
բերեց Եգիպտացիների երկրից՝ ստրկու-
թեան տնից, 15 քեզ անցկացրեց մեծ ու
ահազդու անապատի միջով, ուր օձն ու
կարիճն են խայթում, ծարաւը տան-
ջում, ուր ջուր չկար, բայց նա քեզ
համար ապառաժ քարից ջրի աղբիւր
բխեցրեց: 16 Նա քեզ անապատում
կերակրեց քո հայրերին անծանօթ
մանանայով, որպէսզի քեզ տանջի ու
փորձի եւ վերջում բարութիւն անի
քեզ: 17 Մի՛ ասա քո մտքում, թէ՝ "Իմ
ուժով ու ձեռքի զօրութեամբ եմ
տիրացել ես այս մեծ հարստութեան",
18 այլ յիշի՛ր քո Տէր Աստծուն,
որովհետեւ նա է քեզ ուժ տալիս այդ
հարստութեան հասնելու համար,
որպէսզի հաստատի իր այն ուխտը, որ
դրել է քո հայրերի հետ, ինչպէս
տեսնում ես այսօր:
19 Եթէ պատահի, որ մոռանաս քո
Տէր Աստծուն, գնաս օտար աստուած-
ների յետեւից, ծառայես ու երկրպագես
դրանց, ապա այսօր երդւում եմ
երկնքով ու երկրով, որ դուք անհետ կը
կորչէք: 20 Եթէ չլսէք ձեր Տէր Աստծու
ձայնը, կը կորչէք այնպէս, ինչպէս
կորան միւս ազգերը, որոնց վերացրեց
Տէրը ձեր առջեւից»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

9 «Լսի՛ր, Իսրայէ՛լ: Այսօր դու անց-
նում ես Յորդանան գետից այն կողմ,
որպէսզի մտնես ու նուաճես քեզանից
մեծ ու հզօր ժողովուրդներ, մեծամեծ
ու մինչեւ երկինք հասնող պարսպա-
պատ քաղաքներ, 2 մեծ, բազմամարդ
ու բարձրահասակ մի ժողովուրդ՝

ենակի յետնորդներին, որոնց դու ինքդ ճանաչում ես: Դու լսել ես այն խօսքը, թէ՝ "Ո՞վ կարող է դէմ կանգնել Ենակի յետնորդներին": 3 Դու այսօր կ'իմանաս, որ քո Տէր Աստուածն ինքը, որպէս լափող կրակ, գնալու է քո առջևից: Նա կոտորելու է, ոչնչացնելու է նրանց քո աչքի առջև, կոտորելու է նրանց ու ոչնչացնելու անմիջապէս, ինչպէս որ ասաց քեզ Տէրը: 4 Երբ քո Տէր Աստուածը քո առջև սպանի նրանց, քո մտքում մի՛ ասա, թէ՝ "Իմ արդար լինելու համար է, որ Տէրը ինձ բերել է այստեղ, որպէսզի ժառանգեմ այս լաւ երկիրը": Ոչ թէ քո արդար լինելու, այլ այդ ազգերի ամբարիշտ լինելու համար է, որ քո Տէր Աստուածը կոտորում է նրանց քո աչքի առջև: 5 Ոչ թէ քո արդար լինելու եւ քո հոգու մաքուր լինելու համար ես մտնում նրանց երկիրը, որպէսզի ժառանգես այն, այլ այդ ազգերի անօրէնութեան համար է քո Տէր Աստուածը վերացնում նրանց քո առջևից, որպէսզի հաստատի մեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին երդումով արած իր ուխտը: 6 Դու այսօր կ'իմանաս, թէ քո արդար լինելու համար չէ, որ քո Տէր Աստուածը իբրեւ ժառանգութիւն քեզ լաւ երկիր է տալիս, որովհետեւ դու կամակոր ժողովուրդ ես»:

ՈՍԿԻ ՀՈՐԹԸ. ԺՈՂՈՎՐԴԻ ՍԽԱԼԸ

7 «Յիշի՛ր, մի՛ մոռացի՛ր, թէ որքան ես անապատում բարկացրել քո Տէր Աստծուն: Այն օրից սկսած, ինչ դուրս եկաք Եգիպտացիների երկրից ու եկաք մինչեւ այս վայրը, ըմբոստանալով էիք գալիս տէրունական այս վայրը: 8 Քորէբում բարկացրիք Տիրոջը, եւ Տէրը զայրացաւ ձեզ կոտորելու աստիճան, 9 երբ ես լեռն էի բարձրանում, որպէսզի ստանամ քարէ տախտակները, ուխտի այն տախտակները, որ Տէրը խոստացել էր տալ ձեզ: Ես քառասուն օր, քառասուն գիշեր մնացի լերան վրայ, հաց չկերայ, ջուր չխմեցի. 10 Տէր Աստուածն ինձ տուեց իր իսկ ձեռքով գրած քարէ երկու տախտակներ: Դրանց վրայ գրուած էին բոլոր այն պատգամները, որ Տէրը լերան վրայ հաղորդել էր ձեր հաւաքի օրը: 11 Քառասուն օր, քառասուն գիշեր յետոյ Տէրն ինձ տուեց քարէ երկու տախտակները՝ ուխտի տախտակները:

12 Տէրն ինձ ասաց. "Վե՛ր կաց, շուտ իջի՛ր այստեղից, որովհետեւ անօրէն դարձաւ Եգիպտոսից քո դուրս բերած ժողովուրդը: Նրանք արդէն շեղուել են այն ուղուց, որ պատուիրել էիր նրանց, եւ իրենց համար ձուլածոյ կուռքեր են պատրաստել": 13 Տէրն ինձ ասաց. "Քեզ հետ խօսել եմ մէկ անգամ, երկու անգամ ու ասում եմ. 'Տեսայ քո այդ ժողովրդին. այդ ժողովուրդը կամակոր է: 14 Թո՛յլ տուր ինձ, որ կոտորեմ նրանց, նրանց անունը ջնջեմ երկրի երեսից եւ քեզ աւելի մեծ, հզօր ու բազմամարդ ազգ դարձնեմ, քան նրանք են':

15 Ես դարձեալ իջայ լեռից՝ երկու տախտակներն իմ ձեռքին, իսկ լեռը բորբոքուած էր կրակով: 16 Տեսնելով, որ մեր Տէր Աստծու առջև մեղք էք գործել՝ ձեզ համար ձուլածոյ կուռքեր էք պատրաստել, շեղուել էք այն ուղուց, որ Տէրն էր պատուիրել, 17 վերցրի իմ ձեռքի երկու տախտակները եւ ձեր աչքի առջև ջարդուփշուր արեցի[†]»:

ՄՈՎՍԷՍԸ ՄԻՋՆՈՐԴՈՒՄ Է

18 Առաջինի նման երկրորդ անգամ քառասուն օր, քառասուն գիշեր Տիրոջ առջև աղաչեցի, հաց չկերայ, ջուր չխմեցի ձեր գործած բոլոր մեղքերի քաւութեան համար, որովհետեւ մեր Տէր Աստծու առջև չար գործեր էիք կատարել ու բարկացրել նրան: 19 Ես վախենում էի նրա բարկութիւնից ու զայրոյթից, որովհետեւ Տէրը բարկացել էր ձեզ վրայ ձեզ կոտորելու աստիճան: Այս անգամ էլ լսեց ինձ Տէրը: 20 Նա խիստ բարկացել էր նաեւ Ահարոնի վրայ, ուզում էր սպանել նրան: Ես այս անգամ էլ աղօթեցի Ահարոնի համար, 21 ձեր գործած մեղքը՝ հորթը վերցրի

[†]Երրայերէնը յաւելեալ ունի՝ իմ երկու ձեռքերի վրայից նետեցի:

ու այրեցի կրակով, փշուր-փշուր արեցի ու մանրեցի այն աստիճան, որ մանր փոշու վերածուեց: Այդ փոշին ես լցրի լեռից իջնող վտակի մէջ:

22 Դուք ձեր Տէր Աստծուն բարկացրել էք Կրակի, Փորձութեան ու Ցանկութեան գերեզմանի մէջ[†]: 23 Եւ երբ Տէրը ձեզ ուղարկեց Կադէսբառնեայից, ասաց. "Ելէ՛ք ու ժառանգեցէ՛ք այն երկիրը, որ տալու եմ ձեզ", դուք չէիք հնազանդուել ձեր Տէր Աստծու խօսքին, չէիք հաւատացել նրան, Տիրոջ ձայնին չէիք անսացել: 24 Դուք Տիրոջ հրամանին անհնազանդ էիք այն օրուանից ի վեր, ինչ այն ձեզ ծանուցուեց:

25 Ես Տիրոջ առջև աղաչեցի քառասուն օր, քառասուն գիշեր: Ես աղաչեցի, որովհետեւ Տէրն ասում էր, որ կը կոտորի ձեզ: 26 Ես Տիրոջ առջև աղօթք անելով՝ ասացի. "Տէ՛ր, Տէ՛ր, աստուածների թագաւոր, մի՛ կոտորիր քո ժողովրդին ու քո ընտրած մարդկանց, որոնց փրկեցիր, դուրս բերեցիր Եգիպտոսից քո մեծ զօրութեամբ, ամուր ձեռքով ու հզօր բազկով: 27 Յիշի՛ր քո ծառաներին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, որոնց երդուեցիր քո անունով: Քո ժողովրդի խստութեան, ամբարշտութեան ու մեղքերի վրայ ուշադրութիւն մի՛ դարձրու: 28 Զլինի այնպէս, որ այն երկրի բնակիչները, որտեղից դուրս բերեցիր մեզ, ասեն. "Քանի որ Տէրը չկարողացաւ նրանց տանել այն երկիրը, որ խոստացել էր նրանց, եւ քանի որ Տէրն ատում էր նրանց, դուրս բերեց նրանց, որպէսզի կոտորի անապատում": 29 Սրանք քո ժողովուրդն են ու քո ընտրած մարդիկ, որոնց քո հզօր զօրութեամբ ու հզօր բազկով ես դուրս բերել Եգիպտացիների երկրից»:

ԱՍՏԾՈՒ ՆԵՐՈՒՄԸ
(Ելք 34. 1-10)

10 «Այն ժամանակ Տէրն ինձ ասաց. "Երկու քարէ տախտակ կոփի՛ր նախկիններին նման ու բարձրացի՛ր լեռը:

[†]Երրայերէնը՝ Տաբեթայի, Մասսայի եւ Կիբրոթ-Հաթթաւայի մէջ:

Փայտից տապանակ պատրաստի՛ր քեզ համար, 2 եւ ես այդ տախտակների վրայ կը գրեմ այն նոյն պատգամները, որ գրուած էին քո ջարդած առաջին տախտակների վրայ: Դրանք կը դնես տապանակի մէջ": 3 Ես կարծր փայտից տապանակ պատրաստեցի, առաջինների պէս երկու քարէ տախտակներ կոփեցի եւ բարձրացայ լեռը: Երկու տախտակներն իմ ձեռքին էին: 4 Նա նախկինում[†] գրածի նման երկու տախտակների վրայ գրեց այն տասը պատուիրանները, որ Տէրը ձեզ հաղորդել էր լերան վրայ, կրակի միջից, եւ Տէրը դրանք տուեց ինձ: 5 Ես նորից իջայ լեռից ու տախտակները դրեցի տապանակի մէջ. եւ դրանք այնտեղ են մնում, ինչպէս պատուիրել էր ինձ Տէրը:

6 Իսրայէլացիները Յակիմի որդիների Բերոթ բնակավայրից չուեցին դէպի Սադայի: Ահարոնը մեռաւ այնտեղ ու այնտեղ թաղուեց: Նրա որդի Եղիազարը քահանայ դարձաւ նրա փոխարէն: 7 Այնտեղից չուեցին դէպի Գադգադ, Գադգադից՝ դէպի Ետակա՝ ջրի վտակների երկիրը:

8 Այդ ժամանակ Տէրը Ղեւիի ցեղին առանձնացրեց, որ նրանք տանեն Տիրոջ ուխտի տապանակը, կանգնեն Տիրոջ առջև, ծառայեն նրան ու նրա անունով աղօթք անեն, ինչպէս որ լինում է մինչեւ այսօր: 9 Այդ իսկ պատճառով ղեւտացիներն իրենց եղբայրների մէջ բաժին ու ժառանգութիւն չունեն, քանի որ Տէրն ինքն է նրանց բաժինն ու ժառանգութիւնը, ինչպէս որ ասաց նրանց:

10 Քառասուն օր, քառասուն գիշեր ես մնացի լերան վրայ, եւ Տէրն ինձ լսեց այս անգամ էլ ու չուզեց կոտորել ձեզ: 11 Տէրն ինձ ասաց. "Գնա՛, քայլի՛ր քո այդ ժողովրդի առջևից, որպէսզի նրանք մտնեն ու ժառանգեն այն երկիրը, որ երդումով խոստացայ տալ նրանց հայրերին"»:

ՍԻՐՈՅ ԵՒ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

12 «Արդ, Իսրայէ՛լ, ի՞նչ է պահանջում քեզանից քո Տէր Աստուածը.

[†]Երրայերէնը յաւելեալ ունի՝ ժողովի օրը:

միայն այն, որ երկնչես քո Տէր Աստծուց, ընթանաս նրա ցոյց տուած ճանապարհներով, սիրես նրան ու պաշտես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էութեամբ, 13 պահես քո Տէր Աստծու պատուիրաններն ու նրա օրէնքները, որ ես այսօր պատգամում եմ քեզ, որպէսզի քեզ համար լաւ լինի: 14 Երկինքն ու երկինքների երկինքը, երկիրն ու նրա մէջ գտնուող ամէն ինչ պատկանում են քո Տէր Աստծուն: 15 Տէրը, սակայն, բարեհաճ գտնուեց ու սիրեց ձեր հայրերին եւ նրանցից յետոյ ընտրեց ձեզ՝ նրանց յետնորդներին, բոլոր ազգերի միջից, ինչպէս որ տեսնում էք մինչեւ այսօր: 16 Վերացրէ՛ք ձեր խստասրտութիւնը եւ մի՛ յամառէք, 17 որովհետեւ մեր Տէր Աստուածը աստուածների Աստուած է, տէրերի Տէր, մեծ, հզօր ու ահաւոր Աստուած, որ ոչ մէկին աչառութիւն չի անում ու կաշառք չի առնում: 18 Նա պաշտպանում է պանդխտի, որբի ու այրու իրաւունքները, սիրում է օտարականին, նրան տալիս է հաց ու հագուստ: 19 Դուք էլ սիրեցէ՛ք պանդխտին, որովհետեւ դուք էլ պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում: 20 Երկնչի՛ր քո Տէր Աստծուց, պաշտի՛ր նրան, յարի՛ր նրան եւ երդուի՛ր նրա անունով, 21 որովհետեւ նա քո պարծանքն է, քո այն նոյն Աստուածը, որ քեզ համար մեծ ու փառաւոր գործեր արեց, ինչպէս ինքդ էլ ես տեսնում քո աչքերով: 22 Քո նախնիները եօթանասուն† հոգով եկան Եգիպտոս, իսկ հիմա քո Տէր Աստուածը քեզ երկնքի աստղերի չափ բազմամարդ է դարձրել»:

ԱՍՏՎՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

11 «Քո կեանքի բոլոր օրերին պէտք է սիրես քո Տէր Աստծուն, պահես նրա պատգամները, օրէնքները, պատուիրաններն ու կանոնները: 2 Այսօր պէտք է իմանաք, որ խօսքը չի վերաբերում ձեր որդիներին, որոնք ո՛չ գիտեն, ո՛չ էլ տեսել են քո Տէր Աստծու խրատը, նրա մեծագործութիւնները, ամուր ձեռքը եւ հզօր բազուկը, 3 նրա նշաններն ու զարմանահրաշ գործերը, որ նա արեց Եգիպտոսում եգիպտացիների արքայ փարաւոնի եւ նրա ամբողջ երկրի հանդէպ: 4 Նաեւ այն, թէ Տէրն ինչ բերեց եգիպտացիների զօրքերի, նրանց կառքերի ու երիվարների գլխին, թէ ինչպէս նրանց ջրասոյզ արեց Կարմիր ծովի մէջ, երբ սրանք յարձակւում էին մեր թիկունքից, եւ անհետացրեց նրանց յաւիտեան: 5 Նաեւ այն, թէ ինչ արեց ձեզ համար անապատում, մինչեւ որ եկաք այս վայրը: Նաեւ այն, 6 թէ ինչ բերեց Դաթանի ու Աբիրոնի գլխին, որոնք Ռուբէնի ցեղից Եղիաբի որդիներն էին, թէ ինչպէս երկիրն իր երախը բանալով կուլ տուեց նրանց, նրանց տներն ու վրանները, նրանց հետ եւ այն ամէնը, ինչ ունէին ամբողջ Իսրայէլում: 7 Խօսքը վերաբերում է ձեզ, քանի որ ձեր աչքերով իսկ տեսաք Տիրոջ բոլոր մեծամեծ գործերը, որ նա արեց ձեր մէջ մինչեւ այսօր»:

ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ԵՐԿՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

8 «Պահեցէ՛ք, ուրեմն, նրա բոլոր պատուիրանները, որ ես այսօր պատգամում եմ ձեզ, որպէսզի ապրէք, բազմանաք, մտնէք ու ժառանգէք այն երկիրը, դէպի ուր անցնում էք Յորդանան գետով, 9 որպէսզի երկար ապրէք այն երկրում, որ Տէրը երդուեց տալ ձեր հայրերին եւ նրանցից յետոյ՝ նրանց զաւակներին, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում:

10 Այն երկիրը, ուր դուք մտնելու էք ժառանգելու համար, նման չէ Եգիպտացիների երկրին, որտեղից դուք դուրս եկաք. մի երկիր, ուր սերմը ցանում են ու ջրում ոտքերով, որպէս թէ բանջարանոց լինի: 11 Այն երկիրը, ուր դուք պիտի մտնէք ժառանգելու համար, լեռնային ու հովտային երկիր է. այն ոռոգւում է երկնքից թափուող անձրեւով: 12 Դա մի երկիր է, որը քո Տէր Աստուածն է խնամում, տարուայ սկզբից մինչեւ տարուայ վերջը քո Տէր Աստծու աչքը միշտ նրա վրայ է:

13 Եթէ ուշադրութեամբ լսես նրա բոլոր պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ քեզ, այն է՝ սիրես քո Տէր Աստծուն, պաշտես նրան քո ամբողջ հոգով ու քո ամբողջ էութեամբ, 14 ապա նա ձեր երկրին կը տայ ըստ ժամանակի պահանջուող առաջին ու վերջին անձրեւը, որպէսզի կարողանաս ամբարել քո ցորենը, գինին ու իւղը: 15 Նա քո դաշտերին խոտ կը տայ քո անասունի համար: Կ'ուտես եւ կը յագենաս: 16 Զգո՛յշ եղէք, չլինի թէ ամբարտաւանանան ձեր հոգիները, մեղք գործէք, օտար աստուածներ պաշտէք ու երկրպագէք նրանց: 17 Այն ժամանակ Տէրը խիստ կը զայրանայ ձեզ վրայ, արգելք կը դնի երկնքի վրայ, անձրեւ չի լինի, հողն իր բերքը չի տայ, եւ դուք շատ արագ կը կորչէք այս լաւ երկրից, որ Տէրը տուել է ձեզ:

18 Այս խօսքերը ի պահ դրէ՛ք ձեր մտքում ու ձեր հոգում: Դրանք որպէս նշան կապեցէ՛ք ձեր ձեռքերին, որ մշտապէս մնան ձեր աչքերի առջեւ: 19 Դուք դրանք սովորեցրէ՛ք ձեր որդիներին եւ դրանց մասին խօսեցէ՛ք տանը նստելիս ու ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս: 20 Դրանք գրեցէ՛ք ձեր տների մուտքերին ու դռների վրայ, 21 որպէսզի ձեր կեանքը երկար լինի, իսկ ձեր որդիների կեանքը այն երկրի վրայ, որ Տէրը երդուել է տալ ձեր հայրերին, լինի այնքան երկար, որքան որ երկինքը կը լինի երկրի վրայ:

22 Եթէ ուշադրութեամբ լսէք այս բոլոր պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ ձեզ, որ անէք, այն է՝ սիրէք ձեր Տէր Աստծուն, գնաք նրա ճանապարհով ու յարէք նրան, 23 ապա Տէրը ձեր առջեւից կը հեռացնի այդ բոլոր ազգերին, եւ դուք կը նուաճէք ձեզանից մեծ ու հզօր ազգերին: 24 Բոլոր այն վայրերը, ուր կը կոխեն ձեր ոտքերը, ձերը կը լինեն. անապատից մինչեւ Անդրլիբանան, Եփրատ մեծ գետից մինչեւ Արեւմտեան ծովը† կը լինեն ձեր սահմանները: 25 Ոչ ոք ձեզ չի դիմադրի, ձեր ահն ու սարսափը ձեր Տէր Աստուածը կը սփռի ամբողջ երկրի վրայ, ուր ոտք կը դնէք դուք, ինչպէս ասել է ձեզ Տէրը»:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԱՆԷԾՔՆԵՐ

26 «Ես այսօր, ահա, ձեր առջեւ դնում եմ օրհնութիւններ ու անէծքներ: 27 Օրհնութիւն կը ստանաք, եթէ լսէք ձեր Տէր Աստծու պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ ձեզ, 28 եւ անէծքներ՝ եթէ չլսէք ձեր Տէր Աստծու պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ ձեզ, շեղուէք այն ճանապարհից, որ ես ցոյց տուեցի ձեզ, գնաք պաշտէք ձեզ անծանօթ օտար աստուածներ: 29 Երբ քո Տէր Աստուածը քեզ տանի այն երկիրը, դէպի ուր անցնում ես Յորդանան գետով, որպէսզի ժառանգես այն, ապա օրհնութի՛ւն առաքիր Գարիզին լեռան վրայ եւ անէ՛ծք՝ Գեբալ լեռան վրայ: 30 Չէ՞ որ դրանք Յորդանան գետի այն կողմում են, Քանանացիների երկրի արեւմտեան ճանապարհի յետեւում, Գաղգաղի մօտ, բարձր կաղնու մերձակայքում: 31 Եւ դուք անցէ՛ք Յորդանան գետով՝ մտնելու եւ ժառանգելու համար այն երկիրը, որ Տէր Աստուածը տալու է ձեզ որպէս ժառանգութիւն բոլոր օրերի համար: Ժառանգեցէ՛ք այն եւ բնակուեցէ՛ք նրա մէջ:

32 Զգո՛յշ եղէք, որ կատարէք նրա բոլոր հրամանները եւ կանոնները, որ ես այսօր դնում եմ ձեր առաջ»:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԻԱԿ ՏԵՂԸ

12 «Սրանք են այն հրամաններն ու կանոնները, որոնք դուք հետեւողական օրէն պիտի կատարէք այն երկրում, որը ձեր հայրերի Տէր Աստուածը տալու է ձեզ որպէս ժառանգութիւն: Դրանք պիտի կատարէք այդ երկրի վրայ ձեր կեցութեան բոլոր օրերում: 2 Ոչնչացրէ՛ք բարձր լեռների, բլուրների վրայ ու վարսաւոր ծառերի տակ գտնուող բոլոր վայրերը, ուր միւս ազգերը պաշտել են իրենց կուռքերին, եւ որոնց դուք պիտի տիրանաք: 3 Քարուքա՛նդ արէք նրանց բագինները, ջարդուփշո՛ւր արէք նրանց կոթողները,

†Եւ Ա 4՝ եօթանասունհինգ:

†Այսինքն՝ Միջերկրական ծով:

խորտակեցէ՛ք նրանց յուշասիւները եւ կրակի մատնեցէ՛ք նրանց տաշածոյ կուռքերը: 4 Զաստուածների անունները վերացրէ՛ք այդ վայրերից, բայց այդպէս մի՛ վարուէք ձեր Տէր Աստծու նկատմամբ:

5 Նրան պիտի պաշտէք այն տեղում, որ ձեր Տէր Աստուածը պիտի ընտրի ձեր ցեղերից մէկի տարածքում, եւ այն պիտի կոչէք նրա անունով եւ նրա՛ մէջ պիտի բնակեցնէք նրան: Փնտռեցէ՛ք այն եւ մտէ՛ք այնտեղ: 6 Այդտե՛ղ կը մատուցէք ձեր ողջակէզները, զոհերը, կը տաք ձեր տասանորդները, պարգեւները, ձեր ուխտած, խոստացած եւ կամաւոր նուէրները†, նաեւ ձեր արջառի ու ոչխարի առաջնածինները: 7 Դուք եւ ձեր ընտանիքների անդամները կ'ուտէք ձեր Տէր Աստծու առջեւ եւ կ'ուրախանաք այն ամէնի համար, ինչ արել էք ձեր ձեռքերով, ինչի համար օրհնել է ձեզ ձեր Տէր Աստուածը:

8 Մի՛ արէք այն ամէնը, ինչ որ այսօր մենք այստեղ չենք անում‡. իւրաքանչիւրը իրեն հաճելի բանն է անում. 9 եւ մինչեւ այսօր դուք չէք հասել հանգստի ու ժառանգութեան այն երկիրը, որ մեր Տէր Աստուածը տալու է մեզ: 10 Երբ անցնելով Յորդանան գետը՝ բնակուէք այն երկրում, որ մեր Տէր Աստուածը իբրեւ ժառանգութիւն է տալու ձեզ, եւ երբ նա ձեր շուրջը գտնուող բոլոր թշնամիներից ձեզ ազատի, ու դուք ապրէք ապահով, 11 այն ժամանակ մեր Տէր Աստծու ընտրած վայրը կը կոչէք նրա անունով եւ այնտեղ կը բերէք այն ամէնը, ինչ ես այսօր պատգամում եմ ձեզ, այն է՝ ձեր ողջակէզները, զոհերը, տասանորդները, ձեր ձեռքերին գտնուող նուէրները, տուրքերը եւ ձեր նուիրաբերումները, որ ուխտ էք արել տալ ձեր Աստծուն: 12 Մեր Տէր Աստծու առջեւ կ'ուրախանաք դուք, ձեր տղաներն ու աղջիկները, նաեւ ձեր ծառաներն ու աղախինները, ձեր յարկի տակ գտնուող ղեւտացին, որը ձեզ նման բաժին ու սեփականութիւն չունի: 13 Զգո՛յշ եղիր, որ քո ողջակէզները չմատուցես ուր որ պատահի. 14 քո ողջակէզները կը մատուցես քո քաղաքներից մէկում, այնտեղ, ուր կ'ընտրի քո Տէր Աստուածը†: Այնտեղ կը կատարես այն ամէնը, ինչ այսօր պատգամում եմ քեզ: 15 Որքան ցանկանաս, կարող ես մորթել եւ քո Տէր Աստծու օրհնութեամբ ուտել այն միսը, որ Նա տուել է քեզ բոլոր քաղաքներում: Քեզ հետ բնակուող անմաքուր եւ մաքուր մարդիկ կարող են միասին ուտել այն, ինչպէս ուտում են այծեամն ու եղջերուն: 16 Արիւնը, սակայն, չպէտք է ուտէք, այլ իբրեւ ջուր այն պէտք է գետին թափէք:

17 Չհամարձակուես քո ցորենի, գինու, իւղի տասանորդը, արջառի ու ոչխարի առաջնածինը, քո ուխտ արած ամէն ինչը, քո խոստացած նուէրներն ու ձեռքի ընծաները ուտել քո քաղաքներում: 18 Դու, քո տղան ու քո աղջիկը, քո ծառան ու քո աղախինը, քո քաղաքներում բնակուող պանդուխտը դրանք կ'ուտէք ձեր Տէր Աստծու առջեւ, այնտեղ, ուր Տէր Աստուածը կ'ընտրի իր համար: Քո Տէր Աստծու առջեւ կ'ուրախանաս այն ամէնի համար, ինչ արել ես քո ձեռքով: 19 Զգո՛յշ եղիր, որ ղեւտացուն չլքես այնքան ժամանակ, քանի դեռ ապրում ես երկրի վրայ:

20 Եթէ քո Տէր Աստուածը իր խոստացածի համաձայն ընդարձակի քո սահմանները, եւ եթէ ցանկանաս միս ուտել ու ասես, թէ՝ "Միս եմ ուզում ուտել", ապա ըստ քո ցանկութեան միս կ'ուտես: 21 Իսկ եթէ քեզանից հեռու լինի այն վայրը, որ քո Տէր Աստուածը ընտրել է, որպէսզի իր անունով կոչես այն, ապա Աստծու քեզ տուած արջառներից կամ ոչխարներից կը մորթես, ինչպէս պատուիրել եմ քեզ, եւ ըստ քո ցանկութեան կ'ուտես քո քաղաքներում: 22 Ինչպէս ուտում են այծեամն ու եղջերուն, այդպէս էլ կ'ուտես դա: Քեզ հետ բնակուող անմաքուր ու մաքուր մարդիկ նոյնպէս կարող են ուտել: 23 Զգո՛յշ եղիր, որ արիւնը չուտես, որովհետեւ արիւնն անասունի հոգին է: 24 Հոգին մսի հետ չուտես. այն իբրեւ ջուր գետին թափի՛ր, 25 այն մի՛ կեր, որպէսզի լաւ լինէք դու եւ քեզանից յետոյ գալիք քո սերունդները, եթէ բարի ու հաճելի գործ կատարես քո Տէր Աստծու առջեւ: 26 Քո սրբութիւնները, եթէ ունես, քո ուխտած բաները վերցնելով՝ կը գաս այն վայրը, որը քո Տէր Աստուածը կ'ընտրի իր համար, որպէսզի իր անունը յայտնուի այնտեղ: 27 Կ'անես քո ողջակէզները. միսը կը դնես քո Տէր Աստծու զոհասեղանի վրայ, զոհի արիւնը կը թափես քո Տէր Աստծու զոհասեղանի յատակին, իսկ միսը կ'ուտես:

28 Զգո՛յշ եղիր ու լսի՛ր. կը կատարես այն ամէնը, ինչ պատգամում եմ քեզ, որպէսզի յաւիտեանս լաւ լինի քեզ եւ քո որդիների համար, քանի որ քո Տէր Աստծու առջեւ բարին ու հաճելին ես անում»:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿՈՒԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԻՑ

29 «Եթէ քո Տէր Աստուածը քո առջեւ ազգեր կոտորի, եւ դու նրանց երկիրն իբրեւ ժառանգութիւն ստանալու համար մտնես այդ երկիրն ու նուաճես նրանց, բնակուես նրանց երկրում, 30 ապա զգո՛յշ եղիր, որ քո առջեւ նրանց կոտորուելուց յետոյ չգնաս նրանց հետքերով, չհետաքրքրուես նրանց կուռքերով ու չասես, թէ՝ "Այս ազգերը ինչ արել են իրենց կուռքերին, նոյնն էլ ես անեմ Տիրոջը": 31 Նոյն կերպ չվարուես քո Տէր Աստծու նկատմամբ, որովհետեւ նրանք իրենց կուռքերի համար անում են գարշելի բաներ, որոնք ատելի են Տիրոջը, որովհետեւ նրանք իրենց տղաներին ու աղջիկներին յանուն իրենց կուռքերի այրում են կրակի վրայ: 32 Զգո՛յշ եղիր, որ կատարես այն ամէնը, ինչ ես այսօր պատգամում եմ քեզ: Դրա վրայ ոչինչ մի՛ աւելացրու եւ դրանից ոչինչ մի՛ պակասեցրու»:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ *բարձրացնելու ընծայ:*

‡Եբրայերէնում՝ *անում ենք:*

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ *քո ցեղերից մէկի տարածքում:*

ՊԱՏԻԺ ԿՈՒԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ՅՈՐԴՈՐՈՂՆԵՐԻՆ

13 «Եթէ ձեր միջից մի մարգարէ կամ երազահան երեւան գայ եւ քեզ մի նշան կամ հրաշք ցոյց տայ, 2 քեզ ասած նշանը կամ հրաշքը կատարուի, եւ յետոյ նա ասի՝ "Գնանք պաշտենք ձեզ անծանօթ օտար աստուածներ", 3 ապա այդ մարգարէի կամ երազահանի խօսքերը մի՛ լսէք, որովհետեւ Տէր Աստուածը փորձում է ձեզ, իմանալու համար, թէ ձեր ամբողջ հոգով ու ձեր ամբողջ էութեամբ սիրո՞ւմ էք մեր Տէր Աստծուն: 4 Ձեր Տէր Աստծու յետեւի՛ց գնացէք, նրանից երկնչեցէ՛ք, նրա պատուիրանները կատարեցէ՛ք, նրա ասածը լսեցէ՛ք ու նրան յարեցէ՛ք, 5 թող այն մարգարէն կամ երազահանը մեռնի, որովհետեւ աշխատում է քեզ ապստամբեցնել քո Տէր Աստծու դէմ, որը քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից, քեզ փրկեց ստրկութեան երկրից. թող այն մարգարէն մեռնի, քանզի քեզ շեղեց այն ճանապարհից, որով քո Տէր Աստուածը պատուիրել էր ընթանալ իր հետ: Դրանով չարը կը վերացնես ձեր միջից:*

6 Եթէ քո հօր կամ մօր կողմից քո եղբայրը, քո տղան կամ քո աղջիկը, քո ծոցում պառկող կինդ կամ անձիդ պէս սիրելի բարեկամդ գաղտնաբար քեզ ասի՝ "Գնանք պաշտենք քեզ եւ քո հայրերին անծանօթ օտար աստուածներ", 7 որոնք ձեր շուրջը գտնուող, քեզ մօտիկ կամ քեզանից հեռու ազգերի աստուածներ են երկրի մի ծայրից մինչեւ երկրի միւս ծայրը, 8 ապա չհամաձայնուես նրա հետ, չլսես, չխնայես, չգթաս ու չպատսպարես նրան: 9 Ամենուր կը յայտնես այդ մասին. նախ քո ձեռքը թող բարձրանայ նրան սպանելու համար, որից յետոյ թող բարձրանայ ամբողջ ժողովրդի ձեռքը: 10 Քարկոծելով կը սպանէք նրան, որովհետեւ նա ուզում էր քեզ ապստամբեցնել քո Տէր Աստծու դէմ, որը քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից: 11 Ամբողջ Իսրայէլն այդ լսելով թող զարհուրի, եւ ձեր միջից ոչ ոք թող չյանդգնի կատարել նման չար արարք:

12 Եթէ քո Տէր Աստծու՝ բնակուելու
համար քեզ տուած քաղաքներից որեւէ
մէկում լսես, 13 թէ՝ "Մեր միջից
անօրէն մարդիկ դուրս ելան ու
յեղաշրջեցին իրենց քաղաքի բոլոր
բնակիչներին" ասելով, թէ՝ "Գնանք ու
պաշտենք մեզ անծանօթ օտար աս-
տուածներ", 14 ապա կը քննես, հար-
ցուփորձ կ'անես եւ մանրակրկիտ կը
ստուգես նրանց: Եւ եթէ իրօք հաւաս-
տի է, որ այդ սրբապղծութիւնը տեղի է
ունեցել ձեր մէջ, 15 ապա սրի հա-
րուածներով կը կոտորէք այդ երկրի
բոլոր բնակիչներին, նզովելով կը
նզովէք այդ քաղաքն ու այն ամէնը,
ինչ կայ այնտեղ եւ նրանց անա-
սունները սրի կը քաշէք: 16 Նրա բոլոր
աւարը կը հաւաքես այդ քաղաքի
հրապարակի վրայ եւ քո Տէր Աստծու
առջեւ քաղաքն ու նրա ամբողջ աւարը
կը հրկիզես: Այդ քաղաքն աւերակի
թող վերածուի յաւիտեան եւ այլեւս
թող չվերակառուցուի: 17 Նրա նզո-
վուած իրերից ոչ մի բան չպէտք է
անցնի քո ձեռքը: Տէրը կը մեղմի իր
բարկութիւնը, գթառատ կը լինի քո
նկատմամբ, կ'ողորմի քեզ եւ քեզ կը
բազմացնի այնպէս, ինչպէս երդուել էր
Տէրը քո հայրերին: 18 Եթէ լսես քո Տէր
Աստծու ձայնը, այսինքն՝ պահես նրա
բոլոր պատուիրանները, որ ես այսօր
պատգամում եմ քեզ, քո Տէր Աստծու
առջեւ բարին եւ հաճելին գործած կը
լինես»:

ՋԳՈՒՇԱՑՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՍԳԻՑ

14 «Դուք ձեր Տէր Աստծու որդի-
ներն էք: Սգի մէջ գտնուելիս ձեր
մարմնի վրայ կտրուածքներ չանէք եւ
ձեր ճակատները չխփէք†, 2 որովհետեւ
դուք ձեր Տէր Աստծու սուրբ ժողո-
վուրդն էք: Ձեր Տէր Աստուածը ձեզ է
ընտրել, որ երկրի երեսին գտնուող
բոլոր ազգերի մէջ դուք լինէք իրեն
պատկանող ժողովուրդ»:

ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆՄԱՔՈՒՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ
(Ղեւտ. 11. 1-47)

3 «Ամէն մի գարշելի բան մի՛ կերէք:
4 Սրանք են այն անասունները, որ
կարող էք ուտել. արջառ, հօտի ոչխար,
արու այծ, 5 եղջերու, այծեամ, գոմէշ,
իշայծեամ, այծքաղ, վայրի այծ եւ
ընձուղտ: 6 Կ'ուտէք նաեւ թաթը ճեղ-
քուած, կճղակաբաշխ ու որոճացող
բոլոր անասունները: 7 Մի՛ կերէք այն
անասունները, որոնք որոճում են, բայց
թաթը ճեղքուած կամ կճղակաբաշխ
չեն: Ուղտը, նապաստակն ու ճագարը
որոճում են, բայց կճղակաբաշխ չեն,
դրանք ձեզ համար անմաքուր են:
8 Խոզը թէեւ ճեղքուած թաթ ունի ու
կճղակաբաշխ է, բայց չի որոճում.
ուստի նա ձեզ համար անմաքուր է.
մի՛ կերէք նրա միսը եւ դրանց սատկած
դիակին մի՛ մօտեցէք:
9 Սրանք են ջրային այն կենդա-
նիները, որ կարող էք ուտել. կ'ուտէք
ջրային բոլոր այն կենդանիները,
որոնք լողակ ու թեփուկ ունեն: 10 Մի՛
կերէք բոլոր այն կենդանիները, որոնք
լողակ ու թեփուկ չունեն. դրանք ձեզ
համար անմաքուր են: 11 Բոլոր
մաքուր թռչունները կարող էք ուտել:
12 Սրանք են այն թռչունները, որ
չպէտք է ուտէք. արծիւ, անգղարծիւ,
անգղ, 13 գետարծիւ, ցին եւ այն, ինչ
դրանց ցեղակից է, նոյնպէս եւ 14 որի†
եւ այն, ինչ դրան ցեղակից է, 15 ջայ-
լամ, բու, ճայ, 16 արագիլ, կարապ, հո-
ղամաղ‡, 17 քաջահաւ, սոխակ, ագռաւ,
18 հաւալուսն, քաղաղր§ եւ այն, ինչ
դրանց ցեղակից է, նաեւ՝ յոպոպ եւ
չղջիկ: 19 Թռչող բոլոր զեռունները ձեզ
համար անմաքուր թող լինեն, դրանք
մի՛ կերէք: 20 Կ'ուտէք բոլոր մաքուր
թռչունները:
21 Ոչ մի սատկած անասունի միս
չուտէք: Այն կը տաք ձեր քաղաք-
ներում գտնուող պանդխտին, որ ուտի,
կամ էլ կը վաճառէք օտար մարդու,
որովհետեւ դու քո Տէր Աստծու սուրբ
ժողովուրդն ես:
Դառը իր մօր կաթի մէջ չեփես»:

†Այլ բնագրերում՝ ձեր աչքերի միջեւ դաջուածի չպէտք է անէք:

†Սեւ ագռաւ, արջնագռաւ:
‡Բադի մի տեսակ:
§Բուի տեսակ (տե՛ս Ղեւտական ԺԱ, 19):

ՏԱՍԱՆՈՐԴԻ ՕՐԷՆՔԸ

22 «Քո սերմանած բոլոր արմտիք-
ների, քո դաշտերի բերքի տասանորդը
կը յանձնես ամէն տարի: 23 Դա կ'ու-
տես քո Տէր Աստծու առջեւ, այն վայ-
րում, որ կ'ընտրի քո Տէր Աստուածը,
որպէսզի իր անունը յայտնուի
այնտեղ: Այդտեղ կը մատուցես քո
ցորենի, գինու, իւղի տասանորդը, քո
արջառի ու ոչխարի առաջնածինները,
որպէսզի սովորես յաւիտեանս երկնչել
քո Տէր Աստծուց: 24 Իսկ եթէ ճա-
նապարհը հեռու է քեզանից, եւ դու
չես կարող տանել քո տասանորդը,
քանի որ քեզանից հեռու է այն վայրը,
որ ընտրել է քո Տէր Աստուածը՝ իր
անունը հռչակելու այնտեղ, նրա՛
համար որ քո Տէր Աստուածը օրհնեց
քեզ, 25 կը վաճառես քո տասանորդը
արծաթի դիմաց եւ այդ արծաթը
վերցնելով ձեռքդ՝ կը գնաս այն վայրը,
որ կ'ընտրի քո Տէր Աստուածը: 26 Այդ
արծաթով կը գնես այն ամէնը, ինչ
ինքդ կը կամենաս՝ արջառ, ոչխար,
գինի, ոգելից խմիչք կամ այն ամէնը,
ինչ ինքդ կը կամենաս, կ'ուտես այն-
տեղ քո Տէր Աստծու առջեւ, եւ կ'ուրա-
խանաք դու եւ քո որդին† : 27 Քո
քաղաքներում գտնուող ղեւտացուն
աչքաթող չանես, որովհետեւ նա ո՛չ
բաժին ունի, ո՛չ էլ ժառանգութիւն քեզ
հետ:
28 Երեք տարի անցնելուց յետոյ
կ'առանձնացնես այդ տարուայ բերքի
բոլոր տասանորդները եւ կը պահես քո
քաղաքներում: 29 Կը գայ ղեւտացին,
որը ո՛չ բաժին ունի, ո՛չ էլ ժառան-
գութիւն քեզ հետ, կը գան քո քա-
ղաքներում բնակուող եկուորը, որբն ու
այրին, կ'ուտեն ու կը կշտանան, եւ քո
Տէր Աստուածը կ'օրհնի քո բոլոր
գործերը»:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ
(Ղեւտ. 25. 1-7)

15 «Ամէն եօթը տարին մէկ‡ թո-
ղութիւն կ'անես: 2 Թողութեան կարգն
այս է. եթէ քո մերձաւորին պարտք ես
տուել, եւ նա պէտք է վերադարձնի դա,
ապա կը զիջես, չես պահանջի դա քո
մերձաւորից ու եղբօրից, որովհետեւ
Թողութիւնը յանուն քո Տէր Աստծու է:
3 Քեզ պատկանող, բայց օտար մարդու
փոխ տրուած բանը կը պահանջես,
բայց ինչ որ եղբայրդ քեզ պարտք է,
այն կը զիջես: 4 Թող ձեր մէջ
կարիքաւորներ չլինեն, եւ քո Տէր
Աստուածը քեզ օրհնի այն երկրում, որ
քեզ է տալու իբրեւ ժառանգութիւն,
որպէսզի տիրես դրան: 5 Եթէ ամէն
կերպ լսես քո Տէր Աստծու ձայնը՝
պահես ու կատարես բոլոր պատուի-
րանները, որ ես այսօր պատգամում եմ
քեզ, 6 քո Տէր Աստուածը կ'օրհնի քեզ,
ինչպէս խոստացել է քեզ: Շատ ազգերի
փոխ կը տաս, բայց ինքդ պարտք չես
վերցնի, բազում ազգերի կը տիրես,
բայց քեզ չեն տիրի:
7 Եւ եթէ քո Տէր Աստծու քեզ տուած
երկրի քաղաքներից որեւէ մէկում քո
եղբայրների մէջ մէկը կարիքաւոր լինի,
ապա նրանից երես մի՛ թեքիր, քո
կարիքաւոր եղբօր նկատմամբ ժլա-
տութիւն մի՛ արա, 8 այլ առատաձե՛ռն
եղիր նրա նկատմամբ, նրան պարտք
տո՛ւր այնքան, որքան կը խնդրի նա իր
կարօտութեան մէջ: 9 Զգո՛յշ եղիր,
չլինի թէ մտքումդ ծածուկ չար բան
լինի եւ ասես, թէ՝ "Մօտ է եօթներորդ
տարին՝ թողութեան տարին", եւ թշնա-
մաբար նայես կարիքի մէջ գտնուող քո
եղբօր վրայ եւ նրան պարտք չտաս:
Եթէ նա քո դէմ բողոքի Տիրոջը, ապա
դու մեծ մեղքի տակ կ'ընկնես: 10 Տո՛ւր
նրան, պա՛րտք տուր նրան այնքան,
որքան անհրաժեշտ է: Պարտք տալուց
յետոյ մի՛ տրտմիր, որովհետեւ դրա
համար քո Տէր Աստուածը քեզ կ'օրհնի
քո բոլոր գործերում՝ ինչի էլ որ ձեռք
տաս: 11 Քանի որ կարիքաւորներն
անպակաս են լինելու երկրի վրայ, դրա
համար էլ այս բանը պատուիրելով՝
ասում եմ. "Քո աղքատ եղբօր եւ քո
երկրում տառապեալ մարդկանց
նկատմամբ առատաձե՛ռն եղիր"»:

†Այլ բնագրերում՝ ընտանիքը:
‡Երրայերէն՝ Երբ եօթը տարիները լրանան:

ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ
(Ելք 21. 1-11)

12 Եթէ եբրայեցի քո եղբայրը կամ
եբրայեցի մի կին վաճառուի քեզ, ապա
վեց տարի նա թող ծառայի քեզ, իսկ
եօթներորդ տարում նրան ազատ
կ'արձակես քեզնից: 13 Երբ նրան
ազատ արձակես, ձեռնունայն չար-
ձակես. 14 նրան կը տաս քո ոչխար-
ներից, քո ցորենից ու քո հնձանի բա-
րիքից: Ինչպէս որ քո Տէր Աստուածը
օրհնեց քեզ, դու էլ նրա՛ն տուր: 15 Յի-
շի՛ր, որ դու էլ ստրուկ էիր Եգիպտա-
ցիների երկրում, եւ քո Տէր Աստուածը
քեզ փրկեց այնտեղից: Դրա համար էլ
քեզ պատուիրում եմ, որ կատարես այս
բաները: 16 Եթէ ծառան քեզ ասի՝
"Քեզանից չեմ հեռանայ", քանի որ
սիրել է քեզ ու քո ընտանիքը, որով-
հետեւ նրա համար յարմար է քեզ մօտ
մնալը, 17 ապա հերիւնը կը վերցնես,
դռան սեմի վրայ կը ծակես նրա
ականջը, եւ նա ցմահ կը դառնայ քո
ստրուկը: Նոյն կերպ կը վարուես քո
աղախնի նկատմամբ: 18 Քեզ ծանր
թող չթուայ, եթէ քեզանից ազատ
արձակես քո ստրուկներին, քանի որ
նրանք վեց տարի շարունակ վարձ-
կանի վարձով են ծառայել քեզ: Այն
ժամանակ ինչ գործ էլ կատարես, քո
Տէր Աստուածը կ'օրհնի քեզ»:

ԱՐՋԱՌԻ ԵՒ ՈՉԽԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄՆՈՒՆԴՆԵՐԸ

19 «Քո նախիրներում ու հօտերում
ծնուած բոլոր առաջին ծնունդների
որձերին կը նուիրաբերես քո Տէր
Աստծուն: Քո առաջնածին եզը գործի
չէ՛ծես եւ քո հօտերի առաջին ծնունդ-
ները չխուզես: 20 Տարէցտարի դու եւ
քո ընտանիքը կ'ուտէք քո Տիրոջ առջեւ
այն վայրում, որ կ'ընտրի քո Տէր
Աստուածը: 21 Եթէ այդ անասունը
արատաւոր լինի՝ կաղ, կոյր կամ որեւէ
ուրիշ արատ ունենայ, դրան քո Տէր
Աստծուն զոհ մի՛ բեր, 22 այլ կե՛ր քո
քաղաքներում: Այնտեղ գտնուող ան-
մաքուր ու մաքուր մարդիկ միասին
կարող են ուտել այն, ինչպէս ուտում
են այծեամն ու եղջերուն: 23 Արիւնը,
սակայն, չուտես, այլ իբրեւ ջուր կը
թափես գետին»:

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԸ
(Ելք 12. 1-20)

16 «Պահի՛ր Կանխոց ամիսը, կա-
տարի՛ր քո Տէր Աստծու զատիկը,
որովհետեւ Կանխոց ամսին, գիշերով
դուրս եկաք Եգիպտոսից: 2 Քո Տէր
Աստծու համար կը մորթես զատիկը՝
ոչխարներ ու արջառներ կը զոհես այն
վայրում, որ կ'ընտրի քո Տէր Աս-
տուածը, որպէսզի իր անունը յայտ-
նուի այնտեղ: 3 Դրա հետ թթխմորով
բան չուտես: Դրա հետ եօթը օր բա-
ղարջ՝ չարչարանաց հաց կ'ուտես,
որովհետեւ տագնապով դուրս եկաք
Եգիպտոսից, որպէսզի ձեր կեանքի
բոլոր օրերին յիշէք Եգիպտացիների
երկրից ձեր դուրս գալու օրը: 4 Քո
բոլոր բնակավայրերում եօթը օր
թթխմորով բան չերեւայ, եւ մինչեւ
յաջորդ առաւօտ չմնայ այն մսից, որ
մորթել ես առաջին օրուայ երեկոյեան:
5 Չհամարձակուես քո զատիկը մորթել
քո քաղաքներից մէկում, որոնք քո Տէր
Աստուածը տալու է քեզ. 6 զատիկը կը
մորթես այն վայրում, որ կ'ընտրի քո
Տէր Աստուածը, որպէսզի իր անունը
յայտնուի այնտեղ, կը զոհես երեկո-
յեան՝ մայրամուտին, այն ժամանակ,
երբ դուրս եկար Եգիպտոսից: 7 Կ'եփես,
կը խորովես ու կ'ուտես այն վայրում,
որ կ'ընտրի քո Տէր Աստուածը, եւ վաղ
առաւօտեան կը վերադառնաս քո
տունը: 8 Վեց օր բաղարջ հաց կ'ուտես,
իսկ եօթներորդ օրը ելքի[†] օրն է՝ քո Տէր
Աստծու տօնը: Այդ օրը ոչ մի գործ չես
կատարի, բացի այն գործերից, որ
անհրաժեշտ են մարդու պէտքերի
համար»:

ՀՆՁԻ ՏՕՆԸ
(Ելք 34. 22, Ղեւտ. 23. 15-21)

9 «Եօթը շաբաթ կը հաշուես՝ սկսած
քո մանգաղը գործի դնելու օրից: Այդ
օրուանից կը սկսես հաշուել եօթը
շաբաթ 10 եւ Շաբաթների տօնը

[†]Եբրայերէնում պակասում է:

կատարելով քո Տէր Աստծու համար՝ կը
տաս քո ունեցածի չափով, ինչպէս որ
քո Տէր Աստուածը օրհնեց քեզ: 11 Դու,
քո տղան ու քո աղջիկը, քո ծառան ու
քո աղախինը, քո քաղաքներում բնա-
կուող ղեւտացին ու ձեզ հետ բնակուող
պանդուխտը, որբն ու այրին քո Տէր
Աստծու առջեւ կ'ուրախանաք այն
վայրում, որ կ'ընտրի Տէր Աստուածը,
որպէսզի իր անունը յայտնուի այն-
տեղ: 12 Յիշի՛ր, որ ստրուկ էիր Եգիպ-
տացիների երկրում, եւ հետամո՛ւտ
եղիր, որ կատարես այս պատուի-
րանները»:

ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆԸ
(Ղեւտ. 23. 33-43)

13 «Տաղաւարահարաց տօնը կը կա-
տարես եօթը օր, երբ կը հաւաքես քո
կալի ու քո հնձանի արգասիքը: 14 Տօնդ
կատարելիս կ'ուրախանաք դու, քո
տղան ու աղջիկը, քո ծառան ու քո
աղախինը, քո քաղաքներում բնակուող
ղեւտացին, պանդուխտը, որբն ու
այրին: 15 Քո Տէր Աստծու համար
եօթը օր տօն կը կատարես այն վայ-
րում, որ կ'ընտրի քո Տէր Աստուածը:
Եթէ քո Տէր Աստուածը օրհնի քո բոլոր
բերքը եւ քո ձեռնարկած բոլոր
գործերը, այն ժամանակ կ'ուրախա-
նաս: 16 Քո բոլոր արական սեռի մար-
դիկ տարուայ մէջ երեք անգամ՝ Բա-
ղարջակերաց տօնի, Շաբաթների տօնի
եւ Տաղաւարահարաց տօնի ժամանակ
պէտք է դէմ յանդիման կանգնեն քո
Տէր Աստծու առջեւ այն վայրում, որ
կ'ընտրի Տէրը: Ոչ ոք քո Տէր Աստծու
առջեւ դատարկաձեռն չպէտք է
երեւայ: 17 Իւրաքանչիւրը թող ըստ իր
կարողութեան տայ՝ քո Տէր Աստծու
քեզ տուած օրհնութեան համեմատ»:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ
(Ղեւտ. 23. 33-43)

18 «Քո Տէր Աստծու քեզ տուած բո-
լոր քաղաքներում ըստ ցեղերի դատա-
ւորներ ու օրէնսգէտներ կը կարգես,
որպէսզի ժողովրդին դատեն արդար
դատաստանով, 19 աչառութիւն չանեն
ու կաշառք չվերցնեն, որովհետեւ կա-
շառքը կուրացնում է իմաստուն մարդ-
կանց աչքերը, խեղաթիւրում արդար
մարդկանց խօսքերը: 20 Արդար դատ
կ'անէք, որպէսզի ապրէք, մտնէք ու
ժառանգէք այն երկիրը, որ Տէր Աս-
տուածը տալու է ձեզ:
21 Ոչ մի տեսակ ծառ մի՛ տնկիր քո
Տէր Աստծու զոհասեղանի մերձակայ-
քում, հեթանոսական նուէրներ մի՛ ըն-
դունիր, 22 քեզ համար սիւն մի՛ կանգ-
նեցրու, մի բան, որ ատել է քո Տէր
Աստուածը»:

17 «Եթէ արջառը կամ ոչխարը որեւէ
արատ կամ թերութիւն ունենայ, ապա
դա մի՛ զոհիր քո Տէր Աստծու համար,
որովհետեւ դա պիղծ է քո Տէր Աստծու
առջեւ:
2 Եթէ քո միջավայրում, քո Տէր
Աստծու քեզ տուած քաղաքներից մէ-
կում գտնուի մի տղամարդ կամ կին,
որ քո Տէր Աստծու առջեւ չար գործ
անի, դրժի նրա ուխտը, 3 գնայ, պաշտի
օտար աստուածներ, երկրպագի նրանց,
արեգակին կամ լուսնին կամ երկնքի
զարդերից որեւէ մէկին, որոնք ես չեմ
արտօնել ու յանձնարարել քեզ, 4 ապա
խստօրէն հարցուփորձ կ'անես: Եթէ
իրօք այդպիսի բան եղել է՝ պղծութիւ-
նը կատարուել է Իսրայէլի մէջ, 5 ապա
այդ չար բանը կատարած տղամար-
դուն կամ կնոջը կը բերես ձեր քաղաքի
դռների մօտ, եւ քարկոծելով կը սպա-
նէք նրանց: 6 Երկու կամ երեք մարդ-
կանց վկայութեամբ պէտք է մեռնի
մահուան դատապարտուածը. մէկ մար-
դու վկայութեամբ չի կարելի նրան
մահուան դատապարտել: 7 Նախ վկա-
ները թող քար նետեն նրա վրայ՝
սպանելու նրան, ապա՝ ամբողջ ժողո-
վուրդը: Դրանով դու չարը ձեր միջից
վերացրած կը լինես:
8 Եթէ քո քաղաքներում արիւնա-
հեղութեան, դատարանի վճռի, կռուի,
հակառակութեան վերաբերեալ դատա-
կան մի գործում կողմնորոշուել չկա-
րողանաս, ապա վե՛ր կաց ու գնա՛ այն
վայրը, որ կ'ընտրի քո Տէր Աստուածը,
որտեղ նա կը յայտնի իր անունը: 9 Կը

գնաս ղեւտացի քահանաների եւ այդ
օրուայ դատաւորի մօտ, եւ նրանք
գործը քննելով՝ քեզ կը յայտնեն վճի-
ռը: 10 Այդտեղ՝ քո Տէր Աստծու ընտ-
րած վայրում, կ'արձակես այն վճիռը,
որ կը յայտնեն քեզ: Խստօրէն հետե-
ւի՛ր, որ կատարես ճիշտ այնպէս, ինչ-
պէս կարգադրել են քեզ: 11 Կը կիրա-
ռես այն օրէնքները եւ կ'արձակես այն
վճիռները, որ նրանք կը հաղորդեն քեզ:
Նրանց ասածից ո՛չ աջ կը շեղուես, ո՛չ
ձախ: 12 Այն մարդը, որ գոռոզամտու-
թեան պատճառով կը գործի առանց
լսելու քո Տէր Աստծուն ծառայող քա-
հանայի կամ այդ օրուայ դատաւորի
ասածը, մահապատժի կ'ենթարկուի:
Դրանով դու չարը վերացրած կը լինես
Իսրայէլի միջից, 13 եւ ամբողջ ժո-
ղովուրդն այդ լսելով՝ կը վախենայ ու
այլեւս չի գոռոզամտանայ»:

ՕՐԷՆՔՆԵՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

14 «Եթէ մտնես այն երկիրը, որ քո
Տէր Աստուածը տալու է քեզ, ժառան-
գես այն ու բնակուես նրա մէջ եւ
ասես՝ "Մենք էլ առաջնորդ ունենանք
մեր շուրջը գտնուող միւս ազգերի
նման", 15 ապա առաջնորդ կը նշա-
նակես նրան, որին կ'ընտրի քո Տէր
Աստուածը: Քո իսրայէլացի եղբայր-
ների՛ց քեզ իշխան կը նշանակես:
Չհամարձակուես նշանակել օտար մի
մարդու, որ քո եղբայրը չէ, 16 որպէսզի
նա չբազմացնի իր երիվարները եւ
ժողովրդին դէպի Եգիպտոս չվերա-
դարձնի, որովհետեւ Տէրն ասել է, թէ՝
"Այլեւս նոյն ճանապարհով յետ չէք
դառնալու": 17 Եւ թող նա չբազմացնի
իր կանանց թիւը, չգայթակղուի եւ
շատ արծաթ ու ոսկի չկուտակի: 18 Երբ
նա իր իշխանութեան գլուխ անցնի,
նրա համար կը գրես† այս երկրորդ
օրէնքը այն մատեանում, որի բնօրի-
նակը ղեւտացի քահանաների մօտ է:
19 Այդ պատճէնը պէտք է մնայ իշխա-
նի մօտ, եւ նա իր կեանքի բոլոր օրերին
դրանք պէտք է կարդայ, որպէսզի սո-
վորի երկնչել քո Տէր Աստծուց, պահի
այս բոլոր պատուիրանները եւ կիրառի
այս օրէնքները 20 նրա համար, որ
չմեծամտանայ իր ցեղակիցների մօտ,
պատուիրաններից աջ կամ ձախ չշե-
ղուի, որպէսզի իր ու իր որդիների
իշխանութիւնը իսրայէլացիների վրայ
երկար տեւի»:

ՂԵՒՏԱՑԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

18 «Ղեւտացի քահանաները՝ Ղեւիի
որդիները, իսրայէլացիների հետ բաժին
ու ժառանգութիւն չպէտք է ունենան:
Տիրոջն արուած նուիրաբերումնե՛րը
թող լինեն նրանց բաժինը. դրա՛նք
թող ուտեն: 2 Նրանք իրենց եղբայր-
ների մէջ բաժին չպէտք է ունենան,
որովհետեւ Տիրոջը ծառայելն է նրանց
բաժինը, ինչպէս որ Տէրն ասել է
նրանց:
3 Զոհեր մատուցող ժողովուրդը իր-
րեւ բաժին քահանային պէտք է յատ-
կացնի հետեւեալը. եթէ զոհը արջառ է
կամ ոչխար, քահանային պէտք է տրուի
թեւը, ծնօտները ու փորը: 4 Նրանց
պէտք է տաս նաեւ քո ցորենի, գինու,
իւղի առաջին բերքը, քո ոչխարների
առաջին խուզից ստացած բուրդը, 5 ո-
րովհետեւ Տէրը քո բոլոր ցեղերի միջից
Ղեւիին է ընտրել, որպէսզի նա ու նրա
որդիները յաւիտեանս կանգնեն ձեր
Տէր Աստծու առջեւ, ծառայեն նրան ու
օրհնութիւն տան նրա անուամբ:
6 Իսկ եթէ իսրայէլացիներին պատ-
կանող մի քաղաքից գայ այնտեղ
բնակուող ղեւտացին եւ ըստ իր ցան-
կութեան գայ Տիրոջ ընտրած վայրը,
7 որպէսզի Տէր Աստծու առջեւ այնտեղ
կանգնած իր ղեւտացի բոլոր եղբայր-
ների նման ծառայի քո Տէր Աստծուն,
8 ապա թող ուտի իրեն հասանելիք
բաժինը՝ անկախ իր հայրական ունե-
ցուածքից ստացած եկամուտներից»:

ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԷՆ

9 «Եթէ մտնես Տէր Աստծու քեզ
տուած երկիրը, չիւրացնես այդտեղ
ապրող ազգերի գարշելի սովորու-
թիւնները: 10 Ձեր մէջ թող չգտնուի
այնպիսի մէկը, որն իր տղային կամ
աղջկան կրակի բովից անցկացնի, կա-
խարդութեամբ կամ գուշակութեամբ
զբաղուի, թռչուններին նայելով կան-
խագուշակումներ անի, 11 մոգութիւն-
ներով զբաղուի, վհուկ կամ սուտ մար-
գարէ լինի, ոգեհարցութեամբ զբաղուի,
12 որովհետեւ Տիրոջ համար պիղծ է
նա, ով զբաղւում է այդպիսի բաներով.
այդպիսի գարշելի բաների համար է, որ
Տէրը նրանց վերացնում է քո միջից:
13 Քո Տէր Աստծու առջեւ կատարեալ
պէտք է լինես: 14 Քո ժառանգելիք
երկրի մարդիկ հաւատում են հմայու-
թիւններին ու կախարդութիւններին,
բայց քո Տէր Աստուածը քեզ այդպէս
վարուելու հրաման չի տուել:
15 Քո եղբայրների միջից քո Տէր
Աստուածը ինձ նման մարգարէ պիտի
մէջտեղ հանի, նրա՛ն կը լսէք, 16 քանի
որ, երբ Քորէբում հաւաքուել էիք, ձեր
Տէր Աստծուն խնդրելով՝ ասում էիք.
"Այլեւս չլսենք մեր Տէր Աստծու ձայ-
նը, այդ մեծ կրակն այլեւս չտեսնենք,
որպէսզի չմեռնենք": 17 Այն ժամանակ
Տէրն ինձ ասաց. "Ճիշտ է այն ամէնը,
ինչ նրանք ասացին. 18 ես նրանց
եղբայրներից քեզ նման մի մարգարէ
մէջտեղ կը հանեմ, իմ պատգամները
կը դնեմ նրա բերանը, եւ նա նրանց
կ'ասի այն, ինչ ես կը պատուիրեմ
նրան: 19 Այն մարդը, որ չի լսի իմ
անունից խօսող մարգարէին, նրանից
վրէժ կը լուծեմ:
20 Իսկ եթէ մարգարէն յանդգնի իմ
անունից ասել այնպիսի բաներ, որ ես
չեմ հրամայել ասել, կամ եթէ խօսի
օտար աստուածների անունից, ապա
այդ մարգարէն պէտք է մեռնի": 21 Ե-
թէ ձեր մտքում ասէք՝ "Ինչպէ՞ս իմա-
նանք, թէ Տէրը չի ասել այդ խօսքերը",
22 ապա իմացէ՛ք. եթէ Տիրոջ անունից
մարգարէի ասածը չի կատարւում, չի
լինում, ապա դա Տիրոջ ասած խօսքը
չէ. մարգարէն ամբարշտութեամբ է
խօսել, ուրեմն մի՛ թողէք նրան
խօսել»:

ԱՊԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐ

19 «Երբ քո Տէր Աստուածը կոտորի
այն ազգերին, որոնց երկիրը քո Տէր
Աստուածը տալու է քեզ, երբ ժառան-
գես այն եւ բնակուես նրանց քաղա-
քներում ու տներում, 2 այն ժամանակ
քո Տէր Աստծու քեզ տուած երկրի մէջ
երեք քաղաք կ'առանձնացնես: 3 Նկա-
տի առնելով ճանապարհները, երեքի կը
բաժանես քո Տէր Աստծու քեզ բաժին
տուած երկիրը, որպէսզի այդ քաղաք-
ները ապաստան լինեն մարդասպա-
նութիւն կատարած բոլոր մարդկանց
համար:
4 Այդ քաղաքները փախչելով՝ այդ-
տեղ ապաստան թող գտնի այն մար-
դասպանը, որ նախապէս թշնամութիւն
չի ունեցել իր այդ մերձաւորի նկատ-
մամբ եւ նրան սպանել է ակամայ.
5 ինչպէս, օրինակ՝ նա, ով իր մեր-
ձաւորի հետ մայրու անտառ է մտնում
ծառ կտրելու, կացնով փայտ կտրելու
համար բարձրացնում է իր ձեռքը, եւ
կացինը կոթից պոկուելով՝ դիպչում է
այդ մերձաւորին, ու սա մեռնում է:
Նա թող փախչի, ընկնի այդ քաղաք-
ներից մէկնումէկը եւ փրկուի: 6 Այն-
պէս չլինի, որ սպանուածի արիւնակից
հարազատը, որի սիրտը այրւում է,
սպանողին հետապնդի, եթէ անգամ
ճանապարհը հեռու է, եւ սպանի նրան:
Նա մահուան դատապարտուելու են-
թակայ չէ, որովհետեւ նախապէս նրա
նկատմամբ թշնամութիւն չի ունեցել:
7 Դրա համար էլ քեզ պատուիրում եմ
ու ասում հետեւեալը. երեք քաղաք
կ'առանձնացնես քեզ համար:
8 Եթէ քո Տէր Աստուածը ընդար-
ձակի քո սահմանները, ինչպէս Տէրը
երդուել է քո հայրերին, եւ Տէրը քեզ
տայ քո հայրերին խոստացած ամբողջ
երկիրը, 9 եթէ լսես ու կատարես այսօր
քեզ հաղորդած իմ բոլոր այս պա-
տուիրանները, այն է՝ սիրես քո Տէր
Աստծուն, յաւիտեանս ընթանաս նրա
ուղիով, ապա այդ երեք քաղաքներին
կ'աւելացնես եւս երեք այլ քաղաքներ,
10 որպէսզի քո Տէր Աստծու քեզ ժա-
ռանգութիւն տուած երկրում անմեղ
արիւն չթափուի, ձեր մէջ ոչ ոք
արիւնապարտ չլինի:
11 Եթէ մէկն ատի իր մերձաւորին եւ
նրա դէմ դաւ նիւթի, յարձակուի նրա
վրայ, հարուածելով սպանի նրան ու

†Երրայերէնում՝ թող նա իր համար գրի պատճէնը ...

փախչի այդ քաղաքներից մէկնումէկը,
12 *ապա նրա քաղաքի ծերերը պէտք է*
մարդ ուղարկեն, վերցնեն նրան այն-
տեղից ու յանձնեն սպանուածի արեան
վրէժը պահանջող հարազատի ձեռքը,
որպէսզի նա սպանի նրան: 13 *Դու*
նրան չպէտք է խնայես: Իսրայէլի
միջից կը վերացնես անմեղ արիւնը,
որպէսզի լաւ լինի քեզ համար»:

ՀԻՆ ԿԱԼՈՒԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ

14 «*Մի՛ խախտիր քո մերձաւորի այն*
սահմանները, որ քո հայրերը քեզ
ժառանգութիւն են տուել, եւ որը քո
Տէր Աստուածը այդ երկրում քեզ է
տուել իբրեւ սեփականութիւն»:

ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 «*Որեւէ մէկի անօրէնութիւնները,*
յանցանքներն ու կատարած մեղքերն
ապացուցելու համար մէկ մարդու
վկայութիւնը բաւական չէ: Երկու կամ
երեք վկաների բերանով պէտք է
հաստատուի ամէն բան:
16 *Եթէ մի վկայ սուտ վկայութիւն*
տայ մի մարդու մասին եւ մեղադրի
նրան անօրէնութեան մէջ, 17 *ապա*
երկուսն էլ, որոնց մէջ հակառակու-
թիւն կայ, պէտք է կանգնեն Տիրոջ
առջեւ, քահանաների առջեւ, այդ
օրուայ դատաւորների առջեւ, 18 *եւ*
դատաւորները պէտք է արդարութեամբ
քննեն գործը: Եթէ հաստատուի, որ
վկան սուտ վկայութիւն տալով է մե-
ղադրել իր եղբօրը, 19 *ապա նրա*
նկատմամբ կը կիրառէք այն պատիժը,
որ նա մտադիր էր հասցնել իր եղբօրը:
Դրանով չարը կը վերացնէք ձեր միջից:
20 *Ուրիշներն այդ լսելով՝ կը վախենան*
եւ այլեւս չեն յանդգնի այդպիսի չար
բան անել ձեր մէջ: 21 *Նրան մի՛*
խնայէք: Կեանքի դիմաց՝ կեանք, աչքի
դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ,
ձեռքի դիմաց՝ ձեռք, ոտքի դիմաց՝
ոտք»:

ՕՐԷՆՔ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

20 «*Եթէ պատերազմի ելնես քո*
թշնամիների դէմ եւ տեսնես, որ նրանց
ձիաւորները, հեծեալներն ու ռազմի
դաշտ եկած ժողովուրդը թուով քե-
զանից շատ են, մի՛ վախեցիր նրանցից,
որովհետեւ Եգիպտացիների երկրից քեզ
դուրս բերած քո Տէր Աստուածը քեզ
հետ է: 2 *Երբ հասնի պատերազմելու*
ժամը, քահանան մօտ գալով՝ թող
խօսի ժողովրդի հետ 3 *եւ ասի նրանց.*
“Լսեցէ՛ք, իսրայէլացիներ՛ը, ահաւասիկ
դուք այսօր պատերազմի էք ելնում
ձեր թշնամիների դէմ: Ձեր սրտերը
թող չթուլանան, մի՛ վախեցէք, մի՛
զարհուրէք ու նրանցից խոյս մի՛
տուէք, 4 *որովհետեւ մեր Տէր Աստուա-*
ծը ձեզ հետ գնում է ձեր առջեւից,
որպէսզի ձեզ հետ պատերազմելով ձեր
թշնամիների դէմ՝ փրկի ձեզ”: 5 *Զօ-*
րահաւաք կազմակերպած սպաները
թող խօսեն ժողովրդի հետ եւ ասեն.
“Այն մարդը, որը նոր տուն է կառուցել,
բայց բնակարանամուտ չի արել, թող
վերադառնայ իր տունը. չլինի թէ
պատերազմի ժամանակ նա սպանուի,
եւ նրա փոխարէն մի ուրիշ մարդ
բնակարանամուտ անի: 6 *Այն մարդը,*
որն այգի է տնկել, բայց դեռ դրա
բերքը չի վայելել, թող գնայ ու
վերադառնայ իր տունը. չլինի թէ
պատերազմի ժամանակ սպանուի, եւ
նրա փոխարէն մի ուրիշ մարդ դրա
բերքը վայելի: 7 *Այն մարդը, որը մի*
աղջկայ հետ նշանուել է, բայց նրա
հետ դեռ չի ամուսնացել, թող գնայ ու
վերադառնայ իր տունը. չլինի թէ
պատերազմի ժամանակ սպանուի, եւ
նրա փոխարէն մի ուրիշ մարդ ամուս-
նանայ իր նշանածի հետ”: 8 *Սպաները*
դարձեալ թող խօսեն ժողովրդի հետ եւ
ասեն. “Այն մարդը, որ վախենում է,
թուլասիրտ է, թող գնայ ու վերադառ-
նայ իր տունը, որպէսզի իր եղբօրն էլ
իր նման վախկոտ չդարձնի”: 9 *Երբ*
սպաները վերջացնեն ժողովրդի հետ
խօսելը, զօրքի հրամանատարներ թող
նշանակուեն բանակն առաջնորդելու
համար:
10 *Եթէ մօտենաս մի քաղաքի, նախ*
նրա բնակիչներին խաղաղութեան կոչ
կ՝անես: 11 *Եթէ խաղաղութիւնն ըն-*
դունեն եւ քո առջեւ բաց անեն

դարպասները, ապա այդ քաղաքի մէջ
գտնուող ամբողջ ժողովուրդը հարկա-
տու եւ հնազանդ թող լինի քեզ: 12 *Իսկ*
եթէ չհնազանդուեն քեզ եւ պատե-
րազմեն քո դէմ, ապա կը պաշարես
քաղաքը, 13 *մինչեւ որ Տէր Աս-*
տուածը այն մատնի քո ձեռքը. եւ դու
սրակոտոր կ՝անես նրա բոլոր արական
սեռի բնակիչներին, 14 *կը խնայես*
կանանց, ապրանքներն† *ու բոլոր*
անասունները: Քաղաքում գտնուող
ամէն ինչ ու մնացած մարդկանց աւար
կը վերցնես եւ կը սեփականացնես քո
Տէր Աստծու՝ քեզ յանձնած թշնամի-
ներիդ ամբողջ աւարը: 15 *Նոյն կերպ*
կը վարուես քեզանից շատ հեռու
գտնուող բոլոր քաղաքների հետ,
որոնք այդ ազգերի քաղաքներից չեն:
16 *Քո Տէր Աստծու քեզ իբրեւ սե-*
փականութիւն տուած երկրի քաղաք-
ների բնակիչներից ոչ մէկին կենդանի
չթողնէք, 17 *ամբողջապէս ոչնչացրէ՛ք*
նրանց՝ քետացիներին, ամորհացիներ-
ին, քանանացիներին, փերեզացի-
ներին, խեւացիներին, յեբուսացիներին
եւ գերգեսացիներին, ինչպէս պատուի-
րել է քո Տէր Աստուածը, 18 *որպէսզի*
սրանք ձեզ չսովորեցնեն անել իրենց
այն բոլոր գարշելի բաները, որ նրանք
անում են իրենց չաստուածների
համար: Դրանով դուք մեղանչած կը
լինէք ձեր Տէր Աստծու առջեւ:
19 *Եթէ նստել պաշարել ես մի քա-*
ղաք, եւ այն գրաւելու համար պէտք
լինի երկար ժամանակ պատերազմել
նրա դէմ, ապա կացնահարելով նրա
պտղատու ծառերը չկտրես. դրանց
պտղից կե՛ր, բայց մի՛ կտրիր. ծառը
միթէ դաշտում գտնուող մա՞րդ է, որ
կարողանայ քեզանից հեռանալով՝
պաշարուածներին միանալ: 20 *Կտրի՛ր*
ու կոտորի՛ր այն ծառը, որ գիտես, թէ
պտղատու չէ, այն կտրի՛ր ու կտրատի՛ր
եւ դրանով քո դէմ պատերազմող
քաղաքի շուրջը պատնէշ կառուցի՛ր,
մինչեւ որ այդ քաղաքը յանձնուի»:

ՉԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21 «*Եթէ քո Տէր Աստծու իբրեւ ժա-*
ռանգութիւն քեզ տուած երկրում,
դաշտի մէջ ընկած մի սպանուած
գտնուի, ու չիմանան, թէ ով է եղել
նրան սպանողը, 2 *ապա թող ելնեն քո*
ծերերն ու քո դատաւորները եւ չափեն
սպանուածի եւ նրա շուրջը գտնուող
քաղաքների միջեւ ընկած տարածու-
թիւնը: 3 *Սպանուածի վայրին առաւել*
մօտիկ քաղաքի ծերերը արջառների
միջից թող վերցնեն չբանեցուած ու
լուծ չկրած մի երինջ, 4 *այդ քաղաքի*
ծերերն այդ երինջը թող իջեցնեն
ապառաժուտ մի ձորի մէջ, ուր ո՛չ վար
է արուած, ո՛չ սերմ ցանուած, եւ այդ
ձորում ջլակոտոր թող անեն երինջը:
5 *Ղեւտացի քահանաները, որոնց քո*
Տէր Աստուածն է ընտրել, որպէսզի
կանգնեն նրա առջեւ, օրհնութիւն
տան նրա անունով, թող մօտենան եւ
նրանց ասածով վերանան բոլոր վէ-
ճերն ու վնասները: 6 *Սպանուածին*
առաւել մօտիկ գտնուող քաղաքի բոլոր
ծերերը իրենց ձեռքերը թող լուան
ձորում ջլակոտոր արուած երինջի գլխի
վրայ 7 *եւ պատասխան տալով՝ թող*
ասեն. “Մեր ձեռքերը չեն թափել այս
արիւնը, եւ մեր աչքերը չեն տեսել:
8 *Տէ՛ր, քաւութի՛ւն արա քո փրկած*
Իսրայէլի ժողովրդին, որպէսզի անմեղ
արիւնը Իսրայէլի քո ժողովրդին չվե-
րագրուի†*”: Դրանով նրանք թափուած*
արեան մեղքից զերծ կը մնան: 9 *Այս*
ձեւով դու ձեր միջից կը սրբես անմեղ
արիւնը, եթէ ուզում ես քո Տէր Աստծու
առջեւ բարին ու հաճելին անել»:

ԳԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

10 «*Երբ պատերազմի ելնես քո*
թշնամիների դէմ, եւ քո Տէր Աս-
տուածը նրանց մատնի քո ձեռքը, ա-
ւար վերցնես նրանց ունեցուածքը 11 *եւ*
գերեվարուածների մէջ գեղեցիկ կին
տեսնես, ցանկաս տիրանալ նրան ու
նրան կին առնել քեզ, 12 *ապա նրան կը*
տանես քո տունը, կ՝ածիլես նրա գլու-
խը, 13 *կը կտրես նրա եղունգները, կը*

---

†*Այլ բնագրերում՝ երեխաներին:*

†*Այս եւ յաջորդ մի քանի կէտադրութիւնը՝ ըստ այլ բնագրերի:*

հանես նրա գերութեան զգեստները: Նա թող նստի քո տանը ու մէկ ամիս թող սուգ անի իր հօր ու մօր համար: Դրանից յետոյ կը մերձենաս նրան, կ'ապրես նրա հետ, եւ նա կը լինի քո կինը: 14 *Եթէ դու նրանից գոհ չլինես, ապա նրան ազատ կ'արձակես: Նրան արծաթով չվաճառես ու նրան չստորացնես, քանի որ լակել ես նրան»:*

ԱՆԴՐԱՆԻԿ ՋԱՒԱԿԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

15 *«Եթէ մի տղամարդ երկու կին ունենայ, որոնցից մէկը սիրելի լինի, իսկ միւսն՝ ատելի, եւ նրանք՝ սիրելի ու ատելի այդ կանայք, նրա համար որդիներ ծնեն, եւ անդրանիկը լինի ատելի կնոջ որդին,* 16 *ու երբ վրայ հասնի իր ունեցուածքը որդիներին ժառանգութիւն տալու օրը, ապա այդ մարդն անտես անելով ատելի կնոջ անդրանիկ որդուն՝ իրաւունք չունի անդրանիկի իրաւունքը տալ իր սիրելի կնոջ որդուն.* 17 *Նա պարտաւոր է անդրանիկ ճանաչել ատելի կնոջ որդուն եւ իր ունեցածից նրան հասանելիք բաժնի կրկնապատիկը տալ, որովհետեւ նա է նրա անդրանիկ որդին, եւ անդրանկութեան իրաւունքը նրան է պատկանում»:*

ԱՆՀՆԱԶԱՆԴ ՋԱՒԱԿԻ ՄԱՍԻՆ

18 *«Եթէ մէկն ունի անառակ ու անզգամ որդի, որն իր հօրն ու մօրը չի լսում, որին խրատում են, բայց նա չի անսում նրանց,* 19 *ապա նրա հայրն ու մայրը նրան թող տանեն իրենց քաղաքի ծերերի մօտ, իրենց հրապարակի դարպասի առջեւ,* 20 *եւ ասեն իրենց քաղաքի մարդկանց. "Մեր այս որդին անառակ է ու անզգամ. նա մեր ասածը չի լսում, որկրամոլ է ու հարբեցող":* 21 *Այն ժամանակ այդ քաղաքի մարդիկ քարկոծելով թող սպանեն նրան: Դրանով դուք չարը վերացրած կը լինէք ձեր միջից, իսկ ուրիշներն այդ լսելով՝ կը վախենան»:*

ՋԱՆԱԶԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

22 *«Եթէ մէկը մահուան դատապարտուելու արժանի յանցանք կատարի, նա մեռնելու արժանի լինի, ու նրան կախեն ծառից,* 23 *ապա նրա մարմինը ծառի վրայ գիշերը թող չմնայ. նոյն օրն իսկ կը թաղէք նրան, որովհետեւ Աստծուց անիծուած է նա, ով կախուած է ծառից: Մի՛ պղծէք այն երկիրը, որ քո Տէր Աստուածը քեզ է տալիս իբրեւ ժառանգութիւն»:*

ՅԱՐԳԻՐ ՀԱՐԵՒԱՆԻՆ ՈՒՆԵՑՈՒԱԾՔԸ

22 *«Չլինի թէ ճանապարհի վրայ տեսնես քո իսրայէլացի եղբօր մոլորուած արջառը կամ ոչխարը եւ անտես անես դրանք. անպատճառ պէտք է վերադարձնես դրանք ու բերես քո եղբօր մօտ:* 2 *Եթէ քո եղբայրը քեզ մօտիկ վայրում չի ապրում կամ դու չես ճանաչում նրան, ապա դրանք կը բերես քո տունը. դրանք թող մնան քեզ մօտ, մինչեւ որ քո եղբայրը փնտռի դրանք, ու դու վերադարձնես նրան:* 3 *Նոյն կերպ կը վարուես նրա էշի հետ, նոյն կերպ կը վարուես նրա զգեստների հետ, նոյն կերպ կը վարուես քո եղբօր կորցրած բոլոր իրերի հետ: Եթէ նա ինչ-որ բան կորցնի, ու դու գտնես, չյանդգնես անուշադրութեան մատնել այն:*

4 *Երբ կը տեսնես, որ եղբօրդ էշը կամ եզը ընկած է ճանապարհի վրայ, ապա դրանց կողքով անտարբեր չանցնես, այլ տիրոջն օգնելով՝ ոտքի կը կանգնեցնես դրանց:*

5 *Կինը տղամարդու զգեստ չպէտք է հագնի, իսկ տղամարդն էլ կանացի զգեստ չպէտք է հագնի, որովհետեւ քո Տէր Աստծու առջեւ պիղծ է նա, ով անում է այդ բանը:*

6 *Եթէ քո ճանապարհին, քո առջեւ, ծառի թէ գետնի վրայ թռչունի ձագերի կամ ձուերի բոյն պատահի, եւ մայրը թուխս նստած տաքացնելիս լինի ձագերին կամ ձուերը, ապա մօրը չվերցնես ձագերի հետ.* 7 *ազատ կ'արձակես մօրը, իսկ ձագերին կը վերցնես քեզ, որպէսզի բարիք գործած*

լինես եւ երկրի վրայ երկարակեաց լինես:

8 *Նոր տուն կառուցելիս բազրիք կը չինես տանիքի շուրջը, որպէսզի, եթէ մէկն այնտեղից ընկնի, դու քո տան մէջ սպանութիւն գործած չլինես:*

9 *Այգուդ մէջ տարբեր սերմեր չցանես, որպէսզի այգու բերքն ու քո ցանած սերմի բերքը իրար հետ հաւասարապէս չապականուեն:*

10 *Վար անելիս էշն ու եզը միասին չլծես:*

11 *Տարբեր նիւթերից՝ բրդից ու վուշից գործուած հագուստ չհագնես:*

12 *Ինչ էլ որ հագնես, քո հագած զգեստի չորս կողմերի վրայ մանուածոյ ծոպեր կը դնես»:*

ՕՐԷՆՔՆԵՐ ՍԵՌԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

13 *«Եթէ մէկը կին առնի՝ ամուսնանայ նրա հետ, բայց ատի նրան,* 14 *նրան բամբասելով մեղքեր բարդի նրա վրայ, նրա անունը վարկաբեկելով ասի՝ "Այս կնոջ հետ ամուսնացայ, բայց երբ մերձեցայ, նրան կոյս չգտայ",* 15 *ապա աղջկայ հայրն ու մայրը իրենց դստերն առնելով՝ աղջկայ կուսութեան նշանը թող ցուցադրեն դռան մօտ, ծերերի առջեւ:* 16 *Աղջկայ հայրը թող ասի ծերերին. "Իմ այս աղջկան կնութեան տուեցի այս մարդուն:* 17 *Սա նրան ատելով՝ բամբասում է ու զրպարտում, թէ՝ 'Քո աղջկան կոյս չգտայ': Ահա իմ աղջկայ կուսութեան նշանները":* *Այն ժամանակ այդ քաղաքի ծերերի առջեւ թող բացեն լաթը:* 18 *Այդ քաղաքի ծերերը թող կանչեն ու յանդիմանեն այդ մարդուն:* 19 *Նրանից թող գանձեն հարիւր սիկղ*†*, յանձնեն հօրը այն բանի դիմաց, որ նա վարկաբեկել է իսրայէլացի կոյսի անունը: Նա թող մնայ նրա կինը, եւ տղամարդը երբեք չհամարձակուի լքել նրան:* 20 *Իսկ եթէ ճիշտ լինի նրա ասածը՝ աղջկայ կուսութեան ապացոյց չգտնեն,* 21 *ապա աղջկան թող բերեն իր հօր դուռը, եւ քաղաքի բնակիչները քարկոծելով թող սպանեն նրան, որովհետեւ իսրայէլացիների մէջ անպատիւ գործ է արել՝ պոռնկացել է իր հօր տանը: Դրանով դուք ձեր միջից վերացրած կը լինէք չարը:*

22 *Եթէ գտնուի մի տղամարդ, որ շնանում է ամուսնացած կնոջ հետ, կը սպանէք երկուսին էլ՝ կնոջ հետ շնացող տղամարդուն ու այդ կնոջը. դրանով Իսրայէլի միջից դուք վերացրած կը լինէք չարը:*

23 *Եթէ քաղաքում մի տղամարդ հանդիպի մարդու հետ նշանուած կոյս աղջկայ եւ պառկի նրա հետ,* 24 *ապա երկուսին էլ կը բերէք իրենց քաղաքի դարպասների մօտ եւ քարկոծելով կը սպանէք նրանց. աղջկան կը սպանէք այն բանի համար, որ, դէպքը քաղաքում լինելով, օգնութեան չի կանչել, իսկ տղամարդուն՝ այն բանի համար, որ բռնաբարել է իր մերձաւորի նշանածին: Դրանով դուք չարը վերացրած կը լինէք ձեր միջից:*

25 *Եթէ տղամարդը դաշտում հանդիպի նշանուած մի աղջկայ եւ բռնութեամբ պառկի նրա հետ, ապա կը սպանէք աղջկան բռնաբարած տղամարդուն,* 26 *իսկ աղջկան ոչինչ չէք անի, քանի որ աղջիկը մահուան արժանի բան չի արել. սա նման է այն դէպքին, երբ մէկը յարձակւում է իր մերձաւորի վրայ ու սպանում նրան:* 27 *Նա դաշտի մէջ է հանդիպել նրան, նշանուած աղջիկը դիմադրել է, եւ ոչ ոք չի եղել, որ օգնէր նրան:*

28 *Եթէ մէկը չնշանուած կոյս աղջկայ հանդիպի ու բռնութեամբ պառկի նրա հետ,* 29 *ապա աղջկան բռնաբարող տղամարդը աղջկայ հօրը պէտք է տայ յիսուն երկդրամեան արծաթ, իսկ աղջիկը պէտք է դառնայ նրա կինը: Տղամարդը երբեք չպէտք է յանդգնի լքել նրան:*

30 *Ոչ ոք իրաւունք չունի ամուսնանալու իր հօր կնոջ հետ եւ այդպիսով երեւան հանելու իր հօր ամօթոյքը»:*

ՏԻՐՈՋ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻՋԻՑ ԱՐՏԱՔՍՈՒՄ

23 *«Ամորձիքը ճզմած կամ կտրած մարդն իրաւունք չունի Աստծու ժողովարանը մտնելու:* 2 *Պոռնկորդին իրաւունք չունի Տիրոջ ժողովարանը*

†Հարիւր կտոր արծաթ:

մտնելու†:
3 Ամոնացին ու մովաբացին իրաւունք չունեն Տիրոջ ժողովարանը մտնելու: Նրանց մինչեւ տասներորդ սերունդը թող յաւիտեան Տիրոջ ժողովարանը չմտնի, 4 որովհետեւ Եգիպտոսից դուրս գալու ճանապարհին նրանք հացով ու ջրով ձեզ ընդառաջ չելան եւ որովհետեւ քո դէմ վարձեցին միջագետքցի Բէորի որդի Բաղաամին, որպէսզի սա անիծի քեզ: 5 Քո Տէր Աստուածը, սակայն, չկամեցաւ լսել Բաղաամին, եւ քո Տէր Աստուածն անէծքը վերածեց օրհնութեան, քանի որ քո Տէր Աստուածը սիրեց քեզ: 6 Քո կեանքի բոլոր օրերին, մինչեւ յաւիտեան նրանց հետ հաշտութեամբ չխօսես:
7 Եդոմայեցուց մի՛ խորշիր, որովհետեւ նա քո եղբայրն է: Եգիպտացուց մի՛ խորշիր, որովհետեւ պանդուխտ էիր նրա երկրում: 8 Նրանց երրորդ սերունդը կարող է մտնել Տիրոջ ժողովարանը»:

ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵԼ

9 «Եթէ պատերազմի ելնես քո թշնամիների դէմ, զգուշացի՛ր ամէն տեսակ չար բաներից: 10 Եթէ ձեր մէջ գտնուի մի մարդ, որն իր երազախաբութեան պատճառով անմաքուր է դարձել, ապա թող բանակատեղիից դուրս ելնի եւ բանակատեղի չմտնի: 11 Երեկոյեան նա իր մարմինը պէտք է լուայ ջրով եւ արեւը մայր մտնելու ժամանակ մտնի բանակատեղի: 12 Բանակատեղիից դուրս առանձնացուած մի տեղ պէտք է ունենաս ու այնտեղ արտաքնոց գնաս: 13 Քո գօտուց կախուած պէտք է ունենաս մի ցից, որպէսզի, երբ արտաքնոց գնաս, դրանով փոս բացես եւ քո աղտեղութիւնն այնտեղ նետելով՝ ծածկես. 14 որովհետեւ քո Տէր Աստուածը շրջում է քո բանակատեղիում, որպէսզի փրկի քեզ եւ քո թշնամուն քո ներկայութեամբ մատնի քո ձեռքը: Դրա համար էլ քո բանակատեղին մաքուր պէտք է մնայ, քո միջավայրում աղտեղութիւն չպէտք է երեւայ, այլապէս Տէրը երես կը թեքի քեզանից»:

ԶԱՆԱԶԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

15 «Իր տիրոջից փախչելով քեզ մօտ եկած ստրուկին մի՛ յանձնիր նրա նախկին տիրոջը. 16 նա թող բնակուի քեզ հետ ու քեզ հետ տեղաւորուի այնտեղ, ուր նա յարմար է գտնում: Նրան նեղութիւն մի՛ պատճառէք:
17 Իսրայէլի դուստրերի մէջ բոզ չպէտք է լինի, իսկ Իսրայէլի տղաների մէջ՝ իգացող: Իսրայէլի դուստրերին կռապաշտութեան նուէր չդարձնէք, եւ Իսրայէլի տղաներից որեւէ մէկին չընծայաբերէք†:
18 Պոռնկի վարձը կամ շնացող տղամարդու գինը որեւէ ուխտ կատարելու համար քո Աստծու տուն չտանես, որովհետեւ քո Տէր Աստծու առջեւ երկուսն էլ պիղծ են:
19 Քո եղբօրը վաշխով արծաթ չտաս, կամ շահ ստանալու ակնկալիքով ու տոկոսներով՝ կերակուր: 20 Ամէն ինչ կարող ես փոխ տալ օտարին ու քո եղբօրը‡, որպէսզի քո Տէր Աստուածը օրհնի քեզ քո բոլոր գործերում այն երկրում, ուր դու մտնելու ես այն ժառանգելու համար:
21 Եթէ ուխտ ես անում քո Տէր Աստծուն, ապա մի՛ յապաղիր այն կատարել, որովհետեւ քո Տէր Աստուածը պահանջելով պահանջելու է քեզանից, եւ չկատարելու դէպքում մեղք կը բարդես վրդ: 22 Եթէ չես ցանկանում ուխտել, ապա դա մեղք չի համարուի քեզ: 23 Ինչ որ դուրս է գալիս քո շրթունքներից, զգո՛յշ եղիր, որ անես այնպէս, ինչպէս որ ուխտել ես քո Տէր Աստծուն: Տո՛ւր այն նուէրը, որ խոստացել ես քո բերանով:
24 Եթէ մտնես քո մերձաւորի արտը, ապա հասկը կարող ես քաղել ձեռքով, բայց քո մերձաւորի արտում մանգաղ չգործածես: 25 Եթէ մտնես քո մերձաւորի այգին, ապա խաղող կարող ես

†Երբայերէնը յաւելեալ ունի՝ մինչեւ տասներորդ սերունդը:

†Վերջին նախադասութիւնը այլ բնագրերում չկայ:
‡Ըստ երբայերէն բնագրի՝ Դու կարող ես փոխ տալ օտարին, բայց ոչ Քո եղբօրը:

ուտել մինչեւ յագենալդ, բայց ամանի մէջ լցնելով չտանես†»:

ԱՊԱՀԱՐՁԱՆ ԵՒ ՎԵՐԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

24 «Եթէ մէկը կին է առնում ու մերձենում նրան, բայց այնպէս է պատահում, որ, նրա մէջ անարգութեան հանգամանք նկատելով, դադարում է նրան սիրելուց, ապա ապահարզանի թուղթ թող գրի, տայ նրա ձեռքը եւ նրան արձակի իր տնից: 2 Եթէ այս կինն ամուսնանայ մի այլ մարդու հետ, 3 եւ վերջին ամուսինն էլ ատի նրան, ապա սա էլ թող գրի բաժանուելու թուղթ, տայ նրա ձեռքը եւ նրան արձակի իր տնից: Եթէ մեռնի նրան կնութեան առած վերջին ամուսինը, 4 ապա նրան արձակող առաջին ամուսինը իրաւունք չունի նրա պղծուելուց յետոյ նրան նորից կնութեան առնելու, որովհետեւ դա պղծութիւն է քո Տէր Աստծու առջեւ: Մի՛ պղծէք այն երկիրը, որ Տէր Աստուածը ձեզ է տալու իբրեւ ժառանգութիւն»:

ԶԱՆԱԶԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

5 «Եթէ մի տղամարդ նոր է ամուսնացել, ապա նա պատերազմի թող չգնայ. նրա վրայ ոչ մի պարտականութիւն թող չդրուի, ազատ թող լինի‡ իր տան մէջ եւ ուրախացնի իր առած կնոջը:
6 Աղօրիքի վերին ու ստորին մասերը գրաւ չվերցնես, որովհետեւ այդպիսով դրա տիրոջ կեանքն ես գրաւ վերցրած լինում:
7 Եթէ որեւէ մարդագող իր եղբայրներից՝ իսրայէլացիներից մէկին գողանալով վաճառի, ապա գողը պէտք է մահուան դատապարտուի: Դրանով դուք չարը վերացրած կը լինէք ձեր միջից:
8 Զգուշացի՛ր բորոտութիւնից, հետամուտ եղի՛ր, որ կատարես բոլոր այն օրէնքները, որ քեզ կը հաղորդեն ղեւտացի քահանաները, ինչպէս որ ես եմ պատուիրել ձեզ, որ զգոյշ լինէք: 9 Յիշեցէ՛ք, թէ ձեր Տէր Աստուածը ինչ արեց Մարիամին, երբ դուք Եգիպտոսից ճանապարհ էիք ընկել:
10 Եթէ քո մերձաւորը որեւէ բան է պարտք քեզ, ապա գրաւ վերցնելու համար նրա տունը չմտնես. 11 կանգնի՛ր դրսում, եւ պարտք ունեցող մարդը ինքը թող գրաւը հանի դուրս: 12 Եթէ աղքատ է այդ մարդը, ապա երբ դու գիշերը պառկում ես, նրա գրաւ տուած զգեստը թող քեզ մօտ չլինի, 13 այլ արեւը մայր մտնելու ժամանակ նրա գրաւը կը վերադարձնես. նա թող պառկի իր զգեստով, օրհնի քեզ, եւ դա քո Տէր Աստծու առջեւ կատարուած բարութիւն թող համարուի:
14 Մի՛ զլացիր վարձ տալ քո աղքատ ու կարիքաւոր եղբայրներին կամ քո քաղաքներում գտնուող եկուորներին. 15 նոյն օրը տո՛ւր նրա վարձը, քանի դեռ արեւը մայր չի մտել, որովհետեւ նա տնանկ է, եւ դա է նրա յոյսը: Նա քո մասին թող չբողոքի Տիրոջը, եւ քեզ վրայ դա որպէս մեղք թող չբարդուի:
16 Հայրերը չպէտք է մեռնեն որդիների փոխարէն, ոչ էլ որդիները պէտք է մեռնեն հայրերի փոխարէն: Ամէն մարդ պէտք է մեռնի իր գործած մեղքերի համար:
17 Եկուորի, որբի ու այրու իրաւունքը մի՛ ոտնահարիր, այրու զգեստները գրաւ մի՛ վերցրու, 18 որովհետեւ ստրուկ էիր Եգիպտացիների երկրում, եւ քո Տէր Աստուածը քեզ փրկեց այնտեղից: Դրա համար էլ պատուիրում եմ քեզ կատարել այս բաները:
19 Երբ քո արտը հնձելուց յետոյ խուրձ մոռանաս քո արտում, մի՛ վերադարձիր այն վերցնելու համար. դա թող պատկանի աղքատին, եկուորին, այրուն ու որբին, որպէսզի քո Տէր Աստուածը քեզ օրհնի բոլոր այն գործերում, որոնց ձեռնարկում ես: 20 Երբ քաղես քո այգին, քաղից յետոյ ճռաքաղ չանես. դա թող պատկանի եկուորին, որբին ու այրուն: Յիշի՛ր, որ ստրուկ էիր Եգիպտացիների երկրում, որի համար էլ պատուիրում եմ քեզ

†Վերջին երկու համարները այլ բնագրերում որպէս առանձին համարներ տեղ են գրաւել ԻԴ գլխի սկզբում:
‡Յաւելեալ կայ՝ մէկ տարի:

կատարել այս բաները: 21 Եթէ ձիթապտուղ ես քաղում, քաղից յետոյ մի՛ վերադարձիր պտղաքաղ անելու համար. դա Թող պատկանի եկուորին, որբին ու այրուն: 22 Ցիշի՛ր, որ ստրուկ էիր Եգիպտացիների երկրում, որի համար էլ պատուիրում եմ քեզ կատարել այս բաները»:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԱՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

25 «Եթէ վէճ լինի մարդկանց միջեւ, ապա Թող դատարան ներկայանան, ու դատ Թող լինի: Թող արդարացնեն արդարին, իսկ մեղաւորին Թող պատժեն: 2 Եթէ մեղաւորը գանահարութեան է արժանի, ապա նրան Թող պառկեցնեն դատաւորների առջեւ եւ նրանց առջեւ նրան Թող գանահարեն ըստ նրա մեղաւորութեան՝ 3 քառասուն հարուած, բայց ոչ աւելի: Իսկ եթէ նրան դրանից աւելի գանահարեն, ապա դա քո առջեւ կատարուած անարգանք կը լինի քո եղբօր հանդէպ:
4 Կալում աշխատող եզան դունչը չկապես»:

ԱՆԺԱՌԱՆԳ ԱՅՐԻՆ

5 «Եթէ եղբայրներն ապրում են միասին, եւ նրանցից մէկը առանց զաւակ ունենալու մեռնի, ապա մեռած եղբօր կինը օտարի հետ Թող չամուսնանայ: Նրա ծոցը Թող մտնի իր ամուսնու եղբայրը, սա Թող կին առնի նրան ու ապրի այդ կնոջ հետ: 6 Սրանցից ծնուած երեխան Թող գրանցուի մահացած եղբօր անունով, որպէսզի նրա անունը Իսրայէլից չջնջուի: 7 Իսկ եթէ եղբայրը չցանկանայ ամուսնանալ իր մահացած եղբօր կնոջ հետ, ապա կինը Թող դուրս գայ քաղաքի դարպասի մօտ, ծերերի առջեւ եւ ասի. "Իմ ամուսնու եղբայրը չի ուզում Իսրայէլի մէջ պահպանել իր եղբօր անունը†": 8 Այն ժամանակ իր քաղաքի ծերերը Թող կանչեն մահացածի եղբօրը, խօսեն նրա հետ: Եթէ նա կանգնի ու ասի՝ "Չեմ ուզում ամուսնանալ նրա հետ", 9 ապա նրա եղբօր կինը մօտենալով ծերերին՝ նրա ոտքից Թող հանի մի կօշիկը, Թքի նրա երեսին եւ պատասխան տալով՝ ասի. "Այսպէս են վարւում այն մարդու հետ, որը վառ չի պահում իր եղբօր տունը": 10 Նրա անունն Իսրայէլի մէջ Թող կոչուի 'բոբկացած մարդու տուն'»:

ՈՒՐԻՇ ՕՐԷՆՔՆԵՐ

11 «Եթէ երկու մարդ՝ երկու ազգակից իսրայէլացի եղբայրներ կռուեն միմեանց հետ, եւ նրանցից մէկի կինը իր ամուսնուն ազատելու նպատակով մօտենայ իր ամուսնու հետ կռուողին եւ ձեռքը մեկնելով՝ բռնի նրա ամորձիքներից, 12 ապա առանց խղճալու պէտք է կտրես նրա ձեռքը:
13 Տոպրակիդ մէջ նոյն չափի՝ ծանր ու թեթեւ կշռաքարեր Թող չլինեն: 14 Քո տանը նոյն չափսը երկար ու կարճ Թող չլինի: 15 Ճշգրիտ ու արդար կշռաքարեր պէտք է ունենաս, ճշգրիտ ու արդար չափ ունենաս, որպէսզի երկար ապրես այն երկրում, որ քո Տէր Աստուածը իբրեւ ժառանգութիւն է տալու քեզ, 16 որովհետեւ քո Տէր Աստծու համար պիղծ է նա, ով վարւում է այդ կերպ, ով անարդարութիւն է գործում»:

ԱՄԱՂԷԿԱՑԻՆԵՐԸ՝ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ

17 «Ցիշի՛ր, թէ ինչ արեց քեզ Ամաղէկը, երբ Եգիպտոսից դուրս գալու համար ճանապարհ էիր ընկել, 18 թէ ինչպէս ճանապարհին ելաւ քո դէմ, կոտորեց քո բանակի վերջապահներին ու յոգնելու պատճառով յետ ընկածներին, երբ դու քաղցած ու յոգնած էիր՝ չվախենալով Աստծուց: 19 Եւ երբ քո Տէր Աստուածը քեզ ազատի քո շրջապատում գտնուող քո բոլոր թշնամիներից այն երկրում, որ քո Տէր Աստուածը վիճակով քեզ է տալու իբրեւ ժառանգութիւն, Ամաղէկի անունը կը ջնջես երկրի երեսից: Տե՛ս, որ չմոռանաս սա»:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ Տէգրս հրաժարւում է Իսրայէլի մէջ հաստատել իր եղբօր անունը:

ԱՌԱՋԻՆ ԲԵՐՔԸ

26 «Երբ մտնես այն երկիրը, որ քո Տէր Աստուածը քեզ է տալու իբրեւ սեփականութիւն, երբ ժառանգես այն ու բնակուես այնտեղ, 2 ապա կը վերցնես քո Տէր Աստծու քեզ տուած երկրի պտուղների առաջին բերքը, կը լցնես զամբիւղի մէջ եւ կը գնաս այնտեղ, ուր կ'ընտրի Տէր Աստուածը, որպէսզի իր անունը յայտնի դարձնի այնտեղ: 3 Կը գնաս այդ ժամանակ քահանայութիւն անողի մօտ եւ կ'ասես նրան. "Այսօր գոհութիւն եմ յայտնում իմ Տէր Աստծուն, քանի որ մտայ այն երկիրը, որ Տէրը երդուեց մեր հայրերին, որ մեզ տայ": 4 Այն ժամանակ քահանան քո ձեռքից վերցնելով զամբիւղը՝ այն Թող դնի քո Տէր Աստծու զոհասեղանի առջեւ: 5 Պատասխան տալով՝ կ'ասես քո Տէր Աստծու առջեւ. "Իմ հայրը Թողեց Ասորեստանն ու իջաւ Եգիպտոս, այնտեղ պանդուխտ մնաց սակաւաթիւ մարդկանցով, բայց այնտեղ մեծ ազգ դարձաւ, խիստ բազմացաւ: 6 Եգիպտացիները չարչարեցին, ճնշեցին, տաժանակիր աշխատանքի լծեցին մեզ: 7 Մենք աղաղակ բարձրացրինք դէպի մեր հայրերի Աստուածը, Տէրը լսեց մեր ձայնը, տեսաւ մեր տառապանքները, չարչարանքն ու նեղութիւնը, 8 եւ Տէրն ինքը մեծ զօրութեամբ, ամուր ձեռքով ու հզօր բազկով, մեծամեծ տեսիլքներով, նշաններով ու զարմանահրաշ գործերով մեզ դուրս հանեց Եգիպտոսից, 9 մեզ բերեց այս վայրը, մեզ տուեց այս երկիրը, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում: 10 Արդ, ահա բերել եմ Տիրոջ ինձ տուած երկրի բերքի երախայրիքը, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում": Այնտեղ երկրպագութիւն կ'անես քո Տէր Աստծու առջեւ, 11 այնտեղ կ'ուրախանաք դու, ղեւտացին ու քեզ մօտ բնակուող պանդուխտը բոլոր այն բարիքների համար, որ քո Տէր Աստուածը տուել է քեզ ու քո ընտանիքին»:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՏԱՍԱՆՈՐԴԸ

12 «Երբ քո երկրի բոլոր տասանորդները տաս վերջացնես, երկրորդ† տարում տասանորդ կը տաս այս անգամ ղեւտացուն, եկուորին, որբին ու այրուն: Նրանք Թող ուտեն ու յագենան քո քաղաքներում: 13 Այն ժամանակ քո Տէր Աստծու առջեւ կ'ասես. "Ինչ որ սուրբ էր, իմ տնից դուրս տարայ, ըստ Տէր Աստծու ինձ տրուած հրամանների յանձնեցի ղեւտացուն, եկուորին, որբին ու այրուն: Տէ՛ր, քո պատուիրաններն անտես չարեցի, չմոռացայ: 14 Վշտիս օրերին դրանից չկերայ ու որեւէ պիղծ նպատակի չնուիրեցի, դրանից որեւէ մեռելի բաժին չհանեցի: Լսեցի իմ Տէր Աստծու խօսքը եւ արեցի այնպէս, ինչպէս պատուիրել էիր ինձ, Տէ՛ր: 15 Արդ, նայի՛ր քո սուրբ բնակութեան վայրից՝ երկնքից, եւ օրհնի՛ր քո ժողովրդին՝ իսրայէլացիներին եւ նրանց տուած քո երկիրը, ինչպէս երդուել ես մեր հայրերին, թէ մեզ կը տաս մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում"»:

ԻՍՐԱՅԷԼԸ՝ ՏԻՐՈՋ ԺՈՂՈՎՈՒՐԴ

16 «Այսօր քո Տէր Աստուածը քեզ պատուիրում է, որ կատարես այս բոլոր օրէնքներն ու կանոնները. դրանք կը պահէք ու կը կատարէք ձեր ամբողջ հոգով ու էութեամբ: 17 Քո Տէր Աստծուն ընտրի՛ր այսօր, որպէսզի նա քեզ Աստուած լինի. կ'ընթանաք նրա ճանապարհով, կը պահպանէք նրա օրէնքներն ու կանոնները՝ կը լսէք նրա ասածը: 18 Տէրն այսօր քեզ ընտրեց, որ լինես նրա սեփական ժողովուրդը, ինչպէս որ խոստացել է քեզ, որպէսզի պահես նրա բոլոր պատուիրանները 19 եւ բոլոր ազգերից բարձր լինես: Նա քեզ դարձրել է անուանի, բարգաւաճ ու փառաւոր, որպէսզի ըստ իր խոստման լինես քո Տէր Աստծու սուրբ ժողովուրդը»:

†Եբրայերէն՝ երրորդ:

ՔԱՐԵՐԻ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ ԱՍՏՎՈՒ ՕՐԷՆՔՆԵՐԸ

27 Մովսէսն ու Իսրայէլի ծերերը պատուիրեցին ու ասացին. «Պահեցէ՛ք բոլոր այն պատուիրանները, որ ես այսօր պատգամում եմ ձեզ: 2 Երբ անցնէք Յորդանան գետով այն երկիրը, որ ձեր Տէր Աստուածը տալու է ձեզ, այնտեղ մեծամեծ քարեր կը կանգնեցնէք ու կը ծեփէք դրանք: 3 Երբ անցնէք Յորդանան գետով ու մտնէք այն երկիրը, որ ձեր հայրերի Տէր Աստուածը տալու է ձեզ, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում, ինչպէս խոստացել է ձեր հայրերի Տէր Աստուածը, որ տայ ձեզ, ապա քարերի վրայ կը գրէք այս օրէնքի բոլոր պատգամները: 4 Երբ անցնէք Յորդանան գետով, այսօր իմ պատուիրած այդ քարերը կը կանգնեցնէք Գեբաղ լեռան վրայ եւ դրանք կը ծեփէք: 5 Այնտեղ քո Տէր Աստծու համար քարէ զոհասեղան կը պատրաստես: Դրան երկաթ չպէտք է դիպչի: 6 Չյղկուած քարերով կը պատրաստես քո Տէր Աստծու զոհասեղանը: Դրա վրայ քո Տէր Աստծու համար ողջակէզներ կը մատուցես: 7 Այնտեղ քո Տէր Աստծու համար փրկութեան† զոհ կը մատուցես, կ'ուտես ու կը կշտանաս այնտեղ, կ'ուրախանաս քո Տէր Աստծու առջեւ: 8 Եւ քարերի վրայ խիստ պարզորոշ կը գրես այս բոլոր օրէնքները»:

9 Մովսէսը, քահանաներն ու ղեւտացիները խօսելով բոլոր իսրայէլացիների հետ՝ ասացին. «Լո՛ւռ մնա ու լսի՛ր, Իսրայէ՛լ: Այսօր քո Տէր Աստծու ժողովուրդը դարձար: 10 Լսի՛ր քո Տէր Աստծու ասածը, կատարի՛ր նրա բոլոր պատուիրաններն ու օրէնքները, որ ես այսօր պատգամում եմ քեզ»:

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՆԷԾՔՆԵՐ

11 Եւ Մովսէսն այդ օրը ժողովրդին պատուիրելով՝ ասաց. 12 «Ահա անունները այն ցեղերի, որոնք ժողովրդին օրհնելու համար Յորդանան գետն անցնելուց յետոյ պիտի կանգնեն Գարիզին լեռան վրա. Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Յովսէփ եւ Բենիամին: 13 Եւ ահա անունները այն ցեղերի, որոնք ժողովրդին անիծելու համար պիտի կանգնեն Գեբաղ լեռան վրայ. Ռուբէն, Գադ, Ասեր, Զաբուղոն, Դան եւ Նեփթաղիմ:

14 Ղեւտացիները պատասխան տալով՝ բարձրաձայն պէտք է ասեն բոլոր իսրայէլացիներին.

15 «Անիծեալ լինի այն մարդը, որը կոփածոյ ու ձուլածոյ կուռք կը պատրաստի ու այն կը թաքցնի, քանի որ Տիրոջ համար քանդակագործի ձեռքի աշխատանքը պիղծ է»: Եւ ժողովուրդը պատասխան տալով՝ թող ասի. «Այդպէս թող լինի»:

16 «Անիծեալ լինի այն մարդը, որը կ'անարգի իր հօրը կամ իր մօրը»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

17 «Անիծեալ լինի այն մարդը, որը կ'ոտնահարի եկուորի, որբի ու այրու իրաւունքները»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

18 «Անիծեալ լինի այն մարդը, որը կը խախտի իր հարեւանի սահմանները»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

19 «Անիծեալ լինի այն մարդը, որը կը մոլորեցնի կոյրին ճանապարհի վրայ»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

20 Անիծեալ լինի այն մարդը, որը կը պառկի իր հօր կնոջ հետ, քանի որ դրանով բացած կը լինի իր հօր ամօթոյքը»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

21 «Անիծեալ լինի այն մարդը, որը կը կենակցի անասունի հետ»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

22 Անիծեալ լինի այն մարդը, որը կը պառկի իր հօրենական կամ մօրենական կողմից իր քրոջ հետ»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. Այդպէս թող լինի:

24† «Անիծեալ լինի այն մարդը, որն

†Եբրայերէն՝ խաղաղութեան:

†Հայկական բնագիրը չունի 23-րդ համարը: Այն եբրայական (նաեւ յունական) բնագրում ունի հետեւեալ նախադասութիւնը. Անիծեալ լինի այն մարդը, որը կը պառկի իր հարսի (յուն.)/զոռանչի (եբր.) հետ: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

իր մերձաւորին կը սպանի նենգութեամբ»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

25 «Անիծեալ լինի այն մարդը, որը կաշառք կը վերցնի անմեղ մարդ սպանելու համար»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

26 «Անիծեալ լինի այն մարդը, որը չի պահում այս օրէնքները եւ դրանք չի կատարում»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ
(Ղեւտ. 26. 3-13, Բ Օր. 7. 12-24)

28 «Եթէ լսէք մեր Տէր Աստծու ասածները, որ ես այսօր ձեզ եմ պատգամում, այն է՝ հետեւելով նրա պատուիրաններին՝ կատարէք դրանք, ապա ձեր Տէր Աստուածը ձեզ երկրի բոլոր ազգերից աւելի բարձր կը դասի: 2 Այս բոլոր օրհնութիւնները կ'իջնեն քեզ վրայ ու կը գտնեն քեզ, եթէ լսես քո Տէր Աստծու ձայնը†: 3 Օրհնեալ կը լինես դու քաղաքում եւ օրհնեալ՝ դաշտում: 4 Օրհնեալ կը լինեն քո որովայնի ծնունդները, քո երկրի բերքը, քո արջառների նախիրները եւ քո ոչխարների հօտերը: 5 Օրհնեալ կը լինեն քո շտեմարաններն ու քո ամբարները: 6 Օրհնեալ կը լինես դու միշտ՝ ելնես թէ մտնես: 7 Քո Տէր Աստուածը քո առջեւ կը կոտորի քո թշնամիներին ու հակառակորդներին: Նրանք քո դէմ կ'ելնեն մէկ ճանապարհով, բայց եօթը ճանապարհով կը փախչեն քեզանից: 8 Տէրը օրհնութիւն կ'առաքի քեզ, քո շտեմարաններին ու բոլոր այն գործերին, որոնց կը ձեռնարկես այն երկրում, որ քո Տէր Աստուածը տալու է քեզ: 9 Եթէ լսես մեր Տէր Աստծու ասածը եւ ընթանաս նրա ճանապարհով, ապա քո Տէր Աստուածը քեզ իր սուրբ ժողովուրդը կը դարձնի, ինչպէս երդուել է քո հայրերին: 10 Եւ երկրի բոլոր ազգերը կը տեսնեն, որ քո վրայ է դրուած Տիրոջ անունը, ու քեզանից կը վախենան: 11 Քո Տէր Աստուածը քեզ կը բազմացնի բարիքներով՝ քո որովայնի ծնունդներով, քո երկրի բերքով, քո ոչխարների ծնունդներով այն երկրում, որ քո հայրերի Տէրը երդուել է տալ քեզ երկնքի ու երկրի ստեղծուելու օրից ի վեր†: 12 Տէրը քեզ համար կը բացի իր բարիքների շտեմարանը՝ երկինքը, որպէսզի ժամանակին անձրեւ տայ քո երկրին, կ'օրհնի քո ձեռնարկած բոլոր գործերը, փող փոխ կը տաս շատ ազգերի, բայց ինքդ նրանցից փոխ չես առնի: 13 Եթէ լսես քո Տէր Աստծու պատուիրանները, որ պահելու եւ կատարելու համար հաղորդում եմ քեզ այսօր, ապա բազում ազգերի վրայ կ'իշխես, բայց քեզ վրայ չեն իշխի: Քո Տէր Աստուածը քեզ կը դարձնի գլուխ, բայց ոչ պոչ, բարձր կը լինես եւ ոչ թէ՝ ցած: 14 Դու չպիտի խախտես այն խօսքերը, որ ես պատգամում եմ քեզ այսօր, չպիտի շեղուես ո՛չ աջ եւ ո՛չ ձախ, որ չգնաս օտար աստուածների յետեւից եւ չպաշտես դրանք»:

ԱՆԷԾՔՆԵՐԸ
(Ղեւտ. 26. 14-46)

15 «Իսկ եթէ չլսես քո Տէր Աստծու ասածը՝ չպահես ու չկատարես նրա բոլոր պատուիրանները, որ ես այսօր պատգամում եմ քեզ, ապա այս անէծքները կը թափուեն քո գլխին, կը հասնեն քեզ: 16 Անիծեալ կը լինես դու քաղաքում եւ անիծեալ՝ դաշտում: 17 Անիծեալ կը լինեն քո շտեմարաններն ու քո ամբարները: 18 Անիծեալ՝ քո որովայնի ծնունդները, քո երկրի բերքը, քո արջառների նախիրներն ու ոչխարների հօտերը: 19 Անիծեալ կը լինես դու միշտ՝ մտնելիս թէ ելնելիս: 20 Տէրը քեզ աղքատ ու կարիքաւոր կը դարձնի եւ ձեռնարկած ու ձեռնարկելիք բոլոր գործերդ անյաջողութեան կը մատնի, մինչեւ որ կոտորի քեզ Տէրը, մինչեւ որ քեզ ոչնչացնի իսկոյն քո չար ընթացքի համար, քանի որ դու ինձ լքեցիր: 21 Տէրը մահ կը սփռի քեզ

վուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:
Յունարէն բնագիրն, իբրեւ 23-րդ համարի մաս, յաւելեալ ունի նաեւ. Անիծեալ լինի այն մարդը, որը կը պառկի իր կնոջ հրոջ հետ: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

†Այլ բնագրերում՝ այլ կէտադրութիւն:

†Այլ բնագրերում չիմ երկնքի ու երկրի ստեղծուելու օրից ի վեր:

վրայ, մինչեւ որ սպանի ու վերացնի
քեզ այն երկրից, ուր մտնելու ես այն
ժառանգելու համար: 22 Տէրը քեզ կը
տանջի տարակուսանքներով, տենդով
եւ սարսուռով, շլութեամբ ու երկիւղով,
խորշակով ու դժգունութեամբ, եւ
սրանք քեզ կը հետապնդեն, մինչեւ որ
քեզ կորստեան մատնեն: 23 Քո գլխի
վրայ երկինքը պղնձից կը լինի, իսկ քո
տակի երկիրը՝ երկաթից: 24 Տէրը քո
արտին անձրեւի փոխարէն փոշի կը
թափի, երկնքից քեզ վրայ հող կը
թափի, մինչեւ որ քեզ սպանի ու
կորստեան մատնի: 25 Տէրը թշնա-
միներիդ առջեւ քեզ պարտութեան կը
մատնի. դու նրանց դէմ մէկ ճանա-
պարհով կ'ելնես, բայց եօթը ճանա-
պարհով կը փախչես նրանցից: Ցրիւ կը
գաս երկրի բոլոր թագաւորութիւնների
մէջ: 26 Ձեր դիակները երկնքի
թռչունների ու երկրի գազանների կեր
կը դառնան, եւ ոչ ոք չի լինի, որ քշի
դրանց: 27 Տէրը քեզ կը հիւանդացնի
եգիպտացիների խոցով ու թութքով,
սուր քոսով ու բորոտութեամբ, որպէս-
զի չկարողանաս բուժուել: 28 Տէրը քեզ
կը հիւանդացնի մտագարութեամբ,
կուրութեամբ ու ցնորամտութեամբ:
29 Օրը ցերեկով կը խարխափես այն-
պէս, ինչպէս կոյրն է խարխափում
խաւարի մէջ, եւ քո ուղիղ ճանապարհը
չես գտնի: Այդ ժամանակ յաւիտե-
նապէս զրկուած ու կողոպտուած կը
լինես, եւ ոչ ոք օգնութեան չի գայ
քեզ: 30 Կին կ'առնես, բայց մի ուրիշ
տղամարդ նրան կը խլի քեզանից:
Տուն կը շինես, բայց ինքդ չես բնակուի
նրա մէջ: Այգի կը տնկես, բայց ինքդ
չես քաղի բերքը: 31 Քո արջառը կը
մորթուի քո առջեւ, բայց դու չես ուտի
դրանից: Քո էշը կը գողանան քեզա-
նից, բայց դու այն յետ չես դարձնի
քեզ մօտ: Քո ոչխարը կը մատնուի քո
թշնամու ձեռքը, եւ ոչ ոք չի լինի, որ
օգնի քեզ: 32 Քո տղաներն ու աղջիկ-
ները օտար ազգի ձեռքը կը մատնուեն,
եւ դու տկարացած կկոցած աչքերով կը
նայես նրանց, եւ քո ձեռքը չի հասնի
նրանց: 33 Քո երկրի բերքն ու քո
ամբողջ վաստակը կ'ուտի քեզ անծա-
նօթ մի ազգ, եւ դու մշտապէս զրկուած
ու խորտակուած կը մնաս: 34 Քո
տեսած արհաւիրքներից կը ցնորուես:
35 Տէրը ծնկներդ ու սրունքներդ, ոտ-
քերիդ ծայրից մինչեւ գլուխդ անբու-
ժելի խոցերով կը վարակի, եւ դու չես
կարողանայ բուժուել: 36 Տէրը քեզ եւ
քո ժողովրդի վրայ նշանակուած իշ-
խաններին կը տանի կը յանձնի այն-
պիսի մի ազգի ձեռքը, որին ո՛չ դու, ո՛չ
քո հայրերն են ճանաչել, եւ այնտեղ
կը պաշտես օտար՝ փայտէ ու քարէ
աստուածներ: 37 Զուարճաբանութեան,
առակի եւ ծաղրուծանակի նիւթ կը
դառնաս բոլոր այն ազգերի մէջ, որոնց
կը յանձնի քեզ Տէրը: 38 Շատ սերմ կը
ցանես արտում, բայց քիչ բերք կը
հաւաքես, որովհետեւ մորեխը պիտի
ուտի այն: 39 Այգիներ կը տնկես ու կը
մշակես, բայց գինի չես խմի, ուրա-
խութիւն չես ունենայ դրանից,
որովհետեւ որդը կերած կը լինի այգիդ:
40 Քո բոլոր սահմաններին ձիթենիներ
կը լինեն, բայց իւղով չես օծուի,
որովհետեւ քո ձիթենիներն իրենց
բերքը թափած կը լինեն: 41 Տղաներ ու
աղջիկներ կը ծնես, բայց նրանք քոնը
չեն լինի, որովհետեւ գերութեան
մատնուած կը լինեն: 42 Քո բոլոր
տնկած ծառերն ու հողի բերքը թրթու-
րը կ'ուտի: 43 Քեզ մօտ բնակուող
եկուորը քեզանից աւելի կը բարձրա-
նայ, իսկ դու գնալով կ'իջնես: 44 Նա
քեզ փող փոխ կը տայ, իսկ դու չես
կարողանայ նրան փոխ տալ: Նա
գլուխ կը լինի, իսկ դու՝ պոչ: 45 Քեզ
վրայ կ'իջնեն այս անէծքները, կը
հալածեն քեզ, մինչեւ որ կոտորեն,
ոչնչացնեն քեզ, քանի որ չլսեցիր քո
Տէր Աստծու ասածը՝ չպահեցիր նրա
այն պատուիրաններն ու օրէնքները,
որ նա պատուիրեց քեզ: 46 Քեզ ու քո
սերնդի վրայ յաւիտեան նշաններ ու
զարմանահրաշ գործեր կը լինեն 47 ի
դիմաց այն բանի, որ քո Տէր Աստծուն
ուրախութեամբ ու անկեղծ սրտով
չպաշտեցիր, հակառակ ամէն ինչի
շատութեան: 48 Դրա համար էլ ամէն
տեսակ սովի, ծարաւի, մերկութեան ու
աղքատութեան մէջ կը ծառայես քո
թշնամիներին, որ Տէրը կ'ուղարկի քո

դէմ: Նա երկաթէ լուծ կը դնի քո վզին,
մինչեւ որ ոչնչացնի քեզ: 49 Ինչպէս
արծիւն է խոյանում, այնպէս էլ հեռու
վայրերից՝ երկրի չորս ծագերից
Աստուած քո դէմ կը հանի մի ազգ, որի
լեզուն չես հասկանայ: 50 Այդ ազգը կը
լինի դէմքով լպիրշ, ծերերին չի խնայի,
մանուկներին չի խղճայ: 51 Նա կ'ուտի
քո հօտերից ծնուած անասուններին եւ
քո երկրի բերքը: Նա կը խլի քո ցորենը,
գինին, իւղը, կը վերցնի քո արջառների
նախիրներն ու ոչխարների հօտերը,
մինչեւ որ կորստեան մատնի քեզ:
52 Քեզ կը ճնշի քո բոլոր քաղաքնե-
րում, մինչեւ որ տապալուեն քո բարձր
պարիսպներն ու ամրութիւնները, ո-
րոնց վրայ յոյս ես դրել քո ամբողջ
երկրում: Քեզ կը ճնշի քո բոլոր այն
քաղաքներում, որ քո Տէր Աստուածը
տուել է քեզ: 53 Քո թշնամու քեզ
պատճառած տառապանքի ու նեղու-
թեան ժամանակ կ'ուտես քո որովայնի
ծնունդները՝ Տիրոջ քեզ տուած քո
տղաների ու աղջիկների միսը: 54 Ձեր
մէջ գտնուող ամենափափկակեաց եւ
քնքուշ տղամարդը չար աչքով պիտի
նայի իր եղբօրը, իր ծոցում պառկող
կնոջն ու ողջ թողած իր որդիներին,
55 որպէսզի նրանցից ոչ մէկին չտայ իր
կերած որդիների մսից: Այսպէս պիտի
վարուի նա, որ քո անձկութեան եւ
նեղութեան մէջ, որոնցով պիտի նեղեն
քեզ քո թշնամիները քո բոլոր քաղաք-
ներում, նրան ուտելու ոչինչ պիտի
չմնայ: 56 Ձեր մէջ գտնուող ամենա-
փափկակեաց եւ քնքուշ կինը, որը
քնքուշ ու փափկակեաց լինելու պատ-
ճառով փորձ իսկ չի արել երկրի վրայ
ոտքով քայլելու, չար աչքով պիտի
նայի իր ծոցում գտնուող ամուսնուն,
իր տղային ու աղջկան, 57 պիտի
խորովի եւ ուտի իր միջից ընկած
ընկերքն ու իր իսկ ծնած զաւակին:
Զրկուած լինելու պատճառով նա բոլո-
րից կը թաքցնի դա իր անձկութեան եւ
նեղութեան մէջ, որովհետեւ թշնամին
քո բոլոր քաղաքներում քեզ տառա-
պանք է պատճառելու:

58 Եթէ յանձն չառնէք կատարել
այս գրքում գրուած օրէնքների բոլոր
խօսքերը՝ չվախենաք ձեր Տէր Աստծու
պատուական ու սքանչելի անունից,
59 ապա Տէրը նոր նշաններով՝ մեծ ու
զարմանալի հարուածներով, խոր ու
խիստ ցաւերով կը պատուհասի քեզ ու
քո սերնդին: 60 Նա քեզ կը հիւանդաց-
նի եգիպտացիների բոլոր վատ հիւան-
դութիւններով, որոնցից սոսկում էիր,
եւ որոնք բուն կը դնեն քո մէջ: 61 Օ-
րէնքների այս գրքում գրուած† բոլոր
հիւանդութիւններն ու արհաւիրքները
Տէրը կը թափի քո գլխին, մինչեւ որ
ոչնչացնի քեզ: 62 Թէեւ երկնքի աստ-
ղերի չափ շատ էիք, բայց սակաւաթիւ
կը մնաք, որովհետեւ չլսեցիք ձեր Տէր
Աստծու ասածը: 63 Տէրն ինչպէս որ
ուրախանում էր ձեր մէջ ձեզ բարու-
թիւն անելով ու ձեզ բազմացնելով,
Տէրը նոյն ձեւով կ'ուրախանայ ձեր
մէջ ձեզ կոտորելով. եւ դուք կը
վերանաք այն երկրից, ուր մտնելու էք
այն ժառանգելու համար: 64 Քո Տէր
Աստուածը քեզ կը ցրի բոլոր ազգերի
մէջ՝ երկրի մի ծայրից մինչեւ միւս
ծայրը, եւ դու այնտեղ կը պաշտես քեզ
ու քո հայրերին անծանօթ փայտէ ու
քարէ օտար աստուածներ: 65 Այդ
ազգերի մէջ էլ հանգստութիւն չի տայ
քեզ, եւ քո ոտքերը կանգնելու տեղ չեն
ունենայ: Այնտեղ նա քեզ կը տայ
տխուր սիրտ, արտասուաթոր աչքեր ու
հիւծուած մարմին: 66 Քո աչքերի
առաջ քո կեանքը մազից կախուած կը
լինի, գիշեր ու ցերեկ կը զարհուրես ու
վստահ չես լինի քո կեանքի համար:
67 Քո սրտի ապրած վախի ու քո աչքե-
րի տեսած դէպքերի պատճառով առա-
ւօտները կ'ասես. "Ե՞րբ է երեկոյ լինե-
լու", իսկ գիշերները կ'ասես. "Ե՞րբ է
առաւօտ լինելու": 68 Եւ Տէրը այդտե-
ղից նաւերով, հազարաւոր զօրքերով
քեզ կը վերադարձնի Եգիպտոս այն
նոյն ճանապարհով, որն այլեւս չէիք
տեսնելու: Այնտեղ ձեր թշնամիներին
իբրեւ ստրուկ ու աղախին կը վաճա-
ռուէք, բայց ոչ ոք ձեզ չի գնի»:

ՏԻՐՈՋ ՈՒԽՏԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ

29 Սրանք են ուխտի այն խօսքերը,
որ Տէրը պատուիրեց Մովսէսին Մովա-

†Եբրայերէն՝ չգրուած:

բի երկրում հաղորդել իսրայէլացիներին, բացի այն ուխտից, որ հաղորդել էր նրանց Քորէբում:

2 Մովսէսը կանչելով բոլոր իսրայէլացիներին՝ ասաց. «Դուք ինքներդ տեսաք այն ամէնը, ինչ ձեր առաջ արեց Տէրը Եգիպտոսում փարաւոնի, նրա ծառաների ու նրա ամբողջ երկրի նկատմամբ՝ 3 ամուր ձեռքով ու հզօր բազկով կատարուած այն մեծամեծ փորձանքները, նշաններն ու զարմանահրաշ գործերը, որոնց ականատեսը եղաք դուք: 4 Ձեր Տէր Աստուածը մինչեւ այսօր ձեզ ո՛չ միտք տուեց, որ գիտենաք, ո՛չ աչքեր, որ տեսնէք, ո՛չ ականջ, որ լսէք: 5 Քառասուն տարի նա ձեզ տարաւ անապատով: Ո՛չ ձեր զգեստները հնացան, ո՛չ ձեր ոտքերի կօշիկները մաշուեցին: 6 Հաց չկերաք եւ գինի ու օղի չխմեցիք, որպէսզի համոզուէիք, որ ես եմ ձեր Տէր Աստուածը, 7 եւ եկաք մինչեւ այս վայրը[†]: Մեր դէմ պատերազմի ելան Եսեբոնի թագաւոր Սեհոնը, Բասանի թագաւոր Օգը: 8 Հարուածեցինք նրանց ու գրաւեցինք նրանց երկիրը: Ռուբէնի, Գադի ցեղին ու Մանասէի կէս ցեղին իբրեւ սեփականութիւն տուեցի այն: 9 Հետեւեցէ՛ք, որ կատարէք այս ուխտի բոլոր խօսքերը, որպէսզի իմանաք այն ամէնը, ինչ պիտի անէք:

10 Ձեր Տէր Աստծու առջեւ այսօր, ահա, կանգնած էք դուք բոլորդ՝ ձեր ցեղապետները, ձեր ծերերը, ձեր դատաւորները, ձեր օրէնսգէտները, Իսրայէլի բոլոր տղամարդիկ, 11 ձեր կանայք ու ձեր որդիները, ձեր մէջ բնակուող եկուորը, ձեր փայտահատից մինչեւ ձեր ջրկիրը, 12 որպէսզի ձեր Տէր Աստծու ուխտի մէջ մտնէք եւ դա հաստատէք նրա նզովքներով[‡], որ ձեր Տէր Աստուածը ուխտեց ձեզ այսօր, 13 որպէսզի ձեզ դարձնի իր ժողովուրդը, եւ Նա լինի ձեզ համար Աստուած, ինչպէս ասել է եւ ինչպէս երդուել է ձեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին:

14 Ես ոչ միայն ձեզ համար եմ անում այս ուխտերն ու այս նզովքները[†], 15 այլեւ նրա՛նց համար, ովքեր այսօր մեզ հետ են՝ մեր Տէր Աստծու առջեւ, նաեւ նրա՛նց համար, ովքեր այսօր մեզ հետ չեն: 16 Դուք ինքներդ էլ գիտէք, թէ ինչպէս ապրեցինք Եգիպտացիների երկրում, թէ ինչպէս անցանք այն ազգերի միջից, որոնց երկրով անցաք դուք: 17 Դուք տեսաք նրանց գարշելի գործերն ու նրանց կուռքերը, նրանց մօտ գտնուող փայտէ, քարէ, արծաթէ ու ոսկէ իրերը: 18 Ձեր մէջ թող չգտնուի տղամարդ կամ կին, ազգ կամ ցեղ, որի միտքը իր Տէր Աստծուց շեղուած լինելով՝ գնայ ու պաշտի այդ ազգերի կուռքերը:

Ձեր մէջ ոչ մէկը բուսած դառն ու դաժան արմատ չլինի: 19 Եթէ լինի մէկը, որ, լսելով այս նզովքի պատգամները, մտածի ու ասի՝ "Թողութիւն թող լինի ինձ, հակառակ որ ես իմ մոլոր ճամփով եմ ընթանում", այդ դէպքում մեղաւորն անմեղին կորստեան կը մատնի: 20 Աստուած չի ուզենայ ներել նրան, այլ կը բորբոքուեն նրա բարկութիւնն ու նախանձը այդ մարդու վրայ, նրա վրայ կը թափուեն այս օրէնքների գրքում գրուած այս ուխտի բոլոր նզովքները, եւ Տէրը նրա անունը կը ջնջի երկրի վրայից: 21 Ըստ այս օրէնքների գրքում գրուած այս ուխտի բոլոր նզովքների, Տէրը նրան կը մեկուսացնի բոլոր իսրայէլացիներից, որպէսզի չարիք հասցնի նրան: 22 Եւ միւս ազգերը, ձեզանից յետոյ եկող ձեր որդիները, հեռու երկրներից եկած օտարները, տեսնելով այդ երկրում տիրող արհաւիրքները, նրանց վրայ Տիրոջ ուղարկած հիւանդութիւնները, կ'ասեն. 23 "Ծծումբ ու այրող աղ կայ այնտեղ: Ոչ մի բան չի ցանուի նրա հողի մէջ ու չի բուսնի, եւ ոչ մի դալար բոյս չի բարձրանայ այդ հողից: Երկիրը լինելու է Սոդոմի ու Գոմորի, Ադամայի ու Սեբոյիմի նման, որոնք Տէրը կործանեց սրտմտութեամբ ու բարկութեամբ": 24 Բոլոր ազգերը կ'ասեն. "Ինչո՞ւ Տէրը այդպիսի պատուհաս բերեց այդ երկրի գլխին, ի՞նչ է նրա խոր զայրոյթի եւ այդ բարկութեան պատճառը": 25 Պատասխան կը

[†]Այլ բնագրերում՝ այլ կէտադրութիւն:
[‡]Եբրայերէնում՝ երդումով:

[†]Եբրայերէնում՝ երդումը:

տան ու կ'ասեն. "Որովհետեւ դրժեցին իրենց հայրերի Աստծու ուխտը, որ Տէրը արել էր նրանց հայրերի հետ, երբ նրանց դուրս էր բերում Եգիպտացիների երկրից: 26 Նրանք գնացին պաշտեցին օտար աստուածներ, երկրպագեցին դրանց, որոնց չգիտէին. եւ Աստուած դրանք չէր սահմանել նրանց համար: 27 Տէրը սրտմտութեամբ բարկացաւ այդ երկրի վրայ՝ դրա վրայ թափեց այդ օրէնքների մատեանի մէջ գրուած այս ուխտի բոլոր նզովքները: 28 Տէրը շատ խիստ բարկութեամբ, սրտմտութեամբ ու զայրոյթով նրանց դուրս բերեց իրենց երկրից եւ նրանց մինչեւ այսօր նետել է օտար երկիր": 29 Գաղտնի բաները մեր Տէր Աստծունն են, իսկ յայտնիները՝ մեզ ու մեր որդիներին յաւիտեան, որպէսզի կատարենք այս օրէնքների բոլոր խօսքերը»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԱՅ ԱՍՏԾՈՒՆ

30 «Եթէ քեզ հասնեն իմ հաղորդած այս բոլոր պատգամները՝ օրհնութիւնները կամ անէծքները, եւ հոգուդ մէջ յիշես դրանք այն բոլոր ազգերի մէջ, ուր Տէրը քեզ ցրելու է, 2 դառնաս դէպի քո Տէր Աստուածը[†], քո ամբողջ հոգով ու էութեամբ լսես նրա խօսքը այն բոլոր գործերում, որ ես հաղորդում եմ քեզ այսօր, 3 ապա Տէրը կը ների[‡] քո բոլոր մեղքերը, կ'ողորմի քեզ եւ դարձեալ ի մի կը հաւաքի քեզ բոլոր այն ժողովուրդների միջից, որոնց մէջ ցրել էր քեզ: 4 Եթէ դու ցրիւ ես եկել երկրի մի ծայրից մինչեւ միւս ծայրը, այդտեղից էլ կը հաւաքի քեզ քո Տէր Աստուածը: 5 Այնտեղից կը վերցնի քեզ քո Տէր Աստուածը եւ քո Տէր Աստուածը քեզ կը բերի քո հայրերի ժառանգած երկիրը: Կը ժառանգես այն, քեզ համար լաւ կը լինի, եւ Աստուած քեզ քո հայրերից տասնապատիկ աւելի կը բազմացնի: 6 Տէրը կը մաքրի քո ու քո սերնդի սիրտը, որպէսզի քո Տէր Աստծուն սիրես քո ամբողջ հոգով ու էութեամբ, որպէսզի ապրէք դու եւ քո սերունդը: 7 Այն ժամանակ քո Տէր Աստուածը այս նզովքները կը թափի քեզ հալածող քո թշնամիների ու քեզ ատողների գլխին: 8 Դու շուռ կը գաս, կը լսես քո Տէր Աստծու խօսքը եւ կը կատարես նրա պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ քեզ: 9 Քո Տէր Աստուածը քո որովայնի ծնունդներով, քո երկրի բերքով ու քո անասունների ծնունդներով յաջողութիւն կը պարգեւի քեզ քո ձեռնարկած բոլոր գործերում: Քո Տէր Աստուածը դարձեալ կ'ուրախանայ քեզ բարութիւն անելով, ինչպէս քո հայրերի համար էր ուրախացել, 10 եթէ լսես քո Տէր Աստծու ասածը՝ պահես ու կատարես այս օրէնքների գրքում գրուած նրա բոլոր պատուիրանները, նրա օրէնքներն ու նրա կանոնները, քո Տէր Աստծուն վերադառնաս քո ամբողջ հոգով ու էութեամբ:

11 Այն պատուիրանները, որոնք այսօր ես պատգամում եմ քեզ, ո՛չ դժուար են, ո՛չ էլ՝ քեզ անմատչելի: 12 Դրանք ո՛չ երկնքում են, որ ասես, թէ՝ "Մեզնից ո՞վ կ'ելնի երկինք, որ վերցնի դրանք, որ լսենք եւ կատարենք", 13 ո՛չ էլ՝ ծովի միւս ափին, որ ասես, թէ՝ "Ո՞վ պիտի անցնի ծովի միւս կողմը, որ մեզ համար վերցնի դրանք, մեզ համար կարդայ, եւ մենք կատարենք": 14 Քեզ չափազանց մօտիկ է այդ խօսքը. քո բերանում, քո սրտում է, եւ դու ի վիճակի ես կատարելու այդ:

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

15 Այսօր, ահա, քո առջեւն եմ դնում կեանքն ու մահը, բարին ու չարը: 16 Եթէ լսես մեր Տէր Աստծու պատուիրանները, որ ես այսօր պատգամում եմ քեզ՝ սիրես քո Տէր Աստծուն, ընթանաս նրա ճանապարհներով, պահես նրա օրէնքները, նրա պատուիրաններն ու նրա կանոնները, կ'ապրէք ու բազմամարդ կը լինէք, եւ քո Տէր Աստուածը քեզ կ'օրհնի ամբողջ երկրում, ուր կը մտնես այն ժառանգելու

[†]Եբրայերէնը յաւելեալ ունի՝ թէ՛ դու եւ թէ՛ որդիներդ:
[‡]Եբրայերէնում՝ գերութիւնից դարձնելով:

համար: 17 Իսկ եթէ քո միտքը փոխես, չհնազանդուես, մոլորուելով երկրպագես օտար աստուածների ու պաշտես դրանք, 18 ապա այսօր քեզ յայտնում եմ, որ կը կորչէք, երկար չէք մնայ այն երկրում, ուր դուք կ'անցնէք Յորդանան գետը կտրելով՝ այն ժառանգելու համար: 19 Երդւում եմ ձեզ երկնքով ու երկրով, որ ձեր առջեւն եմ դնում կեանքն ու մահը, օրհնութիւններն ու անէծքները: Ընտրի՛ր կեանքը, որպէսզի ապրէք դու եւ քո սերունդը: 20 Պէտք է սիրես քո Տէր Աստծուն, լսես նրա ասածը, կապուած մնաս նրան, որովհետեւ նա է քո կեանքն ու քո երկարակեցութիւնը, որպէսզի բնակուես այն երկրում, որ Տէրը երդուեց քո հայրերին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, որ կը տայ նրանց»:

ՅԵՍՈՒՆ՝ ՄՈՎՍԷՍԻ ՅԱՋՈՐԴԸ

31 Մովսէսը բոլոր իսրայէլացիներին այս բաները հաղորդելուց յետոյ նրանց ասաց. 2 «Այսօր ես հարիւր քսան տարեկան եմ, այլեւս չեմ կարող ո՛չ գնալ, ո՛չ գալ: Տէրն ինձ ասել է՝ "Յորդանան գետից այն կողմ չանցնես": 3 Քո Տէր Աստուածը, որ ընթանում է քո առջեւից, Նա՛ պիտի վերացնի քո առջեւից այդ ազգերին, եւ դու պիտի տիրես նրանց: Յեսո՛ւն պիտի առաջնորդի քեզ, ինչպէս ասել է Տէրը: 4 Տէրը նրանց հետ պիտի վարուի այնպէս, ինչպէս վարուեց Սեհոնի ու Օգի հետ՝ Յորդանան գետի այն կողմում գտնուող ամորհացի երկու թագաւորների ու նրանց երկրի հետ, 5 որ կոտորէք նրանց: Տէրը նրանց պիտի յանձնի ձեր ձեռքը, եւ դուք նրանց հետ պիտի վարուէք այնպէս, ինչպէս պատուիրել եմ ձեզ: 6 Քա՛ջ եղիր ու զօրացի՛ր, մի՛ երկնչիր ու մի՛ վախեցիր, մի՛ զարհուրիր նրանց ներկայութիւնից, քանի որ քո Տէր Աստուածն ինքը պիտի գնայ ձեր առջեւից, ձեր մէջ: Նա չի լքելու ձեզ ու չի անտեսելու ձեզ»:

7 Մովսէսը կանչեց Յեսուին ու բոլոր իսրայէլացիների առջեւ ասաց նրան. «Քա՛ջ եղիր ու զօրացի՛ր, որովհետեւ այս ժողովրդին առաջնորդելով՝ դու պիտի մտնես այն երկիրը, որ ձեր հայրերի Տէրը երդուեց տալ նրանց, եւ դու պիտի նրանց սեփականութեան տէր դարձնես: 8 Քո առջեւից գնացող Տէրը չի լքելու եւ չի անտեսելու քեզ: Մի՛ երկնչիր, մի՛ վախեցիր»:

ՕՐԷՆՔ, ՈՐ ՊԻՏԻ ԿԱՐԴԱՑՈՒԻ ԱՄԷՆ ԵՕԹԸ ՏԱՐԻՆ ՄԷԿ

9 Մովսէսն այս օրէնքների բոլոր խօսքերը գրեց մատեանում, այն տուեց քահանաներին՝ Տիրոջ ուխտի տապանակը ուսամբարձ տանող Ղեւիի որդիներին եւ իսրայէլացի ծերերին: 10 Մովսէսն այդ օրը նրանց պատուիրելով՝ ասաց. «Եօթը տարի յետոյ՝ թողութեան տարում, Տաղաւարահարաց տօնին, 11 երբ ամբողջ Իսրայէլը հաւաքուի, որպէսզի Տիրոջ ընտրած վայրում հանդիպէք ձեր Տէր Աստծուն, այս օրէնքները կը կարդաք իսրայէլացիների առջեւ, նրանց ականջին, 12 երբ ժողովուրդը՝ տղամարդիկ, կանայք, երեխաներն ու ձեր քաղաքներում գտնուող եկուորները հաւաքուած կը լինեն, որպէսզի լսեն ու սովորեն երկնչել մեր Տէր Աստծուց եւ սովորեն կատարել այս օրէնքի բոլոր պատգամները: 13 Նրանց անտեղեակ որդիները թող լսեն ու սովորեն երկնչել մեր Տէր Աստծուց այդ երկրում ապրելու բոլոր օրերին, այն երկրում, որ Յորդանան գետով անցնելով՝ պիտի ժառանգէք դուք»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

14 Տէրն ասաց Մովսէսին. «Ահա մօտեցան քո մահուան օրերը: Կանչի՛ր Յեսուին, կանգնեցէ՛ք վկայութեան խորանի դռանը, որպէսզի պատուէր տամ նրան»: Մովսէսն ու Յեսուն գնացին դէպի վկայութեան խորանը եւ կանգնեցին վկայութեան խորանի դռանը: 15 Տէրն իջաւ ամպի սիւնի ձեւով ու կանգնեց վկայութեան խորանի դռանը: Խորանի դռանը կանգնեց նաեւ ամպի սիւնը: 16 Տէրն ասաց Մովսէսին. «Ահա դու պիտի մահանաս

ու գնաս քո նախնիների մօտ. այս ժողովուրդը պիտի ելնի ու պոռնկանայ՝ հետեւելով օտար աստուածներին այն երկրի, որոնց բնակիչների մէջ պիտի մտնի: Նա պիտի լքի ինձ ու պիտի խախտի իր հետ կնքած իմ ուխտը: 17 Այդ օրը սրտմտութեամբ պիտի բարկանամ նրանց վրայ, պիտի լքեմ նրանց, երեսս պիտի թեքեմ նրանցից, նրանք թշնամիների կեր պիտի դառնան, բազում չարիքներ ու նեղութիւններ պիտի կրեն ու այդ օրը պիտի ասեն. "Այս չարիքները մեզ վրայ թափուեցին, քանի որ մեր Տէր Աստուածը մեզ հետ չէ": 18 Ես այդ օրը իմ երեսը պիտի դարձնեմ նրանցից բոլոր այն չարիքների համար, որ նրանք գործեցին, քանի որ յարեցին օտար աստուածների: 19 Ուրեմն գրեցէ՛ք օրհներգութեան այս խօսքերը, դրանք սովորեցրէ՛ք իսրայէլացիներին, դրանք դրէ՛ք նրանց բերանը, որպէսզի այդ օրհներգութիւնը իսրայէլացիների մէջ ինձ համար վկայութիւն լինի: 20 Արդարեւ, ես նրանց տանելու եմ այն լաւ երկիրը, որ երդուել եմ տալ նրանց հայրերին, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում: Թող ուտեն ու լիուլի յագենան: Յետոյ նորից պիտի յարեն օտար աստուածների, պիտի պաշտեն դրանք, ինձ պիտի զայրացնեն ու դրժեն նրանց հետ կնքած իմ ուխտը: 21 Այն ժամանակ այդ օրհներգութիւնն իբրեւ վկայութիւն նրանց դէմ պիտի ելնի, նրանք ու նրանց յետնորդները պիտի չմոռանան դա: Ես գիտեմ նրանց չարութիւնը, որ նրանք յղացան այսօր այստեղ, նախքան ես նրանց կը տանեմ այն լաւ երկիրը, որը երդուեցի տալ նրանց հայրերին»†:

22 Այդ օրը Մովսէսը գրեց այս օրհներգութիւնը եւ այն սովորեցրեց իսրայէլացիներին:

23 Մովսէսը Նաւէի որդի Յեսուին պատուիրելով՝ ասաց. «Քա՛ջ եղիր ու զօրացի՛ր, որովհետեւ Իսրայէլի որդիներին դու ես տանելու այն երկիրը, որ Տէրը խոստացաւ տալ նրանց, եւ Նա լինելու է քեզ հետ»:

†Եբրայերէնը յաւելեալ ունի՝ Երբ նրանք շատ չարիքների ու նեղութիւնների հանդիպեն:

24 Երբ Մովսէսն այս օրէնքների բոլոր խօսքերը մինչեւ վերջ գրեց մատեանի մէջ ու աւարտեց, 25 նա Տիրոջ ուխտի տապանակը տանող ղեւտացիներին պատուիրելով՝ ասաց. 26 «Օրէնքների այս մատեանն առէ՛ք եւ դրէ՛ք մեր Տէր Աստծու ուխտի տապանակի մի կողմը: Դա այնտեղ ձեզ համար վկայութիւն թող լինի: 27 Ես գիտեմ ձեր ըմբոստութիւնն ու կամակորութիւնը. եթէ այսօր, երբ ես կենդանի եմ ու ձեր մէջ, եւ դուք Աստծու դէմ ապստամբում էք, ապա իմ մահուանից յետոյ ինչե՞ր կ'անէք: 28 Արդ, ինձ մօտ հաւաքեցէ՛ք ձեր ցեղապետներին ու ծերերին, ձեր դատաւորներին ու օրէնսգէտներին, որպէսզի նրանց ասեմ բոլոր այս խօսքերը եւ ձեզ համար վկայ ունենամ երկինքն ու երկիրը: 29 Գիտեմ, որ իմ մահուանից յետոյ անպայման անօրէնութիւններ էք անելու, շեղուելու էք այն ճանապարհից, որ ես ձեզ պատուիրեցի, եւ վերջին օրերին ձեզ չարիքներ պիտի պատահեն, որովհետեւ չար գործ էք կատարելու Տիրոջ առջեւ՝ ձեր ձեռնարկած գործերով բարկացնելու էք նրան»: 30 Եւ Մովսէսը հաւաքուած բոլոր իսրայէլացիներին մինչեւ վերջ ասաց օրհներգութեան այս խօսքերը.

ՄՈՎՍԷՍԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

32 «Երկի՛նք, ակա՛նջ դիր, որ խօսեմ,
եւ երկիրը թող լսի իմ բերանի պատգամները:
2 Իմ խօսքը թող ընկալուի իբրեւ անձրեւ,
իմ պատգամներն իջնեն իբրեւ ցող,
իբրեւ սէզի վրայ տեղացող անձրեւ
ու խոտի վրայ տեղացող տեղատարափ,
3 որովհետեւ Տիրոջ անունը տուեցի:
Օրհնութիւն առաքեցէ՛ք մեր Տէր Աստծուն,
4 Աստուած, որի գործերը ճշմարիտ են,
ու Նրա ուղիները՝ օրինաւոր:
Աստուած հաւատարիմ է,
եւ Նրա մէջ անիրաւութիւն չկայ,

Տէրն արդար է ու անարատ:
5 Սրանք մեղք գործեցին, բայց դրա
համար որդիները մեղաւոր չեն:
Սա թիւր ու մոլորուած մի ազգ է:
6 Ո՜վ յիմար ու անմիտ ժողովուրդ,
մի՞թէ Տիրոջը դրանով ես հատուցում:
Մի՞թէ նա այն հայրը չէ,
որ քեզ շահեց, քեզ արարեց ու հաստատեց քեզ:
7 Ցիշի՛ր անցած օրերը,
մտաբերի՛ր անցած սերունդների տարիները,
հարցրո՛ւ քո հայրերին, եւ նրանք քեզ կը պատմեն,
քո ծերերին, եւ նրանք քեզ կ'ասեն:
8 Երբ Բարձրեալն իրարից բաժանեց բոլոր ազգերին,
ինչպէս Ադամի որդիներին էր սփռել,
ազգերի սահմանները նշանակեց ըստ Աստծու† որդիների թուի:
9 Տիրոջ բաժինն եղաւ իր ժողովուրդը՝ Յակոբը,
իսկ իր ժառանգութեան վիճակը՝ Իսրայէլը:
10 Նա հոգաց նրա պէտքերն անապատում,
ջրից զուրկ վայրում,
ծարաւեցնող տօթից պաշտպանեց նրան,
խրատեց ու աչքի լոյսի պէս պահեց նրան:
11 Իր բոյնն ու իր ձագերին թեւի տակ առնող արծուի նման գթաց,
տարածեց իր թեւերն ու ընդունեց նրան,
բարձրացրեց ու իր մէջքին դրեց նրան:
12 Միայն Տէ՛րն էր տանում նրանց,
եւ նրանց հետ օտար աստուած չկար:
13 Նրանց բերեց երկրի բարգաւաճ վայրերը,
նրանց կերակրեց արտերի բերքով,
ժայռից ծորող մեղրով ու ապառաժ քարից հոսող իւղով կերակրեց նրանց:
14 Գառների, խոյերի, ցուլերի ու նոխազների ճարպի,
ընտիր ցորենի ալիւրի հետ
նրանց տալիս էր կովերի կարագ ու մաքիների կաթ,
նրանք խմում էին խաղողի արիւն՝ գինի:
15 Յակոբը կերաւ ու յագեցաւ,
ճարպակալեց ու ըմբոստացաւ այդ սիրելի մարդը:
Գիրացաւ, հաստացաւ ու լայնացաւ,
լքեց Տէր Աստծուն՝ իր Արարչին,
ապստամբեց Աստծու՝ իր Փրկչի դէմ:
16 Ինձ բարկացրին օտար աստուածներով
եւ իրենց գարշելի գործերով դառնացրին ինձ:
17 Ոչ թէ Աստծու, այլ դեւերի համար զոհեր էին մատուցում,
այն կուռքերի, որոնց չէին ճանաչում,
որոնք նոր էին ու ժամանակաւոր,
եւ որոնց չէին ճանաչում ձեր հայրերը:
18 Դու լքեցիր քեզ ծնած քո Աստծուն,
մոռացար քեզ կերակրող Աստծուն:
19 Տէրը տեսաւ ու վրդովուեց,
սրտմտեց իր տղաների ու աղջիկների բարկութեան համար: Նա ասաց.
20 "Իմ երեսը կը թեքեմ նրանցից եւ նրանց ցոյց կը տամ,
թէ ինչ կը լինի նրանց վախճանը,
որովհետեւ սրանք մոլորուած ազգ են,
հաւատ չունեցող որդիներ:
21 Նրանք ինձ վրդովեցին չաստուածներով,
ինձ բարկացրին իրենց կուռքերով,
ուրեմն ես էլ նրանց կ'անհանգստացնեմ իրաւ ազգ չեղող մարդկանցով,
նրանց կը բարկացնեմ անմիտ ժողովրդով:
22 Իմ բարկութիւնից հուր է բորբոքուել:
Դա կ'այրի մինչեւ դժոխքի խորքերը,
կը լափի հողն ու նրա բերքը,
կը վառի լեռների հիմքերը:
23 Նրանց վրայ չարիք պիտի կուտակեմ
ու իմ նետերն սպառեմ նրանց վրայ թափելով:

†Եբրայերէնում՝ Իսրայէլի:

24 Նրանք պիտի հիւծուեն սովից ու թռչունների կեր ուտելով:
Անբուժելի հիւանդութիւններ եւ ժանիքաւոր գազաններ պիտի ուղարկեմ նրանց վրայ,
որպէսզի սրանք երկրի երեսից վերացնեն նրանց:
25 Դրսից սուրը, իսկ ներսից երկիւղը թող ոչնչացնեն նրանց՝
երիտասարդներին, կոյս աղջիկներին, կաթնակերներին ու ալեւոր ծերերին:
26 Ասացի, որ կը ցրեմ նրանց,
մարդկանց միջից կը վերացնեմ նրանց յիշատակը:
27 Բայց այդ բանն անելուց հրաժարուեցի,
քանզի նկատի ունէի թշնամիների զայրոյթը.
չլինի թէ հակառակորդները երկար ապրեն եւ վեր կենան ու ասեն.
"Ոչ թէ Տէրն արեց այս ամէնը,
այլ՝ մեր հզօր ձեռքերը:
28 Սրանք անխոհեմ ազգ են,
ու նրանց մէջ իմաստութիւն չկայ:
29 Նրանք չմտածեցին ի մտի ունենալ այս.
արդ, կը ստանան ապագայում:
30 Մի մարդ ինչպէ՞ս կարող է հալածել հազարին,
եւ երկուսը՝ հետապնդել տասը հազարին,
եթէ Աստուած չի ոչնչացնում նրանց:
31 Նրանց աստուածները մեր Աստծու նման չեն†,
իսկ մեր թշնամիներն անխոհեմ են:
32 Սոդոմի որթատնկից է նրանց որթատունկը,
իսկ նրանց վազը՝ Գոմորից:
Նրանց խաղողը լեղի է,
նրանց ողկոյզը՝ դառն:
33 Նրանց գինին վիշապների ժահրն է եւ իժերի մահաբեր թոյնը:
34 Մի՞թէ այս ամէնն ինձ մօտ չի հաւաքուած
եւ կնքուած չի պահւում իմ գանձարանում:
35 Կը հատուցեմ վրէժխնդրութեան օրը՝
այն ժամանակ, երբ նրանք կը շեղեն իրենց ուղին,
որովհետեւ մօտ է նրանց կորստեան օրը,
եւ ձեր դատաստանը պատրաստ է:
36 Տէրը դատելու է իր ժողովրդին
եւ մխիթարուելու է իր ծառաներով,
որովհետեւ տեսել է, որ նրանք հիւծուած են,
լքուած ու գերութեան մատնուած:
37 Եւ Տէրը պիտի ասի. "Ո՞ւր են նրանց աստուածները,
որոնց ապաւինում էիք,
38 որոնց զոհերի ճարպն էիք ուտում,
նրանց նուիրաբերումների գինին խմում:
Թող վեր կենան, օգնեն, պաշտպան կանգնեն ձեզ:
39 Տեսէք, տեսէք, որ ԵՍ ԵՄ միայն,
եւ ինձանից բացի ուրիշը չկայ:
Ես եմ սպանում եւ ես եմ փրկում,
ես եմ հիւանդացնում եւ ես եմ բժշկում:
Չկայ մէկը, որ կարողանայ փրկել իմ ձեռքից:
40 Ձեռքս երկինք բարձրացնելով՝ երդւում եմ իմ աջով ու ասում.
"Ես յաւիտեան կենդանի եմ,
41 իմ սուսերը սրելու եմ կայծակի նման,
իմ ձեռքն է կայացնելու դատաստանի վճիռը,
եւ իմ թշնամիներից ես պիտի վրէժ լուծեմ:
Հատուցելու եմ նաեւ ինձ ատելի մարդկանց:
42 Իմ նետերը պիտի յագենան արեամբ,
իսկ իմ սուրը պիտի խմի վիրաւորների, գերիների եւ ինձ թշնամի իշխանների արիւնը:
Երկի՛նք, ուրախացի՛ր Նրա հետ,
նրան թող երկրպագեն Աստծու բոլոր որդիները†:
43 Ազգե՛ր, ուրախացէ՛ք Նրա ժողովրդի հետ,
նրան թող զօրացնեն Աստծու բոլոր հրեշտակները,

†Եբրայերէնում չկայ նրանց աստուածները մեր Աստծու նման չեն:

†Այս նախադասութիւնն այլ բնագրերում չկայ:

որովհետեւ նրա որդիների արեան
վրէժն է պահանջուում.
Թշնամիների վրէժն է պահանջուե-
լու,
եւ դատաստան է արուելու:
Թող ատելի մարդկանց նա արժա-
նին հատուցի,
եւ Տէրը Թող սրբագործի իր
ժողովրդի երկիրը»:
Մովսէսն այս օրհներգութիւնները
գրեց այդ օրը եւ դրանք սովորեցրեց
իսրայէլացիներին: 44 Մովսէսը մտաւ
ժողովրդի մէջ, եւ ինքն ու Նաւէի որդի
Յեսուն օրէնքի բոլոր խօսքերը լսելի
դարձրին ժողովրդի ականջին: 45 Մով-
սէսը, այս խօսքերը բոլոր իսրայէլա-
ցիներին հաղորդելուց յետոյ, 46 նրանց
ասաց. «Ձեր հոգու մէջ պահեցէ՛ք բոլոր
այն խօսքերը, որոնց վրայ այսօր
վկայութիւն եմ դնում ձեր առջեւ:
Դրանք հաղորդեցէ՛ք ձեր որդիներին,
որպէսզի պահեն ու կատարեն օրէնքի
բոլոր խօսքերը: 47 Սա ոչ թէ դատարկ
խօսք է, այլ ձեր կեանքի էութիւնը:
Դրա համար էլ երկար կ'ապրէք այն
երկրում, որ դուք, անցնելով Յորդա-
նան գետը, պիտի ժառանգէք»:
48 Տէրը նոյն օրը խօսելով Մովսէսի
հետ՝ ասաց. 49 «Բարձրացի՛ր Մովաբի
երկրում Երիքովի դիմաց գտնուող
Աբարիմ լեռը՝ Նաբաւ լեռը, եւ դիտի՛ր
այն երկիրը, որ տալու եմ իսրա-
յէլացիներին իբրեւ սեփականութիւն:
50 Գնա վախճանուի՛ր այնտեղ, քո
բարձրացած լեռան վրայ եւ միացի՛ր
քո ժողովրդին, ինչպէս որ Հոր
լեռան վրայ մեռաւ քո եղբայր Ահա-
րոնն ու միացաւ իր ժողովրդին: 51 Եւ
սա՝ ի դիմաց այն բանի, որ իսրայէ-
լացիների ներկայութեամբ Հակառա-
կութեան ջրերի մօտ, Կադէսում՝ Սին
անապատում, անտեսեցիք իմ խօսքերը,
չփառաւորեցիք դրանք իսրայէլա-
ցիների մէջ: 52 Դիմացի՛ց պիտի
տեսնես այդ երկիրը, բայց այնտեղ
պիտի չմտնես»:

ՄՈՎՍԷՍՆ ՕՐՀՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՑԵՂԵՐԸ

33 Այս է այն օրհներգութիւնը, որով
Մովսէսը՝ Աստծու մարդը, նախքան
մեռնելը օրհնեց իսրայէլացիներին՝
2 ասելով.
«Տէրը եկաւ Սինայից եւ մեզ երեւաց
Սէիրից:
Նա Կադէսից բիւրաւոր մարդկանց
հետ շտապ իջաւ Փառանի լեռից՝
աջ կողմում ունենալով իր հետ
հրեշտակներին† :
3 Նա գթաց իր ժողովրդին:
Նրա սրբագործած բոլոր էակները քո
ձեռքին են,
նրանք քեզ հետ են:
4 Նրա պատգամներից օրէնքներ
ստեղծուեցին,
որոնք դարձան Յակոբի ժողովրդի
սեփականութիւնը:
Դրանք մեզ հաղորդեց Մովսէսը:
5 Երբ ժողովրդի իշխանները ի մի
հաւաքուեն Իսրայէլի ցեղերի հետ,
իշխան Թող լինի Նա իր սիրե-
ցեալների մէջ:
6 Ռուբէնը Թող ապրի՝ չմեռնի,
նրա ժողովուրդը Թուով բազմա-
քանակ Թող լինի»:
7 Յուդայի մասին ասաց հետեւեալը.
«Տէ՛ր, լսի՛ր Յուդայի ձայնը եւ այ-
ցելի՛ր նրա ժողովրդին:
Թող նրա ձեռքերն իր համար անեն
ընտրութիւն,
իսկ դու օգնակա՛ն եղիր նրան
թշնամիների դէմ»:
8 Ղեւիի մասին ասաց.
«Ղեւիին տուէ՛ք նրա յայտնու-
թիւնը‡,
իսկ նրա ճշմարտութիւնը՝ այն
անարատ մարդուն,
որին փորձութեան ենթարկեցին
ու Հակառակութեան ջրի մօտ բամ-
բասեցին նրան:
9 Նա էր, որ ասում էր իր հօրն ու
մօրը,
թէ չի տեսել նրանց,
չի ճանաչել իր եղբայրներին
ու իր որդիներին անգիտացել:
Նա հետեւեց քո խօսքերին ու պահեց
քո ուխտը:
10 Քո իրաւունքները Յակոբին, քո
օրէնքները Իսրայէլին պիտի յայտնեն
նրանք:

†Եբրայերէն՝ Օրէնքի կրակը:
‡Տես Ելք Ի.Ը, 30:

Երբ բարկանաս, քո զոհասեղանի
վրայ նրանք մշտապէս խունկ պիտի
ծխեն:
11 Տէ՛ր, օրհնի՛ր նրա զօրութիւնը եւ
ընդունի՛ր նրա ձեռքի գործերը:
Ջարդի՛ր նրա վրայ յարձակուող
թշնամիների մէջքը,
որպէսզի նրան ատող մարդիկ
չկարողանան ոտքի կանգնել»:
12 Բենիամինի մասին ասաց.
«Տիրոջ սիրելին ապահով Թող
ապրի.
Աստուած նրա համար հովանի կը
լինի ամէն օր,
եւ նա Նրա ուսերի վրայ կը
հանգստանայ»:
13 Յովսէփի մասին ասաց.
«Տէրն օրհնել է նրա երկիրը,
ապահովել երկնքի անձրեւով ու
ցօղով,
անդունդների ընդերքից բխող
աղբիւրներով,
14 արեգակի փոփոխութիւնից կա-
խուած բերքով,
ամպերը միմեանց վրայ կուտա-
կելով,
15 հինաւուրց լեռների գագաթ-
ներով,
մշտնջենական բլուրների կատար-
ներով,
16 երկրի եղանակի համեմատ
տրուող առատութեամբ:
Մորենու մէջ երեւացած Աստծու
հաճութիւնը Թող իջնի Յովսէփի
գլխին՝
եղբայրների մէջ փառաւորուածի
գագաթին:
17 Նա գեղեցիկ է ցուլի առաջ-
նածինի նման,
նրա եղջիւրները նման են
միեղջերուի եղջիւրների:
Դրանցով նա Թող պոզահարի բոլոր
ազգերին
մինչեւ երկրի հեռաւոր անկիւնները:
Սրանք են Եփրեմի բիւրաւորները,
եւ սրանք են Մանասէի հազարա-
ւորները»:
18 Զաբուղոնի մասին ասաց.
«Ուրախացի՛ր, Զաբուղո՛ն, երբ ճա-
նապարհ ես ելնում գործի համար»:
Իսաքարի մասին ասաց.
«Իր բնակավայրում Թող ազգեր
մեռնեն:
19 Այդտեղ կանչեցէ՛ք մարդկանց ու
արդարութեան զոհեր մատուցեցէ՛ք,
որովհետեւ ծովի հարստութիւնն ու
ծովեզերքի մօտ բնակուող մարդկանց
վաճառքի շահը կարող են քեզ
կերակրել»:
20 Գադի մասին ասաց.
«Թող օրհնեալ լինի Աստուած, որ
ընդարձակեց Գադի երկիրը:
Նա հանգստացաւ ինչպէս առիւծը.
նա խորտակեց բազուկներ ու
իշխաններ
21 եւ տեսաւ իր իշխանութիւնը,
որովհետեւ այնտեղ է բաժանուած
Իսրայէլիացիների առաջնորդների հետ
միացած իշխանների երկիրը,
եւ Տէրն իր արդարութիւնն ու դա-
տաստանը գործադրեց ի նպաստ Իս-
րայէլի »:
22 Դանի մասին ասաց.
«Դանը առիւծի ձագ է:
Նա Բասանից ցատկ պիտի կա-
տարի»:
23 Նեփթաղիմի մասին ասաց.
«Նեփթաղիմը յագեցած է բարիք-
ներով:
Նա Թող լցուի Տիրոջ օրհնու-
թիւններով,
Թող ժառանգի ծովն ու հարաւը»:
24 Ասերի մասին ասաց.
«Ասերն օրհնուի Թող որդիներից,
նա եղբայրներին ընդունելի Թող
լինի,
իր ոտքը Թաթախի իւղի մէջ:
25 Նրա կօշիկները երկաթից ու
պղնձից Թող լինեն:
Քո զօրութիւնը քո օրերի չափ Թող
լինի:
26 Սիրելի Աստծու նման ոչ ոք չկայ:
Նա բարձրանում է երկինք,
որպէսզի դառնայ քո օգնականն ու
հաստատուի իր վեհութեամբ:
27 Աստծու իշխանութիւնն ու նրա
բազուկների մշտնջենաւոր զօրութիւնը
քեզ հովանի Թող լինեն:
Նա քո առջեւից Թող հալածի
թշնամուն եւ ասի՝ կորի՛ր:
28 Իսրայէլը Յակոբի երկրում Թող
բնակուի ապահով ու առանձին,

ցորենի ու գինու առատութեան մէջ թող ապրի,
իսկ երկինքը նրա համար ցօղի չտեմարան թող լինի:
29 *Երանի՜ քեզ, Իսրայէ՛լ.*
ո՞վ կարող է նմանուել քեզ,
ո՛վ Տիրոջ ընտրեալ ժողովուրդ:
Քո օգնականը թող պաշտպանի քեզ,
իսկ քո սուրը քո պարծանքը թող լինի:
Քո թշնամիները թող գան, դու
բարձրանալու ես նրանց ուսերին»:

ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ

34 *Մովսէսը Մովաբի երկրի Արաբոթ*
վայրից բարձրացաւ Նաբաւ լեռը՝
Փոգորի գագաթը, որ գտնւում է Երի-
քովի դիմաց: Տէրը նրան ցոյց տուեց
Գաղաադի ամբողջ երկիրը մինչեւ
Դան, 2 *Նեփթաղիմի ամբողջ երկիրը,*
Եփրեմի ու Մանասէի ամբողջ երկիրը,
Ցուդայի ամբողջ երկիրը մինչեւ հե-
ռաւոր ծովը, 3 *անապատն ու Երիքովի*
շրջակայքը, արմաւենիների քաղաք-
ները մինչեւ Սեգոր: 4 *Տէրն ասաց*
Մովսէսին. «Այս է այն երկիրը, որ
երդուելով Աբրահամին, Իսահակին ու
Յակոբին՝ ասել եմ. "Քո յետնորդներին
եմ տալու դա": Այս երկիրը ցոյց եմ
տալիս քեզ, բայց դու այնտեղ չես
մտնելու»:

5 *Եւ Տիրոջ ծառայ Մովսէսը վախ-*
ճանուեց Մովաբի երկրում, Տիրոջ
խօսքի համաձայն: 6 *Նրան թաղեցին*
Գայիում, Փոգորի տան մօտ, եւ ոչ ոք
մինչեւ այսօր չգիտի, թէ որտեղ է նրա
գերեզմանը: 7 *Երբ Մովսէսը վախճա-*
նուեց, հարիւր քսան տարեկան էր: Այդ
տարիքում ո՛չ նրա տեսողութիւնն էր
վատացել, ո՛չ էլ դէմքը խորշոմել:
8 *Իսրայէլացիները Մովաբի երկրի*
Արաբոթ վայրում, Յորդանան գետի
մօտ, Երիքովի դիմաց երեսուն օր ող-
բացին: Վերջացան Մովսէսի սգոյ լացի
օրերը:
9 *Նաւէի որդի Յեսուն լցուեց իմաս-*
տութեան հոգով, որովհետեւ Մովսէսն
իր ձեռքը դրել էր նրա վրայ: Իսրա-
յէլացիները հնազանդուեցին նրան եւ
արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր
պատուիրել Մովսէսին:
10 *Իսրայէլում այլեւս Մովսէսի*
նման մարգարէ չելաւ: Նա մի մարդ
էր, որին Տէրը երես առ երես ճանաչեց:
11 *Եգիպտացիների երկրում փարաւոնի,*
նրա պաշտօնեաների հանդէպ կատա-
րուող Տիրոջ առաքած բոլոր նշաններն
ու զարմանահրաշ գործերը, նրա ամ-
բողջ երկրի հանդէպ եղած մեծամեծ
նշանները 12 *Մովսէսը իսրայէլացիների*
առջեւ կատարում էր ամուր ձեռքով եւ
հզօր բազուկով:

ՆԱՒԷԻ ՈՐԴԻ ՅԵՍՈՒԻ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Յեսուի գրքում պատմւում է Քանանու երկրի նուաճումը եւ իսրայէլական ցեղերի հաստատումն այդ երկրում՝ Մովսէսի յաջորդ Յեսուի առաջնորդութեամբ: Գրքում կարելի է հետեւեալ սահմանազատել երեք մեծ բաժիններ.

1. Քանանի նուաճումը (գլ. 1-12).
2. Երկրի բաժանումը (գլ. 13-21).
3. Յեսուի կեանքի վախճանը (գլ. 22-24):

Իր ժողովրդին մի երկիր տալով՝ Աստուած իրականացնում է այն խոստումները, որ տուել էր իսրայէլացիների նախնիներին եւ ապա՝ Մովսէսին: Աստծու եւ Իսրայէլի միջեւ եղած յարաբերութիւնների պատմութեան մէջ Քանանու երկրի նուաճումը կարելի է համեմատել Եգիպտոսից իսրայէլացիների դուրս գալու պատմութեան հետ: Ինչպէս Եգիպտոսից ելքի, այնպէս էլ այս պատմութեան մէջ նկատելի է Աստծու միջամտութիւնը, որը կուում է իր ժողովրդի կողքին՝ ապահովելով նրան յաջողութիւն եւ յաղթանակ:

Նուաճուած կամ նուաճելի հողերի բաժանումն ու շնորհումը իսրայէլացիներին, իր մանրամասնութիւնների մէջ, ցոյց է տալիս Աստծու հոգատարութիւնը իր ժողովրդի նկատմամբ, հոգատարութիւն, որը թոյլ է տալիս բոլոր իսրայէլացիներին ապրել խաղաղ եւ ապահով՝ մի հողակտորի տէր դառնալու շնորհիւ:

Յեսուի գիրքը միաժամանակ յիշեցնում է, որ Աստծու հաւատարմութիւնը իր խոստումների նկատմամբ ժողովրդին պարտաւորեցնում է փոխադարձաբար հաւատարիմ լինել Աստծու նկատմամբ: Իսրայէլացիների գալն ու հաստատուելը օտարականների մէջ, որոնք չէին ճանաչում Աստծուն, անհաւատարմութեան նոր վտանգների առաջ էր կանգնեցնում նրանց: Ահա թէ ինչու Յեսուն յանձն է առնում այդ պարտաւորութիւնը Աստծու հետ կնքուած դաշինքի հանդիսաւոր վերանորոգութեամբ Սիւքէմի ժողովում, որի պատմութեամբ աւարտւում է այս գիրքը: Այստեղից էլ սկսւում է իսրայէլացիների եւ նրանց երկրի երկար պատմութիւնը:

ՆԱԻԷԻ ՈՐԴԻ ՅԵՍՈՒԻ ԳԻՐՔԸ

ՅԵՍՈՒՆ ՅԱՋՈՐԴՈՒՄ Է ՄՈՎՍԷՍԻՆ

1 Տիրոջ ծառայ Մովսէսի վախճանուելուց յետոյ Տէրը խօսեց Մովսէսի օգնականի՝ Նաւէի որդի Յեսուի հետ եւ ասաց. 2 «Իմ ծառայ Մովսէսը վախճանուեց, հիմա վե՛ր կաց, անցի՛ր Յորդանան գետով քո ամբողջ ժողովրդի հետ այն երկիրը, որ ես տալու եմ իսրայէլացիներին: 3 Այն բոլոր տեղերը, ուր ձեր ոտքերը կը կոխեն, ձեզ պիտի տամ, ինչպէս որ ասել եմ Մովսէսին. 4 անապատը եւ Լեռնալիբանանը մինչեւ Եփրատ մեծ գետը, Քետացիների ամբողջ երկիրը մինչեւ արեւմուտքի վերջին ծովը ձեր սահմանները կը լինեն: 5 Ոչ ոք դէմ չի կանգնի ձեզ քո կեանքի բոլոր օրերում: Ինչպէս Մովսէսի հետ էի, այդպէս կը լինեմ նաեւ քեզ հետ, չեմ լքի քեզ եւ անտես չեմ անի: 6 Զօրացի՛ր եւ արիացի՛ր, որովհետեւ դու պիտի բաժին տաս այս ժողովրդին այն երկիրը, որ երդուեցի տալ քո հայրերին: 7 Արդ, զօրացի՛ր եւ շա՛տ քաջ եղիր, որպէսզի պահես եւ կատարես այն բոլոր օրէնքները, որ իմ ծառայ Մովսէսը քեզ պատուիրեց: Դրանցից չշեղուես աջ կամ ձախ, որ խելամտօրէն անես այն ամէնը, ինչ որ պիտի անես: 8 Այս օրէնքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր, որպէսզի գիտենաս կատարել բոլոր դրա մէջ գրուածները. այն ժամանակ յաջողակ կը լինես, ուղիղ ճանապարհով կ'ընթանաս եւ խելամտօրէն կը գործես: 9 Ահա պատուիրում եմ քեզ, զօրացի՛ր եւ արիացի՛ր, մի՛ վախեցիր եւ մի՛ երկնչիր, որովհետեւ քեզ հետ է քո Տէր Աստուածը ամէն տեղ, ուր էլ որ գնաս»:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

10 Յեսուն պատուիրեց ժողովրդի վերակացուներին եւ ասաց. «Մտէ՛ք ժողովրդի բազմութեան մէջ եւ հրաման տալով ժողովրդին՝ ասացէ՛ք. 11 "Ձեզ համար պաշար պատրաստեցէ՛ք, որովհետեւ երեք օրից յետոյ դուք պիտի անցնէք Յորդանան գետով, որպէսզի մտնէք ու գրաւէք այն երկիրը, որ ձեր հայրերի Տէր Աստուածը տալու է ձեզ որպէս ժառանգութիւն"»:

12 Յեսուն խօսեց նաեւ Ռուբէնի, Գադի եւ Մանասէի կէս ցեղի հետ եւ ասաց. 13 «Յիշեցէ՛ք Տիրոջ խօսքը, որ պատուիրեց ձեզ նրա ծառայ Մովսէսը՝ ասելով. "Ձեր Տէր Աստուածը տեղաւորեց ձեզ եւ տուեց ձեզ այս երկիրը: 14 Ձեր կանայք, ձեր մանուկները եւ ձեր անասունները թող ապրեն այն երկրում, որ Մովսէսը Յորդանան գետի այս կողմում տուեց ձեզ: Բայց դուք զինուած՝ ձեր եղբայրների առա՛ջն անցէք եւ ամբողջ զօրութեամբ նրանց մարտակի՛ց եղէք, 15 մինչեւ որ ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներին էլ ձեզ պէս տեղաւորի, եւ նրանք էլ ժառանգեն այն երկիրը, որ մեր Տէր Աստուածը տալու է նրանց: Ապա իւրաքանչիւրդ ե՛տ դարձէք ձեր ժառանգութեան երկիրը եւ ժառանգեցէ՛ք այն, որ Տիրոջ ծառայ Մովսէսը տուեց ձեզ Յորդանան գետի արեւելեան կողմում"»:

16 Նրանք պատասխան տալով՝ Յեսուին ասացին. «Ամէն ինչ, որ պատուիրում ես մեզ, կ'անենք եւ 17 կը գնանք այն բոլոր տեղերը, ուր ուղարկում ես մեզ, ամէն բանում ինչպէս լսում էինք Մովսէսին, այդպէս կը լսենք եւ քեզ, միայն թէ մեր Տէր Աստուածը քեզ հետ լինի, ինչպէս որ Մովսէսի հետ էր: 18 Այն մարդը, որ անհնազանդ կը լինի քեզ եւ չի լսի քո խօսքերը, ինչ էլ որ հրամայես նրան, նա կը սպանուի. միայն թէ դու զօրացի՛ր եւ արիացի՛ր»:

ՅԵՍՈՒՆ ԼՐՏԵՍՆԵՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՐԻՔՈՎ

2 Նաւէի որդի Յեսուն Սատիմից երկու երիտասարդ ուղարկեց երկիրը լրտեսելու համար եւ ասաց. «Գնացէք լրտեսեցէ՛ք այն երկիրը եւ Երիքովը»: Գնացին երկու երիտասարդները եւ եկան Երիքով ու մտնելով Ռահաբ անունով մի պոռնիկ կնոջ տունը, այնտեղ օթեւանեցին: 2 Երիքովի թագաւորին լուր տուեցին եւ ասացին. «Այս գիշեր այստեղ իսրայէլացիներից մարդիկ են մտել երկիրը լրտեսելու»: 3 Երիքովի թագաւորը մարդ ուղարկեց, որ Ռահաբին ասի. «Գիշերը քեզ մօտ եկած եւ՝ տունդ մտած մարդկանց դո՛ւրս հանիր, որովհետեւ եկել են այս ամբողջ երկիրը լրտեսելու»: 4 Իսկ կինը վերցրեց այդ երկու մարդկանց, թաքցրեց, խօսեց նրանց հետ եւ ասաց. «Ինձ մօտ մարդիկ մտան, բայց ես չգիտէի, թէ որտեղից են: 5 Առաւօտեան աղջամուղջին, դարպասները փակուելու ժամանակ, այդ մարդիկ դուրս եկան, եւ չգիտեմ, թէ ո՛ւր գնացին: Շուտ հետապնդեցէ՛ք նրանց, դուցէ հասնէք»: 6 Իսկ ինքը նրանց հանեց կտուրը եւ թաքցրեց վուշի խուրձերի տակ, որ դիզել էր կտուրի վրայ: 7 Մարդիկ Յորդանան գետի հունով մինչեւ գետանցը նրանց ետեւից ընկան, եւ դարպասը փակուեց, երբ հետապնդողներն ընկան նրանց ետեւից: 8 Նրանք դեռ չէին քնել, որ կինը նրանց մօտ՝ կտուրը ելաւ եւ ասաց. 9 «Գիտեմ, որ Տէրն այս երկիրը ձեզ է տուել, որովհետեւ ձեր ահն ընկել է մեզ վրայ, եւ ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալումաշ են եղել, 10 քանի որ մենք լսել ենք, թէ ինչպէս Տէրը Կարմիր ծովը ցամաքեցրեց ձեր առաջ, երբ դուրս էիք գալիս Եգիպտոսից, եւ թէ ինչ արեցիք դուք ամորհացիների երկու թագաւորներին՝ Յորդանան գետի այն կողմում գտնուող Սեհոնին եւ Օգին, որոնց սպանեցիք: 11 Երբ մենք լսեցինք, զարհուրեցին մեր սրտերը, եւ մեզնից ոչ մէկի մէջ չունչ չի մնացել ձեր պատճառով, որովհետեւ ձեր Տէր Աստուածն Աստուած է երկնքում՝ վերեւում, եւ երկրի վրայ՝ ներքեւում: 12 Հիմա երդուեցէ՛ք ինձ Տէր Աստուածով, որ ինչպէս ես եմ ձեզ ողորմութիւն անում, այդպէս էլ դուք ողորմութիւն կ'անէք իմ հօր տան նկատմամբ: 13 Ինձ մի ճշմարիտ նշան տուէ՛ք, որ ողջ կը թողնէք իմ հօր ընտանիքը՝ իմ մօրը, իմ եղբայրներին եւ քոյրերին ու այն ամէնը, ինչ ունեն նրանք, եւ կ'ազատէք ինձ մահից»: 14 Այդ մարդիկ նրան ասացին. «Մենք ձեր փոխարէն թող մեռնենք, միայն թէ մեր մասին այս բաները չպատմէք»: Եւ կինն ասաց. «Երբ Տէրն այս քաղաքը ձեր ձեռքը յանձնի, ինձ ողորմութիւն արէ՛ք եւ ինձ հետ արդա՛ր վարուեցէք»: 15 Եւ պարանով կախեց-իջեցրեց նրանց պատուհանից, որովհետեւ նրա տունը պարսպի մէջ էր, եւ ինքն էլ բնակւում էր պարսպի մէջ: 16 Նա ասաց նրանց. «Լեռների վրայով գնացէ՛ք, որպէսզի խուսափէք ձեզ փնտռողներից: Երեք օր թաքնուեցէ՛ք այնտեղ, մինչեւ որ ձեզ փնտռողները ետ դառնան, եւ յետոյ գնացէ՛ք ձեր ճանապարհով»: 17 Այդ մարդիկ նրան ասացին. «Մենք ազատ կը լինենք այդ երդումից, որով մեզ երդուեցրիր. 18 երբ մենք մտնենք քաղաքը, դու այս կարմիր պարանը որպէս նշան կը դնես եւ կը կապես այն պատուհանից, որից մեզ իջեցրիր, եւ քո հօրը, մօրը, եղբայրներին եւ քո հօր ամբողջ ընտանիքը կը հաւաքես քեզ մօտ, այս տանը: 19 Ով որ քո տնից դուրս գայ, ինքը թող իր համար պատասխանատու լինի, մենք ազատ կը լինենք քեզ տուած մեր երդումից: Ով քեզ հետ քո տանը լինի, մենք պատասխանատու կը լինենք, եթէ մէկի ձեռքը դիպչի նրան: 20 Իսկ եթէ մէկը վնասի մեզ, կամ յայտնես մեր այս գործը, մենք ազատ կը լինենք քեզ տուած մեր երդումից»: 21 Եւ կինն ասաց. «Թող լինի ձեր ասածի պէս, թող այդպէս լինի»: Արձակեց նրանց, եւ նրանք գնացին: Եւ նա կարմիր նշանը կապեց պատուհանին:

22 Նրանք գնացին եւ եկան լեռնակողմը եւ այնտեղ մնացին երեք օր, մինչեւ որ փնտռողները ետ դարձան: Փնտռողները հետախուզեցին ամբողջ ճանապարհը, բայց չգտան նրանց: 23 Երկու երիտասարդները ետ դարձան, իջան սարից, անցնելով այն կողմ՝ հասան Նաւէի որդի Յեսուի մօտ եւ պատմեցին իրենց հետ պատահած բոլոր դէպքերը: 24 Նրանք ասացին Յեսուին, թէ՝ «Տէր Աստուածը այդ ամբողջ երկիրը մատնել է մեր ձեռքը, եւ այդ երկրի բոլոր բնակիչները զարհուրած են մեզնից»:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԸ

3 Յեսուն առաւօտեան վաղ վեր կացաւ, եւ ինքն ու բոլոր իսրայէլացիները մեկնեցին Սատիմից, եկան մինչեւ Յորդանան գետը եւ գետանցումից առաջ բանակատեղի դրեցին այնտեղ: 2 Երեք օր յետոյ վերակացուներն անցան բանակատեղիի միջով 3 եւ պատուէր տուեցին ժողովրդին՝ ասելով. «Երբ տեսնէք ձեր Տէր Աստծու ուխտի տապանակը, այն տանող ղեւտացիներին ու մեր քահանաներին, դուք էլ ելէ՛ք ձեր տեղերից եւ գնացէ՛ք տապանակի յետեւից: 4 Բայց ձեր եւ նրանց միջեւ երկու հազար կանգունի չափ հեռաւորութիւն պիտի լինի: Կանգնեցէ՛ք եւ մի՛ մօտեցէք նրան, որպէսզի իմանաք այն ճանապարհը, որով պիտի գնաք, որովհետեւ երէկուայ եւ նախորդ օրուայ ճանապարհով չէք գնալու»: 5 Եւ Յեսուն ասաց ժողովրդին. «Մաքրուեցէ՛ք առաւօտեան, որովհետեւ Տէրը վաղը ձեր մէջ զարմանահրաշ գործեր է անելու»: 6 Յեսուն խօսեց քահանաների հետ ու ասաց. «Առէ՛ք Տիրոջ ուխտի տապանակը եւ գնացէ՛ք ժողովրդի առջեւից»: Քահանաները վերցրին Տիրոջ ուխտի տապանակը եւ գնացին ժողովրդի առջեւից:

7 Տէրն ասաց Յեսուին. «Այսօր կը սկսեմ քեզ մեծարել բոլոր իսրայէլացիների առաջ, որպէսզի իմանան, թէ, ինչպէս որ Մովսէսի հետ էի, այդպէս կը լինեմ եւ քեզ հետ: 8 Հիմա պատուիրի՛ր ուխտի տապանակը տանող քահանաներին եւ ասա՛. "Երբ որ մտնէք Յորդանան գետի եզերքի ջրի մէջ, կանգնեցէ՛ք այնտեղ"»:

9 Եւ Յեսուն ասաց իսրայէլացիներին. «Մօտեցէ՛ք այստեղ եւ լսեցէ՛ք մեր Տէր Աստծու պատգամները»: 10 Յեսուն ասաց. «Դրանով դուք կ'իմանաք, որ կենդանի Տէրը ձեր մէջ է, եւ որ նա իսպառ ոչնչացնելու է ձեր առաջից քանանացիներին, քետացիներին, խեւացիներին, փերեզացիներին, գերգեսացիներին, ամորհացիներին եւ յեբուսացիներին: 11 Ահա ամբողջ երկրի Տիրոջ ուխտի տապանակը ձեր առջեւից պիտի անցնի Յորդանան գետով: 12 Հիմա դուք իսրայէլացիներից ընտրեցէ՛ք տասներկու մարդ՝ ամէն ցեղից մի մարդ, 13 եւ երբ ամբողջ երկրի Տիրոջ ուխտի տապանակը կրող քահանաների ոտքերը մտնեն Յորդանան գետի ջրի մէջ, վերեւից իջնող ջուրը կը կտրուի, կը կանգնի ինչպէս քարակոյտ»:

14 Երբ ժողովուրդը Յորդանան գետն անցնելու համար դուրս եկաւ վրաններից, քահանաները վերցրին Տիրոջ ուխտի տապանակը եւ տարան ամբողջ ժողովրդի առաջից: 15 Երբ ուխտի տապանակը կրող քահանաները մտնում էին Յորդանան գետը, եւ տապանակը կրող քահանաների ոտքերը խրուեցին Յորդանան գետի ջրի մէջ, — մինչ Յորդանան գետը գալիս էր ափէափ լցուած, ինչպէս ցորենի հնձի օրերին, — 16 վերեւից իջնող ջրերը կանգնեցին՝ միաձոյլ, անշրպետուած, իրարից խիստ հեռացած՝ սկսած Ադամիտէս քաղաքից, որը Կարիաթարիմի մասն է. իսկ ցած իջնող ջրերը թափուեցին Արաբացիների† ծովը՝ Աղի ծովը, մինչեւ որ իսպառ կտրուեցին, եւ ժողովուրդն արդէն կանգնած էր Երիքովի դիմաց: 17 Տիրոջ ուխտի տապանակը կրող քահանաները հաստատ կանգնեցին Յորդանան գետի հունի մէջ, ցամաքի վրայ: Եւ բոլոր իսրայէլացիներն անցան ցամաքով, մինչեւ որ ամբողջ ժողովուրդն աւարտեց Յորդանան գետի անցումը:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՔԱՐԵՐԸ

4 Երբ ամբողջ ժողովուրդն աւարտեց Յորդանան գետի անցումը, Տէրը խօսեց Յեսուի հետ եւ ասաց. 2 «Ա՛ռ դու ժողովրդից տասներկու մարդ, ամէն ցեղից մի մարդ, 3 հրամա՛ն տուր նրանց ու ասա՛. "Այդտեղից՝ Յորդանան գետի միջից, հաստատ կանգնած քահանաների ոտնատեղերից տասներկու քարեր առէ՛ք, տարէ՛ք ձեզ հետ եւ դրէ՛ք ձեր այն բանակատեղիում, որտեղ իջեւանելու էք այս գիշեր"»: 4 Եւ

†Երբայերէն՝ դաշտերի (Արաբա=դաշտ):

Յեսուն տասներկու փառաւոր† իսրայէլացիներ կանչեց, իւրաքանչիւր ցեղից մէկ մարդ, 5 եւ նրանց ասաց. «Իմ աչքի առաջ մօտեցէ՛ք‡ Տիրոջը յանդիման, Յորդանան գետի մէջտեղում, եւ ամէն մէկդ այնտեղից Իսրայէլի ցեղերի թուի համեմատ մի քար վերցրէ՛ք ձեր ուսերին, 6 որպէսզի դրանք ձեզ համար միշտ նշան լինեն: Երբ վաղը ձեր որդիները ձեզ հարցնեն եւ ասեն՝ "Ի՞նչ են նշանակում այս քարերը ձեզ համար", 7 դուք ձեր որդիներին կը պատմէք եւ կ'ասէք, թէ՝ "Յորդանան գետի ջրերը կտրուեցին ամբողջ երկրի Տիրոջ ուխտի տապանակի առջեւ, երբ այն անցնում էր Յորդանան գետով. Յորդանան գետի ջուրը կտրուեց: Այս քարերը յաւիտեան յիշատակ թող լինեն իսրայէլացիների մէջ"»: 8 Եւ իսրայէլացիներն արեցին այնպէս, ինչպէս Տէրը պատուիրեց Յեսուին: Առնելով տասներկու քարեր Յորդանան գետի միջից, ինչպէս Տէրը հրամայել էր Յեսուին իսրայէլացիների անցնելուց յետոյ, դրանք իրենց հետ տարան բանակատեղի եւ դրին այնտեղ: 9 Յեսուն ուրիշ տասներկու քարեր կանգնեցրեց Յորդանան գետի մէջ, այնտեղ, ուր ոտք էին դրել Տիրոջ ուխտի տապանակը տանող քահանաները. եւ մինչեւ այսօր դրանք այնտեղ են: 10 Տիրոջ ուխտի տապանակը տանող քահանաները կանգնեցին Յորդանան գետի մէջտեղում, մինչեւ որ Յեսուն աւարտեց հաղորդել այն ամէնը, որ Տէրը Յեսուին պատուիրել էր ժողովրդին ասելու, ճիշտ այնպէս, ինչպէս Մովսէսը պատուիրել էր Յեսուին: Եւ ժողովուրդը շտապեց ու անցաւ գետը: 11 Երբ ամբողջ ժողովուրդն անցաւ, Տիրոջ ուխտի տապանակն ու տասներկու քարերը տանողները անցան ժողովրդի առաջ:

12 Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը, սպառազինուած, անցան իսրայէլացիների գլուխը, ինչպէս պատուիրել էր նրանց Մովսէսը: 13 Կռուի պատրաստ քառասուն հազար սպառազինեալներ անցան Տիրոջ առջեւ՝ պատերազմելու Երիքովի քաղաքի դէմ: 14 Այդ օրը Տէրը մեծարեց Յեսուին Իսրայէլի ամբողջ ազգի առաջ. նրանից վախենում էին, ինչպէս որ վախենում էին Մովսէսից նրա կենդանութեան բոլոր օրերին: 15 Տէրը խօսեց Յեսուի հետ եւ ասաց. 16 «Հրամա՛ն տուր վկայութեան ուխտի տապանակը տանող քահանաներին, որ դուրս գան Յորդանան գետից»: 17 Եւ Յեսուն հրաման տուեց քահանաներին ու ասաց. «Դո՛ւրս եկէք Յորդանան գետից»: 18 Երբ Տիրոջ ուխտի տապանակը կրող քահանաները դուրս եկան Յորդանան գետի միջից, եւ քահանաները ոտք դրին ցամաքի վրայ, Յորդանան գետի ջուրը յետ իր տեղը դարձաւ եւ հոսեց իր ամբողջ հունով, ինչպէս երէկ եւ նախորդ օրը:

19 Ժողովուրդը Յորդանան գետից դուրս եկաւ առաջին ամսի տասներորդ օրը, եւ իսրայէլացիները իջեւանեցին Գաղգաղայում, Երիքովի արեւելեան կողմում: 20 Այն տասներկու քարերը, որ վերցրել էին Յորդանան գետից, Յեսուն կանգնեցրեց Գաղգաղայում: 21 Նա ասաց իսրայէլացիներին. «Երբ վաղը ձեր որդիները հարցնեն եւ ասեն՝ "Այս ի՞նչ քարեր են", 22 ասացէ՛ք ձեր որդիներին, որ Իսրայէլը ցամաքով անցաւ Յորդանան գետով, 23 երբ մեր Տէր Աստուածը ցամաքեցրեց Յորդանան գետի ջուրը նրանց առաջ, մինչեւ որ անցան: 24 Այսպէս արեց մեր Տէր Աստուածը Կարմիր ծովում. մեր Տէր Աստուածն այն ցամաքեցրեց մեր առաջ, մինչեւ որ անցանք, 25 որպէսզի երկրի բոլոր ազգերն իմանան, որ մեծ է Տիրոջ զօրութիւնը, եւ դուք միշտ պաշտէք մեր Տէր Աստծուն»:

ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ ԳԱՂԳԱՂԱՅՈՒՄ

5 Ամորհացիների բոլոր թագաւորները, որոնք Յորդանան գետի այն կողմում էին, ծովեզերքին, եւ փիւնիկեցիների† թագաւորները, որոնք ծովեզերքին էին, երբ լսեցին, թէ Տէր Աստուածը նրանց գետանցման ժամանակ

†Երբայերէն՝ իր նշանակած:

‡Երբայերէն՝ անցէ՛ք ձեր Տէր Աստծու տապանակի առաջ:

†Երբայերէն՝ Բանանացիների:

իսրայէլացիների առաջ ցամաքեցրել է Յորդանան գետը, նրանք սրտամաշ եղան, զարհուրեցին, եւ նրանց մէջ խոհականութիւն չմնաց իսրայէլացիների պատճառով:

2 *Այն ժամանակ Տէրը Յեսուին ասաց. «Գայլախազ քարից դանակ շինի՛ր եւ նստի՛ր կրկին թլփատիր իսրայէլացիներին»:* 3 *Եւ Յեսուն գալախազէ դանակներ շինեց եւ թլփատեց իսրայէլացիներին այն վայրում, որ կոչւում էր Անթլփատների բլուր:* 4 *Եւ այդպէս Յեսուն թլփատեց այն իսրայէլացիներին, որոնք ճանապարհին էին ծնուել Եգիպտոսից դուրս գալուց յետոյ եւ բնաւ չէին թլփատուել. բոլորին էլ թլփատեց Յեսուն: Ահա ա՛յս բազմութեանն է, որ թլփատեց Յեսուն. Եգիպտոսից դուրս եկած ամբողջ ժողովրդի արու մանուկներին: Բոլոր պատերազմող մարդիկ մեռան անապատում՝ Եգիպտոսից իրենց դուրս գալու ճանապարհին:* 5 *Դուրս եկած ամբողջ ժողովուրդը թլփատուած էր: Եգիպտոսից դուրս գալուց յետոյ ճանապարհին ծնուած բազմութիւնը* 6 *(քանի որ իսրայէլացիները քառասուներկու տարի շրջել էին Աբդարի անապատում), այդ բազմութիւնից շատերը՝ Եգիպտոսից դուրս եկած պատերազմիկներ, որոնք չէին հնազանդուել Աստծու պատուիրաններին, անթլփատ էին: Նրանց համար Տէրը որոշեց, որ նրանք չպիտի տեսնեն այն երկիրը, որ երդուել էր նրանց հայրերին, թէ կը տայ նրանց, մի երկիր, ուր կաթ եւ մեղր է բխում:* 7 *Եւ նրանց փոխարէն տարաւ նրանց որդիներին, որոնց թլփատեց Յեսուն: Նրանք անթլփատ էին, քանի որ ճանապարհին չէին թլփատուել:* 8 *Երբ ամբողջ ժողովուրդը թլփատուեց, հանգիստ առնելով մնացին բանակատեղիում, մինչեւ որ ապաքինուեցին:* 9 *Եւ Տէրն ասաց Յեսուին. «Այսօր ձեր վրայից վերացրի եգիպտացիների նախատինքը»: Եւ այդ տեղի անունը կոչեց Գաղգաղա. այդպէս է կոչւում մինչեւ այսօր:* 10 *Այնտեղ իջեւանեցին իսրայէլացիները:*

Իսրայէլացիները Երիքովի արեւելեան կողմում գտնուող դաշտում, ամսի տասնչորսերորդ օրը, իրիկնադէմին, զատիկ արեցին: 11 *Եւ առաւօտեան այդ երկրի ցորենից բաղարջ եւ աղանձ կերան:*

12 *Այդ օրը, այդ երկրի ցորենից ուտելուց յետոյ, մանանան դադարեց, եւ իսրայէլացիները այլեւս մանանայ չգտան: Եւ այդ տարի նրանք հաւաքեցին փիւնիկեցիների*† *երկրի պտուղը:*

ՏԻՐՈՋ ԲԱՆԱԿԻ ՋՕՐԱՊԵՏԸ

13 *Եւ մինչ Յեսուն Երիքովում էր, նա, բարձրացնելով իր աչքերը, տեսաւ իր առաջ կանգնած մի մարդու, որի ձեռքին մերկացրած սուր կար: Յեսուն մօտեցաւ եւ ասաց նրան. «Մեզնի՞ց ես, թէ մեր թշնամիներից»:* 14 *Նա ասաց. «Ես Տիրոջ զօրքի զօրավարն եմ եւ հիմա եկայ»:* 15 *Յեսուն երեսնիվայր գետին ընկաւ, երկրպագեց եւ ասաց նրան. «Տէ՛ր, ի՞նչ հրաման կը տաս քո ծառային»:* 16 *Տիրոջ զօրավարն ասաց Յեսուին. «Հանի՛ր կօշիկները քո ոտքերից, որովհետեւ քո կանգնած տեղը սուրբ է»: Եւ Յեսուն այդպէս արեց:*

ԵՐԻՔՈՎԻ ԳՐԱՒՈՒՄԸ

6 *Երիքովն ամուր փակուած եւ ամրացուած էր իսրայէլացիների պատճառով, ոչ ոք դուրս չէր գալիս այնտեղից եւ ոչ ոք չէր մտնում:* 2 *Տէրը Յեսուին ասաց. «Ահա ես քո ձեռքն եմ տալիս Երիքովը, նրա մէջ գտնուող թագաւորին եւ զօրաւոր քաջերին:* 3 *Բայց դուք, երբ լսէք եղջերափողի ձայնը, բոլոր մարտիկներդ շեփորներով շրջապատեցէ՛ք քաղաքը: Երբ փողերը հնչեցնէք, բոլոր պատերազմող մարդիկդ քաղաքի շուրջը պտոյտ տուէ՛ք օրական մէկ անգամ: Այսպէս արէ՛ք վեց օր:* 4 *Եօթը քահանայ թող առնեն տանեն տօնական եղջերափողերը տապանակի առջեւից: Եօթներորդ օրը քաղաքի շուրջը պտոյտ տուէ՛ք եօթն անգամ, քահանաները թող հնչեցնեն եղջերափողերը,* 5 *եւ առհասարակ ամբողջ ժողովուրդը թող աղաղակի: Երբ նրանք աղաղակեն, քաղաքի պարիսպներն իրենք*

†Եբրայերէն՝ *բանանացիների:*

իրենց հիմնայատակ կը կործանուեն, ամբողջ ժողովուրդը կը մտնի քաղաք՝ ամէն մէկն ընթանալով ուղիղ իր դիմացը»: 6 *Նաւէի որդի Յեսուն գնաց քահանաների մօտ եւ ասաց նրանց. «Առէ՛ք ուխտի տապանակը, եւ եօթը քահանաներ եօթը տօնական եղջերափողեր առած՝ թող գնան Տիրոջ տապանակի առջեւից»:* 7 *Նա նրանց ասաց. «Կարգադրեցէ՛ք ժողովրդին, որ գնան, պտոյտ տան քաղաքի շուրջը: Մարտիկները զինուած գնան Տիրոջ տապանակի առջեւից,* 8 *եօթը նուիրական չեփորներ կրող քահանաները նոյնպէս թող անցնեն Տիրոջ ուխտի տապանակի առաջ եւ ուժգին հնչեցնեն փողերը: Տիրոջ ուխտի տապանակը թող գնայ նրանց ետեւից,* 9 *մարտիկները թող ընթանան առջեւից, իսկ քահանաները եւ եղջերափողերը հնչեցնողները, որպէս վերջապահներ, թող գնան Տիրոջ տապանակի յետեւից՝ հնչեցնելով եղջերափողերը»:*

10 *Իսկ ժողովրդին Յեսուն պատուիրեց եւ ասաց. «Մի՛ աղաղակէք, թող ոչ ոք չլսի ձեր ձայնը, եւ ոչ մի խօսք դուրս չգայ ձեր բերանից մինչեւ այն օրը, երբ ես ինքս ազդարարեմ ձեզ աղաղակել, եւ ապա կ՚աղաղակէք»:* 11 *Տիրոջ ուխտի տապանակը, պտտելով քաղաքի շուրջը, գնաց նորից բանակատեղի եւ իջեւանեց այնտեղ:*

12 *Երկրորդ օրն առաւօտեան Յեսուն վեր կացաւ, քահանաները վերցրին Տիրոջ տապանակը,* 13 *եօթը քահանաներն առան եօթը նուիրական փողերը եւ ընթացան Տիրոջ ուխտի տապանակի առջեւից: Քահանաները հնչեցրին փողերն ու մնացեալ ամբողջ բազմութեան հետ վերադարձան բանակատեղի. ապա Տիրոջ ուխտի տապանակի ետեւից անցան մարտիկներն ու մնացած ամբոխը. գնում եւ հնչեցնում էին եղջերափողերը:* 14 *Երկրորդ օրն էլ մէկ անգամ մտիկից պտտուեցին քաղաքի շուրջը եւ դարձեալ եկան բանակատեղի: Այդպէս արեցին վեց օր:* 15 *Իսկ եօթներորդ օրը լուսաբացին վեր կացան եւ նոյն ձեւով քաղաքի շուրջը պտտուեցին եօթն անգամ:* 16 *Եօթներորդ անգամ պտտուելիս քահանաները հնչեցրին փողերը, եւ Յեսուն ասաց իսրայէլացիներին. «Հիմա աղաղակեցէ՛ք, որովհետեւ Տէրն այս քաղաքը մեր ձեռքը մատնեց:* 17 *Քաղաքն ու նրա մէջ եղած ամէն ինչ նզովուած պիտի լինի զօրութիւնների Տիրոջից: Ազատեցէ՛ք միայն պոռնիկ Ռահաբին եւ այն ամէնը, ինչ նրա տանը կայ, որովհետեւ նա թաքցրեց մեր ուղարկած լրտեսներին:* 18 *Բայց դուք զգուշացէ՛ք նզովքից. չլինի թէ ցանկանաք մի բան առնել այդ նզովուածից. իսրայէլացիների բանակատեղին նզովքի կ՚ենթարկէք եւ կը կործանէք մեզ:* 19 *Ամբողջ ոսկին, արծաթը, պղինձը եւ երկաթը Տիրոջ սրբութիւնը պիտի լինեն եւ Տիրոջ գանձարանը պիտի մտնեն»:*

20 *Եւ ժողովուրդն աղաղակեց, ու քահանաները հնչեցրին փողերը: Երբ ժողովուրդը լսեց փողի ձայնը, բոլորն աղաղակեցին մեծ եւ ուժգին աղաղակով, պարիսպն ընկաւ շուրջանակի, եւ ժողովուրդը բարձրացաւ մտաւ քաղաք՝ ամէն մէկն ընթանալով ուղիղ իր դիմացը: Քաղաքը գրաւեցին եւ նզովեցին այն:* 21 *Ինչ որ կար քաղաքում՝ տղամարդ թէ կին, երիտասարդ թէ ծեր, արջառ, ոչխար եւ էշ, բոլորը սրի քաշեցին:*

22 *Երկիրը լրտեսող երկու երիտասարդներին Յեսուն ասաց. «Մտէ՛ք այն պոռնիկ կնոջ տունը եւ, ինչպէս որ երդուել էք, հանէք այնտեղից նրան ու այն ամէնը, ինչ որ նա ունի»:* 23 *Եւ երկու երիտասարդները, որոնք լրտեսել էին քաղաքը, մտան այն կնոջ տունը, հանեցին պոռնիկ Ռահաբին, ինչպէս նաեւ նրա հօրը, մօրը, եղբայրներին, նրա ամբողջ ունեցուածքն ու նրա ամբողջ ազգատոհմին եւ կանգնեցրին նրանց Իսրայէլի բանակատեղիից դուրս:* 24 *Քաղաքն ու նրա մէջ եղած ամէն ինչ այրուեց հրով, բացի ոսկուց, արծաթից, պղնձից եւ երկաթից, որ Տիրոջ գանձարանը մտցրին:* 25 *Պոռնիկ Ռահաբին, նրա հօրենական տունը եւ նրա ամբողջ ունեցուածքը փրկեց Յեսուն: Ռահաբը բնակւում է Իսրայէլի մէջ մինչեւ այսօր, որովհետեւ*

Թաքցրեց այն լրտեսներին, որոնց Յեսուն այն օրն ուղարկել էր Երիքովը լրտեսելու:

26 Յեսուն այդ օրը նզովեց Երիքովը եւ ասաց. «Տիրոջ առաջ անիծեալ լինի այն մարդը, որ կը վերականգնի եւ կը շինի Երիքով քաղաքը, իր անդրանիկ որդու վրայ նրա հիմքերը կը դնի ի գին իր անդրանիկ որդու եւ նրա պարսպի դարպասները կը կանգնեցնի ի գին իր կրտսեր որդու: Այդպէս էլ արեց Ազան Բեթէլացին. իր անդրանկի՝ Աբիրոնի վրայ դրեց նրա հիմքերը եւ Ազատուածի՝ կրտսերի վրայ կանգնեցրեց նրա դարպասները:

27 Տէրը Յեսուի հետ էր, եւ նրա անունը տարածուեց ամբողջ երկրում:

ԱՔԱՐԻ ՄԵՂՔԸ ԵՒ ՊԱՏԻԺԸ

7 Բայց իսրայէլացիները յանցանք գործեցին եւ գողացան նզովուած բաներից: Յուդայի ցեղից Աքարը, որը որդին էր Քարմիի, եւ սա՝ որդին Զամբրիի, իսկ սա՝ որդին Զարայի, առաւ նզովուած բաներից, եւ Տէրը սաստիկ բարկացաւ իսրայէլացիների վրայ:

2 Յեսուն Երիքովից մարդիկ ուղարկեց Գայի, որ Բեթէլի դիմացն է, եւ ասաց նրանց. «Լրտեսեցէ՛ք Գային»: Այդ մարդիկ գնացին, լրտեսեցին Գային, 3 ետ դարձան Յեսուի մօտ ու ասացին. «Այս ամբողջ ժողովուրդը թող չգնայ, այլ երկու կամ երեք հազարի չափ մարդիկ թող գնան եւ պաշարեն քաղաքը: Մի՛ տար այնտեղ ամբողջ ժողովրդին, որովհետեւ նրանք քիչ են»: 4 Եւ ժողովրդից մօտ երեք հազար մարդ գնացին այնտեղ, բայց փախան Գայիի մարդկանց առջեւից: 5 Գայիի մարդիկ նրանցից երեսունվեց մարդու կոտորեցին եւ նրանց հալածեցին դարպասի առաջից, վիրաւորեցին զառիվայրի վրայ, մինչեւ որ ջարդեցին նրանց: Ժողովրդի սիրտը դողաց, եւ նրանք ասես ջուր դարձան:

6 Յեսուն պատռեց իր զգեստները, երեսի վրայ ընկաւ գետին Տիրոջ տապանակի առաջ, եւ ինքն ու Իսրայէլի ծերերը այդպէս մնացին մինչեւ երեկոյ եւ իրենց գլխի վրայ հող ցանեցին:

7 Յեսուն ասաց. «Աղաչում եմ քեզ, Տէ՛ր, Տէ՛ր, ինչո՞ւ քո ծառան այս ժողովրդին անցկացրեց Յորդանան գետից, որ սրանց մատնես ամորհացիներին եւ կործանես մեզ: Երանի թէ այնտեղ, Յորդանան գետի եզերքին մնացած ու բնակուած լինէինք: 8 Օ՜հ, Տէ՛ր, հիմա ես ի՞նչ անեմ, երբ Իսրայէլն իր վիզը ծռել է իր թշնամիների առաջ: 9 Քանանացիներն ու երկրի բոլոր բնակիչներն այդ լսելով՝ կը պաշարեն եւ կը ջնջեն մեզ երկրի երեսից: Այն ժամանակ ի՞նչ պիտի անես քո մեծ անուան համար»:

10 Եւ Տէրը Յեսուին ասաց. «Վե՛ր կաց, ինչո՞ւ ես ընկել երեսիդ վրայ: 11 Ժողովուրդը մեղք գործեց, դրժեց իմ ուխտը, որ ուխտեցի նրանց, նրանք գողացան առան նզովուած բաներից, ստեցին եւ դրին իրենց ամանների մէջ: 12 Իսրայէլացիներն այլեւս չեն կարող կանգնել իրենց թշնամիների առաջ, այլ թիկունք կը դարձնեն իրենց թշնամիների առաջ, որովհետեւ նզովք դարձան: Այլեւս ձեզ հետ չեմ լինի, քանի այդ նզովուածը չէք վերացնի ձեր միջից: 13 Վե՛ր կաց, սրբագործի՛ր ժողովրդին. սրբագործել կը տաս† առաւօտեան: Այսպէս է ասում Տէր Աստուածն իսրայէլացիներին. "Իսրայէլացինե՛ր, նզովք կայ ձեր մէջ, դուք չէք կարող կանգնել ձեր թշնամիների առաջ, մինչեւ որ նզովքը ձեր միջից չվերացնէք: 14 Առաւօտեան հաւաքուեցէ՛ք ամէնքդ ձեր ցեղերով. այն ցեղը, որին ցոյց կը տայ Տէրը, մօտեցրէ՛ք տոհմերով, այն տոհմը, որին ցոյց կը տայ Տէրը, մօտեցրէ՛ք տներով, եւ այն տունը, որին ցոյց կը տայ Տէրը, մօտեցրէ՛ք իր մարդկանցով, 15 եւ ով որ մեղադրուի նզովուածը գողանալու մէջ, թող հրով այրուի ինքը, իր ամբողջ տունը եւ այն ամէնը, ինչ որ նա ունի, որովհետեւ նա դրժել է Տիրոջ ուխտը եւ անիրաւութիւն է արել Իսրայէլի մէջ"»:

16 Եւ Յեսուն առաւօտը կանուխ վեր կացաւ, ներկայացրեց ժողովրդին ըստ իրենց ցեղերի, եւ մեղադրուեց Յուդայի

†Եբրայերէնում՝ կ'ասես. սրբագործուեցէ՛ք վաղը:

ցեղը: 17 Յուդայի ցեղը ներկայացաւ տոհմերով, եւ մեղադրուեց Զարայի տոհմը: Զարայի տոհմը ներկայացաւ տներով, եւ մեղադրուեց Զամբրիի տունը: 18 Նրա տունը ներկայացաւ իր մարդկանցով, եւ մեղադրուեց Յուդայի ցեղից Աքարը, որը որդին էր Քամրիի, եւ սա՝ որդին Զամբրիի, իսկ սա՝ որդին Զարայի: 19 Յեսուն Աքարին ասաց. «Որդեա՛կ իմ, փա՛ռք տուր այսօր Իսրայէլի Տէր Աստծուն, խոստովանի՛ր եւ պատմի՛ր ինձ, ինչ որ արեցիր, եւ մի՛ թաքցրու ինձնից»: 20 Աքարը պատասխան տուեց եւ ասաց Յեսուին. «Արդարեւ, ես մեղք գործեցի Իսրայէլի Տէր Աստծու առաջ եւ այս բանը արեցի. 21 աւարի մէջ տեսայ մի գեղեցիկ նկարազարդ վերարկու, երկու հարիւր սիկղ արծաթ եւ մի ձուլակտոր ոսկի, որի ծանրութիւնը յիսուն սիկղ էր, սաստիկ ցանկացայ եւ առայ դրանք: Ահա դրանք թաքցուած են հողի տակ իմ վրանում, իսկ արծաթը թաքցուած է դրանց տակ»: 22 Յեսուն պատգամաւորներ ուղարկեց, նրանք գնացին բանակատեղի՝ դէպի վրանը. դրանք պահուած էին այնտեղ, նրա վրանում, իսկ արծաթը դրանց տակ էր: 23 Նրանք հանեցին դրանք վրանից, բերին Յեսուի եւ Իսրայէլի ծերերի մօտ եւ դրին Տիրոջ առաջ:

24 Յեսուն, նրա հետ եւ բոլոր իսրայէլացիները վերցրին Զարայի որդի Աքարին, նրա որդիներին եւ դուստրերին, նրա արջառը, էշը, նրա բոլոր ոչխարները, բոլոր վրանները, նրա ամբողջ ունեցուածքը եւ բերեցին Աքորի ձորը: 25 Յեսուն ասաց. «Ինչո՞ւ մեզ կործանեցիր, Տէրն այսօր քեզ կը կործանի»: Եւ բոլոր իսրայէլացիները նրան քարկոծեցին քարերով ու նրա ունեցուածքը այրեցին հրով, քարկոծեցին նրա իւրայիններին եւ դիզեցին նրանց վրայ մեծ քարակոյտ, որ կայ մինչեւ այսօր: Եւ իջաւ Տիրոջ սաստիկ բարկութիւնը: Այդ պատճառով նա այն տեղը կոչեց Աքորի ձոր, եւ այդպէս է կոչւում մինչեւ այսօր:

ԳԱՅԻԻ ԳՐԱՒՈՒՄԸ ԵՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

8 Տէրը Յեսուին ասաց. «Մի՛ վախեցիր եւ մի՛ զարհուրիր, քեզ հետ վերցրո՛ւ բոլոր պատերազմող մարդկանց եւ վեր կաց գնա՛ դէպի Գայի: Ահա ես քո ձեռքն եմ մատնում Գայիի թագաւորին, նրա ժողովրդին, նրա քաղաքը եւ նրա երկիրը: 2 Գայիի եւ նրա թագաւորի հետ վարուի՛ր այնպէս, ինչպէս վարուեցիր Երիքովի եւ նրա թագաւորի հետ. կողոպտի՛ր նրա աւարը եւ անասունները: Քաղաքի ետեւի կողմից դարանակալներ կարգի՛ր»: 3 Յեսուն եւ ամբողջ պատերազմող ժողովուրդը վեր կացան, որ գնան Գայիի վրայ: Յեսուն երեսուն հազար զօրաւոր մարդ ընտրեց եւ նրանց ուղարկեց գիշերով: 4 Նա նրանց պատուիրեց՝ ասելով. «Տեսէ՛ք, դուք դարանամուտ պիտի լինէք քաղաքի ետեւի կողմից: Քաղաքից շատ մի՛ հեռացէք, եւ ամէնքդ պատրա՛ստ եղէք: 5 Ես եւ ինձ հետ եղող ամբողջ ժողովուրդը կը մօտենանք քաղաքին, եւ երբ Գայիի բնակիչները մեր դէմ դուրս գան, ինչպէս առաջին անգամ, կը փախչենք նրանց առաջից: 6 Երբ ելնեն մեր ետեւից, կը հեռացնենք նրանց այդ քաղաքից, եւ նրանք կ'ասեն՝ "Փախան մեր առջեւից ինչպէս առաջին անգամ": 7 Երբ փախչենք նրանց առջեւից, դուք ելէ՛ք դարանից, մտէ՛ք քաղաք եւ հարուածեցէ՛ք քաղաքին, եւ Իսրայէլի Տէր Աստուածը նրանց մեր ձեռքը կը յանձնի: 8 Երբ առնէք քաղաքը, այրեցէ՛ք այն կրակով: Կ'անէք այնպէս, ինչպէս ձեզ պատուիրեցի»: 9 Յեսուն նրանց ուղարկեց, նրանք գնացին դէպի դարանը, մտան թաքնուեցին Բեթէլի եւ Դանի միջեւ, Գայիի ծովահայեաց կողմից: Այն գիշեր Յեսուն ժողովրդի մէջ մնաց:

10 Առաւօտը վաղ վեր կենալով՝ Յեսուն աչքի անցկացրեց ժողովրդին, եւ ինքն ու Իսրայէլի ծերերը ժողովրդի առաջից դուրս ելան Գայիի դէմ: 11 Ամբողջ պատերազմող զօրքը ելաւ նրանց հետ: Նրանք եկան քաղաքի դիմաց արեւելեան կողմից, իսկ քաղա-

քի դարանակալները ծովի կողմում էին, եւ բանակ դրին Գայիի հիւսիսային կողմում: Նրանց ու Գայիի միջեւ մի ձոր կար: 12 Եւ Յեսուն առնելով հինգ հազար մարդ՝ նրանց դարան մտցրեց Բեթաւի եւ Գայիի ծովի միջեւ, 13 իսկ ժողովրդին ու ամբողջ բանակը տեղաւորեց քաղաքի հիւսիսային կողմում: Նրանց վերջապահ զօրքը քաղաքի ծովահայեաց կողմում էր: Յեսուն այդ գիշերն անցկացրեց ձորում:

14 Երբ Գայիի թագաւորն այս տեսաւ, առաւօտեան շտապ վեր կացաւ եւ ելաւ նրանց դէմ: Քաղաքի մարդիկ, ինքը եւ ամբողջ ժողովուրդն այն ժամանակ պատերազմի գնացին Արաբի դիմաց գտնուող ձորը Իսրայէլի դէմ: Բայց Գայի թագաւորը չգիտէր, որ իր համար քաղաքի ետեւի կողմում դարան են պատրաստել: 15 Երբ Յեսուն տեսաւ, կրկին ետ դարձաւ, եւ բոլոր իսրայէլացիները նրանց առաջից փախան անապատի ճանապարհով: 16 Գայիի թագաւորը երկրի ամբողջ ժողովրդին շտապեցրեց, որ հետապնդեն նրանց. եւ նրանք, հետապնդելով, գնացին իսրայէլացիների ետեւից ու հեռացան քաղաքից: 17 Գայիում ու Բեթէլում մարդ չմնաց, որ իսրայէլացիներին հետապնդելու գնացած չլինէր. քաղաքը թողեցին բաց եւ յարձակուեցին իսրայէլացիների վրայ:

18 Տէրը Յեսուին ասաց. «Մեկնի՛ր ձեռքիդ նիզակը դէպի քաղաքը, որովհետեւ քո ձեռքն եմ մատնել այն, եւ դարանակալները թող շտապ դուրս գան իրենց տեղից»: Յեսուն մեկնեց իր ձեռքում եղած նիզակը դէպի քաղաքը: 19 Դարանակալները վեր կացան իրենց տեղից, եւ հէնց որ նա ձեռքը մեկնեց, ելան, մտան քաղաքը, գրաւեցին այն եւ քաղաքն անմիջապէս այրեցին հրով: 20 Գայիի բնակիչները ետ նայելով՝ տեսան, որ քաղաքի ծուխը մինչեւ երկինք է ելնում: Նրանք չէին կարող փախչել այս կամ այն կողմ, իսկ ժողովուրդը, որ թաքնուած էր անապատում, յարձակուեց հետապնդողների վրայ: 21 Երբ Յեսուն եւ ամբողջ ժողովուրդը տեսան, որ դարանակալները գրաւեցին քաղաքը, եւ քաղաքի ծուխը մինչեւ երկինք է հասնում, նորից կրնկի վրայ ետ դարձան եւ հարուածեցին Գայիի մարդկանց: 22 Միւսները քաղաքից դուրս եկան նրանց ընդառաջ, եւ Գայիի մարդիկ մնացին բանակի մէջտեղը: Իսրայէլացիների մի մասը այն կողմից, միւսները այս կողմից, այնքան հարուածեցին Գայիի զինուորներին, մինչեւ որ նրանցից ազատուող եւ փախչող չմնաց: 23 Իսկ Գայիի թագաւորին ձերբակալեցին եւ բերեցին Յեսուի մօտ:

24 Երբ իսրայէլացիները դադարեցին բոլոր գայիցիներին կոտորելուց, ոմանց դաշտերում, ոմանց լեռներում՝ զառիվայրի վրայ, մինչեւ այնտեղ, ուր հալածել էին նրանց, եւ ամէնքը սրակոտոր եղան իսպառ, Յեսուն շրջուեց դէպի Գայի եւ սրի քաշեց նրա բոլոր բնակիչներին: 25 Այդ օրն ընկածները, տղամարդ եւ կին, տասներկու հազար էին՝ Գայիի բոլոր բնակիչները: 26 Յեսուն նիզակ մեկնած ձեռքը ետ չքաշեց, մինչեւ որ բնաջնջեց Գայիի բոլոր բնակիչներին, 27 բացի անասուններից եւ քաղաքի աւարից, որ կողոպտեցին իսրայէլացիները՝ Յեսուին տուած Տիրոջ հրամանի համաձայն: 28 Յեսուն քաղաքը կրակով այրեց եւ այն դարձրեց հողաբլուր, որ յաւիտեան անչէն մնաց մինչեւ այսօր: 29 Իսկ Գայիի թագաւորին կախեց երկճիւղ ծառից, եւ նա մնաց ծառից կախուած մինչեւ երեկոյ: Եւ արեւը մայր մտնելու ժամանակ Յեսուն հրամայեց, նրան իջեցրին ծառից, գցեցին մի փոսի մէջ, քաղաքի դարպասի մօտ եւ նրա վրայ քարերի կոյտ դիզեցին, որ կայ մինչեւ այսօր:

ՕՐԷՆՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԵՐԱՂ ԼԵՌԱՆ ՎՐԱՅ

30 Այն ժամանակ Յեսուն Իսրայէլի Տէր Աստծու համար զոհասեղան շինեց Գեբաղ լեռան վրայ, 31 ինչպէս պատուիրել էր Տիրոջ ծառայ Մովսէսը իսրայէլացիներին, որ գրուած է Մովսէսի օրէնքի գրքում, – զոհասեղան ամբողջական քարերից, որոնց երկաթ չէր դիպել, եւ այնտեղ Տիրոջ համար ողջակէզ եւ փրկութեան զոհ մատուցեց: 32 Իսրայէլացիների առաջ այդ քարերի վրայ Յեսուն գրեց Մովսէսի երկրորդ օրէնքը: 33 Բոլոր իսրայէլացիները, նրանց ծերերը, դատաւորները եւ օրէնսգէտները գնում էին տապանակի դիմացից՝ այս ու այն կողմից, թէ՛ օտարականը եւ թէ՛ բնիկը: Ղեւտացի քահանաները վերցրին Տիրոջ ուխտի տապանակը: Ուղեկցողների կէսը Գարիզին լերան մօտ էր, կէսը՝ Գեբաղ լերան մօտ, ինչպէս առաջ պատուիրել էր Տիրոջ ծառայ Մովսէսը, որ ժողովրդին օրհնեն: 34 Ապա Յեսուն կարդաց այս օրէնքի բոլոր խօսքերը, օրհնութիւններն ու անէծքները, ինչպէս որ գրուած է Մովսէսի օրէնքի գրքում: 35 Այն բոլորից, որ Մովսէսը պատուիրել էր Յեսուին, չկար մի խօսք, որ Յեսուն չկարդար Իսրայէլի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց, կանանց, մանուկների եւ Իսրայէլի մէջ եղած օտարականների առաջ:

ԴԱՇԻՆՔ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԳԱԲԱՒՈՆԻ ՄԻՋԵՒ

9 *Երբ Յորդանան գետի այն կողմի ամորհացիների բոլոր թագաւորները՝ լեռնայինները, դաշտայինները, ե՛ւ նրանք, որ մեծ ծովի ամբողջ եզերքին էին, ե՛ւ նրանք, որ Լեռնալիբանանի մօտ էին, նաեւ քետացիները, ամորհացիները, գերգեսացիները, քանանացիները, փերեզացիները, խեւացիները, յեբուսացիները լսեցին, 2 ամէնքը միասին եկան պատերազմ մղելու Յեսուի եւ իսրայէլացիների դէմ:*

3 Բայց Գաբաւոնի բնակիչները լսելով, թէ ինչ է արել Յեսուն Երիքովին եւ Գայիին, 4 իրենք էլ խորամանկութիւն արեցին. եկան պաշարով եւ պատրաստութեամբ, իրենց ուսերի վրայ հնացած քուրձեր, մաշուած, պատառոտուն եւ կարկատած գինու տիկեր դրած: 5 Նրանց կօշիկների կարերը քանդուած էին, նրանց ոտքերի հողթափները հնացած եւ կարկատած էին, նրանց վրայի զգեստները հնացած էին, եւ նրանց հացի պաշարը չորացած եւ բորբոսնած էր: 6 Նրանք եկան Յեսուի մօտ, իսրայէլացիների բանակատեղին, Գաղգաղա եւ Յեսուին ու բոլոր իսրայէլացիներին ասացին. «Հեռու երկրից ենք եկել, արդ, մեզ հետ դաշի՛նք կնքեցէք»: 7 Իսկ իսրայէլացիներն ասացին քոռացիներին. «Գուցէ մեզ մօտիկ էք բնակւում, ձեզ հետ ինչպէ՞ս դաշինք կնքենք»: 8 Նրանք ասացին Յեսուին. «Մենք քո ծառաներն ենք»: Յեսուն նրանց ասաց. «Ո՞վ էք եւ որտեղի՞ց էք եկել»: 9 Նրանք ասացին. «Շատ հեռու երկրից են եկել քո ծառաները յանուն քո Տէր Աստծու, որովհետեւ լսեցինք նրա անունը եւ այն, ինչ նա արել է Եգիպտոսում, 10 եւ այն, ինչ նա արել է Յորդանան գետի այն կողմի ամորհացիների երկու թագաւորներին՝ Եսեբոնի Սեհոն թագաւորին եւ Բասանի Օգ թագաւորին, որ բնակւում էր Աստարոթում եւ Եդրայինում: 11 Մեր ծերերը եւ մեր երկրի բոլոր բնակիչները խօսեցին մեզ հետ եւ ասացին. "Ձեզ համար ճանապարհի պաշար առէ՛ք, գնացէ՛ք նրանց ընդառաջ եւ ասացէ՛ք նրանց. "Մենք ձեր ծառաներն ենք, արդ, մեզ հետ դաշինք կնքեցէք"": 12 Այն օրը, որ մենք ելանք մեր տներից եւ եկանք ձեզ մօտ, մեր այս հացի պաշարը դեռ տաք էր, իսկ հիմա չորացել եւ բորբոսնել է, 13 այս տիկերը, որ լցրինք գինիով, նոր էին, բայց պատռուեցին, մեր շորերը եւ կօշիկները մաշուեցին շատ երկար ճանապարհից»: 14 Իսրայէլի իշխաններն առան նրանց պաշարը, բայց Տիրոջը չհարցրին: 15 Յեսուն նրանց հետ խաղաղութիւն հաստատեց եւ ուխտեց, որ ողջ կը պահի նրանց. ժողովրդի իշխաններն էլ երդուեցին նրանց:

16 Նրանց հետ դաշինք կնքելուց երեք օր յետոյ լսեցին, որ նրանք դրացիներ են եւ իրենց մօտ են բնակւում: 17 Իսրայէլացիները ճանապարհ ընկան եւ երրորդ օրը հասան նրանց քաղաքները: Նրանց քաղաքներն էին՝ Գաբաւոնը, Կեփիրոնը, Բերոթը եւ Յարիմի քաղաքները: 18 Իսրայէլացիները չպատերազմեցին նրանց դէմ, որովհետեւ ժողովրդի բոլոր իշխանները Իսրայէլի Տէր Աստուծով երդուել էին նրանց. եւ ամբողջ ժողովուրդը տրտնջաց իշխանների դէմ: 19 Իշխաններն ասացին ժողովրդին. «Մենք իս-

բայէլի Տէր Աստուծով երդուել ենք եւ չենք կարող խաբել նրանց: 20 Հիմա այսպէս անենք. ողջ թողնենք նրանց, պահպանենք, որ մեզ վրայ բարկութիւն չգայ այն երդման համար, որ տուեցինք նրանց»: 21 Իշխաններն ասացին նրանց. «Թող ապրեն եւ ամբողջ ժողովրդի համար լինեն փայտահատներ եւ ջրկիրներ»: Եւ նրանք եղան փայտահատներ ու ջրկիրներ, ինչպէս որ իշխաններն ասացին նրանց:

22 Յեսուն նրանց բոլորին կանչեց, խօսեց նրանց հետ եւ ասաց. «Ինչո՞ւ խաբեցիք ինձ եւ ասացիք՝ "Ձեզնից շատ հեռու ենք", մինչդեռ դուք մեր գաւառի բնակիչներ էք: 23 Հիմա դուք անիծուած էք, եւ ինձ ու իմ Աստծու համար միշտ պիտի մնաք փայտահատ եւ ջրկիր ծառայ»: 24 Նրանք պատասխան տուին եւ ասացին Յեսուին. «Մեզ լուր հասաւ եւ յայտնի եղաւ, որ քո Տէր Աստուածը իր ծառայ Մովսէսին հրամայել է, որ այս երկիրը ձեզ տայ եւ մեզ ու այս երկրի բոլոր բնակիչներին ձեր առաջ բնաջինջ անի, ուստի մենք խիստ վախեցանք ձեզնից եւ այդ բանն արեցինք: 25 Հիմա ձեր ձեռքի տակ ենք, վարուեցէ՛ք այնպէս, ինչպէս հաճելի է ձեզ եւ ինչպէս կամենում էք»: 26 Եւ նրանց հետ վարուեցին այսպէս. այն օրը Յեսուն նրանց ազատեց իսրայէլացիների ձեռքից, եւ չկոտորեցին նրանց: 27 Այն օրը նրանց փայտահատներ ու ջրկիրներ կարգեց ամբողջ ժողովրդի եւ Տիրոջ զոհասեղանի համար, եւ մինչեւ այսօր նրանք ծառայում են այդպէս այն տեղում, որ Տէրը կ'ընտրի:

ՅԱՂԹԱՆԱԿ ԱՄՈՐՀԱՑԻՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

10 Երբ Երուսաղէմի թագաւոր Ադոնիբեզեկը լսեց, որ Յեսուն գրաւել է Գային ու կործանել այն, եւ ինչպէս Երիքովի ու նրա թագաւորի հետ էր վարուել, այդպէս էլ վարուել է Գայիի ու նրա թագաւորի հետ, եւ թէ Գաբաւոնի բնակիչներն անձնատուր են եղել Յեսուին ու իսրայէլացիներին եւ նրանց մէջ մնացել, 2 խիստ զարհուրեցին ինքն ու իր ժողովուրդը, որովհետեւ գիտէին, որ Գաբաւոնը մեծ քաղաք է, ինչպէս որեւէ թագաւորանիստ մայրաքաղաք: Դա Գայիից մեծ էր, եւ նրա բոլոր մարդիկ զօրաւոր էին: 3 Երուսաղէմի թագաւոր Ադոնիբեզեկը մարդ ուղարկեց Քեբրոնի թագաւոր Ելամի, Յերիմութի թագաւոր Քերամի, Լաքիսի թագաւոր Յեփիէի եւ Օդողոմի թագաւոր Դաբիրի մօտ ու ասաց. 4 «Բարձրացէք եկէ՛ք ինձ մօտ եւ օգնեցէ՛ք ինձ, որ պատերազմենք Գաբաւոնի դէմ, որովհետեւ անձնատուր են եղել Յեսուին եւ իսրայէլացիներին: 5 Եւ յեբուսացիների հինգ թագաւորները՝ Երուսաղէմի թագաւորը, Քեբրոնի թագաւորը, Յերիմութի թագաւորը, Լաքիսի թագաւորը եւ Օդողոմի թագաւորն իրենց ամբողջ ժողովրդով հաւաքուեցին եկան, բանակ դրին Գաբաւոնի շուրջը եւ պաշարեցին այն:

6 Գաբաւոնի բնակիչները մարդ ուղարկեցին Յեսուի մօտ Իսրայէլի բանակատեղի, Գաղգաղա եւ ասացին. «Մի՛ լքիր քո ծառաներին, շուտ մեզ մօտ ե՛կ, մեզ ազատի՛ր եւ մեզ օգնի՛ր, որովհետեւ ամորհացիների բոլոր թագաւորները, որ բնակւում են լեռնակողմում, կուտակուել են մեր դէմ»: 7 Յեսուն իր ամբողջ պատերազմող զօրքի ու բոլոր նրանց հետ, ովքեր զօրաւոր էին, ելաւ Գաղգաղայից: 8 Տէրը Յեսուին ասաց. «Զվախենաս նրանցից, որովհետեւ նրանց քո ձեռքն եմ մատնելու, եւ նրանցից ոչ մէկը չի դիմանայ ձեր առաջ»: 9 Ամբողջ գիշերը Գաղգաղայից գալով՝ Յեսուն յանկարծակի յարձակուեց նրանց վրայ: 10 Տէրը իսրայէլացիների ահը գցեց նրանց մէջ եւ Գաբաւոնում մեծ ջարդ տուեց նրանց. նրանց հալածեցին Բեթորոնի զառիվայրի ճանապարհին եւ կոտորեցին նրանց մինչեւ Ազեկա եւ Մակեդա: 11 Երբ նրանք Բեթորոնի զառիվայրով փախչում էին իսրայէլացիների առաջից, Տէրը նրանց վրայ երկնքից կարկտի քարեր թափեց մինչեւ Ազեկա: Կարկտի քարերից մեռածներն աւելի շատ էին, քան նրանք,

որոնց իսրայէլացիները պատերազմում սրով կոտորեցին:

12 Այն օրը, երբ Տէր Աստուած ամորհացիներին մատնեց իսրայէլացիների ձեռքը, երբ նրանց կոտորեց Գաբաւոնում, եւ նրանք ջախջախուեցին Իսրայէլի առաջ, Յեսուն խօսեց Տիրոջ հետ եւ ասաց. «Թող արեգակը կանգնի Գաբաւոնի դիմաց, իսկ լուսինը՝ Ելոնի ձորի դիմաց»: 13 Եւ արեգակն ու լուսինը կանգնեցին իրենց տեղում, մինչեւ որ Աստուած նրանց թշնամիներից վրէժն առաւ: Չէ՞ որ այս գրուած է «Ուղիղի» գրքում: Եւ արեգակը կանգնեց երկնքի մէջտեղում եւ չշարժուեց դէպի արեւմուտք մէկ ամբողջ օր: 14 Այսպիսի օր չէր եղել ո՛չ առաջ, ո՛չ յետոյ, որ Աստուած լսէր մարդու ձայնը, որովհետեւ Տէրն Իսրայէլի հետ միասին պատերազմեց:

15 Ապա Յեսուն եւ նրա հետ բոլոր իսրայէլացիները ետ դարձան բանակատեղի՝ Գաղգաղա:

ՅԵՍՈՒՆ ԳԵՐՈՒՄ Է ՀԻՆԳ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻՆ

16 Այն հինգ թագաւորները փախան Մակեդա եւ թաքնուեցին քարայրի մէջ: 17 Իմաց տուին Յեսուին եւ ասացին. «Հինգ թագաւորները գտնուեցին Մակեդայում, քարայրի մէջ թաքնուած»: 18 Յեսուն ասաց. «Քարայրի մուտքին մեծամեծ քարեր գլորեցէ՛ք եւ նրանց վրայ մարդիկ կարգեցէ՛ք, որ հսկեն նրանց: 19 Բայց դուք մի՛ դադարէք ձեր թշնամիներին հետապնդելուց, հասէ՛ք նրանց վերջապահներին եւ մի՛ թոյլ տուէք, որ մտնեն իրենց քաղաքները, որովհետեւ Տէր Աստուածը նրանց մատնեց մեր ձեռքը»: 20 Երբ Յեսուն եւ բոլոր իսրայէլացիները դադարեցին մեծ կոտորածով նրանց խպառ բնաջնջելուց, եւ նրանցից ազատուածները մտան ամրացուած քաղաքները, 21 ամբողջ ժողովուրդը ողջ առողջ վերադարձաւ բանակատեղի՝ Յեսուի մօտ, Մակեդա: Եւ ոչ ոք չյանդգնեց խօսել իսրայէլացիների դէմ: 22 Եւ Յեսուն ասաց. «Բացէ՛ք քարայրը եւ այնտեղից հանէ՛ք, բերէ՛ք ինձ մօտ այն հինգ թագաւորներին»: 23 Այդպէս էլ արեցին. հինգ թագաւորներին՝ Երուսաղէմի թագաւորին, Քեբրոնի թագաւորին, Յերիմութի թագաւորին, Լաքիսի թագաւորին եւ Օդողոմի թագաւորին քարայրից հանեցին ու տարան նրա մօտ: 24 Երբ նրանց տարան Յեսուի մօտ, Յեսուն կանչեց բոլոր իսրայէլացիներին, իր հետ գնացած առաջամարտիկներին եւ ասաց նրանց. «Մօտեցէ՛ք եւ ձեր ոտքերը դրէ՛ք նրանց պարանոցների վրայ»: Նրանք մօտեցան եւ իրենց ոտքերը դրեցին նրանց պարանոցների վրայ: 25 Յեսուն ասաց նրանց. «Մի՛ վախեցէք եւ մի՛ զարհուրէք, արիացէ՛ք եւ զօրացէ՛ք, որովհետեւ Տէրն այսպէս պիտի անի ձեր բոլոր թշնամիներին, որոնց հետ դուք պիտի մարտնչէք»: 26 Ապա Յեսուն նրանց սպանեց եւ նրանց հինգին էլ կախեց ծառերից, եւ նրանք կախուած մնացին ծառերից մինչեւ երեկոյ: 27 Արեւամուտին Յեսուն հրամայեց, եւ նրանց իջեցրին ծառերից, գցեցին այն քարայրի մէջ, որտեղ թաքնուել էին. եւ քարայրի մուտքին գլորեցին մեծամեծ քարեր, որոնք կան մինչեւ այսօր:

ՀԱՐԱՒԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ

28 Այդ օրը գրաւեցին նաեւ Մակեդան, սրի քաշեցին այն ու նրա թագաւորին, բնաջնջեցին այն եւ նրա մէջ եղած բոլոր մարդկանց, ոչ մի ազատուած կամ փախստական չմնաց նրանցից: Յեսուն Մակեդայի թագաւորի հետ էլ վարուեց այնպէս, ինչպէս վարուել էր Երիքովի թագաւորի հետ:

29 Յեսուն, նրա հետ նաեւ բոլոր իսրայէլացիները, Մակեդայից գնացին Լեբնա եւ պաշարեցին Լեբնան: 30 Տէրը մատնեց այն իսրայէլացիների ձեռքը, եւ Յեսուն նուաճեց այն ու նրա թագաւորին, սրի քաշեց այն ու նրա մէջ եղած բոլոր մարդկանց, նրա մէջ ոչ մի ազատուած եւ փախստական չմնաց: Նրա թագաւորի հետ վարուեց այնպէս, ինչպէս վարուել էր Երիքովի թագաւորի հետ:

31 Յեսուն բոլոր իսրայէլացիների հետ Լեբնայից գնաց Լաքիս, բանա-

կատեղի դրեց նրա շուրջը եւ պաշարեց այն: 32 Տէրը Լաքիսն Իսրայէլի ձեռքը մատնեց, եւ երկրորդ օրը Յեսուն գրաւեց այն, սրի քաշեց եւ բնաջնջեց այն, ինչպէս որ Լեբնայի հետ էր վարուել:

33 Այն ժամանակ Գազերի Ելամ թագաւորը ելաւ օգնելու Լաքիսին, բայց Յեսուն սրի քաշեց նրան ու նրա զօրքերին այնպէս, որ նրանցից ոչ մի ազատուած եւ փախստական չմնաց:

34 Յեսուն բոլոր իսրայէլացիների հետ Լաքիսից մեկնեց Օդողոմ, բանակատեղի դրեց նրա շուրջը եւ պաշարեց այն: Տէրը մատնեց Օդողոմն Իսրայէլի ձեռքը, 35 եւ Յեսուն այն օրը գրաւեց ու սրի քաշեց այն: Նրա մէջ եղած բոլոր մարդկանց այն օրը կոտորեցին, ինչպէս որ վարուել էին Լաքիսի հետ:

36 Յեսուն բոլոր իսրայէլացիների հետ Օդողոմից գնաց Քեբրոն ու բանակ դրեց նրա շուրջը: 37 Գրաւեցին ու սրակոտոր արեցին այն, նրա թագաւորին եւ նրա մէջ եղած բոլոր մարդկանց. նրա մէջ ապրող ոչ մէկը չազատուեց: Նրա հետ վարուեցին այնպէս, ինչպէս վարուել էին Օդողոմի հետ. բոլոր բնակիչներին սպանեցին ու նրա մէջ եղած ամէն ինչ ոչնչացրին:

38 Ապա Յեսուն եւ ամբողջ Իսրայէլը շրջուեցին դէպի Դաբիր եւ շրջապատելով՝ 39 գրաւեցին այն, գերեվարեցին նրա թագաւորին եւ նրա ամբողջ զօրքը[†], սրակոտոր արեցին ամբողջ քաղաքը, բնաջնջեցին այն եւ նրա մէջ եղած բոլոր մարդկանց. ոչ մէկին ողջ չթողեցին: Ինչպէս վարուել էին Քեբրոնի հետ եւ ինչպէս վարուել էին Լեբնայի ու նրա թագաւորի հետ, այդպէս էլ վարուեցին Դաբիրի եւ նրա թագաւորի հետ:

40 Յեսուն հարուածեց ամբողջ լեռնային երկրին, Նագեբին[‡] եւ դաշտային երկրներին, Ասեդոթին[§] եւ նրա բոլոր թագաւորներին: Նրանցից ոչ մէկին ողջ չթողեց, բոլոր բնակիչներին սպանեց, ինչպէս Իսրայէլի Տէր Աստուածն էր պատուիրել: 41 Յեսուն կոտորեց նրանց Կադէսբառնեայից մինչեւ Գազա, Գոսոմի ամբողջ երկիրը մինչեւ Գաբաւոն: 42 Նրանց բոլոր թագաւորներին եւ նրանց երկիրը Յեսուն նուաճեց միաժամանակ, քանի որ Իսրայէլի Տէր Աստուածը կուում էր իսրայէլացիների հետ միասին: 43 Եւ Յեսուն բոլոր իսրայէլացիների հետ ետ դարձաւ բանակատեղի՝ Գաղգաղա:

[†]Եբրայերէն՝ *հաղամները:*
[‡]Եբրայերէն՝ *հարաւային (երկրներին):*
[§]Եբրայերէն՝ *Լեռների ստորոտներին:*

ՄԱՌՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

11 Երբ Ասորի Յաբին թագաւորն այս բաները լսեց, մարդ ուղարկեց Մառոնի թագաւոր Յոբաբի, Սեմերոնի թագաւորի, Աքիփայի թագաւորի 2 եւ այն թագաւորների մօտ, որոնք մեծ Սիդոնի լեռներում եւ Քեներեթի դիմաց Ռաբաթում էին՝ դաշտերում եւ Նաբեթդորում, 3 արեւելեան կողմից ծովեզրեայ քանանացիների, ծովեզրեայ ամորհացիների, քետացիների, փերեզացիների, լեռնաբնակ յեբուսացիների եւ Ահերմոնի տակ Մասեփայում ապրող խեւացիների մօտ: 4 Նրանք իրենց թագաւորների ու ծովափի աւազի չափ բազմաքանակ զօրքերի հետ ճամփայ ելան: Նրանք չափազանց շատ ձիեր ու կառքեր ունէին: Հաւաքուեցին այս բոլոր թագաւորները, եկան միասին եւ մէկտեղ բանակ դրին Մառոնի ջրի մօտ, որ պատերազմեն Իսրայէլի դէմ:

6 Տէրը Յեսուին ասաց. «Մի՛ վախեցիր նրանցից, քանի որ վաղը այս ժամին ես նրանց բոլորին փախուստի պիտի մատնեմ իսրայէլացիների առաջ. նրանց ձիերին ջղակտոր կ'անես, նրանց կառքերը հրով կ'այրես»: 7 Յեսուն ու նրա հետ ամբողջ պատերազմող զօրքը Մառոնի ջրի մօտ յանկարծակի նրանց դէմ գնացին եւ լեռնակողմում ընկան նրանց վրայ: 8 Տէրը նրանց Իսրայէլի ձեռքը մատնեց, եւ կոտորելով նրանց՝ հալածեցին մինչեւ մեծ Սիդոն, մինչեւ Մասրեփոթմայիմ եւ մինչեւ Մասեփայի դաշտն արեւելքում: Կոտորեցին նրանց, մինչեւ որ նրանցից ոչ մի ազատուած մարդ չմնաց: 9 Յեսուն նրանց հետ այնպէս

վարուեց, ինչպէս որ Տէրը պատուիրել էր նրան. նրանց ձիերը ջղակտոր արեց եւ նրանց կառքերը հրով այրեց:

ԱՍՈՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ

10 Այն ժամանակ Յեսուն ետ դարձաւ եւ գրաւեց Ասորը եւ նրա թագաւորին, սպանեց նրան, որովհետեւ Ասորն առաջ այն բոլոր թագաւորութիւնների գլուխն էր: 11 Նրա մէջ եղած բոլոր մարդկանց սրակոտոր արեցին, բնաջնջեցին բոլորին, նրա մէջ ոչ մի շնչաւոր էակ չմնաց: Ասորն էլ կրակով այրեցին: 12 Այդ թագաւորութիւնների բոլոր քաղաքներն ու նրանց թագաւորներին գերեց Յեսուն, նրանց սրի քաշեց եւ բնաջինջ արեց, ինչպէս որ իրենց հրամայել էր Տիրոջ ծառայ Մովսէսը: 13 Բայց հողաբլուրների վրայ եղած բոլոր քաղաքները չայրեցին իսրայէլացիները, այլ միայն Ասորը, որ Յեսո՛ւն այրեց: 14 Նրա ամբողջ աւարն ու անասունները իսրայէլացիները կողոպտեցին, բոլոր մարդկանց սրի քաշեցին, մինչեւ որ բնաջնջեցին նրանց եւ ոչ մի շնչաւոր էակ չթողեցին: 15 Ինչպէս Տէրը հրամայել էր իր ծառայ Մովսէսին, եւ ինչպէս Մովսէսը պատուիրել էր Յեսուին, այդպէս արեց Յեսուն եւ ոչ մի բան զանց չարեց այն ամենից, ինչ նրան պատուիրել էր Մովսէսը:

ՅԵՍՈՒԻ ԳՐԱՒԱԾ ԵՐԿՐՆԵՐԸ

16 Յեսուն նուաճեց այն ամբողջ երկիրը, լեռնակողմը եւ ամբողջ Նագեբ երկիրը, ամբողջ Գոսոմ երկիրը, դաշտային եւ արեւմտեան կողմը, Իսրայէլի լեռն ու նրա հովիտը, որ լերան մօտ է, 17 Աքել սարից մինչեւ Սուրի ելքը, մինչեւ Բաալգադ եւ Լիբանանի դաշտավայրերը՝ Ահերմոնի ստորոտում, նրանց բոլոր թագաւորներին նա բռնեց եւ կոտորեց: 18 Այդ բոլոր թագաւորների դէմ Յեսուն շատ օրեր պատերազմ մղեց, 19 եւ չկար մի քաղաք, որ Տէրը իսրայէլացիների ձեռքը մատնած չլինէր, բացի Գաբաւոնում բնակուող խեւացիներից. Յեսուն բոլորին նուաճեց պատերազմով: 20 Արդարեւ, Տէրն էր, որ կարծրացրեց նրանց սրտերը, եւ նրանք պատերազմով դիմաւորեցին Իսրայէլին, որպէսզի չմեռնեն, Տէրը չողորմի նրանց, այլ բնաջնջուեն, ինչպէս որ Տէրն ասել էր Մովսէսին: 21 Այն ժամանակ Յեսուն եկաւ եւ Քեբրոնի ու Դաբիրի լեռնակողմում, Անոբի եւ Իսրայէլի բոլոր լեռներում եւ Յուդայի երկրի բոլոր լեռներում կոտորեց ենակիմներին, ոչնչացրեց նրանց իրենց քաղաքներով հանդերձ: Այո՛, Յեսուն կոտորեց նրանց, 22 եւ իսրայէլացիների երկրում ենակիմներից ոչ ոք չմնաց. մնացին միայն Գազայում, Գեթում եւ Ասեդոթում:

23 Յեսուն նուաճեց ամբողջ երկիրը, ինչպէս որ Տէրը պատուիրել էր Մովսէսին, եւ որպէս ժառանգութիւն տուեց Իսրայէլին բաժիններով՝ ըստ նրանց ցեղերի: Եւ երկիրը դադարեց պատերազմելուց:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԱԾ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ

12 Սրանք են այն թագաւորները, որոնց կոտորեցին Մովսէսն ու իսրայէլացիները եւ որոնց երկիրը ժառանգեցին Յորդանան գետից այն կողմ՝ դէպի արեւմուտք, Առնոնի ձորից մինչեւ Ահերմոն լեռը եւ ամբողջ Արաբան՝ արեւելեան կողմից. 2 ամորհացիների թագաւոր Սեհոնը, որը բնակւում էր Եսեբոնում եւ տիրում էր Արոյերից մինչեւ Առնոնի ձորը՝ ձորաբերանը, Գաղաադի կէսին, մինչեւ Յաբոկի հեղեղատը, որ ամոնացիների սահմաններում է, 3 եւ Արաբային՝ մինչեւ Քեներեթի ծովը արեւելեան կողմից, մինչեւ Արաբայի ծովը, այսինքն՝ Աղի ծովը, արեւելքից՝ Ասեմոթի ճանապարհով դէպի Թեման, եւ հարաւից՝ այն տեղերին, որ Ասեդոթ Փասգայի ստորոտում են: 4 Բասանի Օգ թագաւորը, որը հսկաների ցեղից էր մնացել եւ որը բնակւում էր Աստարոթում եւ Եդրայինում, տիրում էր 5 Ահերմոն լերանը, Սելքային եւ ամբողջ Բասանին մինչեւ Գեսուրի սահ-

մանները, Մաքաթիին եւ Գաղաադի կէսին մինչեւ Եսեբոնի Սեհոն թագաւորի սահմանները: 6 Տիրոջ ծառայ Մովսէսը եւ իսրայէլացիները ջարդեցին սրանց, եւ Տիրոջ ծառայ Մովսէսը որպէս ժառանգութիւն այն տուեց Ռուբէնի եւ Գադի ցեղերին եւ Մանասէի կէս ցեղին:

ՅԵՍՈՒԻՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԱԾ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ

7 Սրանք են ամորհացիների թագաւորները, որոնց կոտորեցին Յեսուն եւ իսրայէլացիները Յորդանան գետի այն կողմում՝ Գաղաադի ծովեզերին, Լիբանանի դաշտում մինչեւ Ալոկ լեռը, որ բարձրանում է դէպի Սէիր (Յեսուն Իսրայէլի ցեղերին իրենց բաժինների համեմատ որպէս ժառանգութիւն տուեց դրանք՝ 8 լերան վրայ, դաշտում, Արաբայում, Ասեդոթում, անապատում, Նագեբում բնակուող քետացիների, ամորհացիների, քանանացիների, փերեզացիների, խեւացիների, դերգեսացիների, յեբուսացիների երկրները). 9 Երիքովի թագաւորը, Բեթէլի մօտ գտնուող Գայիի թագաւորը, 10 Երուսաղէմի թագաւորը, Քեբրոնի թագաւորը, 11 Յերիմութի թագաւորը, Լաքիսի թագաւորը, 12 Եգլոնի թագաւորը, Գազերի թագաւորը, 13 Դաբիրի թագաւորը, Գեսեմի թագաւորը, 14 Հերմէի թագաւորը, Աբերի թագաւորը, 15 Լոբնայի թագաւորը, Օդողոմի թագաւորը, 16 Մակեդայի թագաւորը, 17 Թափուայի թագաւորը, Օփերի թագաւորը, 18 Նափէկի թագաւորը, 19 Ասորի թագաւորը, 20 Սամրոնի թագաւորը, Մառոնի թագաւորը, Ասքափի թագաւորը, 21 Թանաքի թագաւորը, Մակեդդովի թագաւորը, 22 Կեդէսի թագաւորը, Յեկնոամի Քերմել թագաւորը, 23 Դորի Նափեդոր թագաւորը, Գելիմի Գելգել թագաւորը եւ 24 Թերսայի թագաւորը: Այս բոլոր թագաւորների թիւը քսանինն է:

ԴԵՌ ՉԴՐԱՒՈՒԱԾ ԵՐԿՐՆԵՐ

13 Յեսուն ծերացել էր եւ տարիքն առել: Տէրը ասաց Յեսուին. «Դու ծերացել ես եւ օրերդ անց ես կացրել, բայց շատ երկրներ են մնացել ժառանգելու: 2 Մնացած երկրները սրանք են. փղշտացիների բոլոր սահմանները, Գեսուրը եւ Քանանը. 3 Եգիպտոսի գիմացի անչէն վայրից մինչեւ Ակկարոնի սահմանները աջ կողմում. քանանացիներին են պատկանում փղշտացիների հինգ թագաւորութիւնները՝ գազայիներինը, ազոտացիներինը, ասկաղոնացիներինը, գեթացիներինը, ակկարոնացիներինը եւ խեւացիներինը. 4 Թեմանից՝ քանանացիների ամբողջ երկիրը, Գազան, Սիդոնը, մինչեւ Յափեկա, մինչեւ ամորհացիների սահմանները, 5 եւ փղշտացիներից՝ ամբողջ Արաբա երկիրը եւ ամբողջ Լիբանանը արեւելքից, Հերմոն լերան ստորոտի Գաղգաղայից մինչեւ Եմաթի մուտքը: 6 Բոլոր լեռնաբնակներին, Լիբանանից մինչեւ Մասերեփոթմայիմ, եւ բոլոր սիդոնացիներին ես կը կոտորեմ իսրայէլացիների առաջ: Բայց դու դրանք բաժանի՛ր իսրայէլացիներին որպէս ժառանգութիւն, ինչպէս որ քեզ պատուիրեցի»:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

7 Հիմա այս երկիրը որպէս ժառանգութիւն բաժանի՛ր ինը ցեղերին եւ Մանասէի կէս ցեղին. Յորդանան գետից մինչեւ Մեծ ծովը դէպի արեւմուտք կը տաս նրանց, եւ Մեծ ծովը սահման կը դառնայ: 8 Իսկ երկու ցեղերը՝ Ռուբէնի եւ Գադի ցեղերը, Մանասէի կէս ցեղի հետ ստացան իրենց ժառանգութիւնը, որ տուել էր Մովսէսը Յորդանան գետի այն կողմում, արեւելքում. Տիրոջ ծառայ Մովսէսը նրանց մէջ բաժանեց 9 Առնոն հեղեղատի եզերքին գտնուող Արոյերից եւ ձորի մէջ գտնուող քաղաքից մինչեւ Դեբոն, նաեւ ամբողջ Միսորը, Մեդաբան, 10 Եսեբոնում թագաւորող ամորհացիների արքայ Սեհոնի բոլոր քաղաքները, մինչեւ ամոնացիների

սահմանները, 11 Գաղաադը եւ Գեսուրի ու Մաքաթիի սահմանները, ամբողջ Աքերմոն լեռը, ամբողջ Բասանաստանը, մինչեւ Սելքա, 12 Բասանի մէջ ամբողջ թագաւորութիւնն Օգի, որ թագաւորում էր Աստարոթում եւ Եդրայինում: Հսկաների մնացորդներից միայն սա էր մնացել, եւ Մովսէսը հարուածեց ու սպանեց նրան: 13 Բայց իսրայէլացիները չբնաջնջեցին գեսուրացիներին, մաքաթացիներին եւ քանանացիներին. եւ գեսուրացիներն ու մաքաթացիները բնակւում են Իսրայէլի մէջ մինչեւ այսօր: 14 Բայց Ղեւիի ցեղին բաժին եւ ժառանգութիւն չտուեց, որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուածն է նրանց ժառանգութիւնը, ինչպէս նրանց ասել էր Տէրը: Սրանք այն բաժիններն են, որ Մովսէսը բաժանեց իսրայէլացիներին Ռաբոթ Մովաբում, Յորդանան գետի այն կողմում, Երիքովի դիմաց:

ՌՈՒԲԷՆԻ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

15 Մովսէսը Ռուբէնի ցեղին ժառանգութիւն տուեց ըստ նրա տոհմերի, 16 եւ նրանց սահմանները եղան Առնոն ձորի դիմացը գտնուող Արոյերը, Առնոն ձորում գտնուող քաղաքը, ամբողջ Միսորը 17 եւ Մեդաբան մինչեւ Եսեբոնը. նրանց բոլոր քաղաքները, որ Միսորում են, Դեբոնը, Բամոթբահաղը, Բաեալմոթի տունը, 18 Յասան, Կեդմոթը, Մեփայաթը, 19 Կարիաթեմը, Սեբաման, Սարեթը եւ Սիորը Ենակ լերան վրայ, 20 Բեթփագորը, Ասեդոթփասգան, Բեթսիմոթը եւ Միսորի բոլոր քաղաքները, 21 ամբողջ թագաւորութիւնն ամորհացիների Սեհոն թագաւորի, որ թագաւորում էր Եսեբոնում: Սրան, ինչպէս նաեւ Մադիամի իշխաններին՝ Եւիին, Ռոկոմին, Սուրին, Ուրին, Ռոբէին եւ այդ երկրում բնակուող Սեհոնի մերձակայքի իշխաններին, ջարդեց Մովսէսը: 22 Նաեւ Բէորեան Բաղաամ վհուկին մի վայրկեանում սրով սպանեցին իսրայէլացիները: 23 Ռուբէնի սահմանը եղաւ Յորդանան գետը: Այս է Ռուբէնի որդիների ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի, սրանք են նրանց քաղաքներն ու աւանները:

ԳԱԴԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

24 Մովսէսը բաժին տուեց նաեւ Գադի որդիներին ըստ իրենց տոհմերի: 25 Նրանց սահմանները եղան Յազերը, Գաղաադի բոլոր քաղաքները, ամոնացիների երկրի կէսը մինչեւ Արոյեր, որը Արաբայի դիմացն է, 26 Եսեբոնից մինչեւ Մասփայի մօտի Հռամոթը, Բոտանիմը, Մանայիմը մինչեւ Դաբիրի սահմանները 27 եւ Եմակում Բեթարամը, Բեթնամրան, Սոքովն ու Սափոնը եւ Եսեբոնի արքայ Սեհոնի մնացած թագաւորութիւնը: Սահմանը Յորդանան գետն է մինչեւ Քեներեթի ծովեզերքը, Յորդանան գետի այն կողմը, դէպի արեւելք: 28 Այս է Գադի որդիների ժառանգութիւնը ըստ իրենց տոհմերի, նրանց քաղաքները եւ ագարակները:

ՄԱՆԱՍԷԻ ԿԷՍ ՑԵՂԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

29 Մովսէսը բաժին տուեց նաեւ Մանասէի կէս ցեղին, որը եղաւ Մանասէի որդիների կէս ցեղի կալուածքը ըստ իրենց տոհմերի: 30 Նրանց սահմանները եղան. Մանայէմից սկսած ամբողջ Բասանը, Բասանի արքայ Օգի ամբողջ թագաւորութիւնը, Յայիրի բոլոր աւանները, որոնք Բասանաստանում են, ընդամէնը վաթսուն քաղաք: 31 Իսկ Գաղաադի կէսը, Աստարոթը, Եդրայինը, Բասանաստանում Օգի թագաւորութեան քաղաքները տրուեցին Մանասէի որդի Մաքիրի որդիներին եւ Մանասէի կէս ցեղի որդիներին՝ ըստ իրենց տոհմերի:

32 Սրանք են այն տեղերը, որ Մովսէսը ժառանգութիւն տուեց Յորդանան գետի այն կողմում, Մովաբի Ռաբոթ բնակավայրում, Երիքովի դիմաց՝ արեւելքում: 33 Ղեւիի ցեղին Մովսէսը ժառանգութիւն չտուեց, որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուածն ինքն է նրանց ժառանգութիւնը, ինչպէս ասել էր նրանց:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

14 Սրանք են այն տեղերը, որ քանանացիների երկրում իսրայէլացիներին ժառանգութիւն տուին Եղիազար քահանան, Նաւէի որդի Յեսուն եւ իսրայէլացիների ցեղերի նահապետութեան իշխանները: 2 Վիճակով տուին ժառանգութիւնը այն ինը ցեղերին եւ Մանասէի կէս ցեղին, ինչպէս որ պատուիրել էր Տէրը Յեսուի[†] միջոցով, 3 որովհետեւ Մովսէսը երկու ցեղերին եւ Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուել էր Յորդանան գետի այն կողմում: Ղեւտացիներին ժառանգութիւն չէր տուել նրանց մէջ: 4 Քանի որ երկու ցեղ էին Յովսէփի որդիները՝ Մանասէն եւ Եփրեմը, ղեւտացիներին երկրի մէջ բաժին չտուին, այլ միայն քաղաքներ՝ բնակուելու համար եւ դրանց արուարձանները նրանց ոչխարների համար: 5 Ինչպէս Տէրը պատուիրել էր Մովսէսին, այդպէս արեցին իսրայէլացիները եւ բաժանեցին երկիրը:

ՔԵԲՐՈՆԸ ՏՐՒՈՒՄ Է ՔԱՂԷԲԻՆ

6 Յուդայի որդիները Գաղգաղայում մօտեցան Յեսուին, եւ կենեզացի Յեփոնէի որդի Քաղէբն ասաց նրան. «Դու ինքդ գիտես, թէ ինչ խօսեց Տէրը Կադէսբառնեայում Աստծու մարդու՝ Մովսէսի հետ իմ եւ քո մասին: 7 Ես քառասուն տարեկան էի, երբ Տիրոջ ծառայ Մովսէսն ինձ Կադէսբառնեայից ուղարկեց երկիրը լրտեսելու, եւ նրան մենք լուր բերինք նրա ուզածի պէս: 8 Բայց ինձ հետ գնացող իմ եղբայրները ժողովրդի միտքը չեղեցին. իսկ ես շարունակեցի հետեւել իմ Տէր Աստծուն»: Այն օրը Մովսէսը երդուեց եւ ասաց. 9 «Այն երկիրը, ուր դու հասար, յաւիտեան քոնը եւ քո որդիներինը թող լինի որպէս ժառանգութիւն, քանի որ ես շարունակեցի հետեւել իմ Տէր Աստծուն: 10 Եւ արդ, սնուցել է ինձ Տէրը, ինչպէս որ ասել էր. սա քառասունհինգերորդ տարին է, ինչ Տէրն ասել է այս խօսքը Մովսէսին, երբ իսրայէլացիները թափառում էին անապատում: Այժմ ահա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ 11 եւ ուժեղ եմ այսօր, ինչպէս այն ժամանակ, երբ Մովսէսն ինձ ուղարկեց: Այժմ նոյնպէս կարող եմ պատերազմի մէջ մտնել եւ դուրս գալ: 12 Այժմ խնդրում եմ քեզնից ինձ տալ այն լեռը, ինչպէս որ Տէրն ասաց այն օրը: Դու ինքդ այս բանը լսեցիր այն օրը: Հիմա այնտեղ ենակիմներն են, եւ նրանց քաղաքներն ամրացուած են եւ մեծ: Հիմա եթէ Տէրն ինձ հետ լինի, կը բնաջնջեմ նրանց, ինչպէս Տէրն ինձ ասաց»: 13 Եւ Յեսուն օրհնեց նրան եւ Քեբրոնը որպէս ժառանգութիւն տուեց կենեզացի Յեփոնէի որդի Քաղէբին: 14 Դրա համար Քեբրոնը եղաւ կենեզացի Յեփոնէի որդի Քաղէբի ժառանգութիւնը, որովհետեւ նա հետեւեց Իսրայէլի Տէր Աստծու պատուիրանին: 15 Քեբրոն քաղաքի անունն առաջ Արբոկ էր, նա ենակիմների մայրաքաղաքն էր: Եւ երկիրը հանգստացաւ պատերազմից:

ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

15 Յուդայի որդիների ցեղի սահմանները, ըստ իրենց տոհմերի, եղան՝ եդոմայեցիների սահմաններից, Սին անապատից մինչեւ Կադէս, հարաւային կողմում:

2 Հարաւային կողմից նրանց սահմանները գնում են մինչեւ Աղի ծովի եզրը՝ նրա հարաւակողմն իջնող բարձրաւանդակից, 3 անցնում են մինչեւ Ակրաբիմի զառիվերը, անցնում են Սինաքը, բարձրանում են հարաւից դէպի Կադէսբառնեայ, ելնում են Հեսրոն, ձգւում Ադդարի մօտով եւ պտտւում Կադէսի արեւմտեան կողմը, գնում հասնում են մինչեւ Ասեմոնա եւ դուրս գալիս մինչեւ Եգիպտոսի ձորը: 4 Այս սահմանը վերջանում է ծովի կողմում: Սրանք նրանց սահմաններն են հարաւից:

5 Արեւելքից սահմանն ամբողջ Աղի ծովն է, մինչեւ Յորդանան գետի եզերքը: Նրանց հիւսիսային սահմանը ծովածոցից, Յորդանան գետի եզերքից 6 հասնում է Բեթագղա, անցնում հիւսիսով մինչեւ Բեթարաբա, բարձրանում է մինչեւ Ռուբէնի որդիների Բէոն քարը: 7 Ապա սահմանը բարձրանում է Աքորի ձորի չորրորդ մասով, հարաւային կողմից իջնում է Գաղգաղ, որը Եդոմիմի զառիվերի դիմացն է, հարաւային կողմում: Սահմանը հասնում է Արեգ աղբիւրի ջրին եւ վերջանում է Ռոգեղի աղբիւրի մօտ: 8 Ապա սահմանը բարձրանում է ենոմացիների ձորը Յեբուսի ետեւից, հարաւային կողմից, ուր գտնւում է Երուսաղէմը: Ապա հասնում է այն լեռան գլուխը, որը ծովակողմից Ենոմի ձորի դիմացն է եւ որը հիւսիսից Ռափայիմների երկրի ծայրին է: 9 Այս սահմանը լեռան գլխից հասնում է մինչեւ Նափթովի ջրի աղբիւրը, Գայիում հատում է Եփրեմի լեռը, հասնում է Բաաղ, այսինքն՝ Յարիմ քաղաքը. 10 ապա Բաաղից շրջւում է Ասարէսի ծովակողմը, դէպի Սէիր լեռը, հիւսիսից անցնում է Յարիմ քաղաքի ետեւով, ուր գտնւում է Քասղոնը, իջնում է Արեգ քաղաքն ու անցնում հարաւ: 11 Ապա սահմանը Ակկարոնի ետեւից կտրում անցնում է դէպի հիւսիս, հասնում է Սարքայոն, անցնում Բաաղ երկրի լեռան մօտով եւ հասնում մինչեւ Աբնեղ. սահմանը վերջանում է ծովակողմում:

12 Արեւմուտքից նրանց սահմանը Մեծ ծովն է բաժանում: Սրանք Յուդայի որդիների սահմաններն են շուրջանակի՝ ըստ իրենց տոհմերի:

ՔԱՂԷԲԸ ԳՐԱՒՈՒՄ Է ՔԵԲՐՈՆԸ ԵՒ ԴԱՒԻՐԸ
(Դատ. 1. 11-15)

13 Յեսուն Յեփոնէի որդի Քաղէբին բաժին տուեց Յուդայի որդիների երկրի մէջ Աստծու հրամանով: Յեսուն նրան տուեց Արբոկ քաղաքը, որը Ենակի մայրաքաղաքն է, այսինքն՝ Քեբրոնը: 14 Յեփոնէի որդի Քաղէբն այնտեղ բնաջնջեց Ենակի երեք որդիներին՝ Սուսին, Թոմայիին եւ Աքիմանին՝ ենակի զաւակներին: 15 Քաղէբն այնտեղից գնաց Դաբիրի բնակիչների դէմ. Դաբիրի անունն առաջ Նամակաց քաղաք էր: 16 Քաղէբն ասաց. «Ով որ գրաւի Նամակաց քաղաքը եւ տիրի նրան, իմ դուստր Ասքային նրան կնութեան կը տամ»: 17 Եւ այն գրաւեց Քաղէբի եղբայր Կենեզի կրտսեր որդի Գոդոնիէլը, եւ Քաղէբն իր դուստր Ասքային նրան կնութեան տուեց: 18 Երբ կինը գնում էր, խորհուրդ արեց Գոդոնիէլի հետ եւ ասաց. «Իմ հօրից ագարակ ուզեմ». եւ ձայն տուեց էշի վրայից: Քաղէբն ասաց նրան. «Ի՞նչ եղաւ քեզ»: 19 Աղջիկն ասաց. «Ինձ օրհնութի՛ւն տուր: Քանի որ ինձ տուիր Նագեբ երկիրը, տո՛ւր ինձ նաեւ Գոլաթմայիմը»: Եւ Քաղէբը նրան տուեց Վերին Գոլաթն ու Ներքին Գոլաթը:

20 Այս էր Յուդայի որդիների ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի:

ՅՈՒԴԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

21 Եդոմի սահմանների մօտ, անապատում, Յուդայի որդիների ցեղի առաջին քաղաքները սրանք են՝ Կաբբեէղը, Եդրայինը, Յագուրը, 22 Կինան, Դեմոնան, Ադադան, 23 Կադէսը, Իթնանզիփը, 24 Տէղէմը, Բաաղոթը, 25 Ասերոն քաղաքը, այսինքն՝ Ասորը, 26 Ամամը, Սաման, Մոլադան, 27 Ասերգադդան, Բեթփաղէթը, 28 Ասարսուղան, Բերսաբէէն եւ նրանց աւաններն ու ագարակները, 29 Բաաղան, Աւիմը, Ասեմը, 30 Եղթոլադը, Քուզը, Երման, 31 Սիկելէկը, Մադեբենան, Սանսաննան, 32 Ղամոթը, Սէղէմին, Ռեմոնը՝ քսանինը քաղաքներ եւ նրանց աւանները:

33 Դաշտավայրերում՝ Եսթաուլը, Սարաան, Ասնան, Ռամոնը, 34 Զանովը, Ադիաթեմը, Ենայիմը, 35 Յերիմութը, Ոդոդամը, Ներման, Սոքովը, Ազեկան, 36 Սագարիմը, Գադերան եւ նրանց ագարակները. տասնչորս քաղաքներ եւ նրանց աւանները. 37 Սենանը, Ադասան, Մակդաղադը, 38 Դաղաանը, Մասփան, Յեքթայէղը, 39 Ղաքիսը, Բազկաթը, Ագղոմը, 40 Քաբբան, Լամասը, Քասղոմը, 41 Գադերոթը, Բեթդագոնը, Մակեդան, տասնվեց քաղաքներ եւ նրանց աւանները. 42 Ղեբ-

[†]Եբրայերէնում՝ Մովսէսի:

նան, Աթերը, 43 Յեփթան, Ասենան,
Նեսիբը, 44 Կէիլան, Աքեզիբը, Մա-
բեսան, Ելեմոմը. ինը քաղաքներ եւ
նրանց աւանները. 45 Ակկարոնը, նրա
աւաններն ու ագարակները. 46 Ակկա-
րոնից մինչեւ էմէն, Ազդարոդի բոլոր
արուարձանները, նրանց աւաններն ու
ագարակները. 47 Գազան, նրա աւան-
ներն ու ագարակները մինչեւ Եգիպ-
տոսի հեղեղատը եւ Մեծ ծովը, որը
սահմանն է:

48 Լեռնավայրերի վրայ՝ Սափիրը,
Յեթերը, Սոքովը, 49 Դեննան, Ահերմոն
լեռը, Նամակաց քաղաքը՝ այսինքն՝
Դաբիրը, 50 Անոբը, Եսթեմովը, Անի-
մը, 51 Գոսոմը, Քիլվոնը, Գեղոնը,
տասնմէկ քաղաքներ եւ նրանց
աւանները. 52 Երեբը, Եսանը, Երուման,
53 Յանումը, Բեթթափուէն, Ափական,
54 Քամմատան, Արբոկ քաղաքը, այ-
սինքն՝ Քեբրոնը, Սիորը. ինը քաղաք-
ներ եւ նրանց աւանները. 55 Մաւոնը,
Քերմէլը, Զիփը, Յետտան, 56 Յեզ-
բայէլը, Յեկոտամը, Զանովան, Եկիմը,
57 Գաբաան, Թամնան, ինը քաղաքներ
եւ նրանց աւանները. 58 Ալուլը, Բեթ-
սուրը, Գեդորը, 59 Մարոթը, Բեթա-
նոթը, Եղթեկեն. վեց քաղաքներ եւ
նրանց աւանները. Թեկովը եւ Եփ-
բաթան, այսինքն՝ Բեթղահէմը, Բա-
գորը, Ետամը, Կուղոնը, Տատամին,
Սորէսը, Կարէմը, Գաղիմը, Բեթերը,
Մանոքովը. տասնմէկ քաղաքներ եւ
նրանց աւանները. 60 Կարիաթբաալը,
այսինքն՝ Յարիմ քաղաքը եւ Արա-
բան. երկու քաղաքներ, նրանց աւան-
ները իրենց ագարակներով հանդերձ,
61 Բեթբարգիսը, Բեթարաբան, Մա-
գոնը, Սոքովան, 62 Նեբսանը, Աղա-
հանքի քաղաքները, Ենդգադիսը. եօթը
քաղաքներ եւ նրանց աւանները:

63 Յեբուսացիները բնակւում էին
Երուսաղէմում, եւ Յուդայի որդիները
չկարողացան մարտնչել նրանց դէմ,
ուստի յեբուսացիները մինչեւ այսօր
Երուսաղէմում բնակւում են Յուդայի
որդիների հետ:

ԵՓՐԵՄԻՆ ԵՒ ՄԱՆԱՍԷԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

16 Յովսէփի որդիների սահմանները
եղան. Յորդանան գետից, Երիքովի
դիմացից՝ Երիքովի դիմացի ջրի արե-
ւելեան կողմից դէպի անապատ:
Երիքովից սահմանները բարձրանում
են անապատի լեռնակողմը՝ Բեթէղ-
ղուզ. 2 Բեթէղղուզից բարձրանում եւ
անցնում են Արքիատարոթի սահ-
մանների մօտով, 3 դուրս են գալիս
ծովի կողմը, Յեփաղթիի սահմանները,
մինչեւ Ներքին Բեթորոնի սահման-
ներն ու մինչեւ Գազեր եւ վերջանում
են ծովի կողմում: 4 Սա ժառան-
գութիւն ստացան Յովսէփի որդիները՝
Եփրեմը եւ Մանասէն:

ԵՓՐԵՄ

5 Եփրեմի որդիների սահմանները
եղան ըստ իրենց տոհմերի. այսինքն՝
նրանց ժառանգութեան սահմաններն
եղան արեւելքից Աստարոթ Ադարը
մինչեւ Վերին Բեթորոնը եւ Գազերը.
6 սահմաններն անցնում են հիւսիսից
դէպի ծովի կողմը՝ Մաքոթ եւ
պտտւում են արեւելեան կողմից Թե-
նաթսելով, անցնում են արեւելքից
Յանովի մօտով: 7 Յանովից իջնում են
Աստարոթ եւ Նաարաթա, նրանց
աւաններն անցնում են Երիքովի
մօտով ու հասնում Յորդանան գետը.
8 Թափուայից սահմաններն անցնում
են արեւմուտք՝ Կանայի հեղեղատը եւ
վերջանում են ծովակողմում: Այս է
Եփրեմի ցեղի ժառանգութիւնն ըստ
իրենց տոհմերի: 9 Եփրեմի որդիների
համար առանձնացուած քաղաքները
Մանասէի որդիների ժառանգութեան
մէջ են, բոլոր քաղաքներն իրենց
աւաններով:

10 Եփրեմեանները չհալածեցին Գա-
զերում բնակւող քանանացիներին, եւ
քանանացիները բնակուեցին եփրե-
մեանների մէջ, ու այդպէս է այսօր էլ,
մինչեւ որ եգիպտացիների փարաւոն
արքան ելաւ գրաւեց քաղաքը, այրեց
այն հրով, ջարդեց Գազերում բնա-
կուող քանանացիներին ու փերեզա-
ցիներին, այն օժիտ տուեց իր դստերը,

եւ նրանք դարձան հարկատու ծա-
ռաներ:

ՄԱՆԱՍԷ ՑԵՂԸ

17 Մանասէի՝ Յովսէփի անդրանիկ
որդու ցեղի սահմանները սրանք են.
Մանասէի անդրանիկին՝ Մաքիրին՝
Գաղաադի հօրը, որովհետեւ պատե-
րազմող մարդ էր, բաժին հասաւ Գա-
զաադը Բասանաստանում: 2 Մանասէի
միւս որդիներին, Աբիեզերի որդիներին,
Քեղեկի որդիներին, Եսրիէլի որդի-
ներին, Սիւքէմի որդիներին, Սեմիրայիի
որդիներին, Օփերի որդիներին բաժին
հասաւ ըստ իրենց տոհմերի: Սրանք են
Յովսէփի որդու՝ Մանասէի որդիները,
արու զաւակներ ըստ իրենց տոհմերի:
3 Մանասէի որդու Մաքիրի որդու Գա-
զաադի որդու Օփերի որդի Սաղպաադը
արու զաւակ չունէր, այլ միայն՝
դուստրեր: Սաղպաադի դուստրերի
անունները սրանք են՝ Մաաղա, Նուա,
Էգղա, Մեղքա եւ Թերսա: 4 Նրանք
կանգնեցին Եղիազար քահանայի,
Նաւէի որդի Յեսուի եւ իշխանների
առաջ եւ ասացին. «Աստուած Մովսէսի
միջոցով պատուիրեց, որ մեզ ժա-
ռանգութիւն տուրի մեր հօրենական
եղբայրների մէջ»: Եւ Տիրոջ հրա-
մանով նրանց ժառանգութիւն տուեց
իրենց հօրենական եղբայրների մէջ:
5 Մանասէին բաժին ընկան Ղաբեկի
դաշտը եւ Գաղաադն ու Բասանը, որ
Յորդանան գետի այն կողմում են,
6 որովհետեւ Մանասէի որդիների
դուստրերը ժառանգութիւն ստացան
իրենց եղբայրների մէջ, ուստի Գա-
զաադ երկիրը Մանասէի միւս որդի-
ներինը եղաւ:

7 Մանասէի որդիների սահմանները
գնում են Սիւքէմի դիմացը գտնուող
Ասերմաքթոթից մինչեւ Յամին եւ
Ասեբ՝ Թափթոթայի աղբիւրը: 8 Թափ-
թոթայի երկիրը Մանասէինը եղաւ, իսկ
Մանասէի սահմանների վրայ գտնուող
Թափթոթա քաղաքը՝ Եփրեմի որդի-
ներինը: 9 Սահմանները հարաւային
կողմից իջնում են Կանայի ձորը,
Յայիրի ձորի դիմաց. եւ Եփրեմի
բեւեկնի ծառը ընկնում է Մանասէի
քաղաքի մէջ: Մանասէի սահմանը
հիւսիսից գնում է մինչեւ հեղեղատը եւ
վերջանում է ծովում: 10 Հարաւային
կողմը Եփրեմինն է, իսկ հիւսիսային
կողմը՝ Մանասէինը, եւ նրանց սահ-
մանը ծովն է: Հիւսիսային կողմից
նրանք յարում են Ասերին, իսկ
արեւելեան կողմից՝ Իսաքարին: 11 Ի-
սաքարի եւ Ասերի միջեւ Մանասէինը
եղան Բեթսանն ու նրա աւանները,
Ամբղանն ու նրա աւանները, Ենդորի
բնակիչներն ու նրա աւանները, Մա-
կեդդովի բնակիչներն ու նրա աւան-
ները, Տանաքի բնակիչներն ու նրա
աւանները, Նափեթի երրորդ մասն ու
նրա աւանները: 12 Մանասէի որդիները
չկարողացան բնաջնջել այս քաղաք-
ները եւ քանանացիները շարունա-
կեցին բնակուել այդ երկրում: 13 Եւ
երբ իսրայէլացիները զօրացան,
նրանք հնազանդեցրին քանանացի-
ներին, բայց ամբողջովին չբնաջնջե-
ցին նրանց:

ՅՈՎՍԷՓԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԱՆՏԱՌՆԵՐԸ

14 Յովսէփի որդիներն ընդդիմացան
Յեսուին եւ ասացին. «Ինչո՞ւ համար
մեզ մէկ բաժին ժառանգութիւն եւ
մէկ կալուածք տուիր: Մենք բազմա-
մարդ ենք, եւ Աստուած մեզ օրհնել է»:
15 Յեսուն նրանց ասաց. «Եթէ դուք
բազմամարդ էք, գնացէ՛ք անտառ, ձեզ
համար տե՛ղ մաքրեցէք Փերեզացիների
ու Ռափայիների երկրում, եթէ ձեզ
համար նեղ է Եփրեմի լեռը»: 16 Յով-
սէփի որդիներն ասացին. «Եփրեմի
լեռը մեզ բաւական չէ. այնտեղ, մեր
երկրում՝ Բեթսանում, նրա աւան-
ներում եւ Յեզրայէլի ձորում մեզ հետ
բնակուող բոլոր քանանացիներն
ընտիր երիվարներ ու զէնքեր ունեն»:
17 Յեսուն խօսեց Յովսէփի որդիների՝
Եփրեմի եւ Մանասէի հետ եւ ասաց.
«Դուք բազմամարդ ժողովուրդ էք եւ
շատ զօրութիւն ունէք, թող ձեզ մէկ
կալուածք չլինի, 18 անտառը ձերը
լինի: Անտառ է, կը մաքրէք այն,
մինչեւ ծայրը այն ձերը կը լինի, երբ
բնաջնջէք քանանացիներին. թէպէտ
նրանք ընտիր երիվարներ ունեն եւ

ձեզանից ուժեղ են, բայց դուք կը յաղթէք նրանց»:

ԵՐԿՐԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

18 *Իսրայէլի ամբողջ ժողովուրդը հաւաքուեց Սելովում, եւ այնտեղ կանգնեցրին վկայութեան խորանը, քանի որ երկիրը նուաճուեց նրանց կողմից: 2 Իսրայէլացիներից եօթը ցեղ էր մնացել, որ իր ժառանգութիւնը չէր ստացել: 3 Յեսուն նրանց ասաց. «Մինչեւ ե՞րբ պէտք է ծուլանաք եւ չմտնէք ու ժառանգէք այն երկիրը, որ ձեզ տուեց մեր հայրերի Տէր Աստուածը: 4 Ամէն ցեղից ինձ երեքական մարդ տուէ՛ք, ես կ՚ուղարկեմ նրանց, որ վեր կենան անցնեն երկրով եւ չափագրեն այն իմ առաջ՝ պարզելով, թէ ինչպէս պէտք է բաժանել այն»: Նրանք եկան նրա մօտ, 5 ու նա բաժանեց երկիրը նրանց մէջ եօթը մասի: Եւ ասաց. «Յուդայի երկիրը թող մնայ նրանց սահմանը հարաւից, Յովսէփի որդիներն իրենց սահմաններում մնան Հիւսիսից, 6 իսկ դուք երկիրը բաժանեցէ՛ք եօթը մասի եւ չափագրութիւնը բերէք ներկայացրէ՛ք ինձ այստեղ. ես ձեզ համար այստեղ Աստծու առաջ վիճակ կը հանեմ: 7 Ղեւիի որդիները ձեր մէջ բաժին չունեն, որովհետեւ նրանց բաժինը Տիրոջ համար արուած քահանայութիւնն է. Գադը, Ռուբէնը եւ Մանասէի կէս ցեղը Յորդանան գետի այն կողմում՝ արեւելքում ստացան իրենց ժառանգութիւնը, որ Տիրոջ ծառայ Մովսէսը տուել էր նրանց»:*

8 Եւ մարդիկ վեր կացան գնացին: Երկիրն աչքի անցկացնելու գնացած մարդկանց Յեսուն պատուիրեց եւ ասաց. «Անցէք գնացէ՛ք, աչքի անցկացրէ՛ք երկիրն ու վերադարձէ՛ք ինձ մօտ, իսկ ես Սելովում Տիրոջ առաջ ձեզ համար վիճակ կը գցեմ»: 9 Մարդիկ գնացին շրջեցին երկրում, հետազոտեցին ու տեսան երկիրը եւ այն, ըստ նրա քաղաքների, եօթը բաժին անելով՝ չափագրեցին մի գրքի մէջ եւ բերին Յեսուի մօտ՝ բանակատեղի, Սելով: 10 Յեսուն Տիրոջ առաջ նրանց համար վիճակ գցեց Սելովում եւ այնտեղ երկիրը բաժանեց իսրայէլացիներին՝ ըստ իրենց բաժինների:

ԲԵՆԻԱՄԻՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

11 Առաջին վիճակն ընկաւ Բենիամինի որդիների ցեղին՝ ըստ իրենց տոհմերի: Նրանց բաժնի սահմանն ընկաւ Յուդայի եւ Յովսէփի որդիների միջեւ: 12 Նրանց սահմանները եղան Յորդանան գետի Հիւսիսից, որոնք Երիքովի հարաւից բարձրանում են դէպի Հիւսիս, ելնում են լերան վրայ դէպի Յովի կողմը, եւ նրանց վերջը հասնում է մինչեւ Բեթաւանի Մաբդարա բնակավայրը. 13 այնտեղից անցնում են Լուզի սահմանները հարաւային կողմից, Լուզի ետեւից, այսինքն՝ Բեթէլից, եւ սահմաններն իջնում են Ադարի Աստարոթ բնակավայրը, դէպի լերան կողմը, որը Ներքին Բեթորոնի հարաւում է: 14 Սահմաններն անցնում, պտոյտ են տալիս հարաւից Յովահայեաց ափով, այն սարից, որ հարաւում Բեթորոնի դիմացն է: Նրա վերջը հասնում է Կարիաթբաաղ, այսինքն՝ Յուդայի որդիների Կարիաթարիմ քաղաքը: 15 Մովի կողմում ծայրը այս է: Իսկ հարաւային կողմում Կարիաթբաաղի ծայրից սահմաններն անցնում են Գայի եւ դուրս են գալիս դէպի Նափթովայի ջրերի աղբիւրը: 16 Սահմաններն իջնում են ենոմացիների հովտի դիմացի լերան եզերքը, որ Հիւսիսում Ենակի ռափայիների մասն է, եւ հարաւից, Յեբուսի ետեւից իջնում են Ենոմի Գայի բնակավայրը եւ գնում Ռոգէլի աղբիւրը: 17 Հիւսիսից կտրում անցնում են Բեթսամիւսի աղբիւրը, գնում են Եղոմինի զառիվերի դիմացը գտնուող Գալիլոթ, իջնում են մինչեւ Ռուբէնի որդու Բաան վէմը. 18 Բեթարաբայի թիկունքից անցնում են հիւսիս եւ իջնում Արաբա: 19 Ապա սահմաններն անցնում են Բեթագղայի ետեւից, ծովի հիւսիսից եւ վերջանում են Աղի ծովի հիւսիսային ու Յորդանան գետի հարաւային ծայրում:

20 Այս է նրանց սահմանը հարաւից. իսկ արեւելեան կողմի սահմանը Յորդանան գետն է: Այս է Բենիամինի որդիների ժառանգութիւնը, եւ սրանք են նրանց սահմանները չորջանակի՝ ըստ իրենց տոհմերի:

21 Բենիամինի որդիների ցեղի քաղաքներն ըստ իրենց տոհմերի սրանք են՝ Երիքովը, Բեթագղան, Ամենգասիմը, 22 Բեթարաբան, Սեմարիմը, Բեթէլը, 23 Աւիմը, Ափարը, Արփան, 24 Կարեմը, Քափերամինը եւ Գարաան. տասներկու քաղաքներ եւ նրանց աւանները, 25 Գաբաւոնը, Ռամման, Բերոթը, 26 Մասփան, Կեփիրան, Ամուսան, 27 Ռէկէմը, Յերփայէլը, Թարաղան, 28 Սելալէփը, Յեբուսը, այսինքն՝ Երուսաղէմը, Գաբաաթը եւ Արեմ քաղաքը. տասներկու քաղաքներ եւ նրանց աւանները: 29 Այս է Բենիամինի որդիների ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի:

ՇՄԱՒՈՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

19 *Երկրորդ վիճակն ընկաւ Շմաւոնին, Շմաւոնի որդիների ցեղին՝ ըստ իրենց տոհմերի. նրանց ժառանգութիւնն ընկած էր Յուդայի որդիների ժառանգութեան մէջ: 2 Նրանց բաժինը եղան. Բերսաբէէն, Սաբէէն, Մողադան, 3 Ասերսուաղը, Բաթուղը, Բողան, Ասոմը, 4 Եղթուղաադը, Երման, 5 Սիկեղան, Բեթմարքաբոթը, Ասերսուսիմը, 6 Բեթղաբաթը եւ նրանց ագարակները. տասներկու քաղաքներ ու նրանց աւանները, 7 Այինը, Ռեմոնը, Եթերը եւ Ասանը. չորս քաղաքներ եւ նրանց աւանները, 8 այդ քաղաքների չորջը եղած բոլոր ագարակները մինչեւ Բաաղեթ Բերամմոթ, հարաւային Ռամաթայի մուտքի մօտ: Այս է Շմաւոնի որդիների ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի: 9 Շմաւոնի որդիների ցեղի ժառանգութիւնն ընկած էր Յուդայի որդիների բաժնի մէջ, որովհետեւ Յուդայի որդիների բաժինն աւելի մեծ էր, քան նրանցը, ուստի Շմաւոնի որդիները ժառանգութիւն ստացան նրանց բաժնի մէջ:*

ԶԱԲՈՒԼՈՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

10 Երրորդ վիճակը դուրս եկաւ Զաբուղոնի որդիներին՝ ըստ իրենց տոհմերի. նրանց ժառանգութեան սահմանները եղան մինչեւ Սարիդ: 11 Նրանց սահմանները ելնում են դէպի ծովը եւ Մարաղա, հասնում են մինչեւ Դաբասթէ, հանդիպում Եկնամի դիմացը գտնուող ձորին, 12 Սարիդից ետ են դառնում Բեթսամէի արեւելեան կողմը, դէպի Քասաղոթ Թաբորի սահմանները, անցնում Դաբարաթ եւ բարձրանում Յաբագայի մօտով. 13 այնտեղից անցնում են արեւելք՝ ձգուելով դէպի Կատասիմ քաղաքը, անցնում են Ռեմմոն, Ամաթարիմ Աննուա, 14 շրջւում են հիւսիսային սահմաններով մինչեւ Եկանթով եւ վերջանում Գայիում՝ Եփթայեղում. 15 նաեւ՝ Կատտամաթը, Նաաղողը, Սեմրոնը, Յաղեղան եւ Բեթղեհէմը՝ տասներկու քաղաքներ եւ նրանց աւանները: 16 Այս է Զաբուղոնի որդիների ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի՝ նրանց քաղաքներով եւ աւաններով հանդերձ:

ԻՍԱՔԱՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

17 Չորրորդ վիճակը դուրս եկաւ Իսաքարին, Իսաքարի որդիներին՝ ըստ իրենց տոհմերի: 18 Նրանց սահմանները եղան՝ Յեզրայէլը, Աքասեղոթը, Սունամը, 19 Ափերեմը, Սիանը, 20 Ռամաթը, Ենդանիմը, Ռենաթը, Անարեթը, 21 Ռաբբոթը, Կէսիոնը, Այեմէսը, Ռեմեթը, Ենգադիսը, Ենգադդան եւ Բեթասեմը: 22 Այս սահմանները ծովային կողմից յարում են Թաբոթին եւ Կասիմին ու Բեթսամիւսին. նրանց սահմանները վերջանում են Յորդանան գետում՝ տասնվեց քաղաքներ ու նրանց աւանները: 23 Այս է Իսաքարի որդիների ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի՝ նրանց քաղաքներով ու աւաններով հանդերձ:

ԱՍԵՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

24 Հինգերորդ վիճակը դուրս եկաւ
Ասերի որդիների ցեղին՝ ըստ իրենց
տոհմերի: 25 Նրանց սահմանները
եղան՝ Քեղկաթը, Ողին, Բատնէն,
Աքսափը, 26 Ամաթը եւ Մասաղը:
Մովային կողմից սահմանները յարում
են Կարմեղին, Սիորին եւ Բաղանայէին
27 եւ արեւելեան կողմից ետ են
դառնում դէպի Բեթդագոն, հիւսիսից
յարում են Զաբուղոնին, Գայիին,
Եփթայէղին, մտնում են Սափաթա
Բեթամեկ, գնում են Անայէլի
սահմաններով եւ ձախ կողմից
անցնում են Քաբող, 28 Աքրան, Ռոբ,
Ամմոն եւ Կանայի, մինչեւ մեծ Սիդոն:
29 Ապա սահմանները ետ են դառնում
Ռամա, մինչեւ ամրացուած Տիւրոս
քաղաքը, շրջւում են դէպի Սոսա եւ
վերջանում են ծովում, Ակզիփի
կալուածքում. 30 ապա՝ Ամման, Ափե-
կան, եւ Ռաւոբան՝ քսաներկու քա-
ղաքներ ու նրանց աւանները: 31 Այս է
Ասերի որդիների ցեղի ժառան-
գութիւնն ըստ իրենց տոհմերի՝ նրանց
քաղաքներով ու աւաններով հանդերձ:

ՆԵՓԹԱՂԻՄԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

32 Վեցերորդ վիճակը դուրս եկաւ
Նեփթաղիմին, Նեփթաղիմի որդինե-
րին՝ ըստ իրենց տոհմերի: 33 Նրանց
սահմանները եղան՝ Մէղեէփը, Մայե-
ղոմը, Բերսանայիմը, Արմէն, Նագեբը
եւ Յաբնեղը մինչեւ Ղակու. սահման-
ները վերջանում են Յորդանան գե-
տում: 34 Այս սահմանները ետ են
դառնում դէպի Ազանոթ Թաբորի
ծովը, այնտեղից անցնում են Կոկ, հա-
բաւից հատում են Զաբուղոնը, ծովա-
յին կողմից՝ Ասերը, արեւելեան կողմից՝
Յուդայի երկիրը եւ Յորդանան գետը.
35 նաեւ՝ տիւրացիների պարսպապատ
քաղաքները՝ Տիւրոսը, Ամաթը, Ռեկ-
կաթը, Քենեռեթը, 36 Ադամին, Ռամ-
ման, Ասորը, 37 Կադէսը, Եդրայինը,
Ակնասորը, 38 Յարոնը, Մակդաղիէլը,
Օրամը, Բեթանաթը եւ Թասմուսը՝
տասնինը քաղաքներ եւ նրանց աւան-
ները: 39 Այս է Նեփթաղիմի որդիների
ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց
տոհմերի՝ նրանց քաղաքներով ու
աւաններով հանդերձ:

ԴԱՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

40 Դանի որդիների ցեղին, ըստ
իրենց տոհմերի, դուրս եկաւ եօթնե-
րորդ վիճակը: 41 Նրանց ժառանգու-
թեան սահմանները եղան՝ Սարաան,
Եսթաուլը, 42 Սաղաբինը, Յեթղան,
Թամնան, 43 Եղթեկովը, Բաաղոթը,
44 Բանեբարակը եւ Սամես, Յաաղոն,
45 Եղոն, Ակկարոն, Գաբաթոն, Յուբ եւ
Գեթրեմոն քաղաքները, 46 Բազէից
ծովը եւ Բակրոնան՝ Յոպպէի մօտի
սահմանի հետ: 47 Դանի որդիների
սահմանը նրանց ժառանգութիւնից
դուրս մնաց: Այս է Դանի որդիների
ցեղի ժառանգութիւնն ըստ իրենց
տոհմերի՝ նրանց քաղաքներով եւ
աւաններով հանդերձ: Դանի որդիները
չբնաջնջեցին ամորհացիներին՝ լերան
վրայի իրենց նեղողներին, իսկ
ամորհացիները նրանց չէին թողնում
իջնել հովիտները եւ նրանցից խլում
էին նրանց բաժնի սահմանները: Դանի
որդիները գնացին եւ պատերազմեցին
Ղեսէմի դէմ, առան այն եւ սրի
քաշեցին բնակիչներին, ժառանգեցին
այն եւ բնակուեցին նրա մէջ ու իրենց
հօր անունով Ղեսէմն անուանեցին
Դան: 48 Այս է Դանի որդիների ցեղի
ժառանգութիւնն ըստ իրենց տոհմերի՝
այս քաղաքներով եւ նրանց աւան-
ներով հանդերձ:

ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՒԱՐՏԸ

49 Եւ վերջացրին երկրի բաժանումն
իրենց սահմաններով: Ամորհացիները
շարունակեցին ապրել Եղովում եւ
Սաղամիմում, բայց Եփրեմի ձեռքը
ծանրացաւ նրանց վրայ, եւ նրանք
Եփրեմին հարկատու դարձան: Եւ
գնացին աչքի անցկացնելու երկիրն իր
սահմաններով: Իսրայէլացիները Նա-
ւէի որդի Յեսուին ժառանգութիւն
տուին իրենց տարածքի մէջ. 50 Տիրոջ
հրամանով նրան տուին նրա ուզած
Թամնաթսարա քաղաքը, որ Եփրեմի

լերան վրայ է, եւ նա շինեց քաղաքը եւ
բնակուեց նրա մէջ:
51 Սրանք են այն հողաբաժինները,
որ եղիազար քահանան, Նաւէի որդի
Յեսուն եւ Իսրայէլի ցեղերի նահա-
պետները Սելովում, Տիրոջ առաջ,
վկայութեան խորանի դռանը, վիճակով
բաժանեցին: Եւ գնացին աչքի անց-
կացնելու երկիրը:

ԱՊԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

20 Տէրը խօսեց Յեսուի հետ եւ
ասաց. «Խօսի՛ր Իսրայէլացիների հետ
եւ ասա՛. 2 "Տուէ՛ք այն ապաստանի
քաղաքները, որոնց մասին Մովսէսի
միջոցով ձեզ ասել եմ, 3 որպէս
ապաստան այն սպանողի համար, որ
մարդ է սպանել ակամայ, դիպուա-
ծաբար: Դրանք ձեզ համար թող
ապաստանի քաղաքներ լինեն, որպէս-
զի սպանողը սպանուածի արիւնակցի
կողմից չսպանուի, մինչեւ որ ժողովրդի
առաջ ատեանում չկանգնի: 4 Ակամայ
սպանողը թող փախչի այդ քաղաք-
ներից մէկը, կանգնի քաղաքի դռան
մօտ եւ այդ քաղաքի ծերերին ի լուր
ասի իր խօսքը: Ժողովուրդը թող նրան
ընդունի իր մօտ, նրան տեղ տայ, եւ
նա բնակուի նրանց հետ: 5 Եւ եթէ
սպանուածի արիւնակիցը գնայ նրա
ետեւից, սպանողին նրա ձեռքը թող
չմատնեն, քանի որ նա իր ընկերոջը
դիպուածաբար է սպանել եւ նրա դէմ
նախկինում ատելութիւն չի ունեցել:
6 Թող նա այդ քաղաքում բնակուի,
մինչեւ որ կանգնի ժողովրդի առաջ
ատեանում, մինչեւ որ այն օրերին
եղող մեծ քահանան վախճանուի:
Յետոյ սպանողը թող ետ դառնայ եւ
գայ իր տեղը, իր տունը, այն քաղաքը,
որտեղից փախել է"»:
7 Եւ առանձնացրին Կադէսը Գա-
լիլիայում, Նեփթաղիմի լերան վրայ,
Սիւքէմը՝ Եփրեմի լերան վրայ, եւ
Արբոկ քաղաքը, այսինքն՝ Քեբրոնը
Յուդայի լերան վրայ. 8 Յորդանան
գետի այն կողմում, Երիքովի արեւել-
քում Ռուբէնի ցեղից առանձնացրին
Բոսորը, որ անապատում մի հար-
թավայր էր, Գադի ցեղից՝ Ռամոթը
Գաղաադում, Մանասէի ցեղից՝ Գո-
ղանը Բասանաստանում: 9 Սրանք են
բոլոր իսրայէլացիների եւ եկած, նրանց
մէջ բնակուածների համար որոշուած
հոյակապ քաղաքները, ուր կարող է
փախչել ամէն ոք, որ ակամայ մարդ է
սպանել, որպէսզի չսպանուի սպա-
նուածի արիւնակցի ձեռքով, մինչեւ որ
չկանգնի ժողովրդի առաջ ատեանում:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

21 Ղեւտացիների նահապետները
մօտեցան Եղիազար քահանային, Նա-
ւէի որդի Յեսուին եւ Իսրայէլի որ-
դիների ցեղերի ու տոհմերի նահա-
պետներին, 2 խօսեցին նրանց հետ
Սելովում, քանանացիների երկրում եւ
ասացին. «Տէրը Մովսէսի միջոցով
հրամայել է, որ մեզ բնակուելու հա-
մար քաղաքներ եւ մեր անասունների
համար նրանց արտերը տուեն»: 3 Եւ
Իսրայէլացիները Տիրոջ հրամանով
ղեւտացիներին ժառանգութիւն տուին
այս քաղաքներն ու դրանց արտերը:
4 Վիճակը դուրս եկաւ Կահաթի
տոհմին. եւ Ահարոնի որդիներին՝ ղեւ-
տացի քահանաներին վիճակով հասան
տասներեք քաղաքներ Յուդայի ցեղից,
Շմաւոնի ցեղից եւ Բենիամինի ցեղից:
5 Իսկ Կահաթի միւս որդիներին Եփրե-
մի ցեղի ազգատոհմից, Դանի ցեղից եւ
Մանասէի կէս ցեղից վիճակով բաժին
հասան տասը քաղաքներ: 6 Գեթսոնի
որդիներին Իսաքարի ցեղի ազգատոհ-
մից, Ասերի ցեղից, Նեփթաղիմի ցեղից
եւ Բասանի մէջ եղող Մանասէի կէս
ցեղից վիճակով հասան տասներեք
քաղաքներ: 7 Մերարիի որդիներին,
ըստ իրենց տոհմերի, Ռուբէնի ցեղից,
Գադի ցեղից եւ Զաբուղոնի ցեղից
վիճակով հասան տասներկու քաղաք-
ներ: 8 Իսրայէլացիները վիճակով
ղեւտացիներին տուին այս քաղաքները
եւ դրանց արտերը, ինչպէս որ Տէրը
պատուիրել էր Մովսէսին:
9 Յուդայի, Շմաւոնի եւ Բենիամինի
որդիների ցեղերը իրենց անունով
կոչուած այս քաղաքները տուին 10 Ա-
հարոնի որդիներին, որոնք Ղեւիի
որդիներից՝ Կահաթի տոհմից էին,

քանի որ առաջին վիճակը նրանց էր դուրս եկել: 11 Նրանց տուին Ենակի քաղաքամայր Կարիաթարբոկը, այսինքն՝ Քեբրոնը Յուդայի լեռան վրայ, նրա չուրջը եղած արտերը, 12 նրա ագարակները եւ աւանները: Դրանք Յեսուն որպէս կալուածք տուեց Յեփոնիի որդի Քաղէբին: 13 Ահարոնի որդիներին՝ քահանաներին տուին նաեւ սպանողի համար ապաստանի քաղաքներ՝ Քեբրոնը եւ նրա արուարձանները, Ղեբնան եւ նրա արուարձանները, 14 Յեթերը եւ նրա արուարձանները, Յեսթեմովը եւ նրա արուարձանները, 15 Աղոնը եւ նրա արուարձանները, Դաբիրը եւ նրա արուարձանները, 16 Այինը եւ նրա արուարձանները, Յետտան եւ նրա արուարձանները, Բեթսամիւսը եւ նրա արուարձանները՝ ինը քաղաքներ այդ երկու ցեղից: 17 Իսկ Բենիամինի ցեղից՝ Գաբաւոնը եւ նրա արուարձանները, 18 Անաթոթը եւ նրա արուարձանները, Սաղմոնը եւ նրա արուարձանները, Գաբէէն եւ նրա արուարձանները՝ չորս քաղաքներ: 19 Ահարոնի որդիների՝ քահանաների բոլոր քաղաքները տասներեքն էին իրենց արտերով:

20 *Կահաթի որդիների տոհմի ղեւտացիներին՝ Կահաթի մնացած որդիներին, քաղաքներ բաժին հասան Եփրեմի ցեղից: 21 Նրանց տուին սպանողի համար ապաստանի քաղաքներ՝ Սիւքէմը եւ նրա արուարձանները Եփրեմի լեռան վրայ, Գազերը եւ նրա արուարձանները, 22 Կաբսեմը եւ նրա արուարձանները, Վերին Բեթորոնը եւ նրա արուարձանները՝ չորս քաղաքներ: 23 Դանի ցեղից՝ Եղթեկովը եւ նրա արուարձանները, Գեբեթոնը եւ նրա արուարձանները, 24 Յաղոնը եւ նրա արուարձանները, Գեթրեմոնը եւ նրա արուարձանները՝ չորս քաղաքներ: 25 Մանասէի կէս ցեղից՝ Թանաքը եւ նրա արուարձանները, Բեթսանը եւ նրա արուարձանները՝ երկու քաղաքներ: 26 Կահաթի որդիների մնացած տոհմերի բոլոր քաղաքներն իրենց արուարձաններով թուով տասն էին:*

27 *Գեթսոնի որդիներին՝ Ղեւտացիների ազգականներին, Մանասէի կէս ցեղից տուին սպանողի համար առանձնացուած ապաստանի քաղաքներ Գողանը Բասանաստանում ու նրա արուարձանները եւ Բէեստարան ու նրա արուարձանները՝ երկու քաղաքներ: 28 Իսաքարի ցեղից՝ Կեսիոնը եւ նրա արուարձանները, Դաբրաթը եւ նրա արուարձանները, 29 Երիմոթը եւ նրա արուարձանները, Նամակաց աղբիւրը եւ նրա արուարձանները՝ չորս քաղաքներ: 30 Ասերի ցեղից՝ Մասաաղը եւ նրա արուարձանները, Աբդոնը եւ նրա արուարձանները, 31 Քեղկաթը եւ նրա արուարձանները, Ռոբը եւ նրա արուարձանները՝ չորս քաղաքներ: 32 Նեփթաղիմի ցեղից՝ սպանողի համար առանձնացուած ապաստանի քաղաքներ՝ Կադէսը Գալիլիայում եւ նրա արուարձանները, Եմաթդորը եւ նրա արուարձանները, Նոյեմոնը եւ նրա արուարձանները՝ երեք քաղաքներ: 33 Գեթսոնի բոլոր քաղաքներն ըստ իրենց տոհմերի տասներեքն էին՝ իրենց արուարձաններով հանդերձ:*

34 *Մերարիի որդիների տոհմին, այսինքն՝ մնացած ղեւտացիներին տուին Զաբուղոնի որդիների ցեղից՝ Յեկնամը եւ նրա արտերը, Կադէսը եւ նրա արտերը, Կարթան եւ նրա արտերը, 35 Դեմնան եւ նրա արտերը, Նաաղողը եւ նրա արտերը՝ հինգ քաղաք: 36 Յորդանան գետի այն կողմում, Երիքովի դիմաց, Ռուբէնի ցեղից, որպէս ապաստանի քաղաքներ, սպանողի համար տուին Բոսորը Միսորի անապատում եւ նրա արտերը, Յազերը եւ նրա արտերը, 37 Կեդմոնը եւ նրա արտերը, Մասփան եւ նրա արտերը՝ չորս քաղաք: 38 Գադի ցեղից, որպէս ապաստանի քաղաքներ, սպանողի համար տուին Ռամոթը Գաղաադում եւ նրա արտերը, Մանայամը եւ նրա արտերը, 39 Եսեբոնը եւ նրա արտերը, Ազերը եւ նրա արտերը՝ ընդամէնը չորս քաղաք: 40 Ղեւիի ցեղից մնացած Մերարիի որդիների բոլոր քաղաքները, ըստ իրենց տոհմերի, եղան տասներկուսը:*

41 *Իսրայէլացիների կալուածքների մէջ ղեւտացիների բոլոր քաղաքներն ընդամէնը քառասունութն էին՝ այդ քաղաքների չուրջը եղած իրենց արտերով հանդերձ: 42 Այդ քաղաքներն իրենց չուրջն ունէին արտեր. այդպէս էին այդ բոլոր քաղաքները:*

Եւ Յեսուն աւարտեց երկրի բաժանումն իր սահմաններով: Իսրայէլացիները Տիրոջ հրամանի համաձայն Յեսուին բաժին տուին այն քաղաքը, որ նա խնդրեց՝ Թամնասաքարը Եփրեմի լեռան վրայ: Յեսուն շինեց քաղաքը եւ բնակուեց նրա մէջ: Եւ Յեսուն վերցրեց այն քարէ սրերը, որոնցով թլփատել էր անապատի ճանապարհին ծնուած իսրայէլացիներին, քանի որ նրանք չէին թլփատուել անապատում: Յեսուն այդ քարերը վար դրեց Թամնասաքարում: 43 Եւ Տէրն իսրայէլացիներին տուեց այն ամբողջ երկիրը, որ երդուել էր տալ նրանց հայրերին. եւ նրանք ժառանգեցին այն ու բնակուեցին նրա մէջ: 44 Տէրը նրանց հանգիստ տուեց երկրի բոլոր սահմաններում, ինչպէս երդուել էր նրանց հայրերին. եւ նրանց թշնամիներից ոչ ոք դուրս չեկաւ նրանց դէմ, որովհետեւ նրանց բոլոր թշնամիներին Տէրը մատնել էր նրանց ձեռքը: 45 Ոչ մի բան պակաս չմնաց այն բոլոր բարի խօսքերից, որ ասել էր Տէրն իսրայէլացիներին, այլ ամէն բան կատարուեց:

ՅԵՍՈՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՅԵՂԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՏՈՒՆ

22 *Այն ժամանակ Յեսուն կանչեց Ռուբէնի եւ Գադի որդիներին եւ Մանասէի կէս ցեղին 2 ու նրանց ասաց. «Դուք ինքներդ անսացիք այն ամենին, ինչ որ հրամայել էր ձեզ Տիրոջ ծառայ Մովսէսը, եւ լսեցիք իմ խօսքը ամէն ինչում, որ պատուիրեցի ձեզ. 3 այսքան օրեր չլքեցիք ձեր եղբայրներին. դեռ աւելին, մինչեւ այսօր պահեցիք ձեր Տէր Աստծու պատուիրանները: 4 Հիմա մեր Տէր Աստուածը տեղաւորեց հանգստացրեց ձեր եղբայրներին, ինչպէս որ նրանց ասել էր, ուստի ե՛տ դարձէք, գնացէ՛ք ձեր տներն ու ձեր կալուածքի երկիրը, որ ձեզ տուել է Տիրոջ ծառայ Մովսէսը Յորդանան գետի այն կողմում: 5 Միայն թէ շատ զգո՛յշ եղէք, որ կատարէք այն պատուիրանները ու օրէնքը, որ պատուիրել է մեզ Տիրոջ ծառայ Մովսէսը. որ դուք սիրէք մեր Տէր Աստծուն, ընթանաք նրա բոլոր ճանապարհներով, պահէք նրա պատուիրանները, յարէք նրան եւ պաշտէք նրան ձեր ամբողջ սրտով եւ ձեր ամբողջ հոգով»: 6 Եւ Յեսուն օրհնեց նրանց ու արձակեց, եւ նրանք գնացին իրենց տները: 7 Մանասէի կէս ցեղին Մովսէսը կալուածք էր տուել Բասանաստանում, իսկ միւս կէսին Յեսուն նրանց եղբայրների հետ կալուածք տուեց ծովեզերքին: Երբ Յեսուն նրանց արձակեց իրենց տները, օրհնեց նրանց, 8 խօսեց նրանց հետ եւ ասաց. «Շատ հարստութեամբ գնացէ՛ք ձեր տները. չափազանց շատ անասուն, արծաթ, ոսկի, պղինձ, երկաթ եւ խիստ շատ զգեստներ, որոնք աւար են առնուած թշնամուց, բաժանեցէ՛ք ձեր եղբայրների միջեւ»:*

9 *Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը Քանանացիների երկրում գտնուող Սելովում բաժանուեցին իսրայէլացիներից, որպէսզի գնան Գաղաադի երկիրը՝ իրենց կալուածքը հանդիսացող երկիրը, որ ժառանգել էին Մովսէսի միջոցով տրուած Տիրոջ հրամանով:*

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԵԶԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ՋՈՀԱՍԵՂԱՆԸ

10 *Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը եկան Յորդանան գետի Գալիլոթ վայրի սահմանները, որ Քանանացիների երկրում է, եւ Յորդանան գետի եզերքին զոհասեղան չինեցին, վեհատեսիլ մի զոհասեղան: 11 Իսրայէլացիները լսեցին եւ ասացին. «Ահա Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը զոհասեղան են չինել Քանանացիների երկրի սահմաններում, Յորդանան գետի Գալիլոթ վայրում, իսրայէլացիներից այն կողմ»: 12 Երբ իսրայէլացիներն այս լսեցին, հաւա-*

քուեցին Սելովում, որ ելնեն պատերազմելու նրանց դէմ: 13 Իսրայէլացիները Ռուբէնի որդիների, Գադի որդիների եւ Մանասէի կէս ցեղի մօտ՝ Գաղաադ ուղարկեցին Ահարոն քահանայի որդու՝ Եղիազարի որդի Փենէէսին 14 եւ նրա հետ իշխաններից տասը մարդ՝ Իսրայէլի բոլոր ցեղերի նահապետներից մի-մի իշխան: Նահապետների տների այդ իշխաններն Իսրայէլի հազարապետներ էին: 15 Նրանք եկան Գաղաադ, Ռուբէնի որդիների, Գադի որդիների եւ Մանասէի կէս ցեղի մօտ, խօսեցին նրանց հետ ու ասացին. 16 «Տիրոջ ամբողջ ժողովուրդն այսպէս է ասում. "Այդ ի՞նչ յանցանք գործեցիք Իսրայէլի Տէր Աստծու դէմ՝ խոտորուելով Տիրոջից, ձեզ համար զոհասեղան շինելով եւ մեր Տէր Աստծու դէմ ապստամբելով: 17 Մի՞թէ քիչ է մեզ համար Փեգորի մեղքը, որից մինչեւ հիմա չենք մաքրուել, եւ որի համար Տիրոջ ժողովրդի վրայ հարուածներ եկան. 18 եւ դուք էլ այսօր խոտորուեցիք Տիրոջից: Եթէ դուք այսօր ապստամբէք Տիրոջ դէմ, վաղը բարկութիւն կը թափուի ամբողջ Իսրայէլի վրայ: 19 Եթէ ձեր կալուածքի երկիրը փոքր է ձեզ համար, անցէ՛ք Տիրոջ կալուածքի երկիրը, որտեղ կանգնած է Տիրոջ խորանը, եւ մեր մէջ կալուածք վերցրէ՛ք, բայց մի՛ ապստամբէք Տիրոջ դէմ եւ մեր դէմ էլ մի՛ ապստամբէք՝ մեր Տէր Աստծու զոհասեղանից զատ ձեզ համար զոհասեղան շինելով: 20 Չէ՞ որ Զարայի շառաւիղ Աքարը յանցանք գործեց նզովուած իրերից վերցնելով, իսկ բարկութիւնը Իսրայէլի ամբողջ ժողովրդի վրայ թափուեց. նա միայնակ էր, բայց մի՞թէ միայն ինքը մեռաւ իր մեղքերի համար»:

21 Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը պատասխան տուին եւ խօսելով հազարապետների հետ՝ ասացին. 22 «Աստուած Տէր Աստուած է եւ Բարձրեալն Աստուած, Աստուած ինքը գիտէ, եւ Իսրայէլն ինքն էլ թող իմանայ. եթէ ապստամբելով յանցանք գործեցինք Տիրոջ դէմ, թող չփրկի մեզ այսօր: 23 Եթէ մեզ համար զոհասեղան շինեցինք, որ ապստամբենք Տիրոջ դէմ, նրա վրայ ողջակէզ մատուցենք, կամ փրկութեան զոհ անենք, Տէրն ինքը թող վրէժխնդիր լինի: 24 Մենք երկիւղի պատճառով արեցինք այս՝ ասելով, թէ գուցէ ձեր որդիները խօսեն մեր որդիների հետ եւ ասեն, թէ՝ "Ռուբէնի՛ որդիներ եւ Գադի՛ որդիներ, ի՞նչ գործ ունէք դուք Իսրայէլի Տէր Աստծու հետ, 25 Տէրը մեր եւ ձեր միջեւ Յորդանան գետը սահման դրեց, եւ դուք Տիրոջից բաժին չունէք": Եւ ձեր որդիները մեր որդիներին կը խրտնեցնեն, որ չպաշտեն Տիրոջը: 26 Ուստի ասացինք, այսպէս անենք. շինենք այս զոհասեղանը ոչ թէ ողջակէզների եւ զոհերի համար, 27 այլ որպէսզի սա վկայութիւն լինի մեր եւ ձեր միջեւ, մեզանից յետոյ նաեւ՝ մեր որդիների միջեւ, որ մեր ընծաներով, մեր ողջակէզներով եւ մեր փրկութեան զոհերով Տիրոջը պաշտամունք մատուցենք, որ վաղը ձեր որդիները չասեն մեր որդիներին, թէ՝ "Դուք բաժին չունէք Տիրոջից": 28 Մենք ասացինք. "Եթէ վաղը մեզ կամ մեր սերունդներին այսպէս ասելու լինեն, մեր սերունդները կ'ասեն, թէ՝ "Տեսէ՛ք Տիրոջ զոհասեղանի օրինակով պատրաստուած զոհասեղանը, որ մեր հայրերը շինեցին ոչ թէ ողջակէզների եւ զոհերի համար, այլ որպէս վկայութիւն մեր եւ ձեր միջեւ եւ մեր որդիների միջեւ": 29 Քա՛ւ լիցի, որ մենք այսօր ապստամբենք մեր Տիրոջ դէմ եւ զոհի, ողջակէզի կամ փրկութեան զոհի համար զոհասեղան շինենք, բացի մեր Տէր Աստծու զոհասեղանից, որ նրա խորանի առաջ է"»:

30 Երբ Փենէէս քահանան, ժողովրդի բոլոր իշխանները եւ Իսրայէլի հազարապետները, որ նրա հետ էին, լսեցին այս խօսքերը, որ ասացին Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղը, դա նրանց հաճելի թուաց: 31 Տիրոջ քահանայ Եղիազարի որդի Փենէէսը ասաց Ռուբէնի որդիներին, Գադի որդիներին եւ Մանասէի կէս ցեղին. «Այսօր իմացանք, որ Տէրը մեզ հետ է, որովհետեւ դուք Տիրոջ առաջ այս յանցանքը չգործեցիք եւ իսրայէլացիներին ազատեցիք Տիրոջ ձեռքից»:

32 Եւ Եղիազարի որդի Փենէէս քահանան եւ տոհմերի իշխանները վերադարձան Ռուբէնի որդիների, Գադի որդիների եւ Մանասէի կէս ցեղի մօտից, Գաղաադ երկրից Քանանացիների երկիրը, իսրայէլացիների մօտ եւ նրանց պատգամ բերին: 33 Այս բանը հաճելի թուաց իսրայէլացիներին, որոնք օրհնեցին իսրայէլացիների Աստծուն, խօսեցին իսրայէլացիների հետ ու ասացին, որ այլեւս պատերազմի դուրս չեն գայ նրանց դէմ՝ կործանելու համար Ռուբէնի որդիների, Գադի որդիների եւ Մանասէի կէս ցեղի երկիրը, ուր նրանք բնակւում էին: 34 Յեսուն անուն դրեց Ռուբէնի ցեղի, Գադի ցեղի եւ Մանասէի կէս ցեղի զոհասեղանին եւ ասաց, որ դա վկայութիւն է նրանց մէջ, թէ Տէրը նրանց Աստուածն է:

ՅԵՍՈՒԻ ԿՏԱԿԸ

23 Շատ օրեր յետոյ, երբ Տէրը հանգստացրել էր Իսրայէլին նրա չրջակայքում եղած բոլոր թշնամիներից, եւ Յեսուն ծերացել ու տարիքն առել էր, 2 նա կանչեց բոլոր իսրայէլացիներին, նրանց ծերակոյտին, իշխաններին, դատաւորներին, օրէնսդէտներին, բոլորին միասին եւ ասաց նրանց. «Ես ծերացել եմ եւ տարիքս առել: 3 Դուք ինքներդ տեսաք այն ամէնը, ինչ մեր Տէր Աստուածն արեց այն բոլոր ազգերին, որոնց վերացրեց ձեր առջեւից, որովհետեւ Տէր Աստուածն ինքն էր պատերազմում ձեզ համար: 4 Արդ, տեսէ՛ք, տարածքներն այս մնացած ազգերի, բոլոր ազգերի, որոնց ջարդեցի Յորդանան գետից մինչեւ Մեծ ծովը, դէպի արեւմուտք, ձեզ ժառանգութիւն թողեցի ըստ ձեր ցեղերի: 5 Մեր Տէր Աստուածն ինքը կը կոտորի նրանց ձեր առաջ, մինչեւ որ ոչնչանան, նրանց դէմ վայրի գազաններ կ'արձակի, մինչեւ որ ձեր առաջ բնաջնջի նրանց ու նրանց թագաւորներին, եւ դուք ժառանգութիւն կը ստանաք նրանց երկիրը, ինչպէս որ մեր Տէր Աստուածն ասել էր մեզ: 6 Ուստի շա՛տ զօրացէք եւ զգո՛յշ եղէք, որ կատարէք այն ամէնը, ինչ գրուած է Մովսէսի օրէնքի գրքում, որ չխոտորուէք նրանից աջ կամ ձախ: 7 Չլինի թէ մտնէք այն մնացած ազգերի մէջ. թող նրանց աստուածների անունները չտրուեն ձեր մէջ, նրանցով չերդուէք, չպաշտէք նրանց եւ նրանց երկրպագութիւն չանէք, 8 այլ մեր Տէր Աստծու ետեւից գնաք, ինչպէս որ արել էք մինչեւ այսօր: 9 Տէրը ձեր առաջ կոտորեց նրանց՝ մեծամեծ եւ հզօր ազգերին, եւ ոչ ոք դէմ չկանգնեց ձեզ մինչեւ այսօր: 10 Ձեզնից մէկը հազարներին հալածեց, որովհետեւ Տէր Աստուածն ինքն էր պատերազմում ձեզ համար, ինչպէս որ ասել էր ձեզ:

11 Շա՛տ զգոյշ եղէք ձեր նկատմամբ, որ սիրէք ձեր Տէր Աստծուն: 12 Իսկ եթէ ետ դառնաք, ձեր մէջ մնացած ազգերին յարէք, նրանց հետ խնամութիւն անէք, խառնակուէք նրանց հետ, եւ նրանք էլ ձեզ հետ, 13 իմացած եղէք, որ Տէրն այլեւս չի կոտորի այն ազգերին ձեր առաջ, եւ նրանք ձեզ համար որոգայթ եւ գայթակղութիւն կը լինեն, խոչընդոտ՝ ձեր գարշապարների համար եւ նետեր՝ ձեր աչքերի համար, մինչեւ որ կորչէք այս բարի երկրից, որ տուեց ձեզ ձեր Տէր Աստուածը: 14 Եւ ահա ես այսօր մահուան ճանապարհն եմ գնում, ինչպէս այս երկրի վրայ եղող բոլոր մարդիկ: Իմացէ՛ք ձեր ամբողջ սրտով եւ ձեր ամբողջ հոգով, որ այն բոլոր խօսքերից, որ ասաց ձեր Տէր Աստուածը, ոչ մի բան անկատար չմնաց, այլ ամէն ինչ կատարուեց ձեզ համար. դրանցից ոչ մի խօսք սխալ դուրս չեկաւ: 15 Եւ ինչպէս որ ձեզ վրայ կատարուեցին այն բոլոր բարի խօսքերը, որ ասաց ձեզ համար Տէրը, այդպէս էլ Տէրը ձեզ վրայ կը կատարի ամէն տեսակ չար խօսքեր, մինչեւ որ բնաջնջի ձեզ այս բարի երկրից, որ տուել է ձեզ ձեր Տէր Աստուածը, 16 եթէ դրժէք ձեր Տէր Աստծու ուխտը, որ պատուիրել է ձեզ, եւ գնաք

ծառայէք օտար աստուածներին ու նրանց երկրպագութիւն անէք: Տէրը կը բարկանայ ձեզ վրայ, եւ դուք անմիջապէս կը կորչէք այս բարի երկրից, որ Տէրը տուել է ձեզ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՅԱՌԱՅԵԼՈՒ ՏԻՐՈՋԸ

24 Յեսուն Իսրայէլի բոլոր ցեղերին հաւաքեց Սելովում, կանչեց Իսրայէլի բոլոր ծերերին, նրանց իշխաններին, օրէնսգէտներին ու դատաւորներին, եւ նրանք կանգնեցին Տիրոջ առաջ: 2 Յեսուն խօսեց ամբողջ ժողովրդի հետ ու ասաց. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Նախկինում ձեր նախահայրերը՝ Թարան՝ Աբրահամի հայրը եւ Նաքորի հայրը պանդխտել են գետի այն կողմը եւ պաշտել օտար աստուածներին: 3 Գետի այն կողմից ես վերցրի ձեր հայր Աբրահամին եւ նրան առաջնորդեցի Քանանացիների ամբողջ երկրով, բազմացրի նրա սերունդը, նրան տուի Իսահակին, իսկ 4 Իսահակին տուի Յակոբին եւ Եսաւին, Եսաւին որպէս ժառանգութիւն տուի Սէիր լեռը: Յակոբը եւ նրա որդիներն իջան Եգիպտոս եւ այնտեղ մեծ, բազմամարդ ու հզօր ազգ դարձան: Եգիպտացիները նրանց չարչարեցին, 5 եւ Տէրը հարուածեց եգիպտացիներին նրանց դէմ գործադրած նշաններով եւ զարմանահրաշ գործերով: 6 Յետոյ Տէրը ձեզ հանեց Եգիպիտոսից, դուք մտաք ծովը, եւ եգիպտացիները կառքերով ու ձիերով հետապնդեցին ձեր հայրերին մինչեւ Կարմիր ծովը: 7 Մենք աղաղակեցինք Տիրոջը, եւ նա ամպ ու մէգ դրեց մեր եւ եգիպտացիների միջեւ, ծովը նրանց վրայ լցրեց եւ ծածկեց նրանց: Մեր աչքերը տեսան, թէ ինչ արեց Տէրը եգիպտացիների երկրում: Ապա շատ օրեր մնացիք անապատում: 8 Եւ նա ձեզ բերեց Յորդանան գետի այն կողմում բնակուող ամորհացիների երկիրը, նրանք ձեր դէմ պատերազմեցին, Տէրը նրանց մատնեց ձեր ձեռքը, դուք ժառանգեցիք նրանց երկիրն ու կոտորեցիք նրանց ձեր առաջ: 9 Մովաբի արքայ Սեպփորի որդի Բաղակը վեր կացաւ եւ պատերազմ մղեց Իսրայէլի դէմ. մարդ ուղարկեց, կանչեց Բէորի որդի Բաղաամին, որ ձեզ նզովի: 10 Բայց ձեր Տէր Աստուածը չկամեցաւ ձեզ կորստեան մատնել, օրհնեց ձեզ, ազատեց ձեզ նրանց ձեռքից եւ նրանց մատնեց ձեր ձեռքը: 11 Դուք անցաք Յորդանան գետը եւ եկաք Երիքով: Երիքովի բնակիչները, ամորհացիները, քանանացիները, փերեզացիները, խեւացիները, յեբուսացիները, քետացիները եւ գերգեսացիները պատերազմեցին ձեր դէմ, եւ Տէրը մատնեց նրանց ձեր ձեռքը: 12 Ձեզանից առաջ իշամեղուներ ուղարկեց եւ նրանց՝ ամորհացիների տասներկու թագաւորներին, քշեց ձեր առաջից: Ո՛չ քո սրով եւ ո՛չ քո աղեղով արուեց այդ: 13 Տէրը ձեզ տուեց այս երկիրը, որտեղ դուք չէք աշխատել եւ բնակւում էք այն քաղաքներում, որ դուք չէք շինել, ուտում էք այն այգիներից եւ թզենիներից, որ դուք չէք տնկել:

14 Արդ, դուք վախեցէ՛ք Տիրոջից, ծառայեցէ՛ք նրան շիտակութեամբ եւ արդարութեամբ, հեռացրէ՛ք օտար աստուածներին, որոնց պաշտեցին ձեր հայրերը գետի այն կողմում եւ Եգիպտոսում, եւ պաշտեցէ՛ք Տիրոջը: 15 Իսկ եթէ ձեզ համար հաճելի չէ պաշտել Տիրոջը, ապա որոշեցէ՛ք այսօր, թէ ո՛ւմ էք պաշտելու. ձեր հայրերի՞ աստուածներին, որոնք գետի այն կողմում էին, թէ՞ ամորհացիների աստուածներին, որոնց երկրում դուք բնակւում էք: Իսկ ես եւ իմ տունը Տիրոջն ենք պաշտում, որովհետեւ նա սուրբ է»: 16 Ժողովուրդը պատասխան տուեց եւ ասաց. «Քա՛ւ լիցի, որ մենք թողնենք մեր Տէր Աստծուն եւ օտար աստուածներ պաշտենք, 17 որովհետեւ Տէրն է մեր Աստուածը, նա հանեց մեզ եւ մեր հայրերին եգիպտացիների երկրից, ծառայութեան տնից, մեզ համար նա մեծամեծ նշանները գործեց, պահպանեց մեզ մեր գնացած ամբողջ ճանապարհին, պահպանեց բոլոր ազգերի մէջ, որոնց միջով մենք անցանք: 18 Տէրը մեր առաջից քշեց ամորհացիներին եւ այս երկրում բնակուող բոլոր ազգերին. ուրեմն

մենք էլ Տիրոջն ենք պաշտելու, որովհետեւ նա է մեր Աստուածը»:

19 Յեսուն ասաց ժողովրդին. «Դուք չէք կարող Տիրոջը պաշտել, որովհետեւ նա սուրբ է. նա նախանձոտ լինելով՝ չի ների ձեր մեղքերն ու անօրէնութիւնները, 20 երբ թողնէք Տիրոջը եւ օտար աստուածներին պաշտէք: Նա կը չարչարի եւ կ'ոչնչացնի ձեզ այն բարիքների փոխարէն, որ արել է ձեզ համար»: 21 Ժողովուրդն ասաց Յեսուին. «Այդպէս չէ, մենք Տիրոջն ենք պաշտելու»:

22 Յեսուն ասաց ժողովրդին. «Ահա դուք ինքներդ ձեր վկաներն էք, որ դուք Տիրոջն ընտրեցիք նրան պաշտելու համար»: Նրանք ասացին. «Վկայ ենք»: 23 Նա ասաց. «Հեռացրէ՛ք ձեզանից օտար աստուածներին եւ ձեր սիրտն Իսրայէլի Տէր Աստծո՛ւն դարձրէք»: 24 Ժողովուրդը Յեսուին ասաց. «Մեր Տէր Աստծուն պիտի պաշտենք եւ նրա խօսքը պիտի լսենք»:

25 Եւ այդ օրը Յեսուն ժողովրդի հետ ուխտ արեց եւ Սելովում, Իսրայէլի Աստծու խորանի առաջ նրան օրէնքներ եւ կանոններ տուեց: 26 Յեսուն դրանք գրեց Աստծու օրէնքի գրքում, առաւ մի մեծ քար եւ այն կանգնեցրեց Տիրոջ առաջ եղած բեւեկնի ծառի տակ: 27 Եւ Յեսուն ամբողջ ժողովրդին ասաց. «Ահա այս քարը ձեզ վկայ լինի, որովհետեւ սա լսեց Տիրոջ բոլոր խօսքերը, որ նա այսօր ձեզ ասաց. սա թող վկայ լինի ձեզ յետագայ օրերին, երբ պատահի, որ ուրանաք ձեր Տէր Աստծուն[†]»: 28 Եւ Յեսուն արձակեց ժողովրդին, ու ամէն մէկը գնաց իր տեղը: 29 Եւ Իսրայէլը պաշտեց Տիրոջը Յեսուի կենդանութեան բոլոր օրերին եւ այն ծերերի կենդանութեան բոլոր օրերին, որոնք ողջ մնացին Յեսուից յետոյ, եւ որոնք տեսան Տիրոջ բոլոր գործերը, որ նա արեց Իսրայէլի համար:

ՅԵՍՈՒԻ ԵՒ ԵՂԻԱԶԱՐԻ ՄԱՀԸ

30 Սրանից յետոյ Նաւէի որդի Յեսուն՝ Տիրոջ ծառան, հարիւր տասը տարեկանում մեռաւ: 31 Նրան թաղեցին իր ժառանգութեան սահմաններում, Թամնասաքարում, Եփրեմի լեռան վրայ, Գայաս լեռան հիւսիսային կողմում: Այնտեղ, որտեղ թաղեցին նրան, որպէս յիշատակ նրա հետ դրին այն քարէ սրերը, որոնցով նա Գաղգաղայում թլփատել էր իսրայէլացիներին, երբ նրանց հանեց Եգիպտոսից, ինչպէս հրամայել էր Տէրը. դրանք այնտեղ են մինչեւ այսօր:

32 Իսրայէլացիները Եգիպտոսից հանեցին Յովսէփի ոսկորները եւ դրանք թաղեցին Սիկիմում, ագարակի այն մասում, որ հարիւր գառով առել էր Յակոբը Սիկիմում բնակուող ամորհացիներից եւ բաժին էր տուել Յովսէփին: 33 Դրանից յետոյ վախճանուեց Եղիազար քահանան՝ Ահարոնի որդին, եւ թաղուեց իր որդի Փենէէսին պատկանող Գաբաաթում, որ տուել էին նրան Եփրեմի լեռան վրայ: Այդ օրերին իսրայէլացիներն առնելով Աստծու ուխտի տապանակը՝ տանում էին իրենց հետ: Եւ Փենէէսը քահանայ դարձաւ իր հօր՝ Եղիազարի փոխարէն, մինչեւ որ մեռաւ եւ թաղուեց Գաբաաթի իր կալուածքում: Իսրայէլացիները գնացին ամէն մէկն իր տեղն ու իր քաղաքը: Նրանք պաշտեցին Աստարտին, Աստարոթին եւ իրենց շրջակայքում եղած ազգերի աստուածներին: Եւ Տէրը նրանց մատնեց Մովաբի արքայ Եգղոմի ձեռքը, որը տիրեց նրանց վրայ տասնութ տարի:

[†]Իսրայէլէն՝ ...որ չլինի, թէ ուրանամ ձեր Տէր Աստծուն:

ԴԱՏԱՒՈՐՆԵՐ

Ներածութիւն

Դատաւորների գրքի պատմութիւնները վերաբերում են այն փոթորկալի ժամանակաշրջանին, որն սկսում է Քանանի երկրում իսրայէլացիների հաստատումից մինչեւ նրանց թագաւորութեան հիմնադրումը: Գիրքն ունի «Դատաւորներ» վերնագիրը, որովհետեւ նրա կենտրոնական մասում տրուած է մի շարք «դատաւորների» գործերի կամ նրանց կեանքի համառօտ պատմութիւնը: Այս վերնագրի տակ խօսւում է այն մարդկանց մասին, որոնց իշխանութիւնը գալիս է Աստծուց եւ տարածւում շատ աւելի լայն մի բնագաւառի վրայ, քան իրաւագիտութեան բնագաւառն է: Այս մարդիկ կոչուած են թէ՛ կառավարելու ժողովրդին եւ թէ՛ ազատագրելու դժուարութիւնների մէջ գտնուող մէկ կամ բազմաթիւ ցեղերի:

Դատաւորների գիրքը բաղկացած է երեք մեծ մասերից.

Առաջին մասում յիշատակւում են այն իրադարձութիւնները, որոնք վերաբերում են Քանանի երկրում իսրայէլացիների հաստատմանը մինչեւ Յեսուի մահը:

Երկրորդ մասում գլխաւորապէս ցոյց է տրուած, թէ ինչպէս Աստուած ազատագրում է իր ժողովրդին՝ ընտրելով եւ ուղարկելով այնպիսի մարդկանց, որոնք յստակօրէն իրականացնում են այդ ազատագրումը:

Երրորդում բերուած են երկու դրուագներ, որոնք ցայտուն կերպով վեր են հանում իսրայէլական ցեղերի մէջ տիրող անկարգութիւնը նախքան թագաւորութեան հաստատումը:

Դատաւորների գրքում արտայայտուած հիմնական գաղափարն այն է, որ, ինչ որ պատահում է Իսրայէլին, կախուած է Աստծու հետ նրա պահպանած յարաբերութիւնից: Երբ նա անհաւատարիմ է Աստծուն, ճնշման է ենթարկւում տեղական կամ հարեւան երկրի բնակիչների կողմից, իսկ երբ վերադառնում է Աստծուն եւ նրան օգնութեան կանչում, Աստուած ազատագրում է նրան: Այսուհանդերձ իսրայէլացիներն անընդհատ փորձում են պաշտամունք մատուցել Քանանի երկրի չաստուածներին կամ Աստծուն մօտենալ անձնական նպատակներով կամ էլ մոռացութեան տալ նրա պահանջները:

Գրքի երրորդ մասը մասնաւորապէս ցոյց է տալիս, թէ ինչ կարող էին դառնալ իրենց բախտին թողնուած իսրայէլական ցեղերը: Աստծու ժողովրդի համար կարեւոր էր այն հարցը, թէ նա ո՞ր իշխանութեան տակ էր ուզում ապրել. հնարաւո՞ր էր, որ իւրաքանչիւրը շարունակէր ապրել այնպէս, «ինչպէս յարմար էր թւում իրեն»:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԻՈՒՄ ԵՆ ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

1 *Յեսուի վախճանուելուց յետոյ իսրայէլացիները հարցնում էին Տիրոջը եւ ասում. «Մեզնից ո՞վ առաջինը դուրս կը գայ պատերազմի քանանացիների դէմ»:*
2 *Տէրն ասաց. «Յուդայի՛ ցեղը պէտք է դուրս գայ, քանի որ երկիրը նրա ձեռքն եմ յանձնել»:* 3 *Եւ Յուդան իր եղբայր Շմաւոնին ասաց. «Վե՛ր կաց գնանք ինձ հետ իմ կալուածքը եւ քանանացիների դէմ պատերազմենք, ես էլ քեզ հետ կը գամ քո կալուածքը»: Շմաւոնը գնաց նրա հետ:* 4 *Յուդան գնաց, եւ Տէրը քանանացիներին ու փերեզացիներին յանձնեց նրա ձեռքը, եւ նա Բեզեկում նրանցից տասը հազար մարդ կոտորեց:*
5 *Բեզեկում գտան Ադոնիբեզեկին, նրա դէմ պատերազմեցին եւ ջարդեցին քանանացիներին ու փերեզացիներին:* 6 *Ադոնիբեզեկը փախաւ, բայց նրան հետապնդեցին, հասան նրան եւ կտրեցին նրա ձեռքերի ու ոտքերի† մատները:* 7 *Ադոնիբեզեկն ասաց. «Եօթանասուն թագաւորներ, որոնց ձեռքերի ու ոտքերի մատները կտրուած էին, հաւաքում էին իմ սեղանի տակի փշրանքները: Արդ, ինչպէս ես էի արել, այդպէս էլ Աստուած ինձ հատուցեց»: Նրան բերին Երուսաղէմ, եւ նա այնտեղ մեռաւ:*

ՅՈՒԴԱՅԻ ՑԵՂԸ ՏԻՐՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻՆ ԵՒ ՔԵԲՐՈՆԻՆ

8 *Յուդայի որդիները պատերազմեցին Երուսաղէմի դէմ, գրաւեցին այն, սրի քաշեցին եւ քաղաքը հրով այրեցին:*
9 *Դրանից յետոյ Յուդայի որդիներն իջան պատերազմելու լեռան կողմում, հարաւում եւ դաշտավայրում բնակուող քանանացիների դէմ:* 10 *Յուդան գնաց Քեբրոնում բնակուող քանանացիների վրայ, եւ Քեբրոնը դուրս եկաւ նրա դէմ: Քեբրոնի անունն առաջ Կարիաթարբոկ Սեփեր էր: Ջարդեցին Սէսիին, Աքիմանին եւ Թոլմիին՝ Ենակի զաւակներին:*

†Եբրայերէն՝ *բութ մատները:*

ԳՈԴՈՆԻԷԼԸ ՏԻՐՈՒՄ Է ԴԱԲԻՐԻՆ
(Յեսս. 15. 13-19)

11 *Այնտեղից յարձակուեցին Դաբիրի բնակիչների վրայ: Դաբիրի անունն առաջ Նամակաց քաղաք էր:* 12 *Քաղէբն ասաց. «Ով որ հարուածի Նամակաց քաղաքին եւ գրաւի այն, իմ դուստր Ասքային նրան կնութեան կը տամ»:*
13 *Եւ գրաւեց այն Քաղէբի կրտսեր եղբօր՝ Կենեզի որդի Գոդոնիէլը, եւ Քաղէբն իր դուստր Ասքային նրան կնութեան տուեց:* 14 *Երբ աղջիկը գնում էր, Գոդոնիէլը յորդորեց նրան, որ իր հօրից ագարակ խնդրի: Աղջիկը տրտնջաց, աղաղակեց էշի վրայից եւ ասաց. «Հարաւային երկիր տուիր ինձ»: Քաղէբը նրան ասաց. «Ի՞նչ եղաւ քեզ»:* 15 *Ասքան նրան ասաց. «Ինձ օրհնութիւն տո՛ւր. որովհետեւ ինձ հարաւային երկիր տուիր, տո՛ւր ինձ նաեւ ջրի աղբիւրներ»: Եւ Քաղէբը նրա ցանկութեամբ նրան տուեց վերին աղբիւրներն ու հովիտների աղբիւրները:*

ՅՈՒԴԱՅԻ ՈՒ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՑԵՂԵՐԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

16 *Մովսէսի աներոջ՝ Կինեցի Յոբաբայի որդիները, Արմաւենիների քաղաքից գնացին Յուդայի որդիների մօտ, Յուդայի անապատը, որը Յուդայի երկրի հարաւում է, Արադի զառիվայրի մօտ, եւ գնացին բնակուեցին ժողովրդի հետ:* 17 *Յուդան գնաց իր եղբայր Շմաւոնի հետ, եւ նրանք հարուածեցին, նզովեցին ու կոտորեցին Սեփաթում բնակուող քանանացիներին եւ այդ քաղաքի անունը կոչեցին Սատակում*‡*:*
18 *Յուդան չառաւ‡ Գազան ու նրա սահմանները, Ասկաղոնն ու նրա սահմանները, Ակկարոնն ու նրա սահմանները, Ազոտոսն ու նրա արտերը:* 19 *Տէրը Յուդայի հետ էր: Յուդան գրաւեց լեռը, բայց հովիտների բնակիչներին չկարողացաւ տիրել, որովհետեւ Ռեքաբը զատեց նրանց, եւ նրանք երկաթէ կառքեր ունէին:* 20 *Քեբրոնը տուին Քաղէբին, ինչպէս ասել էր Մովսէսը: Քաղէբը այնտեղից ժառանգութիւն*

†Եբրայերէն՝ *նզովմ:*
‡Եբրայերէն՝ *առաւ:*

ստացաւ Ենակի որդիների երեք քաղաքները եւ քշեց այնտեղից Ենակի երեք որդիներին:
21 Բենիամինի որդիները Երուսաղէմում բնակուող յեբուսացիներին չնուաճեցին, եւ յեբուսացիները բնակւում են այնտեղ Բենիամինի որդիների հետ մինչեւ այսօր:

ԵՓՐԵՄԻ ՈՒ ՄԱՆԱՍԷԻ ՑԵՂԵՐԸ ՏԻՐՈՒՄ ԵՆ ԲԵԹԷԼԻՆ

22 Յովսէփի որդիներն իրենք էլ գնացին Բեթէլի դէմ, եւ Տէրը նրանց հետ էր: 23 Իսրայէլի տոհմը բանակատեղի դրեց Բեթէլում. այդ քաղաքի անունն առաջ Լուզա էր: 24 Պահապանները մի մարդ տեսան, որ դուրս էր գալիս այդ քաղաքից, բռնեցին նրան եւ ասացին. «Յո՛յց տուր մեզ քաղաքի մուտքը, եւ մենք կը խնայենք քեզ: 25 Նա նրանց ցոյց տուեց քաղաքի մուտքը, եւ նրանք քաղաքը սրի քաշեցին, իսկ այն մարդուն եւ նրա ազգատոհմը ազատ արձակեցին: 26 Այդ մարդը գնաց Քետիմ երկիրը, այնտեղ քաղաք շինեց եւ նրա անունը Լուզա դրեց, եւ այդ է նրա անունը մինչեւ այսօր:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ, ՈՐՈՆՑ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՉՔՇԵՑԻՆ

27 Մանասէն որպէս ժառանգութիւն չստացաւ Բեթսանը, այսինքն՝ Սկիւթուպոլիսը, նրա աւանները եւ նրա արտերը, Թանաքը եւ նրա աւանները, Դորի բնակիչներին, նրա շուրջը բնակուողներին եւ նրա աւանները, Բաղակի բնակիչներին, նրա շուրջը բնակուողներին եւ նրա աւանները, Յեբղամի բնակիչներին, նրա շուրջը բնակուողներին եւ նրա աւանները. եւ քանանացիները շարունակեցին բնակուել այդ երկրում: 28 Երբ Իսրայէլը հզօրացաւ, քանանացիներին հարկի տակ գցեց, բայց նրանց իսպառ չվերացրեց:
29 Եփրեմն էլ չվերացրեց Գազերում բնակուող քանանացիներին, եւ քանանացիները բնակուեցին նրանց մէջ Գազերում ու Եփրեմին հարկատու եղան:
30 Զաբուղոնն էլ չվերացրեց Կեդրոնի բնակիչներին ու Ամանի բնակիչներին, եւ քանանացիները բնակուեցին նրանց մէջ եւ նրանց հարկատու եղան:
31 Ասերը չվերացրեց Ակքովի բնակիչներին, որոնք նրան հարկատու եղան, նաեւ Դորի, Սիդոնի, Դալափի, Աքազիփի, Ելփայի, Ափէկի, Ռոբի բնակիչներին: 32 Ասերացիները բնակուեցին այդ երկրում ապրող քանանացիների մէջ, որովհետեւ չկարողացան վերացնել նրանց:
33 Նեփթաղիմը չվերացրեց Բեթսամիւսի բնակիչներին, ոչ էլ Բեթանաթի բնակիչներին: Նեփթաղիմը բնակուեց այդ երկրում ապրող քանանացիների մէջ, իսկ Բեթսամիւսի եւ Բեթանաթի բնակիչները նրան հարկատու եղան:
34 Ամորհացիները Դանի որդիներին նեղեցին լերան վրայ, որովհետեւ նրանց թոյլ չէին տալիս իջնել հովիտները: 35 Եւ ամորհացիները շարունակեցին բնակուել Մրտենիների լերան վրայ: Այնտեղ, Մրտաստանում եւ Սաղապինում արջեր եւ աղուէսներ կային: Յովսէփի տոհմի ձեռքը ծանրացաւ ամորհացիների վրայ, եւ ամորհացիները հարկատու եղան նրանց: 36 Ամորհացիները Ակրաբիմի զառիվայրի վրայ, Վէմից վեր սահմանակից էին եդոմայեցիներին:

ՏԻՐՈՋ ՄԵՂԱԴՐԱՆՔՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

2 Տիրոջ հրեշտակը Գաղգաղայից դուրս եկաւ Լացատեղը, Բեթէլ եւ Իսրայէլի տուն ու ասաց նրանց. «Այսպէս է ասում Տէրը. "Տէրը ձեզ հանեց Եգիպտոսից եւ բերեց այն երկիրը, որի համար ձեր հայրերին երդուել էր, որ ձեզ կը տայ եւ ձեզ ասաց. "Ձեզ հետ դրած ուխտս յաւիտեան չեմ դրժի: 2 Դուք այս երկրի բնակիչների հետ դաշինք մի՛ կնքէք, ոչ էլ նրանց չաստուածների հետ, մի՛ երկրպագէք նրանց, այլ խորտակեցէ՛ք նրանց կուռքերը, կործանեցէ՛ք նրանց զոհասեղանները": Բայց դուք իմ խօսքը չլսեցիք եւ այդ բանն արեցիք: 3 Եւ ես ասացի. "Այլեւս չեմ տեղաշարժի այս ժողովրդին, որին շարունակ կոտորեցի եւ նրան չեմ քշի ձեր առաջից: Նրանք ձեզ համար փորձանք կը դառնան, եւ նրանց չաստուածները ձեզ համար գայթակղութիւն կը լինեն"»: 4 Երբ Տիրոջ հրեշտակն այս խօսքերն ասաց Իսրայէլի բոլոր որդիներին, ժողովուրդը ձայն բարձրացրեց ու լաց եղաւ: 5 Դրա համար էլ այն տեղի անունը Լալօնք դրին. եւ այնտեղ Տիրոջը զոհ մատուցեցին:

ՅԵՍՈՒԻ ՄԱՀԸ

6 Յեսուն արձակեց ժողովրդին, եւ իսրայէլացիները գնացին ամէն մէկն իր տունը եւ ամէն մէկն իր կալուածքը՝ երկիրը ժառանգութիւն ստանալու համար: 7 Եւ ժողովուրդը Տիրոջը ծառայեց Յեսուի կենդանութեան բոլոր օրերում եւ այն ծերերի կենդանութեան բոլոր օրերում, որոնք երկար ապրեցին Յեսուից յետոյ եւ որոնք տեսել էին Տիրոջ բոլոր մեծամեծ գործերը, որ նա արեց Իսրայէլի համար: 8 Տիրոջ ծառայ Յեսուն՝ Նաւէի որդին, վախճանուեց հարիւր տասը տարեկան հասակում, 9 եւ նրան թաղեցին իր ժառանգութիւնը հանդիսացող երկրի լերան վրայ, Թամնաթարէսում, Եփրեմի լերան վրայ, Գայաս լերան հիւսիսային կողմում: 10 Վախճանուեց նաեւ այդ ամբողջ սերունդը: Դրանից յետոյ եկաւ ուրիշ սերունդ, որ չէր ճանաչում ո՛չ Տիրոջը եւ ո՛չ էլ այն գործերը, որ նա արել էր Իսրայէլի մէջ:

ԻՍՐԱՅԷԼԸ ԼՔՈՒՄ Է ՏԻՐՈՋԸ

11 Իսրայէլացիները Տիրոջ առաջ չարիք գործեցին եւ Բահաղիմին պաշտեցին. 12 թողին իրենց հայրերի Տէր Աստծուն, որ նրանց հանել էր Եգիպտացիների երկրից, գնացին օտար աստուածների՝ իրենց շուրջը եղած ազգերի աստուածների ետեւից, երկրպագեցին նրանց եւ բարկացրին Տիրոջը, 13 լքեցին նրան եւ պաշտեցին Բահաղին ու Աստարտներին: 14 Սաստիկ զայրացաւ Տէրն իսրայէլացիների վրայ եւ նրանց մատնեց կողոպտիչների ձեռքը, որոնք կողոպտեցին նրանց: Տէրը մատնեց նրանց շրջակայ թշնամիների ձեռքը, եւ նրանք չկարողացան դէմ կանգնել իրենց բոլոր թշնամիներին, որոնց հետ կռապաշտութիւն էին արել: 15 Տիրոջ ձեռքը չարիք պատճառելու համար նրանց վրայ էր, ինչպէս որ ասել էր Տէրը եւ ինչպէս որ երդուել էր. եւ Տէրը խիստ նեղեց նրանց:
16 Տէրը նրանց համար դատաւորներ կարգեց եւ նրանց փրկեց կողոպտիչների ձեռքից: Բայց նրանք դատաւորներին էլ չլսեցին, 17 որովհետեւ օտար աստուածների հետեւելով՝ կռապաշտութիւն արեցին, երկրպագեցին նրանց եւ բարկացրին Տիրոջը: Շուտով խոտորուեցին այն ճանապարհից, որով ընթանում էին նրանց հայրերը՝ Տիրոջ պատուիրանները լսելով: Նրանք այդպէս չարեցին: 18 Եւ երբ Տէրը նրանց համար դատաւորներ կարգեց, Տէրն այդ դատաւորների հետ էր եւ նրանց փրկում էր թշնամիների ձեռքից դատաւորների կենդանութեան բոլոր օրերին, որովհետեւ Տէրը նրանց կարեկցում էր պաշարողների եւ չարչարողների երեսից կրած նրանց հեծութեան համար: 19 Եւ երբ դատաւորը մեռնում էր, նրանք դառնում, նորից անօրէնութիւն էին անում իրենց հայրերից աւելի՝ գնալով օտար աստուածների ետեւից, նրանց պաշտելով ու նրանց երկրպագելով: Նրանք դէն չէին նետում իրենց կուռքերը եւ ետ չէին դառնում իրենց վատ ճանապարհներից: 20 Եւ սաստիկ բարկացաւ Տէրն իսրայէլացիների վրայ եւ ասաց. «Քանի որ այս ազգը զանց արեց իմ ուխտը, որը ես դրել եմ նրանց հայրերի հետ, եւ չլսեց իմ ձայնը, 21 ես էլ այլեւս չեմ քշի նրանց առաջից ոչ մի մարդու այն ազգերից, որ կենդանի թողեց Նաւէի որդի Յեսուն: 22 Նա թողեց, որ նրանցով փորձեմ իսրայէլացիներին, թէ արդեօք նրանք կը զգուշանա՞ն եւ Տիրոջ ճանապարհով կը գնա՞ն, թէ՞ ոչ, ինչպէս զգուշացան նրանց հայրերը»: 23 Եւ Տէրը թողեց այդ ազգերին, շուտով չվերացրեց նրանց եւ չմատնեց նրանց Յեսուի ձեռքը:

ԵՐԿՐՈՒՄ ՄՆԱՑԱԾ ԱԶԳԵՐԸ

3 Սրանք են այն ազգերը, որոնց թողեց Յեսուն, որպէսզի Աստուած նրանցով փորձի իսրայէլացիներին, ամենքին, որոնք չգիտէին քանանացիների բոլոր

պատերազմների մասին. 2 (միայն նրա համար, որ պատերազմել սովորեցնեն իսրայէլացիների սերունդներին, նրանց, որոնք առաջուց չգիտէին պատերազմել). 3 Նա թողեց այլազգիների† հինգ նախարարութիւնները, բոլոր քանանացիներին, սիդոնացիներին եւ Լիբանանում Բաղհերմոն սարից մինչեւ Լաբոեմաթ բնակուող խեւացիներին: 4 Նրանցով պիտի փորձէր իսրայէլացիներին եւ իմանար, թէ կը լսե՞ն արդեօք Տիրոջ պատուիրանները, որ նա տուել էր նրանց հայրերին Մովսէսի միջոցով:

5 Եւ իսրայէլացիները բնակուեցին քանանացիների, քետացիների, ամորհացիների, փերեզացիների, խեւացիների, յեբուսացիների եւ գերգեսացիների մէջ: 6 Նրանց աղջիկներին իրենց համար կին առան եւ իրենց աղջիկներին տուին նրանց տղաներին, պաշտեցին նրանց չաստուածներին:

ԳՈԴՈՆԻԷԼ

7 Իսրայէլացիները չարիք գործեցին Տիրոջ առաջ, մոռացան իրենց Տէր Աստծուն եւ պաշտեցին Բահաղին եւ անտառները‡: 8 Տէրը սաստիկ բարկացաւ իսրայէլացիների վրայ եւ նրանց մատնեց Միջագետքի ասորեստանցիների արքայ Քուսարսաթեմի ձեռքը, եւ իսրայէլացիները նրան ծառայեցին ութ տարի:

9 Իսրայէլացիները աղաղակ բարձրացրին Տիրոջ առաջ, Տէրը Իսրայէլի համար մի փրկիչ մէջտեղ հանեց. նրանց տուեց Գոդոնիէլին՝ Կենեզի որդուն, Քաղէբի կրտսեր եղբօրը: Տէրը լսեց նրանց: 10 Գոդոնիէլի մէջ Տիրոջ հոգին բնակուեց, եւ նա Իսրայէլում դատաւորութիւն արեց: Նա պատերազմի դուրս եկաւ Քուսարսաթեմի դէմ, Տէրը նրա ձեռքը մատնեց ասորեստանցիների Քուսարսաթեմ արքային. Գոդոնիէլը յաղթեց Քուսարսաթեմին: 11 Երկիրը քառասուն տարի հանգստացաւ: Ապա Կենեզի որդի Գոդոնիէլը մեռաւ:

†Այստեղ եւ շատ այլ տեղերում այլազգի բառի տեղ եբրայերէնն ունի *փղշտացի*:

‡Եբրայերէն՝ *Աշերայ*:

ԱՒՈԴ

12 Իսրայէլացիները չարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ. եւ Տիրոջ առաջ չարիք գործելու պատճառով Տէրը Իսրայէլի դէմ զօրացրեց Մովաբի արքայ Եգղոմին: 13 Նա հաւաքեց նրանց դէմ Ամոնի եւ Ամաղէկի բոլոր որդիներին, գնաց հարուածեց Իսրայէլին եւ տիրեց Արմաւենիների քաղաքին: 14 Տասնութ տարի իսրայէլացիները ծառայեցին Մովաբի արքայ Եգղոմին:

15 Իսրայէլացիները աղաղակ բարձրացրին Տիրոջ առաջ, եւ Տէրը նրանց համար մի փրկիչ մէջտեղ հանեց՝ յիմենեցի մի մարդու՝ Գերայի որդի Աւոդին, որը երկու ձեռքով էլ յաջող էր գործում†: Իսրայէլացիները նրա ձեռքով Մովաբի Եգղոմ արքային ընծաներ ուղարկեցին: 16 Աւոդն իր համար մէկ կանգուն երկարութեամբ երկսայրի սուր շինեց, կապեց այն իր աջ ազդրին թիկնոցի տակից եւ գնաց 17 ու ընծաները մատուցեց Մովաբի արքայ Եգղոմին: Եգղոմը շատ գէր մարդ էր: 18 Երբ Աւոդն իր ընծաները տուեց վերջացրեց եւ արձակեց ընծաները բերողներին, Եգղոմը վերադարձաւ Գաղգաղայում եղած կուռքերի մօտից: 19 Աւոդն ասաց. «Ո՛վ արքայ, քեզ ծածուկ ասելու խօսք ունեմ»: Եգղոմն ասաց. «Լռի՛ր»: Եւ ամենքին ասաց. «Հեռո՛ւ գնացէք»: Եւ նրա մօտ եղողները դուրս եկան: 20 Նա միայնակ նստած էր իր ամարանոցի վերնատանը: Աւոդն ասաց. «Ո՛վ արքայ, ես քեզ համար Աստծու պատգամ ունեմ հաղորդելու»: Եգղոմն աթոռից վեր կացաւ գնաց նրա մօտ: 21 Երբ նա վեր կացաւ, Աւոդն իր ձախ ձեռքը մեկնեց, քաշեց սուրն իր աջ ազդրից եւ Եգղոմի կողը խրեց, 22 սրի կոթն էլ խրեց վէրքի մէջ: Ճարպը ծածկեց վէրքի բերանը, որովհետեւ նա սուրը նրա կողից չհանեց: 23 Նա դուրս եկաւ պատշգամբ, անցաւ սրահը, նրա դէմ փակեց վերնատան դռները, կողպեց, եւ ինքը դուրս ելաւ գնաց: 24 Նրա ծառաները ներս մտան, տեսան, որ վերնատան դռները փակուած են, եւ ասացին. «Գուցէ

†Եբրայերէն՝ *ձախլիկ էր*:

սենեակում նստել է բնական կարիքի համար»: 25 Կանգնեցին ու մնացին ամօթից, եւ ոչ ոք բաց չէր անում վերնատան դռները: Առան բանալին, բաց արին եւ տեսան, որ ահա իրենց տէրը ընկած մեռած է գետնին: 26 Մինչ նրանք իրարանցման մէջ էին, Աւոդը փախաւ Սիրոթա, եւ ոչ ոք ուշ չդարձրեց նրա վրայ: Նա անցաւ կուռքերի մօտով եւ փախաւ ընկաւ Սիրոթա:

27 Երբ Աւոդը եկաւ Իսրայէլ, փող փչեց Եփրեմի լեռան վրայ: Իսրայէլացիները նրա հետ իջան լեռից, եւ ինքը նրանց առջեւում էր: 28 Նա ասաց նրանց. «Իջէ՛ք իմ ետեւից, որովհետեւ մեր Տէր Աստուածը մեր թշնամի մովաբացիներին մեր ձեռքը մատնեց»: Նրանք իջան նրա ետեւից ու նախ գրաւեցին Մովաբի եւ Յորդանան գետի միջեւ եղած անցումները եւ ոչ մի մարդու թոյլ չտուին անցնել: 29 Այդ օրը մովաբացիներից կոտորեցին մօտ տասը հազար մարդ՝ նրանց բոլոր պատերազմողներին ու բոլոր զօրաւոր մարդկանց, եւ նրանցից ոչ մի մարդ չազատուեց: 30 Այդ օրը մովաբացիներն ընկճուեցին Իսրայէլի ձեռքի տակ, եւ երկիրն ութսուն տարի հանգստացաւ: Աւոդը նրանց դատաւորը եղաւ մինչեւ իր մահը:

ՍԱՄԵԳԱՐ

31 Աւոդից յետոյ մէջտեղ ելաւ Անաթի որդի Սամեգարը, որն արօրի մաճով այլազգիներից վեց հարիւր մարդ կոտորեց, աւար առաւ չափազանց շատ արջառ եւ ոչխար՝ չհաշուած կովերի հորթերը: Եւ նա՛ էլ փրկեց Իսրայէլը:

ԴԵԲՈՐԱ ԵՒ ԲԱՐԱԿ

4 Իսրայէլացիները չարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ: Սամեգարը† մեռաւ: 2 Տէրը նրանց մատնեց քանանացիների արքայ Յաբինի ձեռքը, որը թագաւորում էր Ասորում: Նրա զօրագլուխը Սիսարան էր, որը բնակւում էր Ազգերի Արիսոթում: 3 Իսրայէլացիներն աղաղակ բարձրացրին Տիրոջ առաջ, որովհետեւ Յաբինը ինը հարիւր երկաթէ կառքեր ունէր եւ քսան տարի սաստիկ նեղում էր իսրայէլացիներին:

4 Այն ժամանակ Իսրայէլում դատաւորութիւն էր անում մարգարէուհի Դեբորան՝ Լաբիդոթի կինը: 5 Նա բնակւում էր արմաւենու տակ, Ռամայի եւ Բեթէլի միջեւ, Եփրեմի լեռան վրայ: Իսրայէլացիները նրա մօտ էին գնում դատաստանի համար: 6 Դեբորան մարդ ուղարկեց եւ Նեփթաղիմի Կադէսից կանչեց Բարակին՝ Աբինէէմի որդուն եւ նրան ասաց. «Չէ՞ որ Իսրայէլի Տէր Աստուածը քեզ հրաման տուեց, որ գնաս Թաբոր լեռը, քեզ հետ վերցնես Նեփթաղիմի որդիներից եւ Զաբուղոնի որդիներից տասը հազար մարդ 7 եւ տանես քեզ հետ Կիսոնի հեղեղատը, Յաբինի զօրագլուխ Սիսարայի, նրա զօրքերի ու նրա կառքերի դէմ, եւ Տէրը նրանց քո ձեռքը կը մատնի»: 8 Բարակը նրան ասաց. «Եթէ ինձ հետ գաս, կը գնամ, իսկ եթէ չգաս ինձ հետ, չեմ գնայ, որովհետեւ ես չգիտեմ այն օրը, երբ Տէրն իր հրեշտակի միջոցով կ՚աջակցի ինձ:» 9 Դեբորան նրան ասաց. «Անշուշտ կը գնամ քեզ հետ, բայց իմացի՛ր, որ քաջութիւնը քոնը չի լինի քո գնացած ճանապարհին, որովհետեւ Տէրը մի կնոջ ձեռքը կը մատնի Սիսարային»: Դեբորան վեր կացաւ ու Բարակի հետ գնաց Կադէս: 10 Բարակը Զաբուղոնին եւ Նեփթաղիմին հրաւիրեց Կադէս: Տասը հազար մարդ նրա ետեւից գնացին. Դեբորան նոյնպէս գնաց նրա հետ: 11 Կինեցիների մերձաւորները բաժանուել էին կինեցիներից՝ Մովսէսի աներոջ Յոբաբի որդիներից, եւ իրենց վրանը կանգնեցրել էին Հանգուցեալների կաղնու մերձակայքում, Կադէսի մօտ:

12 Սիսարային իմաց տուին, որ Աբինէէմի որդի Բարակը ելել է Թաբոր լեռը: 13 Սիսարան իր բոլոր կառքերը՝ ինը հարիւր երկաթէ կառքեր եւ իր հետ եղող բոլոր զօրքերը Ազգերի Արիսոթից Կիսոնի հեղեղատում հաւաքեց:

14 Դեբորան ասաց Բարակին. «Վե՛ր կաց, որովհետեւ սա է այն օրը, որ Տէրը Սիսարային քո ձեռքը մատնեց: Ահա Տէրն է քո առաջ»: Բարակն իջաւ

†Եբրայերէնում՝ *Աւոդը*:

Թաբոր լեռից, եւ նրա ետեւից՝ տասը
հազար մարդ: 15 Տէրը զարհուրեցրեց
Սիսարային եւ նրա բոլոր կառքերն ու
նրա ամբողջ բանակը խորտակեց
Բարակի առաջ սրի բերանով: Սիսարան
իջաւ իր կառքից եւ հետիոտն փախաւ:
16 Բարակը, կառքերն ու բանակը
հետապնդելով, գնաց մինչեւ Ազգերի
անտառը: Սիսարայի ամբողջ բանակն
ընկաւ սրի բերանով, եւ ոչ ոք չմնաց
կենդանի:

17 Սիսարան հետիոտն փախաւ գնաց
կինեցի Քաբերի կնոջ՝ Յայէլի վրանը,
որովհետեւ Ասորի արքայ Յաբինի եւ
կինեցի Քաբերի տան միջեւ խաղա-
ղութիւն էր: 18 Յայէլն ընդառաջ ելաւ
Սիսարային եւ ասաց նրան. «Դէպի ինձ
շո՛ւռ արի, տէ՛ր իմ, շո՛ւռ արի եւ մի՛
վախեցիր»: Եւ նա գնաց վրանը՝ նրա
մօտ. եւ կինը նրան ծածկեց նրա ծած-
կոցով: 19 Սիսարան ասաց նրան. «Մի
քիչ խմելու ջուր տո՛ւր ինձ, ծարաւ եմ»:
Եւ նա բաց արեց կաթի տիկը, խմեցրեց
նրան եւ ծածկեց նրա երեսը: 20 Սի-
սարան նրան ասաց. «Կանգնի՛ր դու
վրանի դռան մօտ, եւ եթէ մէկը քեզ մօտ
գայ եւ քեզ հարցնի ու ասի, թէ՝ այդտեղ
մարդ կա՞յ, կ'ասես, թէ՝ չկայ»: 21 Եւ
կինը ծածկեց նրան նրա ծածկոցով:
Ապա Քաբերի կին Յայէլն առաւ վրանի
ցիցը, բռնեց մուրճն իր ձեռքին, կամա-
ցուկ մտաւ նրա մօտ, ցիցը մխեց նրա
ծնօտի մէջ եւ նրան գետնին գամեց: Նա
տապալուեց նրա ոտքերի առաջ եւ
հոգին փչեց: 22 Եւ ահա Բարակը,
հետապնդելով, գալիս էր Սիսարայի
ետեւից: Յայէլը նրան ընդառաջ ելաւ եւ
ասաց նրան. «Ե՛կ այստեղ, քեզ ցոյց
տամ այն մարդուն, որին փնտռում ես»:
Նա մտաւ նրա մօտ, եւ ահա Սիսարան
ընկած մեռած էր՝ ցիցը նրա քունքի մէջ:

23 Տէր Աստուած այդ օրը իսրայէ-
լացիների առաջ նուաստացրեց քանա-
նացիների Յաբին թագաւորին: 24 Եւ
իսրայէլացիների ձեռքը գնալով զօրա-
նում էր քանանացիների Յաբին արքայի
վրայ, մինչեւ որ նրանց† բնաջինջ
արեցին:

†Եբրայերէն՝ *քանանացիների Յաբին արքային:*

ԴԵԲՈՐԱՅԻ ԵՒ ԲԱՐԱԿԻ ԵՐԳԸ

5 Այդ օրը Դեբորան եւ Աբինէեմի
որդի Բարակը օրհներգեցին ու ասացին.
2 «Իսրայէլի զօրավարներին առաջ-
նորդելու համար,
Ժողովրդի յօժարութեան համար
Օրհնեցէ՛ք Տիրոջը:
3 Լսեցէ՛ք, թագաւորնե՛ր,
Ունկնդի՛ր եղէք, նախարարնե՛ր,
Ես Տիրոջն եմ երգում,
Սաղմոս եմ ասում Իսրայէլի Աստ-
ծուն:
4 Տէ՛ր, երբ դու դուրս եկար Սէիրից,
Երբ չուեցիր Եդոմի դաշտերից,
Երկիրը շարժուեց, եւ երկինքը տակ-
նուվրայ եղաւ,
Ամպերը ջուր ցողեցին,
5 Լեռները շարժուեցին Սինայի Տէր
Ելովայի երեսից,
Իսրայէլի Տէր Աստծու երեսից:
6 Անաթի որդի Սամեգարի օրերին,
Յայէլի օրերին
Պակասեցին թագաւորները‡,
Գնացին շաւիղներով, խոտոր ճանա-
պարհներով գնացին:
7 Իսրայէլի մէջ զօրավարներ չմնացին,
չմնացին,
Մինչեւ որ մէջտեղ ելաւ Դեբորան,
Մինչեւ որ մէջտեղ ելաւ Իսրայէլի
մայրը:
8 Գարու հացի նման փափագեցին օ-
տար, սնոտի աստուածների.
Այն ժամանակ դեռեւս անյայտ նոր
գեղարդներով պատերազմեցին իշխան-
ների քաղաքները՝
Քառասուն հազար մարդ՝ Իսրայէլի
մէջ:
9 Իմ սիրտն Իսրայէլի իշխանների
կողմն է.
Ժողովրդի զօրաւորնե՛ր,
Օրհնեցէ՛ք Տիրոջը:
10 Կէսօրին սպիտակ ձիեր հեծնողնե՛ր,
Դատաւորների ատեան գնացողնե՛ր,
11 Ձա՛յն տուէք նուագածուներին ցնծա-
ցողների մէջ.
Այնտեղ թող գովաբանեն արդա-
րութիւնը Տիրոջ,
Նա զօրացրեց արդարութիւնն Իս-
րայէլի մէջ,

‡Եբրայերէն՝ *ճանապարհները:*

Այն ժամանակ Տիրոջ ժողովուրդն
իջաւ քաղաքները:
12 Արթնացի՛ր, արթնացի՛ր, Դեբորա՛,
Արթնացրո՛ւ բիւրաւորներին ժո-
ղովրդի հետ.
Արթնացի՛ր, արթնացի՛ր, խօսի՛ր
երգերով:
Զօրացած՝ վե՛ր կաց, Բարա՛կ,
Գերի՛ր քո գերիներին, ո՛վ Աբինէեմի
որդի:
13† Այնժամ մեծացաւ նրա զօրութիւնը,
Տէրն ի՛նձ ենթարկեց ինձնից ու-
ժեղներին:
14 Եփրեմի ժողովուրդը նրանց պատժեց
հովիտներում.
Քո եղբայր Բենիամինը հետեւեց քո
ժողովրդին:
Իմ մօտից խուզարկուներ իջան Մա-
քիր,
Իսկ Զաբուղոնի երկրից՝ պատմու-
թեան դպրի գաւազան ունեցող զօրա-
ցուցիչներ:
15 Իսաքարի զօրավարները Դեբորայի եւ
Բարակի հետ էին,
Եւ Բարակն իր ոտքերը տարածեց
հովիտների վրայ:
Ռուբէնի տոհմերում
Մեծամեծ յուզմունք կար:
16† Ինչո՞ւ են նստել Մոսփաթեմի մէջ
Եւ լսում են տագնապողների գոչիւնը,
Որպէսզի անցնեն Ռուբէնի կողմը:
Մեծամեծ յուզմունք է բարձրացել:
17 Գաղը Յորդանան գետի այն կողմում
էր բնակւում.
Դա՛ն, ինչո՞ւ ես պանդուխտ մնացել
նաւերի մէջ:
Ասերը ծովի եզերքին է բնակւում
Եւ ծովախորշերում է ապրում:
18 Զաբուղոնի ժողովուրդն իրեն դնում է
մահուան վտանգի մէջ,
Եւ Նեփթաղիմի ժողովուրդն իրեն
դնում է վտանգի մէջ դաշտի բար-
ձունքներում:
19 Թագաւորներ եկան եւ պատերազ-
մեցին,
Այն ժամանակ տագնապեցին քանա-
նացիների թագաւորները Թանաքի մէջ,
Մակեդդովի ջրերի վրայ.
Ագահութեամբ արծաթ չառայ†:
20 Երկնքից պատերազմեցին աստղերն
իրենց շրջաններից,
Պատերազմեցին Սիսարայի դէմ:
21 Կիսոնի հեղեղատը քշեց նրանց,
Կադեսիմի‡ հեղեղատը,
Կիսոնի հեղեղատը:
Թող ես կոխոտեմ նրանց,
Թող իմ ոտքը զօրանայ:
22 Այն ժամանակ կտոր-կտոր եղան
Մադդարոթի ձիերի սմբակները:
Իմ կրունկները գետնին հաւասարեց-
րին նրանց ահարկու հպարտութիւնը:
23 "Նզովեցէ՛ք Մարոզ քաղաքը, - ասում է Տիրոջ հրեշտակը, -
Անիծելով անիծեցէ՛ք նրա բնակիչ-
ներին,
Որովհետեւ Տիրոջն օգնութեան չե-
կան,
Չեկան Տիրոջն օգնութեան հզօր
ռազմիկների դէմ":
24 Օրհնեալ լինի կանանց մէջ Յայէլը՝
Կինեցի Քաբերի կինը,
Օրհնեալ լինի նա կանանց մէջ իր
վրանում:
25 Սիսարան ջուր խնդրեց, իսկ նա կաթ
տուեց,
Իշխանների ամանով կարագ մա-
տուցեց:
26 Իր ձախ ձեռքը ցցին մեկնեց,
Աջը մուրճին՝ խպառ ջախջախելու եւ
ոչնչացնելու:
Սպանեց Սիսարային,
Ցիցը մեխեց նրա քունքի մէջ,
Խրեց նրա գլխի մէջ եւ սպանեց
նրան:
27 Նա ծանրացած ընկաւ նրա ոտքերի,
Ընկաւ նրա ծնկների միջեւ,
Այնտեղ կորացաւ, մինչեւ որ գետին
փռուեց, ընկաւ թշուառականը:
28 Սիսարայի մայրը նայում էր վան-
դակաւոր պատուհանից,
Տեսնում էր Սիսարայի մօտից եկող-
ներին,
Իսկ նրա կառքն ուշանում էր գալու:

†Եբրայերէն՝ *13 Այն ժամանակ փախստականներն իջան զօրաւորների մօտ:*
Տէրն ինձ հետ իջաւ հզօրների դէմ:
14 Եփրեմի արմատից եղողները Ամաղէկի վրայ ելան,
Քո յետեւից, Բենիամին, քո ժողովրդի մէջ:
Մաքիրից իջան իշխաններ:

†Եբրայերէն՝ *Ինչո՞ւ ես նստել փարախների մէջ, որ լսես հօտերի մայիւնը:*

†Եբրայերէն՝ *չառան:*

‡Եբրայերէն՝ *հին հեղեղատը:*

– Ինչո՞ւ են ուշանում նրա կառքի անուահետքերը:
29 Նրա իշխանների իմաստուն կանայք պատասխան են տալիս նրան ու ասում,
Հէնց ինքն էլ իր խօսքերին պատասխան է տալիս ու ասում.
30 "Աւար բաշխողները չեն գտնի նրան,
Որ բարիք անեն բարեկամներին՝ ամէն մէկին բաժանելով իր աւարը:
Նրա աղիքները ճմլեց Սիսարայի ստացած գոյնզգոյն աւարը,
Նկարազարդ, գոյնզգոյն երանգներով աւարը,
Գոյնզգոյն, նկարազարդ հիւսուածքներով նարօտը նրա պարանոցի վրայ":
31 Այսպէս թող կորչեն քո բոլոր թշնամիները, Տէ՛ր,
Իսկ նրան սիրողները թող լինեն այնպէս, ինչպէս արեւը, որ ծագում է իր զօրութեամբ»:
32 Եւ երկիրը խաղաղուեց քառասուն տարի:

ՄԱԴԻԱՄԱՑԻՆԵՐԸ ՃՆՇՈՒՄ ԵՆ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ

6 Իսրայէլացիները Տիրոջ առաջ չարիք գործեցին, եւ Տէրը նրանց եօթը տարի մադիամացիների ձեռքը մատնեց. 2 եւ մադիամացիների ձեռքը ծանրացաւ Իսրայէլի վրայ: Իսրայէլացիները մադիամացիների պատճառով իրենց համար ապաստաններ շինեցին լեռներում, քարայրներում եւ ամրոցներում: 3 Երբ իսրայէլացիները վարուցանք էին անում, մադիամացիները, ամաղէկացիները եւ Արեւելքի բնակիչները ելնում, յարձակւում էին նրանց վրայ, 4 բանակատեղի էին դնում նրանց մօտ եւ փչացնում հողի բերքը մինչեւ Գազայի սահմանները: Իսրայէլին հանգիստ չէին տալիս, չէին թողնում ո՛չ ոչխար, ո՛չ արջառ, ո՛չ էշ: 5 Նրանք իրենց ոչխարներով վեր էին կենում, բերում էին իրենց վրանները եւ մորեխի պէս բազմութեամբ վրայ էին հասնում: Նրանց եւ նրանց ուղտերին թիւ չկար: Հասնում էին Իսրայէլի երկիրը՝ այն աւերելու համար: 6 Եւ Իսրայէլը մադիամացիների պատճառով շատ աղքատացաւ: Իսրայէլացիները աղաղակեցին Տիրոջը:

7 Եւ երբ Իսրայէլացիները մադիամացիների պատճառով աղաղակեցին Տիրոջը, 8 Տէրն իսրայէլացիների մօտ մարգարէ ուղարկեց եւ ասաց նրանց. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Ես եմ, որ հանեցի ձեզ Եգիպտոսից, ձեզ դուրս բերի ծառայութեան տնից, 9 փրկեցի ձեզ եգիպտացիների ձեռքից եւ բոլոր ձեզ նեղողների ձեռքից, քշեցի նրանց ձեր առաջից եւ նրանց երկիրը ձեզ տուի: 10 Եւ ձեզ ասացի. "Ես եմ ձեր Տէր Աստուածը, մի՛ վախեցէք ամորհացիների աստուածներից, որոնց երկրում դուք բնակւում էք", բայց դուք չլսեցիք իմ խօսքը"»:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՉՈՒՄ Է ԳԵԴԷՈՆԻՆ՝ ՓՐԿԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԸ

11 Եւ Տիրոջ հրեշտակը եկաւ ու նստեց Եսրէի հօր՝ Յովասի կաղնու տակ, որը Եփրայում էր գտնւում: Նրա որդի Գեդէոնը կալում ցորեն էր կալսում՝ փախուստ տալով մադիամացիներից: 12 Տիրոջ հրեշտակը երեւաց նրան եւ ասաց. «Տէրը քեզ հետ է, ով զօրաւոր կտրիճ»: 13 Գեդէոնը նրան ասաց. «Աղաչում եմ քեզ, Տէ՛ր իմ, եթէ Տէրը մեզ հետ է, ինչո՞ւ այս բոլոր չարիքները եկան մեզ վրայ, ո՞ւր են նրա բոլոր զարմանահրաշ գործերը, որ պատմեցին մեզ մեր հայրերը՝ ասելով. "Չէ՞ որ Տէրը մեզ հանեց Եգիպտոսից", եւ հիմա ինչո՞ւ է նա մեզ լքել ու մադիամացիների ձեռքը մատնել»: 14 Տիրոջ հրեշտակը նայեց նրան ու ասաց. «Գնա՛ քո այդ զօրութեամբ եւ փրկի՛ր Իսրայէլը մադիամացիների ձեռքից: Չէ՞ որ ահա ես եմ ուղարկում քեզ»: 15 Գեդէոնը նրան ասաց. «Աղաչում եմ քեզ, Տէ՛ր իմ, ինչո՞վ փրկեմ ես Իսրայէլը. ահա իմ հազարաւոր մարդիկ ամենից աղքատն են Մանասէի ցեղի մէջ, եւ ես իմ հօր տան կրտսերն եմ»: 16 Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Տէրը քեզ հետ է, եւ դու մադիամացիներին կը ջարդես, ինչպէս մէկ մարդու»: 17 Գեդէոնն ասաց. «Եթէ ես քո աչքի առաջ շնորհ եմ գտել, ինձ մի նշան ցո՛յց տուր, որ դու ես ինձ հետ խօսում, 18 մի՛ գնա այստեղից, մինչեւ որ քեզ մօտ գամ եւ իմ զոհը բերեմ ու դնեմ քո առաջ»: Նա ասաց. «Ես եմ, եւ

կը նստեմ այստեղ, մինչեւ որ ետ դառնաս ինձ մօտ»: 19 Գեդէոնը ներս մտաւ, այծերի հօտից մի ուլ մորթեց եւ մէկ արդու[†] ալիւրից բաղարջ պատրաստեց, միսը դրեց ափսէի վրայ, արգանակը կճուճի մէջ ածեց, դրեց նրա առաջ կաղնու տակ եւ երկրպագութիւն արեց: 20 Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Վերցրո՛ւ դու այդ միսն ու բաղարջ հացը, դի՛ր այս քարի վրայ, իսկ արգանակը վրա՛ն թափիր»: Եւ նա այդպէս արեց: 21 Տիրոջ հրեշտակն իր ձեռքի գաւազանի ծայրը մեկնեց եւ հացրեց մսին ու բաղարջին: Քարից կրակ դուրս եկաւ ու լափեց բաղարջ հացերը. եւ Տիրոջ հրեշտակը հեռացաւ նրա աչքից: 22 Գեդէոնը տեսաւ, որ նա Տիրոջ հրեշտակն է, եւ ասաց. «Ո՜հ, ո՜հ, Տէ՛ր, Տէ՛ր, տեսայ ես Տիրոջ հրեշտակին երես առ երես»: 23 Տէրը նրան ասաց. «Խաղաղութիւն քեզ, մի՛ վախեցիր, չես մեռնի»:

24 Եւ Գեդէոնն այնտեղ Տիրոջ համար զոհասեղան շինեց, այն կոչեց «Տիրոջը խաղաղութիւն»: Դա այնտեղ է մինչեւ այսօր:

Եւ մինչդեռ ինքն այնտեղ էր իր հօրը՝ Եսրէին պատկանող Եփրայում, 25 այդ գիշեր Տէրը նրան ասաց. «Ա՛ռ դու քո հօր պարարտ եզն ու եօթը տարեկան երկրորդ եզը եւ քանդի՛ր քո հօրը պատկանող Բահաղի զոհասեղանը, կտրտի՛ր նրա մօտ եղած անտառը[‡] 26 եւ զոհասեղան շինի՛ր քո Տէր Աստծու համար, որը քեզ երեւաց Մանոզ լեռան գլխին, պատերազմի տեղում. վերցրո՛ւ երկրորդ եզը եւ ողջակէ՛զ արա քո կտրտած անտառի փայտերով»: 27 Գեդէոնն իր ծառաներից տասներեք մարդ առաւ եւ արեց այնպէս, ինչպէս նրան ասաց Տէրը: Եւ որովհետեւ իր հօր տնեցիներից ու քաղաքի մարդկանցից վախեցաւ ցերեկն անելու այդ բանը, գիշերն արեց:

28 Առաւօտը կանուխ քաղաքի մարդիկ վեր կացան եւ տեսան, որ կործանուած է Բահաղի զոհասեղանը, նրա մօտի անտառը կտրտուած է, եւ պարարտ եզը ողջակէզ է արուած նոր շինուած զոհասեղանի վրայ: 29 Եւ իրար ասացին. «Ո՞վ արեց այս բանը»: Պրպտեցին, քննեցին եւ ասացին, թէ այդ բանը Յովասի որդի Գեդէոնն է արել: 30 Քաղաքի մարդիկ ասացին Յովասին. «Դո՛ւրս հանիր քո որդուն, նա պէտք է մեռնի, որովհետեւ կործանել է Բահաղի զոհասեղանը եւ կտրտել է նրա մօտի անտառը»: 31 Յովասն իր դէմ ելած մարդկանց ասաց. «Մի՞թէ դո՞ւք պէտք է պաշտպանէք այժմ Բահաղի դատը, եւ կամ դո՞ւք պէտք է ազատէք նրան: Ով որ նրան վնասել է, կը մեռնի մինչեւ առաւօտ: Եթէ նա Աստուած է, թող ինքը լուծի իր վրէժը, քանի որ կործանել են նրա զոհասեղանը»:

32 Եւ այդ օրը նրան անուանեց Յերոբոաղ, այսինքն՝ Բահաղի դատաստան, որովհետեւ քանդել էր նրա զոհասեղանը:

33 Իսկ բոլոր մադիամացիները, ամաղէկացիները եւ Արեւելքի բոլոր բնակիչները հաւաքուեցին միասին եւ եկան, բանակատեղի դրին Յեզրայէլի հովիտներում: 34 Տիրոջ հոգին զօրացրեց Գեդէոնին, նա եղջերափող փչեց, եւ Աբիեզերի ցեղի մարդիկ նրան խրախուսելով գնացին նրա ետեւից: 35 Մանասէի ամբողջ ցեղին պատգամաւորներ ուղարկեց, կանչեց, եւ սրանք էլ գնացին նրա ետեւից: Պատգամաւորներ ուղարկեց նաեւ Ասերի, Զաբուղոնի եւ Նեփթաղիմի ցեղերին, եւ սրանք էլ ելան նրան ընդառաջ:

36 Գեդէոնն ասաց Աստծուն. «Եթէ փրկելու ես Իսրայէլն իմ ձեռքով, ինչպէս որ ասել ես, 37 ահա ես կալի մէջ խուզած բուրդ կը դնեմ. եթէ միայն խուզած բրդի վրայ անձրեւ լինի, իսկ ամբողջ գետինը՝ չոր, կ'իմանամ, որ Իսրայէլն ազատելու ես իմ ձեռքով, ինչպէս որ ասել ես»: 38 Այդպէս էլ եղաւ. յաջորդ օրն առաւօտ կանուխ Գեդէոնը վեր կացաւ, քամեց բուրդը, եւ բրդից մի կոնք լիքը ջուր թափուեց: 39 Գեդէոնն ասաց Աստծուն. «Թող քո բարկութիւնը չբորբոքուի ինձ վրայ, մի անգամ եւս խօսեմ եւ մի անգամ էլ բրդով փորձեմ: Այս անգամ թող միայն բրդի վրայ չորութիւն լինի, իսկ ամբողջ գետնի վրայ՝ անձրեւ»: 40 Եւ այն

[†]Ալիւրի հին չափ:
[‡]Եբրայերէն՝ Աշերա:

գիշերն Աստուած այդպէս արեց. միայն
բրդի վրայ չորութիւն եղաւ, իսկ ամբողջ
գետնի վրայ՝ անձրեւ:

ԳԵԴԷՈՆԸ ՅԱՂԹՈՒՄ Է ՄԱԴԻԱՄԱՑԻՆԵՐԻՆ

7 Յերոբաղը, այսինքն՝ Գեդէոնը, եւ
նրա հետ եղած ամբողջ զօրքը կանուխ
վեր կացան եւ բանակատեղի դրին
Արէդի աղբիւրի մօտ, իսկ Մադիամի եւ
Ամաղէկի բանակը նրանց հիւսիսային
կողմում, Գաբաաթամում էր, հովտի
մէջ: 2 Տէրն ասաց Գեդէոնին. «Քեզ հետ
եղող զօրքը շատ է, չեմ ուզում մադիա-
մացիներին նրանց ձեռքը մատնել, որ
չլինի թէ Իսրայէլն իմ առաջ պարծենայ
եւ ասի, թէ՝ "Իմ ձեռքը փրկեց ինձ"»:
3 Տէրը նրան ասաց. «Խօսի՛ր ի լուր
ժողովրդի եւ ասա՛. "Ով որ վախկոտ է,
թող ետ դառնայ"»: Եւ գնացին Գա-
ղաադ սարից. զօրքից քսաներկու հա-
զար հոգի ետ դարձան, եւ մնացին
տասը հազար: 4 Տէրն ասաց Գեդէոնին.
«Զօրքը տակաւին շատ է, իջեցրո՛ւ
նրանց ջրի մօտ, այնտեղ նրանց
փորձութեան կ'ենթարկեմ քեզ համար.
ում մասին քեզ ասեմ, թէ՝ "Դա թող
գնայ քեզ հետ", նա թող գնայ քեզ հետ,
իսկ ում մասին ասեմ, թէ՝ "Դա թող
չգնայ քեզ հետ", նա թող չգնայ քեզ
հետ»: 5 Նա զօրքն իջեցրեց ջրի մօտ, եւ
Տէրը Գեդէոնին ասաց. «Ովքեր շան
նման լեզուով լակեն այդ ջրից, նրանց
առանձին կը կանգնեցնես, իսկ ովքեր
խմելու համար իրենց ծնկների վրայ
կռանան, նրանց էլ առանձին կը
կանգնեցնես»: 6 Եւ ովքեր լակեցին
ձեռքով ու լեզուով, նրանց բոլորի թիւը
եղաւ երեք հարիւր մարդ. մնացած
ժողովուրդը ջուր խմելու համար
կռացաւ ծնկների վրայ: 7 Տէրն ասաց
Գեդէոնին. «Այն երեք հարիւր
մարդկանցով, որոնք լակեցին ջուրը, ձեզ
կը փրկեմ եւ մադիամացիներին քո
ձեռքը կը մատնեմ, իսկ այն ամբողջ
ժողովուրդը թող գնայ, ամէն մէկն իր
տեղը»: 8 Եւ նրանք ժողովրդի պաշարն
ու նրանց եղջերափողերն իրենց ձեռքն
առան, եւ Գեդէոնը Իսրայէլի բոլոր
մարդկանց իրենց բնակութեան տեղն
արձակեց եւ միայն այն երեք հարիւր
մարդկանց պահեց. Մադիամի բանակը
նրանից ներքեւ՝ հովտում էր:
9 Այդ գիշեր Տէրը նրան ասաց.
«Շտապ վեր կաց իջի՛ր այստեղից
բանակատեղի, որովհետեւ նրան քո
ձեռքն եմ մատնում. 10 իսկ եթէ
վախենում ես դու մենակ իջնել, նախ
դու իջիր բանակատեղի քո ծառայ
Փարայի հետ: 11 Կը լսես, թէ ինչ են
խօսում, եւ այն ժամանակ կը զօրանան
քո ձեռքերը, եւ կ'իջնես բանակատեղի:
Եւ նա իր ծառայի հետ իջաւ մինչեւ
թշնամու բանակի առաջապահ զօրքը,
որ կազմում էր բանակի մէկ յիսու-
ներորդ մասը: 12 Մադիամացիները,
ամաղէկացիները եւ Արեւելքի բոլոր
բնակիչները բանակ էին դրել ծործոր-
ների մէջ մորեխների պէս մեծ բազ-
մութեամբ: Նրանց ուղտերին թիւ չկար,
նրանք շատ էին, ինչպէս ծովափի
աւազը: 13 Գեդէոնը բանակատեղի
մտաւ եւ լսեց, որ մի մարդ իր ընկերոջը
երազ էր պատմում. «Երազ տեսայ,
ասում է, ահա գարէ մի հաց գլորւում
էր դէպի Մադիամի բանակները եւ եկաւ
մինչեւ Մադիամի վրանը, հարուածեց
նրան ու կործանեց, եւ վրանը գլխիվայր
ընկաւ»: 14 Նրա ընկերը պատասխան
տուեց եւ ասաց. «Դա ուրիշ բան չէ,
եթէ ոչ իսրայէլացի Յովասի որդի Գե-
դէոնի սուրը. Տէրը նրա ձեռքն է մատ-
նել մադիամացիներին եւ բոլոր բա-
նակները»:
15 Երբ Գեդէոնը լսեց երազի
պատմութիւնն ու նրա մեկնութիւնը,
երկրպագեց Տիրոջը, վերադարձաւ իս-
րայէլացիների բանակն ու ասաց. «Վե՛ր
կացէք, որովհետեւ Տէրը մադիամա-
ցիների բանակը մեր ձեռքն է մատնել»:
16 Նա այդ երեք հարիւր մարդուն երեք
գնդի բաժանեց եւ ամենքի ձեռքը տուեց
եղջերափողեր եւ սափորների մէջ
դրուած ջահեր: 17 Եւ ասաց նրանց.
«Ի՛նձ նայեցէք եւ նո՛յնն արէք. ահա ես
մտնում եմ բանակի մէջ եւ ինչպէս որ ես
անեմ, այդպէս էլ դո՛ւք արէք: 18 Երբ ես
եւ բոլոր ինձ հետ եղողները կը փչենք
եղջերափողերը, դուք էլ փչեցէ՛ք եղջե-
րափողերը ամբողջ բանակի շուրջը եւ
ասացէ՛ք. "Տիրոջ եւ Գեդէոնի սուրը"»:
19 Գեդէոնը եւ նրա հետ հարիւր

մարդ կէս գիշերուայ սկզբին հասան
բանակի ծայրը՝ զարթեցնելով միայն
պահապաններին, փչեցին եղջերափո-
ղերը, վայր գցեցին իրենց ձեռքի
սափորները: 20 Այն երեք գնդերն էլ
փչեցին եղջերափողերը, կոտրատեցին
սափորները: Նրանք իրենց ձախ ձեռքով
առան ջահերը, իսկ աջ ձեռքով եղջե-
րափողերը բռնած՝ փչեցին, աղաղա-
կեցին եւ ասացին. «Տիրոջ եւ Գեդէոնի
սուրը»: 21 Ամէն մէկն առանձին կանգ-
նեց բանակի շուրջը, եւ ամբողջ բանակը
վազեց. փող փչեցին եւ փախան: 22 Երբ
այն երեք հարիւր եղջերափողերը
հնչեցին, Տէրն այնպէս արեց, որ ամբողջ
բանակի մէջ ամէն մարդ սուրն իր
ընկերոջ վրայ դարձնի. եւ ամբողջ
բանակը փախաւ մինչեւ Բեթասետա,
իսկ գնդերից մէկն էլ՝ մինչեւ Աբէլ-
մաուլայի բարձունքը եւ մինչեւ Տաբէթ:
23 Իսրայէլացիները իրար ձայն տուին
Նեփթաղիմից, Ասերից եւ ամբողջ Մա-
նասէից ու հետապնդեցին մադիամա-
ցիներին: 24 Գեդէոնը պատգամաւորներ
ուղարկեց Եփրեմի բոլոր սահմանները
եւ ասաց. «Իջէ՛ք մադիամացիներին
ընդառաջ եւ գրաւեցէ՛ք ջրերի կիրճերը
մինչեւ Բեթփարա ու Յորդանան գետը»:
Եփրեմի բոլոր մարդիկ իրար ձայն
տուին եւ գրաւեցին ջրերի անցքերը
մինչեւ Բեթփարա ու Յորդանան գետը:
25 Բռնեցին մադիամացիների երկու իշ-
խաններին՝ Օրեբին եւ Զեբին. Օրեբին
սպանեցին Սորորեբայում, իսկ Զեբին՝
Ակեբզեբայում, մադիամացիներին հա-
լածեցին, Օրեբի եւ Զեբի գլուխները
Յորդանան գետի այն կողմից բերին
Գեդէոնին:

ՄԱԴԻԱՄԱՑԻՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

8 Եփրեմի մարդիկ Գեդէոնին ասացին.
«Այս ի՞նչ բան է, որ արեցիր մեզ հետ.
մեզ չկանչեցիր, երբ մադիամացիների
դէմ պատերազմելու գնացիր»: Եւ նրա
հետ սաստիկ վիճեցին: 2 Նա նրանց
ասաց. «Ես հիմա ի՞նչ եմ արել ձեր
արածի համեմատ. մի՞թէ Եփրեմի ճռա-
քաղը Աբիեզերի խաղողաքաղից լաւ չէ.
3 Տէրը ձեր ձեռքը մատնեց մադիա-
մացիների իշխաններին՝ Օրեբին եւ
Զեբին. ես ի՞նչ կարողացայ անել ձեզ
հետ համեմատած»: Երբ նա այս խօսքն
ասաց, նրանց հոգին հանգստացաւ նրա
նկատմամբ:
4 Գեդէոնը եկաւ Յորդանան գետը եւ
իր հետ եղող երեք հարիւր մարդկանց
հետ գետն անցաւ սպառուած եւ քաղ-
ցած: 5 Նա ասաց Սոքքոթի մարդկանց.
«Ուտելու հա՛ց տուէք այս զօրքին, որ
ինձ հետ է, որովհետեւ նրանք քաղցած
են, իսկ ես կը հետապնդեմ Զեբէիին ու
Սաղմանային՝ մադիամացիների թա-
գաւորներին»: 6 Սոքքոթի իշխաններն
ասացին. «Մի՞թէ Զեբէիի եւ Սաղմա-
նայի ձեռքն արդէն քո բռունցքի մէջ է,
որ մենք քո զօրքին հաց տանք»: 7 Գե-
դէոնն ասաց. «Եթէ այդպէս չէ, ապա
երբ Տէրը Զեբէիին ու Սաղմանային իմ
ձեռքը տայ, ես ձեր մարմինները կը
ծուատեմ անապատի փշերով եւ տա-
տասկներով»: 8 Այնտեղից նա գնաց
Փանուէլ եւ նրանց հետ նոյն ձեւով
խօսեց: Փանուէլի մարդիկ նրան պա-
տասխան տուեցին այնպէս, ինչպէս
պատասխանել էին Սոքքոթի մարդիկ:
9 Գեդէոնը խօսեց Փանուէլի մարդկանց
հետ եւ ասաց. «Երբ ես նորից վերա-
դառնամ խաղաղութեամբ, այդ աշտա-
րակը պիտի քանդեմ»:
10 Զեբէին եւ Սաղմանան Կարկարում
էին գտնուում, եւ նրանց բանակը նրանց
հետ էր. բոլորը մօտ տասնհինգ հազար
մարդ, որ մնացել էին Արեւելքի բնա-
կիչների ամբողջ բանակից, իսկ ընկած-
ները հարիւր քսան հազար սրակոտոր
եղած մարդիկ էին: 11 Գեդէոնը բարձ-
րացաւ վրանաբնակների ճանապարհով,
Նաբաէի արեւելեան կողմից, որ
գտնուում է Նաբէի դիմաց, ու հա-
րուածեց բանակին, որովհետեւ բանակն
անհոգութեան մէջ էր: 12 Զեբէին եւ
Սաղմանան փախան, իսկ նա հե-
տապնդեց նրանց, ձերբակալեց մադիա-
մացիների երկու թագաւորներին՝ Զե-
բէիին ու Սաղմանային, եւ նրանց ամ-
բողջ բանակը տակնուվրայ արեց:
13 Յովասի որդի Գեդէոնը պատե-
րազմից ետ դարձաւ Արէսի գառի-
վայրից: 14 Սոքքոթի մարդկանցից նա
մի պատանեակ բռնեց եւ նրան հարց-
ուփորձ արեց: Սա նրա համար գրաւոր

տուեց Սոքքոթի իշխանների ու ծերերի անունները՝ եօթանասունեօթը մարդու:
15 Գեդէոնը եկաւ Սոքքոթի իշխանների մօտ եւ ասաց նրանց. «Ահա Զեբէին եւ Սաղմանան, որոնց համար ինձ նախատեցիք՝ ասելով. "Մի՞թէ Զեբէիի եւ Սաղմանայի ձեռքն այժմ քո բռունցքի մէջ է, որ մենք սովից սպառուած քո մարդկանց հաց տանք"»: 16 Նա առաւ քաղաքի իշխաններին ու ծերերին եւ անապատից՝ փշեր ու տատասկներ եւ դրանցով ձաղկեց Սոքքոթի մարդկանց,
17 Փանուէլի աշտարակը կործանեց եւ կոտորեց քաղաքի մարդկանց:
18 Նա ասաց Զեբէիին եւ Սաղմանային. «Ինչպիսի՞ք էին այն մարդիկ, որոնց կոտորեցիք Թաբորում»: Նրանք ասացին. «Ինչպիսին դու ես, նոյնպիսին եւ նրանք էին՝ քեզ նման, եւ դու՝ նրանց նման: Նրանց տեսքը թագաւորի որդիների նման էր»: 19 Գեդէոնն ասաց. «Նրանք իմ եղբայրները, իմ մօր որդիներն էին»: Եւ երդուեց նրանց ու ասաց. «Կենդանի է Տէրը. եթէ դուք նրանց ողջ թողնէիք, ես ձեզ չէի սպանի»: 20 Եւ իր անդրանիկ որդուն՝ Եթերին ասաց. «Վե՛ր կաց, սպանի՛ր դրանց»: Բայց պատանին իր սուրը չհանեց, որովհետեւ վախեցաւ, քանի որ մանուկ էր: 21 Զեբէին եւ Սաղմանան ասացին. «Վե՛ր կաց եւ դու ի՛նքդ զարկ մեզ, որովհետեւ մարդու ուժը իրեն համեմատ կը լինի»: Գեդէոնը վեր կացաւ, սպանեց Զեբէիին ու Սաղմանային եւ նրանց ուղտերի վզից մանեակներն առաւ:
22 Իսրայէլի մարդիկ Գեդէոնին ասացին. «Իշխի՛ր մեզ վրայ դու եւ քո որդին ու քո որդու որդին, որովհետեւ դու մեզ փրկեցիր մադիամացիների ձեռքից»: 23 Գեդէոնը նրանց ասաց. «Ես ձեզ վրայ չեմ իշխի, եւ ոչ էլ իմ որդին կ'իշխի ձեզ վրայ, Տէ՛րը թող իշխի ձեզ վրայ»:
24 Ապա Գեդէոնը նրանց ասաց. «Ձեզանից մի բան եմ խնդրում. ամէն մարդ իր աւարից մի գինդ թող տայ ինձ»: Նրանք ոսկի գինդեր ունէին, քանի որ իսմայէլացիներ էին: 25 Նրանք ասացին. «Սիրով կը տանք»: Եւ փռեցին նրա հանդերձները, ու ամէն մարդ իր աւարի ոսկի գինդերը այնտեղ գցեց:
26 Նրա խնդրած ոսկի գինդերի կշիռը հազար եօթը հարիւր սիկղ† ոսկի եղաւ, բացի չռնչաններից, ապարանջաններից, պսակակալներից եւ ծիրանիներից, որոնք մադիամացիների թագաւորների վրայ կային, եւ բացի նրանց ուղտերի վզի ոսկի մանեակներից: 27 Գեդէոնը դրանցով եփուդ շինեց եւ դրեց այն իր Եփրա քաղաքում: Ամբողջ Իսրայէլը նրան հետեւելով՝ այդ կուռքը պաշտեց, եւ դա Գեդէոնի ու նրա տան համար գայթակղութիւն եղաւ:
28 Այսպէս մադիամացիներն ենթարկուեցին իսրայէլացիներին եւ այլեւս իրենց գլուխները չբարձրացրին: Գեդէոնի օրօք երկիրը հանգստացաւ քառասուն տարի:

ԳԵԴԷՈՆԻ ՄԱՀԸ

29 Յովասի որդի Յերոբոաղը գնաց բնակուեց իր տանը: 30 Գեդէոնը եօթանասուն որդի էր սերնդագործել, որովհետեւ շատ կանայք ունէր: 31 Սիկիմում նրա ունեցած հարճն էլ նրա համար մի որդի ծնեց, եւ Գեդէոնը նրա անունը Աբիմելէք դրեց: 32 Յովասի որդի Գեդէոնը մեռաւ խոր ծերութեան հասակում եւ թաղուեց իր հօր՝ Յովասի գերեզմանում, Եսրէի հօրը պատկանող Եփրայում:
33 Երբ Գեդէոնը մեռաւ, իսրայէլացիները նորից բահաղիմեաններին հետեւելով՝ կուռքեր պաշտեցին եւ ուխտ դրին Բահաղ Բերիթի հետ, որ նա իրենց աստուածը դառնայ: 34 Իսրայէլացիները չյիշեցին իրենց Տէր Աստծուն, որ նրանց փրկեց իրենց շրջակայքի բոլոր թշնամիներից: Նրանք Յերոբոաղի, այսինքն՝ Գեդէոնի տան հանդէպ երախտագէտ չեղան այն բոլոր բարեգործութիւնների դիմաց, որ նա արել էր Իսրայէլին:

---

†Նուրջ բառ կիլոգրամ:

‡Եփուդ եբրայերէն բառ է, որ նշանակում է բահանայական զգեստ: Տե՛ս նաեւ Դատ. ԺԷ 5, ԺԸ 14, 17, 20: Հրեաները սնապաշտական պատիւ էին տալիս այդ զգեստին եւ այն գործածում էին կուռքեր պաշտելու համար:

ԱԲԻՄԵԼԷՔԸ՝ ԹԱԳԱՒՈՐ

9 Յերոբոաղի որդի Աբիմելէքը գնաց Սիկիմ իր մօր եղբայրների մօտ, խօսեց նրանց հետ եւ իր մօր հօրական ամբողջ ազգատոհմի հետ ու ասաց. 2 «Բոլոր սիկիմացիներին ի լուր ասացէ՛ք. "Ո՞րն է լաւ ձեզ համար՝ Յերոբոաղի բոլոր եօթանասո՞ւն որդիների իշխելը ձեզ վրայ, թէ՞ մէկ մարդու իշխելը. եւ յիշեցէ՛ք, որ ես ձեր ոսկորից ու ձեր մարմնից եմ"»: 3 Նրա մօր եղբայրները նրա այս բոլոր խօսքերը հասցրին Սիկիմի բոլոր բնակիչների ականջին, եւ նրանց սիրտը հակուեց Աբիմելէքի կողմը, որովհետեւ ասացին, թէ՝ «Նա մեր եղբայրն է», 4 եւ նրան տուին Բահաղ Բերիթի ուխտի տնից եօթանասուն արծաթ: Դրանցով Աբիմելէքը դատարկապորտ եւ ահարկու մարդիկ վարձեց, որոնք եւ գնացին նրա ետեւից:
5 Նա գնաց Եփրա, իր հօր տունը եւ մի քարի վրայ կոտորեց իր եղբայրներին՝ Յերոբոաղի որդիներին՝ եօթանասուն մարդ: Ողջ մնաց միայն Յովաթամը՝ Յերոբոաղի կրտսեր որդին, որովհետեւ թաքնուել էր: 6 Սիկիմի բոլոր մարդիկ եւ Մաաղոնի ամբողջ տունը գնացին թագաւոր կարգեցին Աբիմելէքին Կռուի կաղնու մօտ, որ Սիկիմում է:
7 Երբ լուրը հասաւ Յովաթամին, նա գնաց կանգնեց Գարիզին լեռան գլխին, ձայնը բարձրացրեց, լաց եղաւ եւ ասաց նրանց. «Լսեցէ՛ք ինձ, Սիկիմի՛ մարդիկ, եւ Աստուած ձեզ կը լսի: 8 Ծառերը գնացին իրենց համար թագաւոր օծելու եւ ասացին ձիթենուն. "Թագաւորի՛ր մեզ վրայ": 9 Ձիթենին նրանց ասաց. "Թողնեմ իմ պարարտութիւնը, որով փառաւորում են ինձ Աստուած եւ մարդիկ, եւ գնամ ծառերի՞ վրայ իշխեմ": 10 Ծառերն ասացին թզենուն. "Եկ թագաւորի՛ր մեզ վրայ": 11 Թզենին նրանց ասաց. "Իմ քաղցրութիւնն ու իմ լաւ պտուղները թողած՝ գնամ ծառերի՞ վրայ իշխան լինեմ": 12 Ծառերն ասացին որթատունկին. "Եկ թագաւորի՛ր մեզ վրայ": 13 Որթատունկը նրանց ասաց. "Իմ գինին եւ Աստծու ու մարդկանց ուրախութիւնը թողած՝ գնամ ծառերի՞ իշխան լինեմ": 14 Ծառերն ասացին փշին. "Եկ թագաւորի՛ր մեզ վրայ": 15 Փուշն ասաց ծառերին. "Եթէ իսկապէս դուք ինձ ձեզ վրայ թագաւոր էք օծում, եկէք ծածկուեցէ՛ք իմ հովանու տակ, եթէ ոչ՝ փշից կրակ դուրս կը գայ եւ կ'այրի Լիբանանի մայրիները": 16 Արդ, եթէ ճշմարտութեամբ եւ արդարութեամբ վարուեցիք Աբիմելէքին թագաւոր դարձնելով, եթէ լաւ վարուեցիք Յերոբոաղի եւ նրա տան հետ, եթէ նրա ձեռքի գործերի համեմատ հատուցեցիք նրան ... 17 Իմ հայրը ձեր փոխարէն պատերազմեց, իր կեանքը չխնայեց եւ ձեզ ազատեց մադիամացիների ձեռքից: 18 Իսկ դուք այսօր ելաք իմ հօր տան դէմ եւ կոտորեցիք նրա որդիներին՝ եօթանասուն մարդ մի քարի վրայ եւ նրա աղախնի որդի Աբիմելէքին, – քանի որ նա ձեր եղբայրն է, – սիկիմացիների թագաւոր կարգեցիք: 19 Եթէ այսօր Յերոբոաղի եւ նրա տան հետ ճշմարտութեամբ եւ արդարութեամբ վարուեցիք, օրհնուած լինէք դուք եւ ուրախացէ՛ք Աբիմելէքով, եւ նա էլ ձեզնով թող ուրախանայ: 20 Իսկ եթէ ոչ, թող Աբիմելէքից կրակ դուրս գայ եւ այրի Սիկիմի բնակիչներին ու Մաաղոնի տունը, կամ էլ թող կրակ դուրս գայ Սիկիմի բնակիչներից ու Մաաղոնի տնից եւ այրի Աբիմելէքին»: 21 Յովաթամը փախաւ ու ազատուեց, գնաց Բերայի ճանապարհով եւ բնակուեց այնտեղ՝ թաքնուելով իր եղբայր Աբիմելէքից:

ՍԻԿԻՄԻ ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆԸ ԱԲԻՄԵԼԷՔԻ ԴԷՄ

22 Աբիմելէքն իշխեց Իսրայէլի վրայ երեք տարի: 23 Աստուած չար ոգի ուղարկեց Աբիմելէքի եւ Սիկիմի բնակիչների մէջ, եւ Սիկիմի բնակիչներն արհամարհեցին Աբիմելէքի տունը,
24 որպէսզի Յերոբոաղի եօթանասուն որդիներին հասած անիրաւութիւնը նրա վրայ գայ, եւ նրանց արիւնը հասնի իրենց եղբայր Աբիմելէքի վրայ, որ նրանց կոտորեց, նաեւ Սիկիմի բնակիչների վրայ, որոնք զօրացրել էին նրա ձեռքը, որ կոտորի իր եղբայրներին:
25 Սիկիմի բնակիչները նրա համար դարան պատրաստեցին լեռների կատար-

ներին եւ կողոպտում էին բոլորին,
ովքեր անցնում էին նրանց մօտի ճա-
նապարհով: Լուրը հասաւ Աբիմելէքին:
26 Իսկ Աբեդդի որդի Գաաղը եւ նրա
եղբայրները եկան մտան Սիկիմ, եւ
Սիկիմի բնակիչներն ապաւինեցին նրան:
27 Նրանք դուրս եկան դաշտերը, քա-
ղեցին իրենց այգիների խաղողը, տրո-
րեցին հնձաններում, պար բռնեցին,
մտան իրենց աստծու տունը, կերան,
խմեցին եւ անիծեցին Աբիմելէքին:
28 Աբեդդի որդի Գաաղն ասաց. «Աբի-
մելէքն ո՞վ է, եւ Սիքէմի որդին ո՞վ է,
որ մենք նրան ծառայենք. նա Յերո-
բոաղի որդին չէ՞, եւ իր ծառայ Զեբուղը
նրա վերակացուն չէ՞: Սիքէմի հօր՝
Եմորի մարդկանց հետ, ինչո՞ւ համար
նրան ծառայենք: 29 Երանի թէ այս
ժողովրդին իմ ձեռքը տային, եւ ես
հեռացնէի Աբիմելէքին եւ ասէի նրան.
“Զօրքերդ շատացրո՛ւ եւ դո՛ւրս եկ իմ
դէմ”»:

30 Քաղաքի իշխան Զեբուղը լսեց
Աբեդդի որդի Գաաղի խօսքերը եւ բար-
կութեամբ լցուեց: 31 Նա Աբիմելէքի
մօտ պատգամաւորներ ուղարկեց
նուէրներով եւ ասաց. «Ահա Աբեդդի
որդի Գաաղն ու նրա եղբայրները եկել
են Սիկիմ եւ քաղաքը պաշարում են, որ
հանեն քո դէմ: 32 Հիմա դու եւ քեզ հետ
եղող զօրքը գիշերը վե՛ր կացէք եւ
դարանամո՛ւտ եղէք դաշտում: 33 Ա-
ռաւօտեան, հէնց որ արեգակը ծագի,
կանուխ վե՛ր կացէք եւ քաղաքի վրայ
յարձակուեցէ՛ք: Երբ նա եւ նրա հետ
եղող զօրքը դուրս գան քո դէմ, նրա
հետ արա՛ այն, ինչ որ ձեռքիցդ կը
գայ»: 34 Աբիմելէքը եւ նրա հետ եղող
զօրքը գիշերով վեր կացան եւ չորս
գնդով դարան մտան Սիկիմի մօտ: 35 Ա-
ռաւօտեան Աբեդդի որդի Գաաղը դուրս
եկաւ եւ կանգնեց քաղաքի դարպասի
առաջ: Աբիմելէքը եւ նրա հետ եղող
ամբողջ զօրքը դուրս եկան դարան-
ներից: 36 Աբեդդի որդի Գաաղը տես-
նելով զօրքը՝ Զեբուղին ասաց. «Ահա
լեռների գագաթից զօրք է իջնում»: Զե-
բուղը նրան ասաց. «Լեռների ստուերն
ես տեսնում դու եւ մարդկանց տեղ ես
դնում»: 37 Գաաղը նորից խօսեց եւ
ասաց. «Ահա զօրք է իջնում երկրի
պորտից դէպի ծովի կողմը, եւ մի գունդ
էլ գալիս է Դիտանոցների կաղնու ճա-
նապարհով»: 38 Զեբուղը նրան ասաց.
«Հիմա ո՞ւր է քո բերանը, որն ասում
էր, թէ ո՞վ է Աբեմելէքը, որ մենք
ծառայենք նրան: Չէ՞ որ սա այն զօրքն
է, որը դու արհամարհում էիր: Հիմա
վե՛ր կաց եւ նրա հետ պատերազմի՛ր»:
39 Գաաղը դուրս եկաւ Սիկիմի բնակիչ-
ների առաջ եւ կռուեց Աբիմելէքի դէմ:
40 Աբիմելէքը նրան հալածեց, նա փա-
խաւ նրա առաջից, եւ շատ վիրաւորներ
ընկան մինչեւ քաղաքի դարպասները:
41 Աբիմելէքը մնաց Արիմում, իսկ
Զեբուղը Գաաղին եւ նրա եղբայրներին
քշեց, որ Սիկիմում չբնակուեն: 42 Յա-
ջորդ օրը ժողովուրդը դաշտ դուրս եկաւ.
դա իմացաւ Աբիմելէքը: 43 Նա առաւ
զօրքը, երեք գնդի բաժանեց եւ նրանց
հետ դարան մտաւ: Նա տեսաւ, որ
զօրքը դուրս է գալիս քաղաքից, յար-
ձակուեց նրանց վրայ եւ ջարդեց նրանց:
44 Աբիմելէքը եւ նրա հետ եղող գնդերը
կռուեցին եւ կանգնեցին քաղաքի դար-
պասի մօտ, իսկ երկու գնդերը յար-
ձակուեցին դաշտում գտնուողների վրայ
եւ ջարդեցին նրանց: 45 Աբիմելէքն այդ
ամբողջ օրը պատերազմեց քաղաքի դէմ.
նրանք գրաւեցին քաղաքը եւ նրա մէջ
եղած ժողովրդին կոտորեցին, քաղաքը
կործանեցին եւ այնտեղ աղ ցանեցին:

46 Այս լսեցին Սիկիմի աշտարակի
բոլոր մարդիկ, եկան Բեթէլ Բերիթի
տան ամրոցը: 47 Աբիմելէքին լուր հա-
սաւ, որ Սիկիմի աշտարակի բոլոր մար-
դիկ հաւաքուել են: 48 Աբիմելէքը եւ
նրա հետ եղող ամբողջ զօրքը բարձ-
բացան Սելմոն լեռը, Աբիմելէքը կացինն
իր ձեռքն առաւ, մի բեռ փայտ կտրեց,
վերցրեց այն, դրեց իր ուսերի վրայ եւ
ասաց իր զօրքին. «Տեսաք, թէ ես ինչ
արեցի, դուք էլ անմիջապէս նոյնը
արէք»: 49 Նրանցից իւրաքանչիւրը մի
բեռ փայտ կտրեց, վերցրեց ու գնաց
Աբիմելէքի ետեւից. փայտը դրին
ամրոցի վրայ եւ ամրոցը հրով այրեցին:
Սիկիմի աշտարակի բոլոր մարդիկ, մօտ
հազար մարդ՝ տղամարդ եւ կին, մեռան:

ԹԵԲԷՍԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ԵՒ ԱԲԻՄԵԼԷՔԻ ՄԱՀԸ

50 Աբիմելէքը գնաց Թեբէս, պաշարեց
եւ գրաւեց այն: 51 Քաղաքի մէջ մի
ամուր աշտարակ կար, բոլոր տղա-
մարդիկ եւ կանայք ու քաղաքի բոլոր
գլխաւորները փախան այնտեղ, փակե-
ցին դուռը ներսից եւ բարձրացան
աշտարակի կտուրը: 52 Աբիմելէքը եկաւ
մինչեւ աշտարակը, կռուեց դրա դէմ եւ
մօտեցաւ աշտարակի դռներին: 53 Մի
կին երկանաքարի մի կտոր գցեց նրա
գլխին եւ ջարդեց Աբիմելէքի գանգը:
54 Աբիմելէքն իսկոյն ձայն տուեց իր
կապարճակիր պատանուն եւ նրան
ասաց. «Մերկացրո՛ւ քո սուրը եւ սպա-
նի՛ր ինձ. չլինի, թէ ասեն, որ մի կին է
սպանել նրան»: Նրա պատանին խոցեց
նրան, եւ Աբիմելէքը մեռաւ: 55 Իսրա-
յէլացիները տեսան, որ Աբիմելէքը
մեռաւ. նրանցից ամէն մէկը գնաց իր
տեղը:

56 Այսպէս Աստուած Աբիմելէքի
գլխին թափեց նրա չարիքը, որ նա
գործել էր իր հօր դէմ՝ կոտորելով իր
եօթանասուն եղբայրներին: 57 Սիկիմի
մարդկանց բոլոր չարագործութիւններն
Աստուած նրանց գլխին թափեց, եւ
Յերոբոաղի որդի Յովաթամի անէծքը
նրանց գլխին եկաւ:

ՈՒՐԻՇ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ. ԹՈՂԱ ԵՒ ՅԱՅԻՐ

10 Աբիմելէքից յետոյ Իսրայէլը
փրկելու համար մէջտեղ ելաւ Փուայի
որդի Թողան, նրա հօրեղբօր որդին՝
Իսաքարի ցեղից: Նա բնակւում էր
Սամարիայում, Եփրեմի լերան վրայ:
2 Նա Իսրայէլում դատաւորութիւն
արեց քսաներեք տարի եւ մեռաւ ու
թաղուեց Սամարիայում: 3 Նրանից յե-
տոյ մէջտեղ ելաւ գաղաադացի Յայիրը
եւ Իսրայէլում դատաւորութիւն արեց
քսաներկու տարի: 4 Նա ունէր երե-
սուներկու որդի, որոնք հեծնում էին
երեսուներկու աւանակի վրայ: Նրանք
ունէին երեսուներկու քաղաք: Նա
դրանք կոչեց Յայիրի աւաններ, եւ
այդպէս են կոչւում մինչեւ այսօր: Այդ
քաղաքները գտնւում են Գաղաադում:
5 Յայիրը մեռաւ եւ թաղուեց Կամոնում:

ԱՄՈՆԱՑԻՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ
ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ՎՐԱՅ

6 Իսրայէլացիները շարունակեցին
Տիրոջ առաջ չարիք գործել եւ պաշ-
տեցին Բահաղիմներին, Աստարոթին,
ասորեստանցիների աստուածներին, Սի-
դոնի աստուածներին, Մովաբի աս-
տուածներին, ամոնացիների աստուած-
ներին եւ այլազգիների աստուածներին:
Նրանք լքեցին Տիրոջը եւ չպաշտեցին
նրան: 7 Տէրը բարկութեամբ բորբոքուեց
իսրայէլացիների վրայ եւ նրանց մատ-
նեց այլազգիների ձեռքը ու ամոնա-
ցիների ձեռքը: 8 Նրանք այն ժամանակ
տասնութ տարի ճնշեցին եւ ճզմեցին
իսրայէլացիներին, բոլոր իսրայէլա-
ցիներին, որոնք Յորդանան գետի այն
կողմում, ամորհացիների երկրում, Գա-
ղաադում էին: 9 Ամոնացիներն անցան
Յորդանան գետը՝ պատերազմելու Յու-
դայի դէմ, Բենիամինի դէմ եւ Եփրեմի
տան դէմ: Իսրայէլացիները խիստ նե-
ղութեան մէջ ընկան: 10 Նրանք աղա-
ղակեցին Տիրոջը եւ ասացին. «Մեղան-
չեցինք քո դէմ, որովհետեւ թողեցինք
մեր Աստծուն եւ Բահաղիմներին պաշ-
տեցինք»: 11 Տէրն ասաց իսրայէլացի-
ներին. «Չէ՞ որ եգիպտացիները, ամոր-
հացիները, ամոնացիները, մովաբացի-
ները, այլազգիները, 12 սիդոնացիները,
ամաղէկացիները, քանանացիները նե-
ղում էին ձեզ, եւ դուք ինձ աղաղա-
կեցիք, ու ես ազատեցի ձեզ նրանց ձեռ-
քից: 13 Իսկ դուք թողեցիք ինձ եւ օտար
աստուածներ պաշտեցիք: Դրա համար
այլեւս ձեզ չեմ փրկելու: 14 Գնացէ՛ք,
աղաղակեցէ՛ք այն աստուածներին, որ
ձեզ համար ընտրեցիք, թող նրանք
փրկեն ձեզ ձեր նեղութեան ժամանակ»:
15 Իսրայէլացիներն ասացին Տիրոջը.
«Մենք մեղանչեցինք, արա՛ դու մեզ այն,
ինչ որ քեզ հաճելի է թւում, բայց
միայն, Տէ՛ր, ազատի՛ր մեզ այսօր»:
16 Եւ նրանք հեռացրին իրենց միջից
օտար աստուածներին եւ միայն Տիրոջը
պաշտեցին: Նա չհաշտուեց ժողովրդի
հետ, բայց նրա սիրտը ցաւեց Իսրայէլի
տառապանքի համար:

17 Ամոնացիները վեր կացան եւ բա-
նակատեղի դրին Գաղաադում. իսրայէ-

լացիներն էլ վեր կացան եւ բանակատեղի դրին Դիտանոցում: 18 Գաղաադի ժողովրդի իշխաններն իրար ասացին. «Այն մարդը, որ սկսի պատերազմել ամոնացիների դէմ, նա թող լինի Գաղաադի բոլոր բնակիչների գլխաւորը»:

ՅԵՓԹԱՅԷՆ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ԳԼԽԱՒՈՐ

11 Գաղաադացի Յեփթայէն հզօր եւ ուժեղ մարդ էր: Նա որդին էր մի պոռնիկ կնոջ, որը Գաղաադից ունեցաւ Յեփթայէին: 2 Գաղաադի կինը նրա համար որդիներ ծնեց, եւ երբ կնոջ որդիները զօրացան, վռնդեցին Յեփթայէին եւ ասացին նրան. «Դու մեր հօր տան մէջ ժառանգութիւն չպիտի ունենաս, որովհետեւ պոռնիկ կնոջ որդի ես»: 3 Յեփթայէն փախաւ իր եղբայրների երեսից եւ բնակուեց Տոբ երկրում: Յեփթայէի մօտ հաւաքւում էին դատարկապորտ մարդիկ եւ շրջում էին նրա հետ:

4 Որոշ ժամանակից յետոյ ամոնացիները պատերազմեցին իսրայէլացիների դէմ: 5 Երբ ամոնացիները պատերազմում էին Իսրայէլի դէմ, Գաղաադի ծերերը գնացին, որ Յեփթայէին Տոբ երկրից վերցնեն: 6 Նրանք ասացին Յեփթայէին. «Ե՛կ եւ մեզ համար զօրավար եղիր, եւ ամոնացիների դէմ պատերազմ տանք»: 7 Յեփթայէն Գաղաադի ծերերին ասաց. «Չէ՞ որ դուք ինձ ատեցիք, հանեցիք իմ հօր տնից եւ հեռացրիք ինձ ձեզնից: Հիմա, երբ նեղութեան մէջ էք, ինչո՞ւ էք եկել ինձ մօտ»: 8 Գաղաադի ծերերն ասացին Յեփթայէին. «Այդպէս չէ, մենք քեզ մօտ ենք եկել, որ մեզ հետ գնաս, եւ պատերազմ տանք ամոնացիների դէմ, եւ մեզ՝ Գաղաադի բոլոր բնակիչներիս գլխաւոր լինես»: 9 Յեփթայէն ասաց Գաղաադի ծերերին. «Եթէ դուք ինձ վերադարձնէք ամոնացիների դէմ պատերազմելու, եւ Տէրը նրանց իմ ձեռքը մատնի, ես իշխան կը դառնա՞մ»: 10 Գաղաադի ծերերն ասացին Յեփթայէին. «Տէրը թող մեր մէջ վկայ լինի, որ մենք քո խօսքի համաձայն կ՚անենք»: 11 Յեփթայէն Գաղաադի ծերերի հետ գնաց, եւ ժողովուրդը նրան իր վրայ գլխաւոր եւ առաջնորդ կարգեց: Յեփթայէն Տիրոջ առաջ Մասեփայում ասաց իր այս բոլոր խօսքերը:

12 Յեփթայէն ամոնացիների թագաւորի մօտ պատգամաւորներ ուղարկեց եւ ասաց . «Դու ինձ հետ ի՞նչ գործ ունես, որ եկել ես ինձ մօտ պատերազմելու իմ երկրում»: 13 Ամոնացիների թագաւորը Յեփթայէի պատգամաւորներին ասաց. «Ինչո՞ւ Իսրայէլը գրաւեց իմ երկիրը Եգիպտոսից դուրս գալու ժամանակ՝ Առնոնից մինչեւ Յաբոկ եւ մինչեւ Յորդանան գետը: Հիմա խաղաղութեամբ այն վերադարձրո՛ւ ինձ, եւ ես կը գնամ»: Պատգամաւորները վերադարձան Յեփթայէի մօտ: 14 Յեփթայէն նորից պատգամաւորներ ուղարկեց ամոնացիների արքայի մօտ 15 եւ ասաց նրան. «Այսպէս են ասում Իսրայէլը եւ Յեփթայէն. "Եգիպտոսից դուրս գալիս Իսրայէլը չգրաւեց Մովաբի երկիրն ու ամոնացիների երկիրը, 16 այլ Իսրայէլն անապատով գնաց մինչեւ Կարմիր ծովը եւ եկաւ մինչեւ Կադէս: 17 Իսրայէլը պատգամաւորներ ուղարկեց Եդոմի արքայի մօտ եւ ասաց. "Թող անցնեմ քո երկրով, բայց Եդոմի արքան չլսեց": Մովաբի արքայի մօտ էլ պատգամաւորներ ուղարկեց, բայց նա էլ չկամեցաւ: Եւ Իսրայէլը մնաց Կադէսում, 18 շրջեց անապատում, պտոյտ տուեց Եդոմի երկրով եւ Մովաբի երկրով, եկաւ Մովաբի երկրի արեւելեան կողմով եւ բանակատեղի դրեց Առնոնի այն կողմում, բայց Մովաբի սահմանները չմտաւ, որովհետեւ Մովաբի սահմանն Առնոնն էր: 19 Իսրայէլը պատգամաւորներ ուղարկեց ամորհացիների Սեհոն արքայի մօտ, որ Եսեբոնի եւ ամորհացիների թագաւորն էր, եւ Իսրայէլը նրան ասաց. "Թող անցնեմ քո երկրով մինչեւ իմ տեղը": 20 Եւ Սեհոնը չկամեցաւ, որ Իսրայէլն անցնի իր սահմաններով: Սեհոնը հաւաքեց իր ամբողջ ժողովրդին, բանակատեղի դրեց Ասասյում եւ պատերազմեց Իսրայէլի դէմ: 21 Իսրայէլի Տէր Աստուածը Սեհոնին եւ նրա ամբողջ ժողովրդին իսրայէլացիների ձեռքը մատնեց, եւ ջարդեցին նրանց, 22 եւ Իսրայէլը

ժառանգեց այդ երկրում ապրող ամորհացիների երկիրը, ամորհացիների բոլոր սահմանները Առնոնից մինչեւ Յաբոկ եւ անապատից մինչեւ Յորդանան գետը: 23 Արդ, Իսրայէլի Տէր Աստուածը ամորհացիներին վերացրել է Իսրայէլի իր ժողովրդի առջեւից, դո՞ւ պիտի ժառանգես այն: 24 Չէ՞ որ դու պիտի ժառանգես քո աստծու՝ Քամոսի քեզ ժառանգութիւն տուածը, մենք էլ պիտի ժառանգենք այն ամէնը, ինչ մեր Տէր Աստուածը ժառանգութիւն տուեց մեզ: 25 Արդ, դու Սեպփորի որդի Բաղակից՝ Մովաբի արքայից լա՞ւ ես. միթէ նա վի՞ճեց իսրայէլացիների հետ կամ պատերազմե՞ց նրանց դէմ. 26 Իսրայէլը երեք հարիւր տարի ապրում է Եսեբոնում եւ նրա աւաններում, Արոյերում եւ նրա աւաններում ու Յորդանան գետի ափերի բոլոր քաղաքներում: Ինչո՞ւ չազատեցին դրանք այնքան ժամանակ: 27 Ես քո դէմ չեմ մեղանչել, իսկ դու իմ դէմ չարիք ես գործում՝ պատերազմելով իմ դէմ: Իսրայէլացիների եւ ամոնացիների միջեւ դատաւոր եղող Տէրը թող այսօր դատաստան անի»: 28 Բայց ամոնացիների արքան չանսաց Յեփթայէի յղած խօսքերին:

29 Եւ Տիրոջ հոգին հակուեց Յեփթայէի կողմը: Նա Գաղաադից, Մանասէից եւ Գաղաադի Դիտանոցից անցաւ ու Գաղաադի Դիտանոցից գնաց ամոնացիների կողմը: 30 Յեփթայէն Տիրոջը ուխտ արեց եւ ասաց. «Եթէ ամոնացիներին իմ ձեռքը մատնես, 31 եւ ես խաղաղութեամբ վերադառնամ ամոնացիների մօտից, իմ տան դռնից ինձ ընդառաջ դուրս եկողին Տիրոջը ողջակէզ կը մատուցեմ»: 32 Եւ Յեփթայէն գնաց ամոնացիների դէմ պատերազմելու, եւ Տէրը նրանց մատնեց նրա ձեռքը: 33 Նա ջարդեց նրանց Արոյերից մինչեւ Սեմենիթի սահմանը, ջարդեց քսան քաղաք՝ մինչեւ այգեստանների Յաբէլը խիստ մեծ կոտորած տալով: Ամոնացիները փախան իսրայէլացիների առաջից:

ՅԵՓԹԱՅԷԻ ԱՂՋԻԿԸ

34 Յեփթայէն եկաւ Մասեփա, իր տունը, եւ ահա նրա աղջիկը նրան ընդառաջ ելաւ թմբուկներով եւ պարերով: Նա նրա միակ սիրելի զաւակն էր, եւ նրանից բացի նա ուրիշ տղայ կամ աղջիկ չունէր: 35 Երբ նրան տեսաւ, պատառոտեց իր զգեստները եւ ասաց. «Վա՜յ ինձ, աղջի՛կս, դու ինձ ընկճեցիր, փորձանքի մէջ գցեցիր, որովհետեւ քեզ համար պարտաւորութիւն ստանձնեցի Տիրոջ առաջ եւ չեմ կարող խօսքս ետ առնել»: 36 Աղջիկը նրան ասաց. «Եթէ ինձ համար պարտաւորութիւն ես ստանձնել Տիրոջ առաջ, արա՛ ինձ հետ այն, ինչ դուրս է եկել քո բերանից այն բանի փոխարէն, ինչ արեց Տէրը քեզ համար՝ վրէժ լուծելով քո թշնամիներից՝ ամոնացիներից»: 37 Եւ աղջիկն իր հօրն ասաց. «Միայն այս բա՛նն արա ինձ համար. թո՛յլ տուր, որ ես երկու ամիս գնամ ման գամ լեռների վրայ եւ իմ ընկերուհիների հետ ողբամ իմ կուսութիւնը»: 38 Եւ հայրն ասաց. «Գնա՛»: Եւ արձակեց նրան երկու ամիս: Աղջիկը իր ընկերուհիների հետ գնաց եւ լեռների վրայ ողբաց իր կուսութիւնը: 39 Երբ լրացաւ երկու ամիսը, վերադարձաւ իր հօր մօտ, եւ հայրը կատարեց իր արած ուխտը. աղջիկը տղամարդ չէր ճանաչել: Եւ Իսրայէլի մէջ սովորութիւն դարձաւ ողբալ Յեփթայէի աղջկան. 40 սահմանուած օրերին, տարուայ մէջ չորս օր, Իսրայէլի աղջիկները հաւաքւում էին ողբալու գաղաադացի Յեփթայէի աղջկան:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՓՐԵՄԻ ԵՒ ԳԱՂԱԱԴԻ ՄԻՋԵՒ

12 Եփրեմի որդիները հաւաքուեցին, եկան Սեփենա եւ ասացին Յեփթայէին. «Ինչո՞ւ ամոնացիների դէմ պատերազմի ելար եւ մեզ չկանչեցիր, որ քեզ հետ գնայինք: Հիմա մենք կրակով կ՚այրենք քո տունը եւ քեզ էլ՝ հետը»: 2 Յեփթայէն նրանց ասաց. «Ես եւ իմ ժողովուրդը զրկուած մարդիկ էինք եւ ամոնացիները խիստ նեղում էին ինձ: Ես բողոքով դիմեցի ձեզ, բայց դուք ինձ չազատեցիք նրանց ձեռքից: 3 Տեսնելով, որ ոչ ոք չի ազատում ինձ, ինքս ինձ վտանգի ենթարկեցի, գնացի ամոնացիների դէմ, եւ Տէրը նրանց իմ ձեռքը

մատնեց: Հիմա ինչո՞ւ էք դուք ելել այսօր իմ դէմ պատերազմելու»: 4 Եւ Յեփթայէն հաւաքեց Գաղաադի բոլոր տղամարդկանց ու պատերազմ մղեց Եփրեմի դէմ: Գաղաադի մարդիկ ջարդեցին եփրեմեաններին, որովհետեւ եփրեմեանների ազատուածներն ասել էին, թէ՝ «Դուք, գաղաադացիներ, Եփրեմի եւ Մանասէի միջեւ Եփրեմի փախստականներ էք»: 5 Գաղաադացիները եփրեմեաններից գրաւեցին Յորդանան գետի կիրճերը, եւ երբ եփրեմեանների փախստականներն ասում էին՝ «Թող անցնենք», Գաղաադի մարդիկ նրանց ասում էին. «Մի՞թէ դուք էլ եփրեմեան էք»: Նրանք ասում էին. «Նրանցից չենք»: 6 Նրանց ասում էին. «Մեզ մի նշան տուէ՛ք, ասացէ՛ք՝ հասկ, հասկ»: Բայց նրանց չէր յաջողւում այդպէս ասել, ուստի բռնում եւ կոտորում էին նրանց Յորդանան գետի անցումներում: Այդ ժամանակ եփրեմեաններից քառասուներկու հազար մարդ զոհուեց:

7 Յեփթայէն վեց տարի դատաւորութիւն արեց Իսրայէլում. գաղաադցի Յեփթայէն մեռաւ եւ թաղուեց իր քաղաքում՝ Գաղաադում:

ԵՍԵԲՈՆԸ, ԵԼՈՆԸ, ԱԲԴՈՆԸ

8 Նրանից յետոյ Իսրայէլում դատաւորութիւն արեց բեթղեհէմցի Եսեբոնը: 9 Նա երեսուն տղայ ունէր եւ երեսուն աղջիկ: Աղջիկներին մարդու տուեց, իսկ տղաների համար երեսուն կին բերեց դրսից: Նա Իսրայէլում դատաւորութիւն արեց եօթը տարի: 10 Եսեբոնը մեռաւ եւ թաղուեց Բեթղեհէմում:

11 Նրանից յետոյ Իսրայէլում տասը տարի դատաւորութիւն արեց զաբուղոնցի Ելոնը: 12 Զաբուղոնցի Ելոնը մեռաւ եւ թաղուեց Եղիմում՝ Զաբուղոնի երկրում:

13 Նրանից յետոյ Իսրայէլում դատաւոր եղաւ փարաթոնցի Աբդոնը՝ Ելլէքի որդին: 14 Նա քառասուն որդի եւ երեսուն թոռներ ունէր, որոնք հեծնում էին եօթանասուն աւանակներ: Նա Իսրայէլում դատաւորութիւն արեց ութ տարի: 15 Փարաթոնցի Աբդոնը՝ Ելլէքի որդին, մեռաւ եւ թաղուեց Եփրաթոնում, Եփրեմի երկրում, Ամաղէկի լերան վրայ:

ՍԱՄՓՍՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ

13 Իսրայէլացիները շարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ, եւ Տէրը նրանց քառասուն տարի այլազգիների ձեռքը մատնեց:

2 Սարաացի մի մարդ կար Դանի ցեղից, նրա անունը Մանովէ էր: Նրա կինը ամուլ էր եւ զաւակ չէր ունենում: 3 Տիրոջ հրեշտակը երեւաց այս կնոջը եւ ասաց նրան. «Ահա դու ամուլ ես եւ երեխայ չես ունեցել, բայց կը յղիանաս եւ որդի կը ծնես: 4 Արդ, զգո՛յշ եղիր, գինի եւ օղի չխմես եւ ոչ մի անմաքուր բան չուտես, 5 որովհետեւ ահա դու պիտի յղիանաս եւ մի որդի ծնես: Նրա գլխին ածելի չպիտի դիպչի, որովհետեւ մանուկը Աստծու ուխտաւոր պիտի լինի հէնց մօր արգանդից. նա պիտի սկսի փրկել Իսրայէլը այլազգիներից»: 6 Կինը մտաւ իր տունը եւ ասաց իր ամուսնուն. «Աստծու մարդը եկաւ ինձ մօտ, նա Աստծու հրեշտակի նման վեհատեսիլ էր: Ես նրան հարցրի, թէ որտեղից է, նա ինձ իր անունը չասաց: 7 Նա ինձ ասաց. "Ահա դու պիտի յղիանաս եւ մի որդի ծնես, հիմա գինի եւ օղի չխմես եւ ոչ մի անմաքուր բան չուտես, որովհետեւ մանուկը Աստծու ուխտաւոր պիտի լինի հէնց իր մօր արգանդից մինչեւ իր մահուան օրը"»:

8 Մանովէն Տիրոջն աղաչեց եւ ասաց. «Աղաչում եմ, Տէ՛ր, Աստծու այն մարդը, որին դու ուղարկեցիր մեզ մօտ, թող դարձեալ գայ մեզ մօտ եւ սովորեցնի, թէ ինչ անենք այն մանկանը, որ պիտի ծնուի»: 9 Աստուած լսեց Մանովէի ձայնը, եւ Աստծու հրեշտակը նորից եկաւ նրա կնոջ մօտ, երբ նա նստել էր հանդում: Նրա ամուսին Մանովէն նրա մօտ չէր: 10 Կինն շտապ գնաց պատմեց իր ամուսնուն եւ ասաց նրան. «Ահա երեւաց ինձ այն մարդը, որ այն օրը եկել էր ինձ մօտ»: 11 Մանովէն վեր կացաւ, գնաց իր կնոջ հետ, եկաւ այն մարդու մօտ եւ ասաց նրան. «Դո՞ւ ես այն մարդը, որ խօսել է այս կնոջ հետ»: Հրեշտակն ասաց. «Ես եմ»: 12 Մանովէն

ասաց. «Արդ, երբ քո խօսքերը կատարուեն, ինչպիսի՞ն պէտք է լինեն մանկան կեանքի կանոնները ու գործերը»: 13 Տիրոջ հրեշտակն ասաց Մանովէին. «Թող նա զգուշանայ այն ամենից, որ ասացի այդ կնոջը. 14 որթատունկից ելած ոչ մի բան թող չուտի, գինի եւ օղի չխմի, ոչ մի անմաքուր բան չուտի, թող զգուշանայ այն ամենից, որ պատուիրեցի»:

15 Մանովէն ասաց հրեշտակին. «Թող որ քեզ մի փոքր ժամանակ մեզ մօտ պահենք եւ մի ուլ պատրաստենք ու դնենք քո առաջ»: 16 Տիրոջ հրեշտակը Մանովէին ասաց. «Եթէ ինձ պահես էլ, քո հացից չեմ ուտի, իսկ եթէ ուլը ողջակէզ պիտի անես, Տիրո՛ջը մատուցիր այն»: Մանովէն չիմացաւ, թէ նա Տիրոջ հրեշտակն է: 17 Մանովէն ասաց Տիրոջ հրեշտակին. «Ի՞նչ է քո անունը, ասա՛, որ երբ քո խօսքը կատարուի, փառաւորենք քեզ»: 18 Տիրոջ հրեշտակն ասաց նրան. «Ինչո՞ւ ես հարցնում իմ անունը, դա մի սքանչելի անուն է»: 19 Մանովէն վերցրեց զոհաբերուելիք ուլը եւ քարի վրայ մատուցեց սքանչելագործ Տիրոջը. Մանովէն եւ նրա կինը նայում էին: 20 Երբ բոցը զոհասեղանից դէպի երկինք բարձրացաւ, Տիրոջ հրեշտակն էլ բարձրացաւ զոհասեղանի բոցի հետ: Մանովէն ու նրա կինը նայում էին եւ երեսի վրայ գետին ընկան: 21 Տիրոջ հրեշտակն այլեւս չերեւաց Մանովէին ու նրա կնոջը: Այն ժամանակ Մանովէն իմացաւ, որ նա Տիրոջ հրեշտակն է: 22 Մանովէն ասաց իր կնոջը. «Անպատճառ կը մեռնենք, որովհետեւ տեսանք Աստծուն: 23 Եւ նրա կինը նրան ասաց. «Եթէ Տէրը ուզենար մեզ սպանել, մեր ձեռքից չէր ընդունի ողջակէզն ու զոհը եւ մեզ չէր յայտնի այդ ամէնը իր ժամանակին եւ այն մեզ լսելի չէր դարձնի»: 24 Եւ կինը մի որդի ծնեց ու նրա անունը Սամփսոն դրեց: Մանուկն աճեց, եւ Տէրը նրան օրհնեց: 25 Տիրոջ հոգին սկսեց շրջել նրա հետ Դանի բանակում, Սարաայի եւ Եշթաուլի միջեւ:

ՍԱՄՓՍՈՆԸ ԵՒ ԹԱՄՆԱԹԱՅԻ ԱՂՋԻԿԸ

14 Սամփսոնն իջաւ Թամնաթա եւ Թամնաթայում այլազգիների աղջիկների մէջ մի կին տեսաւ, որը հաճելի թուաց նրան: 2 Նա գնաց պատմեց իր հօրն ու մօրը եւ ասաց. «Թամնաթայում այլազգիների աղջիկների մէջ մի կին տեսայ. արդ, նրան ինձ համար կի՛ն առէք»: 3 Նրա հայրն ու մայրը ասացին նրան. «Մի՞թէ կին չկայ քո եղբայրների աղջիկների եւ իմ ամբողջ ժողովրդի մէջ, որ գնաս կին առնես անթլփատ այլազգիներից»: Սամփսոնն ասաց իր հօրը. «Նրան բե՛ր ինձ համար, որովհետեւ նա հաճելի է իմ աչքին»: 4 Նրա հայրն ու մայրը չգիտէին, որ դա Տիրոջից է, որպէսզի նա վրէժ լուծի այլազգիներից: Այն ժամանակ այլազգիներն իշխում էին Իսրայէլի վրայ:

5 Սամփսոնն իր հօր եւ մօր հետ իջաւ Թամնաթա. Սամփսոնը ճանապարհը շեղեց Թամնաթայի այգեստանի մէջ եւ տեսաւ, որ ահա առիւծի մի կորիւն է մռնչում իր դիմաց: 6 Տիրոջ հոգին աջակցեց նրան, եւ նա պատառեց առիւծին ինչպէս մի ուլի, մինչ նրա ձեռքին զէնք չկար: 7 Նա իր արածը չպատմեց իր հօրն ու մօրը: Նրանք եկան, խօսեցին կնոջ հետ, եւ կինը հաճելի թուաց Սամփսոնին:

8 Մի քանի օր յետոյ, երբ ետ դարձաւ այդ աղջկան կնութեան առնելու, ճանապարհը շեղեց առիւծի դիակը տեսնելու համար եւ տեսաւ, որ առիւծի բերանի մէջ մեղուների մի պարս եւ մեղր կար: 9 Նա առաւ այն իր բերանը եւ ուտելով գնաց իր հօր եւ մօր մօտ, նրանց էլ տուեց, եւ նրանք կերան: Բայց նրանց չասաց, թէ մեղրը առիւծի բերանից է հանել:

10 Նրա հայրն իջաւ այն կնոջ մօտ, եւ Սամփսոնն այնտեղ եօթը օր հարսանիք արեց, որովհետեւ երիտասարդներն այդպէս էին անում: 11 Նրանք զարհուրելով Սամփսոնից՝ նրա մօտ երեսուն ընկեր կարգեցին, որոնք նրա մօտ մնացին:

12 Սամփսոնը նրանց ասաց. «Հիմա ես ձեզ մի հանելուկ կ'ասեմ. եթէ խնջոյքի այս եօթը օրուայ ընթացքում

այն լուծէք եւ գտնէք, ես ձեզ կը տամ
երեսուն սաւան եւ երեսուն տօնական
զգեստներ: 13 Իսկ եթէ չկարողանաք
լուծել, դուք կը տաք ինձ երեսուն
սաւան եւ երեսուն տօնական զգեստ-
ներ»: Նրան ասացին. «Առաջարկի՛ր մեզ
քո հանելուկը, եւ լսենք այն»: 14 Եւ
նրանց ասաց. «Ուտողից կերակուր
դուրս եկաւ, եւ հզօրից քաղցրութիւն
դուրս եկաւ»: Նրա հանելուկը չկա-
րողացան լուծել երեք օրուայ ընթաց-
քում: 15 Չորրորդ օրը Սամփսոնի կնոջն
ասացին. «Խաբի՛ր քո մարդուն, որ
հանելուկը քեզ բացատրի, թէ չէ քեզ եւ
քո հօր տունը կ'այրենք: Մեզ կո-
ղոպտելո՞ւ համար կանչեցիր այստեղ»:
16 Սամփսոնի կինը լաց եղաւ ամուսնու
մօտ եւ ասաց նրան. «Դու ատել ես ինձ
եւ չես սիրել, որովհետեւ այն հանե-
լուկը, որ առաջարկել ես իմ ժողովրդի
որդիներին, ինձ չես յայտնել»: Սամփ-
սոնը նրան ասաց. «Իմ հօրն ու մօրը չեմ
յայտնել, հիմա քե՞զ պիտի յայտնեմ»:
17 Եւ խնջոյքի եօթը օրերին կինը լաց
եղաւ նրա մօտ: Եօթներորդ օրը Սամփ-
սոնը յայտնեց նրան, որովհետեւ նա
թախանձում էր: Կինն էլ յայտնեց իր
ժողովրդի զաւակներին: 18 Եօթներորդ
օրը արեւամուտից առաջ քաղաքի մար-
դիկ ասացին Սամփսոնին. «Ի՞նչն է
մեղրից քաղցր եւ ի՞նչն է առիւծից
հզօր»: Սամփսոնը նրանց ասաց. «Եթէ
դուք իմ երինջով չհերկէիք, իմ հանելու-
կի պատասխանը չէիք գտնի»: 19 Տիրոջ
հոգին աջակցեց Սամփսոնին, նա իջաւ
Ասկաղոն, այնտեղ երեսուն մարդ սպա-
նեց եւ նրանց տօնական զգեստներն
առաւ եւ տուեց հանելուկը լուծողներին:
Սամփսոնը սաստիկ բարկացաւ եւ գնաց
իր հօր տուն, 20 իսկ Սամփսոնի կինն
ամուսնացաւ նրա կնքահօր հետ, որ նրա
ընկերն էր:

ՍԱՄՓՍՈՆԻ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

15 Մի քանի օր յետոյ, ցորենի հնձի
օրերին Սամփսոնը մի ուլ վերցնելով՝
այցելեց իր կնոջը եւ ինքն իրեն ասաց.
«Մտնեմ սենեակ կնոջս մօտ»: Բայց
կնոջ հայրը չթողեց, որ նրա մօտ մտնի:
2 Նրա հայրն ասաց. «Ես կարծեցի, թէ
դու ատեցիր նրան եւ նրան կնութեան
տուի քո ընկերոջը: Չէ՞ որ նրա կրտսեր
քոյրը նրանից գեղեցիկ է, թող սա քեզ
կին լինի նրա փոխարէն»: 3 Սամփսոնն
ասաց. «Ես միանգամայն անմեղ կը
լինեմ այլազգիներիդ առաջ, եթէ նրանց
դէմ չարութիւն անեմ»: 4 Եւ Սամփսոնը
գնաց, երեք հարիւր աղուէս բռնեց: Նա
ջահեր վերցրեց եւ աղուէսներին կապեց
միմեանց հետ՝ պոչ պոչի, ջահերը դրեց
երկու պոչերի մէջտեղը եւ կապեց: 5 Նա
ջահերը կրակով վառեց եւ արձակեց
այլազգիների հնձի մէջ, այրեց ցորենի
շեղջերը, առաջուց հնձուածները, դէզերն
ու չհնձուած ցորենը, մինչեւ անգամ
այգիներն ու ձիթենիները: 6 Այլազգի-
ներն ասացին. «Ո՞վ արեց այս բանը»:
Եւ ասացին. «Թամնացու փեսայ Սամփ-
սոնը, որովհետեւ կնոջ հայրը նրա կնոջն
առաւ եւ նրա ընկերոջը կնութեան
տուեց»: Այլազգիները վեր կացան,
կրակով այրեցին նրա կնոջ հօր տունը,
կնոջը եւ կնոջ հօրը: 7 Սամփսոնը նրանց
ասաց. «Եթէ մի այդքան էլ անէք,
դարձեալ չեմ հաշտուի, այլ ձեր ամէն
մէկից իմ վրէժը պիտի լուծեմ»: 8 Եւ
մեծամեծ հարուածներով զարկեց նրանց
սրունքներին ու մէջքին, եւ իջաւ բնա-
կուեց Ետեմի քարայրում, հեղեղատի
մօտ:

ՍԱՄՓՍՈՆԸ ՅԱՂԹՈՒՄ Է ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻՆ

9 Այլազգիները վեր կացան, բանա-
կատեղի դրին Յուդայի երկրի շուրջը
եւ տարածուեցին Ելքիի շուրջբոլորը:
10 Յուդայի երկրի մարդիկ նրանց ասա-
ցին. «Ինչո՞ւ էք եկել մեզ վրայ»: Այ-
լազգիներն ասացին. «Եկել ենք Սամփ-
սոնին կապելու, որ նրա հետ վարուենք
այնպէս, ինչպէս նա վարուեց մեզ հետ»:
11 Եւ Յուդայի երկրից երեք հազար
մարդ իջան Ետեմի քարայրն ու ասացին
Սամփսոնին. «Չգիտե՞ս, որ այլազգի-
ներն իշխում են մեզ վրայ, ինչո՞ւ արե-
ցիր այդ բանը մեզ հետ»: Սամփսոնը
նրանց ասաց. «Ինչպէս որ նրանք վա-
րուեցին ինձ հետ, այդպէս էլ ես վա-
րուեցի նրանց հետ»: 12 Նրան ասացին.
«Եկել ենք քեզ կապելու եւ այլազ-
գիների ձեռքը մատնելու»: Սամփսոնը

նրանց ասաց. «Երդուեցէ՛ք, որ չէք
սպանի ինձ, տուէ՛ք ինձ նրանց ձեռքը,
եւ դուք երբեք մի՛ հանդիպէք ինձ»:
13 Նրանք երդուեցին նրան եւ ասացին.
«Ո՛չ, քեզ կը կապենք եւ կը տանք
նրանց ձեռքը, բայց քեզ չենք սպանի»:
Եւ նրան կապեցին երեք նոր պարան-
ներով ու դուրս հանեցին քարայրից:
14 Նա եկաւ մինչեւ Մնօտ կոչուած
վայրը, այլազգիներն աղաղակեցին եւ
ընթացան նրա դէմ յանդիման: Տիրոջ
հոգին աջակից եղաւ Սամփսոնին, նրա
բազուկների վրայի պարանները դար-
ձան կրակից այրուած թելի նման, եւ
կապանքները հալուեցին թափուեցին
նրա բազուկներից: 15 Նա գետին տա-
պալուած էշի մի ծնօտ գտաւ, երկարեց
իր ձեռքը, վերցրեց այն եւ դրանով
հազար մարդ սպանեց: 16 Սամփսոնն
ասաց. «Էշի ծնօտով կը բնաջնջեմ
նրանց, որովհետեւ էշի ծնօտով կո-
տորեցի հազար մարդ»: 17 Եւ երբ իր
խօսքը վերջացրեց, ծնօտը ձեռքից գցեց
եւ այդ տեղն անուանեց Մնօտի կոտոր-
ած:
18 Նա խիստ ծարաւեց, աղաղակեց
Տիրոջն ու ասաց. «Դու քո ծառայի
ձեռքով յաջողեցրիր այս մեծ փրկու-
թիւնը, իսկ հիմա ծարաւի՞ց պիտի
մեռնեմ եւ անթլփատների ձե՞ռքն
ընկնեմ»: 19 Եւ Տէրը Մնօտ կոչուող
վայրում մի անցք բացեց, նրանից ջուր
դուրս եկաւ, նա խմեց, ոգի առաւ եւ
զովացաւ. այդ պատճառով դրա անունը
դրեց «Մնօտի աղբիւր»: Եւ այն գոյու-
թիւն ունի մինչեւ այսօր: 20 Սամփսոնը
այլազգիների իշխանութեան օրօք
Իսրայէլում քսան տարի դատաւոր
եղաւ:

ՍԱՄՓՍՈՆԸ ԵՒ ԳԱԶԱՅԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ

16 Սամփսոնն այնտեղից գնաց Գա-
զա, այնտեղ մի պոռնիկ կին տեսաւ եւ
մտաւ նրա մօտ: 2 Լուրը հասաւ
գազացիներին, եւ նրանք ասացին.
«Սամփսոնը եկել է այստեղ»: Շրջա-
պատեցին, ամբողջ գիշերը դարանա-
կալեցին նրան քաղաքի դարպասի մօտ
եւ ամբողջ գիշերը լուռ մնացին ու
ասացին. «Այստեղ մնանք մինչեւ
առաւօտ եւ սպանենք նրան»: 3 Սամփ-
սոնը քնեց մինչեւ կէսգիշեր. կէսգիշերին
վեր կացաւ, պոկեց քաղաքի դար-
պասների փեղկերը եւ դրանք նիգերով
մէկտեղ բարձրացրեց, դրեց իր ուսերի
վրայ, տարաւ այն լերան գլուխը, որը
Քեբրոնի դիմացն է, եւ դրանք դրեց
այնտեղ:

ՍԱՄՓՍՈՆ ԵՒ ԴԱԼԻԼԱ

4 Դրանից յետոյ նա սիրեց մի կնոջ,
որ ապրում էր Սորեկ հեղեղատի եզեր-
քին. նրա անունը Դալիլա էր: 5 Այդ
կնոջ մօտ եկան այլազգիների նախա-
բարները եւ ասացին. «Խաբի՛ր նրան եւ
տե՛ս, թէ ինչում է նրա մեծ զօրութիւնը,
եւ կամ ինչպէս կարող ենք հնար գտնել
եւ կապել նրան, որ տկարացնենք նրան:
Իսկ մենք ամէն մէկս քեզ կը տանք
հազար հարիւր արծաթ»: 6 Եւ Դալիլան
ասաց Սամփսոնին. «Ասա՛ ինձ, թէ
ինչում է քո մեծ զօրութիւնը, եւ քեզ
տկարացնելու համար ինչով պէտք է
կապել քեզ»: 7 Սամփսոնը նրան ասաց.
«Եթէ ինձ կապեն եօթը դալար
ճիւղերով, կը տկարանամ եւ կը դառնամ
սովորական մարդկանց նման»: 8 Եւ
այլազգիների նախարարները բերին
եօթը դալար ճիւղեր, եւ Դալիլան նրան
կապեց դրանցով 9 ու շտեմարանում
դարանակալ նստեց: Կինը նրան ասաց.
«Այլազգիները յարձակուել են քեզ
վրայ, Սամփսո՛ն»: Եւ նա կտրտեց
ճիւղերն այնպէս, ինչպէս կը կտրտուի
կրակից այրուած բարակ թելը թափ
տալուց: Եւ այդպէս չհասկացուեց նրա
զօրութիւնը: 10 Դալիլան ասաց Սամփ-
սոնին. «Ահա խաբեցիր ինձ եւ սուտ
խօսեցիր, գոնէ հիմա ասա՛, թէ ինչով կը
կապուես»: 11 Եւ նա ասաց նրան. «Եթէ
ինձ կապեն եօթը նոր չուաններով,
որոնք գործածուած չլինեն, կը տկարա-
նամ եւ կը լինեմ սովորական մարդկանց
նման»: 12 Դալիլան առաւ նոր չուան-
ներ, դրանցով կապեց նրան եւ ասաց.
«Այլազգիները յարձակուել են քեզ
վրայ, Սամփսո՛ն»: Եւ Դալիլան շտե-
մարանում դարանակալ նստել էր: Իսկ
Սամփսոնը ասեղի թելի նման կտրտեց
թափեց այն իր բազուկներից: 13 Դալի-

լան ասաց Սամփսոնին. «Մինչեւ ե՞րբ պիտի խաբես ինձ եւ սուտ ասես ինձ: Հիմա ասա՛ ինձ, թէ ինչո՞վ կը կապուես»: Նա ասաց նրան. «Եթէ իմ գլխի եօթը գիսակները հիւսես չղթայաձեւ հիւսքերով եւ ցցերով ամրացնես պատին, կը տկարանամ սովորական մարդկանց նման»: 14 Եւ Դալիլան քնեցրեց նրան, առաւ նրա գլխի եօթը գիսակները չղթայաձեւ հիւսքերով, ցցերով ամրացրեց պատին եւ ասաց նրան. «Այլազգիները յարձակուել են քեզ վրայ, Սամփսո՛ն»: Նա զարթնեց քնից, պատից պոկեց ցցերը ոստայնի եւ հիւսքերի հետ միասին, եւ չիմացուեց նրա զօրութիւնը: 15 Դալիլան նրան ասաց. «Ինչպէ՞ս ես ասում, թէ քեզ սիրում եմ, մինչ քո սիրտը չիտակ չէ ինձ հետ. այս երեք անգամ խաբեցիր ինձ եւ չասացիր, թէ ինչո՞ւմ է քո մեծ զօրութիւնը»: 16 Եւ երբ ամբողջ գիշերը նեղեց նրան խօսքերով, թախանձեց եւ հոգին հանեց սպանելու չափ, 17 նա սրտանց պատմեց նրան ամէն ինչ եւ ասաց նրան. «Ածելի չպիտի դիպչի իմ գլխին, որովհետեւ Աստծու ուխտաւոր եմ ես իմ մօր արգանդից, իսկ եթէ ածիլուեմ, իմ զօրութիւնը կը գնայ ինձնից, ես կը տկարանամ եւ կը դառնամ բոլոր մարդկանց պէս»: 18 Երբ Դալիլան տեսաւ, որ նա սրտանց պատմեց իրեն ամէն ինչ, մարդ ուղարկեց, կանչեց այլազգիների նախարարներին եւ ասաց. «Բոլորդ եկէ՛ք, որովհետեւ սրտանց պատմեց ինձ ամէն ինչ»: Եւ այլազգիների բոլոր նախարարները եկան նրա մօտ արծաթն իրենց ձեռքին: 19 Դալիլան քնեցրեց նրան իր ծնկների մէջ, վարսաւիր կանչեց, որն ածիլեց նրա գլխի եօթը գիսակները: Նա սկսեց թուլանել, եւ նրանից գնաց նրա զօրութիւնը: 20 Դալիլան ասաց. «Այլազգիները յարձակուել են քեզ վրայ, Սամփսո՛ն»: Նա զարթնեց քնից եւ ասաց. «Վեր կենամ եւ անեմ այնպէս, ինչպէս միշտ եւ թափ տամ»: Նա չգիտէր, թէ Տէրը մեկնել էր իրենից: 21 Այլազգիները նրան բռնեցին, հանեցին նրա աչքերը, իջեցրին նրան Գազա, կապեցին երկաթէ կապանքներով, եւ նա բանտում աղօրիք էր պտտեցնում:

ՍԱՄՓՍՈՆԻ ՄԱՀԸ

22 *Նրա գլխի մազերն սկսեցին աճել ածիլելուց յետոյ:* 23 *Այլազգիների նախարարները հաւաքուեցին, որ մեծ զոհ մատուցեն իրենց աստծուն՝ Դագոնին եւ ուրախանան: Նրանք ասացին. «Մեր աստուածը մեր թշնամի Սամփսոնին մեր ձեռքը մատնեց»:* 24 *Երբ մարդիկ տեսան նրան, օրհնեցին իրենց աստուածներին՝ ասելով. «Մեր աստուածը մեր ձեռքն է մատնել մեր թշնամուն՝ մեր երկիրն աւերողին, որը շատացրեց մեր վիրաւորներին»:* 25 *Երբ նրանց սրտերը զուարթացան, ասացին. «Կանչեցէ՛ք Սամփսոնին բանտից, թող մեր առաջ պար գայ»: Սամփսոնին կանչեցին բանտից եւ զուարճանում էին նրանով: Նրան կանգնեցրին երկու սիւների մէջտեղում:* 26 *Սամփսոնն ասաց իր ձեռքից բռնած պատանուն. «Թո՛յլ տուր ինձ շօշափեմ սիւները, որոնց վրայ հաստատուած է այս տունը, եւ յենուեմ նրանց վրայ»:* 27 *Տունը լի էր տղամարդկանցով եւ կանանցով, այնտեղ էին այլազգիների բոլոր նախարարները, տանիքի վրայ կային մօտ երեք հազար կանայք եւ տղամարդիկ, որոնք դիտում էին Սամփսոնի պարը:* 28 *Սամփսոնն աղաղակեց Տիրոջը եւ ասաց. «Տէ՛ր, զօրութիւնների՛ Տէր, յիշի՛ր ինձ եւ զօրացրո՛ւ ինձ այս մի անգամ էլ, Աստուա՛ծ, որ իմ երկու աչքերի համար վրէժս լուծեմ այս այլազգիներից»:* 29 *Եւ Սամփսոնը բռնեց մէջտեղի երկու սիւներից, որոնց վրայ հաստատուած էր տունը, եւ յենուեց նրանց վրայ՝ մէկին աջ ձեռքով, միւսին՝ ձախ:* 30 *Եւ Սամփսոնն ասաց. «Թող մեռնեմ ես այս այլազգիների հետ»: Եւ ուժեղ շարժեց: Տունը փուլ եկաւ բոլոր նախարարների եւ նրա մէջ եղած ամբողջ ժողովրդի վրայ: Եւ մեռածները, որոնց Սամփսոնն սպանեց իր մահուան պահին, աւելի էին, քան նրանք, որոնց սպանել էր իր կենդանութեան ժամանակ:* 31 *Նրա եղբայրներն ու նրա հօր ամբողջ տունն իջան, վերցրին հանեցին եւ թաղեցին նրան իր հօր Մանովէի գերեզմանում, Սարաայի եւ Եսթաւուլի միջեւ: Նա Իսրայէլում դատաւոր էր եղել քսան տարի:*

ՄԻՔԱՆ ԵՒ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԱՅՐԸ

17 *Եփրեմի լերան վրայ Միքա անունով մի մարդ կար:* 2† *Նա իր մօրն ասաց. «Այն հազար հարիւր արծաթը, որ վերցուել է քեզնից, եւ որի համար անէծք տուիր եւ ասացիր իմ ականջին, թէ՝ "Այն արծաթն ինձ մօտ է", ես եմ վերցրել այն»: Նրա մայրն ասաց. «Որդեա՛կ իմ, օրհնեալ լինես Տիրոջից»:* 3 *Եւ նա իր մօրը վերադարձրեց հազար հարիւր արծաթը: Նրա մայրն ասաց. «Այն արծաթը ես իմ ձեռքով նուիրել եմ Տիրոջը՝ առանձին ձուլածոյ կուռք շինելու համար: Հիմա այն քեզ եմ վերադարձնում»:* 4 *Իսկ Միքան այդ արծաթը մօրը վերադարձրեց: Մայրն առաւ երկու հարիւր արծաթ, այն տուեց ձուլողին, նա էլ ձուլածոյ կուռք շինեց դրանից, որը մնաց Միքայի տանը:* 5 *Միքայի տունը նրա համար աստծու տուն եղաւ: Եւ նա եփուդ‡ ու թերափ§ շինեց. ձեռնադրեց իր որդիներից մէկին, եւ սա նրա համար քահանայ եղաւ:* 6 *Այդ օրերին Իսրայէլում թագաւոր չկար, եւ ամէն մարդ անում էր այն, ինչ հաճելի էր իր աչքին:*

7 *Յուդայի ազգատոհմից, Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից, մի պատանի կար, որ ղեւտացի էր եւ այնտեղ էր բնակւում:* 8 *Այս մարդը Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից գնաց պանդխտելու որեւէ տեղ՝ ապաստան գտնելու համար: Նա ճանապարհորդելով եկաւ մինչեւ Եփրեմի լեռը եւ մինչեւ Միքայի տունը:* 9 *Միքան նրան ասաց. «Ո՞րտեղից ես գալիս»: Նա ասաց. «Ես ղեւտացի եմ, Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից, գնում եմ պանդխտելու որեւէ տեղ՝ ապաստան գտնելու համար»:* 10 *Միքան նրան ասաց. «Մնա՛ ինձ մօտ, ինձ համար հայր եւ քահանայ եղի՛ր, եւ ես քեզ ամէն տարի տասը արծաթ, մի զոյգ զգեստ եւ ուտելիք կը տամ, որով կ'ապրես»:* 11 *Ղեւտացին գնաց եւ ապաստանեց այդ մարդու մօտ: Այս պատանին նրա համար եղաւ ինչպէս իր որդիներից մէկը:* 12 *Միքան ղեւտացուն ձեռնադրեց, եւ պատանին նրա համար քահանայ եղաւ եւ ապրում էր Միքայի տանը:* 13 *Միքան ասաց. «Հիմա գիտեմ, որ Տէրն ինձ բարիք արեց, քանի որ այս ղեւտացին ինձ համար քահանայ եղաւ»: Այն օրերին Իսրայէլում թագաւոր չկար:*

ՄԻՔԱՆ ԵՒ ԴԱՆԻ ՑԵՂԸ

18 *Այն օրերին Դանի ցեղն իր համար բնակուելու կալուածք էր փնտռում, որովհետեւ մինչեւ այդ օրերը Իսրայէլի ցեղերի մէջ նրան կալուածք չէր հասել:* 2 *Դանի որդիներն իրենց տոհմերից հինգ մարդ ուղարկեցին, իրենց ցեղերի թուի համեմատ, զօրաւոր մարդիկ Սարաայից եւ Եսթաւուլից, որ գնան լրտեսեն եւ հետախուզեն այդ երկիրը: Նրանց ասացին. «Գնացէ՛ք, զննեցէ՛ք այն երկիրը»: Նրանք գնացին Եփրեմի լեռը, մինչեւ Միքայի տունը եւ գիշերեցին այնտեղ:* 3 *Եւ մինչդեռ նրանք Միքայի տանն էին, ճանաչեցին ղեւտացի պատանու ձայնը, մտան նրա մօտ եւ ասացին նրան. «Ո՞վ բերեց քեզ այստեղ, ի՞նչ ես անում եւ ի՞նչ գործ ունես այստեղ»:* 4 *Նա ասաց նրանց. «Միքան ինձ համար այս ու այս արեց, ինձ վարձակալեց, եւ ես նրա համար քահանայ եղայ»:* 5 *Նրան ասացին. «Հապա հարցրո՛ւ Աստծուն, որ իմանանք, թէ յաջող կը լինի՞ մեր գնացած ճանապարհը»:* 6 *Քահանան նրանց ասաց. «Գնացէ՛ք խաղաղութեամբ, Տիրոջ առաջն է ձեր գնացած ճանապարհը»:* 7 *Այդ հինգ մարդիկ գնացին Լայիսա, տեսան այնտեղ եղած մարդկանց, որոնք սիդոնացիների նման անհոգ ու հանգիստ ապրում էին: Այդ երկրում իշխանութիւն ունեցող մէկը չկար, որ բան ասէր, որովհետեւ Սիդոնից հեռու էին եւ ասորեստանցիների հետ գործ չունէին:* 8 *Այդ հինգ մարդիկ եկան Սարաա եւ Եսթաւուլ իրենց եղբայրների մօտ: Նրանց եղբայրներն իրենց ասացին. «Ինչո՞ւ էք նստել»:* 9 *Նրանք ասացին. «Վե՛ր կացէք գնանք նրանց վրայ, որովհետեւ մենք մտանք շրջեցինք այն երկրում մինչեւ Լայիսա եւ տեսանք, որ ժողովուրդն այնտեղ բնակւում է անհոգ՝*

†Այս նախադասութիւնը թարգմանելիս հետեւել ենք եբրայերէն բնագրին:

‡Եփուդ, տես Դատ. Ը 27-ի ծանօթ.:

§Թերափ եբրայերէն բառ է, որ նշանակում է տնային կուռք: Տե՛ս նաեւ Դատ. ԺԸ 14, 17, 20:

սիդոնացիների նման. նրանք հեռու են Սիդոնից եւ ոչ մի գործ չունեն ասորեստանցիների հետ: Վե՛ր կացէք գնանք նրանց վրայ, որովհետեւ տեսանք այն երկիրը, որ շատ լաւն է. իսկ դուք հանգիստ նստե՞լ էք: Հիմա ինչո՞ւ էք յապաղում գնալու մտնելու եւ ժառանգելու այն երկիրը: 10 Երբ որ գնաք, կը տիրէք մի անհոգ ժողովրդի եւ ընդարձակ երկրի, որովհետեւ Աստուած այն մատնել է մեր ձեռքը: Դա մի այնպիսի տեղ է, որտեղ երկրի վրայ եղած ոչ մի բանի պակասութիւն չկայ»:

11 Եւ այնտեղից՝ Սարայից եւ Եսթաուլից գնացին Դանի ազգատոհմից վեց հարիւր մարդիկ՝ զինուած պատերազմական զէնքերով: 12 Գնացին բանակատեղի դրին Յուդայի երկրի Կարիաթարիմ վայրում. այդ պատճառով այն տեղը մինչեւ այսօր կոչւում է Դանի բանակատեղի, որ Կարիաթարիմի ետեւի կողմում է: 13 Այնտեղից անցան, եկան մինչեւ Եփրեմի լեռը եւ հասան մինչեւ Միքայի տունը: 14 Այդ հինգ մարդիկ, որ գնացել էին լրտեսելու Լայիսա երկիրը, պատասխանեցին եւ ասացին իրենց եղբայրներին. «Գիտէ՞ք, որ այս տներում եփուդ, թերափ եւ ձուլածոյ կուռք կայ: Հիմա տեսէ՛ք, թէ ինչ պիտի անէք»: 15 Եւ նրանք շրջուեցին այնտեղ ու մտան ղեւտացի պատանու տունը՝ Միքայի տունը եւ նրա ողջութիւնը հարցրին: 16 Իսկ Դանի որդիներից պատերազմական զէնքով զինուած այն վեց հարիւր մարդիկ անշարժ կանգնեցին դռան մուտքի մօտ: 17 Իսկ այն հինգ մարդիկ, որոնք գնացել էին երկիրը լրտեսելու, յարձակուեցին, վերցրին կուռքը, եփուդը, թերափը եւ ձուլածոն: Քահանան եւ պատերազմական զէնքերով զինուած այն վեց հարիւր մարդիկ անշարժ կանգնել էին դռան մուտքի մօտ: 18 Երբ նրանք Միքայի տունը մտան եւ վերցրին կուռքը, եփուդը, թերափը եւ ձուլածոն, քահանան նրանց ասաց. «Ի՞նչ էք անում»: 19 Նրանք ասացին նրան. «Լռի՛ր, ձեռքդ բերանիդ վրայ դի՛ր, ե՛կ մեզ հետ եւ մեզ համար հայր ու քահանայ եղիր. մի՞թէ քեզ համար աւելի լաւ է միայն մէկ մարդու տան քահանայ լինել, քան Իսրայէլի մէկ ցեղի եւ ազգատոհմի քահանայ»: 20 Քահանայի սիրտը զուարթացաւ, նա վերցրեց եփուդը, թերափը, քանդակած ու ձուլածոյ կուռքերը եւ մտաւ զօրքի մէջ: 21 Նրանք ետ դարձան գնացին եւ նրանց առաջ աւերեցին նրա ամբողջ տունն ու շքեղ ունեցուածքը: 22 Երբ նրանք հեռացան Միքայի տնից, Միքան եւ նրա տանը եղած մարդիկ բողոք բարձրացրին եւ հասան Դանի որդիների յետեւից: 23 Դանի որդիները շուռ եկան եւ ասացին Միքային. «Ի՞նչ է եղել քեզ, ինչո՞ւ ես աղաղակում»: 24 Միքան ասաց. «Ինձ համար իմ չինած աստուածները եւ իմ քահանային առաք ու գնացիք, էլ ի՞նչ մնաց ինձ, եւ ինչո՞ւ էք ասում ինձ, թէ՝ "Ինչու ես աղաղակում"»: 25 Դանի որդիներն ասացին նրան. «Քո ձայնը թող չլսուի մեր ետեւից, թէ չէ քեզ կը հանդիպեն բարկացած սրտով մարդիկ եւ կը կործանեն քեզ ու քո ընտանիքը»: 26 Եւ Դանի որդիները գնացին իրենց ճանապարհով: Միքան տեսնելով, որ նրանք իրենից զօրաւոր են, վերադարձաւ իր տունը:

27 Իսկ նրանք վերցրին Միքայի չինածները, նրա քահանային եւ գնացին Լայիսա՝ հանգիստ եւ վստահ ու անհոգ ժողովրդի վրայ, նրանց սրի քաշեցին եւ քաղաքն այրեցին: 28 Ոչ ոք չկար, որ փրկէր նրանց, որովհետեւ Սիդոնից հեռու էին եւ ոչ մի գործ չունէին որեւէ մարդու հետ: Այդ քաղաքը Ռոբի հովտի մէջ էր: Քաղաքը շինեցին եւ այնտեղ բնակուեցին. 29 եւ քաղաքի անունը իսրայէլական ծագում ունեցող իրենց հօր անունով Դան կոչեցին. իսկ նախապէս քաղաքի անունը Լայիսա էր: 30 Դանի որդիներն իրենց համար կանգնեցրին Միքայի քանդակած կուռքը, իսկ Մանասէի որդի Գերսոնի որդի Յովնաթանը՝ ինքը եւ իր որդիները մինչեւ երկրի գերութեան օրը Դանի ցեղի քուրմերն էին: 31 Նրանք Միքայի չինած կուռքն իրենց համար պահեցին այնքան ժամանակ, որքան որ Աստծու տունը Սելովի մէջ էր:

ՂԵՒՏԱՑԻՆ ԵՒ ԻՐ ՀԱՐՃԸ

19 Այն օրերին, երբ Իսրայէլում թագաւոր չկար, Եփրեմի լեռան կողմերում մի ղեւտացի պանդուխտ մարդ կար. այդ մարդն իր հարճը դարձրեց Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից մի կնոջ: 2 Նրա հարճը նրանից խորշեց եւ գնաց իր հօր տունը՝ Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքը եւ այնտեղ մնաց երեք ամիս: 3 Նրա մարդը վեր կացաւ գնաց նրա ետեւից, որ քաղցրութեամբ խօսի, հաշտեցնի նրան իր հետ եւ նորից ետ բերի իր մօտ: Նրա հետ էին իր ծառան եւ մի զոյգ էշ: Գնացին մինչեւ նրա հօր տունը: Երբ աղջկայ հայրը նրան տեսաւ, ելաւ նրան ընդառաջ: 4 Նրա աները՝ աղջկայ հայրը, ներս տարաւ նրան, եւ նա նրա մօտ մնաց երեք օր: Կերան, խմեցին եւ գիշերեցին այնտեղ:

5 Չորրորդ օրը, երբ առաւօտը կանուխ վեր կացան, նրանք ոտքի ելան, որ գնան: Աղջկայ հայրն ասաց իր փեսային. «Սիրտդ պնդացրո՛ւ մի կտոր հացով, յետոյ կը գնաք»: 6 Նստեցին, կերան եւ խմեցին երկուսը միասին: Աղջկայ հայրն ասաց իր փեսային. «Այս գիշեր էլ այստեղ մնա՛, եւ թող սիրտդ զուարթանայ»: 7 Մարդը վեր կացաւ, որ գնայ, բայց նրա աները ստիպեց նրան, եւ նա մնաց ու գիշերեց այնտեղ: 8 Հինգերորդ օրը կանուխ վեր կացաւ, որ գնայ. աղջկայ հայրն ասաց. «Սիրտդ պնդացրո՛ւ հացով եւ զբօսնի՛ր մինչեւ օրը վերջանայ»: Եւ կերան ու խմեցին երկուսով: 9 Մարդը վեր կացաւ, որ իր հարճի եւ ծառայի հետ գնայ: Բայց աղջկայ հայրն ասաց նրան. «Ահա օրը երեկոյ դարձաւ, այստե՛ղ գիշերիր, թող սիրտդ զուարթանայ, վաղը կանուխ ճանապարհ կ'ընկնես եւ կը գնաս քո տունը»: 10 Բայց մարդը չկամեցաւ այնտեղ գիշերել, վեր կացաւ ու գնաց: Եկաւ հասաւ մինչեւ Յեբուսի դիմաց, այսինքն՝ Երուսաղէմ. նրա հետ էին մի զոյգ համեստած էշ եւ իր հարճը:

11 Երբ նրանք Յեբուսի դիմացն էին, օրը տարաժամել էր: Ծառան իր տիրոջն ասաց. «Ե՛կ թեքուենք դէպի յեբուսացիների քաղաքը եւ այնտեղ գիշերենք»: 12 Տէրը նրան ասաց. «Ճանապարհը չշեղենք դէպի օտարազգիների քաղաքը, որտեղ իսրայէլացիներ չկան, այլ անցնենք մինչեւ Գաբաա»: 13 Եւ իր ծառային ասաց. «Ե՛կ մօտենանք այդ տեղերից մէկին եւ գիշերենք այնտեղ՝ Գաբաայում կամ Հռամայում»: Եւ անցան գնացին: 14 Երբ մօտեցան Գաբաային, որ Բենիամինի երկիրն է, արեգակը մայր մտաւ: 15 Ճանապարհը շեղեցին, որ մտնեն Գաբաա եւ գիշերեն այնտեղ: Նա մտաւ ու նստեց քաղաքի հրապարակում, բայց ոչ մի մարդ չկար, որ նրանց իր տունն առնէր գիշերելու համար: 16 Եւ ահա երեկոյեան հանդից, իր գործից մի ծեր մարդ էր գալիս: Այդ մարդը Եփրեմի լեռից էր եւ պանդուխտ էր Գաբաայում, իսկ այնտեղի մարդիկ Բենիամինի ցեղի որդիներ էին: 17 Բարձրացնելով իր աչքերը՝ քաղաքի հրապարակում նա տեսաւ ուղեւոր մարդուն: Մեր մարդն ասաց. «Ո՞ւր ես գնում եւ որտեղի՞ց ես գալիս»: 18 Նա ասաց նրան. «Մենք Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից գնում ենք մինչեւ Եփրեմի լեռան կողմերը, որովհետեւ ես այնտեղացի եմ: Ես գնացի մինչեւ Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքը, իսկ հիմա իմ հօր տունն եմ գնում, եւ չկայ մի մարդ, որ մեզ իր տունը ընդունի: 19 Մեր էշերի համար յարդ եւ խոտ, իսկ ինձ եւ այս աղջկայ ու ծառայի համար հաց եւ գինի կայ. քո ծառաները ոչ մի բանի պակասութիւն չունեն»: 20 Մեր մարդն ասաց. «Խաղաղութիւն քեզ, քո ամէն պակասութիւնն ինձ վրայ լինի, բայց դու այդ հրապարակում մի՛ գիշերիր»: 21 Եւ նրան տարաւ իր տունը, էշերին խոտ տուեց, նրանք լուացին իրենց ոտքերը, կերան եւ խմեցին:

22 Երբ նրանց սրտերը զուարթանում էին, քաղաքի բնակիչները՝ անօրէն մարդիկ, շրջապատեցին տունը, բախեցին դրսի դուռը եւ խօսելով այդ ծեր մարդու՝ տան տիրոջ հետ, ասացին. «Հանի՛ր քո տունը մտած այդ մարդուն, որ նրա հետ յարաբերութիւն ունենանք»: 23 Այն մարդը՝ տան տէրը, գնաց նրանց մօտ եւ ասաց. «Ո՛չ, եղբայրնե՛ր, անզգամութիւն մի՛ արէք, այդ մարդն իմ տունը մտնելուց յետոյ

այդ անզգամութիւնը մի՛ արէք: 24 Ահա
իմ կոյս աղջիկը եւ այդ մարդու հարճը.
նրանց դուրս հանեմ, լլկեցէ՛ք նրանց,
արէ՛ք նրանց հետ այն, ինչ հաճելի է
ձեզ, բայց այս մարդու հետ այդ
անզգամութիւնը մի՛ արէք»: 25 Բայց
մարդիկ չուզեցին լսել: Եւ այդ մարդն
առաւ իր հարճին ու դուրս հանեց:
Նրանք կենակցեցին նրա հետ եւ լլկեցին
նրան ամբողջ գիշերը մինչեւ առաւօտ եւ
առաւօտը բացուելիս բաց թողեցին
նրան: 26 Առաւօտեան կինը եկաւ,
ընկաւ այն մարդու տան դռան շեմին,
որտեղ իր տէրն էր, եւ հոգին փչեց:
27 Առաւօտեան նրա տէրը վեր կացաւ,
բացեց տան դուռը, դուրս եկաւ, որ
գնայ իր ճանապարհը եւ տեսաւ, որ իր
հարճն ընկած էր դռան մօտ, ձեռքերը
շեմի վրայ: 28 Եւ նրան ասաց. «Վե՛ր
կաց գնանք»: Նա պատասխան չտուեց,
որովհետեւ մեռած էր: Մարդը նրան
վերցրեց դրեց էշի վրայ, վեր կացաւ եւ
գնաց իր տեղը: 29 Երբ մտաւ իր տունը,
վերցրեց սուրը, բռնեց իր հարճին եւ
ոսկորներն էլ կտրատելով՝ բաժանեց
տասներկու մասի եւ դրանք ուղարկեց
Իսրայէլի բոլոր ցեղերին: 30 Բոլոր
տեսնողներն ասում էին, թէ այդպիսի
բան ո՛չ եղել է եւ ո՛չ էլ տեսնուել
Եգիպտոսից իսրայէլացիների դուրս
գալու օրերից մինչեւ այսօր: Հիմա դրա
մասին խորհուրդ արէ՛ք եւ ասացէ՛ք, թէ
ինչ պէտք է անել:

ԻՍՐԱՅԷԼԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

20 Բոլոր իսրայէլացիները դուրս
եկան, եւ ժողովուրդը՝ Դանից մինչեւ
Բերսաբէէ եւ Գաղաադի երկիրը մէկ
մարդու պէս հաւաքուեց Տիրոջ առաջ
Մասեփայում: 2 Ամբողջ ժողովրդի
իշխանները եւ Իսրայէլի բոլոր ցեղերը՝
չորս հարիւր հազար սուսերամարտիկ,
ներկայացան Աստծու ժողովրդի հաւա-
քին: 3 Բենիամինի ցեղի որդիները
լսեցին, որ իսրայէլացիները եկել են
Մասեփա: Իսրայէլացիներն ասացին.
«Ասացէ՛ք, թէ ո՞րտեղ կատարուեց այս
չարագործութիւնը»: 4 Ղեւտացի մար-
դը՝ սպանուած կնոջ ամուսինը, պա-
տասխան տուեց եւ ասաց. «Ես եւ իմ
հարճը եկանք Բենիամինի երկրի Գա-
բաա վայրը, որ գիշերենք: 5 Գաբաայի
բնակիչները ելան իմ դէմ, գիշերով
շրջապատեցին տունն իմ շուրջը եւ
ուզում էին ինձ սպանել: Իմ հարճին
լլկեցին, խեղդեցին, եւ նա մեռաւ: 6 Ես
էլ առայ իմ հարճին, կտրատեցի նրան
եւ ուղարկեցի Իսրայէլի տէրութեան
բոլոր սահմանները, որովհետեւ նրանք
մեծ յանցանք եւ անզգամութիւն արեցին
Իսրայէլի մէջ: 7 Ահա մենք ամէնքս
իսրայէլացիներ ենք, մեզ խօ՛սք ասացէք
ու խորհո՛ւրդ տուէք»: 8 Ամբողջ ժողո-
վուրդը վեր կացաւ մէկ մարդու նման եւ
ասաց. «Մեզնից ոչ մի մարդ իր յարկի
տակ չի մտնելու, եւ ոչ մի մարդ
ճանապարհը չի թեքելու դէպի իր տուն:
9 Ահա թէ ինչ պիտի անենք հիմա
Գաբաային. նրա վրայ գնանք վիճա-
կահանութեամբ. 10 Իսրայէլի բոլոր ցե-
ղերից վերցնենք հարիւրից տասը, հա-
զարից հարիւր, տասը հազարից հազար
մարդ, որ օրուայ պաշար տանեն բոլոր
նրանց համար, ովքեր կը գնան Բենիա-
մինի երկրի Գաբաա վայրի դէմ, որ
պատժեն նրան՝ Իսրայէլի մէջ նրա
արած ամբողջ անզգամութեան համար»:
11 Եւ բոլոր իսրայէլացիները մէկ մար-
դու նման հաւաքուեցին եկան քա-
ղաքներից:

12 Իսրայէլի ցեղերը Բենիամինի ամ-
բողջ ցեղի մօտ մարդիկ ուղարկեցին եւ
ասացին. «Այդ ի՞նչ չարագործութիւն է,
որ եղաւ ձեր մէջ: 13 Հիմա տուէ՛ք Գա-
բաայի այդ ամբարիշտ մարդկանց՝ Բե-
լիարի որդիներին, որ սպանենք նրանց
եւ վերացնենք չարիքն Իսրայէլից»:
Բայց Բենիամինի ցեղի որդիները չկա-
մեցան լսել իրենց եղբայրների՝ իսրայէ-
լացիների ձայնը: 14 Եւ Բենիամինի ցեղի
որդիները հաւաքուեցին իրենց քաղաք-
ներից Գաբաայի մէջ, որ իսրայէ-
լացիների դէմ պատերազմի դուրս գան:
15 Այն օրը իրենց քաղաքներից եկած
Բենիամինի ցեղի որդիները քսանհինգ
հազար սուսերամարտիկ էին, չհաշուած
Գաբաայի բնակիչներին, 16 որոնք եօթը
հարիւր մարդ էին՝ ընտիր երիտա-
սարդներ ամբողջ ժողովրդից՝ երկու
ձեռքով՝† էլ գործելու ընդունակ: Նրանք

†Եբրայերէն՝ ձախլիկ:

բոլորն էլ պարսատիկաւորներ էին, որ
քարեր էին նետում եւ մազաչափ չէին
վրիպում: 17 Բոլոր իսրայէլացիները,
բացի Բենիամինի ցեղի որդիներից, չորս
հարիւր հազար սուսերամարտիկներ
էին, բոլորն էլ պատերազմող մարդիկ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԲԵՆԻԱՄԻՆԻ ԴԷՄ

18 Վեր կացան գնացին Բեթէլ, եւ
իսրայէլացիները հարցրին Աստծուն ու
ասացին. «Բենիամինի ցեղի որդիների
հետ պատերազմելու համար ո՞վ պիտի
լինի մեր առաջնորդը»: 19 Տէրն ասաց.
«Յուդան թող լինի առաջնորդը»: Եւ
իսրայէլացիներն առաւօտեան վեր կա-
ցան, բանակեցին Գաբաայի մօտ: 20 Իս-
րայէլացիները ելան Բենիամինի ցեղի
դէմ պատերազմելու եւ Գաբաայի մօտ
նրանց դէմ պատերազմելու համար
ճակատ կազմեցին: 21 Բենիամինի ցեղի
որդիները դուրս եկան քաղաքից, եւ այն
օրը իսրայէլացիներից քսաներկու հա-
զար մարդ սպանեցին եւ գետին տա-
պալեցին: 22 Բայց Իսրայէլի մարդիկ
դարձեալ զօրացան եւ նորից ճակատ
կազմեցին պատերազմելու համար այն
տեղում, որտեղ ճակատել էին առաջին
օրը: 23 Իսրայէլացիները վեր կացան եւ
մինչեւ երեկոյ լաց եղան Տիրոջ առաջ եւ
Տիրոջը հարցրին ու ասացին. «Շարու-
նակե՞նք պատերազմել մեր եղբօր՝
Բենիամինի ցեղի դէմ»: Տէրն ասաց.
«Դո՛ւրս եկէք նրանց դէմ»: 24 Եւ երկ-
րորդ օրը իսրայէլացիները պատերազմի
ելան Բենիամինի ցեղի որդիների դէմ:
25 Բենիամինն էլ ելաւ նրանց դէմ պա-
տերազմելու երկրորդ օրը եւ ժողովրդից
նորից ութ հազար մարդ սպանեց եւ
գետին տապալեց: Սրանք բոլորն էլ
սուսերակիրներ էին:

26 Բոլոր իսրայէլացիները, ամբողջ
ժողովուրդը վեր կացան եկան Բեթէլ,
նստեցին լաց եղան Տիրոջ առաջ, ծոմ
պահեցին այդ օրը եւ փրկութեան
ողջակէզներ մատուցեցին Տիրոջ առաջ:
27 Այդ օրերին այնտեղ էր Տէր Աստծու
ուխտի տապանակը: 28 Նրա առաջ այդ
օրերին Ահարոնի որդի Եղիազարի որդի
Փենէէսն էր կանգնում: Իսրայէլացի-
ները հարցրին Տիրոջը եւ ասացին.
«Նորից մեր եղբայր Բենիամինի ցեղի
որդիների դէմ պատերազմելու դուրս
գա՞նք, թէ՞ դադարեցնենք»: Տէրն
ասաց. «Դո՛ւրս եկէք, վաղը նրանց կը
մատնեմ ձեր ձեռքը»:

29 Իսրայէլացիները դարանակալներ
դրին Գաբաայի շուրջը: 30 Երրորդ օրը
իսրայէլացիները դուրս եկան Բենիա-
մինի ցեղի դէմ, ճակատ կազմեցին Գա-
բաայի մօտ, ինչպէս նախորդ անգամ-
ները: 31 Բենիամինի ցեղի որդիները
դուրս եկան ժողովրդի դէմ, հեռացան
քաղաքից եւ սկսեցին նախորդ անգամ-
ների պէս ջարդել-վիրաւորել ժողովրդին
այն ճանապարհների վրայ, որոնցից մէկը
դուրս էր գալիս Բեթէլ, իսկ միւսը՝ Գա-
բաա: Նրանք այդ դաշտում իսրայէլա-
ցիներից մօտ երեսուն մարդ կոտորեցին:
32 Բենիամինի ցեղի որդիներն ասացին.
«Սրանք մեր առաջ կոտորուելու են,
ինչպէս նախորդ անգամ»: Իսկ իսրայէ-
լացիներն ասացին. «Փախչենք եւ հե-
ռացնենք նրանց քաղաքից ու ճանա-
պարհից»: 33 Եւ բոլոր իսրայէլացիները
վեր կացան իրենց տեղից եւ վերադա-
սաւորուեցին Բաալթամարում: Իսրայէ-
լացի դարանակալները կուում էին
իրենց տեղից, Գաբաայի արեւմտեան
կողմից: 34 Ամբողջ Իսրայէլից տասը
հազար ընտիր մարդիկ եկան Գաբաայի
դիմաց: Պատերազմը սաստկացաւ, բայց
Բենիամինի ցեղի որդիները չգիտէին, որ
իրենց վրայ չարիք է հասել: 35 Եւ Տէրը
Բենիամինի ցեղին հարուածեց իսրայէ-
լացիների առաջ, եւ իսրայէլացիներն
այդ օրը Բենիամինի ցեղից քսանհինգ
հազար հարիւր մարդ կոտորեցին:
Նրանք բոլորն էլ սուսերակիրներ էին:

36 Երբ Բենիամինի ցեղի որդիները
տեսան, որ պարտութեան են մատ-
նուած, տեղի տուին իսրայէլացիների
առաջ: Իսրայէլացիները յոյսները դրել
էին Գաբաայի շրջակայքում եղած դա-
րանամուտների վրայ: 37 Դարանա-
մուտները յարձակուեցին եւ թափուեցին
Գաբաայի վրայ, մտան եւ ամբողջ քա-
ղաքը սրի քաշեցին: 38 Իսրայէլացիները
պայմանաւորուել էին դարանակալների
հետ, որ կրակ վառեն եւ ծուխ հանեն
քաղաքի վրայ: 39 Այդ ազդանշանի
վրայ իսրայէլացիները պէտք է ետ

քաշուէին պատերազմից: Բենիամինի
ցեղի մարդիկ սկսեցին ջարդել իս-
րայէլացի դարանակալներին, կոտորե-
ցին մօտ երեսուն վիրաւոր մարդ եւ
ասացին, թէ՝ «Կոտրուում են մեր առաջ
այսօր, ինչպէս նախորդ պատերազ-
մում»: 40 Կրակէ ազդանշանը ծաւա-
լուելով բարձրացաւ քաղաքի վրայ
ինչպէս ծխի սիւն: Բենիամինի ցեղի
մարդիկ ետ նայեցին եւ տեսան, որ
այրուող քաղաքը երկինք է բարձրա-
նում: 41 Իսրայէլացիները նորից ետ
դարձան, Բենիամինի ցեղի մարդիկ
տագնապեցին, որովհետեւ տեսան, որ
չարիքը հասել է իրենց վրայ: 42 Նրանք
իսրայէլացիներից փախան անապատի
ճանապարհով, բայց պատերազմը հա-
սաւ նրանց, եւ քաղաքից դուրս եկող
իսրայէլացիներն սպանում էին նրանց՝
իրենց մէջ առնելով: 43 Բենիամինի ցեղի
մարդկանց նրանք ջարդեցին եւ հե-
տապնդեցին Նուից մինչեւ Գաբաայի
դիմացը՝ արեւելեան կողմից: 44 Բենիա-
մինի ցեղից ընկան տասնութ հազար
մարդ. նրանք բոլորն էլ զօրաւոր մար-
դիկ էին: 45 Մնացածները, տեսնելով
այդ, փախան դէպի անապատ՝ ապա-
ւինելով Ռեմոնի քարայրին: Ճանապար-
հին Բենիամինի ցեղից հինգ հազար
մարդ հնձեցին, հետապնդեցին նրանց
մինչեւ Գաղաադ եւ նրանցից երկու
հազար մարդ էլ կոտորեցին: 46 Այն օրը
Բենիամինի ցեղից ընկածները քսանհինգ
հազար սուսերամարտիկներ էին, բոլորն
էլ զօրաւոր մարդիկ: 47 Մնացածները՝
վեց հարիւր մարդ, խոյս տալով փախան
անապատ՝ ապաւինելով Ռեմոնի քա-
րայրին եւ այնտեղ, Ռեմոնի քարայրում
մնացին չորս ամիս: 48 Իսկ Իսրայէլի
մարդիկ յետ դառնալով՝ յարձակուեցին
Բենիամինի ցեղի որդիների վրայ, հեր-
թով սրի քաշեցին քաղաքում նրանց,
մինչեւ իսկ անասուններին եւ ամէն
բան, որ գտան բոլոր քաղաքներում, իսկ
կոտորածից զերծ մնացած քաղաքները
մարդիկ ուղարկեցին եւ այրեցին հրով:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ՑԵՂԻ ՎԵՐԱՄՆՈՒՆԴԸ

21 Իսրայէլացի տղամարդիկ եր-
դուեցին Մասեփայում եւ ասացին.
«Մեզանից ոչ մէկն իր դուստրը Բե-
նիամինի ցեղից մարդու կնութեան թող
չտայ»: 2 Ամբողջ ժողովուրդը եկաւ
Մասեփա՝ Բեթէլ, մինչեւ երեկոյ նրանք
նստեցին այնտեղ Աստծու առաջ,
բարձրացրին իրենց ձայնը, սաստիկ լաց
եղան 3 եւ ասացին. «Իսրայէլի՛ Տէր
Աստուած, ինչո՞ւ համար այս բանը
եղաւ Իսրայէլում, որ այսօր Իսրայէլից
մի ցեղ բնաջնջուէր»: 4 Յաջորդ օրը
ժողովուրդը կանուխ վեր կացաւ, այն-
տեղ զոհասեղան շինեցին եւ փրկութեան
ողջակէզներ մատուցեցին:
5 Իսրայէլացիներն ասացին. «Իսրա-
յէլի բոլոր ցեղերից ո՞վ է, որ այս
հաւաքին, Տիրոջ առաջ Մասեփա չի
եկել: Արդարեւ, մեծ երդում էին տուել՝
ասելով, թէ՝ «Պիտի մեռնի՛ նա, ով չգայ
Մասեփա հաւաքի»: 6 Իսրայէլացիները
ցաւեցին իրենց եղբայր Բենիամինի ցեղի
համար եւ ասացին. «Այսօր Իսրայէլից
մի ցեղ վերացաւ: 7 Հիմա ի՞նչ անենք
առանց կնոջ մնացածներին, քանի որ
մենք երդուել ենք Տիրոջով, որ մեր
աղջիկներից նրանց կնութեան չտանք»:
8 Եւ ասացին. «Իսրայէլի ցեղերից ո՞վ է,
որ չի եկել Տիրոջ առաջ Մասեփա»:
Պարզուեց, որ Գաղաադի երկրի Յաբէս
բնակավայրից ոչ ոք չէր եկել բանա-
կատեղի՝ հաւաքին: 9 Եւ ժողովրդին
հաշուառման ենթարկեցին: Նրանց մէջ
մարդ չկար Գաղաադի երկրի Յաբէսի
տնից: 10 Ժողովուրդն այնտեղ ուղարկեց
տասներկու հազար զօրաւոր մարդիկ,
նրանց պատուիրեցին եւ ասացին.
«Գնացէ՛ք եւ Գաղաադի երկրի Յաբէս
բնակավայրի բնակիչներին՝ ե՛ւ կանանց,
ե՛ւ մանուկներին կոտորեցէ՛ք սրով: 11 Ա-
հա թէ ինչ պիտի անէք. բոլոր արու-
ներին եւ արուի հետ անկողին մտած
կանանց կոտորեցէ՛ք»: 12 Եւ Գաղաադի
երկրի Յաբէս բնակավայրի բնակիչների
մէջ նրանք գտան չորս հարիւր կոյս
աղջիկ, որոնք տղամարդու հետ անկող-
նում չէին պառկել: Նրանց բերին բա-
նակատեղի՝ Սելով, որ Քանանացիների
երկրում է: 13 Եւ ամբողջ ժողովուրդը
մարդ ուղարկեց, որ խօսեն Բենիամինի
ցեղի որդիների հետ, որոնք Ռեմոնի
քարայրում էին, եւ նրանց խաղաղու-
թեան կոչեցին: 14 Այն ժամանակ

Բենիամինի ցեղի մարդիկ վերադարձան
Իսրայէլացիների մօտ: Իսրայէլացիները
նրանց կնութեան տուին Գաղաադի
երկրի Յաբէս բնակավայրի աղջիկներին.
եւ դա նրանց հաճելի թուաց: 15 Ժո-
ղովուրդը ցաւեց Բենիամինի ցեղի հա-
մար, որովհետեւ Տէրը Իսրայէլի ցեղերի
մէջ ճեղք էր բաց արել:
16 Ժողովրդի ծերերն ասացին. «Ի՞նչ
անենք առանց կնոջ մնացած միւսների
համար, քանի որ Բենիամինի ցեղի կա-
նայք բնաջնջուեցին»: 17 Եւ ասացին.
«Բենիամինի ցեղից ժառանգութիւն է
ազատուել, թող Իսրայէլից ցեղ
չբնաջնջուի: 18 Բայց մենք չենք կարող
մեր աղջիկներից նրանց կնութեան տալ,
որովհետեւ մենք՝ իսրայէլացիներս, եր-
դուելով ասացինք. "Անիծուած լինի նա,
ով Բենիամինի ցեղին աղջիկ կնութեան
կը տայ"»: 19 Եւ ասացին. «Ամէն տարի
Տիրոջ տօն է լինում Սելովում, որը Բե-
թէլի հիւսիսում, Բեթէլից Սիկիմ տանող
ճանապարհի արեւելեան կողմում, Լի-
բանանից հարաւ, Ելեբոնայում է
գտնւում»: 20 Նրանք Բենիամինի ցեղի
որդիներին պատուիրեցին եւ ասացին.
«Գնացէ՛ք, դարա՛ն մտէք այգիներում:
21 Երբ տեսնէք, որ Սելովի աղջիկները,
պար բռնած, խմբերով դուրս են գալիս,
դո՛ւրս եկէք այգիներից, թող ամէն
տղամարդ մի կին յափշտակի Սելովի
աղջիկներից, եւ գնացէ՛ք Բենիամինի
ցեղի երկիրը: 22 Եթէ նրանց հայրերը եւ
եղբայրները գան ձեր դէմ բողոքելու,
նրանց կ՚ասէք, թէ՝ "Խղճացինք նրանց,
որովհետեւ պատերազմի ժամանակ այդ
մարդիկ իրենց համար կին չառան". եւ
քանի որ դո՛ւք չէ, որ նրանց կնութեան
տուիք աղջիկներին, դա ձեզ համար
մեղք չէ»: 23 Եւ Բենիամինի ցեղի որդի-
ներն այդպէս արեցին. պարողներից
իրենց թուի համեմատ յափշտակելով
կանայք առան եւ գնացին, վերադար-
ձան ամէն մէկն իր կալուածքը, քաղաք-
ներ շինեցին եւ բնակուեցին դրանց մէջ:
24 Այն ժամանակ իսրայէլացիները գնա-
ցին ամէն մէկն իր ցեղի եւ ազգատոհմի
մօտ, եւ այնտեղից ամէն մարդ գնաց իր
կալուածքը: Այն օրերին Իսրայէլում
թագաւոր չկար, եւ ամէն մարդ անում
էր այն, ինչ հաճելի էր իրեն :

ՀՌՈՒԹ

Ներածութիւն

Հռութի պատմութիւնը մեզ փոխադրում է այն ժամանակաշրջանը, երբ դատաւորները, ինչպէս կոչում էին նրանց, առաջնորդում էին իսրայէլացի ժողովրդին: Սակայն այս գործը գրուել է աւելի ուշ, այնպիսի մի թուականի, որ դժուար է որոշակիօրէն ճշտել:

Գրքի նպատակներից մէկն է ցոյց տալ, թէ ինչպէս օտարերկրացի մի կին մուտք է գործել իսրայէլական համայնք: Այս իմաստով պատմուածքը շեշտը դնում է մովաբացի Հռութի ցուցաբերած օրինակելի ուղղամտութեան վրայ իր ամուսնու, ընտանիքի, ինչպէս նաեւ Իսրայէլի Աստծու նկատմամբ: Գրքում նկարագրուած է, թէ Աստուած ինչ ձեւով է վարձատրում նրա ուղղամտութիւնը: Հռութը եւ նրա սկեսուր Նոյեմին, որոնք սկզբնապէս դժբախտութեան մէջ էին գտնւում, աստիճանաբար ձեռք են բերում բարեկեցիկ ու երջանիկ կեանք: Պատմուածքը, որը շարադրուած է կենդանի ու գրաւիչ ոճով, մարդկային յարաբերութիւններում հաւատարմութեան եւ Աստծու հանդէպ վստահութեան ուսանելի մի օրինակ է:

Պատմուածքն աւարտւում է Հռութի որդու ծննդով, որը յետագայում դառնալու էր Դաւիթ թագաւորի պապը: Այսպիսով, մովաբացի Հռութը, մաս կազմելով Դաւիթի նախնիներին, իր տեղն է ունենում Յիսուսի ազգաբանութեան մէջ:

ԵԼԻՄԵԼԷՔԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1 Դատաւորների կառավարման օրերին սով եղաւ երկրում: Յուդայի Բեթղեհէմ քաղաքից մի մարդ իր կնոջ եւ երկու որդիների հետ գնաց բնակուելու Մովաբի դաշտում: 2 Այդ մարդու անունը Ելիմելէք էր, նրա կնոջ անունը՝ Նոոմին, իսկ նրա երկու որդիների անունները՝ Մաալոն եւ Քեղլոն: Նրանք եփրաթացիներ էին, Յուդայի ցեղից: Նրանք գնացին Մովաբի դաշտը եւ մնացին այնտեղ: 3 Ելիմելէքը՝ Նոոմինի ամուսինը, մեռաւ, եւ մնաց կինը իր երկու որդիների հետ: 4 Նրանք մովաբացի կանայք առան. սրանցից մէկի անունը Օրփա էր, միւսինը՝ Հռութ: Նրանք այնտեղ բնակուեցին մօտ տասը տարի: 5 Մաալոնը եւ Քեղլոնը երկուսն էլ մեռան այնտեղ, եւ կինը մնաց միայնակ՝ զրկուած իր ամուսնուց եւ որդիներից:

ՆՈՈՄԻՆԸ ԵՒ ՀՌՈՒԹԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԲԵԹՂԵՀԷՄ

6 Նա ու իր երկու հարսները վեր կացան, վերադարձան Մովաբի դաշտից, որովհետեւ լսել էին, որ Աստուած այցի է եկել իր ժողովրդին՝ նրան հաց տալու: 7 Նա իր երկու հարսների հետ դուրս եկաւ այն տեղից, որտեղ ապրում էր, եւ նրանք ճանապարհ ընկան Յուդայի երկիրը վերադառնալու համար: 8 Նոոմինը իր երկու հարսներին ասաց. «Գնացէ՛ք, վերադարձէ՛ք ամէն մէկդ ձեր հօր տունը. Տէրը թող ձեզ ողորմութիւն անի, ինչպէս որ դուք այն մեռածներին եւ ինձ էք արել: 9 Աստուած տայ, որ ամէն մէկդ հանգիստ գտնէք ձեր հօր տանը[†]»: Եւ համբուրեց նրանց: 10 Նրանք բարձրացրին իրենց ձայնը, լաց եղան եւ ասացին նրան. «Այդպէս չի լինի, մենք քեզ հետ կը վերադառնանք դէպի քո ժողովուրդը»: 11 Նոոմինն ասաց. «Ե՛տ դարձէք, աղջիկնե՛րս, ինչո՞ւ գաք ինձ հետ, միթէ դարձեալ իմ որովայնում որդինե՞ր կան, եւ նրանք ձեզ համար ամուսի՞ն կը լինեն: 12 Վերադարձէ՛ք, աղջիկնե՛րս, եւ գնացէ՛ք, որովհետեւ ես պառաւել եմ, էլ մարդու չեմ գնալու. եթէ ասէի էլ, թէ յոյս ունեմ եւ կ'ամուսնանամ ու որդիներ կը ծնեմ, 13 դուք նրանց պիտի սպասէի՞ք, մինչեւ որ մեծանան, եւ նրանցով գրաւուելով՝ պիտի զրկուէի՞ք ամուսնանալուց: Ո՛չ, աղջիկնե՛րս, ես ձեզանից աւելի եմ դառնացած, որովհետեւ Տիրոջ ձեռքը ծանրացաւ ինձ վրայ»: 14 Նրանք նորից բարձրացրին իրենց ձայնը եւ լաց եղան: Օրփան համբուրեց իր սկեսրոջը եւ վերադարձաւ իր ժողովրդի մօտ, բայց Հռութը գնաց սկեսրոջ յետեւից: 15 Նոոմինն ասաց Հռութին. «Ահա քո տագերակինը վերադարձաւ իր ժողովրդի եւ իր աստուածների մօտ, դու էլ ե՛տ դարձիր քո տագերակնոջ յետեւից»: 16 Հռութն ասաց. «Ես չեմ թողնի քեզ եւ չեմ հեռանայ քեզնից. ուր էլ որ դու գնաս, ես էլ կը գնամ, որտեղ էլ որ մնաս, ես էլ կը մնամ: Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, եւ քո Աստուածն իմ Աստուածն է: 17 Որտեղ որ դու մեռնես, այնտեղ էլ ես կը մեռնեմ եւ կը թաղուեմ. թող Տէրը այսպէս եւ սրանից աւելին անի ինձ. միայն մահը կը բաժանի ինձ քեզանից»: 18 Երբ Նոոմինը տեսաւ, որ նա հաստատ որոշել է գնալ իր հետ, այլեւս չխօսեց այդ մասին նրա հետ:

19 Նրանք երկուսով գնացին, մինչեւ որ հասան Բեթղեհէմ: Երբ նրանք եկան Բեթղեհէմ, ամբողջ քաղաքը զրնգաց նրանց շուրջը: Ասում էին. «Սա՞ է Նոոմինը»: 20 Նա նրանց ասաց. «Ինձ Նոոմին մի՛ կոչէք, այլ կոչեցէ՛ք Դառնացած, որովհետեւ Ամենակարողը խիստ դառնացրեց ինձ: 21 Լիքը գնացի, բայց Տէրը դատարկ վերադարձրեց ինձ. հիմա ինչո՞ւ էք ինձ Նոոմին կոչում: Տէրն ինձ նկուն դարձրեց, եւ Ամենակարողը չարչարեց ինձ»: 22 Եւ Նոոմինն ու իր հարսը՝ մովաբացի Հռութը, վերադարձան, գնացին Մովաբի դաշտից եւ գարու հնձի սկզբին եկան Բեթղեհէմ:

ՀՌՈՒԹՆ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԲՈՈՍԻ ԱՐՏՈՒՄ

2 Նոոմինի ամուսինը մի ազգական ունէր, մեծ կարողութեան տէր մի մարդ՝ Ելիմելէքի ազգից: Նրա անունը Բոոս էր: Նա այրի Նոոմինին տուն տուեց, որ

[†]Եբրայերէնում՝ ամուսնու տանը:

բնակուի նրա մէջ: 2 Մովաբացի Հռութն
ասաց Նոոմինին. «Գնամ արտը եւ ում
մօտ բարեհաճութիւն գտնեմ, նրա
յետեւից հասկեր հաւաքեմ»: Նա ասաց
նրան. «Գնա՛, աղջի՛կս»: 3 Նա գնաց եւ
մտնելով արտի մէջ՝ հասկ էր հաւաքում
հնձողների յետեւից. եւ այնպես
պատահեց, որ նա ընկնի արտի այն
մասը, որը Ելիմելէքի ազգական
Բոոսինն էր:
4 Եւ ահա Բոոսը եկաւ Բեթղեհէմից եւ
ասաց իր հնձուորներին. «Տէրը ձեզ
հետ»: Նրանք ասացին. «Տէրը օրհնի
քեզ»: 5 Եւ Բոոսը հնձուորների վրայ
նշանակուած ծառային ասաց. «Ո՞ւմ
աղջիկն է դա»: 6 Հնձուորների վրայ
նշանակուած ծառան պատասխանեց ու
ասաց. «Դա Մովաբացի աղջիկն է, որ
Նոոմինի հետ վերադարձաւ Մովաբի
դաշտից եւ ասաց. 7 "Թո՛ղ, որ հնձուոր-
ների յետեւից հասկաքաղ անեմ եւ
խուրձերից ընկածները հաւաքեմ": Եկել
ու մնացել է այստեղ առաւօտից մինչեւ
այժմ, մի փոքր դադար էլ չտուեց այս
արտում»:
8 Բոոսն ասաց Հռութին. «Լսի՛ր, աղ-
ջի՛կս, հասկ հաւաքելու համար ուրիշ
տեղ, ուրիշի արտը չգնաս, այստեղից ոչ
մի տեղ չգնաս, այլ հէնց այստեղ, ինձ
ծառայող աղջիկների մօտ մնա՛: 9 Թող
քո աչքերը լինեն այն արտի վրայ, որ-
տեղ հունձ են անում, եւ նրա՛նց յետեւից
գնա: Չէ՞ որ ես պատուիրել եմ իմ պա-
տանիներին, որ քեզ չդիպչեն: Եթէ ծա-
րաւես, գնա՛ ամանների մօտ եւ խմի՛ր
այդ պատանիների հանած ջրից»: 10 Աղ-
ջիկն ընկաւ երեսի վրայ եւ մինչեւ գե-
տին խոնարհուելով՝ երկրպագութիւն
արեց ու ասաց. «Ինչի՞ց է, որ քո բարե-
հաճութեանն արժանացայ, եւ դու հե-
տաքրքրուեցիր ինձնով, թէեւ ես մի
օտար կին եմ»: 11 Բոոսը պատասխան
տուեց եւ ասաց. «Ինձ պատմել են այն
ամէնը, ինչ որ արել ես դու քո սկեսրոջ
համար ամուսնուդ մահուանից յետոյ.
թէ ինչպէս թողել ես քո հօրն ու մօրը,
քո ծննդավայրը եւ եկել ես այն ժո-
ղովրդի մօտ, որին առաջ չէիր ճանա-
չում: 12 Քո արածի համար թող Տէրը
հատուցի քեզ, թող քո վարձը անպակաս
լինի Իսրայէլի Տէր Աստծու կողմից,
որին դու դիմել ես՝ նրա թեւերի տակ
ապաստան գտնելու համար»: 13 Հռութն
ասաց. «Տէ՛ր իմ, քո առաջ շնորհ գտայ,
դու մխիթարեցիր ինձ, քանի որ քո
աղախնի սրտից խօսեցիր. թող ես էլ քո
աղախիններից մէկը լինեմ»: 14 Բոոսը
նրան ասաց. «Ահա ճաշի ժամ է, մօտե-
ցի՛ր այստեղ, կե՛ր հացից եւ պատառդ
թաթախի՛ր քացախով պատրաստուած
հիւթի մէջ»: Հռութը նստեց հնձուոր-
ների մօտ, Բոոսը նրա համար փոխինձ
պատրաստեց, նա կերաւ, յագեցաւ,
աւելացածը պահեց 15 եւ վեր կացաւ
հասկ հաւաքելու: Բոոսն իր պատա-
նիներին պատուիրեց եւ ասաց. «Թող
խուրձերի միջից էլ հաւաքի, մի՛ ամա-
չեցնէք նրան, 16 այլ տարէ՛ք, կուտա-
կուած խուրձերից էլ նրա առաջը գցէ՛ք,
թո՛յլ տուէք ուտի եւ հասկ հաւաքի, մի՛
յանդիմանէք նրան»: 17 Նա մինչեւ երե-
կոյ այդ արտի մէջ հաւաքեց, հաւա-
քածը ծեծեց, եւ դա մի տոպրակ գարի
եղաւ: 18 Նա առաւ այն եւ քաղաք
մտաւ: Երբ սկեսուրը տեսաւ նրա հա-
ւաքածը, Հռութը հանեց, նրան տուեց
այն, ինչ պահել էր կշտանալուց յետոյ:
19 Սկեսուրը նրան ասաց. «Ո՞րտեղ
հաւաքեցիր այսօր եւ ո՞րտեղ եղար.
օրհնեալ լինի նա, ով լաւութիւն արեց
քեզ»: Եւ Հռութն իր սկեսրոջը յայտնեց,
թէ որտեղ է եղել եւ ասաց, թէ Բոոս է
այն մարդու անունը, որի մօտ ինքը եղել
է այն օրը: 20 Նոոմինն իր հարսին
ասաց. «Օրհնեալ լինի նա Տիրոջից, որ
իր գութը չպակասեցրեց ողջերից եւ
մեռածներից»: Նոոմինը նրան ասաց.
«Նա մեզ մօտիկ մարդ է, նա մեր ազ-
գականներից է»: 21 Հռութն ասաց իր
սկեսրոջը. «Ճիշտ է, նա ինձ ասաց՝ "Ինձ
ծառայող աղջիկների մօտ մնա՛, մինչեւ
որ վերջացնեն իմ հունձը"»: 22 Նոոմինն
իր հարս Հռութին ասաց. «Լաւ է, աղ-
ջի՛կս, որ նրան ծառայող աղջիկների
հետ լինես, եւ չլինի, թէ մի այլ արտում
քեզ ուրիշը հանդիպի»: 23 Եւ Հռութը
միացաւ Բոոսին ծառայող աղջիկներին
ու հասկ հաւաքեց մինչեւ գարու եւ
ցորենի հնձի վերջը եւ ապրում էր իր
սկեսրոջ մօտ:

ՀՌՈՒԹԸ ԱՄՈՒՍԻՆ Է ԳՏՆՈՒՄ

3 Նրա սկեսուր Նոոմինն ասաց Հռու-
թին. «Աղջի՛կս, քեզ համար ապաստան
փնտռեմ, որ քեզ լաւ լինի: 2 Արդ, չէ՞
որ Բոոսը, որին ծառայող աղջիկների
հետ մնում էիր, մեր ազգականն է: Ահա
նա այս գիշեր գարի է կալսում: 3 Դու
լուացուի՛ր, օծանելիք ցանուի՛ր, հա-
գուստներդ հագի՛ր եւ դո՛ւրս արի կալը,
բայց այդ մարդուն մի՛ յայտնուիր, մին-
չեւ որ նա ուտելն ու խմելը վերջացնի:
4 Երբ նա գնայ քնելու, իմացի՛ր նրա
քնելու տեղը, գնա՛, բա՛ց արա ծածկոցը
ոտքի կողմից եւ պառկի՛ր: Նա քեզ
կ'ասի, թէ ինչ պիտի անես»: 5 Հռութը
նրան ասաց. «Կ'անեմ այն ամէնը, ինչ
որ ասացիր ինձ»:
6 Նա իջաւ կալը եւ ամէն ինչ արեց
այնպէս, ինչպէս պատուիրել էր իր
սկեսուրը: 7 Բոոսը կերաւ, խմեց, եւ նրա
սիրտը զուարթացաւ, գնաց պառկեց
դէզի մօտ: Հռութը թաքուն եկաւ, բա-
ցեց ծածկոցը նրա ոտքերի կողմից եւ
պառկեց: 8 Կէս գիշերուայ մօտ մարդը
վախեցաւ, շփոթուեց եւ տեսաւ, որ իր
ոտքերի մօտ մի կին է պառկել: 9 Ասաց.
«Ո՞վ ես դու»: Նա ասաց. «Ես քո
աղախին Հռութն եմ: Քո քղանցքը տա-
րածի՛ր քո աղախնի վրայ, որովհետեւ
դու իմ ազգականն ես»: 10 Բոոսն ասաց.
«Օրհնեալ լինես դու Տէր Աստծուց, աղ-
ջի՛կս, որովհետեւ քո այս վերջին բա-
րեգթութիւնը աւելին է, քան առաջինը,
քանի որ աղքատ կամ հարուստ երի-
տասարդների յետեւից չգնացիր: 11 Հի-
մա, աղջի՛կս, մի՛ վախեցիր, ինչ որ ասես
ինձ, բոլորը կ'անեմ քեզ համար, որով-
հետեւ իմ ժողովրդի բոլոր ցեղերը գի-
տեն, որ դու զօրաւոր կին ես: 12 Ես,
արդարեւ, քո ազգականն եմ, բայց ին-
ձանից աւելի մօտ ուրիշ ազգական էլ
կայ: 13 Այս գիշեր այստեղ գիշերի՛ր,
իսկ առաւօտեան եթէ այն ազգականը
տէր կանգնի քեզ, լաւ է, թող տէր
կանգնի, իսկ եթէ չկամենայ քեզ տէր
կանգնել, ե՛ս քեզ տէր կը կանգնեմ:
Կենդանի է Տէրը: Պառկի՛ր այստեղ
մինչեւ առաւօտ»:
14 Նա պառկեց նրա ոտքերի մօտ
մինչեւ առաւօտ: Հռութը վեր կացաւ.
այնքան մութ էր դեռ, որ մարդ մարդու
չէր կարող ճանաչել: Բոոսն ասաց.
«Թող ոչ ոք չիմանայ, որ կին է եկել ինձ
մօտ կալը: 15 Վրայիդ ծածկոցը բե՛ր եւ
բռնի՛ր այստեղ»: Հռութը բռնեց այն, եւ
Բոոսը վեց չափ† գարի չափեց, դրեց
նրա շալակը, եւ Հռութը մտաւ քաղաք:
16 Նա գնաց իր սկեսրոջ մօտ, որը նրան
ասաց. «Ի՞նչ եղաւ, աղջի՛կս»: Եւ նա
պատմեց նրան այն ամէնը, ինչ որ այդ
մարդն արել էր իր համար, 17 եւ ասաց.
«Այս վեց չափ գարին տուեց ինձ եւ
ասաց. "Քո սկեսրոջ մօտ ձեռնունայն
չգնաս"»: 18 Նոոմինն ասաց. «Նստի՛ր,
մինչեւ որ պարզ լինի մեզ, թէ գործն
ինչպես կը վերջանայ, որովհետեւ այն
մարդը չի հանգստանայ, մինչեւ որ այս
գործն այսօր չվերջացնի»:

ԲՈՈՍԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ՀՌՈՒԹԻ ՀԵՏ

4 Բոոսը գնաց նստեց քաղաքի դռների
մօտ: Եւ ահա նրա մօտով անցնում էր
այն ազգականը, որի մասին ասել էր
ինքը: Բոոսը նրան ասաց. «Ե՛կ այստեղ
նստի՛ր եւ մնա՛ մի պահ»: Նա գնաց
նստեց: 2 Բոոսը քաղաքի ծերերից տասը
մարդ վերցրեց եւ ասաց. «Նստեցէ՛ք
այստեղ»: Եւ նրանք նստեցին: 3 Բոոսն
ասաց այն ազգականին. «Նոոմինը, որը
վերադարձել է Մովաբի դաշտից, վա-
ճառում է մեր եղբայր Ելիմելէքի արտի
բաժինը: 4 Ես ասացի, թէ կը յայտնեմ ի
լուր քեզ: Հիմա այս նստածների եւ իմ
ժողովրդի ծերերի ներկայութեամբ գնի՛ր:
Եթէ ուզում ես ազգականի իրաւունքով
նրանից այն ծախու առնել, ա՛ռ, իսկ
եթէ չես ուզում ծախու առնել, ասա՛
ինձ, որ իմանամ, որովհետեւ քեզանից
բացի ազգական չկայ, քեզանից յետոյ
ազգականը ես եմ»: 5 Բոոսն ասաց.
«Նոոմինից ագարակն առնելուդ օրը
մովաբացի Հռութին՝ հանգուցեալի կնոջն
էլ կնութեան պիտի առնես, որ վերա-
կենդանացնես մեռածի անունն իր կա-
լուածքում»: 6 Ազգականն ասաց Բոո-
սին. «Ես չեմ կարող ազգականի իրա-
ւունքով այն ծախու առնել, որ չաւերեմ
իմ ժառանգութիւնը, դո՛ւ տէր կանգնիր
իմ ազգականութեան իրաւունքին, ո-

†Շուրջ 15 կիլոգրամ:

րովհետեւ ես չեմ կարող տէր կանգնել»:
7 *Առաջ Իսրայէլում ետ գնելու եւ ծախու առնելու գործում ամէն բան հաստատելու համար այս սովորութիւնը կար. մարդն իր կօշիկը հանում տալիս էր իր ընկերոջը, որը պէտք է սեփականացնէր նրա ազգականութեան իրաւունքը: Եւ դա Իսրայէլի մէջ դիտւում էր որպէս վկայութիւն:* 8 *Ազգականը Բոոսին ասաց. «Դո՛ւ ստացիր իմ ազգականութեան իրաւունքը»: Եւ հանեց իր կօշիկն ու տուեց նրան:*

9 *Բոոսն ասաց ծերերին եւ ամբողջ ժողովրդին. «Դուք այսօր վկայ էք, որ ես Ելիմելէքի ամբողջ ստացուածքը եւ Քելլոնի ու Մաալոնի ամբողջ ստացուածքը Նոոմինի ձեռքից գնում եմ:* 10 *Նաեւ Մաալոնի կնոջը՝ մովաբացի Հռութին ինձ կնութեան եմ առնում, որ մեռածի անունը պահեմ իր կալուածքում, եւ նրա անունը չվերանայ իր եղբայրների միջից ու իր բնակավայրի ցեղից. դուք այսօր դրա վկաներն էք»:*
11 *Քաղաքի դռանը գտնուող ամբողջ ժողովուրդը պատասխան տուեց եւ ասաց. «Մենք վկայ ենք»: Ծերերն ասացին. «Տէրը թող քո տունը մտնող կնոջը դարձնի Ռաքէլի եւ Լիայի նման, որոնք երկուսով կառուցեցին Իսրայէլի տունը: Դու Եփրաթայում ո՛ւժ հաւաքիր եւ Բեթղեհէմում անո՛ւն վաստակիր:*
12 *Քո տունը թող լինի Փարէսի տան նման, որին Թամարը Յուդայի համար ծնեց այն սերնդից: Եւ Տէրը քեզ որդի կը տայ այդ աղջկանից»:*

ՕԲԷԴԻ ԾՆՈՒՆԴԸ

13 *Բոոսը կնութեան առաւ Հռութին, որը մտաւ նրա տունը. Տէրը նրան յղիութիւն տուեց, եւ նա որդի ծնեց:*
14 *Կանայք ասացին Նոոմինին. «Օրհնեալ լինի Տէրը. նա քեզ այսօր առանց ազգականի չթողեց, որ քո անունն Իսրայէլի մէջ յիշուի.* 15 *Նորածինը քեզ սիրտ կը տայ եւ կը կերակրի քո ծերութեան ժամանակ, որովհետեւ քեզ սիրող հարսը ծնեց մի որդի, որ քեզ համար եօթը որդուց լաւ է»:* 16 *Նոոմինն առաւ մանկանը, դրեց իր ծոցը եւ նրա համար դայեակ եղաւ:* 17 *Դրացիները նրան անուն դրին եւ ասացին. «Նոոմինը որդու տէր դարձաւ»: Նրա անունը Օբէդ դրին: Նա Դաւթի հօր՝ Յեսսէի հայրն է:*

ԴԱՒԹԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

18 *Փարէսի ազգատոհմը այս է. Փարէսը ծնեց Եսրոմին,* 19 *Եսրոմը ծնեց Արամին, Արամը ծնեց Ամինադաբին,* 20 *Ամինադաբը ծնեց Նաասոնին, Նաասոնը ծնեց Սաղմոնին,* 21 *Սաղմոնը ծնեց Բոոսին, Բոոսը ծնեց Օբէդին,* 22 *Օբէդը ծնեց Յեսսէին, Յեսսէն ծնեց Դաւթին:*

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ա

Ներածութիւն

Սամուէլ մարգարէն, որի անունով են կոչւում նաեւ այս եւ սրա յաջորդ գիրքը, փաստօրէն վերջինն է «դատաւորներից», այն փրկարարներից, որ Աստուած տագնապալի ժամանակներում ուղարկում է իր ժողովրդին: Սամուէլը կրկնակի պաշտօն է վարում՝ քաղաքական եւ կրօնական: Իսրայէլը չի բաւարարւում այլեւս «դատաւորների» պատահական միջնորդութիւններից եւ ձգտում է ունենալ աւելի կանոնաւոր քաղաքական մի իշխանութիւն: Ժողովրդի պահանջով եւ Աստծու հրամանով, Սամուէլը, հակառակ իր վերապահութիւններին, Իսրայէլի վրայ թագաւոր է հաստատում Սաւուղին: Սակայն շուտով Սաւուղը անհաւատարմութիւն է հանդէս բերում Աստծու նկատմամբ, այնպէս որ Աստուած զրկում է նրան իր պաշտպանութիւնից: Այն ժամանակ Աստուած ընտրում է երիտասարդ Դաւթին, որը յաջորդելու էր Սաւուղին: Դաւիթը ծառայութեան է մտնում Սաւուղի մօտ եւ այդպիսով ընտելանում պալատական կեանքին, նախքան իր փախուստը պալատից՝ խոյս տալու համար Սաւուղից, որն ուզում էր սպանել նրան: Գրքի 16-30 գլուխները ցոյց են տալիս Սաւուղի աստիճանական անկումը եւ Դաւթի հզօրութեան մեծացումը: Գիրքն աւարտւում է Սաւուղի եւ նրա որդիների մահուան պատմութեամբ, որը տեղի է ունենում փղշտացիների դէմ մղուած մի ճակատամարտի ընթացքում:

Այս գիրքը մեզ յիշեցնում է, որ Աստուած է միայն իր ժողովրդի ճշմարիտ թագաւորը: Այդ ժողովրդի մէջ օրինական իշխանութիւնը կարող է գործադրուել միայն այն անձի միջոցով, ով ամբողջապէս ընդունում է Աստծու միակ իշխանութիւնը եւ ենթարկւում դրան:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ա

ԵՂԿԱՆԱՆ ԵՒ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԸ ՍԵԼՈՎՈՒՄ

1 Արիմաթէմ Սիբայից՝ Եփրեմի լեռից
եկած Եղկանա անունով Նասիբ Եփ-
ռեմցի մի մարդ կար: Նա Թոկիի որդի
Հեղիի որդի Ցերեմիէլի որդին էր:
2 Նա երկու կին ունէր. մէկի անունն
էր Աննա, իսկ երկրորդինը՝ Փեննանա:
3 Փեննանան ունէր որդիներ, իսկ Ան-
նան որդի չունէր: Այդ մարդը տարէց-
տարի ելնում էր իր Արիմաթէմ քաղա-
քից, գնում էր Սելով զօրութիւնների
Տէր Աստծուն երկրպագելու եւ զոհ
մատուցելու: Այնտեղ էին նաեւ Հեղին
եւ նրա երկու որդիները՝ Օփնին ու
Փենեէսը, որոնք Տիրոջ քահանաներն
էին: 4 Եղկանան իր զոհ մատուցած օրը
իր կին Փեննանային, նրա որդիներին
ու դուստրերին բաժիններ տուեց: 5 Իսկ
Աննային մէկ† բաժին տուեց, քանզի
նա որդի չունէր: Եղկանան, սակայն,
Աննային առաւել էր սիրում, քան Փեն-
նանային, քանզի Տէրը փակել էր նրա
արգանդը, որպէսզի նրան որդի չպար-
գեւելով՝ տառապանք ու տրտմութիւն
պատճառի նրան: 6 Եղկանան տրտմել
էր, որ Տէրը փակել էր նրա արգանդը,
որպէսզի նրան որդի չպարգեւի: 7 Նա
ամէն տարի Տիրոջ տունը գալով՝
այդպէս էր վարւում, բայց Աննան
տրտմում էր, լալիս եւ ոչինչ չէր
ուտում: 8 Նրա ամուսին Եղկանան
ասաց նրան. «Աննա»: Սա ասաց.
«Այստեղ եմ, տէ՛ր»: Եղկանան ասաց
նրան. «Ինչո՞ւ ես լալիս, ինչո՞ւ չես
ուտում, եւ ինչո՞ւ է հոգիդ ալեկոծւում,
մի՞թէ ես քեզ համար տասը որդուց
լաւ չեմ»:

ԱՆՆԱՆ ԵՒ ՀԵՂԻՆ

9 Նրա հետ ուտելուց յետոյ Աննան
եկաւ Սելով ու կանգնեց Տիրոջ առջեւ:
10 Հեղի քահանան նստել էր մի աթոռի
վրայ, Տիրոջ տաճարի սեմի մօտ: Նա
վշտահար հոգով աղօթեց Տիրոջը ու
դառնօրէն լաց եղաւ եւ ասաց. 11 «Իս-
րայէլի Տէ՛ր Աստուած, զօրութիւնների՛
Տէր, եթէ կամենաս տեսնել քո աղախ-
նի տառապանքները, ինձ յիշես ու
արու զաւակ տաս քո աղախնին, մին-
չեւ նրա մահուան օրը քեզ կը նուիրեմ
նրան, նա գինի չի խմի ու չի հարբի եւ
նրա գլխին ածելի չի դիպչի»:
12 Նա երկար աղօթեց Տիրոջ առաջ,
եւ Հեղի քահանան հետեւելով նրա
շրթունքներին՝ նկատեց, որ աղօթում է
մտքում. շրթունքները չէին շարժւում:
13 Ձայնը լսելի չէր, բայց Տէրը լսեց
նրան: 14 Հեղին կարծեց, թէ նա հար-
բած է, ուստի Հեղիի սպասաւորն ասաց
Աննային. «Մինչեւ ե՞րբ հարբած վի-
ճակում ես մնալու, սթափուի՛ր գինո-
վութիւնից ու գնա հեռացի՛ր Տիրոջ
առջեւից»: 15 Պատասխան տալով Ան-
նան ասաց. «Ո՛չ, Տէ՛ր, այդպէս չէ: Ես
վշտացած սրտով կին եմ: Ո՛չ գինի եմ
խմել, ո՛չ էլ հարբած եմ: Ես իմ սիրտն
եմ բացել Տիրոջ առջեւ: 16 Քո աղա-
խնին անզգամ կին մի՛ համարիր, ես
իմ բազում տրտմութիւնից եւ իմ
տխրութիւնից մտամոլոր կանգնել եմ
մինչեւ այժմ»: 17 Պատասխան տուեց
Հեղին եւ ասաց. «Գնա՛ խաղաղու-
թեամբ եւ Իսրայէլի Աստուածը թող
կատարի նրանից հայցած քո բոլոր
խնդրանքները»: 18 Աննան ասաց. «Քո
աղախինը շնորհ գտաւ քո առաջ»: Եւ
կինը գնաց իր ճանապարհով, մտաւ իր
կացարանը, կերաւ ու խօսեց իր
ամուսնու հետ, եւ իր երեսից վերացաւ
տխրութիւնը:

ՍԱՄՈՒԷԼԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԸՆԾԱՅՈՒՄԸ

19 Առաւօտ կանուխ նրանք երկրպա-
գեցին Տիրոջը եւ գնացին իրենց ճա-
նապարհով: Եղկանան մտաւ Արիմա-
թէմում գտնուող իր տունը ու մեր-
ձեցաւ իր կնոջը՝ Աննային: 20 Տէրը
նրան յիշեց, եւ կինը յղիացաւ: Երբ
ժամանակը հասաւ, ծնեց որդի, որի
անունը դրեց Սամուէլ՝ ասելով, թէ՝
«Նրան զօրութիւնների Տէր Աստծուց
եմ խնդրել»:
21 Նրա ամուսինը՝ Եղկանան ու իր
ամբողջ ընտանիքը եկան Սելով՝ տա-
րուայ զոհը մատուցելու: 22 Նա իր
ուխտ արած ընծաներն ու ամբողջ
ունեցուածքի տասանորդը ընծայեց:
Բայց Աննան չգնաց նրա հետ եւ ասաց

†Այլ բնագրերում՝ կրկնակի:

իր ամուսնուն. «Մնամ այստեղ, մինչեւ
մանկանը կրծքից կտրեմ, ապա կը
տանեմ նրան, որ ներկայանայ Տիրոջ
առջեւ եւ այնտեղ ծառայի ընդմիշտ»:
23 Նրա ամուսին Եղկանան նրան
ասաց. «Արա՛ այնպէս, ինչպէս յարմար
ես գտնում. նստի՛ր այստեղ մինչեւ
նրան կտրես կրծքից: Թող Տէրը
կատարի այն, ինչ ելաւ քո բերանից»:
Կինը նստեց եւ կերակրեց իր որդուն,
մինչեւ նրան կրծքից կտրելը:
24 Դրանից յետոյ նրանք գնացին
Սելով՝ իրենց հետ վերցնելով երեք
տարեկան մի զուարակ, կլոր հացեր,
մէկ արդուի չափ ընտիր ալիւր եւ մի
սափոր գինի: Նրանք մտան Սելովում
գտնուող Տիրոջ տունը: Մանուկն
իրենց հետ էր: 25 Նրանք նրան ըն-
ծայեցին Տիրոջը: Նրա հայրը մորթեց
զոհը, որ ամէն տարի մատուցում էր
Տիրոջը: Նա մօտ բերեց մանկանը եւ
մորթեց զուարակը մանկան փրկու-
թեան համար: 26 Աննան՝ մանկան
մայրը, նրան տարաւ Հեղիի մօտ՝ ասե-
լով. «Աղաչում եմ, տէ՛ր իմ, ինչպէս
ճիշտ է, որ դու կենդանի ես, այնպէս էլ
ճիշտ է, որ ես այն կինն եմ, որ կանգ-
նել էի քո առջեւ եւ Տիրոջն էի
աղօթում ահա այս մանկան համար:
27 Տէրը կատարեց իրենից հայցած իմ
խնդրանքը: 28 Արդ, իբրեւ դրա հա-
տուցում, նրան նուիրում եմ Տիրոջը.
ինչքան որ ապրի, թող ծառայի
Տիրոջը»:
Եւ նրանք այնտեղ երկրպագեցին
Տիրոջը:

ԱՆՆԱՅԻ ԱՂՕԹՔԸ

2 Աննան աղօթել սկսեց ու ասաց.
«Սիրտս ամրացաւ իմ Տիրոջ շնոր-
հիւ,
գլուխս բարձր եմ պահում Տիրոջ
շնորհիւ†,
բերանս լայն բացուեց իմ թշնա-
միների դէմ,
ուրախ եղայ, որ փրկեցիր ինձ:
2 Տիրոջ նման սուրբ չկայ,
մեր Աստծու նման արդար չկայ,

†Բառացի՝ եղջիւրս բարձրացաւ իմ Տիրոջ շնորհիւ:

3 եւ քեզանից բացի սուրբ չկայ:
Մի՛ պարծենաք ու մի՛ խօսէք ամ-
բարտաւան բաներ,
մեծախօսութիւն թող չլսուի ձեր
բերանից,
քանզի Աստուած իմացութիւնների
Տէրն է,
եւ նա՛ է պատրաստում իր զար-
մանահրաշ գործերը:
4 Հզօրների աղեղները տկարացան,
իսկ տկարները զօրութիւն ստացան:
5 Հացով կշտացածները հիւծուեցին,
իսկ քաղցածները երկրում բնակուե-
ցին,
ամուլը եօթը որդի ծնեց,
իսկ բազմածինը դադարեց որդի ու-
նենալուց:
6 Տէրն է սպանում եւ ապրեցնում,
իջեցնում գերեզման եւ դուրս բե-
րում այնտեղից:
7 Տէրն է աղքատացնում ու
հարստացնում,
ստորացնում ու բարձրացնում:
8 Գետնից բարձրացնում է տնան-
կին,
աղքատին հանում աղբանոցից,
որ նրանց նստեցնի ժողովրդի իշ-
խանների հետ
ու փառքի գահին բազմեցնի նրանց:
9 Նա ուխտաւորի ուխտն է կա-
տարում,
արդարների տարիներն է օրհնում:
Ուժեղն իր շնորհքով չէ, որ հզօր է:
Տէրը տկարացնում է իր հակա-
ռակորդներին:
Տէրը սուրբ է:
Ո՛չ իմաստունը թող պարծենայ իր
իմաստութեամբ,
ո՛չ հզօրն իր զօրութեամբ,
ո՛չ էլ մեծատունն իր հարստու-
թեամբ:
Պարծեցողը պէտք է պարծենայ
նրանով,
որ իմանում ու ճանաչում է Տիրոջը,
երկրում իրաւունք եւ արդարութիւն
է գործադրում:
10† Տէրը երկինք ելաւ ու որոտաց,
ինքն է, որ արդար է դատելու
երկիրն իր չորս ծագերով,
զօրութիւն տալու մեր թագաւոր-
ներին

†Այլ բնագրերում՝ տարբեր տեղատում:

եւ զօրավիգ լինելու իր օծեալին»:
11 *Եւ նրանք մանկանը թողնելով այնտեղ՝ Տիրոջ առջեւ, գնացին Աբիմաթէմ, իրենց տունը:*
Մանուկ Սամուէլը Հեղի քահանայի մօտ Տիրոջն էր ծառայում:

ՀԵՂԻԻ ՈՐԴԻՆԵՐԸ

12 *Հեղի քահանայի որդիները, սակայն, անզգամ էին եւ չէին ճանաչում Տիրոջը:* 13 *Զոհ մատուցելիս քահանան ժողովրդից պահանջում էր հետեւեալը. միսը եփուելիս քահանայի սպասաւորը, եռաժանի պատառաքաղը ձեռքին պիտի գար, այն մտցնէր տաշտի, պղնձէ մեծ կաթսայի կամ պտուկի մէջ, եւ ինչ որ հանէր մեծ պատառաքաղն այնտեղից, պէտք է պատկանէր քահանային:* 14 *Այսպէս էին վարւում բոլոր իսրայէլացիների զոհերի հետ, որոնք գալիս էին զոհեր մատուցելու Սելովում, Տիրոջ տանը:* 15 *Նախքան ճարպն այրելը գալիս էր քահանայի սպասաւորը եւ ասում զոհ մատուցողին. «Քահանային խորովելու միս տո՛ւր, եւ ես կաթսայում եփուող մսից չեմ առնի»:* 16 *Զոհ մատուցողն ասում էր. «Թող նախ ճարպն այրուի, ինչպէս օրէնքն է, ապա ա՛ռ այնքան, ինչքան սիրտդ ցանկանայ»:* 17 *Իսկ նա ասում էր. «Ո՛չ, հիմա՛ տուր, ապա թէ ոչ՝ բռնի կ'առնեմ»: Այդ երիտասարդների մեղքերը շատ էին Տիրոջ առաջ:*

ՍԱՄՈՒԷԼԸ ՍԵԼՈՎՈՒՄ

18 *Մանուկ Սամուէլը, քաթանէ վակաս հագած, Տիրոջ առջեւ ծառայութիւն էր անում:* 19 *Մայրն ամէն տարի կարճ վերարկու էր պատրաստում ու բերում նրան, երբ իր ամուսնու հետ բարձրանում էր ամենամեայ զոհը մատուցելու:* 20 *Հեղին օրհնելով Եղկանային ու նրա կնոջը՝ ասաց. «Տիրոջը քո նուիրած այս մանկան փոխարէն Տէրը քեզ թող այդ կնոջից զաւակներ պարգեւի»: Եւ Եղկանան գնաց իր բնակավայրը:* 21 *Տէրն այցելեց Աննային, սա յղիացաւ ու ծնեց եւս երեք տղայ ու երեք աղջիկ:*

Մանուկ Սամուէլն էլ մեծացաւ Տիրոջ առջեւ:

ՀԵՂԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻՆ

22 *Հեղին շատ էր ծերացել եւ տեղեակ էր այն ամենին, ինչ նրա որդիներն անում էին իսրայէլացիների նկատմամբ եւ թէ ինչպէս պառկում էին ուխտաւոր կանանց հետ վկայութեան խորանի դռան մօտ:* 23 *Նա նրանց ասաց. «Ինչո՞ւ էք այնպիսի բաներ անում, որ ես այդ բաները լսեմ Տիրոջ ամբողջ ժողովրդի բերանից:* 24 *Մի՛ արէք, որդեակնե՛ր, իմ լսածը լուրը բարի չէ, դուք Աստծու ժողովրդին չէք ծառայում:* 25 *Եթէ մարդը մեղանչում է մարդու դէմ, ապա պէտք է աղօթի Տիրոջը, իսկ եթէ Տիրոջ դէմ է մեղանչում, ո՞վ պէտք է նրա համար աղօթի»: Նրանք սակայն չէին լսում իրենց հօր խօսքերը, քանզի Տէրը ուզում էր կործանել նրանց:*
26 *Եւ մանուկ Սամուէլը շարունակում էր մեծանալ եւ հաճելի էր դառնում Տիրոջն ու մարդկանց:*
27 *Աստծու հրեշտակը եկաւ Հեղիի մօտ եւ ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Երբ քո հօր նախնիները Եգիպտացիների երկրում փարաւոնի տանը ստրուկ էին, քո հօր տանը յայտնապէս երեւացի* 28 *եւ Իսրայէլի բոլոր ազգատոհմերի միջից ընտրեցի քո հօ՛ր տունը, որպէսզի նրանք ինձ համար քահանայագործեն, որ իմ զոհասեղանին բարձրանան, խունկ ծխեն, իմ առջեւ վակաս հագնեն: Ես քո հօր սերունդներին իբրեւ կերակուր եմ տուել իսրայէլացիների մատուցած բոլոր ողջակէզներն ու զոհերը:* 29 *Ինչո՞ւ ես ժպիրհ աչքով նայում իմ խնկերին ու զոհերին եւ ինձանից աւելի ես փառաւորում քո որդիներին, այն աստիճան, որ նրանք յանդգնում են օրհնել իսրայէլացիների՝ ինձ մատուցած ամէն տեսակի զոհերը"»:* 30 *Ահա թէ ինչու Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս է կարգադրում. "Ասել եմ, որ քո տունը եւ քո հօր տունը իմ առջեւ պէտք է ծառայեն յաւիտեան, սակայն հիմա Տէրն ասում է. "Հիմա այդպէս թող չլինի. քանզի ես փառաւորելու եմ ինձ փառաւորողներին, իսկ ովքեր ինձ արհամարհում են, անարգելու եմ":* 31 *Ահա օրեր պիտի գան, երբ պիտի սպանեմ քո սերնդին եւ քո հօր տան սերնդին, որպէսզի ծեր չլինի քո տան մէջ:* 32 *Ու ողբագին պիտի նայես այն բոլոր բարութիւններին, որ Տէր Աստուածն անելու է Իսրայէլին, եւ քո տան մէջ բնաւ ծեր չի լինելու:* 33 *Միայն մէկի՛ն պիտի թողնեմ իմ զոհասեղանի մօտ, որպէսզի նուաղեն նրա աչքերը, եւ հալումաշ լինի նրա սիրտը: Քո տան բոլոր մնացեալ անդամները ընկնելու են մարդկանց սրով:* 34 *Թող քեզ նշան լինի այս բանը, որ գալու է քո երկու որդիների՝ Օփնիի եւ Փենեէսի գլխին. նրանք երկուսն էլ նոյն օրն են մեռնելու:* 35 *Ես ինձ համար հաւատարիմ մի քահանայ մէջտեղ պիտի հանեմ, որ կատարի այն ամէնը, ինչ կայ իմ մտքում եւ հոգում: Նրա սերունդը հաստատուն պիտի պահեմ, որ միշտ իմ օծեալի առջեւ ծառայի:* 36 *Այնպէս պիտի լինի, որ քո տնից ով կենդանի մնայ, մի արծաթի չնչին կտորի եւ մի նկանակ հացի համար գայ նրան երկրպագելու եւ ասի. "Աղաչում եմ, ինձ քահանայական մի պաշտօն տո՛ւր, որ մի պատառ հաց ուտեմ"»:*

ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԳԱՐԷ Է ՀԱՍՏԱՏՈՒՄ ՍԱՄՈՒԷԼԻՆ

3 Պատանի Սամուէլը Հեղի քահանայի առջեւ Տիրոջը ծառայութիւն էր անում: Այդ օրերին Տիրոջ խօսքը հազուագիւտ էր, եւ տեսիլք չկար, որ գուշակուէր[†]: 2 Եւ պատահեց, որ այդ ժամանակ Հեղին ննջում էր իր սենեակում. նրա աչքերն սկսել էին տկարանալ, ու նա չէր կարողանում տեսնել: 3 Աստծու տաճարի ճրագը դեռ չէր հանգել, եւ Սամուէլը ննջում էր Տիրոջ տաճարում, ուր գտնւում էր Աստծու տապանակը: 4 Տէրը կանչեց՝ ասելով. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»: Սա պատասխանեց. «Ահա այստեղ եմ»: 5 Նա Հեղիի մօտ վազելով՝ ասաց. «Ահա ես այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր ինձ»: Նա ասաց. «Ես քեզ չեմ կանչել, վերադարձի՛ր ու քնի՛ր»: 6 Նա վերադարձաւ ու քնեց: Տէրը կրկին կանչեց. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»: Վեր կացաւ Սամուէլը, երկրորդ անգամ գնաց Հեղիի մօտ ու ասաց. «Ահա այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր ինձ»: Նա ասաց. «Ես քեզ չեմ կանչել, որդեա՛կ իմ, վերադարձի՛ր ու քնի՛ր»: 7 Սամուէլը, նախ, անծանօթ էր Տիրոջը, եւ Տիրոջ խօսքը նրան դեռ չէր յայտնուել: 8 Նորից՝ երրորդ անգամ Տէրը կանչեց Սամուէլին, որը վեր կացաւ, գնաց Հեղիի մօտ եւ ասաց. «Ահա այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր ինձ»:
9 Հեղին հասկացաւ, որ Տէրն է կանչում պատանուն: Հեղին ասաց Սամուէլին. «Վերադարձի՛ր, որդեա՛կ, ու ննջի՛ր: Եւ եթէ որեւէ մէկը քեզ կանչի, կ'ասես. "Խօսի՛ր, Տէ՛ր, քո ծառան լսում է"»: 10 Գնաց Սամուէլն ու պառկեց իր տեղում: Տէրն եկաւ, կանգնեց եւ, ինչպէս նախորդ անգամները, կանչեց նրան. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»: 11 Սամուէլն ասաց. «Խօսի՛ր, Տէ՛ր, քո ծառան լսում է»: Տէրն ասաց Սամուէլին. «Ահա ես Իսրայէլի մէջ այնպիսի բաներ պիտի անեմ, որ, ով լսի դրանք, ականջները պիտի զնգան: 12 Այդ օրը Հեղիի նկատմամբ պիտի կատարեմ այն ամէնը, ինչ նրա տան համար ասել եմ, սկզբից մինչեւ վախճանը:* 13 *Ինչպէս ասել եմ իրեն, իր որդիների գործած անօրէնութիւնների համար մինչեւ վերջ իր սերնդից վրէժ պիտի լուծեմ, որովհետեւ իր որդիները Աստծուն էին անարգում, իսկ նա նրանց չէր յանդիմանում:* 14 *Աւելին. երդուել եմ Հեղիի տան վրայ, որ նրա տան անօրէնութիւնը խնկերով եւ զոհերով քաւութիւն չի ստանալու յաւիտեան»:*
15 *Սամուէլը ննջեց մինչեւ առաւօտ եւ վաղ առաւօտեան, զարթնելով, բացեց Տիրոջ տան դռները:* 16 *Սամուէլը վախեցաւ տեսիլքը պատմել Հեղիին:* 17 *Հեղին Սամուէլին ասաց. «Սամուէ՛լ, որդեա՛կ»: Սա ասաց. «Ահա այստեղ եմ»: Նա ասաց. «Ինչ խօսքեր որ քեզ ասաց Տէրը, մի՛ թաքցրու ինձանից: Աստուած քեզ թող առաւել պատժի,*

[†]եւ մեկնելու արժանի տեսիլներ չէին երեւում:

եթէ քո ականջին ասուած խօսքերից ո-
րեւէ բան թաքցնես ինձանից»: 18 *Սա-*
մուէլն ամէն ինչ պատմեց նրան՝ նրա-
նից ոչինչ չթաքցնելով: Հեղին ասաց.
«Տէրը թող անի այն, ինչ բարի է իր
համար»:

19 *Սամուէլը մեծացաւ, Տէրը նրա*
հետ էր, եւ նրա ասած խօսքերից ոչ
մէկը գետնին չմնաց: 20 *Ամբողջ Իս-*
րայէլը, Դանից մինչեւ Բերսաբէէ,
իմացաւ, որ Սամուէլը դարձել է Տիրոջ
մարգարէ: 21 *Տէրը կրկին երեւաց*
Սելովում: Տէրը Սամուէլին երեւաց ըստ
իր ասած խօսքի: Սամուէլը հաւատար-
մութեամբ դարձաւ Տիրոջ մարգարէն
ամբողջ Իսրայէլի մէջ, երկրի մի ծայ-
րից միւսը: Հեղին շատ էր ծերացել, իսկ
որդիները շարունակում էին իրենց ան-
թացքը, եւ նրանց ճանապարհը չար էր:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ

4 *Այդ օրերին այլազգիները*† *յար-*
ձակուեցին Իսրայէլի վրայ: Իսրայէլը
նրանց դէմ պատերազմի ելաւ եւ
Աբենեզերում բանակատեղի դրեց, իսկ
այլազգիները բանակատեղի դրեցին
Ափեկում: 2 *Այլազգիները ճակատա-*
մարտ տուին Իսրայէլի դէմ, պատե-
րազմն սկսուեց, եւ Իսրայէլը այլազգի-
ներից պարտուեց: 3 *Ռազմի դաշտում*
չորս հազար զինուոր ընկաւ: Երբ զօր-
քը վերադարձաւ բանակատեղի, Իսրա-
յէլի ծերերն ասացին. «Ինչո՞ւ Տէրն
այսօր մեզ պարտութեան մատնեց
այլազգիների առաջ: Սելովից մեզ մօտ
բերենք մեր Աստծու ուխտի տապանա-
կը, որ մեզ մօտ լինի ու մեզ փրկի մեր
թշնամիների ձեռքից»: 4 *Ժողովուրդը*
մարդիկ ուղարկեց Սելով, որոնք
այնտեղից բերեցին քերովբէների միջեւ
նստած զօրութիւնների Տիրոջ ուխտի
տապանակը: Հեղիի երկու որդիները՝
Օփնին ու Փենեէսը, Աստծու ուխտի
տապանակի հետ գնացին: 5 *Երբ Տիրոջ*
ուխտի տապանակը բանակատեղի
բերուեց, ամբողջ Իսրայէլը մեծաձայն
աղաղակեց, եւ երկիրը թնդաց: 6 *Լսե-*
լով աղաղակի ձայնը՝ այլազգիներն
ասացին. «Այս ի՞նչ բարձրագոչ աղա-
ղակ է եբրայեցիների բանակատե-
ղիում»: 7 *Նրանք իմացան, որ Տիրոջ*
տապանակն են բերել բանակատեղի:
Այլազգիները վախեցան ու ասացին.
«Նրանց աստուածները եկել են բա-
նակատեղի: Փրկի՛ր մեզ այսօր, Տէ՛ր:
8 *Վա՛յ մեզ, քանզի այսպիսի բան չկար*
երէկ ու նախորդ օրը: Վա՛յ մեզ, ո՞վ կը
փրկի մեզ այդ հզօր աստուածների
ձեռքից: Սրանք այն աստուածներն են,
որ Եգիպտոսին ամէն տեսակ հարուած-
ներ հասցրին նաեւ ամբողջ անապա-
տում: 9 *Գօտեպնդուեցէ՛ք եւ տղա-*
մա՛րդ եղէք, ո՛վ այլազգիներ, չլինի թէ
ստրուկ դառնաք եբրայեցիներին, ինչ-
պէս որ ձեզ նրանք ստրուկ եղան:
Տղամա՛րդ եղէք եւ պատերազմեցէ՛ք
նրանց դէմ»: 10 *Այլազգիները պատե-*
րազմեցին նրանց դէմ, եւ բոլոր
Իսրայէլացիները փախան դէպի իրենց
յարկերը: Շատ մեծ կոտորած եղաւ, եւ
Իսրայէլացիներից երեսուն հազար հե-
տեւակ ընկաւ: 11 *Աստծու տապանակը*
գերուեց, իսկ Հեղիի երկու որդիները՝
Օփնին ու Փենեէսը սպանուեցին:

ՀԵՂԻԻ ՄԱՀԸ

12 *Այդ օրը մի համինացի մարդ*
բանակատեղիից վազելով եկաւ Սելով:
Նա պատառոտել էր իր զգեստները եւ
գլխին հող ածել: 13 *Երբ հասաւ, Հեղին*
տաճարի դռան առաջ նստած էր աթո-
ռին ու ճանապարհին էր նայում, քան-
զի նրա սիրտը տագնապի մէջ էր Աստ-
ծու տապանակի համար: Այդ մարդը
քաղաք մտնելով գոյժը հաղորդեց, ու
քաղաքն աղաղակեց: 14 *Հեղին, լսելով*
աղաղակը, ասաց. «Այդ ի՞նչ աղաղակ
է»: Մարդն շտապ եկաւ, որ գոյժը հա-
ղորդի Հեղիին: 15 *Հեղին իննսունութ*
տարեկան էր, աչքերն այնքան էին
տկարացել, որ չէր տեսնում: Հեղին
իրեն շրջապատող մարդկանց ասաց.
«Այս ի՞նչ աղաղակ է»: 16 *Մարդը*
շուտափոյթ մտաւ Հեղիի մօտ եւ ասաց
նրան. «Ես եկել եմ բանակից, ռազմա-
դաշտից այսօր եմ փախել»: Հեղին
ասաց. «Ի՞նչ է պատահել, որդեա՛կ,
պատմի՛ր ինձ»: 17 *Պատանին պատաս-*
խանեց. «Իսրայէլացիները այլազգի-

†Եբրայերէնում՝ փղշտացիները:

ների առջեւից փախան, ժողովուրդը
մեծ կոտորածի ենթարկուեց, քո երկու
որդիները՝ Օփնին եւ Փենեէսը, սպա-
նուեցին, իսկ Աստծու տապանակը գե-
րուեց»: 18 *Եւ երբ նա յիշեց Աստծու*
տապանակը, Հեղին աթոռից յետ ըն-
կաւ դռան մօտ, նրա ողնաշարը ջար-
դուեց եւ մեռաւ, քանի որ ծեր ու ծան-
րացած մարդ էր: Նա Իսրայէլի մէջ
քսան տարի դատաւորութիւն էր արել:

ՓԵՆԵԷՍԻ ԿՆՈՋ ՄԱՀԸ

19 *Հեղիի հարսը՝ Փենեէսի կինը, յղի*
էր, ծննդաբերելու օրերը մօտ էին, եւ
երբ Աստծու տապանակի գերուելու եւ
իր սկեսրայրի ու ամուսնու մահուան
լուրը լսեց, լաց եղաւ ու ծնեց, քանզի
երկունքի ցաւերը պատել էին նրան:
20 *Երբ նա մեռնում էր, նրան շրջա-*
պատող կանայք ասացին. «Մի՛ վախե-
ցիր, քանզի տղայ ծնեցիր»: Նա պա-
տասխան չտուեց եւ ուշադրութիւն
չդարձրեց: 21 *Աստծու տապանակի,*
սկեսրայրի եւ իր ամուսնու պատճառով
մանկանը կոչեցին «Վայ քաբոթ»†՝
22 *ասելով. «Իսրայէլի փառքը վերա-*
ցաւ», որովհետեւ Տիրոջ տապանակը
գերուեց, նրա սկեսրայրն ու ամուսինը
մեռան:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՁԵՌՔԻՆ

5 *Այլազգիները Աստծու տապանակը*
վերցրին ու այն Աբենեզերից տարան
Ազոտոս: 2 *Այլազգիները Տիրոջ տա-*
պանակը դրեցին Դագոնի տաճարը եւ
կանգնեցրին Դագոնի կողքին: 3 *Յա-*
ջորդ օրը վաղ առաւօտեան զարթնեցին
ազոտացիները, մտան Դագոնի տաճա-
րը եւ տեսան, որ Դագոնը Տիրոջ տա-
պանակի առջեւ երեսնիվայր ընկած է:
Նրանք բարձրացրին Դագոնը եւ դրե-
ցին իր տեղը: Տիրոջ ձեռքը բարձրացաւ
ազոտացիների վրայ: Նա չարչարեց
Ազոտոսի ամբողջ տարածքում ապրող
մարդկանց, թութքով հիւանդացրեց
նրանց‡*:*

4 *Երբ յաջորդ առաւօտ նորից կա-*
նուխ զարթնեցին, տեսան, որ Դագոնը
Տիրոջ ուխտի տապանակի առջեւ երես-
նիվայր ընկած է, Դագոնի գլուխն ու
ոտքի† *երկու թաթերը ջարդուած են ու*
գետնին ցրուած, ձեռքի երկու դաս-
տակները ընկած են դռան սեմին. Դա-
գոնի միայն իրանն էր մնացել: 5 *Այդ*
պատճառով է, որ Դագոնի քրմերն ու
բոլոր նրանք, ովքեր մտնում են Դա-
գոնի տաճարը, մինչեւ օրս Ազոտոսի
Դագոնի տաճարի սեմին ոտք չեն
դնում, այլ ցատկելով վրայից են անց-
նում: 6 *Եւ Տիրոջ ձեռքը բարձրացաւ*
Ազոտոսի վրայ, թութքով հիւանդաց-
րեց նրանց, նրանց դաշտերում վխտալ
տուեց մկներին, եւ քաղաքում մահա-
ռիթ սոսկում առաջացաւ:

7 *Այս դէպքը տեսնելով՝ Ազոտոսի*
բնակիչներն ասացին. «Աստծու տա-
պանակը թող չմնայ մեզ մօտ, քանզի
նրա ձեռքը բարձրացաւ մեր եւ մեր
աստծու՝ Դագոնի վրայ»: 8 *Նրանք*
մարդ ուղարկեցին եւ այլազգիների
բոլոր իշխաններին իրենց մօտ հաւա-
քելով՝ ասացին. «Ինչ անենք Իսրայէլի
Աստծու տապանակը»: Գէթացիները
ասացին. «Իսրայէլի Աստծու տապա-
նակը թող մեզ մօտ փոխադրուի»: Եւ
Աստծու տապանակը փոխադրուեց
Գէթ: 9 *Երբոր տապանակը այնտեղ*
փոխադրուեց, Տիրոջ ձեռքը բարձրա-
ցաւ այդ քաղաքի վրայ, շատ մեծ
խռովութիւն բարձրացաւ, Տէրը քաղա-
քի մարդկանց՝ փոքրից մինչեւ մեծերը,
չարչարեց, նրանց հիւանդացրեց
թութքով, եւ Գէթացիները թութքով
տառապեցին:

10 *Աստծու տապանակը ուղարկեցին*
Ասկաղոն: Երբ Աստծու տապանակը
մտաւ Ասկաղոն, ասկաղոնացիները բո-
ղոք բարձրացրին՝ ասելով. «Ինչո՞ւ Իս-
րայէլի Աստծու տապանակը մեզ մօտ
բերեցիք, որ մեզ եւ մեր ժողովրդին
սպանէք»: 11 *Մարդ ուղարկեցին, հա-*
ւաքեցին այլազգիների բոլոր իշխան-
ներին ու ասացին. «Իսրայէլի Աստծու
տապանակը յե՛տ ուղարկեցէք, թող
մնայ իր տեղում, որ մեզ ու մեր ժո-
ղովրդին չկոտորի»: Մի մահառիթ
սոսկում էր պատել ամբողջ քաղաքն
այն բանից յետոյ, երբ Իսրայէլի Աստ-

†Թարգմանւում է՝ «Ո՞ւր է փառը»

‡Վերջին նախադասութիւնը չկայ եբրայական բնագրում:

†Յունարէն եւ միւս բնագրերում՝ ծեռքի:

ծու տապանակը այնտեղ էր մտել:
12 Մահից ազատուելով կենդանի մնացած մարդիկ թուքով էին տառապում, եւ քաղաքի աղաղակը երկինք բարձրացաւ:

ՏԱՊԱՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

6 Տիրոջ տապանակը եօթը ամիս մնաց այլազգիների երկրում: Նրանց երկրում Տէրը վխտալ տուեց մկներին:
2 Այլազգիներն իրենց քրմերին, գուշակներին եւ կախարդներին կանչեցին ու ասացին. «Ի՞նչ անենք Տիրոջ տապանակը, մեզ խորհուրդ տուէ՛ք, թէ ինչպէ՞ս այն իր տեղն ուղարկենք»:
3 Նրանք ասացին. «Եթէ Իսրայէլի Տէր Աստծու ուխտի տապանակը ուղարկէք, այն դատարկ մի՛ ուղարկէք, այլ անպատճառ պատուհասի վերացման զոհաբերութիւն արէ՛ք նրան: Այն ժամանակ կը բուժուէք, Տէրը կը ների ձեզ, եւ գուցէ թէ նրա պատժող ձեռքը վերանայ ձեզանից»:
4 Նրանք ասացին. «Պատուհասի վերացման ինչպիսի՞ զոհաբերութիւն մատուցենք»: Նրանք պատասխանեցին. «Այլազգիների իշխանների թուի համեմատ յետոյքի ոսկէ հինգ քանդակներ կերտեցէ՛ք եւ ոսկէ հինգ մկներ ձուլեցէ՛ք, քանզի նոյն այդ հարուածներն են իջել ձեզ, ձեր իշխանների ու ձեր ժողովրդի վրայ:
5 Արդ, կերտեցէ՛ք ձեր յետոյքների քանդակները, ձեր երկիրն ապականող մկների արձանիկները եւ փառաւորեցէ՛ք Տիրոջը, որ նա վերացնի իր ձեռքը ձեր, ձեր աստուածների ու ձեր երկրի վրայից:
6 Ինչո՞ւ էք ձեր սրտերը կարծրացնում այնպէս, ինչպէս Եգիպտոսն ու փարաւոնն էին կարծրացրել իրենց սրտերը: Չէ՞ որ Աստուած նախ յաղթեց եգիպտացիներին եւ յետոյ միայն իսրայէլացիներին ազատ արձակեց, որ գնան:
Արդ, տախտակ վերցրէ՛ք եւ մի նոր սայլ պատրաստեցէ՛ք:
7 Բերէ՛ք անդրանկածին երկու երինջ, որոնք դեռ ձագ չեն բերել†: Երինջները սայլին լծեցէ՛ք, իսկ յետեւից եկող հորթերին գոմում փակեցէ՛ք:
8 Վերցրէ՛ք Տիրոջ տապանակը եւ այն դրէ՛ք սայլի վրայ, իսկ պատուհասի վերացման համար մատուցուող ոսկէ ընծաները դրէ՛ք քուրձէ տոպրակի մէջ, դրա կողքին:
9 Հրեցէ՛ք սայլը եւ թողէ՛ք, որ գնայ:
Հետեւեցէ՛ք եւ տեսէ՛ք. եթէ դէպի իր սահմանը՝ Բեթսամիւս է գնում, ուրեմն մեզ մեծամեծ չարիքներով պատժողը Տէրն է, իսկ եթէ՝ ոչ, իմացէ՛ք, որ Տիրոջ ձեռքը չէ, որ մեզ պատուհասել է, այլ եղած պատիժները պատահական են»:
10 Այլազգիներն այդպէս էլ արեցին: Նրանք բերեցին անդրանկածին երկու երինջ, դրանք լծեցին սայլին, իսկ դրանց հորթերը պահեցին գոմում:
11 Սայլի վրայ դրեցին Տիրոջ տապանակը, քուրձէ տոպրակի մէջ դրուած մկների ու իրենց յետոյքների ոսկէ քանդակները:
12 Երինջները ուղիղ Բեթսամիւսի ճանապարհը բռնեցին. նրանք ջանում էին առանց աջ ու ձախ խոտորուելու մի շաւիղով գնալ: Այլազգիների իշխանները մինչեւ Բեթսամիւսի սահմանը գնում էին նրանց յետեւից:
13 Բեթսամիւսի բնակիչները հովիտներում ցորեն էին հնձում: Նրանք իրենց հայեացքը բարձրացնելով՝ տեսան Տիրոջ ուխտի տապանակը եւ նրա համար ուրախացան:
14 Սայլը մտաւ բեթսամիւսացի Օսէի դաշտը: Այնտեղ՝ սայլի կանգնած տեղում, մի մեծ քար կանգնեցրին, սայլի փայտերը կոտրեցին, իսկ երինջները Տիրոջը ողջակէզ մատուցեցին:
15 Ղեւտացիները վերցրին Տիրոջ ուխտի տապանակը, քուրձէ տոպրակն ու դրա միջի ոսկէ քանդակները եւ դրեցին մեծ քարի վրայ: Բեթսամիւսացիները այդ օրը ողջակէզներ ու զոհեր մատուցեցին Տիրոջը:
16 Այլազգիների հինգ իշխանները այս բանը տեսնելուց յետոյ նոյն օրը վերադարձան Ակկարոն:
17 Պատուհասի վերացման համար այլազգիների ընծայած ոսկէ քանդակներից մէկը Ազոտոսի համար էր, մէկը՝ Գազայի համար, մէկն՝ Ասկաղոնի, մէկը՝ Գէթի, մէկն էլ՝ Ակկարոնի համար,
18 իսկ ոսկէ մկները այլազգիների հինգ իշխաններին պատկանող բոլոր քաղաքների թուի համեմատ էին, որոնք պարսպապատ քաղաքներից հասնում էին մինչեւ փերեզացիների աւանները, մինչեւ այն քարը, որի վրայ դրեցին Տիրոջ ուխտի տապանակը, որը մինչեւ այսօր էլ կայ բեթսամիւսացի Օսէի դաշտում:
Ցեքոնէի որդիները, սակայն, բեթսամիւսացիների նման չուրախացան, որ տեսել են Տիրոջ ուխտի տապանակը:
19 Տէրը նրանցից յիսուն հազար եօթանասուն մարդ կոտորեց: Ժողովուրդը սգի մէջ էր, քանզի Տէրը ժողովրդին մեծամեծ հարուածներ էր հասցրել:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ԿԱՐԻԱԹԱՐԻՄՈՒՄ

20 Բեթսամիւսացի մարդիկ ասացին. «Ո՞վ կարող է կանգնել այս սուրբ Տէր Աստծու առաջ, եւ մեզանից ո՞ւմ մօտ կը գնայ Տիրոջ ուխտի տապանակը»:
21 Եւ Կարիաթարիմի բնակիչների մօտ պատգամաւորներ ուղարկեցին, որ նրանց ասեն. «Այլազգիները վերադարձրին Տիրոջ ուխտի տապանակը, եկէ՛ք եւ այն ձեզ մօտ տարէ՛ք»:

7 Կարիաթարիմցիները եկան, այնտեղից հանեցին Տիրոջ ուխտի տապանակը եւ այն տարան Ամինադաբի տունը, որը բլրի վրայ էր: Նրա որդի Եղիազարին սրբագործեցին, որ պահպանի Տիրոջ ուխտի տապանակը:

ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ՍԱՄՈՒԷԼԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՂԵԿԱՎԱՐ

2 Տապանակը Կարիաթարիմում դնելու օրից յետոյ բազում օրեր անցան, քսան տարի, եւ ամբողջ Իսրայէլը հայեացքը չէր կտրում Տիրոջից:
3 Սամուէլը խօսելով Իսրայէլի ամբողջ ժողովրդի հետ՝ ասաց. «Եթէ դուք ձեր ամբողջ սրտով դարձ էք կատարել դէպի Տէրը, ապա ձեր միջից վերացրէ՛ք օտար աստուածներն ու անտառները†, ձեր հոգիները թող ենթարկուեն Տիրոջը, միայն նրա՛ն ծառայեցէք, եւ նա ձեզ կը փրկի այլազգիների ձեռքից»:
4 Եւ իսրայէլացիները Բահաղիմներին ու Աստարոթի անտառները հեռու վանեցին եւ միայն Տիրոջը ծառայեցին:
5 Սամուէլն ասաց. «Բոլոր իսրայէլացիներին հաւաքեցէ՛ք Մասեփաթում, եւ ես ձեզ համար աղօթելու եմ Տիրոջը»:
6 Հաւաքուեցին Մասեփաթում, ջուր հանեցին ու թափեցին գետին, Տիրոջ առջեւ, այդ օրը ծոմ պահեցին եւ ասացին. «Մեղանչել ենք Տիրոջ առաջ»: Եւ Սամուէլը Մասեփաթում դատեց իսրայէլացիներին:
7 Երբ այլազգիները լսեցին, թէ իսրայէլացիները հաւաքուել են Մասեփաթում, նրանց իշխանները յարձակուեցին Իսրայէլի վրայ: Իսրայէլացիներն այդ լուրը լսելով՝ վախեցան այլազգիներից:
8 Իսրայէլացիներն ասացին Սամուէլին. «Մի՛ դադարիր աղաղակելուց քո Տէր Աստծուն մեզ համար, որ այլազգիների ձեռքից փրկի մեզ»:
9 Սամուէլն առաւ մի ծծկեր գառնուկ եւ ամբողջ ժողովրդի մասնակցութեամբ նրան ողջակէզ արեց Տիրոջը: Սամուէլը դիմեց Տիրոջը Իսրայէլի համար, եւ Տէրը լսեց նրան:
10 Մինչ Սամուէլը ողջակէզ էր մատուցում, այլազգիները մօտեցան, որ պատերազմեն Իսրայէլի դէմ: Այդ ժամանակ Տէրը բարձր ձայնով որոտաց այլազգիների վրայ, եւ նրանք շփոթուելով փախան իսրայէլացիների առջեւից:
11 Իսրայէլացիները Մասեփաթից ելան, հարուածեցին այլազգիներին ու կոտորեցին նրանց մինչեւ Բեթքորի սահմանները:
12 Սամուէլը մի քար վերցնելով՝ կանգնեցրեց Մասեփաթի ու հին Բեթսանի միջեւ եւ այն կոչեց Աբենեզեր, այսինքն՝ «Օգնականի քար»՝ ասելով. «Մինչեւ այս վայրը Տէրը մեզ օգնեց»:
13 Տէրն այլազգիներին խեղճացրեց, եւ նրանք այլեւս Իսրայէլի սահմանների վրայ չյարձակուեցին: Սամուէլի ապրած բոլոր օրերին Տիրոջ ձեռքը ծանրացած էր այլազգիների վրայ:
14 Այն քաղաքները, որ այլազգիները գրաւել էին իսրայէլացիներից, Ասկաղոնից մինչեւ Գէթ, վերադարձրին ու յանձնեցին Իսրայէլին, եւ Իսրայէլի սահմանները ազատուեցին այ-

†Եբրայերէնում՝ կաթնատուներ, որոնց վրայ լուծ չի դրուած:

†Եբրայերէնում՝ Աստարոթը:

լազգիների ձեռքից: Իսրայէլի ու ամորհացիների միջեւ խաղաղութիւն տիրեց:
15 Իր կեանքի բոլոր օրերին Սամուէլը դատաւորութիւն արեց իսրայէլացիներին: 16 Նա ամէն տարի գնում էր Բեթէլ, Գաղաադ եւ Մասեփաթ, շրջում էր Իսրայէլի բոլոր սրբագործուած վայրերում եւ դատաւորութիւն անում: 17 Վերադառնալով Արիմաթեմ, որտեղ իր տունն էր, նա այնտեղ դատաւորութիւն արեց իսրայէլացիներին ու Տիրոջ համար զոհասեղան շինեց:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ԹԱԳԱՒՈՐ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

8 Երբ Սամուէլը ծերացաւ, իր որդիներին Իսրայէլի դատաւորներ կարգեց: 2 Սրանք են նրա որդիների անունները. անդրանիկը՝ Յովէլ, երկրորդի անունը՝ Աբիա: 3 Նրանք դատաւորներ էին Բերսաբէէում: 3 Նրա որդիները, սակայն, չգնացին իրենց հօր ճանապարհով, այլ, ընչաքաղցութեան յետեւից ընկնելով՝ կաշառք էին վերցնում եւ իրաւունքը թիւրում:
4 Բոլոր իսրայէլացի տղամարդիկ հաւաքուեցին, եկան Սամուէլի մօտ՝ Արիմաթէմ, եւ ասացին նրան. 5 «Դու, ահա, ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ, մեզ վրայ մի թագաւոր դի՛ր, որ մեզ դատաւորութիւն անի, ինչպէս բոլոր ազգերի մօտ է»: 6 Այս բանը Սամուէլին դուր չեկաւ, քանզի ասել էին, թէ՝ «Մեզ թագաւոր տո՛ւր, որ մեզ համար դատաւորութիւն անի»: 7 Սամուէլն աղօթեց Տիրոջը, եւ Տէրն ասաց Սամուէլին. «Լսի՛ր ժողովրդի ձայնը, ինչ էլ որ նա ասի քեզ: Նրանք ոչ թէ քե՛զ անարգեցին, այլ չուզեցին, որ ե՛ս թագաւորեմ իրենց վրայ: 8 Նրանց Եգիպտոսից դուրս գալու օրուանից մինչեւ այսօր նրանք ինձ լքեցին ու պաշտեցին օտար աստուածներ: Եւ ինչ որ արեցին իմ նկատմամբ, նոյնը կ'անեն քո նկատմամբ: 9 Արդ, դու լսի՛ր նրանց խօսքը, բայց նրանց տեղեակ պահի՛ր, բացատրի՛ր թագաւորի իրաւունքները, որ իշխելու է իրենց վրայ»:
10 Սամուէլը Տիրոջ բոլոր պատգամները հաղորդեց իրենից թագաւոր խնդրող ժողովրդին: 11 Նա ասաց. «Ձեզ վրայ իշխող թագաւորը հետեւեալ իրաւունքներն է ունենալու. նա պիտի վերցնի ձեր որդիներին եւ նրանց կառապաններ, հեծեալներ ու իր մարտակառքերի առջեւից վազող սուրհանդակներ պիտի դարձնի: 12 Նրանց իր հազարապետներն ու հարիւրապետները պիտի դարձնի, նրանք իր հունձը պիտի հնձեն, այգիները քաղեն, իր զէնքերն ու մարտակառքերի մասերը պիտի պատրաստեն: 13 Ձեր դուստրերին անուշահոտութիւն պատրաստողներ, խոհարարներ ու հացթուխներ պիտի դարձնի, 14 ձեր անդաստանները, ձեր այգիներն ու ձեր ընտիր ձիթենիները վերցնելով՝ իր ծառաներին պիտի տայ: 15 Ձեր հանդերից ու ձեր այգիների բերքից նա տասանորդ պիտի ստանայ եւ տայ իր ներքինիներին եւ ծառաներին: 16 Ձեր ծառաներն ու աղախինները, ձեր ընտիր արջառներն ու աւանակները ձեզնից պիտի վերցուեն եւ իր համար տասանորդ պիտի լինեն: 17 Ձեր հօտերից նա տասանորդ պիտի ստանայ, եւ դուք նրա ծառաները պիտի դառնաք: 18 Այն ժամանակ դուք բողոքելու էք ձեր ընտրած թագաւորի դէմ, սակայն Տէրը ձեզ չի լսելու այդ օրը, քանզի դուք ինքներդ ձեզ համար թագաւոր ընտրեցիք»:
19 Ժողովուրդը չուզեց լսել Սամուէլին եւ ասաց նրան. «Ո՛չ, թող մէկը թագաւորի մեզ վրայ: 20 Մենք եւս այլ ազգերի նման լինենք, թող մեր թագաւորը մեզ դատի, մեր առջեւից ընթանայ եւ մեզ պատերազմի առաջնորդի»: 21 Սամուէլը լսեց ժողովրդի բոլոր ասածները եւ դրանք յայտնեց Տիրոջը: 22 Տէրն ասաց Սամուէլին. «Լսի՛ր նրանց եւ նրանց վրայ թագաւո՛ր դիր»: Սամուէլն ասաց իսրայէլացիներին. «Թող ամէն ոք իր քաղաքը գնայ»:

ՍԱՒՈՒԼԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՍԱՄՈՒԷԼԻՆ

9 Բենիամինի որդիներից սերուած Կիս անունով մի ուժեղ մարդ կար, որ որդին էր Աբիէլի, եւ սա որդին՝ Արէդի, եւ սա թոռը՝ Բեքորաթի ու ծոռը՝ Ափիայի, որ յեմինացի մի մարդ էր: 2 Նա Սաւուղ անունով բարի ու թիկնեղ մի որդի ունէր: Իսրայէլացիների մէջ նրանից բարեւոս մարդ չկար, բոլոր մարդիկ մէկ գլխով ցածր էին նրանից:
3 Մի անգամ կորան Սաւուղի հօր աւանակները: Կիսն ասաց իր որդի Սաւուղին. «Վերցրո՛ւ ծառաներից մէկին, եւ ելէ՛ք, գնացէ՛ք աւանակները փնտռելու»: 4 Նրանք գնացին, անցան Եփրեմի լեռը, անցան Սարիսի երկիրը՝ չգտան աւանակները, անցան Սադիմի երկիրը՝ չկային աւանակները, անցան յեմինացիների երկիրը՝ եւ չգտան: 5 Երբ հասան Սիփ, Սաւուղն ասաց իր հետ եկած ծառային. «Արի՛ վերադառնանք: Կարող է հայրս, աւանակները մոռացած, մե՛զ համար անհանգստանայ»: 6 Ծառան ասաց նրան. «Այս քաղաքում է ապրում Աստծու մարդը: Նա պատուաւոր մարդ է եւ ինչ որ ասում է, անպայման կատարւում է: 7 Արի՛ գնանք նրա մօտ, թերեւս մեզ ցոյց տայ այն ճանապարհը, որով պէտք է գնանք»: Սաւուղն ասաց իր հետ եկած ծառային. «Եթէ գնանք, ի՞նչ տանենք Աստծու մարդուն, չէ՞ որ մեր ամաններից հացը պակասել է, եւ մի աւելի բան չունենք, որ տանենք Աստծու մարդուն»: 8 Ծառան նորից պատասխան տալով Սաւուղին՝ ասաց. «Ես ունեմ քառորդ սիկղ արծաթ: Այն կը տաս Աստծու մարդուն, եւ նա ցոյց կը տայ մեր ճանապարհը»: 9 (Հին ժամանակներում երբ իսրայէլացիները գնում էին Աստծուց խորհուրդ հայցելու, այսպէս էին ասում. «Եկէ՛ք գնանք տեսանողի մօտ», որովհետեւ հին ժամանակներում ժողովուրդը մարգարէին տեսանող էր անուանում): 10 Սաւուղն իր ծառային ասաց. «Ճիշտ ես ասում, արի՛ գնանք»:
11 Եւ նրանք գնացին այն քաղաքը, ուր գտնւում էր Աստծու մարդը: Մինչ նրանք բարձրանում էին դէպի քաղաք տանող զառիվերը, նրանց հանդիպեցին աղջիկներ, որոնք ջուր հանելու էին եկել: 12 Նրանք հարցրին աղջիկներին. «Այստե՞ղ է ապրում տեսանողը»: Աղջիկները պատասխան տալով՝ ասացին. «Այստեղ է, ահա ձեր առջեւն է, սակայն շտապեցէ՛ք, նա միայն այսօրուայ համար է եկել քաղաք, որովհետեւ ժողովուրդն այսօր է Բամայում զոհ անում: 13 Եթէ հիմա մտնէք քաղաք, նրան կը գտնէք այնտեղ, որովհետեւ դեռ չի գնացել Բամա՝ ուտելու, եւ ժողովուրդը չի ուտի, մինչեւ որ նա չգայ, որովհետեւ նա օրհնում է զոհը, ու դրանից յետոյ հիւրերն ուտում են: 14 Արդ, շո՛ւտ գնացէք, որ նրան հիմա այնտեղ գտնէք»: Նրանք գնացին քաղաք եւ երբ մտան քաղաքամէջ, Սամուէլն էլ Բամա բարձրանալիս հանդիպեց նրանց:
15 Սաւուղի գնալուց մի օր առաջ Տէրը Սամուէլին յայտնել էր նրա մասին ու ասել. «Վաղը այսինչ ժամին Բենիամինի երկրից մի մարդ պիտի ուղարկեմ քեզ մօտ, որ նրան Իսրայէլի իմ ժողովրդի վրայ իշխան օծես: 16 Նա իմ ժողովրդին պիտի փրկի այլազգիների ձեռքից, քանզի ականատես եղայ ժողովրդիս տառապանքներին, եւ նրա աղաղակը ինձ հասաւ»: 17 Սամուէլը տեսաւ Սաւուղին, եւ Տէրն ասաց նրան. «Ահաւասիկ սա է այն մարդը, որի մասին ասել եմ քեզ, թէ՝ «Նա է ղեկավարելու իմ ժողովրդին»: 18 Սաւուղը քաղաքամիջում մօտենալով Սամուէլին՝ հարցրեց. «Ասա՛ ինձ, ո՞րն է տեսանողի տունը»: 19 Պատասխան տուեց Սամուէլը եւ ասաց Սաւուղին. «Տեսանողը ես ինքս եմ: Իմ առջեւից գնալով բարձրացի՛ր Բամա: Այսօր ինձ հետ կ'ուտես, իսկ վաղը քեզ կ'արձակեմ, եւ ամէն ինչ, որ սրտումդ կայ, կը պատմեմ քեզ: 20 Երեք օր առաջ կորցրած քո աւանակների համար մի՛ մտածիր, քանզի դրանք գտնուել են: 21 Եւ ո՞ւմ է պատկանում Իսրայէլի փառքը, եթէ ոչ քեզ եւ քո հօր ամբողջ տոհմին»: Պատասխան տուեց Սաւուղն՝ ասելով. «Չէ՞ որ ես Իսրայէլի ամենափոքր ազգատոհմին պատկանող մի յեմինացու որդի եմ, եւ

Բենիամինի ցեղի մէջ իմ տոհմը ամենակրտսերն է: Ինչո՞ւ ես ինձ այդ բաներն ասում»:

22 Սամուէլը Սաւուղին ու նրա ծառային տարաւ ճաշասրահ, նրանց նստեցրեց չուրջ երեսուն հիւրերի ամենավերին շարքում: 23 Սամուէլն ասաց խոհարարին. «Բե՛ր ինձ այն բաժինը, որ քեզ տուի ու պատուիրեցի, որ քեզ մօտ պահես»: 24 Խոհարարը եփեց ազդրը՝ վրայի մսով† եւ այն դրեց Սաւուղի առջեւ: Սամուէլն ասաց Սաւուղին. «Ահաւասիկ այս է մնացել, առջեւդ դի՛ր ու կե՛ր, որ դա քեզ համար վկայութիւն լինի ժողովրդի առաջ, եւ կրծի՛ր»: Այդ օրը Սաւուղը Սամուէլի հետ կերաւ:

25‡ Նա Բամայից իջաւ քաղաք: Սաւուղի համար տանիքի վրայ անկողին գցեցին, ու նա քնեց: 26‡ Երբ առաւօտեան նրանք զարթնեցին, Սամուէլը Սաւուղին տանիքից կանչելով՝ ասաց. «Ե՛կ, արձակելու եմ քեզ»: Սաւուղն իջաւ, եւ ինքն ու Սամուէլը տնից դուրս եկան: 27 Երբ նրանք հասան քաղաքի սահմանին, Սամուէլն ասաց Սաւուղին. «Ասա՛ քո ծառային, որ մեզանից առաջ անցնի»: Եւ նա առաջ անցաւ: Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու այսօր այստեղ կը մնաս, որ լսես Տիրոջ պատգամները»:

ՍԱՄՈՒԷԼԸ ՍԱՒՈՒՂԻՆ ՕՄՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐ

10 Սամուէլն առաւ իւղի սրուակն ու թափեց նրա գլխին: Նա համբուրեց նրան եւ ասաց. «Մի՞թէ Տէրը չէ, որ քեզ իշխան օծեց իր ժառանգութեան, իր իսրայէլացի ժողովրդի վրայ: Դու կ'իշխես Տիրոջ ժողովրդի վրայ եւ կը փրկես նրան իր չուրջը գտնուող թշնամիների ձեռքից: 2 Եւ թող այս նշան լինի, թէ Տէրն է քեզ օծողը. ինձնից հեռանալուց յետոյ երկու մարդ պիտի գտնես Ռաքէլի գերեզմանի մօտ, Բենիամինի լերան վրայ, որոնք արագավազ պիտի գան ու պիտի ասեն քեզ. "Գտնուեցին այն աւանակները, որ փնտռելու էիր գնում, իսկ հայրդ, աւանակների հոգսը թողած, ձեր մասին է մտածում ու ասում. "Ի՞նչ անեմ իմ որդու համար": 3 Երբ այնտեղից կը գնաս եւ կը հասնես մինչեւ Դեբորայի կաղնին, այնտեղ երեք մարդու կը հանդիպես, որոնք Աստծու մօտ՝ Բեթէլ են գնում: Մէկը երեք ուլ է տանում, միւսը՝ երեք ման հաց, իսկ երրորդը՝ մի տիկ գինի: 4 Քո առողջութիւնը հարցնելով՝ նրանք քեզ երկու հաց կը նուիրեն, եւ դու կ'առնես նրանց ձեռքից: 5 Ապա կը հասնես Աստծու բլուրը, ուր այլազգիների մի գունդ կայ: Երբ քաղաք մտնես, կը հանդիպես Բամայից դուրս եկող մարգարէների խմբին, որոնց առաջ կան սրինգ, թմբուկ, փող ու քնար նուագողներ, իսկ իրենք մարգարէութիւն են անում: 6 Քո Տիրոջ հոգին կը շարժուի քեզ վրայ, դու էլ մարգարէութիւն կ'անես նրանց հետ եւ ուրիշ մարդ կը դառնաս: 7 Երբ այս նշանները քեզ վրայ կատարուեն, ինչ որ ձեռքիցդ գայ, բոլորն էլ արա՛, քանզի Աստուած քեզ հետ է: 8 Ինձանից առաջ Գաղգաղա պէտք է իջնես: Այնտեղ ես կը գամ քեզ մօտ, որպէսզի ողջակէզներ եւ խաղաղութեան զոհեր մատուցեմ: Եօթը օր կը սպասես, մինչեւ որ գամ քեզ մօտ եւ հաղորդեմ քեզ, թէ ինչ ես անելու»: 9 Երբ նա շուռ եկաւ, որ գնայ Սամուէլի մօտից, Աստուած նրան ուրիշ սիրտ տուեց, եւ նոյն օրը այդ բոլոր նշանները կատարուեցին: 10 Երբ նա մօտեցաւ բլրին, մարգարէների խումբը նրան ընդառաջ գնաց, նրա վրայ Աստծու հոգին շարժուեց, եւ նա նրանց մէջ մարգարէութիւն արեց: 11 Երբ նախկինում նրան տեսնողները բոլորն էլ ճանաչեցին իրեն, թէ ինչպէս նա մարգարէների մէջ մարգարէութիւն է անում, մէկը միւսին հարցրեց. «Ի՞նչ է պատահել Կիսի որդուն, մի՞թէ Սաւուղը եւս մարգարէների մէջ է»: 12 Նրանցից մէկը պատասխանեց եւ ասաց. «Ո՞վ է նրա հայրը, եթէ ոչ՝ Կիսը»: Այս առթիւ ասացուածք ստեղծուեց, թէ՝ «Սաւո՞ւղն էլ մարգարէների մէջ է»: 13 Մարգարէութիւն անելը վերջացնելուց յետոյ նա բարձրացաւ բլուրը: 14 Սաւուղի

†Ցունարէն միայն ազդր:

‡25–26 համարները եբրայական բնագրում ունեն մի փիչ այլ բովանդակութիւն:

ազգականը հարցրեց նրան ու նրա ծառային. «Ո՞ւր էիք գնացել»: Նրանք պատասխանեցին. «Աւանակները փնտռելու: Բայց երբ տեսանք, որ չկան, մտանք Սամուէլի մօտ»: 15 Ազգականն ասաց Սաւուղին. «Պատմի՛ր ինձ, Սամուէլը քեզ ի՞նչ ասաց»: 16 Սաւուղն ասաց իր ազգականին. «Նա մեզ յայտնեց, որ աւանակները գտնուել են»: Նա, սակայն, թագաւորութեան մասին Սամուէլի ասածները նրան չյայտնեց:

17 Սամուէլը ամբողջ ժողովրդին հաւաքելով Տիրոջ առաջ, Մասեփաթում, իսրայէլացիներին ասաց. 18 «Այսպէս խօսեց Իսրայէլի Տէր Աստուածը եւ ասաց. "Ես եմ, որ իսրայէլացիներին հանեցի Եգիպտոսից, փրկեցի ձեզ եգիպտացիների արքայ փարաւոնի ու ձեզ ճնշող բոլոր թագաւորների ձեռքից, 19 բայց դուք այսօր անարգեցիք Աստծուն, որ ձեզ փրկել է ձեր շուրջը գտնուող ու ձեզ նեղութիւն պատճառող ժողովուրդներից: Իսկ դուք ասացիք. "Ո՛չ, այդպէս չէ, մեզ վրայ թագաւո՛ր կարգիր": Արդ, կանգնեցէ՛ք Տիրոջ առջեւ ըստ ձեր իշխանութիւնների, ըստ ձեր ազգատոհմերի եւ ըստ ձեր հազարեակների»: 20 Սամուէլն Իսրայէլի բոլոր ցեղերին իրար մօտ բերեց, եւ վիճակն ընկաւ Բենիամինի ցեղին: 21 Նա մօտ բերեց Բենիամինի ցեղին ըստ ազգատոհմերի, եւ վիճակն ընկաւ Մատտարիի ազգատոհմին: Նա մօտ բերեց Մատտարիի ազգատոհմին, եւ վիճակն ընկաւ Կիսի որդի Սաւուղին: 22 Նա փնտռեց նրան, բայց չգտաւ: Սամուէլը կրկին հարցրեց Տիրոջը. «Արդեո՞ք այդ մարդն էլի այստեղ կը գայ»: Տէրն ասաց. «Ահաւասիկ նա թաքնուած է կարասիների միջեւ»: 23 Նա վազեց ու նրան այնտեղից առնելով՝ կանգնեցրեց ժողովրդի մէջ: Բոլոր մարդիկ Սաւուղից մի գլխով ցածր էին: 24 Սամուէլն ասաց ամբողջ ժողովրդին. «Տեսա՞ք Տիրոջ ընտրած մարդուն, ձեր ամենքի մէջ նրա նմանը չկայ»: Ամբողջ ժողովուրդը ճանաչեց նրան՝ ասելով. «Կեցցէ՛ արքան»: 25 Սամուէլը ժողովրդին յայտնեց թագաւորի իրաւունքները, գրեց մատեանում եւ դրեց Տիրոջ առաջ: Սամուէլն արձակեց ամբողջ ժողովրդին, եւ ամէն մարդ գնաց իր տեղը: 26 Սաւուղը գնաց իր տունը, Գաբաա: Նրա հետ գնացին զօրեղ մարդիկ, որոնց սրտերը Տէրը դրդել էր, որ լինեն Սաւուղի հետ: 27 Բայց կային նաեւ չար մարդիկ, որոնք ասում էին. «Ո՞վ է սա, որ մեզ պիտի փրկի»: Եւ նրանք քամահրեցին նրան ու ընծաներ չմատուցեցին:

ՍԱՒՈՒՂԸ ՅԱՂԹՈՒՄ Է ԱՄՈՆԱՑԻՆԵՐԻՆ

11 Մէկ ամիս անց Նաաս Ամոնացին եկաւ Գաղաադի Յաբիս քաղաքի շուրջը բանակ դրեց: Յաբիսի բոլոր բնակիչներն ասացին Նաաս Ամոնացուն. «Մեզ հետ դաշինք կնքի՛ր, եւ մենք կը ծառայենք քեզ»: 2 Նաաս Ամոնացին նրանց ասաց. «Ձեզ հետ դաշինք կը կնքեմ այն պայմանով, որ բոլորդ հանէք ձեր աջ աչքը: Եւ ես դրանով ամբողջ Իսրայէլի վրայ նախատինք դրած կը լինեմ»: 3 Յաբիսի բնակիչները ասացին Նաասին. «Մեզ եօթը օր ժամանակ տո՛ւր, որ պատգամաւորներ ուղարկենք Իսրայէլի բոլոր սահմանները, եւ եթէ մեզ փրկող չլինի, քեզ անձնատուր կը լինենք»:

4 Պատգամաւորները եկան Գաբաա, Սաւուղի մօտ եւ այդ խօսքերը հաղորդեցին ժողովրդին: 5 Ժողովուրդն իր ձայնը բարձրացրեց ու լաց եղաւ: Սաւուղն առաւօտեան գալով դաշտից՝ հարցրեց. «Ի՞նչ է պատահել, որ ժողովուրդը լաց է լինում»: Նրան յայտնեցին յաբիսեցիների խօսքերը: 6 Երբ Սաւուղը լսեց այս բանը, Տիրոջ հոգին շարժուեց նրա վրայ, եւ նրա բարկութիւնը սաստիկ բորբոքուեց: 7 Նա մի զոյգ եզ առաւ, կտոր-կտոր արեց դրանք ու պատգամաւորների միջոցով Իսրայէլի բոլոր սահմաններն ուղարկեց՝ ասելով. «Ով Սաւուղի եւ Սամուէլի յետեւից չգայ, այսպէս կը դառնան նրա եզները»: Տիրոջ ահն ընկաւ Իսրայէլի ամբողջ ժողովրդի սիրտը, եւ նրանք մէկ մարդու պէս անվախ վրայ վազեցին: 8 Սաւուղը Բեզեկում զօրահաւաք արեց. Իսրայէլի բոլոր մարդիկ վեց հարիւր հազար հոգի էին, իսկ

Ցուգայի ցեղի մարդիկ՝ եօթանասուն հազար: 9 Նա ասաց եկած պատգամաւորներին. «Այսպէս կ'ասէք Գաղատացի Ցաբիս քաղաքի բնակիչներին. "Վաղը, երբ արեգակը տաքացնի երկիրը, դուք կը փրկուէք"»: Պատգամաւորները եկան քաղաք ու դա հաղորդեցին Ցաբիսի բնակիչներին, որոնք ուրախացան: 10 Ցաբիսի բնակիչներն ասացին Նաաս Ամոնացուն. «Վաղը ձեզ անձնատուր կը լինենք, եւ մեզ հետ վարուեցէք այնպէս, ինչպէս հաճելի է ձեզ»: 11 Հետեւեալ օրը Սաւուղը ժողովրդին բաժանեց երեք գնդի: Առաւօտեան նրանք մտան նրանց բանակի մէջ եւ ամոնացիներին կոտորեցին մինչեւ արեւի ջերմացնելը: Կենդանի մնացածները փախուստի դիմեցին այնպէս, որ նրանցից երկու հոգու իրար մօտ չէիր գտնի:

12 Ժողովուրդն ասաց Սամուէլին. «Այդ ո՞վ էր ասում, թէ Սաւուղը չի կարող թագաւորել մեզ վրայ, մեզ յանձնի՛ր այդ մարդկանց, որ սպանենք նրանց»: 13 Սամուէլն ասաց. «Այսօր ոչ ոք չի սպանուելու, որովհետեւ Տէրն այսօր փրկութիւն պարգեւեց Իսրայէլին»:

14 Սամուէլը խօսելով ժողովրդի հետ՝ ասաց. «Գնանք Գաղգաղա եւ թագադրութեան տօնակատարութիւն անենք»: 15 Ամբողջ ժողովուրդը գնաց Գաղգաղա եւ այնտեղ, Գաղգաղայում, Տիրոջ առջեւ Սամուէլը Սաւուղին թագաւոր օծեց: Խաղաղութեան զոհեր մատուցեցին Տիրոջ առաջ, եւ Սամուէլն ու ամբողջ ժողովուրդը շատ ուրախացան:

ՍԱՄՈՒԷԼԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՏԳԱՄԸ

12 Սամուէլը բոլոր իսրայէլացիներին ասաց. «Ահա ես լսեցի այն ամէնը, ինչ դուք ինձ ասացիք, եւ ես ձեզ վրայ թագաւոր դրեցի: 2 Հիմա ձեզ թագաւորն է առաջնորդում: Ես ծերացել եմ, պէտք է հանգստանամ, բայց իմ որդիները ահա ձեր մէջ են: Իմ վաղ հասակից մինչեւ այսօր ե՛ս ձեզ ղեկավարեցի: 3 Ես, ահա, կանգնած եմ ձեր առաջ, եւ դուք Տիրոջ ու նրա օծեալի ներկայութեամբ ասացէ՛ք, թէ ես ո՞ւմ եզն եմ խլել կամ աւանակը տարել, ձեզանից ո՞ւմ նկատմամբ եմ անիրաւութիւն գործել կամ որեւէ մէկին զրկել, ո՞ւմ ձեռքից եմ կաշառք կամ ընծաներ վերցրել: 4 Պատասխան տուէ՛ք ինձ, որպէսզի ես հատուցեմ ձեզ»: Սամուէլին ասացին. «Մեր դէմ չես մեղանչել, մեզ չես զրկել, մեզ չես նեղել ու որեւէ մէկի ձեռքից ոչինչ չես խլել»:

5 Սամուէլն ասաց ժողովրդին. «Տէրը եւ նրա օծեալը այսօր թող վկայ լինեն իմ եւ ձեր միջեւ, որ իմ ձեռքում ոչինչ չէք գտել»: Նրանք ասացին. «Թող վկայ լինի»:

6 Սամուէլը խօսեց ժողովրդի հետ եւ ասաց. «Թող վկայ լինի Մովսէսին ու Ահարոնին իր ծառաները դարձրած եւ մեր հայրերին Եգիպտոսից հանած Տէրը: 7 Արդ, առա՛ջ եկէք, որ ես ձեզ դատեմ Տիրոջ առաջ եւ պատմեմ ձեզ այն բոլոր բարերարութիւնները, որ Տէրն արել է ձեզ ու ձեր հայրերին: 8 Երբ Յակոբն ու նրա որդիները Եգիպտոս մտան, եւ եգիպտացիները ճնշեցին նրանց, մեր հայրերն աղաղակեցին Տիրոջը, եւ Տէրն առաքեց Մովսէսին ու Ահարոնին, որոնք մեր հայրերին հանեցին Եգիպտոսից եւ բնակեցրին այս վայրերում: 9 Նրանք, սակայն, իրենց Տէր Աստծուն մոռացան, եւ նա նրանց մատնեց Ասորի արքայ Յաբինի զօրավար Սիսարայի, այլազգիների եւ Մովաբի թագաւորի ձեռքը, որոնք նրանց դէմ պատերազմ մղեցին: 10 Նրանք աղաղակեցին Տիրոջը՝ ասելով. "Մենք մեղանչել ենք, քանզի Տիրոջը թողնելով՝ ծառայեցինք Բահաղիմներին ու անտառներին: Արդ, փրկի՛ր մեզ մեր թշնամիների ձեռքից, եւ քե՛զ կը ծառայենք": 11 Տէրն առաքեց Յերոբովաղին, Բարակին, Յեփթայէին ու Սամփսոնին եւ ձեզ փրկեց շրջակայ թշնամիների ձեռքից, ու դուք բնակուեցիք ապահովութեան մէջ: 12 Երբ տեսաք, թէ Նաաս Ամոնացին յարձակուել է ձեր երկրի վրայ, ասացիք. "Այդպէս չէ, այլ մի թագաւոր պիտի իշխի մեզ վրայ, թէեւ մեր Տէր Աստուածն էր մեր թագաւորը": 13 Արդ, ահաւասիկ այն թագաւորը, որին խնդրեցիք ու ընտրեցիք, Տէրը ձեզ թագաւոր տուեց: 14 Եթէ վախենաք Տիրոջից, ծառայէք նրան, հնազանդուէք նրան, չհակառակուէք Տիրոջ ասածին, դուք ու ձեզ վրայ իշխող թագաւորը գնաք Տիրոջ յետեւից, ապա Տիրոջ ձեռքը ձեր ու ձեր թագաւորի դէմ չի լինի: 15 Իսկ եթէ չհնազանդուէք Տիրոջը, հակառակ գնաք Տիրոջ ասածին, ապա Տիրոջ ձեռքը ձեր եւ ձեր թագաւորի դէմ կը լինի: 16 Արդ, սպասեցէ՛ք եւ տեսէ՛ք այն մեծագործութիւնները, որ Տէրը ձեր աչքերի առջեւ պիտի անի: 17 Չէ՞ որ այսօր ցորենի հնձի ժամանակ է. ես Տիրոջը պիտի աղաղակեմ, եւ նա ձեզ որոտ ու անձրեւ պիտի տայ: Դուք կ'իմանաք ու կը տեսնէք, որ ձեզ համար թագաւոր խնդրելով՝ մեծ չարութիւն գործեցիք ձեր Տիրոջ հանդէպ»:

18 Սամուէլը Տիրոջն աղաղակեց, ու Տէրը նոյն օրը որոտ եւ անձրեւ ուղարկեց: 19 Ամբողջ ժողովուրդը սաստիկ վախեցաւ Տիրոջից ու Սամուէլից: Բոլորն ասացին Սամուէլին. «Քո Տէր Աստծուն աղօ՛թք արա քո ծառաների համար, որ չմեռնենք, քանզի մեզ համար թագաւոր ուզելով մեր գործած բոլոր մեղքերի վրայ այդ չարիքն էլ ենք աւելացրել»: 20 Սամուէլն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցէք, դուք թէեւ գործել էք այս բոլոր չարիքները, բայց Տիրոջ ճանապարհից մի՛ խոտորուէք եւ Տիրոջը ծառայեցէ՛ք ձեր ամբողջ հոգով: 21 Մի՛ գնացէք սուտ աստուածների յետեւից, որոնք ձեզ ոչ մի օգուտ չեն տայ եւ չեն փրկի, քանզի նրանք աստուածներ չեն: 22 Տէրն իր մեծ անուան պատուի համար իր ժողովրդին չի լքի, քանզի Տէրը բարեհաճութեամբ է ձեզ իր ժողովուրդը դարձրել: 23 Քաւ լիցի, որ ես մեղանչեմ Տիրոջ դէմ՝ հրաժարուելով ձեզ համար աղօթելուց: Ծառայեցէ՛ք Տիրոջը, եւ ես ձեզ ցոյց կը տամ բարի եւ ուղիղ ճանապարհը: 24 Երկի՛ւղ կրեցէք Տիրոջից եւ ձեր ամբողջ սրտով, ճշմարտութեամբ ծառայեցէ՛ք նրան, քանզի տեսաք, թէ մեզ համար ինչ մեծ գործեր արեց, 24 իսկ եթէ չարագործութիւնը շարունակէք, թէ՛ դուք, թէ՛ ձեր թագաւորը կորստեան կը մատնուէք»:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԴԷՄ

13 Սաւուղը Իսրայէլում մէկ տարի թագաւորելուց յետոյ յաջորդ՝ երկրորդ տարում Իսրայէլացիներից երեք հազարանոց զօրք հաւաքեց: 2 Երկու հազարն իր հետ Մաքմասում էին, Բեթէլ լերան վրայ, իսկ հազարը՝ Յովնաթանի հետ, Բենիամինի երկրի Գաբաա քաղաքում: Մնացած զինուորներին նա արձակեց, որ ամէն մէկը գնայ իր բնակութեան վայրը:

3 Յովնաթանը կոտորեց բլրի վրայ բնակուող այլազգի Նասիբին, եւ այլազգիներն այդ իմացան: Սաւուղը շեփոր հնչեցրեց ամբողջ երկրում եւ ասաց. «Ծառաներն արհամարհեցին մեզ»: 4 Բոլոր իսրայէլացիները լսելով այդ՝ ասացին. «Սաւուղը կոտորել է այլազգի Նասիբին, եւ Իսրայէլն ատելի է դարձել այլազգիներին»: Եւ ժողովուրդը Սաւուղի յետեւից գնաց Գաղգաղա:

5 Այլազգիները եւս հաւաքուեցին պատերազմելու Իսրայէլի դէմ եւ յարձակուեցին Իսրայէլի վրայ երեսուն հազար մարտակառքերով ու վեց հազար հեծեալներով, իսկ զօրքն իր բազմութեամբ նման էր ծովեզրի աւազին: Սրանք եկան ու բանակեցին Մաքմասում, Բեթորոնի դիմաց, դէպի հարաւ: 6 Իսրայէլացիները տեսնելով որ իրենց տեղը նեղ է, եւ չեն կարող մօտենալ նրանց, թաքնուեցին քարայրներում, գոմերում, ժայռերի ծերպերում, խորխորատներում ու ջրհորներում, 7 իսկ ոմանք անցան Յորդանան գետն ու գնացին Գադի եւ Գաղաադի երկիրը: Սաւուղը դեռ Գաղգաղայում էր, եւ ամբողջ ժողովուրդը դողում էր նրանից†:

8 Նա եօթը օր սպասեց, ինչպէս նշանակել էր Սամուէլը, սակայն Սամուէլը Գաղգաղա չեկաւ, եւ մարդիկ սկսեցին նրան լքել: 9 Սաւուղն ասաց. «Մո՛տ եկէք, որ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցեմ»: 10 Եւ ինքը ողջակէզ մատուցեց: Երբ ողջակէզ մատուցելը վերջացրեց, եկաւ Սամուէլը: Սաւուղն ընդառաջ գնաց նրան

†Եբրայերէնում՝ վախից դողալով՝ հետեւում էր նրան:

դիմաւորելու եւ ողջունելու: 11 Սամուէլն ասաց. «Այդ ի՞նչ ես արել»: Սաւուղն ասաց. «Երբ տեսայ, որ իմ ժողովուրդն սկսեց ինձ լքել, եւ դու չեկար քո նշանակած օրը, 12 իսկ այլազգիները հաւաքուեցին Մաքմասում, մտածեցի, թէ այլազգիները հիմա կը գան իմ դէմ, Գաղգաղա, իսկ ես Տիրոջ առջեւ դեռ չէի աղերսել, դրա համար էլ համարձակուեցի եւ ողջակէզ մատուցեցի»: 13 Սամուէլն ասաց Սաւուղին. «Զուր տեղ ես արել, քանի որ չես պահել իմ պատուիրանը, որ Տէրն էր պատուիրել: Տէրը քեզ Իսրայէլի վրայ ցմահ թագաւոր պիտի դարձնէր, 14 բայց հիմա քո թագաւորութիւնը այլեւս չի շարունակուելու: Տէրն իր սրտին հաճելի մարդ պիտի փնտռի, որ նրան իշխան դարձնի իր ժողովրդի վրայ պատուիրանով, քանզի դու չկատարեցիր այն, ինչ Տէրը պատուիրել էր քեզ»:

15 Սամուէլը վեր կացաւ եւ Գաղգաղայից գնաց իր ճանապարհով†: Մնացած զօրքը միացաւ Սաւուղին, որ դիմաւորի իրենց վրայ յարձակուող զինուորներին: Երբ նրանք Գաղգաղայից ելան ու հասան Բենիամինի երկրի Գաբաա քաղաքը, Սաւուղը հաշուեց իր հետ գտնուող զինուորներին եւ տեսաւ, որ ինքն ունի մօտաւորապէս վեց հարիւր զինուոր: 16 Սաւուղը, նրա որդի Յովնաթանն ու նրա հետ եղած զօրքը հաստատուեցին Բենիամինի երկրի Գաբաա քաղաքում, իսկ այլազգիները բանակել էին Մաքմասում:

17 Այլազգիների բանակից դուրս եկան երեք գնդեր, որ աւերածութիւն գործեն: Մի գունդը դիմեց դէպի Օփիր տանող ճանապարհը, դէպի Սոգողի աղբիւրը, 18 միւս գունդը՝ դէպի Բեթորոն տանող ճանապարհը, իսկ երրորդ գունդը՝ Գաբաայից դէպի Սաբայի անապատի Գայի տանող ճանապարհը:

19 Ամբողջ Իսրայէլի երկրում մի դարբին չգտնուեց, քանզի այլազգիներն ասել էին. «Այնպէս անենք, որ եբրայեցիները սուր կամ գեղարդ չշինեն»: 20 Բոլոր իսրայէլացիներն իրենց գերանդին, գործիքները, կացինը եւ մանգաղը նորոգելու համար գնում էին այլազգիների երկիրը: 21 Այգեկութի ժամանակ էր, եւ ամէն մի գործիքի արժէքը երեք սիկղ էր: Խոփի, կացնի եւ մանգաղի գինը նոյնն էր: 22 Այնպէս պատահեց, որ Մաքմասում պատերազմի օրերին Սաւուղի եւ նրա որդի Յովնաթանի հետ եղած մարդկանց ձեռքին սուր կամ գեղարդ չկար: Զէնք կար միայն Սաւուղի ու նրա որդի Յովնաթանի մօտ:

23 Այլազգիների բանակից մի գունդ եկաւ, որ անցնի Մաքմասից այն կողմ, իսկ իր հօր համար վեր չհանեց‡:

ՅՈՎՆԱԹԱՆԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՎՐԱՅ

14 Մի օր Սաւուղի որդի Յովնաթանն իր կապարճակրին ասաց. «Ե՛կ անցնենք այլազգիների կիրճից այն կողմ»: 2 Այդ մասին նա իր հօրը իմաց չտուեց: Սաւուղը նստած էր բլրի գլխին, Մագդոդի նռնենու տակ: Նրա հետ եղած ժողովուրդը մօտ վեց հարիւր հոգի էր: 3 Եւ Աքիա անունով մէկը կար, որը Ղեւիի§ որդու Փենեէսի որդու Քաբիէլի եղբայր Աքիտոբի որդին էր: Ղեւին Սելովում Աստծու քահանան էր, որը եփուդ էր կրում: Ժողովուրդը չգիտէր, որ Յովնաթանը կիրճ է գնացել:

4 Յովնաթանը ուզում էր անցնել այլազգիների ճամբարը, որ գտնուում էր կիրճի մէջ, բայց այդտեղ տանող ճանապարհի այս ու այն կողմում քարաժայռեր էին բարձրանում, որոնցից մէկը կոչւում էր Բազէս, իսկ միւսը՝ Սենարա: 5 Այս քարաժայռերից մէկը հիւսիսի կողմից Մաքմասի դիմաց էր ուղղուած, իսկ միւսը՝ հարաւային կողմից՝ դէպի Գաբայէ: 6 Յովնաթանն ասաց իր կապարճակիր ծառային. «Ե՛կ անցնենք այս անթլփատների կիրճը, թերեւս Տէրը յօգուտ մեզ ինչ-որ բան անի, քանզի Տիրոջ համար խտրութիւն չկայ. նա կարող է շատ մարդկանցով էլ փրկութիւն պարգեւել, քչով էլ»: 7 Զինակիրն ասաց նրան. «Արա՛ այն, ինչ սիրտդ է ուզում: Ահա ես քեզ հետ եմ, ինչ քո սիրտն է ուզում, նոյնն էլ՝ իմ սիրտը»: 8 Յովնաթանն ասաց. «Ահաւասիկ մենք ուղղուում ենք այդ մարդկանց կողմը. մագլցելով կը գնանք նրանց մօտ: 9 Եթէ մեզ ասեն. "Այնտեղ կա՛նգ առէք, մինչեւ ձեզ կանչենք", ապա տեղում կը կանգնենք եւ նրանց չենք մօտենայ: 10 Բայց եթէ ասեն. "Մօտեցէ՛ք մեզ", այն ժամանակ կ'ելնենք կը գնանք, քանզի պարզ կը լինի, որ Տէրը նրանց մեր ձեռքն է մատնել: Դա մեզ համար թող նշան լինի»:

11 Նրանք երկուսով մտան այլազգիների կիրճը: Այլազգիներն ասացին. «Ահա եբրայեցիները ելնում են իրենց ծակերից, ուր թաքնուել էին»: 12 Կիրճերի պահապաններն ասացին Յովնաթանին ու կապարճակրին. «Մօտեցէ՛ք մեզ, որ մենք ձեզ մի բան յայտնենք»: Յովնաթանն ասաց իր կապարճակրին. «Ե՛կ իմ յետեւից, քանզի Տէրը նրանց Իսրայէլի ձեռքն է մատնել»: 13 Յովնաթանը մագլցելով գնաց, կապարճակիրն էլ՝ նրա հետ: Այլազգիները յարձակուեցին Յովնաթանի վրայ, իսկ Յովնաթանը սպանեց նրանց, կապարճակիրն էլ նրա յետեւից էր հարուածում նրանց: 14 Այս առաջին կոտորածի ժամանակ Յովնաթանն ու նրա կապարճակիրը մօտաւորապէս քսան հոգու սպանեցին նետերով ու ձեռքով նետուած դաշտերի քարերով: 15 Դաշտում, բանակում ու կիրճում եղած ամբողջ ժողովրդի մէջ սոսկում ընկաւ, հարուածող գունդը զարհուրեց եւ չէր ուզում շարժուել. երկիրը դղրդաց, եւ Տիրոջ ահն ընկաւ թշնամու սիրտը:

ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

16 Սաւուղի դէտերը Բենիամինի երկրի Գաբաա քաղաքից տեսան, որ բանակը, իրեն կորցրած, այս ու այն կողմ է գնում: 17 Սաւուղն իր հետ եղած զօրքին ասաց. «Ստուգեցէ՛ք ու տեսէ՛ք, մեզանից ո՞վ է հեռացել»: Ստուգեցին եւ տեսան, որ Յովնաթանն ու նրա կապարճակիրը չկան: 18 Սաւուղն ասաց Աքիային. «Մօտեցրո՛ւ եփուդդ» (քանզի նա եփուդ էր կրում, եւ Աստծու տապանակն այդ օրը իսրայէլացիների մօտ էր): 19 Մինչ Սաւուղը քահանայի հետ էր խօսում, այլազգիների բանակում աղաղակը գնալով աւելանում էր: Սաւուղը քահանային ասաց. «Ձեռքդ յե՛տ քաշիր»: 20 Սաւուղն ու նրա հետ նաեւ ամբողջ ժողովուրդը գնացին, հասան պատերազմի դաշտը: Մարդիկ իրենց սրերն ուղղեցին իրար դէմ, եւ մեծ աղմուկ առաջացաւ: 21 Եւ այն ծառաները, որոնք առաջ իսրայէլացիների հետ էին, բայց այլազգիների հետ բանակ էին եկել, շուռ եկան եւ միացան իսրայէլացիներին՝ Սաւուղին եւ Յովնաթանին: 22 Բոլոր իսրայէլացիները, որոնք թաքնուած էին Եփրեմի լեռան վրայ, լսելով այլազգիների փախուստի մասին, խմբուեցին ու իրենք եւս նրանց դէմ պատերազմի մէջ մտան: 23 Այդ օրը Տէրը փրկեց Իսրայէլին, եւ պատերազմը հասաւ մինչեւ Բեթաւան:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԱՋԱՏՈՒՄ ԵՆ ՅՈՎՆԱԹԱՆԻՆ

24 Սաւուղի հետ եղած ամբողջ ժողովուրդը մօտաւորապէս տասը հազար էր: Պատերազմը տարածուել էր Եփրեմի լեռան բոլոր քաղաքներում: Այդ օրը Սաւուղը անգիտութեամբ նզովեց ժողովրդին՝ ասելով. «Անիծեալ լինի այն մարդը, որ մինչեւ երեկոյ, նախքան որ ես իմ թշնամիներից վրէժ լուծեմ, հաց կ'ուտի»: 25 Եւ ժողովուրդը հաց չկերաւ, թէեւ ամբողջ երկիրը ճաշ էր ուտում: 26 Այնտեղ՝ դաշտի դիմաց, անտառ կար, ուր մեղու էին պահում: Ժողովուրդը մտաւ մեղուանոցը: Մարդիկ, անցնելով, քրթմնջում էին, բայց ոչ ոք ձեռքն իր բերանը չէր տանում, քանզի ժողովուրդը վախենում էր Տիրոջը տրուած երդումից:

27 Յովնաթանը չիմանալով, թէ իր հայրը երդուել էր տուել ժողովրդին, իր ձեռքի գաւազանի ծայրը երկարեց, խրեց մեղրի խորսխի մէջ, իր ձեռքով մեղրը տարաւ բերանը, եւ նրա աչքերը

†Այլ բնագրերում՝ Բենիամինի երկրի Գաբաա քաղաքը:

‡Իսկ իր հօր համար վեր չհանեց հատուածը ոչ միայն անիմաստ է, այլեւ չկայ միւս, անգամ յունարէն բնագրերում:

§Այլ բնագրերում՝ Հեղիի:

պայծառացան: 28 Զինուորներից մէկը նրան ասաց. «Քո հայրը խստագոյնս երդուեցրեց ժողովրդին՝ ասելով. "Անիծեալ լինի այն մարդը, որ մինչեւ երեկոյ հաց կ'ուտի"»: 29 Դրա համար էլ ժողովուրդը թուլացած էր: Երբ Յովնաթանն այդ իմացաւ, ասաց. «Հայրս երկիրը կորստեան է մատնել. տեսէ՛ք, թէ ինչպէս իմ աչքերը լոյս ստացան, քանզի մի քիչ ճաշակեցի այդ մեղրից: 30 Եթէ ժողովուրդն այսօր կերած լինէր իր թշնամուց վերցրած աւարից, այլազգիներին մեծամեծ հարուածներ կը հասցնէր»:

31 Այդ օրը նա Մաքմասում կոտորեց այլազգիներին, իսկ ժողովուրդը սաստիկ յոգնել էր: 32 Մարդիկ ընկան աւարի վրայ, առան ոչխարները, արջառներն ու հորթերը, գետնի վրայ մորթեցին ու կերան արնաշաղախ միսը: 33 Սաւուղին յայտնեցին՝ ասելով, թէ՝ «Ժողովուրդը Տիրոջ դէմ մեղանչեց, քանզի արնաշաղախ միս կերաւ»: Սաւուղն ասաց. «Գեթթամից սկսած արդէն անօրէն էիք դարձել: Հիմա այստեղ մի մեծ քար բերէ՛ք գլորելով»: 34 Սաւուղն աւելացրեց. «Ժողովրդի մէջ ցրուեցէ՛ք եւ նրան ասացէ՛ք, որ ամէն մէկն իր արջառն ու ոչխարը այստեղ բերի, սրա վրայ մորթեցէ՛ք ու կերէ՛ք եւ արնաշաղախ միս ուտելով՝ Տիրոջ դէմ մեղանչած չէք լինի»: Մարդիկ այն գիշեր իրենց մօտ եղածը բերեցին եւ այնտեղ մորթեցին: 35 Սաւուղն այդտեղ Տիրոջ համար զոհասեղան չինեց: Սա առաջին զոհասեղանն էր, որ նա չինեց Տիրոջ համար:

36 Սաւուղն ասաց. «Գիշերը հետապնդենք այլազգիներին, մինչեւ լոյսը բացուելը կողոպտենք նրանց եւ նրանցից ոչ մի մարդ կենդանի չթողնենք»: Նրան ասացին. «Արա՛ այն, ինչ հաճելի է քեզ»: Քահանան ասաց. «Այստեղ մօտենանք Աստծուն»: 37 Սաւուղն Աստծուն հարցրեց. «Այլազգիներին հետապնդե՞նք, նրանց իսրայէլացիների ձեռքը կը մատնե՞ս»: 38 Տէրը այդ օրը պատասխան չտուեց նրան: Սաւուղն ասաց. «Հաւաքեցէ՛ք այստեղ բոլոր իսրայէլացիներին, որ իմանանք ու տեսնենք, թէ այսօր ո՛ւմ մեղքով է յանցանք կատարուել, քանզի Իսրայէլին փրկող Տէրը կենդանի է: 39 Եթէ մեղքը նոյնիսկ իմ որդի Յովնաթանին էլ լինի, նա մահապատժի կ'ենթարկուի»: 40 Ամբողջ ժողովրդից ոչ ոք չպատասխանեց: Այն ժամանակ նա ասաց բոլոր իսրայէլացիներին. «Դուք ծառայութիւն կատարեցէ՛ք, իսկ ես ու իմ Յովնաթան որդին էլ ծառայութիւն կը կատարենք[†]»: Ժողովուրդն ասաց Սաւուղին. «Արա՛ այն, ինչ հաճելի է քեզ»: 41 Սաւուղն ասաց. «Իսրայէլի Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ այսօր քո ծառային պատասխան չտուեցիր. եթէ անօրէնութիւնն այսօր կատարել եմ ես կամ կատարել է իմ Յովնաթան որդին, յայտնի՛ր, իսկ եթէ անօրէնութիւնը կատարուել է Իսրայէլի քո ժողովրդի մէջ, նրան քաւութի՛ւն պարգեւիր»: Վիճակ գցեցին Յովնաթանի ու Սաւուղի վրայ, եւ ժողովուրդը անպարտ դուրս ելաւ: 42 Սաւուղն ասաց. «Վիճա՛կ գցեցէք իմ ու իմ Յովնաթան որդու վրայ, եւ ում վրայ որ Տէրը վիճակ հանի, մահապատժի թող ենթարկուի»: Ժողովուրդն ասաց Սաւուղին. «Մի՛ արա այդ բանը»: Սաւուղն ստիպեց ժողովրդին, եւ նրա ու նրա որդի Յովնաթանի վրայ վիճակ գցեցին: 43 Վիճակն ընկաւ Յովնաթանի վրայ: Սաւուղն ասաց Յովնաթանին. «Ասա՛ ինձ, ի՞նչ ես արել»: Յովնաթանը պատմեց նրան՝ ասելով. «Իմ ձեռքի գաւազանի ծայրով մի քիչ մեղր կերայ եւ հիմա պիտի մեռնե՞մ[‡]»: 44 Սաւուղն ասաց նրան. «Աստուած այսպէս ու սրանից աւելին անի, եթէ դու այսօր մահապատժի չենթարկուես»: 45 Ժողովուրդն ասաց Սաւուղին. «Քաւ լիցի, այսօր մահապատժի թող չենթարկուի նա, ով Իսրայէլին այս մեծ փրկութիւնը պարգեւեց: Կենդանի է Տէրը: Նրա գլխի մէկ մազն անգամ գետին չի ընկնելու, քանի որ Աստծու ժողովուրդը գործեց այս մեղքերը»: Եւ այդ օրը ժողովուրդը Յովնաթանի համար աղօթքով դիմեց Տիրոջը, եւ նա մահապատժի չենթարկուեց: 46 Սաւուղը դադարեց այլազգիներին հետապնդելուց, եւ այլազգիներն իրենց տեղը գնացին:

[†]Այլ բնագրերում՝ Դուք մի կողմ կանգնեցէ՛ք, իսկ ես ու իմ Յովնաթան որդին միւս կողմը կանգնենք:

[‡]Այլ բնագրերում հարցական չկայ:

ՍԱՒՈՒՂԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ. ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ

47 Սաւուղն սկսեց թագաւորել, եւ նա որպէս ժառանգութիւն ստացաւ Իսրայէլը: Պատերազմեց իր շուրջը գտնուող բոլոր թշնամիների դէմ, Մովաբացիների, ամոնացիների, եդոմացիների, բեթորացիների, Սուբայի թագաւորի եւ այլազգիների դէմ: Որ կողմը որ դարձաւ, յաղթանակ տարաւ: 48 Նա մեծ քաջագործութիւններ արեց, յաղթեց ամաղէկացիներին եւ Իսրայէլը փրկեց այն ոտնակոխ անողների ձեռքից:

49 Սաւուղի որդիներն էին Յովնաթանը, Յեսսուրը եւ Մեղքիսաւէն, իսկ նրա երկու դուստրերի անուններն էին. մեծինը՝ Մերոբ, իսկ երկրորդի անունը՝ Մեղքոլ: 50 Նրա կինը Աքիմասի դուստր Աքինոամն էր: Նրա զօրավարը Ների որդի Աբեններն էր, որը Սաւուղի ազգականի որդին էր: 51 Կիսը՝ Սաւուղի հայրը, եւ Ները՝ Աբենների հայրը, Աբիէլի որդի Յամինի որդիներն էին: Նրանք բոլորը երեսունութ հոգի էին:

52 Սաւուղի ամբողջ իշխանութեան ընթացքում սաստիկ պատերազմ տեղի ունեցաւ այլազգիների դէմ, եւ Սաւուղն իր տեսած բոլոր զօրաւոր ու քաջ մարդկանց իր մօտ էր հաւաքում:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄԱՂԷԿԱՑԻՆԵՐԻ ԴԷՄ

15 Սամուէլն ասաց Սաւուղին. «Ինձ Տէրն է առաքել, որ քեզ թագաւոր օծեմ իմ ժողովրդի՝ Իսրայէլացիների վրայ: 2 Արդ, լսի՛ր Տիրոջ պատգամները: Այսպէս է ասում զօրութիւնների Տէրը. "Հիմա Իսրայէլի դէմ Ամաղէկի արածների համար վրէժ եմ լուծելու: Նա փակեց Իսրայէլացիների ճանապարհը, երբ նրանք Եգիպտոսից դուրս էին գալիս: 3 Արդ, գնա՛ եւ կոտորի՛ր ամաղէկացիներին ու յարիմացիներին եւ ոչնչացրո՛ւ այն ամէնը, ինչ նրանց է պատկանում: Նրանցից ոչ ոք չպէտք է փրկուի: Կը կոտորես նրանց ու կ'ոչնչացնես բոլորին՝ տղամարդ լինի թէ կին, երեխայ լինի թէ կաթնակեր մանուկ, արջառ ու ոչխար, ուղտ ու աւանակ"»:

4 Սաւուղը հրաման տուեց ժողովրդին եւ հաշուառում անցկացրեց Աղիմում: Զորս հարիւր հազարանոց հետեւակ զօրք կար, երեսուն հազարանոց հետեւակ զօրք էլ՝ Յուդայի երկրից: 5 Սաւուղը եկաւ մինչեւ Ամաղէկի քաղաքները եւ բանակը դարանամուտ եղաւ հեղեղատում: 6 Սաւուղն ասաց կինեցիներին. «Խո՛յս տուէք, հեռացէ՛ք ամաղէկացիներից, որ ձեզ էլ նրանց հետ չկոտորեմ, քանզի Եգիպտոսից ելնելու ժամանակ բարեացակամ էիք եղել բոլոր իսրայէլացիների հանդէպ»: 7 Կինեցիները Ամաղէկի զօրքից հեռացան: Սաւուղը Ամաղէկի զօրքին ջախջախեց Եւիլատայից մինչեւ Եգիպտոսի դիմաց գտնուող Սուր բնակավայրը: 8 Նա կենդանի բռնեց Ամաղէկի թագաւոր Ագագին, իսկ Յարիմի ամբողջ ազգատոհմը սրի քաշեցին: 9 Սաւուղը եւ ամբողջ ժողովուրդը, սակայն, կենդանի թողեցին Ագագին, խնայեցին ընտիր ոչխարների, արջառների հօտերը, պտղատու եւ խաղողի այգիները, ամէն տեսակ բարիքները, չուզեցին ոչնչացնել դրանք, իսկ ինչ որ անարժէք ու անպէտք էր, բնաջնջեցին:

ՍԱՒՈՒՂԸ ՄԵՐԺՈՒՄ Է ՏԻՐՈՋԻՑ

10 Տէրը խօսքն ուղղեց Սամուէլին՝ ասելով. «Զղջացել եմ, որ թագաւոր եմ օծել Սաւուղին, քանզի ինձնից շուռ է եկել եւ իմ խօսքերը չի պահել»: 11 Սամուէլը տրտմեց եւ ամբողջ գիշերն աղօթեց Տիրոջը: 12 Սամուէլն[†] առաւօտ կանուխ զարթնեց ու գնաց իսրայէլացիներին դիմաւորելու: Սամուէլին յայտնեցին՝ ասելով. «Սաւուղը եկել է Կարմեղոս, իր համար յուշարձան կանգնեցրել եւ մարտակառքերը յետ դարձնելով իջել է Գաղգաղա»:

13 Սամուէլը եկաւ Սաւուղի մօտ, երբ նա Տիրոջը ողջակէզներ էր մատուցում Ամաղէկից բերած աւարի լաւագոյն

[†]Եբրայերէն՝ Սաւուղն:

մսից: Երբ Սամուէլը եկաւ Սաւուղի մօտ, Սաւուղն ասաց նրան. «Ո՞վ Տիրոջ օրհնեալ, կատարեցի այն, ինչ Տէրն ասել է»: 14 Սամուէլն ասաց. «Հապա ի՞նչ է ոչխարների այս ձայնը, որ իմականջին է հասնում, եւ արջառների ձայնը, որ լսում եմ»: 15 Սաւուղն ասաց. «Ամաղէկի երկրից բերեցի, քանզի ժողովուրդը ընտիր ոչխարներն ու արջառները ողջ պահեց, որ զոհ մատուցեն քո Տէր Աստծուն, իսկ միւսները կոտորեցի»: 16 Սամուէլն ասաց Սաւուղին. «Լսի՛ր, քեզ յայտնեմ այն, ինչ այս գիշեր Տէրն ասաց ինձ»: 17 Նա ասաց նրան. «Խօսի՛ր»: Եւ Սամուէլն ասաց Սաւուղին. «Չէ՞ որ դու փոքր էիր, երբ Իսրայէլի ազգատոհմերի զօրավար դարձար, եւ Տէրը քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեց: 18 Տէրը քեզ ճանապարհ դրեց՝ ասելով. "Գնա՛ եւ ինձ դէմ մեղանչած Ամաղէկի ժողովրդին կոտորի՛ր, պատերա՛զմ մղիր, մինչեւ որ բնաջնջես նրանց": 19 Ինչո՞ւ չլսեցիր Տիրոջ ձայնը եւ աւարի վրայ ընկնելով՝ չարիք գործեցիր Տիրոջ առջեւ»: 20 Սաւուղն ասաց Սամուէլին. «Ես անսացի ժողովրդի ձայնին եւ գնացի այն ճանապարհով, որով Տէրն էր առաքել ինձ. Ամաղէկի թագաւոր Ագագին գերեցի, իսկ Ամաղէկի ժողովրդին կոտորեցի: 21 Ժողովուրդն այդ աւարից առաւ ընտիր ոչխարների հօտեր ու արջառներ, որպէսզի Գաղգաղայում մորթելով՝ Տէր Աստծու համար զոհեր մատուցեն»: 22 Սամուէլն ասաց. «Մի՞թէ Տիրոջ համար աւելի հաճելի՞ են ողջակէզներն ու զոհերը, քան Տիրոջ ձայնին անսալը: Հնազանդութիւնն աւելի լաւ է, քան ընտիր զոհը, եւ անսալն աւելի լաւ է, քան խոյերի ճարպը: 23 Կախարդութիւն անելը մեղք է, եւ կուռքերը միայն ցաւ ու տառապանք են պատճառում: Քանի որ արհամարհեցիր Տիրոջ խօսքը, Տէրն էլ քեզ պիտի մերժի իբրեւ Իսրայէլի թագաւոր»:

24 Սաւուղն ասաց Սամուէլին. «Մեղանչեցի՝ զանց անելով Տիրոջ եւ քո խօսքերը: 25 Վախեցայ ժողովրդից եւ նրա ձայնին անսացի: Արդ, ների՛ր իմ մեղքը, ինձ հետ վերադարձի՛ր, որ քո Տէր Աստծո՛ւն երկրպագեմ»: 26 Սամուէլն ասաց Սաւուղին. «Ես քեզ հետ չեմ վերադառնայ, քանզի արհամարհեցիր Տիրոջ խօսքը, եւ Տէրը քեզ մերժեց իբրեւ Իսրայէլի թագաւոր»: 27 Սամուէլը երեսը դարձրեց, որ գնայ, բայց Սաւուղը բռնեց նրա թիկնոցի ծայրից ու պատռեց այն: 28 Սամուէլն ասաց նրան. «Տէրն այսօր քո վրայից վերցրեց Իսրայէլի թագաւորութիւնը եւ այն տալու է քեզանից լաւ ընկերոջդ: 29 Իսրայէլը երկու մասի է բաժանուելու, եւ Տէրն իր խօսքից յետ չի դառնալու ու չի զղջալու, քանզի նա մարդ չէ, որ զղջայ: 30 Նա սպառնացող է»: Սաւուղն ասաց. «Մեղանչել եմ, սակայն հիմա ժողովրդի ծերերի ու իսրայէլացիների առաջ ինձ պատուի՛ր, վերադարձի՛ր ինձ հետ, եւ ես կ'երկրպագեմ քո Տէր Աստծուն»: 31 Սամուէլը Սաւուղի մօտ վերադարձաւ, եւ Սաւուղը Տիրոջը երկրպագութիւն արեց:

32 Սամուէլն ասաց. «Ինձ մօ՛տ բերէք Ամաղէկի թագաւոր Ագագին»: Ագագը դողալով մօտեցաւ եւ ասաց. «Մի՞թէ այսպէս դառն է մահը»: 33 Սամուէլն ասաց Ագագին. «Ինչպէս որ քո սուրը կանանց որդեկորոյս դարձրեց, նոյն ձեւով էլ որդեկորոյս կը լինի քո մայրը կանանց մէջ»: Սամուէլն Ագագին սպանեց Տիրոջ առջեւ Գաղգաղայում:

34 Սամուէլը գնաց Արիմաթէմ, իսկ Սաւուղը ելաւ գնաց Գաբաա, իր տունը: 35 Սամուէլը մինչեւ իր մահուան օրը այլեւս չտեսաւ Սաւուղին, քանզի Սամուէլը Սաւուղի համար սուգ էր անում: Եւ Տէրը զղջացել էր, որ Սաւուղին թագաւոր էր օծել Իսրայէլի վրայ:

ՏԷՐԸ ԴԱՒԻԹԻՆ ԸՆՏՐՈՒՄ Է ՈՐՊԷՍ ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐ

16 Տէրն ասաց Սամուէլին. «Մինչեւ ե՞րբ պէտք է սգաս Սաւուղին, ես նրան զրկել եմ Իսրայէլի վրայ թագաւորելուց: Քո եղջիւրը իւղով լցրո՛ւ, ե՛կ քեզ առաքեմ Բեթղեհէմ, Յեսսէի մօտ, քանզի նրա որդիներից մէկին եմ թագաւոր ընտրել»: 2 Սամուէլն ասաց.

«Ինչպէ՞ս երթամ: Սաւուղը կը լսի, եւ ինձ կը սպանի»: Տէրն ասաց. «Դու քեզ հետ մի երինջ վերցրո՛ւ եւ ասա՛, թէ Տիրոջը զոհելու համար եմ եկել: 3 Եւ Յեսսէին հրաւիրի՛ր զոհաբերութիւն անելու ու ինչ որ պիտի անես, ես կ'ասեմ: Դու կ'օծես նրա՛ն, որին քեզ կ'ասեմ»:

4 Սամուէլն արեց այն, ինչ Տէրն ասել էր, ու եկաւ Բեթղեհէմ: Քաղաքի ծերերը զարհուրած դիմաւորեցին նրան՝ ասելով. «Քո մուտքը թող խաղաղութեամբ լինի, ո՞վ տեսանող»: 5 Նա ասաց. «Խաղաղութեամբ է, Տիրոջը զոհաբերութիւն անելու եմ եկել: Մաքրուեցէ՛ք ու ինձ հետ ուրա՛խ եղէք այսօր»: Նա Յեսսէին ու նրա որդիներին մաքրեց եւ զոհաբերութեան հրաւիրեց նրանց: 6 Երբ նրանք մտնում էին, նա Եղիաբին տեսնելով՝ ասաց. «Իրօք, Տիրոջ օծեալն իր առջեւ է»: 7 Տէրը, սակայն, ասաց Սամուէլին. «Նրա տեսքին մի՛ նայիր եւ ոչ էլ հասակի բարձրութեանը, քանզի ես նրան չեմ ընտրել: Աստուած այնպէս չի նկատում, ինչպէս նկատում են մարդիկ. մարդիկ երեսին են նայում, իսկ Աստուած՝ սրտին»: 8 Յեսսէն կանչեց Ամինադաբին ու նրան անցկացրեց Սամուէլի առջեւից: Սամուէլն ասաց. «Տէրը սրան չի ընտրել»: 9 Յեսսէն Սամուէլի առջեւից անցկացրեց Սամայիին, եւ Սամուէլն ասաց. «Ոչ էլ սրան է ընտրել Տէրը»: 10 Յեսսէն Սամուէլի առջեւից անցկացրեց իր եօթը որդիներին էլ, բայց Սամուէլն ասաց Յեսսէին. 11 «Տէրը դրանցից որեւէ մէկին չի ընտրել»: Սամուէլը Յեսսէին ասաց. «Այսքա՞ն են քո որդիները»: Յեսսէն ասաց. «Մի փոքրիկ տղայ էլ ունեմ, որ ոչխար է արածեցնում»: Սամուէլն ասաց Յեսսէին. «Մարդ ուղարկի՛ր ու բերել տո՛ւր նրան, քանզի մենք սեղան չենք նստի, մինչեւ նա այստեղ չգայ»: 12 Յեսսէն մարդ ուղարկեց ու բերել տուեց նրան: Նա խարտեաշ էր, պիրուն աչքերով ու Տիրոջ համար† գեղանի տեսքով: 13 Տէրն ասաց Սամուէլին. «Վե՛ր կաց, օծի՛ր Դաւթին, քանզի նա լաւ է»: Սամուէլը իւղով լի եղջիւրն առաւ եւ իր եղբայրների մէջ օծեց նրան: Այդ օրուանից եւ յետոյ Տիրոջ հոգին շարժուեց Դաւթի վրայ: Սամուէլը վեր կացաւ ու գնաց Արիմաթէմ:

ԴԱՒԻԹԸ ՍԱՒՈՒՂԻ ՊԱԼԱՏՈՒՄ

14 Տիրոջ հոգին վերացաւ Սաւուղից, եւ Տիրոջ կողմից առաքուած մի չար ոգի նեղում էր նրան: 15 Ծառաներն ասացին նրան. «Ահա Տիրոջ կողմից առաքուած մի չար ոգի խեղդում է քեզ: 16 Թող քո առաջ կանգնած ծառաներդ խօսեն եւ խնդրեն մեր Տիրոջը, որ գտնեն մի մարդու, որ գիտի նուագել, եւ հէնց որ Աստծուց ուղարկուած չար ոգին քեզ վրայ հասնի, նա քնար նուագելով կ'երգի, դա քեզ հաճելի կը լինի եւ կը հանգստացնի քեզ»: 17 Սաւուղն իր ծառաներին ասաց. «Գտէ՛ք մի մարդ, որ լաւ է նուագում, եւ նրան բերէ՛ք ինձ մօտ»: 18 Ծառաներից մէկն ասաց. «Ես տեսել եմ Բեթղեհէմացի Յեսսէի տղային, որ գիտի սաղմոս ասել, շնորհալի մարդ է ու պատերազմիկ, իմաստուն ու ճարտասան, գեղեցիկ տեսքով: Եւ Տէրը նրա հետ է»: 19 Սաւուղը պատգամաւորներ ուղարկելով Յեսսէի մօտ՝ ասաց. «Ինձ մօ՛տ ուղարկիր քո որդի Դաւթին՝ քո հօտի պահապանին»: 20 Յեսսէն առաւ մի արդու հաց, մի տիկ գինի ու մի ուլ եւ իր որդի Դաւթի հետ ուղարկեց Սաւուղին: 21 Դաւիթն եկաւ Սաւուղի մօտ ու կանգնեց նրա առջեւ: Սաւուղը նրան շատ սիրեց, եւ նա նրա կապարճակիրը դարձաւ: 22 Սաւուղը Յեսսէին լուր ուղարկեց՝ ասելով. «Դաւիթը թող ինձ մօտ մնայ, քանզի իմ առաջ նա շնորհ գտաւ»: 23 Եւ երբ չար ոգին իջնում էր Սաւուղի վրայ, Դաւիթը առնում էր քնարը եւ նուագում իր ձեռքով, հանգստացնում էր Սաւուղին: Սաւուղը հանգստանում էր, եւ չար ոգին նրանից հեռանում էր:

†Եբրայերէնում պակասում է Տիրոջ համար արտայայտութիւնը:

ԴԱՒԻԹԸ ԵՒ ԳՈՂԻԱԹԸ

17 Այլազգիներն իրենց զօրքը հաւաքեցին, որ պատերազմեն: Նրանք հաւաքուեցին Հրէաստանի Սոկքով վայրում եւ բանակեցին Սոկքովի ու Ափեսդոմի Ազեկա բնակավայրի միջեւ: 2 Սաւուղն ու իսրայէլացիները նոյնպէս համախմբուեցին Հովիտներում եւ պատերազմի ճակատ կազմեցին այլազգիների դէմ: 3 Այլազգիները լերան այն կողմում էին, իսկ իսրայէլացիները լերան այս կողմում էին. նրանց միջեւ հովիտ կար: 4 Այլազգիների ճակատից գէթցի մի զօրեղ մարդ դուրս եկաւ, որի անունն էր Գողիաթ: Նրա հասակի բարձրութիւնը վեց կանգուն եւ մէկ թիզ էր, 5 գլխին սաղաւարտ կար, հագել էր պղնձից ու երկաթից լանջապանակ, մի զրահ, որի քաշը հինգ հազար սիկղ էր[†]: 6 Նրա ազդրերին պղնձէ սռնապաններ կային, իսկ թիկունքին՝ պղնձէ վահան: 7 Նրա գեղարդի բունը նման էր ոստայնանկների գլանի, իսկ նրա երկաթէ տէգը վեց հարիւր սիկղ էր կշռում[‡]: Նրա զինակիրն իր առջեւից էր ընթանում: 8 Նա եկաւ կանգնեց, ձայն տուեց իսրայէլացիների բանակին՝ ասելով. «Ինչո՞ւ էք մեր դէմ ելել պատերազմելու: Ձէ՞ որ ես այլազգի եմ, իսկ դուք՝ եբրայեցիներդ, Սաւուղի ստրուկներ: Ձեր միջից ընտրեցէ՛ք մի մարդ, որ իմ դէմ ելնի: 9 Եթէ նա կարողանայ կռուել իմ դէմ եւ ինձ սպանել, մենք ձեզ ծառայ կը լինենք, իսկ եթէ ես յաղթեմ ու սպանեմ նրան, դո՛ւք մեզ ծառայ կը լինէք ու մեզ կը ծառայէք»: 10 Այլազգին աւելացրեց. «Ահաւասիկ ես այսօր Իսրայէլի զօրքը խայտառակելու եմ: Մի մարդ տուէ՛ք, եւ ես ու նա երկուսով մենամարտենք»: 11 Երբ Սաւուղն ու բոլոր իսրայէլացիները լսեցին այլազգու խօսքերը, ահաբեկուեցին, շատ վախեցան:

ԴԱՒԻԹԸ ՍԱՒՈՒՂԻ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՈՒՄ

12[§] Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից եփրաթացի մի մարդ կար, նրա անունը Յեսսէ էր: Նա մի որդի ունէր: Յեսսէն ութ որդի ունէր: Սաւուղի օրօք նա ծերութեան հասած մարդ էր: 13 Յեսսէի երեք աւագ որդիները Սաւուղի հետ պատերազմի էին գնացել: Պատերազմի գնացած որդիների անուններն էին. անդրանիկ որդունը՝ Եղիաբ, երկրորդինը՝ Ամինադաբ եւ երրորդինը՝ Սամաա: 14 Դաւիթը կրտսերն էր, իսկ երեք աւագ որդիները գնացել էին Սաւուղի հետ: 15 Դաւիթը Սաւուղի մօտից վերադարձաւ, որ Բեթղեհէմում գտնուող իր ոչխարներն արածեցնի:

16 Այն այլազգին քառասուն օր, առաւօտ կանուխ ու երեկոյեան, գալիս արձանացած կանգնում էր իսրայէլացիների առաջ:

17 Յեսսէն ասաց իր որդի Դաւթին. Այս մէկ արդու խարկած ցորենը եւ տասը նկանակը ա՛ռ ու շտապի՛ր բանակ, տո՛ւր քո եղբայրներին: Այս տասը գլուխ պանիրը տո՛ւր հազարապետին: 18 Նաեւ իմացի՛ր, թէ եղբայրներդ ողջ-առո՞ղջ են, եւ հարցրո՛ւ, թէ որեւէ բանի պէտք ունե՞ն»: 19 Սաւուղը եւ բոլոր իսրայէլացիները Կաղնու հովտում էին հաւաքուել, որ այլազգիների դէմ պատերազմեն:

20 Դաւիթը վաղ առաւօտեան վեր կացաւ եւ ոչխարներին թողնելով հովիւներին՝ այդ բաներն առաւ ու գնաց, ինչպէս Յեսսէն էր հրամայել իրեն: Երբ հասաւ տափարակ տեղը, զօրքերն արդէն շարուել էին՝ ճակատ կազմելու եւ պատերազմի աղաղակներ էին արձակում: 21 Իսրայէլացիները եւ այլազգիները միմեանց դէմ էին կանգնել ճակատ առ ճակատ: 22 Դաւիթն իր բերածները յանձնեց բանակի մթերապահին եւ վազեց դէպի զօրքը ու հետաքրքրուեց իր եղբայրների առողջութեամբ: 23 Մինչ նա խօսում էր, այլազգիների ճակատից դուրս եկաւ յամինացի այն փղշտացին, որի անունն էր Գողիաթ: Նա գէթացի էր: Նա կրկնեց նոյն խօսքերը, եւ Դաւիթը լսեց դրանք: 24 Բոլոր իսրայէլացիներն այդ մարդուն տեսնելով՝ նրա առաջից փախան եւ սաստիկ վախեցան: 25 Իսրայէլացիներն ասացին. «Տեսա՞ք այս մարդուն, որն Իսրայէլին խայտառակելու է դուրս եկել: Ով որ սպանի նրան, արքան մեծ հարստութեամբ կը լիացնի նրան, իր աղջկան նրան կնութեան կը տայ եւ նրա հօր տունը Իսրայէլի մէջ ազատ կը դարձնի»: 26 Դաւիթն իրեն շրջապատող մարդկանց ասաց. «Ի՞նչ կ'անեն այն մարդուն, որ այլազգուն կը սպանի եւ Իսրայէլի նախատինքը կը վերացնի: Ո՞վ է այդ անթլփատ այլազգին, որը կենդանի Աստծու զօրքին վիրաւորանք է հասցնում»: 27 Եւ ժողովուրդը նոյն խօսքերը կրկնելով՝ նրան ասաց. «Այսպէս ու այսպէս կը լինի այն մարդը, որ կը սպանի նրան»:

28 Երբ նրա աւագ եղբայր Եղիաբը լսեց նրա զրոյցը այդ մարդկանց հետ, Դաւթի վրայ խիստ բարկանալով՝ ասաց. «Դու ինչո՞ւ ես եկել այստեղ, անապատում ո՞ւմ ես յանձնել այն փոքրաթիւ ոչխարները: Ես գիտեմ քո մեծամտութիւնը եւ սրտի չարութիւնը, դու պատերազմը դիտելու համար ես եկել»: 29 Դաւիթն ասաց. «Ի՞նչ եմ արել, բան էր՝ ասացինք»: 30 Եւ նրանից հեռանալով՝ նոյն հարցը տուեց, եւ մարդիկ նոյն խօսքերով պատասխան տուեցին:

31 Դաւթի խօսակցութիւնը յայտնի դարձաւ, եւ երբ այդ մասին պատմեցին Սաւուղին, նա նրան կանչել տուեց իր մօտ: 32 Դաւիթն ասաց Սաւուղին. «Գողիաթի պատճառով իմ տիրոջ սիրտը թող չկոտրուի: 33 Քո ծառան կը գնայ ու կը մենամարտի այդ այլազգու դէմ»: Սաւուղն ասաց Դաւթին. «Դուցէ չկարողանաս գնալ կռուել այլազգու դէմ, քանզի պատանի ես, իսկ նա մանկութիւնից ի վեր պատերազմող մարդ է եղել»: 34 Դաւիթն ասաց Սաւուղին. «Քո ծառան իր հօր ոչխարներն էր արածեցնում, եւ երբ առիւծ կամ արջ էր գալիս եւ հօտից ոչխար էր տանում, 35 ես նրան հետապնդում էի, զարկում եւ կորզում ոչխարը նրա երախից: Իսկ եթէ ինձ վրայ էր յարձակւում, բռնում էի նրա կոկորդից, հարուածում ու սպանում նրան: 36 Քո ծառան առիւծ էլ է սատկեցրել, արջ էլ: Նոյն կերպ կը վարուեմ ես այդ անթլփատ այլազգու հետ: Արդ, ինչո՞ւ չգնամ, չսպանեմ նրան եւ այսօր եւեթ վերացնեմ Իսրայէլի նախատինքը: Ո՞վ է այդ անթլփատը, որ կենդանի Աստծու զօրքն է նախատել»: 37 Դաւիթն ասաց. «Եթէ Տէր Աստուած ինձ փրկել է առիւծի ու արջի ճանկերից, ինձ կը փրկի նաեւ այդ անթլփատ այլազգու ձեռքից»: 38 Սաւուղն ասաց. «Գնա՛, Տէրը քեզ հետ թող լինի»: Սաւուղը Դաւթի ուսերին գցեց իր թիկնոցը, գլխին դրեց պղնձէ սաղաւարտը եւ հագցրեց իր զրահները: 39 Դաւիթը նրա սուրը կապեց թիկնոցի վրայից եւ գնալ-գալիս մէկ երկու անգամ սայթաքեց: Դաւիթը Սաւուղին ասաց. «Սրանցով չեմ կարող քայլել, որովհետեւ սովոր չեմ». եւ զրահը հանեցին նրա վրայից:

ԴԱՒԻԹԸ ՅԱՂԹՈՒՄ Է ԳՈՂԻԱԹԻՆ

40 Նա ձեռքն առաւ ցուպը եւ հեղեղատից հինգ ողորկ քարեր ընտրելով՝ դրեց իր հովուական տոպրակի մէջ, որի մէջ սովոր էր քարեր հաւաքել: Նա պարսատիկն իր ձեռքն առնելով՝ գնաց դէպի այլազգին: 41 Այլազգին նոյնպէս եկաւ ու մօտեցաւ Դաւթին: 42 Նրա վահանակիրն իր առջեւից էր գնում: Երբ այլազգին նայեց ու տեսաւ Դաւթին, արհամարհեց նրան, քանզի նա խարտեաշ ու գեղեցիկ աչքերով մի պատանեակ էր: 43 Այլազգին ասաց Դաւթին. «Ինչպէ՞ս թէ, մի՞թէ ես շուն եմ, որ ցուպով ու քարերով ես գալիս ինձ վրայ»: Դաւիթն ասաց. «Դու շնից էլ վատթար ես»: Եւ այլազգին իր աստուածներով նզովելով Դաւթին՝ ասաց նրան. 44 «Ե՛կ ինձ մօտ, եւ ես քո մարմինը կը տամ երկնքի թռչուններին ու երկրի գազաններին»: 45 Դաւիթն ասաց այլազգուն. «Դու ինձ վրայ ես յարձակւում սրով, գեղարդով եւ վահանով, իսկ ես քեզ վրայ եմ յարձակւում Իսրայէլի զօրքի զօրութիւնների Տիրոջ անունով, Իսրայէլի, որին դու այսօր նախատեցիր: 46 Տէրը քեզ այսօր իմ ձեռքը կը մատնի, ես կը սպանեմ քեզ, քո գլուխը կը կտրեմ, քո լէշն ու այլազգիների

[†]Շուրջ 60 կիլոգրամ:

[‡]Շուրջ 7 կիլոգրամ:

[§]12-31 եւ յետագայ մի քանի համարներ յունարէն բուն բնագրում չկան: Դրանք դրուած են «յաւելուած» բաժնում:

բանակի դիակները այսօր երկնքի թռչուններին ու երկրի գազաններին կը տամ: Ամբողջ երկիրը կ'իմանայ, թէ Աստուած գոյութիւն ունի Իսրայէլի մէջ, 47 այս ամբողջ բազմութիւնը կ'իմանայ, թէ Տէրը սրով ու գեղարդով չէ, որ փրկում է, քանզի սա Տիրոջ պատերազմն է, եւ Տէրը ձեզ մեր ձեռքը պիտի մատնի»:

48 Վեր կացաւ այլազգին ու եկաւ մօտեցաւ Դաւթին, իսկ Դաւիթն շտապեց եւ այլազգու դէմ ճակատելու գնաց: 49 Դաւիթը ձեռքը մտցրեց տոպրակի մէջ, այնտեղից մի քար առաւ ու այն պարսատիկով նետելով՝ հարուածեց այլազգու ճակատին: Քարը սաղաւարտը ծակելով մտաւ ճակատի մէջ, եւ Գողիաթը երեսնիվայր գետին ընկաւ: 50 Այսպիսով Դաւիթը պարսատիկով ու քարով յաղթեց այլազգուն, հարուածեց ու սպանեց նրան: 51 Դաւթի ձեռքին, սակայն, սուր չկար, ուստի Դաւիթը վազեց, կանգնեց այլազգու վրայ, բռնեց նրա սուրը, բռնելով քաշեց հանեց պատեանից, սպանեց ու գլխատեց նրան: 52 Երբ այլազգիները տեսան, թէ իրենց հզօր մարդը մեռաւ, փախան: Իսրայէլացիների ու Ցուդայի երկրի մարդիկ վեր կենալով՝ աղաղակեցին, յարձակուեցին ու հետապնդեցին նրանց մինչեւ Գէթի մուտքը եւ Ակկարոնի դարպասները: Վիրաւոր այլազգիներն ընկան ճանապարհների վրայ մինչեւ Գէթի ու Ակկարոնի դարպասները: 53 Իսրայէլացիները այլազգիներին հալածելուց յետոյ վերադարձան ու կողոպտեցին նրանց բանակատեղին: 54 Դաւիթը վերցրեց այլազգու գլուխը եւ այն բերեց Երուսաղէմ, իսկ նրա զէնքերը բերեց իր վրանը:

ԴԱՒԻԹԸ ՍԱՒՈՒՂԻ ԱՌԱՋ

55 Երբ Սաւուղը տեսաւ այլազգու դէմ յարձակուած Դաւթին, ասաց զօրքի հրամանատար Աբեննեին. «Աբեննե՛ր, ո՞ւմ որդին է այս պատանեակը»: 56 Աբեններն ասաց. «Կենդանի է քո անձը, արքա՛յ, չգիտեմ»: Արքան ասաց. «Հարցրո՛ւ եւ իմացի՛ր, թէ ո՞ւմ որդին է այդ պատանեակը»: 57 Երբ Դաւիթը վերադարձաւ այլազգուն սպանելուց յետոյ, Աբեննները նրան տարաւ Սաւուղի մօտ: Այլազգու գլուխը Դաւթի ձեռքին էր: 58 Սաւուղը հարցրեց նրան. «Ո՞ւմ որդին ես դու, պատանի՛»: Դաւիթն ասաց. «Քո ծառայ Յեսսէ Բեթղեհէմացու որդին եմ»:

18 Երբ Դաւիթը Սաւուղի հետ խօսակցութիւնը վերջացրեց, Յովնաթանը հոգով կապուեց Դաւթին: 2 Յովնաթանը նրան իր անձի պէս սիրեց: Նոյն օրը Սաւուղն իր մօտ վերցրեց նրան ու չթողեց, որ նա վերադառնայ իր հօր տունը: 3 Յովնաթանը Դաւթի հետ ուխտ դրեց, քանզի Յովնաթանը նրան իր անձի պէս էր սիրում: 4 Յովնաթանն իր թիկնոցը հանեց ու տուեց Դաւթին, նաեւ իր զինուորական համազգեստը, նոյնիսկ իր սուրը, աղեղն ու գօտին: 5 Դաւիթը գնում էր ամէն տեղ, ուր Սաւուղն ուղարկում էր նրան, եւ նա գնալով իմաստուն էր դառնում: Սաւուղը նրան պատերազմիկների առաջնորդ կարգեց, եւ նա ամբողջ ժողովրդի, ինչպէս նաեւ Սաւուղի ծառաների աչքին հաճելի դարձաւ:

ՍԱՒՈՒՂԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՍՊԱՆԵԼ ԴԱՒԹԻՆ

6 Երբ նրանք պատերազմից գալիս էին, եւ Դաւիթը այլազգուն սպանելուց յետոյ վերադառնում էր, Իսրայէլի բոլոր քաղաքներից պարողները երգերով ու պարերով դիմաւորեցին Դաւթին, թմբուկներով, ուրախութեան բացականչութիւններով ու ծնծղաներով ընդառաջ եկան Սաւուղ արքային: 7 Պարող կանայք երգելով ասում էին. «Սաւուղը հազար, իսկ Դաւիթը բազմահազար մարդկանց սպանեց»:

8 Սաւուղը զայրացաւ այդ խօսքերի համար եւ ասաց. «Բազմահազարը Դաւթին վերագրեցին, իսկ ինձ՝ հազարը: Արդ, նրան ի՞նչ է պակասում բացի թագաւորութիւնից»: 9 Այն օրից Սաւուղը ծուռ աչքով էր նայում Դաւթին:

10 Հետեւեալ օրը Աստծուց ուղարկուած չար ոգին պատեց Սաւուղին, եւ սա ցնորամիտ դարձաւ իր տան մէջ: Դաւիթն, ինչպէս միշտ, իր ձեռքով քնար էր նուագում, իսկ Սաւուղի ձեռքին գեղարդ կար: 11 Նա իր մտքում ասաց. «Գեղարդով հարուածեմ ու Դաւթին պատին գամեմ»: Սաւուղը նետեց գեղարդը, բայց Դաւիթը երկու անգամ նրանից խոյս տուեց: 12 Սաւուղը Դաւթի ներկայութիւնից վախենում էր, որովհետեւ Տէրը նրա հետ էր, իսկ Սաւուղից հեռացել էր: 13 Սաւուղը նրան հազարապետ կարգելով՝ իր մօտից հեռացրեց, եւ Դաւիթը ժողովրդի մէջ ելումուտ էր անում: 14 Դաւիթն ամէն գործում խելամիտ էր, եւ Տէրը նրա հետ էր: 15 Երբ Սաւուղը տեսաւ, որ նա չափազանց իմաստուն է, երկիւղ էր կրում նրանից: 16 Բոլոր իսրայէլացիներն ու Ցուդայի երկրի բնակիչները սիրում էին Դաւթին, քանզի նա էր նրանց մօտ ելումուտ անողը:

17 Սաւուղն ասաց Դաւթին. «Ահա իմ մեծ աղջկան՝ Մերոբին քեզ կնութեան եմ տալու, միայն թէ դու ինձ քաջաբար ծառայի՛ր ու Տիրոջ պատերազմները վարի՛ր»: Սաւուղը մտածում էր. «Թող իմ ձեռքը նրա դէմ չլինի, այլ թող այլազգիների ձեռքը նրա դէմ լինի»: 18 Դաւիթն ասաց Սաւուղին. «Ո՞վ եմ ես, ի՞նչ է իմ ապրուստը, եւ ի՞նչ է իմ հօր ազգատոհմը Իսրայէլի մէջ, որ արքային փեսայ դառնամ»: 19 Եւ այդ ժամանակ, երբ Սաւուղի դուստր Մերոբը կնութեան պիտի տրուէր Դաւթին, Մոլաթացի Եզրիէլի՛ն կնութեան տրուեց:

ԴԱՒԹՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ՍԱՒՈՒՂԻ ԱՂՋԿԱՅ ՀԵՏ

20 Սաւուղի դուստր Մեղքողը սիրեց Դաւթին, ու երբ այդ մասին յայտնեցին Սաւուղին, դա նրան հաճելի թուաց: 21 Սաւուղը մտածեց. «Նրան կնութեան տամ, որ նա նրա համար որոգայթ դառնայ»: Եւ այլազգիների ձեռքը Սաւուղի վրայ էր[†]: Սաւուղն ասաց Դաւթին. «Այսօր դու ինձ երկու աղջիկներով փեսայ դարձար»: 22 Սաւուղն իր ծառաներին պատուիրեց՝ ասելով. «Դաւթի հետ ծածուկ խօսելով՝ ասացէ՛ք. "Արքան քեզ հաւանել է, եւ նրա բոլոր մարդիկ սիրում են քեզ, ուստի փեսա՛յ դարձիր արքային"»: 23 Սաւուղի ծառաները այս խօսքերը Դաւթի ականջին հասցրին: Դաւիթն ասաց. «Ձեզ թւում է հե՞շտ բան է արքային փեսայ դառնալը: Ես մի խեղճ ու աննշան մարդ եմ»: 24 Սաւուղի ծառաները հաղորդեցին նրան Դաւթի պատասխանը: Սաւուղն ասաց. «Այսպէ՛ս ասացէք Դաւթին. 25 "Արքան գլխագին չի ուզում, այլ միայն այլազգիների հարիւր անթլփատութիւն, որպէսզի արքայի թշնամիներից վրէժ լուծի"»: Սաւուղը մտածում էր Դաւթին այլազգիների ձեռքը յանձնել: 26 Սաւուղի ծառաներն այս խօսքերը հաղորդեցին Դաւթին, ու Դաւթին հաճելի թուաց արքային փեսայ դառնալը: 27 Պայմանաւորուած ժամկէտը դեռ չէր վերջացել, որ Դաւիթն իր մարդկանցով վեր կացաւ եւ այլազգիներից հարիւր մարդ սպանեց, բերեց նրանց չթլփատուած անդամները, լցրեց արքայի առջեւ եւ արքային փեսայ դարձաւ. Սաւուղն իր դուստր Մեղքողին նրան կնութեան տուեց: 28 Սակայն երբ Սաւուղը տեսաւ ու հասկացաւ, թէ Տէրը Դաւթի հետ է, եւ ամբողջ Իսրայէլը սիրում է նրան, սկսեց առաւել եւս վախենալ Դաւթից: 29 Եւ Սաւուղը միշտ թշնամութեամբ էր վերաբերւում Դաւթին:

30 Այլազգիների իշխանները ոտքի ելան. նրանք երկար ժամանակ էին նախապատրաստւում դրան. ամէն անգամ Դաւիթն աւելի խորագէտ էր գործում, քան Սաւուղի բոլոր ծառաները, ուստի նրա անունը գնալով աւելի էր փառաւորւում:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԴԱՒԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

19 Սաւուղը խօսեց իր Յովնաթան որդու եւ իր բոլոր ծառաների հետ՝ Դաւթին սպանելու համար: 2 Սաւուղի որդի Յովնաթանը, սակայն, շատ էր սիրում Դաւթին եւ այս բանը հաղորդեց նրան՝ ասելով. «Իմ հայրը մտադիր

[†]Ելրայ ելրէ ՆՇում՝ ...այլազգիների ձեռքը նրա վրայ լինի:

է քեզ սպանել, ուստի զգո՛յշ եղիր
վաղն առաւօտեան, թաքնուի՛ր ու
նստի՛ր թաքստոցում: 3 Ես դուրս կը
գամ ու կը կանգնեմ հօրս մօտ, այն
դաշտում, ուր դու կը լինես: Ես իմ հօր
հետ կը խօսեմ քո մասին, կը տեսնեմ,
թէ ինչ կ'ասի եւ կը յայտնեմ քեզ»:
4 Եւ Յովնաթանը Դաւթի մասին
նպաստաւոր խօսքեր ասելով իր հօրը՝
Սաւուղին, աւելացրեց. «Թող արքան
իր ծառայ Դաւթի դէմ մեղք չգործի,
քանզի նա ոչ մի մեղք չի գործել քո
դէմ: Նա քո նկատմամբ բարի շատ
գործեր է կատարել: 5 Նա իր անձը
վտանգի ենթարկելով՝ սպանել է այ-
լազգուն՝ Գողիաթին, Տէրը մեծ փրկու-
թիւն է շնորհել, եւ ամբողջ Իսրայէլն
այդ տեսնելով՝ ուրախացել է: Ինչո՞ւ
Դաւթին ի զուր սպանելով անմեղ
արեան մեղքի տակ մտնես»: 6 Սա-
ւուղն անսաց Յովնաթանի խօսքին ու
երդուեց՝ ասելով. «Կենդանի է Տէրը.
նա չպիտի մեռնի»: 7 Յովնաթանը
կանչեց Դաւթին եւ հաղորդեց նրան
այս բոլոր խօսքերը: Յովնաթանը
Դաւթին տարաւ Սաւուղի մօտ, եւ նա
Դաւթին վերաբերուեց այնպէս, ինչպէս
նախկինում:

8 Դարձեալ պատերազմ եղաւ, ու
Դաւիթը դուրս եկաւ այլազգիների դէմ
պատերազմի: Նա նրանց շատ մեծ
ջարդ տուեց, եւ նրանք փախան նրա
առջեւից: 9 Տիրոջ չար ոգին իջաւ
Սաւուղի վրայ. սա, գեղարդը ձեռքին,
իր տանը նստած էր, իսկ Դաւիթը
քնար էր նուագում: 10 Սաւուղը փոր-
ձեց Դաւթին գեղարդով պատին գա-
մել, սակայն նա Սաւուղի հարուածից
խոյս տուեց. գեղարդը պատին խրուեց,
իսկ Դաւիթը փախչելով ազատուեց:

11 Այդ գիշեր Սաւուղը մարդ ու-
ղարկեց Դաւթի տունը, որ հետեւեն եւ
առաւօտեան սպանեն նրան: Դաւթի
կին Մեղքողն այդ մասին նրան յայտ-
նելով՝ ասաց. «Եթէ այս գիշեր ինքդ
քեզ չփրկես, վաղը կը մեռնես»: 12 Մեղ-
քողը Դաւթին պատուհանից իջեցրեց,
եւ սա փախչելով փրկուեց: 13 Մեղքողը
մի խրտուիլակ բերեց ու դրեց մահճի
վրայ, նաեւ այծի լեարդ ու սնարին՝
մազի կծիկ եւ ծածկոցով ծածկեց:
14 Սաւուղը մարդ ուղարկեց Դաւթին
բռնելու. եկան ասացին Սաւուղին, թէ
նա հիւանդ է: 15 Դարձեալ մարդ
ուղարկեց Դաւթի յետեւից՝ ասելով.
«Մահճով հանդերձ նրան ինձ մօտ
բերէ՛ք, որ սպանեմ»: 16 Մարդիկ եկան
եւ տեսան, որ մահճի մէջ խրտուիլակ
էր դրուած, այծի լեարդ եւ սնարին՝
մազի կծիկ: 17 Սաւուղն ասաց Մեղ-
քողին. «Ինչո՞ւ ինձ այսպէս խաբեցիր,
իմ թշնամուն բաց թողեցիր, եւ նա
փրկուեց»: Մեղքողն ասաց Սաւուղին.
«Ինքն ասաց, թէ՝ "Արձակի՛ր ինձ,
ապա թէ ոչ՝ քեզ կը սպանեմ"»:

18 Դաւիթը փախչելով փրկուեց,
եկաւ Արիմաթէմ, Սամուէլի մօտ, նրան
պատմեց ամէն ինչ, որ Սաւուղն արել
էր իր նկատմամբ: Սամուէլն ու Դա-
ւիթը գնացին ու բնակուեցին Ռամայի
Նաւաթ բնակավայրում: 19 Սաւուղին
իմաց տուեցին, թէ՝ «Ահա Դաւիթը
Ռամայի Նաւաթ բնակավայրում է»:
20 Սաւուղը մարդիկ ուղարկեց, որ
բռնեն Դաւթին, բայց երբ նրանք
տեսան մարգարէութիւն անող մար-
գարէների ժողովն ու նրանց ղեկա-
վարող Սամուէլին, Աստծու հոգին Սա-
ւուղի մարդկանց վրայ իջաւ, եւ նրանք
էլ մարգարէացան: 21 Սաւուղին պատ-
մեցին եղելութիւնը, նա այլ մարդկանց
ուղարկեց, եւ սրանք եւս մարգարէա-
ցան: Սաւուղը կրկին ուրիշ մարդկանց
ուղարկեց, սրանք էլ մարգարէացան:
22 Սաւուղը խիստ բարկացաւ, ինքը
գնաց Արիմաթէմ ու հասնելով մինչեւ
Սոկքովի մեծ ջրհորը՝ հարցրեց. «Ո՞ւր
են Սամուէլն ու Դաւիթը»: 23 Նրան
ասացին. «Ռամայի Նաւաթ բնակա-
վայրում»: Նա այնտեղից գնաց Ռա-
մայի Նաւաթ բնակավայրը, Աստծու
հոգին իջաւ նրա վրայ, եւ նա ճա-
նապարհը շարունակելով՝ մինչեւ Ռա-
մայի Նաւաթ բնակավայրը հասնելը
մարգարէութիւն էր անում: 24 Նա հա-
նեց իր զգեստները ու նրանց առջեւ
մարգարէանում էր: Ամբողջ գիշեր ու
ցերեկ նա մերկ ընկած էր գետնին:
Դրա համար են ասում, թէ՝ «Սաւո՞ւղն
էլ է մարգարէների մէջ†»:

†Գրաբար բնագրում այս նախադասութիւնը
հարցական բնոյթ չունի:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՕԳՆՈՒՄ Է ԴԱՒԹԻ ՄԵԿՆՈՒՄԻՆ

20 Դաւիթը Ռամայի Նաւաթ բնա-
կավայրից փախաւ եկաւ Յովնաթանի
մօտ ու ասաց նրան. «Ի՞նչ եմ արել,
ո՞րն է յանցանքս, ի՞նչ մեղք եմ
գործել քո հօր դէմ, որ մտադրուել է
ինձ սպանել»: 2 Յովնաթանը նրան
ասաց. «Քա՛ւ լիցի, դու չպիտի մեռնես:
Հայրս ոչ մի մեծ կամ փոքր գործ չի
բռնում առանց ինձ յայտնելու, եւ
ինչպէ՞ս կարող է հայրս այդ բանն
ինձնից թաքցնել: 3 Այդպիսի բան
չկայ»: Պատասխան տուեց Դաւիթը
Յովնաթանին՝ ասելով. «Քո հայրը լաւ
գիտի, որ ես շնորհ եմ գտել քո աչքում,
եւ դրա համար էլ կը մտածի, թէ
Յովնաթանն այդ մասին թող չիմա-
նայ, թէ չէ դժգոհ կը լինի: Բայց վկայ
է Տէրը, եւ վկայ ես դու, որ, ինչպէս
ասացի, ինձ մի քայլ է բաժանում հօրդ
նիւթած մահից»: 4 Յովնաթանն ասաց
Դաւթին. «Դու ինչ որ կը կամենաս, ես
կ'անեմ քեզ համար»: 5 Դաւիթն ասաց
Յովնաթանին. «Ահա վաղը նորալուս-
ին է, ես պէտք է արքայի հետ նստէի
հաց ուտելու, սակայն ինձ թո՛ղ, որ
մինչեւ երրորդ օրուայ երեկոն դաշտում
թաքնուեմ: 6 Եթէ հայրդ իմ մասին
հարցնի, կ'ասես, թէ՝ "Դաւիթն իր
քաղաքը՝ Բեթղեհէմ գնալու արտօնու-
թիւն խնդրեց ինձանից, քանզի այն-
տեղ ամբողջ ազգատոհմի զոհաբե-
րութեան օրն է": 7 Եթէ ասի՝ "Լաւ է",
ապա քո ծառայի համար խաղաղու-
թիւն է, իսկ եթէ խիստ պատասխան
տայ, իմացի՛ր, որ նա չար գործ է
նիւթել: 8 Դու ողորմի՛ր քո ծառային,
քանզի ինձ հետ Տիրոջն ուխտ ես դրել,
եւ եթէ քո ծառան որեւէ յանցանք
ունի, դու ինքդ սպանի՛ր ինձ. ինչո՞ւ
անպայման ինձ յանձնես քո հօր ձեռ-
քը»: 9 Յովնաթանն ասաց. «Քա՛ւ լի-
ցի: Եթէ ես իմանամ, որ հայրս քո դէմ
չարիք է նիւթել, քո քաղաքում իսկ
քեզ կը յայտնեմ»: 10 Դաւիթն ասաց
Յովնաթանին. «Ո՞վ պէտք է ինձ
յայտնի, թէ քո հայրը խստութեամբ է
պատասխանել»: 11 Յովնաթանը Դաւ-
թին ասաց. «Գնա՛ ու սպասի՛ր դաշ-
տում»: Եւ երկուսով դաշտ գնացին:
12 Յովնաթանն ասաց Դաւթին.
«Երդւում եմ Իսրայէլի Տէր Աստուծով,
որ երբ իմ հօրը երեք անգամ քննելով
տեսնեմ, թէ նա արդեօք բարի՞ է
Դաւթի նկատմամբ, թէ չար, դաշտ՝
քեզ մօտ մարդ կ'ուղարկեմ: 13 Տէրը
Յովնաթանին այսպէս եւ սրանից աւե-
լին թող անի, եթէ չբացայայտեմ հօրս
չարութիւնը քո հանդէպ եւ քեզ
չյայտնեմ: Այդ դէպքում քեզ կ'ար-
ձակեմ, որ գնաս խաղաղութեամբ, եւ
Տէրը քեզ հետ լինի, ինչպէս իմ հօր
հետ էր: 14 Իսկ եթէ ես կենդանի մնամ,
դու ինձ գթասրտութիւն ցոյց տո՛ւր.
15 եթէ մեռնեմ, քո գթասրտութիւնը իմ
տնից չկտրես յաւիտեան: Նոյնիսկ այն
ժամանակ, երբ Տէրը Դաւթի թշնա-
միներին երկրի երեսից ջնջի, 16 Յով-
նաթանի անունը համարում պէտք է
ունենայ Դաւթի տանը, եւ Տէրը
Դաւթի թշնամիներից պէտք է վրէժ
առնի»:

17 Յովնաթանը Դաւթին կրկին
երդուեցրեց իր սիրով, քանզի նրան իր
անձի պէս էր սիրում: 18 Յովնաթանը
նրան ասաց. «Վաղը նորալուսին է:
Քեզ պիտի փնտռեն: Քո տեղը դա-
տարկ տեսնելով՝ քո մասին պիտի
հարցնեն: 19 Երեք օր կը մնաս, ապա կը
գաս այն վայրը, ուր թաքնուել էիր
գործի օրը: Կը նստես Երգաբ կոչուող
քարի մօտ: 20 Ես երեք նետ կ'արձակեմ,
իբրեւ թէ նպատակակէտի վրայ, 21 ու
կ'ուղարկեմ պատանեակին՝ ասելով.
"Գնա՛ նետերը գտի՛ր": Եթէ ասեմ
պատանեակին՝ "Քեզանից այս կողմ է
նետը, այս կողմում փնտռի՛ր", կը գաս.
նշանակում է խաղաղութիւն է քեզ
համար, եւ ոչ մի վտանգ չկայ, վկայ է
Տէրը: 22 Իսկ եթէ ասեմ պատանեակին՝
"Քեզանից այն կողմ է նետը", գնա՛,
քանզի Տէրն է քեզ արձակել: 23 Իմ ու
քո ասածների համար Տէրը վկայ է իմ
ու քո միջեւ յաւիտեան»:

24 Դաւիթը թաքնուեց դաշտում:
Նորալուսին եկաւ, եւ արքան սեղեակ
մտաւ հաց ուտելու: 25 Արքան, ըստ
սովորութեան, նստեց պատի մօտ
դրուած աթոռին: Յովնաթանը վեր
կացաւ: Աբեն նները նստել էր Սաւուղի
մօտ, իսկ Դաւթի տեղը դատարկ էր:

26 Այդ օրը Սաւուղը ոչինչ չասաց,
որովհետեւ մտածեց, թէ նրան մի բան
է պատահել, երեւի մաքուր չէ կամ չի
մաքրուել: 27 Հետեւեալ օրը, նորալուսնի
երկրորդ օրն էլ Դաւիթի տեղը դա-
տարկ էր: Սաւուղն ասաց իր որդի
Յովնաթանին. «Յեսսէի որդին ինչո՞ւ
երէկ եւ այսօր սեղան նստելու չեկաւ»:
28 Յովնաթանը պատասխանեց Սա-
ւուղին. «Նա ինձնից արտօնութիւն
խնդրեց ու գնաց իր քաղաքը՝ Բեթ-
ղեհէմ: 29 Նա ասաց. "Արձակի՛ր ինձ,
քանզի այդ քաղաքում մեր ազգա-
տոհմը զոհ է մատուցելու: Եղբայրներս
ինձ կանչել են, եւ եթէ հիմա քո աչքին
շնորհ եմ գտել, գնամ տեսնեմ իմ
եղբայրներին": Այս պատճառով նա
արքայի սեղանին չի եկել»:

30 Սաւուղը բարկացաւ Յովնաթանի
վրայ եւ ասաց նրան. «Ոռնկորդի՛,
մատնի՛չ, միթէ չգիտե՞մ, որ դու դաշ-
նակից ես Յեսսէի որդուն: Դա ամօթ ու
խայտառակութիւն է քեզ համար եւ քո
մօր սեռական մերկութեան համար:
31 Ինչքան ժամանակ որ Յեսսէի որդին
կենդանի է, քո թագաւորութիւնը հաս-
տատուն չի լինի: Հիմա մա՛րդ ուղարկիր
ու պատանի Դաւիթին բերել տո՛ւր,
քանզի նա մահապարտ է»: 32 Յով-
նաթանը պատասխան տուեց իր հայր
Սաւուղին՝ ասելով. «Ինչո՞ւ պէտք է
մեռնի, ի՞նչ է արել նա»: 33 Եւ Սա-
ւուղը Յովնաթանի վրայ բարձրացրեց
գեղարդը, որ նրան սպանի: Յովնա-
թանն իմանալով, որ հայրը Դաւիթին
սպանելու չար որոշում է կայացրել,
խիստ զայրանալով՝ 34 սեղանից վեր
կացաւ եւ նորալուսնի երկրորդ օրը
հաց չկերաւ: Նա տխրեց Դաւթի համար,
քանզի հայրը Դաւթին անարգել էր:

35 Առաւօտեան Յովնաթանը դաշտ
գնաց, ինչպէս որ պայմանաւորուել
էին ինքն ու Դաւիթը: 36 Նրա հետ մի
փոքրիկ պատանի կար: Նա ասաց պա-
տանեակին. «Վազիր գտի՛ր այն նե-
տերը, որ ես պիտի արձակեմ»: Նա
նետեր արձակեց, եւ պատանին վազեց,
որ դրանք բերի: 37 Երբ պատանեակը
գնաց մինչեւ այն տեղը, ուր Յովնա-
թանը նետեր էր արձակել, 38 Յովնա-
թանը կանչեց պատանեակի յետեւից՝
ասելով. «Նետը քեզնից այն կողմ է»:
Ապա Յովնաթանը պատանեակի յետե-
ւից կանչեց. «Շտա՛պ արի, մի՛ կանգ-
նիր»: 39 Յովնաթանի պատանին նե-
տերը հաւաքեց ու բերեց իր տիրոջը:
Պատանեակը, սակայն, ոչինչ չգիտէր,
եւ միայն Յովնաթանն ու Դաւիթը գի-
տէին այդ բանը: 40 Յովնաթանն իր
գործիքները տուեց պատանեակին՝
ասելով նրան. «Գնա մտի՛ր քաղաք»:
41 Տղան գնաց, իսկ Դաւիթն երգաբ
կոչուող քարից դուրս եկաւ, իր երեսի
վրայ գետին ընկաւ եւ նրան երեք
անգամ երկրպագութիւն արեց: Նրանք
իրար համբուրեցին, եւ ամէն մէկն իր
ընկերոջ համար երկար ժամանակ լաց
եղաւ: 42 Յովնաթանն ասաց Դաւթին.
«Գնա՛ խաղաղութեամբ, ինչպէս որ
մենք Տիրոջ անուամբ երդուեցինք՝
ասելով, որ Տէրը յաւիտեան վկայ լինի
իմ ու քո միջեւ եւ իմ զաւակի ու քո
զաւակի միջեւ»: 43 Դաւիթը վեր կա-
ցաւ ու գնաց, իսկ Յովնաթանը մտաւ
քաղաք:

ԴԱՒԻԹԸ ՓԱԽՉՈՒՄ Է ՍԱՒՈՒՂԻՑ

21 Դաւիթը եկաւ Նոմբա, Աքիմելէք
քահանայի մօտ: Աքիմելէքը նրան
տեսնելով՝ զարհուրեց ու ասաց. «Ին-
չո՞ւ ես մենակ, ինչո՞ւ ոչ ոք չկայ քեզ
հետ»: 2 Դաւիթն ասաց Աքիմելէք քա-
հանային. «Արքան այսօր ինձ մի գործ
է յանձնարարել եւ ասել է ինձ. "Ոչ ոք
չիմանայ, թէ ինչու եմ քեզ ուղարկում
եւ թէ ինչ եմ պատուիրել քեզ": Ես իմ
ծառաներին յանձնարարել եմ մնալ
այն տեղում, որ կոչւում է փելմոնի
ելմոնի, այսինքն՝ Աստծու հաւատար-
մութիւն: 3 Արդ, եթէ հինգ նկանակ
ունես քո ձեռքի տակ, տո՛ւր ինձ: Կամ
էլ իմ պէտքերի համար տո՛ւր, ինչքան
որ կայ»: 4 Աստծու քահանան պա-
տասխան տալով՝ ասաց Դաւթին. «Ես
անմաքուր հաց չունեմ, ունեմ սուրբ
հաց: Եթէ քո ծառաները կանանց չեն
մերձեցել, թող ուտեն»: 5 Դաւիթը պա-
տասխանեց քահանային՝ ասելով. «Կա-
նանցից հեռու ենք մնացել երէկուանից
ու նախորդ օրուանից: Ճանապարհ
ընկնելու ժամանակ իմ ծառաները

մաքրուել են, բայց այս ճանապարհը
պիղծ է, այդ պատճառով այսօր դա
պիտի մաքրուի իմ գործով»: 6 Աքի-
մելէք քահանան տուեց նրան առա-
ջաւորութեան հաց, քանի որ այն-
տեղ սովորական հաց չկար, այլ միայն՝
առաջաւորութեան հաց, որ վերցրել
էին Տիրոջ առաջից՝ այդ օրը դրանց
փոխարէն տաք հաց դնելու համար:

7 Այն օրն այդտեղ էր գտնւում Սա-
ւուղի ծառաներից մէկը, որը Տիրոջ
առջեւ դիւահարութեամբ էր բռնուած:
Նրա անունն էր Դովեկ Ասորի: Նա
Սաւուղի ջորիներն էր արածեցնում:
8 Դաւիթն ասաց Աքիմելէքին. «Այս-
տեղ ձեռքիդ տակ գեղարդ կամ սուր
կա՞յ: Իմ սուրն ու զէնք ու զրահը
հետս չեմ վերցրել, քանի որ արքայի
գործը շտապ էր»: 9 Քահանան ասաց.
«Ահա այլազգի փղշտացի Գողիաթի
սուրը, որին սպանեցիր Եղա հովտում:
Դա շորով փաթաթուած ու դրուած է
վակասի յետեւը: Եթէ ուզում ես, վերց-
ո՛ւ, քանզի, բացի դրանից, այստեղ
ոչինչ չկայ»: Դաւիթն ասաց. «Դրա
նմանը չկայ, տո՛ւր ինձ այն»: Եւ նա
դա տուեց նրան:

10 Դաւիթն այդ օրը ելաւ ու փախաւ
Սաւուղի առաջից եւ եկաւ Գէթի ար-
քայ Անքուսի մօտ: 11 Անքուսի ծառա-
ներն ասացին նրան. «Սա Դաւիթը չէ՞,
այն երկրի թագաւորը: Սրա համար
չէ՞, որ պար բռնող կանայք երգում
էին ու ասում. "Սաւուղը հազար սպա-
նեց, իսկ Դաւիթը՝ հազարաւորներ"»:
12 Դաւիթն այս խօսքերը պահեց իր
յիշողութեան մէջ եւ սաստիկ վախեցաւ
Գէթի արքայ Անքուսից: 13 Նա իր
դէմքն այլակերպեց, այդ օրը նրանց
առջեւ խելագար ձեւացաւ: Նա նուա-
գում պարում էր քաղաքի դռների մօտ,
լորձունքները ծորեցնում իր մօրուքի
վրայ, գլուխկոնծի տալիս: 14 Անքուսն
ասաց իր ծառաներին. «Դուք տեսնում
էք, որ այս մարդը դիւահար է: 15 Ին-
չո՞ւ էք նրան ինձ մօտ բերել: Մի՞թէ
ես դիւահարներին կարօտ եմ, որ նրան
բերել էք ինձ մօտ, որպէսզի դիւահա-
րութիւն անի: Նա թող իմ տունը
չմտնի»:

ԴԱՒԻԹԸ ՋՕՐԱԳԼՈՒԽ

22 Դաւիթն այնտեղից գնաց եւ ա-
պաստանեց Օդողոմի քարայրում: Նրա
եղբայրներն ու նրա հօր ամբողջ տունը
լսեցին այդ եւ եկան այնտեղ՝ նրա
մօտ: 2 Նրա մօտ հաւաքուեցին բոլոր
տառապեալները, բոլոր պարտապան-
ներն ու դժգոհները, եւ նա նրանց
առաջնորդը դարձաւ: Նրա մօտ չորս
հարիւրի չափ մարդ հաւաքուեց:

3 Այնտեղից Դաւիթը գնաց Մովաբի
Մասեփաթ քաղաքը եւ ասաց Մովաբի
արքային. «Թող իմ հայրն ու մայրը
քեզ մօտ մնան, մինչեւ որ իմանամ, թէ
Աստուած ինձ ինչ պիտի անի»: 4 Նա
աղաչեց Մովաբի արքային, եւ նրանք
նրա մօտ բնակուեցին այնքան ժամա-
նակ, քանի դեռ Դաւիթը քարան-
ձաւում էր:

5 Գադ մարգարէն ասաց Դաւթին.
«Մի՛ մնա քարանձաւում, այլ վեր կաց
գնա՛ Յուդայի երկիրը»: Դաւիթը գնաց
եւ հաստատուեց Սարիթ քաղաքում:

ՆՈՄԲԱՅԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

6 Սաւուղն իմացաւ, որ Դաւիթն իր
մարդկանցով յայտնուել է: Սաւուղը
Ռամայի ներքին դաշտի բլրին էր
նստել: Գեղարդը նրա ձեռքին էր,
եւ բոլոր ծառաները նրա շուրջն
էին: 7 Սաւուղը խօսելով իրեն շրջա-
պատող ծառաների հետ՝ ասաց. «Լսե-
ցէ՛ք, Բենիամինի՛ որդիներ, արդեո՞ք
Յեսսէի որդին ձեզ ամենքիդ արտեր,
այգեստաններ կը տայ եւ կամ ձեզ
ամենքիդ հազարապետներ ու հարիւ-
րապետներ կը դարձնի: 8 Ինչո՞ւ
ամէնքդ իմ դէմ միաբանել էք, եւ ինձ
յայտնող չկայ, որ իմ որդին դաշինք է
կնքել Յեսսէի որդու հետ: Ձեր մէջ ինձ
համար ցաւող չկայ, որ ինձ յայտնէր,
թէ իմ որդին իմ դէմ է յարուցել իմ
ծառային որպէս թշնամի, ինչպէս
այսօր է»: 9 Պատասխան տուեց Դովեկ
Ասորին, որը Սաւուղի ջորիներն էր
արածեցնում, եւ ասաց. «Ես տեսայ
Յեսսէի որդուն, որ եկել էր Նոմբա
Աքիտոբի որդի Աքիմելէք քահանայի
մօտ: 10 Նա նրա մասին հարցրեց

Տիրոջը, նրան պաշար տուեց, ինչպէս նաեւ այլազգի Գողիաթի սուրը»:

11 Արքան մարդ ուղարկեց ու կանչել տուեց Աքիտոբի որդի Աքիմելէք քահանային ու նրա հօր բոլոր որդիներին՝ Նոմբայում գտնուող քահանաներին: Ամէնքն էլ եկան արքայի մօտ: 12 Սաուղն ասաց. «Լսի՛ր, Աքիտոբի՛ որդի»: Սա ասաց. «Լսում եմ, խօսի՛ր, տէ՛ր»: 13 Սաուղն ասաց նրան. «Ինչո՞ւ դու եւ Յեսսէի որդին միաբանել էք իմ դէմ, դու նրան հաց ու սուր ես տուել, նրա համար Աստծուն խնդրել, նրան ինձ հետ թշնամացրել, ինչպէս այսօր է»: 14 Աքիմելէքը պատասխանեց արքային՝ ասելով. «Քո ծառաների մէջ ո՞վ կայ Դաւթի պէս հաւատարիմ: Նա քո՝ արքայիդ փեսան է եւ քո բոլոր հրամանները գործադրողը, քո տան մէջ փառաւորը: 15 Մի՞թէ ես այսօր եմ սկսել նրա համար Աստծուն խնդրել: Քա՛ւ լիցի, որ արքան իր ծառայի վրայ կամ իմ հօր տան վրայ այդպիսի մեղք բարդի, քանզի քո ծառան այդ ամենից շատ կամ քիչ բան չգիտի»: 16 Սաուղ արքան ասաց. «Դու մահապատժի կ'ենթարկուես, Աքիմելէ՛ք, դու եւ քո հօր ամբողջ տունը»: 17 Արքան ասաց իրեն շրջապատող թիկնապահներին. «Գնացէ՛ք ու Տիրոջ քահանաներին սպանեցէ՛ք, քանզի նրանք հովանաւորում են Դաւթին: Նրանք գիտէին, որ նա փախչում է, բայց ինձ չյայտնեցին»: Արքայի ծառաները, սակայն, չուզեցին իրենց ձեռքը բարձրացնել ու սպանել Տիրոջ քահանաներին: 18 Արքան ասաց Դոէգին. «Դու գնա՛ ու սպանի՛ր Աստծու քահանաներին»: Դոէգ Ասորին գնաց ու կոտորեց Տիրոջ քահանաներին: Այդ օրը երեք հարիւր հինգ մարդ սպանուեց: 19 Բոլորը կտաւից պարեգօտ կրողներ էին: Քահանաների քաղաք Նոմբան սրի քաշուեց. սրախողխող եղան տղամարդ թէ կին, երեխայ թէ կաթնակեր մանուկ, արջառ թէ աւանակ եւ ոչխար:

20 Աքիտոբի որդի Աքիմելէքի մի որդին փրկուեց: Նրա անունն էր Աբիաթար: Նա փախաւ Դաւթի մօտ: 21 Աբիաթարը Դաւթին յայտնեց, որ Սաուղը կոտորել է Տիրոջ բոլոր քահանաներին: 22 Դաւիթն ասաց Աբիաթարին. «Այն օրը գիտէի, որ Դոէգ Ասորին անպայման կը յայտնի Սաուղին: Քո հօր տան բոլոր զոհուած մարդկանց համար ես եմ յանցաւոր: 23 Նստի՛ր ինձ մօտ եւ մի՛ վախեցիր, քանզի ուր որ ինձ համար տեղ փնտռեմ, քեզ համար էլ կը փնտռեմ, եւ դու ինձ մօտ ապահով կը լինես»:

ԴԱՒԻԹՆ ԱԶԱՏՈՒՄ Է ԿԷԻԼԱ ՔԱՂԱՔԸ

23 Դաւթին յայտնեցին՝ ասելով. «Այլազգիները պատերազմում են Կէիլայի դէմ եւ կողոպտում են կալերը»: 2 Դաւիթը Տիրոջը հարցրեց՝ ասելով. «Գնա՞մ ջարդեմ այդ այլազգիներին»: Տէրն ասաց Դաւթին. «Գնա՛, ջարդի՛ր այլազգիներին ու փրկի՛ր Կէիլան»: 3 Դաւթի մարդիկ ասացին նրան. «Մենք այստեղ՝ Հրէաստանի մէջ, վախենում ենք: Ի՞նչ կը լինի մեր վիճակը, եթէ գնանք Կէիլա ու այլազգիներին գերի դառնանք»: 4 Դաւիթը երկրորդ անգամ հարցրեց Տիրոջը, եւ Տէրը նրան պատասխան տուեց՝ ասելով. «Վեր կաց գնա՛ Կէիլա, քանզի ես այլազգիներին քո ձեռքն եմ մատնելու»: 5 Դաւիթն իր մարդկանցով գնաց Կէիլա եւ մարտնչեց այլազգիների դէմ, որոնք նրա առջեւից փախան: Նա նրանց մեծ հարուածներ հասցրեց, վերցրեց նրանց անասունը եւ փրկեց Կէիլայի բնակիչներին: 6 Երբ Աքիմելէքի որդի Աբիաթարը Դաւթի մօտ էր փախել եւ Դաւթի հետ էլ գալիս էր Կէիլա, իր ձեռքին ունէր պարեգօտը:

7 Երբ Սաուղին յայտնեցին, թէ Դաւիթը եկել է Կէիլա, Սաուղն ասաց. «Աստուած նրան իմ ձեռքն է մատնել, քանզի մտել ու փակուել է դռներ ու նիգեր ունեցող քաղաքում»: 8 Սաուղն ամբողջ ժողովրդին հրամայեց գնալ Կէիլա, գտնել Դաւթին ու նրա մարդկանց: 9 Դաւիթը Սաուղի մասին իմացաւ, որ նա չարութիւնից չի հրաժարուել: 10 Դաւթն ասաց Աբիաթար քահանային. «Բե՛ր Տիրոջ պարեգօտը»: Դաւիթն ասաց. «Ո՛վ Իսրայէլի Տէր Աստուած, քո ծառան լսեց, որ Սաուղն ուզում է յարձակուել Կէիլայի վրայ եւ

կործանել քաղաքն իմ պատճառով: 11 Արդեօք, ինչպէս քո ծառան լսել է, Սաուղը հիմա կ'իջնի այստեղ, կը պաշարի՞: Ցայտնի՛ր քո ծառային, Իսրայէլի Տէ՛ր Աստուած»: 12 Տէրն ասաց. «Կը պաշարի»: Դաւիթն ասաց. «Արդեօք կէիլացիներն ինձ եւ իմ մարդկանց Սաուղի ձեռքը կը մատնե՞ն»: Տէրն ասաց. «Կը մատնեն»: 13 Վեր կացան Դաւիթն ու նրա հետ եղող մարդիկ, մօտաւորապէս չորս հարիւր մարդ, ելան Կէիլայից ու գնացին ուր որ կարող էին գնալ: Երբ Սաուղին յայտնեցին, թէ Դաւիթը փախել է Կէիլայից, նա հրաժարուեց քաղաքի վրայ յարձակուելուց:

ԶԻՓ ԱՆԱՊԱՏՈՒՄ. ՅՈՎՆԱԹԱՆԻ ԱՅՑԸ ԴԱՒԹԻՆ

14 Դաւիթը բնակւում էր անապատի մէջ, Մասերեթի կիրճերում եւ մնում էր Զիփ անապատի միգապատ լերան վրայ, մթին երկրում†: Սաուղն անընդհատ նրան էր որոնում, սակայն Տէրը նրա ձեռքը չմատնեց Դաւթին: 15 Երբ Դաւիթը տեսաւ, որ Սաուղը դուրս է եկել իրեն որոնելու, մնաց անապատում, Նոր Զիփի միգապատ լերան վրայ:

16 Սաուղի որդի Յովնաթանը վեր կացաւ ու գնաց Նոր Զիփ՝ Դաւթի մօտ, եւ նրա ձեռքերը Տիրոջ կողմից զօրացան‡: 17 Յովնաթանն ասաց նրան. «Մի՛ վախեցիր, որովհետեւ իմ հայր Սաուղի ձեռքը քեզ չի գտնի, եւ դու կը թագաւորես Իսրայէլի վրայ, իսկ ես քո երկրո՛րդը կը լինեմ: 18 Իմ հայր Սաուղն էլ գիտի, որ դա այդպէս է»: Նրանք երկուսով ուխտ դրեցին Տիրոջ առջեւ: Դաւիթը մնաց Նորում, իսկ Յովնաթանը գնաց իր տունը:

19 Զիփացիներն իրենց մոայլ երկրից ելան գնացին բլուրը, Սաուղի մօտ եւ ասացին. «Չէ՞ որ Դաւիթն ահա մեզ մօտ է թաքնուած, Մասերայում, Նորի կիրճերում, Եքեղատի բլրի վրայ, Հեսեմոնի աջ կողմը: 20 Արդ, ո՛վ արքայ, քանի որ դա շատ ես ցանկանում, անպայման արի՛ մեզ մօտ, որ նրան չրջափակենք ու քո՝ արքայիդ ձեռքը յանձնենք»: 21 Սաուղն ասաց նրանց. «Օրհնեալ էք դուք Տիրոջից, քանզի ինձ ցաւակից էք: 22 Արդ, գնացէ՛ք, աւելի լա՛ւ պատրաստուեցէք, դիտեցէ՛ք ու յայտնաբերեցէ՛ք, թէ նա ուր ոտք կը դնի: Շո՛ւտ հասէք այն տեղը, որտեղ ասում էք, թէ նա գտնւում է: Զլինի, թէ նա խորամանկութիւն անի: 23 Քննեցէ՛ք ու տեսէ՛ք ամէն տեղ, ուր թաքնուած է, եւ վերադարձէ՛ք ինձ մօտ ստոյգ տեղեկութիւններով, որ ձեզ հետ գնանք: Եթէ նա այդ երկրում է, հազարաւոր յուդացիների մէջ էլ կը գտնեմ նրան»: 24 Եւ զիփացիները վեր կացան ու գնացին Սաուղի մօտից:

Դաւիթը եւ նրա մարդիկ Մաոնի անապատում էին, Հեսեմոնի աջ կողմում, դէպի արեւմուտք: 25 Սաուղն ու նրա մարդիկ գնացին Դաւթին փնտռելու: Երբ Դաւթին իմաց տուեցին, նա իջաւ ու նստեց Մաոնի անապատում, քարի վրայ: Սաուղն այդ լսելով՝ հետապնդեց Դաւթին Մաոնի անապատում: 26 Սաուղն ու իր մարդիկ գնում էին լերան այս կողմով, իսկ Դաւիթն իր մարդկանցով՝ լերան այն կողմով: Դաւիթը Սաուղից թաքուն էր գնում, սակայն Սաուղն ու իր մարդիկ Դաւթին ու նրա մարդկանց չրջապատեցին, որ բռնեն: 27 Եւ ահա մի լրաբեր եկաւ Սաուղի մօտ եւ ասաց. «Շտապ արի՛ այստեղ, որովհետեւ այլազգիները արշաւել են երկրի վրայ»: 28 Սաուղը Դաւթին հետապնդելուց դադարեց, որ գնայ այլազգիների դէմ: Այդ պատճառով այս վայրը կոչուեց Բաժանուած վէմ:

ԴԱՒԻԹԸ ԽՆԱՅՈՒՄ Է ՍԱՒՈՒՂԻ ԿԵԱՆՔԸ

24 Դաւիթը գնաց ու բնակուեց Գադդայի կիրճերում: 2 Երբ Սաուղը վերադարձաւ այլազգիներին հետապնդելուց, նրան լուր բերեցին՝ ասելով. «Ահաւասիկ Դաւիթը Գադդայի անապատում է»: 3 Իր հետ վերցնելով ամբողջ Իսրայէլից հաւաքուած երեք հազար ընտիր մարդկանց՝ Սաուղը գնաց փնտռելու Դաւթին ու նրա մարդկանց եղջերուների որսատեղիի Ելիմ կոչուող վայրի դիմաց: 4 Նա ոչ-

†Այդ լեռը գտնւում էր մթին երկրում:
‡Տէրը զօրացրեց նրա ձեռքերը:

խարների փարախների Հանդիպեց ճանապարհի վրայ, ուր մի քարայր կար: Սաւուղը մտաւ այնտեղ հանգստանալու: Դաւիթն ու նրա մարդիկ քարայրի ներքին մասում էին: 5 Նրանք Դաւթին ասացին. «Ահա այս այն օրն է, որի համար Տէրը քեզ ասել է, թէ՝ "Քո թշնամիներին քո ձեռքը պիտի մատնեմ": Նրան արա՛ այնպէս, ինչպէս հաճելի է քո աչքին»: Դաւիթը ելաւ ու Սաւուղի թիկնոցի մի ծայրը զգուշութեամբ կտրեց: 6 Դրանից յետոյ Դաւիթը խղճի խայթ զգաց, որ նրա թիկնոցի մի ծայրը կտրել է: 7 Դաւիթն իր մարդկանց ասաց. «Երդւում եմ Տիրոջ անունով, որ այդ բանը չեմ անի իմ տիրոջ՝ Տիրոջ կողմից օծեալ մարդու նկատմամբ, իմ ձեռքը չեմ բարձրացնի նրա վրայ, որովհետեւ նա Տիրոջ օծեալն է»: 8 Դաւիթն այս խօսքերով համոզեց իր մարդկանց ու թոյլ չտուեց, որ Սաւուղի վրայ յարձակուեն ու սպանեն: Սաւուղը դուրս եկաւ այդ քարայրից ու գնաց իր ճանապարհով:

9 Դաւիթը նրանից յետոյ վեր կացաւ, դուրս եկաւ քարայրից եւ աղաղակեց նրա յետեւից՝ ասելով. «Իմ տէ՛ր արքայ»: Սաւուղը յետ նայեց. Դաւիթը երեսնիվայր գետին ընկաւ ու երկրպագեց: 10 Դաւիթն ասաց Սաւուղին. «Ինչո՞ւ ես մարդկանց խօսքին հաւատում, որ ասում են, թէ՝ "Դաւիթը քեզ սպանել է ուզում": 11 Ահա այսօր քո աչքերը տեսան, որ այս քարայրի մէջ Տէրը ինչպէս էր քեզ իմ ձեռքը մատնել, բայց ես չուզեցի քեզ սպանել, խնայեցի քեզ՝ ասելով, թէ՝ "Իմ ձեռքը իմ տիրոջ վրայ չեմ բարձրացնի, որովհետեւ նա Տիրոջ օծեալն է": 12 Տե՛ս, հա՛յր իմ, ահա քո թիկնոցի մի ծայրն իմ ձեռքին է. ես կտրեցի քո հանդերձի ծայրը, բայց չսպանեցի քեզ: Իմացի՛ր ու տե՛ս այսօր, որ իմ վարմունքի մէջ չկայ չարութիւն, անօրէնութիւն ու ամբարշտութիւն, քո դէմ ոչ մի յանցանք չեմ գործել, իսկ դու ուզում ես հետապնդելով իմ կեանքը խլել: 13 Թող Տէրը դատ անի իմ ու քո միջեւ եւ իմ վրէժը քեզնից առնի, բայց իմ ձեռքը քո վրայ չի բարձրանայ: 14 Ինչպէս հին առակն է ասում՝ "Անօրէն ձեռքից է գալիս վնասը, իսկ իմ ձեռքը քո վրայ չի բարձրանայ": 15 Արդ, ո՞ւմ յետեւից ես ընկել, ո՛վ Իսրայէլի արքայ, եւ ո՞ւմ ես հալածում. սատկած շան կամ մի լուի յետեւի՞ց ես ընկել: 16 Թող Տէրը դատաւոր ու իրաւարար լինի իմ եւ քո միջեւ: Թող Տէրը տեսնի ու դատի եւ ինձ արդարութիւն անի»:

17 Երբ Դաւիթն աւարտեց Սաւուղին ուղղուած այս խօսքերը, Սաւուղն ասաց. «Այդ քո՞ ձայնն է, որդեա՛կ իմ Դաւիթ»: Եւ Սաւուղն իր ձայնը բարձրացնելով՝ լաց եղաւ: 18 Սաւուղն ասաց Դաւթին. «Դու աւելի արդար մարդ ես, քան ես, քանզի դու ինձ բարիք հատուցեցիր, իսկ ես քեզ չարիք հատուցեցի: 19 Դու այսօր ինձ պատմեցիր, որ բարիք ես արել. թէ ինչպէս Տէրն այսօր ինձ քո ձեռքն էր մատնել, իսկ դու ինձ չսպանեցիր: 20 Եթէ մէկն իր թշնամուն նեղութեան մէջ բռնելով՝ նրան ազատ է արձակում, որ բարով գնայ իր ճանապարհը, ինչպէս դու արեցիր այսօր իմ նկատմամբ, ապա Տէրը նրան բարութեամբ է հատուցում: 21 Արդ, ես գիտեմ, որ դու անպայման կը թագաւորես, եւ Իսրայէլի թագաւորութիւնը քո ձեռքում հաստատ կը մնայ: 22 Ուրեմն, երդուի՛ր ինձ Տիրոջ անունով, որ ինձնից յետոյ իմ սերունդը չես վերացնի եւ իմ անունը չես արատաւորի իմ հօր տանը»: 23 Եւ Դաւիթը երդուեց Սաւուղին: Սաւուղը գնաց իր տեղը, իսկ Դաւիթն ու իր մարդիկ եկան Մասարայի կիրճերը:

ՍԱՄՈՒԷԼԻ ՄԱՀԸ

25 Մեռաւ Սամուէլը, եւ ամբողջ Իսրայէլը հաւաքուեց ու ողբաց նրան: Նրան թաղեցին Արիմաթէմի իր տանը: Դաւիթը վեր կացաւ ու գնաց Մաոնի անապատը:

ԴԱՒԻԹՆ ՈՒ ԱԲԻԳԵԱՆ

2 Մաոնում մի մարդ կար, որի հօտերը Կարմեղոսում էին: Նա շատ հարուստ էր. ունէր երեք հազար ոչխար, հազար այծ: Իր հօտերը Կարմեղոսում

հազար այծ: Իր հօտերը Կարմեղոսում էին խուզում: 3 Նրա անունը Նաբաղ էր, իսկ կնոջ անունը՝ Աբիգեա: Կինը լի էր իմաստութեամբ եւ շատ բարեսէր էր, իսկ ամուսինը դաժան էր, չարամիտ ու շնաբարոյ:

4 Այդ օրերին Դաւիթը լսեց, թէ Նաբաղ կարմեղացին խուզում է իր հօտերը: 5 Դաւիթը տասը ծառաների ուղարկեց՝ նրանց ասելով. «Բարձրացէ՛ք Կարմեղոս, գնացէ՛ք Նաբաղի մօտ, իմ անունից նրա ողջութիւնը հարցնելուց յետոյ այսպէ՛ս ասացէք. 6 "Այս օրերին ողջ լինես դու ու քո տունը† եւ ինչ գործ որ բռնես, յաջող լինի: 7 Լսել եմ, թէ խուզում ես քո հօտերը: Քո հովիւները մեզ հետ էին այստեղ, անապատում, եւ որքան մնացել են մեզ հետ, Կարմեղոսում, նրանց արգելք չհանդիսացանք եւ ոչ մի բանին ձեռք չտուեցինք: 8 Հարցրո՛ւ քո ծառաներին, եւ նրանք կ'ասեն քեզ: Այս ծառաները թող շնորհ գտնեն քո առաջ, քանզի բարի օրում եկան. ինչ որ ձեռքիցդ կը գայ, տո՛ւր քո ծառաներին եւ քո Դաւիթ որդուն"»: 9 Դաւթի ծառաները եկան եւ այդ խօսքերը Դաւթի անունից ասացին Նաբաղին: 10 Նա ըմբոստացաւ եւ Դաւթի ծառաներին պատասխան տուեց՝ ասելով. «Ո՞վ է Դաւիթը, կամ Յեսսէի որդին ո՞վ է: Այս օրերին բազմացել են իրենց տէրերից փախած թափառական ծառաները: 11 Ուրեմն առնեմ իմ հացը, գինին եւ խուզողների համար մորթուած անասուններս ու տամ այս մարդկանց, որոնց որտեղից լինելը չգիտեմ»: 12 Դաւթի ծառաները ճանապարհից վերադարձան եկան եւ այդ խօսքերը հաղորդեցին Դաւթին: 13 Դաւիթն ասաց իր մարդկանց. «Ամէն մէկը իր սուրը թող կապի մէջքին»: Բոլորը իրենց սրերը կապեցին իրենց մէջքին: Դաւիթը նոյնպէս իր սուրը կապեց մէջքին, եւ Դաւթի յետեւից չորս հարիւր մարդ ելաւ, երկու հարիւր մարդ էլ մնաց կահ-կարասու մօտ:

14 Ծառաներից մէկը Նաբաղի կնոջը՝ Աբիգեային պատմեց՝ ասելով. «Դաւիթն անապատից պատգամաբերներ է ուղարկել մեր տիրոջը ողջունելու, իսկ նա նրանցից երես է դարձրել: 15 Այդ մարդիկ մեր նկատմամբ շատ բարեացակամ էին. որքան նրանց հետ բաց դաշտում էինք, մեզ վնաս չէին տուել, եւ մեզանից ոչ մի բան չի պակասել: 16 Ինչքան նրանց հետ էինք եւ արածեցնում էինք ոչխարները, նրանք մեզ համար պարիսպ եղան գիշեր ու ցերեկ: 17 Արդ, տե՛ս ու իմացի՛ր, թէ ինչ ես անելու, քանզի մեր տիրոջ ու նրա ամբողջ տան վրայ չարիք է հասել. նա այնպիսի դաժան մարդ է, որ նրա հետ խօսել չի լինի»:

18 Աբիգեան շտապեց, առաւ երկու հարիւր նկանակ, երկու տիկ գինի, հինգ եփած ոչխար, հինգ արդու բռված ցորեն, մէկ զամբիւղ չամիչ, երկու հարիւր շարոց չոր թուզ ու դրանք դրեց աւանակների վրայ: 19 Նա ասաց ծառաներին. «Առա՛ջ անցէք ինձնից, ես կը գամ ձեր յետեւից»: 20 Նա այդ մասին իր ամուսին Նաբաղին չյայտնեց: Երբ նա, աւանակին հեծած, լեռան ծածուկ տեղերով իջնում էր, ահա Դաւիթն ու նրա մարդիկ նրան ընդառաջ գնացին. Աբիգեան հանդիպեց նրանց: 21 Դաւիթն ասաց. «Ուրեմն ի զուր էր, որ Նաբաղի ամէն ինչը պահպանեցի այնտեղ, անապատում: Նրա ունեցածից ոչ մի բան չկորաւ, բայց նա իմ երախտիքի փոխարէն չարութիւն է հատուցում: 22 Աստուած Դաւթին այսպէս եւ այսպէս անի, եթէ մինչեւ վաղն առաւօտ Նաբաղի ամբողջ տնից պատին միզող մէկ արու թողնեմ»:

23 Երբ Աբիգեան Դաւթին տեսաւ, աւանակից շտապ իջնելով՝ Դաւթի առաջ ընկաւ, երկրպագեց նրան մինչեւ գետին եւ նրա ոտքերն ընկնելով՝ ասաց. 24 «Մեղքն ինձ վրայ լինի, տէ՛ր, բայց թող քո աղախինը խօսի քեզ հետ, եւ դու լսի՛ր քո աղախնի խօսքերը: 25 Իմ տէրը այդ դաժան Նաբաղի արարքը իր սրտին մօտ թող չընդունի, քանի որ ինչպէս իր անունն է, այնպէս էլ ինքն է: Նրա անունը Նաբաղ է, ուրեմն անզգամութիւնն իր հետ է: Եւ՝ քո աղախինը, քո ուղարկած ծառաներին չեմ տեսել: 26 Արդ, կենդանի է Տէրը, եւ կենդանի ես դու†. Տէրն է քեզ

†Խաղաղութիւն մեզ ու հօ տանը:

†Երդւում եմ Աստուծով ու հօ արեւով, որ...

արգելել անպարտ արիւն թափելը եւ այդ բանից քո ձեռքը հեռու է պահել: Քո թշնամիներն ու իմ տիրոջը չարիք կամեցողները Նաբալի պէս թող լինեն: 27 Հիմա ընդունի՛ր այս ընծան, որ քո աղախինն իր տիրոջն է բերում, այն տո՛ւր իմ տիրոջ հետ գտնուող ծառաներին: 28 Ների՛ր քո աղախնի յանցանքը, քանզի Տէրն իմ տիրոջ համար հաստատուն տուն պիտի շինի, քանի որ իմ տիրոջ պատերազմները Տէրն է վարում: Քո մէջ երբեք չարութիւն թող չլինի: 29 Եթէ որեւէ մէկը քո դէմ դուրս գայ քեզ հալածելու եւ քո կեանքն ուզենայ խլել, իմ տիրոջ հոգին թող Տէր Աստծու կենաց ծրարի մէջ ծրարուի, իսկ քո թշնամիների հոգիները որպէս պարսաքարեր թող արձակուեն: 30 Եւ երբ Տէրը իմ տիրոջ համար խոստացած այս բոլոր բարիքները կատարի եւ քեզ, ըստ իր պատգամի, Իսրայէլի վրայ առաջնորդ հաստատի, 31 իմ տիրոջ սրտում թող չլինի վատութիւն ու գայթակղութիւն, որ ի զուր արդար արիւն թափի: Թող իմ տիրոջ ձեռքը ուրիշի վրայ չբարձրանայ, եւ Տէրը թող բարին անի իմ տիրոջը, որ յիշես քո աղախնին ու բարիք գործես նրա համար»:

32 Դաւիթն ասաց Աբիգեային. «Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որ քեզ այսօր ինձ ընդառաջ ուղարկեց: 33 Օրհնեալ լինի քո խոհեմութիւնը, եւ օրհնեալ լինես դու, որ արգելք հանդիսացար ինձ այսօր, եւ ես չգնացի արիւն թափելու ու իմ ձեռքը ուրիշի վրայ բարձրացնելու: 34 Բայց կենդանի է Իսրայէլի Տէր Աստուածը†, որ այսօր ինձ արգելք հանդիսացաւ չարիք գործելու քո հանդէպ. քանզի եթէ շտապ չգայիր եւ իմ առջեւ չելնէիր, ինչպէս ասել էի, մինչեւ առաւօտ Նաբալը կը զրկուէր պատին միզողներից»: 35 Դաւիթը նրա ձեռքից առաւ այն ամէնը, ինչ բերել էր, եւ ասաց նրան. «Գնա՛ քո տունը խաղաղութեամբ: Տե՛ս, քո խօսքը լսեցի ու քո խնդրանքը կատարեցի»:

†Երդւում եմ Իսրայէլի Տէր Աստուծով:

ՆԱԲԱԼԻ ՄԱՀԸ. ԴԱՒԻԹՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ԱԲԻԳԵԱՅԻ ՀԵՏ

36 Աբիգեան գնաց Նաբալի մօտ: Նրա տանը թագաւորական խնջոյքի պէս խրախճանք էր, Նաբալը զուարթացել էր եւ շատ հարբել: Կինը մինչեւ առաւօտ նրան ոչ մի բան չպատմեց: 37 Առաւօտեան երբ Նաբալը գինուց սթափուեց, կինը այդ բաները պատմեց, Նաբալի սիրտը մահացու հարուած ստացաւ, եւ նա կարծես քար կտրեց: 38 Տասը օր անց Տէրը հարուածեց Նաբալին, եւ նա մեռաւ:

39 Երբ Դաւիթը լսեց Նաբալի մահը, ասաց. «Օրհնեալ է Տէր Աստուածը, որ Նաբալից կրած իմ նախատինքի դատաստանն ինքը տեսաւ, իր ծառային չարագործութիւնից յետ պահեց: Տէրը Նաբալի չարութիւնը նրա գլխին թափեց»: Դաւիթը մարդ ուղարկեց Աբիգեային համոզելու, որ իր կինը դառնայ: 40 Դաւթի ծառաները եկան Կարմեղոս, Աբիգեայի մօտ, խօսեցին նրա հետ՝ ասելով. «Դաւիթը մեզ ուղարկեց քեզ մօտ, որ քեզ իրեն կնութեան առնի»: 41 Նա վեր կացաւ ու գլուխը մինչեւ գետին խոնարհելով՝ ասաց. «Քո աղախինը պատրաստ է ստրկուհի լինել եւ իր տիրոջ ծառաների ոտքերը լուանալ»: 42 Աբիգեան անմիջապէս վեր կացաւ, հեծաւ աւանակը եւ իր հետ հինգ ծառայող աղջիկներ վերցնելով՝ գնաց Դաւթի ծառաների յետեւից: Եւ Աբիգեան դարձաւ Դաւթի կինը:

43 Դաւիթը Եզրայէլից Աքինովամին էլ կնութեան էր առել. այս երկուսն էլ դարձան նրա կինը, իսկ Սաւուղն իր Մեղքող դստերը, որը Դաւթի կինն էր, ռոմացի Հեմեսսայի որդի Փաղտիէլին էր կնութեան տուել:

ԴԱՒԻԹԸ ԴԱՐՁԵԱԼ ԽՆԱՅՈՒՄ Է ՍԱՒՈՒՂԻ ԿԵԱՆՔԸ

26 Զիփացիները Մռայլ լեռից գնացին դէպի բլուրը, Սաւուղի մօտ, եւ նրան ասացին. «Դաւիթը թաքնուել է մեզ մօտ, Եքեղատի բլրի վրայ, Հեսեմոնի դիմաց»: 2 Սաւուղը վեր կացաւ եւ իսրայէլացի երեք հազար ընտիր մարդկանցով իջաւ Դաւթին որոնելու Զիփ անապատում: 3 Սաւուղը բանակատեղի դրեց Եքեղատի բլրի վրայ, Հեսեմոնի դիմաց, ճանապարհի վրայ: 4 Դաւիթը նստել էր անապատում եւ երբ տեսաւ, որ Սաւուղն իր յետեւից անապատ է գալիս, լրտեսներ ուղարկեց եւ իմացաւ, որ Սաւուղը կազմ ու պատրաստ եկել է Կէիլա:

5 Դաւիթը վեր կացաւ, գաղտագողի եկաւ այն տեղը, ուր մնում էր Սաւուղը, եւ գտաւ նրա քնած տեղը: Այնտեղ էր Ների որդի Աբեննները՝ նրա զօրապետը: Սաւուղը ննջում էր գահաւորակի վրայ, իսկ նրա շուրջբոլորը նրա զօրքն էր: 6 Դաւիթը խօսելով Աքիմելէք քետացու եւ Ցովաբի եղբայր Շարուհու որդի Աբեսսայի հետ՝ ասաց. «Ո՞վ ինձ հետ բանակատեղի կը մտնի Սաւուղի մօտ»: 7 Աբեսսան ասաց. «Ե՛ս քեզ հետ կը մտնեմ»: Եւ Դաւիթն ու Աբեսսան գիշերը մտան զօրքի մէջ: Սաւուղը ննջում էր գահաւորակի վրայ, գեղարդը սնարի մօտ գետինն էր ցցուած, իսկ Աբեններն ու զինուորները նրա շուրջը ննջել էին: 8 Աբեսսան ասաց Դաւթին. «Տէրն այսօր քո թշնամուն ձեռքդ մատնեց. արդ, գեղարդով մէկ անգամից գետին գամեմ սրան եւ էլ հարուածս չկրկնեմ»: 9 Դաւիթն ասաց Աբեսսային. «Մի՛ սպանիր նրան, քանզի ո՞վ կարող է ձեռք բարձրացնել Տիրոջ օծեալի վրայ եւ թողութիւն ստանալ»: 10 Դաւիթն ասաց. «Կենդանի է Տէրը†: Միայն Տէրը կարող է պատժել նրան. կա՛մ նրա օրհասը կը գայ, ու ինքը կը մեռնի, կա՛մ թէ պատերազմի մէջ կը մտնի ու կը սպանուի: 11 Քա՛ւ լիցի, որ ես իմ ձեռքը բարձրացնեմ Տիրոջ օծեալի վրայ: Միայն թէ վերցրո՛ւ նրա սնարի մօտ դրուած այդ գեղարդն ու այդ ջրի կուժը, եւ գնանք մեզ մօտ»: 12 Դաւիթն առաւ նրա սնարի մօտ դրուած գեղարդն ու ջրի կուժը, եւ գնացին: Ոչ ոք ոչինչ չտեսաւ կամ չիմացաւ կամ չզարթնեց, քանզի թմրութիւնը Տիրոջ կողմից իջած լինելով նրանց վրայ՝ բոլորը քնի մէջ էին:

13 Դաւիթն այն կողմ անցաւ, բարձրացաւ լերան գագաթը եւ կանգնեց հեռուում. իր ու Սաւուղի զօրքի միջեւ երկար տարածութիւն կար: 14 Դաւիթը դիմեց զօրքին ու Աբեններին ասաց. «Պատասխան չե՞ս տալիս, Աբեննե՛ր»: Սա ասաց. «Ո՞վ ես դու, որ արքայի մօտ ինձ վրայ բղաւում ես»: 15 Դաւիթն ասաց Աբեններին. «Չէ՞ որ դու քաջ մարդ ես: Իսրայէլում ո՞վ կայ քեզ նման: Ինչո՞ւ քո տէր արքային չես պահպանում: Չէ՞ որ մարդ էր մտել քո տէր արքայի մօտ, որ նրան սպանէր: 16 Լաւ բան չես անում: Կենդանի է Տէրը†: Դուք՝ Տիրոջ օծեալ ձեր արքային պահպանողներդ, մահուան էք արժանի: Արդ, ո՞ւր են արքայի մօտ դրուած գեղարդն ու ջրի կուժը»: 17 Սաւուղը ճանաչեց Դաւթի ձայնը եւ ասաց. «Այդ քո՞ ձայնն է, որդեա՛կ իմ Դաւիթ»: Դաւիթն ասաց. «Քո ծառան եմ, տէ՛ր իմ արքայ»: 18 Եւ աւելացրեց. «Ինչո՞ւ է իմ տէրն ընկել իր ծառայի յետեւից: 19 Ինչո՞վ եմ մեղանչել եւ ի՞նչ վնաս եմ հասցրել: Արդ, իմ տէր արքան թող լսի իր ծառայի խօսքերը. "Եթէ Աստուած է քեզ շարժել իմ դէմ, թող քո ճենճերացող զոհը լինեմ, իսկ եթէ մարդկանց որդիներն են արել, անիծեալ լինեն նրանք Տիրոջ առջեւ, քանզի նրանք ինձ այսօր մեկուսացրել են, որ բաժին չստանամ Տիրոջ ժառանգութիւնից": 20 Նրանք ինձ ասացին. "Գնա ծառայի՛ր օտար աստուածների": Արդ, իմ արիւնը Տիրոջ առջեւ գետին թող չթափուի, քանի որ Իսրայէլի թագաւորը ելել է իմ կեանքը խլելու, ինչպէս որ ագռաւն է թեւածում լեռների վրայ»:

21 Սաւուղն ասաց. «Մեղք եմ գործել: Վերադարձի՛ր, որդեա՛կ իմ Դաւիթ: Քեզ չար բան չեմ անի այն բանի համար, որ իմ անձը քո աչքին պատուական է: Ես ամբողջ ժամանակ յիմարութիւն եմ գործել եւ շատ յանցաւոր եմ»: 22 Պատասխան տուեց Դաւիթն՝ ասելով. «Ահաւասիկ արքայի գեղարդը: Թող ծառաներից մէկը գայ եւ վերցնի սա: 23 Թող Տէրն ամէն մէկին ըստ իր արդարութեան եւ հաւատարմութեան հատուցի: Տէրն այսօր քեզ իմ ձեռքը մատնեց, բայց ես չկա-

†Երդւում եմ Տիրոջով:

†Երդւում եմ Տիրոջով:

մեցայ իմ ձեռքը բարձրացնել Տիրոջ օծեալի վրայ: 24 Եւ ահա, ինչպէս քո անձը այսօր իմ աչքին պատուական երեւաց, իմ անձն էլ Տիրոջ առջեւ այնպէս պատուական թող երեւայ, ինձ զօրացնի ու փրկի ամէն տեսակ նեղութիւնից»: 25 Սաւուղն ասաց Դաւթին. «Օրհնեալ ես դու, որդեա՛կ իմ Դաւիթ, դու յաջողութիւն ես գտնելու եւ զօրանալով զօրանալու ես»:

Դաւիթը գնաց իր ճանապարհով, իսկ Սաւուղը վերադարձաւ իր տեղը:

ԴԱՒԻԹՆ ԱՊԱՍՏԱՆՈՒՄ Է ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՄՕՏ

27 Դաւիթն իր մտքում ասաց. «Վերջապէս ես մի օր Սաւուղի ձեռքով կորչելու եմ: Այլազգիների երկիրը փախչելուց լաւ բան չկայ: Եթէ պատահի, որ Սաւուղն ինձ փնտռի Իսրայէլի բոլոր սահմաններում, դարձեալ նրա ձեռքից կ'ազատուեմ»: 2 Դաւիթը վեր կացաւ, եւ ինքն ու իր հետ եղող վեց հարիւր մարդիկ անցան գնացին Գէթի արքայ Մովաքի որդի Անքուսի մօտ: 3 Ինքը Դաւիթն ու իր մարդիկ, ամէն մէկն իր ընտանիքով, եւ Դաւիթն էլ իր երկու կանանց՝ Աքինովամ Յեզրայէլացու եւ Նաբաղ Կարմեղացու կին Աբիգեայի հետ բնակուեցին Գէթում, Անքուսի մօտ: 4 Երբ Սաւուղին տեղեկացրին, թէ Դաւիթը փախել է Գէթ, նա այլեւս չհետապնդեց նրան:

5 Դաւիթն ասաց Անքուսին. «Եթէ քո ծառան քո առաջ շնորհ է գտել, ինձ տե՛ղ տուր երկրի քաղաքներից մէկում, որ այնտեղ մնամ. ինչո՞ւ քո ծառան քեզ հետ նստի թագաւորանիստ քաղաքում»: 6 Այն ժամանակ Անքուսը նրան տուեց Սիկեղակը, եւ այդ պատճառով Սիկեղակը Հրէաստանի արքաներին է պատկանել: Այդպէս է մինչեւ օրս: 7 Դաւիթը այլազգիների երկրում բնակուեց չորս ամիս:

8 Դաւիթն ու նրա մարդիկ ելնում ու ասպատակում էին բոլոր գեսերացիների, գեզերացիների ու ամաղէկացիների վրայ, որոնք բնակւում էին Գեղամսուրի ապահով պարսպապատ քաղաքներից մինչեւ Եգիպտոս: 9 Դաւիթը հարուածեց այդ երկիրը եւ ողջ չթողեց ո՛չ տղամարդ եւ ո՛չ կին: Նա աւար էր առնում ոչխարների հօտեր, արջառներ, աւանակներ, ուղտեր եւ հագուստ-կապուստ ու վերադառնում Անքուսի մօտ: 10 Անքուսը հարցրեց Դաւթին. «Ո՞ր կողմն արշաւեցիք այսօր»: Դաւիթը պատասխանեց Անքուսին. «Հրէաստանի հարաւային կողմերը եւ Հերամլի ու Կենեզի կողմերը: 11 Տղամարդ ու կին ողջ չթողեցի, որ Գէթ բերեմ, որպէսզի, Գէթ գալով, մեր մասին լուր չբերեն, թէ՝ "Այս բոլորը Դաւիթն է արել"»: Եւ այս էր Դաւթի սովորութիւնը, քանի դեռ նա բնակւում էր այլազգիների երկրում: 12 Անքուսը Դաւթին շատ էր վստահում՝ ասելով. «Այս մարդը Իսրայէլի իր ժողովրդի մօտ իրեն վարկաբեկել է. թող ինձ մօտ մինչեւ վերջ ծառայ լինի»:

28 Այդ օրերին այլազգիներն իրենց զօրքերը հաւաքելով՝ պատերազմի ելան ընդդէմ Իսրայէլի: Անքուսն ասաց Դաւթին. «Լա՛ւ իմացիր, որ դու եւ քո մարդիկ ինձ հետ պատերազմի էք դուրս գալու»: 2 Դաւիթն ասաց Անքուսին. «Այդպէս թող լինի: Հիմա դու կ'իմանաս, թէ քո ծառան ինչ է անելու»: Անքուսն ասաց Դաւթին. «Այդպէս թող լինի, քանզի քեզ ընդմիշտ իմ թիկնապահների պետ եմ դարձնելու»:

ՍԱՒՈՒՂԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ՎՀՈՒԿԻ ՀԵՏ

3 Սամուէլը մահացել էր, նրան ողբացել էր ամբողջ Իսրայէլը ու նրան թաղել իր քաղաք Արիմաթէմում: Սաւուղը երկրից վերացրել էր ոգեհարցներին ու գուշակներին: 4 Այլազգիները հաւաքուեցին ու եկան բանակատեղի դրեցին Սոմանում: Սաւուղն էլ հաւաքեց բոլոր իսրայէլացիներին ու բանակատեղի դրեց Գեղբուէում: 5 Երբ Սաւուղը տեսաւ այլազգիների բանակը, վախեցաւ, նրա սիրտը մեծ ահ ընկաւ: 6 Սաւուղը Տիրոջը հարց տուեց, սակայն Տէրը նրան պատասխան չտուեց ո՛չ երազով, ո՛չ գուշակութեամբ, ո՛չ էլ մարգարէների միջոցով: 7 Սաւուղն ասաց իր ծառաներին. «Մի ոգեհարց

կին գտէ՛ք, որ գնամ նրա մօտ ու հարց տամ նրան»: 8 Ծառաներն ասացին նրան. «Ահա մի ոգեհարց կին կայ Այենդորում»: Սաւուղը ծպտուեց, ուրիշ զգեստներ հագաւ ու գնաց երկու մարդկանց հետ: Նրանք գիշերը հասան կնոջ մօտ: Սաւուղն ասաց նրան. «Ոգեհարցին պատշաճ դիւթութիւն արա՛ եւ կանչի՛ր նրան, ում որ քեզ կ'ասեմ»: 9 Կինն ասաց. «Դու ինքդ գիտես, թէ ինչ էր արել Սաւուղը. թէ ինչպէս ոգեհարցներին ու գուշակներին վերացրեց երկրից: 10 Արդ, ինչո՞ւ ես ինձ սպանելու համար իմ անձի դէմ որոգայթ լարում»: Սաւուղը նրան Տիրոջ անունով երդուեց՝ ասելով. «Կենդանի է Տէրը. այս բանից քեզ ոչ մի վնաս չի հասնի»: 11 Կինն ասաց. «Ո՞ւմ ոգին կանչեմ»: Նա ասաց. «Սամուէլի ոգին կանչի՛ր»:

12 Կինը տեսնելով Սամուէլին՝ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց Սաւուղին. «Ինչո՞ւ ինձ խաբեցիր, չէ՞ որ դու Հէնց Սաւուղն ես»: 13 Արքան նրան ասաց. «Մի՛ վախեցիր, ասա՛, ո՞ւմ տեսար»: Կինն ասաց նրան. «Գետնից դուրս եկող աստուածներ եմ տեսնում»: 14 Սաւուղն ասաց նրան. «Ի՞նչ նկատեցիր»: Նա ասաց. «Մի կանգնած մարդ երկրից ելնում էր, եւ նրա վրայ թիկնոց կար»: Սաւուղն իմացաւ, որ դա Սամուէլն է, եւ երեսնիվայր ընկաւ գետին ու երկրպագեց նրան: 15 Սամուէլն ասաց Սաւուղին. «Ինչո՞ւ ինձ կանչելով նեղութիւն տուեցիր ինձ»: Սաւուղն ասաց. «Սաստիկ նեղ վիճակում եմ, այլազգիներն իմ դէմ պատերազմի են ելել, Աստուած ինձնից հեռացել է, ինձ չի պատասխանում ո՛չ մարգարէների, ո՛չ էլ երազների միջոցով: Արդ, քեզ կանչեցի, որ ինձ ցոյց տաս, թէ ինչ անեմ»: 16 Սամուէլն ասաց. «Ինչո՞ւ ես ինձ հարցնում: Տէրը քեզնից հեռացաւ եւ քո ընկերոջը հետ եղաւ: 17 Տէրը քեզ հետ վարուեց այնպէս, ինչպէս իմ միջոցով յայտնել էր: Տէրը քո ձեռքից խլելու է թագաւորութիւնդ եւ տալու է քո ընկերոջը՝ Դաւթին, 18 որովհետեւ լսեցիր Տիրոջ ձայնը եւ նրա սաստիկ բարկութիւնը Ամաղէկի վրայ ի գործ չդրեցիր: 19 Այդ պատճառով էլ Տէրն այսօր քեզ հետ այդպէս է վարուում: Տէրը Իսրայէլին քեզ հետ միասին մատնելու է այլազգիների ձեռքը, վաղը դու եւ քո որդիները պիտի ընկնէք, եւ Տէրը Իսրայէլի բանակը պիտի մատնի այլազգիների ձեռքը»:

20 Սաւուղն անմիջապէս ամբողջ հասակով գետնի վրայ վայր ընկաւ, խիստ զարհուրեց Սամուէլի խօսքերից, ու իր մէջ այլեւս ուժ չմնաց, որովհետեւ մի ամբողջ օր ու գիշեր հաց չէր կերել: 21 Կինը մտաւ Սաւուղի մօտ ու տեսնելով, որ նա մեծ տագնապի մէջ է, ասաց նրան. «Ես՝ քո աղախինը, հնազանդուել եմ քեզ, կեանքս վտանգի ենթարկելով անսացել եմ խօսքերիդ: 22 Հիմա էլ դո՛ւ լսիր քո աղախնի խօսքերը: Քո առջեւ մի պատառ հաց դնեմ ու կե՛ր եւ ուժ կը ստանաս, որ քո ճանապարհը գնաս»: 23 Նա չուզեց ուտել, սակայն իր ծառաներն ու կինը ստիպեցին նրան, ու Սաւուղը տեղի տալով՝ գետնից վեր կացաւ ու նստեց աթոռին: 24 Կինը տանը կերակրուած մի հորթ ունէր, անմիջապէս մորթեց դա: Ալիւր առնելով՝ շաղեց, բաղարջ հաց եփեց եւ տուեց Սաւուղին ու նրա ծառաներին: 25 Նրանք կերան, վեր կացան ու նոյն գիշերը գնացին:

ԱՅԼԱԶԳԻՆԵՐԸ ՃԱՄՓՈՒՄ ԵՆ ԴԱՒԹԻՆ

29 Այլազգիներն իրենց բոլոր բանակները հաւաքեցին Ափեկում, իսկ իսրայէլացիները բանակ դրին Յեզրաէլի Այենդոր բնակավայրում: 2 Այլազգիների իշխանները հարիւրներով ու հազարներով էին առաջ շարժւում, իսկ Դաւիթն ու իր մարդիկ գնում էին Անքուսի յետեւից: 3 Այլազգիների իշխաններն ասացին. «Ովքե՞ր են դրանք, որ անցնում են»: Անքուսն իր նախարարներին ասաց. «Չէ՞ որ դա Իսրայէլի Սաւուղ արքայի ծառայ Դաւիթն է: Ահա երկու տարի է, որ մեզ մօտ է, եւ նրա մեր կողմն անցած օրից մինչեւ այսօր նրա մէջ ոչ մի վատ բան չեմ նկատել»: 4 Այլազգիների իշխանները խոժոռ նայելով Դաւթին՝ ասացին Անքուսին. «Յե՛տ դարձրու այդ մարդուն,

թող գնայ այնտեղ, ուր նշանակել ես նրան, մեզ հետ պատերազմի թող չգայ, մի գուցէ նա դաւաճանի մեր բանակին: Նա ինչո՞վ պիտի հաշտուի իր տիրոջ հետ, եթէ ոչ այս մարդկանց գլուխներով: 5 Սա այն Դաւիթը չէ՞, որի համար պար բռնելով երգում էին, թէ՝ "Սաւուղը հազար կոտորեց, իսկ Դաւիթը՝ բազմահազարներ"»:

6 Անքուսը կանչեց Դաւթին ու ասաց նրան. «Կենդանի է Տէրը. դու իմ աչքին չիտակ եւ բարի մարդ ես, հաճելի է ինձ հետ բանակ մտնելդ ու ելնելդ, քանզի ինձ մօտ եկած օրից դեռ մինչեւ այսօր քո մէջ չարութիւն չեմ նկատել: 7 Բայց դու իշխանների աչքին լաւ չես երեւում: Արդ, դարձի՛ր ու գնա՛ խաղաղութեամբ եւ մի՛ արա այն, ինչ իշխանների աչքին վատ է երեւում»:

8 Դաւիթն ասաց Անքուսին. «Ի՞նչ եմ արել քեզ. քեզ մօտ ապրելու օրից մինչեւ այս օրը ծառայիդ մէջ ի՞նչ վատ բան ես նկատել, ինչո՞ւ ես չեմ գնալու իմ տէր արքայի թշնամիների դէմ պատերազմելու»: 9 Պատասխան տուեց Անքուսը Դաւթին՝ ասելով. «Գիտեմ, որ դու իմ աչքին Աստծու հրեշտակի պէս բարի ես, բայց այլազգիների իշխաններն ասում են. "Թող մեզ հետ պատերազմի չգայ"»: 10 Արդ, դու եւ քո տիրոջ ծառաները, որոնք քեզ հետ են եկել, առաւօտ կանուխ վե՛ր կացէք գնացէ՛ք այնտեղ, ուր ձեզ նշանակել եմ: Ոչ մի վատ բան մի՛ մտածիր, քանզի դու ինձ համար հաճելի մարդ ես: Առաւօտ կանուխ վե՛ր կացէք ու լուսածագին գնացէ՛ք»:

11 Դաւիթն ու նրա մարդիկ առաւօտեան կանուխ վեր կացան, որ գնան, այլազգիների երկիրը պահպանեն, իսկ այլազգիները դուրս եկան պատերազմելու Իսրայէլի դէմ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄԱՂԷԿԱՑԻՆԵՐԻ ԴԷՄ

30 Երբ Դաւիթն ու նրա մարդիկ երրորդ օրը մտան Սիկեղակ, ամաղէկացիներն ասպատակել էին հարաւակողմը եւ Սիկեղակը: Նրանք հարուածել էին Սիկեղակին ու հրի մատնել, գերեվարել էին կանանց եւ երկրում գտնուող բոլոր մարդկանց՝ փոքրից մինչեւ մեծը: 2 Թշնամին չէր սպանել տղամարդկանց եւ կանանց, այլ գերել էր ու գնացել իր ճանապարհով: 3 Դաւիթն ու իր մարդիկ երբ մտան քաղաք, տեսան, որ այն հրկիզուած է, իսկ իրենց կանայք, տղաներն ու աղջիկները՝ գերուած: 4 Դաւիթը եւ իր մարդիկ իրենց ձայնը բարձրացրին ու լաց եղան այնքան, որ նրանց վրայ լալու ուժ այլեւս չմնաց: 5 Գերուել էին նաեւ Դաւթի երկու կանայք՝ Աքինոամ Յեզրայելացին ու Կարմեղացի Նաբալի կինը՝ Աբիգեան: 6 Դաւիթը մեծ տագնապի մէջ էր. ժողովուրդն ուզում էր նրան քարկոծել, որովհետեւ ամէն մէկի սիրտը կսկծում էր իր տղաների ու աղջիկների համար: 7 Դաւիթն ասաց Աբիմելէքի որդի Աբիաթար քահանային. «Մօտեցրո՛ւ պարեգօտդ»: Աբիաթարը մօտեցրեց պարեգօտը Դաւթին: 8 Դաւիթը հարցրեց Տիրոջը եւ ասաց. «Հետապնդե՞մ այդ ելուզակներին, կը հասնե՞մ նրանց»: Տէրն ասաց. «Հետապնդի՛ր եւ անպայման կը հասնես ու բոլոր գերիներին կը փրկես»:

9 Դաւիթն իր հետ վերցնելով վեց† հարիւր մարդ՝ եկաւ մինչեւ Բոսորի հեղեղատը, իսկ ուժասպառ եղածները մնացին տեղում: 10 Դաւիթն այդ չորս հարիւր մարդկանցով հետապնդեց թշնամուն, իսկ երկու հարիւր մարդ էլ մնաց նստած Բոսորի հեղեղատի այն կողմը: 11 Նրանք դաշտում մի եգիպտացու գտան, բռնեցին ու բերեցին դաշտ, Դաւթի մօտ: Նրան հաց տուեցին, ու նա կերաւ, ջուր խմեցրին, տուին նրան մի կտոր չոր թուզ, երկու ողկոյզ չամիչ: 12 Նա կերաւ եւ ուժ առաւ, քանզի երեք օր ու երեք գիշեր ո՛չ հաց էր կերել, ո՛չ ջուր խմել: 13 Դաւիթը ասաց. «Դու ո՞ւմ մարդն ես, որտեղի՞ց ես»: Պատանեակն ասաց. «Ես եգիպտացի եմ, մի ամաղէկացու ծառայ: Տէրս ինձ լքեց, քանզի երրորդ օրն է, որ հիւանդ եմ: 14 Մենք ասպատակեցինք Քերեթի հարաւային կողմերը, Հրէաստանի կողմերը եւ Քաղէբի հարաւակողմը, իսկ Սիկեղակը հրի մատնեցինք»: 15 Դաւիթն ասաց նրան. «Ինձ այդ ելուզակների մօտ կ'առաջնորդե՞ս»: Եգիպտացին ասաց նրան. «Երդուի՛ր, որ ինձ չես սպանի, չես յանձնի իմ տիրոջ ձեռքը, եւ ես քեզ ելուզակների մօտ կ'առաջնորդեմ»: Նա երդուեց նրան:

16 Եգիպտացին նրան այնտեղ տարաւ, եւ Դաւիթը տեսաւ, որ նրանք ցրուած էին ամբողջ դաշտում, ուտում ու խմում էին եւ այլազգիների ու Յուդայի երկրից վերցրած մեծամեծ աւարով ուրախութիւն անում: 17 Դաւիթը նրանց վրայ յարձակուեց եւ Արուսեակի երեւալուց մինչեւ երեկոյ ու միւս օրը կոտորեց նրանց այնպէս, որ ոչ մի տղամարդ չփրկուեց: Միայն չորս հարիւր երիտասարդներ, ուղտերը հեծած, փախան:

18 Դաւիթն ազատեց այն բոլորին, որոնց գերեվարել էին ամաղէկացիները: Նա փրկեց նաեւ իր երկու կանանց: 19 Նրանց ունեցածից ոչ մի բան չէր պակասել. փոքրից մինչեւ մեծը, տղաներին եւ աղջիկներին եւ այն ամէնը, ինչ առել էին նրանցից, Դաւիթը յետ բերեց: 20 Դաւիթն առաւ բոլոր հօտերն ու արջառները եւ տարաւ աւարի առջեւից: Աւարի համար ասում էին. «Սա Դաւթի աւարն է»:

21 Դաւիթը եկաւ ուժասպառ եղած երկու հարիւր զինուորների մօտ, որոնք չէին կարողացել Դաւթի յետեւից գնալ եւ մնացել էին Բոսորի հեղեղատում: Նրանք ընդառաջ գնացին Դաւթին ու նրա հետ եղած զօրքին: Դաւիթը մօտեցաւ այդ երկու հարիւր զինուորներին, հարցուփորձ արեց նրանց առողջութեան մասին: 22 Դաւթի հետ պատերազմի գնացած դաժան ու անզգամ մարդիկ ասացին. «Քանի որ սրանք մեզ հետ չեկան, ուստի մենք էլ մեր փրկած աւարից նրանց բաժին չենք հանի: Միայն ամէն մէկը թող առնի իր կնոջն ու որդիներին եւ գնայ, հեռանայ»: 23 Դաւիթն ասաց. «Եթէ Տէրը թշնամուն յանձնել է մեր ձեռքը եւ մեզ պահել է, ուրեմն այդ բանը մի՛ արէք, եղբայրնե՛ր: Չէ՞ որ Տէրը մեր ձեռքն է մատնել մեզ վրայ յարձակուած ելուզակներին: 24 Ո՞վ կը լսի ձեր խօսքերը, չէ՞ որ նրանք ձեզնից թոյլ չեն: Պահապանների բաժինը հաւասար պէտք է լինի պատերազմի գնացողների բաժնին: 25 Աւարը հաւասարապէս պէտք է բաժանուի»: Եւ այդ օրուանից մինչեւ այսօր դա իբրեւ օրէնք ու իրաւունք կիրառւում է Իսրայէլի մէջ:

26 Դաւիթը եկաւ Սիկեղակ եւ աւարից ուղարկեց Յուդայի երկրի ծերերին ու իր ընկերներին՝ ասելով. 27 «Ահա ձեզ Տիրոջ թշնամիների աւարից բաժին եմ հանում, ո՛վ Բեթէլի ու հարաւային Ռամաթի, 28 Եթերի ու Արոյերի, Եփթամոթի, Եսթամայի, 29 Երաքէլի եւ յերեմելացիների ու կինեցիների քաղաքների, Ռամայի, 30 Բորասանի ու Աթաքի, Քեբրոնի ու բոլոր այն վայրերի բնակիչներ, 31 ուր Դաւիթն ու իր մարդիկ արշաւել են»:

ՍԱՒՈՒՂԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՀԸ

31 Այլազգիները պատերազմ մղեցին Իսրայէլի դէմ, եւ իսրայէլացիները այլազգիների առաջ փախուստի դիմելով՝ վիրաւոր ընկան Գեղբուա լերան վրայ: 2 Այլազգիները հետապնդելով Սաւուղին ու նրա որդիներին՝ սպանեցին Սաւուղի որդիներին՝ Յովնաթանին, Ամինադաբին ու Մեղքիսաւէին: 3 Պատերազմը Սաւուղի դէմ սաստկացաւ, կորովի աղեղնաւորները գտան նրան, եւ նա վիրաւորուեց կողոսկրից ներքեւ: 4 Սաւուղն ասաց իր կապարճակրին. «Սուրդ մերկացրո՛ւ եւ դրանով ինձ մահացու խոցի՛ր: Չլինի, թէ անթլփատները գան, ինձ խոցոտեն ու ծաղր ու ծանակի ենթարկեն»: Կապարճակիրը չուզեց այդ անել, քանզի սաստիկ վախեցել էր: 5 Սաւուղն առաւ իր սուրը եւ իրեն նետեց դրա վրայ: Երբ կապարճակիրը տեսաւ, թէ Սաւուղը մեռաւ, ինքը եւս իրեն նետեց սրի վրայ ու նրա հետ մեռաւ: 6 Մեռան Սաւուղը, իր երեք որդիներն ու իր կապարճակիրը. նրա բոլոր մարդիկ նոյն օրը միասին մեռան:

7 Երբ հովտի այն կողմում ու Յորդանան գետի այն կողմում գտնուող իսրայէլացիները տեսան, թէ իսրայէ-

†Գրաբար բնագրում՝ չորս: Ուղղումն ըստ Լ գլխի 10-րդ համարի:

լացիները փախան, եւ թէ մեռան Սաուղն ու իր որդիները, թողեցին իրենց քաղաքներն ու փախուստի դիմեցին: Այլազգիները եկան ու բնակուեցին դրանց մէջ:

8 Հետեւեալ օրը այլազգիները եկան դիակները կողոպտելու: Նրանք գտան Գեղբուա լերան վրայ ընկած Սաուղին ու նրա երեք որդիներին: 9 Նրան շուռ տուեցին, վերցրին զէնքերը եւ կտրեցին գլուխը: Նրանք աւետաբերներ ուղարկեցին այլազգիների երկրի չորս կողմը՝ յայտնելու այս մասին իրենց կռատներին ու ժողովրդին: 10 Սաուղի զէնքերը դրեցին Աստարտիոնի տանը եւ սպանուածների մարմինները կախեցին Բեթսանի պարսպից:

11 Երբ գաղաադացիների Յաբէս բնակավայրի բնակիչները լսեցին այն մասին, թէ ինչ էին արել այլազգիները Սաուղին, 12 բոլոր զօրեղ մարդիկ վեր կացան, ամբողջ գիշեր գնացին, Բեթսանի պարսպից վերցրին Սաուղի ու նրա որդի Յովնաթանի մարմինները, Յաբէս բերեցին դրանք եւ այնտեղ այրեցին: 13 Այնուհետեւ նրանց ոսկորներն առնելով՝ թաղեցին Յաբէսի դաշտում եւ եօթը օր ծոմ պահեցին:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Բ

Ներածութիւն

Սկզբնապէս այս գիրքը եւ սրա նախորդը կազմում էին մէկ աշխատութիւն, որը ծանօթ էր նրանում յիշատակուած առաջին կարեւոր անձնաւորութեան՝ Սամուէլ մարգարէի անունով: Ներկայումս, երբ այն երկու գրքի է բաժանուած, երկրորդ գրքում պատմւում են Դաւթի՝ ամբողջ Իսրայէլի առաջին եւ ամենամեծ թագաւորի իշխանութեան ժամանակաշրջանի իրադարձութիւնները:

Գիրքը բացւում է մի յուզիչ ողբով, որ Դաւիթն արտասանում է, երբ լսում է Սաուղի եւ նրա որդի Յովնաթանի մահուան լուրը: Այնուհետեւ նկարագրւում է, թէ ինչպէս Դաւիթը դառնում է Յուդայի ցեղի թագաւոր: Սաուղի որդիներից մէկը՝ Իշբաղը, մի կարճ ժամանակաշրջան իշխելով Հիւսիսի ցեղերի վրայ, մահանում է: Նրա մահից յետոյ այդ ցեղերը, միանալով Դաւթին, նրան թագաւոր են ընտրում: Այդպիսով, Դաւիթը թագաւորում է ամբողջ տասներկու ցեղերի վրայ:

Դաւթի կերպարը ներկայացուած է առանց գունազարդման, այնպէս, ինչպէս նա եղել է իրականում: Սամուէլի այս երկրորդ գիրքը մեզ ցոյց է տալիս նրա մեծութիւնն ու հզօրութիւնը, բայց չի թաքցնում նաեւ նրա թուլութիւններն ու լռութեամբ չի անցնում այն ողբերգական իրադարձութիւնների վրայից, որոնք մթագնել են նրա ընտանեկան կեանքը: Այսպիսով, Դաւիթը մեզ ներկայանում է շատ մարդկային կերպարանքով. գրքում վեր է հանուած ճշմարիտ մեծութիւնը մի մարդու, որ գիտի ընդունել իր սխալները եւ դրանց համար ներողութիւն խնդրել Աստծուց:

Յետագայում, յատկապէս բռնութեան ժամանակներում, Դաւիթը Իսրայէլի համար դառնում է փրկարար թագաւորի հազուագիւտ օրինակ, որ Աստուած խոստացել էր ուղարկել իր ժողովրդին:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Բ

ԴԱՒԻԹՆ ԻՄԱՆՈՒՄ Է ՍԱՒՈՒՂԻ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

1 Սաւուղի մահուանից եւ ամաղէկացիներին կոտորելուց յետոյ Դաւիթը վերադարձաւ եւ երկու օր մնաց Սիկեղակում: 2 Երրորդ օրը Սաւուղի բանակատեղիից մարդ եկաւ, որի հագուստները պատառոտուած էին, իսկ գլխին հող էր ածուած: Երբ նա Դաւթի մօտ մտաւ, գետին ընկաւ ու խոնարհուեց նրա առաջ: 3 Դաւիթը հարցրեց նրան. «Որտեղի՞ց ես գալիս»: Նա պատասխանեց. «Փախել եմ Իսրայէլի բանակատեղիից»: 4 Դաւիթն ասաց նրան. «Ի՞նչ է պատահել, պատմի՛ր ինձ»: Մարդն ասաց. «Ժողովուրդը պատերազմի դաշտից փախաւ, շատերը վիրաւոր ընկան ու մեռան: Մեռան նաեւ Սաւուղն ու Յովնաթանը»: 5 Դաւիթն իրեն լուր բերող երիտասարդին հարցրեց. «Ի՞նչ գիտես, որ Սաւուղն ու նրա որդի Յովնաթանը մեռան»: 6 Լուր բերող երիտասարդն ասաց. «Դիպուածով Գեղբուա լերան վրայ էի գտնուում եւ ահա տեսայ, որ Սաւուղն ընկել էր իր նիզակի վրայ, եւ թշնամու մարտակառքերն ու հեծեալների զօրավարները հասել էին նրան: Նա յետ նայեց եւ ինձ տեսնելով՝ իր մօտ կանչեց: 7 Ասացի. "Ահա այստեղ եմ": 8 Նա ասաց ինձ. "Ո՞վ ես դու": Ասացի՝ "Ամաղէկացի եմ": 9 Նա ասաց ինձ. "Խոցի՛ր ու սպանի՛ր ինձ: Խաւարն է պատել ինձ, բայց չունչս դեռ վրաս է": 10 Խոցեցի ու սպանեցի նրան, որովհետեւ գիտէի, որ նիզակի վրայ ընկնելուց յետոյ չէր ապրելու: Առայ նրա գլխից թագը, ապարանջանները՝ նրա բազկից եւ դրանք բերեցի այստեղ՝ իմ տիրոջը»: 11 Դաւիթն իր հագուստները բռնելով՝ պատառոտեց: Իրենց հագուստները պատառոտեցին նաեւ նրա մօտ գտնուող մարդիկ: 12 Նրանք ողբացին, լաց եղան ու մինչեւ երեկոյ ծոմ պահեցին սրով ընկած Սաւուղի, նրա որդի Յովնաթանի, Յուդայի երկրի ժողովրդի ու Իսրայէլի տան համար:

13 Դաւիթն ասաց իրեն լուր բերող երիտասարդին. «Որտեղի՞ց ես դու»: Մարդն ասաց. «Մի պանդուխտ ամաղէկացու որդի եմ ես»: 14 Դաւիթն ասաց նրան. «Ինչպէ՞ս չվախեցար ձեռք բարձրացնել ու սպանել Տիրոջ օծեալին»: 15 Դաւիթն իր ծառաներից մէկին կանչելով՝ ասաց. «Մօտեցի՛ր ու սպանի՛ր սրան»: Նա հարուածեց, ու մարդը մեռաւ: 16 Դաւիթն ասաց նրան. «Քո արիւնը թող քո գլխին լինի, քանզի քո բերանը քո մասին վկայութիւն տուեց՝ ասելով. "Ես սպանեցի Տիրոջ օծեալին"»:

ԴԱՒԻԹԻ ՈՂԲԸ ՍԱՒՈՒՂԻ ԵՒ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՀԱՄԱՐ

17 Դաւիթը Սաւուղի ու նրա որդի Յովնաթանի վրայ այս ողբը յօրինեց եւ պատուիրեց այս ողբը ուսուցանել Յուդայի երկրի աղեղնակիրներին: 18 Այն գրուած է Արդարութեան գրքում:

19 Բլուրների բարձունքներում իբրեւ արձան կանգնի՛ր, Իսրայէ՛լ,
վիրաւոր ընկած քո զօրաւոր որդիների համար:
20 Մի՛ յայտնէք Գէթում եւ լուր մի՛ տարածէք Ասկաղոնի փողոցներում,
որ այլազգիների դուստրերը երբեք չհրճուեն,
եւ անթլփատների դուստրերը չցնծան:
21 Ո՛վ Գեղբուայի լեռներ, թող ձեզ վրայ ցող չիջնի,
անձրեւ չգայ ձեզ վրայ,
եւ ոչ էլ պտղատու այգիներ լինեն:
22 Քանզի այստեղ է, որ հզօրների վահանը ջարդուեց,
Սաւուղի վահանը չօծուեց իւղով:
Յովնաթանի աղեղը զուր յետ չքաշուեց վիրաւորների արիւնից ու հզօրների ճարպից,
իսկ Սաւուղի սուրը դատարկ պատեան չդրուեց:
23 Սաւուղն ու Յովնաթանն իրենց կենդանութեան ժամանակ միմեանց սիրելի էին, գեղեցիկ ու վայելուչ,
իրենց մահուան ժամանակ էլ իրարից չբաժանուեցին:
Արծիւներից աւելի թեթեւաշարժ էին,
առիւծներից աւելի զօրեղ:
24 Իսրայէլի դուստրե՛ր, լա՛ց եղէք Սաւուղի վրայ,
լա՛ց եղէք նրա վրայ, ով ձեզ

զարդարուն կարմիր զգեստներ էր հագցնում,
ձեր հագուստների վրայ ոսկէ զարդեր էր դնում:
25 Հզօրներն ինչպէ՞ս ընկան պատերազմի մէջ:
Յովնաթա՛ն, քո բարձունքների վրայ խոցուեցիր:
26 Յաւում եմ քեզ համար, եղբա՛յր իմ Յովնաթան:
Ինձ շատ սիրելի էիր, քո սէրը կանանց սիրուց բարձր էր:
27 Ինչպէ՞ս ընկան հզօրները, եւ ջարդուփշուր եղան ռազմի գործիքները:

ԴԱՒԻԹԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐ

2 Դրանից յետոյ Դաւիթը հարց տալով Տիրոջը՝ ասաց. «Արդեօք գնա՞մ Յուդայի քաղաքներից որեւէ մէկը»: Տէրն ասաց նրան. «Գնա՛»: Դաւիթն ասաց. «Ո՞ւր գնամ»: 2 Տէրն ասաց՝ «Քեբրոն»: Դաւիթն իր երկու կանանց՝ յեզրայէլացի Աքինոամի եւ կարմելացի Նաբալի կին Աբիգեայի հետ եկաւ Քեբրոն: 3 Դաւիթն իր հետ եկած մարդկանց, ամէն մէկին իր ընտանիքով բերեց, եւ նրանք բնակուեցին Քեբրոն քաղաքում: 4 Եկան Հրէաստանի մարդիկ եւ այնտեղ Դաւթին Յուդայի տան վրայ թագաւոր օծեցին: Դաւթին յայտնեցին, թէ Գաղաադի Յաբէս բնակավայրի մարդիկ թաղել են Սաւուղին: 5 Դաւիթը Գաղաադի Յաբէս բնակավայրի առաջնորդների մօտ պատգամաւորներ ուղարկեց եւ ասաց նրանց. «Օրհնեալ լինէք Տիրոջից, որ ձեր տիրոջ՝ Տիրոջից օծեալ Սաւուղի նկատմամբ բարեացակամ էք եղել՝ թաղել էք նրան ու իր որդի Յովնաթանին: 6 Արդ, Տէրը ձեր նկատմամբ ողորմութիւն եւ արդարութիւն թող ցուցաբերի, իսկ ես այդ բարի գործի համար հատուցելու եմ ձեզ: 7 Թող ձեր ձեռքերը զօրանան, ու դուք քաջասիրտ լինէք: Մեռաւ ձեր տէրը՝ Սաւուղը, եւ Յուդայի տունն ինձ իր վրայ թագաւոր է օծել»:

ՅԵՐՈՒՍԱԼԷՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ

8 Սաւուղի զօրավար Ների որդի Աբեն-ները Սաւուղի որդի Յեբուսթէին առաւ տարաւ բանակատեղի 9 եւ նրան թագաւոր դարձրեց Գաղաադաստանի, Թասիրի, Յեզրայէլի, Եփրեմի, Բենիամինի երկրների եւ ամբողջ Իսրայէլի վրայ: 10 Սաւուղի որդի Յեբուսթէն քառասուն տարեկան էր, երբ թագաւոր դարձաւ Իսրայէլի վրայ: Նա երկու տարի թագաւորեց: Միայն Յուդայի տունն էր, որ Դաւթին էր հետեւում: 11 Քեբրոնում, Յուդայի երկրի վրայ Դաւիթը թագաւորեց եօթը տարի վեց ամիս:

ՊԱՏԵՐԱԶՄ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՋԵՒ

12 Ների որդի Աբեն-ները եւ Սաւուղի որդի Յեբուսթէի ծառաները բանակատեղիներից եկան Գաբաւոն: 13 Շարուհիի որդի Յովաբը եւ Դաւթի ծառաները ելան Քեբրոնից եւ նրանց հանդիպեցին Գաբաւոնի աղբիւրի մօտ: Սրանք աղբիւրի այն կողմը նստեցին, իսկ նրանք՝ այս կողմը: 14 Աբեն-ներն ասաց Յովաբին. «Թող քո կտրիճները ելնեն ու մրցեն մեր առջեւ»: 15 Յովաբն ասաց. «Թող մրցեն»: Բենիամինի ու Սաւուղի որդի Յեբուսթէի կողմից ելան տասներկու երիտասարդներ. Դաւթի կողմի՛ց էլ ելան տասներկու երիտասարդներ: 16 Ամէն մէկը ձեռքով բռնեց իր մրցակցի գլխից ու սուրը խրեց իր մրցակցի կողը: Բոլորն այնտեղ ընկան ու մեռան: Եւ այդ տեղի անունը դրեցին Դաւաճանների դաշտ, որը Գաբաւոնում է գտնուում:

17 Այդ օրը սաստիկ պատերազմ եղաւ, եւ Աբեն-ները իսրայէլացիների հետ պարտուեց Դաւթի զինուորներից: 18 Այնտեղ էին Շարուհիի երեք որդիները՝ Յովաբը, Աբեսսան եւ Ասայէլը: Ասայէլը դաշտի այծեամի պէս թեթեւաքայլ էր: 19 Ասայէլը հետապնդեց Աբեն-ներին եւ նրան հալածելիս աջ ու ձախ չխոտորուեց: 20 Աբեն-ները յետ նայեց եւ ասաց. «Դո՞ւ ես, Ասայէ՛լ»: Սա ասաց. «Ես եմ»: 21 Աբեն-ներն ասաց. «Խոտորուի՛ր աջ կամ ձախ, բռնի՛ր կտրիճներից մէկին ու վերցրո՛ւ նրա զէնքերը»: Ասայէլը, սակայն, չուզեց նրան հետապնդելուց հրաժարուել:

22 Աբեն՝նները մի անգամ եւս ասաց Ասայէլին. «Հեռո՛ւ մնա ինձանից, որ քեզ գետին չխփեմ, թէ չէ ի՞նչ երեսով պիտի ներկայանամ Յովաբին, եւ ինչի՞ նման կը լինի դա: 23 Դնա՛ քո եղբայր Յովաբի մօտ»: Ասայէլը չուզեց յետ կանգնել, Աբեն՝նները նիզակով հարուածեց նրա կողին, եւ նիզակը գիստից դուրս եկաւ: Նա ընկաւ այնտեղ ու մեռաւ տեղում: Ով Ասայէլի ընկած ու մեռած տեղն էր գալիս, կանգ էր առնում: 24 Յովաբն ու Աբեսսան Աբեն՝նների յետեւից ընկած հետապնդում էին նրան, եւ երբ Գայի դիմաց, Գաբաւոնի անապատի ճանապարհի վրայ գտնուող Ամմանի բլուրը հասան, արեւը մայր մտաւ:

25 Բենիամինի որդիները հաւաքուելով Աբեն՝նների շուրջը՝ մի բլրի վրայ կանգ առան: 26 Աբեն՝նները ձայն տուեց Յովաբին. «Մի՞թէ սուրն անդադար բնաջնջելու է, կամ մի՞թէ չգիտես, որ սրա վերջը դառնութիւն կը լինի: Ե՞րբ ես հրամայելու ժողովրդին, որ իրենց եղբայրներին հալածելուց հրաժարուեն»: 27 Յովաբն ասաց. «Կենդանի է Տէրը: Եթէ դու խօսած չլինէիր, ժողովուրդը այգաբացին վեր էր կենալու, եւ ամէն մէկը հալածելու էր իր եղբօրը»:

28 Յովաբը փող հնչեցրեց, ամբողջ ժողովուրդը կանգ առաւ, այլեւս չհալածեց իսրայէլացիներին, եւ պատերազմը դադարեց: 29 Աբեն՝ներն ու նրա մարդիկ ամբողջ գիշերը շարժուեցին դէպի արեւելք, անցան Յորդանան գետը, բոլոր մօտակայ վայրերը ու եկան բանակատեղի: 30 Յովաբը Աբեն՝ներին հալածելուց հրաժարուեց, հաւաքեց ամբողջ ժողովրդին, աշխարհագիր արեց ու տեսաւ, 31 որ Դաւթի մարդկանցից կոտորուել էին տասնինը մարդ եւ Ասայէլը, իսկ Դաւթի զինուորները Բենիամինի որդիներից ու Աբեն՝ների մարդկանցից կոտորել էին երեք հարիւր վաթսուն մարդ: 32 Վերցրին Ասայէլին ու նրան թաղեցին Բեթղեհէմում, իր հօր գերեզմանի մէջ: Յովաբն ու իր մարդիկ գնացին եւ արշալոյսին հասան Քեբրոն:

3 Սաւուղի տան ու Դաւթի տան միջեւ սաստիկ պատերազմ եղաւ: Դաւթի տունը գնալով հզօրանում էր, իսկ Սաւուղի տունը գնալով տկարանում էր:

ԴԱՒԹԻ ՈՐԴԻՆԵՐԸ

2 Քեբրոնում Դաւթը որդիներ ունեցաւ: Նրա անդրանիկը յեզրայէլացի Աքինոոմայից ծնուած Ամմոնն էր, 3 երկրորդը կարմեղացի Աբիգեայից ծնուած Դաւիան էր, երրորդը Գեսուրի արքայ Թողմիի դուստր Մաաքայից ծնուած Աբեսաղոմն էր, 4 չորրորդը Ագգիթի որդի Ադոնիան էր, հինգերորդը Ամիտաղի որդի Սափատիան էր, 5 վեցերորդը Դաւթի Եգղաթա կնոջից ծնուած Յեթրամն էր: Դաւթը այս որդիներին ունեցաւ Քեբրոնում:

6 Երբ Սաւուղի տան եւ Դաւթի տան միջեւ պատերազմ էր տեղի ունենում, Աբեն՝ները Սաւուղի տունն էր կառավարում: 7 Սաւուղն ունէր մի հարճ, որի անունը Ռեսփա էր: Նա Յուղի դուստրն էր: Սաւուղի որդի Յեբուսթէն ասաց Աբեն՝ներին. 8 «Ինչո՞ւ ես պառկում իմ հօր հարճի հետ»:

ԱԲԵՆ՝ՆԵՐԸ ԳԺՏԻՈՒՄ Է ՅԵԲՈՒՍԹԷԻ ՀԵՏ

Աբեն՝ները խիստ բարկանալով Յեբուսթէի խօսքի համար՝ նրան ասաց. «Մի՞թէ ես շան գլուխ եմ: Քո հօր տան, նրա եղբայրներին ու բարեկամներին այսօր ծառայութիւն եմ մատուցել, բայց քեզ Դաւթի տան ձեռքը չեմ մատնել: Իսկ դու այսօր մի կնոջ համար ինձանից վրէժ ես լուծում: 9 Աստուած Աբեն՝ներին այսպէս ու սրանից աւելին թող անի, եթէ Դաւթի նկատմամբ չանեմ այն, ինչ Տէրը երդուեց նրան՝ ասելով, 10 թէ՝ "Թագաւորութիւնը վերցնելու եմ Սաւուղից եւ Դաւթի թագաւորութիւնն եմ հաստատելու Իսրայէլի ու Յուդայի երկրի վրայ Դանից մինչեւ Բերսաբէէ"»: 11 Յեբուսթէն վախից այլեւս չկարողացաւ պատասխան տալ Աբեն՝ներին:

ԱԲԵՆ՝ՆԵՐԸ ԴԱՒԹԻ ԴԱՇՆԱԿՈՒՄ

12 Աբեն՝ներն անմիջապէս պատգամաւորներ ուղարկելով Թեսաղմի երկիր, Դաւթի մօտ՝ ասաց. «Ինձ հետ քո ուխտը կնքի՛ր, եւ ես քեզ կ՚օգնեմ ամբողջ Իսրայէլը քո կողմը դարձնելու համար»: 13 Դաւիթն ասաց. «Բարի: Ես քեզ հետ ուխտ կը կնքեմ, բայց քեզանից մի բան եմ խնդրում. ինձ չներկայանաս, եթէ ինձ տեսնելու գալիս հետդ չբերես Սաւուղի դուստր Մեղքողին»: 14 Դաւիթը Սաւուղի որդի Յեբուսթէի մօտ պատգամաւորներ ուղարկեց՝ ասելով. «Ինձ տո՛ւր իմ կին Մեղքողին, որին ես ստացել եմ այլազգիների հարիւր անթլփատ անդամների դիմաց»: 15 Յեբուսթէն մարդ ուղարկեց ու Մեղքողին առաւ իր ամուսնուց՝ Սեղոայի որդի Փաղտիէլից: 16 Նրա ամուսինը լալով գնում էր նրա յետեւից մինչեւ Բարակիմ: Աբեն՝ներն ասաց նրան. «Յե՛տ դարձիր»: Եւ նա յետ դարձաւ:

17 Աբեն՝ները խօսելով Իսրայէլի ծերերի հետ՝ ասաց. «Երկար ժամանակ խնդրում էիք, որ Դաւիթը թագաւորի ձեզ վրայ: 18 Հիմա իրագործեցէ՛ք, քանզի Տէրը խօսելով Դաւթի մասին՝ ասել է. "Իմ ծառայ Դաւթի ձեռքով եմ փրկելու Իսրայէլը այլազգիների ձեռքից եւ նրա բոլոր թշնամիների ձեռքից"»: 19 Աբեն՝ներն այս բանն ասաց Բենիամինին: Աբեն՝ները գնաց Քեբրոն Դաւթին յայտնելու այն, ինչ հաճելի էր թուացել Իսրայէլին եւ Բենիամինի ամբողջ տանը: 20 Աբեն՝ները քսան մարդկանցով եկաւ Քեբրոն, Դաւթի մօտ, եւ Դաւիթը Աբեն՝ների ու նրա հետ եկած մարդկանց համար խրախճանք կազմակերպեց: 21 Աբեն՝ներն ասաց Դաւթին. «Գնամ եւ ամբողջ Իսրայէլին հաւաքեմ իմ տէր արքայի շուրջը, քեզ հետ ուխտ դնեմ, եւ դու թագաւորես բոլոր նրանց վրայ, որոնց ցանկանում ես»:

ԱԲԵՆ՝ՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Դաւիթն Աբեն՝ներին յետ ուղարկեց, եւ սա գնաց խաղաղութեամբ: 22 Դաւթի մարդիկ եւ Յովաբը եկան ասպատակութիւնից՝ իրենց հետ բազում աւար բերելով: Յովաբը Քեբրոնում, Դաւթի մօտ չէր, երբ սա նրան արձակել էր, եւ նա գնացել էր խաղաղութեամբ: 23 Յովաբն ու նրա ամբողջ զօրքը եկան: Յովաբին յայտնեցին, թէ Ների որդի Աբեն՝ները եկել է Դաւթի մօտ, սա նրան արձակել է, եւ նա գնացել է խաղաղութեամբ: 24 Յովաբը մտնելով Դաւթի արքայի մօտ՝ ասաց. «Այդ ի՞նչ ես արել. Աբեն՝ները եկել է քեզ մօտ, եւ դու ինչո՞ւ նրան խաղաղութեամբ արձակեցիր: 25 Մի՞թէ չգիտես Ների որդի Աբեն՝ների չարութիւնը: Նա եկել է քեզ խաբելու, իմանալու քո ելումուտը եւ տեղեկանալու այն ամենին, ինչ դու անում ես»: 26 Յովաբը դուրս եկաւ Դաւթի մօտից, պատգամաւորներ ուղարկեց Աբեն՝ների ետեւից, որոնք եւ նրան վերադարձրին Սէիրմի ջրհորից: 27 Դաւիթն այդ մասին չգիտէր: Յովաբն Աբեն՝ներին բերեց Քեբրոն, դարպասից ներս տարաւ իբր թէ նրան գաղտնի բան յայտնելու նպատակով եւ իր եղբայր Ասայէլի արեան վրէժը լուծելու համար խոցեց նրա կողը, եւ նա մեռաւ:

28 Դրանից յետոյ Դաւիթն իմանալով այդ մասին՝ ասաց. «Ես եւ իմ թագաւորութիւնը Տիրոջ առաջ յաւիտեան անպարտ ենք Ների որդի Աբեն՝ների արեան համար: 29 Թող Յովաբի եւ նրա հօր ամբողջ տան վրայ ընկնի մեղքը, եւ Յովաբի տնից անպակաս լինեն սերմը ծորողը, բորոտը, ցուպով շրջող մուրացիկը, սրից ընկնողն ու սովամահը»: 30 Յովաբն ու նրա եղբայր Աբեսսան հետապնդում էին Աբեն՝ներին այն բանի համար, որ նա Գաբաւոնում, պատերազմի ժամանակ, սպանել էր իրենց եղբօրը՝ Ասայէլին:

ԱԲԵՆ՝ՆԵՐԻ ԹԱՂՈՒՄԸ

31 Դաւիթը Յովաբին ու նրա հետ եղած ամբողջ ժողովրդին ասաց. «Պատառոտեցէ՛ք ձեր հագուստները, քո՛ւրձ հագէք ու ողբացէ՛ք Աբեն՝ների վրայ»: 32 Դաւիթ արքան գնում էր դագաղի յետեւից: Աբեն՝ներին թաղեցին Քեբրոնում: Արքան բարձրաձայն լաց եղաւ

նրա գերեզմանի վրայ: Աբենների հա-
մար լաց էր լինում նաեւ ամբողջ ժո-
ղովուրդը: 33 Արքան Աբեններին ող-
բալով ասում էր.
«Մի՞թէ Աբենները պիտի մեռնէր
այնպէս,
ինչպէս մի անզգամ է մեռնում:
Մի՞թէ Նաբաղի մահո՞վ պիտի մեռ-
նէր Աբենները:
34 Քո ձեռքերը կապուած չէին,
քո ոտքերը չէին շղթայուած:
Քեզ չբերեցին, ինչպէս անիրաւ Նա-
բաղին էին բերել,
բայց դու ընկար անկարող, ինչպէս
ընկնում են անիրաւները»:
35 Ամբողջ ժողովուրդը հաւաքուեց
նրան ողբալու: Ամբողջ ժողովուրդը
եկաւ Դաւիթին ընթրիք տալու, քանի
դեռ ցերեկ էր, սակայն Դաւիթը եր-
դուելով ասաց. «Աստուած ինձ այսպէս
եւ այսպէս ու աւելին անի, եթէ արե-
գակը մայր մտնելուց առաջ հաց կամ
որեւէ բան ուտեմ»: 36 Ամբողջ ժողո-
վուրդը իմացաւ այդ, նրան հաճելի
թուաց այն ամբողջ բարութիւնը, որ
արքան գործել էր ժողովրդի համար:
37 Նրանք՝ բոլոր իսրայէլացիներն այդ
օրը իմացան, որ արքայի հրամանով չի
եղել Ների որդի Աբենների սպանու-
թիւնը: 38 Արքան ասաց իր ծառա-
ներին. «Զգիտէ՞ք, որ այսօր Իսրայէլի
մի մեծ առաջնորդ ընկաւ, 39 նա ինձ
արիւնակից էր եւ արքայի կողմից էր
նշանակուած: Սակայն այս մարդիկ՝
Շարուհիի որդիները, ինձնից աւելի
դաժան են: Տէրը չարին թող նրա
չարութեան համեմատ հատուցի»:

ՅԵԲՈՒՍԹԷԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

4 Երբ Սաւուղի որդի Յեբուսթէն լսեց,
որ Աբենները մահացել է Քեբրոնում,
նրա ձեռքերը թուլացան, իսկ բոլոր
իսրայէլացիները վհատուեցին: 2 Սա-
ւուղի որդի Յեբուսթէն ունէր գնդերի
երկու զօրապետներ, որոնցից մէկի
անունն էր Բաանա, իսկ միւսինը՝ Ռե-
քաբ: Սրանք Բենիամինի ցեղից բերո-
թացի Ռեմոնի որդիներն էին: 3 Բերո-
թը Բենիամինի երկրի մասն էր կազ-
մում: Բերոթացիները Գեթթայի էին
փախել եւ իբրեւ պանդուխտ այնտեղ
են ապրում մինչեւ այսօր: 4 Սաւուղի
որդի Յովնաթանն ունէր հինգ տարե-
կան մի կաղ որդի: Սաւուղի եւ նրա
որդի Յովնաթանի մահուան գոյժը
Յեզրայէլից հասնելուց յետոյ մանկան
դայեակը նրան վերցնելով փախել էր:
Եւ ահա երբ նրանք շտապ փախչում
էին, մանուկն ընկել էր ու ոտքը վնա-
սել: Նրա անունը Մեմփիբոսթէ էր:
5 Բերոթացի Ռեմոնի որդիները՝ Ռե-
քաբն ու Բաանան, գնացին եւ օրուայ
տօթ ժամին մտան Յեբուսթէի տունը:
Սա կէսօրին ննջում էր անկողնում:
6 Տան դռնապանը ցորեն մաքրելիս
նիրհել էր ու քուն մտել: 7 Ռեքաբ եւ
Բաանա եղբայրները գաղտագողի տուն
մտան: Յեբուսթէն սենեակում ննջում
էր իր անկողնում: 8 Հարուածեցին
նրան, սպանեցին, կտրեցին նրա գլու-
խը եւ այն վերցնելով՝ ամբողջ գիշերը
գնացին արեւելեան ճանապարհով:
Յեբուսթէի գլուխը բերեցին Քեբրոն,
Դաւիթի մօտ, եւ ասացին արքային.
«Ահա քո թշնամու՝ Սաւուղի որդի Յե-
բուսթէի գլուխը, որը քո մահն էր
նիւթում: Տէրը մեր տէր արքայի հա-
մար վրէժխնդիր եղաւ նրա թշնամի-
ներից, ինչպէս այսօր վրէժխնդիր եղաւ
քո թշնամի Սաւուղից եւ նրա
սերնդից»: 9 Դաւիթը Բերոթացի Ռե-
մոնի որդիներ Ռեքաբին ու նրա եղ-
բայր Բաանային պատասխանեց՝ ասե-
լով. «Վկայ է Տէրը, որ ինձ փրկեց
ամէն նեղութիւնից: 10 Նա, ով պատ-
մել էր ինձ, թէ մեռաւ Սաւուղը, նրան
թւում էր, թէ ինձ աւետիս էր տալիս,
իսկ ես բռնեցի նրան Սիկեղակում ու
սպանեցի, մինչդեռ նա կարծում էր, թէ
ես նրան պէտք է աչքալուսանք տամ:
11 Արդ, դուք՝ չա՛ր մարդիկ, իր տանը,
անկողնում սպանել էք արդար մար-
դու: Հիմա ես նրա արիւնը պէտք է
պահանջեմ ձեզանից, ձեզ պիտի վե-
րացնեմ երկրից»: 12 Դաւիթը հրաման
տուեց իր զինուորներին, որոնք սպա-
նեցին նրանց, կտրեցին նրանց ձեռ-
քերն ու ոտքերը եւ դրանք կախեցին
Քեբրոնի աղբիւրի վրայ, իսկ Յեբուս-
թէի գլուխը թաղեցին Քեբրոնում,
Ների որդի Աբենների գերեզմանում:

ԴԱՒԻԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ Է ՕԾՈՒՄ
(Ա Մնաց. 11. 1-9, 14. 1-7)

5 Իսրայէլի բոլոր ցեղերը եկան Քեբ-
րոն, Դաւիթի մօտ, ու խօսելով նրա հետ՝
ասացին. 2 «Մենք քո ոսկորը եւ քո
մարմինն ենք: Անցեալում, երբ Սա-
ւուղը մեր թագաւորն էր, դու էիր իս-
րայէլացիներին առաջնորդողը եւ ի մի
հաւաքողը: Տէրը քեզ ասաց. "Դու պի-
տի հովուես Իսրայէլի իմ ժողովրդին,
դու ես լինելու Իսրայէլի առաջնոր-
դը"»: 3 Իսրայէլի բոլոր ծերերը եկան
Քեբրոն, արքայի մօտ, եւ Դաւիթ ար-
քան նրանց հետ ուխտ դրեց Քեբրո-
նում, Տիրոջ առջեւ: Նրանք Դաւիթին
թագաւոր օծեցին ամբողջ Իսրայէլի
վրայ:
4 Դաւիթը երեսուն տարեկան էր, երբ
թագաւոր դարձաւ, եւ քառասուն տարի
թագաւորեց. 5 եօթը տարի վեց ամիս
թագաւորեց Քեբրոնում Յուդայի երկրի
վրայ եւ երեսուներեք տարի Երուսաղէ-
մում՝ ամբողջ Իսրայէլի ու Յուդայի
երկրի վրայ:
6 Դաւիթն իր զօրքով գնաց Երու-
սաղէմ, այդ երկրում բնակուող յեբու-
սացիների դէմ: Դաւիթին ասացին, թէ՝
«Դու այստեղ չես մտնի, քանզի կոյ-
րերն ու կաղերը քեզ դէմ են կանգնել
եւ ասում են. "Դաւիթն այստեղ թող
չմտնի"»: 7 Դաւիթը գրաւեց Սիոնն ու
նրա ամրոցը, որ Դաւիթի քաղաքն է:
8 Այդ օրը Դաւիթն ասաց. «Ով որ
ուզում է կոտորել յեբուսացիներին,
թող սրով յարձակուի կաղերի, կոյրերի
եւ Դաւիթի անձն ատողների վրայ»:
Դրա համար է, որ ասում են. «Կոյրերն
ու կաղերը չպէտք է մտնեն Տիրոջ
տունը»: 9 Դաւիթն ապրեց ամրոցում,
եւ այն կոչուեց Դաւիթի քաղաք: Նա
շուրջանակի, ծայրից ծայր քաղաք
շինեց եւ իր համար էլ տուն կառուցեց:
10 Դաւիթը գնալով հզօրանում էր, եւ
ամենակալ Տէրը նրա հետ էր:
11 Տիւրոսի արքայ Քիրամը դես-
պաններ ուղարկեց Դաւիթի մօտ, նաեւ
եղեւնափայտ, փայտի հիւսներ ու քա-
րի վարպետներ, որոնք Դաւիթի համար
տուն շինեցին: 12 Դաւիթը համոզուեց,
որ Տէրն է իրեն Իսրայէլի թագաւոր
հաստատել եւ իր թագաւորութիւնը
բարձրացրել իր ժողովրդի՝ Իսրայէ-
լացիների վրայ: 13 Դաւիթը Քեբրոնից
Երուսաղէմ գալուց յետոյ ուրիշ կա-
նայք ու հարճեր եւս առաւ: 14 Դաւիթն
ուրիշ տղաներ եւ աղջիկներ էլ ունե-
ցաւ: Երուսաղէմում նրա ունեցած որ-
դիների անունները սրանք են. 15 Սա-
մաաթ, Յեսիբաթ, Նաթան, Գաղա-
մաան, Յեբաար, 16 Թեմեսուս, Եղփա-
ղատ, Նագեդ, Նափեկ, Յեննաթա,
Եղիսամիս, Բաղիգադ եւ Եղիփաղէտ:

ԴԱՒԻԹԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԴԷՄ
(Ա Մնաց. 14. 8-17)

17 Այլազգիները լսելով, թէ Դաւիթը
Իսրայէլի թագաւոր է օծուել, բոլո-
րը ելան Դաւիթի վրայ յարձակուելու:
18 Երբ Դաւիթն այդ իմացաւ, իջաւ
ամրոցը: Այլազգիները եկան ու հա-
ւաքուեցին Տիտանների հովիտներում:
19 Դաւիթը հարցրեց Տիրոջը՝ ասելով.
«Յարձակուե՞մ այլազգիների վրայ,
նրանց իմ ձեռքը կը մատնե՞ս»: Տէրն
ասաց Դաւիթին. «Յարձակուի՛ր, քանզի
անպայման քո ձեռքն եմ մատնելու
այլազգիներին»: 20 Դաւիթն եկաւ
Խրամատների վրայից եւ այնտեղ կո-
տորեց այլազգիներին: Դաւիթն ասաց.
«Տէրն իմ թշնամիներին իմ ձեռքով
կոտորեց այնպէս, ինչպէս ջրերն են
թմբերը աւերում»: Դրա համար
այդ տեղը կոչուեց Խրամատների վրայ:
21 Նրանք այնտեղ թողեցին իրենց
աստուածներին, եւ Դաւիթն ու իրեն
ընկերակցող մարդիկ առան դրանք:
22 Այլազգիները կրկին ոտքի ելան
ու հաւաքուեցին Տիտանների հովիտ-
ներում: 23 Դաւիթը հարցրեց Տիրոջն՝
ասելով. «Յարձակուե՞մ այլազգիների
վրայ, նրանց իմ ձեռքը կը մատնե՞ս»:
Տէրն ասաց. «Մի՛ յարձակուիր նրանց
վրայ, շրջանցի՛ր նրանց ու նրանց
թիկունքից գնա՛ դէպի Լացի անտառը:
24 Երբ Լացի անտառից շարժման ձայն
լսես, այն ժամանակ յարձակուի՛ր
նրանց վրայ, որովհետեւ այն ժամա-
նակ է, որ Տէրը դուրս է գալու քո
առաջ, որ պատերազմում կոտորի
այլազգիներին»: 25 Դաւիթն արեց

այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել նրան: Եւ նա կոտորեց այլազգիներին Գաբաւոնից մինչեւ Գազերա:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ
(Ա Մնաց. 13. 1-14, 15. 25-16. 6-43)

6 Դաւիթը կրկին հաւաքեց Իսրայէլի բոլոր երիտասարդներին՝ մօտաւորապէս եօթանասուն հազար հոգի: 2 Դաւիթը, նրա հետ եղած ամբողջ ժողովուրդն ու Յուդայի երկրի իշխաններից ոմանք ելան գնացին այն զառիվերով, որով բարձրացուել էր Աստծու տապանակը, որին տրուած էր զօրութիւնների Տէր Աստծու անունը, եւ որի վրայ նստած է Աստուած քերովբէների միջեւ: 3 Դաւիթը Տիրոջ տապանակը դրեց նոր սայլի վրայ, վերցրեց այն Ամինադաբ Բլրացու տնից: 4 Ամինադաբի որդիները՝ Օզան ու նրա եղբայրներն էին քշում տապանակը կրող սայլը, իսկ միւս եղբայրները ընթանում էին տապանակի առջեւից: 5 Դաւիթն ու իսրայէլացիները Տիրոջ առաջ տաւիղներ, հնչեղ նուագարաններ, քնարներ, սրինգներ էին նուագում, թմբուկներ, ծնծղաներ զարկում ու փողեր էին հնչեցնում ու երգում:

6 Երբ եկան Ամինադաբի կալը, Օզան իր ձեռքը գցեց Աստծու տապանակին, որ այն բռնի: Նա այն բռնեց, որովհետեւ լծկան զուարակն այն շարժել էր իր տեղից: 7 Տէրը բարկացաւ Օզայի վրայ եւ նրա յանդգնութեան համար հարուածեց նրան այնտեղ, եւ նա մեռաւ այնտեղ, Տիրոջ տապանակի մօտ, Աստծու առջեւ: 8 Դաւիթը տրտմեց, որ Տէրը մահացու հարուածեց Օզային նրա մեծ յանդգնութեան համար: 9 Այդ տեղը մինչեւ այսօր Օզայի Հարուած է կոչւում: Այդ օրը Դաւիթը վախեցաւ Տիրոջից եւ ասաց. «Տիրոջ տապանակը ինչպէ՞ս մտնի ինձ մօտ»: 10 Դաւիթը չուզեց Տիրոջ ուխտի տապանակը տանել իր մօտ՝ Դաւիթի քաղաքը, եւ Դաւիթը, շեղելով ճանապարհը, այն տարաւ գեթացի Աբեդդարի տունը: 11 Տիրոջ տապանակը երեք ամիս մնաց գեթացի Աբեդդարի տանը: Տէրն օրհնեց Աբեդդարին ու նրա ամբողջ տունը: 12 Այդ մասին յայտնեցին Դաւթին՝ ասելով. «Տէրն Աստծու տապանակի համար օրհնել է Աբեդդարի տունն ու նրա ունեցած ամէն ինչը»:

Դաւիթը գնաց, Տիրոջ տապանակը հանեց Աբեդդարի տնից եւ ուրախութեամբ բերեց Դաւթի քաղաքը: 13 Տապանակը տանողների հետ գնում էին պարողների եօթը խմբեր, զուարակ ու գառներ էին զոհ մատուցում: 14 Դաւիթը Տիրոջ առաջ տաւիղ էր նուագում: Նա պատմուճան էր հագել: 15 Դաւիթն ու Իսրայէլի ամբողջ տունը Տիրոջ տապանակը հանեցին ուրախութեան աղաղակ արձակելով ու փող հնչեցնելով: 16 Երբ տապանակը Դաւթի քաղաքին մօտեցաւ, Սաւուղի դուստր Մեղքողը նայում էր պատուհանից եւ տեսնելով, որ Դաւիթ արքան Տիրոջ առաջ պարում էր ու նուագարաններ նուագում, արհամարհեց նրան իր հոգում: 17 Տիրոջ տապանակը բերեցին ու դրեցին իր տեղը, վրանի մէջ, որ Դաւիթը դրա համար էր կանգնեցրել: 18 Դաւիթը Տիրոջ առջեւ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցեց: Երբ Դաւիթն աւարտեց ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցելը, զօրութիւնների Տիրոջ անունից օրհնեց ժողովրդին: 19 Նա Իսրայէլի բոլոր բնակիչներին՝ Դանից մինչեւ Բերսաբէէ, տղամարդկանց թէ կանանց, ամէն մէկին բաշխեց հացի մի բլիթ, կասկարայի վրայ եփուած արմաւով խմորեղէն եւ չամչով կարկանդակ: Ժողովրդի ամբողջ բազմութիւնը գնացին իրենց տները:

20 Դաւիթը յետ դարձաւ իր տունն օրհնելու. նրան ընդառաջ ելաւ Սաւուղի դուստր Մեղքողը եւ, ողջունելով նրան, ասաց. «Վայե՞լ էր Իսրայէլի արքային, որ այսօր իր աղախինների ու ծառաների առաջ մերկանայ, ինչպէս մերկանում են պարողները»: 21 Դաւիթն ասաց Մեղքողին. «Ես պիտի պարեմ Տիրոջ առջեւ: Օրհնեալ է Տէր Աստուածը, որն ինձ ընտրեց եւ ոչ թէ քո հօրն ու նրա ամբողջ տունը: Նա ինձ Իսրայէլի իր ժողովրդի վրայ առաջնորդ կարգեց: 22 Ահա այդ Տիրոջ

առաջ ես պիտի երգեմ ու պարեմ: Եւ դեռ էլ աւելի պիտի մերկանամ, քո աչքին անարգ պիտի երեւամ ու դրանով էլ քո ասած այդ աղախինների առաջ պիտի փառաւորուեմ»: 23 Եւ Սաւուղի դուստր Մեղքողը մինչեւ իր մահուան օրը զաւակ չունեցաւ:

ՆԱԹԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ԴԱՒԹԻՆ
(Ա Մնաց. 17. 1-15)

7 Երբ Դաւիթը բնակուեց իր տանը, եւ Տէրը նրան ազատեց շրջապատի իր թշնամիներից, արքան ասաց Նաթան մարգարէին. 2 «Ահաւասիկ ես բնակւում եմ եղեւնափայտից պատրաստուած տան մէջ, բայց Աստծու տապանակը վրանից մէջ է գտնւում»: 3 Նաթանն ասաց արքային. «Ամէն ինչ, որ մտքիդ մէջ կայ, գնա՛ եւ արա՛, քանզի Տէրը քեզ հետ է»:

4 Նոյն գիշերը Տէրը խօսեց Նաթանի հետ եւ ասաց. «Գնա՛ եւ ասա՛ իմ ծառայ Դաւթին. 5 այսպէս է ասում Տէրը. "Դու ինձ համար բնակուելու տուն չպէտք է շինես, 6 որովհետեւ տան մէջ չեմ բնակուել այն օրից, որ իսրայէլացիներին հանեցի Եգիպտոսից: 7 Ես շրջում եմ՝ իջեւանելով վրաններում: Ամենուրեք, որ շրջել եմ իսրայէլացիների մէջ, մի՞թէ երբեւիցէ խօսել եմ Իսրայէլի ազգատոհմերից որեւէ մէկի հետ, հրաման տուել հովուելու Իսրայէլի իմ ժողովրդին, ասելով, թէ՝ "Ինչո՞ւ ինձ համար եղեւնափայտէ տուն չշինեցիք": 8 Արդ, այսպէ՛ս ասա իմ ծառայ Դաւթին. «Այսպէ՛ս է ասում ամենակալ Տէրը. "Ես քեզ վերցրել եմ ոչխարների հօտից, որ Իսրայէլի իմ ժողովրդի վրայ առաջնորդ լինես: 9 Ես քեզ հետ էի ամենուրեք, ուր գնում էիր, քո առջեւից քո բոլոր թշնամիներին ոչնչացրի եւ քեզ անուանի դարձրի երկրի վրայ եղած մեծամեծների անուանը հաւասար: 10 Իսրայէլի իմ ժողովրդի համար տեղ պիտի որոշեմ ու ամրացնեմ նրան այնտեղ, որ նա առանձին բնակուի եւ այլեւս հոգս չունենայ, որպէսզի անօրէն մարդիկ առաջուայ պէս չխոշտանգեն նրան, 11 ինչպէս եղել էր այն օրերից ի վեր, երբ Իսրայէլի իմ ժողովրդի վրայ դատաւորներ կարգեցի: Քեզ պիտի ազատեմ քո բոլոր թշնամիներից, եւ Տէրը քեզ պիտի ասի, որ իր համար տուն պէտք է շինես: 12 Եւ երբ քո կեանքի օրերը լրանան եւ քո նախնիների գիրկը գնաս, քեզանից յետոյ քո յետնորդը հանդիսացող զաւակիդ պիտի բարձրացնեմ եւ նրա թագաւորութիւնը պիտի հաստատեմ: 13 Նա է իմ անուան համար տուն շինելու, եւ ես նրա աթոռը կանգուն պիտի պահեմ յաւիտեան: 14 Հայր պիտի լինեմ նրան, եւ նա ինձ որդի պիտի լինի, եւ եթէ նա անիրաւութիւն գործի, պիտի յանդիմանեմ նրան ու խրատեմ մարդկանց գործածած գաւազանով եւ մարդկային տանջանքներով: 15 Բայց նրան ողորմութիւն չեմ զլանայ, ինչպէս զլացայ նրանց, որոնց իմ առաջից վանեցի: 16 Յաւիտեան հաստատուն պիտի լինեն նրա անունն ու թագաւորութիւնը իմ առաջ, նրա աթոռը յաւիտեան կանգուն պիտի մնայ իմ առաջ"»: 17 Այս բոլոր խօսքերն ու ամբողջ տեսիլքը նոյն ձեւով Նաթանը հաղորդեց Դաւթին:

ԴԱՒԹԻ ԱՂՕԹՔԸ
(Ա Մնաց. 17. 16-27)

18 Դաւիթ արքան գնաց ու նստելով Տիրոջ առաջ՝ ասաց. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, եւ ի՞նչ է իմ տունը, որ ինձ այսքան սիրեցիր: 19 Տէ՛ր իմ, Տէ՛ր, դոյզն չափով իսկ չնուաստացայ քո առաջ: Դու խօսեցիր քո ծառայի տան մասին երկար ժամանակի համար: Մի՞թէ այս է մարդկային օրէնքը, Տէ՛ր իմ, Տէ՛ր: 20 Դաւիթն էլ ի՞նչ ասի քեզ, քանզի դու, Տէ՛ր իմ, Տէ՛ր, ճանաչում ես քո ծառային: 21 Քո ծառայի համար եւ ըստ քո սրտի ինձ հասցրիր այս փառքին, որպէսզի քո ծառային իմացնես, որ ինձ պէտք է բարձրացնես, Տէ՛ր իմ, Տէ՛ր: 22 Ըստ մեր ականջներով լսածի, քեզ նման մէկը չկայ, եւ քեզանից բացի ուրիշ Աստուած չկայ: 23 Եւ երկրի վրայ ո՞ր ազգն է Իսրայէլի քո ժողովրդի պէս, որին Աստուած ինքը առաջնորդեց՝ փրկելու իր ժողովրդին,

որպէսզի անուանի դարձնի քեզ եւ հռչակի քո մեծութիւնն ու յայտնութիւնը, որ Եգիպտոսից փրկուած ժողովրդիդ առջեւից ազգեր ու նրանց բնակութեան վրանները տապալեցիր: 24 Քո Իսրայէլին յաւիտեան քեզ ժողովուրդ հաստատեցիր քեզ համար, եւ դու, ո՜վ Տէր, նրանց համար Աստուած եղար: 25 Արդ, Տէ՛ր իմ, քո ծառայի ու նրա տան համար ասած խօսքդ յաւիտեան հաստատի՛ր եւ ասածիդ պէս արա՛, որ քո անունը յաւիտեան փառաւորուի: 26 Տէ՛ր ամենակալ, ամբո՛ղջ Իսրայէլի Աստուած, քո ծառայ Դաւթի տունը թող կանգուն մնայ քո առջեւ, 27 որովհետեւ դու ես Իսրայէլի ամենակալ Տէր Աստուածը: Թող քո անունը յաւիտեան փառաւորուի, դու քո ծառայի ականջին յայտնեցիր եւ ասացիր՝ "Քեզ համար տուն եմ շինելու", ուստի քո ծառան յանդգնեց քո առջեւ այս աղօթքը անելու: 28 Եւ արդ, Տէ՛ր իմ, Տէ՛ր, դու ես Աստուած, քո խօսքերը ճշմարիտ են, եւ դու ես քո ծառային այս ամբողջ բարիքը խոստացել: 29 Ուստի հիմա օրհնի՛ր քո ծառայի տունը, որ յաւիտեան քո առջեւ լինի, քանզի դու ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, որ ասել ես դա, եւ քո օրհնութեամբ է, որ քո ծառայի տունը յաւիտեան օրհնուած պիտի մնայ»:

ԴԱՒԹԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ
(Ա Մնաց. 18. 1-17)

8 Դրանից յետոյ Դաւիթը յարձակուեց այլազգիների վրայ, փախուստի մատնեց նրանց, այլազգիների ձեռքից վերցրեց քաղաքին յարող տարածքները: 2 Դաւիթը հարուածեց մովաբացիներին, նրանց գետին պառկեցրեց եւ չափեց պարանով. ամէն երկու պարան չափեց սպանելու եւ ամէն երկու պարան՝ կենդանի թողնելու համար: 3 Մովաբացիները Դաւթի հարկատու հպատակները դարձան: Երբ Դաւիթը գնում էր իր իշխանութիւնը Եփրատի վրայ հաստատելու, յարձակուեց Սուբայի արքայի՝ Ռովամի որդի Ադրաազարի վրայ: 4 Դաւիթը նրանից հազար մարտակառք, եօթը հազար հեծեալ ու քսան հազար հետեւակ գերի վերցրեց: Դաւիթը բոլոր մարտակառքերը քանդեց՝ իր համար թողնելով միայն հարիւր մարտակառք: 5 Դամասկոսից եկան ասորիները, որ օգնեն Սուբայի արքայ Ադրաազարին, բայց Դաւիթը ասորիներից քսաներկու հազար մարդ կոտորեց: 6 Դաւիթը Ասորիքում, Դամասկոսի մօտ բերդապահ զօրքեր դրեց, եւ ասորիները Դաւթի հարկատու ծառաները դարձան: Տէրը հովանաւորում էր Դաւթին ամենուրեք, ուր էլ որ նա գնում էր: 7 Դաւիթն առաւ Սուբայի արքայ Ադրաազարի ծառաների ոսկէ ապարանջանները եւ բերեց Երուսաղէմ: 8 Եգիպտոսի արքայ Սաւսակիմը դրանք յետ վերցրեց, երբ նա Սողոմոնի որդի Ռոբովամի օրօք յարձակուեց Երուսաղէմի վրայ: Դաւիթ արքան Մասբակից եւ Ադրաազարի հռչակաւոր քաղաքներից առաւ պղինձ, որով Սողոմոն արքան պղնձէ տաշտ, սիւներ, աւազաններ եւ ամէն տեսակ կահոյք պատրաստեց:

9 Եմաթի արքայ Թովուն լսելով, որ Դաւիթը ջախջախել է Ադրաազարի բոլոր զօրքերին, իր որդի Եդդուրային ուղարկեց Դաւիթ արքայի մօտ նրա ողջութիւնը հարցնելու: 10 Նա շնորհաւորեց նրան այն բանի համար, որ ջախջախել էր Ադրաազարին, քանզի սա Թովուի թշնամին լինելով՝ իր դէմ բուռն պատերազմներ էր մղել: Եդդուրան իր հետ վերցրել էր ոսկէ, արծաթէ եւ պղնձէ անօթներ: 11 Դաւիթ արքան այս ամէնը Տիրոջը նուիրաբերեց, ինչպէս նուիրաբերել էր իր յաղթած բոլոր ազգերից՝ եդոմայեցիներից, մովաբացիներից, ամոնացիներից, 12 այլազգիներից, ամաղէկացիներից եւ Սուբայի արքայի՝ Ռոբի որդի Ադրաազարից գրաւած արծաթն ու ոսկին: 13 Դաւիթն անուանի դարձաւ: Երբ վերադառնում էր, Դաւիթը Գաբեղեմում հարուածեց ասորիներին եւ տասնութ հազար մարդ կոտորեց: 14 Նա Եդոմի մէջ՝ եդոմայեցիների երկրի բոլոր տեղերում բերդապահ զօրքեր դրեց, եւ բոլոր եդոմայեցիները դարձան արքայի հպատակները: Տէրը հովանաւորում էր Դաւթին ամենուրեք, ուր էլ որ նա գնում էր:

15 Աստուած Դաւթին ամբողջ Իսրայէլի վրայ թագաւոր կարգեց, եւ սա իրաւունք ու արդարութիւն էր գործադրում իր ամբողջ ժողովրդի հանդէպ: 16 Շարուհիի որդի Յովաբը զօրքի հրամանատարն էր, Աքիի որդի Յոսափատը դիւանապետ էր, 17 Աքիտոբի որդի Սադոկը եւ Աբիաթարի որդի Աքիմելէքը քահանաներ էին, Ասան քարտուղար էր, 18 Յովիդայէի որդի Բանեան խորհրդական էր, քերեթիները, փելեթիներն ու Դաւթի որդիները արքունի իշխաններ էին:

ԴԱՒԹԻ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՈՐԴԻ ՄԵՄՓԻԲՈՍԹԷԻ ՀԱՆԴԷՊ

9 Դաւիթն ասաց. «Սաւուղի տնից մնացած մարդ կա՞յ, որ Յովնաթանի սիրուն նրան բարերարութիւն անեմ»: 2 Սաւուղի տնից Սիբա անունով մի ծառայ կար: Կանչեցին նրան Դաւթի մօտ, եւ արքան հարցրեց նրան. «Դո՞ւ ես Սիբան»: 3 Սա պատասխանեց. «Ես եմ, քո ծառան»: Արքան հարցրեց. «Սաւուղի տնից մնացած մարդ կա՞յ, որ նրան Աստծու ողորմածութիւնը ցոյց տամ»: 4 Սիբան ասաց արքային. «Յովնաթանն ունի ոտքերից հաշմուած մի որդի»: Արքան ասաց. «Ո՞ւր է նա»: Սիբան պատասխանեց արքային. «Նա լադաբարացի Ամիէլի որդի Մաքիրի տանն է»: 5 Դաւիթ արքան մարդ ուղարկելով՝ նրան վերցրեց լադաբարացի Ամիէլի որդու՝ Մաքիրի տնից: 6 Սաւուղի որդի Յովնաթանի որդի Մեմփիբոսթէն եկաւ Դաւիթ արքայի մօտ, ընկաւ երեսնիվայր եւ երկրպագութիւն արեց նրան: Դաւիթն ասաց նրան. «Մեմփիբոսթէ»: 7 Նա ասաց. «Ահաւասիկ ես քո ծառան եմ»: Դաւիթը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետեւ քո հայր Յովնաթանի սիրուն քեզ ողորմութիւն պիտի անեմ. քո հօր հայր Սաւուղի բոլոր արտերը քեզ պիտի վերադարձնեմ, եւ դու միշտ իմ սեղանից հաց պիտի ուտես»: 8 Մեմփիբոսթէն գետին խոնարհուեց եւ ասաց. «Քո ծառան ո՞վ է, որ մի մեռեալ շան վրայ, ինչպիսին ես եմ, ուշադրութիւն ես դարձնում»: 9 Արքան կանչելով Սաւուղի ծառայ Սիբային՝ ասաց. «Այն ամէնը, ինչ պատկանում էր Սաւուղին ու նրա ամբողջ տանը, տալիս եմ քո տիրոջ որդուն: 10 Դու, քո որդիներն ու քո ծառաները կը մշակէք նրա հողը, հացը կը բերէք քո տիրոջ տունը, որ ուտեն: Քո տիրոջ որդի Մեմփիբոսթէն միշտ իմ սեղանից պիտի հաց ուտի»: 11 Սիբան ունէր տասնհինգ որդի եւ քսան ծառայ: Սիբան ասաց արքային. «Ըստ ամենայնի, ինչ որ իմ տէր արքան հրամայեց իր ծառային, այնպէս էլ կ'անի քո ծառան»: Եւ Մեմփիբոսթէն Դաւթի սեղանից էր հաց ուտում, որպէս թէ արքայի որդիներից մէկը լինէր: 12 Մեմփիբոսթէն ունէր մի փոքրիկ որդի, որի անունը Միքա էր: Սիբայի տան բոլոր բնակիչները Մեմփիբոսթէի ծառաներն էին: 13 Մեմփիբոսթէն բնակւում էր Երուսաղէմում, քանի որ միշտ արքայի սեղանից էր ուտում: Նա երկու ոտքից կաղ էր:

ԴԱՒԹԻ ԻՇԽԱՆՆԵՐԸ՝ ԱՆԱՐԳՈՒԱԾ

10 Դրանից յետոյ մեռաւ ամոնացիների արքան, եւ նրա որդի Անոնը թագաւորեց նրա փոխարէն: 2 Դաւիթն ասաց. «Մարդասիրութիւն անենք Նաասի որդի Անոնի նկատմամբ, որովհետեւ նրա հայրն էլ իմ նկատմամբ էր մարդասիրութիւն արել»: Դաւիթն իր իշխաններին ուղարկեց նրա մօտ, որ նրանց միջոցով ցաւակցի հօր համար: Դաւթի իշխանները գնացին ամոնացիների երկիրը: 3 Ամոնացիների իշխաններն ասացին իրենց տէր Անոնին. «Մի՞թէ Դաւիթը հօրդ մեծարելու համար է քեզ մխիթարողներ ուղարկել: Ո՛չ: Դաւիթն իր իշխաններին ուղարկել է, որ գնեն, հետախուզեն քո քաղաքները: 4 Դաւիթն իր իշխաններին քեզ մօտ է ուղարկել լրտեսելու համար»: Եւ նա Դաւթի իշխաններին բռնեց, նրանց մօրուքները ածիլեց եւ նրանց զգեստները մէջտեղից մինչեւ ծայրը պատռելով՝ արձակեց նրանց: 5 Այս մարդկանց հետ պատահածի մասին պատմեցին Դաւթին, նա նրանց ընդառաջ մարդ ուղարկեց, քանզի այդ

մարդիկ խիստ անարգուած էին: Արքան ասաց. «Մնացէ՛ք Երիքովում մինչեւ որ ձեր մօրուքները աճեն, եւ ապա կը վերադառնաք: 6 Երբ ամոնացիները տեսան, որ անարգել են Դաւիթի ժողովրդին, մարդ ուղարկեցին եւ Ռոբի ու Սուբայի ասորիներից վարձեցին քսան հազար հետեւակ, ինչպէս նաեւ ամաղէկացիների արքայից հազար ու Ստոբի արքայից տասներկու հազար զինուոր:

7 Դաւիթ արքան այդ լսելով՝ Յովաբին ընտիր զօրքով ուղարկեց նրանց դէմ: 8 Ամոնացիները պատերազմելու համար ճակատ կազմեցին ասորիների Սուբա քաղաքի դարպասի մօտ, իսկ ռոբացիները, ստոբացիներն ու ամաղէկացիները առանձին էին կանգնել դաշտում: 9 Յովաբը տեսնելով, որ իր վրայ յարձակւում են առջեւից ու յետեւից, բոլոր իսրայէլացիներից ընտրեց երիտասարդներ եւ ասորիների դէմ ճակատ կազմեց: 10 Զօրքի մնացած մասը նա յանձնեց իր եղբօրը՝ Աբեսային: Նրանք ճակատ կազմեցին ամոնացիների դէմ: 11 Նա ասաց. «Եթէ ասորիներն ինձ նեղեն, դուք ինձ օգնութեան կը հասնէք, իսկ եթէ ամոնացիները քեզ նեղեն, մենք օգնութեան կը հասնենք: 12 Կորովի՛ եղիր, զօրավիդ լինենք մեր ժողովրդի ու մեր Աստծու քաղաքների բնակիչներին, եւ Տէրը կ'անի իր աչքին հաճելի եղածը»: 13 Յովաբն իր զօրքով պատերազմի ելաւ ասորիների դէմ, եւ ասորիները փախան նրա առաջից: 14 Ամոնացիները երբ տեսան, որ ասորիները փախչում են, իրենք եւս փախուստի դիմեցին Աբեսայի առաջից եւ մտան քաղաք: Յովաբը ամոնացիների մօտից վերադարձաւ ու եկաւ Երուսաղէմ:

15 Երբ ասորիները տեսան, որ իրենք պարտուեցին Իսրայէլից, մէկտեղ հաւաքուեցին: 16 Ադրաազարը մարդ ուղարկեց եւ գետի այն կողմի ասորիներին հաւաքեց Քաղամակում: Նրանք եկան հասան Եղամ, եւ Ադրաազարի իշխան Սոբակը զօրքի գլուխն անցաւ: 17 Դաւթին յայտնեցին այդ մասին: Նա հաւաքեց բոլոր իսրայէլացիներին, անցաւ Յորդանան գետը եւ հասաւ Քաղամակ: Ասորիները Դաւթի դիմաց գնդեր հանեցին ու նրա դէմ պատերազմեցին: 18 Ասորիները փախան իսրայէլացիների առաջից, եւ Դաւիթը ասորիների եօթը հարիւր մարտակառքերն ու քառասուն հազար հեծեալները ոչնչացրեց, զօրքի հրամանատար Սոբակին հարուածեց, ու սա տեղնուտեղը մեռաւ: 19 Ադրաազարին հպատակ բոլոր թագաւորները երբ տեսան, որ իրենք Իսրայէլից պարտութիւն են կրել, անձնատուր եղան, Իսրայէլի հետ հաշտութեան ուխտ կնքեցին, նրա հպատակները դարձան, իսկ ասորիները վախեցան այնուհետեւ ամոնացիներին օգնել:

ԴԱՒԻԹԸ ԵՒ ԲԵՐՍԱԲԷԷՆ

11 Հետեւեալ տարին, երբ թագաւորները արշաւի էին ելնելու, Դաւիթը Յովաբին իր ծառաների ու բոլոր իսրայէլացիների հետ ուղարկեց, որ կոտորեն ամոնացիներին եւ պաշարեն Ռաբաթը, իսկ ինքը մնաց Երուսաղէմում:

2 Երեկոյեան կողմ, երբ Դաւիթն իր անկողնից ելնելով ման էր գալիս թագաւորական պալատի տանիքի վրայ, տեսաւ, որ մի կին լողանում էր տանիքի վրայ: 3 Այդ կինը արտաքինով շատ գեղեցիկ էր: Դաւիթը մարդ ուղարկեց ու հարցուփորձ արեց այդ կնոջ մասին: Նրան ասացին. «Չէ՞ որ դա քետացի Ուրիայի կինն է, Եղիաբի դուստր Բերսաբէէն»: 4 Դաւիթը պատգամաւորներ ուղարկեց, բերել տուեց նրան եւ մտաւ նրա ծոցը: Նա դաշտանից նոր էր մաքրուել: Կինը վերադարձաւ իր տունը եւ յղիացաւ: 5 Նա մարդ ուղարկեց Դաւթի մօտ եւ ասաց. «Յղի եմ ես»: Դաւիթը մարդ ուղարկեց Յովաբի մօտ՝ ասելով. «Ինձ մօ՛տ ուղարկիր քետացի Ուրիային»: 6 Եւ Յովաբը Ուրիային ուղարկեց Դաւթի մօտ: 7 Եկաւ Ուրիան, ներկայացաւ Դաւթին: Դաւիթը հարցրեց Յովաբի ողջութեան, զինուորների առողջութեան ու պատերազմի վիճակի մասին: 8 Ուրիան ասաց. «Ամէն ինչ բարեյաջող է»: Դաւիթն ասաց Ուրիային. «Ելի՛ր, գնա՛ քո տունը եւ լուա՛ ոտքերդ»: Ուրիան դուրս եկաւ արքայի տնից, եւ նրա յետեւից արքան պարգեւ ուղարկեց: 9 Ուրիան քնեց արքայի տան դռանը նրա ծառաների հետ. նա իր տունը չգնաց: 10 Դաւթին պատմեցին՝ ասելով, թէ Ուրիան իր տունը չի գնացել: Դաւիթն ասաց Ուրիային. «Չէ՞ որ ճանապարհից ես եկել, ինչո՞ւ քո տունը չգնացիր»: 11 Ուրիան ասաց Դաւթին. «Աստծու ուխտի տապանակը, Իսրայէլի ու Յուդայի երկրի բանակները վրաններում են բնակւում, իմ տէր Յովաբն ու իմ տիրոջ ծառաները բաց դաշտում են բնակւում, ես իմ տո՞ւնը գնամ ուտելու, ըմպելու եւ իմ կնոջ հետ քնելու համար: Այդ ինչպէ՞ս կարող է պատահել: Երդւում եմ քո կեանքով, որ ես այդ բանը չեմ անի»: 12 Դաւիթն ասաց Ուրիային. «Այսօր էլ այստեղ մնա՛, եւ վաղը քեզ կ'արձակեմ»: Այդ օրը Ուրիան մնաց Երուսաղէմում: 13 Յաջորդ օրը Դաւիթը կանչեց նրան: Սա կերաւ նրա մօտ, խմեց ու հարբեց եւ երեկոյեան քնեց իր անկողնում, իր տիրոջ ծառաների հետ. նա իր տունը չգնաց:

14 Առաւօտեան Դաւիթը նամակ գրեց Յովաբին եւ Ուրիայի միջոցով ուղարկեց նրան: 15 Նամակում գրուած էր. «Ուրիային ուղարկի՛ր պատերազմի թէժ տեղերը, իսկ դուք յե՛տ քաշուեցէք նրանից, որ նա վիրաւորուի ու մեռնի»: 16 Երբ Յովաբը քաղաքը պաշարել էր, Ուրիային ուղարկեց այնտեղ, ուր գիտէր, թէ զօրաւոր մարդիկ կան: 17 Քաղաքի մարդիկ պատերազմի ելան Յովաբի դէմ: Դաւթի զօրքից մարդիկ ընկան եւ մեռան: Մեռաւ նաեւ քետացի Ուրիան: 18 Յովաբը մարդ ուղարկեց եւ արքային պատմեց ամէն ինչ, որ պատահել էր պատերազմում: 19 Նա պատգամաւորներին պատուիրեց՝ ասելով. «Հէնց որ պատերազմի բոլոր դէպքերն արքային պատմես ու վերջացնես եւ տեսնես, թէ արքան զայրանալով կ'ասի քեզ. "Ինչո՞ւ էք քաղաքին մօտեցել պատերազմելու, չգիտէի՞ք, որ պարսպից վրայից նետեր կ'արձակեն: 20 Ո՞վ սպանեց Ների որդի Յերոբովաղի որդի Աբիմելէքին: 21 Չէ՞ որ մի կին նրա վրայ պարսպի վրայից երկանաքարի մի բեկոր նետեց, եւ նա մեռաւ Թամասում: Ինչո՞ւ էք մօտեցել պարսպին", այն ժամանակ կ'ասես. "Քո ծառայ քետացի Ուրիան էլ մեռաւ"»: 22 Յովաբի պատգամաբերը գնաց Երուսաղէմ, արքայի մօտ, հասաւ ու հաղորդեց Դաւթին ամէն ինչ՝ պատերազմի բոլոր դէպքերը, ինչպէս պատուիրել էր Յովաբը: Դաւիթը բարկանալով Յովաբի վրայ՝ ասաց պատգամաբերին. «Ինչո՞ւ էք քաղաքին մօտեցել պատերազմելու, չգիտէ՞ք, որ պարսպից ձեզ հարուածելու են: Ո՞վ սպանեց Յերոբովաղի որդի Աբիմելէքին: Չէ՞ որ մի կին պարսպից նրա վրայ երկանաքարի մի բեկոր նետեց, եւ նա մեռաւ Թամասում: Ինչո՞ւ էք մօտեցել պարսպին»: 23 Պատգամաբերն ասաց Դաւթին. «Այդ մարդիկ մեզանից ուժեղ էին: 24 Նրանք դուրս եկան մեր դէմ, մենք նրանց հալածեցինք մինչեւ քաղաքի դարպասը, բայց աղեղնաւորները պարսպի վրայից նետեր տեղացին քո ծառաների վրայ: Արքայի ծառաներից ոմանք մեռան, մեռաւ նաեւ քո ծառայ քետացի Ուրիան»: 25 Դաւիթն ասաց պատգամաբերին. «Այսպէս կ'ասես Յովաբին. "Եղածի համար մի՛ անհանգստացիր, որովհետեւ սուրը երբեմն այսպէս է հարուածում, երբեմն՝ այնպէս: Սաստկացրո՛ւ պատերազմը քաղաքի դէմ ու կործանի՛ր այն: Եւ զօտեպնդի՛ր քեզ»:

26 Երբ Ուրիայի կինը լսեց, որ իր ամուսինը՝ Ուրիան սպանուել է, ողբաց իր մարդու մահը: 27 Երբ սուգն անցաւ, Դաւիթը մարդ ուղարկեց, նրան իր տունը բերեց, սա դարձաւ նրա կինը եւ նրա համար որդի ծնեց: Դաւթի այս արածը չար բան երեւաց Տիրոջ աչքին:

ՆԱԹԱՆԻ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ԵՒ ԴԱՒԹԻ ԶՂՋՈՒՄԸ

12 Տէրը Նաթան մարգարէին ուղարկեց Դաւթի մօտ: Սա, գալով նրա մօտ, ասաց. «Մի քաղաքում երկու մարդ կար. մէկը հարուստ էր, միւսն՝ աղքատ: 2 Հարուստն ունէր շատ ու շատ հօտեր ու նախիրներ, իսկ աղքատը ոչինչ չունէր, բացի մի փոքրիկ

էգ գառնուկից, որը ծախու էր առել ու պահում էր: 3 Գառնուկը մեծացաւ նրա ու նրա որդիների հետ: Նա ուտում էր նրա հացից, նրա բաժակից խմում, նրա ծոցում էր քնում. 4 դա կարծես նրա դուստրն էր: Այդ հարուստ մարդու մօտ մի անցորդ եկաւ: Հարուստը չուզեց իր հօտերից ու արջառներից մի անասուն մորթել, որ հիւրասիրի իր մօտ եկած անցորդին, առաւ աղքատի գառնուկը եւ կերակուր պատրաստեց իր մօտ եկած մարդու համար»:

5 Դաւիթը խիստ բարկանալով այդ մարդու վրայ՝ ասաց Նաթանին. «Կենդանի է Տէրը. այդ բանն անող մարդը արժանի է մահուան: 6 Նա այդ գառնուկի համար եօթնապատիկ պէտք է հատուցի այն բանի փոխարէն, որ նա արեց. այսինքն՝ մորթեց ուրիշի միակ գառը»: 7 Նաթանն ասաց Դաւթին. «Դո՛ւ ես այն մարդը, որ արել է այդ բանը: Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Ես եմ, որ քեզ թագաւոր օծեցի ամբողջ Իսրայէլի վրայ, ես եմ, որ քեզ փրկեցի Սաւուղի ձեռքից, 8 քեզ յանձնեցի քո տիրոջ՝ Սաւուղի տունը, քո տիրոջ կանայք քո գրկում են, քեզ տուեցի Իսրայէլն ու Յուդայի երկիրը, եւ եթէ դրանք քիչ ես համարում, նոյնքան էլ կ'աւելացնեմ"»: 9 Ինչո՞ւ Տիրոջ խօսքն անարգեցիր նրա աչքի առաջ չարիք գործելով: Դու սրով սպանեցիր քետացի Ուրիային եւ նրա կնոջը քեզ կնութեան առար, նրան սպանեցիր ամոնացիների սրով: 10 Արդ, սուրը յաւիտեանս թող չհեռանայ քո տնից փոխարէնն այն բանի, որ ինձ անարգեցիր եւ քետացի Ուրիայի կնոջը քեզ կնութեան առար: 11 Այսպէս է ասում Տէրը. "Ահա ես քո դէմ չարիք կը յարուցեմ քո տնից. աչքերիդ առաջ քո կանանց պիտի վերցնեմ եւ տամ քո ընկերոջը, նա այս արեգակի լոյսի տակ[†] պառկելու է քո կանանց հետ: 12 Դու այդ բանը ծածուկ արեցիր, իսկ ես այն անելու եմ ամբողջ Իսրայէլի աչքի առաջ, օրը ցերեկով"»: 13 Դաւիթն ասաց Նաթանին. «Մեղանչել եմ Տիրոջ դէմ»: Նաթանն ասաց Դաւթին. 14 «Տէրը ներեց քո մեղքը, եւ դու չես մեռնի, բայց քանի որ դրանով թշնամիներին առիթ տուեցիր Տիրոջը հայհոյելու, քեզանից ծնուելիք որդիդ պէտք է մեռնի»:

[†]Օրը ցերեկով:

ԴԱՒԹԻ ՈՐԴՈՒ ՄԱՀԸ

15 Նաթանը գնաց իր տունը, եւ Տէրը հարուածեց Դաւթի համար Ուրիայի կնոջ ծնած մանկանը, եւ սա հիւանդացաւ: 16 Դաւիթը մանկան համար աղաչեց Աստծուն. Դաւիթը ծոմ պահեց ու գիշերը գետնին քնեց: 17 Պալատականները ելան գնացին նրա մօտ, որ նրան գետնից բարձրացնեն, բայց նա չուզեց գետնից վեր կենալ եւ նրանց հետ հաց չկերաւ: 18 Երբ եօթներորդ օրը մանուկը մեռաւ, պալատականները վախենում էին Դաւթին յայտնել, թէ մանուկը մեռաւ, քանզի ասում էին. «Քանի դեռ մանուկը կենդանի էր, խօսեցինք նրա հետ, բայց նա մեր ասածը չլսեց: Հիմա ինչպէ՞ս ասենք, թէ մանուկը մեռաւ: Նա չարիք կը գործի»: 19 Դաւիթը տեսնելով, որ պալատականները փսփսում են եւ հասկանալով, որ մանուկը մահացել է, ասաց պալատականներին. «Մի՞թէ մանուկը մեռաւ»: Նրանք ասացին՝ «Մեռաւ»: 20 Դաւիթը գետնից վեր կացաւ, լուացուեց ու օծուեց, փոխեց իր զգեստները, մտաւ Աստծու տունն ու երկրպագեց նրան: Ապա նա իր տունը մտաւ, ուզեց հաց ուտել: 21 Նրա առաջ հաց դրեցին, ու նա կերաւ: Պալատականները նրան ասացին. «Այս ի՞նչ արեցիր մանկան համար. քանի նա կենդանի էր, ծոմ էիր պահում, լալիս ու տանջւում, իսկ երբ մանուկը մեռաւ, վեր կացար, կերար ու խմեցիր»: 22 Դաւիթն ասաց. «Քանի մանուկը կենդանի էր, ծոմ էի պահում ու լալիս, որովհետեւ մտածում էի. "Ո՞վ գիտի, գուցէ Տէրը ողորմի, եւ մանուկն ապրի"»: 23 Հիմա որ մանուկը մեռաւ, ես ինչո՞ւ ծոմ պահեմ, մի՞թէ կարող եմ նրան յետ կեանքի կոչել: Ես եմ նրա մօտ գնալու, իսկ նա ինձ մօտ չի վերադառնայ»:

ՍՈՂՈՄՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ

24 Դաւիթը մխիթարեց իր կնոջը՝

Բերսաբէէին: Դաւիթը գնաց նրա մօտ, պառկեց նրա հետ, կինը յղիացաւ ու ծնեց որդի: Դաւիթը նրա անունը դրեց Սողոմոն: 25 Տէրը սիրեց նրան, Նաթան մարգարէի միջոցով պատգամ յղեց, եւ սա մանկան անունը Տիրոջ համար Յեդեդի[†] դրեց:

[†]Նշանակում է՝ Տիրոջից սիրուած:

ԴԱՒԻԹԸ ԳՐԱՒՈՒՄ Է ՌԱԲԱԹԸ
(Ա Մնաց. 20. 1-3)

26 Յովաբը Ռաբաթում պատերազմում էր ամոնացիների դէմ եւ գրեթէ գրաւել էր թագաւորանիստ քաղաքը: 27 Յովաբը պատգամաբերներ ուղարկեց Դաւթին՝ ասելով. 28 «Ռաբաթի դէմ պատերազմել եմ եւ գրաւել ջրերի քաղաքը: Արդ, հաւաքի՛ր մնացած ժողովրդին, քաղաքի դիմաց բանա՛կ դիր ու գրաւի՛ր այն, որպէսզի ե՛ս գրաւած չլինեմ քաղաքը, եւ իմ անունը չկապուի դրա հետ»: 29 Դաւիթը հաւաքեց ամբողջ ժողովրդին, գնաց Ռաբաթ ու պատերազմելով գրաւեց այն: 30 Նա նրանց թագաւոր Մեղքոմի գլխից վերցրեց թագը, որի քաշը մի տաղանդ[‡] ոսկի էր եւ զարդարուած էր թակարժէք քարերով: Դա դրեցին Դաւթի գլխին: Նա քաղաքից խիստ շատ աւար տարաւ: 31 Նա դուրս հանեց այդտեղի ժողովրդին, նրանց լծեց սղոցի ու երկաթէ կացինների աշխատանքների, գործի դրեց աղիւսի փռում: Նա այսպէս վարուեց նաեւ ամոնացիների բոլոր քաղաքներում: Դաւիթն ու ամբողջ ժողովուրդը դրանից յետոյ վերադարձան Երուսաղէմ:

[‡]Նուրջ երեսուն կիլոգրամ:

ԱՄՈՆՆ ՈՒ ԹԱՄԱՐԸ

13 Դաւթի որդի Աբեսաղոմը ունէր շատ գեղեցիկ մի քոյր, որի անունն էր Թամար: Դաւթի որդի Ամոնը սիրեց նրան: 2 Ամոնը նեղւում էր այն ստիճան, որ հիւանդացաւ իր քոյր Թամարի պատճառով: Թամարը կոյս էր, եւ Ամոնի համար դժուար էր նրան մերձենալու որեւէ փորձ անել: 3 Ամոնն ունէր Յովնադաբ անունով մի ընկեր, որը Դաւթի եղբայր Սամայի որդին էր: Յովնադաբը շատ խորագէտ մարդ էր: 4 Սա ասաց Ամոնին. «Ինչո՞ւ ես դու այդպէս օրէցօր հիւծւում, ո՛վ արքայորդի, եւ ինձ չես պատմում»: Ամոնը նրան ասաց. «Իմ եղբայր Աբեսաղոմի քրոջը՝ Թամարին եմ սիրում»: 5 Յովնադաբն ասաց նրան. «Պառկի՛ր քո անկողնում, հիւա՛նդ ձեւացիր, ու երբ հայրդ գայ քեզ տեսնելու, կ'ասես նրան. "Թող իմ քոյր Թամարը գայ, իմ աչքերի առաջ ուտելիք պատրաստի, ինձ խաւիծ տայ, որպէսզի տեսնեմ եւ ուտեմ նրա ձեռքից"»: Ամոնը պառկեց ու հիւանդ ձեւացաւ:

6 Արքան եկաւ նրան տեսնելու: Ամոնն ասաց արքային. «Թող իմ քոյր Թամարը գայ ինձ մօտ, իմ աչքի առաջ ուտելու համար բլիթներ պատրաստի, որ ես ուտեմ նրա ձեռքից»: 7 Դաւիթը մարդ ուղարկեց տուն, Թամարի մօտ՝ ասելով. «Գնա՛ քո եղբայր Ամոնի տունը եւ նրա համար կերակո՛ւր պատրաստիր»: 8 Թամարը գնաց իր եղբայր Ամոնի տունը, ուր նա պառկած էր, վերցրեց ալիւրը, խմոր շաղեց, նրա աչքի առաջ բլիթներ պատրաստեց ու եփեց դրանք: 9 Թամարն առաւ տապակը եւ դատարկեց նրա առաջ, սակայն նա չուզեց ուտել: Ամոնն ասաց. «Իմ մօտ գտնուող բոլոր մարդկանց դո՛ւրս հանեցէք»: Բոլորին դուրս հանեցին իր մօտից: Ամոնն ասաց Թամարին. 10 «Կերակուրը տա՛ր սենեակ, որ քո ձեռքից ուտեմ»: Թամարն առաւ իր պատրաստած բլիթները, 11 տարաւ իր եղբայր Ամոնի սենեակը ու մօտեցրեց նրան, որ ուտի: 12 Նա բռնելով նրան՝ ասաց. «Եկ պառկի՛ր ինձ հետ, քո՛յր իմ»: Թամարն ասաց նրան. «Ո՛չ, եղբա՛յր, ինձ մի՛ բռնացիր, քանզի Իսրայէլում այդպիսի բան չի արւում: 13 Դու էլ մի՛ արա այդ անզգամութիւնը: Ես ինչպէ՞ս տանեմ իմ նախատինքը: Դու անզգամներից մէկը կը լինես Իսրայէլում: Արդ, խօսի՛ր արքայի հետ, եւ նա չի հրաժարուի ինձ քեզ տալուց»: 14 Ամոնը չուզեց լսել նրան ու ձեռքը գցելով բռնութիւն գործադրեց եւ պառկելով նրա հետ՝ բռնաբարեց նրան: 15 Ամոնը դրանից

յետոյ շատ մեծ ատելութեամբ լցուեց Թամարի դէմ, այնպէս որ աւելի մեծ էր ատելութիւնը, որով ատեց նրան, քան նախկին սէրը, որով սիրել էր: Ամոնն ասաց նրան. «Վե՛ր կաց, գնա՛»: 16 Թամարը նրան ասաց. «Դուրս քշելով ինձ՝ աւելի մեծ չարիք ես գործում, քան այն, որ արեցիր ինձ հետ»: 17 Ամոնը, սակայն, չուզեց լսել նրան եւ, կանչելով իր տան վերակացու սպասաւորին, ասաց նրան. «Դո՛ւրս հանիր սրան իմ մօտից եւ դուռը փակի՛ր նրա յետեւից»: 18 Թամարի վրայ գունագեղ կոճակներով ասեղնագործ պարեգօտ կար. այդպիսի զգեստներ էին հագնում թագաւորների կոյս դուստրերը: Սպասաւորը նրան դուրս հանեց ու դռները փակեց նրա յետեւից: 19 Թամարը մոխիր վերցնելով՝ ածեց իր գլխին, պատառոտեց կոճակներով զարդարուն պարեգօտը, որ հագել էր, ձեռքը դրեց իր գլխին եւ գնաց՝ լաց լինելով: 20 Նրա եղբայր Աբեսաղոմը հարցրեց նրան. «Մի՞թէ քո եղբայր Ամոնը քեզ հետ պառկեց: Արդ, քո՛յր իմ, լո՛ւռ մնա, որովհետեւ նա քո եղբայրն է: Մտքիցդ մի՛ անցկացրու այդ բանը պատմել»: Եւ Թամարը, որպէս այրի, բնակուեց իր եղբայր Աբեսաղոմի տանը: 21 Արքան այս բաները լսելով՝ խիստ բարկացաւ, սակայն չվրդովեց իր որդի Ամոնի հոգին, քանի որ նա իր անդրանիկ որդին էր, եւ արքան սիրում էր նրան:

22 Աբեսաղոմը Ամոնի մասին վատ կամ լաւ բան չասաց, բայց Աբեսաղոմն ատում էր Ամոնին այն բանի համար, որ նա բռնաբարել էր իր քրոջը՝ Թամարին:

ԱԲԵՍԱՂՈՄԸ ՍՊԱՆԵԼ Է ՏԱԼԻՍ ԱՄՈՆԻՆ

23 Երեք տարի† անց, երբ Աբեսաղոմը Եփրեմի երկրին մերձակայ Բեթմարոն բնակավայրում պէտք է խուզէր իր ոչխարները, իր մօտ հրաւիրեց արքայի բոլոր որդիներին: 24 Աբեսաղոմը գալով արքայի մօտ՝ ասաց նրան. «Ահաւասիկ քո ծառայի ոչխարները խուզելու ժամանակն է: Արքան ու նրա ծառաները քո ծառայի հետ թող գնան Բեթմարոն»: 25 Արքան ասաց Աբեսաղոմին. «Ո՛չ, որդեա՛կ իմ, ամէնքս թող չգնանք ու չծանրաբեռնենք քեզ»: Նա պնդեց, սակայն արքան չուզեց գնալ եւ օրհնեց նրան: 26 Աբեսաղոմն ասաց. «Այդ դէպքում գոնէ ինձ հետ թող գայ իմ եղբայր Ամոնը»: 27 Արքան ասաց. «Ինչո՞ւ նա գնայ քեզ հետ»: Աբեսաղոմը պնդեց, եւ արքան նրա հետ ուղարկեց Ամոնին ու իր բոլոր որդիներին: 28 Աբեսաղոմը թագաւորական խրախճանք սարքեց: Նա պատուիրեց իր ծառաներին՝ ասելով. «Տեսէ՛ք, երբ որ Ամոնը հարբի գինուց, եւ ես ձեզ ասեմ՝ "Խփեցէ՛ք Ամոնին եւ սպանեցէ՛ք նրան", մի՛ վախեցէք, չէ՞ որ ես եմ ձեզ հրամայում: 29 Քաջասի՛րտ եղէք ու զօրացէ՛ք»: Եւ Աբեսաղոմի զինուորները Ամոնին արեցին այն, ինչ հրամայել էր Աբեսաղոմը: Արքայի բոլոր որդիները ելան, եւ ամէն մէկն իր ջորին հեծնելով՝ փախաւ: 30 Մինչ նրանք ճանապարհին էին, գոյժը հասաւ Դաւթին, թէ Աբեսաղոմը կոտորել է արքայի բոլոր որդիներին, նրանցից ոչ ոքի կենդանի չի թողել: 31 Ելաւ արքան, իր զգեստները պատառոտեց ու գետին ընկաւ: Բոլոր ծառաները նրա շուրջն էին կանգնել իրենց պատառոտուած զգեստներով: 32 Դաւթի եղբայր Սամաայի որդի Յովնադաբն ասաց. «Մի՛ ասա, իմ տէ՛ր արքայ, թէ՝ "Արքայի բոլոր որդիները մեռան", քանի որ միայն Ամո՛նը մեռաւ: Աբեսաղոմն այդպէս էր որոշել այն օրուանից, երբ Ամոնը բռնաբարել էր իր քրոջը՝ Թամարին: 33 Արդ, թող իմ արքան այդ բանն իր սրտին մօտիկ չընդունի եւ չասի, թէ՝ "Արքայի բոլոր որդիները մեռան": Միայն Ամո՛նը մեռաւ»: 34 Եւ Աբեսաղոմը փախաւ: Դիտանոցի երիտասարդ պահակն իր աչքերը բարձրացնելով՝ տեսաւ, որ մի խումբ մարդիկ են գալիս լերան լանջի զառիվայր ճանապարհով: Նա եկաւ ու պատմեց արքային՝ ասելով. «Որոնիմի ճանապարհին, լերան լանջին մարդկանց տեսայ»: 35 Յովնադաբն ասաց արքային. «Ահա արքայի որդիներն են գալիս: Ինչ որ ասաց քո ծառան, այդպէս էլ եղաւ»: 36 Երբ նա խօսքը վերջացրեց, ահա եկան արքայի որդիները եւ իրենց ձայնը բարձրացնելով՝ լաց եղան: Արքան էլ իր բոլոր ծառաների հետ հեկեկալով՝ լաց եղաւ:

37 Աբեսաղոմը փախաւ ու գնաց Գեսուրի արքայ Եմիուդի որդի Թոլմեմեմի մօտ, Մաքուլի երկիրը: Դաւիթը ամբողջ ժամանակ սուգ էր անում իր որդու համար, 38 իսկ Աբեսաղոմը փախել ու գնացել էր Գեսուր, ուր մնաց երեք տարի: 39 Դաւիթ արքայի զայրոյթը Աբեսաղոմի դէմ հանդարտուեց, որովհետեւ նա մխիթարուել էր մեռած Ամոնի համար:

ԱԲԵՍԱՂՈՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

14 Շարուհիի որդի Յովաբն իմացել էր, որ արքայի սիրտը վերստին տաքցել է Աբեսաղոմի հանդէպ: 2 Յովաբը մարդ ուղարկեց Թեկուէ եւ այնտեղից մի ճարպիկ կին բերելով՝ ասաց նրան. «Սգաւոր ձեւացի՛ր՝ սգոյ հագուստներ հագի՛ր, իւղով մի՛ օծուիր եւ դարձի՛ր այնպիսի մի կին, որ երկար ժամանակ մեռեալի վրայ է սգում: 3 Կը գնաս արքայի մօտ եւ նրա հետ այսպէս կը խօսես»: Եւ Յովաբը նրան յայտնեց այն, ինչ պէտք է ասէր: 4 Թեկուացի կինը մտաւ արքայի մօտ եւ երեսնիվայր գետին խոնարհուելով՝ ասաց. 5 «Փրկի՛ր ինձ, արքա՛յ, փրկի՛ր»: Արքան ասաց նրան. «Ի՞նչ է եղել քեզ»: Նա ասաց. «Ես մեծ տագնապի մէջ եմ: 6 Մի այրի կին եմ ես, ամուսինս մահացել է: Քո աղախինը երկու որդի ունէր: Երկուսը դաշտում կռուեցին, ու ոչ ոք չբաժանեց նրանց, եւ եղբայրներից մէկը միւսին խփեց ու սպանեց: 7 Ամբողջ ազգատոհմը վեր է կացել քո աղախնի դէմ՝ ասելով. "Իր եղբօրը սպանողին յանձնի՛ր, որ նրան սպանենք իր եղբօր արեան փոխարէն եւ քո ժառանգորդին վերացնենք": Այսպիսով նրանք ուզում են հանգցնել իմ յոյսի մնացած կայծը՝ իմ մարդու համար չթողնելով ո՛չ յետնորդ, ո՛չ էլ անուն երկրի երեսին»: 8 Արքան ասաց. «Ողջութեամբ գնա՛ քո տունը, եւ ես կը կարգադրեմ քո հարցը»: 9 Թեկուացի կինն ասաց. «Թող ինձ վրայ, արքա՛յ, եւ իմ տան վրայ լինի մեղքը, իսկ արքան ու նրա աթոռն անպարտ թող լինեն»: 10 Արքան ասաց. «Ո՞վ է քեզ հետ խօսելու: Նրան ինձ մօ՛տ բեր, եւ նա այլեւս քեզ չի մօտենայ»: 11 Կինն ասաց. «Թող արքան յիշի իր Տէր Աստծուն, որ չչատանան վրէժի համար արիւն թափողները եւ իմ որդուն չսպանեն»: Դաւիթն ասաց. «Կենդանի է Տէրը. քո որդու գլխից մի մազ անգամ գետին չի ընկնի»:

12 Կինն ասաց. «Թո՛յլ տուր, որ քո աղախինը մի խօսք ասի իր տէր արքային»: 13 Արքան ասաց. «Խօսի՛ր»: Կինն ասաց. «Ինչո՞ւ այդպիսի բան ես մտածում Աստծու ժողովրդի մասին, կամ թէ արքայի՞ բերանից ելաւ այն վնասաբեր խօսքը, որ արքան չվերադարձնի իրենից հեռացուածին, 14 որ նա մեռնի եւ, ինչպէս գետին թափած ջուրը, այլեւս չհաւաքուի, Աստուած նրա հոգին չառնի, եւ որեւէ մէկը չմտածի իրենից հեռացնել հեռացուածին: 15 Արդ, եկել եմ իմ տէր արքային ասելու այս խօսքերը, որպէսզի, երբ ժողովուրդն ինձ տեսնի, ասի, թէ՝ "Քո աղախինը խօսել է արքայի հետ, թերեւս արքան իր աղախնի խօսքը կատարի": 16 Քանզի արքան պէտք է լսի ու ինձ փրկի այն մարդու ձեռքից, որն ուզում է ինձ ու իմ որդուն Աստծու ժառանգութիւնից զրկել»: 17 Եւ կինն ասաց. «Թող իմ տէր արքայի խօսքը բարով կատարուի, քանզի իմ տէր արքան նման է Աստծու հրեշտակի, որը պատրաստ է լսելու բարին ու չարը, եւ թող քո Տէր Աստուածը քեզ հետ լինի»: 18 Արքան պատասխանեց եւ ասաց կնոջը. «Ինձանից մի՛ թաքցրու այն, ինչ քեզանից հարցնելու եմ»: 19 Կինն ասաց. «Ասա՛, տէ՛ր իմ արքայ»: Արքան ասաց. «Քո ասած այս բոլոր խօսքերի մէջ արդեո՞ք Յովաբի մատը չկայ»: Կինն ասաց արքային. «Երդւում եմ քո անձով, տէ՛ր իմ արքայ, որ ոչ ոք աջ կամ ձախ չի խոտորուի այն ամենից, որ ասաց իմ տէր արքան. քո ծառայ Յովաբը ինքն է ինձ պատուիրել, եւ նա է քո աղախնի բերանը դրել այս խօսքերը, որ ասում

†Երրայերէնում՝ երկու տարի:

եմ: 20 Այս խօսքի ձեւը փոխելու նպատակով է, որ քո ծառայ Ցովաբն արեց այս բանը: Իմ տէր արքան իմաստուն է Աստծու հրեշտակի պէս եւ գիտէ երկրի վրայ եղած ամէն բան»:

21 Արքան գնաց եւ ասաց Ցովաբին. «Ահաւասիկ անուամբ եմ ըստ քո ասածի. գնա յե՛տ դարձրու, բե՛ր պատանի Աբեսաղոմին»: 22 Ցովաբը երեսնիվայր գետին ընկնելով՝ երկրպագեց արքային, օրհնեց նրան: Ցովաբն ասաց. «Այսօր քո ծառան իմացաւ, որ շնորհ է գտել քո աչքում, տէ՛ր իմ արքայ, քանզի իմ տէր արքան իր ծառայի ասածը կատարեց»: 23 Ցովաբը ելաւ գնաց Գեսուր եւ Աբեսաղոմին բերեց Երուսաղէմ: 24 Արքան ասաց. «Թող իր տունը վերադառնայ եւ թող իմ երեսը չտեսնի»: Աբեսաղոմն իր տունը վերադարձաւ եւ արքայի աչքին չերեւաց:

ԱՐԵՍԱՂՈՄԸ ՀԱՇՏՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՏ

25 Ամբողջ Իսրայէլի մէջ Աբեսաղոմի պէս գեղեցիկ ու գովելի տղամարդ չկար: Ոտքի ծայրից մինչեւ գլուխը նա ոչ մի արատ չունէր: 26 Երբ իր գլխի մազերը կտրում էր, – իսկ նա ամէն տարուայ սկզբին էր կտրում, քանի որ մազերը խիստ ծանրանում էին նրա վրայ, – այդ կտրած մազերը կշռում էին երկու հարիւր սիկղ[†] ըստ արքունական կշռի: 27 Աբեսաղոմը երեք տղայ եւ մէկ աղջիկ ունեցաւ, որի անունն էր Թամար: Նա տեսքով շատ գեղեցիկ կին էր եւ, դառնալով Սողոմոնի որդի Ռոբովամի կինը, նրա համար ծնեց Աբիային:

28 Աբեսաղոմը երկու տարի[‡] մնաց Երուսաղէմում, բայց արքայի աչքին չերեւաց: 29 Աբեսաղոմը մարդ ուղարկեց Ցովաբի մօտ, որ սա այցելի արքային, բայց Ցովաբը չուզեց նրա մօտ գնալ: Երկրորդ անգամ Աբեսաղոմը լուր ուղարկեց, եւ նա դարձեալ չուզեց գնալ: 30 Աբեսաղոմն ասաց իր ծառաներին. «Տեսէ՛ք, իմ արտի մօտ գտնուող Ցովաբի արտը լի է գարիով, գնացէ՛ք եւ հրկիզեցէ՛ք այն»: Աբեսաղոմի ծառաները այրեցին Ցովաբի արտը: Ցովաբի ծառաները եկան իր մօտ իրենց պատառոտուած զգեստներով եւ ասացին. «Աբեսաղոմի ծառաները քո արտը այրեցին»: 31 Ցովաբը ելաւ եկաւ Աբեսաղոմի տունը եւ ասաց նրան. «Ինչո՞ւ են քո ծառաները հրկիզել իմ արտը»: 32 Աբեսաղոմն ասաց Ցովաբին. «Ես քեզ մօտ մարդ էի ուղարկել, թէ՝ "Ե՛կ այստեղ, որ քեզ ուղարկեմ արքայի մօտ՝ ասելու համար, թէ ես ինչո՞ւ եկայ Գեսուրից, քանի որ աւելի լաւ էր, որ դեռ այնտեղ մնայի, քան թէ արքայի երեսը չտեսնէի: Եթէ որեւէ յանցանք ունեմ, սպանի՛ր ինձ"»: 33 Ցովաբը մտնելով արքայի մօտ՝ հաղորդեց նրան նրա ասածը: Արքան կանչեց Աբեսաղոմին, որը մտնելով արքայի մօտ՝ երեսնիվայր գետին ընկաւ արքայի առաջ, երկրպագեց նրան, եւ արքան համբուրեց Աբեսաղոմին:

ԱՐԵՍԱՂՈՄԸ ՁԳՏՈՒՄ Է ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

15 Դրանից յետոյ Աբեսաղոմը մարտակառքեր, երիվարներ եւ առջեւից վազող յիսուն հոգի սուրհանդակ հաւաքեց: 2 Աբեսաղոմը կանուխ վեր էր կենում ու կանգնում դարպասի ճանապարհին: Ով գալիս էր արքայի դատաստանին դատ ներկայացնելու, Աբեսաղոմը նրան հարցնում էր. «Դու ո՞ր քաղաքից ես»: Երբ մարդը պատասխանում էր նրան, թէ՝ «Քո ծառան Իսրայէլի այսինչ ցեղից է», 3 Աբեսաղոմն ասում էր նրան. «Քո գործերը արդար են ու դիւրին, բայց արքայի մօտ քեզ ոչ ոք ունկնդիր չի լինի»: 4 Աբեսաղոմը մտածում էր. «Եթէ որեւէ մէկն ինձ դատաւոր նշանակէր այս երկրի վրայ, եւ ամէն ոք, որ վէճ կամ դատ ունենար, ինձ մօտ գար, ես արդարութեամբ կը դատէի նրան»: 5 Երբ որեւէ մէկը նրան էր մօտենում գլուխ տալու, նա երկարում էր ձեռքը, մարդուն դէպի իրեն էր քաշում ու համբուրում նրան: 6 Աբեսաղոմն այսպէս էր վարւում այն բոլոր իսրայէլացիների նկատմամբ, ովքեր դատի համար գալիս էին արքայի մօտ: Աբեսաղոմն այսպիսով շահում էր Իսրայէլի բոլոր մարդկանց սրտերը:

7 Չորս[†] տարի լրանալուց յետոյ Աբեսաղոմն ասաց իր հօրը. 8 «Գնամ ու Քեբրոնում կատարեմ Տիրոջը խոստացած իմ ուխտը, քանզի Ասորիքի Գեսուր քաղաքում բնակուելիս ծառադ ուխտեց Տիրոջը՝ ասելով. «Եթէ Տէրն ինձ վերադարձնի Երուսաղէմ, ես Տիրոջը զոհ եմ մատուցելու»: 9 Արքան նրան ասաց. «Գնա՛ խաղաղութեամբ»: 10 Նա վեր կացաւ ու գնաց Քեբրոն: Աբեսաղոմը պատգամաւորներ ուղարկելով Իսրայէլի բոլոր ցեղերին՝ ասաց. «Երբ եղջերափողի ձայն լսէք, ասացէ՛ք, թէ Աբեսաղոմ թագաւորն է թագաւորել Քեբրոնում»: 11 Աբեսաղոմի հետ գնացին երկու հարիւր հրաւիրեալներ, որոնք գնում էին միամիտ, ամենեւին տեղեակ չլինելով անցուդարձին: 12 Զոհերը մատուցելու ժամանակ մարդ ուղարկեց ու իր Գոլա քաղաքից կանչեց Դաւթի խորհրդական թեկուսցի Աքիտոփէլին: [‡]Շատ մարդ հաւաքուեց, եւ մեծ բազմութիւն էր հետեւում Աբեսաղոմին: 13 Գուժկան հասաւ Դաւթին, թէ Իսրայէլի մարդիկ անցել են Աբեսաղոմի կողմը:

ԴԱՒԻԹԸ ՓԱԽՉՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

14 Դաւիթն ասաց Երուսաղէմում իր հետ եղող բոլոր ծառաներին. «Ելէ՛ք փախչենք, որովհետեւ մեզ փրկութիւն չկայ Աբեսաղոմի ձեռքից: Շտապ գնացէ՛ք, որ արագ չհասնի մեզ եւ չարիք չբերի մեր գլխին, քաղաքները սրի չքաշի»: 15 Արքայի ծառաներն ասացին իրեն. «Ամէն ինչ, որ մեր տէր արքան կամենայ, ծառաներս պատրաստ ենք կատարելու»:

16 Թագաւորն ելաւ, եւ նրա ամբողջ տունը ոտքով գնաց նրա յետեւից: Արքան իր հարճերից տասը կին թողեց, որ տունը պահպանեն: 17 Արքան դուրս ելաւ, եւ նրա բոլոր ծառաները ոտքով գնալով կանգնեցին անապատում գտնուող ձիթենու մօտ: 18 Նրա բոլոր ծառաները մէկ առ մէկ անցնում էին նրա կողքով. բոլոր քերեթիները, օփելեթիներն ու բոլոր գեթացիները՝ վեց հարիւր մարդ, որ ոտքով եկել էին Գեթից, անցան Դաւթի առջեւից: 19 Արքան ասաց գեթացի Եթթիին. «Ինչո՞ւ ես դու էլ գնում մեզ հետ, յե՛տ դարձիր ու մնա՛ եկող արքայի մօտ, քանզի օտար մարդ ես դու, որ քո տեղից՝ Գեթից դուրս գալով՝ եկել ես: 20 Մի՞թէ քեզ տեղահան պիտի անեմ, որ գաս մեզ հետ, երբ ինքս էլ չգիտեմ, թէ ուր եմ գնում եւ ուր պիտի գնամ: Դու յե՛տ դարձիր, քո եղբայրներին էլ յե՛տ դարձրու քեզ հետ, եւ Տէրը քեզ ողորմութիւն ու արդարութիւն կ'անի»: 21 Եթթին պատասխան տուեց արքային՝ ասելով. «Կենդանի է Տէրը, եւ կենդանի է իմ տէր արքան. որտեղ լինի իմ տէր արքան, մեռած թէ կենդանի, այնտեղ կը լինեմ եւ ես՝ քո ծառան»: 22 Արքան ասաց Եթթիին. «Արի՛ ինձ հետ»: Եւ գեթացի Եթթին գնաց իր հետ եղած բոլոր ծառաներով ու ամբողջ բազմութեամբ հանդերձ: 23 Ամբողջ երկիրը բարձրաձայն լալիս էր: Ամբողջ զօրքը անցնում էր Կեդրոնի հեղեղատով: Արքան նոյնպէս անցաւ Կեդրոնի հեղեղատով: Ամբողջ զօրքն ու արքան գնում էին անապատ տանող ճանապարհով:

24 Սադոկն ու նրա հետ բոլոր ղեւտացիները Տիրոջ ուխտի տապանակը հանեցին Բեթարից: Նրանք կանգնեցրին Աստծու տապանակը եւ այն չտարան Բեթարից, մինչեւ որ ամբողջ ժողովուրդը այդ քաղաքից դուրս չեկաւ: 25 Արքան ասաց Սադոկին. «Աստծու տապանակը յե՛տ տար քաղաք եւ դի՛ր իր տեղը: Եթէ Աստծու առաջ շնորհ գտնեմ, նա ինձ յետ կը դարձնի եւ ինձ տեսնել կը տայ այն եւ նրա վայելչութիւնը: 26 Բայց եթէ ասի, թէ՝ "Դու ինձ հաճելի չես", թող ինձ անի այն, ինչ նրա աչքին հաճելի է»: Արքան ասաց Սադոկ քահանային. 27 «Այնպէս արէք, որ դու խաղաղութեամբ քաղաք վերադառնաս, եւ քո որդի Աքիմասն ու Աբիաթարի որդի Ցովնաթանը՝ ձեր երկու որդիները, ձեզ հետ լինեն: 28 Ես բանակատեղի եմ դնելու Ռաբոթ անա-

[†]Շուրջ երկու կիլոգրամ:
[‡]Որոշ ձեռագրերում՝ ամիս:

[†]Այլ բնագրերում՝ Դաւթի թագաւորութեան քառասուներորդ տարին լրանալուց յետոյ:
[‡]Սրբայերէնում՝ Մեծ դաւադրութիւն եղաւ:

պատում եւ կը մնամ, մինչեւ որ ձեզանից լուր ստանամ»: 29 Եւ Սադոկն ու Աբիաթարը տապանակը յետ դարձրին Երուսաղէմ, եւ այն մնաց այնտեղ:

30 Դաւիթը բարձրանում էր Ձիթենեաց զառիվերով, բարձրանում էր ու լալիս: Նա ծածկել էր գլուխը, բոբիկ էր գնում, եւ ամբողջ ժողովուրդը նրա հետ էր՝ գլուխները շորով ծածկած: Բոլորը, լաց լինելով, բարձրանում էին: 31 Դաւիթին յայտնեցին՝ ասելով. «Աքիտոփէլն էլ ապստամբների հետ է, Աբեսաղոմի մօտ»: Դաւիթն ասաց. «Տէ՛ր Աստուած իմ, խափանի՛ր Աքիտոփէլի խորհուրդը»: 32 Դաւիթը հասաւ Հռոս, ուր երկրպագեց Աստծուն:

Եւ ահա նրան ընդառաջ եկաւ արաքացի Քուսին՝ Դաւիթի բարեկամը, իր պատմուճանը պատառոտած ու հողը գլխին ածած: 33 Դաւիթն ասաց. «Եթէ ինձ հետ գաս, ինձ վրայ բեռ կը լինես, 34 իսկ եթէ յետ դառնաս քաղաք եւ ասես Աբեսաղոմին, թէ՝ "Քո եղբայրներն անցան, արքան յուզուած հետեւում էր ինձ, ու հայրդ եւս անցաւ, եւ արդ, քո ծառան եմ, արքա՛յ, թող ողջ մնամ քո առաջ. մի ժամանակ քո հօր ծառան էի, իսկ հիմա քո ծառան եմ ես, արքա՛յ", այդ ժամանակ խափանած կը լինես Աքիտոփէլի խորհուրդը: 35 Ահա այնտեղ քեզ հետ կը լինեն Սադոկ եւ Աբիաթար քահանաները, եւ եթէ որեւէ բան լսես արքայի տնից, յայտնի՛ր Սադոկ ու Աբիաթար քահանաներին: 36 Ահա նրանց հետ են իրենց երկու որդիները՝ Սադոկի որդի Աքիմասն ու Աբիաթարի որդի Յովնաթանը: Նրանց միջոցով ինձ յայտնեցէ՛ք ամէն ինչ, որ կը լսէք»: 37 Դաւիթի բարեկամ Քուսին եկաւ քաղաք, եւ Աբեսաղոմը մտաւ Երուսաղէմ քաղաքը:

ԴԱՒԻԹԸ ԵՒ ՍԻԲԱՆ

16 Դաւիթը հազիւ էր հեռացել Հռոսից, երբ Մեմփիբոսթէի ծառայ Սիբան նրան ընդառաջ եկաւ երկու բեռնաւորուած էշերով: Դրանց վրայ կային երկու հարիւր նկանակ, հարիւր ողկոյզ չամիչ, հարիւր շարոց արմաւ եւ մի սափոր գինի: 2 Արքան ասաց Սիբային. «Այդ ի՞նչ է»: Սիբան ասաց. «Էշերը արքայի համար են, որ նստի, հացն ու արմաւը՝ ծառաների համար, որ ուտեն, իսկ գինին՝ այստեղ, անապատում մնացած մարդկանց համար, որ խմեն»: 3 Արքան հարցրեց. «Ո՞ւր է քո տիրոջ որդին»: Սիբան պատասխանեց արքային. «Նա մնացել է Երուսաղէմում, քանզի ասել է. "Իսրայէլի տունն այսօր ինձ կը վերադարձնի իմ հօր թագաւորութիւնը"»: 4 Արքան ասաց Սիբային. «Թող քո՛նը լինի ամէն ինչ, որ Մեմփիբոսթէին է պատկանում»: Սիբան գլուխը խոնարհելով՝ ասաց. «Շնորհ գտայ քո առաջ, տէ՛ր իմ արքայ»:

ՍԵՄԷԻՆ ԱՆԻԾՈՒՄ Է ԴԱՒԹԻՆ

5 Դաւիթ արքան եկաւ մինչեւ Բաւուրիմ, եւ ահա այնտեղից, Սաւուղի տան ազգականներից մի մարդ մէջտեղ ելաւ: Դա Գերայի որդի Սեմէին էր: 6 Սա դուրս եկաւ անիծելով եւ քարեր շպրտելով Դաւիթի ու ամենքի վրայ, որոնք Դաւիթի հետ էին: Ամբողջ ժողովուրդն ու բոլոր քաջարիները կանգնած էին արքայի աջ ու ձախ կողմում: 7 Սեմէին, նրան անիծելով, այսպէս էր ասում. «Դո՛ւրս եկ, դո՛ւրս եկ, արիւնարբո՛ւ եւ անօրէ՛ն մարդ: 8 Տէրը Սաւուղի տան թափած ամբողջ արիւնը քո դէմ դարձրեց, քանի որ նրա փոխարէն դո՛ւ թագաւորեցիր: Տէրը քո թագաւորութիւնը յանձնեց քո որդի Աբեսաղոմի ձեռքը: Նա քեզ է վերադարձնում քո չարիքը, քանզի դու արիւնարբու ես»: 9 Շարուհիի որդի Աբեսան ասաց Դաւթին. «Ինչո՞ւ է մի սատկած շուն այսպէս անիծում իմ տէր արքային: 10 Թող գնամ ու կտրեմ նրա գլուխը»: Արքան ասաց. «Դուք ինձ հետ ի՞նչ գործ ունէք, Շարուհիի՛ որդիներ: Թողէ՛ք նա այդպէս անիծի, քանզի Տէրն է ասել նրան, որ անիծի Դաւթին: Ո՞վ կարող է նրան ասել, թէ՝ "Ինչո՞ւ ես այդպէս վարւում"»: 11 Դաւիթն ասաց Աբեսային ու իր բոլոր ծառաներին. «Եթէ ինձնից սերուած իմ որդին իմ մահն է ուզում, որչա՛փ եւս առաւել կ'ուզի Յեմինի որդին: Թո՛յլ տուէք նրան, որ անիծի, քանզի Տէրն է այդ ասել նրան: 12 Թերեւս Տէրը, տեսնելով իմ տառապանքները, ինձ բարիք հատուցի այսօրուայ անէծքի փոխարէն»: 13 Դաւիթը եւ իր հետ եղած մարդիկ գնացին իրենց ճանապարհով, իսկ Սեմէին գնում էր լեռան կողքով, նրան մօտիկ, գնում էր ու անիծում, նրա կողմը քարեր նետում, նրա վրայ հող շաղ տալիս: 14 Արքան ու նրան ընկերակցող ամբողջ տանջուած զօրքը եկան ու հանգստացան այնտեղ:

ԱԲԵՍԱՂՈՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

15 Աբեսաղոմը եւ բոլոր իսրայէլացիները մտան Երուսաղէմ: Նրանց հետ էր նաեւ Աքիտոփէլը: 16 Երբ Դաւթի բարեկամ արաքացի Քուսին եկաւ Աբեսաղոմի մօտ, Քուսին ասաց Աբեսաղոմին. «Կեցցէ՛ արքան»:

17 Աբեսաղոմն ասաց Քուսին. «Ա՞յդ է բարեկամիդ նկատմամբ ունեցած սէրդ, ինչո՞ւ չես գնացել քո բարեկամի հետ»: 18 Քուսին ասաց Աբեսաղոմին. «Այդպէս չէ. ում որ ընտրի Տէրը, ում որ ընտրեն իսրայէլացիները, այս ժողովուրդն ու բոլոր իսրայէլացիները, կը գնամ նրա հետ, նրանը կը լինեմ ու նրա հետ կը մնամ: 19 Բացի այդ, ես ո՞ւմ պիտի ծառայեմ, եթէ ոչ նրա որդուն: Ինչպէս որ ծառայել եմ քո հօրը, այդպէս էլ կը ծառայեմ քեզ»:

20 Աբեսաղոմն ասաց Աքիտոփէլին. «Խորհո՛ւրդ տուէք, թէ ի՞նչ պէտք է անենք»: 21 Աքիտոփէլն ասաց Աբեսաղոմին. «Մտի՛ր քո հօր հարճերի ծոցը, որոնց նա թողել էր իր տունը պահպանելու համար, եւ ամբողջ Իսրայէլը թող իմանայ, թէ խայտառակել ես հօրդ, եւ բոլոր քեզ հետ եղողները կը քաջալերուեն»: 22 Աբեսաղոմի համար վրան խփեցին տանիքում, եւ Աբեսաղոմը բոլոր իսրայէլացիների աչքի առաջ մտաւ իր հօր հարճերի ծոցը: 23 Աքիտոփէլի խորհուրդը, որ նա տալիս էր այդ օրերին, այնպիսին էր, կարծես մարդ Աստծուց էր խորհուրդ հարցնում: Այդպիսին էր Աքիտոփէլի ամէն մի խորհուրդը ինչպէս Դաւթի, այնպէս էլ Աբեսաղոմի համար:

ՔՈՒՍԻՆ ՄՈԼՈՐԵՑՆՈՒՄ Է ԱԲԵՍԱՂՈՄԻՆ

17 Աքիտոփէլն ասաց Աբեսաղոմին. «Թող տասներկու հազար մարդ ընտրեմ, այս գիշեր գնամ ու հետապնդեմ Դաւթին եւ գիշերով նրա դէմ ելնեմ: 2 Նա յոգնած է ու ձեռքերը թուլացած: Նրան խուճապի կը մատնեմ, նրա հետ եղած զօրքը կը փախչի, ու կը սպանեմ միայն արքային: 3 Ամբողջ զօրքը քեզ մօտ կը բերեմ, ինչպէս հարսն է իր ամուսնու մօտ գալիս, եւ միայն մէկ մարդու կեանքին վերջ կը տամ, իսկ ամբողջ զօրքը խաղաղութեան մէջ կը լինի»: 4 Այս խօսքը ճշմարիտ թուաց Աբեսաղոմին եւ Իսրայէլի բոլոր ծերերին:

5 Աբեսաղոմն ասաց. «Կանչեցէ՛ք արաքացի Քուսիին, եւ լսենք, թէ նա ինչ կ'ասի»: 6 Քուսին եկաւ Աբեսաղոմի մօտ, եւ Աբեսաղոմը հաղորդեց նրան այն խօսքերը, որ ասել էր Աքիտոփէլը: Նա աւելացրեց. «Հետեւե՞նք նրա ասածին, ապա թէ ոչ, դու ի՛նքդ խորհուրդ տուր»: 7 Քուսին ասաց Աբեսաղոմին. «Աքիտոփէլի այս անգամ տուած խորհուրդը լաւ չէ»: 8 Քուսին աւելացրեց. «Դու ինքդ ճանաչում ես հօրդ եւ նրա մարդկանց, որ նրանք շատ զօրեղ են եւ դառնացած սրտով, որովհետեւ նրանք նման են դաշտում ձագերը կորցրած ու զայրացած արջի: Քո հայրը պատերազմի մարդ է եւ զօրքին հանգիստ չի տայ: 9 Նա հիմա թաքնուած է բլուրներից մէկում կամ այլ տեղում, եւ եթէ յարձակուենք նրա վրայ, առաջինը ինքը կը գրոհի, եւ այն ժամանակ լսողները կ'ասեն, թէ՝ "Կոտորուել է Աբեսաղոմին հետեւող ժողովուրդը": 10 Նա հզօր մարդ է, եւ նոյնիսկ նա, ով առիւծի սիրտ ունի, նրա առաջ կը թուլանայ, որովհետեւ ամբողջ Իսրայէլը գիտի, թէ ուժեղ է քո հայրը, եւ նրա հետ եղողներն էլ ուժեղ են: 11 Ուստի ես քեզ այսպիսի խորհուրդ կը տամ. հաւաքի՛ր բոլոր իսրայէլացիներին՝ Դանից մինչեւ Բերսաբէէ, ծովեզրի աւազի չափ, եւ դու էլ անձամբ առաջնորդի՛ր նրանց: 12 Այն ժամանակ նրա վրայ կը հասնենք այն տեղերից մէկում, ուր նրան կը գտնենք.

կը չրջապատենք նրան, ինչպէս ցօղն է իջնում երկրի վրայ, եւ նրա մարդկանցից ոչ ոքի կենդանի չենք թողնի: 13 Իսկ եթէ նա քաղաք մտնի, այն ժամանակ ամբողջ Իսրայէլն այդ քաղաքը պարաններ տանելով՝ նրա մարդկանց քարշ կը տայ մինչեւ հեղեղատը, այնպէս որ այնտեղ մի քար էլ չի մնայ»: 14 Աբեսաղոմն ու բոլոր Իսրայէլացիներն ասացին. «Արաքացի Քուսիի խորհուրդն աւելի լաւ է, քան Աքիտոփէլի խորհուրդը»: Տէրը վճիռ էր տուել, որ Աքիտոփէլի լաւ խորհուրդը չկատարուի, որպէսզի Տէրը Աբեսաղոմի գլխին թափի բոլոր չարիքները:

ԴԱՒԻԹՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԸ

15 Արաքացի Քուսին ասաց Սադոկ ու Աբիաթար քահանաներին. «Աքիտոփէլը այսպէս եւ այսպէս խորհուրդ տուեց Աբեսաղոմին ու Իսրայէլի ծերերին, իսկ ես այսպիսի խորհուրդ տուեցի: 16 Արդ, շուտափոյթ կերպով մա՛րդ ուղարկեցէք ու իմա՛ց տուէք Դաւիթին՝ ասելով. "Այս գիշեր Ռաբոթ անապատում մի՛ մնա, այլ անցիր գնա՛, որ չլինի, թէ արքան եւ ամբողջ ժողովուրդը կորստեան մատնուեն"»: 17 Յովնաթանն ու Աքիմասը Ռոգելի աղբիւրների մօտ էին, եւ մի աղախին գնաց ու նրանց պատմեց, որ գնան ու յայտնեն Դաւիթ արքային, որովհետեւ իրենք չէին կարող քաղաք մտնել ու երեւալ այնտեղ: 18 Մի պատանի, սակայն, տեսաւ նրանց ու յայտնեց Աբեսաղոմին: Նրանք երկուսով գնացին Բաւուրիմ ու մտան մի մարդու տունը, ուր ջրհոր կար, եւ այնտեղ իջան: 19 Կինը խուփն առաւ ու փակեց ջրհորը, դրա վրայ թուզ փռեց իբր չորացնելու համար, ու ոչինչ չիմացուեց: 20 Աբեսաղոմի ծառաներն եկան այդ կնոջ մօտ, նրա տունը եւ հարցրին. «Ո՞ւր են Աքիմասն ու Յովնաթանը»: Կինը նրանց պատասխանեց. «Գետից այն կողմ անցան»: Նրանք փնտռեցին նրանց եւ, չգտնելով, վերադարձան Երուսաղէմ: 21 Նրանց գնալուց յետոյ սրանք ջրհորից դուրս եկան եւ գնացին Դաւիթ արքայի մօտ ու պատմեցին՝ ասելով. «Ելէ՛ք ու անցէ՛ք գետը, քանզի Աքիտոփէլն այսպէս ու այսպէս է խորհուրդ տուել ձեր դէմ»: 22 Դաւիթն ու նրա հետ եղող ամբողջ ժողովուրդը առաւօտեան, նախքան լուսանալը ելան ու անցան Յորդանան գետը: Ոչ ոք չմնաց, որ անցած չլիներ Յորդանան գետը: 23 Աքիտոփէլը երբ տեսաւ, որ իր խորհուրդը ի դերեւ ելաւ, համեստեց իր էշը, ելաւ գնաց քաղաք, իր տունը, եւ իր տանը կարգադրութիւններ անելուց յետոյ կախուեց: Նա մեռաւ եւ թաղուեց իր հօր գերեզմանում:

24 Դաւիթը հասաւ Բանակատեղիներ, իսկ Աբեսաղոմն ինքը եւ նրա հետ ամբողջ Իսրայէլը անցան Յորդանան գետը: 25 Աբեսաղոմը Յովաբի փոխարէն իր զօրքի հրամանատար կարգեց Ամեսայիին: Ամեսային որդին էր յեզրայելացի մի մարդու, որի անունն էր Յոթոր: Նա ամուսնացել էր Յովաբի մայր, Շարուհիի քոյր եւ Յեսսէի դուստր Աբիգեայի հետ: 26 Աբեսաղոմը եւ ամբողջ Իսրայէլը բանակատեղի դրեցին Գաղաադի երկրում: 27 Երբ Դաւիթը Բանակատեղիներ հասաւ, Նաասի որդի Վեսբին՝ Ամոնի որդիներից՝ Ռաբաթից, Ամիէլի որդի լաղաբարցի Մաքիրը եւ գաղաադացի Բերզելին՝ Ռոգելիմից, բերեցին տասն անկողիններ, 28 ծածկոցներ, տասը կաթսաներ, բրուտի անօթներ, 29 ցորեն, գարի, ալիւր, փոխինդ, ոլոռ, ոսպ, մեղր, կարագ, ոչխարներ ու կաթնակեր հորթեր եւ մատուցեցին Դաւիթին ու նրա հետ եղած զօրքին, որ ուտեն, քանզի զօրքը անապատում լինելով՝ քաղցած էր ու ծարաւ:

ԱԲԵՍԱՂՈՄԻ ՋՕՐՔԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

18 Դաւիթն իր հետ եղած զօրքի աշխարհագիր անցկացրեց եւ նրանց վրայ հազարապետներ ու հարիւրապետներ կարգեց: 2 Դաւիթը զօրքի մէկ երրորդ մասը յանձնեց Յովաբի, մէկ երրորդ մասը Շարուհիի որդու՝ Յովաբի եղբայր Աբեսսայի եւ մէկ երրորդ մասն էլ գեթացի Եթթիի հրամանատարութեանը: Դաւիթն ասաց զօրքին. 3 «Ես էլ պէտք է ձեզ հետ դուրս գամ»:

Նրանք ասացին. «Դու չպէտք է դուրս գաս, որովհետեւ եթէ փախչենք, նրանք մեզ կարեւորութիւն չեն տայ: Կարեւորութիւն չեն տայ, եթէ անգամ մեր կէսն էլ կոտորուի: Դու մեր տասը հազար մարդու արժէքն ունես: Արդ, լաւ է, որ դու քաղաքում մնաս եւ մեզ օգնութեան հասնես»: 4 Արքան նրանց ասաց. «Ինչ որ ձեզ համար հաճելի է, ես այն կ'անեմ»: Եւ արքան մնաց դարպասի մօտ, իսկ ամբողջ ժողովուրդը հարիւրներով ու հազարներով դուրս էր գալիս քաղաքից: 5 Արքան պատուէր տուեց Յովաբին, Աբեսսային ու Եթթիին՝ ասելով. «Խնայեցէ՛ք իմ պատանեակ Աբեսաղոմին»: Եւ ամբողջ զօրքը լսեց, որ արքան Աբեսաղոմի համար բոլոր զօրավարներին պատուէր էր տալիս:

6 Ամբողջ զօրքը դուրս եկաւ անտառ[†], Իսրայէլի դէմ, եւ կռիւ եղաւ Եփրեմի անտառում: 7 Իսրայէլի զօրքը պարտուեց Դաւթի ծառաներից. այդ օրը մեծ կոտորած եղաւ՝ քսան հազար հոգի ընկաւ: 8 Պատերազմն այստեղից տարածուեց ամբողջ երկրի վրայ: Այդ օրն անտառն աւելի շատ զինուոր կլանեց, քան սուրը կոտորեց:

ԱԲԵՍԱՂՈՄԻ ՄԱՀԸ

9 Աբեսաղոմը Դաւթի ծառաների դէմ դուրս եկաւ: Աբեսաղոմն իր ջորին էր հեծել, եւ ջորին մի մեծ կաղնու թաւ ոստերի տակը մտաւ: Նրա գլուխը կաղնու ճիւղերի մէջ խճճուեց, ու ինքը կախ ընկաւ երկնքի ու երկրի միջեւ, իսկ ջորին նրա տակից անցաւ գնաց: 10 Մի մարդ տեսաւ ու պատմեց Յովաբին, թէ՝ «Ահա տեսայ Աբեսաղոմին կաղնու ծառից կախուած»: 11 Յովաբն ասաց իրեն լուր տուող մարդուն. «Տեսել ես, բայց ինչո՞ւ նրան գետին չտապալեցիր: Ես այսօր քեզ յիսուն սիկղ արծաթ եւ մի սուր կը տայի»: 12 Մարդն ասաց Յովաբին. «Եթէ քո ձեռքից նոյնիսկ հազար սիկղ արծաթ ստանայի, իմ ձեռքը արքայի որդու վրայ չէի բարձրացնի, քանզի արքան մեզ՝ քեզ, Աբեսսային ու Եթթիին պատուիրել է՝ ասելով. "Խնայեցէ՛ք Աբեսաղոմ պատանեակին, նրան ոչ մի վնաս թող չհասնի"»: 13 Արքայի համար ոչ մի բան թաքուն չէր մնայ, եւ դու ինքդ էլ հեռու կը մնայիր»: 14 Յովաբն ասաց. «Դրա համար էլ քեզ մօտ չեմ մնայ»: Եւ Յովաբը երեք նետ վերցրեց եւ դրանցով խոցեց Աբեսաղոմի սիրտը, մինչ նա կենդանի էր կաղնու վրայ: 15 Յովաբի զինակիրներից տասը երիտասարդներ շրջապատեցին եւ խփելով Աբեսաղոմին՝ սպանեցին նրան:

16 Յովաբը եղջերափող հնչեցրեց, եւ զօրքը նրա հետ վերադարձաւ, որպէսզի չհետապնդեն Իսրայէլացիներին, որովհետեւ Յովաբը խնայում էր զօրքին: 17 Յովաբը վերցրեց Աբեսաղոմի դիակն ու այն նետեց անտառում մի մեծ, շատ խորունկ վիհի մէջ: Բոլոր Իսրայէլացիները փախան՝ ամէն մէկն իր բնակավայրը:

18 Աբեսաղոմը կենդանի եղած ժամանակ իր համար կոթող էր կանգնեցրել: Նա կոթող էր կանգնեցրել նաեւ Յաբինում, Թագաւորների հովտում: Նա ասում էր, թէ ինքը որդի չունի, որ պահի իր յիշատակը: Եւ նա կոթողը կոչել էր իր անուամբ, ու այն մինչեւ օրս կոչւում է «Աբեսաղոմի ձեռակերտ»:

ԴԱՒԻԹԻՆ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԱԲԵՍԱՂՈՄԻ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

19 Սադոկի որդի Աքիմասն ասաց. «Գնամ, աւետիս տանեմ արքային, քանզի Տէրն արդար գործ արեց՝ նրան ազատելով իր թշնամիների ձեռքից»: 20 Յովաբն ասաց նրան. «Դու այսօր աւետիս տանող մարդ չես, մի ուրիշ օր աւետիս կը տանես: Այսօր պէտք չէ աւետիս տանել, քանզի արքայի որդին մեռաւ»: 21 Նա ասաց Քուսիին. «Գնա յայտնի՛ր արքային, ինչ որ տեսար»: Քուսին խոնարհ գլուխ տուեց Յովաբին ու դուրս եկաւ: 22 Սադոկի որդի Աքիմասը դարձեալ ասաց Յովաբին. «Ի՞նչ կը լինի, եթէ ես էլ վազեմ Քուսիի յետեւից»: Յովաբն ասաց. «Դու ինչո՞ւ պէտք է վազես, որդեա՛կ իմ, այստե՛ղ արի: Դա այնպիսի աւետիս չէ, որ օգուտ բերի»: 23 Աքիմասն

[†]Եբրայերէն բնագրում՝ դաշտ:

ասաց. «Ի՞նչ կը լինի, եթէ վազեմ:»
Ցովաբն ասաց նրան. «Վազի՛ր»: Աքի-
մասը վազեց Կեքարի ճանապարհով
եւ Քուսիից առաջ անցաւ: 24 Դաւիթը
նստել էր երկու դարպասների միջեւ:
Պահակակէտի դիտորդը դարպասի
տանիքի վրայով գնաց դէպի պարիսպը
եւ իր հայեացքը բարձրացնելով՝ տե-
սաւ, որ մի մարդ մենակ վազում է իր
կողմը: 25 Նա աղաղակելով՝ այդ մա-
սին յայտնեց արքային: Արքան ասաց.
«Եթէ մենակ է, աւետիս է բերում»: Նա
գալիս, մօտենում էր: 26 Դիտորդը
վազող մի ուրիշ մարդ էլ տեսաւ եւ
դարպասի մօտից աղաղակեց՝ ասելով.
«Ահա մի մարդ եւս մենակ վազում է»:
Արքան ասաց. «Նա էլ աւետաբեր է»:
27 Դիտորդն ասաց. «Տեսնում եմ, որ
առաջինի վազքը նման է Սադոկի որդի
Աքիմասի վազքին»: Արքան ասաց.
«Նա բարի մարդ է եւ բարի լուրով կը
գայ»: 28 Աքիմասն աղաղակելով ու
երեսնիվայր գետին ընկնելով՝ ասաց
արքային. «Ողջո՛յն: Օրհնեալ է քո Տէր
Աստուածը, որ ոչնչացրեց քեզ ատելի
մարդկանց, որոնք իրենց ձեռքը մեր
տէր արքայի վրայ էին բարձրացրել»:
29 Արքան ասաց. «Ո՞ղջ է իմ երիտա-
սարդ Աբեսաղոմը»: Աքիմասն ասաց.
«Ո՛վ արքայ, երբ քո ծառայ Ցովաբն
ինձ՝ քո ծառային ուղարկում էր, ես
միայն մեծ բազմութիւն տեսայ: Ես
չիմացայ, թէ ինչ կար այնտեղ»:
30 Արքան ասաց. «Մի կո՛ղմ քաշուիր»:
Նա մի կողմ քաշուեց ու կանգնեց:
31 Հասաւ Քուսին եւ ասաց արքային.
«Իմ տէր արքայ, աւետիս եմ բերել,
Տէրն այսօր քեզ պաշտպանեց քեզ
վրայ բոլոր ձեռք բարձրացնողներից»:
32 Արքան հարցրեց Քուսին. «Ո՞ղջ է
իմ երիտասարդ Աբեսաղոմը»: Քուսին
ասաց. «Այդ երիտասարդի նման դառ-
նան իմ արքայի թշնամիները եւ բոլոր
չար նպատակով քո դէմ ելնողները»:

33 Արքան խռովուեց, բարձրացաւ
դարպասի վերնատունը եւ ողբալով
այս էր ասում. «Որդի՛ս, Աբեսաղո՛մ,
Աբեսաղո՛մ, որդեա՛կ իմ, երանի՜ ես
մեռնէի քո փոխարէն, ես մեռնէի քո
փոխարէն: Աբեսաղո՛մ, որդեա՛կ իմ,
որդեա՛կ իմ Աբեսաղոմ»:

ԴԱՒԻԹԻ ՎԻՇՏԸ

19 *Ցովաբին յայտնեցին, թէ արքան*
լալով ողբում էր Աբեսաղոմի մահը:
2 Այդ օրը յաղթանակը սուգի վերա-
ծուեց ամբողջ զօրքի համար, քանզի
զօրքն այդ օրը լսել էր, թէ արքան
տխրեց իր որդու համար: 3 Այդ օրը
զօրքը գաղտագողի էր քաղաք մտնում
այնպէս, ինչպէս ամօթահար զօրքը
փախչում է պատերազմից: 4 Արքան իր
երեսը ծածկեց եւ բարձրաձայն ողբա-
լով՝ ասում էր. «Որդեա՛կ իմ Աբե-
սաղոմ, Աբեսաղո՛մ, որդեա՛կ իմ»:

5 Ցովաբը մտնելով պալատ, արքայի
մօտ՝ ասաց. «Դու այսօր ամօթով ես
թողնում քո բոլոր ծառաներին, որոնք
փրկեցին քեզ, քո տղաներին ու
աղջիկներին, քո կանանց ու հարճերին:
6 Սիրում ես քեզ ատողներին եւ ա-
տում՝ քեզ սիրողներին: Դու այսօր
ցոյց տուեցիր, որ քեզ համար ոչինչ են
քո իշխաններն ու ծառաները: Ես
հաստատ գիտեմ, որ, եթէ Աբեսաղոմը
կենդանի լինէր, մենք ամէնքս այսօր
մեռած կը լինէինք, եւ դա քեզ հաճելի
կը լինէր: 7 Արդ, վե՛ր կաց եւ սի՛րտ
տուր քո ծառաներին, քանզի երդւում
եմ Տիրոջ անունով, որ, եթէ այսօր
դուրս չգաս, այս գիշեր քեզ մօտ մարդ
չի մնայ: Գիտցի՛ր, որ դա քեզ համար
շատ աւելի վատ կը լինի, քան այն
բոլոր չարիքները, որ հասել են քեզ
մանկութիւնից սկսած մինչեւ այժմ»:
8 Արքան ելաւ ու նստեց դարպասի
մօտ: Ամբողջ զօրքին յայտնեցին՝
ասելով. «Ահա արքան նստել է դար-
պասի մօտ»: Ամբողջ զօրքը եկաւ
արքայի առաջ, իսկ իսրայէլացիները
փախան իրենց բնակութեան վայրերը:

ԴԱՒԻԹԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄ

9 Ամբողջ ժողովուրդը Իսրայէլի բո-
լոր ցեղերի խղճմտանքին էր դիմում՝
ասելով. «Դաւիթ արքան մեզ փրկեց
մեր բոլոր թշնամիներից, նա մեզ ա-
զատեց այլազգիների ձեռքից, իսկ հի-
մա Աբեսաղոմի պատճառով փախստա-
կան է դարձել իր երկրից ու թագա-
ւորութիւնից: 10 Աբեսաղոմը, որին մեզ

թագաւոր օծեցինք, մեռել է պատե-
րազմում: Հիմա ինչո՞ւ չէք խօսում
արքային յետ դարձնելու մասին»:
11 Բոլոր իսրայէլացիների ասած այդ
խօսքերը հասան արքային, եւ Դաւիթ
արքան մարդ ուղարկեց Սադոկ եւ
Աբիաթար քահանաների մօտ՝ ասելով.
«Խօսեցէ՛ք Ցուդայի երկրի ծերերի հետ
եւ ասացէ՛ք. "Ինչո՞ւ վերջինը դառ-
նանք արքային իր տունը յետ բերողների մէջ", քանզի բոլոր իսրայէլացիների ասած խօսքը հասաւ արքային»: 12 Դաւիթն ասաց Ցուդայի ցեղին. «Դուք իմ ոսկորն ու մարմինն էք, ինչո՞ւ էք վերջինը մնում արքային իր տունը յետ բերողների մէջ: 13 Ամեսայիին ասացէ՛ք. "Դու իմ ոսկորն ու մարմինը չե՞ս: Աստուած ինձ այսպէս ու աւելին անի, եթէ դու ամէն ժամանակ իմ զօրքի հրամանատար չլինես Ցովաբի փոխարէն"»: 14 Դաւիթը Ցուդայի երկրի բոլոր մարդկանց սրտերը մէկ մարդու սրտի պէս դէպի իրեն դարձրեց, եւ սրանք պատգամաւորներ ուղարկեցին արքայի մօտ՝ ասելով. «Ե՛կ դարձէք դու եւ քո բոլոր ծառաները»: 15 Արքան վերադարձաւ ու եկաւ մինչեւ Ցորդանան գետը: Ցուդայի երկրի մարդիկ եկան Գաղգաղա՝ արքային դիմաւորելու եւ Ցորդանան գետով անցկացնելու համար:

16 Ցեմինայի որդի Գերայի որդի բաւուրիմացի Սեմէին շտապեց ու Ցուդայի երկրի մարդկանց հետ, իր հետ ունենալով Բենիամինի երկրից հազար մարդ, եկաւ դիմաւորելու Դաւիթ արքային: 17 Սաւուղի տան ծառայ Սիբան իր տասնհինգ որդիների եւ քսան ծառաների հետ եկաւ, որ կազմակերպի արքայի անցումը Ցորդանան գետից: 18 Լաստեր պատրաստեցին, որ անցկացնեն արքայի ընտանիքը եւ նրա ողորմածութեանն արժանանան:

ԹԱԳԱՒՈՐԸ ԽՆԱՅՈՒՄ Է ՍԵՄԷԻՆ

Մինչ արքան Ցորդանան գետն էր անցնում, Գերայի որդի Սեմէին երեսնիվայր ընկաւ արքայի առաջ: 19 Նա ասաց արքային. «Թող իմ տէր արքան մոռանայ իմ անօրէնութիւնը, չյիշի, որ իր ծառան յանցանք է գործել այն օրը, երբ իմ տէրը դուրս էր եկել Երուսաղէմից: 20 Թագաւորն այն թող մոռանայ, քանզի քո ծառան գիտի, որ մեղք է գործել, եւ այսօր ահաւասիկ Ցովսէփի ամբողջ տնից ես եմ առաջինը եկել դիմաւորելու իմ տէր արքային»: 21 Շարուհիի որդի Աբեսսան պատասխան տալով՝ ասաց. «Մի՞թէ Սեմէին չի մեռնելու այն բանի փոխարէն, որ նա անիծեց Տիրոջ օծեալին»: 22 Դաւիթն ասաց. «Ի՞նչ եմ արել ես ձեզ, Շարուհիի՛ որդիներ, որ այսօր իմ դէմ դաւաճանութիւն էք անում: Այսօր Իսրայէլից ոչ ոք չի մեռնելու: Մի՞թէ ես չգիտեմ, որ այսօր ես եմ թագաւորում Իսրայէլի վրայ»: 23 Եւ արքան ասաց Սեմէիին. «Դու պիտի չմեռնես»: Եւ արքան երդուեց նրան:

ԴԱՒԻԹԸ ՆԵՐՈՒՄ Է ՄԵՄՓԻԲՈՍԹԷԻՆ

24 Սաւուղի որդի Ցովնաթանի որդի Մեմփիբոսթէն արքային ընդառաջ եկաւ: Նա արքայի գնալու օրուանից մինչեւ նրա խաղաղութեամբ վերադառնալը ո՛չ իր ոտքերն էր խնամել, ո՛չ եղունգներն էր կտրել, ո՛չ մօրուքը տեսքի բերել, ո՛չ բեղերը շտկել եւ ո՛չ էլ հագուստներն էր լուացել: 25 Երբ նա մտաւ Երուսաղէմ եւ ընդառաջ ելաւ արքային, արքան ասաց նրան. «Ինչո՞ւ ինձ հետ չեկար, Մեմփիբոսթէ՛»: 26 Մեմփիբոսթէն նրան ասաց. «Տէ՛ր իմ արքայ, ծառաս ինձ խաբեց, քանզի քո ծառան ասաց նրան, թէ "Համեցի՛ր էշը, որ հեծնեմ ու գնամ արքայի մօտ", քանի որ քո ծառան կաղ է: 27 Իսկ նա՝ քո ծառան, տէ՛ր իմ արքայ, քեզ մօտ ինձ զրպարտել է: Տէ՛ր իմ արքայ, որպէս Աստծու հրեշտակ, բարի գործեր ես արել: 28 Արդ, արա՛, ինչ քո աչքին բարի է. թէեւ իմ հօր ամբողջ տունը իմ տէր արքայի առաջ մահուան արժանի մարդիկ են, բայց դու քո ծառային դրեցիր այն մարդկանց շարքը, որոնք արքայի սեղանից են ուտում: Արդ, այսուհետեւ էլ ի՞նչ իրաւունք ունեմ արքային բողոքելու»: 29 Արքան նրան ասաց. «Ինչո՞ւ ես ասում այդ խօսքերը: 30 Ասել եմ, որ դու եւ Սիբան բաժանէք

ագարակը»: Մեմփիբոսթէն ասաց արքային. «Նա նոյնիսկ ամբողջը թող առնի, քանի որ արքան խաղաղութեամբ իր տունն է վերադարձել»:

ԴԱՒԻԹԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ Է ԲԵՐԶԵԼԻԻՆ

31 Գաղաադացի Բերզելին եկաւ Ռոգելիմից եւ արքային անցկացրեց Յորդանան գետով՝ նրան ընկերակցելով մինչեւ Յորդանան գետի միւս կողմը: 32 Բերզելին շատ ծեր մարդ էր, ութսուն տարեկան: Նա էր, որ արքային կերակրել էր, երբ վերջինս բնակւում էր Բանակատեղիներում, քանի որ նա շատ հարուստ մարդ էր: 33 Արքան ասաց Բերզելիին. «Դու ե՛կ ինձ հետ, եւ ես քո ծերութեան օրերին քեզ կը կերակրեմ Երուսաղէմում»: 34 Բերզելին ասաց արքային. «Ինչքա՞ն են իմ կեանքի օրերը, որ արքայի հետ գնամ Երուսաղէմ: 35 Այսօր ես ութսուն տարեկան եմ: Միթէ կարո՞ղ եմ լաւը վատից տարբերել, կամ թէ ծառաս արդեօք կերածի ու խմածի համը կ'առնի՞, կամ թէ տակաւին կը լսե՞մ գուսանների ու վարձակների ձայնը: 36 Ինչո՞ւ ծառաս բեռ լինի իր տէր արքային: Քո ծառան արքայի հետ հազիւ անցնի Յորդանան գետը: Ինչո՞ւ արքան ինձ այդ հատուցումն է տալիս: 37 Քո ծառան թող ապրի ու մեռնի իր քաղաքում, իր հօր ու մօր գերեզմանի մօտ: Թող քո ծառայ Քամաա՛մն անցնի իմ տէր արքայի հետ, եւ նրան արա՛ այն, ինչ բարի է քո աչքին»: 38 Արքան ասաց. «Թող Քամաա՛մն անցնի ինձ հետ, եւ ես նրան կ'անեմ այն, ինչ բարի է իմ աչքին: Ամէն ինչ, որ դու ինձանից կ'ակնկալես, կ'անեմ քեզ համար»:

39 Ամբողջ ժողովուրդն անցաւ Յորդանան գետը. անցաւ եւ արքան: Արքան համբուրեց Բերզելիին, օրհնեց նրան, եւ սա իր տեղը վերադարձաւ: 40 Արքան գնաց Գաղգաղա, Քամաամն էլ անցաւ գնաց նրա հետ: Յուդայի երկրի ամբողջ ժողովուրդը եւ Իսրայէլի ժողովրդի կէսը գնացին արքայի հետ:

41 Բոլոր իսրայէլացիները եկան ու ասացին արքային. «Ինչո՞ւ մեր եղբայրները՝ Յուդայի երկրի մարդիկ, քեզ փախցրին եւ արքային ու նրա տունն անցկացրին Յորդանան գետով»: 42 Յուդայի երկրի մարդիկ պատասխանեցին իսրայէլացիներին՝ ասելով. «Որովհետեւ արքան մեզ աւելի հարազատ է: Եւ ինչո՞ւ էք դժգոհ այդ բանի համար: Միթէ արքան մեզ կերակրե՞լ է կամ մեզ պարգեւնե՞ր է տուել եւ կամ մեր բեռը կրե՞լ է»: 43 Իսրայէլացիները Յուդայի երկրի մարդկանց պատասխանեցին՝ ասելով. «Մենք տասն անգամ աւելի իրաւունք ունենք արքային մօտ, քան դուք: Անդրանիկը մենք ենք, ոչ դուք: Դաւթի նկատմամբ էլ մենք աւելի շատ իրաւունք ունենք, քան դուք: Ինչո՞ւ մեզ անարգեցիք եւ մեր խորհուրդը չհարցրիք նախքան արքային մեզ մօտ վերադարձնելը»: Եւ Յուդայի երկրի մարդիկ աւելի խիստ էին խօսում, քան իսրայէլացիները:

ՍԱԲԷԷԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԴԱՒԹԻ ԴԷՄ

20 Բոքորիի որդի յեմինացի Սաբէէ անունով անօրէն մի մարդ յոխորտաց: Նա եղջերափող հնչեցնելով՝ ասաց. «Մենք ո՛չ Դաւթի մօտ բաժին ունենք, ո՛չ էլ ժառանգութիւն՝ Յեսսէի որդու մօտ: Ո՛վ իսրայէլացիներ, թող ամէն մարդ իր բնակավայրը գնայ»: 2 Ամբողջ Իսրայէլը Դաւթից բաժանուելով՝ Բոքորիի որդի Սաբէէին հետեւեց, իսկ Յուդայի երկրի մարդիկ իրենց թագաւորի հետ Յորդանան գետի ափից գնացին մինչեւ Երուսաղէմ:

3 Դաւիթը եկաւ Երուսաղէմ, իր տուն: Թագաւորն այն տասը հարճերին, որոնց թողել էր տունը պահպանելու համար, առաւ եւ նրանց պահել տուեց մի տան մէջ, կերակրեց նրանց, բայց նրանց չմերձեցաւ: Հարճերը տառապում էին, քանզի մինչեւ իրենց մահուան օրն իբրեւ այրի ապրեցին: 4 Արքան ասաց Ամեսայիին. «Երեք օրուայ ընթացքում ինձ մօտ կը հաւաքես Յուդայի երկրի մարդկանց, եւ դու էլ այստեղ կը գաս»: 5 Ամեսային գնաց կանչելու Յուդայի երկրի մարդկանց, սակայն արքայի նշանակած ժամանակին չհասցրեց:

6 Դաւիթն ասաց Աբեսային. «Հիմա Բոքորիի որդի Սաբէէն աւելի մեծ չարիք կը գործի, քան Աբեսաղոմը: Վերցրո՛ւ քո տիրոջ ծառաներին ու հետապնդի՛ր նրան, չլինի թէ ամրացուած քաղաքներ գտնի եւ մեր աչքից կորչի»: 7 Նրան հետապնդելու ելան Աբեսան ու Յովաբի մարդիկ, քերեթիները, օփելեթիներն ու բոլոր ուժեղ մարդիկ: Սրանք դուրս եկան Երուսաղէմից, որ հետապնդեն Բոքորիի որդի Սաբէէին:

8 Երբ նրանք Գաբաւոնի մեծ քարի մօտ էին, նրանց դիմաց ելաւ Ամեսային: Յովաբը հագել էր իր զրահաւոր թիկնոցը, դրա վրայ մէջքին կապել էր պատենաւոր սուրը, որը մի քիչ դուրս էր ցցուած: 9 Յովաբն ասաց Ամեսայիին. «Ինչպէ՞ս ես, եղբա՛յր»: Եւ Յովաբն աջ ձեռքով բռնեց Ամեսայիի մօրուքը, որ նրան համբուրի: 10 Ամեսային չզգուշացաւ Յովաբի ձեռքի սրից, եւ Յովաբը դա խրելով նրա որովայնը՝ փորոտիքը դեռին թափեց: Յովաբը հարուածը չկրկնեց, եւ Ամեսային մեռաւ: Յովաբը եւ նրա եղբայր Աբեսան գնացին Բոքորիի որդի Սաբէէին հետապնդելու: 11 Յովաբի զինուորներից մէկը եկաւ ու կանգնելով Ամեսայիի մօտ՝ ասաց. «Ով սիրում է Յովաբին կամ Դաւթին, թող գնայ Յովաբի ու Աբեսայի յետեւից»: 12 Ամեսայիի դիակն արնաշաղախ ընկած էր ճանապարհի մէջտեղը: Երբ այդ մարդը տեսաւ, որ մարդիկ տեղում մնացել են կանգնած, Ամեսայիի դիակը ճանապարհից դէպի դաշտը գլորեց ու մի շորով ծածկեց այն, որովհետեւ տեսաւ, որ ամէն ոք, որ գալիս էր, նրա առաջ կանգ էր առնում: 13 Երբ դիակը ճանապարհից հեռացրեց, իսրայէլացիները հետեւեցին Յովաբին, որ հետապնդեն Բոքորիի որդի Սաբէէին:

14 Սաբէէն անցաւ Իսրայէլի բոլոր ցեղերի մարդկանց միջով մինչեւ Աբէլ ու Բեթմաաքա, եւ բոլոր առաւել ընտիր[†] զինուորները հաւաքուեցին ու եկան նրա յետեւից: 15 Նրանք նրան բռնելու համար պաշարեցին Աբէլն ու Բեթմաքան, քաղաքի դիմաց հողաբլուր կուտակեցին: Այն նրանց իբրեւ պատուար ծառայեց: Յովաբի ամբողջ զօրքը քանդում կործանում էր պարիսպը:

16 Մի իմաստուն կին պարսպից ձայն տուեց՝ ասելով. «Լսեցէ՛ք, լսեցէ՛ք, ասացէ՛ք Յովաբին, որ մօտ գայ, ես նրա հետ խօսեմ»: 17 Յովաբը մօտեցաւ նրան, ու կինն ասաց. «Դո՞ւ ես Յովաբը»: Սա ասաց. «Ես եմ»: Կինն ասաց նրան. «Լսի՛ր քո աղախնի խօսքերը»: 18 Յովաբն ասաց. «Ես եկել եմ լսելու»: Կինն ասաց. «Նախկինում այսպիսի խօսքեր էին ասում. "Թող գնան Աբէլին ու Դանին հարցնեն, թէ Իսրայէլին հաւատարիմ մարդկանց ձեռնարկած գործերը յաջող աւարտ կ'ունենա՞ն": Անպայման պէտք է Աբէլին հարցնէին եւ այդպէս էլ անում էին: 19 Ես Իսրայէլի հաւատարիմ խաղաղարարներից եմ, իսկ դու ուզում ես կործանե՞լ Իսրայէլի այս քաղաքը: Ինչո՞ւ ես բնաջնջում Տիրոջ ժառանգութիւնը»: 20 Պատասխան տուեց Յովաբն ասելով. «Քա՛ւ լիցի ինձ, քա՛ւ լիցի, թէ բնաջնջեմ ու կոտորեմ: 21 Հարցը դա չէ: Մի մարդ կայ Եփրեմի լեռից, Սաբէէ անունով, Բոքորիի որդին, որ ձեռք է բարձրացրել Դաւթի արքայի վրայ: Ինձ տուէ՛ք միայն նրան, եւ ես կը հեռանամ այս քաղաքից»: Կինն ասաց Յովաբին. «Նրա գլուխը հիմա քեզ մօտ կ'ընկնի պարսպի վրայից»: 22 Կինը գնաց ժողովրդի մօտ, իր իմաստութիւնը գործադրելով՝ համոզեց բոլոր քաղաքացիներին, որ կտրեն Բոքորիի որդի Սաբէէի գլուխը: Նրանք կտրեցին նրա գլուխն ու այն նետեցին Յովաբի առաջ: Եղջերափող հնչեց, այդ քաղաքում ամէն մարդ իր բնակավայրը քաշուեց, իսկ Յովաբը յետ դարձաւ Երուսաղէմ, արքայի մօտ:

ԴԱՒԹԻ ՋՕՐԱՎԱՐՆԵՐԸ

23 Յովաբը Իսրայէլի ամբողջ զօրքի հրամանատարն էր, Յովիդայի որդի Բանեան հրամանատարն էր քերեթիների ու օփելեթիների, 24 Ադոնիրամը

[†]Իմա՞ բերացի:

հարկերի վերակացուն էր, Աքիլոթի որդի Յոսափատը դիւանապետ էր, 25 Սուդայէն՝ քարտուղար, Սադոկն ու Աբիաթարը քահանաներ էին, 26 իսկ Յարիմի որդի Իրասը Դաւթի քահանան էր:

ՄԵԾ ՍՈՎԸ. ՍԱՒՈՒՂԻ ՍԵՐՆԴԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

21 Երեք տարի իրար յետեւից սով եղաւ Դաւթի օրօք, եւ Դաւիթը դիմեց Տիրոջը: Տէրն ասաց. «Սաւուղի եւ նրա տան արիւնահեղութեան պատճառով է այս պատուհասը, որովհետեւ նա կոտորել է գաբաւոնացիներին»: 2 Դաւիթ արքան կանչեց գաբաւոնացիներին ու խօսեց նրանց հետ: Գաբաւոնացիները իսրայէլացիներ չէին, այլ ամորհացու արիւնից էին: Իսրայէլացիները երդումով էին կապուած նրանց հետ, բայց Սաւուղը ուզեց կոտորել նրանց, որպէսզի վրէժ լուծի Իսրայէլի ու Յուդայի երկրի որդիների համար: 3 Դաւիթն ասաց գաբաւոնացիներին. «Ի՞նչ անեմ ձեզ, ինչո՞վ քաւութիւն անեմ, որ օրհնէք Տիրոջ ժառանգութիւնը»: 4 Գաբաւոնացիներն ասացին նրան. «Մենք արծաթ ու ոսկի չենք ուզում Սաւուղից ու նրա ցեղից, ոչ էլ որեւէ իսրայէլացու մահն ենք ուզում»: Արքան ասաց. «Հապա ի՞նչ էք ուզում, որ անեմ ձեզ համար»: 5 Նրանք ասացին արքային. «Թող մեռնի նա, ով մեզ կոտորեց ու հալածեց, ով վճռել էր մեզ ոչնչացնել: 6 Որպէսզի նրանք վերանան Իսրայէլի բոլոր սահմաններից, մեզ յանձնեցէ՛ք նրա որդիներից եօթը հոգի, որ նրանց կախենք Տիրոջ առաջ, Տիրոջ ընտրեալ Սաւուղ արքայի Գաբաա քաղաքում»: Արքան ասաց. «Ես ձեզ կը տա՛մ նրանց»: 7 Արքան խնայեց Սաւուղի որդի Յովնաթանի որդի Մեմփիբոսթէին այն երդումի համար, որ Դաւիթն ու Սաւուղի որդի Յովնաթանը տուել էին իրար Տիրոջ առաջ: 8 Դաւիթն առաւ Սաւուղից սերուած Այիայի դուստր Ռեսփայի երկու որդիներին՝ Երմոնթիին ու Յեբուսթէին, Սաւուղի դուստր Մերոբի հինգ որդիներին, որ սերուել էին մոլաթացի Բերզելիի որդի Եսդրիէլից, ու նրանց յանձնեց գաբաւոնացիների ձեռքը, որոնք նրանց կախեցին լերան վրայ, Տիրոջ առաջ: 9 Նրանք եօթն էլ միասին զոհուեցին: Նրանք մեռան հնձի առաջին օրերին, գարու հնձի սկզբում:

10 Այիայի դուստր Ռեսփան գարու հնձի սկզբում քուրձ առաւ ու գցեց ապառաժի վրայ գտնուող նրանց դիակների վրայ†, մինչեւ որ երկնքից անձրեւ տեղաց նրանց վրայ: Նա չէր թողնում, որ երկնքի թռչունները նրանց մօտենան ցերեկը, ոչ էլ անապատի գազանները՝ գիշերը: 11 Դաւթին յայտնեցին, թէ ինչ էր արել Այիայի դուստր Ռեսփան՝ Սաւուղի հարճը: Նրանց դիակները փտեցին, եւ Յովասի որդի Դանը, հսկաների ցեղից, հասաւ նրանց վրայ: 12 Դաւիթը գնաց եւ Սաւուղի ու նրա որդի Յովնաթանի ոսկորները վերցրեց Գաղաադի Յաբիս բնակավայրի բնակիչներից, որոնք թաքուն հաւաքել էին դրանք Բեթսանի հրապարակից: Այլազգիները Գեղբուէում կախել էին նրանց այն օրը, երբ յաղթել էին նրանց: 13 Նա այնտեղից հանեց Սաւուղի ու նրա որդի Յովնաթանի ոսկորները, հաւաքեց նաեւ Բենիամինի երկրում կախուածների ոսկորները եւ թաղեց այն գերեզմանում, որը պատկանում էր նրանց հայր Կիսին: 14 Նրանք արեցին այն ամէնը, ինչ արքան հրամայել էր, եւ Աստուած դրանից յետոյ լսեց երկրից եկող ձայնը:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԴԷՄ
(Ա Մնաց. 20. 4-8)

15 Դարձեալ պատերազմ եղաւ այլազգիների եւ իսրայէլացիների միջեւ: Դաւիթն ու նրա մարդիկ պատերազմեցին այլազգիների դէմ: Դաւիթը յոգնեց: 16 Յեսբէացի Աբեսսան, որը Ռափայի որդիներից էր, եւ որի նիզակը երեք հարիւր սիկղ‡ կշիռ ունեցող պղնձից էր, ու ինքն էլ մէջքին թուր ունէր, ուզում էր սպանել Դաւթին: 17 Շարուհիի որդի Աբեսսան, սակայն, օգնութեան եկաւ Դաւթին եւ, հարուածելով այլազգուն, սպանեց նրան: Այն ժամանակ Դաւթի մարդիկ երդուեցին՝ ասելով. «Դու այլեւս մեզ հետ պատերազմի չպէտք է դուրս գաս, որ Իսրայէլի ճրագը չհանգի»:

†Այլ բնագրերում՝ իր վրայ:
‡Շուրջ երեք կիլոգրամ:

18 Դրանից յետոյ Գեթում կրկին պատերազմ եղաւ այլազգիների դէմ: Այն ժամանակ օսացի Սոբաքը սպանեց Սեփտոնին, որը Ռափայի որդիներից էր: 19 Դարձեալ պատերազմ եղաւ Ռոբում այլազգիների դէմ, եւ բեթղեհէմացի Արիոդիմի որդի Եղէանան սպանեց գեթացի Գողիաթին, որի նիզակի բռնակը ոստայնանկների գլան էր յիշեցնում:

20 Դարձեալ պատերազմ եղաւ Գեթում: Այդ ժամանակ մի մարդ կար Մաով անունով, որի ձեռքերի ու ոտքերի մատները վեց-վեց հատ էին՝ ընդամէնը քսանչորս մատ: 21 Նա ծնուել էր Ռափայից եւ նախատում էր իսրայէլացիներին: Նրան սպանեց Դաւթի եղբայր Սամաայի որդի Յովնաթանը: 22 Սրանք չորսը ծնուել էին Ռափայի տանը, Գեթում, եւ ընկան Դաւթի ու նրա մարդկանց ձեռքով:

ԴԱՒԹԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳԸ
(Սաղմոս 19)

22 Այն օրը, երբ Տէրը Դաւթին փրկել էր իր բոլոր թշնամիներից ու Սաւուղի ձեռքից, Դաւիթը Տիրոջն ուղղեց օրհնութեան հետեւեալ խօսքերը.

2 «Տէրն իմ վէմն է, ամրութիւնն ու փրկիչը:
3 Թող Աստուած ինձ պահապան լինի. ես նրան եմ ապաւինել:
Նա է իմ հովանաւորը, իմ փրկութեան եղջիւրը,
իմ պաշտպանն ու իմ փրկութեան ապաւէնը:
4 Անիրաւ մարդկանցից փրկի՛ր ինձ, Տէ՛ր:
Օրհնեալ Տիրոջն եմ աղերսում, որ ազատուեմ իմ թշնամիներից:
5 Ինձ պաշարեցին մահաբեր թուլութիւնները,
ինձ խռովեցին անօրէնութեան հեղեղները:
6 Մահուան երկունքն ինձ պատեց,
մահուան որոգայթներ ծառացան իմ առաջ:
7 Իմ նեղութեան մէջ Տիրոջը պիտի դիմեմ,
իմ Աստծուն աղաղակեմ,
ու նա իր սուրբ տաճարից պիտի լսի իմ ձայնը,
իմ աղաղակը նրա ականջին պիտի հասնի:
8 Երկիրը դողաց, ալեկոծուեց ու ցնցուեց,
երկնքի հիմքերը դղրդացին ու տապալուեցին,
քանզի Տէրը բարկացել էր դրանց վրայ:
9 Նրա բարկութիւնից ծուխ ելաւ,
ու նրա բերանից՝ լափող հուր:
10 Նրանից կայծակներ արձակուեցին,
նա խոնարհեցրեց երկինքն, ու ինքը ցած իջաւ:
11 Մառախուղ կար նրա ոտքերի տակ:
Նա նստեց քերովբէների վրայ ու թռաւ,
սաւառնեց հողմերի թեւերի վրայ:
12 Նա իրեն խաւարով պատեց, խաւարով ծածկեց իր վրանը
ու ջրի խաւարով թանձրացրեց ամպերը:
13 Նրա առաջ եղած լոյսի ցոլքից հրէ կայծակներ բորբոքուեցին:
14 Տէրը երկնքից որոտաց, ու Բարձրեալը ձայն տուեց:
15 Նա իր նետերն արձակեց՝ ցրեց դրանք,
կայծակներ փայլատակեցրեց ու զարհուրեցրեց դրանք:
16 Ծովի ակունքներն ի յայտ եկան,
Տիրոջ սաստից ու նրա բարկութեան հողմ արտաշնչելուց
երեւան եկան հիմքերը տիեզերքի:
17 Նա երկնքի բարձունքներից ինձ ձեռք երկարեց
եւ ինձ դուրս բերեց յորդառատ ջրերից:
18 Նա ինձ կորզեց իմ ուժեղ թշնամիների ու ինձ ատողների բռնութիւնից,
քանզի նրանք ինձանից հզօր էին:
19 Նեղ օրեր ունեցայ,
սակայն Տէրն ինձ նեցուկ եղաւ:

Նա ինձ դուրս բերեց անդորր մի տեղ ու փրկեց ինձ,
քանզի նա ինձ սիրեց:
20 Տէրն ինձ հատուցեց ըստ իմ արդարութեան,
21 եւ ըստ իմ ձեռքերի մաքրութեան պիտի հատուցի ինձ Տէրը:
22 Ես պահել եմ Տիրոջ պատգամները
եւ իմ Աստծու դէմ ամբարշտութիւն չեմ գործել:
23 Նրա բոլոր օրէնքներն իմ առաջ են,
եւ ես նրա պատգամներից չեմ շեղուել:
24 Նրա առաջ անբիծ եմ եղել
եւ նախօրօք հեռու մնացել անօրէնութիւնից:
25 Տէրն ինձ թող հատուցի ըստ իմ արդարութեան
ու ըստ իմ ձեռքերի մաքրութեան, որ կան Տիրոջ աչքի առաջ:
26 Սրբի հետ սուրբ պիտի լինես,
կատարեալի հետ՝ կատարեալ:
27 Ընտրեալի հետ ընտրեալ պիտի լինես,
իսկ ծուռի հետ՝ ծուռ:
28 Դու պիտի փրկես տնանկ ժողովրդին,
իսկ ամբարտաւանների աչքերը պիտի խոնարհեցնես:
29 Դո՛ւ ես իմ ճրագը, Տէ՛ր,
եւ դո՛ւ ես լուսաւորելու իմ խաւարը:
30 Քեզնով միայնակ զինուած պիտի վազեմ
եւ իմ Աստծու շնորհիւ պիտի անցնեմ պարսպի վրայով:
31 Իմ հզօ՛ր Աստուած, քո ճանապարհն անարատ է:
Տիրոջ խօսքը ճշմարիտ է,
նա հովանաւոր է բոլոր իրեն ապաւինողներին:
32 Ո՞վ է հզօր, բացի քեզանից, Տէ՛ր,
եւ ո՞վ է արարիչ, բացի մեր Աստծուց:
33 Հզօր է Տէրը, որն ինձ հզօրացնում է զօրութեամբ,
իմ ճանապարհներն անարատ դարձնում:
34 Նա իմ ոտքերը հաստատուն է պահում, ինչպէս եղջերուներինը,
եւ ինձ բարձունքների վրայ է կանգնեցնում:
35 Նա իմ ձեռքը պատերազմի է սովորեցնում
եւ իմ բազուկներով պղնձէ աղեղ ձգում:
36 Դու ես ինձ տուել իմ փրկութեան պաշտպանութիւնը,
իմ հնազանդութիւնն ընդարձակել է իմ ճանապարհը:
37 Իմ ոտքերը չեն դողացել:
Ես պիտի հալածեմ իմ թշնամիներին,
38 նրանց պիտի կոտորեմ ու յետ պիտի չդառնամ,
մինչեւ որ խսպառ չոչնչացնեմ նրանց:
39 Ես խորտակելու եմ նրանց, որ ոտքի չկանգնեն:
Նրանք պիտի ընկնեն իմ ոտքերի տակ:
40 Դու ինձ զօրութեամբ պիտի զօտեպնդես, որ պատերազմեմ,
եւ դու իմ դէմ ելնողներին իմ ձեռքը պիտի յանձնես:
41 Դու իմ թշնամիներին իմ առջեւից փախուստի մատնեցիր
ու իմ ատելիներին կոտորեցիր:
42 Նրանք պիտի աղաղակեն, բայց ոչ ոք նրանց չպիտի օգնի:
Նրանք Տիրոջը դիմեցին, բայց նա չլսեց նրանց:
43 Ես նրանց պիտի կոխոտեմ ինչպէս գետնի հողը
եւ պիտի տրորեմ ինչպէս փողոցի ցեխը:
44 Դու ինձ կը փրկես ժողովուրդների կռուից
եւ ինձ կը կանգնեցնես ազգերի գլխին:
Ինձ անծանօթ ժողովուրդը ծառայեց ինձ
եւ ականջալուր եղաւ ինձ:
45 Օտարների որդիները կեղծաւորութիւն արեցին իմ առաջ:
46 Օտարների որդիները վերանալու են,
կոտորուելու են իրենց թաքստոցներում:
47 Կենդանի է Տէրը, եւ օրհնեալ է իմ պահապանը:

Բարձրանալու է Տէրը՝ իմ փրկութեան պահապանը:
48 Հզօր է Տէրը, նա վրէժխնդիր է,
ժողովուրդներին հպատակ է դարձնում ինձ:
49 Նա ինձ պիտի փրկի իմ թշնամիներից
եւ ինձ վրայ յարձակուողներից աւելի վեր պիտի դասի ինձ,
անիրաւ մարդուց պիտի փրկի ինձ:
50 Այս բանի համար ազգերի մէջ պիտի գոհանամ քեզանից, Տէ՛ր,
եւ քո անունը պիտի գովերգեմ իմ սաղմոսներում:
51 Նա թագաւորի փրկութիւնն ապահովում է
եւ ողորմութիւն է անում իր օծեալ Դաւթին
ու նրա սերնդին մինչեւ յաւիտեան»:

ԴԱՒԹԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐԸ

23 Ահա եւ Դաւթի վերջին խօսքերը.
«Հաւատարիմ է Յեսսէի որդի Դաւիթը,
հաւատարիմ է նա, որին Տէրը բարձրացրեց
եւ իբրեւ Աստծու օծեալ՝ Յակոբի ցեղի վրայ թագաւոր կարգեց:
2 Գեղեցիկ են Իսրայէլի երգերը:
Տիրոջ հոգին իմ մէջ խօսեց,
նրա խօսքն իմ լեզուի վրայ է:
3 Իսրայէլի Աստուածն ասաց,
ինձ հետ խօսեց Իսրայէլի պահապանը.
ես այլաբանութեամբ ասացի մարդկանց.
"Ո՞վ կարող է դիմանալ Տիրոջ եւ Աստծու երկիւղին,
ինչպէս առաւօտեան լոյսին":
4 Արեգակն առաւօտեան ծագում է,
եւ նրա լոյսը չի պակասում,
ինչպէս անձրեւից յետոյ կանաչն է բարձրանում երկրի վրայ:
5 Մի՞թէ այդպիսին չէ իմ տունը հզօր Աստծու մօտ:
Նա ինձ հետ յաւիտենական ուխտ է դրել,
որը բոլոր ժամանակներում պէտք է պահուի:
Իմ ամբողջ փրկութիւնն ու իմ ամբողջ կամքը Տէրն է:
6 Անօրէնները թող չբողբոջեն.
նրանք նման են դուրս գցուող փշերի,
որոնք ձեռքով չեն բռնւում,
7 այլ երկաթով ու նիզակի ծայրով են նետւում կրակի մէջ
եւ այրւում են իրենց ամօթից»:

ԴԱՒԹԻ ՊԱՏԵՐԱԶՄԻԿՆԵՐԸ
(Ա Մնաց. 11. 10-41)

8 Սրանք են Դաւթի զօրավարների անունները. քանանացի Յեբուսթէ՝ նոյն ինքը ասոնացի Ադինոն մէկ երրորդ մասի հրամանատար: Սա սուր էր բարձրացրել միանգամից ութ հարիւր զինուորների վրայ: 9 Նրանից յետոյ գալիս է Եղեազան՝ նրա հօրեղբօրորդին, սոսացու որդին, որը Դաւթի երեք զօրավարներից մէկն էր: Երբ սա Ռեմայում ասպարէզ կարդաց այլազգիներին, սրանք պատերազմի հաւաքուեցին, եւ նա խրախուսեց Իսրայէլի մարդկանց: 10 Նա վեր կացաւ ու այլազգիներին այնքան հարուածեց, որ ձեռքը կպաւ սրին: Տէրն այդ օրը մեծ փրկութիւն պարգեւեց: Զօրքը մնաց, բայց միայն դիակապտութեան համար:
11 Սրանից յետոյ գալիս է արուկացի Սիսի որդին՝ Սամաան: Այլազգիները հաւաքուել էին Ծնօտ† կոչուող վայրում: Այնտեղ կար մի դաշտ, ուր առատ ոսպ էր ցանուած: Զօրքը փախաւ այլազգիների առաջից, 12 իսկ նա դաշտում ամուր կանգնեց ու փրկեց զօրքին, հարուածեց այլազգիներին, ու Տէրը մեծ փրկութիւն պարգեւեց: 13 Երեսուն զօրավարներից երեքը գնացին Կասովա, Ոդողոմի քարայրը, Դաւթի մօտ: Այլազգիների գնդերը բանակատեղի էին դրել Ռափայիմների հովտում: 14 Դաւթն այն ժամանակ ամրոցում էր: Այն ժամանակ այլազգիների բանակատեղին Բեթղեհէմում էր: 15 Դաւիթը ջուր խմելու ցանկութիւն ունեցաւ եւ ասաց. «Ո՞վ ինձ Բեթղեհէմի դարպասի մօտ գտնուող

†Այլ բնագրերում՝ Թերիայում:

ջրհորի ջրից ջուր կը բերի, որ խմեմ»:
16 Այլազգիների գնդերը Բեթղեհէմում էին: Երեք զօրավարները ճեղքեցին այլազգիների բանակը, ջուր հանեցին Բեթղեհէմի դարպասի մօտ գտնուող ջրհորից, առան ու եկան Դաւթի մօտ:
17 Նա չուզեց խմել այն, այլ նուիրեց Տիրոջը: Նա ասաց. «Քա՛ւ լիցի ինձ, ո՛վ Տէր, որ այդ բանն անեմ: Մի՞թէ ես կը խմեմ իրենց կեանքը վտանգող մարդկանց արիւնը»: Եւ նա չուզեց խմել այն: Ահա այս բանն արեցին այս երեք զօրավարները:
18 Եւ Աբեսսան՝ Յովաբի եղբայրը՝ Շարուհիի որդին, այս երեքի գլխաւորն էր: Նա իր նիզակով երեք հարիւր հակառակորդ էր սպանել:
19 Նա անուանի էր երեքի մէջ, նրանցից աւելի փառաւորուած, նրանց գլխաւորը, բայց նա այն երեքի աստիճանին չհասաւ:
20 Բազում գործեր կատարած Կաբէէղացի մի զօրաւոր մարդու՝ Յովիդայէի որդի Բանեան սպանել էր Մովաբացի Արիէլի երկու որդիներին: Նա է, որ ձիւնոտ մի օր փոսի մէջ իջնելով՝ առիւծ էր սպանել:
21 Նա էր սպանել եգիպտացի յաղթանդամ մի մարդու: Այդ եգիպտացու ձեռքին կար կամրջի գերան յիշեցնող մի նիզակ: Նա յարձակուելով այդ մարդու վրայ՝ նիզակը խլել էր եգիպտացու ձեռքից եւ նրա նիզակով էլ սպանել նրան:
22 Այս բանն արել էր Յովիդայէի որդին՝ Բանեան: Նա անուանի էր երեք զօրավարների մէջ:
23 Նա այդ երեքից ամենից փառաւորն էր, սակայն առաջին երեքին չէր հասնի: Դաւթը նրան իր շտեմարանների վերակացու էր նշանակել:
Սրանք են Դաւթի արքայի զօրավարների անունները.
24 Յովաբի եղբայր Ասայէլ, որը երեսուն զօրավարներից մէկն էր:
25 Բեթղեհէմում ապրող նրա հօրեղբօր՝ Եղիուդի որդի Եղեանա,
26 ռուգացի Սամաա, կեղոթացի Սեղղոմ, փեղղատացի Աղղաս,
27 Թեկուացի Եսկաթի որդի Իրաս, ասոթացու որդիներից անաթոթացի Աբիեզեր,
28 աղիոյացի Եղղոն, նետոփատացի Նոերէ, Փամփանի որդի Աղափ,
29 եփրաթացի Բենիամինի որդիների Գաբաեթի բնակավայրից՝ Ռիբայի որդի Եթթի, Գովասի ձորից՝ Ադդայի,
30 Նաքաղայի Ադդայի դաշտավայրերից՝ Աբիեղբոն,
31 ղադաբարացի Գասբիէ, 32 բարսամացի Ասմոն,
33 սաղաբոնացի Եղիաս, Ասանի որդի Յովնաթան,
34 արոդացի Սամնան, արաթիրացի Աբեղի որդի Եղիա,
35 ասիբացիներից Ամաքի որդի Աղիփաղեթ,
36 գաղամոնացի Աքիտոփէլի որդի Եղիաբ, կարմեղացի Ասարէ,
37 երքացի Տուուր[†], 36 Նաթանի որդի Գաղա, որը մեծ ուժի տէր գաղաադացու որդին էր,
38 ամմանացի Եղիէ, Շարուհիի որդի Յովաբի կապարճակիր բեքրոթացի Գեղորէ,
39 յեթերացի Իրաս, բեթանացի Գարէի, քետացի Ուրիա: Ընդամէնը՝ երեսունեօթը հոգի:

ԴԱՒԻԹԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ Է ԱՆՑԿԱՑՆՈՒՄ
(Ա Մնաց. 21. 1-27)

24 Տիրոջ բարկութիւնը դարձեալ բորբոքուեց Իսրայէլի վրայ: Նա Դաւթին գրգռեց նրանց դէմ՝ ասելով. «Գնա՛ հաշուառում կատարի՛ր Իսրայէլում եւ Յուդայի երկրում»:
2 Արքան իր մօտ գտնուող զօրքի հրամանատար Յովաբին ասաց. «Շրջի՛ր Իսրայէլի բոլոր ցեղերի մէջ՝ Դանից մինչեւ Բերսաբէէ, ժողովրդի հաշուառում կատարի՛ր, որ գիտենամ նրանց թիւը»:
3 Յովաբն ասաց արքային. «Տէրը թող ժողովրդին հարիւրապատիկ աւելացնի, ու դա թող տեսնեն իմ տէր արքայի աչքերը, բայց իմ տէր արքան ինչո՞ւ է այդ բանն ուզում»:
4 Արքան իր ասածը պարտադրեց Յովաբին ու զօրքի հրամանատարներին: Յովաբն ու զօրքի բոլոր հրամանատարները ելան արքայի մօտից, որ Իսրայէլի ժողովրդի հաշուառում անցկացնեն:
5 Նրանք անցան Յորդանան գետը եւ կանգ առան Արոյեր քաղաքի աջ կողմը, որը Գադի ու Եղիազարի ձորի միջեւ է:

[†]Այլ բնագրերում՝ երմացի Տուուրի որդի Ասարէ Կարմեղացի:

6 եկան Գաղաադ, Թաբասոն, Եսթոն ու Ադասէ, հասան Դան ու Սիդոնի շրջակայքը:
7 Նրանք անցան Տիւրոսի Մափսար բնակավայրը եւ քանանացիների ու խեւացիների բոլոր քաղաքները, հարաւի կողմից եկան Յուդայի երկիրը ու Բերսաբէէ:
8 Ամբողջ երկիրը շրջեցին եւ ինն ամիս քսան օր լրանալուց յետոյ եկան հասան Երուսաղէմ:
9 Յովաբը մարդահամարի տուեալները յանձնեց արքային. Իսրայէլն ունէր ութ հարիւր հազար սուսերակիր զինուոր, իսկ Յուդայի երկիրը՝ հինգ հարիւր հազար մարտիկ:
10 Դաւթի սիրտը ցաւեց մարդկանց հաշուառումից յետոյ: Դաւիթն ասաց Տիրոջը. «Մեծ մեղք գործեցի արուածի համար: Արդ, ո՛վ Տէր, ների՛ր քո ծառայի մեղքը, քանզի մեծ յիմարութիւն արեցի»:
11 Երբ Դաւիթն առաւօտեան զարթնեց, Տէրը Դաւթին ուղղուած խօսք ասաց տեսանող մարգարէ Գադի միջոցով:
12 Տէրն ասաց. «Գնա՛ խօսի՛ր Դաւթի հետ եւ նրան ասա՛. "Այսպէս է ասում Տէրը. երեք բան եմ առաջարկում քեզ, ընտրի՛ր նրանցից մէկը, եւ դա էլ կը կատարեմ"»:
13 Գադը եկաւ Դաւթի մօտ, պատմեց ու ասաց. «Ընտրի՛ր որն ուզում ես. կա՛մ քո երկրում երեք տարի սով պիտի լինի, կա՛մ երեք ամիս դու պիտի փախչես քո թշնամիների առաջից, ու քեզ պիտի հալածեն, կա՛մ էլ երեք օր մահ պիտի լինի քո երկրում: Արդ, մտածի՛ր ու ասա՛, թէ ի՞նչ պատասխան տանեմ ինձ ուղարկողին»:
14 Դաւիթն ասաց Գադին. «Բոլոր կողմերից ես խիստ ծանր կացութեան մէջ եմ: Քանի որ շատ ու շատ են Տիրոջ ողորմածութիւնները, աւելի լաւ է ընկնեմ Տիրոջ ձեռքը, քան մարդկանց ձեռքը»: Եւ Դաւիթն ընտրեց մահը: Յորեանը հնձելու օրերն էին:
15 Եւ Տէրն Իսրայէլին մահ ուղարկեց առաւօտից մինչեւ ճաշի ժամ: Մահ սկսուեց ժողովրդի մէջ. Դանից մինչեւ Բերսաբէէ եօթանասուն հազար մարդ մեռաւ:
16 Աստծու հրեշտակն իր ձեռքը մեկնեց Երուսաղէմի վրայ, որ ոչնչացնի այն, սակայն Տէրը զղջաց այդ չար աղէտի համար եւ ասաց ժողովրդին ոչնչացնող հրեշտակին. «Բաւական է, ձեռքդ յե՛տ քաշիր»:
17 Տիրոջ հրեշտակը յեբուսացի Ռնայի կալի մօտ էր: Երբ Դաւիթը տեսաւ ժողովրդին կոտորող հրեշտակին, ասաց Տիրոջը. «Ահաւասիկ ես. ես եմ մեղաւոր, ես՝ հովիւս եմ յանցաւոր, այս ոչխարներն ի՞նչ են արել: Թող քո ձեռքը բարձրանայ իմ ու իմ հօր տան վրայ»:
18 Այդ օրը Գադը Դաւթի մօտ գալով՝ ասաց նրան. «Վե՛ր կաց ու յեբուսացի Ռնայի կալում Տիրոջ համար զոհասեղան կանգնեցրո՛ւ»:
19 Գադի խօսքերին անսալով՝ Դաւիթը գնաց, ինչպէս Տէրն էր պատուիրել:
20 Երբ Ռնան տեսաւ իր մօտ եկող արքային ու նրա ծառաներին, ընդառաջ գնաց նրանց եւ երկրպագեց տիրոջը՝ երեսնիվայր գետին ընկնելով:
21 Ռնան ասաց. «Ինչո՞ւ է եկել իմ տէր արքան իր ծառայի մօտ»: Դաւիթն ասաց. «Կալը քեզանից գնելու, որ Տիրոջ համար զոհասեղան չինեմ, եւ դադարի ժողովրդի կոտորածը»:
22 Ռնան ասաց Դաւթին. «Թող իմ տէր արքան առնի ու Տիրոջը զոհ մատուցի այն, ինչ հաճելի է նրա աչքին: Ահաւասիկ եզներ ողջակէզի համար եւ անիւներ ու եզների լծասարք՝ փայտի փոխարէն»:
23 Ռնան ամէն ինչ տալով արքային՝ ասաց նրան. «Թող քո Տէր Աստուածը քեզ օրհնի»:
24 Արքան ասաց Ռնային. «Ո՛չ, այդպէս չէ: Պէտք է քեզանից փողով գնեմ, իմ Տէր Աստծուն ձրի ողջակէզ չեմ մատուցի»: Դաւիթը կալն ու եզները գնեց յիսուն սիկղ արծաթով:
25 Դաւիթը այնտեղ Տէր Աստծու համար զոհասեղան չինեց եւ նրա վրայ ողջակէզներ ու հաշտութեան զոհեր մատուցեց: Յետագայում Սողոմոնը զոհասեղանն ընդարձակեց, որովհետեւ նախկինը փոքր էր: Տէրը լսեց երկրի համար արուած աղօթքը, եւ Իսրայէլից կոտորածը դադարեց:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Գ

Ներածութիւն

Սկզբնապէս «Թագաւորութիւններ»-ի այս երկու գրքերը նոյնպէս կազմում էին մէկ աշխատութիւն, որը ժամանակագրականօրէն շարունակութիւնն էր հանդիսանում Սամուէլի գրքերի: Ներկայումս, բաժանուած ձեւի տակ, «Թագաւորութիւններ»-ի երրորդ գրքում պատմւում են Դաւթի որդի Սողոմոնի եւ նրա առաջին յաջորդների իշխանութեան ժամանակաշրջանի անցքերը:

Երբ Դաւիթն այնքան էր ծերացել, որ այլեւս ի վիճակի չէր արդիւնաւէտ կերպով ղեկավարելու թագաւորական իշխանութիւնը, նրա որդիներից երկուսը դաւեր էին նիւթում նրա յաջորդը դառնալու նպատակով: Ի վերջոյ Սողոմոնն է դառնում թագաւոր: Նրա իշխանութեան շրջանը նշանաւորւում է մասնաւորապէս տաճարի եւ թագաւորական պալատի կառուցումով: Դժբախտաբար Սողոմոնն իր կեանքն աւարտում է անհաւատարմութեամբ եւ կռապաշտութեամբ: Այն ժամանակ Աստուած թոյլ է տալիս, որ թագաւորութիւնը կազմալուծուի եւ քայքայուի: Հիւսիսի ցեղերը հրաժարւում են ենթարկուել Սողոմոնի որդու իշխանութեանը եւ իրենց համար ընտրում են մի ուրիշ թագաւոր: Դրանից յետոյ, շուրջ երկու դար, ամբողջ երկրում իշխում են երկու թագաւորութիւններ կողք-կողքի՝ Յուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւնները, որոնք մերթ դաշնակցում են միմեանց, մերթ թշնամանում:

Գրքում ընդգծուած է այն միտքը, թէ որքան անհրաժեշտ է, որ թագաւորը հաւատարիմ լինի Աստծուն: Այդպիսի հաւատարմութիւնը աղբիւր է հանդիսանում ազգի բարգաւաճմանը, միմեանց կռապաշտութիւնն ու անհնազանդութիւնը Աստծուն՝ անխուսափելիօրէն առաջնորդում են աղէտի: Գրքում հանդէս են գալիս բազմաթիւ մարգարէներ տարբեր ժամանակներում՝ յիշեցնելու համար թագաւորներին Աստծու պահանջները: Նրանցից գլխաւորը եղել է Եղիա մարգարէն:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Գ

ԴԱՒԻԹԸ՝ ԾԵՐԱՑԱԾ

1 Դաւիթ արքան տարիքն առել, ծերացել էր. նրան զգեստներով ծածկում էին, բայց նա չէր տաքանում: 2 Նրա ծառաներն ասացին. «Թող մեր տէր արքայի համար մի կոյս աղջիկ գտնեն, որ նա կանգնի արքայի առջեւ եւ հոգանի նրան, նրա հետ պառկի, ու մեր տէր արքան տաքանայ»: 3 Մի գեղեցիկ աղջիկ որոնեցին Իսրայէլի ամբողջ սարածքում, գտան սոմնացի Աբիսակին ու նրան բերեցին արքայի մօտ: 4 Աղջիկը շատ գեղեցիկ էր, տաքացնում էր արքային ու ծառայում նրան, բայց արքան չմերձեցաւ նրան:

ԱԴՈՆԻԱՆ ՈՒԶՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐԵԼ

5 Ադոնիան՝ Ագիթի որդին, վեր-վեր թռչելով, ասաց. «Ես պէտք է թագաւորեմ»: Եւ նա կառքեր ու հեծեալներ պատրաստեց: Յիսուն սուրհանդակներ ընթանալու էին նրա առջեւից: 6 Հայրը նրան երբեք չարգելեց, չասաց, թէ՝ «Ինչո՞ւ այդ արեցիր»: Ինքն էլ դէմքով գեղեցիկ էր ու ծնուել էր Աբեսաղոմից յետոյ: 7 Նա խորհրդակցեց Շարուհիի որդի Յովաբի եւ Աբիաթար քահանայի հետ, ու նրանք օգնեցին Ադոնիային: 8 Սադոկ քահանան, Բանեան՝ Յովիդայէի որդին, Նաթան մարգարէն, Սեմէին, Ռէին եւ Դաւթի քաջարի մարդիկ Ադոնիայի հետ չէին: 9 Եւ Ադոնիան ոչխարներ, եզներ ու գառներ մորթեց Զոոլեթի քարի մօտ, որը Ռոգէլի երկրին մօտ է: Նա կանչեց իր բոլոր եղբայրներին՝ արքայի որդիներին, եւ Յուդայի երկրի բոլոր ղամարդկանց՝ արքայի ծառաներին, 10 բայց Նաթան մարգարէին, Բանեային, քաջարի մարդկանց եւ իր Սողոմոն եղբօրը չկանչեց:

ՆԱԹԱՆԸ ԵՒ ԲԵՐՍԱԲԷԷՆ՝ ՍՈՂՈՄՈՆԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ

11 Նաթան մարգարէն խօսելով Սողոմոնի մօր՝ Բերսաբէէի հետ, ասաց. «Չե՞ս լսել, որ Ադոնիան՝ Ագիթի որդին, թագաւոր է դարձել, եւ մեր տէր արքայ Դաւիթը այդ չգիտի: 12 Արդ, ե՛կ քեզ մի խորհուրդ տամ, որ փրկես քո եւ Սողոմոն որդուդ կեանքը: 13 Գնա՛ Դաւիթ արքայի մօտ, խօսի՛ր նրա հետ եւ ասա՛. "Չէ՞ որ դու ինքդ, տէ՛ր իմ արքայ, երդուելով քո աղախնին, ասացիր, թէ՝ "Քո որդի Սողոմոնն է թագաւորելու ինձնից յետոյ, նա է նստելու իմ աթոռին": Էլ ինչո՞ւ է թագաւորել Ադոնիան": 14 Երբ կը սկսես խօսել արքայի հետ, ես կը մտնեմ ու կը լրացնեմ քո խօսքերը»:

15 Բերսաբէէն մտաւ սենեակ, արքայի մօտ: Արքան շատ էր ծերացել, եւ սոմնացի Աբիսակն սպասարկում էր արքային: 16 Բերսաբէէն խոնարհուեց ու երկրպագեց արքային: Արքան հարցրեց. «Ի՞նչ է խնդրանքդ»: 17 Նա պատասխանեց. «Իմ տէ՛ր արքայ, դու քո Տէր Աստուծով երդուեցիր քո աղախնին ու ասացիր, թէ՝ "Իմ որդի Սողոմոնն է թագաւորելու ինձնից յետոյ, նա է նստելու իմ աթոռին", 18 բայց ահա Ադոնիան է թագաւորել, եւ դու, տէ՛ր իմ արքայ, այդ չես իմացել: 19 Բազում արջառներ, ոչխարներ ու գառներ է մորթել, կանչել է արքայի բոլոր որդիներին, Աբիաթար քահանային ու զօրքի հրամանատար Յովաբին, իսկ քո ծառայ Սողոմոնին չի կանչել: 20 Տէ՛ր իմ արքայ, ամբողջ Իսրայէլն իր հայեացքը յառել է քեզ վրայ, որ յայտնես նրանց, թէ ով պիտի նստի իմ տէր արքայի աթոռին իրենից յետոյ: 21 Եթէ իմ տէր արքան գնայ իր նախնիների գիրկը, ես ու իմ որդի Սողոմոնը մեղապարտ կը համարուենք»:

22 Մինչ նա խօսում էր արքայի հետ, եկաւ Նաթան մարգարէն: 23 Յայտնեցին արքային, թէ՝ «Ահաւասիկ եկել է Նաթան մարգարէն»: Սա մտաւ արքայի մօտ ու մինչեւ գետին երեսնիվայր գլուխ տուեց նրան: 24 Նաթանն ասաց. «Տէ՛ր իմ արքայ, դո՞ւ ես ասել, թէ՝ "Ադոնիան թագաւորելու է ինձնից յետոյ եւ նստելու է իմ աթոռին": 25 Այսօր նա իջել է, մորթել բազում արջառներ, ոչխարներ ու գառներ, կանչել արքայի բոլոր որդիներին, զօրքի հրամանատարներին ու Աբիաթար քահանային: Նրանք ահա ուտում ու խմում են նրա մօտ՝ ասելով. "Կեցցէ՛ Ադոնիա

արքան", 26 իսկ ինձ՝ քո ծառային, Սադոկ քահանային, Յովիդայէի որդի Բանեային եւ քո Սողոմոն ծառային չի կանչեցէ: 27 Արդեօ՞ք այս բանն իմ տէր արքայի հրամանով է կատարուել: Դու, սակայն, քո ծառային չես յայտնել, թէ իրենից յետոյ ո՛վ պիտի նստի իմ տէր արքայի աթոռին»:

28 Պատասխան տուեց Դաւիթ արքան՝ ասելով. «Ինձ մօ՛տ կանչեցէք Բերսաբէէին»: Սա մտաւ նրա մօտ ու կանգնեց նրա դիմաց: 29 Արքան երդուեց՝ ասելով. «Կենդանի է Տէրը, որ փրկել է իմ կեանքը ամէն նեղութիւնից: 30 Ինչպէս երդուելով Իսրայէլի Տէր Աստուծով ասել եմ, թէ՝ "Քո Սողոմոն որդին է թագաւորելու ինձնից յետոյ, եւ իմ փոխարէն նա է նստելու իմ աթոռին", այդպէս էլ անելու եմ հէնց այսօր»: 31 Բերսաբէէն երեսնիվայր գետին խոնարհուեց ու գլուխ տալով արքային՝ ասաց. «Յաւիտեան կեցցէ՛ իմ տէր Դաւիթ արքան»:

32 Դաւիթ արքան ասաց. «Ինձ մօ՛տ կանչեցէք Սադոկ քահանային, Նաթան մարգարէին ու Յովիդայէի որդի Բանեային»: 33 Սրանք եկան արքայի մօտ: Արքան ասաց նրանց. «Առէ՛ք ձեզ հետ ձեր տիրոջ ծառաներին, իմ որդի Սողոմոնին իմ ջորու վրայ նստեցրէ՛ք եւ իջեցրէ՛ք Գեհոն: 34 Սադոկ քահանան ու Նաթան մարգարէն այնտեղ նրան թող Իսրայէլի թագաւոր օծեն: Եղջերափողեր հնչեցրէ՛ք եւ բացականչեցէ՛ք՝ "Կեցցէ՛ Սողոմոն արքան": 35 Ապա նրա յետեւից գնալով՝ քաղա՛ք բարձրացէ՛ք, եւ նա թող գայ, նստի իմ աթոռին ու թագաւորի իմ փոխարէն, քանզի ես եմ հրամայել, որ նա լինի Իսրայէլի ու Յուդայի երկրի առաջնորդը»: 36 Յովիդայէի որդի Բանեան պատասխան տալով արքային՝ ասաց. «Թող այդպէս լինի, թող Տէր Աստուածն իմ տէր արքայի խօսքը հաստատի: 37 Ինչպէս Տէրն իմ արքայ տիրոջ հետ էր, նոյնպէս թող լինի նաեւ Սողոմոնի հետ, թող բարձրացնի նրա աթոռը առաւել, քան իմ տէր արքայ Դաւթի աթոռը»: 38 Սադոկ քահանան, Նաթան մարգարէն, Յովիդայէի որդի Բանեան, քերեթիները ու օփելեթիները եկան եւ Սողոմոնին նստեցրին Դաւիթ արքայի ջորու վրայ եւ նրան տարան Գեհոն: 39 Սադոկ քահանան իւղով լի եղջիւրն առաւ խորանից եւ օծեց Սողոմոնին, եղջերափող հնչեցրեց, եւ ամբողջ ժողովուրդը բացականչեց՝ «Կեցցէ՛ Սողոմոն արքան»: 40 Բոլոր մարդիկ եկան նրա հետ, պարեր պարելով մեծ ուրախութիւն արեցին, երկիրը դղրդաց նրանց ձայնից:

41 Երբ Ադոնիան ու նրա բոլոր հիւրերը աւարտեցին ուտելը, լսեցին ուրախութեան աղմուկ-աղաղակը: Յովաբը լսելով եղջերափողի ձայնը՝ ասաց. «Այս ի՞նչ աղմուկ է բարձրացել քաղաքում»: 42 Մինչ նա խօսում էր, եկաւ Աբիաթար քահանայի որդի Յովնաթանը: Ադոնիան նրան ասաց. «Նե՛րս մտիր, քանզի զօրաւոր մարդ ես դու եւ բարի լուր ես տալու»: 43 Յովնաթանը պատասխան տալով՝ ասաց Ադոնիային. «Յիրաւի, մեր տէր Դաւիթ արքան թագաւոր դարձրեց Սողոմոնին: 44 Նա Սադոկ քահանային, Նաթան մարգարէին, Յովիդայէի որդի Բանեային, քերեթիներին ու օփելեթիներին ուղարկեց նրա հետ, նրան նստեցրին արքայի ջորու վրայ, 45 եւ Սադոկ քահանան ու Նաթան մարգարէն նրան թագաւոր օծեցին Գեհոնում: Ապա այնտեղից ուրախութեամբ եկան, ու քաղաքը դղրդաց: Ահա այդ ձայնն է, որ լսում էք: 46 Սողոմոնը նստեց արքայական գահին: 47 Արքայի ծառաները մտան, որ շնորհաւորեն մեր տէր Դաւիթ արքային: Նրանք ասացին. "Թող Աստուած քո Սողոմոն որդու անունը առաւել մեծացնի, քան քո անունը, եւ նրա աթոռն առաւել բարձրացնի, քան քո աթոռը": Արքան իր անկողնի մէջ գլուխ խոնարհեց՝ ասելով. 48 "Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որն այսօր իմ զաւակին արժանացրեց իմ աթոռին, եւ իմ աչքերը այդ տեսնում են"»: 49 Ադոնիայի բոլոր հիւրերը զարհուրեցին ու վեր կացան, եւ ամէն մէկը գնաց իր ճանապարհով:

50 Ադոնիան վախենալով Սողոմոնից՝ ելաւ գնաց ու զոհասեղանի եղջիւրներից բռնեց: 51 Սողոմոնին յայտնեցին՝

ասելով. «Ահա Ադոնիան վախեցաւ Սողոմոն արքայից: Նա բռնել է զոհասեղանի եղջիւրները եւ ասում է. "Թող Սողոմոն արքան այսօր ինձ երդուի, թէ իր ծառային սրով չի սպանի"»: 52 Սողոմոնն ասաց. «Եթէ նա առաքինի մարդ լինի, նրանից ոչ մի մազ չի պակասի ու գետին չի ընկնի, իսկ եթէ ուզենայ չար գործ կատարել, կը մեռնի»: 53 Սողոմոն արքան մարդ ուղարկեց, եւ Ադոնիային իջեցրին զոհասեղանից: Ադոնիան եկաւ, խոնարհուեց Սողոմոն արքայի առաջ, իսկ Սողոմոնն ասաց նրան. «Գնա՛ քո տունը»:

ԴԱՒԹԻ ՎԵՐՋԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ՍՈՂՈՄՈՆԻՆ

2 Երբ մօտեցան Դաւթի մահուան օրերը, նա դիմելով իր որդի Սողոմոնին՝ ասաց. 2 «Ըստ այս աշխարհի կարգի, ես անցայ իմ կեանքի ճամփան: Դու զօրացի՛ր, տղամարդ եղի՛ր, 3 պահի՛ր քո Տէր Աստծու հրամանները՝ գնա՛ նրա ճանապարհով, պահի՛ր նրա պատուիրանները, նրա օրէնքները, նրա հրամաններն ու նրա վկայութիւնները ըստ Մովսէսի Օրէնքների գրքի, որ, ինչ էլ անես, նկատի ունենաս այն ամէնը, որ պատուիրել եմ քեզ: 4 Եւ Տէրը կ'իրագործի իր խօսքը, որ ասաց իմ մասին, թէ՝ "Եթէ քո որդիները հաստատ պահեն իրենց ընթացքը եւ իրենց ամբողջ սրտով ու հոգով հաւատարմութեամբ գնան իմ առջեւից, ապա մարդ չի պակասի Իսրայէլի գահի վրայից": 5 Դու ինքդ գիտես, թէ ինչ է արել ինձ Շարուհիի որդի Յովաբը, ինչ է արել Իսրայէլի երկու զօրապետերին՝ Ներէի որդի Աբեններին եւ Հեթերի որդի Ամեսայիին: Նա սպանեց նրանց, խաղաղ ժամանակ պատերազմի ժամանակուայ պէս արիւն թափեց, իր կեանքում անպարտ արիւն թափեց՝ ներկելով իր մէջքն ու կօշիկները: 6 Գործի՛ր ըստ քո իմաստութեան եւ նրա ալեւոր մազերը խաղաղութեամբ մի՛ իջեցրու դժոխք: 7 Գաղաադացի Բերզելիի որդիներին ողորմութի՛ւն արա, նրանք թող քո սեղանից ուտողների հետ լինեն, որովհետեւ նրանք ինձ աջակից եղան, երբ ես փախչում էի քո եղբայր Աբեսաղոմից: 8 Ահա քեզ հետ է բաւուրիմացի Յեմինի որդի Գերայի որդի Սեմէին: Սա ինձ ծանր անէծքներով անիծել է այն օրը, երբ գնում էի իմ բանակատեղին: Նա Յորդանան գետի ափին ինձ ընդառաջ եկաւ, եւ ես Տիրոջ անունով երդուելով՝ նրան ասացի. "Քեզ սրով չեմ սպանի": 9 Նրան անպարտ մի՛ համարիր, քանզի դու իմաստուն մարդ ես, գիտես, թէ ինչ պէտք է անես նրա ալեւոր մազերն արեամբ դժոխք իջեցնելու համար»:

ԴԱՒԹԻ ՄԱՀԸ

10 Եւ Դաւիթը գնաց իր նախնիների գիրկը: Նա թաղուեց Դաւթի քաղաքում: 11 Դաւիթն Իսրայէլի վրայ թագաւորեց քառասուն տարի. Քեբրոնում թագաւորել էր եօթը տարի, իսկ Երուսաղէմում՝ երեսուներեք տարի:

12 Սողոմոնը նստեց իր հօր՝ Դաւթի գահին, երբ տասներկու տարեկան էր: Նրա թագաւորութիւնը շատ հաստատուն էր:

ԱԴՈՆԻԱՅԻ ՄԱՀԸ

13 Ագիթի որդի Ադոնիան Սողոմոնի մայր Բերսաբէէի մօտ գալով՝ խոնարհուեց նրա առաջ: Բերսաբէէն հարցրեց. «Բարի՞ նպատակով ես գալիս մօտս»: Ադոնիան ասաց. «Բարի նպատակով»: 14 Եւ նա աւելացրեց. «Ես խօսքեր ունեմ քեզ ասելու»: 15 Բերսաբէէն ասաց. «Խօսի՛ր»: Ադոնիան ասաց նրան. «Դու ինքդ գիտես, թէ իմն էր թագաւորութիւնը, եւ ամբողջ Իսրայէլն իր հայեացքն ինձ էր ուղղել որպէս թագաւորի, սակայն ոչ թէ ե՛ս արժանացայ թագաւորութեան, այլ՝ իմ եղբայրը, քանզի Աստծուց տրուեց նրան: 16 Արդ, մի բան եմ խնդրելու քեզնից, եւ դու չպէտք է մերժես ինձ»: Բերսաբէէն ասաց. «Ցայտնի՛ր խնդրանքդ»: 17 Ադոնիան ասաց. «Ասա՛ Սողոմոն արքային (եւ նա քեզ չի մերժի), որ ինձ կնութեան տայ սոմնացի Աբիսակին»: 18 Բերսաբէէն ասաց. «Բարի, ես այդ մասին կը խօսեմ արքայի հետ»:

19 Բերսաբէէն գնաց Սողոմոն ար-

քայի մօտ, որ խօսի նրա հետ Ադոնիայի մասին: Արքան ոտքի կանգնեց նրա առջեւ, համբուրեց նրան, նստեց իր աթոռին: Արքայի մօր համար էլ աթոռ բերուեց, եւ մայրը նստեց նրա աջ կողմում: 20 Բերսաբէէն ասաց նրան. «Մի փոքր խնդրանք ունեմ քեզնից, ինձ մի՛ մերժիր»: Արքան ասաց. «Խնդրի՛ր, մա՛յր իմ, ես քեզ չեմ մերժի»: 21 Բերսաբէէն ասաց. «Սոմնացի Աբիսակը թող քո եղբօրը՝ Ադոնիային կնութեան տրուի»: 22 Պատասխան տուեց Սողոմոն արքան եւ ասաց իր մօրը. «Իսկ ինչո՞ւ ես Ադոնիայի համար սոմնացի Աբիսակին խնդրում, նրա համար թագաւորութի՛ւնս խնդրիր, չէ՞ որ նա իմ աւագ եղբայրն է, եւ Աբիաթար քահանան ու Շարուհիի որդի Յովաբը նրա սպարապետն ու բարեկամներն են»: 23 Սողոմոն արքան երդուեց Տիրոջ անունով՝ ասելով. «Թող Աստուած ինձ այսպէս անի եւ աւելին էլ անի. Ադոնիայի խնդրածը իր իսկ կեանքի դէմ է: 24 Արդ, կենդանի է Տէրը, որ ինձ հաստատեց ու նստեցրեց իմ հայր Դաւթի գահին, ինձ համար տուն շինեց, ինչպէս խոստացել էր Տէրը: Ադոնիան այսօր իսկ պիտի մեռնի»: 25 Եւ Սողոմոն արքան ուղարկեց Յովիդայէի որդի Բանեային, որը սպանեց նրան: Եւ այդ օրը մեռաւ Ադոնիան:

ԱԲԻԱԹԱՐԻ ՄԱՀԸ ԵՒ ՅՈՎԱԲԻ ՄԱՀԸ

26 Աբիաթար քահանային արքան ասաց. «Գնա՛ քո ագարակը՝ Անաթոթ: Այսօր դու մահուան ես արժանի, սակայն քեզ չեմ սպանի, քանզի իմ հօր առջեւ կրել ես Տիրոջ ուխտի տապանակը, եւ դու էլ չարչարուել ես այնտեղ, ուր չարչարուել է իմ հայրը»: 27 Եւ Սողոմոնը Աբիաթարին զրկեց Տիրոջ քահանայութիւնից, որպէսզի կատարուի Տիրոջ այն խօսքը, որ Սելովում ասել էր Հեղիի տան վերաբերեալ: 28 Լուրը հասաւ Յովաբին, որը Ադոնիայի համակիրն էր եւ չէր հետեւել Սողոմոնին: Յովաբը փախաւ մտաւ Տիրոջ վրանը եւ բռնեց զոհասեղանի եղջիւրներից: 29 Սողոմոնին յայտնեցին, թէ Յովաբը փախել մտել է Տիրոջ վրանը եւ բռնել զոհասեղանի եղջիւրներից: Սողոմոնը լուր ուղարկեց Յովաբին՝ ասելով. «Քեզ ի՞նչ եղաւ, որ փախար զոհասեղանի մօտ»: Յովաբն ասաց. «Վախեցայ քեզնից ու փախայ Տիրոջ մօտ»: Սողոմոն արքան Յովիդայէի որդի Բանեային ասաց. «Գնա սպանի՛ր Յովաբին ու թաղի՛ր»: 30 Յովիդայէի որդի Բանեան գնաց Տիրոջ վրանը, Յովաբի մօտ եւ ասաց նրան. «Այսպէս է կարգադրել արքան, ելի՛ր այդտեղից»: Յովաբն ասաց. «Չեմ ելնի, քանզի այստեղ էլ պիտի մեռնեմ»: Յովիդայէի որդի Բանեան վերադարձաւ ու արքային յայտնեց, թէ ինչ է ասել ինքը Յովաբին, եւ թէ ինչ պատասխան է տուել նա: 31 Արքան ասաց նրան. «Գնա՛ եւ արա՛ նրան այն, ինչ ինքը ցանկացել է. սպանի՛ր նրան ու թաղի՛ր եւ այսօր վերացրո՛ւ ինձնից ու իմ հօր տնից այն անմեղ արիւնը, որ թափել էր Յովաբը: 32 Տէրը նրա հեղած անմեղ արիւնը թող նրա գլխին դարձնի, որովհետեւ նա սրով սպանել է իրենից աւելի արդար եւ քաջ երկու մարդկանց, եւ հայրս նրանց այդ սպանութեան մասին չգիտէր: Դրանք էին՝ Ներէի որդի Աբենները, որն Իսրայէլի սպարապետն էր, եւ Յեթերի որդի Ամեսային, որը Յուդայի երկրի սպարապետն էր: 33 Նրանց արիւնը թող յաւիտեան դառնայ նրա ու նրա զաւակների գլխին, իսկ Տէրը յաւիտենական խաղաղութիւն թող պարգեւի Դաւթին, նրա զաւակին, նրա տանն ու գահին»: 34 Յովիդայէի որդի Բանեան վերադարձաւ Յովաբի մօտ, սպանեց նրան ու թաղեց անապատում գտնուող նրա տան մէջ: 35 Արքան Յովիդայէի որդի Բանեային նրա փոխարէն զօրավար կարգեց, թագաւորութիւնը փոխադրեց Երուսաղէմ եւ Սադոկ քահանային Աբիաթարի փոխարէն քահանայ կարգեց Տիրոջ առաջ:

Տէրը Սողոմոնին չափազանց շատ խելք ու իմաստնութիւն տուեց եւ ծովեզրի աւազի նման՝ սրտի լայնութիւն: Սողոմոնն աւելի իմաստուն դարձաւ, քան իր նախնիների բոլոր որդիները եւ եգիպտացի իմաստունները: Նա կին առաւ փարաւոնի դստերն ու, նախքան իր պալատը կառուցելը, նրան բերեց Դաւթի քաղաքը: Նա նախ եօթը տարի կառուցեց եւ աւարտեց Տիրոջ տունն ու Երուսաղէմի շուրջանակի պարիսպը: Սողոմոն արքան լեռներում ունէր եօթանասուն հազար բեռնակիր եւ ութսուն հազար քարհատ: Սողոմոնը ծովափին պատնէշներ դրեց, մեծամեծ ջրաւազաններ կառուցեց, ինչպէս նաեւ սիւներ տնկեց, բակում շատրուաններ շինել տուեց ու պղնձէ աւազանը: Նա շինեց բարձրադիր միջնաբերդ աշտարակներով եւ Դաւթի քաղաքն անջրպետեց խրամատով: Դրանից յետոյ փարաւոնի դուստրը ելաւ Դաւթի քաղաքից եւ եկաւ իր տունը, որ Սողոմոնը շինել էր իր համար: Դրանից յետոյ է, որ շինուեց բարձրադիր միջնաբերդը: Սողոմոնը տարեկան երեք անգամ ողջակէզ եւ խաղաղութեան զոհեր էր մատուցում այն զոհասեղանի վրայ, որ կառուցել էր Տիրոջ համար, խունկ էր ծխում Տիրոջ առջեւ: Նա աւարտեց տան կառուցումը:

Սրանք են այն իշխանները, որոնք ղեկավարում էին Սողոմոնի շինարարական գործերը ... Սողոմոնի ձեռնարկած գործերի վրայ աշխատող մարդկանց հսկում էին երեք հազար վեց հարիւր գործավարներ: Նա կառուցեց Ասուրը, Մակդովը, Ազերը, Վերին Բեթորոնը եւ Բալաաթը, բայց Տիրոջ տունը եւ Երուսաղէմի շուրջանակի պարիսպը շինելուց յետոյ է, որ կառուցեց այդ քաղաքները:

Դաւիթը կենդանի եղած ժամանակ պատուիրել էր Սողոմոնին՝ ասելով. «Ահա քեզ մօտ է քեբրոնցի Յեմինի որդի Գերիի որդի Սեմէին: Նա ծանր անէծքներով անիծեց ինձ այն օրը, երբ գնում էի իմ բանակը: Սա Յորդանան գետի ափին ընդառաջ եկաւ ինձ, եւ ես Տիրոջ անունով երդուեցի նրան, թէ՝ "Քեզ սրով չեմ սպանի": Արդ, նրան անպարտ մի՛ համարիր, քանզի դու իմաստուն մարդ ես եւ գիտես, թէ ինչ պէտք է անես նրան՝ նրա ալեւոր մազերն արեամբ դժոխք իջեցնելու համար»:

ՍԵՄԷԻԻ ՄԱՀԸ

36 Արքան լուր ուղարկեց, կանչեց Սեմէիին եւ ասաց նրան. «Քեզ համար տո՛ւն շինիր Երուսաղէմում, այնտեղ ապրի՛ր եւ այնտեղից դուրս չգաս: 37 Այն օրը, որ ելնես եւ Կեդրոնի հեղեղատն անցնես, լա՛ւ իմացիր, որ կը մեռնես, եւ քո արիւնը քո գլխին կը լինի»: Արքան այդ օրը երդուել տուեց նրան: 38 Սեմէին ասաց արքային. «Բարի է այն, որ ասացիր, իմ տէ՛ր արքայ, քո ծառան այդպէս էլ կ'անի»: Եւ Սեմէին Երուսաղէմում բնակուեց երեք տարի:

39 Երեք տարի անց Սեմէիի երկու ծառաները փախան Գեթի արքայ Մաաքի որդի Անքուսի մօտ: Սեմէիին յայտնեցին, թէ՝ «Ահա քո երկու ծառաները Գեթում են»: 40 Վեր կացաւ Սեմէին, համբուեց իր էշը ու գնաց Անքուսի մօտ՝ իր ծառաներին որոնելու: Սեմէին գնաց ու իր ծառաներին բերեց Գեթից: 41 Սողոմոնին յայտնեցին, թէ Սեմէին Երուսաղէմից գնացել է Գեթ եւ վերադարձրել իր ծառաներին: 42 Արքան մարդ ուղարկելով՝ կանչեց Սեմէիին եւ ասաց նրան. «Չէ՞ որ քեզ երդուեցրի Տիրոջ անունով ու վկայութիւն տուեցի՝ ասելով, թէ՝ "Այն օրը, որ ելնես Երուսաղէմից ու գնաս աջ կամ ձախ, լա՛ւ իմացիր, որ կը մեռնես", իսկ դու ասացիր ինձ՝ "Բարի են խօսքերդ, որ լսեցի": 43 Արդ, ինչպէ՞ս է, որ չպահեցիր Տիրոջը տուած իմ երդումն ու քեզ տուած իմ պատուէրը»: 44 Արքան ասաց Սեմէիին. «Դու ինքդ գիտես քո սրտի չարութիւնը, որ արել ես իմ հայր Դաւթի նկատմամբ: 45 Տէրը քո չարիքները քո գլխին է թափելու, իսկ Սողոմոն արքան օրհնեալ է, եւ Դաւթի աթոռը Տիրոջ առաջ թող յաւիտեան հաստատ մնայ»: 46 Եւ Սողոմոն արքան հրաման տուեց Յովիդայէի որդի Բանեային, որը եկաւ ու սպանեց Սեմէիին, եւ սա մեռաւ:

ՍՈՂՈՄՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՓԱՐԱՒՈՆԻ ԱՂՋԿԱՅ ՀԵՏ
(Բ Մնաց., 1. 3-12)

3 Երբ Սողոմոնի թագաւորութիւնն ամրապնդուեց, նախքան իր տան, Տիրոջ տան ու Երուսաղէմի շուրջանակի պարսպի շինարարութեան աւարտը նա խնամիութիւն հաստատեց Եգիպտոսի արքայ փարաւոնի հետ, կին առաւ նրա դստերն ու բերեց Դաւթի քաղաքը: 2 Ժողովուրդը խունկ էր ծխում բարձունքների վրայ, քանզի մինչ այդ դեռ չէր շինուել Տիրոջ անուան տունը:

3 Սողոմոնը, հնազանդուելով իր հայր Դաւթի յորդորներին, սիրեց Տիրոջը, բայց ինքն էլ էր բարձունքներում զոհեր մատուցում ու խունկ ծխում:

ՍՈՂՈՄՈՆՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ՏԻՐՈՋԻՑ

4 Արքան ելաւ գնաց Գաբաւոն՝ այնտեղ զոհ մատուցելու, քանզի այդտեղ աւելի բարձր էր ու մեծ: Սողոմոնը Գաբաւոնում գտնուող այդ զոհասեղանի վրայ հազար ողջակէզ մատուցեց:

5 Տէրը Սողոմոնին երեւաց գիշերուայ քնի մէջ: Տէրն ասաց Սողոմոնին. «Որեւէ բան խնդրի՛ր քեզ համար»: 6 Սողոմոնն ասաց. «Դու մեծ ողորմածութիւն արեցիր իմ հայր Դաւթին, եւ նա էլ քեզ հետ, քո առջեւից ընթացաւ ճշմարտութեամբ, արդարութեամբ ու սրտի մաքրութեամբ, եւ դրա համար ցոյց տուեցիր այս մեծ ողորմածութիւնը՝ նրա որդուն նստեցրիր նրա գահին, ինչպէս որ է այսօր: 7 Արդ, իմ Տէ՛ր Աստուած, դու քո ծառային դրել ես իմ հայր Դաւթի փոխարէն, իսկ ես դեռ պատանի եմ եւ չգիտեմ իմ անելիքը: 8 Քո ծառան քո ընտրած ժողովրդի մէջ է, մի ժողովուրդ, որը բազմամարդ է, անթիւ ու անհամար: 9 Իմաստութի՛ւն տուր քո ծառային, որ նա կարողանայ արդարութեամբ լսել ու դատել քո ժողովրդին, խելամտութիւն ունենայ տարբերելու բարին ու չարը, որովհետեւ ո՞վ կարող է ղեկավարել քո այս բազմամարդ ժողովրդին»: 10 Տիրոջը հաճելի եղաւ Սողոմոնի այս խնդրանքը, 11 եւ Տէրն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թէ կեանքի երկար օրեր, հարստութիւն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտութիւն՝ դատ անելու, 12 ուստի քո ասածի համաձայն եմ վարուելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպէս որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել, եւ ո՛չ էլ քեզնից յետոյ քո նմանը կը յայտնուի: 13 Քեզ տալիս եմ նաեւ այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստութիւն ու փառք, այնպէս որ քո ապրած կեանքի օրերին թագաւորներից ոչ ոք չի լինելու քեզ նման: 14 Եւ եթէ ընթանաս իմ ճանապարհով, կատարես իմ հրամաններն ու պատուիրանները, ինչպէս ընթացել էր քո հայր Դաւիթը, ապա քո կեանքի օրերը կ՚երկարեցնեմ»: 15 Սողոմոնը զարթնեց եւ տեսաւ, որ դա երազ էր: Նա եկաւ Երուսաղէմ, կանգնեց Սիոնում գտնուող Տիրոջ ուխտի տապանակի դէմ յանդիման, զոհասեղանի առջեւ, ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցեց եւ մեծ խրախճանք սարքեց իր եւ իր բոլոր ծառաների համար:

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

16 Այդ ժամանակ երկու անառակ կանայք եկան ու կանգնեցին արքայի առջեւ: 17 Կանանցից մէկն ասաց. «Լսի՛ր ինձ, տէ՛ր իմ, ես եւ այս կինը մի տան մէջ էինք: Ես երեխայ ունեցայ այդ տանը: 18 Այնպէս պատահեց, որ երրորդ օրն այս կինն էլ ծնեց: Մենք էինք միայն տանը, մեր երկուսից բացի ուրիշ ոչ ոք չկար տանը: 19 Գիշերը սրա որդին մեռաւ, որովհետեւ նա իր երեխայի վրայ էր պառկել: 20 Սա գիշերուայ կէսին զարթնել է, վերցրել իմ մանկանն իմ գրկից, երբ ես՝ քո աղախինը, քնած եմ եղել, պառկեցրել է իր ծոցում, իսկ իր մեռած որդուն դրել է իմ ծոցը: 21 Առաւօտեան վեր կացայ, որ կուրծք տամ իմ որդուն, բայց տեսայ, որ մեռած է: Ցերեկը մի լաւ դիտեցի նրան եւ տեսայ, որ դա իմ ծնած երեխան չէ»: 22 Միւս կինն ասաց. «Ո՛չ, մեռածը քո որդին է, իմ որդին կենդանին է»: Առաջին կինն ասում էր. «Ո՛չ, կենդանին իմ որդին է, իսկ քո որդին մեռածն է»: 23 Այսպէս վիճեցին արքայի առջեւ: Արքան ասաց նրանց. «Դու ասում ես, թէ՝ "Այս կենդանին է իմ որդին, մեռածը նրա որդին է", իսկ դու էլ ասում ես՝ "Ո՛չ, մեռածը քո որդին է, կենդանին իմ որդին է"»: 24 Արքան ասաց. «Սուրն ինձ բերէք»: Սուրը բերեցին թագաւորի մօտ: 25 Արքան ասաց. «Կտրեցէ՛ք, երկու կէս արէ՛ք այս կենդանի ծծկեր մանկանը, նրա մի կէսը տուէ՛ք սրան ու միւս կէսը՝ նրան»: 26 Այն կինը, որի որդին կենդանի էր, ցաւից գալարուեց իր որդու համար: Նա ասաց արքային. «Լսի՛ր ինձ, տէ՛ր, կենդանի մանկանը տուէ՛ք նրան, միայն թէ մի՛ սպանէք մանկանը»: Միւս կինն ասաց. «Ո՛չ իմը թող լինի, ո՛չ նրանը, մէջտեղից կիսէ՛ք նրան»: 27 Պատասխան տուեց արքան՝ ասելով. «Նրա՛ն տուէք կենդանի մանկանը, ով ասաց, թէ՝ "Դրա՛ն տուէք, միայն թէ մի՛ սպանէք երեխային"»: Նա է դրա մայրը»: 28 Եւ ամբողջ Իսրայէլը լսելով արքայի վճռած դատաստանը՝ երկնչեց արքայից, քանզի տեսաւ, որ նրա մէջ դատաստան վարելու Աստծու իմաստութիւնը կար:

ՍՈՂՈՄՈՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐԸ

4 Սողոմոն արքան թագաւորում էր Իսրայէլի վրայ, 2 ու սրանք էին նրա իշխանները. Սադոկի որդի Ազարիան՝ քահանայ, 3 Սիսայի որդիներ Ելիարեփն ու Աքիան՝ քարտուղարներ, Աքիլիդի որդի Յոսափատը՝ դիւանապետ, 4 Յովիդայէի որդի Բանեան՝ սպարապետ, Սադոկն ու Աբիաթարը՝ քահանաներ, 5 Նաթանի որդի Ազարիան՝ գործավարների վերակացու, Նաթանի որդի Զաբուդը՝ քահանայ եւ արքայի բարեկամ, 6 Աքիսարը՝ տան վերակացու, Ելիակը՝ հազարապետ, Սափի որդի Ելիափը՝ իշխան, եւ Աբդովի որդի Ադոնիրամը՝ հարկերի վերատեսուչ: 7 Սողոմոնն ամբողջ Իսրայէլում ունէր տասներկու գործակալներ, որոնցից ամէն մէկը տարուայ մէջ մէկ ամիս ուտեստեղէն էր մատակարարում արքային ու նրա ընտանիքին: 8 Ահա նրանց անունները. Օրի որդի Բէին՝ Եփրեմի լեռան վրայ, 9 Դակարի մի որդին՝ Մաքմասում, Սալաբիմում, Բեթսամիւսում ու Այիլոմում մինչեւ Բեթանան, 10 Եսդի որդին՝ Արաբոթում: Սրան էին պատկանում Սոքովն ու ամբողջ Օփերի երկիրը: 11 Ամինադաբի որդին՝ ամբողջ Նեփադորում: Սողոմոնի դուստր Տափաթը սրա կինն էր: 12 Այելոթի որդի Բաանան՝ Թանաքում, Մաքդովում եւ Սանի ամբողջ տանը, որը Ելսարթանի մօտ է, Եզրայէլից ներքեւ, եւ տարածւում է Բեթսանից մինչեւ Աբելմաուլա եւ Մամբրալա: 13 Գաբերի որդի Եկմաալը՝ Ռամոթ Գաղաադում: Սրան էին պատկանում Մանասէի որդի Յայիրի աւանները Գաղաադում, Երգաբի գաւառը Բասանում, վաթսուն մեծամեծ պարսպապատ, պղնձէ նիգերով ամրացուած քաղաքներ: 14 Ադդովի որդի Այինադաբը՝ Մայեանեմում, 15 Աքիմասը՝ Նեփթալիմում: Սա Սողոմոնի դուստր Մասեմաթին կնութեան էր առել: 16 Քուսիի որդի Բաանասը՝ Ասերում եւ Բաալոթում: 17 Փարուայի որդի Յոսափատը՝ Իսաքարում: 18 Ելի որդի Սեմէին՝ Բենիամինում: 19 Ադայի որդի Գաբերը՝ Գաղաադի երկրում, ամորհացիների թագաւոր Սեհոնի ու Բասանի թագաւոր Օգի երկրում: Նաբիփը՝ Յուդայի երկրում:

ՍՈՂՈՄՈՆԻ ԲԱՐԳԱՒԱՃ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

20 Իսրայէլը ծովեզերքի աւազի չափ շատ բնակիչներ ունէր, որոնք ուտում էին, խմում եւ ուրախանում: 21 Սողոմոնը տիրում էր թագաւորութիւններին այլազգիների գետի երկրից մինչեւ Եգիպտոսի սահմանները: Բերում էին ընծաներ ու ծառայեցին նրան մինչեւ նրա կեանքի վերջը:

22 Սողոմոնն օրական սպառում էր երեսուն քոռ† ընտիր ալիւր, քառասուն քոռ ալիւր, 23 տասն ընտիր եզներ, արօտավայրում կերակրուած քսան կով

†Շուրջ 9.000 կիլոգրամ:

*եւ Հարիւր ոչխար, չհաշուած եղջերու-
ները, այծեամներն ու տեսակ-տեսակ
ընտիր պարարտ թռչունները, 24 քան-
զի նա իշխում էր գետից այս կողմ
գտնուող բոլոր երկրների վրայ՝ Թափ-
սայից մինչեւ Գազա, գետի այս կող-
մում եղած բոլոր թագաւորութիւնների
վրայ: Խաղաղութիւն էր տիրում նրա
երկրում ու շրջակայ բոլոր կողմերում:
25 Սողոմոնի իշխանութեան օրօք Ցու-
դայի երկրում եւ Իսրայէլում, Դանից
մինչեւ Բերսաբէէ, մարդիկ իրենց որ-
թատունկերի ու թզենիների տակ
ապահով կեանք էին վարում, ուտում
ու խմում:*

*26 Սողոմոնն ունէր քառասուն հա-
զար մատակ լծկան ձիեր եւ տաս-
ներկու հազար երիվարներ: 27 Գործա-
կալները Սողոմոն արքային ամէն
ամիս պարէն էին մատակարարում,
արքայի սեղանից ոչ մի բան չէր
պակասում: 28 Որտեղ որ գտնւում էր
արքան, ըստ իւրաքանչիւրի վրայ
դրուած հարկի, այնտեղ էին բերում
նաեւ գարի ու յարդ նժոյգների եւ
լծկան ձիերի համար:*

*29 Տէրը Սողոմոնին տուեց ընդու-
նակութիւն, շատ խոր իմաստութիւն,
ծովեզերքի աւազի չափ լայնախոհ
սիրտ: 30 Սողոմոնի իմաստութիւնը
շատ աւելի խորն էր, քան բոլոր նա-
խորդ մարդկանց ու Եգիպտոսի իմաս-
տունների հանճարը: 31 Նա բոլոր
մարդկանցից առաւել իմաստուն դար-
ձաւ, աւելի իմաստուն, քան զարացի
Գեթանը, Եմանը եւ Մաւուլի որդիներ
Քալքալն ու Դարդանը: Նրա համբաւը
տարածուել էր շրջակայ բոլոր ազգերի
մէջ: 32 Սողոմոնը երեք հազար առակ է
գրել, իսկ նրա օրհներգութիւնների
թիւը հինգ հազար է: 33 Նա խօսել է
ծառերի մասին՝ Լիբանանի մայրիից
մինչեւ պատն ի վեր մագլցող զոպան,
պատմել է անասունների, թռչունների
ու ձկների մասին: 34 Բոլոր կողմերից,
նրա իմաստութեան համբաւը լսած
երկրի բոլոր թագաւորների մօտից
մարդիկ գալիս էին լսելու Սողոմոնի
իմաստութիւնը:*

ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Բ ՄՆԱՑ. 2.1-18)

5 *Տիւրոսի Քիրամ արքան իր ծառա-
ներին ուղարկեց Սողոմոնի մօտ, որով-
հետեւ լսել էր, թէ նրան թագաւոր են
օծել իր հայր Դաւթի փոխարէն. Քի-
րամը միշտ սիրել էր Դաւթին: 2 Սո-
ղոմոնը լուր ուղարկեց Քիրամին՝ ասե-
լով. 3 «Դու ինքդ գիտես, որ իմ հայր
Դաւիթը չրջակայ երկրների պար-
տադրած պատերազմների պատճառով
չկարողացաւ իմ Տէր Աստծու անուան
տունը շինել, մինչեւ որ Տէրը թշնա-
միներին հնազանդեցրեց նրա ոտքերի
առաջ: 4 Արդ, իմ Տէր Աստուածն ինձ
հանգիստ է տուել, եւ չրջապատում
չկայ ո՛չ դաւադիր, ո՛չ չար պատահար:
5 Ես որոշել եմ իմ Տէր Աստծու անուան
տունը շինել, ինչպէս Տէր Աստուածը
պատուիրել է իմ հայր Դաւթին՝
ասելով. "Իմ անուան տունը շինելու է
քո որդին, որին ես նստեցնելու եմ քո
աթոռին քո փոխարէն": 6 Արդ, հրա-
մա՛ն տուր, որ ինձ համար Լիբանանից
փայտ կտրեն, եւ իմ ստրուկների հետ
լինեն նաեւ քո ստրուկները: Ես քեզ կը
տամ քո ստրուկների վարձատրու-
թիւնն այնքան, որքան դու կ'ասես,
որովհետեւ դու ինքդ գիտես, որ մենք
չունենք մի մարդ, որ գիտենայ սիդո-
նացիների նման փայտ կտրել»:*

*7 Երբ Քիրամը լսեց Սողոմոնի խօս-
քերը, շատ ուրախանալով՝ ասաց.
«Օրհնեալ է այսօր Տէր Աստուածը, որ
Դաւթին իմաստուն որդի է տուել, որ-
պէսզի նա ղեկավարի մի բազմամարդ
ժողովուրդ»: 8 Քիրամը Սողոմոնին
լուր ուղարկեց՝ ասելով. «Իմացայ այն
ամէնն, ինչ ինձ յայտնեցին քո ուղար-
կած մարդիկ: Ես կը կատարեմ քո ամ-
բողջ կամքը. 9 իմ ստրուկները Լիբա-
նանից եղեւնափայտ ու մայրի կ'իջեց-
նեն ծով, ես դրանցից լաստեր կը
պատրաստեմ ծովի վրայ, դրանք բերել
կը տամ մինչեւ այն տեղը, որ դու ինձ
ցոյց կը տաս, ես ծովափ կը հանեմ
դրանք, եւ դու կը վերցնես: Դրա փո-
խարէն դու կը կատարես իմ կամքը.
հաց կը մատակարարես իմ տանը»:
10 Քիրամը Սողոմոնին եղեւնափայտ*

*ու մայրի էր տալիս այնքան, ինչքան
նա ուզում էր, 11 իսկ Սողոմոնը
Քիրամին տալիս էր քսան հազար քոռ
ցորեն ու քսան հազար սափոր զտուած
ձիթաիւղ, որ Սողոմոնն ամէն տարի
ուղարկում էր Քիրամին: 12 Տէրը Սո-
ղոմոնին իմաստութիւն տուեց, ինչ-
պէս խոստացել էր նրան, խաղաղու-
թիւն հաստատուեց Քիրամի ու Սողո-
մոնի միջեւ, եւ նրանք իրար հետ
դաշինք կնքեցին:*

*13 Սողոմոնը գլխահարկ դրեց ամ-
բողջ Իսրայէլում: Հարկ էր դրուած ե-
րեսուն հազար մարդու վրայ, 14 որոն-
ցից տասը հազարին ամէն ամիս
ուղարկում էր Լիբանան: Սրանք մէկ
ամիս մնում էին Լիբանանում եւ երկու
ամիս՝ իրենց տներում: Այդ գլխա-
հարկի վերակացու էր Ադոնիրամը:
15 Սողոմոնը լեռներում ունէր եօթա-
նասուն հազար բեռնակիր եւ ութսուն
հազար քարհատ, 16 բացի երեք հազար
հինգ հարիւր գործակալ ղեկավար-
ներից, որ Սողոմոնը նշանակել էր գոր-
ծաւորների վրայ: 17 Արքայի հրամա-
նով տան հիմքի համար բերեցին մեծ
ու ընտիր ապառաժ քարեր, անտաշ
քարեր: 18 Սողոմոնի մարդիկ, Քիրամի
մարդիկ ու Բիբլոսի բնակիչները տա-
շեցին, երեք տարի փայտ ու քար
պատրաստեցին Աստծու տան շինու-
թեան համար:*

ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

6 *Իսրայէլացիների՝ Եգիպտոսից դուրս
գալու չորս հարիւր քառասուներորդ
տարում եւ Սողոմոն արքայի՝ Իսրայէլի
վրայ թագաւորելու չորրորդ տարուայ
երկրորդ ամսում Սողոմոնն սկսեց
կառուցել Տիրոջ տունը:*

*2 Սողոմոն արքայի՝ Տիրոջ համար
շինած տան երկարութիւնն էր վաթ-
սուն կանգուն, լայնութիւնը՝ քսան
կանգուն, բարձրութիւնը՝ քսան† կան-
գուն: 3 Տան առջեւի կամարակապ բա-
կի երկարութիւնը քսան կանգուն էր՝
ինչքան տան բարձրութիւնն էր‡, իսկ
տան ճակատի կողմի լայնութիւնը՝
տասը կանգուն: Նա կառուցեց-ամբողջացրեց տունը: 4 Տունն ունէր գաղտնի դիտելու պատուհաններ: 5 Նա տան պատից դուրս, տան պատերի երկայնքով, տաճարի ու սրբարանի շուրջը պատուար շինեց, չորս կողմը սենեակներ կառուցեց: 6 Ներքին յարկը հինգ կանգուն լայնութիւն ունէր, միջինը՝ վեց կանգուն լայնութիւն, իսկ երրորդը՝ եօթը կանգուն լայնութիւն, որպէսզի տան շուրջը արտաքուստ ազատ տեղ ունենալով՝ տան պատերը չվնասուեն: 7 Տունը շինուեց ապառաժ ու անմշակ քարերով, եւ մուրճի կամ երկաթէ որեւէ գործիքի ձայն չլսուեց դրա շինութեան ժամանակ: 8 Ներքին յարկի գաւթի դուռը տան աջ կողմում էր. այստեղից ոլորապտոյտ սանդուղքներով ելնում էին միջին յարկը, իսկ միջինից՝ երրորդը: 9 Տունը կառուցեց-վերջացրեց, տունը երեսապատեց միմեանց շաղկապուած տախտակներով ու քանդակազարդ եղեւնափայտով: 10 Ամբողջ տան շուրջը վերնախարիսխ շինեց հինգ կանգուն բարձրութեամբ եւ վերնախարիսխը պատեց եղեւնափայտով:*

*11 Տէրը խօսքն ուղղելով Սողոմոնին՝
ասաց. 12 «Ահա տուն ես շինում: Եթէ
ըստ իմ հրամանների ընթանաս, իմ
օրէնքներն ի գործ դնես, պահես իմ
բոլոր պատուիրաններն ու դրանցով
առաջնորդուես, ապա կը կատարեմ քո
նկատմամբ այն խոստումը, որ տուել
էի քո հօրը՝ Դաւթին. 13 կը բնակուեմ
Իսրայէլի ժողովրդի մէջ եւ չեմ լքի իմ
իսրայէլացի ժողովրդին»:*

ՏԱՃԱՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՀԱՒՈՐՈՒՄԸ
(Բ ՄՆԱՑ., 3.8-14)

*14 Սողոմոնը կառուցեց-աւարտեց
տունը: 15 Տան պատերը ներսից երե-
սապատեց եղեւնափայտով. տան յա-
տակից մինչեւ պատերն ու գերանները
ներսից շուրջանակի փայտով երեսա-
պատեց: Տան ներքին մասը դրուագեց
մայրի փայտով, 16 տան յետեւում
քսան կանգուն երկարութեամբ մի
պատ շինեց, ներսում յատակից մինչեւ
գերանները երեսապատեց փայտով ու*

†Այլ բնագրերում՝ երեսուն:
‡Գէտ է լինի լայնութիւն:

այն վերածեց սրբարանի, որպէսզի այնտեղ պահուի սրբութիւնների սրբութիւնը: 17 Տունը՝ ներքին տաճարը, քառասուն կանգուն էր: 18 Տան ներսից կամարները, վերնախարիսխները երեսապատեց քանդակազարդ եղեւնափայտով: Ամէն ինչ եղեւնափայտով էր ծածկուած այնպէս, որ քար չէր երեւում: 19 Սրբարանը տան մէջ էր, ներսում: Այն շինուել էր, որպէսզի այնտեղ դրուի Տիրոջ ուխտի տապանակը: 20 Սրբարանը քսան կանգուն երկարութիւն, քսան կանգուն լայնութիւն եւ քսան կանգուն բարձրութիւն ունէր: Այն դրուագել տուեց մաքուր ոսկով: 21 Սողոմոնը եղեւնափայտէ զոհասեղան պատրաստեց: Նա տունը ներքուստ մաքուր ոսկով պատեց եւ սրբարանի դիմացը վարագոյր քաշեց ոսկէ շղթաներով: 22 Նա ամբողջ տունը ոսկով պատեց: Սրբարանի ամբողջ ներքնամասը երեսապատեց ոսկէ թիթեղներով:

23 Սրբարանի ներսում դրեց նոճու փայտից պատրաստուած երկու քերովբէներ: Մէկի բարձրութիւնը տասը կանգուն էր: 24 Նրա մի թեւը հինգ կանգուն էր, միւսը թեւը՝ նոյնպէս հինգ կանգուն. մի թեւի ծայրից միւս թեւի ծայրը տասը կանգուն էր: 25 Երկրորդ քերովբէն նոյն չափն ու նոյն ձեւն ունէր: 26 Մի քերովբէի բարձրութիւնը տասը կանգուն էր, նոյնը եւ՝ երկրորդ քերովբէինը: 27 Երկու քերովբէները դրեց ներսի սենեակում եւ նրանց թեւերը տարածեց. մի քերովբէի մէկ թեւը հասնում էր մի պատին, իսկ երկրորդ քերովբէի մէկ թեւը՝ միւս պատին: Նրանց միւս թեւերը սենեակում գալիս միանում էին իրար: 28 Նա քերովբէները ոսկով պատեց:

29 Տան բոլոր պատերի վրայ ներսից ու դրսից շուրջանակի քանդակեց, փորագրեց քերովբէներ, արմաւենիներ ու բարձրաքանդակներ: 30 Նա տան ներքին ու արտաքին յատակը ոսկով երեսապատեց:

31 Նա սրբարանի մուտքի դուռը շինեց գիհի փայտից: Դուռը պատի մէկ հինգերորդ մասն էր կազմում: 32 Իւղաթաթախ փայտից շինուած երկու փեղկերի վրայ քերովբէներ, արմաւենիներ փորագրեց եւ դրանք ոսկով երեսապատեց. ոսկին ծածկում էր քերովբէներն ու արմաւենիները:

33 Տաճարի մուտքի դռան դրանդիկները նոյնպէս գիհիի քառակուսի փայտերից էին: 34 Երկու դռները մայրի փայտից էին, ամէն մի դուռը երկփեղկ էր, իսկ փեղկերը բացւում-փակւում էին ծխնիներով: 35 Երկրորդ դռան վրայ ոսկով դրուագուած էին քերովբէներ, արմաւենիներ, եւ այդ դրուագները պատուած էին ոսկով, որ իջնում էր յօրինուածքի վրայ:

36 Նա ներքին սրահը շինեց երեք շարք անտաշ քարով եւ պարիսպ կառուցեց եղեւնափայտով:

37 Տիրոջ տան հիմքը դրուեց Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարուայ Զի ամսին, 38 եւ տասնմէկերորդ տարուայ Բուլ ամսին, այսինքն՝ ութերորդ ամսին տունն աւարտուեց իրեն անհրաժեշտ ամէն ինչով ու ամէն յօրինուածքով: Սողոմոնը տաճարը կառուցեց եօթը տարում:

ՍՈՂՈՄՈՆԻ ՊԱԼԱՏԸ

7 Սողոմոնն իր տունը տասներեք տարի կառուցեց եւ ամբողջովին աւարտեց այն:

2 Տունը շինեց Լիբանանի անտառի փայտով: Տունն ունէր հարիւր կանգուն երկարութիւն, յիսուն կանգուն լայնութիւն եւ երեսուն կանգուն բարձրութիւն. այն կառուցուել էր երեք շարք եղեւնափայտէ սիւներով, որոնց վրայ դրուած էին եղեւնափայտէ հեծաններ: 3 Նաեւ կառուցեց մի յարկ սիւների վրայ: Կառոյցը քառասունհինգ սիւն ունէր. ամէն մի շարքի վրայ տասնհինգ սիւն: 4 Երեք պատուարներն ու երեք միջնորմները կանգնած էին իրար դէմ առ դէմ: 5 Բոլոր դռներն ու միջնորմները քառակուսի էին, պատուարով: Դռները երեք շարքով իրար դիմաց էին:

6 Նա յիսուն կանգուն երկարութեամբ ու երեսուն կանգուն լայնութեամբ սիւնազարդ կամարակապ դահլիճ կառուցեց: Իրար միացուած կամարները տեղաւորուած էին միմեանց դիմաց, իսկ սիւներն ու խարիսխները դրուած էին կամարների դիմաց: 7 Նա կառուցեց նաեւ կամարակապ գահասրահ եւ դատաստան էր անում այդ կամարակապ ատեանում: Այդ յարկը յատակից մինչեւ ձեղուն երեսապատուած էր եղեւնափայտով:

8 Նրա տան մէջ, ուր բնակւում էր, կար նոյն ձեւով կառուցուած կամարակապ մի սրահ: Փարաւոնի դստեր համար, որը Սողոմոնի կինն էր, նոյն ձեւով կամարակապ սրահ պատրաստեց: 9 Ամէն ինչ շինուած էր ընտիր քարերից. անտաշ քարերը հիմքից մինչեւ առաստաղ ներսից ու դրսից իրար էին ագուցուած ըստ իրենց չափերի: 10 Մեծ սրահի պատի հիմքը նա կառուցել էր մեծ-մեծ քարերով, որոնք ունէին տասը եւ ութ կանգուն երկարութիւն, 11 իսկ վերեւի մասը կառուցել էր նոյն չափի անտաշ ու ընտիր քարերով: Պատերը երեսապատուած էին եղեւնափայտով: 12 Մեծ սրահը շուրջանակի երեք կարգ անտաշ քարերից էր եւ երեսապատուած եղեւնափայտով: Տիրոջ տան սրահը՝ Տիրոջ տան ներքին կամարակապ սրահը շինուած էր տաճարի դիմաց:

ՔԻՐԱՄԻՆ ՎԱՍԱՀՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

13 Սողոմոն արքան մարդ ուղարկեց ու Քիրամ անունով մի մարդու բերել տուեց Տիւրոսից: 14 Սա Նեփթաղիմի ցեղից մի այրի կնոջ որդի էր: Նրա հայրը տիւրոսցի էր, պղնձի վարպետ եւ ամէն տեսակ պղնձի գործերի մէջ մեծ հմտութիւն, վարպետութիւն ու գիտելիքներ ունէր: Նա եկաւ Սողոմոն արքայի մօտ ու նրա բոլոր գործերը կատարեց. 15 պատրաստեց տան կամարակապ սրահի երկու ձուլածոյ սիւները՝ ամէն մի սիւնի բարձրութիւնը տասնութ կանգուն, իսկ սիւների շուրջը կապեց մի գօտի, որի լայնութիւնը տասնչորս կանգուն էր եւ չորս մատ լայնութեամբ ակօսներ ունէր: Նոյն ձեւով կերտեց նաեւ երկրորդ սիւնը: 16 Նա երկու խոյակ պատրաստեց, որոնք պէտք է դրուէին պղնձաձոյլ սիւների վրայ, նրանց գլխին: Մի խոյակի բարձրութիւնը հինգ կանգուն էր, երկրորդ խոյակի բարձրութիւնը նոյնպէս հինգ կանգուն էր: 17 Նա պատրաստեց վանդակակերպ երկու ցանց խոյակը ծածկելու համար:

18 Վանդակակերպ երկու ցանց էլ պատրաստեց երկրորդ խոյակը զարդարանքով ծածկելու համար: Նա երկու սիւների համար պատրաստեց նռնաձեւ զարդեր, որպէսզի դրանք շարք-շարք կախեն վանդակացանցի վրայ: 19 Սիւնի գլխին գտնուող երկրորդ խոյակի վրայ, կամարի մօտ դրեց մի պսակ, որն ունէր չորս կանգուն երկարութիւն, եւ վրան շուշաններ էին քանդակուած: 20 Երկու սիւների խոյակների վերեւից դրեց պսակներ, իսկ երկրորդ խոյակի շուրջը՝ կարգով շարուած երկու հարիւր նռնաձեւ զարդեր: 21 Նա սիւներ կանգնեցրեց տաճարի սրահում: Մի սիւն կանգնեցրեց ու այն անուանեց Ցաքում. երկրորդ սիւնը կանգնեցրեց ու անունը դրեց Բոոզ: 22 Սիւների գլխին շուշանաձեւ զարդեր քանդակեց: Այսպիսով աւարտուեցին սիւների հետ կապուած աշխատանքները:

ՊՂՆՁԷ ԱՒԱԶԱՆԸ
(Բ Մնաց., 4. 2-5)

23 Նա պատրաստեց նաեւ մի ձուլածոյ աւազան, որի երկարութիւնը մի ծայրից մինչեւ միւս ծայրը տասը կանգուն էր: Այն կլոր էր: Դրա բարձրութիւնը հինգ կանգուն էր, իսկ երեսուներեք կանգուն երկարութիւն ունեցող դրա շուրջբոլորը փոսեր կային: 24 Դրա եզրերից ներքեւ տասը կանգուն շուրջանակի յենարաններ կային, եւ երկու շարք մոյթեր ձուլուած-ամրացուած էին դրա շուրջը: 25 Ձուլածոյ աւազանը դրուած էր տասներկու եզների վրայ. երեքը դէպի հիւսիս էին նայում, երեքը՝ դէպի ծով, երեքը՝ դէպի հարաւ, երեքը՝ դէպի արեւելք: Աւազանը դրանց վրայ էր ամրացուած: Բոլոր եզների գաւակները դէպի ներս էին ուղղուած: 26 Աւազանի պղնձի հաստութիւնը մի թիզ էր. դրա շուրթը

բաժակի շուրթի նման էր. դրա վրայ ծաղկած շուշան էր քանդակուած: Աւազանը մօտաւորապէս երկու հազար մար† էր տանում:

ՊՂՆՁԷ ԽԱՐՍԽԱՋԵՒ ՊԱՏՈՒԱՆԴԱՆՆԵՐ

27 Նա պղնձէ տասը պատուանդաններ շինեց. մէկ պատուանդանի երկարութիւնը հինգ կանգուն էր, լայնութիւնը՝ չորս կանգուն, բարձրութիւնը՝ վեց կանգուն: 28 Պատուանդաններն այսպիսի կառուցուածք ունէին. փոսիկները յաջորդում էին միմեանց, եւ դրանց միջեւ ելուստներ կային: 29 Ելուստների միջեւ գտնուող փոսիկների վրայ պատկերուած էին առիւծներ, եզներ ու քերովբէներ, իսկ փոսիկների վրայ պատկերուած առիւծներից եւ եզներից վերեւ ու ներքեւ զարդեր էին կախուած: 30 Ամէն մի պատուանդան պղնձէ չորս անիւ ու պղնձէ սռնի ունէր, եւ չորս անկիւններին, աւազանի տակ, մարդու ուսի նմանութիւն ունեցող ձուլածոյ ելուստներ կային: 31 Դրա բերանը ներքին խոյակից մինչեւ վեր մէկ կանգուն էր. այդ բերանը խարսխի պէս կլոր էր ու մէկուկէս կանգուն լայնութիւն ունէր: Դրա բերանի վրայ ոչ թէ կլոր, այլ քառակուսի քանդակներ կային: 32 Սռնիով իրար միացուած չորս անիւներն ամրացուած էին աւազանի տակից, իսկ անիւներն էլ ամրացուած էին պատուանդանին: Ամէն մի անուի բարձրութիւնը մէկուկէս կանգուն էր: 33 Անիւները սարքուած էին կառքի անիւների նման. դրանց սռնիները, շրջանակները, ճաղերը եւ ամէն ինչը ձուլածոյ էին: 34 Ամէն մի պատուանդանի չորս անկիւններն ունէին չորս ելուստներ, եւ ելուստները պարանոցի հետ միաձոյլ էին: 35 Պատուանդանի վերեւում կէս կանգուն բարձրութեամբ կար բոլորակ մի պսակ, եւ պատուանդանի գլխի վերեւում գտնուող դրա բռնակներն ու խորշերը պատուանդանի հետ միաձոյլ էին: 36 Դրա բռնակների ու խորշերի վրայ քանդակեց Ներսի կողմից շուրջանակի միմեանց դիմաց կանգնած քերովբէներ, առիւծներ ու արմաւենիներ: 37 Այս նոյն օրինակով սարքեց բոլոր տասը պատուանդանները. բոլորը նոյն ձեւը, նոյն չափն ու նոյն զարդերն ունէին: 38 Նա պղնձէ տասը տաշտեր պատրաստեց. ամէն մի տաշտ քառասուն սափոր էր տանում եւ չորս կանգուն բարձրութիւն ունէր: Ամէն մի տաշտ դրուեց այդ տասը պատուանդաններից մէկի վրայ: 39 Ուսի վրայ ամրացուած հինգ պատուանդանները տեղադրեց տան աջ կողմում, միւս հինգը՝ տան ձախ կողմում, իսկ աւազանը տեղադրեց տան աջ կողմում՝ դէպի հարաւ-արեւելք: 40 Քիրամը շինեց կաթսաներ, երեսին տաք ջուր ցանելու անօթներ ու կոնքեր: Քիրամն աւարտեց բոլոր այն գործերը, որ արել էր Տիրոջ համար Սողոմոն արքայի տունը կառուցելիս. դրանք են՝ 41 երկու սիւն ու սիւների շուրջանակի քանդակազարդ խոյակներ, երկու ցանց, որոնցով պէտք է ծածկէին սիւների շուրջանակի քանդակուած երկու խոյակները, 42 երկու ցանցերի չորս հարիւր նռնաձեւ զարդերը, երկու շարք նռնաձեւ քանդակներ ամէն մի վանդակին, որոնցով պէտք է ծածկէին սիւների շուրջանակի քանդակուած երկու խոյակները: 43 Նաեւ տասը պատուանդաններ ու պատուանդանների վրայ դրուած տասը տաշտեր, 44 մէկ աւազան ու աւազանի տակ ամրացուած տասներկու պղնձաձոյլ եզներ, 45 կաթսաներ, երեսին տաք ջուր ցանելու անօթներ, կոնքեր եւ ամբողջ կահկարասին, որ Քիրամն արել էր Տիրոջ համար Սողոմոն արքայի տունը կառուցելիս: Արքայի տան ու Տիրոջ տան քառասունութ սիւներն ու արքայի պղնձի ամբողջ գործերը պատրաստեց Քիրամը: Իսկ թէ որքան պղինձ օգտագործեց այդ ամբողջ գործերն անելու համար, հնարաւոր չէ ասել, քանի որ դրանց չափ ու սահման չկար: Անգամ հնարաւոր չէ ասել, թէ որքան փայլուն պղինձ օգտագործուեց: 46 Արքան դրանք ձուլել էր տուել կաւային թանձր հողի մէջ, Սոկքոթի ու Սիրարթամի միջեւ ընկած

†Նուրջ 80.000 լիտր:

Յորդանան գետի ափին: 47 Սողոմոն արքան այդպէս տեղում թողեց ամբողջ այդ իրերը, քանզի թուով չափազանց շատ էին դրանք, եւ օգտագործուած պղնձին չափ ու սահման չկար: 48 Սողոմոն արքան պատրաստել տուեց Տիրոջ տան ամբողջ սպասքը, ոսկէ զոհարանն ու ոսկէ սեղանը, որի վրայ մատուցւում էր նուիրաբերման հացը, 49 մաքուր ոսկուց պատրաստուած աշտանակները, որոնցից հինգը դրուած էր սրբարանի դիմաց՝ աջ կողմում, եւ հինգը՝ ձախ կողմում, ոսկէ մոմակալները, ճրագակալները, մոմ կտրելու մկրատները, նաեւ դրանդիկները, լծակները, տաշտերը, ափսէներն ու տուփերը մաքուր ոսկուց: 50 Ոսկուց էին ներքնատան՝ սրբութիւնների սրբութեան դռներն ու տաճարի տան դռները:

51 Այսպիսով աւարտուեցին Տիրոջ տունը կառուցելու համար Սողոմոն արքայի ձեռնարկած բոլոր գործերը: Եւ Սողոմոն արքան տարաւ իր հայր Դաւթի նուէրները եւ իր՝ Սողոմոնի բոլոր նուէրները՝ արծաթը, ոսկին ու սպասքը, եւ ի պահ դրեց Տիրոջ տան գանձարանում:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ՏԱՃԱՐԻ ՄԷՋ Է ՏԵՂԱԴՐՒՈՒՄ
(Բ Մնաց. 5. 2 - 6. 2)

8 Այն ժամանակ Սողոմոն արքան Իսրայէլի բոլոր ծերերին՝ ցեղերի բոլոր բարձրաստիճան գլխաւորներով եւ Իսրայէլացիների նահապետներով հանդերձ կանչեց իր մօտ, Սիոն, որպէսզի Տիրոջ ուխտի տապանակը հանեն Դաւթի քաղաքից, այսինքն՝ Սիոնից: 2 Իսրայէլի բոլոր տղամարդիկ Սողոմոն արքայի մօտ հաւաքուեցին Անթանիամ ամսին, տօնին, այսինքն՝ եօթներորդ ամսին: 3 Եկան Իսրայէլի բոլոր ծերերը, եւ քահանաները վերցնելով դուրս բերեցին Տիրոջ տապանակը, 4 վկայութեան խորանն ու վկայութեան խորանի մէջ եղած ամբողջ սուրբ սպասքը: Այն վերցրին քահանաներն ու ղեւտացիները: 5 Սողոմոն արքան ու նրա մօտ հաւաքուած Իսրայէլի ամբողջ ժողովուրդը նրա հետ տապանակի առջեւից գնալով՝ անթիւ ու անհամար արջառ ու ոչխար էին զոհաբերում: 6 Քահանաները Տիրոջ ուխտի տապանակը ներս տարան, իր տեղը՝ սրբութիւնների սրբութեան տան սրբարանը, եւ տեղադրեցին քերովբէների թեւերի ներքոյ: 7 Քերովբէները թեւերը տարածել էին տապանակի վրայ, եւ նրանք վերեւից ծածկում էին դրա սրբութիւնները: 8 Լծակներն այնպէս էին տեղաւորել, որ դրանց գլուխները սրբարանի դիմաց երեւում էին սրբութիւններից, բայց դրսից չէին երեւում: Դրանք այնտեղ են մնում մինչեւ այսօր: 9 Տապանակի մէջ ոչինչ չկար, բացի քարէ երկու տախտակներից՝ ուխտի տախտակներից: Դրանք այնտեղ դրել էր Մովսէսը Քորէբում, երբ Տէրն ուխտ էր արել իսրայէլացիների հետ Եգիպտոսից նրանց դուրս գալու ժամանակ:

10 Երբ քահանաները ելան սրբարանից, ամպ լցուեց Տիրոջ տունը, 11 եւ քահանաներն ամպի պատճառով չէին կարողանում սպասաւորութիւն անել, քանզի Տիրոջ փառքը լցրել էր տունը:

12 Այդ ժամանակ Սողոմոնն ասաց. «Տէրն ասել է՝ "Ես հովանի պիտի լինեմ մէգ ու մշուշով": 13 Ես քեզ համար բնակութեան տուն շինեցի, որ քո աթոռը հաստատ լինի յաւիտեան»:

ՍՈՂՈՄՈՆԻ ՃԱՌԸ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՒ
(Բ Մնաց. 6. 3-11)

14 Արքան երեսը դարձրեց ու օրհնեց Իսրայէլի ամբողջ ժողովրդին. եւ Իսրայէլի ամբողջ ժողովուրդը կանգնած էր: 15 Նա ասաց. «Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր Աստուածն այսօր, որն իր բերանով խօսեց իմ հայր Դաւթի մասին եւ իր ձեռքով կատարեց իր խոստումը՝ 16 ասելով. "Այն օրից, որ իմ ժողովրդին՝ Իսրայէլին Եգիպտոսից դուրս բերեցի, Իսրայէլի ցեղերին պատկանող ոչ մի վայր չընտրեցի տուն շինելու համար, որ իմ անուամբ լինի, այլ ընտրեցի Դաւթին, որ Իսրայէլի իմ ժողովրդին ղեկավարի": 17 Իմ հայր Դաւթի մտքում եղել էր Իսրայէլի Տէր Աստծու անուանով տուն շինելու

նպատակը, 18 եւ Տէրն ասել էր իմ Հայր
Դաւթին. "Քանի որ մտքումդ դրել ես
իմ անունով տուն շինել, լաւ ես արել,
որ այն դրել ես մտքումդ, 19 բայց դո՛ւ
չես շինելու տունը, այլ՝ քո որդին, որ
սերուելու է քեզնից, նա է շինելու իմ
անունով տունը": 20 Եւ Տէրը կատա-
րեց իր ասած խօսքը, ու ես փոխա-
րինեցի իմ հօրը՝ Դաւթին, նստեցի
Իսրայէլի աթոռին, ինչպէս ասել էր
Տէրը, եւ Իսրայէլի Տէր Աստծու անու-
նով տուն շինեցի, 21 այնտեղ տապա-
նակի համար տեղ պատրաստեցի, ուր
դրուած է Տիրոջ ուխտը, որ նա ուխտել
էր մեր հայրերի հետ, երբ նրանց դուրս
բերեց Եգիպտացիների երկրից»:

ՍՈՂՈՄՈՆԻ ԱՂՕԹՔԸ
(Բ Մնաց. 6. 12-42)

22 Սողոմոնը ամբողջ Իսրայէլի ժո-
ղովրդի ներկայութեամբ կանգնեց Տի-
րոջ զոհասեղանի առջեւ, ձեռքերը եր-
կինք տարածեց 23 եւ ասաց. «Տէ՛ր
Աստուած Իսրայէլի, չկայ քեզ նման
Աստուած վերեւում՝ երկնքում, ու ներ-
քեւում՝ երկրի վրայ. դու պահում ես
ուխտը եւ ողորմածութիւն ցուցաբե-
րում քո ծառայի նկատմամբ, որը
սրտանց գնում է քո առջեւից: 24 Դու
պահեցիր քո ծառային՝ իմ հայր
Դաւթին տուած խոստումդ. ինչ որ քո
բերանով ասել էիր, քո ձեռքով էլ
կատարեցիր, ինչպէս այսօր: 25 Արդ,
Տէ՛ր Աստուած Իսրայէլի, կատարի՛ր քո
Դաւիթ ծառային՝ իմ հօրը տուած քո
այն խոստումը, թէ՝ "Մարդ չի պակա-
սելու Իսրայէլի գահի վրայից, միայն
թէ քո որդիները հաստատ հետեւեն
իրենց ճանապարհին՝ ընթանալով իմ
առջեւից, ինչպէս դու ես ընթանում իմ
առջեւից":
26 Արդ, Տէ՛ր Աստուած Իսրայէլի,
թող իրագործուեն քեզ ծառայ իմ հայր
Դաւթին ասած քո խօսքերը: 27 Մի՞թէ
Աստուած բնակուելու է մարդկանց
հետ երկրի վրայ: Եթէ երկինքն ու
երկնքի անսահմանութիւնները քեզ
բաւական չեն, ապա ինչպէ՞ս կարող է
բաւականացնել իմ շինած այս տունը:
28 Արդ, լսի՛ր քո ծառայի աղօթքներն
ու իմ խնդրանքները, Տէ՛ր Աստուած
Իսրայէլի, լսի՛ր քո ծառայի պաղա-
տագին աղօթքները, որ նա քո առջեւ
մատուցում է քեզ: 29 Քո աչքերը
գիշեր-ցերեկ թող բաց լինեն այն տեղի
վրայ, որի համար ասացիր, թէ քո
անունն այնտեղ պէտք է լինի. լսի՛ր
այն աղերսանքը, որ քո ծառան գիշեր-
ցերեկ առաքում է քեզ այստեղ:
30 Լսի՛ր քո ծառայի ու Իսրայէլի քո
ժողովրդի ձայնը, որոնք աղօթքի են
կանգնել այստեղ. լսի՛ր քո բնակու-
թեան վայրում՝ երկնքում, 31 ու ների՛ր
նրան, ով կը մեղանչի իր մերձաւորի
դէմ: Եթէ մէկը մի մարդու անիծելով
մեղք գործելուց յետոյ գայ ու այս
տանը, քո զոհասեղանի առաջ զղջայ,
32 ապա լսի՛ր նրան երկնքում ու քա-
ւութի՛ւն արա նրան: Դատի՛ր Իսրայէլի
քո ժողովրդին, դատապարտի՛ր անօրէ-
նին ու նրանից պահանջի՛ր նրա կա-
տարած մեղքի հատուցումը, իսկ ար-
դարին արդարացրո՛ւ՝ հատուցելով
նրան ըստ իր արդարութեան:
33 Եթէ քո դէմ մեղանչելու պատ-
ճառով Իսրայէլի քո ժողովուրդը պար-
տուի թշնամիներից, բայց դառնայ
դէպի քեզ, փառք տայ քո անունը,
աղօթի ու աղաչի քեզ այս տանը,
34 ապա լսի՛ր նրան երկնքում, ների՛ր
Իսրայէլի քո ժողովրդի մեղքերը եւ
վերադարձրո՛ւ նրանց այն երկիրը, որ
տուել ես նրանց հայրերին:
35 Եթէ քո դէմ մեղանչելու պատ-
ճառով երկինքը փակուի, ու անձրեւ
չլինի, իսկ նրանք աղօթք անեն այս
վայրում, փառք տան քո անունը եւ
քեզնից ներում ստանալով՝ զղջան
իրենց մեղքերի համար, 36 ապա լսի՛ր
երկնքում եւ ների՛ր քո ծառաների ու
Իսրայէլի քո ժողովրդի մեղքերը, որ-
պէսզի ցոյց տաս նրանց բարի ճա-
նապարհը, որով պէտք է ընթանան, եւ
անձրեւ տաս քո երկրին, որը տուել ես
քո ժողովրդին իբրեւ ժառանգութիւն:
37 Եթէ երկրի վրայ սով լինի, ժան-
տախտ, խորշակահարութիւն, դեղ-
նախտ, մորեխ կամ թրթուր, եւ թշնա-
մին նեղի նրան իր քաղաքներից
մէկում, կամ ամէն տեսակ պատահար
ու ցաւ լինի, 38 եւ եթէ Իսրայէլի քո

ամբողջ ժողովրդից որեւէ մէկը մի
աղօթք կամ մի աղերսանք անի, եւ
մարդիկ, իրենց սրտի ցաւը գիտենալով,
ձեռքները տարածեն դէպի այս տունը,
39 ապա լսի՛ր երկնքում՝ քո բնակու-
թեան տեղում, ների՛ր նրանց, կա-
տարի՛ր նրանց խնդրանքը, ամէն մէկի
հոգին ճանաչելով՝ հատուցի՛ր ըստ
նրանց ընթացած ճանապարհի, քանզի
միայն դու ես ճանաչում բոլոր մարդ-
կանց հոգիները: 40 Թող մարդիկ եր-
կիւղ կրեն քեզնից իրենց կեանքի բոլոր
օրերում, որչափ որ ապրեն մեր հայ-
րերին տուած քո երկրի երեսին:
41 Եթէ Իսրայէլի քո ժողովրդին
չպատկանող մի օտարական գայ հեռու
երկրից, 42 ուր լսած լինի քո մեծ
անուան, ամուր ձեռքի ու հզօր բազկի
մասին, գայ եւ աղօթք անի այս տե-
ղում, 43 ապա նրան եւս լսիր երկնքում՝
քո բնակութեան տեղում, եւ ըստ ամե-
նայնի կատարի՛ր այդ օտարականի
քեզնից խնդրածը, որպէսզի երկրի
բոլոր ազգերը ճանաչեն քո անունը,
երկիւղ կրեն քեզնից, ինչպէս Իսրայէլի
քո ժողովուրդը, եւ իմանան, որ քո
անուամբ է կոչուել իմ կառուցած այս
տունը:
44 Եթէ քո ժողովուրդը պատերազմի
ելնի իր թշնամիների դէմ այն ճանա-
պարհով, որ դու կ'ուղարկես նրանց, եւ
եթէ նրանք աղօթքի կանգնեն Տիրոջ
ընտրած քաղաքի ճանապարհին կամ
քո անունով իմ կառուցած տանը, 45 ա-
պա երկնքից լսի՛ր նրանց աղօթքն ու
խնդրանքը, իրաւադա՛տ եղիր նրանց
նկատմամբ: 46 Եթէ մեղանչեն քո դէմ
(քանզի չկայ մարդ, որ չմեղանչի), եւ
նրանց վրայ բարկանաս ու նրանց
մատնես թշնամիների ձեռքը, եւ գե-
րեվարողները նրանց գերեվարեն դէպի
թշնամու հեռաւոր կամ մօտիկ երկիրը,
47 եւ եթէ գերի տարուած երկրում
զղջան իրենց հոգում, դառնան դէպի
քեզ, աղաչեն քեզ գերութեան երկրում
եւ ասեն՝ "Մեղանչեցինք, անօրէնու-
թիւն ու անիրաւութիւն գործեցինք",
48 եւ ապա իրենց թշնամիների երկ-
րում, ուր տարել ես նրանց, քեզ դիմեն
իրենց ամբողջ սրտով եւ ամբողջ հո-
գով, քեզ աղօթք անեն իրենց հայրերի
տուած երկրի ճանապարհին, քո ընտ-
րած քաղաքում եւ քո անունով իմ կա-
ռուցած տանը, 49 ապա լսի՛ր երկնքում՝
քո բնակութեան վայրում, նրանց
աղօթքներն ու խնդրանքները, իրաւա-
դա՛տ եղիր նրանց նկատմամբ, 50 նե-
րի՛ր քո դէմ գործած նրանց անիրա-
ւութիւնները, քո հանդէպ թոյլ տուած
բոլոր անարգանքները, գո՛ւթ տուր
նրանց գերեվարողներին, գթա՛ նրանց,
51 քանզի նրանք քո ժողովուրդն են եւ
քո ժառանգութիւնը, որոնց դուրս բե-
րեցիր Եգիպտոսից՝ երկաթէ հնոցի մի-
ջից: 52 Թող քո աչքերն ու ականջները
բաց լինեն քո ծառայի ու Իսրայէլի քո
ժողովրդի աղերսանքների հանդէպ, որ
լսես նրանց բոլոր աղաղակները, որ
առաքում են քեզ, 53 քանզի, դու ես
նրանց քեզ համար ժառանգորդ ընտ-
րել բոլոր ազգերի միջից, ինչպէս ասել
ես քո ծառայ Մովսէսի միջոցով, երբ
մեր հայրերին դուրս էիր բերում
Եգիպտոսից, Տէ՛ր, Տէ՛ր»:

ՍՈՂՈՄՈՆԸ ՀԱՅՑՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Երբ Սողոմոնն աւարտեց տան կա-
ռուցումը, իր կառուցած տան մասին
ասաց. «Տէրն արեգակը ի ցոյց հանեց
երկնքում. Տէրն ասաց, որ բնակւում է
մէգ ու մշուշի մէջ: Նա ասաց. "Իմ նոր
տունը ինձ արժանի ձեւով կառուցի՛ր,
որ բնակուեմ այնտեղ": Չէ՞ որ սա
գրուած է Երգերի գրքում»: 54 Երբ Տի-
րոջ զոհասեղանի առաջ ծնկաչոք ու
ձեռքերը դէպի երկինք տարածած Սո-
ղոմոնն աւարտեց Տիրոջն ուղղուած
այս բոլոր աղօթքներն ու աղերսանք-
ները, 55 կանգնեց ու մեծաձայն օրհ-
նեց Իսրայէլի ամբողջ ժողովրդին՝
ասելով. 56 «Օրհնեալ է Տէրն այսօր, որ,
ինչպէս խոստացել էր, հանգիստ է
տուել Իսրայէլի իր ժողովրդին: Իր
ծառայի՝ Մովսէսի միջոցով խոստացած
բոլոր բարի խօսքերից ոչ մի բան պա-
կաս չի մնացել: 57 Մեր Տէր Աստուածը
թող մեզ հետ լինի, ինչպէս մեր հայ-
րերի հետ էր, 58 մեզ թող չլքի, այլ
այնպէս առաջնորդի, որ մեր սրտերը
նրանից չխոտորուեն, ընթանանք նրա
նշած ճանապարհով, պահենք մեր

*հայրերին տուած նրա բոլոր պատուի-
բանները, նրա հրամանները, նրա
կարգադրութիւնները: 59 Տէր Աստծու
առջեւ մատուցած այս պաղատանքի
խօսքերս ցերեկ ու գիշեր թող հասնեն
մեր Տէր Աստծուն, որպէսզի իր ծա-
ռային ու Իսրայէլի իր ժողովրդին
ամէն օր արդար դատի, 60 որ երկրի
բոլոր ժողովուրդները ճանաչեն, թէ
Տէրը Աստուած է, եւ ուրիշ աստուած
չկայ: 61 Մեր սրտերը հաւատարիմ թող
լինեն մեր Տէր Աստծու նկատմամբ,
որպէսզի մենք մաքուր սրտով ընթա-
նանք ըստ նրա հրամանների եւ պա-
հենք նրա պատուիրանները, ինչպէս
այսօր»:*

ՏԱՃԱՐԻՆ ԱՐՈՒԱԾ ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒՄՆԵՐԸ
(Բ Մնաց. 7. 4 - 10)

*62 Արքան ու բոլոր իսրայէլացիները
նրա հետ Տիրոջ առջեւ զոհեր մատու-
ցեցին: 63 Սողոմոն արքան Տիրոջը
քսաներկու հազար արջառ, հարիւր
քսան հազար ոչխար մատուցեց իբրեւ
խաղաղութեան զոհաբերում: Արքան
ու բոլոր իսրայէլացիները կատարեցին
Տիրոջ տան նաւակատիքը: 64 Այդ օրը
արքան սրբագործեց սրահի մէջտեղը,
որը Տիրոջ տան դիմաց էր. այնտեղ
արեց ողջակէզներ, ընծայաբերումներ,
զոհաբերումներ ու խաղաղութեան զո-
հեր: Տիրոջ առաջ գտնուող պղնձէ զո-
հասեղանը փոքր էր եւ չէր կարող տե-
ղաւորել ողջակէզները, ընծայաբե-
րումները եւ խաղաղութեան զոհերը:*

*65 Սողոմոնն ու նրա հետ նաեւ Իս-
րայէլի ամբողջ ժողովուրդը Եմաթի
արեւմուտքից մինչեւ Եգիպտոսի հե-
ղեղատը այդ օրը մեր Տէր Աստծու
առաջ, նրա համար շինուած տանը
եօթը օր ու դարձեալ եօթը օր, այսինքն՝
տասնչորս օր կերան, խմեցին եւ ուրա-
խացան: 66 Ութերորդ օրը Սողոմոնն
արձակեց ժողովրդին, նրանք օրհնեցին
արքային, եւ ամէն մէկը ուրախ ու
զուարթ գնաց իր բնակութեան վայրը,
որովհետեւ Տէրը իր Դաւիթ ծառային
եւ Իսրայէլի իր ժողովրդին բարիք էր
պարգեւել:*

ԱՍՏՈՒԱԾ ԿՐԿԻՆ ԵՐԵՒՈՒՄ Է ՍՈՂՈՄՈՆԻՆ
(Բ Մնաց. 7. 11-22)

9 *Երբ Սողոմոնն աւարտեց Տիրոջ տան
եւ արքունի տան շինութիւնը, ինչպէս
նաեւ այն բոլոր գործերը, որ նա կա-
մենում էր կատարել, 2 Տէրը երկրորդ
անգամ երեւաց նրան, ինչպէս երե-
ւացել էր նրան Գաբաւոնում: 3 Տէրը
նրան ասաց. «Լսեցի իմ առջեւ արած
աղօթքի ձայնդ ու կատարած պաղա-
տանքներդ եւ արեցի այն ամէնը, ինչ
դու խնդրում էիր քո աղօթքներում.
սրբագործեցի քո կառուցած տունը, որ-
պէսզի իմ անունը յաւիտեան այնտեղ
դրուի, իմ աչքն ու սիրտը ընդմիշտ
այնտեղ լինեն: 4 Եթէ դու քո հայր
Դաւթի նման մաքուր սրտով, ուղիղ
ճանապարհով ընթանաս իմ առջեւից,
կատարես այն ամէնը, ինչ պատուի-
րեցի նրան, պահես իմ հրամաններն ու
պատուիրանները, 5 ապա քո աթոռը
Իսրայէլի վրայ յաւիտեան կանգուն կը
պահեմ, ինչպէս խոստացել եմ քո հայր
Դաւթին՝ ասելով, թէ՝ "Քո տոհմից
առաջնորդ չի պակասելու Իսրայէլի
գահի վրայ": 6 Իսկ եթէ դուք եւ ձեր
որդիները ինձնից խոտորուէք, չպահէք
իմ պատուիրաններն ու հրամանները,
որ Մովսէսը տուեց ձեզ, գնաք ու ծա-
ռայէք օտար աստուածներին, երկրպա-
գէք նրանց, ապա երկրի երեսից կը
ջնջեմ Իսրայէլ աշխարհը, որ տուել եմ
նրանց: 7 Իմ անուան համար սրբա-
գործուած այս տունը աչքից կը գցեմ,
Իսրայէլը բոլոր ժողովուրդների մօտ
խայտառակ ու ծաղրի առարկայ կը
լինի: 8 Եւ եթէ այս բարձր տան կողքից
ամէն անցնող զարմանալով ու սու-
լելով հարց տայ, թէ՝ "Ինչո՞ւ է Տէրն
այսպէս արել այս երկիրն ու այս
տունը", 9 ապա նրան պիտի պատաս-
խանեն. "Քանի որ նրանք լքեցին
իրենց Տէր Աստծուն, որը նրանց
հայրերին դուրս էր բերել Եգիպտոսից,
ստրկութեան տնից, իսկ իրենք յարե-
ցին օտար աստուածներին, երկրպագե-
ցին ու ծառայեցին նրանց, այդ պատ-
ճառով էլ Տէրը նրանց վրայ թափեց
այս ամբողջ չարիքը"»:*

Այն ժամանակ Սողոմոնը փարաւոնի

*դստերը հանեց Դաւթի քաղաքից ու
բերեց իր կառուցած տունը:*

ՍՈՂՈՄՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՔԻՐԱՄԻ ՀԵՏ
(Բ Մնաց. 8. 1-2)

*10 Քսան տարուայ ընթացքում, երբ
Սողոմոնը կառուցում էր երկու տները՝
Տիրոջ տունն ու արքունի տունը, 11 Տիւ-
բոսի Քիրամ արքան Սողոմոնին մա-
տակարարել էր եղեւնափայտ, մայրի
փայտ, ոսկի եւ այն ամէնը, ինչ Սո-
ղոմոնն ուզել էր: Այն ժամանակ
Սողոմոն արքան Քիրամին Գալիլիա-
յում քսան քաղաք նուիրեց: 12 Քիրամը
եկաւ Տիւրոսից ու գնաց Գալիլիա,
որպէսզի տեսնի Սողոմոնի իրեն նուի-
րած քաղաքները, սակայն դրանք
նրան դուր չեկան: 13 Նա ասաց. «Եղ-
բա՛յր, այս ի՞նչ քաղաքներ ես դու ինձ
նուիրել»: Եւ նա դրանց անունը Սահ-
մաններ դրեց: Դրանք մինչեւ այսօր էլ
այդպէս են կոչւում: 14 Եւ Քիրամը
Սողոմոնին հարիւր քսան տաղանդ†
ոսկի բերեց:*

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԻԻՍ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ
(Բ Մնաց. 8. 3-18)

*15‡ Սողոմոն արքայի սահմանած
մարդահարկի նպատակն այն էր, որ
կառուցի Տիրոջ տունը եւ արքունի
տունը, Մելոնը եւ բարձրապարիսպ-
ները, լցնի Դաւթի քաղաքի խրա-
մատները, կառուցի Ասուրը, Մայդանը
եւ Երուսաղէմի պարիսպը, Եսերը, Մա-
կեդովն ու Գազերը, 16 որոնք Եգիպ-
տոսի փարաւոն արքային էին պատ-
կանում: Փարաւոնը գնացել, նուաճել
ու հրով այրել էր Գազերը, սպանել
քանանացիներին, որոնք ապրում էին
այդ քաղաքում, եւ այն օժիտ էր տուել
իր դստերը՝ Սողոմոնի կնոջը: 17 Սո-
ղոմոնը վերակառուցեց Գազերը, Ներ-
քին Բեթերոնը, 18 Բալաթն ու Թերմո-
թը այդ երկրի անապատում, 19 իրեն
պատկանող բոլոր բնակելի քաղաք-
ները, ռազմակառքերի, բոլոր երիվար-
ների համար սահմանուած քաղաք-
ները եւ այն շենքերը, որ Սողոմոնն
ուզեց շինել Երուսաղէմում, Լիբանա-
նում եւ ամբողջ երկրում: 20 Որպէսզի
գլուխ չբարձրացնեն Իսրայէլի ցեղին
չպատկանող եւ երկրում ամորհացինե-
րից, քետացիներից, փերեզացիներից,
խեւացիներից, քանանացիներից, յե-
բուսացիներից ու գերգեսացիներից
կենդանի մնացած մարդիկ, որոնց իս-
րայէլացիները չէին կարողացել կոտո-
րել, 21 Սողոմոնը նրանց հարկատու
ծառայութեան ենթարկեց, ինչպէս որ
են մինչեւ այսօր: 22 Սողոմոնը իսրայէ-
լացիներին ծանր աշխատանքի չլծեց,
քանի որ նրանք պատերազմողներ էին,
իր ծառաները, իր իշխանները, իր
սպառազէն զինուորները, իր հեծեալ-
ները: 23 Սողոմոնի գործերի վերակա-
ցուները հինգ հարիւր յիսուն իշխան-
ներ էին, որոնք հսկում էին գործաւոր
ժողովրդին:*

*24 Փարաւոնի դուստրը Դաւթի քա-
ղաքից դուրս գալով՝ եկաւ այն տունը,
որ Սողոմոնը կառուցել էր իր համար:
Այդ ժամանակ էր, որ Սողոմոնը կա-
ռուցեց Մելոնը: 25 Սողոմոնը տարեկան
երեք անգամ ողջակէզներ ու խաղա-
ղութեան զոհեր էր մատուցում այն
զոհասեղանի վրայ, որը Տիրոջ համար
էր կառուցել, եւ Տիրոջ առջեւ խունկ էր
ծխում: Նա աւարտեց տան կառու-
ցումը:*

*26 Եդոմի երկրում, Կարմիր ծովի
եզրին, Ելաթի մօտ գտնուող Գասիոն-
գաբերում Սողոմոն արքան նաւեր
պատրաստեց, 27 իսկ Քիրամը Սողոմոնի
ծառաների հետ ծովի նաւարկութեան
հմուտ նաւորդներ ուղարկեց այդ նա-
ւերով: 28 Սրանք եկան Սոփերա եւ
այնտեղից չորս հարիւր քսան տա-
ղանդ† ոսկի բերեցին ու յանձնեցին
Սողոմոն արքային:*

ՍԱԲԱՅԻ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
(Բ Մնաց. 9. 1-12)

10 *Սաբայի թագուհին, լսելով Սողո-
մոնի համբաւի, Տիրոջ անուան ու Սո-
ղոմոնի իմաստնութեան մասին, եկաւ
նրան փորձելու հանելուկներով: 2 Նա
եկաւ Երուսաղէմ շատ մեծ շքախմբով,*

†Շուրջ 3.500 կիլոգրամ:
‡Իմաստի յստակութեան համար այստեղ
նեռնել եմ՝ երրայերէն բնագրին:

†Շուրջ 12.000 կիլոգրամ:

խնկեր, շատ առատ ոսկի ու թանկարժէք ակնեղէն բարձած ուղտերով: Նա մտաւ Սողոմոնի մօտ եւ խօսեց այն ամենի մասին, որ կար իր սրտում: 3 Սողոմոնը մեկնում էր նրա բոլոր խօսքերը. չկար այնպիսի մի բան, որ արքան սխալուէր կամ չմեկնէր: 4 Կինը, տեսնելով Սողոմոնի ամբողջ իմաստնութիւնը, կառուցած տները, 5 նրա խորտիկները, նրա ծառաների դասակարգութիւնը, պաշտօնեաների կարգապահութիւնն ու հանդերձանքը, նրա մատռուակներին ու Տիրոջը մատուցուող ողջակէզները, ապշեց: 6 Նա ասաց Սողոմոն արքային. «Ինչ որ իմ երկրում լսել էի քո գործերի ու իմաստնութեան մասին, ճիշտ է: 7 Ես չէի հաւատում ինձ ասուած խօսքերին, մինչեւ որ անձամբ չեկայ եւ աչքերովս չտեսայ: Քո իմաստնութեան եւ քո բարութեան համբաւի կէսն անգամ չեն պատմել ինձ իմ երկրում: 8 Երանելի են քո կանայք ու ծառաները, որ քո առջեւ կանգնած՝ ամէն օր լսում են քո ամբողջ իմաստնութիւնը: 9 Օրհնեալ լինի քո Աստուածը, որ բարեհաճել է քեզ տալ Իսրայէլի գահը: Տէրն Իսրայէլը յաւիտեան սիրելու համար քեզ է հաստատել ու քեզ արքայ դարձրել նրա վրայ, որ արդարամտութեամբ դատաստան անես նրանց ատեաններում»: 10 Նա Սողոմոնին նուիրեց հարիւր քսան տաղանդ† ոսկի, շատ առատ խունկ եւ թանկագին քարեր: Ոչ մի անգամ այդքան շատ եւ անուշահոտ խունկ չստացուեց, ինչքան որ Սաբայի թագուհին էր նուիրել Սողոմոն արքային:

11 Սոփերից ոսկով բարձուած Քիրամի նաւը բերեց նաեւ խիստ շատ անտառանիւթ եւ թանկագին քարեր: 12 Արքան անտառանիւթից Տիրոջ տան եւ արքունի տան համար մոյթեր պատրաստեց, իսկ երաժիշտների համար՝ քնարներ ու տաւիղներ: Այդպիսի քանակութեամբ անտառանիւթ այդ երկիրն այլեւս չստացաւ, եւ մինչեւ օրս էլ այդպիսի փայտեր չեն երեւացել:

13 Սողոմոն արքան Սաբայի թագուհուն տուեց ամէն ինչ, որ նա ուզեց ու խնդրեց, չհաշուած այն ամէնը, որ Սողոմոն արքան իր կամքով էր նուիրել: Սաբայի թագուհին եւ նրա բոլոր ծառաները վերադարձան իրենց երկիրը:

ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ
(Բ Մնաց. 9. 13-29)

14 Մէկ տարուայ ընթացքում Սողոմոնի ստացած ոսկին կշռում էր վեց հարիւր վաթսունվեց տաղանդ†, 15 չհաշուած հպատակներից, վաճառականների հասոյթից եւ գետի այն կողմում գտնուող բոլոր թագաւորներից ու երկրի կառավարիչներից ստացուած հարկերը:

16 Սողոմոն արքան երեք հարիւր նիզակ‡ պատրաստել տուեց կռածոյ ոսկուց՝ երեք հարիւր դահեկան ծախսելով մէկ նիզակի վրայ, 17 եւ երեք հարիւր վահան կռածոյ ոսկուց՝ մէկ ու կէս կիլոգրամ կշռով ոսկի ծախսելով ամէն մի վահանի վրայ:

18 Արքան դրանք զետեղեց Լիբանանի փայտից կառուցուած տանը: Արքան փղոսկրէ մեծ գահ պատրաստել տուեց եւ այն պատեց մաքուր ոսկով: 19 Գահը վեց աստիճան ունէր, գահի թիկունքին եզան գլուխներ էին քանդակուած: Գահաթոռի երկու կողմերին երկու յենաթեւ կար, եւ յենաթեւերի այս ու այն կողմից երկու առիւծներ կային: 20 Վեց աստիճանների այս ու այն կողմերում տասներկու առիւծներ կային: Այսպիսի գահ չէր եղել ոչ մի թագաւորութեան մէջ:

21 Սողոմոն արքայի ամբողջ սպասքը ոսկուց էր: Ոսկի էին նաեւ լուացարանները, իսկ Լիբանանի փայտից կառուցուած տան ամբողջ ամանեղէնը ոսկեպատ էր: Արծաթէ ոչինչ չկար, քանզի Սողոմոնի օրօք արծաթը յարգի չէր: 22 Սողոմոն արքան Թարսիսի ծովում նաւ ունէր Քիրամի նաւերի հետ, եւ երեք տարին մէկ Թարսիսից մի նաւ էր գալիս՝ բեռնուած ոսկով, արծաթով, փղոսկրներով, կապիկներով ու սիրամարգերով:

23 Սողոմոնն իր հարստութեամբ ու իմաստնութեամբ գերազանցեց աշխարհի բոլոր թագաւորներին, 24 եւ աշխարհի բոլոր թագաւորները փափագում էին տեսնել նրա երեսը, լսել նրա իմաստնութիւնը, որը Տէրն էր դրել նրա սրտում: 25 Նրանցից իւրաքանչիւրն ամէն տարի բերում էր իր ընծան՝ արծաթէ, ոսկէ անօթներ, հանդերձներ, զմուռս ու խնկեր, ձիեր ու ջորիներ:

26 Սողոմոնը հաւաքեց ռազմակառքեր ու հեծեալներ: Նա ունէր քառասուն հազար մատակ ձիեր, տասներկու հազար երիվարներ, որոնց տեղաւորեց ռազմակառքերի համար սահմանուած քաղաքներում, իսկ նրանք, որ արքայի համար էին սահմանուած՝ Երուսաղէմում: Նա գետից մինչեւ այլազգիների եւ եգիպտացիների սահմանները իշխում էր բոլոր թագաւորների վրայ: 27 Արքան արծաթն ու ոսկին Երուսաղէմում հասարակ քարի նման բան դարձրեց, իսկ եղեւնափայտը՝ դաշտի մոլաթզենիների նման առատ: 28 Սողոմոնի երիվարները բերւում էին Եգիպտոսից եւ Թեկուայից, որտեղից դրանք գնում էին նրա վաճառականները: 29 Արծաթ վճարելով† ռազմակառքեր էին բերում Եգիպտոսից: Ամէն մի ձի հարիւր յիսուն արծաթ արժէր: Այդ ապրանքները վաճառւում էին նաեւ Քետտիմի երկրի բոլոր թագաւորներին եւ ասորիների թագաւորներին ծովային ճանապարհով:

ՍՈՂՈՄՈՆԻ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒՆ

11 Սողոմոն արքան կնամոլ էր. նա կնութեան առաւ շատ օտար կանանց. փարաւոնի աղջկան, սովաբացի, ամոնացի, եդոմայեցի, ասորի, քետացի, ամորհացի 2 եւ այլ ազգերի պատկանող բազմաթիւ օտար կանանց, որոնց մասին Տէրն ասել էր իսրայէլացիներին. «Զխառնուէք նրանց հետ, նրանք էլ թող չխառնուեն ձեզ հետ, որպէսզի չլինի թէ ձեր սրտերը մոլորեցնեն իրենց կուռքերին դարձնելով»: Սողոմոնը յարեց նրանց՝ սէր տածելով: 3 Նա եօթը հարիւր կին եւ երեք հարիւր հարճ ունէր, եւ կանայք խոտորեցրին նրա սիրտը:

4 Սողոմոնի ծերութեան օրերին կանայք նրա սիրտը խոտորեցրին օտար աստուածների կողմը, եւ նա ամբողջ հոգով չկապուեց իր Տէր Աստծու հետ, ինչպէս իր հօր՝ Դաւիթի սիրտն էր կապուած: 5 Սողոմոնը պաշտեց սիդոնացիների գարշելի կուռք Աստարտին ու ամոնացիների գարշելի կուռք Մեղքոմին: 6 Սողոմոնը չարութիւն գործեց Աստծու առաջ եւ չընթացաւ Տիրոջ ճանապարհով, ինչպէս որ ընթացել էր իր հայր Դաւիթը: 7 Այն ժամանակ Սողոմոնը Երուսաղէմի դիմաց, լերան վրայ մի մեհեան կառուցեց մովաբացիների կուռք Քամոսի համար, ինչպէս եւ ամոնացիների Մեղքոմ կուռքի եւ սիդոնացիների գարշելի կուռք Աստարտի համար: 8 Նոյն բանն արեց նա նաեւ իր բոլոր օտարազգի կանանց աստուածների համար. նրա կանայք խունկ էին ծխում եւ իրենց կուռքերին զոհ մատուցում:

9 Տէրը բարկացաւ Սողոմոնի վրայ, որովհետեւ նրա սիրտը խոտորուել էր Իսրայէլի Տէր Աստծուց, որը երկու անգամ երեւացել 10 ու պատուիրել էր նրան, որ օտար աստուածների յետեւից ամենեւին չգնայ, այլ պահի եւ կատարի այն, ինչ Տէր Աստուած պատուիրել էր նրան: 11 Տէրն ասաց Սողոմոնին. «Քանի որ այդպէս վարուեցիր՝ չպահեցիր իմ հրամաններն ու պատուիրանները, որ պատգամել էի քեզ, ես կը խլեմ թագաւորութիւնը քո ձեռքից եւ այն կը տամ քո ծառային: 12 Բայց, յանուն քո հայր Դաւիթի, քո կենդանութեան ժամանակ չեմ անի դա, այլ որդո՛ւդ ձեռքից կը խլեմ թագաւորութիւնը: 13 Ամբողջ թագաւորութիւնը չեմ խլի, այլ, յանուն իմ ծառայ Դաւիթի եւ իմ ընտրած Երուսաղէմ քաղաքի, մէ՛կ ցեղ կը յանձնեմ քո որդուն»:

ՍՈՂՈՄՈՆԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

14 Եւ Տէրը մի թշնամի յարուցեց Սողոմոնի դէմ՝ եդոմայեցիների թագաւորական սերնդից եդոմայեցի Ադերին: 15 Երբ Դաւիթը կոտորում էր Եդոմը,

†Շուրջ 3.500 կիլոգրամ:

†Շուրջ 20.000 կիլոգրամ:

‡Այլ բնագրերում՝ վահան:

†Եբրայերէն բնագրում՝ վեց հարիւր արծաթ:

զօրագլուխ Ցովաբը գնացել էր սպանուածներին թաղելու եւ կոտորելու Եդոմի բոլոր արու ծնունդներին: 16 Ցովաբը եւ բոլոր իսրայէլացիները վեց ամիս մնացին Եդոմում, մինչեւ որ կոտորեցին եդոմացի բոլոր արու ծնունդներին: 17 Այդ ժամանակ Ադերն ինքը եւ իր հօր բոլոր ծառաները փախել-գնացել էին Եգիպտոս: Ադերն այդ ժամանակ մանուկ էր: 18 Նրանք Մադիամ քաղաքից եկել էին Փարան, Փարանից իրենց հետ վերցրել մարդկանց ու եկել Եգիպտոս՝ եգիպտացիների արքայ փարաւոնի մօտ: Ադերը եկել էր փարաւոնի մօտ, սա նրան տուն էր տուել, ուտելիք յատկացրել ու հող տրամադրել: 19 Ադերը փարաւոնի առաջ մեծ շնորհ էր գտել, եւ փարաւոնը նրան կնութեան էր տուել իր «Մեծ տիկնոջ»՝ Թեկեմինայի քրոջը: 20 Թեկեմինայի քոյրը Ադերի համար ծնել էր մի որդի՝ Գանեբաթին: Թեկեմինան նրան մեծացրել էր փարաւոնի որդիների հետ եւ այսպիսով Գանեբաթը փարաւոնի տան մէջ, նրա որդիների հետ էր դաստիարակուել: 21 Երբ Ադերը Եգիպտոսում լսեց, թէ Դաւիթը վախճանուել է, եւ թէ զօրագլուխ Ցովաբը մահացել է, ասաց փարաւոնին. «Արձակի՛ր ինձ, որ վերադառնամ իմ երկիրը»: 22 Փարաւոնն ասաց Ադերին. «Ի՞նչդ է պակաս ինձ մօտ, որ ուզում ես գնալ քո երկիրը»: Ադերը նրան ասաց. «Անպայմա՛ն արձակիր ինձ»: Եւ Ադերը վերադարձաւ իր երկիրը:

23 Տէրը Սողոմոնի դէմ հանեց Եղիադայի որդի Ռազոնին, որը փախել էր իր տիրոջից՝ Սուբայի արքայ Ադրաազարից: 24 Երբ Դաւիթը նրանց կոտորում էր, Ռազոնի մօտ մարդիկ էին հաւաքուել, եւ նա գնդի հրամանատար էր եղել: Նրանք գնացին Դամասկոս եւ հաստատուեցին այնտեղ: Նա թագաւորեց Դամասկոսում 25 եւ Իսրայէլի թշնամին դարձաւ Սողոմոնի թագաւորութեան ամբողջ ընթացքում: Խժդժութիւններ անելուց բացի, Ադերը ոխ ունէր Իսրայէլի դէմ: Նա թագաւորում էր Եդոմի երկրում:

ՑԵՐՈԲՈՎԱՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

26 Իր արքայի դէմ ձեռք բարձրացրեց նաեւ Սարիրայում ապրող եփրաթացի Նաբաղի որդի Ցերոբովամը, որի մօր անունը Սարուա էր՝ մի որբեւայրի կին: Նա Սողոմոնի մի ծառայի այրի կնոջ որդին էր: Ահա թէ ինչ պարագաներում նա ձեռք բարձրացրեց Սողոմոն արքայի դէմ: 27 Սողոմոն արքան կառուցել էր միջնաբերդը եւ լցրել իր հօր՝ Դաւիթի քաղաքի խրամատը: 28 Ցերոբովամը մի քաջարի մարդ էր, եւ երբ Սողոմոնը տեսաւ, որ նա գործունեայ երիտասարդ է, նրան նշանակեց Ցովսէփի տան բեռնակիրների վերակացու: 29 Այդ ժամանակ էր, որ Ցերոբովամը ելաւ Երուսաղէմից, եւ ճանապարհին նրան հանդիպեց սիլոնացի Աքիա մարգարէն ու ճանապարհից մի կողմ քաշեց նրան: Աքիան նոր զգեստ էր հագել, եւ դաշտում նրանք երկուսով էին: 30 Աքիան իր նոր զգեստը բռնեց ու պատառոտեց տասներկու կտոր անելով: 31 Նա ասաց Ցերոբովամին. «Ա՛ռ քեզ տասը կտոր, քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս է ասում. "Ահա ես Սողոմոնի թագաւորութիւնը ձեռքից խլելով՝ պիտի պատառոտեմ եւ քեզ պիտի յանձնեմ տասը ցեղ, 32 իսկ երկու ցեղը թող նրան մնայ յանուն իմ ծառայ Դաւթի եւ յանուն Երուսաղէմ քաղաքի, որն ընտրեցի Իսրայէլի բոլոր ցեղերին պատկանող քաղաքների միջից: 33 Եւ սա այն բանի փոխարէն, որ նա ինձ լքեց եւ երկրպագեց սիդոնացիների գարշելի կուռք Աստարտին, Մովաբի կուռք Քամոսին եւ ամոնացիների զազրելի կուռք Մեղքոմին ու չընթացաւ իմ ճանապարհով, չարեց այն, ինչ հաճելի է ինձ, չկատարեց իմ ճշմարիտ օրէնքներն ու պատուիրանները, ինչպէս արել էր իր հայր Դաւիթը: 34 Բայց ես ամբողջ թագաւորութիւնը չխլեցի նրա ձեռքից (որպէսզի իր թագաւորութեան բոլոր օրերում հակառակութեամբ հատուցեմ իր հակառակութեան դիմաց) յանուն իմ ծառայ Դաւթի, որին ընտրել եմ, եւ որը պահեց իմ պատուիրաններն ու իմ

օրէնքները: 35 Թագաւորութիւնը խլելու եմ նրա ձեռքից եւ քեզ եմ յանձնելու տասը ցեղ, 36 իսկ նրա որդուն պիտի տամ երկու ցեղ, որպէսզի իմ ծառայ Դաւթի ճրագը միշտ վառ մնայ իմ առջեւ՝ իմ Երուսաղէմ քաղաքում, որն ընտրել եմ իմ անունը յայտնի դարձնելու համար: 37 Ես քեզ եմ ընտրում, դու կը թագաւորես այն ամենի վրայ, որ քո սիրտը կը կամենայ, թագաւոր կը լինես Իսրայէլի վրայ: 38 Եթէ պահես այն ամէնն, ինչ քեզ պատուիրելու եմ, ընթանաս իմ ճանապարհով ու գործես այն, ինչ հաճելի է ինձ, հետեւես իմ պատուիրաններին ու հրամաններին, ինչպէս արեց իմ ծառայ Դաւիթը, ապա կը լինեմ քեզ հետ եւ քեզ համար հաստատուն տուն կը շինեմ, ինչպէս Դաւթի համար շինեցի, 39 եւ քեզ կը յանձնեմ Իսրայէլը: Այս պատճառով պիտի տանջեմ Դաւթի սերունդը, բայց ոչ ընդմիշտ"»: 40 Սողոմոնը ուզում էր սպանել Ցերոբովամին, բայց Ցերոբովամը փախաւ-գնաց Եգիպտոս, եգիպտացիների Սաւսակիմ արքայի մօտ եւ մնաց Եգիպտոսում մինչեւ Սողոմոնի մահը:

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՀԸ
(Բ Մնաց. 9. 29-31)

41 Սողոմոնի մնացած գործերը եւ ամէն ինչ, որ նա արել է, նրա իմաստութիւնները չէ՞ որ գրի են առնուած Սողոմոնի գործերի գրքում: 42 Սողոմոնը Երուսաղէմի եւ ամբողջ Իսրայէլի վրայ թագաւորեց քառասուն տարի:

43 Սողոմոնը գնաց իր նախնիների գիրկը, նրան թաղեցին իր հայր Դաւթի քաղաքում, ու նրա փոխարէն թագաւորեց նրա որդի Ռոբովամը:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՑԵՂԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ
(Բ Մնաց. 10. 1-19)

12 Ռոբովամ արքան գնաց Սիկիմ, որովհետեւ ամբողջ Իսրայէլը եկել էր Սիկիմ նրան թագաւոր օծելու: 2 Երբ դա լսեց Նաբատի որդի Ցերոբովամը, որը տակաւին Եգիպտոսում էր Սողոմոն արքայից փախչելուց ի վեր, Եգիպտոսից վերադարձաւ Երուսաղէմ: Մարդ ուղարկեցին ու կանչեցին նրան: 3 Ցերոբովամը եւ հաւաքուած բոլոր իսրայէլացիները եկան ու խօսելով Ռոբովամ արքայի հետ՝ ասացին. 4 «Քո հայրը ծանր լուծ էր դրել մեզ վրայ: Արդ, դու թեթեւացրո՛ւ քո հօր սահմանած խիստ ծառայութիւնն ու մեզ վրայ դրած ծանր լուծը, որ մենք ծառայենք քեզ»: 5 Ռոբովամն ասաց նրանց. «Գնացէ՛ք եւ երեք օրից դարձեալ եկէ՛ք ինձ մօտ»: Նրանք գնացին:

6 Ռոբովամ արքան խորհրդակցեց ծերերի հետ, որոնք շրջապատում էին իր հայր Սողոմոնին նրա կենդանութեան օրօք, եւ ասաց. «Ի՞նչ խորհուրդ էք տալիս, որ պատասխան տանք այս ժողովրդին»: 7 Նրան ասացին. «Եթէ դու այսօր ժողովրդին ծառայութիւն մատուցես, զիջող լինես, ընդառաջես եւ բարի խօսքեր ասես, նրանք ընդմիշտ կը ծառայեն քեզ»: 8 Ռոբովամը, սակայն, մերժեց ծերերի տուած խորհուրդը եւ խորհրդակցեց իր սննդակից ու իր առաջ կանգնած երիտասարդների հետ՝ 9 ասելով. «Ի՞նչ խորհուրդ էք տալիս, որ պատասխան տանք այս ժողովրդին, որ խօսեց ինձ հետ ու ասաց. "Թեթեւացրո՛ւ այն լուծը, որ քո հայրը դրել էր մեզ վրայ"»: 10 Իր սննդակից ու իր առաջ կանգնած երիտասարդներն ասացին. «Այսպէս կ'ասես այն մարդկանց, որ քեզ հետ խօսելով ասել են. "Քո հայրը ծանրացրեց մեր լուծը, իսկ դու թեթեւացրո՛ւ այն մեր վրայից"»: Այսպէս ասա՛ նրանց. 11 "Իմ ճկոյթը հօրս մէջքից հաստ է: Արդ, եթէ իմ հայրը ձեզ վրայ ծանր լուծ էր դրել, ապա ես կ'աւելացնեմ ձեր լուծը. իմ հայրը ձեզ խրատում էր ծեծով, իսկ ես կարիճներով կը խրատեմ ձեզ"»:

12 Երրորդ օրն ամբողջ Իսրայէլը եկաւ Ռոբովամ արքայի մօտ, ինչպէս արքան ասել էր նրանց. «Վերադարձէ՛ք ինձ մօտ երրորդ օրը»: 13 Արքան խստութեամբ պատասխան տուեց ժողովրդին եւ, մերժելով ծերերի տուած խորհուրդը, 14 Ռոբովամը նրանց հետ խօսեց ըստ երիտասարդների տուած խորհրդի՝ ասելով. «Եթէ իմ հայրը

ծանր լուծ էր դրել ձեզ վրայ, ապա ես կ'աւելացնեմ ձեր լուծը: Իմ Հայրը ձեզ ծեծով էր խրատում, իսկ ես կարիճներով եմ խրատելու ձեզ»: 15 Թագաւորը չլսեց ժողովրդին, որովհետեւ Տէրն էր խոտորել նրան, որպէսզի Տէրը հաստատի իր այն խօսքը, որ սիլոնացի Աքիայի միջոցով ասել էր Նաբատի որդի Յերոբովամի վերաբերեալ:

16 Երբ ամբողջ Իսրայէլը տեսաւ, որ արքան չլսեց իրեն, պատասխան տուեց ժողովուրդն արքային՝ ասելով. «Մենք կիսելու ի՞նչ ունենք Դաւթի հետ: Մենք Յեսսէի որդու հետ էլ ժառանգութիւն չունենք: Իսրայէ՛լ, գնա՛ քո վրանները, դու ի՛նքդ հոգա Դաւթի տան հոգսերը»: 17 Իսրայէլացիները գնացին իրենց վրանները, իսկ Յուդայի երկրի քաղաքներում բնակուող իսրայէլացիների վրայ թագաւորեց Ռոբովամը:

18 Ռոբովամ արքան հարկահաւաքների պետ Ադոնիրամին ուղարկեց հարկ հաւաքելու, բայց ամբողջ Իսրայէլը քարկոծելով սպանեց նրան, իսկ Ռոբովամ արքան շտապեց կառք բարձրանալ ու փախչել Երուսաղէմ: 19 Այսպիսով Իսրայէլը ապստամբեց Դաւթի տան դէմ: Եւ այդպէս է մինչեւ այսօր:

20 Երբ ամբողջ Իսրայէլը լսեց, թէ Յերոբովամը վերադարձել է, մարդ ուղարկեցին, նրան ժողովի կանչեցին ու թագաւոր օծեցին Իսրայէլի վրայ: Ոչ ոք չյարեց Դաւթի տանը, բացի Յուդայի ու Բենիամինի ցեղերից: 21 Ռոբովամը մտաւ Երուսաղէմ եւ զօրահաւաք արեց Յուդայի տնից ու Բենիամինի ցեղից: Հարիւր ութսուն հազար երիտասարդ պատերազմողներ ելան Իսրայէլի տան դէմ, որպէսզի թագաւորութիւնը վերադարձնեն Սողոմոնի որդի Ռոբովամին:

ՍԱՄԵԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ
(Բ Մնաց. 11. 1-4)

22 Տէրը խօսեց Աստծու մարդ Սամեայի հետ՝ ասելով. 23 «Խօսի՛ր Յուդայի երկրի արքայ Սողոմոնի որդի Ռոբովամի եւ Յուդայի ու Բենիամինի ամբողջ տան եւ մնացած մարդկանց հետ ու նրանց ասա՛. 24 "Այսպէս է ասում Տէրը. մի՛ ելէք ու մի՛ պատերազմէք ձեր եղբայրների՝ իսրայէլացիների դէմ, եւ թող իւրաքանչիւրը վերադառնայ իր տունը, քանզի ինձնից եղաւ այդ բանը"»: Նրանք լսեցին Տիրոջ խօսքը եւ, անսալով Տիրոջը, յետ դարձան:

ՅԵՐՈԲՈՎԱՄԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՑ

25 Յերոբովամը Եփրեմի լեռան վրայ կառուցեց Սիկիմը եւ այնտեղ էր բնակւում: Այնուհետեւ այնտեղից ելաւ ու շինեց Փանուէլը: 26 Յերոբովամն ասաց իր մտքում. «Իմ թագաւորութիւնը նորից կը վերադառնայ Դաւթի տուն, 27 եթէ այս մարդիկ գնան ու զոհ մատուցեն Երուսաղէմում, Տիրոջ տանը: Այն ժամանակ այս մարդկանց միտքը կը հակուի դէպի Տէրն ու իրենց տէրը՝ Յուդայի երկրի արքայ Ռոբովամը, ինձ կը սպանեն ու կ'անցնեն Յուդայի երկրի արքայ Ռոբովամի կողմը»: 28 Արքան խորհեց ու երկու ոսկէ հորթ պատրաստելով՝ ասաց ժողովրդին. «Բաւական է մինչեւ Երուսաղէմ գնաք: Ահա քո աստուածները, ո՛վ Իսրայէլ, որոնք քեզ դուրս բերեցին Եգիպտացիների երկրից»: 29 Նա կուռքերից մէկը դրեց Դանում, իսկ միւսը՝ Բեթէլում: 30 Այսպիսով մեղք գործուեց, որովհետեւ ժողովուրդը գնում էր մինչեւ Դան՝ հորթերից մէկին երկրպագելու: 31 Նա բարձունքների վրայ կառուցեց նաեւ մեհեաններ եւ Ղեւիի ցեղին չպատկանող մարդկանց քրմեր դարձրեց:

ԲԵԹԷԼԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

32 Յերոբովամը տօն կատարեց, ութերորդ ամսի տասնհինգերորդ օրը տօնական օր սահմանեց, ինչպէս Յուդայի երկրում էր, եւ Բեթէլում պատրաստած իր ոսկէ հորթերի համար զոհեր մատուցեց: Նա Բեթէլում կառուցած մեհեանում քրմեր նշանակեց, 33 Բեթէլում, ութերորդ ամսի տասնհինգերորդ օրը սահմանած տօնին՝ զոհասեղանի վրայ զոհեր մատուցեց իսրայէլացիների համար:

13 Երբ Յերոբովամը զոհ մատուցելու համար կանգնած էր զոհասեղանի առաջ, Տիրոջ թելադրանքով Յուդայի երկրից Բեթէլ եկաւ Աստծու մարդը: 2 Նա Տիրոջ խօսքն ուղղելով զոհասեղանին՝ ասաց. «Սեղա՛ն, ո՛վ սեղան, այսպէս է ասում Տէրը. "Դաւթի տանը Յոսիա անունով մի որդի կը ծնուի, նա քեզ վրայ կը զոհաբերի մեհեանների քրմերին, որոնք քեզ վրայ զոհ են մատուցում, եւ մարդկանց ոսկորները կ'այրի քեզ վրայ"»: 3 Իր ասածը հաստատելու համար ասաց. «Այս է նշանը, որ Տէրն է ասել. "Հիմա դա կը փլուի, իսկ դրա վրայի իւղոտուած մոխիրը կը թափուի"»: 4 Երբ Յերոբովամ արքան լսեց Աստծու մարդու Բեթէլում գտնուող զոհասեղանին ուղղուած խօսքերը, իր ձեռքը մեկնեց զոհասեղանի վրայից՝ ասելով. «Բռնեցէ՛ք դրան», բայց դէպի նա մեկնուած նրա ձեռքը չորացաւ, նա չկարողացաւ ձեռքն իրեն քաշել, 5 զոհասեղանը փլուեց, իսկ դրա վրայի իւղոտուած մոխիրը թափուեց, ըստ այն նշանի, որ տուել էր Աստծու մարդը Տիրոջ խօսքով: 6 Յերոբովամ արքան ասաց Աստծու մարդուն. «Աղաչի՛ր քո Տէր Աստծուն, աղօթի՛ր ինձ համար, որ ձեռքս դէպի ինձ քաշուի»: Աստծու մարդն աղաչեց Տիրոջը, եւ արքայի ձեռքը առաջուայ պէս դէպի ինքը յետ քաշուեց: 7 Արքան, խօսելով Աստծու մարդու հետ, ասաց. «Տո՛ւն մտիր ինձ հետ, ճաշի՛ր, եւ ես քեզ պարգեւ կը տամ»: 8 Աստծու մարդն ասաց արքային. «Եթէ քո տան կէսն էլ ինձ տաս, չեմ մտնի քո տունը, ոչ էլ հաց կ'ուտեմ եւ ջուր կը խմեմ այստեղ, 9 քանզի Տէրն ինձ այսպիսի պատուէր է տուել. "Հաց չուտես այդտեղ, ջուր չխմես եւ չվերադառնաս այն ճանապարհով, որով գնացել ես"»: 10 Նա գնաց հեռացաւ Բեթէլից, բայց ոչ այն ճանապարհով, որով եկել էր:

ԲԵԹԷԼԻ ՅԵՐ ՄԱՐԳԱՐԷՆ

11 Մի ծեր մարգարէ էր բնակւում Բեթէլում: Նրա որդիներն եկան ու նրան պատմեցին այն բոլոր դէպքերը, որ այդ օրը Բեթէլում անցել էին Աստծու մարդու գլխով, ինչպէս նաեւ այն խօսքերը, որ նա ասել էր արքային, եւ իրենց երեսը չուռ տուեցին, որ հեռանան իրենց հօր մօտից: 12 Հայրը հարցրեց նրանց. «Ո՞ր ճանապարհով գնաց նա»: Որդիները ցոյց տուեցին նրան այն ճանապարհը, որով գնացել էր Յուդայի երկրից եկած Աստծու մարդը: 13 Նա ասաց որդիներին. «Թամբեցէ՛ք էշը»: Թամբեցին էշը, եւ նա նստեց էշի վրայ, 14 գնաց Աստծու մարդու յետեւից եւ նրան գտաւ կաղնու տակ նստած: Մերը հարցրեց. «Դո՞ւ ես Յուդայի երկրից եկած Աստծու մարդը»: Սա ասաց. «Ես եմ»: 15 Նա ասաց. «Ե՛կ ինձ հետ տուն եւ հա՛ց կեր»: 16 Սա ասաց. «Չեմ կարող քեզ հետ վերադառնալ եւ քեզ մօտ գալ, հաց ուտել ու ջուր խմել այնտեղ, 17 քանզի Տէրն ինձ այսպիսի հրաման է տուել. "Հաց չուտես այդտեղ, ջուր չխմես եւ չվերադառնաս այն ճանապարհով, որով գնացել ես"»: 18 Նա ասաց նրան. «Ես էլ եմ մարգարէ քեզ պէս. Տիրոջ հրեշտակը խօսեց ինձ հետ՝ ասելով. "Նրան քեզ մօտ՝ քո տունը տար, թող հաց ուտի ու ջուր խմի"»:

19 Նա խաբելով տարաւ նրան իր հետ. սա հաց կերաւ ու ջուր խմեց: 20 Եւ մինչ սեղան էին նստել, 21 Տէրը խօսեց նրան այն մարգարէի հետ, որ Աստծու մարդուն իր տունն էր բերել: Սա խօսելով Յուդայի երկրից եկած Աստծու մարդու հետ՝ ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Քանի որ դու չհնազանդուեցիր Տիրոջ խօսքին, չպահեցիր այն հրամանը, որ քո Տէր Աստուածն էր տուել քեզ, 22 եկար, հաց կերար ու ջուր խմեցիր այնտեղ, որի մասին Տէրն ասել էր քեզ. "Հաց չուտես, ջուր չխմես"": Արդ, քո դիակը քո հայրերի գերեզմանը չի մտնելու"»:

23 Երբ հաց ուտելուց ու ջուր խմելուց յետոյ նա թամբեց մարգարէի էշն ու գնաց, 24 ճանապարհին նրան հանդիպեց մի առիւծ, որը յօշոտեց նրան: Նրա դիակն ընկած էր ճանապարհին, էշը նրա կողքին էր կանգնած, իսկ առիւծը՝ դիակի մօտ: 25 Եկան ան-

ցորդներ, տեսան ճանապարհին ընկած դիակն ու դիակի մօտ կանգնած առիւծը, մտան այն քաղաքը, ուր այդ ծերունի մարգարէն էր բնակւում, եւ պատմեցին իրենց տեսածը: 26 Երբ այս բանը լսեց Աստծու մարդուն ճանապարհից յետ դարձրած մարգարէն, ասաց. «Դա Աստծու մարդն է, որը Տիրոջ խօսքը չլսեց, Տէրը նրան առիւծին յանձնեց, եւ սա բզկտելով սպանեց նրան, ինչպէս որ Տէրն ասել էր նրան»: 27 Նա խօսեց իր որդիների հետ՝ ասելով. «Համեստեցէ՛ք էշը»: 28 Նրանք համեստեցին: Նա գնաց ու գտաւ ճանապարհին ընկած նրա դիակը, իսկ էշն ու առիւծը կանգնած էին դիակի մօտ: Առիւծը չէր կերել Աստծու մարդու դիակը, ոչ էլ յօշոտել էր էշին: 29 Մարգարէն առաւ Աստծու մարդու դիակը, դրեց իր էշի վրայ եւ բերեց իր քաղաքը, որ ողբան նրա վրայ ու թաղեն նրան: 30 Մարգարէն նրա դիակը թաղեց իր գերեզմանում: Նրա վրայ լաց եղան եւ ասացին. «Վա՛յ, եղբա՛յր»: 31 Նրա վրայ ողբալուց յետոյ ծերն ասաց իր որդիներին. «Երբ մեռնեմ, ինձ կը թաղէք այն գերեզմանում, ուր թաղուեց Աստծու մարդը. նրա ոսկորների կողքի՛ն դրէք ինձ, որպէսզի իմ ոսկորները պահպանուեն նրա ոսկորների հետ, 32 որովհետեւ անպայման կը կատարուի Տիրոջ այն խօսքը, որ ասուեց Բեթէլում գտնուող զոհասեղանի ու Սամարիայի բարձրադիր կռատների դէմ»:

ՅԵՐՈԲՈՎԱՄԻ ՀԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԵՂՔԸ

33 Այս բաներից յետոյ էլ Յերոբովամը չհրաժարուեց իր չարիքներից. նա ժողովրդի մի մասին մեհեանների քրմեր էր դարձնում. ով ուզում էր, նրան ձեռնադրում էր, եւ սա դառնում էր մեհեանների քուրմ: 34 Ահա թէ ինչպէս Յերոբովամի տունը մեղք գործեց, եւ դրա համար էլ նա բնաջնջուեց ու վերացաւ երկրի երեսից:

ՅԵՐՈԲՈՎԱՄԻ ՈՐԴՈՒ ՄԱՀԸ

14 Այն ժամանակ հիւանդացաւ Յերոբովամի որդի Աբիան, 2 եւ Յերոբովամն ասաց իր կնոջը. «Վե՛ր կաց, կերպարանափոխուի՛ր, որ չիմանան, թէ դու Յերոբովամի կինն ես, եւ գնա՛ Սելով: Այնտեղ է ապրում Աքիա մարգարէն: Նա գուշակել է, թէ ես պիտի թագաւորեմ այս ժողովրդի վրայ: 3 Հա՛ց վերցրու Աստծու մարդու համար, նրա որդիների համար՝ բլիթներ, չամիչ ու մի սափոր մեղր, գնա՛ նրա մօտ, եւ նա քեզ պիտի յայտնի, թէ ինչ կը պատահի մանկանը»: 4 Յերոբովամի կինն այդպէս էլ արեց. նա վեր կացաւ գնաց Սելով, մտաւ Աքիայի տունը, սակայն Աքիայի տեսողութիւնը վատացել էր, ծերութեան պատճառով աչքերը չէին տեսնում:

5 Տէրն ասաց Աքիային. «Յերոբովամի կինը եկել է քեզնից բան հարցնելու իր հիւանդ որդու մասին, իսկ դու այսպէս եւ այսպէս կ'ասես նրան»: 6 Երբ կինը ներս մտաւ, արդէն կերպարանափոխուած էր: Երբ Աքիան դռան բացուելուց եւ ներս մտնելուց յետոյ լսեց նրա ոտնաձայնը, ասաց. «Մտի՛ր, Յերոբովամի՛ կին, ինչո՞ւ ես կերպարանափոխուել: Ես ուղարկուած եմ, որ քեզ դաժան բան ասեմ: 7 Գնա՛ եւ ասա՛ Յերոբովամին. այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Ես քեզ բարձրացրի ժողովրդի միջից, քեզ Իսրայէլի իմ ժողովրդի վրայ առաջնորդ դրեցի, 8 ես թագաւորութիւնը խլեցի Դաւթի տնից ու քեզ յանձնեցի, սակայն դու չեղար իմ ծառայ Դաւթի նման, որը պահում էր իմ պատուիրանները եւ իր ամբողջ սրտով հետեւում էր ինձ, որպէսզի իմ աչքին հաճելի երեւացածն անի: 9 Դու աւելի շատ չարութիւն գործեցիր, քան քո բոլոր նախորդները. դու օտար աստուածներ ու ձուլածոյ կուռքեր պատրաստել տուեցիր, որպէսզի ինձ բարկացնես, իսկ ինձ մոռացութեան տուեցիր: 10 Դրա համար Յերոբովամի տան վրայ չարիք պիտի բերեմ, Յերոբովամի տնից մինչեւ վերջ պիտի բնաջնջեմ բոլոր նրանց, ովքեր միզում են պատին, Իսրայէլի մէջ ապրող ստրուկ ու ազատ մարդկանց, Յերոբովամի տունը պիտի աւլեմ այնպէս, ինչպէս աղբն են աւլում, մինչեւ որ

խսպառ ոչնչացնեմ այն: 11 Յերոբովամի տնից ով քաղաքում մեռնի, շները պիտի ուտեն նրան, իսկ ով դաշտում մեռնի, երկնքի թռչունները պիտի կոցեն": Ահա Տէրն է այսպէս ասել: 12 Իսկ դու վեր կաց գնա՛ քո տունը, եւ երբ քո ոտքերը քաղաք մտնեն, երեխան կը մեռնի, 13 եւ ամբողջ Իսրայէլը կ'ողբայ ու կը թաղի նրան: Յերոբովամի մարդկանցից միայն նրա որդին կը մտնի գերեզման, քանի որ Իսրայէլի Տէր Աստուածը Յերոբովամի տանը միայն նրա՛ մէջ տեսաւ մի բարի բան: 14 Տէրը իր համար մի թագաւոր պիտի հանի Իսրայէլի դէմ, որը այսօր իսկ բնաջինջ պիտի անի Յերոբովամի տունը: 15 Եւ արդ, ի՞նչ մնաց: Տէրը պիտի հարուածի Իսրայէլին, եւ նա պիտի նմանուի ջրի մէջ շարժուող եղէգի: Նա Իսրայէլացիներին պիտի հեռացնի այս լաւ երկրից, որ տուել էր նրանց հայրերին: Նրանց գետի միւս կողմը պիտի քշի ի դիմաց այն բանի, որ նրանք իրենց համար կուռքեր շինեցին, որպէսզի բարկացնեն Տիրոջը: 16 Տէրը կորստեան պիտի մատնի Իսրայէլին Յերոբովամի մեղքերի համար, որը մեղանչեց եւ Իսրայէլին էլ մեղանչել տուեց»: 17 Յերոբովամի կինը վեր կացաւ ու գնաց Սարիրա: Նա հազիւ էր տան դռնից ներս մտել, որ երեխան մեռաւ, 18 եւ ամբողջ Իսրայէլը ողբաց նրան ու թաղեց, ինչպէս որ Տէրն էր նախօրօք յայտնել իր ծառայ Աքիա մարգարէի միջոցով:

ՅԵՐՈԲՈՎԱՄԻ ՄԱՀԸ

19 Յերոբովամի մնացած գործերի մասին, թէ նա ինչ պատերազմներ մղեց, որքան ժամանակ թագաւորեց, գրուած է Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 20 Յերոբովամը թագաւորեց քսաներկու տարի եւ գնաց իր նախնիների գիրկը: Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Նաբադը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՌՈԲՈՎԱՄ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 11. 5-12. 15)

21 Սողոմոնի որդի Ռոբովամը թագաւորեց Յուդայի երկրի վրայ: Քառասունմէկ տարեկան էր Ռոբովամը, երբ թագաւոր օծուեց, եւ տասնեօթը տարի թագաւորեց Երուսաղէմ քաղաքում, որը Տէրն ընտրել էր Իսրայէլի բոլոր ցեղերին պատկանող վայրերի միջից, որպէսզի իր անունն այնտեղ յայտնի դարձնի: Նրա ամոնացի մօր անունն էր Նաամա: 22 Ռոբովամը չար գործեր արեց Տիրոջ առաջ. նա նմանուեց իր նախնիներին՝ ընթացաւ նրանց գործած մեղքերի ճանապարհով: 23 Նրանք իրենց համար մեհեաններ ու կուռքեր շինեցին ամէն բարձր բլրի վրայ եւ ամէն տերեւաշատ ծառի տակ: 24 Նրանք խոտորուեցին այդ երկրի այն ազգերի նման, որոնք գարշելի բաներ էին անում, եւ որոնց քշել էր Տէրը իսրայէլացիների առջեւից:

25 Այն տարում, երբ Ռոբովամը թագաւոր օծուեց, Եգիպտոսի արքայ Սաւսակիմը յարձակուեց Երուսաղէմի վրայ, 26 վերցրեց Տիրոջ տան, ինչպէս նաեւ արքայի տան բոլոր գանձերը, ոսկէ նիզակները, որոնք Դաւիթը աւար էր վերցրել Սուբայի արքայ Ադրաազարի ձեռքից: Նա տարաւ ամէն ինչ, որ Դաւիթը վերցրել էր որպէս աւար ու տարել Երուսաղէմ: Աւար վերցրեց նաեւ ոսկէ վահանները[†], որ պատրաստել էր Սողոմոնը: 27 Ռոբովամ արքան դրանց փոխարէն պղնձէ վահաններ շինեց եւ դրանք յանձնեց պահակազօրքի զօրագլուխներին, որոնք պահպանում էին արքայի տունը: 28 Երբ արքան մտնում էր Տիրոջ տունը, պահակազօրքը օգտագործում էր դրանք ու յետոյ կախում զինարանում: 29 Ռոբովամի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ արել է նա, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

30 Ռոբովամն ու Յերոբովամը միշտ պատերազմի մէջ էին: 31 Ռոբովամը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում: Նրա ամոնացի մօր անունը Նաամա էր: Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Աբիուն:

[†]Տես ժ, 16:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱԲԻՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 13. 1-14. 1)

15 Նաբատի որդի Յերոբովամի թագաւորութեան տասնութերորդ տարում Յուդայի երկրի վրայ թագաւորեց Ռոբովամի որդի Աբիուն: 2 Նա երեք տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մայրը Աբեսաղոմի դուստր Մաաքան էր: 3 Նա գնաց նախկինում Տիրոջ առաջ իր հոր գործած բոլոր մեղքերի ճանապարհով, նրա սիրտն ուղիղ չէր իր Տէր Աստծու առջեւ, ինչպէս մաքուր էր իր հայր Դաւթի սիրտը: 4 Տէր Աստուածը, սակայն, յանուն Դաւթի նկատմամբ ունեցած իր սիրոյ, Երուսաղէմում թողել էր մի ժառանգ, որպէսզի նրանից յետոյ նրա որդիները գոյատեւեն նրա միջոցով, ու կանգուն պահի Երուսաղէմը, 5 քանի որ Դաւիթն իր ամբողջ կեանքի ընթացքում ուղիղ էր ընթացել Տիրոջ առջեւ, չէր շեղուել այն ուղուց, որ պատուիրել էին իրեն, բացի քետացի Ուրիայի հետ կատարուած դէպքից: 6 Իրենց կենդանութեան բոլոր օրերում Աբիուն ու Յերոբովամը իրար դէմ պատերազմ էին մղում: 7 Աբիուի մնացած գործերն ու նրա արարքները չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ: Պատերազմ էր մղում Աբիուի ու Յերոբովամի միջեւ:

8 Աբիուն գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Դաւթի քաղաքում: Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Ասան:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՍԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 15. 16-16. 6)

9 Իսրայէլի արքայ Յերոբովամի թագաւորութեան քսաներորդ տարում Ասան թագաւորեց Յուդայի երկրի վրայ: 10 Նա քառասունմէկ տարի իշխեց Երուսաղէմում: Նրա մայրը Աբեսաղոմի դուստր Մաաքան էր: 11 Ասան իր նախնի Դաւթի նման ուղիղ ընթացք ունեցաւ Տիրոջ առջեւ, 12 երկրից վերացրեց սոդոմական մեղքը, ջնջեց ամէն տեսակ մոլորութիւնները, որ գործել էին իր նախորդները: 13 Նա իր մայր Մաաքային զրկեց «Մեծ տիկին» կոչումից, քանզի նա իր մեհեանում ծէս էր կատարել: Ասան կործանեց նրա կուռքերը եւ դրանք հրով այրեց Կեդրոնի հեղեղատի մօտ: 14 Թէեւ մեհեանները չվերացրեց, սակայն իր ամբողջ կեանքում նրա սիրտն ամբողջովին ուղիղ էր Տիրոջ նկատմամբ: 15 Նա բերեց իր հօր սիւները, նաեւ իրեն պատկանող արծաթէ ու ոսկէ սիւներն ու անօթները եւ դրեց Տիրոջ տանը:

16 Իրենց կենդանութեան բոլոր օրերում Ասան ու Իսրայէլի արքայ Բաասան իրար դէմ պատերազմ էին մղում: 17 Իսրայէլի արքայ Բաասը յարձակուեց Յուդայի երկրի վրայ եւ կառուցեց Ռաման, որ որեւէ մէկը ելումուտ չունենայ Յուդայի արքայ Ասայի երկիրը: 18 Ասան վերցրեց Տիրոջ տան գանձարանում եւ թագաւորական տան գանձարանում եղած ամբողջ արծաթն ու ոսկին, տուեց իր ծառաների ձեռքը, որ դրանք տանեն Դամասկոսում բնակուող ասորիների արքայ Ազայէլի որդի Աբենրայիմի որդի Ադերի որդուն՝ ասելով. 19 «Դաշինք թող կնքուի իմ ու քո միջեւ, ինչպէս որ եղել է իմ հօր ու քո հօր միջեւ: Ահաւասիկ քեզ ընծայ եմ ուղարկում արծաթ ու ոսկի, որպէսզի քանդես քո եւ Իսրայէլի արքայ Բաասի միջեւ եղած դաշինքը, եւ նա հեռանայ ինձնից»: 20 Ադերի որդին լսեց Ասա արքային, իր իշխաններին ուղարկեց Իսրայէլի քաղաքների դէմ, հարուածեց Այինը, Դանը, Աբէլ Բեթմաաքան եւ ամբողջ Քեներեթը մինչեւ Նեփթաղիմի ամբողջ երկիրը: 21 Երբ Բաասան լսեց այդ, ընդհատեց Ռամայի շինութիւնը եւ վերադարձաւ Թերսա: 22 Ասա արքան Յուդայի երկրի բոլոր մարդկանց, որոնք ենակիմում էին, հրամայեց, որ հանեն բերեն Ռամայի քարերն ու փայտերը, որ Բաասան օգտագործում էր շինութեան համար: Ասա արքան դրանցով կառուցապատեց Բենիամինի ամբողջ բլուրը եւ դիտանոցը: 23 Ասայի մնացած գործերը, նրա զօրութիւնը եւ այն ամէնը, ինչ նա արել է, նաեւ իր կառուցած քաղաքը, չէ՞ որ նկարագրուած են

Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ: Այդտեղ չի ասուած միայն այն մասին, որ Ասայի ծերութեան օրերին նրա ոտքերը ցաւեցին:

24 Ասան գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում: Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յոսափատը:

ՆԱԲԱՏԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ

25 Յերոբովամի որդի Նաբատը Իսրայէլում թագաւորեց Յուդայի արքայ Ասայի թագաւորութեան երկրորդ տարում: Նա Իսրայէլում թագաւորեց երկու տարի: 26 Նա չար գործեր արեց Տիրոջ առաջ, ընթացաւ իր հօր գործած մեղքերի ճանապարհով եւ դրանցով էլ Իսրայէլը մեղքի մէջ գցեց: 27 Նրա դէմ դաւ նիւթեց Աքիայի որդի Բաասան, որն Իսաքարի տան վրայ էր իշխում: Բաասան նրան սպանեց այլազգիների բնակավայրում, իսկ Նաբատն ու ամբողջ Իսրայէլը պաշարել էին Գաբաթոնը: 28 Բաասան նրան սպանեց Յուդայի երկրի Ասա արքայի թագաւորութեան երկրորդ տարում, եւ նրա փոխարէն ինքը թագաւորեց: 29 Երբ թագաւոր դարձաւ, կոտորեց Յերոբովամի ամբողջ տունը եւ Յերոբովամի տնից ոչ մի մարդու կենդանի չթողեց, բոլորին բնաջնջեց, ինչպէս Տէրն էր ասել իր ծառայ սիլոնացի Աքիայի միջոցով, 30 որովհետեւ Յերոբովամն ինքը շատ մեղքեր էր գործել եւ Իսրայէլին էլ մեղքերի մէջ էր գցել ու դրանով զայրացրել էր Իսրայէլի Տէր Աստծուն:

31 Նաբատի մնացած գործերն ու այն ամէնը, ինչ արել է նա, չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 32 Իրենց կենդանութեան բոլոր օրերում Ասան ու Իսրայէլի արքայ Նաբատը իրար դէմ պատերազմ էին մղում:

ԻՍՐԱՅԷԼԻ ԲԱԱՍԱ ԹԱԳԱՒՈՐԸ

33 Յուդայի երկրի արքայ Ասայի թագաւորութեան երրորդ տարում ամբողջ Իսրայէլի վրայ թագաւորեց Աքիայի որդի Բաասան: Նա քսանչորս տարի թագաւորեց Թերսայում: 34 Նա չար գործեր արեց Տիրոջ առաջ, գնաց Նաբատի որդի Յերոբովամի գործած մեղքերի ճանապարհով եւ դրանցով Իսրայէլն էլ մեղքերի մէջ գցեց:

16 Տէրը Անանիայի որդի Յէուի միջոցով խօսքն ուղղելով Բաասային՝ ասաց. 2 «Թէեւ ես քեզ երկրի փոշուց բարձրացրի եւ իմ ժողովուրդ Իսրայէլին առաջնորդ դարձրի, սակայն դու գնացիր Յերոբովամի ճանապարհով եւ Իսրայէլի իմ ժողովրդին մեղանչել տուեցիր, որ նրանց կուռքերով ինձ բարկացնես: 3 Դրա համար ես թշնամի եմ յարուցելու Բաասայի ու նրա տան դէմ եւ քո տունը Նաբատի որդի Յերոբովամի տան նման եմ դարձնելու: 4 Բաասայի տնից ով քաղաքում մեռնի, շները պիտի ուտեն նրան, իսկ ով դաշտում մեռնի, երկնքի թռչունները պիտի կտցեն»: 5 Բաասայի մնացած գործերը, նրա քաջագործութիւններն ու այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 6 Բաասան գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Թերսայում: Ասա արքայի թագաւորութեան քսաներորդ տարում նրա փոխարէն թագաւորեց իր որդի Ելան: 7 Արդէն ասել ենք, թէ Տէրը Անանիայի որդի Յէուի մարգարէի միջոցով խօսել էր Բաասայի, նրա տան եւ այն բոլոր չարիքների մասին, որ նա գործել էր Տիրոջ նկատմամբ, թէ ինչպէս նա իր կատարած գործերով բարկացրել էր նրան, եւ Տէրը պատուհասել էր նրան այնպէս, ինչպէս Յերոբովամին:

ԻՍՐԱՅԷԼԻ ԵԼԱ ԹԱԳԱՒՈՐԸ

8 Յուդայի երկրի արքայ Ասայի թագաւորութեան քսանվեցերորդ տարում Թերսայում Իսրայէլի վրայ երկու տարի թագաւորեց Բաասայի որդի Ելան: 9 Նրա ծառայ Զամբրին՝ հեծելազօրի կէս մասի հրամանատարը, ըմբոստացաւ նրա դէմ, երբ նա Թեր-

սայում հանդերձարանի պետ Արսայի տանը խմել հարբել էր: 10 Զամբրին
Ցուդայի երկրի Ասա արքայի թագաւորութեան քսանեօթներորդ տարում
խփեց սպանեց նրան եւ նրա փոխարէն թագաւոր դարձաւ: 11 Երբ նա թագաւորեց
ու նստեց գահին, կոտորեց Բաասայի ամբողջ տոհմը՝ նրա մերձաւորներին
ու բարեկամներին, կենդանի չթողեց պատին միզող ոչ մէկին:
12 Զամբրին Բաասայի ամբողջ տոհմը բնաջնջեց, ինչպէս որ Տէրը Յէու մարգարէի
միջոցով յայտնել էր Բաասայի տան մասին: 13 Այս բոլորը եղան
Բաասայի բոլոր մեղքերի, նրա որդի Ելայի մեղքերի պատճառով, քանի որ
նրանք մեղանչել էին տուել Իսրայէլին՝ բարկացնելով Իսրայէլի Տէր
Աստծուն իրենց կուռքերով:
14 Ելայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ
նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ԶԱՄԲՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ

15 Ցուդայի երկրի արքայ Ասայի թագաւորութեան քսանեօթներորդ տարում
Զամբրին Թերսայում թագաւորեց եօթը
օր: Այդ ժամանակ Իսրայէլի զօրքը բանակատեղի էր դրել այլազգիների
Գաբաթոն բնակավայրում: 16 Երբ բանակատեղիում գտնուող ժողովուրդը
լսեց, որ Զամբրին զօրք է հաւաքել ու սպանել արքային, ապա նոյն օրը
զօրահրամանատար Ամրիին թագաւոր դարձրեց Իսրայէլի վրայ
բանակատեղիում: 17 Ամրին բոլոր Իսրայէլացիների հետ գնաց Գաբաթոնից
ու եկաւ պաշարեց Թերսան: 18 Երբ Զամբրին տեսաւ, որ քաղաքը շուտով
գրաւելու են, մտաւ արքունի սենեակներից մէկը եւ արքունի տունը հրի
մատնեց: 19 Նա մեռաւ Տիրոջ առաջ իր գործած մեղքերի համար, քանզի գնացել
էր Նաբատի որդի Յերոբովամի գործած մեղքերի ճանապարհով եւ
դրանցով էլ Իսրայէլը մեղքի մէջ գցել:
20 Զամբրիի մնացած գործերն ու նիւթած դաւադրութիւնները չէ՞ որ
նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՄՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ

21 Այն ժամանակ Իսրայէլի ժողովուրդը երկուսի բաժանուեց. ժողովրդի
կէսը յարեց Գոնաթի որդի Թամնիին,
որպէսզի նրան թագաւոր դարձնի, իսկ ժողովրդի միւս կէսը յարեց Ամրիին:
22 Յաղթեցին Ամրիի հետեւորդները, իսկ Գոնաթի որդի Թամնիին յարող
ժողովուրդը պարտութիւն կրեց: Այն ժամանակ մեռան Թամնին ու նրա եղբայր
Յորամը, եւ Թամնիից յետոյ թագաւորեց Ամրին: 23 Ցուդայի երկրի
Ասա արքայի թագաւորութեան երեսունմէկերորդ տարում Ամրին թագաւորեց
Իսրայէլի վրայ եւ իշխեց տասներկու տարի: Նա Թերսայում թագաւորեց
վեց տարի: 24 Ամրին Սեմերոն լեռը նրա տիրոջից՝ Սամերից գնեց երկու
տաղանդ արծաթով†, լեռը շէնացրեց եւ շէնացրած այդ լեռը նախկին
տիրոջ՝ Սամերի անունով կոչեց Սեմերոն:
25 Ամրին Տիրոջ առջեւ չարիք գործեց, բոլոր իրենից առաջ եղածներից
աւելի չարութիւն գործեց, 26 գնաց
Նաբատի որդի Յերոբովամի ընթացած բոլոր ճանապարհներով, գործեց այն
մեղքերը, որով մեղանչել տուեց Իսրայէլին եւ իր կուռքերով բարկացրեց Իսրայէլի
Տէր Աստծուն: 27 Ամրիի մնացած գործերը, այն ամէնը, ինչ նա
արել է, նրա քաջագործութիւնները չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների
ժամանակագրութեան մէջ:
28 Ամրին գնաց իր նախնիների գիրկը, թաղուեց Սամարիայում, եւ իր փոխարէն
թագաւորեց իր որդին՝ Աքաաբը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱԳԱԱԲ ԹԱԳԱՒՈՐԸ

29 Ամրիի որդի Աքաաբը թագաւորեց Իսրայէլի վրայ: Ցուդայի երկրի արքայ
Ասայի թագաւորութեան երեսունութերորդ տարում Ամրիի որդի Աքաաբը
թագաւորեց Իսրայէլի վրայ: Նա քսաներկու տարի թագաւորեց Սամարիայում:
30 Ամրիի որդի Աքաաբը Տիրոջ առջեւ առաւել չար գտնուեց,

†Վեց հազար կտոր արծաթ:

քան իր բոլոր նախորդները: 31 Բացի այն, որ նա գործում էր Նաբատի որդի
Յերոբովամի նոյն մեղքերը, նա կին
առաւ սիդոնացիների արքայ Յոբաղի դուստր Յեզաբէլին եւ գնաց ու պաշտեց
Բահաղին, 32 երկրպագեց նրան եւ Սամարիայում կառուցած գարշելի
կուռքերի տանը Բահաղի համար զոհասեղան կանգնեցրեց: 33 Աքաաբը
կուռք կանգնեցրեց եւ իր գործերով առաւել բարկացրեց Աստծուն, քան
իրենից առաջ եղած Իսրայէլի բոլոր թագաւորները: 34 Նրա օրօք բեթէլացի
Աքիէլը կառուցեց Երիքովը, իր անդրանիկ որդի Աբիրոնի հետ դրա հիմքերը
դրեց, իսկ կրտսեր որդի Սեգուբի հետ դրա դարպասները կանգնեցրեց,
համաձայն Տիրոջ խօսքի, որ ասուեց Նաւէի որդի Յեսուի բերանով:

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ ԵՒ ԵՐԱՇՏԸ

17 Գաղաադի Թեզբէ գիւղից սերած
Եղիա մարգարէն ասաց Աքաաբին.
«Կենդանի է երկնային զօրութիւնների
Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը,
որի առջեւ կանգնում եմ. եթէ այս
տարիներին ցող իջնի կամ անձրեւ
գայ, ապա այդ կը լինի միայն իմ խօսքով»: 2 Տէրը խօսեց Եղիայի հետ եւ
ասաց. 3 «Գնա՛ այստեղից դէպի արեւելք ու թաքնուի՛ր Քոռաթի հեղեղատի մօտ, որը
Յորդանան գետի դիմացն է: 4 Այնտեղ հեղեղատի ջրից կը խմես,
իսկ ես հրամայել եմ ագռաւներին, որ քեզ այնտեղ կերակրեն»: 5 Եղիան
գնաց եւ արեց Տիրոջ ասածի համաձայն. նա գնաց ու նստեց Քոռաթի
հեղեղատի մօտ, Յորդանան գետի դիմաց: 6 Ամէն առաւօտ ագռաւները հաց
ու միս էին բերում նրան, ինչպէս նաեւ
հաց ու միս՝ երեկոները, իսկ ջուրը նա
հեղեղատից էր խմում: 7 Որոշ ժամանակ անց հեղեղատը ցամաքեց, որովհետեւ
անձրեւ չէր տեղում երկրի
վրայ:

ԵՂԻԱՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ ՄՕՏ ՍԱՐԵՓԹԱՅՈՒՄ

8 Տէրն իր խօսքն ուղղեց Եղիային՝
ասելով. 9 «Վե՛ր կաց եւ գնա՛ սիդոնացիների Սարեփթա քաղաքը եւ այնտե՛ղ մնա: Ես մի այրի կնոջ պատուիրել եմ, որ քեզ այնտեղ կերակրի»:
10 Եղիան գնաց Սարեփթա ու հասաւ քաղաքի դարպասը: Մի կին այնտեղ
փայտ էր հաւաքում: Եղիան ձայն
տալով նրան՝ ասաց. «Ինձ համար
ամանով մի քիչ ջուր բե՛ր, որ խմեմ»:
11 Կինը գնաց բերելու: Եղիան նրա
յետեւից ձայն տալով՝ ասաց. «Ինձ
համար մի պատառ հաց բե՛ր»: 12 Կինն
ասաց. «Կենդանի է քո Տէր Աստուածը.
ես մի նկանակ էլ չունեմ, բացի սափորում եղած մի բուռ ալիւրից եւ կուժի
մէջ եղած մի քիչ իւղից: Ահա մի երկու
փայտի կտոր եմ հաւաքում, որ գնամ
ու հաց պատրաստեմ ինձ եւ երեխաներիս համար. այն կ'ուտենք ու յետոյ
կը մեռնենք»: 13 Եղիան ասաց նրան.
«Քաջալերուի՛ր, գնա՛ եւ արա՛ այնպէս, ինչպէս ասացիր, սակայն նախ
ինձ համար մի փոքրիկ նկանակ պատրաստի՛ր ու բե՛ր եւ ապա պատրաստի՛ր
քեզ ու երեխաներիդ համար: 14 Այսպէս
է ասում Իսրայէլի Տէր Աստուածը.
"Ալիւրը չի պակասելու սափորում, եւ
կուժի իւղը չի նուազելու մինչեւ այն
օրը, երբ Տէրն անձրեւ կը տեղացնի
երկրի վրայ"»: 15 Կինը գնաց եւ արեց
այնպէս, ինչպէս ասել էր Եղիան:
Եղիան, կինն ու նրա որդիները կերան:
16 Այդ օրուանից սափորում ալիւրը
չպակասեց, եւ կուժի մէջ իւղ չնուազեց, ինչպէս որ Եղիայի միջոցով ասել
էր Տէրը:

ԵՂԻԱՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒՆ

17 Այս դէպքերից յետոյ այնպէս
պատահեց, որ տանտիկնոջ որդին հիւանդացաւ: Հիւանդութիւնն այնքան
ծանր էր, որ տղայի մէջ շունչ չմնաց:
18 Այրին ասաց Եղիային. «Ի՞նչ գործ
ունես ինձ հետ, ո՜վ Աստծու մարդ,
եկել ես ինձ մօտ, որ մեղքե՞րս յիշեցնես ու որդո՞ւս սպանես»: 19 Եղիան
ասաց կնոջը. «Տո՛ւր ինձ քո որդուն»:
Նա երեխային վերցրեց նրա գրկից,
տարաւ վերնատուն, ուր ինքն էր
բնակւում, եւ պառկեցրեց նրան իր
անկողնի վրայ: 20 Եղիան աղաղակելով

ասաց. «Ո՛վ Տէր, ահա տեսնում ես այս
այրի կնոջը, որի մօտ ես բնակւում եմ:
Դու չարչարեցիր նրա որդուն եւ մահ
պատճառեցիր»: 21 *Նա երեք անգամ*
փչեց մանկան վրայ եւ աղաղակեց
Տիրոջն՝ ասելով. «Տէ՛ր իմ Աստուած,
այս երեխայի շունչը իրե՛ն վերադարձ-
րու»: 22 *Այդպէս էլ եղաւ. նա աղա-*
ղակեց, Տէրը լսեց Եղիայի ձայնը, երե-
խայի շունչը վերադարձաւ նրա մարմ-
նի մէջ, ու նա կենդանացաւ: 23 *Եղիան*
առաւ մանկանը, վերնատնից տուն
իջեցրեց նրան, տուեց իր մօրը՝ ասելով.
«Տես, որ կենդանի է քո որդին»: 24
Կինն ասաց Եղիային. «Հիմա համո-
զուեցի, որ դու Աստծու մարդն ես, եւ
Տիրոջ ճշմարիտ խօսքն է քո բերա-
նում»:

ԵՂԻԱՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԵՐԱՇՏԻ ՎԵՐՋԸ

18 *Որոշ ժամանակ անցնելուց յետոյ,*
երրորդ տարում, Եղիային հասաւ Տի-
րոջ խօսքը, որն ասում էր. «Գնա՛ ու
երեւացի՛ր Աքաաբին, իսկ ես անձրեւ
կը տեղացնեմ երկրի վրայ»: 2 *Եղիան*
գնաց Աքաաբին ներկայանալու, իսկ
Սամարիայում սաստիկ սով էր: 3 *Ա-*
քաաբը կանչեց իր հազարապետ Աբ-
դիուին: Աբդիուն սաստիկ երկիւղ էր
կրում Տիրոջից. 4 *երբ Յեզաբէլը կո-*
տորում էր Տիրոջ մարգարէներին, Աբ-
դիուն հարիւր մարգարէի տարաւ եւ
նրանց յիսուն-յիսուն թաքցրեց քա-
րայրներում եւ կերակրեց նրանց
հացով ու ջրով: 5 *Արքան ասաց*
Աբդիուին. «Ե՛կ շրջենք այս երկրում,
փնտռենք ու գտնենք բոլոր աղ-
բիւրներն ու հեղեղատները, թերեւս
խոտ գտնենք ու կերակրենք ձիերին ու
ջորիներին, որպէսզի անասունները
չսատկեն»: 6 *Նրանք իրենց միջեւ*
բաժանեցին շրջելու ենթակայ տեղերը:
Աքաաբը մի ճանապարհով գնաց
առանձին, իսկ Աբդիուն մի այլ
ճանապարհով՝ առանձին:

7 *Երբ Աբդիուն ճանապարհին էր,*
Եղիան նրան ընդառաջ ելաւ միայնակ:
Աբդիուն անմիջապէս ընկաւ երեսի
վրայ ու ասաց. «Մի՞թէ դու ես, տէ՛ր
իմ Եղիա»: 8 *Եղիան ասաց. «Ես եմ:*
Գնա ասա՛ քո տիրոջը. "Ահա Եղիան"»:
9 *Աբդիուն ասաց. «Ի՞նչ մեղք եմ*
գործել, որ քո ծառային մատնում ես
Աքաաբի ձեռքը, որպէսզի սպանի ինձ:
10 *Կենդանի է քո Տէր Աստուածը. չկայ*
ազգ կամ թագաւորութիւն, ուր իմ
տէրը մարդ ուղարկած չլինի քեզ
որոնելու, սակայն երբ ասում էին, թէ՝
"Չկայ", նա այրել էր տալիս այն
թագաւորութիւնը կամ այն երկիրը,
որտեղ քեզ չէր գտնում: 11 *Արդ, ինձ*
ասում ես, թէ՝ "Գնա՛ ու պատմի՛ր քո
տիրոջը, թէ՝ "Ահա այստեղ է Եղիան"":
12 *Եթէ ես քո մօտից գնամ, եւ Տիրոջ*
հոգին քեզ վերցնի տանի մի երկիր, որը
չգիտեմ, իսկ ես գնամ յայտնեմ Ա-
քաաբին, եւ նա չգտնի քեզ, ապա ինձ
կը սպանի: 13 *Չէ՞ որ քո ծառան ման-*
կութիւնից ի վեր երկիւղ է կրում Տի-
րոջից: Մի՞թէ չեն պատմել իմ տիրոջը,
որ, երբ Յեզաբէլը կոտորում էր Տիրոջ
մարգարէներին, ես Տիրոջ մարգարէ-
ներից հարիւր հոգի՝ յիսուն-յիսուն
թաքցրել եմ տարբեր քարայրներում,
նրանց կերակրել հացով ու ջրով: 14 *Եւ*
հիմա ասում ես ինձ՝ "Գնա ասա՛ քո
տիրոջը, թէ՝ "Ահա այստեղ է Եղիան"",
որ նա էլ ինձ սպանի»: 15 *Եղիան, սա-*
կայն, ասաց. «Կենդանի է զօրութիւն-
ների Տէրը, որի առջեւ կանգնած եմ. ես
այսօր երեւալու եմ Աքաաբին»:

ԵՂԻԱՆ ԱՔԱԱԲԻ ԱՌԱՋ

16 *Աբդիուն գնաց Աքաաբի մօտ ու*
նրան պատմեց կատարուածը: Աքաաբը
վեր կացաւ ու գնաց Եղիային դիմա-
ւորելու: 17 *Երբ Աքաաբը տեսաւ Եղիա-*
ին, ասաց. «Այդ դո՞ւ ես Իսրայէլը
տակնուվրայ անողը»: 18 *Եղիան ասաց.*
«Ես չեմ Իսրայէլը տակնուվրայ անողը,
այլ՝ դու եւ քո հօր տունը, որ լքելով
ձեր Տէր Աստծուն, գնացել էք Բահա-
ղիմին յարողների յետեւից: 19 *Արդ,*
մա՛րդ ուղարկիր եւ ինձ մօտ, Կարմելոս
լերան վրայ հաւաքի՛ր ամբողջ Իսրա-
յէլին, Բահաղի չորս հարիւր յիսուն
մարգարէներին եւ չորս հարիւր յիսուն
ամօթի՝ Աստարտի մարգարէներին եւ
մեհեանների չորս հարիւր կռապաշտ
մարգարէներին, որոնք սնվում են Յե-
զաբէլ թագուհու սեղանից:

ԵՂԻԱՆ ԵՒ ԲԱՀԱՂԻ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ ԿԱՐՄԵԼՈՍ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

20 *Աքաաբը մարդ ուղարկեց Իս-*
րայէլի չորս կողմերը եւ մարգարէ-
ներին հաւաքեց Կարմելոս լերան
վրայ: 21 *Եղիան մօտենալով ամբողջ*
ժողովրդին՝ ասաց. «Մինչեւ ե՞րբ պիտի
կաղաք երկու ոտքով: Եթէ Տէրը
Աստուած է, գնացէ՛ք նրա յետեւից, եւ
եթէ Բահաղն է, նրա՛ յետեւից գնա-
ցէք»: Ժողովուրդը պատասխան
չտուեց: 22 *Եղիան ասաց ժողովրդին.*
«Միայն ես եմ մնացել Տիրոջ մար-
գարէ, Բահաղի մարգարէները չորս
հարիւր յիսուն հոգի են, մեհեանների
կռապաշտ մարգարէները՝ չորս հարիւր:
23 *Արդ, թող մեզ երկու եզ տան, նրանք*
թող իրենց համար ընտրեն մէկին,
կտրատեն այն ու դնեն փայտերի
վրայ, սակայն կրակ թող չվառեն: Ես
էլ նոյնն անեմ միւս եզան. դնեմ
փայտերի վրայ եւ կրակ չվառեմ:
24 *Դրանից յետոյ դուք դիմեցէ՛ք ձեր*
աստուածներին, իսկ ես՝ իմ Տէր Աստ-
ծուն: Այն աստուածը, որ հրով կը պա-
տասխանի, նա՛ է Աստուածը»: Ամբողջ
ժողովուրդը պատասխանեց՝ ասելով.
«Ճիշտ խօսք ասացիր»: 25 *Եղիան ասաց*
ամօթի՝ Աստարտի մարգարէներին.
«Ընտրեցէ՛ք ձեզ համար մի զուարակ
եւ առաջինը դուք սկսեցէ՛ք, քանի որ
բազմամարդ էք: Տուէ՛ք ձեր աս-
տուածների անունը, սակայն կրակ մի՛
վառէք»: 26 *Նրանք առան իրենց*
տրուած զուարակը եւ այդպէս արեցին.
նրանք առաւօտից մինչեւ կէսօր
դիմելով Բահաղին՝ ասում էին. «Լսի՛ր
մեզ, Բահա՛ղ, լսի՛ր մեզ»: Բայց ո՛չ
ձայն կար, ո՛չ պատասխան: Նրանք
ցատկոտում էին իրենց կառուցած զո-
հասեղանի շուրջը: 27 *Երբ կէսօր եղաւ,*
Թեզբացի Եղիան ծաղրեց նրանց՝
ասելով. «Բարձրաձա՛յն կանչեցէք, չէ՞
որ աստուած է, թերեւս զբաղուած է,
կամ գործ է կատարում, կամ գուցէ
քնած է եւ զարթնի»: 28 *Նրանք*
բարձրաձայն կանչում էին եւ, ըստ
իրենց օրէնքի, սրերով ու գեղարդներով
իրենք իրենց կտրատում էին, մինչեւ որ
արիւն հոսեց նրանց մարմնից: 29 *Երբ*
երեկոն մօտենում էր, նրանք դեռ
ոգեկոչում էին մինչեւ զոհ մատուցելու
ժամանակը, սակայն ոչ մի ձայն չկար:
Այն ժամանակ խօսեց Թեզբացի Եղիան
գարշելի կուռքերի մարգարէների հետ՝
ասելով. «Հեռո՛ւ կանգնեցէք, հիմա ես
եմ իմ ողջակէզն անելու»: Նրանք
գնացին հեռացան:

30 *Եղիան ասաց ժողովրդին. «Մօ-*
տեցէ՛ք ինձ»: Ամբողջ ժողովուրդը մօ-
տեցաւ նրան: 31 *Նա նորոգեց Տիրոջ*
կործանուած զոհասեղանը, առաւ
տասներկու քար ըստ Իսրայէլի ցեղերի
թուի, ինչպէս Տէրն ասել էր նրան՝
«Իսրայէ՛լ թող լինի քո անունը»:
32 *Նա քարերից Տիրոջ անունով զո-*
հասեղան շինեց, նրա շուրջը փոս
փորեց, որ կարող էր երկու գրիւ սերմ
տանել, 33 *ապա փայտ դիզեց զոհա-*
սեղանի վրայ, կտրատեց զուարակը,
դրա կտրատուած մասերը դասաւորեց
զոհասեղանին դրուած փայտերի վրայ:
34 *Նա ասաց. «Չորս սափոր ջո՛ւր բերէք*
եւ թափեցէ՛ք ողջակէզի ու ջարդուած
փայտերի վրայ»: Ապա ասաց. «Դար-
ձեա՛լ արէք»: Նրանք նոյն բանը կրկին
արեցին: Եղիան ասաց. «Երրո՛րդ ան-
գամ էլ արէք»: Նրանք երրորդ անգամ
էլ արեցին: 35 *Ջուրը հոսում էր զոհա-*
սեղանի շուրջը, եւ փոսը լցուեց ջրով:

36 *Զոհի մատուցման ժամին Եղիան*
երկինք աղաղակելով՝ ասաց. «Աբրա-
համի, Իսահակի ու Իսրայէլի Տէ՛ր
Աստուած, թող այսօր համոզուեն, թէ
դու ես Իսրայէլի Տէր Աստուածը, եւ ես
քո ծառան եմ: Ես արեցի այս գործերը:
37 *Լսի՛ր ինձ, Տէ՛ր, պատասխանի՛ր ինձ*
հրով, որ այս ժողովուրդը գիտենայ,
թէ դու ես Տէր Աստուածը, եւ դու յետ
դարձրիր այս ժողովրդի սիրտը»: 38 *Եւ*
երկնքից կրակ ընկաւ Տիրոջից, լափեց
ողջակէզն ու փայտերը, կլանեց փոսի
հողն ու ջուրը: 39 *Երբ ամբողջ ժողո-*
վուրդը տեսաւ դա, ընկաւ երեսնիվայր
եւ ասաց. «Արդարեւ, Տէրն Աստուած է,
Տէրն Աստուած է»: 40 *Եղիան ասաց*
ժողովրդին. «Բռնեցէ՛ք Բահաղի մար-
գարէներին, որ նրանցից ոչ ոք չփախ-
չի»: Բռնեցին նրանց: Եղիան ամենքին
իջեցրեց Կիսոնի հեղեղատն ու այնտեղ
կոտորեց նրանց:

ԱՆՁՐԵՒ ՏԵՂԱՑ

41 Եղիան ասաց Աքաաբին. «Ելի՛ր, կե՛ր ու խմի՛ր, որովհետեւ անձրեւի ձայն է լսւում»: 42 Աքաաբն ելաւ, որ ուտի եւ խմի, իսկ Եղիան բարձրացաւ Կարմելոս լերան գագաթը: Նա մինչեւ գետին խոնարհուեց, երեսն առաւ ծնկների մէջ 43 ու ասաց իր ծառային. «Ելի՛ր ու նայի՛ր ծով տանող ճանապարհի կողմը»: Մառան ելաւ, նայեց ու ասաց. «Ոչինչ չկայ»: Եղիան ասաց. «Դու եօթն անգամ արա՛ դա»: 44 Մառան եօթն անգամ գնաց եւ այնպէս պատահեց, որ, եօթներորդ անգամը հազիւ լրացած, մարդու ձեռքի չափ մի փոքրիկ ամպ ջուր էր կաթեցնում: Եղիան ասաց. «Գնա՛ ու ասա՛ Աքաաբին՝ "Լծի՛ր քո կառքերը եւ հեռացի՛ր, որ անձրեւի չբռնուես"»: 45 Երբ սա այս ու այն կողմ էր դառնում, երկինքը մթնեց ամպերով ու հողմով, եւ սաստիկ անձրեւ սկսեց տեղալ: 46 Աքաաբը լալով գնաց Յեզրայէլ: Տիրոջ ձեռքը Եղիայի վրայ էր, որն իր մէջքը պինդ կապելով՝ վազեց Աքաաբի առջեւից մինչեւ որ մտաւ Յեզրայէլ:

ԵՂԻԱՆ ՍԻՆԱ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

19 Աքաաբը իր կնոջը՝ Յեզաբէլին պատմեց այն ամէնը, ինչ Եղիան արել էր, եւ թէ ինչպէս նա բոլոր մարգարէներին սրակոտոր էր արել: 2 Յեզաբէլը սուրհանդակ ուղարկեց Եղիայի մօտ՝ ասելով. «Եթէ դու Եղիան ես, իսկ ես՝ Յեզաբէլը, ապա թող աստուածներն ինձ այսպէս ու այսպէս անեն եւ դեռ աւելին, եթէ վաղը այս ժամին քեզ չանեմ այն, ինչ մարգարէներից իւրաքանչիւրին արեցիր դու»:

3 Եղիան վախեցաւ, ելաւ գնաց, հեռացաւ այդտեղից, եկաւ Յուդայի երկրի Բերսաբէէ քաղաքը: Այնտեղ թողնելով իր ծառային՝ 4 ինքը մէկ օրուայ ճանապարհ գնաց դէպի անապատ եւ նստեց բեւեկնի մի ծառի տակ: Նա իր մահը ցանկացաւ՝ ասելով. «Բաւական է, Տէ՛ր, ա՛ռ իմ հոգին ինձնից, քանզի ես իմ հայրերից աւելի լաւ չեմ»: 5 Նա քուն մտաւ, ննջեց ծառի տակ: Եւ ահա մէկը նրան մօտենալով՝ ասաց. «Ելի՛ր ու կե՛ր»: 6 Եղիան նայեց եւ տեսաւ իր սնարից կախուած հաճարի նկանակ եւ ջրի կուժ: Նա ելաւ, կերաւ, խմեց եւ դարձեալ ննջեց: 7 Տիրոջ հրեշտակը երկրորդ անգամ նրան մօտենալով՝ ասաց. «Ելի՛ր, կե՛ր, որովհետեւ երկար ճանապարհ ես գնալու»: 8 Նա վեր կացաւ, կերաւ ու խմեց եւ այդ կերակրի զօրութեամբ քառասուն օր ու քառասուն գիշեր քայլեց մինչեւ Աստծու Քորէբ լեռը:

9 Նա մտաւ քարայրն ու այնտեղ օթեւանեց: Եւ ահա նրան հասաւ Տիրոջ խօսքը, որն ասում էր. «Ինչո՞ւ ես այստեղ, Եղիա՛»: 10 Եղիան ասաց. «Նախանձախնդրութիւն ունեցայ ամենակալ Տիրոջ համար, քանզի իսրայէլացիները լքեցին քեզ, քո զոհասեղանները կործանեցին եւ քո մարգարէներին սրակոտոր արեցին: Միայն ես եմ մնացել, եւ ինձ էլ փնտռում են, որ սպանեն»: 11 Տէրն ասաց. «Վաղն առաւօտեան կ'ելնես ու կը կանգնես լերան վրայ, Տիրոջ առջեւ: Տէրը կ'անցնի, մի սաստիկ հողմ կը բարձրանայ, Տիրոջ առաջ կը խորտակի լեռները, փուլ կը տայ ժայռերը, սակայն Տէրն այն հողմի մէջ չի լինի: Հողմից յետոյ երկրաշարժ կը լինի, սակայն Տէրը երկրաշարժի մէջ չի լինի: 12 Երկրաշարժից յետոյ կրակ կը թափուի, սակայն Տէրը կրակի մէջ չի լինի: Կրակից յետոյ մեղմ օդի ձայն կը լինի»: 13 Երբ Եղիան լսեց Աստծու ասածը, իր կաշուէ վերարկուով ծածկեց երեսը, եկաւ ու կանգնեց քարայրից ներս: Եւ ահա մի ձայն ասաց նրան. «Ինչո՞ւ ես այստեղ, Եղիա՛»: 14 Եղիան ասաց. «Նախանձախնդրութիւն ունեցայ ամենակալ Տիրոջ համար, քանզի իսրայէլացիները դրժեցին քո ուխտը, քո զոհասեղանները քանդեցին, քո մարգարէներին սրակոտոր արեցին: Միայն ես եմ մնացել, եւ ինձ էլ փնտռում են, որ սպանեն»: 15 Տէրն ասաց նրան. «Վերադարձի՛ր քո ճանապարհով, գնա՛ Դամասկոսի անապատով, եւ երբ հասնես, Ազայէլին ասորիների թագաւոր կ'օծես, 16 Ամեսսէի որդի Յեհուին՝ Իսրայէլի թագաւոր, իսկ աբելմաուլացի Սափատի որդի Եղիսէէին կ'օծես մարգարէ քո փոխարէն: 17 Այնպէս կը լինի, որ Ազայէլի սրից ազատուածին Յեհուն կը սպանի, իսկ Յեհուի սրից ազատուածին՝ Եղիսէէն: 18 Իսրայէլում կը թողնես եօթը հազար տղամարդ՝ այնպիսի մարդիկ, որ չեն ծնրադրել Բահաղին եւ չրթունքներով նրան չեն համբուրել»:

ԵՂԻՍԷԷԻ ԿՈՉՈՒՄԸ

19 Նա գնաց այնտեղից ու գտաւ Սափատի որդի Եղիսէէին, որը տասներկու եզով վար էր անում, եւ եզները զոյգ-զոյգ նրա առաջ էին, իսկ ինքը տասներկուերորդ զոյգն էր քշում: Եղիան մօտենալով՝ իր կաշուէ վերարկուն նետեց Եղիսէէի վրայ: 20 Եղիսէէն թողեց եզներն ու վազեց Եղիայի յետեւից՝ ասելով. «Թող նախ համբուրեմ հօրս ու մօրս, ապա հետեւեմ քեզ»: Եղիան ասաց. «Գնա՛ ու վերադարձի՛ր, քեզ ի՞նչ եմ արել»: 21 Վերադառնալով՝ նա մի զոյգ եզ վերցրեց, մորթեց եւ հերկելու գործիքները տաքացնելով՝ խորովեց դրանց միսը, բաժանեց ժողովրդին: Մարդիկ կերան, իսկ ինքը գնաց Եղիայի յետեւից ու ծառայեց նրան:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

20 Ադերի որդին՝ ասորիների արքան հաւաքեց իր ամբողջ զօրքը եւ բոլոր երիվարներով ու մարտակառքերով ելաւ ու պաշարեց Սամարիան: Պատերազմի ժամանակ նրան դաշնակցել էին երեսուներկու թագաւորներ: 2 Նա սուրհանդակներ ուղարկելով քաղաք, Իսրայէլի արքայ Աքաաբի մօտ՝ 3 ասաց նրան. «Այսպէս է ասում Ադերի որդին. "Քո արծաթն ու ոսկին իմն են, քո կանայք ու գեղեցիկ որդիները իմն են"»: 4 Իսրայէլի արքան պատասխան տալով՝ ասաց. «Քո ասածի պէս, տէ՛ր իմ արքայ, քոնն եմ ես, եւ քոնն է իմ ամէն ինչը»: 5 Սուրհանդակները նորից եկան ու ասացին. «Այսպէս է ասում Ադերի որդին. "Ես լուր էի ուղարկել, որ քո արծաթն ու ոսկին, քո կանայք ու որդիներն ինձ տաս: 6 Արդ, վաղն այս ժամին կ'ուղարկեմ իմ ծառաներին, որոնք խուզարկելու են քո եւ քո ծառաների տները եւ ինչ որ իրենց աչքերին ցանկալի թուայ, ինչի էլ որ իրենց ձեռքերը մեկնեն, պիտի առնեն"»: 7 Իսրայէլի արքան կանչեց երկրի բոլոր ծերերին եւ ասաց. «Իմացէ՛ք ու տեսէ՛ք, որ նա չարիք է ուզում, քանզի ինձ մօտ մարդ էր ուղարկել՝ պահանջելով իմ տղաներին ու աղջիկներին, իմ արծաթն ու ոսկին, բայց ես չմերժեցի նրան»: 8 Մերերն ու ամբողջ ժողովուրդը նրան ասացին. «Մի՛ լսիր նրան ու յանձնառու մի՛ լինիր»: 9 Եւ նա Ադերի սուրհանդակներին ասաց. «Ձեր տէր արքային ասացէ՛ք. «Ինչի համար որ առաջին անգամ մարդ էիր ուղարկել քո ծառային, կ'անեմ, իսկ այս բանը չեմ կարող անել»: Մարդիկ գնացին ու պատասխանը հաղորդեցին նրան:

10 Ադերի որդին նրա մօտ մարդ ուղարկելով՝ ասաց. «Այսպէս եւ այսպէս թող անեն ինձ աստուածները եւ աւելին թող անեն, եթէ Սամարիան աւերելուց յետոյ թողնեմ այնքան կանգուն բան, որի փոշին լցնի իմ զինուորների ափերը»: 11 Իսրայէլի արքան պատասխան տուեց ու ասաց. «Շա՛տ եղաւ, թող կուզիկը չպարծենայ ուղիղ կանգնողի նման»: 12 Նա այս պատասխան խօսքերը լսեց, երբ որ բոլոր թագաւորների հետ վրաններում գինարբուքի մէջ էր: Նա ասաց իր ծառաներին. «Պաշարեցէ՛ք»: Եւ պաշարեցին քաղաքը:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

13 Եւ ահա մի մարգարէ մօտեցաւ Իսրայէլի Աքաաբ արքային ու ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Տեսնո՞ւմ ես այս մեծ ամբոխը. ահա նրան այսօր քո ձեռքն եմ մատնելու, որ համոզուես, թէ ես եմ Տէրը"»: 14 Աքաաբը հարցրեց. «Ո՞ւմ միջոցով»: Մարգարէն ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Գաւառների իշխանների ծառաների միջոցով"»: Աքաաբը հարցրեց. «Ո՞վ պէտք է սկսի պատերազմը»: Մարգարէն ասաց.

«Դո՛ւ»: 15 Աքաաբը հաշուեց գաւառների իշխանների ծառաներին ու տեսաւ, որ նրանք երկու հարիւր երեսուն հոգի են: Ապա հաշուեց ամբողջ ժողովրդին, զօրքի բոլոր անդամներին եւ տեսաւ, որ եօթը հազար մարդ կար: Կէսօրին նա յարձակման անցաւ: 16 Ադերի որդին եւ նրա երեսուներկու դաշնակից թագաւորները գինով հարբած էին Սոկքովում: 17 Նախ յարձակում գործեցին գաւառների իշխանների ծառաները: Լուր ուղարկեցին Ադերի որդուն, պատմեցին նրան ու ասացին. «Պաշարուած Սամարիայից մարդիկ են դուրս եկել»: 18 Ադերի որդին ասաց նրանց. «Եթէ խաղաղութեան համար են դուրս եկել, կենդանի՛ բռնեցէք նրանց, եթէ պատերազմի համար են եկել, դարձեա՛լ կենդանի բռնեցէք»: 19 Քաղաքից դուրս եկան գաւառների իշխանների ծառաները, նրանց յետեւից՝ նաեւ զօրքը, 20 եւ ամէն մէկն սպանեց նրան, ով հանդիպեց իրեն: Ասորիները փախան, եւ իսրայէլացիները հալածեցին նրանց: Ասորիների արքան՝ Ադերի որդին, ձի հեծած, հազիւ փրկուեց երեք ձիաւորների հետ: 21 Իսրայէլի արքան առաջ շարժուեց, վերցրեց երիվարներն ու մարտակառքերը եւ ասորիներին մեծ հարուածներ հասցրեց:

22 Մարգարէն մօտեցաւ Իսրայէլի արքային ու ասաց նրան. «Զօրացի՛ր ու իմացի՛ր, տե՛ս, թէ ինչ ես անելու, քանզի յաջորդ տարի Ադերի որդին՝ ասորիների արքան, յարձակուելու է քեզ վրայ»:

ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ

23 Ասորիների արքայի ծառաներն ասացին նրան. «Իսրայէլի Աստուածը լեռների Աստուած է եւ ոչ թէ դաշտերի Աստուած, այդ պատճառով էլ նրանք յաղթեցին մեզ: Եթէ նրանց դէմ պատերազմենք հարթ վայրում, կը յաղթենք նրանց: 24 Այս բա՛նն արա. թագաւորներին գահընկե՛ց արա եւ նրանց փոխարէն նախարարնե՛ր նշանակիր: 25 Քո կորցրած զօրքերի փոխարէն զօրքեր կը տանք, երիվարների փոխարէն՝ երիվարներ, մարտակառքերի փոխարէն՝ մարտակառքեր. նրանց դէմ պատերազմենք հարթ վայրում ու յաղթենք»: Նա անսաց նրանց խօսքերին եւ այդպէս էլ արեց:

26 Հետեւեալ տարին Ադերի որդին աշխարհագիր անցկացրեց Ասորիքում, ելաւ գնաց Ափեկա, որ պատերազմի Իսրայէլի դէմ: 27 Իսրայէլացիները նոյնպէս աշխարհագիր անցկացրին եւ երկու գնդի բաժանուելով՝ եկան կանգնեցին նրանց առջեւ: Իսրայէլացիները ասորիների դէմ ճակատ կազմեցին այծերի երկու հօտերի պէս, մինչդեռ ասորիները ծածկել էին երկիրը:

28 Աստծու մարդը մօտենալով Իսրայէլի արքային՝ ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Քանի որ ասորիներն ասացին, թէ՝ Աստուած լեռների Տէր Աստուած է եւ ոչ թէ դաշտերի Աստուած, նա այդ մեծ զօրքը քո ձեռքն է յանձնելու, որ համոզուես, թէ ես եմ Տէրը"»: 29 Նրանք, ճակատ կազմած, եօթը օր իրար դէմ դիմաց էին, իսկ եօթներորդ օրը պատերազմը բորբոքուեց: Իսրայէլացիները մէկ օրում հարիւր հազար ասորի հետեւակ կոտորեցին, 30 իսկ մնացածները փախան իրենց քաղաքը՝ Ափեկա, եւ պարիսպը փուլ եկաւ մնացած քսանեօթը հազար ասորիների վրայ: Ադերի որդին փախաւ ու իր պալատում մի սենեակից միւս սենեակն էր վազում:

31 Նրա ծառաներն ասացին. «Մենք լսել ենք, որ Իսրայէլի տան թագաւորները ողորմած են: Մեր մէջքերին քուրձեր կապենք, մեր գլուխներին՝ չուաններ, գնանք Իսրայէլի թագաւորի մօտ, թերեւս մեր կեանքը խնայի»: 32 Նրանք իրենց մէջքերին քուրձեր ու գլուխներին չուաններ կապեցին եւ ասացին Իսրայէլի թագաւորին. «Քո ծառան՝ Ադերի որդին, ասում է. "Խնայի՛ր կեանքս"»: Իսկ նա ասաց. «Եթէ նա դեռ կենդանի է, իմ եղբայրն է»: 33 Նրա մարդիկ այս յաջող առիթից օգտուելով՝ նուէրներ տուեցին եւ այս խօսքերը նրա բերանից առնելով՝ ասացին. «Քո եղբայրը՝ Ադերի որդին, այստեղ է»: Ասաց. «Գնացէ՛ք ու բերէ՛ք նրան»: Ադերի որդին եկաւ Աքաաբի մօտ, եւ նրան մարտակառք նստեցրին թագաւորի կողքին: 34 Ադերի որդին ասաց. «Այն քաղաքները, որ իմ հայրը գրաւել էր քո հօրից, քեզ եմ վերադարձնում: Դու հարկեր կը վերցնես Դամասկոսից, ինչպէս իմ հայրը վերցնում էր Սամարիայից»: Աքաաբն ասաց. «Ես էլ դաշինք կնքելով՝ քեզ կ'արձակեմ»: Նա դաշինք կնքեց նրա հետ եւ արձակեց նրան:

ՄԱՐԳԱՐԷՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԱՔԱԱԲԻ ՎԱՐՄՈՒՆՔԸ

35 Մարգարէների որդիներից մէկը Տիրոջ խօսքին անսալով՝ ասաց իր ընկերոջը. «Հարուածի՛ր ինձ»: Մարդը, սակայն, չուզեց հարուածել նրան: 36 Նա ասաց նրան. «Քանի որ Տիրոջ ձայնին չհնազանդուեցիր, հէնց որ ինձնից հեռանաս, մի առիւծ քեզ կը բզկտի»: Երբ սա հեռացաւ նրանից, մի առիւծ հանդիպեց նրան ու յօշոտեց: 37 Նա մի ուրիշ մարդու հանդիպելով՝ ասաց. «Հարուածի՛ր ինձ»: Այս մարդը հարուածեց ու վիրաւորեց նրան: 38 Մարգարէն եկաւ եւ կանգնելով ճանապարհին՝ սպասեց թագաւորին ու չճանաչուելու համար շորով կապեց իր աչքը: 39 Երբ արքան անցնում էր այնտեղից, նա ասաց արքային. «Երբ ես՝ քո ծառան, պատերազմ էի գնացել, մի մարդ ինձ մօտ բերելով մէկին՝ ասաց. "Այս մարդուն պահի՛ր, իսկ եթէ ձեռքիցդ փախչի, քո կեանքը կը կորչի նրա կեանքի փոխարէն, կամ մի տաղանդ արծաթ[†] կը տաս ինձ"»: 40 Եւ մինչ քո ծառան այս ու այն կողմ էր նայում, նա արդէն չկար»: Իսրայէլի արքան նրան ասաց. «Իմ ըմբռնումով դա դաւ է, ուրեմն սպանե՞լ ես նրան»: 41 Սա անմիջապէս շորը հեռացրեց աչքերից, եւ Իսրայէլի արքան ճանաչեց նրան. նա այնտեղի մարգարէներից էր: 42 Մարգարէն ասաց նրան. «Այսպէս է ասում Տէրը. "Քանի որ դու վտանգաւոր մարդուն ազատեցիր իմ ձեռքից, ուստի դու քո կեանքով կը հատուցես նրա կեանքի փոխարէն, իսկ քո ժողովուրդը՝ նրա ժողովրդի փոխարէն"»:

[†]Երեք հազար կտոր արծաթ:

43 Իսրայէլի արքան գնաց իր տունը, Սամարիա, տխուր ու հուսահատ:

ՆԱԲՈԹԻ ԱՅԳԻՆ

21 Այս դէպքերից յետոյ այսպիսի մի բան պատահեց. յեզրայէլացի Նաբոթը մի այգի ունէր Սամարիայի Աքաաբ արքայի կալի մօտ: 2 Արքան Նաբոթին ասաց. «Ի՛նձ տուր քո այգին, որ ինձ համար բանջարանոց դառնայ, որովհետեւ այն իմ տան մօտ է: Դրա փոխարէն դրանից աւելի լաւ այգի կը տամ քեզ, եւ եթէ կամենաս, այգու արժէքը արծաթով կը վճարեմ, եւ սա ինձ համար կը լինի բանջարանոց»: 3 Նաբոթն ասաց արքային. «Թող իմ Աստուածն այնպէս չանի, որ իմ հայրերի ժառանգութիւնը քեզ տամ»:

4 Աքաաբն իր տունը եկաւ խռոված եւ անտրամադիր այն խօսքերի պատճառով, որ յեզրայէլացի Նաբոթն ասել էր, թէ՝ «Իմ հայրերի ժառանգութիւնը քեզ չեմ տայ»: Նա ննջեց իր մահճում, երեսը ծածկեց եւ հաց չկերաւ: 5 Նրա մօտ եկաւ կինը՝ Յեզաբէլը, խօսեց նրա հետ եւ ասաց. «Ինչո՞ւ է հոգիդ խռովուած, եւ հաց չես ուտում»: 6 Աքաաբն ասաց. «Յեզրայէլացի Նաբոթին ասացի. "Ինձ տուր քո այգին արծաթի դիմաց եւ եթէ չուզենաս, դրա փոխարէն քեզ ուրիշ այգի կը տամ", իսկ նա ասաց, թէ՝ "Իմ հայրերի ժառանգութիւնը քեզ չեմ տայ"»: 7 Նրա կին Յեզաբէլն ասաց. «Դու այդպէ՞ս ես թագաւորութիւն անում Իսրայէլի վրայ: Վե՛ր կաց, հա՛ց կեր ու սթափուի՛ր, եւ ես քեզ կը յանձնեմ յեզրայէլացի Նաբոթի այգին:

ՆԱԲՈԹԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

8 Նա հրովարտակ գրեց Աքաաբի անունով, կնքեց նրա մատանիով եւ հրովարտակն ուղարկեց ծերերին ու նրա քաղաքի ազատներին, որոնք Նաբոթի հետ էին ապրում: 9 Հրովարտակում այսպէս էր գրուած. «Մո՛մ պահեցէք եւ Նաբոթին ժողովրդի մէջ գլխաւոր տեղում նստեցրէ՛ք, 10 իսկ նրա դիմաց թող նստեն երկու անօրէն

մարդիկ, որ վկայեն նրա մասին ու ասեն, թէ՝ "Դու օրհնեցիր† Աստծուն ու արքային", եւ թող դուրս հանեն Նաբոթին եւ քարկոծեն, մինչեւ որ մեռնի»:

11 Այդ քաղաքում բնակուող ծերերն ու ազատները արեցին այնպէս, ինչպէս որ գրուած էր Յեզաբէլի՝ նրանց ուղարկած հրովարտակներում: 12 Մոմապահութիւն նշանակեցին, Նաբոթին նստեցրին ժողովրդի մէջ գլխաւոր տեղում, 13 եկան երկու անօրէններ, նստեցին նրա դիմաց եւ վկայեցին ամբողջ ժողովրդի առաջ, թէ Նաբոթն ապստամբել է, ասացին, թէ՝ «Նաբոթն օրհնել է† Աստծուն եւ արքային»: Դրանից յետոյ նրան քաղաքից դուրս հանեցին եւ քարկոծելով սպանեցին: 14 Լուր ուղարկեցին Յեզաբէլին, թէ՝ «Նաբոթը քարկոծուելով մեռաւ»:

15 Երբ Յեզաբէլը լսեց, որ Նաբոթը քարկոծուել ու մահացել է, ասաց Աքաաբին. «Գնա ժառանգի՛ր յեզրայէլացի Նաբոթի այգին, որը չէր ուզում այն քեզ արծաթով ծախել, քանզի Նաբոթը կենդանի չէ, նա մեռել է»: 16 Երբ Աքաաբը լսեց, թէ յեզրայէլացի Նաբոթը մեռել է, իր զգեստները պատառոտեց ու քուրձ հագաւ: Դրանից յետոյ Աքաաբը եկաւ ու ժառանգեց յեզրայէլացի Նաբոթի այգին:

17 Տէրը խօսելով Թեզբացի Եղիայի հետ՝ ասաց. 18 «Վեր կաց գնա՛ Իսրայէլի Աքաաբ արքայի մօտ, Սամարիա: Նա գնացել է Նաբոթի այգին ժառանգելու: 19 Կը խօսես նրա հետ ու կ'ասես. այսպէս է ասում Տէրը. "Քանի որ սպանեցիր ու ժառանգեցիր նրա ունեցուածքը, ապա դրա համար այսպէս է ասում Տէրը. "Այն տեղում, ուր շներն ու խոզերը լափեցին Նաբոթի արիւնը, նոյն տեղում լափելու են նաեւ քո արիւնը, եւ բոզերը լողանալու են քո արեան մէջ""»: 20 Աքաաբն ասաց Եղիային. «Ո՛վ իմ թշնամի, գտա՞ր ինձ»: Եղիան ասաց. «Գտայ, քանզի իզուր հպարտացար՝ չարիք գործելով Տիրոջ առջեւ ու բարկացնելով նրան: 21 Ահա ես քեզ պիտի պատուհասեմ, քեզ վրայ կրակ պիտի թափեմ, Աքաաբի տոհմից պիտի կոտորեմ բոլոր նրանց, ովքեր պատին են միզում, ինչպէս նաեւ Իսրայէլից պիտի վերացնեմ նեղութեան մէջ եղող եւ լքուած մարդկանց: 22 Քո տունը դարձնելու եմ Նաբատի որդի Յերոբովամի տան նման եւ Աքիայի որդի Բաասի տան նման, որովհետեւ դու բարկացրիր ինձ եւ Իսրայէլին մեղանչել տուեցիր: 23 Տէրը Յեզաբէլի մասին ասաց. "Շները պիտի ուտեն նրան Յեզրայէլի պարսպի մօտ": 24 Աքաաբ թագաւորի մարդկանցից քաղաքում մեռածներին շներն են ուտելու, իսկ դաշտում մեռածների դիակները երկնքի թռչուններն են կոտցելու»:

25 Իզուր ամբարտաւանացաւ Աքաաբը՝ չարիք գործելով Տիրոջ առջեւ: Նրան իր կինը՝ Յեզաբէլը յիմարացրեց: 26 Նա կուռքեր պաշտելով՝ անօրէն դարձաւ, արեց այն ամէնը, որ ամորհացին էր արել, որին Տէրը հալածել էր իսրայէլացիների միջից:

ԱՔԱԱԲԸ ՋՂՋՈՒՄ Է ԻՐ ՎԱՐՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

27 Այս խօսքերը լսելով՝ արքան զղջաց Տիրոջ առջեւ, լալով գնաց, պատառոտեց իր պատմուճանը, քուրձ հագաւ իր մարմնի վրայ եւ ծոմ պահեց. նա քուրձ հագաւ այն օրուանից, երբ սպանել տուեց յեզրայէլացի Նաբոթին: Նա գլխիկոր էր մեռելոյ: 28 Տէրը Աքաաբի մասին ասաց իր ծառայ Եղիային. 29 «Տեսա՞ր, որ զղջաց իմ առջեւ: Եւ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի իր կենդանութեան օրօք, այլ նրա որդիների՛ օրօք կը թափեմ չարիքը նրա տան վրայ»:

ԱՔԱԱԲՆ ՈՒԶՈՒՄ Է ՎԵՐԱԳՐԱՒԵԼ ՌԱՄԱԹԸ
(Բ Մնաց. 18. 2-27)

22 Երեք տարի պատերազմ չեղաւ Ասորիքի ու Իսրայէլի միջեւ:

2 Երրորդ տարում Յուդայի երկրի արքայ Յոսափատը եկաւ Իսրայէլի արքայի մօտ: 3 Իսրայէլի արքան ասաց իր ծառաներին. «Գիտէ՞ք, որ Գաղաադ երկրի Ռամաթ քաղաքը մերն է, իսկ մենք լռել ենք, այն չենք գրաւում ասորիների արքայից»: Իսրայէլի արքան ասաց Յոսափատին. «Մեզ հետ կը յարձակուե՞ս Գաղաադի Ռամաթ քաղաքի վրայ»: 4 Յոսափատն ասաց Իսրայէլի արքային. « Մի ենք ես եւ դու, մի են իմ զօրքն ու քո զօրքը, մի են իմ երիվարներն ու քո երիվարները»:

5 Յուդայի երկրի արքայ Յոսափատն ասաց Իսրայէլի արքային. «Ապա Տիրոջ կամքը հարցրո՛ւ այսօր»: 6 Իսրայէլի արքան հաւաքեց բոլոր մարգարէներին, մօտաւորապէս չորս հարիւր մարդ, եւ հարցրեց նրանց. «Գաղաադի Ռամաթ քաղաքի վրայ պատերազմի գնա՞մ, թէ՞ մնամ տեղում»: Նրանք ասացին. «Գնա՛, Տէրն այն անպայման արքայի ձեռքն է յանձնելու»: 7 Յոսափատն ասաց Իսրայէլի արքային. «Այստեղ արդեօք Տիրոջ մարգարէ կա՞յ, թէ՞ ոչ, որ նրա՛ միջոցով Տիրոջը հարցնենք»: 8 Իսրայէլի արքան ասաց Յոսափատին. «Այստեղ կայ մի մարդ, որի միջոցով կարելի է հարցնել Տիրոջը, սակայն ես ատում եմ նրան, որովհետեւ ինձ համար բարի բան չի գուշակում, այլ՝ չար: Դա Յեմլէի որդի Միքիան է»: Յուդայի երկրի արքայ Յոսափատն ասաց. «Թող այդպիսի բան չասի արքան»:

9 Իսրայէլի արքան մի ներքինի կանչելով՝ ասաց. «Անմիջապէս այստե՛ղ բեր Յեմլէի որդի Միքիային»: 10 Իսրայէլի արքան եւ Յուդայի երկրի արքայ Յոսափատը արքայական զգեստներով նստել էին ամէն մէկն իր աթոռին, Սամարիայի դարպասների մօտ, եւ բոլոր մարգարէները մարգարէութիւն էին անում նրանց առջեւ: 11 Քանանի որդի Սեդեկիան, որը երկաթէ եղջիւրներ էր սարքել տուել, ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Սրանցո՛վ ես հարուածելու ասորիներին, մինչեւ որ բնաջնջուեն"»: 12 Բոլոր մարգարէները նոյնպէս մարգարէանում էին՝ ասելով. «Գնա՛ Գաղաադի Ռամաթ քաղաքը եւ յաջողութիւն կ'ունենաս. Տէրը քո ձեռքը կը յանձնի ասորիների արքային»:

ՄԻՔԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Է ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

13 Սուրհանդակը, որ գնացել էր Միքիային կանչելու, նրան ասաց. «Ահաւասիկ բոլոր մարգարէները միաբերան բարի բան են գուշակում արքայի համար: Արդ, քո խօսքն էլ թող նրանց ասածին համահնչիւն լինի, դո՛ւ էլ բարի բան գուշակիր»: 14 Միքիան ասաց. «Կենդանի է Տէրը. ինչ որ Տէրն ինձ ասի, ա՛յն կը հաղորդեմ»:

15 Նա եկաւ արքայի մօտ, եւ արքան հարցրեց նրան. «Միքիա՛, Գաղաադի Ռամաթ քաղաքի դէմ պատերազմելու գնա՞մ, թէ՞ տեղում մնամ»: Միքիան ասաց. «Գնա՛ եւ յաջողութիւն կը գտնես, եւ Տէրը դա արքայի ձեռքը կը յանձնի»: 16 Արքան ասաց նրան. «Քեզ կրկին եմ երդուեցնում, որ ինձ ճշմարտութիւնն ասես յանուն Տիրոջ»: 17 Միքիան ասաց. «Ո՛չ, այդ չէ ճշմարտութիւնը: Ես տեսել եմ, թէ ինչպէս բոլոր իսրայէլացիները ցրուած են լեռների վրայ իբրեւ ոչխարների հօտ, որ չունի հովիւ: Տէրն ասաց. «Դրանք տէրեր չունեն, թող ամէն մէկն իր տունը դառնայ խաղաղութեամբ»: 18 Իսրայէլի արքան ասաց Յուդայի արքայ Յոսափատին. «Ես քեզ չասացի՞, թէ նա ինձ համար բարի բան չի մարգարէանայ, այլ միայն՝ չար բան»: 19 Միքիան ասաց. «Այդպէս չէ, ոչ թէ իմ, այլ Տիրո՛ջ պատգամը լսիր: Ես, արդարեւ, տեսայ Իսրայէլի Տէր Աստծուն՝ նստած իր աթոռին, եւ երկնքի բոլոր զօրքերը աջից ու ձախից կանգնած էին նրա մօտ: 20 Տէրն ասաց. "Ո՞վ կը խաբի Իսրայէլի արքայ Աքաաբին, որ ելնի յարձակուի Գաղաադի Ռամաթ քաղաքի վրայ եւ սպանուի": Մէկն այսպէս ու միւսն այնպէս էր ասում: 21 Եւ ահա մարգարէի մի ոգի ելաւ ու կանգնելով Տիրոջ առջեւ՝ ասաց. "Ես կը խաբեմ նրան": Տէրը նրան ասաց. "Ի՞նչ միջոցով": 22 Նա պատասխանեց. "Կ'ելնեմ ու սուտ ոգի կը դառնամ նրա բոլոր մարգարէների բերանում": Տէրն ասաց. "Դու իրօք կը խաբես, դու այդ կարող ես, գնա՛ եւ այդպէ՛ս արա": 23 Եւ ահա Տէրը սուտ ոգի դրեց քո այդ բոլոր

†Ըստ եբրայերէն բնագրի՝ հայհոյեցիր:

մարգարէների բերանում, եւ Տէրը
չարիք է որոշել քեզ համար»:
24 Քանանի որդի Սեղեկիան մօտեցաւ ու խփելով Միքիայի ծնօտին՝
ասաց. «Տիրոջ ո՞ր ոգին է, որ ինձնից
դուրս գալով՝ խօսեց քո մէջ»: 25 Միքիան ասաց. «Դու ինքդ կը տեսնես
այն օրը, երբ սենեակից սենեակ կը
վազես թաքնուելու համար»:
26 Իսրայէլի արքան ասաց. «Բռնեցէ՛ք Միքիային եւ յանձնելով Ամոն
քաղաքապետին ու արքայորդի Յովասին՝ 27 ասացէ՛ք. "Այսպէս է հրամայում արքան: "Բանտարկեցէ՛ք սրան,
եւ թող մի կտոր հաց ուտի ու մի կում
ջուր խմի, մինչեւ որ ողջ եւ առողջ վերադառնամ պատերազմից"»: 28 Միքիան ասաց. «Եթէ դու ողջ եւ առողջ
վերադառնաս, ուրեմն Տէրը չէ, որ
խօսել է իմ բերանով»: Ապա աւելացրեց. «Լսեցէ՛ք, զօրքե՛ր, ամէնքդ
լսեցէ՛ք»:

ԱՔԱԱԲԻ ՄԱՀԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
(Բ Մնաց. 18. 28-34)

29 Իսրայէլի արքան Յուդայի երկրի
արքայ Յոսափատի հետ շարժուեց դէպի Գաղաադի Ռամաթ քաղաքը: 30 Իսրայէլի արքան ասաց Յուդայի երկրի
արքայ Յոսափատին. «Ես կը կերպարանափոխուեմ եւ այդպէս կը
մտնեմ պատերազմ, իսկ դու հագի՛ր իմ
զգեստները»: Իսրայէլի արքան փոխեց
իր հագուստները եւ մտաւ պատերազմի մէջ: 31 Ասորիների արքան
պատուէր էր տուել իր մարտակառքերի
պետերին՝ ասելով. «Մի՛ մարտնչէք
մեծի կամ փոքրի դէմ, այլ միայն՝
Իսրայէլի արքայի դէմ»: 32 Երբ մարտակառքերի պետերը տեսան Յուդայի
երկրի արքայ Յոսափատին, ասացին
միմեանց. «Թւում է, թէ սա է Իսրայէլի
թագաւորը»: Նրանք մօտեցան, որ
կռուեն նրա դէմ, բայց Յոսափատը
աղաղակեց: 33 Երբ մարտակառքերի
պետերը տեսան, թէ նա չէ Իսրայէլի
արքան, յետ դարձան: 34 Նրանցից
մէկը ուժգին ձգեց իր աղեղը եւ
ճեղքելով Իսրայէլի արքայի զրահը՝
խոցեց նրա թոքը: Սա ասաց իր
մարտակառքի պետին՝ «Շո՛ւռ արի, ինձ
հանի՛ր ռազմադաշտից, քանզի վիրաւոր եմ»: 35 Այդ օրը, սակայն,
պատերազմը սաստկացաւ, եւ արքան
այգաբացից մինչեւ երեկոյ մնաց իր
մարտակառքում, ասորիների դէմ: Արիւնը հոսում էր վէրքից ու լցւում
մարտակառքի մէջ: Երբ երեկոյ եղաւ,
նա մեռաւ: 36 Արեգակը մայր մտնելիս
մունետիկը յայտնեց զօրքին. «Ամէն
ոք իր քաղաքը, իր երկիրը թող գնայ,
որովհետեւ արքան մեռել է»: 37 Արքային բերեցին Սամարիա եւ Սամարիայում էլ թաղեցին: 38 Սամարիայի
ջրաւազաններում լուացին մարտակառքերը, խոզերն ու շները լիզեցին
նրա արիւնը, իսկ բոզերը լողացան նրա
արեան մէջ, ինչպէս կանխատեսել էր
Տէրը:
39 Աքաաբի մնացած գործերը, նրա
բոլոր արարքները, նրա կառուցած
փղոսկրեայ տունը, կառուցապատած
բոլոր քաղաքները՝ այս ամէնը նկարագրուած են Իսրայէլի թագաւորների
ժամանակագրութեան մէջ: 40 Աքաաբը
գնաց իր նախնիների գիրկը, եւ նրա
փոխարէն թագաւորեց իր որդին՝ Օքոզիան, իսկ Յուդայի երկրի վրայ թագաւորում էր Ասայի որդի Յոսափատը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՍԱՓԱՏ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 20. 31-21. 1)

41 Իսրայէլի թագաւոր Աքաաբի թագաւորութեան չորրորդ տարում թագաւորեց Յոսափատը: 42 Նա երեսունհինգ տարեկան էր, երբ թագաւոր
դարձաւ, ու քսանհինգ տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մայրը
Սալալի դուստր Ասուբան էր: 43 Նա իր
հօր՝ Ասայի ճանապարհով գնաց, չխոտորուեց, արեց այն, ինչ ուղիղ էր
Տիրոջ առջեւ: 44 Նա, սակայն, բարձրադիր մեհեանները չվերացրեց, որովհետեւ ժողովուրդը տակաւին զոհ էր
մատուցում եւ խունկ ծխում մեհեաններում: 45 Յոսափատը խաղաղութեան
դաշինքի մէջ էր Իսրայէլի արքայի
հետ:
46 Յոսափատի մնացած գործերը,
կատարած քաջագործութիւնները ու

պատերազմները չէ՞ որ նկարագրուած
են Յուդայի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 47 Նա երկրից մաքրեց սոդոմական մեղք գործողներին,
որոնք մնացել էին իր հօր օրերից:
48 Այդ ժամանակ Եդոմում թագաւոր
չկար:
49 Յոսափատ արքան Թարսիսի նաւեր պատրաստեց, որ գնան Օֆիր՝ ոսկի
ձեռք բերելու, սակայն նաւերը տեղ
չկարողացան հասնել, որովհետեւ Գասիոնգաբերում նաւաբեկութեան ենթարկուեցին: 50 Այդ ժամանակ Աքաաբի որդի Օքոզիան ասաց Յոսափատին.
«Թող քո ծառաները գնան իմ ծառաների հետ, եւ քո նաւերն՝ իմ նաւերի
հետ»: Յոսափատը, սակայն, չհամաձայնեց: 51 Յոսափատը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց իր հայրերի
մօտ, իր նախահայր Դաւթի քաղաքում: Նրա փոխարէն թագաւորեց նրա
որդին՝ Յորամը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ ՕՔՈԶԻԱՆ

52 Աքաաբի որդի Օքոզիան Սամարիայում Իսրայէլի վրայ թագաւորեց Յուդայի երկրի արքայ Յոսափատի թագաւորութեան տասնեօթներորդ տարում: Նա Իսրայէլում թագաւորեց երկու տարի: 53 Նա չար
գործեր արեց Տիրոջ առջեւ, գնաց իր
հայր Աքաաբի ու իր մայր Յեզաբէլի,
Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի
որդի Յերոբովամի մեղսալից ճանապարհով: 54 Նա ծառայեց Բահաղիմներին,
երկրպագեց նրանց եւ
դրանով իսկ բարկացրեց Իսրայէլի Տէր
Աստծուն՝ ըստ ամենայնի կրկնելով իր
նախորդների կատարածը:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Դ

Ներածութիւն

«Թագաւորութիւններ»-ի չորրորդ գիրքը շարունակութիւնն է նոյն անունը կրող երրորդ գրքի: Այստեղ յիշատակւում են Ցուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւնների վերջին միապետների իշխանութեան ժամանակաշրջանի դէպքերը:

Առաջին մասը մեզ տանում հացնում է մինչեւ Իսրայէլի թագաւորութեան կործանումը, թագաւորութիւն, որը վատ էր կառավարւում Աստծուն անհաւատարիմ թագաւորների կողմից: Նրանց խստասրտութեան պատճառով Աստուած թոյլ է տալիս Ասորեստանի թագաւոր Սալմանասարին, որ գայ եւ գրաւի Իսրայէլի հիւսիսային թագաւորութեան մայրաքաղաք Սամարիան շուրջ 722 թուականին (Ն. Ք.) եւ աքսորի նրա բնակիչների մի մասին: Գրքի այս մասի բազմաթիւ գլուխներում, որպէս տիրական դէմք, հանդէս է գալիս Եղիսէ մարգարէն՝ Եղիա մարգարէի աշակերտն ու յաջորդը (գլ. 2-13):

Երկրորդ մասը վերաբերում է շուրջ 130 տարուայ մի շրջանի պատմութեան, որի ընթացքում Ցուդայի թագաւորութիւնը միայնակ շարունակում է իր գոյութիւնը, մինչեւ որ Բաբելոնի թագաւոր Նաբուքոդոնոսորը գալիս գրաւում է Երուսաղէմը 578 թուականին (Ն. Ք.), կործանում տաճարը եւ Ցուդայի երկրի բնակչութեան ընտրանուն գերեվարում դէպի Բաբելոն:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Դ

ԱՍՏՈՒԱԾ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՕՔՈԶԻԱ ԹԱԳԱՒՈՐԻ ԸՆԹԱՑՔԸ

1 Աքաաբի մահուանից յետոյ մովաբացիներն ըմբոստացան Իսրայէլի դէմ: 2 Օքոզիան ընկաւ Սամարիայում գտնուող իր վերնատան վանդակապատից ու ծանր վնասուածք ստացաւ: Նա պատգամաւորներ ուղարկեց ու ասաց նրանց. «Գնացէ՛ք եւ Ակկարոնի Բահաղ-Ճանճիկ աստծուն հարցրէ՛ք, թէ ես կը փրկուե՞մ այս ցաւից»: Եւ նրանք գնացին հարցնելու նրան: 3 Տիրոջ հրեշտակը, սակայն, կանչեց Թեզբացի Եղիային եւ ասաց. «Ելիր գնա՛ եւ Սամարիայի Օքոզիա արքայի պատգամաւորներին դիմաւորելով՝ նրանց ասա՛. "Իսրայէլի մէջ Աստուած չլինելո՞ւ պատճառով է, որ գնում էք Ակկարոնի Բահաղ-Ճանճիկ աստծուն հարցնելու: 4 Մի՛ արէք այդ բանը: Տէրն այսպէս է ասում. "Այն մահիճը, որի մէջ պառկել ես, դրանից չես իջնելու եւ դրա մէջ էլ մեռնելու ես"»: Եղիան գնաց ու յայտնեց նրանց այդ խօսքերը:

5 Պատգամաւորները վերադարձան նրա մօտ, եւ նա հարցրեց. «Ինչո՞ւ էք յետ դարձել»: 6 Նրան ասացին. «Մի մարդ մեր առաջ ելաւ ու ասաց մեզ. "Վերադարձէ՛ք ձեզ ուղարկող արքայի մօտ եւ ասացէ՛ք նրան. այսպէս է ասում Տէրը. "Իսրայէլի մէջ Աստուած չլինելո՞ւ պատճառով է, որ գնում էք Ակկարոնի Բահաղ-Ճանճիկ աստծուն հարցնելու: Մի՛ արէք այդ բանը: Այն մահիճը, որի մէջ պառկել ես, դրանից ցած չես իջնելու, մեռնելու ես""»: 7 Օքոզիան հարցրեց. «Ի՞նչ նշաններ ունէր այն մարդը, որ ձեր առաջ ելաւ եւ այդ բաներն ասաց ձեզ»: 8 Նրանք ասացին. «Մազոտ մարդ էր եւ մէջքին կաշուէ գօտի էր կապել»: Նա ասաց. «Դա Թեզբացի Եղիան է»:

9 Նա մի յիսնապետ հրամանատար ուղարկեց Եղիա մարգարէի մօտ իր յիսուն զինուորներով: Յիսնապետը եկաւ նրա մօտ: Եղիան նստած էր լերան գագաթին: Յիսնապետն ասաց նրան. «Ո՛վ Աստծու մարդ, արքան քեզ կանչում է, իջի՛ր այդտեղից»: 10 Եղիան պատասխան տալով՝ ասաց յիսնապետին. «Եթէ ես Աստծու մարդ եմ, թող երկնքից կրակ իջնի եւ լափի քեզ ու քո յիսուն զինուորներին»: Կրակ իջաւ երկնքից եւ լափեց նրան ու նրա յիսուն զինուորներին:

11 Արքան նորից մի այլ յիսնապետ ուղարկեց նրա մօտ իր յիսուն զինուորներով: Յիսնապետն եկաւ ու ասաց նրան. «Ո՛վ Աստծու մարդ, արքան այսպէս է ասում. "Անմիջապէս ցա՛ծ իջիր այդտեղից"»: 12 Եղիան պատասխան տալով՝ ասաց նրան. «Եթէ ես Աստծու մարդ եմ, թող երկնքից կրակ իջնի եւ լափի քեզ ու քո յիսուն զինուորներին»: Աստծու կրակն իջաւ երկնքից ու լափեց նրան ու նրա յիսուն զինուորներին:

13 Արքան երրորդ անգամ յիսնապետ ուղարկեց յիսուն հոգով: Երրորդ յիսնապետն եկաւ, Եղիայի առջեւ ծնկի իջաւ եւ աղաչելով՝ ասաց նրան. «Ո՛վ Աստծու մարդ, բարի՛ աչքով նայիր ինձ ու քո այս յիսուն ծառաներին, 14 քանզի տեսանք, որ կրակ ընկաւ երկնքից ու լափեց նախորդ երկու յիսնապետներին ու նրանց յիսունական զինուորներին: Արդ, բարի՛ աչքով նայիր քո ծառաներին»:

15 Տիրոջ հրեշտակը խօսելով Եղիայի հետ՝ ասաց. «Գնա՛ նրա հետ, նրանցից երկիւղ մի՛ ունեցիր»: Վեր կացաւ Եղիան, նրա հետ գնաց արքայի մօտ 16 եւ ասաց նրան. «Քանի որ պատգամաւորներ ես ուղարկել Ակկարոնի Բահաղ-Ճանճիկ Աստծու մօտ բան հարցնելու, կարծես թէ Իսրայէլի մէջ չկար Աստուած, որ նրանից հարցնէիր (մի բան, որ չպէտք է անէիր), ուստի այն մահիճը, որի մէջ պառկել ես, դրանից չես իջնելու, այլ մեռնելու ես»: 17 Եւ նա մեռաւ, ինչպէս որ Տէրն էր ասել Եղիային:

Աքաաբի որդի Յորամը Ցուդայի երկրի արքայ Յոսափատի թագաւորութեան տասնութերորդ տարում թագաւորեց Իսրայէլի վրայ Սամարիայում տասներկու տարի: Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, բայց ոչ իր եղբայրների եւ իր մօր նման: Նա հանեց ու ոչնչացրեց իր հօր պատրաստած Բա-

հաղի արձանները, բայց գործեց Յերոբովամի այն մեղքերը, որոնցով նա մեղանչել էր տուել Իսրայէլին, դրանցից չհրաժարուեց, ուստի Տէրը խիստ զայրացաւ Աքաաբի տան վրայ: Յոսափատի որդի Յուդայի երկրի արքայ Յորամի Թագաւորութեան երկրորդ տարում Օքոզիայի փոխարէն իշխել էր իր եղբայր Յորամը, որովհետեւ Օքոզիան որդի չունէր:

18 *Օքոզիայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ արել է նա, չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի Թագաւորների ժամանակագրութեան մէջ:*

ԵՂԻԱՆ ԵՐԿԻՆՔ Է ՀԱՄԲԱՐՁԻՈՒՄ. ՆՐԱՆ ՅԱՋՈՐԴՈՒՄ Է ԵՂԻՍԷԷՆ

2 *Երբ Տէրը Եղիային պտտահողմով երկինք էր բարձրացնելու, Եղիան ու Եղիսէէն գնացին Գաղգաղա*[†]*: 2 Եղիան ասաց Եղիսէէին. «Դու այստե՛ղ նստիր, քանզի Տէրն ինձ Բեթէլ է ուղարկում»: Եղիսէէն ասաց. «Կենդանի է Տէրը, եւ կենդանի ես դու. ես քեզ չեմ լքի»: Նրանք եկան Բեթէլ: 3 Բեթէլում գտնուող մարգարէների որդիները եկան Եղիսէէի մօտ եւ ասացին նրան. «Գիտե՞ս, որ Տէրը այսօր առնել տանելու է քո մօտից քո տիրոջը»: Նա ասաց. «Գիտեմ, լո՛ւռ մնացէք»: 4 Եղիան ասաց Եղիսէէին. «Դու այստե՛ղ նստիր, քանզի Տէրն ինձ Երիքով է ուղարկում»: Եղիսէէն ասաց. «Կենդանի է Տէրը, եւ կենդանի ես դու. ես քեզ չեմ լքի»: 5 Նրանք եկան Երիքով: Երիքովում գտնուող մարգարէների որդիները մօտեցան Եղիսէէին եւ ասացին նրան. «Գիտե՞ս, որ այսօր Տէրը քո տիրոջը առնել տանելու է քո մօտից»: 6 Նա ասաց. «Գիտեմ, լո՛ւռ մնացէք»: Եղիան ասաց նրան. «Դու այստե՛ղ նստիր, քանզի Տէրը ինձ Յորդանան գետի ափն է ուղարկում»: Եղիսէէն ասաց. «Կենդանի է Տէրը, եւ կենդանի ես դու. ես քեզ չեմ լքի»: 7 Եւ նրանք երկուսով գնացին: Մարգարէների որդիներից յիսուն հոգի գնաց ու կանգնեց հեռուում, Եղիայի ու Եղիսէէի դիմաց, իսկ սրանք երկուսով կանգնել էին Յորդանան գետի եզերքին: 8 Եղիան առաւ իր մորթէ վերարկուն, ծալեց ու խփեց ջրերին: Ջրերն իրարից հեռացան այս ու այն կողմ, եւ նրանք երկուսով անցան ցամաքով:*

9 *Երբ նրանք անցան, Եղիան ասաց Եղիսէէին. «Խնդրի՛ր, ի՞նչ անեմ քեզ, քանի դեռ Տէրն ինձ քո մօտից չի վերացրել»: Եղիսէէն ասաց. «Թող քո ոգին կրկնապատիկ չափով ինձ վրայ լինի»: 10 Եղիան ասաց. «Դժուար բան խնդրեցիր, բայց եթէ քեզնից իմ երկինք բարձրանալու ժամանակ ինձ տեսնես, այդպէս թող լինի, ապա թէ ոչ՝ թող չլինի»:*

11 *Մինչ նրանք քայլում էին, մի հրեղէն կառք ու հրեղէն երիվարներ երեւացին, նրանց միմեանցից բաժանեցին, եւ Եղիան պտտահողմի մէջ դէպի երկինք վերացաւ: 12 Եղիսէէն նայեց ու աղաղակեց. «Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայէլի կառքը եւ նրա հեծեալը»: Եւ այլեւս չտեսաւ նրան: Եղիսէէն իր հագուստները բռնեց ու պատռելով երկու կէս արեց: 13 Նա ձեռքն առաւ Եղիայի մորթէ վերարկուն, որ գցել էր իր վրայ: Եղիսէէն վերադարձաւ, գնաց կանգնեց Յորդանան գետի եզերքին, 14 վերցրեց Եղիայի մորթէ վերարկուն, որ գցել էր իր վրայ, խփեց ջրերին՝ ասելով. «Եղիայի Տէ՛ր Աստուած, ո՞ւր ես հիմա»: Նա խփեց ջրերին, ջրերն իրարից հեռացան այս ու այն կողմ, եւ Եղիսէէն անցաւ:*

15 *Երբ Երիքովի մարգարէների որդիները դիմացից տեսան նրան, ասացին. «Եղիայի հոգին իջել է Եղիսէէի վրայ»: Նրանք եկան դիմաւորեցին, երկրպագեցին նրան 16 ու ասացին նրան. «Ահա մեզ՝ քո ծառաների հետ, յիսուն զօրեղ մարդիկ կան, թող գնան ու փնտռեն քո տիրոջը, գուցէ Տիրոջ հոգին նրան վերցնելով նետել է Յորդանան գետի եզերքը կամ մի լերան եւ կամ մի բլրի վրայ: Եղիսէէն ասաց. «Մի՛ ուղարկէք»: 17 Սակայն նրանք այնքան պնդեցին, որ նա ամաչեց ու ասաց. «Ուղարկեցէ՛ք»: Յիսուն հոգու ուղարկեցին, որոնք երեք օր փնտռեցին ու չգտան նրան: 18 Վերադարձան նրա մօտ, իսկ նա Երիքովում էր: Նա ասաց նրանց. «Չէ՞ որ ասացի՝ "Մի՛ գնացէք"»:*

ԵՂԻՍԷԷԻ ՋԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԳՈՐԾԵՐԸ

19 *Քաղաքի մարդիկ ասացին Եղիսէէին. «Մեր քաղաքում բնակուելը լաւ է, ինչպէս որ տեսնում ես, տէ՛ր իմ. բայց ջրերը վատ են, իսկ հողը՝ անբերրի»: 20 Եղիսէէն ասաց. «Ինձ մի նոր կո՛ւժ բերէք ու այդտե՛ղ դրէք*[†]*»: 21 Բերեցին նրա ուզածը, Եղիսէէն գնաց ջրերի ակունքը եւ այնտեղ աղ գցելով՝ ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Ես մաքրեցի այս ջրերը, որ դրանցից մահ եւ անբերրիութիւն չառաջանան:"» 22 Եւ այդ ջրերը մաքուր դարձան, ու այդպէս է մինչեւ այսօր, ինչպէս որ ասել էր Եղիսէէն:*

23 *Նա այնտեղից բարձրացաւ Բեթէլ եւ մինչ իր ճանապարհն էր գնում, քաղաքից դուրս եկան փոքրիկ երեխաներ ու ծաղրելով նրան՝ ասում էին. «Բարձրացի՛ր, ճաղա՛տ, բարձրացի՛ր, ճաղա՛տ»: 24 Երբ նա յետ դարձաւ ու տեսաւ նրանց, Տիրոջ անունով անիծեց նրանց՝ նրանց անուանելով յանցանքի եւ ունայնութեան որդիներ: Եւ ահա անտառից երկու արջեր ելան ու այդ մանուկներից քառասուներկու հոգու պատառոտեցին: 25 Եղիսէէն այնտեղից գնաց Կարմելոս լեռը եւ ապա վերադարձաւ Սամարիա:*

ՅՈՐԱՄԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ

3 *Աքաաբի որդի Յորամը Յուդայի երկրի Յոսափատ արքայի Թագաւորութեան տասնեօթներորդ տարում դարձաւ Իսրայէլի Թագաւոր եւ տասներկու տարի Թագաւորեց Սամարիայում: 2 Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, բայց ո՛չ իր հօր, ո՛չ էլ իր մօր նման. նա կործանեց այն արձանները, որ իր հայրն էր կանգնեցրել: 3 Նա, սակայն, միացաւ Նաբատի որդի Յերոբովամի գործած մեղքերին, որն Իսրայէլին մեղանչել էր տուել, եւ դրանցից չհրաժարուեց:*

ՊԱՏԵՐԱԶՄ ՄՈՎԱԲԱՑԻՆԵՐԻ ԵՐԿՐԻ ԴԷՄ

4 *Մովաբի Մոսա արքան ոչխարի հօտերի տէր էր եւ Իսրայէլի արքային հարկ էր տալիս հարիւր հազար մաքի ու հարիւր հազար նրբագեղմ խոյ:*

5 *Աքաաբի մեռնելուց յետոյ Մովաբի երկրի արքան ըմբոստացաւ Իսրայէլի արքայի դէմ: 6 Այդ ժամանակ Յորամ արքան ելաւ Սամարիայից եւ գնաց Իսրայէլի բանակն աչքի անցկացնելու: 7 Նա Յուդայի երկրի Յոսափատ արքայի մօտ մարդ ուղարկեց՝ ասելով. «Մովաբացիների արքան ըմբոստացել է իմ դէմ, կը գա՞ս ինձ հետ մովաբացիների դէմ պատերազմելու»: Նա ասաց. «Կ'ելնեմ, քանզի մի ենք ես ու դու, մի են իմ ու քո զօրքը, եւ մի են իմ ու քո երիվարները»: 8 Նա հարցրեց. «Ո՞ր ճանապարհով գնանք»: Սա պատասխանեց. «Եդոմի անապատի ճանապարհով»: 9 Իսրայէլի արքան, Յուդայի երկրի արքան եւ Եդոմի արքան գնացին, եօթը օրուայ ճանապարհ կտրեցին, սակայն ջուր չկար ո՛չ բանակի, ո՛չ էլ իրենց հետ եղող անասունների համար:*

10 *Իսրայէլի արքան ասաց. «Աւա՜ղ, Տէրը պաշարել է իրար մօտ հաւաքուած երեք Թագաւորներիս, որ սրանց մովաբացիների ձեռքը յանձնի»: 11 Յոսափատն ասաց. «Մի՞թէ այստեղ Տիրոջ մի մարգարէ չկայ, որ նրա միջոցով Տիրոջը հարցնենք»: Իսրայէլի արքայի ծառաներից մէկն ասաց. «Այստեղ է Սափատի որդի Եղիսէէն, որը Եղիայի ձեռքին ջուր էր ածում»: 12 Յոսափատն ասաց. «Տիրոջ խօսքը նրա հետ է»: Իսրայէլի արքան, Յուդայի երկրի Յոսափատ արքան եւ Եդոմի արքան եկան նրա մօտ: 13 Եղիսէէն ասաց Իսրայէլի արքային. «Ի՞նչ գործ ունես ինձ հետ, գնա՛ քո հօր ու քո մօր մարգարէների մօտ»: Իսրայէլի արքան նրան ասաց. «Մի՞թէ Տէրը երեք Թագաւորներիս կանչեց, որ մեզ յանձնի մովաբացիների ձեռքը»: 14 Եղիսէէն ասաց. «Կենդանի է զօրութիւնների Տէրը, որի առջեւ կանգնած եմ. եթէ Յուդայի երկրի Յոսափատ արքայի նկատմամբ ակնածանք չու-*

[†]Այլ բնագրերում՝ Գաղգաղայից:

[†]Եբրայերէնում՝ դրա մէջ աղ դրէ՛ք:

նենայի, քո երեսն իսկ չպիտի նայէի:
15 Բայց արդ, բերէ՛ք ինձ մի քնարահարի»: Երբ քնարահարն սկսեց նուագել, Տիրոջ ձեռքը իջաւ Եղիսէէի վրայ:
16 Նա ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Այս հեղեղատը փոսերի՛ վերածեցէք":
17 Այսպէս է ասում Տէրը. "Ո՛չ հողմ էք տեսնելու, ո՛չ էլ անձրեւ, սակայն այս հեղեղատը ջրով պիտի լցուի, եւ դուք, ձեր անասուններն ու ձեր գրաստները պիտի խմէք այդտեղից":
18 Այս բոլորը դեռ չնչին բան է Տիրոջ համար:
19 Նա մովաբացիներին ձեր ձեռքն է մատնելու, դուք աւերելու էք բոլոր պարսպապատ քաղաքները, բոլոր գեղեցիկ քաղաքները, ջարդելու էք պտղատու ծառերը, խցանելու էք ջրի աղբիւրները եւ քարեր լցնելով՝ անպէտք էք դարձնելու բարեբեր դաշտերը»:

20 Առաւօտեան զոհաբերութեան ժամին Եդոմի կողմից ջրեր հոսեցին, եւ շրջակայ տարածքը լցուեց ջրով:
21 Երբ ամբողջ Մովաբի երկիրը լսեց, որ Թագաւորները եկել են իրենց դէմ պատերազմելու, զէնք կրելու ի վիճակի եղող եւ նրանցից աւելի տարիքաւոր մարդիկ առաւօտ կանուխ զարթնեցին ու կանգնեցին սահմանագլխին:
22 Երբ արեւը բարձրացաւ ջրերի վրայ, ջրերի դիմաց կանգնած մովաբացիներին թուաց, թէ այդ ջրերն արեան պէս կարմիր են:
23 Նրանք ասացին. «Դա սրի թափած արիւն է, Թագաւորներն իրար հետ կռուել են, ամէն մէկն իր ընկերոջն է սպանել: Հիմա, ո՛վ մովաբացիներ, գնանք աւարի»:
24 Նրանք մտան Իսրայէլի բանակատեղին, իսկ Իսրայէլացիները ելան ու հալածեցին մովաբացիներին: Սրանք փախան Իսրայէլացիների առջեւից, բայց Իսրայէլացիները եկան ու խիստ հարուածներ հասցրին մովաբացիներին,
25 կործանեցին քաղաքները, ամէն մէկը մի քար նետեց եւ լցրեց բարեբեր դաշտերը, նրանք խցանեցին ջրի բոլոր աղբիւրները, ջարդեցին բոլոր պտղատու ծառերը: Այնտեղ մնացին միայն քանդած պատերի քարերը, որովհետեւ պարսաւորները պաշարել էին այն ու քանդել:
26 Երբ Մովաբի երկրի արքան տեսաւ, որ պատերազմը տանուլ է տալիս, իր հետ վերցրեց եօթը հարիւր սուսերակիրներ, որպէսզի ճեղքելով հասնի Եդոմի արքային, սակայն չկարողացաւ:
27 Նա իր անդրանիկ որդուն, որն իր փոխարէն պէտք է Թագաւորէր, տարաւ ողջակիզեց պարսպի վրայ: Դա մեծ կսկիծ պատճառեց իսրայէլացիներին, եւ նրանք նրանցից երես դարձնելով՝ գնացին իրենց երկիրը:

ԵՂԻՍԷԷՆ ՕԳՆՈՒՄ Է ԽԵՂՃ ՈՐԲԵՒԱՅՐՈՒՆ

4 Մարգարէների որդիների կանանցից մէկը աղաղակում էր Եղիսէէին եւ ասում. «Իմ ամուսինը՝ քո ծառան, մեռաւ: Դու գիտես, որ նա Տիրոջ երկիւղած ծառան էր, եւ ահա պարտատէրը եկել է, որ իմ երկու որդիներին որպէս ստրուկ տանի իր մօտ»:
2 Եղիսէէն նրան ասաց. «Ի՞նչ անեմ քեզ: Ասա՛ ինձ, թէ ինչ կայ քո տանը»: Նա ասաց. «Քո աղախնի տանը ոչինչ չկայ, բացի այն իւղից, որով օծւում եմ»:
3 Եղիսէէն ասաց. «Գնա՛ եւ քո բոլոր դրացիներից դատարկ ամաններ խնդրի՛ր ոչ քիչ քանակով:
4 Ապա մտի՛ր տունդ, դռները փակի՛ր քո եւ քո որդիների վրայ, իսկ քո ունեցած իւղը լցրո՛ւ բոլոր ամանների մէջ ու լցուածը մի կո՛ղմ դիր»:
5 Նա հեռացաւ նրա մօտից, դուռը փակեց իր եւ իր որդիների վրայ: Սրանք ամաններն էին մատուցում, իսկ նա լցնում էր, մինչեւ որ բոլոր ամանները լցուեցին:
6 Նա ասաց իր որդիներին. «Մի աման եւս բերէ՛ք»: Նրանք ասացին. «Այլեւս աման չկայ»: Եւ իւղը դադարեց հոսելուց:
Նա գնաց ու դա պատմեց Աստծու մարդուն:
7 Եղիսէէն ասաց. «Գնա իւղը վաճառի՛ր, վճարի՛ր քո պարտքը, եւ դու ու քո որդիները մնացած իւղով կ'ապրէք»:

ԵՂԻՍԷԷՆ ԵՒ ՍՈՄՆԱՑԻ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ

8 Պատահեց, որ, երբ մի օր Եղիսէէն անցնում էր Սոմնայից, մի հարուստ կին նրան կանչեց հաց ուտելու: Եղիսէէն շատ յաճախ այնտեղից անցնելիս մտնում էր այդ տունը՝ ուտելու եւ խմելու:
9 Կինն ասաց իր ամուսնուն. «Գիտեմ, որ Աստծու մարդը սուրբ է, եւ նրա ճանապարհը մեր կողմով է անցնում:
10 Ե՛կ մի փոքրիկ վերնատուն շինենք նրա համար, այնտեղ դնենք մահիճ, սեղան, աթոռ ու աշտանակ, եւ երբ որ մեզ մօտ գայ, թող այնտեղ ապրի»:
11 Եւ ահա մի օր, երբ նա եկել էր ու մտել վերնատուն ու այդտեղ քնել,
12 ասաց իր սպասաւոր Գէեզիին. «Ինձ մօ՛տ կանչիր այդ սոմնացի կնոջը»: Նա կանչեց կնոջը, եւ սա եկաւ կանգնեց նրա առջեւ:
13 Եղիսէէն ասաց սպասաւորին. «Ասա՛ նրան. "Ահա այս ամէնը դու պատրաստել ես մեզ համար: Ի՞նչ պէտք է անել քեզ համար. գուցէ արքայի կամ զօրքի հրամանատարի մօտ պէտք է բարեխօսե՞լ քո մասին"»: Կինն ասաց. «Ես իմ ժողովրդի մէջ եմ բնակւում»:
14 Եղիսէէն ասաց. «Նրան ի՞նչ կարող ենք անել»: Իր սպասաւոր Գէեզին ասաց. «Շատ բարի, չէ՞ որ նա որդի չունի, եւ նրա ամուսինը ծեր չէ[†]»:
15 Եղիսէէն ասաց. «Կանչի՛ր նրան»: Գէեզին կանչեց նրան, եւ սա կանգնեց դռան առաջ:
16 Եղիսէէն ասաց նրան. «Միւս տարի այս ժամանակ, այս օրերին գրկումդ մի մանուկ կ'ունենաս»: Կինն ասաց. «Ո՛չ, տէ՛ր, Աստծո՛ւ մարդ, մի՛ խաբիր քո աղախնին»:
17 Կինը յղիացաւ ու հետեւեալ տարին, այդ նոյն ժամանակ որդի ծնեց, որը ողջ-առողջ էր, ինչպէս նրան ասել էր Եղիսէէն:
18 Մանուկը մեծացաւ:

Մի օր տղան գնաց իր հօր, հնձողների մօտ ու ասաց իր հօրը. «Գլո՛ւխս, գլո՛ւխս»:
19 Հայրն ասաց իր ծառային. «Տա՛ր սրան իր մօր մօտ»:
20 Նա տարաւ նրան նրա մօր մօտ, իսկ երեխան մօր ծնկներին քնեց մինչեւ կէսօր ու մեռաւ:
21 Կինը վերցրեց նրան ու պառկեցնելով Աստծու մարդու անկողնում՝ դուռը փակեց նրա վրայ:
22 Նա գնաց կանչեց իր ամուսնուն եւ ասաց. «Ինձ մօ՛տ ուղարկիր քո ծառաներից մէկին ու մի էշ, որպէսզի շտապ հասնեմ Աստծու մարդու մօտ եւ վերադառնամ»:
23 Ամուսինն ասաց. «Ինչո՞ւ ես դու այսօր գնում նրա մօտ. ո՛չ նորալուսին է, ո՛չ էլ շաբաթ»: Նա ասաց. «Հանգստացի՛ր»:
24 Կինը համետեց էշը եւ ասաց իր ծառային. «Քշի՛ր ու գնա՛, մինչեւ որ ասեմ՝ "Կանգնի՛ր": Բայց եթէ քեզ ասեմ՝ "Այստե՛ղ արի", կը գաս:
25 Կը քշես ու կը գնաս Աստծու մարդու մօտ, Կարմելոս լեռը»: Երբ Եղիսէէն տեսաւ, որ կինը գալիս է իր մօտ, ասաց իր սպասաւոր Գէեզիին.
26 «Ահա նա այն սոմնացի կինն է: Ընդառաջ գնա եւ հարցրո՛ւ. "Ողջ-առո՞ղջ ես, ողջ-առո՞ղջ է ամուսինդ, ողջ-առո՞ղջ է երեխադ"»: Նա ասաց. «Ողջ-առողջ ենք»:
27 Ապա եկաւ Եղիսէէի մօտ, լեռը, եւ գրկեց նրա ոտքերը: Գէեզին մօտեցաւ, որ նրան յետ քաշի, բայց Եղիսէէն ասաց. «Թո՛յլ տուր նրան, որովհետեւ նրա սիրտը վշտահար է, եւ Տէրն ինձանից դա թաքցրել է, չի յայտնել ինձ»:
28 Կինն ասաց. «Մի՞թէ ես իմ տիրոջից որդի խնդրեցի, չասացի՞, թէ՝ "Մի՛ խաբիր ինձ"»:
29 Եղիսէէն ասաց Գէեզիին. «Գօտի՛ կապիր մէջքիդ, իմ ցուպը ձեռքդ վերցրո՛ւ եւ գնա՛: Եթէ որեւէ մէկին հանդիպես, բարեւ մի՛ տուր, եթէ որեւէ մէկը քեզ բարեւ տայ, մի՛ պատասխանիր, իմ ցուպը դի՛ր երեխայի երեսին»:
30 Երեխայի մայրն ասաց. «Կենդանի է Տէրը, եւ կենդանի ես դու. ես քեզ չեմ լքի»: Եղիսէէն ելաւ ու գնաց կնոջ յետեւից:
31 Գէեզին նրանցից առաջ անցաւ եւ ցուպը դրեց երեխայի երեսին, սակայն երեխան ո՛չ խօսում էր, ո՛չ լսում: Նա վերադարձաւ Եղիսէէի մօտ ու ասաց. «Երեխան վեր չի կենում»:
32 Եղիսէէն մտաւ տուն եւ տեսաւ, որ մեռած երեխան պառկած է իր մահճում:
33 Եղիսէէն տուն մտնելով՝ դուռը փակեց իրենց երկուսի վրայ, աղօթեց Տիրոջը,
34 եկաւ ընկաւ երեխայի վրայ, իր բերանը դրեց նրա բերանին, իր աչքերը՝ նրա աչքերին, իր ձեռքերը՝ նրա ձեռքերին, ապա կծկուեց նրա վրայ ու ջերմացրեց երեխայի մարմինը:
35 Նա շրջեց տան մէջ այս ու այն կողմ, բարձրացաւ երեխայի վրայ, եօթն անգամ ծածկեց երեխային իր մարմնով, եւ երեխան բացեց իր աչքերը:
36 Եղիսէէն աղաղակեց ու ասաց Գէեզիին. «Այստե՛ղ կանչիր սոմնացի կնոջը»: Նա կանչեց նրան, եւ կինը ներս մտաւ:
37 Եղիսէէն ասաց.

[†]Երրայերէն՝ ծեր է:

«Ա՛ռ քո որդուն»: Կինը մտաւ, ընկաւ նրա ոտքերին եւ մինչեւ գետին խոնարհուեց նրա առաջ: Նա առաւ իր որդուն ու գնաց, 38 իսկ Եղիսէէն վերադարձաւ Գաղգաղա:

ԹՈՒՆԱՒՈՐՈՒԱԾ ԿԱԹՍԱՆ

Երկրում սով էր. մարգարէները նստած էին Եղիսէէի առջեւ: Եղիսէէն իր սպասաւորին ասաց. «Մեծ կաթսան կրակի՛ն դիր եւ ապո՛ւր եփիր մարգարէների համար»: 39 Նա գնաց դաշտ՝ բանջար քաղելու, գտաւ մի վայրի բոյս եւ դրանից մի ամբողջ բեռ վայրի դդում 40 քաղեց ու բերեց լցրեց ապուրի կաթսայի մէջ, բայց նա չէր իմանում†, թէ դա ինչ բոյս է: Երբ ճաշը պատրաստ էր, դրեց նրանց առաջ, որ ուտեն: Երբ սկսեցին ապուրն ուտել, նրանք աղմուկ բարձրացնելով՝ ասացին. «Մահ կայ կաթսայի մէջ, ո՛վ Աստծու մարդ»: Նրանք չկարողացան ուտել: 41 Եղիսէէն ասաց. «Ալի՛ւր առէք ու լցրէ՛ք այդ կաթսայի մէջ»: Նա ասաց իր սպասաւոր Գէեզիին. «Դի՛ր ժողովրդի առջեւ, որ ուտեն»: Եւ կաթսայի այդ ճաշը ոչ ոքի վնաս չտուեց:

ԵՂԻՍԷԷՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ Է ՀԱՐԻՒՐ ՄԱՐԴՈՒ

42 Բեթսարիսայից մի մարդ եկաւ եւ Աստծու մարդու համար մատաղաշ արմտիքից պատրաստուած նկանակներ, գարեհաց ու չոր թուզ բերեց տոպրակով: 43 Եղիսէէն ասաց. «Տուէ՛ք ժողովրդին, թող ուտեն»: Նրա սպասաւորն ասաց. «Ի՞նչ ես տալիս, որ հարիւր մարդու առջեւ դնեմ»: Նա ասաց. «Տո՛ւր ժողովրդին, որ ուտեն, քանզի այսպէս է ասում Տէրը. "Պիտի ուտեն, եւ պիտի աւելանայ"»: 44 Մառան դրեց նրանց առջեւ, նրանք կերան, եւ, Տիրոջ ասածի նման, մի բան էլ դեռ աւելացաւ:

ԲՈՐՈՏ ՆԷԵՄԱՆԻ ԲՈՒԺՈՒՄԸ

5 Ասորիների զօրքի հրամանատար գեղեցկադէմ Նէեմանը յարգելի մարդ էր իր տիրոջ առջեւ, քանզի նրա միջոցով էր Տէրը փրկութիւն տուել ասորիներին: Այս մարդը հզօր էր, սակայն՝ բորոտ: 2 Ասորի զինուած կողոպտիչները յարձակուել էին եւ Իսրայէլից գերի վերցրել մի փոքրիկ աղջկայ, որը մնում էր Նէեմանի կնոջ մօտ: 3 Աղջիկն ասաց իր տիկնոջը. «Երանի թէ իմ տէրը գնար Աստծու մարգարէի մօտ, որը Սամարիայում է, նա նրան կը բուժէր բորոտութիւնից»: 4 Կինը գնաց եւ ասաց իր տիրոջը. «Այսպէս է խօսում իսրայէլացի աղջիկը»: 5 Ասորիների արքան ասաց Նէեմանին. «Գնա՛, ես էլ նամակ կ'ուղարկեմ Իսրայէլի արքային»: Սա գնաց՝ իր ձեռքին ունենալով տասը տաղանդ† արծաթ, վեց հազար դահեկան եւ տասը ձեռք պատմուճան: 6 Նա տարաւ Իսրայէլի արքային ուղղուած նամակը, ուր գրուած էր. «Երբ որ քեզ հասնի այս նամակը, գիտցի՛ր, որ քեզ մօտ եմ ուղարկում իմ ծառայ Նէեմանին, որպէսզի բուժես նրան իր բորոտութիւնից»: 7 Երբ Իսրայէլի արքան ընթերցեց նամակը, իր հագուստները պատառոտելով՝ ասաց. «Մի թէ ես Աստուա՞ծ եմ, որ սպանեմ կամ կենդանացնեմ. ինձ մօտ մարդ է ուղարկել բորոտութիւնից բուժելու համար: Իմացէ՛ք եւ տեսէ՛ք, որ սա պատրուակ է»:

8 Երբ Աստծու մարդ Եղիսէէն լսեց, թէ Իսրայէլի արքան իր հագուստներն է պատառոտել, լուր ուղարկեց նրան՝ ասելով. «Ինչո՞ւ ես պատառոտել քո հագուստները, թող Նէեմանն ինձ մօտ գայ եւ իմանայ, որ Իսրայէլում մարգարէ կայ»:

9 Նէեմանն եկաւ երիվարներով ու մարտակառքերով եւ կանգնեց Եղիսէէի տան դռանը: 10 Եղիսէէն մարդ ուղարկելով նրա մօտ՝ ասաց. «Գնա՛ եօթն անգամ լուացուի՛ր Յորդանան գետում, քո մարմինը կը բուժուի, եւ դու կը մաքրուես»: 11 Նէեմանը բարկացաւ եւ գնաց՝ ասելով. «Ես էլ կարծում էի, թէ դուցէ կը գայ, կը կանգնի ինձ մօտ, իր Տէր Աստծու անունը կը տայ, իր ձեռքը կը դնի հիւանդ տեղի վրայ եւ կը բուժի իմ բորոտութիւնը: 12 Մի՞թէ Դամասկոսի Նաբանա եւ Փարփարա գետերը

†Եբրայերէն՝ նրանմ չէին իմանում:

†Շուրջ 300 կիլոգրամ:

Իսրայէլի բոլոր ջրերից աւելի լաւ չեն, ինչո՞ւ չերթամ, չլուացուեմ դրանց մէջ եւ մաքրուեմ»: Եւ վերադառնալով՝ գնաց զայրացած: 13 Նրան մօտեցան ծառաներն ու ասացին. «Հա՛յր, եթէ մարգարէն դժուար բան խնդրէր, չպէ՞տք է կատարէիր: Նա միայն ասաց՝ "Լուացուի՛ր ու կը մաքրուես"»: 14 Նէեմանն իջաւ ու եօթն անգամ թաթախուեց Յորդանան գետի մէջ, ինչպէս Եղիսէէն էր ասել, եւ նրա մարմինը դարձաւ մատղաշ երեխայի մարմնի նման. նա մաքրուեց:

15 Դրանից յետոյ նա իր ամբողջ բանակով վերադարձաւ Եղիսէէի մօտ ու կանգնելով նրա առջեւ՝ ասաց. «Հիմա համոզուեցի, որ չկայ Աստուած ամբողջ աշխարհում, այլ միայն՝ Իսրայէլում: Արդ, ընծա՛յ ընդունիր քո ծառայից»: 16 Եղիսէէն ասաց. «Կենդանի է Տէրը. ես կանգնած եմ նրա առջեւ. ոչինչ չեմ ընդունի»: Նա ստիպեց առնել, սակայն Եղիսէէն չհամաձայնուեց: 17 Նէեմանն ասաց. «Քանի որ մերժում ես, թող քո ծառային երկու ջորու բեռ հող տան այս երկրից, որպէսզի քո ծառան այլեւս օտար աստուածներին ողջակէզ եւ զոհ չմատուցի այս բանի համար, 18 այլ միայն՝ Տիրոջը: Թող Տէրը ների քո ծառային հետեւեալի համար. երբ իմ տէր արքան մտնի Ռեմանի տունը նրան երկրպագելու, ես էլ նրա հետ երկրպագեմ Ռեմանին, քանի որ արքան յենուած է լինում իմ ձեռքին: Թող Տէրը ների քո ծառային այս բանի համար»: 19 Եղիսէէն ասաց Նէեմանին. «Գնա՛ խաղաղութեամբ»: Եւ նա գնաց նրա մօտից, Իսրայէլի երկրից:

ԳԷԵԶԻԻ ՍԽԱԼԸ

20 Սպասաւոր Գէեզին ասաց Եղիսէէին. «Իմ տէրը հրաժարուեց վերցնել ասորի Նէեմանի բերած նուէրները: Կենդանի է Տէրը. ես նրա յետեւից կը վազեմ ու մի բան կ'առնեմ»: 21 Գէեզին վազեց Նէեմանի յետեւից, եւ երբ Նէեմանը տեսաւ, որ նա իր յետեւից է գալիս, մարտակառքից իջաւ եւ նրան ընդառաջ գնալով՝ ասաց. «Բարի՞ գործով է»: 22 Գէեզին ասաց. «Բարի գործով է: Իմ տէրն ինձ քեզ մօտ ուղարկեց՝ ասելով. "Ահա Եփրեմի լեռից ինձ մօտ եկան երկու երիտասարդ մարգարէներ: Նրանց համար տո՛ւր մի տաղանդ† արծաթ եւ երկու ձեռք պատմուճան"»: 23 Նէեմանն ասաց. «Եթէ այդպէս է, ա՛ռ երեք տաղանդ արծաթ»: Նէեմանն ստիպեց եւ երկու պարկի մէջ երեք տաղանդ արծաթ ու երկու ձեռք պատմուճան դնելով՝ տուեց իր երկու ծառաներին, որ տանեն նրա առջեւից: 24 Երբ մի մութ տեղ հասան, նա բեռը խլեց նրանց ձեռքից ու տան մէջ դրեց, իսկ այդ մարդկանց ճանապարհ գցեց: 25 Նրանք վերադարձան: Գէեզին եկաւ կանգնեց իր տիրոջ առջեւ: Եղիսէէն հարցրեց նրան. «Որտեղի՞ց ես գալիս, Գէեզի՛»: Գէեզին ասաց. «Քո ծառան ոչ մի տեղ չէր գնացել»: 26 Եղիսէէն նրան ասաց. «Մի՞թէ իմ սիրտը քեզ հետ չէր, երբ այդ մարդն իր մարտակառքից իջաւ քեզ դիմաւորելու: Արդարեւ, արծաթ ու հագուստներ առար՝ ձիթենիներ ու այգիներ, արջառ ու ոչխար գնելու եւ ծառաներ ու աղախիններ ունենալու համար: 27 Թող Նէեմանի բորոտութիւնը քեզ ու քո սերնդին կպչի յաւիտեան»: Եւ Գէեզին դուրս եկաւ նրա մօտից ձեան նման սպիտակած բորոտ մարմնով:

ԿՈՐԱԾ ԵՒ ԳՏՆՈՒԱԾ ԿԱՑԻՆԸ

6 Մարգարէներն ասացին Եղիսէէին. «Այս տեղը, ուր մենք բնակւում ենք, մեզ համար նեղ է, 2 գնանք մինչեւ Յորդանան գետը եւ այնտեղ ամէն մէկս մի գերան վերցնելով՝ մեզ համար բնակութեան տեղ պատրաստենք»: Եղիսէէն ասաց. «Գնացէ՛ք»: 3 Նրանցից մէկն ասաց. «Դու եւս քո ծառաներով ե՛կ մեզ հետ»: 4 Նա պատասխանեց. «Կը գամ»: Եւ գնաց նրանց հետ: Հասան Յորդանան գետի եզերքը: Այնտեղ ծառ էին կտրում: 5 Եւ ահա երբ նրանցից մէկը գերան էր կտրում, կացինը ջուրն ընկաւ: Նա բացականչելով՝ ասաց. «Ո՛հ, Տէ՛ր, ես այն փոխ

†Շուրջ 30 կիլոգրամ:

էի առել»: 6 Աստծու մարդը հարցրեց.
«Ո՞ւր ընկաւ»: Նա ցոյց տուեց տեղը,
եւ Եղիսէէն մի փայտ կտրելով՝ այն-
տեղ գցեց, ու երկաթը ջրի երեսը
լողաց: 7 Եղիսէէն ասաց. «Վերցրո՛ւ»:
Նա ձեռքը մեկնեց ու վերցրեց կացինը:

ԵՂԻՍԷԷՆ ԳԵՐԵՎԱՐՈՒՄ Է ԱՍՈՐԻ ՋԻՆՈՒՈՐՆԵՐԻ

8 Ասորիների արքան պատերազմի
մէջ էր Իսրայէլի դէմ: Նա խորհրդակ-
ցելով իր ծառաների հետ՝ ասաց.
«Այսինչ տեղում թող բանակը դարան
մտնի»: 9 Եղիսէէն լուր ուղարկելով
Իսրայէլի արքային՝ ասաց. «Զգո՛յշ
եղիր, չլինի, թէ անցնես այսինչ տե-
ղով, քանզի ասորիները դարան են
մտել այնտեղ»: 10 Իսրայէլի արքան
մարդ ուղարկեց Եղիսէէի նշած վայրը
եւ դարանից զգուշացաւ ոչ միայն մէկ,
այլ երկու եւ աւելի անգամ: 11 Այս
բանի համար ասորիների արքան
վրդովուեց եւ կանչելով իր ծառաներ-
ին՝ ասաց. «Ինձ չէ՞ք ասի, թէ ով է իմ
գաղտնիքները յայտնում Իսրայէլի
արքային»: 12 Ծառաներից մէկն ասաց.
«Ո՛չ, տէ՛ր իմ արքայ, Իսրայէլում
գտնուող Եղիսէէ մարգարէն է, որ Իս-
րայէլի արքային յայտնում է նոյնիսկ
այն բոլոր խօսքերը, որ դու քո ննջա-
սենեակում ես խօսում»: 13 Արքան
ասաց. «Գնացէ՛ք ու տեսէ՛ք, թէ ո՛ւր է
նա, որ մարդ ուղարկեմ ու բռնեմ
նրան»: Ցայտնեցին նրան, որ Եղիսէէն
Դոթայիմում է:
14 Նա ուղարկեց մարտակառքեր,
երիվարներ եւ ուժեղ զօրք: Սրանք
եկան ու գիշերը պաշարեցին քաղաքը:
15 Առաւօտ կանուխ Եղիսէէն զարթնեց
եւ դուրս եկաւ, որ պաշտամունք կա-
տարի†: Նա տեսաւ, որ զօրքը երիվար-
ներով ու մարտակառքերով պաշարել է
քաղաքը: Սպասաւորը նրան ասաց.
«Տէ՛ր, ի՞նչ պիտի անենք»: 16 Եղիսէէն
ասաց. «Մի՛ վախեցիր, քանզի մեզ հետ
եղողները նրանց հետ եղողներից շատ
են»: 17 Եղիսէէն աղօթք անելով՝
ասաց. «Տէ՛ր, բա՛ց սպասաւորիս աչքե-
րը, որ տեսնի»: Տէրը բացեց նրա աչ-
քերը, եւ նա տեսաւ, որ Եղիսէէի շուրջը
լեռը լի էր ձիերով ու հրեղէն մար-
տակառքերով, որոնք եկան նրա մօտ:
18 Եղիսէէն սկսեց աղօթել Տիրոջն՝
ասելով. «Հարուածի՛ր այս ազգին, որ
չիլ դառնայ»: Եւ Տէրը, ինչպէս ասել էր
Եղիսէէն, հարուածեց նրանց ու չիլ
դարձրեց: 19 Եղիսէէն ասաց թշնամու
զօրքին. «Այս չէ ճանապարհը, եւ այս
չէ քաղաքը, եկէ՛ք իմ յետեւից, եւ ես
ձեզ կը տանեմ այն մարդու մօտ, որին
փնտռում էք»: Նա տարաւ նրանց
Սամարիա, եւ երբ մտաւ Սամարիա,
ասաց Եղիսէէն. «Տէ՛ր, բա՛ց նրանց
աչքերը, որ տեսնեն»: 20 Եւ Տէրը բացեց
նրանց աչքերը, ու տեսան, որ իրենք
Սամարիայի մէջ են:
21 Երբ Իսրայէլի արքան տեսաւ
նրանց, ասաց Եղիսէէին. «Սպանե՞մ
սրանց, հա՛յր իմ»: 22 Եղիսէէն ասաց.
«Մի՛ սպանիր: Սպանել կարող ես
նրանց, որոնց քո սրով ու աղեղով ես
գերի վերցրել: Նրանց առջեւ հաց ու
ջուր դի՛ր. թող ուտեն ու խմեն:
Արձակի՛ր նրանց, թող գնան իրենց
տիրոջ մօտ»: 23 Նրանց առաջ առատ
խոտ† դրեց: Նրանք կերան ու խմեցին:
Արքան նրանց արձակեց, եւ նրանք
գնացին իրենց տիրոջ մօտ: Ասորիների
կողոպտիչ զօրքը այլեւս Իսրայէլի
երկրի վրայ չյարձակուեց:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

24 Դրանից յետոյ Ադերի որդին՝ ա-
սորիների արքան, հաւաքեց իր ամբողջ
բանակը եւ եկաւ պաշարեց Սամարիան:
25 Սամարիայում մեծ սով եղաւ, իսկ
ասորիները պաշարած պահում էին
քաղաքը: Մի էշի գլուխը յիսուն սիկղ
արծաթով էր ծախւում, իսկ աղաւնու
կեղտի մէկ քառորդ կապիճ չափը՝ յի-
սունհինգ արծաթով: 26 Իսրայէլի ար-
քան շրջում էր պարսպի վրայ: Մի կին
աղաղակելով՝ ասաց նրան. «Փրկի՛ր
ինձ, տէ՛ր արքայ»: 27 Արքան ասաց.
«Եթէ Տէրը չի փրկում, ինչո՞վ կարող
եմ ես փրկել քեզ, կալո՞վ, թէ՞ հնձա-
նով»: 28 Արքան հարցրեց. «Քեզ ի՞նչ
է պատահել»: Նա ասաց. «Այս կինն

†Այլ բնագրերում՝ տարբեր ձեւով:

†Եբրայերէն՝ Նրանց համար մեծ խնջոյք սարքեց:

ինձ ասաց. "Տո՛ւր քո որդուն, որ այսօր
ուտենք նրան, իսկ իմ որդուն վաղը
կ'ուտենք"»: 29 Եփեցինք իմ որդուն ու
կերանք: Յաջորդ օրն ասացի նրան.
"Տո՛ւր քո որդուն, որ ուտենք", սակայն
նա թաքցրեց իր որդուն»: 30 Երբ ար-
քան կնոջ այս խօսքերը լսեց, պատա-
ռոտեց իր հագուստները, եւ քանի որ
նա դեռ շրջում էր պարսպի վրայ, ժո-
ղովուրդը տեսաւ, որ նա իր հագուստի
տակից, մարմնի վրայ քուրձ էր հագել:
31 Արքան ասաց. «Թող Աստուած այս-
պէս ու այսպէս եւ աւելին անի ինձ,
եթէ Սափատի որդի Եղիսէէի գլուխն իր
վրայ մնայ այսօր»: 32 Եղիսէէն նստել
էր իր տանը, ծերերի հետ: Արքան
մարդ ուղարկեց նրա մօտ, եւ երբ դեռ
պատգամաւորը նրա մօտ չէր հասել,
Եղիսէէն ասաց ծերերին. «Տեսնո՞ւմ էք,
մարդասպանի որդին մարդ է ուղարկել,
որ իմ գլուխը կտրի: Հէնց որ հասնի
պատգամաւորը, դռների մօտ բռնեցէ՛ք
նրան: Չէ՞ որ նրա տիրոջ ոտնաձայնը
նրա յետեւից լսւում է»: 33 Մինչ
Եղիսէէն խօսում էր նրանց հետ,
պատգամաւորն եկաւ նրանց մօտ եւ
ասաց. «Ահա այս չարիքը Տիրոջից է.
Տիրոջ վրայ էլ ի՞նչ յոյս դնեմ»:

7 Եղիսէէն ասաց. «Տիրոջ խո՛սքը լսե-
ցէք: Այսպէս է ասում Տէրը. "Վաղն
այս ժամին Սամարիայի դարպասների
մօտ մէկ գրիւ ընտիր ալիւրը մէկ սիկղ,
եւ երկու գրիւ գարին մէկ սիկղ պէտք է
արժենայ"»: 2 Այն զօրապետը, որի
ձեռքին յենւում էր արքան, ասաց Ե-
ղիսէէին. «Եթէ Տէրը անգամ երկնքի
սահանքները բացի, մի՞թէ այդպիսի
բան կարող է լինել»: Եղիսէէն ասաց.
«Քո աչքերով պիտի տեսնես դա,
սակայն դու դրանցից չպիտի ուտես»:

ԱՍՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է

3 Քաղաքի դարպասի մօտ կային
չորս բորոտ մարդիկ: Նրանք իրար
ասացին. «Ինչո՞ւ այստեղ նստենք
մինչեւ մեր մահը: 4 Եթէ ասենք՝
"Մտնենք քաղաք", քաղաքում էլ սով
է, այնտեղ էլ կը մեռնենք. եթէ
այստեղ նստած մնանք, էլի կը մեռ-
նենք: Արի՛ գնանք ասորիների բանա-
կը: Եթէ մեզ ողջ թողնեն, կ'ապրենք,
իսկ եթէ սպանեն մեզ, թող մեռնենք»:
5 Նրանք մթնշաղին վեր կացան, որ-
պէսզի ասորիների բանակը մտնեն:
Նրանք հասան ասորիների բանա-
կատեղին, սակայն այստեղ մարդ
չկար: 6 Տէրն ասորիների բանակա-
տեղիում մարտակառքերի աղմուկ եւ
մեծ զօրքի աղաղակ լսել տուեց, եւ
նրանք իրար ասացին. «Իսրայէլի ար-
քան վարձել է քետացիների ու եգիպ-
տացիների թագաւորներին, որպէսզի
մեզ վրայ յարձակուեն»: 7 Եւ նրանք
ելան ու մթութեան մէջ փախան՝ թող-
նելով իրենց բանակատեղիի վրանները,
ձիերն ու էշերը, ինչպէս որ կային:
Նրանք մազապուրծ փախան: 8 Բո-
րոտները հասան մինչեւ բանակատե-
ղիի եզրը, մի վրան մտան, կերան ու
խմեցին, վերցրին արծաթ, ոսկի ու հա-
գուստներ, գնացին եւ տարան թաք-
ցրին դրանք: Մի այլ վրան մտան եւ
այնտեղից էլ վերցրին ու տարան
թաքցրին: 9 Նրանք ասացին իրար.
«Ճիշտ չէ մեր արածը, այսօր աւետեաց
օր է, իսկ մենք լռո՞ւմ ենք: Մինչեւ
առաւօ՞տ սպասենք, որ մեր անօրէնու-
թեան պատիժը կրենք: Եկէ՛ք գնանք
թագաւորի մօտ եւ այս ամէնը յայտ-
նենք նրան»: 10 Նրանք գնացին, ձայն
տուեցին քաղաքի դարպասի պահա-
պաններին, պատմեցին նրանց՝ ասելով.
«Մտանք ասորիների բանակատեղին,
այնտեղ ոչ ոք չկար, մարդու ձայն չէր
լսւում, միայն ձիեր ու էշեր էին
կապուած, իսկ վրանները մնում էին,
ինչպէս որ կային»: 11 Դռան պահա-
պանները ձայն տուեցին եւ այդ լուրը
հասցրին թագաւորի տուն:
12 Արքան գիշերով ելաւ եւ ասաց իր
ծառաներին. «Հիմա ասեմ ձեզ, թէ
ասորիները մեզ ինչ են արել: Գիտե-
նալով, որ սոված ենք, ելել են բանա-
կատեղիից եւ թաքնուել բաց դաշտում՝
մտածելով, որ թերեւս քաղաքից դուրս
կը գանք, մեզ կենդանի կը բռնեն, կը
մտնեն քաղաքը եւ ապա դուրս կը
գան»: 13 Նրա ծառաներից մէկն ասաց.
«Թող մարդիկ Իսրայէլի մէջ փոքր քա-

նակով մնացած ձիերից հինգը վերցնեն, գնանք ու հետախուզենք այնտեղ»: 14 Արքան երկու ձիաւոր ուղարկեց ասորիների արքայի բանակատեղի՝ ասելով. «Գնացէ՛ք ու հետախուզեցէ՛ք»: 15 Սրանք գնացին նրանց հետքերով մինչեւ Յորդանան գետը եւ տեսան, որ ամբողջ ճանապարհը լի է հագուստներով եւ իրերով, որ խուճապահար փախչելիս նետել էին ասորիները: Հետախոյզները վերադարձան ու պատմեցին արքային:

16 Ժողովուրդը եկաւ եւ կողոպտեց ասորիների բանակատեղին: Մէկ գրիւ ընտիր ալիւրը արժեց մէկ սիկղ, իսկ երկու գրիւ գարին՝ մէկ սիկղ, ինչպէս ասել էր Տէրը: 17 Արքան դռան առջեւ հսկիչ կարգեց այն զօրապետին, որի ձեռքին յենւում էր ինքը պաշտամունքի ժամանակ: Ժողովուրդը դռան մօտ այնքան կոխոտեց նրան, որ նա մեռաւ, ինչպէս ասել էր Աստծու մարդը, երբոր պատգամաւորը նրա մօտ էր եկել: 18 Եղաւ այնպէս, ինչպէս Եղիսէէն ասել էր արքային. «Վաղն այս ժամին Սամարիայի դարպասների մօտ երկու գրիւ գարին մի սիկղ կը լինի, եւ մէկ գրիւ ընտիր ալիւրը՝ մի սիկղ»: 19 Իսկ զօրապետը պատասխանել էր Եղիսէէին. «Տէրը եթէ անգամ երկնքի սահանքները բացի, մի՞թէ այդպիսի բան կարող է լինել»: 20 Այդ ժամանակ Եղիսէէն ասել էր. «Քո աչքերով պիտի տեսնես դա, սակայն դու դրանցից չպիտի ուտես»: 21 Այդպէս էլ եղաւ. եւ ժողովուրդը կոխոտեց նրան դռան առաջ, ու նա մեռաւ:

ՍՈՄՆԱՑԻ ԿՆՈՋ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԸ

8 Եղիսէէն, խօսելով այն կնոջ հետ, որի որդուն կենդանացրել էր, ասաց. «Վե՛ր կացէք գնացէ՛ք դու եւ քո տնեցիները, եղէ՛ք պանդուխտ այնտեղ, որտեղ կարող էք ապրել, քանզի Տէրը սով է ուղարկելու երկրի վրայ. դա արդէն եկել է եւ եօթը տարի է տեւելու երկրի վրայ»: 2 Կինը վեր կացաւ եւ արեց այնպէս, ինչպէս Եղիսէէն էր ասել. ինքն ու տնեցիները գնացին եւ եօթը տարի պանդուխտ մնացին այլազգիների երկրում:

3 Եօթը տարին լրանալուց յետոյ կինը վերադարձաւ այլազգիների երկրից եւ իր տան ու արտերի համար բողոքի գնաց արքայի մօտ:

4 Թագաւորը խօսելով Աստծու մարդ Եղիսէէի սպասաւոր Գէեզիի հետ՝ ասաց. «Պատմի՛ր ինձ Եղիսէէի կատարած բոլոր մեծամեծ գործերը»: 5 Երբ նա պատմում էր արքային, թէ ինչպէս էր Եղիսէէն կենդանացրել մեռեալ որդուն, առաջ եկաւ այդ կինը, որի որդուն կենդանացրել էր Եղիսէէն, եւ արքային ասաց իր տան եւ արտերի մասին: Գէեզին ասաց. «Տէ՛ր արքայ, այս է այդ կինը, եւ այս էլ՝ նրա որդին, որին Եղիսէէն կենդանացրեց»: 6 Արքան հարցեր տուեց կնոջը, եւ նա պատմեց նրան: Թագաւորը տուեց նրան մի ներքինի եւ ասաց. «Վերադարձրո՛ւ նրան նրա ամբողջ ունեցուածքը եւ արտերի այն ամբողջ բերքը, որ ստացուել է նրա պանդխտութեան առաջին օրից մինչեւ այսօր:

ԵՂԻՍԷԷՆ ԵՒ ԱԶԱՅԷԼԸ

7 Եղիսէէն եկաւ Դամասկոս: Ասորիների արքան՝ Ադերի որդին, հիւանդացել էր: Նրան այդ մասին յայտնելով՝ ասացին. «Աստծու մարդն այստեղ է եկել»: 8 Արքան ասաց Ազայէլին. «Մի ընծա՛յ վերցրու, գնա՛ Աստծու մարդու մօտ, նրա միջոցով Տիրոջը հարցրո՛ւ, թէ կը բուժուե՞մ արդեօք իմ այս հիւանդութիւնից»: 9 Ազայէլը վերցրեց ընծան եւ Դամասկոսի բոլոր բարիքները քառասուն ուղտի վրայ բարձելով՝ գնաց նրան ընդառաջ: Նա կանգնելով նրա առջեւ՝ ասաց. «Ո՛վ հայր Եղիսէէ, քո որդին, ասորիների արքայ Ադերի որդին, ինձ քեզ մօտ է ուղարկել՝ ասելով, թէ՝ "Արդեօք կը բուժուե՞մ իմ այս հիւանդութիւնից"»: 10 Եղիսէէն ասաց նրան. «Գնա ասա՛, որ կ'ապրի, սակայն Տէրն ինձ ցոյց է տուել, որ կը մեռնի»: 11 Մարգարէի հայեացքը դարձաւ սեւեռուն, դէմքը՝ լարուած, եւ Աստծու մարդը լաց եղաւ: 12 Ազայէլը հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, տէ՛ր իմ»: Եղիսէէն ասաց. «Գիտեմ, թէ

իսրայէլացիների դէմ ինչ չարիքներ ես գործելու. նրանց ամրոցները հրով պիտի այրես, քաջ մարդկանց սրով պիտի կոտորես, նրանց տղաներին պիտի ոչնչացնես, յղիների փորը պիտի պատռես»: 13 Ազայէլն ասաց. «Քո ծառան ի՞նչ շուն է, որ այդ բաներն անի»: Եղիսէէն ասաց. «Տէրն ինձ յայտնեց, որ դո՛ւ պիտի թագաւորես ասորիների վրայ»: 14 Ազայէլը գնաց Եղիսէէի մօտից եւ մտաւ իր տիրոջ մօտ: Սա հարցրեց նրան. «Ի՞նչ ասաց Եղիսէէն»: Նա պատասխանեց. «Ինձ ասաց, թէ՝ "Անպայման կ'ապրես"»: 15 Հետեւեալ օրը նա մի սաւան առաւ, ջրով թրջեց, փռեց իր երեսին ու մեռաւ:

Նրա փոխարէն թագաւորեց Ազայէլը:

ՅՈՐԱՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐ
(Բ Մնաց. 21. 1-20)

16 Իսրայէլի արքայ Աքաաբի որդի Յորամի թագաւորութեան հինգերորդ տարում թագաւորեց Յուդայի երկրի Յոսափատ արքայի որդի Յորամը: 17 Երբ նա գահ բարձրացաւ, երեսուներկու տարեկան էր եւ ութ տարի թագաւորեց Երուսաղէմում: 18 Նա ընթացաւ Իսրայէլի թագաւորների ճանապարհով, ինչպէս արել էր Աքաաբի տոհմը, քանզի Աքաաբի դուստրը նրա կինն էր: Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, 19 սակայն Տէրը չկամեցաւ ոչնչացնել Յուդայի երկիրը իր ծառայ Դաւթի սիրուն, որովհետեւ նրան խոստացել էր, որ թէ՛ նրան, թէ՛ նրա սերնդին միշտ ճրագ՝ թագաւորութիւն կը տայ:

20 Նրա օրօք Եդոմն ազատագրուեց Յուդայի երկրից եւ իր համար առանձին մի թագաւոր օծեց: 21 Յորամն իր բոլոր մարտակառքերով եկաւ Սիոր եւ առաւօտեան, լոյսը չբացուած, յարձակուեց եդոմացիների վրայ (որոնք իրեն շրջապատել էին), ինչպէս նաեւ նրա մարտակառքերի զօրավարների վրայ: 22 Զինուորները փախան՝ ամէն մէկն իր վրանը: Եդոմը անջատ մնաց Յուդայի երկրից: Եւ այդպէս է մինչեւ այսօր: Այդ ժամանակ ապստամբեց նաեւ Լոբնան: 23 Յորամի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ արել է նա, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՕՔՈԶԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 22. 1-6)

24 Յորամը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց իր հայրերի մօտ, իր նախնի Դաւթի քաղաքում, եւ նրա փոխարէն թագաւորեց նրա որդին՝ Օքոզիան: 25 Իսրայէլի արքայ Աքաաբի որդի Յորամի թագաւորութեան տասներկուերորդ տարում թագաւորեց Յուդայի երկրի արքայ Յորամի որդի Օքոզիան: 26 Երբ Օքոզիան թագաւոր դարձաւ, քսաներկու տարեկան էր: Նա մէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մայրը Իսրայէլի Ամրի արքայի դուստր Գոթողիան էր: 27 Նա ընթացաւ Աքաաբի տոհմի ճանապարհով, չարիք գործեց Տիրոջ առջեւ, ինչպէս Աքաաբի տունն էր արել, որովհետեւ նա Աքաաբի տան փեսան էր: 28 Նա Աքաաբի որդի Յորամի հետ գնաց Գաղաադի Ռամաթ քաղաքը՝ ասորիների արքայ Ազայէլի դէմ պատերազմելու, սակայն ասորիները խոցեցին Յորամին: 29 Յորամ արքան վերադարձաւ, որպէսզի Յեզրայէլում բուժուի այն վէրքերից, որ ասորիները հասցրել էին Ռամաթում ասորիների արքայ Ազայէլի դէմ պատերազմելու ժամանակ: Յուդայի երկրի արքայ Յորամի որդի Օքոզիան եկաւ Յեզրայէլ Աքաաբի որդի Յորամի տեսութեան, որովհետեւ սա հիւանդացել էր:

ՅԵՈՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ

9 Եղիսէէ մարգարէն կանչելով մի երիտասարդ մարգարէի՝ ասաց նրան. «Գոտի՛ կապիր մէջքիդ, իւղի այս սրուակը ձեռքդ վերցրո՛ւ, 2 գնա մտի՛ր Գաղաադի Ռամաթ քաղաքը, ու երբ տեսնես Ամեսիի որդի Յոսափատի որդի Յեհուին, կանչի՛ր նրան իր եղբայրների միջից, նրան մի ներքնասենեակ տա՛ր 3 եւ այս սրուակի իւղը նրա գլխին

թափելով՝ ասա՛. "Այսպէս է ասում Տէրը. քեզ Իսրայէլի թագաւոր օծեցի": Ապա դուռը բա՛ց արա, էլ մի՛ սպասիր, փախի՛ր»: 4 Երիտասարդ մարգարէն գնաց մտաւ Գաղաադի Ռամաթ քաղաքը 5 եւ տեսաւ, որ զօրքի իշխանները նստած են: Նա ասաց. «Ո՞վ իշխան, խօսք ունեմ քեզ ասելու»: Յեհուն ասաց. «Մեզնից ո՞ւմ»: 6 Մարգարէն ասաց. «Քե՛զ, ո՛վ իշխան»: Յեհուն եկաւ ու մտաւ սենեակը: Նա իւղը թափելով նրա գլխին՝ ասաց. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Քեզ Տիրոջ ժողովրդի՝ Իսրայէլի թագաւոր օծեցի, 7 որպէսզի վերացնես քո տիրոջ՝ Աքաաբի տունը քո միջից եւ իմ ծառայ մարգարէների ու Տիրոջ բոլոր ծառաների արեան վրէժը լուծես Յեզաբէլից ու նրա ամբողջ տնից, 8 Աքաաբի տնից ոչնչացնես բոլոր պատին միզողներին, Իսրայէլում կապուած ու ազատ մարդկանց, 9 որպէսզի ես Աքաաբի տունը Նաբատի որդի Յերոբովամի տան եւ Աքիայի որդի Բաասայի տան նման դարձնեմ: 10 Յեզաբէլին Յեզրայէլի դաշտերի մէջ շները պիտի ուտեն, քանի որ մարդ չպիտի գտնուի, որ թաղի նրան"»:

11 Ապա նա դուռը բացեց ու փախաւ: Յեհուն եկաւ իր տիրոջ ծառաների մօտ, որոնք հարցրին նրան. «Բարի՞ լուր է. այս անմիտն ինչո՞ւ էր եկել քեզ մօտ»: Նա ասաց նրանց. «Դուք արդէն գիտէք այդ մարդուն եւ նրա բարբաջանքները»: 12 Նրանք ասացին. «Ճիշտ չէ, պատմի՛ր մեզ»: Յեհուն նրանց ասաց. «Այսպէս ու այսպէս ասաց ինձ. "Այսպէս է ասում Տէրը. քեզ Իսրայէլի թագաւոր օծեցի"»: 13 Երբ այդ լսեցին, ամէն մէկն շտապեց իր բաճկոնն առնել եւ աստիճանների գլխին, ուր նստում էին, դրեց նրա տակը: Եղջերափող հնչեցնելով՝ նրանք ասացին. «Յեհուն թագաւոր դարձաւ»:

ՅԵՀՈՒՆ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ Է ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՅՈՐԱՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԴԷՄ

14 Ամեսսիայի որդի Յոսափատի որդի Յեհուն գլուխ բարձրացրեց Յորամի դէմ, իսկ Յորամը բոլոր իսրայէլացիների հետ ասորիների արքայ Ազայէլից Գաղաադի Ռամաթ քաղաքն էր պաշտպանում: 15 Յորամ արքան ասորիների արքայ Ազայէլի դէմ պատերազմելու ընթացքում ասորիների հասցրած վէրքերից բուժուելու համար եկել էր Յեզրայէլ: Յեհուն ասաց. «Եթէ հոգով դուք ինձ հետ էք, ապա թող ոչ ոք գաղտնի կերպով դուրս չգայ քաղաքից, որ գնայ այս բանը յայտնի Յեզրայէլում»: 16 Յեհուն ձի հեծաւ ու գնաց Յեզրայէլ, ուր Իսրայէլի Յորամ արքան բուժւում էր նետերի վէրքերից, որ նա ստացել էր Ռամաթում ասորիների արքայ Ազայէլի դէմ պատերազմելիս: Նա զօրաւոր եւ հզօր մարդ էր եւ այնտեղ էր պառկել: Յուդայի երկրի արքայ Օքոզիան եկել էր տեսնելու Յորամին: 17 Յեզրայէլում մի պահակ աշտարակի վրայ ելաւ ու փոշի տեսաւ, որ Յեհուի գալուց էր բարձրանում: Նա ասաց. «Ես փոշի եմ տեսնում»: Յորամն ասաց. «Մի հեծեալ վերցրո՛ւ, նրան ընդառա՛ջ ուղարկիր, եւ նա թող հարցնի, թէ խաղա՞ղ նպատակով է գալիս»: 18 Հեծեալը գնաց նրան ընդառաջ եւ ասաց. «Արքան այսպէս է ասում. "Արդեօք խաղա՞ղ նպատակով ես գալիս"»: Յեհուն ասաց նրան. «Քո ինչի՞ն է պէտք խաղաղութիւնը, հետեւի՛ր ինձ:» Աշտարակի պահակն այդ բանը հաղորդելով՝ ասաց. «Սուրհանդակը հասել է նրանց, բայց չի վերադառնում»: 19 Արքան երկրորդ հեծեալին ուղարկեց, որն ասաց. «Այսպէս է հարցնում արքան, թէ՝ "Արդեօք խաղա՞ղ նպատակով ես գալիս"»: Յեհուն ասաց. «Քո ինչի՞ն է պէտք խաղաղութիւնը, հետեւի՛ր ինձ»: 20 Աշտարակի պահակն այդ բանը հաղորդելով՝ ասաց. «Սուրհանդակը հասել է նրանց մօտ, բայց չի վերադառնում: Նրա ձի վարելը Ամեսսիայի որդի Յեհուի ձի վարելուն նման է, որովհետեւ կատաղօրէն է քշում»: 21 Յորամն ասաց. «Կառքը լծի՛ր»: Մարտակառքերը լծեցին, եւ Իսրայէլի արքայ Յորամն ու Յուդայի երկրի արքայ Օքոզիան, ամէն մէկն իր մարտակառքը նստած՝ գնացին Յեհուին ընդառաջ եւ նրան հասան Նաբոթ Յեզրայէլացու կալուածքում:

ԻՍՐԱՅԷԼԻ ՅՈՐԱՄ ԱՐՔԱՅԻ ՄԱՀԸ

22 Երբ Յորամը տեսաւ Յեհուին, ասաց. «Խաղա՞ղ նպատակով ես գալիս, Յեհո՛ւ»: Յեհուն ասաց. «Ի՞նչ խաղաղութիւն, երբ քո մայր Յեզաբէլի պոռնկութիւններն ու կախարդութիւնները շատանում են»: 23 Յորամը սանձերը շուռ տալով՝ փախաւ եւ ասաց Օքոզիային. «Դաւադրութիւն է, Օքոզիա՛»: 24 Յեհուն քաշեց աղեղը, հարուածեց Յորամի թիկունքի մէջտեղը, նետը մտաւ նրա սիրտը, եւ նա ընկաւ իր ծնկների վրայ: 25 Յեհուն ասաց իր զինակիր Բադեկարին. «Սրան դցի՛ր Նաբոթ Յեզրայէլացու կալուածքի մի արտը, քանզի յիշում եմ, որ, երբ ես ու դու դրա Հայր Աքաաբի յետեւից ձի հեծած կողք-կողքի գնում էինք, Տէրը նրա նկատմամբ այս վճիռը տուեց. 26 "Ես, - ասաց Տէրը, - երէկ տեսայ Նաբոթի ու նրա որդիների արիւնը. դրա համար ես քեզ պիտի հատուցեմ այս ագարակում"»: Արդ, վերցրո՛ւ նրան ու նետի՛ր այդ արտը, ինչպէս ասել է Տէրը»:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՕՔՈԶԻԱ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀԸ

27 Յուդայի երկրի արքայ Օքոզիան, տեսնելով այդ, փախաւ Բեթանգան տանող ճանապարհով, բայց Յեհուն հետապնդելով նրան՝ ասաց. «Ապա, դրա՛ն էլ սպանիր»: Եւ նա նրան խոցեց մարտակառքում, երբ սա բարձրանում էր Բերայի, այսինքն՝ Յեբլաամի զառիվերը: Նա փախաւ Մակեդդով եւ այնտեղ մեռաւ: 28 Մառաները նրան տարան Երուսաղէմ եւ այնտեղ թաղեցին իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում:

29 Իսրայէլի արքայ Յորամի թագաւորութեան տասնմէկերորդ տարում էր թագաւորել Օքոզիան Յուդայի երկրի վրայ:

ՅԵԶԱԲԷԼ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՀԸ

30 Յեհուն եկաւ Յեզրայէլ:

Յեզաբէլն այդ լսելով՝ իր աչքերին ծարիր քսեց, իր գլուխը զարդարեց ու նայեց պատուհանից դուրս: 31 Երբ Յեհուն քաղաք էր մտնում, նա ասաց. «Մի՞թէ տիրասպան Զամբրին խաղաղութեամբ է գալիս»: 32 Յեհուն իր գլուխը բարձրացնելով դէպի պատուհանը՝ ասաց. «Ո՞վ ես դու, իջի՛ր ինձ մօտ»: Երկու ներքինիներ կռացան ու ցած նայեցին, 33 եւ Յեհուն ասաց նրանց. «Ցա՛ծ գցեցէք սրան»: Ցածն նետեցին այդ կնոջը. նրա արիւնը պատերի ու ձիերի վրայ ցայտեց, եւ ձիերը ոտքի կոխան արեցին նրան: 34 Յեհուն մտաւ ներս եւ ուտելուց ու խմելուց յետոյ ասաց. «Վերցրէ՛ք այդ անիծեալին ու թաղեցէ՛ք նրան, քանզի թագաւորի դուստր է»: 35 Գնացին նրան թաղելու, սակայն նրանից ոչինչ չգտան, բացի գանգից, ոտքերից ու ձեռքերից, 36 եւ վերադառնալով՝ այդ մասին յայտնեցին Յեհուին: Նա ասաց. «Իրականացաւ Տիրոջ այն խօսքը, որ ասուել էր Եղիա Թեզբացու բերանով, թէ՝ "Յեզրայէլի կալուածքում շներն ուտելու են Յեզաբէլի մարմինը, 37 Յեզաբէլի դիակը այդ կալուածքի հողի երեսին լինելու է իբրեւ աղբ, այնպէս որ ոչ ոք չկարողանայ ասել, թէ՝ "Սա է Յեզաբէլը"»:

ԱՔԱԱԲԻ ՍԵՐՆԴԻ ԿՈՏՈՐԱԾԸ

10 Աքաաբը Սամարիայում եօթանասուն որդի ունէր: Յեհուն նամակ գրեց եւ ուղարկեց Սամարիա նրա իշխաններին, ծերերին եւ Աքաաբի որդիների դաստիարակներին: Այդտեղ ասուած էր. 2 «Երբ ձեզ հասնի այս նամակը, քանի որ ձեզ մօտ են ձեր տիրոջ որդիները, եւ դուք ունէք մարտակառքեր ու երիվարներ, ամրապատ քաղաքներ ու զէնքեր, 3 ապա ձեր տիրոջ որդիներից, որին որ արժանի ու յարմար տեսնէք, նրան նստեցրէ՛ք իր հօր գահին եւ պատերազմեցէ՛ք ձեր տիրոջ տան համար»: 4 Նրանք շատ վախեցան ու ասացին. «Երկու թագաւոր չկարողացան նրա դէմ կանգնել, մենք ինչպէ՞ս դէմ կանգնենք»: 5 Ուստի թագաւորական տան ու քաղաքի վերակացուները, ծերերն ու դաստիարակները մարդ ուղարկեցին Յեհուի մօտ՝ ասելով. «Մենք քո ստրուկներն ենք, եւ

մեզ ինչ որ հրամայես, կ'անենք, ոչ ոքի թագաւոր չենք նստեցնի, եւ ինչ որ լաւ է քեզ համար, այն կ'անենք»:

6 Նա մի երկրորդ նամակ գրեց նրանց՝ ասելով. «Եթէ դուք ինձ էք պատկանում եւ իմ ձայնին հնազանդէք, ապա ձեր տիրոջ որդիների գլուխները կտրեցէ՛ք եւ վաղն այս ժամին բերէ՛ք ինձ մօտ, Յեզրայէլ»: Արքայի որդիները եօթանասուն հոգի էին, եւ քաղաքի ազդեցիկ մարդիկ էին նրանց դաստիարակում: 7 Երբ նամակը նրանց հասաւ, բռնեցին արքայի որդիներին, եօթանասունին էլ սպանեցին եւ նրանց գլուխները կողովների մէջ դնելով՝ ուղարկեցին նրա մօտ, Յեզրայէլ: 8 Սուրհանդակն եկաւ ու Յէհուին ասաց. «Արքայի որդիների գլուխները բերել են»: Նա ասաց. «Դրանք երկու կոյտ անելով՝ դրէ՛ք քաղաքից դուրս մինչեւ առաւօտ»: 9 Առաւօտեան նա ելաւ կանգնեց եւ ասաց ամբողջ ժողովրդին. «Դուք մեղաւոր չէք, ես եմ գլուխս բարձրացրել իմ տիրոջ դէմ, եւ ես եմ սպանել նրան, բայց տեսէ՛ք, սրանց հիմա ո՞վ է կոտորել: 10 Որպէսզի Աքաաբի մասին Տիրոջ ասած խօսքն իրականանայ, Տէրը կատարեց այն, ինչ ասել էր իր ծառայ Եղիայի միջոցով»: 11 Եւ Յէհուն կոտորեց Աքաաբի տնից Յեզրայէլում մնացած բոլոր մարդկանց, նրա բոլոր մեծամեծներին, հարազատներին, քրմերին, այնպէս որ նրանցից ոչ մէկին կենդանի չթողեց:

ՕՔՈԶԻԱՅԻ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

12 Դրանից յետոյ Յէհուն ելաւ գնաց Սամարիա: Երբ ճանապարհին նա հասաւ Հովիւների կացարանին, 13 Յէհուն հանդիպեց Յուդայի երկրի Օքոզիա արքայի եղբայրներին, որոնց ասաց. «Ովքե՞ր էք դուք»: Նրանք ասացին. «Մենք Օքոզիայի եղբայրներն ենք, եկել ենք արքայի ու նրա ազգականների† որդիներին ողջունելու»: 14 Յէհուն ասաց. «Սրանց կենդանի՛ բռնեցէք»: Նրանց կենդանի բռնեցին ու Հովիւների կացարանի մօտ կոտորեցին այդ քառասուներկու հոգուն, եւ նրանցից ոչ ոք կենդանի չմնաց:

†Եբրայերէնում՝ *բագուհու*

15 Յէհուն գնաց այնտեղից եւ հանդիպեց իրեն ընդառաջ եկող Ռեքաբի որդի Յոնադաբին: Նա նրան բարեւեց ու ասաց. «Արդեօք քո սիրտը հաւատարի՞մ է, ինչպէս իմ սիրտն է հաւատարիմ քո նկատմամբ»: Յոնադաբն ասաց. «Հաւատարիմ է»: Յէհուն ասաց. «Եթէ այդպէս է, ձեռքդ ի՛նձ տուր»: Սա տուեց իր ձեռքը, եւ նա նրան իր մօտ՝ մարտակառքի վրայ բարձրացրեց: 16 Նա ասաց նրան. «Արի՛ ինձ հետ ու Տիրոջ հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս տե՛ս»: Եւ նա նրան նստեցրեց իր մարտակառքը: 17 Նա մտաւ Սամարիա եւ այնտեղ Աքաաբի տան մնացած բոլոր մարդկանց կոտորեց, մինչեւ որ նրանց բնաջնջեց, ինչպէս Տէրն ասել էր Եղիային:

ՅԷՀՈՒՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ԲԱՀԱՂԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

18 Յէհուն հաւաքեց ամբողջ ժողովրդին եւ նրանց ասաց. «Աքաաբը Բահաղին քիչ ծառայութիւն մատուցեց, իսկ Յէհուն շատ ծառայութիւններ պիտի մատուցի: 19 Արդ, Բահաղի բոլոր մարգարէներին, նրա ծառաներին ու քրմերին ինձ մօ՛տ կանչեցէք. թող ոչ ոք չբացակայի, քանզի Բահաղին մեծ զոհ եմ մատուցելու: Ով բացակայի, իմ ձեռքից չի փրկուի»: Յէհուն խաբէութիւն արեց, որպէսզի Բահաղի ծառաներին կորստեան մատնի: 20 Յէհուն ասաց. «Բահաղի համար սրբազան զոհաբերութիւն պատրաստեցէ՛ք»: 21 Այդ բանը հաղորդեցին բոլորին: Յէհուն Իսրայէլի բոլոր կողմերը մարդ ուղարկեց, Բահաղին պաշտող բոլոր մարդիկ եկան, չներկայացող մարդ չմնաց: Սրանք մտան Բահաղի մեհեանը, եւ մեհեանը բերնէբերան լցուեց: 22 Յէհուն ասաց սեղանի† վերակացուներին. «Հանեցէ՛ք Բահաղին ծառայողների պատմուճանները»: Եւ նրանք հանեցին նրանց պատմուճանները: 23 Յէհուն եւ Ռեքաբի որդի Յոնադաբը մտան Բահաղի մեհեանը: Նրանք ասացին Բահաղին պաշտողներին. «Որոնեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ արդեօք այստեղ ձեզ հետ չկա՞ն Տիրոջը պաշտողներ, այստեղ միայն Բահաղին ծառայողներ պէտք է լինեն»: 24 Յէհուն մտաւ խունկ ծխելու եւ ողջակէզներ մատուցելու, իսկ դրսում երեք հարիւր ութսուն մարդ կանգնեցնելով՝ ասաց նրանց. «Եթէ ձեզնից որեւէ մէկը կենդանի թողնի նրան, ում ես կը յանձնեմ ձեր ձեռքը, իր կեանքով կը հատուցի այդ մարդու փոխարէն»: 25 Երբ Յէհուն ողջակէզները կատարեց վերջացրեց, ասաց հետեւակ ու սպառազէն զինուորներին. «Մտէք կոտորեցէ՛ք նրանց, նրանցից ոչ ոք թող դուրս չգայ»: Հետեւակ ու սպառազէն զինուորները նրանց սրակոտոր արեցին, նրանց մարմինները դուրս շպրտեցին, ապա գնացին քաղաք, ուր գտնւում էր Բահաղի մեհեանը, 26 Բահաղի մեհեանի արձանը հանեցին եւ այրեցին այն: 27 Նրանք կործանեցին Բահաղի արձանները, քանդեցին Բահաղի մեհեանը եւ այն արտաքնոց դարձրին, ինչպէս որ է մինչեւ այսօր: 28 Այսպիսով Յէհուն Բահաղ աստծուն վերացրեց Իսրայէլից: 29 Յէհուն, սակայն, Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից, այսինքն՝ Բեթէլի ու Դանի ոսկէ երինջներից չհրաժարուեց: 30 Տէրն ասաց Յէհուին. «Քանի որ քաջութիւն ունեցար Աքաաբի որդիների նկատմամբ անելու այն, ինչ իմ սրտում էր, ուստի քո յետնորդները մինչեւ չորրորդ սերունդ նստելու են Իսրայէլի գահին»: 31 Յէհուն, սակայն, ամբողջ հոգով Իսրայէլի Տէր Աստծու օրէնքով ընթանալու ջանադիր չեղաւ, Իսրայէլին մեղանչել տուող Յերոբովամի մեղքերից զերծ չմնաց:

ՅԷՈՒԻ ՄԱՀԸ

32 Այդ օրերին Տէրն սկսեց կոտորակել Իսրայէլի բոլոր սահմանները, իսկ Ազայէլը նրանց կոտորեց Իսրայէլի բոլոր սահմաններում, 33 Յորդանան գետից արեւելք գտնուող ամբողջ Գաղաադի, Գադի, Ռուբէնի ու Մանասէի երկրներում, Առնոնի ձորի եզրին գտնուող Արոյերից մինչեւ Գաղաադ ու Բասան: 34 Յէհուի մնացած գործերը, այն ամէնը, ինչ նա արել է, նրա բոլոր քաջագործութիւնները, մղած պատերազմները չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

35 Յէհուն գնաց իր նախնիների գիրկը, եւ նրան թաղեցին Սամարիայում: Նրա փոխարէն թագաւորեց նրա որդի Յովաքազը: 36 Յէհուն Սամարիայում Իսրայէլի վրայ թագաւորեց քսանութ տարի:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԳՈԹՈՂԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ

(Բ Մնաց., 22. 10-23. 15)

11 Օքոզիայի մայր Գոթողիան երբ տեսաւ իր որդիների մահը, կոտորեց ամբողջ թագաւորական սերունդը, 2 բայց Յորամ արքայի դուստրը, Օքոզիայի քոյր Յոսաբէէն Օքոզիայի որդի Յովասին վերցրեց արքայի սպանուած որդիների միջից եւ նրան ու նրա դայեակին Գոթողիայից փախցնելով՝ թաքցրեց ննջասենեակում: Յովասը փրկուեց: 3 Նա նրա հետ վեց տարի Տիրոջ տանը թաքնուեց, երբ Գոթողիան թագաւորում էր երկրում:

4 Եօթներորդ տարում Յովիդայէն մարդ ուղարկեց, կանչեց հարիւրապետներին, թիկնապահներին ու սուրհանդակ զինուորներին, նրանց բերեց Տիրոջ տունն ու նրանց Տիրոջ անունով երդուեցնելով՝ ցոյց տուեց նրանց արքայի որդի Յովիդայէին: 5 Նա պատուիրելով նրանց՝ ասաց. «Ձեր անելիքն այս է. ձեր մէկ երրորդ մասը շաբաթ օրը թող պահպանի արքունի տան դուռը, 6 միւս մէկ երրորդ մասը ճանապարհների դարպասը պահպանի, իսկ մնացած մէկ երրորդ մասը՝ սուրհանդակ զինուորների յետեւի դուռը: Այսպիսով ամբողջ տունը պէտք է հսկողութեան տակ առնուի: 7 Երեք խմբերից երկուսը, այսինքն՝ շաբաթ օրը Տիրոջ տունը 8 եւ արքայի շուրջը պահպանութիւն անողները, զէնքերը ձեռքներին արքայի չորս կողմը թող պահպանեն, եւ ովքեր այդ շրջանից ներս մտնեն, թող սպանուեն: Եւ նրանք թագաւորի հետ են լինելու նրա

ելումուտ անելու ամբողջ ժամանակ»:

9 *Հարիւրապետներն արեցին այն, ինչ իմաստուն Յովիդայէն պատուիրել էր. ամէն մէկն առաւ իր մարդկանց՝ թէ՛ նրանց, որոնք չաբաթ օրը պահպանութիւն անելու էին կոչուած եւ թէ՛ նրանց, որոնք այդ օրը վերջացրել էին իրենց ծառայութիւնը, եւ եկաւ Յովիդայէ քահանայի մօտ:* 10 *Քահանան Դաւիթ արքայի՝ Տիրոջ տանը գտնուող գեղարդներն ու զէնքերը տուեց հարիւրապետներին:* 11 *Հետեւակ զինուորներն եկան ու իրենց զէնքերը ձեռքներին կանգնեցին տան աջ անկիւնից մինչեւ ձախ անկիւնը, զոհասեղանի ու արքունի տան շուրջը:* 12 *Յովիդայէն բերել տուեց արքայի որդուն, նրա գլխին դրեց թագը, նրան յանձնեց վկայականը, նրան օծելով թագաւոր դարձրեց եւ ծափ զարկեց ու ասաց. «Կեցցէ՛ արքան»:*

13 *Գոթողիան լսելով շարժման մէջ եղող մարդկանց աղմուկը՝ եկաւ նրանց մօտ, մտաւ Տիրոջ տունը* 14 *եւ տեսաւ, որ արքան, ինչպէս կարգն է, կանգնել է սեան մօտ, իսկ երգիչներն ու փողհարները՝ նրա շուրջը: Երկրի ամբողջ ժողովուրդը ուրախանում էր եւ փող հնչեցնում: Գոթողիան պատառոտեց իր հագուստները եւ աղաղակեց՝ ասելով. «Դա՛ւ է, դա՛ւ»:* 15 *Յովիդայէ քահանան պատուիրեց զօրքի հարիւրապետներին՝ ասելով. «Դո՛ւրս բերէք նրան շարքերից, եւ ով որ գնայ նրա յետեւից, թող սրով սպանուի»: Քահանան չէր ուզում, որ նա Տիրոջ տանը սպանուի:* 16 *Նրան բռնեցին, եւ երբ իրենք արքունի տուն տանող երիվարների ճանապարհով էին ընթանում, սպանեցին նրան:*

ՅՈՎԻԴԱՅԷԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Բ Մնաց., 24. 1-16)

17 *Յովիդայէն Տիրոջ եւ արքայի, ինչպէս եւ արքայի ու ժողովրդի միջեւ ուխտ դրեց, որ իրենք կը լինեն Տիրոջ ժողովուրդը:* 18 *Երկրի բոլոր մարդիկ գնացին Բահաղի մեհեանը, կործանեցին այն, ջարդուփշուր արեցին նրա զոհասեղանները, նրա արձանները, Բահաղի քուրմ Մաթանին սպանեցին զոհասեղանի դիմաց: Քահանան հսկիչ ոստիկաններ նշանակեց Տիրոջ տան վրայ:* 19 *Նա հարիւրապետներին, թիկնապահներին, սուրհանդակ զինուորներին ու երկրի ամբողջ ժողովրդին առնելով՝ արքային դուրս բերեց Տիրոջ տնից, սուրհանդակների դռան ճանապարհով բերեց արքունի տուն եւ նրան թագաւորական գահին նստեցրեց:* 20 *Երկրի ամբողջ ժողովուրդը ուրախացաւ, քաղաքը հանդարտուեց: Գոթողիային արքունի տան մօտ սպանել էին սրով:* 21 *Երբ Յովասը թագաւոր օծուեց, եօթը տարեկան էր:*

ՅՈՒԴԱՅԻ ՅՈՎԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 24. 1-16)

12 *Յէուի թագաւորութեան եօթներորդ տարում թագաւոր դարձաւ Յովասը, որը քառասուն տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Սաբիա էր՝ Բերսաբէէ քաղաքից:* 2 *Յովասն արդար գտնուեց Տիրոջ առջեւ այնքան ժամանակ, որ Յովիդայէն նրան դաստիարակում էր:* 3 *Մարդիկ, սակայն, մեհենական բարձունքներից չհրաժարուեցին, եւ ժողովուրդը տակաւին զոհեր էր մատուցում եւ խունկ ծխում մեհենական բարձունքներում:*

4 *Յովասն ասաց քահանաներին. «Տիրոջ տունը մտած սրբութիւնների ամբողջ արծաթը, այսինքն՝ հաշուառման ենթարկուած բոլոր մարդկանց դրամը, ըստ մարդկանց սրտի ցանկութեան Տիրոջ տան համար նուիրաբերուող արծաթը, ինչպէս նաեւ ամէն մէկի կատարած վաճառքից ստացուած հարկերը* 5 *քահանաները թող վերցնեն, որպէսզի, ուր որ Տիրոջ տան քանդուած մասեր լինեն, նորոգուեն»:*

6 *Մինչեւ Յովաս արքայի թագաւորութեան քսաներկուերորդ տարին քահանաները Տիրոջ տան քանդուած մասերը դեռ չէին նորոգել,* 7 *ուստի Յովաս արքան կանչեց Յովիդայէ քահանային ու միւս քահանաներին եւ ասաց նրանց. «Ինչո՞ւ չէք նորոգել Տիրոջ տան քանդուած մասերը: Վաճառքից ստացուած արծաթը ձեզ մի՛ վերցրէք,*

այլ Տիրոջ տան քանդուած մասերի նորոգմա՛նը յատկացրէք»: 8 *Քահանաները խոստացան ժողովրդից արծաթ չառնել, եթէ դա չէին յատկացնելու Տիրոջ տան քանդուած մասերը նորոգելու համար:* 9 *Յովիդայէ քահանան մի արկղ վերցրեց, վրան անցք բացեց եւ դրեց Տիրոջ զոհասեղանի կողքին: Տիրոջ տունը պահպանող քահանաները, Տիրոջ տանը գտնուած ամբողջ արծաթը լցրին այնտեղ:* 10 *Երբ տեսնում էին, որ արկղի մէջ արծաթը շատացել է, կանչում էին* 11 *արքունի քարտուղարների պետին ու մեծ քահանային, որոնք գալիս էին, Տիրոջ տանը գտնուած արծաթը ծրարում եւ պատրաստ գումարը տալիս էին Տիրոջ տան գործավարներին, որ բաշխեն Տիրոջ տան ատաղձագործներին,* 12 *շինարարներին, նկարիչներին, ճարտար որմնադիրներին, քարգործներին, որպէսզի Տիրոջ տան քանդուած մասերը նորոգելու համար գնեն փայտ ու տաշած քարեր եւ անեն այն ամէնը, ինչ անհրաժեշտ էր Տիրոջ տունը նորոգելու համար:* 13 *Տիրոջ տուն բերուած արծաթով, սակայն, Տիրոջ տան համար արծաթէ դոներ, սեպեր, տաշտեր, փողեր եւ ամէն տեսակ ոսկէ ու արծաթէ անօթներ չպէտք է սարքէին,* 14 *այլ այդ գումարը գործաւորներին պէտք է տային, որպէսզի նրանք Տիրոջ տունը նորոգեն:* 15 *Հաշիւ չէին պահանջում այն մարդկանցից, որոնց ձեռքն էին յանձնում գործաւորներին տրուելիք արծաթը, որովհետեւ նրանք վստահելի էին,* 16 *իսկ մեղքի ու յանցանքի քաւութեան համար ընծայաբերուած արծաթը Տիրոջ տուն չէր մտնում, այլ քահանաներին էր տրւում:*

ՅՈՎԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

17 *Այն ժամանակ ասորիների արքայ Ազայէլը յարձակուեց Գէթի դէմ եւ գրաւեց այն: Ապա Ազայէլն իր երեսը դարձրեց դէպի Երուսաղէմ, որ նրա վրայ արշաւի:* 18 *Յուդայի երկրի արքայ Յովասը իր հայրերի, Յուդայի երկրի արքաներ Յոսափատի, Յորամի ու Օքոզիայի արած բոլոր նուիրատուութիւններն ու իր նուիրատուութիւնները, Տիրոջ տան ու թագաւորի տան գանձարաններում գտնուող ամբողջ արծաթը ուղարկեց ասորիների արքային, իսկ ինքը մեկնեց Երուսաղէմից:*

19 *Յովասի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արեց, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի թագաւորների ժամանակագրութեան մէջ:* 20 *Նրա ծառաները նրա դէմ ելան, դաւաճանեցին նրան եւ Գաղաղում բնակուող Մաալոնի տանը սպանեցին Յովասին:* 21 *Նրան սպանեցին նրա ծառաները՝ Յեմաւութի որդի Յովազաքարը եւ սրա որդի Յեզեբութը: Նրա այս պատանդ ծառաները խփեցին ու սպանեցին նրան եւ թաղեցին իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում: Նրա փոխարէն թագաւորեց նրա որդին՝ Ամեսսիան:*

ԻՍՐԱՅԷԼԻ ՅՈՎԱՀԱԶ ԹԱԳԱՒՈՐԸ

13 *Յուդայի երկրի արքայ Օքոզիայի որդի Յովասի թագաւորութեան քսաներկուերորդ տարում Իսրայէլի վրայ, Սամարիայում թագաւորեց Յէուի որդի Յովաքազը: Նա թագաւորեց տասնեօթը տարի:* 2 *Նա Տիրոջ առջեւ չարիք գործեց, ընթացաւ Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերի հետքերով: Նա դրանցից չհրաժարուեց:* 3 *Տիրոջ բարկութիւնը բորբոքուեց Իսրայէլի դէմ, եւ Տէրը նրանց շարունակ մատնեց ասորիների Ազայէլ արքայի եւ Ազայէլի որդի Ադերի ձեռքը:*

4 *Յովաքազն աղօթեց Տիրոջը, եւ Տէրը լսեց նրան, որովհետեւ տեսաւ Իսրայէլի նեղութիւնները, որ պատճառում էր նրան ասորիների արքան:* 5 *Տէրն Իսրայէլին մի ազատարար տուեց. Իսրայէլն ազատուեց ասորիների ձեռքից, եւ իսրայէլացիներն ապրեցին իրենց վրաններում, ինչպէս նախկին ժամանակներում:* 6 *Սակայն իսրայէլացիները չհրաժարուեցին Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից, այլ նրա*

ուղիով ընթացան, եւ Աստարոթի կուռքերն էլ մնացին Սամարիայում:
7 Յովաքազի մօտ մնացել էին միայն յիսուն հեծեալ, տասը մարտակառք ու տասը հազար հետեւակ. մնացածներին ասորիների արքան բնաջնջել էր եւ կոխոտուած հող էր դարձրել:
8 Յովաքազի մնացած գործերը, այն ամէնը, ինչ նա արել է, նրա քաջագործութիւնները չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 9 Յովաքազը գնաց իր նախնիների գիրկը, նրան թաղեցին Սամարիայում, իր նախնիների մօտ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՅՈՎԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ

Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յովասը: 10 Յուդայի երկրի արքայ Յովասի թագաւորութեան երեսունեօթներորդ տարում Իսրայէլի վրայ թագաւորեց Յովաքազի որդի Յովասը: Նա Սամարիայում թագաւորեց տասներկու տարի: 11 Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից, թաղուեց դրանց մէջ:
12 Յովասի մնացած պատմութիւնը, այն ամէնը, ինչ նա արել է, Յուդայի երկրի արքայի հետ կռուելու ժամանակ նրա ցուցաբերած քաջագործութիւնները չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 13 Յովասը գնաց իր նախնիների գիրկը, եւ նրա գահին նստեց Յերոբովամը: Յովասը թաղուեց Սամարիայում, Իսրայէլի թագաւորների մօտ:

ԵՂԻՍԷԷՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Է ԱՍՈՐԻՆԵՐԻ ԴԷՄ ՅԱՂԹԱՆԱԿԸ

14 Եղիսէէն ծանր հիւանդացաւ, որից եւ մեռաւ: Իսրայէլի արքայ Յովասը մինչ այդ եկել էր նրա մօտ, լաց եղել նրա մօտ՝ ասելով. «Հա՛յր, հա՛յր, դու Իսրայէլի մարտակառքն էիր եւ նրա հեծելազօրը»: 15 Եղիսէէն նրան ասել էր. «Ա՛ռ քո աղեղն ու նետերը»: Յովասն առել էր աղեղն ու նետերը, 16 եւ Եղիսէէն Իսրայէլի արքային ասել էր. «Աղեղը ձեռքո՛վդ լարիր». եւ նա իր ձեռքով լարել էր աղեղը: Եղիսէէն իր ձեռքը դրել էր արքայի ձեռքին 17 եւ ասել. «Բա՛ց արեւելեան կողմի պատուհանը»: Նա բացել էր, եւ Եղիսէէն ասել էր. «Արձակի՛ր»: Երբ նա արձակել էր, Եղիսէէն ասել էր. «Սա Տիրոջ փրկութեան նետն է, ասորիների դէմ փրկութեան նետը: Դու ասորիներին պիտի հարուածես Ափեկում, մինչեւ որ իսպառ բնաջնջես նրանց»: 18 Եղիսէէն աւելացրել էր. «Նետեր վերցրո՛ւ»: Երբ Յովասը նետերը վերցրել էր, Եղիսէէն ասել էր Իսրայէլի արքային. «Արձակի՛ր եւ խփի՛ր գետնին»: Արքան երեք նետ էր խփել գետնին ու կանգ առել: 19 Աստծու մարդը բարկացել էր նրա վրայ՝ ասելով. «Եթէ հինգ կամ վեց անգամ հարուածէիր, ասորիներին իսպառ ոչնչացրած կը լինէիր: Արդ, միայն երեք անգամ կը հարուածես ասորիներին»:
20 Մեռաւ Եղիսէէն, եւ նրան թաղեցին: Հետեւեալ տարին Մովաբի կողոպտիչ զօրքը յարձակուեց երկրի վրայ: 21 Այդ ժամանակ մի մարդու էին թաղում: Երբ թաղողները տեսան Մովաբի կողոպտիչ զօրքին, այդ մեռած մարդուն շտապ գցեցին գերեզմանը: Այդ մեռած մարդու դիակը Եղիսէէի ոսկորներին դիպչելուն պէս հանգուցեալը կենդանացաւ ու կանգնեց իր ոտքերի վրայ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ

22 Ասորիների արքայ Ազայէլը Յովաքազի իշխանութեան բոլոր օրերին նեղում էր Իսրայէլին, 23 բայց Տէրը յանուն Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ դրած ուխտի ողորմեց, գթաց ու հայեացքը դարձրեց նրանց, չկամեցաւ կործանել նրանց եւ իր երեսը նրանցից շուռ չտուեց:
24 Ասորիների արքայ Ազայէլը մեռաւ, եւ թագաւորեց Ադերի որդին նրա որդու փոխարէն: 25 Յովաքազի որդին Յովասը ելաւ եւ Ազայէլի որդի Ադերի որդուց գրաւեց այն քաղաքները, որ նրա հայրը պատերազմով խլել էր իր

հօրից՝ Յովաքազի ձեռքից: Յովասը նրան երեք անգամ յաղթեց եւ վերադարձրեց Իսրայէլի քաղաքները:

ՅՈՒԴԱՅԻ ԱՄԱՍԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 25. 1-24)

14 Իսրայէլի արքայ Յովաքազի որդի Յովասի թագաւորութեան երկրորդ տարում թագաւորեց Յուդայի երկրի արքայ Յովասի որդի Ամասիան: 2 Քսանհինգ տարեկան էր նա, երբ թագաւոր դարձաւ, եւ քսանինը տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունն էր Յովադին, որը Երուսաղէմից էր: 3 Ամասիան արդար գտնուեց Տիրոջ առջեւ, բայց ոչ իր նախնի Դաւթի նման: Ըստ ամենայնի նա արեց այն, ինչ իր հայր Յովասն էր արել, 4 սակայն բարձունքների մեհեանները չվերացրեց, եւ ժողովուրդը տակաւին զոհեր էր մատուցում եւ խունկ ծխում բարձունքներում: 5 Երբ թագաւորութիւնն իր ձեռքն անցաւ, նա սպանեց իր այն պալատական պաշտօնեաներին, որոնք սպանել էին իր հօրը, 6 սակայն սպանողների որդիներին չսպանեց, որովհետեւ, ինչպէս գրուած է Մովսէսի Օրէնքի գրքում, Տէրը պատուիրել է՝ ասելով. «Թող հայրերը չմեռնեն որդիների պատճառով, ոչ էլ որդիները մեռնեն հայրերի պատճառով, այլ ամէն ոք իր մեղքի համար թող մեռնի»: 7 Նա տասը հազար եդոմացիների սպանեց Մայիլայում, գրաւեց Վէմը պատերազմով եւ այն կոչեց Յեկթովէլ, ինչպէս եւ կոչւում է մինչեւ այսօր:
8 Այդ ժամանակ Ամասիան Իսրայէլի արքայ Յեհուի որդի Յովաքազի որդի Յովասի մօտ բանագնաց ուղարկեց՝ ասելով. «Ե՛կ երես երեսի հանդիպենք միմեանց»: 9 Իսրայէլի արքայ Յովասը մարդ ուղարկեց Յուդայի երկրի արքայ Ամասիայի մօտ եւ ասաց. «Լիբանանում բուսնող ակքան փուշը լուր ուղարկեց Լիբանանի եղեւնուն՝ ասելով. "Քո դստերը կնութեան տո՛ւր իմ որդուն": Լիբանանի անապատի գազանները, սակայն, անցան ու կոխոտեցին ակքան փուշը: 10 Եդոմացիներին կոտորեցիր եւ մտքումդ հպարտացար: Գոհացի՛ր քո փառքով ու նստի՛ր քո տանը: Ինչո՞ւ է քո չարութիւնը քեզ գրգռում, չէ՞ որ կ'ընկնես դու, եւ քեզ հետ էլ՝ Յուդայի երկիրը»: 11 Ամասիան չանսաց նրան, եւ պատերազմի ելաւ Իսրայէլի արքայ Յովասը: Հրէաստանի Բեթսամիւս բնակավայրում դէմ դիմաց իրար հանդիպեցին ինքը եւ Յուդայի երկրի արքայ Ամասիան: 12 Յուդայի երկրի զօրքը պարտուեց Իսրայէլից, եւ Յուդայի երկրի բոլոր զօրքերը իրենց վրանները փախան: 13 Իսրայէլի արքայ Յովաքազի որդի Յովասը Բեթսամիւսում բռնեց Յովաքազի որդի Յովասի որդի Ամասիային՝ Յուդայի երկրի թագաւորին, եկաւ Երուսաղէմ եւ Եփրեմի դարպասից մինչեւ Անկիւնների դարպասը քանդեց Երուսաղէմի պարիսպը, որը չորս հարիւր կանգուն էր: 14 Նա Տիրոջ տան ու թագաւորի տան գանձարանում եղած ոսկին ու արծաթը, բոլոր անօթները եւ հարճորդիներին† վերցնելով՝ վերադարձաւ Սամարիա:
15 Յովասի մնացած գործերը, նրա կատարած քաջագործութիւններն ու Յուդայի երկրի արքայ Ամասիայի դէմ մղած պատերազմը չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 16 Յովասը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Սամարիայում, Իսրայէլի թագաւորների հետ: Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յերոբովամը:

ԱՄԱՍԻԱ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀԸ
(Բ Մնաց., 25. 25-28)

17 Յուդայի երկրի արքայ Յովասի որդի Ամասիան Իսրայէլի թագաւոր Յովաքազի որդի Յովասի մահուանից յետոյ ապրեց տասնհինգ տարի: 18 Ամասիայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 19 Նրա դէմ Երուսաղէմում դաւադրութիւն կազմակերպեցին, եւ նա

†Եբրայերէնում՝ պատանդներին:

փախաւ Լաքիս: Նրա յետեւից մարդ ուղարկեցին Լաքիս ու նրան այնտեղ սպանեցին: 20 Նրան բերեցին ձիերի վրայ ու թաղեցին Երուսաղէմում՝ Դաւթի քաղաքում, իր հայրերի մօտ:

21 Յուդայի երկրի ամբողջ ժողովուրդը վերցրեց տասնվեցամեայ Ազարիային եւ թագաւոր նստեցրեց նրա հայր Ամասիայի փոխարէն: 22 Ազարիան բարեկարգեց Ելոթը եւ արքայի մեռնելուց յետոյ այն վերադարձրեց Յուդայի երկրին:

ԻՍՐԱՅԷԼԻ ՅԵՐՈԲՈՎԱՄ ԹԱԳԱՒՈՐԸ

23 Յուդայի երկրի արքայ Յովասի որդի Ամասիայի թագաւորութեան տասնհինգերորդ տարում թագաւորեց Իսրայէլի արքայ Յովասի որդի Յերոբովամը: Նա քառասունմէկ տարի թագաւորեց Սամարիայում: 24 Նա Տիրոջ առջեւ չարիք գործեց, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի բոլոր մեղքերից: 25 Նա Իսրայէլի սահմանները՝ Եմաթի մուտքից մինչեւ Արաբա ծովը ապահով դարձրեց, ինչպէս իր ծառայ գեթաքոբերացի Ամաթի որդի Յովնան մարգարէի միջոցով ասել էր Տէր Աստուածը, 26 քանզի Տէրը տեսել էր սակաւամարդ, նեղուած, տկար ու լքուած Իսրայէլի չափազանց դառն տառապանքը. ոչ ոք չկար, որ օգնէր Իսրայէլին: 27 Տէրը չէր ուզում, որ Իսրայէլացիները բնաջնջուեն երկնքի ներքոյ, ուստի Յովասի որդի Յերոբովամի ձեռքով փրկեց նրանց:

28 Յերոբովամի մնացած գործերը, այն ամէնը, ինչ նա արել է, թէ պատերազմում նա ինչպիսի քաջագործութիւն է ցուցաբերել, ինչպէս է Դամասկոսն ու Եմաթը Յուդայի երկրից ազատելով վերադարձրել Իսրայէլին, չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

29 Յերոբովամը գնաց իր նախնիների՝ Իսրայէլի թագաւորների գիրկը, եւ նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Զաքարիան:

ՅՈՒԴԱՅԻ ԱԶԱՐԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 26. 1-23)

15 Իսրայէլի Յերոբովամ արքայի թագաւորութեան քսանեօթներորդ տարում թագաւորեց Յուդայի երկրի Ամասիա արքայի որդի Ազարիան: 2 Նա տասնվեց տարեկան էր, որ թագաւոր դարձաւ, եւ յիսուներկու տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Յեքեղիա էր, նա Երուսաղէմից էր: 3 Ազարիան իր հայր Ամասիայի նման ըստ ամենայնի բարի գործեր կատարեց Տիրոջ առջեւ, 4 բայց բարձունքների մեհեանները չվերացրեց, իսկ ժողովուրդը տակաւին զոհեր էր մատուցում եւ խունկ ծխում բարձունքներում: 5 Տէրը պատուհասեց թագաւորին, եւ նա բորոտ դարձաւ մինչեւ իր կեանքի վերջը: Նա առանձին մի տան մէջ էր բնակւում: Արքունի տան վրայ իշխում եւ երկրի ժողովրդին դատում էր արքայի որդին՝ Յովաթամը:

6 Ազարիայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 7 Ազարիան գնաց իր նախնիների գիրկը, եւ նրան թաղեցին Դաւթի քաղաքում, իր նախնիների մօտ: Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յովաթամը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԶԱՔԱՐԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ

8 Յուդայի երկրի արքայ Ազարիայի թագաւորութեան երեսունեօթներորդ տարում Իսրայէլի վրայ թագաւորեց Յերոբովամի որդի Զաքարիան: Նա վեց ամիս թագաւորեց Սամարիայում: 9 Նա իր նախնիների նման չարիք գործեց Տիրոջ առջեւ, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից: 10 Նրա դէմ գլուխ բարձրացրին Յաբիսի որդի Սեղղումն ու Կերդաամը. նրանք ժողովրդի ներկայութեամբ հարուածեցին նրան ու սպանեցին: Նրա փոխարէն թագաւորեց Սեղղումը:

11 Զաքարիայի մնացած գործերը նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 12 Ահա այս էր այն մարդը, որի մասին Տէրը ասել էր Յէուին. «Քո որդիներից միայն մինչեւ չորրորդ սերունդը պիտի նստի Իսրայէլի գահին»: Եւ այդպէս էլ եղաւ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՍԵՂՂՈՒՄ ԹԱԳԱՒՈՐԸ

13 Յաբիսի որդի Սեղղումը թագաւորեց Յուդայի երկրի արքայ Ազարիայի թագաւորութեան երեսունութերորդ տարում: Սեղղումը Սամարիայում թագաւորեց մէկ ամիս: 14 Գադդիի որդի Մանայեմը դուրս եկաւ Թերսայից, մտաւ Սամարիա, Սամարիայում հարուածեց Յաբիսի որդի Սեղղումին, սպանեց նրան ու փոխարէնը թագաւոր նստեց:

15 Սեղղումի մնացած գործերը, նրա կազմակերպած դաւադրութիւնները նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԱՆԱՅԵՄ ԹԱԳԱՒՈՐԸ

16 Այն ժամանակ Մանայեմը յարձակուեց Թերսայի վրայ եւ այնտեղ, սկսած Թերսայից, նրա սահմաններում գտնուող բոլորին սպանեց, յղի կանանց արգանդը պատռեց, որովհետեւ նրա առաջ չէին բացել քաղաքի դարպասները:

17 Յուդայի երկրի արքայ Ազարիայի թագաւորութեան երեսունիններորդ տարում Իսրայէլի վրայ թագաւորեց Գադդիի որդի Մանայեմը: Նա տասը տարի թագաւորեց Սամարիայում: 18 Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից:

19 Ասորեստանի արքայ Փուան եկաւ յարձակուեց Իսրայէլի վրայ: Մանայեմը Փուային հազար տաղանդ† արծաթ տուեց, որպէսզի նա իրեն օգնական լինի, եւ Մանայեմն իր թագաւորութիւնն իր ձեռքում պահի: 20 Այս արծաթն Ասորեստանի արքային տալու համար Մանայեմն Իսրայէլի բոլոր հարուստների վրայ հարկ դրեց, ամէն մէկից յիսնական սիկղ արծաթ առաւ: Ասորեստանի թագաւորը յետ դարձաւ՝ չմնաց երկրում:

21 Մանայեմի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ: Մանայեմը գնաց իր նախնիների գիրկը:

22 Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Փակէիան: 23 Յուդայի երկրի արքայ Ազարիայի թագաւորութեան յիսուներորդ տարում Փակէիան թագաւորեց Իսրայէլի վրայ: Նա տասը տարի թագաւորեց Սամարիայում: 24 Նա չարիք գործեց Տիրոջ առջեւ, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից: 25 Նրա դէմ գլուխ բարձրացրեց Ռոմելիայի որդի Փակէէն՝ իր զօրապետը: Սրա հետ էին Արգոբը եւ Արիէն, ինչպէս նաեւ չորսհարիւրեակի միջից յիսուն հոգի: Նա հարուածեց նրան Սամարիայում, արքունի տան առաջ, սպանեց նրան, եւ նրա փոխարէն ինքը թագաւորեց:

26 Փակէիայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՓԱԿԷէ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 27. 1-9)

27 Յուդայի երկրի արքայ Ազարիայի թագաւորութեան յիսուներկուերորդ տարում թագաւորեց Ռոմելիայի որդի Փակէէն: Նա Սամարիայում Իսրայէլի վրայ թագաւորեց քսան տարի: 28 Նա Տիրոջ առջեւ չարութիւն գործեց, չհրաժարուեց Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից: 29 Իսրայէլի արքայ Փակէէի օրօք եկաւ Ասորեստանի թակղաթփաղասար արքան, գրաւեց Այինը, Կաբէէլը, Բեթմաաքան, Յանոքը, Կենէզը, Ասորը, Գաղաադը եւ Գալիլիան, Նեփթալիմի ամբողջ երկիրը եւ նրանց բնակիչներին քշեց Ասորեստան: 30 Եղայի որդի Օսէէն դաւադրութիւն կազմակերպեց Ռոմելիայի որդի Փա-

†Նուրջ 30 տոննա:

կէէի դէմ, խփեց ու սպանեց նրան, եւ նրա փոխարէն ինքը թագաւորեց Օզիայի որդի Յովաթամի թագաւորութեան քսաներորդ տարում:

31 Փակէէի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, նկարագրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

32 Իսրայէլի թագաւոր Ռոմելիայի որդի Փակէէի թագաւորութեան երկրորդ տարում Իսրայէլում թագաւորեց Յուդայի երկրի արքայ Օզիայի որդի Յովաթամը: 33 Նա քսանհինգ տարեկան էր, որ թագաւոր դարձաւ եւ տասնվեց տարի իշխեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Յերուսա էր, նա Սադոկի դուստրն էր: 34 Յովաթամը ըստ ամենայնի արդար գտնուեց Տիրոջ առջեւ, այնպէս, ինչպէս իր հայր Օզիան, 35 միայն թէ նա բարձունքների մեհեանները չվերացրեց, եւ ժողովուրդը տակաւին զոհեր էր մատուցում եւ խունկ ծխում բարձունքներում: Նա շինեց Տիրոջ տան վերին դուռը:

36 Յովաթամի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

37 Այդ օրերին Տէրը Յուդայի երկրի դէմ ուղարկեց ասորիների արքայ Ռասոնին եւ Ռոմելիայի որդի Փակէէին:

38 Յովաթամը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց իր նախնի Դաւթի քաղաքում, իր նախնիների մօտ, եւ նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Աքազը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՔԱԶ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 28. 1-27)

16 Ռոմելիայի որդի Փակէէի թագաւորութեան տասնեօթներորդ տարում Իսրայէլում թագաւորեց Յուդայի երկրի արքայ Յովաթամի որդի Աքազը: 2 Աքազը քսան տարեկան էր, որ թագաւորեց եւ տասնվեց տարի իշխեց Երուսաղէմում: Նա հաւատարիմ չգտնուեց Տէր Աստծու առջեւ, ինչպէս հաւատարիմ էր եղել իր նախնի Դաւիթը, 3 այլ գնաց Իսրայէլի արքայ Նաբատի որդի Յերոբովամի ճանապարհով: Նա իր որդուն կրակի միջով անցկացրեց ըստ այն ազգերի գարշելի սովորութեան, որոնց Տէրն իսրայէլացիների առջեւից հալածել էր: 4 Նա զոհեր էր մատուցում եւ խունկ ծխում բարձունքների մեհեաններում, բլուրների վրայ ու ծառախիտ անտառներում:

5 Այն ժամանակ ասորիների արքայ Ռասոնը եւ Ռոմելիայի որդի Իսրայէլի թագաւոր Փակէէն ելան Աքազի դէմ պատերազմի ու պաշարեցին Երուսաղէմը, սակայն պատերազմը չարունակել† չկարողացան: 6 Այդ ժամանակ ասորիների Ռասոն արքան ելաթը վերադարձրեց ասորիներին, իսկ հրեաներին հանեց Ելաթից: Եդոմայեցիները եկան Ելաթ եւ այնտեղ են բնակւում մինչեւ այսօր: 7 Աքազը դեսպաններ ուղարկեց Ասորեստանի Թագղաթփաղասար արքային՝ ասելով. «Ես քո ծառան ու քո որդին եմ: Արի՛ եւ փրկի՛ր ինձ ասորիների արքայի ու Իսրայէլի արքայի ձեռքից, որոնք ինձ վրայ են յարձակուել»: 8 Աքազը Տիրոջ տանն ու թագաւորի տան գանձարանում գտնուող արծաթն ու ոսկին առաւ եւ ուղարկեց Ասորեստանի արքային որպէս պարգեւ: 9 Ասորեստանի արքան անսաց նրան, ելաւ Դամասկոսի դէմ ու գրաւեց այն, բնակիչներին գերեվարեց Կիւրէն, իսկ Ռասոնին սպանեց:

10 Աքազ արքան գնաց Դամասկոս, Ասորեստանի Թագղաթփաղասար արքային հանդիպելու: Նա տեսաւ Դամասկոսում եղած զոհասեղանը, այդ զոհասեղանի օրինակն ու ձեւերը բոլոր մանրամասներով ուղարկեց Ուրիա քահանային: 11 Ուրիա քահանան կառուցեց զոհասեղանը ըստ այն օրինակի, որ Աքազ արքան ուղարկել էր Դամասկոսից: Մինչեւ Աքազ արքայի Դամասկոսից վերադառնալը Ուրիա քահանան պատրաստեց դա: 12 Երբ արքան տեսաւ զոհասեղանը, մօտեցաւ դրան, զոհեր մատուցեց նրա վրայ, իր ողջակէզներն այրեց, 13 իր ընծաները նուիրեց, զոհասեղանի վրայ թափեց

† Նրան յաղթել:

խաղաղութեան զոհերի արիւնը: 14 Տիրոջ առջեւ գտնուող պղնձէ զոհասեղանը նա տեղափոխեց իր տեղից՝ Տիրոջ տան առջեւից, ու դրեց նոր զոհասեղանից հիւսիս: 15 Աքազ արքան պատուէր տուեց Ուրիա քահանային՝ ասելով. «Այս մեծ զոհասեղանի վրայ պէտք է մատուցես առաւօտեան ողջակէզը եւ երեկոյեան զոհաբերութիւնը, արքայի ողջակէզն ու նրա զոհաբերութիւնները, երկրի ժողովրդի ողջակէզները, զոհաբերութիւններն ու ընծաները: Բոլոր ողջակէզների ու զոհաբերութիւնների արիւնը նրա վրայ պէտք է թափես, իսկ պղնձէ զոհասեղանն իմ տրամադրութեան տակ պէտք է լինի առաւօտեան»: 16 Ուրիա քահանան ամէն ինչ արեց այնպէս, ինչպէս նրան պատուիրել էր Աքազ արքան: 17 Աքազ արքան կոտրեց անուաւոր խարիսխները, փոխադրեց լուացարանները, ձուլածոյ աւազանն իջեցրեց իր տակ գտնուող տասներկու պղնձէ ցուլերից ու դրեց քարէ յատակի վրայ: 18 Նա, ի պատիւ Ասորեստանի արքայի, Տիրոջ տան մէջ գահի համար մի պատուանդան դրեց եւ թագաւորական տան արտաքին մուտքը դարձրեց Տիրոջ տան կողմը:

19 Աքազի կատարած մնացած գործերը չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 20 Աքազը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Դաւթի քաղաքում, իր նախնիների մօտ: Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Եզեկիան:

ԻՍՐԱՅԷԼԻ ՕՍԷԷ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՍԱՄԱՐԻԱՅԻ ԳՐԱՒՈՒՄԸ

17 Յուդայի երկրի արքայ Աքազի թագաւորութեան տասներկուերորդ տարում Իսրայէլի վրայ թագաւորեց Ելայի որդի Օսէէն: Նա Սամարիայում թագաւորեց ինը տարի: 2 Նա Տիրոջ առջեւ չար գտնուեց, բայց ոչ Իսրայէլի այն թագաւորների նման, որոնք իրենից առաջ կային: 3 Նրա դէմ յարձակուեց Ասորեստանի Սաղմանասար արքան, եւ Օսէէն նրան ենթակայ դարձաւ, նրան հարկ էր տալիս, որ նա տանի: 4 Ասորեստանի արքան, սակայն, տեսաւ, որ Օսէէի մէջ նենգութիւն կայ, որովհետեւ սա պատգամաւորներ էր ուղարկել Եգիպտոսի թագաւոր Սովային եւ այդ տարի հարկ չէր վճարել Ասորեստանի արքային: Ասորեստանի արքան կալանաւորեց նրան եւ բանտարկեց: 5 Ասորեստանի արքան յարձակուեց ամբողջ երկրի վրայ, ելաւ նաեւ Սամարիայի դէմ եւ այն պաշարեց երեք տարի:

6 Օսէէի թագաւորութեան իններորդ տարում Ասորեստանի արքան գրաւեց Սամարիան եւ իսրայէլացիներին քշեց Ասորեստան, նրանց բնակեցրեց Ալաթում եւ Աբորում, Գոզան գետի մօտ ու Մարերի լեռներում: 7 Իսրայէլացիները մեղանչել էին իրենց տէր Աստծու դէմ, որն իրենց հանել էր Եգիպտացիների երկրից եւ ազատել եգիպտացիների Փարաւոն արքայի ձեռքից: Նրանք սկսել էին երկիւղ կրել օտար աստուածներից, 8 հետեւել այն ազգերի կրօնին, որոնց Տէրը քշել էր իսրայէլացիների առջեւից: 9 Իսրայէլի թագաւորները նման շատ բաներ էին արել, եւ իսրայէլացիները նման շատ թաքուն գործեր կատարել, որ չպէտք է անէին իրենց Աստծու դէմ: Նրանք իրենց բոլոր քաղաքներում բարձրադիր տեղեր ստեղծեցին, սկսած պահապանների աշտարակից մինչեւ պարսպապատ քաղաքը, 10 իրենց համար արձաններ եւ կուռքեր կանգնեցրին, բոլոր բարձր բլուրների վրայ, բոլոր անտառախիտ ծառերի ներքոյ, 11 բոլոր բարձունքների վրայ խունկ էին ծխում այն բոլոր ազգերի նման, որոնց Տէրը վտարել էր նրանց առջեւից: Նրանք վատ ընկերակիցներ ունեցան եւ վատ հաւաքոյթներ կազմակերպեցին, որպէսզի բարկացնեն Տիրոջը: 12 Նրանք պաշտեցին կուռքեր, որոնց մասին Տէրն իրենց ասել էր. «Այդ բանը մի՛ արէք յանուն Տիրոջ»:

13 Տէրը բոլոր մարգարէների ու տեսանողների միջոցով Իսրայէլին ու Յուդայի երկրին զգուշացրեց՝ ասելով. «Դարձէ՛ք ձեր չար ճանապարհներից, պահեցէ՛ք իմ պատուիրանները, իմ

կանոններն ու օրէնքները, որ պատուիրեցի ձեր հայրերին, եւ որոնք ձեզ հաղորդեցի իմ ծառայ մարգարէների միջոցով»: 14 *Նրանք չլսեցին, աւելի ըմբոստացան, քան իրենց հայրերը, չհաւատացին իրենց Տէր Աստծուն:* 15 *Նրանց հայրերի հետ Աստծու կնքած ուխտերը, դաշինքներն ու վկայութիւնները նրանք չպահեցին, գնացին սնոտի աստուածներ պաշտողների հետքերով՝ իրենք էլ նրանց հետ սնոտի աստուածներ պաշտողներ դառնալով իրենց շրջապատող ազգերին հետեւելով: Մինչդեռ Տէրը պատուիրել էր, որ չնմանուեն նրանց:* 16 *Նրանք անտեսեցին իրենց Տէր Աստծու բոլոր պատուիրանները, իրենց համար երկու ձուլածոյ երինջներ պատրաստեցին, երկնքի զօրութիւններին երկրպագեցին, պաշտեցին Բահաղին,* 17 *իրենց տղաներին եւ աղջիկներին կրակի միջով անցկացրին, կախարդութիւն ու հմայութիւն արեցին, համարձակուեցին Տիրոջ առջեւ չարութիւն գործել եւ զայրացրին նրան:* 18 *Տէրն Իսրայէլի վրայ խիստ բարկացաւ, չուզեց տեսնել նրանց երեսը, այնպէս որ միայն Յուդայի ցեղն էր մնացել:*

19 *Սակայն Յուդայի ցեղի մարդիկ էլ չպահեցին իրենց Տէր Աստծու պատուիրանները եւ ընթացան Իսրայէլի երկրում ընդունուած սովորութիւններով:* 20 *Նրանք Տիրոջը հեռու պահեցին Իսրայէլի ամբողջ սերնդից*†*: Տէրը նրանց չարչարեց եւ աւարառուների ձեռքը մատնեց, մինչեւ որ նրանց իր երեսից հեռու վանեց:*

21 *Մինչ Դաւթի տունը գոյութիւն ունէր, նրանք Իսրայէլի թագաւոր էին նստեցրել Նաբատի որդի Յերոբովամին, եւ Յերոբովամը Իսրայէլացիներին արգելել էր ընթանալ Տիրոջ ճանապարհով, նրանց մեծ մեղքեր գործել տուել:* 22 *Իսրայէլացիներն ընթացել էին Յերոբովամի գործած բոլոր մեղքերի ճանապարհով, չէին հրաժարուել դրանցից:* 23 *Տէրն իր երեսը թեքել էր Իսրայէլից, ինչպէս որ մարգարէների միջոցով ասել էր իր բոլոր ծառաներին: Այսպէս է, որ Իսրայէլացիներն իրենց երկրից Ասորեստան գերեվարուեցին, ուր գտնուում են մինչեւ այսօր:*

†Եբրայերէնում՝ *Տէրը մերժեց Իսրայէլի ամբողջ սերնդին:*

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԻՈՒՄ ԵՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ

24 *Ասորեստանի արքան Բաբելոնից, Քութից, Այայից, Եմաթից ու Սեփփարուիմից մարդկանց էր բերել տուել եւ Իսրայէլացիների փոխարէն բնակեցրել Սամարիայի քաղաքներում: Նրանք ժառանգել էին Սամարիան ու բնակուել նրա քաղաքներում:* 25 *Իրենց բնակութեան սկզբնական շրջանում նրանք չէին վախեցել Տիրոջից, եւ Տէրն առիւծներ էր ուղարկել, որ յօշոտեն նրանց:* 26 *Նրանք դիմել էին Ասորեստանի թագաւորին՝ ասելով. «Այն ազգերը, որոնց փոխադրեցիր եւ Սամարիայի քաղաքներում բնակեցրիր, չգիտեն այդ երկրի Աստծու կրօնը, Տէրը նրանց վրայ առիւծներ ուղարկեց, որոնք ահա յօշոտում են նրանց, որովհետեւ չգիտեն այդ երկրի Աստծու կրօնը»:* 27 *Ասորեստանի արքան հրաման էր արձակել ու ասել. «Այնտե՛ղ տարէք ձեր գերեվարած քահանաներից մէկին, որ գնայ այնտեղ բնակուի, սովորեցնի Տիրոջ կրօնը եւ լուսաւորի նրանց այդ երկրի Աստծու օրէնքներով»:* 28 *Գերուած քահանաներից մէկին Սամարիայից տարել էին, բնակեցրել Բեթէլում: Քահանան լուսաւորել էր նրանց եւ սովորեցրել, որ երկիւղ կրեն Տիրոջից:* 29 *Ամէն մի ազգ իր ապրած քաղաքում իր համար տարբեր աստուածներ էր պատրաստել եւ դրել այն բարձունքների վրայ գտնուող մեհեաններում, որ սամարացիներն էին շինել:* 30 *Բաբելացիները կառուցել էին Սոքքոթն ու Բանոթը, քութացիները կառուցել էին Անգեղը, եմաթացիները կառուցել էին Ասիմաթը,* 31 *այիացիները կառուցել էին Աբլազերը, Նեբասը, Թարթակն ու Սեփփարուիմը, ուր սեփփարուիմացիները կենդանի վառում էին իրենց որդիներին Սեփփարուիմի աստուածներ Ադրամելէքի ու Ամամելէքի համար վառուող հրով:* 32 *Նրանք երկիւղ էին կրում նաեւ Տիրոջից, սակայն իրենց գարշելի կուռքերը հաստատել էին բարձունքների վրայ գտնուող մեհեաններում, որ ամէն մի ազգ շինել էր Սամարիայում, այնտեղ, ուր նրանք բնակւում էին: Թէեւ Տիրոջից երկիւղ էին կրում, բայց բարձունքների վրայ քրմեր էին նշանակել.* 33 *թէեւ երկիւղ էին կրում Տիրոջից, բայց պաշտում էին իրենց աստուածներին ըստ այն ազգերի կրօնների, որոնց Աստուած մերժել էր:*

34 *Մինչեւ օրս նրանք առաջնորդւում են իրենց սովորութիւններով. թէեւ երկիւղ են կրում Տիրոջից, բայց վարւում են ըստ իրենց սովորութիւնների, կանոնների եւ օրէնքների, նաեւ ըստ այն պատուիրանի, որ Տէրը պատուիրել էր Յակոբի որդիներին: Տէրը Յակոբի անունը դրել էր Իսրայէլ:* 35 *Տէրը նրանց հետ ուխտ էր դրել, պատուիրել ու ասել. «Մի՛ վախեցէք օտար աստուածներից, մի՛ երկրպագէք նրանց, մի՛ պաշտէք նրանց, զոհեր մի՛ մատուցէք նրանց,* 36 *այլ վախեցէ՛ք Տէր Աստծուց, որը մեծ զօրութեամբ ու հզօր բազկով ձեզ դուրս բերեց Եգիպտոսից: Նրանի՛ց վախեցէք, նրա՛ն երկրպագեցէք ու նրա՛ն զոհեր մատուցեցէք:* 37 *Ձեզ համար գրուած կանոնները, դատաստանները, օրէնքներն ու պատուիրանները զգուշութե՛ամբ գործադրեցէք: Մի՛ վախեցէք օտար աստուածներից,* 38 *մի՛ մոռացէք այն ուխտը, որ Տէրը դրել է ձեզ հետ, մի՛ վախեցէք օտար աստուածներից, այլ ձեր Տէ՛ր Աստծուց երկիւղ կրեցէք:* 39 *Նա ձեզ կը փրկի ձեր բոլոր թշնամիներից:* 40 *Մի՛ հաւատացէք նրանց կրօնին, որին նրանք հետեւում են:* 41 *Այդ ազգերը թէպէտ Տիրոջից վախենում էին, բայց իրենց քանդակած կուռքն էին պաշտում: Նրանց որդիներն ու որդիների որդիները մինչեւ այսօր վարւում են այնպէս, ինչպէս իրենց նախնիները»:*

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԵԶԵԿԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 29. 1-2, 31. 1)

18 *Իսրայէլի արքայ Եղայի որդի Օսէէի թագաւորութեան երրորդ տարում թագաւորեց Յուդայի երկրի Աքազ արքայի որդի Եզեկիան:* 2 *Նա քսանհինգ տարեկան էր, որ թագաւորեց, եւ Երուսաղէմում քսանինը տարի իշխեց: Նրա մօր անունը Աբութ էր, որը Զաքարիայի դուստրն էր:* 3 *Նա իր նախնի Դաւթի նման ըստ ամենայնի ուղիղ ընթացաւ Տիրոջ առջեւ:* 4 *Նա վերացրեց բարձունքների մեհեանները, խորտակեց բոլոր արձանները, ջարդուփշուր արեց կուռքերի կոթողները, փշրեց Մովսէսի շինած պղնձէ օձը, քանզի մինչեւ այդ օրը իսրայէլացիները զոհ էին մատուցում նրան եւ այն կոչում էին Նէեսթան:* 5 *Նա իր յոյսը կապեց Իսրայէլի Տէր Աստծու հետ, եւ նրա նմանը չեղաւ Յուդայի երկրի ո՛չ յաջորդ, ո՛չ էլ նախորդ բոլոր թագաւորների մէջ:* 6 *Նա Տիրոջն ապաւինեց, նրա ճանապարհից չխոտորուեց, պահեց Մովսէսին պատգամուած պատուիրանները,* 7 *ուստի Տէրը նրա հետ էր, եւ Եզեկիան ինչ որ անում էր, խելամտօրէն էր անում: Նա ապստամբեց Ասորեստանի արքայի դէմ, չծառայեց նրան,* 8 *այլազգիներին քշեց մինչեւ Գազա եւ նրա սահմանները, Պահապանների աշտարակից մինչեւ պարսպապատ քաղաքը:*

9 *Եզեկիա արքայի թագաւորութեան չորրորդ տարում, այսինքն՝ Իսրայէլի Եղա արքայի որդի Օսէէի թագաւորութեան եօթներորդ տարում Ասորեստանի արքայ Սաղմանասարը ելաւ Սամարիայի դէմ, պաշարեց այն եւ երեք տարի անց քաղաքը գրաւեց:* 10 *Եզեկիայի թագաւորութեան վեցերորդ տարում, այսինքն՝ Իսրայէլի արքայ Օսէէի թագաւորութեան իններորդ տարում Ասորեստանի արքան գրաւեց Սամարիան* 11 *եւ սամարացիներին քշեց Ասորեստան, նրանց տեղաւորեց Ալաթում եւ Աբորում՝ Գոզան գետի եւ Մարաց լեռների մօտ,* 12 *որովհետեւ նրանք իրենց Տէր Աստծուն չէին անսացել, նրա ուխտը չէին պահել եւ այն, ինչ նրանց պատուիրել էր Տիրոջ ծառայ Մովսէսը, չէին լսել ու չէին կատարել:*

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿԻՐ
(Բ Մնաց., 32. 1-19, Եսայի 36. 1-22)

13 Եզեկիա արքայի թագաւորութեան տասնչորսերորդ տարում Ասորեստանի Սենեքերիմ արքան յարձակուեց Ցուդայի երկրի պարսպապատ քաղաքների վրայ եւ գրաւեց դրանք: 14 Ցուդայի երկրի արքայ Եզեկիան Ասորեստանի արքայի մօտ դեսպաններ ուղարկելով Լաքիս՝ ասաց. «Մեղանչել եմ, յե՛տ դարձիր իմ երկրից, եւ ինչ տուգանք որ ինձ վրայ դնես, կը հատուցեմ»: Ասորեստանի արքան Ցուդայի երկրի արքայ Եզեկիայի վրայ երեք հարիւր տաղանդ արծաթ† եւ երեսուն տաղանդ ոսկի‡ տուգանք դրեց, 15 եւ Եզեկիան Տիրոջ տանը եւ թագաւորի գանձատանը ինչ որ գտաւ, տուեց: 16 Այդ ժամանակ Եզեկիան պոկեց Տիրոջ տաճարի դռների եւ դրանդիկների վրայ եղած ոսկին, որ ինքը՝ Ցուդայի երկրի արքայ Եզեկիան էր պատել, ու տուեց Ասորեստանի արքային:

17 Ասորեստանի արքան Թարաթային, Ռաբսարիսին ու Ռափսակին մեծ զօրքով Լաքիսից ուղարկեց Երուսաղէմ, Եզեկիա արքայի մօտ: Սրանք ելան ու եկան Երուսաղէմ եւ, կանգնելով թափիչի§ ագարակի ճանապարհին գտնուող վերին աւազանի ջրմուղի վրայ, 18 կանչեցին Եզեկիային: Նրանց մօտ եկան Քեղկիայի որդի Եղիակիմ հազարապետը, Սոմնաս դպրապետը եւ Ասափի որդի Ցովաքը, որ պատմագիր էր:

19 Ռափսակը նրանց ասաց. «Ասացէ՛ք Եզեկիային, որ այսպէս է ասում մեծ արքան՝ Ասորեստանի արքան. "Ի՞նչ է քո յոյսը, որին դու ապաւինել ես: 20 Եթէ ասես, թէ խորհուրդ ու զօրութիւն են անհրաժեշտ պատերազմի համար, թէեւ դրանք դատարկ խօսքեր են, ապա ո՞ւմ ապաւինելով ապստամբեցիր իմ դէմ: 21 Դու ապաւինել ես այդ ջախջախուած եղէգի՞ն՝ Եգիպտոսի՞ն, որին եթէ մարդ յենուի, ձեռքը կը ծակի, ու նա կը խոցուի դրանից: Այդպիսին է Եգիպտոսի Փարաւոն արքան բոլոր նրանց համար, ովքեր իրենց յոյսը դնում են նրա վրայ: 22 Ինձ ասացիր, թէ՝ Տէր Աստծուն ենք ապաւինում: Դա այն չէ՞, որի բարձրադիր մեհեաններն ու զոհասեղանները Եզեկիան ոչնչացրեց եւ Ցուդայի երկրին ու Երուսաղէմին ասաց. "Երուսաղէմում միայն այս զոհասեղանի առջեւ երկրպագեցէք": 23 Արդ, իմ տիրոջ՝ Ասորեստանի արքայի հետ հաշտուեցէ՛ք, եւ նա քեզ երկու հազար երիվար կը տայ, եթէ դու կարող ես այդքան հեծեալներ գտնել դրանց համար: 24 Ինչպէ՞ս կարող ես դիմադրել իմ տիրոջ յետին ծառաներից որեւէ զօրականի եւ դեռ մարտակառքեր ու երիվարներ ստանալու համար ապաւինում ես Եգիպտոսին: 25 Կամ առանց Տիրոջ հրամանի՞ եմ ես յարձակուել այս երկրի վրայ, որ բնաջնջեմ այն: Տէրն ինձ ասել է. "Յարձակուի՛ր այդ երկրի վրայ եւ բնաջնջի՛ր այն"»:

26 Քեղկիայի որդի Եղիակիմը, Սոմնասն ու Ասափի որդի Ցովաքը ասացին Ռափսակին. «Մեզ՝ քո ծառաների հետ ասորերէ՛ն խօսիր, որովհետեւ մենք հասկանում ենք այդ լեզուն, պարսպի վրայ կանգնած ժողովրդի ներկայութեամբ եբրայերէն մի՛ խօսիր»: 27 Բայց Ռափսակը նրանց ասաց. «Միթէ իմ տէրն այս խօսքերը քո տիրո՞ջ ու քե՞զ ասելու համար ուղարկեց ինձ. չէ՞ որ պարսպի վրայ կանգնած մարդկանց համար, որպէսզի ձեզ հետ ուտեն իրենց կեղտը եւ խմեն իրենց մէզը»:

28 Ռափսակը ելաւ, բարձր ձայնով բղաւելով՝ եբրայերէն ասաց. «Լսեցէ՛ք մեծ արքայի՝ Ասորեստանի արքայի պատգամը: 29 Այսպէս է ասում արքան. "Թող Եզեկիան չմոլորեցնի ձեզ, քանզի նա չի կարող ձեզ իմ ձեռքից փրկել: 30 Եզեկիան ձեզ թող Տիրոջով չյուսադրի՝ ասելով, թէ 'Տէրը մեզ անպայման կը փրկի եւ այս քաղաքը չի մատնի Ասորեստանի արքայի ձեռքը': 31 Մի՛ լսէք Եզեկիային, որովհետեւ այսպէս է ասում Ասորեստանի արքան. "Ինձ հետ հաշտութիւն կնքեցէ՛ք, եկէ՛ք ինձ մօտ, եւ ամէն մարդ իր խաղողի այգուց ու թզենուց կ'ուտի, իր ջրհորից ջուր կը խմի, 32 մինչեւ որ գամ, ձեզ վերցնեմ ու տանեմ մի երկիր, որ ձեր երկրի նման է՝ ցորենի ու գինու երկիր, այգիների ու հացի երկիր, ձիթենիների, իւղի ու մեղրի երկիր: Դուք այնտեղ կ'ապրէք ու չէք մեռնի: Մի՛ լսէք Եզեկիային, որովհետեւ խաբում է ձեզ՝ ասելով, թէ՝ 'Տէրը մեզ կը փրկի': 33 Միթէ ազգերի աստուածները Ասորեստանի արքայի ձեռքից փրկեցի՞ն նրանց երկրները: 34 Ո՞ւր է Եմաթի ու Արփաթի աստուածը, ո՞ւր է Սեփփարուիմ քաղաքի աստուածը, Անայի ու Աւայի աստուածը: Միթէ նրանք փրկեցի՞ն Սամարիան իմ ձեռքից: 35 Երկրի բոլոր աստուածներից ո՞ր մէկը կարողացաւ իր երկիրն իմ ձեռքից փրկել, որ Տէրը Երուսաղէմը փրկի իմ ձեռքից"»:

36 Մարդիկ լռեցին եւ պատասխան չտուեցին, որովհետեւ արքան հրաման էր տուել, թէ՝ «Նրան մի՛ պատասխանէք»:

37 Քեղկիայի որդի Եղիակիմ հազարապետը, Սոմնաս դպրապետը եւ Ասափի որդի Ցովաքը՝ պատմագիրը, զգեստները պատառոտելով եկան Եզեկիայի մօտ ու հաղորդեցին նրան Ռափսակի ասածները:

ԵԶԵԿԻԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ Է ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ՀԵՏ
(Եսայի 37. 1-7)

19 Երբ Եզեկիան լսեց արքայի պատգամը, պատառոտեց իր զգեստները, քուրձ հագաւ ու մտաւ Տիրոջ տունը: 2 Նա Եղիակիմ հազարապետին, Սոմնաս դպրապետին եւ քահանաներից ծերերին քրձեր հագած ուղարկեց Ամոսի որդի Եսայի մարգարէի մօտ, 3 որոնք նրան ասացին. «Այսպէս է ասում Եզեկիան. "Այս օրը նեղութեան, կշտամբանքների ու նախատինքի օր է, որովհետեւ երեխաների մայրերը երկունքի մէջ են, սակայն ուժ չունեն ծննդաբերելու: 4 Թերեւս քո Աստուածը լսի Ռափսակի պատգամները, որին իր տէրը՝ Ասորեստանի արքան է ուղարկել, որպէսզի անարգի կենդանի Աստծուն, քսու խօսքերով հայհոյի: Այդ բոլորը լսեց քո Տէր Աստուածը: Դու կենդանի մնացողներիս համար աղօթի՛ր"»: 5 Եզեկիա արքայի ծառաները եկան Եսայի մարգարէի մօտ. Եսային նրանց ասաց. 6 «Այսպէ՛ս ասացէք ձեր տիրոջը. այս է ասում Տէրը. "Մի՛ վախեցիր այն խօսքերից, որոնցով Ասորեստանի արքայի ծառաները ինձ հայհոյեցին: 7 Ես նրան այնպիսի մի ոգի կը ներշնչեմ, որ նա մի գոյժ լսելով՝ իր երկիրը կը վերադառնայ, եւ ես սրով նրան կ'ոչնչացնեմ իր երկրում"»:

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ
(Եսայի 37. 7-20)

8 Ռափսակը վերադարձաւ ու տեսաւ, որ Ասորեստանի արքան Ղոբնայի դէմ պատերազմի մէջ է, թէեւ լսել էր, որ նա չուել է Լաքիսից: 9 Նա լսել էր եթովպացիների արքայ Թարակայի մասին. նրան ասել էին, թէ՝ «Նա քո դէմ պատերազմի է ելել»: Նա այնտեղից վերադարձաւ, դեսպաններ ուղարկեց Եզեկիային՝ ասելով. 10 «Այսպէ՛ս ասացէք Ցուդայի երկրի արքայ Եզեկիային. "Թող քո Աստուածը, որին ապաւինել ես, քեզ չամբարտաւանացնի՝ մտածելով, թէ Երուսաղէմը Ասորեստանի արքայի ձեռքը չի մատնուի: 11 Դու ինքդ լսել ես, թէ ինչպէս Ասորեստանի արքաները կործանել են բազմաթիւ երկրներ, իսկ դու պիտի փրկուե՞ս: 12 Միթէ ազգերի աստուածները փրկեցի՞ն Գոզանի, Քառանի, Ռափաթի մարդկանց, Ծովեզերքի մօտ բնակուող եդոմացիներին, որոնց ոչնչացրին իմ նախնիները: 13 Ո՞ւր են Եմաթի արքան, Արփաթի արքան, Սեփփարուիմ քաղաքի, Անայի ու Աւայի արքան"»:

14 Եզեկիան հրովարտակներն առաւ դեսպանների ձեռքից, ընթերցեց դրանք, ապա գնաց Տիրոջ տուն եւ դրանք բաց վիճակում ցոյց տուեց Տիրոջը: 15 Եզեկիան Տիրոջն աղօթելով՝ ասաց. «Տէ՛ր Աստուած Իսրայէլի, դու, որ նստած ես քերովբէների վրայ, աշխարհի բոլոր թագաւորութիւնների մէջ միայն դո՛ւ ես Աստուած, դո՛ւ ես

†Շուրջ 9000 կիլոգրամ արծաթ:
‡Շուրջ 900 կիլոգրամ ոսկի:
§Թաղիմ մամրող:

ստեղծել երկինքն ու երկիրը: 16 Տէ՛ր,
ակա՛նջ դիր ու լսի՛ր, բա՛ց աչքերդ ու
տե՛ս, լսի՛ր Սենեքերիմի խօսքերը, որ
մարդ էր ուղարկել նախատելու կեն-
դանի Աստծուն: 17 Արդարեւ, Տէ՛ր, Ա-
սորեստանի թագաւորները ազգեր ու
երկրներ ոչնչացրին, 18 հրի մատնեցին
նրանց աստուածներին, որոնք աս-
տուածներ չէին, այլ իրեր, որ փայտից
ու քարից պատրաստուած էին մարդ-
կանց ձեռքով, եւ ոչնչացրին դրանց:
19 Արդ, Տէ՛ր Աստուած մեր, փրկի՛ր մեզ
նրանց ձեռքից, թող աշխարհի բոլոր
թագաւորութիւններն իմանան, որ
միայն դո՛ւ ես Տէր Աստուածը»:

ԵՍԱՅՈՒ ՊԱՏԳԱՄԸ ԹԱԳԱՒՈՐԻՆ
(Եսայի 37. 21-38)

20 Ամոսի որդի Եսային մարդ ու-
ղարկեց Եզեկիայի մօտ՝ ասելով. «Այս-
պէս է ասում զօրութիւնների Տէր Ա-
ստուածը՝ Իսրայէլի Աստուածը. Ասո-
ր ե ս տ ա ն ի Սենեքերիմ արքայի մասին
ինձ ուղղած աղօթքդ լսեցի: 21 Նրա
մասին Տիրոջ ասած խօսքն այս է.
"Սիոնի կոյս դուստրը քեզ արհա-
մարհեց, անգոսնեց,
Երուսաղէմի դուստրը շարժեց քո
դէմ գլուխն իր:
22 Դու ո՞ւմ նախատեցիր ու հայ-
հոյեցիր,
ո՞ւմ վրայ նախատալից ձայնդ
բարձրացրիր,
հայեացքդ յառեցիր Իսրայէլի սրբի
վրայ:
23 Դեսպաններիդ միջոցով Տիրոջը
կշտամբեցիր՝ ասելով.
'Իմ բազմաթիւ կառքերով ես ելայ
լեռների բարձունքը՝ Լիբանանի լան-
ջերը,
կտրատեցի մեծամեծ եղեւնիներն ու
ընտիր նոճիները նրա,
հասայ եզրը Կարմելի անտառի,
24 փորեցի եւ խմեցի օտար աղբիւր-
ների ջրեր,
իմ ոտքի թաթով ցամաքեցրի ջրա-
ռատ գետեր':
25 Միթէ չե՞ս լսել, Սենեքերի՛մ,
որ ես դա նախօրօք էի պատրաստել
ու հասցրել այն վիճակի,
որ պատերազմում, նոյնիսկ պարըս-
պապատ քաղաքներում
գերեվարուածների խմբերը տարան-
ջատուեն,
26 այնտեղ բնակուող մարդիկ տկա-
րանան ու զարհուրեն,
ամաչեն ու դառնան նման վայրի
խոտի,
դալար բանջարի, տանիքին բուսած
խոտի
եւ լինեն ամէն հասնողի ոտքի կո-
խան:
27 Ես գիտեմ, թէ դու երբ ես նստում,
երբ ես վեր կենում,
երբ ես մտնում ու ելնում:
28 Գիտեմ նաեւ քո զայրոյթն իմ
դէմ:
Քո խռովքը հասել է ականջիս:
Ես կարթ կը դցեմ քո քթին,
սանձ կը դնեմ քո բերանին,
քեզ յետ կ'ուղարկեմ այն ճանա-
պարհով, որով եկել ես:
29 Ահա թէ ինչը քեզ համար նշան
կը լինի, Եզեկիա՛.
այս տարի կ'ուտես ինքնաբոյս ցո-
րենը,
երկրորդ տարին նոյնպէս՝ ինքնա-
բոյս ցորենը,
երրորդ տարին՝ ձեր ցանածը,
հնձածն ու այգիների բերքը,
դրանց արդիւնքները կ'ուտէք:
30 Ցուղայի երկրում կենդանի մնա-
ցածները բազմանալու են,
ներքեւից արմատ են արձակելու,
վերեւից պտուղ են տալու,
31 քանզի Երուսաղէմից են ելնելու
կենդանի մնացածները,
եւ Սիոն լեռից՝ փրկուածները:
Զօրութիւնների Տիրոջ նախան-
ձախնդրութիւնն է դա ի կատար
ածելու:
32 Դրա համար այսպէս է ասում
Տէրը.
'Ասորեստանի արքան չի մտնի այս
քաղաքը,
նետեր չի արձակի դրա վրայ,
քաղաքը չի պաշարի վահաններով,
նրա առջեւ հողաթումբ չի կանգ-
նեցնի,
33 յետ կը գնայ այն ճանապարհով,
որով եկել էր,

եւ այս քաղաքը չի մտնի':
Այսպէս է ասում Տէրը.
34 'Այս քաղաքը պիտի հովանա-
ւորեմ,
որպէսզի այն ազատեմ ինձ ու իմ
ծառայ Դաւթի համար'»:

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՆԱՀԱՆՋԸ
ԵՒ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՄԱՀԸ

35 Երբ որ գիշերը վրայ հասաւ,
Տիրոջ հրեշտակը եկաւ եւ Ասորեստանի
բանակից հարիւր ութսունհինգ հազար
մարդ սպանեց: Երբ առաւօտ կանուխ
վերապրողները ելան, տեսան, որ բո-
լորը մեռել են: 36 Ասորեստանի Սե-
նեքերիմ արքան չուեց ու գնաց բնա-
կուեց Նինուէում: 37 Երբ նա երկրպա-
գում էր իր Նեսրաք աստծու տանը,
նրա որդիներ Ադրամելէքն ու Սարա-
սարը նրան սրով հարուածեցին եւ
Արարատի երկիրը փախան: Նրա
փոխարէն թագաւորեց իր որդին՝
Ասորդանը:

ԵԶԵԿԻԱՅԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՒԺՈՒՄԸ
(Եսայի 38. 1-8, 21-22, Բ Մնաց., 32. 24-26)

20 Այդ օրերին Եզեկիան մերձիմահ
հիւանդացաւ:
Նրա մօտ եկաւ Ամոսի որդի Եսայի
մարգարէն եւ ասաց նրան. «Այսպէս է
ասում Տէրը. "Քո տան գործերը կարգի՛
դիր, քանզի դու չես առողջանալու,
մեռնելու ես"»: 2 Եզեկիան երեսը պա-
տի կողմը դարձրեց եւ աղօթեց Տիրոջն՝
ասելով. 3 «Ո՛վ Տէր, յիշի՛ր, թէ ինչպէս
եմ ես քո առջեւ ճշմարտութեամբ ու
հաւատարիմ սրտով ընթացել, քո առ-
ջեւ բարին եմ կատարել»: Եւ Եզեկիան
դառնօրէն արտասուեց: 4 Եսային դեռ
դուրս չէր եկել գաւթից, երբ նրան
հասաւ Տիրոջ խօսքը, որ ասում էր.
5 «Ցե՛տ դարձիր եւ իմ ժողովրդի
առաջնորդ Եզեկիային ասա՛. "Այսպէս
է ասում քո նախնի Դաւթի Տէր Ա-
ստուածը. 'Լսեցի քո աղօթքը եւ տեսայ
քո արտասուքը: Ես, ահա, պիտի
բժշկեմ քեզ, երրորդ օրը պիտի գաս
Տիրոջ տունը, 6 քո կեանքը տասնհինգ
տարով պիտի երկարեցնեմ, Ասորես-
տանի արքայի ձեռքից պիտի փրկեմ
քեզ ու քո քաղաքը, պաշտպան պիտի
կանգնեմ քո քաղաքին ինձ ու իմ
ծառայ Դաւթի համար'"»: 7 Եսային
ասաց. «Զոր թզե՛ր բերէք»: Բերեցին,
վէրքի վրայ դրեցին, ու նա առող-
ջացաւ:
8 Եզեկիան ասաց Եսայուն. «Ի՞նչ է
նշանակում այն, որ Տէրն ինձ բժշկեց,
եւ թէ ինչո՞ւ երրորդ օրը Տիրոջ դուռը
պիտի գնամ»: 9 Եսային ասաց. «Դա
նշան է Տիրոջ կողմից, որ Տէրն իր
խօսքը կը կատարի. արեւի ժամացոյցի
ստուերը տասն աստիճան առաջ պիտի
շարժուի»: 10 Եզեկիան ասաց. «Ստուե-
րի տասը աստիճան առաջ շարժուելը
բնական բան է: Ո՛չ, այդպէս թող
չլինի, ստուերը թող տասն աստիճան
յետ դառնայ»: 11 Եսայի մարգարէն
դիմեց Տիրոջը, եւ ստուերը տասն
աստիճան յետ դարձաւ Աքազի արեւի
ժամացոյցի աստիճաններով:

ԵԶԵԿԻԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԲԱԲԵԼՈՆԻ
ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ
(Եսայի 39. 1-8)

12 Այդ ժամանակ Բաբելոնի արքան՝
Բաղդանի որդի Մարոդաք Բաղդանը
հրովարտակներ ու ընծաներ ուղարկեց
Եզեկիային, որովհետեւ լսել էր, թէ
Եզեկիան հիւանդացել է: 13 Եզեկիան
ուրախացաւ դրանց համար եւ նրա
դեսպաններին ցոյց տուեց Նաքոթի
ամբողջ գանձատունը, արծաթը, ոս-
կին, խնկերը, անուշահոտ իւղերը,
զինանոցը եւ այն ամէնը, ինչ կար իր
գանձատանը: Եզեկիան իր տանը եւ
ամբողջ իշխանութեան մէջ տեղ չթո-
ղեց, որ ցոյց չտար նրանց:
14 Եսայի մարգարէն եկաւ Եզեկիա
արքայի մօտ ու ասաց նրան. «Ի՞նչ
խօսեցին այդ մարդիկ եւ որտեղի՞ց էին
եկել քեզ մօտ»: Եզեկիան ասաց.
«Հեռու երկրից՝ Բաբելոնից էին եկել
ինձ մօտ»: 15 Եսային ասաց. «Ի՞նչ
տեսան քո տանը»: Եզեկիան ասաց.
«Ինչ որ կար իմ տանը եւ իմ գան-
ձատանը, տեսան. ոչ մի բան չկայ իմ
տան մէջ եւ իմ գանձատանը, որ
նրանց ցոյց տուած չլինեմ»: 16 Եսային

ասաց Եզեկիային. «Լսի՛ր Տիրոջ խօսքը.
17 "Ահա կը գան օրեր, եւ քո տան մէջ
ինչ որ կայ, եւ ինչ որ կուտակել են քո
հայրերը մինչեւ այսօր, կը տարուեն
Բաբելոն, ոչինչ չի մնայ": 18 Այս է Տի-
րոջ ասած խօսքը. "Քո որդիները,
որոնք քեզնից են ծնուելու, գերի պիտի
ընկնեն ու ներքինիներ դառնան Բա-
բելոնի արքայի տանը"»: 19 Եզեկիան
ասաց Եսայուն. «Բարի է Տիրոջ ասած
խօսքը»: Ապա աւելացրեց. «Միայն թէ
խաղաղութիւն ու ապահովութիւն լինի
իմ օրերում»:

ԵԶԵԿԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ
(Բ Մնաց., 32. 32-33)

20 Եզեկիայի մնացած գործերը, նրա
բոլոր քաջագործութիւնները, նրա
ջրամբարների, ջրմուղի եւ քաղաք
հասնող ջրատարի շինարարութիւնը
չէ՞ որ նկարագրուած են Ցուդայի
երկրի թագաւորների ժամանակագրու-
թեան մէջ: 21 Եզեկիան գնաց իր
նախնիների գիրկը, եւ նրա փոխարէն
թագաւորեց իր որդին՝ Մանասէն:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 33. 1-20)

21 Մանասէն տասներկու տարեկան
էր, որ թագաւոր դարձաւ, եւ յիսունինը
տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա
մօր անունը Եփսիբա էր: 2 Նա չար
ընթացք ունեցաւ Տիրոջ առջեւ, հե-
տեւեց այն ազգերի գարշութեանը,
որոնց Տէրը վռնդել էր Իսրայէլացիների
առջեւից: 3 Նա վերականգնեց իր հայր
Եզեկիայի կործանած բարձունքների
մեհեանները, վերակառուցեց Բահաղի
զոհասեղանը, Աստարոթի կուռքեր
կառուցեց, ինչպէս արել էր Իսրայէլի
Աքաաբ արքան, երկրպագեց երկնքի
բոլոր զօրութիւնների ու պաշտեց
դրանք: 4 Նա Տիրոջ տանը զոհասեղան
դրեց, թէեւ Տէրն ասել էր. «Երու-
սաղէմում եմ դնելու իմ անունը»: 5 Տի-
րոջ տան բոլոր սրահներում նա երկնքի
բոլոր զօրութիւնների համար զոհա-
սեղաններ պատրաստեց, 6 իր որդի-
ներին հրի միջով անցկացրեց, հմա-
յութիւն արեց, թռչուններին նայելով
գուշակութիւններ արեց, վհուկներ ու
նշանագէտներ պահեց: Տիրոջ առջեւ
շատ չարիքներ գործելով՝ նա բար-
կացրեց նրան: 7 Նա Աստարոթի կուռ-
քերի արձաններ տեղադրեց Տիրոջ տա-
նը, որի համար Տէրն ասել էր Դաւթին
ու նրա որդի Սողոմոնին, թէ՝ «Իմ
անունը յաւիտեան դնելու եմ այս տան
մէջ, Իսրայէլի բոլոր ցեղերի միջից իմ
ընտրած Երուսաղէմի մէջ, 8 Իսրայէլի
ոտքը դուրս պիտի չգայ այս երկրից,
որը նրա հայրերին եմ տուել, միայն
թէ նրանք իմ բոլոր պատուիրաններն
ու իմ ծառայ Մովսէսի պատուիրած
բոլոր օրէնքներն զգուշութեամբ կա-
տարեն»: Սակայն նրանք չլսեցին.
9 Մանասէն մոլորեցրեց նրանց, եւ
նրանք չարիք գործեցին Տիրոջ առաջ
շատ աւելի քան այն ազգերը, որոնց
հալածել էր Տէրը Իսրայէլացիների
առջեւից:

10 Տէրը խօսելով իր ծառայ մար-
գարէների միջոցով՝ ասաց. 11 «Քանի
որ Ցուդայի երկրի արքայ Մանասէն
այս գարշութիւններն արեց իմ առջեւ,
առաւել չարիք գործեց, քան իրենից
առաջ եղած ամորհացիներն էին արել
իմ առջեւ, իր կուռքերով Ցուդայի
երկրին մեղանչել տուեց, 12 ապա այդ
պատճառով այսպէս է ասում Իսրայէլի
Տէր Աստուածը. "Ահա ես այնպիսի չար-
իք պիտի բերեմ Երուսաղէմի ու Ցու-
դայի երկրի վրայ, որ ամէն ոք երբ լսի,
նրա երկու ականջները խշշան: 13 Ե-
րուսաղէմը Սամարիայի եւ Աքաաբի
տան օրը պիտի գցեմ: Երուսաղէմը
պիտի ջնջեմ այնպէս, ինչպէս մի
ապակէ աման, որ մաքրում ու շուռ են
տալիս: 14 Իմ ժողովրդի մնացորդացը
պիտի լքեմ ու նրանց իրենց թշնա-
միների ձեռքը պիտի մատնեմ, որպէս-
զի նրանք աւար ու յափշտակութիւն
դառնան իրենց բոլոր թշնամիների
համար: 15 Այսպէս պիտի վարուեմ,
քանի որ իմ առջեւ չարութիւն գոր-
ծեցին եւ իրենց հայրերին Եգիպտոսից
դուրս բերելու օրից մինչեւ այսօր ինձ
բարկացնում էին: 16 Մանաւանդ Մա-
նասէն չափազանց շատ անմեղ արիւն
թափեց, այնպէս որ Երուսաղէմը ծայ-

րէծայր արեամբ լցրեց, բացի այն
մեղքերից, որոնցով Տիրոջ առջեւ
Ցուդայի երկրին մեղանչել ու չարիք
գործել տուեց"»:
17 Մանասէի մնացած գործերը, բո-
լոր արարքները եւ գործած մեղքերը
չէ՞ որ նկարագրուած են Ցուդայի
երկրի թագաւորների ժամանակագրու-
թեան մէջ:
18 Մանասէն գնաց իր նախնիների
գիրկը, թաղուեց իր տան պարտէզում՝
Օզայի պարտէզում: Նրա փոխարէն
թագաւորեց իր որդին՝ Ամոնը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 33. 21-25)

19 Ամոնը քսաներկու տարեկան էր,
որ թագաւոր դարձաւ: Նա տասներկու
տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա
մօր անունը Մեսոլոմիթ էր, նա յետե-
բալցի Արուսի դուստրն էր: 20 Նա իր
հայր Մանասէի նման չար ընթացք
ունեցաւ Տիրոջ առջեւ, 21 գնաց իր հօր
ընթացած բոլոր ճանապարհներով,
պաշտեց իր հօր պաշտած կուռքերը,
երկրպագեց նրանց, 22 լքեց իր հայրերի
Տէր Աստծուն, չգնաց Տիրոջ ճանա-
պարհներով:
23 Ամոնի ծառաները նրա դէմ դաւ
նիւթեցին ու արքային սպանեցին իր
տան մէջ, 24 իսկ ամբողջ ժողովուրդը
կոտորեց բոլոր նրանց, որոնք դաւա-
ճանել էին Ամոն արքային: Երկրի
ժողովուրդը նրա փոխարէն թագաւոր
նստեցրեց նրա որդուն՝ Յոսիային:
25 Ամոնի մնացած գործերը չէ՞ որ
նկարագրուած են Ցուդայի երկրի թա-
գաւորների ժամանակագրութեան մէջ:
26 Ամոնը գնաց իր նախնիների գիրկը,
եւ նրան թաղեցին իր գերեզմանում՝
Օզայի պարտէզում:
Նրա փոխարէն թագաւորեց իր
որդին՝ Յոսիան:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՍԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց., 34. 1-2)

22 Յոսիան ութ տարեկան էր, որ
թագաւոր դարձաւ, եւ երեսունմէկ տա-
րի թագաւորեց Երուսաղէմում: Նրա
մօր անունը Յեդիդա էր, նա բասու-
րոթացի Յեդիդայի դուստրն էր: 2 Նա
հաւատարիմ գտնուեց Տիրոջ առջեւ,
գնաց իր նախնի Դաւթի ընթացած
բոլոր ճանապարհներով, աջ կամ ձախ
չխոտորուեց:

ՕՐԷՆՔԻ ԳՐՔԻ ՅԱՅՏՆԱՐԵՐՈՒՄԸ
(Բ Մնաց., 34. 8-28)

3 Ցուդայի երկրի արքայ Յոսիայի
թագաւորութեան տասնութերորդ տա-
րուայ եօթներորդ ամսում արքան Մե-
սողոմի որդի Եսելիայի որդի Սափանին՝
տան քարտուղարին ուղարկելով՝ ա-
սաց. 4 «Գնա՛ Քեղկիա քահանայա-
պետի մօտ եւ նրան ասա՛, որ նա պա-
հապանների՝ ժողովրդից կշռով
հաւաքած եւ Տիրոջ տունը բերուած
արծաթը հաշուի 5 ու յանձնի Տիրոջ
տան գործի վրայ նշանակուած գոր-
ծաւորներին՝ Տիրոջ տան վերակացու-
ներին»: 6 Սրանք Տիրոջ տան քայ-
քայուած մասերը վերականգնելու
համար վճարեցին Տիրոջ տան վրայ
աշխատող բանուորներին՝ հիւսներին,
շինարարներին, ճարտար որմնադիր-
ներին, որպէսզի Տիրոջ տան փլուած
մասերը նորոգելու համար ատաղձ ու
տաշած քարեր գնեն: 7 Նրանց տրուած
արծաթի հաշիւը չէին պահանջում,
որովհետեւ նրանք ազնուօրէն էին
աշխատում: 8 Քեղկիա քահանայա-
պետն ասաց Սափան քարտուղարին.
«Տիրոջ տանը օրէնքի գիրք եմ գտել»:
Քեղկիան գիրքը տուեց Սափանին, եւ
սա ընթերցեց այն: 9 Նա արքային լուր
տարաւ՝ ասելով. «Քո ծառաները Տիրոջ
տանը եղած արծաթը հաւաքեցին եւ
Տիրոջ տան վրայ աշխատող բանուոր-
ներին յանձնեցին»: 10 Սափան քար-
տուղարը խօսեց արքայի հետ՝ ասելով.
«Քեղկիա քահանան ինձ մի մատեան
է տուել»: Սափանն այն ընթերցեց ար-
քայի առջեւ: 11 Երբ արքան լսեց օրէն-
քի գրքի խօսքերը, իր զգեստները
պատառոտեց: 12 Պատուէր տուեց
արքան Քեղկիա քահանային, Սափանի
որդի Աքիկամին, Միքէի որդի Աքոբո-
րին, Սափան քարտուղարին եւ արքայի
ծառայ Յասայիային, թէ՝ 13 «Գնացէ՛ք
եւ ինձ համար, ամբողջ ժողովրդի հա-

մար եւ Ցուդայի ամբողջ երկրի համար
հարցրէ՛ք Տիրոջը այս գտնուած գրքի
խօսքերի մասին, որովհետեւ մեզ վրայ
Տիրոջ մեծ բարկութիւնն է բորբոքուել
այն բանի համար, որ մեր հայրերը այս
գրքի խօսքերին չեն հնազանդուել, չեն
գործադրել այդտեղ գրուած բոլոր
պատգամները»:
14 Եւ Քեղկիա քահանան, Աքիկամը,
Աքոբորը, Սափանը եւ Ցասայիան
գնացին հանդերձապետ Արասի որդի
Թեկուայի որդի Սեղոմի կնոջ՝ Օղդա
մարգարէի մօտ: Նա Երուսաղէմում՝
Մասենայում էր բնակւում: Նրանք
խօսեցին նրա հետ: 15 Օղդան ասաց.
«Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աս-
տուածը. "Ասացէ՛ք այն մարդուն, որը
ձեզ ուղարկել է ինձ մօտ. 16 այսպէս է
ասում Տէրը. 'Ահա չարիք պիտի բերեմ
այդ տեղի եւ բնակիչների վրայ, ինչ-
պէս գրուած է Ցուդայի երկրի արքայի
կարդացած մատեանում: 17 Այս ամէնը
նրա համար, որ ինձ լքեցին, խունկ
ծխեցին օտար աստուածներին, որպէս-
զի իրենց ձեռնարկած բոլոր գործերով
ինձ բարկացնեն, եւ բորբոքուի իմ
բարկութիւնը այդ տեղի վրայ եւ
չմեղմանայ': 18 Տիրոջը հարց տալու
համար ձեզ ուղարկած Ցուդայի երկրի
արքային ա՛յս ասացէք. 'Այսպէս է ա-
սում Իսրայէլի Տէր Աստուածը. 19 "Քո
լսած խօսքերի իմաստը այս է. քանի որ
քո սիրտը փափկեց, դու խոնարհ
գտնուեցիր Տիրոջ առջեւ, երբ լսեցիր,
թէ ինչ է ասուել Երուսաղէմի եւ նրա
բնակիչների մասին, թէ լինելու է
աւերածութիւն ու անէծք, եւ պատա-
ռոտեցիր քո զգեստները, լաց եղար իմ
առջեւ, իսկ ես լսեցի այդ, ուստի Տէրն
ասում է. 20 'Դրա համար ես քեզ պիտի
տանեմ քո նախնիների գիրկը, դու
թաղուելու ես քո տեղում՝ Երուսա-
ղէմում, եւ քո աչքերը չեն տեսնելու
այն բոլոր չարիքները, որ ես բերելու եմ
այդ տեղի՝ Երուսաղէմի վրայ"""»:

ՅՈՍԻԱՍԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ Է ԴԱՇԻՆԳՆ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ
(Բ Մնաց. 34. 3-7, 29-33)

23 Երբ արքայի ուղարկած մարդիկ
այս պատասխանը հաղորդեցին ար-
քային, նա իր մօտ հաւաքեց Ցուդայի
երկրի ու Երուսաղէմի բոլոր ծերերին,
գնաց Տիրոջ տուն: 2 Ցուդայի երկրի
բոլոր մարդիկ ու Երուսաղէմի բոլոր
բնակիչները, քահանաներն ու մարգա-
րէները՝ ամբողջ ժողովուրդը, փոքրից
մինչեւ մեծը, նրա հետ էին: Նա նրանց
առաջ ընթերցեց Տիրոջ տան մէջ
գտնուած ուխտի մատեանի բոլոր խօս-
քերը: 3 Արքան կանգնեց սեան մօտ եւ
Տիրոջ առջեւ ուխտ դրեց, որ կ'ընթա-
նայ Տիրոջ ճանապարհով, ամբողջ
հոգով ու էութեամբ կը պահի նրա
պատուիրանները, վկայութիւններն ու
կանոնները, կը կատարի այդ մատեա-
նում գրուած ուխտի պատգամները: Եւ
ամբողջ ժողովուրդը ուխտ արեց:

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐՈՒՄ

4 Արքան հրամայեց Քեղկիա քա-
հանայապետին, երկրորդ աստիճանի
քահանաներին ու դռան պահապան-
ներին, որ Տիրոջ տաճարից դուրս բերեն
Բահաղի, Աստարոթի կուռքերի եւ
երկնքի զօրութեան համար պատրաս-
տուած իրերը: Դրանք այրեց Երուսա-
ղէմից դուրս գտնուող Կեդրոնի դաշ-
տում եւ դրանց մոխիրը տարաւ Բեթէլ:
5 Նա այրեց քրմերին, որոնց հաստա-
տել էին Ցուդայի երկրի արքաները,
որովհետեւ նրանք բարձունքների մե-
հեանններում, Ցուդայի երկրի բոլոր
քաղաքներում ու Երուսաղէմի շուրջը
խունկ էին ծխում, ինչպէս նաեւ
արեգակին, լուսնին, աստղերին ու
երկնքի ամբողջ զօրութեանը խնկար-
կողներին, 6 Տիրոջ տնից հանելով եւ
Երուսաղէմից դուրս բերելով Կեդրոնի
հեղեղատում այրեց Աստարոթի կուռ-
քերը, փոշու վերածեց եւ նրանց
մոխիրը ժողովրդի որդիների գերեզ-
մանների վրայ ցանեց: 7 Տիրոջ տան
մօտ գտնուող սոդոմականների տունը
քանդեց, ուր կանայք Աստարոթի
կուռքերի համար ծածկոցներ էին գոր-
ծում: 8 Նա բոլոր քրմերին հանեց
Ցուդայի երկրի քաղաքներից, Գաբաա-
յից մինչեւ Բերսաբէէ քարուքանդ
արեց բարձունքների մեհեանները, ուր
քրմերը խունկ էին ծխում, քանդեց

քաղաքի իշխան Յեսովի տան դռան
կողքին, քաղաքի դարպասի ձախ կող-
մը գտնուող տունը: 9 Բարձունքների
մեհեանների քրմերն այլեւս Երուսա-
ղէմում գտնուող Տիրոջ զոհասեղանին
չէին մօտենում, այլ բաղարջ հաց էին
ուտում իրենց եղբայրների շրջանում:
10 Նա քարուքանդ արեց ենոմացիների
ձորում գտնուող Թոփոթը, որպէսզի ոչ
ոք իր որդուն կամ դստերը Մեղքոմի
բոցի միջով չանցկացնի: 11 Արքայի
ներքինի Նաթանի գանձարանի մօտ՝
փարուիմում այրեցին Տիրոջ տան
մուտքի մօտ գտնուող այն ձիերը,
որ Ցուդայի երկրի արքան նուիրել
էր արեգակին. արեգակին նուի-
րուած մարտակառքերը հրի մատնե-
ցին: 12 Վերնատների տանիքների
վրայ Ցուդայի երկրի թագաւորների
կառուցած զոհասեղանները, Տիրոջ
տան երկու սրահներում Մանասէի կա-
ռուցած զոհասեղանները արքան քան-
դեց, ջարդուփշուր արեց եւ նրանց փո-
շին կեդրոնի հեղեղատը թափեց: 13 Ե-
րուսաղէմի դիմաց, Մոսաթի լերան աջ
կողմում գտնուող տունը, որ Սողոմոն
արքան էր շինել ի պատիւ սիդոնա-
ցիների գարշելի Աստարտի, Մովաբի
զազրելի Քամոսի եւ ամոնացիների
գարշելի Մեղքոմի, արքան քարուքանդ
արեց: 14 Նա խորտակեց արձանները,
ջարդուփշուր արեց Աստարոթի կուռ-
քերը եւ նրանց տեղում մարդկանց
ոսկորներ լցրեց:
15 Բեթէլի բարձունքում գտնուող
զոհասեղանը, որ պատրաստել էր Ի-
սրայէլին մեղանչել տուող Նաբատի
որդի Յերոբովամը, այս բարձր զոհա-
սեղանը եւս կործանեց, նրա քարերը
ջարդուփշուր անելով փոշու վերածեց,
Աստարոթի կուռքերը այրեց: 16 Յո-
սիան հայեացքը շուռ տուեց ու տեսաւ
քաղաքում եղած գերեզմանները, մարդ
ուղարկեց, գերեզմաններից ոսկորները
հանեց ու զոհասեղանի վրայ այրելով՝
պղծեց դրանք, ըստ Տիրոջ խօսքի, որ
ասել էր Աստծու մարդը, երբ Յերո-
բովամը տօնի ժամանակ կանգնած էր
զոհասեղանի մօտ: Նա աչքերը յառեց
Աստծու մարդու գերեզմանին, որը
խօսել էր այս բաների մասին, 17 եւ
ասաց. «Այս ի՞նչ կոթող է, որ տեսնում
եմ»: Քաղաքի մարդիկ ասացին.
«Աստծու մարդու գերեզմանն է, որ
եկաւ Ցուդայի երկրից եւ Բեթէլի այս
զոհասեղանի մասին այդ բաներն
ասաց»: 18 Յոսիան ասաց. «Ձեռք մի՛
տուէք, ոչ ոք թող տեղահան չանի նրա
ոսկորները»: Նրա ոսկորները Սամա-
րիայից եկած մարգարէի ոսկորների
հետ էին թաղուած: 19 Բարձունքների
բոլոր մեհեանները, որոնք Իսրայէլի
թագաւորները Սամարիայի քաղաքնե-
րում կառուցելով բարկացրել էին Տի-
րոջը, Իսրայէլի արքայ Յոսիան քան-
դեց եւ ամէն ինչ արեց այնպէս,
ինչպէս Բեթէլում էր արել: 20 Նա
կենդանի-կենդանի այրեց բարձունք-
ների բոլոր քրմերին, որոնք գտնուում
էին զոհասեղանների մօտ, դրանց վրայ
էլ այրեց մարդկանց ոսկորները եւ
դրանից յետոյ վերադարձաւ Երու-
սաղէմ:

ՋԱՏԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
(Բ Մնաց. 35. 1-19)

21 Արքան պատուիրեց ամբողջ ժո-
ղովրդին՝ ասելով. «Կատարեցէ՛ք մեր
Տէր Աստծու զատիկը, ինչպէս որ
գրուած է այս ուխտի մատեանում»:
22 Իսրայէլը ղեկավարող դատաւորների
օրերից սկսած, Իսրայէլի ու Ցուդայի
երկրի թագաւորների օրօք նման
զատիկ չէր եղել: 23 Յոսիա արքայի
թագաւորութեան տասնութերորդ տա-
րում էր միայն, որ Երուսաղէմում կա-
տարեցին Տիրոջ զատիկը:

ՅՈՍԻԱՅԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

24 Յոսիան վերացրեց վհուկներին,
նշանագէտներին, մեռելահարցուկնե-
րին, կուռքերը եւ Ցուդայի երկրում ու
Երուսաղէմում եղած ամէն տեսակ
գարշութիւնները, որպէսզի հաստատի
օրէնքի գրքի այն խօսքերը, որ Տիրոջ
տանը Քեղկիա քահանայի գտած
մատեանում էին գրուած: 25 Նրանից
առաջ նման մի թագաւոր չէր եղել, որ
իր ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու
զօրութեամբ, հնազանդուելով Մովսէ-
սի բոլոր օրէնքներին, հակուէր դէպի

Տէրը: 26 Ոչ էլ նրանից յետոյ եղաւ նրա նմանը: Մանասէի կատարած չար գործերի պատճառով Յուդայի երկրի հանդէպ Տիրոջ մէջ բորբոքուած սաստիկ զայրոյթը, սակայն, չմեղմացաւ, 27 ուստի Տէրն ասաց. «Յուդայի երկիրն էլ իմ երեսից պիտի մերժեմ, ինչպէս մերժեցի Իսրայէլը, պիտի մերժեմ այդ քաղաքը՝ իմ ընտրած Երուսաղէմը, եւ այդ տունը, որի համար ասել եմ, թէ՝ "Իմ անունը նրա վրայ պիտի լինի"»:

ՅՈՍԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Բ Մնաց. 35. 20-36. 1)

28 Յոսիայի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ: 29 Այդ օրերին Եգիպտոսի արքայ Նեքաւով փարաւոնը Եփրատ գետի մօտ յարձակուեց Ասորեստանի արքայի վրայ: Յոսիա արքան նրան ընդառաջ գնաց, եւ երբ Նեքաւովը տեսաւ նրան, սպանեց նրան Մակեդովում: 30 Մառաները նրա մարմինը տարան Մակեդովից, բերեցին Երուսաղէմ եւ թաղեցին իր գերեզմանում:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱՀԱԶ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 36. 2-4)

Երկրի ժողովուրդը Յոսիայի որդի Յովաքազին բերեց, օծեց նրան եւ նրա հօր փոխարէն թագաւոր նստեցրեց: 31 Քսաներեք տարեկան էր Յովաքազը, որ թագաւոր դարձաւ: Նա երեք ամիս թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Ամիտալ էր: Նա լոբնացի Երեմիայի դուստրն էր: 32 Յովաքազը չար ընթացք ունեցաւ Տիրոջ առջեւ՝ կրկնելով իր հայրերի ամէն տեսակ վատ արարքները: 33 Նեքաւով փարաւոնը նրան գերեվարելով փոխադրեց[†] Ռեբղաթա, Եմաթի երկիրը՝ վերջ դնելով նրա թագաւորութեանը: Երուսաղէմում Նեքաւով փարաւոնը հարիւր տաղանդ[‡] արծաթ ու տասը տաղանդ ոսկի[†] հարկ դրեց երկրի վրայ:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱԿԻՄ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 36. 5-8)

34 Փարաւոն Նեքաւովը Իսրայէլի վրայ թագաւոր նստեցրեց Յուդայի երկրի արքայ Յոսիայի որդի Եղիակիմին իր հօր՝ Յոսիայի փոխարէն, նրա անունը փոխելով՝ Յովակիմ դրեց, իսկ Յովաքազին առաւ տարաւ Եգիպտոս, ուր եւ նա մեռաւ: 35 Յովակիմն արծաթն ու ոսկին տալիս էր փարաւոնին, սակայն փարաւոնի պահանջածի չափով արծաթ վճարելու համար երկրի վրայ հարկ դրեց: Երկրի մարդկանցից ամէն մէկից նա իր սահմանած հարկի համեմատ արծաթ ու ոսկի էր վերցնում, որպէսզի տայ Նեքաւով փարաւոնին:

36 Յովակիմը քսանհինգ տարեկան էր, որ թագաւոր դարձաւ, եւ տասնմէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Ելդափ էր: Նա ռոմայեցի Յեդդելայի դուստրն էր: 37 Նա Տիրոջ առջեւ գործեց իր նախնիների բոլոր չար արարքները:

24 Յովակիմի օրօք Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան ելաւ կռուի: Յովակիմը երեք տարի նրան հպատակ եղաւ, բայց յետոյ ապստամբեց նրա դէմ: 2 Տէրը Յովակիմի դէմ ուղարկեց քաղդէացիների, ասորիների, մովաբացիների եւ ամոնացիների կողոպտիչ զօրքը: Նա նրանց Հրէաստանի դէմ ուղարկեց, որպէսզի սպանեն նրա բնակիչներին, ինչպէս ասել էր Տէրը իր մարգարէների միջոցով: 3 Տէրը բարկացել էր Յուդայի երկրի վրայ, իրենից հեռու վանել նրան Մանասէի կատարած մեղքերի պատճառով, այն անմեղ արեան համար, որ նա թափել էր 4 ու Երուսաղէմը լցրել այդ անմեղ արեամբ: Տէրը չուզեց ներել նրան:

5 Յովակիմի մնացած գործերը եւ այն ամէնը, ինչ նա արել է, չէ՞ որ նկարագրուած են Յուդայի երկրի թագաւորների ժամանակագրութեան մէջ:

†Եբրայերէնում՝ բանտարկեց:

‡Շուրջ 3000 կիլոգրամ արծաթ:

†Շուրջ 300 կիլոգրամ ոսկի:

6 Յովակիմը գնաց իր նախնիների քիրկը, եւ իր փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յովաքիմը:

7 Եգիպտոսի փարաւոնն այլեւս իր երկրից դուրս չեկաւ, որովհետեւ Բաբելոնի արքան գրաւել էր Եգիպտոսի հեղեղատից մինչեւ Եփրատ գետը, այն ամէնը, ինչ պատկանում էր Եգիպտոսի արքային:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱՔԻՄ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 36. 9-10)

8 Յովաքիմը տասնութ տարեկան էր, որ թագաւոր դարձաւ, եւ երեք ամիս թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Նեսթա էր, նա երուսաղէմցի Ելամաթի դուստրն էր: 9 Յովաքիմը չարիք գործեց Տիրոջ առջեւ՝ կրկնելով իր հօր արարքները:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

10 Այդ ժամանակ Երուսաղէմի դէմ ելաւ Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան, եկաւ ու պաշարեց քաղաքը: 11 Բաբելացիների արքան Երուսաղէմ քաղաքը եկաւ, երբ նրա զօրականները պաշարուած վիճակում էին պահում այն: 12 Այն ժամանակ Յուդայի երկրի արքայ Յովաքիմը, իր զօրականները, մայրը, իշխանները, ներքինիները գնացին բաբելացիների արքայի մօտ, եւ բաբելացիների արքան իր թագաւորութեան ութերորդ տարում գերեվարեց նրանց: 13 Նա հանեց Տիրոջ տան բոլոր գանձերը, թագաւորի տան գանձերը, ջարդեց այն բոլոր ոսկէ անօթները, որ Իսրայէլի Սողոմոն արքան պատրաստել էր տուել Տիրոջ տաճարի համար, ինչպէս ասել էր Տէրը: 14 Ամբողջ Երուսաղէմը, բոլոր իշխաններին ու հզօր մարդկանց՝ տասը հազար հոգի, գերեվարեց, բոլոր հիւսներին ու դարբիններին տարաւ: Երկրի աղքատներից բացի ոչ ոք չմնաց: 15 Նա Յովաքիմին, թագաւորի մօրը, նրա կանանց ու ներքինիներին, երկրի ուժեղ մարդկանց Երուսաղէմից տարաւ Բաբելոն, գերութեան: 16 Բաբելացիների արքան բոլոր եօթը հազար հզօր մարդկանց, հազար հիւսների ու դարբինների՝ ամէնքն էլ կտրիճ պատերազմիկներ, գերութեան տարաւ Բաբելոն: 17 Բաբելացիների արքան նրա փոխարէն թագաւոր նստեցրեց նրա որդուն՝ Մեթթանիային, եւ անունը դրեց Սեդեկիա:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՍԵԴԵԿԻԱ ԹԱԳԱՒՈՐԸ
(Բ Մնաց. 36. 11-12, Երեմ. 52. 1-3))

18 Սեդեկիան քսանմէկ տարեկան էր, որ դարձաւ թագաւոր, եւ տասնմէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Ամատել էր: Նա ղոբնացի Երեմիայի դուստրն էր: 19 Սեդեկիան Տիրոջ առջեւ չարիք գործեց, ինչպէս արել էր Յովաքիմը: 20 Տէրը բարկացել էր Երուսաղէմի ու Յուդայի երկրի վրայ այն սատիճան, որ Տէրը նրանցից երես թեքեց: Սեդեկիան ապստամբեց բաբելացիների արքայի դէմ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԿՈՒՄԸ
(Բ Մնաց. 36. 13-21, Երեմ. 52. 3-11)

25 Այնպէս պատահեց, որ իր թագաւորութեան իններորդ տարուայ տասներորդ ամսի տասներորդ օրը Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան իր ամբողջ զօրքով եկաւ Երուսաղէմի դէմ, նրա շուրջը բանակ դրեց եւ պարիսպ բարձրացրեց: 2 Քաղաքը պաշարուեց մինչեւ Սեդեկիա արքայի թագաւորութեան տասնմէկերորդ տարուայ 3 իններորդ ամիսը: Քաղաքում սովը սաստկացաւ, եւ երկրի ժողովուրդը հաց չունէր: 4 Քաղաքի պարսպի մէջ ճեղք բացուեց, եւ բոլոր պատերազմիկները գիշերը փախան պարիսպների միջեւ գտնուող դարպասը տանող ճանապարհով, որը արքունի պարտէզի մօտ էր: Քաղդէացիները քաղաքը շրջապատել էին: Թագաւորը գնաց Արաբա դաշտը տանող ճանապարհով: 5 Երբ քաղդէացիների զօրքը տեսաւ այդ, ընկաւ թագաւորի յետեւից եւ նրան հասաւ Երիքովի Արաբոթ վայրում: Նրա ամբողջ զօրքը նրանից հեռացաւ: 6 Բռնեցին թագաւորին ու բերեցին Բաբելոնի արքայի մօտ, Ռեբղաթա, եւ

արքան նրա դատաստանն արեց: 7 Սեդեկիայի որդիներին նրա աչքի առաջ սպանեց, Սեդեկիայի աչքերը կուրացրեց եւ շղթայակապ տարաւ Բաբելոն:

ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ
(Երեմ. 52. 12-33)

8 Բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի տասնիններորդ տարուայ հինգերորդ ամսի եօթներորդ օրը Բաբելոնի արքայի ծառայ Նաբուզարդան դահճապետը եկաւ Երուսաղէմ, 9 այրեց Տիրոջ տունը, թագաւորի տունը, Երուսաղէմի բոլոր տները եւ ամէն ինչ կրակի մատնեց: 10 Դահճապետի հետ եկած քաղդէացիների բոլոր զինուորները Երուսաղէմի պարիսպը շուրջանակի քանդեցին: 11 Քաղաքում մնացած մարդկանց, Բաբելոնի արքային յանձնուելիք փախստականներին եւ մնացած խառնիճաղանջ ամբոխին Նաբուզարդան դահճապետը քշեց տարաւ: 12 Երկրի աղքատ մարդկանցից ոմանց նա թողեց, որպէսզի սրանք զբաղուեն այգեգործութեամբ ու երկրագործութեամբ:

13 Քաղդէացիները Տիրոջ տան երկու պղնձէ սիւները, պատուանդաններն ու պղնձէ աւազանը, որը Տիրոջ տան մէջ էր, քանդեցին ու նրա պղինձը տարան Բաբելոն: 14 Ամաններն ու կաթսաները, տաշտերն ու խնկամանները եւ բոլոր պղնձէ անօթները, որոնցով սպասաւորութիւն էին անում, տարան: 15 Դահճապետը վերցրեց արծաթէ ու ոսկէ բուրվառներն ու ափսէները, 16 ինչպէս նաեւ երկու սիւները եւ մի աւազանն ու պատուանդանները, որ Սողոմոնն էր դրել Տիրոջ տանը: 17 Այս բոլոր պղնձէ անօթներին կշիռ չկար: Մի սիւնը տասնութ կանգուն բարձրութիւն ունէր, վրան պղնձէ խոյակ կար, եւ մի խոյակի բարձրութիւնը երեք կանգուն էր: Վանդակ ու նռնաձեւ զարդեր կային խոյակի վրայ, շուրջանակի, ամբողջովին պղնձէ: Նոյնօրինակ վանդակի զարդեր կային նաեւ երկրորդ սիւնի վրայ:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԲԱԲԵԼՈՆ ԵՆ ՏԱՐՒՈՒՄ
(Երեմ. 52. 24-27)

18 Դահճապետն առաւ Սարայա քահանայապետին, նրա օգնական Սոփոնիա քահանային, 19 կշեռքի† երեք պահապաններին, քաղաքից վերցրեց մի ներքինու, որը պատերազմող մարդկանց զօրագլուխն էր, արքայի առջեւ կանգնող խորհրդականներից հինգ հոգու, որոնք քաղաքում էին գտնուում, զօրքի քարտուղար իշխանին, որը զինուորագրում էր երկրի ժողովրդին, եւ երկրի ժողովրդից եօթը այլ մարդկանց, որոնք քաղաքում էին գտնուում: 20 Նաբուզարդան դահճապետը նրանց առաւ տարաւ Ռեբղաթա, Բաբելոնի արքայի մօտ: 21 Բաբելոնի արքան հարուածելով սպանեց նրանց Եմաթ երկրի Ռեբղաթա վայրում: Այսպիսով Յուդայի բնակիչները իրենց երկրից գերեվարուեցին:

22 Յուդայի երկրում մնացած ժողովրդին Բաբելոնի արքայ Նաբուքոդոնոսորը թողեց եւ նրանց վրայ կառավարիչ կարգեց Սափանի որդի Աքիկամի որդի Գոդողիային:

ԳՈԴՈՂԻԱՆ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ
(Երեմ. 40. 7-9, 41. 1-3)

23 Երբ զօրքի բոլոր իշխաններն ու նրանց մարդիկ լսեցին, որ Բաբելոնի արքան Գոդողիային կառավարիչ է նշանակել, ապա Գոդողիայի մօտ, Մասեփա եկան Նաթանիայի որդի Իսմայէլը, Կարէի որդի Յովնանը, սոփաթացի Թանայէմի որդի Սարայիան, Մաքաթի որդի Յեզոնիան: Եկան թէ՛ իրենք, թէ՛ իրենց մարդիկ: 24 Գոդողիան ինքն ու իր մարդիկ երդուեցին, եւ նա ասաց. «Մի՛ վախեցէք քաղդէացի ասպատակներից, նստեցէ՛ք ձեր երկրում, ծառայեցէ՛ք Բաբելոնի արքային, եւ ձեզ համար լաւ կը լինի»:

25 Այնպէս պատահեց, սակայն, որ եօթներորդ ամսին Եղիսամայի որդի Նաթանիայի որդի Իսմայէլը, որը թագաւորական ընտանիքից էր, տասը մարդով եկաւ, խփեց Գոդողիային, եւ սա մեռաւ: Նա սպանեց նաեւ Մասեփայում նրա մօտ գտնուող հրեաներին ու քաղդէացիներին: 26 Ամբողջ ժողովուրդը, փոքրից մինչեւ մեծը, նաեւ զօրքի իշխանները ելան ու գնացին Եգիպտոս, որովհետեւ վախենում էին քաղդէացիներից:

ՅՈՎԱՔԻՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ
(Երեմ. 52. 31-34)

27 Յուդայի երկրի արքայ Յովաքիմի գերութեան երեսունեօթներորդ տարուայ տասներկուերորդ ամսի քսանեօթներորդ օրը Բաբելոնի Եւիլմարոդաք արքան իր թագաւորութեան առաջին տարում շնորհ արեց Յուդայի երկրի Յովաքիմ արքային, նրան հանեց բանտից, 28 քաղցրութեամբ խօսեց նրա հետ, նրա աթոռը Բաբելոնում իր մօտ գտնուող այլ թագաւորների աթոռից բարձր դրեց: 29 Նրա բանտային հագուստները փոխեց, եւ Յովաքիմը միշտ նրա հետ էր հաց ուտում: 30 Յովաքիմի ապրուստի միջոցները, որպէս հանապազօրեայ ապրուստի միջոցներ, նրան տրւում էին արքայական տնից ամէն օր մինչեւ նրա կեանքի վերջը:

†Երրայերէնում՝ դռան:

ՄՆԱՑՈՐԴԱՑ ԱՌԱՋԻՆ

Ներածութիւն

«Մնացորդաց»-ի երկու գրքերն էլ գրուել են Իսրայէլի նոյն միջավայրում, հաւանաբար քահանայական դասի կողմից, եւ կազմում են մի ամբողջութիւն: Սա մի մեծակտաւ երկ է, ուր իւրայատուկ ձեւով շարադրուած է Աստծու ժողովրդի պատմութիւնը նրա ծագումից մինչեւ նրա գերութիւնը Բաբելոնում:

Այս պատմութիւնը գրուել է ոչ թէ մի պատմագրի տեսանկիւնից՝ բառիս բուն իմաստով, այլ աւելի շուտ մի աստուածաբանի կամ մի քարոզչի, որը լայնօրէն օգտագործել է հնագոյն աղբիւրներ, մասնաւորապէս Սամուէլի եւ երրորդ, չորրորդ «Թագաւորութիւններ»-ի գրքերը: Օգտագործուած աղբիւրների մէջ հեղինակի կատարած ընտրութիւնները յստակօրէն ցոյց են տալիս, թէ որն է այն ուսմունքը, որ առաւելապէս մօտ է եղել նրա սրտին: Դա այն է, որ միայն Աստուած պէտք է կառավարի Իսրայէլի ժողովրդին. թագաւորները սոսկ նրա սպասաւորներն են, որոնց պարտականութիւնն է ներկայացնել Նրա հեղինակութիւնը կեանքի բոլոր բնագաւառներում: Այս տեսակէտից Դաւիթը Աստծուն կատարելապէս հաւատարիմ թագաւոր է, որ նուաճել է Երուսաղէմը, որը յետագայում դառնում է սուրբ քաղաք այնտեղ կառուցուած տաճարի շնորհիւ: Նա է նոյնպէս ղեկավարել Իսրայէլի քաղաքական կեանքը, կազմակերպել նրա կրօնական կեանքը: Այս օրինակելի թագաւորի մահից յետոյ հեղինակն իր ուշադրութիւնը կենտրոնացնում է նրա յետնորդների վրայ, որոնք Յուդայի երկրի թագաւորութեան գլխաւորներն են եղել:

«Մնացորդաց»-ի առաջին գիրքը մեզ վերյիշեցնում է Ադամից մինչեւ Դաւիթ թագաւորի ժամանակաշրջանն ընկած ամբողջ պատմութիւնը՝ շատ ամփոփ կերպով, ծննդաբանական ցանկերի ձեւով (1-9 գլուխները): Գրքի երկրորդ մասը (10-29 գլուխները) նուիրուած է Դաւիթ թագաւորութեան պատմութեանը, ուր զանց են առնուած բազմաթիւ դրուագներ՝ Դաւիթ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, նրա թափառական կեանքը, նրա բախումը Սաւուղի հետ, նրա թագաւորութեան եօթը տարիները Հեբրոնում, Աբեսաղոմի ապստամբութիւնը եւ այլն: Դրան հակառակ, հեղինակը կանգ է առնում այն բոլոր հանգամանքների վրայ, որոնք Դաւիթին մղեցին նախապատրաստելու Երուսաղէմի տաճարի կառուցումը՝ ուխտի տապանակի վերադարձը հայրենիք, Իսրայէլի ժողովրդի մարդահամարի չարաբաստիկ նախաձեռնութիւնը, դրան յաջորդող խորանի շինարարութիւնը ապագայ սրբարանի տեղում եւ, վերջապէս, կազմակերպումը այդ խորանին սպասարկող տարբեր դասի պաշտօնեաների՝ քահանաներ, դպիրներ, երգեցողներ, դռնապաններ եւ այլն:

ԱՌԱՋԻՆ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԱԴԱՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԱԲՐԱՀԱՄ
(Մնն. 5. 1-32, 10. 1-32, 11. 10-26)

1 *Ադամ, Սէթ, Ենոս, 2 Կայնան, Մա-*
զալայէլ, Յարեդ, 3 Ենոք, Մաթու-
սաղա, Ղամէք, 4 Նոյ:

Նոյի որդիները՝ Սէմ, Քամ, Յաբեթ:

5 *Յաբեթի որդիները՝ Գամեր, Մա-*
գոգ, Մադայի, Յովիդան, Եղիսան, Թո-
բէլ, Մոսոք եւ Թիրաս:

6 *Գամերի որդիները՝ Ասքանազ,*
Հռիփաթ եւ Թորգոմա:

7 *Յովիդանի որդիները՝ Ելիսա եւ*
Թարսիս, կիտացիները եւ Հռոդացի-
ները:

8 *Քամի որդիները՝ Քուս եւ Մեստ-*
րեմ, Փուդ եւ Քանան:

Քուսի որդիները՝ Սաբա, Եւիլա, Սա-
բաթա, Հռեգմա եւ Սաբակաթա:

9 *Հռեգմայի որդիները՝ Սաբա եւ Դե-*
դան:

10 *Քուսը ծնեց Նեմրոթին. սա սկսեց*
հզօր որսորդ դառնալ երկրի վրայ:
11 *Մեստրեմը ծնեց լուդիմացիներին,*
լաբիինացիներին, անամիացիներին,
նեփթաբիմացիներին, պատրոսիմա-
ցիներին եւ քասղոնիիմացիներին, 12 *ո-*
րոնցից էլ առաջացան փղշտացիները,
նաեւ՝ քափթորիիմացիներին: 13 *Քա-*
նանը ծնեց իր անդրանիկ որդուն՝ Սի-
դոնին, քանանացիներին, 14 *յեբուսա-*
ցիներին, ամորհացիներին, գերգեսա-
ցիներին, 15 *խեւացիներին, արուկեցի-*
ներին, արսենացիներին, 16 *արադացի-*
ներին, սամարացիներին եւ ամաթա-
ցիներին:

17 *Սէմի որդիները՝ Եղամ, Ասսուր,*
Արփաքսադ, Ղուդ եւ Արամ:

Արամի որդիները՝ Ցուս, Եմող,
Գաթեր եւ Մոսոք:

18 *Արփաքսադը ծնեց Կայինանին,*
Կայինանը ծնեց Սաղային, Սաղան
ծնեց Եբերին: 19 *Եբերն ունեցաւ երկու*
որդի. մէկի անունը Փաղէկ էր, քանզի
նրա օրօք երկիրը բաժանուեց, իսկ նրա
եղբօր անունն էր Հեկտան: 20 *Հեկ-*
տանը ծնեց Ելմոդադին, Սաղափին,
Արամոթին, 21 *Կեդրուրանին, Եզէլին,*
Դեկլանին, Կամաանին, Աբիմէելին,
Սաբային, 22 *Սուփիրին, Եւիին եւ Յո-*
բամին: 23 *Սրանք ամէնքը Հեկտանի*
որդիներն են:

24 *Սէմի որդիները՝ Ելամ, Ասսուր,*
Արփաքսադ, Կայինան, Սաղա, Եբեր,
25 *Փաղէկ, Ռագաւ, Սերուք, Նաքոր,*
Թառայ, 26 *Աբրամ, նոյն ինքը՝ Աբ-*
րահամ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Մնն. 25. 12-16)

27 *Աբրահամի որդիները՝ Իսահակ եւ*
Իսմայէլ: 28 *Իսմայէլի որդիները՝* 29 *Նա-*
բէոթ, Կեդար, 30 *Նաբդեէլ, Մաբսան,*
Մասմա, Իդումա, Մասսէ, Քոդադ,
Թաման, Իտուր, Նափէս եւ Կեդմա:
31 *Սրանք են Իսմայէլի որդիները:*

32 *Աբրահամի հարճի՝ Քետուրի որ-*
դիները. նա ծնեց Եմրանին, Հեկսանին,
Մադանին, Մադիանին, Հեսբոկին եւ
Սուվիվէին: Հեկսանի որդիները՝ Սաբա,
Դեման† *եւ Դեդան: Դեդանի որդիները՝*
Ռագուէլ, Նաբդեէլ, Ասուրիիմ, Լատու-
սիիմ եւ Լոոմին: 33 *Մադիանի որդի-*
ները՝ Գեփար, Օփեր, Ենոք, Աբիդա եւ
Ելդա: Սրանք ամէնքը Քետուրի որ-
դիներն են:

34 *Աբրահամը ծնեց Իսահակին: Ի-*
սահակի որդիները՝ Եսաւ եւ Յակոբ:

ԵՍԱՒԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(Մնն. 36. 1-19)

35 *Եսաւի որդիները՝ Եղիփազ, Հռա-*
գուէլ, Յէուլ, Եգղոմ եւ Կորէ: 36 *Եղի-*
փազի որդիները՝ Թեման, Օմար, Սո-
փար, Գոթոմ եւ Կենէզ: Եղիազարի
հարճ Թամարը նրա համար ծնեց
Ամաղէկին: 37 *Ռագուէլի որդիները՝*
Նաքէթ, Զարեհ, Սոմէ եւ Մոզէ:

ԵԴՈՄԻ ԵՐԿՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ
(Մնն. 36. 20-30)

38 *Սէիրի որդիները՝ Ղոտան, Սոբաղ,*
Սեբեգոն, Անա, Դեսոն, Ասար եւ Հռի-
սոն: 39 *Ղոտանի որդիները՝ Քոռի, Է-*
ման: Ղոտանի քոյրը՝ Թամնա: 40 *Սո-*
բաղի որդիները՝ Գողամ, Մանաքաթ,
Գեբէլ, Սոփար եւ Յովնան: Սեբեգոնի
որդիները՝ Այիա եւ Օնան: Անայի

†Եբրայերէնում պակասում է այս անունը:

որդին՝ Դեսոն, իսկ Անայի դուստրը՝
Ելիբամա: 41 Դեսոնի որդիները՝ Ադա-
մա, Եսեբամ, Յեթրան եւ Քառան: Ա-
սարի որդիները՝ Բաղտան, Ազուկամ,
Յովակիմ եւ Ուկամ: 42 Դեսոնի
որդիները՝ Օս եւ Առան:

ԵԴՈՄԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ
(ՄՆԵՂ. 36. 31-43)

43 Սրանք են այն թագաւորները,
որոնք թագաւորեցին Եդոմում, նախ-
քան իսրայէլացիների թագաւորելը:
Սեփորի որդին Բաղակն էր, եւ նրա
քաղաքի անունը Դենաբա էր: 44 Մե-
ռաւ Բաղակը, եւ նրա փոխարէն թա-
գաւորեց Յոբաբը՝ բոսորացի Զարեհի
որդին: 45 Մեռաւ Յոբաբը, եւ նրա փո-
խարէն Թեմնացիների երկրում թագա-
ւորեց Ասոմը: 46 Մեռաւ Ասոմը, եւ նրա
փոխարէն թագաւորեց Ադադը՝ Բարա-
դի որդին, որը Մովաբի դաշտում կո-
տորեց մադիամացիներին: 47 Նրա քա-
ղաքի անունը Գէթեմ էր: Մեռաւ Ա-
դադը, եւ նրա փոխարէն թագաւորեց
մասեկացի Սամաան: 48 Մեռաւ Սա-
մաան, եւ նրա փոխարէն թագաւորեց
Սաւուղը, որը գետեզերքի մօտ
գտնուող Ռոբոթ բնակավայրից էր:
49 Մեռաւ Սաւուղը, եւ նրա փոխարէն
թագաւորեց Աքոբորի որդի Բաղաե-
նոնը: 50 Մեռաւ Աքոբորի որդի
Բաղաեենոնը, եւ նրա փոխարէն թա-
գաւորեց Ադադը: Նրա քաղաքի անու-
նը Փոգոր էր, իսկ նրա կնոջ անունը՝
Մետաբեէլ, որը Մատրադի դուստրն
էր: 51 Մեռաւ Ադադը:

Սրանք են Եդոմի երկրի իշխանները.
իշխան Թամանա, իշխան Գոլա, իշխան
Յեթեր, 52 իշխան Ելիսակամաս, իշխան
Եղաս, 53 իշխան Փինոն, իշխան Կենէզ,
իշխան Թեման, իշխան Սարսար,
իշխան Մագեդիէլ, իշխան Զափոսիիմ:
54 Սրանք Եդոմի երկրի իշխաններն են:

ԻՍՐԱՅԷԼԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

2 Սրանք են Իսրայէլի որդիների ա-
ունները. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի,
Յուդա, 2 Իսաքար, Զաբուղոն, Դան,
Յովսէփ, Բենիամին, Նեփթաղիմ, Գադ,
Ասեր:

3 Յուդայի որդիները՝ Էր, Օնան եւ
Սելոմ. այս երեքին Յուդայի համար
ծնեց քանանացի մի մարդու դուստր
Շաւան: Յուդայի անդրանիկ որդին՝
Էրը, չար էր Տիրոջ աչքին, ուստի
Աստուած սպանեց նրան: 4 Նրա հարս
Թամարը ծնեց Փարէսին ու Զարային:
5 Յուդայի բոլոր որդիները թուով
հինգ էին: Փարէսի որդիները՝ Եսրոմ ու
Յեմուէլ: 6 Զարայի որդիները՝ Զամրի,
Եթան, Եման, Քաղքաղ եւ Դարա,
ընդամէնը՝ հինգ որդի: 7 Քարմիի որ-
դին էր Աքարը, որ դժբախտութիւն
բերեց Իսրայէլին՝ Աստծուն վերա-
պահուած աւարից բաժին առնելով:

ԴԱՒԻԹԻ ՄԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

8 Եթանի որդին էր Ազարիան: Եսր-
ոմի որդիները, որ ծնուեցին նրա հա-
մար, էին 9 Յերամէլը, Օրամը, Օքոբէլը
եւ Արամը:
10 Արամը ծնեց Ամինադաբին, Ամի-
նադաբը ծնեց Յուդայի տան իշխան
Նաասոնին: 11 Նաասոնը ծնեց Սաղ-
մանին. 12 Սաղմանը ծնեց Բոոսին.
Բոոսը ծնեց Օբէդին, Օբէդը ծնեց
Յեսսէին: 13 Յեսսէն ծնեց իր անդ-
րանիկ որդի Եղիաբին, երկրորդ որդի
Ամինադաբին, երրորդ որդի Սամաա-
յին, 14 չորրորդ որդի Նաթանայէլին,
հինգերորդ որդի Հռադային, վեցերորդ
որդի Ասոմին, եօթներորդ որդի Դաւ-
թին: 15 Նրանց քոյրերն են Սարուիան
եւ Աբիգեան: 16 Սարուիան ունեցաւ
երեք որդի՝ Աբեսսա, Յովաբ եւ Ասայէլ:
17 Աբիգեան ծնեց Ամեսային, իսկ Ամե-
սայի հայրն էր իսմայէլացի Յեթերին:

ԵՍՐՈՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

18 Եսրոնի որդի Քաղեբը կին առաւ
Ազուբային, որից ծնուեց Երիմոթը:
19 Սրանք են նրա որդիները. Յովասար,
Սոբաբ եւ Օռնա: Մեռաւ Ազուբան, եւ
Քաղեբը կին առաւ Եփրաթին, իսկ սա
նրա համար ծնեց Օրին: 20 Օրը ծնեց
Օրիին: Օրին ծնեց Բեսեղիէլին:
21 Դրանից յետոյ Եսրոնը պառկեց
Գաղաադի հօր՝ Մաքիրի դստեր հետ,
եւ նրան կնութեան առաւ, երբ ինքը

վաթսուն տարեկան էր: 22 Նա ծնեց
Սեգուբին. Սեգուբը ծնեց Յայիրին: Սա
Գաղաադում քսաներեք քաղաք ունէր:
23 Նա գրաւեց Գեսուրից ու Արամից
Յայիրի գիւղերը, Կանաթն ու նրա
աւանները՝ վաթսուն քաղաք. այս
ամէնը Գաղաադի հօր՝ Մաքիրի որդի-
ներին էր պատկանում: 24 Եսրոնի
մեռնելուց յետոյ Եփրաթա եկաւ
Քաղեբը, եւ Եսրոնի կին Աբիան ծնեց
Ասղոմին՝ Թեկուայի հօրը:

ՅԵՐԵՄԻԷԼԻ ՍԵՐՈՒՆԴԸ

25 Եսրոնի անդրանիկ որդու՝ Յե-
րեմիէլի որդիներն էին. անդրանիկ
որդին՝ Հռամանը, Բաանը, Առանը եւ
սրա եղբայր Ասոմը: 26 Յերեմիէլը
ուրիշ կին էլ ունէր, որի անունն էր
Ատարա: 27 Սա Ունոմի մայրն էր:
Յերեմիէլի անդրանիկ որդու՝ Ռամայի
որդիներն էին Մաասը, Յաբինը եւ
Ակորը: 28 Ունոմի որդիներն էին
Սամային եւ Յադային: 29 Սամայիի
որդիներն էին Նաբադն ու Աբիսուրը.
Աբիսուրի կնոջ անունն էր Աբիսեա,
որը ծնեց Ազաբարին, Մոլիլին: 30 Նա-
բադի որդիներն են Սաղադը եւ Ափփե-
մը: 31 Սաղադը մեռաւ անորդի, նա
ժառանգ չունէր: Ափփեմի որդին Յեսս-
ին էր: 32 Յեսսիի որդին էր Սոսանը:
Սոսանի որդին էր Աղային: Աղայիի
որդիներն էին Աքիսաման, Յեթերն ու
Յովնաթանը: 33 Յեթերը մեռաւ
առանց որդի ունենալու: Յովնաթանի
որդիներն են Փաղէթը եւ Օզազան:
34 Սրանք Յերեմիէլի որդիներն են:
Սոսանը չունէր որդիներ, այլ միայն
դուստրեր: Սոսանն ունէր մի եգիպ-
տացի ծառայ, որի անունն էր Յոքաղ:
35 Սոսանն իր դստերը կնութեան
տուեց իր ծառայ Յոքաղին, որը ծնեց
Եթթիին: 36 Եթթին ծնեց Նաթանին.
Նաթանը ծնեց Աբէդին. 37 Աբէդը ծնեց
Օփղաղին. Օփղաղը ծնեց Օբէդին.
Օբէդը ծնեց Յէուին. 38 Յէուն ծնեց
Ազարիասին. Ազարիասը ծնեց Քեղղէ-
սին. Քեղղէսը ծնեց Եղէասային. 39 Ե-
ղէասան ծնեց Սոսոմէին. Սոսոմէն
ծնեց Սաղղումին. 40 Սաղղումը ծնեց
Յեքոնիասին. 41 Յեքոնիասը ծնեց
Եղիսամային:

ՔԱՂԵԲԻ ՍԵՐՈՒՆԴԸ

42† Յերեմիէլի եղբայր Քաղեբի որ-
դիներն էին. Մաեսան՝ նրա անդրանիկ
որդին, որը Զիփի հայրն էր, եւ Մա-
րիսան, որ Քեբրոնի հայրն էր:
43 Քեբրոնի որդիները՝ Կորխ,
Թափփսի, Հռոկոմ եւ Սեմաա: 44 Սե-
մաան ծնեց Հռաամին՝ Յերակայի
հօրը: 45 Յերական ծնեց Սաղամային,
որի որդին էր Մաոնը՝ Բեթսորի հայրը:
46 Քաղեբի հարճ Գեփան ծնեց Առա-
նին, Յոսային ու Գեզուէին: 47 Ադայի
որդիներն էին Հռագեմը, Օթամը, Գեր-
սոմը, Փաղէտը, Գեփան եւ Սագափը:
48 Քաղեբի հարճ Մոքան ծնեց Սե-
բերին եւ Թաքնային: 49 Նա ծնեց
նաեւ Սագափին՝ Մադեենայի հօրը, Սա-
ուղին՝ Մաքամենայի ու Բաղայի
հօրը: Քաղեբի դուստրը Ասքան էր:
50 Սրանք են Քաղեբի որդիները: Եփ-
րաթայի անդրանիկ որդի Օրի որդի-
ները. Սոբաղ՝ Կարիաթարիմի հայրը,
Սաղոմոն՝ Բեթղամոնի հայրը, այն է՝
51 Բեթղէէմի հայրը, Արի՝ Բեթեգորի
հայրը‡: Կարիաթարիմի հայր Սոբաղի
որդիներն էին 52 Արան, Եսին, Ամա-
նիթը, Թիւմասփայէն, Հռիաթիաւրը,
Եթաղիմը, Եփիթինը, Սամաթինը, Յե-
մասարինը: 53 Սրանցից են առաջացել
սարաթացիները եւ եսթաւուղացիները:
54 Սաղոմոնի որդիներն էին Բեթղե-
հէմը, Նետոփաթին, Ատարոթը, Յովա-
բի ցեղը, մանաթացիների կէս ցեղը,
Եսարային: 55 Գաբէսում բնակուող
ուսեալների տոհմերն էին ագաթա-
ցիները, սամաթացիները եւ սոկաթա-
ցիները: Սրանք են Հռեքաբի տան
հայր Եմաթից առաջացած տները:

ԴԱՒԻԹ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻՆԵՐԸ

3 Սրանք են Դաւթի որդիները, որ նա
ծնեց Քեբրոնում. անդրանիկ որդին՝
Ամոնը՝ ծնուած յեզրայէլացի Աքինո-
վամից, երկրորդը՝ Դաղուիան՝ ծնուած
կարմելացի Աբիգեայից, 2 երրորդը՝

†Իմաստի յստակութեան համար թարգմա-
նուած է եբրայերէնի հետեւողութեամբ:

‡Ըստ յունարէն բնագրի՝ Սաղոմոն՝ Բեթայի
հայրը, Լամմոն՝ Բեթղեհէմի հայրը, Արիմ՝
Բեթգեորի հայրը:

Աբեսաղոմը՝ Գեսուրի թագաւոր Թողմայի դուստր Մոքայի որդին, 3 չորրորդը՝ Ադոնիան՝ Ագիթի որդին, հինգերորդը՝ Սափատիասը՝ ծնուած Աբիտաղից, վեցերորդը՝ Յեթրամը՝ ծնուած իր Աղգեա կնոջից: 4 Սրանք ծնուեցին Քեբրոնում: Նա այնտեղ թագաւորեց եօթը տարի եւ վեց ամիս, իսկ երեսուներեք տարի թագաւորեց Երուսաղէմում:

5 Երուսաղէմում ծնուածներն են Սամաան, Սոբաբը, Նաթանը եւ Ամիէլի դուստր Բերսաբէէից ծնուած Սողոմոնը: 6 Նաեւ Յեբաարը, Եղիսաման, Եղիփալէտը, Նագեբը, 7 Նափեկը, Նափիին, Եղիսաման եւ Եղիթադան: 8 Սրանք Դաւթի տասնինը որդիներն են, չհաշուած նրա հարճերից ծնուած որդիները: 9 Եւ Թամարը նրանց քոյրն էր:

ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ

10 Սողոմոնի որդիները՝ Հռոբովամ, սրա որդին՝ Աբիաս, սրա որդին՝ Ասա, 11 սրա որդին՝ Յոսափատ, սրա որդին՝ Յորամ, սրա որդին՝ Օքոզիաս, սրա որդին՝ Յովաս, 12 սրա որդին՝ Ամասիա, սրա որդին՝ Ազարիա, սրա որդին՝ Յովաթամ, 13 սրա որդին՝ Աքազ, սրա որդին՝ Եզեկիա, սրա որդին՝ Մանասէ, սրա որդին՝ Ամոս, 14 սրա որդին՝ Յոսիա: 15 Յոսիայի որդիները. անդրանիկը՝ Յովաքազ, երկրորդը՝ Յովակիմ, երրորդը՝ Սեդեկիա, չորրորդը՝ Աղում: 16 Յովակիմի որդիները. Յեքոնիաս եւ Սեդեկիաս: 17 Յեքոնիասի որդիները՝ Ասիր, սրա որդիները՝ Սաղաթիէլ, Մեղքիրամ, 18 Փադայիաս, Սոսամով, Նաբատիաս, Սանեսար եւ Յեքոնիաս: 19 Սաղաթիէլի որդիները՝ Զօրաբաբէլ եւ Սեմէի: Զօրաբաբէլի որդիները՝ Մասողամոս, Անանիաս եւ նրանց քոյր Սաղոմէ: 20 Նաեւ՝ Ասեբա, Օող, Բարքիաս, Ասադիաս եւ Ասոբասէդ՝ ընդամէնը ուութ հոգի: 21 Անանիասի որդին՝ Փալետիա, սրա որդին՝ Յեսիա, սրա որդին՝ Հռափայիա, սրա որդին՝ Օռնա, սրա որդին՝ Աբդիա, սրա որդին՝ Սեքենիա: 22 Սեքենիայի որդին՝ Սամայիա, Սամայիայի որդիները՝ Քետտուս, Յովել, Բերիա, Նովադիա, Սափատ եւ Սափեք՝ ընդամէնը վեց հոգի: 23 Նովադիայի որդիները՝ Եղիոէնէ, Եզեկիաս, Եսրիկամ՝ ընդամէնը երեք հոգի: 24 Եղիոնէի որդիները՝ Օդուիա, Եղիասիբ, Փադայիա, Ակկուբ, Յովնան, Գաղայիա եւ Անանիա՝ ընդամէնը եօթը հոգի:

ՅՈՒԴԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ

4 Յուդայի որդիները՝ Փարէս, Եսրոմ, Քարմի, Օր, Սուբաղ, իսկ սրա որդին՝ Կերիա: 2 Սուբաղը ծնեց Յեթին, Յեթը ծնեց Աքիսայիին ու Ղադայիին: Սրանք Սարաթիայի սերունդն են: 3 Սրանք են Ետամի որդիները. Յեսրայէլ, Յեսմա եւ Գաբէս, իսկ նրանց քրոջ անունն էր Եսեղեփոն: 4 Գեդուրի հայրը Փանուէլն էր, իսկ Օսանի հայրը՝ Եզերը: Սրանք են Բեթղեհէմի հայր Եփրաթայի անդրանիկ որդի Օրի որդիները:

5 Թեկուայի հայր Ասքուրը երկու կին ունէր՝ Աղա ու Նոոբա: 6 Նոոբան ծնեց Օքոզամին, Նեփադին, Թեմանին եւ Ասթերանին: 7 Սրանք բոլորը Նոոբայի որդիներն են: Աղայի որդիները՝ Նարեթ, Ասաար եւ Եթնադի: 8 Եւ Կոսը ծնեց Եգնոբին եւ Սոբեբային:

Սրանք են Յարիմի որդու՝ Հռեքաբի եղբօր սերունդները:

9 Գաբէսը առաւել յայտնի էր, քան իր եղբայրները, եւ մայրը նրա անունը Իգաբէս դրեց՝ ասելով. «Մնեցի նրան Գաբէսի նման»: 10 Իգաբէսը դիմեց Իսրայէլի Աստծուն՝ ասելով. «Օրհնի՛ր ինձ, ընդարձակի՛ր իմ սահմանները, ձեռքդ ինձ վրայ թող լինի, եւ իմաստութի՛ւն տուր, որ չնեմանամ† »: Եւ Աստուած նրան տուեց այն ամէնը, ինչ նա խնդրել էր:

ԱՅԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

11 Եսքասի հայր Քաղեբը ծնեց Մաքիրին, որն Ասաբոնի հայրն էր: 12 Ասպաթոնը ծնեց Յատրոփային, Փեսէին, Թանային՝ Նաասա քաղաքի հօրը, կենէզացի Եսեղոնի եղբօրը: Սրանք

†Եբրայերէնում՝ փրկի՛ր ինձ չարից, որ ցաւ չտեսնեմ:

Հռեփի բնակիչներն են: 13 Կենէզի որդիները՝ Գոթոնիէլ եւ Սարայիա, իսկ Գոթոնիէլի որդին՝ Աթաթ: 14 Մանաթին ծնեց Գոփորային, իսկ Սարայիան ծնեց Գերսասիմի հայր Յաբաբին: Արդարեւ, սրանք հիւսներ էին: 15 Յեփոնէի որդի Քաղեբի որդիները՝ Եռաղա եւ Նաամ, իսկ Արամի որդին՝ Կենէզ: 16 Յայէլի որդիները՝ Ղեզիփաղի, Զեփա, Թիրա եւ Եսրայէլ: 17 Եսրայէլի որդիները՝ Յեթեր, Մորադ ու Գափեր: Աղոնը ծնեց Յեթերին, Մարոնին, Յեսմայիին, Այեսբայիին՝ Սեթեմոնի հօրը: 18 Նրա կինը ծնեց Յարեդին՝ Գեդորի հօրը, Յաբարին՝ Սաքոնի հօրը, եւ Յեքթիէլին՝ Զոնանի հօրը: Սրանք են Մորեդի կնոջ՝ փարաւոնի դուստր Բեթթիայի ծնած որդիները: 19 Օդիայի կնոջ՝ Նաքիմի քրոջ որդիները՝ Կեսիայի հայր Դանա, Հոմամի հայր Սիմէոն, իսկ Կէիլայի հայր Նայեմի որդիները՝ Օտարմի, Յեսթեմոն եւ Մաքաթի: 20 Սիմիւնի որդիները՝ Ամնոն, Անանից ծնուած Հռանոն եւ Թիղոն: Յեսսէի որդի՝ Զոքաթ ու Զոքաթի որդիները:

ՍԵՂՈՒՄԻ ՍԵՐՈՒՆԴԸ

21 Յուդայի որդի Սեղումի որդիները. Ղեքադի հայրը՝ Էրը, Մաղէսի հայրը՝ Դաղաան եւ նրանց սերունդները՝ 22 Եբդաթ, Աբուստան, Նեսոբա, Յովակիմ՝ Քուզեբի բնակիչները, Յովաս, Սարափ, որոնք Մովաբում բնակուեցին, եւ Աբեթարը նրանց վերադարձրեց Նաթուկիմ† : 23 Սրանք բրուտներ էին, որոնք բնակւում էին Անատիմում ու Սադերայում թագաւորի հետ, նրա թագաւորութեան մէջ: Սրանք զօրացան եւ բնակուեցին այնտեղ:

ՇՄԱՒՈՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

24 Շմաւոնի որդիները՝ Նաբուէլ, Յամին, Յարիբ, Զարեհ, Սաւուղ: 25 Սաւուղի որդին՝ Սաղէմ, սրա որդին՝ Բասան, սրա որդին՝ Ասեման, սրա որդին՝ Մազբա, 26 սրա որդին՝ Ամուէլ, սրա որդին՝ Սաբուդ, սրա որդին՝ Զաքուր, սրա որդին՝ Սեմէի: 27 Սեմէին ունէր վեց որդիներ ու տասը դուստրեր, բայց նրա եղբայրները շատ որդիներ չունէին. նրանց ամբողջ տոհմը Յուդայի որդիների նման չէր բազմանում: 28 Նրանք բնակուեցին Բերսաբինում, Սամաայում, Մոլադայում, Սերսուղայում, 29 Բաաղայում, Քուասոմում, Թուղադայում, 30 Բաթուղում, Երմայում, Սիկիլակում, 31 Բեթմարայում, Քաբորայում, Կեսսէոսիմում եւ Բարուասէորիմի տանը: Սրանք էին նրանց քաղաքները մինչեւ Դաւիթ արքան: 32 Նրանց քաղաքներն էին նաեւ Երամը, Երեմոնը, Թոքանը, Եսանը, Թեկենը՝ հինգ քաղաք: 33 Այս բոլոր քաղաքների շուրջը, մինչեւ Բաաղ սփռուած նրանց բնակավայրերի կալուածքների ու նրանց տէրերի անունները սրանք են. 34 Մոսոբաբ, Ամադէկ, Ամասիայի որդի Յոսիա, 35 Յովէլ, Ասիէլի որդի Սարիայի որդի Սաբիայի որդի Յեսու, 36 Եղիոնէ, Յեկեբա, Յասթէ, Յասուիա, Ասայիա, Եդիէլ, Իսմայէլ, Բանեա, 37 Սամուայի որդի Սամարիայի որդի Յեդիայի որդի Աղոնի որդի Սեփերի որդի Զուզա: 38 Այս անուն առ անուն յիշուածները իրենց տոհմերի իշխաններն էին, որոնց հայրերի տոհմերը շատ էին բազմացել: 39 Սրանք գնացին Հասան մինչեւ Գերարա, մինչեւ Գայի արեւելեան կողմը, որ իրենց հօտերի համար արօտավայր որոնեն: 40 Նրանք գտան բազմաթիւ ու հարուստ արօտավայրեր, մի ընդարձակ երկիր իրենց առաջ, ուր խաղաղութիւն ու հանդարտութիւն էր տիրում, որովհետեւ նախկինում Քամի որդիներն էին այստեղ բնակուել: 41 Անուն առ անուն յիշատակուած այս մարդիկ Յուդայի Եզեկիա արքայի օրօք եկան եւ կոտորեցին նրա բնակիչներին, այնտեղ բնակուող մինեցիներին ու նրանց փոխարէն բնակուեցին մինչեւ այսօր, որովհետեւ իրենց հօտերի համար այնտեղ արօտավայրեր էին գտել: 42 Նրանցից՝ Շմաւոնի որդիներից հինգ հարիւր մարդ գնաց Սէիր լեռը, իսկ Յեթեսիայի որդիներ Փաղատիան, Նովադիան, Հռափայիան ու Օզիէլը

†Գրաբար բնագրում նախադասութեան իմաստն անորոշ է:

դարձան նրանց իշխանները: 43 Նրանք կոտորեցին Ամաղէկից այստեղ հաստատուած վերապրածներին եւ այստեղ բնակուեցին մինչեւ այսօր:

ՌՈՒԲԷՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

5 Իսրայէլի անդրանիկ ծննդի՝ Ռուբէնի որդիները: Թէեւ նա էր անդրանիկը, սակայն, իր հօր անկողինը պղծելու պատճառով, հայրն իր օրհնութիւնը տուեց Իսրայէլի որդի Յովսէփին: Ռուբէնը ազգահամարի մէջ իբրեւ անդրանիկ չգրուեց: 2 Թէեւ Յուդան զօրաւոր էր իր եղբայրների մէջ եւ նրանց իշխանը, բայց օրհնութիւնը Յովսէփին տրուեց: 3 Իսրայէլի անդրանիկ ծննդի՝ Ռուբէնի որդիները. Ենոք եւ Փաղղուս, Եսրոմ եւ Քարմի: 4 Յովէլի սերունդը. Սեմէի, Բեբենա, 5 Գոգ, 6 Սեմէի, Բաաղ, Բէէղա, որին գերեց Ասորեստանի Թագլաթփաղասար արքան: 7 Նա էր Ռուբէնի ցեղի իշխանը: Երբ նրա եղբայրներն իրենց տոհմերով ազգահամարի մէջ էին գրւում, նրանց իշխաններն էին Յովէլն ու Զաքարիան: 8 Յովէլի որդի Ամայի որդի Օզուզի որդի Իբաղէին բնակուեց Արոյերում, Նաբաւում ու Բելմաոնում: 9 Նա բնակուեց արեւելքում՝ Եփրատ գետից մինչեւ անապատ, որովհետեւ Գաղաադում նա շատ անասուններ ունէր: 10 Սաւուղի օրօք նրանք պատերազմեցին երկրի բնակիչների դէմ, եւ Գաղաադից դէպի արեւելք՝ վրանաբնակները նրանց ձեռքը գերի ընկան:

ԳԱԴԻ ՍԵՐՈՒՆԴԸ

11 Գադի որդիները բնակուեցին նրանց դիմաց՝ Բասանից մինչեւ Մեղքէ: Դրանք են. գլխաւորը՝ Յովէլ, 12 երկրորդը՝ Սափա, ապա Անայի, որ գրագիր էր Բասանում: 13 Նրանց եղբայրները բնակուեցին ըստ իրենց ազգատոհմերի տների. դրանք են. Միքայէլ, Մոսողամ, Սոբայէ, Յորէ, Յաքան, Ազիա եւ Օբէդ: 14 Այս եօթը Աբիքայիայի որդիներն էին. ինքը՝ Ուրիի որդին, սա՝ Ադայի որդին, սա՝ Գաղաադի որդին, սա՝ Միքայէլի որդին, սա՝ Յեսսայի որդին, սա՝ Յեդդադի որդին, սա՝ Աքիբուզի որդին, 15 սա՝ Աբդիէլի որդին, սա՝ Գունի որդին: Աբիքայիան նրանց ազգատոհմերի իշխանն էր, 16 որոնք բնակւում էին Գաղաադում, Բասանում եւ նրանց աւաններում, Սարոնի շրջակայ բոլոր դաշտերում, մինչեւ նրանց սահմանները: 17 Նրանք ազգահամարի մէջ մտան Յուդայի արքայ Յովաթամի եւ Իսրայէլի արքայ Յերոբովամի օրօք:

ԱՐԻԵԼԵԱՆ ՑԵՂԵՐԻ ԲԱՆԱԿՆԵՐԸ

18 Ռուբէնի ու Գադի որդիները եւ Մանասէի կէս ցեղի մարդիկ զօրաւոր էին: Նրանք պատերազմի սովոր էին՝ վահաններ ու սրեր ունէին, աղեղներ էին լարում ու քառասունչորս հազար եօթը հարիւր վաթսուն մարտիկներով պատերազմի էին ելնում: 19 Նրանք պատերազմի ելան հագարացիների, տուրեցիների, նափեսացիների, նաբեդոնացիների եւ նաբիմացիների դէմ: 20 Նրանք յարձակուեցին նրանց վրայ: Հագարացիները յանձնուեցին նրանց իրենց վրաններով հանդերձ, որովհետեւ պատերազմի ժամանակ իսրայէլացիները Աստծուն էին ուղղել իրենց խնդրանքը: Աստուած լսել էր նրանց, քանի որ իր վրայ էին դրել իրենց յոյսը: 21 Նրանք աւար առան հագարացիների մթերանոցը. հինգ հազար ուղտ, երկու հարիւր յիսուն հազար ոչխար, երկու հազար էշ. գերեցին հարիւր հազար մարդ: 22 Շատերն սպանուեցին, որովհետեւ պատերազմը Աստծուց եղաւ: Իսրայէլացիները բնակուեցին նրանց բնակավայրերում մինչեւ իրենց գերեվարումը:

ՄԱՆԱՍԷԻ ԿԷՍ ՑԵՂԸ ԱՆԴՐՅՈՐԴԱՆԱՆՈՒՄ

23 Մանասէի կէս ցեղը բնակուեց ու բազմացաւ Բասանի երկրից մինչեւ Բաաղերմոն եւ Սանիր, Ահերմոնի լեռից մինչեւ Լիբանան: 24 Սրանք են նրանց տոհմատների իշխանները. Օփեր, Յեսսի, Ելիէլ, Եզրիէլ, Յերեմիա, Յոդիա եւ Իգդիէլ, որոնք զօրեղ մարդիկ էին, իրենց տոհմատների անուանի իշխանները:

25 Նրանք, սակայն, ուխտադրուժ եղան իրենց հայրերի Աստծու հանդէպ, լքեցին նրան ու գնացին այն օտար երկրների աստուածների յետեւից, որոնց Աստուած նրանց ներկայութեամբ ոչնչացրել էր: 26 Եւ Աստուած Իսրայէլի դէմ գրգռեց Ասորեստանի արքայ Փանոքի հոգին ու Սուրի արքայ Թագլաթփաղասարի հոգին, որոնք գերեցին Ռուբէնի ցեղին, Գադի ցեղին եւ Մանասէի կէս ցեղին, տարան Քաղա ու Քաբոր, Գոզան գետի եզերքը, ուր եւ մնում են մինչեւ այսօր:

ՂԵՒԻԻ ՍԵՐՈՒՆԴԸ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐ

6 Ղեւիի որդիները՝ Գերսոն, Կահաթ եւ Մերարի: 2 Կահաթի որդիները՝ Ամրամ, Սահառ, Քեբրոն եւ Օզիէլ: 3 Ամրամի որդիները՝ Ահարոն, Մովսէս եւ Մարիամ: Ահարոնի որդիները՝ Նաբադ եւ Աբիուդ, Եղիազար եւ Իթամար: 4 Եղիազարը ծնեց Փենէէսին, Փենէէսը ծնեց Աբեսսուին, 5 Աբեսսուն ծնեց Բոքքիին, Բոքքին ծնեց Օզիային, 6 Օզիան ծնեց Արէասին, Արէասը ծնեց Մարէոթին, 7 Մարէոթը ծնեց Ամարիասին, Ամարիասը ծնեց Աքիտոբին, 8 Աքիտոբը ծնեց Սադոկին, Սադոկը ծնեց Աքիմաասին, 9 Աքիմաասը ծնեց Ազարիասին, Ազարիասը ծնեց Յոնասին, 10 Յոնասը ծնեց Ազարիասին: 11 Սա քահանայ էր Աստծու այն տանը, որ Երուսաղէմում շինել էր Սողոմոնը: 12 Ազարիասը ծնեց Ամարիասին, Ամարիասը ծնեց Աքիտոբին, Աքիտոբը ծնեց Սադոկին, 13 Սադոկը ծնեց Սելլումին, Սելլումը ծնեց Քեղկիասին, Քեղկիասը ծնեց Ազարիասին, 14 Ազարիասը ծնեց Սարէասին, Սարէասը ծնեց Յոսեդեկին: 15 Յոսեդեկը Նաբուքոդոնոսորի ձեռքը գերի ընկաւ Յուդայի երկրի ու Երուսաղէմի հետ:

16 Ղեւիի որդիները՝ Գերսոն, Կահաթ եւ Մերարի: Գերսոնի որդիների անուններն են Ղոբենի եւ Սեմէի: 17 Կահաթի որդիները՝ Ամրամ, Սահառ, Քեբրոն եւ Օզիէլ: 18 Մերարիի որդիները՝ Մոողի եւ Մուսի: 19 Սրանք Ղեւիի տոհմերն են ըստ ընտանիքների:

20 Գերսոնի որդի Ղոբենիից սերուեցին սրա որդի Յեթթին, 21 սրա որդի Յովաքը, սրա որդի Աբդիուն, սրա որդի Զարան, սրա որդի Յաթրին:

22 Կահաթի որդիները՝ Սահառ, սրա որդի Կորխ, սրա որդի Ասիր, 23 սրա որդի Եղկանա, սրա որդի Աբիսափ, սրա որդի Ասիր, սրա որդի Օզիաս, 24 սրա որդի Աթ, սրա որդի Ուրիէլ, սրա որդի Սաւուղ: 25 Եղկանայի որդիները՝ Ամաս, Աքիմոթ, 26 սրա որդի Եղկանա, սրա որդի Սուփի, սրա որդի Կանաթ, 27 սրա որդի Եղիաթ, սրա որդի Յերոամ, սրա որդի Եղկանա: 28 Սամուէլի որդիները. նրա անդրանիկը՝ Յովէլ, երկրորդը՝ Աբիա: 29 Մերարիի որդիները՝ Մոողի, Նաբար, 30 սրա որդի Ղոբենի, սրա որդի Սեմէի, սրա որդի Օզա, սրա որդի Սամաա, սրա որդի Անգիա, սրա որդի Ասիա:

ՏԱՃԱՐԻ ԵՐԱԺՇՏՆԵՐԸ

31 Սրանք են նրանք, որոնց Դաւիթը կարգեց Աստծու տան երգիչների վրայ, երբ ուխտի տապանակը հաստատուեց այնտեղ: 32 Նրանք վկայութեան խորանի առջեւ երգեցողութեան իրենց պաշտօնը կատարեցին, մինչեւ որ Սողոմոնը Երուսաղէմում շինեց Տիրոջ տունը: Նրանք սպասաւորութիւն կատարելիս կանգնում էին ըստ իրենց կարգի: 33 Ահա Կահաթի ցեղից սպասաւորութեան կոչուածներն ու նրանց որդիները. Սամուէլի թոռ Էմանը՝ Կահաթի սերնդից սաղմոսերգու Էմանը, որը որդին էր Յովէլի, եւ սա՝ Սամուէլի, 34 սա՝ Եղկանայի, սա՝ Յերեմիէլի, սա՝ Ելիեղի, սա՝ Թոկիի, 35 սա՝ Սուփիի, սա՝ Եղկանայի, սա՝ Մաաթի, սա՝ Ամասիի, 36 սա՝ Եղկանայի, սա՝ Յովէլի, սա Ազարիայի, սա՝ Սափանի, 37 սա՝ Թաաթի, սա՝ Ասիրի, սա՝ Բիասափի, սա՝ Կորխի, 38 սա՝ Յեսարի, սա՝ Կահաթի, սա՝ Ղեւիի, սա՝ Իսրայէլի: 39 Նրա եղբայրն էր Ասափը, որը նրա աջ կողմում էր կանգնում: Ասափը

որդին էր Բարաքիի, եւ սա՝ Սամայի,
40 սա՝ Միքայէլի, սա՝ Բաասիայի, սա՝
Միքիայի, 41 սա՝ Աթանիի, սա՝ Ազա-
րիայի, սա՝ Ցադիայի, 42 սա՝ Ուրիի, սա՝
Զամմայի, սա՝ Սեմէիի, 43 սա՝ Յեթթիի,
սա՝ Գերսոնի, եւ սա՝ Ղեւիի: 44 Մերա-
րիի որդիները՝ նրանց եղբայրները,
կանգնում էին ձախ կողմում: Դրանք
են՝ Էթանը՝ որդին Կիսանի, եւ սա՝ որ-
դին Աբդիի, սա՝ Մաղոտի, 45 սա՝ Ասե-
բիի, սա՝ Ամեսսիի, սա՝ Քեղկիի, 46 սա՝
Ամասիայի, սա՝ Բանի, սա՝ Սեմերի,
47 սա՝ Ամոողի, սա՝ Մուսիի, սա՝ Մե-
րարիի, եւ սա՝ Ղեւիի: 48 Եւ նրանց
եղբայրները, ըստ իրենց տոհմատների,
ղեւտացիներ էին, որոնք նշանակուած
էին Աստծու տան խորանին սպասաւո-
րութիւն կատարելու համար:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

49 Ահարոնը եւ իր որդիները ող-
ջակէզների զոհասեղանին ու խնկերի
զոհասեղանին խունկ ծխելով՝ կատա-
րում էին սրբութիւնների սրբութեան
բոլոր գործերը Իսրայէլի քաւութեան
համար, ճիշտ այնպէս, ինչպէս պա-
տուիրել էր Աստծու ծառայ Մովսէսը:
50 Սրանք են Ահարոնի որդիները.
Եղիազար, սրա որդին՝ Փենէէս, 51 սրա
որդին՝ Աբիսու, սրա որդին՝ Բոկա, սրա
որդին՝ Օզիա, սրա որդին՝ Զարա,
52 սրա որդին՝ Մերաոթ, սրա որդին՝
Ամարիաթ, սրա որդին՝ Աքիտոբ, սրա
որդին՝ Սադոկ, 53 սրա որդին՝ Աքիմաս:
54† Կահաթի տոհմից սերուած Ա-
հարոնի որդիները գիւղերում ու ա-
ւաններում բնակավայրեր ունեցան,
որովհետեւ դրանք էին նրանց բաժին
ընկել: 55 Նրանց տուեցին Յուդայի
երկրում գտնուող Քեբրոնն իր շրջա-
կայ արուարձաններով, 56 իսկ քաղաքի
դաշտերն ու գիւղերը տուեցին Յեփո-
ննէի որդի Քաղեբին: 57 Ահարոնի որ-
դիներին տուեցին ապաստանի քա-
ղաքները՝ Քեբրոնն ու Ղոբնան իրենց
արօտավայրերով, Եղոնը իր արօտա-
վայրերով, Եսթամովը իր արօտա-
վայրերով, 58 Յեսթերը իր արօտա-
վայրերով, Դաբիրը իր արօտավայ-
րերով, 59 Ասանը իր արօտավայրերով,
Բեթսամիւսը իր արօտավայրերով եւ
Բեթերը իր արօտավայրերով: 60 Բե-
նիամինի ցեղին տուեցին Գաբէէն իր
արօտավայրերով, Գաղեմէթը իր արո-
տավայրերով, Ղաբէէն իր արօտա-
վայրերով, Անաթոթը իր արօտավայ-
րերով, Անքոսը իր արօտավայրերով:
Այդ տոհմերի բոլոր քաղաքների թիւը
տասնչորս է:
61 Մանասէի կէս ցեղից սերուած
Կահաթի որդիներին՝ այս տոհմի մնա-
ցած անդամներին, վիճակահանու-
թեամբ տասը քաղաք տրուեց, 62 իսկ
Գերսոնի որդիներին, ըստ իրենց տոհ-
մերի, այն է՝ Իսաքարի ցեղից, Ասերի
ցեղից, Նեփթալիմի ցեղից եւ Բասա-
նում բնակուող Մանասէի ցեղից վի-
ճակահանութեամբ տրուեց տասներեք
քաղաք:
63 Մերարիի որդիներին, ըստ իրենց
տոհմերի, այն է՝ Ռուբէնի ցեղից, Գա-
դի ցեղից եւ Զաբուղոնի ցեղից վի-
ճակահանութեամբ տրուեց տասներկու
քաղաք:
64 Այսպիսով իսրայէլացիները ղեւ-
տացիներին տուեցին այս քաղաքներն
իրենց շրջակայ արօտավայրերով:
65 Յուդայի ցեղից, Շմաւոնի ցեղից ու
Բենիամինի որդիների ցեղից վիճա-
կահանութեամբ բաժին հանեցին այս
քաղաքները, որ անուններով են
նշուած: 66 Կահաթի որդիների տոհ-
մերին տուեցին Եփրեմի ցեղի
սահմաններում գտնուող քաղաքներ.
67 նրանց տուեցին ապաստանի քա-
ղաքները՝ Եփրեմի լերան վրայ
գտնուող Սիւքէմն իր արօտավայրերով,
Գազերը իր արօտավայրերով, 68 Յեկ-
նամը իր արօտավայրերով, Բեթորոնը
իր արօտավայրերով, 69 Ելոթը իր
արօտավայրերով եւ Գեթրեմոնը իր
արօտավայրերով: 70 Մանասէի կէս
ցեղից Ենները իր արօտավայրերով, Իբ-
զաամամն իր արօտավայրերով տրուե-
ցին Կահաթի որդիների տոհմի մնա-
ցած անդամներին:
71 Գերսոնի որդիներին, ըստ իրենց
տոհմերի, Մանասէի կէս ցեղից տրուե-
ցին Բասանի Գողոն բնակավայրը իր
շրջակայ արօտավայրերով եւ Հռոմոթը

†Իմաստի յստակութեան համար այս հա-
մարում հետեւել ենք երրայերէն բնագրին:

իր արօտավայրերով: 72 Իսաքարի ցե-
ղից տուեցին Կեթէսը իր արօտա-
վայրերով, Կադիրը իր արօտավայ-
րերով, 73 Ամոսը իր արօտավայրերով
եւ Անամը իր արօտավայրերով: 74 Ա-
սերի ցեղից տուեցին Մասաղը իր
արօտավայրերով, Աւադոնը իր արօտա-
վայրերով, 75 Յակակը իր արօտավայ-
րերով եւ Հռոթը իր արօտավայրերով:
76 Նեփթալիմի ցեղից տուեցին Գա-
լիլիայում գտնուող Կեդէսը իր արո-
տավայրերով, Քամովը իր արօտա-
վայրերով եւ Կարիաթարիմը իր արո-
տավայրերով:
77 Մերարիի մնացած որդիներին
Զաբուղոնի ցեղից տուեցին Յեկոմանը
իր արօտավայրերով, Կադէսը իր արո-
տավայրերով, Հռեմոնը իր արօտա-
վայրերով, Բաթորը իր արօտավայ-
րերով, 78 նաեւ Երիքովում, Յորդանան
գետի եղերքին, Յորդանան գետից
արեւմուտք գտնուող մասը, Ռուբէնի
ցեղից տուեցին անապատում գտնուող
Բոսորը իր արօտավայրերով, Յասան
իր արօտավայրերով, 79 Կադեթոթը իր
արօտավայրերով եւ Մոփասաթը իր
արօտավայրերով: 80 Գադի ցեղից
տուեցին Գաղաադում գտնուող Ռա-
մոթը իր արօտավայրերով, Մանայիմը
իր արօտավայրերով, 81 Յեսեբոնը իր
արօտավայրերով եւ Յազերը իր
արօտավայրերով:

ԻՍԱՔԱՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ

7 Սրանք են Իսաքարի որդիները. Թո-
ղա, Փուա, Յասուբ եւ Սամրամ՝ ընդա-
մէնը չորս հոգի: 2 Թողայի որդիները՝
Օզի, Հռափայիաս, Յերիէլ, Յեմու, Յե-
բամ եւ Սամուէլ, որոնք իրենց տոհ-
մատների իշխաններն էին: Թուղն ու
Անանը իրենց տոհմի մէջ քաջազուն-
ներ էին: Նրանց գունդը Դաւթի օրօք
բաղկացած էր քսաներկու հազար վեց
հարիւր հոգուց: 3 Օզիի որդին էր Յե-
զրեիասը, Յեզրեիասի որդիները՝
Միքայէլ, Աբդիաս, Յովէլ եւ Յի-
սիաս, որոնք բոլորն էլ իշխաններ էին:
4 Նրանց հետ, ըստ իրենց ազգատոհմի,
ըստ իրենց տոհմատների, պատերազմի
համար պատրաստ կային երեսունվեց
հազար զօրաւոր մարդիկ, որովհետեւ
նրանց կանայք ու որդիները բազմացել
էին: 5 Նրանց եղբայրները Իսաքարի
բոլոր տոհմերի մէջ քաջազուններ էին:
Նրանց ընդհանուր թիւը կազմում էր
ութսունեօթը հազար հոգի:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ԵՒ ԴԱՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

6 Բենիամինի որդիները՝ Բաղէէ, Բո-
քոր, Ադիէլ՝ ընդամէնը երեք հոգի:
7 Սրանք են Բաղէէի որդիները. Ասե-
բոն, Օզի, Օզիէլ, Երեմոթ, Ուրի՝ ընդա-
մէնը հինգ հոգի, որոնք իրենց տոհ-
մատների քաջազուն իշխաններն էին:
Նրանց թիւը քսաներկու հազար երե-
սունչորս էր: 8 Բոքորի որդիները՝ Զա-
մարիաս, Յովաս, Ելիեզեր, Ելիոէլ, Նաւ,
Ամարիա, Երիմոթ, Աբիու, Անաթոթ եւ
Ելմեթեմ. 9 սրանք բոլորը Բոքորի որ-
դիներն էին, իրենց տոհմերի քաջա-
զուն իշխանները, եւ նրանց թիւը
քսան հազար երկու հարիւր էր: 10 Աբ-
դիէլի որդին էր Բաղաանը, Բաղաանի
որդիները՝ Յէսոս, Բենիամին, Աւոդ,
Քանաան, Եդան, Թարսիս եւ Աքի-
սաար: 11 Սրանք բոլորը Աբդիէլի որ-
դիներն էին, իրենց տոհմի քաջազուն
իշխանները, որոնք քաջութեամբ
պատերազմի էին ելնում, եւ որոնց
թիւը տասնեօթը հազար երկու հարիւր
էր: 12 Նաեւ Սափիմ ու Աբիմ: Սորայի
որդին էր Սորուն, սրա որդին՝ Յաթերը:
13 Նեփթալիմի որդիները՝ Յասիէլ,
Գունի, Սահառ, Սելլում: Նեփթալիմի
մայրը Բալլան էր:

ՄԱՆԱՍԷԻ ՍԵՐՈՒՆԴԸ

14 Մանասէի որդին էր Եսրիէլը, որին
ծնել էր Մանասէի ասորի հարճը, եւ
որը ծնել էր նաեւ Գաղաադի հօրը՝
Մաքիրին: 15 Մաքիրը կին գտաւ Յա-
փինի, նաեւ Սեփոնի համար: Մաքիրի
քրոջ անունն էր Մոոքա: Մաքիրը երկ-
րորդ որդի ունեցաւ, որի անունն էր
Սափաադ: Սափաադը ծնեց միայն
դուստրեր: 16 Մաքիրի կին Մոոքան
որդի ծնեց եւ անունը դրեց Փարէս:
17 Սրա եղբօր անունն էր Սորոմ, իսկ
սրա որդու անունը՝ Ուղամա: Ուղա-

մայի որդին էր Բաղիմը: 18 Սրանք են Մանասէի որդի Մաքիրի որդի Գաղաադի որդիները: Նրա քոյր Մաւէքէթը ծնեց Իսուղին, Աբիեզերին եւ Մողղային: 19 Սեմիրի որդիներն էին Այինը, Սիւքէմը, Ղակէիան եւ Անիամը:

ԵՓՐԵՄԻ ՍԵՐՈՒՆԴԸ

20 Եփրեմի որդին՝ Մեսթաղա, սրա որդին՝ Բարադ, սրա որդին՝ Թաաթ, սրա որդին՝ Եղիադ, սրա որդին՝ Նոմեէ, սրա որդին՝ Զարեդ, 21 սրա որդին՝ Սոթէլ, սրա որդին՝ Եզեր, սրա որդին՝ Եղէադ: Սրանց սպանեցին այդ երկրում ծնուած գեթացիները, քանզի սրանք եկել էին իրենց անասունները խլելու: 22 Նրանց հայր Եփրեմը բազում օրեր սուգ արեց: Եկան նրա եղբայրները նրան մխիթարելու: 23 Նա պառկեց իր կնոջ հետ, սա յղիացաւ ու ծնեց որդի, որի անունը դրեց Բարիա, քանզի ասում էր, թէ՝ «Չար ժամանակ ծնուեց իմ տանը»: 24 Եփրեմի դուստրն էր Սառան: Սառան մնացած իր մարդկանց հետ շինեց ներքին եւ վերին Բեթորոնը: 25 Օզանի որդին էր Սէէրան, 26 սրա որդիները՝ Հռափայէ եւ Հռասէթ, սրա որդին՝ Թաղէ, սրա որդին՝ Զոոդա, սրա որդին՝ Թաան, 27 սրա որդին՝ Ամիուդ, սրա որդին՝ Եղիսամա, 28 սրա որդին՝ Նուն, եւ սրա որդին՝ Յեսու: Նրանց կալուածքներն ու բնակավայրը Բեթէլում էին, Բեթէլի գիւղերը արեւելեան մասում էին գտնուում: Դրանք են. Գազերն իր գիւղերով, Սիւքէմն իր գիւղերով մինչեւ Գազա ու դրա գիւղերը, 29 մինչեւ Մանասէի որդիների սահմանները, Բեթսանն իր գիւղերով, Թանաքն իր գիւղերով, Գաղաադն իր գիւղերով, Մակեդդոն իր գիւղերով եւ Դորն իր գիւղերով: Այնտեղ բնակուեցին Իսրայէլի որդի Յովսէփի որդիները:

ԱՍԵՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ

30 Ասերի որդիները՝ Յեսնա, Յասուբ, Յեսովա, Յեսու, Աբարիա եւ նրանց քոյր Սարա: 31 Աբարիայի որդիները՝ Քաբեր եւ Մելքիէլ. սա Զեբեթի հայրն է: 32 Քաբերը ծնեց Յափաղէտին, Սոմերին, Քոթամին եւ սրանց քոյր Սողամին: 33 Յափաղէտի որդիները՝ Թեսեքի, Բամայէլ եւ Ասիթ: Սրանք էին Յափաղէտի որդիները: 34 Սոմերի որդիները՝ Աքիու, Հռաադա, Օբդա, Արամ: 35 Սոփարի եղբայր Ելամի որդիները՝ Յամանա, Սեղէս եւ Ամաաղ: 36 Սոփարի որդիները՝ Առնափար, Սուաղ, Բարի, Յեմրա, 37 Բասար, Օդ, Սեմա, Սաղիսա, Յեթեր եւ Բեէրա: 38 Յեթերի որդիները՝ Յափինա, Փասփա եւ Արա: 39 Օղի որդիները՝ Օրեք, Անիէլ եւ Հռայիէլ: 40 Սրանք բոլորը Ասերի որդիներն են, բոլորը տոհմերի իշխաններ ու պետեր, ընտիր քաջազուններ, իշխաններ եւ առաջնորդներ: Պատերազմի պատրաստ նրանց մարդկանց թիւը քսանվեց հազար էր:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

8 Բենիամինը առաջինը ծնեց Բաղէին, երկրորդը՝ Ասբէղին, երրորդը՝ Արային, չորրորդը՝ Նովային, հինգերորդը՝ Հռափային: 2 Բաղէի որդիներն էին 3 Արեդը, Գերան, Աբիուդը, 4 Աբիսուէն, Նեէմանը, Գերան, 5 Սոփանը, Քիրամը եւ Սովիմը: 6 Սրանք են Օդի որդիները, եւ սրանք են տոհմերի իշխանները, որ բնակւում էին Գաբայում եւ գերեվարուեցին դէպի Մանաքաթ: 7 Նաեւ՝ Նեէման, Աքիան եւ Գերան՝ նոյն ինքը Եգղամը, որը ծնեց Օզային ու Աքիադին: 8 Եւ Գաարիմը նրան տեղ հասցնելուց յետոյ ծնեց Մովամին, Օսիմին ու Բաարային: 9 Նրա կին Ադան ծնեց Յոբաբին, Սաբիային, Մոսային, Մեղքամին, 10 Յէուսին, Սեբիային եւ Մարմային: 11 Սրանք Յոսիմից սերուած տոհմերի իշխաններն են: Մեսիմը ծնեց Աքիտոբին եւ Աղփաղային: 12 Աղփաղայի որդիները՝ Օուէտ, Միսայէլ, Սեմեր (որ կառուցեց Օնողն ու Ղոդը եւ նրա գիւղերը), Բարիգա ու Սամա: 13 Սրանք են Եղամում բնակուող տոհմերի իշխանները, որ դուրս քշեցին Գեթի բնակիչներին: 14 Նրանց եղբայրները՝ Մոսէք, Յարիմաթ, 15 Ա-

զբադիա, Արոդ, Յադեր, 16 Միքայէլ, Յեսփաք, Յովաքա եւ Յեզիաս: Բարիագայի որդիներն են 17 Զաբդաիան, Մոքողամը, Ազակին, Աբարը, 18 Յեսամարին, Եսիեղան եւ Յոբաբը: Եղփաղի որդիներն են 19 Յաքիմը, Զէքրին, Զաբդին, 20 Եղիոնէն, Սաղթին, Ելիէլը, 21 Ազաիան, Բերիգան, Բարեան եւ Սամարիամը: Ամարիայի որդիներն են 22 Յեսփանը, Օբեդը, Ելիէլը, 23 Աբդոնը, Մեքրին, Անանը, 24 Անանիան, Ամբրին, Աեղամը, Անաթոթիան, 25 Աթինը, Յեփադիան եւ Փանուէլը: Սոսեկի որդիներն են 26 Սամերիան, Սարայիան, Գոթողիասը, 27 Արասիասը, Հեզիասը, Զէքրին եւ Երոմի որդիները: 28 Սրանք տոհմերի իշխաններն են, Երուսաղէմում բնակուող իրենց սերնդի առաջնորդները:

29 Գաբաւոնի հայրը բնակուեց Գաբաւոնում: Նրա կնոջ անունն էր Մաաքա: 30 Նրա որդիները՝ անդրանիկը՝ Սաբդոն, ապա՝ Յեսուր, Կիս, Բաղաամ, Ներ, Նաբադ 31 եւ Գեդուր. սրա եղբայրներն էին Զաքուրն ու Մաղողոթը, որը ծնել էր Սամաային: 32 Սրանք բնակուեցին Երուսաղէմում, իրենց եղբայրների դիմաց, իրենց եղբայրների հետ:

ՍԱՒՈՒՂ ԹԱԳԱՒՈՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

33 Ները ծնեց Կիսին. Կիսը ծնեց Սաւուղին. Սաւուղը ծնեց Յովնաթանին, Մեղքիսաւէին, Ամինադաբին եւ Իսմայէլին: 34 Յովնաթանը ծնեց Մեմփիբաաղին. Մեմփիբաաղը ծնեց Միքային: 35 Միքայի որդիներն են Փիղոնը, Մաղոքը, Թարէն եւ Քաազը: 36 Քաազը ծնեց Յովիդային. Յովիդան ծնեց Գաղեմաթին, Ազոթին, Զամարիային: 37 Զամարիան ծնեց Մեսսային. Մեսսան ծնեց Բաանային: 38 Սրա որդին է Հռափեան, սրա որդին՝ Եղէասը, սրա որդին՝ Եսէլը: Եսէլը[†] վեց որդի ունէր, որոնց անուններն են. անդրանիկինը՝ Եզրիկամ, ապա՝ Բոքերու, Իսմայէլ, Սարաիաս, Արդիաս, Անան: 39 Սրանք բոլորը Եսէլի որդիներն էին: Նրա եղբայր Եսեղկանի որդիները՝ անդրանիկը՝ Ուղամ, երկրորդը՝ Աւաս, երրորդը՝ Եղիփաղէտ: 40 Եղկամի որդիները քաջազուն, աղեղնաւոր մարդիկ էին, որոնք բազմացրին իրենց որդիներին ու որդիների որդիներին: Նրանց թիւը հասաւ հարիւր իննսուն հոգու: Սրանք բոլորը Բենիամինի որդիներից ծնուեցին:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ՝ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔ ԵՒ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔ

9 Իսրայէլի բոլոր ցեղերը, իրենց մեղքերի համար Բաբելոն տարաբնակեցուածներով հանդերձ, գրանցուած են Իսրայէլի ու Յուդայի երկրի թագաւորների գրքերում:

2 Իսրայէլի քաղաքներում իրենց կալուածքների առաջին բնակիչները քահանաներն ու ղեւտացիներն էին: 3 Երուսաղէմում բնակուեց Յուդայի որդիների, Բենիամինի որդիների եւ Եփրեմի ու Մանասէի որդիների մի մասը: 4 Նաեւ Յուդայի որդի Փարէսի որդի Ամարիի որդի Ամիութի որդի Գոթին, 5 Սեղոմի որդիներից՝ նրա անդրանիկ որդի Ասեան ու սրա որդիները, 6 Զարայի որդիներից՝ Յէիէլը եւ նրա եղբայրները՝ ընդամէնը վեց հարիւր իննսուն հոգի, 7 Բենիամինի որդիներից՝ Ասանուի որդի Դովիայի որդի Մոսոմի որդի Սաղոմը, 8 Յերեմի որդի Յեբնան, Սոքորի որդի Օզիայի որդի Եղամը, Յեբանի որդի Ռագուէլի որդի Սափատի որդի Մասաղամը 9 եւ նրանց եղբայրներն ըստ իրենց ցեղերի՝ ընդամէնը ինը հարիւր յիսունվեց մարդ: Սրանք բոլորն էլ իրենց տոհմերի պետեր էին՝ իւրաքանչիւրն ըստ իր ընտանիքի:

ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ԲՆԱԿՈՒՈՂ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

10 Քահանաներից՝ Յոդայէն, Յովարիբը, Աքինը, 11 Աստծու տան առաջնորդ Աքիտոբի որդի Մարիոթի որդի Սադոկի որդի Մոսողոմի որդի Քեղկիի որդի Ազարիասը, 12 Քեղկիի որդի Փասուրի որդի Յերեմի որդի Օրդիասը, Մոսողոմի որդի Եզրի որդի Ադիէլի որդի Մասէն, Ասերի որդի Ղաամոթը

[†]Հայերէն բնագրում՝ Յովսէլ:

13 եւ նրանց եղբայրները, որոնք, թուով ընդամէնը հազար եօթը հարիւր իններսուն հոգի, իրենց տոհմատների իշխաններն էին եւ Աստծու տան սպասաւորութեան գործում հմուտ մարդիկ էին:
14 Ղեւտացիներից բնակւում էին Մերարիի թոռ Ասաբիայի որդի Եզրիկամի որդի Ասոբի որդի Սամաան, 15 Բակբակը, Արէսը, Գողէղը եւ Ասափի որդի Զէքրիի որդի Միքայի որդի Մաթանիասը, 16 Իդիթոնի որդի Գողաղի որդի Սամեայի որդի Օբդիասը, նետոփատացիների գիւղերում բնակւող Եղկանայի որդի Ասայի որդի Բարաքիասը, 17 դռան պահապաններ Սալլոմը, Ակուբը, Տեղմանը, Եմանը եւ նրանց եղբայրները, ընդ որում Սալլոմը իշխան էր: 18 Սրանք մինչեւ այսօր պահպանում են թագաւորի դռան արեւելեան կողմը, այսինքն՝ Ղեւիի որդիների գնդերի դռները: 19 Նաեւ Կորխի որդի Աբիսափի որդի Կորէի որդի Սաղոմն ու նրա հօրական տնից եղբայրները, կորխացիները սպասաւորութեան գործի վրայ էին. նրանք պահպանում էին վրանի շեմը. իրենք եւ իրենց հայրերը Տիրոջ բանակատեղիի մուտքի պահապաններն էին: 20 Եղիազարի որդի Փենէհեսը նրանց իշխանն էր Տիրոջ առջեւ, եւ սրանք նրա հետ էին: 21 Մոսոդոմի որդի Զաքարիասը վկայութեան խորանի դռան պահապանն էր: 22 Դռան պահպանութեան համար ընտրուածները երկու հարիւր տասներկու հոգի էին: Սրանք իրենց սրահներում էին մնում, եւ այդ էր նրանց թիւը: Դաւիթն ու տեսանող Սամուէլն էին նշանակել նրանց իրենց հաւատարմութեան համար: 23 Սրանք եւ իրենց որդիները նշանակուել էին Տիրոջ տան՝ խորանի տան դռների վրայ, որ պահպանեն 24 դռները չորս կողմից՝ արեւելքից, ծովի կողմից, հիւսիսից ու հարաւից: 25 Նրանց եղբայրները մնում էին իրենց սրահներում եւ ամէն եօթը օրը մէկ, ժամանակ առ ժամանակ մտնում էին նրանց մօտ, 26 քանզի չորս զօրեղ հաւատարիմ մարդկանց էր վստահուած դռների պահպանութիւնը: Ղեւտացիներն էին, որ նշանակուած էին շտեմարանների եւ Աստծու տան գանձերի վրայ, որովհետեւ նրանց էր յանձնարարուած պահպանութիւնը, 27 նրանց էին վստահուած բանալիները, ուստի նրանք էին ամէն առաւօտ բաց անում տաճարի դռները: 28 Նրանցից ոմանք նշանակուած էին պաշտամունքի սպասքի վերակացուներ, որ հաշուով բերեն սպասքը ու հաշուով էլ տանեն: 29 Նրանցից ոմանց յանձնուած էր սրբազան կահկարասիի, ընտիր ալիւրի, գինու, իւղի, կնդրուկի եւ այլ խնկերի հսկողութիւնը: 30 Քահանաների որդիներից ոմանք իւղ եփողներ եւ խունկ պատրաստողներ էին: 31 Ղեւտացիներից Մատաթիասը, որը կորխացի Սաղոմի անդրանիկ որդին էր, պէտք է կատարէր զոհաբերութեան եւ քահանայապետի տապակի հսկողութիւնը: 32 Կահաթացի Բանեասը իր եղբայրների միջից առաջաւորաց հացի վերակացու էր կարգուած. նա ամէն շաբաթ պէտք է պատրաստէր այն: 33 Սրանք սաղմոսերգուներ էին, ղեւտացիների տոհմերի իշխաններ, որոնց յանձնարարուած էր օրուայ սպասաւորութիւնը: Սրանք օր ու գիշեր գործի վրայ էին: 34 Սրանք ղեւտացիների տոհմերի իշխաններն էին, ամէն մէկն իր ցեղի իշխանը: Սրանք բնակուեցին Երուսաղէմում:

ՍԱՒՈՒՂ ԹԱԳԱՒՈՐԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐՆ ՈՒ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ
(Ա Մնաց. 8. 29-38)

35 Գաբաւոնի հայրը՝ Ցէէլը, բնակուեց Գաբաւոնում: Նրա կնոջ անունն էր Մոոքա: 36 Նրա անդրանիկ որդին էր Աբդոնը, իսկ միւսների անուններն էին՝ Ցասիր, Կիս, Բաաղ, Ներ, Նաբադ, 37 Գեդուր: Զաքուրի եղբայրներն էին Այիոնը, Զէքրին ու Մակեղոթը: 38 Մակեղոթը ծնեց Սամաային, եւ սրանք իրենց եղբայրների մէջ ու իրենց եղբայրների հետ բնակուեցին Երուսաղէմում:
39 Ները ծնեց Կիսին. Կիսը ծնեց Սաւուղին. Սաւուղը ծնեց Յովնաթանին, Մեղքիսաւէին, Ամինադաբին

ու Բաաղին: 40 Յովնաթանի որդի Մեմփիբաաղը ծնեց Միքային: 41 Միքայի որդիներն էին Փիթոնը, Մաղոքն ու Թարան: 42 Բաաղը ծնեց Յովադային. Յովադան ծնեց Գաղեմոթին ու Ազեմոթին. Զամրին ծնեց Մասային. 43 Մասան ծնեց Բանարին: Սրա որդին էր Ափան, սրա որդին՝ Եղէասաը, եւ սրա որդին՝ Եսսէլը: Եսսէլի որդիները վեցն էին: 44 Ահա նրանց անունները. անդրանիկը՝ Եզրիկամ, ապա՝ Իսմայէլ, Սարիա, Աբդիա, Ամարիա եւ Անան: Սրանք են Եսսէլի որդիները:

ՍԱՒՈՒՂԻ ՄԱՀԸ
(Ա Թագ. 31. 1-13)

10 Այլազգիները պատերազմեցին իսրայէլացիների դէմ, որոնք փախան այլազգիների առջեւից եւ սպանուած ընկան Գեղբուա լեռների վրայ: 2 Այլազգիները հետապնդեցին Սաւուղին ու նրա որդիներին: Այլազգիները սպանեցին Յովնաթանին, Ամինադաբին եւ Մեղքիսաւէին՝ Սաւուղի որդիներին: 3 Պատերազմում պարտութիւն կրեց Սաւուղը՝ նետերով խոցուած. նա նետահար էր եղել: 4 Սաւուղն ասաց իր կապարճակրին. «Հանի՛ր սուրդ եւ դրանով սպանի՛ր ինձ: Չլինի, թէ անթլփատները գան ու անարգանքի ենթարկեն ինձ»: Կապարճակիրը չուզեց այդ անել, քանզի շատ վախեցել էր: Այն ժամանակ Սաւուղն առաւ սուրը եւ ընկաւ դրա վրայ: 5 Երբ նրա կապարճակիրը տեսաւ, որ Սաւուղը մեռաւ, ինքն էլ իր սրի վրայ նետուեց ու մեռաւ: 6 Այդ օրը մեռան Սաւուղն ու իր որդիները. նրա ամբողջ ընտանիքը միաժամանակ մեռաւ: 7 Երբ հովտում գտնուող բոլոր իսրայէլացիները տեսան, թէ իսրայէլացիները փախել են, իսկ Սաւուղն ու նրա որդիներն սպանուել, թողեցին իրենց քաղաքները եւ փախան, իսկ այլազգիները եկան ու բնակուեցին նրանց քաղաքներում:
8 Հետեւեալ օրը եկան այլազգիները, որ կողոպտեն սպանուածներին: Նրանք գտան Գեղբուա լեռան վրայ սպանուած Սաւուղին ու նրա որդիներին, 9 մերկացրին նրան, տարան գլուխն ու զէնքերը եւ ուղարկեցին այլազգիների երկիրը, որ ամէն տեղ աւետիս տան իրենց կուռքերին ու ժողովրդին: 10 Նրա զէնքերը դրեցին իրենց աստծու տանը, իսկ գլուխը՝ Դագոնի տանը:
11 Գաղաադում բնակուող բոլոր մարդիկ լսեցին, թէ ինչ էին արել այլազգիները Սաւուղի եւ իսրայէլացիների նկատմամբ: 12 Բոլոր քաջարի մարդիկ ելան Գաղաադից եւ առնելով Սաւուղի ու նրա որդիների մարմինները՝ բերեցին Յաբիս ու նրանց ոսկորները թաղեցին Յաբիսում գտնուող կաղնու տակ ու եօթը օր ծոմ պահեցին: 13 Սաւուղը մեռաւ իր այն անօրէնութիւնների պատճառով, որ գործել էր Տիրոջ դէմ, Տիրոջ խօսքը չպահելով՝ վհուկներից խորհուրդ էր հարցրել, փոխանակ Տիրոջը խնդրելու: Նրան դէմ էր կանգնել Սամուէլ մարգարէն: 14 Տէրը սպանել էր նրան ու թագաւորութիւնը վերադարձրել Յեսսէի որդի Դաւթին:

ԴԱՒԻԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐ
(Բ Թագ. 5. 1-10)

11 Բոլոր իսրայէլացիները Քեբրոն, Դաւթի մօտ գալով՝ ասացին. «Ահաւասիկ, մենք քո ոսկորն ու քո մարմինն ենք: 2 Անցեալում, մինչ Սաւուղն արքայ էր, դու էիր հովուութիւն անում Իսրայէլին: Եւ քո Տէր Աստուածը քեզ ասաց. "Դո՛ւ պիտի հովուես Իսրայէլի իմ ժողովրդին, դո՛ւ պիտի լինես Իսրայէլի առաջնորդը"»: 3 Եկան Իսրայէլի բոլոր ծերերը արքայի մօտ, Քեբրոն, ու Դաւթը Տիրոջ առջեւ նրանց հետ ուխտ դրեց Քեբրոնում: Նրանք Դաւթին Իսրայէլի թագաւոր օծեցին ըստ Տիրոջ այն խօսքերի, որ նա Սամուէլի միջոցով էր ասել:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՐԱՒՈՒՄԸ

4 Արքան ու նրա մարդիկ գնացին Երուսաղէմ, որ Յեբուսն է: Այնտեղ էին յեբուսացիները, որոնք այդ երկրի բնակիչներն էին: 5 Յեբուսի բնա-

կիչներն ասացին Դաւթին.«Դու այստեղ չպիտի մտնես»: Իսկ նա գրաւեց Սիոնի ամրոցը, այսինքն՝ Դաւթի քաղաքը: 6 Դաւիթն ասաց. «Ով յեբուսացիներին առաջինը կը սպանի, նա էլ իշխան ու զօրավար կը լինի»: Սարուհիի որդի Յովաբը առաջինը ելաւ նրանց դէմ ու դարձաւ իշխան: 7 Դաւիթը նստեց ամրոցում եւ այդ պատճառով նա կոչեց այն Դաւթի քաղաք: 8 Նա շուրջանակի ամրացրեց այն քաղաքը, որ պատերազմելով էր գրաւել: 9 Դաւիթը գնալով հզօրանում էր, որովհետեւ ամենակալ Տէրը նրա հետ էր:

ԴԱՒԹԻ ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ՋՕՐԱՎԱՐՆԵՐԸ
(Բ Թագ. 23. 8-39)

10 Սրանք են Դաւթի զօրքի այն հրամանատարները, որոնք նրա թագաւորութեան մէջ նրա հետ ու ամբողջ Իսրայէլի հետ հզօրանում էին, եւ որոնք Տիրոջ ասածի համաձայն նրան Իսրայէլի թագաւոր էին օծել: 11 Ահա Դաւթի հզօր մարդկանց անուանացանկն ու նրանց թիւը.

Աքամանի որդի Իզբաամը՝ երեք զօրավարներից առաջինը: Սա էր, որ միայնակ իր սուրը բարձրացրեց երեք հարիւր հոգու դէմ եւ նրանց միաժամանակ սպանեց:

12 Նրանից յետոյ գալիս է աքուքացի Դոդայի որդի Եղեազարը: Սա երեք հզօրներից էր 13 եւ Փասասդոմում Դաւթի հետ էր: Այլազգիներն այստեղ էին հաւաքուել պատերազմի: Դաշտի մի մասը լի էր գարիով, եւ ժողովուրդը փախել էր այլազգիների առջեւից: 14 Նա եկել կանգնել էր այդ մասում եւ այն պաշտպանել: Երեք զօրավարները հարուածեցին այլազգիներին, եւ Տէրը մեծ փրկութիւն պարգեւեց իսրայէլացիներին: 15 Երեսուն իշխաններից երեքը իջան Դաւթի մօտ, Օդողոմի քարայրի մօտերքում գտնուող ժայռի մօտ, իսկ այլազգիները բանակ էին դրել Հսկաների հովտում: 16 Դաւիթն այդ ժամանակ ամրոցում էր, իսկ այլազգիների զօրքը՝ Բեթղեհէմում: 17 Դաւիթը ծարաւը յագեցնել ցանկանալով՝ ասաց. «Ո՞վ ինձ խմելու ջուր կը բերի Բեթղեհէմի ջրհորից, որը դարպասի մօտ է»: 18 Եւ այդ երեք զօրավարները այլազգիների բանակը ճեղքելով՝ ջուր հանեցին Բեթղեհէմի դարպասի մօտ գտնուող ջրհորից, բերեցին Դաւթի մօտ, բայց Դաւիթը չուզեց խմել այն. նա այն Տիրոջը նուիրելով՝ ասաց. 19 «Աստուած թող ինձ ների: Ինչպէ՞ս կարող եմ ես այդ բանն անել. դա պիտի նշանակէր խմել այդ մարդկանց արիւնը, քանի որ իրենց կեանքի գնով բերեցին այն»: Եւ նա չուզեց խմել այդ ջուրը: Այս բանն արել էին այդ երեք զօրավարները:

20 Յովաբի եղբայր Աբեսսան երեքի† գլխաւորն էր: Սա էր, որ միայնակ սուր էր բարձրացրել երեք հարիւր հոգու վրայ եւ նրանց միաժամանակ սպանել: 21 Սա անուանի էր երեքի մէջ: Սա աւելի նշանաւոր էր, քան միւս երկուսը: Սա նրանց գլխաւորն էր, սակայն այն երեքի հետ չէր կարող մրցել:

22 Յովիդայէի որդի Բանեասը հզօր մարդու որդի էր: Նա բազում գործեր էր արել Կասբէէլում: Նա էր, որ սպանել էր Արիէլ Բանիայի երկու որդիներին: Մի ձիւնոտ օր նա իջել էր ու փոսի մէջ սպանել առիւծին: 23 Նա սպանել էր նաեւ հինգ կանգուն հասակ ունեցող մի ահռելի եգիպտացի մարդու՝ զինուած ոստայնանկի գլանի չափ մեծ նիզակով: Բանեասը գաւազանով յարձակուել էր նրա վրայ, եգիպտացու ձեռքից խլել նիզակը եւ նրա նիզակով էլ սպանել նրան: 24 Այս բանն արել էր Յովիդայէի որդի Բանեասը, որի անունն այդ երեք հզօր մարդկանց մէջ է: 25 Նա այս երեքի մէջ աւելի նշանաւոր էր, սակայն այն երեքի‡ հետ չէր կարող մրցել: Դաւիթը նրան իր տոհմի վերակացու կարգեց:

26 Սրանք էին զօրքի հզօր մարդիկ. Յովաբի եղբայր Ասայէլը, բեթղեհէմացի Գոդայի որդի Եղեանանը, 27 արորացի Սամոթը, փաղոնացի Աքիզեղէսը, 28 թեկուացու որդի Օրէն, անաթոթացի Աբիեզէրը, 29 ասոթացի Սոբաքը, օնացի Եղիաքը, 30 նետոփաթացի Մովարէն, նետոփաթացի Բաանի որդի Եղեազը, 31 Բենիամինի բլրից Հռեփայի որդի Եթայիին, փարաթոնացի Բանեասը, 32 Նեքեզ բնակավայրից Ուրին, սարափթացի Գաասաբիէլը, 33 բարսամացի Ազամոթը, 34 գոթնացի Ասամի որդի սաղաբոնացի Եղիաբան, 35 արարացի Մադէի որդի Յովնաթանը, արարացի Աքարի որդի Աքիաբը, Օրի որդի Եղիբաազը, 36 քուրաթացի Փերոմէն, փելոնացի Աքիան, 37 կարմելացի Ասարան, Ասբիայի որդի Նաարէն, 38 Նաթանի եղբայր Յովէլը, Ագարի որդի Մաբարը, 39 ամոնացի Սեղեկովը, Սարուեայի որդի Յովաբի կապարճակիր աբերոնացի Նաարը, 40 ուրեթացի Իրասը, հեթերացի Գաբեթը, 41 քետացի Ուրիասը, 42 Սեղքայի որդի Սոդոի որդի Զաբադը, որը Ռուբէնի ցեղից էր՝ երեսուն իշխանների գլխաւորը, 43 Մաաքայի որդի Անանը, մատթանացի Յոսափատը, 44 աստարոթացի Օզիասը, քոթանացու որդիներ Սամաան եւ Յեւեղը, որոնք արարացիներ էին, 45 Սամարիի որդի Յեդիէլն ու նրա եղբայր Յովազան, որոնք թոսացիներ էին, 46 մաոնացի Յեդիէլը, Այիրաբն ու սրա որդին՝ Յոսէն, որոնք եղնամացիներ էին, մովաբացի Յեթեման, Աղիէլը, Օբէդը եւ Յասիէլը, որոնք մոսաթացիներ էին:

ԴԱՒԹԻՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՐՈՂՆԵՐԸ

12 Սրանք են, որ եկան Դաւթի մօտ, Սիկեղակ, երբ նրան դեռ նեղում էր Կիսի որդի Սաուղը, եւ սրանք են այն հզօրները, որոնք պատերազմում օգնում էին նրան 2 եւ թէ՛ աջ, թէ՛ ձախ ձեռքերով աղեղներով հարուածներ հասցնում եւ պարսատիկներով քարեր ու նետեր արձակում: Բենիամինից սերուած Սաուղի եղբայրներից էին 3 իշխան Աքիեզերը, սաբամոթացի Սամայի որդի Յովասը, Ազմոթի որդիներ Յեզեէլն ու Ափղէտը, Բարաքիա եւ Յէուլ անաթացիները, 4 գաբաւոնացի Սամէասը, որը հզօր էր այն երեսունի մէջ եւ երեսունի գլխաւորն էր: Եկան նաեւ Յերեմիասը, Եղեկիէլը, Յովնանը, Զաբադը Գադերոնից, 5 Եղիսաղը, Յարիմութը, Բաալիան, Սամարիան, Սափատիասը Արիբեղից, 6 Եղկանան, Յեսիայը, Ելիէլը, Յովազարը, Յեզբաման, որոնք ակորացիներ էին, 7 Յովէլն ու Զաբադիան՝ գեդորացի Յերոմի որդիները:

ԳԱԴԻ ՅԵՂԻՑ ԴԱՒԹԻՆ ՅԱՐՈՂՆԵՐԸ

8 Գաղաադից հեռանալով՝ անապատից Դաւթի մօտ եկան քաջազուն մարդիկ, որոնք, ռազմիկներ լինելով, կրում էին վահաններ ու աշտէներ: Նրանց դէմքը նման էր առիւծի դէմքի, իսկ արագաշարժութեամբ յիշեցնում էին լեռնային այծեամներ: 9 Եզերը իշխանն էր, Աբդիասը՝ երկրորդը, Եղիաբը՝ երրորդը, 10 Մասմանը՝ չորրորդը, Յերեմիասը՝ հինգերորդը, 11 Եթթին՝ վեցերորդը, Ելիէլը՝ եօթներորդը, 12 Յովնանը՝ ութերորդը, Եղզաբաթը՝ իններորդը, 13 Յերեմիասը՝ տասներորդը, Մաքբանան՝ տասնմէկերորդը: 14 Սրանք Գադի որդիներից սերուած զօրահրամանատարներն էին. ամենափոքրը մի հարիւրեակ ունէր ձեռքի տակ, իսկ ամենամեծը՝ հազարեակ:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՅԵՂԻՑ ԴԱՒԹԻՆ ՅԱՐՈՂՆԵՐԸ

15 Սրանք են, որ անցան Յորդանան գետը առաջին ամսում, երբ ջրերը յորդել էին ափերից, եւ հալածեցին հովիտների բոլոր բնակիչներին արեւելքից մինչեւ արեւմուտք: 16 Դաւթին օգնութեան եկան նաեւ Բենիամինի ու Յուդայի ցեղի որդիները: 17 Դաւիթը ընդառաջ գնալով նրանց՝ ասաց. «Եթէ խաղաղութեամբ էք եկել ինձ մօտ, իմ սիրտը ձեզ հետ կը լինի, իսկ եթէ եկել էք, որ անհաւատարմօրէն ինձ մատնէք իմ թշնամիների ձեռքը, թող մեր հայրերի Աստուածը տեսնի ու դատապարտի ձեզ»: 18 Եւ երեսնեակի հրամանատար Ամեսսան Հոգուց ներշնչուելով՝ ասաց.

«Յեսսէի որդի Դաւի՛թ,
գնացէ՛ք դու եւ քո ժողովուրդը,
խաղաղութիւն քեզ եւ խաղաղութիւն քո օգնականներին,

†Եբրայերէնում՝ երեսունի:
‡Եբրայերէնում՝ երեսունի:

քանզի քո Աստուածը քեզ օգնեց»:
Դաւիթն ընդունեց նրանց ու նրանց զօրքի հրամանատարներ կարգեց:

ՄԱՆԱՍԷԻ ՑԵՂԻՑ ԴԱՒԹԻՆ ՅԱՐՈՂՆԵՐԸ

19 *Մանասէից սերուած մարդիկ էլ անցան Դաւթի կողմը, երբ այլազգիները Սաւուղի դէմ պատերազմի էին ելել, սակայն նա չօգնեց նրանց, քանզի այլազգիների զօրագլուխները խորհրդակցելով՝ ասացին, թէ նա այս մարդկանց գլուխների գնով կ'անցնի իր տիրոջ՝ Սաւուղի կողմը:* 20 *Երբ նա Սիկեղակ էր գնում, նրա կողմն անցան Մանասէից սերուած Եդնան, Յոզաբադը, Եղիուն եւ Սաղթին՝ Մանասէից սերուած հազարապետները:* 21 *Նրանք Դաւթի հետ յարձակուեցին ասպատակողների վրայ, որովհետեւ իրենք ուժեղ էին, եւ ամէնքն էլ զօրքի հրամանատարներ էին:* 22 *Այսպիսով օրէցօր Դաւթի մօտ էին գալիս նոր ուժեր, մինչեւ որ Դաւթի բանակը Աստծու բանակի պէս հզօր դարձաւ:*

ԴԱՒԹԻ ՋՕՐՔԸ

23 *Սրանք են զօրքի այն հրամանատարների անունները, որոնք եկան Դաւթի մօտ, Քեբրոն, որպէսզի, Աստծու ասածին համապատասխան, Սաւուղի թագաւորութիւնը յանձնեն նրան.* 24 *Յուդայի ցեղի որդիներից սերուած վահանակիրներ ու նիզակակիրներ, վեց հազար ութ հարիւր հոգի, բոլորն էլ կորովի պատերազմողներ:* 25 *Եկան նաեւ Շմաւոնի որդիներից սերուած քաջարի պատերազմողներ, թուով եօթը հազար հարիւր հոգի,* 26 *Ղեւիի որդիներից սերուածներ՝ չորս հազար վեց հարիւր հոգի:* 27 *Եկաւ նաեւ Յուդասը՝ Ահարոնի որդիների առաջնորդը, որի հետ կար երեք հազար եօթը հարիւր հոգի:* 28 *Նաեւ՝ երիտասարդ, քաջարի Սադոկն իր հօր տնից՝ քսաներկու հրամանատարներով:* 29 *Բենիամինի որդիներից՝ Սաւուղի եղբայրներից կար երեք հազար հոգի: Նրանցից շատերը Սաւուղի տան վերակացուներ էին:* 30 *Եփրեմի որդիներից՝ քսան հազար ութ հարիւր քաջազուն կտրիճներ, անուանի մարդիկ, ըստ իրենց տոհմատների:* 31 *Մանասէի կէս ցեղից՝ տասնութ հազար հոգի, որոնք անուանապէս նշանակուած էին, որ թագաւոր օծեն Դաւթին:* 32 *Իսաքարի որդիներից, որոնք իմաստնութիւնն ունէին ժամանակի համեմատ կռահելու, թէ ինչ պէտք է անի Իսրայէլը իշխանութեան հարցերում, եկան երկու հարիւր հոգի, իրենց բոլոր եղբայրների հետ:* 33 *Զաբուղոնից սերուածներից, որոնք ամէն տեսակ զէնքերով պատերազմի գնացողներ էին, եկան յիսուն հազար հոգի, որ օգնեն Դաւթին: Սրանցից ոչ մէկը ձեռնունայն չէր:* 34 *Նեփթալիմից սերուածներից եկան հազար հրամանատարներ, որոնց հետ կային երեսուն հազար վահանաւորներ եւ նիզակակիրներ,* 35 *Դանից սերուածներից՝ պատերազմի պատրաստ քսանութ հազար ութ հարիւր հոգի:* 36 *Ասերից սերուածներից՝ ռազմի ելնելու ընդունակ քառասուն հազար հոգի,* 37 *Յորդանան գետի այն կողմում գտնուող Ռուբէնի ցեղից, Գադի ցեղից եւ Մանասէի կէս ցեղից սերուածներից՝ ամէն տեսակ ռազմական զէնքերով զինուած հարիւր քսան հազար հոգի:* 38 *Պատերազմող, մարտի պատրաստ, ուրախ սրտով այս բոլոր մարդիկ եկան Քեբրոն, որ Իսրայէլի թագաւոր օծեն Դաւթին: Մնացած իսրայէլացիներն էլ միահամուռ համաձայն էին, որ Դաւթը դառնայ թագաւոր:* 39 *Նրանք այնտեղ մնացին երեք օր, կերան ու խմեցին, որովհետեւ իրենց իսրայէլացի եղբայրները պատրաստութիւն էին տեսել նրանց համար:* 40 *Նրանց մերձաւորները, մինչեւ իսկ Իսաքարի, Զաբուղոնի եւ Նեփթալիմի ցեղերը, ուղտերով, էշերով, ջորիներով ու եզներով ուտելիք՝ ալիւր, թուզ, չամիչ, գինի, ձէթ եւ շատ զուարակներ ու ոչխարներ էին բերում, որովհետեւ ուրախութիւն էր Իսրայէլում:*

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ՓՈԽԱԴՐՈՒՄ Է ԿԱՐԻԱԹԱՐԻՄԻՑ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Բ Թագ. 6. 1-11)

13 *Դաւիթը խորհրդակցեց հազարապետների ու հարիւրապետների եւ բոլոր իշխանների հետ:* 2 *Դաւթն ասաց հաւաքուած բոլոր իսրայէլացիներին. «Եթէ գտնում էք, որ սա բարի գործ է ձեզ համար, եւ մեր Տէր Աստուածն է մեզ յաջողութիւն պարգեւել, մարդ ուղարկենք Իսրայէլի բոլոր կողմերում մնացած մեր եղբայրներին, որ իրենց քաղաքներում ու կալուածքներում ապրող քահանաներն ու ղեւտացիները գան մեզ մօտ ժողովի,* 3 *մեզ մօտ բերենք մեր Աստծու տապանակը, քանզի Սաւուղի ժամանակներից ի վեր այդ հարցով չզբաղուեցին»:* 4 *Բոլոր հաւաքուածներն ասացին. «Այդպէս անենք». որովհետեւ ժողովուրդն այս խօսքերը արդարացի համարեց:* 5 *Դաւիթը բոլոր իսրայէլացիներին հաւաքեց Եգիպտոսի սահմաններից սկսած մինչեւ Եմաթ, որ Աստծու տապանակը տանեն Յարիմ քաղաքից:* 6 *Դաւիթը հանել տուեց այն, եւ ամբողջ Իսրայէլը գնաց Յուդայի երկրում գտնուող Դաւթի քաղաքը, որ այնտեղից բերեն Տէր Աստծու՝ քերովբէների վրայ տեղադրուած տապանակը: Եւ Տէր Աստծու անունը գրուած է այդ տապանակի վրայ:* 7 *Աստծու տապանակը դրեցին Ամինադաբի տնից բերուած մի նոր սայլի վրայ, եւ Օզան ու նրա եղբայրները քշում էին սայլը:* 8 *Դաւիթն ու բոլոր իսրայէլացիները եռանդագին պարում էին Աստծու առջեւ, սաղմոսներ երգելով, տաւիղներով, քնարներով, փողերով, թմբուկներով ու ծնծղաներով:*
9 *Նրանք եկան մինչեւ Քելոնի կալը, եւ Օզան ձեռքը մեկնեց, որ բռնի տապանակը, որովհետեւ եզը տեղից շարժել էր այն:* 10 *Տէրը խիստ զայրացաւ Օզայի վրայ ու սպանեց նրան, որովհետեւ համարձակուել էր իր ձեռքը մեկնել տապանակին: Նա տեղնուտեղը մեռաւ Աստծու առաջ:* 11 *Դաւիթը տրտմեց, քանզի Տէրը մահացու հարուածել էր Օզային:* 12 *Այդ վայրը մինչեւ այսօր կոչւում է Օզայի հարուած: Այդ օրը Դաւիթը Աստծուց վախենալով՝ ասաց. «Ես ինչպէ՞ս Աստծու տապանակն ինձ մօտ տանեմ»:* 13 *Եւ Դաւիթը տապանակն իր մօտ՝ Դաւթի քաղաքը չփոխադրեց, այլ ճանապարհը շեղեց ու տարաւ քետացի Աբեդդարի տունը:* 14 *Աստծու տապանակը երեք ամիս մնաց Աբեդդարի տանը, եւ Աստուած օրհնեց Աբեդդարին եւ այն ամէնը, ինչ նա ունէր:*

ԴԱՒԻԹԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ
(Բ Թագ. 5. 11-16)

14 *Տիւրոսի արքայ Քիրամը Դաւթի մօտ ուղարկեց դեսպաններ, մայրի փայտ, որմնադիրներ ու ատաղձագործներ, որ տուն շինեն նրա համար:* 2 *Դաւիթը հասկացաւ, որ Տէրն է իրեն ընտրել Իսրայէլի վրայ իշխելու համար, քանզի Իսրայէլի ժողովրդի համար նրա թագաւորութիւնը հզօրացել էր:*
3 *Դաւիթն այլ կանայք եւս առաւ Երուսաղէմում, որոնցից ծնուեցին ուրիշ տղաներ ու աղջիկներ:* 4 *Ահա անունները նրանց, որոնք ծնուեցին Երուսաղէմում. Սամաաս, Սոբաբ, Նաթան, Սողոմոն,* 5 *Յեբաար, Ելիսաւ, Ելիփաղէտ,* 6 *Նագեթ, Նափատ, Յափիէ,* 7 *Ելիսամա, Բաղիադա եւ Ելիփաղատ:*

ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԴԷՄ
(Բ Թագ. 5. 17-25)

8 *Երբ այլազգիներն իմացան, թէ Դաւիթը ամբողջ Իսրայէլի վրայ թագաւոր է օծուել, ելան Դաւթին գտնելու: Դաւիթն այդ լսելով՝ նրանց դիմաց ելաւ:* 9 *Եկան նաեւ այլազգիները, եւ նրանք միմեանց հանդիպեցին Հսկաների հովտում:* 10 *Դաւիթն Աստծուն հարցրեց՝ ասելով. «Յարձակուե՞մ այլազգիների վրայ, դու նրանց իմ ձեռքը կը մատնե՞ս»: Տէրը նրան ասաց. «Յարձակուի՛ր, եւ ես նրանց քո ձեռքը կը մատնեմ»:* 11 *Դաւիթը ելաւ գնաց Բաաղփարասին եւ կոտորեց նրանց: Դաւիթն ասաց. «Աստուած իմ*

թշնամիներին ջախջախեց իմ ձեռքով, պատառոտեց նրանց, ինչպէս ջրերն են պատառոտուում»: Սրա համար էր, որ այդ տեղը կոչուեց Բաաղփարասին, այն է՝ Փարասինի պատռուածք: 12 Նրանք իրենց աստուածներին այնտեղ թողեցին, եւ Դաւիթը պատուիրեց դրանք հրով այրել:

13 Այլազգիները կրկին յարձակուեցին, եւ նրանք իրար հանդիպեցին Հսկաների հովտում: 14 Դաւիթը դարձեալ հարցրեց Աստծուն, եւ Աստուած նրան ասաց. «Մի՛ գնա նրանց յետեւից, շո՛ւռ արի եւ նրանց թո՛ղ տանձենիների մօտ: 15 Երբ տանձենիների կատարների շարժման ձայն լսես, այն ժամանակ ելի՛ր պատերազմի, քանզի Աստուած քո առջեւից գնալով՝ կոտորելու է այլազգիների բանակը»: 16 Դաւիթն արեց այնպէս, ինչպէս Աստուած պատուիրել էր նրան, եւ նա կոտորեց այլազգիների բանակը Գաբաթոնից մինչեւ Գազերա: 17 Դաւիթի անունն ամբողջ երկրում հռչակուեց, եւ Տէրը նրա երկիւղը տարածեց բոլոր ազգերի վրայ:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

15 Դաւիթն իր համար տներ կառուցեց Դաւիթի քաղաքում, իսկ Աստծու տապանակի համար տեղ պատրաստեց, դրա համար վրան կանգնեցրեց:

2 Այն ժամանակ Դաւիթն ասաց. «Ոչ ոք իրաւունք չունի վերցնելու Աստծու տապանակը, բացի ղեւտացիներից, որովհետեւ Տէրն է նրանց ընտրել իր տապանակը կրելու եւ նրա առաջ յաւիտեան ծառայելու համար»:

3 Եւ Դաւիթը բոլոր իսրայէլացիներին հաւաքեց Երուսաղէմում, որ Տիրոջ տապանակը դրա համար պատրաստուած տեղը բերեն: 4 Դաւիթը հաւաքեց Ահարոնի որդիներին ու ղեւտացիներին. 5 Կահաթի որդիներից՝ Ուրիէլ իշխանին եւ նրա հարիւր քսան ցեղակից եղբայրներին, 6 Մերարիի որդիներից՝ Սայիաս իշխանին եւ նրա երկու հարիւր յիսուն ցեղակից եղբայրներին, 7 Գերսոնի որդիներից՝ Յովէլ իշխանին եւ նրա հարիւր երեսուն ցեղակից եղբայրներին, 8 Ելիսափանի որդիներից՝ Սամայիաս իշխանին եւ նրա երկու հարիւր ցեղակից եղբայրներին, 9 Քեբրոնի որդիներից՝ Ելիէլ իշխանին եւ նրա ութսուն ցեղակից եղբայրներին, 10 Օզիէլի որդիներից՝ Ամինադաբ իշխանին եւ նրա հարիւր տասներկու ցեղակից եղբայրներին:

11 Դաւիթը կանչեց Սադոկ ու Աբիաթար քահանաներին ու ղեւտացիներին՝ Ուրիէլին, Ասայիասին, Յովէլին, Սամայիասին, Ելիէլին, Ամինադաբին 12 եւ ասաց նրանց. «Դուք ղեւտացիների տոհմերի իշխաններն էք, մաքրուեցէ՛ք դուք ու ձեր եղբայրները եւ Աստծու տապանակը բերէ՛ք այն տեղը, որ դրա համար պատրաստել եմ: 13 Զէ՞ որ առաջին անգամ Աստուած մեզ մահացու հարուած հասցրեց այն պատճառով, որ դուք այնտեղ չէիք: Յիրաւի, մենք տապանակի հետ չէինք վարուել, ինչպէս կարգն է»: 14 Քահանաներն ու ղեւտացիները մաքրուեցին, որ բերեն Իսրայէլի Աստծու տապանակը: 15 Ղեւտացիների որդիները վերցրին Աստծու տապանակը՝ դրա բռնակները դնելով իրենց ուսերին, ինչպէս Մովսէսն էր գրաւոր պատուիրել ըստ Աստծու ասածի:

16 Դաւիթն ասաց ղեւտացիների իշխաններին. «Ձեր եղբայրներին ասացէ՛ք, որ սաղմոսներ երգեն նուագարաններով, քնարներով, սրինգներով ու ծնծղաներով, որ ուրախութեան ձայներ առաքեն դէպի վեր»: 17 Եւ ղեւտացիները առանձնացրին Յովէլի որդի Նամանին ու նրա եղբայրներից Բարաքիայի որդի Ասափին ու նրա եղբայր Մերարիի որդիներից Կիսի որդի Եթանին: 18 Ապա նրանց հետ իրենց երկրորդ դասի եղբայրներ Զաքարիասին, Յովէլին, Սեմիրամոթին, Եէլին, Անանիասին, Եղիաբին, Բանեասին, Մասեասին, Մատաթիասին, Ելիբաղային, Մակէդիասին, Աբէդդոմին, Յեէլին եւ Օզիասին, որոնք դռնապաններ էին: 19 Աման, Ասափ եւ Եթան նուագածուները թնդացնում էին պղնձէ

նուագարանները: 20 Զաքարիասը, Օզիէլը, Սեմիրամոթը, Ելիէլը, Անանիասը, Եղիաբը, Մասեասը եւ Նաթայիասը քնար էին ածում ըստ Աղեմոթի: 21 Մատաթիասը, Ելիփաղատը, Մակեղիան, Աբէդդոմը, Յեէլը եւ Օզիասը սրինգ էին նուագում ըստ Սենեթիասի՝ բարձր ձայն հանելու համար: 22 Ղեւտացիների իշխան Քոնենիասը երգեցողութիւնն էր ղեկավարում, քանզի քաջահմուտ էր: 23 Բարաքիասն ու Եղկանան տապանակի դռնապաններն էին: 24 Սոբենիաս, Յոսափատ, Նաթանիէլ, Ամաս, Զաքարիաս, Բանեաս եւ Ելիեզեր քահանաները Աստծու տապանակի առջեւից գնալով՝ շեփորներ էին հնչեցնում, իսկ Աբէդդոմը եւ Յեհիասը Աստծու տապանակի դռներն էին պահպանում:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Բ Թագ. 6. 12-22)

25 Դաւիթը, Իսրայէլի ծերերն ու հազարապետները գնացին, որ Տիրոջ ուխտի տապանակը ուրախութեամբ հանեն Աբեդդարի տնից: 26 Երբ Աստուած ուժ տուեց իշխաններին, որ սրանք կարողանան կրել Տիրոջ ուխտի տապանակը, եօթը զուարակ եւ եօթը խոյ զոհաբերուեցին: 27 Դաւիթը բեհեզէ պատմուճան էր հագել: Բոլոր ղեւտացիներն ու սաղմոսերգուները բարձրացրին Տիրոջ ուխտի տապանակը, իսկ Քոնենիասը երգեցողութիւնն էր ղեկավարում: Դաւիթը բեհեզէ պատմուճան էր հագել: 28 Ամբողջ Իսրայէլը Տիրոջ ուխտի տապանակը տարաւ տօնական աղաղակներով, շեփորով ու ծնծղաներով, քնարներ ու տաւիղներ նուագելով: 29 Երբ Աստծու տապանակը հասաւ Դաւիթի քաղաքը, Սաւուղի դուստր Մեղքողը պատուհանից դուրս նայեց ու տեսնելով, որ Դաւիթ արքան երգում է ու պարում, իր հոգում արհամարհեց նրան:

16 Աստծու տապանակը ներս տարան ու դրեցին այն վրանի մէջ, որ Դաւիթն էր պատրաստել դրա համար, եւ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցեցին Աստծու առաջ: 2 Դաւիթը վերջացնելով ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցելը՝ Տիրոջ անունից օրհնեց ժողովրդին: 3 Բոլոր իսրայէլացիներին՝ թէ՛ տղամարդկանց եւ թէ՛ կանանց, ամէն մէկին տուեց փռի մէկ նկանակ եւ մէկ պատառ կասկարայի մսից:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

4 Դաւիթը Տիրոջ ուխտի տապանակի առջեւ երգելու, փառք տալու եւ Իսրայէլի Տէր Աստծուն օրհնելու համար ղեւտացիներից սպասաւորներ նշանակեց: 5 Գլխաւորն էր Ասափը, նրա օգնականը՝ Զաքարիասը: Յեէլը, Սեմիրամոթը, Յայէլը, Մատաթիասը, Եղիաբը, Բանեասը, Աբէդդոմն ու Եսիէլը նուագում էին իրենց տաւիղներով ու քնարներով: Ասափը ծնծղաներ էր հնչեցնում, 6 իսկ Բանեաս ու Օզիէլ քահանաները փողերով շարունակ նուագում էին Աստծու ուխտի տապանակի առաջ:

7 Այդ օրն էր, որ Դաւիթը Ասափին ու նրա եղբայրներին առաջին անգամ Տիրոջն օրհնաբանելու յանձնարարութիւն տուեց:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ
(Սաղմ. 105. 1-15, 96. 1-13, 106. 47-48)

8 Երգ: Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը եւ հնչեցրէ՛ք նրա անունը,
պատմեցէ՛ք ժողովուրդներին նրա գործերը,
9 երգեցէ՛ք նրա համար ու օրհնաբանեցէ՛ք նրան,
պատմեցէ՛ք բոլորին Տիրոջ սքանչելագործութիւնները.
10 օրհնեցէ՛ք նրա սուրբ անունը,
նրան հաճելի լինել կամեցողների սիրտը թող ուրախ լինի:
11 Տիրո՛ջը փնտռեցէք ու հզօր կը լինէք,
միշտ նրա ներկայութի՛ւնը փնտռեցէք:
12 Յիշեցէ՛ք նրա կատարած սքանչելագործութիւնները, նշաններն ու

բերանի դատաստանները:
13 Ո՛վ Իսրայէլի զաւակներ, նրա ծառանե՛ր,
Յակոբի՛ որդիներ եւ նրա ընտրեալնե՛ր,
14 նա է մեր Տէր Աստուածը,
նրա դատաստանները բովանդակ երկրի վրայ են:
15 Յաւիտեան թող յիշեն նրա ուխտը,
պատուիրած խօսքերը մինչեւ հազար սերունդ,
16 այն ուխտը, որ նա դրեց Աբրահամի հետ,
եւ իր երդումը՝ Իսահակի հետ:
17 Նա այն հաստատեց Յակոբի համար որպէս օրէնք,
իսկ Իսրայէլի համար՝ որպէս յաւիտենական ուխտ՝
18 ասելով. «Քեզ եմ տալու Քանանի երկիրը,
ձեր ժառանգութեան բաժինը»:
19 Նրանք սակաւաթիւ էին եւ պանդուխտ այնտեղ:
20 Մի ազգից միւս ազգի մօտ գնացին նրանք,
մի թագաւորութիւնից անցան մի այլ ժողովրդի մօտ:
21 Տէրը չթողեց, որ որեւէ մէկը կեղեքի նրանց
եւ նրանց սիրուն սաստեց թագաւորներին՝ ասելով.
22 «Իմ օծեալներին մի՛ մօտեցէք
եւ իմ մարգարէների հանդէպ չար մի՛ եղէք»:
23 Օրհնաբանեցէ՛ք Տիրոջը, համա՛յն աշխարհի մարդիկ,
օրըստօրէ պատմեցէ՛ք նրա կատարած փրկագործութիւնը:
24 Հեթանոսներին պատմեցէ՛ք նրա փառքը
եւ բոլոր ժողովուրդներին՝ նրա հրաշագործութիւնները,
25 քանզի մեծ է Տէրը, յոյժ օրհնեալ
եւ բոլոր աստուածներից աւելի ահաւոր.
26 ազգերի բոլոր աստուածները կուռքեր են,
իսկ Աստուած երկինքն է արարչագործել»:
27 Փա՛ռք եւ գովութի՛ւն նրա առաջ,
զօրութի՛ւն ու պարծա՛նք նրա բնակութեան տեղին:
28 Ո՛վ ազգատոհմեր, փա՛ռք տուէք Տիրոջը,
փա՛ռք տուէք Տիրոջը եւ զօրութիւն.
29 Տիրոջ անունը փա՛ռք տուէք,
ընծանե՛ր բերէք ու մատուցեցէ՛ք նրա առաջ,
երկրպագեցէ՛ք Տիրոջը նրա սուրբ սրահում,
30 թող ամբողջ երկիրը վախենայ նրանից,
թող երկիրը հաստատուն մնայ եւ չսասանուի:
31 Երկինքը թող ուրախ լինի, եւ երկիրը թող ցնծայ,
թող հեթանոսներին ասեն՝ Տէրը թագաւորեց:
32 Ծովն իր պարունակութեամբ, լիութեամբ թող մռնչի,
թող ցնծան ծառերն անտառի եւ դրա մէջ եղած ամէն ինչ.
33 թող ուրախ լինեն ողջ ծառերն անտառի,
քանզի Տէրն է եկել դատելու երկիրը:
34 Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը, քանզի բարի է նա,
եւ յաւերժ է նրա ողորմածութիւնը:
35 Եւ աղաղակեցէ՛ք. «Փրկի՛ր մեզ, ո՛վ մեր փրկութեան Աստուած,
փրկի՛ր մեզ մեր թշնամիներից,
որ օրհնենք քո սուրբ անունը
եւ պարծենանք քո օրհնութիւններով»:
36 Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր Աստուածը յաւիտեանս յաւիտենից,
եւ բոլոր ժողովուրդներն ասեն՝ Ամէն:
Եւ նրանք օրհնաբանեցին Տիրոջը:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ԵՒ ԳԱԲԱՒՈՆՈՒՄ

37 Դաւիթն այնտեղ Տիրոջ ուխտի տապանակի առջեւ թողեց Ասափին ու նրա եղբայրներին, որ ամենօրեայ ծառայութիւնը շարունակ կատարեն տապանակի առջեւ: 38 Աբդողոմն ու նրա եղբայրները վաթսունուութ հոգի էին: Աբդողոմը Իդիթունի որդին էր, իսկ Օսէէն դռնապանն էր: 39 Սադոկ քահանային ու նրա քահանայ եղբայրներին նա թողեց Տիրոջ վրանի առջեւ Գաբաւոնում գտնուող Բամայում, 40 որպէսզի ամէն առաւօտ եւ երեկոյ Տիրոջը ողջակէզներ մատուցեն ողջակէզների զոհասեղանի վրայ եւ ըստ ամենայնի կատարեն այն, ինչ որ Աստծու ծառայ Մովսէսի ձեռքով գրուած է Տիրոջ օրէնքում եւ պատուիրուած իսրայէլացիներին: 41 Սադոկի հետ էին Եմանն ու Իդիթունը, ինչպէս նաեւ միւս ընտրեալները, որ օրհնեն Տիրոջը, քանզի յաւիտենական է նրա ողորմածութիւնը: 42 Նրանք ունէին շեփորներ, ծնծղաներ ու քնարներ, որ դրանցով Աստծուն փառաբանեն, իսկ Իդիթունի որդիները դռան պահապաններն էին: 43 Ամբողջ ժողովուրդը ցրուեց, ամէն մէկը գնաց իր տունը, Դաւիթն էլ եկաւ, որ օրհնի իր տունը:

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԴԱՒԻԹԻՆ ԵՒ ՆՐԱ ՍԵՐՆԴԻՆ
(Բ Թագ. 7.1-17)

17 Երբ Դաւիթը բնակուեց իր տանը, ասաց Նաթան մարգարէին. «Ահա ես բնակւում եմ մայրի փայտից կառուցուած իմ տանը, իսկ Տիրոջ ուխտի տապանակը վրանի տակ է»: 2 Նաթանն ասաց Դաւիթին. «Ինչ որ կայ սրտումդ, արա՛, քանզի Աստուած քեզ հետ է»: 3 Եւ այդ գիշեր Տէրը խօսքն ուղղելով Նաթանին՝ ասաց. 4 «Գնա՛ եւ ասա՛ իմ ծառայ Դաւիթին, թէ Տէրն այսպէս է ասում. "Դու ինձ համար բնակուելու տուն չպիտի շինես, 5 քանզի իսրայէլացիներին Եգիպտոսից հանելուց մինչեւ այսօր երբեք տան մէջ չեմ բնակուել, այլ անտուն վրանաբնակ եմ եղել: 6 Ամենուրեք, որ իսրայէլացիների հետ եմ եղել, մի՞թէ որեւէ բան եմ ասել Իսրայէլի ցեղերից որեւէ մէկին կամ նրա դատաւորներին, որոնց պատուիրել էի հովուել իմ ժողովրդին, ասելով, թէ՝ "Ինչո՞ւ ինձ համար մայրի փայտից տուն չէք շինում": 7 Արդ, հետեւեա՛լն ասա իմ ծառայ Դաւիթին. "Այսպէս է ասում ամենակալ Տէրը. Ես քեզ արօտավայրից՝ ոչխարների յետեւից վերցրի, որ Իսրայէլի իմ ժողովրդին առաջնորդ լինես: 8 Ուր որ գնում էիր, ամենուրեք քեզ հետ էի. ոչնչացրի քո բոլոր թշնամիներին քո առաջից ու երկրի վրայ եղած մեծամեծերի անուան պէս քեզ համար տուն ստեղծեցի: 9 Արդ, Իսրայէլի իմ ժողովրդի համար տեղ պիտի որոշեմ, դու նրան պիտի հաստատես, եւ նա առանձին պիտի բնակուի, ոչ մի հոգս պիտի չունենայ, եւ ոչ մի անիրաւութիւն նախկինի նման նրան այլեւս չպիտի ընկճի, 10 ինչպէս սկզբում, այն օրերին, երբ Իսրայէլի իմ ժողովրդի վրայ դատաւորներ էի կարգել, քեզ ենթարկել քո բոլոր թշնամիներին: Արդ, ես՝ Տէրս, քեզ պիտի բազմացնեմ ու կառուցեմ քո տունը: 11 Եւ երբ քո օրերը լրանան, դու կը ննջես քո նախնիների հետ: Քեզնից յետոյ քեզնից ծնուած քո զաւակին պիտի բարձրացնեմ եւ պիտի պատրաստեմ նրա թագաւորութիւնը: 12 Նա ինձ համար տուն պիտի շինի, իսկ ես նրա գահը յաւիտենական պիտի դարձնեմ: 13 Ես նրան հայր պիտի լինեմ, իսկ նա ինձ որդի պիտի լինի: Իմ ողորմածութիւնը նրանից չեմ պակասեցնելու, ինչպէս որ այն զլացել էի քեզնից առաջ եղածների հանդէպ: 14 Նա հաւատարիմ պիտի լինի իմ տան նկատմամբ, եւ նրա թագաւորութիւնը յաւիտենական պիտի լինի, նրա գահը՝ հաստատուն մինչեւ յաւիտեան"»: 15 Եւ Նաթանն այս բոլոր խօսքերը եւ այս ամբողջ յայտնութիւնը նոյնութեամբ պատմեց Դաւթին:

ԴԱՒԻԹԻ ԱՂՕԹՔԸ
(Բ Թագ. 7.18-29)

16 Եկաւ Դաւիթ արքան ու նստելով Տիրոջ առջեւ՝ ասաց. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր Աստուած, եւ կամ ի՞նչ է իմ տունը, որ ինձ սիրեցիր յաւիտեան: 17 Կարծես այս բաները քիչ երեւացին քո աչքին, Աստուա՛ծ, հիմա էլ երկար ժամանակ խօսեցիր քո ծառայի մասին, վերաբերուեցիր ինձ հետ, ինչպէս բարձր կանգնած մի մարդու: Դու բարձրացրիր ինձ, Տէ՛ր Աստուած: 18 Ի՞նչ խօսք աւելացնի Դաւիթը քեզ փառաւորելու համար. ինքդ ճանաչում ես քո ծա-

*ռային 19 եւ ըստ քո սրտի արեցիր այս
ամբողջ մեծութիւնը, Տէ՛ր: 20 Քեզ
նման ոչ ոք չկայ, եւ քեզնից բացի այլ
Աստուած չկայ՝ դատելով այն բոլոր
խօսքերից, որ լսել ենք մեր ականջ-
ներով: 21 Եւ չկայ երկրի վրայ այն-
պիսի ազգ, ինչպէս Իսրայէլի քո ժողո-
վուրդն է, որին Աստուած առաջնոր-
դեց, որ փրկի իր ժողովրդին: Դու
ստացար մեծ ու երեւելի անուն՝ ազգեր
քշելով քո ժողովրդի առջեւից: Դու
նրան ազատեցիր Եգիպտոսից: 22 Քո
իսրայէլացի ժողովրդին յաւիտենապէս
ժողովուրդ դարձրիր քեզ, եւ դու
նրանց համար Աստուած եղար: 23 Արդ,
Տէր իմ, այն խօսքը, որ ասացիր քո
ծառայի եւ նրա տան մասին, թող
հաստատ լինի յաւիտեան: 24 Դու ա-
սացիր, Տէ՛ր, ամենակալ Տէ՛ր Աստուած
Իսրայէլի, թէ քո ծառայ Դաւթի տունը
թող կանգուն մնայ քո առջեւ, 25 քան-
զի դու, Տէ՛ր, քո ծառայի ականջին
յայտնեցիր, թէ քեզ համար տուն եմ
կառուցելու, եւ դրա համար քո ծառան
աղօթք է անում քո առջեւ: 26 Արդ,
Տէ՛ր, դու ես Աստուած, եւ դու ասացիր
այդ բարի խօսքերը քո ծառայի մասին:
27 Սկսի՛ր այսուհետեւ օրհնել քո ծա-
ռայի տունը, որ յաւիտեան լինի քո
առջեւ, քանզի, Տէ՛ր, դո՛ւ օրհնեցիր եւ
օրհնի՛ր նրան յաւիտեան»:*

ԴԱՒԹԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՐԵՒԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ
(Բ Թագ. 8. 1-18)

18 *Դրանից յետոյ Դաւիթը հարուա-
ծեց այլազգիներին, վանեց նրանց,
այլազգիների ձեռքից գրաւեց Գէթն ու
նրա գիւղերը: 2 Նա հարուածեց Մո-
վաբին, եւ մովաբացիները դարձան
Դաւթի հարկատու ծառաները: 3 Դա-
ւիթը Եմաթում հարուածեց Սուբայի
արքայ Ադրազարին, երբ սա գնում էր
իր իշխանութիւնը հաստատելու Եփ-
րատ գետի վրայ: 4 Նրանից վերցրեց
հազար մարտակառք, եօթը հազար
ձիաւոր ու քսան հազար հետեւակ:
Դաւիթը ջարդեց բոլոր մարտակառ-
քերը՝ թողնելով միայն հարիւր մար-
տակառք: 5 Դամասկոսից եկան աս-
որիները, որ օգնեն Սուբայի արքայ Ադ-
րազարին: Դաւիթը սպանեց քսաներ-
կու հազար ասորի: 6 Նա Ասորիքում՝
Դամասկոսի մօտ բերդապահ զօրք
դրեց, եւ նրանք Դաւթի հարկատու
ծառաները դարձան: Տէրը հովանա-
ւորեց Դաւթին ամենուրեք, ուր որ նա
գնում էր: 7 Դաւիթը Ադրազարի թիկ-
նապահներից առաւ ոսկէ մանեակները
եւ բերեց Երուսաղէմ: 8 Դաւիթը Մա-
տեբեթից եւ Ադրազարի բարգաւաճ
քաղաքներից խիստ շատ պղինձ
վերցրեց: Եւ դրանով է, որ Սողոմոնը
պատրաստեց պղնձէ աւազանը եւ
պղնձէ սիւներն ու անօթները:*

*9 Երբ Եմաթի արքայ Թովուն լսեց,
թէ Դաւիթը հարուածել է Սուբայի
արքայ Ադրազարի բոլոր զօրքերին,
10 իր որդի Ադուրամին ուղարկեց Դա-
ւիթ արքայի մօտ նրա առողջութիւնը
հարցնելու եւ շնորհաւորելու նրան,
քանզի իր դէմ պատերազմել էր Ադ-
րազարը եւ յաղթել իրեն. Թովուն
թշնամի էր Ադրազարին: Նա իր որդու
միջոցով ուղարկեց նաեւ ամէն տեսակ
ոսկէ ու արծաթէ անօթներ: 11 Դաւիթը
բոլոր ազգերից՝ եդոմացիներից, մով-
բացիներից, ամոնացիներից, այլազգի-
ներից եւ ամաղեկացիներից գրաւած
արծաթի ու ոսկու հետ դրանք եւս
նուիրեց Տիրոջը: 12 Եւ Շարուհիի որդի
Աբեսսան Ալոնի հովտում հարուածեց
տասնութ հազար եդոմացիների 13 ու
հովտում բերդապահ զօրք դրեց: Եդո-
մացիները Դաւթի ծառաները դարձան,
եւ Տէրը փրկեց Դաւթին ամենուրեք,
ուր նա գնում էր:*

*14 Դաւիթը թագաւորեց ամբողջ Իս-
րայէլի վրայ, եւ նա իրաւունք ու ար-
դարութիւն էր ի գործ դնում իր ամ-
բողջ ժողովրդի մէջ: 15 Շարուհիի որդի
Յովաբը զօրքի հրամանատար էր, Ա-
քիլուդի որդի Յոսափատը՝ դիւանա-
պետ, 16 Աքիտոբի որդի Սադոկը եւ
Աբիաթարի որդի Աբիմելէքը՝ քահա-
նաներ, Սուսան՝ գլխաւոր քարտուղար,
17 Յովիդայէի որդի Բանեասը՝ քերե-
թիների ու փելեթիների վերակացու,
իսկ Դաւթի որդիները՝ արքայի
առաջին փոխանորդները:*

ԴԱՒԹԻ ԱՆԱՐԳՈՒԱԾ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ
(Բ Թագ. 10. 1-19)

19 *Դրանից յետոյ մեռաւ ամոնացի-
ների Նաաս արքան, եւ նրա փոխարէն
թագաւորեց նրա որդին՝ Անանը: 2 Դա-
ւիթն ասաց. «Եկէք ողորմածութիւն
ցոյց տանք Նաասի որդի Անանի
նկատմամբ, ինչպէս որ նրա հայրն էր
ինձ ողորմածութիւն ցոյց տալիս»: Եւ
Դաւիթը դեսպաններ ուղարկեց, որ
մխիթարեն նրան հօր համար: Դաւթի
ծառաները եկան ամոնացիների եր-
կիրը, որ մխիթարեն Անանին: 3 Ամոնի
իշխաններն ասացին Անանին. «Քո
հօր յիշատակը մեծարելո՞ւ համար է
Դաւիթը մխիթարողներ ուղարկել, չէ՞
որ նրա ծառաները եկել են նրա հա-
մար, որ հետախուզեն քաղաքները,
լրտեսեն երկիրը»: 4 Եւ Անանը բռնեց
Դաւթի ծառաներին, ածիլեց նրանց
մօրուքը, նրանց պատմուճանները
պատռեց մէջտեղից մինչեւ վեր ու
արձակեց նրանց: 5 Եկան ու Դաւթին
պատմեցին այդ մարդկանց մասին:
Նա մարդ ուղարկեց, որ դիմաւորեն
նրանց, որովհետեւ նրանք խիստ
անարգուած էին: Արքան ասաց.
«Մնացէ՛ք Երիքովում, մինչեւ որ ձեր
մօրուքները աճեն, որից յետոյ կը
վերադառնաք»:*

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄՈՆԱՑԻՆԵՐԻ ԵՒ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԴԷՄ

*6 Երբ ամոնացիները տեսան, որ
Դաւթի զօրքը անարգանք կրեց,
Անանը եւ ամոնացիները հազար տա-
ղանդ արծաթ† ուղարկեցին եւ իրենց
համար Ասորիքից, Միջագետքից եւ
Ասորիքի Մաաքա ու Սուբա քաղաք-
ներից վարձեցին մարտակառքեր ու
հեծեալներ, 7 վարձեցին երեսուներկու
հազար մարտակառք, Մովաբի արքա-
յին ու նրա զօրքին: Սրանք եկան բա-
նակատեղի դրեցին Մեդաբայի դիմաց:
Ամոնացիները հաւաքուեցին իրենց
քաղաքներից ու եկան պատերազմելու:
8 Դաւիթը լսեց եւ ուղարկեց Յով-
աբին ու հզօրների գունդը: 9 Ամո-
նացիները դուրս եկան եւ պատերազմի
շարուեցին քաղաքի դարպասի մօտ,
իսկ այն եկած թագաւորները դաշտում
առանձին ճակատ կազմեցին: 10 Երբ
Յովաբը տեսաւ, որ նրանք պատերազ-
մի են դուրս եկել իր դէմ թէ՛ առջեւից,
թէ՛ յետեւից, ընտրեց բոլոր երիտա-
սարդ իսրայէլացիներին եւ նրանց դա-
սաւորեց ասորիների դիմաց, 11 իսկ
զօրքի մնացած մասը նա յանձնեց իր
եղբայր Աբեսսային եւ նրանց շարեց
ամոնացիների դիմաց: 12 Նա ասաց.
«Եթէ ասորիները մեր նկատմամբ
գերակշռութիւն ունենան, դու ինձ
օգնութեան կը հասնես, իսկ եթէ ամո-
նացիները քո նկատմամբ գերակշռու-
թիւն ունենան, ես քե՛զ օգնութեան կը
հասնեմ: 13 Քաջասի՛րտ եղիր եւ թող
զօրանանք յանուն մեր ժողովրդի եւ
մեր Աստծու քաղաքների: Տէրը թող
անի այն, ինչ նրա աչքին բարի է
թւում»: 14 Յովաբն իր հետ եղած
զօրքով ասորիների դէմ պատերազմի
ելաւ, եւ սրանք փախուստի դիմեցին:
15 Երբ ամոնացիները տեսան, թէ ասո-
րիները փախան, իրենք եւս փախուստի
դիմեցին Յովաբի եւ նրա եղբայր
Աբեսսայի առջեւից ու մտան քաղաք:
Յովաբը եկաւ Երուսաղէմ:*

*16 Երբ ասորիները տեսան, թէ իսրա-
յէլացիները իրենց յաղթեցին, պատ-
գամաւորներ ուղարկեցին եւ դուրս
բերեցին Եփրատ գետի այն կողմի
ասորիներին: Ադրազարի զօրքի հրա-
մանատար Սոփաքն էր նրանց առաջ-
նորդում: 17 Երբ Դաւթին պատմեցին
այդ մասին, նա հաւաքեց բոլոր
իսրայէլացիներին, անցաւ Յորդանան
գետն ու գնաց նրանց դէմ: Նա իր
զօրքը շարեց ասորիների դիմաց եւ
պատերազմեց նրանց դէմ: 18 Ասորի-
ները փախան Դաւթի առջեւից: Դա-
ւիթը ասորիներից եօթը հազար մար-
տակառքի հեծեալներ ու քառասուն
հազար հետեւակ կոտորեց, սպանեց
զօրքի հրամանատար Սոփաքին: 19 Երբ
Ադրազարի ծառաները տեսան, որ
իրենք պարտուած են Իսրայէլից,
Դաւթի հետ հաշտութիւն կնքեցին,
նրա իշխանութեան տակ մտան, իսկ
ասորիները այլեւս չուզեցին օգնել
ամոնացիներին:*

†Նուրջ երեսուն տոննա:

ԴԱՒԻԹԸ ԳՐԱՒՈՒՄ Է ՌԱԲԱԹԸ
(Բ Թագ. 12. 26-31)

20 Պատահեց, որ յաջորդ տարի, երբ թագաւորները պատերազմի էին ելել միմեանց դէմ, Յովաբը հաւաքեց բոլոր զօրագնդերը եւ ասպատակեց ամոնացիների ամբողջ երկիրը: Նա եկաւ եւ պաշարեց Ռաբաթը, իսկ Դաւիթը մնաց Երուսաղէմում: 2 Յովաբը գրաւեց Ռաբաթը եւ կործանեց այն: Դաւիթը նրանց Մեղքոմ թագաւորի գլխից առաւ թագը: Պարզուեց, որ դրա ոսկին մի տաղանդ† քաշ ունի՝ զարդարուած թանկարժէք քարերով: 3 Այն դրեցին Դաւթի գլխին: Շատ-շատ աւար վերցրեց նա, այնտեղի ժողովրդին դուրս բերեց, չարաչար աշխատեցրեց՝ սղոցներով սղոցել տալով ու երկաթէ ուրագներով տաժանակիր աշխատանքի լծել տալով նրանց: Այսպէս վարուեց Դաւիթը ամոնացիների հետ բոլոր քաղաքներում եւ իր ամբողջ զօրքով վերադարձաւ Երուսաղէմ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԴԷՄ
(Բ Թագ. 21. 15-22)

4 Դրանից յետոյ Գազերում կրկին պատերազմ եղաւ այլազգիների դէմ: Այն ժամանակ ուսթացի Սուբաքէն յարձակուեց Հսկաների որդիներից Սեպփիասի վրայ եւ հալածեց նրան: 5 Դարձեալ պատերազմ եղաւ այլազգիների դէմ, եւ Յայիրի որդի Եղէանան յարձակուեց գէթացի Գողիադի եղբայր Ղէէմիի վրայ, որի նիզակի փայտը ոստայնանկների գլանի չափ էր:

6 Դարձեալ պատերազմ եղաւ Գէթում: Այնտեղ կար մի շատ հսկայ մարդ, որի մատները վեց-վեց լինելով՝ ընդամէնը քսանչորս մատ ունէր: Նա հսկաների ցեղից էր: 7 Նա լուտանք էր թափում Իսրայէլի վրայ, ուստի Դաւթի եղբօր որդի Սամաայի որդի Յոնադաբը սպանեց նրան: 8 Սրանք Գէթի Հռափա քաղաքից էին: Սրանք ամէնքը հսկայ մարդիկ էին եւ ընկան Դաւթի ու նրա զօրականների ձեռքով:

ԴԱՒԻԹԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ Է ԱՆՑԿԱՑՆՈՒՄ
(Բ Թագ. 24. 1-25)

21 Սատանան ելաւ Իսրայէլի մէջ ու դրդեց Դաւթին մարդահամարի ենթարկելու Իսրայէլը: 2 Դաւիթն ասաց Յովաբին եւ իր զօրքի հրամանատարներին. «Գնացէք հաշուառո՛ւմ կատարեցէք Իսրայէլի մէջ Բերսաբէէից մինչեւ Դան եւ տուեալնե՛ր բերէք ինձ, որ գիտենամ նրանց թիւը»: 3 Յովաբն ասաց. «Տէրը հարիւրապատիկ թող աւելացնի իր ժողովրդին, ու իմ տիրոջ աչքը տեսնի, որ ամէնքը ծառայում են նրան: Ինչո՞ւ է իմ տէրն այս բանը պահանջում, ինչո՞ւ Իսրայէլը մեղքի մէջ ընկնի»: 4 Սակայն երբ արքան իր ասածը պարտադրեց Յովաբին, սա ելաւ, անցաւ Իսրայէլի բոլոր սահմաններով ու եկաւ Երուսաղէմ: 5 Յովաբը Իսրայէլի ժողովրդի մարդահամարի տվեալները յանձնեց Դաւթին: Ամբողջ Իսրայէլում մէկ միլիոն մարդ կար եւ հարիւր հազար սուսերակիր. իսկ Յուդայի երկիրն ունէր չորս հարիւր յիսուն հազար սուսերակիր: 6 Ղեւիի ու Բենիամինի ցեղերի մարտիկներն այդ թուի մէջ չէին մտնում, քանզի արքայի խօսքը Յովաբի սրտովը չէր:

7 Այս ամբողջ կատարուածը չար երեւաց Տիրոջ աչքին, եւ նա հարուածեց Իսրայէլին: 8 Դաւիթն ասաց Աստծուն. «Շատ մեղանչեցի այս բաներն անելով, ուստի ների՛ր քո ծառայի չար արարքը, քանզի շատ յիմարացայ»:

9 Տէրը տեսանող Գադի հետ խօսելով՝ ասաց. 10 «Գնա խօսի՛ր Դաւթի հետ եւ ասա՛. "Այսպէս է ասում Տէրը. 'Երեք բան եմ դնելու քո առջեւ, դրանցից մէկն ընտրի՛ր, եւ ես այն կ'անեմ քեզ համար'"»: 11 Գադը գալով Դաւթի մօտ՝ ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Ընտրութի՛ւն կատարիր. երեք պայման եմ դնելու. 12 կա՛մ երեք տարի սով կը լինի, կա՛մ երեք ամիս հալածական կը լինես քո թշնամիներից, եւ քո թշնամիների սուրը քեզ կը սպանի, եւ կա՛մ երեք օր Տիրոջ սուրը մահ կը սփռի քո երկրում, ու Տիրոջ հրեշտակը կը բնաջնջի Իսրայէլի

†Շուրջ երեսուն կիլոգրամ:

ամբողջ տարածքը: Արդ, տե՛ս, թէ ես ինչ պատասխան եմ տալու նրան, որ ինձ ուղարկել է"»: 13 Դաւիթն ասաց Գադին. «Այս երեքն էլ ինձ համար մեծ դժբախտութիւն են, բայց աւելի լաւ է ես Տիրոջ ձեռքն ընկնեմ, որովհետեւ շատ մեծ է նրա ողորմածութիւնը, քան ընկնեմ մարդկանց ձեռքը»: 14 Տէրը մահ սփռեց Իսրայէլում, եւ Իսրայէլացիներից եօթանասուն հազար մարդ մեռաւ: 15 Աստուած հրեշտակին առաքեց Երուսաղէմ, որ կոտորի մարդկանց: Հազիւ էր նա սկսել կոտորածը, որ Տէրը տեսաւ ու զղջաց իր պատճառած չարիքի համար: Նա ասաց մարդկանց կոտորելու համար առաքուած հրեշտակին. «Բաւական է, յե՛տ քաշիր ձեռքդ»: Եւ այդ պահին Տիրոջ հրեշտակը գտնուում էր յեբուսացի Ուռնայի կալի մօտ: 16 Դաւիթն աչքերը բարձրացրեց ու տեսաւ Տիրոջ հրեշտակին, որ կանգնած էր երկնքի ու երկրի միջեւ եւ ձեռքի մերկացրած սուրը մեկնել էր Երուսաղէմի վրայ: Դաւիթն ու ծերունիները, քուրձ հագած, երեսնիվայր գետին ընկան: 17 Դաւիթն ասաց Աստծուն. «Չէ՞ որ ես եմ հրամայել մարդահամար կազմել, ես եմ մեղանչել, ես եմ չարիք գործել, այս անմեղ հօտը ի՞նչ է արել, Տէ՛ր Աստուած: Թող քո ձեռքը իմ եւ իմ հօր տան դէմ լինի եւ ոչ թէ քո ժողովրդին կոտորի, Տէ՛ր»:

18 Տիրոջ հրեշտակն ասաց Գադին. «Ասա՛ Դաւթին, որ նա ելնի ու Տիրոջ համար զոհասեղան կանգնեցնի յեբուսացի Ուռնայի կալում»: 19 Եւ Դաւիթը գնաց Տիրոջ խօսքի համաձայն, որ ասուել էր Տիրոջ անունով: 20† Ուռնան դարձաւ, երբ տեսաւ արքային ու նրա չորս որդիներին, որոնք թաքնուել էին նրա հետ: Ուռնան կալում ցորեն էր կալսում: 21 Երբ Դաւիթն եկաւ Ուռնայի մօտ, սա կալից դուրս ելաւ ու երեսնիվայր գետին ընկաւ: 22 Դաւիթն ասաց Ուռնային. «Քո այդ կալատեղն ի՛նձ տուր, որ ես այնտեղ Տիրոջ համար զոհասեղան շինեմ, եւ ժողովրդի կոտորածը վերանայ: Ինչքան արծաթ որ արժէ դա, ես կը տամ քեզ»: 23 Ուռնան ասաց Դաւթին. «Վերցրո՛ւ այն, իմ արքան թող անի այն, ինչ իրեն լաւ է թւում: Բացի այդ, ես կը տամ իմ եզները ողջակիզելու համար, սայլերը՝ ցախ անելու եւ ցորենը՝ նուիրաբերութեան համար: Ամէն ինչ կը տամ քեզ»: 24 Դաւիթ արքան ասաց Ուռնային. «Այդպէս չէ: Պէտք է այն գնեմ այնքան արծաթով, ինչքան արժէ: Ես չեմ առնի այն, ինչ քոնն է, որպէսզի Տիրոջը ձրի ողջակէզ մատուցեմ»: 25 Եւ Դաւիթն այդ տեղի համար կշռով վեց հարիւր սիկղ† արծաթ տուեց Ուռնային: 26 Դաւիթը Տիրոջ համար զոհասեղան շինեց այնտեղ, ողջակէզներ եւ փրկութեան զոհեր մատուցեց, Տիրոջն աղօթեց, եւ Տէրը լսեց ու պատասխան տուեց նրան՝ երկնքից ողջակէզի զոհասեղանին կրակ իջեցնելով եւ ողջակէզներն այրելով: 27 Տէրն ասաց հրեշտակին. «Քո սուրը դի՛ր իր պատեանը»: 28 Երբ Դաւիթը տեսաւ, որ Տէրը լսեց ու պատասխանեց նրան յեբուսացի Ուռնայի կալում, այնտեղ զոհեր մատուցեց: 29 Տիրոջ սրբարանը, որ Մովսէսը պատրաստել էր անապատում, եւ ողջակէզների զոհասեղանն այն ժամանակ Գաբաւոնի Բամա բնակավայրում էին, 30 եւ Դաւիթը Աստծուն հարցում անելու համար չէր կարող գնալ դրա մօտ, որովհետեւ Տիրոջ հրեշտակի սուրը սարսափեցնում էր նրան:

22 Դաւիթն ասաց. «Այս է Տէր Աստծու տունը, եւ այս է Իսրայէլի ողջակէզների զոհասեղանը»:

ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

2 Դաւիթը հրամայեց հաւաքել դրսից Իսրայէլի երկիրը եկած բոլոր մարդկանց եւ նշանակեց քարհատներ, որ քարեր կոփեն ու շինեն Աստծու տունը: 3 Դաւիթը շատ երկաթ հաւաքեց դռների բեւեռների ու դռների համար. նա երկաթէ շրջանակներ պատրաստել տուեց, հաւաքեց շատ առատ

†Եբրայերէն բնագրում՝ Ուռնան դարձաւ, երբ տեսաւ հրեշտակին. ինքն ու իր չորս որդիները թաքնուեցին:

†Շուրջ վեց հարիւր ոսկեղրամ:

պղինձ, որի կշիռը հաշիւ չունէր,
4 մայրի փայտեր, որոնց թիւ ու սահման չկար, քանզի սիդոնացիներն ու տիւրացիները առատօրէն մայրի փայտ էին բերում Դաւիթին:
5 Դաւիթն ասաց. «Սողոմոն որդիս փոքր մանուկ է, իսկ տունը, որ պէտք է կառուցուի Տիրոջ համար, պէտք է լինի մեծ, ամբողջ աշխարհում փառահեղ ու հռչակաւոր: Դրա համար շինանիւթ եմ պատրաստում»: Դաւիթն իր մահուանից առաջ շատ պատրաստութիւն տեսաւ: 6 Նա կանչեց իր որդի Սողոմոնին եւ պատուիրեց նրան Իսրայէլի Տէր Աստծու անուան տուն շինել:
7 Դաւիթն ասաց Սողոմոնին. «Որդեա՛կ իմ, մտքումս կար Տէր Աստծու անուան տուն շինել, 8 բայց Աստծու խօսքն ինձ հասաւ, թէ՝ "Շատ արիւն ես թափել եւ մեծամեծ պատերազմներ ես մղել, ուստի դու իմ անուան տուն չես շինելու, քանզի շատ արիւն ես թափել երկրի վրայ իմ առաջ: 9 Ահա դու մի որդի կ'ունենաս, որը հանգիստ մարդ կը լինի: Ես նրան հանգստութիւն եմ տալու շրջակայ բոլոր թշնամիներից, նրա անունը Սողոմոն կը լինի, եւ ես խաղաղութիւն ու հանգստութիւն եմ տալու Իսրայէլին նրա օրերում: 10 Նա իմ անուան տուն է կառուցելու: Նա ինձ որդի է լինելու, ես նրան՝ հայր, եւ նրա թագաւորութեան աթոռը Իսրայէլում հաստատելու եմ յաւիտեան"»: 11 Արդ, որդեա՛կ իմ, Տէրը քեզ հետ թող լինի ու յաջողութիւն տայ քեզ, որ շինես քո Տէր Աստծու տունը, ինչպէս որ նա ասել է քո մասին: 12 Թող Տէրը քեզ հանճար եւ իմաստնութիւն տայ ու զօրացնի քեզ Իսրայէլի վրայ, որ պահպանես քո Տէր Աստծու օրէնքները: 13 Դու յաջողութիւն կ'ունենաս, եթէ պահպանես այն պատուիրաններն ու օրէնքները, որ Տէրը Մովսէսին պատգամել էր Իսրայէլի համար: Եղի՛ր քաջարի, հզօրացի՛ր, մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրիր: 14 Ես իմ աղքատութեան մէջ Տիրոջ տան համար պատրաստել եմ հարիւր հազար տաղանդ ոսկի†, հազար անգամ հազար տաղանդ արծաթ†, իսկ պղնձին ու երկաթին թիւ չկայ, որովհետեւ չափազանց շատ են: Հաւաքել եմ նաեւ փայտ ու քար, 15 բայց դու աւելացրո՛ւ եղածները, որ աւելի շատ լինեն արհեստաւորներ, որմնադիրներ, հիւսներ եւ ամէն տեսակ հմուտ գործաւորներ, 16 իսկ ոսկին, արծաթը, պղինձն ու երկաթը կան անթիւ քանակութեամբ: Արդ, վե՛ր կաց ու գործի՛ր, քանի որ Տէրը քեզ հետ է»:
17 Դաւիթը Իսրայէլի բոլոր իշխաններին պատուիրեց օգնել իր որդի Սողոմոնին՝ ասելով. 18 «Չէ՞ որ Տէրը ձեզ հետ է եւ ձեզ հանգիստ է տուել ամէն կողմից, քանզի նա ձեր ձեռքն է յանձնել այս երկրի նախկին բնակիչներին, եւ այս երկիրը հնազանդուել է Տիրոջն ու նրա ժողովրդին: 19 Արդ, ձեր սրտերն ու հոգիները թող փնտռեն մեր Տէր Աստծուն, ելէ՛ք եւ շինեցէ՛ք մեր Տէր Աստծու սրբարանը, որպէսզի Տիրոջ ուխտի տապանակը եւ Աստծու սուրբ սպասքը տանէք այն տունը, որ կառուցելու էք Տիրոջ անունով»:

†Շուրջ 3000 տոննա:

†Շուրջ 30000 տոննա:

ՂԵԻՏԱՑԻՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

23 Դաւիթը տարիքն առել, ծերացել էր, ուստի նրա փոխարէն Իսրայէլի վրայ թագաւորեց իր որդի Սողոմոնը:
2 Դաւիթը հաւաքեց Իսրայէլի բոլոր իշխաններին, քահանաներին եւ ղեւտացիներին:
3 Հաշուառման մէջ մտած եւ երեսուն տարեկանից բարձր տարիք ունեցող ղեւտացիների թիւը երեսունութ հազար էր: 4 Նրանցից քսանչորս հազարը Տիրոջ տան գործերի վերակացուներ էին, վեց հազարը՝ դատաւորներ, 5 չորս հազարը՝ դռնապաններ եւ չորս հազարը՝ Տիրոջն օրհնելու համար պատրաստուած նվագարաններ ունեցող օրհներգուներ: 6 Դաւիթն ամենօրեայ պաշտամունքի նշանակեց Ղեւիի որդիներին՝ Գերսոնի, Կահաթի ու Մերարիի ազգատոհմերից:
7 Գերսոնի որդիներն էին Ելէադանն ու Սեմէին: 8 Իսրայէլի իշխան Ելէադանի որդիներն էին Եթոմն ու Ցովէլը:

9 Սեմէիի որդիներն էին Սալոմիթը, Ազիէլն ու Արանը: Սրանք Ելէադանի տոհմից սերուած երեք իշխաններ էին:
10 Սեմէիի որդիներն էին նաեւ Ցեթը, Զիզան, Ցովասն ու Բերիան: Սրանք Սեմէիի չորս որդիներն էին: 11 Ցեթը գլխաւորն էր, իսկ Զիզան՝ երկրորդը: Ցովասն ու Բերիան շատ որդիներ չունեցան եւ մարդահամարի մէջ մէկ տոհմ կազմեցին: 12 Կահաթի որդիներն էին Ամրամը, Իսահառը, Քեբրոնն ու Օզիէլը՝ չորս հոգի: 13 Ամրամի որդիներն էին Ահարոնն ու Մովսէսը: Որոշուեց, որ Ահարոնն ինքը եւ իր որդիները յաւիտեան մաքուր լինեն սրբութիւնների սրբութեանն սպասարկելու, Տիրոջ առջեւ խունկ ծխելու, պաշտամունք կատարելու նրան եւ նրա անունով աղօթելու համար յաւիտեան: 14 Մովսէսը՝ Աստծու մարդը, եւ նրա որդիները համարուեցին Ղեւիի ցեղի յետնորդներ: 15 Մովսէսի որդիներն էին Գերսամն ու Եղիազարը:
16 Գերսամի որդին էր իշխան Սուբայէլը: 17 Եղիազարի որդին էր իշխան Ռաբիան: Եղիազարն ուրիշ որդի չունեցաւ, մինչդեռ Ռաբիան շատ որդիներ ունեցաւ: 18 Իսահառի որդիներն էին իշխաններ Սաւուղն ու Մովէն:
19 Քեբրոնի որդիներն էին Ցերիան՝ գլխաւորը, Ամարիան՝ երկրորդը, Օզիէլը՝ երրորդը, եւ Ցեկեմիասը՝ չորրորդը:
20 Օզիէլի որդիներն էին Միքիան՝ գլխաւորը, եւ Ցեսիասը՝ երկրորդը:
21 Մերարիի որդիներն էին Մոողին ու Մուսին: Մոողիի որդիներն էին Եղիազարն ու Կիսը: 22 Եղիազարը մեռաւ՝ չունենալով որդիներ: Նա միայն դուստրեր ունէր, որոնց հետ ամուսնացան Կիսի որդիները՝ նրանց զարմիկները: 23 Մուսիի որդիներն էին Մողին, Եդերն ու Արիմոթը՝ երեք հոգի:
24 Սրանք են Ղեւիի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող որդիներն ըստ իրենց ազգատոհմերի, իրենց ցեղերի իշխաններն իրենց քանակով ու անուններով, իրենց գլխաւորներով, որոնք սպասաւորութեան գործն էին կատարում Տիրոջ տանը:
25 Դաւիթն ասել էր, որ Տէր Աստուածը հանգստութիւն է տուել Իսրայէլի իր ժողովրդին եւ բնակեցրել Իսրայէլում յաւիտեան: 26 Ղեւտացիները այլեւս չէին կրելու խորանն ու սպասաւորութեան նրա բոլոր անօթները, 27 քանզի, Դաւթի վերջին խօսքի համաձայն, հաշուի առնուեցին Ղեւիի քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող որդիները: 28 Դաւիթը նրանց նշանակեց Ահարոնի որդիների օգնականներ, որպէսզի պաշտամունք կատարեն Տիրոջ տանը, սրահներում, սենեակներում եւ սրբարաններում մաքուր պահեն բոլոր սրբութիւնները եւ սպասաւորութիւն անեն Տիրոջ տանը, 29 կատարեն առաջաւորութեան հացի, ընտիր ալիւրի, անթխմոր բլիթների, բաղարջների, տապակում եփածի, իւղով տապակուածի հսկողութիւնը եւ հսկեն ըստ չափի արուող ամէն ինչ: 30 Նաեւ ամէն առաւօտ վեր կենալով օրհնեն ու փառաւորեն Տիրոջը, նոյն բանը կատարեն երեկոյեան, 31 շաբաթ օրերին, ամսագլուխներին, տօներին Տիրոջը մատուցեն բոլոր ողջակէզները ըստ նշուած քանակի ու հրամանի՝ ամէն ժամ այս բոլորի վրայ լինելով Տիրոջ առջեւ: 32 Նրանք պէտք է պահպանէին վկայութեան խորանը եւ օգնէին իրենց եղբայրներին՝ Ահարոնի որդիներին, Տիրոջ տանը սպասաւորութիւն անելիս:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԴԱՍԸ

24 Ահարոնի որդիների դասակարգումը:
Ահարոնի որդիներն են Նաբադը, Աբիուդը, Եղիազարն ու Իթամարը: 2 Նաբադն ու Աբիուդը իրենց հօրից չուտ մեռան եւ որդիներ չունէին: Ահարոնի որդիներ Եղիազարն ու Իթամարը քահանայ դարձան: 3 Դաւիթը նրանց՝ Եղիազարի որդիներից Սադոկին եւ Իթամարի որդիներից Աքիմելէքին նշանակեց ըստ իրենց թուահամարի, պաշտօնի ու ազգատոհմերի: 4 Եղիազարի որդիների մէջ գտնուեցին աւելի շատ զօրաւոր իշխաններ, քան Իթամարի որդիների մէջ: Նա նրանց նոյնպէս պաշտօնների նշանակեց. ե-

զիազարի որդիներին կարգեց տասնվեց ազգատոհմերի իշխաններ, իսկ Իթամարի որդիներին՝ ութ ազգատոհմերի: 5 Նրանց նշանակեց ըստ իրենց ընկած վիճակի, քանի որ «սրբութիւնների վերակացուներ» եւ «Տիրոջ տան առաջնորդներ» թէ՛ Եղիազարի որդիների մէջ կային եւ թէ՛ Իթամարի որդիների մէջ: 6 Ղեւտացիներից Նաթանայէլի որդի Սամէաս քարտուղարը նրանց գրանցեց արքայի, իշխանների, Սադոկ քահանայի եւ Աբիաթարի որդի Աքիմելէքի եւ ղեւտական ու քահանայական ընտանիքների իշխանների ներկայութեամբ: Վիճակ էին հանում մէկ անգամ Եղիազարի ազգատոհմի համար, մէկ անգամ էլ Իթամարի ազգատոհմի համար:

7 Առաջին վիճակն ընկաւ Յարիբին, երկրորդը՝ Յադինային, 8 երրորդը՝ Քարէմին, չորրորդը՝ Սեւուրինին, 9 հինգերորդը՝ Մեղքիային, վեցերորդը՝ Մերիային, 10 եօթներորդը՝ Ակկուսին, ութերորդը՝ Աբիային, 11 իններորդը՝ Յեսուին, տասներորդը՝ Սեքենիային, 12 տասնմէկերորդը՝ Ելիասիբին, տասներկուերորդը՝ Սաղակիմին, 13 տասներեքերորդը՝ Օփփային, տասնչորսերորդը՝ Իզբայէլին, 14 տասնհինգերորդը՝ Բելգային, տասնվեցերորդը՝ Եմմերին, 15 տասնեօթներորդը՝ Եզիրին, տասնութերորդը՝ Ափեսէին, 16 տասնիններորդը՝ Օփեթիային, քսաներորդը՝ Եզեկիէլին, 17 քսանմէկերորդը՝ Յաքինին, քսաներկուերորդը՝ Գամուէլին, 18 քսաներեքերորդը՝ Դալայիային, քսանչորսերորդը՝ Մոզիային: 19 Այս է նրանց դասակարգումը իրենց պաշտամունքը կատարելու համար Տիրոջ տունը մտնելիս, ըստ իրենց իրաւունքի, որ հաստատել էր իրենց նախահայր Ահարոնը, ինչպէս որ պատուիրել էր նրան Իսրայէլի Տէր Աստուածը:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑԱՆԿԸ

20 Ղեւիի ազգատոհմի մնացած որդիներն էին. Ամրամի որդիներից՝ Տուբայէլը, Յուղայիան, Աբաղիան. 21 Աբիայի որդիներից՝ իշխան Յեսիասը, 22 Սարայիսի որդիներից՝ Ալամոթը, Սալոնի որդիներից՝ Յանաթը, 23 Քեղրոնի որդիներից՝ առաջինը Յեղիուն, երկրորդը՝ Ամասիասը, երրորդը՝ Յեզիէլը, չորրորդը՝ Յեկիմասը: 24 Օզիէլի որդիներից՝ առաջինը Միքիան, երկրորդը՝ Յուսան, Միքայի որդին՝ Սամերը, 25 եւ Միքայի եղբայրը՝ Յեսիէն, Յեսիէի որդին՝ Զաքարիասը: 26 Մերարիի որդիները՝ Մոողին ու Մուսին, եւ սրա որդին՝ Օզիան, սրա որդին՝ 27† Բոնիան, Մերարիի որդիները՝ Զակքուրն ու Օբդիան, 28 Մոողի որդին՝ Եղիազարը, սրա որդին՝ Կիսը, Կիսի որդին՝ Իսմայէլը: 29 Մուսիի որդիները՝ Մոողին, Յեդերն ու Յերիմոթը: 30 Սրանք ղեւտացիների որդիներն են ըստ իրենց ազգատոհմերի: 31‡ Ինչպէս իշխանների տոհմերը, նոյնպէս եւ իրենց կրտսերագոյն եղբայրները Ահարոնի որդիների նման վիճակ հանեցին Դաւիթ արքայի, Սադոկի, Աբիմելէքի, քահանայական տոհմի եւ ղեւտացի իշխանների ներկայութեամբ:

ՏԱՃԱՐԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

25 Դաւիթ արքան եւ զօրքի հրամանատարները ծառայութեան համար նշանակեցին Ասափի, Եմանի ու Իդիթումի որդիներին, որոնք երգում էին տաւիղների, քնարների ու ծնծղաների նուագակցութեամբ: Եւ այս գործը կատարողներն ըստ իրենց պաշտօնի հետեւեալներն էին. 2 Ասափի որդիները՝ Զակքուր, Յովսէփ, Նաթանիաս եւ Յեսիէլ: Ասափի որդիները գործում էին թագաւորի հրահանգով: 3 Իդիթումի որդիները՝ Գոդոլիաս, Սուրի, Յէիմ, Սեմէի, Ասաբիաս եւ Մատթանիաս: Այս վեցն իրենց հայր Իդիթումի հետ քնարի նուագակցութեամբ գոհութիւն եւ փառաբանութիւն էին մատուցում Տիրոջը: 4 Եմանի որդիներն էին՝ Բոկքիաս, Մատթանիաս, Օզիէլ, Սոբայէլ, Յերիմոթ, Անանիաս, Անան, Ելէաթան, Գեթոզաթի, Հանեմոթի, Եզեր, Սեբանատան, Մելամոթ, Յոթիրի եւ Մա-

†Իմաստի յստակութեան համար այս համարում հետեւել ենք եբրայերէն բնագրին:

‡Իմաստի յստակութեան համար այս համարում նոյնպէս հետեւել ենք եբրայերէն բնագրին:

զիոթ: 5 Սրանք բոլորը Եմանի որդիներն էին, որոնք Աստծու խօսքերով ու փող հնչեցնելով փառաբանում էին արքային: Աստուած Եմանին տուեց տասնհինգ որդի եւ երեք դուստր: 6 Արքայի, Ասափի, Իդիթումի եւ Եմանի մօտ, Տիրոջ տանը նրանք բոլորն իրենց հօր հետ օրհներգեր էին երգում ծնծղաների, տաւիղների ու քնարների նուագակցութեամբ: 7 Տիրոջ երգերը սովորելու ընդունակ այս չնորհալի մարդիկ իրենց եղբայրներով հանդերձ երկու հարիւր ութսունութ հոգի էին:

8 Ամենօրեայ սպասաւորութեան համար վիճակ հանեցին թէ՛ փոքրն ու մեծը, թէ՛ փորձառու երգիչը եւ թէ՛ սկսնակը: 9 Առաջինն սպասարկելու վիճակն ընկաւ Ասափին, նրա որդիներին ու եղբայրներին. առաջինը՝ Յովսէփին, երկրորդը՝ Գոդոլիային, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 10 երրորդը՝ Զակքուրին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 11 չորրորդը՝ Եզրիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 12 հինգերորդը՝ Նաթանիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 13 վեցերորդը՝ Բոկիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 14 եօթներորդը՝ Յեսուէլին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 15 ութերորդը՝ Իսիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 16 իններորդը՝ Մատթանիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 17 տասներորդը՝ Սեմէիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 18 տասնմէկերորդը՝ Եզրիէլին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 19 տասներկուերորդը՝ Ասաբիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 20 տասներեքերորդը՝ Սուբայէլին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 21 տասնչորսերորդը՝ Մատթանիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 22 տասնհինգերորդը՝ Յերիմոթին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 23 տասնվեցերորդը՝ Անանիասին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 24 տասնեօթներորդը՝ Եզբակատանին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 25 տասնութերորդը՝ Անանիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 26 տասնիններորդը՝ Մելեթիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 27 քսաներորդը՝ Ալիաթին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 28 քսանմէկերորդը՝ Յեթիրիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 29 քսաներկուերորդը՝ Գեդելթիին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 30 քսաներեքերորդը՝ Մազիոթին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի, 31 քսանչորսերորդը՝ Ռոմեթիեզերին, իր որդիներին ու եղբայրներին՝ ընդամէնը տասներկու հոգի:

ՏԱՃԱՐԻ ԴՌՆԱՊԱՆՆԵՐԸ

26 Ահա եւ դռնապանների դասակարգումները. Կորխի սերնդից՝ Ասափի որդիներից Կորխի որդի Մոսողամ եւ Մասելամիա: 2 Զաքարիայի որդիները՝ անդրանիկը՝ Յազիէլ, երկրորդը՝ Աբդիաս, երրորդը՝ Նաթանա, չորրորդը՝ Յովէլ, 3 հինգերորդը՝ Օդամ, վեցերորդը՝ Յովնաթան, եօթներորդը՝ Ելիովէ: 4 Իդիթոմի որդիները՝ անդրանիկը՝ Սամէաս, երկրորդը՝ Յովազաբադ, երրորդը՝ Յովաթա, չորրորդը՝ Սաքար, հինգերորդը՝ Նաթանայէլ, 5 վեցերորդը՝ Ամիէլ, եօթներորդը՝ Իսաքար, ութերորդը՝ Փելաթի: Արդարեւ, Աստուած օրհնել էր Իդիթոմին: 6 Նրա անդրանիկ որդի Սամէասը ծնեց որդիներ, որոնք իրենց հօր տան գլխաւորներն էին, քանզի հզօր էին: 7 Սեմայի որդիները՝ Ադոնի, Ռափայէլ, Յոբեդ, Ելզաբեթ, Աքիու եւ իր եղբայրները, որոնք զօրեղ մարդիկ էին, Ելիու, Սամաքիաս եւ Իզբակոս: 8 Սրանք բո-

լորը Աբդեդոմի որդիներն էին. իրենք, իրենց որդիներն ու եղբայրները հզօր մարդիկ էին ու վարժ սպասաւորութիւն էին կատարում: Աբդեդոմի ցեղը վաթսուներկու հոգի էր: 9 Մասողամայի որդիներն ու եղբայրները տասնութ քաջարի մարդիկ էին: 10 Մեբարիի որդիներից Յեսամն ունէր Շամարի անունով մի որդի, որին տրուած էր գլխաւորի դերը. թէեւ նա անդրանիկը չէր, սակայն հայրը նրան առաջինը դարձրեց: 11 Երկրորդը Քեղկիան էր, երրորդը՝ Նաաբէլը, չորրորդը՝ Զաքարիան: Սրանք բոլորը Ուսայի որդիներն ու եղբայրներն էին՝ ընդամէնը տասնչորս հոգի: 12 Վիճակով սրանց բաժին ընկաւ դռների պահպանութիւնը. նրանք ամէն շաբաթ իրենց եղբայրների հետ ծառայութիւն էին անելու Տիրոջ տանը: 13 Տարբեր դռների համար, ըստ իրենց ընտանիքների, վիճակ գցեցին նաեւ փոքրն ու մեծը: 14 Արեւելեան դռան վիճակն ընկաւ Սեմէլիին ու նրա որդի Զաքարիային: Իմաստուն Յովադի համար վիճակ գցեցին, եւ նրան բաժին ընկաւ հիւսիսային կողմը: 15 Աբդեդոմին ու նրա որդիներին բաժին ընկաւ հարաւային կողմը, Ասափի տան դիմացը: 16 Երրորդ վիճակը գցեցին Օվասայի համար: Նրան բաժին ընկաւ արեւմտեան կողմը՝ զառիվերի վրայ գտնուող ներքին սենեակի դռնով հանդերձ: Այստեղ պահապանները կանգնելու էին դէմ դիմաց: 17 Ամէն օր վեցական ղեւտացի էին կանգնում հիւսիսային կողմում, չորսական՝ հարաւային կողմում, չորսական՝ Ասափի տան մօտ եւ երկուական՝ իրար փոխարինելու համար†: 18 Արեւմտեան մասում չորս հոգի էին, իսկ ճանապարհի վրայ՝ երկուական՝ իրար փոխարինելու համար: 19 Սա է Կորխի որդիների եւ Մեբարիի որդիների դռնապանների դասակարգումն ըստ վիճակի:

ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻՆ ՎՍՏԱՀՈՒԱԾ ՅԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

20 Ղեւտացիներն իրենց եղբայրներով հանդերձ Տիրոջ տան գանձերն ու սրբութիւնների սրբութեան գանձերն էին հսկում: 21 Նրանք Գերսամի որդի Լաադանի որդիներն էին: Լաադանից էին սերում նրա ազգատոհմի իշխանները: Գերսամից ծնուած Լաադանի որդին էր Յեհիէլը, 22 որի որդիներն էին Զեթամը եւ Յովէլը, եղբայրներ, որոնք Տիրոջ տան գանձերի վերակացուներն էին: 23 Ամրիմից ու Իսահարից էին սերուել Քեբրոնն ու Օզիէլը: 24 Մովսէսի որդի Գերսամի որդի Սեբիէլը գանձերի վերակացուն էր: 25 Նրա եղբայր Եղիազարի որդին Աբիան էր, սրա որդին՝ Յուսէէն, սրա որդին՝ Յորամը, սրա որդին՝ Զեքրին, սրա որդին՝ Սալամիթը, 26 որն իր եղբայրներով վերակացու էր այն բոլոր սրբազան գանձերի, որ նուիրել էին Դաւիթը, տոհմերի իշխանները, հարիւրապետները, հազարապետները եւ զօրքի հրամանատարները: 27 Դրանք աւար էին վերցուած քաղաքներից, եւ դրանց մի մասը յատկացուած էր, որ Աստծու տան շինութեան աշխատանքները թերի չմնան: 28 Այն ամէնը, ինչ նուիրել էին Սամուէլ տեսանողը, Կիսի որդի Սաւուղը, Ների որդի Աբենները, Շարուհիի որդի Յովաբը, Սաղոմոթի ու նրա եղբայրների ձեռքում էին:

ՄԻԻՍ ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

29 Յեսսարին, Քոնոնիան եւ սրա որդիները Իսրայէլի արտաքին գործերն էին տնօրինում, որ գրագրութիւն ու դատ անեն Քեբրոնիայում: 30 Սադիասն ու իր եղբայրները, որոնց տոհմը հազար եօթը հարիւր հզօր մարդուց էր բաղկացած, Իսրայէլի գործերն էին տնօրինում Յորդանան գետից այն կողմ՝ արեւմտեան մասում: Նրանք զբաղուում էին Տիրոջ պաշտամունքի բոլոր հարցերով եւ արքունի գործերով: 31 Քեբրոնից էր սերուած եւ Քեբրոնի ամբողջ ազգատոհմի իշխանն էր Ուրիասը: Դաւիթի թագաւորութեան քառասուներորդ տարում մարդահամար եղաւ, որի ժամանակ Գաղաադացիների Յազեր բնակավայրում գտնուեց մի հզօր մարդ, 32 որի երկու հազար եօթը հարիւր ցեղակից եղբայրները հզօր լինելով՝ տոհմերի իշխաններ էին դարձել:

Դաւիթը նրանց Ռուբէնի ու Գադի ցեղերի եւ Մանասէի կէս ցեղի գնդի վերակացու նշանակեց, որ կարգաւորեն Աստծու եւ արքայի բոլոր գործերը:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

27 Իսրայէլացիներից սերուած ազգատոհմերի նահապետների, հազարապետների, հարիւրապետների, արքայի համար հաշուառում կատարող գրագիրների, արքունի ծառայութիւն կատարողների, տարուայ բոլոր ամիսներին ելումուտ անող դասերից ամէն մի դասի թիւը քսանչորս հազար էր: 2 Առաջին ամսուայ առաջին դասի գլխաւորը Բալէէլի որդի Յեզբաալն էր: Այդ դասի մէջ կար քսանչորս հազար հոգի: 3 Առաջին ամսում զօրքի բոլոր հրամանատարների գլխաւորը Փարէսի որդիներից մէկն էր: 4 Երկրորդ ամսում դասի գլխաւորները՝ զօրքի իշխաններն էին Դուդային, Դաքոթին ու Մագալոթը, իսկ դասի մէջ կար քսանչորս հազար հոգի: 5 Երրորդ ամսում երրորդ դասի գլխաւորը քահանայապետ Յովադի որդի Բանեասն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 6 Ինքը Բանեասը Երեսնեակի մէջ ամենահզօրն էր, ուստի նա Երեսնեակի գլխաւորն էր: 7 Չորրորդ ամսում դասի գլխաւորը Յովաբի եղբայր Ասայէլն էր, նաեւ նրա որդի Զաբդէասը եւ նրանից յետոյ՝ նրա եղբայրները: Նրա դասում կար քսանչորս հազար հոգի: 8 Հինգերորդ ամսում հինգերորդի գլխաւորը Իզիայի որդի Սաթիոթն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 9 Վեցերորդ ամսում վեցերորդի գլխաւորը Թեկուացի Եկդէսի որդի Էկէսն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 10 Եօթներորդ ամսում եօթներորդի գլխաւորը Եփրեմի որդիներից փալտցի Քելն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 11 Ութերորդ ամսում ութերորդի գլխաւորը Զարայի ընտանիքից եկիեսթայիցի Ուսաքն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 12 Իններորդ ամսում իններորդի գլխաւորը Բենիամինի երկրից անաթոթացի Աբիեզերն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 13 Տասներորդ ամսում տասներորդի գլխաւորը Զարայի ընտանիքից նետոպաթցի Մաարին էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 14 Տասնմէկերորդ ամսում տասնմէկերորդի գլխաւորը Եփրեմի որդիներից փարաթոնցի Բանաիասն էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի: 15 Տասներկուերորդ ամսում տասներկուերորդի գլխաւորը Գոթոնիէլի տոհմից նետոպաթցի Քալդային էր, որի դասում կար քսանչորս հազար հոգի:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

16 Իսրայէլի ցեղերից Ռուբէնի ցեղի իշխանը Զեքրիի որդի Եղիազարն էր, Շմաւոնինը՝ Մակքայի որդի Սափատիասը, 17 Ղեւիինը՝ Կամուէլի որդի Ասաբիան, Ահարոնինը՝ Սադոկի որդին, 18 Յուդայինը՝ Դաւթի եղբայրներից Եղիաբը, Իսաքարինը՝ Միքայէլի որդի Ամարիասը, 19 Զաբուղոնինը՝ Աբդիայի որդի Սամէասը, Նեփթաղիմինը՝ Օզիէլի որդի Յաբիմութը, 20 Եփրեմինը՝ Օզիայի որդի Օսերը, Մանասէի կէս ցեղինը՝ Փալդիայի որդի Յովէլը, 21 Գաղաադում գտնուող Մանասէի կէս ցեղինը՝ Զաբդիայի որդի Յադային, Բենիամինի որդիներինը՝ Աբենների որդի Ասիէլը, 22 Դանինը՝ Յորամի որդի Եզրիէլը: Սրանք են Իսրայէլի ցեղերի նահապետները: 23 Դաւիթը հաշուառման չենթարկեց սրանցից քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցողներին, քանզի Տէրն ասել էր, թէ՝ «Իսրայէլացիներին պիտի բազմացնեմ երկնքի աստղերի չափ»: 24 Շարուհիի որդի Յովաբը սկսեց հաշուառման ենթարկել ժողովրդին, սակայն չաւարտեց, եւ այդ պատճառով Տէրը բարկացաւ Իսրայէլի վրայ, եւ նրանց թիւը չարձանագրուեց Դաւիթ արքայի ժամանակագրութեան մէջ:

†Յունարէն բնագրում մի քիչ այլ կերպ են ներկայացուած 17-18 համարները:

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

25 *Արքայի գանձերի վերակացուն Մոդիէլի որդի Ազմոթն էր, իսկ գիւղերի ցանքատարածութիւնների, բնակութեան վայրերի, բերդերի վերակացուն՝ Օզիայի որդի Յովնաթանը:*
26 *Հողը մշակող երկրագործների վերակացուն Քելուբի որդի Եզրասն էր,*
27 *ագարակներինը՝ արիմաթացի Սեմէին, գիւղերում գինու շտեմարաններինը՝ Սեփինի որդի Զաբդին,* 28 *դաշտային ձիթենիներինն ու վայրի թզենիներինը՝ Գեդէոնի որդի Բալդանան, ձէթի շտեմարաններինը՝ Յովասը:* 29 *Հովիտներում արածող արջառների վերակացուն էր Ադայիայի որդի Սոփատը,* 30 *ուղտերինը՝ իսմայէլացի Ուբիասը, աւանակներինը՝ մարաթոնացի Յադիասը,* 31 *հօտերինը՝ հագարացի Յովազը: Սրանք բոլորը Դաւիթ արքայի ստացուածքների վերակացուներն էին:*

ԴԱՒԻԹԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԸ

32 *Դաւիթի հօրեղբայր Յովնաթանը, որ մի իմաստուն մարդ էր ու ատենադպիր, դարձել էր խորհրդական: Աքիմենի որդի Յեհիէլը արքայի որդիների դաստիարակն էր:* 33 *Աքիտոփէլը արքայի խորհրդականն էր,* 34 *իսկ Քուսին՝ արքայի մտերիմ բարեկամը: Աքիտոփէլից յետոյ մերձաւոր լինելու տեսակէտից գալիս էին Բանեասի որդի Յովիդայիան եւ Աբիաթարը: Արքայի զօրքերի հրամանատարն էր Յովաբը:*

ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԴԱՒԻԹԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

28 *Դաւիթը Իսրայէլի բոլոր իշխաններին, գլխաւոր դատաւորներին, արքային հերթով սպասարկող բոլոր իշխաններին, հազարապետներին, հարիւրապետներին, գանձապահներին, իր ստացուածքների վերակացուներին, զօրահրամանատարներից քաջարիներին ու արի պատերազմիկներին հաւաքեց Երուսաղէմում:* 2 *Դաւիթը կանգնեց ժողովականների մէջ եւ ասաց. «Լսեցէ՛ք ինձ, իմ եղբայրնե՛ր եւ իմ ժողովո՛ւրդ: Նպատակ եմ դրել Տիրոջ ուխտի տապանակի համար մշտական տեղ պատրաստել եւ մեր Տիրոջ ոտքին՝ պատուանդան: Այդ բանի համար շինանիւթ եմ պատրաստել՝ բազում քանակութեամբ ոսկի, արծաթ, պղինձ, արոյր, երկաթ եւ փայտ:* 3 *Սակայն Աստուած ինձ ասաց. "Դու ինձ համար իմ անունը կրող տուն չպիտի շինես, քանզի դու պատերազմող մարդ ես եւ շատ արիւն ես թափել":* 4 *Աստուած բոլոր ազգերից ընտրեց Իսրայէլին, իր թագաւորութիւնը հաստատուն պահելու համար ամբողջ Իսրայէլից ընտրեց Յուդայի ցեղին: Յուդայի տնից ընտրեց իմ հօր տունը եւ ուզեց, որ ե՛ս լինեմ իմ հօր տնից թագաւոր ամբողջ Իսրայէլի վրայ:* 5 *Տէրն ինձ բազում որդիներ տուեց, բայց իմ բոլոր որդիներից ընտրեց իմ Սողոմոն որդուն, որ նա Իսրայէլում նստի Տիրոջ թագաւորութեան գահին:* 6 *Աստուած ասաց ինձ. "Քո Սողոմոն որդին է շինելու իմ տունն ու իմ գաւիթը, քանզի նրան եմ ընտրել որպէս որդի, եւ ես եմ նրան հայր լինելու:* 7 *Նրա թագաւորութիւնը յաւիտեան հաստատուն կը դարձնեմ, եթէ պահի իմ պատուիրաններն ու օրէնքները, ինչպէս պահել է մինչեւ հիմա":* 8 *Արդ, ես Տիրոջ ամբողջ ժողովրդի առջեւ եւ ի լուր մեր Աստծու պարտաւորեցնում եմ ձեզ. պահել-պահպանել մեր Տէր Աստծու բոլոր պատուիրանները, որ ժառանգէք լաւ երկիրը եւ այն ձեզնից յետոյ իբրեւ ժառանգութիւն յաւիտենապէս յանձնէք ձեր որդիներին:*

9 *Եւ դու, որդի՛ իմ Սողոմոն, ճանաչի՛ր քո հայրերի Աստծուն, ծառայի՛ր նրան ամբողջ սրտով ու յօժար մտքով, քանզի Տէրը քննում է ամենքի սրտերը, եւ նա գիտի բոլորի մտածումները. եթէ փնտռես նրան, նա կը գտնուի քեզ համար, իսկ եթէ թողնես նրան, նա քեզ կը լքի իսպառ:* 10 *Այժմ տե՛ս, Տէրը քեզ է ընտրել, որ իր համար տուն կառուցես որպէս սրբավայր: Ուրեմն զօրացի՛ր եւ իրագործի՛ր»:*

11 *Դաւիթն իր որդի Սողոմոնին տուեց տաճարի, նրա սենեակների, գանձարանների, վերնատների, ներքին*

շտեմարանների եւ քաւութեան սենեակի յատակագիծը 12 *եւ դրա այն օրինակը, որ ունէր իր մտքում Տիրոջ տան գաւիթների, շուրջը գտնուող շտեմարանների, Տիրոջ տան մթերանոցների ու սրբութիւնների պահեստի համար:* 13 *Նա տուեց քահանաների ամենօրեայ սպասաւորութեան, Տիրոջ տանը ղեւտացիների պարտականութիւնների եւ Տիրոջ տան սպասաւորութեան անօթների պահեստի ծրագիրը:* 14 *Նրան տուեց նաեւ ոսկէ ու արծաթէ անօթների,* 15 *աշտանակների ու ճրագների,* 16 *առաջաւորութեան սեղանի եւ ամէն մի սեղանի ոսկու, ոսկէ ու արծաթէ բոլոր իրերի,* 17 *մեծ պատառաքաղների, բաժակների, ոսկէ ու արծաթէ տաշտերի եւ ոսկէ ու արծաթէ առարկաների, խնկամանների ամէն մէկի կշռաչափը:* 18 *Նա նրան յայտնեց նաեւ խնկերի զոհասեղանների մաքուր ոսկու կշռաչափը եւ նմուշն այն քերովբէների, որոնք իրենց թեւերը տարածելով պէտք է հովանի անէին Տիրոջ ուխտի տապանակի վրայ:* 19 *Դաւիթը Տիրոջ ձեռքով գրուած ամէն ինչ տուեց Սողոմոնին, մի գրութիւն, որի մէջ կայ իմաստութիւն եւ իրագործման ծրագիր:*

20 *Դաւիթն ասաց իր որդի Սողոմոնին. «Զօրացի՛ր ու քա՛ջ եղիր, գործի՛ր եւ մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրիր, քանզի իմ Տէր Աստուածը քեզ հետ է, նա քեզ չի թողնի ու չի լքի, մինչեւ որ աւարտես Տիրոջ ամբողջ տան կառուցումը: Ահա տաճարի, նրա սենեակների, նրա գաւիթների, նրա վերնատների, շտեմարանների, ներքնատների եւ քաւութեան սենեակի օրինակը,* 21 *ինչպէս նաեւ քահանաների, Աստծու տանը մատուցուելիք բոլոր պաշտամունքների համար ղեւտացիների ամենօրեայ սպասաւորութեան ծրագիրը: Քեզ հետ թող լինեն բոլոր նրանք, ովքեր պատրաստ են հմտօրէն աշխատելու ըստ իրենց արհեստների, իսկ իշխաններն ու համայն ժողովուրդը թող պատրաստ լինեն քո հրամաններին ենթարկուելու»:*

ՆՈՒԷՐՆԵՐ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

29 *Դաւիթ արքան ասաց բոլոր ժողովականներին. «Իմ որդի Սողոմոնը, որին Տէրն ընտրեց իր համար, փոքր է, իսկ գործը՝ մեծ, քանզի ոչ թէ մարդու համար է այս շինուածքը, այլ՝ Տէր Աստծու:* 2 *Ըստ իմ կարողութեան պատրաստեցի իմ Աստծու տան շինանիւթերը՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, փայտ, անկիւնների ու կամարների քարեր, յղկուած ու պատուական քարեր եւ բազում այլ նիւթեր:* 3 *Եւ իմ Աստծու տան հանդէպ իմ ունեցած սիրուց մղուած, բացի սրբութիւնների տան համար իմ նուիրած ոսկուց ու արծաթից, յաւելեալ տուեցի նաեւ* 4 *Սոփերից բերուած երեք հազար տաղանդ ոսկի եւ եօթը հազար տաղանդ ընտիր արծաթ, որպէսզի վարպետները դրանցով պատեն տաճարի որմերը:* 5 *Այսօր կը գտնուի՞ մէկը, որ յօժար լինի նուէր մատուցելու Տիրոջը»:*

6 *Տոհմերի պետերը, իսրայէլացիների իշխանները, հազարապետները, հարիւրապետները, գործերի վերակացուները եւ արքունի գաւառապետները* 7 *պարտաւորուեցին Տիրոջ տան շինութեան համար տալ հինգ հազար տաղանդ ոսկի, տասը հազար դահեկան, տասը հազար տաղանդ արծաթ, տասնութ հազար տաղանդ պղինձ եւ հարիւր հազար տաղանդ երկաթ:* 8 *Ով թանկարժէք քար ունէր, տուեց Տիրոջ տան գանձարանին՝ այն յանձնելով Եսրոմի որդի Յերիէլին:* 9 *Ժողովուրդն ուրախացաւ, որ մարդիկ Տիրոջը նուէրներ են մատուցում սրտանց:*

ԴԱՒԻԹԻ ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒՈՒՆ

10 *Մեծապէս ուրախացաւ Դաւիթ արքան ու ժողովականների առջեւ օրհնեց Տիրոջը՝ ասելով.*

«Յաւիտեանս յաւիտենից օրհնեալ ես, Իսրայէլի մեր հայրերի ո՛վ Տէր Աստուած: 11 *Քոնն է, Տէ՛ր, մեծութիւնը, զօրութիւնը, փառքը, յաղթութիւնն ու հզօրութիւնը, քանզի դու ես, որ տիրում ես երկնքում ու երկրի վրայ գտնուող բոլոր էակների վրայ:* 12 *Բո-*

*լոր թագաւորներն ու ազգերը դողում
են քո առջեւ, քեզանից է բխում
մեծութիւնն ու փառքը, դու ես ամենքի
իշխանը, Տէ՛ր, եւ ամէն իշխանու-
թիւնների Տէրը, քո ձեռքում են զօրու-
թիւնն ու ուժը, քո ձեռքում է բոլորին
հզօր դարձնելու ամենակալ կարողու-
թիւնը:* 13 *Արդ, Տէ՛ր, փառաբանում ենք
քեզ եւ օրհներգում քո փառաւոր
անունը:* 14 *Ո՞վ եմ ես, եւ ո՞վ է քո
ժողովուրդը, որ կարողանայինք յօժա-
րամիտ լինել քեզ համար անելու այս
բոլորը: Չէ՞ որ քոնն է ամէն ինչ, եւ
քեզնից ստացածն է, որ տալիս ենք
քեզ:* 15 *Մենք պանդուխտ ենք քո առ-
ջեւ եւ օտարական, ինչպէս մեր բոլոր
հայրերը: Մեր օրերը երկրի վրայ
ստուերի են նման, եւ մենք մնայուն ոչ
մի բան չունենք:* 16 *Մեր Տէ՛ր Աս-
տուած, այս ամէնը, որ ես պատրաստել
եմ քո սուրբ անուան տունը կառու-
ցելու համար, քեզնից է գալիս, եւ
ամէն ինչ քոնն է:* 17 *Գիտեմ, Տէ՛ր, որ
դու ես քննում սրտերը եւ սիրում ես
արդարութիւնը: Մենք յօժար սրտով
ենք այս ամէնն ընծայում, եւ ես
ուրախութեամբ տեսայ, թէ այստեղ
գտնուող քո ժողովուրդը կամաւոր
կերպով քեզ ընծաներ մատուցեց:* 18 *Ո՛վ
Տէր, Աբրահամի, Իսահակի եւ Իսրա-
յէլի մեր հայրերի Աստուած, յաւի-
տեան պահի՛ր այս բանը քո ժողովրդի
սրտում ու մտքում եւ նրանց սրտերը
դէպի քե՛զ ուղղիր:* 19 *Իմ Սողոմոն
որդուն բարի սի՛րտ տուր, որ պահի-
պահպանի քո պատուիրանները, քո
վկայութիւններն ու քո օրէնքները եւ
աւարտին հասցնի քո տան կառու-
ցումը»:*

20 *Դաւիթն ասաց բոլոր ժողովա-
կաններին. «Օրհնեցէ՛ք ձեր Տէր Աստ-
ծուն»: Եւ բոլոր ժողովականները օրհ-
նեցին իրենց հայրերի Տէր Աստծուն եւ
ծնկի իջնելով՝ երկրպագեցին Տիրոջն
ու արքային:* 21 *Յաջորդ օրը Դաւիթը
հազար զուարակ, հազար խոյ ու հա-
զար գառ ողջակիզեց դրանց համա-
պատասխան ընծաներով եւ առատ
զոհեր մատուցեց ամբողջ Իսրայէլի
համար:* 22 *Այն օրը ուրախութեամբ
կերան ու խմեցին Տիրոջ առջեւ, երկ-
րորդ անգամ գահ բարձրացրին Դաւթի
որդի Սողոմոնին, Տիրոջ առջեւ նրան
թագաւոր օծեցին, իսկ Սադոկին՝ քա-
հանայ:* 23 *Սողոմոնը նստեց իր հօր՝
Դաւթի գահին: Նա յաջողութիւնների
հասաւ, նրան հնազանդուեց ամբողջ
Իսրայէլը:* 24 *Իշխանները, հզօր մար-
դիկ եւ իր հայր Դաւիթ արքայի բո-
լոր որդիները հնազանդուեցին նրան:*
25 *Տէրն ի վերուստ բարձրացրեց Սող-
մոնին բոլոր իսրայէլացիների առաջ,
նրան այնպիսի թագաւորական փառք
տուեց, որի նմանը նրանից առաջ
եղած ոչ մի թագաւոր չէր ունեցել:*

ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

26 *Յեսսէի որդի Դաւիթը Իսրայէլի
վրայ թագաւորեց քառասուն տարի.*
27 *Քեբրոնում՝ եօթը տարի եւ Երու-
սաղէմում՝ երեսուներեք տարի:* 28 *Նա
վախճանուեց խոր ծերութեան մէջ,
առաջացած տարիքում, հարստութեան
մէջ ու փառքով: Նրա Սողոմոն որդին
թագաւորեց նրա փոխարէն:* 29 *Դաւիթ
արքայի մնացած՝ առաջին եւ վերջին
գործերը, նրա ամբողջ թագաւորու-
թեան ու զօրութեան մասին,* 30 *ինչ որ
կատարուել էր նրա ժամանակ թէ՛
Իսրայէլում եւ թէ՛ երկրի միւս թա-
գաւորութիւններում, նկարագրուած են
Սամուէլ տեսանողի գրքում, Նաթան
մարգարէի գրքում եւ Գադ տեսանողի
գրքում:*

ՄՆԱՑՈՐԴԱՑ ԵՐԿՐՈՐԴ

Ներածութիւն

«Մնացորդաց»-ի երկրորդ գիրքը բաժանւում է երկու մասի. Դաւթի որդի Սողոմոնի թագաւորութիւնը (1-9 գլուխներ) եւ նրա յաջորդների իշխանութիւնը Յուդայի երկրի թագաւորութեան վրայ՝ մինչեւ Երուսաղէմի գրաւումը Նաբուքոդոնոսորի կողմից եւ հրեայ ժողովրդի գերութիւնը Բաբելոնում (գլուխ 10-36):

Այս գրքի վերջին երկու համարները մի տեսակ կապ են հաստատում Եզրասի եւ Նէեմիի գրքերի հետ ու այդպիսով հրաւիրում են մեզ՝ շարունակելու Իսրայէլի ժողովրդի պատմութեան ընթերցումը: Դրանցում յիշատակւում է Կիւրոս կայսեր կողմից հրապարակուած հրովարտակը, որով թոյլ տրուեց հրեաներին գնալ եւ վերակառուցել Երուսաղէմի տաճարը: Այդ նոյն հրովարտակը ամբողջութեամբ մէջ է բերուած Եզրասի գրքի սկզբում:

ԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԸ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ԱՍՏՈՒՈՅ

1 Դաւթի որդի Սողոմոնը հզօրացաւ
իր թագաւորութեան մէջ, իր Տէր
Աստուածը նրա հետ էր ու նրան շատ
բարձրացրեց: 2 Սողոմոնը խօսեց բոլոր
իսրայէլացիների՝ հազարապետների,
հարիւրապետների, դատաւորների ու
տոհմերի բոլոր իշխանների հետ: 3 Սո-
ղոմոնը բոլոր ժողովականների հետ
գնաց Գաբաւոնի բարձրաւանդակը, ուր
դրուած էր Աստծու վկայութեան խո-
րանը: Անապատում այն պատրաստել
էր Տիրոջ ծառայ Մովսէսը, 4 իսկ Դա-
ւիթը Տիրոջ տապանակը հանել էր Կա-
րիաթարիմ քաղաքից եւ դրա համար
վրան էր պատրաստել Երուսաղէմում:
5 Պղնձէ զոհասեղանը, որ պատրաստել
էր Ցորի որդի Ուրի որդի Բեսելիէլը,
այնտեղ էր՝ Տիրոջ վրանի առջեւ: 6 Սո-
ղոմոնն ու ժողովականները փնտռեցին
ու գտան այն: Սողոմոնը զոհեր բերեց
Տիրոջ վրանի առջեւ գտնուող պղնձէ
զոհասեղանի վրայ եւ այնտեղ հազար
ողջակէզ մատուցեց:

7 Այն գիշեր Տէրը երեւալով Սողո-
մոնին՝ ասաց նրան. «Խնդրի՛ր, ի՞նչ
տամ քեզ»: 8 Սողոմոնն ասաց Աստ-
ծուն. «Դու իմ հօրը մեծ ողորմածու-
թիւն ես արել եւ ինձ գահ ես բարձ-
րացրել նրա փոխարէն: 9 Արդ, Տէ՛ր
Աստուած, քո անունը թող հաստա-
տուն մնայ իմ հայր Դաւթի վրայ,
քանզի ինձ գահ ես բարձրացրել բազ-
մամարդ մի ժողովրդի վրայ, որը երկրի
հողի չափ շատ է: 10 Արդ, ինձ իմաստ-
նութիւն ու իմացութիւն տո՛ւր, որ
կարողանամ ղեկավարել քո այս ժո-
ղովրդին, այլապէս ո՞վ պիտի ղեկա-
վարի քո այս մեծ ժողովրդին»: 11 Աստ-
ուած ասաց Սողոմոնին. «Քանի որ
դա է քո սրտում, չխնդրեցիր ո՛չ մեծ
հարստութիւն, ո՛չ փառք, ո՛չ քո հա-
կառակորդների մահը, ո՛չ էլ երկար
կեանք, այլ խնդրեցիր իմաստնութիւն
ու իմացութիւն, որ կարողանաս ղեկա-
վարել իմ ժողովրդին, որի թագաւորն
եմ դարձրել քեզ, 12 ապա քեզ կը տամ
իմաստնութիւն եւ իմացութիւն, ինչ-
պէս եւ հարստութիւն, ունեցուածք ու
փառք, որպիսին քեզանից առաջ եղած
ոչ մի թագաւոր չի ունեցել, եւ ոչ էլ
քեզանից յետոյ եկողներն են ունենա-
լու»: 13 Սողոմոնը Գաբաւոնի բարձ-
րաւանդակից, վկայութեան խորանի
առջեւից եկաւ Երուսաղէմ եւ թագա-
ւորեց Իսրայէլի վրայ:

ՍՈՂՈՄՈՆԻ ՋՕՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ
(Գ Թագ. 10. 26-29)

14 Սողոմոնը հաւաքեց մարտակառ-
քեր ու հեծեալներ եւ ունեցաւ հազար
չորս հարիւր մարտակառք ու տասներ-
կու հազար հեծեալ: Նա դրանք թողեց
հեծեալների համար սահմանուած քա-
ղաքներում, իսկ զօրքը արքայի հետ
մնաց Երուսաղէմում: 15 Արքան Երու-
սաղէմում ոսկին ու արծաթը այնքան
առատ դարձրեց, որքան քարը, իսկ
մայրիները Հրէաստանում իրենց շա-
տութեամբ դարձան դաշտում աճող
մոլաթզենիների չափ: 16 Սողոմոնի
ձիերը Եգիպտոսից էին բերւում: Ար-
քային վաճառուող ձիերի գները սահ-
մանուած էին այսպէս. 17 Եգիպտոսից
բերուած մէկ մարտակառքը վաճառում
էին վեց հարիւր արծաթով, իսկ ձին՝
հարիւր յիսուն: Դրանք բերւում էին
նաեւ բոլոր քետացի թագաւորների եւ
ասորի թագաւորների համար:

ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ
(Գ Թագ. 5. 1-18)

2 Սողոմոնը հրամայեց կառուցել Տի-
րոջ տունը եւ իր թագաւորական
պալատը: 2 Նա հաւաքեց եօթանասուն
հազար բեռնակիրներ, լեռներում աշ-
խատող ութսուն հազար քարհատներ
եւ նրանց վրայ վերակացուներ՝ երեք
հազար վեց հարիւր մարդ:

3 Սողոմոնը Տիւրոսի արքայ Քիրամի
մօտ մարդ ուղարկեց՝ ասելով. «Դու իմ
հայր Դաւթին օգնել ես՝ մայրի փայտ
ես տուել բնակութեան տուն շինելու
համար: 4 Արդ, ես նոյնպէս, նրա
որդին, իմ Տէր Աստծու անուան տուն
եմ շինում, որ այն Նրան նուիրաբերեմ,
Նրա առջեւ խունկ ծխեմ, շարունակ
առաջաւորութեան հաց ու ողջակէզներ

մատուցեմ ամէն առաւօտ ու երեկոյ,
ամէն շաբաթ օրերին, ամսամուտներին
եւ մեր Աստծու տօներին: Եւ սա պէտք
է յաւիտեան կատարուի Իսրայէլում:
5 Այն տունը, որ կառուցելու եմ, մեծ է
լինելու, քանզի մեր Տէր Աստուածն
աւելի մեծ է, քան բոլոր աստուածները:
6 Եւ ո՞վ կարող է նրա համար տուն
կառուցել, քանզի եթէ երկինքն ու
երկինքների երկինքը չեն կարող պար-
փակել նրա փառքը, ես նրա համար
ի՞նչ տուն կարող եմ կառուցել: Ես կա-
րող եմ նրա համար կառուցել մի տուն,
ուր միայն խունկ կը ծխեն: 7 Արդ, ինձ
մօտ ճարտար մարդ ուղարկի՛ր, որ
գիտենայ մշակել իմ հայր Դաւթի
հաւաքած ոսկին, արծաթը, պղինձը,
երկաթը, հմուտ լինի ծիրանի, կարմիր,
կապուտակ կտորներ ու բեհեզ գործա-
ծելու մէջ, որ իմանայ քանդակներ
պատրաստել Հրէաստանում ու Երու-
սաղէմում գտնուող իմ վարպետների
հետ: 8 Ինձ Լիբանանից ուղարկի՛ր
մայրի, սարդենի եւ թեղենի փայտեր,
որովհետեւ գիտեմ, որ ոչ ոք քո
ծառաների նման Լիբանանից փայտ
կտրել չգիտի: Արդ, քո ծառաները թող
գնան իմ ծառաների հետ, 9 որ ինձ
համար մեծ քանակութեամբ փայտ
պատրաստեն, որովհետեւ այն տունը,
որ կառուցելու եմ, պէտք է լինի մեծ ու
փառաւոր: 10 Քո ծառաներին, փայտ
կտրող գործաւորներին իբրեւ ռոճիկ կը
տամ քսան հազար քոռ† ցորեն, քսան
հազար քոռ† գարի, քսան հազար չափ‡
գինի եւ քսան հազար չափ‡ ձէթ»:

11 Տիւրոսի Քիրամ արքան պատաս-
խանեց նամակով եւ այն ուղարկեց
Սողոմոնին. «Քանի որ Տէրը սիրեց իր
ժողովրդին, դրա համար քեզ նրանց
վրայ թագաւոր կարգեց»: 12 Ապա
Քիրամն ասում էր. «Օրհնեալ է Իս-
րայէլի Տէր Աստուածը, որն ստեղծել է
երկինքն ու երկիրը եւ Դաւթի արքային
տուել է խելամտութեամբ ու դատո-
ղութեամբ օժտուած իմաստուն որդի,
որ կառուցի Տիրոջ տունն ու իր թագա-
ւորական տունը: 13 Ահա քեզ մօտ եմ
ուղարկում մի խելօք ու հմուտ մարդու՝
իմ ծառայ Քիրամին, 14 որի մայրը
Դանի դուստրերից է, իսկ նրա հայրը
տիւրոսցի է: Նա գիտի մշակել ոսկին,
արծաթը, պղինձը, երկաթը, քարերն ու
փայտերը, հիւսել ծիրանի ու կապու-
տակ, բեհեզ ու կարմիր կտորներ, քան-
դակներ անել: Նա, աշխատելով քո
վարպետների ու քո հօր՝ իմ տէր Դաւ-
թի վարպետների հետ, կը կարողանայ
անել այն բոլոր գործերը, որ կ'առա-
ջարկես դու իրեն: 15 Արդ, ցորենը,
գարին, ձէթն ու գինին, որ յիշատակել
է իմ տէրը, թող տայ իր ծառաներին,
16 իսկ մենք Լիբանանից փայտ կը
կտրենք ըստ քո կարիքների եւ ծովի
վրայով, լաստերով կը բերենք Յոպպէ,
եւ դու կը տանես կը կուտակես Երու-
սաղէմում»:

ՍԿՍԻՈՒՄ Է ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ
(Գ Թագ. 6. 1-38)

17 Սողոմոնը հաւաքեց Երուսաղէ-
մում գտնուող բոլոր պանդուխտներին
ըստ իր հայր Դաւթի կատարած մար-
դահամարի: Նրանք հարիւր յիսուներ-
եք հազար վեց հարիւր հոգի էին:
18 Նա նրանցից եօթանասուն հազար
բեռնակիրներ, ութսուն հազար քար-
հատներ վերցրեց ու նրանց վրայ երեք
հազար վեց հարիւր գործավարներ
նշանակեց:

3 Սողոմոնը Երուսաղէմում, Ամորհա-
ցիների լեռան վրայ, ուր Տէրը երեւացել
էր նրա հօրը՝ Դաւթին, սկսեց կառուցել
Տիրոջ տունը այն տեղում, որ Դաւիթը
պատրաստել էր Օռնա Յեբուսացու
կալում: 2 Նա կառուցումն սկսեց իր
թագաւորութեան չորրորդ տարուայ
երկրորդ ամսին: 3 Այսպիսով Սողոմոնն
սկսեց շինել Աստծու տունը: Դրա
նախկին երկարութիւնը վաթսուն
կանգուն էր, իսկ լայնութիւնը՝ քսան
կանգուն: 4 Տան ճակատի արտաքին
գաւթի նախկին երկարութիւնն ու լայ-
նութիւնը քսանական կանգուն էին,
բարձրութիւնը՝ հարիւր քսան կան-
գուն: Նա այն ներսից պատեց մաքուր
ոսկով: 5 Մեծ դահլիճը նա երեսապա-

†Շուրջ 6000 տոննա:
‡Շուրջ 800.000 լիտր:

տեց մայրի փայտով ու պատեց մաքուր ոսկով, վրան քանդակեց արմաւենիներ ու շղթայաձեւ զարդեր: 6 Շքեղութեան համար տունը զարդարեց թանկարժէք քարերով ու Սեփարուիմից աւար բերուած մաքուր ոսկով. 7 տունը, պատերը, դրանդիկները, դռներն ու ձեղունը պատեց ոսկով, իսկ պատերին քանդակեց քերովբէներ:

8 Շինեց նաեւ Սրբութիւնների սրբութեան դահլիճը, որի երկարութիւնը ճակատի կողմից քսան կանգուն էր, լայնութիւնն էլ՝ քսան կանգուն: Նա սրահը պատեց մաքուր ոսկով եւ քերովբէներով՝ ծախսելով վեց հարիւր տաղանդ† ոսկի: 9 Ամէն մի մեխի կշիռը յիսուն սիկղ‡ ոսկի էր: Վերնատունը նոյնպէս պատեց ոսկով: 10 Սրբութիւնների սրբութեան դահլիճում երկու քերովբէներ պատրաստեց եւ դրանք պատեց ոսկով: 11 Քերովբէների թեւերի երկարութիւնը քսան կանգուն էր. ամէն մի թեւը՝ հինգ կանգուն, կպած սրահի պատին, եւ միւս թեւը եւս՝ հինգ կանգուն, կպած միւս քերովբէի թեւին: 12 Միւս քերովբէի թեւը նոյնպէս հինգ կանգուն էր, կպած սրահի պատին, եւ միւս թեւը եւս՝ հինգ կանգուն, կպած միւս քերովբէի թեւին: 13 Երկու քերովբէների թեւերը տարածուած վիճակում քսան կանգուն էին: Նրանք կանգնած էին իրենց ոտքերի վրայ, իսկ նրանց դէմքերը նայում էին սրահի կողմը:

14 Նա վարագոյրները պատրաստեց կապուտակ, ծիրանի, կարմիր կտորներից ու բեհեզից, որոնց վրայ քերովբէներ էին հիւսուած:

ՊՂՆՁԷ ԵՐԿՈՒ ՍԻՒՆԵՐԸ
(Դ Թագ. 7. 15-22)

15 Տան առաջ երկու սիւներ կանգնեցրեց երեսունհինգ կանգուն բարձրութեամբ եւ նրանց վրայ՝ խոյակներ, որոնք հինգ կանգուն էին: 16 Նա սրբարանում եղած շղթայաձեւ զարդերի նման զարդեր պատրաստեց ու դրեց սիւների գլուխներին: Նռան հարիւր ծաղկաբողբոջներ սարքեց ու դրեց շղթայաձեւ զարդերի վրայ: 17 Տաճարի առաջ սիւներ կանգնեցրեց. մէկը՝ աջից, միւսը՝ ձախից: Աջ կողմինը կոչեց Ուղղութիւն, իսկ ձախ կողմինը՝ Զօրութիւն:

ՊՂՆՁԷ ՄԵԾ ԱՒԱԶԱՆԸ
(Ա Թագ. 7. 23-26)

4 Նա պղնձէ զոհասեղան պատրաստեց քսան կանգուն երկարութեամբ, քսան կանգուն լայնութեամբ ու տասը կանգուն բարձրութեամբ:

2 Զուլածոյ մեծ աւազանը շինեց տասը կանգուն տրամագծով, շրջանաձեւ, հինգ կանգուն բարձրութեամբ եւ երեսուն կանգուն շրջագծով: 3 Դրա տակ շուրջանակի կային ձուլածոյ եզներ, որոնք տասը կանգուն տրամագծով շրջապատել էին այն: Զուարակները միաձոյլ էին: 4 Զուարակները տասներկու հատ էին. երեքը նայում էին հիւսիս, երեքը նայում էին արեւմուտք, երեքը նայում էին հարաւ, երեքը նայում էին արեւելք: Աւազանը տեղադրուած էր դրանց վրայ, եւ դրանց գաւակներն ուղղուած էին դէպի ներս: 5 Մեծ աւազանի խորութիւնը մէկ թիզ էր, նրա շուրթը բաժակի շրթի նման էր, վրան շուշան ծաղիկներ էին քանդակուած, եւ երեք հազար չափ† տարողութիւն ունէր: Նա այս ամէնն աւարտեց:

6 Նա պատրաստեց տասը աւազան. հինգը դրեց աջ կողմը, հինգը՝ ձախ կողմը, որ նրանց մէջ լուանան ու ողողեն ողջակիզման գործիքները, իսկ մեծ աւազանը նրա համար էր, որ քահանաները լուացուեն դրա մէջ:

7 Նա պատրաստեց տասը ոսկէ աշտանակներ ըստ եղած նմուշի եւ դրանք դրեց տաճարում. հինգը՝ աջ կողմը, հինգը՝ ձախ:

8 Նա պատրաստեց տասը զոհասեղաններ ու դրեց տաճարի մէջ. հինգը՝ աջ կողմը, հինգը՝ ձախ: Պատրաստեց հարիւր ոսկէ տաշտեր:

9 Նա պատրաստեց քահանաների սրահը, մեծ սրահն ու սրահի դռները եւ դրանց փեղկերը պատեց պղնձով:

†Շուրջ քսան տոննա:

‡Կէս կիլոգրամ:

†Շուրջ 120.000 լիտր:

10 Մեծ աւազանը զետեղեց տաճարի աջ անկիւնը՝ ուղղուած դէպի արեւելք: 11 Քիրամը պատրաստեց զոհասեղանի մեծ պատառաքաղները, կաթսաները, կասկարաներն ու զոհասեղանի ամբողջ սպասքը: Նա վերջացրեց այն բոլոր գործերը, որ Սողոմոն արքան հրամայել էր պատրաստել Աստծու տան մէջ: 12 Քիրամը պատրաստեց երկու սիւներն ու նրանց վրայի խոյակները, սիւների խոյակների վրայի երկու վերնախարիսխները, երկու վանդակապատ ցանցերը, որ ծածկում էին վերնախարիսխների խոյակները, եւ որոնք սիւների գլխին էին: 13 Նա պատրաստեց նաեւ չորս հարիւր ոսկէ զանգակներ երկու վանդակապատ ցանցերի համար եւ նռան ծաղկաբողբոջների երկու շարքեր ամէն մի վանդակապատ ցանցի համար, որպէսզի դրանցով ծածկեն սիւների վրայ դրուած երկու խոյակները: 14 Նա պատրաստեց տասը խարիսխներն ու խարիսխների վրայ դրուած աւազանները, 15 մի աւազանն իր տակ գտնուող տասներկու զուարակներով, 16 կասկարաները, վերցնելու ձողերը, կաթսաները, մեծ պատառաքաղներն ու դրանց ամբողջ սպասքը, որ Քիրամն էր պատրաստել, եւ տարաւ Սողոմոնի մօտ՝ Տիրոջ տունը: 17 Այդ բոլորն արքան ձուլել տուեց մաքուր պղնձից Յորդանան գետի Հովտում գտնուող մի ընդարձակ վայրում, Սոքոթի տանը, Սարեթի բնակավայրում, թանձր հողի մէջ: 18 Սողոմոնն այս ամբողջ սպասքը մեծ քանակութեամբ պատրաստեց, քանի որ պղինձը չափ ու սահման չունէր: 19 Սողոմոնը պատրաստեց Տիրոջ տան ամբողջ սպասքը, ոսկէ զոհասեղանն ու այլ սեղաններ, որոնց վրայ առաջաւորութեան հաց պէտք է դրուէր, 20 աշտանակները, լոյսի ճրագները, որոնք, ըստ ընդունուած կարգի, վառւում էին սրբարանի դիմաց եւ մաքուր ոսկուց էին պատրաստուած: 21 Նա պատրաստեց նաեւ կանթեղները, ունելիները, տաշտերը, խնկամաններն ու բուրվառները, որոնք նոյնպէս մաքուր ոսկով էին սարքուած, 22 Սրբութիւնների սրբութեան դահլիճի ներսի դռներն ու տաճարի դռները, որոնք ոսկուց էին:

5 Սողոմոնն աւարտելով Տիրոջ տան կառուցման ամբողջ գործը՝ իր հայր Դաւթի սրբութիւնները, արծաթն ու ոսկին եւ սպասքը տարաւ ներս ու դրեց Տիրոջ տան գանձարանը:

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ ԲԵՐԻՈՒՄ Է ՏԱՃԱՐ
(Ա Թագ. 8. 1-13)

2 Այն ժամանակ Սողոմոնը Երուսաղէմում հաւաքեց Իսրայէլի բոլոր ծերերին, ցեղերի իշխաններին ու Իսրայէլացիների տոհմերի առաջնորդներին, որ Տիրոջ ուխտի տապանակը հանեն Դաւթի քաղաքից, այսինքն՝ Սիոնից: 3 Տօն կատարելու համար եօթներորդ ամսին արքայի մօտ հաւաքուեցին Իսրայէլի բոլոր տղամարդիկ: 4 Եկան Իսրայէլի բոլոր ծերերը: Բոլոր ղեւտացիները վերցրին տապանակը, վկայութեան խորանն ու խորանում եղած ամբողջ սուրբ սպասքը, 5 եւ քահանաներն ու ղեւտացիները տարան դրանք: 6 Սողոմոն արքան, բոլոր իսրայէլացիները, աստուածավախ եւ տապանակի առջեւ հաւաքուած մարդիկ զուարակներ ու ոչխարներ մորթեցին, որոնց թիւն անհնար էր հաշուել շատութեան պատճառով: 7 Ղեւտացիները Տիրոջ ուխտի տապանակը տարան ներս ու դրեցին իր տեղը՝ տաճարի սրբարանում, այն է՝ Սրբութիւնների սրբութեան մէջ, քերովբէների թեւերի տակ: 8 Քերովբէներն իրենց թեւերը տարածելով տապանակի վրայ՝ վերեւից ծածկում էին տապանակն ու այն վերցնելու ձողերը: 9 Ձողերը շուրջը բռնել էին եւ դրանց ծայրերը երեւում էին միայն Սրբութիւնների սրբութիւնից, իսկ դրսից չէին երեւում: Դրանք մինչեւ այսօր էլ այնտեղ են: 10 Տապանակի մէջ ոչինչ չկար, բացի երկու տախտակներից, որ Մովսէսն էր դրել այնտեղ Քորէբում: Դրանցով Տէրն ուխտ էր դրել իսրայէլացիների հետ, երբ նրանք դուրս էին գալիս Եգիպտոսից:

ԱՍՏՈՒԱԾ ՏԷՐ Է ԴԱՌՆՈՒՄ ԻՐ ՏԱՃԱՐԻՆ

11 *Երբ քահանաները սրբարանից դուրս եկան (քանի որ այնտեղ գտնուող բոլոր քահանաներն էլ սրբագործուել էին եւ չէին նշանակուած ըստ իրենց ամենօրեայ սպասաւորութեան),* 12 *բոլոր սաղմոսերգու ղեւտացիները՝ Ասափի, Եմանի եւ Իդիթոմի որդիները, նրանց որդիներն ու նրանց եղբայրները, բեհեզէ պատմուճաններ հագած, տաւիղներով, քնարներով, սրինգներով զոհասեղանի արեւելեան կողմը կանգնեցին:* 13 *Նրանց հետ կային հարիւր քսան քահանաներ, որոնք փող էին հնչեցնում: Փող հնչեցնողները, սաղմոսերգուները միաբերան իրենց ձայնը բարձրացնելով՝ ասում էին. «Գովերգեցէ՛ք եւ օրհնեցէ՛ք Տիրոջը»: Եւ երբ նրանք փողերի, ծնծղաների ու նուագարանների նուագակցութեամբ իրենց ձայնը բարձրացրին, կրկնեցին. «Գովերգեցէ՛ք Տիրոջը եւ օրհնեցէ՛ք, քանզի նա բարի է, եւ յաւիտեան է նրա ողորմածութիւնը»: Այն ժամանակ Տիրոջ տունը լցուեց Նրա փառքի ամպով,* 14 *եւ քահանաները չէին կարողանում պաշտամունք կատարել ամպի պատճառով, քանզի Տիրոջ փառքը լցրել էր Աստծու տունը:*

ՍՈՂՈՄՈՆԻ ԽՕՍՔԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՒ
(Գ Թագ. 8. 12-21)

6 *Այն ժամանակ Սողոմոնը խօսեց՝ ասելով. «Տէրն ասաց, թէ ինքը բնակւում է մառախուղի մէջ,* 2 *բայց ես տուն չինեցի քո անունը իբրեւ սրբութիւն քեզ, պատրաստեցի, որ այնտեղ բնակուես յաւիտեան»:* 3 *Արքան երեսը դարձրեց դէպի ժողովուրդը, օրհնեց իսրայէլացի բոլոր ժողովականներին: Իսրայէլացի բոլոր ժողովականները նրա շուրջն էին կանգնած:* 4 *Արքան ասաց. «Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որն ինչ որ ասել էր իր բերանով իմ հայր Դաւթին, այն էլ կատարեց իր ձեռքով:* 5 *Նա ասել էր. "Այն օրուանից, ինչ իմ ժողովրդին հանեցի Եգիպտոսի երկրից, Իսրայէլի բոլոր ցեղերին պատկանող ոչ մի քաղաք չընտրեցի, որ ինձ համար այնտեղ տուն շինուի, որ իմ անունն այնտեղ լինի, որեւէ մէկին չընտրեցի, որ Իսրայէլի իմ ժողովրդի առաջնորդը լինի:* 6 *Հիմա Երուսաղէմն ընտրեցի, որ իմ անունն այնտեղ լինի, եւ Դաւթին ընտրեցի, որ Իսրայէլի իմ ժողովրդի վրայ լինի":* 7 *Իմ հայր Դաւիթը ցանկութիւն ունէր Իսրայէլի Տէր Աստծու անուան տուն շինել,* 8 *ուստի Տէրն ասաց իմ հայր Դաւթին. "Ցանկութիւն ունես իմ անուան տուն կառուցելու. լաւ է, որ այդ բանը սրտումդ կայ:* 9 *Սակայն դու չէ, որ ինձ համար տուն պիտի շինես, այլ՝ որդիդ, որ քեզնից է ծնուելու, նա է, որ իմ անուան տուն է շինելու":* 10 *Աստուած իր ասած խօսքը կատարեց, եւ ես, ահա, հօրս փոխարինեցի՝ նստեցի Իսրայէլի աթոռին, ինչպէս Տէրն էր ասել, շինեցի Իսրայէլի Տէր Աստծու անուան այս տունը,* 11 *այնտեղ դրեցի տապանակն այն ուխտի, որ Տէրը կնքեց իսրայէլացիների հետ»:*

ՍՈՂՈՄՈՆԻ ԱՂՕԹՔԸ
(Գ Թագ. 8. 22-53)

12 *Սողոմոնը Իսրայէլի բոլոր ժողովականների ներկայութեամբ կանգնեց Տիրոջ զոհասեղանի առջեւ եւ բարձրացրեց իր ձեռքերը:* 13 *(Սողոմոնը պղնձէ պատուանդան էր պատրաստել ու դրել տաճարի սրահի մէջտեղում: Նրա երկարութիւնը հինգ կանգուն էր, լայնութիւնը՝ հինգ կանգուն, եւ բարձրութիւնը՝ երեք կանգուն): Դրա վրայ կանգնելով՝ նա Իսրայէլի բոլոր ժողովականների առջեւ ծնրադրեց եւ իր ձեռքերը դէպի երկինք մեկնելով՝* 14 *ասաց.*

«Իսրայէլի Տէ՛ր Աստուած, չկայ քեզ նման Աստուած երկնքում ու երկրի վրայ, դու պահում ես ուխտն ու ողորմածութիւնը բոլոր նրանց, որոնք ամբողջ սրտով ընթանում են քո առջեւից: 15 *Դու քո ծառային՝ իմ հայր Դաւթին տուած խոստումդ կատարեցիր. ինչ որ քո բերանով ասել էիր, այսօր քո ձեռքով կատարեցիր:* 16 *Արդ, Իսրայէլի Տէ՛ր Աստուած, կատարի՛ր այն, ինչ խոստացել էիր իմ հօրը՝ քո ծառայ Դաւթին՝ ասելով. "Քեզ համար երբեք չի պակասելու մարդ, որ նստի Իսրայէլի գահի վրայ, միայն թէ քո որդիները չշեղեն իրենց ճանապարհները՝ ընթանան իմ առջեւից, ինչպէս դու ես ընթացել իմ առջեւից":* 17 *Արդ, Իսրայէլի Տէ՛ր Աստուած, Դաւթին ասած խօսքդ թող ի կատար ածուի:*

18 *Բայց եթէ Աստուած իրօք բնակուելու է երկրի վրայ, մարդկանց մէջ (երբ երկինքն ու երկինքների երկինքը բաւական չեն նրան տեղաւորելու համար), ապա ի՞նչ է իմ շինած այս տունը:* 19 *Արդ, Տէ՛ր Աստուած, ունկնդրի՛ր քո ծառայի աղօթքին ու խնդրանքին, լսի՛ր քո ծառայի՝ քո առջեւ այսօր արած աղաչանքներն ու աղօթքները,* 20 *որպէսզի քո աչքն ու միտքը օր ու գիշեր լինեն այս տան վրայ, այն տեղի վրայ, որի համար ասացիր, թէ քո անունն ես հաստատելու դրա մէջ, որպէսզի այս տեղո՛ւմ լսես քո ծառայի աղաչական աղօթքը:* 21 *Արդ, լսի՛ր քո ծառայի եւ Իսրայէլի քո ժողովրդի խնդրանքը, այստեղ կատարուած աղաչանքը, եւ լսելով երկնքում՝ քո բնակութեան վայրում, ունկնդի՛ր եղիր ու ողորմած:*

22 *Եթէ մի մարդ մեղանչի իր մերձաւորի հանդէպ, եւ նրանից պահանջեն, որ նա երդում տայ, ապա թող գայ կանգնի քո զոհասեղանի առջեւ, այս տան մէջ,* 23 *եւ դու երկնքում լսելով՝ կատարի՛ր քո ծառաների դատը, արժանի՛ն հատուցիր անօրէնին, իր գլխի՛ն թափիր նրա արածը, արդարացրո՛ւ արդարին եւ հատուցի՛ր ամէն մէկին ըստ իր արդարութեան չափի:*

24 *Եթէ Իսրայէլի քո ժողովուրդը թշնամիներից հալածուի, քո դէմ մեղանչի եւ ապա դառնայ ու քո անունը փառք տայ, աղօթքի կանգնի ու պաղատի քո առջեւ այս տան մէջ,* 25 *ապա դու լսի՛ր երկնքից, քաւի՛ր Իսրայէլի քո ժողովրդի մեղքերը, վերադարձրո՛ւ նրան այն երկիրը, որ նրանց հայրերին ես տուել:*

26 *Եթէ նրանք մեղանչեն քո դէմ, եւ այդ պատճառով երկինքը փակուի, ու անձրեւ չգայ, բայց այս տեղում քեզ աղօթք անեն, փառաբանեն քո անունը եւ իրենց մեղքերից դարձ կատարեն (քանի որ դու կարող ես նկուն դարձնել նրանց),* 27 *ապա լսի՛ր նրանց երկնքից, ների՛ր քո ծառաների եւ Իսրայէլի քո ժողովրդի մեղքերը, նրանց ցո՛յց տուր բարի ճանապարհը, որով պէտք է ընթանան, եւ քո ժողովրդին որպէս ժառանգութիւն տրուած երկրին անձրե՛ւ պարգեւիր:*

28 *Երբ սով կամ մահ լինի երկրի վրայ, երաշտ, դեղնախտ, մորեխ կամ թրթուր, եւ երբ թշնամին նրանց նեղի իրենց իսկ քաղաքների շրջակայքում, որեւէ աղէտ լինի, կամ համաճարակ,* 29 *երբ որեւէ մէկը կամ Իսրայէլի քո ժողովուրդը աղօթք կամ պաղատանք անի եւ իմանալով իր բորոտութիւնը կամ հիվանդութիւնը՝ իր ձեռքերը երկարի դէպի այս տունը,* 30 *ապա դու երկնքում՝ քո բնակութեան վայրում լսի՛ր ու բժշկի՛ր եւ ամէն մէկին տո՛ւր իր սրտի կամեցածը, ինչպէս որ դու ես ճանաչում նրա սիրտը (քանզի միայն դո՛ւ գիտես մարդկանց սրտերը),* 31 *որպէսզի նրանք վախենան քեզնից ու քո ճանապարհներով ընթանան բոլոր այն օրերին, որ կ'ապրեն նրանց հայրերին տրուած երկրում:*

32 *Երբ մի օտարական, որ Իսրայէլի քո ժողովրդից չէ, բայց քո մեծ անուան, քո զօրեղ ձեռքի, քո հզօր բազկի համար եկել է հեռաստանից ու աղօթքի կանգնել այս վայրում,* 33 *ապա դու լսի՛ր երկնքից, քեզ համար պատրաստուած բնակութեան վայրից եւ արա՛ այն ամէնը, ինչ օտարականը կը խնդրի քեզնից, որպէսզի աշխարհի բոլոր ժողովուրդները ճանաչեն քո անունը, վախենան քեզնից այնպէս, ինչպէս Իսրայէլի քո ժողովուրդը, եւ գիտենան, որ քո անունով է կոչուած իմ շինած այս տունը:*

34 *Երբ քո ժողովուրդը պատերազմի ելնի իր թշնամիների դէմ այն ճանապարհով, որով դու կ'ուղարկես նրանց, եւ երբ նրանք աղօթեն քեզ՝ իրենց հայեացքն ուղղելով դէպի քո այս ընտրած քաղաքն ու դէպի այս տունը, որ շինել եմ քո անուան համար,*

35 ապա երկնքից կը լսես նրանց պաղատանքներն ու աղօթքները եւ կը
պաշտպանես նրանց իրաւունքը: 36 Երբ
քո դէմ մեղանչեն (քանզի մարդ չկայ,
որ մեղք չգործի), եւ դու հալածես
նրանց ու թշնամիների ձեռքը մատնես,
երբ գերեվարելով նրանց տանեն
թշնամիների հեռաւոր կամ մօտիկ
երկիրը, 37 եւ գերութեան տարուած
երկրում նրանք զղջան, դարձի գան ու
քեզ աղաչեն իրենց գերութեան մէջ՝
ասելով՝ "Մեղք եւ անօրէնութիւն ենք
գործել", 38 իրենց գերութեան երկրում
դէպի քեզ դարձ կատարեն իրենց ամ-
բողջ սրտով ու հոգով, մեր հայրերին
տուած քո երկրի, քո ընտրած քաղաքի
եւ քո անուան համար իմ շինած տան
կողմը նայելով՝ աղօթեն, 39 ապա
երկնքից՝ քո բնակութեան վայրից,
լսի՛ր նրանց աղօթքներն ու պաղա-
տանքները, պաշտպանի՛ր նրանց իրա-
ւունքը եւ ների՛ր քո դէմ մեղանչած
ժողովրդին: 40 Արդ, Տէ՛ր, թող քո աչ-
քերը բաց լինեն եւ քո ականջները՝
սուր, որ լսես այստեղ արուած պաղա-
տանքները:

41 Արդ, Տէ՛ր Աստուած, դու եւ քո
սրբութեան տապանակը ելէք եկէ՛ք ձեր
Հանգստութեան վայրը.

քո քահանաները, Տէ՛ր Աստուած,
փրկութիւն թող հագնեն,

եւ քո որդիները ցնծան բարութեան
մէջ:

42 Տէ՛ր Աստուած, երես մի՛ դարձրու
քեզնից օծուածից,

յիշի՛ր քո ծառայ Դաւթին քո ողոր-
մածութեամբ»:

ՆՈՒԻՐԱՒԵՐՈՒՄՆԵՐ ՏԻՐՈՋԸ
(Գ Թագ. 8. 62-66)

7 Երբ Սողոմոնը վերջացրեց աղօթքը,
երկնքից կրակ իջաւ եւ լափեց ողջ-
կէզները ու զոհերը: 2 Տիրոջ փառքը
լցրեց տաճարը, եւ այդ ժամանակ քա-
հանաները չէին կարողանում մտնել
Տիրոջ տունը, քանզի Տիրոջ փառքը
լցրել էր տաճարը: 3 Բոլոր իսրայէ-
լացիները տեսան իջնող կրակն ու Տի-
րոջ փառքը տաճարի վրայ: Նրանք ե-
րեսնիվայր ընկան սալայատակի վրայ,
երկրպագեցին եւ օրհնեցին Տիրոջը,
քանզի նա բարի է, իսկ նրա ողոր-
մածութիւնը՝ յաւիտեան: 4 Արքան եւ
ամբողջ ժողովուրդը Տիրոջ առջեւ զո-
հեր մատուցեցին: 5 Սողոմոնը քսաներ-
կու հազար զուարակ եւ հարիւր քսան
հազար արածող ոչխար զոհ մատու-
ցեց: Արքան եւ ամբողջ ժողովուրդը
տաճարի նաւակատիքն արեցին: 6 Քա-
հանաներն ըստ իրենց սպասաւորու-
թեան պաշտօնի էին կանգնած, իսկ
ղեւտացիները նուագարաններով փա-
ռաբանում էին Տիրոջը տէրունական եւ
Դաւիթ արքայի յօրինած երգերով,
քանզի Նրա ողորմածութիւնը յաւի-
տեան է: Նրանք կատարում էին Դաւ-
թի յօրինած օրհնաբանութիւնները,
իսկ քահանաները նրանց դիմաց
փողեր էին հնչեցնում: Ամբողջ Իսրա-
յէլը ոտքի վրայ էր:

7 Սողոմոնը սրբագործեց Տիրոջ տան
սրահի մէջտեղը, որովհետեւ այնտեղ
մատուցեց ողջակէզները ու խաղա-
ղութեան զոհերի ճարպերը. Սողոմոնի
պատրաստած պղնձէ զոհասեղանը չէր
կարող տեղաւորել ողջակէզները, ընծ-
աներն ու ճարպերը: 8 Այդ ժամանակ
Սողոմոնը եօթը օր տօն կատարեց:
Բոլոր իսրայէլացիները՝ շատ մեծ
բազմութեամբ, Եմաթի մուտքից մին-
չեւ Եգիպտոսի հեղեղատը նրա հետ
էին: 9 Ութերորդ օրը հանդիսաւոր
ժողով արեցին, քանզի զոհասեղանի
նաւակատիքը եօթը օր տօնեցին, 10 իսկ
եօթներորդ ամսի քսաներեքին նա
ժողովրդին ուրախութեամբ եւ բարի
սրտով արձակեց իրենց վրանները,
որովհետեւ Տէրը բարիք էր գործել
Դաւթի, Սողոմոնի ու Իսրայէլի իր
ժողովրդի համար:

11 Սողոմոնն աւարտեց Տիրոջ տան
եւ արքունի տան կառուցումը, եւ ամէն
ինչ, որ Սողոմոնի սիրտը կամեցել էր
Տիրոջ տան եւ իր տան համար կա-
տարել, յաջողուեց:

ԱՍՏՈՒՈ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՂՈՄՈՆԻՆ
(Գ Թագ. 9. 12-9)

12 Այդ նոյն գիշեր Աստուած երե-
ւալով Սողոմոնին՝ ասաց նրան. «Լսեցի

քո աղօթքը եւ այդ տեղն ինձ համար
ընտրեցի որպէս զոհաբերութիւնների
տուն: 13 Եթէ երկինքը փակեմ, ու
անձրեւ չլինի, եթէ հրամայեմ, որ
մորեխն ուտի ծառերը, եթէ մահ
առաքեմ իմ ժողովրդին, 14 եւ եթէ իմ
ժողովուրդը, որի վրայ իմ անունն է
դրուած, զղջայ, աղօթի եւ իմ երեսը
փնտռի ու յետ դառնայ իր չար
ճանապարհներից, ես էլ երկնքից կը
լսեմ, կը ներեմ նրանց եւ կը բուժեմ
նրանց երկիրը: 15 Այժմ իմ աչքերը բաց
կը լինեն, եւ իմ ականջները՝ սուր, որ
լսեմ այս տեղում կատարուող աղօթքը:
16 Ահա ընտրեցի եւ սրբագործեցի այս
տունը, որպէսզի իմ անունը այստեղ
լինի յաւիտեան, իմ աչքերն ու սիրտը
այստեղ լինեն ընդմիշտ: 17 Եթէ դու իմ
առջեւից ընթանաս քո հայր Դաւթի
նման եւ կատարես այն ամէնը, ինչ
պատգամել եմ քեզ՝ պահես իմ հրա-
մաններն ու օրէնքները, 18 քո թա-
գաւորութեան աթոռը հաստատուն կը
պահեմ, ինչպէս ուխտ էի դրել քո հայր
Դաւթի հետ՝ ասելով. "Քեզնից յետոյ
Իսրայէլի վրայ իշխող մարդ չի պա-
կասելու": 19 Իսկ եթէ դուք յետ դառ-
նաք ու մոռանաք իմ հրամաններն ու
պատուիրանները, որ ձեր առաջ եմ
դրել, գնաք պաշտէք օտար աստուած-
ներ ու երկրպագէք նրանց, ապա ես
ձեզ կը վերացնեմ այն երկրից, որը
տուել եմ ձեզ, 20 եւ այս տունը, որ
սրբագործել եմ իմ անուան համար, կը
վերացնեմ, ծաղրանքի առարկայ կը
դարձնեմ ու խայտառակ կ'անեմ բոլոր
ազգերի մէջ այս բարձրաշէն տունը.
21 եւ ով որ անցնի այս տան կողքով,
կը զարմանայ ու կ'ասի. "Ինչո՞ւ Տէրն
այս բանն արեց այս երկրին ու այս
տանը": 22 Եւ մարդիկ կը պատաս-
խանեն. "Որովհետեւ նրանք լքեցին
իրենց հայրերի Տէր Աստծուն, որը
նրանց հանել էր եգիպտացիների երկ-
րից, օտար աստուածներ ընդունեցին եւ
նրանց երկրպագեցին ու ծառայեցին:
Դրա համար էլ Նա նրանց վրայ բերեց
այդ բոլոր չարիքները"»:

ՍՈՂՈՄՈՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Գ Թագ. 9. 10-28)

8 Պատահեց այնպէս, որ Սողոմոնը
Տիրոջ տունն ու իր տունը կառուցելուց
քսան տարի յետոյ 2 վերակառուցեց
այն քաղաքները, որ Քիրամը տուել էր
իրեն, եւ այնտեղ բնակեցրեց իսրայէ-
լացիներին: 3 Սողոմոնը եկաւ Սոբայի
Եմաթ բնակավայրը, ամրացրեց այն,
4 անապատում կառուցեց Թադմորը եւ
Եմաթում շինեց ամրութիւններով քա-
ղաքներ: 5 Նա Վերին Բեթորոն ու
Ներքին Բեթորոն քաղաքները վերա-
կառուցեց ամուր պարիսպներով, դռներ-
ով ու նիգերով: 6 Նա կառուցեց
Բալաաթն ու իրեն պատկանող բոլոր
ամրացուած քաղաքները, մարտակառ-
քերի ու հեծեալների բոլոր քաղաք-
ները: Ամէն ինչ, որ Սողոմոնը կամեց-
աւ, ըստ իր ցանկութեան շինեց Երու-
սաղէմում, Լիբանանում եւ իր ամբողջ
թագաւորութեան մէջ:

7 Ոչ իսրայէլացի բոլոր մարդկանց,
որոնք մնացել էին քետացիներից, ա-
մորհացիներից, փերեզացիներից, խե-
ւացիներից եւ յեբուսացիներից, 8 Իս-
րայէլի կազմակերպած կոտորածից յե-
տոյ երկրում վերապրած նրանց որդի-
ներին Սողոմոնը հարկատու դարձրեց.
եւ այդպէս է մինչեւ այսօր: 9 Սողո-
մոնն իսրայէլացիներից իր թագաւո-
րութեան համար ծառաներ չվերցրեց,
որովհետեւ նրանք պատերազմողներ,
հզօր իշխաններ, մարտակառքերի ու
հեծեալների հրամանատարներ էին:
10 Սրանք, թուով երկու հարիւր յիսուն
հոգի, Սողոմոնի թագաւորութեան
գլխաւոր իշխանները՝ ժողովրդի ղեկա-
վարներն էին:

11 Սողոմոնը փարաւոնի դստերը
հանելով Դաւթի քաղաքից՝ բերեց այն
տունը, որ կառուցել էր նրա համար:
Նա ասում էր. «Իմ կինը չպէտք է
բնակուի Իսրայէլի արքայ Դաւթի քա-
ղաքում, որովհետեւ սուրբ է այն քա-
ղաքը, ուր Տիրոջ տապանակն է մտել»:

12 Այն ժամանակ Սողոմոնը Տիրոջը
ողջակէզներ մատուցեց տաճարի դիմաց
իր շինած զոհասեղանի վրայ, 13 որի
վրայ, ամենօրեայ կարգի համաձայն,

ըստ Մովսէսի պատուիրանների, ողջակէզ պիտի մատուցուէր շաբաթ օրերին, ամսուայ սկզբին ու տարեկան երեք տօներին՝ Բաղարջակերաց տօնին, Շաբաթների տօնին եւ Տաղաւարահարաց տօնին: 14 Նա, Դաւթի կարգադրութեան համաձայն, քահանաների դասերը որոշեց ըստ իրենց սպասաւորութեան. ղեւտացիները նշանակուեցին իրենց պարտականութիւնների վրայ, որ օրհներգեն ու ծառայեն քահանաների առջեւ ըստ ամէն մի օրուայ կարգի: Դռնապաններ կարգուեցին տարբեր դռների վրայ ըստ իրենց դասերի, քանզի այդպէս էր Աստծու մարդու՝ Դաւթի ցուցումը: 15 Նրանք զանց չարեցին արքայի այն ցուցումները, որ տրուել էին քահանաների, ղեւտացիների, գանձարանի եւ ամէն ինչի վերաբերեալ: 16 Այսպիսով աւարտուեց Սողոմոնի՝ Տիրոջ համար տուն կառուցելու ամբողջ գործը սկզբից մինչեւ վերջ:

17 Այն ժամանակ Սողոմոնը գնաց Գասիոնգաբեր եւ Ելամ, որը Հրէաստանի ծովեզերքին էր: 18 Քիրամը իր ծառաների միջոցով նաւեր ուղարկեց ու մարդիկ, որ ծովի վրայ նաւարկել գիտէին: Նրանք Սողոմոնի ծառաների հետ գնացին Սոփերա եւ այնտեղից բերեցին չորս հարիւր յիսուն տաղանդ† ոսկի ու եկան Սողոմոն արքայի մօտ:

ՍԱԲԱՅԻ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՈՂՈՄՈՆԻՆ
(Գ Թագ. 10. 1-13)

9 Սաբայի թագուհին լսելով Սողոմոնի համբաւը՝ շատ մեծ զօրքով եւ խնկերով, բազում ոսկով ու թանկարժէք քարերով ծանրաբեռնուած ուղտերով եկաւ Երուսաղէմ, որ Սողոմոնին փորձի հանելուկներով: Նա եկաւ Սողոմոնի մօտ եւ նրա հետ խօսեց այն ամենի մասին, որ մտքում ունէր: 2 Սողոմոնը պատասխանեց նրա բոլոր հարցերին. եւ չգտնուեց ոչ մի հարց, որին Սողոմոնը պատասխանած չլինէր: 3 Սաբայի թագուհին տեսաւ Սողոմոնի իմաստնութիւնը, նրա կառուցած տունը, 4 սեղանների վրայ դրուած ուտելիքները, նրա իշխանների զբաղեցրած աթոռներն ու աստիճանակարգումը, նրա պաշտօնեաների պատմուճանները, նրա մատռուակներին ու նրանց զգեստները եւ այն ողջակէզները, որ Տիրոջ տանը նա մատուցում էր, եւ ապշելով ասաց արքային. 5 «Ճշմարիտ էր այն, ինչ լսել էի իմ երկրում քո խօսքերի ու քո իմաստնութեան մասին: 6 Եւ չէի հաւատում ասուած խօսքերին, մինչեւ որ եկայ ու աչքերովս տեսայ, որ ինձ չեն պատմել քո իմաստնութեան նոյնիսկ կէսի մասին: Դու աւելի իմաստուն ես, քան ես լսել եմ: 7 Երանելի են քո մարդիկ, երանելի են քո կանայք եւ պալատական այդ ծառաները, որ միշտ քո առաջ կանգնած են ու լսում են քո իմաստնութիւնը: 8 Օրհնեալ լինի Տէր Աստուածը, որ քեզ հաւանելով՝ քեզ է յանձնել քո ժողովրդի թագաւորութեան աթոռը, քանզի քո Տէր Աստուածը Իսրայէլին սիրելու պատճառով ու նրան յաւիտեան հաստատելու համար քեզ է նրանց վրայ թագաւոր դրել, որ իրաւունք ու արդարութիւն գործադրես»: 9 Սաբայի թագուհին արքային հարիւր քսան տաղանդ ոսկի† տուեց, չափազանց շատ խունկ եւ թանկարժէք քարեր: Սաբայի տիկնոջ՝ Սողոմոն արքային տուած խնկից լաւ խունկ չի եղել:

10 Սողոմոնի ծառաներն ու Քիրամի ծառաները Սոփերից Սողոմոնին բերեցին ոսկի, նոճու փայտ եւ թանկարժէք քարեր: 11 Արքան նոճու փայտից Տիրոջ տան ու արքայի տան համար աստիճաններ սարքեց եւ երգիչների համար քնարներ ու տաւիղներ, որոնց նմանը դրանից առաջ Յուդայի երկրում չէր եղել:

ՍՈՂՈՄՈՆ ԱՐՔԱՅԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ
(Գ Թագ. 10. 14-25)

12 Սողոմոն արքան Սաբայի տիկնոջը տուեց ամէն ինչ, որ նա ցանկացաւ ու խնդրեց, շատ աւելի, քան այն, ինչ թագուհին տուել էր Սողոմոն արքային: Եւ թագուհին վերադարձաւ իր երկիրը:

†Աւելի քան տասներեք տոննա:

†Շուրջ երեք ու կէս տոննա:

13 Մէկ տարում Սողոմոնի համար բերուած ոսկու կշիռը վեց հարիւր վաթսունվեց տաղանդ† էր, 14 չհաշուած կառավարիչների, վաճառականների բերածները: Սողոմոն արքային ոսկի ու արծաթ էին բերում նաեւ Արաբիայի բոլոր թագաւորները, երկրի իշխանները:

15 Սողոմոն արքան ոսկուց երեք հարիւր կռածոյ վահան պատրաստեց՝ ամէն մի վահանի համար օգտագործելով վեց հարիւր դահեկան‡ մաքուր ոսկի: 16 Ոսկուց պատրաստեց նաեւ երեք հարիւր կռածոյ նիզակ՝ ամէն մի նիզակի համար օգտագործելով երեք հարիւր դահեկան§: Արքան դրանք դրեց Լիբանանի անտառի փայտից պատրաստուած տան մէջ:

17 Արքան փղոսկրից մի մեծ գահ պատրաստեց եւ այն պատեց մաքուր ոսկով: 18 Գահը ունէր ոսկով ծածկուած վեց աստիճան: Գահի նստատեղը այս եւ այն կողմից ունէր յենակներ, իսկ յենակների ծայրին կային երկու առիւծներ:

19 Վեց աստիճանների այս եւ այն կողմերում կային տասներկու առիւծներ: Այսպիսի գահ երբեք չէր եղել ոչ մի թագաւորութեան մէջ:

20 Սողոմոն արքայի ամբողջ սպասքը ոսկուց էր, եւ Լիբանանի անտառի փայտից պատրաստուած տան ամբողջ սպասքը ոսկու շերտով էր պատուած: Սողոմոնի օրօք արծաթը ոչինչ էր համարւում, 21 քանզի Սողոմոն արքայի նաւը Քիրամի ծառաների հետ գնում էր Թարսիս, եւ երեք տարին մէկ Թարսիսից արքայի նաւը գալիս էր լի ոսկով, արծաթով, փղոսկրով, կապիկներով ու սիրամարգերով:

22 Սողոմոնը բոլոր թագաւորներին գերազանցեց ունեցուածքով եւ իմաստնութեամբ: 23 Աշխարհի բոլոր թագաւորները ձգտում էին տեսնել Սողոմոնի երեսը, լսել նրա իմաստնութիւնը, որն Աստուած դրել էր նրա սրտում: 24 Նրանցից ամէն մէկը ամէն տարի բերում էր ընծաներ՝ արծաթէ անօթներ, ոսկէ անօթներ, պատմուճաններ, զմուռս, խնկեր, ձիեր ու ջորիներ:

25 Սողոմոնն ունէր քառասուն հազար մատակ ձիեր մարտակառքերի համար եւ տասներկու հազար երիվարներ: Նա դրանք տեղաւորեց մարտակառքերի համար սահմանուած քաղաքներում. իսկ Երուսաղէմում Սողոմոնի մօտ մնացին որոշ քանակի մատակ ձիեր ու երիվարներ: 26 Նա իշխում էր բոլոր թագաւորների վրայ Եփրատ գետից մինչեւ այլազգիների երկիրն ու մինչեւ Եգիպտոսի սահմանները: 27 Արքան Երուսաղէմում քարի չափ շատ ոսկի ու արծաթ եւ դաշտում գտնուող մոլաթզենու չափ շատ մայրի փայտ կուտակեց: 28 Սողոմոնի ձիերը բերւում էին Եգիպտոսից եւ շատ ուրիշ երկրներից:

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՀԸ
(Ա Թագ. 11. 41-43)

29 Սողոմոնի պատմութեան մնացած մասը, սկզբից մինչեւ վերջը, գրուած են Նաթան մարգարէի գրուածքներում, սիլոնացի Աքիայի գրուածքներում, տեսանող Յովէլի՝ Նաբաթի որդի Յերոբովամին վերաբերող տեսիլքում: 30 Սողոմոնն ամբողջ Իսրայէլի վրայ իշխեց քառասուն տարի: 31 Սողոմոնը մեռաւ եւ նրան թաղեցին իր հօր՝ Դաւթի քաղաքում: Նրա փոխարէն թագաւորեց նրա որդին՝ Ռոբովամը:

ԺՈՂՈՎ ՍԻՒՔԷՄՈՒՄ
(Ա Թագ. 12. 1-15)

10 Ռոբովամը եկաւ Սիւքէմ, որովհետեւ բոլոր իսրայէլացիները եկել էին Սիւքէմ նրան թագաւոր դարձնելու: 2 Երբ Նաբատի որդի Յերոբովամը, որը Սողոմոն արքայի երեսից Եգիպտոս էր փախել ու բնակուել Եգիպտոսում, լսեց այս բանը, վերադարձաւ Եգիպտոսից: Մարդ ուղարկեցին ու կանչեցին նրան: 3 Յերոբովամը եւ Իսրայէլի բոլոր ժողովականները եկան Ռոբովամ արքայի մօտ եւ ասացին. 4 «Քո հայրը ծանրացրել էր մեր լուծը: Արդ, թեթե-

†Շուրջ քսան տոննա:

‡Վեց կիլոգրամ:

§Երեք կիլոգրամ:

ւացրո՛ւ հօրդ նշանակած տաժանակիր աշխատանքն ու մեր վրայ դրուած ծանր լուծը, որ քեզ ծառայենք»: 5 *Նա նրանց ասաց. «Գնացէ՛ք եւ երեք օրից եկէ՛ք ինձ մօտ»: Ժողովուրդը գնաց:*

6 *Ռոբովամ արքան հաւաքեց ծերերին, որոնք իր հօր՝ Սողոմոնի կենդանութեան օրօք կանգնում էին նրա առաջ, եւ ասաց. «Ի՞նչ էք կարծում, ի՞նչ խորհուրդ էք տալիս, որ պատասխանեմ այս ժողովրդին»:* 7 *Նրանք ասացին նրան. «Եթէ այսօր այդ ժողովրդի նկատմամբ բարեացակամ լինես, հաճելի լինես եւ լաւ խօսքեր ասես նրանց, քեզ միշտ ծառայ կը լինեն»:* 8 *Նա, սակայն, անտեսեց այն խորհուրդը, որ ծերերը տուել էին իրեն, եւ հարց տուեց իր հետ մեծացած տարեկից ընկերներին, որոնք իր առջեւ էին կանգնում:* 9 *Նա ասաց նրանց. «Ի՞նչ էք կարծում, ի՞նչ պատասխան տամ այս ժողովրդին, որ ինձ հետ խօսեց՝ ասելով. "Թեթեւացրո՛ւ այն լուծը, որ քո հայրը դրել էր մեր վրայ"»:* 10 *Նրա տարեկից ընկերները նրան ասացին. «Այսպէս կը խօսես այն ժողովրդի հետ, որ քեզ ասել է, թէ՝ "Քո հայրը ծանրացրեց մեր լուծը, իսկ դու այն թեթեւացրո՛ւ մեր վրայից"»:* 11 *Նրանց այսպէս կ'ասես. "Իմ ճկոյթն աւելի հաստ է, քան հօրս մէջքը: Արդ, եթէ իմ հայրը ձեզ խրատել է ծանր լծով, ապա ես կ'աւելացնեմ ձեր լուծը: Եթէ իմ հայրը խրատել է ձեզ գաւազաններով, ապա ես ձեզ կը խրատեմ կարիճներով"»:*

12 *Յերոբովամը եւ ամբողջ ժողովուրդը երրորդ օրը եկան Ռոբովամի մօտ, ինչպէս որ ասել էր արքան. «Ինձ մօտ կը վերադառնաք երրորդ օրը»:* 13 *Արքան խստութեամբ պատասխանեց՝ անտեսելով ծերերի խորհուրդը,* 14 *եւ նրանց հետ խօսեց ըստ երիտասարդների խորհրդի՝ ասելով. «Իմ հայրը ձեր լուծը ծանրացրել էր, ես աւելացնելու եմ այն: Իմ հայրը գաւազաններով էր ձեզ խրատել, ես ձեզ խրատելու եմ կարիճներով»:* 15 *Արքան չլսեց ժողովրդին, որովհետեւ կործանումն Աստծուց էր սահմանուած, որպէսզի Տէրը հաստատի սիլոնացի Աքիայի բերանով իր ասած խօսքերը Նաբատի որդի Յերոբովամի եւ ամբողջ Իսրայէլի մասին. եւ արքան չլսեց նրանց:*

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԺԱՆՈՒՄ. ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՌՈԲՈՎԱՄ ԱՐՔԱՆ
(Ա Թագ. 12. 16-25)

16 *Ժողովուրդը պատասխանեց արքային՝ ասելով. «Ի՞նչ գործ ունենք Դաւթի հետ, կամ կիսելու ի՞նչ ժառանգութիւն՝ Յեսսէի որդու հետ: Գնա՛ք վրանները, ո՛վ Իսրայէլ, եւ քո տա՛ն մասին հոգա, ո՛վ Դաւիթ»:* 17 *Եւ բոլոր իսրայէլացիները գնացին իրենց բնակավայրերը, իսկ Յուդայի երկրի քաղաքներում ապրող միւս իսրայէլացիները Ռոբովամին դարձրին իրենց թագաւոր:* 18 *Ռոբովամ արքան հարկերի վերակացու Ադոնիրամին ուղարկեց իսրայէլացիների մօտ, բայց սրանք նրան քարկոծեցին, ու նա մեռաւ: Ռոբովամ արքան հազիւ կարողացաւ իր մարտակառքը բարձրանալ ու փախչել Երուսաղէմ:* 19 *Եւ իսրայէլացիները երես դարձրին Դաւթի տնից, ու այդպէս է մինչեւ այսօր:*

ՍԱՄԷԱՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

11 *Ռոբովամը եկաւ Երուսաղէմ, Յուդայի ու Բենիամինի տներից հաւաքեց պատերազմի ընդունակ հարիւր ութսուն հազար երիտասարդներ եւ պատերազմեց Իսրայէլի դէմ, որ թագաւորութիւնն իրեն վերադարձնի:* 2 *Տէրը խօսեց Աստծու մարդու՝ Սամէասի հետ՝ ասելով.* 3 *«Խօսի՛ր Սողոմոնի որդի Ռոբովամի եւ Յուդայի երկրի ու Բենիամինի երկրի բոլոր մարդկանց հետ՝ ասելով. "Այսպէս է ասում Տէրը.* 4 *մի՛ ելնէք ու մի՛ պատերազմէք ձեր եղբայրների դէմ, ամէն ոք թող վերադառնայ իր տունը, որովհետեւ այս բանը ինձնից եղաւ"»: Նրանք լսեցին Տիրոջ խօսքը եւ ետ դարձան Յերոբովամի վրայ արշաւելուց:*

ՌՈԲՈՎԱՄԸ ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ՔԱՂԱՔՆԵՐԸ

5 *Ռոբովամը բնակուեց Երուսաղէմում եւ պարսպապատ քաղաքներ կառուցեց Հրէաստանում:* 6 *Նա շինեց Բեթղեհէմը, Ետանին, Բեքովեան,* 7 *Բեթսուրան, Սոկքովը, Օդղամը,* 8 *Գէթը, Մարիսան, Զիփը,* 9 *Ադորայիմը, Լաքիսը, Ազեկան,* 10 *Սարաան, Աեղոնը եւ Քեբրոնը, որոնք Յուդայի երկրում ու Բենիամինի երկրում պարսպապատ քաղաքներ էին:* 11 *Նա պարիսպներով ամրացրեց դրանք, հրամանատարներ կարգեց դրանց վրայ, բոլոր քաղաքներում ուտելիքի՝ ձէթի ու գինու ամբարներ շինեց,* 12 *վահաններ ու նիզակներ պատրաստեց եւ յաճախակի ամրացրեց այդ քաղաքները:*

ՔԱՀԱՆԱՆԵՐԸ ԵՒ ՂԵՒՏԱՑԻՆԵՐԸ ՅԱՐՈՒՄ ԵՆ ՌՈԲՈՎԱՄԻՆ

13 *Ռոբովամին էին պատկանում Յուդայի ու Բենիամինի երկրները: Ամբողջ Իսրայէլի մէջ գտնուող քահանաներն ու ղեւտացիները երկրի բոլոր ծայրերից նրա մօտ հաւաքուեցին, որովհետեւ ղեւտացիները իրենց սեփականութիւնը հանդիսացող բնակավայրերը լքեցին ու գնացին Յուդայի երկիրը՝ Երուսաղէմ.* 14 *Յերոբովամն ու նրա որդիները զրկել էին նրանց Տիրոջն սպասաւորելու պարտականութիւնից:* 15 *Նա իր պատրաստած բարձրադիր մեհեանների, կուռքերի, չաստուածների ու երինջների վրայ քրմեր նշանակեց:* 16 *Նա Իսրայէլի ցեղերից առանձնացրեց բոլոր նրանց, ովքեր սրտանց փնտռում էին Իսրայէլի Տէր Աստծուն: Սրանք եկան Երուսաղէմ, որ իրենց հայրերի Տէր Աստծուն զոհեր մատուցեն,* 17 *եւ զօրացրին Յուդայի երկրի թագաւորութիւնը: Երեք տարով հզօրացաւ Սողոմոնի որդի Ռոբովամը, որովհետեւ նա երեք տարի ընթացաւ Դաւթի ու Սողոմոնի ճանապարհներով:*

ՌՈԲՈՎԱՄԻ ԸՆՏԱՆԻՔԸ

18 *Ռոբովամը կին առաւ Դաւթի որդի Յերիմութի դուստր Մոլաթին ու Յեսսէի որդի Եղիաբի դուստր Աբիգային:* 19 *Նրանք Ռոբովամի համար ծնեցին երեք որդիներ՝ Յերուսին, Սամարիային ու Ալովին:* 20 *Դրանից յետոյ նա ամուսնացաւ Աբեսաղոմի դուստր Մաաքայի հետ, եւ սա նրա համար ծնեց Աբիասին, Եթթիին, Իզային, Սալեմոթին:* 21 *Ռոբովամը իր բոլոր կանանց ու հարճերի մէջ ամենից շատ սիրեց Աբեսաղոմի դուստր Մաաքային: Նա ունէր տասնութ կին ու վաթսուն հարճ, որոնք նրա համար ծնեցին քսանութ տղաներ ու վաթսուն աղջիկներ:* 22 *Ռոբովամը Մաաքայից ծնուած Աբիային իշխան կարգեց նրա եղբայրների վրայ, քանզի նպատակ ունէր նրան թագաւոր դարձնել:* 23 *Յուդայի ու Բենիամինի երկրների բոլոր սահմաններում Ռոբովամն աւելի հզօր եղաւ, քան իր բոլոր որդիները, եւ ամրացուած քաղաքներում նրանց տուեց ուտելիքի խիստ առատ պաշար եւ նրանց համար բազում կանայք փնտռեց:*

ԵԳԻՊՏՈՍԻ ՍԱՒՍԱԿԻՄ ԱՐՔԱՅԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ
(Գ Թագ. 14. 25-28)

12 *Երբ Ռոբովամի թագաւորութիւնը հաստատուն դարձաւ ու հզօրացաւ, նա, նրա հետ նաեւ բոլոր իսրայէլացիները, անտեսեց Տիրոջ պատուիրանները:* 2 *Եւ քանի որ նրանք մեղանչել էին Տիրոջ դէմ, Ռոբովամի թագաւորութեան հինգերորդ տարում Եգիպտոսի արքայ Սաւսակիմը յարձակուեց Երուսաղէմի վրայ* 3 *հազար երկու հարիւր մարտակառքերով ու վաթսուն հազար հեծեալներով: Անթիւ էր Եգիպտոսից նրա հետ եկած բազմութիւնը՝ լիբէացիներ, տրոգլոդացիներ, եթիոպացիներ,* 4 *որոնք տիրեցին Յուդայի երկրի ամրակուռ քաղաքներին: Եւ Սաւսակիմը եկաւ Երուսաղէմ:* 5 *Սամէաս մարգարէն եկաւ Ռոբովամի եւ Յուդայի երկրների իշխան-*

ների մօտ, որոնք Սաւսակիմի ահից հաւաքուել էին Երուսաղէմում, եւ ասաց նրանց. «Այսպէս է ասում Տէրը. "Դուք ինձ լքեցիք, ուրեմն ես էլ ձեզ մատնելու եմ Սաւսակիմի ձեռքը"»: 6 Իսրայէլի իշխաններն ու արքան ամաչեցին եւ ասացին. «Արդար է Տէրը»: 7 Երբ Տէրը տեսաւ, որ զղջացին, ապա Տէրն ասաց Սամէասին. «Նրանք զղջացին, ուրեմն ես նրանց չեմ կործանի, կարճ ժամանակով նրանց հանգիստ կը թողնեմ եւ իմ զայրոյթը Երուսաղէմի վրայ չեմ թափի: 8 Այսպիսով նրանք իմ ծառայութեան տակ կը մտնեն եւ կ'իմանան, թէ ո՞րն է ինձ ծառայելու եւ երկրային թագաւորութիւններին ծառայելու տարբերութիւնը»: 9 Եգիպտոսի արքայ Սաւսակիմը եկաւ ու գրաւեց Տիրոջ տան գանձերը եւ տարաւ արքայի տան բոլոր գանձերը: Նա գրաւեց նաեւ Սողոմոնի պատրաստած ոսկէ վահանները: 10 Ռոբովամը դրանց փոխարէն պղնձէ վահաններ պատրաստեց եւ դրանք յանձնեց արքունի դռների պահապանների պետերին†: 11 Երբ արքան մտնում էր Տիրոջ տունը, մտնում էին նաեւ պահապաններն ու սուրհանդակները, եւ պահապանները դրանք վերցնում տանում էին սուրհանդակների ներկայութեամբ: 12 Երբ Ռոբովամը զղջաց, Տիրոջ բարկութիւնը նրանից վերացաւ, եւ նա իսպառ չկործանուեց, քանզի Յուդայի երկրում բարի գործեր էլ կային կատարուած:

ՌՈԲՈՎԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

13 Ռոբովամը հզօրացաւ Երուսաղէմում ու թագաւորեց: Ռոբովամը քառասունմէկ տարեկան էր, երբ գահ բարձրացաւ: Նա տասնեօթը տարի թագաւորեց Երուսաղէմում, այն քաղաքում, որ Տէրն ընտրել էր Իսրայէլի բոլոր ցեղերի միջից, որպէսզի իր անունը դնի դրա վրայ:

Ռոբովամի ամոնացի մօր անունը Նոոմա էր: 14 Նա չարիք գործեց, որովհետեւ նրա սիրտը հակուած չէր Տիրոջ կողմը: 15 Ռոբովամի առաջին ու վերջին խօսքերը եւ գործերը չէ՞ որ գրուած են Սամէաս մարգարէի ու Ադդով տեսանողի գրքերում: Յարատեւ պատերազմ էր մղւում Ռոբովամի ու Յերոբովամի միջեւ: 16 Ռոբովամը մեռաւ ու թաղուեց իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում:

Նրա փոխարէն թագաւորեց իր որդին՝ Աբիասը:

ԱԲԻԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
(Գ Թագ. 15.1-8)

13 Յերոբովամի թագաւորութեան տասնութերորդ տարում Յուդայի երկրի վրայ թագաւորեց Աբիասը: 2 Նա Երուսաղէմում թագաւորեց երեք տարի: Նրա մայրը Աբեսաղոմի դուստրն էր, անունը՝ Մաաքա: Պատերազմ էր տեղի ունենում Աբիասի ու Յերոբովամի միջեւ: 3 Աբիասը պատերազմի պատրաստուեց հզօր մարտիկներով՝ չորս հարիւր հազար զօրեղ մարդկանցով: Յերոբովամը նրա դէմ պատերազմի ելաւ ութ հարիւր հազար հզօր, քաջազուն ռազմիկներով:

4 Աբիասը վեր բարձրացաւ Սոմորոնի լեռից, որը Եփրեմի լեռներից մէկն էր, 5 եւ ասաց. «Լսեցէ՛ք, Յերոբովա՛մ եւ բոլո՛ր Իսրայէլացիներ, մի՞թէ ձեզ յայտնի չէ, թէ Իսրայէլի Տէր Աստուածը Իսրայէլի թագաւորութիւնը անբեկանելի ուխտով† յաւիտեան տուել է Դաւթին ու նրա որդիներին: 6 Նաբատի որդի Յերոբովամը՝ Դաւթի որդի Սողոմոնի ծառան, սակայն, վեր կացաւ եւ ապստամբեց իր տիրոջ դէմ: 7 Նրա մօտ հաւաքուեցին չար եւ անօրէն մարդիկ եւ ընդդիմացան Սողոմոնի որդի Ռոբովամին: Ռոբովամը դեռ երիտասարդ էր եւ երկչոտ սիրտ ունէր, ուստի նրա դէմ չելաւ: 8 Արդ, դուք ասում էք, որ դէմ կը կանգնէք Տիրոջ թագաւորութեանը, որը Դաւթի որդիների ձեռքին է, որ չափազանց շատ զօրք ունէք, եւ ձեզ հետ են ոսկէ երինջները, որոնց Յերոբովամը ձեզ համար աստուածներ դարձրեց: 9 Մի՞թէ դուք չվռնդեցիք Տիրոջ քահանաներին՝ Ահարոնի որդիներին ու ղեւտացիներին, եւ ձեզ համար քրմեր ընտրեցիք մի այլ երկրի ժողովրդի միջից: Բոլոր նրանք, որ քահանայ դառնալու համար գալիս էին զուարակներով եւ եօթը խոյով, դառնում էին չաստուածների քուրմ: 10 Մենք մեր Տէր Աստծուն չլքեցինք. նրա քահանաները՝ Ահարոնի որդիներն ու ղեւտացիները, ծառայում են Տիրոջը: 11 Նրանք ամէն օր խունկ են ծխում Տիրոջ համար, առաւօտեան ու երեկոյեան ողջակէզներ են մատուցում, անուշաբոյր խնկեր են ծխում, սուրբ սեղանի վրայ առաջաւորութեան հաց են դնում, վառում են ոսկէ աշտանակներն ու ճրագները, որ երեկոները լուսաւորեն: Մենք պահում ենք մեր հայրերի Տէր Աստծու պատուիրանները, իսկ դուք լքել էք Նրան: 12 Ահաւասիկ մեզ հետ են եւ մեզ իշխան են Տէրն ու նրա քահանաները, եւ ազդարարող փողերը պատրաստ են հնչելու, որ մեզ մարտի հրաւէր տան: Եւ դուք, ո՜վ իսրայէլացիներ, մի՞թէ կը մարտնչէք մեր հայրերի Աստծու դէմ. դա ձեզ յաջողութիւն չի բերի»:

13 Յերոբովամը դարանակալներ էր դրել, որ Աբիասի զօրքի յետեւն անցնեն: Ինքը կանգնեց Յուդայի երկրի մարդկանց առաջ, իսկ դարանակալները անցան սրանց թիկունքը: 14 Յուդայի երկրի մարդիկ յետ նայեցին ու տեսան, որ թշնամին կանգնած է իրենց ե՛ւ առջեւը, ե՛ւ յետեւը: Նրանք աղաղակեցին Տիրոջը, քահանաները փողեր հնչեցրին, եւ Յուդայի երկրի մարդիկ աղաղակ բարձրացրին: 15 Երբ Յուդայի երկրի մարդիկ գոչեցին, Տէրը Աբիասի ու Յուդայի երկրի մարդկանց առջեւ կոտորեց Յերոբովամին ու Իսրայէլացիներին: 16 Իսրայէլացիները փախան Յուդայի երկրի մարդկանց առջեւից, եւ Տէրը սրանց մատնեց նրանց ձեռքը: 17 Աբիասն ու նրա զօրքը նրանց ծանր հարուածներ հասցրին: Իսրայէլացիներից հինգ հազար ուժեղ մարդ կոտորուեց: 18 Այդ օրը Իսրայէլացիները ընկճուեցին, իսկ Յուդայի երկրի մարդիկ զօրացան, քանզի իրենց հայրերի Տէր Աստծուն էին ապաւինել: 19 Աբիասը Յերոբովամին հալածեց ու նրանից գրաւեց քաղաքներ՝ Բեթէլն ու նրա գիւղերը, Անան ու նրա գիւղերը, Եփրոնն ու նրա գիւղերը, Բեան ու նրա գիւղերը: 20 Աբիասի օրօք Յերոբովամն այլեւս չկարողացաւ զօրութեամբ ոտքի կանգնել: Տէրը հարուածեց նրան, եւ նա մեռաւ:

21 Աբիասը հզօրացաւ. նա տասնչորս կին առաւ: Նա ունեցաւ քսաներկու տղայ եւ տասնվեց աղջիկ: 22 Աբիասի մնացեալ արարքները, գործերն ու խօսքերը գրուած են Ադդով մարգարէի գրքում:

ԱՍԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

14 Աբիասը գնաց իր նախնիների գերեզը. նրան թաղեցին Դաւթի քաղաքում:

Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Ասան: Նրա օրօք Յուդայի երկիրը տասը տարի հանգիստ մնաց: 2 Նա բարի եւ արդար գործեր կատարեց իր Տէր Աստծու առջեւ: 3 Նա վերացրեց օտար աստուածների զոհասեղանները, բարձադիր մեհեանները, խորտակեց արձանները եւ այրեց կուռքերը: 4 Նա Յուդայի երկրի բնակիչներին հրամայեց պաշտել իրենց հայրերի Տէր Աստծուն եւ կատարել օրէնքներն ու պատուիրանները: 5 Նա Յուդայի երկրի բոլոր քաղաքներից վերացրեց զոհասեղաններն ու կուռքերը: Եւ Յուդայի երկրում պարսպապատ քաղաքները խաղաղուեցին, 6 քանզի երկիրը խաղաղուել էր, եւ այն տարիներին պատերազմ չկար նրա դէմ, որովհետեւ Տէրը նրան հանգստութիւն էր պարգեւել: 7 Նա ասաց Յուդայի երկրի մարդկանց. «Եկէ՛ք վերակառուցենք այս քաղաքները, պարիսպներ, աշտարակներ, դռներ ու նիգեր դնենք, որ տիրենք երկրին, քանզի, ինչպէս մենք մեր Տէր Աստծուն փնտռեցինք պաշտեցինք, այնպէս էլ նա մեզ փնտռեց եւ ամէն տեղ հանգստութիւն ու յաջողութիւն տուեց մեզ: 8 Ասան Յուդայի երկրում վահաններ ու նիզակներ կրող երեք հարիւր հազարանոց զօրք ունեցաւ, իսկ Բենիամինի երկրում՝ երկու հարիւր վաթսուն հազար ասպա-

†Իմաստի յստակութեան համար այս համարում հետեւել ենք եբրայերէն բնագրին:

†Բառացի աղի ուխտով:

բաւորներ ու աղեղնաւորներ: Սրանք բոլորը հզօր պատերազմիկներ էին:

ԶԱՐԵՀԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

9 Նրանց դէմ ելաւ Եթովպացի Զարեհը մէկ միլիոն զինուորներով ու երեք հարիւր մարտակառքերով: Նա եկաւ-հասաւ մինչեւ Մարիսա: 10 Ասան դուրս եկաւ նրա դէմ եւ պատերազմի ճակատ կազմեց Մարիսայի հիւսիսում գտնուող ձորում: 11 Ասան դիմեց իր Տէր Աստծուն՝ ասելով. «Տէ՛ր, քեզ համար դժուար չէ օգնութեան հասնել ինչպէս սակաւազօր, այնպէս եւ բազմաքանակ զօրքերին: Զօրացրո՛ւ մեզ, Տէ՛ր Աստուած մեր, քանզի քեզ ենք ապաւինում եւ քո անունով ելանք այս բազմութեան դէմ: Ո՛վ Տէր Աստուած մեր, թող մարդը քո դէմ յաղթանակ չտանի»: 12 Եւ Տէրը հարուածեց Եթովպացիներին Ցուդայի երկրի մարդկանց աչքի առջեւ, ու Եթովպացիները փախան: 13 Ասան եւ իր զօրքը հալածեցին նրանց մինչեւ Գեդոր, եւ Եթովպացիներից այնքան մարդ ընկաւ, որ նրանցից ոչ մէկը կենդանի չմնաց, քանզի կոտորուեցին Տիրոջ ու նրա զօրութեան առջեւ: 14 Ցուդայի երկրի մարդիկ շատ աւար վերցրին եւ կործանեցին Գեդորի շուրջը գտնուող նրանց գիւղերը, քանզի Տիրոջից հասած արհաւիրքն էր պատել նրանց: Նրանք աւար առան նրանց բոլոր քաղաքները, քանի որ հարուստ աւար կար այդտեղ: 15 Նրանք նաեւ քանդեցին նրանց հօտերի պահակների վրանները, կոտորեցին ամազոնուհիներին, քշեցին տարած բազում ոչխարներ եւ ուղտեր ու վերադարձան Երուսաղէմ:

ԱՍԱՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

15 Տիրոջ հոգին իջաւ Ադադի որդի Ազարիասի վրայ: 2 Նա, կանգնելով Ասայի եւ ամբողջ Ցուդայի ու Բենիամինի երկրների ամբողջ ժողովրդի առջեւ, ասաց. «Լսեցէ՛ք ինձ, ո՛վ Ասա եւ Ցուդայի ու Բենիամինի երկրների բոլո՛ր մարդիկ: Տէրը ձեզ հետ է, քանի որ դուք նրա հետ էք: Արդ, եթէ դուք նրան փնտռէք, նա կը յայտնուի ձեզ, եւ եթէ լքէք նրան, նա էլ ձեզ կը լքի: 3 Երկար ժամանակ Իսրայէլը եղել է առանց ճշմարիտ Աստծու, առանց քահանայի, որ ուսուցանէր, 4 եւ առանց օրէնքի, որ նրանց դարձնէր դէպի Իսրայէլի Տէր Աստուածը, բայց Տէրը նրանց մէջ էր: 5 Այդ ժամանակներում չկար ապահովութիւն դուրս եկողի ու ներս մտնողի համար, քանզի Տիրոջ սարսափն էր ընկել գաւառների բոլոր բնակիչների վրայ: 6 Ազգը ազգի դէմ էր պատերազմում, եւ քաղաքը՝ քաղաքի, քանզի Աստուած ամէն տեսակ նեղութիւններով զարհուրեցրել էր նրանց: 7 Արդ, դուք զօրացէ՛ք, ու ձեր ձեռքերը թող չթուլանան, քանզի ձեր գործերը վարձ են ունենալու»:

8 Երբ Ասան լսեց այս խօսքերը եւ Ազարիաս մարգարէի մարգարէութիւնը, զօրացաւ եւ Ցուդայի ու Բենիամինի երկրներից եւ այն քաղաքներից, որ գրաւել էր Եփրեմի լեռան վրայ, դուրս գցեց ամէն տեսակ կուռքերը: Նա կատարեց նաեւ Տիրոջ տաճարի առջեւում գտնուող Տիրոջ զոհասեղանի նաւակատիքը: 9 Նա ժողովեց հաւաքեց Ցուդայի ու Բենիամինի երկրների մարդկանց, ինչպէս եւ Եփրեմի, Մանասէի, Շմաւոնի ցեղերից նրանց մօտ գտնուող պանդուխտներին, քանզի շատերը, տեսնելով որ նրանց Տէր Աստուածը նրա հետ է, Իսրայէլից անցել-գնացել էին նրա կողմը: 10 Ասայի թագաւորութեան տասնհինգերորդ տարուայ երրորդ ամսին նրանք հաւաքուեցին Երուսաղէմում: 11 Այդ օրը նա բերուած աւարից Տիրոջ համար զոհաբերեց եօթը հարիւր զուարակ ու եօթը հազար ոչխար: 12 Նա ուխտ դրեց, որ իրենց Տէր Աստծուն պէտք է պաշտեն ամբողջ սրտով եւ ամբողջ հոգով: 13 Ով չէր պաշտի Իսրայէլի Տէր Աստծուն, պէտք է մեռնէր, լինի երիտասարդ թէ ծեր, տղամարդ թէ կին: 14 Նրանք բարձր ձայնով ու եղջերափող հնչեցնելով երդուեցին Տիրոջը: 15 Ամբողջ Ցուդայի երկիրը ուրախացաւ երդման համար, քանզի իրենց ամբողջ սրտով

երդուեցին եւ յօժարակամ պաշտեցին Նրան: Տէրը նրանց մէջ էր. Նա համատարած հանգստութիւն պարգեւեց նրանց: 16 Ասան իր մօրը[†]՝ Մաաքային հեռացրեց, քանզի սա Աստարտի քրմուհի էր, ու խորտակելով կուռքերը՝ այրեց դրանք Կեդրոնի հեղեղատում: 17 Բարձրադիր մեհեանները, սակայն, չվերացուցին. դրանք տակաւին կային Ցուդայի երկրում ու Իսրայէլում, թէեւ Ասայի սիրտն իր կեանքի բոլոր օրերին լի էր Աստուծով: 18 Նա ներս տարաւ իր նախահայր Դաւթի սրբութիւնները եւ Տէր Աստծու սրբութիւնները՝ արծաթ, ոսկի ու սպասք: 19 Պատերազմ չեղաւ մինչեւ Ասայի թագաւորութեան երեսունհինգերորդ տարին:

ԱՍԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԲԱԱՍ ԱՐՔԱՅԻ ԴԷՄ
(Գ Թագ. 15. 17-22)

16 Ասայի թագաւորութեան երեսունութերորդ տարում Իսրայէլի Բաաս արքան յարձակուեց Ցուդայի երկրի վրայ: Նա ամրացրեց Հռաման, որ փակի Ցուդայի երկրի արքայ Ասայի ելումուտը: 2 Ասան ոսկի ու արծաթ վերցնելով Տիրոջ տան եւ թագաւորական տան գանձատներից՝ ուղարկեց ասորիների արքայ Ադերի որդուն, որ բնակւում էր Դամասկոսում, ասելով. 3 «Դաշի՛նք կնքիր իմ ու քո միջեւ, ինչպէս որ կար իմ հօր ու քո հօր միջեւ: Ահաւասիկ ես քեզ արծաթ ու ոսկի եմ ուղարկում, որ յետ դարձնես Իսրայէլի Բաաս արքային, որպէսզի նա ինձնից հեռանայ»: 4 Ասորիների արքայ Ադերի որդին անսաց եւ իր զօրքի իշխաններին ուղարկեց Իսրայէլի քաղաքների դէմ, որոնք հարուած հասցրին Աւոնին, Դանին, Աբելմայիմին եւ Նեփթալիմ գաւառի շրջակայ ամբողջ երկրին: 5 Երբ Բաասը լսեց այդ մասին, հրաժարուեց Հռաման ամրացնելուց, եւ նրա այդ գործը կանգ առաւ: 6 Ասա արքան հաւաքեց Ցուդայի երկրի բոլոր մարդկանց եւ տանելով Բաասի կառուցած Հռամայի ամրութիւնների քարերն ու փայտը՝ դրանցով ամրացրեց Գաբաան ու Մասփան:

[†]Մօր մօրը:

ԱՆԱՆԻԱՍ ՄԱՐԳԱՐԷՆ

7 Այն ժամանակ Ցուդայի երկրի Ասա արքայի մօտ եկաւ Անանիաս մարգարէն եւ ասաց նրան. «Քանի որ ապաւինեցիր ասորիների արքային եւ ոչ թէ քո Տէր Աստծուն, այդ պատճառով Իսրայէլի արքայի զօրքը փրկուեց քո ձեռքից: 8 Մի՞թէ եթովպացիներն ու լիբիացիները մեծաթիւ զօրք չունէին եւ համարձակութեամբ չյարձակուեցին չափազանց շատ հեծեալներով: Բայց քանի որ դու ապաւինել էիր քո Տիրոջը, Տէրը նրանց քո ձեռքը մատնեց, 9 քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպէսզի նա զօրացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են: Արդ, քանի որ դու այդ բանն անտեսեցիր, սրանից յետոյ քո երկիրը պատերազմներ է ունենալու»: 10 Ասան զայրացաւ մարգարէի վրայ եւ նրան բանտարկեց, որովհետեւ այդ բանի համար բարկացել էր: Այդ ժամանակ Ասան սկսեց դաժան վերաբերուել ժողովրդի հանդէպ:

ԱՍԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Գ Թագ. 15. 23-24)

11 Ասայի առաջին եւ վերջին գործերը գրի են առնուած Ցուդայի երկրի ու Իսրայէլի թագաւորների գրքում: 12 Ասայի ոտքերը թուլացան իր թագաւորութեան երեսունիններորդ տարում. նա ծանրօրէն հիւանդացաւ: Իր հիւանդութեան ժամանակ նա Տիրոջը չապաւինեց, այլ՝ բժիշկներին: 13 Ասան վախճանուեց իր թագաւորութեան քառասունմէկերորդ տարում եւ գնաց իր նախնիների գիրկը: 14 Նրան թաղեցին այն գերեզմանում, որ ինքն իր համար էր փորել տուել Դաւթի քաղաքում: Նրան գահաւորակի վրայ դրեցին, առատ խնկերով ու զանազան իւղերով օծեցին ու շատ մեծ յուղարկաւորութեամբ թաղեցին:

ՅՈՍԱՓԱՏԸ ԹԱԳԱՒՈՐ. ՆՐԱ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ՏԻՐՈՋ ՀԱՆԴԷՊ

17 Ասայի փոխարէն թագաւորեց իր որդին՝ Յոսափատը: Յոսափատը իր իշխանութիւնը զօրացրեց Իսրայէլի դէմ: 2 Նա զօրքեր դրեց Յուդայի երկրի բոլոր ամրացուած քաղաքներում, հրամանատարներ նշանակեց Եփրեմի երկրի բոլոր քաղաքներում, որոնք իր հայր Ասան էր գրաւել: 3 Տէրը Յոսափատի հետ էր, քանզի նա ընթացաւ իր նախահօր՝ Դաւթի իշխանութեան սկզբում որդեգրած ճանապարհով. կուռքեր չպաշտեց, 4 այլ իր նախահօր Տէր Աստծուն պաշտեց, իր նախահօր պատուիրաններով առաջնորդուեց եւ ոչ թէ Իսրայէլի թագաւորութեան նման վարուեց: 5 Նրա թագաւորութիւնը բարգաւաճեց նրա ձեռքում, եւ ամբողջ Յուդայի երկիրը Յոսափատին ընծաներ էր տալիս. նա ձեռք բերեց մեծ հարստութիւն ու փառք: 6 Նրա սիրտը նուիրուեց Տիրոջ ճանապարհներին, եւ նա եւս Յուդայի երկրից վերացրեց բարձրադիր մեհեաններն ու կուռքերը:

7 Իր թագաւորութեան երրորդ տարում նա իր իշխաններին ու զօրականներին՝ Աբդիասին, Զաքարիասին, Նաթանայէլին ու Միքէասին ուղարկեց ուսուցանելու Յուդայի երկրի քաղաքներում: 8 Նրանց հետ էին ղեւտացիներ Սամուիասը, Նաթանասը, Զաբդիասը, Ասիէլը, Սեմիրամոթը, Յովնաթանը, Ադոնիասը եւ Տաբադոնիասը՝ բոլորն էլ ղեւտացիներ: Նրանց հետ էին Եղիսամա ու Յորամ քահանաները: 9 Նրանք ուսուցանում էին Յուդայի երկրում՝ իրենց մօտ ունենալով Տիրոջ Օրէնքների գիրքը: Նրանք անցնում էին Յուդայի երկրի քաղաքներով եւ ուսուցանում ժողովրդին:

ՅՈՍԱՓԱՏԻ ՀԶՕՐՈՒԹԻՒՆԸ

10 Տիրոջ սարսափն էր պատել Յուդայի երկրի շուրջը գտնուող երկրների թագաւորներին, ու նրանք ոչ մի պատերազմ չէին մղում Յոսափատի դէմ: 11 Այլազգիները Յոսափատին բերում էին ընծաներ՝ ոսկի, արծաթ ու նուէրներ, իսկ արաբները նրան բերում էին եօթը հազար եօթը հարիւր խոյ եւ եօթը հազար եօթը հարիւր նոխազ: 12 Յոսափատը գնալով աւելի մեծ հարստութեան էր տիրանում: Նա Հրէաստանում շինեց տներ ու ամրացուած քաղաքներ: 13 Նա բազում գործեր կատարեց Հրէաստանում: Հզօր պատերազմիկներ կային Երուսաղէմում: 14 Նրանց թիւը, ըստ նրանց տոհմատների, այս էր. Յուդայի ցեղի հազարապետներն էին Եղնաս իշխանը, որն ունէր երեք հարիւր հազար ուժեղ զինուոր: 15 Նրանից յետոյ Յովնան իշխանն էր, որն ունէր երկու հարիւր ութսուն հազար զինուոր: 16 Նրանից յետոյ Զաքարիայի որդի Մասէասն էր, որը Տիրոջ նուիրեալն էր: Նա ունէր երկու հարիւր հազար ուժեղ զինուոր: 17 Բենիամինի ցեղից էր հզօր Եղիադան, որն ունէր երկու հարիւր հազար աղեղնաւորներ ու պարսաւորներ: 18 Նրանից յետոյ Յոզաբադն էր, որն ունէր հարիւր ութսուն հազար հզօր պատերազմող մարդիկ: 19 Սրանք էին արքային ծառայութիւն անողները, բացի նրանցից, որոնց կարգել էր արքան ամբողջ Հրէաստանի ամրացուած քաղաքներում:

ՅՈՍԱՓԱՏԻ ԴԱՇԻՆՔԸ ԱՔԱԱԲԻ ՀԵՏ
(Գ Թագ. 22. 1-28)

18 Յոսափատը էլ աւելի շատ հարստութիւն ու մեծ փառք ունեցաւ եւ խնամութիւն արեց Աքաաբի տան հետ: 2 Տարեվերջին նա գնաց Աքաաբի մօտ, Սամարիա, եւ Աքաաբը նրա ու նրա հետ եկած զօրքի համար շատ ոչխար ու զուարակ մորթեց եւ փորձեց նրան համոզել, որ միասին յարձակուեն Գաղաադի Ռամոթ քաղաքի վրայ: 3 Իսրայէլի արքայ Աքաաբն ասաց Յուդայի երկրի արքայ Յոսափատին. «Ինձ հետ Գաղաադի Ռամոթ քաղաքի դէմ կը յարձակուե՞ս»: Սա ասաց. «Մի ենք ես ու դու, մի են քո զօրքն ու իմ զօրքը քեզ համար պատերազմում»:

ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

4 Յոսափատն ասաց Իսրայէլի արքային. «Այսօր հարցնենք Տիրոջը»: 5 Իսրայէլի արքան հաւաքեց Իսրայէլի մարգարէներին՝ չորս հարիւր մարդ, եւ հարցրեց նրանց. «Գաղաադի Ռամոթ քաղաքը պատերազմի գնա՞մ, թէ՞ յետ կանգնեմ»: Նրանք ասացին. «Գնա՛, եւ Աստուած քեզ՝ արքայիդ, յաջողութիւն կը պարգեւի»: 6 Յոսափատն ասաց. «Այստեղ Տիրոջ ուրիշ մարգարէ չկա՞յ, որ նրան էլ հարցնենք»: 7 Իսրայէլի արքան ասաց Յոսափատին. «Մի ուրիշ մարդ էլ կայ, որի միջոցով կարելի է Տիրոջը հարցնել, բայց ես ատում եմ նրան, որովհետեւ նա ինձ համար լաւ բան չի մարգարէանում, եւ նրա բոլոր օրերը չարութեամբ են լցուած: Դա Յեմլայի որդի Միքիասն է»: Յոսափատն ասաց. «Թող արքան այդպէս չխօսի»:

8 Եւ Իսրայէլի արքան մի ներքինի կանչեց ու ասաց. «Շտապ այստե՛ղ բեր Յեմլայի որդի Միքիասին»: 9 Իսրայէլի արքան եւ Յուդայի երկրի Յոսափատ արքան, ամէն մէկը պատմուճանը հագած, նստել էին իրենց գահին: Նրանք նստել էին Սամարիայի դարպասի առջեւ, մի ընդարձակ տեղ, եւ բոլոր մարգարէները նրանց առջեւ մարգարէանում էին: 10 Քանանի որդի Սեդեկիասը, որ երկաթէ եղջիւրներ էր պատրաստել, ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Սրանցով պիտի հարուածես ասորիներին, մինչեւ որ բնաջնջես նրանց"»: 11 Բոլոր մարգարէները նոյնպէս մարգարէանում էին՝ ասելով. «Յարձակուի՛ր Գաղաադի Ռամոթ քաղաքի վրայ, յաջողութիւն կ'ունենաս, եւ Տէրը քո՝ արքայիդ ձեռքը կը յանձնի այն»:

12 Սուրհանդակը, որ գնացել էր Միքիասին կանչելու, խօսեց նրա հետ եւ ասաց. «Ահա մարգարէները միաբերան բարեգուշակ բաներ ասացին յօգուտ արքայի, դու էլ նրանց ասածի պէս մի բա՛ն ասա, լաւ բա՛ն գուշակիր»: 13 Միքիասն ասաց. «Կենդանի է Տէրը. ինչ որ Աստուած ինձ ասի, այն էլ կ'ասեմ»:

14 Նա եկաւ արքայի մօտ, եւ արքան նրան ասաց. «Միքիա՛ս, Գաղաադի Ռամոթ քաղաքի վրայ յարձակուե՞մ, թէ՞ յետ կանգնեմ»: Եւ նա ասաց. «Յարձակուի՛ր եւ յաջողութիւն կը գտնես, նրանք ձեր ձեռքը կ'ընկնեն»: 15 Ասաց նրան արքան. «Քանի անգամ եմ քեզ երդուել տուել, որ, Տիրոջ անունով, ճշմարտութիւնից բացի ինձ այլ բան չասես»: 16 Միքիասն ասաց. «Տեսայ, որ իսրայէլացիները ցրուած են լեռների վրայ հովիւ չունեցող ոչխարների պէս, եւ Տէրն ասաց. "Սրանք առաջնորդ չունեն, թող ամէն մարդ իր տունը վերադառնայ խաղաղութեամբ"»: 17 Իսրայէլի արքան ասաց Յոսափատին. «Քեզ չասացի՞, որ նա ինձ համար բարի գուշակութիւն չի անի, այլ՝ չար»: 18 Իսկ Միքիասն ասաց. «Ճիշտ չէ: Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը: Ես տեսայ Տիրոջը, որ նստած էր իր աթոռին, եւ երկնքի բոլոր զօրքերը կանգնած էին նրա աջ ու ձախ կողմերին: 19 Տէրն ասաց. "Ո՞վ կը խաբի Իսրայէլի արքայ Աքաաբին, որ վեր կենայ ու յարձակուի Գաղաադի Ռամոթ քաղաքի վրայ": Մէկն այսպէս խօսեց, միւսն՝ այնպէս: 20 Մի ոգի ելաւ ու կանգնելով Տիրոջ առջեւ՝ ասաց. "Ես կը խաբեմ նրան": Տէրն ասաց. "Ի՞նչպէս": 21 Նա ասաց. "Ես կը գնամ ու սուտ ոգի կը լինեմ նրա բոլոր մարգարէների բերանում": Տէրն ասաց. "Դու կը խաբես նրան, դու կարող ես, ուրեմն գնա՛ եւ արա՛ այդպէս": 22 Ահա Տէրը սուտ ոգի է դրել քո այդ մարգարէների բերանում, այդ պատճառով էլ Տէրը քեզ համար վատ բան է գուշակում»:

23 Այն ժամանակ Քանանի որդի Սեդեկիասը մօտենալով Միքիասին՝ հարուածեց նրա ծնօտին ու ասաց. «Ո՞ր ճանապարհով Տիրոջ ոգին անցաւ իմ մէջ եւ խօսեց քեզ հետ»: 24 Միքիասն ասաց. «Ահա դու կը տեսնես այն օրը, երբ պահասենեակից պահասենեակ կը մտնես, որ թաքնուես»:

25 Իսրայէլի արքան ասաց. «Բռնեցէ՛ք Միքիասին, յե՛տ տարէք քաղաքագլուխ Սեմերի ու արքայորդի Յովասի մօտ 26 եւ ասացէ՛ք. "Այսպէս է

ասում արքան. սրան բա՛նտ դրէք, ու թող նա մի կտոր հացով ու մի կում ջրով սնուի, մինչեւ որ ես խաղաղութեամբ վերադառնամ"»: 27 Մի-քիասն ասաց. «Եթէ իրօք խաղաղութեամբ վերադառնաս, ուրեմն Տէրը ինձ հետ չի խօսել: Ո՛վ ժողովուրդ, բոլորդ լսեցէ՛ք»:

ՌԱՋՄԻ ԴԱՇՏՈՒՄ
(Գ Թագ. 22. 29-35)

28 *Իսրայէլի արքան ու Յուդայի երկրի արքայ Յոսափատը յարձակուեցին Գաղաադի Ռամոթ քաղաքի վրայ: 29 Իսրայէլի արքան ասաց Յոսափատին. «Մտի՛ր ինձ, որ այդպէս մտնեմ պատերազմի մէջ, իսկ դու հագի՛ր իմ պատմուճանը»: Իսրայէլի արքան ծպտուեց եւ մտաւ պատերազմի մէջ: 30 Ասորիների արքան իր մարտակառքերի հրամանատարներին, որոնք իր մօտ էին, ասաց. «Մի՛ կռուէք ո՛չ շարքայինի, ո՛չ էլ նրանց մեծաւորների դէմ, այլ միայն՝ Իսրայէլի արքայի դէմ»: 31 Եւ երբ մարտակառքերի հրամանատարները տեսան Յոսափատին, ասացին. «Սա է Իսրայէլի արքան»: Եւ շրջապատեցին նրան, որ կռուեն նրա դէմ: Յոսափատը աղաղակեց, ու Տէրը փրկեց նրան: Աստուած նրանց հեռացրեց նրա մօտից: 32 Երբ մարտակառքերի հրամանատարները տեսան, որ նա Իսրայէլի արքան չէ, նրան հետապնդելուց դադարեցին: 33 Մի մարդ ամբողջ ուժով լարեց աղեղը եւ լանջապանակի միջով խոցեց Իսրայէլի արքայի թոքերը: Նա ասաց իր ներքինուն. «Կառքը յե՛տ դարձրու եւ ինձ հանի՛ր պատերազմի դաշտից, որովհետեւ մահացու վիրաւոր եմ»: 34 Այդ օրը պատերազմը սաստկացաւ, եւ Իսրայէլի արքան մինչեւ երեկոյ մնաց իր մարտակառքի վրայ, ասորիների դիմաց եւ արեգակի մայր մտնելու ժամանակ մեռաւ:*

ՅՈՍԱՓԱՏԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐՈՒՄ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ

19 *Յոսափատ արքան խաղաղութեամբ վերադարձաւ իր տունը, Երուսաղէմ: 2 Նրան ընդառաջ եկաւ Անանիա մարգարէի որդի Յեհուն եւ ասաց Յոսափատ արքային. «Պէ՞տք էր, որ մեղաւորին օգնէիր կամ Տիրոջ ատելի մարդուն բարեկամ լինէիր: Այդ պատճառով քեզ վրայ իջաւ Տիրոջ բարկութիւնը, 3 բայց քանի որ դու բարի գործեր էլ էիր կատարել՝ Յուդայի երկրից վերացրել էիր բարձրադիր մեհեանները եւ սրտով Տիրոջն էիր յարել, ուստի Տէրը քեզ փրկեց»: 4 Յոսափատը ապրեց Երուսաղէմում, կրկին դուրս եկաւ ժողովրդի մէջ Բերսաբէէից մինչեւ Եփրեմի լեռը եւ մարդկանց վերստին դարձրեց դէպի իրենց հայրերի Տէր Աստուածը: 5 Նա դատաւորներ կարգեց Յուդայի երկրի բոլոր քաղաքներում, ամէն մի ամրացուած քաղաքում: 6 Նա ասաց դատաւորներին. «Տեսէ՛ք, թէ դուք ինչ էք անում, ձեր դատը մարդկանց չի վերաբերում, այլ՝ Տիրոջը: Արդարութիւնը ձեր կողմն է: 7 Արդ, Տիրոջ երկիւղը թող ձեզ վրայ լինի, պահեցէ՛ք Օրէնքը եւ գործադրեցէ՛ք, քանզի մեր Տէր Աստուածը անիրաւութիւն եւ կողմնակալութիւն չի անում եւ չի կաշառւում»:*

8 Յոսափատը քահանաներից, ղեւտացիներից եւ Իսրայէլի տոհմապետերից դատաւորներ կարգեց նաեւ Երուսաղէմում, որ կատարեն Տիրոջ դատաստանը՝ դատեն Երուսաղէմի բնակիչներին: 9 Նա նրանց պատուիրեց՝ ասելով. «Տիրոջ երկիւղով, ճշմարտութեամբ ու կատարեալ սրտով այսպէս կը վարուէք. 10 եթէ իրենց քաղաքներում բնակուող ձեր եղբայրներից որեւէ մէկը արեան դիմաց արեան, օրէնքին ու պատուիրանին, իրաւունքներին ու դատաստաններին վերաբերող գործով դիմի ձեզ, ապա բացատրեցէ՛ք նրանց, որ չմեղանչեն Աստծու դէմ, որ նրանք չբարկանան ո՛չ ձեր վրայ, ո՛չ էլ՝ ձեր եղբայրների: Այսպէս արէ՛ք եւ չէք մեղանչի: 11 Եւ ահա Ամարիաս քահանան Տիրոջ բոլոր գործերում ձեր առաջնորդն է, Իսմայէլի որդի Զաբդիասը Յուդայի տան առաջնորդն է արքայի բոլոր գործերում, իսկ քարտուղարներն ու ղեւտացիները ձեր կողքին են. զօրացէ՛ք ու գործեցէ՛ք, եւ Տէրը բարուն աջակից պիտի լինի»:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ. ՅՈՍԱՓԱՏԻ ԱՂՕԹՔԸ

20 *Դրանից յետոյ ամոնացիներն ու մովաբացիները, նրանց հետ նաեւ մինեցիներից ոմանք եկան Յոսափատի դէմ պատերազմելու: 2 Եկան ու այդ բանը յայտնեցին Յոսափատին՝ ասելով. «Քեզ վրայ մեծ բազմութիւն է յարձակւում ծովի այն կողմից՝ Ասորիքից, եւ ահա նրանք Ասասանթամարում են, այսինքն՝ Գադդիում»: 3 Յոսափատը վախեցաւ, երեսն ուղղելով դէպի Տէրը՝ աղօթեց եւ յայտարարեց, որ ծոմ պահեն ամբողջ Յուդայի երկրում: 4 Յուդայի երկրի բնակիչները հաւաքուեցին, որ դիմեն Տիրոջը. Յուդայի երկրի բոլոր քաղաքներից եկան դիմելու Տիրոջը: 5 Յոսափատը Երուսաղէմում, Տիրոջ տանը, դրա նոր գաւթի դիմաց կանգնեց Յուդայի երկրի ժողովականների մէջ 6 ու աղօթեց. «Ո՛վ մեր հայրերի Տէր Աստուած, չէ՞ որ դո՛ւ ես Աստուած երկնքում, որ տիրում ես հեթանոս ազգերի բոլոր թագաւորութիւնների վրայ. քո ձեռքում է իշխանութեան ուժը, եւ ոչ ոք չի կարող քեզ դէմ կանգնել: 7 Չէ՞ որ, Տէ՛ր, քո իսրայէլացի ժողովրդի առաջ դո՛ւ ոչնչացրիր այս երկրի բնակիչներին եւ երկիրը յաւիտեան տուեցիր քո սիրելի Աբրահամի յետնորդներին: 8 Սրանք բնակուեցին այստեղ եւ այստեղ էլ շինելով քո անուան սրբարանը՝ ասացին. 9 "Եթէ մեզ վրայ գան չարիք, սուր, դատաստան, մահ ու սով, կը կանգնենք այս տան առջեւ եւ քո առջեւ, քանզի քո անունը այս տան վրայ է, քեզ կը կանչենք նեղութեան մէջ լինելու դէպքում, եւ դու կը լսես ու կը փրկես մեզ": 10 Եւ արդ, ահա ամոնացիները, մովաբացիները եւ Սէիր լեռան բնակիչները, որոնց երկրով թոյլ չտուեցիր անցնել, երբ իսրայէլացիները Եգիպտոսից դուրս եկան եւ շեղեցին իրենց ճանապարհը նրանցից, որ չկոտորեն նրանց, 11 ահաւասիկ նրանք յանդգնել են մեզ վրայ յարձակուել ու մեզ հանել ժառանգութիւն ստացած մեր երկրից, որը դու ես տուել մեզ: 12 Ո՛վ Տէր Աստուած մեր, մի՞թէ նրանց դատաստանը չես տեսնելու: Չէ՞ որ մենք զօրութիւն չունենք այս մեծ բազմութեան դէմ կանգնելու եւ չգիտենք, թէ ինչ անենք նրանց դէմ: Մեր աչքերը քեզ են ուղղուած»: 13 Յուդայի երկրի ողջ բնակչութիւնը, նաեւ երեխաներն ու կանայք կանգնած էին Տիրոջ առջեւ:*

ՏԷՐԸ ՅԱՂԹԱՆԱԿ Է ՏԱԼԻՍ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ

14 Ասափի որդիներից ղեւտացի Մաթանիայի որդի Եղիէլի որդի Բանիասի որդի Զաքարիայի որդի Օզիէլի վրայ հաւաքի ժամանակ իջաւ Տիրոջ հոգին, 15 եւ Օզիէլն ասաց. «Լսեցէ՛ք, Յուդայի երկրի մարդիկ, Երուսաղէմի՛ բնակիչնե՛ր եւ Յոսափա՛տ արքայ, Տէրը ձեզ այսպէս է ասում. "Մի՛ վախեցէք ու մի՛ զարհուրէք այս մեծ բազմութիւնից, քանզի պատերազմը ձերը չէ, այլ՝ Աստծունը: 16 Վաղն ելեթ յարձակուեցէ՛ք նրանց վրայ: Ահա նրանք իջնում են Ասերի զառիվայրով, եւ դուք նրանց կը գտնէք Յերիէլի անապատում գտնուող գետի եզերքին: 17 Դուք չէք, որ այնտեղ պիտի պատերազմէք: Հասկացէ՛ք ու կը տեսնէք ձեզ հետ եղող Տիրոջ փրկութիւնը: Յուդայի՛ երկիր եւ Երուսաղէ՛մ, մի՛ վախեցէք ու մի՛ զարհուրէք. վաղը յարձակուեցէ՛ք նրանց վրայ, քանզի Տէրը ձեզ հետ է»: 18 Յոսափատը, ամբողջ Յուդայի երկրի ու Երուսաղէմի բնակիչները երեսնիվայր խոնարհուելով՝ ընկան Տիրոջ առջեւ ու երկրպագեցին Տիրոջը: 19 Եւ Կահաթի տոհմից ու Կորխի տոհմից ղեւտացիները վեր կացան ու բարձր ձայնով օրհնեցին Տէր Աստծուն:

20 Նրանք առաւօտեան կանուխ զարթնելով՝ գնացին Թեկուայի անապատը: Երբ նրանք վեր էին կենում, Յոսափատը կանգնեց ու աղաղակելով ասաց. «Ի՛նձ լսեցէք, Յուդայի երկրի եւ Երուսաղէմի բնակիչնե՛ր, հաւատացէ՛ք մեր Տէր Աստծուն, եւ նա էլ ձեզ կը հաւատայ, հաւատացէ՛ք նրա մարգա-

ըէներին ու յաջողութիւն կ'ունենաք»:
21 Նա խորհուրդ արեց ժողովրդի հետ
եւ կարգեց սաղմոսերգուներ ու օրհնա-
բանողներ, որ զօրքի առջեւից ընթա-
նալիս փառք տան ու օրհնաբանեն
սրբութիւնները: Նրանք ասում էին.
«Փառք տանք Տիրոջը, քանզի նրա
ողորմածութիւնը յաւիտեան է»:
22 Երբ նրանք սկսել էին օրհնել ու
փառաբանել Տիրոջը, Տէրը ամոնացի-
ներին կռուի հանեց մովաբացիների ու
Սէիր լեռան բնակիչների դէմ, որոնք
եկել էին Ցուդայի երկրի վրայ յարձա-
կուելու: Եւ նրանք պարտուեցին: 23 Ա-
մոնացիներն ու մովաբացիները յար-
ձակուեցին Սէիր լեռան բնակիչների
վրայ, որ կոտորեն ու ոչնչացնեն
նրանց: Երբ Սէիրի բնակիչներին խ-
պառ բնաջնջեցին, այս անգամ սրանք
իրար վրայ յարձակուեցին ու կոտո-
րեցին միմեանց: 24 Ցուդայի երկրի
մարդիկ եկան անապատի դիտանոցը,
նայեցին ու տեսան, որ բոլորն սպա-
նուած են, գետին ընկած, ու ոչ ոք չէր
փրկուել: 25 Յոսափատն ու զօրքը եկան
կողոպտելու նրանց աւարը: Նրանք
գտան մեծ թուով անասուններ, հան-
դերձանք, աւար ու թանկարժէք ա-
ռարկաներ եւ այս ամէնը կողոպտեցին:
Նրանք երեք օր հաւաքում էին աւարը,
որովհետեւ չափազանց շատ էր:
26 Չորրորդ օրը նրանք հաւա-
քուեցին Օրհնութեան հովտում, որով-
հետեւ այնտեղ էին օրհնել Տիրոջը, որի
համար էլ այդ տեղը կոչուեց Օրհ-
նութեան հովիտ. եւ այդպէս է կոչւում
մինչեւ այսօր: 27 Ցուդայի երկրի բոլոր
մարդիկ վերադարձան Երուսաղէմ:
Յոսափատը նրանց առաջնորդեց մեծ
ուրախութեամբ, քանզի Տէրը նրանց
ուրախութիւն էր տուել՝ ազատելով
նրանց իրենց թշնամիներից: 28 Նրանք
մտան Երուսաղէմ, Տիրոջ տունը
քնարներով, տաւիղներով ու փողերով:
29 Երբոր երկրի բոլոր թագաւորու-
թիւնները լսեցին, որ Տէրն է պատե-
րազմել Իսրայէլի թշնամիների դէմ,
Տիրոջ վախն ընկաւ նրանց վրայ:
30 Յոսափատի թագաւորութիւնը խա-
ղաղուեց, եւ նրա Աստուածը ամէն
կողմից հանգստացրեց նրան:

ՅՈՍԱՓԱՏԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Դ Թագ. 22. 41-50)

31 Յոսափատը իշխեց Ցուդայի երկրի
վրայ: Նա երեսունհինգ տարեկան էր,
երբ թագաւոր դարձաւ, եւ քսանհինգ
տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա
մօր անունը Ազուբա էր, որը Սալիի
դուստրն էր: 32 Յոսափատն ընթացաւ
իր հօր՝ Ասայի ճանապարհներով, չխո-
տորուեց Տիրոջ ճանապարհից, 33 թէեւ
տակաւին բարձրադիր մեհեաններ կա-
յին, եւ ժողովուրդն իր սիրտը չէր ուղ-
ղել իր հայրերի Տէր Աստծուն: 34 Յո-
սափատի մնացած գործերը, առաջինից
մինչեւ վերջինը, գրուած են Անանի
որդի Յէուի պատմութեան մէջ. նա է
գրի առել Իսրայէլի թագաւորների
պատմութիւնը: 35 Դրանից յետոյ Յու-
դայի երկրի արքայ Յոսափատը բարե-
կամացաւ Իսրայէլի արքայ Օքոզիասի
հետ. 36 Յոսափատը անօրէնութիւն
գործեց, երբ վեր կացաւ ու գնաց Օքո-
զիասի մօտ, որ նաւ պատրաստի ու
գնայ Թարսիս: Նա նաւ պատրաստեց
Գասիոնգաբերում: 37 Մարեսացի Օդ-
րիի որդի Եղիազարը Յոսափատի մա-
սին մարգարէանալով ասաց. «Քանի
որ Օքոզիասին սիրելի դարձար, Տէրը
պիտի խառնի քո գործերը, քո նաւը
պիտի խորտակուի, եւ դու չպիտի
կարողացաս Թարսիս գնալ»:

21 Յոսափատը գնաց իր նախնիների
գիրկը եւ թաղուեց Դաւթի քաղաքում,
իր նախնիների մօտ:

ՅՈՐԱՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐ
(Դ Թագ. 8. 17-24)

Նրա փոխարէն թագաւորեց իր որ-
դին՝ Յորամը: 2 Նա ունէր վեց եղբայր,
որոնք Յոսափատի որդիներն էին. Եզ-
րիաս, Եէլ, Զաքարիաս, Միսայէլ, Սա-
փատիաս եւ Ազարիու: Սրանք բոլորը
Ցուդայի երկրի արքայ Յոսափատի որ-
դիներն էին: 3 Հայրը նրանց տուել էր
բազում պարգեւներ՝ արծաթ, ոսկի,
զէնքեր, ինչպէս նաեւ ամրացուած
քաղաքներ Ցուդայի երկրում, իսկ թա-

գաւորութիւնը յանձնել էր Յորամին,
քանզի նա էր անդրանիկը: 4 Յորամն
ստանձնելով թագաւորութիւնը՝ հզօ-
րացաւ ու սրակոտոր արեց իր բոլոր
եղբայրներին, նաեւ Իսրայէլի մի շարք
իշխանների:
5 Նա երեսուներկու տարեկան էր,
երբ թագաւոր դարձաւ, եւ ութ տարի
թագաւորեց Երուսաղէմում: 6 Նա ըն-
թացաւ Իսրայէլի թագաւորների ճա-
նապարհներով. նա արեց այն, ինչ որ
Աքաաբի տունն էր արել, քանի որ նրա
կինը Աքաաբի դուստրն էր: Նա չարիք
գործեց Տիրոջ առջեւ, 7 սակայն Տէրը
չուզեց կործանել Դաւթի տունը այն
ուխտի համար, որ դրել էր Դաւթի հետ,
եւ ինչպէս ասել էր նրան՝ միշտ մի
ճրագ էր տալու նրան ու նրա որդի-
ներին:
8 Այդ օրերին Ցուդայի երկրի դէմ
ապստամբեցին եդոմացիները, որոնք
իրենց համար թագաւոր ընտրեցին:
9 Յորամը գնաց իր իշխաններով ու
հեծեալներով հանդերձ եւ գիշերը վեր
կենալով՝ յարձակուեց եդոմացիների ու
նրանց մարտակառքերի հրամանա-
տարների վրայ, որոնք պաշարել էին
իրեն: Եդոմացիների զօրքը փախաւ
դէպի իրենց վրանները: 10 Եդոմն
ազատուեց Ցուդայի երկրի գերիշխա-
նութիւնից. եւ այդպէս է մինչեւ այսօր:
Այդ ժամանակ ապստամբեց Լոբնան
Յորամի իշխանութեան դէմ, քանզի
Յորամը լքել էր իր հայրերի Տէր
Աստծուն, 11 բարձրադիր մեհեաններ
էր կառուցել տուել Ցուդայի երկրի
քաղաքներում, չաստուածներ պաշտե-
լու էր մղել Երուսաղէմի բնակիչներին
ու մոլորեցրել Ցուդայի երկիրը: 12 Ե-
ղիա մարգարէից նրան պատգամագիր
եկաւ, ուր ասուած էր. «Այսպէս է
ասում քո նախահօր՝ Դաւթի Տէր
Աստուածը. "Քանի որ չընթացար քո
հօր՝ Յոսափատի ուղիով եւ ոչ էլ
Ցուդայի երկրի արքայ Ասայի ուղիով,
13 այլ ընթացար Իսրայէլի թագաւորի
ուղիով, չաստուածներ պաշտելու մղե-
ցիր Ցուդայի երկրի ու Երուսաղէմի
բնակիչներին, ինչպէս որ արել էր
Աքաաբի տունը, եւ քո հօր որդիներին՝
քո եղբայրներին, որոնք քեզնից լաւ
էին, սպանեցիր, 14 դրա համար էլ Տէրը
քո ժողովրդի ներկայութեամբ քեզ, քո
որդիներին, քո կանանց եւ քո ամբողջ
ունեցուածքին մեծ հարուածներ է
հասցնելու: 15 Դու ծանր հիւան-
դութեամբ ու որովայնի ախտով պիտի
մաշուես, մինչեւ որ քո ախտահարուած
փորոտիքը օրէցօր դուրս թափուի"»:
16 Եւ Տէրը Յորամի դէմ հանեց
այլազգիներին եւ եթիոպացիների
հարեւան արաբներին: 17 Նրանք յար-
ձակուեցին Ցուդայի երկրի վրայ, կո-
ղոպտեցին այն եւ տարան արքայի
տան ամբողջ հարստութիւնը, նրա
տղաներին ու աղջիկներին, եւ նա
զրկուեց իր բոլոր որդիներից, բացի
կրտսերագոյն որդուց՝ Օքոզիասից:
18 Դրանից յետոյ Տէրը նրան հա-
րուածեց եւ որովայնի անբուժելի հի-
ւանդութիւն տուեց: 19 Որոշ ժամանակ
անց երբ հասաւ նրա վախճանը,
ամբողջ երկու օր նրա ախտահարուած
փորոտիքը դուրս թափուեց, եւ նա
մեռաւ այդ ծանր հիւանդութիւնից:
Ժողովուրդը նրան յուղարկաւորութիւն
չարեց, ինչպէս որ արել էր նրա նախ-
նիներին: 20 Նա երեսուներկու տարե-
կան էր, երբ թագաւոր դարձաւ, եւ ութ
տարի թագաւորեց Երուսաղէմում: Նա
մեռաւ առանց դրուատանքի խօսքի:
Նա թաղուեց Դաւթի քաղաքում, բայց
ոչ թագաւորների գերեզմանոցում:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՕՔՈԶԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 8. 25-29, 9. 21-28)

22 Երուսաղէմի բնակիչները Յորամի
փոխարէն գահ բարձրացրին նրա
կրտսերագոյն որդուն՝ Օքոզիասին,
քանզի նրա բոլոր աւագ եղբայրներին
սպանել էին նրանց վրայ յարձակուած
աւազակախմբերը, արաբները եւ ալի-
մազոնացիները: Թագաւոր դարձաւ
Ցուդայի երկրի արքայ Յորամի որդի
Օքոզիասը: 2 Օքոզիասը թագաւոր
դարձաւ, երբ քսաներկու տարեկան էր:
Նա մէկ տարի թագաւորեց Երուսա-
ղէմում: Նրա մօր անունը Գոթողիա
էր: Սա Ամրիի դուստրն էր: 3 Օքո-
զիասն ընթացաւ Աքաաբի տան ճա-
նապարհով, քանզի նրա մայրը մե-

զանչելու գործում նրա խորհրդականն էր: 4 Օքոզիասը չարիք գործեց Տիրոջ առջեւ, ինչպէս արել էին Աքաաբի տան մարդիկ, քանի որ հօր մահից յետոյ նրան կործանելու համար նրանք էին դարձել իր խորհրդականները: 5 Նա առաջնորդուեց նրանց խորհուրդներով, Աքաաբի որդի Յորամի հետ գնաց Գաղաադի Ռամաթ քաղաքը՝ Ասորիքի արքայ Ազայէլի դէմ պատերազմելու: Եւ աղեղնաւորները վիրաւորեցին Յորամին: 6 Յորամը վերադարձաւ Յեզրայէլ, որ բուժուի այն վէրքերից, որ ասորիները պատճառել էին Ռամաթում, երբ նա պատերազմում էր Ասորիքի արքայ Ազայէլի դէմ: Յուդայի երկրի արքայ Յորամի որդի Օքոզիասը եկաւ Յեզրայէլ, որ այցելի Աքաաբի որդի Յովրամին, որը հիւանդ էր: 7 Տիրոջ պատուհասը իջաւ Օքոզիասի գլխին այն ժամանակ, երբ սա գնացել էր Յորամի մօտ: Մինչ նա գնում էր, յարձակուեց Ամեսսիի որդի, Տիրոջից օծեալ Յէուի վրայ: 8 Երբ Յէուն վրէժ էր լուծում Աքաաբի տնից, տեսաւ, որ Յուդայի իշխանները՝ Օքոզիասի եղբօրորդիները, ծառայում էին Օքոզիասին, ուստի կոտորեց նրանց: 9 Նա հրամայեց փնտռել գտնել Օքոզիասին: Նրան բռնեցին Սամարիայում, ուր բուժւում էր: Նրան բերեցին Յէուի մօտ, որն սպանեց նրան: Նրան թաղեցին այնտեղ, քանզի ասացին, թէ նա որդին է Յոսափատի, որն իր ամբողջ սրտով ձգտում էր Տիրոջը: Եւ Օքոզիասի տան մէջ չգտնուեց մէկը, որ ձեռք առնէր թագաւորական իշխանութիւնը:

ԳՈԹՈՂԻԱՆ ՏԻՐԱՆՈՒՄ Է ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ

10 *Օքոզիասի մայրը՝ Գոթողիան, երբ տեսաւ, թէ որդին մեռել է, վեր կացաւ ու կոտորեց Յուդայի տան ամբողջ թագաւորական սերունդը: 11 Արքայադուստր Յոսաբեթը, սակայն, գողացաւ Օքոզիասի որդի Յովասին արքայի կոտորուող որդիների միջից եւ նրան ու նրա դայեակին տեղաւորեց անկողինների սենեակում: Յոսաբեթը, որը Յորամ արքայի դուստրն էր, Օքոզիասի քոյրը եւ Յովիդայէ քահանայի կինը, նրան թաքցրեց Գոթողիայից, ուստի սա չկարողացաւ սպանել նրան: 12 Նա վեց տարի նրա հետ թաքնուած մնաց Աստծու տանը: Գոթողիան վեց տարի թագաւորեց երկրում:*

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԳՈԹՈՂԻԱՅԻ ԴԷՄ
(Դ Թագ. 11. 4-16)

23 *Եօթներորդ տարում Յովիդայէն զօրացաւ եւ վերցնելով հարիւրապետներին՝ Յորամի որդի Ազարիասին, Յովնանի որդի Իսմայէլին, Յոբադի որդի Ազարիասին, Ադայիայի որդի Մասիասին, Զաքարիայի որդի Եղիսափատին, տարաւ Տիրոջ տունը: 2 Նրանք շրջեցին Յուդայի երկրում, Յուդայի երկրի բոլոր քաղաքներից հաւաքեցին ղեւտացիներին, Իսրայէլի տոհմերի իշխաններին եւ եկան Երուսաղէմ: 3 Նրանք Յուդայի երկրի բոլոր ժողովականների եւ արքայի հետ ուխտ դրեցին Տիրոջ տանը: Նա նրանց ցոյց տալով արքայորդուն՝ ասաց. «Ահաւասիկ Յուդայի երկրի արքայորդին. սա՛ պէտք է թագաւորի, ինչպէս Տէրն ասել էր Դաւթի տան մասին: 4 Արդ, պէտք է անէք հետեւեալը. ձեզնից՝ քահանաներիցդ ու ղեւտացիներիցդ նրանք, որ շաբաթ օրուայ պաշտամունք են կատարում, նրանց մէկ երրորդ մասը պէտք է պահպանի դռների մուտքը, 5 մէկ երրորդ մասը պէտք է լինի արքայի պալատում, իսկ միւս մէկ երրորդ մասը պէտք է լինի Հիմքի դռան մօտ: Ամբողջ ժողովուրդը պէտք է լինի Տիրոջ տան գաւթում: 6 Ոչ ոք չպէտք է մտնի Տիրոջ տունը, բացի քահանաներից, ղեւտացիներից ու սպասաւորութեան կոչուած ղեւտացիներից: Սրանք միայն պէտք է մտնեն, քանզի սուրբ են, իսկ ամբողջ ժողովուրդը պէտք է Տիրոջ հրամանները կատարի: 7 Ղեւտացիները, ամէն մէկն իր ձեռքին զէնք ունենալով, պէտք է շրջապատեն արքային: Ով տուն մտնի, կը սպանուի: Նրանք պէտք է ուղեկցեն արքային, որտեղ էլ որ նա գտնուի»: 8 Ղեւտացիները եւ Յուդայի երկրի*

բոլոր բնակիչները ըստ ամենայնի կատարեցին այն, ինչ Յովիդայէ քահանան պատուիրեց. ամէն մէկն ընտրեց իր մարդկանց, թէ՛ նրանց, որ սկսում էին շաբաթ օրուայ իրենց պաշտամունքը եւ թէ՛ նրանց, որ այդ օրը աւարտում էին այն, քանի որ Յովիդայէն ամենօրեայ պահապաններին չէր արձակել: 9 Յովիդայէն նրանց տուեց սուսերներ, վահաններ եւ զէնքեր, որ Դաւիթ արքայինն էին եւ պահւում էին Աստծու տանը: 10 Նա ամբողջ ժողովրդին, ամէն մէկին իր զէնքով կանգնեցրեց տան աջ կողմից մինչեւ զոհասեղանի եւ տաճարի ձախ կողմը, թագաւորի շուրջը: 11 Դուրս բերելով արքայորդուն՝ նա նրա վրայ դրեց թագն ու Վկայութեան գիրը. Յովիդայէն ու իր որդիները նրան թագաւոր դարձրին եւ օծեցին՝ գոչելով. «Կեցցէ՛ արքան»:

12 *Երբ Գոթողիան լսեց վազող, արքային փառաբանող ու օրհնող ժողովրդի ձայնը, մտաւ արքայի մօտ՝ Տիրոջ տունը, 13 ու տեսաւ, որ թագաւորը իր տեղում է, իսկ զօրապետները, փողհարները եւ իշխանները կանգնած են արքայի շուրջը, ճանապարհի մուտքի մօտ: Ամբողջ ժողովուրդը զուարճանում էր, փողեր էր հնչեցնում, նուագարաններով երգեր էր երգում, օրհնութիւններ առաքում առ Աստուած: Գոթողիան զգեստները պատառոտեց ու գոչեց՝ ասելով. «Դուք դաւադրութեամբ խարդախ խաղ խաղացիք»: 14 Յովիդայէ քահանան տեղից բարձրանալով՝ պատուիրեց հարիւրապետներին եւ զօրքի հրամանատարներին՝ ասելով նրանց. «Սրան Աստծու տնից դո՛ւրս հանեցէք, հետեւեցէ՛ք նրան ու սրով սպանեցէ՛ք»: Քահանան ասաց. «Նա Տիրոջ տան մէջ թող չմեռնի»: 15 Թոյլ տուեցին, որ նա դուրս գնայ, եւ երբ անցաւ արքայի հեծելալների տան դռան կողքով, նրան այնտեղ սպանեցին:*

ՅՈՎԻԴԱՅԷԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Դ Թագ. 11. 17-20)

16 *Յովիդայէն ուխտ դրեց իր, ժողովրդի ու արքայի միջեւ, որ իրենք Տիրոջ ժողովուրդը կը լինեն: 17 Երկրի ամբողջ ժողովուրդը մտաւ Բահաղի տունը, ջարդուփշուր արեց նրան ու նրա զոհասեղանները, փշրեց նրա կուռքերը, իսկ Բահաղի Մաթան քուրմին սպանեց նրա զոհասեղանի առջեւ: 18 Յովիդայէն Տիրոջ տան գործը յանձնեց քահանաներին ու ղեւտացիներին, վերականգնեց քահանաների ու ղեւտացիների մշտական սպասաւորութիւնը, որ Դաւիթն էր հաստատել Տիրոջ տանը կատարուելու համար, Տիրոջը ողջակէզներ մատուցեց, ինչպէս որ գրուած է Մովսէսի օրէնքների մէջ՝ ուրախութեամբ ու երգերով, ըստ Դաւթի սահմանած կարգի: 19 Պահապաններ կանգնեցին Տիրոջ տան դռների մօտ, եւ ոչ մի անմաքուր մարդ որեւէ կերպ այնտեղ չէր մտնում: 20 Նա կանչեց տոհմերի պետերին, զօրապետներին ու ժողովրդի իշխաններին եւ երկրի ամբողջ ժողովրդին: Սրանք արքային հանելով Տիրոջ տնից՝ ներքին դռնով մտան թագաւորական տունը եւ արքային նստեցրին թագաւորական գահին: 21 Երկրի ամբողջ ժողովուրդն ուրախացաւ, քաղաքը հանդարտուեց, իսկ Գոթողիային սպանեցին սրով:*

ՅՈՎԱՍԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԹԱԳԱՒՈՐ
(Դ Թագ. 12. 1-16)

24 *Եօթը տարեկան էր Յովասը, երբ թագաւոր դարձաւ: Նա քառասուն տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա բերսաբէէցի մօր անունը Աբիա էր: 2 Յովիդայէ քահանայի բոլոր օրերին Յովասն արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առաջ: 3 Յովասը երկու կին առաւ, որոնք ծնեցին տղաներ ու աղջիկներ:*

4 *Այնպէս պատահեց, որ Յովասի սիրտը ուզեց Տիրոջ տունը նորոգել: 5 Նա հաւաքեց քահանաներին ու ղեւտացիներին եւ ասաց նրանց. «Ելէք գնացէ՛ք Յուդայի երկրի քաղաքները եւ ամբողջ Իսրայէլից արծա՛թ հաւաքեցէք Տիրոջ տունը տարէցտարի նորոգելու համար: Շտապեցէ՛ք կատարել»: Սակայն ղեւտացիները չանսացին նրան: 6 Յովաս արքան կանչեց Յովի-*

դայէ իշխանին եւ ասաց նրան. «Ինչո՞ւ դու չես հետեւել, որ զեւտացիները Յուդայի երկրից ու Երուսաղէմից բերեն այն, ինչ սահմանուած էր Աստծու մարդու՝ Մովսէսի կողմից, երբ սա հաւաքել էր իսրայէլացիներին վկայութեան խորանի մօտ: 7 Զէ՞ որ Գոթողիան անօրէն էր, եւ նրա որդիները կործանել էին Աստծու տունը, իսկ Աստծու տան սրբութիւնները նուիրել Բահաղին»: 8 Արքան ասաց. «Թող մի արկղ պատրաստեն ու դնեն Տիրոջ տան դռան առջեւ, դրսում, 9 եւ յայտարարեն Յուդայի երկրում ու Երուսաղէմում, որ արծաթ բերեն Տիրոջը, ինչպէս ասել էր Աստծու ծառայ Մովսէսը անապատում»: 10 Եւ ամէնքը՝ իշխաններն ու ամբողջ ժողովուրդը, արծաթ բերելով, գցեցին արկղի մէջ, մինչեւ որ այն լցուեց: 11 Երբ զեւտացիները արկղը ներս բերեցին արքայի վերակացուների մօտ, տեսան, որ արծաթը շատ-շատ է հաւաքուել. արքայի քարտուղարը եկաւ ու մեծ քահանայի վերակացուի հետ արկղը դատարկելով՝ տարաւ իր տեղը դրեց: Այսպէս արեցին ամէն օր: 12 Շատ արծաթ հաւաքուեց: Արքան ու Յովիդայէ քահանան այն տուեցին նրանց, ովքեր Տիրոջ տան վերակառուցման գործով էին զբաղուած: Վարձեցին քարհատներ ու հիւսներ, որ նորոգեն Տիրոջ տունը: Նրանք աշխատում էին, 13 եւ գործը նրանց շնորհիւ յաջողութեամբ առաջ էր ընթանում: Նրանք Տիրոջ տունը իր նախկին հիմնաձեւին բերեցին եւ ամրացրին այն: 14 Երբ աւարտեցին, արքայի ու Յովիդայէի մօտ բերեցին աւելացած արծաթը, որով Տիրոջ տան համար սպասք, ողջակէզների համար անօթներ, ոսկէ ու արծաթէ խնկամաններ պատրաստեցին եւ Յովիդայէի օրօք միշտ ողջակէզներ էին մատուցում Տիրոջ տանը:

15 Յովիդայէն հասաւ խորութեան. նա վախճանուեց հարիւր երեսուն տարեկան հասակում: 16 Երբ վախճանուեց, նրան թաղեցին Դաւթի քաղաքում, թագաւորների մօտ, քանզի նա բարիք էր գործել Իսրայէլում, Աստծու առաջ եւ նրա տան համար:

ՅՈՎԱՍԻ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԱՍՏԾՈՒՆ ԵՒ ՆՐԱ ՊԱՏԻԺԸ

17 Յովիդայէի վախճանուելուց յետոյ Յուդայի երկրի իշխանները մտան արքայի մօտ, խոնարհութիւն արեցին նրան, Յովասի միտքը յեղաշրջեցին, եւ արքան լսեց նրանց: 18 Նրանք լքեցին իրենց հայրերի Տէր Աստծուն եւ ծառայեցին կուռքերին ու Աստարտներին: Այդ ժամանակ Աստծու բարկութիւնն իջաւ Յուդայի երկրի ու Երուսաղէմի վրայ, 19 եւ նա նրանց մօտ մարգարէներ առաքեց, որ նրանց շուռ տան դէպի Տէրը, սակայն նրանք չլսեցին: Նա նրանց վկայութիւններ ցոյց տուեց, սակայն նրանք չանսացին:

20 Եւ Աստծու հոգին պատեց Յովիդայէ քահանայի որդի Ազարիասին, որը, մտնելով ամբողջ ժողովրդի մէջ, ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Ինչո՞ւ խոտորուեցիք Տիրոջ պատուիրաններից, որ այլեւս յաջողութիւն չունենաք: Քանի որ դուք լքեցիք Տիրոջը, նա էլ ձեզ է լքելու"»: 21 Յովաս արքայի հրամանով Տիրոջ տան սրահում մարդիկ յարձակուեցին նրա վրայ ու քարկոծեցին նրան: 22 Յովասը չյիշեց այն բարեգթութիւնը, որ նրա հայր Յովիդայէն ցուցաբերել էր իր նկատմամբ, եւ սպանեց նրա որդի Ազարիասին: Իր մահուան ժամանակ Ազարիասն ասաց. «Տէ՛ր թող տեսնի ու դատի»:

ՅՈՎԱՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱԽՃԱՆԸ

23 Այդ տարուայ վերջին նրա դէմ ելաւ Ասորիքի զօրքը. այդ զօրքը յարձակուեց Յուդայի երկրի ու Երուսաղէմի վրայ, կոտորեց բանակի մէջ եղած ժողովրդի բոլոր իշխաններին եւ նրանց ամբողջ աւարը վերցրեց տարաւ Դամասկոսի արքայի մօտ: 24 Թէեւ Ասորիքի զօրքը սակաւամարդ էր, բայց Աստուած նրանց ձեռքը չափազանց շատ զօրք մատնեց, քանի որ իսրայէլացիները լքել էին իրենց հայրերի Տէր Աստծուն: Եւ Ասորիքի զօրքը Յովասի նկատմամբ դատաստան տեսաւ: 25 Երբ Ասորիքի զօրքը ծանր հիւանդութիւնների մէջ թողնելով նրան՝ հեռացաւ նրանից, նրա վրայ յարձակուեցին իր ծառաները, որ լուծեն Յովիդայէ քահանայի որդու արեան վրէժը: Յովասին սպանեցին իր անկողնում, եւ նա մեռաւ: Նրան թաղեցին Դաւթի քաղաքում, բայց ոչ թագաւորների գերեզմանոցում: 26 Նրա վրայ յարձակուողներն էին ամոնացի Սամեթի որդի Զաբդեան, մովաբացի Սամարիթի որդի Յոսաբեթը: 27 Ինչ վերաբերում է նրա որդիներին, նրա վրայ գրուած հարկերին եւ Աստծու տան նորոգութեանը, ահա դրանք գրուած են թագաւորների գրքի յիշատակարաններում[†]:

Նրա որդի Ամասիան թագաւորեց նրա փոխարէն:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՄԱՍԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 14. 2-6)

25 Քսանհինգ տարեկան էր Ամասիասը, երբ թագաւոր դարձաւ, եւ քսանինը տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա երուսաղէմացի մօր անունը Յովադին էր: 2 Ամասիասն արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առջեւ, բայց ոչ լիակատար սրտով:

3 Եւ պատահեց, որ երբ թագաւորութիւնն անցաւ իր ձեռքը, նա սպանեց այն պալատականներին, որոնք սպանել էին իր արքայ հօրը: 4 Նա, սակայն, նրանց որդիներին չսպանեց, ինչպէս գրուած է Տիրոջ օրէնքների ուխտի մէջ, եւ ինչպէս պատուիրել է Տէրը՝ ասելով. «Հայրերը չպէտք է մեռնեն որդիների փոխարէն, եւ որդիները չպէտք է մեռնեն հայրերի փոխարէն, այլ ամէն ոք պէտք է իր մեղքերի համար մեռնի»:

5 Ամասիասը հաւաքեց Յուդայի տան մարդկանց եւ նրանց ազգատոհմերի համեմատ հազարապետներ ու հարիւրապետներ նշանակեց Յուդայի ամբողջ երկրում ու Երուսաղէմում: Նա քսան եւ աւելի բարձր տարիք ունեցող մարդկանց հաշուառում կատարեց եւ տեսաւ, որ նրանք պատերազմի ելնելու, նիզակ ու ասպար կրելու ընդունակ երեք հարիւր հազար հոգի են: 6 Բացի այդ, Իսրայէլից նա հարիւր տաղանդ[†] արծաթով հարիւր հազար հզօր մարդ վարձեց: 7 Նրա մօտ Աստծու մի մարդ եկաւ եւ ասաց. «Արքա՛յ, թող Իսրայէլի զօրքերը քեզ հետ չգնան, որովհետեւ Տէրը Իսրայէլի հետ չէ եւ նոյնիսկ Եփրեմի ոչ բոլոր որդիների հետ է: 8 Եթէ դու կարծում ես, թէ այդ զօրքով ես զօրանալու, ապա Տէրը քեզ պարտութեան կը մատնի քո թշնամիների առջեւ, քանզի Տէրն է թէ՛ յաղթանակ պարգեւողը եւ թէ՛ պարտութեան մատնողը»: 9 Ամասիասն ասաց Աստծու մարդուն. «Հապա ի՞նչ անեմ այն հարիւր տաղանդը, որ տուել եմ Իսրայէլի զօրքի համար»: Աստծու մարդն ասաց նրան. «Տէրը քեզ դրանից աւելի՛ն կը տայ»: 10 Ամասիասն իր զօրքից բաժանեց այն զօրքը, որ եկել էր իր մօտ Եփրեմից, որպէսզի իր տեղը վերադառնայ: Սրանք շատ զայրացան Յուդայի երկրի վրայ եւ բարկութեամբ ու ցասումով վերադարձան իրենց տեղը:

ՊԱՏԵՐԱԶՄ ՍԷԻՐԻ ԴԷՄ
(Դ Թագ. 14. 7)

11 Ամասիասը հզօրանալով՝ վերցրեց իր զօրքն ու գնաց Աղի հովիտը եւ Սէիրի որդիներից կոտորեց տասը հազար մարդ: 12 Տասը հազար էլ Յուդայի երկրի մարդիկ գերի բռնեցին ու տարան քարաժայռի գլուխը, բարձունքի եզրից նրանց գահավէժ անելով՝ բոլորին սպանեցին:

13 Այն գնդերի մարդիկ, որոնց Ամասիասը յետ էր դարձրել, որ իր հետ պատերազմի չգնան, յարձակուեցին Յուդայի երկրի քաղաքների վրայ Սամարիայից մինչեւ Բեթորոն, երեք հազար հոգու կոտորեցին եւ բազում աւար տարան:

14 Երբ Ամասիասը եդոմայեցիներին ջարդելուց յետոյ վերադարձաւ, իր հետ բերեց Սէիրի որդիների աստուածներին եւ նրանց դարձրեց իր աստուածները, երկրպագեց նրանց, եւ հէնց ինքն էլ

[†]Իմաստի յստակութեան համար այս համարում հետեւել ենք երրայերէն բնագրին:

[†]Շուրջ 300 կիլոգրամ:

նրանց զոհեր էր մատուցում: 15 Տիրոջ բարկութիւնը բորբոքուեց Ամասիասի դէմ. Նա նրա մօտ մարգարէներ առաքելով՝ ասաց նրան. «Ինչո՞ւ յարեցիր դու այդ աստուածներին, որոնք իրենց ժողովրդին քո ձեռքից չփրկեցին»: 16 Երբ նա խօսում էր, արքան ասաց նրան. «Մի՞թէ քեզ արքայի խորհրդական եմ նշանակել, զգո՛յշ եղիր, թէ չէ տանջանքի կ'ենթարկուես»: Մարգարէն լռեց եւ ապա ասաց. «Գիտեմ, որ Տէրը որոշել է քեզ կործանել, որովհետեւ դու այս բանն արեցիր եւ չանսացիր իմ խրատներին»:

ՊԱՏԵՐԱԶՄ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԷՄ
(Դ Թագ. 14. 8-20)

17 Ամասիասը խորհուրդ արեց եւ Իսրայէլի արքայ Յէուի որդի Յովաքազի որդի Յովասի մօտ մարդ ուղարկելով՝ ասաց. «Ե՛կ, եւ երես առ երես հանդիպենք»: 18 Իսրայէլի արքայ Յովասը Յուդայի երկրի արքայ Ամասիասի մօտ մարդ ուղարկելով՝ ասաց. «Լիբանանի փուշը լուր ուղարկեց Լիբանանի մայրի ծառին՝ ասելով. "Քո դստերը իմ որդուն կնութեա՛ն տուր": Եւ ահա անցան Լիբանանի անապատի գազանները եւ կոխոտեցին փուշը»: 19 Այնուհետեւ աւելացրեց. «Դու ահա կոտորեցիր եդոմայեցիներին, եւ քո սիրտը լցուել է սնապարծութեամբ: Այսուհետեւ տանդ նստի՛ր, ինչո՞ւ ես լցւում չարութեամբ: Դու կը կոտորուես, եւ Յուդայի երկիրն էլ՝ քեզ հետ»: 20 Ամասիասը չլսեց նրան, քանզի Տէրը որոշել էր նրան մատնել Յովասի ձեռքը այն բանի համար, որ յարել էր եդոմայեցիների աստուածներին: 21 Ելաւ Իսրայէլի արքայ Յովասը, եւ նա ու Յուդայի երկրի արքայ Ամասիասն իրար դէմ ելան Բեթսամիւսում, որը Յուդայի երկրում է գտնւում: 22 Յուդայի երկիրը պարտուեց Իսրայէլից, եւ ամէն մարդ իր վրանը փախաւ: 23 Իսրայէլի արքայ Յովասը Բեթսամիւսում գերի բռնեց Յուդայի երկրի արքայ Յովասի որդի Ամասիասին ու տարաւ Երուսաղէմ: Նա քանդեց Երուսաղէմի պարսպի մի մասը Եփրեմի դռնից մինչեւ Անկեան դուռը՝ չուրջ երեք հարիւր կանգուն: 24 Նա տարաւ Աբդեդոմի հսկողութեան տակ գտնուող Տիրոջ տան ամբողջ ոսկին, արծաթն ու սպասքը, նաեւ թագաւորի տան գանձերն ու ապօրինածին մարդկանց եւ վերադարձաւ Սամարիա:

ԱՄԱՍԻԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

25 Յուդայի երկրի արքայ Յովասի որդի Ամասիասը Իսրայէլի արքայ Յովաքազի որդի Յովասի մեռնելուց յետոյ ապրեց տասնհինգ տարի: 26 Ամասիասի մնացեալ գործերը, սկզբից մինչեւ վերջինը, չէ՞ որ գրուած են Իսրայէլի ու Յուդայի երկրի թագաւորների գրքում: 27 Այն ժամանակ, երբ Ամասիասը հեռացել էր Տիրոջից, զօրքը Երուսաղէմում ապստամբեց նրա դէմ, եւ նա փախաւ Լաքիս: Նրա յետեւից մարդ ուղարկեցին Լաքիս: Եւ այնտեղ սպանեցին նրան: 28 Նրա դիակը դրեցին ձիերի վրայ եւ բերեցին ու թաղեցին իր նախնիների մօտ, Դաւթի քաղաքում:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՕԶԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 14. 21-22, 15. 1-7)

26 Եւ երկրի ամբողջ ժողովուրդը առաւ տասնվեցամեայ Օզիասին եւ թագաւոր դարձրեց նրան իր հայր Ամասիասի փոխարէն: 2 Նա վերակառուցեց Ելաթը եւ այն վերադարձրեց Յուդայի երկրին, երբ արքան արդէն գնացել էր իր նախնիների գիրկը: 3 Օզիասը թագաւոր դարձաւ տասնվեց տարեկան հասակում եւ յիսուներկու տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա երուսաղէմացի մօր անունն էր Յեքելիա: 4 Նա արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առջեւ, ըստ այն ամենի, որ իր հայր Ամասիասն էր արել: 5 Զաքարիա իմաստունի կենդանութեան օրօք Օզիասը Տիրոջ երկիւղով Տիրոջն էր յարել: Նրա օրերին նա Տիրոջը ձգտեց: Եւ Տէրը նրան յաջողութիւն պարգեւեց: 6 Նա ելաւ ու պատերազմեց այլազգիների դէմ, քանդեց Գեթի պարիսպը, Յաբիսի պարիսպը, Ազոտի պարիսպը եւ այլազգիների մօտ կառուցեց Ազոտի քաղաքները: 7 Տէրը նրան զօրացրեց այլազգիների, քարայրաբնակ արաբների եւ մինեցիների դէմ: 8 Մինեցիները հարկ էին տալիս Օզիասին, եւ նրա անունը տարածուեց մինչեւ Եգիպտոս, որովհետեւ նա շատ հզօրացաւ: 9 Օզիասը կառուցեց Երուսաղէմի աշտարակները Ջորի դռան ու Անկեան դռան մօտ եւ ամրացրեց դրանք: 10 Նա աշտարակներ կառուցեց անապատում եւ բազում ջրհորներ փորեց, որովհետեւ շատ անասուններ ունէր Սեփելայում ու ցածրադիր դաշտավայրում եւ այգեգործներ՝ լեռներում եւ Կարմելոսում. նա սիրում էր երկրագործութիւնը: 11 Օզիասն ունեցաւ մարզուած զօրք՝ պատրաստ պատերազմելու: Եւ նրա գնդերը մարտի էին ելնում: Նրանց թիւը յայտնի էր Յեկել գրագրին, Մասիաս դատաւորին եւ արքայի փոխանորդ Անանիային: 12 Պատերազմի ժամանակ բոլոր քաջազուն ցեղապետների գնդերում լինում էր երկու հազար վեց հարիւր զինուոր: 13 Նրանց հետ կար երեք հարիւր եօթը հազար հինգ հարիւր հոգուց բաղկացած պատերազմող զօրք: Սրանք էին, որ մեծ հզօրութեամբ օգնելով արքային՝ պատերազմում էին թշնամիների դէմ: 14 Օզիասը ամբողջ զօրքի համար պատրաստել տուեց վահաններ, նիզակներ, սաղաւարտներ, զրահներ, աղեղներ եւ քարանետ պարսատիկներ: 15 Երուսաղէմում նա մեծ վարպետութեամբ սարքուած մեքենաներ պատրաստել տուեց, որոնք պարիսպների ու անկիւնների վրայ դրուելով՝ նետեր ու հսկայ քարեր էին արձակում: Նրա ռազմական պատրաստութեան մասին լսեցին հեռաստաններում, որովհետեւ նա իր հզօրութեան համար պարտական էր սքանչելի օգնութեան:

ՕԶԻԱՍԸ ՊԱՏԺԻՈՒՄ Է ԻՐ ԳՈՌՈԶՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

16 Երբ Օզիասը զօրացաւ, այնքան մեծամտացաւ, որ անխուսափելի դարձաւ նրա կործանումը: Նա անիրաւութիւն գործեց իր Տէր Աստծու դէմ. մտաւ Տիրոջ տաճարը եւ խունկ ծխեց խնկի սեղանի վրայ: 17 Նրա յետեւից մտաւ Ազարիաս քահանան, Ազարիասի հետ Տիրոջ ութսուն քահանաներ՝ հզօր մարդիկ, 18 որոնք կանգնելով Օզիաս արքայի դիմաց՝ ասացին նրան. «Օզիա՛ս, դու Տիրոջը խունկ ծխելու իրաւունք չունես, այլ՝ միայն Ահարոնի որդի քահանաները, որոնք սրբագործուած են խունկ ծխելու համար: Ելի՛ր սրբարանից, քանի որ ապստամբեցիր Տիրոջ դէմ, եւ դրա համար Տէր Աստծու առջեւ դու փառք չես գտնի»: 19 Օզիասը զայրացաւ, եւ երբ, իր ձեռքին ունենալով տաճարում խունկ ծխելու բուրվառը, բարկացաւ քահանաների վրայ, բորոտութիւն երեւաց նրա ճակատին, քահանաների առջեւ, Տիրոջ տանը, խնկի սեղանի մօտ: 20 Առաջին քահանան եւ միւս քահանաները նրա կողմը դարձան եւ տեսան, որ նրա ճակատը բորոտութեամբ է պատած, ուստի նրան անմիջապէս դուրս հանեցին: Ինքն էլ փութաց դուրս գալ, քանի որ Տէրը պատժել էր նրան:

ՕԶԻԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

21 Օզիաս արքան բորոտ մնաց մինչեւ իր վախճանը: Նա տան մէջ մեկուսացած էր նստում բորոտ վիճակում՝ արտաքսուած Տիրոջ տնից: Նրա որդի Յովաթամը, դառնալով թագաւորական տան վերակացուն, ղեկավարում էր երկրի ժողովրդին:

22 Օզիասի մնացեալ գործերը, սկզբից մինչեւ վերջինը, գրի է առել Ամոսի որդի Եսայի մարգարէն: 23 Օզիասը գնաց իր նախնիների գիրկը, եւ նրան թաղեցին իր նախնիների մօտ, թագաւորների գերեզմանների դաշտում, որովհետեւ նա բորոտ էր:

Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Յովաթամը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱԹԱՄ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 15. 32-38)

27 Քսանհինգ տարեկան էր Յովաթամը, երբ թագաւոր դարձաւ, եւ տասնվեց տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Յերուսա էր.

սա Սադոկի դուստրն էր: 2 Յովաթամն արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առաջ, արեց այն բոլորը, ինչ իր հայր Օզիասն էր արել: Նա, սակայն, Տիրոջ տաճարը չմտաւ: Իսկ ժողովուրդը դեռ շարունակում էր մեղքեր գործել: 3 Նա շինեց Տիրոջ տան Վերին դուռը եւ Օփելի պարսպի վրայ շատ բաներ կառուցեց: 4 Յուդայի երկրի լեռներում ու անտառներում նա կառուցեց քաղաքներ, բնակավայրեր եւ աշտարակներ: 5 Նա կռուեց ամոնացիների արքայի դէմ եւ յաղթեց նրան. ամոնացիները նրան տարեկան հարիւր տաղանդ արծաթ էին տալիս, տասը հազար քոռ[†] ցորեն ու տասը հազար քոռ գարի: Այս ամէնը Ամոնի արքան բերում էր ամէն տարի՝ թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ, թէ՛ երրորդ տարում: 6 Յովաթամը զօրացաւ, որովհետեւ նա ուղիղ էր ընթանում Տիրոջ առաջ նրա ճանապարհներով:

7 Յովաթամի մնացեալ գործերը, նրա պատերազմներն ու մարտերը ահա գրի են առնուած Յուդայի երկրի եւ Իսրայէլի թագաւորների գրքում: 8 Նա քսանհինգ տարեկան էր, երբ թագաւոր դարձաւ, եւ տասնվեց տարի թագաւորեց Երուսաղէմում: 9 Յովաթամը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Դաւթի քաղաքում:

Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Աքազը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՔԱԶ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 16. 1-4)

28 Երբ Աքազը թագաւոր դարձաւ, քսան տարեկան էր: Նա տասնվեց տարի թագաւորեց Երուսաղէմում: Նա չարեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առաջ, ինչպէս որ արել էր իր նախահայր Դաւիթը: 2 Նա ընթացաւ Իսրայէլի թագաւորների ճանապարհներով. նա կուռքերի քանդակներ պատրաստեց 3 եւ Բենեմի երկրում նրանց կուռքերին զոհեր մատուցեց, իր որդիներին կրակի միջով անցկացրեց՝ կատարելով այն հեթանոս ազգերի գարշելի գործերը, որոնց քշել էր Տէրը իսրայէլացիների առջեւից: 4 Նա խունկ էր ծխում բարձրադիր մեհեաններում, տանիքների վրայ եւ ամէն մի սաղարթաւոր ծառի տակ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՍՈՐԻՔԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԷՄ
(Դ Թագ. 16. 5)

5 Տէրը Աքազ թագաւորին մատնեց Ասորիքի արքայի ձեռքը, որը հարուածեց նրան եւ նրանցից մեծ թուով գերիներ վերցնելով՝ տարաւ Դամասկոս: Նա նաեւ Իսրայէլի թագաւորի ձեռքը մատնեց նրան, որը մեծամեծ հարուածներ հասցրեց նրան: 6 Իսրայէլի արքայ Ռոմելայի որդի Փակեէն մի օրում Յուդայի երկրում հարիւր քսան հազար զօրաւոր մարդկանց կոտորեց այն բանի համար, որ նրանք լքել էին իրենց հայրերի Տէր Աստծուն: 7 Եփրեմի սերնդից մի հզօր մարդ՝ Զեքրին, սպանեց արքայի որդի Ամասիասին, նրա տան իշխան Եզրիկամին եւ արքայի փոխանորդ Եղկանային: 8 Իսրայէլացիները Յուդայի երկրի իրենց եղբայրներից գերեվարեցին երեք հարիւր հազար կին, տղաներ ու աղջիկներ եւ բազում աւար առնելով նրանցից՝ տարան Սամարիա:

ՕԴԵԴ ՄԱՐԳԱՐԷՆ

9 Այնտեղ կար Տիրոջ մի մարգարէ, որի անունն էր Օդեդ: Նա դիմաւորելով Սամարիա եկող զօրքը՝ ասաց նրանց. «Ահա ձեր հայրերի Տէր Աստծու բարկութիւնն իջաւ Յուդայի երկրի վրայ, եւ Աստուած նրանց ձեր ձեռքը մատնեց. դուք նրանց կոտորեցիք այնպիսի կատաղութեամբ, որը մինչեւ երկինք հասաւ: 10 Արդ, դուք ուզում էք, որ Յուդայի երկրի եւ Երուսաղէմի մարդիկ ստրուկներ եւ ստրկուհիներ դառնան: Բայց չէ՞ որ ես, ահա, ձեզ հետ եմ որպէս ձեր Տէր Աստծու վկայ: 11 Հիմա լսեցէ՛ք ինձ եւ ձեր եղբայրներին ազատեցէ՛ք գերութիւնից, թէ չէ Տիրոջ կատաղի բարկութիւնը կ'իջնի ձեզ վրայ»:

12 Եփրեմի սերնդի իշխանները՝ Յովնանի որդի Ազարիասը, Մոսոքլոմոթի որդի Բարաքիասը, Ելեմի որդի Եզեկիասը եւ Ադլիայի որդի Մասիասը ելան պատերազմից եկողների դէմ եւ ասացին նրանց. 13 «Այդ գերիներին մեզ մօտ մի՛ բերէք, որովհետեւ Տիրոջ դէմ մեզ մեղանչել էք տալիս եւ աւելացնում էք մեր մեղքերն ու անխելքութիւնը: Բազում են ձեր այդ մեղքերը, եւ Տիրոջ կատաղի զայրոյթը Իսրայէլի վրայ է»: 14 Պատերազմողները ազատ արձակեցին գերիներին եւ վերադարձրին աւարը իշխանների եւ բոլոր ժողովականների առջեւ: 15 Այս գործի համար յականէ յանուանէ նշանակուած մարդիկ վեր կացան եւ խնամեցին գերիներին, բոլոր մերկերին հագցրին աւարի մէջ եղած հագուստներից, տուեցին կօշիկներ, կերցրին, իւղով օծեցին, բոլոր տկարներին գրաստ տուեցին ու տարան Երիքով՝ արմաւենիների քաղաքը, իրենց եղբայրների մօտ, իսկ իրենք վերադարձան Սամարիա:

ԱՔԱԶԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ԱՍՈՐԵՍՏԱՆԻՑ
(Դ Թագ. 16. 7-9)

16 Այդ ժամանակ Աքազը լուր ուղարկեց Ասորեստանի արքային, որ օգնի իրեն, 17 քանզի եդոմայեցիները յարձակուել էին Յուդայի երկրի վրայ, հարուածել, գերիներ տարել: 18 Այլազգիները յարձակուել էին Դաշտավայրի քաղաքների վրայ, լիբէացիները եկել էին Յուդայի երկիրը, գրաւել Բեթսամիւսը, Այելոնը, Գադերոթը, Սոկքովն ու նրա գիւղերը, Թամնան ու նրա գիւղերը, Գամեզերն ու նրա գիւղերը եւ բնակուել այնտեղ: 19 Տէրը ընկճել էր Յուդայի երկիրը Յուդայի արքայ Աքազի պատճառով, որը, անհաւատարիմ լինելով, հեռացել էր Տիրոջից: 20 Նրա վրայ յարձակուեց Ասորեստանի արքայ Թագղաթփաղասարը, հարուածեց նրան, 21 իսկ Աքազը, առնելով Տիրոջ տանը եւ թագաւորի ու իշխանների տանը եղած ամէն ինչը, յանձնեց Ասորեստանի արքային, որը ոչ միայն չօգնեց իրեն, այլ ինքը եւս նեղեց իրենց:

ԱՔԱԶԻ ՍԽԱԼՆԵՐԸ

22 Եւ էլ աւելի հեռանալով Տիրոջից՝ 23 արքան ասաց. «Ես պիտի յարեմ Դամասկոսի աստուածներին, որոնք ինձ հարուածեցին»: Նա նաեւ ասաց. «Քանի որ Ասորեստանի թագաւորի աստուածները զօրաւոր են, այսուհետեւ նրա՛նց զոհեր կը մատուցեմ, եւ նրանք ինձ կ'օգնեն»: Սակայն այդ աստուածները նրա ու ամբողջ Իսրայէլի առաջ խոչընդոտներ յարուցեցին:

24 Աքազը Տիրոջ տան սպասքը վերցրեց, կտոր-կտոր արեց, Տիրոջ տան դռները փակեց եւ իր համար զոհասեղաններ դրեց Երուսաղէմի ամէն մի անկիւնում: 25 Յուդայի երկրի բոլոր քաղաքներում բարձրադիր մեհեաններ կառուցեցին, խունկ ծխեցին օտար աստուածների առաջ եւ զայրացրին իրենց հայրերի Տէր Աստծուն:

26 Աքազի մնացեալ գործերը, սկզբից մինչեւ վերջինը, ահա գրի են առնուած Յուդայի երկրի եւ Իսրայէլի թագաւորների գրքում: 27 Աքազը գնաց իր նախնիների գիրկը եւ թաղուեց Դաւթի քաղաքում, քանզի նրան թագաւորների գերեզմանոցում չթաղեցին:

Նրա փոխարէն թագաւորեց Եզեկիասը:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԵԶԵԿԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 18. 1-3)

29 Եզեկիասը քսանհինգ տարեկան էր, երբ թագաւոր դարձաւ: Նա քսանինը տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունը Աբաւթ էր: Սա Զաքարիայի դուստրն էր: 2 Եզեկիասը արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առաջ, ինչպէս արել էր իր նախահայր Դաւիթը:

ՏԱՃԱՐԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

3 Երբ Եզեկիասը հաստատուեց իր թագաւորութեան մէջ, առաջին ամսին նա բացեց Տիրոջ տան դռները եւ նորոգեց դրանք: 4 Նա ներս տարաւ քահանաներին ու ղեւտացիներին եւ կանգնեցրեց արեւելեան կողմը: 5 Նա

[†]Շուրջ 3000 տոննա:

ասաց նրանց. «Լսեցէ՛ք, ղեւտացինե՛ր, այսուհետեւ պէտք է սրբուէք ու սրբէք ձեր հայրերի Տէր Աստծու տունը, պղծութիւնները պէտք է դուրս հանէք սրբարաններից: 6 Մեր հայրերը անհաւատարիմ եղան ու չարիք գործեցին Տիրոջ առջեւ, լքեցին նրան եւ իրենց երեսները չուռ տուեցին Տիրոջ խրանից, 7 ընդվզեցին ու փակեցին տաճարի դռները, հանգցրին ճրագները, խունկ չծխեցին եւ զոհեր չմատուցեցին Իսրայէլի սուրբ Աստծուն: 8 Տէրը խիստ զայրացաւ Ցուդայի երկրի ու Երուսաղէմի վրայ եւ նրանց մատնեց յիմարութեան, կորստեան ու խայտառակութեան, ինչպէս դուք տեսնում էք ձեր աչքերով: 9 Եւ ահա մեր հայրերը սրակոտոր եղան, իսկ ձեր տղաներն ու աղջիկները եւ կանայք գերութեան մէջ են ոչ իրենց երկրում, ուր գտնւում են այժմ: 10 Եկէ՛ք մենք սրտանց ուխտ դնենք Իսրայէլի Տէր Աստծու հետ, որ նա իր բարկութիւնը վերացնի մեզնից: 11 Արդ, այսուհետեւ անհոգութիւն մի՛ արէք, քանզի Տէրը ձեզ ընտրել է, որ կանգնէք նրա առջեւ, պաշտէք նրան, սպասաւորէք ու խունկ ծխէք»:

12 Ոտքի ելան ղեւտացիները՝ Կահաթի տոհմից Ամասիի որդի Մայէթը, Զաքարիայի որդի Ցովէլը, Մերարիի տոհմից Աբդիի որդի Կիսը, Ցելէլի որդի Ազարիասը, Զեմաթի որդի Ցովան, Ցովաքայի որդի Ցովադան, 13 Եղիսափանի տոհմից Սամարին եւ Էիէլը, Ասափի տոհմից Զաքարիասը եւ Մաթանիասը, 14 Եմանի տոհմից Էիէլը եւ Սեմէին, Իդիթունի տոհմից Սամիասը եւ Օզիէլը: 15 Սրանք հաւաքեցին իրենց եղբայրներին եւ, ըստ թագաւորի պատուիրանի ու Տիրոջ հրամանի, իրենք սրբուեցին, որ սրբեն Տիրոջ տունը: 16 Քահանաները մտան Տիրոջ տունը, որ սրբեն այն, եւ դուրս հանեցին այն ամէն տեսակ աղտեղութիւնները, որ գտան Տիրոջ տանն ու Տիրոջ տան գաւթում: Ղեւտացիները դուրս հանեցին դրանք եւ առան տարան Կեդրոնի հեղեղատը: 17 Նրանք առաջին ամսի առաջին օրը սկսեցին մաքրել այն եւ ամսի ութերորդ օրը մտան Տիրոջ տաճարը: Նրանք ութ օր մաքրեցին Տիրոջ տունը եւ առաջին ամսի տասնվեցերորդ օրը աւարտեցին աշխատանքը:

ՏԱՃԱՐԻ ՎԵՐԸՆԾԱՅՈՒՄԸ

18 Նրանք գնացին Եզեկիաս արքայի մօտ եւ ասացին. «Մաքրեցինք Տիրոջ տան մէջ եղած ամէն ինչ՝ ողջակէզների զոհասեղանն ու նրա սպասքը, առաջաւորութեան սեղանն ու նրա սպասքը 19 եւ այն բոլոր անօթները, որ Աքազ արքան պղծել էր իր թագաւորութեան ու Տիրոջ հանդէպ իր անհաւատարմութեան ժամանակ, կարգի բերել եւ մաքրել ենք. եւ ահա դրանք Տիրոջ զոհասեղանի առջեւ են»:

20 Եզեկիաս արքան առաւօտ կանուխ վեր կացաւ ու հաւաքելով քաղաքի իշխաններին՝ գնաց Տիրոջ տունը: 21 Նա եօթը զուարակ, եօթը խոյ, եօթը գառ եւ եօթը նոխազ զոհեց թագաւորութեան, սրբութիւնների ու Իսրայէլի մեղքերի քաւութեան համար: Նա ասաց քահանաներին՝ Ահարոնի որդիներին. «Մօտեցէ՛ք Տիրոջ զոհասեղանին եւ մորթեցէ՛ք զուարակները»: 22 Քահանաները վերցրին զոհերի արիւնը եւ ցանեցին զոհասեղանի վրայ, մորթեցին խոյերը եւ արիւնը ցանեցին զոհասեղանի վրայ, մորթեցին գառները եւ արիւնը ցանեցին զոհասեղանի վրայ: 23 Նոխազները մեղքերի քաւութեան համար զոհ մատուցեցին արքայի ու ժողովրդի առջեւ եւ իրենց ձեռքերը դրեցին դրանց վրայ: 24 Քահանաները մորթեցին դրանք եւ արիւնը քաւութեան համար զոհասեղանի վրայ ցանեցին ու քաւութիւն արեցին ամբողջ Իսրայէլի համար, քանզի արքան ասել էր, որ ողջակէզները եւ մեղքերի քաւութեան զոհաբերութիւնը ամբողջ Իսրայէլի համար անեն: 25 Ղեւտացիներին տեղաւորեցին Տիրոջ տանը ծնծղաներով, տաւիզներով ու քնարներով, ինչպէս պատուիրել էին Դաւիթ արքան, թագաւորի տեսանող Գադն ու Նաթան մարգարէն, քանզի Տիրոջ պատուիրանով հրամանը մարգարէների միջոցով էր տրւում: 26 Ղեւտացիները կանգնեցին Դաւիթ արքայի պատրաստած նուագարաններով, իսկ քահանաները՝ շեփորներով: 27 Եզեկիասը կարգադրեց, որ ողջակէզները դնեն զոհասեղանի վրայ: Երբ սկսեցին ողջակէզները դնել զոհասեղանի վրայ, սկսեցին օրհներգել Տիրոջը Իսրայէլի Դաւիթ արքայի պատրաստած նուագարաններով ու շեփորներով: 28 Բոլոր հաւաքուածները երկրպագում էին, սաղմոսերգուները երգում էին, շեփորներ հնչեցնում մինչեւ ողջակէզների մատուցման աւարտը: 29 Երբ ողջակէզների մատուցումը վերջացրին, թագաւորը խոնարհուեց, եւ բոլոր քահանաները երկրպագեցին: 30 Եզեկիաս արքան ու իշխանները ղեւտացիներին հրամայեցին, որ Տիրոջը օրհնեն Դաւթի ու Ասափ մարգարէի խօսքերով: Նրանք օրհնաբանեցին ուրախութեամբ եւ երեսնիվայր ընկնելով երկրպագեցին: 31 Եզեկիաս արքան այն ժամանակ ասաց. «Այժմ դուք լի ձեռքերով էք ներկայանում Տիրոջը, այսուհետեւ էլ այդպէս մօտեցէ՛ք եւ ընծաներ բերէ՛ք»: Եւ հաւաքուածները օրհնութեան նուէրներ բերեցին Տիրոջ տուն, իսկ ովքեր սրտով յօժար էին, ողջակէզներ մատուցեցին: 32 Հաւաքուածների մատուցած ողջակէզների թիւը այս էր. եօթանասուն զուարակ, հարիւր խոյ, երկու հարիւր գառ. սրանք բոլորը իբրեւ ողջակէզ մատուցուեցին Տիրոջը: 33 Նուիրաբերուած զուարակները վեց հարիւր էին, ոչխարները՝ երեք հազար: 34 Քահանաները սակաւաթիւ էին, ուստի չէին կարողանում հասցնել մորթել ողջակէզները: Նրանց օգնում էին իրենց ղեւտացի եղբայրները, մինչեւ որ գործն աւարտուեց, եւ քահանաները մաքրուեցին. ղեւտացիներն աւելի տրամադիր էին մաքրուելու, քան քահանաները: 35 Խաղաղութեան ու փրկութեան ողջակէզների հետ մէկտեղ, որոնք առատ էին ճարպերով, կային նաեւ ոչ կենդանական նուիրաբերումներ: Այսպիսով Տիրոջ տանը կարգի դրուեց սպասաւորութեան գործը: 36 Եզեկիասն ու ամբողջ ժողովուրդն ուրախացան, որ Աստուած սպասաւորութեան գործը կարգի էր բերել ժողովրդի համար. եւ այդ գործը երկար ժամանակ չխլեց:

ՋԱՏԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

30 Եզեկիասն ամբողջ Իսրայէլ ու Ցուդայի երկիր մարդ ուղարկեց, նամակ գրեց Եփրեմի ու Մանասէի երկրների բնակիչներին, որ գան Տիրոջ տունը, Երուսաղէմ՝ Իսրայէլի Աստծու զատիկը կատարելու: 2 Արքան, իշխաններն ու բոլոր ժողովականները, որ գտնւում էին Երուսաղէմում, որոշեցին զատիկը տօնել երկրորդ ամսին, 3 որովհետեւ չէին կարողացել ժամանակին կատարել այն, քանի որ բաւական թուով քահանաներ դեռ չէին մաքրուել, եւ ժողովուրդը չէր հաւաքուել Երուսաղէմում: 4 Սա ընդունելի թուաց արքային ու հաւաքուածներին, 5 եւ նրանք որոշեցին, որ ամբողջ Իսրայէլ լուր ուղարկեն, Բերսաբէէից մինչեւ Դան, որպէսզի գան եւ Իսրայէլի Տէր Աստծու զատիկը տօնեն Երուսաղէմում, քանզի քիչ մարդ էր հաւաքուել, հակառակ Գրուածքի թելադրանքին:

6 Սուրհանդակները, ըստ թագաւորի հրամանի, թագաւորի ու իշխանների նամակներով գնացին ամբողջ Իսրայէլի ու Ցուդայի բնակիչների մօտ եւ ասացին իսրայէլացիներին. «Դարձէ՛ք դէպի Աբրահամի, Իսահակի եւ Ցակոբի Տէր Աստուածը, որ նա էլ դառնայ դէպի փրկուածներդ ու Ասորեստանի արքայի ձեռքից ազատուածներդ: 7 Մի՛ նմանուէք ձեր եղբայրներին ու հայրերին, որոնք ընդվզեցին իրենց հայրերի Տէր Աստծու դէմ, եւ նա նրանց կործանման մատնեց, ինչպէս դուք տեսնում էք: 8 Արդ, կամակորութիւն մի՛ արէք, փա՛ռք տուէք Աստծուն, մտէ՛ք նրա սրբարանը, որը նա սրբացրել է յաւիտեան, ծառայեցէ՛ք ձեր Տէր Աստծուն, որ նա ձեր վրայից վերացնի իր սաստիկ բարկութիւնը: 9 Եթէ դառնաք դէպի Տէրը, ձեր եղբայրներն ու որդիները գթութիւն կը գտնեն իրենց գերեվարողների մօտ, եւ Նա նրանց կը վերադարձնի այս երկիրը: Մեր Տէր Աստուածը ողորմած ու գթառատ է եւ

մեզնից երես չի թեքի, եթէ մեր երեսն ուղղենք դէպի Նա»:
10 Սուրհանդակները գնում էին քաղաքից քաղաք, Եփրեմի ու Մանասէի լեռները մինչեւ Զաբուղոն, բայց նրանց ծաղրում ու արհամարհում էին:
11 Ասերի, Մանասէի եւ Զաբուղոնի բնակիչները, սակայն, խոնարհ գտնուեցին եւ եկան Երուսաղէմ ու Ցուդայի երկիրը: 12 Տիրոջ ձեռքը նրանց միասիրտ դարձրեց, որ նրանք գան ու կատարեն արքայի ու իշխանների հրամանը, ինչպէս ասել էր Տէրը:

ԶԱՏԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

13 Երուսաղէմում մեծ բազմութիւն հաւաքուեց՝ չափազանց շատ ժողովականներ, որ երկրորդ ամսում կատարեն Բաղարջակերաց տօնը: 14 Նրանք վեր կացան ու քանդեցին բոլոր զոհասեղանները, որ կային Երուսաղէմում եւ բոլոր վայրերում, ուր խունկ էին ծխում սուտ աստուածներին, եւ դրանք կործանելով գցեցին Կեդրոնի հեղեղատը: 15 Նրանք զատկի գառը մորթեցին երկրորդ ամսի տասնչորսին. քահանաներն ու ղեւտացիները, ամաչելով, մաքրուեցին եւ ողջակէզները տարան ներս՝ Տիրոջ տունը: 16 Նրանցից իւրաքանչիւրը, ըստ իրենց Օրէնքի, կանգնեց իր տեղում, ինչպէս պատուիրել էր Աստծու մարդ Մովսէսը, եւ քահանաները զոհի արիւնն ընդունում էին ղեւտացիների ձեռքից: 17 Քանի որ հաւաքուածներից շատերը դեռ չէին մաքրուած, ուստի ղեւտացիները զատկի զոհեր էին մորթում նաեւ նրանց համար, ովքեր Տիրոջ համար դեռ չէին մաքրուած: 18 Քանի որ Եփրեմի, Մանասէի, Իսաքարի, Զաբուղոնի մարդկանցից շատերը չէին մաքրուած, ուստի նրանք զատիկը կերան, հակառակ Գրուածքի թելադրանքին: Եզեկիասը նրանց համար աղօթելով՝ ասաց. 19 «Բարերա՜ր Տէր, ողորմի՛ր բոլոր ուղիղ սիրտ ունեցողներին, որոնք քեզ՝ իրենց հայրերի Տէր Աստծուն են յարում, թէեւ, ըստ սրբարանի մաքրութեան, մաքրուած չեն»: 20 Տէրը լսեց Եզեկիասին ու բուժեց ժողովրդին:
21 Երուսաղէմում գտնուող իսրայէլացիները Բաղարջակերաց տօնը եօթը օր տօնեցին մեծ ուրախութեամբ՝ ամէն օր օրհնաբանելով Տիրոջը, իսկ քահանաներն ու ղեւտացիները նուագակցում էին Տիրոջ փառաբանութեանը յատկացուած նուագարաններով: 22 Եզեկիասը համոզեց բոլոր ղեւտացիներին եւ միւս իմաստուններին, որոնց ծանօթ էր Տիրոջ բարի հանճարը, եւ նրանք եօթը օր կատարեցին Բաղարջակերաց տօնը՝ փրկութեան զոհեր մատուցելով ու իրենց հայրերի Տէր Աստծուն գովաբանելով:
23 Եւ հաւաքուածները միահամուռ առաջարկեցին եօթը օր եւս տօն կատարել. եւ եօթը օր եւս ուրախութիւն արեցին: 24 Եզեկիասը Ցուդայի երկրից հաւաքուածներին տուել էր հազար զուարակ ու եօթը հազար ոչխար, իսկ իշխանները ժողովրդին տուեցին հազար զուարակ եւ տասը հազար ոչխար: Քահանաներից շատ-շատերը մաքրուեցին, 25 եւ բոլոր ժողովականները՝ քահանաներն ու ղեւտացիները, ինչպէս նաեւ Ցուդայի երկրի ամբողջ ժողովուրդը եւ նրանք, որ Իսրայէլից էին կամ Իսրայէլի երկրից էին եկել ու Ցուդայի երկրում էին բնակւում, ուրախացան: 26 Երուսաղէմում մեծ ուրախութիւն եղաւ. Իսրայէլի արքայ Դաւթի որդի Սողոմոնի օրերից սկսած այսպիսի տօն չէր եղել Երուսաղէմում:
27 Ոտքի ելան քահանաներն ու ղեւտացիները եւ օրհնեցին ժողովրդին. նրանց ձայնը լսելի դարձաւ, ու նրանց աղօթքը հասաւ երկինք՝ Տիրոջ սուրբ բնակարանը:

ԵԶԵԿԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՏԱՃԱՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

31 Երբ այս ամէնն աւարտուեց, ոտքի ելան Ցուդայի երկրի քաղաքներում գտնուող բոլոր իսրայէլացիները, ամբողջ Հրէաստանում, Բենիամինի, Եփրեմի ու Մանասէի երկրներում իսպառ փշրեցին արձանները, կոտորեցին կուռքերը, կործանեցին բարձրադիր մեհեանները ու բագինները: Եւ բոլոր իսրայէլացիներից իւրաքանչիւրը վերադարձաւ իր կալուածքը եւ իր քաղաքը:

2 Եզեկիասը քահանաների ու ղեւտացիների դասին նշանակեց հանապազօրեայ սպասաւորութեան, քահանայ լինեն թէ ղեւտացի, ամէն մէկին ըստ իր պաշտօնի, որպէսզի ողջակէզներ ու փրկութեան զոհեր մատուցեն, օրհնաբանեն, գովաբանեն եւ ծառայեն Տիրոջ տան սրահների դռների մօտ: 3 Թագաւորն իր ունեցուածքից բաժին հանեց առաւօտեան եւ երեկոյեան ողջակէզների, շաբաթ օրերի, ամսամուտների եւ տօների ողջակէզների համար, ինչպէս գրուած է Տիրոջ Օրէնքում: 4 Նա Երուսաղէմում բնակուող ժողովրդին կարգադրեց, որ բաժին տան քահանաներին ու ղեւտացիներին, որպէսզի սրանք կարողանան կատարել Տիրոջ տան ծառայութիւնը: 5 Երբ այս բանը հրամայեց, իսրայէլացիները առատօրէն բերեցին ցորենի, գինու, ձէթի, մեղրի եւ դաշտերի բոլոր բերքերի երախայրիքը: Իսրայէլացիներն ու Ցուդայի երկրի բնակիչները առատօրէն բերեցին նաեւ ամէն ինչի տասանորդը: 6 Ցուդայի երկրի քաղաքներում բնակուողները նոյնպէս բերեցին զուարակների ու ոչխարների տասանորդները, բերեցին եւ դարսեցին կոյտ-կոյտ: 7 Կոյտերն սկսեցին դիզուել երրորդ ամսին եւ աւարտի հասան եօթներորդ ամսին: 8 Եզեկիասն ու իշխանները եկան տեսան կոյտերը եւ օրհնեցին Տիրոջն ու նրա իսրայէլացի ժողովրդին: 9 Եզեկիասը քահանաներին ու ղեւտացիներին հարցրեց կոյտերի մասին, 10 եւ Ազարիաս քահանան՝ Սադոկի տան իշխանը, ասաց նրան. «Այն բանից յետոյ, երբ սկսեցին նուէրներ բերել Տիրոջ տունը, մենք կերանք ու խմեցինք եւ թողեցինք այդ մնացորդները, քանզի ամենակալ Տէրն օրհնեց իր այդ ժողովրդին, եւ ահա այսքան շատ էլ աւելացել է»:
11 Եզեկիասն ասաց. «Ուրիշ շտեմարաններ եւս պատրաստեցէ՛ք Տիրոջ տանը»: 12 Պատրաստեցին եւ այնտեղ հաւատարմութեամբ բերեցին նուէրներն ու տասանորդները: Դրանց վերակացուն ղեւտացի Քոքենիասն էր, իսկ նրա եղբայր Սեմէին իր փոխանորդն էր: 13 Յեհիէլը, Օզիասը, Նաթանը, Ասայէլը, Յերիմոթը, Յոզաբադը, Ելիէլը, Սամաքիան, Մաաթը, Բանեասն ու նրա որդիները օգնում էին Քոքենիասին ու նրա եղբայր Սեմէին, ինչպէս հրամայել էր Եզեկիաս արքան: 14 Ազարիասը Տիրոջ տան ղեկավարն էր, ղեւտացի Յեմնայի որդի Կորէն արեւելեան կողմի դռան պահապանն էր, Տիրոջը մատուցուող նուէրների եւ ամենասուրբ իրերի վերակացուն, 15 որին հաւատարմօրէն օգնում էին Օդոմը, Բենիամինը, Յեսուն, Սեմէին, Մարիսը, Սեքինիան ու քահանաները: Նրանք, ըստ ամենօրեայ սպասաւորութեան, ըստ մեծի ու փոքրի, դրանք պիտի բաժանէին իրենց եղբայրներին, 16 նաեւ երեք տարեկանից բարձր տարիք ունեցող արական սեռի մարդկանց, ամէն մէկին, ով ամէն օր մտնում էր Տիրոջ տունը՝ ըստ իր կարգի ամենօրեայ սպասաւորութիւն կատարելու: 17 Քահանաները հաշուառուած էին ըստ իրենց ազգատոհմերի, իսկ քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող ղեւտացիները արձանագրուած էին ըստ իրենց ամենօրեայ պաշտօնի: 18 Սրանք արձանագրուած էին իրենց նոր ծնուած տղաներով եւ աղջիկներով ու ամբողջ բազմութեամբ, քանի որ սրանք հաւատարմօրէն սրբագործեցին սրբազան վայրը: 19 Ահարոնի քահանայ դարձած որդիներին օգնելու համար ամէն մի քաղաքում յականէ յանունէ նշանակուեցին մարդիկ, որոնք բաժին պէտք է հանէին արական սեռի բոլոր քահանաներին ու ղեւտացիների ցուցակի մէջ մտած մարդկանց:
20 Եզեկիասն այսպէս արեց ամբողջ Ցուդայի երկրում. նա Տիրոջ առաջ բարի եւ ուղիղ գործ կատարեց: 21 Ամէն մի գործ, որին ձեռնարկեց թէ՛ Տիրոջ տանը ծառայելիս, թէ՛ Տիրոջ օրէնքն ու պատուիրանը կատարելիս, իր ամբողջ սրտով յարեց Աստծուն, կատարեց եւ յաջողութիւն ունեցաւ:

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ
(Դ Թագ. 18. 13-37, 19. 14-19, 35-37, Եսայի 36. 1-22, 37. 8-38)

32 *Այս բաներից եւ հաւատարմութեամբ արուած գործերից յետոյ Ասորեստանի արքայ Սենեքերիմը յարձակուեց Ցուդայի երկրի վրայ եւ բանակատեղի դրեց պարսպապատ քաղաքների շուրջը: Նա ասում էր, որ կը գրաւի դրանք: 2 Եզեկիասը տեսնելով, որ Սենեքերիմը իր դէմ է եկել պատերազմելու Երուսաղէմի դիմաց, 3 խորհրդակցեց ծերերի ու զինուորականների հետ քաղաքից դուրս գտնուող աղբիւրների ջրերը փակելու մասին: Եւ փակեցին դրանք: 4 Նա մեծ թուով մարդկանց հաւաքեց, որոնք փակեցին աղբիւրների ջրերն ու գետի ճանապարհը, որ բաժանում էր քաղաքը՝ նրա միջով անցնելով: Նրանք ասացին. «Զլինի, թէ Ասորեստանի արքան, գալով, առատ ջուր գտնի եւ հզօրանայ»: 5 Եզեկիասը զօրացաւ եւ վերաշինեց բոլոր կործանուած պարիսպներն ու աշտարակները, ինչպէս նաեւ կառուցեց արտաքին մի ուրիշ պարիսպ: Նա ամրացրեց Դաւթի քաղաքի պատնէշները եւ շատ զէնք կուտակեց: 6 Նա զօրքերի վրայ հրամանատարներ նշանակեց, որոնք հաւաքուեցին նրա մօտ Զորի հրապարակում: Նա սրտապնդեց նրանց՝ ասելով. 7 «Զօրացէ՛ք ու քա՛ջ եղէք, մի՛ վախեցէք Ասորեստանի թագաւորից եւ այն ազգերից, որոնք նրա հետ են, որովհետեւ մեզ հետ եղածներն աւելի շատ են, քան նրանց հետ եղածները: 8 Նրանք ունեն մարմնաւոր բազուկներ, իսկ մեզ հետ է մեր Տէր Աստուածը, որ մեզ կը փրկի ու մեր պատերազմը ինքը կը մղի»: Եւ ժողովուրդը քաջալերուեց Ցուդայի երկրի արքայ Եզեկիասի խօսքերից:*

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

9 Դրանից յետոյ Ասորեստանի արքայ Սենեքերիմը իր զօրապետներին ուղարկեց Երուսաղէմ, իսկ ինքը իր ամբողջ զօրքով մնաց Լաքիսում: Նա լուր ուղարկեց Ցուդայի երկրի արքայ Եզեկիասին, որ Երուսաղէմում էր: Նա Երուսաղէմացիներին դիմելով՝ ասում էր. 10 «Այսպէս է ասում Ասորեստանի արքայ Սենեքերիմը. "Ո՞ւմ ապաւինելով էք դուք նստել Երուսաղէմի ամրոցում: 11 Չէ՞ որ Եզեկիասը ձեզ խաբում է, որ ձեզ մատնի մահուան, սովի ու ծարաւի՝ ասելով. "Ձեր Տէր Աստուածը կը փրկի ձեզ Ասորեստանի արքայի ձեռքից": 12 Դա այն Եզեկիասը չէ՞, որ քանդեց նրա զոհասեղանները, բարձրադիր մեհեանները եւ ասաց Ցուդայի՝ Երուսաղէմի բնակիչներին. "Միայն այս զոհասեղանի առջեւ պէտք է երկրպագէք եւ այս զոհասեղանի վրայ պիտի զոհ մատուցէք": 13 Դուք չգիտէ՞ք, թէ ինչ ենք արել ես եւ իմ հայրերը բոլոր ժողովուրդներին ու երկրներին: Մի՞թէ բոլոր այդ երկրների ազգերի աստուածները կարողացան փրկել իրենց ժողովրդին իմ ձեռքից: 14 Այս ազգերի բոլոր աստուածներից ո՞ր մէկին իմ հայրերը չկործանեցին, մի՞թէ կարողացան փրկել իրենց ժողովրդին իմ ձեռքից, եւ ինչպէ՞ս կարող է ձեր Աստուածը ձեզ իմ ձեռքից փրկել: 15 Արդ, Եզեկիասը թող ձեզ չխաբի, թող ձեզ չյուսադրի: Մի՛ հաւատացէք նրան, քանզի բոլոր ազգերի ու թագաւորութիւնների աստուածները չկարողացան իրենց ժողովուրդներին փրկել իմ եւ իմ նախնիների ձեռքից. ձեր Աստուածն էլ ձեզ չի փրկի իմ ձեռքից»: 16 Եւ դեռ աւելին խօսեցին նրա ծառաները Տէր Աստծու եւ նրա ծառայ Եզեկիասի մասին:

ՍԵՆԵՔԵՐԻՄԸ ՀԱՅՀՈՅՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ

17 Սենեքերիմը նամակ էր գրել, ուր հայհոյում էր Իսրայէլի Տէր Աստծուն եւ որի մասին ասում էր. «Երկրի ուրիշ ազգերի աստուածները իրենց ժողովուրդներին չփրկեցին իմ ձեռքից, նոյնպէս եւ Եզեկիասի Աստուածը իր ժողովրդին չի փրկի իմ ձեռքից»: 18 Եւ Սենեքերիմի զօրապետները եբրայերէն բարձրաձայն դիմեցին Երուսաղէմի պարսպի վրայ եղած ժողովրդին, որ օգնեն իրենց՝ քանդեն պարիսպը, որ-

պէսզի իրենք շուտափոյթ գրաւեն քաղաքը: 19 Նա խօսեց Երուսաղէմի Աստծու մասին այնպէս, ինչպէս կը խօսեն երկրի ժողովուրդների՝ մարդու ձեռքով կերտուած աստուածների մասին:

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ. ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՄԱՀԸ

20 Եզեկիաս արքան եւ Ամոսի որդի Եսայիաս մարգարէն աղօթք արեցին այս բանի համար եւ աղաղակեցին դէպի երկինք: 21 Տէրը հրեշտակ ուղարկեց եւ բնաջնջեց Ասորեստանի արքայի բանակում գտնուող բոլոր զօրաւոր մարդկանց եւ պատերազմիկներին, իշխաններին ու զօրագլուխներին: Սենեքերիմը ամօթապարտ վերադարձաւ իր երկիրը, գնաց իր աստուածների տունը, եւ իր հարազատ որդիներն այնտեղ սրով սպանեցին իրեն: 22 Տէրը Եզեկիասին ու Երուսաղէմի բնակիչներին փրկեց Ասորեստանի Սենեքերիմ արքայի ու ամենքի ձեռքից, եւ նրանց երկրի բոլոր վայրերում խաղաղութիւն տիրեց: 23 Շատերը Տիրոջը զոհեր էին բերում Երուսաղէմ եւ ընծաներ՝ Ցուդայի երկրի արքայ Եզեկիասին: Եզեկիասը բարձրացաւ բոլոր ազգերի աչքին:

ԵԶԵԿԻԱՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՆԸ ԵՒ ՀՊԱՐՏՈՒԹԻՆԸ
(Դ Թագ. 20. 1-3, 12-19, Եսայի 28. 1-3, 39. 1-8)

24 Դրանից յետոյ այդ օրերին Եզեկիասը մերձիմահ հիւանդացաւ: Նա աղօթք արեց Տիրոջը, որը լսեց նրան ու մի նշան ցոյց տուեց, 25 բայց Եզեկիասն իր նկատմամբ ցոյց տրուած բարերարութեան համեմատ չհատուցեց, այլ մեծամտացաւ, ուստի բարկութիւն իջաւ նրա, Ցուդայի երկրի ու Երուսաղէմի վրայ: 26 Եզեկիասը հրաժարուեց իր մեծամտութիւնից, նոյնպէս եւ Երուսաղէմի բնակիչները. եւ այլեւս Եզեկիասի թագաւորութեան օրօք Տիրոջ բարկութիւնը չիջաւ նրանց վրայ:

ԵԶԵԿԻԱՍԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՓԱՌՔԸ

27 Եզեկիասը շատ մեծ հարստութեան եւ փառքի տիրացաւ: Նա իր համար ոսկու, արծաթի եւ թանկարժէք քարերի գանձարաններ ստեղծեց, նաեւ հաւաքեց մեծ քանակութեամբ խունկ, զէնք, թանկարժէք անօթներ: 28 Նա կառուցել տուեց ցորենի, գինու եւ ձէթի շտեմարաններ, գիւղեր, ամէն տեսակ անասուններ, հոտերի համար գոմեր, 29 իր համար քաղաքներ: Նա մեծ թուով ոչխարներ ու արջառներ ունեցաւ, որովհետեւ Տէրը նրան չափազանց շատ հարստութիւն էր տուել: 30 Նոյն այս Եզեկիասը փակեց Վերին Գեհոնի ջրի ընթացքը եւ այն ուղղեց ցած՝ դէպի Դաւթի քաղաքի արեւմտեան կողմը: Եզեկիասի բոլոր գործերը յաջողութիւն ունեցան:

31 Երբ Բաբելոնից իշխաններ եւ դեսպաններ ուղարկեցին նրա մօտ՝ հարցնելու նրան իր մասին եւ իր երկրում եղած զարմանահրաշ գործերի մասին, Տէրը ազատ թողեց նրան՝ փորձելու եւ գիտենալու համար, թէ ի՞նչ կայ նրա սրտում:

ԵԶԵԿԻԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Դ Թագ. 20. 21-21)

32 Եզեկիասի մնացած գործերը եւ նրա բարեպաշտութիւնը ահա գրի են առնուած Ամոս մարգարէի որդի Եսայիասի մարգարէութեան մէջ եւ Ցուդայի երկրի ու Իսրայէլի թագաւորների գրքում: 33 Եզեկիասը գնաց իր նախնիների գիրկը, եւ նրան թաղեցին մի բարձր տեղ, Դաւթի յետնորդների գերեզմանների վերին մասում: Նրա մահուան առթիւ նրանց փառք ու պատիւ տուեցին ամբողջ Ցուդայի երկրի եւ Երուսաղէմի բնակիչները:

Նրա փոխարէն թագաւորեց իր որդի Մանասէն:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 21. 1-9)

33 *Մանասէն տասներկու տարեկան էր, երբ թագաւոր դարձաւ, եւ յիսունհինգ տարի թագաւորեց Երուսաղէմում: 2 Նա չարիք գործեց Տիրոջ առաջ՝ նմանութեամբ այն ազգերի գարշելի գործերի, որոնց բնաջնջել էր*

Տէրը իսրայէլացիների աչքի առաջ:
3 Նա վերականգնեց այն բարձրադիր
մեհեանները, որ իր հայրը՝ Եզեկիասը
քանդել էր, Բահաղիմի արձաններ
կանգնեցրեց եւ կուռքեր շինել տուեց:
Նա երկրպագեց երկնքի բոլոր զօրու-
թիւններին ու ծառայեց նրանց: 4 Նա
զոհասեղան պատրաստեց Տիրոջ տան
մէջ, որի մասին Տէրն ասել էր. «Իմ
անունը Երուսաղէմում յաւիտեան պի-
տի լինի»: 5 Նա այստեղ՝ Տիրոջ տան
երկու գաւիթներում, զոհասեղան շի-
նեց երկնքի բոլոր զօրութիւնների
համար: 6 Նա ինքն իր ձեռքով
որդիներին անցկացրեց կրակի միջով
Բենոնոմի երկրում եւ հմայութիւն, գու-
շակութիւն ու դիւթութիւն էր անում:
Նա ունէր վհուկներ ու կախարդներ:
Նա շատացրեց իր չար գործերը Տիրոջ
առջեւ՝ նրան բարկացնելու աստիճան:
7 Նա ձուլածոյ քանդակուած պատկեր
դրեց Տիրոջ տան մէջ, որի մասին
Աստուած ասել էր Դաւթին ու նրա
որդի Սողոմոնին. «Այս տան մէջ եւ
Երուսաղէմում, որ ես ընտրել եմ Իսրա-
յէլի բոլոր ցեղերի միջից, իմ անունը
պիտի դնեմ յաւիտեան 8 եւ Իսրայէլի
ոտքը չեմ կտրելու այս երկրից, որը
նրանց հայրերին տուեցի, միայն թէ
պահեն այն ամէնը, որ պատուիրել եմ
նրանց, ըստ Մովսէսի միջոցով տրուած
բոլոր օրէնքների, պատուիրանների ու
կանոնների»: 9 Բայց Մանասէն մոլո-
րեցրեց Յուդայի երկրի ու Երուսաղէմի
բնակիչներին, որ չարիք գործեն առա-
ւել, քան այն բոլոր ազգերը, որոնց
վերացրել էր Տէրը իսրայէլացիների
առաջից: 10 Տէրը խօսեց Մանասէի ու
նրա ժողովրդի հետ, սակայն նրանք
չլսեցին:

ՄԱՆԱՍԷԻ ՉՂՋՈՒՄԸ

11 Տէրը նրա դէմ հանեց Ասորեստանի արքայի զօրքի հրամանատարներին, որոնք բռնեցին Մանասէին, կապանքներով կապեցին ու տարան Բաբելոն: 12 Երբ նա նեղութեան մէջ ընկաւ, փնտռեց իր Տէր Աստծու ներկայութիւնը եւ խիստ նուաստացաւ իր նախնիների Աստծու առջեւ: 13 Նա աղօթեց Աստծուն. Աստուած լսեց նրա աղաչանքը ու նրան վերադարձրեց Երուսաղէմ, իր թագաւորութեանը: Եւ Մանասէն իմացաւ, թէ Տէրը Աստուած է:

14 Դրանից յետոյ նա Դաւթի քաղաքի արտաքին պարիսպը շինեց արեւմուտքից դէպի հարաւակողմ, հեղեղատի միջով, դռան մուտքի մօտ, Օփէլի շուրջը. նա շատ բարձրացրեց այն: Նա զօրքի հրամանատարներ նշանակեց Յուդայի երկրի բոլոր պարսպապատ քաղաքներում: 15 Նա Տիրոջ տնից վերացրեց օտար աստուածներին ու քանդակուած կուռքերը, նաեւ այն զոհասեղանները, որ պատրաստել էր Տիրոջ տան բարձունքի վրայ, Երուսաղէմում: Նա հրամայեց դրանք թափել քաղաքից դուրս: 16 Նա նորոգեց Տիրոջ զոհասեղանը եւ նրա վրայ փրկութեան ու օրհնութեան զոհեր մատուցեց: Նա պատուիրեց Յուդայի երկրի բնակիչներին, որ պաշտեն Իսրայէլի Տէր Աստծուն: 17 Ժողովուրդը, սակայն, տակաւին յաճախում էր բարձրադիր մեհեանները եւ զոհեր մատուցում, միայն թէ՝ իր Տէր Աստծուն:

ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Դ Թագ. 21. 17-18)

18 Մանասէի մնացած գործերն ու նրա աղօթքը Աստծուն, տեսանողների խօսքերը, որ ասել էին նրան յանուն Իսրայէլի Տէր Աստծու, 19 նրա աղօթքների խօսքերի մէջ են, այն աղօթքների, որոնցով նա լսեց Նրան. նրա բոլոր մեղքերն ու նրա անհաւատարմութիւնը Տիրոջ հանդէպ, այն բարձրադիր տեղերը, ուր մեհեաններ շինեց, կուռքեր ու քանդակուած պատկերներ պատրաստեց նախքան իր դարձի գալը, ահա գրի են առնուած տեսանողների գրքերում: 20 Մանասէն գնաց իր նախնիների գիրկը, եւ նրան թաղեցին իր տան պարտէզում:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԱՄՈՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 21. 19-26)

21 Մանասէի փոխարէն թագաւորեց իր որդի Ամոսը: Ամոսը քսաներկու

տարեկան էր, երբ թագաւոր դարձաւ,
եւ տասներկու տարի թագաւորեց
Երուսաղէմում: 22 Նա չարիք գործեց
Տիրոջ առաջ, ինչպէս արել էր իր
հայրը՝ Մանասէն. իր հօր պատ-
րաստած բոլոր կուռքերին Ամոսը
զոհեր մատուցեց եւ պաշտեց դրանք:
23 Նա դարձի չեկաւ Տիրոջ առջեւ,
ինչպէս դարձի էր եկել իր հայրը՝
Մանասէն, այլ նրա որդին՝ Ամոսը, իր
հօր գործած մեղքերի վրայ մեղք
աւելացրեց: 24 Նրա դէմ ելան իր
պալատականները ու նրան սպանեցին
իր տան մէջ: 25 Իսկ երկրի ժողովուրդը
սպանեց նրանց, որոնք յարձակուել
էին թագաւորի վրայ:

Եւ երկրի ժողովուրդը նրա փոխարէն
գահ բարձրացրեց նրա որդուն՝ Յոսիասին:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՍԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 22. 1-2)

34 Յոսիասը ութ տարեկան էր, երբ
թագաւոր դարձաւ, եւ երեսունմէկ տա-
րի թագաւորեց Երուսաղէմում: 2 Նա
արեց այն, ինչ ուղիղ էր Տիրոջ առջեւ.
գնաց իր նախնի Դաւթի ճանա-
պարհներով՝ չխոտորուելով ո՛չ աջ, ո՛չ
ձախ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

3 Իր թագաւորութեան ութերորդ
տարում, երբ Յոսիասը տակաւին
երիտասարդ էր, սկսեց յարել իր նախնի
Դաւթի Տէր Աստծուն, իսկ իր թա-
գաւորութեան տասներկուերորդ տա-
րում սկսեց մաքրել Յուդայի երկիրն ու
Երուսաղէմը բարձրադիր մեհեաննե-
րից, կուռքերից, ձուլածոյ աստուած-
ներից: 4 Նա իր իսկ ներկայութեամբ
կործանել տուեց Բահաղիմի զոհա-
սեղանները եւ սրանց վերեւի մասում
գտնուող բարձրադիր պաշտամունքի
տեղերը: Նա ջարդուփշուր արեց կուռ-
քերը, քանդակուած ու ձուլածոյ աս-
տուածները, փշրեց, փոշիացրեց դրանք
եւ շպրտեց դրանց զոհ մատուցողների
լիրիմների վրայ: 5 Նա զոհասեղան-
ների վրայ վառեց քրմերի ոսկորները
եւ մաքրեց Յուդայի երկիրը, Երուսա-
ղէմը, 6 Եփրեմի, Մանասէի, Շմաւոնի,
Նեփթալիմի քաղաքներն ու դրանց
շրջակայ վայրերը: 7 Նա վերացրեց
կուռքերը, բագիններն ու աստուած-
ների արձանները փշրեց, մանրեց եւ
բոլոր բարձրադիր մեհեանները վերաց-
նելով ամբողջ Իսրայէլի երկրից՝ վերա-
դարձաւ Երուսաղէմ:

ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ
(Դ Թագ. 22. 3-20)

8 Իր թագաւորութեան տասնութե-
րորդ տարում, երբ վերջացրել էր
երկիրն ու թագաւորական տունը մաք-
րելը, Սելիի որդի Սափանին, քաղաքի
իշխան Մասիասին ու Յովաքազի որդի
Յոսիասին՝ իր դիւանապետին ուղար-
կեց, որ նորոգեն իր Տէր Աստծու
տունը: 9 Սրանք եկան մեծ քահանայ
Քեղկիասի մօտ, եւ նա տուեց Տիրոջ
տուն բերուած արծաթ դրամը, որը
դռան ղեւտացի պահապանները հա-
ւաքել էին Մանասէի, Եփրեմի երկրնե-
րից, իշխաններից եւ Իսրայէլի մնացած
բոլոր վայրերից, Յուդայի, Բենիամինի
երկրների եւ Երուսաղէմի բնակիչ-
ներից: 10 Նրանք այն տուեցին գոր-
ծաւորներին, որոնք մնում էին Տիրոջ
տանը այն նորոգելու եւ ամրացնելու
համար: 11 Նրանք արծաթը տուեցին
հիւսներին եւ շինարարներին, որ խոշոր
քառանկիւն քարեր ու փայտէ գերան-
ներ գնեն, ծածկեն այն շենքերը, որ
Յուդայի երկրի թագաւորներն էին
քանդել: 12 Այդ մարդիկ հաւատար-
մօրէն կատարեցին գործը, եւ նրանց
վերակացուները՝ Մերարիի որդիներից
ղեւտացիներ Յէթն ու Աբդիասը, Կա-
հաթի որդիներից Զաքարիասն ու
Մեսոլամը եւ ամէն մի ղեւտացի, որ
գիտակ էր նուագարանների ընկերակ-
ցութեամբ երգեր կատարելու, հսկում
էին: 13 Վերակացուներ կային բեռնա-
կիրների, ամէն տեսակ գործեր կատա-
րողների ու աշխատանքի ղեկավար-
ների վրայ: Քարտուղարները, դատա-
ւորներն ու դռների պահապանները
ղեւտացիներից էին:

ՕՐԷՆՔԻ ԳՐՔԻ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

14 Երբ Տիրոջ տուն մտնելով հանում էին արծաթը, Քեղկիաս քահանան գտաւ Տիրոջ Օրէնքի գիրքը, որը գրուած էր Մովսէսի ձեռքով: 15 Քեղկիասը յայտնեց Սափան քարտուղարին. «Օրէնքի գիրք եմ գտել Տիրոջ տանը»: 16 Քեղկիասը Օրէնքի գիրքը տուեց Սափանին: Սափանը արքային յանձնեց այդ գիրքը, ինչպէս նաեւ ներկայացրեց գործ անող բանուորներին տրուած արծաթի հաշիւը: 17 Ցուլեցին Տիրոջ տանը գտնուած արծաթը եւ այն տուեցին վերակացուներին ու նրանց, որոնք գործ էին անում: 18 Սափան քարտուղարը պատմեց արքային՝ ասելով. «Քեղկիաս քահանան ինձ տուեց Օրէնքի գիրքը»: 19 Եւ Սափանն այն ընթերցեց թագաւորի առջեւ: Երբ արքան լսեց Օրէնքի գրքի խօսքերը, պատառոտեց իր պատմուճանը: 20 Արքան պատուիրեց Քեղկիասին, Սափանի որդի Աքիկամին, Միքեասի որդի Աբդիին, Սափան քարտուղարին եւ արքայի ծառայ Ասայիային՝ ասելով. 21 «Գնացէք հարցրէ՛ք Տիրոջը ինձ համար եւ Իսրայէլում ու Ցուդայի երկրում մնացած բոլորի համար, թէ ինչ են գրել այդ գտնուած գրքում, քանզի մեր նախնիների Տիրոջ խօսքերին չանսալու՝ այս գրքի մէջ գրուած ամէն ինչ չկատարելու պատճառով է Տիրոջ բարկութիւնը բորբոքուած մեզ վրայ»:

ՄԱՐԳԱՐԷՈՒՀՈՒ ՊԱՏԳԱՄԸ

22 Քեղկիասը եւ նրանք, որոնց հետ խօսել էր արքան, գնացին Օղդան մարգարէուհու՝ Եսերի որդի Թակուաթի որդի Սելեմի կնոջ մօտ, որը պահում էր պատուիրանները† եւ ապրում էր Երուսաղէմում՝ Մասենայում, եւ նրան պատմեցին վերեւում ասուած խօսքերը: 23 Նա ասաց նրանց. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Ասացէ՛ք այն մարդուն, որ ձեզ ինձ մօտ է ուղարկել, 24 թէ այսպէս է ասում Տէրը. "Ահա ես այդ տեղի վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն՝ պիտի կատարուեն այն խօսքերը, որ գրուած են այդ գրքում, եւ ընթերցել են Ցուդայի երկրի արքայի առջեւ. 25 քանի որ ինձ լքելով զոհեր մատուցեցին օտար աստուածներին, որպէսզի ինձ բարկացնեն իրենց ձեռքի գործերով, իմ բորբոքուած բարկութիւնն է իջնելու այդ տեղի վրայ եւ չի հանգարտուելու"": 26 Իսկ Տիրոջը փնտռելու համար ձեզ ուղարկած Ցուդայի երկրի թագաւորին այսպէ՛ս ասացէք. "Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. 27 'Քո լսած խօսքերը պատկառանքով լցրեցին քո սիրտը, եւ դու խոնարհուեցիր իմ առջեւ՝ լսելու համար իմ խօսքերը այդ տեղի ու նրա բնակիչների մասին: Դու խոնարհուեցիր իմ առջեւ, պատառոտեցիր քո պատմուճանը ու լաց եղար իմ դիմաց, ուստի ես եւս լսեցի քեզ, – ասում է Տէրը: 28 Ահա ես քեզ քո նախնիների մօտ պիտի տանեմ, քեզ քո շիրիմի մէջ պիտի դնեմ խաղաղութեամբ, եւ քո աչքերը չեն տեսնելու այն բոլոր չարիքները, որ ես բերելու եմ այդ տեղի ու դրա բնակիչների գլխին'"»: Այս խօսքերը հաղորդեցին թագաւորին:

ՈՒԽՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
(Դ Թագ. 23. 1-20)

29 Արքան մարդ ուղարկեց ու հաւաքեց Ցուդայի երկրի եւ Երուսաղէմի ծերերին: 30 Ցուդայի երկրի արքան եւ Ցուդայի երկրի ու Երուսաղէմի բոլոր բնակիչները, քահանաներն ու ղեւտացիները եւ ամբողջ ժողովուրդը՝ մեծից մինչեւ փոքրը, եկան Տիրոջ տունը, եւ արքան նրանց առաջ ընթերցեց Տիրոջ տանը գտնուած ուխտի բոլոր խօսքերը: 31 Վեր կացաւ Յոսիաս թագաւորը, կանգնեց սեան մօտ եւ ուխտեց Տիրոջ առջեւ՝ ընթանալ Տիրոջ նշած ուղիով, ամբողջ սրտով ու ամբողջ հոգով պահել Նրա պատուիրանները, Նրա օրէնքներն ու հրամանները եւ ուխտի խօսքերը, որ գրուած են այդ գրքում: 32 Նա յորդորեց Երուսաղէմում ու Բենիամինի երկրում գտնուող բոլոր մարդկանց, եւ Երուսաղէմի բնակիչները ուխտ արեցին իրենց հայրերի Աստծու տանը: 33 Այսպիսով Յոսիասը իսրայէլացիների ամբողջ երկրից վերացրեց բոլոր պղծութիւնները եւ Երուսաղէմում ու Իսրայէլում գտնուող բոլոր մարդկանց համոզեց ծառայել իրենց Տէր Աստծուն: Իր բոլոր օրերին նա չխոտորուեց իր նախնիների Տէր Աստծու ուղուց:

†Եբրայերէնում՝ պատմուճանները:

ՅՈՍԻԱՍԸ ՏՕՆՈՒՄ Է ԶԱՏԻԿԸ

35 Յոսիասն իր Տէր Աստծու զատիկը կատարեց. զատկի գառը մորթեցին առաջին ամսի տասնչորսերորդ օրը: 2 Նա քահանաներին կանգնեցրեց իրենց պաշտօնի վրայ եւ յորդորեց նրանց կատարելու Տիրոջ տան ծառայութիւնները: 3 Նա ասաց ղեւտացիներին՝ ամբողջ Իսրայէլի վերակացուներին, որ պէտք է նուիրուել Տիրոջը եւ սուրբ տապանակը դնել այն տանը, որը շինել էր Իսրայէլի արքայ Դաւթի որդի Սողոմոնը: Արքան ասաց. «Դուք ոչ մի բան չպէտք է վերցնէք ուսերի վրայ: Արդ, ծառայեցէ՛ք ձեր Տէր Աստծուն եւ Նրա ժողովրդին՝ Իսրայէլացիներին: 4 Պատրա՛ստ եղէք ըստ ձեր ազգատոհմերի եւ ըստ ձեր առօրեայ պաշտամունքի, ըստ Իսրայէլի արքայ Դաւթի եւ Նրա որդի Սողոմոն թագաւորի գրածի: 5 Տաճարում կանգնեցէ՛ք այն տեղերում, որ նշանակուած են ըստ ձեր ազգատոհմերի, ձեր եղբայրների եւ ձեր ժողովրդի որդիների առջեւ՝ ղեւտացիների ազգատոհմի մարդկանց յատկացուած բաժանումների համեմատ: 6 Մորթեցէ՛ք զատկի գառը եւ պատրաստեցէ՛ք ձեր եղբայրների սրբութիւնները՝ գործելով ըստ Տիրոջ խօսքի, որ գրուել է Մովսէսի ձեռքով»: 7 Եւ Յոսիասն սկսեց ժողովրդի որդիներին եւ ամենքին, որ այնտեղ էին գտնուում, տալ խոյեր, գառներ, մատաղ այծերի նոխազներ՝ բոլորն էլ զատկի համար: Այդ բոլորը թուով երեսուն հազար էր. նաեւ երեք հազար զուարակ: Սրանք թագաւորի ունեցուածքից էին: 8 Նրա իշխանները նոյնպէս սկսեցին ընծաներ տալ ժողովրդին, քահանաներին ու ղեւտացիներին: Քեղկիասը, Զաքարիասը եւ Յէհիէլը եւ Աստծու տան իշխանները զատկի առթիւ քահանաներին տուեցին երկու հազար վեց հարիւր խոյ, գառ, նոխազ եւ երեք հարիւր զուարակ: 9 Քոնենիասը, Բանեասը, Սամէասը եւ նրա եղբայր Նաթանայէլը, Ասաբիասը, Յէհիէլը եւ Յոզաբադը՝ ղեւտացիների իշխանները, զատկի առթիւ ղեւտացիներին տուեցին հինգ հազար խոյ եւ հինգ հարիւր զուարակ:

10 Պաշտամունքը կատարուեց. քահանաները կանգնած էին իրենց տեղերում, իսկ ղեւտացիները՝ իրենց դասերում, ըստ արքայի հրամանի: 11 Նրանք մորթեցին զատկի գառը, եւ քահանաները իրենց ձեռքերով ցանեցին արիւնը: 12 Ղեւտացիները կտրտեցին ու պատրաստեցին ողջակէզները, որ դրանք բաժանեն ժողովրդի որդիներից իւրաքանչիւրին ըստ ազգատոհմերի, դասերի, որպէսզի մատուցեն Տիրոջը, ինչպէս որ գրուած է Մովսէսի Օրէնքի գրքում: Այսպէս արեցին մինչեւ առաւօտ: 13 Զատկի գառը խորովեցին կրակով ըստ օրէնքի, իսկ սուրբ մասերը եփեցին կաթսաների ու սաների մէջ: Տօնը յաջող ընթացաւ, եւ զոհը բաժանեցին ժողովրդի բոլոր որդիներին: 14 Յետոյ զատիկը պատրաստեցին իրենց ու քահանաների համար, քանի որ քահանաները մինչեւ գիշեր մատուցում էին ճարպերն ու ողջակէզները: Ղեւտացիները բաժին վերցրին նաեւ իրենց ու իրենց եղբայրների՝ Ահարոնի որդիների համար: 15 Ասափի սաղմոսերգու որդիները, նաեւ Ասափը, Եմանը եւ Իդիթունը՝ արքայի մարգարէները, ըստ Դաւթի պատուիրանի, կանգնեցին իրենց տեղերում: Իշխանները, դռների պահերն ու իւրաքանչիւր դռան պահապան տեղից չպէտք է շարժուէին սրբութեան ծառայութեան ժամանակ, քանզի նրանց եղբայրները՝ ղեւտացիները, բաժիններ էին պատրաստել նաեւ նրանց համար: 16 Այդ օրը Տիրոջ ամբողջ պաշտամունքը պատշաճօրէն պատրաստուեց ու կատարուեց, որպէսզի, ըստ Յոսիաս արքայի հրամանի, տօնեն զատիկը եւ

ողջակէզներ մատուցեն Տիրոջ սեղանի
վրայ: 17 Այդ ժամանակ այնտեղ
գտնուող իսրայէլացիները եօթը օր
կատարեցին զատիկը եւ անթթխմոր
հացի տօնը: 18 Սամուէլ մարգարէի
օրերից ի վեր սրա նման զատիկ երբեք
չէր եղել Իսրայէլում, եւ Իսրայէլի
բոլոր թագաւորները այսպիսի զատիկ
չէին արել, ինչպէս արեց Յոսիասը:
19 Այնտեղ գտնուող քահանաներն ու
ղեւտացիները, ամբողջ Յուդայի եր-
կիրն ու Իսրայէլը եւ Երուսաղէմի բնա-
կիչները Տիրոջ տօնը կատարեցին Յո-
սիասի թագաւորութեան տասնութե-
րորդ տարում: Յոսիաս արքան Յուդա-
յի երկրում եւ Երուսաղէմում գտնուող
վհուկներին, գուշակներին, մոգերին,
կախարդներին եւ չաստուածներին
վերացրեց ու հրով այրեց, որպէսզի
հաստատի Օրէնքի այն խօսքերը, որ
գրուած էին Քեղկիաս քահանայի՝
Տիրոջ տանը գտած գրքում: Յոսիասի
նմանը չէր եղել նրանից առաջ, որ,
ըստ Մովսէսի բոլոր օրէնքների, իր
ամբողջ սրտով, իր ամբողջ հոգով եւ
իր ամբողջ զօրութեամբ դառնար դէպի
Տէր Աստուածը: Եւ նրանից յետոյ էլ
նրա նմանը չյայտնուեց: Տէրը,
սակայն, չհանդարտուեց իր խիստ
բորբոքուած բարկութիւնից, Յուդայի
երկրի նկատմամբ այն բարկութիւնից,
որով բորբոքել էր Նրան Մանասէն: Եւ
Տէրն ասաց. «Ես Յուդայի երկիրն էլ եմ
վերացնելու իմ աչքի առաջից, ինչպէս
վերացրել եմ Իսրայէլը, եւ մերժելու եմ
Երուսաղէմը՝ այն քաղաքը, որ ընտրել
էի, եւ այն տունը, որի համար ասել էի,
թէ՝ իմ անունը պէտք է լինի այնտեղ»:

ՅՈՍԻԱՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ
(Դ Թագ. 23. 28-30)

20 Եգիպտոսի արքայ Նեքաւով փա-
րաւոնը յարձակուեց Ասորեստանի ար-
քայի վրայ Եփրատ գետի ուղղու-
թեամբ: Յոսիաս արքան գնաց նրա
դէմ, 21 իսկ սա պատգամաւորներ
ուղարկեց նրա մօտ՝ ասելով. «Ի՞նչ
թշնամութիւն ունենք ես ու դու,
Յուդայի երկրի՛ արքայ, այսօր քո դէմ
պատերազմելու չեմ եկել: Աստուած
ինձ ասաց, որ շտապեմ: Զգուշացի՛ր
ինձ հետ եղող Աստծուց, գուցէ նա քեզ
կործանի»: 22 Յոսիասը, սակայն, իր
երեսը նրանից չշրջեց, այլ ինքն իր մէջ
ուժ գտաւ, որ պատերազմի նրա դէմ:
Նա չանսաց Նեքաւովի Տիրոջ անունով
ասուած խօսքերին եւ եկաւ պատերազ-
մելու Մակեդդովի դաշտում: 23 Աղեղ-
նաւորները հարուածեցին Յոսիասին,
եւ արքան ասաց իր ծառաներին. «Ինձ
այստեղից դո՛ւրս հանեցէք, որովհետեւ
ծանր վիրաւորուած եմ»: 24 Նրա
ծառաները հանեցին նրան իր մար-
տակառքից ու դրեցին նրա երկրորդ
մարտակառքի մէջ ու տարան Երու-
սաղէմ: Նա մեռաւ ու թաղուեց իր
նախնիների մօտ, եւ ամբողջ Յուդայի
երկիրն ու Երուսաղէմը սուգ արեցին
Յոսիասի վրայ: 25 Երեմիասը ողբեր
ասաց Յոսիասի մասին, եւ բոլոր պա-
լատականները, տղամարդ թէ կին,
Յոսիասի մասին յօրինեցին ողբեր,
որոնք յիշւում են մինչեւ այսօր:
Դրանք Իսրայէլի մէջ կանոնական
դարձան եւ ահա գրի են առնուած
ողբերի գրքում:
26 Յոսիասի գործերը եւ նրա
յուսացած բաները գրի են առնուած
Տիրոջ օրէնքներում գրուածի համե-
մատ, 27 իսկ նրա մնացած գործերը,
սկզբից մինչեւ վերջինը, գրի են
առնուած Իսրայէլի ու Յուդայի երկրի
թագաւորների գրքում:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱՔԱԶ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 23. 30-35)

36 Երկրի ժողովուրդը Յոսիասի որդի
Յովաքազին օծեց ու իր հօր փոխա-
րէն Երուսաղէմում դարձրեց թագաւոր:
2 Յովաքազը քսաներեք տարեկան էր,
երբ թագաւոր դարձաւ, եւ երեք ամիս
թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր
անունը Ամիտալ էր, որը լրբնացի
Երեմիայի դուստրն էր: Յովաքազը
չարիք գործեց Տիրոջ առջեւ, այն բոլոր
չարիքները, որ գործել էին նրա
նախնիները: 3 Նեքաւով փարաւոնը
նրան բռնեց Դեբլաթայում, Եմաթի
երկրում, եւ նա այլեւս չկարողացաւ

թագաւորել Երուսաղէմում: Արքան
նրան տարաւ Եգիպտոս եւ երկրի վրայ
հարիւր տաղանդ արծաթ† եւ մէկ
տաղանդ ոսկի հարկ դրեց:
4 Նեքաւով փարաւոնը Յուդայի
երկրի արքայ Յոսիասի որդի Եղիա-
կիմին նշանակեց նրա հօր՝ Յոսիասի
փոխարէն եւ նրա անունը փոխեց ու
դրեց Յովակիմ, իսկ նրա եղբայր Յո-
վաքազին Նեքաւով փարաւոնն առաւ
եւ տարաւ Եգիպտոս, ուր եւ նա մեռաւ:
Արծաթն ու ոսկին հարկ էին տալիս
փարաւոնին: Այնուհետեւ երկիրն
սկսեց հարկեր վճարել, եւ արծաթը
տալիս էին ըստ փարաւոնի հրամանի:
Երկրի ժողովրդից՝ ամէն մէկից արծաթ
ու ոսկի էին պահանջում ըստ նրա
կարողութեան, որպէսզի դրանք յանձ-
նեն Նեքաւով փարաւոնին:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅՈՎԱԿԻՄ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 23. 36-24. 7)

5 Յովակիմը քսանհինգ տարեկան
էր, երբ թագաւոր դարձաւ, եւ
տասնմէկ տարի թագաւորեց Երու-
սաղէմում: Նրա մօր անունը Զեկքորա
էր, որը ռամացի Ներիայի դուստրն էր:
Նա Տիրոջ առջեւ գործեց այն բոլոր
չարիքները, որ արել էին նրա նախ-
նիները: Նրա օրօք Բաբելոնի Նաբու-
քոդոնոսոր արքան մտաւ Յուդայի
երկիրը: Յովակիմը երեք տարի ծառա-
յեց նրան, բայց յետոյ ապստամբեց
նրա դէմ: Տէրն ուղարկեց նրա դէմ
քաղդէացիներին, Ասորիքի աւազակ-
ներին, մովաբացիների աւազակներին
եւ ամոնացիներին ու սամարացիներին:
Եւ այս բաներից յետոյ նրանք ազա-
տուեցին, ինչպէս ասել էր Տէրն իր
ծառայ մարգարէների միջոցով: Տիրոջ
զայրոյթը, սակայն, դեռ Յուդայի
երկրի վրայ էր, որ այն վերացնի իր
աչքի առաջից Մանասէի գործած բոլոր
մեղքերի, Մանասէի թափած անմեղ
արեան՝ Երուսաղէմում թափած անմեղ
արեան պատճառով: Տէրը, սակայն,
չուզեց ոչնչացնել նրանց:
6 Յովակիմի վրայ յարձակուեց Բա-
բելոնի արքայ Նաբուքոդոնոսորը եւ
նրան կապեց պղնձէ շղթաներով ու
տարաւ Բաբելոն: 7 Նա Տիրոջ տան
սպասքի մի մասը տարաւ Բաբելոն ու
դրեց Բաբելոնում գտնուող իր տաճա-
րում: 8 Յովակիմի մնացած գործերը եւ
ամէն ինչ, որ նա արել էր, չէ՞ որ ահա
գրուած են Յուդայի երկրի թագա-
ւորների ժամանակագրութեան մէջ:
Յովակիմը գնաց իր նախնիների գիրկը
ու թաղուեց Գանոզայում, իր նախ-
նիների մօտ:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՅԵՔՈՆԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 24. 8-17)

Յովակիմի փոխարէն թագաւորեց իր
որդի Յեքոնիասը: 9 Տասնութ տարե-
կան էր Յեքոնիասը, երբ թագաւոր
դարձաւ, եւ երեք ամիս ու տասն օր
թագաւորեց Երուսաղէմում: Նա չարիք
գործեց Տիրոջ առջեւ: 10 Երբ տարին
բոլորուեց, Նաբուքոդոնոսոր արքան
մարդ ուղարկեց ու նրան Տիրոջ տան
թանկարժէք սպասքով հանդերձ տա-
րաւ Բաբելոն: Նա Յուդայի երկրում ու
Երուսաղէմում թագաւորական գահին
նստեցրեց նրա հօրեղբօրը՝ Սեդե-
կիասին:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՍԵԴԵԿԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԸ
(Դ Թագ. 24. 18-20, Երեմ. 52. 1-3)

11 Քսանմէկ տարեկան էր Սեդե-
կիասը, երբ թագաւոր դարձաւ, եւ
տասնմէկ տարի թագաւորեց Երուսա-
ղէմում: 12 Նա չարիք գործեց իր Տէր
Աստծու առաջ, չպատկառեց ո՛չ Երե-
միա մարգարէից, ո՛չ էլ Տիրոջ խօս-
քերից:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՐԱՒՈՒՄԸ
(Դ Թագ. 25. 1-21, Երեմ. 52. 3-11)

13 Սեդեկիասն ապստամբեց Նաբու-
քոդոնոսոր արքայի դէմ՝ դրժելով այն
երդումը, որ Նաբուքոդոնոսորը նրան
երդուեցրել էր Աստծու անունով, դար-
ձաւ կամակոր, կարծրացրեց իր սիրտը,
որ չվերադառնայ Իսրայէլի Տէր Աստ-
ծուն: 14 Յուդայի երկրի բոլոր
մեծամեծները, քահանաներն ու երկրի

†Շուրջ 3000 կիլոգրամ:

ժողովուրդները բազմապատկեցին հեթանոս ազգերի գարշելի անօրէնութիւնները եւ պղծեցին Տիրոջ տունը Երուսաղէմում: 15 *Նրանց հայրերի Տէր Աստուածը մարգարէների միջոցով շտապ առաքեց իր պատգամախօսներին, քանզի խնայում էր իր ժողովրդին եւ իր սրբավայրը:* 16 *Մարդիկ արհամարհեցին նրա պատգամախօսներին, մերժեցին նրանց խօսքերը ու ծաղրեցին նրա մարգարէներին մինչեւ այն աստիճան, որ Տիրոջ բարկութիւնը բորբոքուեց ժողովրդի վրայ, որից յետոյ նրանք փրկութիւն չունեցան:* 17 *Տէրը նրանց վրայ ուղարկեց քաղդէացիների թագաւորին, որը սրակոտոր արեց նրանց երիտասարդներին իրենց իսկ սրբութեան տան մէջ, չխնայեց նաեւ Սեդեկիասին, չողորմեց նրանց կոյս աղջիկներին եւ նրանց բոլոր ծերերին մատնեց թշնամիների ձեռքը:* 18 *Նա Աստծու տան ամբողջ մեծ ու փոքր սպասքը եւ արքայի ու մեծամեծների բոլոր գանձերը՝ ամէն ինչ տարաւ Բաբելոն,* 19 *այրեց Տիրոջ տունը, կործանեց Երուսաղէմի պարիսպը եւ նրա մէջ եղած ապարանքները հրոյ ճարակ դարձրեց, ոչնչացրեց ամէն մի գեղեցիկ անօթ,* 20 *իսկ վերապրածներին գերեվարեց Բաբելոն: Այնտեղ նրանք նրա ու նրա սերնդի ծառաները դարձան մինչեւ մարաց*† *թագաւորութեան հաստատումը, որպէսզի* 21 *կատարուի Երեմիայի բերանով ասուած Տիրոջ խօսքը, թէ՝ «երկիրը պիտի լքուի եօթանասուն տարի, մինչեւ որ լրանայ շաբաթօրեայ հանգստի իր ժամանակը, որպէս հատուցում շաբաթօրեայ հանգստեան այն ժամանակի, որ չէր պահպանուել»:*

ԿԻՒՐՈՍԸ ԹՈՅԼԱՏՐՈՒՄ Է ՀՐԵԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ
(Եզրաս 1.1-4)

22 *Պարսից արքայ Կիւրոսի թագաւորութեան առաջին տարում, երբ կատարուեց Երեմիայի բերանով ասուած Տիրոջ խօսքը, Տէրը զարթնեցրեց Պարսից Կիւրոս արքայի հոգին եւ պատուիրեց իր ամբողջ թագաւորութեան մէջ գրաւոր հրովարտակ ծանուցել, ուր ասուած էր.* 23 *«Այսպէս է ասում Պարսից Կիւրոս արքան. "Երկնքի Տէր Աստուածն ինձ է յանձնել աշխարհի բոլոր թագաւորութիւնները: Նա ինձ է պատուիրել Հրէաստանում՝ Երուսաղէմում, կառուցել իր տունը: Ձեզնից ով որ Նրա ժողովրդին է պատկանում, թող ելնի գնայ, եւ թող Տէր Աստուածն իր հետ լինի"»:*

†Եբրայերէնում՝ *պարսից:*

ԵԶՐԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Եզրասի գրքի սկզբում պատմւում է, թէ ինչպէս պարսից Կիւրոս արքայից արքան արտօնութիւն է տալիս հրեաներին, որ գնան իրենց երկիրը եւ վերակառուցեն Երուսաղէմի տաճարը: Եվ ահա մեծ թուով հրեայ աքսորեալներ բռնում են վերադարձի ճանապարհը: Երուսաղէմում նրանց առաջին մտահոգութիւնն է լինում վերականգնել զոհասեղանը եւ վերահաստատել պաշտամունքը: Սակայն բուն տաճարի վերակառուցման նախապատրաստութիւնները յարուցում են որոշ հակառակորդների ընդդիմութիւնը: Այդ պատճառով հրեաների եւ պարսկական արքունիքի միջեւ տեղի են ունենում բանակցութիւններ, որոնց արդիւնքը լինում է այն, որ պարսկական արքունիքը հաստատում է արտօնութիւնը, եւ այդպիսով սկսւում է տաճարի գործնական վերակառուցումը:

ԵԶՐԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ԶԱՏԿԻ ՏՕՆԱՀԱՆԴԷՍ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

1 Յոսիա թագաւորը Տիրոջ զատիկը կատարեց Երուսաղէմում. Տիրոջ զատկի գառը մորթեցին առաջին ամսի տասնչորսին: 2 Ըստ իրենց ծառայութեան օրերի՝ նա Տիրոջ տաճարում քահանաներ կանգնեցրեց, որոնք քահանայական պատմուճաններ էին հագած, 3 եւ ասաց ղեւտացի սպասաւորներին. «Մաքրեցէ՛ք ձեր անձերը եւ պատրաստեցէ՛ք ձեզ ըստ Տիրոջ ուխտի տապանակի սրբութեան, թող ձեր մէջ չլինի աղտեղութիւն եւ պղծութիւն: 4 Արդ, պաշտամո՛ւնք մատուցեցէք ձեր Տէր Աստծուն, հաւաքեցէ՛ք ու պատրաստեցէ՛ք Իսրայէլի բոլոր ազգերին եւ կանգնեցրէ՛ք նրանց ըստ իրենց հայրապետների եւ ցեղերի հերթականութեան, 5 ինչպէս սահմանել եւ գրել է Իսրայէլի Դաւիթ թագաւորը եւ հրահանգել նրա որդի մեծն Սողոմոնը. թող ղեւտացիները ըստ իրենց հայրերի կարգի տաճարում կանգնեն, իրենց եղբայրների՝ իսրայէլացիների առաջ: 6 Ըստ առաջին կարգերի հերթականութեան՝ մորթեցէ՛ք զատկի գառը, պատրաստեցէ՛ք զոհերն ու զատիկը կատարեցէ՛ք ըստ Տիրոջ այն հրամանի, որ նա պատուիրել էր Մովսէսի միջոցով»:

7 Եւ իբրեւ պարգեւ Յոսիան ժողովրդին տուեց երեսուն հազար գառներ եւ ուլեր, երեք հազար հորթեր: 8 Այս բոլորը, թագաւորի հրամանի համաձայն, տրուեց ժողովրդին, քահանաներին եւ ղեւտացիներին: Բացի դրանից, նա Քեղկիա եւ Զաքարիա քահանայապետներին, ժողովրդի առաջնորդներին եւ քահանաներին տուեց եւս երկու հազար վեց հարիւր ոչխար: 9 Յեքոնիասը, Սամէասն ու նրա եղբայր Նաթանայէլը, Ռաբիասը, Օզիէլը եւ Յորամը, որոնք հազարապետներ էին, զատկի համար ղեւտացիներին տուեցին հինգ հազար ոչխար եւ հինգ հարիւր հորթ:

10 Վերցնելով այս բոլորը՝ քահանաները մեծ շուքով, ամենայն վայելչութեամբ եւ բազմազան ձեւերով պատրաստեցին Բաղարջակերաց զատիկը 11 եւ, ըստ իրենց տոհմերի եւ հայրերի կարգի, կանգնեցին ժողովրդի առաջ, ինչպէս գրուած է Մովսէսի գրքում, մատուցելու համար Տիրոջ զատիկը: 12 Ահա այսպէս նրանք առաւօտեան կրակի վրայ խորովեցին ու պատրաստեցին Տիրոջ զատիկը. մնացած հում միսը անուշահոտ համեմունքներով եփեցին կաթսաների եւ սաների մէջ եւ մատուցեցին ժողովրդին: 13 Սրանից յետոյ քահանայապետները զատիկը պատրաստեցին իրենց եւ իրենց եղբայրների՝ Ահարոնի որդիների համար, 14 որովհետեւ քահանաները ճարպ էին մատուցում կրակը բորբոքելու համար, ղեւտացիներն իրենք էլ զատիկը պատրաստեցին թէ՛ իրենց եւ թէ՛ իրենց քահանայ եղբայրների՝ Ահարոնի որդիների համար: 15 Ասափի որդիները՝ սաղմոսների երգիչները, նոյնպէս զատիկը պատրաստեցին իրենց համար, ինչպէս սահմանել էր Դաւիթ թագաւորը ժամանակին Ասափի, Զաքարիայի եւ Ելդիթունի համար: 16 Դռնապանները, որոնցից իւրաքանչիւրը հսկում էր իր դռան վրայ՝ ըստ ամէն օրուայ կարգի, քանի որ իրենք էլ Ղեւիի որդիներ էին, իրենք նոյնպէս պատրաստեցին զատիկը:

17 Այդ օրը բոլորը միաբան կատարեցին Տիրոջ զոհը 18 եւ, ինչպէս հրամայել էր Յոսին թագաւորը, Տիրոջ զատիկը մատուցեցին սեղանի վրայ: 19 Այն իսրայէլացիները, որ այդ ժամանակ գտնւում էին այնտեղ, եօթը օր կատարեցին Տիրոջ զատիկը եւ Բաղարջակերաց տօնը: 20 Երբեք այդպիսի զատիկ չէր եղել Իսրայէլում, քանի որ ոչ ոք նման զատիկ չէր արել Սամուէլ մարգարէի ժամանակից ի վեր: 21 Իսրայէլի բոլոր թագաւորներն էլ այսպիսի զատիկ չէին արել, ինչպէս արեց Յոսիա թագաւորը, նաեւ քահանաները, ղեւտացիները, հրեաներն ու բոլոր իսրայէլացիները, որոնք այն ժամանակ ապրում էին Երուսաղէմում: 22 Այդ զատիկը Յոսիան կատարեց իր թագաւորութեան տասնութերորդ տարում: 23 Յոսիա թագաւորի գործերը ուղիղ էին իր Տէր Աստծու առաջ, եւ նա Տիրոջը ծառայում էր իր ամբողջ սրտով ու մտքով:

24 Բայց նրանից առաջ եղել են ուրիշ թագաւորներ, որոնց մասին ստոյգ

գրուած է, թէ նրանք մեղանչել, անօրէնութիւն են գործել բոլոր ազգերի մէջ, վշտացրել են Տիրոջը եւ Իսրայէլի մէջ դէմ են կանգնել Նրա խօսքին:

25 Յոսիա թագաւորի այս բոլոր առաքինի գործերից յետոյ եգիպտացիների Փարաւոն թագաւորը եկաւ պատերազմելու Կարքամուսում՝ Եփրատի կողմերում, եւ Յոսիան ելաւ պատերազմելու նրա դէմ: 26 Եգիպտացիների թագաւորը բանագնաց ուղարկեց նրա մօտ եւ ասաց. «Ի՞նչ կայ իմ եւ քո միջեւ, ո՛վ Հրէաստանի թագաւոր, 27 չէ՞ որ Տէր Աստուածն ինձ չի ուղարկել քեզ մօտ, այլ ես գնում եմ պատերազմելու Եփրատի կողմերում: Այժմ Տէրը ինձ հետ է, եւ դու մի՛ խանգարիր ինձ, քանի որ Տէրը ստիպում է ինձ գնալ ու պատերազմել Եփրատի կողմերում. դու հեռո՛ւ կաց ինձնից եւ մի՛ հակառակուիր Տիրոջը»: 28 Բայց Յոսիան յետ չդարձրեց իր մարտակառքը, այլ ձեռնամուխ եղաւ նրա դէմ պատերազմելու, չլսեց Երեմիա մարգարէի խօսքերը, որ նա ասում էր նրան Տիրոջ բերանով: 29 Նա համախմբեց զօրքը, իջաւ Եդդաւուսի դաշտ՝ այնտեղ ճակատամարտ տալու Փարաւոնի դէմ. եւ իշխաններն էլ իջան Յոսիա թագաւորի մօտ: 30 Յոսիա թագաւորն ասաց իր ծառաներին. «Ինձ դո՛ւրս տարէք ռազմադաշտից, ես խիստ թուլացել եմ»: Ծառաներն անմիջապէս նրան դուրս հանեցին մարտադաշտից: 31 Յոսիան բարձրացաւ իր երկրորդ կառքը եւ հասնելով Երուսաղէմ՝ վախճանուեց: Նրան թաղեցին իր հայրերի գերեզմանատանը: 32 Ամբողջ ժողովուրդը ողբաց եւ սգաց Յոսիայի վրայ, իսկ Երեմիա մարգարէն ողբ հիւսեց Յոսիայի մասին: Մինչեւ այսօր կանայք նստում եւ ողբում են Երեմիայի այդ ողբը: Դրանից յետոյ հրաման տուեցին, որ միշտ իրենց ազգերի մէջ այդպէս ողբան Իսրայէլում:

33 Այս բոլորի մասին գրուած է Իսրայէլի թագաւորների պատմութիւնների գրքում, նաեւ նրա կատարած գործերի, նրա բարեմասնութիւնների, առաքինութեան, նրա մեծ արդարութեան ու փառքի մասին, եւ թէ ինչպիսի իմաստուն հոգատարութիւն ունէր նա Տիրոջ Օրէնքի նկատմամբ: Այս բոլորի մասին մինչեւ այժմ պատմում են Իսրայէլի եւ Յուդայի երկրի թագաւորների գրքերը:

34 Յոսիայի մահից յետոյ նրա տոհմից թագաւոր դարձրին Յեքոնիային՝ Յոսիայի որդուն: Յեքոնիան քսաներեք տարեկան էր, երբ թագաւորեց իր հօր՝ Յոսիայի փոխարէն: 35 Նա Հրէաստանի եւ Երուսաղէմի վրայ թագաւորեց երեք ամիս: Եգիպտացիների թագաւորը արգելեց, որ նա թագաւորէր Երուսաղէմում 36 եւ, իբրեւ ծախս, հրեաներից պահանջեց հարիւր տաղանդ արծաթ եւ մէկ տաղանդ ոսկի: 37 Եգիպտացիների թագաւորը նրանց վրայ թագաւոր կարգեց Յովակիմին՝ Յեքոնիայի եղբօրը, եւ Յովակիմը թագաւորեց Հրէաստանի եւ Երուսաղէմի վրայ: 38 Յովակիմը կալանաւորեց Իսրայէլի տան մեծամեծներին ու իշխաններին, եւ իր եղբօրը՝ Զարային, հանեց եգիպտացիների երկրից եւ բերեց իր մօտ:

39 Յովակիմը քսանհինգ տարեկան էր, երբ թագաւորեց Հրէաստանի ու Երուսաղէմի վրայ եւ չարիքներ գործեց Տիրոջ առաջ: 40 Բաբելացիների արքայ Նաբուքոդոնոսորը յարձակուեց նրա վրայ, նրան կապեց պղնձէ կապանքներով եւ տարաւ Բաբելոն: 41 Նաբուքոդոնոսորը վերցրեց նաեւ Տիրոջ տան սպասքից, տարաւ ու Բաբելոնում դրեց իրենց կուռքերի տանը՝ պահելու համար:

42 Նրա այս բոլոր գործերի՝ նրա պղծութիւնների եւ անօրէնութիւնների մասին գրուած է թագաւորների ժամանակագրութիւնների գրքում:

43 Նրա փոխարէն թագաւորեց Յովակիմը՝ նրա որդին, որ տասնութ տարեկան էր: 44 Նա թագաւորեց երեք ամիս եւ տասն օր Երուսաղէմում եւ չարիք գործեց Տիրոջ առաջ: 45 Մէկ տարի յետոյ Նաբուքոդոնոսորը վերցրեց ու տարաւ նրան Բաբելոն՝ Տիրոջ տան գանձերով հանդերձ:

46 Նաբուքոդոնոսորը Հրէաստանի եւ Երուսաղէմի թագաւոր կարգեց Սեդեկիային: Սեդեկիան քսանմէկ տարեկան էր եւ թագաւորեց տասնմէկ տարի: 47 Նա եւս չարիք գործեց Տիրոջ առաջ

եւ յետ չկանգնեց իր չարիքներից, չլսեց Երեմիա մարգարէի խօսքերը, որ նա ասել էր նրան Տիրոջ բերանով: 48 Նա հաւատարիմ չմնաց իր երդմանը, որ Տիրոջ անունով տուել էր Նաբուքոդոնոսոր արքային, այլ դրժեց երդումը եւ հեռացաւ Նաբուքոդոնոսորից, խստացրեց պարանոցը եւ սիրտը փակեց Իսրայէլի Տէր Աստծու օրէնքների հանդէպ:

49 Ժողովրդի իշխաններն ու քահանաներն էլ ամբարշտութիւններ արեցին, անօրէն եղան, բազմացրին իրենց պղծութիւններն աւելի, քան բոլոր հեթանոսները եւ նոյնիսկ պղծեցին Տիրոջ սուրբ տաճարը Երուսաղէմում: 50 Նրանց հայրերի Աստուածն իր հրեշտակներին ու մարգարէներին ուղարկեց նրանց մօտ, որպէսզի դարձի գան, որովհետեւ խնայում էր թէ՛ նրանց եւ թէ՛ իր սուրբ տաճարը, 51 բայց նրանք արհամարհեցին Տիրոջ հրեշտակներին. այն օրը, երբ Տէրը խօսում էր նրանց հետ, նրանք ձեռ էին առնում եւ ծաղրում նրա մարգարէներին: 52 Տէրը բարկացաւ նրանց ազգի վրայ եւ նրանց ամբարշտութեան պատճառով նրանց դէմ բերեց քաղդէացիների թագաւորներին, 53 որոնք սրով սպանեցին նրանց երիտասարդներին, նրանց սրիւնը թափեցին սուրբ տաճարի շուրջը, չխնայեցին նրանց մանուկներին, կոյսերին, ծերերին ու նրանց երիտասարդներին: 54 Աստուած նրանց ձեռքը յանձնեց այս բոլորը՝ թէ՛ Տիրոջ տան բոլոր մեծ ու փոքր անօթները, թէ՛ Տիրոջ տապանակի կայքն ու սպասքը եւ թէ՛ Իսրայէլի թագաւորի գանձերը. այս ամէնը նրանք վերցրին ու տարան Բաբելոն: 55 Նրանք հրկիզեցին Տիրոջ տաճարը, քարուքանդ արեցին Երուսաղէմի պարիսպը, կրակի մատնեցին նրա աշտարակները, եւ հասաւ նրա բոլոր փառքերի վախճանը: 56 Իսկ մնացածներին, սրի առաջ գցած, գերի տարան Բաբելոն: 57 Սրանց եւ իրենց որդիները մնացին ստրկութեան մէջ մինչեւ պարսիկների թագաւորների ժամանակը, մինչեւ որ կատարուեց Տիրոջ այն խօսքը, որ նա ասել էր Երեմիա մարգարէի բերանով. 58 «Մինչեւ Տէրը բարեհաճի, որ թափուր այս երկիրը տօնի իր շաբաթները, ամբողջ ժամանակ այն պիտի լինի անապատ, պիտի լրանայ եօթանասուն տարին, որպէսզի շաբաթը տօն լինի նրա համար»:

Կիւրոսի թագաւորութեան առաջին տարում լրանում էր Յուդայի եւ Բենիամինի ցեղերի գերութեան եօթանասուն տարին: Կիւրոսը ընդամէնը թագաւորեց երեսուն տարի:

ԿԻՒՐՈՍԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԳԵՐՈՒԹԻՆԻՑ ՀՐԵԱՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

2 Պարսկաստանի թագաւոր Կիւրոսի թագաւորութեան առաջին տարում կատարուեց Տիրոջ այն խօսքը, որ նա ասել էր Երեմիա մարգարէի բերանով: 2 Տէրն արթնացրեց Կիւրոս թագաւորի ոգին, եւ Կիւրոսը հրամայեց իր ամբողջ թագաւորութեան մէջ ազդարարել եւ ասել. 3 «Այսպէս ասաց Պարսկաստանի Կիւրոս թագաւորը. ինձ յայտնեց Իսրայէլի Տէր Աստուածը, որ բովանդակ տիեզերքի թագաւորն է եւ բարձրեալ Տէրը, 4 կանխանշանով ցոյց տուեց ինձ, որ ես նրա համար տաճար կառուցեմ Հրէաստանի Երուսաղէմ քաղաքում: 5 Արդ, ով էլ որ լինի, ում մօտ էլ որ մարդ լինի հրեաների ցեղերից, – թող Տէր Աստուածը լինի նրա հետ, – նա կարող է ելնել եւ հրեաների հետ գնալ Երուսաղէմ, որպէսզի կառուցի Իսրայէլի Տէր Աստծու տաճարը: Սա այն Տէրն է, որ բնակւում է Երուսաղէմում: 6 Եւ բոլոր նրանք, ովքեր կը մնան իրենց բնակավայրում, թող օգնեն նրանց ոսկով ու արծաթով, ձիերով ու այլ անասուններով 7 եւ թող իրենց ունեցուածքից նուէրներ տան Տիրոջ տաճարին, որը գտնւում է Երուսաղէմում: 8 Թող իշխաններ նշանակուեն ըստ ազգերի, ըստ Յուդայի ազգի եւ Բենիամինի ցեղի տոհմապետերի, քահանաների եւ ղեւտացիների ու բոլոր նրանց վրայ, ում ոգին արթնացրեց Տէրը՝ գնալու եւ կառուցելու Տիրոջ տունը Երուսաղէմում ու նրա շուրջը, 9 եւ թող բոլորն օգնեն արծաթով, ոսկով, ձիերով, անասուններով եւ նուիրեն Տիրոջը, ում սիրտն ինչքան կը կամենայ»:

10 Եւ Կիւրոսը բերել տուեց Տիրոջ սուրբ սպասքը, որը Նաբուքոդոնոսորը բերել էր Երուսաղէմից եւ դրել էր իրենց կուռքերի տանը պահելու համար: 11 Պարսկաստանի Կիւրոս թագաւորը բերել տուեց այն եւ հրամայեց սպասքը տալ իր գանձապետ Միթրիդատին: 12 Միթրիդատը հաշուեց եւ տուեց Յուդայի հանդերձապետ Սամանասարին: 13 Ահա Տիրոջ սպասքի թիւը. ոսկեղէն սպասք՝ հազար, արծաթէ սպասք՝ նոյնպէս հազար, արծաթէ դանակներ՝ քսանինը, ոսկէ ափսէներ՝ երեսուն, արծաթէ ափսէներ՝ երկու հազար չորս հարիւր քսան, եւ այլ անօթներ՝ հազար: 14 Ոսկէ եւ արծաթէ այդ ամբողջ կայքն ու սպասքը, որ բերեցին, հինգ հազար չորս հարիւր վաթսունինն էր: 15 Այդ ամէնը տուեցին Սամանասարի ձեռքը, եւ նա բոլոր գերիների հետ դրանք վերցրեց եւ Բաբելոնից բերեց Երուսաղէմ:

16 Պարսկաստանի Արտաշէս արքայի թագաւորութեան ժամանակ Հրէաստանի եւ Երուսաղէմի շրջակայ բնակիչները ամբաստանութեան մի նամակ գրեցին նրան: Այդ թուղթը գրել էին Բաաղսամոսը, Միթրիդատը, Բելլիոսը, Ռաթիմոսը, Բելտէթմոսը եւ գրագիր Սամելիոսը, նրանց հետ նաեւ շատ ուրիշներ, որոնք բնակւում էին ծովեզերքում՝ քանանացիներ, տիւրոսացիներ, ամոնացիներ, մովաբացիներ, սամարացիներ եւ այլ տեղերում ապրող բազմաթիւ ուրիշներ: 17 Նամակը գրուած էր այսպէս. «Արտաշէ՛ս թագաւոր, տէ՛ր մեր, քո ծառաները՝ Ռաթիմոսը, որ երկրպագում է քեզ, Սամելիոս գրագիրը, մեր բոլոր խորհրդականները եւ Ասորիքի ու քանանացիների կողմերի դատաւորները ողջունում են քեզ: 18 Արդ, տէ՛ր մեր եւ թագաւո՛ր, թող քեզ յայտնի լինի հրեաների մասին, որ երբ նրանք քեզնից հեռացան եւ եկան մեզ մօտ, գնացին Երուսաղէմ՝ ապստամբող եւ խռովարար մի քաղաք: Այնտեղ նրանք վերաշինում են նրա հրապարակները, ուզում են ամրացնել նրա պարիսպները, կամենում են կառուցել նրա բարձր տաճարը: 19 Արդ, եթէ նրանք չինեն այս քաղաքը եւ աւարտեն նրա պարիսպը, ապա նրանք ոչ միայն հարկ չեն տայ ոչ մէկին, այլեւ ոտքի կը կանգնեն թագաւորների դէմ, 20 որովհետեւ, պարծենալով, նրանք յոյսը կը դնեն իրենց տաճարի վրայ: 21 Այժմ մեզ թւում է լաւ կը լինի, որ դու նկատի ունենաս այս բաները, տէ՛ր մեր թագաւո՛ր, քննես եւ տեսնես, թէ ինչ են գրել քո հայրերն ու նախնիները, 22 գտնես նրանց յիշատակարանների մատեանը եւ իմանաս, որ այս քաղաքը ապստամբների քաղաք է, 23 որ սրա թագաւորներն ու հրեաներն ապստամբներ են, սրա բնակիչները միշտ սուտ են երդուել, եւ հէնց դրա համար էլ աւերուել ու անապատ է դարձել այս քաղաքը: 24 Արդ, ծանուցում ենք քեզ՝ մեր տիրոջն ու թագաւորիդ, որ եթէ այս քաղաքը վերաշինուի, եւ սրա պարիսպները վերականգնուեն, ապա դու այլեւս իշխանութիւն չես ունենայ սրանց վրայ եւ ոչ էլ ճանապարհ՝ դէպի Ասորիքի ու քանանացիների կողմերը»:

25 Այն ժամանակ Արտաշէս թագաւորը գրեց Ռաթիմոսին, Բելտէթմոսին, գրագիր Սամելիոսին եւ բոլոր նրանց, որոնք բնակւում էին Սամարիայի, Ասորիքի ու քանանացիների կողմերում եւ որոնք թուղթ էին գրել իրեն:

26 «Կարդացի, – ասում է, – ձեր թուղթը, որ գրեցիք ինձ: Ես հրամայեցի, որ նայեն յիշատակարանների մատեանները, եւ իմացայ, որ այդ քաղաքը թէ՛ սկզբից իսկ եւ թէ՛ մշտապէս դէմ է կանգնել բոլոր թագաւորներին, 27 որ զօրաւոր պատերազմողներ են եղել, որոնք բնակւել են այդ բոլոր կողմերում եւ դրա մէջ, որ հզօր ու խիստ թագաւորներ են ապրել Երուսաղէմում, որոնք տիրել եւ հարկեր են գանձել Ասորիքի եւ քանանացիների կողմերից: 28 Այժմ, ահա, ես հրամայեցի, որ դուք այդ մարդկանց արգելէք վերաշինել այդ քաղաքը, 29 իսկ դուք յանձն առէք ջանք չխնայել, որպէսզի էլ աւելի չշատանայ դրանց չարութիւնը՝ մեզ ընդդիմանալու եւ մեր թագաւորութեանը նեղութիւն պատճառելու համար»:

30 Երբ Արտաշէս թագաւորի թուղթը կարդացին Ռաթիմոսի, գրագիր Սա-

մելիոսի եւ նրանց հետ ուրիշ շատերի համար, սրանք անմիջապէս յարձակուեցին Երուսաղէմի վրայ, ձիերով եւ զօրքով հանդերձ, եւ արգելեցին հրեաներին վերաշինել քաղաքը: 31 Եւ այսպէս խափանուեց Տիրոջ տաճարի շինարարութիւնը Երուսաղէմում՝ մինչեւ Պարսկաստանի Դարեհ արքայի թագաւորութեան երկրորդ տարին:

ԴԱՐԵՀԻ ԵՐԵՔ ՍԵՆԵԿԱՊԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

3 Դարեհ թագաւորը մեծ խրախճանք սարքեց, հրաւիրեց իր բոլոր իշխաններին եւ իր գերդաստանի ընդոծիններին, մարերի, պարսիկների եւ քաղդէացիների բոլոր մեծամեծներին, 2 եւ այն բոլոր նախարարներին, զօրապետներին եւ նրանց հետ նաեւ կառավարիչներին, որոնք գտնւում էին Հնդկաստանից մինչեւ Եթովպիայի շրջանները. այդ նախարարները հարիւր քսանեօթն էին: 3 Նրանք կերան, խմեցին, յագեցան եւ ուրախացան: Երբ խրախճանքն աւարտուեց, Դարեհ թագաւորը մտաւ իր սենեակը, բազմեց իր գահին եւ քնեց:

4 Այն ժամանակ, երեք պատանիներ, որ նրա սենեկապաններն էին, մինչ թագաւորը դեռ քնած էր, սենեակի ներսում կանգնել էին նրան սպասաւորելու համար եւ պահպանում էին նրան: Նրանք սկսեցին իրար հետ խօսել եւ ասացին. 5 «Եկէ՛ք իւրաքանչիւրս մի բան ասենք. եւ ով իր ընկերոջից աւելի իմաստուն եւ ուժեղ բան ասի, թող Դարեհ թագաւորը մեծամեծ պարգեւներ տայ նրան, թող նա մեծ ու անուանի լինի բոլորից, 6 թող նրան ծիրանի զգեստներ հագցնի, խմելու եւ ուտելու համար ոսկի սպասք տայ, նստելու եւ քնելու համար՝ ոսկեղէն գահաւորակ, թող նա ոսկեսանձ նժոյգ հեծնի, բեհեզեայ խոյրով թագ կապի նրա գլխին եւ ոսկէ մանեակ՝ նրա պարանոցին: 7 Թող նա իր իմաստութեան համար նստի Դարեհի երկրորդ աթոռին եւ կոչուի Դարեհի ազգական»:

8 Այդ ժամանակ նրանցից իւրաքանչիւրը գրեց իր խօսքը: Նրանք կնքեցին եւ դրեցին Դարեհ արքայի սնարին ու ասացին. 9 «Երբ արթնանայ, այդ գրութիւնները կը տանք նրան. թող թագաւորն ու պարսիկ երեք մեծամեծ իշխաններ ընտրեն եւ ում խօսքը գտնեն առաւել իմաստուն, յաղթողի պարգեւը թող տան նրան»: 10 Առաջինը գրեց եւ ասաց. «Գինին է բոլորից յաղթողն ու զօրաւորը»: 11 Երկրորդը գրեց եւ ասաց. «Թագաւորն է բոլորից յաղթողն ու զօրաւորը»: 12 Երրորդը գրեց եւ ասաց. «Կանայք են բոլորից յաղթողն ու զօրաւորը, բայց ճշմարտութիւնը յաղթում է բոլորին»: 13 Երբ թագաւորը արթնացաւ, վերցրեց գրութիւնները, որ տուեցին նրան, կարդաց 14 եւ մարդ ուղարկեց կանչելու պարսիկների ու մարերի բոլոր մեծամեծներին՝ նախարարներին, սպարապետներին, կառավարիչներին եւ իշխաններին: 15 Նստեցին մի դահլիճում եւ բոլորի առաջ կարդացին գրութիւնները: 16 Թագաւորն ասաց. «Այստե՛ղ կանչեցէք պատանիներին, թող մեկնաբանեն իրենց խօսքերը»: 17 Երբ կանչուած պատանիները եկան նրանց առաջ, բոլորը նրանց ասացին. «Բացատրեցէ՛ք մեզ ձեր այս գրածները»:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՆՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

18 Առաջինը, որ գինու զօրութեան մասին էր գրել, սկսեց խօսել եւ այսպէս ասաց. «Ո՛վ մարդիկ, մի՞թէ ամենից զօրաւորը գինին չէ. բոլոր մարդիկ, ովքեր խմում են այն, գինին յիմարեցնում է նրանց մտքերը. 19 թագաւորների ու տառապեալների միտքը նա դարձնում է նոյնը, այդպէս էլ տիրոջն ու ծառայինը, հարուստներինն ու աղքատներինը: 20 Գինին շեղում է բոլորի միտքը եւ դարձնում դէպի ուրախութիւն: Նրանք երբեք չեն յիշում տրտմութիւն եւ որեւէ ցաւ, 21 քանզի գինին բոլորի սրտերը լցնում է զուարթութեամբ եւ մեծութեամբ. 22 երբ խմում են, էլ չեն յիշում թագաւորներին կամ իշխաններին եւ դառնում մեծախօս: Մարդ երբ խմում է, չի յիշում անգամ սիրելիներին, եղբայրներին կամ թշնամիներին, շատ յաճախ սուր է հանում, 23 եւ երբ անցնում է գինու ազդեցութիւնը, չի էլ յիշում, թէ ինչ է արել:

24 Ո՛վ մարդիկ, մի՞թէ զօրաւորը գինին չէ, որ ստիպում է այս բոլորն անել»: Եւ այս ասելով՝ նա լռեց:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԱՆՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

4 Երկրորդը, որ գրել էր թագաւորի զօրութեան մասին, սկսեց խօսել եւ ասաց. 2 «Ո՛վ մարդիկ, մի՞թէ ճիշտ չէ, որ մարդիկ հզօրացել են, տիրել ծովին ու ցամաքին եւ այն ամենին, ինչ կայ նրանց մէջ: 3 Իսկ հզօր թագաւորը տիրում է ամբողջ երկրին եւ մարդկանց. ինչ որ նա ասում կամ հրամայում է, կատարում են անմիջապէս. նոյնիսկ եթէ հրամայի, որ ընկերը պատերազմի ընկերոջ դէմ, նրանք չեն համարձակուի զանց առնել թագաւորի խօսքը: 4 Իսկ եթէ նրանց ուղարկի պատերազմելու թշնամիների դէմ, ապա նրանք իսկոյն կը գնան, կը պատրաստեն մարտական մեքենաներ, ամրութիւններ, պարիսպներ եւ աշտարակներ, 5 կը սպանեն եւ կը մեռնեն, բայց չեն կարող զանց առնել թագաւորի հրամանը. իսկ եթէ յաղթեն, բոլոր բարիքները կը բերեն թագաւորի համար: 6 Ոչ միայն պատերազմող զօրականները, այլեւ այն մշակները, որ հող են հերկում, ցանում են եւ հնձում, նրանք եւս իրենց բերքից բերում են թագաւորի համար. նաեւ հարկահանները, որոնք ստիպում են երկրի բնակիչներին, դարձեալ հարկ են հաւաքում թագաւորի համար: 7 Թագաւորն է միայն, որ հզօր իշխան է բոլորի վրայ. եթէ հրամայում է սպանել, կը սպանեն, ապրեցնել՝ կ'ապրեցնեն, 8 կառուցել՝ կը կառուցեն, քանդել՝ կը քանդեն, 9 եթէ հրամայում է տնկել՝ կը տնկեն: 10 Չէ՞ որ ամբողջ երկիրը ենթակայ է թագաւորի ուժին եւ լսում է նրա հրամանը. արքան ինքը ինչ որ կամենում է, այն է անում. ինքը հանգիստ բազմում է, ուտում, խմում, քնում, 11 մինչդեռ միւս բոլորը նրա շուրջը պատրաստ՝ պահպանում են նրան, լսում նրա հրամանները եւ չեն համարձակւում ըստ իրենց կամքի գնալ մի տեղ կամ մի բան անել, սիրտ չեն անում զանց առնել թագաւորի հրամանը: 12 Արդ, ո՛վ մարդիկ, մի՞թէ զօրաւորը թագաւորը չէ, որի հրամանի խօսքը լինում է այսքան հզօր, եւ նա իշխում է բոլորի վրայ»: Այս ասաց եւ լռեց:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԱՆՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

13 Երրորդը, որ ասել էր կանանց զօրութեան եւ ճշմարտութեան մասին, Զորոբաբէլն էր: Նա սկսեց խօսել եւ ասաց. 14 «Ո՛վ մարդիկ, եթէ մեծազօր է թագաւորը կամ բազմաթիւ այլ մարդիկ, կամ թէ զօրաւոր է գինին, ապա ո՞վ է, որ յաղթում եւ տիրում է բոլորին. կանայք չե՞ն արդեօք, 15 քանզի նրանք են, որ ծնում են թագաւորներին. բոլոր այն մարդիկ, որոնք տիրում են ծովին ու ցամաքին, ծնուել են նրանցից: 16 Կանայք են, որ ծնել եւ սնել են նաեւ այն մշակներին, որոնք այգիներ են տնկում եւ գինի ստանում դրանցից: 17 Նրանք են, որ հագուստներ են պատրաստում տղամարդկանց համար, որոնցով զարդարւում եւ փառաւորւում են նրանք. տղամարդիկ էլ, առանց նրանց, չեն կարող լինել: 18 Եթէ տղամարդիկ ոսկի, արծաթ եւ ամէն տեսակ բարիքներ էլ հաւաքելիս լինեն, տեսնելով մի գեղեցիկ կին՝ շրջւում են դէպի նա, 19 բերանները բաց նայում եւ ամբողջ սրտով սիրում են նրան՝ ոսկուց, արծաթից եւ բոլոր բարիքներից առաւել: 20 Տղամարդը թողնելով իր հօրն ու մօրը, որ ծնել ու սնել են իրեն, նաեւ իր երկիրը, գնում է կնոջ հետ, 21 եւ հոգով այնպէս է միանում նրան, որ մինչեւ իսկ չի յիշում ո՛չ հօրը, ո՛չ մօրը եւ ո՛չ էլ իր երկիրը: 22 Հէնց սրանից էլ արժէ, որ դուք իմանաք, թէ ձեր կանայք սիրում են ձեզ, քանզի այն ամէնը, ինչ դուք անում էք եւ վաստակում, բերում եւ տալիս էք ձեր կանանց: 23 Եթէ մարդ իր սուրը վերցնելով՝ գնայ հեռու ճանապարհ, եւ ինչ-որ բան ձեռք բերի՝ աւազակութիւն անի կամ գողանայ, նաւարկի ծովով կամ գետերով, 24 գազանների պատահի կամ անցնի խաւար տեղերով, երբ գողանայ, յափշտակի, անցնի բոլոր նեղութիւններից, ապա պիտի գայ եւ իր ամբողջ վաստակը պիտի բերի կնոջ համար, 25 որովհետեւ մարդ կնոջն աւելի է սիրում, քան իր հօրն ու մօրը: 26 Շատերն են

իրենց խելքը կորցրել եւ իրենց կանանց պատճառով դարձել ծառաներ, 27 շատերն են մատնուել կորստի, մեռել ու սպանուել, սխալուել ու ընկել մեծ մեղքերի մէջ՝ կանանց պատճառով: 28 Հիմա դուք ինձ չէք հաւատում. ահա այդ մեծ թագաւորը. անձնիշխան է չէ՞ ինքը. մարդկանցից ամէն մէկը չի համարձակւում մօտենալ նրան: 29 Բայց ես տեսել եմ, թէ ինչպէս թագաւորի հարճի աղջիկը, որ նստել էր թագաւորի աջ կողմում, 30 թագաւորի գլխից վերցնելով թագը՝ դնում էր իր գլխին, 31 ապտակում թագաւորին, բայց թագաւորը դրա համար չէր բարկանում, այլ բերանը բացած՝ նայում էր նրան. եթէ աղջիկը ծիծաղում էր, ինքն էլ էր ծիծաղում նրա հետ, եթէ նա տխրում էր, թագաւորը փաղաքշում էր, մինչեւ որ սփոփէր նրան: 32 Արդ, ո՛վ մարդիկ, մի՞թէ զօրաւորը կանայք չեն, որ անում են այս բոլորը»: 33 Թագաւորն ու նրա մեծամեծները այդ ժամանակ սկսեցին նայել մէկը միւսին, ընկերն՝ ընկերոջը: Զորոբաբէլն սկսեց խօսել ճշմարտութեան մասին եւ ասաց. 34 «Ո՛վ մարդիկ, ճիշտ չէ՞, որ կանայք են զօրաւոր. մեծ է երկիրը, բարձր է երկինքը, արագընթաց է արեգակը, քանզի արշաւելով երկնքի կամարաձեւ խորանի միջով՝ մի օրուայ մէջ դարձեալ արագ սլանում եւ հասնում է իր տեղը: 35 Արդեո՞ք մեծ չէ Նա, որ ստեղծել է այս բոլորը: Արդարեւ, մեծ է ճշմարտութիւնը եւ ամէն ինչից զօրաւոր: 36 Ամբողջ երկիրը ապաւինում է ճշմարտութեանը, երկինքը օրհնում է ճշմարտութիւնը, ամէն ինչ սասանւում եւ դողում է նրա առաջ. ճշմարտութեան մէջ անիրաւութիւն չկայ, ոչ մի անիրաւութիւն: 37 Անիրաւ է գինին, անիրաւ է թագաւորը, անիրաւ են նաեւ կանայք, անիրաւ են բոլոր մարդկանց որդիները, անիրաւ են նաեւ նրանց բոլոր գործերը, ճշմարտութիւն չկայ նրանց մէջ, եւ իրենց անիրաւութեան մէջ էլ կը կորչեն իրենք: 38 Իսկ ճշմարտութիւնը կայ, մնում է եւ զօրաւոր է յաւիտենապէս, կենդանի է նա, եւ նրա իշխանութիւնը՝ յաւիտենական: 39 Աչառութիւն չկայ նրա մէջ, նա չի փոփոխւում երբեք, այլ միշտ հաստատում է արդարութիւնը, մերժում չարութիւնն ու անիրաւութիւնը. ճշմարտութեան բոլոր գործերը հաճելի են ամենքին: 40 Անիրաւութիւն չկայ նրա դատաստանի մէջ. ճշմարտութիւնն է թագաւորների հզօրութիւնը, նրանց իշխանութիւնն ու նրանց մեծութիւնը: Օրհնեալ է ճշմարտութեան Տէր Աստուածը»:

41 Այս խօսքն ասաց եւ լռեց: Այդ ժամանակ բոլոր հաւաքուածները բարձրաձայն աղաղակեցին եւ ասացին. «Մեծ է ճշմարտութիւնը, ե՛ւ յաղթող, ե՛ւ զօրաւոր»: 42 Իսկ թագաւորն ասաց նրան. «Խնդրի՛ր, ինչ որ ուզում ես, եւ ես կը տամ գրուածից աւելին, քանզի դու բոլորից իմաստուն գտնուեցիր. դու կը նստես իմ երկրորդ աթոռին եւ կը կոչուես իմ ազգականը»: 43 Այն ժամանակ Զորոբաբէլն ասաց թագաւորին. «Յիշի՛ր այն ուխտը, որ արեցիր Երուսաղէմը վերաշինելու մասին այն օրը, երբ թագաւոր դարձար: 44 Դու ասացիր. "Երբ Կիւրոսը գրաւեց Բաբելոնը, գնաց եւ առանձնացրեց այնտեղ Երուսաղէմի կայքն ու սպասքը եւ ուխտ արեց վերադարձնելու Տիրոջ սպասքը: 45 Նոյնպէս եւ դու, ո՛վ թագաւոր, ուխտեցիր շինել Տիրոջ տաճարը, որ այրեցին եդոմայեցիները, երբ քաղդէացիները Հրէաստանը անապատ դարձրին: 46 Այժմ, ահա, աղաչում եմ քեզ, տէ՛ր իմ եւ թագաւո՛ր, խնդրում եմ քեզանից. այս մեծ պարգեւը շնորհի՛ր դու ինձ. սրա համար աղաչում եմ քեզ. կատարի՛ր այն ուխտը, որ ուխտեցիր երկնային թագաւորին, արա՛ այնպէս, ինչպէս խոստացար քո բերանով»:

ԴԱՐԵՀԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ Է ՎԵՐԱՇԻՆԵԼ ԵՐՈՒՍԱՂԷՄՆ ՈՒ ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԸ

47 Այն ժամանակ Դարեհ թագաւորը վեր կացաւ եւ համբուրեց Զորոբաբէլին: Նրա համար թղթեր գրեց բոլոր գաւառապետներին, տեղերի կառավարիչներին, զօրապետներին եւ նախարարներին, որպէսզի նրանք ճանապարհ տան նրան, ինչպէս եւ նրանց, ովքեր նրա հետ էին՝ վերադառնալու եւ վերաշինելու Երուսաղէմը: 48 Թագաւորը թուղթ գրեց նաեւ Ասորիքի, Փիւնիկէի

եւ Լիբանանի կողմերի կառավարիչներին, որպէսզի նրանք Լիբանանից մայրի չինափայտ առաքեն Երուսաղէմ եւ Զորոբաբէլի հետ վերաշինեն քաղաքը: 49 Գրեց նաեւ բոլոր հրեաներին, որոնք Հրէաստան էին վերադառնում իր թագաւորութիւնից, նրանց ազատեց հարկերից եւ բոլոր զօրապետներին, նախարարներին, կառավարիչներին ու գաւառապետներին ասաց, որ ոչ ոք հարկի համար չմօտենայ նրանց դռներին, 50 որ բոլոր այն վայրերում, ուր բնակւում են նրանք, հարկ չտան եւ լինեն ազատ, որ բոլոր եդոմացիները հրեաներին տան այն բոլոր գիւղերն ու վայրերը, որ վերցրել էին նրանցից, 51 որ տաճարի շինութեան համար արքունիքից տան տարեկան քսան տաղանդ, մինչեւ որ տաճարը կառուցուի: 52 Նաեւ ողջակէզների զոհասեղանի համար զոհեր տան բոլոր այն օրերին, ինչպէս գրուած է Օրէնքում, եւ անխափան մատուցեն եօթնորդներն ու տասանորդները, ինչպէս նաեւ՝ տարեկան տասը տաղանդ: 53 Բոլոր նրանք, ովքեր վերադառնում են Երուսաղէմ, թող վերաշինեն քաղաքը, ազատ լինեն եւ հարկ չվճարեն՝ թէ՛ իրենք ու իրենց տոհմերը եւ թէ՛ բոլոր քահանաները: 54 Նաեւ հրամայեց գրել, որ ամէն տեսակ մթերք եւ պատմուճան տան քահանաներին՝ Տիրոջ պաշտամունքը կատարելու համար: 55 Գրեց, որ ղեւտացիներին ռոճիկ տան, մինչեւ որ աւարտուի Տիրոջ տաճարի շինութիւնը, եւ Երուսաղէմը վերաշինուի: 56 Գրեց նաեւ, որ բոլոր նրանց, ովքեր պահպանում են քաղաքը, հողաբաժիններ տան եւ ռոճիկ: 57 Նա Բաբելոնից ուղարկեց տաճարի այն ամբողջ կայքն ու սպասքը, որ առանձնացրել էր Կիւրոսը. եւ ամէն բան, որ ասել էր Կիւրոսը, Դարեհը նոյնն արեց եւ կատարեց ճշտութեամբ. Տիրոջ ամբողջ սպասքը տուեց, որ տանեն:

58 Երբ Զորոբաբէլը դուրս եկաւ թագաւորի մօտից, ձեռքերը բարձրացրեց դէպի երկինք, դէպի Երուսաղէմի կողմը, օրհնեց երկնքի Տէր թագաւորին եւ ասաց. 59 «Քեզանից է յաղթութիւնը, քեզանից է իմաստութիւնը եւ քեզ է վայել փառքը. 60 ես քո ծառան եմ եւ օրհնում եմ քեզ, որ իմաստութիւն տուեցիր ինձ, ես գոհութիւն եմ մատուցում քեզ՝ մեր հայրերի Աստծուն»: 61 Նա վերցրեց թղթերն ու գնաց: Եկաւ Բաբելոն, ամէն ինչ պատմեց իր եղբայրներին: 62 Նրանք օրհնեցին իրենց հայրերի Աստծուն, քանի որ Տէրը նրանց ազատութիւն շնորհեց: 63 Թոյլ տուեց գերութիւնից վերադառնալ եւ վերաշինել Երուսաղէմն ու Տիրոջ տաճարը, որն այդ քաղաքում կոչուեց իր անունով: Եւ եօթը օր նրանք մեծ ուրախութիւն արեցին ամէն տեսակ նուագարաններով:

ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՀՐԵԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

5 Այս բոլորից յետոյ նրանք ընտրեցին տոհմերի, ազգերի ու ցեղերի նահապետներ ու առաջնորդներ, որպէսզի իրենց կանանց, տղաների, աղջիկների ու ծառաների հետ եւ իրենց ամբողջ կայքով ու ունեցուածքով վերադառնան Երուսաղէմ: 2 Դարեհը նրանց հետ ուղարկեց հազար ձիաւոր, որպէսզի նրանք ապահով հասնեն Երուսաղէմ, 3 յետոյ թմբուկների, փողերի եւ այլ նուագարանների նուագով, պարով եւ մեծ ուրախութեամբ նրանց ճանապարհեց Երուսաղէմ:

4 Ըստ իրենց հայրերի անունների եւ ըստ իրենց ազգատոհմերի, ահա սրանք են անուններն այն մարդկանց, որ վերադարձան Երուսաղէմ.

5 Քահանաներից՝ Ահարոնի որդի Փենեէսի որդիները, Յոսեդեկի որդի Յեսուն, Յուդայի ցեղից, Փարէսի տոհմից, Դաւթի ազգից՝ Յովակիմը, որ Սաղաթիէլի որդի Նոյն Զորոբաբէլն էր, 6 հէնց նա, որ Դարեհ արքայի առաջ իմաստուն խօսքեր ասաց Նիսան ամսին՝ նրա թագաւորութեան երկրորդ տարուայ առաջին ամսին: 7 Սրանք բոլորը հրեաներ էին, որոնց թոյլ տրուեց գերութիւնից վերադառնալ Երուսաղէմ. սրանց գերի էր տարել Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան: 8 Սրանք վերադարձան Երուսաղէմ եւ բնակութիւն հաստատեցին Հրէաստանում՝ իւրաքանչիւրն իր քաղաքում: Նրանց առաջնորդներն էին Զորոբաբէլը եւ Յոսեդեկի

որդի Յեսուն. քահանաների ազգատոհմից՝ Նէեմին, Զարեհը, Ռեսէն, Անանիան, Մուրդքէն, Բեելսարը, Ասփարասը, Բորսէլը, Ռուիբը եւ Բաանան:

9 Ահա եւ նրանց ազգերի տոհմապետների եւ իշխանների անուններն ու թիվը. Փորոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու մարդ. Սափատիայի որդիները՝ չորս հարիւր եօթանասուներկու. 10 Արէսի որդիները՝ եօթը հարիւր եօթանասունվեց. 11 Նեփթաղիմ Մովաբացու որդիները, Յեսուի եւ Ռովաբի որդիները՝ երկու հազար ութ հարիւր տասներկու. 12 Ելամի որդիները՝ երկու հազար երկու հարիւր յիսունչորս. Զատոնայի որդիները՝ ինը հարիւր քառասունհինգ. Բորքիայի որդիները՝ եօթը հարիւր յիսուն. 13 Բանիայի որդիները՝ վեց հարիւր քառասունութ. Բերիայի որդիները՝ վեց հարիւր քսաներեք. Արդիայի որդիները՝ երեք հազար երեք հարիւր քսաներկու. 14 Ադոնիկամի որդիները՝ վեց հարիւր եօթանասունեօթը. Բոսորիայի որդիները՝ երկու հազար վեց հարիւր վեց. Ադինայի որդիները՝ չորս հարիւր յիսունչորս. 15 Ազերեղեկիայի որդիները՝ իննսուներկու. Իլանայի որդիները եւ Զետայի որդիները՝ վաթսունեօթը. Ազարիայի որդիները՝ չորս հարիւր երեսուներկու. 16 Գերդալի որդիները՝ վեց հարիւր երեսուներկու. Անանիայի որդիները՝ հարիւր քսան. Արոմի որդիները՝ երեք հարիւր քսաներեք. 17 Արսիփուրի որդիները՝ հարիւր տասներկու. Բետերի որդիները՝ երեք հազար իննսունհինգ. Բեթլոմի որդիները՝ հարիւր քսաներեք: 18 Նատոբի մարդիկ յիսունհինգ հոգի էին, Նատտայինը՝ հարիւր յիսունութ, Բեթսամոթինը՝ քառասուներկու, 19 Կարիաթարիմինը՝ քսանհինգ, Քափիրինը եւ Թերոնինը՝ եօթը հարիւր քառասունութ, Քադիասիայինը եւ Ամիդայինը՝ չորս հարիւր քսաներկու, 20 Կիմարինը եւ Կաբէսինը՝ վեց հարիւր քսանմէկ, Մակալոնինը՝ հարիւր քսաներկու, 21 Բետոլիամայինը՝ յիսուներկու: 22 Նեփիսայի որդիները՝ հարիւր յիսունվեց մարդ. Կալամոլի որդիները եւ Օնիայի որդիները՝ եօթը հարիւր քսանհինգ. 23 Երեքոյի որդիները՝ երեք հարիւր քառասունհինգ, Սանասսի որդիները՝ երեք հազար երեք հարիւր երեսունմէկ:

24 Քահանաների որդիները. Յեսուի որդի Յեդդուտի որդիները՝ ինը հարիւր երեսուներկու. Եմմերի որդիները՝ հազար յիսուներկու. 25 Փասորի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունհինգ. Քարմիայի որդիները՝ հազար տասնեօթը:

26 Իսկ ղեւտացիների որդիների թիւը այս էր. Յեսուինը՝ մէկ, Կոդոլիայինը՝ Բանիայինը եւ Սուդիայինը՝ եօթանասունչորս:

27 Քահանաների ազգատոհմից կային սաղմոս երգողներ. Ասափի որդիները՝ հարիւր քառասունութ մարդ:

28 Դռնապաններից՝ Սալոմիայի որդիները, Ատերի որդիները, Տոլմանիայի որդիները, Գակուբիայի որդիները, Ատերի որդիները, Սաբէի որդիները, բոլորը միասին՝ հարիւր երեսունինը մարդ:

29 Քահանաների ծառաները. Ասիփի որդիները, Տաբալի որդիները, Կերի որդիները, Սուի որդիները, Փալիայի որդիները, Լաբանիայի որդիները, Ագաբի որդիները, 30 Ակուդի որդիները, Ուտի որդիները, Կեդաբի որդիները, Ագաբի որդիները, Սուբայիմի որդիները, Աստանի որդիները, Կաթուի որդիները, Գելլուրի որդիները, 31 Յաբուի որդիները, Դեսանի որդիները, Նորի որդիները, Ասէբի որդիները, Գազերի որդիները, Օքոզիայի որդիները, Փանիայի որդիները, Ասարի որդիները, Բասիայի որդիները, Ասանի որդիները, Մաանի որդիները, Նափիսի որդիները, Ակումի որդիները, Աքիփի որդիները, Ասուրի որդիները, Փարակի որդիները, 32 Փասալոթի որդիները, Դեդանի որդիները, Կուութի որդիները, Քարէսի որդիները, Բարքուսի որդիները, Սեսարի որդիները, Թումայի որդիները, Նասի որդիները, Ատեփի որդիները:

33 Սողոմոնի ծառաների որդիները. Սափփոթի որդիները, Փարիդի որդիները, Յեելի որդիները, Լոզոնի որդիները, Սաբէի որդիները, Սափիայի որդիները, 34 Ագիայի որդիները, Փաքարիայի որդիները, Սաբիայի որդիները, Սարոթի որդիները, Մասսիայի որդիները, Գասայի որդիները, Ադուսի որդիները, Սուբասի որդիները, Ափփերի որդիները, Բարոդիայի որդիները, Սափատի որդիները, Ալլոնիայի որդիները: 35 Քահանաների եւ Սողոմոնի բոլոր ծառաները միասին՝ երեք հարիւր եօթանասուներկու մարդ:

36 Բաբելոնից էին վերադարձել թէ՛ սրանք եւ թէ՛ սրանց իշխանները՝ Թերմալէթը, Թելեսիասը, Քարաթալան եւ Ալլասարը: 37 Կային նաեւ ուրիշներ, որ չկարողացան ցոյց տալ ո՛չ իրենց հայրերի տոհմը եւ ո՛չ էլ իրենց սերունդը, թէ իրենք իսրայէլացիներ են: Դրանք էին՝ Դալանի որդիները, Տուբանի որդիները, Նեկոդանի որդիները՝ վեց հարիւր եօթանասուներկու մարդ:

38 Քահանաներից, որոնք քահանայական ծառայութեան մէջ էին, իրենց նախնիների տոհմերը չկարողացան ցոյց տալ նաեւ Նորդիայի որդիները, Ակբոսի որդիները, Յոդուսի որդիները, որոնք կին էին առել Բերզելիայի աղջիկներից եւ կոչւում էին նրանց անունով: 39 Նրանց անունները փնտռեցին մատեաններում՝ ըստ իրենց տոհմերի եւ ըստ իրենց բնակավայրերի, բայց չգտան. Նրանց հեռացրին ծառայութիւնից եւ արգելեցին մօտենալ քահանայութեանը: 40 Նէմիան եւ Ատթարիան նրանց ասացին, որ նրանք սուրբ բաներին չմօտենան այնքան ժամանակ, քանի դեռ որեւէ քանայապետ չի պարզաբանել ճշմարտութիւնը նրանց տոհմերի մասին: 41 Բոլոր իսրայէլացիները, ներառեալ տասներկու եւ աւելի բարձր տարիք ունեցողները, չհաշուած ծառաներին եւ աղախիններին, քառասուներեք հազար երեք հարիւր վաթսուն մարդ էին. 42 նրանց ծառաներն ու աղախինները՝ եօթը հազար երեք հարիւր երեսունեօթը մարդ. սաղմոս երգողներն ու պաշտամունքի սպասաւորները՝ երկու հարիւր քառասունհինգ մարդ:

43 Նրանց հետ կար չորս հարիւր երեսունհինգ ուղտ, եօթը հազար քառասունվեց ձի, երկու հարիւր քառասունհինգ ջորի եւ հինգ հազար հինգ հարիւր քսանհինգ էշ: 44 Նրանց իշխաններն ու տոհմապետները եկան, մտան Աստծու տաճարի տեղը, որ գտնւում է Երուսաղէմում, ուխտ արեցին, որ տաճարը նորից կը կանգնեցնեն իր տեղում, եւ 45 ի նպաստ գործի, իւրաքանչիւրն ըստ իր կարողութեան, տաճարի գանձանակին տալիս էր ոսկի՝ հազար մնաս, արծաթ՝ հինգ հազար մնաս եւ քահանայական հարիւր պատմուճան: 46 Քահանաները, ղեւտացիները եւ ժողովուրդը բնակուեցին Երուսաղէմում եւ մօտիկ վայրերում, իսկ սաղմոսասաց պաշտօնեաները, դռնապաններն եւ բոլոր իսրայէլացիները՝ իրենց գիւղերում եւ ագարակներում:

47 Եօթներորդ ամսին բոլոր իսրայէլացիները իրենց բնակավայրերից վեր կացան եւ միահամուռ հաւաքուեցին Երուսաղէմում, ընդարձակ մի տեղ, արեւելեան կողմի դռան առջեւ: 48 Յոսեդեկի որդի Յեսուն ու նրա եղբայրները, քահանաների ամբողջ բազմութիւնը, Սաղաթիէլի որդի Զորոբաբէլն ու նրա եղբայրները պատրաստեցին Իսրայէլի Տէր Աստծու զոհասեղանը 49 նրա վրայ ողջակէզներ մատուցելու համար ըստ այն կարգի, ինչպէս գրուած է Աստծու մարդու՝ Մովսէսի գրքում: 50 Հրեաները հաւաքուեցին, զատուեցին երկրի հեթանոս այլազգիներից, կանգնեցրին զոհասեղանն իր նախկին տեղում, ու թէեւ հեթանոսներն իրենց թշնամիներն էին, սակայն երկրի բոլոր այլազգիներն էլ օգնում էին իրենց: Նրանք ժամանակ առ ժամանակ ընծաներ եւ զոհեր էին բերում, իսկ իրենք մատուցում էին Տիրոջ թէ՛ առաւօտեան եւ թէ՛ երեկոյեան ողջակէզները: 51 Նրանք կատարեցին Տաղաւարահարաց տօնն այն կարգով, ինչպէս գրուած էր Մովսէսի օրէնքներում եւ մատուցում էին ամենօրեայ զոհերը՝ ըստ ընդունուած կարգի: 52 Նրանք մատուցում էին նաեւ ըստ ժամանակների սահմանուած ողջակէզները՝ շաբաթ օրերի եւ ամէն ամսամտի ողջակէզները եւ, ըստ կարգի, կատարում էին բոլոր սուրբ տօները: 53 Եւ բոլոր նրանք, որ ուխտ էին արել Աստծուն, եօթներորդ ամսի ամսամտին սկսեցին ողջակէզներ մատուցել Տէր Աստծուն, մինչդեռ Տէր Աստծու տաճարը դեռեւս կառուցուած չէր: 54 Նրանք քարհատներին ու հիւսներին փող ու մթերք տուեցին, 55 սիդոնացիներին եւ

տիւրոսացիներին՝ նոյնպէս, որպէսզի նրանք Լիբանանից մայրի շինափայտ բերեն, նաւերով հասցնեն Յոպպէ նաւահանգիստը, ինչպէս ժամանակին նրանց հրամայել եւ կարգադրել էր Պարսկաստանի Կիւրոս թագաւորը:

56 Սաղաթիէլի որդի Զորոբաբէլը, Յոսեդեկի որդի Յեսուն եւ նրանց եղբայրները, քահանաներն ու ղեւտացիները, նաեւ բոլոր նրանք, որ Երուսաղէմ էին վերադարձել գերութիւնից, Երուսաղէմ գալու իրենց երկրորդ տարուայ երկրորդ ամսին սկսեցին կառուցել տաճարը: 57 Նրանք Տէր Աստծու տան հիմքերը գցեցին գերութիւնից Հրէաստան եւ Երուսաղէմ վերադառնալու երկրորդ տարուայ երկրորդ ամսի ամսամտին: 58 Քսան տարեկանից բարձր ղեւտացիներին նրանք յանձնարարեցին Տիրոջը սպասաւորելու գործը, իսկ Յեսուն, նրա որդիներն ու եղբայրները, նրա եղբայր Կադմիէլը, Բաբունի որդի Յեբուհէմի որդիները, Ելիադիայի որդի Յովիդէի որդիները՝ իրենց եղբայրների հետ, եւ բոլոր ղեւտացիները միահամուռ աշխատում էին Տիրոջ տաճարի գործի վրայ, իսկ վարպետները կառուցում էին Տիրոջ տաճարը: 59 Քահանայապետները, երկար զգեստներ հագած, դասաւորուել էին նուագարաններ ու շեփորներ ձեռքերին, իսկ ղեւտացիները՝ Ասափի որդիները ծնծղաներ էին բռնել, 60 սաղմոսներ էին երգում եւ օրհնում Աստծուն՝ ըստ նուագարանների ու երգերի այն կարգի, որ սահմանել էր Իսրայէլի Դաւիթ թագաւորը: 61 Նրանք բարձրաձայն օրհնում եւ գոհութիւն էին մատուցում Տէր Աստծուն, որ նրա բարերարութիւնը եւ փառքը յաւիտենական է ամբողջ Իսրայէլի համար: 62 Եւ ամբողջ ժողովուրդը լիաշունչ շեփորներ էր փչում, բարձրաբարբառ գոչում եւ օրհնում էր Տիրոջը, որ նա կանգնեցնում է իր սուրբ տաճարը: 63 Եկան եւ շինարարութեան վայր մտան ղեւտացի այն քահանայապետները, որոնք, ըստ իրենց հայրերի նահապետութեան, գահերէցներ եւ առաջնորդներ էին եւ որոնք տեսել էին նախկին տաճարը, որը կառուցուած էր սրանից առաջ: 64 Ոմանք բարձրաձայն լալիս էին, ոմանք շեփորներ էին փչում, ոմանք արձակում ուրախութեան կանչեր, եւ այդ ձայները խառնուել էին այնպէս, 65 որ բազմութիւնը, ժողովրդի լացի ձայներից, չէր կարողանում լսել շեփորների ձայնը, թէեւ բազմաթիւ շեփորներ էին փչում, եւ նրանց ձայնը հասնում էր հեռու, հեռաւոր վայրեր:

66 Յուդայի ու Բենիամինի ազգի թշնամիները լսեցին, եկան տեսնելու եւ իմանալու, թէ ինչ էր նշանակում շեփորների այդ ձայնը, 67 եւ իմացան, որ Բաբելոնի գերութիւնից վերադարձած հրեաները կառուցում են Իսրայէլի Տէր Աստծու տաճարը: 68 Նրանք մօտեցան Զորոբաբէլին, Յոսեդեկի որդի Յեսուին եւ այլ իշխանների ու տոհմապետների եւ ասացին նրանց. «Թողէ՛ք մենք էլ ձեզ հետ կառուցենք տաճարը, 69 որովհետեւ ինչպէս դուք, այնպէս էլ մենք ենք լսում ձեր Տէր Աստծուն, մենք էլ ենք նրան զոհեր մատուցում այստեղից ձեր գերեվարուելուց յետոյ, այն օրից ի վեր, երբ մեզ Ասորեստանի Սալմանասար թագաւորը գերի վերցրեց, բերեց եւ բնակեցրեց այստեղ»:

70 Զորոբաբէլը, Յոսեդեկի որդի Յեսուն եւ Իսրայէլի միւս իշխաններն ու տոհմապետները նրանց ասացին. «Մեզ վայել չէ, որ մենք ձեզ հետ կառուցենք մեր Տէր Աստծու տունը, 71 միայն մե՛նք պիտի կառուցենք մեր Աստծու տաճարը, ինչպէս որ հրամայել է մեզ Պարսկաստանի Կիւրոս թագաւորը»:

72 Սրանք հէնց այն ազգերն էին, որ միացել էին Յուդայի երկրի թշնամիներին 73 եւ արգելք եղել Կիւրոս թագաւորի ժամանակ տաճարը կառուցելուն, քանի որ նա հրամայել էր տաճարը կառուցել իր կենդանութեան ժամանակ. իսկ նրա մահից յետոյ էլ արգելեցին տասներկու տարի՝ մինչեւ Դարեհ թագաւորի թագաւորութեան երկրորդ տարին:

ԴԱՐԵՀԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄԱԾ ՆԱՄԱԿԸ
ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

6 Դարեհ արքայի երկրորդ տարում Անգէ եւ Զաքարիա մարգարէները Իսրայէլի Տէր Աստծու անունով մարգարէութիւն էին անում Հրէաստանի եւ Երուսաղէմի մասին: 2 Այդ ժամանակ էլ Սաղաթիէլի որդի Զորոբաբէլը եւ Յոսեդեկի որդի Յեսուն սկսեցին կառուցել Տիրոջ տաճարը Երուսաղէմում՝ Տիրոջ մարգարէների հետ միասին, որոնք օգնում էին նրանց: 3 Նոյն ժամանակ նրանց մօտ եկան Սիսինը՝ Ասորիքի կողմերի եւ փիւնիկեցիների իշխանը, Սաթրուբազանն ու նրանց ընկերները եւ ասացին նրանց. 4 «Ո՞ւմ հրամանով էք կառուցում այդ տաճարը եւ նրա գաւիթները, կամ այդ ովքե՞ր են կամեցել այդ տաճարը կառուցել եւ աւարտել»: 5 Տիրոջ կողմից, սակայն, շնորհ էր իջել քահանաների եւ հրեաների վրայ, 6 եւ նրանք չարգելեցին նրանց կառուցել, մինչեւ որ գրէին Դարեհ թագաւորին եւ հրաման առնէին նրանից: 7 Ահա այն նամակի պատճէնը, որ նրանք գրեցին եւ ուղարկեցին Դարեհ արքային.

8 «Սիսինը՝ Ասորիքի եւ փիւնիկեցիների իշխանը, Սաթրուբազանը եւ նրանց հետ միասին Ասորիքի եւ փիւնիկեցիների գործակալներն ու կառավարիչները ողջունում են Դարեհ թագաւորին: 9 Թող յայտնի լինի քեզ, տէ՛ր մեր եւ թագաւո՛ր, որ մենք գնացինք, հասանք Հրէաստան երկիրը, մտանք Երուսաղէմ քաղաքը, այնտեղ գտանք գերութիւնից վերադարձած հրեաներին եւ Երուսաղէմ քաղաքի նրանց քահանայապետներին, 10 տեսանք, որ նրանք կառուցում են Տիրոջ մեծաշուք եւ սքանչելի տաճարը կոփածոյ եւ խոշոր քարերով, որոնք պատերի մէջ կապում են փայտէ պահանգներով. գործը յաջողութեամբ առաջ է գնում նրանց ձեռքով, եւ նրանք ուզում են փառք ու պատուով արագ վերջացնել այն: 11 Այն ժամանակ մենք հարցրինք աւագներին եւ ասացինք. "Ո՞ւմ հրամանով էք կառուցում այդ տունը, կամ ո՞ւմ խօսքով էք գցում նրա հիմքերը": 12 Հարցնում էինք, որպէսզի քեզ յայտնենք այդ մասին, մատնանշենք նրանց առաջնորդներին, գրենք այն մարդկանց անունները, որոնք այդ գործի գլխաւորներն են: 13 Նրանք մեզ պատասխանեցին ու ասացին. "Մենք Տէր Աստծու ծառաներն ենք, Նրա, որ ստեղծել է երկինքն ու երկիրը: 14 Այս տաճարը շատ տարիներ առաջ կառուցուած է եղել Իսրայէլի մի հզօր ու մեծ թագաւորի ձեռքով, 15 բայց երբ մեր հայրերը դառնացրին Իսրայէլի Տէր Աստծուն եւ մեղք գործեցին նրա առաջ, Նրա, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, Տէրն էլ նրանց մատնեց բաբելացիների արքայի՝ քաղդէացիների թագաւոր Նաբուքոդոնոսորի ձեռքը: 17† Բայց Բաբելոնում Կիւրոսի թագաւորութեան հաստատուելու առաջին տարում, Կիւրոս արքան հրովարտակ գրեց եւ հրամայեց կառուցել այս տաճարը, 18 եւ ամբողջ կայքը, ոսկէ եւ արծաթէ այն սպասքը, որ Նաբուքոդոնոսոր արքան վերցրել էր Երուսաղէմի Տիրոջ տաճարից եւ տարել ու տուել էր պահելու իր կուռքերի գանձատանը, Կիւրոսը դարձեալ հանեց բաբելացիների կուռքերի գանձատնից եւ դրանք տուեց Զորոբաբէլին ու Սամանասարին: 19 Արքան պատուիրեց նրանց, որ այդ կայքն ու սպասքը բերեն Երուսաղէմ, դնեն Տիրոջ տաճարում եւ հրաման տուեց այս տաճարը կառուցել իր նախկին տեղում: 20 Երբ Սամանասարը վերադարձաւ Երուսաղէմ, այդ ժամանակ էլ գցեց այս տաճարի հիմքերը, եւ մենք այդ օրից մինչեւ այժմ կառուցում ենք այն ու դեռ չենք աւարտել":

21 Արդ, տէ՛ր մեր եւ թագաւո՛ր Դարեհ, հրամայի՛ր, որ մատենադարաններում, ուր պահւում են Կիւրոս թագաւորի յիշատակարանների գրքերը, փնտռեն 22 եւ գտնեն, որ Կիւրոս թագաւորի հրամանով եւ նրա խօսքով են Տիրոջ տունը կառուցում Երուսաղէմում, ապա վերահասու եղիր Կիւրոս թագաւորի հրամանին եւ այս բոլորի մասին տեղեկութիւն ուղարկիր մեզ»:

23 Այն ժամանակ Դարեհ թագաւորը հրամայեց փնտռել թագաւորական

†Հայերէնը չունի 16-րդ համարը:

մատենադարաններում, որոնք գտնուում էին Բաբելոնում: Մարաստանի Բատանբարիտէն քաղաքում, ուր յիշատակարանների գրքեր կային, գտնուեց մի հրովարտակ, ուր գրուած էր այսպէս. 24 «Կիւրոսի թագաւորութեան առաջին տարի. Կիւրոս արքան հրամայեց կառուցել Տիրոջ տունը Երուսաղէմում, ուր բաց կրակի վրայ զոհեր են մատուցուում: 25 Նա հրամայեց տաճարը կառուցել այս չափերով. բարձրութիւնը՝ վաթսուն կանգուն, լայնութիւնը՝ վաթսուն կանգուն. երեք շարք կոփածոյ քարեր դնել, մի շարք նոր չինափայտ, եւ ծախսերը տալ արքունիքից: 26 Իսկ այն կայքը, ոսկեղէն եւ արծաթեղէն սպասքը, որ Նաբուքոդոնոսորը Բաբելոն էր բերել Տիրոջ տանից, որ գտնուում էր Երուսաղէմում, Կիւրոս թագաւորը հրամայեց տանել եւ դնել այնտեղ՝ իրենց առաջուայ տեղը»:

ԴԱՐԵՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ

27 Ի յաւելումն այս հրամանի, Դարեհ արքան գրում է այսպէս. «Սիսինին՝ ամբողջ Ասորիքի եւ փիւնիկեցիների իշխանին, Սաթրուբազանին եւ ձեր միւս ընկերներին, որոնք Ասորիքի եւ փիւնիկեցիների գործակալներ են նշանակուած. հեռո՛ւ մնացէք այդ տեղից եւ մի՛ մօտեցէք Տիրոջ ծառայ այդ Զորոբաբէլին՝ հրեաների իշխանին, ինչպէս նաեւ հրեաների քահանայապետներին, որոնք միաբանուած կառուցում են Տիրոջ տունը իր տեղում: 28 Ես հրամայեցի, որ այդ տունը կառուցուի ամբողջապէս, եւ դուք օգնէք Երուսաղէմ վերադարձած հրեաներին, որպէսզի նրանք աւարտեն իրենց Տէր Աստծու տաճարը: 29 Ես հրամայեցի, եւ իմ պատուէրն է, որ այդ մարդկանց նպաստ տաք Ասորիքի կողմերի եւ փիւնիկեցիների հարկերից՝ Տիրոջ տան զոհաբերութիւնների համար, եւ թող իշխան Զորոբաբէլը ձեզնից վերցնի արջառներ, խոյեր եւ գառներ. 30 նմանապէս նաեւ՝ ցորեն, աղ, գինի ու ձէթ, եւ այդ բոլորը թող ճշտորէն կատարուի տարէցտարի՝ ըստ այն չափերի եւ ժամկէտների, ինչպէս կը հրամայեն Երուսաղէմի քահանաները Տիրոջն սպասաւորելու ծախսերի համար: 31 Թող այդ ամէնը տրուի օր ըստ օրէ, անխափան, որպէսզի դարձեալ Տէր Աստծուն զոհեր մատուցեն յանուն թագաւորի ու նրա զօրքերի եւ աղօթեն թագաւորի կեանքի համար: 32 Ես հրամայեցի, որ նա, ով կը խուսափի կամ զանց կ'առնի իմ հրամանը, թող պատժուի, անձամբ տանջանքների ենթարկուի, թող կախեն ու խոշտանգեն նրան եւ նրա ամբողջ ունեցուածքը դարձնեն արքունական սեփականութիւն, 33 քանի որ այն տեղի համար, որ կոչւում է Տիրոջ անունով, իմ թագաւորութեան մէջ բոլոր ազգերին հրամայուած էր տալ ամէն բան, իսկ նա համարձակուել է արգելել եւ չար խորհուրդներ է խորհել Տիրոջ տաճարի մասին, որ գտնուում Երուսաղէմում: 34 Ես՝ Դարեհ թագաւորը, հրամայեցի այս բոլորը կատարել մեծագոյն ճշտութեամբ եւ խստութեամբ»:

ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ՆԱՒԱԿԱՏԻՔԸ

7 Այն ժամանակ Սիսինը՝ Ասորիքի կողմերի եւ փիւնիկեցիների մեծ իշխանը, Սաթրուբազանը եւ նրանց ընկերները, որոնք արգելել էին տաճարի շինարարութիւնը, երբ ստացան Դարեհ թագաւորի հրամանը, 2 սկսեցին վերահսկել եւ հոգ տանել գործի համար՝ գործակցելով հրեաների աւագների եւ քահանայապետների հետ: 3 Գործը յաջողութեամբ առաջ էր ընթանում, մանաւանդ որ նրանց օգնում էին Անգէ եւ Զաքարիա մարգարէները: 4 Եւ, ըստ Իսրայէլի Տէր Աստծու հրամանի եւ ըստ Կիւրոսի ու Դարեհի կամքի, աւարտուեց տաճարը:

5 Դարեհ թագաւորի վեցերորդ տարում աւարտուեց սուրբ տաճարը, ադար ամսի քսանին, Դարեհի թագաւորութեան վեցերորդ տարում: 6 Իսրայէլացիները, քահանաներն ու ղեւտացիները եւ բոլոր նրանք, որ վերադարձել էին գերութիւնից, կատարեցին այդ գործը այնպէս, ինչպէս սահմանուած եւ հրամայուած էր Մովսէսի օրէնքների գրքում: 7 Նրանք մատուցեցին Տիրոջ տան նաւակատիքի զոհերը. հարիւր արջառ, երկու հարիւր խոյ, չորս հարիւր գառ եւ 8 ամբողջ Իսրայէլի մեղքերի համար՝ տասներկու նոխազ, ըստ Իսրայէլի տասներկու ցեղերի թուի: 9 Եւ, ըստ ազգերի, նշանակուեցին քահանաներ եւ ղեւտացիներ, որոնք երկար պարեգօտներ էին կրում Իսրայէլի Տէր Աստծու առաջ ծառայելու համար, ինչպէս հրամայուած էր Մովսէսի գրքում. եւ, ըստ իւրաքանչիւր դռան, նշանակեցին դռնապաններ: 10 Իսրայէլացիները, որոնք վերադարձել էին գերութիւնից, Տիրոջ զատկի տօնը կատարեցին առաջին ամսի տասնչորսերորդ օրը, որովհետեւ քահանաներն ու ղեւտացիները մաքրուել էին միասին, 11 ինչպէս եւ բոլոր նրանք, որ վերադարձել էին գերութիւնից: 12 Մաքրուած ղեւտացիները մորթեցին Տիրոջ զատկի գառը գերութիւնից վերադարձած բոլոր իսրայէլացիների համար, իրենց եղբայրների, իրենց եւ քահանաների համար: 13 Կերան գերութիւնից վերադարձած իսրայէլացիները եւ բոլոր նրանք, որ զատուել էին հեթանոսների պղծութիւններից՝ փնտռելով իրենց Տէր Աստծուն: 14 Նրանք Բաղարջակերաց զատիկը կատարեցին եօթը օր եւ ուրախ եղան Տիրոջ առաջ, 15 որովհետեւ Տէրը դէպի իրենց դարձրեց Ասորեստանի թագաւորի սիրտը եւ հզօրացրեց իրենց ձեռքը՝ Իսրայէլի Տէր Աստծու գործի համար:

ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՒՈՐԸ ԹՈՅԼ Է ՏԱԼԻՍ ՀՐԵԱՆԵՐԻՆ՝ ԵԶՐԱՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԵՏ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԱԼ ԵՐՈՒՍԱՂԷՄ

8 Այս բոլոր դէպքերը կատարուելուց յետոյ Պարսկաստանում թագաւորեց Արտաշէս արքան: Նրա մօտ գնաց Եզրասը, որը որդին էր Ազարիայի, սա՝ Եզեկիայի, սա՝ Քեղկիայի, սա՝ Սաղէմի, 2 սա՝ Ադուկի, սա՝ Աքիտոբի, սա՝ Ամարէթի, սա՝ Ազեկի, սա՝ Մարերոթի, սա՝ Զարիայի, սա՝ Սեուիայի, սա՝ Բոկկիայի, սա՝ Աբասիայի, սա՝ Փենէհասի, սա՝ Եղիազարի, եւ սա՝ Ահարոնի, որը առաջին քահանայապետն էր:

3 Ահա այս Եզրասը, որ Իսրայէլի Աստծու կողմից Մովսէսին տրուած օրէնքների հմուտ օրէնսգէտ էր, վերադարձաւ Բաբելոնից: 4 Թագաւորը մեծ պատուի արժանացրեց նրան: Եզրասը չնորհ գտաւ նրա առաջ, եւ թագաւորը մեծ բարեհաճութեամբ յարգեց նրա խնդրանքը: 5 Եզրասի հետ Երուսաղէմ վերադարձան իսրայէլացիները՝ քահանայապետների եւ ղեւտացիների, սաղմոսասաց սպասաւորների, դռնապանների եւ քահանաների ծառաների որդիները: 6 Նրանք վերադարձան Արտաշէս արքայի թագաւորութեան եօթներորդ տարուայ հինգերորդ ամսին, իսկ Բաբելոնից դուրս էին եկել թագաւորի եօթներորդ տարուայ առաջին ամսի ամսամտին:

7 Նոյն տարուայ հինգերորդ ամսի ամսամտին էլ նրանք մտան Երուսաղէմ, եւ Տէրը յաջողութիւն տուեց Եզրասին ու նրանց ճանապարհին: 8 Եզրասը, որ ամբողջապէս լցուած էր իմաստութեամբ եւ անթերի գիտէր Տիրոջ բոլոր պատուիրանները, Իսրայէլի ժողովրդին ուսուցանում էր, ըստ Տիրոջ օրէնքների, ամէն դատ ու դատաստան եւ իրաւունք:

9 Այդ ժամանակ Եզրաս քահանային՝ Տիրոջ Օրէնքի մատենագրին, հասաւ Արտաշէս թագաւորի հրովարտակը, ուր գրուած էր այսպէս. 10 «Արտաշէս թագաւորը ողջունում է Եզրաս քահանային՝ Տիրոջ Օրէնքի մատենագրին: 11 Մարդասիրական ցանկութեամբ կշռադատելով ամէն բան՝ ես հրամայեցի Հրէաստանի ցեղերի բոլոր մարդկանց, ովքեր կամաւոր ուզում են գնալ Երուսաղէմ, նաեւ քահանայապետներին եւ ղեւտացիներին, որ քեզ հետ միասին վերադառնան Երուսաղէմ. 12 Թող գնան բոլոր նրանք, ովքեր փափագում են մեկնել Հրէաստան եւ Երուսաղէմ, ինչպէս հրամայեցինք մենք՝ ես եւ իմ եօթը խորհրդականները: 13 Թող նրանք վերադառնան եւ կատարեն այն ամէնը, ինչ պահանջում է Օրէնքը. 14 Երուսաղէմում թող զոհեր մատուցեն Իսրայէլի Տէր Աստծուն, ինչպէս խոստացանք մենք՝ ես եւ իմ սիրելիները: Այն ամբողջ ոսկին եւ արծաթը, որ նրանք ունեն բաբելացիների այս երկրում, թող տանեն եւ

Երուսաղէմում զոհեր մատուցեն իրենց
Տէր Աստծուն: 15 Թող բաբելացիների
այս երկրից Տէր Աստծու քահանաները
վերցնեն նուիրաբերութիւնները եւ տա-
նեն Երուսաղէմ. ոսկի ու արծաթ,
արջառներ, խոյեր, գառներ 16 եւ ըն-
ծայուած միւս բոլոր զոհերը, եւ Երու-
սաղէմում Տիրոջ սեղանի վրայ մա-
տուցեն Աստծուն: 17 Այն ամէնը, ինչ
դու կամենում ես անել քո եղբայրների
հետ միասին, արա՛. ըստ քո Տէր Աստ-
ծու կամքի էլ վարուի՛ր թէ՛ ոսկու եւ
արծաթի 18 եւ թէ՛ քահանայական կայ-
քի ու Տիրոջ այն սպասքի հետ, որ կը
տանէք Երուսաղէմ՝ Տէր Աստծու տա-
ճարի կարիքների համար. 19 այդ ամէնը
դի՛ր քո Տէր Աստծու առաջ, Երու-
սաղէմում, 20 իսկ աւելորդ եւ տաճարի
այլ կարիքների համար եղած բաները
թող դնեն թագաւորական գանձատանը:
21 Ես՝ Արտաշէս թագաւորը, հրամայեցի
Ասորեստանի եւ քանանացիների կող-
մերի գանձապահներին, որ նրանք Եզ-
րաս քահանային՝ բարձրեալ Տէր Աստ-
ծու Օրէնքի մատենագրին անխափան
տան այն ամէնը, ինչ կկամենայ վերցնել
նա. հարիւր տաղանդ արծաթ, 22 նոյն
ձեւով՝ հարիւր քոռ ցորեն, հարիւր մար
գինի եւ նոյնքան ձէթ. 23 նաեւ
օրինական միւս բաները՝ բարձրեալ Տէր
Աստծու պաշտամունքը կատարելու
համար, որպէսզի նրա ցասումը չգայ իմ
թագաւորութեան եւ իմ որդու վրայ:
24 Ձեր քահանաների ու ղեւտացիների,
սաղմոսասաց պաշտօնեաների ու դռնա-
պանների, քահանաների ծառաների եւ
Տիրոջ տան սպասաւորների վերաբերեալ
հրամայեցի, 25 որ ոչ ոք իշխանութիւն
չունենայ նրանցից հարկ կամ այլ տուրք
պահանջելու: 26 Իսկ դու, Եզրա՛ս, ըստ
քո իմաստութեան, որ Աստուած տուել է
քեզ, Ասորիքի եւ փիւնիկեցիների
կողմերում դատելու եւ կառավարելու
համար վերակացուներ եւ դատաւորներ
նշանակիր բոլոր նրանց, որ սովորել են
քո Տէր Աստծու Օրէնքը, իսկ նրանց, որ
դեռեւս չգիտեն, սովորեցրո՛ւ: 27 Իսկ
բոլոր նրանց, որ զանց կ՚առնեն քո Տէր
Աստծու Օրէնքը եւ չեն հնազանդուի
մեր թագաւորական օրէնքներին, քեզ
իշխանութիւն է տրւում նրանց պատժե-
լու եւ խոշտանգելու. եթէ մահապարտ
են՝ սպանելու, եթէ պատժի են արժանի՝
պատժելու, եթէ տուգանքի՝ տուգանք
պահանջելու»:

28 Այն ժամանակ Եզրասը՝ Տիրոջ
Օրէնքի մատենագիրն ասաց. «Օրհ-
նուած է մեր հայրերի Տէր Աստուածը,
որ այս ամենի համար շնորհ տուեց
թագաւորի սրտին՝ փառաւորելու Տիրոջ
տաճարը, որ գտնւում է Երուսաղէմում:
29 Իսկ ինձ մեծապէս պատուի ար-
ժանացրեց թագաւորի առաջ, նրա բոլոր
խորհրդականների եւ սիրելիների առաջ,
նրա բոլոր մեծամեծների առաջ, 30 եւ ես
լցուեցի անբաւ հրճուանքով՝ իմ Տէր
Աստծու օգնութեամբ»: Դրանից յետոյ
Եզրասը հաւաքեց իսրայէլացի այն բո-
լոր մարդկանց, որոնք իր հետ վերա-
դարձան Երուսաղէմ:

31 Ըստ իրենց հայրերի նահապետու-
թեան եւ ըստ իրենց ցեղերի բաժանման,
սրանք են ահա այն իշխանները, որոնք
Եզրասի հետ ելան Բաբելոնից Արտաշէս
արքայի թագաւորութեան ժամանակ.
32 Փենէեսի որդիներից՝ Գերսոնը, Իթա-
մարի որդիներից՝ Դամայէլը, 33 Դաւթի
որդիներից՝ Փարէսը, Փորոսիայի որդի-
ներից՝ Զաքարիասը եւ նրա հետ գերի
տարուածներից հարիւր յիսուն մարդ.
34 Փաաթի որդիներից՝ Մովաբը, Ելիան,
Օնիասը, Զարեան եւ նրա հետ երկու
հարիւր մարդ. 35 Զաթսէսի որդիներից՝
Յեզոնիասը, Յեթելեան եւ նրա հետ
երեք հարիւր մարդ. 36 Ադինոբի որդի-
ներից՝ Յովնաթանը եւ նրա հետ երեք
հարիւր յիսուն մարդ. Ելամեսիայի որ-
դիներից՝ Գոդոդիան եւ նրա հետ եօթ-
նասուն մարդ. 37 Սափատիայի որդի-
ներից՝ Միքայէլի որդի Զաքարիասը եւ
նրա հետ եօթանասուն մարդ. 38 Յովաբի
որդիներից՝ Եղելիայի որդի Աբադիսերը
եւ նրա հետ երկու հարիւր տասներկու
մարդ. 39 Բանիայի որդիներից՝ Յոսափի
որդի Ասալիմոթը եւ նրա հետ հարիւր
վաթսուն մարդ. 40 Բէյերի որդիներից՝
Բերիայի որդի Զաքարիան եւ նրա հետ
քսանութ մարդ. 41 Ուստաթի որդիներ-
ից՝ Կատանի որդի Յովհաննէսը եւ նրա
հետ հարիւր տասը մարդ. 42 Ադոնի-
կամի որդիներից՝ Էսփատայի որդիները,
որոնց անուններն են՝ Ելիփալատ,

Դեւուէլ, Սամեաս եւ նրանց հետ եօթա-
նասուն մարդ. Բանիայի որդիներից՝
Տաւկուրիայի որդի Ութիան եւ նրա հետ
եօթանասուն մարդ:

43 Եզրասը նրանց հաւաքեց Թերա
կոչուած գետի եզերքին, ուր օթեւա-
նեցին երեք օր, ազգահամար կատարեց,
44 բայց քահանաների որդիներից եւ
ղեւտացիներից ոչ մէկին չգտաւ նրանց
մէջ: 45 «Ես մարդ ուղարկեցի Եղիազարի
մօտ, եւ ինձ մօտ եկան Սամեասը,
Օրիբոնը, Նաթանը, Ենոստանը, Զաքա-
րիան եւ Մոսոլաբոնը. 46 սրանք իշ-
խաններ էին եւ օրէնքի վարդապետներ:
Ես նրանց ասացի, որ գնան
գանձապահների պետի՝ Լոգէոնի մօտ,
47 պատուիրեցի նրանց, որ Լոգէոնին,
նրա եղբայրներին եւ տեղում գտնուող
միւս գանձապահներին ասեն, որ նրանք
Տիրոջ տան համար քահանաներ ուղար-
կեն մեզ մօտ: 48 Եւ նրանք բերեցին
այնպիսի մարդիկ, որոնք զօրաւոր էին
Տիրոջ խօսքը քարոզելու գործում եւ լաւ
գիտէին Տիրոջ օրէնքը: Դրանք
Իսրայէլի որդի Ղեւիի որդի Մոողիայի
որդիներից էին՝ Ասեբեւանը եւ նրա
տասնութ եղբայրները. 49 Քանունիայի
որդիներից՝ Ասեբիան, Անուսոնը եւ նրա
եղբայր Օսեասանը իր որդիների հետ՝
քսան մարդ. 50 քահանաների այն
ծառաներից, որոնց Դաւիթ թագաւորը
նշանակել էր ղեւտացիներին սպասա-
ւորելու համար գլխաւորներ, նրանց
որդիներից՝ քսան մարդ, որոնցից
նշանաւորներին գրեցին անուանապէս:
51 Մենք ծոմ պահեցինք այնտեղ, աղօթք
մատուցեցինք մեր Տէր Աստծուն,
խնդրեցինք, որ նա դիւրութիւն եւ յա-
ջողութիւն տայ մեզ, մեր որդիներին եւ
բոլորին, ովքեր մեզ հետ էին, 52 քանի
որ մենք ծանր էինք համարել թագա-
ւորից հետեւակ կամ հեծեալ ուղեկիցներ
խնդրել՝ մեր թշնամիներից զգուշանալու
համար: 53 Մենք թագաւորին ասացինք,
որ մեր Տէր Աստծու զօրութիւնը մեզ
հետ է եւ բոլոր նրանց հետ, ովքեր
խնդրում են նրան: 54 Այս բոլորի
համար էր, ահա, որ ծոմ պահեցինք եւ
աղաչեցինք, որ Տէրը պահպանի մեզ,
յաջողութիւն տայ մեզ՝ մեր ճանապար-
հին: 55 Յեզերի քահանաների գլխաւոր-
ներից ընտրեցինք տասներկու մարդ՝
Եսեբիային, Ասեմիային՝ իրենց տասը
եղբայրների հետ միասին: 56 Կշռեցինք
ու նրանց տուեցինք արծաթն ու ոսկին,
Տիրոջ տան համար քահանայական
կայքն ու սպասքը, որ մեզ էին նուիրել
թագաւորն ու նրա խորհրդականները,
իշխաններն ու բոլոր իսրայէլացիները:
57 Ես կշռեցի եւ նրանց տուեցի վեց
հարիւր յիսուն տաղանդ արծաթ,
հարիւր տաղանդ արծաթէ սպասք,
հարիւր տաղանդ ոսկէ սպասք, 58 ոսկէ
այլ անօթներ՝ քսան, նաեւ մաքուր,
ոսկեգոյն եւ զուտ պղնձէ անօթներ՝
տասներկու: 59 Ես նրանց ասացի. «Ե՛ւ
դուք էք սուրբ Տիրոջ համար, ե՛ւ այս
ամբողջ սպասքն է սուրբ Տիրոջ համար,
լինի ոսկեղէն թէ արծաթեղէն:
Աղօթեցէ՛ք Տիրոջը, եւ մեր հայրերի Տէր
Աստուածը դրանք կը պահպանի եւ
խաղաղութեամբ կը հասցնի իր
սրբութեան տեղը: 60 Արթո՛ւն կացէք եւ
պահպանեցէ՛ք դրանք, մինչեւ որ
հասցնէք քահանաների ու ղեւտացիների
գլխաւորներին, Իսրայէլի տոհմապետ-
ներին եւ իշխաններին, որոնք գտնւում
են Երուսաղէմում: 61 Թող Տիրոջ տա-
ճարի պահապանները՝ քահանայապետ-
ներն ու ղեւտացիները, վերցնեն ար-
ծաթը, ոսկին, սպասքն ու անօթները եւ
տանեն, դնեն Տիրոջ տաճարում, որը
գտնւում է Երուսաղէմում»:

62 Յետոյ վեր կացանք եւ Թերա գետի
մօտից ճանապարհ ընկանք. դա առաջին
ամսի տասներկուերորդ օրն էր: Մենք,
Տիրոջ ձեռքով պահպանուած, վեր
բարձրացած ու զօրացած, եկանք հա-
սանք Երուսաղէմ: Մեր Տէր Աստուածը
մեզ փրկեց մեր բոլոր թշնամիներից, եւ
մենք ողջ, անկորուստ եւ խաղաղու-
թեամբ հասանք Երուսաղէմ: 63 Երբ
երեք օր հանգստացանք Երուսաղէմում,
չորրորդ օրը կշռեցինք արծաթն ու
ոսկին եւ մեր Տէր Աստծու տանը
տուեցինք Ուրիայի որդի Մարմոթ
քահանային, 64 որի հետ էին Փենէէսի
որդի Եղիազարը, Յեսովի որդի Յոսա-
բոդոսը, Սաբանիայի որդի Մեթորը եւ
այլ ղեւտացիներ: 65 Մենք կշռով ու
հաշուով դրանք տուեցինք նրանց՝ նոյն
օրն էլ գրանցելով կշիռն ու հաշիւը:

66 Նրանք, որ ինձ հետ գերութիւնից
վերադարձել էին բաբելացիների մօտից,
զոհեր մատուցեցին Իսրայէլի Տէր Աստ-
ծուն, տասներկու արջառ՝ բովանդակ
Իսրայէլի համար, 67 ինսուն խոյ,
եօթանասուներկու գառ, տասներկու
նոխազ՝ Իսրայէլի փրկութեան համար,
եւ այս բոլոր զոհերը մատուցեցին Ի-
սրայէլի Տէր Աստծու առաջ: 68 Թա-
գաւորի գրաւոր հրամանը տուեցին
թագաւորի գործակալներին՝ Ասորիքի
եւ փիւնիկեցիների իշխաններին եւ
գաւառապետներին, եւ մեր ազգն ու
Տիրոջ տաճարն արժանացան մեծ փառ-
քի ու պատուի:

69 Այս ամէնը կատարուելուց յետոյ
իսրայէլացիների նահապետներն ու իշ-
խանները եկան իմ առաջ եւ ասացին.
«Իսրայէլացիների ամբողջ ազգը, նրանց
իշխանները, քահանաներն ու ղեւտացի-
ները, առանց խտրականութիւն դնելու,
70 խառնակուեցին հեթանոսների, այ-
լազգիների եւ ամէն տեսակ անհաւատ-
ների պղծութիւնների հետ, քանանա-
ցիների եւ քետացիների, փերեզացիների
եւ յեբուսացիների, մովաբացիների եւ
ամոնացիների, եգիպտացիների եւ
եդոմացիների հետ, 71 քանզի ամուս-
նացան նրանց աղջիկների հետ՝ թէ՛
իրենք եւ թէ՛ իրենց որդիները: Խառ-
նակուեց իրենց սուրբ սերմը երկրի
այլազգիների եւ հեթանոսների հետ,
քանի որ այս անօրէնութիւններն ընդու-
նեցին եւ յանձն առան թէ՛ իշխանները
եւ թէ՛ մեծամեծները՝ իրենք իսկ
դառնալով այդ չարաղէտ խառնակու-
թիւնների առաջնորդներ»:

72 Երբ ես լսեցի այս խօսքերը,
պատառոտեցի հագուստներս, սկսեցի
ողբալ եւ փետել գլխիս ու մօրուքիս
մազերը, եւ այդպէս տրտմաբեկ նստեցի
մեծ սգի մէջ: 73 Բոլորը, ովքեր լսեցին
իմ ողբերի ձայնը, որ Իսրայէլի Տէր
Աստծու համար էր, եւ տեսնելով այն,
ինչ ես արեցի նրանց անօրէնութեան
պատճառով (որովհետեւ այդպէս
տրտմահեծ նստեցի մինչեւ երեկոյ,
մինչեւ որ հասաւ երեկոյեան զոհերի
մատուցման ժամը), 74 նոր միայն ես վեր
կացայ, հագուստներս այդպէս պատա-
ռոտուած, ողբալով ծնկի իջայ եւ,
ձեռքերս տարածելով դէպի Տէր
Աստուած, աղաղակեցի եւ ասացի.
75 «Տէ՛ր, մենք ամաչում եւ դողում ենք
քո երեսի առաջ, 76 քանզի մեր մեղքերը
մեր գլուխներից էլ աւելի վեր բարձ-
բացան, 77 մեր անօրէնութիւնները,
սկսած մեր հայրերի տարիներից ու
ժամանակներից, բարձրացան երկնքից
էլ վեր, եւ մենք մեծ մեղքերի մէջ ենք
մինչեւ այսօր, մինչեւ այժմ: 78 Մեր
մեղքերի ու մեր հայրերի յանցանքների
համար էր, որ մենք մատնուեցինք
գերութեան մեր եղբայրների հետ, մեր
թագաւորների ու քահանայապետների
հետ: Երկրի բոլոր թագաւորները մեզ
սրի ու սուսերի քաշեցին, գերեվարեցին
մեզ, աւերեցին մեր բնակավայրերը, եւ
մենք ամօթահար եղանք մինչեւ այսօր:
79 Եւ հիմա որքա՜ն մեծ է քո ողոր-
մածութիւնը մեր նկատմամբ, Տէ՛ր, որ
մեզնից արմատ, սերունդ եւ անուն
թողեցիր քո սրբութեան այս վայրում,
80 մեզ համար յայտնի դարձրիր մեր Տէր
Աստծու տաճարի լոյսը եւ մեզ, մեր
ստրկութեան մէջ, կերակուր տուեցիր:
81 Մեր գերութեան մէջ քո ձեռքը չլքեց
մեզ, դու օգնական Տէր եղար մեզ եւ
արեցիր այնպէս, որ մենք շնորհ գտնենք
Պարսկաստանի թագաւորի առաջ: Նա
պատուի արժանացրեց մեզ, հոգաց մեր
բոլոր կարիքները, 82 փառաւորեց մեր
Տէր Աստծու տաճարը, վերականգնեց եւ
վերաշինեց Սիոնը, որ անապատ էր, եւ
մեզ վերստին հաստատեց Հրէաստանում
եւ Երուսաղէմում: 83 Եւ հիմա, այս
ամենից յետոյ, քո առաջ ի՞նչ պատաս-
խան տանք քեզ, Տէ՛ր, քանզի մենք
անտեսեցինք քո օրէնքն ու հրաման-
ները, Տէ՛ր, որ տուել էիր մեզ քո ծառա-
ների՝ մարգարէների միջոցով, ասելով
այսպէս. 84 "Այն երկիրը, որը գնում ես
դու ժառանգելու, պղծուած է այդ երկրի
ազգերի պղծութիւններով եւ լեցուն է
նրանց աղտեղութիւններով: 85 Արդ,
նրանց աղջիկներից դու կանայք չառնես
քո որդիների համար, ոչ էլ քո աղջիկ-
ներին կնութեան կը տաս նրանց որդի-
ներին 86 եւ ոչ էլ ամէն ժամանակ
խաղաղութիւն փնտռիր նրանց հետ. դու
զօրաւոր կը լինես այդ երկրի բարիք-
ները ուտելով, եւ քո որդիներն այդ

երկիրը կը ժառանգեն յաւիտենական
ժամանակների համար": 87 Թէեւ այն
դէպքերը, որ մէկ անգամ կատարուեցին
մեզ հետ մեր չար գործերի եւ մեղքերի
պատճառով, բայց դու, Տէ՛ր, բազում
անգամ ներեցիր մեր մեղքերը, 88 եւ մեզ
այսպիսի սերունդ ու արմատ տուեցիր,
մինչդեռ մենք դարձեալ չեղուեցինք քո
օրէնքից եւ խառնակուեցինք այս երկրի
հեթանոսների հետ, 89 բայց դու մեզ
վրայ չբարկացար այն աստիճան, որ
մեզնից այսպիսի սերունդ ու արմատ
չմնար եւ ոչ էլ՝ մեր անունը: 90 Դու,
Տէ՛ր Աստուած Իսրայէլի, արդար ես եւ
ճշմարիտ, դու իսպառ չոչնչացրիր մեր
սերունդը, եւ մեր սերունդն ու արմատը
մնացին մինչեւ այսօր: 91 Արդ, ահա-
ւասիկ մենք, մեր անօրէնութիւններով,
կանգնած ենք քո առաջ եւ այլեւս չենք
կարող կանգնել քո երեսի դէմ, որով-
հետեւ բազմացան մեր անօրէնութիւն-
ները, եւ մեր չարիքները բարձրացան
մեր գլուխներից էլ վեր»:

92 Երբ Եզրասը աղօթում էր այս
խոստովանութիւններով եւ սաստիկ ող-
բերով, նա երեսնիվայր ընկած էր
գետնին, Տիրոջ տաճարի առջեւ: Բոլո-
րը, ովքեր կային Երուսաղէմում, հաւա-
քուեցին նրա մօտ, բազմամարդ մի
ամբոխ՝ տղամարդիկ ու կանայք, երի-
տասարդներ ու կոյսեր. շատերը
մեծապէս ողբում էին բազմութեան մէջ:
93 Այդ ժամանակ իսրայէլացիներից Իե-
լուի որդի Յեքոնիան ձայն տուեց եւ
ասաց Եզրասին. «Մենք մեղանչել ենք
մեր Տէր Աստծու դէմ՝ կին ենք առել այս
երկրի այլազգիներից. 94 այժմ, այսօր էլ,
անօրէնութիւնները մեր մէջ են. եկէ՛ք
երդուենք Տիրոջ առաջ, դուրս հանենք
եւ հեռացնենք այլազգիներից մեր առած
կանանց իրենց զաւակների հետ, 95 ինչ-
պէս որ հրամայում է մեր Տէր Աստծու
օրէնքը: 96 Շո՛ւտ, վե՛ր կաց, կատարի՛ր
այդ գործը, քանզի քո ձեռքին են մեր
բոլոր գործերը. մենք քեզ հետ ենք, եւ
ինչ որ դու հրամայես, մենք կ'անենք»:

97 Եզրասը վեր կացաւ, երդուել
տուեց ցեղերի իշխաններին, քահանա-
ներին, ղեւտացիներին եւ ամբողջ
Իսրայէլին, որ վարուեն ըստ այդ վճռի:
Եւ նրանք երդուեցին:

ԵԶՐԱՍԸ ՀՐԱՄԱՆ Է ՏԱԼԻՍ ՀՐԵԱՆԵՐԻՆ՝
ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԱՅԼԱԶԳԻ ԿԱՆԱՆՑ

9 Եզրասը վեր կացաւ Տիրոջ տաճարի
գաւթից, գնաց Ելիասիբի որդի Յովհան-
նայի տունը, գիշերեց այնտեղ, 2 բայց
ո՛չ հաց կերաւ եւ ո՛չ էլ ջուր խմեց, այլ
միայն ողբաց ժողովրդի գործած անօ-
րէնութիւնների եւ մեծ մեղքերի համար:
3 Ամբողջ Հրէաստանում եւ Երուսաղէ-
մում մունետիկն ազդարարում էր, որ
բոլոր նրանք, ովքեր վերադարձել են
գերութիւնից, գան հաւաքուեն Երուսա-
ղէմում, 4 իսկ նրանք, ովքեր երկու, երեք
օրուայ ընթացքում չեն ներկայանայ,
նրանք պիտի դատուեն առաջնորդների
եւ ծերերի կողմից, պիտի առգրաւուի
նրանց ունեցուածքը, եւ նրանց, իբրեւ
օտարների, պիտի արտաքսեն գերե-
դարձների բազմութիւնից: 5 Եւ երեք
օրուայ ընթացքում Երուսաղէմում հա-
ւաքուեցին Յուդայի ազգի ու Բենիա-
մինի ցեղի բոլոր մարդիկ, իններորդ
ամսին, ամսի քսաներորդ օրը: 6 Ամբողջ
բազմութիւնը, Եզրասի հետ միասին,
նստեց Տիրոջ տան ընդարձակ գաւթում՝
սարսռալով եւ դողալով ձմռան ցրտից:
7 Եզրասը կանգնեց եւ ասաց նրանց.
«Դուք մեղք էք գործել, կին էք առել
այլազգիների աղջիկներից եւ անօրէ-
նութիւն էք աւելացրել Իսրայէլի վրայ:
8 Արդ, խոստովանեցէ՛ք եւ փա՛ռք
տուէք մեր հայրերի Տէր Աստծուն, 9 կա-
տարեցէ՛ք նրա կամքը, զատուեցէ՛ք եւ
բաժանուեցէ՛ք երկրի բոլոր հեթա-
նոսներից եւ ձեր այլազգի կանանցից»:

10 Ամբողջ բազմութիւնը միասին
բարձրաձայն աղաղակեց եւ ասաց.
11 «Ինչպէս որ դու ասացիր, այնպէս էլ
կ'անենք. բայց մենք մեծ բազմութիւն
ենք, ժամանակն էլ ձմեռ է, եւ մենք
չենք կարող դիմանալ այս ցաւին ու
նեղութիւններին, գործն էլ մէկ կամ
երկու օրուայ բան չէ, մանաւանդ որ մեր
մեղքերն էլ այս գործում մեծ են ու
ծանր: 12 Դրա համար գործը յանձնա-
րարեցէ՛ք իշխաններին եւ առաջնորդ-
ներին, թող ամէն տեղ ում տանն
այլազգի կին կայ, ժամանակին գնան ու
պահանջեն նրանից, 13 թող իւրաքան-
չիւր տեղի ծերերն ու դատաւորները

վճռեն գործը եւ Տիրոջ բարկութիւնը
հեռացնեն մեզնից մեր գործած այս մեծ
չարիքների պատճառով»:
14 Այս գործը յանձն առան Ազայէլի
որդի Յովնաթանը եւ Թոկիայի որդի
Եզեկիան, իսկ Մոսոլամոսը, Ղեւին ու
Սաբատէոսը միացան նրանց, 15 եւ
նրանք ամէն ինչ արեցին այնպէս,
ինչպէս հրամայեցին գերութիւնից
վերադարձածները: 16 Եզրասն անուն
առ անուն ընտրեց քահանայ, իշխան եւ
տոհմապետ մարդիկ. նրանք տասներորդ
ամսի ամսամտին նստեցին խորհրդի՝
գործը քննելու եւ աւարտելու համար:
17 Մինչեւ առաջին ամիսը նրանք հա-
ւաքեցին եւ բերեցին այն տղամարդ-
կանց, որոնք ամուսնացած էին այլազգի
կանանց հետ. բերեցին նաեւ նրանց
կանանց: 18 Հաւաքուածների մէջ
գտնուեցին քահանաներ, որոնք ունէին
այլազգի կանայք եւ խառնակուել էին
ամբարիշտների հետ. 19 դրանք Յոսե-
դեկի որդի Յեսովի եւ նրա եղբօր
որդիներից էին. Մաթելան, Եղիազա-
րոսը, Յորիբոսը եւ Յովադանը, 20 որոնք
սկսեցին դուրս հանել իրենց այլազգի
կանանց եւ մէկական խոյեր մատուցել
առանց գիտութեան գործած իրենց
մեղքերի թողութեան համար: 21 Յեսոյ
Եմմորի որդիներից՝ Անանիան, Բադ-
դէոսը, Մանասը, Սամաէասը, Յերիէլը
եւ Ազարիասը. 22 Փասուրի որդիներից՝
Ելիանասը, Մասսիասը, Իսմայէլը,
Նաթանայէլը, Սկեթլեդոսը եւ Սալթոսը.
23 Ղեւտացիների որդիներից՝ Յոզապ-
տոսը, Սեմիսը եւ Կոնոսը, որ նոյն ինքը
Սալիտասն է, Փաթէասը, որ նոյն ինքը
Յուդասն է, եւ Յոնասը: 24 Սաղմոսասաց
պաշտօնեաներից՝ Ելիասիբոսը եւ Բա-
քուրոսը: 25 Դռնապաններից՝ Սալո-
մոսը եւ Տոլբանէսը: 26 Իսրայէլա-
ցիներից՝ Փորոսի որդիներից՝ Յերա-
մասը, Յեդդիասը, Մելքիասը, Միալէսը,
Եղիազարոսը, Ասաբիասը եւ Բանեասը:
27 Եղիակիմի որդիներից՝ Մատթա-
նիասը, Զաքարիասը, Յեզորիէլը, Յով-
դիոսը, Յերիմոթը եւ Այէդիասը: 28 Զա-
թոմի որդիներից՝ Ելիադասը, Ելիասի-
մոսը, Օթոնիասը, Արիմոթը, Սաբաթոսը
եւ Զարդէասը: 29 Բեբէի որդիներից՝
Յովհաննէսը, Անանիասը, Յոզաբդոսը եւ
Եմաթոսը: 30 Մանիի որդիներից՝ Ելա-
մոսը, Սամուսոսը, Յեդէոսը, Յասուբոսը,
Յաստելոսը եւ Յերեմոթը: 31 Ադդիի որ-
դիներից՝ Նաթոսը, Մոռոսիասը, Զակու-
նոսը, Նաթդասը, Մատաթիասը, Եսթէլը,
Բալունոսը եւ Մանասէն: 32 Աննասի
որդիներից՝ Ելիոնասը, Ասսէասը, Մել-
քիասը, Սաբէոսը, Սիմոնը եւ Քոսա-
մէոսը: 33 Ասոմատի որդիներից՝
Աննէոսը, Մատաթիասը, Բանէուսը,
Ելիփալատը, Մանասէն եւ Սեմէին:
34 Բաանի որդիներից՝ Երեմիասը, Մոմ-
դիոսը, Իսմաերոսը, Յուէլը, Մամբդէն,
Պէդիասը, Անոսը, Բաբասիոնը, Անասի-
բոսը, Մամնիտանեմոսը, Ելիասիսը, Բա-
նուսը, Ելիալին, Սոմէիան, Սելեմիասը եւ
Նաթանիասը: Եզորի որդիներից՝ Այէմը,
Եզրիէլը, Ազայէլը, Սամատոսը, Զամբ-
ռին եւ Յովսէփը: 35 Նաւմի որդիներից՝
Զազիկեասը, Լաբադիասը, Եդեսիուէլը
եւ Բենեսիասը:
36 Սրանք էին բոլոր այն տղա-
մարդիկ, որոնք կին էին առել այլազ-
գիներից եւ որոնք էլ ազատ արձակեցին
իրենց կանանց եւ իրենց որդիներին:
37 Իսրայէլացի քահանաներն ու ղեւ-
տացիները բնակուեցին Երուսաղէմում
եւ նրա գաւառում եօթներորդ ամսի
ամսամտին, իսկ իսրայէլացիները գնա-
ցին իրենց բնակութեան վայրերը:
38 Ամբողջ բազմութիւնը, միաբանուած,
հաւաքուեց տաճարի դռան առջեւ,
արեւելեան կողմը, ընդարձակ մի տեղ:
39 Նրանք ասացին Եզրաս քահանա-
յապետին՝ Օրէնքի մեկնիչին, որ նա
բերի Իսրայէլի Տէր Աստծու կողմից
Մովսէսին տրուած օրէնքների գիրքը:
40 Եզրասը մէջտեղ բերեց օրէնքների
գիրքը, ցոյց տուեց բոլոր տղամարդ-
կանց ու կանանց եւ բոլոր քահա-
նաներին: 41 Տաճարի դռան առջեւ,
ընդարձակ հրապարակում, առաւօտից
մինչեւ կէսօր նա կարդում էր Տիրոջ
օրէնքները, բոլոր տղամարդկանց եւ
կանանց համար, եօթներորդ ամսի
ամսամտի օրերին, եւ ամբողջ բազ-
մութիւնը լսում ու սովորում էր Տէր
Աստծու Օրէնքը: 42 Եզրաս քահանան՝
Տիրոջ Օրէնքի մեկնիչը, կանգնում էր
փայտակերտ բեմի վրայ, որ պատրաս-
տել էին նրա համար: 43 Նրա մօտ, աջ

կողմից, կանգնում էին Մատաթին, Սա-
մուսը, Անանիասը, Ազարիասը, Ուրիա-
սը, Եզեկիասը եւ Բաալամոսը, 44 իսկ
ձախ կողմից՝ Փալթէոսը, Միսայէլը,
Մելքիասը, Լոթասը, Ուբոսը, Նաբա-
րիասը եւ Զաքարիասը: 45 Եզրասը,
Օրէնքի գիրքը ձեռքին, մեծ պատուով
բազմում էր բոլորի առաջ, իսկ ամբողջ
բազմութիւնը նստում էր նրա դիմաց:
46 Երբ նա բացեց Օրէնքի գիրքը,
ամբողջ բազմութիւնը ոտքի կանգնեց:
Եզրասն օրհնեց բարձրեալ Տէր Աստ-
ծուն, զօրութիւնների Աստծուն եւ Ամե-
նակալին, 47 իսկ ամբողջ բազմութիւնը
միաձայն բացականչում էր՝ ամէն:
Բոլորն իրենց ձեռքերը բարձրացրած
դէպի վեր՝ երեսնիվայր ընկնում էին
գետին եւ երկրպագում Տէր Աստծուն:
48 Տիրոջ Օրէնքը ժողովրդին ուսու-
ցանում էին նաեւ ղեւտացիները՝ Յե-
սուսը, Աննուսը, Ասրաբիասը, Յադի-
նոսը, Յակուբոսը, Սաբատէոսը, Աւդէա-
սը, Մաննէասը, Կալիտասը, Ազարիասը,
Յոզաբդոսը, Անանիասը եւ Փիլաթասը:
49 Սրանք ժողովրդի համար կարդում եւ
բացատրում էին Տիրոջ Օրէնքը:
50 Ատտարատէսը դիմելով Եզրաս
քահանային՝ Տիրոջ Օրէնքի մեկնիչին եւ
ղեւտացիներին, որոնք Օրէնքը սովո-
րեցնում էին ժողովրդին, բոլորի առաջ
ասաց նրանց.
51 «Այս օրը սրբութեան օր է Տիրոջ
համար, եւ դուք ազատ էք Տիրոջ
Օրէնքը լսելուց. 52 ցրուեցէ՛ք, գնացէ՛ք
եւ պարարտ մի՛ս կերէք, քաղցր
ըմպելիքներ խմեցէ՛ք եւ ուղարկեցէ՛ք
նաեւ նրանց համար, ովքեր չունեն.
53 եւ որովհետեւ Տիրոջ համար սուրբ է
այս օրը, թող ոչ ոք տխուր չդարձնի
այն, քանզի Տէր Աստուածն է, որ մեզ
արժանացրեց փառքի»:
54 Ղեւտացիները նոյնպէս ամբողջ
ժողովրդին հրամայեցին եւ ասացին.
«Այս օրը սուրբ է, եւ թող ոչ ոք տխուր
չդարձնի այն»: 55 Ապա ասացին
ժողովրդին. « Ով ունի, թող ուտի, խմի,
ուրախ լինի եւ տայ նաեւ նրան, ով
չունի. թող բոլորն էլ այսօր շատ ուրախ
լինեն, որովհետեւ դուք լսեցիք եւ
սովորեցիք Տիրոջ Օրէնքը, դուք հաւա-
քուեցիք ժողովի, եւ մենք սովորեցրինք
ձեզ»:

ԵԶՐԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Եզրասի երկրորդ գրքում պատմւում է, թէ ինչպէս յաջորդ դարում Եզրաս անունով մի քահանայ, որ ուղարկուել էր արքայից արքայ Արտաշէսի կողմից, վերակենդանացնում եւ բարեփոխում է կրօնական կեանքը Երուսաղէմում:

Եզրասի գրքերում ընդգծւում է ամուր հաւատի եւ անարատ կեանքի անհրաժեշտութիւնը: Ցոյց է տրւում նաեւ Եզրասի՝ այս բարեկարգիչ քահանայի խիզախութիւնն ու վճռականութիւնը՝ վերականգնելու իսրայէլացի ժողովրդի բարեպաշտութիւնը: Եզրասի միջոցով է, որ, բառիս իսկական առումով, ձեւաւորւում է հրէականութիւնը, որի ծոցում, մի քանի դար անց, պիտի ծնուէր Յիսուս:

ԵԶՐԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

ԿԻՐՈՍԻ ՀՐԱՄԱՆԸ ԵՒ ՀՐԵԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ

1 Պարսկաստանի Կիւրոս արքայի առաջին տարում, որպէսզի կատարուէր Տիրոջ խօսքը, որ ասուել էր Երեմիա մարգարէի բերանով, Տէրը զարթնեցրեց Պարսկաստանի Կիւրոս թագաւորի ոգին, եւ նա պատուէր ու հրաման տուեց բոլոր նրանց, ովքեր գտնւում էին իր թագաւորութեան ներքոյ: Այս էր այդ հրովարտակը. 2 «Այսպէս է ասում Պարսկաստանի Կիւրոս թագաւորը. երկնքի Տէր Աստուածն ինձ տուեց երկրի վրայ բոլոր թագաւորութիւնները եւ հրամայեց ինձ, որ ես նրա համար տաճար կառուցեմ Հրէաստանի Երուսաղէմ քաղաքում: 3 Տիրոջ ամբողջ ժողովրդից ով էլ որ կայ ձեր մէջ, եւ ում հետ որ է նրա Աստուածը, թող ելնի ու գնայ Հրէաստան՝ Երուսաղէմ, եւ կառուցի Իսրայէլի Տէր Աստծու տունը. թող Աստուած ինքը, որ բնակւում է Երուսաղէմում, լինի նրա հետ: 4 Ամէն մարդ իր ունեցուածքը թող վերցնի իր հետ, տանի այն տեղը, ուր պիտի բնակուի ինքը: Ամէն մարդ կարող է վերցնել իր ամբողջ ունեցուածքը՝ լինի արծաթ թէ ոսկի, կայք թէ անասուն: Թող իրենց ընկերների հետ նրանք վերցնեն ամէն ինչ՝ Տէր Աստծու տաճարը Երուսաղէմում կառուցելու համար»:

5 Այն ժամանակ վեր կացան Յուդայի եւ Բենիամինի ցեղերի տոհմապետները, իշխանները, քահանաները, ղեւտացիներն ու բոլոր նրանք, ում ոգին զարթնեցրել էր Տէր Աստուած՝ վերադառնալու եւ Տէր Աստծու տաճարը Երուսաղէմում կառուցելու համար: 6 Բոլորը, ովքեր համախմբուել էին նրանց շուրջը, օգնում էին նրանց, զօրացնում նրանց ձեռքը՝ տալով արծաթ ու ոսկի, գոյք ու անասուն եւ այլ ընծաներ ու նուէրներ:

7 Կիւրոս թագաւորը բերել տուեց Տիրոջ տաճարի այն ամբողջ կայքն ու սպասքը, որ Նաբուքոդոնոսորը վերցրել էր Երուսաղէմից, բերել եւ պահելու էր տուել իրենց աստուածների տանը: 8 Այդ բոլորը Պարսկաստանի Կիւրոս թագաւորը բերել տուեց Միթրիդատ գանձապետի ձեռքով, հաշուեց եւ տուեց Յուդայի երկրի իշխան Սամանասարին: 9 Այս է ահա դրանց թիւը. ոսկէ մատուցարաններ՝ երեսուն, արծաթէ անօթներ ու մատուցարաններ՝ հազար†, դանակներ՝ քսանինը, 10 ոսկէ թասեր՝ երեսուն, արծաթէ թասեր՝ դարձեալ հազար: 11 Բոլոր ոսկէ ու արծաթէ իրերի թիւը հինգ հազար չորս հարիւր էր: Այդ բոլորը Սամանասարն իր հետ Բաբելոնից բերեց Երուսաղէմ՝ գերութիւնից վերադառնալու ժամանակ:

ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ԹԻՒԸ

2 Սրանք են, իւրաքանչիւրն ըստ իր բնակավայրի, գերութիւնից վերադարձած այն իսրայէլացիները, որոնց բաբելացիների Նաբուքոդոնոսոր թագաւորը գերի էր տարել Բաբելոն, եւ որոնց Կիւրոս թագաւորը Բաբելոնից վերադարձրեց Երուսաղէմ եւ Հրէաստան՝ ամէն մարդու իր քաղաքը: 2 Զորոբաբէլի հետ գերութիւնից վերադարձել էին Յեսուն, Նէեմին, Սարէասը, Ռէելիասը, Մարդորէոսը, Բալասանը, Մասփարը, Բագուարը, Ռէումը եւ Բաանան:

3 Ահա գերութիւնից վերադարձած իսրայէլացիների թիւը. Փորոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու. 4 Սափատի որդիները՝ չորս հարիւր եօթանասուներկու. 5 Արէսի որդիները՝ եօթը հարիւր եօթանասունվեց. 6 Նեփթաղիմ Մովաբացու որդիները, որոնք Յեսուի եւ Ռովաբի որդիներից էին, երկու հազար ութ հարիւր տասներկու. 7 Ելամի որդիները՝ երկու հազար երկու հարիւր յիսունչորս. 8 Զատոնայի որդիները՝ ինը հարիւր քառասունհինգ. 9 Քորբի որդիները՝ եօթը հարիւր յիսուն. 10 Բանիայի որդիները՝ հազար քառասունութ. 11 Բեբիայի որդիները՝ ութ հարիւր քսաներեք. 12 Արգիայի որդիները՝ երեք հազար երեք հարիւր քսաներկու. 13 Ադոնիկամի որդիները՝ ութ հարիւր եօթանասունեօթը. 14 Բոսերի որդիները՝ երկու հազար ութ հարիւր վեց. 15 Ադդինայի որդիները՝ չորս հարիւր յիսունչորս. 16 Եզե-

†Հայերէն բնագրում՝ *մատուցարաններ՝ հազար քսանինը*. պակասում է *դանակներ* բառը:

կիայի տոհմից Ազերի որդիները՝
իննսունվեց. 17 Բեսէէի որդիները՝ երեք
հարիւր քսաներեք. 18 Յարովի որդի-
ները՝ հարիւր տասներկու. 19 Ասումի
որդիները՝ երկու հարիւր քսաներեք.
20 Դաբերի որդիները՝ իննսունհինգ.
21 Բեթղեհէմի որդիները՝ հարիւր քսան-
երեք. 22 Նետոփի որդիները՝ յիսունվեց.
23 Անաթոթի որդիները՝ հարիւր քսան-
ութ. 24 Ամոթի որդիները՝ քառա-
սուներկու. 25 Կարիաթարիմի, Քափիրի
եւ Բերոթի որդիները՝ եօթը հարիւր քա-
ռասուներկու. 26 Ռասամի եւ Գայերի
որդիները՝ հազար քսանմէկ. 27 Մաք-
մասի որդիները՝ հարիւր քսաներկու.
28 Բեթէլի եւ Յեգէի որդիները՝ չորս
հարիւր քսաներեք. 29 Նաբոթի որդի-
ները՝ յիսուներկու. 30 Մակերիսի որդի-
ները՝ հարիւր յիսունվեց. 31 Ելամարի
որդիները՝ հազար երկու հարիւր յի-
սունչորս. 32 Իրամի որդիները՝ երեք
հարիւր քսան. 33 Լիդոնի, Լոդադի եւ
Օնոյի որդիները՝ եօթը հարիւր քսան-
հինգ. 34 Յերիքոյի որդիները՝ երեք
հարիւր քառասունհինգ. 35 Սեննայի
որդիները՝ երեք հազար վեց հարիւր
երեսուն:

36 Քահանաների որդիները. Յոսեդեկի
որդի Յեսուի տոհմից Յեգուի որդիները՝
ինը հարիւր եօթանասուներեք. 37 Եմ-
մերի որդիները՝ հազար յիսուներկու.
38 Փասուրի որդիները՝ հազար երկու
հարիւր քառասունութ. 39 Երեմի որդի-
ները՝ հազար եօթը հարիւր:

40 Ղեւտացիներ՝ Սեդուիայի որդիներ-
ից. Յեսուի եւ Կադմիէլի որդիները՝
եօթանասունչորս:

41 Սաղմոսասացներ եւ երգիչներ. Ա-
սափի որդիները՝ հարիւր քսանութ:

42 Դռնապանների որդիներ. Ելումի
որդիները, Ատտերի որդիները, Տելմոնի
որդիները, Ակուբբի որդիները, Ատիտի
որդիները, Սուբայի որդիները՝ բոլորը
միասին հարիւր երեսունինը: 43 Նաթա-
նի տոհմից՝ Սուալի որդիները, Ասուփի
որդիները, Տաբոթի որդիները, 44 Կերոսի
որդիները, Սիայի որդիները, Փադոնի
որդիները, 45 Լաբանի որդիները, Ագաբի
որդիները, Ակկուբի որդիները, 46 Ադա-
բի որդիները, Սալամէի որդիները, Անա-
նի որդիները, 47 Գեդդէլի որդիները,
Գաարի որդիները, Ռադիայի որդիները,
48 Ռասոնի որդիները, Նեկոդանի որդի-
ները, Գազամի որդիները, 49 Գազայի
որդիները, Փասէի որդիները, Բասիի
որդիները, 50 Ասենայի որդիները, Մո-
վանիմի որդիները, Նեփուսիմի որդի-
ները, 51 Բակուքի որդիները, Ակուփի
որդիները, Արուրի որդիները, 52 Բաւա-
լոթի որդիները, Միդայի որդիները,
Արսայի որդիները, 53 Բարկոսի որդի-
ները, Սիսարայի որդիները, Թամայի
որդիները, 54 Նեսուայի որդիները,
Ատուփայի որդիները:

55 Սողոմոնի ծառաների որդիներ.
Սոտէի որդիները, Ասոփերաթի որդի-
ները, Փակդուրայի որդիները, 56 Յելայի
որդիները, Կերդոնի որդիները, Կերդիէլի
որդիները, 57 Սափատիայի որդիները,
Ատտիլի որդիները, Փաքերոթ-Ասե-
բայիմի որդիները, Եմէի որդիները:

58 Նաթանի որդիների եւ Սողոմոնի
ծառաների որդիների թիւը, բոլորը մի-
ասին՝ երեք հարիւր իննսուներկու մարդ:

59 Ահա եւ նրանք, որ վերադարձան
Թելմելէքից, Թելարէսից, Քերուբից,
Եդարից եւ Եմերից, բայց որոնք չկա-
րողացան ցոյց տալ իրենց հայրերի
ազգատոհմերը եւ ոչ էլ այն, թէ իրենք
իսրայէլացիների սերունդ են. 60 դրանք
էին Դալաւայի որդիները, Տուբիի որդի-
ները, Նեկոթի որդիները՝ վեց հարիւր
յիսուներկու մարդ:

61 Քահանաների որդիներից. Աբաիա-
յի որդիները, Ակուսի որդիները, Բեր-
զելայի որդիները, որոնք կին էին առել
Բերզելա Գաղաադացու աղջիկներից եւ
այդ պատճառով էլ մոռացուել էր իրենց
ազգատոհմի անունը: 62 Թէեւ մա-
տեաններում փնտռեցին նրանց ծննդա-
բանութիւնը, սակայն գրուած վկայու-
թիւններ չգտնուեցին, եւ նրանց վտա-
րեցին քահանայութիւնից: 63 Անամեսե-
թիան ասաց նրանց. «Դուք իրաւունք
չունէք ուտելու ամենասուրբ բաներից,
մինչեւ որ չյայտնուի մի քահանայա-
պետ, որը ցոյց տայ ձեր ազգահամարը
եւ լիովին պարզաբանի ամէն ինչ»:

64 Գերութիւնից վերադարձած ամ-
բողջ ժողովուրդը քառասուներկու հա-
զար երեք հարիւր վաթսուն մարդ էր,
65 չհաշուած ծառաներին, աղախին-

ներին եւ նրանց երեխաներին, որոնց
թիւը եօթը հազար երեք հարիւր երե-
սունեօթն էր, չհաշուած նաեւ սամսեր-
դու տղամարդկանց եւ կանանց, որոնք
երկու հարիւր հոգի էին: 66 Նրանք
ունէին ձիեր՝ եօթը հարիւր երեսունվեց,
ջորիներ՝ երկու հարիւր քառասունեօթը,
67 ուղտեր՝ չորս հարիւր երեսունհինգ,
էշեր՝ վեց հազար եօթը հարիւր քսան:

68 Այն տոհմապետներն ու իշխան-
ները, որոնք վերադարձան Երուսաղէմ՝
Տիրոջ տունը, իրենց նպաստը բերեցին
Աստծու տան կառուցմանը՝ 69 ըստ
իրենց կարողութեան այդ գործի համար
գանձարանին տալով վաթսունմէկ հա-
զար երկդրամեան ոսկի եւ քահանա-
յական հարիւր պատմուճան:

70 Եւ այսպէս՝ քահանաներն ու ղեւ-
տացիները, ժողովրդի միջից մարդիկ եւ
երգիչները, դռնապաններն ու նաթա-
նայացիները բնակուեցին իրենց քա-
ղաքներում եւ, առհասարակ, բոլոր
իսրայէլացիները՝ իւրաքանչիւրն իր
բնակավայրում:

ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԶՈՀԱՍԵՂԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

3 Երբ հասաւ եօթներորդ ամիսը, եւ
իսրայէլացիներից իւրաքանչիւրն արդէն
իր քաղաքում էր, ամբողջ ժողովուրդը
մի մարդու պէս եկաւ ու հաւաքուեց
Երուսաղէմում: 2 Այդ ժամանակ վեր
կացան Յոսեդեկի որդի Յեսուն՝ իր
քահանայ եղբայրների հետ եւ Սաղա-
թիէլի որդի Զորոբաբէլը՝ իր վեց
եղբայրների հետ եւ շինեցին Իսրայէլի
Տէր Աստծու զոհասեղանը, որպէսզի
Մովսէսի՝ Աստծու այդ մարդու գրած
օրէնքների համաձայն նրա վրայ
ողջակէզներ մատուցեն: 3 Զոհասեղանը
վերականգնեցին իր նախկին տեղը. եւ
որովհետեւ երկիւղ էին կրում երկրի
այլազգիներից, անմիջապէս սկսեցին
նրա վրայ ողջակէզներ մատուցել իրենց
Տէր Աստծուն՝ մէկ անգամ առաւօտեան,
մէկ անգամ էլ երեկոյեան: 4 Նրանք
կատարեցին Տաղաւարահարաց տօնը՝
ըստ գրուած կարգի եւ մատուցեցին
ամենօրեայ ողջակէզները՝ ըստ այն
թուի, որքան սահմանուած էր օրուայ
համար: 5 Մատուցեցին նաեւ ամսամտի
եւ շաբաթ օրերի ողջակէզները, կա-
տարեցին Տիրոջ տարեկան բոլոր սուրբ
տօներն ու բոլոր նրանց տօնը, ովքեր
Տիրոջ դէմ մեղանչում են ակամայ:
6 Եօթներորդ ամսի առաջին օրից սկսե-
ցին ողջակէզներ մատուցել Տէր Աստ-
ծուն, թէեւ դեռեւս չէր գցուած Տիրոջ
տան հիմքը: 7 Նրանք արծաթ տուեցին
քարհատներին եւ հիւսներին, ուտելիք,
խմելիք ու ձէթ՝ սիդոնացիներին եւ
տիւրոսացիներին, որպէսզի նրանք
Լիբանանից ծովով մայրի շինափայտ
բերեն Յոպպէ, ինչպէս նրանց հրամայել
էր Պարսկաստանի Կիւրոս թագաւորը:

ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

8 Երուսաղէմ վերադառնալու՝ Աստ-
ծու տաճար գալու երկրորդ տարուայ
երկրորդ ամսին Սաղաթիէլի որդի
Զորոբաբէլը, Յոսեդեկի որդի Յեսուն,
նրանց եղբայրները, քահանաներն ու
ղեւտացիները եւ գերութիւնից Երու-
սաղէմ վերադարձած բոլոր մարդիկ
սկսեցին գործը: Քսան տարեկանից
բարձր բոլոր ղեւտացիներին նրանց
վերակացուներ կարգեցին Տիրոջ տան
շինարարական աշխատանքների վրայ:
9 Յեսուն, նրա որդիներն ու եղբայրները,
Կարմիէլն ու նրա որդիները, Յուդայի
որդիները, Տիրոջ տան աշխատանքների
վերակացուները, նաեւ Ենադադի որդի-
ներն ու նրա ղեւտացի եղբայրները,
բոլորն էլ մէկ մարդու պէս սկսեցին շի-
նարարութիւնը:

10 Երբ հիմքերը գցեցին եւ սկսեցին
կառուցել Տիրոջ տունը, քահանաները
կանգնել էին պատմուճաններ հագած եւ
փչում էին իրենց փողերը, իսկ ղեւ-
տացիները՝ Ասափի որդիները, ծնծղա-
ներ էին նուագում եւ օրհնում Տէր
Աստծուն՝ ըստ այն կարգի, որ սահմա-
նել էր Իսրայէլի Դաւիթ թագաւորը:
11 Եւ ընկերն ընկերոջն ասում էր.
«Օրհնաբանենք եւ գոհութիւն մատու-
ցենք Տիրոջը, քանզի քաղցր է նրա
ողորմածութիւնը Իսրայէլի վրայ»: Եւ
ամբողջ ժողովուրդը բարձրաձայն
օրհնում էր Իսրայէլի Տէր Աստծուն,
քանզի արդէն գցել էին Տիրոջ տան
հիմքերը:

12 Իսկ քահանաներից ու ղեւտացիներից, իշխաններից ու տոհմապետներից եւ ծերերից շատերը, որոնք տեսել էին Տիրոջ տաճարը, երբ տեսան նրա նոր հիմքերը, բարձրաձայն լաց էին լինում. ամբողջ ժողովուրդը աղաղակում էր ուրախութիւնից՝ բարձրագոչ ճիչ ու կանչերով: 13 Այնպէս բարձր էին ուրախութեան այդ ձայները, եւ ժողովրդի աղաղակն այնքան մեծաշուռնդ էր, որ ժողովրդի միջից ոչ ոք չէր կարող զանազանել դրանք իրարից: Այդ ձայները լսելի էին մինչեւ իսկ հեռո՛ւ-հեռուներից:

ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԳԵԼՈՒՄԸ

4 Երբ Յուդայի ու Բենիամինի երկրի թշնամիները լսեցին, որ գերութիւնից եկած իսրայէլացիները վերաշինում են Իսրայէլի Տէր Աստծու տաճարը, 2 եկան Զորոբաբէլի, իշխանների եւ տոհմապետների մօտ եւ նրանց ասացին. «Մենք էլ ենք ուզում տաճարը կառուցել ձեզ հետ, որովհետեւ ինչպէս դուք, այնպէս էլ մենք պաշտում ենք ձեր Տէր Աստծուն. մենք էլ ենք զոհեր մատուցում նրան այն օրից, ինչ Ասորեստանի Ասորդան թագաւորը մեզ բերել է այստեղ»: 3 Զորոբաբէլը, Յեսուն եւ Իսրայէլի միւս իշխաններն ու տոհմապետները նրանց ասացին. «Մեզ վայել չէ, որ ձեզ հետ միասին շինենք Իսրայէլի մեր Տէր Աստծու տունը: Մենք ինքներս պիտի շինենք Իսրայէլի մեր Տէր Աստծու տունը, ինչպէս հրամայել է մեզ Պարսկաստանի Կիւրոս թագաւորը»: 4 Դրանից յետոյ այդ երկրի այլազգիները թուլացնում էին Հրէաստանի ժողովրդի ձեռքերը, խափանում նրանց շինարարութիւնը, 5 ծախու խորհրդականներ էին վարձում եւ նրանց հետ մտածում շինարարութիւնը խափանելու մասին՝ սկսած Պարսկաստանի Կիւրոս արքայի թագաւորութեան օրերից մինչեւ Պարսկաստանի Դարեհ արքայի օրերը:

ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐԸ ՀՐԵԱՆԵՐԻ ԴԷՄ

6 Պարսկաստանի Արտաշէս† թագաւորի ժամանակ, նրա թագաւորութեան սկզբին, նրանք ամբաստանութեան թուղթ գրեցին Հրէաստանի եւ Երուսաղէմի բնակիչների դէմ: 7 Թուղթը գրեցին Արտաշէսի թագաւորութեան օրերին Միթրիդատէսը եւ Տաբեէլը՝ հարկահաւաք միւս ծառաների հետ միասին, գրեցին ասորերէն, որը թարգմանեց Ռէում Բաալտիմը: 8 Ահա այդ թղթի բովանդակութիւնը, որ նրանք ուղարկեցին Արտաշէս թագաւորին.

9 «Մենք՝ քո ծառաները, որ բնակւում ենք Գետի այս կողմում, Ռէում Բաալտիմը, Սամսա գրագիրը եւ մեր միւս ծառայակիցները՝ Դեենէսը, Սփարսաթաքայիէն, Տարփալէէն, Ափերսէէն, Օքուէէն, Բաբելոնէէն, Սուսանան, Քեէդաւէէն, 10 եւ մնացած այլ ազգերը, որոնց մեծ եւ փառապանծ Ասենափարը բնակեցրեց Սոմարում, այսինքն՝ Սամարիա քաղաքում, Գետի այս կողմում, - խաղաղութիւն են մաղթում Արտաշէս թագաւորին: 13‡ Արդ, ո՛վ թագաւոր, թող յայտնի լինի քեզ, որ եթէ այդ քաղաքը վերակառուցուի, եւ նրա պարիսպները կանգնեցուեն, քեզ ոչ միայն ոչ ոք հարկ չի տալու, 14 այլ բոլորը դիմադարձ են կանգնելու թագաւորներին, իսկ մենք, որ չենք կամենում այդպիսի յանդգնութիւն թագաւորի դէմ, դրա համար էլ այս ամենի մասին գրեցինք քեզ՝ թագաւորիդ, 15 որպէսզի դու քննես, փնտռես ու գտնես քո հայրերի դիւանների մատեաններում, որ իմանաս, թէ դա ապստամբների քաղաք է, թէ ամէն ժամանակ նա ոտքի է ելել թագաւորների դէմ եւ հին ժամանակներից ի վեր միշտ եղել է փախստականների ապաստան եւ հէնց դրա համար էլ աւերուել է այդ քաղաքը: 16 Ահա թէ ինչու մենք քեզ, ո՛վ թագաւոր, յայտնեցինք այդ մասին, որ եթէ այս քաղաքը վերաշինուի եւ նրա պարիսպները կանգնեցուեն, ապա այլեւս խաղաղութիւն չի լինի քեզ համար»:

†Հայերէն բնագրում այս անունը ունի գրութեան տարբեր ձեւեր՝ Ասարսոյեր, Արսասէս, Արսասաս, Արտաքսերքսէս:

‡Հայերէնը չունի 11 եւ 12-րդ համարները:

ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

17 Թագաւորը պատասխան ուղարկեց Ռէում Բաալտիմին, Սամսա գրագրին եւ նրանց միւս ծառայակից ընկերներին, որոնք բնակւում էին Սամարիայում, նաեւ մնացած բոլորին, որ Գետի այն կողմում էին.

18 «Ողջո՛յն ձեզ: Ձեր ուղարկած հարկահանները եկան ինձ մօտ եւ ինձ, իմ առաջ, տեղեկացրին ամէն բան: 19 Ես վերահասու եղայ, քննեցի ու գտայ, որ այդ քաղաքը հին ժամանակներից ի վեր եղել է ապստամբ եւ ոտքի է ելել թագաւորների դէմ, 20 որ Երուսաղէմում եղել են հզօր ու բռնակալ թագաւորներ, որոնք տիրել են արեւմտեան կողմին՝ Եփրատ գետից այն կողմը: Արդ, դուք հարկեր ու տուրքեր դրէ՛ք դրանց վրայ, որպէսզի այլեւս չբռնանան ինքնիշխան կամքով: 21 Այժմ իմ հրամանն է ձեզ, որ գնաք, արգելէք եւ խափանէք նրանց գործը, որպէսզի քաղաքը չկառուցուի, 22 չներէք նրանց եւ հանգիստ թողնէք, այլ շտապ յանձն առէ՛ք եւ պահանջեցէ՛ք բոլոր հարկերն ու տուրքերը, որպէսզի նրանք երբեք չբազմանան, չզօրանան ու չկանգնեն թագաւորների դէմ»:

23 Եւ երբ Արտաքսերքսէսի, այսինքն՝ Արտաշէս թագաւորի հարկահաւաքը բերեց այդ հրամանի թուղթը եւ կարդաց Ռեսիմի, Սամսա գրագրի եւ նրանց ծառայակիցների առջեւ, նրանք անմիջապէս ելան եւ հետեւակ ու հեծեալ մեծ զօրքով գնացին Երուսաղէմ, Հրէաստան եւ հրեաներին արգելեցին ու խափանեցին շինարարութիւնը: 24 Այդ ժամանակ էլ խափանուեց եւ դադարեց Տէր Աստծու տաճարի աշխատանքը Երուսաղէմում, եւ այդ դադարը տեւեց մինչեւ Պարսկաստանի Դարեհ արքայի երկրորդ տարին:

ԴԱՐԵՀԻ ՀՐԱՄԱՆԸ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

5 Անդէ եւ Ադդովի որդի Զաքարիա մարգարէները, Իսրայէլի Տէր Աստծու անունով, մարգարէութիւն արեցին Հրէաստանի ու Երուսաղէմի մասին: 2 Այդ ժամանակ վեր կացան Սաղաթիէլի որդի Զորոբաբէլը, Յոսեդեկի որդի Յեսուն եւ սկսեցին կառուցել Իսրայէլի Տէր Աստծու տունը. մարգարէները միաբանեցին նրանց հետ եւ օգնում էին նրանց: 3 Այդ նոյն ժամանակ Եփրատ գետի միւս կողմից նրանց մօտ եկան Թաթանա իշխանը, Սաթրաբուզանը, նրանց ծառայակիցները եւ ասացին. «Ո՞վ է ձեզ հրաման տուել այս տունը շինելու. կամ՝ ո՞ւմ խօսքով էք կանգնեցրել դրա աշտարակները, 4 եւ կամ՝ ի՞նչ են այն մարդկանց անունները, որոնք այս քաղաքը շինելու գլխաւորներն են դարձել»: 5 Բայց Տէր Աստծու աչքը քաղցր էր գերութիւնից վերադարձած հրեաների վրայ. նրանք չխափանեցին նրանց աշխատանքը, մինչեւ որ այդ մասին յայտնէին Դարեհ արքային. նրանք հարկահաններ ուղարկեցին արքայի մօտ՝ գործի մասին գրաւոր տեղեկացնելու համար:

6 Ահա այսպէս էին գրել. «Գետի այն կողմերի իշխան Թաթանայից, Սաթրաբուզանից եւ նրա ծառայակիցներից՝ 7 Փարսաքեէից եւ Ռեսիմից՝ ողջոյն Դարեհ թագաւորին: 8 Թող յայտնի լինի թագաւորին, որ մենք գնացինք Հրէաստան երկիրը, Երուսաղէմ քաղաքը, տեսանք մեծազօր Աստծու տաճարը, որը կառուցում էին ընտիր քարերով, փայտէ պահանգներ էին դնում պատերի մէջ, եւ գործը նրանց ձեռքին յաջողութեամբ եւ արագ առաջ էր գնում: 9 Այն ժամանակ մենք նրանց աւագներին հարցրինք, թէ՝ "Ո՞վ է ձեզ հրաման տուել այս տունը կառուցելու, կամ՝ ո՞ւմ խօսքով էք կանգնեցնում սա", 10 հարցրինք նաեւ գլխաւորների անունները, որոնք իշխաններ էին: 11 Եւ ահա թէ հրեաները ինչ պատասխանեցին մեզ. "Մենք, - ասացին, - երկնքի եւ երկրի Տէր Աստծու ծառաներն ենք եւ այս տունը շինում ենք այնպէս, ինչպէս շատ տարիներ առաջ կառուցել էր Իսրայէլի մեծ թագաւոր Սողոմոնը. մենք էլ, ըստ նոյն օրինակի, կառուցում ենք այն: 12 Բայց յետոյ, երբ մեր հայրերը բարկացրին երկնքի ու երկրի Աստծուն, նա էլ բաբելացիների եւ քաղդէացիների արքայ Նաբուքոդոնոսորի ձեռքը մատնեց նրանց. Նաբուքոդոնոսորը քանդեց այս

տունը եւ ժողովրդին էլ գերի տարաւ Բաբելոն: 13 Սակայն բաբելացիների Կիւրոս թագաւորի առաջին տարին, Կիւրոս թագաւորը հրաման տուեց չինել Տէր Աստծու այս տունը, 14 եւ այս տան արծաթէ եւ ոսկէ այն ամբողջ սպասքն ու գոյքը, որ Նաբուքոդոնոսորը վերցրել էր Երուսաղէմից եւ բերել իր աստուածների տունը, Կիւրոս թագաւորը դրանք վերցրեց թագաւորի գանձատնից, տուեց Սամանասար գանձապետին 15 եւ նրան ասաց. "Վերցրո՛ւ այդ ամբողջ սպասքը եւ կայքը, գնա՛ Երուսաղէմ, Տիրոջ տունը, որ այնտեղ է, տա՛ր եւ այդ կայքը դի՛ր իր տեղում": 16 Այն ժամանակ Սամանասարը եկաւ Տէր Աստծու տաճարի հիմքը գցեց Երուսաղէմում. այդ օրից էլ, ահա, մենք չինում ենք այն եւ դեռ չենք աւարտել: 17 Արդ, ո՛վ թագաւոր, եթէ հաճելի է քեզ, բաբելացիների թագաւորական մատենադարաններում փնտրի՛ր եւ տե՛ս, թէ իսկապէ՞ս Կիւրոս թագաւորը հրամայել է, որ Հրէաստանի Երուսաղէմ քաղաքում վերաշինեն Տիրոջ այս տունը: Երբ դու, ո՛վ թագաւոր, տեղեկանաս այդ հրամանի մասին, այն ուղարկի՛ր մեզ»:

ԴԱՐԵՀԸ ԳՏՆՈՒՄ Է ԿԻՒՐՈՍԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

6 Այն ժամանակ Դարեհ թագաւորը այցելեց թագաւորական մատենադարան, որը գտնւում էր Բաբելոնում, որոնումներ կատարեց գրաւոր յիշատակարաններում 2 եւ այնտեղ գտաւ տոմարական մի մատեան, որ գրուած էր եկբատանացիների Ամթիստ քաղաքում, ուր կար այս յիշատակարանը.

3 «Կիւրոս թագաւորի առաջին տարի. Կիւրոս թագաւորը հրաման տուեց Տիրոջ տան մասին, որ գտնւում է Երուսաղէմում, եւ ասաց. "Թող Տիրոջ տաճարը կառուցուի այն տեղում, ուր զոհեր են մատուցում Տիրոջը: Նրա բարձրութիւնը թող լինի վաթսուն կանգուն, լայնութիւնը՝ նոյնպէս վաթսուն կանգուն: 4 Երեք շարք պատերը կը լինեն մեծ քարերից, մէկ շարքը՝ փայտից. տաճարը կը կառուցուի այդպէս եւ այդպէս էլ կ'աւարտուի այն: 5 Տիրոջ տան արծաթէ եւ ոսկէ այն կայքն ու սպասքը, որ Նաբուքոդոնոսորը բերել է Երուսաղէմից՝ Տիրոջ տանից, եւ դրել Բաբելոնում, գանձատանը, թող հանեն եւ տանեն Երուսաղէմ՝ Տիրոջ տաճարը. թող տանեն եւ դնեն դրանք Տիրոջ տան մէջ իրենց տեղերը, ուր եղել են առաջ"»:

6 Այն ժամանակ Դարեհը հրաման տուեց գետի այն կողմերի իշխաններին՝ Սաթրաբուզանին եւ գետի կողմերի նրա ծառայակիցներին, նաեւ հեռաւոր տեղերի կառավարիչներին եւ նրանց գրեց այսպէս. 7 «Արդ, դուք այսուհետեւ թո՛յլ տուէք հրեաների իշխաններին եւ Իսրայէլի աւագներին, որ նրանք, իր առաջուայ տեղում, կառուցեն Աստծու տունը: 8 Այս է իմ հրամանը. թող ոչ ոք չարգելի Իսրայէլի աւագներին չինելու իրենց Տէր Աստծու տունը, եւ Գետի կողմերի այն հարկահանները, որոնք իմ թագաւորութեան իշխանութեան տակ են, թող ամենայն ճշտութեամբ հոգան այդ մարդկանց ծախսերը եւ չխափանեն աշխատանքները: 9 Երկնքի Տէր Աստծուն ողջակէզներ մատուցելու համար թող նրանց տան արջառներ, խոյեր եւ նոխազներ, ցորեն ու աղ, գինի ու ձէթ, ինչպէս նրանց կը հրամայեն Երուսաղէմի քահանայապետները. թող այդ բոլորը տրուեն նրանց օր-օրի, անխափան, ինչպէս կը պահանջեն նրանք: 10 Թող նրանք անուշահոտ զոհեր մատուցեն երկնքի իրենց Տէր Աստծուն եւ աղօթեն թագաւորի եւ նրա որդիների կեանքի համար: 11 Այս է, ահա, իմ հրամանը, եւ եթէ մէկը դէմ կանգնի իմ հրամանին, ապա նրա տունը կը քանդուի, նրա տանից կը հանուի մի գերան, նրան կը գամեն այդ գերանին, այն մարդուն, որ դէմ է կանգնել իմ հրամանին, եւ դա մշտական նախատինք կը լինի նրա համար: 12 Եւ Աստուած, որի անունը դրուած է այնտեղ, Երուսաղէմում, կ'ելնի ու կը կործանի այն թագաւորութիւնն ու ժողովրդին, որոնք կը յանդգնեն իրենց ձեռքերը երկարել, արգելել եւ կործանել Աստծու տունը, որ գտնւում է Երուսաղէմում: Ես՝ Դարեհ թագաւորը, հաստատեցի այս հրամանը, եւ թող ոչ ոք չհամարձակուի զանց առնել այն»:

13 Այն ժամանակ Գետի կողմերի իշխանը, Սաթրաբուզանը եւ նրա ծառայակիցները, որոնց Դարեհ թագաւորն ուղարկել էր իր հրամանը, անմիջապէս սկսեցին կատարել այն: 14 Հրէաստանի աւագները եւ ղեւտացիները տաճարը կառուցեցին Անդէ եւ Ադդովի որդի Զաքարիա մարգարէների ժամանակներում, կառուցեցին եւ աւարտեցին Իսրայէլի Տէր Աստծու խօսքի համաձայն եւ այնպէս, ինչպէս հրամայել էին Կիւրոս եւ Դարեհ թագաւորները՝ Պարսկաստանի Արտաշէս արքայի թագաւորութեան ժամանակ: 15 Տաճարի շինարարութիւնն աւարտուեց Ադար ամսի երրորդ օրը, Դարեհ արքայի թագաւորութեան վեցերորդ տարում: 16 Իսրայէլի որդիները, քահանաներն ու ղեւտացիները եւ նրանք, որ վերադարձել էին գերութիւնից, մեծ ուրախութեամբ կատարեցին Տիրոջ տան նաւակատիքը: 17 Տիրոջ տան նաւակատիքին նրանք մատուցեցին զոհեր՝ հարիւր արջառ, երկու հարիւր խոյ, չորս հարիւր գառ եւ բովանդակ Իսրայէլի մեղքերի թողութեան համարտասներկու նոխազ՝ Իսրայէլի տասներկու ցեղերի թուի համեմատ: 18 Նրանք, ինչպէս գրուած է Մովսէսի գրքում, ըստ իրենց տեղերի՝ կարգեցին քահանաներ եւ ըստ իրենց վիճակների՝ ղեւտացիներ, Երուսաղէմում Տէր Աստծուն ծառայելու համար. նրանց թիւը երկու հազար երկու հարիւր էր:

ՀՐԵԱՆԵՐԸ ՏՕՆՈՒՄ ԵՆ ԶԱՏԻԿԸ

19 Իսրայէլացիները, որոնք վերադարձել էին գերութիւնից, Տիրոջ զատիկը կատարեցին առաջին ամսի տասնչորսերորդ օրը: 20 Քահանաներն ու ղեւտացիները մաքրուեցին մեղքերից, մաքրուեցին նաեւ մարդիկ, եւ երբ բոլորն էլ մաքուր էին, մորթեցին զատկի զոհը գերութիւնից բոլոր վերադարձածների եւ իրենց եղբայրների ու քահանաների համար: 21 Իսրայէլացիները կերան զատիկը բոլոր նրանց հետ, ովքեր զատուել էին այդ երկրի այլազգիների պղծութիւնից եւ եկել էին իրենց մօտ՝ Իսրայէլի Տէր Աստծուն փնտռելու համար: 22 Եօթը օր նրանք կատարեցին Բաղարջակերաց տօնը, ուրախացան Երուսաղէմում, որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուածը ուրախացրեց նրանց, Տէրը Ասորեստանի թագաւորի սիրտը դարձրեց դէպի իրենց, որպէսզի օգնէր եւ զօրացնէր նրանց ձեռքերը Իսրայէլի Տէր Աստծու տաճարը կառուցելու համար:

ԵԶՐԱՍԸ ԲԱԲԵԼՈՆԻՑ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄ

7 Այս դէպքերից յետոյ Պարսկաստանի Արտաշէս արքայի թագաւորութեան ժամանակ, Եզրասը, որը որդին էր Սարուայի, սա՝ Ազարիայի, սա՝ Քեղկիայի, 2 սա՝ Սելումի, սա՝ Սադոկի, սա՝ Աքիտոբի, 3 սա՝ Սամարիայի, սա՝ Եզրայի, սա՝ Մարոթոսի, 4 սա՝ Զարիայի, սա՝ Օզիայի, սա՝ Բոկկի, 5 սա՝ Աբիսուայի, սա՝ Փենեէսի, սա՝ Եղիազարի, որն առաջին քահանայապետ Ահարոնի որդին էր, – 6 ահա այս Եզրասն էր, որ վերադարձաւ Բաբելոնից: Սա եռանդուն գրագիր էր եւ Իսրայէլի Տէր Աստծու կողմից Մովսէսին տրուած Օրէնքի օրէնսգէտ: Թագաւորը նրան տուեց ամէն բան, ինչ նա խնդրեց նրանից, որովհետեւ Տէր Աստծու ձեռքը նրա վրայ էր: 7 Նրա հետ Երուսաղէմ վերադարձան իսրայէլացիներից շատերը՝ քահանաներ, ղեւտացիներ, պաշտամունքի երգիչներ, դռնապաններ եւ նաթանայացիներ: Նրանք ճանապարհ էին ընկել Արտաշէս թագաւորի եօթներորդ տարուայ հինգերորդ ամսին, 8 եւ թագաւորի եօթներորդ տարուայ եօթներորդ ամսի ամսամտին Եզրասը եկաւ Երուսաղէմ, 9 որովհետեւ Տէր Աստծու բարի ձեռքը նրանց վրայ էր: 10 Եզրասն իր սրտում վճռել էր քննել Տիրոջ Օրէնքը, գրել նրա մասին եւ Իսրայէլի ժողովրդին ուսուցանել Տիրոջ պատուիրաններն ու կանոնները:

ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԵԶՐԱՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ

11 Ահա այն հրամանը, որ Արտաշէս թագաւորը տուեց Եզրաս քահանային՝ Տիրոջ Օրէնքի եւ Իսրայէլի մասին նրա տուած պատուիրանների օրէնսգէտին.

12 «Ես՝ թագաւորների թագաւոր Ար-

տաշէսը, իմ կողմից հաստատուած այս հրամանը տուեցի երկնքի Տէր Աստծու Օրէնքի օրէնսգէտ Եզրասին. 13 հրամայում եմ իմ թագաւորութեան տակ գտնուող բոլորին՝ Իսրայէլի ժողովրդին, քահանաներին եւ ղեւտացիներին, որ քեզ հետ բոլորը վերադառնան Երուսաղէմ: 14 Այս հրամանն ուղարկուած է թագաւորի եւ նրա եօթը խորհրդականների կողմից՝ թոյլատրելու հրեաներին եւ երուսաղէմացիներին Եզրասի առաջնորդութեամբ, որի ձեռքին է Աստծու Օրէնքը, վերադառնալու Երուսաղէմ: 15 Թագաւորն իր եւ իր խորհրդականների կողմից հրամայեց տալ արծաթ եւ ոսկի Տիրոջ տան համար, որ գտնւում է Երուսաղէմում, տանել եւ դնել Իսրայէլի Տէր Աստծու տան առաջ: 16 Եւ ամէն մարդ, Բաբելոնում գերի հրեաները, ժողովուրդը, քահանաները, ովքեր արծաթ եւ ոսկի ունեն, թող իրենց հետ վերցնեն եւ տանեն Երուսաղէմ՝ Տիրոջ տունը: 17 Եւ բոլորը, ովքեր պիտի գնան, թող այս ձեւով, ինչպէս գրեցինք, պատրաստեն զոհեր՝ արջառներ, խոյեր, գառներ ու իրենց նուէրները եւ թող մատուցեն իրենց Տէր Աստծու զոհասեղանի վրայ, որ գտնւում է Երուսաղէմում: 18 Այս մէկ բարութիւնն էլ, ահա, ես արեցի քեզ եւ քո եղբայրների համար. արծաթ եւ ոսկի թողեցի, որպէսզի, ինչպէս որ արժանի է ձեր Աստծուն, օգտագործէք այնպէս: 19 Տիրոջ տան կահաւորման համար ես քեզ սպասք տուեցի. վերցրո՛ւ քեզ հետ եւ տա՛ր Երուսաղէմ: 20 Իսկ այն անօթները, որ աւելորդ կը լինեն, կը տաս թագաւորական տան գանձարանին՝ պահելու համար: 21 Ես՝ Արտաշէս թագաւորը, հրաման տուեցի բոլոր գանձատէրերին, ձեզ, որ Եփրատ գետի այն կողմում էք գտնւում, Եզրաս քահանային՝ երկնքի Տէր Աստծու օրէնսգէտին տաք այն բոլոր բաները, ինչ նա կը պահանջի ձեզանից՝ իր Տէր Աստծու տան համար: 22 Պատրաստեցէ՛ք հարիւր տաղանդ արծաթ, հարիւր քոռ ցորեն, նոյնքան էլ գինի ու նոյնքան էլ ձէթ. 23 եւ թող ոչ ոք դէմ չկանգնի թագաւորի այս հրամանին: Այն բոլոր բաները, ինչ հրամայեցի տալ երկնքի ու երկրի Տէր Աստծու համար, պիտի լինեն. թող ոչ ոք որեւէ բան չձեռնարկի Իսրայէլի Տէր Աստծու տան գործը խափանելու համար, որպէսզի Տէր Աստծու բարկութիւնը չգայ իմ թագաւորութեան եւ իմ որդու վրայ: 24 Դուք իմացա՛ծ եղէք նաեւ, որ բոլոր քահանաները, ղեւտացիները, սաղմոս երգողները, դռնապանները, նաթանայացիները եւ նրանք, որ Տիրոջ տան սպասաւորներն են, ազատ են հարկեր տալուց, եւ թող ոչ ոք չհամարձակուի նրանց ծառայեցնել իրեն: 25 Դու էլ, Եզրա՛ս, որ քո Աստծու իմաստութիւնն ունես քո ձեռքին, օրէնսգէտնե՛ր եւ դատաւորնե՛ր նշանակիր, որպէսզի նրանք դատեն Գետի այն կողմում գտնուող ամբողջ ժողովրդին եւ ուսուցանեն քո Աստծու Օրէնքը բոլոր նրանց, ովքեր չգիտեն: 26 Իսկ նրանք, ովքեր չեն կատարի Օրէնքը, ովքեր չեն գործի ըստ Տիրոջ Օրէնքի եւ ըստ թագաւորի օրէնքների, թող ըստ իրենց գործերի՝ նրանց համար դատաստան արուի. եթէ մահուան են արժանի, դատապարտուեն մահուան, եթէ տանջանքի՝ տանջանքի, եթէ տուգանքի՝ տուգանքի, եթէ կալանքի՝ բանտարկութեան»:

ԵԶՐԱՍԸ ԳՈՀՈՒԹԻՒՆ Է ՅԱՅՏՆՈՒՄ ՏԻՐՈՋԸ

27 «Օրհնուած է մեր Տէր Աստուածը, որ այսպիսի բարութիւն տուեց թագաւորի սրտին, փառաւորեց մեր Տէր Աստծու անունը Երուսաղէմում, 28 ինձ էլ ողորմութիւն արեց եւ պատուի արժանացրեց թագաւորի եւ նրա խորհրդականների առաջ, թագաւորի բոլոր իշխանների առաջ, զօրացայ, քանզի Տիրոջ ձեռքն ինձ վրայ էր, հաւաքեցի Իսրայէլի բոլոր իշխաններին՝ ինձ հետ գերութիւնից վերադառնալու համար»:

ԵԶՐԱՍԻ ԱՆՈՒԱՆԻ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

8 Սրանք են այն իշխաններն ու տոհմապետները, որոնք ինձ հետ վերադարձան բաբելացիների Արտաշէս թագաւորի թագաւորութեան ժամանակ. 2 Փենեէսի որդիներից՝ Գերսոնը, Իթամարի որդիներից՝ Դանիէլը, Դաւթի որդիներից՝ Ատտուսը, 3 Նաաքայի որդիներից՝ Նիան, Փորոսի որդիներից՝ Զաքարիան եւ նրա հետ հարիւր յիսուն տղամարդ, 4 Փաաթմովաբի որդիներից՝ Զարայի որդի Ելիանան եւ նրա հետ երկու հարիւր տղամարդ, 5 Զատուէլի որդիներից՝ Ազիէլի որդի Սեքենիան եւ նրա հետ երեք հարիւր տղամարդ, 6 Ադինի որդիներից՝ Յովնաթանի որդի Աբէնը եւ նրա հետ յիսուն տղամարդ, 7 Ելամի որդիներից՝ Աթալայի որդի Իսայիասը եւ նրա հետ եօթանասուն տղամարդ, 8 Սափատիայի որդիներից՝ Միքայէլի որդի Զամբդիան եւ նրա հետ եօթանասուն տղամարդ, 9 Յովաբի որդիներից՝ Յեուէլի որդի Բադիան եւ նրա հետ երկու հարիւր տասնութ տղամարդ, 10 Բանիի որդիներից՝ Յովսէփի որդի Սելեմութը եւ նրա հետ հարիւր վաթսուն տղամարդ, 11 Բաբէի որդիներից՝ Բաբի որդի Զաքարիասը եւ նրա հետ քսանութ տղամարդ, 12 Ազգադի որդիներից՝ Սակատանի որդի Յովնանը եւ նրա հետ հարիւր տասը տղամարդ, 13 Ադոնիկամի որդիներից՝ Էսքարին. իսկ միւսների անունները սրանք են՝ Ելիփալաթ, Յէիէլ եւ Սամա եւ սրանց հետ վաթսուն տղամարդ, 14 Բադուի որդիներից՝ ՈւԹային եւ Զաբութը եւ սրանց հետ եօթանասուն տղամարդ:

ԵԶՐԱՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

15 Ես նրանց հաւաքեցի դէպի Եւի հոսող գետի եզերքին: Այստեղ մենք օթեւանեցինք երեք օր: Ժողովրդի բազմութեան մէջ ես փնտռեցի, բայց քահանաներից եւ Ղեւիի որդիներից չգտայ ոչ մի մարդ: 16 Այն ժամանակ ես եղիազարի, Արիէլի եւ Սեմեայի մօտ ուղարկեցի Առնաամին, Արիբին, Ելնաթանին, Նաթանին, Զաքարիային, Մէսոլամին, Յովարիբին եւ Յելմաթամին: 17 Իմաց տալուց յետոյ նրանց բերեցին իշխանների առաջ, որոնք գտնւում էին Գանձաւորաց տեղ կոչուած վայրում: Ես նրանց բերանը խօսք դրեցի, որ խօսեն իրենց Նաթանայիմ եղբայրների հետ, որոնք մեր Աստծու տան երգիչներն էին, եւ որոնց բերել էին Գանձաւորաց տեղ կոչուած վայրը: 18 Նրանք եկան մեզ մօտ, քանզի Տիրոջ բարի ձեռքը մեզ վրայ էր. դրանք Իսրայէլի որդի Ղեւիի որդիներից էին, եւ առաջինը մեզ մօտ եկան նրա որդիներն ու նրա եղբայրները՝ տասնութ տղամարդ: 19 Եկան եւ Ասեբիան, Մերարիի որդի Յեսեան՝ իր եղբայրների եւ որդիների հետ՝ քսան տղամարդ: 20 Եկաւ նաեւ Նաթանայիմը, այն Նաթանի որդին, որին Դաւիթ թագաւորը եւ նրա իշխանները տուել էին ղեւտացիներին՝ ծառայելու. նա եկաւ երկու հարիւր քսան տղամարդու հետ:

21 Ես այնտեղ, Էոս գետի եզերքին, ծոմապահութեան քարոզ կարդացի, այնտեղ մենք աղօթք մատուցեցինք մեր Տէր Աստծու առաջ, խնդրեցինք նրանից, որ ուղիղ ճանապարհով տանէր թէ՛ մեզ եւ մեր որդիներին եւ թէ՛ բոլոր նրանց, ովքեր մեզ հետ էին, 22 քանի որ մենք ամաչեցինք թագաւորից հեծեալներ խնդրել՝ ճանապարհին մեր թշնամիներից մեզ ազատելու համար, որովհետեւ թագաւորին այսպէս էինք ասել, թէ մեր Տիրոջ ձեռքն օգնում է բոլորին, ովքեր դիմում են նրան բարութեան համար, եւ որ նա իր զօրութիւնն ու բարկութիւնն է թափում բոլոր նրանց վրայ, ովքեր լքում են նրան: 23 Մենք ծոմ պահեցինք եւ խնդրեցինք այս բոլորի համար, եւ Տէրը մեզ լսեց:

24 Գլխաւոր քահանաներից մենք ընտրեցինք տասներկու մարդ՝ Սարաբիային, Ասաբիային եւ նրանց հետ իրենց տասը եղբայրներին: 25 Մենք նրանց առաջ կշռեցինք եւ նրանց տուեցինք այն արծաթը, ոսկին եւ սպասքը, որ մեր Աստծու տան համար նուիրել էին թագաւորն ու նրա խորհրդականները, նրա իշխաններն ու Իսրայէլի ժողովուրդը, որ գտնւում էր այնտեղ: 26 Ես կշռեցի եւ նրանց տուեցի վեց հարիւր յիսուն տաղանդ արծաթ, արծաթէ հարիւր անօթներ, հարիւր տաղանդ ոսկի, 27 ոսկէ քսաներեք գաւաթ եւ ընտիր, մաքուր ու ոսկեզօծ պղնձէ այլ անօթներ: 28 Ես նրանց ասացի. «Դուք սրբագործուած էք Տէր Աստծու կողմից, սրբագործուած են նաեւ Տիրոջ այս սպասքը, մեր հայրերի Տէր Աստծու այս ոսկեղէն եւ արծաթեղէն ընտիր

անօթները. 29 արթո՛ւն կացէք եւ պահպանեցէ՛ք, մինչեւ որ դրանք կշռէք գլխաւոր քահանաների, ղեւտացիների, Իսրայէլի իշխանների եւ տոհմապետների առաջ, Երուսաղէմում, Տիրոջ տան խորանում»: 30 Քահանաները եւ ղեւտացիները վերցրին կշռած ու հաշուած ոսկին, արծաթն ու սպասքը՝ Երուսաղէմ, մեր Աստծու տուն տանելու համար, 31 եւ մենք ճանապարհ ընկանք Էսոս գետի մօտից առաջին ամսի տասներկուերորդ օրը, եկանք ու հասանք Երուսաղէմ: Մեր Տէր Աստծու ձեռքը մեզ վրայ էր, եւ նա փրկեց մեզ մեր թշնամիների ձեռքից եւ ճանապարհի դարանակալներից: 32 Մենք եկանք Երուսաղէմ եւ երեք օր հանգստացանք այնտեղ: 33 Չորրորդ օրը, կշռելով արծաթը, ոսկին եւ սպասքը, տուեցինք մեր Տէր Աստծու տանը՝ Օնիա քահանայի որդի Մարեմոթին. նրա հետ էին նաեւ Փենեէսի որդի Եղիազարը, Յեսուի որդի Յովաբաթը, Բանիայի որդի Նովադան եւ այլ ղեւտացիներ: 34 Ամէն ինչ յանձնուեց հաշուով ու կշռով, եւ գրուեց ամէն ինչի լրիւ հաշիւն ու կշիռը:

35 Այն ժամանակ բոլոր նրանք, որ վերադարձել էին գերութիւնից եւ պանդխտութիւնից, ողջակէզներ մատուցեցին Իսրայէլի Տէր Աստծուն. ամբողջ Իսրայէլի համար տասներկու արջառ, իննսունվեց խոյ, եօթանասունեօթը գառ եւ տասներկու նոխազ՝ մեղքերի մաքրման համար. այս բոլոր ողջակէզները նրանք մատուցեցին Տէր Աստծուն: 36 Թագաւորի հրամանը նրանք յանձնեցին Եփրատ գետի այն կողմի իշխաններին, որոնք էլ պատիւ մատուցեցին հրեայ ժողովրդին եւ փառաւորեցին Աստծու տաճարը:

ԵԶՐԱՍԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԽԱՌՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

9 Այս բոլորը կատարուելուց յետոյ իշխանները մօտեցան ինձ եւ ասացին. «Իսրայէլի ժողովուրդը, քահանաներն ու ղեւտացիները չեն կտրել իրենց կապերը այն հեռաւոր ժողովուրդների ու երկրների հետ, ուր եղել են՝ չեն բաժանուել քանանացիներից ու քետացիներից, փերեզացիներից ու յեբուսացիներից, ամոնացիներից ու մովաբացիներից, եգիպտացիներից ու ամորհացիներից, 2 քանի որ նրանց աղջիկներից կին առան իրենց համար՝ թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց որդիները. նրանց սուրբ սերմը խառնակուեց ու պղծուեց այդ երկրների ժողովուրդների հետ, եւ անօրէնութեան այդ սկիզբը ծագեց իշխաններից»: 3 Երբ ես լսեցի այս խօսքերը, պատառոտեցի իմ հագուստները, փետեցի իմ մազերն ու մօրուքը եւ այդպէս նստեցի սգի մէջ: 4 Եւ բոլոր նրանք, որ երկիւղ էին կրում Իսրայէլի Աստծուց եւ որոնք վերադարձել էին գերութիւնից, հաւաքուեցին ինձ մօտ, իսկ ես այդպէս նստել էի սգի մէջ՝ մինչեւ երեկոյեան զոհի մատուցման ժամը:

ԵԶՐԱՍԻ ԱՂՕԹՔԸ ՄԵՂԱՒՈՐ ՀՐԵԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

5 Երեկոյեան զոհը մատուցելու ժամին, ես վեր կացայ իմ տառապանքի տեղից, հագուստներս պատառոտուած՝ խոնարհուեցի ցած, իջայ ծնկի եւ, ձեռքերս տարածելով, բարձրացրի դէպի իմ Տէր Աստուածը 6 եւ ասացի. «Աստուա՛ծ իմ եւ Տէ՛ր, ամաչում ենք եւ զարհուրում քեզնից. բարձրացրո՛ւ իմ երեսը դէպի քեզ, Տէ՛ր իմ Աստուած, քանզի բազմացան մեր անօրէնութիւններն ու դիզուեցին մեր գլուխներին, մեր մեղքերը մեծացան ու բարձրացան մինչեւ երկինք՝ մեր հայրերի տարիներից եւ ժամանակներից ի վեր, եւ մենք մեծ մեղքերի մէջ ենք մինչեւ այսօր: 7 Դու մեր մեղքերի պատճառով հեթանոս թագաւորների ձեռքը մատնեցիր մեզ, մեր թագաւորներին եւ մեր որդիներին մատնեցիր սրի, գերութեան ու յափշտակութեան, եւ մեր երեսն ամօթահար եղաւ մինչեւ այսօր: 8 Բայց այժմ, ահա, քո գթութիւնը թափեցիր մեզ վրայ, Տէ՛ր Աստուած մեր, փրկութիւն շնորհեցիր մեզ, հաստատեցիր մեզ քո սուրբ վայրում, մեր աչքերը լուսաւորեցիր այսօր, Տէ՛ր Աստուած մեր, մեր ստրկութեան մէջ մեզ փոքր ի շատէ կեանք տուեցիր: 9 Մենք ստրուկ էինք, բայց դու, Տէ՛ր Աստուած մեր, չթողեցիր մեզ մեր ստրկութեան մէջ, քո ողորմածութիւնը մեր նկատմամբ իջաւ Պարսկաստանի թագաւորի առաջ, որպէսզի նա մեզ կենդանութիւն տար, բարձրացնէր մեր Աստծու տունը, վերականգնէր եւ վերաշինէր այս անապատները, ցանկապատ եւ ամուր պարիսպներ կառուցէր Յուդայի երկրի եւ Երուսաղէմի համար: 10 Եւ հիմա մենք, այս բոլորից յետոյ, ի՞նչ պատասխան տանք քեզ, Տէ՛ր, քանզի օրինազանց եղանք քո առաջ, 11 զանց արինք քո պատուիրանները, որ տուել էիր մեզ քո մարգարէների միջոցով՝ ասելով այսպէս. «Այն երկիրը, ուր գնում ես դու ժառանգելու, այդ երկիրը պղծուած է երկրի այլազգիների գարշութիւններով եւ լցուած նրանց աղտեղութիւններով: 12 Դու նրանց աղջիկներից կին չառնես քո որդիների համար եւ ոչ էլ քո աղջիկներից կնութեան կը տաս նրանց որդիներին: Դու զօրաւոր կը լինես այդպէս, կ՝ուտես այդ երկրի բարիքները, եւ քո որդիները յաւիտենապէս կը ժառանգեն այդ երկիրը»:

13 Արդ, այն ամէնը, ինչ մէկ անգամ եղաւ մեզ հետ, կատարուեց մեր վատթար գործերի եւ մեր չար մեղքերի պատճառով, բայց դու, Տէ՛ր, բազում անգամ ներեցիր մեր մեղքերը եւ մեզ տուիր այսպիսի արմատ ու սերունդ: 14 Բայց մենք դարձեալ խոտորուեցինք՝ զանց առնելով քո պատուիրանները. խառնակուեցինք երկրի այլազգիների աղտեղութիւնների հետ, եւ դու չբարկացար մեզ վրայ, չմատնեցիր մեզ իսպառ կորստի, որպէսզի մեզնից ո՛չ արմատ մնար, ո՛չ սերունդ եւ ո՛չ էլ մեր անունը: 15 Տէ՛ր Աստուած Իսրայէլի, դու արդար ես եւ ճշմարիտ, որովհետեւ չոչնչացրիր մեր սերունդը, այլ մեր արմատն ու սերունդը մնացին մինչեւ այսօր: Եւ ահա այսօր մենք մեր անօրէնութիւններով քո առջեւ ենք եւ չենք կարող բարձրացնել մեր գլուխները, չենք կարող նայել քո երեսին, որովհետեւ մեր անօրէնութիւնները բազմացան, եւ մեր չարիքները բարձրացան մեր գլխից էլ վեր»:

ՀՐԵԱՆԵՐԸ ՀԵՌԱՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՅԼԱԶԳԻ ԿԱՆԱՆՑ

10 Երբ Եզրասը, երեսի վրայ ընկած գետնին, այս խոստովանութիւնն էր անում եւ ողբով աղօթում Տիրոջ առաջ, նրա մօտ հաւաքուեց շատ մեծ բազմութիւն՝ տղամարդիկ եւ կանայք, երիտասարդներ եւ կոյսեր, որ բնակւում էին Երուսաղէմում. ժողովուրդը ողբում էր եւ բարձրաձայն լաց լինում: 2 Ելամի որդիներից Եղիայի որդի Յեքոնիան պատասխան տուեց Եզրասին եւ ասաց. «Մենք մեղք ենք գործել մեր Տէր Աստծու դէմ. մենք կին ենք առել այս երկրի այլազգիներից, եւ այսօր դա անօրէնութիւն է Իսրայէլի մէջ: 3 Արդ, ուխտ անենք մեր Տէր Աստծու առաջ, դուրս անենք այս երկրի այլազգիներից բերած բոլոր կանանց եւ նրանցից ծնուած զաւակներին: Հիմա վե՛ր կաց եւ, ինչպէս կը կամենաս, նրանց կանգնեցրո՛ւ Տէր Աստծու Օրէնքի առաջ. թող քո բերանից լսենք, թէ ինչ պիտի անենք ըստ պատուիրանների, եւ մենք այդպէս էլ կ՝անենք: 4 Մենք քեզ հետ ենք, պի՛նդ կաց եւ արա՛ այնպէս, ինչպէս հրամայել է մեր Տէր Աստուածը»:

5 Եզրասը ելաւ, երդուել տուեց ցեղերի տոհմապետներին, քահանաներին, ղեւտացիներին եւ ամբողջ Իսրայէլին, որ նրանք վարուեն ըստ իրենց երդման: 6 Դրանից յետոյ Եզրասը վեր կացաւ Աստծու տան առջեւից, գնաց գանձապետ Ելիսուբի որդի Յոհանի սենեակը, բայց ո՛չ հաց կերաւ եւ ո՛չ էլ ջուր խմեց, այլ ողբում էր բազմութեան անօրէնութեան եւ նրա մեծ մեղքերի համար:

7 Այդ ժամանակ էլ մունետիկները յայտարարում էին Հրէաստանում եւ Երուսաղէմում, թէ՝ 8 «Ամէն մարդ, իշխաններից լինի թէ աւագներից, եթէ մինչեւ երեք օր չգայ Երուսաղէմ, նա եւ իր ամբողջ ունեցուածքը կ՝ենթարկուի նզովքի, եւ ինքն էլ կը վտարուի Իսրայէլի ժողովրդից»:

9 Եւ Յուդայի ու Բենիամինի երկրի ամբողջ ժողովուրդը երեք օրում հաւաքուեց Երուսաղէմում: Դա իններորդ ամիսն էր, ամսի քսաներորդ օրը: Ամբողջ ժողովուրդը նստել էր Տիրոջ տան առաջ, հրապարակում եւ, վախեցած, դողում էր թէ՛ Եզրասի խօսքերից եւ թէ՛ ձմրան ցրտից: 10 Եզրասը վեր կացաւ եւ ասաց նրանց. «Դուք էք, ահա, որ

մեղքեր էք գործել, կանայք էք առել այլազգիների աղջիկներից եւ Իսրայէլի վրայ աւելացրել մեղքեր ու անօրէնութիւններ: 11 Հիմա դուք օրհնութի՛ւն տուէք մեր հայրերի Տէր Աստծուն եւ նրա համար արէ՛ք հաճելին. զատուեցէ՛ք ու բաժանուեցէ՛ք երկրի բոլոր հեթանոսներից եւ այլազգիներից առած ձեր կանանցից»:

12 Բոլոր ժողովականները պատասխան տուին եւ ասացին. «Մանր է այդ խօսքը, որ ասում ես մեր մասին. 13 չէ՞ որ մենք շատ ենք, ժամանակն էլ ձմեռ է, չենք կարող դրսում մնալ, այս գործն էլ մէկ-երկու օրուայ բան չէ, մենք էլ խիստ մեղքեր ունենք այդ գործում: 14 Բոլոր տեղերի եւ քաղաքների իշխանները թողէ՛ք մնան, իսկ նրանք, ովքեր այլազգի կանայք են առել, իրենց քաղաքների աւագների եւ տոհմապետների հետ որոշուած ժամանակին թող գան այստեղ՝ դատուելու եւ մեզնից քաւելու այս մեղքերը, որպէսզի Աստծու բարկութիւնը հեռացնեն մեզնից՝ մեր արած այս գործերի համար»:

16† Եւ այդպէս էլ արեցին գերութիւնից վերադարձածները: Եզրասն, ըստ տոհմերի, ընտրեց անուանի մարդիկ՝ իշխաններ եւ տոհմապետներ, եւ նրանք հաւաքուեցին տասներորդ ամսի ամսամտին՝ քննելու համար այս գործը: Տասներորդ ամսի ամսամտին աւարտեցին այն: 17 Նրանք մինչեւ առաջին ամսի ամսամուտը ճշտեցին ու ջոկեցին այն բոլոր տղամարդկանց, որոնք այլազգի կանայք ունէին:

18 Նրանք գտան, որ քահանաների որդիներից այլազգի կանայք ունէին Յոսեդեկի որդի Յեսուի որդիներից եւ եղբայրներից Մանասէն, Եղիազարը, Յարիբն ու Գադալիան: 19 Այնուհետեւ սրանք սկսեցին արձակել այլազգի կանանց, եւ իւրաքանչիւրը, անգիտութեամբ գործած իր մեղքերի թողութեան համար, զոհ մատուցեց մի խոյ: 20 Երամի որդիներից՝ Մասիասը, Եղիան, Սամայիան եւ Ելոզիասը. 22† Փասուրի որդիներից՝ Ելիանասը, Մասիէլը, Միսայէլը, Նաթանայէլը, Յոզաբաթը եւ Ելասան. 23 ղեւտացիների որդիներից՝ Յեւզաբաթը, Սամութը, Կոլիան, այսինքն՝ Կոլիտոսը, Ափեթիասը, Յուդասը եւ Եղիազարը. 24 սաղմոս երգողներից՝ Ելիսափը, դռնապաններից՝ Կոլէմը, Էտէլէսը եւ Ուրին. 25 իսրայէլացիներից՝ Փորոսի որդիներից՝ Ռամայիան, Յազիան, Մելքիան, Էակիմը, Եղիազարը, Ասաբիան, Նիբանիան. 26 Ելամի որդիներից՝ Մատթանիան, Զաքարիան, Յաւէլը, Աբդիան, Երիմոթը եւ Եղիան. 27 Զաթուի որդիներից՝ Ելիոնէն, Ելիսաբը, Մատթանիան, Յարմոթը, Զաբադը, Զազիան. 28 Բաբէի որդիներից՝ Յոհանան, Անանիան, Զաբուն եւ Թալին, 29 Բանիի որդիներից՝ Մոսոլամը, Մալաքը, Ադայիասը, Իասուբը, Սաալ Ռեմոթը. 30 Փաթ-Մովաբի որդիներից՝ Ադնէն, Քալէլը, Բանայիան, Մասեան, Մաթթան, Բեսեէլը, Մանասէն. 31 Երամի որդիներից՝ Ելիեզին, Եսիան, Մելքիան, Սամերասը, Սիմէոնը, 32 Բենիամինը, Մալուքը, Սամարիան. 33 Ասէմի որդիներից՝ Մատթանիան, Մատաթիան, Զաբաթը, Ելիփալէթը, Յերեմին, Մասսէն, Սամէին. 34 Բանիի որդիներից՝ Մովադիան, Ամրամը, Ուէլը, 35 Բանեան, Բադայիան, Քելիան, 36 Ուանիան, Մարիմոթը, Ելիասիբը, 37 Մաթանիան, Մաթթան. 38 Բանիի որդիներից եւ Սեմէիի որդիներից՝ 39 Սելեմիասը, Նաթանը, Ադալիասը, Մաքնան, Գայագուն, Սէսէն, Արուն, 40 Եզրիէլը, Սալամիասը, Սամարիասը, Սելումը, Ատարիասը, Յովսէփը. 41 Աբուբէի որդիներից՝ Իէուէլը, Մատաթիասը, Զաբաթը, 42 Զեբիննասը, Յադային, Յադէն, 43 Յովեդը, Բանայիան:

44 Սրանք էին այն բոլոր տղամարդիկ, որոնք այլազգի կանայք էին առել եւ նրանցից ունեցել տղաներ ու աղջիկներ:

†Հայերէնը չունի 15-րդ համարը:

†Հայերէնը չունի 21-րդ համարը:

ՆԷԵՄԻ

Ներածութիւն

Նէեմիի գիրքը Եզրասի գրքի շարունակութիւնն է կազմում: Սկզբնապէս սրանք մէկ գրքի մէջ էին առնուած: Գիրքը պարունակում է անհատական փաստաթղթեր, որոնք կարելի է նկատել որպէս հէնց իր՝ Նէեմիի յիշողութիւնները:

Աշխարհական Նէեմին, լինելով Եզրաս քահանայի ժամանակակիցը եւ բարձրաստիճան մի պաշտօնեայ պարսից արքայից արքայ Արտաշէսի արքունիքում, թոյլտուութիւն է ստանում իր տիրոջից՝ վերադառնալու Երուսաղէմ, որպէսզի զբաղուի իր հայրենիքի քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքի վերաշինութեան գործով: Հասնելով այնտեղ, չնայած որոշ հակառակորդների ընդդիմութեանը, նա պաշտպանութիւն է գտնում բազմաթիւ հայրենակիցների կողմից եւ նրանց հետ միասին վերակառուցում է Երուսաղէմի պարիսպները: Այնուհետեւ կրօնական հանդիսաւոր մի արարողութեան ժամանակ նա անցնում է Եզրասի կողմը: Այդ արարողութեան ընթացքում Եզրասը մի ընթերցանութիւն է կատարում Աստծու Օրէնքի մասին: Ղեւտացի քահանաները բացատրում են այն եւ հաւանաբար նաեւ թարգմանում նրանց համար, ովքեր չէին հասկանում եբրայերէն, եւ այսպիսով ժողովուրդը վերանորոգում է իր պարտաւորութիւնները Աստծու հանդէպ:

Նէեմին ձեռնամուխ է լինում կրօնական բնոյթի մի շարք բարեփոխութիւնների: Ցանձին նրա ընթերցողը տեսնում է գործարար, նախաձեռնող, համարձակ, մշտապէս աղօթքի զօրութեանն ապաւինող ազնիւ եւ քաջարի մի մարդու:

ՆԷԵՄԻԻ ԳԻՐՔԸ

ԱՔԱԼԻԱՅԻ ՈՐԴԻ ՆԷԵՄԻԻ ԽՕՍՔԵՐԸ

ՆԷԵՄԻԻ ԱՂՕԹՔԸ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔՆ ԱՍՏՄՈՒՏ

1 Արտաշէս արքայի քսաներորդ տարուայ Քասղեւ ամսին այնպէս եղաւ, որ ես Աբիրայի մայրաքաղաք Սուսայում էի: 2 Ինձ մօտ եկան իմ եղբայրներից մէկը եւ Ցուդայի երկրի մի քանի մարդիկ: Ես նրանց հարցրի Երուսաղէմի եւ կենդանի մնացածների մասին, որոնք փրկուել ու վերադարձել էին գերութիւնից: 3 Նրանք ասացին ինձ. «Գերութիւնից փրկուածներն այնտեղ՝ իրենց աշխարհում, մեծ նեղութեան ու նախատինքների մէջ են. իսկ Երուսաղէմի պարիսպները մնում են նոյն ձեւով քանդուած ու աւերուած, նրա դռներն էլ՝ հրկիզուած»:

4 Երբ ես լսեցի այս խօսքերը, նստեցի, լալիս էի, օրեր շարունակ սուգ արեցի ու ծոմ պահեցի, աղօթքի կանգնեցի երկնքի Տէր Աստծու առջեւ 5 ու ասացի. «Տէ՛ր Աստուած երկնքի եւ երկրի, որ զօրաւոր ես, մեծ եւ ահարկու, պահում ես նրանց ուխտերն ու ողորմութիւնները, ովքեր սիրում են քեզ եւ ենթարկւում քո օրէնքներին: 6 Թող քո ականջները լսեն, եւ քո աչքերը՝ տեսնեն: Այժմ լսի՛ր եւ տե՛ս քո ծառայի աղօթքները, որ այսօր ես մատուցում եմ քեզ քո ծառաների՝ իսրայէլացիների համար, մեզ համար, որ մենք, մեր գործած մեղքերի պատճառով մատնուեցինք նեղութեան. ես եւ իմ հօր տունը մեղք գործեցինք, 7 որովհետեւ անիրաւօրէն յանցանք գործեցինք եւ չպահեցինք քո օրէնքները, հրամաններն ու հրահանգները, որ քո ծառայ Մովսէսի միջոցով պատուիրեցիր մեզ: 8 Տէ՛ր, յիշի՛ր քո խօսքը, որ պատուիրեցիր քո ծառայ Մովսէսին եւ ասացիր. "Եթէ դուք չպահէք իմ օրէնքները, ես էլ ձեզ կը ցրեմ հեթանոսների մէջ, 9 իսկ եթէ դառնաք եւ պահէք իմ օրէնքներն ու կատարէք դրանք, եթէ դուք մինչեւ երկրի ծագերն էլ ցրուած լինէք, ես այնտեղի՛ց էլ ձեզ կը ժողովեմ եւ կը բերեմ այն տեղը, որ ընտրել եմ եւ որի մէջ ապրում է իմ անունը": 10 Եւ արդ, սրանք քո ծառաներն ու ժողովուրդն են, որոնց փրկեցիր քո մեծ զօրութեամբ եւ բարձր բազկով. 11 բաց մի՛ թող նրանց քո ձեռքից, այլ քո ականջները թող բաց լինեն քո ծառաների աղօթքների համար եւ անսան նրանց աղաչանքներին, ովքեր երկնչում են քո անունից: Եւ այսօր յաջողութի՛ւն տուր քո ծառայի խնդրանքներին, եւ թող ես գթութիւն գտնեմ այս մարդու առջեւ:

Այդ ժամանակ ես թագաւորի տակառապետն էի»:

ՆԷԵՄԻԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

2 Արտաշէս արքայի քսաներորդ տարուայ Նիսան ամսին այնպէս եղաւ, որ արքան ինձնից գինի խնդրեց: Ես գինին վերցրի եւ տուեցի թագաւորին. թագաւորը մենակ էր: 2 Երբ նա գինին խմեց, ասաց ինձ. «Ինչո՞ւ է քո դէմքը տխուր եւ տրտում. դրա պատճառը այլ բան չէ, եթէ ոչ քո սրտի չարութիւնը»: 3 Ես խիստ վախեցայ ու թագաւորին ասացի. «Արքա՛յ, դու յաւիտեան ապրած կենաս, ինչո՞ւ իմ դէմքը տխուր եւ տրտում չլինի, որովհետեւ իմ հօր տունն ու քաղաքն անապատ է դարձել, եւ նրա դռներն այրուել են կրակից»: 4 Թագաւորն ինձ ասաց. «Դրա համար ի՞նչ ես ուզում խնդրել ինձնից»: Ես աղօթքի կանգնեցի ու միտքս ուղղելով երկնքի Տէր Աստծուն՝ ասացի թագաւորին. 5 «Թո՛ղ քո թագաւորութեան վրայ բարութիւն լինի. եթէ քո ծառան քո առջեւ շնորհ գտաւ, եւ եթէ դու կամենում ես, ուղարկի՛ր ինձ Հրէաստան՝ իմ հայրերի յիշատակների քաղաքը, եւ ես, ըստ քո հրամանի խօսքի, կը վերաշինեմ այն»: 6 Թագաւորը, որի հարճը նստած էր նրա մօտ, ասաց ինձ. «Դու ե՞րբ տեղ կը հասնես եւ կամ ե՞րբ կը վերադառնաս»: Թագաւորը բարի գտնուեց եւ ինձ արձակեց: 7 Ես նրանից ժամկէտ խնդրեցի եւ ասացի թագաւորին. «Եթէ քո առջեւ շնորհ գտայ, տո՛ւր ինձ գետի կողմերի իշխաններին ուղղուած մի թուղթ, եւ թող ինձ տանեն՝ մինչեւ հասնեմ Հրէաստան: 8 Մի թուղթ էլ

տո՛ւր Ասափին, որ արքունի անտառի պահապանն է, որպէսզի ինձ չինափայտ տայ քաղաքի դռների, պարիսպների եւ տան պատրաստման համար, որի մէջ ես պէտք է մտնեմ»: Թագաւորն այդ թղթերը տուեց ինձ, որովհետեւ իմ Աստծու ձեռքն իմ նկատմամբ բարի էր: 9 Ես եկայ գետի կողմերի իշխանների մօտ ու նրանց տուեցի թագաւորի թղթերը: Թագաւորն ինձ հետ ուղարկել էր զօրաւոր առաջնորդներ ու ձիեր: 10 Երբ Սանբալատ իշխանն ու Ամոնի ծառայ Տուբիան լսեցին այս, նրանք իրենց վատ զգացին, որ Իսրայէլի բարօրութեան եւ կարիքների համար ես մարդիկ եմ փնտռել: 11 Եկայ Երուսաղէմ ու այնտեղ մնացի երեք օր: 12 Գիշերը ես վեր կացայ, ինձ հետ նաեւ՝ սակաւաթիւ մարդիկ: Ես մարդկանց չպատմեցի, թէ Աստուած ինչ դրեց իմ սրտում, որ անեմ Իսրայէլի համար: Ինձ հետ չկար ուրիշ գրաստ, բացի այն գրաստից, որի վրայ նստած էի: 13 Ես գուրս եկայ Հեղեղատի դռնով, անցայ Թզենու հողամասի եզրով եւ գնացի մինչեւ Աղբանոցի դուռը: Ես ճնշւում էի, որ Երուսաղէմի պարսպի մէջ կային ճեղքեր, որ նրանք մաքրել էին, եւ որ նրա դռներն այրուած էին կրակից: 14 Ես անցայ Աղբիւրի դռնով՝ թագաւորի Ջրաւազանի մօտով: Այնտեղ տեղ չկար, որ ես իմ գրաստին հեծած՝ կարողանայի անցնել: 15 Հեղեղատի մօտով, գիշերը ելայ դէպի վեր՝ պարսպի կողմը՝ ճնշուելով պարսպի ճեղքերից, հասայ Ջորի դռան մօտ, ապա վերադարձայ: 16 Պահապանները չիմացան, թէ ինչու էի գնացել կամ ինչ էի անում. ես ոչինչ չէի ասել նաեւ հրեաներին, քահանաներին, անուանի մարդկանց, զօրապետներին եւ ուրիշներին, որոնք այդ ժամանակ գլխաւորում էին գործերը: 17 Նրանց ասացի. «Տեսէ՛ք այն չարիքները, որոնց մէջ ենք այժմ, տեսէ՛ք, ինչպէ՛ս Երուսաղէմն անապատ է դարձել, եւ հրկիզուել են նրա դռները: Եկէ՛ք չինենք Երուսաղէմի պարիսպները, եւ այլեւս նախատինքի մէջ չլինենք»: 18 Ես նրանց պատմեցի, որ Տիրոջ ձեռքն իմ նկատմամբ բարի էր, ասացի նաեւ թագաւորի խօսքերը, որ նա ասել էր ինձ: Նրանց ասացի. «Այժմ եկէ՛ք ելնենք եւ վերաշինենք պարիսպը»: 19 Եւ նրանց ձեռքերը զօրացան այդ բարի գործերի համար: Լսելով այդ մասին՝ Սանաբալատը, Ամոնի ծառայ Տուբիան եւ Գեսամ Արաբացին ծաղրում էին մեզ. նրանք եկան մեզ մօտ ու մեզ ասացին. «Ի՞նչ են այդ բաները, որ դուք անում էք: Ի՞նչ է, դուք ուզում էք թագաւորի դէմ ապստամբե՞լ»: 20 Ես նրանց պատասխանեցի ու ասացի. «Երկնքի եւ երկրի Աստուածը յաջողութիւն տուեց մեզ, մենք նրա սուրբ ծառաներն ենք ու վերաշինում ենք այս քաղաքը, բայց ձեզ համար Երուսաղէմում չկայ բաժին, յիշատակ ու արդարութիւն»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

3 Ելիասիբ մեծ քահանան եւ նրա եղբայր քահանաները ելան եւ չինեցին Ջրմուղի աւազանների դուռը, մաքրեցին այն ու նորոգեցին նրա փեղկերը եւ պարիսպը կանգնեցրին մինչեւ Անամայէլի աշտարակը՝ 2 Երիքովի մարդկանց եւ Զաքուրի ու Ամարի որդիների օգնութեամբ: 3 Եթթիերան դուռը չինեցին Ասանի որդիները. նրանք յարդարելով պատրաստեցին այն իր փականքներով եւ նիգերով: Նրանց հետ ձեռք-ձեռքի աշխատում էին Ռամոթը եւ Օրիայի որդիները, Ակոսի որդիները, 4 սրանց կողքին՝ Մասիզեբէլի որդի Բարաքի որդի Մոսոլամը, սրա կողքին՝ Բաանի որդի Մադոկը, 5 սրա կողքին՝ Թեկումադորեմի բնակիչները, բայց սրանց անուանի մարդիկ իրենց պարանոցը նրանց ծառայութեան տակ չդրեցին:

6 Հին դուռը նորոգեցին Ցուդան՝ Փասեկի որդին, եւ Մեսոլամը՝ Բասոդիայի որդին. սրանք պատրաստեցին այն ու դրեցին նրա փեղկերը՝ իրենց փականքներով ու նիգերով†: 8 Նրանց կողքին, ըստ հերթականութեան, աշխատում էր Ռոսէկէիմի որդի Անանիան, որը երուսաղէմացիներին թողեց

†Գրաբար բնագրում բացակայում է 7-րդ համարը:

նորոգման աշխատանքը մինչեւ Հրա-
պարակների պարիսպը: 9 Նրանից
յետոյ աշխատում էր Երուսաղէմի
շրջանի իշխան Ռափիան, 10 Նրա
կողքին՝ Յերոմաքի որդի Յեդայիան,
իսկ իր տան կողմից, սրա կողքին՝
Սաբանէի որդի Ատտուսը: 11 Պարսպի
երկրորդ հատուածի վրայ աշխատում
էին Երամի որդի Ելքիասը եւ Փաադ-
մովաբի որդի Ասուբը՝ մինչեւ Թա-
նուրիմի աշտարակը: 12 Սրանց կողքին
աշխատում էր Ալոհեմի որդի Սալումը՝
Երուսաղէմի միւս կէսի իշխանը, ինքը
եւ իր դուստրերը: 13 Ձորի դռան
աշխատանքը յանձն առան Անուն եւ
Զանուի բնակիչները. նրանք շինեցին
եւ կանգնեցրին դուռը, դրեցին դռնա-
փակերն եւ նիգերը. նրանք վերա-
շինեցին նաեւ պարիսպը հազար կան-
գուն երկարութեամբ՝ մինչեւ Մոխրոցի
դուռը: 14 Իսկ Մոխրոցի դռան աշխա-
տանքը յանձն առաւ Բեթքարամի
շրջանի իշխան՝ Ռեքաբի որդի Մել-
քիան տեղացիների հետ, որոնք շինե-
ցին, կանգնեցրին դուռը եւ դրեցին
նրա փակերն ու նիգերը:

15 Զրաւազանի աղբիւրի պարսպի
նորոգման աշխատանքը յանձն առաւ
Թագաւորի իշխան Ադիոնը՝ մինչեւ
այնտեղ, ուր աստիճաններն իջնում են
Դաւթի քաղաքից: 16 Նրանից յետոյ
աշխատում էր Ազբուքի որդի Նէհեմասը՝
Բեթսուրի կողմի իշխանը՝ մինչեւ
Դաւթի գերեզմանի պարտէզը, մինչեւ
Զրաւազանի առաջացման տեղը, մին-
չեւ Բեթազաբարին:

17 Նրանից յետոյ աշխատում էին
ղեւտացիները՝ Բանէի որդի Ռայումը,
նրանց կողքին Կէիլի կողմերի իշխան
Ասաբիան. 18 սրանից յետոյ՝ նրա
եղբայրները եւ Կէիլի կողմի իշխան՝
Ադադի որդի Բենային: 19 Սրանից
յետոյ Մասփէի իշխան՝ Յեսուի որդի
Ազուրը աշխատում էր պարսպի երկ-
րորդ հատուածի վրայ, որ գնում եւ
միանում էր աշտարակի անկիւններին:
20 Նրանից յետոյ երկրորդ հատուածի
անկիւնից մինչեւ Բեթելիասուբի դու-
ռը, ուր նստում էր քահանայապետը,
պարսպի նորոգման աշխատանքը
յանձն առաւ Զաբուի որդի Բարուքը:
21 Նրանից յետոյ, երկրորդ հատուա-
ծում, աշխատում էր Ակոմի որդի Ու-
րիայի որդին՝ Մերամոթը, Բեթելիա-
սուբի դռնից մինչեւ պարսպի վերջը:

22 Նրանից յետոյ աշխատում էին
Աքերի քահանաները: Սրանցից յետոյ,
իրենց տների առջեւ, վերանորոգման
աշխատանքը յանձն առան Բենիա-
մինն ու Ասուբը, 23 եւ սրանցից յետոյ՝
Ազարիան՝ Անանիայի որդի Մասէայի
որդին, իր տան մօտ: 24 Սրանից յետոյ
Ենդադի որդի Բանին յանձն առաւ
նորոգել պարսպի երկրորդ հատուածը՝
Բեթազարից մինչեւ անկիւնը: 25 Իսկ
Ուզայի որդի Փալաքը յանձն առաւ
նորոգել շրջադարձի մասը՝ անկեան
դիմացը եւ աշտարակը, որ գտնւում էր
թագաւորի ապարանքից դուրս՝ գաւթի
բանտից վերեւ: Նրանից յետոյ աշ-
խատում էր Փորոնէի որդի Փաթաւան:
26 Նաթանայիմները, որ բնակւում էին
Օփալում, նորոգում էին պարիսպը
արեւելեան կողմի Զրի դռան պարտէ-
զից մինչեւ դրսի կողմի աշտարակը:
27 Սրանցից յետոյ աշխատանքը յանձն
էին առել թէկուացիները՝ մեծ աշտա-
րակի դիմացի երկրորդ հատուածից
մինչեւ Սոփէլի պարիսպը: 28 Ձիերի
դռան վերեւի հատուածից սկսած աշ-
խատում էին քահանաները՝ ամէն
մարդ իր տան դիմաց: 29 Նրանից յե-
տոյ աշխատանքը յանձն առաւ Եմերի
որդի Սադոկը՝ իր տան դիմաց, նրանից
յետոյ՝ Սեքենիայի որդի Սամէիան, որը
արեւելեան դռան պահապանն էր,
նրանից յետոյ՝ Սելեմիայի որդի Անա-
նիան եւ Սելեփի որդի Անոնը, որոնք
աշխատում էին երկրորդ հատուածում:
Անոնից յետոյ աշխատում էր Բարա-
քայի որդի Մեսոլամը՝ իր դանձատան
դիմաց: 30 Նրանից յետոյ պարսպի
նորոգման աշխատանքը մինչեւ Բե-
թանաթան յանձն առաւ Սարեփի որդի
Մելքիան: Իսկ քաղաքի միւս մեծա-
տունները նորոգում էին Մափկաթ
դռան դիմացից մինչեւ անկիւնային
ելքերը: 31 Զրաւազանի եւ անկիւնի
դռան միջեւ ընկած հատուածի նորո-
գումը յանձն առան Քելկիան եւ
քաղաքի մեծատունները:

ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԽԱՓԱՆԵԼ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

4 Երբ Սանաբալաթը լսեց, թէ շինում
են պարիսպը եւ կանգնեցնում նրա
աշտարակները, վատ զգաց իրեն,
զայրացաւ եւ սաստիկ ծաղրում էր
հրեաներին: 2 Նա ասում իր եղբայր-
ների առաջ. «Ա՞յս է ձեր զօրութիւնը,
ո՛վ սամարացիներ, այդ ինչպէ՞ս են
հրեաները շինում ու ամրացնում իրենց
քաղաքը»: 3 Նրանց տեսութեան եկած
Տուբիա Ամանացին ասում էր. «Ո՛չ, չեն
կարող շինել, զոհեր մատուցել կամ
ուտել զոհաբերուած ընծաներն իրենց
տեղում. միթէ այժմ աղուէսները չե՞ն
ելնի ու քանդի նրանց պարսպի քա-
րերը»: 4 Այն ժամանակ մենք ասա-
ցինք. «Լսի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր,
քանզի մենք արժանացանք արհամար-
հանքի ու թշնամանքի. նրանց նախա-
տինքները շո՛ւռ տուր իրենց գլխին,
մատնի՛ր նրանց իրենց գերեվարողների
թշնամանքին, 5 եւ թող չծածկուեն
նրանց անօրէնութիւնները»† :

7 Երբ Սանաբալաթն ու Տուբիան,
արաբացիներն ու ամոնացիները լսե-
ցին, թէ յաջողուեց Երուսաղէմի
պարսպի շինարարութիւնը, եւ թէ մենք
սկսեցինք ամէն տեղ գործը երեւացնել,
դա վատ թուաց նրանց, 8 եւ բոլորը
հաւաքուեցին՝ միասին գալու եւ պա-
տերազմելու Երուսաղէմի դէմ: 9 Մենք
աղօթքի կանգնեցինք մեր Տէր Աստծու
առջեւ եւ, թշնամիների պատճառով,
մեզ վրայ պահակներ նշանակեցինք
ցերեկն ու գիշերը: 10 Հրէաստանի
մարդիկ ասացին. «Այսպէս չենք կարո-
ղանայ պատերազմել եւ միաժամանակ
կառուցել. թող ոմանք զինուած կանգ-
նեն պատրաստ, իսկ ոմանք՝ կառու-
ցեն»: 11 Իսկ մեզ նեղողներն ասում
էին. «Չենք թողնի, որ նրանք իմա-
նան, ոչ էլ՝ տեսնեն, թէ ինչպէս ամէն
տեղից ելնելով կը մտնենք նրանց մէջ,
կը կոտորենք նրանց ու կը խափանենք
նրանց գործը»: 12 Երբ տարբեր տե-
ղերում բնակուող հրեաներն եկան եւ
մեզ ասացին, թէ ամէն տեղից յար-
ձակուելու են մեզ վրայ, 13 ես ցածր
տեղերում, պարսպի ետեւում, յարկերի
ներքոյ կանգնեցրի մարդկանց՝ իրենց
զէնքով, գեղարդով ու աղեղով հան-
դերձ: 14 Ես վեր կենալով՝ ասացի կազմ
ու պատրաստ կանգնած մարդկանց,
նրանց զօրապետներին եւ նրանց, որ
տարբեր տեղերի պահապաններն էին.
«Նրանցից մի՛ վախեցէք, յիշեցէ՛ք մեր
մեծազօր եւ ահարկու Աստծուն եւ
պատերազմեցէ՛ք ձեր եղբայրների,
կանանց ու որդիների, դուստրերի եւ
ձեր տների համար»:

15 Երբ մեր թշնամիները լսեցին, թէ
մենք իմացել եւ զինուել ու պատ-
րաստուել ենք, Աստուած ցրեց նրանց
մտադրութիւնը, եւ մենք բոլորս վերա-
դարձանք պարսպի նորոգման աշխա-
տանքին, եւ ամէն մարդ անցաւ իր
գործին: 16 Եւ այդ օրից սկսած մարդ-
կանց կէսը աշխատանք էր կատարում,
իսկ միւս կէսը զինուած էր թշնամու
դէմ. ամէն մարդ գեղարդը, վահանն ու
աղեղն իր ձեռքին՝ պատրաստ կանգ-
նած էր իր եղբօր թիկունքին, որը
շինում էր պարիսպը: 17 Լինում էր
ժամանակ, երբ, զէնքը մի ձեռքին,
օգնում էր իր եղբօրը, իսկ միւս ձեռքով
եղբօրը տալիս էր խիճը կամ շաղախը:
18 Ամէն շինարար իր մէջքին ունէր
սուսեր եւ իր ազդրի վրայ՝ միասայրի
սուր. եւ այդպէս շինում էին Երուսա-
ղէմի պարիսպը: Եղջերափող փչողը
կանգնած էր նրանց մօտ: 19 Ես ասացի
զինուած ու պատրաստ կանգնած
մարդկանց եւ նրանց իշխաններին.
«Այս գործը մեծ եւ ընդարձակ է, իսկ
մենք ցրուած ենք պարսպի երկա-
րութեամբ, 20 հեռու ենք իրարից՝ ամէն
մէկն իր եղբօրից: Արդ, տարբեր տեղե-
րում փողհարներ նշանակենք, եւ երբ
մէկը որեւէ տեղից լսի եղջերափողի
ձայնը, թող բոլորն այնտեղ հաւա-
քուեն, եւ մեր Աստուածը մեր թշնա-
միների դէմ կը պատերազմի մեզ
համար»:

21 Եւ այդպէս մարդկանց կէսն
աշխատում էր, իսկ միւս կէսը զէնքերը
պատրաստ բռնած՝ հսկում էր առա-
ւօտը բացուելուց մինչեւ աստղերի
երեւալը: 22 Ես ասացի ժողովրդին.
«Եկէ՛ք բնակուենք այս Երուսաղէմ

†Գրաբար բնագրում բացակայում է 6-րդ համարը:

քաղաքի մէջ եւ գիշերը պահակներ դնենք մեր շուրջը, իսկ ցերեկը աշխատենք»: 23 Ես կանգնեցի, եւ ինձ պահպանող մարդիկ կանգնեցին իմ շուրջը: Մեզանից որեւէ մէկը չէր հանում իր զգեստները եւ ոչ էլ ձեռքից ցած դնում իր զէնքը:

ՆԷԵՄԻՆ ՀՐԱՒԻՐՈՒՄ Է ՄԵՏ ԺՈՂՈՎ

5 Այն ժամանակ մեծ աղաղակ սկսուեց ժողովրդի մէջ, կանանց ու տղամարդկանց միջեւ՝ ամէն մարդ իր եղբօր դէմ: 2 Նրանք ասում էին. «Մեր որդիների եւ մեր դուստրերի կերակուրը վերջացաւ, գնանք, մի բան գնենք, որ ապրենք»: 3 Իսկ ոմանք ասում էին. «Մեր դաշտերն ու մեր այգիները գրաւի դնենք, ցորեն առնենք եւ ուտենք»: 4 Կային ոմանք, որ ասում էին. «Մեր ունեցուածքը ծախեցինք, ոսկի ու արծաթ առանք եւ տուեցինք թագաւորի հարկը: 5 Հիմա մեր մարմիններն այնպիսին են, ինչպիսին մեր եղբայրների մարմիններն են, եւ մեր որդիները՝ ինչպէս նրանց որդիներն են: Արդ, ինչո՞ւ մեր որդիներին տուեցինք ստրկութեան, մեր դուստրերը տարուած են բռնութեան, եւ մեր ձեռքին չկայ ճար, որով փրկենք նրանց»:

6 Երբ ես լսեցի աղաղակն ու նրանց խօսքերը, խիստ նեղսրտեցի. 7 ինքս ինձ խորհեցի, նախատեցի նրանց անուանի մարդկանց ու իշխաններին եւ ասացի նրանց. «Դո՞ւք էք ձեր եղբայրներից հարկ պահանջում»: Նրանց հրամայեցի մեծ ժողովի հաւաքուել 8 ու ասացի նրանց. «Մենք կը փրկենք մեր եղբայր հրեաներին, որոնք վաճառուեցին հեթանոսներին, բայց դա մենք չիմացանք. հիմա՞ էլ էք դուք վաճառում նրանց»: Նրանք լռեցին ու պատասխան տալ չկարողացան: Ես ասացի. 9 «Լաւ չէ այդ գործը, որ դուք անում էք, որովհետեւ Աստծուց չէք վախենում. այդ է պատճառը, որ մենք չազատուեցինք հեթանոսների ու մեր թշնամիների նախատինքից: 10 Ես ասում եմ իմ եղբայրներին ու ծանօթներին. "Թէ՛ ես եւ թէ՛ դուք փրկանքի համար կը տանք արծաթ ու բերք, որ ուզում են հարկահանները, 11 եւ կը վերադարձնենք դրանց դաշտերը, այգիները, ձիթենիներն ու տները. թող մեր արծաթով գնեն ու դրանց համար բերեն ցորեն, գինի եւ ձէթ"»: 12 Եւ իշխաններն ու այլ մեծամեծներն ասացին. «Կը վերադարձնենք եւ դրանցից ոչինչ չենք պահանջի, կ'անենք այդպէս, ինչպէս հրամայում ես»: Ես կանչեցի քահանաներին ու նրանց երդուեցրի, որ անեն այս բանը. 13 ես իմ վերարկուն ուժգին թափ տուեցի ու ասացի. «Թո՛ղ Աստուած այսպէս թափ տայ ամէն մարդու, որ չի պահի այս խօսքը. թո՛ղ այսպէս նա իր տնից ու իր կալուածքներից դատարկուած եւ իր կեանքից թօթափուած լինի»: Եւ հաւաքուած ամբողջ ժողովուրդն ասաց՝ Ամէն: Նրանք օրհնեցին Տիրոջը, եւ ամբողջ ժողովուրդը կատարեց այս ասուած խօսքերը:

14 Այն օրից սկսած, երբ ես պատուիրեցի, որ Ցուդայի իշխանները չիշխեն նրանց, – դա Արտաշէս արքայի քսաներորդ տարուց մինչեւ երեսուներկուերորդ տարին էր, – տասներկու տարի ես եւ իմ եղբայրները եղանք իշխաններ. մենք որեւէ մէկի ունեցուածքը բռնի չկերանք եւ չխմեցինք: 15 Իսկ նախկինում բռնութիւն գործադրած իշխանների հարկը ծանրացրի եւ նրանցից առայ հաց, գինի եւ այլ բաներ, ինչպէս նաեւ՝ քառասուն դիդրաքմա արծաթ[†], որը վերադարձրի իրենց տէրերին, նրանց հեռացրի ժողովրդի իշխանութիւնից ու Աստծու երկիւղի պատճառով ես չեղայ նրանց նման: 16 Իսկ պարսպի գործը յաջող էր ընթանում, եւ ես որեւէ մէկի վրայ չբռնացայ՝ դաշտեր կամ այգիներ առնելով. բոլորն էլ անխափան աշխատում էին պարսպի շինութեան վրայ: 17 Հրեաներից հարիւր մարդու եւ մեր շրջակայքում գտնուող այլազգիներից նրանց համար, ովքեր մեզ մօտ էին գալիս, ես ծախսեր էի անում ու նրանց մասնակից դարձնում իմ ճաշին: 18 Օրական մի արջառ, վեց ընտիր ոչխար ու մի ուլ. այս էր իմ մէկ օրուայ ծախսը. տասն օրը մէկ անգամ բոլորին

[†]Երկդրամեան արծաթ, դահեկան:

անխնայ գինի էի տալիս ըմպելու. ես ոչ ոքից բռնի հաց չառայ, քանզի գիտէի, որ ժողովրդի գործը ծանր է: 19 Թող Աստուած ինձ բարի յիշի այն ամենի համար, ինչ ես արեցի իմ ամբողջ ժողովրդին:

ՊԱՐՍՊԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԸ

6 Երբ Սանաբալատն ու Տուբիան եւ արաբացիների երկիրն ու մեր թշնամիներից ուրիշ շատերը լսեցին, թէ չինեցի պարիսպը, եւ նրա մէջ քանդուած տեղ չմնաց, թէեւ այն ժամանակ դռները դեռեւս պատրաստուած չէին, 2 Սանաբալատն ու Գեսամը մարդ ուղարկեցին ինձ մօտ եւ ասացին. «Ե՛կ եւ միասին հաւաքուենք Օնոյի դաշտավայրի մի գիւղում»: 3 Նրանք ուզում էին չարիք նիւթել իմ դէմ: Ես նրանց մօտ պատգամաւորներ ուղարկեցի ու ասացի. «Այս գործը, որ ես անում եմ, մեծ գործ է, եւ չեմ հասցնում իջնելու ձեզ մօտ, որպէսզի գործս չընդհատուի. ձեզ մօտ կ'իջնեմ, երբ աւարտեմ»: 4 Նրանք բազում անգամ մարդ ուղարկեցին ինձ մօտ, իսկ ես նրանց տուեցի նոյն պատասխանը:

5 Սանաբալատն ինձ մօտ ուղարկեց իր ծառաներից մի պատանու, որն իր ձեռքին բռնել էր մի բաց նամակ, 6 որի մէջ գրուած էր այսպէս. «Բոլոր ժողովուրդների մէջ լուր է տարածուել, որ դու եւ բոլոր հրեաները ուզում էք ապստամբել թագաւորի դէմ. եւ դու դրա համար ես շինում այդ պարիսպն ու ամրացնում նրա աշտարակները, որովհետեւ ուզում ես թագաւոր դառնալ. 7 այդ պատճառով դու քեզ համար մարգարէներ կարգեցիր, որովհետեւ ուզում ես Երուսաղէմում թագադրուել եւ թագաւորել Հրէաստանի վրայ: Արդ, գուցէ այս խօսքերը պատմեն թագաւորին. արի՛ եւ երկուսս էլ մտածենք սրա մասին»: 8 Ես մարդ ուղարկեցի նրա մօտ ու ասացի. «Այդ խօսքերը, որ դու ասում ես, ոչ թէ ուրիշ տեղից են, այլ՝ քեզանից, քո սրտից ես ասում այդ»: 9 Արդարեւ, բոլորը զարհուրեցնում էին մեզ ու ասում. «Նրանց ձեռքերը կը թուլանան, եւ իրենց գործը չեն կատարի: Արդ, ես զօրացրի իմ ձեռքերը, եւ գործը գլխովին պիտի աւարտեմ»: 10 Ես մտայ Մետաբելի որդի Գալայիայի որդու՝ Սեմէի տունը: Նա փակուել էր իր տանը եւ ինձ ասաց. «Հաւաքուենք Տիրոջ Տանը, ամրանանք նրա մէջ, փակենք նրա դռները, գուցէ թշնամիները գիշերը գալով սպանեն մեզ»: 11 Ես ասացի. «Ո՞վ է այն մարդը, որից ես փախչեմ, եւ կամ կա՞յ ինձ նման մի մարդ, որ Տիրոջ Տուն մտնի եւ կարողանայ ապրել»: 12 Ես հասկացայ, որ նա Աստծու ուղարկածը չէ, եւ մարգարէի խօսքը իմ մասին չէր: 13 Տուբիան եւ Սանաբալատը վարձկաններ ու բազում այլ մարդիկ հանեցին իմ դէմ, որպէսզի վախենամ եւ մտնեմ Տիրոջ Տուն, մեղք գործեմ, եւ իմ անունն արատաւորեն: 14 Թող Աստուած ըստ իրենց նենգութեան յիշի Տուբիային ու Սանաբալատին, որոնք չար բան մտածեցին իմ մասին եւ ստիպում էին սուտ մարգարէանալ, որպէսզի զարհուրեցնեն ու վախեցնեն ինձ:

15 Պարիսպն աւարտուեց Իլուլ ամսի քսանհինգին՝ յիսուներկու օրուայ ընթացքում: 16 Երբ մեր բոլոր թշնամիները եւ մեր շուրջը եղած բոլոր ժողովուրդները լսեցին այդ, զարհուրեցին, եւ նրանց վրայ ահ ու մեծ երկիւղ ընկաւ. նրանք իմացան, որ մեր գործի կատարումն Աստծուց էր:

17 Այն օրերին հրեաների կողմից մեծ պատուով նամակ է ուղարկւում Տուբիային. Տուբիան գալիս է նրանց մօտ, 18 քանզի նրանք իրար հետ ընտանեկան մեծ կապեր ունէին: Տուբիան Երայի որդի Սեքենիայի փեսան էր, իսկ նրա որդի Յովնաթանը կին առաւ Բարաքիայի որդի Մեսոլոմի դստերը: 19 Նրա խօսքերն ինձ էին բերում, իսկ իմ խօսքերը յայտնում էին նրան: Տուբիան ինձ վախեցնելու համար բազմաթիւ նամակներ էր տուել:

ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՒԱՄԱՐԸ

7 Երբ պարսպի շինութիւնն աւարտուեց, եւ ես դրեցի նրա դռները, նշանակուեցին դռնապաններ, սաղմո-

սասացներ եւ ղեւտացիներ: 2 Ես պատուիրեցի իմ եղբայրներին ու Երուսաղէմի իշխան Անանիային (նա հաւատարիմ մարդ էր եւ աւելի երկիւղած Աստծուց, քան շատերը) 3 եւ ասացի նրանց. «Դռները շուտ չբացէք մինչեւ արեւի ծագելը, եւ քանի դեռ բոլորն արթուն կը լինեն, թող դռները ծածկուած մնան, փակ գցելով ամրացուեն դրանք, դռների վրայ պահպաններ կանգնեն, հսկեն Երուսաղէմի բնակիչներին՝ ամէն մարդ իր ժամին եւ ամէն մարդ իր տանը, 4 որովհետեւ այս քաղաքը մեծ է եւ ընդարձակ, իսկ ժողովուրդը՝ քիչ, եւ բոլոր ապարանքները դեռեւս չինուած չեն»:

5 Աստուած շնորհ գցեց իմ սիրտը, ես հաւաքեցի անուանի մարդկանց, իշխաններին ու ժողովրդին, գտայ ազգահամարի գիրքն այն մարդկանց, ովքեր աւելի առաջ էին վերադարձել գերութիւնից: Նրա մէջ գրուած էր այսպէս. 6 «Սրանք են անուններն այն իսրայէլացիների, որոնք ելան գերութիւնից, որոնց պանդխտեցրել էր Բաբելոնի թագաւոր Նաբուքոդոնոսորը, եւ որոնք վերադարձան Երուսաղէմ եւ Հրէաստան՝ ամէն մարդ իր քաղաքը: 7 Նրանք եկան Զորոբաբէլի, Յեսուի, Ազարիայի որդի Նէեմիի, Դայելմիայի, Նայեմանի, Մարտէքուի, Բելմանի, Մատատփարաթի, Եզրի, Բագուիէի, Նաւումի, Բարանայի եւ Մոփրայի հետ:

Սրանք են Իսրայէլի ժողովրդի այրերը.

8 Փարոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու մարդ. 9 Սափատիայի որդիները՝ երեք հարիւր եօթանասուներկու. 10 Արէսի որդիները՝ վեց հարիւր յիսունվեց. 11 Փաաթմովաբի որդիները՝ Յեսուի եւ Յովաբի որդիներից՝ երկու հազար երկու հարիւր տասնութ. 12 Ելամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս. 13 Զաթուի որդիները՝ ութ հարիւր քառասունհինգ. 14 Զաքուի որդիները՝ եօթը հարիւր վաթսուն, 15 Բանուի որդիները՝ վեց հարիւր քառասունութ. 16 Բիբէի որդիները՝ վեց հարիւր քառասունութ[†]. 17 Ազգիայի որդիները՝ երկու հազար երեք հարիւր քսաներկու. 18 Ադոնիկամի որդիները՝ վեց հարիւր յիսունեօթը. 19 Բալուէի որդիները՝ երկու հազար վաթսունեօթը. 20 Ադինի որդիները՝ վեց հարիւր յիսունչորս. 21 Ատտերեզիայի որդիները՝ իննսունութ[†]. 23 Բէսասի որդիները՝ երեք հարիւր քսանչորս. 24 Արիբի որդիները՝ հարիւր տասներկու. 25 Բեթլահէմի որդիները՝ հարիւր քսաներեք. 26 Նետոփի որդիները՝ յիսունվեց. 27 Անաթոթի որդիները՝ հարիւր քսանութ. 28 Բեթազմայի որդիները՝ քառասուներկու. 29 Կարիաթարիմ Քաբիրի եւ Բերոթի որդիները՝ ութ հարիւր քառասուներեք. 30 Արամի եւ Գաբի որդիները՝ վեց հարիւր քսանմէկ. 31 Մաքեմարի որդիները՝ հարիւր քսաներկու. 32 Բեթէլի եւ Արիի որդիները՝ հարիւր քսաներեք. 33 Նաբիի ոդիները՝ հարիւր յիսուներկու. Մակեբոսի որդիները՝ հարիւր յիսունվեց. 34 Ելամի որդիները՝ հազար յիսունչորս. 35 Երամի որդիները՝ երեք հարիւր քսան. 36 Երեքովի որդիները՝ երեք հարիւր քառասունհինգ. 37 Լոդադիի եւ Անոնի որդիները՝ եօթը հարիւր քսաներեք. 38 Անանի որդիները՝ երեք հազար հարիւր երեսուն:

39 Յեսուի տան քահանաներից. Յովիդիայի որդիները՝ ինը հարիւր եօթանասուներեք. 40 Եմերի որդիները՝ հազար յիսուներկու. 41 Փասէուրի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունեօթը. 42 Երամի որդիները՝ հազար տասնեօթը:

43 Ղեւտացիներից. Յեսուի որդիներից՝ Կադմիէլը, 44 Ուդայիդի որդիներից՝ եօթանասունչորս:

45 Սաղմոսասաց երգիչներից. Ասափի որդիները՝ հարիւր քառասունութ:

46 Դռնապաններից. Ելումի որդիները, Ատտերի որդիները, Տեմիոնի որդիները, Ակուբի որդիները, Ատիտի որդիները, Սաբէի որդիները՝ հարիւր երեսունութ:

47 Նաթանիմացիներից. Սիւի որդիները, Ասիփի որդիները, Տաբոթի որդիները, 48 Սարիասի որդիները, Սիայի

[†]Եբրայերէնում՝ *վեց հարիւր տասնութ:*

[†]Գրաբար բնագրում բացակայում է 22-րդ համարը:

որդիները, Փասոնի որդիները, Լաբանի որդիները, Ագաբի որդիները, Ակուդի որդիները, Ուտայի որդիները, Կետարի որդիները, Ագաբի որդիները, Սելեմի որդիները, 49 Անանի որդիները, Գադէլի որդիները, Գայարի որդիները, 50 Ռէի որդիները, Ռասոնի որդիները, Նեկոդի որդիները. 51 Գէելամի որդիները, Օզի որդիները, Փեսէի որդիները. 52 Բեսէի որդիները, Մէինոսի որդիները, Նեփովայիսի որդիները, Բաքոկի որդիները, Աքիբի որդիները, Արուրի որդիները, 53 Բասալոթի որդիները, Մէիդի որդիները, Ադասանի որդիները. 54 Բարկուէի որդիները, Սիսարայի որդիները, Թեմայի որդիները. 55 Նեսէի որդիները, Սարիփայի որդիները:

56 Սողոմոնի ծառաների որդիներից՝ 57 Սուտի որդիները, Սափարաթի որդիները, Փարեդի որդիները, 58 Յէալէի որդիները, Դորկոնի որդիները, Գադէլի որդիները. 59 Սափատիայի որդիները, Ետէմի որդիները, Փաքարաթի որդիները, Սաբայիմի որդիները, Հեմիմի որդիները:

60 Բոլոր նաթանայիմներն ու Սողոմոնի ծառաների որդիները՝ երեք հարիւր իննսուներկու մարդ:

61 Իսկ Թելան, Օրսան, Քերուբը, Երոնը, Եմերը, որոնք դուրս էին եկել Թեմելիքից, չկարողացան ցոյց տալ իրենց հայրերի տոհմը եւ ոչ էլ իրենց ցեղը, թէ իրենք Իսրայէլից են:

62 Դալայի որդիները, Բուայի որդիները, Տուբիայի որդիները, Նեկոդի որդիները՝ վեց հարիւր քառասուներկու մարդ: 63 Քահանաներից. Եբէրի որդիները, Ակոմի որդիները, Ելիսէի որդիները: Նա կին էր առել Բերզելիա Գաղաադացու աղջիկներից եւ կոչուեց ըստ նրա անուան: 64 Սրանք փնտռեցին իրենց ազգահամարը մատեաններում, բայց չգտնուեց, եւ հեռացուեցին քահանայութիւնից: 65 Աթարսաթան ասաց նրանց. «Թող չուտեն սրբութիւն սրբոցից, մինչեւ որ նայտնուի մի քահանայապետ՝ պարզաբանելու այս գործը»:

66 Հաւաքուած ամբողջ ժողովրդի թիւը քառասուն երկու հազար երեք հարիւր վաթսուն մարդ էր, 67 բացի իրենց ծառաներից ու աղախիններից, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունեօթը մարդ էին, իսկ երգիչներն ու սաղմոսասացները՝ տղամարդիկ ու կանայք, երկու հարիւր քառասունհինգ մարդ: 68 Ձիերը՝ եօթը հարիւր երեսունվեց, ջորիները՝ երկու հարիւր քառասունհինգ, 69 ուղտերը՝ չորս հարիւր երեսունհինգ, էշերը՝ վեց հազար քսանեօթը: 70 Իշխանները, ըստ իրենց նախնիների անուան, գործի համար նուէրներ տուեցին. Աթարսաթան գանձատանը տուեց յիսուն ոսկի սկաւառակ եւ քահանայական երեսուն պատմուճան: 71 Տոհմերի իշխանները գործի համար տուեցին քսան հազար ոսկի եւ տասներկու հազար երկու հարիւր մնաս արծաթ: 72 Մնացած ժողովուրդը տուեց քսան հազար դահեկան, երկու հազար մնասի արծաթէ սպասք եւ քահանայական վաթսունեօթը պատմուճան: 73 Եւ այսպէս քահանաներն ու դռնապանները, սաղմոսասաց երգիչները, ժողովուրդը, նաթանիմացիները եւ ամբողջ Իսրայէլը հաստատուեցին իրենց քաղաքներում:

Արդէն եօթներորդ ամիսն էր, որ իսրայէլացիներն իրենց քաղաքներում էին:

ԵԶՐԱՍԸ ԿԱՐԴՈՒՄ Է ՕՐԷՆՔԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋ

8 Ամբողջ ժողովուրդը մի մարդու նման հաւաքուեց հրապարակում՝ Ջրերի դռան դիմաց: Տիրոջ օրէնքների մեկնիչ Եզրասին ասացին, որ բերի Մովսէսի օրէնքների գիրքը, որ նրան հրահանգել էր Իսրայէլի Տէր Աստուածը: 2 Եզրաս քահանան օրէնքների գիրքը բերեց ժողովի առջեւ. դա եօթներորդ ամսի ամսամտի օրն էր, երբ հաւաքուել էին տղամարդիկ ու կանայք եւ բոլոր նրանք, ովքեր ուզում էին լսել: 3 Նա տղամարդկանց ու կանանց առջեւ սկսեց կարդալ օրէնքը՝ առաւօտից, երբ ծագում էր արեգակը, մինչեւ կէսօր. բոլորը հասկանում էին, եւ ամբողջ ժողովուրդն ականջ էր դնում՝ լսելու գրուած բոլոր օրէնքները:

4 Եզրաս քահանան՝ մեկնիչը, կանգնած էր փայտաշէն բեմի վրայ. նրա

մօտ, նրա աջ կողմից կանգնած էին Մատաթիասը, Սամէասը, Անանիասը, Ուրիասը, Քելկիան եւ Մասիան, իսկ նրա ձախից՝ Փագիասը, Միսայէլը, Մելքիասը, Ասամը, Սարդանան, Զաքարիան եւ Մոսոլամը: 5 Երբ Եզրաս քահանան ամբողջ ժողովրդի առջեւ բացեց գիրքը (նա ամբողջ ժողովրդի վերակացուն էր), գիրքը բանալու ժամանակ ժողովուրդը ոտքի կանգնեց նրա առջեւ: 6 Եզրասն օրհնեց մեծազօր Տէր Աստծուն, իսկ ամբողջ ժողովուրդն ասաց՝ Ամէն: Նրանք բարձրացրին իրենց ձեռքերը, իսկ երեսները մինչեւ գետին խոնարհելով՝ երկրպագեցին Տէր Աստծուն: 7 Յեսուսը, Բանեասն ու Սարարիասը օրէնքները բացատրում էին ժողովրդին, եւ ժողովուրդը կանգնած էր ըստ մարդկանց կարգի†: 9 Նէեմին, որ նոյն Աթերսասթան է, Եզրաս քահանան՝ մեկնիչը, եւ ղեւտացիները, որ բացատրում էին բազմութեանը, 10 ասացին ամբողջ ժողովրդին. «Այս օրը մեր Տէր Աստծու սուրբ օրն է, մի՛ սգացէք եւ մի՛ լացէք»: Արդարեւ, երբ ժողովուրդը լսում էր օրէնքների խօսքերը, լաց էր լինում: Նրանց ասացին. «Գնացէ՛ք իւղալի ճաշեր կերէ՛ք, քաղցր խմիչքներ խմեցէ՛ք, եւ մի բաժին էլ ուղարկեցէ՛ք նրանց, ովքեր չունեն, որովհետեւ սա մեր Տէր Աստծու սուրբ օրն է: Արդ, զօրացէ՛ք եւ տխուր մի՛ դարձէք այս օրը:

11 Իսկ ղեւտացիները լռեցնում էին ժողովրդին ու ասում. «Լո՛ւռ եղէք եւ մի՛ տրտմէ՛ք, որովհետեւ սա սուրբ օր է»: 12 Ժողովուրդը գնաց ուտելու եւ ըմպելու, եւ մի բաժին էլ ուղարկեցին նրանց, ովքեր չունէին: Նրանք մեծապէս ուրախ էին, որովհետեւ հասկացան օրէնքների խօսքերը՝ որ Եզրասը կարդաց նրանց համար:

13 Երկրորդ օրը օրէնքների մեկնիչ Եզրասի մօտ հաւաքուեցին ամբողջ ժողովրդի իշխանները, տոհմապետները, քահանաներն ու ղեւտացիները, որպէսզի նրանից իմանան եւ սովորեն օրէնքների բոլոր խօսքերը: 14 Եւ օրէնքների մէջ գտան, որ գրուած էր, թէ Տէր Աստուած հրամայել էր Մովսէսին, որ իսրայէլացիներին արժան է եօթներորդ ամսի տօնին բնակուել տաղաւարների մէջ 15 եւ այդ մասին փողեր փչելով ազդարարել իրենց բոլոր քաղաքներում ու Երուսաղէմում: Այդ ժամանակ Եզրասն ասաց. «Ելէ՛ք լեռը եւ բերէ՛ք ձիթենիների, սօսի ծառերի, մրտենիների, խնկենիների, արմաւենիների եւ այլ ծառերի տերեւախիտ ճիւղեր եւ, ըստ գրուածի, ձեզ համար տաղաւարներ շինեցէ՛ք»: 16 Ժողովրդի մարդիկ ելան, ճիւղեր բերին եւ իրենց համար տաղաւարներ շինեցին, մէկը՝ իր տան տանիքին, մէկը՝ իր տան բակում, ոմանք էլ՝ Աստծու Տան գաւթում ու քաղաքի հրապարակներում, մինչեւ Եփրեմի դարպասները: 17 Գերութիւնից վերադարձած ամբողջ ժողովուրդը տաղաւարներ շինեց ու նստեց տաղաւարների մէջ, որովհետեւ Նաւէի որդի Յեսուի օրերից մինչեւ այն օրը իսրայէլացիները երբեւէ այդպիսի մեծ ուրախութիւն չէին արել: 18 Եւ Եզրասն օր-օրի, առաջին օրից մինչեւ եօթներորդ օրը, կարդում էր օրէնքների գիրքը: Նրանք եօթն օր տօն կատարեցին եւ ութերորդ օրը, ըստ օրէնքի, աւարտեցին այն:

†Գրաբար բնագրում բացակայում է 8-րդ համարը:

ՄԵՂՔԵՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

9 Նոյն ամսի քսանչորսին իսրայէլացիները հաւաքուեցին ու սկսեցին ծոմ պահել, քուրձ հագան ու մոխիր լցրին իրենց գլուխներին: 2 Իսրայէլացիները զատուեցին բոլոր այլազգիներից ու քաւեցին իրենց եւ իրենց հայրերի մեղքերը: 3 Նրանք կանգնած էին իրենց տեղերում՝ ըստ սահմանուած կարգի: Եզրասը կարդում էր Տէր Աստծու Օրէնքի գիրքը, եւ ամբողջ ժողովուրդը երկրպագում էր իր Տէր Աստծուն: 4 Նրանք կանգնած էին բարձրադիր մի տեղում: Եզրասը, ղեւտացիները,Յոսեդեկի որդի Յեսուն, Կադմիէլի որդիները, Սարեբիայի որդի Սաքանիան եւ Անանիայի որդիները բարձրաձայն գոչեցին իրենց Տէր Աստծուն: 5 Ղեւտացի Յեսուն եւ Կադմիէլն ասացին. «Եղբայրնե՛ր, օրհնեցէ՛ք մեր Տէր Աստծուն յաւիտեանս

յաւիտենից. Թո՛ղ օրհնեալ լինի Տիրոջ փառքը, Թո՛ղ բարձրանայ նրա օրհնութիւնն ու գոհութիւնը»: Եզրասն սկսեց օրհնաբանել Տէր Աստծուն եւ ասաց. 6 «Դու ես միակ նոյն Տէր Աստուածը, դու ես, որ ստեղծեցիր երկինքը, երկինքների երկինքները եւ նրա բոլոր զօրութիւնները, երկիրը եւ այն ամէնը, ինչ նրա վրայ է, ծովը եւ այն ամէնը, ինչ նրա մէջ է: Դու ես, որ կենդանութիւն տուեցիր բոլորին, եւ քեզ են երկրպագում երկնքի զօրքերը, քեզ են փառաբանում երկինքների երկինքները, 7 որովհետեւ դու ես մեր միակ Տէր Աստուածը: Դու ընտրեցիր Աբրամին, նրան հանեցիր քաղդէացիների երկրից ու նրա անունը դրիր Աբրահամ. 8 նրա սիրտը գտար հաւատարիմ քո առջեւ եւ նրա հետ ուխտ դրեցիր՝ յաւիտենապէս տալու նրան եւ նրա զաւակին քանանացիների, ամորհացիների, փերեզացիների, յեբուսացիների եւ գերգեսացիների երկիրը: Դու հաստատեցիր քո խօսքը, որովհետեւ արդար ես: 9 Դու տեսար մեր հայրերի նեղութիւնները Եգիպտոսում, լսեցիր նրանց աղաղակը Կարմիր ծովի վրայ, 10 նրանց համար հրաշքներ գործեցիր Եգիպտոսում՝ Փարաւոնի, նրա բոլոր ծառաների ու նրա երկրի ամբողջ ժողովրդի վրայ, քանզի իմացար, որ նա յոխորտաց քո ժողովրդի վրայ, եւ դու քեզ համար մեծ անուն ստեղծեցիր մինչեւ այսօր: 11 Դու Կարմիր ծովը ճեղքեցիր նրանց առջեւ, եւ նրանք անցան ծովի միջով, ինչպէս ցամաքով. նրանց հալածիչներին քարերի նման ընկղմեցիր խոր ջրերի մէջ. 12 ցերեկը նրանց առաջնորդեցիր ամպի սիւնով, իսկ գիշերը՝ կրակի սիւնով, որպէսզի լուսաւորես նրանց ճանապարհը, որով գնում էին: 13 Դու իջար Սինայի լեռան վրայ ու երկնքից խօսեցիր նրանց հետ, նրանց տուեցիր արդար դատաստաններ ու ճշմարիտ օրէնքներ, հրամաններ եւ բարի պատուիրաններ, 14 քո սուրբ շաբաթները ծանուցեցիր նրանց եւ քո ծառայ Մովսէսի միջոցով նրանց տուեցիր պատուիրաններ, հրամաններ եւ օրէնքներ: 15 Դու երկնքի հացը տուեցիր նրանց՝ կերակրուելու համար, ժայռից ջուր բխեցրիր ու խմեցրիր նրանց, ճանապարհ բացեցիր նրանց համար՝ մտնելու եւ ժառանգելու այն երկիրը, դէպի ուր բարձրացրիր քո ձեռքը, որպէսզի այն տաս նրանց:

16 Բայց իրենք իսկ՝ մեր հայրերը, գոռոզացան ու անօրինացան, խստացրին իրենց պարանոցները, չլսեցին քո պատուիրանները, 17 իրենց աչքերը շեղեցին քո օրէնքներից, չյիշեցին քո հրաշքները, որ դու արեցիր նրանց համար, այլ խստացրին իրենց պարանոցները, իրենց թիկունքները դարձրին դէպի քեզ եւ ուզեցին նորից ստրկութեան վերադառնալ Եգիպտոս: Բայց դու, Տէ՛ր Աստուած մեր, որ գթած ես եւ ողորմած, համբերատար եւ բազումողորմ, իսպառ չլքեցիր նրանց: 18 Նրանք դարձեալ իրենց համար ձուլածոյ հորթ պատրաստեցին ու ասացին. "Սրա՛նք են այն աստուածները, որ մեզ հանեցին Եգիպտացիների երկրից": Նրանք մեծամեծ վիրաւորանքներ հասցրին քեզ, 19 բայց դու, ըստ քո բազում գթութեան ու ողորմութեան, նրանց չթողեցիր անապատում ու չցրեցիր, նրանցից չհեռացրիր ամպի սիւնը, որ նրանց առաջնորդում էր ցերեկը, նաեւ՝ կրակի սիւնը, որ գիշերը լուսաւորում էր նրանց ճանապարհը, որով գնում էին: 20 Դու քո բարերար Սուրբ Հոգին տուեցիր նրանց՝ իմանալու օրէնքները, մանանան չհեռացրիր նրանց բերանից, ժայռից ջուր տուեցիր նրանց՝ ծարաւը յագեցնելու, 21 քառասուն տարի նրանց թափառել տուեցիր անապատում, նրանց հագուստները չմաշուեցին, նրանց կօշիկները չհնացան: 22 Դու նրանց առջեւ հարուածեցիր թագաւորներ ու ժողովուրդներ, եւ նրանք բաժանեցին ու ժառանգութիւն առան նրանց երկիրը՝ Եսեբոն թագաւորի Սեհոն երկիրը եւ Բասանի թագաւոր Օգի երկիրը: 23 Դու նրանց որդիներին բազմացրիր ինչպէս երկնքի աստղերը եւ բերեցիր նրանց այն երկիրը, որ խոստացել էիր նրանց հայրերին. նրանք ժառանգեցին այն: 24 դու նրանց առջեւ կոտորեցիր քանանացիների երկրի բնակիչներին ու նրանց երկիրը տուեցիր սրանց ձեռքը,

կոտորեցիր Նրանց թագաւորներին ու երկրի ժողովրդին, ինչպէս որ Նրանք էին ցանկացել: 25 *Նրանք առան բարձրաբերձ քաղաքներ ու պարիսպներ, ժառանգեցին ամէն տեսակ բարիքներով լի տներ, փորուած եւ պատրաստուած ջրհորներ, այգիներ, ձիթենիներ եւ ամէն տեսակ պտղատու ծառեր՝ որպէս լիառատ կերակուր Նրանց համար: Նրանք կերան եւ յագեցան, գիրացան ու մեղկացան մեծամեծ բարիքների մէջ, որ դու տուեցիր Նրանց:* 26 *Նրանք հեռացան ու հրաժարուեցին քեզանից, ետ դարձան քո օրէնքներից ու կոտորեցին քո մարգարէներին, որոնք քարոզում էին Նրանց, որ դառնան դէպի քեզ, բայց Նրանք մեծ չարիքներ գործեցին քո առջեւ:* 27 *Դրա համար էլ դու Նրանց մատնեցիր իրենց թշնամիների ձեռքը, որոնք նեղեցին Նրանց. Նրանք իրենց նեղութեան ժամանակ աղաղակեցին դէպի քեզ, եւ դու երկնքից լսեցիր Նրանց, բազում գթութեամբ եւ ողորմութեամբ փրկեցիր Նրանց ու Նրանց հանեցիր իրենց նեղողների ձեռքերից:* 28 *Բայց երբ Նրանք հանգստացան, նորից սկսեցին քո առջեւ չարիքներ գործել: Դու Նրանց թողեցիր իրենց թշնամիների ձեռքը, որոնք չարչարեցին Նրանց: Նրանք կրկին աղաղակեցին դէպի քեզ, եւ դու երկնքից լսեցիր Նրանց, քո բազում ողորմութեամբ փրկեցիր Նրանց* 29 *եւ դարձեալ Նրանց պատուիրեցիր դառնալ քո օրէնքներին: Իսկ Նրանք, յիմարացած, անմտութեամբ չհնազանդուեցին քո օրէնքներին եւ մեղանչեցին քո այն հրամանների ու պատուիրանների դէմ, որ դու ասել ու հրամայել էիր, թէ՝ մարդկանցից ով որ կատարի քո պատուիրանների պահանջները, կ'ապրի Նրանցով: Բայց Նրանք դարձրին իրենց թիկունքները դէպի քեզ, եղան խստապարանոց ու չլսեցին քո խօսքը:* 30 *Դու նորից համբերատար եղար Նրանց նկատմամբ, եւ քո Սուրբ Հոգով ուղարկեցիր մարգարէներին՝ վկայութեան, սակայն Նրանք այդպէս էլ չլսեցին: Դու Նրանց մատնեցիր օտար երկրների ժողովուրդների ձեռքը, որոնք շատ տառապանքներ պատճառեցին Նրանց:* 31 *Դու, ըստ քո բազում գթութեան ու ողորմութեան, Նրանց իսպառ չթողեցիր եւ մերժելով չհեռացրիր քեզանից, քանզի դու հզօր ես, գթած եւ ողորմած, համբերատար ու բազումողորմ:*

32 *Այժմ, Տէ՛ր Աստուած մեր, դու, որ զօրաւոր ես ու մեծ, ամենակալ եւ ահարկու, արդար եւ ճշմարիտ, պահի՛ր քո ուխտն ու ողորմութիւնը եւ նայի՛ր մեր եւ մեր թագաւորների, մեր իշխանների, մեր քահանաների, մարգարէների եւ մեր բոլոր հայրերի տառապանքներին ու նեղութիւններին, նայի՛ր քո ժողովրդին, որին տառապեցրին, եւ մինչեւ այսօր մեզ վրայ բռնանում են Ասորեստանի թագաւորները:* 33 *Դու արդար ես ամէն ինչում, որ մեզ վրայ բերեցիր մեր մեղքերի պատճառով, որովհետեւ ճշմարտութեամբ արեցիր այդ բոլորը,* 34 *քանի որ մեղանչեցինք թէ՛ մենք, թէ՛ մեր իշխանները, թէ՛ մեր քահանաներն ու մեր հայրերը, եւ քո պատուիրանները չկատարեցինք, չանսացինք քո օրէնքներին ու վկայութիւններին, որ յիշեցնում էիր մեզ:* 35 *Դու մեզ տուեցիր քո գթութիւնները եւ բազում բարութիւնները, տուեցիր մեզ այս լայն, ընդարձակ ու պարարտ երկիրը, բայց մենք քեզ ծառայել չիմացանք, մեր սիրտը չրջեցինք քո օրէնքներից եւ մեր մեղքերի պատճառով մատնուեցինք գերութեան:* 36 *Եւ ահա այսօր ստրկութեան մէջ ենք, մենք եւ այս երկիրը, որ տուեցիր մեր հայրերին՝ ազատօրէն ուտելու նրա բերքն ու բարիքները:* 37 *Արդ, այսօր օտար թագաւորներ են տիրում մեզ վրայ եւ ուտում են այս երկրի բարիքները մեր մեղքերի պատճառով, իսկ մենք, ստրկութեան մէջ ընկած, հարկ ենք տալիս. Նրանք մեզ ու մեր անասունների հետ վարւում են այնպէս, ինչպէս որ կամենում են: Այսօր մենք նեղութեան ու մեծ վշտերի մէջ ենք մեր մեղքերի պատճառով:* 38 *Արդ, այս ամենի համար մենք ուխտ ենք դնում եւ հաւատարիմ կը մնանք մեր ուխտին. հաւատում ենք քո*

օրէնքներին ու կատարում ենք դրանք: Այս խօսքերը գրով հաստատում ու կնքում ենք մենք, մեր բոլոր իշխանները, մեր ղեւտացիները եւ մեր քահանաները»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՒԽՏ Է ԱՆՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՕՐԷՆՔԸ

10 *Ահա սրանք են, որ կնքում են քեզ ուղղուած այս հաւատարմութեան գիրը. Աքալիայի որդի Նէեմիան եւ Սեդեկիայի որդի Սարերան.* 2 *Ազարիան, Երեմիան,* 3 *Փասուրը, Ամարիան, Միքիան,* 4 *Ատտուսը, Ասաբանիան, Մալուքը,* 5 *Եմաթը, Մերամոթը, Աբդիան,* 6 *Դանիէլը, Կանաթոնը, Բարուքը.* 7 *Մեսուլամը, Աբիան, Միամինը,* 8 *Մաադիան, Բելգեէն, Սեմէին: Սրանք բոլորը քահանաներ են:*

9 *Ղեւտացիները. Ազանիայի որդի Յեսուսը, Ենադադի որդիներից Բանիան, Գալմիէլը* 10 *եւ նրա եղբայրներ Սեբանիան, Օգուիան, Կալիտանը, Փելիմանը,* 11 *Միքան, Ռոբան, Սեբին,* 12 *Զաքուրը, Սարաբիան, Սատանիան, Սեբանիան,* 13 *Օդուիան, Բանուէի որդիները:*

14 *Ժողովրդի իշխանները. Փորխը, Փարադմովաբը, Ելամը եւ Զատթուրան:* 15 *Բանիայի որդիները.* 16 *Ազուրթը, Բերային, Ադոնիան,* 17 *Բագուն, Եդինատերը,* 18 *Եզեկիան, Ազուրայիդան,* 19 *Ասամը, Բեսէին,* 20 *Արիփը, Անաթոթը, Նորան,* 21 *Մադափէսը, Մեսուղամը, Եզրը,* 22 *Մեսոզաբէէլը, Զադուկը, Եդոքը,* 23 *Փալիտան, Անանը, Անիան,* 24 *Ասէէն, Անանիասը,* 25 *Ռայումը, Էսաբանանը, Մայալուան,* 26 *Աբիան, Էնանը, Աւնանը.* 27 *Մալուսը եւ Ռէումը:*

28 *Նաեւ մնացեալ ժողովուրդը, քահանաներն ու ղեւտացիները, դռնապանները, երգիչները, նաթանացիները եւ մենք բոլորս, որ լսում ենք մեր Տէր Աստծու օրէնքները, այսօր քո առջեւ վկայութիւն ենք տալիս հաւատարմութեան այս գրին՝ տղամարդիկ եւ կանայք, իրենց որդիներն ու դուստրերը:* 29 *Եւ նա, ով երբեւէ զանց կ'առնի քո օրէնքները, այսօր քո առջեւ երդմամբ հաստատում ենք, որ նա նզովքների եւ անէծքների կ'ենթարկուի, նա, ով չի պահի քո օրէնքները, որ տուրեցին քո ծառայ Մովսէսի միջոցով: Իսկ մենք մեր ամբողջ կամքով կը պահենք եւ կը կատարենք Տէր Աստծու բոլոր պատուիրանները եւ նրա օրէնքներն ու հրամանները:* 30 *Մեր դուստրերին կնութեան չենք տայ օտար ժողովուրդների տղաներին, եւ հեթանոսների դուստրերին էլ չենք բերի մեր որդիների համար:* 31 *Այս երկրի ժողովուրդները շաբաթ օրը մեզ մօտ վաճառելու ապրանք չեն բերի. շաբաթ օրը բան չենք գնի նրանցից, որովհետեւ դա սուրբ օր է, եւ սուրբ կը պահենք եօթներորդ օրը:* 32 *Տարէցտարի ողորմութիւն կը տանք երկդրամեանի երրորդ մասը, որպէս Աստծու Տան հարկ.* 33 *նաեւ՝ սուրբ սեղանի առաջաւորաց հացը, ժամանակ առ ժամանակ տրուող զոհերն ու ողջակէզները, տարեկան տօներին, շաբաթ օրերին, ամսամուտներին, նաւակատիքներին ու սրբութիւններին եւ մեղքի համար տրուող բոլոր ընծաները, որ Իսրայէլի քաւութեան եւ մեր Տէր Աստծու տաճարի գործերի համար են:*

34 *Վիճակ կը գցենք նաեւ փայտ ընծայելու համար, որ տրւում է քահանաներին ու ղեւտացիներին: Ժամանակ առ ժամանակ, ամէն տարի ժողովուրդը մեր Աստծու Տուն՝ մեր հայրերի Տուն կը բերի այդ փայտը՝ վառելու համար մեր մեր Տէր Աստծու զոհերի սեղանի վրայ, ինչպէս որ գրուած է Մովսէսի օրէնքների մէջ:* 35 *Ամէն տարի մեր Տէր Աստծու Տան համար կը տանք մեր երկրի առաջին բերքն ու մեր ծառերի պտուղները,* 36 *մեր անդրանիկ որդիների երկդրամեաններն ու մեր անասունների առաջնածինները, ինչպէս որ գրուած է Մովսէսի օրէնքների մէջ. մեր արջառների ու մեր հօտերի առաջնածինները կը բերենք մեր Աստծու Տուն՝ մեր քահանաների ու ղեւտացիների համար, որոնք սպասաւորում են Տիրոջ Տանը:* 37 *Կը բերենք նաեւ ցորենի առաջին բերքը եւ ծառերի առաջին պտուղները, գինին ու ձէթը Աստծու Տան գանձատուն, քահանաների մօտ, իսկ ղեւ-*

տացիները կը շրջեն ու լիովին կ'առնեն մեր երկրի բոլոր տասանորդները: 38 Ահարոնի որդիներից մի քահանայ կը լինի, որը կը վերցնի տասանորդը ղեւտացիներից, իսկ ղեւտացիներն էլ կը վերցնեն այդ տասանորդների տասանորդը եւ կը տան քահանայապետին մեր Աստծու Տան՝ Տիրոջ տաճարի գանձատան համար. 39 որովհետեւ ղեւտացիների որդիներն ու սպասաւորները դրանք պէտք է մուծեն ամբարների մէջ, այն տեղերում, ուր գտնւում է սրբարանի սպասքը: Այդ բոլորը կը լինի քահանաներինը, դռնապաններինը եւ սաղմոսների երգիչներինը. նրանց ուսելիքը երբեք չի պակասի մեր Աստծու Տնից. եւ նրանք չեն խափանի Տիրոջ Տան սպասաւորութիւնը:

ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿՈՒԱԾ ՀՐԵԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

11† *Ժողովրդի իշխանները նստեցին Երուսաղէմում ու վիճակ գցեցին, որ տասից մէկը, ում էլ ընկնի վիճակը, մնայ սուրբ քաղաք Երուսաղէմում, իսկ մնացեալ ինը գնան միւս քաղաքները: 2 Ժողովուրդն օրհնեց այն մարդկանց, ում վիճակուեց մնալ Երուսաղէմում:*

3 Սրանք են երկրի իշխանները, քահանաները, ղեւտացիները, նաթանացիները եւ Սողոմոնի ծառաների որդիները, որոնք բնակուեցին Երուսաղէմում: 4 Ովքեր մնացին Երուսաղէմում, Յուդայի ազգից եւ Բենիամինի ազգից էին:

Յուդայի որդիներից սրանք են. Օզիայի որդի Աթեէն, Զաքարիայի որդին, Սամարիայի որդին, Սափատիայի որդին, Մանէելի որդին: 5 Փարէսի ու Մալասիայի որդիներից՝ Բարուքի որդին, Ալազի որդին, Օզիայի որդին, Ադիայի որդին, Յոյարիբի որդին, Զաքարիայի որդին, Ելոնի որդին: 6 Փարէսի բոլոր որդիները, որոնք մնացին Երուսաղէմում, չորս հարիւր վաթսունութ զօրաւոր այրեր էին:

7 Սրանք են Բենիամինի որդիները. Մեսելոմի որդի Սելոնը, Յովադի որդին, Փադայի որդին, Կոլիի որդին, Մասասայի որդին, Աթիէլի որդին, Յեսուի որդին: 8 Ապա՝ Դեբէին, Սելէին. բոլորը՝ ինը հարիւր քառասունութ մարդ: 9 Զեքրիի որդի Յովէսը առաջնորդ եւ վերակացու էր նրանց վրայ, իսկ Ասանի որդի Յուդան քաղաքի երկրորդն էր:

10 Քահանաներից սրանք են. Յովարիբի որդի Ադդիդը, Իաքինը, 11 Սարիան, Ելքիայի որդին, Մեսուլամի որդին, Սադոկի որդին, Մարաւոթի որդին եւ Եատոբի որդին: Սրանց տները Տիրոջ տաճարի մօտ էին: 12 Սրանց եղբայրներն էին, որ անում էին Տիրոջ Տան սպասաւորութեան գործը. բոլորը՝ ութ հարիւր քսաներկու մարդ: Նաեւ՝ Ամասիայի որդի Փալալիայի որդի Երոմի որդի Ադային, Զաքարիայի որդին, Փասէուրի որդին, Մելքիայի որդին 13 եւ նրանց եղբայրները՝ տոհմերի իշխանները, բոլորը՝ երկու հարիւր քառասուներկու մարդ: Նաեւ՝ Եզրիէլի որդի Ամասիան 14 եւ ամէն ինչով զօրաւոր նրա եղբայրները քսանութ հոգի էին: Նրանց առաջնորդն ու վերակացուն էր Զեքրիէլը, որ մեծ իշխաններից էր:

15 Ղեւտացիներից՝ Ասուբի որդի Սամէիան եւ Եզրոմի որդին: 17 Մաթանացիներից՝ Միքայի որդին, Յոբէբի որդին եւ Սամուի որդիները՝ երկու հարիւր եօթանասունչորս մարդ:

19 Դռնապաններից՝ Ակուբը, Տելմին եւ նրա եղբայրները՝ հարիւր եօթանասուներկու մարդ: 22 Ղեւտացիների առաջնորդներն ու վերակացուները, որոնք մնացին Երուսաղէմում, սրանք են. Բանիի որդի Ազան, Ասաբիայի որդին, Մատթանի որդին եւ Միքայի որդին, որոնք Ասափի որդիներից էին: Սրանք երգիչներ էին եւ մնացին Տիրոջ Տան մօտ, 23 որովհետեւ թագաւորը հրաման էր տուել նրանց այնտեղ լինել եւ անխափան սպասաւորել: 24 Իսկ Մեսիզաբիւլի որդի Փաթաւան, որը Յուդայի որդի Զարեհի որդիներից էր եւ թագաւորի մօտ ամէն ինչում վստահուած պաշտօնեայ, 25 բնակւում էր իր ագարակում:

Յուդայի որդիներից, որոնք հաստատուեցին Կարիաթարբայում, Յեսուն եւ Բերսաբէէն էին: Իսկ միւսները բնակւում էին Լաքիսում 30 եւ իրենց ագարակներն ունէին Բերսաբէէի շրջակայքում: 31 Բենիամինի որդիները հաստատուեցին Գաբայից մինչեւ Մաքմաս: 36 Ղեւտացիների բաժինը Յուդայի եւ Բենիամինի գաւառներում էր:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ՂԵՒՏԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

12† *Սրանք են այն քահանաները ու ղեւտացիները, որոնք եկան Սաղաթիէլի որդի Զորոբաբէլի եւ Յովսեդեկի որդի Յեսուի հետ. Սարայիան, Երեմիան, Եզրան 2 Ամարիան, Մալուքը, Ատտուսը եւ Սեքենիան: 3 Սրանք էին քահանաների եւ նրանց եղբայրների առաջնորդները Յեսուի օրերին: 8 Իսկ Յեսուի օրերի ղեւտացիները սրանք էին. Յեսուն, Բանուին, Կադմիէլը, Սարաբիան, Յուդան, Մաթանիան եւ նրանց եղբայրները, որոնք սպասաւորում էին տաճարում՝ ըստ նշանակուած օրերի:*

Յովակիմի որդին էր Ելիասիբը, 9 Ելիասիբի որդին՝ Յովադէն, Յովադէի որդին՝ Յովնաթանը, եւ Յովնաթանի որդին՝ Յատդուսը: Յովակիմի օրերին իր եղբայրները տոհմերի իշխաններ եւ քահանաներ էին. դրանք էին՝ Սարիան, Եմարիան, Երեմիան, Անանիան, Ազարիան, Եզրան, Մեսուլամը, Ամարիան, Յովնանը եւ Մալուքը: 22 Ելիասիբի օրերի ղեւտացիներն էին՝ Յոդան, Յովան, Յովնանը եւ Իդուան, որոնք գրուած էին որպէս տոհմերի իշխաններ: Այս բոլորը քահանաներ էին Դարեհի թագաւորութեան ժամանակ: 23 Ղեւիի որդիները տոհմերի իշխաններ էին՝ գրուած ազգահամարի մատեանում մինչեւ Ելիասիբի որդի Յովնանը: 24 Ղեւտացիների իշխաններն էին՝ Ասաբիան, Արաբիան եւ Յեսուն: Կադմիէլի որդիները եւ նրա եղբայրները նշանակուած էին նրա մօտ, օրհնելու եւ սաղմոս ասելու, 25 ըստ հերթական օրերի, ամբողջ օրը, իրենց ժողովների ժամանակ՝ դռնապանների հետ միասին, ինչպէս հրամայել էր Աստծու մարդ Դաւիթը: 26 Սրանք սպասաւորում էին Յոսեդեկի որդի Յեսուի որդի Յովակիմի օրերին եւ Նէեմիի ու Եզրաս քահանայի՝ Տիրոջ օրէնքների մեկնիչի օրերին:

ՊԱՐՍՊԻ ՆԱԻԱԿԱՏԻՔԸ

27 Երուսաղէմի պարսպի նաւակատիքի ժամանակ ղեւտացիներին փնտռեցին իրենց բնակութեան տեղերում, որպէսզի նրանց բերեն Երուսաղէմ եւ նաւակատիքն անեն ուրախութեամբ ու գոհութեամբ, երգերով ու նուագարաններով, ծնծղաներով ու թմբուկներով, սաղմոսարաններով ու եղջերափողի ձայնով: 28 Բոլոր նրանք, ովքեր պիտի երգէին եւ սաղմոս ասէին, Երուսաղէմի շրջակայ բոլոր կողմերից՝ 29 քաղաքներից, գիւղերից եւ իրենց բնակութեան վայրերից հաւաքուեցին՝ Երուսաղէմ գալու եւ պաշտամունքին սպասաւորելու համար: 30 Բոլոր քահանաներն ու ղեւտացիները մաքրուեցին եւ մաքրեցին ժողովրդին ու մեծ պարսպի դռների դռնապաններին:

31 Պարսպի վրայ բարձրացրին Յուդայի երկրի իշխաններին: Նրանց յետեւից երգերով ու նուագարաններով երկշարք գնում էին 32 Յոսիան եւ Օզիան, Յուդայի երկրի իշխանների կէսը, 33 Ազարիասը, Եզրան, Մոսոլամը, Յուդան, Բենիամինը, Սամէասը եւ Երեմիասը: 34 Քահանաների որդիներից փող էին փչում Յովնանի որդի Զաքարիասը, 35 Սամայի որդին, Մաթանիայի որդին, Միքայի որդին, Զաքուրի որդին եւ Ասափի որդին: 36 Իսկ նրանց եղբայրներ Սամէիան եւ Եզրիէլը երգում էին Աստծու մարդ Դաւիթի նուագած երգերն ու սաղմոսները: Եզրասը՝ մեկնիչը, գնում էր նրանց առջեւից՝ պարսպի դռների մօտից: 37 Ովքեր երգում էին՝ գնում էին նրա դիմացից: Նրանք բարձրացան Դաւիթի քաղաքի աստիճաններով, այն սանդուղքով, որը տանում էր Դաւիթի ապարանքից վեր, դէպի պարիսպը՝ մինչեւ Եփրեմի Ջրի դուռը,

†Գրաբար բնագրում բացակայում են սոյն գլխի 16, 18, 20, 21, 26–29 եւ 32–35 համարները:

†Գրաբար բնագրում բացակայում են սոյն գլխի 4–7, 10–21, 38 եւ 40–42 համարները:

որը արեւելեան կողմն էր: 39 Նրանք գնում էին դէպի Եքթիերան դուռը, դէպի Անամայէլի աշտարակը, մինչեւ Զրաւազանի դուռը: Երգերի ձայնը լսւում էր ամենուր՝ մինչեւ հեռաւոր վայրերը, որովհետեւ Եզրասը հրամայել էր կանգնել պարսպի բոլոր դռների վրայ եւ երգել: 43 Այն օրը մեծամեծ զոհեր մատուցեցին եւ շատ ուրախ եղան, որովհետեւ Աստուած նրանց մեծ ուրախութիւն էր տուել: Ուրախ էին նաեւ նրանց կանայք ու նրանց որդիները: Նրանց ուրախութիւնը լսելի եղաւ Երուսաղէմից մինչեւ հեռաւոր տեղեր:

44 Այդ օրը գանձատան վրայ մարդիկ նշանակուեցին, որպէսզի վերցնեն առաջին բերքի բաժինն ու տասանորդները եւ այն ընծաները, որ հաւաքել էին քաղաքի իշխանաւորներն այնտեղ քահանաների եւ ղեւտացիների համար, ինչպէս հրամայուած էր Մովսէսի օրէնքով: Արդարեւ, մեծ ուրախութիւն էր Յուդայի երկրում եւ քահանաների ու ղեւտացիների մէջ, որոնք հոգ էին տանում Աստծու ծառայութեան եւ նրա սրբութիւնների պահպանման համար: Երգիչները, սաղմոսասացները եւ դռնապանները եւս անում էին այնպէս, ինչպէս սահմանել էին Դաւիթն ու նրա որդի Սողոմոնը, 45 որովհետեւ այս մարդիկ էին սաղմոսներ երգում, նուագում եւ Աստծուն փառաբանում Դաւթի օրերից, երբ երգիչների իշխանն ու առաջնորդն էր Ասափը: 46 Զորոբաբէլի ու Նէեմիի օրերին ամբողջ Իսրայէլը, ըստ սահմանուած կարգի, մաս եւ բաժին էր տալիս երգիչներին եւ դռնապաններին, իսկ սուրբ ընծաները՝ ղեւտացիներին. ղեւտացիներն էլ Ահարոնի որդիներին էին տալիս իրենց բաժինը:

ՆԷԵՄԻԻ ԿԱՏԱՐԱԾ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

13 Այն օրերին Մովսէսի գիրքը կարդացին ի լուր ժողովրդի: Նրա մէջ այսպէս էր գրուած. «Թող ամոնացին եւ մովաբացին յաւիտեան չմտնեն Աստծու ժողովարան, 2 որովհետեւ նրանք հացով եւ ջրով ընդառաջ չելան իսրայէլացիներին, այլ վարձեցին Բաղաամ գուշակին՝ նրանց անիծելու համար, իսկ մեր Աստուածն անէծքը դարձրեց օրհնութիւն»: 3 Երբ լսեցին այս օրէնքը, հեռացրին իսրայէլացիներին խառնուած բոլոր այլազգիներին:

4 Սրանից առաջ Ելիասիբ քահանան էր նշանակուած մեր Աստծու Տան գանձատան վրայ: Նա Տուբիային տեղ տուեց 5 եւ այնտեղ նրա համար մեծ գանձատուն շինեց: Դա նախկինում այն տունն էր, ուր դնում էին ընծաները, կնդրուկն ու սրբարանի սպասքը եւ ղեւտացիների, երգիչների ու դռնապանների համար որոշուած ցորենի, գինու, ձէթի ու իւղի տասանորդները, ինչպէս նաեւ առաջին բերքի այն բաժինը, որ քահանաների համար էր:

6 Երբ այս ամէնն արուել էր, ես Երուսաղէմում չէի, քանի որ Բաբելոնի Արտաշէս թագաւորի երեսուներկուերորդ տարում գնացել էի թագաւորի մօտ: Շատ օրեր անց ես թագաւորից խնդրեցի 7 ու վերադարձայ Երուսաղէմ: Ես իմացայ այն բոլոր չարութիւնները, որ Ելիասիբն արել էր Տուբիայի պատճառով, որովհետեւ նրան թոյլ էր տուել, որ գանձատուն շինի Տիրոջ տաճարի գաւթում: 8 Այդ բանն ինձ խիստ վրդովեց: Ես Տուբիայի ամբողջ գոյքը դուրս նետեցի գանձատնից 9 եւ հրամայեցի մաքրել Տիրոջ գանձատունը, այնտեղ վերադարձրի Տիրոջ Տան կայքն ու սպասքը, ընծաներն ու կնդրուկը:

10 Իմացայ նաեւ ու վերահասու եղայ, որ ղեւտացիների բաժինն իրենց չէր տրուել, եւ նրանք գնացել էին իրենց ագարակները: Ղեւտացիներն ու երգիչները այնտեղ մշակութիւն էին անում: 11 Ես կռուեցի իշխանաւորների հետ ու ասացի. «Ինչո՞ւ Տիրոջ Տնից պակասեցին ուտելիքները»: Ես հաւաքեցի տաճարի բոլոր սպասաւորներին ու նրանց կարգեցի իրենց տեղերում: 12 Դրանից յետոյ բոլոր հրեաները Տիրոջ տաճարի գանձատուն էին բերում ցորենի, գինու եւ ձէթի տասանորդները: 13 Ես հրամայեցի դրանք տալ Ելիմ քահանային, Սադոկ դպրագրին եւ ղեւտացիներից մէկին՝ Փադայիային, եւ նրանց հետ՝ Զաքուրի որդի Անանին, Մաթանայի որդուն, որովհետեւ նրանք վստահելի էին մթերքներն իրենց եղբայրներին բաժանելու եւ տալու գործում: 14 Թող Աստուած ինձ յիշի այս ամենի համար եւ ինձնից չհեռացնի իր ողորմութիւնը, որովհետեւ ես այս բոլորն արեցի Իսրայէլի Տէր Աստծու Տան համար:

15 Այն օրերին տեսայ, որ Հրէաստանում շաբաթ օրով հնձաններ էին տրորում, հնձած խրձեր էին բերում Երուսաղէմի դռներով. գրաստներին բարձել էին գինու, խաղողի եւ թզի բեռներ եւ շաբաթ օրով բեռները բերում էին Երուսաղէմ: Ես վկաներ բռնեցի, որ նրանք շաբաթ օրը վաճառք են անում: 16 Ովքեր ձուկ եւ ամէն տեսակ ապրանք էին բերում, նստում էին վաճառքի տեղերում, եւ հրեաները շաբաթ օրը Երուսաղէմի մէջ գնումներ էին կատարում: 17 Ես նախատեցի Երուսաղէմում եղած հրեաներին ու Յուդայի երկրի իշխանաւորներին եւ ասացի նրանց. «Այս ի՞նչ անօրէնութիւն էք գործում դուք. պղծում էք սուրբ շաբաթի օրերը: 18 Մի՞թէ այսպէս չարեցին ձեր հայրերը, եւ Աստուած նրանց եւ այս քաղաքի վրայ բերեց այս բոլոր չարիքները: Արդ, դուք ինչո՞ւ էք աւելացնում Տիրոջ բարկութիւնն Իսրայէլի վրայ եւ պղծում սուրբ շաբաթի օրը»:

19 Երբ ես կանգնեցրի Երուսաղէմի դռները, շաբաթ օրից առաջ հրամայում էի փակել դռները եւ թոյլ չէի տալիս բացել, մինչեւ որ անցնէր շաբաթ օրը: Նաեւ պահապան զինուորներ նշանակեցի, որպէսզի շաբաթ օրը որեւէ մէկը չկարողանայ բեռով մտնել Երուսաղէմի դռներով: 20 Մէկերկու անգամ բոլոր վաճառողները գիշերեցին Երուսաղէմից դուրս: 21 Ես ասացի նրանց. «Ինչո՞ւ էք դուք քնում պարսպից դուրս. եթէ էլի տեսնեմ այդ անօրէնութիւնը, հրաման կը տամ, որ դուք չգաք մեր շաբաթներին եւ չմտնէք այս քաղաքը»: 22 Ղեւտացիներին, որոնք մաքրուած էին, ասացի, որ գան ու պահպանեն դռները եւ սրբագործեն շաբաթ օրը: Դրանից յետոյ շաբաթ օրերը չպղծեցին: Այս բոլորի համար էլ թող Աստուած յիշի ինձ եւ խնայի ինձ ըստ իր մեծ ողորմութեան:

23 Այդ օրերին էր դարձեալ, որ ես տեսայ հրեաների, որոնք ազոտացի, ամոնացի եւ մովաբացի կանայք էին առել: 24 Նրանց որդիներն ու կանանցից ոմանք խօսում էին ազոտերէն, իսկ հրէերէն խօսել չգիտէին: 25 Ես նրանց նախատեցի, նզովեցի ու նրանցից շատերին ծեծեցի: Աստծու անունով նրանց երդուեցրի, որ իրենց դուստրերին կնութեան չտան նրանց որդիներին եւ նրանց դուստրերին էլ չբերեն իրենց որդիների համար: Նրանց ասացի. 26 «Մի՞թէ այդ պատճառով չէ՞ր, որ մեղանչեց Սողոմոն թագաւորը: Մեր բոլոր թագաւորներից ո՞վ էր նրա նման իմաստուն. նա սիրելի էր Աստծուն, եւ Աստուած նրան դրեց թագաւոր ամբողջ Իսրայէլի վրայ: Բայց Աստծուն սիրելի եւ իմաստուն այսպիսի մեծ թագաւորին այլազգի կանայք խոտորեցրին ու գցեցին մեղքի մէջ: 27 Արդ, չլսե՛մ, թէ ձեզանից մէկն այսպիսի մեծ չարիք գործի՝ Աստծու առջեւ մեղանչի եւ այլազգի կին առնի»:

28 Յովիդիայի եւ Ելիասիբ մեծ քահանայի որդիների մասին լսեցի, թէ նրանցից մէկի կինը Սանաբալատի դուստրն է, եւ նրան հալածելով՝ հեռացրի ինձանից: 29 Թող Աստուած նրանց յիշի իրենց ժառանգութեան եւ քահանայական ուխտի մէջ: 30 Ես ղեւտացիներին մաքրեցի բոլոր այլազգիներից եւ, ըստ ծառայութեան օրերի ու կարգի, նշանակեցի նրանց՝ քահանաներին եւ ղեւտացիներին, իւրաքանչիւրին իր գործին: 31 Նաեւ կարգադրեցի, որ իր ժամանակին բերեն ողջակէզների համար պատրաստի ամբողջ փայտը եւ առաջին բերքի իրենց բաժինը: Թող մեր Աստուածն ինձ յիշի արդարութեամբ արած իմ բոլոր բարի գործերի համար, Նա, որ օրհնուած է յաւիտեան. ամէն:

ԵՍԹԵՐ

Ներածութիւն

Այս գրքում պատմւում է, թէ ինչպէս հրէական մի համայնք փրկուեց իր վրայ ծանրացող ոչնչացման սպառնալիքից: Պատմութիւնը տեղի է ունեցել այն ժամանակաշրջանում, երբ պարսիկները իրենց գերիշխանութիւնը տարածում էին ամբողջ Մերձաւոր Արեւելքի վրայ՝ Հնդկաստանից մինչեւ Եգիպտոս: Մեծ թւով հրեաներ, որոնց ընտանիքները աքսորուել էին Բաբելոն, չէին վերադարձել իրենց երկիրը բաբելոնեան իշխանութեան անկումից յետոյ (539 թուականին Ն. Ք.): Տեղացի ժողովուրդը յաճախ թշնամանքով էր վերաբերւում նրանց հանդէպ, որովհետեւ նրանք ապրում էին իրենց յատուկ օրէնքներով եւ սովորութիւններով, որոնք տարբերւում էին միւս ժողովուրդների օրէնքներից եւ սովորութիւններից: Եսթերի գիրքը, նկարագրելով Արտաշէս թագաւորի առաջին նախարար Համանի եւ հրեայ պաշտօնեայ Մուրթքէի միջեւ տեղի ունեցող բախումը, մեր առջեւ դնում է կեանքի սրտաշարժ մի պատկեր: Այն միջոցը, որով Եսթերը, Մուրթքէի միջնորդութեամբ, դառնում է Պարսկաստանի թագուհի եւ այդպիսով հեռացնում իր ժողովրդին սպառնացող վտանգը, յիշեցնում է, որ այն բոլոր փորձերը, որոնց նպատակն է եղել կործանել հրեայ ժողովրդին, միշտ մատնուել են ձախողման: Այստեղ հրեաներին բնաջնջելու համար որոշուած օրը դառնում է նրանց թշնամիների պարտութեան եւ կոտորածի օր:

Եսթերի գիրքը հրեաների ազգասիրութիւնն ու նրանց վրէժխնդրութեան զգացումը դնում է այնպիսի մի աստիճանի վրայ, որ զարմացնում կամ ցնցում է ընթերցողին: Գրքում երեւում է ինքնապաշտպանական ուժեղ մի հակազդեցութիւն այլամերժութեան դէմ, որի զոհերն էին եղել հրեաները օտար երկրում երկար ժամանակ: Ցեղապաշտութիւնն ու այլամերժութիւնը սովորաբար պատճառ են դառնում նմանօրինակ հակազդեցութիւնների, եւ Եսթերի պատմութիւնը մի անգամ եւս ցոյց է տալիս, թէ ինչպէս բռնութիւնը բռնութիւն է ծնում:

ԵՍԹԵՐԻ ԳԻՐՔԸ

ՄՈՒՐԹՔԷԻ ԵՐԱԶԸ

11† 2 *Արտաշէս մեծ արքայի թագաւորութեան երկրորդ տարում, առաջին օրն Ադար ամսի, որ հայերէն Արեգ ամիսն է, երազ տեսաւ Մուրթքէն՝ Բենիամինի ցեղից մի հրեայ մարդ, որ որդին էր Յայիրի, սա՝ Սեմէի, եւ սա՝ Կիսէի: 3 Մուրթքէն բնակւում էր Սուսա քաղաքում, մեծ մարդ էր եւ հաւատարիմ պաշտօնեայ թագաւորի տան բոլոր գործերի վրայ: 4 Նա այն գերիներից էր, որոնց Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան Երուսաղէմից գերեւարել էր Հրէաստանի արքայ Յեքոնիայի հետ միասին:*

5 Այս է այն երազը, որ նա տեսաւ. երազում նա լսում էր աղեկոծութեան, որոտի եւ երկրաշարժի ձայն. երկրի վրայ մեծ խառնաշփոթութիւն էր: 6 Եւ ահա երկու շատ մեծ վիշապներ ելնում էին իրար դէմ՝ պատրաստ կռուելու: 7 Նրանցից լսուեց մի բարձր ձայն, եւ նրանց այդ ձայնից բոլոր ազգերը պատրաստուեցին պատերազմի, որպէսզի կռուեն մի արդար ազգի դէմ: 8 Դա խաւարի ու մթի օր էր, տառապանքի ու նեղութիւնների օր, իսկ երկրի վրայ մեծ խառնաշփոթութիւն էր: 9 Խռովքի մատնուեց ամբողջ արդար ազգը՝ իր վրայ հասնող չարիքների պատճառով եւ պատրաստուեց կործանման: Նրանք կանչեցին Աստծուն: 10 Նրանց ձայնից՝ ինչպէս փոքրիկ աղբիւրից, առաջացաւ մի մեծ ու յստակ գետ: 11 Արեգակը ծագեց, խոնարհ մարդիկ բարձրացան եւ ոչնչացրին սնափառներին:

12 *Մուրթքէն զարթնեց այս երազից, մտածեց, թէ ինչ էր խորհել Աստուած անել. նա երազը պահում էր իր սրտում, եւ իր ամբողջ հոգով ցանկանում էր իմանալ, թէ ինչ կը լինի երազը, որ ինքը տեսաւ այդ գիշեր:*

ԵՐԿՈՒ ՆԵՐՔԻՆԻՆԵՐԻ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ

12 *Մուրթքէն մնաց ապարանքում թագաւորի երկու ներքինիների՝ թագաւորի պալատի պահապաններ Դաբիթի ու Թառայի հետ միասին: 2 Երբ Մուրթքէն իմացաւ ներքինիների միտքը եւ պարզեց նրանց սրտի ցանկութիւնը, թէ նրանք պատրաստուել են ձեռք բարձրացնել Արտաշէս թագաւորի վրայ, արքային զեկուցեց նրանց մտադրութիւնների մասին: 3 Թագաւորը հարցաքննեց երկու ներքինիներին, եւ նրանք ամէն ինչ խոստովանեցին նրան: 4 Թագաւորն այս դէպքերի մասին գրեց յիշատակարաններում. Մուրթքէն եւս գրեց այս դէպքի մասին: 5 Թագաւորը Մուրթքէին հրամայեց մեծ զգուշութեամբ առաւել եւս հոգատար լինել թագաւորի տան նկատմամբ եւ նրան պարգեւներ տուեց: Ամադոթի որդի Բոկեցի Համանը, որը պատիւ ունէր արքայի առաջ, կամեցաւ ներքինիների համար չարչարել Մուրթքէին ու նրա ժողովրդին:*

ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ ԽՆՋՈՅԹԸ

1 6 *Այս դէպքերից յետոյ, Արտաշէսի օրօք, – 1 այս Արտաշէսը տիրում էր Հնդկաստանից մինչեւ Եթովպիա՝ հարիւր քսանեօթը գաւառի, – 2 երբ նա Սուսա քաղաքում նստեց գահին, 3 իր թագաւորութեան երրորդ տարում խնջոյքի հրաւիրեց իր սիրելիներին ու մեծամեծներին, նաեւ այլ ազգերի՝ պարսիկների ու մարերի բոլոր նախարարներին եւ իշխաններին: 4 Նա հարիւր ութսուն օր նրանց ցոյց տուեց իր թագաւորութեան հարստութիւնը՝ իր ուրախութեան ու վայելչութեան փառքը: 5 Երբ խնջոյքի օրերն աւարտուեցին, յաջորդ անգամ կրկին հրաման տուեց խնջոյքի կանչելու իր ռամիկ քաղաքացիներին արքունի տան գաւթում: 6 Գաւիթը զարդարուած էր բեհեզներով ու կերպասներով, որոնք շարուած ու կապուած էին ծիրանի ու բեհեզի հիւսածոյ թելերով՝ ամրացուած ոսկէ խոյակներին: Կային նաեւ ծիրանագոյն պաստառներ գեղեցիկ սիւների ու ոսկե-*

†Հայերէն բնագրում գլուխների եւ նրանց հատուածների բաժանումները անկանոն են, բայց բովանդակութեան յաջորդականութիւնը չի խախտուած:

ղէն խարիսխների վրայ: Գաւթի վարդագոյն յատակի վրայ կային մարգարիտներով ու թանկարժէք քարերով ընդելուզուած բազում ոսկէ եւ արծաթէ գահաւորակներ՝ ծածկուած նկարազարդ երփներանգ պաստառներով եւ պատուական զարդանախշերով: 7 Այնտեղ կային թագաւորի ոսկէ ու արծաթէ սափորներ եւ գաւաթներ, որոնք ունէին երեսուն հազար քանքարի գին: 8 Գինին առատ էր եւ արքայավայել: Բայց այս խնջոյքը չեղաւ այնպէս, ինչպէս կարգն էր, որովհետեւ թագաւորը ցանկացել էր, որ իր սպասաւորները կատարեն հիւրերի կամքը: 9 Իսկ թագաւորի կինը՝ Ասթինէն, Արտաշէս թագաւորի ապարանքում խնջոյք արեց կանանց համար:

ԱՍԹԻՆԷ ԹԱԳՈՒՀՈՒ ՇՆՈՐՀԱԶՐԿՈՒՄԸ

10 Եօթներորդ օրը թագաւորը, որի սիրտը լցուած էր ուրախութեամբ, ասաց Ամանին, Բազանին, Թառային, Բուրազէին, Աբեղթային, Բատենզային եւ Թառաբբային՝ իր եօթը ներքինիներին, 11 որ կնոջը կանչեն արքունիք, որպէսզի թագադրի նրան եւ բոլոր իշխաններին ու ազգերին ցոյց տայ նրա գեղեցկութիւնը, որովհետեւ նա շատ գեղեցիկ էր: 12 Իսկ Ասթինէն չուզեց լսել հրամանը՝ ներքինիների հետ գալու նրա մօտ: Թագաւորը տրտմեց, խիստ բարկացաւ 13 եւ իր սիրելիներին պատմեց Ասթինէի վարմունքը: Թագաւորն ասաց. «Այժմ դատ ու դատաստան արէ՛ք»: 14 Եւ նրա մօտ մտան Արքինէոսը, Առնաթեւը եւ Մալիսեարը՝ պարսիկների եւ մարերի այն իշխանները, որ արքայի մերձաւորներն ու աթոռակիցներն էին. 15 սրանք յայտնեցին, թէ օրէնքով ինչ պէտք անել թագաւորի կին Ասթինէին, քանի որ չէր կատարել ներքինիների միջոցով իրեն տրուած արքայական հրամանը:

16 Այն ժամանակ Մուրթքէն ասաց արքային. «Տիկնանց տիկին Ասթինէն հակառակուեց ոչ թէ միայն արքային, այլեւ՝ արքայի բոլոր իշխաններին եւ կուսակալներին: 17 Այսպէս անհնազանդ կը լինեն նաեւ պարսիկների ու մարերի իշխանների բոլոր կանայք. 18 երբ նրանք լսեն թագաւորի կնոջ այս արհամարհանքը, համարձակ կարող են անարգել իրենց ամուսիններին: 19 Արդ, եթէ արքան կամենայ եւ հաճելի թուայ նրան, թող այդ կինն այլեւս չմտնի արքայի մօտ, եւ թող արքան նրա տիկնութիւնը տայ այն կնոջը, որը նրանից աւելի լաւը կը լինի: 20 Եւ երբ այս օրէնքը կը հրապարակես քո թագաւորութեան մէջ, կանայք՝ աղքատներից մինչեւ մեծամեծները, մեծ յարգանքով կը պատուեն իրենց ամուսիններին»: 21 Այս խօսքը հաճելի թուաց արքային եւ նրա բոլոր իշխաններին, եւ թագաւորն արեց այնպէս, ինչպէս ասաց Մուրթքէն: 22 Նա հրովարտակ ուղարկեց իր ամբողջ թագաւորութեան բոլոր գաւառները, որ այդ հրամանը դրուի բոլոր կանանց վրայ:

ԵՍԹԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳՈՒՀԻ

2 Այս դէպքերից յետոյ թագաւորի բարկութիւնը հանդարտուեց, եւ նա Ասթինէին այլեւս չյիշեց իսկ, որովհետեւ մտքում պահում էր այն, թէ ինչ էր խօսել նա: Այսպէս մերժուելով՝ կինը շնորհազրկուեց: 2 Թագաւորի սպասաւորներն ասացին. «Թող արքայի համար փնտռեն տեսքով գեղեցիկ կոյս աղջիկներ. 3 թող արքան հրամայի իր թագաւորութեան բոլոր երկրներում նշանակել գաւառապետներ, որոնք կ'ընտրեն կոյս աղջիկներ եւ բերել կը տան Սուսա քաղաք՝ մի կուսանոց: Նրանց կը յանձնեն արքունի ներքինուն, որը կանանց պահապանն է, եւ արքան կը հրամայի նրանց տալ իւղ, օճառ եւ այն ամէնը, ինչ պէտք է նրանց: 4 Թող Ասթինէի փոխարէն թագաւորի այն կինը, որ հաճելի կը լինի արքային»: Արքային հաճելի թուացին այս խօսքերը, եւ նա այդպէս էլ արեց:

5 Սուսա քաղաքում կար Բենիամինի ցեղից մի հրեայ մարդ. նրա անունն էր Մուրթքէ. սա որդին էր Յայիրի, սա՝ Սեմէի, եւ սա՝ Կիսէի: 6 Մուրթքէն գերի էր բերուել Երուսաղէմից այն գերիների հետ, որոնց գերեվարել էր Բաբելոնի Նաբուքոդոնոսոր արքան: 7 Նա դաստիարակել էր մի մանկան՝ իր հօրեղբայր

Ամինադաբի դստերը, որի անունը Եսթեր էր: Նրան վերցնելով իր հօրից ու մօրից՝ Մուրթքէն ուզում էր իրեն կնութեան առնել: 8 Աղջիկը տեսքով շատ գեղեցիկ էր: Երբ թագաւորի հրամանը տարածուեց, Սուսա քաղաքում հաւաքուեցին բազմաթիւ աղջիկներ, որոնք Օգէի ձեռքի տակ էին: Եսթերին տարան կանանց վրայ նշանակուած ներքինի Օգէի մօտ: 9 Աղջիկը նրան հաճելի թուաց եւ շնորհ գտաւ նրա առաջ: Օգէն շտապեց նրան տալ իր բաժին օճառն ու այլ պարագաներ, նաեւ եօթը աղջիկներին, որոնք արքունիքից նրան նաժիշտ էին տրուած: Նա Եսթերին, նոյնպէս եւ նաժիշտներին, աւելի էր խնամում, քան նրա միւս ընկերուհիներին: 10 Եսթերը չյայտնեց իր ազգութիւնն ու գաւառը, որովհետեւ Մուրթքէն նրան պատուիրել էր չյայտնել: 11 Մուրթքէն ամէն օր գնում էր շրջելու կանանց տան մօտ ու տեսնելու, թէ ինչ է պատահելու Եսթերին, 12 քանզի մօտեցել էր աղջկայ՝ թագաւորի մօտ մտնելու ժամանակը: Արդէն լրանում էր տասներկու ամիսը, որովհետեւ աղջիկների մարմնական խնամքի ընթացքն այսպէս էր արւում. նրանք վեց ամիս օծւում էին անուշահոտ իւղերով, վեց ամիս էլ՝ անուշաբոյր խնկերով եւ կանանց լուացուելու օճառներով: 13 Եւ աղջիկը նոր միայն մտնում էր արքայի մօտ: Ում որ ներքինին կամենում էր տալ արքայի ձեռքը, նա նրա հետ մտնում էր սենեակ՝ թագաւորի մօտ: 14 Երեկոյեան աղջիկը մտնում էր թագաւորի մօտ, իսկ ցերեկը վերադառնում իր ընկերուհիների եւ կանանց պահապան ներքինի Օգէի մօտ. նա մնում էր այնտեղ, մինչեւ որ նրան անունով կանչէին թագաւորի սենեակ:

15 Երբ լրացաւ Մուրթքէի հօրեղբայր Ամինադաբի դուստր Եսթերի՝ արքայի մօտ մտնելու ժամանակը, աղջիկը զանց չարեց ոչ մի բան, որ երբեւէ պատուիրել էր նրան կանանց պահապան ներքինին, որովհետեւ Եսթերը շնորհ էր գտնում բոլոր նրանց առաջ, ովքեր թէկուզ մի անգամ տեսնում էին նրան: 16 Եսթերն արքայի մօտ մտաւ տասներկուերորդ՝ Ադար ամսին, որ հայերէն Արեգ ամիսն է, նրա թագաւորութեան եօթներորդ տարում: 17 Եսթերն արքային շատ հաճելի թուաց, նա բոլոր կանանցից աւելի շնորհների արժանացաւ, եւ արքան նրա գլխին դրեց կանանց թագը: 18 Ապա թագաւորն իր բոլոր սիրելիների եւ իր զօրականների համար խնջոյք արեց եւ պատուեց Եսթերի հարսանիքը: Նա հրամայեց թեթեւացնել բոլոր նրանց հարկերը, ովքեր իր թագաւորութեան ներքոյ էին: Մուրթքէն խնամում ու կարգաւորում էր թագաւորի տունը: 19 Իսկ Եսթերը չյայտնեց իր հայրենի գաւառն ու երկիրը, որովհետեւ Մուրթքէն այսպէս էր պատուիրել. երկնչել Աստծուց եւ կատարել նրա հրամաններն այնպէս, ինչպէս նա անում էր առաջ, երբ իր մօտ էր: Եւ Եսթերը չփոխեց իր սովորութիւնը:

20 Այդ ժամանակ տրտմեցին արքայի երկու ներքինիները, որոնք նրա դռան պահապաններն էին, որովհետեւ նրանք Մուրթքէին նախանձում էին, որ թագաւորը իրենցից առաւել պատուում էր նրան, եւ ցանկանում էին սպանել Արտաշէս արքային: 21 Այս բանը յայտնի եղաւ Մուրթքէին. նա յայտնեց Եսթերին, իսկ Եսթերն էլ յայտնեց արքային սպանութեան այդ մտադրութիւնը: 22 Արքան կշտամբեց երկու ներքինիներին ու նրանց կախաղան հանեց: Թագաւորը հրամայեց ճշտութեամբ արձանագրել այս դէպքերը, եւ թէ ինչպէս իր նկատմամբ հաւատարիմ եղաւ Մուրթքէն:

ՀԱՄԱՆԻ ԵՒ ՄՈՒՐԹՔԷԻ ԲԱԽՈՒՄԸ

3 Սրանից յետոյ այնպէս եղաւ, որ Արտաշէս արքան փառաւորեց Համանին՝ Դաթուբէի եւ նրա ընկերների հետ միասին. նրան բարձրացրեց առաջին աթոռին՝ իր բոլոր սիրելիներից աւելի: 2 Բոլորը, ովքեր թագաւորի տանն էին, երկրպագում էին Համանին, որովհետեւ թագաւորը հրամայել էր այդպէս անել: Բայց Մուրթքէն նրան չէր երկրպագում: 3 Թագաւորի մեծամեծները խօսեցին Մուրթքէի հետ ու ասացին. «Մուրթքէ՛, ինչո՞ւ ըստ թագաւորի հրամանի, չես երկրպագում Համանին»: 4 Թէեւ նրանք

ամէն օր այդ մասին խօսում էին նրա հետ, բայց նա չէր լսում նրանց. նրանք Համանի առջեւ ամբաստանեցին Մուրթքէին, թէ Մուրթքէն չի հնազանդւում արքայի հրամանին, որովհետեւ հրեայ է: 5 Երբ Համանն իմացաւ, որ նա չի երկրպագում իրեն, շատ զայրացաւ. 6 նա մտածեց, թէ ինչպէս կորստեան մատնի Արտաշէս արքայի թագաւորութեան տակ եղած հրեաներին: 7 Արտաշէսի թագաւորութեան տասներկուերորդ տարում խորհուրդ արեցին թուահամարի վիճակ գցելու. նա օրից օր ու ամսից ամիս վիճակ էր գցում, թէ ինչպէս մի օրում կորստեան մատնի Մուրթքէի ազգը. եւ վիճակն ընկաւ Ադար ամսի տասնչորսին:

ՀԱՄԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀՐԵԱՆԵՐԻՆ ԲՆԱՋՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 Նա խօսեց արքայի հետ ու ասաց. «Կայ մի ազգ, որ ցրուած է ժողովուրդների եւ քո ամբողջ թագաւորութեան մէջ: Այդ ազգը բոլոր ազգերից աւելի ապիրատ ու խորամանկ է եւ արքունի օրէնքներին չի հնազանդւում. արքայի համար օգուտ չէ, եթէ դու թողնես, որ նրանք մնան: 9 Արդ, եթէ արքան կամենայ, նրանց կորստեան մատնելու հրաման կը տայ, իսկ ես արքունի գանձերին կ'աւելացնեմ տասը հազար արծաթ քանքար»: 10 Եւ արքան հանեց իր մատանին ու այն տուեց Համանի ձեռքը, որպէսզի նա գրի ու կնքի հրաման՝ հրեաներին կոտորելու մասին: 11 Թագաւորն ասաց Համանին. «Արծաթդ պահի՛ր քեզ, իսկ այդ ազգի հետ արա՛, ինչպէս որ կամենում ես»: 12 Եւ առաջին ամսին, տասներեքերորդ օրը կանչեցին արքունի գրագիրներին, որոնք, ինչպէս նրանց հրամայել էր Համանը, Արտաշէսի հրամանով գիր գրեցին բոլոր գաւառների զօրավարներին եւ իշխաններին, Հնդկաստանից մինչեւ Եթովպիա՝ հարիւր քսանեօթը գաւառներին եւ նրանց ազգերի իշխաններին՝ իւրաքանչիւրին իր լեզուով: 13 Սուրհանդակների միջոցով հրովարտակներն ուղարկուեցին Արտաշէսի իշխանութեան բոլոր կողմերը՝ տասներկուերորդ ամսին, որ Ադարն է, որպէսզի մի օրում հրեաների ազգը կոտորեն եւ նրանց ամբողջ ունեցուածքն ու հարստութիւնը յափշտակեն: 14 Հրովարտակի հրամանն այսպէս էր.

ԱՐՏԱՇԷՍ ԱՐՔԱՅԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

13 «Ես՝ մեծ արքայ Արտաշէսը, գրում եմ այս հրամանը ձեզ, որ Հնդկաստանից մինչեւ Եթովպիայի կողմերում էք, իշխաններիդ եւ պետերիդ, ձեր հպատակներին եւ իմ այս ամբողջ երկրին: 2 Կամենալով ո՛չ թէ իմ իշխանութեան յարուցած ահով հպարտանալ, այլ քաղցրութեամբ ու խոնարհութեամբ կառավարել, որպէսզի նրանք, որ հնազանդ են, աներկիւղ եւ միշտ ապահով կեանք ունենան, եւ իմ թագաւորութիւնը խաղաղութեամբ մնայ մինչեւ իմ երկրի ծայրամասերը, ինչպէս նաեւ վերահաստատելու համար բոլոր մարդկանց ցանկալի խաղաղութիւնը, 3 ես հարցրի իմ խորհրդակիցներին, թէ ինչպէս կարելի է գլուխ բերել այս ամէնը: Եւ Համանը, որի իմաստութիւնը, անփոփոխ հոգածութիւնը, հաստատուն հաւատարմութիւնը յայտնի է, եւ որով նա արժանացել է իմ երկրորդ աթոռակցութեանը, 4 մեզ ցոյց տուեց, որ ամբողջ աշխարհի ազգերին խառնուած է մի դժնդակ, օրինազանց ժողովուրդ, որ ընդդիմանում է թագաւորներին, չի լսում նրանց, մերժում է նրանց հրամանները, որոնք մեր կողմից սահմանուած ու հաստատուած են եւ պարտադիր են մեր իշխանութեան համար: 5 Արդ, միայն այս ազգն է, որ իր բոլոր ցեղերով հակառակ է միւս ազգերին, բոլոր մարդկանց եւ մերժում է օտար օրէնքներն ու կարգերը: Նրանք վատ մարդիկ են ու մեր օրէնքներին հակառակ, նրանց ձեռքով են կատարւում բոլոր չարիքները, նրանք մեր թագաւորութեան թշնամիներն են: 6 Այժմ որոշում եւ այդ մասին ազդարարում ենք մեր այս գրով՝ հաստատուած մեր եւ մեր գործերի կառավարիչ ու թագաւորութեան երկրորդ հայր Համանի կողմից, այս տարուայ տասներկուերորդ ամսի՝ Ադար ամսի չորրորդ օրը թշնամու սրով իսպառ ոչնչացնել բոլոր

հրեաներին, կանանցով ու որդիներով հանդերձ, առանց գթալու եւ խնայելու: 7 Թող նրանք այս տարի չարաչար մահով մէ՛կ օրում դժոխք իջնեն: Միայն այդ ժամանակից, այդ գործերը կատարելուց յետոյ խաղաղութիւն կը լինի մեզ»:

8 Հրովարտակի պատճէնները գրուեցին եւ տարածուեցին բոլոր գաւառներում: Երբ հրապարակուեց այս հրամանը, բոլորն սկսեցին պատրաստուել այդ օրուան: Այդ լուրերն արագ հասան նաեւ Սուսա քաղաք: Մինչ թագաւորն ու Համանը իրենց մազերը յարդարած զուարճանում էին, ամբողջ քաղաքը խռովութեան մէջ էր:

ՄՈՒՐԹՔԷԻ ՏԱԳՆԱՊԸ

4 Երբ Մուրթքէն իմացաւ կատարուած դէպքերի մասին, պատռեց իր պատմուճանը, քուրձ հագաւ եւ իր գլխին մոխիր ցանեց ու ընթացաւ քաղաքի հրապարակով: Նա բարձր ձայնով աղաղակում էր եւ ասում. «Ինչո՞ւ էք իզուր եւ անտեղի վերացնում իմ ազգը, որ որեւէ չարիք չի գործել»: 2 Նա եկաւ մինչեւ արքունի տան դռներն ու կանգնեց. եւ որովհետեւ նա քուրձ էր հագել եւ մոխիր ցանել գլխին, արժանի չէր արքունի գաւիթ իսկ մտնելու: 3 Բոլոր գաւառներում, ուր որ կարդում էին հրովարտակը, հրեաները աղաղակ էին բարձրացնում, մեծ սուգ ու կոծ անում, քուրձ էին հագնում ու մոխիր լցնում իրենց վրայ: 4 Տիկնանց տիկնոջ ներքինիներն ու նաժիշտները մտան ու այդ մասին պատմեցին Եսթերին: Երբ նա իմացաւ թագաւորի տուած հրամանի մասին, սաստիկ յուզուեց, ապա հագուստ ուղարկեց՝ Մուրթքէին հագցնելու եւ քուրձը նրա վրայից հանելու համար, բայց նա չհամաձայնեց: 5 Եսթերը կանչեց իր ներքինի Առնաթեւին, որ մշտապէս լինում էր նրա մօտ, եւ նրան ուղարկեց Մուրթքէից ճշմարտութիւնն իմանալու, թէ իսկապէս դա այդպէ՞ս է: 7 Մուրթքէն իրազեկ դարձրեց նրան կատարուած դէպքերի մասին, ինչպէս որ դրանք եղել էին, նաեւ այն մասին, որ Համանը խոստացել էր տասը հազար քանքարի գանձ տալ արքային, որպէսզի կոտորի հրեաներին: 8 Եւ նա Սուսա քաղաքում նրանց կոտորելու մասին կարդացուած հրովարտակի պատճէնը տուեց ներքինուն, որպէսզի ցոյց տայ Եսթերին:

ՄՈՒՐԹՔԷԻ ՊԱՏՈՒԻՐԸ ԵՍԹԵՐԻՆ

15 Մուրթքէն, պատուիրելով, ասաց նրան, որ Եսթերը մտնի արքայի մօտ, խնդրի նրանից եւ աղաչի ժողովրդի համար: 2 «Յիշի՛ր, – ասաց, – քո տառապանքի օրերը եւ թէ ինչպէս մեծացար իմ ձեռքերի մէջ, որովհետեւ Համանը՝ արքայի երկրորդը, նրա հետ խօսել է մեզ մահուան մատնելու մասին: 3 Արդ, Տէր Աստծուն կ'աղաչես պաղատանքով եւ թագաւորիդ հետ կը խօսես մեր մասին, որպէսզի մեզ փրկես այս մահուանից»: 4 Առնաթեւը մտաւ Եսթերի մօտ եւ նրան ասաց այս բոլոր բաները: 5 Եսթերն ասաց Առնաթեւին. 6 «Դու գնա՛ Մուրթքէի մօտ եւ ասա՛ նրան, թէ թագաւորութեան բոլոր ազգերը գիտեն, որ եթէ որեւէ տղամարդ կամ կին մտնի արքայի մօտ՝ ներքին սենեակը, առանց նրա կանչելու, փրկութիւն չկայ նրան. բայց ապրում է միայն նա, ում արքան մեկնում է իր ոսկի գաւազանը: Իսկ ես կանչուած չեմ մտնելու արքայի մօտ՝ ահա արդէն այս երեսուն օր է»:

ԵՍԹԵՐԻ ԽՈՍՏՈՒՄԸ

4 12 Առնաթեւը Մուրթքէին պատմեց Եսթերի բոլոր խօսքերը: 13 Մուրթքէն ասաց Առնաթեւին. «Դու գնա՛ եւ ասա՛ նրան. "Եսթե՛ր, դու մտքումդ մի՛ ասա, թէ այս թագաւորութեան մէջ բոլոր հրեաներից միայն ես կը փրկուես. 14 եթէ դու այս ժամանակ չլսես ու լռես, ապա այլ տեղից հրեաներին օգնութիւն եւ փրկութիւն կը լինի, իսկ դու եւ քո հօր տունը կը կորչէք. եւ, ո՛վ գիտէ, գուցէ հէնց այսպիսի ժամանակի համար դու թագադրուեցիր"»: 15 Եւ Եսթերը ներքինուն կրկին ուղարկեց Մուրթքէի մօտ եւ ասաց. 16 «Դու գնա՛ եւ հաւաքի՛ր Սուսա քաղաքում եղած հրեա-

ներին, ինձ համար ծո՛մ պահեցէք եւ երեք օր՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը չուտէք ու չխմէք, իսկ ես եւ իմ նաժիշտները նոյնպէս ծոմ կը պահենք: Ապա ես կը մտնեմ արքայի մօտ, թէեւ այդ բանն անելն արքայի օրէնքներից դուրս է. սակայն ես կ՚անեմ դա. եթէ մեռնելու իսկ լինեմ, չեմ յապաղի»: 17 Եւ Մուրթքէն գնաց ու արեց՝ ինչպէս իրեն պատուիրել էր Եսթերը:

ՄՈՒՐԹՔԷԻ ԱՂՕԹՔԸ

13 8 Մուրթքէն թախանձագին աղաչեց Տիրոջը՝ մտաբերելով եւ յիշելով Տիրոջ փառաւոր գործերը: Նա ասաց. 9 «Տէ՛ր Աստուած, Թագաւո՛ր Ամենակալ, քո հրամանին է սպասում ամէն ոք, ոչ ոք չի կարող ընդդիմանալ քեզ, եթէ դու կամենում ես ապրեցնել քո ժողովրդին՝ Իսրայէլին, 10 որովհետեւ դու, Տէ՛ր, ստեղծեցիր երկինքն ու երկիրը եւ բոլոր սքանչելիքները. 11 դու տիրում ես ամէն բանի վրայ, եւ ոչ ոք չի կարող հակառակ լինել քո տէրութեանը. դու գիտես ամէն ինչ. 12 որովհետեւ ես ո՛չ հպարտութիւնից, ո՛չ ամբարտաւանութիւնից եւ ո՛չ էլ թշնամանքից ելնելով չերկրպագեցի ամբարտաւան Համանին: 13 Մինչդեռ ես հաճոյքով կը կամենայի համբուրել նրա ոտքերի գարշապարները Իսրայէլի այս տան փրկութեան համար: 14 Բայց ես այս բանն արեցի, որպէսզի փառք չտամ մարդ արարածին, այլ միայն քեզ՝ ճշմարիտ Աստծուդ. ես չեմ երկրպագի որեւէ մէկին, այլ միայն քեզ՝ իմ Տիրոջը. ես դա չարեցի ամբարտաւանութեամբ: 15 Արդ, Աբրահամի Տէ՛ր Աստուած, դու խնայի՛ր քո ժողովրդին, քանզի մեր դէմ բարձրացել են ապականիչները, որովհետեւ ցանկանում են կորստի մատնել քո սկզբնական ժառանգութիւնը: 16 Մի՛ անտեսիր քո բաժինը, որ դու ինքդ փրկեցիր Եգիպտացիների երկրից: 17 Լսի՛ր, Տէ՛ր, իմ աղօթքի ձայնը եւ քաւի՛չ եղիր քո ժառանգութեանը, մեր սուգն ուրախութեա՛ն փոխիր, որպէսզի մենք՝ ապրողներս, օրհնենք քո մեծ անունը, Տէ՛ր: Մի՛ ապականիր այն բերանը, որ օրհնում է քեզ»:

18 Եւ բոլոր իսրայէլացիները, իրենց ամբողջ զօրութեամբ, կանչեցին Տիրոջը, քանի որ մահը նրանց առջեւ էր:

ԵՍԹԵՐԻ ԱՂՕԹՔԸ

14 Եսթեր տիկինը մեծ նեղութիւնների մէջ ապաւինել էր Տիրոջը: 2 Նա վրայից հանեց թագաւորութեան փառքի զգեստները եւ հագաւ նեղութեան ու սգի քուրձ, զանազան թանկարժէք իւղերի ու խնկերի փոխարէն մոխիր ու աղբ լցրեց իր գլխին, իր մարմինը ենթարկեց ծանր չարչարանքների եւ իր մարմնի այն բոլոր մասերը, որ զարդարում էր ցնծութեան ժամանակ, ծածկեց իր մազերի գիսակներով: 3 Նա բազում թախանձագին աղօթքներ մատուցելով՝ Իսրայէլի Տէր Աստծուն խնդրում էր եւ ասում. «Տէ՛ր իմ եւ Թագաւո՛ր մեր, դո՛ւ միայն կարող ես օգնել ինձ՝ միայնակիս, ես քեզանից բացի ուրիշ օգնական չունեմ ինձ, քանզի իմ առջեւ մեծ վտանգ կայ: 4 Ես իմ ծնունդից ի վեր լսում էի իմ հայրենի ազգից, 5 թէ դու, Տէ՛ր, բոլոր ազգերից ընտրեցիր Իսրայէլին եւ նրանց ազգատոհմից՝ մեր հայրերին, իբրեւ յաւիտենական ժառանգութիւն քեզ, եւ նրանց համար արեցիր այն ամէնը, ինչ ասացիր»: Նա կրկին շարունակելով իր աղօթքը՝ այսպէս էր ասում. «Աստուա՛ծ Աբրահամի, Աստուա՛ծ Իսահակի եւ Աստուա՛ծ Յակոբի, դու օրհնեալ ես յաւիտեան. հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու Ենոքին այս երկրից տարար երկինք, ապաշխարութիւնից՝ դէպի յաւիտենական կեանք: Հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու Նոյին փրկեցիր ջրհեղեղից: Հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու Աբրահամին իր մարդկանց առջեւ թագաւորների մէջ փառք տուեցիր: Հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու Յովնանին կէտ ձկան մէջ կենդանի պահեցիր: Իմ հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու երեք մանուկներին հնոցի կրակից փրկեցիր, իսկ Դանիէլին ապրեցրիր առիւծների գբի մէջ: Իմ հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու Հրէաստանի Եզեկիա արքային, որ մահուան

էր դատապարտուած, փրկեցիր, եւ երբ նա իր կեանքի համար աղօթում էր քեզ, ողորմեցիր նրան, շնորհ տուիր ու նրա կեանքին աւելացրիր տասնհինգ տարի: Իմ հայրենի գրքերից ես լսեցի, Տէ՛ր, թէ դու, երբ Աննան աղօթքներով ու պատանքով զաւակ էր խնդրում քեզանից, դու նրան, Տէ՛ր, շնորհեցիր մեծն Սամուէլին: 6 Եւ այժմ, Տէ՛ր, մենք մեղք գործեցինք քո առջեւ, եւ դու մեզ մատնեցիր մեր թշնամիների ձեռքը 7 այն բանի փոխարէն, որ մենք փառաւորեցինք նրանց աստուածներին: Արդար ես դու, Տէ՛ր: 8 Բայց նրանք չբաւարարուեցին նրանով, որ մենք ծառայում ենք իրենց, այլ իրենց ձեռքերը դրին իրենց կուռքերի վրայ՝ 9 երդուելով վերացնել այն, ինչ սահմանել է քո բերանը, եղծանել քո ժառանգութիւնը, փակել քեզ օրհնող բերանները, մարել քո Տան եւ քո սուրբ սեղանի փառքը, 10 բացել ազգերի բերանները՝ փառաւորելու համար իրենց աստուածներին, որ ոչնչութիւն են, փառաւորելու համար այս ժամանակի մարմնաւոր թագաւորներին: 11 Արդ, Տէ՛ր Աստուած, քո ժառանգութեան վիճակը մի՛ մատնիր նրանց ձեռքը, որ ոչինչ են, որպէսզի մեր կործանման վրայ ուրախութեամբ չցնծան, այլ շրջի՛ր նրանց մտադրութիւնը իրե՛նց իսկ վրայ եւ խայտառակի՛ր նրան, ով ելել է մեր դէմ: 12 Յիշի՛ր, Տէ՛ր, եւ մի՛ անտեսիր մեզ մեր նեղութեան ժամանակ: Դու, որ բոլոր թագաւորների թագաւորն ես եւ տէրերի Տէրը, համարձակութի՛ւն տուր ինձ 13 եւ իմ բերանում դի՛ր դիւրին խօսքեր, որ շնորհ գտնեմ թագաւորի առաջ, շրջի՛ր նրա սիրտը ատելութեամբ դէպի մեր թշնամին՝ կոտորելու համար նրան եւ նրա կամակիցներին: 14 Իսկ մեզ փրկի՛ր քո բարձր բազկով եւ օգնի՛ր ինձ՝ միայնակիս, որը, բացի քեզնից, ուրիշ օգնական չունի, Տէ՛ր: 15 Տէ՛ր, դու բոլորի սիրտը գիտես եւ ճանաչում ես. ես ատեցի այս անօրէնների փառքը, զզուած եմ այս անթլփատների անկողնուց եւ այս բոլոր օտար ստացուածքներից: 16 Դու գիտես, Տէ՛ր, իմ կարիքները, քանզի ինձ համար գարշելի է այս թագը, որ իմ գլխին է. սրանից գարշում եմ՝ ինչպէս կանանց ամսականի արնոտ լաթից, եւ չեմ կրում այն, երբ ներսում հանգստանում եմ: 17 Քո աղախինը չկերաւ Համանի սեղանից, ես չփառաւորեցի թագաւորի գինարբուքը եւ չխմեցի կուռքերին զոհաբերուած նրանց գինուց: 18 Այն օրից, ինչ քո աղախինը մտել է թագաւորի մօտ, մինչեւ այժմ, ուրախացել է միայն քեզանով, Տէ՛ր, Տէ՛ր Աստուած Աբրահամի: 19 Աստուա՛ծ, որ հզօր ես բոլորի վրայ, լսի՛ր մեր՝ անյոյսներիս ձայնը, փրկի՛ր մեզ այն ձեռքերից, որ չարչարում են մեզ, ազատի՛ր ինձ իմ երկիւղից եւ ապրեցրո՛ւ քո ժողովրդին՝ Իսրայէլին»:

ԵՍԹԵՐԻ ԱՅՑԸ ԹԱԳԱՒՈՐԻՆ

15 4 Երրորդ օրը, երբ նա վերջացրեց իր աղօթքը, հանեց իր վրայից սգոյ հանդերձը, հագաւ իր ծիրանի զգեստները եւ շատ գեղեցիկ դարձաւ: 5 Նա կանչեց իր ամենատես եւ բոլորի փրկիչ Աստծուն, իր հետ վերցրեց իր սիրելի երկու նաժիշտներին, 6 որոնցից մէկը վեր էր բռնել նրա զգեստի քղանցքը, 7 իսկ միւսի ուսով նա գցել էր իր թեւը: 8 Նա ամօթահար՝ վախենում էր իր երիտասարդական գեղեցկութեան համար: Նրա երեսը զուարթ էր՝ սիրելու համար, բայց նրա սիրտը նեղուած էր ահից: 9 Նա անցաւ ապարանքի բոլոր դռներով ու կանգնեց թագաւորի առջեւ: Թագաւորը նստել էր իր արքայական աթոռին ու հագել էր իր փառքի պատմուճանը, որն ընդելուզուած էր ոսկով, մարգարտով ու թանկարժէք քարերով, իսկ տեսքը խիստ ահաւոր էր: 10 Թագաւորը վեր բարձրացրեց իր դէմքը, որ վառուում էր փառքով, եւ նայեց: Տիկինը շփոթուեց, փոխեց իր գոյնը, թուլացաւ եւ թեքուեց իր առջեւից գնացող նաժշտի վրայ: 11 Աստուած թագաւորի հոգին շրջեց դէպի հեզութիւն. թագաւորը շտապ վեր կացաւ, մեծ երկիւղով արագ իջաւ իր աթոռից եւ տիկնոջն առաւ իր գիրկը, կանգնեցրեց նրան: Նա աղաչում, մխիթարում էր նրան մեղմ խօսքերով եւ ասում. 12 «Քեզ ի՞նչ է եղել, Եսթե՛ր տիկին, ես քո եղբայրն եմ, համարձա՛կ եղիր, չե՛ս մեռնի.

13 քանի որ իմ եւ քո հրամանները նոյնն են. մօտեցի՛ր, 14 վերցրո՛ւ ոսկի գաւազանն ու դի՛ր քո՝ տիկնոջդ պարանոցի վրայ»: Ապա նա համբուրեց նրան ու ասաց. 15 «Խօսի՛ր ինձ հետ»: 16 Եսթերն ասաց նրան. «Ես քեզ տեսայ, տէ՛ր, ինչպէս Աստծու հրեշտակ, եւ իմ սիրտը խռովուեց քո փառքի ահից, 17 քանզի սքանչելի ես, տէ՛ր իմ, եւ քո երեսը լի է շնորհով»: 18 Եւ մինչ նա խօսում էր նրա հետ, երկրորդ անգամ թուլացած ընկաւ թագաւորի ահից: 19 Թագաւորն ու նրա բոլոր ծառաները շատ անհանգիստ էին. թագաւորի սպասաւորներն աղաչում էին տիկնոջը: Թագաւորն ասաց. «Ի՞նչ ես կամենում, Եսթե՛ր, եւ ի՞նչ է քո խնդրանքը. ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ խնդրես նոյնիսկ իմ թագաւորութեան կէսը, կը տամ քեզ»:

ՀԱՄԱՆԻ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՐԹՔԷԻՆ ԿԱԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 4 Եսթերն ասաց. «Իմ այս օրը նշանաւոր է. եթէ արքան կամենայ, դու եւ Համանը կը գաք իմ խնջոյքին, որ տալու եմ այսօր»: 5 Թագաւորն ասաց. «Շտապ կանչեցէ՛ք Համանին, եւ կատարենք Եսթերի ասածը»: Նրանք երկուսով եկան Եսթերի ասած խնջոյքին: 6 Եւ մինչ նրանք գինի էին խմում, արքան ասաց Եսթերին. «Ի՞նչ ես կամենում, Եսթե՛ր տիկին, ինչ էլ խնդրես՝ կը տամ քեզ»: 7 Եսթերն ասաց. «Իմ աղաչանքն ու խնդրանքն այս է. 8 եթէ ես շնորհ գտայ արքայի առջեւ, թող գան արքան եւ Համանը խնջոյքին, որ ձեզ համար կրկին տալու եմ վաղը»: 9 Համանն արքայի մօտից ելաւ մեծ ուրախութեամբ: Երբ Համանը թագաւորի տանը տեսաւ Մուրթքէին՝ հրեայ մարդուն, շատ բարկացաւ: 10 Ապա նա մտաւ իր տունը, կանչեց իր սիրելիներին ու իր կին Զոսարրային 11 եւ նրանց պատմեց իր մեծութեան ու փառքի մասին, որ իրեն տուել էր թագաւորը, եւ թէ ինչպէս իրեն դարձրել էր իր թագաւորութեան մէջ առաջինը: 12 Համանն ասաց. «Եսթեր տիկինն իր խնջոյքին արքայի հետ չկանչեց ուրիշ մէկին, բացի ինձանից. եւ վաղը կրկին հրաւիրեց ինձ: 13 Բայց ինձ համար հաճելի չէ, երբ թագաւորի տանը տեսնում եմ Մուրթքէին՝ հրեայ մարդուն»: 14 Իր կին Զոսարրան եւ իր սիրելիներն ասացին նրան. «Հրամա՛ն տուր, որ յիսուն կանգուն բարձրութեամբ մի կախաղան պատրաստեն. առաւօտեան կ'ասես արքային, որ Մուրթքէն կախաղան հանուի, իսկ դու արքայի հետ կը մտնես խնջոյքի եւ ուրախ կը լինես նրա հետ»: Այս խօսքը հաճելի թուաց Համանին, եւ կախաղանը պատրաստեցին:

ԹԱԳԱՒՈՐԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ՄՈՒՐԹՔԷԻՆ

6 Այդ գիշեր Տէր Աստուած փախցրեց արքայի քունը: Արքան ասաց իր ատենադպրին, որ նա իր առջեւ բերի եւ կարդայ հրովարտակի գիրը: 2 Սա գտաւ հրովարտակը, որ գրուած էր Մուրթքէի մասին, թէ նա ինչպէս թագաւորին յայտնել էր այն երկու ներքինիների մասին, որոնք հսկում էին թագաւորի ապարանքը, եւ թէ ինչպէս ուզում էին սպանել Արտաշէս արքային: 3 Թագաւորն ասաց. «Իսկ ի՞նչ շնորհ կամ պատիւ տուեցինք Մուրթքէին»: Արքայի սպասաւորներն ասացին. «Երբ իմացար քո նկատմամբ նրա հաւատարմութիւնն ու հոգածութիւնը, նրա համար ոչինչ չարեցիր»: Առաւօտեան եկան թագաւորի գաւիթը: 4 Արքան ասաց. «Ո՞վ է իմ գաւթում»: Համանը եկել էր թագաւորից հրաման առնելու, որ Մուրթքէին կախի այն կախաղանից, որ պատրաստել էր տուել նրա համար: 5 Արքայի սպասաւորներն ասացին. «Ահա Համանը դրսում է»: Արքան ասաց. «Թող ներս գայ»: 6 Ապա թագաւորն ասաց Համանին. «Ի՞նչ անեմ ես այն մարդուն, որին կամենում եմ մեծարել»: Համանը մտածեց ու իր մտքում ասաց. «Ո՞ւմ է կամենում արքան մեծարել, եթէ ոչ՝ ինձ»: 7 Եւ ասաց արքային. «Այն մարդուն, որին արքան կամենում է մեծարել, թող նրա համար բերեն արքայական պատմուճանը 8 եւ այն նժոյգը, որին հեծնում է արքան, եւ թող դրանք տան արքայի սիրելիներից պատուարժան մէկին, 9 որպէսզի նա պատմուճանը հագցնի այն մարդուն,

որին սիրում է արքան, եւ նրան նստեցնի արքայական նժոյգին. թող քաղաքի հրապարակներում յայտարարեն ու ասեն. «Այսպէս կը լինի ամէն մարդու հետ, որին արքան կը մեծարի»: 10 Եւ արքան ասաց Համանին. «Լա՛ւ ասացիր. այդ կ'անես իմ տան խնամակալի՝ հրեայ Մուրթքէի համար. թող քո ասած խօսքերից որեւէ բան չվրիպի»: 11 Համանն առաւ պատմուճանն ու արքայական նժոյգը, հագցրեց Մուրթքէին, նրան նստեցրեց նժոյգին եւ տարաւ քաղաքի փողոցներով. նա յայտարարում էր ու ասում. «Այսպէս կը լինի ամէն մարդու հետ, որին արքան կը կամենայ մեծարել»:

12 Ապա Մուրթքէն վերադարձաւ արքունի ապարանք, իսկ Համանը գնաց իր տունը՝ գլուխը կախած եւ տրտմութեամբ լի: 13 Համանն իր կին Զոսարրային պատմեց, թէ ինչ էր պատահել իր հետ: Նրա սիրելիներն ու կինն ասացին նրան. «Եթէ Մուրթքէն հրեաների ազգից էր եւ իշխան դարձաւ, հնազանդուի՛ր նրան, որովհետեւ դու չես կարող նրան չարիք հասցնել, քանի որ Տէր Աստուած նրա հետ է, եւ Տէ՛րն է փառաւորել նրան»: 14 Եւ մինչ նրանք դեռ խօսում էին, երկու ներքինիներն եկան Համանին կանչելու տիկնոջ ճաշին:

ՀԱՄԱՆԻ ՄԱՀԱՊԱՏԻԾԸ

7 Թագաւորն ու Համանը եկան տիկնոջ գինարբուքին: 2 Երկրորդ օրն էլ, մինչ գինի էին ըմպում, արքան ասաց Եսթերին. «Ի՞նչ է պէտք քեզ, Եսթե՛ր տիկին, եւ ի՞նչ է քո խնդրանքը կամ աղաչանքը. քո՛նը կը լինի մինչեւ իմ թագաւորութեան կէսը»: 3 Եսթերը պատասխանեց ու ասաց. «Եթէ քո առջեւ շնորհ գտայ, արքա՛յ, իմ խնդրանքը մի անձ է միայն, եւ թող իմ աղաչական խօսքն ընդունելի լինի: 4 Արդարեւ, ես եւ իմ ժողովուրդը վաճառուեցինք կորստեան, ստրկութեան ու յափշտակութեան համար, թէ՛ մենք եւ թէ՛ մեր որդիները. բայց ես չհաւատացի: Արդ, բանսարկու մարդն արժանի չէ թագաւորի տանը լինելու»: 5 Արքան ասաց. «Ո՞վ է եւ ո՞ւր է նա, ով համարձակուեց անել այս բաները»: 6 Եսթերն ասաց. «Այդ թշնամի մարդը Համանն է, որ չար է, նա՛ արեց»: Համանն ահաբեկուեց եւ խիստ վախեցաւ արքայից ու տիկնոջից: 7 Թագաւորը վեր կացաւ ճաշից ու մտաւ արքունի ծաղկանոցը, իսկ Համանը ցանկանում էր հրաժեշտ տալ տիկնոջը, քանզի մեծ վախի մէջ էր: 8 Թագաւորը վերադարձաւ ծաղկանոցից ու տեսաւ, որ Համանն ընկած էր տիկնոջ գահոյքի առջեւ եւ նրան աղաչում էր իր փրկութեան համար: Թագաւորն ասաց. «Արդ, հասար այն աստիճանի, որ ուզում ես իմ տանն իմ կնոջը բռնաբարել»: Երբ Համանը լսեց այդ, ահաբեկուելով ու ամօթահար, ընկաւ երեսի վրայ: 9 Ներքինիներից մէկը՝ Բուգաթանը, ասաց արքային. «Ահա Համանն արքայի սիրելի Մուրթքէի համար նաեւ յիսուն կանգուն մի կախաղան է պատրաստել եւ դրել իր տանը»: Թագաւորն ասաց. «Թող նա խաչուի դրա վրայ»: 10 Եւ Համանին կախեցին այն կախաղանից, որ նա պատրաստել էր Մուրթքէի համար: Ապա թագաւորը հանդարտուեց իր բարկութիւնից:

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀՐԵԱՆԵՐԻ

8 Այդ նոյն օրը թագաւորը Եսթերին նուիրեց քսու Համանի գանձը: Թագաւորը կանչեց Մուրթքէին, քանզի Եսթերը նրան յայտնեց, որ նա իր ազգականն է: 2 Թագաւորը վերցրեց այն մատանին, որ հանել էր Համանի մատից, եւ այն տուեց Մուրթքէին. իսկ Եսթերը Մուրթքէին նշանակեց Համանի ամբողջ ունեցուածքի կառավարիչ: 3 Նա շարունակեց խօսել արքայի հետ, ընկաւ նրա ոտքերի առջեւ եւ աղաչում էր, որ վերացուի այն պատուհասը, որ ծրագրել էր Համանը հրեաների դէմ: 4 Եւ արքան ոսկի գաւազանը մեկնեց Եսթերին: Եսթերը վեր կացաւ, որ գնայ արքայի սենեակը: 5 Եսթերն ասաց. «Եթէ դու կամենաս, եւ եթէ ես շնորհ եմ գտել քո առաջ, թող արքան սուրհանդակներ ուղարկի եւ վերադարձնի հրովարտակները, որ գրուեցին Համանի կողմից քո

թագաւորութեան մէջ եղած հրեաներին կոտորելու մասին: 6 Ես ինչպէ՞ս կարող եմ տեսնել իմ ժողովրդին հասած չարիքը եւ կամ ինչպէ՞ս կարող եմ միայն ե՛ս ապրել իմ հայրենի գաւառի բնակիչներից»: 7 Թագաւորն ասաց Եսթերին. «Եթէ Համանի ամբողջ գոյքն ու հարստութիւնը քեզ նուէր տուեցի եւ նրան էլ կախաղան հանեցի, որովհետեւ նա հրեաների վրայ ձեռք էր բարձրացրել, այլեւս ի՞նչ ես խնդրում: 8 Արդ, դուք գրեցէ՛ք իմ խօսքով եւ իմ հրամանով, ինչպէս դուք կը ցանկանաք, եւ թող այն կնքուի իմ մատանիով, որովհետեւ ինչ որ գրէք, դա իմ՝ արքայիս տուած համանն է, եւ չի գտնուի մէկը, որ ընդդիմանայ այդ հրամաններին»:

9 Արտաշէսի թագաւորութեան քսաներեքերորդ տարուայ Նիսան ամսի, որ Արեգն ամիսն է, առաջին օրը կանչեցին գրագիրներին եւ, ինչպէս հրաման էր տրուած, աշխարհագիր անող գրագիրների կողմից թագաւորի անունով հրովարտակներ գրուեցին բոլոր գաւառների բոլոր իշխաններին եւ կուսակալներին, նախարարներին եւ սատրապներին, Հնդկաստանից մինչեւ Եթովպիա՝ հարիւր քսանեօթը կուսակալներին, ըստ գաւառների՝ նրանց իւրաքանչիւրի լեզուով: 10 Հրովարտակները կնքուեցին թագաւորի մատանիով եւ մէկ օրում, Ադար ամսի տասներեքին, սուրհանդակների միջոցով ուղարկուեցին թագաւորութեան բոլոր վայրերը, որպէսզի հրեաները ողջ մնան բոլոր քաղաքներում իրենց անփոփոխ օրէնքներով, 11 օգնական եւ թիկունք լինելու միմեանց՝ հատուցելու համար իրենց թշնամիներին, ինչպէս որ կը կամենան:

ԱՐՏԱՇԷՍԻ ԱՆՈՒՆԻՑ ԳՐՈՒԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

16 Այս էր պատճէնն այն հրովարտակի, որ կնքուած էր թագաւորի մատանիով.

1 Ես՝ մեծ թագաւոր Արտաշէսը, ողջունում եմ ձեզ, որ Հնդկաստանից մինչեւ Եթովպիայի կողմերում էք, հարիւր քսանեօթը գաւառների նախարարներիդ եւ իշխաններիդ, ձեզ, որ մեր մտքի եւ մեր սրտի մէջ էք: 2 Շատերը, որ շատ անգամ իրենց բարերարների քաղցր վերաբերմունքի շնորհիւ յաճախակի պատիւների են արժանացել, չափից աւելի մեծամտացան իրենց խորհուրդներով: 3 Նրանք ոչ միայն աշխատում են մեր հպատակներին չարչարել, այլ իրենց յանդգնութեամբ չեն կարողանում հանդուրժել նաեւ մեծերին եւ մեքենայութիւններ են նիւթում իրենց բարերարների հանդէպ: 4 Այդպիսով նրանք ոչ միայն վերացնում են մարդկանցից երախտագիտութիւն ստանալու հնարաւորութիւնը, այլեւ յղփանալով ու գոռոզամտանալով՝ ուզում են անհնարին գովասանքներ ստանալ: Նրանք չգիտեն, որ այդ ամենի վերատեսուչը յաւերժական Աստուածն է: Նրանք ատելի չարութեամբ կարծում են, թէ կը խուսափեն դատաստանից: 5 Շատ անգամ շատերը, որ իշխանութեան են նշանակուած եւ որոնց գործ է վստահուած, իրենց համար հանգստութիւն ու մխիթարութիւն են համարում անմեղ արիւն թափելը: 6 Դրա համար էլ այդպիսի մէկը կրեց իր արժանի պատիժը, որը, չարակամութեամբ եւ ատելութեամբ, առանց խորհելու մեզ մօտ ամբաստանեց նրանց, ովքեր պատուի են արժանացել մեր կողմից: 7 Իսկ այժմ պէտք է առաւել զգոյշ լինել, քան նախորդ անգամ, ինչպէս սովորեցրինք ձեզ, որովհետեւ այն անգամ գրուեց միայն այդպիսի մարդկանց մասին եւ ոչ թէ նրանց արած գործերի, մարդիկ, որոնք անարժանաբար հզօրացել էին իրենց ժառանգած իշխանութեամբ: 8 Արդ, նայելով թագաւորութեանս, այնպէս արէք, որ այն լինի առանց խռովութեան, քանի որ մենք բոլոր մարդկանց շնորհեցինք ապրել խաղաղութեամբ: 9 Այժմ վերադարձէ՛ք նոյն վիճակին. թող մերժուի նախորդ հրամանը. հարկաւոր է հեզութեամբ ու խաղաղութեամբ ընդառաջել 10 եւ ոչ ինչպէս Ամադոթի որդի Համան Մակեդոնացին, որը իսկապէս օտար լինելով պարսից զարմին եւ այն քաղցր վերաբերմունքին 11 ու մարդասիրութեանը, որ ունենք բոլոր ազգերի նկատմամբ, եւ որոնք խիստ ատելի, մերժելի եւ խորթ էին նրա համար այն աստիճան, որ, թէեւ նա կոչուեց մեր

աթոռակիցը, որին երկրպագում էին բոլորը, որ մեր իշխանութեան տակ են, եւ որին պատուեցինք մեր երկրորդ աթոռին նստեցնելով, 12 բայց նա իր ամբարտաւանութեան մէջ չհանդարտուեց, ջանաց մեքենայութիւն նիւթել՝ հեռացնելու մեզ այս իշխանութիւնից եւ զրկելու հոգուց: 13 Մեր փրկիչ ու երախտաւոր Մուրթքէին եւ իմ թագաւորութեանը հաւասար չքնաղ ու անարատ Եսթեր տիկնանց տիկնոջը, իր ամբողջ ազգով հանդերձ, բազում զուր եւ դատարկ մեղքեր վերագրելով, նա ցանկացաւ առանց պատճառի կործանել: 14 Այս եղանակով նա մտածում էր իմ պարսկական թագաւորութիւնը վերածել աւերի ու անապատի եւ այն կրկին վերադարձնել մակեդոնացիներին: 15 Իսկ մենք տեսնում ենք, որ բազմահնար այդ սատակչի կողմից կոտորուելու մատնուած հրեաների մէջ չարութեան որեւէ գործ չկայ, եւ նրանք արդար օրէնքներով ընթացող մարդիկ են: 16 Սրանք որդիներն են բարձրեալ, մեծ ու կենդանի Աստծու, որ մեր եւ մեր ազգի թագաւորութիւնը վարում է իր բարութեան եւ սիրոյ առատութեամբ: 17 Արդ, լաւ կ'անէք, որ ոչինչ չձեռնարկէք ըստ այն հրովարտակի, որ Համանի հրամանն է եւ ուղարկուած է ձեզ: 18 Նա ինքնապլուխ է արել այդ բանը, դրա համար էլ նա Սուսա քաղաքի դռների մօտ իր ամբողջ ընտանիքով հանդերձ կախաղան է հանուել՝ վրէժի արժանի հատուցումն իր վրայ ընդունելով Ամենակալ Աստծուց, որը նրան արագ հատուցեց իր դատաստանը: 19 Այս հրովարտակի պատճէնը հանեցէ՛ք, դրէ՛ք տեսանելի տեղերում, տարածեցէ՛ք ամենայն հոգածութեամբ, որպէսզի հրեաները կատարեն իրենց օրէնքները: 20 Արդ, թող նրանք քաջալերուեն, որովհետեւ ինչպէս նեղութեան ժամանակ նրանց չարչարում էին, թող նրանք այդպէս էլ հատուցեն իրենց թշնամիներին Ադար ամսի նոյն՝ տասներկուերորդ եւ տասներեքերորդ օրը. 21 քանզի Ամենազօր Աստուած հէնց ինքը այդ ընտրեալ ազգի կործանման փոխարէն նրանց ուրախութիւն տուեց: 22 Եւ դուք այժմ ձեր օրէնքով՝ ձեր տարեկան տօներին եւ նշանաւոր օրերին ուրախութիւն կ'անէք, 23 որպէսզի, ինչպէս մինչեւ հիմա, այնպէս էլ սրանից յետոյ եւս փրկութիւն լինի մեզ եւ պարսիկներիս համար վաստակածներին, իսկ կորստեան յիշատակ նրանց, ովքեր մեզ համար մահ էին նիւթում: 24 Բոլոր այն քաղաքներն ու գաւառները, որոնք չեն գործի ըստ մեր այս խօսքերի, սրով, հրով եւ ցասումով պիտի աւերուեն եւ դատարկուեն ոչ միայն մարդկանցից, այլեւ երկրի գազաններից եւ թռչուններից, որոնք յաւիտեան պիտի թողնեն եւ հեռանան դրանցից:

8 13 Այս հրովարտակի պատճէնները թող ցոյց տրուելով կարդացուեն իմ թագաւորութեան մէջ՝ բոլորի աչքի առաջ. ովքեր պատրաստուել էին կոտորելու հրեաներին, թող այս օրը կոտորեն նրանց թշնամիներին: Ողջ լինէք»:

14 Սուրհանդակները ելան փութով կատարելու թագաւորի կարգադրութիւնը: Հրամանը գրուեց եւ դրուեց Սուսա քաղաքում: Եւ այն օրերին, երբ տեղի ունեցաւ այս բանը, 15 Մուրթքէն դուրս ելաւ թագաւորի մօտից: Նա հագել էր արքայական պատմուճանը, գլխին ոսկի պսակ ունէր եւ բեհեզից ու ծիրանուց թագ: Ովքեր Սուսա քաղաքում էին, տեսան եւ շատ ուրախացան: 16 Հրեաների համար մեծ լոյս ծագեց, եւ նրանք շատ ուրախացան: 17 Բոլոր քաղաքներում ու գաւառներում, ուր կարդում էին արքունի հրամանները, խնդութիւն եւ ուրախութիւն էր լինում նրանց համար: Հեթանոսներից շատերը հրէութիւն էին ընդունում եւ թլփատւում հրեաների ահի պատճառով:

ՀՐԵԱՆԵՐԻ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

9 Տասներկուերորդ ամսին, որ Ադարն ամիսն է, նրա տասներեքերորդ օրը եկաւ հասաւ արքունիքից գրուած հրովարտակը: Այդ նոյն օրը կոտորւում էին նրանք, որոնք միահամուռ հակառակուել էին հրեաներին: 2 Նրանցից ոչ մէկը ամենեւին չէր ընդդիմանում հրեաներին, քանզի վախենում էին

նրանցից 3 այն պատճառով, որ նրանց
նախարարների վրայ կարգուած իշ-
խանները, կուսակալները եւ արքունի
պաշտօնեաները պատուում էին հրեա-
ներին, քանի որ Մուրթքէի ահը կար
նրանց վրայ: 4 Արքայի հրովարտակով
իր ամբողջ թագաւորութեան մէջ
Մուրթքէի անունը յիշատակելու հրա-
ման էր տրուած: 6 Սուսա քաղաքում
հրեաները կոտորեցին մօտ հինգ հարիւր
մարդ. 7 Փարակնին եւ Նեստէնին, Դո-
փոնին եւ Փազգային, 8 Փարդաթային
եւ Բարէային, Սարաբաքային եւ Մար-
մասիսին, 9 Արուփէսնին, Արսէսնին եւ
Արբութեթանին, 10 որոնք որդիներն էին
հրեաների թշնամի Համանի, որը Բերգէի
որդի Ամադոթի որդին էր: 11 Այն օրը
նրանք ոչինչ չյափշտակեցին† : Արքային
ներկայացրին Սուսա քաղաքում կոտո-
րուածների թիւը: 12 Արքան ասաց Ես-
թերին. «Հրեաները Սուսա քաղաքում
հինգ հարիւր մարդ են կոտորել. իսկ
ի՞նչ ես կարծում, քաղաքից դուրս ինչ-
քա՞ն աւելի շատ մարդ կոտորած կը
լինեն: Արդ, է՞լ ինչ ես կամենում, որ
անեմ քեզ համար»: 13 Եսթերն ասաց
արքային. «Թո՛ղ արքան հրեաներին
թոյլ տայ, որ վաղն էլ այդպէս անեն, որ
նրանք կախեն Համանի որդիներին»:
14 Արքան հրաման տուեց այդպէս անել.
Համանի որդիների մարմինները դուրս
բերել եւ քաղաքում գտնուող հրեաների
մօտ կախաղան հանել:
15 Ադար ամսի տասնչորսերորդ օրը
հրեաները հաւաքուեցին Սուսայում ու
կոտորեցին երեք հարիւր մարդ, բայց
որեւէ բան չյափշտակեցին: 16 Իսկ նրա
թագաւորութեան այլ վայրերում մնա-
ցած հրեաները հաւաքուեցին ու օգնում
էին միմեանց: Նրանք իրենց հանգիստ
ու ապահով զգացին իրենց դէմ պա-
տերազմողներից, որովհետեւ նրանցից
կոտորեցին մօտ հինգ հազար հոգու 17 Ա-
դար ամսի տասներեքին եւ ոչինչ
չյափշտակեցին: Նոյն ամսի տաս-
ներեքերորդ օրը նրանք հանգստացան
եւ այդ օրը հռչակեցին հանգստեան
օր, խնդութեան եւ ուրախութեան օր:
18 Սուսա քաղաքի հրեաները հաւա-
քուեցին տասնչորսերորդ օրը, բայց
չհանգստացան. նրանք տասնհինգերորդ
օրը հռչակեցին ցնծութեան եւ ուրա-
խութեան օր: 19 Այս պատճառով էլ
ամբողջ երկրում եւ բոլոր գաւառներում
հրեաներն ուրախութեան տօն են անում
Ադար ամսի տասնչորսերորդ օրը,
որպէս բարութեան եւ ուրախութեան
օր: Նրանք նուէրներ են ուղարկում
իրար՝ ամէն մարդ իր ընկերոջը: Իսկ
մայրաքաղաքներում ապրող բնակիչ-
ներն Ադար ամսի տասնհինգերորդ օրը
նոյնպէս տօնում են, որպէս բարութեան
եւ ուրախութեան օր:
20 Մուրթքէն այս դէպքերը գրի
առաւ յիշատակարանների մատեան-
ներում եւ ուղարկեց Արտաշէս արքայի
իշխանութեան տակ գտնուող մօտիկ ու
հեռաւոր հրեաներին, 21 որպէսզի այս
օրերը՝ Ադար ամսի տասնչորսը եւ
տասնհինգը, իբրեւ կարգ, հաստատեն
ուրախութեան տօնի օրեր, 22 որովհետեւ
այս երկու† օրերին հրեաները հանգիստ
գտան իրենց թշնամիներից: Դա Ադար
ամսին էր, երբ նրանց սուգը դարձաւ
ուրախութիւն, եւ վշտերը փոխուեցին
խնդութեան: Այդ օրերը դարձնել են
խնջոյքի օրեր, 23 ինչպէս նրանց գրել է
Մուրթքէն, 24 թէ ինչպէս Ամադոթի
որդի Համան Մակեդոնացին պատե-
րազմ էր տուել իրենց դէմ, թէ ինչքան
նա վիճակ էր գցել եւ օր նշանակել
կոտորելու համար, 25 կամ ինչպէս էր
մտել արքայի մօտ եւ ուզում էր Մուրթ-
քէին կախաղան հանել տալ, թէ ինչ-
քան չար գործեր էր ձեռնարկել
հրեաների դէմ, թէ ինչքան չարիքներ
եկան լցուեցին ու բազմացան նրա մէջ,
եւ թէ ինչպէս ինքն ու իր որդիները
հանուեցին կախաղան:
26 Սրա համար էլ ահա այս օրերը
կոչուեցին փուրիմի օրեր‡ , որովհետեւ,
ըստ այս հրովարտակի խօսքերի, ժամա-
նակը իրենց բարբառով կոչւում է
փուրիմ: Այն, ինչ որ այդ ժամանակ
կատարուեց նրանց հետ, եւ ինչ որ եղաւ
նրանց, Մուրթքէն հաստատեց որպէս
կարգ: 27 Հրեաները դա ընդունեցին եւ
յանձն առան. նրանք սովորեցնում էին

†Գրաբար բնագրում՝ *յափշտակեցին*, որ հաւանաբար վրիպակ է:

†Բագրատունին այստեղ ունի *երեսուն*, որ *հաւանաբար վրիպակ է:*

‡Գրաբար բնագրում՝ *պահոց օրեր:*

նաեւ իրենց որդիներին ու նրանց յետ-
նորդներին, 28 որպէսզի նրանք սերնդից
սերունդ չփոխեն յիշատակի այդ ամիսն
ու օրերը, քաղաքներում եւ գաւառ-
ներում տօնեն պահոց այդ օրերը, եւ
նրանց յիշատակը չպակասի սերնդից
սերունդ:
29 Ամինադաբի դուստր Եսթերը,
նաեւ հրեայ Մուրթքէն գրեցին եւ հաս-
տատեցին այս հրովարտակը, որպէսզի
միշտ պահպանուի այդ տօնը: 31 Մուրթ-
քէն ու Եսթերն առանձին-առանձին ըն-
դունեցին այս կարգը, ուխտ արեցին եւ
կատարեցին իրենց խորհուրդը: 32 Ես-
թերը երդումով հաստատեց այդ կարգը
յաւիտենական ժամանակների համար,
եւ այն գրուեց յիշատակարանների մա-
տեանում:

ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԱՑ ՏՕՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

10 Արտաշէս թագաւորը գրեց ծովի
եւ ցամաքի վրայ իր ունեցած իշխա-
նութեան, 2 իր հզօրութեան, իր քա-
ջութեան, իր մեծութեան եւ իր թագա-
ւորական փառքի մասին: Ահա այդ
բոլորը գրուած է պարսիկների եւ մարե-
րի յիշատակարանների մատեաններում:
3 Այնտեղ գրուած է նաեւ, որ Մուրթքէն
Արտաշէսից իշխանութիւն էր ստացել,
մեծ էր նրա թագաւորութեան մէջ,
հրեաներից փառաւորուած ու սիրուած
եւ կատարուած դէպքերը պատմում էր
իր ամբողջ ազգատոհմին: 4 Նա ասում
էր, թէ՝ 5 «Աստծուց եղաւ այս բանը»՝
յիշելով այս դէպքերի մասին իր տեսած
երազը, քանի որ դրանից մի բան անգամ
զանց չեղաւ: 6 Նա տեսել էր մի փոքրիկ
աղբիւր, որ մեծ գետ էր դարձել, տեսել
էր լոյս, արեւ եւ շատ ջուր: Գետը Ես-
թերն է, որի հետ ամուսնացաւ թագա-
ւորը եւ նրան դարձրեց տիկին: 7 Իսկ
երկու վիշապները, - ասում էր, - ես եմ
եւ Համանն ու այն ազգերը, 8 որ ժողո-
վուել էին՝ կորստեան մատնելու հրեա-
ների անունը, որ Իսրայէլ է: 9 Նրանք
կանչեցին Աստծուն ու ապրեցին. Տէրը
ապրեցրեց իր ժողովրդին. Տէրը մեզ
փրկեց մեր բոլոր չարիքներից: Աս-
տուած հրաշքներ գործեց ու ցոյց տուեց
իր մեծամեծ հնարքները, որպիսիք
երբեք չեն եղել հեթանոսների մէջ:
10 Այսպէս, Աստուած ստեղծեց երկու
վիճակ՝ մէկն իր ժողովրդի, միւսը բոլոր
հեթանոսների համար: 11 Այս երկու
վիճակներն էլ իրենց ժամին ու ժա-
մանակին, դատաստանի օրը եկան
Աստծու առջեւ՝ բոլոր հեթանոսների
մէջ: 12 Յիշեց Աստուած իր ժողովրդին
եւ արդարացրեց իր ժառանգութիւնը:
13 Ադար ամսի այս օրերը՝ տասնչոր-
սերորդ օրը եւ նոյն ամսի տասնհին-
գերորդ օրը թող տօն լինեն նրանց հա-
մար, թող ժողովուրդը լինի ցնծութեան
եւ ուրախութեան մէջ՝ Աստծու առջեւ,
եւ թող այդպէս լինի յաւիտեան,
սերնդից սերունդ, Իսրայէլի ժողովրդի
մէջ:

11 1 Պտղոմէոսի եւ Կլէոպատրայի
թագաւորութեան չորրորդ տարում դեւ-
տացի քահանայ Դոսիթէոսը եւ նրա
որդի Պտղոմէոսը տօների կարգի մէջ
մուծեցին այս տօնը՝ փուրիմեանը†,
որը գրուած է ազնուական հրովար-
տակում եւ կոչւում է Պտղոմէոսի որդի
Լուսիմաքոսի անունով, այն, որ Երու-
սաղէմում է:

†Գրաբար բնագրում՝ *փրուրեանն:*

ՅՈՒԴԻԹ

Ներածութիւն

Յուդիթի գիրքը շարադրում է պատմութիւնը մի կնոջ, որին հրեայ ժողովուրդը պարտական էր իր փրկութիւնը մի պատերազմի ժամանակ, երբ նա գտնւում էր ոչնչացման սպառնալիքի առաջ: Յուդիթի կերպարն, այսպիսով, մեզ յիշեցնում է Դեբորայի կամ Եսթերի կերպարները:

Գրքում, սակայն, նկատելի են աշխարհագրական եւ պատմական զարմանալի անճշտութիւններ:

Նաբուքոդոնոսոր արքան, որը անցեալում հիմնադրել էր Նոր-Բաբելոնեան կայսրութիւնը ի հեռուկս Ասորեստանի, այստեղ ներկայացուած է որպէս Ասորեստանի թագաւոր: Միւս կողմից՝ յիշատակուած եղելութիւնները ենթադրել են տալիս, որ հրեաներն արդէն վերադարձել են գերութիւնից: Մինչդեռ այս նոյն Նաբուքոդոնոսորն էր, որ գերեվարել էր նրանց: Բացի այդ, պէտք է նշել նաեւ, որ Բետիղուա քաղաքը, որի շուրջն է պտտւում այս պատմութեան ամբողջ գործողութիւնը, ուրիշ ոչ մի տեղ յիշատակուած չէ, եւ պատմուածքում մատնանշուած տեղանունները էլ չեն համապատասխանում Պաղեստինում յայտնի ոչ մի բնակավայրի:

Հաւանաբար դա ասորի թագաւոր Անտիոքոս Դ Եպիփանեցու դէմ հրէական ապստամբութեան դժուարին ժամանակաշրջանն է (175-164 Ն. Ք.): Հեղինակի գլխաւոր նպատակն է եղել քաջալերել իր հայրենակիցներին, որպէսզի աննկուն լինեն իրենց դժբախտութեան մէջ եւ, հակառակ ամէն ինչի, հաւատարիմ մնան Աստծուն: Այս տեսակէտից Յուդիթի գիրքը իր մտահոգութիւններով շատ նման է Դանիէլի գրքին:

ՅՈՒԴԻԹ†

ԳԱՏԵՐԱԶՄ ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԻ ԵՒ ԱՐՓԱՔՍԱԴԻ ՄԻՋԵՒ

1 *Մեծ քաղաք Նինուէում ասորեստանցիների թագաւոր Նաբուքոդոնոսորի թագաւորութեան տասներկուերորդ տարում, մարերի վրայ եկբատանցիների երկրում թագաւորում էր Արփաքսադը:* 2 *Այդ ժամանակ նա այնտեղ քաղաք կառուցեց եւ եկբատանցիների շուրջը կոփածոյ քարերով պարիսպ դրեց, որի լայնութիւնը երեք կանգուն էր, երկարութիւնը՝ վեց կանգուն. նա պարսպի բարձրութիւնը եօթանասուն կանգուն արեց, իսկ լայնութիւնը՝ յիսուն կանգուն:* 3 *Քաղաքի դարպասների երկու կողմերում հիմքերով ամրացրեց աշտարակներ, որոնց երկարութիւնը հարիւր կանգուն էր, իսկ հիմքի լայնութիւնը՝ վաթսուն կանգուն:* 4 *Նա էլի դարպասներ դրեց, որպէսզի իր հրամանով իր հզօր զօրքերը, զօրավարներն ու հետեւակները դուրս ելնեն:* *Այդ դարպասների բարձրութիւնը եօթանասուն կանգուն էր, լայնութիւնը՝ քառասուն կանգուն:*

5 *Այն օրերին Նաբուքոդոնոսոր արքան պատերազմ սկսեց Արփաքսադ արքայի դէմ մի մեծ դաշտում, որ Ռագաւի սահմանի մէջ է:* 6 *Նրա մօտ հաւաքուեցին լեռնակողմի բնակիչները եւ բոլոր նրանք, ովքեր բնակւում էին Եփրատ, Տիգրիս եւ Հիւդասպ գետերի շրջակայքում եւ ելիմացիների Արիոք արքայի դաշտում:* *Եւ շատ ժողովուրդներ հաւաքուեցին Քիլոթի որդիների դէմ պատերազմ տալու համար:*

7 *Ասորեստանցիների Նաբուքոդոնոսոր արքան սուրհանդակներ ուղարկեց Պարսկաստանի բնակիչների եւ արեւմտեան կողմի բնակիչների մօտ, նաեւ՝ Կիլիկիայի, Դամասկոսի, Լիբանանի եւ բոլոր այն բնակիչների մօտ, որ բնակւում էին ծովեզերքի դէմ-յանդիման, նաեւ՝ նրանց մօտ,* 8 *որ կարմելացիների ազգից էին, Գաղաադից, Վերին Գալիլիայից, Եզրայէլի մեծ դաշտից* 9 *եւ բովանդակ Սամարիայից, նաեւ՝ նրանց մօտ, որ Սամարիայի քաղաքներում էին եւ Յորդանան գետի միւս կողմը, մինչեւ Երուսաղէմ եւ Բետան, մինչեւ Քելուս եւ Կադէս, եգիպտացիների գետը, Տափնաս եւ Ռամեսէ,* 10 *մինչեւ Դեսեմի ամբողջ երկիրը, մինչեւ Վերին Մեմփիս եւ Տանիս, նաեւ՝ Եգիպտոսի բոլոր բնակիչների մօտ, մինչեւ եթովպացիների սահմանը:* 11 *Երկրի բոլոր բնակիչները ապստամբելով արհամարհեցին ասորեստանցիների Նաբուքոդոնոսոր արքայի խօսքերը եւ չյօժարեցին նրա հետ պատերազմի գնալ, որովհետեւ չվախեցան նրանից, եւ նրա սուրհանդակները նրանց առջեւ արհամարհուեցին ու խիստ անարգուեցին:* 12 *Նաբուքոդոնոսորը սաստիկ բարկացաւ երկրի վրայ եւ այսպէս երդուեց իր թագաւորութեան ու իր աթոռի վրայ. «Ես վրէժ պիտի առնեմ, - ասում է, - կիլիկեցիների լեռներից, դամասկացիներից եւ ասորեստանցիներից ու իմ սրով պիտի ոչնչացնեմ Մովաբի բնակիչներին, ամոնացիներին, ամբողջ Հրէաստանը, բոլոր եգիպտացիներին մինչեւ երկու ծովերի սահմանները»:*

13 *Եւ տասնեօթներորդ տարում նա պատրաստուեց եւ իր բովանդակ զօրութեամբ յարձակուեց Արփաքսադ արքայի վրայ, ուժեղացաւ իր պատերազմի մէջ եւ վերցրեց Արփաքսադի ամբողջ ռազմական ուժը՝ նրա բոլոր երիվարները, բոլոր զէնքերը, նրա կառքերը,* 14 *տիրեց նրա քաղաքներին, հասաւ մինչեւ Եկբատան, գրաւեց նրա աշտարակները, քանդեց ու աւերեց նրա հրապարակները եւ նրա գեղեցկութիւնը նախատինք դարձրեց նրա համար:* 15 *Նաբուքոդոնոսորը բռնեց Արփաքսադին Ռագաւի սահմանի վրայ եւ իր սրով սպանեց նրան.* 16 *նա այնտեղից յետ դարձրեց իր զօրքերը նրա հետ եկած բազմաթիւ այլազգիների հետ միասին: Եւ այնտեղ ինքն ու իր զօրքը հարիւր քսան օր հանգստութեան եւ ուրախութեան մէջ էին:*

†Սոյն գրքի որոշ գլուխներում համարների երբեմն անութիւնը չի պահպանուած գրաբար բնագրում:

ԱՐՇԱՒԱՆՔ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԴԷՄ

2 Տասնութերորդ տարում, առաջին ամսի տասներկուերորդ օրը Նաբուքոդոնոսորը իր զօրքերի հանդէսն արեց եւ նրանց հետ մտածում էր վրէժ առնել ամբողջ երկրից: 2 Նա կանչեց իր բոլոր մեծամեծներին եւ իր կուսակալներին ու նրանց յայտնեց իր մտադրութիւնները: 3 Նա իր բերանով, ի լուր զօրականների, յայտնեց այն բոլոր չարիքների մասին, որ պիտի բերի երկրի դէմ: 4 Նրանք, պատասխան տալով, ասացին. «Թագաւորին հակառակ ամէն մարդ կը սպանուի, նաեւ՝ նա, ով չի հնազանդուի նրա հրամաններին[†]»: 5 Եւ երբ ասորեստանցիների Նաբուքոդոնոսոր արքան կատարեց իր մտադրութիւնները, կանչեց իր բոլոր զօրքերի սպարապետ Հողոփեռնէսին եւ ասաց նրան. «Այսպէս է ասում մեծ արքան, այս ամբողջ երկրի տէրը. հաւասիկ դու դուրս կ'ելնես իմ մօտից եւ կ'ընտրես ու կը վերցնես քեզ հետ նրանց, ովքեր վստահ են իրենց հզօրութեան վրայ. հարիւր քսան հազար հետեւակ եւ տասներկու հազար հեծեալների մեծաքանակ բազմութիւն: Դու կը գնաս արեւմտեան կողմը, որովհետեւ նրանք անտեսեցին իմ հրամանները: Նրանց կը պատուիրես, որ հող ու ջուր պատրաստեն[‡], եւ ես զայրոյթով նրանց վրայ կը դիմեմ, իմ զօրքերով ամբողջ երկրի երեսը կը ծածկեմ, ոտքի կոխան կը դարձնեմ այն, եւ նրանք կը մատնուեն կողոպուտի իմ բոլոր զօրքերի կողմից: Նրանց ձորերն ու կիրճերը կը լցուեն իրենց վիրաւորներով, գետերը կը յորդեն նրանց արիւնից, եւ ես երկրի բոլոր ծայրերից սկսած նրանց գերութեան կը տանեմ: Իսկ դու կ'ելնես, ինձ համար կը տիրես եւ կը պաշարես նրանց սահմանները, յետոյ իրենք կը յանձնուեն քեզ, եւ դու նրանց կը պահես ինձ համար մինչեւ այն օրը, երբ ես կը դատապարտեմ ու կը կշտամբեմ նրանց: 6 Իմ աչքը չի խնայի նրանց, ովքեր անտեսեցին ինձ, երբ ես ասում էի, թէ՝ "Մահուան կը մատնեմ ձեզ եւ կողոպուտի՝ ձեր ամբողջ երկիրը": Ահա կենդանի եմ ես իմ զօրութեամբ, ասացի եւ կ'անեմ այն ամէնը, ինչ իմ կամքն է: Եւ դու ոչ մի բանով զանց մի՛ առ այն հրամանը, որ տուի քեզ, այլ՝ խստօրէն կատարի՛ր այն բոլորը, ինչ ասացի քեզ եւ մի՛ դանդաղիր անել այդ»:

7 Հողոփեռնէսը ելաւ իր տիրոջ մօտից, իր մօտ կանչեց Ասորեստանի բոլոր իշխաններին եւ զօրապետերին. պատերազմի համար նա նրանցից ընտրում եւ հաշւում էր այրեր, ինչպէս իր տէրն էր հրամայել իրեն. հարիւր քսան հազար աղեղնաւոր, քսան հազար հեծելազօրայիններ: 8 Նա նրանց դասաւորեց ու պատրաստեց՝ ճակատելու համար պատերազմում: Նա վերցրեց մեծ քանակութեամբ ուղտեր եւ դրաստներ՝ կահկարասի բարձելու համար, նաեւ անթիւ ոչխարների հօտեր, արջառներ եւ այծերի երամակներ՝ զօրքը կերակրելու համար: 9 Ճանապարհի համար բոլորին պաշար տուեց, 10 նաեւ՝ թագաւորական տնից՝ մեծաքանակ ոսկի եւ արծաթ: 11 Ինքն ու իր ամբողջ զօրքը պատերազմի ելան, որպէսզի նախապատրաստեն թագաւորին՝ դուրս գալու եւ երկրի արեւմտակողմի ամբողջ երեսը ծածկելու մարտակառքերով, երիվարներով եւ ընտիր հետեւակով: Նրանք, ովքեր խառնուել էին նրա զօրքերին, նման էին մորեխի պարսի եւ երկրի աւազի, որովհետեւ թիւ չկար նրանց բազմութեանը: 12 Նրանք գնացին Նինուէ քաղաքից, երեք օրուայ ճանապարհ անցնելով Հասան Բեկեղիթի դաշտը եւ բանակ դրեցին Վերին Կիլիկիայի ձախակողմում գտնուող լերան մօտ: Հողոփեռնէսը վերցնելով իր բովանդակ զօրքը, հեծեալները, հետեւակը, զէնքերն ու կառքերը՝ գնաց դէպի լեռնակողմը: 13 Նա գրաւեց Փուդն ու Լուդը, ոչնչացրեց եւ աւարի մատնեց Ռամասի եւ Իսմայէլի ցեղերին, որոնք բնակւում էին անապատում, Քիլոնի հարաւակողմում: 14 Անցաւ Եփրատ գետը, անցաւ միջագետքով եւ կործանեց Աբրոնի ձորից մինչեւ ծովի սահմանը գտնուող բարձրադիր քաղաքները: 15 Հասնելով եւ գրաւելով Կիլիկիայի սահմանները՝ նա կոտորեց բոլոր իրեն դիմադրողներին: Եկաւ մինչեւ Յափեթի հարաւակողմի սահմանը, որ Արաբիայի դիմաց է: 16 Շրջափակեց Մադիամի բոլոր որդիներին եւ հրոյ ճարակ դարձրեց նրանց բնակարաններն եւ վրանները, աւերեց, քանդեց նրանց հօտերի բոլոր գոմերը: 17 Նա ցորենի հնձի օրերին իջաւ Դամասկոսի դաշտը եւ հրոյ ճարակ դարձրեց նրանց հանդերն ու ագարակները, ոչնչացրեց նրանց հօտերն ու նախիրները, աւարի մատնեց նրանց քաղաքները, կոտորեց նրանց մանուկներին եւ սրի բերան անցկացնելով՝ հարուածեց, սպանեց նրանց երիտասարդներին: 18 Եւ ահ ու երկիւղ ընկաւ Տիւրոսի եւ Սիդոնի ծովեզերքի բնակիչների մէջ, նաեւ Սուրի եւ Իւկինի բնակիչների մէջ, նաեւ Յեմնանի բոլոր բնակիչների մէջ: Իսկ նրանք, ովքեր բնակւում էին Ազոտոսում եւ Ասկաղոնում, խիստ վախեցան նրանից:

ՀՈՂՈՓԵՌՆԷՍԸ ՄՕՏԵՆՈՒՄ Է ՀՐԷԱՍՏԱՆԻ ԴՌՆԵՐԻՆ

3 Հողոփեռնէսի մօտ ուղարկեցին պատգամաւորներ՝ խաղաղութեան խօսք ասելու համար: Նրանք ասացին. 2 «Ահաւասիկ մենք Նաբուքոդոնոսորի ծառաներն ենք եւ կանգնել ենք քո առջեւ. վարուի՛ր մեզ հետ ինչպէս հաճելի կը թուայ քեզ, 3 որովհետեւ ահա մեր տներն ու ցորենի բոլոր դաշտերը, հօտերն ու նախիրները, մեր ոչխարների բոլոր գոմերը քո աչքի առաջ են. վարուի՛ր այնպէս, ինչպէս բարի կը թուայ քեզ, որովհետեւ ահա մեր քաղաքները եւ մենք՝ նրանց բնակիչները, քո ծառաներն ենք: Արի՛ մեր մէջ եւ վարուի՛ր ինչպէս բարի կը թուայ քեզ»:

6 Պատգամաւորները եկան Հողոփեռնէսի մօտ եւ նրան ասացին այս խօսքերը: 7 Հողոփեռնէսն ու իր զօրքը իջան ծովեզերք. նա նրա բարձրադիր քաղաքներում պահապաններ դրեց: Այդ քաղաքներից իր համար նա վերցրեց զինակից ընտիր մարդիկ: 9 Այդ քաղաքները նրան դիմաւորեցին երգերով, 10 պսակներով, ծնծղաներով եւ թմբուկներով: 11 Հողոփեռնէսը քարուքանդ արեց նրանց սահմանները եւ հատեց նրանց բոլոր անտառները: 12 Նրան հրաման էր տրուած խորտակել այդ երկրի աստուածներին, 13 որպէսզի բոլոր ազգերն ու ժողովուրդները միայն Նաբուքոդոնոսորին պաշտեն եւ նրան աստուած անուանեն: 14 Նա եկաւ Եզրայելոմի հանդիպակաց կողմը, որ մօտիկ էր բնակիչներին[†] եւ դէմյանդիման Հրէաստանի մեծ սարին: 15 Նա բանակ դրեց Գայի ու Բիշանի միջեւ եւ այնտեղ մի ամիս մնաց՝ իր զօրքի համար զինամթերք եւ պաշար հաւաքելու:

ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

4 Երբ իսրայէլացիները եւ Հրէաստանի բնակիչները լսեցին այն ամենի մասին, ինչ արեց ասորեստանցիների արքայի զօրապետ Հողոփեռնէսը ազգերին եւ հեթանոսներին, թէ ինչպէս քանդեց եւ պղծեց նրանց բոլոր մեհեանները, 2 խիստ վախեցան նրանից եւ տագնապեցին Երուսաղէմի ու իրենց Աստծու Տան համար, որովհետեւ այդ ժամանակ նոր էին վերադարձել իրենց գերութիւնից, դեռ նոր էին հաւաքուել Հրէաստանում եւ իրենց Տէր Աստծու սեղանը, սպասքը եւ Տունը նոր էին սրբել պղծութիւնից: 3 Նրանք մարդիկ ուղարկեցին Սամարիայի, Կոնոբեթորոնի[‡], Բելմայի, Երիքովի, Քոքի, Սոմայի բոլոր սահմանները եւ Սաղէմի հովիտները: 4 Նրանք հասան եւ գրաւեցին բոլոր բարձր լեռների գագաթները, պարսպեցին նրանց մէջ գտնուող գիւղերը եւ պատերազմելու համար պաշար հաւաքեցին, որովհետեւ այն ժամանակ նոր էին հնձուել նրանց դաշտերը: 5 Մեծ քահանայ Յովակիմը, որ այն օրերին Երուսաղէմում էր, գրեց Բետիլուի եւ Եզրոմի, Դոթայիմին մօտիկ գաշտի

[†]Յունարէնում՝ Նրանք որոշեցին ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր չէին ենթարկուի արքային:

[‡]Սա մի արտայայտութիւն է, որը նշանակում է հնազանդուել:

[†]Յունարէն՝ Դոթային:

[‡]Յունարէն՝ Կոնայի եւ Բեթորոնի:

հանդիպակաց կողմում գտնուող Բեթոմեսթի բնակիչներին եւ ասաց. 6 «Եւ-
լէք գրաւեցէ՛ք լեռանցքի կողմը» (ո-
րովհետեւ այնտեղ էր գտնուում մուտքը
դէպի Հրէաստան, եւ իրենց համար
հեշտ կը լինէր խոչընդոտել նրանց,
քանզի կիրճերի անցումներն այնքան
նեղ էին, որ երկու մարդ կարող էին
պահել): 7 Իսրայէլացիներն արեցին
այնպէս, ինչպէս հրամայել էին մեծ
քահանայ Յովակիմը եւ Երուսաղէմում
նստող Իսրայէլի ժողովրդի ծերակոյ-
տը: 8 Իսրայէլի բոլոր տղամարդիկ
իրենց ամբողջ սրտով կանչեցին Տի-
րոջը եւ իրենք ու իրենց կանայք
խոնարհեցրին իրենց անձերը: 9 Բոլոր
պանդուխտներն ու վարձկանները
իրենց անասուններով հաւաքուեցին մի
տեղ, եւ արծաթով գնուած նրանց
ծառաները քուրձ գցեցին իրենց մէջ-
քին: 10 Երուսաղէմում բնակուող Իս-
րայէլի բոլոր տղամարդիկ իրենց կա-
նանցով եւ երեխաներով Տիրոջ տաճա-
րի առջեւ ծնկի իջած աղաչում էին
նրան, մոխիր էին ցանում իրենց
գլխին, Տիրոջ առջեւ հանում էին
իրենց քրձերը, սրբութեան սեղանը
ծածկում քրձով եւ միասին ամբողջ
սրտով կանչում էին Իսրայէլի Աստ-
ծուն, որպէսզի իրենց որդիներին
չմատնի յափշտակութեան, իրենց կա-
նանց՝ աւարի եւ իրենց ժառանգութիւն
մնացած քաղաքները՝ ոչնչացման,
սրբութիւնը չմատնի պղծութեան եւ
իրենց՝ հեթանոսների նախատինքին ու
ծաղրին: Տէրը լսեց նրանց ձայնը եւ
տեսաւ նրանց նեղութիւնները: Ամբողջ
Հրէաստանի ու Երուսաղէմի ժողո-
վուրդը շատ օրեր պահեցողութեան մէջ
էր Ամենակալ Տիրոջ սրբութիւնների
առջեւ: 16 Մեծ քահանայ Յովակիմը եւ
Տիրոջ առջեւ կանգնած բոլոր քահա-
նաներն ու Տիրոջ պաշտօնեաները
քուրձ էին հագել, մշտապէս զոհեր էին
մատուցում, աղօթում եւ նուիրում ժո-
ղովրդի կամաւոր ընծաները: 17 Նրանց
գլխանոցների վրայ մոխիր կար:
Նրանք իրենց ամբողջ սրտով կանչում
էին Տիրոջը՝ օգնութեան գալու եւ
բարիք անելու Իսրայէլի տանը:

ՀՈՂՈՓԵՌՆԷՍԸ ԺՈՂՈՎ Է ԳՈՒՄԱՐՈՒՄ

5 *Ասորեստանի զօրքերի զօրապետ*
Հողոփեռնէսին պատմեցին, թէ իսրա-
յէլացիները պատերազմի են նախա-
պատրաստուում, փակել են լեռանցք-
ները, պարսպապատել բարձր լեռների
գագաթները, ծածուկ որոգայթներ լա-
րել դաշտերում: 2 Հողոփեռնէսը խիստ
զայրացաւ, կանչեց Մովաբի բոլոր
իշխաններին, Ամոնի զօրապետներին,
ծովեզերքի բոլոր նախարարներին եւ
ասաց նրանց. 3 «Դուք, ո՛վ քանանա-
ցիներ, յայտնեցէ՛ք ինձ, ո՞վ է այդ
ժողովուրդը, որ բնակւում է լեռնակող-
մում, ի՞նչ քաղաքներ են, ուր
բնակւում են նրանք, կամ ինչքա՞ն է
նրանց զօրքերի բազմութիւնը, ի՞նչ է
նրանց ուժը կամ զօրութիւնը, կամ ո՞վ
է նրանց թագաւորը եւ նրանց զօրքերի
առաջնորդը, 4 եւ ինչո՞ւ նրանք
փոխեցին իրենց միտքը, որպէսզի ինձ
չդիմաւորեն, այլ գոռոզացան Արեւ-
մուտքի բոլոր բնակիչներից աւելի»:
5 *Եւ ահա բոլոր ամոնացիների ա-*
ռաջնորդ Աքիորը ասաց նրանց. «Թող
տէրը լսի իր ծառայի խօսքերը. ես քեզ
կը պատմեմ ճշմարտութիւնն այդ
ժողովրդի մասին, որ բնակւում է այդ
լեռնակողմում եւ մօտիկ է քեզ. ոչ մի
սուտ խօսք դուրս չի գայ քո ծառայի
բերանից: 6 Այս ժողովուրդը քաղ-
դէացիների ազգից է 7 եւ առաջինը
պանդխտեց Միջագետքից, որովհետեւ
քաղդէացիների երկրում չկամեցաւ
պաշտել իր հայրերի աստուածներին.
նրանք դուրս եկան իրենց հայրենի
երկրից 8 եւ երկրպագեցին երկնքի
Աստծուն, որին ճանաչում էին իբրեւ
ճշմարիտ Աստծու: Նրանք դուրս գա-
լով՝ գնացին Միջագետք եւ այնտեղ
պանդխտեցին բազում օրեր: Իրենց
Աստուածն ասաց նրանց, որ դուրս
գան պանդխտութիւնից եւ հաստա-
տուեն Քանանի երկրում: Նրանք բնա-
կուեցին այնտեղ, հարստացան ոսկով,
արծաթով եւ բազում անասուններով:
9 *Նրանք իջան Եգիպտոս, որովհետեւ*
քանանացիների երկրում սով եղաւ:
Այնտեղ պանդխտեցին այնքան ժա-
մանակ, քանի դեռ կարող էին սնուել,

այնտեղ խիստ բազմացան, եւ թիւ
չկար նրանց ազգին: 10 Նրանց վրայ
յարձակուեց եգիպտացիների արքան,
նրանց գցեց ծառայութեան տակ՝
չարչարելով եւ հարկադրելով նրանց
աղիւսներ պատրաստել: 11 Նրանք
կանչեցին իրենց Աստծուն, եւ Աս-
տուած հարուածեց Եգիպտացիների
երկիրը անբուժելի աղէտներով: Եգիպ-
տացիները նրանց հալածեցին իրենց
երկրից: 12 Աստուած ցամաքեցրեց
կարմիր ծովը նրանց առջեւ 13 եւ
նրանց բերեց դէպի Սինայի ճանա-
պարհը, դէպի Կադէս-Բառնա. սրանք
անապատի բոլոր բնակիչներին տե-
ղահանեցին, 14 բնակեցրին ամորհա-
ցիների երկրում եւ իրենց զօրութեամբ
կոտորեցին բոլոր եսեբոնացիներին:
Անցան Յորդանան գետը ու ժառան-
գեցին ամբողջ երկիրը, 20 իրենցից քշե-
ցին հեռացրին քանանացիներին, փե-
րեզացիներին, յեբուսացիներին, սիւ-
քեմացիներին, բոլոր գերգեսացիներին
եւ երկար օրեր բնակուեցին այդ
երկրում: 21 Քանի դեռ նրանք իրենց
Աստծու առջեւ չէին մեղանչել, նրանց
հետ էր բարիքը, որովհետեւ Աստուած,
որ ատում է անիրաւութիւնը, նրանց
հետ էր: 22 Եւ երբ իրենք հեռացան
Աստծու պատուիրած ճանապարհից,
կոտորուեցին բազմաթիւ պատերազմ-
ների մէջ եւ գերուեցին օտար երկիր, որ
իրենցը չէր: Իրենց Աստծու տաճարը
կործանուեց ու իրենց քաղաքները
մատնուեցին իրենց թշնամիների ձեռ-
քը: 23 Այժմ նրանք դարձի են եկել
դէպի իրենց Տէր Աստուածը: Հաւա-
քուեցին այն վայրերից, ուր ցրուած
էին իրենց գերութեան մէջ, գրաւեցին
Երուսաղէմը, որտեղ սրբարանն էր
գտնուում. նրանք ապրեցին լեռնա-
կողմում, որովհետեւ այն անբնակ էր:
24 *Եւ արդ, տէ՛ր, եթէ այժմ նրանց*
ժողովրդի մէջ մոլորութիւն կայ, եւ
նրանք մեղանչում են իրենց Աստծու
դէմ, ակնկալելով սպասենք դրան,
որովհետեւ սա դայթակղութիւն է
նրանց համար. մենք յետոյ կը յարձ-
ակուենք նրանց վրայ եւ պատերազմ
կը տանք նրանց դէմ: 25 Իսկ եթէ որեւէ
անիրաւութիւն չունեն իրենց Աստծու
հանդէպ՝ զանց առնենք նրանց, տէ՛ր,
թերեւս իրենց Տէր Աստուածը պաշտ-
պանի նրանց, եւ մենք ամօթով նա-
խատինք կը կրենք ամբողջ երկրի
առջեւ»:
26 *Երբ Աքիորը դադարեց այս բա-*
ները խօսելուց, ամբողջ բանակը, որ
վրանի շուրջն էր, տրտնջաց: 27 Եւ
իշխանները, ծովեզերքի բնակիչները,
մովաբացիները Հողոփեռնէսին ասա-
ցին, որ պատժի Աքիորին: «Մենք, -
ասացին նրանք, - չենք վախենում
իսրայէլացիներից, մի ժողովուրդ, որ
պատերազմի ոչ մի կարողութիւն չու-
նի: 28 Արդ, տէ՛ր Հողոփեռնէս, մենք
կ՝ելնենք նրանց դէմ, եւ նրանք քո բո-
լոր զօրքերին կերակուր կը դառնան»:

6 *Երբ դադարեց նրանց աղմուկը, ով-*
քեր իրենց վրանի շուրջն էին, Ասո-
րեստանի զօրքերի զօրապետ Հողոփեռ-
նէսը բոլոր այլազգիների[†] *զօրքերի*
առջեւ Աքիորին ասաց. «Ո՞վ ես դու,
Աքիո՛ր, որ մովաբացիների եւ Եփրեմի
երկրի վարձկանների, բոլոր այլազգի
ժողովուրդների հետ դէմ կանգնեցիր
ինձ, 2 մարգարէացար մեզ համար,
ինչպէս այսօր, եւ ասում ես, թէ պա-
տերազմ մի՛ տուէք իսրայէլացիների
դէմ, որովհետեւ նրանց Աստուածը
պաշտպանում է նրանց: Նաբուքոդո-
նոսորից բացի էլ ի՞նչ Աստուած կայ.
նա կ՝ուղարկի իր զօրութիւնը եւ երկրի
երեսից կը ջնջի նրանց, եւ նրանց
Աստուածը չի փրկի նրանց: 3 Բայց
մենք՝ նրա ծառաներս, կը վանենք[‡]
նրանց իբրեւ մէկ մարդ, եւ նրանք չեն
կարող կանգնել մեր հեծելազօրի, մեր
երիվարների դէմ. դրանցով կը ջնջենք
նրանց, նրանց լեռները կը յագեցնենք
իրենց արիւնով, նրանց դաշտերը կը
լցուեն իրենց դիակներով, եւ այլեւս
նրանք չեն կարող մեր դէմ կանգնել,
այլ՝ իսպառ կը կորչեն, 4 ինչպէս ասում
է բովանդակ երկրի տէր Նաբուքոդո-
նոսոր արքան. եւ քանի որ նա այսպէս
է ասել, իզուր չեն լինի նրա բերանի

†Յունարէնն աւելացնում է՝ եւ բոլոր մովաբացիների:

‡Յունարէնում՝ կը հարուածենք:

խօսքերը: 5 *Բայց դու, Ամոնի վարձկա՛ն Աքիոր, որ յանիրաւի խօսեցիր այս բաները, այլեւս չես տեսնի իմ երեսն այսօրուանից, մինչեւ չլուծեմ իմ վրէժն այդ ազգից, որ դուրս է եկել Եգիպտոսից. եւ այն ժամանակ իմ զօրքերի սուրը կը խրուի քո կողը,* 6 *եւ երբ ես վերադառնամ, դու կը կործանուես բազում վիրաւորների հետ: Բայց այժմ իմ ծառաները թող քեզ տանեն լեռների կողմը եւ քեզ պահեն մի քաղաքում, որ ճանապարհների վրայ է, եւ չես կորչի մինչեւ չսպանուես նրանց հետ միասին: Եւ եթէ քո սրտում յոյս ունես, թէ նրանք մահուան չեն մատնուի, այդ բանին վստահ մի՛ եղիր, որովհետեւ ես խօսեցի, եւ իմ խօսքերից ոչ մէկը իզուր չի անցնի»:*

7 *Հողոփեռնէսը հրամայեց իր ծառաներին, որ նրա առջեւ էին, բռնել ու կապել Աքիորին, նրան տանել Բետիղուա եւ նրան մատնել իսրայէլացիների ձեռքը:* 8 *Եւ նրա ծառաները բռնեցին նրան, դուրս տարան բանակից այնտեղի դաշտը, նրանք գնացին այդ դաշտից ու եկան լեռնակողմի աղբիւրների մօտ, Բետիղուայի ստորին մասը, որ Սամարիան է: Երբ քաղաքի տղամարդիկ նրանց տեսան լերան գագաթին, վերցրին իրենց զէնքերը եւ լերան գլխին յարձակուեցին նրանց վրայ: Բոլոր պարսատիկաւոր տղամարդիկ փակեցին նրանց ելքի ճանապարհը եւ քարկոծեցին նրանց:* 9 *Սրանք անցան լեռնալանջով, կապեցին Աքիորին, նրան գցեցին լերան ստորոտին ու վերադարձան իրենց տիրոջ մօտ:* 10 *Իսրայէլացիներն իջան քաղաքից, հասան նրան, արձակեցին կապանքները, տարան Բետիղուա եւ կանգնեցրին իրենց քաղաքի իշխանների առջեւ:* 11 *Այդ օրերին իշխաններն էին Միքիայի որդի Օզիան՝ Շմաւոնի տոհմից, եւ Մելքիէլի որդի Քարմին:* 12 *Քաղաքի բոլոր ծերերին, երիտասարդներին ու կանանց հաւաքեցին ժողովարանում եւ Աքիորին կանչեցին ամբողջ ժողովրդի առաջ. Օզիան հարցրեց նրան. «Ինչո՞ւ այդ բանը պատահեց քեզ հետ»: Նա պատասխան տուեց ու պատմեց Հողոփեռնէսի ժողովում ասուած խօսքերը եւ բոլոր այն խօսքերը, որ ինքն էր ասել ասորեստանցիների իշխանների առջեւ,* 13 *նաեւ այն խօսքերը, որ Հողոփեռնէսը յոխորտալով ասել էր Իսրայէլի տան մասին:* 14 *Երկրի ամբողջ ժողովուրդը ծնկի գալով երկրպագում էր Աստծուն, աղաղակում եւ ասում.* 15 *«Երկնքի Տէ՛ր Աստուած, տե՛ս նրանց ամբարտաւանութիւնը, ողորմի՛ր մեր ազգի խոնարհութեան համար եւ այս օրերին նայի՛ր մեզ՝ քո սրբութեանը, Տէ՛ր»:* 16 *Նրանք աղաչեցին, մխիթարեցին Աքիորին եւ շատ գովեցին նրան:* 19 *Օզիան նրան վերցրեց ժողովարանից եւ տարաւ իր տուն,* 20 *խրախճանք արեց ծերերի ու քահանաների հետ, եւ այդ ամբողջ գիշեր նրանք օգնութեան կանչեցին Իսրայէլի Տէր Աստծուն:*

ՀՈՂՈՓԵՌՆԷՍԸ ՊԱՇԱՐՈՒՄ Է ԲԵՏԻՂՈՒԱՆ

7 *Յաջորդ օրը Հողոփեռնէսը պատուիրեց իր զօրքերին եւ հաւաքուածներին, որ եկել էին նրան օգնելու, արշաւել Բետիղուայի վրայ, գրաւել լեռնակողմի ելքը եւ հասնել ու պատերազմել իսրայէլացիների դէմ:* 2 *Այն օրը բոլոր տղամարդիկ, որ պատերազմ էին գնալու, կազմ ու պատրաստ էին: Ամբողջ հետեւակ զօրքը հարիւր եօթանասուն հազար էր, իսկ զինավառուած հեծելազօրը՝ տասներկու հազար, չհաշուած ամբողջ ժողովուրդը եւ մեծաթիւ հանդերձանքը:* 3 *Նրանք բանակ դրեցին հովտում, որ մօտիկ էր Բետիղուայի աղբիւրին, եւ լայնութեամբ տարածուեցին դէպի հարաւային կողմը՝ մինչեւ Դոթայիմ, մինչեւ Բելբեմ, իսկ երկարութեամբ Բետիղուայից մինչեւ Կիամ, որ հանդիպակաց է Եզրայէլոմին, այսինքն՝ Յեզրայէլին:* 4 *Երբ իսրայէլացիները տեսան այդ անչափ բազմութիւնը, խիստ տագնապեցին, եւ ամէն մարդ ասում էր իր ընկերոջը. «Հիմա սրանք կը ճարակեն ու կը լիզեն երկրի ամբողջ երեսը. էլ ո՛չ լեռների բարձունքները, ո՛չ ձորերն ու բլուրները չեն կարող դէմ կանգնել նրանց զօրութեանը»:* 5 *Եւ իսրայէլացիներից իւրաքանչիւր տղամարդ վերցրեց իր զէնքը, ջահեր վառեցին քաղաքի աշտարակների վրայ եւ ամբողջ գիշեր պահպանում էին այն:* 6 *Երկրորդ օրը Հողոփեռնէսը ամբողջ հեծելազօրը հանեց իսրայէլացիների դէմ, որոնք Բետիղուայում էին,* 7 *հասաւ նրանց քաղաքի ելքին, իմացաւ ջրի աղբիւրների տեղերը, շտապեց պաշարել դրանք, դրեց պատերազմող այրերի բանակների հսկողութեան տակ եւ ինքը վերադարձաւ իր բանակը:* 8 *Այն ժամանակ բոլոր ամոնացիները, ամբողջ ժողովուրդը, մովաբացիների առաջնորդները եւ ծովեզերքի բնակիչների զօրավարները եկան նրա մօտ եւ ասացին.* 9 *«Թող մեր տէրը լսի իր ծառաների խօսքը, որպէսզի քո զօրքերի վրայ հարուածներ չտեղան, որովհետեւ իսրայէլացիները չեն վստահում ո՛չ իրենց նիզակներին եւ ո՛չ զէնքերին, այլ ապաւինում են իրենց բարձր լեռներին, ուր բնակւում են իրենք: Նոյնիսկ անհնարին է նրանց հասնել: Եւ արդ, տէ՛ր, դու նրանց դէմ պատերազմ մի՛ տուր սովորական պատերազմի պէս, եւ քո զօրքերից ոչ մի տղամարդ չի ընկնի: Դու հանգիստ մնա՛ քո բանակում եւ կը փրկես քո զօրքերը, բայց քո ծառաները թող գրաւեն ջրերի աղբիւրները, որ դուրս են գալիս լերան ստորոտից, որովհետեւ քաղաքի բոլոր բնակիչները այդտեղից են խմում. նրանք կը կոտորուեն ծարաւից, իսկ յետոյ իրենք իսկ քո ձեռքը կը յանձնեն քաղաքը: Մենք մեր բոլոր զօրավարներով կը բարձրանանք լեռների մօտիկ բարձունքները եւ մի մարդու նման կը տեղաւորուենք դրանց վրայ*†*: Նրանք սովից ու ծարաւից կը մեռնեն. նախքան սուրը նրանց վրայ գալը իրենք, իրենց կանայք եւ իրենց որդիները դիտապաստ կ'ընկնեն իրենց քաղաքի հրապարակներում, եւ դու կը հատուցես նրանց ի պատասխան նրանց չարութեան, որ փոխանակ անսալու, կռուի մէջ մնացին եւ խաղաղութեամբ չհնազանդուեցին քեզ»:*

†Յունարէնում՝ *եւ կը տեղաւորուենք դրանց վրայ հսկելու համար, որպէսզի ոչ մի մարդ դուրս չգայ քաղաքից:*

10 *Այս խորհուրդը հաճելի թուաց Հողոփեռնէսին ու նրա բոլոր ծառաներին, եւ նա հրամայեց անել այնպէս, ինչպէս ասել էին: Ամոնացիների բանակը եւ նրանց հետ հինգ հազար էլ ասորեստանցիներից գնացին եւ բանակ դրեցին ձորահովտում եւ հասնելով՝ գրաւեցին իսրայէլացիների ջրի աղբիւրները: Եղոմացիները եւ ամոնացիները դուրս եկան եւ բանակ դրեցին Դոթայիմի հանդիպակաց լեռնակողմում: Նրանց մի մասին ուղարկեցին հարաւակողմը եւ դէպի Հիւսիս՝ Եգրեբիլի հանդիպակաց կողմը, որ մօտիկ է Քուշին, որն էլ Քումուրի ձորի եզրին է: Իսկ Ասորեստանի միւս զօրքերը բանակ դրեցին դաշտում եւ ծածկեցին ամբողջ երկրի երեսը: Մնացեալ ժողովուրդը հանդերձանքով ու վրաններով տեղաւորուեց մեծ տարածութեան վրայ: Իսրայէլացիները կանչեցին իրենց Տէր Աստծուն, որովհետեւ ահից սարսափած մարել էին նրանց հոգիները, քանի որ թշնամին պատել պաշարել էր նրանց, եւ ոչ մի հնար չկար դուրս գալու նրանց միջից: Ասորեստանցիների զօրքերը ռազմակառքերով, իրենց երիվարներով ելան պաշարեցին նրանց երեսունչորս օր:*

ՊԱՇԱՐՈՒԱԾՆԵՐԻ ՅՈՒՍԱԼՔՈՒԹԻՆԸ ԵՒ ՕԶԻԱՅԻ ՔԱՋԱԼԵՐՈՒԹԻՆԸ

11 *Բետիղուայի բոլոր բնակիչները յուսահատուեցին ու թուլացան, ջուրը սպառուեց նրանց բոլոր ամաններում, ջրհորների ջուրը վերջացաւ, մէկ օրուայ խմելու ջուր իսկ չմնաց, եւ ինչ խմում էին՝ չափով եւ կշռով էին խմում:* 12 *Նրանց կանայք եւ մանուկները վախի ու տարակոյսի մէջ էին, նրանց երիտասարդները թուլացել էին ծարաւից ու գլորուել քաղաքի հրապարակներում, դռների շեմին, եւ ոչ մի տեղից մխիթարութիւն չկար նրանց համար: Ամբողջ ժողովուրդը հաւաքուեց Օզիայի եւ քաղաքի իշխանների շուրջը. երիտասարդները, կանայք եւ մանուկները բարձր ձայնով լացեցին եւ ժողովրդի բոլոր ծերերի առջեւ ասացին.* 13 *«Թող Աստուած մեր եւ ձեր*

մէջ դատ անի, որովհետեւ դուք մեր
Հանդէպ անիրաւ գործ արեցիք՝ ասո-
րեստանցիներին չարեցիք խաղաղու-
թեան առաջարկ: 14 Եւ արդ, ոչ ոք
չկայ, որ օգնի մեզ, այլ Աստուած մեզ
նրանց ձեռքը մատնեց, որպէսզի դի-
տապաստ ընկնենք նրանց առջեւ եւ
կորստի մատնուենք ծարաւից: 15 Այժմ
դուք նրանց աղաչեցէ՛ք եւ, որպէս
աւար, ամբողջ քաղաքը նրանց տուէ՛ք.
16 աւելի լաւ է մեզ համար մատնուել
գերութեան եւ ծառայութեան, բայց
ողջ մնալ, քանզի չենք կարող մեր
աչքերով տեսնել մեր տղաների եւ
կանանց մահը, քանի որ թուլացել,
տկարացել են նրանց հոգիները: 17 Արդ,
երկնքի ու երկրի առջեւ վկայում ենք
ձեզ, մեր հայրերի Աստծուն, որ
վրէժխնդիր է մեզանից մեր եւ մեր
հայրերի մեղքերի համար, որպէսզի
մեր օրերին նա չանի ըստ իր խօս-
քերի»: 18 Եւ ժողովի ժամանակ բոլորը
միասին լացեցին, մեծ ողբ արեցին եւ
բարձր ձայնով կանչեցին Տէր Աստ-
ծուն: 23 Օզիան նրանց ասաց. «Քա-
ջալերուեցէ՛ք, եղբայրնե՛ր, համբերե-
ցէ՛ք եւս հինգ օր, եւ այդ օրը Տէրը
կ՚առաքի իր ողորմութիւնը մեզ վրայ,
24 որովհետեւ նա մեզ իսպառ չի լքի:
25 Բայց երբ այս օրերն անցնեն ու մեզ
օգնութիւն չգայ, ես կ՚անեմ ձեր
խօսքերի համաձայն»: Նա ժողովրդին
արձակեց իրենց տները. նրանք գնա-
ցին դէպի քաղաքի աշտարակները եւ
պարիսպները՝ թշնամիներից զգուշա-
նալու համար: Բոլորն էլ վարանումի
եւ մեծ տարակուսանքի մէջ էին:

ՅՈՒԴԻԹԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԸ

8 Այն օրը այս բոլորը լսեց Յուդիթը,
որ դուստրն էր Մերարիի, եւ սա՝ որդին
Ոքոզիայի, եւ սա՝ որդին Յովսէփի, եւ
սա՝ որդին Օզիէլի, եւ սա՝ որդին Ելկիի,
եւ սա՝ որդին Ելիէսի, եւ սա՝ որդին
Քելկիի, եւ սա՝ որդին Եղիաբի, եւ սա՝
որդին Նաթանայէլի, եւ սա՝ որդին
Սամամիէլի, եւ սա՝ որդին Սարասադդի,
եւ սա՝ որդին Իսրայէլի: 2 Յուդիթի
ամուսինը՝ Մանասէն, նրա սերնդից եւ
տոհմից էր: Նրա ամուսինը մեռաւ
գարու հնձի ժամանակ, 3 երբ դաշտում
իր հնձողների մօտ էր. խորշակը եկաւ
եւ հարուածեց նրա գլխին, որից էլ
մեռաւ իր քաղաքում՝ Բետիղուայում,
եւ թաղուեց իր հայրերի մօտ, ագա-
րակում, որ մօտիկ էր Դոթայիմին եւ
Բալսոնին: 4 Յուդիթը երեք տարի չորս
ամիս այրի նստած էր իր տանը: 5 Նա
տաղաւար պատրաստեց իր տան տա-
նիքի վրայ, իր մէջքին քուրձ գցեց եւ
այրիութեան զգեստ առաւ իր վրայ:
6 Նա իր այրիութեան բոլոր օրերում
ծոմ էր պահում, բացի շաբաթ օրից,
ամսամուտից, տարեկան տօներից եւ
Իսրայէլի տան ուրախութեան օրերից:
7 Նա տեսքով շատ գեղեցիկ էր: Նրա
ամուսինը՝ Մանասէն, նրան թողել էր
ոսկի, արծաթ, ծառաներ, աղախիններ,
արտեր, ագարակներ եւ անասուններ:
Յուդիթն ինքն էր խնամում ամէն ինչ:
8 Ոչ ոք չար բան չէր խօսում նրա
մասին, որովհետեւ նա խիստ երկիւղ
ունէր Աստծու հանդէպ: 9 Յուդիթը
լսեց իշխանի մասին ժողովրդի ասած
անիրաւացի խօսքը, քանի որ նրանք
թուլացել էին ծարաւից. լսեց նաեւ
Օզիայի խօսքերը, որ նա ասել էր
ժողովրդին, ինչպէս երդուել էր, թէ
հինգ օրից ասորեստանցիների ձեռքը
կը յանձնի քաղաքը: Նա Օզիայի մօտ
ուղարկեց իր այն նաժիշտին, որ
պատասխանատուն էր նրա ամբողջ
ունեցուածքի: Սա կանչեց Օզիային,
Քաբրիին, Քարմիին եւ քաղաքի բոլոր
ծերերին: 10 Նրանք եկան Յուդիթի
մօտ: Յուդիթն ասաց նրանց. «Լսեցէ՛ք
ինձ, Բետիղուայի բնակիչնե՛ր, որով-
հետեւ ճիշտ չեն ձեր խօսքերը, որ այ-
սօր ասացիք ժողովրդի առջեւ ու եր-
դումով հաստատեցիք այն, ինչ խօսե-
ցիք Աստծու եւ ձեր միջեւ. ասացիք, որ
քաղաքը կը մատնէք մեր թշնամիների
ձեռքը, եթէ Տէրը չուղարկի իր
օգնութիւնը մեզ: 11 Արդ, դուք, որ այս
օրերին փորձում էք Աստծուն եւ ձեզ
Աստծու տեղ էք դնում մարդկանց
որդիների մէջ, 12 ահա այժմ չէք
հարցնում Ամենակալ Տիրոջը եւ ոչինչ
չէք իմանում: 13 Եւ եթէ մարդու սրտի
խորքն անիմանալի է, ու եթէ դուք
նրանց սրտի խորհուրդները չէք հաս-

կանում, ապա ինչպէ՞ս էք համար-
ձակւում քննել Աստծուն, որ այս
բոլորն արարեց, իմանալ նրա կամքը եւ
կամ ըմբռնել նրա միտքը. քա՛ւ լիցի,
եղբայրնե՛ր, մի՛ բարկացրէք մեր Տէր
Աստծուն: 14 Եթէ նա չկամենայ մեզ
օգնել այս հինգ օրերում, ապա նա
իշխանութի՛ւն ունի մեզ պաշտպան
լինելու այն օրերին, երբ կը կամենայ,
եւ կամ մեզ կոտորել տալու մեր
թշնամիների առջեւ: 15 Արդ, դուք
դրաւ մի՛ դրէք ձեր† Տէր Աստծու խոր-
հուրդները, որովհետեւ Աստծուն չի
կարելի մարդու նման սպառնալ եւ ոչ
էլ մարդու որդու նման տանջել: 16 Ու-
րեմն, այժմ սպասելով՝ ակնկալենք
նրանից ողորմութիւն գտնել, աղաչենք
ու նրան օգնութեան կանչենք մեզ, եւ
նա կը լսի մեր աղօթքի ձայնը, եթէ
նրան հաճելի լինի. 17 քանզի այդպէս
չի վարուել երբեք մեր ազգի
նկատմամբ, այդպէս չի եղել մինչեւ
այսօր ո՛չ մեր ազգի, ո՛չ մեր տոհմի, ո՛չ
մեր ժողովրդի եւ ո՛չ մեր քաղաքի հետ:
18 Այժմ չեն երկրպագում ձեռակերտ
կուռքերին, ինչպէս վաղնջական օրե-
րում, որի պատճառով մեր հայրերը
մատնուեցին սրի ու յափշտակութեան
եւ մեծ կործանումով կործանուեցին
իրենց թշնամիների առջեւ: 19 Բայց
մենք ուրիշ Աստուած չճանաչեցինք,
բացի նրանից, որին յուսացինք, որով-
հետեւ նա չի անտեսի մեզ 20 եւ մեր
ազգը կորստեան չի մատնի այնպէս,
ինչպէս դուք ասացիք, կամ աւարի չի
մատնի մեր սրբութիւնները եւ կամ
վրիժառու չի լինի թշնամիներից
սրբութիւններն անարգելու, մեր եղ-
բայրների մահուան, այս երկրի գերու-
թեան համար: Նա մեր ժառանգու-
թեան աւերումը մեր գլխին կը բերի
հեթանոսների մէջ, ուր էլ որ ծառա-
յելու լինենք նրանց: Մենք ամօթ եւ
նախատինք կը դառնանք նրանց
առջեւ, ովքեր իշխում են մեզ վրայ,
որովհետեւ մեր ստրկութիւնը չի կարող
ուրախութիւն լինել նրանց համար,
այլ՝ մեր Տէր Աստուածն անարգանք եւ
կործանում կը բերի նրանց: 21 Եւ արդ,
եղբայրնե՛ր, մեր եղբայրներին ցոյց
տանք, որ նրանց կեանքը մեզանից է
կախուած, ու մեզ վրայ են հաստա-
տուած ե՛ւ սրբութիւնները, ե՛ւ զոհա-
սեղանը, ե՛ւ տաճարը: Արդ, այս բոլորի
համար գոհութիւն յայտնենք մեր
Աստծուն, որ փորձում է մեզ, ինչպէս
փորձել է մեր հայրերին: 22 Յիշեցէ՛ք,
թէ ինչ արեց Աբրահամին, թէ ինչ
արեց Իսահակին, կամ՝ Յակոբին Ասո-
րիքի Միջագետքում իր մօրեղբօր՝ Լա-
բանի հօտերն արածացնելիս, 23 քանզի
նրանց չփորձեց իրենց սրտի խոր-
հուրդները ճանաչելու համար. այդպէս
էլ մեր մեղքերի համար վրիժառու չի
լինի մեզնից, այլ Տէրը տանջում է իր
մերձաւորներին՝ խրատելու եւ սովո-
րեցնելու համար»:

28 Օզիան ասաց նրան. «Ինչ որ
ասացիր, ամբողջ սրտով եւ բարի
մտքով ասացիր, եւ ոչ ոք չկայ, որ դէմ
կանգնի քո խօսքերին, որովհետեւ ոչ
թէ լոկ այսօր յայտնի դարձաւ քո
իմաստութիւնը, այլ սկզբի օրերից
ամբողջ ժողովուրդն իմացաւ քո
խելքը, քանի որ բարի են քո սրտի
պտուղները: Բայց ժողովուրդը սաստիկ
ծարաւեց, եւ մենք հարկադրուած
եղանք անել այնպէս, ինչպէս խօսե-
ցինք նրանց հետ. նրանք մեզ պար-
տաւորեցրին երդումով, որը չենք
կարող դրժել: Արդ, դու խնդրուածք-
ներով աղաչի՛ր Աստծուն, որովհետեւ
դու արդար կին ես. Տէրը անձրեւ
կ՚ուղարկի, կը լցուեն ջրհորները, եւ
մենք այլեւս չենք նուազի ծարաւից»:

30 Յուդիթն ասաց նրանց. «Դուք
լսեցէ՛ք ինձ, մի բան պիտի անեմ, որի
մասին պատմուելու է սերնդից սերունդ
եւ որդուց մինչեւ որդի: 32 Դուք այս
գիշեր կանգնեցէ՛ք քաղաքի դարպասի
մօտ, ես դուրս կը գամ իմ այս նաժշտի
հետ, եւ այս օրերին, երբ մենք
որոշեցինք այս քաղաքը մատնել մեր
թշնամիների ձեռքը, Տէր Աստուած ձեզ
կ՚այցելի իմ միջոցով: 33 Դուք մի՛
քննէք իմ գործերը, որ անելու եմ,
քանի որ ես ձեզ ոչինչ չեմ ասի, մինչեւ
որ ես կատարեմ այն, ինչ անելու եմ»:

34 Օզիան, որ իշխանների հետ էր,
ասաց նրան. «Գնա՛ խաղաղութեամբ,

†Յուսարէնում՝ մեր:

եւ Իսրայէլի Տէր Աստուածը քեզ հետ թող լինի՝ մեր թշնամիներից վրէժխնդիր լինելու համար»:

Եւ նրանք Ցուդիթի տաղաւարից վերադարձան՝ իւրաքանչիւրը պարսպի պահպանութեան իր տեղը:

ՅՈՒԴԻԹԻ ԱՂՕԹՔԸ

9 *Ցուդիթն ընկաւ իր երեսի վրայ, վրայից գցեց քուրձը, որ հագել էր, եւ իր գլխին մոխիր ցանեց: Այդ ժամին Երուսաղէմում երեկոյեան խունկն էին մատուցում Տիրոջ տաճարում: Նա բարձր ձայնով կանչեց Տէր Աստծուն եւ ասաց.* 2 *«Իմ Հօր՝ Շմաւոնի Տէ՛ր Աստուած, որի ձեռքում սուր դրեցիր վրէժխնդիր լինելու համար այն այլազգիներից,* 3 *ովքեր պղծեցին կոյսերի արգանդը, մերկացրին նրանց անդամները, խայտառակեցին նրանց կուսութիւնը նախատինքի եւ թշնամանքի համար, մի բան, որ հաճելի չեղաւ քո առջեւ: Դրա համար էլ նրանց իշխաններին անկողինների պղծութեան համար, որով նրանք դատապարտուեցին, մատնեցիր արեան, սպանեցիր ծառաներին իրենց տէրերի հետ միասին ու հայրերին՝ իրենց աթոռների վրայ. նրանց կանանց մատնեցիր աւարի ու նրանց աղջիկներին՝ գերութեան: Ամբողջ աւարը բաժիններն էին քո սիրելի որդիների, ովքեր խիստ նախանձախնդիր եղան քեզ համար, գարշանք համարեցին իրենց քոյրերի պղծութիւնը եւ օգնութեան կանչեցին քեզ: Արդ, Տէ՛ր Աստուած իմ, լսի՛ր քո աղախնի ձայնը եւ նայի՛ր այրուս խնդրուածքներին:* 4 *Դու ես արել այդ բոլորը, ինչ եղել է առաջ եւ դրանից յետոյ, ինչ լինում է այժմ եւ ինչ լինելու է յետոյ. դո՛ւ մտածեցիր այդ բոլորը, եւ եղաւ այնպէս, ինչպէս որ դո՛ւ կամեցար: Այդ բոլորը, ինչպէս դու մտածել էիր, կանգնեցին քո առաջ եւ ասացին.* 5 *«Ահա մենք»: Քո բոլոր ճանապարհները պատրաստ են, քո դատաստանները՝ կանխորոշուած:* 6 *Ահաւասիկ ասորեստանցիներն իրենց զօրքերով լցուեցին մեր երկիրը, գոռոզացան իրենց երիվարներով ու հեծեալներով, հպարտացան ու մեծամտեցին իրենց հետեւակի բազմութեան հզօրութեամբ, յոյս դրեցին իրենց նիզակների, սպառազինութեան, աղեղնաւորների ու պարսատիկաւորների կորովի վրայ. նրանք չիմացան, որ դու ես Տէրը, որ խորտակում ես պատերազմները, եւ որ քո անունը Տէր է: Փրկի՛ր մեզ այս նեղութիւնից* 11 *եւ ցրի՛ր նրանց զօրութիւնը, ո՛վ Ամենակալ Տէր, խորտակի՛ր, տապալի՛ր նրանց զօրութիւնը քո բարկութեամբ, որովհետեւ նրանք կամեցան պղծել քո սրբութիւններն ու քո փառքի անուան բնակարանները եւ երկաթով խորտակել քո սուրբ զոհասեղանի եղջիւրները:* 12 *Նայի՛ր եւ տե՛ս նրանց ամբարտաւանութիւնը, քո բարկութիւնն ուղարկի՛ր նրանց գլխին եւ զօրութի՛ւն տուր քո աղախնու, իմ՝ այրուս ձեռքին, որ կատարեմ այն, ինչ մտածեցի:* 15 *Իմ շուրթերի խաբէութեամբ հարուածի՛ր, կործանի՛ր ծառային եւ իշխանին՝ իր ծառաներով*†*, խորտակի՛ր նրանց հպարտութիւնը իմ՝ այս կնոջ ձեռքով, որովհետեւ քո զօրութիւնը ոչ թէ բազմութեան մէջ է, քո արդարութիւնը ոչ թէ նրանցն է, ովքեր հզօր են, այլ դու խոնարհների Տէր Աստուածն ես, կարօտեալների օգնականը, տկարների ապաւէնը, կարօտեալների խնամակալը, յուսահատների փրկիչը:* 17 *Այո՛, դու իմ հօր Աստուածն ես, Իսրայէլի ժառանգութեան Աստուածը, երկնքի եւ երկրի Տէրը, ջրերի Արարիչը, դու ես քո բոլոր արարածների Թագաւորը,* 18 *լսի՛ր քո աղախնի աղօթքը, ինձ այնպիսի խօսքեր տո՛ւր, որ խօսեմ կործանելու համար նրանց, ովքեր եկել յարձակուել են քո կտակարանների վրայ, քո Տան վրայ, Սիոնի բարձունքի ու քո որդիների բնակարանների վրայ, որովհետեւ դաժան բաներ խորհեցին:* 19 *Քո բարձր բազուկը ցո՛յց տուր մեզ՝ քո ժառանգութեանը, թէ դու ես Աստուածը, որ տիրում ես բոլոր զօրութիւններին եւ իշխանութիւններին, եւ բացի քեզնից ոչ ոք չկայ, որ պաշտպան լինի Իսրայէլի ազգին, ո՛վ Տէր»:*

†Ցուցարէնում՝ *ծառային՝ իշխանի առջեւ եւ իշխանին՝ իր ծառայի առջեւ:*

ՅՈՒԴԻԹԸ ԳՆՈՒՄ Է ԹՇՆԱՄՈՒ ԲԱՆԱԿԸ

10 *Երբ Ցուդիթն աւարտեց իր աղօթքը եւ վերջացրեց այս խօսքերը, ոտքի կանգնեց խոնարհուած դիրքից,* 2 *կանչեց իր նաժիշտին եւ իջաւ իր տունն, ուր անցկացնում էր շաբաթ օրերն ու տօն օրերը:* 3 *Իր վրայից նա հանեց քուրձը, որ հագել էր, հանեց իր այրիութեան զգեստը, ջրով լուաց իր մարմինը, օծեց անուշ իւղով, հիւսեց իր գլխի մազերը, իր ճակատին կապեց ապարօշը եւ հագաւ իր ուրախութեան զգեստը, որ հագնում էր իր ամուսնու՝ Մանասէի կենդանութեան ժամանակ:* 4 *Նա ոսկեզօծ կօշիկներ հագաւ, իր ձեռքերին ապարանջաններ եւ իր պարանոցին մեծագին քարերով ընդելուզուած մանեակ անցկացրեց, մատանիներ՝ իր մատներին եւ իր գլխին՝ գլխազարդ: Նա զարդարուեց իր ամէն տեսակ զարդերով, է՛լ աւելի գեղեցկացաւ՝ իր դէմքի սիրունութեամբ խաբելու, գայթակղեցնելու համար նրանց, ովքեր կը տեսնեն իրեն:* 5 *Մախաղը տուեց իր աղախնին եւ այն լցրեց փոխինձով, չոր թուզով, ընտիր հացով, վերցրեց խսիրապատ գինու ամանը, իւղի սրուակը: Այս բոլորը մաքրեց ու դրեց, ըստ իրենց սովորութեան, եւ տուեց իր աղախնին:* 6 *Նրանք եկան Բետիղուա քաղաքի դարպասի մօտ ու այնտեղ տեսան Օզիային, որ դարպասի մօտ էր, եւ նրա հետ՝ քաղաքի միւս քահանաներին՝ Քաբրինին ու Քարմինին:* 7 *Երբ նրանք տեսան Ցուդիթին, որ փոխել էր իր երեսի գեղեցկութիւնը եւ իր զգեստը, նրանք շատ զարմացան նրա գեղեցկութեան վրայ* 8 *եւ ասացին նրան. «Թող Աստուած, մեր հայրերի Աստուածը քեզ շնորհ տայ եւ կատարի քո սրտի ուզածը՝ ի ցնծութիւն եւ յուրախութիւն իսրայէլացիների եւ ի փառս Երուսաղէմի»: Եւ նրանք երկրպագեցին Աստծուն: Ցուդիթը նրանց ասաց.* 9 *«Հրամայեցէ՛ք, որ ինձ համար բացեն քաղաքի դարպասները, որպէսզի ես դուրս գամ կատարելու այն, ինչ ասացիք ինձ»: Նրանք հրամայեցին դռնապաններին բացել եւ, ինչպէս ասել էին, այնպէս էլ արեցին:* 10 *Ցուդիթն իր աղախնի հետ դուրս եկաւ: Քաղաքի մարդիկ նայում էին նրա յետեւից, մինչեւ նա անցաւ լերան յետեւը, մինչեւ անցաւ հովտի կիրճը, եւ ապա այլեւս չտեսան նրան:*

11 *Նրանք գնում էին հովտի կիրճով, ուղիղ ճանապարհով: Նրանք հանդիպեցին ասորեստանցի պահապանների,* 12 *որոնք բռնեցին նրանց, հարցրին ու ասացին. «Ո՞ր ցեղից ես դու, որտեղի՞ց ես գալիս, ո՞ւր ես գնում»: Ցուդիթը նրանց ասաց. «Ես եբրայեցիների դուստրն եմ եւ փախչում եմ նրանցից, որովհետեւ նրանք ձեզ կեր են դառնալու:* 13 *Ես եկել եմ ձեր զօրքերի իշխան Հոլոփեռնէսի առջեւ կանգնելու՝ նրան ճշմարիտ բաներ պատմելու եւ նրան ցոյց տալու համար այն ճանապարհը, որով կը գնայ եւ կը գրաւի ամբողջ լեռնակողմը, ու նրա զօրքից ոչ մէկին վնաս չի լինի»:* 14 *Երբ մարդիկ լսեցին Ցուդիթի խօսքերը, նայեցին նրա երեսին, նա խիստ գեղեցիկ երեւաց իրենց, եւ ասացին նրան.* 15 *«Դու այսօր փրկեցիր քո անձը. արդ, շտապի՛ր իջնել՝ տեսնելու մեր տիրոջ երեսը, մեզ հետ կը գնաս նրա վրանը, մենք քեզ կը յանձնենք նրա ձեռքը.* 16 *երբ կանգնես նրա առջեւ, քո սրտի մէջ մի՛ վախեցիր, այլ դու նրան կը պատմես ըստ քո այն խօսքերի, որ ասացիր, եւ նա քեզ բարիք կ՚անի»: Նրանք իրենց միջից ընտրեցին հարիւր մարդ, ուղարկեցին նրանց հետ, որոնք նրանց տարան Հոլոփեռնէսի վրանը: Ամբողջ բանակին նրանք պատմեցին նրա գեղեցկութեան ու գալու մասին: Բոլորը գալիս էին նրան տեսնելու, մինչ նա կանգնած էր Հոլոփեռնէսի վրանից դուրս, իսկ ներսում նրա մասին պատմում էին Հոլոփեռնէսին:* 17 *Նրանք խիստ զարմանում էին նրա գեղեցկութեան վրայ ու բոլոր իսրայէլացիների վրայ:* 18 *Իւրաքանչիւր ոք իր ընկերոջն ասում էր. «Արդ, ո՞վ կարող է չար բան մտածել այս ազգի մասին, որ այսպիսի գեղեցիկ կանայք ունի: Նրանց տղամարդիկ չպէտք է ապրեն, որպէսզի նրանց աղջիկները մեզ կին լինեն, քանի որ,*

եթէ ապրեն, վնաս կը տան ամբողջ երկրին»: Հողոփեռնէսի սպասաւորները եւ նրա բոլոր ծառաները դուրս եկան եւ Ցուդիթին տարան վրան: 19 Հողոփեռնէսը նստել էր իր գահոյքին, որը չուրջանակի ծածկուած էր վարագոյրով, ընդելուզուած էր ոսկով, մարգարտով եւ թանկագին քարերով: Երբ նա լսեց Ցուդիթին, դուրս եկաւ վրանի սրահը ջահերով եւ արծաթեայ լապտերներով, որովհետեւ գիշեր էր: 20 Եւ երբ Հողոփեռնէսը նրան տեսաւ, զարմացաւ նրա գեղեցիկ տեսքի վրայ: Ցուդիթը խոնարհուելով մինչեւ գետին՝ երկրպագեց Հողոփեռնէսին, իսկ նրա ծառաները կանգնեցրին նրան:

ՅՈՒԴԻԹԸ ՀՈՂՈՓԵՌՆԷՍԻ ԱՌՋԵՒ

11 Հողոփեռնէսը նրան ասաց. «Արիացի՛ր, ո՛վ կին եւ մի՛ վախեցիր, որովհետեւ ես չեմ չարչարում ոչ մի մարդու, ով կամենում է ծառայել Նաբուքոդոնոսոր արքային, որը տիրում է այս ամբողջ երկրին: 2 Արդ, քո այդ ժողովուրդը, որ բնակւում է լեռնակողմում, եթէ չապստամբէր իմ դէմ, ես նիզակ չէի բարձրացնի դրանց վրայ, բայց դրանք այս բանն իրենք իրենց արեցին: 3 Արդ, դու ինձ ասա, թէ ինչո՞ւ ես փախել նրանցից եւ եկել ես մեզ մօտ. քաջալերուի՛ր, որովհետեւ եկել ես փրկուելու համար, կենդանի կը մնաս թէ՛ այս գիշեր եւ թէ՛ քո բոլոր օրերին: Քեզ ոչ ոք չի վնասի, այլ լաւ կը վարուեն քեզ հետ, ինչպէս վարւում են իմ տիրոջ՝ Նաբուքոդոնոսորի ծառաների հետ»:

4 Ցուդիթը ասաց նրան. «Թո՛յլ տուր, որ քո աղախինը խօսի քո առջեւ. ես այս գիշեր ոչ մի սուտ բան չեմ ասի իմ տիրոջը: Եթէ հետեւես եւ լսես քո աղախնի խօսքերը, Աստուած քո միջոցով մեծ գործ կը կատարի, եւ քո գործն իզուր չի անցնի: 5 Թող ապրած կենայ Նաբուքոդոնոսորը՝ բովանդակ երկրի արքան, եւ ապրած կենայ նրա զօրութիւնը, որ քեզ ուղարկեց՝ ուղղութիւն տալու ամէն մարդու, որովհետեւ քո ձեռքով ոչ միայն մարդիկ են ծառայում նրան, այլեւ՝ վայրի գազանները, անասունները եւ երկնքի թռչունները. քեզնով են ապրելու Նաբուքոդոնոսորն ու նրա ամբողջ տունը: 6 Արդարեւ, մենք լսեցինք քո իմաստութեան ու քո հոգու մեծութեան մասին, որ պատմւում է ամբողջ երկրում, որովհետեւ միայն դու ես բարերարը նրա բովանդակ թագաւորութեան մէջ, դու հզօր ես խօսքով ու սքանչելի՝ պատերազմող զօրականների մէջ: 7 Արդ, այն խօսքերը, որ Աքիորն ասել է ժողովում, քո սենեակի մէջ, մենք էլ լսեցինք, որովհետեւ Բետիղուայի մարդիկ խնայեցին նրան, եւ նա պատմեց բոլորը, ինչ ասել էր քեզ: Արդ, տէ՛ր, այժմ նրա խօսքերը մի՛ անտեսիր, այլ հաստատի՛ր քո սրտում, որովհետեւ դրանք ճշմարիտ են, 8 քանզի ոչ ոք չի կարող չարչարել մեր ազգը, եւ ոչ էլ թշնամու սուրը կը վնասի մեզ, եթէ նրանք չմեղանչեն իրենց Աստծու դէմ: 9 Եւ արդ, թող չվնասուես, տէ՛ր իմ, դու եւ քո զօրքը, որովհետեւ հասել է նրանց մահուան ժամը այն մեղքերի պատճառով, որ գործեցին իրենց Աստծու դէմ, քանզի նրանք անիրաւութեան մեծ մեղք գործեցին: 10 Գակասեց նրանց ջուրն ու կերակուրը, 11 նրանք մտածեցին եւ իրենց ձեռքը երկարեցին այն անասունների վրայ, որ հրամայուած չէր ուտել իրենց Աստծու կողմից, 12 ցորենի բերքի, գինու եւ իւղի տասանորդի վրայ, որոնք սրբագործուած էին քահանաների կողմից, որ մեր Աստծու սպասաւորներն են Երուսաղէմում: Նրանք սկսեցին ուտել դրանք, որ ոչ ոք իրաւունք չունէր ուտելու, բացի միայն քահանաներից: Նրանք Երուսաղէմ մարդիկ ուղարկեցին, որպէսզի, ովքեր այնտեղ են, այսպէս անեն: Դրա համար էլ նրանց թողութիւն էր լինում Աստծու կողմից քահանաների ձեռքով: Եւ արդ, երբ նրանք այս մեղքը գործեցին, մահուան պիտի մատնուեն: 13 Ահա թէ ինչու, ես՝ քո աղախինը, երբ այս իմացայ, նրանցից փախայ: Աստուած† ինձ ուղարկեց քեզ հետ մեծ գործ կատարելու, որից ամբողջ երկիրը

†Գրաբար բնագրում չիմ, դրել եմ ըստ յունարէն բնագրի:

պիտի զարմանայ՝ ով էլ որ մի անգամ լսի այդ մասին, 14 որովհետեւ քո աղախինը աստուածապաշտ է եւ գիշեր ու ցերեկ աղաչում է երկնքի Տէր Աստծուն: Իսկ արդ, ես թող քեզ մօտ մնամ, տէ՛ր իմ, քո աղախինը թող այս գիշեր դուրս գայ հովտի կիրճը, թող ես աղօթեմ իմ Տէր Աստծուն, եւ երբ մեղանչեն իր դէմ, նա կը յայտնի ինձ: 17 Ես կը գամ ու կը պատմեմ քեզ, դու քո ամբողջ զօրքի հետ միասին դուրս կը գաս, նրանցից ոչ մէկը չի փրկուի քեզանից: Ես քեզ կը տանեմ Հրէաստանի միջով, քեզ կը տանեմ մինչեւ Երուսաղէմ, եւ դու քո աթոռը կը հաստատես նրա մէջ, նրանց կը հաւաքես հօտի նման, որ չունի հովիւ, եւ ոչ մի շուն իր լեզուով չի հաչի քո դէմ: Ինձ յայտնուեց, որ այս բանը լինելու է Աստծուց, ու ես եկայ՝ ցոյց տալու քեզ»:

18 Ցուդիթի խօսքերը հաճելի թուացին Հողոփեռնէսին եւ նրա բոլոր ծառաներին: Զարմանում էին նրա իմաստութեան վրայ եւ ասում. 19 «Սրա նման գեղեցիկ կին չկայ երկրի մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը՝ իր խօսքի իմաստութեամբ եւ իր դէմքի գեղեցկութեամբ»: 20 Հողոփեռնէսը նրան ասաց. «Աստուած բարիք գործեց, որ քեզ ուղարկել է՝ առաջնորդելու այս ժողովրդին, որպէսզի հզօրանայ մեր տէրութիւնը, եւ ովքեր ապստամբեցին մեր դէմ՝ կորչեն† : Արդ, տեսնում եմ, որ դու կայտառ ես, եւ բարի են քո բոլոր խօսքերը: 21 Եւ եթէ Աստուած այնպէս անի, ինչպէս ասացիր, ապա քո Աստուածը նաեւ իմ Աստուածը կը լինի. դու կը նստես Նաբուքոդոնոսորի տանը եւ անուանի կը լինես ամբողջ երկրում»:

ՅՈՒԴԻԹԸ ԹՇՆԱՄՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ

12 Հողոփեռնէսը հրամայեց տանել նրան ճաշասենեակ, հրամայեց, որ նա օգտուի իր սեղանի կերակուրներից եւ այնտեղի գինուց, որ ինքն էր խմում: 2 Ցուդիթը նրան ասաց. «Ես դրանցից

†Յունարէնում՝ որպէսզի մեր ձեռքերում ուժ լինի, իսկ իմ Տիրոջը ատողներին՝ մահ:

չեմ ուտի, որպէսզի ինձ համար գայթակղութիւն չլինեն, այլ հրամա՛ն տուր ուտել այն, ինչ բերել են այն քաղաքից ինձ համար»: 3 Հողոփեռնէսը նրան ասաց. «Եթէ այն պակասի, քեզ որտեղի՞ց տանք դրանց նմանը, քանզի քո ազգից ոչ ոք չկայ մեր մէջ»: 4 Ցուդիթը նրան ասաց. «Ապրած կենաս, տէ՛ր իմ, քո աղախինը չի վերջացնի այն կերակուրը, որ բերուած է ինձ հետ, մինչեւ որ իմ ձեռքով անեմ այն, ինչի մասին խօսուեց:

Հողոփեռնէսի ծառաները նրան տարան վրան: Նա այնտեղ քնեց մինչեւ կէսգիշեր: Առաւօտեան պահին Ցուդիթը վեր կացաւ 5 եւ մարդ ուղարկեց Հողոփեռնէսի մօտ՝ ասելու. «Թող իմ տէրը հրամայի թոյլ տալ իր աղախնին աղօթքի դուրս գալ»: 6 Հողոփեռնէսը պահապաններին հրամայեց չարգելել նրան: Ցուդիթը երեք օր այնտեղ էր՝ բանակում: 7 Նա գիշերը դուրս էր գալիս Բետիղուայի ձորը եւ լուացւում էր բանակում աղբիւրի ջրով, ըստ հրեաների սովորութեան: 8 Երբ նա լուացւում էր, Իսրայէլի Տէր Աստծուն աղօթում էր, որ յաջողութիւն տայ իր ճանապարհին՝ իր ժողովրդի փրկութեան համար: 9 Նա մաքրուած էր մտնում վրանը, իսկ կերակուրը երեկոյեան վերցնում տանում էին իր մօտ:

ՀՈՂՈՓԵՌՆԷՍԻ ԽՆՋՈՅՔԸ

10 Չորրորդ օրը Հողոփեռնէսը միայն իր ծառաների համար խնջոյք արեց եւ խնջոյքի չկանչեց օտարներից եւ ոչ մէկին, որ այնտեղ էին: Նա ասաց Բագուին՝ իր ներքինուն, որը նրա ամբողջ ունեցուածքի հաւատարիմ տնտեսն էր. «Գնա՛ դու, համոզի՛ր, - ասում է, - եբրայեցի կնոջը, որը քեզ մօտ է, որ գայ ուտելու ու խմելու մեզ հետ: 11 Ամօթ է մեզ՝ թողնել այդպիսի կնոջը ու բոլորովին չխօսել նրա հետ: Արդ, եթէ չկանչենք նրան եւ չմօտեցնենք մեզ, գուցէ նա ծաղրի մեզ»: 12 Բագուն ելաւ Հողոփեռնէսի մօտից, մտաւ Ցուդիթի մօտ ու ասաց նրան. «Ո՛վ դու, գեղեցի՛կ աղախին, մի՛ յապաղիր գալ իմ տիրոջ մօտ,

փառաւորուել նրա կողմից ու նրա
կողքին, մեզ հետ միասին, խմել
ուրախութեան գինին: Դու այսօր կը
լինես իբրեւ ասորեստանցիների
դուստրերից մէկը, որ սպասաւորում է
Նաբուքոդոնոսոր արքային»: 13 Ցուդի-
թը նրան ասաց. «Ո՞վ եմ ես, որ
ընդդիմանամ իմ տիրոջը, 14 որով-
հետեւ ամէն ինչ, որ հաճելի է քո
աչքին, փութով կատարում եմ, եւ դա
ինձ համար ցնծութիւն կը լինի մինչեւ
իմ մահուան օրը»: 15 Նա վեր կացաւ,
զարդարուեց կանացի իր զարդերով.
նրա նաժիշտը ներս մտաւ ու Հողո-
փեռնէսի դէմյանդիման նրա համար
բազմելու մորթի փռեց գետնին, որ նա
Բագուից էր ստացել ամենօրեայ
օգտագործման համար: Ցուդիթը բազ-
մեց դրա վրայ: 16 Հողոփեռնէսը
յափշտակուեց նրա տեսքից, նրա
հոգին խռովուեց նրան՝ ունենալու մեծ
ցանկութիւնից: Այն օրից, ինչ տեսել էր
նրան, Հողոփեռնէսն առիթ էր
փնտռում հրապուրելու նրան: 17 Հո-
ղոփեռնէսն ասաց. «Դու խմի՛ր եւ մեզ
հետ ուրա՛խ եղիր»: 18 Ցուդիթն ասաց.
«Այո՛, տէ՛ր, որովհետեւ այսօր իմ
կեանքը մեծարուեց աւելի, քան իմ
ծննդից սկսած բոլոր օրերին»: 19 Եւ
Ցուդիթը նրա առջեւ վերցնում,
ուտում, խմում էր, ինչ նրա համար
պատրաստում էր իր աղախինը: 20 Հո-
ղոփեռնէսն ուրախացաւ դրանից ու
այնքան շատ գինի խմեց, ինչքան նա
չէր խմել իր ծննդեան օրից:

ՅՈՒԴԻԹԸ ԿՏՐՈՒՄ Է ՀՈՂՈՓԵՌՆԷՍԻ ԳԼՈՒԻՆԸ

13 Երբ երեկոյ եղաւ, Հողեփեռնէսը
իր ծառաներին շտապեցրեց դուրս
գնալ: Բագուն փակեց վրանի դուռը,
նրանք գնացին՝ իւրաքանչիւրն իր
անկողինը, որ դրսում էր, 2 քանզի
բոլորը մեծ գինարբուքից շատ էին
յոգնել: 3 Վրանում մնացին միայն
Ցուդիթը եւ Հողոփեռնէսը: 4 Հողո-
փեռնէսը, մտնելով իր անկողինը, քնեց,
որովհետեւ խիստ թմրել էր գինուց:
5 Ցուդիթն ասաց իր աղախնին, որ
մնայ վրանից դուրս, սպասի իրեն,
ինչպէս միւս օրերին, երբ ինքը դուրս
էր գալիս ասելով, թէ՝ «Ըստ սովո-
րութեան գնում եմ աղօթելու»: Այս
նոյն բանը նա Բագուին ասաց:

6 Երբ բոլորը գնացին այդ սենեակից,
ու այնտեղ ոչ ոք չմնաց, Ցուդիթը
կանգնեց նրա մահճակալի մօտ եւ
ասաց. «Զօրութիւնների Տէ՛ր Աստուած,
այս ժամին նայի՛ր իմ ձեռքի գործերին
եւ Երուսաղէմի բարձունքին, 7 որով-
հետեւ այժմ ժամանակն է, որ դու
օգնես ինձ՝ քո ժառանգութեանը, եւ
այս գործը կատարես իմ ձեռքով, սա-
տակեցնես մեր թշնամիներին, որ յար-
ձակուել են մեզ վրայ»: 8 Նա մօտեցաւ
մահճակալի ճաղին, որ Հողոփեռնէսի
սնարի կողմն էր, հանեց նրա դաշոյնը
ազդրից, բռնեց նրա մազերից եւ ասաց.
9 «Զօրացրո՛ւ ինձ այսօր, Իսրայէլի՛
Աստուած»: 10 Եւ նա իր ամբողջ ուժով
երկու անգամ հարուածեց նրա պարա-
նոցին եւ կտրեց նրա գլուխը: 11 Նրա
մարմինը թաւալեց գցեց մահճակալից.
մէկ ժամ յետոյ դուրս եկաւ, իր
նաժշտին տուեց Հողոփեռնէսի գլուխը,
12 եւ նա այն գցեց իր կերակրի
մախաղի մէջ: Երկուսը միասին, ըստ
իրենց սովորութեան, ելան ու անցան
բանակի միջով, շրջանցեցին ձորը,
ելան Բետիղուայի լեռը 13 եւ եկան
քաղաքի դարպասների մօտ: Ցուդիթը
դարպասների պահապաններին ասաց
հեռուից. «Բացէ՛ք, բացէ՛ք դարպաս-
ները, մեզ հետ է մեր Տէր Աստուածը,
որպէսզի էլ աւելի զօրութիւն տայ Ի-
սրայէլին՝ մեր թշնամիներին յաղթելու
համար, ինչպէս արեց այսօր»: 14 Երբ
քաղաքի մարդիկ լսեցին նրա ձայնը՝
փութացին իջնել իրենց քաղաքի
դարպասների մօտ: Նրանք կանչեցին
ժողովրդի քահանաներին ու ծերերին,
15 եւ հաւաքուեցին բոլորը, փոքրից
մինչեւ մեծը, որովհետեւ նրանք շատ
էին զարմացել, որ նա եկել է: Նրանք
բացեցին քաղաքի դարպասը, նրանց
ներս առան, 16 վառեցին իրենց
լապտերները եւ հաւաքուեցին նրանց
շուրջը: 17 Ցուդիթը բարձր ձայնով
ասաց. «Ո՛վ իսրայէլացիներ, օրհնեցէ՛ք
Աստծուն, 18 որ իր ողորմութիւնը
չհեռացրեց Իսրայէլի տնից, այլ այս
գիշեր իմ ձեռքով հարուածեց, վանեց

թշնամուն»: 19 Եւ նա Հողոփեռնէսի
գլուխը հանեց մախաղից, ցոյց տուեց
նրանց եւ ասաց. «Ահա Հողոփեռնէսի՝
ասորեստանցիների զօրքերի զօրապետի
գլուխը, ահա թանկարժէք վարագոյրը,
որի վրայ նա փռուել էր հարբած, եւ
Տէր Աստուած իմ՝ այս կնոջ ձեռքով
սատակեցրեց նրան: 20 Կենդանի է
Տէրը, որ պահպանեց ինձ այն ճանա-
պարհին, որով ես գնացի, որովհետեւ
իմ երեսի տեսքը խաբեց նրան՝ ի
կորուստ իրեն, բայց նա ինձ չպղծեց՝
իմ անձը խայտառակելու համար»: 22
Ամբողջ ժողովուրդը գոհութիւն յայտ-
նեց ու խոնարհուելով՝ երկրպագեց
Աստծուն: Բոլորը միաբերան ասացին.
«Օրհնեալ ես դու, մեր Տէ՛ր Աստուած,
որ այսօր ամաչեցրիր քո ժողովրդի
թշնամիներին»: 23 Օզիան ասաց Ցու-
դիթին. «Բարձրեալ Աստծու դո՛ւստր,
օրհնեալ ես դու աւելի, քան երկրի
վրայ եղած բոլոր կանայք, 24 եւ օրհ-
նեալ է Տէր Աստուած, որ ստեղծել է
երկինքն ու երկիրը, որ յաջողութիւն
տուեց քեզ՝ կտրելու մեր թշնամու
իշխանի գլուխը: 25 Դրա համար քո
անունը չի վերանալու մարդկանց մի-
ջից՝ Աստծու առջեւ յաւիտենապէս քեզ
յիշելու համար: Թող իմ Տէր Աս-
տուածը բարձրացնի քո անձը եւ բա-
րիքներ շնորհի քեզ ի հատուցումն այն
բանի, որ մեր ազգի տառապանքների
պատճառով դու չխնայեցիր քո անձը,
այլ վրէժխնդիր եղար մեր կրած կոր-
ծանարար հարուածների համար՝ մեր
Տիրոջ առջեւ ընթանալով ուղիղ ճա-
նապարհով»: 26 Եւ ամբողջ ժողո-
վուրդն ասաց. «Թող այդպէս լինի,
թող այդպէս լինի»:

ԱՔԻՈՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՀԱՒԱՏԸ

14 Ցուդիթը նրանց ասաց. «Եղ-
բայրնե՛ր, լսեցէ՛ք ինձ, թէ ինչ եմ
ասում ձեզ. վերցրէ՛ք այս գլուխը եւ
կախեցէ՛ք քաղաքի պարիսպների սիւ-
ներից: 2 Երբ բացուի առաւօտը, ու
երկրի վրայ ծագի արեգակը, պատե-
բազմելու կարող բոլոր տղամարդիկդ
զինուեցէ՛ք, ձեր վրայ զօրավարնե՛ր
կարգեցէք, դո՛ւրս ելէք քաղաքից՝
իբրեւ թէ դաշտ էք իջնում, գնացէ՛ք
դէպի ասորեստանցիների առաջապահ
թեւը, բայց այնտեղ չիջնէք, այլ միայն
անհանգստացրէ՛ք նրանց: 3 Նրանք
կ՚առնեն իրենց զէնքերը, կը գնան
իրենց բուն բանակը, կ՚արթնացնեն
ասորեստանցիների զօրապետներին,
հաւաքուելով կը դիմեն Հողոփեռնէսի
վրանը եւ չեն գտնի նրան: Նրանց մէջ
ահ կ՚ընկնի, նրանք կը փախչեն
ձեզանից, 4† եւ դուք կ՚ընկնէք նրանց
յետեւից: Իսրայէլի սահմաններում
բնակուող բոլոր բնակիչները թող
նրանց դիտապաստ անելով ոչնչացնեն
իրենց բոլոր ճանապարհների վրայ:
5 Արդ, մինչ այս անելը, ինձ մո՛տ
կանչեցէք Աքիոր Ամոնացուն, որ տես-
նի գլուխն այն մարդու, որ ոտնա-
հարեց Իսրայէլի տունը, կապեց նրան՝
մահ բերելու այստեղ»: 6 Աքիորին
կանչեցին Օզիայի տնից, ու երբ նա
եկաւ եւ Հողոփեռնէսի գլուխը տեսաւ
ժողովրդի մէջ մի տղամարդու ձեռքին,
երեսնիվայր ընկաւ, թաւալուեց: 7 Երբ
սթափուեց, ընկաւ Ցուդիթի ոտքը,
երկրպագեց նրան եւ ասաց. «Օրհնեալ
ես դու Ցուդայի երկրի բոլոր բնակա-
վայրերում եւ բոլոր ժողովուրդների
մէջ, ուր, լսելով քո անունը, կը զար-
մանան: 8 Արդ, դու ինձ պատմի՛ր, թէ
ի՛նչ էիր անում այս օրերին»: Եւ իր
ամբողջ ժողովրդի առաջ Ցուդիթը
նրան պատմեց, թէ ինչ էր նա արել
այն օրից, երբ դուրս էր եկել, մինչեւ
այդ ժամը: 9 Երբ Ցուդիթը դադարեց
խօսելուց, ժողովուրդը բարձր ձայնով
աղաղակեց՝ փառաբանելով Աստծուն
իրենց քաղաքում: 10 Երբ Աքիորը
տեսաւ այն ամէնն, ինչ Իսրայէլի
Աստուածն արել էր, իր ամբողջ սրտով
հաւատաց Աստծուն, թլփատեց իր
անթլփատ մարմինը եւ այդ օրից էլ
միացաւ Իսրայէլի տանը:

ԲԱԳՈՒՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է ՀՈՂՈՓԵՌՆԷՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

11 Երբ բացուեց առաւօտը, Հողո-
փեռնէսի գլուխը կախեցին պարսպից.

†Թուահամարները վերականգնել եմ ըստ յունարէն բնագրի:

իւրաքանչիւր տղամարդ զինուեց իր զէնքով, եւ նրանք դուրս եկան գրաւելու այն լեռնանցքը, որ լերան վրայ էր: 12 Երբ ասորեստանցիները նրանց տեսան, իրենց առաջնորդներին տեղեակ պահեցին, նրանք էլ եկան իրենց զօրապետների, իշխանների եւ նրանց հազարապետների մօտ: 13 Նրանք գնացին Հողոփեռնէսի վրանը եւ ասացին նրա սենեկապետին. «Նե՛ր մտիր, արթնացրո՛ւ մեր տիրոջը, որովհետեւ եբրայեցիները յանդգնեցին պատերազմել մեր դէմ, որպէսզի նրանց իսպառ ոչնչացնենք»: 14 Բագուն մտաւ ու բախեց սենեակի դուռը, որովհետեւ կարծում էր, թէ Հողոփեռնէսը Ցուդիթի հետ քնած է: 15 Երբ ոչ ոք նրան չպատասխանեց, համարձակ սենեակ մտաւ եւ տեսաւ, որ նա մերկ ընկած էր գետնին, եւ նրա գլուխը կտրուած էր մարմնից: 16 Բագուն գոչեց բարձր ձայնով, լացով ու մեծ ողբով եւ պատռեց իր պատմուճանը: 17 Նա մտաւ Ցուդիթի սենեակն ու նրան չգտաւ, դուրս եկաւ, գնաց զօրքի մօտ եւ ասաց. 18 «Եբրայեցիներն ապստամբեցին, որովհետեւ եբրայեցի մի կին ամօթ ու նախատինք դրեց Նաբուքոդոնոսոր արքայի տան վրայ, քանզի, ահա, Հողոփեռնէսը գետին է գլորուել, եւ նրա գլուխը իր վրայ չէ»: 19 Երբ Ասորեստանի զօրքերի իշխանները լսեցին այս բաները, բոլորը պատռեցին իրենց պատմուճանները, խիստ վախեցան, ու նրանց աղաղակն ընկաւ բանակի մէջ:

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՆԱՀԱՆՋԸ

15 Ովքեր վրանում էին, երբ լսեցին կատարուած բաների մասին, ապշեցին, 2 ու նրանց վրայ սաստիկ ահ ու դող ընկաւ: Ապա ոչ մի մարդ չմնաց իր ընկերոջ մօտ, 3 եւ բոլորը խուճապով փախուստի դիմեցին դէպի դաշտի ու լերան կողմերը, որ գտնւում էին Բետիղուայի շուրջը: 4 Այնտեղից էլ դարձեալ փախան: Դրանից յետոյ իսրայէլացիներից իւրաքանչիւր պատերազմող տղամարդ յարձակուեց նրանց վրայ:

5 Օզիան սուրհանդակներ ուղարկեց Բետմեսթեմ, Քոբա, Կոլա եւ Իսրայէլի բոլոր սահմանները՝ աւետելու կատարուած բաների մասին, որպէսզի բոլորը միասին հաւաքուեն ու հետապնդեն նրանց՝ ոչնչացնելու համար: 6 Երբ իսրայէլացիները լսեցին, բոլորը միասին յարձակուեցին նրանց վրայ, կոտորեցին ու հալածեցին մինչեւ Քոբա: Այդպէս արեցին նաեւ երուսաղէմացիները: Բոլոր նրանք, ովքեր լեռնակողմից էին եկել, նրանց պատմեցին այն, ինչ եղել էր բանակում: Սրանք Գաղաադից ու Գալիլիայից էին. հասան, յարձակուեցին եւ քշեցին նրանց՝ հասցնելով մինչեւ Դամասկոս ու նրա սահմանները: 7 Բետիղուայի միւս բնակիչները ելան ու յարձակուեցին բանակ դրած ասորեստանցի բնակիչների վրայ՝ աւարելու եւ կողոպտելու համար: Նրանք վերցրին բանակի այդ կողոպուտը, որով խիստ յղփացան ու հարստացան Բետիղուայի բնակիչները: 8 Իսրայէլացիները կոտորածից վերադարձան եւ սկսեցին հաւաքել սպանուածների կողոպուտը: Լեռնակողմի ու դաշտակողմի գիւղերի ու ագարակների բնակիչներն էլ եկան հաւաքեցին աւարի մնացորդները: 9 Յովակիմ մեծ քահանան ու իսրայէլացիների ծերակոյտը, որ բնակւում էին Երուսաղէմում, եկան տեսնելու այն բարիքը, որ Տէր Աստուած արեց Իսրայէլին, տեսնելու նաեւ Ցուդիթին եւ ողջունելու նրան: 10 Եւ երբ ներս մտնելով տեսան նրան՝ բոլորը միաբերան օրհնեցին նրան ու ասացին. «Դու երուսաղէմի հպարտութիւնն ես, դու Իսրայէլի ցնծութիւնն ես, դու մեր ազգի պարծանքն ես, 11 որովհետեւ քո ձեռքով արեցիր այս ամբողջ բարիքն Իսրայէլին, եւ Աստուած հաւանեց դրանք. յաւիտենապէս օրհնեալ լինես դու Ամենակալ Աստծուց»: 12 Եւ ամբողջ ժողովուրդն ասաց. «Թող այդպէս լինի»:

13 Երեսուն օր ժողովուրդը կրում էր բանակի աւարը: Ցուդիթին տուեցին Հողոփեռնէսի վրանը եւ վրանի ամբողջ արծաթն ու կահոյքը, նրա ամբողջ ոսկէ ու արծաթէ սպասքը: Նա

վերցնելով այդ՝ բարձեց իր սայլի, իր դրաստների վրայ եւ քաղաք բերեց: 14 Նրա մօտ եկան իսրայէլացիների բոլոր կանայք՝ նրան տեսնելու. նրանք օրհնեցին նրան եւ նրա համար նուագում էին ու պարելով երգում: Ցուդիթը վերցնելով արմաւենու ոստեր ձիթենու ծաղիկների հետ՝ տալիս էր նրանց: 15 Ուրիշ կանայք եւս յայտնի վայրերից խմբերով գալիս էին գովելու նրան: Բոլոր իսրայէլացիները զարդարուած գնում էին նրանց յետեւից՝ իրենց գլուխներին դրած տեսակ-տեսակ պսակներ. նրանց բոլորի բերանում օրհնութիւն կար՝ Աստծուն փառաբանելու համար:

ՅՈՒԴԻԹԻ ԵՐԳԸ

16 Ցուդիթն սկսեց երգել այս երգը, եւ ամբողջ Իսրայէլը ձայնակցում էր նրան:

Ցուդիթն այսպէս էր ասում.

2 «Երգեցէ՛ք Տիրոջ համար թմբուկներով,
օրհնեցէ՛ք նրան ծնծղաներով,
երգեր եւ օրհնութիւններ ուղղեցէ՛ք նրան:
Փառաբանեցէ՛ք նրան եւ կանչեցէ՛ք նրա անունը,
3 որովհետեւ Աստուած Տէր է եւ խորտակում է պատերազմները,
4 նա իր բանակներն է դնում ժողովուրդների մէջ.
նա՛ ինձ փրկեց իմ հալածիչների ձեռքից:
5 Ասորեստանը եկաւ Հիւսիսային լեռներից,
եկաւ իր բիւրաւոր զօրքերով.
նրանց բազմութիւնը ծածկեց ձորերը,
երիվարների բազմութիւնը ծածկեց բլուրները,
6 նա ասաց, որ հրի է մատնելու իմ սահմանները,
իմ երիտասարդներին ոտնատակ է անելու†,
իմ տղաներին աւարի է մատնելու
եւ իմ կոյսերին գերի վարելու:

7 Ամենակալ Տէր Աստուածը նրանց կործանեց ձեռքով,
8 որովհետեւ նրանց հզօր այրը ոչ թէ երիտասարդների ձեռքով ընկաւ,
ոչ թէ տիտանների որդիները նրան սատակեցրին,
ոչ թէ բարձրահասակ հսկաները յարձակուեցին նրա վրայ,
այլ՝ Ցուդիթը՝ Մերարիի դուստրը.
նրա դէմքի գեղեցկութիւնը խաբեց նրան:
9 Նա հանեց իր այրիութեան զգեստները՝
բարձրացնելու համար նրանց,
ովքեր ծեծուած էին Իսրայէլի մէջ:
10 Նա անուշ իւղերով օծեց իր երեսը
եւ իր գլուխը զարդարեց իր զարդերով:
11 Բեհեզեայ զգեստ հագաւ հրապուրելու համար:
Զօրապետի սիրտը զմայլուեց նրա կօշիկների գեղեցկութիւնից,
նրա նրբագեղութիւնը գերեց նրա հոգին,
եւ դաշոյնը կտրեց նրա պարանոցը:
12 Պարսիկները դողացին նրա քաջասրտութիւնից,
եւ մարերը շփոթուեցին նրա արիութիւնից:
13 Այն ժամանակ աղաղակեցին իմ տառապեալները,
իմ հիւանդները գոչեցին բարձրաձայն,
եւ նրանք պարտուեցին.
բարձրացաւ իրենց ձայնը,
եւ նրանք վհատուեցին:
14 Թոյլ կանանց որդիներ համարուածները խոցոտեցին նրանց,
տնանկ պանդուխտների որդիներ համարուածները կոտորեցին նրանց,
եւ նրանք ոչնչացան իմ Տիրոջ գրոհից:
15 Նոր երգ եմ երգելու իմ Տէր Աստծուն:
16 Տէ՛ր, մեծ ես դու եւ փառաւորեալ,
սքանչելի ես աննուազ զօրութեամբ:
17 Թող քեզ ծառայեն քո բոլոր արարածները,
որովհետեւ դու ասացիր՝ եւ նրանք գոյացան,
դու առաքեցիր քո Հոգին՝

†Ցուցարէնում՝ իմ երիտասարդներին սրով է սպանելու եւ նորածիններին գետնին գցելու:

եւ նրանք ընդունեցին այն ու կազ-
մաւորուեցին,
եւ ոչ ոք չկայ, որ հակառակ լինի քո
ձայնին:
18 Լեռներն իրենց հիմքով ջրերի
հետ միասին սասանուեցին,
ժայռերը մոմի նման հալուեցին քո
դէմքի առջեւ,
բայց դու քաւիչ ես նրանց համար,
ովքեր երկիւղ են կրում քեզնից,
քանզի անուշ բուրմունքի համար
փոքր է իւրաքանչիւր զոհ,
եւ չնչին՝ այն ճարպը, որ քեզ
համար ողջակէզ է,
19 սակայն յաւիտեանս մեծ է նա, ով
երկիւղած է:
20 Վա՜յ այն ազգերին, ովքեր կը
յարձակուեն մեր ազգի վրայ.
Ամենակալ Տէրը դատաստանի օրը
վրէժխնդիր կը լինի նրանցից:
21 Նա կրակի կը մատնի ու որդերի
ճարակ կը դարձնի նրանց մար-
մինները,
եւ նրանք սգի մէջ լաց կը լինեն
յաւիտեան»:

ՅՈՒԴԻԹԻ ՄԱՀԸ

22 Երբ նրանք Երուսաղէմ գնացին,
Աստծուն երկրպագեցին, ու երբ ժողո-
վուրդը մաքրուեց, հանեցին իրենց
ողջակէզները, կամաւոր զոհերը եւ
իրենց ընծաները: 23 Ցուդիթը բերեց
ու նուիրեց Հողոփեռնէսի ամբողջ
ունեցուածքը, այն ընծայաբերեց Տէր
Աստծուն: 24 Երուսաղէմում երեք ամիս
ժողովուրդն ուրախանում էր սրբարա-
նի դէմյանդիման, եւ Ցուդիթը նրանց
հետ էր: 25 Այդ օրերից յետոյ իւրա-
քանչիւրը գնաց իր կալուածքը, Ցու-
դիթն էլ գնաց Բետիղուա եւ պահում
էր իր տունը: 26 Այդ ժամանակից ի
վեր նրա անունը փառաբանւում էր
ամբողջ երկրում: 27 Նրա ամուսնու՝
Մանասէի մահից ու գերեզմանում նրա
թաղուելուց յետոյ շատերը ցանկա-
ցան† ամուսնանալ նրա հետ նրա
կեանքի բոլոր օրերին: 28 Ցուդիթն
օրըստօրէ մեծարւում եւ փառաբանւում
էր: Նա ծերացաւ իր ամուսնու տանը՝
ապրելով հարիւր հինգ տարի: Նա
ազատ արձակեց իր նաժշտին: Ցու-
դիթը մեռաւ Բետիղուայում, եւ նրան
թաղեցին իր ամուսնու՝ Մանասէի
շիրմի մօտ: 29 Իսրայէլի ամբողջ տունը
եօթն օր սուգ արեց նրա վրայ: Մա-
հանալուց առաջ նա իր ինչքերը բա-
ժանեց բոլորին, ովքեր իր ամուսնու՝
Մանասէի ազգականներն էին, նաեւ
բաժանեց բոլոր նրանց, ովքեր իր մեր-
ձաւորներն էին: 30 Ցուդիթի ապրած
օրերին եւ նրա մահից շատ օրեր յետոյ
էլ չկար մէկը, որ վախ պատճառէր
իսրայէլացիներին:

†Ցունարէնում՝ ցանկացան, բայց ոչ մի
տղամարդ չմերձեցաւ նրան իր կեանքի ...:

ՏՈԲԻԹ

Ներածութիւն

Սա դաստիարակչական բնոյթի մի պատմութիւն է, ուր նկարագրուած է աստուածավախ իսրայէլացի մի ընտանիքի կեանքը: Այդ ընտանիքը ասորեստանցիների կողմից աքսորուած է Նինուէ՝ Սամարիայի կործանումից անմիջապէս առաջ (722 թ. Ք.): Տոբիթը եւ իր որդին, իրենց ընտանիքի վրայ ծանրացած դժբախտութեան օրերին, աշխատում են բարեպաշտօրէն եւ ամենայն բծախնդրութեամբ կատարել հրէական օրէնքի սահմանած բոլոր պատուիրանները: Նրանց ծրագրերի իրականացման ճանապարհին Ռափայէլ հրեշտակը իր հրաշագործ զօրութեամբ մշտապէս օգնում է նրանց՝ իրենց հաւատակից եղբայրներից մէկի կերպարանքն ստացած:

Տոբիթի գրքի նպատակն է ուսուցանել եւ քաջալերել այն հրեաներին, որոնք առանձնացած ապրում են օտարութեան մէջ: Գիրքը յիշեցնում է կեանքի կանոնները, որոնց պարտաւոր են հետեւել Աստծուն հաւատարիմ բոլոր իսրայէլացիները. յարգանք ծնողների հանդէպ, ողորմութիւն եւ աղօթք, ծառայութիւն մերձաւորներին, ամուսնութիւն Աստծու կամքի համաձայն եւ այլն: Ապրելով ըստ այս սկզբունքների, իսրայէլացիները կը կարողանան պահպանել իրենց ինքնութիւնը հեթանոս ժողովուրդների մէջ՝ մնալով հանդերձ Աստծու հաւատարիմ եւ արդար զաւակները: Աստուած այդպիսիներին երբեք չի զլանում իր օգնութիւնը:

ՏՈԲԻԹ†

ՆԱԽԱԲԱՆ

1 *Այս է գիրքը պատմութեան Տոբիթի, որ Նեփթաղիմի ազգից էր, Սասիէլի սերնդից: Տոբիթը որդին էր Տոբէլի, սա՝ Անանիէլի, սա՝ Անաւելի, եւ սա՝ Գաբայէլի:* 2 *Ասորեստանի Ենեմեսար թագաւորի օրօք նա գերուեց Թեկբուից, որ Նեփթաղիմի երկրի աջ կողմում է՝ Գալիլիայում, Ասէի վերեւում:*

ՏՈԲԻԹԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

3 *Ես՝ Տոբիթս, իմ կեանքի բոլոր օրերին ընթացայ ճշմարտութեան եւ արդարութեան ճանապարհներով, բազում ողորմութիւններ արեցի իմ եղբայրներին եւ իմ ազգակիցներին, որ Ասորեստանի երկրում՝ Նինուէում ինձ հետ էին:*

4 *Երբ դեռեւս Իսրայէլի երկրում էի, իմ հայրենի գաւառում, եւ քանի դեռ երիտասարդ էի, իմ հայր Նեփթաղիմի ողջ ազգն արտաքսուեց ու հեռացուեց Երուսաղէմի տաճարից, որն ընտրուած էր Իսրայէլի բոլոր ազգերի կողմից, որպէսզի բոլորն այնտեղ զոհ մատուցեն, եւ ուր Բարձրեալի բնակութեան տաճարը սրբագործուել էր եւ կառուցուել բոլոր ժամանակների համար:* 5 *Երուսաղէմից ապստամբ եւ Բահաղի երինջին զոհ մատուցող բոլոր ազգերի նման էր նաեւ իմ հայր Նեփթաղիմի տունը:* 6 *Միայն ես էի, որ տարեկան տօներին բազմիցս գնում էի Երուսաղէմ, ինչպէս սահմանուած է ամբողջ Իսրայէլի համար յաւիտենական հրամանով: Ստացուած բերքի պտուղներն ու տասանորդները եւ բոլոր արդիւնքներից իրենց ստանալիք ընծաները զոհասեղանի առջեւ տալիս էի քահանաներին՝ Ահարոնի որդիներին: Տասանորդները տալիս էի Ղեւիի որդիներին, որոնք Երուսաղէմում Աստծու տաճարի սպասաւորներն էին:* 7 *Երկրորդ տասանորդը հաւաքում եւ վաճառում էի, ամէն տարի գնում Երուսաղէմ ու ամբողջովին ծախսում այն:* 8 *Երրորդը տալիս էի նրանց, ում պատշաճ էր, ինչպէս պատուիրել էր իմ հօր մայր Դեբուրան. որովհետեւ հօրից որբ էի մնացել:* 9 *Երբ տղամարդ դարձայ, իմ հայրենի ցեղից կնութեան առայ Աննային եւ նրանից ունեցայ Տուբիին:*

10 *Իսկ երբ գերեվարուեցի Նինուէ, իմ բոլոր եղբայրներն ու ազգակիցներն ուտում էին հեթանոսների հացից, իսկ ես ինձ զսպեցի, որպէսզի չուտեմ,* 12 *քանզի ողջ հոգովս յիշում էի Աստծուն:* 13 *Բարձրեալն ինձ Ենեմեսարի կողմից շնորհներ եւ բարեհաճութիւն տուեց. ես նրա վաճառականն էի, գնում էի Մարաստան:* 15 *Մարաց երկրի Ռագիւս քաղաքում Գուրիի եղբայր Գաբայէլին պահելու տուեցի տասը քանքար արծաթ:* 18 *Իսկ երբ Ենեմեսարը մեռաւ, եւ նրա փոխարէն թագաւորեց նրա որդի Սենեքերիմը, այդ տարիներին խռովութիւններ սկսուեցին, եւ ես չկարողացայ գնալ Մարաստան:*

19 *Ենեմեսարի օրօք իմ եղբայրներին բազում բարեգործութիւններ էի անում.* 20 *իմ հացը տալիս էի քաղցածներին, հագուստս՝ մերկերին. իսկ երբ տեսնում էի, որ իմ ազգից որեւէ մէկը մեռել է, եւ նրան դուրս են գցել պարսպից, ես թաղում էի: Կամ էլ երբ Հրէաստանից փախստական վերադառնալուց յետոյ* 21 *Սենեքերիմ արքան որեւէ մէկին սպանում էր, ես գաղտնի թաղում էի նրան. որովհետեւ նա իր զայրոյթով շատերին կոտորեց, իսկ յետոյ դիակները փնտռեց ու չգտաւ:* 22 *Նինուէացիներից ինչ-որ մէկը մտել էր թագաւորի մօտ ու նրան տեղեկացրել իմ մասին, որ դիակները թաղում եմ: Ես թաքնուեցի, որովհետեւ իմացայ, որ ուզում են ինձ սպանել. եւ ահաբեկուած փախայ գնացի Նինուէից:* 23 *Իմ ամբողջ ունեցուածքը յափշտակուեց. որեւէ բան չմնաց, մնացին միայն կինս ու Տուբի որդիս:* 24 *Ապա, յիսուն օր չանցած, իր երկու որդիներն սպանեցին նրան եւ փախան Հայոց լեռները: Դրանից յետոյ թագաւորեց իր որդի Ասորդանը: Սա իմ*

†Տների թուահամարները, որոնցում կան յաջորդականութեան խախտումներ, դրուած են ըստ գրաբար բնագրի:

եղբօրորդի Աքիաքարոս Անայէլին կարգեց իր թագաւորութեան բոլոր իշխանների եւ ամբողջ արքունի տան գլխաւոր: 25 *Աքիաքարոսը թագաւորին բարեխօսեց ինձ համար: Եկան ինձ վերադարձնելու, եւ ես եկայ Նինուէ: Աքիաքարոսը տակառապետն էր, թագաւորի տան ամբողջ ելեւմտի գիրքը նրա ձեռքին էր: Ասորդանը նրան նշանակեց իր թագաւորութեան երկրորդ մարդը. իսկ նա իմ եղբօրորդին էր: Երբ ես եկայ իմ տուն, ինձ տուեցին իմ Աննա կնոջը եւ իմ Տուբի որդուն:*

ՏՈԲԻԹԸ ԿՈՒՐԱՆՈՒՄ Է

2 *Ենտեկոստէի մեծ տօնին, որ եօթներորդ շաբաթուայ սուրբ տօնն է, ինձ համար ճոխ ճաշ պատրաստեցին, եւ ես նստեցի ուտելու եւ խմելու:* 2 *Իմ առջեւ բազմաթիւ խորտիկներ տեսայ եւ որդուս ասացի. «Գնա՛ եւ մեր աղքատ եղբայրներից ում գտնես՝ բե՛ր, իսկ ես կը սպասեմ քեզ»:* 3 *Նա եկաւ եւ ասաց. «Հա՛յր, մեր ազգից մէկը, որի ոտքերը քայքայուած ու կոճերն ընկած են, այնտեղ՝ հրապարակում ընկած մեռած է»:* 4 *Ես, քանի դեռ չէի ճաշել, գնացի, վերցրի նրան եւ արեգակի մայր մտնելուց առաջ բերի իմ տուն:* 5 *Իսկ երեկոյեան լուացուեցի եւ տրտմութեամբ ուտում էի իմ հացը:* 6 *Յիշեցի Ամոսի մարգարէութիւնը, թէ ինչպէս նա ասել էր. «Ձեր տօները սուգ կը դառնան, եւ ձեր բոլոր ուրախութիւնները՝ տրտմութիւն»: Եւ ես դառնօրէն արտասուեցի:* 7 *Երբ արեգակը մայր մտաւ, գերեզման փորեցի եւ թաղեցի նրան:* 8 *Իսկ իմ մերձաւորները ծաղրում էին ինձ եւ ասում. «Այժմ էլ չի՞ վախենում այս գործերի պատճառով մեռնելուց, որովհետեւ դրա համար հալածուեց, եւ կրկին եկել՝ դիակներն է թաղում»:*

9 *Նոյն գիշերը, դիակը թաղելուց յետոյ, վերադարձայ եւ, պղծուած լինելով, պառկեցի գաւթի պատի մօտ.* 10 *երեսս էլ չծածկեցի:* 18 *Զգիտէի, որ առաստաղին ճնճղուկներ էին նստած, ու բաց աչքերով վերեւ էի նայում, իսկ նրանց ճագերը տաք-տաք ծրտում էին աչքերիս մէջ. դրանից աչքերիս մէջ հատեր գոյացան: Գնացի բժիշկների մօտ, բայց նրանք ինձ չօգնեցին: Մինչեւ Ելիմադիա գնալս Աքիաքարոսն ինձ կերակրում էր իր ծախսով:* 19 *Իսկ իմ կինն իր ձեռքով մանում ու գործում էր եւ տալիս գործատէրերին,* 20 *սրանք էլ տալիս էին նրա վարձը: Մի անգամ էլ վարձից բացի նրան տուեցին նաեւ մի ուլ:* 21 *Երբ նա եկաւ ինձ մօտ, սկսեց ինձ հետ վիճել. ես նրան ասացի. «Դու որտեղի՞ց բերեցիր այդ ուլը, մի՞թէ գողացուած է. տա՛ր, տո՛ւր իր տէրերին, որովհետեւ ինձ համար գողացուածը ուտելն օրէնք չէ»:* 22 *Իսկ կինս ասաց. «Պատիւ արեցին ինձ՝ վարձիս հետ տուին»: Բայց ես չհաւատացի նրան, այլ ստիպում էի ուլը տալ իր տէրերին: Ես նրա կողմից ամօթանքի արժանացայ. նա ինձ ասաց. «Հիմա ո՞ւր են քո ողորմութիւններն ու արդարութիւնները, ահա թէ ինչպէ՛ս յայտնի եղան քեզ»:*

ՏՈԲԻԹԻ ԱՂՕԹՔԸ

3 *Ես տխրեցի ու լաց եղայ. վեր կացայ եւ զայրացած սրտով սկսեցի աղօթել ու ասել.*

2 *«Տէ՛ր, արդար ես դու,*
եւ քո բոլոր գործերն ու ճանապարհները ողորմութիւն են.
դատաստաններդ ճշմարիտ են, եւ միշտ արդար ես դատում.
3 *Նայի՛ր եւ յիշի՛ր ինձ,*
մի՛ հատուցիր ինձ ըստ իմ մեղքերի եւ ըստ իմ չարիքների,
նաեւ իմ հայրերի գործած չարիքների համար,
որոնք մեղանչեցին քո առաջ:
4 *Նրանք անտեսեցին քո պատուիրանները,*
դու մեզ յափշտակութեան, գերութեան եւ մահուան մատնեցիր,
նախատինքի նշաւակ դարձրիր բոլոր ժողովուրդների առաջ,
որոնց մէջ եւ ցրուած ենք:
Արդ, Տէ՛ր, այժմ բազում են քո արդար դատաստանները,
որ արեցիր իմ եւ մեր հայրերի հետ,
5 *որովհետեւ մենք քո պատուիրան-*

ները չկատարեցինք
եւ արդարութեամբ չընթացանք քո առջեւ:
6 Այժմ ինձ հետ վարուի՛ր ըստ քո կամքի հաճութեան
եւ իմ հոգին առնելու հրաման տուր,
որպէսզի ազատուեմ հողուցս եւ հող դառնամ,
որովհետեւ ինձ համար մեռնելն աւելի լաւ է, քան իմ այս կեանքը,
քանի որ անտեղի նախատինքներ լսեցի,
եւ տրտմութիւնն իմ մէջ շատ է.
ազատի՛ր ինձ իմ վշտերից,
ուղարկի՛ր յաւիտենական հանգըրուան
եւ քո երեսը մի՛ շրջիր ինձանից»:

ՍԱՌԱՅԻ ԿՐԱՎ ՆԱԽԱՏԻՆՔՆԵՐԸ

7 Նոյն օրն իսկ Աստուած իմացել էր այն, ինչ կատարուել էր Ռագուէլի դուստր Սառայի հետ, որ Մարաստան երկրի Եկբատան քաղաքում էր. 8 իր հօր աղախինները նախատում էին աղջկան, որն ամուսնութեան էր տրուել եօթը մարդու, իսկ Ազմոդեւս չար դեւը սպանում էր նրանց՝ աղջկան մերձենալուց առաջ, համաձայն այր ու կնոջ մերձեցման կարգի: Աղախինները նրան նախատում էին ու ասում. «Զգիտե՞ս, որ խեղդում ես քո ամուսիններին, որովհետեւ արդէն եօթը մարդ առար եւ ոչ մէկին չվայելեցիր. 9 ուրեմն մեզ ինչո՞ւ ես տանջում, ինչո՞ւ դու էլ նրանց հետ չմեռար, որպէսզի մենք երբեք չտեսնենք քո զաւակին»:
10 Երբ աղջիկն այս լսեց, շատ տխրեց ու ցանկանում էր խեղդել իրեն: Նա ասում էր. «Ես իմ հօր միամօր զաւակն եմ, ուրեմն եթէ անեմ այս, նրան անարգանք կը բերեմ ու ծերունուն ցաւերով դժոխք կ'իջեցնեմ»:

ՍԱՌԱՅԻ ԱՂՕԹՔԸ

11 Եւ նա սկսեց աղօթել այն պատուհանի մօտ, որ նայում էր դէպի Երուսաղէմ: Նա ասում էր.
13 «Օրհնուած ես դու, Տէ՛ր Աստուած իմ,
եւ յաւիտեան օրհնուած է քո սուրբ եւ պատուական անունը:
14 Այժմ, Տէ՛ր, իմ ամբողջ սրտով աղաչում եմ քեզ
15 եւ խնդրում, որ հոգիս մարմնից ազատես,
որպէսզի այլեւս նախատինքներ չլսեմ.
16 քանզի, Տէ՛ր, դու գիտես, որ իմ կուսութեամբ մաքուր եմ բոլոր մեղքերից,
17 չեմ աղտոտել իմ անունն ու իմ հօր անունը,
իմ հօր միամօր զաւակն եմ,
նա ուրիշ որդի չունի, որ ժառանգ լինի իրեն:
Նա ո՛չ մերձաւոր եղբայր, ո՛չ էլ եղբօրորդի ունի,
որպէսզի նրան կնութեան գնալու համար պահպանեմ անձս,
որովհետեւ ահա արդէն եօթը ամուսիններս մահացան,
այլեւս ինչի՞ համար ապրեմ հիմա:
Իսկ եթէ մահս չես ցանկանում, Տէ՛ր,
նայի՛ր ինձ եւ ողորմի՛ր,
որպէսզի այլեւս նախատինքներ չլսեմ»:
24 Եւ երկուսի աղօթքներն էլ լսելի եղան մեծ Ռափայէլին: 25 Նա ուղարկուեց բժշկելու երկուսին էլ՝ Տոբիթի աչքերից հատերը վերացնելու եւ Ռագուէլի դուստր Սառայից Ազմոդեւս դեւին հանելու, նրան կնութեան տալու Տոբիթի որդի Տուբիին, որովհետեւ հէնց Տուբիին էր վիճակուած ժառանգել նրան: Այդ նոյն պահին Տոբիթը շրջուեց ու մտաւ իր տուն, իսկ Ռագուէլի դուստր Սառան իջաւ իր վերնասենեակից:

ՏՈԲԻԹԻ ԿՏԱԿԸ

4 Նոյն օրը Տոբիթը յիշեց արծաթը, որ Մարաց երկրի Ռագիւս քաղաքում պահ էր տուել Գաբայէլին: Նա իր մտքում ասաց. «Ես ինձ համար մահ խնդրեցի. քանի դեռ չեմ մեռել, ինչո՞ւ չկանչեմ իմ որդի Տուբիին եւ ամէն ինչ չյայտնեմ նրան»: 2 Եւ նա կանչեց ու

ասաց նրան. 3 «Որդեա՛կ իմ, երբ մեռնեմ, կը թաղես ինձ. չանարգե՛ս կամ չանտեսե՛ս քո մօրը, այլ նրան կը պատուես կեանքիդ բոլոր օրերին, նրա համար կ'անես այն ամէնը, ինչ հաճելի է իրեն, չտխրեցնես նրան: 4 Կը յիշես, որ, երբ դու նրա որովայնում էիր, նա քեզ համար շատ նեղութիւններ է կրել. 5 երբ նա մեռնի, կը թաղես ինձ մօտ, նոյն գերեզմանում: 6 Ցիշի՛ր քո Տէր Աստծուն կեանքիդ բոլոր օրերին, մեղք չգործե՛ս կամ նրա պատուիրանները զանց չառնես, քո ամբողջ կեանքում արդարութիւն կը գործես, անիրաւութեան ճանապարհներով չգնաս, քանի որ, երբ արդար գործ անես, քո բոլոր գործերը կը յաջողուեն, ինչպէս յաջողւում է բոլորին, ովքեր արդարութիւն են գործում: 7 Քո ունեցուածքից ողորմութիւններ կ'անես. ողորմութիւն անելիս թող քո աչքը ագահ չլինի. երեսդ չդարձնես բոլոր աղքատներից, եւ Տէր Աստուածն էլ ի՛ր երեսը չի դարձնի քեզանից: 8 Ինչքան շատ ունենաս, ըստ այդ շատութեան կ'անես քո ողորմութիւնները, եթէ քիչ ունենաս՝ ըստ քչի: 9 Չյապաղես ողորմութիւններ անել, 10 քանի որ դրանով բարիքներ կը գանձես քո կեանքի օրերին: 11 Արդարեւ, ողորմութիւնները փրկում են մահուանից եւ թոյլ չեն տալիս մտնել խաւարի մէջ. 12 ողորմութիւնները բարի պարգեւ են բոլորին, ովքեր այն անում են Աստծու առջեւ: 13 Անձիդ համար զգոյշ կը լինես պոռնկութիւնից, կին կ'առնես քո հայրերի սերնդից. օտար ազգից կին չառնես, որովհետեւ մարգարէների՝ մենք մեր առաջին հայրերի՝ Նոյի, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի որդիներն ենք: Դու, որդեա՛կ, յիշի՛ր՝ սրանք բոլորն էլ իրենց եղբայրներից կին առան եւ օրհնուեցին իրենց որդիներով. եւ նրանց սերունդը պիտի ժառանգի երկիրը: Դու, որդեա՛կ, պիտի սիրես քո եղբայրներին, երեսդ չշրջես, սիրտդ չշրջես քո եղբայրներից, քո ժողովրդի որդիներից ու դուստրերից. նրանցի՛ց կին կ'առնես քեզ համար: 14 Ամբարտաւանութիւնից առաջ են գալիս կորուստ եւ մեծ խռովութիւն, պղծութիւնից՝ պակասութիւն եւ մեծ աղքատութիւն, քանի որ պղծութիւնը սովի մայրն է: 15 Վարձկանիդ վարձը թող մի օր էլ չմնայ քեզ մօտ, այլ կը վճարես անմիջապէս. եւ եթէ դու ծառայես Աստծուն, նա քեզ բարիքներով կը հատուցի: Որդեա՛կ, քո բոլոր գործերում զգոյշ կը լինես, խելամի՛տ եղիր քո ողջ կեանքում. 16 ինչը դու ատում ես, ուրիշին չանես: Հարբելու աստիճան գինի չխմե՛ս, հարբած ճանապարհ չգնա՛ս. 17 քո հացից կը տաս քաղցածներին, քո հագուստներից՝ մերկերին. եւ ինչ կ'աւելանայ քեզ պէտք եղածից, ողորմութիւն կ'անես: 18 Քո հացը չխնայես տալ արդարների գերեզմանների վրայ, բայց մեղաւորների համար չտա՛ս: 19 Ամէն մարդուց խորհուրդ կը խնդրես, չարհամարհես ոչ մի պիտանի խորհուրդ: 20 Ամէն ժամ կ'օրհնես քո Տէր Աստծուն եւ կը խնդրես նրանից, որ քո բոլոր ճանապարհներն ուղիղ լինեն, քո բոլոր մտադրութիւններն ու գործերը յաջողուեն, որովհետեւ մարդու բոլոր մտադրութիւնները ոչինչ են: Տէրն ինքն է տալիս բարի խորհուրդներ, եւ ում կամենում է՝ խոնարհեցնում է, ինչպէս հաճելի է իրեն: Ահա, որդեա՛կ իմ, դու կը յիշես իմ բոլոր պատուիրանները, որ տալիս եմ քեզ, եւ թող նրանք չջնջուեն քո սրտից: 21 Հիմա ես յայտնում եմ քեզ տասը քանքար արծաթի մասին, որ Մարաց երկրի Ռագիւս քաղաքում պահելու տուեցի Գաբրիի որդի Գաբայէլին: 23 Չվախենաս, որդեա՛կ, որ շատ աղքատացանք, որովհետեւ եթէ Աստծուց վախենաս, բոլոր մեղքերից հեռու լինես եւ անես նրան հաճելին, քեզ շատ ունեցուածք եւ հարստութիւն կը գայ»:

ՏՈԲԻԹԸ ԳՆՈՒՄ Է ՄԱՐԱՍՏԱՆ

5 Տուբին պատասխանեց եւ ասաց նրան. «Հա՛յր, կ'անեմ ամէն ինչ, որ պատուիրեցիր ինձ, 2 բայց ես ինչպէ՞ս կարող եմ գտնել արծաթը, քանի որ չեմ ճանաչում այդ մարդուն: 3 Հայրը նրան տուեց ստացագիրն այն մարդու, որի մօտ գանձն աւանդ էր դրուած,

4 եւ ասաց նրան. «Դու քեզ համար
փնտռի՛ր մի մարդ, որ հետդ գայ. ես կը
տամ նրա վարձը, քանի դեռ կենդանի
եմ, եւ դու կը գնաս կը վերցնես
արծաթը»: 5 Տուբին գնաց վարձով մի
մարդ փնտռելու, որ գնար իր հետ: Եւ
նա գտաւ Ռափայէլ Հրեշտակին, 6 բայց
չգիտէր, թէ ով է նա: Տուբին ասաց
նրան. 7 «Դու կարո՞ղ ես ինձ հետ գալ
Ռագիւս՝ Մարաց երկիր, կամ լաւ
ծանո՞թ ես այդ տեղերին»:

8 Հրեշտակն ասաց նրան. «Ես կը
գամ քեզ հետ. ե՛ւ ճանապարհին եմ
տեղեակ, ե՛ւ մեր եղբայր Գաբայէլին
եմ ճանաչում»: 9 Տուբին ասաց նրան.
«Դու մի վայրկեան սպասի՛ր այստեղ,
մինչեւ ես մտնեմ ու հարցնեմ իմ
հօրը»: Եւ ասաց նրան. «Գնա՛ եւ
չուշանա՛ս»: 10 Տուբին ներս մտաւ ու
ասաց հօրը. «Ահա գտայ ընկեր, որ
գալիս է հետս»: Հայրն ասաց նրան.
«Դու նրան կանչի՛ր ինձ մօտ, որպէսզի
իմանամ, թէ որ ազգից է նա եւ կամ
հետդ գալու համար վստահելի՞ է»:
11 Տուբին ներս կանչեց նրան, եւ
նրանք ողջոյն տուեցին միմեանց:
16 Տոբիթն ասաց նրան. «Եղբա՛յր, դու
մեր ո՞ր ցեղից ես, ասա՛ ինձ»: 17 Եւ նա
ասաց նրան. «Իմ ազգատո՞հմն ես
փնտռում, թէ՞ ինձ վարձել ես, որ քո
որդու հետ գնամ»: Տոբիթն ասաց
նրան. «Ուզում եմ, եղբա՛յր, իմանալ
քո ազգն ու անունը»: 18 Նա ասաց.
«Իմ անունն Ազարիա է, քո եղբայր-
ներից մէկի՝ մեծն Անանիայի որդին
եմ»: 19 Տոբիթն ասաց նրան. «Բարի
եկար, եղբա՛յր, մի՛ զայրացիր ինձ
վրայ, որ ցանկացայ իմանալ քո ազ-
գատոհմը, որովհետեւ դու հէնց իմ
եղբայրն ես՝ բարի ու ազնուական
ցեղից, քանի որ ես ճանաչում եմ
Անանիային եւ Ցոթանին՝ մեծն Սեմի
որդիներին, երբ մենք միասին գնում
էինք Երուսաղէմում երկրպագելու եւ
անասունների առաջին ծնունդներն ու
բերքի տասանորդները մատուցելու:
Նրանք չմոլորուեցին մեր եղբայրների
մոլորութիւնով. Դու մեծերի ազգից ու
արմատից ես, եղբա՛յր: 20 Այժմ դու
ասա՛ ինձ. ի՞նչ վարձ տամ քեզ. կը
տամ օրական մի դրամ եւ ուտելիքը,
ինչպէս իմ որդուն: 21 Երբ ողջ վերա-
դառնաք այս ուղեւորութիւնից, վարձդ
կ'աւելացնեմ»: Եւ նրանք համաձայ-
նեցին այդպէս անել: 22 Տոբիթն ասաց
նրան. «Տուբի՛, որդեա՛կ, պատրաս-
տուի՛ր ճանապարհ ընկնելու, եւ թող
Աստուած յաջողութիւն տայ ձեզ»:
Պատանին պատրաստեց ճանապարհի
ուտելիքը, իսկ հայրն ասաց նրան.
«Որդեա՛կ, դու գնա՛ այդ մարդու հետ,
իսկ Աստուած, որ բնակւում է
երկնքում, թող յաջողութիւն տայ ձեր
ճանապարհին, եւ նրա հրեշտակն
ուղեկից լինի ձեզ»: 23 Եւ նրանք եր-
կուսով միասին ելան գնացին, նրանց
հետ՝ նաեւ պատանու շունը: Պատանու
մայրը լալով ասաց. «Տոբի՛թ, մեր որ-
դուն ինչո՞ւ հեռացրիր մեզանից, չէ՞
որ նա է մեր ծերութեան ցուպը, նա է
մեր առջեւ ելումուտ անում. 24 թող
արծաթի վրայ արծաթ չգայ, միայն
թէ մեր որդու կեանքին բան չլինի,
25 քանզի ինչ Աստուած տուել է մեզ,
բաւական է մեզ համար»: 26 Տոբիթն
ասաց նրան. «Քո՛յր, մի՛ տրտմիր, նա
ողջ կը վերադառնայ, եւ քո աչքերը կը
տեսնեն նրան, 27 քանի որ իր բարի
Հրեշտակը կ'առաջնորդի նրան, յաջո-
ղութիւն կը տայ նրա ճանապարհին,
եւ նա ողջ ու առողջ կը վերադառնայ
այնտեղից»: 28 Եւ մայրը դադարեց
լալուց:

ՁԿԱՆ ՈՐՍԸ

6 Նրանք ճանապարհ ընկան, եկան
Դկլաթ գետի մօտ եւ իջեւանեցին
այնտեղ, գետափին: Պատանին իջաւ
գետեզը՝ լուացուելու: 2 Գետից դուրս
ելաւ մի ձուկ եւ ուզում էր կուլ տալ
պատանուն: 4 Հրեշտակն ասաց պա-
տանուն. «Ձեռքդ մեկնի՛ր, բռնի՛ր այդ
ձուկը»: Պատանին բռնեց ձուկը եւ
հանեց ցամաք: Հրեշտակն ասաց նրան.
5 «Բա՛ց արա այդ ձկան փորը, հանի՛ր
դրա սիրտը, լեարդն ու լեղին եւ
պահի՛ր զգուշութեամբ»: 6 Եւ պատա-
նին արեց այնպէս, ինչպէս հրեշտակն
ասաց իրեն: Ձուկը խորովեցին ու կե-
րան եւ ապա երկուսով միասին գնա-
ցին: Եւ երբ մօտեցել էին Եկբատանին,

7 պատանին ասաց հրեշտակին. «Ազա-
րիա՛ եղբայր, ինչի՞ համար վերցրինք
ձկան սիրտը, լեարդն ու լեղին»: 8 Հրեշ-
տակն ասաց նրան. «Եթէ դեւը կամ
պիղծ սատանան բռնել է մէկին, այդ
սիրտը եւ լեարդը պէտք է ծխել տղա-
մարդու կամ կնոջ առջեւ, եւ նա այլեւս
չի դիւահարուի: 9 Իսկ եթէ մէկն
աչքերին հատ ունի, լեղին քսում են
աչքին, եւ նա բուժւում է»:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

10 Երբ նրանք մօտեցան Ռագիւսին,
11 հրեշտակն ասաց պատանուն. «Եղ-
բա՛յր, այսօր մենք պէտք է գիշերենք
Ռագուէլի մօտ, նա քո ազգականն է եւ
ունի մի դուստր, որի անունը Սառա է.
ես նրա համար կը խօսեմ, որպէսզի
նրան կնութեան տան քեզ: 12 Աղջկայ
ժառանգութիւնը քեզ է վիճակուած, եւ
միայն դու ես նրա ազգից, իսկ աղջիկն
իսկապէս գեղեցիկ է, պարկեշտ եւ
խելացի: 13 Այժմ լսի՛ր ինձ, ես կը
խօսեմ աղջկայ հօր հետ, իսկ երբ մենք
վերադառնանք ռագիւսացիների քա-
ղաքից, կ'անենք քո հարսանիքը: Ես
ճանաչում եմ Ռագուէլին. Մովսէսի
օրէնքների համաձայն նա աղջկան չի
տայ օտար մարդու, որը արենակից
մերձաւոր չէ, քանի որ բոլոր մարդ-
կանցից աւելի դու ես ժառանգութիւնն
ստանալու արժանի»:

14 Այն ժամանակ պատանին ասաց
հրեշտակին. «Եղբա՛յր Ազարիա, ես
աղջկայ մասին այսպիսի բան եմ լսել.
նրան տուել են եօթը մարդու, եւ
նրանք բոլորը մեռել են առագաստի
սենեակում: 15 Իսկ ես իմ հօր միամօր
զաւակն եմ, վախենում եմ՝ միգուցէ
մտնեմ եւ նախորդների նման ես էլ
մեռնեմ, որովհետեւ աղջիկը դեւ ունի,
եւ դեւը նրան սիրում է ու որեւէ մէկին
չի դիպչում վնասելու համար, այլ՝
միայն նրանց, ովքեր մերձենում են
նրան, որպէսզի կնութեան առնեն:
Արդ, եթէ անեմ այս բանը, վախենում
եմ, որ իմ հօրն ու իմ մօրը իմ
պատճառած վշտերով կ'իջեցնեմ իրենց
գերեզմանը: Նրանք ուրիշ որդի էլ
չունեն, որ թաղի նրանց»:

16 Հրեշտակն ասաց նրան. «Դու չե՞ս
յիշում քո ազգից քեզ կին առնելու
մասին հօրդ ասած պատուիրանը:
Այժմ դու լսի՛ր ինձ, որովհետեւ նա
պէտք է քո կինը լինի. 17 դեւի մասին
էլ մի՛ մտահոգուիր, քանի որ այս
գիշեր իսկ դու աղջկան կնութեան
կ'առնես: 18 Երբ մտնես առագաստի
սենեակ, կը վերցնես մոխրախառն
կրակ, որի մէջ խունկ ծխուած լինի, եւ
ձկան սիրտն ու լեարդը կը դնես դրա
վրայ ու կը ծխես. 19 դեւը կը հոտոտի
ու կը փախչի եւ այլեւս յաւիտեան չի
վերադառնայ: 20 Եւ երբ դու եւ աղջիկը
մտնէք առագաստի սենեակ, երկուսով
կը կանգնէք եւ բարձրաձայն լալով կը
կանչէք ողորմած Աստծուն, եւ նա ձեզ
կը փրկի ու կ'ողորմի, 21 որովհետեւ իր
ծննդից ի վեր այդ աղջիկը վիճակուած
է քեզ. դու կը փրկես նրան, եւ նա քեզ
հետ կը գայ քո տուն. եւ ես գիտեմ, որ
դու նրանից որդիներ կ'ունենաս»:

22 Տուբին երբ լսեց այս բանը,
աղջկայ նկատմամբ գութ ընկաւ նրա
սիրտը, եւ հոգին սիրով կապուեց
նրան:

ՏՈՒԲԻԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՆԸ

7 Նրանք եկան Եկբատան եւ մտան
Ռագուէլի տուն: Սառան ընդառաջ
ելաւ, եւ ողջունեցին նրանց, նրանք էլ՝
նրան, եւ Սառան նրանց տարաւ տուն:
2 Ռագուէլն իր կին Հեդնային ասաց.
«Տեսնո՞ւմ ես, որ այս պատանեակը
նման է իմ եղբօրորդի Տոբիթին»: 3 Ռա-
գուէլը հարցրեց նրանց եւ ասաց.
«Որտեղի՞ց էք, եղբայրնե՛ր»: Նրան
ասացին. «Նեփթալիմի որդիներից
ենք, որ գերի ենք տարուած Նինուէ»:
4 Ապա ասաց. «Դուք ճանաչո՞ւմ էք
մեր եղբայր Տոբիթին»: Ասացին. «Ճա-
նաչում ենք»: 5 Ռագուէլը նրանց
ասաց. «Ո՞ղջ է»: Նրանք ասացին.
«Ողջ եւ կենդանի է»: 6 Իսկ Տուբին
ասաց. «Նա իմ հայրն է»: Ռագուէլն
անմիջապէս վեր կացաւ, համբուրեց
նրան, շատ լաց եղաւ, 7 օրհնեց նրան
եւ ասաց. «Բարի ես դու եւ բարերար
մարդու որդի»: Իսկ երբ լսեց, որ

Տոբիթի աչքերը կուրացել են, 8 լաց եղաւ եւ տրտմեց. տրտմեցին նաեւ իր կին Հեդնան եւ նրանց դուստր Սառան: Նրանք մեծ ուրախութեամբ ընդունեցին ու պահեցին նրանց: 9 Ապա նրանք հօտից մի խոյ մորթեցին, բազում խորտիկներ պատրաստեցին ու դրեցին նրանց առջեւ: Տուբին ասաց Ռափայէլին. «Եղբա՛յր Ազարիա, այժմ ասա այն, ինչի մասին խօսում էիր ճանապարհին, որպէսզի քո ասածը լինի»: Ռափայէլն այդ խօսքերը հաղորդեց Ռագուէլին. եւ Ռագուէլը Տուբիին ասաց. «Կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ եղիր, որովհետեւ քեզ է վիճակուած առնել իմ աղջկան: Բայց քեզ ճշմարիտն ասեմ. ես իմ աղջկան տուել եմ եօթը մարդու, եւ երբ նրանք ցանկանում էին մերձենալ նրան, նոյն գիշերը մեռնում էին: Իսկ այժմ, որդեա՛կ իմ, դու ուրախ եղիր»: 10 Տուբին ասաց. «Ես այստեղ ոչ մի բան չեմ ուտի, մինչեւ չվերջացնէք այս գործը»: 13 Ռագուէլն ասաց. «Ըստ օրէնքի, նրան վերցրո՛ւ քեզ, որովհետեւ դու աղջկան եղբայր ես դալիս, եւ թող նա քոնը լինի. 14 թող ողորմածն Աստուած ձեզ բարին յաջողեցնի»: 15 Նա կանչեց իր դուստր Սառային, բռնեց նրա ձեռքից, տուեց Տուբիին կնութեան եւ ասաց. «Ահա՛, ըստ Մովսէսի օրէնքի, դու վերցրո՛ւ նրան եւ տա՛ր քո հօր մօտ»: Եւ նա օրհնեց նրանց: 16 Ապա կանչեց իր կին Հեդնային եւ տան ամբողջ ունեցուածքը վերցրեց, տուեց աղջկան, մուրհակներով հաստատեց դրանք եւ կնքեց: 17 Նրանք սկսեցին ուտել, խմել եւ ուրախանալ: 18 Ռագուէլը կանչեց իր կին Հեդնային ու ասաց նրան. «Քո՛յր, դու պատրաստի՛ր միւս սենեակը եւ աղջկան տար այնտեղ»: 19 Կինը արեց այնպէս, ինչպէս հրամայել էր իրեն, եւ նրան տարաւ այնտեղ: Աղջիկը լալիս էր, մայրը սրբում էր աղջկայ արտասուքները եւ ասում նրան. 20 «Քաջալերուի՛ր, դո՛ւստրս, երկնքի եւ երկրի Տէրն այս տրտմութեան փոխարէն քեզ ուրախութիւն ու ցնծութիւն կը տայ, քաջալերուի՛ր, աղջի՛կս, քաջալերուի՛ր»:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐԸ

8 Երբ նրանք ընթրելն աւարտեցին, Տուբիին տարան աղջկայ մօտ: 2 Երբ նա ներս մտաւ, յիշեց Ռափայէլի խօսքերը, վերցրեց խնկի մոխրախառն կրակը, նրա վրայ դրեց ձկան սիրտն ու լեարդը եւ ծխեց. իսկ երբ դեւն առաւ այդ հոտը, փախաւ Եգիպտոսի սահմանների վերին կողմը, 3 եւ Հրեշտակը կապեց նրան:

Երբ երկուսով անկողին մտան, Տուբին ելաւ մահճից եւ ասաց. 4 «Քո՛յր, դո՛ւ էլ արի, աղօթենք, որպէսզի Աստուած մեզ ողորմի»: Տուբին սկսեց աղօթել ու ասաց.

7 «Օրհնուած ես դու, մեր հայրերի Տէ՛ր Աստուած,
օրհնուած է քո սուրբ անունը եւ փառաւորուած յաւիտեան,
թո՛ղ քեզ փառաբանեն երկինքը եւ քո բոլոր արարածները:
8 Դո՛ւ ստեղծեցիր Ադամին եւ նրան օգնական տուիր Եւային,
նրա կնոջը որպէս զօրավիդ տուիր նրան.
նրանցից եղան մարդկանց բոլոր զաւակները.
դո՛ւ ասացիր, թէ՝ "Լաւ չէ, որ մարդ լինի մենակ,
նրա համար իրեն նման օգնական ստեղծենք":
9 Այժմ, Տէ՛ր, այս քրոջս առնում եմ ոչ թէ պոռնկութեան համար,
այլ՝ արդարութեամբ, որպէս կին:
10 Նայի՛ր, Տէ՛ր, եւ ողորմի՛ր ինձ,
որպէսզի մենք միասին ծերանանք»:

Եւ աղջիկն աղօթում էր նրա հետ: Այն գիշեր նրանք քնեցին երկուսով՝ միասին:

11 Իսկ Ռագուէլը գնաց եւ նրա համար գերեզման փորեց, 12 քանզի վախենում էր, թէ գուցէ նա էլ մեռնի: 13 Ռագուէլը եկաւ տուն եւ ասաց իր կին Հեդնային. 14 «Աղախիններից մէկին ուղարկի՛ր, որպէսզի տեսնի, թէ կենդանի՞ է արդեօք, իսկ եթէ ոչ, կը թաղենք նրան, եւ ոչ ոք չի իմանայ»: 15 Աղախինը ներս մտաւ ու տեսաւ, որ երկուսով քնած են: 16 Նա դուրս ելաւ ու ասաց, որ կենդանի են:

ՌԱԳՈՒԷԼԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

17 Ռագուէլը օրհնեց Աստծուն ու ասաց.
«Օրհնուած ես դու, Տէ՛ր Աստուած,
քո բոլոր օրհնութիւնների ու փառքերի մէջ.
թող քեզ օրհնեն քո բոլոր սրբերը,
քո բոլոր ստեղծածները,
քո ընտրեալները թող քեզ օրհնեն յաւիտեան:
18 Օրհնուած ես դու, Տէ՛ր Աստուած,
որովհետեւ ուրախացրիր ինձ,
եւ ինձ հետ չպատահեց այն, ինչ թւում էր ինձ,
այլ մեզ հետ վարուեցիր ըստ քո մեծ ողորմութեան:
19 Օրհնուած ես դու, Տէ՛ր,
որովհետեւ ողորմեցիր այս երկու միամօրիկ զաւակներին,
Տէ՛ր, սրանց համար արա՛ քո ողորմութիւնները,
թո՛ղ սրանց կեանքն աւարտուի առողջութեամբ եւ ուրախութեամբ»:

20 Եւ նա իր ծառաներին հրամայեց լցնել գերեզմանը:

22 Ապա տասնչորս օր արեց նրանց հարսանիքը: 23 Ռագուէլն ասաց Տուբիին. «Երդուեցնում եմ քեզ. դու այստեղից չես գնայ, մինչեւ չաւարտուի հարսանիքի տասնչորս օրը. 24 իսկ յետոյ կը վերցնես իմ ունեցուածքի կէսը, դու եւ աղջիկը խաղաղութեամբ կը գնաք քո հօր մօտ, իսկ երբ ես եւ իմ կինը մեռնենք, դուք կը վերցնէք մնացած մեր ամբողջ ունեցուածքը»:

ՌԱՓԱՅԷԼԸ ԲԵՐՈՒՄ Է ԱՐԾԱԹԸ

9 1 Տուբին կանչեց Ռափայէլին եւ ասաց նրան. 3 «Եղբա՛յր Ազարիա, դու հետդ վերցրո՛ւ մի պատանի եւ երկու ուղտ ու գնա՛ Մարաց Ռագիւս քաղաքը՝ Գաբայէլի մօտ, եւ պահելու տրուած արծաթը բե՛ր ինձ. հետդ առնելով հարսանիք կը բերես նաեւ իրեն՝ Գաբայէլին, 4 որովհետեւ Ռագուէլը երդուեց, թէ՝ "Քեզ չեմ արձակի": 5 Այժմ իմ հայրն օրերն է հաշուում: Եթէ ուշանանք, շատ կը վշտանայ ու կը տրտմի»: 6 Ռափայէլը գնաց եւ իջեւանեց Գաբայէլի մօտ, նրան տուեց մուրհակը: Գաբայէլը բերեց արծաթի կնքուած պարկերը ու տուեց նրան: 12 Եւ առաւօտեան կանուխ նրանք գնացին հարսանիք: Տուբին ուրախացաւ իր կնոջ հետ:

ԾՆՈՂՆԵՐՆ ՍԳԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՐԴՈՒՆ

10 Նրա հայր Տոբիթն ամբողջ ժամանակ մտքում խորհում էր: Երբ լրացան վերադառնալու օրերը, եւ նրանք չեկան, 2 նա ասաց. «Գուցէ Գաբայէլը մեռե՞լ է. երեւի ոչ ոք նրան չի տուել արծաթը, ինքն էլ ամօթից չի ցանկանում գալ»: Եւ նա խիստ տրտում էր: 3 Կինն ասաց նրան. «Որ այսչափ ուշացաւ, վայ թէ կորաւ տղան»: 4 Նա սկսեց լալ ու սգալ որդուն եւ ասաց. 5 «Ոչինչ պէտք չէ ինձ, որդեա՛կ իմ, էլ ինչո՞ւ թողեցի քեզ, իմ աչքերի՛ լոյս»: 6 Տոբիթն ասաց նրան. «Լռի՛ր եւ մի՛ անհանգստացիր, նա ողջ է»: 7 Իսկ կինն ասաց նրան. «Դո՛ւ լռիր եւ մի՛ խաբիր ինձ, որովհետեւ իմ երեխան կորաւ»: Եւ ամէն օր մայրը դուրս էր ելնում ու գալիս այն ճանապարհը, որով նրանք գնացել էին. ցերեկը հաց չէր ուտում, իսկ գիշերը չէր դադարում իր որդի Տուբիին սգալուց:

ՏՈՒԲԻՆ ՈՒՋՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

Երբ լրացաւ հարսանիքի տասնչորս օրը, որ նրանց այնտեղ լինելու համար երդուել էր Ռագուէլը, 8 Տուբին ասաց Ռագուէլին. «Արձակի՛ր ինձ, որովհետեւ իմ հայրն ու մայրն այլեւս ինձ ողջ տեսնելու յոյս չունեն»: 9 Եւ աներն ասաց նրան. «Դու մնա՛ այստեղ՝ ինձ մօտ, իսկ ես մարդիկ կ'ուղարկեմ քո հօր մօտ, նրանք քո մասին կը պատմեն նրան»: 10 Տուբին ասաց. «Այդպէս չի լինի, այլ պէտք է ինձ արձակես, որ գնամ իմ հօր մօտ»:

Եւ Ռագուէլը վեր կացաւ ու նրան տուեց իր կին Սառային, իր ունեցուածքի կէսը, ծառաներ ու աղախիններ, անասուններ ու արծաթ, 11 օրհնեց նրանց, արձակեց ու ասաց. «Որ-

դեա՛կ իմ, թող երկնքի Տէր Աստուածը յաջողութիւն տայ ձեզ, քանի դեռ ես չեմ մեռել»: 12 *Իսկ իր դստերն ասաց. «Որդեա՛կս, պատուի՛ր քո սկեսուրին ու սկեսրայրին, քանի որ այժմ նրանք են քո հայրն ու մայրը. եւ հեռո՛ւ մնա ատելութեան խօսքերից»:* 13 *Եւ նա համբուրեց նրան: Իսկ Հեղնան ասաց Տուբիին. «Սիրելի՛ եղբայր, թող Տէրը քեզ ողջութեամբ տանի քո տուն եւ ինձ՝ իմ դուստր Սառայից զաւակ տեսնել տայ, որպէսզի ես ուրախանամ Տիրոջ առջեւ. այժմ նրան յանձնում եմ քեզ, թո՛ղ այսուհետեւ քոնը լինի, չտրտմեցնե՛ս նրան»:*

ՏՈԲԻԹԻ ԱՂՔԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

11 *Տուբին գնում էր ու օրհնում Աստծուն, որ յաջողութիւն տուեց իր ճանապարհին, օրհնում էր Ռագուէլին ու նրա կնոջը: Եւ նա նրանց հետ գնաց, մինչեւ մօտեցան Նինուէին:* 2 *Ռափայէլը Տուբիին ասաց. «Եղբա՛յր, չգիտե՞ս ինչպիսի վիճակում թողեցիր քո հօրը.* 3 *արի՛ կնոջիցդ առաջ անցնենք եւ նախապատրաստենք տունը,* 4 *իսկ դու վերցրո՛ւ ձկան լեղին»:*

Նրանք գնացին, շունն էլ եկաւ նրանց յետեւից: 5 *Իսկ Աննան, ըստ սովորութեան, նստել սպասում էր իր որդու ճանապարհին:* 6 *Նա տեսաւ, որ որդին գալիս է, եւ ասաց. «Ահա գալիս է քո որդին, նաեւ այն մարդը, որ ընկերացել էր նրան:* 7 *Ռափայէլն ասաց Տուբիին. «Ես գիտեմ, որ քո հօր աչքերը կը բացուեն.* 8 *այժմ այդ լեղին քսի՛ր նրա աչքերի շուրջը, այն կը կսկծացնի ու նրա աչքերից կը հանի հատերը, եւ նա կը տեսնի»:* 9 *Աննան ընդառաջ գնաց, ընկաւ իր որդու պարանոցով ու ասաց նրան. «Որդեա՛կ իմ, ես քեզ տեսայ, հիմա ես, սրանից յետոյ, անհոգ կը մեռնեմ»:* *Եւ երկուսով լաց եղան:* 10 *Տոբիթը դուրս ելաւ դռների մօտ. նա խարխափում էր ու գլորւում. որդին շտապեց նրա մօտ, վերցրեց ու կանգնեցրեց հօրը:* 13 *Նա լեղին քսեց հօր աչքերին ու ասաց. «Հայրի՛կ, տոկա՛ եւ համբերի՛ր»:* 14 *Եւ մի պահ անց՝ հատերն անմիջապէս կեղեւահան եղան ու ընկան նրա աչքերից,* 15 *եւ նա տեսաւ իր որդուն ու ընկաւ նրա պարանոցով.* 16 *լալիս էր ու ասում.*

«Օրհնուած ես, Տէ՛ր Աստուած,

եւ քո անունն օրհնուած է յաւիտեան,

օրհնուած են քո բոլոր սուրբ հրեշտակները,

17 *որովհետեւ դու պատժեցիր եւ ողորմեցիր ինձ,*

քանի որ ահա տեսնում եմ իմ որդի Տուբիին»:

Նրա որդին ուրախութեամբ մտաւ ներս ու հօրը պատմեց այն մեծ գործերի մասին, որ իր հետ կատարուեցին Մարաստանում: 18 *Տոբիթը խնդութեամբ ընդառաջ ելաւ իր հարսին. Նինուէի դռների մօտ օրհնում էր Աստծուն: Ովքեր տեսնում էին նրան, զարմանում էին, որ նա տեսնելով է քայլում:* 19 *Տոբիթը նրանց առջեւ գոհութիւն էր մատուցում Աստծուն, թէ նա ինչպէս ողորմեց իրեն: Տոբիթը մօտեցաւ իր հարսին, օրհնեց նրան ու ասաց. «Բարի եկար, դո՛ւստրս, թող օրհնուած լինի Աստուած, որ քեզ բերեց մեզ մօտ, եւ թող օրհնուեն քո հայրն ու մայրը»:* *Եւ նրա բոլոր եղբայրները, որ Նինուէում էին, ուրախացան:* 21 *Այնտեղ եօթը օր հարսանիք արեցին:*

ՌԱՓԱՅԷԼԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է, ԹԷ ՈՎ Է ԻՆՔԸ

12 *Տոբիթը կանչեց իր որդի Տուբիին ու ասաց նրան. «Որդեա՛կ, այժմ տես, թէ ի՛նչ վարձ ես ուզում տալ հետդ եկած մարդուն. արժէ, որ աւելին տաս»:* 2 *Տուբին նրան ասաց. «Հա՛յր, ինձ ոչինչ չի պակասի, եթէ նրան տամ բերուած ունեցուածքիս կէսը,* 3 *որովհետեւ ինձ ողջ առողջ բերեց քեզ մօտ, բուժեց իմ կնոջը, բերեց իմ արծաթը եւ քեզ նոյնպէս առողջացրեց»:* 4 *Մերունին ասաց. «Իրաւացի է նրան տալը»:* 5 *Եւ նա կանչեց Հրեշտակին ու ասաց նրան. «Վերցրո՛ւ դու կէսն այն ամէնի, որ բերեցիր»:*

6 *Այն ժամանակ Հրեշտակը կանչեց նրանց երկուսին եւ ասաց. «Դուք Աստծո՛ւն օրհնեցէք, նրա՛ն խոստովանեցէք, փա՛ռք տուէք նրան եւ բոլոր ապրողներին պատմեցէ՛ք այն մասին, ինչ նա արեց ձեզ հետ, որովհետեւ բարի է Աստծուն օրհնելը, նրա անունը բարձրացնելը եւ Աստծու գործերի պատգամները պատուով մեծացնելը. մի՛ յապաղէք նրան բարեբանելու:* 7 *Լաւ է թագաւորի գաղտնիքը թաքցնել, իսկ Աստծու գործերը փառքով յայտնել: Բարի՛ն գործեցէք, եւ չարը ձեզ չի հանդիպի:* 8 *Բարի են աղօթքները՝ պահեցողութիւններով, ողորմութիւններով եւ արդարութիւններով. բարի է քիչ ունեցուածքը արդարութեամբ, քան շատը՝ անիրաւութեամբ. լաւ է ողորմութիւններ անել, քան ոսկու գանձ կուտակել.* 9 *ողորմութիւնը փրկում է մահից, նա ինքն էլ մարդուն մաքրում է բոլոր մեղքերից. ովքեր ողորմութիւններ եւ արդարութիւններ են անում, լցւում են կեանքով,* 10 *իսկ ովքեր մեղք են գործում, նրանք իրենց կեանքի դէմ պատերազմողներ են:* 11 *Այժմ ես ձեզանից ոչինչ չեմ թաքցնի, որովհետեւ արդէն ասացի, որ լաւ է արքայի գաղտնիքները թաքցնել, իսկ Աստծու գործերը փառքով յայտնել:* 12 *Երբ աղօթելու կանգնեցիր դու, նաեւ քո հարս Սառան, ես ձեր աղօթքների յիշատակը մատուցեցի սուրբ Աստծուն. իսկ երբ դու թաղում էիր մեռելներին, ես քեզ հետ էի.* 13 *երբ դու չյապաղեցիր վեր կենալ, թողեցիր քո ճաշը, որպէսզի գնաս եւ թաղես մեռելը, ես չմոռացայ քեզ. երբ բարիքներ էիր գործում, ես կրկի՛ն քեզ հետ էի:* 14 *Աստուած ինձ ուղարկեց բժշկելու քեզ եւ քո հարս Սառային:* 15 *Ես Ռափայէլն եմ՝ մէկն այն եօթը սուրբ հրեշտակներից, որոնք վեր են հանում աղօթքները, մտնում սուրբ եւ փառաւոր Աստծու մօտ եւ մատուցում նրան»:* 16 *Նրանք երկուսն էլ շփոթուեցին ու երեսնիվայր ընկան գետնին, որովհետեւ շատ էին վախեցել:* 17 *Հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախեցէք, թո՛ղ խաղաղութիւն լինի ձեզ, օրհնեցէք Աստծո՛ւն,* 18 *որովհետեւ ես ոչ թէ իմ շնորհով եկայ, այլ ձեր Աստծու կամքով.* 19 *նրան օրհնեցէ՛ք յաւիտեան, որովհետեւ այն բոլոր օրերին, որ ես երեւում էի ձեզ, ո՛չ կերայ եւ ո՛չ խմեցի, այլ դուք ինձ տեսնում էիք որպէս երազ:* 20 *Այժմ խոստովանեցէ՛ք ձեր Աստծուն, որովհետեւ ես բարձրանում եմ նրա մօտ, ով ուղարկեց ինձ. եւ դուք գրեցէ՛ք այս ամենի մասին, որ եղաւ ու կատարուեց»:*

21 *Եւ այս ամէնը գրուեց իմ Գրքի մէջ: Իսկ նրան այլեւս չտեսան:* 22 *Նրանք գոհութիւն էին մատուցում Աստծուն նրա մեծագործութիւնների համար եւ նրա համար, թէ ինչպէս իրենց յայտնուեց Տիրոջ Հրեշտակը:*

ՏՈԲԻԹԻ ՕՐՀՆԵՐԳԸ

13 *Տոբիթը ցնծութեան մէջ գրեց այս աղօթքը, եւ ասաց.*

«Օրհնուած է Աստուած, որ կենդանի է յաւիտեան,

օրհնուած է նրա արքայութիւնը,

2 *որովհետեւ նա է հարուածում եւ ողորմում,*

նա է իջեցնում դժոխք եւ հանում այնտեղից,

եւ ոչ ոք չի փախչում նրա ձեռքից:

3 *Իսրայէլի՛ որդիներ, պաշտեցէ՛ք նրան հեթանոս ազգերի առջեւ,*

որովհետեւ նա մեզ ցրեց նրանց մէջ.

4 *պատմեցէ՛ք նրա մեծութեան մասին,*

բարձրացրէ՛ք նրան բոլոր կենդանի մարդկանց առջեւ,

քանի որ յաւիտեան նա է մեր Տէր Աստուածը,

մեր Հայր Աստուածը:

5 *Մեր բոլոր անիրաւութիւնների համար նա կը տանջի եւ կրկին կ'ողորմի մեզ,*

մեզ կը հաւաքի բոլոր հեթանոս ազգերի միջից,

ուր ցրուել ենք մենք:

8 *Եթէ դուք ձեր ամբողջ սրտով,*

ձեր ամբողջ հոգով վերադառնաք նրան

եւ նրա առջեւ արդարութիւն գործէք,

այն ժամանակ նա էլ կը դառնայ դէպի ձեզ
եւ իր երեսը չի ծածկի ձեզանից:
6 Դուք կը տեսնէք, թէ նա ինչ կ'անի ձեզ հետ,
եւ դուք նրան կը փառաբանէք լիաբերան:
Օրհնեցէ՛ք Տիրոջը, որ արդար է,
բարձրացրէ՛ք յաւիտենութեան Թագաւորին:
7 Ես իմ գերութեան երկրում կը փառաբանեմ նրան
եւ նրա զօրութիւնն ու մեծութիւնը ցոյց կը տամ մեղաւոր ազգերին:
Այժմ, մեղաւորնե՛ր, դարձէ՛ք եւ արդարութի՛ւն գործեցէք նրա առջեւ,
քանի որ, ո՞վ գիտէ, գուցէ նա բարեհաճ լինի եւ ողորմի ձեզ:
9 Իսկ ես կ'օրհնեմ իմ Աստծուն.
իմ անձը կ'օրհնի երկնքի Թագաւորին,
ես կը ցնծամ նրա մեծութեան համար:
10 Թող բոլոր ազգերն ասեն այս
եւ փառաբանեն նրան Երուսաղէմ սուրբ քաղաքում:
11 Երուսաղէ՛մ, նա կը պատժի քո ժողովրդի որդիներին,
բայց նորից կը դառնայ ու կ'ողորմի արդարների որդիներին:
12 Դու գոհութիւն կը մատուցես բարերար Տիրոջը
եւ կ'օրհնես յաւիտենութեան Թագաւորին,
քանի որ նա իր տաճարը դարձեալ ուրախութեամբ կը կառուցի քո մէջ,
13 քո մէջ կը ցնծան նրանք, ովքեր գերուած են,
քեզ կը սիրեն նրանք, ովքեր բոլոր ազգերի մէջ յաւիտեան թշուառացած են:
14 Բազմաթիւ ազգեր կը գան հեռուից,
Տէր Աստծու անունով իրենց ձեռքերին առած կը բերեն իրենց նուէրները՝
մատուցելու երկնաւոր Թագաւորին
եւ քեզ ուրախութիւն կը տան սերնդից սերունդ:
16 Քո բոլոր ատելիներն անիծեալ կը լինեն,
քո բոլոր սիրելիներն օրհնեալ կը լինեն:
17 Ցնծա՛ եւ ուրա՛խ եղիր արդարների որդիների համար,
որովհետեւ նրանք կը հաւաքուեն միասին
եւ միասին կը փառաբանեն արդարութիւնների Տիրոջը:
18 Քեզ սիրողները երջանիկ կը լինեն,
եւ նրանք կը ցնծան քո խաղաղութեան համար.
երանի՛ նրանց, ովքեր տրտմեցին քո կործանման համար,
որովհետեւ երբ նրանք տեսնեն քո փառքը,
կրկին քեզանով կը ցնծան
եւ յաւիտեան ուրախ կը լինեն:
19 Հոգիս կ'օրհնի Աստծուն՝ մեծ Թագաւորին,
21 որովհետեւ Երուսաղէմը կը կառուցուի թանկարժէք քարերով՝
շափիւղայով, սուտակով եւ այլ թանկագին քարերով.
քո պարիսպները, աշտարակներն ու ամրութիւնները կը կառուցուեն ազնիւ ոսկով.
22 Երուսաղէմի բոլոր հրապարակները կը պատրաստուեն բիւրեղ, դահանակ եւ սարդիոն քարերով:
23 Երուսաղէմի բոլոր փողոցներում կ'ասեն՝ Ալէլուիա.
կ'օրհնեն եւ կ'ասեն.
"Օրհնուած է Աստուած,
որ յաւիտեան բարձրացրեց ամբողջ աշխարհը"»:

ՏՈԲԻԹԻ ՄԱՀԸ

14 Տոբիթը վերջացրեց այս օրհներգը: 2 Երբ նրա աչքերը կուրացան, նա յիսունութ տարեկան էր. ութ տարի անց աչքերը կրկին բացուեցին. 3 նա ողորմութիւններ էր անում. էլ աւելի էր երկնչում Աստծուց ու փառաբանում նրան:
4 Նա շատ ծերացաւ. 5 կանչեց իր որդուն, իր որդու որդիներին եւ իր որդուն ասաց. «Որդեա՛կ, դու վերցրո՛ւ քո որդիներին, որովհետեւ ես ահա ծերացել եմ եւ մօտ եմ մեռնելու. այժմ

դու գնա՛ Մարաց երկիր, որդեա՛կ իմ, 6 որովհետեւ ես հաւատում եմ, որ, ինչպէս Յովնան մարգարէն է ասել, Նինուէն պիտի կործանուի, իսկ Մարաց երկրում միառժամանակ խաղաղութիւն պիտի լինի: Մեր եղբայրները կը ցրուեն այս բարի երկրից, Երուսաղէմն աւերակ ու անապատ կը դառնայ, նրա մէջ Աստծու Տունը կը հրկիզուի եւ մի որոշ ժամանակ աւերուած կը լինի: 7 Բայց Աստուած կրկին կ'ողորմի նրանց ու կը վերադարձնի հայրենի երկիր, եւ նրանք կը շինեն Աստծու Տունը, բայց ոչ առաջինի նման, մինչեւ որ լրանան յաւիտենութեան ժամանակները: Դրանից յետոյ կը վերադառնան այս գերութիւնից եւ փառքով ու մեծ պատուով կը կառուցեն Երուսաղէմը: Աստծու տաճարը նրա մէջ յաւիտեան բոլոր ազգերի կողմից կը կառուցուի փառաւոր շինուածքներով, ինչպէս նրա մասին ասել են մարգարէները: 8 Բոլոր հեթանոսները դարձի կը գան՝ ճշմարտութեամբ երկնչելու Տէր Աստծուց, եւ կը կործանեն ու կը մերժեն իրենց կուռքերը: 9 Բոլոր ժողովուրդները կ'օրհնեն Տիրոջը, եւ ամէն ժողովուրդ կը խոստովանի իր Աստծուն: Տէրը կը բարձրացնի իր ժողովրդին. եւ բոլոր նրանք, ովքեր ճշմարտութեամբ ու արդարութեամբ սիրում են Տէր Աստծուն, կը ցնծան. դուք էլ ձեր հայրերի նման ողորմութիւն կ'անէք:
10 Արդ, որդեա՛կ իմ, դու գնա՛ այստեղից, որովհետեւ Յովնան մարգարէի ասածն անպատճառ կը լինի: 11 Բայց դու կը կատարես օրէնքներն ու բոլոր հրամանները. եղի՛ր ողորմած ու արդար, որպէսզի քեզ համար բարի լինի. 12 կը թաղես ինձ եւ քո մօրը՝ ինձ հետ. այլեւս չմնաս Նինուէում: Որդեա՛կ իմ, դու տես, թէ ինչ արեց Ադամն[†] Աքիաքարին, որը սնել էր նրան. թէ ինչպէս լոյսից նրան տարաւ խաւար եւ թէ որքան չարիք գործեց նրա նկատմամբ. բայց Աքիաքարը փրկուեց, իսկ նա ստացաւ հատուցումը՝ նրա փոխարէն ինքն իջաւ խաւարի մէջ. Մանասէն ողորմութիւններ արեց եւ իր դէմ նիւթուած մահուան օրը փրկուեց, իսկ Ադամն ընկաւ որոգայթ եւ կործանուեց: 13 Եւ ահա, որդեա՛կ իմ, դու տե՛ս, թէ ի՞նչ է անում ողորմութիւնը, կամ ինչպէ՞ս է փրկում արդարութիւնը»:
Երբ ասաց այս, հոգին աւանդեց իր մահճում, քանի որ նա հարիւր յիսուն տարեկան էր: Նրա որդին մեծ փառքով ու պատուով թաղեց նրան: 14 Իսկ երբ մեռաւ Աննան, նա իր հօր մօտ թաղեց նաեւ նրան:

ՎԵՐՋԱԲԱՆ

Տուբին իր կնոջ ու որդիների հետ գնաց Մարաց Եկբատան քաղաքը՝ իր աներ Ռագուէլի մօտ: 15 Տուբին մեծ պատուով ծերացաւ. նա փառքով ու պատուով թաղեց իր աներոջն ու զոքանչին եւ ժառանգեց նրանց տունն ու իր հայր Տոբիթի տունը: 16 Նա հարիւր քսանեօթը տարեկան հասակում մեռաւ Մարաց Եկբատան քաղաքում: 17 Քանի դեռ նա չէր մեռել, լսեց Նինուէի կործանման մասին, ուր իրենց գերութեան էր տարել Նաբուքոդոնոսոր Ասուերոսը: Տուբին, որ դեռ չէր մեռել, ուրախացաւ Նինուէի կործանման համար: Նա գոհութիւն մատուցելով փառք տուեց Աստծուն, որին փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

[†]Յունարէն բնագրում՝ Նադանը:

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Մակաբայեցիների գրքերը յիշատակում են հրեայ ժողովրդի պատմութիւնը այնպիսի խառն մի ժամանակաշրջանում, երբ նա ապստամբել էր այն վարչակարգի դէմ, որ նրան պարտադրել էին Մեծն Ալեքսանդրի յաջորդ Սելեւկեան իշխանները, որոնք տիրութիւն էին անում Սիրիական Անտիոքում:

Մակաբայեցիների առաջին գիրքը ընդգրկում է աւելի քան քառասուն տարուայ մի ժամանակաշրջան, 175–134 թուականները (Ն. Ք.): Գրքում ոգեկոչուած են Մեծն Ալեքսանդրի եւ նրա յաջորդ Սելեւկեանների իշխանութեան տարիները եւ մասնաւորապէս Անտիոքոս Դ-ի քաղաքականութիւնը, որի նպատակն էր հրեաներին պարտադրել յունական սովորոյթներն ու կրօնական պաշտամունքները: Այս քաղաքականութեան խստութիւնը պատճառ է դառնում Մատաթիայի եւ նրա որդիների գլխաւոր ապստամբութեանը:

Յուդա Մակաբայեցին վեց տարի կռիւ է մղում սելեւկեան բանակի յաջորդական զօրավարների դէմ: Նրա մահից յետոյ նրա եղբայր Յովնաթանը շարունակում է եղբօր գործը, սակայն սրա պայքարը աւելի քաղաքական բնոյթ է կրում, քան ռազմական: Սա քահանայապետ է նշանակւում Ալեքսանդր Բալաս թագաւորի կողմից, բայց 142 թուականին սպանւում է սիրիացի զօրավար Տրիփոնի ձեռքով, որը ցանկանում էր տիրանալ Անտիոքոս Դ-ի գահին:

Յովնաթանի եղբայր Սիմոնը շարունակում է իր նախորդների գործը: Սա եւս քահանայապետ է նշանակւում Դեմետրիոս Բ թագաւորի կողմից, ապա վերսկսում զինեալ պայքարը եւ ի վերջոյ ձեռք է բերում ինքնավարութիւն իր հայրենակիցների համար: Այսպիսով Սիմոն Մակաբայեցին դառնում է հասմոնեան հրէական հարստութեան հիմնադիրը:

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

1 *Փիլիպպոսի որդի Ալեքսանդր Մակեդոնացի կայսրը Քետիմացիների երկրից դուրս գալով՝ ծնկի բերեց պարսիկների եւ պարթեւների արքայ Դարեհին, թագաւորեց նրա փոխարէն, իշխեց յոյների եւ հռոմէացիների երկրների վրայ: 2 Այնուհետեւ զօրք հաւաքելով՝ մեծ պատերազմներ մղեց, բերդեր գրաւեց, բազում թագաւորներ սպանեց, 3 հեթանոս տարբեր ազգերից մեծ աւար վերցրեց: Ամբողջ երկիրը դողում էր նրա առաջ: 4 Նա բազմաթիւ զօրք հաւաքեց, յարձակուեց բոլոր հզօր երկրների վրայ 5 ու ողջ աշխարհը հարկատու դարձրեց:*

6 Դրանից յետոյ նա մահացու ախտով հիւանդացաւ եւ անկողին ընկաւ: 7 Երբ տեսաւ, որ մեռնում է, կանչեց մանկուց իր հետ սնուած-դաստիարակուած ծառաներին՝ իր կողմից փառքի արժանացած իր չորս կաթնեղբայրներին, ու քանի դեռ կենդանի էր, իր թագաւորութիւնը բաժանեց եւ տուեց նրանց: 8 Ալեքսանդրը տասներկու տարի թագաւորելուց յետոյ մեռաւ: 9 Նրանից յետոյ իր կաթնեղբայրները իշխեցին իրենց բաժին հասած տարածքում. 10 նրա մահուանից յետոյ իւրաքանչիւրը թագ կապեց իր գլխին: Սրանց հետեւեցին նաեւ իրենց որդիները: Եւ այսպէս՝ երկար տարիներ: Սրանք բազմացրին անօրէնութիւններն ու երկիրը լցրին իրենց չարագործութիւններով:

11 Սրանցից է սերում չարիքի արմատ, դառնութեան շառաւիղ, անօրէն Անտիոքոսը՝ Անտիոքոս արքայի որդին, որ պատանդ էր մնացել Հռոմ քաղաքում: Նա թագաւորեց յոյների թագաւորութեան հարիւր երեսունեօթներորդ տարում:

12 Սրանց ժամանակ էր, որ իսրայէլացիներից ծնուեցին անօրէն մարդիկ, որոնք շատերին դիւթելով պատիր ու շողոմ խօսքերով՝ ասացին. «Եկէք մեր շուրջը բնակուող բոլոր հեթանոս ազգերի հետ ուխտ դնենք ու դաշինք կնքենք, որովհետեւ այն օրից ի վեր, երբ մենք անջատուեցինք նրանցից ու մեկնեցինք, բազում մեծ չարիքներ պատահեցին մեզ»: 13 Շատերին հաճելի թուացին այս խօսքերը, 14 ժողովրդի միջից ոմանք համաձայնեցին գնալ հանդիպել թագաւորին, եւ թագաւորը նրանց իրաւունք տուեց ապրել հեթանոսների բոլոր օրէնքներով: 15 Նրանք Երուսաղէմում ըստ հեթանոսների օրէնքների մեհենական հրապարակներ կառուցեցին, 16 իրենց համար անթլփատութեան օրէնք հաստատեցին, չեղուեցին սուրբ կտակարանների ուխտից, միաբանեցին հեթանոսների հետ եւ յօժարեցին չարիքներ գործել:

ԱՆՏԻՈՔՈՍԸ ՅԱՐՁԱԿԻՐՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ

17 Երբ Անտիոքոսի թագաւորութիւնը հզօրացաւ, նա մտադրուեց թագաւորել նաեւ Եգիպտացիների երկրի վրայ, որպէսզի միացնի երկու թագաւորութիւնները: 18 Նա մեծ զօրքով, ռազմակառքերով, փղերով ու բազում նաւերով արշաւեց Եգիպտացիների երկրի վրայ, 19 որպէսզի պատերազմի Եգիպտոսի Պտղոմէոս թագաւորի դէմ: Պտղոմէոսը պարտութիւն կրեց նրանից ու փախուստի դիմեց: Այդ կռուում բազմաթիւ մարդիկ վէրքեր ստանալով մեռան: 20 Անտիոքոսն ասպատակեց ամբողջ երկիրը. նրա զօրքերը յանկարծակի վրայ էին հասնում, արագ հաւաքում էին աւարն ու գրաւում ողջ Եգիպտացիների երկրի բերդերը:

21 Եգիպտացիներին յաղթելուց յետոյ Անտիոքոսը հարիւր քառասուներեք թուականին վերադարձաւ 22 եւ մեծ զօրքով յարձակուեց Երուսաղէմ քաղաքի վրայ, 23 յանդուգն գոռոզութեամբ մտաւ սուրբ տաճար, յափշտակեց ոսկէ զոհասեղանը, լոյսի աշտանակը, գանձատան բոլոր իրերը, առաջաւորութեան հացի սեղանը, սկիհներն ու տաշտերը, բոլոր խնկամաններն ու վարագոյրները, պսակներն ու ոսկէ զարդերը: 24 Առաջինն ինքը մտաւ տաճար, յափշտակեց ու ձուլեց ամէն ինչ, վերցրեց արծաթն ու ոսկին, զէնքն ու զրահը, ռազմական բոլոր իրերը,

գտաւ ու վերցրեց թաքցրած գանձերն
ու սրբազան բոլոր անօթները եւ գնաց
իր երկիրը: 25 Նա շատ արիւն թափեց,
շատ մարդկանց սպանեց, մեծ ամբար-
տաւանութեամբ խօսեց շատերի հետ:
26 Մեծ սուգ պատեց Իսրայէլին:
27 Իրենց բոլոր տեղերում հեծեցին
իշխաններն ու ծերերը,
թուլացան աղջիկներն ու երիտա-
սարդները,
խամրեց կանանց գեղեցկութիւնը,
28 բոլոր փեսաների դէմքերից ան-
պակաս դարձաւ ողբն ու լացը,
սգոյ բանտի վերածուեցին բոլոր
հարսների ննջասենեակները,
29 երկիրը սարսռաց իր բնակիչների
համար,
եւ անարգանքն ու ամօթը համակեց
Յակոբի ամբողջ տունը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՄՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

30 Այդ դէպքերից երկու տարի յետոյ
Անտիոքոս արքան հարկահան մի իշ-
խան ուղարկեց Հրէաստանի քաղաք-
ները: Սա Երուսաղէմ եկաւ բազմաթիւ
զօրքերով 31 եւ սկսեց նենգութեամբ
խաղաղութիւն քարոզել: Նրանք հա-
ւատացին սրան, 32 բայց սա յան-
կարծակի յարձակուեց քաղաքի վրայ,
մեծ հարուածներ հասցրեց բնակիչ-
ներին եւ բազմաթիւ իսրայէլացիներ
սպանեց: 33 Նա աւարի մատնեց
քաղաքը, հրկիզեց նրա բոլոր փայ-
տակերտ շինութիւնները, քանդեց,
աւերեց քաղաքը շրջափակող պարիսպ-
ներն ու նրա ապարանքների բոլոր
պատերը: 34 Գերեվարեցին կանանց ու
մանուկներին, տիրացան նրանց բոլոր
անասուններին: 35 Նրանք քաղաքի
վերին կողմը հզօր աշտարակներով
ամուր պարիսպ շինեցին, եւ դա նրանց
համար ամրացուած քաղաքի միջնա-
բերդը եղաւ: 36 Այնտեղ լցրին մեղ-
սագործ, անօրէն մարդկանց, զէնքերով
զինեցին նրանց, մթերքներով ապահո-
վեցին եւ Երուսաղէմի ողջ աւարը
կուտակեցին ներսում: 37 Դրանք Իս-
րայէլի երկրի համար մշտապէս եղան
մեծ որոգայթ, 38 սրբութեան արգելք-
ներ ու չար սատանայ: 39 Նրանք սուրբ
տաճարի շուրջը անմեղ արիւն թափե-
ցին եւ պղծեցին սրբավայրերը: 40 Դրա-
նից յետոյ Երուսաղէմի բնակիչները
նրանց պատճառով փախստական
դարձան: Երուսաղէմը օտարների
բնակավայր դարձաւ եւ օտարացաւ իր
հարազատ զաւակներից, որովհետեւ
նրա որդիները հեռացան այնտեղից:
41 Աւերուեց նրա սրբարանն ու
վերածուեց անապատի:
Նրա տարեկան տօները սգի վերա-
ծուեցին,
իսկ նրա շաբաթ օրերը՝ նախատինքի
ու ամօթի:
Արհամարհուեց նրա պատիւը,
42 նրա փառքը լցուեց անարգանքով,
նրա վեհութիւնը դարձաւ սգի ար-
ժանի:

ԱՆՏԻՈՔՈՍԸ ՍՏԻՊՈՒՄ Է ՊԱՇՏԵԼ ԿՈՒՌՔԵՐԻՆ

43 Ողջ աշխարհում հրովարտակներ
արձակուեցին, որ երկրի բոլոր բնակիչ-
ները հրաժարուեն իրենց օրէնքներից
եւ ընդունեն մէկ օրէնք՝ նրա՛ օրէնքը:
44 Բոլոր ազգերը ենթարկուեցին ար-
քունի հրամանին: 45 Իսրայէլացիներից
շատերը նոյնպէս դաւանեցին անօրէն
կրօնը, զոհեր մատուցեցին նրանց
կուռքերին ու պղծեցին իրենց շաբաթ
օրերը: 46 Թագաւորը բանագնացների
միջոցով հրովարտակներ ուղարկեց Ե-
րուսաղէմ եւ Հրէաստանի քաղաքները՝
նրանց ընդունել տալու համար օտա-
րոտի օրէնքներ, 47 վերացնելու ողջա-
կիզումն ու սուրբ զոհերը, 48 պղծելու
շաբաթ օրերն ու ամենամեայ տօները,
ապականելու սրբարանը, 49 որպէսզի
դրանց փոխարէն կռապաշտական զո-
հասեղաններ կանգնեցնեն, մեհեան-
ներին արտեր յատկացնեն, 50 նաեւ
խոզեր ու խառնածին անասուններ
մորթեն, 51 որդիներին անթլփատ
թողնեն, իրենց անձը պղծեն ամէն
տեսակ անօրէն պղծութիւններով եւ
բոլորովին մոռանան իրենց հաւատն
ու փոխեն օրէնքները: 52 Եւ նա, ով չէր
ենթարկուի թագաւորի հրամանին, կը
դատապարտուէր մահուան: 53 Բոլոր
վայրերում ոստիկանն արեց այն ամէ-
նը, ինչ գրել էր թագաւորը: 54 Հրէաս-

տանի քաղաքացիներին պարտադրեց,
որ ամէն մէկը զոհեր մատուցի իր քա-
ղաքում: 55 Նրանց մօտ հաւաքուեցին
նախկին օրէնքներից դժգոհ բոլոր
մարդիկ եւ չարագործութիւններով
լցրին երկիրը: 56 Նրանք ստիպեցին
Իսրայէլին քաշուել աւելի ամուր
տեղեր եւ ապաստարաններ:
57 Հարիւր քառասունհինգ թուա-
կանի քասղեւ ամսի քսանհինգին նա
զոհասեղանի վրայ բարձրացրեց անա-
պատի մի պիղծ կուռք: 58 Ամբողջ
Հրէաստանի քաղաքների շուրջը մեհ-
եաններ կառուցեցին եւ ապարանքների
բոլոր դռների, քաղաքների բոլոր
ճանապարհների վրայ խունկ ծխեցին:
59 Պատառոտում ու կրակն էին նետում
իրենց ձեռքն ընկած Կտակարանի
բոլոր գրքերը: 60 Ում մօտ Կտակարանի
գիրք էին գտնում, կամ ով իր հաւատն
էր դաւանում, թագաւորի հրամանի
համաձայն նրան մահապատժի էին
ենթարկում: 61 Այսպէս ամսէ ամիս
սաստկանում էր հրամանը այն
իսրայէլացիների նկատմամբ, որոնք
գտնւում էին քաղաքներում: 62 Ամսի
քսանհինգին զոհասեղանի վրայ կա-
ռուցուած հեթանոսական բագինների
վրայ զոհ էին մատուցում: 63 Հրա-
մանի համաձայն՝ սպանում էին այն
կանանց, որոնք թլփատել էին իրենց
երեխաներին 64 եւ, ըստ արքունի
հրամանի, երեխաներին կախում էին
իրենց իսկ մայրերի պարանոցներից:
Նոյն կերպ էին վարւում թլփատող-
ների եւ նրանց որդիների հետ: 65 Բազ-
մաթիւ իսրայէլացիներ որոշեցին չու-
տել պիղծ բաներ, գերադասեցին յօժար
կամքով մեռնել, բայց երբեք իրենց
անձը չպղծել անմաքուր կերակուր-
ներով, 66 որպէսզի չպղծեն սուրբ
ուխտը: Դրա համար էլ շատերը մե-
ռան: 67 Իսրայէլը դա համարեց իր
համար մեծ տօն եւ ուրախութիւն†:

ՄԱՏԱԹԻԱ ՔԱՀԱՆԱՅԻ ՈՂԲԸ

2 Այդ ժամանակներում ասպարէզ
իջաւ Շմաւոնի որդի Յովհաննէսի որդի
Մատաթիան՝ երուսաղէմացի Յովարի-
մի տոհմից սերած մի քահանայ: Նա
եկաւ ու նստեց Մոդիիմի քարայրների
մօտ գտնուող բերդերում: 2 Նա ունէր
հինգ որդի. Կադիշ մականունով Յով-
հաննէսը, 3 Թարսսի մականունով
Շմաւոնը, 4 Մակաբէ մականունով
Յուդան, 5 Աւարան մականունով
Եղիազարը եւ Յովնաթանը, որ կոչուեց
Սափութ: 6 Երբ Մատաթիան տեսաւ
Հրէաստանում եւ Երուսաղէմում կա-
տարուող սրբապղծութիւնները, սկսեց
ողբալ իր անձի վրայ՝ ասելով.
7 «Վա՜յ ինձ, ինչո՞ւ ականատես
եղայ իմ ժողովրդի կոտորածին,
կամ ինչո՞ւ տեսայ սուրբ քաղաք
Երուսաղէմի աւերումը:
Ինչո՞ւ նա մատնուեց թշնամու
ձեռքը,
8 եւ սրբութիւնն ընկաւ օտարների
ձեռքը:
Ինչպէ՜ս տաճարը նմանուեց փառքից
ընկած մի տղամարդու,
9 իսկ նրա փառաւոր սպասքը՝ գե-
րութեան մատնուած մի մարդու:
Նրա պատանիները կոտորուեցին իր
փողոցներում,
իսկ նրա երիտասարդներն ընկան
թշնամու սրից:
10 Կա՞յ մի ազգ, որ ժառանգած
չլինի մի մաս նրա տէրութիւնից,
կամ կա՞յ մի մարդ, որ չի կողոպտել
նրան ու չի տիրել նրա ունեցուածքին:
11 Սպառուել են նրա զարդերը:
Ազատութեան փոխարէն նա
մատնուել է ստրկութեան:
12 Մեր բոլոր գեղեցիկ զարդերը, մեր
սրբավայրն ու մեր փառքը կործանուել
են:
Եւ այդ բոլորը պղծել են հե-
թանոսները:
13 Այլեւս մեր ինչի՞ն է պէտք
կեանքը»:

ՄԱՏԱԹԻԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

14 Այն ժամանակ Մատաթիան ու
նրա որդիները ձեռքները գցեցին օձիք-
ներին, պատառոտեցին իրենց պատ-
մուճանները, քուրձ հագան ու սուգ
պահեցին: 15 Թագաւորի մօտից մար-

†Այլ բնագրեր ունեն բոլորովին հակառակ իմաստ. Իսրայէլի վրայ սուգ իջաւ կամ Իսրայէլը մեծ սգի օրեր պարեց:

դիկ եկան, որոնք ստիպում էին նրանց դիմելու ապստամբութեան: Նրանք եկան Մոդիիմ քաղաքը, որ այնտեղ զոհեր մատուցեն: 16 Նրանց մօտ եկան ու հաւաքուեցին բազմաթիւ իսրայէլացիներ, որոնց թւում նաեւ՝ Մատաթիան ու իր որդիները: 17 Ապա թագաւորի մօտից եկած մարդիկ սկսեցին խօսել ու ասացին Մատաթիային. «Դու հռչակաւոր իշխան ես, դու մեծաւոր ես այս քաղաքում: Դու սրանց մէջ ես հաստատուել քո որդիների ու եղբայրների հետ: 18 Արդ, նախ դո՛ւ մօտեցիր, կատարի՛ր թագաւորի հրամանը, ինչպէս կատարեցին Հրէաստանում բնակուող բոլոր ազգերի մարդիկ ու բոլոր նրանք, ովքեր բնակւում են Երուսաղէմում. դուք կը դառնաք արքայի բարեկամները, դու եւ քո որդիները պատիւ կը ստանաք ոսկով, արծաթով եւ արքունի հրովարտակներով»:

19 Մատաթիան պատասխան տուեց ու բարձր ձայնով ասաց. «Եթէ թագաւորի երկրի բոլոր մարդիկ ենթարկուել են թագաւորի հրամաններին, ընկրկել եւ հրաժարուել են իրենց հայրերի օրէնքներից ու կատարում են թագաւորի հրամանները, 20 ապա ես, իմ որդիներն ու իմ եղբայրները կը հետեւենք մեր հայրերի պատուիրաններին: 21 Մենք չենք հրաժարուի Աստծու օրէնքներից ու կանոններից, 22 չենք ենթարկուի թագաւորի հրամաններին: Մենք չենք փոխի մեր հայրերի կրօնը, աջ ու ձախ չենք շեղուի եւ թագաւորի հրամանին չենք անսայ»:

23 Հազիւ էր նա այս խօսքերն ասել, որ հրեաներից մի մարդ, թագաւորի հրամանի համաձայն, բոլորի ներկայութեամբ առաջ եկաւ, որպէսզի Մոդիիմի բագինում, մեհեանի առաջ զոհ մատուցի: 24 Երբ դա տեսաւ Մատաթիան, այնքան զայրացաւ, որ դողացին իր երիկամները: Նա դատաստան անելու համար բարկութեամբ լցուեց, բարձրացրեց ոտքը ու այնպէս հարուածեց հրեային, որ սպանեց նրան բագինի առաջ: 25 Նա սպանեց նաեւ այն մարդուն, որ արքունի հրամանով ստիպում էր զոհեր մատուցել: Նա կործանեց բագինը, աւերեց մեհեանը: 26 Նա օրէնքի նախանձախնդիր եղաւ այնպէս, ինչպէս Փենէէան էր վարուել Եղոմի որդու՝ Զամբրիի նկատմամբ:

ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

27 Նա սկսեց բարձրաձայն աղաղակել ու ասաց. «Իւրաքանչիւր ոք, ով կարող է օրէնքի նախանձախնդիր լինել, ով ուզում է հաւատարիմ մնալ օրէնքներին, թող հետեւի ինձ»: 28 Նա ու իր եղբայրները փախան գնացին լեռները՝ իրենց բոլոր ունեցուածքը թողնելով քաղաքում:

29 Այն ժամանակ անապատ իջան իրաւունք եւ արդարութիւն որոնող շատ մարդիկ, 30 որ բնակուեն այնտեղ իրենց կանանցով, որդիներով ու անասուններով, որովհետեւ չարագործութիւնը սաստկանում էր նրանց նկատմամբ:

31 Թագաւորի իշխաններն ու Դաւթի քաղաքում գտնուող զօրքը իմացան, որ թագաւորի հրամանը չկատարող մի քանի հոգի իջել են անապատի մօտ գտնուող ապաստարանները, իսկ շատերը նրանց միանալով՝ գնացել են նրանց հետ: 32 Ժամանակ նշանակեցին, պատրաստութիւն տեսան, ձի հեծած եկան ու պաշարեցին անապատի մօտ գտնուող ապաստարանները: Նրանք պատերազմի պատրաստութիւն տեսան ու շաբաթ օրը պաշարեցին նրանց: 33 Նախ բանագնաց ուղարկեցին, սկսեցին բանակցութիւններ վարել՝ ասելով. «Գոնէ սրանից յետոյ ենթարկուեցէ՛ք թագաւորի հրամանին, որ կենդանի մնաք»: 34 Պաշարուածներն այնտեղից խօսել սկսեցին ու ասացին. «Ո՛չ դուրս կ'ելնենք ապաստարաններից, ո՛չ թագաւորի հրամանին անսալով կը պղծենք մեր շաբաթ օրերը, ո՛չ էլ կը շեղուենք մեր օրէնքներից»: 35 Երբ նրանք այս խօսքերը լսեցին, աւելի սաստկացրին հակառակութիւնը նրանց նկատմամբ եւ ուզեցին աւելի սեղմել ապաստարանները պաշարող օղակը, որպէսզի գերի վերցնեն նրանց: 36 Սրանք ո՛չ

կիրճերը փակեցին, ո՛չ քար արձակեցին, ո՛չ ապաստարաններն ամրացրին, ո՛չ իսկ նրանց ասածին պատասխան տուեցին, որովհետեւ օրը շաբաթ էր: 37 Սրանք միայն իրար էին քաջալերում՝ ասելով. «Հէնց այստեղ, մեր նեղութեան մէջ էլ կը մեռնենք, որովհետեւ երկինքն ու երկիրը վկայ են, որ իզուր էք մեզ ոչնչացնում: Մեզ համար աւելի լաւ է մեռնել, քան թէ մեր օրէնքները խախտել ու շաբաթ օրերը պղծել»: 38 Երբ նրանք դա լսեցին, շաբաթ օրը սաստկացրին պատերազմը, սպանեցին հազար հոգի, չհաշուած այն, որ մարդկանց ու անասուններին գերի վարեցին:

39 Երբ դա լսեցին Մատաթիան ու իր եղբայրները, խիստ տրտմեցին ու մեծ սուգ արեցին: 40 Նրանք իրար հետ խօսելով ասացին. «Եթէ հետեւենք մեր եղբայրների օրինակին, այսինքն՝ մեր անձն ու իրաւունքները պաշտպանելու համար պատերազմի չելնենք հեթանոսների դէմ, կարճ ժամանակ յետոյ մեզ աւելի շուտ կը սպանեն, քան նախորդ օրերի մարդկանց»: 41 Ուստի հաւաքուեցին, պայմանաւորուեցին, իրար հետ խորհուրդ արեցին ու ասացին. «Ով էլ շաբաթ օրը գայ մեր դէմ պատերազմելու, համարձակ մարտնչենք եւ ոչ թէ ամէնքս էլ առհասարակ մեռնենք, ինչպէս մեռան անապատում ապրող մեր եղբայրները»:

42 Այն ժամանակ նրանց մօտ հաւաքուեցին ասիտացի շատ զինուորներ: Սրանք իսրայէլացիների մէջ հզօր ու պատերազմող մարդիկ էին՝ ամէն մէկն իր օրէնքի համար ինքնակամ նահատակուելու պատրաստ: 43 Նրանց միացան նաեւ ամէն տեսակի չարագործութիւններից խուսափած մարդիկ, որով նրանք մեծ զօրք կազմեցին: 44 Զօրք հաւաքեցին, գնդեր կազմեցին, պատրաստութիւն տեսան, իրենց բարկութեան ուժով սպանեցին մեղաւորներին ու անօրէն մարդկանց, իսկ մնացածները փախան հեթանոսների մօտ: 45 Մատաթիան իր եղբայրների ու բարեկամների հետ հետապնդեց նրանց, հասաւ, ջարդեց, աւերեց մեհեանները, 46 կործանեց բագինները, թլփատեց անթլփատ երեխաներին եւ ամրացաւ իսրայէլացիների սահմանների վրայ: 47 Նրանք հալածական արեցին ամբարտաւան մարդկանց: Նրանց ձեռնարկած գործը յաջողութիւն ունեցաւ: 48 Նրանք պաշտպանեցին իրենց օրէնքները, վրէժ լուծեցին հեթանոսներից, մերժեցին թագաւորի անօրէն հրամանը, թոյլ չտուեցին, որ գլուխ բարձրացնի ամբարտաւանութեան եղջիւրը:

ՄԱՏԱԹԻԱՅԻ ԿՏԱԿՆ ՈՒ ՄԱՀԸ

49 Երբ մօտեցան Մատաթիայի մեռնելու օրերը, նա իր մօտ կանչեց իր որդիներին ու ասաց նրանց. «Գոռոզութիւնն ու ամբարտաւանութիւնն են հաստատուել այժմ, բայց ահա հասել է կործանումն ու գոռոզութիւնը վերացնելու ժամանակը: 50 Արդ, զաւակնե՛րս, եկէք առաջնորդուեցէ՛ք օրէնքի հանդէպ նախանձախնդրութեամբ, դուք ձեզ նուիրեցէ՛ք հայրերի Կտակարանների պաշտպանութեանը, 51 յիշեցէ՛ք, թէ ձեր հայրերը քաջութեան ինչ գործեր են կատարել իրենց ժամանակին, եւ աւագութեան փառք կը ստանաք, յաւիտենական անուն կը ժառանգէք: 52 Չէ՞ որ Աբրահամը փորձութեան ժամանակ հաւատարիմ գտնուեց եւ դրա համար էլ արդար համարուեց: 53 Յովսէփն իր նեղութեան ժամանակ պահեց պատուիրանը եւ տէր դարձաւ Եգիպտացիների երկրին: 54 Մեր նախանձախնդիր հայր Փենէէսն արդար վրէժի զգացումով առաջնորդուեց եւ առյաւէտ ստացաւ քահանայութեան ուխտը: 55 Նաւէի որդի Յեսուն Տիրոջ պատգամները կատարելու համար դարձաւ իսրայէլացիների դատաւորը: 56 Քաղեբը ժողովրդի մէջ վկայութիւն տալու համար դարձաւ ժառանգութեան տէր: 57 Դաւիթն իր հեզութեան, արդարամտութեան ու ողորմած լինելու համար յաւիտենապէս ժառանգեց թագաւորութեան գահը: 58 Եղիան օրէնքի նկատմամբ նախանձախնդիր լինելու համար բարձրացաւ երկինք: 59 Անա-

նիան, Ազարիան ու Միսայէլը իրենց հաւատի շնորհիւ փրկուեցին հնոցի կրակից: 60 Դանիէլն անմեղ լինելու պատճառով փրկուեց առիւծների երախից: 61 Արդ, իմացէ՛ք, որ բոլոր նրանք, ովքեր իրենց յոյսը դրել են Տիրոջ վրայ, սերնդից սերունդ չեն տկարանայ: 62 Ամբարիշտ մարդու խօսքից մի՛ վախեցէք, որովհետեւ նրա փառքը աղբ է ու կեղտ: 63 Այսօր լինի թէ վաղը, այն այլեւս չի մնայ, կը վերածուի հողի, եւ կ'անէչանան նրա մտադրութիւնները: 64 Գօտեպնդուեցէ՛ք, զաւակնե՛րս, հաստա՛տ մնացէք ձեր օրէնքի վրայ, որովհետեւ դրանով պիտի փառաւորուէք: 65 Գիտեմ, որ ձեր եղբայր Շմաւոնը խոհեմ մարդ է: Լսեցէ՛ք նրան, նրան ընդունեցէ՛ք ձեր հօր տեղ: 66 Ձեր զօրքերի սպարապետը թող լինի զօրավար Յուդա Մակաբէն, նա թող պատերազմի ելնի զօրքով, 67 իսկ դուք՝ օրէնքի նախանձախնդիր բոլոր մարդիկդ, միացէ՛ք, որ լուծէք ձեր ժողովրդի վրէժը. 68 հատուցում պահանջեցէ՛ք հեթանոսներից ու հետեւեցէ՛ք օրէնքի հրամաններին»:

69 Նա օրհնեց նրանց, վախճանուեց ու միացաւ իր նախնիներին: 70 Նա մեռաւ հարիւր քառասունութ թուականին: Նրան թաղեցին իր նախնիների գերեզմանատանը՝ Մոդիիմում, եւ ամբողջ Իսրայէլը մեծապէս սգաց նրան:

ՄԱԿԱԲԻՆ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ՋՕՐԱՊԵՏ

3 Նրան փոխարինեց Մակաբէ մականուամբ Յուդան՝ նրա որդին: 2 Նրան աջակից եղան իր բոլոր եղբայրները եւ բոլոր նրանք, ովքեր իր հօր հետեւորդներն էին: Նրանք յանուն իսրայէլացիների պատերազմ էին մղում խինդով եւ ուրախութեամբ:

3 Մեծ էր Մակաբէի փառքը ժողովրդի վրայ:

Նա զինուեց իբրեւ մի հսկայ,

պատերազմի զրահ հագաւ,

մեծամեծներին պատերազմի էր առաջնորդում

եւ իր նիզակով հովանի լինում իր զօրագնդերին:

4 Իր գործերով նա նմանուեց առիւծի

ու որսի վրայ մռնչացող առիւծի ձագի:

5 Հետապնդելով հալածեց նա անօրէններին,

կրակի մատնեց իր ժողովրդին անհանգստացնողներին:

6 Անօրէնները սարսափեցին նրա ահից,

ովքեր սատար էին անօրէնութեան, խուճապի մատնուեցին.

նրա շնորհիւ ձեռք բերուեց փրկութիւն:

7 Նա բազում թագաւորների դառնութիւն պատճառեց,

իր գործերով ուրախացրեց Յակոբի տունը,

դրա համար էլ նրա յիշատակը յաւիտեանս օրհնութեամբ է մնալու:

8 Նա յարձակւում էր Հրէաստանի քաղաքների վրայ,

կոտորում այնտեղ գտնուող ամբարիշտներին,

որպէսզի վերացնի Իսրայէլի վրայ իջած բարկութիւնը:

9 Նա հաւաքում էր ցրուած մարդկանց եւ գտնում կորածներին:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

10 Այս դէպքերից յետոյ Ապոլոնիոսը հեթանոսներից զօրք հաւաքեց, զէնքի կոչեց նաեւ բազմաթիւ շամրտացիների†, որպէսզի պատերազմի Իսրայէլի դէմ: 11 Երբ դա իմացաւ Յուդան, ընդառաջ ելաւ Ապոլոնիոսին եւ խփեց-սպանեց նրան, նրա զինուորներից շատերին վիրաւորելով կոտորեց, իսկ մնացածներին փախուստի մատնեց, 12 աւարի ենթարկեց նրա ունեցուածքը: Յուդան առաւ Ապոլոնիոսի սուսերն ու իր ամբողջ կեանքում դրանով կռուեց նրանց զօրքերի դէմ: 13 Երբ ասորեստանցիների զօրքերի իշխան Նրէնը լսեց, որ Յուդան զօրք է հաւաքել, եւ բազմաթիւ հաւատացեալներ պատերազմի են գալիս նրա հետ, 14 ինքն իր մէջ մտածեց եւ ասաց.

†Երրայերէնում՝ սամարացիների:

«Ես էլ անուն վաստակեմ ու փառքի տիրանամ իմ արքայութեան մէջ: Պատերազմ մղեմ Յուդայի դէմ եւ պարտութեան մատնեմ նրանց, ովքեր անարգում են թագաւորի հրամանը»: 15 Նա կրկնապատիկ զօրք հաւաքեց: Նրան օգնութեան հասան անօրէնների բազմաթիւ զօրքեր, որպէսզի յարձակուեն ու վրէժ լուծեն իսրայէլացիներից: 16 Նա եկաւ հասաւ մինչեւ Բեթորի կողմերը: Յուդան նրան ընդառաջ գնաց սակաւաթիւ մարդկանցով: 17 Երբ նրանք տեսան, որ գունդ է գալիս իրենց դէմ ճակատելու, Յուդայի մօտ եղած մարդիկ սկսեցին խօսել ու ասացին. «Ինչպէ՞ս կարող ենք մենք սակաւաթիւ մարդկանցով մարտնչել այդքան բազմամարդ բանակի դէմ, մանաւանդ որ թոյլ ու տկար ենք, որովհետեւ արդէն քանի օր է, ինչ քաղցած ենք»: 18 Յուդան սկսեց նրանց քաջալերել ու ասաց. «Աստծու համար դիւրին գործ է շատ մարդկանց մատնել քչերի ձեռքը: Երկնաւորի համար տարբերութիւն չկայ շատի ու քչի միջեւ, 19 որովհետեւ յաղթանակը ձեռք է բերւում ոչ թէ շատ զօրքով, այլ այն զօրութեամբ, որ երկնքից է գալիս: 20 Նրանք մեզ վրայ են գալիս ամբարտաւան գոռոզութեամբ եւ անօրէնութեամբ, որպէսզի կոտորեն մեզ եւ մեր կանանց ու երեխաներին գերեւարեն: 21 Մենք մարտնչում ենք յանուն մեր անձերի ու յանուն մեր օրէնքների, 22 եւ Տէրը նրանց սատակեցնելու է մեր ոտքերի առաջ: Գօտեպնդուեցէ՛ք, քա՛ջ եղէք, մի՛ վախեցէք»:

23 Հազիւ էր նա իր խօսքերը վերջացրել, որ յարձակուեց գնդի վրայ, կոտորեց այն թեւը, ուր կազմ ու զինավառ կանգնած էր Նրէն իշխանը, հալածական արեց բանակն այդ վայրից եւ նրան ու ողջ զօրքը փախուստի մատնեց: 24 Նրանք հետապնդեցին դրանց մինչեւ Բեթորի դաշտի կողմերը, շատերին վիրաւորելով դիաթաւալ գետին տապալեցին: Դրանցից մօտաւորապէս ութ հարիւր մարդ ընկաւ, իսկ մնացածները փախուստի դիմեցին դէպի Փիլիստիիմ: 25 Յուդան ու իր եղբայրները ահ ու սարսափ էին տարածել. այնուհետեւ նրանք որոշեցին ասպատակել իրենց շրջակայքում գտնուող հեթանոսների երկրները: 26 Նրա համբաւը հասաւ թագաւորին, որովհետեւ հեթանոսները պատմում էին նրա պատերազմների մասին:

ԱՆՏԻՈՔՈՍ ԿԱՅՍՐԸ ԼԻՍԻԱՍԻՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ Է ԿՈՐԾԱՆԵԼ ԻՍՐԱՅԷԼԸ

27 Երբ այս դէպքերի մասին լսեց Անտիոքոս կայսրը, խիստ զայրացաւ: Նա իր բոլոր երկրներից զօրք հաւաքելով՝ շատ մեծ բանակ կազմեց: 28 Նա բաց արեց գանձատունը, զինուորներին մէկ տարուայ պարգեւներ բաշխեց եւ պատուիրեց նրանց, որ պատրաստ լինեն ամէն ինչի: 29 Երբ տեսաւ, որ գանձատունը դատարկուել է, եւ նուազել է երկրի հարկը այն երկպառակութեան եւ հարուածների պատճառով, որ նա հասցրել էր երկրին, եղծել նախնիների օրէնքները, որ սահմանուած էին վաղ ժամանակներից, 30 Անտիոքոսը զարհուրեց, որ գուցէ նուէրներն ու ոռճիկները բաւական չլինեն առաջուայ նման առատաձեռնօրէն բաժանելու համար: 31 Եւ նա վարանեց: Մտածեց մտնել Պարսից աշխարհը, երկրի հարկը հաւաքել այնտեղից, շատ արծաթ կուտակել: 32 Նա այնտեղ թողեց Լիւսիասին՝ թագաւորական տոհմից մի հռչակաւոր մարդու, իբրեւ Եփրատի կողմերի ու եգիպտացիների սահմանների արքունի գործերի վերակացու, 33 որպէսզի սա դաստիարակի իր որդի Անտիոքոսին, մինչեւ որ ինքը վերադառնայ այնտեղից: 34 Նա նրա մօտ թողեց զօրքի կէսն ու փղերը եւ կարգադրեց նրան անել այն ամէնը, ինչ ինքը կամենում էր ու ինչ ինքը խորհել էր ե՛ւ Հրէաստանի բնակիչների, ե՛ւ Երուսաղէմի մասին: 35 Նա նրանց համար գումարտակ յատկացրեց, որ կոտորի նրանց, բնաջինջ անի Իսրայէլի զօրքն ու Երուսաղէմի մնացած բնակիչներին, այնտեղից ջնջի նրանց յիշատակը, 36 այնտեղ, նրանց բոլոր սահմաններում, բնակեցնի օտարազգիների որդիներին եւ չափած

հողակտորների բաժանի նրանց ողջ երկիրը: 37 Ինքը վերցրեց զօրքի միւս կէսը եւ հարիւր քառասուն թուականին Անտիոքից՝ իր թագաւորանիստ քաղաքից շարժուեց, անցաւ Եփրատ մեծ գետն ու գնաց վերին գաւառների կողմերը:

ԼԻՍԻԱՍԻ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ Է ՀՐԷԱՍՏԱՆ

38 Լիւսիասն ընտրեց Պտղոմէոսին՝ Դորիմէնի որդուն[†], Նիկանորին եւ Գորգիասին, որոնք արքայի հզօր բարեկամներն ու խորհրդականներն էին, 39 նրանց յանձնեց քառասուն հազար հեծեալ եւ եօթը հազար բուած ձի[‡], որպէսզի, թագաւորի հրամանի համաձայն, յարձակուեն Հրէաստան երկրի վրայ, աւերեն, քանդեն այդ աշխարհը, կործանեն երկիրը: 40 Նրանք իրենց ամբողջ զօրքով եկան ու բանակ դրեցին Ամաուսի մօտակայքում, դաշտավայրի տափարակ մասում: 41 Երբ այդ երկրի վաճառականները լսեցին, որ զօրք է եկել, որպէսզի աւարի մատնի Հրէաստան երկիրը, գերեվարի նրա որդիներին ու դուստրերին, վերցրին իրենց արծաթն ու ոսկին եւ այնքան ձեռնհաս մարդ, որ կարող լինէին օգնել իրենց, որպէսզի գան ու փրկագնեն օտար երկրներում գերի ընկած իսրայէլացիներին: Դրանց միացան նաեւ ասորիների ու այլազգիների երկրների զօրքերը: 42 Երբ Ցուդան ու իր եղբայրները տեսան, որ ամէն տեսակ չարիքներ են կուտակւում իրենց վրայ, եւ այս զօրքն էլ եկել, պաշարուած վիճակում է պահել իրենց սահմանները, երբ նաեւ տեղեկացան ժողովրդին կորստի ու բնաջնջման մատնելու վերաբերեալ թագաւորի հրամանի մասին, սկսեցին իրար հետ խօսել եւ ասացին. 43 «Եկէք սրտապնդուենք, կանխենք մեր ժողովրդի անկումը, պատերազմենք յանուն մեր սրբութիւնների, յանուն մեր ազգի»: 44 Եւ ժողովուրդը պատերազմի պատրաստութիւն տեսաւ, աղօթք արեց ու Տիրոջից ողորմածութիւն խնդրեց:

45 Երուսաղէմն աւերակ ու ամայի էր,

Նրա բնակիչներից չկար ոչ մէկը, որ մտնէր ու ելնէր այնտեղից:

Նրա սրբութիւնները այլազգիների որդիները ոտնակոխ էին անում,

քաղաքի ամրութիւնները հեթանոսների բնակութեան վայր էին դարձել:

Վերացաւ ուրախութիւնը Յակոբի տնից,

պակասեցին շեփորների ու տաւիղների ձայները,

լռեցին երաժշտութեան ցանկալի եւ ուրախ հնչիւնները:

ՀՐԵԱՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

46 Բոլորը եկան հաւաքուեցին Մասեփայում՝ Երուսաղէմի դէմ յանդիման, որովհետեւ իսրայէլացիների աղօթատեղին առաջ Մասեփայում էր: 47 Ծոմ պահեցին, քուրձ ու ցնցոտի հագան, մոխիր ու հող վերցրին, ածեցին իրենց գլխին, պատառոտեցին օձիքները: 48 Բացում էին Օրէնքի մատեանները, որոնց համար հեթանոսները հալածում էին իրենց, 49 բերում էին քահանայութեան զգեստները, բերքի առաջին պտուղներն ու տասանորդներն էին մէջտեղ դնում, հաւաքում ու բերում էին այն ուխտաւորներին, որոնք վերջացրել էին իրենց ուխտի օրերը: 50 Նրանք բարձր ձայնով իրենց խօսքը երկինք էին առաքում՝ ասելով. «Հիմա ի՞նչ անենք սրանց, կամ ո՞ւր տանենք, 51 որովհետեւ քո սրբութիւնները ոտնակոխ են եղել, քո քահանաները նստել են սգի ու տառապանքի մէջ, 52 բոլոր հեթանոսները ահա հաւաքուել են, որ բնաջնջեն մեզ: Դու գիտես, թէ նրանք ինչ են խորհում մեր մասին: 53 Հիմա մենք ինչպէ՞ս կարող ենք դէմ կանգնել, եթէ դու մեզ չօգնես»: 54 Նրանք շեփոր էին փչում, աղաղակ բարձրացնում, բարձր ձայնով դէպի երկինք դիմում:

55 Դրանից յետոյ Ցուդան սկսեց կարգ հաստատել ժողովրդի մէջ: Նա հրամանատարներ՝ հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ նշանակեց նրանց վրայ: 56 Իսկ չէնքեր կառուցողներին, նոր ամուսնացածներին ու այգի տնկողներին ասուեց եւ վախկոտներին էլ պատուէր տրուեց, որ, Օրէնքի համաձայն, իրենց տները վերադառնան: 57 Ամբողջ զօրքը հասաւ ու բանակ դրեց Ամաուսի թիկունքում: 58 Այնտեղից Ցուդան սկսեց քաջալերել զօրքին՝ ասելով. «Զինուեցէ՛ք, պատրաստուեցէ՛ք, գօտեպնդուեցէ՛ք, որ վաղը առաւօտեան պատերազմ մղենք հեթանոսների դէմ, որոնք եկել են բնաջնջելու մեզ ու մեր սրբութիւնները: 59 Աւելի լաւ է մեռնենք պատերազմի դաշտում, քան տեսնենք մեր ազգի ու մեր սրբութիւնների անարգանքը: 60 Ինչ որ է երկնային Տիրոջ կամքը, այդպէս էլ թող կատարուի: 61 Նա թող յիշի մեր հայրերի հետ կնքած ուխտը եւ մեր ոտքերի առաջ թող կոտորի այս զօրքը, 62 որպէսզի հեթանոսները գիտենան, թէ գոյութիւն ունի մէ՛կ Աստուած[†], որ փրկում է Իսրայէլը»:

ԱՄԱՈՒՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

4 12[‡] Այլազգիներն իրենց աչքերը բարձրացրին ու տեսան, որ նրանք յարձակուելով գալիս են իրենց վրայ. 13 եւ նրանք պատերազմելու ելան նրանց գնդերի դէմ: 14 Ցուդայի զինուորները շեփոր հնչեցրին ու մի տեղ հաւաքուեցին: Յարձակուեցին, կոտորեցին, փախուստի մատնեցին, 15 մի մասին տեղում սպանեցին, ոմանց դաշտում սրախողխող արեցին, փախուստի մատնեցին մինչեւ Գազիրոնի սահմանները, եդոմացիների, Ազոտի ու Յամնէի կողմերը: Այդ օրը խոցուած ընկաւ շուրջ երեք հազար մարդ: 16 Ցուդան վերադարձաւ իր զօրքով: Երբ նա եկաւ հասաւ ճակատամարտի վայրը, 17 սկսեց խօսել զօրքի հետ ու ասաց. «Դեռ մի՛ մտածէք ընկած դիակները կողոպտելու մասին, 18 որովհետեւ ահա Գորգիասը սպառազինուած իր զօրքով կանգնած է մեր դէմ: Դիրքե՛ր բռնեցէք, կանգնեցէ՛ք ձեր թշնամիների դէմ, իսկ մարտի յաղթանակից յետոյ համարձակ կերպով կողոպտեցէ՛ք նրանց»: 19 Երբ նա այս խօսքերն էր ասում, տեսան, որ մի գունդ երեւաց լերան կողմից: 20 Գնդի մարդիկ մտածեցին, որ իսրայէլացիները պարտութեան մատնուելով կրակ են գցել ճամբարի մէջ, եւ բարձրացող ծուխը կատարուած դէպքի նշան է: 21 Երբ սրանք դա տեսան, կանգ առան՝ մանաւանդ նկատելով, թէ Ցուդայի գունդը ինչպէս էր պատրաստուած ճակատամարտ տալու համար: 22 Սրանք վեր կացան ու փախան Փղշտացիների երկիրը: 23 Ցուդան վերադարձաւ ճակատամարտի վայրը, որպէսզի կողոպտի ընկած դիակները: Նա նրանց բանակից վերցրեց ոսկի ու արծաթ, թանկարժէք զգեստներ, կարմիր, կապուտակ, ծովագոյն կտորեղէն, մեծ հարստութիւն: 24 Երբ այնտեղից վերադարձան, սկսեցին գոհութիւն մատուցել, օրհնել երկնային Տիրոջն ու ասել. «Նա բարի է, յաւիտենական է նրա ողորմածութիւնը»: 25 Եւ Իսրայէլն այդ օրը մեծ փորձանքից ազատուեց:

26 Այլազգիներից ովքեր այս անգամ փրկուել էին, եկան պատմեցին Լիւսիասին այն ամէնը, ինչ կատարուել էր: 27 Երբ դա լսեց Լիւսիասը, տրտմեց ու երեսի վրայ ընկաւ գետին, որովհետեւ իսրայէլացիների վերաբերեալ իր ցանկութիւնը չէր կատարուել այնպէս, ինչպէս ինքն էր մտածել. չէր կատարուել այն, ինչ պատուիրել էր իրեն թագաւորը:

ԼԻՍԻԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

28 Յաջորդ տարի նա մօտ վեց հազարանոց[†] հետեւակ զօրք հաւաքեց, հինգ հազարանոց սպառազինուած հեծեալ այրուձի կազմեց, որպէսզի գայ, կողոպտի Հրէաստան երկիրը: 29 Եկան, հասան, ճակատամարտ տուեցին Բեթսորի կողմերում: Ցուդան նրան

[†]Հայերէնում՝ Պարգեւական Պտղոմէոսին:

[‡]Այլ բնագրերում՝ մառասուն հազար հետեւակ եւ եօթը հազար հեծեալ:

[†]Այլ բնագրեր չունեն 61-62 համարները:

[‡]Հայկական այս բնագիրը չունի Դ գլխի 1-11 համարները:

[†]Երրայերէնում՝ վաթսուն հազար:

ընդառաջ եկաւ տասնմէկ հազար մարդկանցով: 30 Երբ տեսան բազմամարդ ու հզօր գունդը, սկսեցին աղօթել, օրհնել Աստծուն եւ ասել. «Տէ՛ր Աստուած, դու ես այն Աստուածը, որ քո ծառայ Դաւթի ձեռքով կոտորեցիր յարձակում գործած հզօր ազգի զօրքերին, Սաւուղի որդի Յովնաթանի ձեռքը մատնեցիր այլազգիների բանակները: 31 Արդ, Իսրայէլի ձեռքով խորտակի՛ր այս զօրքի զօրութիւնը: Թող նօսրանան նրանց զօրքերի՝ հեծեալների ու հետեւակների շարքերը: 32 Սարսա՛փ գցիր նրանց մէջ, հալածի՛ր նրանց գոռոզ զինուորներին, նրանք թող դողան իրենց պարտութիւնը տեսնելով: 33 Կործանի՛ր նրանց, յանձնի՛ր քո սիրելիների սրերի բերանը, որպէսզի քեզ օրհնեն նրանք, ովքեր ճանաչում են քո անունը»:

34 Բանակները բախուեցին միմեանց, եւ այդ ժամանակ իրենց առաջ Լիւսիասի գնդից ընկաւ հինգ հազար հեծեալ: 35 Երբ Լիւսիասը տեսաւ իր գնդի պարտութիւնն ու Յուդայի գնդի քաջութիւնն ու յաղթանակը եւ այն, որ նրանք պատրաստ էին քաջ յաղթողի անուն վաստակելու համար ապրել կամ մեռնել, նահանջեց, գնաց Անտիոքի կողմերը: Դարձեալ նա զօրք հաւաքեց, սպառազինուեց, որպէսզի նորից արշաւի դէպի Հրէաստան:

ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ

36 Յուդան ու եղբայրներն սկսեցին խօսել ժողովրդի հետ ու ասացին. «Ահա մեր թշնամիները ջախջախուեցին մեր ոտքերի առաջ: Եկէք գնանք, մաքրենք սրբարանը, մաքրենք տաճարը, որպէսզի նաւակատիք անենք այնտեղ»: 37 Ողջ ժողովուրդը հաւաքուեց, եկաւ հասաւ Սիոն լեռը 38 եւ տեսաւ, որ սրբարանն աւերուած է, զոհասեղանը՝ պղծուած, դռները՝ հրկիզուած: Գաւիթներում թփեր էին բուսել ինչպէս անտառում կամ մի լերան վրայ, կամարակապ սենեակներն աւերուած էին, ներքնախցերը՝ քանդուած: 39 Նրանք ձեռքները գցեցին օձիքներին, պատառոտեցին պատմուճանները, գլուխներին հող ցանեցին: 40 Թաւալւում էին գետին, շեփոր էին փչում, դէպի երկինք աղաղակ բարձրացնում:

41 Այն ժամանակ Յուդան հրաման տուեց, որ զօրքը հաւաքուի, պաշարի միջնաբերդը՝ մաքրելու համար սրբարանը: 42 Նա ընտրեց անարատ, օրէնքներին հնազանդ քահանաներ եւ մաքրել տուեց սրբարանը: 43 Նրանք հանեցին պղծուած վէմերը, հաւաքեցին մի առանձին տեղ 44 եւ խորհրդի նստեցին թշնամիների պղծած ողջակէզների զոհասեղանի համար, թէ ինչ անեն այն: 45 Քանի որ այն պղծել էին թշնամիները, խորհրդի նստածները որոշեցին քանդել զոհասեղանը, որպէսզի իրենց խիղճը չտանջի ու յաւիտենական նախատինք չլինի: 46 Նրանք քանդեցին զոհասեղանը, քարերը տարան դրեցին յարմար մի տեղ, մինչեւ կը գար մի մարգարէ ու իր խօսքը կ'ասէր դրանց մասին: 47 Նրանք, ինչպէս սահմանուած է Օրէնքով, վերցրին անկոփ քարեր, 48 կառուցեցին սրբարանը ու այն ամէնը, ինչ պէտք է լինէր տաճարի ներսում, եւ մաքրեցին գաւիթները: 49 Պատրաստեցին սրբութեան նոր սպասքներ, ներս տարան լոյսի աշտանակը, խնկերի սեղանը, տաճարի սեղանը: 50 Զոհասեղանի վրայ խունկ ծխեցին, վառեցին ճրագները եւ լուսաւորեցին տաճարը: 51 Սեղանի վրայ դրեցին հանապազօրեայ հացը, կախեցին վարագոյրները եւ արեցին այն բոլոր արարողութիւնները, որ պէտք է կատարէին:

52 Հարիւր քառասուն թուականի իններորդ ամսի քսանհինգերորդ օրուայ առաւօտեան վաղ վեր կացան, 53 ըստ Օրէնքի զոհ մատուցեցին այդ ժամանակ նոր կառուցուած ողջակէզների սեղանի վրայ: 54 Այն նոյն օրը, որ հեթանոսները պղծել էին զոհասեղանը, տարուայ այդ նոյն օրն էլ այն նորոգուեց օրհնութեան երգերով, շեփոր, քնար ու սրինգ հնչեցնելով: 55 Ողջ ժողովուրդն ընկաւ երեսի վրայ, խոնարհուեց, երկրպագութիւն արեց, օրհնեց իրենց գործին յաջողութիւն

պարգեւած երկնային Աստծուն: 56 Ութ օր նրանք կատարեցին զոհասեղանի նաւակատիքը, ուրախութեամբ ողջակէզներ, փրկութեան ու օրհնութեան զոհեր մատուցեցին: 57 Տաճարի ճակատը, կամարակապ դահլիճը ու ներքնախցերը† զարդարեցին ոսկէ պսակներով ու ոսկէ ճարմանդներով, նորոգեցին դարպասները, տեղադրեցին դռները: 58 Ժողովուրդը խիստ մեծ ուրախութեան մէջ էր, որովհետեւ իրենց վրայից ջնջուում էր թշնամու հասցրած նախատինքը: 59 Յուդան, իր եղբայրներն ու իսրայէլացի ողջ ժողովուրդը որոշեցին, որ զոհասեղանի նաւակատիքի այս օրերը ամէն տարի ութ օր ուրախութեամբ ու ցնծութեամբ նշուեն նոյն այդ ժամանակ՝ իններորդ ամսի քսանհինգերորդ օրը, տարուայ վերջում:

60 Այդ ժամանակ նրանք Սիոն լերան շուրջը կառուցեցին բոլորշի բարձր պարիսպներ, ամուր աշտարակներ, որպէսզի հեթանոսները չգան, ոտնակոխ չանեն այդ վայրը, ինչպէս արել էին առաջ: 61 Յուդան այդտեղ պահապան զօրք թողեց, ամրացրեց Բեթսուրան, որպէսզի եդոմայեցիների կողմից զօրքն ապահով պատնէշ ունենայ:

ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ Է ՀԱՐԵՒԱՆ ՑԵՂԵՐԻ ԴԷՄ

5 Երբ շրջակայքի հեթանոսները լսեցին, որ զոհասեղանը նորից են շինել ու սրբարանը վերականգնել առաջուայ պէս, խիստ զայրացան: 2 Որոշեցին գալ, բնաջնջել իրենց մօտ բնակուող ցակոբի ցեղը եւ սկսեցին սպանել ու կոտորել նրանց: 3 Յուդան միշտ պատերազմ էր մղում Եսաւի որդիների՝ եդոմայեցիների եւ ակրաբատացիների դէմ, որովհետեւ սրանք եկել էին ու Իսրայէլը պաշարելով նստել: Նա ծանր հարուածներ հասցրեց նրանց, ընկճեց նրանց եւ կողոպտեց նրանց ունեցուածքը: 4 Նա յիշեց Բեանի ցեղի չարագործութիւնները. նրանք գայթակղութեան որոգայթ էին դառնում ժողովրդի համար, դարանակալում էին նրանց ճանապարհներին: 5 Յուդայից փախչելով՝ նրանք ամրացան իրենց բերդերում, բայց նա եկաւ, շրջապատեց նրանց, հրդեհեց նրանց բերդերը բոլոր բնակիչներով հանդերձ: 6 Ինքն այնուհետեւ յարձակուեց ամոնացիների վրայ, բայց այնտեղ նա պատահեց մի հզօր ձեռքի՝ բազմաթիւ զօրքերի ու նրանց զօրագլուխ Տիմոթէոսին: 7 Նրանք բախուեցին իրար: Նրանք բազմիցս էին պատերազմել միմեանց դէմ: 8 Նա հարուածեց, վանեց նրանց, գրաւեց Ազեր քաղաքն ու նրա շրջակայքի գիւղերը եւ վերադարձաւ Հրէաստան: 9 Հրեաների դէմ հաւաքուեցին իրենց մօտիկ՝ Գաղաադում բնակուող բոլոր հեթանոսները, որպէսզի բնաջնջեն իրենց կողմերում գտնուող հրեաներին: Հրեաները փախուստի մատնուելով՝ ընկան Դոթայիմում գտնուող բերդերը: 10 Նրանք բանագնացներ ուղարկեցին Յուդայի ու նրա եղբայրների մօտ եւ ասացին. «Ահա մեզ վրայ են յարձակուել բոլոր հեթանոսները: Նրանք շրջապատել են մեզ եւ ուզում են մեզ բնաջնջել այստեղ: 11 Նրանք պատրաստում են գրաւել այն բերդերը, ուր մենք պատսպարուել ենք: Նրանց զօրագլուխը Տիմոթէոսն է: 12 Արդ, եթէ քո ձեռքին հնար կայ, շտապի՛ր փրկել մեզ նրանց ձեռքից, 13 որովհետեւ մեզանից շատերն են սպանուել, Տոբայում գտնուող մեր բոլոր եղբայրները կոտորուել են, նրանց կանայք ու որդիները՝ գերեվարուել: Իրենց ունեցած-չունեցածով առհասարակ կորել է այդ կողմերում այնքան մարդ, որչափ լինում է մի հազարապետի իշխանութեան տակ»:

14 Դեռ նամակն իրենց ձեռքին էր, որ գալիլիացիների կողմից օձիքները պատառոտուած, ճակատները պատռուած գուժկաններ հասան: Սրանք գուժելով յայտնեցին. 15 «Պտղոմէոսի, Տուրի ու Տայդանի կողմից մեզ վրայ են յարձակուել Գալիլիայի բոլոր կողմերի այլազգիները, որպէսզի մեզ բնաջնջեն այնտեղ»: 16 Երբ դա

†Յունարէնը այս համարում չունի կամարակապ դահլիճը ու ներքնախցերը բառերը:

լսեցին Յուդան ու ժողովուրդը, անմիջապէս խորհրդի հաւաքուեցին, որպէսզի որոշեն, թէ ինչ ձեռնարկեն՝ փրկելու համար իրենց եղբայրներին, որոնք նեղութեան մէջ էին եւ տառապում էին պատերազմողների ձեռքին: 17 *Յուդան սկսեց խօսել իր եղբայր Շմաւոնի հետ ու ասաց. «Ընտրի՛ր կորիճ տղամարդկանց ու գնա՛ Գալիլիայի կողմերում նեղութեան մէջ գտնուող մեր եղբայրներին փրկելու, իսկ ես ու իմ եղբայր Յովնաթանը կը գնանք Գաղաադի կողմերը»:*

18 *Նա Զաքարիայի որդի Յովսեպոսին ու զօրագլուխ Զաքարիային յանձնեց ընտիր զօրքեր, որպէսզի սրանք պահպանեն Հրէաստան երկիրը:* 19 *Նա պատուիրեց նրանց ու ասաց. «Կը ղեկավարէք այս ժողովրդին, բայց մինչեւ մեր այնտեղից վերադառնալը ոչ մի ճակատամարտ չտաք հեթանոսների դէմ»:* 20 *Զօրք հաւաքեցին ու այն բաժանեցին երկուսի միջեւ: Երեք հազարը Շմաւոնի հետ գնաց Գալիլիայի կողմերը, իսկ ութ հազարը՝ Գաղաադի երկիրը:*

ՇՄԱՒՈՆԻ ԵՒ ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

21 *Շմաւոնը գնաց Գալիլիացիների երկիրը եւ պատերազմեց հեթանոսների դէմ: Հեթանոսները կոտորուեցին նրա հարուածներից:* 22 *Նա նրանց հալածեց մինչեւ Պտղոմէոսի դարպասները:* 22 *Այդ օրը հեթանոսներից կոտորուեց երեք հազար սպառազէն զինուոր:* 23 *Նա Գալիլիայի ու Արաբաթի կողմերը մատնեց աւարի, գերեց կանանց՝ իրենց որդիների հետ, գրաւեց բոլոր տներն իրենց կահ-կարասիով ու գանձերով: Նրանք այդ բոլորը մեծ ցնծութեամբ եւ ուրախութեամբ բերեցին Հրէաստան երկիր:*

24 *Յուդա Մակաբայեցին ու նրա եղբայր Յովնաթանն անցան Յորդանան գետի միւս ափը եւ երեք օրուայ ճանապարհ կտրեցին անապատով:* 25 *Խաղաղութեամբ նրանց առաջ ելան նաբատացիները եւ պատմեցին Գաղաադի երկրում իրենց եղբայրների հետ կատարուած դէպքերի մասին,* 26 *թէ ինչպէս իրենցից շատերը արգելափակուած են եղել Բոսոր, Բոսալում, Մակեդիայի Սեփոր եւ Զառնասպասի քաղաքներում: Այս քաղաքներն ամուր էին ու մեծ:* 27 *Ցայտնեցին նաեւ, որ Գաղաադի կողմի միւս քաղաքները նոյնպէս պաշարուած են, որ նրանք հաւաքուել են մի տեղ, պայմանաւորուել, որ վաղն ելթ շրջապատեն բերդերը, գրաւեն, բոլորին սպանեն, բնաջնջեն մէկ օրում:* 28 *Երբ դա լսեց Յուդան, անմիջապէս մի զօրագունդ կազմեց ու բռնեց անապատի ճանապարհը: Նա շտապ արշաւեց դէպի Բոսոր, յանկարծակի, անսպասելի մի ժամի գրաւեց ողջ քաղաքը: Ինքն այնտեղ իր սուր սուսերով սպանում էր բոլոր երիտասարդներին, բռնագրաւում բոսորացիների քաղաքի ողջ գոյքը եւ ամբողջ քաղաքը կրակի մատնում,* 29 *իսկ գիշերը ինքն իր զօրագնդով դիմում էր պաշարուած բերդերի կողմը:* 30 *Երբ գիշերն անցնում, եւ առաւօտը բացուելու վրայ էր, նրանք բարձրացրին իրենց աչքերը եւ անթիւ-անհամար զօրքեր տեսան, որոնք բերում էին սանդուղքներ, ռազմական մեքենաներ եւ այլ յարմարանքներ, որպէսզի բերդերի վրայ բարձրանան, կռիւ տան, պատերազմի մէջ մտնեն:* 31 *Երբ Յուդան այդ կողմը նայեց, տեսաւ, որ մարտն սկսուած է: Այնտեղ՝ աղաղակող քաղաք, այստեղ՝ շրջապատող զօրքեր: Կռուի աղմուկը, պատերազմի շառաչը, շեփորի կանչը՝ այս ամէնը երկինք էին հասնում:* 32 *Նա իր զօրքին դիմելով՝ ասաց. «Ապա, զգաստացէ՛ք, պի՛նդ կացէք: Ձեր գործը այսօր մարտնչելն է եղբայրների համար»:*

33 *Նա ամբողջ զօրքը բաժանեց երեք գնդի եւ նրանց շրջապատելով կռուի պատրաստուեց: Շեփոր հնչեցրին, քաջալերեցին միմեանց, աղօթքներով Աստծուն դիմեցին ու յարձակման անցան:* 34 *Տիմոթէոսին ու իր զօրքին իմաց տուեցին, թէ Մակաբէն զօրքով յարձակում է գործել: Երբ սրանք տեսան դա, շփոթուեցին, խուճապի մատնուեցին, ընկրկեցին, լքեցին բոլոր*

մեքենաներն ու փախուստի դիմեցին: Նա այդ օրը սաստիկ մեծ հարուած հասցրեց նրանց, հետապնդեց նրանց, մէկը միւսի յետեւից դիաթաւալ արեց, սրախողխող արեց մօտ ութ հազար սպառազէն զինուոր:

35 *Ապա շուռ եկաւ Մայափի կողմը, ճակատամարտ տուեց դրա շրջակայքում, գրաւեց այն, սպանեց այդտեղի բոլոր երիտասարդներին, բռնագրաւեց նրանց կայքն ու ունեցուածքը եւ քաղաքն էլ հրի մատնեց:* 36 *Այնտեղից շարժուեց, եկաւ պաշարեց Մակեդիայի Քասփօ եւ Բոսոր քաղաքները, ինչպէս նաեւ Գաղաադի մնացած քաղաքները:*

37 *Որոշ ժամանակ անց Տիմոթէոսը դարձեալ զօրք հաւաքեց, եկաւ բանակ դրեց Ռափոնի դիմաց, գետի այն կողմում:* 38 *Յուդան հետախոյզներ ուղարկեց, որպէսզի հետախուզեն նրանց բանակները: Եկան, պատմեցին ու ասացին. «Խիստ համախմբուած են մեր շրջապատում բնակուող բոլոր ցեղերն ու ազգերը: Նրանք շատ մեծ զօրք են կուտակել:* 39 *Նրանք, իբրեւ օգնական, բազմաթիւ արաբներ են վարձել, բանակ դրել գետի այն կողմում եւ պատրաստուում են գալ, յարձակուել քեզ վրայ»: Երբ դա լսեց Յուդան, անմիջապէս ի՛նքը նախայարձակ եղաւ:* 40 *Երբ Տիմոթէոսը տեսաւ դա, սկսեց խօսել իշխանների հետ ու ասաց. «Երբ նա կը հասնի գետի ափին, ուշադի՛ր եղէք Յուդայի ու նրա գնդի նկատմամբ: Եթէ նա հասնի ու միանգամից անցնի գետը, ապա մենք չենք կարող դէմ կանգնել նրան, որովհետեւ նա մեզ անպայման կը յաղթի,* 41 *իսկ եթէ հասնի գետի ափին ու բանակ դնի այնտեղ, նշանակում է՝ վախենում է: Այդ դէպքում մենք կ'անցնենք գետը, մարտի մէջ կը մտնենք ու կը յաղթենք նրան»:* 42 *Հազիւ էր նա իր խօսքը վերջացրել, որ Յուդան զօրքով հասաւ գետի ափը: Այնտեղ, գետի ափին, նշանակեց գրագիրներ եւ նրանց պատուիրեց, որ ոչ ոքի թոյլ չտան բանակ դնել գետի ափին, այլ պատերազմող ամէն մի մարդ շեփորի ձայնով իրար յետեւից առաջ ընթանայ:* 43 *Ինքը միանգամից հասաւ, անցաւ գետը ու յարձակուեց. նախ առաջապահ գունդը տեղում ջարդեց, ամբողջ զօրքը փախուստի մատնեց, իսկ բոլոր ցեղերն ու ազգերը, զէնքերը նետելով, փախան-գնացին բերդի կողմը՝ Կառնայինի մեհեանին նուիրուած վայրը:* 44 *Սրանք եկան, հասան, պաշարեցին քաղաքը, հրդեհեցին բերդը մեհեանով հանդերձ: Կառնայինը ընկճուեց, չկարողացաւ դիմադրել Յուդային:*

45 *Յուդան հրաման տուեց տեղափոխել Գաղաադի կողմերում ապրող բոլոր հրեաներին իրենց բոլոր կանանցով, երեխաներով, կահ-կարասիով ու բերել, հասցնել Հրէաստան երկիրը:* 46 *Դա մեծաթիւ մի բազմութիւն էր: Նրանք եկան-հասան Եփրոն քաղաքի դարպասին: Սա ճանապարհի վրայ, ամուր մի վայրում գտնուող մի մեծ քաղաք էր, եւ իրենք աջ կամ ձախ շեղուելու ուրիշ ճանապարհ չունէին, այլ միայն քաղաքի միջով պիտի անցնէին:* 47 *Երբ քաղաքում գտնուող զօրքերը տեսան զինուորներին ու զօրքի բազմութիւնը, դարպասները փակեցին, դռների յետեւը քարեր լցրին եւ թոյլ չտուեցին, որ նրանք անցնեն քաղաքի միջով: Երբ Յուդան տեսաւ դա, խաղաղութեան առաջարկով դիմեց նրանց եւ ասաց.* 48 *«Թո՛յլ տուէք, որ անցնենք ձեր երկրով: Թողէ՛ք անցնենք, գնանք մեր երկիրը: Մենք ձեզ ոչ մի վնաս չենք պատճառի, միայն մեր ոտքերը կ'անցնեն ձեր հողի վրայով»: Նրանք չհամաձայնեցին բանալ դարպասները:*

49 *Այն ժամանակ Յուդան հրամայեց շեփոր հնչեցնել, ճառ արտասանեց ու ասաց. «Այժմ թող ամէն մի գունդ, որտեղ որ կանգնել է, այդտեղով էլ թող ներս մտնի»:* 50 *Ամէն մի գունդ, որտեղ որ կանգնել էր, այդտեղ էլ ճակատամարտ տուեց: Կռուեցին ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշերը, մինչեւ որ քաղաքն անցաւ իրենց ձեռքը:* 51 *Այստեղ նրանք սրակոտոր արեցին բոլոր երիտասարդներին, հիմնայատակ կործանեցին, կողոպտեցին քաղաքը, դիակները կոխոտելով անցան քաղաքի*

միջով: 52 Նրանք Ցորդանան գետի միջով անցան տափարակ մի վայր՝ մի մեծ դաշտ, եւ այնտեղ բանակատեղի դրեցին Բեթսոնի դէմ յանդիման: 53 Այնտեղ նա հոգ տարաւ յետ մնացած ժողովրդի մասին: Ցուդան բոլորին յուսադրում էր: Ճանապարհի ողջ ընթացքում նա այսպէս էր վարւում, մինչեւ որ նրանց բերեց հասցրեց Հրէաստան երկիր: 54 Եկան, հասան, ցնծութեամբ եւ ուրախութեամբ բարձրացան Սիոն լեռը, այնտեղ ողջակէզներ ու զոհեր մատուցեցին, որովհետեւ այնտեղից մինչեւ այստեղ գալը ոչ ոք չէր սպանուել, եւ տեղ էին հասել խաղաղութեամբ:

ՅՈՎՍԵՊՈՍԻ ԵՒ ԱԶԱՐԻԱՅԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

55 Այդ օրերին Ցուդան ու Ցովնաթանը Գաղաադի երկրում էին, իսկ իրենց եղբայր Շմաւոնը Գալիլիացիների երկրում էր գտնուում, Պտղոմէոսի դիմաց: 56 Երբ Զաքարիայի որդի Ցովսեպոսն ու զօրքերի իշխան Զաքարիան լսեցին այդ պատերազմում տարած յաղթութեան մասին, ասացին. 57 «Եկէք մենք էլ գնանք, պատերազմ մղենք մեր շրջակայքում գտնուող հեթանոսների դէմ եւ մենք էլ փառք վաստակենք»: 58 Զօրքերի համար ժամ նշանակեցին, շարժուեցին-գնացին Համնիայի կողմերը: 59 Գորգիոսն իր մօտ գտնուող զօրքով դուրս ելաւ քաղաքից, որ ճակատամարտ տայ: Նրանք բախուեցին միմեանց: 60 Պարտութեան մատնուեցին Ցովսեպոսն ու Զաքարիան եւ հալածական դարձած՝ փախան մինչեւ Հրէաստան երկրի սահմանները: Այդ օրը նրանց զօրքից ընկաւ շուրջ երկու հազար մարդ: Այս աղէտը շատ ծանր նստեց ժողովրդի վրայ, 61 որովհետեւ նրանք չլսեցին Ցուդային ու նրա եղբայրներին, այլ մտածեցին, որ իրենք էլ նրա նման քաջի անուն կարող են վաստակել: 62 Նրանք, սակայն, այն մարդկանց զաւակներից չէին, որոնց միջոցով Իսրայէլը փրկութիւն պիտի ստանար:

63 Ցուդան ինքն ու իր եղբայրները հռչակաւոր դարձան ժողովրդի աչքին, բոլոր հեթանոս ազգերի առաջ: 64 Ուր որ լսում էին նրանց անունները, հաւաքւում էին ու օրհնում նրանց: 65 Ցուդան ելաւ իր եղբայրների հետ, որ պատերազմ մղի հարաւային մասում գտնուող Եսաւի որդիների դէմ: Այնտեղ նա յարձակուեց Քեբրոն քաղաքի ու նրա գիւղերի վրայ, քանդեց, կործանեց նրա բոլոր ամրութիւնները, հրի մատնեց նրա շրջակայքում գտնուող աշտարակները: 66 Նա ելաւ գնաց այլազգիների երկիրը, եկաւ հասաւ Մարիսայի կողմերը: 67 Քաջի անուն վաստակելու համար կռուի ելան բազմաթիւ քահանաներ, բայց նրանք սպանուեցին, որովհետեւ ծանօթ չէին պատերազմ վարելու գործին: 68 Ցուդան շուռ եկաւ Ազոտի կողմը՝ դէպի այլազգիների երկիրը, աւերեց նրանց մեհեանները, կործանեց նրանց կուռքերը, հրի մատնեց նրանց քաղաքները, բռնագրաւեց նրանց կայքն ու ունեցուածքը եւ վերադարձաւ Հրէաստան երկիր:

ԱՆՏԻՈՔՈՍ Դ-Ի ՄԱՀԸ

6 *Անտիոքոս կայսրը գնում էր վերին գաւառները: Նրան տեղեկացրին, որ Պարսից աշխարհի Լիմնէոս քաղաքի կողմերում կայ հռչակաւոր, ոսկով ու արծաթով հարուստ մի քաղաք, 2 այնտեղ գտնուող մեհեանը խիստ հարուստ գանձեր ունի, այնտեղ կան ոսկեձոյլ մեծամեծ կուռքեր, բազում զէնքեր, զրահներ ու պատեաններ, որը թողել էր Ալեքսանդր Մակեդոնացի կայսրը, որ նախ թագաւորել էր Ցունաստանի վրայ, 3 ապա եկել հասել էր այդ քաղաքը եւ ուզում էր գրաւել այն՝ կողոպտելու համար: Երբ դա իմացան քաղաքացիները, 4 պատրաստուեցին ճակատամարտ տալու եւ թոյլ չտուեցին, որ նա քաղաք մտնի: Ալեքսանդրը վախեցաւ ու արեւելեան կողմերից գնաց Բաբելացիների երկիրը:*

5 Հարաւային կողմերից Անտիոքոս կայսեր մօտ գուժկան եկաւ ու յայտնեց, որ Հրէաստանի վրայ յարձակուած զօրքը կոտորուել է, 6 որ բազմաթիւ զինուորներով առաջից

դնացող Լիւսիասը պարտութեան է մատնուել նրանց կողմից, որ նրանք հզօրացել են զէնքերով, զօրքերով, շատ աւար են առել, կոտորել իրենց բանակները, իրենց կայքն ու ունեցուածքը բռնագրաւել, 7 մեհեաններն աւերել, Երուսաղէմում զոհասեղանի վրայ շինուած կուռքերը կործանել, առաջուայ պէս բարձր պարիսպներով փակել սրբավայրը, դրա հետ նաեւ Բեթսոր քաղաքը:

8 Երբ այս բանը լսեց թագաւորը, խիստ զարմացաւ, շուարեց ու զայրացաւ, անկողին ընկաւ ու հիւանդացաւ, քանի որ չէր կատարուել իր հրամանը: 9 Այնտեղ նա մնաց բազմաթիւ օրեր, որովհետեւ նրա ցաւի տագնապները կրկնուում էին եւ նա կարծեց, թէ մեռնում է: 10 Կանչեց իր բոլոր բարեկամներին ու ասաց. «Քունը կորուել է աչքերիցս: Վախից սիրտս պայթում է: 11 Մտածեցի ու ինքս ինձ ասացի. "Ինչպիսի նեղութիւններ ու բազմաթիւ խռովքներ են պաշարել քեզ այժմ": Կար ժամանակ, որ իմ զօրքի համար ես քաղցր էի, բարերար ու սիրելի: 12 Հիմա յիշում եմ այն չարիքները, որ գործեցի Երուսաղէմում. բռնագրաւեցի ոսկէ ու արծաթէ բոլոր սպասքները, իզուր զօրք հաւաքեցի, որ յարձակուելով բնաջինջ անեմ նրանց: 13 Հիմա հասկանում եմ, որ այդ պատճառով եկան ինձ վրայ այս բոլոր չարիքները, եւ ահա ես տխուր ու տրտում կորչում եմ օտար երկրում»:

14 Նա կանչեց Փիլիպպոսին՝ իր բարեկամներից մէկին, նրան իր ամբողջ թագաւորութեան վերակացու նշանակեց, 15 նրան յանձնեց իր թագը, պատմուճանն ու մատանին, պատուիրեց բերել իր Անտիոքոս որդուն, սնել ու դաստիարակել եւ իր փոխարէն գահին նստեցնել նրան: 16 Անտիոքոս արքան մահացաւ այնտեղ հարիւր քառասունինը թուականին:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

17 Լիւսիասն իմանալով, որ արքան մեռել է, գահին նստեցրեց նրա որդի Անտիոքոսին եւ նրա անունը դրեց Եւպատոր[†] Անտիոքոս: 18 Թշնամի զօրքերից նրանք, որոնք արգելափակուած էին միջնաբերդում, նեղում էին իսրայէլացիներին, սրբարանի շուրջը անընդհատ չարիքներ էին գործում, հեթանոսներին աջակցում, ուստի քաղաքի բնակիչները որոշեցին բնաջնջել նրանց: 19 Այն ժամանակ Ցուդան հաւաքեց բոլոր զօրքերը, 20 որոնք եկան, հաւաքուեցին մի տեղ ու շրջապատեցին նրանց: Նրանք պաշարեցին միջնաբերդը հարիւր յիսուն թուականին. շինեցին բազմաթիւ պատուարներ, նետաձիգ յարմարանքներ ու մեքենաներ: 21 Պաշարուածներից ոմանք դուրս ելան արգելափակոցից ու միացան մի քանի անօրէն իսրայէլացիների: 22 Նրանք գնացին արքայի մօտ ու ասացին. «Մինչեւ ե՞րբ դատաստան չես անելու եւ մեր եղբայրների վրէժը չես լուծելու: 23 Մենք համաձայնել ենք ծառայել քո հօրը եւ կատարել նրա հրամանները: 24 Դրա համար էլ մեր ժողովրդի որդիները նստում էին միջնաբերդի շուրջը. շատերը օտարանում էին մեզանից. ում էլ գտնում էին մեզնից, մահուան էին դատապարտում, յափշտակում մեր ունեցուածքը: 25 Նրանք ձեռք բարձրացրին ոչ միայն մեզ վրայ, այլեւ իրենց բոլոր սահմաններում բնակուողների վրայ: 26 Այժմ էլ եկել պաշարել են մեզ, փակել եւ շրջապատուած վիճակում են պահում Երուսաղէմի միջնաբերդը, որպէսզի գրաւեն այն, ինչպէս եւ սրբարանը: Անգամ ամրացրել են Բեթսորը: 27 Եթէ չշտապէք, սրանից աւելի վատ գործեր կ'անեն, եւ դուք այլեւս առաջն առնել չէք կարող»:

ԲԵԹՍԱԿԱՐԻԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

28 Երբ դա լսեց թագաւորը, խիստ բարկացաւ, հրամայեց կանչել իր բարեկամներին ու զօրքի վրայ նշանակուած զօրապետներին: 29 Այլ թագաւորութիւնից ու այլ կղզիներից նրա մօտ եկան բազմաթիւ վարձկան

[†] Գրաբար բնագրում՝ Անտիոքոս Հօրամոյն, այսինքն՝ ազնիւ հօր որդի:

զինուորներ: 30 Նրա զինուորների թիւը հասաւ հարիւր հազար վահանակիր ու նիզակաւոր հետեւակի, քսան հազար սպառազէն հեծեալի, երեսուներկու զինուած, մարտական փղերի: 31 Եկան, անցան Եդոմի միջով, ճակատ կազմեցին, շրջապատեցին Բեթսոր քաղաքը եւ դրա շրջակայքում պատերազմեցին բազմաթիւ օրեր: Շուրջանակի դասաւորեցին ռազմական սարքերն ու մեքենաները, բայց պաշարուածները դուրս եկան քաղաքից, այրեցին մեքենաները եւ քաջաբար մարտի ելան նրանց դէմ: 32 Յուդան ամրոցից շարժուեց գնաց միջնաբերդ, եկաւ բանակ դրեց Բեթսակարիայում, արքայի բանակի դէմ յանդիման: 33 Թագաւորն առաւօտեան կանուխ վեր կացաւ, բանակը տարաւ տեղաւորեց Բեթսակարիայի ճանապարհի երկարութեամբ եւ զօրքերը դասաւորելով՝ պատրաստուեց ճակատամարտ տալու: 34 Փող փչեցին, փղերին կազմ ու պատրաստ վիճակի բերելու համար խաղողի հիւթ, զմուռս ու գինի խմեցրին, 35 դրանց բաժանեցին առանձին գնդերի, ամէն մի փղի մօտ դրեցին հազար սպառազէն զինուոր, իսկ ամէն մի գնդի գլխին իբրեւ պահապան դրեցին հինգ հազար հեծեալ իրենց սպառազէն նժոյգներով՝ իբրեւ գնդերի պաշտպան, 36 որպէսզի փղերը ուր որ կանգնեն, այնտեղ կանգնեն նաեւ իրենք, եւ ուր որ փղերը գնան, այնտեղ գնան նաեւ իրենք: 37 Փղերի վրայ տեղաւորեցին յարմարանքներ ունեցող վանդակակալ մարտկոցներ, փղապաններին նստեցրին նրանց գլուխներին, 38 գնդի աջ ու ձախ թեւերին տեղաւորեցին մնացած այրուձին:

39 Երբ արեգակն իր առաջին ճառագայթներն արձակեց, լեռների վրայ փայլատակեցին առհասարակ զրահաւոր, պատենաւոր, պղնձապատ վահանների շողերը: Ճառագայթները շողարձակում էին կրակի ցոլքերի նման: 40 Ռազմաճակատը երկարեց, ստուերացաւ մասամբ դէպի լեռների բարձունքները, մասամբ դէպի ձորերը, մասամբ դէպի կիրճերն ու դաշտերը: 41 Միահամուռ կերպով առաջ շարժուեցին առհասարակ բոլոր զինուածներն ու դասաւորուած շարքերը: Լսւում էին բազմութեան աղաղակները, զէնքերի շաչիւնը, ձիերի վրնջիւնը, վահանակիրների ոտքերի դոփիւնը:

42 Յուդան եկաւ հասաւ իր բանակով, դասաւորեց գնդերը, պատրաստուեց, յարձակուեց, դէմ յանդիման բախուեց Թագաւորի բանակին, նոյն տեղում, Թագաւորի աչքի առաջ վեց հարիւր սպառազէն հեծեալների դիաթաւալ արեց: 43 Այդ տեղում Եղիազար Աւարանը† աչքերը վեր բարձրացնելով տեսաւ, որ զարդարուած ու զինավառ փղերից մէկը արքայական զէնք է կրում եւ տարբերւում է միւսներից: Կարծեց, թէ արքան հէնց դրա վրայ է, 44 յարձակուեց այդ գնդի վրայ, աջ ու ձախ կոտորեց, գնաց հասաւ մինչեւ տարբերանշաններ ունեցող փղին, 45 վերցրեց զէնքը, մտաւ փղի տակ, հարուածեց ու տապալեց նրան: 46 Փիղը տապալուեց, ընկաւ նրա վրայ ու ճզմեց նրան:

47 Երբ հրեաները տեսան Թագաւորի բանակի ուժը, խոյս տուեցին նրանցից, 48 սակայն ուր էլ գնում էին, նրանց ընդառաջ էին գալիս արքունի գնդերը, մինչեւ որ եկան հասան Երուսաղէմի կողմերը:

ՍԻՈՆ ԼԵՐԱՆ ՊԱՇԱՐՈՒՄԸ ԵՒ ԲԵԹՍՈՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Արքան եկաւ, բանակ դրեց Հրէաստանի ու Սիոն լերան մօտ: 49 Նա խաղաղութիւն առաջարկեց Բեթսոր քաղաքին: Նրանք ելան ցրուեցին այդ քաղաքից, որովհետեւ այնտեղ պաշար չունէին երկար ժամանակ շրջափակուած լինելու պատճառով: Բացի այդ, երկրում հանգստեան տարի էր: 50 Թագաւորը գրաւեց Բեթսոր քաղաքը եւ հրամայեց քաղաքում պահապան զօրք թողնել, 51 իսկ ինքը երկար ժամանակ պաշարուած պահեց սուրբ քաղաքը: Նրա շուրջը կանգնեցրել էին մարտական սարքեր ու մեքենաներ, կրակ

†Այլ բնագրերում՝ Աւարանի որդի Եղիազարը:

նետող յարմարանքներ, քարընկեցներ, քարագնդեր, բաբաններ, նետաձգութեան աշտարակներ ու պարսատիկաւորների աշտարակներ: 52 Սրանք էլ իրենց կողմից քաղաքում սկսեցին նրանց ամէն մի յարմարանքի դիմաց մի յարմարանք տեղաւորել: Ճակատամարտ տալով կուռւում էին շատ օրեր: 53 Մթերքը պակասեց, որովհետեւ եօթներորդ տարին էր, ինչ երկրի գաղթականները սպառում էին կուտակուած մթերքները: 54 Քիչ մարդիկ էին մնացել այնտեղ, սրբավայրում, որովհետեւ սովը գնալով սաստկանում էր, եւ ամէն ոք ցրուել էր իր տեղը:

ԱՆՏԻՈՔՈՍ Ե-Ն ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Է ՏԱԼԻՍ ՀՐԵԱՆԵՐԻՆ

55 Լիւսիասը լսեց, թէ Փիլիպպոսը, որին Անտիոքոսն ինքն էր հրամայել սնել ու դաստիարակել իր Անտիոքոս որդուն, որպէսզի նրան գահ նստեցնի, 56 վերադարձել է Պարսկաստանից ու Պարթեւների երկրից, եւ որ ամբողջ զօրքը յարել է նրա կողմը, եւ ինքը կամենում է վերահասու լինել իր երկրի գործերին: 57 Դրա համար նա, գալով, ասաց արքային ու բանակի բոլոր մեծամեծներին. «Զօրքերը միշտ նեղութեան մէջ են, մթերքները նուազել են, կերը պակասել: Այն վայրը, որի համար պատերազմ է մղւում, ամուր է ու ապահով, իսկ մենք գահակալական հոգսերով ենք տարուած: 58 Արդ, եկէք հաշտութեան մասին խօսենք, դաշինք կնքենք, խաղաղութիւն հաստատենք այդ ազգի մարդկանց հետ: 59 Մենք նրանց խոստանանք, որ նրանք իրենց բոլոր օրէնքները կը պահպանեն առաջուայ պէս: Նրանք մեզ վրայ բարկացել են այն բանի համար, որ մենք ստիպեցինք նրանց խախտել իրենց օրէնքները: Դրա համար էր, որ նրանք ընդդիմացան ու այս բոլոր բաներն արեցին»:

60 Թագաւորին ու նրա իշխաններին խոհեմ թուացին այս խօսքերը: Նա բանագնացներ ուղարկեց խաղաղութիւն կնքելու համար: Նրանք ընդունեցին պայմանները, 61 Թագաւորն ու զօրապետները երդումով հաստատեցին իրենց խօսքը, որից յետոյ նրանք դուրս եկան ամրոցներից: 62 Թագաւորը ելաւ Սիոն լեռը, տեսաւ այդ վայրի ամրութիւնը եւ դրժեց իր տուած երդումը. նա հրամայեց քանդել այն շրջապատող պարիսպները: 63 Նա շտապ գնաց Անտիոքի կողմերը եւ տեսաւ, որ Փիլիպպոսը տիրել է քաղաքին: Նա ճակատամարտ տուեց նրա դէմ եւ բռնութեամբ առաւ քաղաքը:

ԴԵՄԵՏՐԻՈՍ ԱՌԱՋԻՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐ

7 Հարիւր յիսունմէկ թուականին Սելեւկիոսի որդի Դեմետրիոսը ելաւ Հռոմ քաղաքից, սակաւաթիւ զինուորներով եկաւ ծովեզերեայ մի քաղաք եւ թագաւորեց այնտեղ: 2 Երբ Անտիոքոսը ցանկացաւ մտնել իր հայրենի թագաւորական տունը, նրան շրջապատեցին բազմաթիւ զինուորներ, ձերբակալեցին Լիւսիասին, իսկ Անտիոքոսին կալուկապ արած բերեցին Դեմետրիոսի մօտ: 3 Երբ Դեմետրիոսին յայտնեցին եղելութիւնը, նա հրաման տուեց եւ ասաց. «Թող իմ աչքը բնաւ չտեսնի նրանց երեսը»: 4 Նրանց վերցրին, զօրքից դուրս տարան ու սպանեցին: Թագաւորական գահին նստեց Դեմետրիոսը: 5 Նրա մօտ եկան իսրայէլացի անօրէն ու ամբարիշտ մարդիկ, որոնց պարագլուխը Յակիմոսն էր: Նա ինքը ձգտում էր քահանայութեան: 6 Սրանք ամբաստանեցին ժողովրդին ու ասացին. «Յուդան լկեց, կործանեց մեզ՝ իր եղբայրներին ու քո բարեկամներին, մեզ հալածեց մեր իսկ երկրից: 7 Արդ, հաւատարիմ մարդի՛կ ուղարկիր, որ գան տեսնեն ազգի չարչարանքները եւ այն հարուածները, որ նա հասցրել է մեզ: Նա է ոչնչացրել արքունի երկիրը, վշտացրել նրա պաշտպաններին»:

ԲԱՔԻԴԷՍԸ ԵՒ ՅԱԿԻՄՈՍԸ ՀՐԷԱՍՏԱՆՈՒՄ

8 Կայսրն ընտրեց արքային սիրելի Բաքիդէսին, որը գետի միւս կողմի իշխանն էր, նրա Թագաւորութեան հաւատարիմ իշխանը: 9 Սրան ու սրա

հետ անօրէն Ցակիմոսին ուղարկեցին, նրան յանձնեցին քահանայութիւնը եւ հրաման տուեցին, որ նա լուծի իսրայէլացիների վրէժը: 10 Բաքիդէսը շարժուեց գնաց եւ այդտեղից բանագնացներ ուղարկեց Ցուդայի ու նրա եղբայրների մօտ, որ խորամանկ խօսքերով խաղաղութեան դաշինք կնքեն: 11 Սրանք չհաւատացին նրանց խօսքերին, որովհետեւ տեսան, որ բազմաթիւ զօրքերով են եկել:

12 Բաքիդէսի ու Ցակիմոսի մօտ հաւաքուեց օրէնսգէտների այն խումբը, որ արդարութիւն էր պահանջում: 13 Իսրայէլացիներից նախ ասիդացիներն էին, որ խաղաղութիւն էին պահանջում, 14 որովհետեւ այսպէս էին մտածում. «Եթէ Ահարոնի զաւակներից մի քահանայ է եկել զօրքի հետ, ուրեմն մեզ վնաս չի պատճառի»: 15 Ցակիմոսը խաղաղութեան խօսքեր ասաց նրանց, երդում տուեց նրանց, թէ՝ «Ո՛չ ձեզ վնաս կը պատճառեմ, ո՛չ ձեր բարեկամներին»: 16 Հաւատացին նրան, բայց նա վաթսուն մարդ վերցրեց նրանցից ու մի օրում սպանեց նրանց ըստ Գրքում գրուած այն խօսքի, թէ՝ 17 «Քո սրբերի մարմինները նետեցին երկնքի թռչուններին, նրանց արիւնը հեղեցին Երուսաղէմի շուրջը, եւ ոչ ոք չկար, որ թաղէր նրանց»: 18 Ժողովուրդն ահ ու սարսափի մէջ ընկաւ, որովհետեւ մտածում էին, որ նրանք ո՛չ իրաւունք են ճանաչում, ո՛չ ճշմարտութիւն, քանի որ դրժեցին իրենց իսկ խոստումն ու երդումը: 19 Բաքիդէսը հեռացաւ Երուսաղէմից եւ եկաւ, բանակ դրեց Բեթսեթում: Նա մարդ ուղարկեց եւ բռնել տուեց բազմաթիւ փախստականների եւ ժողովրդի միջից բազմաթիւ մարդկանց, հրամայեց փողոտել նրանց ու նետել ջրհորների մէջ: 20 Նա երկիրը յանձնեց Ցակիմոսին, Ցակիմոսի մօտ թողեց բազմաթիւ զինուորներ իբրեւ նրան օգնական եւ ինքը գնաց արքայի մօտ:

21 Ցակիմոսը ջանք էր թափում, որպէսզի քահանայապետ դառնար: 22 Նրա մօտ հաւաքուեցին ժողովրդի բոլոր խառնակիչները, նուաճեցին Ցուդայի երկիրը եւ Իսրայէլին մեծամեծ հարուածներ հասցրին: 23 Երբ Ցուդան տեսաւ Ցակիմոսի ու նրա հետ եղող իսրայէլացիների կատարած չարագործութիւնները, 24 չորս կողմից յարձակուեց Հրէաստանի սահմանների վրայ եւ վրէժ լուծեց այն մարդկանցից, որոնք ինքնակամ կերպով հեթանոսներին էին յարել: Դրանից յետոյ նրանք այլեւս Հրէաստան չէին գալիս: 25 Երբ Ցակիմոսը տեսաւ, որ այս անգամ էլ հզօրացաւ Ցուդան, եւ հասկացաւ, որ չի կարող նրան դիմադրել, նորից եկաւ թագաւորի մօտ, որպէսզի չարախօսի նրա մասին:

ՆԻԿԱՆՈՐԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

26 Թագաւորն ուղարկեց Նիկանորին՝ իր հռչակաւոր զօրավարներից մէկին, մանաւանդ որ սա ատելութիւն ու թշնամանք էր տածում Իսրայէլի նկատմամբ: Թագաւորը նրան պատուիրեց, որ բնաջինջ անի այդտեղի ժողովրդին: 27 Նիկանորը եկաւ հասաւ բազմաթիւ զօրքերով եւ նենգութեամբ խաղաղութեան պատգամներ ուղարկեց Ցուդային ու նրա եղբայրներին. 28 «Կռիւ թող չլինի իմ ու ձեր միջեւ: Ես կը գամ սակաւաթիւ մարդկանցով, որ ձեր երեսները տեսնեմ խաղաղութեամբ»: 29 Նա եկաւ Ցուդայի մօտ, նրանք խաղաղութեամբ ողջունեցին միմեանց, մինչդեռ զօրքը դասաւորուել-պատրաստուել էր, որ յարձակուի ու ձերբակալի Ցուդային: 30 Երբ Ցուդան իմացաւ, որ Նիկանորը նենգ մտադրութեամբ է եկել իր մօտ, հոգին տակնուվրայ եղաւ, վրդովուեց, մօտ չեկաւ նրան ու այլեւս չէր ուզում տեսնել նրա երեսը: 31 Նիկանորը հասկանալով, որ իր գաղտնիքը բացայայտուել է, առաջ շարժուեց, որ հանդիպի նրան ու պատերազմի Փարսալայի մօտերքում: 32 Նիկանորի բանակից ընկաւ մօտ հինգ հարիւր մարդ, իսկ մնացածները փախան Դաւթի քաղաքը:

33 Այս դէպքերից յետոյ Նիկանորը եկաւ, բարձրացաւ Սիոն լեռը: Տեղի սրբավայրերի քահանաներից ոմանք բարձրացան նրա մօտ, որպէսզի

խաղաղութեան ողջոյն տան նրան եւ ցոյց տան նրան այն ողջակէզները, որ ամէն օր մատուցում էին թագաւորի կեանքի համար: 34 Նա անարգեց նրանց, ծիծաղեց նրանց վրայ, անպատուեց ծանր ու ամբարտաւան խօսքերով: 35 Նա հարուածեց նրանց եւ ցասումով ասաց. «Եթէ իմ ձեռքը չյանձնէք Ցուդային իր գնդի հետ, դուք կը տեսնէք, որ ես այս տաճարը կրակի կը մատնեմ եւ ձեզանից վրէժ կը լուծեմ, երբ խաղաղութիւնը հաստատուած լինի, եւ ես վերադառնամ այստեղ»: Նա թողեց գնաց խիստ վրդովուած ու զայրացած: 36 Քահանաները եկան, ներս մտան, կանգնեցին զոհասեղանի ու տաճարի դիմաց, սկսեցին լալ ու ասել. 37 «Դո՛ւ ես, որ ընտրեցիր քո այս տաճարը, որպէսզի քո սուրբ անուամբ կոչուի այն, որպէսզի դա քո ժողովրդի ուխտի, աղօթքի տուն լինի: 38 Դու էլ վրէ՛ժ լուծիր այդ մարդուց ու նրա բանակից: Նրանք թող կոտորուեն իրենց իսկ սրով: Յիշի՛ր նրանց հայհոյութիւնները եւ նրանց հանդիստ մի՛ տուր»:

ՆԻԿԱՆՈՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

39 Նիկանորը ելաւ Երուսաղէմից եւ բանակ դրեց Բեթսորոնում: Նրան ընդառաջ եկան Ասորիքի զօրքերը: 40 Ինքը Ցուդան երեք հազար մարդկանցով բանակ էր դրել Ադասայում: Նա սկսեց աղօթել ու ասաց. 41 «Այն ժամանակ, երբ թագաւորի մօտից մարդիկ էին եկել եւ հայհոյում էին քեզ, ելաւ քո հրեշտակն ու հարուածելով նրանց՝ հարիւր ութսունհինգ հազար մարդ սպանեց: Նոյն ձեւով այսօր դու կոտորի՛ր այս բանակը, որպէսզի մնացածներն իմանան, որ քո սրբութեան վերաբերեալ սին խօսքեր են ասել: Պատժի՛ր նրանց ըստ իրենց կատարած չարագործութեան»:

42 Երկու բանակները հասան եւ իրար բախուեցին Ադար ամսի տասներեքերորդ օրը: Նիկանորի գունդը պարտուեց, ջախջախուեց, եւ երկու բանակների միջեւ ինքն էլ առաջինը սրախողխող ընկաւ: 43 Երբ թշնամու գունդը տեսաւ, որ Նիկանորն ընկաւ, զէնքերը նետեցին եւ փախուստի դիմեցին: 45† Սրանք մէկ օր շարունակ Ադասայից հետապնդեցին նրանց, մինչեւ որ հասան Ազերա: Նրանց յետեւից փող էին փչում իբրեւ յաղթանակի նշան, 46 Հրէաստանի բոլոր քաղաքներից ելնում էին ու սպանում նրանց: Հետապնդուողները դարձեալ հաւաքւում էին ու դիմադրում: Այդ օրը սրախողխող ընկան բոլորը, եւ նրանցից մէկ մարդ անգամ չմնաց: 47 Եկան եւ սկսեցին աւար առնել, կողոպտել բանակի զէնքերը, գանձերը եւ ամբողջ ունեցուածքը: Կտրեցին Նիկանորի գլուխն ու աջ ձեռքը, որ նա գոռոզութեամբ յանդգնել էր բարձրացնել տաճարի վրայ, եւ բերեցին ու կախեցին Երուսաղէմի դիմաց: 48 Ժողովուրդը խիստ ուրախացաւ եւ այդ օրը նշեց որպէս տարեկան տօն: 49 Այդ օրը, Ադար ամսի տասներեքերորդ օրը, նրանք հռչակեցին ամենամեայ տօն: 50 Ցուդայի երկիրը միառժամանակ հանդիստ ապրեց:

ՅՈՒԴԱՆ ԴԱՇԻՆՔ Է ԿՆՔՈՒՄ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

8 Ցուդան լսեց հռոմէացիների համբաւի մասին, թէ նրանք հզօր են իրենց ուժով, նրանք լաւ են համարում, եթէ մէկը դիմում է իրենց օգնութեանը կամ դաշնակից լինում իրենց: Նա լսեց, որ նրանք խիստ զօրացել են երկրի վրայ, 2 նաեւ պատերազմներ մղելու շնորհիւ գրաւել են գաղատացիների կողմերը, ընկճել նրանց ու հարկատու դարձրել, 3 նաեւ այն, թէ ինչ են արել ժամանակին խպանացիների կողմերում՝ նրանցից գրաւել են հանքեր, որտեղից ոսկի ու արծաթ էին հանում, գրաւել են այդ վայրերն իրենց խելամտութեամբ ու իրենց համբերատարութեամբ, թէեւ այդ վայրը խիստ հեռու էր նրանցից: 4 Լսեց նաեւ, որ երկրի հեռաւոր ծայրամասից նրանց վրայ յարձակուելու եկած թագաւորներից մի քանիսին կոտորել են, մեծ ջարդ տուել նրանց, իսկ մնացածներին տարեկան հարկի տակ դրել: 5 Նրանք

†Բնօրինակում 44-րդ համարը չկայ:

Փիլիպպոսին ու իրենց վրայ յարձակուած կինացիների արքային սպանել են պատերազմի ժամանակ ու ընկճել նրանց: 6 Նրանցից պարտութիւն է կրել նաեւ ասիացիների մեծ արքան՝ Անտիոքոսը, որ եկել էր նրանց վրայ մեծ պատերազմով եւ որն ունէր հարիւր քսան փիղ, բազմաթիւ կառքեր ու երիվարներ: 7 Նրան կենդանի են բռնել եւ ստիպել, որ հարկ վճարի: 8 Ստիպել են նաեւ իրենից յետոյ եկած թագաւորներին պատանդներ ու փրկագին տալ, նրանից խլել են Հնդիկների, Պարթեւների, Լիդացիների երկրներն ու նրանց ընտիր գաւառները յանձնել են Եւմենիի արքային: 9 Երբ լսել են նաեւ, թէ յոյները որոշել են գալ, կոտորել իրենց, երբ տեղեկացել են այդ մասին, ուղարկել են իրենց զօրավարներից մէկին, 10 որն եկել ու ահեղ մի կռուի ժամանակ կոտորել է նրանց, բազմաթիւ մարդկանց սրախողխող արել, գերեվարել նրանց կանանց ու որդիներին, կողոպտել նրանց կայքն ու ունեցուածքը, երկիրն ստրկացրել, բերդերը քանդել, երկիրը հարկատու դարձրել մինչեւ օրս: 11 Կոտորել են նաեւ խռովութիւն բարձրացրած միւս թագաւորութիւնների ու կղզիների մարդկանց, ստրկացրել նրանց: 12 Բայց իրենց բարեկամների եւ նրանց հետ, ովքեր դիմել են իրենց օգնութեանը, անդաւաճան բարեկամութիւն են արել: Նրանք ընկճել են մօտիկ ու հեռաւոր բոլոր թագաւորութիւնները, եւ ովքեր մի անգամ լսել են նրանց անունը, վախեցել են նրանցից: 13 Ում ուզեցել են, թագաւորութիւն են տուել, ում ուզեցել են, զրկել են իշխանութիւնից: Նրանք խիստ հզօրացել են: 14 Հակառակ այս ամենին, նրանցից ոչ ոք յանձն չի առել, ի նշան իշխանութեան, թագ կրել կամ ծիրանի հագնել: 15 Նրանք խորհրդարան են շինել, եւ ամէն օր երեք հարիւր քսան մարդ հոգ է տարել զօրքի մասին, որպէսզի երկիրը չէն պահեն: 16 Ամէն տարի նրանցից մէկը, ով արժանաւոր է եղել, նշանակուել է իշխանութեան ղեկավար, որպէսզի կառավարի իրենց ողջ երկիրը: Բոլորը հնազանդութեամբ լսել են մէկին, նրանք միմեանց նկատմամբ ոխ կամ նախանձ չեն ունեցել:

17 Այն ժամանակ Յուդան ամէն մի գնդից ընտրեց մարդիկ՝ Ակկոսի որդի Յովնաթանի որդի Եւպոլեմոսին եւ Եղիազարի որդի Յաասոնին, նրանց ուղարկեց Հռոմ քաղաքը, որպէսզի սրանք նրանցից հաշտութիւն եւ օգնութիւն խնդրեն, 18 որպէսզի իրենց վրայից վերացնեն ստրկութեան այն լուծը, որ յոյները դրել էին իսրայէլացիների վրայ: 19 Նրանք գնացին Հռոմէացիների կողմերը: Ճանապարհը երկար էր: Բանագնացները եկան հասան ու նրանց հանդիպեցին խորհրդարանում: Նրանք կանգնեցին մէջտեղում ու սկսեցին յայտնել, թէ ինչ պատգամներով են եկել: 20 «Յուդա Մակաբայեցին, իր եղբայրներն ու Հրէաստանի բոլոր սեպուհները ուղարկել են մեզ, որ ձեզ հետ հաշտութեան մասին խօսենք, ձեզ մեր օգնականը դարձնենք եւ ձեզանից խաղաղութիւն խնդրենք, որ դուք էլ մեզ ձեր նիզակակիցն ու բարեկամը համարէք»:

21 Այս խօսքերը նրանց հաճելի թուացին: 22 Ահա այս է այն հրովարտակի պատճէնը, որ պղնձէ տախտակների վրայ նրանք գրեցին նրանց համար, ուղարկեցին Երուսաղէմ եւ թողեցին նրանց մօտ իբրեւ օգնութեան ու խաղաղութեան վկայագիր.

23 «Խաղաղութիւն եւ բարեգործութիւն թող լինի Հրէաստանի ու Հռոմէացիների միջեւ, ծովի ու ցամաքի վրայ, թող սուրն ու թշնամին հեռու լինեն նրանցից: 24 Իսկ եթէ պատերազմ լինի նախ Հռոմէացիների կամ նրա բարեկամներից որեւէ մէկի դէմ նրանց պետութեան ողջ տարածքում, 25 ապա անմիջապէս նրանց կամովին թող օգնեն հրէական գնդերը ըստ ժամանակի պահանջի: 26 Նրանք թշնամու կողմը չպէտք է անցնեն, արծաթով, ոսկով, զէնքով կամ նաւերով չպէտք է օգնեն թշնամիներին, որովհետեւ այսպէս է ձեռնտու Հռոմէացիներին: Այս պատուիրանները պէտք է նրանք պահպանեն առանց հատուցում պահանջելու: 27 Նոյն ձեւով եթէ հրեաների դէմ պատերազմ լինի, հաւատարմութեամբ, կամովին շտապ օգնութեան պէտք է հասնեն Հռոմէացիներն էլ ըստ ժամանակի պահանջի, 28 թշնամուն չպէտք է տան ոսկի, արծաթ, զէնք կամ նաւեր, որովհետեւ այսպէս է ձեռնտու Հռոմէացիներին: Այս պատուիրանները նրանք պէտք է պահպանեն առանց նենգութեան: 29 Ահա այսպիսի պայմաններ կապեցին Հռոմէացիները հրեաների գնդի հետ. 30 իսկ եթէ այդ պայմաններից յետոյ այս կամ այն կողմը որեւէ բան ունի հանելու կամ աւելացնելու, ապա դա թող անեն, ըստ հարկի, երկու կողմերի համաձայնութեամբ եւ պահեն անխախտ: 31 Նրանց նկատմամբ չարագործութիւն կատարող Դեմետրիոս արքային կը գրենք. "Ասա՛, ինչո՞ւ էք լուծ դնում մեր նիզակակից բարեկամների պարանոցին: 32 Իմացէ՛ք, որ եթէ նրանք բողոքեն քեզանից, արդար դատաստան կը տեսնենք, քո դէմ կռուի կ'ելնենք, լինի ծովի վրայ թէ ցամաքում"»:

ԲԵՐԷԹԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՒ ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՄԱՀԸ

9 Դեմետրիոսը չլսեց: Քանի որ Նիկանորն իր բանակով նրանց դէմ պատերազմելով պարտուել էր, ուստի դարձեալ, երկրորդ անգամ, Հրէաստան ուղարկեց Բաքիդէսին եւ Յակիմոսին իր բանակի աջակողմեան թեւի հետ: 2 Նրանք գնացին Գաղգաղայի ճանապարհով, եկան ու դասաւորուեցին Մեսալոթում՝ Արբելացիների երկրում: Գրաւեցին այն ու այնտեղ բազմաթիւ մարդկանց սպանեցին: 3 Հարիւր յիսուներեք թուականի առաջին ամսում բանակ դրեցին Երուսաղէմի մօտ, 4 յետոյ քսան հազար նիզակակիր մարդկանցով ու երկու հազար սպառազինուած հեծեալներով գնացին Բերէթ: 5 Յուդան երեք հազար սպառազէն ընտիր զինուորներով բանակ էր դրել Եղիշայում: 6 Երբ սրանք տեսան զօրագնդի բազմութիւնը, խիստ վախեցան. շատերը լքեցին նրան, Յուդայի մօտ ոչ ոք չմնաց, բացի ութ հարիւր սպառազէն հեծեալներից: 7 Երբ Յուդան տեսաւ, որ զինուորները լքել են իրեն, իսկ պատերազմը նեղում էր իրեն, վրդովուեց իր սրտում, որովհետեւ չէր հասցնի նորից հաւաքել նրանց, 8 թեւաթափ եղաւ, յուսալքուեց, բայց մնացածների հետ խօսելով՝ ասաց. «Եկէք դիմադրենք, գուցէ կարողանանք դիմադրել նրանց»: 9 Ինքը համարձակօրէն առաջ շարժուեց, բայց զինուորները, մտածելով, չը ջապատեցին նրան, որ յետ դարձնեն: Սկսեցին խօսել նրա հետ ու ասացին. «Ո՛վ մարդ, մենք չենք կարող նրանց վնասել, այժմ մեր անձը փրկելու մասին մտածենք, յետոյ կը գնանք, կը հաւաքենք մեր եղբայրներին ու կը կռուենք, թէպէտեւ սակաւաթիւ ենք»: 10 Յուդան պատասխան տուեց նրանց եւ ասաց. «Ես այդ բանը չեմ անի, ես նրանց առաջ փախուստի չեմ դիմի: Եթէ հասել է մեր ժամանակը, քաջութեամբ մեռնենք մեր եղբայրների համար եւ վախկոտի անունը չենք խառնի քաջի առաքինութեան հետ»:

11 Երկու կողմի բանակների զինուորները վեր կացան ու պատերազմեցին միմեանց դէմ: Բաքիդէսի սպառազէն բանակը բաժանուեց երկու մասի: Պարսատիկաւորներն ու աղեղնաւորները գնում էին գնդի առաջից, իսկ առաջամարտիկները գնում էին սրանց առաջից: 12 Բաքիդէսն աջ թեւում շտապեցնում էր զինուորներին, տագնապի չափոր հնչեցնելով առաջ էր տանում նրանց: 13 Յուդայի գունդը չափոր հնչեցնելով յարձակում գործեց: Երկիրը երկու կողմերի աղմուկ-աղաղակից դղրդում էր: Պատերազմը շարունակուեց առանց դադարի՝ առաւօտից մինչեւ երեկոյ: 14 Երբ Յուդան նկատեց, որ Բաքիդէսն ընտիր զօրքով աջ թեւում է կանգնած, իր գնդի սպառազէն, ընտիր զինուորներին իր մօտ կանչեց, քաջալերեց ու յարձակման անցաւ: 15 Երբ նա արդէն ջախջախել էր աջակողմեան թեւը, նետուեց դէպի ձախ թեւն ու նրանց իր առաջն առած՝ հալածեց մինչեւ Ազոտ լերան կողմը: 16 Երբ ձախակողմեան

թեւի զինուորները տեսան, որ աջակողմեան թեւը ջախջախուել է Ցուդայի զինուորների առաջ, եկան, միացան ու պաշարեցին Ցուդային իր գնդի հետ: 17 Այդ վայրում երկու կողմերի վիրաւորները գետին էին թաւալւում:

18 Այդտեղ ընկաւ Ցուդան առաջին նահատակուողների հետ, իսկ մնացածները փախուստի դիմեցին: 19 Երկու եղբայրները՝ Յովնաթանն ու Շմաւոնը, վերադարձան, վերցրին Ցուդային, տարան թաղեցին իրենց հայրերի շիրիմում՝ Մոդիիմում: 20 Իսրայէլացիները մեծ կոծով ողբացին, սուգ պահեցին բազում օրեր, 21 յետոյ սկսեցին խօսել եւ ասել. «Ինչպէ՞ս ընկաւ, ինչպէ՞ս տապալուեց Իսրայէլի հզօր փրկիչը»: 22 Այս մատեանում, սակայն, չի գրուել այն բոլոր մարտերի, ճակատամարտերի, պատերազմների մասին, որ մղել է Ցուդան, եւ այն քաջութիւնների մասին, որ գործել է նա, որովհետեւ դրանք չափազանց շատ են:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՅԱՋՈՐԴՈՒՄ Է ՅՈՒԴԱՅԻՆ

23 Ցուդայի մահուանից յետոյ անօրէնները յայտնուեցին Իսրայէլի բոլոր սահմաններում. աճեցին, բազմացան նրանք, որ անօրէնութիւն էին գործում: 24 Այդ օրերին մեծ սով եղաւ, եւ մարդիկ ինքնակամ գնացին նրանց մօտ. բոլորը նրանց կողմն անցան: 25 Բաքիդէսն ընտրեց անօրէն մարդկանց, նրանց իշխանութիւն տուեց: 26 Նրանք փնտռում, գտնում էին ու Բաքիդէսի մօտն էին բերում Ցուդայի բարեկամներին, նրանցից վրէժ լուծում: 27 Իսրայէլացիներին չարչարում, ծաղրում, նեղում, ծանակում էին այնպէս, որ մարգարէի ի յայտ գալուց յետոյ այդպիսի բան չէր եղել:

28 Հաւաքուեցին Ցուդայի բոլոր բարեկամները, գնացին Յովնաթան Ափուսի մօտ ու ասացին. 29 «Քո եղբայր Ցուդան մեռաւ, եւ չկայ մի մարդ, որ նրա նման ելնի թշնամիների դէմ, պատասխան տայ նրանց, ովքեր թշնամութեամբ գալով նեղում են մեր ազգը: 30 Արդ, նրա փոխարէն մենք քեզ ընտրեցինք, որ դու մեզ վրայ զօրապետ լինես, մեզ առաջնորդես, մեր թշնամիների դէմ ճակատամարտաս»:

31 Այդ ժամանակ Յովնաթանն ստանձնեց առաջնորդութիւնը եւ բարձրացաւ իր եղբայր Ցուդայի տեղը:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՎՐԷԺԽՆԴԻՐ Է ԼԻՆՈՒՄ ԻՐ ԵՂԲՕՐ ՀԱՄԱՐ

32 Երբ դա իմացաւ Բաքիդէսը, հնար էր փնտռում սպանելու Յովնաթանին ու նրա եղբայր Շմաւոնին: 33 Սրանք փախան Թակովիի անապատը, եկան, բանակ դրեցին Ասփաւ լճի մօտ: 34 Բաքիդէսը այդ մասին իմացաւ շաբաթ օրը եւ եկաւ, ինքն էլ իր զօրքով բանակ դրեց Յորդանան գետի այն կողմում: 35 Նա նրանց մօտ ուղարկեց իր մի եղբօրը՝ բազմաթիւ զօրքերի զօրավարին, եւ խնդրեց իրենց բարեկամ նաբատացիներին, որ իրենց յանձնեն իրենց պատկանող կայքն ու գրաստները եւ այն ամէնը, ինչ մնացել էր իրենց մօտ: 36 Դամասայում գտնուող Յամբրիի որդիները ելան ու բռնեցին Յովհաննէսին եւ կահ-կարասիով հանդերձ վերցրին գնացին իրենց հետ: 37 Դրանից յետոյ նրա եղբայրներ Յովնաթանն ու Շմաւոնը իմացան, որ Յամբրիի որդիները հարսանիք են անում: Սրանք Աբելաթից մեծ երթով ու անչափ հանդերձանքով հարս էին բերում քանանացի մեծամեծ աւագներից մէկի դստերը: 38 Նրանք յիշեցին իրենց Յովհաննէս եղբօրը եւ վեր կացան, դարան մտան լեռան մի ծործորում: 39 Իրենց հայեացքը բարձրացնելով՝ նրանք տեսան, որ մի մեծ երթ՝ հոծ մի ամբոխ է գալիս: Փեսան դուրս եկաւ իր բարեկամների եւ իր եղբայրների հետ չեփորներով, թմբուկներով, տարբեր նուագածուների ու բազում զինուած մարդկանց ուղեկցութեամբ: 40 Սրանք ելան դարանից, շատերին սպանեցին, վիրաւորեցին եւ զինուած մարդկանց փախուստի մատնեցին, աւար առան իրերն ու զգեստները, իսկ երթի մասնակիցներին

կողոպտեցին: 41 Հարսանիքը փոխուեց լաց ու կոծի, իսկ երաժիշտների ձայնը սուգի ու ողբի վերածուեց: 42 Նրանք իրենց եղբօր վրէժը լուծեցին ամբողջովին եւ վերադարձան Յորդանան գետին մօտիկ մի մարգագետին:

43 Երբ դա իմացաւ Բաքիդէսը, զօրք վերցրեց, շարժուեց նրանց վրայ, եկաւ հասաւ Յորդանան գետի քարայրների մօտ: 44 Յովնաթանն ասաց իր զօրքին. «եկէք վեր կենանք ու մարտի մէջ մտնենք յանուն մեր կեանքի, որովհետեւ այս օրը նման չէ երէկուան եւ ոչ էլ նախորդ օրուան: 45 Ահաւասիկ զօրք է դասաւորուել մեր դիմաց: Ո՛չ ամրոց կայ պատսպարուելու, ո՛չ էլ դաշտ կայ փախուստի համար. մեզ Յորդանան գետն է շրջապատել: 46 Արդ, եկէք կանչենք Տիրոջ անունը, յարձակուենք, դուցէ փրկուենք մեր թշնամիների ձեռքից»: Այս խօսքն ասաց ու անմիջապէս յարձակուեց Բաքիդէսի վրայ, 47 ձեռքը բարձրացրեց, որ հարուածի, բայց սա խոյս տուեց: 48 Յովնաթանն ու նրա հետ եղածները անցան այդ բարձունքից:

ՅԱԿԻՄՈՍԻ ՄԱՀԸ

49 Բաքիդէսի զինուորները հարուածեցին, կոտորեցին Ցուդայի գնդից հազար մարդ եւ վերադարձան Երուսաղէմ, 50 սկսեցին Հրէաստանում ամուր քաղաքներ կառուցել, Երիքովի, Ամաւուսի, Բեթորի, Բեթէլի, Մինաթարոթի եւ Սթեփի բերդերն ամրացրին ամուր պարիսպներով, հզօր դարպասներով ու հաստատուն նիզերով: 51 Նա թշնամութիւնը բորբոքելու համար պահապաններ կանգնեցրեց Իսրայէլացիների վրայ, 52 ամրացրեց Բեթսոր քաղաքը, Գազերան եւ ամրոցը, այնտեղ տեղաւորեց բազմաթիւ զօրքեր ու շատ մթերք: 53 Նա երկրի իշխանների որդիներին պատանդ վերցրեց եւ նրանց բանտարկեց Երուսաղէմի բերդում: 54 Հարիւր տասը թուականի երկրորդ ամսին Յակիմոսը հրամայեց քանդել ներքին սրբավայրի որահների պարիսպները. նրանք սկսեցին քանդել այն գործը, որ արել էին մարգարէները: 55 Այդ ժամանակ դիւահարուեց Յակիմոսը. ձախողուեցին նրա գործերը, թուլացաւ նրա երախը, պապանձուեց լեզուն. նա ոչ մի բան չէր կարողանում ասել ու իր տան վերաբերեալ կարգադրութիւններ անել: 56 Այդ ժամանակ Յակիմոսը մեռաւ մեծ տանջանքներով: 57 Երբ Բաքիդէսը տեսաւ, որ Յակիմոսը մեռաւ, վերադարձաւ արքայի մօտ, եւ Հրէաստանը երկու տարի խաղաղ կեանք ունեցաւ: 58 Անօրէնները միտք արեցին ու ասացին. «Ահա Յովնաթանն ու նրա մօտ գտնուողները ապրում են խաղաղ ու անհոգ: Եկէք բերենք Բաքիդէսին, որ սա մի գիշերուայ մէջ բռնի բոլորին»: 59 Գնացին ու իրենց մտածածն ասացին նրան:

ԲԱՔԻԴԷՍԻ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵԿՆՈՒՄԸ ՀՐԷԱՍՏԱՆԻՑ

60 Նա բազմաթիւ զօրքերով արագ ճանապարհ ընկաւ, գաղտնի հրովարտակ ուղարկեց Հրէաստանում գտնուող իր համախոհներին, որ բռնեն Յովնաթանին ու նրա հետ գտնուողներին, բայց սրանք դա անել չկարողացան, քանի որ դաւի գաղտնիքը բացայայտուել էր: 61 Նրանք բռնեցին երկրի չար առաջնորդներից մի յիսուն հոգու եւ խողխողեցին: 62 Յովնաթանը, Շմաւոնն ու նրանց հետ եղող մարդիկ խոյս տուեցին դէպի Բեթբէս, որ անապատում էր, նրա քանդուած պատերը վերանորոգեցին ու ամրացրին: 63 Երբ Բաքիդէսը տեսաւ դա, զօրք հաւաքեց, եկաւ պաշարեց այն: 64 Բեթբէսի շրջակայքում մարտ մղեց, կռիւ արեց բազմաթիւ օրեր, դրա շուրջը մեքենաներ կանգնեցրեց: 65 Յովնաթանն իր Շմաւոն եղբօրը թողեց քաղաքում, իսկ ինքն եկաւ այդ գաւառը: 66 Եկաւ Արթամ, սպանեց Օդոմերային, նրա եղբայրներին ու Փասիրոնի որդիներին իրենց վրանում: Դրանից յետոյ սկսեց կոտորել զինուորներին: 67 Շմաւոնն ու նրա հետ եղող մարդիկ ելան քաղաքից, հրկիզեցին մեքենաները, 68 պատերազմեցին Բաքիդէսի դէմ եւ

պարտութեան մատնեցին նրան, որովհետեւ նրա մտադրութիւնն ու նրա արշաւանքն իզուր էին: 69 Սա բարկացաւ այն անօրէն մարդկանց վրայ, ովքեր իրեն խորհուրդ էին տուել արշաւել նրա երկիրը: Բաքիդէսը նրանցից շատերին սպանեց ու որոշեց վերադառնալ այն երկիրը, որտեղից եկել էր: 70 Երբ Յովնաթանն իմացաւ այդ, բանագնացներ ուղարկեց նրա յետեւից, որ նրա հետ խօսեն խաղաղութիւն հաստատելու մասին, դաշինք կնքեն, եւ նա վերադարձնի բոլոր գերիներին: 71 Նա համաձայնեց եւ արեց այնպէս, ինչպէս Յովնաթանը խօսել էր իր հետ: Նա երդուեց, որ, քանի կենդանի է ինքը, այլեւս չարիք չի հասցնի նրանց: 72 Նա վերադարձրեց այն գերիներին, որ վերցրել էր նախկինում Հրէաստանից, իսկ ինքը գնաց իր երկիրն ու այլեւս չարշաւեց նրանց սահմանների վրայ: 73 Կռիւները դադարեցին Իսրայէլում: Յովնաթանը բնակուեց Մաքմասում, սկսեց դատել իր ժողովրդին ու անօրէններին կոտորել Իսրայէլում:

ԱԼԵՔՍԱՆԴՐԸ ՅՈՎՆԱԹԱՆԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

10 Հարիւր վաթսուն թուականին անտիոքացի Ալեքսանդր Եպիփանը գնաց ու գրաւեց պտղոմէացիների քաղաքը: Ընդունեցին նրան, եւ նա այնտեղ թագաւորեց: 2 Երբ Դեմետրիոս արքան լսեց, բազմաթիւ զօրք հաւաքեց, վեր կացաւ, որ պատերազմի նրա դէմ: 3 Դեմետրիոսը նրան խաղաղութեան պատգամ ուղարկեց, որ նրանք մեծարեն իրեն: 4 «Շտապեցէ՛ք, – ասաց, – նրա հետ խաղաղութեան դաշինք կնքել, քանի դեռ Ալեքսանդրը նրանց հետ դաշինք չի կնքել ընդդէմ մեզ: 5 Ես գիտեմ, նա կը յիշի իր դէմ, իր եղբայրների ու իր ազգի դէմ մեր կատարած չարագործութիւնները»: 6 Եւ նա նրան իրաւունք տուեց զօրք հաւաքելու, սպառազինուելու, որպէսզի նա իր նիզակակիցը դառնայ, իսկ ամրոցում գտնուող պատանդներին հրամայեց յանձնել նրա ձեռքը: 7 Յովնաթանն եկաւ Երուսաղէմ: Նա նամակը կարդաց ամբողջ ժողովրդի առաջ եւ նրանց առաջ, ովքեր բերդում էին: 8 Նրանք խիստ վախեցան, որովհետեւ լսեցին, թէ արքան նրան իրաւունք է տուել զօրք հաւաքելու: 9 Բայց պատանդներին բերեցին ու յանձնեցին նրան, իսկ նա նրանց յանձնեց իրենց ընտանիքներին:

10 Յովնաթանը բնակուեց Երուսաղէմում, սկսեց բարեկարգել ու նորոգել քաղաքը: 11 Նա պարսպի շինարարութեան վրայ աշխատողներին ասաց. «Շինեցէ՛ք այդ պարիսպը եւ պատեցէ՛ք Սիոն լերան շուրջը քառանկիւն որձաքարերով»: Այդպէս էլ արեցին: 12 Այն ժամանակ Բաքիդէսի կառուցած բերդում ապրող այլազգիները փախուստի դիմեցին: 13 Նա ամէն մէկին թողեց իր տեղում, իսկ ինքը գնաց իր հայրենի երկիրը: 14 Բեթսորում մնացել էին Օրէնքին ու հրամաններին չենթարկուող մի քանի մարդիկ, որովհետեւ դա նրանց ապաստարանն էր:

15 Երբ Ալեքսանդր արքան լսեց այն խոստումները, որ Դեմետրիոսը տուել էր Յովնաթանին, եւ պատմեցին նրան այն պատերազմի մասին, որ նա քաջաբար մղել էր իր եղբայրների հետ, եւ այն տանջանքները, որ նա կրել էր, ասաց. 16 «Մի՞թէ երբեւէ կարող ենք գտնել այսպիսի մի տղամարդ: Եկէք նրան դարձնենք մեր բարեկամն ու օգնականը»: 17 Նա հրամայեց նրանց հրովարտակ ուղարկել հետեւեալ խօսքերով. 18 «Ալեքսանդր արքայից ողջո՛յն իր եղբայր Յովնաթանին: 19 Քո մասին լսել ենք, թէ քաջ տղամարդ ես, եւ արժանի է, որ լինես մեր բարեկամը: 20 Արդ, մենք քեզ այսօր նշանակում ենք քո ազգի քահանայապետ եւ քեզ կոչում ենք արքայի բարեկամ (եւ հրամայեց նրա համար տանել ոսկէ պսակ ու ծիրանիներ): Արդ, հաստատո՛ւն մնա մեր դաշինքի վրայ եւ պահպանի՛ր մեր նկատմամբ ունեցած քո հաւատարիմ բարեկամութիւնը: Ո՛ղջ եղիր»:

21 Յովնաթանը հագաւ այդ ընտիր պատմուճանը: Հարիւր վաթսուն

թուականին, տաղաւարահարաց տարեկան տօնի ժամանակ զօրք հաւաքեցին, սպառազինուեցին եւ ուրախութիւններ կատարեցին:

ՀՐԵԱՆԵՐԸ ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ԴԵՄԵՏՐԻՈՍԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

22 Այս բաները լսելով՝ Դեմետրիոսը խիստ տրտմեց 23 ու ասաց. «Այս ի՞նչ արեցինք, ինչո՞ւ մենք նրանց չդարձրինք մեզ օգնական: Ալեքսանդրը կանխեց մեզ, նրանց հետ խաղաղութեան դաշինք կնքեց եւ Հրէաստանը հաստատապէս իր ձեռքն առաւ: 24 Արդ, եկէք մենք էլ նրանց գրենք ողջոյնի ու մեծարանքի խօսքեր, պարգեւներ խոստանանք, որպէսզի նրանք դառնան մեր օգնականները»: 25 Եւ նա նրանց հրովարտակ ուղարկեց հետեւեալ խօսքերով.

«Դեմետրիոս արքայից ողջո՛յն հրեայ ազգին: 26 Քանի որ դուք պահպանեցիք մեզ հետ կնքած ուխտն ու դաշինքը, շարունակեցիք մնալ մեր բարեկամը, թշնամիներին աջակից չեղաք, մենք, լսելով այդ, ուրախ եղանք: 27 Արդ, շարունակեցէ՛ք, պահպանեցէ՛ք մեր նկատմամբ ունեցած հաւատարմութիւնը, 28 եւ մենք դրա փոխարէն բազում բարեգործութիւններով կը հատուցենք ձեզ, բազմաթիւ պարգեւներ կը տանք: 29 Ձեզ ազատ կ'արձակենք, բոլոր հրեաներին կ'ազատենք տուրքերից, աղի ու պսակի, սերմի երրորդ բաժին հարկերից, 30 իսկ ինձ պատկանող հանրային այգիներն ու ծառերը այսօրուանից սկսած եւ յետագայում կը թողնեմ ձեզ: 31 Երուսաղէմը թող մնայ սուրբ ու նուիրական իր շրջակայ սահմաններով: Տասանորդից վերցրած մաքսը վերացնում ենք ձեզանից: 32 Միջնաբերդի իշխանութիւնը յանձնում ենք քահանայապետին: Դա պահպանելու համար նա թող այնտեղ կ'արգի այն մարդկանց, որոնց ինքը կ'ընտրի: 33 Հրէաստանից իմ թագաւորութեան երկրները բերուած ամէն մի գերի հրեայ առանց փրկագնի՝ ձրի թող ազատ արձակուի: Թող վերանան հասի, մաքսի ու գրաստի հարկերը: 34 Իմ թագաւորութեան մէջ գտնուող բոլոր հրեաները տարեկան բոլոր տօներին, շաբաթ օրերին, ամսուայ սկզբներին, տօնին նախորդող եւ տօնին յաջորդող երեք օրերին հարկ թող չվճարեն: 35 Ոչ ոք թող չյանդգնի որեւէ մէկին պահանջ ներկայացնել կամ որեւէ մէկին նեղել իմ բոլոր գործերի պատճառով: 36 Անդրանիկ զաւակները թող մտնեն արքունի զօրքի մէջ, նրանց թիւը թող լինի մինչեւ վեց հարիւր հազար† զօրական, եւ նրանք ըստ օրէնքի պարգեւներ թող ստանան արքունի առաջին զօրքի մեծամեծներին հաւասար: 37 Ովքեր հաւատարիմ են, դարձեալ նրանցի՛ց թող նշանակուեն արքունի պաշտօնեաներ, նրանք թող դառնան իշխաններ ու վերակացուներ, նրանք թող առաջնորդուեն այն օրէնքներով, որ արձակել է արքան Հրէաստանում: 38 Նախկինում Հրէաստանին պատկանող երեք գաւառները Սամարացիների երկրից թող վերադարձուի Հրէաստանին, եւ երկուսի համար թող գործի մէկ օրէնք, որ ուրիշը չկարողանայ իշխել նրանց վրայ, այլ՝ քահանայապետը: 39 Պտղոմէացիների քաղաքը թող պարգեւ տրուի Երուսաղէմում գտնուող սրբարանին, որպէսզի հոգացուեն սրբարանի համար յատկացուող ծախսերը: 40 Ամէն տարի ես արքունի գանձարանից կը տամ տասնհինգ հազար կշիռ արծաթ, որոնք կը ստացուեն ինձ ենթակայ վայրերից: 41 Այն մթերքը, որ կը պակասի, եւ իրենք չեն կարողանայ ձեռք բերել, արքունիքից կը տրուի, ինչպէս եղել է առաջին սերունդների ժամանակ: 42 Դրանք սրանից յետոյ թող տրուեն արքունի միջոցներից: Բացի այդ, սրբարանի եկամուտներից ամէն տարի գանձուող հինգ հազար կշիռ արծաթը զեղչում եմ, որովհետեւ դա պէտք է քահանաներին ու պաշտօնեաներին: 43 Ով արքունիքին պարտք ունենալու պատճառով կը ցանկանայ փախչել ու մտնել Երուսաղէմի տաճարը, կամ ով դրա

†Այլ բնագրերում՝ մինչեւ երեսուն հազար, որ աւելի հաւանական է:

սահմաններում է գտնուում, թող նե-
րում ստանայ: Նրանք թող ազատ
արձակուեն: 44 Սուրբ չինուիթիւններից
ամէն ինչ, որ աւերուած-կործանուած
կը լինի, թող կառուցուի ու նորոգուի,
իսկ ծախսերը թող վճարուի արքու-
նիքից: 45 Թող կառուցեն Երուսաղէմի
պարիսպը, չորս կողմը թող ամրացնեն,
իսկ ծախսերը թող վճարուի արքու-
նիքից: Թող կառուցուեն Հրէաստանի
բոլոր բերդապարիսպները»:

ԴԵՄԵՏՐԻՈՍԻ ՄԱՀԸ

46 Երբ Յովնաթանն ու ժողովուրդը
լսեցին այս բանը, երբեք չհաւատացին
ու չընդունեցին նրանց, որովհետեւ
յիշեցին Երուսաղէմում նրանց կատա-
րած մեծամեծ չարագործութիւնները,
նրանց պատճառած նեղութիւնները:
47 Նրանք գերադասեցին Ալեքսանդրի
հետ հաշտութիւնը, որովհետեւ նախ
նա էր խաղաղութիւն առաջարկողը,
իրենք նրա նիզակակիցներն էին, եւ
նա իրենց օգնականն էր եղել իրենց
կեանքի բոլոր օրերում:

48 Ալեքսանդր արքան զօրաժողով
արեց, բազմաթիւ զօրքեր հաւաքեց, որ
գայ, պատերազմ տայ Դեմետրիոսի
դէմ: 49 Երկու թագաւորները եկան
միմեանց բախուեցին, եւ Դեմետրիոսի
զօրագունդը փախուստի դիմեց: Ալեք-
սանդրը հետապնդեց նրանց. 50 ճա-
կատամարտը սաստկացաւ մինչեւ
արեւի մայր մտնելը: Այդ օրն այդտեղ,
Ալեքսանդրի առաջ սպանուեց Դեմետ-
րիոսը: Հարուածեցին, հալածեցին եւ
նոյն օրն էլ ամէն ինչ աւարտի
հասցրին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ՊՏՂՈՄԷՈՍ Զ-Ի ԴՍՏԵՐ ՀԵՏ

51 Ալեքսանդրը Եգիպտացիների եր-
կիր՝ Պտղոմէոս արքայի մօտ բանա-
գնացներ ուղարկեց եւ հետեւեալը
պատուիրեց. «Թող յայտնի լինի քեզ,
ո՛վ արքայ Եգիպտոսի, 52 որ ես տէր
դարձայ իմ տէրութեանը, ես նստեցի
իմ հայրերի գահին, իշխանութիւնը
վերցրի իմ ձեռքը, հարուածեցի ու
վանեցի Դեմետրիոսին իր զօրքով
հանդերձ եւ վերանուաճեցի իմ երկիրը:
53 Պատերազմում հարուածեցի ու
վանեցի նրան ու իր զօրքերը, նստեցի
նրա թագաւորական գահին: 54 Արդ,
ե՛կ միմեանց միջեւ խաղաղութիւն
հաստատենք. դու քո դստերն ինձ
կնութեա՛ն տուր, որ նա ինձ արժանի
կին լինի, իսկ ես էլ՝ քո արժանի
փեսան»:

55 Եգիպտացիների արքան պատաս-
խան տուեց ու ասաց. «Բարի է այն
օրը, երբ դու վերադարձար քո նախ-
նիների երկիրը եւ նստեցիր քո հայրերի
արքայական գահին: 56 Ես պատրաստ
եմ յօժար կամքով անել այն ամէնը,
ինչ դու գրել ես ինձ: Եկ հանդիպենք
իրար պտղոմէացիների քաղաքում,
տեսնենք միմեանց, եւ քեզ իմ փեսան
դարձնեմ, ինչպէս որ դու ես ասել»:

57 Պտղոմէոս արքան ելաւ Եգիպ-
տացիների երկրից հարիւր վաթսուն-
երկու թուականին եւ իր Կլէոպատրա
դստեր հետ եկաւ պտղոմէացիների
քաղաքը: 58 Երկու թագաւորները
հանդիպեցին միմեանց, եւ Պտղոմէոսը
իր Կլէոպատրա դստերը տուեց նրան:
Պտղոմէացիների քաղաքում հարսա-
նիք արեցին մեծ ճոխութեամբ ու մեծ
շուքով, ինչպէս վայել է թա-
գաւորներին:

59 Ալեքսանդրը Յովնաթանին հրա-
վարտակ ուղարկեց, որ սա գայ իր մօտ:
60 Յովնաթանը մեծ շուքով գնաց
պտղոմէացիների քաղաքը, երկու թա-
գաւորներին հանդիպելով մեծամեծ
նուէրներ տուեց եւ ինքն էլ նրանցից
նուէրներ ստացաւ: 61 Երուսաղէմի
անօրէն մարդիկ հաւաքուեցին, որպէս-
զի ամբաստանեն նրան, սակայն թա-
գաւորը նրանց չլսեց: 62 Արքան
հրամայեց հանել Յովնաթանի զգեստ-
ները. նրան հագցրին ծիրանի զգեստ-
ներ. արքան նրան նստեցրեց իր կողքը
63 եւ ասաց իշխաններին. «Կը գնաք
նրա հետ, բոլոր քաղաքներում կը
յայտնէք իմ հրամանը, որ ոչ ոք
չյանդգնի ամբաստանել նրան, եւ ոչ
ոք չնեղացնի նրան ոչ մի բանով»:

64 Երբ չարագործները տեսան նրա
նկատմամբ ցուցաբերուած պատիւը,

լսեցին հրամանի խօսքերը եւ տեսան
ծիրանի զգեստները, բոլորը փախան,
թաքնուեցին, անհետացան: 65 Թագա-
ւորը պատիւ տուեց նրան առաջին
բարեկամների հետ հաւասար, նրան
նշանակեց սպարապետ եւ կուսակալ:
66 Յովնաթանը վերադարձաւ Երուսա-
ղէմ՝ լցուած ուրախութեամբ ու
խաղաղութեամբ:

ԱՊՈԼՈՆԻՈՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

67 Հարիւր վաթսունհինգ թուակա-
նին Դեմետրիոսի որդի Դեմետրիոսը
կրետացիների կողմերից եկաւ իր հայ-
րերի երկիրը: 68 Ալեքսանդրը խիստ
տրտմեց ու այնտեղից վերադարձաւ
անտիոքացիների քաղաքը: 69 Դեմետ-
րիոսն այնտեղ նշանակեց Ապոլո-
նիոսին, որն առաջ Ստորին Ասորիքի
վերակացուն էր: Նա բազմաթիւ զօրք
հաւաքեց, եկաւ, բանակ դրեց Յամ-
նիայի շրջակայքում: Նա Յովնաթան
քահանայապետի մօտ մարդ ուղարկեց,
որ ասի հետեւեալը. 70 «Դու ես միայն,
որ գլուխդ բարձրացրել, դուռդագել ես
մեզ վրայ, իսկ ես քո պատճառով
նախատինքի ու ծաղրի եմ ենթար-
կուել: Ի՞նչ ես փքուել ու նստել քո
լեռներում: 71 Արդ, եթէ յոյսդ քո
զօրքի վրայ է, ե՛կ, իջի՛ր դաշտ, մեզ
մօտ, հանդիպենք միմեանց, որովհետեւ
ես էլ այստեղ ինձ հետ քաղաքի զօրք
ունեմ: 72 Արդ, հարցրո՛ւ, փորձի՛ր,
տե՛ս, թէ ով եմ ես, կամ ովքեր են մեր
օգնականները. նրանք քեզ կ՛ասեն.
"Դու մեզ հետ կռիւ անել չես կարող,
որովհետեւ ձեր հայրերին իրենց իսկ
երկրում երկու անգամ պարտութեան
ենք մատնել մենք": 73 Արդ, դու չես
կարող դիմադրել այսքան հեծելա-
զօրին այս դաշտում, ուր թաքնուելու
համար ո՛չ թուփ կայ, ո՛չ փախուստի
տեղ, ո՛չ ապաւինելու ժայռ եւ ո՛չ էլ
նետելու քար»:

74 Երբ Ապոլոնիոսի այս խօսքերը
լսեց Յովնաթանը, բարկացաւ իր
մտքում, անմիջապէս ոտքի ելաւ, իր
զօրքից ընտրեց մօտ տասը հազար
ընտիր զինուոր եւ դուրս եկաւ
Երուսաղէմից: Նրան ընդառաջ եկաւ
իր եղբայր Շմաւոնը՝ օգնելու նրան:
75 Նրանք եկան հասան յոպպէացի-
ների քաղաքը: Քաղաքացիները դռնե-
րը փակեցին նրանց դէմ, որովհետեւ
Ապոլոնիոսը սրանց վրայ պահապան
ոստիկաններ էր նշանակել: Նրանք
յարձակուեցին, պատերազմ մղեցին
քաղաքի դէմ: 76 Քաղաքի բնակիչները
վախից բաց արեցին քաղաքի դռները,
եւ նրանք մտան ու գրաւեցին քա-
ղաքը: 77 Երբ դա լսեց Ապոլոնիոսը,
պատրաստութիւն տեսաւ, իր հետ
վերցրեց երեք հազար սպառազէն
մարդ ու բազմաթիւ այլ զօրքեր,
78 գնաց Ազոտի կողմերը, իբր պիտի
անցնէր դաշտի մօտով, մինչդեռ նա
ուղիղ գնում էր դէպի դաշտավայրը,
որովհետեւ վստահ էր իր հեծելազօրի
վրայ: Յովնաթանը հետապնդեց նրան,
որպէսզի ճակատամարտ տայ: 79 Ա-
պոլոնիոսը նրա հետքերով դարան էր
դրել հազար հեծեալ: 80 Յովնաթանն
իմացաւ, որ իր համար դարան են դրել,
ուստի եկաւ, փակեց, պաշարեց դարա-
նակալների ամրոցը եւ դրա շուրջը
պատնէշ կառուցեց: Դրանց պա-
շարուած էին պահում առաւօտից
մինչեւ երեկոյ, ինչպէս հրամայել էր
նրանց Յովնաթանը: 81 Հեծեալները
յոգնեցին, տանջուեցին ու թուլացան:
82 Շմաւոնն իր գնդով բռնեց գաղտնի
ճանապարհը, եկաւ կանգնեց ձորակի
գլխին ու յարձակուեց նրանց վրայ:
Քանի դեռ սրանք թուլացած էին ու
յոգնած, յարձակուեց սրանց վրայ,
շատերին սպանեց հէնց դարանում,
83 հեծելազօրից շատերին դաշտի վրայ
փախուստի մատնեց ու հալածեց
մինչեւ Ազոտի կողմերը: Նա այնպիսի
իրարանցում գցեց սրանց մէջ, որ
փախստականները եկան Դագոնի մեհ-
եանում պատսպարուելու: 84 Յովնա-
թանն իր զօրքով եկաւ, պաշարեց
Դագոնի մեհեանն ու ազոտացիների
քաղաքը եւ աւարի մատնեց դրա շրջա-
կայքի քաղաքները, հրկիզեց Դագոնի
մեհեանն այնտեղ պատսպարուողնե-
ներով հանդերձ: 85 Սրից ընկածների
ու այրուածների թիւը հասաւ մօտ ութ
հազարի: 86 Յովնաթանն այնտեղից
շարժուեց գնաց ու բանակ դրեց

Ասկաղոնի կողմերում: Այդ քաղաքից մարդիկ ընդառաջ եկան նրան եւ պատիւներ մատուցեցին: 87 Յովնաթանն իր զօրագնդով վերադարձաւ Երուսաղէմ հարուստ աւարով, որովհետեւ կողոպտել ու յափշտակել էր բազում թշնամիների:

88 Երբ դա լսեց Ալեքսանդրը, առաւել եւս սկսեց փառաւորել Յովնաթանին: 89 Նրան ուղարկեց ոսկէ ճարմանդ, որ աւանդաբար տալիս էին թագաւորի եղբայրներին, եւ, իբրեւ ժառանգութիւն, նրան տուեց Ակկարոնն իր բոլոր սահմաններով:

ՊՏՂՈՄԷՈՍ Զ-Ի ԱՐՇԱՒԱՆՔԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԴԷՄ

11 Եգիպտացիների թագաւորը զօրք կազմեց, ծովափի աւազի չափ բազմաթիւ զինուորներ եւ շատ նաւեր հաւաքեց: Նա ուզում էր նենգութեամբ Ալեքսանդրի թագաւորութեանը տիրանալ եւ այն միացնել իր թագաւորութեանը: 2 Նա խաղաղութեան պատգամներով եկաւ Ասորիքի կողմերը: Դարպաս էին բաց անում նրա առաջ եւ ընդառաջ գնում նրան: Դա Ալեքսանդր արքայի պատուէրն էր, որովհետեւ Պտղոմէոսն իր աներն էր: 3 Երբ Պտղոմէոսը մտնում էր քաղաքները, ամէն մի քաղաքում իր զօրքից պահապաններ էր թողնում: 4 Երբ նրանք եկան մօտեցան ազոտացիների քաղաքին, նրան ցոյց տուեցին Դագոնի հրկիզուած մեհեանը, քաղաքը եւ պատերազմի ժամանակ կրակի մատնուած նրա շրջակայ քաղաքների այրուած դիակները, որ բերել կոյտ-կոյտ դիզել էին ճանապարհի վրայ: 5 Արքային պատմեցին այն ամենի մասին, ինչ կատարել էր Յովնաթանը, եւ աչքից գցեցին նրան: Թագաւորը լուռ էր: 6 Յովնաթանը մեծ պատիւներով դիմաւորեց թագաւորին յոպպէացիների քաղաքում: Իրար ողջոյն տուեցին ու միասին անցկացրին այդ օրը: 7 Յովնաթանն արքայի հետ գնաց մինչեւ Ազատ կոչուող գետի կողմերը եւ այդտեղից վերադարձաւ Երուսաղէմ, 8 իսկ Պտղոմէոս արքան գրաւեց ծովեզրեայ քաղաքները մինչեւ սելեւկացիների քաղաքը. նա Ալեքսանդրի դէմ դաւադրութիւն էր պատրաստում:

9 Նա Դեմետրիոս արքայի մօտ բանագնացներ ուղարկեց ու ասաց. «Եկ իրար հետ ուխտ դնենք ու դաշինք կնքենք: Ես քեզ կը տամ Ալեքսանդրի մօտ գտնուող իմ դստերը, եւ դու կը տիրանաս քո հօր թագաւորութեանը: 10 Ես զղջում եմ, թէ ինչու իմ դստերը տուեցի նրան կնութեան, քանի որ նա մահուան դաւ է նիւթում իմ դէմ»: 11 Այսպէս նա զրպարտեց Ալեքսանդրին, որովհետեւ աչք էր դրել նրա տէրութեան վրայ: Նա իր դստերը յետ բերեց ու տուեց Դեմետրիոսին: 12 Նա երես դարձրեց Ալեքսանդրից եւ յայտնի դարձրեց իր թշնամանքը: Պտղոմէոսը մտաւ ու գրաւեց քաղաքները, ծովեզրեայ Սելեւկիան եւ Ալեքսանդրի դէմ դաւ էր նիւթում: 13 Նա եկաւ մտաւ անտիոքացիների քաղաքը, գլխին դրեց ասիացիների թագն ու իրեն պսակեց կրկնակի թագով՝ ասիացիների թագով ու եգիպտացիների թագով:

14 Այդ ժամանակ, սակայն, Ալեքսանդր արքան Կիլիկիայի կողմերում էր, որովհետեւ ապստամբութիւն էին բարձրացրել նրա դէմ: 15 Երբ դա իմացաւ Ալեքսանդրը, եկաւ պատերազմ տալու: Պտղոմէոսը նրա դէմ ելաւ բազմաթիւ զօրքով եւ նրան պարտութեան մատնեց: 16 Ալեքսանդրը փախաւ արաբացիների կողմերը, որպէսզի թաքնուի այնտեղ ու ազատուի նրանից: Հզօրացաւ Պտղոմէոս արքան: 17 Եկաւ արաբ Զաբդիէլը, կտրեց Ալեքսանդրի գլուխը եւ տուեց, որ այն տանեն Պտղոմէոս արքային: 18 Երրորդ օրը մեռաւ Պտղոմէոսը, եւ բոլոր նրանք, ովքեր բերդի շուրջն էին գտնուում, կոտորուեցին բնակիչների կողմից: 19 Դեմետրիոսը թագաւորեց հարիւր վաթսունեօթը թուականին:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԴԵՄԵՏՐԻՈՍ Բ-Ի ԵՒ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՄԻՋԵՒ

20 Այդ օրերին Յովնաթանը Հրէաստանում զօրք հաւաքեց, որ գայ պատերազմ մղի Երուսաղէմում գտնուող բերդի համար: Նրա շրջակայքում կանգնեցրին բազմաթիւ ռազմական մեքենաներ: 21 Հրեայ ազգին թշնամի մի քանի անօրէն մարդիկ գնացին պատմեցին թագաւորին, թէ Յովնաթանը մեքենաներ է կանգնեցրել ու շրջապատել բերդը, պատրաստուել է գրաւելու այն: 22 Երբ դա լսեց Դեմետրիոսը, խիստ բարկացաւ, վեր կացաւ ու եկաւ պտղոմէացիների մօտ, հրովարտակներ ուղարկեց Յովնաթանին, որ բերդն այլեւս պաշարման մէջ չպահի, այլ անմիջապէս վեր կենայ ու գայ պտղոմէացիների քաղաքը, որպէսզի այնտեղ հանդիպեն միմեանց: 23 Երբ դա լսեց Յովնաթանը, հրամայեց առաւել եւս ուժեղացնել բերդի պաշարումը, իսկ ինքը ժողովրդի ծերերից ու քահանաներից վերցրեց ազնիւ եւ իմաստուն մարդկանց, 24 ճանապարհ ընկաւ նուէրներով, ոսկով ու արծաթով, իր անձը մահուամբ վտանգելով գնաց, որ պտղոմէացիների քաղաքում հանդիպի թագաւորին: 25 Նա նրա կողմից պատուի արժանացաւ, թէեւ շատ անօրէններ էին ամբաստանել նրան: 26 Թագաւորը նրան մեծարեց, ինչպէս իր նախնիներն էին մեծարել, պատուեց նրան իր բոլոր բարեկամների մօտ, 27 նրան տուեց քահանայապետութեան իշխանութիւն եւ այն բոլոր պատիւները, որ ունէին քահանայապետները նրանից առաջ: Նա նրան իր առաջին բարեկամների շարքը դասեց:

28 Յովնաթանը խնդրեց արքային, որ վերացնի Հրէաստանի եւ Սամարիայի երեք կուսակալութիւնների հարկերը: Նա խոստացաւ նրան տալ միայն երեք հարիւր քանքար: 29 Թագաւորին դա ընդունելի թուաց, եւ նա այս բոլորի համար հրամայեց Յովնաթանին տալ հրովարտակ հետեւեալ բովանդակութեամբ.

30 «Դեմետրիոս արքան ողջունում է իր եղբայր Յովնաթանին: 31 Այս հրովարտակի պատճէնը մենք ուղարկել ենք մեր եղբայր Լասթենէսին: Նոյնի օրինակն էլ ձեզ ենք գրում, որ տեղեակ լինէք: 32 "Արքայ Դեմետրիոսը ողջունում է հայր Լասթենէսին: 33 Մեր բարեկամ, օգնական, նիզակակից, ուխտապահ հրեաներին արժանի ենք համարում, որ հանգիստ թողնենք նրանց, բարութիւն հատուցենք այն արդարութեան ու հաւատարմութեան համար, որ նրանք ցուցաբերել են մեր նկատմամբ: 34 Հաստատում ենք Հրէաստանի սահմանները եւ երեք գաւառները՝ Ափարիմը, Լուդան ու Ռաթամինը: Դրանք թող անջատուեն Սամարիայից եւ կցուեն Հրէաստանին: Այսուհետեւ օրէնքով սահմանուած այդ գաւառների հարկերը թող յատկացուեն Երուսաղէմի պաշտօնեաներին: Արքունի այն եկամուտները, որոնք ամէն տարի ստացւում են հողի արտադրանքից ու պտղատու ծառերի բերքից, 35 արքունի հարկերը, տասանորդները, մաքսերը, արքունի այլ եկամուտները, աղի տուրքը, պսակների հարկը, - 36 այս բոլորը զիջում ենք նրանց: Սրանցից ոչ մէկը թող չխախտուի յաւիտենապէս: 37 Արդ, հո՛գ տարէք, որ այդ հրովարտակի մի պատճէնը հանէք եւ յանձնէք Յովնաթանին, որպէսզի այն դնի սրբարանի գանձարանում, աչքի ընկնող եւ յարմար տեղում"»:

ՅՈՎՆԱԹԱՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԴԵՄԵՏՐԻՈՍ Բ-ԻՆ

38 Երբ Դեմետրիոս արքան տեսաւ, որ ողջ երկիրը հնազանդուել է իրեն, եւ աշխարհում չկար մի բան, որ հակառակուէր իր կամքին, հրաման տուեց, որ ամէն մի զօրք արձակուի ու վերադառնայ իր տեղը, բացի հեռաւոր ազգերի զինուորներից ու կղզիներից հաւաքուած ռազմիկների գնդից: Բոլոր ազգերի զօրքերը թշնամացան նրա դէմ:

39 Ալեքսանդրի տոհմում կար Տրիփոն անունով մէկը: Երբ տեսաւ, որ բոլոր զօրքերը տրտնջում են Դեմետրիոսի դէմ, գնաց Իմալկուս Արաբացու մօտ, որը սնում ու դաստիարակում էր Ալեքսանդրի պատանի որդի Անտիոքոսին: 40 Նա ստիպեց նրան, որ պատանուն իրեն յանձնի, որպէսզի ինքը բերի նրան ու հօր գահին նստեցնի:

Նա նրան պատմեց նախկինում Դեմետրիոսի կատարած գործերի մասին եւ այն բոլոր թշնամութիւնների, որ մի ժամանակ ունէր զօրքը նրա նկատմամբ: Նա նրա մօտ մնաց շատ օրեր:

41 Յովնաթանը Դեմետրիոս արքայի մօտ մարդ ուղարկեց, որ նա հրաման տայ միջնաբերդից եւ միւս բերդերից դուրս հանելու զօրքերը, որովհետեւ սրանք թշնամաբար էին տրամադրուած Իսրայէլի նկատմամբ: 42 Դեմետրիոսը մարդ ուղարկեց Յովնաթանի մօտ ու ասաց. «Ես ոչ միայն քեզ ու քո ազգի համար կ'անեմ այդ, այլեւ պատուի կ'արժանացնեմ քո ազգը, միայն թէ ժամանակ գտնեմ: 43 Դու լաւ կ'անես, եթէ օգնական մի գունդ ուղարկես, որովհետեւ իմ զինուորներն ինձ լքել են»:

44 Երբ դա լսեց Յովնաթանը, անմիջապէս լաւ սպառազինուած երեք հազարանոց մի գունդ ուղարկեց անտիոքացիների քաղաքը իբրեւ թագաւորի օգնական: Թագաւորն ուրախացաւ, որ նրանք հասան իր մօտ: 45 Երբ դա իմացան քաղաքի բնակիչները, զանազան տեղերից եկան հաւաքուեցին քաղաքի կենտրոնում հարիւր քսան հազար մարդ եւ թագաւորի վրայ յարձակուելով՝ ուզում էին նրան անմիջապէս սպանել, 46 բայց նա խոյս տուեց նրանցից: Նրանք անմիջապէս գրաւեցին քաղաքի բոլոր փողոցների մուտքերը եւ սկսեցին կռուել: 47 Իսրայէլեան գունդն այդ իմանալով՝ կուտակուեց թագաւորի ապարանքի մօտ. մարդիկ ձայն տուեցին միմեանց ու տարածուեցին ամբողջ քաղաքում: 48 Հարուածելով սպանեցին, կոտորեցին մօտ տասը հազար մարդ, հրդեհի մատնեցին քաղաքի փայտակերտ բոլոր շէնքերը եւ կողոպտեցին նրանց կայքն ու ունեցուածքը, իրենց մօտ բերեցին թագաւորին ու փրկեցին նրանց ձեռքից:

49 Երբ քաղաքի գնդի մնացած զինուորները տեսան, որ իսրայէլեան գունդը հզօրացել է, կատարելապէս յաղթել իրենց, յուսալքուեցին, թուլացան ու հրաժարուեցին իրենց մտադրութիւնից: Նրանք աղաչական ձայնով սկսեցին դիմել թագաւորին ու ասացին. 50 «Խղճա՛ մեզ, մոլեգնած գունդը թող դադարեցնի քաղաքի բնակիչների կոտորածը»: 51 Ասում էին այս, եւ ամէն մէկն իր զէնքը նետում էր յաղթողների ոտքերի առաջ: Իսրայէլեան գնդի փառքն ու պատիւը բարձրացաւ թագաւորի ու նրա ողջ զօրքի աչքին: Դրանից յետոյ նրանք մեծ պատուով ու բազում աւարով վերադարձան Երուսաղէմ: 52 Դեմետրիոս արքան նստեց իր տէրութեան գահին, եւ ամբողջ երկիրը դողաց նրա առաջ: 53 Բայց նա դրժեց այն բոլոր խոստումները, որ տուել էր իսրայէլացիներին, բոլորովին օտարացաւ Յովնաթանից եւ չհատուցեց նրա հաւատարիմ ծառայութեան փոխարէն:

ՅՈՎՆԱԹԱՆՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԱՆՏԻՈՔՈՍ Զ-ԻՆ ԴԵՄԵՏՐԻՈՍԻ ԴԷՄ

54 Այս դէպքերից յետոյ վերադարձան Տրիփոնն ու նրա հետ պատանի Անտիոքոսը, որն արդէն թագաւոր էր դարձել ու նստել տէրութեան գահին: 55 Նրա մօտ հաւաքուեցին Դեմետրիոսի բոլոր ցրուած զինուորները, պատերազմեցին Դեմետրիոսի դէմ ու խայտառակ կերպով նրան փախուստի մատնեցին: 56 Տրիփոնն եկաւ փղերով ու գրաւեց անտիոքացիների քաղաքը:

57 Պատանի Անտիոքոսը հրաման արձակեց, որ Յովնաթանին հրովարտակ ուղարկեն, ուր ասուած էր. «Քեզ քահանայապետ եմ նշանակում, քեզ հաստատում եմ չորս գաւառների վերակացու, քեզ համարում եմ մեր իսկական եւ առաջին բարեկամներից մէկը»: 58 Նա հրամայեց, որ նրան տանեն ոսկէ գաւաթներ ու տաճարի սպասքը: Նրան իրաւունք տուեց ըմպել ոսկէ գաւաթներով, ծիրանի զգեստներ հագնել, թագաւորական նշանի նման ճարմանդ կրել: 59 Հրաման տուեց, որ նրա եղբայր Շմաւոնը նշանակուի իշխան եւ զօրավար Ծուրից մինչեւ եգիպտացիների սահմանը:

60 Յովնաթանը ելաւ, որ շրջագայի Յորդանան գետի այն կողմում եւ քաղաքներում: Իբրեւ օգնական նրա մօտ հաւաքուեցին Ասորիքի բոլոր զինուորները: Նա եկաւ Ասկաղոնի կողմերը: Մեծամեծ գովաբանութիւններ անելով նրան ընդառաջ ելան քաղաքացիները: 61 Այնտեղից նա գնաց Գազա, բայց գազացիները նրա առաջ փակեցին դարպասները: Նա շրջապատեց նրանց, հրդեհի մատնեց նրանց աւանները, բռնագրաւեց նրանց ինչքն ու ունեցուածքը: 62 Դրանից յետոյ եկան գազացիները, կանգնեցին ու խոնարհուեցին նրա առաջ, իրենց իշխանների որդիներին պատանդ տուեցին: Նա նրանց ուղարկեց Երուսաղէմ, իսկ ինքն անցաւ երկիրը մինչեւ Դամասկոսի կողմերը:

63 Յովնաթանը լսեց, որ Դեմետրիոսի իշխանները բազում զօրքերով հասել են գալիլիացիների կողմերը՝ կռուէս, նրան իշխանութիւնից զրկելու դիտաւորութեամբ: 64 Նա իր եղբայր Շմաւոնին վերակացու թողեց երկրի վրայ, իսկ ինքը գնաց նրանց ընդառաջ: 65 Շմաւոնը յարձակուեց Բեթսորի վրայ, բազում օրեր պաշարեց այն, կալանքի տակ պահեց նրա բնակիչներին: 66 Նրանք սկսեցին աղաչել նրան, որ իրենց հետ դաշինք կնքի: Շմաւոնը համաձայնեց, նրանց տեղահան արեց քաղաքից եւ այդտեղ, քաղաքի վրայ պահապաններ նշանակեց:

67 Յովնաթանն իր զօրքով եկաւ ու բանակ դրեց Գեննեսարեթի ջրերի մօտ: Երբ առաւօտեան հասաւ Նասորի դաշտը, 68 այլազգիների մի գունդ ընդառաջ եկաւ նրան մի դաշտավայրում, բայց նրանք ծուղակ էին պատրաստել. գնդի կէսը դարան էր մտել, իսկ միւս կէսը յարձակուեց նրա վրայ: 69 Դարանակալները ելան իրենց տեղերից, հետապնդեցին նրանց, Յովնաթանին զօրքով հանդերձ շրջապատեցին 70 եւ Յովնաթանի զօրքը փախուստի մատնեցին: Նրա մօտ ոչ ոք չմնաց, բացի Բեսալոմի որդի Մատաթիայից ու Կափի որդի Յուդայից, որոնք զօրքի զօրավարներն էին: 71 Յովնաթանը բռնեց իր օձիքից, պատառոտեց պատմուճանը, հող լցրեց գլխին: 72 Նա մեծ բարկութեամբ յարձակուեց ու պարտութեան մատնեց նրանց: 73 Այն ժամանակ բոլոր փախստականները վերադարձան ու հալածեցին թշնամուն մինչեւ իրենց բանակատեղին՝ մինչեւ Կադէս: Նրանք եկան հասան այլազգիների բանակի մօտերքը: 74 Այդ օրն սպանեցին երեք հազար սպառազէն հեծեալ, եւ Յովնաթանը վերադարձաւ Երուսաղէմ:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԴԱՇԻՆՔԸ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

12 Երբ Յովնաթանը տեսաւ, որ ժամանակը նպաստաւոր է իր համար, մարդիկ կանչեց, բանագնացներ ընտրեց նրանցից եւ ուղարկեց Հռոմէացիների քաղաքը, որպէսզի գնան ու նորոգեն իրենց հետ կնքուած հաշտութեան դաշինքը: 2 Նա սպարտացիներին ու այլ վայրերի մարդկանց հրովարտակներ ուղարկեց նոյն բովանդակութեամբ: 3 Բանագնացները գնացին, հասան Հռոմէացիների քաղաքը, հանդիպեցին նրանց խորհրդարանի դահլիճում ու ասացին. «Յովնաթան քահանայապետն ու հրեայ ազգը մեզ ուղարկեցին ձեզ մօտ, որպէսզի նորոգենք հաշտութեան նախկին դաշինքը, առաջուայ նման լինենք միմեանց զինակից ու օգնական»: 4 Հռոմէացիներն ընդունեցին, համաձայնեցին, տարբեր վայրեր հրովարտակներ ուղարկեցին, որ նրանց խաղաղութեամբ Հրէաստան ուղեկցեն: 5 Այս է նրանց փոխարքաներին, իշխաններին ու կուսակալներին գրած Յովնաթանի հրովարտակի պատճէնը.

6 «Յովնաթան քահանայապետը, ժողովրդի աւագների խորհուրդը, քահանաները, հրեայ ազգի բանակն ու սպաները ողջունում են իրենց սպարտացի եղբայրներին: 7 Դարեհ արքան Օնիա քահանայապետին անցեալում հրովարտակներ էր ուղարկել, թէ դուք մեր նիզակակիցներն էք, մեր եղբայրներն ու բարեկամները, ինչպէս մեզ ցոյց են տալիս այդ հրովարտակների պատճէնները, 8 Օնիան մեծ

պատուով էր ընդունել ուղարկուած մարդուն, ձեռքն առել հրովարտակը, ուր նշւում էր, թէ մենք նիզակակիցներ ու սիրելի բարեկամներ ենք: 9 Մենք, որ հարուստ ենք եւ ոչնչի կարիք չենք զգում ու մխիթարուել ենք ձեր հրովարտակներով, 10 այժմ դարձեալ ուզում ենք նորոգել հաւատարմութիւնը, որպէսզի չօտարանանք ձեզանից: Երկար ժամանակ է անցել նախկին համաձայնագրերից յետոյ, որ դուք ուղարկել էք մեզ: 11 Արդ, մենք ամէն ժամանակ, տարեկան տօներին ու յիշարժան միւս բոլոր օրերին, միշտ յիշում ենք ձեզ, երբ զոհ ենք մատուցում, յիշում ենք մեր աղօթքներում, ինչպէս վայել ու արժանի է յիշել մեր եղբայրներին: 12 Մենք ուրախանում ենք ձեր փառքով: 13 Արդ, մեզ պատել են պատերազմների պատճառած նեղութիւնները: Պատերազմներ մղեցին մեր դէմ մեր շրջակայքում գտնուող թագաւորները, 14 բայց մենք առ այսօր ոչնչով նեղութիւն չտուեցինք ո՛չ ձեզ եւ ո՛չ էլ նրանց, ովքեր ձեզ սահմանակից լինելով՝ այս պատերազմում մեր նիզակակից բարեկամներն են եղել, 15 որովհետեւ մեր օգնութիւնը գալիս էր երկնքից, եւ մենք ազատուեցինք մեր թշնամիների ձեռքից. նրանք մեր առաջ պարտութեան մատնուեցին: 16 Արդ, մենք ընտրեցինք Անտիոքոսի որդի Նումենիոսին ու Յասոնի որդի Անտիպատրոսին, ուղարկեցինք նրանց Հռոմէացիների մօտ, որպէսզի նորոգեն հաշտութեան, բարեկամութեան, եղբայրութեան ու օգնութեան նախկին դաշինքը: 17 Նրանց պատուիրել ենք, որ անցնեն ձեզ մօտ, ձեզ հաղորդեն մեր ողջոյնը եւ ձեզ մատուցեն մեր եղբայրական սիրոյ նորոգման նամակը: 18 Արդ, բարեհաճեցէ՛ք հրամայել, որ պատասխանեն մեզ»:

19 Այս է հրովարտակների պատճէնը, որ այնտեղից ուղարկեցին Օնիա քահանային. 20 «Սպարտացիների արքայից ողջո՛յն Օնիա մեծ քահանայապետին: 21 Սպարտացիներին ու Հրէաստանցիներին վերաբերող հին մատեաններ են գտնուել, ուր գրուած է, թէ նրանք հաւասար եղբայրներ են եւ սերել են Աբրահամից: 22 Այն բանից յետոյ, երբ այս մասին տեղեկացանք, բարեհաճեցէ՛ք ամէն անգամ գրել մեզ մեր նկատմամբ ձեր եւ ձեր նկատմամբ մեր ունեցած խաղաղութեան ու ողջոյնի մասին: 23 Մեր ունեցած ինչքն ու հարստութիւնը, բոլոր անասունները նաեւ ձե՛րն են, ինչպէս եւ ձերը մե՛րն է: Արդ, մենք այս պատուէրն ենք տալիս ձեզ, որ դուք միշտ այս բանը պահանջէք մեզանից»:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ՓԱԽՈՒՍՏԻ Է ՄԱՏՆՈՒՄ ԴԵՄԵՏՐԻՈՍԻ ԲԱՆԱԿԸ

24 Յովնաթանը տեղեկացաւ, որ Դեմետրիոսի իշխանները առաջուանից շատ զինուորներով գալիս են իր դէմ պատերազմելու: 25 Նա դուրս եկաւ Երուսաղէմից, գնաց նրանց դէմ, հասաւ ու բախուեց Ամաթիտի մօտ: Քանի դեռ նրանք չէին հասցրել մտնել եւ հետախուզել իր երկիրը, 26 ինքը հետախոյզ ուղարկեց նրանց բանակը: Նրան հաղորդեցին, որ պատրաստւում են գիշերով յարձակուել իրենց վրայ: 27 Երբ արեւը մայր մտաւ, Յովնաթանը զօրքին հրաման տուեց, որ մինչեւ առաւօտ կազմ ու պատրաստ, զինուած, համախմբուած լինեն պատերազմելու համար: Պարեկներ նշանակեցին, փակեցին իրենց չորս կողմը, ու իրենք պատրաստուեցին յարձակում գործելու: 28 Երբ թշնամիները տեղեկացան, թէ նրանք գիշերով են պատրաստւում յարձակում գործելու, սրտները վախ ընկաւ, զարհուրեցին: Բոլոր տեղերում, խիտ առ խիտ, խարոյկներ վառեցին, իսկ իրենք գիշերով փախան ու գնացին: 29 Յովնաթանն ու զօրքը չիմացան նրանց փախուստը, որովհետեւ տեսնելով բորբոքուող խարոյկները, կարծում էին, թէ իրենց տեղում են նրանք: 30 Դրանից յետոյ թէեւ հետապնդեցին նրանց, բայց հասնել չկարողացան, որովհետեւ նրանք արդէն անցել էին Ազատ գետը:

31 Դրանից յետոյ Յովնաթանը վերադարձաւ այդտեղից ու յարձակուեց զաբդեցի կոչուող արաբացիների վրայ:

Նա հարուածեց, կոտորեց, փախուստի մատնեց նրանց բանակը, աւար առաւ նրանց ինչքն ու ունեցուածքը: 32 Ապա նա շուռ եկաւ Դամասկոսի կողմը, իսկ Շմաւոնը հասաւ Ասկաղոն, 33 գրաւեց նրա շրջակայքում գտնուող բոլոր բերդերը, գնաց յոպպէացիների կողմերը: Նա շտապում էր զօրքը ներս մտցնել: 34 Քանի որ լսել էր, թէ բերդի բնակիչները օգնում են Դեմետրիոսին, ուստի դրանց վրայ պահապան ոստիկաններ նշանակեց:

ՅՈՎՆԱԹԱՆԸ ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

35 Յովնաթանը վերադարձաւ, զօրք հաւաքեց, ծերակոյտը խորհրդի կանչեց. ուզում էր Հրէաստանում բերդեր կառուցել, 36 միջնաբերդում ու քաղաքում բարձր պարիսպներ շինել, անջրպետել դրանք քաղաքից, որպէսզի Դեմետրիոսի մարդիկ առանձին լինեն, ոչինչ չտան ու չառնեն, չգնեն ու չվաճառեն: 37 Հաւաքուեցին, որ կառուցեն քաղաքը եւ այն պատը, որ պարիսպներից հասնում էր մինչեւ Քափնաթա կոչուող ծմակների ջրառատ հեղեղատները: 38 Շմաւոնն Ափիլայում սկսեց կառուցել Ալեդա քաղաքը, ամրացրեց այն, դարպասներ դրեց ու նիգերով ամրացրեց դրանք:

ՏՐԻՓՈՆԻ ԽԱՐԴԱՒԱՆՔԸ ՅՈՎՆԱԹԱՆԻ ԴԷՄ

39 Տրիփոնն ուզում էր թագաւորել ասիացիների կողմերում, թագ դնել գլխին, ձեռք բարձրացնել անտիոքացիների արքայի վրայ, 40 բայց վախեցաւ, զգուշացաւ, թէ գուցէ Յովնաթանը չհամաձայնի ու պատերազմի դայ իր վրայ: Դրա համար հնար էր փնտռում, որ բռնի նրան ու կորստեան մատնի: 41 Նա շարժուեց ու եկաւ Բեթսանի կողմերը: Յովնաթանը նրան ընդառաջ եկաւ քառասուն հազար զինավառ ընտիր զինուորներով, եկաւ հասաւ Բեթսան: 42 Երբ Տրիփոնը տեսաւ, որ Յովնաթանը եկել է բազմաթիւ զօրքով, վախեցաւ ձեռք բարձրացնել նրա վրայ, 43 ուստի նրան ընդունեց պատուով, նրան ներկայացրեց իր բարեկամներին, նրան նուէրներ տուեց, իսկ զօրքին հրամայեց, որ հնազանդ լինեն նրան: 44 Նա սկսեց խօսել Յովնաթանի հետ ու ասաց. «Ինչո՞ւ ես այդքան նեղութիւն տուել զօրքին, չէ՞ որ պատերազմելու պատճառ չկար: 45 Արդ, զինուորներին ուղարկի՛ր իրենց տեղերը եւ ընտրի՛ր սակաւաթիւ մարդկանց, որ քեզ հետ շրջեն միշտ, իսկ դու ինձ հետ ե՛կ պտղոմէացիների քաղաքը: Ես այն կը յանձնեմ քեզ, ինչպէս նաեւ այլ բերդեր՝ դրանք հսկող զօրքերի հետ միասին, ինչպէս յարմար է քեզ, իսկ ես կը վերադառնամ այնտեղից, որովհետեւ հէնց դրա համար եմ եկել»:

46 Յովնաթանը հաւատաց նրան ու արեց այնպէս, ինչպէս նա հրամայել էր. զինուորներին ուղարկեց իրենց տեղերը՝ Հրէաստան, 47 իսկ իր մօտ թողեց չուրջ երեք հազար մարդ: Սրանցից երկու հազարին էլ թողեց Գալիլիացիների երկրում, իսկ ինքը նրա հետ գնաց հազար հոգով: 48 Երբ Յովնաթանը մտաւ պտղոմէացիների քաղաքը, քաղաքացիները փակեցին դարպասները, ներսում արգելափակեցին նրան եւ սրախողխող արեցին բոլոր նրանց, ովքեր նրա հետ ներս էին մտել: 49 Տրիփոնն իր զօրքն ուղարկեց Գալիլիացիների երկիրն ու մեծ դաշտը, որ գնան կոտորեն Յովնաթանի ամբողջ զօրքը: 50 Երբ սրանք իմացան, որ նա բանտարկուած է եւ նրա հետ եղած բոլոր մարդիկ սպանուած են, սթափուեցին ու միասին համախմբուած՝ գնացին պատերազմելու: 51 Յարձակուողների զօրականները երբ տեսան, որ անձնազոհաբար են մարտնչում նրանք, վախեցան, մարտադաշտը թողեցին ու վերադարձան, 52 իսկ նրանք հանգիստ եկան հասան Հրէաստան: Կոծեցին ու ողբացին Յովնաթանի եւ նրա հետ եղած զինուորների համար: Նրանք սարսափի մէջ էին: Ողջ Իսրայէլը սգում ու ողբում էր Յովնաթանին: 53 Շրջակայքում ապրող բոլոր հեթանոսներն ուզում էին կոտորել սրանց, որովհետեւ այսպէս էին ասում. 54 «Սրանք այլեւս զօրապետ չունեն, որ մեր դէմ

պատերազմի: Արդ, եկէք յարձակուենք
սրանց վրայ ու երկրի երեսից ջնջենք
սրանց յիշատակը»:

ՇՄԱՒՈՆԸ ՅԱՋՈՐԴՈՒՄ Է ՅՈՎՆԱԹԱՆԻՆ

13 Շմաւոնը լսեց, որ Տրիփոնը մեծ
զօրք է հաւաքել Հրէաստանի վրայ
յարձակուելու, բնակիչներին կոտորելու
համար: 2 Երբ տեսաւ, որ ժողովուրդը
ահի եւ խուճապի մէջ է, ինքը վեր
կացաւ եկաւ Երուսաղէմ, հաւաքեց
ժողովրդին, խրախուսեց նրանց ու
ասաց. 3 «Դուք ինքներդ էլ գիտէք, թէ
որքան գործ ենք արել ես, իմ
եղբայրներն ու իմ հօր տունը: Քանի՛-
քանի՛ մարտ ու պատերազմներ ենք
մղել, որքա՛ն նեղութիւններ կրել
յանուն մեր սրբարանի, մեր օրէնքների
ու քաղաքի, 4 որովհետեւ Իսրայէլի ու
ձեր բոլորի համար զոհուեցին մեր
բոլոր եղբայրները, եւ ես եմ մնացել
միայն: 5 Ոչ մի նեղութեան ժամանակ
ես իմ անձը չեմ խնայի: Թէեւ ես աւելի
քաջ չեմ, քան իմ եղբայրները, 6 բայց
մեր սրբարանի եւ օրէնքների, մեր
կանանց ու որդիների վրէժը լուծելու
համար աւելի կը զօրանամ: Բոլոր
հեթանոսներն ահա հաւաքուել են, որ
յարձակուեն, մեր յիշատակը ջնջեն
երկրի երեսից»:

7 Երբ նա խօսում էր, ժողովուրդը
յուսադրւում, ոգեւորւում էր: 8 Նրանք
պատասխան տուեցին, սկսեցին խօսել
բարձր ձայնով ու ասացին. «Դու ես
մեր առաջնորդը Յուդայի ու քո եղ-
բայր Յովնաթանի փոխարէն: 9 Ղե-
կավարի՛ր մեր պատերազմը, ինչ որ
ասես, մենք կը հնազանդուենք քեզ»:
10 Նա հաւաքեց բոլոր ռազմիկներին,
շտապ կառուցեց Երուսաղէմի պարիս-
պը, 11 Աբիսողոմի որդի Յովնաթանին
մեծ զօրքով ուղարկեց յոպպէացիների
քաղաքը: Սա այնտեղից հանեց պա-
հապաններին, ինքը մտաւ ու ամրացաւ
այնտեղ եւ պահպանում էր այն:

ՅՈՎՆԱԹԱՆԻ ՎԱԽՃԱՆԸ

12 Դրանից յետոյ Տրիփոնը մեծ
զօրքով շարժուեց պտղոմէացիների
քաղաքից, որ գայ Հրէաստան: Նա
Յովնաթանին իր մօտ պահելու
զգուշութեան համար ման էր ածում
իր հետ: 13 Շմաւոնը բանակ էր դրել
Դիդայում, դաշտի դիմաց: 14 Երբ
Տրիփոնը տեղեկացաւ, որ Շմաւոնը
նստել է իր եղբայր Յովնաթանի
փոխարէն եւ պատրաստւում է
պատերազմ տալու, բանագնացներ
ընտրեց եւ ուղարկելով նրա մօտ՝
ասաց. 15 «Յովնաթանն արքունիքում
բանտարկուած է այն արծաթների
համար, որ նա պարտք է: 16 Արդ,
բերե՛լ տուր հարիւր քանքար արծաթ,
ինձ մո՛տ բեր նրա որդիներից
երկուսին, որ, երբ իրեն ազատ
արձակենք, չապստամբի մեր դէմ»:

17 Շմաւոնը հասկացաւ, որ
խաբէութիւն կայ նրա խօսքերի մէջ,
բայց տուեց, որ տանեն արծաթն ու
պատանիներին, որպէսզի չլինի թէ
թշնամութիւն ծագի ժողովրդի ու իր
միջեւ, 18 եւ չասեն, թէ՝ «Շմաւոնը
խնայեց արծաթը եւ չտուեց պա-
տանիներին, որ տանեն, դրա համար էլ
մարդը կորաւ»: 19 Նա տուեց, որ
տանեն հարիւր քանքարն ու պա-
տանիներին, բայց Տրիփոնը խաբեց եւ
Յովնաթանին ազատ չարձակեց:

20 Դրանից յետոյ Տրիփոնն եկաւ
երկրի կողմերը, որ մտնի, կոտորի
նրանց: Նա բռնեց Ադոր տանող
ճանապարհը: Նա որտեղ էլ որ գնար,
Շմաւոնն իր բանակով հետապնդում էր
նրան: 21 Երուսաղէմի միջնաբերդում
գտնուողները Տրիփոնի մօտ բա-
նագնացներ ուղարկեցին ու ստիպեցին,
որ նա իրենց մօտ գայ անապատի
միջով ու բերդի համար պաշար
ուղարկի: 22 Տրիփոնն իր գնդով
պատրաստուեց գալ ու միջնաբերդ
մտնել այդ գիշերն իսկ, բայց քանի որ
սաստիկ ձիւն էր եկել, այդ պատճառով
էլ չկարողացաւ մտնել, շարժուեց եկաւ
Գաղաադի կողմերը: 23 Երբ նա մօտե-
ցաւ Բասկանային, այնտեղ սպանեց
Յովնաթանին, որն այնտեղ էլ թա-
ղուեց: 24 Տրիփոնն այդտեղից վերա-
դարձաւ ու եկաւ իր երկիրը:

25 Շմաւոնը մարդ ուղարկեց, որ
այնտեղից հանեն իր եղբայր

Յովնաթանի ոսկորները: Նրա աճիւնը
բերեցին եւ թաղեցին Մոդիիմում՝ իր
հայրերի քաղաքում: 26 Մեծ ողբով լաց
եղան նրա վրայ բոլոր իսրայէլացիները
եւ բազում օրեր սուգ պահեցին: 27 Նա
իր հօր ու եղբայրների գերեզմանի
վրայ մահարձան բարձրացրեց, կո-
փածոյ քարերով պարիսպ քաշեց նրա
շուրջը, 28 իսկ պարսպի վրայ իրար
դէմ-դիմաց բուրգեր կանգնեցրեց եւ
կողք-կողքի երեք զարդանշաններ
դրեց ի պատիւ իր հօր ու եղբայրների:
29 Գերեզմանը վանդակապատ էր եւ
ունէր բարձր սիւներ: Այդպէս նա
յաւերժացրեց իր անունը: Նա վան-
դակի կողքերին նաւերի նմանութեամբ
քանդակներ արեց, որպէսզի դրանք
երեւան նրանց, ովքեր նաւերով
անցնում են ծովով: 30 Մոդիիմի
չիրիմների վրայ կառուցուած այդ
դամբարանը մնում է մինչեւ այսօր:

ԴԵՄԵՏՐԻՈՍԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է
ԴԱՇԻՆՔԸ ՀՐԵԱՆԵՐԻ ՀԵՏ

31 Տրիփոնը նենգ մտադրութեամբ
վարուեց նաեւ պատանի Անտիոքոս
արքայի հետ, 32 սպանեց նրան ու
թագաւորեց նրա փոխարէն: Իր գլխին
դրեց ասիացիների թագը եւ մեծամեծ
հարուածներ հասցրեց երկրին:

33 Շմաւոնը Հրէաստանում բերդեր
կառուցեց, պարիսպներ բարձրացրեց,
աշտարակներ կանգնեցրեց, դարպաս-
ներով ու նիգերով ամրացրեց, բերդերը
լցրեց պարէնով: 34 Շմաւոնը հաւաքեց
ընտիր մարդկանց, ուղարկեց Դեմետ-
րիոսի մօտ, որ երկրին զիջումներ անի,
որովհետեւ Տրիփոնի բոլոր գործերը
յափշտակութիւններ էին եղել: 35 Դե-
մետրիոս թագաւորը հետեւեալ բովան-
դակութեամբ պատասխան ուղարկեց
նրան, գրեց այսպիսի հրովարտակներ.

36 «Դեմետրիոս արքան ողջունում է
Շմաւոն քահանայապետին՝ թագաւոր-
ների բարեկամին ու հրեայ ամբողջ
ազգի ծերակոյտին: 37 Ստացանք ոսկէ
պսակն ու օրհնութիւնը, որ ուղարկել
էք մեզ: Մենք պատրաստ ենք կայուն
խաղաղութիւն հաստատել եւ գրել
հարկահաւաք պաշտօնեաներին, որ
զիջեն ձեր պարտքերը, 38 եւ ինչ որ մի
անգամ հաստատել ենք ձեզ հետ,
հաստատ թող մնայ: Ձեր կառուցած
բերդերը թող ձեզ պատկանեն: 39 Մին-
չեւ այսօր կամայ թէ ակամայ ձեր
կատարած մեղքերը ներում ենք: Վե-
րացնում ենք պսակի հարկը եւ
Երուսաղէմից ապրանք դուրս բերելու
համար գանձուող մաքսը: 40 Եթէ կայ
պիտանի մէկը, որ արժանի է մեր
ցանկի մէջ մտնելու, համարձակ թող
ցուցակագրուի: Մեր ու ձեր միջեւ
խաղաղութիւն թող հաստատուի»:

41 Հարիւր եօթանասուն թուականին
հեթանոսների լուծը վերացաւ իսրա-
յէլեան ցեղի վրայից: 42 Ժողովուրդն
սկսեց ազգահամար կատարել եւ ցու-
ցակագրել գոյքը՝ գրանցելով մա-
տեաններում. Շմաւոն մեծ քահա-
նայապետի եւ հրեայ ազգի առաջնորդ
զօրավարի առաջին տարում»:

ՇՄԱՒՈՆԸ ԳՐԱՒՈՒՄ Է ԳԱԶԱՐԱՆ
ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԸ

43 Այս օրերին նա յարձակուեց
Գազարա քաղաքի վրայ, զօրքով պա-
շարեց այն, մարտական մեքենաներ
կառուցեց, դրանք մօտեցրեց պարիսպ-
ներին ու կործանեց աշտարակներից
մէկը: 44 Մեքենաներից դուրս եկան
զինուորներն ու յարձակուեցին քա-
ղաքի վրայ: Մեծ խռովութիւն բարձ-
րացաւ քաղաքում: 45 Բոլոր քաղա-
քացիներն առհասարակ, կանանց ու
երեխաների հետ, ճչալով, օձիքները
պատառոտելով եւ աղաղակ բարձրաց-
նելով դիմեցին Շմաւոնին. 46 խնդրում
էին խնայել իրենց, իրենց կատարած
չարագործութիւնների համեմատ չդա-
տել, այլ ողորմածութեամբ գթալ
իրենց: 47 Մեղմացաւ Շմաւոնը, դա-
դարեցրեց պատերազմը եւ հրամայեց
քաղաքից դուրս հանել նրանց: Տները
մաքրեցին նրանց կուռքերի բոլոր
պիղծ աղտեղութիւններից, որից յետոյ
նա եկաւ, ներս մտաւ ցնծութեամբ ու
օրհնութեամբ, 48 այնտեղից մաքրեց
բոլոր պղծութիւնները եւ այնտեղ
բնակեցրեց Օրէնքին հետեւող մարդ-
կանց: Նա դարձեալ ամրացրեց այն,

այնտեղ չինեց բազմատեսակ ապարանքներ:
49 Երուսաղէմի միջնաբերդում մնացածները դեռեւս պաշարուած, շուրջկալի մէջ էին. նրանք ո՛չ ելումուտ ունէին, ո՛չ առեւտուր էին կարողանում անել: Նրանք նեղւում, սովամահ էին լինում, եւ նրանցից շատերն էլ մեռան: 50 Նրանք դիմեցին Շմաւոնին՝ խնդրելով հաշտութիւն: Նա խնայեց նրանց, բայց դուրս արեց նրանց այնտեղից, միջնաբերդը մաքրեց նրանց ամէն տեսակի պղծութիւններից 51 եւ այնտեղ մտաւ հարիւր եօթանասունմէկ թուականի երկրորդ ամսի քսաներեքերորդ օրը: Նա օրհնութիւն ու գոհութիւն մատուցելով, արմաւենու ճիւղերով, ցնծութեամբ շեփոր ու սրինգ հնչեցնելով՝ մտաւ այնտեղ, որովհետեւ խորտակուել էր Իսրայէլի երկրի ահեղ թշնամին: 52 Նա հրաման տուեց ամէն տարի տօնել այդ օրը ուրախութեամբ եւ ցնծութեամբ: 53 Նա ամրացրեց միջնաբերդի մօտ գտնուող լեռը, որի վրայ էր տաճարը, եւ ինքն իր սեփական զօրագնդով ապրեց այնտեղ: 54 Շմաւոնը տեսնելով, որ իր որդի Յովնաթանը չափահաս ու կատարեալ տղամարդ է դարձել, նրան նշանակեց բոլոր զօրքերի իշխան՝ առաջնորդ զօրավար, եւ նրան վերակացու կարգեց Գազարայի կողմերում:

ԴԵՄԵՏՐԻՈՍ Բ-Ի ՄԱՀԸ

14 Հարիւր եօթանասուներկու թուականին Դեմետրիոս արքան զօրք հաւաքեց եւ գնաց մարերի ու պարթեւների մօտ, որպէսզի նրանցից օգնութիւն խնդրի, գայ եւ պատերազմի Տրիփոնի դէմ: 2 Երբ պարսից ու պարթեւաց արքայ Արշակը լսեց, թէ Դեմետրիոսը եկել-մտել է իր երկրի սահմանները, ուղարկեց իր իշխաններից մէկին, որ գնայ ու ձերբակալի նրան: 3 Սա գնաց, հարուածեց, կոտորեց Դեմետրիոսի զօրքը, ձերբակալեց նրան ու նրան բերեց Արշակի մօտ: Վերջինս հրամայեց ոստիկաններին կապկպել նրան եւ բանտ դնել:
4 Շմաւոնի բոլոր օրերին երկիրը խաղաղ կեանք ունեցաւ. նա ազգի համար շատ բարեգործութիւններ կատարեց†: 7 Նա տիրեց գաւառների, բազմաթիւ գերիներ վերցրեց, տիրեց Գազարայի, Բեթսորի կողմերի բերդերին: 8 Մարդիկ հանգիստ իրենց հողն էին մշակում, երկիրը տալիս էր իր պտուղները, մրգատու ծառերը առատ բերք էին տալիս: 9 Մերերը նստում էին հրապարակներում, բարի գործեր անելու մասին իրար հետ խորհրդակցում, երիտասարդները զինուորական շքեղ զգեստներ էին հագնում: 10 Նրանք քաղաքն ապահովում էին պարէնով ու իրենց նախապատրաստում յուսալի սպառազինութեամբ: Նրանց փառքի համբաւը հասաւ մինչեւ երկրի չորս կողմերը: 11 Իսրայէլը խաղաղ էր ապրում, ցնծում մեծ ուրախութեամբ: 12 Ամէն մէկը նստում էր իր այգում, իր թզենու տակ, եւ ոչ ոք նրանց չէր վախեցնում: 13 Այդ ժամանակներում աշխարհի երեսից վերացան իրենց դէմ կռուողները, խորտակուեցին թագաւորները: 14 Նա ոտքի կանգնեցրեց, լիացրեց ժողովրդի խեղճ մարդկանց, Օրէնքի նկատմամբ մարդկանց դարձրեց նախանձախնդիր, երկրի երեսից բնաջնջեց բոլոր չար ու անօրէն մարդկանց: 15 Նա փառաւոր դարձրեց սրբարանը, շատացրեց նրա սպասքն ու անօթները:

ՍՊԱՐՏԱՑԻՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՇՄԱՒՈՆԻՆ

16 Երբ հռոմէացիների քաղաքից մինչեւ սպարտացիների կողմերը լսեցին, որ մեռել է Յովնաթանը, խիստ տրտմեցին, 17 բայց երբ նաեւ լսեցին, թէ նրա փոխարէն իր եղբայր Շմաւոնն է դարձել քահանայապետ եւ տիրել այդտեղ գտնուող գաւառներին ու քաղաքներին, 18 բանագնացներ ուղարկեցին, պղնձէ տախտակների վրայ հրովարտակ գրեցին, որպէսզի նորոգեն եղբայրներ Յուդայի ու Յովնաթանի հետ հաստատած հին բարեկամութեան ուխտը: 19 Դա բերեցին ու կարդացին Երուսաղէմի ժողովրդի առաջ: Այս է

†Հայերէն բնագրում պակասում են 5-րդ եւ 6-րդ համարներ:

սպարտացիների ուղարկած հրովարտակի պատճէնը.
20 «Սպարտացիների իշխաններն ու առաջնորդները մեծ քաղաքի բնակիչների հետ ողջունում են Շմաւոն մեծ քահանային, իսրայէլացիների ծերակոյտին ու քահանաներին, հրեաների բոլոր գնդերին՝ մեր եղբայրներին: 21 Ձեր ուղարկած բանագնացները պատմեցին մեզ ձեր փառքի ու պատուի մասին: Մենք ուրախ ենք նրանց գալստեան համար: 22 Մենք ձեր պատգամները գրեցինք մեր բանակի խորհուրդների մատեանում՝ ըստ այս օրինակի. "Անտիոքոսի որդի Նումենիոսն ու Յասոնի որդի Անտիպատրոսը՝ հրեաների պատգամաւորները, եկել են մեզ մօտ, որպէսզի նորոգեն մեր ազգի հետ բարեկամութիւնը: 23 Բոլոր սպարտացիների համար հաճելի էր մեծ պատուով ընդունել այդ մարդկանց եւ նրանց ասածների պատճէնը դնել սպարտացիների բանակի խորհուրդների մատեանի աչքի ընկնող մի տեղում եւ հրովարտակի պատասխանն ուղարկել Շմաւոն մեծ քահանային"»:
24 Այս դէպքերից յետոյ Շմաւոնը մեծ նուէրներով եւ հազար քանքարի ոսկեայ վահանով նորից պատգամաւորներ ուղարկեց Հռոմ, որ գնան, վերահաստատեն նախկին բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը:

ՇՄԱՒՈՆԸ ՀՐԷԱՍՏԱՆԻ ԳԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԵՒ ԶՕՐԱՎԱՐ

25 Երբ հռոմէացիների բանակն այդ լսեց, զինուորներն սկսեցին խորհել ու ասացին. «Այժմ մենք ինչո՞վ կարող ենք հատուցել Շմաւոնի ու նրա որդիների երախտիքը, 26 որովհետեւ նա, նրա եղբայրներն ու նրա հօր տունը մեզ հետ բարեկամութիւն են հաստատել: Նա կոտորել է իր թշնամիներին, մեզ դարձրել իր բարեկամն ու օգնականը եւ ազատութիւն է տուել իր ժողովրդին»: Այս մասին նրանք գրեցին պղնձէ տախտակների վրայ, դրանք ամրացրին մի կոթողի եւ այն կանգնեցրին Սիոն լեռան վրայ: 27 Այս է նրանց գրած նամակի պատճէնը.

«Հարիւր եօթանասուն թուականին, ամսի տասնութին, Շմաւոնի քահանայապետութեան երրորդ տարում, 28 Սամարէքում հաւաքուած ժողովրդի առաջնորդ մեծ քահանաներին, ժողովրդին, ազգերի իշխաններին, բոլոր գաւառների ծերակոյտին. յայտնի է դարձել մեզ, թէ բազմաթիւ պատերազմներ են մղուել ձեր երկրում, 29 որ Յովարիմի որդիներից Մատաթիա քահանայապետի որդի Շմաւոնն իր եղբայրներով կեանքը վտանգի ենթարկելով՝ պատերազմներ է մղել: Նա դիմակայել է իր ազգի թշնամիներին, որ իրենց սրբութիւններն ու օրէնքները չպղծուեն: Նա մեծապէս փառաւորել է իր ազգը: 30 Յովնաթանը միաւորել է իր ազգը, դարձել քահանայապետ, մեռել ու գերեզման մտել: 31 Երբ թշնամին կամեցել է յարձակուել նրանց երկրի վրայ ու ձեռք մեկնել նրանց սրբութիւններին, 32 այդ ժամանակ վեր է կացել Շմաւոնը, յանուն իր ազգի պատերազմ մղել, իր մեծ հարստութիւնը ծախսել, որ իր ազգի համար կռուողներին սպառազինի, պարէն կուտակի ու զինուորներին թոշակ վճարի: 33 Նա ամրացրել է Հրէաստանի քաղաքները, նաեւ Բեթսորան, որ գտնուում է Հրէաստանի սահմաններում, ուր նախկինում պահում էր իրենց թշնամի զօրքերի զէնքն ու զրահը, այնտեղ կանգնեցրել է հրեայ պահապաններ, 34 ամրացրել Յոպպէզին գտնուող յոպպէացիների քաղաքները եւ Ազոտի սահմանների մօտ գտնուող Գազարան: Նախկինում դա թշնամու ձեռքին է եղել: Նա այնտեղ հրեաներ է բնակեցրել: Ինչ որ հարկաւոր է եղել իրենց, նա արել է հաստատապէս: 35 Երբ ժողովուրդը տեսել է Շմաւոնի այս բոլոր գործերը, նաեւ այն փառքը, որ իր ազգի համար նա խորհում էր ստեղծել, նրան քահանայապետ եւ իշխան է կարգել, որովհետեւ այս ամէնը նա արել էր նրանց համար: Բացի այդ, նա իր ազգը ղեկավարել է արդարութեամբ ու հաւատով: Նա ձգտում էր ամէն կերպ բարձրացնել իր ժողովրդին: 36 Իր օրօք նրան յաջողուել է իր երկրից վերացնել

հեթանոսներին ու նրանց, ովքեր Երուսաղէմի միջնաբերդում են եղել: Սրանք դուրս էին գալիս, գնում ու հիմնովին պղծում սրբարանի շրջակայքը, եւ սրբարանը դրանից մեծապէս տուժել է: Նա նրանց արգելափակել է ու բանջնջել: 37 Երկրի ու քաղաքի ապահովութեան համար նա պահապաններ է նշանակել, ամրացրել ու բարձրացրել քաղաքի պարիսպները: 38 Դեմետրիոս արքան եւս հաստատել է նրա քահանայապետութիւնը: 39 Այս ամենի համար նա իր բոլոր բարեկամների հետ մեծ պատուի է արժանացրել նրան, 40 որովհետեւ լսել է, թէ հրեաները հռոմէացիներին բարեկամ, եղբայր, հովանաւոր ու նիզակակից են անուանել եւ Շմաւոնի պատգամաւորներին փառքով են ընդունել: 41 Հրեաներն իրենք ու քահանաները բարեհաճել ու յանձն են առել նրան ընտրել յաւիտենապէս քահանայապետ իշխան, մինչեւ որ դար հաւատարիմ մի մարգարէ, 42 որպէսզի նրան դարձնէր առաջնորդող զօրավար, եւ նա հոգ տանէր սրբութիւններին, գործավարներ կանգնեցնէր երկրի գործերի վրայ, գաւառների վրայ, զէնք ու զրահի վրայ, բերդերի վրայ: 43 Շմաւոնը պիտի հոգ տանէր սրբութիւններին, ամբողջ ժողովուրդը պիտի հնազանդուէր նրան, նրա անունով պիտի կնքուէին երկրի բոլոր պայմանագրերը: Նա իրաւունք պիտի ունենար ծիրանի զգեստներ հագնելու եւ ոսկով զարդարուելու: 44 Ժողովրդի կամ քահանաների միջից ոչ ոք իրաւունք չպիտի ունենար հակառակուելու նրա հրամաններին կամ առանց նրա թոյլտուութեան երկրում ժողովներ գումարելու, կամ ծիրանի զգեստներ հագնելու, կամ ոսկէ ճարմանդ կրելու: 45 Եթէ որեւէ մէկը զանց առնէր եւ կամ արհամարհէր սրանք, մահուան կը դատապարտուէր:

46 Ժողովրդին հաճելի թուաց ենթարկուել Շմաւոնի ասածին: 47 Շմաւոնը յանձն առաւ եւ հաճոյքով ընդունեց քահանայապետութիւնը, դարձաւ Հրէաստանի բանակի զօրավար եւ սպարապետ, առաջնորդեց բոլորին: 48 Պատուիրեցին պղնձէ տախտակների վրայ գրել այս հրովարտակը եւ հրամայեցին այն դնել բերդում, սրբարանի մէջ, նշանաւոր, աչքի ընկնող մի տեղ, 49 իսկ դրա պատճէնները դնել գանձարանում, որպէսզի Շմաւոնն ու նրա որդիները այն միշտ ունենան իրենց մօտ»:

ԱՆՏԻՈՔՈՍ Է-Ի ԹՈՒՂԹԸ ՇՄԱՒՈՆԻՆ

15 *Դեմետրիոս արքայի որդի Անտիոքոսը կղզիներից հրովարտակներ ուղարկեց քահանայապետ Շմաւոնին, Հրէաստանի կուսակալին ու նրա ամբողջ ազգին: 2 Հրովարտակներն ունէին այսպիսի բովանդակութիւն.*

«Անտիոքոս արքայից ողջո՛յն մեծ քահանայապետ Շմաւոնին եւ հրեայ ազգի կուսակալին: 3 Քանի որ մի քանի անօրէններ եկան ու խլեցին իմ հայրերի թագաւորութիւնը, ուստի ուզում եմ նոյն թագաւորութիւնը վերականգնել եւ հաստատել ինչպէս առաջ: Արդ, ես մեծ զօրք եմ հաւաքել, ռազմանաւեր պատրաստել, 4 որպէսզի ելնեմ ու իմ հայրերի վրէժը լուծեմ այն ազգերից, որոնք մեր երկրին վնաս պատճառեցին, աւերեցին մեր մեծամեծ քաղաքները: 5 Արդ, ես վերահաստատում եմ նախկին թագաւորների այն բոլոր պայմանագրերը, որոնցով վերացուում էին ամէն տեսակի հասոյթի հարկերը: 6 Միաժամանակ հրաման ենք տալիս, որ դու իրաւունք ունես քո երկրում առանձին դրամ հատելու: 7 Երուսաղէմն ու սրբավայրերը ամէն ինչից թող ազատ լինեն, քո պատրաստած զէնքն ու զրահը, քո ամրացրած բերդերը թող պատկանեն քեզ: 8 Արքունի բոլոր պարտքերը, նաեւ հարկերն ու տուրքերը, որ դուք տալիս էք, այսուհետեւ յաւիտեան թող պատկանեն քեզ: 9 Երբ վերականգնենք մեր տէրութիւնը, մեծ փառքով կը պատուենք քեզ, քո ազգն ու քո տաճարը, որպէսզի քո փառքը յայտնի լինի ամբողջ երկրում»:

ԴՈՐԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

10 Հարիւր եօթանասունչորս թուականին Անտիոքոսն եկաւ հասաւ իր հայրերի երկիրը: Նրա մօտ հաւաքուեցին բոլոր զօրքերը, իսկ Տրիփոնի մօտ մնացին սակաւաթիւ մարդիկ: 11 Անտիոքոսը նրան հալածեց, նրան քշեց ծովեզրեայ Դորա բնակավայրը: 12 Երբ բոլոր զինուորները տեսան նրա գլխին եկած չարիքները, լքեցին նրան: 13 Անտիոքոսն եկաւ տասներկու հազար[†] հետեւակ զինուորներով եւ ութ հազար սպառազէն հեծեալներով, բանակ դրեց Դորայի շուրջը: 14 Նա նաւերով փակեց ծովի կողմը եւ քաղաքը շրջափակեց ծովի ու ցամաքի կողմից: Ոչ ոքի չէին թողնում ելնել կամ մտնել:

ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

15 Նումենիոսն ու նրա ուղեկիցները եկան, Հռոմ քաղաքից երկրի թագաւորներին հրովարտակներ բերեցին, ուր գրուած էր հետեւեալը. 16 «Հռոմէացիների հիւպատոս Լեւկիոսից ողջո՛յն Պտղոմէոս արքային: 17 Հրէաստանից աւագներ եկան մեզ մօտ, որպէսզի նորոգեն նախկին բարեկամութիւնը, նիզակակցութիւնն ու օգնութիւնը: Նրանց մեզ մօտ էին ուղարկել քահանայապետ Շմաւոնն ու հրեաների բանակը: 18 Նրանք մեզ բերեցին հինգ հազար քանքարի ոսկեայ վահան: 19 Դրա համար հաճելի է մեզ գրել ձեր երկրի թագաւորներին եւ բոլոր ազգերին, որ ոչ ոք չար բան չխորհի նրանց նկատմամբ, պատերազմ չմղի նրանց քաղաքների ու երկրի դէմ, որպէսզի նրանք մեր թշնամիներին բարեկամ չլինեն: 20 Մեզ համար հաճելի եղաւ նրանցից ընդունել վահանը: 21 Արդ, եթէ իրենց երկրից փախած անօրէն մարդիկ կան, յանձնեցէ՛ք քահանայապետ Շմաւոնին, որպէսզի նրանք կարողանան իրենց օրէնքի համաձայն դատել նրանց»:

22 Որպէսզի դա հաճելի լինի սպարտացիներին, նոյնը գրեց Դեմետրիոս արքային, Աթալային, Արիարէթին, Արշակին, 23 ուղարկեց բոլոր գաւառները՝ Դելոս, Մինդոն, Սիկիոնա, Կարիդա, Սամոն, Պամփիլա, Լիդիա, Ալիկառնաս, Ռոդոն, Փասելիդա, Սիդէն, Արադոն, Գորտինա, Կնիդոս, Կիպրոս եւ Կիւրէն: 24 Հրովարտակների պատճէնը ուղարկեցին քահանայապետ Շմաւոնին:

ԱՆՏԻՈՔՈՍԸ ՁԵՂԵԱԼ Է ՅԱՑՏԱՐԱՐՈՒՄ ԻՐ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

25 Անտիոքոս արքան եկաւ եւ պաշարեց Դորան: Վաղ առաւօտեան այնտեղ մօտեցրեց մարտական մեքենաներ ու սկսեց յարձակումը: Նա ներսում արգելափակուած, պաշարուած պահեց Տրիփոնին: Ոչ ոք չէր կարողանում ներսից դուրս գալ, եւ ոչ ոք չէր կարողանում ներս մտնել: 26 Շմաւոնը նրան օգնելու համար ուղարկեց երկու հազար սպառազէն ընտիր ռազմիկներ, մեծարժէք նուէրներ՝ ոսկի եւ արծաթ, 27 բայց սա դրժեց նրա հետ կնքած իր ուխտը եւ օտարացաւ նրանից: 28 Նա իր բարեկամներից մէկին՝ Աթենոբիոսին ուղարկեց նրա հետ բանակցելու համար եւ ասաց. «Դուք գրաւել ու տիրացել էք իմ թագաւորութեան քաղաքներին՝ յոպպէացիների եւ գազարացիների քաղաքներին ու Երուսաղէմի միջնաբերդին: 29 Դուք աւերել էք դրանց սահմանները, մեծ հարուածներ հասցրել երկրին, շատ գաւառներ գրաւել, բազմաթիւ գաւառներ անջատել իմ տէրութիւնից: 30 Արդ, վերադարձրէ՛ք քաղաքները, գաւառներն ու շրջանները, դրանցից գանձուող հարկերը, ինչպէս նաեւ Հրէաստանից դուրս գտնուող այն վայրերը, որ նախկինում բռնութեամբ նուաճել էք մեզանից, 31 ապա թէ ոչ, դրանց փոխարէն տուէ՛ք հինգ հարիւր քանքար արծաթ, ինչպէս նաեւ քաղաքների մինչեւ այսօր չվճարած հարկերն ու ձեր պատճառած աւերի վարձը՝ եւս հինգ հարիւր քանքար: Այլապէս կը գանք ու կը պատերազմենք, կը հարուածենք երկիրը եւ կը կոտորենք»:

32 Երբ արքայի բարեկամ Աթենո-

[†]Այլ բնագրերում՝ հարիւր հազար:

բիոսը եկաւ Երուսաղէմ, տեսաւ Շմաւոնի փառքը, ոսկէ ու արծաթէ սպասքը, մեծաթիւ զօրքի պատրաստի հանդերձանքը, ոտքի կանգնեց նրա առաջ եւ յարգանքով հաղորդեց Թագաւորի պատգամը: 33 Շմաւոնը պատասխանեց նրան ու ասաց. «Օտար երկիր չենք մտել, ոչ էլ որեւէ մէկի բաժնին բռնութեամբ, յանիրաւի ձեռք ենք մեկնել: Անօրէն թշնամիների ձեռքից իզուր տեղը վտարանդի դարձած մեր հայրերի ժառանգութիւնն է, 34 որ քաջութեամբ, ժամանակի ընթացքում յետ ենք վերցրել: 35 Ինչ վերաբերում է յոպպէացիների ու գազարացիների քաղաքներին, որ դուք պահանջում էք, ապա դրանք մեծ վնասներ են հասցրել մեր աշխարհին, ուստի մենք էլ վրէժ ենք լուծել նրանցից: Դրա համար մենք կը վճարենք հարիւր քանքար»:

Բայց Աթենոբիոսը պատասխան չտուեց, 36 զայրացած վերադարձաւ Թագաւորի մօտ, նրան հաղորդեց Շմաւոնի վայելած փառքն ու իր տեսած չքեղութիւնը: Թագաւորը խիստ բարկացաւ:

ԿԵՆԴԵԲՈՍԸ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ Է ՀՐԷԱՍՏԱՆ

37 Տրիփոնը փախաւ Օրթոսիա: 38 Թագաւորը ծովեզրեայ շրջանների վրայ սպարապետ նշանակեց Կենդեբոսին, նրան յանձնեց մեծաթիւ հեծեալ եւ հետեւակ զօրքեր: 39 Պատուիրեց նրան, որ բանակ դնի Հրէաստանի դէմ-յանդիման եւ բերդեր շինելով իսրայէլացիների բանակի դէմ՝ պատերազմելու համար պատրաստութիւն տեսնի: Թագաւորն ի՛նքը հետապնդեց Տրիփոնին:

40 Կենդեբոսը եկաւ հասաւ Ցամնիայի կողմերը, սկսեց հրահրել զօրքերին, որ մտնեն Հրէաստան, գերեն ու սպանեն: 41 Նա կառուցեց Կեդրոնը եւ այնտեղ շատ հեծելազօր հաւաքեց, որ ներխուժեն Հրէաստան, շրջափակեն նրանց ճանապարհները, ինչպէս Թագաւորն էր հրամայել:

ՇՄԱՒՈՆԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՓԱԽՈՒՍՏԻ ԵՆ ՄԱՏՆՈՒՄ ԿԵՆԴԵԲՈՍԻՆ

16 Ցովհաննէսը վերադարձաւ Գազարայից, եկաւ պատմեց իր հայր Շմաւոնին, թէ ինչեր է անում Կենդեբոսը: 2 Շմաւոնը կանչեց իր երկու որդիներին՝ Ցուդային ու Ցովհաննէսին, եւ ասաց նրանց. «Ես, իմ եղբայրներն ու իմ հօր տոհմը մեր մանկութիւնից մինչեւ այսօր կռուել ենք իսրայէլացիների թշնամիների դէմ: Մենք յաջողութիւններ ենք ունեցել, մեր ձեռքով բազմաթիւ իսրայէլացիներ ենք փրկել: 3 Հիմա, սակայն, ես ծերացել եմ, իսկ դուք արդէն հասուն տղամարդ էք: Փոխարինեցէ՛ք ինձ ու իմ եղբօրը: Արդ, ելէ՛ք, կռի՛ւ մղեցէք յանուն մեր ազգի, եւ երկնքից օգնական ուժեր կը հասնեն ձեզ»:

4 Նա իր երկրից ընտրեց սպառազէն մօտ քսան հազար հեծեալ եւ գնաց Կենդեբոսի դէմ: 5 Այդ օրը գիշերեցին Մոդիիմում: Առաւօտեան, վեր կենալով, դաշտ մտան: Այնտեղ նրանք տեսան բազմաթիւ հեծեալ ու հետեւակ զօրքեր, որոնք գալիս էին իրենց դէմ: Երկու կողմերի միջեւ մի հեղեղատ կար: 6 Նրանց դիմաց ճակատ յարդարեցին ինքն ու իր զօրքը: Երբ Ցովհաննէսը տեսաւ, թէ նրանց զօրքը դանդաղում է անցնել հեղեղատը, նախ ինքն առաջ ընկաւ, իսկ յետոյ զօրքը միահամուռ գնաց նրա յետեւից: 7 Նա հետեւակ գունդը բաժանեց երկու մասի, իսկ հեծելազօրը դասաւորեց հետեւակների միջեւ: Թշնամու հեծելազօրը շատ-շատ էր: 8 Շեփոր հնչեցրին, միմեանց քաջալերեցին ու անցան յարձակման: Կենդեբոսը պարտութեան մատնուեց, եւ այդ օրը նրա զօրքից բազմաթիւ մարդիկ սպանուեցին, իսկ կենդանի մնացածները փախան մտան բերդերը: 9 Այդ օրը վիրաւորուեց Ցուդան, իսկ Ցովհաննէսը հալածեց փախուստի դիմածներին, մինչեւ որ նրանց հասցրեց Կենդեբոսի կառուցած Կեդրոնի կողմերը: 10 Նրանց մի մասը գնաց մինչեւ Ազոտի կողմերի բուրգերը. Ցովհաննէսը կրակի ճարակ դարձրեց դրանց: Այդ բերդում

հրդեհից այրուեց մօտ երկու հազար մարդ, իսկ ինքը խաղաղութեամբ վերադարձաւ Հրէաստանի կողմերը:

ՊՏՂՈՄԷՈՍԻ ԽԱՐԴԱՒԱՆՔԸ ԵՒ ՇՄԱՒՈՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

11 Աբուբի որդի Պտղոմէոսը Երիքովի դաշտի վերակացուն էր: 12 Նա շատ արծաթ ու ոսկի ունէր, որովհետեւ քահանայապետի փեսան էր: 13 Նա մեծամտացաւ, հպարտացաւ ինքն իր մէջ եւ ուզում էր տիրել այդ կողմերի գաւառներին: Նա նենգ դաւեր էր նիւթում Շմաւոնի ու նրա որդիների դէմ, որպէսզի մէջտեղից վերացնի նրանց: 14 Շմաւոնը շրջագայում էր այդ կողմերի գաւառները, տեսնում եւ հոգում էր բնակիչների կարիքները: Նա Մատթիայի, Ցուդայի ու իր որդիների հետ եկաւ իջաւ Երիքով: Դա հարիւր եօթանասուներեօթը թուականի շաբաթամսի տասնմէկերորդ օրն էր: 15 Պտղոմէոսն իր կառուցած Դորա քաղաքում ընդունեց նրանց կեղծ մեծարանքով, խնջոյք սարքեց հիւրերի պատուին, մինչդեռ նա դարանում մարդիկ էր թաքցրել: 16 Երբ Շմաւոնն ու իր որդիները կերան, խմեցին ու հարբեցին, Պտղոմէոսը եւ թաքնուած մարդիկ վերցրին իրենց զէնքերը, յարձակուեցին Շմաւոնի վրայ եւ խնջոյքի սրահում սպանեցին նրան, նրա որդիներին ու նրանց հետ եկած ծառաներին: 17 Նրանք անօրէն մեծ գործ կատարեցին, բարութիւնը չարութեամբ հատուցեցին:

18 Պտղոմէոսը թագաւորին գրեց, որ իրեն օգնական զօրք ուղարկի, որպէսզի թագաւորին յանձնի իրենց քաղաքներն ու հարկերը: 19 Նա զօրքի մի մասն ուղարկեց Գազարայի կողմերը, որպէսզի այնտեղից վերացնի Ցովհաննէսին: Նա գրեց նաեւ զօրապետներին, որ գան ու իրենից ստանան ոսկի, արծաթ ու բազմաթիւ պարգեւներ: 20 Միւսներին ուղարկեց Երուսաղէմ, որ շտապ հասնեն, գրաւեն այն լեռը, որի վրայ գտնուում էր տաճարը: 21 Մի մարդ աւելի շուտ եկաւ Գազարա եւ գոյժ տուեց Ցովհաննէսին, թէ՝ «Քո հայրն ու եղբայրները սպանուել են, նենգ մտադրութեամբ մարդիկ են գալիս քո յետեւից, որ սպանեն նաեւ քեզ»:

22 Երբ Ցովհաննէսը լսեց այս, խիստ զարմացաւ, զայրացաւ, բռնել տուեց իրեն սպանելու եկած մարդկանց ու անմիջապէս սպանեց նրանց, որովհետեւ իմացաւ, որ նրանք եկել էին նենգութեամբ սպանելու իրեն:

23 Ինչ վերաբերում է Ցովհաննէսին, նրա պատերազմներին, տարբեր մարդկանց քաջագործութիւններին, պարիսպների շինարարութիւններին կամ բարի գործերին եւ այլ պատմութիւններին, 24 դրանք բոլորը գրի են առնուած քահանաների մատեաններում, սկսած այն օրից, երբ Ցովհաննէսը իր հօրից յետոյ դարձաւ քահանայապետ:

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Մակաբայեցիների երկրորդ գիրքը նոյն անունը կրող առաջին գրքի շարունակութիւնը չի կազմում: Այս գրքի նպատակն է հրաւէր կարդալ Եգիպտոսի հրեաներին, որ իրենք եւս ոգեկոչեն Յուդա Մակաբայեցու կողմից վերանուաճուած եւ մաքրագործուած Երուսաղէմի տաճարի Նաւակատիքի յիշատակը: Այդ նպատակը յստակօրէն երեւում է գրքի առաջին մասում, յատկապէս այնտեղ մէջբերուած այն երկու նամակներում, որոնք Երուսաղէմի կրօնական իշխանութիւնների կողմից ուղղուած են Եգիպտոսի հրէական համայնքին:

Գրքի երկրորդ մասում պատմւում է, թէ ինչպէս յոյները կամ նրանց կողմնակիցները կողոպտում են տաճարի սրբազան գանձերը եւ այնտեղ ներմուծում իրենց հեթանոսական պաշտամունքները, թէ ինչպէս են ձգտում նաեւ բազմատեսակ տանջանքների միջոցով բռնադատել հաւատարիմ հրեաներին՝ ուրանալու իրենց հաւատը եւ ընդունելու յունական սովորոյթներն ու կրօնը:

Երրորդ մասում նկարագրուած են Յուդա Մակաբայեցու գլխաւորած զինեալ ապստամբութիւնը եւ նրա ունեցած առաջին յաջողութիւնները յունական զօրքերի դէմ, որոնց շնորհիւ հնարաւոր եղաւ մաքրագործել տաճարը եւ վերահաստատել հրէական պաշտամունքը: Այս մասում այնուհետեւ յիշատակւում են Յուդայի ձեռք բերած նոր յաղթանակները մինչեւ Դեմետրիոս Ա-ի բանակի զօրագլուխ Նիկանորի մահը:

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂՂՈՒԱԾ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԵԱՆԵՐԻՆ

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

1 «Եգիպտոսի կողմերում ապրող հրեայ եղբայրներին ողջո՛յն Երուսաղէմի ու Հրէաստանի հրեայ եղբայրներից: 2 Աստուած թող ձեզ յարատեւ խաղաղութիւն պարգեւի, յիշի իր հաւատարիմ ծառաներ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ կնքած ուխտը, 3 ձեզ տայ սիրտ, որ ըստ ամենայնի պաշտէք իրեն, յօժարակամ ու սրտանց կատարէք նրա կամքը, 4 իր օրէնքների ու հրամանների համար բաց անէք ձեր աչքերն ու ձեր սրտի ականջները, խաղաղութիւն հաստատէք, եւ նա էլ լսի ձեր խնդրանքները, 5 բարեհաճ լինի ձեր նկատմամբ, ձեզ չլքի նեղութեան ժամանակ: 6 Ահա այժմ մենք աղօթում ենք ձեզ համար:

7 Դեմետրիոսի թագաւորութեան օրօք, հարիւր վաթսունինը թուականին մենք՝ հրեաներս, գրեցինք եւ ուղարկեցինք ձեզ այս աղօթքը այն ժամանակ, երբ նեղութիւն է հասել մեզ վրայ, այն ժամանակ, երբ Յասոնն ու նրա հետ եղածները հրաժարուել են սուրբ հողից ու թագաւորութիւնից, 8 կրակի մատնել տաճարի դարպասը, անմեղ արիւն թափել: Այս աղօթքը մենք մատուցեցինք Տիրոջը, եւ նա լսեց մեզ. մենք ուխտ կատարեցինք, մատուցեցինք խունկ ու ընտիր ալիւրի ընծաներ եւ ամենօրեայ հաց: 9 Արդ, Տաղաւարահարաց տօնը կատարեցէ՛ք Քասղեւ ամսին: 10 Սա գրուեց հարիւր ութսունուութ թուականին»:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ

«Երուսաղէմացիները, Հրէաստանի ծերակոյտը եւ Յուդան ողջունում են ու խաղաղութիւն մաղթում Պտղոմէոս արքայի դաստիարակ Արիստաբուլոսին, որ օծուած քահանաների ցեղից է, ինչպէս նաեւ Եգիպտոսի կողմերում ապրող հրեաներին: 11 Մենք՝ Աստծու շնորհիւ մեծամեծ փորձութիւններից փրկուածներս, չափազանց գոհ ենք նրանից, որովհետեւ մենք թէեւ թագաւորի դէմ պատերազմելու պատրաստութիւն էինք տեսել, բայց նա ինքը հետապնդեց նրանց, 12 ովքեր եկել, շրջափակել ու պաշարուած էին պահել սուրբ քաղաքը, 13 որովհետեւ երբ Անտիոքոս Թագաւորն ինքը անթիւանհամար զօրքերով յարձակուել էր պարսից կողմերի վրայ, նրանք ընկել-կոտորուել էին Նանէի տաճարի շուրջը, նրանց դէմ խորամանկ դաւ էին լարել Նանէի տաճարի քրմերը, 14 երբ Անտիոքոսն ինքը եկել էր այդտեղ, իբր ուզում էր բնակուել այդտեղ, իսկ իր հետ եղած բարեկամները մտադրուել էին այդտեղի բոլոր գանձերը վերցնել իբրեւ օժիտ: 15 Տաճարի քրմերը բոլոր գանձերը դրել էին նրա առաջ, եւ նա համաձայնել էր ներս մտնել սակաւաթիւ մարդկանցով: Երբ նա հասած է եղել սրահի մէջտեղը, յանկարծ փակել են պարսպի արտաքին դարպասները, որտեղից մտած է եղել Անտիոքոսը, 16 բացել են առաստաղի տակ գտնուող գաղտնի պատուհանները եւ սկսել այնտեղից մեծ-մեծ քարեր նետել եւ տեղնուտեղը սպանել են առաջնորդին ու զինուորներին: Ներսում նրանց կտոր-կտոր անելուց յետոյ կտրել են նրանց գլուխները եւ պարսպից շպրտել զօրքերի մէջ: 17 Այս ամենի համար օրհնեալ է ամբարիշտներին պատժող Աստուածը:

18 Արդ, երբ ուզեցինք Քասղեւ ամսի քսանհինգին մաքրել տաճարը, յարմար գտանք այդ մասին յայտնել նաեւ ձեզ, որպէսզի դուք եւս կատարէք Տաղաւարահարաց ու կրակի տօնը այնպէս, ինչպէս Նէեմին, որը տաճարն ու սեղանը կառուցելուց յետոյ այնտեղ զոհեր էր մատուցում:

19 Երբ մեր հայրերին քշում էին պարսից կողմերը, կրօնասէր քահանաները զոհասեղանից գաղտնի կրակ վերցրին եւ տարան թաքցրին մի անջուր ջրհորի խորշերում: Այդ տեղը զգուշութեամբ քօղարկեցին այնպէս, որ այդ վայրն աննկատ մնայ: 20 Շատ տարիներ յետոյ, Աստծու կամեցողութեամբ, պարսից արքայի հրամանով Նէեմին կրակի յետեւից ուղարկեց այն

քահանայապետերի թոռներին, որոնք պահել թաքցրել էին կրակը, որպէսզի յետ բերեն այն: Նրանք եկան, պատմեցին ու ասացին. “Մենք այնտեղ կրակ չենք գտել, այլ միայն՝ լճացած ջուր”: 21 Դրանից յետոյ նա նրանց հրաման տուեց գնալ, հաւաքել ջուրն ու բերել: Երբ հասաւ ողջակէզներ մատուցելու ժամանակը, Նէեմի քահանայապետը հրաման տուեց, որ այդ ջուրը շաղ տան փայտերի ու ողջակէզների վրայ: 22 Երբ դա արեցին, անցաւ մի փոքր ժամանակ, արեգակը շառագոյն շողեր արձակեց դրա վրայ, եւ կրակի բոցեր ելան սեղանի վրայի փայտերից ու լափեցին ողջակէզները, այնպէս որ բոլորը սքանչացան: 23 Քահանաները ձայնակցեցին իրար եւ սկսեցին օրհնել, քանի դեռ ողջակէզներն այրւում էին: Յովնաթանն առաջ ինքը սկսեց, իսկ Նէեմին եւ միւսները նրա յետեւից ձայնակցում էին: Աղօթքն այսպիսին էր.

24 “Տէ՛ր, բոլոր արարածների Տէ՛ր Աստուած, ահեղ, հզօր, ճշմարիտ, արդար եւ ողորմած, դու ես միակ թագաւորը, որ քաղցր ես, 25 դու ես, որ բոլորին մատակարարում ես ամէն ինչ, դու ես միայն արդար եւ ճշմարիտ, դու ես յաւիտենապէս Ամենազօրը, որ Իսրայէլը փրկում ես բոլոր պատուհասներից: Դու ես, որ հայրերին ընտրեալներ դարձրիր եւ սրբագործեցիր նրանց: 26 Յանուն քո ամբողջ ժողովրդի ընդունի՛ր այս զոհերը եւ պահի՛ր ու պահպանի՛ր քո ժառանգութիւնը: 27 Սրբագործի՛ր ու հաւաքի՛ր ցրուած մեր գերիներին, ազատի՛ր նրանց, որ անարգ ու պիղծ մարդկանց ծառայութեան տակ են, նայի՛ր քո ծառաներին, որպէսզի թշնամիներն իմանան, թէ դու ես մեր Աստուածը: 28 Քո հարուածներն իջեցրո՛ւ պիղծ ու անարգ հեթանոսների գլխին, որոնք մեզ հետ ամբարտաւանօրէն են վարւում: 29 Քո ժողովրդին բեր հաստատո՛ւ քո սրբավայրը, ինչպէս ասել է Մովսէսը”:

30 Քահանաներն իրենց օրհնութիւնն էին մատուցում, 31 իսկ ողջակէզները տակաւին այրւում մոխրանում էին: Երբ զոհաբերութիւնն աւարտուեց, Նէեմին հրամայեց մնացած ջուրը շաղ տալ քարերի վրայ: 32 Երբ դա կատարեցին, բոցն աւելի բորբոքուեց: Երբ բոցի լեզուները բարձրացան, զոհասեղանի կրակն աւելի բորբոքուեց ու մոխրացաւ այն ամէնը, ինչ դեռեւս մնացել էր: 33 Երբ այս հրաշքը բացայայտ երեւաց բոլորին, ու այս դէպքը յայտնեցին թագաւորին, թէ այն վայրում, ուր գերի քահանաները կրակն էին թաքցրել, ջուր է բխել, եւ Նէեմին ու նրա մօտ գտնուող քահանաները դրանով են ողջակէզները սրբագործել: 34 Երբ թագաւորը վերահասու եղաւ այս դէպքերին, հրամայեց շուրջանակի փակել այդ վայրը եւ տաճար կառուցել: 35 Երբ թագաւորը կամենում էր որեւէ մէկին մեծարել, ապա տալիս էր այն պարգեւներից, որ իրեն էին մատուցում: 36 Նէեմիի մօտ գտնուողներն այդ վայրը անուանեցին Նեփթէ, որ թարգմանաբար նշանակում է սրբագործող: Շատերն էլ դրան Եփրաթա անունն են տալիս»:

ԵՐԵՄԻԱՆ ԹԱՔՑՆՈՒՄ Է ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԸ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆԳԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

2 Նախկին մատեաններում գրուած է, թէ Երեմիա մարգարէն դրանից յետոյ հրամայել է վերցնել այդ կրակից, այնպէս, ինչպէս ցոյց է տրուած: Մարգարէն նրանցից յետոյ եկած սերնդին պատուիրել 2 եւ օրէնք է դրել, որ, երբ տեսնեն քանդակուած կուռքեր, ոսկուց ու արծաթից կերտուած նկարներ ու դրանց շուրջը գտնուող զարդեր, չմոլորուեն իրենց խորհուրդների մէջ. 3 նա պատուէր տալով աղաչում էր, որ չմոռանան եւ իրենց սրտից չհանեն Տիրոջ Օրէնքը: 4 Նրա մատեանում նաեւ այսպէս է գրուած եղել. իբր թէ մարգարէն, երկնային հրամանի համաձայն, հրամայել է վկայութեան խորանն ու կտակարանների տապանակը իրենց հետ մանածել, հասցնել այն լեռը, որտեղ բարձրացել էր Մովսէսը Աստծու ժառանգութիւնը տեսնելու համար: 5 Երբ

Երեմիա մարգարէն եկաւ հասաւ այդ վայրը, այնտեղ գտաւ անտառապատ ամուր քարանձաւներ. վկայութեան խորանը, կտակարանների տապանակը, խնկերի սեղանը նա տարաւ դրեց ներս եւ փակեց մուտքը: 6 Նրան ուղեկցող մարդիկ մօտեցան, որ գտնեն այդ վայրը, բայց այդ վայրը տանող ճանապարհն իսկ չգտան: 7 Երբ Երեմիան իմացաւ դա, սկսեց յանդիմանել նրանց ու ասաց. «Մի՞թէ չգիտէիք, որ, ըստ հրամանի, անյայտ պիտի մնայ այդ վայրը, մինչեւ որ Տէրերի Տէրը բարեհաճ վերաբերմունք ցոյց տայ իր արարածների նկատմամբ, եւ Աստուած հրամայի ի մի հաւաքել իր ժողովրդին: 8 Դրանից յետոյ միայն Տէրը ցոյց կը տայ այդ վայրը, Տիրոջ փառքը կ՚երեւայ ամպի սիւնից, ինչպէս Մովսէսի ժամանակ: Եւ ինչպէս Սողոմոնն էր աղաչել, Տիրոջ այդ վայրը կատարելապէս կը սրբագործուի»: 9 Պատմում էին նաեւ այն մասին, թէ ինչպէս, իմաստութեամբ լցուած, Սողոմոնը մատուցել էր նաւակատիքի ու տաճարն աւարտելու զոհերը: 10 Ինչպէս որ Մովսէսն աղօթել էր Աստծուն, կրակն իջել էր երկնքից, լափել փայտն ու պատարագների ողջակէզները, նոյն ձեւով էլ աղօթքի էր կանգնել Սողոմոնը, եւ կրակն իջնելով լափել էր զոհասեղանի վրայի ողջակէզները: 11 Մովսէսը չէր հրամայել, որ մեղքերի համար մատուցուած զոհերի միսն ուտէին, ուստի կրակն իջնում ու լափում էր զոհերը: 12 Նոյն ձեւով Սողոմոնն էր ամբողջ ութ օր տօն կատարել:

13 Նէեմիի օրօք գրուած հին մատեաններում՝ յիշատակարաններում, գրուած է նաեւ, թէ ինչպէս են հաւաքուել թագաւորների ու իշխանների, նաեւ Դաւթի մասին գրուած բոլոր գրքերը, ինչպէս նաեւ թագաւորների այն հրովարտակները, որ տարբեր պատճառներով տաճարին էին նուիրուել: Այդ բոլորը հաւաքուել է մի տեղ: 14 Նոյն ձեւով Յուդան է մի տեղ հաւաքել պատերազմի պատճառով կորած ու ցրուած գրքերը: Դրանք հիմա մեզ մօտ են պահւում: 15 Արդ, եթէ դրանց կարիքն ունէք, մա՛րդ ուղարկեցէք, որ դրանք բերեն ձեզ: 16 Բարի գործ կատարած կը լինէք, եթէ միշտ պահէք տօն օրերը: 17 Ամբողջ ժողովրդին փրկութիւն պարգեւած Աստուածն ինքը բոլորին վերադարձրել է իրենց ժառանգութիւնը, թագաւորութիւնը, քահանայութիւնն ու սրբութիւնները, 18 ինչպէս խոստացել էր Կտակարանների մէջ: Յուսանք, որ Աստուած շուտով բոլորին կը հաւաքի սուրբ վայրում, 19 որովհետեւ նա է փրկել մեզ մեծամեծ փորձանքներից ու մաքրել սրբավայրը:

ՀԵՂԻՆԱԿԻ ՏԵՍԱԿԷՏՔ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

20 Ինչ վերաբերում է Յուդա Մակաբայեցու եւ նրա եղբայրների օրօք կատարուած դէպքերին, մեծ տաճարի սրբագործմանը, նաւակատիքի զոհասեղանի 21 կամ Անտիոքոս Երեւելու, ինչպէս նաեւ ազնուազարմ Հօր որդու դէմ մղուած ճակատամարտերին, յանուն օրէնքների քաջագործութիւն կատարած ու հաստատակամութիւն ցուցաբերած մարդկանց երկնքից երեւացած յայտնութեանը 22 կամ աշխարհին տիրանալ ցանկացող խուժդուժ ազգերին հալածելու համար մահուանն ընդառաջ գնացած սակաւաթիւ մարդկանց, 23 ամբողջ տիեզերքում հոյակապ, չքեղ տաճարը նորից կառուցելուն կամ մեծ քաղաքն ամէն փորձանքից ազատելուն կամ Տէր Աստծուն քաղցրութեամբ ու խաղաղութեամբ մեր նկատմամբ հաճելի դարձնելուն, – 24 ահա այս բոլորի մասին հանգամանօրէն եւ ժամանակին գրուած է Յասոն Կիւրենացու գրքի հինգ գլուխներում: Այս ամէնը աշխատեցինք մի գրքում համառօտակի վերարտադրել: 25 Մենք նկատեցինք, որ նրանք, ովքեր կ՚ուզենան խորամուխ լինել այդ մատեաններում նկարագրուած դէպքերին, կարող են խճճուել թուերի շատութեան պատճառով, 26 մոլորուել շարադրուող նիւթերի մանրամասնութեան մէջ: Մենք հոգ ենք տարել, որ իմաստուն ընթերցողների գործը հեշտանայ, նրանք յիշեն առանց չարչարուելու եւ առանց որեւէ

բան եղծելու: 27 Զկարծէք թէ հեշտ, քիչ քրտինք ու տքնութիւն պահանջող գործ ենք ձեռնարկել, եթէ յանձն ենք առել համառօտ բան գրելու աշխատանքը: 28 Եթէ մէկը պատրաստւում է հիւրասիրել խնջոյքի հրաւիրուած իր ընկերներին, ապա նրանց ուրախացնելու համար պէտք է ճոխ սեղան բաց անի եւ ոչ թէ իր հանգստեան մասին մտածի: Մենք շատերին հաճոյք պատճառելու համար ենք ջանք թափել: 29 Ճշտելն ու ճշգրտելը մեր նախորդների գործն է եղել, մենք յանձն ենք առել միայն համառօտել, պարզ ու սեղմ դարձնել ընդարձակ խօսքը: 30 Ինչպէս ապարանքի շինութեան ժամանակ շատերին է գործ յանձնարարւում, բայց գործի սկիզբն ու աւարտը բուն ճարտարապետի գործն է, իսկ ծեփելը, ներկելը, զարդարելն ու նկարելը արուեստագէտի գործն է, 31 նոյնը վերաբերում է մեզ. հարցուփորձ անելը, քննելը, ճշմարիտ խօսքին հետամուտ լինելը, գաղտնիքների մէջ թափանցելը մատենագրութեանը հետեւողների խնդիրն է, 32 իսկ համառօտ պատմութիւն ներկայացնելը, որ այժմ յանձն եմ առնում, կարող էք պահանջել ինձանից:

33 Արդ, այստեղ սկսենք պատմել այն, ինչ խոստացել էինք: Անմտութիւն է գրքի նախաբանն ընդլայնել, իսկ բուն մատեանի բովանդակութիւնը ներկայացնել համառօտակի:

ՍԻՄՈՆԻ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

3 Կար ժամանակ, որ սուրբ տաճարի բարեպաշտ ու չարատեաց Օնիա քահանայապետի շնորհիւ սուրբ քաղաքի բնակիչները ապրում էին խաղաղ եւ սրբութեամբ պահում ճշմարիտ օրէնքները: 2 Եթէ անգամ հարկ էր լինում, թագաւորներն իրենք էին պատւում երեւելի տաճարը հրովարտակներով, բազմաթիւ նուէրներով ու ընծաներով. 3 նոյնիսկ ինքը՝ ասիացիների կողմերի արքայ Սելեւկիոսը մասնակցում էր ծիսակատարութեանը եւ իր եկամուտներից էր ծախսում ողջակիզման զոհեր մատուցելու համար:

4 Բաղգեղի† ցեղից Սիմոն անունով մէկը, որն իր տոհմի առաջնորդն էր, մեղադրեց քահանայապետին քաղաքում կատարուող անօրէնութիւնների համար: 5 Տեսնելով, որ չի կարողանում յաղթել կամ վնասել Օնիային, նա եկաւ կանգնեց Դրասէի որդի Ապոլոնի առաջ, որն այդ ժամանակ Ստորին Ասորիքի եւ Տաճկաստանի‡ սպարապետն էր: 6 Նա նրան յայտնեց, որ Երուսաղէմի գանձատունը բազում գանձեր ունի, եւ տարբեր տեսակի այդ գանձերի թիւն ու հաշիւը ոչ ոք չի կարող պահել: Նա ասաց. «Այդ գանձերը պէտք է արքային պատկանեն եւ յատկացուեն զոհեր մատուցելուն»: 7 Ապոլոնիոսն այդ մասին իրազեկ դարձրեց թագաւորին, եւ նրանք յանձն առան հետաքրքրուել այդ գանձերով: Թագաւորը կանչեց իր հանդերձապետ Հելիոդորոսին, հրամայեց այդ գանձը հանել ու բերել քաղաքից: 8 Հելիոդորոսն շտապ գնաց իբր թէ Ստորին Ասորիքի ու Տաճկաստանի քաղաքների վիճակն ստուգելու, բայց իրականում թագաւորի հրամանն էր կատարում: 9 Երբ հասաւ Երուսաղէմ, այնտեղ քահանայապետն ու քաղաքացիները մեծ պատուով ընդունեցին նրան: Նա սկսեց նրանց պատմել, թէ ինչ են ասել արքային, ու ասաց. «Ո՞վ, կամ ինչպէ՞ս, կամ ինչո՞ւ են ձեր մասին ամբաստանել արքային, եւ կամ իրո՞ք այնքան գանձ կայ, որքան ասել են»: 10 Քահանայապետն առաջ եկաւ ու ասաց. «Ճիշտ է, հարստութիւններ կան, բայց դրանք այրիների ու որբերի պահ դրուած աւանդներն են: 11 Այստեղ բաժին ունի նաեւ Տուբիի որդի Օրկանիոսը՝ մի մեծ մարդ, բայց չկայ այնքան գանձ, որքան ասել է ամբաստանութեան նամակ գրող անօրէն Սիմոնը: Այդտեղ ընդամէնը կայ չորս հարիւր քանքար արծաթ եւ երկու հարիւր քանքար ոսկի: 12 Չի կարելի հաւատացեալներին զրկել այն հաւատից, որ նրանք ունեն ամբողջ աշխարհում փառաւոր հռչակ

†Այլ բնագրերում՝ Բենիամինի:

‡Հնում հայերը այսպէս են կոչել Պաղեստինի, Փիւնիկէի եւ Հարաւային Սիրիայի շրջանները:

ունեցող սուրբ տաճարի նկատմամբ»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԽՌՎՈՒԹԵԱՆ ՄԷՋ

13 Երբ Հելիոդորոսը լսեց քահանայապետի խօսքերը, յիշեց արքայի հրամանն ու ասաց. «Հրամայուած է, որ յօգուտ արքունիքի վերցուի այդ գանձը»: 14 Նա օր ու ժամ նշանակեց եւ, ըստ արքունի հրամանի, պատրաստւում էր մտնել, հաշուել ու բռնագրաւել գանձը: Այդ ժամանակ քաղաքում քիչ յուզումներ ու խռովութիւններ չառաջացան. 15 քահանաներն իրենք սրբազան պատմուճաններով ընկնում, թաւալւում էին սեղանի առաջ, աղաչում էին նրան, ով այդ աւանդները սրբութեամբ պահելու համար օրէնքներ էր սահմանել, որ կարողանան այդ բոլոր աւանդներն անվնաս իրենց աւանդատուներին հասցնել: 16 Մարդ խոցւում էր իր սրտում, երբ տեսնում էր քահանայապետի դէմքը, նրա երեսի արտայայտութիւնն ու գոյնը, որ նրա հոգու տրտմութիւնն էին արտացոլում, 17 որովհետեւ ահն ու սարսափն էր պատել նրան, եւ մարմինը դողում էր: Այդ ամենից յայտնի էր դառնում նրա սրտի մորմոքը: 18 Բոլոր տներից ընտանիքները խումբ-խումբ դուրս էին գալիս ընդհանուր աղօթքի, որպէսզի չոտնահարուի մեծ տաճարի պատիւը: 19 Կանայք քուրձ էին հագնում ու ողբում հրապարակներում, ճգնաւոր կոյսերը կուսանոցներից գնում էին դէպի դարպասներն ու պարիսպները, ոմանք պատուհաններից բազուկները դուրս էին կարկառում, 20 եւ բոլորն առհասարակ, ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով եւ մատները տատանելով, աղօթք էին մրմնջում: 21 Ողորմելի տեսարան էր դա, որովհետեւ մարդիկ առհասարակ գետին ընկնելով, թաւալուելով՝ աղօթք էին մատուցում դէպի երկինք. մեծապէս տագնապած՝ քահանայապետը կարծէք հրաշքի էր սպասում: 22 Նրանք այսպէս, ընկնելով ու թաւալուելով, դիմում էին Ամենակալին, որ հաւատացեալների աւանդները լրիւ ու անվնաս հասցնի հաւատացեալներին: 23 Հելիոդորոսն ուզում էր կատարել այն, ինչ յանձնարարուած էր իրեն:

ՀԵԼԻՈԴՈՐՈՍԻ ՊԱՏԻԺԸ

24 Դրա համար նա իր թիկնապահների հետ մտաւ գանձատուն, բայց բոլոր հոգիների եւ իշխանութիւնների վրայ զօրութիւն ունեցող Տէրը մի մեծ հրաշք ցոյց տուեց. բոլոր նրանք, ովքեր յանդգնել էին նրա հետ ներս մտնել, խեղուեցին, անդամալոյծ դարձան Աստծու վախից: 25 Նրանց յանկարծ երեւաց մի փառահեղ ձի հեծեալի հետ, որն ունէր ոսկեզարդ հանդերձանք: 26 Հեծեալի առաջ կանգնած էին գեղեցիկ զարդերով զարդարուած երկու երիտասարդներ: Սրանք աջ ու ձախ կողմերից անմիջապէս մօտենալով սաստիկ հարուածներ տեղացին Հելիոդորոսի վրայ, 27 այնպէս որ սա մերձիմահ, անզգայ ընկաւ գետին. եւ վերցրին նրան†: 28 Նա, որ այդպիսի շուքով, պատուով, սպառնալիքով եւ թիկնապահներով մտել ու ճեմում էր գանձատանը, այժմ նրան բարձրացրած տանում էին անզգայ վիճակում: 29 Պարզ երեւում էր, որ Աստծու զօրութիւնն էր վրայ հասել, եւ նա անմռունչ ու անբարբառ, փրկութեան ամէն մի յոյսից կտրուած, կիսամահ գետին էր ընկել: 30 Ինչ վերաբերում է Օնիայի շուրջը գտնուողներին, ապա սրանք օրհնում էին Տիրոջը, որն ամէն ինչով փառաւորում էր իր սրբավայրը, եւ այն տաճարը, որը քիչ առաջ խռովութեամբ էր լցուած, Տիրոջ երեւալով լցուեց խնդութեամբ ու անսպառ ուրախութեամբ: 31 Այն ժամանակ եկածներից մի քանի բարեսիրտ մարդիկ՝ զօրավարի աւագ ընկերները, շտապ հասան Օնիայի մօտ, որպէսզի սա խնդրի Բարձրեալից գոնէ կենդանի թողնել նրան, այնպէս չանել, որ կեանքի վերջին տարիներին այդ մարդը չարաչար տանջուելով մեռնի: 32 Քահանայապետը մտահոգուեց, որ գուցէ թագաւորը մտածի, թէ այդ մարդը

†Այլ բնագրեր 25–27 համարներում ուրիշ կերպ են պատմում դէպքը:

տուժել է իր կամ հրեաների նիւթած դաւից, ուստի աղաչեց Աստծուն, զոհ մատուցեց այդ մարդու կեանքը փրկելու համար: 33 Երբ քահանայապետը մատուցեց քաւութեան զոհերը, նոյն երիտասարդները, նոյն շքեղ զգեստները հագած, անմիջապէս իջան ու եկան Հելիոդորոսի առաջ եւ ասացին. «Դու Օնիա քահանայապետից շատ շնորհակալ եղիր, որովհետեւ նրա համար, նրա միջոցով Տէրը քեզ կեանք շնորհեց: 34 Իսկ դու, որ նրա համար այդքան տանջանքներով պատժուել ես, պատմի՛ր բոլորին Աստծու մեծ զօրութեան մասին»: Այս բանն ասելուց յետոյ նրանք անմիջապէս աներեւութացան:

ՀԵԼԻՈԴՈՐՈՍԻ ԴԱՐՁԸ ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾ

35 Երբ Հելիոդորոսն սթափուեց, անմիջապէս Տիրոջը ողջակէզ զոհեր մատուցեց, Տիրոջը մեծամեծ ուխտեր եւ աղօթքներ արեց, որ նա իրեն շնորհեց իր կեանքը եւ պարգեւեց առաջուայ ուժն ու եռանդը: Նա Օնիա քահանայապետին մեծամեծ նուէրներով պատուեց ու այնտեղից շարժուեց ու գնաց թագաւորի մօտ: 36 Ամէն տեղ նա վկայութեամբ հաստատեց Աստծու հրաշքները, որ ինքն իր աչքերով էր տեսել: 37 Երբ թագաւորը հարց տուեց Հելիոդորոսին, թէ՝ «Ինչպէ՞ս, ի՞նչ արեցիր, ինչո՞վ վերջացրիր այն գործը, որի համար գնացել էիր», ապա սա սկսեց պատմել գանգատուելով ու ասաց. 38 «Ո՛վ տէր, Երուսաղէ՛մ ուղարկեցէք նրան, ով ձեր թշնամին է ու ձեր մեծ գործերի հակառակորդը: Հրամայեցէ՛ք ուղարկել նրան եւ նրան կը գտնէք այնտեղ չարաչար բրածեծ եղած, եթէ միայն մահուանից փրկուել կարողանայ: 39 Այնտեղ, իրօք, մեծ հրաշքներ են կատարւում: Նա, որի զօրութիւնը երկնքում է, Նա՛ է այդ երկրի հովանաւորն ու օգնականը: Եւ ով մի անգամ թշնամութեամբ կամ արհամարհանքով է այդ երկիրը մտնում, մեծամեծ չարիքներ կը կրի, եթէ միայն կարողանայ կենդանի դուրս գալ այդտեղից»:

Այսքանը բաւական է Հելիոդորոսի ու գանձատունը պաշտպանելու հետ կապուած դէպքերի մասին:

ՍԻՄՈՆԸ ՋՐՊԱՐՏՈՒՄ Է ՕՆԻԱՅԻՆ

4 Դարձեալ Սիմոնի մասին, որը մատնել էր գանձի տեղը եւ դաւաճանել իր երկրին: Նա սկսեց աւելի յաճախ ամբաստանել Օնիային, որ նա ինքն է անձամբ դրդել Հելիոդորոսին այդ քայլին ու ինքն էլ ակել է նրան, եւ որ նա է բոլոր չարիքների պարագլուխն ու կատարողը: 2 Քաղաքի այդ բարեբարին ու վերակացուին, ազգի երախտաւորին, օրէնքների նախանձախնդիր այդ մարդուն նա ներկայացրեց իբրեւ արքունի գործերի վնասարար: 3 Նա կարողացաւ թշնամական այնպիսի զգացումներ հրահրել, որ Սիմոնի նշանակած մարդկանցից մի քանիսն ուզում էին մահուան դատապարտել այդ մարդուն: 4 Օնիան տեսաւ, որ հակառակութիւնը դառնում է անհանդուրժելի, իսկ Ասորիքի ու Տաճկաստանի սպարապետ Ապոլոնիոսը ընկերացել եւ աջակցում է Սիմոնի չար գործերին, որ նրանք գրգռում են նաեւ թագաւորին: 5 Նա գտաւ, որ այլեւս անհնար է առանց թագաւորի հրամանի հասարակութեանը օգուտ տալ, 6 մանաւանդ որ անհանգիստ Սիմոնին տեսնում էր, որ անընդհատ խարդախութիւններ է նիւթում:

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՅԱՍՈՆԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ Է ՅՈՒՆԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

7 Երբ Սելեւկիոսը մեռաւ, եւ գահ բարձրացաւ Անտիոքոսը, որ կոչւում էր Երեւելի, Յասոն անունով մէկը, որ Օնիայի եղբայրն էր, անամօթաբար աշխատեց քահանայապետութիւնը խլել Օնիայից: 8 Նա խոստացաւ երեք հարիւր քանքարից բացի արքունիքին յաւելեալ տալ վաթսուն քանքար, իսկ այլ եկամուտներից՝ եւս ութսուն քանքար†: 9 «Եւ դրան կ'աւելացնեմ եւս

†Այլ բնագրեր 8-րդ համարի սկզբից մինչեւ այստեղ ունեն նա խոստացաւ արքային տալ 300 տաղանդ արծաթ:

հարիւր†, – ասում էր նա, – եթէ գործը գլուխ գայ: Քաղաքը կ'ենթարկեմ ձեզ, թատրոններ ու կրկէսներ կը շինեմ, երուսաղէմացիներին ձեր անունով անտիոքացիներ կը գրեմ»: 10 Երբ թագաւորը համաձայնեց, եւ Յասոնը հասաւ իր ցանկացած իշխանութեանը, աշխատեց յոյների հեթանոսութիւնը անմիջապէս ազգային օրէնք դարձնել: 11 Նա վերացրեց նախկին այն արքունական արտօնութիւնները, որ յօգուտ հանրութեան սիրով տրուել էին Փտողոմէոսի հայր Յովհաննէսի առաքելութեան ժամանակ. արգելեցին օրինաւոր կրօնը, ընդունել տուեցին անօրէն նոր կրօնը: 12 Բերդի ներսում նա կառուցեց թատրոն ու մարզարան, ուր ընտիր ու առոյգ պատանիներին մարմնամարզութեան արուեստն էին ուսուցանում: 13 Այդ ամբարիշտ ու չքահանայապետ Յասոնն այնպէս եռանդագին աշխատեց, որ նրա ծայրայեղ մոլորութեան պատճառով այլազգութեան ու հեթանոսութեան սկիզբ դրուեց, 14 որովհետեւ դրանից յետոյ քահանաները թողեցին զոհասեղանի իրենց պարտականութիւնն ու տաճարի ծառայութիւն կատարելը եւ արհամարհեցին ողջակէզի զոհաբերութիւնները: Քահանաների ցեղն աւելի սիրով իրեն նուիրում էր մարզիկներին ու բռնցքամարտին, կաքաւիչներին պիղծ նուէրներ տալուն, աղմուկ-աղաղակով գունդ հրելուն եւ նիզակ նետելուն: 15 Հայրերի պատիւն արհամարհեցին, անօրէն հեթանոսութեան փառքը գերադասեցին օրհնութեան փառքից: 16 Այդ իսկ պատճառով շուտով նրանց վրայ թափուեցին այն նեղութիւնները, որոնք պատել էին նրանց: Ում բարքին ու սովորութեանը նախանձում էին ու աշխատում ամէն ինչով նմանուել նրանց, հէնց նրանց էլ իրենց համար դահիճներ, թշնամիներ ու տանջողներ դարձրին: 17 Անպատիժ չեն մնայ նրանք, ովքեր կ'անարգեն աստուածային օրէնքները: Ստորեւ պատմուող դէպքերը բացայայտ կերպով այդ են ցոյց տալիս:

18 Արդ, ժամանակն էր, որ Ծուր քաղաքում թագաւորի ներկայութեամբ աստուածների պաշտամունք կատարէին: 19 Անօրէն Յասոնը, իբրեւ այդ խաղերի մասնակից ու հանդիսատես, անտիոքացիներին ուղարկեց սուրբ Երուսաղէմից եւ նրանց յանձնարարեց, որ այնտեղ մուծեն երեք հարիւր սատեր՝ իբրեւ Վահագնի† պաշտամունքի համար զոհերի գին: Երբ սրանք եկան ու բերեցին այն, ինչ պէտք է բերէին, խնդրեցին, որ այդ արծաթը չխառնեն կուռքերի պաշտամունքի զոհերին, որովհետեւ պարտ ու պատշաճ չէր սուրբ վայրի գանձը յատկացնել դիցապաշտութեան կուռքերի զոհերին: 20 Ընդունելով պաշտամունքի համար բերուած զոհերի գինը՝ այն չխառնեցին Վահագնի պաշտամունքի զոհերի համար յատկացուածներին, այլ, բերողների աղաչանքին անսալով, յատկացրին արքունի գործերին՝ նաւեր պատրաստելու համար:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

21 Մենեսթէոսի որդի Ապոլոնիոսը պատգամաւորութիւնից յետոյ գնաց Եգիպտացիների երկիրը, որպէսզի մասնակցի եգիպտացիների թագաւոր Փտողոմէոսի թագադրութեանը: Անտիոքոսը զգաց, որ իրեն այս կողմերի համար օտար մարդ են համարում, ուստի վերադարձաւ, եկաւ յոպպէացիների քաղաքը: 22 Այդտեղից էլ եկաւ Երուսաղէմ, որտեղ Յասոնն ու այդ քաղաքի բնակիչները նրան ընդունեցին մեծ պատուով՝ ջահերով ու լուսաճաճանչ աշտանակներով: Այնտեղից նա իր ողջ զօրքով գնաց Տաճկաստանի կողմերը:

ՄԵՆԵԼԱՒՈՍԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

23 Երեք տարի անց Յասոնն ազատ արձակեց մոլեգնած Սիմոնի եղբօրը՝ Մենելաւոսին, եւ նրա ձեռքով արքունի գանձերն ուղարկեց արքային: 24 Երբ նա հանդիպեց արքային ու մեծարուեց նրա կողմից, սկսեց քահանայութիւն

†Ցուցարէնում՝ Հերակլէսի:

պահանջել ու Յասոնին մեղադրել: Նա
իր յանձնած գանձի վրայ աւելացրեց
եւս երեք հարիւր քանքար 25 եւ արքա-
յից իշխանութիւն ստանալու հրաման
առնելով՝ վերադարձաւ: Նա հասաւ
իշխանութեան, բայց քահանայապե-
տութեանը արժանի ոչ մի գործ չկա-
տարեց, այլ գազանի նման դառն զայ-
րոյթ էր յարուցում: 26 Յասոնը, որ իր
եղբօր քահանայութիւնը խլել էր դա-
ւով, ինքը նոյնպէս զրկուեց քահանա-
յութիւնից եւ հալածական դառնալով՝
փախաւ Ամոնացիների երկիրը:

27 Մենելաւոսը իր ձեռքն առաւ քա-
հանայութեան իշխանութիւնը, սա-
կայն ամբողջութեամբ չկարողացաւ
տալ այն գումարը, որ խոստացել էր
թագաւորին: Դղեակ-միջնաբերդի հա-
զարապետն սկսեց անհանգստանալ ու
պահանջել գումարը, 28 որովհետեւ
նրան էր յանձնարարուած հաւաքել
երկրի հարկը, ուստի երկուսն էլ պա-
լատ կանչուեցին: 29 Երբ Մենելաւոսը
տեսաւ, որ հարկը չի կարող վճարել, իր
փոխարէն փոխանորդ նշանակեց իր
եղբայր Լիւսիմաքոսին, իսկ Սուստրա-
տոսը դարձաւ կիպրացիների գործերի
կառավարիչ:

ՕՆԻԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

30 Երբ այս դէպքերը տեղի էին ու-
նենում, տարսոնացիներն ու մալոտա-
ցիներն ըմբոստացան, որովհետեւ
իրենք իբրեւ սեփականութիւն յանձ-
նուել էին թագաւորի հարճ Ան-
տիոքիդէին: 31 Թագաւորը գնաց, որ
հասնի, հնազանդեցնի նրանց: Նա իր
փոխարէն փոխանորդ նշանակեց
բարձրաստիճան Անդրոնիկոսին: 32 Մե-
նելաւոսը տեսնելով, որ պատեհ առիթ
է ներկայացել, զգուշութեամբ տա-
ճարից ոսկէ սպասներ գողացաւ, մի
մասը տուեց Անդրոնիկոսին, իսկ միւս
մասն էլ վաճառեց Մուրում եւ դրա
շրջակայքում գտնուող այլ քաղաք-
ներում: 33 Օնիան այդ մասին
տեղեկանալով՝ մեղադրեց նրան եւ
գնաց անտիոքացիների Դափնա քա-
ղաքը: 34 Դրա համար էլ Մենելաւոսը
Անդրոնիկոսին իբրեւ իւրային համա-
րելով՝ աղաչում էր նրան ու աշխա-
տում նրա միջոցով իր ձեռքը գցել
Օնիային: Նա գնաց Օնիայի մօտ,
նենգութեամբ համոզեց նրան եւ մեծ
երդումներով հաւատարմութեան դա-
շինք կնքեց նրա հետ: Օնիան թէեւ
բնաւորութեամբ կասկածամիտ էր,
բայց համաձայնեց դուրս գալ բերդից:
Հէնց որ դուրս եկաւ, Անդրոնիկոսը
սրախողխող արեց նրան՝ ամենեւին
չվախենալով արդար դատաստանից:
35 Դրա համար էլ ոչ միայն հրեաները,
այլեւ անգամ հեթանոսները զայրացել
էին յատկապէս այդ մարդու անարդար
սպանութեան համար:

36 Երբ թագաւորը վերադարձաւ Կի-
լիկիայի կողմերից, բոլոր քաղաքների
հրեաներն ու հեթանոսները նրա մօտ
սրտի կսկիծով դժգոհութիւն յայտ-
նեցին այդ մարդու անարդար սպա-
նութեան եւ նրա տարապարտ մա-
հուան համար: 37 Անտիոքոսն անկեղ-
ծօրէն խղճաց, զգացուեց ու խիստ
սգաց սուրբ ու շատ իմաստուն մարդու
մահը: 38 Բարկութիւնից նա եռաց,
հրամայեց Անդրոնիկոսի վրայից հա-
նել ծիրանին, մերկացնել նրան իր
զգեստներից, ման ածել քաղաքում եւ
հէնց այն վայրում, ուր նա Օնիայի
նկատմամբ անօրէնութիւն էր գործել,
հրամայեց կտրել այդ ստոր մարդա-
սպանի գլուխը: Այսպիսով Տէրը ար-
ժանի պատիժ հասցրեց չարագործին:

ԼԻՒՍԻՄԱՔՈՍԻ ՄԱՀԸ

39 Երբ շատ գանձեր գողացուեցին
Լիւսիմաքոսի ձեռքով ու Մենելաւոսի
խորհրդով, եւ երբ այդ լուրը տա-
րածուեց, զօրքը հաւաքուեց Լիւսի-
մաքոսի դէմ, որովհետեւ ոսկէ շատ
առարկաներ էին կորել գանձատնից:
40 Երբ ժողովուրդը յուզուած ու զայ-
րացած ոտքի ելաւ, Լիւսիմաքոսն սկսեց
սպառազինել մօտ երեք հազար մարդ
եւ ձեռնարկեց չար գործերի, առաջ-
նորդութեամբ մի մարդու, որը որքան
դժնադէմ էր, նոյնքան էլ՝ թանձրա-
միտ: 41 Երբ տեսան Լիւսիմաքոսի
գործած դաւն ու նենգութիւնը, անմի-
ջապէս հաւաքուեցին, որ միջոցներ

ձեռնարկեն: Մէկը քար, միւսը փայտ,
երրորդը աւազ ու հողախառն խիճ
վերցնելով՝ նետեցին բոլոր յարձա-
կուողների վրայ: 42 Ոմանց վիրա-
ւորեցին, ոմանց գլուխը կտրեցին,
շատերին սպանեցին, իսկ մնացած
բոլորին փախուստի մատնեցին, սուրբ
տաճարի զոհասեղանը կողոպտողին
գանձատնից հալածեցին†:

43 Այս ամենի համար դատեցին
Մենելաւոսին: 44 Երբ թագաւորն եկաւ
Մուր, տեղի էր ունենում դատը:
Ժողովրդի ծերակոյտից ընտրուած
երեք մարդ եկան նրան բողոք
ներկայացնելու: 45 Երբ Մենելաւոսը
մեղաւոր ճանաչուեց, խոստացաւ շատ
գանձեր տալ Փտողոմէոսին, եթէ սա
սիրաշահէր թագաւորի սիրտը: 46 Այդ
մտադրութեամբ սա, իբրեւ թէ թագա-
ւորի հետ զբօսնելու նպատակով, նրան
մի կողմ տարաւ, յեղաշրջեց նրա
միտքը, 47 համոզեց, որ մեղապարտ
Մենելաւոսն ազատուի բոլոր տեսակի
մեղադրանքներից, իսկ այդ տառա-
պեալներին, որոնց թէեւ խաղտէա-
ցիների‡ առաջ դատել էին եւ անպարտ
համարել, ազատ էին արձակել եւ ան-
մեղ ճանաչել, – մահուան դատա-
պարտեցին: 48 Անարդար պատիժն
անմիջապէս ի գործ դրեցին նրանց
նկատմամբ, ովքեր յանուն քաղաքի,
բանակի ու սրբազան անօթների
պաշտպանութեան, բողոք էին բարձ-
րացրել: 49 Ահա թէ ինչու չարատեաց
ծուրացիները սրտացաւութեամբ ու
առատապէս հոգացին այն ամէնը, ինչ
պէտք էր նրանց յուղարկաւորելու
համար: 50 Իշխանների ժլատութիւնից
ու դժգոհութիւնից օգտուելով՝ Մենե-
լաւոսը չարախօսութեամբ էր զբաղւում
եւ իր համաքաղաքացիներին մեծամեծ
չարիքներ պատճառում:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ

5 Այդ ժամանակ Անտիոքոսը պատ-
րաստուեց անտիոքացիների կողմերից
երկրորդ անգամ յարձակուել Եգիպ-
տացիների երկրի վրայ: 2 Այնպէս պա-
տահեց, որ քառասուն օր անընդհատ
ամբողջ քաղաքի վրայ՝ երկնքում եւ
երկրի վրայ երեւացին նիզակակիր
հեծեալ զինուորներ, 3 որոնք զար-
դարուած էին ոսկէ զարդերով: Սրանք
արշաւում էին իրար խառնուած:
Վահանները բախւում էին, աղեղները՝
շաչում, սուսերները՝ շողում, դրօշները՝
փողփողում, նետերը՝ շառաչում:
Փայլատակում էին զէնքերը ոսկու
պէս: 4 Բոլորը ծնկի չոքած աղաչում
էին, որ այդ տեսարանը բարի գործի
նախանշան լինի:

ՅԱՍՈՆԸ ՅԱՐՁԱԿԻՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎՐԱՅ

5 Երբ յանկարծակի լուր տարա-
ծուեց, թէ Անտիոքոսը հրաժեշտ է
տուել կեանքին, Յասոնը ոչ պակաս
քան քսան հազար† սպառազէն զի-
նուորներ վերցնելով՝ յարձակուեց քա-
ղաքի վրայ: Մինչ քաղաքի բնա-
կիչները անսպասելի դաւից վախեցած՝
պարսպից հեռացան, Մենելաւոսն
արշաւելով եկաւ հասաւ քաղաք, 6 ուր
մոլեգնած Յասոնն առանց խնայելու
իր համաքաղաքացիներին էր կոտո-
րում: Կարծես նա թշնամիներ էր
կոտորում՝ չմտաբերելով, որ սրանք իր
տոհմակիցներն ու համաքաղաքա-
ցիներն են, եւ պէտք է մտածել սրանց
կեանքի ապահովութեան մասին,
մինչդեռ նա թշուառութեան էր
մատնում նրանց: Տոհմակից քաղա-
քացիների վրայ յարձակուելով ու
նրանց կոտորելով կարծում էր, թէ
թշնամու նկատմամբ է արագ յաղ-
թանակ տանում ու յաղթութեան յու-
շարձան կանգնեցնում: 7 Բայց եւ
այնպէս նա իշխանութեան հասնել
չկարողացաւ, այլ ի վերջոյ կրեց
դաւաճանի նախատինքն ու փախաւ
ամոնացիների կողմերը: 8 Իր անփա-
ռունակ կեանքի վերջում նրան բան-
տարկեց արաբների արքայ Արետասը:
Յետոյ Յասոնը քաղաքից քաղաք
փախաւ, իբրեւ օրէնքի դէմ ընդվզող՝
բոլորի աչքին ատելի դարձաւ ու
հալածական, պիղծ ու գարշելի համա-

†Այլ բնագրերում՝ նոյն գանձատան մօտ սպանեցին:

‡Յունարէնում՝ սկիւթացիների:

†Այլ բնագրերում՝ հազար:

բուեց իբրեւ գաւառի, քաղաքի, բանակի մատնիչ ու դահիճ, վտարուեց Եգիպտոս: 9 Նա չատերին, անթիւ-անհամար մարդկանց տարագրեց իրենց երկրից, եւ ինքն էլ օտարների մէջ օտարանալով՝ 10 կորաւ անխնամ, անզգեստ, ոչ ոք չսգաց նրան, եւ նա արժանի չեղաւ հայրենի գերեզմանին:

11 Երբ այդ դէպքերի մասին տեղեկացաւ արքան, կարծեց, թէ Հրէաստանն ապստամբել է իր դէմ: Այդ պատճառով նա գազազած սրտով շտապ դուրս եկաւ Եգիպտացիների երկրից եւ քաղաքը գրաւելով՝ սրի քաշեց: 12 Նա զինուորներին հրաման տուեց, որ, ով իրենց ձեռքն ընկնի, անխնայ կոտորեն, իսկ ովքեր ապարանքներում ապաստանեն, նոյն տեղում էլ սպանեն նրանց: 13 Տղամարդիկ ու ծերերն առհասարակ կոտորուեցին, կանայք ու մանուկներն առհասարակ սպանուեցին, կոյսերն ու աղջիկներն առհասարակ սրի քաշուեցին: 14 Այդ երեք օրուայ ընթացքում ընդհանրապէս ութսուն հազար մարդ կոտորեցին. քառասուն հազար մարդկանց սրի քաշեցին եւ համարեա նոյնքան մարդկանց էլ վաճառքի հանեցին:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԱՃԱՐԻ ԿՈՂՈՊՈՒՏԸ

15 Երբ նա չյագեցաւ այս չարագործութիւններով, որոշեց ձեռքը բարձրացնել ամբողջ աշխարհի ամենասուրբ սրբարանի վրայ, յանդգնեց մտնել տաճար՝ իբրեւ առաջնորդ ունենալով Մենելաւոսին, որը օրէնքի, երկրի, բանակի մատնիչն ու դահիճն էր դարձել: 16 Իրենց պիղծ ու անօրէն ձեռքերով վերցրին ու պիղծ մարդկանց բաշխեցին զոհասեղանի այն սուրբ սպասքը, որ ուրիշ թագաւորներ ու այլ քաղաքներ նուիրել էին սրբարանին ի բարգաւաճումն ու ի փառս այդ վայրի: 17 Գուցէ հպարտացել, յամառել էր իր մտքում Անտիոքոսը, երբ ասում էր, թէ՝ «Այս քաղաքի բնակիչների անօրէն մեղքերի համար է բարկացել Տէրը սրանց վրայ, դրա համար էլ անարգուել են սուրբ վայրերը: 18 Եթէ մեծ մեղքեր գործած չլինէին, ապա կը լինէին այնպէս, ինչպէս Հելիոդորոսն էր եղել, որին Սելեւկիոս արքան ուղարկել էր, որպէսզի հաշուի գանձերը, եւ երբ սա մտել էր այնտեղ, անմիջապէս կործանուել էր իր յանդգնութեան պատճառով»: 19 Ոչ թէ տեղի համար էր Տէրն ընտրել ազգին, այլ ազգի համար էր ընտրել տեղը: 20 Դրա համար էլ տեղն ինքը ժառանգել էր ազգի մոլորութիւնը, որպէսզի այնուհետեւ նորից արժանայ Տիրոջ բարերարութեանը, նորից ճշմարիտ փառքով հաճելի լինի մեծ Աստծուն:

ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

21 Անտիոքոսը ինը հարիւր քանքարի վրայ գումարած եւս ութ հարիւր քանքար վերցնելով յափշտակեց տաճարից, շտապ գնաց անտիոքացիների քաղաքը: Նա գոռոզամտութեամբ կարծում էր, թէ կարող է ծովը ցամաքի վերածել եւ ցամաքը՝ ծովի: 22 Նա այնտեղ թողեց խիստ վերակացուներ, որպէսզի սրանք չարչարեն ժողովրդին: Երուսաղէմում թողեց ազգով փռիւգացի† Փիլիպպոսին, որն իր բարքով աւելի ժանտ էր, քան նա, ով իրեն նշանակել էր այնտեղ, 23 իսկ Գարգարիզում՝ Անդրոնիկոսին: Բացի այդ, սրանց վրայ նշանակեց Մենելաւոսին, որը նրանցից աւելի չար լինելով՝ դատ ու դատաստան էր տեսնում քաղաքացիների հետ:

24 Բայց քանի որ Մենելաւոսը քիչ էր խղճում հրեաներին, Մաշուէ‡ Ապոլոնիոսին ուղարկեց քսան հազար զինուորներով, չհաշուած նախկին հազար զինուորները, որպէսզի բոլոր չափահաս մարդկանց կոտորի, կանանց ու մանուկներին վաճառի: 25 Ինքը եկաւ Երուսաղէմ, նախ կեղծ խաղաղութեամբ, ապա դաւով մտաւ եւ այնտեղ մնաց մինչեւ սուրբ շաբաթ օրը: Երբ տեսաւ, որ հրեաները շաբաթ օրը գործ չեն անում, հրաման տուեց իր զինուորներին զինուել: 26 Ովքեր նայելու էին եկել այդ տեսարանը, սրով սպանեց նրանց: Սպառազինուած զինուորները երթեւեկում էին ողջ քաղաքում այստեղ-այնտեղ եւ բոլորին դիաթաւալ գետին փռում:

27 Յուդա Մակաբայեցին տասը հոգով միասին փախուստի դիմելով՝ գնաց անապատ, լեռներում գազանների նման կեանք վարեց: Նոյն ձեւով իր հետ եղած զինուորները խոտաբոյսեր ուտելով էին անցկացնում իրենց ժամանակը, որպէսզի հեռու մնան պղծութիւններից:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԻ ԱՐՄԱՏԱՒՈՐՄԱՆ ՓՈՐՁ

6 Կարճ ժամանակ անց թագաւորն ուղարկեց Աթենեբիոս ծերունուն, որ սա ստիպի հրեաներին հրաժարուել իրենց հայրերի օրէնքներից, այլեւս չենթարկուել Աստծու օրէնքներին, 2 պղծել Երուսաղէմի տաճարը եւ այնուհետեւ այն անուանել ողոմպիացիների Որմիզդ աստծու անունով, իսկ Գարգարիզում գտնուող տաճարը՝ հիւրընկալ Որմիզդ աստծու՝ Վանատուրի անունով, որովհետեւ այնտեղ բնակութիւն հաստատած հեթանոսները այդ էին պահանջում: 3 Նրանք սաստիկ նեղութիւններ պատճառեցին: 4 Սուրբ տաճարը լցուեց հեթանոսական բարքերի պղծութիւններով, տղամարդիկ ու կանայք միմեանց խառնակուելով սրբարանի գաւիթը արատաւորեցին, ինչ անթոյլատրելի իրեր կային, համարձակօրէն ներս էին տանում: 5 Զոհասեղանն ամբողջութեամբ լցրին օրէնքով չթոյլատրուած ու մերժուած իրերով: 6 Ո՛չ շաբաթ օրերն էին կարողանում պահել, ո՛չ հայրերի տարեկան տօները նշել, ո՛չ իսկ համարձակւում էին իրենք իրենց հրեայ անուանել: 7 Թագաւորի ծննդեան օրը, իւրաքանչիւր ամսուայ այդ օրը ստիպում էին զոհեր մատուցել: Երբ հասնում էր պտղաբերութեան պաշտամունքի տօնը, ստիպում էին նրանց թաւ ոստերից հիւսուած պսակներով պարել Բաքոսի կուռքի մօտ: 8 Պտղոմէացիների դրդմամբ հրաման ուղարկուեց բոլոր մօտակայ քաղաքները, որ հեթանոսութիւն ընդունեն եւ հրեաներին ստիպեն զոհեր մատուցել կուռքերի համար: 9 Ովքեր յանձն չառնէին զոհեր մատուցել, պէտք է սրատուէին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էին տառապում խեղճերը: 10 Երկու կնոջ գրաւոր ամբաստանել էին, թէ սրանք թլփատել են իրենց որդիներին: Շտապ բերեցին երեխաներին, կախեցին իրենց մայրերի ստինքներից, հրապարակներում նրանց խայտառակելով մանածեցին, իսկ յետոյ պարիսպներից ներքեւ գլորեցին: 11 Մարդկանց մի մասը գաղտնի փախաւ մօտակայ քարանձաւները, որ շաբաթ օրերն այնտեղ անցկացնի, բայց երբ բռնեցին սրանց, կենդանի-կենդանի այրելով սպանեցին, որովհետեւ սրանք երկիւղածութիւն ունէին հանգստեան օրուայ ու սրբութեան օրէնքների նկատմամբ:

12 Ես խնդրում եմ այս գիրքն ընթերցողներին, որ մեր ազգի նկատմամբ խղճահարութիւն չունենան, որովհետեւ այդ աղէտները ոչ թէ բնաջնջել են մեր ցեղը, այլ խրատ են եղել մեր ազգի համար: 13 Արդարեւ, Տէրը ոչ միայն անօրէններին երկար ժամանակ յաջողութիւն չի պարգեւում, այլեւ անմիջապէս ցոյց է տալիս իր հրաշքներն ու յայտնի դարձնում իր շնորհները: 14 Բայց Աստուած միւս հեթանոս ազգերի նկատմամբ համբերատար է լինում. նա պատժում է նրանց, երբ նրանց մեղքերի չափը լցւում, եւ նրանք հասնում են իրենց անխուսափելի դատաստանին: 15 Ինչ վերաբերում է մեզ, ապա նա այդպիսի դատաստան չի անում մեզ հետ, 16 այլ ստէպ-ստէպ է խրատում եւ արագարագ էլ ներում է: 17 Այս բանն ասում ենք ձեզ, որպէսզի յիշէք այս խօսքերը: Արդ, դառնանք մեր պատմելիք նիւթին:

ԵՂԻԱԶԱՐ ԾԵՐՈՒՆՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

18 Կար Եղիազար անունով ծերացած, գեղեցիկ դէմքով մի մարդ, որը օրէնսգէտների խմբի մէջ առաջիններից մէկն էր: Նրա բերանին գելոց դնելով ստիպեցին խոզի միս ուտել: 19 Նա որոշեց յամառել, սրտապնդուել,

†Հայերէն բնագրում՝ փրանգ:
‡Այլ բնագրերում այսպիսի բառ չկայ:

դերադասեց քաջի անունով մահ ընդունել, քան ապրել խղճի խայթով ու պախարակուել ընկերներից: Նա նախընտրեց ինքնակամ տանջանքի մատնուել, համարձակուեց թքել, անարգել նրանց պաշտամունքները, 20 ինչպէս վայել է կեանքի հաճոյքներից բացայայտ կերպով հրաժարուած մարդուն: 21 Նրանք, ովքեր իրենց տկարամտութեան պատճառով եկել էին ծիսական զոհեր մատուցելու եւ ծանօթ էին այդ ծեր մարդուն, մի կողմ տարան նրան ու աշխատում էին վայելքների հրապոյրներով յետ կանգնեցնել նրան իր հաստատ որոշումից: «Ենթարկուի՛ր, – ասում էին, – թագաւորի հրամանին, 22 քեզ ուրիշ միս կը տանք, որպէսզի կասկածները փարատես եւ մահուանից ազատուես»: 23 Նա, ինչպէս վայել էր ծերունական իր հասակի վեհութեանն ու իմաստութեանը, իր տարիքին, պատկառելի արտաքինին, փառահեղ սպիտակ մազերին, մանկուց ստացած կրթութեանը, մանաւանդ առաւել եւս ինչպէս վայել էր աստուածադիր սուրբ օրէնքներին հաւատարիմ մարդուն, ոգեշնչուած, տեղը տեղին եւ անմիջապէս պատասխան տալով՝ ասաց. 24 «Ո՛չ արժան է, ո՛չ էլ պատշաճ, որ այս տարիքի հասած մարդը կեղծաւորութիւն անելով մտնի սուրբ դատաստան: Կարող են շատ երիտասարդներ խէթ նայել ինձ վրայ, մտքում կասկածել ու ասել. "Եղիազարը իննսուն տարեկան հասակում, հասնելով մահուան դուռը, դաւանափոխ եղաւ": 25 Նրանք իմ պատճառով կեղծաւորութեամբ կը գայթակղուեն: Ես խղճի խայթ կ'ուենեմ եւ աշխարհում վատ ծերունու անուն կը թողնեմ: 26 Արդ, եթէ ինձ նոյնքան կեանք շնորհեն, եւ ես այլեւս մարդկանց ձեռքը չընկնեմ, ապա թէ՛ կենդանութեանս օրօք եւ թէ՛ իմ կենդանութիւնից յետոյ ես չեմ կարող խուսափել մշտնջենաւոր Աստծու ձեռքից: 27 Դրա համար էլ քաջութեամբ կը հեռանամ այս աշխարհից, որպէսզի արժանի լինեմ իմ ծերութեանը, 28 երիտասարդներին բարութեան ու առաքինութեան օրինակ թողնեմ, որպէսզի նրանք յօժար կամքով ու քաջութեամբ, կեանքի գնով կարողանան պաշտպանել սուրբ օրէնքները»:

Երբ այս խօսքերն ասաց վերջացրեց, ինքնակամ ու սրտանց գնաց տանջանք ու մահ ընդունելու: 29 Նրանք, ովքեր նրա շուրջը գտնուելով՝ կարեկցում էին նրան, սկսեցին նրա մխիթարանքի խօսքերը թշնամաբար ընդունել, նրա իմաստուն խորհուրդները մոլորութիւն համարել, աշխատում էին արագացնել նրա տանջանքները: 30 Երբ կտտանքներ կրելով նա մօտ էր իր վախճանին, հեծեծելով բաց արեց իր բերանը, սկսեց խօսել Տիրոջ՝ սուրբ խորհուրդներն իմացողի հետ, ու ասաց. «Քեզ յայտնի է, որ իմ ձեռքին էր այս տաժանելի մահուանից ազատուելու կարողութիւնը: Մարմնով այս խստ տանջանքներն ընդունելով համբերում եմ, բայց հոգով դրանք հաճելի քաղցրութեամբ եմ ընդունում քո՝ Տիրոջ հանդէպ ունեցած երկիւղի պատճառով»:

31 Ազնիւ մաքառման այսպիսի օրինակ տալով՝ նա հեռացաւ այս աշխարհից:

ԵՕԹԸ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՒ ԻՐԵՆՑ ՄՕՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

7 Մի անգամ բռնեցին եօթը եղբայրների իրենց մօր հետ եւ թագաւորի ատեան բերեցին: Ծեծելով ու խոշտանգելով՝ ստիպում էին նրանց խոզի միս ուտել: 2 Նրանցից մէկը համարձակ առաջ եկաւ, սկսեց խօսել ու ասաց. «Ի՞նչ էք ուզում անել մեզ, ի՞նչ էք ուզում իմանալ մեզնից, մենք պատրաստ ենք մեռնել, բայց ոչ երբեք մեր հայրերի օրէնքներից հրաժարուել»: 3 Թագաւորը լցուեց զայրոյթով. նա հրամայեց տապակներ, կաթսաներ ու անիւներ տաքացնել, տանջանքի զանազան գործիքներ պատրաստել: Երբ դրանք տեղնուտեղը տաքացրին, 4 նա հրամայեց խօսողին առաջ բերել: Նախ կտրեցին լեզուն, գլխի կաշին շուռ տուեցին դէմքին, յետոյ իր մօր ու եղբայրների առաջ ոտքերն ու ձեռքերը ծայրատեցին: 5 Երբ խօսելու եւ

գործելու անկարող դարձրին նրան, հրամայեց ողջ-ողջ նստեցնել տաքացրած տապակի վրայ: Երբ ճենճերի թանձր ծուխը տապակից սկսեց ելնել ու բարձրանալ, եղբայրներն իրենց մօրն ու միմեանց սկսեցին մխիթարել ու ասել. «Քաջութեամբ մեռնենք եւ անուն ու հոգի ժառանգենք: 6 Տէր Աստուած տեսնում է, թէ ինչպէս ենք չարչարւում մեր այս պայքարում, Նա իր գթասրտութիւնը ցոյց կը տայ իր ծառաների նկատմամբ, ինչպէս իր օրհնութեան մէջ յայտնապէս ասել է Մովսէսը. "Նա կարեկից կը լինի իր ծառաների նկատմամբ"»:

7 Երբ եղբայրներից առաջինն այս կերպ հրաժեշտ տուեց աշխարհին, երկրորդին բերեցին տանջանքի վայրը: Գլխի կաշին մազերով հանդերձ շուռ տուեցին դէմքին ու հարցրին. «Խոզի միս կ'ուտե՞ս, թէ՞ ամբողջ մարմինդ մաս-մաս կտրտենք»: 8 Նա իրենց մայրենի լեզուով պատասխան տուեց ու ասաց. «Ո՛չ»: Դրա համար սա նոյնպէս նոյն տանջանքներին ենթարկուելով՝ վախճանուեց: 9 Շունչը փչելուց առաջ նա սկսեց խօսել ու ասաց թագաւորին. «Ա՛յ դու դոռոզ, ինքնահաւան ու ամբարտաւան, դու կարծում ես, թէ մեզ զրկում ես այս աշխարհի կեանքից: Թէպէտ մենք մեռնում ենք օրէնքի համար, բայց Նա, որ աշխարհի թագաւորն է, յաւիտենական կեանքում երկրորդ ծննդեան ժամանակ մեզ նորից կը պարգեւի:»

10 Սրանից յետոյ երրորդին բերեցին: Ուզում էին լեզուն բռնել, բայց նա ինքն անմիջապէս հանեց այն, քաջաբար մեկնեց նաեւ ձեռքերը, 12† այնպէս որ թագաւորն ինքն իսկ զարմացաւ պատանու մտքի ուշիմութեան ու սրտի քաջութեան վրայ, որովհետեւ տեսաւ, որ նա արհամարհում է ցաւերը: 13 Երբ սա մահացաւ, չորրորդին էլ բերելով նոյն տեղը՝ նոյն տանջանքներին մատնեցին: 14 Նախքան հոգին աւանդելը նա այսպէս խօսեց. «Վաւ է, որ հեռանում ենք մարդկանցից, որովհետեւ մենք հաւատում ենք մեռելների յարութեանը՝ երկրորդ ծննդեանը: Դու թէեւ կենդանի ես մնում, բայց յարութեան չես արժանանայ»: 15 Սրանից յետոյ հինգերորդին բերեցին տանջելու: Սա աչքերը վեր բարձրացրեց, նայեց թագաւորին, սկսեց խօսել նրա հետ ու ասաց. 16 «Դու, որ իշխանութիւն ունես մարդկանց վրայ, ո՛վ մահկանացու, եւ անում ես այն, ինչ կամենում ես, բայց չկարծես, թէ ինչ-ինչ չարագործութիւններով մեր ազգը կը վերացնես, կամ չկարծես, թէ Աստուած կը լքի մեզ: 17 Դու շարունակի՛ր ապրել եւ կը տեսնես այն մեծամեծ հրաշքները, թէ ինչպիսի չարաղէտ պատուհասներով Տէրը պատժելու է քեզ ու քո ազգատոհմը»: 18 Սրանից յետոյ բերեցին վեցերորդին: Երբ մեռնելու մօտ էր, նա ասաց. «Դու իզուր ես մոլորուել: Այս փորձանքները մեր գլխին են գալիս մեր մեղքերի համար, որովհետեւ մենք Աստծու առաջ ապշելու աստիճան մեղքեր ենք գործել: 19 Դու, սակայն, երբեք չակնկալես, թէ աստուածամարտ լինելով՝ ողջ եւ առողջ ու անվնաս կը մնաս»:

20 Առաւել եւս բարի յիշատակի էր արժանի սքանչելի մայրը: Նա Աստծու յոյսին ապաւինելով՝ այսպիսի եօթը որդի էր կորցնում մէկ օրում, նոյն ժամին: 21 Քաջալերուելով նրանցից իւրաքանչիւրով՝ ինքն էլ նրանց էր քաջալերում, մխիթարում իրենց մայրենի լեզուով: Կին լինելով, բայց հանդէս բերելով տղամարդուն վայել սիրտ ու միտք, 22 նա քաջաբար առաջ եկաւ ու ասաց. «Ես չգիտեմ, թէ դուք ինչպէս էք յայտնուել իմ արգանդում: Ե՛ս չէ, որ ձեզ կեանք ու հոգի եմ պարգեւել եւ ոչ էլ կերպարանք տուել ձեզանից իւրաքանչիւրին, ոչ էլ ձեզ սնել, հասցրել եմ այս հասակին: Սրանից յետոյ ես ոչինչ իմը չեմ համարում, 23 այլ նրան, ով աշխարհի Արարիչն է, ով ստեղծել է մարդկային ծնունդները, ով իր ողորմածութեամբ ու իր գալստեամբ ձեր կեանքն ու հոգին ձեզ պիտի վերադարձնի»:

24 Անտիոքոսը թէեւ նախատինքի այս խօսքերի համար իրեն արհամարհուած զգաց, բայց որովհետեւ

†Բնօրինակում 11-րդ համարը չկայ:

դեռեւս իր ձեռքին էր եղբայրներից կրտսերի կեանքը, սկսեց ոչ միայն մխիթարական խօսքեր ասել, այլեւ իրօք երդւում էր, թէ նրան հարստութիւն կը պարգեւի, աւագութեան կը հասցնի, երանելի կը դարձնի երկրում, միայն թէ հրաժարուի իր նախնիների օրէնքից: Նրան իշխանութիւն կը տայ եւ թագաւորների բարեկամ կը դարձնի: 25 Երբ թագաւորը տեսաւ, որ պատանին երբեք չի հնազանդւում իր խօսքերին, կանչեց մօրը եւ խնդրեց նրան, որ նա պատանուն խորհուրդ տայ, որ սա փրկուի: 26 Երբ շատ ստիպեց, մայրը յանձն առաւ խօսել որդու հետ: 27 Թեքուեց նրա կողմը, սկսեց ծաղրել գոռոզ ու ամբարտաւան թագաւորին ու ասել. «Գթա՛ ինձ, որդեա՛կ իմ, յիշի՛ր, որ քեզ ինն ամիս կրել եմ իմ արգանդում, երեք տարի գրկել, կրծքովս կերակրել եմ քեզ եւ հասցրել այս հասակին: 28 Արդ, աղաչում եմ քեզ, որդեա՛կ, նայի՛ր երկնքին ու երկրին, այդտեղ ապրող արարածներին: Ցիշի՛ր, որ Աստուած նրանց ստեղծել է ոչնչից: Այդպէս էլ նա մարդկային ցեղն է ստեղծել: 29 Մի՛ զարհուրիր այս դաժան դահճից, այլ արժանի՛ եղիր եղբայրներիդ, գերադասի՛ր մահը, քան թէ աշխարհի կեանքը, որպէսզի մեծ Աստծու ողորմածութեամբ քո այն եղբայրների հետ ընդունեմ քեզ»:

30 Քանի դեռ մայրն այս խրատներն էր տալիս հաստատ մտքով, պատանին սկսեց խօսել ու ասաց. «Ո՞ւմ էք սպասում, ինչո՞ւ էք ուշացնում: Թագաւորի հրամանին չեմ ենթարկուելու, այլ հնազանդւում եմ Մովսէսի միջոցով մեր հայրերին տրուած օրէնքներին: 31 Իսկ դու, որ ամէն տեսակ չարիքներ ես յօրինում եբրայեցիների համար, չես փրկուի Աստծու ձեռքից, 32 որովհետեւ եթէ մեր կենդանի Տէրը մեզ խրատելու համար է պատուհասի ենթարկում, մի փոքր բարկանում մեզ վրայ, 33 ապա նորից ողորմածութիւն է հանդէս բերում իր ծառաների նկատմամբ: 34 Իսկ դու, անօրէ՛ն, ապստա՛մբ, պի՛ղծ, վախկո՛տ, քո սնոտի յոյսերով ի զուր ես գոռոզանում Նրա ծառաների վրայ:

35 Դու չես փրկուի ամենագէտ, ամենազօր Աստծու դատաստանից: 36 Այժմ մեր եղբայրները, յանուն յաւիտենական կեանքի, Աստծու կտակարանի ուխտի համար մի քիչ ցաւերին դիմանալով՝ մահ ընդունեցին: 37 Ես էլ, իմ եղբայրներին հաւասար, պատրաստ եմ իմ չունչն ու մարմինը հայրերի օրէնքի համար զոհել: Ցուսով դիմում եմ Աստծուն, որ մեր ամբողջ ազգին քաւութիւն պարգեւի, իսկ քեզ, մեծամեծ տանջանքների ենթարկելով, խոստովանել տայ, որ միայն ինքն է Աստուած, եւ ուրիշ մէկը չկայ: 38 Իմ ու իմ եղբայրների նկատմամբ ցուցաբերած քո բոլոր բարկութիւնները կ'անցնեն ու կը մոռացուեն»:

39 Եօթը պատանիների այսպիսի քաջասրտութիւնից թագաւորը թեւաթափ եղաւ†, դրա համար էլ կրտսերին աւելի խիստ տանջանքների ենթարկեցին: 40 Սակայն նա էլ, իր հաւատարմութեամբ ու անմեղութեամբ Տիրոջն ապաւինելով, հեռացաւ այս աշխարհից: 41 Որդիներից յետոյ երանելի մայրն էլ նոյն ձեւով նահատակուեց:

42 Թէ ինչ կտտանքների ենթարկեցին այս զոհերին, ինչ սաստիկ տանջանքների մատնեցին նրանց, բաւարարուենք այսքանով:

ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

8 Ցուդա Մակաբայեցին եւ նրանք, որ նրա հետ էին, գաղտագողի մտնում էին այստեղ ու այնտեղ՝ գիւղեր, քաղաքներ ու ագարակներ, եւ իրենց շուրջն էին հաւաքում իրենց ցեղակիցներին: Նրանք ներգրաւում էին այն հրեաներին, որոնք հաւատարիմ էին մնացել իրենց ուխտին: Սրանք հաւաքուեցին, շատացան, բանակ կազմեցին: Դրանց թիւը հասաւ մօտ վեց հազար մարդու: 2 Նրանք խնդրում էին Տիրոջը, որ օգնի, բարի աչքով նայի հեթանոսներից ոտնակոխ արուած իր ժողովրդին, խնայի ամբարիշտների ձեռքով պղծուած տաճարը, 3 կարեկցի

†Այլ բնագրերում՝ ընդհակառակը. խիստ զայրացաւ:

ապականուած, տակնուվրայ եղած քաղաքին, ականջ դնի թափած արեան կանչին, 4 յիշի իզուր նահատակուած անմեղ մարդկանց, միտքը բերի իր սուրբ անունը հայհոյողներին: 5 Երբ Մակաբայեցին հաւաքեց մարդկանց ու զօրք կազմեց, հեթանոսները նրան չդիմադրեցին, որովհետեւ մեծ Աստծու զայրոյթը ողորմածութեան էր վերածուել: 6 Նա յարձակուեց գիւղերի ու քաղաքների վրայ, հրդեհի մատնեց թշնամիների տարբեր վայրերի բերդերը, նուաճելով վերադարձրեց թշնամիների գրաւած տեղերը, թշնամիներին մեծամեծ հարուածներ հասցրեց, 7 մանաւանդ որ գիշերը դարձրել էր իրեն օգնական ու աջակից: Նրա քաջագործութիւնների համբաւը տարածուեց ամէն կողմ:

ՆԻԿԱՆՈՐԻ ԵՒ ԳՈՐԳԻԱՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

8 Երբ Փիլիպպոսը տեսաւ, որ այդ մարդու գործերը գնալով յաջողւում են, արքունի հրովարտակներով պատգամաւորներ ուղարկեց Ստորին Ասորիքի ու Տաճկաստանի սպարապետ Պտղոմէոսի մօտ, որ սա օգնական զօրք ուղարկի իրեն: 9 Հրովարտակներն ստանալուց անմիջապէս յետոյ նա Պատրոկլէսի որդի Նիկանորին՝ իր աւագների մէջ առաջին սիրելի մարդուն յանձնեց ոչ պակաս քան քառասուն† հազար մարդ, որ առհասարակ բնաջնջի, երկրի վրայից վերացնի հրեայ ազգը: Նրան օգնական տուեց Գորգիաս սպարապետին, որը մի քաջ, պատերազմական գործերին տեղեակ, ամէն ինչին հմուտ մարդ էր: 10 Նիկանորը յանձն առաւ հռոմէացիներին վճարուող նախկին հարկը՝ հարիւր քանքարը լրացնել հրեայ գերիների վաճառքից: 11 Ծովեզերքում բնակուող վաճառականներին հրամայեց գալ Հրէաստան մարդիկ գնելու եւ խոստացաւ մի քանքարի դիմաց նրանց տալ իննսուն մարդ: Նա չգիտէր, թէ երկնքից նայող Ամենակալը ինչ դատաստան է պատրաստել իր համար:

12 Ցուդան ունէր մարդիկ, որոնք գուշակել էին Նիկանորի արշաւանքը: 13 Եղան մարդիկ, որոնք վախից այս ու այն կողմ փախան 14 եւ ինչ որ ունէին, վաճառեցին ու սկսեցին աղօթել Ամենակալ Տիրոջը, որ իրենց փրկի անօրէն, անարժան Նիկանորի ձեռքից, որը մարդկանց չտեսած՝ արդէն իսկ սահմանել էր նրանց վաճառքի գինը: 15 Արդ, Աստուած եթէ ոչ իրենց համար, ապա իրենց հայրերի ուխտի ու կտակարանների, իր փառաւոր ու սուրբ անուան համար կարող էր նրանից փրկել իրենց: 16 Մակաբայեցին իր մօտ գտնուող մարդկանցից մօտ վեց հազարանոց զօրք հաւաքեց, քաջալերեց նրանց, որ չվախենան Նիկանորի զօրքի բազմութիւնից, իզուր չյուսալքուեն հեթանոսների բանակի այդպիսի մեծ կուտակումից, այլ կանգնեն ու մարտնչեն քաջութեամբ, 17 վրէժխնդիր լինեն սուրբ վայրերում կատարուած անարգութիւնների, գերուած քաղաքի կրած չարչարանքների, նախնիների սուրբ օրէնքների ոտնահարման համար: 18 «Նրանք, - ասում էր նա, - յոյս են դրել իրենց զէնքի եւ իրենց հզօրութեան վրայ, իսկ մենք՝ Ամենակալ Աստծու վրայ, որը մեզ ու ողջ աշխարհը ընկճել ցանկացող այդ մարդկանց կարող է իր մի շնչով կոտորել»: 19 Նա սկսեց մէկ առ մէկ յիշեցնել նախնիների քաջագործութիւնները, Տիրոջ ցոյց տուած ամէն մի օգնութիւն. «Ցիշեցէ՛ք Սենեքերիմի եւ հարիւր ութսուն հազար մարդկանց միանգամից կոտորուելը, 20 յիշեցէ՛ք գաղատացիների դէմ հռոմէացիների պատերազմը, ուր հարիւր քսան հազար յարձակուող մարդկանց դէմ ելան վեց հազար զինուորներ եւ Բարձրեալի օգնութեամբ հարիւր քսան հազար զինուորներին մի ժամում կոտորեցին»:

21 Այսպիսի մխիթարական, քաջալերիչ խօսքերով կռուի էր պատրաստում նա նրանց, որ, յանուն իրենց օրէնքների ու իրենց աշխարհի, քաջաբար մարտնչեն, հերոսաբար մեռնեն: 22 Նա զօրքը բաժանեց երեք գնդի. երկու գնդերի զօրավար նշանակեց իր երկու եղբայրներին՝ Շմաւոնին ու Ցովսէփին: 23 Զօրքերին

†Այլ բնագրերում՝ քսան:

քաջալերելու, սրտապնդելու համար կանչեց Եզրասին, նրանց առաջ կարդալ տուեց սուրբ գիրքը, ամէն մի գնդին Տիրոջ անունով զինանշաններ բաշխեց, ինքն անցաւ առաջամարտիկ գնդի գլուխը եւ արշաւելով յարձակուեց Նիկանորի վրայ: 24 Ամենակալն օգնութեան հասաւ նրան. յարձակուեցին, հարուածեցին թշնամու զօրքին եւ առաջին իսկ յարձակման ժամանակ աւելի քան ինը հազար սպառազէն մարդ սպանեցին, կոտորեցին նրանց զօրքերը, շատերին խոցոտեցին, խեղանդամ ու վիրաւոր դարձրին եւ գերեցին: 25 Ստրկավաճառների ունեցուածքն ու գանձերը խլեցին, Նիկանորի կենդանի մնացած զինուորներին մինչեւ օրը մթնելը հալածելով փախուստի մատնեցին: 26 Երբ օրը տարաժամել էր, այդտեղից շտապ վերադարձան ու նորից, թէեւ կարճ ժամանակով, հալածեցին նրանց, որովհետեւ յաջորդ օրը շաբաթ էր: 27 Հասնելով ճակատամարտի վայրը՝ նրանք հաւաքեցին ընկածների զէնքերը, հանեցին սպանուածների հագուստները եւ պատրաստուեցին տօնելու շաբաթ օրը: Օրհնեցին, գովեցին, փառաբանեցին Տիրոջը, որովհետեւ այդ օրը նա իրենց փրկել էր նրանցից: Այդ օրը ողորմութիւն արեցին եւ յաղթութեան տօն կատարեցին: 28 Շաբաթ օրից յետոյ ստացուած աւարից մաս հանեցին կարիքաւորներին, այրիներին ու որբերին, եւ ապա իրենք էլ ստացան իրենց բաժինն այդ աւարից: 29 Երբ այս բանն արեցին, բոլորը ծնկի եկած աղօթեցին ողորմած Աստծուն, աղաչեցին, որ մինչեւ վերջ հաշտ լինի իր ծառաների հետ:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԵՒ ԲԱԳԻԴԷՍԻ ԴԷՄ

30 Դրանից յետոյ նրանց վրայ յարձակուեցին Տիմոթէոսն ու Բաքիդէսը: Մակաբայեցու զօրքերը հետապնդեցին, նեղեցին, նրանցից սպանեցին աւելի քան քսան հազար հոգու: Բազմաթիւ բերդեր ու բարձունքներ գրաւեցին քաջութեամբ, բռնագրաւեցին նրանց բազմաթիւ գանձերը, ինչքն ու ունեցուածքը: Աւարից բաժին հանեցին նաեւ աղքատներին, որբերին ու ծերերին: 31 Հանեցին սպանուածների զէնքերը, թողեցին յարմար տեղերում եւ իրենց աւարով եկան Երուսաղէմ՝ ազգերի նահապետի մօտ: 32 Այդտեղ նրանք սպանեցին Տիմոթէոսին, որ բազում չարիքներ էր հասցրել հրեայ ազգին: 33 Նրանք հաւաքեցին գաւառներից եկած մարդկանց, ուրախութեան օր արեցին, յաղթանակի յուշակոթող կանգնեցրին: Բերեցին փախստական Կալիսթենէսին ու նրա հետ եղողներին, որոնք տաճարի դռներն էին հրդեհել, ու ողջ-ողջ այրեցին, 34 իսկ ոճրագործ Նիկանորը, որ հազար վաճառական էր բերել հրեաներ գնելու համար, 35 Տիրոջ հրամանով մեծ տառապանքների մէջ ընկած, փառքի հանդերձներից զրկուած, նուաստանալով մուրացկան դարձած, իր զօրքը կորցնելու համար մեծ ամօթի մատնուած, փախստական դարձած՝ անտիոքացիների քաղաքն ընկաւ: 36 Նա, որ խոստանում էր, թէ Երուսաղէմը գերելով կը լրացնի հռոմէացիներին վճարուող հարկը, ինքն իր բերանով պատմում էր, թէ Աստուած յայտնապէս օգնում է նրանց, եւ դրա համար էլ նրանք պատերազմից դուրս են գալիս ողջանդամ, առանց վէրք ստանալու, որովհետեւ նրանք հաւատարմութեամբ են պահպանում Նրա սահմանած օրէնքները:

ԱՆՏԻՈՔՈՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱԽՃԱՆԸ

9 Այդ ժամանակներում այնպէս պատահեց, որ Անտիոքոսը խիստ գլխիկոր վերադարձաւ Պարսկաստանի կողմերից, որովհետեւ նա գնացել էր նրանց գլխաւոր քաղաքը[†]՝ մտածելով տիրանալ գանձերին, իսկ եթէ հնարաւոր լինէր, նաեւ աւերել քաղաքը: Երբ դա զգացին քաղաքի զօրքերը, բոլորը վերցրին իրենց զէնքերը եւ նրան, որ մեծ խստութեամբ յարձակուել էր, խայտառակ կերպով, կորզելուխ յետ շպրտեցին: 2 Անտիոքոսը ամօթահար

[†]Այլ բնագրերում՝ Պերսեպոլիս:

հեռացաւ Պարսկաստանի կողմերից, եկաւ հասաւ Եկբատանի կողմերը: Նրան տեղեակ պահեցին իր զօրքի հետ պատահած դէպքերի մասին: 3 Ցիշելով իրեն փախուստի մատնած Երուսաղէմ քաղաքի բնակիչների ստահակութիւնը 4 եւ զայրանալով երկու կողմերի՝ իր զօրավարների ու երուսաղէմցիների վրայ, նա որոշեց իր զայրոյթը թափել երուսաղէմցիների վրայ: Դրա համար հրամայեց կառապանին անընդհատ քշել կառքը՝ ճանապարհը շուտ անցնելու համար: Նա չէր մտածում, որ երկինքը բարեհաճ չէր իր հանդէպ, իսկ ինքը մեծամտաբար փքւում էր եւ ասում. «Հրեաների Երուսաղէմը անբնակ պիտի դարձնեմ»: 5 Ամենակալ Բարձրեալը՝ Իսրայէլի Տէր Աստուածը, սակայն, նրան պատուհասեց աներեւոյթ հարուածներով. հազիւ էր նա ասել այս խօսքերը, որ անասելի սուր ցաւերով բռնուեցին նրա ոսկորները, տանջող խիթեր սկսուեցին որովայնում: 6 Նա շատ արժանի էր դրան, քանի որ բազմաթիւ ու նորանոր ինչպիսի տանջանքներ, որ նա պատճառում էր ուրիշների մարմիններին, նոյնպիսի սաստիկ ցաւեր պատեցին իրեն: 7 Այդուհանդերձ նա իր գոռոզութիւնից չէր հրաժարւում, այլ եբրայեցիների վրայ աւելի մեծ ամբարտաւանութեամբ ու բարկութեամբ էր բռնկւում: Նա ստիպեց աւելի արագ քշել կառքը եւ սրընթաց այդ վազքի ժամանակ էլ ընկաւ կառքից: Սոսկալի տանջանքներ պատեցին նրան, որովհետեւ նրա բոլոր ոսկորները ջարդուել էին: 8 Նա, որ ուզում էր ամբարտաւանութեամբ սաստել ծովի ալիքները, լերան գագաթները շուռ տալ ներքեւ, ստորոտները բարձրացնել վերեւ, ի՜նքն էր գետին տապալուած, իրե՛ն էին շալակած ման ածում: Աստծու զօրութեան բացայայտ ցուցադրումն էր դա: 9 Այդ անօրէնի աչքերից վխտալով որդեր էին բխում ու թափւում դուրս: Իր կենդանութեան օրով մարմնի անդամները հիւանդութեան ցաւերից բաժանուեցին իրարից, մարմնի նեխահոտից ամբողջ բանակն սկսեց նեղուել: 10 Նա, որ առաջ գոռոզամտութեամբ ուզում էր երկնքի աստղերը հաւաքել, իր նեխահոտի պատճառով բոլորից մեկուսացել էր, եւ ոչ ոք չէր կարողանում նրան այս ու այն կողմ շրջել:

11 Այդ պահից սկսած՝ նա չափաւորեց իր ամբարտաւան խստութիւնը եւ Աստծու պատճառած տանջանքների հետեւանքով ներքուստ մեղմացաւ, որովհետեւ մարմնի ցաւերը գնալով ուժեղանում էին: 12 Ինքն իսկ չէր կարող տանել իր մարմնի նեխահոտը: Նա սկսեց այսպէս խօսել. «Պէտք է հնազանդ լինել Տէր Աստուծուն, մահկանացու մարմինը չպէտք է բարձրացնել եւ աստուածակերպ համարել»: 13 Աղաչում էր Նրան, որ սուրբ քաղաքը հիմնայատակ կործանելու եւ ամայի դարձնելու սպառնալիքի համար այլեւս չէր գթալու իրեն. 14 խոստանում էր, որ այն մարդաշատ ու ազատ կը դարձնի: 15 Եբրայեցիներին, որոնց ինքը սպառնում էր չարժանացնել ո՛չ պատանքի, ո՛չ էլ թաղուելու, կանանց ու երեխաներին գազանների կեր դարձնել ու գիշատիչ թռչունների բաժին անել, այժմ խոստանում էր աթենացիներին հաւասար համաքաղաքացիներ հռչակել հրովարտակով: 16 Սուրբ տաճարը, որ առաջ սպառնում էր կողոպտել, այժմ խոստանում էր այն զարդարել գեղեցիկ նուէրներով, նախկինում տաճարի կողոպտուած զարդերի ու սպասքի փոխարէն բազմապատիկը վերադարձնել, զոհերի համար անհրաժեշտ պիտոյքները արքունիքից լրացնել, 17 այս ամենից բացի եբրայեցի դառնալ, մարդաբնակ բոլոր վայրերը շրջել ու Աստծու մեծ զօրութեան մասին պատմել:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ՀՐԵԱՆԵՐԻՆ

18 Երբ տեսաւ, որ ցաւերը ոչ մի կերպ չեն դադարում (որովհետեւ Տիրոջից նրա վրայ արդար դատաստանով պատիժ էր հասել), երբ յոյսը կտրեց, թէ այլեւս չի կարող ազատուել, եբրայեցիներին մեծ խոնարհութեամբ հրովարտակներ գրեց հետեւեալ բովանդակութեամբ. 19 «Քաղցր եբրայեցի-

ներին, ընկերներին, եղբայրներին, համաքաղաքացիներին սրտագի՛ն ողջոյն: 20 Ձեր շնորհիւ Աստծուց մեծ շնորհ եմ ստացել 21 եւ ծանր հիւանդութիւնից տկարանալու ժամանակ անգամ մեծ գորովանքով եմ յիշել ձեզ: Ես վերադարձայ Պարսկաստանի կողմերից ու ծանր հիւանդացայ: Մտքումս լաւ համարեցի հոգ տանել հասարակութեան օգտի ու խաղաղութեան մասին: 22 Դեռ յոյսս չեմ կտրում, որ կ'ապրեմ, անգամ հաւատացած եմ, որ կ'ազատուեմ նաեւ այս ծանր հիւանդութիւնից: 23 Ես յիշում եմ, որ երբ հայրս երկրի վերին կողմերում էր շրջագայում, նշանակել էր իր փոխանորդին, 24 որպէսզի, եթէ որեւէ դէպք պատահի իրեն կամ աղէտ տեղի ունենայ, իմանան, թէ ով է նկատի առնուած իր գործերը վարելու համար, եւ իրենց չկորցնեն: 25 Բացի այդ, նկատելով, որ մեր շրջապատում մեր թագաւորութեան հարեւան երկրները նայում են մեզ, ես իմ որդի Անտիոքոսին թագաւոր նշանակեցի իմ փոխարէն: Երբ ես շրջագայում էի երկրի վերին կողմերը, բազմաթիւ անգամներ ես վստահել եմ ձեզանից շատերին: Ձեզ վստահելով ու ապաւինելով եմ ես գնացել: Ձեզ գրած այսպիսի հրովարտակի մի պատճէնն էլ ուղարկել եմ նրանց: 26 Արդ, աղաչում եմ ձեզ, որ յիշէք առհասարակ իմ երախտիքն ու կատարած բարեգործութիւնները եւ իւրաքանչիւրիդ նկատմամբ իմ տածած սէրը, որպէսզի պահպանէք իմ ու իմ որդու նկատմամբ ձեր միաբանութիւնն ու հաւատարմութիւնը: 27 Հաստատ համոզուած եմ, որ իմ կատարած բարեգործութիւնները նկատի ունենալով՝ նա աւելի սիրալիր ու մարդասէր կը լինի ձեր նկատմամբ»:

28 Եւ Անտիոքոսը՝ այս արիւնարբուն ու անօրէն հայհոյիչը այսպէս տանջուելով սատկեց: Այն տանջանքները, որ նա պատճառել էր ուրիշներին, նոյն տանջանքները կրելով նա չարաչար մեռաւ օտար լեռներում, 29 իսկ իր դայեկորդի Փիլիպպոսը, որ վերցրել եւ տարել էր նրա մարմինը, վախեցաւ նրա որդուց եւ փախաւ Պտղոմէոսի մօտ, Եգիպտացիների երկիրը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԱՃԱՐԻ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ

10 Մակաբայեցին եւ ովքեր նրա հետ էին, Տիրոջ օգնութեամբ զօրացած՝ գերութիւնից ազատեցին քաղաքն ու տաճարը, 2 քաղաքի մէջ այլազգիների կառուցած բագիններն ու պաշտամունքի տեղերը քանդեցին, 3 տաճարը մաքրեցին, կրակով մաքրագործուած քարերով մէկ այլ զոհասեղան շինեցին ու դրանցից նորից կրակ առնելով՝ երկամեայ ընդմիջումից յետոյ ողջակիզման զոհեր մատուցեցին: Ճրագներ վառեցին, խնկեր ծխեցին, սկսեցին հացի մշտական նուէրներ տալ: 4 Երբ դա կատարեցին, երեսի վրայ գետին ընկնելով՝ աղաչում էին Տիրոջը, որ նոյն չարիքներն այլեւս չկրկնուեն իրենց նկատմամբ, իսկ եթէ երբեւէ յանցանք գործեն, ինքն իր հեզութեամբ խրատի եւ ոչ թէ հայհոյող, խուժդուժ հեթանոսների ձեռքը մատնի իրենց: 5 Արդ, այն օրը, երբ տաճարը հեթանոսների ձեռքով պղծուել էր, նոյն օրն էլ նորից նորոգեցին սրբարանը, այն է՝ Քասղեւ կոչուող ամսի քսանհինգերորդ օրը: 6 Որոշեցին Տաղաւարահարաց տօնի նման ութ օր ցնծութեամբ եւ ուրախութեամբ տօն կատարել, յիշելով, որ վերջին ժամանակներս ինչպէս էին կատարել Տաղաւարահարաց տօնը լեռներում, քարանձաւներում եւ ծերպերում՝ երէների նման խոտ ուտելով ու շրջելով: 7 Դրա համար թաւ ծառերից գեղեցիկ ճիւղեր ու արմաւի ոստեր վերցնելով՝ մատուցեցին նրան, որ յաջողութիւն էր տուել իրենց՝ սրբագործելու իր սրբավայրը: 8 Եբրայեցի ազգի ընդհանուր համաձայնութեամբ հրաման տրուեց, որ այդ օրը դասուի տարեկան տօների շարքը, տօն կատարուի ցնծութեամբ եւ ուրախութեամբ:

9 Այսքանը՝ երեւելի մականուամբ Անտիոքոսի մասին. 10 իսկ ազնուազարմ հօր որդի՝ անօրէն Անտիոքոսի վերաբերեալ համառօտակի կը պատմենք միայն այն, ինչ կատարուեց քաղաքներում:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

11 Երբ Անտիոքոսը գահ բարձրացաւ, Ստորին Ասորիքի ու Տաճկաստանի կողմերի արքունի կառավարիչ նշանակեց Լիւսիասին, որովհետեւ Պտղոմէոսը, 12 որին Բարձրանձն էին կոչում, եբրայեցիների իրաւունքները հաստատուն պահեց եւ գործերը խաղաղ հունի մէջ դրեց այն բանից յետոյ, երբ խախտել էին եբրայեցիների հետ կնքուած ուխտը եւ նրանց զրկել իրաւունքներից: 13 Դրա համար նրան Անտիոքոսի մօտ ամբաստանել էին իր ընկերները եւ մատնիչ էին անուանում այն բանի համար, որ նա թողել էր Փիլոմիտորէսի հրամանով իրեն յանձնուած Կիպրացիների երկիրը եւ եկել Անտիոքոսի մօտ: Զդիմանալով իր հացէին ասուած նախատինքներին, նա թոյն խմեց ու մեռաւ:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԵԴՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԲԵՐԴԵՐԻ ՎՐԱՅ

14 Այդ վայրերի զօրավար Գորգիասը եդոմացիներից զօրք էր հաւաքում ու յարձակումներ գործում, յարմար դիրքեր գրաւում: 15 Նրանք դուրս էին գալիս, անհանգստացնում եբրայեցիներին, փախուստի մատնում նրանց Երուսաղէմից, գնդեր էին կազմում, մարտի պատրաստւում: 16 Իսկ նրանք, որ մակաբայեցիների հետ էին, աղօթեցին Աստծուն, նրա օգնութիւնը հայցեցին, որ իրե՛նք նախայարձակ լինեն եդոմայեցիների բերդերի վրայ: 17 Եկան, խմբեր կազմեցին, յարձակուեցին, խորտակեցին բերդերը, հարուածեցին, կոտորեցին բոլոր նրանց, ովքեր ընկան իրենց ձեռքը, սպանեցին նրանց: 18 Ոմանք ազատուեցին, փախան ու եկան ապաստանեցին երկու ամուր բերդերում: Նրանք իրենց մօտ ունէին մարտական պատրաստի ամէն տեսակ մեքենաներ՝ պաշարման դիմանալու համար: Նրանք մեքենաները կանգնեցրին պարիսպների մօտ: 19 Մակաբայեցին բերդի վրայ յարձակուելու համար այնտեղ թողեց Շմաւոնին, Յովսէփին, Զաքէին ու նրա հետ եղող զինուորներին, որպէսզի պաշարեն բերդերը, իսկ ինքը գնաց: 20 Բերդի շուրջը նստած Շմաւոնի զինուորները բանագնացներ ուղարկեցին, կաշառք վերցրին, բերդերում պաշարուածներից առան եօթանասուն հազար սատեր արծաթ եւ թոյլ տուեցին, որ նրանք դուրս գան բերդերից ու փախչեն: 21 Երբ կատարուած դէպքերի մասին տեղեակ պահեցին Մակաբայեցուն, նա հաւաքեց բոլոր իշխաններին, դատապարտեց, մեղադրեց, որ արծաթով վաճառել են եղբայրներին եւ ազատ արձակել թշնամիներին: 22 Օրէնքը խախտողներին բերեցին, սպանեցին նրանց եւ իրենք արշաւեցին դէպի բերդը: 23 Եկան, շրջապատեցին այդ երկու բերդերը, եւ որովհետեւ յաջողութիւնը նրա կողմն էր, նրանք այդտեղ աւելի քան քսան հազար մարդ կոտորեցին:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԴԷՄ ԵՒ ԳԱԶԱՐԱՅԻ ԳՐԱՒՈՒՄԸ

24 Տիմոթէոսը, որ առաջ պարտութիւն էր կրել եբրայեցիներից, նորից աշխուժացաւ, նորից զօրք հաւաքեց օտար երկրներից, ասիացիներից մեծաթիւ այրուձի ժողովեց՝ մտադրուելով գալ, սրի ուժով Հրէաստան երկիրը գրաւել: 25 Մակաբայեցիների հետ եղածները նրանց մօտենալու պահին պաղատանքով դիմում էին Աստծուն, գլուխներին հող էին ցանում, քուրձ հագնում, 26 զոհասեղանի առաջն ընկած՝ թաւալւում էին աստիճանների վրայ, խնդրում էին, որ սրանից յետոյ նա հաշտ լինի իրենց հետ, վանի իրենց թշնամիներին, դէմ կանգնի իրենց հակառակորդներին. աղաչելով աղօթում էին այնպէս, ինչպէս հրահանգում էր օրէնքը: 27 Երբ աղօթելը վերջացրին, բոլորը զէնք վերցրին, սպառազինուեցին, պատրաստուեցին ու քաղաքից բաւական հեռու գնացին: Երբ թշնամու գնդին մօտեցան, ըստ կարգի դասաւորուեցին, ճակատ կազմեցին: 28 Երբ շառագոյն արեգակն սկսեց իր ճառագայթները սփռել երկրի երեսին, երկու կողմերը բախուեցին

միմեանց: Օրը բախուողների մի կէսին ուրախութեան բարի նշան էր պատրաստում եւ ուրախալի յաղթութիւն պարգեւում, որովհետեւ երկնքի զօրութեան փառքն ու իրենց Տիրոջ օգնականութիւնը լոյսի պէս իջնելով՝ անվտանգ էին պահում նրանց, իսկ միւս կէսին, նրանց բիրտ գոռոզութեան համար, տագնապ էին պատճառում: 29 Այն պահին, երբ պատերազմի անաչառ, անողորմ ձեռքը իր գործն էր անում, երկնքից երեւացին սպառազէն հինգ հեծեալներ՝ զինուած ոսկէ զէնքերով ու ոսկէ զարդերով: Նրանք իջան թշնամու բանակի մօտ, բայց եկան խառնուեցին եբրայեցիների գնդին: 30 Սրանք Յուդա Մակաբայեցուն իրենց մէջն առնելով առաջ գնացին, իրենց աներեւոյթ զէնքերով աւելի մեծ նախճիր գործեցին, քան Յուդան իր զէնքերով, որովհետեւ նրանք սրա վրայ թափուող բոլոր նետերն ու տէգերը վանում էին եւ, բարկութեամբ լցուած, իրենց նետերով թշնամու աչքերն էին կուրացնում: Թշնամու ահաբեկուած զօրքն սկսեց իրար խառնուել: 31 Այդ օրը թշնամու բանակից սպանուել էր քսան հազար հինգ հարիւր սպառազէն զինուոր†, 32 իսկ Տիմոթէոսն ինքը մազապուրծ եղած՝ ամբոխի հետ փախուստի դիմեց: Նա եկաւ ընկաւ Գազարա անունով պարսպապատ քաղաքը, ուր զօրավար էր Քերէասը: 33 Մակաբայեցին իր զօրքով եկաւ ու չորս օր պաշարեց բերդը: 34 Ներսում գտնուողները վստահ լինելով քաղաքի ամրութեան վրայ, ծաղրում էին եբրայեցիներին, իրենց չարութիւնից թշնամական, անարգալից խօսքեր էին շպրտում նրանց հասցէին: 35 Հինգերորդ օրը, երբ պիտի ծագէր շաբաթ օրուայ լոյսը, եբրայական բանակի միջից քսան ընտիր երիտասարդներ Մակաբայեցու հետ զէնքեր վերցնելով՝ քաջաբար, բարկութեամբ յարձակուեցին քաղաքի դարպասներից մէկի վրայ: Ում պատահեցին դարպասի մօտ, տեղնուտեղը սպանեցին: 36 Յարձակում գործեց նաեւ պարիսպների շուրջը գտնուող ամբողջ զօրքը: Ազմուկ-աղաղակը հասաւ քաղաք: Պարսպապահ զինուորները, որոնք պարսպի վրայ էին, պարսպից դուրս ու ներս, խմբեր կազմած, տեղատարափ անձրեւի պէս վերեւից վայր էին թափւում: Բոլոր մակաբայեցիները խուժեցին ներս, բերդի աշտարակն ու քաղաքի բոլոր փայտակերտ շինութիւնները կրակի տուեցին, դարպասներն ու մարտական մեքենաներն այրեցին, աչքի ընկնող ամէն ինչ խորտակեցին, յետոյ քաղաքի մէջ խարոյկ վառեցին ու իրենց հայհոյող թշնամիներին դրա վրայ այրեցին, 37 քաղաքի ամբողջ ինչքը, գանձերն ու հարստութիւնը կողոպտեցին եւ քաղաքի օրէնքն ու կարգերը վերցրին իրենց ձեռքը: Եկան գտան նաեւ փախած, մի գրի մէջ թաքնուած Տիմոթէոսին. նրան, նրա եղբայր Քերէասին ու Ապոլոփանէսին նոյն գրի մէջ էլ մորթեցին: 38 Երբ այս բոլոր գործերն արեցին վերջացրին, ցնծութեամբ եւ ուրախութեամբ օրհնեցին Տիրոջը, որ արժանի ու փառաւոր յաղթանակ էր պարգեւել Իսրայէլին:

ԼԻՍԻԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

11 Երբ քիչ ժամանակ անց այդ մասին լսեց արքայի հազարապետ Լիւսիասը, խիստ զայրացաւ, վրէժխնդրութեամբ լցուեց կատարուած դէպքերի համար: 2 Նա զօրք ժողովեց, ութսուն հազար զինուոր հաւաքեց, ութսուն հազարանոց զօրքի հետ վերցրեց իր ունեցած ամբողջ հեծելազօրը, նրանց իր հետ առնելով յարձակուեց եբրայեցիների վրայ այն մտադրութեամբ, որ նրանց գլխաւոր քաղաքը վերածի հեթանոսների բնակավայրի, 3 սրբութեան տաճարը միւս մեհեանների նման դարձնի հարկատու, իսկ քահանայապետութեան պաշտօնը ամէն տարի լինի վաճառքի ենթակայ: 4 Նա անտեսելով Աստծու զօրութիւնը, հազարաւոր հետեւակ զինուորներ, հեծելազօր եւ փղեր հաւաքելով՝ գոռոզամտութեամբ առաջ էր շարժւում:

5 Երբ Հրէաստան մտաւ ու մօտեցաւ Երուսաղէմից հինգ ասպարէզ հեռու գտնուող Բեթսորի բերդին, հազարաւոր զինուորներով շրջապատեց բերդը եւ սկսեց ճնշում գործադրել: 6 Երբ մակաբայեցիներն իմացան իրենց բերդի պաշարման մասին, ժողովրդի հետ ողբալով ու արտասուելով աղաչում էին Աստծուն, որ բարի հրեշտակ առաքի իսրայէլացիներին փրկելու համար: 7 Մակաբայեցին նախ ինքը զէնք վերցրեց, զօրքին հրաման տուեց սպառազինուել, կազմ ու պատրաստ լինել, նեղութիւն յանձն առնելով՝ օգնութեան հասնել նեղութեան մէջ գտնուող եղբայրներին: 8 Այդ ժամանակ նրանք միաբան, միահամուռ սպառազինուելով՝ առաջ գնացին: Երբ նրանք հասան Երուսաղէմ քաղաքի մերձակայքը, նրանց առաջ եկաւ իջաւ ոսկէ զէնքերով սպառազինուած, սպիտակ ձի հեծած մի մարդ: Նա նիզակ էր ճօճում ու պատրաստւում էր յարձակում գործել: 9 Բոլորը, գոտեպնդուած, օրհնեցին ողորմած Աստծուն եւ այդպէս քաջալերուած ու ոգեւորուած՝ յարձակման անցան: Կարծես գնում էին ոչ թէ մարդկանց վրայ յարձակուելու, այլ հանդիպել էին սոսկալի գազանների, դէմ էին առել երկաթէ պարիսպների եւ ուզում էին հարուածել, կոտորել, կործանել, թափով անցնել, համարձակ յարձակուել՝ 10 ընդունելով երկնային նիզակակցի ողորմածութիւնը: 11 Քաջի պէս, առիւծի նման յարձակուեցին թշնամի բանակի վրայ եւ նոյն տեղում էլ հարուածելով՝ դիաթաւալ արեցին տասնմէկ հազար ընտիր զինուոր, հազար վեց հարիւր հեծեալ եւ ամբողջ զօրքը փախուստի մատնեցին: 12 Նրանցից շատերը ծանր վիրաւորուելով՝ տկար ու տկլոր փախան-փրկուեցին: Լիւսիասը գլխիկոր, մազապուրծ փախաւ: 13 Կարծես ինքը եղած չլինէր այդ ապիկարութեան պատճառը: Նա խօսում էր ինքն իր հետ եւ մտածում, որ եբրայեցիներն անյաղթելի են, քանի որ հզօր Աստուած օգնում է նրանց:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔ ՀՐԵԱՆԵՐԻ ՀԵՏ

Լիւսիասը պատգամաւորներ ուղարկեց նրանց մօտ, որ նրանց իրաւունքները հաշուի առնելով՝ հաշտութիւն կնքի, 14 յանձն առաւ թագաւորի համաձայնութիւնն ստանալ ու համոզել թագաւորին, որ բարեկամանայ նրանց հետ: 15 Յուդան, յանուն հասարակութեան շահերի, համաձայնեց այն պայմաններին, որ ժամանակին առաջարկել էր Լիւսիասը: Արքան թոյլ տուեց անել այն, ինչ հրեաների վերաբերեալ պահանջել էր Մակաբայեցին Լիւսիասին գրած նամակում: 16 Հրեաներին գրուած նամակներն ունէին այս բովանդակութիւնը. 17 «Լիւսիասը ողջունում է հրեաների բանակին: Յովհաննէսն ու Աբեսալոմը, որոնց դուք ուղարկել էիք մեզ մօտ, մեզ յանձնեցին ձեր նամակը եւ խնդրեցին այն, ինչ գրուած է նրա մէջ: Ինչ արժանի էր թոյլ տալու, թոյլ տուեցի, 18 ինչ պէտք էր ցոյց տալ թագաւորին, ցոյց տուեցի, որպէսզի ձեզ թոյլատրուի անել այն, ինչ թոյլատրելի է: 19 Մենք եւ դուք պէտք է հոգ տանենք միմեանց նկատմամբ, ուստի սրանից յետոյ կը ջանամ բարիք անել ձեզ: 20 Յետագայ գործերի մասին պատուիրեցինք, որ խօսեն ձեզ հետ: Ո՛ղջ եղէք: 21 Հարիւր քառասունութ թուականին, Որմիզդի տօնի օրը, ամսի քսանչորսին»:

22 Իսկ արքունի հրովարտակը գրուած էր այսպէս. «Անտիոքոս արքան ողջունում է եղբայր Լիւսիասին: 23 Երբ մեր հայրը գնաց աստուածների մօտ, կամեցանք, որ մեր թագաւորութեան ենթակայ ժողովուրդները խռովութիւն չբարձրացնեն: 24 Հրեաներից աւելի ո՞վ խախտեց այդ օրէնքը: Նախ նրանք չենթարկուեցին հեթանոսութիւն ընդունելու իմ հօր առաջարկութեանը, այլ խնդրեցին, որ թոյլ տանք պաշտել իրենց օրէնքները: 25 Որպէսզի այս ազգը խռովութիւն չբարձրացնի, մենք յանձն առանք եւ հրաման տուեցինք իրենց տաճարը իրենց վերադարձնել եւ թոյլ տալ, որ ապրեն ըստ իրենց նախնիների օրէնքների: 26 Արդ, լաւ կ'անես, եթէ մարդ ուղարկես նրանց մօտ, պայման կապես ու դաշինք կնքես, որ նրանք

†Այլ բնագրերում՝ եւ վեց հարիւր հեծեալ:

հասկանան, թէ մենք հոգ ենք տանում նրանց համար, ուրախանան, յօժարակամ, բարեացակամ դառնան նրանց նկատմամբ, ովքեր յարգում են իրենց օրէնքները»:

27 Ժողովրդին ուղղուած արքունի հրովարտակը գրուած էր այսպէս. «Անտիոքոս արքան բարեկամաբար ողջունում է հրեաների ծերակոյտին, հրեայ զինուորներին ու զօրքերին: 28 Ո՛ղջ եղէք, եւ եթէ ամէն ինչ լինի այնպէս, ինչպէս մենք ենք կամենում, ապա մենք էլ ողջ կը մնանք: 29 Լիւսիասը[†] մեզ այնպէս տեղեկացրեց, թէ դուք ուզում էք իջնել Երուսաղէմում գտնուող հրեաների մօտ: 30 Ովքեր այժմ կարող են գնալ, դրանց թող դա թոյլատրուի մինչեւ Ահեկան ամսի երեսունը: 31 Հրեաների հետ կնքուած դաշինքի համաձայն, թող թոյլ տրուի, որ նրանք առաջուայ նման դաւանեն իրենց կրօնն ու օրէնքները, եւ ոչ ոք թող նրանց նեղութիւն չտայ որեւէ ձեւով: 32 Մենք ուղարկում ենք Լիւսիասին ու[‡] Մենելաւոսին, որ ձեզ մխիթարեն: Ո՛ղջ եղէք: 33 Հարիւր քառասունութ թուական, Ահեկան ամսի տասնհինգ»:

34 Հռոմէացիները նոյնպէս ուղարկեցին այսպիսի նամակ.

«Կոյինդոս Մեմիոսն ու Տիտոս Մանիոսը՝ հռոմէացիների գլխաւորները, ողջունում են եբրայեցի ժողովրդին: 35 Ինչ արտօնութիւն որ տուել է ձեզ թագաւորի եղբայր Լիւսիասը, մենք նոյնպէս համաձայն ենք: 36 Ինչ որ արժանի էք համարում հաղորդել արքային, իմաստութեամբ խորհելուց յետոյ արա՛ք հաղորդեցէք մեզ, որպէսզի որեւէ կերպ կարողանանք ձեզ օգտակար լինել, որովհետեւ մենք ահա շուտով գնալու ենք անտիոքացիների քաղաքը: 37 Դրա համար էլ դուք շտա՛պ ուղարկեցէք մէկին, որ մենք էլ իմանանք, թէ դուք ինչ էք խորհում: Ո՛ղջ եղէք: 38 Այս դաշինքը կնքուեց քառասունութ թուականին, Որմիզդի տօնի օրը»:

[†]Այլ բնագրերում՝ Մենելաւոսը:

[‡]Այլ բնագրերում բացակայում է՝ Լիւսիասին ու ...

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆ ԳՐԱՒՈՒՄ Է ՅՈԳՊԷՆ ԵՒ ԿՐԱԿԻ ՄԱՏՆՈՒՄ

12 Լիւսիասը նորից անցաւ գնաց թագաւորի մօտ, իսկ հրեաներն սկսեցին զբաղուել հող մշակելով:

2 Ջօրքի զօրավարները՝ Տիմոթէոսը, քաջազգի Ապոլոնիոսը[†], Հերոնիմոսն ու Դիմոփոնը, նաեւ Նիկանորը, երբեք թոյլ չէին տալիս սրանց հանգիստ ու խաղաղ ապրել: 3 Ցոպպէացիներն այնքան համարձակութիւն ստացան, որ սկսեցին անօրէնութիւններ անել: Միջնորդներ եկան ու համոզեցին իրենց շրջակայքում գտնուող հրեաներին, որ սրանց, իրենց կանանց ու երեխաների հետ, նաւերով բերեն, 4 եւ որ ամբողջ քաղաքը համաձայն է դրան: Սրանք համաձայնեցին, որպէսզի իրենց միջեւ խաղաղութիւնն ու միաբանութիւնը պահպանուի, յանձն առան գնալ, որովհետեւ ոչնչի նկատմամբ ոչ մի կասկած չունէին: Բերեցին սրանց ու ոչ պակաս քան երկու հարիւր մարդու ծովի մէջ խեղդեցին:

5 Երբ Ցուդա Մակաբայեցին իմացաւ կատարուած այդ անօրէն ու տմարդի գործի, այդ աղէտի մասին, հրաման տուեց իր շուրջը գտնուող զինուորներին կանչել արդար Դատաւորի անունը, 6 իսկ ինքն անմիջապէս յարձակուեց մարդասպանների վրայ: Գիշերով նրանք նաւահանգիստը հրդեհի մատնեցին, նաւերն այրեցին, իսկ այնտեղ ապաստան գտած մարդկանց կոտորեցին: 7 Քանի որ բերդերն զգուշութեան համար փակ էին պահել, Մակաբայեցին որոշեց, որ միւս անգամ վերադարձին առհասարակ կը կոտորի յոպպէացիներին: 8 Նա յարձակուեց նաեւ յամնէացիների վրայ, որոնք կարծես նոյն պատուհասն էին ուզում բերել իրենց հետ բնակուող եբրայեցիների գլխին: 9 Գիշերով նա յարձակուեց յամնէացիների վրայ եւ նաւահանգիստը նաւերով հանդերձ հրդեհեց, այնպէս որ կրակի ցոլքերը երեւում էին Երուսաղէմում, թէեւ այստեղից մինչեւ այնտեղ մօտ չորս

[†]Այլ բնագրերում՝ Գենէոսի որդի:

հարիւր ութսուն ասպարէզ էր:

ԿԱՍՊ ՔԱՂԱՔԻ ԳՐԱՒՈՒՄԸ

10 Այնտեղից շրջանցելով մօտ քսան ասպարէզ՝ ուղեցին Տիմոթէոսի վրայ յարձակուել, բայց նրանց առաջը կտրեցին մօտ հինգ հազար հինգ հարիւր արաբ հեծեալներ: 11 Գնդերը բախուեցին միմեանց, ու մարտը սաստկացաւ: Ցուդայի բանակը ապաւինեց Տիրոջ օգնութեանը, որովհետեւ յաղթանակի բարեգուշակ նշանը տեսան իրենց աչքի առաջ: Երբ անապատաբնակ արաբները պարտութեան մատնուեցին, եկան կանգնեցին Ցուդայի բանակի առաջ եւ հլու-հնազանդ խնդրեցին դաշինք կնքել: Բացի այդ, խոստացան ոչխարի հօտեր տալ նրանց եւ ամէն ինչում օգտակար լինել նրանց: 12 Ցուդան մտածեց, որ սրանք կարող են շատ պէտք գալ իրենց, ուստի համաձայնեց, ներեց ու նրանց հետ խաղաղութիւն հաստատեց: Երբ դաշինքը կնքեցին, իւրաքանչիւրն իր բանակը գնաց:

13 Հրեաները ասպատակեցին մի կողմի վրայ եւ պաշարեցին պարիսպներով ամրացուած, խառնիճաղանջ ազգերի բնակիչներով լցուած մի քաղաք, որի անունը Կասպ էր, եւ այն պաշարուած պահեցին: 14 Բերդի ներսում գտնուողները իրենց յոյսը դրել էին պարիսպների ամրութեան եւ իրենց պաշարների շատութեան վրայ: Արհամարհոտ գոռոզութեամբ նրանք նայում էին Ցուդայի ու նրա զօրքի վրայ, քսու խօսքերով հայհոյում սրանց, ասում էին այն, ինչ պատշաճ չէր: 15 Իսկ սրանք հայցեցին երկնքի ու երկրի ամենազօր, մեծ ու հզօր Տիրոջ օգնութիւնը, որ Նաւէի որդի Յեսուի օրօք առանց մարտական մեքենաների, առանց խոյերի ու մանգղիոնների կործանել էր Երիքովը, խմբեր կազմեցին, եւ բոլորը միասին քաջաբար յարձակուեցին պարիսպների վրայ: 16 Գրոհեցին ու Աստծու կամքով գրաւեցին պարսպապատ քաղաքը եւ այնքան շատ զինուորներ կոտորուեցին, որ այնտեղ գտնուող երկու ասպարէզ երկարութեամբ ծովակը արեամբ ներկուեց:

ՔԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

17 Այնտեղից գնացին Քարայի կողմը, մօտ հինգ[†] հարիւր յիսուն ասպարէզ, եւ մօտեցան տուբէական կոչուող հրեաներին: 18 Այդտեղ գտան[‡] անյաջողութիւն կրած, ուժասպառ եղած Տիմոթէոսին, որը, սակայն, պահապան զօրքեր էր թողել խիստ ամրացուած մի վայրում: 19 Դոսիթէոսն ու Սոսիպատրոսը՝ մակաբայեցիների գնդի հզօր զօրավարները, բանակից դուրս էին եկել ու շրջագայում էին իրենց գնդով: Երբ սրանք եկան ու հանդիպեցին այդ բերդին, յարձակուեցին ու այդտեղ սպանեցին աւելի քան տասը հազար մարդ, 20 իսկ Մակաբայեցին իր բանակը գնդերի բաժանեց եւ իր գնդով յարձակուեց Տիմոթէոսի վրայ: Սա ունէր հարիւր քսան հազար վահանակիր զինուորներ եւ մօտ երկու հազար[§] հինգ հարիւր հեծեալ: 21 Երբ Տիմոթէոսն իմացաւ, որ մակաբայեցիները արշաւում են իր վրայ, անմիջապէս իր ունեցուածքը, գանձը, զինուորների կանանց ու երեխաներին իր մօտից ուղարկեց կառնացիների բերդը: Այդ բերդն անհնար էր պաշարել այդ վայրերի անմատչելի, անանցանելի լինելու պատճառով: 22 Երբ երեւաց Ցուդայի գունդը, թշնամու զօրքն սկսեց առաջ շարժուել, որովհետեւ Ամենակալի վախն ընկել էր նրանց սրտերը: Նրանք անմիջապէս լեղապատառ եղան, խառնուեցին իրար, սկսեցին խոցոտել միմեանց, ցրուեցին ու փախուստի դիմեցին: Շատ էին նաեւ այնպիսիք, որոնք յիմար վախից զէնքերով բախուում էին իրար: 23 Ցուդայի գունդը փախուստի դիմածներին խստագոյնս հալածեց, անխնայ հարուածեց ու կոտորեց: Այդտեղ թշնամու զինուորներից դիաթաւալ ընկաւ մօտ երեսուն հազար զինուոր: 24 Դո-

[†]Այլ բնագրերում՝ եօթը:

[‡]Այլ բնագրերում՝ չգտան:

[§]Այլ բնագրերում՝ հազար:

սիթէոսի ու Սոսիպատրոսի գնդերը գերի վերցրին Տիմոթէոսին: Նրանց ձեռքն ընկնելով՝ սա ամէն հնարքի դիմելով աղաչում էր նրանց, որ կենդանի թողնեն իրեն: Նա ասում էր. «Զեզանից շատերի բարեկամներն ու եղբայրները ինձ մօտ գերի են: Նրանց բոլորին իմ գլխի փոխարէն ազատ կ'արձակեմ եւ ձեզ կը յանձնեմ»: 25 Ստանալով իր փոխարէն շատերին ազատ արձակելու այսպիսի խոստում՝ նրանք նրան ազատ թողեցին իրենց եղբայրներին փրկելու յոյսով: 26 Երբ Տիմոթէոսը բերդ հասաւ, որ Շոնչանանի կենտրոնում էր, բերեց, կոտորեց նրանց, որոնց խոստացել էր ազատ արձակել: Դրանց թիւն աւելի քան քսան հազար մարդ էր[†]:

ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

27 Նրանք անմիջապէս արշաւեցին Եփրոն կոչուող ամուր քաղաքը, ուր բնակւում էր Լիւսիասն ինքը: Բազմաթիւ զինուորներ, նետաձիգ մեքենաներով ու զէնքերով զինուած, ներսից հեշտութեամբ պաշտպանում էին պարիսպները, կուում դրսի մարդկանց դէմ: 28 Սրանք օգնութեան կանչեցին Հզօր Ամենակալին, որը կարող էր խորտակել պատերազմողների զօրութիւնը, եւ անմիջապէս գրաւեցին քաղաքը բերդով հանդերձ: Այնտեղ՝ ներսում, դիաթաւալ սպանեցին մօտ քսան հազար հինգ հարիւր մարդ: 29 Այնտեղից ասպատակեցին սկիւթացիների մի քաղաք, որը Երուսաղէմից հեռու էր մօտ վեց հարիւր ասպարէզ: Սրանք իրենց երախտապարտ էին համարում հրեայ ազգի նկատմամբ: 30 Քաղաքում բնակուող հրեաներն իրենք էլ վկայեցին, որ, երբ իրենք նեղութեան մէջ են եղել, այդ քաղաքացիները օգնել են իրենց: 31 Երբ նրանց յաջողուեց մակաբայեցիների գնդի հետ խաղաղութեան գործը գլուխ բերել, նրանք գնդի առաջ բարձրաձայն խոստացան առաւել եւս հնազանդ լինել նրանց ազգին: Սրանք նրանց մօտից շտապեցին Երուսաղէմ քաղաքը, որովհետեւ մօտենում էին եօթներորդ շաբաթի տօները:

ԱՐՇԱՒԱՆՔ ԳՈՐԳԻԱՍԻ ԴԷՄ

32 Երբ կատարեցին Պենտեկոստէի[†] տօնը, նրանք յարձակուեցին Գորգիասի վրայ, որը եդոմացիների կողմի կուսակալն էր: 33 Նրանք նրա դէմ ելան երեսուն հազար[‡] վահանակիր զինուորներով ու չորս հազար[§] հեծեալներով: 34 Երբ այս ու այն կողմում բանակները ճակատ կազմեցին, եբրայեցիների մի փոքրիկ խումբ ընկաւ երկու ճակատների միջեւ: 35 Տոբեկենացիների գնդից Դոսիթէոս անունով մէկը, որ հզօր, հմուտ պատերազմող էր, յարձակուեց Գորգիասի վրայ: Այն պահին, երբ ուզում էր անօրէնին ձերբակալելով մակաբայեցիների գնդի առաջ զոհ մատուցել, Թրակիայի գնդից սպառազէն մի մարդ հասաւ, հարուածեց ուսին, տապալեց ու Գորգիասին ազատեց նրա ձեռքից: Գորգիասը մազապուրծ ճողոպրելով՝ փախաւ Միմարէն ամրոցը: 36 Երբ ճակատամարտը երկարեց, ու շատ կոտորած եղաւ, այն ժամանակ մակաբայեցի զինուորները Ամենակալ Աստծուն օգնութեան կանչեցին, որպէսզի նա պատերազմում առաջնորդի իրենց: 37 Իրենց լեզուով խրախուսեցին միմեանց, գործի անցան եւ նոյն պահին էլ Գորգիասին իր գնդով հանդերձ փախուստի մատնեցին:

38 Յուդան վերցրեց զօրքը, հասցրեց Սոդոմ կոչուող քաղաքը: Երբ շաբաթը մօտեցաւ, իրենց օրէնքների համաձայն, լուացուելով ու մաքրուելով, անցկացրին շաբաթ օրը: 39 Յաջորդ օրը եկան Հրէաստանի կողմերը, որպէսզի թաղեն պատերազմում ընկածներին. եւ տոհմակից եղբայրներից իւրաքանչիւրին թաղեցին իրենց հայրերի գերեզմանոցում: 40 Երբ հասան ճա-

[†]Այլ բնագրերում՝ բոլորովին այլ իմաստ. Յուդան այնուհետեւ շարժուեց գնաց դէպի Կառնայիմ ու Ազարքատիսի սրբավայրը եւ այնտեղ կոտորեց Խանիինգ հազար մարդ:

[†]Հրեաների Ջատկի տօնի յիսուներորդ օրը:

[‡]Այլ բնագրերում՝ երեք հազար:

[§]Այլ բնագրերում՝ չորս հարիւր:

կատամարտի տեղը, գտան իրենց ազգակիցների դիակները, որոնց զգեստների տակ, թեւատակին, յուռուքքի ուլունքներ եւ ամէն տեսակ կուռքերի բժժանքներ կային, մի բան, որ յատկապէս մերժելի էր օրէնքով, եւ եբրայեցիներն այդպիսի բանից խիստ հեռու էին փախչում: Գտնելով դրանք՝ հրեաները հասկացան, որ նրանց կոտորածը եղել է այդ պատճառով: 41 Դրանից յետոյ բոլորն էլ առհասարակ օրհնեցին արդար դատաւոր Տիրոջը, որ բացայայտում է գաղտնիքները: 42 Մնկի իջած խնդրում էին, որ անցեալում իրենց կատարած մեղքերը բարեսրտօրէն ների: Քաջ Յուդան սփոփեց զինուորներին, խնդրեց, որ զգոյշ լինեն նման մեղքեր գործելուց: «Ձեր աչքերով տեսաք, – ասում էր, – որ այս պատուհասը տեղի է ունեցել նրանց կատարած մեղքերի պատճառով»: 43 Սթափ մտածելով՝ նա չորս սատեր արծաթ հաւաքեց եւ տուեց, որ տանեն, Երուսաղէմում զոհեր մատուցեն կատարուած մեղքերի համար: Դա խիստ իմաստուն քայլ էր, որովհետեւ ինչ որ անում էր, մեռելների յարութեան մասին մտահոգուելով էր անում: 44 Եթէ պատերազմում ընկածների յարութեան ակնկալութիւն չունենար, զուր կը լինէր մեռելների համար աղօթք մատուցելը: 45 Նա ճիշտ էր հասկացել, որ գեղեցիկ մահով ընկածները շնորհների են արժանանում: 46 Նա հաւատում էր, որ քաջութեամբ ընկածները մեղքերի թողութիւն կը ստանան:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ԵՒ ԼԻՒՍԻԱՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

13 Հարիւր քառասունինը թուականին, Յուդա Մակաբայեցու ժամանակ 2 Անտիոքոսը Լիւսիասի հետ բազմաթիւ զօրքերով եկաւ Հրէաստան: Նա ունէր հարիւր տասը հազար վահանակիր զինուորներ, հինգ հազար երեք հարիւր հեծեալներ, քսաներկու փղեր եւ երեք հարիւր գերանդակիր մարտակառքեր: 3 Շմաւոնն[†] իրեն խելօք կարծելով՝ ընկել էր նրանց մէջ, որ աշխարհի խաղաղութեան մասին բարեխօսի, մինչդեռ իր մտքի խորհուրդը երկրի քահանայապետութիւնը ստանալն էր: 4 Արքայից արքան խիստ շարժել էր Անտիոքոսի բարկութիւնը Շմաւոնի դէմ, մանաւանդ Լիւսիասը հաստատեց, որ այս Շմաւոնն է այդ երկրում կատարուող բոլոր չարագործութիւնների պատճառը, ուստի հրաման տուեց, որ բռնեն նրան ու տեղի օրէնքի համաձայն ոչնչացնեն: 5 Այդտեղ կար յիսուն կանգուն բարձրութեամբ մի աշտարակ, որը լցուած էր մոխրով: Նա ունէր ճաղարաձեւ, պտտուող մի գործիք: 6 Դուռը չինել էին այնպէս, որ բացւում էր հակառակ՝ դէպի ներսի, մոխրի կողմը: Նրա մէջ էին նետում այն յանցագործին, որ տաճարին վնաս էր տուել կամ այլ մեծամեծ չարիքներ էր գործել: 7 Հրամայեցին այսպիսի պատժով մէջտեղից վերացնել անօրէն Շմաւոնին, 8 որ երկրի վրայ արժանի չլինի հողի ու պատանքի: Քանի որ նա բազում չարիքներ էր գործել այն սեղանի հանդէպ, ուր պահւում էին սուրբ կրակն ու աճիւնը, դրա համար էլ նա մոխրահեղձ մահով գտաւ իր վախճանը:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄՈՌԻՒՄԻ ՄՕՏ

9 Անտիոքոս արքան պատրաստուեց աւելի վայրենի տանջանքների ենթարկել հրեաներին, քան իր հայրը: 10 Երբ դա իմացաւ Յուդան, ժողովրդին պատուիրեց, որ գիշեր-ցերեկ կանչեն Տիրոջ անունը, որ Նա, ինչպէս նախկինում, հիմա էլ լինի օգնական այն մարդկանց, 11 ում ուզում են հեռացնել իրենց հայրերի օրէնքներից ու սուրբ տաճարից, իրենց չմատնի անօրէն հեթանոսների ձեռքը: 12 Երբ բոլորն առհասարակ արտասուելով ու ծոմ պահելով միահամուռ այս ուխտը կատարեցին, երեք օր անընդհատ գետին ընկած աղօթք արեցին, այն ժամանակ Յուդան յորդորեց նրանց, որ պատրաստ լինեն: 13 Նա առանձին հաւաքեց ժողովրդի ծերերին, խորհուրդ արեց: «Քաղաքներն ամրացնենք, – ասաց, – քանի դեռ թագաւորի

[†]Այլ բնագրերում՝ Մենելաւոսը:

զօրքերը Հրէաստան չեն մտել: 14 Աստծու կամքով մենք քաջութեամբ ելնենք, կեանքի եւ մահու կռիւ մղենք ի պաշտպանութիւն քաղաքի, օրէնքների, տաճարի, երկրի ու տէրութեան»: Երբ այս բանն ասաց, անմիջապէս զօրքով արշաւեցին Մոդիիմ քաղաքի կողմերը. նա բանակատեղի էր հաստատում, զինանշան էր բաշխում, 15 իր անձը, զօրքն ու բանակի յաղթութիւնը յանձնում Աստծուն: Նա ընտրեց Արիստիդէսին†, լաւ սպառազինուած երիտասարդներ, գիշերով խուժեց Թագաւորի բանակի մէջ, մտաւ վրանը, կոտորեց մօտ չորս հազար գիշերային պահակներ, սպանեց առաջնորդող փղին ու փղապետին եւ առհասարակ դռան բոլոր պահապաններին դիմաթաւալ գետին տապալելով՝ վերադարձաւ: 16 Այն ժամանակ ամբողջ բանակը խառնաշփոթութեամբ ու սարսափով բռնուեց: 17 Բոլորը յուսալքուած, թուլացած, ուժասպառ եղած ու տարակուսած՝ դիմաւորեցին առաւօտը:

ԱՆՏԻՈՔՈՍԸ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ՀՐԵԱՆԵՐԻՑ

18 Թագաւորը եբրայական բանակի այսպիսի համարձակութիւնն ու խիզախութիւնը երկնքի օգնութեանը վերագրելով՝ աշխատեց խորամանկութեամբ նոյնպիսի մի հարուած հասցնել նրանց, բայց անյաջողութիւն կրեց: 19 Նա Բեթսոր արշաւելով՝ պաշարեց այն, ասպատակեց, բայց այդտեղ էլ հարուածներ ստանալով՝ պարտութիւն կրեց, 20 որովհետեւ ներսում գտնուողներին Ցուդան ինքը գաղտնի պահեստներից նետ, զէնք, մթերք էր մատակարարում: 21 Հրեաների գնդից Ռոդոկ անունով մէկը այս գաղտնիքը յայտնեց թշնամուն: Փնտռեցին, գտան նրան ու պատժեցին. նա սրի զոհ դարձաւ: 22 Երբ թագաւորին յայտնի դարձաւ, թէ բերդում գտնուողները ուժեղ են, ուժի գործադրումից հրաժարուելով՝ սկսեց խորամանկօրէն համոզել բերդում գտնուողներին, թէ դաշինք է առաջարկում, խոստանում է հրաժարուել բերդերը գրաւելուց, 23 մինչդեռ յարձակուեց Ցուդայի բանակի վրայ, բայց երկու կողմից էլ անյաջողութիւն կրելով՝ ընկրկեց: Երբ դրանից յետոյ նրան յայտնեցին, թէ Փիլիպպոսը ստոր արարք է կատարել՝ երկրում չրջագայելով արքունի գործերին վերաբերող կարգադրութիւններ է արել, թուլացաւ, յուսալքուեց, տրտմեց եւ եբրայեցիներին խնդրեց համաձայնութեան գալ: Ուխտ դրեց, երդում տուեց, որ նրանց բոլոր իրաւունքները կը վերականգնի: Խաղաղութեան դաշինք կնքեց, զոհ մատուցեց ու պատիւ տուեց տաճարին: Նա քաղցր սիրով գթութիւն եւ մարդասիրութիւն ցոյց տուեց նրանց բոլոր վայրերում, 24 փառաբանեց Մակաբայեցուն եւ նրան աւելի հարուստ դարձրեց, քան առաջ էր: Այնտեղ՝ Դորայից մինչեւ Գերար, սպարապետ նշանակեց Հեգեմոնիդէսին†, 25 իսկ ինքն եկաւ մտաւ Պտղոմայիս: Քաղաքի բնակիչները խիստ զայրացել էին, որ նա խաղաղութեան դաշինք է կնքել: Նրանք չէին հանդարտւում, խռովութիւն էին պատրաստում նրա դէմ, ստիպում, որ չեղեալ յայտարարի հաշտութեան համաձայնութիւնը: 26 Եկաւ Լիւսիասն ինքը, մօտեցաւ, ողջախոհութեամբ համոզեց նրանց, մեղմացրեց: Անտիոքոսը նորից վերադարձաւ անտիոքացիների կողմերը:

Ահա այսպիսի վախճան ունեցաւ ասպատակող թագաւորի այս արշաւանքը:

ԱԼԿԻՄՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

14 Երեք տարի անց Սելեւկիոսի որդի Դեմետրիոսը մեծ բանակով յարձակուեց եբրայեցիների Երեքքաղաքեան‡ նաւահանգստի վրայ: 2 Բազմաթիւ զինուորներով նա խուժեց երկիր, որպէսզի արտաքսի-հեռացնի Անտիոքոսին ու սրա եղբայր Լիւսիասին: 3 Նախկինում եղել էր Ալկիմոս անունով մի քահանայապետ, որը խառնակ ժամանակներում իր կամքով պղծուել

†Այլ բնագրերում այս բառը բացակայում է:

†Այլ բնագրերում այս բառը չկայ: Սա պարզապէս յունարէն εγεμενιδις բառն է, որ նշանակում է սպարապետ:

‡Իմա՝ Տրիպոլիս::

ու դարձել էր հեթանոս. սա միտք արեց ու ասաց. «Ինչ էլ լինի, չեմ կարող փրկութիւն գտնել, չեմ կարող այլեւս մօտենալ սուրբ զոհասեղանին»: 4 Հարիւր յիսունմէկ թուականին նա եկաւ կանգնեց Դեմետրիոս արքայի առաջ, նրան նուիրեց ոսկէ պսակ ու արմաւենու տերեւ եւ, ի պատիւ մեհեանի, ձիթենու թաւ ճիւղեր:

5 Այդ օրը նա լուռ մնաց. իր անմտութիւնը իրագործելու համար յարմար ժամանակի էր սպասում: Մի օր Դեմետրիոսը նրան կանչելով խորհրդի՝ հարցրեց. «Հրէաստանի եբրայեցիները ի՞նչ օրէնք են դաւանում, ի՞նչ են կամենում, ի՞նչ են խորհում մեր մասին»: 6 Նա այսպէս պատասխանեց. «Հրեաների մէջ ասիդացի կոչուողները, որոնց սպարապետ ու զօրավար է հռչակել իրեն Ցուդա Մակաբայեցին, զօրք են կազմել, պատրաստւում են պատերազմի, անընդհատ հրահրում են ժողովրդին եւ թոյլ չեն տալիս, որ խաղաղութեամբ հնազանդուեն ձեր տէրութեանը: 7 Դրա համար էլ ես, ահա, զրկուած իմ հայրենի փառքից՝ քահանայութիւնից, եկել հասել եմ քեզ մօտ: 8 Նպատակս է նախ՝ արքունի գործերի մասին սրտացաւութիւնս յայտնել եւ ապա՝ իմ մտահոգութիւնը մեր մասին: Այդ մարդկանց անմտութեան պատճառով խիստ անհանգստացած եկել հասել եմ քեզ մօտ, որովհետեւ մեր անմեղ ամբողջ ժողովուրդն իզուր խռովքի մէջ է: 9 Թէ ինչ նպատակներ ու մարդասիրական ցանկութիւններ ունէք տարբեր կողմերի ու ամբողջ աշխարհի նկատմամբ, այդ բոլորը քաջ գիտեմ: 10 Քանի Ցուդան կենդանի է, անհնար է, որ Հրէաստանում արքունի գործերը խաղաղ ընթանան»: 11 Երբ նա այս խօսքերն ասաց նրա մասին, Ցուդայի նկատմամբ թշնամական ոխ ունեցող աւագանին առաւել եւս զայրացրեց թագաւորին: 12 Սա հրամայեց անմիջապէս կանչել փղապետ Նիկանորին, նրան զօրք յանձնեց ու նշանակեց Հրէաստանի կողմերի սպարապետ: 13 Նրա հետ ուղարկեց մեծ սպառազինութիւն՝ խստագոյնս պատուիրելով, որ Ցուդային անձամբ կենդանի բռնի, նրա գունդը այս ու այն կողմ ցրի եւ Ալկիմոսին նշանակի տաճարի քահանայապետ: 14 Ցուդայի պատճառով Հրէաստանից փախած մարդիկ պառակտուած եկան խառնուեցին Նիկանորի գնդին: Սրանք հրեաների դժբախտութիւնը իրենց համար մխիթարութիւն էին համարում:

15 Երբ հրեաները լսեցին Նիկանորի արշաւանքի ու հեթանոսների այդ առաջխաղացման մասին, հող էին լցնում իրենց գլխին, թաւալւում էին գետնին, օգնութիւն հայցում Տիրոջից, որ ի սկզբանէ յաւիտեանս հաստատել էր իր ժողովրդին եւ ամէն անգամ բացայայտ օգնութեան ձեռք էր մեկնել իրենց: 16 Երբ զօրավարը հրաման տուեց, Դեսաոմ գիւղում անմիջապէս նրան ընդառաջ գնաց 17 Ցուդայի եղբայր Շմաւոնը, որը եւաւ Նիկանորի դէմ, բայց նիզակակիցների փոքրիկ խումբը անզգոյշ լինելու պատճառով պարտութիւն կրեց: 18 Նիկանորը, սակայն, լսել էր այդ մարդկանց քաջութեան, յանուն իրենց երկրի մղած մարտերում նրանց ցուցաբերած խիզախութեան մասին: Նա վախենում էր գործն աւարտել արիւնալի դատաստան տեսնելով: 19 Դրա համար նա մարդ ուղարկեց, կանչեց Պոսիդոնիոսին, Թէոդոտոսին ու Մատաթիասին, որպէսզի սրանք համոզեն հրեաներին, որ դաշինք կնքեն: 20 Բազմաթիւ առարկութիւններ ու տարակարծութիւններ եղան, բայց երբ զօրապետը շատերին համոզեց, զինուորներն էլ միաձայն յանձն առան հաշտութիւն կնքել: 21 Պայման դրեցին ու դաշինք կնքեցին: Ժամկէտ նշանակեցին, թէ երբ մի տեղ հաւաքուելով պէտք է հաստատեն դաշինքը: Եկան իրար մօտ, նստեցին աթոռներին, խորհուրդ արեցին ու դաշինք կնքեցին: 22 Ցուդան իր գնդին հրաման էր տուել, որ կազմ ու պատրաստ զինուեն, դարանամուտ լինեն, չլինի թէ թշնամին յանկարծ մի չար դաւ նիւթած լինի: Այսպէս զգուշութեամբ միմեանց հետ օրինական դաշինք կնքեցին: 23 Նիկանորը

մտաւ Երուսաղէմ ու շրջագայեց այն-
տեղ առանց անկարգ ու անօրէն որեւէ
բան կատարելու: Իր մօտ կուտակուած
խառնիճաղանջ բանակի զինուորներին
ուղարկեց իրենց տեղերը: 24 Նիկանորը
Ցուդայի հետ սիրալիր ու յարգանքով
էր վերաբերւում: 25 Խնդրեց, որ
Ցուդան իր ազգից կին առնի, զաւակ
ունենայ, որպէսզի միմեանց նկատ-
մամբ յարգանք լինի: Ցուդան համա-
ձայնեց, ու նրանք բարեկամացան:

ՆԻԿԱՆՈՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԱՒԵՐԵԼ ՏԱՃԱՐԸ

26 Երբ Ալկիմոսը տեսաւ նրանց
միաբանութիւնը եւ միմեանց հետ
կնքած դաշինքը, անմիջապէս եկաւ
Դեմետրիոսի մօտ: Նա ամբաստանեց
Նիկանորին եւ ապացուցում էր, որ նա
արքունական օրէնքի նկատմամբ
խորթ, թշնամական մտադրութիւններ
ունի, քանի որ արքունական գործերի
դէմ գնացող մի մարդու իբրեւ որդեգիր
ժառանգ է դարձրել եւ նշանակել իր
փոխանորդը: 27 Երբ թագաւորը լսեց
անօրէն բանսարկուի այս խօսքերը,
խիստ զայրացաւ: Թագաւորը հրամա-
յեց հրովարտակ արձակել, որ ինքը
համաձայն չէ միաբանութեան դաշին-
քին: Նոյն հրովարտակում նա հրա-
մայում էր, որ Մակաբայեցուն, ոտքերն
ու ձեռքերը կապկպած, բերեն Հասցենն
անտիոքացիների քաղաքը: 28 Երբ այս
ամէնը յայտնի դարձաւ Նիկանորին,
նա մտամոլոր ու գլխահակ դարձաւ,
տրտմեց, որ դաշինքը կեղծիք է
դառնալու, ուխտը՝ իզուր մի բան: Այդ
արդար մարդը ոչ մի վնաս չէր ուզում
պատճառել: 29 Բայց քանի որ
թագաւորի հրամանն անտեսել չէր
կարող, սպասեց յարմար առիթի,
որպէսզի հնարագիտութեամբ կատարի
թագաւորի հրամանը: 30 Երբ Մակա-
բայեցին տեսաւ, որ Նիկանորը ինչ-որ
նենգութիւն է նիւթում, հպատա-
կութեան օրէնքը շատ խիստ ու կոպ-
տօրէն է կիրառում իր նկատմամբ,
Նիկանորի յանդգնութիւնը չար բան
համարեց: Եւ քանի որ նա շատ
մարդկանց էր լարել իրար դէմ, ուստի
ելաւ գնաց Նիկանորի մօտից: 31 Երբ
Նիկանորը տեսաւ, որ նրան չի
կարողանում իր ձեռքը գցել այնպէս,
ինչպէս ինքն էր կամենում, եկաւ
սրբութեան տաճարը՝ քահանաների
մօտ, երբ սրանք զոհեր էին մատու-
ցում: Նա պահանջում էր նրանցից, որ
անմիջապէս իրեն յանձնեն այդ
մարդուն: 32 Սրանք երդուելով ասացին.
«Այդ մարդուն մենք չենք էլ տեսել»:
Նա ձեռքը մեկնեց դէպի տաճար ու
այսպէս երդուեց. 33 «Եթէ Ցուդային,
ոտքերն ու ձեռքերը կապած, ինձ
չյանձնէք, Աստծու այս տաճարը գետ-
նին կը հաւասարեցնեմ, զոհասեղանը
կը կործանեմ, նուիրական այս տա-
ճարը Որմիզդի աստուածների մեհեան
կը դարձնեմ»: 34 Այս խօսքերն ասաց
նա ու ելաւ գնաց: Քահանաները ձեռ-
քերը դէպի երկինք պարզեցին, դիմե-
ցին Նրան, ով բոլոր ժամանակներում
իրենց ազգի օգնականն ու պաշտպանն
էր եղել, եւ ասացին. 35 «Դու, ո՜վ ամէն
բանի Տէր, որ ոչ մի բանի կարիք
չունես եւ ամէն ինչով լի ես, կամեցար,
որ քո բնակութեան տաճարը հաստա-
տուի մեր մէջ: 36 Արդ, քո բոլոր
սրբութիւններով, Տէ՛ր, յաւիտեան
պահպանի՛ր նորոգ սրբագործուած քո
այս տաճարը»:

ՌԱԳՍԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

37 Երուսաղէմի զօրքի, ժողովրդի
ծերերի մէջ կար Ռաքս անունով մէկը,
որին խիստ ընկերասէր, մարդասէր,
բարեհամբաւ եւ բարեհամբաւ, բարե-
սիրտ ու հոգատար լինելու պատճառով
եբրայեցիների հայր էին անուանում:
38 Հին ժամանակ, հրէութեան օրէնք-
ների նկատմամբ անխառն, մաքուր
հոգով ու մարմնով նախանձախնդիր
մարդ էր նա եւ իրեն նուիրել էր իր
ազգի ազատութեանը: 39 Երբ Նիկա-
նորը ցանկացաւ իր բացայայտ թշնա-
մութիւնը յայտնել հրեաների նկատ-
մամբ, աւելի քան հինգ հարիւր
զինուոր յատկացրեց, որպէսզի գնան
ու բռնեն նրանց, որովհետեւ այսպէս
էր մտածում. 40 «Եթէ կարողանամ
դրանց ընկճել, մեծ գործ կատարած կը
լինեմ այս քաղաքում»: 41 Երբ

զինուորները հասան ու պաշարեցին
աշտարակը եւ դարպասի վրայ ուժ
գործադրեցին, միմեանց ձայն տուին,
որ կրակ բերեն, դարպասներն այրեն:
42 Երբ այդ մարդը, տագնապած,
տեսաւ, որ իրեն պիտի բռնեն, սուրը
խրեց իր պորտի տակ. նա գերադասեց
ազատ մեռնել, քան անօրէնների
ձեռքն ընկնել, պղծել իր հոգու
ազնուութիւնը: 43 Քանի որ զօրքը
դարպասից ներս էր խուժել եւ
բռնուելու վտանգը մօտենում էր, շտա-
պելուց նրա հարուածը մահացու չէր
եղել: Նա ուզեց վեր բարձրանալ եւ
իրեն պարսպի բարձրութիւնից նետել
ցած: 44 Երբ ներքեւում գտնուողները
տագնապահար այս ու այն կողմ ըն-
կան, եւ ամբոխը նրանից հեռացաւ, նա
սուրը դրեց ու պառկեց վրան† : 45 Քա-
նի դեռ շնչում էր, նա ուժ առաւ ու
ոտքի կանգնեց բարկութեամբ լցուած,
թէեւ արիւնը գունդ-գունդ հոսում էր,
եւ վէրքը գնալով մեծանում: Ամբոխն
այս ու այն կողմ ցրուեց: 46 Նա ելաւ
կանգնեց երկու կողմից երեւացող մի
ցից ժայռի վրայ, թեքուեց, իր ձեռքերի
մէջ առաւ արնաթաթախ աղիքները,
ցոյց տուեց երկնքին եւ դիմելով կեն-
դանի հոգիների ու մարմինների Տիրո-
ջը՝ ասաց. «Այս հատուցմա՛մբ հատու-
ցիր նրան»: Եւ նա այսպէս հրաժեշտ
տուեց աշխարհին:

ՆԻԿԱՆՈՐԸ ԱՐԳԵԼՈՒՄ Է ՊԱՀԵԼ ՇԱԲԱԹԸ՝ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՕՐԸ

15 Երբ Նիկանորն իմացաւ, որ Ցու-
դայի զինուորները սամարացիների
կողմերում են, որոշեց, որ շաբաթ՝
հանգստեան օրը կը յարձակուի նրանց
վրայ: 2 Նիկանորը բռնի տարաւ իր
մօտ գտնուող հրեաներին: Սրանք
սկսեցին աղաչել ու ասացին. «Տէ՛ր, քո
կամքն այդպէս խիստ ու դաժանօրէն
մի՛ կատարիր, այլ փա՛ռք տուր, յար-
գի՛ր այս օրը, որ սուրբ Ամենակալն է
իրրեւ հանգստեան օր սահմանել»:
3 Այն ժամանակ անօրէնն սկսեց
հարցնել ու ասաց. «Մի՞թէ երկնքում
գոյութիւն ունի Ամենակալ Աստուած,
որը հրամայել է ձեզ շաբաթ օրը
նուիրական պահել»: 4 Նրանք պա-
տասխանեցին ու ասացին. «Այո՛, գոյութիւն ունի ամենազօր, կենդանի Տէր, որը հրամայել է նուիրական պա-
հել շաբաթուայ եօթներորդ օրը»: 5 Ա-
մենաժանտ այդ մարդն արհամար-
հանքով ասաց. «Իսկ ես ամենազօր եմ
այս երկրի վրայ, որ հրամայում եմ
գործել զէնքով ու զրահով եւ կատարել
արքունական ծառայութիւն»: Այդ
անօրէնը չէր հրաժարւում իր գոռո-
զամտութիւնից: 6 Նիկանորը յամա-
ռօրէն որոշել էր յարձակուել Ցուդայի
մարդկանց վրայ, կոտորել եւ յաղթու-
թեան նշան կանգնեցնել: 7 Մակա-
բայեցին ամէն ժամ յոյսը դնում էր
Տիրոջ վրայ, որ երբեք չէր դադարում
նրան օգնելուց: 8 Նա յուսադրում էր
իր հետ գտնուողներին եւ ասում.
«Զվախենաք, չսարսափէք անօրէն հե-
թանոսներից: Նախնիների քաջագոր-
ծութիւնները յիշելով՝ յարձակուեցէ՛ք,
որովհետեւ երկնքից է գալու ձեր օգ-
նութիւնը: Ապաւինեցէ՛ք այն յաղթու-
թեանն ու մխիթարութեանը, որ Տէրն է
առաքելու»: 9 Օրէնքներով ու մար-
գարէներով նա քաջալերում էր նրանց՝
յիշեցնելով նրանց մղած պատերազմ-
ները: 10 Սրտապնդելով համոզում էր
նրանց, նաեւ հեթանոսների կեղծիքը
ցոյց տալով յիշեցնում էր, թէ որքան
են նրանք ուխտը դրժել եւ երդմնա-
զանց եղել:

ՄԱԿԱԲԱՅԵՑՈՒ ԲԱՐԵՆՇԱՆ ԵՐԱԶԸ

11 Նրանցից ամէն մէկին
սրտապնդում էր առաւել ոգեւորիչ
խօսքերով, քան զէնքով՝ տէգերով ու
վահաններով: Նա այդ ժամանակին
պատշաճ մի երազ պատմեց, որով
աւելի զուարթացրեց բոլորին: 12 Նրա
տեսած երազը հետեւեալն էր. Օնիա
անունով մէկը, որն իր ժամանակին
գեղեցիկ դէմքով, շքեղ արտաքինով,
հեզաբարոյ ու սրտով խաղաղ մի
քահանայապետ էր, եկաւ ու սկսեց
գեղեցիկ խօսքեր ասել մարդու անձ-
նական քաջագործութիւնների մասին,

†Այլ բնագրերում՝ սուսերը դրեց մէկդի ու իրեն մետեց մերքեւ:

մի բան, որ սովորել էր մանուկ հասակից: Նա ձեռքը բարձրացրած աղաչում էր, որ հաստատ մնայ հրեայ ազգը: 13 Դրանից բացի, նա տեսաւ մի փառահեղ, սքանչելի ու խիստ վայելուչ ծերունու, որ կանգնած էր նրա մօտ: 14 Այդտեղ խօսել սկսեց Օնիան ու ասաց. «Սա մեր եղբայրասէր ծերունին է, որ միշտ ու յաճախ աղօթք է մատուցում Աստծուն»: Դա Աստծու մարգարէ Երեմիան էր: 15 Երեմիան իր աջ ձեռքը մեկնելով՝ Ցուդայի ձեռքին դրեց ոսկէ մի սուսեր: Տալու ժամանակ նա այսպէս ասաց. 16 «Ընդունի՛ր այս սուրբ սուսերն իբրեւ Տիրոջ կողմից տրուած պարգեւ, որովհետեւ դրանով ես ոչնչացնելու բոլոր թշնամիներին»:

ՆԻԿԱՆՈՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

17 Այս ազդու եւ գեղեցիկ խօսքերից խիստ քաջալերուեցին, ոգեւորուեցին, նոր ուժ ստացան Ցուդան ու երիտասարդները: Որոշեցին այլեւս չխոտորուել, այլ ոտքերը հաստատուն դնել գետին, ապաւինել համբերութեանը, պատրաստ լինել պատերազմի, քաջի անուն վաստակել, հաւատարմութեան ուխտը հաստատ պահել, քաղաքի մասին հոգ տանել, 18 նաեւ կանանց, երեխաների, հարազատ եղբայրների, տոհմակից քաղաքացիների, տեղացի դայեակների մասին հոգալ: Այս ամենից աւելի, սակայն, պէտք է մտահոգուէին յանուն մեծ ու սուրբ տաճարի պատերազմելու համար: 19 Քաղաքացիները նուազ չէին անհանգստանում մղուող պատերազմի, նրա ելքի համար: 20 Երկու կողմերի զօրքերը միմեանց վրայ յարձակուելուց առաջ շեփոր էին հնչեցնում, պատրաստութիւն էին տեսնում, ճակատ կազմում, բոլոր գնդերի գլուխ կանգնեցնում սպառազինուած փղեր, հեծելազօրը կանգնեցնում էին աջ ու ձախ կողմերում: 21 Այդ սոսկալի երազում Ցուդան տեսնում էր, որ գնդերն իրենց դրօշները պարզած† պատրաստութիւն էին տեսնում, տարբեր զէնքերով զինւում: Փողփողում էին տարբերանշանները, խիստ գազազում էին հսկայ գազանները: Այն ժամանակ Ցուդան ձեռքերը երկինք պարզած՝ դիմեց հրաշագործ Տիրոջը, որը յաղթանակ է պարգեւում ոչ թէ ըստ մարդկանց ցանկութեան, այլ ըստ իր իրաւադատ կամքի այն մարդկանց, որ արժանի են իրեն: 22 Նա դիմեց Նրան այսպիսի աղաչանքով. «Դու, Տէ՛ր տէրերի, Եզեկիէլ արքայի ժամանակ ուղարկեցիր քո հրեշտակին եւ Սենեքերիմի զօրքից կոտորեցիր հարիւր ութսունհինգ հազար սպառազէն հեծեալ: 23 Արդ, ո՛վ ամենազօր Տէր, որ բնակւում ես երկնքում, ուղարկի՛ր մեզ քո հրեշտակին որպէս ահ ու սարսափ տարածող, որպէս քո բազկի զօրութիւն, 24 որպէսզի սարսափեն ու դողան քո ժողովրդի վրայ հայհոյելով յարձակուող թշնամիները»: Եւ այսպէս նա վերջացրեց իր խօսքը:

25 Երբ Նիկանորը շեփորներ հնչեցնելով, բազմաթիւ նուագարաններ նուագելով իր զօրքն էր առաջ շարժում, 26 սրանք բազմաթիւ աղօթքներով ու պաղատանքներով յարձակուեցին նրանց վրայ: 27 Սրանց ձեռքերը կռուի մէջ էին, իսկ սրտերը աղօթքներով դարձած էին դէպի երկինք, դէպի Աստուած: Մակաբայեցի Ցուդայի բանակը հեթանոսների զօրքից կոտորեց ոչ պակաս քան երեսունհինգ հազար մարդ՝ խիստ ուրախանալով, որ Աստուած մեծապէս օգնեց իրենց: 28 Այսպէս գործը յաջող աւարտելով՝ նրանք վերադարձան ուրախութեամբ: Երկու կողմերի սպանուած զինուորների մէջ գտնելով Նիկանորի դիակը իր զէնքերով ու զինանշաններով հանդերձ, 29 իրենց մայրենի լեզուով ու բարձր ձայնով օրհնեցին իրենց Ամենազօր Աստծուն: 30 Ազգի համար յաժարակամ նահատակուելու պատրաստ Ցուդան հրամայեց, որ կտրեն Նիկանորի գլուխն ու աջ ձեռքը ուսով հանդերձ եւ տանեն Երուսաղէմ: 31 Երբ ինքն եկաւ հասաւ, զոհասեղանի մօտ կանչեց իր ազգատոհմի մարդկանց, քահանաներին, բերել տուեց նաեւ միջնաբերդում մնացած մարդկանց, 32 նրանց ցոյց տուեց

†Այլ բնագրերում՝ զինուած:

անօրէն, հայհոյող Նիկանորի գլուխը եւ այն ձեռքը, որ ամբարտաւան գոռոզութեամբ յանդգնել էր երկարել Ամենակալ Աստծու տաճարի դէմ: 33 Նա հրամայեց կտրել հանել անօրէն Նիկանորի լեզուն եւ ասաց. «Սա մանրմանր կտրատելով՝ գիշակեր թռչուններին կեր պիտի դարձնեմ»: Նա հրամայեց նրա անխոհեմ բազուկը կախել տաճարի դիմաց: 34 Բոլորը դէպի երկինք՝ փառապանծ Աստծուն ուղղեցին իրենց օրհնութիւնները եւ ասացին. «Թող օրհնուի Նա, ով իր սուրբ վայրը անարատ պահեց»:

35 Մակաբայեցին Նիկանորի գլուխը կախեց բարձրապարիսպ աշտարակից ի ցոյց բոլորի՝ որպէս նշան Տիրոջ պարգեւած յաղթութեան ու բացայայտ օգնութեան: 36 Բոլորի համաձայնութեամբ ամբողջ ազգին հրաման տուեցին, որ այդ օրը ամենամեայ տօն լինի, որպէսզի այդ օրն աննկատ չանցնի: 37 Դա տասներկուերորդ ամսի՝ ասորերէն Ադար կոչուող ամսի տասներեքերորդ օրն է եւ տօնւում է մարդքէական ամսից մի օր առաջ:

ՎԵՐՋԱԲԱՆ

38 Նիկանորի հետ կապուած դէպքերի պատմութիւնն այսքան է: Այստեղ ես էլ աւարտում եմ այն ժամանակների պատմութիւնը, երբ եբրայեցիները տիրեցին այդ քաղաքին: 39 Եթէ գովութեան արժանի է շարադրանքս, ապա գոհ եմ, որովհետեւ դա եղել է իմ ցանկութիւնը, իսկ եթէ խօսքս եղել է պարզունակ ու թոյլ, ապա այդքանն եմ կարողացել: 40 Եթէ որեւէ մէկը գինին առանձին ու ջուրն առանձին է խմում, անդուր է, իսկ եթէ մէկը ջուրը խառնում է գինու հետ, ապա քաղցր ու հաճելի է դառնում դրա համը: Նոյն ձեւով մեր խօսքի կառուցուածքը հաճելի պէտք է լինի նրանց ականջին, ովքեր ընդունում են այն: Այստեղ աւարտում ենք մեր խօսքը:

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ

Ներածութիւն

Ամենայն հաւանականութեամբ Մակաբայեցիների այս երրորդ գիրքը գրուել է Մակաբայեցիների առաջին եւ երկրորդ գրքերից աւելի քան 30 տարի առաջ, որովհետեւ այստեղ պատմում է Եգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Փիլոպատորի ժամանակ տեղի ունեցած դէպքերի մասին: Պտղոմեանների մէջ միայն նա է, որ տիրել է Եգիպտոսին: Եգիպտոսում նա իշխել է Ասորիքի եւ ասիական կողմերի թագաւոր Անտիոքոս Մեծի թագաւորութեան ժամանակ եւ ոչ թէ նրա կրտսեր որդու՝ Անտիոքոս Եպիփանի տարիներին: Ինչպէս յայտնի է, այն աղէտալի դէպքերը, որոնց մասին պատմում է այս գրքում, եւ որոնց ենթարկուեցին հրեաները, կատարուել են Անտիոքոս Մեծի կողմից, մինչդեռ Անտիոքոս Եպիփանի ժամանակ տեղի ունեցած աղէտները կատարուել են երեսուն կամ քառասունից պակաս տարիներ յետոյ, որոնց մասին էլ պատմում են Մակաբայեցիների առաջին եւ երկրորդ գրքերը:

Եգիպտոսի Փիլոպատոր թագաւորը գալիս է պատերազմելու Ասորիքի եւ ասիական կողմերի արքայ Անտիոքոս Մեծի դէմ: Փիլոպատորը դաւաճանաբար սպանում է ոմանց ձեռքով, եւ Անտիոքոսն առանց պատերազմի հասնում է յաղթանակի, որի համար էլ նա շռայլ պարգեւներ է բաշխում իր պաշտած հեթանոս աստուածներին: Ապա նա գալիս է Երուսաղէմ եւ երբ պատիւ մատուցելու համար ուզում է տաճար մտնել, հրեաներն ընդդիմանում են նրան՝ համարելով դա մեծ աղէտ: Նրանք բարձրաձայն աղօթում են, որ այդ անօրէնի ոտքը չկոխի իրենց սրբավայրը: Թէեւ Անտիոքոսը յանդգնում է մտնել տաճար, բայց Աստծու կողմից պատժուելով՝ հազիւ կարողանում է կենդանի դուրս գալ այնտեղից եւ այդ պատճառով էլ առաւել մեծ թշնամանքով է լցւում դէպի հրեաները:

Վերադառնալով Եգիպտոս, նա մի խիստ հրովարտակ է գրում հրեաների դէմ՝ պահանջելով, որ նրանք թողնեն իրենց հայրերի օրէնքը: Հրեաներից շատերը, գայթակղուելով, հրաժարւում են իրենց օրէնքից: Անտիոքոսը ծանրացնում է հարկերը եւ դա բաւական չհամարելով՝ հրաման է արձակում ամբողջ երկրում շղթայակապ անել բոլոր հրեաներին եւ փղերի ոտքերի տակ ոչնչացնել նրանց: Սակայն Աստուած իր մեծ խնամակալութեամբ նրա ցասումը փոխում է գթասրտութեան, եւ հրեաներն ազատ են արձակւում փառքով ու պատուով: Այնուհետեւ նա գրում է մի նոր հրովարտակ ի պաշտպանութիւն հրեաների, եւ որպէսզի այն մեծարանքով ընդունուի նրանց կողմից, հրամայում է վերադարձնել նրանց առգրաւուած ինչքերը եւ նրանց ձեռքը յանձնել իրենց նախնիների օրէնքներից հրաժարուած եւ սուրբ Աստծուն ուրացած հրեաներին՝ արժանի պատիժ ստանալու համար: Անտիոքոսն այս հրովարտակը գրում է Փիլիպատոր Պտղոմէոսի անունով եւ ինքն էլ իրեն կոչում է Պտղոմէոս, որովհետեւ նա յաղթանակօրէն տիրել էր նրա երկրին:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

1 Փիլոպատորը իր մօտ վերադարձողներից տեղեկացաւ, որ Անտիոքոսը գրաւել է իր հողերը եւ այդտեղերից հեռացրել իր զինուորներին: Ժամկէտ նշանակեց, հրաման տուեց իր ամբողջ զօրքին՝ հետեւակներին ու հեծեալներին, հետը վերցրեց իր քոյր Արսինոյէին, գնաց հասաւ ռափայեցիների կողմերը, ուր հասել ու բանակ էր դրել նաեւ Անտիոքոսն իր ամբողջ զօրքով: 2 Թէոդոտոս անունով մէկը մտաբերեց, որ իրեն գործ են յանձնարարել, վերցրեց իր ձեռքի տակ եղած զօրքը եւ գաղտնի զինուեց: Գիշերով նա հասաւ Պտղոմէոսի վրանը, որ ներս մտնի, նրան այնտեղ սպանի ու միայնակ լուծի պատերազմի հարցը: Նրան առաջնորդում էր Դոսիթէոս անունով մի հրեայ, որն ուրացել էր իր նախնիների կրօնը: Այդտեղ՝ վրանում, արագ-արագ հանգցնում էին լոյսերը: Երբ մարտը բորբոքուեց, եւ Անտիոքոսի գործերը յաջողուեցին, 3 Արսինոյէն անմիջապէս վեր կացաւ, ողորմաձայն լալով, մազերն արձակելով զօրքերին աղաչեց, որ նրանք այսուհետեւ իրենց ու իրենց որդիների համար կռուեն, եւ եթէ կարողանան յաղթանակ տանել, ապա խոստանում էր նրանցից ամէն մէկին երկուական ոսկի մնաս տալ: Այնպէս պատահեց, որ Անտիոքոսն ու իր զօրքը սկսեցին նեղել թշնամուն: Նրանք ոմանց կոտորեցին, ոմանց գերեվարեցին:

4 Երբ իր ծրագրած գործն այսպէս իր ձեռքով բարեյաջող աւարտ ունեցաւ, Անտիոքոսը որոշեց գնալ այցելել իր շրջակայքում գտնուող քաղաքները եւ քաջալերել բնակիչներին: Նա ի կատար ածեց իր որոշումը. պաշտամունքի բոլոր վայրերին նուէրներ տուեց, իր շուրջը համախմբեց ոգեւորուած ու քաջալերուած մարդկանց: 5 Եբրայեցիները ժողովրդի միջից ծերեր ուղարկեցին նրան ողջոյն հաղորդելու, զոհեր մատուցելու, յաղթանակի առթիւ ուրախութիւն յայտնելու համար: Եւ նա նրանց յայտնեց, որ սիրով յանձն է առնում գնալ նրանց մօտ:

ՀՐԵԱՆԵՐԸ ԱՐԳԵԼՈՒՄ ԵՆ ԱՆՏԻՈՔՈՍԻՆ ՄՏՆԵԼ ՍՐԲԱՐԱՆ

6 Երբ մեծ շուքով ու հանդիսաւորութեամբ նա եկաւ հասաւ Երուսաղէմ, մեծ Աստծուն ողջակէզներ մատուցեց, գոհութիւն յայտնեց ու շնորհակալ եղաւ: Նա ուզում էր այդ վայրում մի ծէս եւս կատարել: Երբ եկաւ հասաւ սուրբ վայրը, զարմացաւ տաճարի գեղեցկութեան ու շքեղութեան, նրա սպասքի վրայ, ապա ցանկութիւն յայտնեց մտնել նաեւ սրբարանից ներս: 7 Հրեաները առաջը կտրեցին եւ յայտնեցին, որ պատշաճ ու յարմար չէ այդ բանն անելը, որովհետեւ հրեաներն իրենք անգամ իրաւունք չունեն մտնել այնտեղ: Նոյնիսկ քահանաները չեն կարող մտնել այնտեղ, այլ միայն՝ քահանայապետը, այն էլ տարին միայն մէկ անգամ: 8 Նա, սակայն, չնահանջեց: Թէեւ բերեցին օրէնսգիրքը, կարդացին նրա առաջ, բայց նա չհրաժարուեց. յամառում, պնդում էր, որ իրեն ներս թողնեն: «Եթէ ուրիշներին արժանի չէ ներս մտնել, ապա ինձ, – ասում էր, – արժանի է, պէտք է տրուի այդ պատիւը: 9 Հապա ինչպէ՞ս է, – ասաց, – որ պաշտամունքի անխտիր բոլոր վայրերը համարձակ մտել եմ, եւ ոչ ոք ինձ չի արգելել»: Այդտեղից մէկը համարձակօրէն խօսեց ու ասաց. «Ինչո՞ւ ես յամառելով պնդում: Մի՞թէ չի կարող լինել այնպիսի մի տեղ, ուր պատշաճ չէ մտնել»: Սա պատասխանեց. «Ո՛չ, հնար չկայ, ուզում էք թէ չէք ուզում, ես մտնելու եմ»:

10 Թանկարժէք զգեստներ հագած բոլոր քահանաներն այդտեղ ընկան գետին, սողում էին ու աղաչում Աստծուն, որ օգնի իրենց եւ յետ կանգնեցնի նրան իր մտադրութիւնից: Նրանք տաճարը աղաղակով, լացուկոծով լցրեցին: Մնացած քաղաքացիներն էլ յուզուած ու շտապ այդտեղ հասան: «Ի՞նչ է պատահել», – շշնջում էին նրանք: Կուսանոցների կոյսերը մայրապետների հետ փողոցներ դուրս եկան: Նրանք հող էին ածում իրենց գլխին, քաղաքը լցնում իրենց ճիչ ու

աղաղակով: 11 Իրենց առագաստներում պառկած նորահարսերը, իրենց պատշաճ ամօթը մոռացած, համարձակ քայլուածքով դէպի քաղաքամէջ էին շտապում: Նոյն ձեւով դեռատի մայրերն իրենց երեխաներով, երեխաների հոգսերը մոռացած, խելայեղօրէն վազում էին արտերի միջով առանց յետ նայելու, որպէսզի հաւաքուեն սրբազան տաճարի մօտ: Հազարաւոր մարդիկ հաւաքուեցին այստեղ, որպէսզի աղօթք անեն, որովհետեւ նա որոշել էր իր կեանքը վտանգի ենթարկելով՝ անօրէնութեամբ տաճարից ներս մտնել: Դրա համար էլ քաղաքացիները բարկացել էին եւ չէին հաշտուում այդ սրբապիղծ մարդու բռնութեան հետ:

12 Երբ տեսան, որ հաստատապէս ու յամառօրէն ուզում է իր կամքը կատարել, միմեանց ձայն տուեցին, ամէն մէկն իր զէնքը վերցրեց, որպէսզի կազմ ու պատրաստ լինի կռուի եւ մեռնի յանուն նախնիների հաւատի ու հայրերի օրէնքների: Այդտեղ նրանք մեծ խռովութիւն բարձրացրին, բայց ժողովրդի միջից ծերերը հազիւ կարողացան ամբոխին հանդարտեցնել եւ կռուի պատրաստուածներին ժողովարան վերադարձնել: Նոյնն արեց նաեւ քաղաքի զօրքը: 13 Թագաւորի մօտ գտնուող ծերերն ու մեծամեծները աշխատում էին այդ գոռոզի միտքը փոխել, բորբոքուած յամառութիւնը կոտրել: Նա, սակայն, չէր ընկրկում. յամառօրէն պահանջում էր կատարել նախապէս յայտնած իր կամքը: 14 Նրա մօտ գտնուողները երբ տեսան նրա յամառութիւնը, վերադարձան ժողովարան՝ Ամենազօր Աստծուն աղաչելու, որ զօրավիդ լինի իրենց, որ չարհամարհի, աչքաթող չանի իրենց ու չթողնի, որ նա ամբարտաւանութեամբ ոտնահարի իրենց օրէնքն ու կրօնը: Հաւաքուած ժողովուրդն այսպէս անընդհատ սրտակեղեք աղաղակ էր բարձրացնում: Սոսկալի աղմուկ բարձրացաւ, եւ թւում էր, թէ ոչ միայն մարդիկ են աղաղակում, այլեւ պարիսպներն ու գետինն են ձայն տալիս: Բոլորը գերադասում էին մեռնել, քան սրբարանը պղծուած տեսնել:

ՀՐԵԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔԸ

2 Հրեաներն սկսեցին աղաչել ու ասել. «Տէ՛ր, Տէ՛ր, Թագաւո՛ր երկնքի, բոլոր արարածների Տէ՛ր Աստուած, սրբերի՛ սուրբ, Ամենազօր, Ամենակալ, տե՛ս մեր այս ցաւերը, որ կրում ենք անօրէն ու պիղծ, յանդուգն ու գոռոզ թշնամուց: Դո՛ւ ես ստեղծել ամէն ինչ, 2 դու, որ ամէն ինչ ընդունում ես հեզութեամբ ու արդարութեամբ, արդար ես դու, Տէ՛ր, բայց ովքեր գոռոզութեամբ ու ամբարտաւանութեամբ են գործում, դու դատում ես նրանց: Նախկինում դու բնաջնջեցիր անօրէնութիւններ կատարող հսկաներին, որ ապաւինում էին իրենց ուժին ու քաջութեանը: Դու նրանց ջրասոյզ արեցիր: 3 Դու ամբարտաւան սոդոմացիներին իրենց բացայայտ չարիքների համար խայտառակեցիր, կրակի ու ծծմբի մատնեցիր նրանց, ծաղրուածանակի ենթարկեցիր յետագայ սերունդների առաջ: 4 Դու զանազան պատուհասներով պատժեցիր յանդուգն ու բռնակալ արքային՝ Փարաւոնին, որը քո իսրայէլացի սուրբ ժողովրդին ստրկութեան էր մատնել, ցոյց տուեցիր քո զօրութիւնը, նրան ցոյց տուեցիր քո զօրութեան մեծութիւնը, որովհետեւ սպառազինուած, բազմաթիւ մարտակառքերով ու ձիերով հետապնդում էր քո ժողովրդին, բայց դու նրան սուզեցիր Կարմիր ծովի մէջ, 5 իսկ նրանց, ովքեր հաւատում էին քեզ, բոլոր արարածներից բարձր պահեցիր: Սրանք երբ տեսան քո ձեռքի գործը, օրհնեցին քեզ, Տէ՛ր Ամենակալ: Դու Թագաւոր ես, դու ես, որ ստեղծեցիր անչափելի ու անքննելի ողջ երկինքը, քեզ համար ընտրեցիր այս քաղաքը եւ սրբագործեցիր այս վայրը քո անունով, քեզ համար, դու, որ կարօտ չես ոչ մի բանի: 6 Դու սա կառուցեցիր ի փառս քո մեծութեան, ի պատիւ քո անուան: Դու սիրեցիր այս տաճարը եւ խոստացար իսրայէլացիներին, որ, ինչ էլ պատահի, ինչ

դժուարութիւններ էլ լինեն, դանք այս սուրբ տեղը խնդրանքներով եւ լսելի դարձնենք քեզ մեր աղօթքը: Քո խօսքը վստահելի է ու ճշմարիտ, 7 որովհետեւ մեր հայրերը շատ անգամ են նեղութեան մէջ ընկել, եւ որովհետեւ նրանք հնազանդ էին քեզ, դու օգնեցիր, մեծամեծ չարիքներից փրկեցիր նրանց: Իսկ մենք, ահա, սո՛ւրբ Թագաւոր, մեր մեծամեծ ու բազմաթիւ մեղքերի համար տանջուելով՝ մատնուել ենք մեր թշնամու ձեռքը: Մենք ուժասպառ ու յուսահատ ենք դարձել: Մեր թուլութեան ու նեղութեան այս օրերին պիղծ, գոռոզ ու ամբարտաւան այդ մարդն ուզում է անպայման ներս մտնել, անպատուել սրբարանը, ողջ երկրում քո անուան փառքի համար կառուցուած անուանի տաճարը: 8 Թէեւ քո բնակավայրը անթերեւոյթ ու մարդկանց ձեռքի համար անհասանելի երկինքների երկինքն է, բայց դու հաճեցար քո փառքով Իսրայէլին վայելչութիւն պարգեւել, սրբագործեցիր այս վայրը: Թէեւ յանցաւոր ենք քո առաջ, բայց պիղծ հեթանոսների վրէժը մեզանից մի՛ լուծիր, որպէսզի անօրէնները չպարծենան գոռոզամտութեամբ եւ չցնծան իրենց ամբարտաւան խօսքերով ու չասեն, թէ՝ "Մենք ոտնակոխ արեցինք սուրբ տաճարը, ինչպէս ոտնատակ են տալիս մեհեանների յատակը": 9 Ջնջի՛ր մեր մեղքերը, ների՛ր մեր բոլոր յանցանքները, այս պահին ցո՛յց տուր քո ողորմածութիւնը: Անմիջապէս մեզ թող հասնի քո ողորմածութիւնը, թո՛յլ տուր, որ մենք՝ կործանուողներս եւ չարչարուողներս, մեր բերանով օրհնենք քեզ: Խաղաղութի՛ւն պարգեւիր մեզ»:

10 Ամենազօր, Ամենակալ Աստուածը, որ սուրբ է եւ բնակւում է սրբերի մէջ, լսեց ժողովրդի այս օրինաւոր խնդրանքն ու աղօթքը: Մինչեւ վերջ ամբարտաւան, մեծ գոռոզութեամբ նրանց վրայ յանդգնօրէն յոխորտացող այդ մարդուն նա սաստիկ հարուածներով պատժեց: Նրան այնպէս էր տանում ու բերում, ինչպէս եղէգն է տարուբերւում քամուց: Ապա գետին զարկեց նրան: Նա այդպէս ընկած էլ մնաց անզգայ, թմրած, անմռունչ, բոլոր անդամները յօդերից խախտուած. եւ խիստ դատաստանը նրա գոռոզութեան համար արագ հասաւ նրա վրայ: 11 Նրա բարեկամներն ու նրան չրջապատող սպասաւորները տեսնելով, որ դատաստանը այդպէս շուտ է հասնում նրա վրայ, վախեցան, թէ նա կը մեռնի: Անմիջապէս նրան ներսից դուրս հանեցին՝ վախենալով էլ աւելի սաստիկ հարուածներից: 12 Երբ բաւական ժամանակ անցաւ, այդ մարդը սթափուեց, բայց ոչ թէ զղջաց իր մտքում այդ մեծ պատուհասից յետոյ, այլ սկսեց աւելի սաստիկ սպառնալ:

13 Հրամայեց վերադարձի ուղին բռնել: Երբ եկաւ հասաւ Եգիպտացիների երկիրը, չարութիւնն աւելի բորբոքուեց իր ու սեղանակից ընկերների մէջ, որոնք արհամարհում էին բոլոր տեսակի օրէնքները: Նա ոչ միայն անթիւ չարագործութիւններ անելով չյագեցաւ, այլ այնպիսի յանդգնութեան հասաւ, որ սրբավայրի հասցէին հայհոյանքներ էր թափում: Իր բարեկամներից շատերն էլ, հետեւելով Թագաւորին, նրա կամքին էին ենթարկւում:

ԱՆՏԻՈՔՈՍԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

14 Նա նամակ գրեց ու հրամայեց, որ այն հրապարակեն քաղաքի փողոցներում: Դա բամբասանք էր ու հայհոյանք: Նա հրամայեց իր պալատի շուրջը, աշտարակների վրայ սիւներ կանգնեցնել եւ դրանց վրայ ամրացնել հետեւեալ խիստ հրամանը. «Եթէ որեւէ մէկը զոհ չի մատուցում, թող երբեք չհամարձակուի տաճար մտնել: Ամբողջ հրեայ ազգը հաշուառման ենթարկել եւ հարկատու դարձնել նրանց իբրեւ ծառաների: Ով ապստամբելով մի փոքր դիմադրի, մահուան պիտի դատապարտուի: Իսկ ում որ չեն սպանելու, նրանց վրայ կրակով թող խարանեն Որմիզդ աստծու նշանը եւ նրա տօնին ստիպեն նրանց պարել՝

ճիւղերից հիւսած պսակներ ձեռքնե-
րին»: 15 Որպէսզի ինքը բոլորին
թշնամի չերեւայ, հրամայեց, որ հրո-
վարտակում գրեն նաեւ հետեւեալը.
«Եթէ ոմանք համաձայնեն ընդունել
արքունի կրօնը, ապա նրանք թող
համարուեն ալեքսանդրացիների հա-
մաքաղաքացիներ»: 16 Հրեաների
միջից բազմաթիւ թեթեւամիտներ, որ
առաջներում էլ տատանւում էին
նախնիների օրէնքը դաւանելիս, հեշ-
տութեամբ յանձն առան: Սրանք կար-
ծում էին, թէ մեծ փառքի կարժանան,
եթէ հնազանդուեն թագաւորի ասա-
ծին: 17 Սակայն հրեաներից շատերը
մնացին անդրդուելի. նրանք հաւա-
տարիմ մնացին իրենց սուրբ օրէնք-
ներին: Նրանք իրենց ունեցած
հարստութիւնը տուեցին իրենց անձը
փրկելու համար, որպէսզի ստուգապէս
այդ ցուցակի մէջ չմտնեն: Նրանք յոյս
ունէին, որ իրենց օգնութիւն կը հասնի
Տիրոջից: Նրանք խորշում, զզւում էին
իրենց կրօնից հրաժարուած մարդկան-
ցից, նրանց պիղծ էին համարում:
Նրանց վանում, հեռու էին պահում
իրենց հայրենի օրէնքներից եւ մերժում
էին, որ նրանք հաղորդուեն սրբու-
թիւնների հետ:

ՀՐԵԱՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

3 Երբ այդ անօրէնը տեղեակ դարձաւ
նրանց նպատակներին, խիստ զայրա-
ցաւ, հրաման տուեց, որ իր բար-
կութիւնը թափեն ոչ միայն երու-
սաղէմացիների, այլեւ ամբողջ երկրի
վրայ, ուր երբայեցիներն են բնակւում,
հրամայեց բերել հաւաքել նրանց,
տանջալի մահով սպանել վերացնել
նրանց երկրի երեսից: 2 Երբ տանջանքի
այս անօրէն հրամանը հրապարակուեց,
նրանք գտան, որ իրենց համար աւելի
ծանր է օրէնքները փոխելու տառա-
պանքը, քան դառն մահը: 3 Երբա-
յեցիները հաւատարմութեամբ արքայի
օրէնքը պահում էին, բայց եւ իրենց
Տէր Աստծուն հաւատարիմ էին մնում,
որուած օրէնքները հաստատ էին
պահում, հեռու էին մնում ապստամբ-
ների անօրէնութիւններից, որի պատ-
ճառով շատերի աչքից ընկնում էին,
4 բայց հէնց նրա համար, որ հա-
ւատարիմ էին մնում օրէնքի սպա-
սաւորութեանը, դրա համար էլ բոլոր
մարդկանց առաջ փառաւորւում էին:
Սակայն այլազգիները հաշուի չէին
առնում հրեայ ազգի բարեմասնու-
թիւնները, այլ նրանց պաշտամունքի
եւ կերակուրների տարբերութիւնը
համարում էին ապստամբութիւն
իրենց դէմ եւ ասում. «Այս ազգն
առհասարակ թագաւորին ու արքունի
զօրքին թշնամի է»: Եւ այսպիսի
հայհոյալից խօսքերով արքունիքին
մեծ վնաս ու պատուհաս էին բերում:

5 Ինչ վերաբերում է քաղաքում
ապրող հեթանոսներին, ապա սրանք
տեսնելով մարդկանց յանկարծակի
խռովութիւնը, այսպիսի հալածանք-
ների յանկարծակի վրայ հասնելը, ո՛չ
կարողանում էին օգնել նրանց, ո՛չ էլ
արքունի հրամանին դէմ կանգնել:
6 Միայն կարեկցում էին, մխիթարում,
քաջալերում, խնդրում էին անցկացնել
բարկութեան պահն ու ասում էին.
«Իրենց Տէր Աստուածը չի թողնի, որ
այսպիսի մի ազգ իզուր ոչնչացնեն»:
Բարեկամները, մերձաւորները, վաճա-
ռականները լռելեայն ուխտում էին
օգնական լինել միմեանց՝ որքան
կարող են: 7 Անօրէնը, սակայն, միաս-
ժամանակ այնքան էր ամբարտա-
ւանացել, որ բոլորովին անտեսել էր
մեծն Աստծու զօրութիւնը: Նա
կարծում էր, որ իր իշխանութիւնը
մշտնջենական է: Նա ամբողջ երկրում
այսպիսի մի հրովարտակ տարածեց.

ԱՆՏԻՈՔՈՍԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԱՆՀՆԱԶԱՆՈՂ ՀՐԵԱՆԵՐԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 «Եգիպտոսի կողմերի արքայ Ան-
տիոքոսը ողջունում է բոլոր վայրերի
սպարապետներին, զօրավարներին ու
զինուորներին: Ո՛ղջ եղէք, իսկ ես ինքս
ամէն ինչով, զօրքով ու տէրութեան
օրէնքների շնորհիւ ողջ եմ: 9 Դուք
ինքներդ լսած կը լինէք մեր հեծե-
լազօրի անցած ճանապարհի մասին,
թէ ինչպէս աստուածների օգնութեամբ
իմ զինուորներով ճանապարհ ընկայ:
Ո՛չ զօրքի ուժով անցայ, ո՛չ տէգ ու
նիզակով, ո՛չ ամրապինդ աղեղներով,
այլ՝ հեզութեամբ ու խոնարհութեամբ,
մարդասիրական նպատակներով, որ-
պէսզի դայեակի նման սնուցանեմ
Սորին Ասորիքի ու Տաճկաստանի
բոլոր կողմերը: Ամէն ինչ բարեյաջող
աւարտուեց: 10 Մենք մեծարեցինք
բոլոր քաղաքները, նուէրներ մատու-
ցեցինք այնտեղ: Եկանք մտանք
Երուսաղէմ, ցանկացանք մտնել տա-
ճար՝ այն չարագործների սրբավայրը,
որոնք երբեք չեն կամենում հրա-
ժարուել իրենց չար խորամանկու-
թիւններից: 11 Նրանք խօսքերով առե-
րես ուրախացան, որ եկել ենք իրենց
մօտ, բայց գործով խաբեցին մեզ,
որպէսզի խանգարեն մեր այնտեղ
մտնելը: Նրանք մեզ ո՛չ տաճարին
մօտիկ թողեցին, ո՛չ էլ ընդունեցին
իրենց տաճարին մատուցած մեր
մեծարժէք ընծաներն ու զոհաբե-
րութիւնները: Ապաւինելով իրենց
ամբարտաւան հպարտութեանը, մի
բան, որ շատ հնուց է գալիս,
արգելեցին մեզ ներս մտնել: Հրաժա-
րուեցին մեր այն մարդասիրական
բարութիւնից, որ մենք ունենք բոլոր
մարդկանց նկատմամբ: 12 Նրանք մեր
հանդէպ ունեցած իրենց անմիտ
թշնամութիւնը կամեցան բացայայտ
կերպով ցոյց տալ, միայն թէ
կարողանային բոլոր ազգերի մէջ
վարազի պէս գլուխները տնկել, ելնել,
տիրել, թագաւորել, հպարտանալ,
ամբարտաւանել, բարձրապարանոց
երեւալ իրենց երախտաւորների առաջ:
13 Մենք հանդուրժեցինք նրանց
անմտութիւնը, եւ երբ յաղթանակով
վերադարձանք Եգիպտոսի կողմերից,
նուաճեցինք բոլոր ցեղերն ու ազգերը
մարդասիրական հեզութեամբ, խնամք
տածելով, ինչպէս պարտ ու պատշաճ է
մեր օրէնքներին: 14 Առանց ոխ
պահելու բազում անգամ նրանց
ցուցաբերած յանդգնութեան ու լրբու-
թեան համար, հրամայեցինք նրանց
ազգատոհմերին համարել ալեքսան-
դրացիներին արժանի համաքա-
ղաքացիներ: 15 Բայց նրանք ստոր,
յետին նպատակներով ու բնածին
խորամանկութիւններով այդ բարե-
գործութիւնից էլ հրաժարուեցին, եւ
քանի որ նրանց միտքը միշտ դէպի
չարագործութիւնն է հակուած, նրանք
ոչ միայն մերժեցին ընկերութիւնը,
մեծարանքն ու պատիւը, այլեւ
գարշում են, խօսքով կամ լռելեայն
անարգում են ու պիղծ համարում մեզ:
Եւ սակաւաթիւ մարդկանց եւս, որոնք
գթութեամբ համակրում են մեզ,
նրանք մերժում, անարգում են եւ
արագօրէն թշուառ կեանքի հասցնում:
Նրանք հապշտապ, տագնապահար՝
նրանց գործերը ձախողման են ուղում
հասցնել: 16 Այս ամենի պատճառով
մենք համոզուեցինք, որ նրանք մեր
թշնամիներն են, ուստի մենք
ենթադրում ենք, որ այդպիսի
խորամանկ մտադրութիւն ունենալով՝
նրանք գուցէ յանկարծ խռովութիւն
բարձրացնեն մեր դէմ, ըստ իրենց
անօրէն սովորութեան՝ օգնութիւն
հայցեն ուրիշներից, ներքուստ մեզ
իրենց թշնամի ու մատնիչ համարեն:
Հրամայում ենք. մեր այս
հրովարտակն ստանալուց անմիջապէս
յետոյ մոլի չարագործներին իրենց
կանանց ու երեխաների հետ
նախատինքների ու տանջանքների
ենթարկելով, ոտք ու ձեռքը եւ
պարանոցները կապկպած, չորս կողմ
կարգուած պահակախմբերով, խիստ
պատիժների ենթարկելով՝ մեզ մօտ
բերել, 17 որպէսզի նրանք, իբրեւ
խորամանկ մարդիկ, իրենց անօրէն
չարագործութիւնների համար իրենց
կատարած գործերին արժանի պատիժ
ու պատուհաս կրեն, եւ մենք կարո-
ղանանք հեշտ ու խաղաղ մեր գործերը
կարգի բերել: Եթէ գտնուեն մարդիկ,
որոնք կը թաքցնեն նրանցից մի
տղամարդ, մի կին կամ մի տղայ
երեխայ՝ ալեհեր ծերունուց մինչեւ
ծծկեր երեխայ, ապա նրան ու նրա
տոհմը չարաչար տանջանքներով
մահապատժի կ'ենթարկէք: 18 Իսկ եթէ
գտնուեն մարդիկ, որոնք ի յայտ կը
բերեն այդ թաքնուած մարդկանց,
ապա յայտնողը թող սեփականացնի
թաքնուածի ինչքն ու ունեցուածքը,
արքունի գանձարանից թող պարգեւ

ստանայ եւ ազատութեան պսակով պսակուած՝ գայ ու մեծարուի հրապարակում: 19 Բոլոր այն վայրերը, ուր կ՚երեւան փախստականներ կամ թաքնուածներ, թող աւերուեն, հրդեհուեն ու վերածուեն անապատի, թող կրակի մատնուեն եւ ամէն ազգի մարդկանց համար մշտապէս համարուեն ոչ պիտանի»:

ՀՐԵԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

4 Արքունի հրովարտակն, ահա, գրուել էր այս ձեւով: Հրովարտակի հրամանը որտեղ էլ որ հասնում էր, հեթանոսները հաւաքւում էին գաւառներում ու քաղաքներում եւ մեծ ուրախութիւն անում, որովհետեւ խորամանկ նենգութեամբ թաքցրած իրենց ոխակալութիւնը այլեւս բացայայտօրէն ու համարձակութեամբ էին ցոյց տալիս: 2 Քաջերի խոր սուգը յորդառատ արցունքներով էր արտայայտւում, սիրտ էր ճմլում, որովհետեւ յանկարծ տրւում էր մի խիստ հրաման, որով կոչ էին անում առհասարակ բոլորին սպանել: 3 Զկար մի գաւառ կամ քաղաք, մարդաբնակ մի վայր, բոլոր քաղաքներում մի փողոց, որ գոյժի աղաղակով ու կոծով լցուած չլինէր, 4 որովհետեւ խիստ դաժան ու անողոք հրամանի համաձայն, գաւառների հրամանատարները զանազան քաղաքներից տեղահան էին անում ընտրեալ ազգի զաւակներին, որպէսզի, ըստ այդ հրամանի, բնակավայրերից դուրս իզուր տեղը մեռնեն: Աղէտալի տառապանքներն ու խոր վշտերը այնքան ծանր էին, որ չարչարանքների այս ողորմելի տեսարանը մինչեւ անգամ ոխակալ սրտի, վրէժխնդիր ոգու տէր մարդկանց աչքերից արտասուք էր քամում, 5 որովհետեւ թշուառութեան այդ ճանապարհով տանում էին ալեհեր, ծերութիւնից թուլացած եւ կթոտած ոտքերով ծերունիների մի բազմութիւն:

Տանում էին նաեւ նորապսակների՝ կիսատ թողնելով նրանց ուրախութիւնը, զրկելով նրանց ամուսնական առագաստից, չարաչար դժբախտութիւն պատճառելով նրանց: 6 Աւանդապահ, քօղածածկ, պարկեշտ հարսները, ի նշան գոյժի, մազերն արձակած, իւղով օծուած մազերի հիւսուածքը համարձակօրէն արձակելով՝ հող էին ածում իրենց գլուխներին: Նրանք ուրախ երգերի ձայնակից ընկեր լինելու փոխարէն ենթարկւում էին իրենց համար անսովոր տառապանքների: Հրապարակներից մինչեւ նաւահանգիստները բռնութեամբ քարշ տալով նրանց՝ տանում էին հերարձակ, բզկտուած ու կապուած: 7 Նրանց ամուսինները երիտասարդական ուրախութեան փոխարէն պարաններով կապկպուեցին: Նրանք տեսնելով իրենց վրայ հասած այս աղէտը՝ մռնչում էին ու լալիս, իրենց դիմաց տեսնում էին մահուան օրհասը, իրենց ոտքերի առաջ՝ դժոխքի պատկերը: 8 Այսպէս բոլորին, իբրեւ վայրենի գազանների, շղթայակապ բերեցին եւ նոյն շղթաները, որոնցով կապուած էին նրանց պարանոցները, ամրացրին նաւախելերին: Ոմանց ոտքերից, ոմանց ձեռքերից կապելով՝ գամեցին նաւի տախտակամածի վերին կողմը: Բոլոր կողմերից փակուած՝ նրանք թմրած ու յիմարացած էին. այդպէս էին արել, որպէսզի նաւերի ընթացքի ժամանակ յանկարծ խորամանկութեամբ ազատուել-փախչել չկարողանան:

9 Երբ այսպէս բոլորին նաւերին ամրացրած տարան եւ յաջողակ քամու շնորհիւ, թագաւորի հրամանի համաձայն, տեղ հասցրին, հրաման արձակուեց, որ դրանց կոտորեն քաղաքից դուրս մի հրապարակում, ընդարձակ մի վայրում, որպէսզի խայտառակեն այդ ազգը, եւ որպէսզի բոլորը, ազատ ու հանգիստ, տեսնեն նրանց, որոնք ելումուտ էին անում ամէն տեղ: Բոլոր նախորդների վրէժը սրանցից էին հանում: 10 Երբ այս ամէնը կատարեցին, յայտնի դարձաւ, որ ցեղակիցները գաղտնի ցաւակցելով՝ լաց էին լինում ազգի վրայ հասած այս յանկարծակի թշուառութեան համար: Երբ դա իմացուեց, թագաւորը խիստ զայրացաւ, հրաման տուեց, որ քաղքում գտնուող հրեաներին նոյնպէս բերեն ու խառնեն սրանց, եւ բոլորին նոյն պատժի ենթարկելով՝ մահուան դատապարտեն, նոյն ցուցակում գրեն նրանց բոլորի անունները, 11 որովհետեւ այս գործը յայտնի դառնալուց քիչ առաջ թէեւ նա պատուիրել էր սրտացաւութիւն հանդէս բերել նրանց պաշտամունքի հանդէպ, բայց այժմ հրամայեց սաստիկ պատուհասներով ու տանջանքներով միանգամից ոչնչացնել նրանց:

12 Նրանց ցուցակագրելու այս խիստ դաժան հրամանն ի կատար ածելը տեւում էր արեւածագից մինչեւ մայրամուտ, բայց այն լիովին աւարտել չյաջողուեց քառասուն օրուայ ընթացքում: 13 Սովորականից աւելի խիստ մի հրամանով թագաւորը կարգադրեց բոլոր մեծամեծներին խնջոյքի հրաւիրել մեծ տաճարում: Ճշմարտութիւնից շեղուած մտքով, անօրէն, պիղծ բերանով նա յարգում ու գովաբանում էր անշունչ, անձայն, անմռունչ կուռքերին, իսկ օրինաւոր սրբութիւնների մասին ասում էր այն, ինչ արժան չէր: 14 Իր նշանակած ժամից յետոյ ցուցակագրող գրագիրները թագաւորին յանձնեցին ցուցակը: Նրանք սկսեցին համոզել, որ հրեաների հաշուառում կատարելը անհնար է: Նրանք ասացին. «Չենք կարող, որովհետեւ նրանք խիստ շատ են, որովհետեւ շատերը երկրով մէկ ցրուած լինելու պատճառով հնարաւոր չէ նրանց հաշուառման ենթարկել. հաշուառումից դուրս են մնացել շատերը, չցուցակագրուած հրեաներ կան անգամ Եգիպտացիների երկրի տարբեր վայրերում»: 15 Երբ դա լսեց թագաւորը, գրագիրներին մեղադրեց կաշառակերութեան մէջ, որ իբր թէ նրանք ցանկանում են խոտոր ճանապարհներով փրկել նրանց կեանքը: Նրանք պնդում ու ասում էին, որ իրենց թղթերն սպառուել եւ գրիչները մաշուել են՝ բացայայտօրէն ցոյց տալով դա: Եւ այս ամէնը լինում էր Բարձրեալի օգնութեամբ, որը գութ ու խնամք էր ցուցաբերում եբրայեցիների նկատմամբ:

ԹԱԳԱՒՈՐԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՅԵՏԱՁԳՈՒՄ Է ԿՈՏՈՐԱԾԻ ՀՐԱՄԱՆԸ

5 Այն ժամանակ նա կանչեց Հերմոն փղապետին ու հրամայեց, որ սա վաղն եւեթ զինի փղերը, առանց յապաղելու պատրաստի խնկախառն գինիներ, դրանք թունդ դարձնի կնդրուկով, մօտ եօթը հարիւր փղեր կատաղեցնի անապական գինիով, քշի հրապարակ՝ եբրայեցիների գլխին մեծ պատուհաս բերելու համար: 2 Թագաւորը փղապետին այս հրամանը տուեց, իսկ ինքը վերադարձաւ իր ուրախութիւնը շարունակելու բազմաթիւ զօրքերի, բարեկամների, մեծամեծ աւագանու հետ, որոնք եբրայեցիների նկատմամբ աւելի թշնամաբար էին վերաբերւում, քան թագաւորն ինքը: 3 Երբ փղապետը լսեց խիստ հրամանը, նոյն ժամին էլ պատրաստ վիճակի բերեց փղերին: Ծառաները ելան, կապեցին տառապեալների ձեռքերն ու ոտքերը, իսկ ուրիշ ծառաներ, իբրեւ գիշերային պահակներ, զգուշութեամբ նրանց շուրջն էին պտտւում՝ մտածելով, թէ առաւօտեան կը տեսնեն այդ ազգի կոտորածն ու վախճանը: 4 Իսկ հրեաներն իրենց անզօր ու անօգնական էին համարում, իբրեւ մի լէշ՝ նետուած հեթանոսների առաջ: Նրանք անդադար աղօթելով, արտասուելով դիմում էին Ամենակալ Աստծուն, ամէն զօրութիւն զօրացնող, ողորմած Աստծուն: Բոլորն առհասարակ ծնկի եկած աղաչում էին, որ նա խափանի անօրէն այս դիտաւորութիւնը, մի մեծ հրաշքով վերացնի այս օրհասը, որ ահա մօտենում է ոտքերն ու ձեռքերը կապուած այս մարդկանց:

5 Փղապետն անողորմ գազանները խնկախառն գինիներով գրգռելով՝ առաւօտեան հասցրեց թագաւորի պալատը: 6 Պարգեւատու, երկնաւոր, առատաձեռն Աստուած, սակայն, թագաւորին պարգեւեց խոր քուն, որ իբրեւ բարի պարգեւ վաղնջական ժամանակներից ի վեր գիշեր ու ցերեկ տրւում է գեղեցիկ արարածներին: Նա իր զօրութեամբ թագաւորին թանձր, խոր, քաղցր ու անուշ քուն առաքելով՝ կա-

պեց, մոլորեցրեց, շեղեց եւ հեռու պահեց նրան իր հաստատ որոշումից: 7 Երբ եբրայեցիները տեսան, որ անցել է օրհասի մահաբեր ժամանակը, սկսեցին օրհնել երկնաւոր սուրբ Աստծուն եւ նորից իրենց երեսի վրայ ընկած՝ աղաչում էին նրան, որ գոռոզ հեթանոսներին ցոյց տայ իր մեծազօր բազկի զօրութիւնը:

8 Երբ կիսուեց տասներորդ ժամը, եւ արդէն վերջացրել էին խնջոյքի պատրաստութիւն տեսնելը, եւ հրաւիրուածներից իւրաքանչիւրը կանգնած էր ըստ իր աստիճանի, այն ժամանակ արարողապետը ներս մտաւ, արթնացրեց Թագաւորին եւ յայտնեց, որ խնջոյքն սկսելու ժամանակն է: Թագաւորը յիշեց, որ մարդկանց խնջոյքի էր հրաւիրել: Նա անմիջապէս վեր կենալով՝ հրամայեց հրաւիրուածներին ներս կանչել, բարձեր սպասարկել նրանց խնջոյքին մասնակցելու համար, իրաքանչիւրին, ըստ իր աստիճանի, գահաւորակ մատուցել: 9 Երբ խրախճանքն սկսուեց, նա ցանկութիւն յայտնեց ուրախ ժամանակ անցկացնելու մինչեւ ուշ գիշեր: Երբ խմելով երկար ժամանակ զրոյցի բռնուեցին, նա կանչեց փղապետին ու խիստ զայրացած սպառնաց նրան. «Ինչպէ՞ս կամ ինչո՞ւ են հրեաներն ազատուել սաստիկ հրամանով նշանակուած օրհասից. ինչո՞ւ մինչեւ այսօր դեռ կենդանի են մնացել»: 10 Փղապետը վկայակոչեց արքայի հրամանը եւ ասաց, որ դեռեւս գիշերն է հարբեցրել փղերին: Հրաւիրուածները հաստատեցին փղապետի խօսքերը: Դրանից յետոյ Թագաւորը մեղմացնելով իր կատաղութիւնը՝ ասաց. «Գնա՛, այսօր թող իմ քնից շնորհակալ լինեն նրանք, բայց վաղն անպայման փղերը նոյն կատաղութեան կը հասցնես, որպէսզի կոտորենք այդ անօրէն հրեայ ազգին»: 11 Երբ Թագաւորն այդ ասաց, բոլորն ուրախացած, միաձայն հաւանութիւն տուեցին նրա հրամանին, եւ որովհետեւ ուշ էր, միմեանցից բաժանուելով՝ ամէն մէկը գնաց իր օթեւանը: Նրանք ոչ այնքան քնեցին, որքան ամբողջ գիշեր մտածում էին այն մասին, թէ ինչ նորանոր չարչարանքներ կարելի է հնարել տառապեալների համար:

12 Երբ աքլորը կանչեց, փղապետն առաւօտ վաղ բերեց գինիով ու խնկով գրգռուած փղերին, իսկ ինքն իջնելով ընդարձակ գաւիթը՝ սկսեց ճեմել: Քաղաքում գտնուող բոլոր մարդիկ եկել հաւաքուել էին, ուզում էին տեսնել ողորմելի այն տեսարանը, որ առաւօտ շուտ սպառնում էր հրեաներին: 13 Հրեաներն անցկացնելով օրհասի ժամը, զսպած իրենց առատ արցունքները, խղճալի ու ողբաձայն, ձեռքերը դէպի երկինք պարզած՝ աղաչում էին Ամենազօր Աստծուն, որ նորից օգնութեան հասնի իրենց ու փրկի սոսկալի օրհասից:

14 Դեռ արեգակը չէր սփռել իր ճառագայթները աշխարհի վրայ, որ Թագաւորը վեր կենալով ընդունում էր իր մեծամեծ հիւրերին: Հասնելով փղապետի դռան մօտ՝ աչքով զննում էր փղերի վիճակը, թէ ինչպէս են նրանք կազմ ու պատրաստ հասել մինչեւ հրապարակ: 15 Թագաւորը շնորհակալ էր, զարմացել էր փղերի պատրաստութեան վրայ: Նա մի անգամ էլ յետաձգեց կոտորածի հրամանը՝ ասելով. «Ի՞նչ կարիք կայ անիմաստ կերպով շտապելու»: Դարձեալ միտքը փոխեց, փղապետին մեղադրեց, որ ինչ հրամայուած էր, անմիջապէս չէր գործադրել: 16 Այս ամէնը լինում էր Ամենակալ Տիրոջ հրամանով. Նա օրհասի սոսկալի նպատակը մոռացնել էր տալիս: Փղապետը անուանի մարդկանցից ոմանց վկայ էր բերում, թէ ինչպէս էին փղերը վաղուց զինուել, զինուորները պատրաստուել: Նա ապացուցում էր, որ ինքը արքայի հրամանը կատարել էր անթերի: 17 Այն ժամանակ Թագաւորը լցուեց մեծ զայրոյթով, – եւ դա շնորհիւ Աստծու մեծ գթասրտութեան, – որովհետեւ Նա ուզում էր Թագաւորի մտադրութիւնը չիք դարձնել: Թագաւորը խիստ զայրացած ու ցասումնալից նայեց փղապետին, սկսեց խօսել ու ասաց. 18 Ցուցակագրեցէ՛ք այն հայրերին, մայրերին ու որդիներին՝ բոլոր նրանց, ովքեր

այս տեսարանը դիտելու են եկել, որպէսզի դրանք, դու էլ դրանց հետ, գազանների կեր դառնաք այդ դատապարտուած անմեղ եբրայեցիների փոխարէն, որոնք, սկսած իրենց առաջին նախնիներից մինչեւ այսօրուայ սերունդը, պահպանել են արդարութիւնն ու հաւատը մեր նկատմամբ: Եթէ քո՝ իմ սննդակցի նկատմամբ սէր չունենայի, քո քաղցր արեւը կը կտրէի աչքերիդդ եւ քեզ, ո՛վ նենգ չարագործ, մէջտեղից կը վերացնէի»: 19 Փղապետն այսպէս բարեպատեհ դիպուածով մազապուրծ ազատուեց եղերական պատժից: Նրա նախկին զուարթութիւնն անհետացաւ, մարդկանց միջից նա հեռացաւ տրտում երեսով: Հաւաքուած մարդիկ, որոնք իր բարեկամներն էին, գլխիկոր ցրուեցին, ամէն մէկը թոյլտուութիւն ստանալով՝ վերադարձաւ իր տեղը:

20 Երբ եբրայեցիները լսեցին Թագաւորի հրամանը, սկսեցին օրհնել մեծազօր Տէր Աստծուն, Թագաւորների Թագաւորին, մանաւանդ որ այսպիսի օգնութիւն էին ստացել: Այն ժամանակ Թագաւորն անմիջապէս հրամայեց հրաւիրուածներին, որ վերադառնան խնջոյքը շարունակելու: 21 Նա փղապետին նորից կանչեց, սպառնալով խօսեց նրա հետ ու ասաց. «Ա՛յ թշուառական, քանի՞ անգամ եմ քեզ պատուիրել, որ կազմ ու պատրաստ պահես փղերը: Գոնէ վաղը թող պատրաստ լինեն հրեաների թշուառական, եղեռնագործ ազգը ոչնչացնելու համար»: 22 Երբ բոլոր նստածները լսեցին դա, առաւել եւս զարմացան Թագաւորի յեղյեղուկ մտքի վրայ ու ասացին. «Մինչեւ ե՞րբ, ո՛վ արքայ, մինչեւ ե՞րբ մեզ պիտի փորձես: Երեք անգամ հրաման ես արձակել այդ յանդուգն ազգը ոչնչացնելու մասին եւ անմիջապէս քո իսկ հրամանը չեղեալ ես յայտարարել: Այժմ դրա համար բոլոր քաղաքների ժողովուրդները աւելի են վշտացել, քան հէնց իրենք՝ այդ չարագործները»: 23 Մոլորուած արքան այս ամենի պատճառով սկսեց վարանել, շփոթուել ու չհասկացաւ, որ երկնքից է գալիս օգնութիւնը եբրայեցիներին: Նա նորից երդուեց իր անհաստատ երդումով ու ասաց. «Առանց որեւէ բանից երկմտելու կատաղի գազաններին ոտնատակ անել պիտի տամ նրանց, դժոխք պիտի ուղարկեմ, զօրք պիտի հաւաքեմ, որպէսզի յարձակուենք Հրէաստանի վրայ, փայտակերտ շէնքերը հրդեհենք, կաւաշէն շէնքերը հեղեղենք ջրով, կողոպտենք նրանց ինչքն ու ունեցուածքը եւ ինչ որ կայ նրանց երկրում, նրանց տաճարի պահեստները կրակի մատնենք եւ տաճարն էլ յաւիտեանս զոհերի տան վերածենք»:

24 Հրաւիրուածները, բարեկամներն ու սիրելի ազգականները լսելով այդ հաստատ որոշումը՝ ուրախացած գնացին: Զօրքին հրաման տրուեց, որ բերդում պաշարուածների վրայ գիշերապահներ ու խրամապահներ նշանակուեն, 25 իսկ փղապետը գազաններին խիստ գրգռելով՝ դրանց կազմ ու պատրաստ վիճակի բերեց. նա կնդրուկ, խունկ ու գինի իրար խառնելով՝ խմեցրեց ու գրգռեց դիւային գազաններին յաջորդ օրուայ համար, որպէսզի հրապարակ եկած անթիւ մարդկանց դիակների վերածի: Նա եկաւ մտաւ սրահը, շտապեցրեց Թագաւորին, որ կապկպուած ժողովրդին կոտորեն: 26 Այն ժամանակ Թագաւորը ողջ զօրքով ու կատաղած գազանների հետ դուրս եկաւ՝ ցանկանալով իր անյագ աչքերով ու անգութ սրտով տեսնել Թշուառ ժողովրդի ցաւալի կոտորածը: 27 Երբ պատրաստուած փղերն ու սպառազէն զինուորները հասան քաղաքի դարպասի մօտ, հրեաները լսեցին զինուորների ոտքերի դոփիւնը, տեսան զէնքերի փայլը, մինչեւ երկինք հասնող փոշու ամպը: Նրանք լսեցին իրենց շրջապատած ամբոխի աղաղակը: Դրանից նրանք ուշաթափ էին լինում: Նրանք կարծում էին, որ իրենց Թշուառ կեանքի վերջը հասել է: Խանդաղատանքով լցուած ողորմելի, խեղճ հայրերն ու մայրերը, զաւակներն ու դուստրերը, քոյրերն ու եղբայրները, ազգակից սիրելի բարեկամները

միմեանց պարանոցներին փաթաթուած՝ համբուրւում էին: 28 Մայրերից ոմանք իրենց նորածին երեխաներին գրկած՝ կարծում էին, որ վերջին անգամ են կուրծք տալիս իրենց երեխաներին: Այս ալեկոծութեան ու տագնապի մէջ հալումաշ եղած վիճակում էլ նրանք յիշում էին երկնքից իջած առաջին օգնութիւնը: Բոլորը համերաշխ միմեանց էին մօտենում, մանուկների բերաններից հանում էին իրենց ստինքները, բոլորն իրենց մեծ Աստծու առաջ երեսի վրայ ընկած՝ թաւալւում էին: Բարձրացնելով իրենց ձայնը՝ ողբագին լացով աղաչում էին Ամենազօր եւ Ամենակալ Աստծուն, որ նա մեծ ողորմածութեամբ գթայ, փրկի յուսալքուածներին, դժոխքի դուռը հասածներին:

ԵՂԻԱԶԱՐԻ ԱՂՕԹՔԸ

6 Քահանաների սերնդից Եղիազար անունով երեւելի մի մարդ, որ արդէն ծերութեան էր հասել, եւ որի կեանքը մանկութիւնից քաջութեամբ ու արդարութեամբ էր զարդարուած, իր շուրջը համախմբեց մի քանի ծերունիների, հանգստացրեց նրանց եւ սուրբ Աստծուն դիմելով՝ աղօթեց այսպիսի խօսքերով. 2 «Մեծազօր թագաւոր, բարձրեալ եւ Ամենակալ Աստուած, որ քո բոլոր ստեղծածներին առաջնորդում եւ ուղղում ես քո ողորմած գթութեամբ, նայի՛ր Աբրահամի զաւակների, սուրբ Իսահակի ու Յակոբի որդիների՝ քո բաժին ժառանգութեան վրայ, որոնք օտար երկրում օտար ժողովրդի ձեռքին կորստի են մատնւում: 3 Դու այն Աստուածն ես, որ եգիպտական Փարաւոնին իր բազմաթիւ մարտակառքերով, երիվարներով ու զինուորներով՝ գոռոզ ու ամբարտաւան եգիպտական զօրքի հետ միասին ծովասոյզ անելով՝ կորստեան մատնեցիր: 4 Դու ես, որ կոտորեցիր Ասորեստանի պարծենկոտ Սանատրուկ արքայի զօրքը, որը մի սրով ու մի տէգով գրաւել, նուաճել էր ամբողջ Հրէաստան երկիրը: Նա ինքնահաւան խօսքերով գոռոզացել էր, սպառնացել, թէ յանդուգն զայրոյթով եւ մեծ նախատինքով կը յարձակուի նաեւ սուրբ քաղաքի վրայ: Դու, Տէ՛ր, հարուածեցիր, կոտորեցիր ու կործանեցիր նրան եւ բոլոր հեթանոսներին ցոյց տուեցիր քո բազկի ուժը: 5 Դու փրկեցիր երեք մանուկներին, որոնք Բաբելացիների երկրում սնոտի աստուածներին չերկրպագելու համար իրենք իրենց ինքնակամ կերպով հրի էին մատնել, որպէսզի նրանց մազի մի թելին անգամ կրակ չդիպչի: Դու հրոյ ճարակ դարձրիր թշնամուն: 6 Դու ես, որ անվնաս պահեցիր եւ գերից հանեցիր Դանիէլին, որը նենգ վրէժխնդրութեան պատճառով յանձնուած էր կատաղած գազանների երախին: 7 Դու ես, որ տեսար եւ անդունդներից հանեցիր այն հիւրին, որ մաշւում էր ձկան որովայնում, եւ անվնաս բերեցիր յանձնեցիր իր ընտանիքին: 8 Դու, ո՜վ Հայր, որ ատում ես ամբարտաւաններին, որ բարեսէր ես, որորմած, բոլորի ապաւէն, շտա՛պ յայտնուիր իսրայէլացիներին, որոնք պիղծ ու անօրէն հեթանոսների ձեռքին չարաչար կորստեան են մատնւում: 9 Իսկ եթէ մեր ամբարիշտ կեանքը այսպիսի սպառնալիքներով է վախճան ունենալու, ապա գոնէ թշնամիների ձեռքից ազատի՛ր եւ յետոյ, ինչպիսի սոսկալի պատուհասներով էլ ցանկանաս պատժել մեզ, պատժի՛ր, որպէսզի դատարկամիտ ու ունայնախոհ հեթանոսները մեզ կոտորելով չպարծենան իրենց սնոտի աստուածների առաջ ու չասեն, թէ՝ "Անգամ իրենց Աստուածը նրանց չփրկեց մեր ձեռքից": 10 Դու, որ բոլոր զօրութիւնները, իշխանութիւնները եւ պետութիւնները յաւիտեանս պահում ես քո ձեռքում, ո՜վ անուշ, անմահ ու ողորմած Աստուած, ողորմի՛ր, գթա՛ մեզ, որ այսպիսի անօրէն թշնամութեամբ մահուան անիմաստ պատիժ կրելով՝ կեանքից զրկուելով մահուան չմատնուենք իբրեւ չարագործներ: 11 Քո ամենայաղթ զօրութիւնը թող հալեցնի, մաշեցնի հեթանոսներին, որովհետեւ Յակոբի տոհմի փրկութիւնը քո պատիւն է: 12 Ահա մատղաշ երեխաները, նրանց հայրերն

ու մայրերը խումբ-խումբ ծնկի եկած, արցունք թափելով աղաչում են, որ բոլոր հեթանոսներին ցոյց տաս, թէ դու մեր նկատմամբ ողորմած ես, որ, դու ո՜վ մեր Տէր, դու մեզ հետ ես ու երես չես թեքել մեզանից, ինչպէս առաջ էլ խոստացել էիր, թէ մեր թշնամիների երկրում չես լքի մեզ: Արդ, քո նոյն այդ խոստումը կատարի՛ր, ո՜վ Տէր»:

ԹԱԳԱՒՈՐԸ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Է ՏԱԼԻՍ ՀՐԵԱՆԵՐԻՆ

13 Երբ Եղիազարն իր այս աղօթքը ուղղում էր Աստծուն, խիստ զայրացած թագաւորը գազաններով ու զօրքով եկաւ հրապարակ: Եբրայեցիները, տեսնելով դա, իրենց աչքերը վեր բարձրացրին եւ բարձր ձայնով աղաղակեցին դէպի երկինք: Աղաղակի այս ձայնին արձագանքեցին բոլոր լեռներն ու հովիտները: Երկու կողմերի աղմուկ-աղաղակից սաստիկ խռովութիւն բարձրացաւ զօրքի մէջ: 14 Այդ ժամին Բարձրեալը՝ փառաւոր, մեծապատիւ, ամենակալ, ճշմարիտ Աստուած, ցոյց տուեց իր երեսը: Նա բաց արեց երկնքի դռները, որտեղից եկան իջան երկու ահեղ, փառաւոր ու անեւեւոյթ հրեշտակներ, որոնք, բացի հրեաներից, ոչ ոքի չէին երեւում†: 15 Նրանք ելան թշնամիների դէմ, զօրքը խռովքի մատնեցին, ահ ու դողի մէջ գցեցին նրանց եւ բոլորին առհասարակ կաչկանդեցին, անշարժ պահեցին: Թագաւորի մարմինն ու ոսկորները սոսկալի դողում էին, փշաքաղւում: Կատաղութեան խիստ սպառնալիքը եւ զայրոյթը խելագարեցրել էին նրան: Ապա գազանները յարձակուեցին զինուած զօրքի վրայ, նրանցից շատերին ոտնակոխ անելով՝ սպանեցին: 16 Նոյն տեղում թագաւորի զայրոյթն ու խստութիւնը անմիջապէս փոխուեցին արտասուքի ու գութի նախկինում իր ցոյց տուած յամառութեան ու խստութեան համար, որովհետեւ երբ լսեց նրանց աղաղակն ու յիշեց բազմութեան կոտորածը, վրդովուեց, արցունքներ թափեց, խստութեամբ սկսեց խօսել բարեկամների հետ ու ասաց. 17 «Դուք չափն անցկացրիք, բռնութիւններ գործեցիք, ուզում էք թագաւոր դառնալ, ուզում էք իմ երախտիքների փոխարէն ինձ առհասարակ իշխանութիւնից զրկել: Դուք՝ առաջինի խորհրդականներդ, ինձ խելքից հանեցիք եւ խորամանկութեամբ ուզեցիք անել այն, ինչ օգտակար չէ մեր պետութեանը: 18 Այդ ո՞վ է, որ ուզում է սասանել մեր հզօր ու հաստատուն աշտարակը՝ մեր ուխտաւանդապահներին, ո՞վ է, որ սրանցից իւրաքանչիւրին իրենց բնակավայրերից կտրելով, իբրեւ չարագործ գազանների, հաւաքել ու պաշարուած պահում է այստեղ: Ո՞վ է, որ այս մարդկանց պահում է կապած-կապկպած, անասելի տանջանքների ենթարկում, պաշարուած պահում, երբ սրանք, արդարամտութեանը հաւատարիմ մնալով, բազմաթիւ պատերազմների ու յուզումների ժամանակ սկզբից եւեթ մեր նկատմամբ աւելի հաւատարիմ ու արդար են եղել, քան միւս ազգերը: 19 Քանդեցէ՛ք, արձակեցէ՛ք այդ անօրէն կապանքները, ամէն մէկին խաղաղութեամբ իր բնակավայրն ուղարկեցէ՛ք, նախկինում պատճառած լլկանքների փոխարէն մխիթարեցէ՛ք կենդանի Երկնաւորի՝ Ամենակալ Աստծու որդիներին, որը մեր նախնիներից սկսած մինչեւ այսօր մեզ տուել է հզօր իշխանութիւն ու հաստատուն իրաւունքներ»:

Թագաւորն այսպիսի խօսքերով յայտնեց իր միտքը: 20 Եբրայեցիները անմիջապէս, մի ակնթարթում արձակուելով իրենց կապանքներից՝ օրհնեցին իրենց ամենակալ փրկիչ սուրբ Աստծուն, որ իրենք անհաւատալի կերպով մազապուրծ ազատուել են մահուանից: 21 Թագաւորը եբրայեցիներին այս ազատութիւնը տալուց յետոյ մտաւ քաղաքամէջ, հրամայեց կանչել ծախսերի գրագրին ու ասաց. «Գինի, ընտիր ալիւր եւ ինչ որ պէտք է եօթը օրուայ ուրախութեան հանդէսի համար, բեր մատուցի՛ր հրեաներին»: Հրաման տրուեց, որ այնտեղ, ուր պէտք է կատարուէր նրանց կոտորածի

† Այլ բնագրերում՝ որոնք երեւում էին բոլորին, բացի հրեաներից:

նախճիրը, նոյն տեղում փրկութեան առիթով եօթը օր ուրախութիւն կատարուի: 22 Այն ժամանակ, երբ նրանք նախատինքի, ծաղրուծանակի ենթարկուելով՝ եկել հասել էին մահուան դուռը, նոյնիսկ մտել էին դժոխքի դռնից ներս, այժմ այդ դառն օրհասի փոխարէն ուրախութեան խնջոյք էին կատարում այն նոյն փրկութեան վայրում, որտեղ սպասում էին կոտորելու ու մահուան վիհն ընկնելու: Այժմ, խմբերի բաժանուած, ուրախութեամբ լի, ամէն մէկն իր տեղը գնաց: 23 Նրանք արտասուալից ողբերի փոխարէն իրենց մայրենի լեզուով սկսեցին օրհնել հրաշագործ, փրկիչ Աստծուն: Մոռացան լացն ու կոծը: Ի նշան խաղաղութեան ու ցնծութեան, նրանք ուրախ պարեր էին պարում:

24 Այս ձեւով թագաւորն էլ մեծ տաճարում ժամ նշանակելով՝ անսահման ուրախութեամբ հրամայեց ներս կանչել կոչնականներին: Նա անդադար աղօթելով ու երկինք նայելով՝ ժողովրդի անակնկալ եւ սքանչելի փրկութեան համար օրհնում էր Աստծուն: Ովքեր առաջ ժողովրդին ուզում էին ուրախութեամբ գազանների ու գիշատիչ թռչունների կեր դարձնել, այժմ ամօթից ու իրենց մեղաւոր զգալուց հառաչում, իրենց հրաբորբոք բարկութիւնը իջեցնում եւ ցնծում էին անզուսպ ուրախութեամբ: 25 Իսկ հրեաները, ինչպէս քիչ առաջ ասացինք, եօթը օր ուրախութեան պարեր պարելով եւ զուարճանալով՝ օրհնում էին Աստծուն: 26 Ընդհանուր համաձայնութեամբ օրէնք սահմանեցին, որ իրենց բնակութեան բոլոր վայրերում այդ օրերը ուրախութեամբ անցկացնեն: Դա ոչ թէ իրենց հպարտութեանը կամ որկրամոլութեանը յագուրդ տալու համար էր, այլ գոհութիւն յայտնելու Աստծուն՝ նրա պարգեւած փրկութեան համար: 27 Որոշեցին այդ օրերը դասել իրենց տարեկան տօների շարքը: Դրանից յետոյ խնդրեցին թագաւորին, որ թոյլ տայ իրենցից ամէն մէկին մեկնելու իր բնակավայրը: Քառասուն օր՝ Պաքոն ամսի քսանհինգից մինչեւ Եպիփոս ամսի չորսը, ցուցակ կազմեցին: 28 Որոշեցին նոյն տեղում, Եպիփոս ամսի հինգից սկսած երեք օրուայ ընթացքում կազմել ծախսերի ցանկը, երբ Աստուած առատաձեռն կերպով իր ողորմածութիւնն էր պարգեւել եւ նրանց բոլորին անվնաս պահել: 29 Ուրախացան, որ թագաւորը հրամայել է մինչեւ տասնչորսերորդ օրը խնջոյքի պատրաստութիւններ տեսնել, որից յետոյ նա պիտի տար իրենց ազատ արձակելու վճիռը: Թագաւորը յանձն առաւ եւ հրամայեց, որ բոլոր քաղաքների զօրավարներին ուղարկուեն այսպիսի հրովարտակներ.

ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀՐԵԱՆԵՐԻ

7 «Եգիպտոսի Փիլոպատոր Պտղոմէոս արքան ողջունում է արքունի բոլոր իշխաններին եւ արքունի գործերի զօրավարներին ու պետերին: Ուրա՛խ եղէք, որ մենք մեր որդիների, եղբայրների ու բոլոր զօրքի հետ ողջառողջ ենք, որ Աստուած մեր գործերը յաջողութեամբ է կատարում այնպէս, ինչպէս մենք ենք ուզում: 2 Արդ, մեր այստեղի մերձաւոր բարեկամներից ոմանք, իրենց չարամտութիւնից դրդուած, չարախօսութեամբ զբաղուեցին. նրանք մեզ գրգռեցին այնքան, մինչեւ որ համոզեցին մեզ, որ հրաման տանք հաւաքել մեր իշխանութեան տակ գտնուող բոլոր հրեաներին, կուտակել մի տեղ, որպէսզի նորահնար տանջանքների ենթարկելով կոտորենք նրանց: 3 Նրանք մեզ բոլորովին թոյլ չտուեցին հրաժարուել այդ մտքից՝ պատճառաբանելով, որ նրանք թշնամանք են տածում բոլոր հեթանոսների դէմ: Ի վերջոյ ոմանց իբրեւ օտարների, մանաւանդ իբրեւ չարագործների հաւաքեցին, բերեցին կապկպած, բազմաթիւ լկանքների ու տանջանքների ենթարկեցին: Նրանք մտադիր էին առանց հարցուփորձի ու քննութեան ենթարկելու՝ բոլորին միանգամից կոտորել: Նրանց համակել էր մի աւելի վայրենի զգացում, քան բարբարոսների վայրագութիւնը: 4 Բայց մենք, մեր սովորութեանը համաձայն, նրանց խստագոյնս պատժեցինք: Մարդասիրական գութ ցուցաբերելով հրեաների նկատմամբ՝ մենք նրանց կեանք շնորհեցինք: Մենք դաւանում ենք երկնաւոր Աստծուն, որովհետեւ նոյն ձեւով նա օգնական եղաւ հրեաներին, ինչպէս հայրն է վերաբերւում իր որդիներին: 5 Սրանք սիրով ու միաբանութեամբ մեզ հաւատարիմ են եղել հին ժամանակներից մինչեւ այսօր, դրա համար էլ հրաման տուեցինք ազատ արձակել նրանց եւ ներեցինք նրանց այն բոլոր վնասները, որ պատճառել են մեզ: Հրաման տուեցինք նաեւ, որ նրանք բոլորը տէր դառնան այն ամենին, ինչ ունեցել են, որպէսզի նրանցից ոչ ոք իր ունեցածից չզրկուի: Ոչ ոք թող չհամարձակուի նրանց նախատել իրենց կատարած արարքների համար: 6 Իմացէ՛ք հետեւեալը. եթէ նրանց նկատմամբ դաւեր նիւթենք կամ վշտացնենք, մեղանչած կը լինենք ոչ թէ առհասարակ մարդու նկատմամբ, այլ Աստծու, որ տիրում է ամէն տեսակ զօրութիւնների ու մեծութիւնների: Այդպիսին անվրէպ ու ամէն տեսակ հատուցում կը ստանայ ոչ թէ մարդկանցից, այլ՝ Բարձրեալից: Ո՛ղջ եղէք»:

7 Երբ հրեաներն ստացան այս հրովարտակը, ոչ թէ անմիջապէս հեռացան, այլ թագաւորի մօտ գնացին ու խնդրելով ասացին. «Հրեաների միջից ով ինքնակամ ուրացել է սուրբ Աստծուն ու հրաժարուել Աստծու օրէնքներից, հրաման թող տրուի, որ նրանց յանձնեն մեր ձեռքը, որպէսզի ըստ օրէնքի արժանի պատիժ տրուի նրանց»: Ի յաւելումն դրա՝ նաեւ ասացին. «Եթէ կան մարդիկ, որոնք իրենց կեանքից վախենալով կամ որկրամոլութիւնից դրդուած՝ հրաժարուել են իրենց նախնիների օրէնքներից, արքունի դատարանում իրենց յօժարութեան համար արդարանալ երբեք չեն կարող»: 8 Թագաւորը դա իրաւացի համարեց եւ նրանց իրաւունք տուեց, որ եթէ թագաւորի իշխանութեան տակ գտնուող որեւէ մի տեղ գտնեն Աստծու օրէնքներից հրաժարուած մէկին, ապա թող նրան սպանեն համարձակութեամբ: Ոչ ոք թող չընդդիմանայ դրան արքունիքի անունից սպառնալով:

9 Այն ժամանակ քահանաները, նրանց հետ նաեւ ամբողջ ժողովուրդը, ինչպէս կարգն է, գոհութիւն յայտնեցին, օրհնեցին եւ իրենց խօսքի վերջում օրհնութիւնն աւարտեցին ալէլուիայով: Նրանք ցնծութեամբ եւ ուրախութեամբ երկրպագեցին ու հրաժեշտ տուեցին թագաւորին:

ՕՐԻՆԱՋԱՆՑ ՀՐԵԱՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

10 Երբ ճանապարհ ընկան նրանք, խայտառակ տանջանքների ենթարկելով՝ սպանեցին բոլոր նրանց, ովքեր նախկինում հրաժարուել էին իրենց օրէնքներից, անօրէնութեամբ պղծուել եւ հեռացել էին իրենց ցեղակիցներից: Այդտեղ, մի օրում սպանուեց աւելի քան երեք հարիւր մարդ: Այդ օրն ուրախութիւն արեցին, որովհետեւ իրենց օրէնքներից հրաժարուած պիղծ, անօրէն մարդկանց բռնելով՝ սպանել էին, որովհետեւ իրենք, իրենց Աստծու ողորմածութեամբ, մահուան դռնից էին ազատուել: 11 Այդ քաղաքից դուրս գալով՝ նրանք գնացին տարբեր տեսակի անուշահոտութիւններով օծուած, գոյնզգոյն ծաղիկներով պսակուած, ուրախ ու զուարթ, քաղցր ձայնով գոհութիւն մատուցեցին իրենց հայրերի Աստծուն՝ Իսրայէլի յաւիտենական Փրկչին: 12 Երբ եկան հասան պտղոմէացիների Վարդաբերք քաղաքը, որն այսպէս էր կոչւում այդ վայրի պայծառութեան պատճառով, նրանց սպասում էին այն նաւերը, որոնցով եկել էին այստեղ: Բոլորի համաձայնութեամբ նրանք եօթը օր մնացին այստեղ, ուրախութիւն արեցին, որովհետեւ թագաւորը հրամայել էր ճանապարհի պաշարը հոգալ առատօրէն, մինչեւ որ ամէն մէկն իր բնակավայրը հասնէր:

13 Երբ իրենց տեղերը հասան, նրա պարգեւներին արժանի գոհութիւն յայտնեցին: Նորից հաստատեցին

իրենց այն որոշումը, որ այդ օրը նոյնպէս դասուի տարեկան տօների շարքը եւ ուրախութիւն կատարուի: Նուէրներ մատուցեցին, ուրախութեան վայրերում յուշարձաններ կանգնեցրին եւ այդ օրը դասեցին տարեկան տօների շարքը: 14 *Հաւաքուեցին մի տեղ, աղօթք ու գոհութիւն մատուցեցին, յետոյ ողջ-առողջ, անվնաս, ազատ, ուրախ ու զուարթ միմեանց հրաժեշտ տուեցին, Տիրոջ թոյլտուութեամբ եւ թագաւորի հրամանով ամէն մէկը ծովով, ցամաքով եւ գետերի վրայով գնաց իր բնակավայրը:* 15 *Նրանք, որ առաջ թշնամու ձեռքի տակ էին, այժմ իշխանական փառքով ու շուքով էին վերադառնում: Այսուհետեւ ոչ ոք չէր կարող նրանց անհանգստացնել: Նրանք ստացան ցուցակագրուած իրենց ամբողջ ինչքն ու ունեցուածքը, որովհետեւ ում մօտ ինչ որ մնացել էր, բոլորն ահ ու սարսափով բերեցին յանձնեցին տէրերին՝ մեծն Աստծու փրկութեանն արժանանալու համար:*

Օրհնեալ է Աստուած, որ Իսրայէլը փրկում է ամէն ինչից՝ բոլոր տեսակի նեղութիւններից ու վշտերից: Նրան փառք, պատիւ եւ զօրութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍՆԵՐ

Ներածութիւն

Սաղմոս բառը առաջացել է յունարէն ψαλμος-փսալմոս բառից, որը որպէս վերնագիր գործածուել է Հին Կտակարանի յունարէն հին թարգմանութեան մէջ եւ նշանակել է բանաստեղծութիւն կամ հոգեւոր երգ: Սաղմոսները սահմանուած էին երգուելու երաժշտութեան ընկերակցութեամբ: Սաղմոսների գիրքը 150 աղօթքներից բաղկացած մի ժողովածու է, որ գործածուել է Հին Իսրայէլում պաշտամունքի ժամանակ:

Ներկայումս այն բաժանուած է հինգ գրքերի՝ Դաւթի սաղմոսներ, Կորէի եղբայրութեան սաղմոսներ, Ասափի սաղմոսներ, Երկնային թագաւորութեան սաղմոսներ եւ Ուխտագնացութիւնների սաղմոսներ:

116 սաղմոսներ ունեն վերնագրեր, որոնք ցոյց են տալիս տուեալ սաղմոսի ծագումը, տեսակը, մեղեդին, նրան ընկերակցելու համար նախատեսուող երաժշտական այս կամ այն գործիքը, նրա օգտագործումը պաշտամունքի ժամանակ եւ այլն:

Շատ սաղմոսներ դուրս են մնացել դասակարգումից: Այնուամենայնիւ, կարելի է զատորոշել սաղմոսների բազմաթիւ տեսակներ: Այսպէս՝

1) Օրհներգեր, որոնք փառաբանում են Տիրոջ մեծութիւնն ու բարութիւնը:

2) Երկնային թագաւորութեան երգեր, որոնք յատկանշւում են հետեւեալ հաստատումով՝ «Տէրը թագաւոր է»:

3) Արքայական սաղմոսներ, որոնք արքաների համար գրուած աղօթքներ են կամ արքաների աղօթքներ:

4) Տաճար մտնելու սաղմոսներ:

5) Ուխտագնացութեան սաղմոսներ, որոնք իսրայէլացիների կողմից երգւում էին տարեկան երեք մեծ տօների ժամանակ (Զատիկ-Շաբաթապաշտօն, Տաղաւարահարաց տօն):

6) Սիոնի երգեր, որոնցում գովերգւում են Երուսաղէմի տաճարի համար Աստծու կողմից ընտրուած վայրի առաւելութիւնները:

7) Պատգամախօս սաղմոսներ, որոնք քահանայի կամ մարգարէի բերանով Աստծու ազդարարութիւնները կամ յանձնարարութիւններն են հաղորդում հաւատացեալներին:

8) Հաւատացեալների ուսուցման համար գրուած սաղմոսներ:

9) Ցուսալքութեան մատնուած ժողովրդի սաղմոսներ, որոնք արտայայտում են այն աղերսանքները, որ դժբախտութեան մէջ գտնուող հաւատացեալների համայնքը ուղղում է Աստծուն:

10) Անհատական աղերսանքներ արտայայտող սաղմոսներ: Այս տեսակի սաղմոսների թիւը ամենամեծն է:

11) Երախտագիտական սաղմոսներ, որոնց մէջ հաւատացեալը իր երախտագիտութիւնն է յայտնում Աստծուն նրա ներմանը կամ փրկութեանն արժանանալու համար:

12) Վստահութեան սաղմոսներ, որոնք արտայայտում են հաւատացեալների ուրախութեան եւ խաղաղութեան զգացումները:

Յիսուս երգել է սաղմոսներ: Նա յաճախ յիշատակում է դրանք՝ լինի իր ուսուցման համար, լինի արտայայտելու համար իր սեփական աղօթքը, որտեղ կան որոշ բառեր՝ քաղուած այս կամ այն սաղմոսից (Սաղմ. 22, 23):

Սաղմոսները մինչեւ օրս շարունակում են մնալ բանաստեղծական անսպառ աղբիւր բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են օգտուել դրանցից՝ իրենց աղօթքն առաքելու առ Աստուած:

ԴԱՒԹԻ ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ԳԻՐՔԸ

ԻՐԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

1 *Սաղմոս Դաւթի*

1 *Երանելի է այն մարդը,*
որն ամբարիշտների խորհրդով չի
շարժւում,
մեղաւորների ճանապարհին ոտք չի
դնում
եւ չարագործների հետ համախոհ չի
լինում,
2 *այլ հաճոյք է ստանում Տիրոջ*
օրէնքներից
եւ գիշեր-ցերեկ խորհում է Նրա
պատուիրանների մասին:
3 *Նա նման է ջրերի հոսանքի վրայ*
տնկուած ծառի,
որն իր պտուղը ժամանակին կը
տայ,
իսկ նրա տերեւը չի թափուի,
ու ամէն բան, ինչ էլ որ անի, կը
յաջողուի նրան:
4 *Այսպէս չեն ամբարիշտները, այս-*
պէս չեն,
այլ նման են հողմափոչու, որ
հոսում է երկրի երեսին†*:*
5 *Ուստի ամբարիշտները չեն դիմա-*
նայ դատաստանին,
ոչ էլ մեղաւորները կը լինեն ար-
դարների հաւաքի մէջ,
6 *քանզի Տէրը գիտէ արդարների*
ճանապարհները,
իսկ ամբարիշտների ճանապարհները
կորստեան են տանում:

ԱՍՏԾՈՒ ՕԾԱԾ ԹԱԳԱՒՈՐԸ

2 *Անվերնագիր, եբրայերէնում այս*
երկուսը մի համարի տակ են

1 *Ինչո՞ւ խռովութիւն արեցին հե-*
թանոսները,
եւ ժողովուրդները դատարկ բաներ
խորհեցին:
2 *Հաւաքուեցին երկրի թագաւոր-*
ները,
եւ միաւորուեցին իշխաններն ընդ-
դէմ Տիրոջ ու նրա օծեալի՝ ասելով.
3 *«Քանդենք նրանց կապանքները*
եւ թօթափենք նրանց լուծը մեզանից»:
4 *Երկնքում բնակուողը կը ծիծաղի*
նրանց վրայ,
եւ Տէրը կ'արհամարհի նրանց:
5 *Այնժամ կը խօսի նրանց հետ իր*
բարկութեամբ,
եւ իր զայրոյթով կը սարսափեցնի
նրանց:
6 *Ես թագաւոր կարգուեցի նրանից*
իր սուրբ լեռան՝ Սիոնի վրայ,
որ հռչակեմ Տիրոջ հրամանները:
7 *Տէրն ասաց ինձ. «Դու իմ որդին*
ես, ես այսօր ծնեցի քեզ:
8 *Խնդրի՛ր ինձնից՝ եւ հեթանոս-*
ներին քեզ կը տամ
որպէս ժառանգութիւն, ու իշխա-
նութիւն†*՝ երկրի բոլոր ծագերում:*
9 *Նրանց կը հովուես երկաթեայ*
գաւազանով
եւ բրուտի անօթի պէս կը փշրես
նրանց»:
10 *Արդ, թագաւորնե՛ր, ո՛ւշ դարձրէք*
սրան,
եւ խրատուեցէ՛ք ամէնքդ, որ մարդ-
կանց էք դատում:
11 *Ծառայեցէ՛ք Տիրոջը երկիւղով*
եւ ցնծացէ՛ք նրա առջեւ դողալով:
12 *Ընդունեցէ՛ք նրա խրատը, որ*
Տէրը չբարկանայ,
որ դուք չկորչէք արդարութեան
ճանապարհից,
երբ նրա զայրոյթը բորբոքուած
լինի:
13 *Երանի բոլոր նրանց, ովքեր յոյսը*
դրել են Տիրոջ վրայ»:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

3 1 *Սաղմոս Դաւթի, երբ նա փախել*
էր իր որդու՝ Աբիսողոմի երեսից

2 *Տէ՛ր, ինչո՞ւ բազմացան ինձ հա-*
լածողները,
եւ շատերը ելան իմ դէմ:
3 *Շատերն էին ասում իմ մասին՝*
«Սա փրկութիւն չունի իր Աստծուց»:
4 *Բայց դու, Տէ՛ր, իմ օգնականն ես,*
իմ փառքը եւ գլուխս բարձր
պահողը:
5 *Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի,*
եւ նա լսեց ինձ իր սուրբ լեռան
վրայից:

†Եբրայերէն՝ այլ. . . մղեղի պէս, որ քամին ցրում է:

†Եբրայերէն՝ սեփականութիւն:

6 *Ես ննջեցի ու քուն մտայ.*
զարթնեցի, եւ Տէրն իմ ապաւէնն է:
7 *Չեմ սոսկայ ես նրանց բիւրաւոր*
զօրքերից,
որոնք ամէն կողմից պատել ու
պաշարել էին ինձ:
8 *Արի՛, Տէ՛ր, փրկի՛ր ինձ, Աստուա՛ծ*
իմ, քանզի կործանեցիր բոլորին,
ովքեր իզուր թշնամացել էին ինձ
հետ.
դու մեղաւորների ատամները կը
փշրես:
9 *Տիրոջից է փրկութիւնը,*
քո օրհնութիւնը ժողովրդիդ վրայ
թող լինի:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

4 1 *Դպրապետին. Դաւթի օրհնու-*
թեան սաղմոսերգութիւնը

2 *Երբ ձայն տուի, իմ արդարութեան*
համար լսեցիր ինձ, Աստուա՛ծ,
նեղութեան մէջ ինձ անդորր տուիր.
ողորմի՛ր ինձ եւ ակա՛նջ դիր իմ
աղօթքին:
3 *Մարդկա՛նց որդիներ, մինչեւ ե՞րբ*
պիտի խստասիրտ լինէք†*.*
ինչո՞ւ էք ունայնութիւն սիրում եւ
ստութիւն փնտռում:
4 *Իմացէ՛ք, որ Տէրը զարմանահրաշ*
գործեր արեց իր սրբի համար,
եւ Տէրը կը լսի ինձ, երբ օգնութեան
կանչեմ նրան:
5 *Եթէ բարկանաք՝ մի՛ մեղանչէք,*
ձեր անկողնու մէջ ինչ էլ որ ասէք
ձեր սրտում՝ զղջացէ՛ք:
6 *Արդարութեան զոհե՛ր մատուցե-*
ցէք եւ Տիրոջ վրայ յո՛յս դրէք:
7 *Շատերն ասացին՝ «Ո՞վ ցոյց կը*
տայ մեզ Տիրոջ բարութիւնը»:
Քո երեսի լոյսը ծագեց մեր վրայ,
8 *եւ ուրախութիւն տուիր մեր սրտե-*
րին,
ցորենի, գինու, ձէթի բարիքով յա-
գեցրիր նրանց:
9 *Այսուհետեւ մենք խաղաղու-*
թեամբ կը ննջենք ու կ'արթնանանք,
10 *քանզի դու միայն, Տէ՛ր, ապա-*
հովութեան մէջ բնակեցրիր մեզ:

†Եբրայերէն՝ Մինչեւ ե՞րբ իմ փառքը նախատինքի պիտի արժանացնէք:

ԱՂՕԹՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

5 1 *Դպրապետին. ժառանգորդ-*
ների մասին, սաղմոս

2 *Ակա՛նջ դիր իմ խօսքերին, Տէ՛ր, եւ*
ո՛ւշ դարձրու աղաղակիս,
3 *ընդունի՛ր ձայնն աղօթքներիս,*
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:
4 *Աղաչում եմ քեզ, Տէ՛ր,*
որ առաւօտեան լսես ձայնն իմ.
առաւօտեան պատրաստ կը լինեմ քո
առջեւ կանգնելու:
5 *Դու անօրէնութիւն կամեցող Աս-*
տուած չես,
եւ քեզ մօտ չարամիտներ չեն բնակ-
ւում:
6 *Թող յանցագործները չապրեն աչ-*
քիդ առջեւ:
7 *Դու ատեցիր անօրէնութիւն գոր-*
ծողներին,
կործանում ես բոլոր ստախօսներին,
արիւնահեղ ու նենգ մարդուց գար-
շում ես, Տէ՛ր:
8 *Իսկ ես քո ամէնառատ ողոր-*
մութեան շնորհիւ կը մտնեմ տունդ,
եւ քե՛զ վայել ակնածանքով
կ'երկրպագեմ սուրբ տաճարիդ մէջ:
9 *Տէ՛ր, արդարութեամբ քո առաջ-*
նորդի՛ր ինձ,
իմ թշնամիների պատճառով ուղղի՛ր
իմ առջեւ ճանապարհները քո,
10 *քանզի նրանց բերանում ճշմար-*
տութիւն չկայ,
եւ նրանց սրտերն ունայնացած են:
11 *Գերեզմանի պէս բաց են կոկորդ-*
ները նրանց,
իսկ լեզուները՝ լի նենգութեամբ:
Դատի՛ր նրանց, Աստուա՛ծ,
որ ետ կանգնեն իրենց մտքերից.
իրենց անչափ ամբարշտութեան
համար վանի՛ր նրանց,
քանզի դառնացրին քեզ:
12 *Թող ուրախանան բոլոր նրանք,*
որ յոյս են դնում քեզ վրայ,
յաւիտեան թող ցնծան, եւ դու
ապրես նրանց մէջ.
թող պարծենան քեզնով քո անունը
սիրողները,
13 *քանզի դու պիտի օրհնես արդա-*
րին.
Տէ՛ր, քո սպառազինութեամբ պաշտ-
պանեցիր մեզ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

6 1 *Դպրապետին. ութերորդական եղանակով, Դաւթի օրհնութեան սաղմոս*

2 Տէ՛ր, զայրոյթով քո մի՛ յանդիմանիր ինձ,
եւ քո բարկութեամբ ինձ մի՛ խրատիր:
3 Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի հիւանդ եմ ես,
բժշկի՛ր ինձ, քանզի ոսկորներս խախտուել են:
4 Անձն իմ յոյժ խռոված է,
եւ դու, Տէ՛ր, մինչեւ ե՞րբ ...:
5 Դարձի՛ր, Տէ՛ր, փրկի՛ր ինձ,
ազատի՛ր ինձ, Տէ՛ր, քո ողորմութեամբ,
6 քանզի չկայ մէկը, որ մահուան մէջ յիշի քեզ,
կամ դժոխքում գոհանայ քեզանից:
7 Ես յոգնեցի իմ հառաչանքներից,
ամէն գիշեր հեծեծանքով լուացի մահիճն իմ
եւ իմ արտասուքով անկողինս թրջեցի:
8 Սրտնեղութիւնից այլայլուեց աչքն իմ,
ես հիւծուեցի բոլոր թշնամիներիս ձեռքից:
9 Հեռացէ՛ք ինձնից ամէնքդ, որ անօրէնութիւն էք գործում:
10 Տէրը լսեց իմ լացի ձայնը,
Տէրն ականջ դրեց իմ աղօթքներին,
Տէրն ընդունեց իմ խնդրանքները:
11 Բոլոր թշնամիներս թող ամաչեն ու խիստ խռովուեն,
թող ետ դառնան եւ իսկոյն խիստ ամաչեն ու զարհուրեն:

7 1 *Սաղմոս Դաւթի, որ Տիրոջն ասաց Յեմինի որդի Քուսի խօսքերի առթիւ*

ԱՂՕԹՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

2 Տէ՛ր իմ Աստուած, քեզ վրայ դրեցի յոյսն իմ,
փրկի՛ր ինձ եւ իմ բոլոր հալածիչներից ազատի՛ր ինձ:
3 Զլինի թէ առիւծի նման յօշոտեն ինձ,
եւ չգտնուի մէկը, որ փրկի ինձ եւ պահպանի:
4 Տէ՛ր իմ Աստուած, եթէ արել եմ այս բանը,
եթէ իմ ձեռքով անօրէնութիւն եմ գործել,
5 եթէ երբեւէ իմ չարակամներին չարութեամբ եմ հատուցել,
թող ես էլ իսպառ կորչեմ թշնամիներիս ձեռքով:
6 Թող ուրեմն թշնամին հալածի ինձ,
թող վրայ հասնի եւ խորտակի կեանքն իմ՝ կոխոտելով ինձ,
իսկ փառքս հողին թող հաւասարեցնի:
7 Ելի՛ր, Տէ՛ր, բարկութեամբ քո
եւ բարձրացի՛ր իսպառ վերացնելու իմ թշնամիներին:
Արթնացի՛ր, Տէ՛ր իմ Աստուած,
յանուն քո սահմանուած կարգի:
8 Ժողովուրդների բազմութիւնները շուրջդ կը հաւաքուեն,
իսկ դու, Տէ՛ր, բազմի՛ր բարձունքում
9 (Տէրն է դատում իր ժողովրդին):
Դատի՛ր ինձ, Տէ՛ր,
իմ մէջ եղած արդարութեան եւ անմեղութեան համեմատ:
10 Մեղաւորների վրայ չարիք կը գայ,
իսկ արդարին յաջողութիւն կը տաս,
սրտերի ու երիկամների քննիչ արդա՛ր Աստուած:
11 Ցիրաւի, օգնողն Աստուած է,
որ փրկում է նրանց, ովքեր շիտակ են սրտով:
12 Արդար, հզօր եւ համբերատար դատաւոր է Աստուած,
որն իր զայրոյթը չի թափում հանապազ:
13 Սակայն եթէ չդառնաք դէպի Նա,
սուրն իր սրած է եւ աղեղն իր՝ լարած:
14 Նա պատրաստել է մահուան գործիքները,
իսկ նետերն իր հրանիւթով է սարքել:
15 Ահաւասիկ, ով որ անօրէնութիւն երկնեց,
չարիք յղացաւ եւ անիրաւութիւն ծնեց,

16 նա փոս փորեց, խորացրեց,
հէնց ինքն էլ ընկաւ այն փոսը,
որ նա պատրաստեց:
17 Նրա գլխին կը թափուեն իր չարագործութիւնները,
նրա գագաթին կ'իջնեն իր անօրէնութիւնները:
18 Գոհութիւն կը մատուցեմ Տիրոջն իր արդարութեան համար,
սաղմոս կ'երգեմ Բարձրեալ Տիրոջ համար:

ԱՍՏՄՈՒ ՓԱՌՔԸ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԻՔԸ

8 1 *Այսուհետեւ՝ հնձանների մասին, սաղմոս Դաւթի*

2 Տէ՛ր, ո՛վ մեր Տէր,
ի՜նչ հրաշալի է քո անունը ողջ աշխարհում:
Քո փառքը բարձրացաւ երկնքից վեր:
3 Մանկահասակ եւ ծծկեր երեխաների բերանից
թող օրհնութիւն ելնի ընդդէմ քո թշնամիների, Տէ՛ր,
որպէսզի ոսոխն ու հակառակորդը կործանուեն:
4 Տեսնեմ երկինքը՝ քո մատների գործը,
լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր:
5 Մարդն ի՞նչ է, որ յիշում ես նրան,
կամ մարդու որդին՝ որ այցի գաս նրան:
6 Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրիր նրան
եւ փառք ու պատուով պսակեցիր նրան:
7 Նրան կարգեցիր քո բոլոր ձեռակերտների վրայ:
8 Ամէն ինչ դրիր նրա ոտքերի ներքոյ՝
ոչխար, արջառ եւ ամէն ինչ,
9 նաեւ վայրի երէ, երկնքի թռչուններ, ծովի ձկներ,
որ շրջում են ծովերի հոսանքներում:
10 Տէ՛ր, ո՛վ մեր Տէր,
ի՜նչ հրաշալի է քո անունը ողջ աշխարհում:

ԱՍՏՈՒԱԾ Ա ՊԱՀԻՆ ԽԵՂՃԵՐԻ ԵՒ ՃՆՇՈՒԱԾՆԵՐԻ

9 1 *Այսուհետեւ՝ որդու գաղտնիքների մասին, սաղմոս Դաւթի*

2 Իմ ամբողջ սրտով գոհութիւն կը մատուցեմ քեզ, Տէ՛ր,
կը պատմեմ բոլոր հրաշագործութիւնները:
3 Կ'ուրախանամ ու կը ցնծամ քեզնով,
սաղմոս կ'երգեմ քո անունը, ո՛վ Բարձրեալ:
4 Թշնամիներս ետ դառնալով՝ կը թուլանան ու կը կորչեն քո առաջից:
5 Դատաստանս եւ իրաւունքս դու տեսար,
բազմեցիր աթոռին, ո՛վ դատաւոր արդար:
6 Սաստեցիր հեթանոսներին, եւ ամբարիշտն անհետացաւ.
նրանց անունները ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից:
7 Եւ թշնամու զէնքը իսպառ վերացաւ.
դու քաղաքներ աւերեցիր,
եւ յիշատակը դրանց կորաւ աղաղակով:
8 Բայց Աստուած մնում է յաւիտեան,
նա պատրաստեց իր աթոռը դատաստանի համար:
9 Ինքն է դատում աշխարհն այս արդարութեամբ,
եւ իր ժողովրդին՝ ուղղամտութեամբ:
10 Տէրն եղաւ տնանկի ապաւէնը
եւ նեղութեան ժամանակ օգնականը:
11 Քեզ վրայ թող յոյս դնեն բոլոր նրանք, ովքեր գիտեն անունը քո,
քանզի դու չես լքի նրանց, ովքեր փնտռում են քեզ, Տէ՛ր:
12 Սաղմո՛ս երգեցէք Տիրոջը, որ բնակւում է Սիոնում.
հեթանոսների մէջ պատմեցէ՛ք գործերը նրա:
13 Տնանկների արեան համար վրէժխնդիր լինելիս՝
Տէրը յիշեց եւ չմոռացաւ աղօթքը նրանց:
14 Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր,

եւ տե՛ս իմ նուաստացումն իմ թշնամիներից:
15 *Դու բարձրացրիր ինձ մահուան դռներից,*
որ պատմեմ քո բոլոր օրհներգութիւնները
Սիոն քաղաքի դռներին,
եւ ցնծամ քո փրկագործութեամբ:
16 *Հեթանոսներն ընկղմուեցին իրենց գործած ապականութեան մէջ,*
եւ իրենց լարած թակարդն իրենց իսկ ոտքերն է բռնելու:
17 *Տէրն իրեն ճանաչեցրեց դատաստան անելով,*
եւ մեղաւորները կը պատժուեն ըստ իրենց ձեռքի գործերի:
18 *Մեղաւորները կրկին դժոխք կ'ընկնեն,*
նաեւ բոլոր հեթանոսները, որոնք մոռացան Աստծուն:
19 *Տէրն ամենեւին չի մոռանայ աղքատին,*
եւ տնանկների համբերութիւնը երբեք չի սպառուի:
20 *Ելի՛ր, Տէ՛ր, եւ թող մարդը չզօրանայ,*
թող հեթանոսները դատուեն քո առջեւ:
21 *Նրանց վրայ օրէնսդի՛ր կարգիր, Տէ՛ր,*
եւ թող հեթանոսներն իմանան, թէ իրենք մարդիկ են:

ԱՂՕԹՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1 *Ինչո՞ւ, Տէ՛ր, հեռու մնացիր,*
անտարբեր եղար նեղութեան ժամանակ:
2 *Ամբարշտի յոխորտալուց տոչորւում է աղքատը.*
թող խափանուեն այն հնարքները, որ խորհեցին նրանք,
3 *քանզի գովաբանւում է մեղաւորն իր ցանկութիւնների համար,*
գովաբանւում է եւ նա, ով զրկում է:
4 *Իսկ մեղաւորն ինչո՞ւ բազում դառնութեամբ զայրացրեց Աստծուն,*
թէ չի ստանայ հատուցում:
5 *Զկայ Աստուած նրա աչքերի առջեւ,*
մշտապէս պիղծ են նրա ճանապարհները:
Իրաւունք ասուածը վերացել է նրա մտքից,
նա կը տիրի իր բոլոր հակառակորդներին:
6 *Նա ասում է իր սրտում, թէ չի սասանուի,*
դարէդար կ'ապրի առանց փորձանքի:
7 *Անէծքով, դառնութեամբ ու նենգութեամբ լի է բերանը նրա,*
իսկ լեզուի տակ ցաւ է ու տառապանք:
8 *Մեծամեծների հետ դարան է մտնում,*
որ գաղտնաբար սպանի անմեղին:
9 *Նրա աչքն աղքատի վրայ է,*
դարանակալում է թաքստոցում՝ ինչպէս առիւծն իր որջում,
դարանակալում է յափշտակելու աղքատին,
յափշտակելու աղքատին եւ ճանկելու նրան:
10 *Նրան կը գցի իր որոգայթը,*
բայց տիրելով տնանկներին՝ նա կը խոնարհուի ու կ'ընկնի:
11 *Նա ասում է իր սրտում, թէ Աստուած մոռացել է,*
շրջել է երեսն իր՝ բնաւ չտեսնելու համար:
12 *Ելի՛ր, Տէ՛ր իմ Աստուած, թող բարձրանայ քո ձեռքը,*
եւ մի՛ մոռացիր տնանկներին:
13 *Իսկ ամբարիշտն ինչո՞ւ բարկացրեց Աստծուն՝*
ասելով իր սրտում, թէ ինքը չի քննուի:
14 *Տէ՛ր, տեսնում ես դու աղքատին՝*
նայելով նրա ցաւին ու սրտմտութեանը՝
նրան քո ձեռքը վերցնելու համար:
Քեզ է ապաւինել աղքատը,
եւ դու ես որբի օգնականը:
15 *Թող խորտակուի մեղաւորի ու չարագործի բազուկը,*
թող փնտռուեն նրա մեղքերն ու այլեւս չգտնուեն:
16 *Տէրը թագաւոր է յաւիտեանս յաւիտենից.*
թող կորչեն հեթանոսները նրա երկրից:

17 *Տնանկների ցանկութիւնը լսեցիր, Տէ՛ր,*
քո ականջը ուշ դարձրեց նրանց սրտի պատրաստակամութեանը՝
18 *տեսնելու որբի ու տնանկի դատաստանը,*
որպէսզի մարդը չչարունակի իր յոխորտանքը երկրի երեսին:

ՎԱՍԱՀՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՎՐԱՅ

10 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
2 *Ցոյսս դրի Տիրոջ վրայ.*
ինչո՞ւ էք ասում ինձ, որ ճնճղուկի պէս լեռները թռչեմ:
3 *Զէ՞ որ մեղաւորներն ահա լարել են աղեղներն իրենց,*
պատրաստել են նետերը կապարճներում,
որ մութն ընկնելիս ձգեն ուղղամիտների վրայ:
4 *Ինչ դու չինեցիր՝ աւերեցին նրանք,*
իսկ արդարն ի՞նչ արեց:
5 *Տէրն իր սուրբ տաճարում է,*
Տէրը երկնքում է՝ իր գահի վրայ:
Նրա աչքերը նայում են տնանկներին,
իսկ արտեւանունքները զննում են մարդկանց որդիներին:
6 *Տէրը քննում է արդարին եւ ամբարշտին.*
ով սիրում է մեղքը՝ ատում է անձն իր:
7 *Մեղաւորների վրայ որոգայթ, հուր եւ ծծումբ կը տեղայ,*
փոթորկի շունչն է նրանց բաժակի բաժինը:
8 *Արդար է Տէրը, արդարութիւն է սիրում,*
ճշմարտութեանն է նայում երեսը նրա:

ԸՆԴԴԷՄ ՍՏԱԽՕՍ ԱՇԽԱՐՀԻ

11 1 *Այսուհետեւ՝ ութերորդականների մասին, սաղմոս Դաւթի*
2 *Փրկի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի սուրբ չմնաց,*
նուազեց ճշմարտութիւնը մարդկանց որդիների մէջ:
3 *Ստութեամբ խօսեց մարդը մարդու հետ,*
սրտերը հաղորդակցուեցին նենգ շրթունքներով:
4 *Տէրը կ'ոչնչացնի բոլոր նենգ շրթունքներն ու լեզուները մեծախօս,*
5 *որոնք ասացին. «Երկարեցնենք մեր լեզուները, մենք շրթունք ունենք,*
արդ՝ ո՞վ է մեր տէրը»:
6 *Աղքատի տառապանքին եւ տնանկի հեծութեան համար*
այժմ ես կ'ելնեմ, – ասում է Տէրը, – կը բերեմ իմ փրկութիւնը
եւ վստահ կը լինեմ նրանց վրայ:
7 *Տիրոջ խօսքերը սուրբ խօսքեր են,*
ինչպէս ընտիր ու փորձուած արծաթ՝ եօթնապատիկ մաքրուած եւ զտուած հողից:
8 *Դու, Տէ՛ր, պահպանեցիր մեզ*
եւ փրկեցիր այս ազգից մինչեւ յաւիտենութիւն:
9 *Ամէն կողմ ամբարիշտներ են շրջում.*
քո բարձրութեան համեմատ դու մեծութի՛ւն տուր մարդկանց որդիներին:

ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ

12 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
1 *Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր, պիտի մոռանաս ինձ իսպառ,*
մինչեւ ե՞րբ պիտի շրջես երեսդ ինձնից:
2 *Մինչեւ ե՞րբ խռովք ունենամ իմ հոգում*
եւ ամենօրեայ ցաւ՝ իմ սրտում:
3 *Մինչեւ ե՞րբ թշնամին պիտի բռնանայ ինձ վրայ:*
4 *Նայի՛ր եւ լսի՛ր ինձ, Տէ՛ր իմ Աստուած,*
լո՛յս տուր, Տէ՛ր, իմ աչքերին,
որ երբեք մահուան քուն չմտնեմ:
5 *Թշնամիս թող չասի, թէ՝ յաղթեցի նրան,*
կամ հալածիչներս ցնծան, եթէ սասանուեմ:
6 *Ես ողորմութեանդ վրայ յոյս դրի, Տէ՛ր,*
սիրտս հրճուեց քո փրկագործութեամբ.
կ'օրհներգեմ քեզ, Տէ՛ր, բարերա՛ր իմ:

ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

13 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*

1 *Անզգամն ասաց իր սրտում, թէ՝*
չկայ Աստուած.
ապականուեցին ու պղծուեցին իրենց
անօրէնութեան մէջ,
եւ չկայ մէկը, որ բարութիւն գործի:
2 *Տէրն երկնքից նայեց բոլոր մարդ-*
կանց որդիներին՝
տեսնելու, թէ կա՞յ մի իմաստուն, որ
Աստծուն փնտռի:
3 *Բոլորը խոտորուեցին, միասին ան-*
պիտան դարձան.
բարութիւն անող չկայ, ոչ իսկ մէկ
հոգի:
4 *Ինչպէ՞ս չեն գիտակցում բոլոր*
նրանք, ովքեր անօրէնութիւն են գոր-
ծում,
ովքեր խժռում են իմ ժողովրդին
իբրեւ կերակուր ու հաց
եւ Տիրոջը չեն դիմում:
5 *Այնտե՛ղ են երկիւղից սարսում,*
ուր երկիւղ չկայ,
քանզի Տէրը արդարների ազգի մէջ է:
6 *Աղքատի մտածմունքը ամօթ հա-*
մարեցին,
Տէրն է յոյսը նրա:
7 *Ո՞վ կը տայ Սիոնից փրկութիւնն*
Իսրայէլի:
Երբ Տէրն իր ժողովրդին վերա-
դարձնի գերութիւնից,
Յակոբը կը ցնծայ, եւ Իսրայէլն
ուրախ կը լինի:

Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՏԷՐԸ

14 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*

1 *Տէ՛ր, ո՞վ պիտի ապրի քո վրանում,*
կամ ո՞վ պիտի բնակուի քո սուրբ
լերան վրայ.
2 *Նա, ով անբասիր է ընթանում,*
արդար գործ է կատարում,
ճշմարտութիւն խօսում իր սրտում:
3 *Ով չի նենգել իր լեզուով եւ*
ընկերոջը վատութիւն չի արել,
4 *Մերձաւորներից նախատինք նա*
չի ստանում,
եւ չարագործն անարգուած է նրա
աչքում:
Այդպիսին փառաբանում է նրանց,
ովքեր երկիւղ ունեն Տիրոջից,
երդւում է իր բարեկամին եւ երդումն
իր չի դրժում:
5 *Իր արծաթը վաշխով չի տալիս,*
իրաւունքի դէմ կաշառք չի վերց-
նում:
Ով անում է այս, նա յաւիտեան չի
սասանուի:

ԱՂՕԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

15 1 *Սաղմոս Դաւթի, արձանա-*
գիր†

2 *Պահպանի՛ր ինձ, Աստուա՛ծ,*
քանզի քեզ վրայ դրի յոյսս իմ:
Տիրոջն ասացի. «Իմ Տէրն ես դու,
ինձ արուած բարիքները քեզնից են:
3 *Քո սրբերին, որոնք քո երկրում են,*
սքանչելագործութեամբ ցոյց տուիր
իմ բոլոր ցանկութիւնները:
4 *Շատացան նրանց հիւանդութիւն-*
ները, որ այսուհետեւ յաճախակի են
դառնալու:
Չեմ մասնակցի նրանց արիւնալի
հաւաքներին
եւ նրանց անունը չեմ յիշատակի իմ
շրթունքներով:
5 *Տէ՛ր, իմ ժառանգութեան եւ իմ*
բաժակի բաժին,
ժառանգութիւնս դու ես կրկին ինձ
վերադարձնելու:
6 *Ինձ վիճակ ընկաւ ընտրեալների*
մէջ լինելու,
եւ իմ բաժին ժառանգութիւնն
հաճելի եղաւ ինձ:
7 *Պիտի օրհներգեմ Տիրոջը, որ իմաս-*
տուն դարձրեց ինձ,
եւ գիշերն անգամ երիկամներս ինձ
խրատում էին:
8 *Սկզբից եւեթ Տիրոջը մշտապէս*
տեսնում էի իմ առջեւ.
նա իմ աջ կողմում է, որպէսզի
չսասանուեմ:
9 *Դրա համար ուրախ եղաւ սիրտս*
իմ, եւ ցնծաց լեզուն իմ,
իսկ մարմինն իմ կը հանգստանայ
յոյսով.
10 *քանզի դժոխքում չես թողնի դու*
ինձ,

†Այստեղ խօսքը սաղմոսի եղանակի եւ տեսակի մասին է:

եւ քո սրբին ապականութիւն տեսնել
չես տայ:
11 *Ինձ ցոյց տուիր կեանքի քո*
ճանապարհները,
քո աջի քաղցրութիւնից ու վա-
յելչութիւնից լիովին յագեցրիր ինձ
երեսիդ ուրախութեամբ:

ԱՆՄԵՂԻ ԱՂՕԹՔԸ

16 1 *Աղօթք Դաւթի*

Արդարութեանն ակա՛նջ դիր, Տէ՛ր,
նայի՛ր իմ խնդրանքին եւ լսի՛ր
աղօթքս,
որ նենգ շրթներով չէ:
2 *Դատաստանս քեզնից թող չլինի,*
եւ աչքերն իմ ճշմարտութիւնը թող
տեսնեն:
3 *Փորձեցիր սիրտն իմ եւ քննեցիր*
գիշերով,
փորձեցիր ինձ, եւ իմ մէջ անիրա-
ւութիւն չգտնուեց:
4 *Բերանն իմ չի պատմի մարդկանց*
որդիների գործերը.
քո շրթների խօսքերի շնորհիւ ես
հաստատ կը մնամ դժուարին ճանա-
պարհներին:
5 *Հաստատո՛ւն պահիր շաւիղն իմ*
քո ճանապարհին,
որ ընթացքս չխոտորուի:
6 *Ես քե՛զ կանչեցի, Տէ՛ր,*
քանի որ լսեցիր ինձ, Աստուա՛ծ.
դէպի ի՛նձ խոնարհեցրու ականջդ եւ
լսի՛ր իմ խօսքերը:
7 *Սքանչելի դարձրիր քո ողորմու-*
թիւնները,
դու, որ աջիդ գտնուող հակա-
ռակորդներից փրկում ես նրանց,
որոնք իրենց յոյսը դրել են քեզ
վրայ:
8 *Պահպանի՛ր ինձ աչքի բբի պէս,*
քո թեւերի հովանու տակ ծածկի՛ր
ինձ
9 *ամբարիշտների երեսից, որոնք տա-*
ռապեցրին ինձ:
Թշնամիներն ինձ պաշարեցին,
10 *խիստ պարարտացան*
եւ նրանց բերանն ամբարտաւա-
նութիւն բարբառեց:
11 *Վռնդեցին ինձ, եւ արդ դարձեալ*
շուրջս պատելով,
մտադրուեցին ինձ գետին տապալել:
12 *Ինձ թուացին իբրեւ առիւծ, որ*
պատրաստ է որսի վրայ նետուելու,
իբրեւ կորիւն առիւծի՝ նստած
դարանում:
13 *Ելի՛ր, Տէ՛ր, հասի՛ր եւ արգելի՛ր*
նրանց,
փրկի՛ր ինձ ամբարիշտների սրից ու
թշնամու ձեռքից:
14 *Տէ՛ր, վերացրո՛ւ նրանց աշխար-*
հից,
ցրի՛ր նրանց եւ խորտակի՛ր կեանքը
նրանց:
Քո պահեստներից լցուեց որովայնը
նրանց,
յագեցան նրանք կերակուրներով եւ
մնացածը թողեցին իրենց երեխա-
ներին:
15 *Իսկ ես արդարութեամբ կ'երեւամ*
քո առաջ,
կը յագենամ՝ տեսնելով փառքը քո:

ԴԱՒԹԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ

17 1 *Այսուհետեւ՝ Տիրոջ ծառայ*
Դաւթի՝ քաջամարտիկի մասին, որն
օրհնութեան այս խօսքերը Տիրոջն
ուղղեց այն օրը, երբ Տէրը փրկեց
նրան բոլոր թշնամիների ու Սա-
ուղի ձեռքից. եւ ասաց.
2 *Սիրում եմ քեզ, Տէ՛ր, զօրութի՛ւն*
իմ.
ո՛վ Տէր, պահպանի՛չ իմ, ապաւէ՛ն
իմ եւ փրկի՛չ:
3 *Աստուած օգնականս է, ես յոյսս*
դրել եմ նրա վրայ.
իմ ապաւէնն է, փրկութեանս եղջիւ-
րը, ինձ ընդունողը:
4 *Օրհնելով կը կանչեմ Տիրոջը*
եւ իմ թշնամիներից կ'ազատուեմ:
5 *Մահուան տառապանքը շրջա-*
պատեց ինձ,
եւ անօրէնութեան հեղեղն ինձ
վրդովեց:
6 *Դժոխքի ցաւերը պաշարեցին ինձ,*
եւ մահացու վտանգներն ինձ հա-
սան:
7 *Նեղութեանս մէջ ես Տիրոջը դի-*
մեցի
եւ իմ Աստծուն աղաղակեցի.
Նա լսեց ինձ եւ իմ աղօթքի ձայնն
իր սուրբ տաճարից,

Նրան ուղղուած աղաղակս նրա ա-
կանջին է հասնելու:
8 Ցնցուեց ու դողաց երկիրը,
եւ լեռների հիմքերը սասանուեցին
ու խախտուեցին,
քանզի բարկացաւ նրանց վրայ
Աստուած:
9 Նրա բարկութիւնից ծուխ բարձ-
րացաւ,
երեսից հուր բորբոքուեց,
եւ կայծակներ ճարճատեցին նրա-
նից:
10 Ծածրացրեց նա երկինքն ու իջաւ,
եւ նրա ոտքերի տակ մառախուղ էր:
11 Ելաւ նա քերովբէների վրայ ու
թռաւ,
սլացաւ հողմի թեւերով:
12 Խաւարն իր համար ծածկոյթ
դարձրեց,
եւ շուրջբոլորն իր տունը եղաւ՝ օդի
ամպերի թանձր ջրերով:
13 Նա փայլատակեց նրանց առջեւ,
ամպերը կարկուտ եւ հրեղէն կայ-
ծակներ արձակեցին:
14 Որոտաց Տէրն երկնքից,
եւ Բարձրեալն իր ձայնը լսել տուեց
կարկտով ու հուր կայծակներով:
15 Ուղարկեց իր նետերն ու ցրեց
դրանք,
շատացրեց իր կայծակները եւ սփռեց
դրանք:
16 Քո զայրոյթից, Տէ՛ր, եւ քո բար-
կութեան հողմի շառաչից
երեւացին ջրերի ակունքները, եւ
յայտնուեցին հիմքերն աշխարհի:
17 Վերից փութալով՝ Տէրը վերցրեց
ինձ,
վերցրեց ինձ ջրերի հեղեղից:
18 Տէրը կը փրկի ինձ իմ զօրեղ
թշնամիներից ու ինձ ատողներից,
որոնք աւելի հզօր են, քան ես:
19 Նրանք ինձ վրայ հասան չար-
չարանքներիս օրերին,
բայց Տէրն ինձ զօրութիւն տուեց
20 ու անդորրութիւն պարգեւեց:
Եւ Տէրը կը փրկի ինձ,
քանզի նա ինձ հաւանեց:
21 Տէրն ինձ կը հատուցի ըստ իմ
արդարութեան,
ըստ իմ անբծութեան կը հատուցի
ինձ:
22 Ես կը պահեմ Տիրոջ ճանապարհը
եւ իմ Աստծու դէմ ամբարշտութիւն
չեմ անի:
23 Նրա բոլոր օրէնքներն իմ առջեւ
են,
նա արդարութիւնն իր չհեռացրեց
ինձնից:
24 Եւ ես անբասիր կը լինեմ նրա
հանդէպ,
կը զգուշանամ իմ անօրէնութիւնից:
25 Տէրն ինձ կը հատուցի ըստ իմ
արդարութեան,
ըստ իմ ձեռքերի մաքրութեան, որ
նրա աչքի առջեւ է:
26 Սրբի հետ սուրբ կը լինես, Տէ՛ր,
անարատ մարդու հետ՝ անարատ:
27 Ընտրեալների հետ ընտրեալ կը
լինես
եւ խոտորուածներին կը կործանես:
28 Դու փրկում ես հեզ ժողովուրդ-
ներին,
իսկ ամբարտաւանների աչքերը խո-
նարհեցնում:
29 Դու լոյս ես տալիս իմ ճրագին,
Տէ՛ր.
Աստուա՛ծ իմ, լուսաւորի՛ր ինձ խա-
ւարում:
30 Քեզնով կը փրկուեմ ես փորձու-
թիւնից,
Աստծուս շնորհիւ պարիսպներ կը
յաղթահարեմ:
31 Աստուա՛ծ իմ, անթերի են քո
ճանապարհները,
ընտիր են խօսքերը Տիրոջ,
նա ապաւէնն է բոլոր նրանց,
ովքեր յոյսը դրել են նրա վրայ.
32 քանզի Տիրոջից բացի ո՞վ է
Աստուած,
կամ ո՞վ է Աստուած մեր Աստծուց
բացի:
33 Աստուա՛ծ, դու ինձ ուժ պար-
գեւեցիր
եւ իմ ճանապարհն անբիծ դարձրիր:
34 Ինձ ոտքեր տուիր եղջերուի ոտ-
քերի նման,
եւ բարձր տեղերի վրայ կանգնեցրիր
ինձ:
35 Ձեռքերս վարժեցրիր պատերազմի,
իսկ բազուկն իմ դարձրիր ինչպէս
հաստ աղեղ:

36 Տուիր ինձ նաեւ քո փրկարար
պաշտպանութիւնը:
Աջդ զօրավիգ եղաւ ինձ,
իսկ խրատդ միշտ կանգուն պահեց.
քո խրատն իմաստուն կը դարձնի
ինձ:
37 Ընդարձակեցիր ուղիս իմ ոտքերի
տակ,
եւ ընթացքն իմ չտկարացաւ:
38 Հալածելով թշնամիներիս՝ ես կը
հասնեմ նրանց
ու ետ չեմ դառնայ, մինչեւ
չոչնչացնեմ նրանց:
39 Ես կ'ընկճեմ նրանց, որ այլեւս
չկարողանան կանգնել,
եւ նրանք կ'ընկնեն իմ ոտքերի տակ:
40 Դու ինձ պատերազմելու զօրու-
թիւն տուիր,
դէմս ելնողներին ոտքերիս տակ
գցեցիր:
41 Թշնամիներիս դու հալածեցիր,
իսկ ինձ ատողներին ոչնչացրիր:
42 Աղաղակեցին նրանք, բայց չկար
մէկը, որ փրկէր նրանց,
կանչեցին Տիրոջը, բայց նա չլսեց
նրանց:
43 Ես կը փշրեմ, հողմափոշի կը
դարձնեմ նրանց,
փողոցների ցեխի պէս կը տրորեմ
նրանց:
44 Տէրն ինձ կը փրկի ժողովրդի
ըմբոստութիւնից
եւ ինձ հեթանոսների գլուխ կը
կարգի:
45 Իմ չճանաչած ժողովուրդն ինձ
ծառայեց
եւ համակ ականջ դարձած՝ լսեց
ինձ:
46 Օտարների որդիներն ինձ ստեցին,
օտարների որդիները մաշուեցին՝
խոտորուելով իրենց շաւղից:
47 Կենդանի է Տէրն ու օրհնեալ է
Աստուած,
եւ թող բարձր լինի Աստուածն իմ
փրկութեան:
48 Աստուածն իմ, որ լուծում է
վրէժն իմ
եւ ժողովուրդներին ինձ է հնազան-
դեցնում,
49 որ փրկում է ինձ իմ գազազած
թշնամիներից.
դու բարձր դասեցիր ինձ իմ հա-
կառակորդներից,
անիրաւ մարդուց ազատեցիր ինձ:
50 Դրա համար գոհութիւն պիտի
մատուցեմ քեզ հեթանոսների մէջ
եւ քո անունը սաղմոս պիտի եր-
գեմ:
51 Դու փրկութեամբ մեծարեցիր
թագաւորիդ՝
ողորմելով քո օծեալ Դաւթին ու
նրա սերնդին յաւիտեանս յաւիտենից:

ԱՍՏԾՈՒ ՓԱՌՔԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

18 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
2 Երկինքը պատմում է Աստծու
փառքը,
եւ երկնքի հաստատութիւնը յայտ-
նում է նրա ձեռքի գործերը:
3 Օրը օրուան միտք է հաղորդում,
եւ գիշերը գիշերուան գիտութիւն է
ցոյց տալիս:
4 Ձկան բառեր, ոչ էլ խօսքեր,
դրանց հնչիւնները լսելի չեն:
5 Ողջ երկիրն է բռնել ձայնը նրանց,
եւ մինչեւ աշխարհի ծայրն են հա-
սել խօսքերը նրանց:
6 Արեւի մէջ նա վրանն իր խփեց,
իսկ ինքն ասես փեսայ լինի,
որ ելնում է իր առագաստից.
ցնծում է նա որպէս հսկայ՝ ընթա-
նալով իր ճանապարհով:
7 Երկնքի ծայրերից է նրա ծագումը,
իսկ դադարը՝ մինչեւ ծայրերը նրա,
ու չկայ մէկը, որ թաքնուի նրա
տապից:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԸ

8 Տիրոջ օրէնքն անբիծ է եւ վերա-
փոխում է հոգիները.
Տիրոջ վկայութիւնն ստոյգ է եւ
իմաստուն է դարձնում տհասներին:
9 Տիրոջ արդարութիւնն ուղիղ է եւ
զուարճացնում է սրտերը.
Տիրոջ պատուիրանները լոյս են ու
լոյս են տալիս աչքերին:
10 Տիրոջ երկիւղը սուրբ է եւ սուրբ է
մնում յաւիտեան:
Տիրոջ դատաստանները ճշմարիտ են
եւ ինքնին՝ արդար:

11 Ոսկուց ու շատ թանկագին քարերից ցանկալի են դրանք,
նոյնպէս եւ քաղցր՝ մեղրից ու խորիսխից աւելի:
12 Եւ քանի որ քո ծառան պահպանում է դրանք,
պահպանելու վարձը մեծ կը լինի:
13 Նրա յանցանքներն ո՞վ կարող է մտքում պահել.
իմ գաղտնիքներից մաքրի՛ր ինձ, Տէ՛ր:
14 Օտարներից պահպանի՛ր քո ծառային, որ նրանք ինձ չտիրեն.
այնժամ ես անբիծ կը լինեմ ու կը մաքրուեմ մեծ մեղքերից:
15 Թող քեզ հաճելի լինեն բերանիս խօսքերը,
եւ սրտիս խորհուրդներն յարաժամ քո առջեւ լինեն,
Տէ՛ր, օգնակա՛ն իմ եւ փրկի՛չ իմ:

ԱՂՕԹՔ ԱՐՔԱՅԻ ՀԱՄԱՐ

19 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
2 Անձկութեան օրը կը լսի քեզ Տէրը,
եւ օգնական կը լինի քեզ Յակոբի Աստծու անունը:
3 Տէրն իր սուրբ Սիոնից քեզ օգնութիւն կ'ուղարկի
եւ կ'ընդունի քեզ:
4 Թող յիշի Տէրը քո բոլոր ընծաները
եւ ողջակէզներդ ընդունելի թող համարի:
5 Տէրը քեզ կը տայ, ինչ որ ուզի քո սիրտը,
եւ քո բոլոր մտադրութիւնները նա կը կատարի:
6 Մենք կը ցնծանք քո փրկութեամբ,
Աստծու անունով մենք կը մեծարուենք:
Տէրը կը կատարի քո բոլոր խնդրանքները:
7 Այժմ հասկացանք, որ Տէրը փրկեց իր օծեալին:
Նա կը լսի նրան իր սուրբ երկնքից
իր փրկարար աջի զօրութեամբ:
8 Ոմանց աչքը ռազմակառքերին է, ուրիշներինը՝ երիվարներին:
իսկ մենք մեր Աստծու անունն ենք կանչում:
9 Նրանք կործանուեցին ու ընկան,
իսկ մենք ոտքի կանգնեցինք եւ ուղղուեցինք:
10 Տէ՛ր, պահպանի՛ր թագաւորին եւ լսի՛ր մեզ այն օրը, երբ ձայն տանք քեզ:

ԹԱԳԱՒՈՐԸ ՅՈՅՍԸ ԴՆՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՎՐԱՅ

20 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
2 Տէ՛ր, զօրութեամբ քո պիտի ուրախանայ թագաւորը,
եւ յոյժ ցնծայ քո փրկութեամբ:
3 Նրա սրտի ուզածը տուիր նրան
եւ նրա շրթունքների ցանկութիւնը չմերժեցիր:
4 Քո քաղցր օրհնութեամբ այցելեցիր նրան
եւ թանկագին քարերով ընդելուզուած պսակ դրիր նրա գլխին:
5 Կեանք խնդրեց քեզնից,
եւ նրան տուիր երկար օրեր՝ յաւիտեանս յաւիտենից:
6 Մեծ է նրա փառքը քեզնից եղած փրկութեամբ,
փառք ու պարծանք կը դնես նրա վրայ:
7 Օրհնութեան մէջ կը հաստատես նրան յաւիտեանս յաւիտենից,
կ'ուրախացնես նրան քո երեսի խնդութեամբ:
8 Թագաւորն իր յոյսը դրեց Տիրոջ վրայ,
եւ Բարձրեալի ողորմութեամբ նա չի սասանուի:
9 Թող ձեռքդ անպակաս լինի քո թշնամիների վրայ,
եւ աջդ հասնի բոլոր քեզ ատողներին:
10 Երբ դու երեւաս,
նրանց հրաբորբոք հնոց կը դարձնես.
Տէրն իր զայրոյթով կը խռովի նրանց,
եւ հուրը նրանց կը լափի:
11 Երկրից կը կորչի պտուղը նրանց,
իսկ մարդկանց որդիներից՝ սերունդը նրանց:
12 Չարամտութեամբ խոտորուեցին քեզնից, դաւեր նիւթեցին,
բայց չեն կարող իրագործել դրանք:

13 Դու նրանց հալածական կ'անես,
եւ նրանց երեսը կ'ուղղես քո հաւատարիմների կողմը:
14 Բա՛ձր եղիր, Տէ՛ր, քո զօրութեամբ.
օրհնենք եւ սաղմոս երգենք քո զօրութեանը:

ԱՐԴԱՐԻ ՏԱՌԱՊԱՆԳՆԵՐՆ ՈՒ ՅՈՅՍԸ

21 1 Այսուհետեւ՝ առաւօտեան օգնութեան մասին.
սաղմոս Դաւթի
2 Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, նայի՛ր ինձ, ինչո՞ւ լքեցիր ինձ,
յանցանքներիս պատճառով հեռու մնացիր իմ փրկութիւնից:
3 Աստուա՛ծ իմ, քեզ կանչեցի ցերեկով, բայց չլսեցիր ինձ,
կանչեցի գիշերով՝ բայց չանսացիր ինձ:
4 Դու ապրում ես սրբերի մէջ
եւ գովերգւում Իսրայէլում:
5 Քեզ վրայ յոյս դրին հայրերը մեր,
յոյս դրին քեզ վրայ, եւ դու փրկեցիր նրանց:
6 Առ քեզ աղաղակեցին ու ապրեցին,
քեզ վրայ յոյս դրին եւ ամօթով չմնացին:
7 Բայց ես որդ եմ եւ ոչ թէ մարդ,
մարդկանց համար նախատինք եմ եւ անարգանք՝ ժողովուրդներին:
8 Բոլոր ինձ տեսնողներն արհամարհում էին ինձ,
խօսում շրթունքներով եւ շարժում գլուխներն իրենց՝ ասելով.
9 «Յոյսը դրել է Տիրոջ վրայ,
դէ թող փրկի ու ազատի նրան,
եթէ սիրում է նրան»:
10 Դո՛ւ հանեցիր ինձ արգանդից,
իմ յոյսը դարձար մօրս կաթով սնուելու օրից:
11 Քե՛զ յանձնուեցի ես արգանդից,
մօրս որովայնից սկսած՝ դու ես Աստուածն իմ:
12 Մի՛ հեռացիր ինձնից, քանզի մօտ են վտանգները,
եւ չկայ մէկը, որ օգնի ինձ:
13 Բազում եզներ շրջապատեցին ինձ,
եւ պարարտ ցուլերը պաշարեցին ինձ:
14 Մռնչացող ու յափշտակող առիւծների պէս
ինձ վրայ բացին բերաններն իրենց:
15 Հոսեցի ես ինչպէս ջուր,
խախտուեցին իմ բոլոր ոսկորները,
եւ սիրտս հալած մոմ դարձաւ որովայնիս մէջ:
16 Զօրութիւնն իմ չորացաւ խեցու նման,
լեզուս կպաւ քիմքիս,
եւ ինձ իջեցրին մահուան հողի մէջ:
17 Շորս կողմս բազում շներ հաւաքուեցին,
եւ չարագործների ամբոխն ինձ պաշարեց:
18 Ծակեցին ձեռքերն ու ոտքերն իմ,
հաշուեցին բոլոր ոսկորներս,
նրանք նայեցին ու տեսան ինձ:
19 Հագուստներս բաժանեցին իրար մէջ,
եւ պատմուճանիս վրայ վիճակ գցեցին:
20 Դու, Տէ՛ր, օգնութիւնդ ինձնից հեռու մի՛ պահիր,
այլ օգնի՛ր ինձ, Տէ՛ր:
21 Փրկի՛ր ինձ սրից, փրկի՛ր միամօրիկիս շների ձեռքից:
22 Ազատի՛ր ինձ առիւծի բերանից,
եւ խեղճ անձն իմ՝ միեղջերուի եղջիւրից:

ԳՈՀԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

23 Անունդ պիտի հռչակեմ իմ եղբայրներին,
ժողովատեղում պիտի օրհնեմ քեզ:
24 Աստուածավախնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
եւ թող Յակոբի բոլոր զաւակները փառաբանեն նրան:
25 Իսրայէլի ողջ սերունդը երկիւղ պիտի կրի Տիրոջից,
քանզի Տէրը չարհամարհեց ու չանարգեց աղօթքն աղքատիս
եւ երեսն ինձնից չշրջեց,
այլ երբ ձայն տուի նրան՝ լսեց ինձ:
26 Քո մասին է գովքն իմ,
մեծ հաւաքներում պիտի օրհնեմ քեզ:
Ուխտս պիտի կատարեմ նրա բոլոր

երկիւղածների առջեւ:
27 Տնանկները պիտի ուտեն ու յագենան,
Տիրոջը փնտռողները պիտի օրհնեն նրան:
Նրանց սրտերը կ'ապրեն յաւիտեանս յաւիտենից:
28 Աշխարհի բոլոր ծայրերից մարդիկ կը վերյիշեն ու կը դառնան Տիրոջը:
Բոլոր ազգատոհմերը կ'երկրպագեն նրան,
29 քանզի Տիրոջն է արքայութիւնը,
եւ նա է տիրում բոլոր հեթանոսների վրայ:
30 Լիացան եւ երկրպագեցին նրան երկրի բոլոր մեծամեծները,
եւ ամէն ոք, որ գերեզման է իջնում, նրա առջեւ պիտի ընկնի:
31 Նրանով է ապրում անձն իմ,
եւ իմ սերունդը պիտի ծառայի նրան:
32 Գալիք սերունդներին պիտի պատմեմ Տիրոջ մասին,
Տիրոջ գործած արդարութիւնը պիտի աւանդուի
այն ժողովրդին, որ ծնուելու է:

ՏԷՐՆ ԻՄ ՀՈՎԻՒՆ Է

22 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
2 Տէրն իմ հովիւն է,
եւ ինձ ոչինչ չի պակասի:
3 Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց
եւ հանդարտ ջրերի մօտ ինձ սնուցեց:
4 Նա կենդանացրեց ինձ,
յանուն իր անուան առաջնորդեց ինձ արդարութեան ճանապարհներով:
5 Եթէ նոյնիսկ անցնեմ մահուան ստուերների միջով,
չեմ վախենայ չարից,
քանզի դու, Տէ՛ր, ինձ հետ ես:
Քո ցուպն ու գաւազանն ինձ կը մխիթարեն:
6 Իմ առջեւ սեղան պատրաստեցիր հալածիչներիս աչքերի դիմաց:
Գլուխս իւղով օծեցիր,
եւ քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պէս:
7 Ողորմութիւնը քո, Տէ՛ր, պիտի հետեւի ինձ կեանքիս բոլոր օրերին,
երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակուեմ:

ՏԻՐՈՋ ՄՈՒՏՔԸ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

23 *Դաւթի կիրակնօրեայ սաղմոսը*
1 Տիրոջն է երկիրն իր ամբողջութեամբ,
աշխարհն իր բոլոր բնակիչներով:
2 Նրա հիմքերն անձամբ դցեց ծովի վրայ,
եւ գետերի վրայ հաստատեց նրան:
3 Ո՞վ կը բարձրանայ Տիրոջ լեռը,
կամ ո՞վ կը կանգնի նրա սրբավայրում.
4 նա, ով մաքուր ձեռքեր եւ անբիծ սիրտ ունի,
ով յանձն չի առել ունայնութիւն
ու նենգութեամբ չի երդուել իր ընկերոջը:
5 Նա՛ է, որ օրհնութիւն կը ստանայ Տիրոջից,
եւ ողորմութիւն իր փրկարար Աստծուց:
6 Այս սերունդն է, որ փնտռում է Տիրոջը,
որ ուզում է տեսնել երեսը Յակոբի Աստծու:
7 Վե՛ր քաշեցէք, իշխանները՛ր, դռները ձեր,
թող բացուեն յաւիտենական դռները,
եւ փառքի արքան թող ներս մտնի:
Հանգիստ:
8 Ո՞վ է այս փառքի արքան,
– կարողութեամբ հզօր Տէրն է նա,
պատերազմում զօրեղ Տէրը:
9 Վե՛ր քաշեցէք, իշխանները՛ր, դռները ձեր,
թող բացուեն յաւիտենական դռները,
եւ փառքի արքան թող ներս մտնի:
10 Ո՞վ է այս փառքի արքան,
– զօրութիւնների Տէրը՝ նա ինքն է փառքի արքան:

ԱՂՕԹՔ ՎՏԱՆԳԻ ՊԱՀԻՆ

24 1 *Այսուհետեւ՝ Սաղմոս Դաւթի*
2 Դէպի քեզ, Տէ՛ր, բարձրացրի հոգիս:

3 Աստուա՛ծ իմ, քեզ վրայ դրի յոյսն իմ,
թող ամօթով չմնամ,
եւ թշնամիներս չծիծաղեն ինձ վրայ:
4 Բոլոր նրանք, ովքեր յոյսով սպասում են քեզ,
ամօթով պիտի չմնան,
այլ ամօթով պիտի մնան անօրէններն իրենց ունայնութեան մէջ:
Տէ՛ր, ցո՛յց տուր ինձ քո ճանապարհները
եւ քո շաւիղները սովորեցրո՛ւ ինձ:
5 Ինձ առաջնորդի՛ր քո ճշմարտութեան մէջ
եւ ուսուցանի՛ր ինձ,
քանզի դու ես փրկիչ Աստուածն իմ,
ու ես հանապազ քեզ եմ սպասում:
6 Յիշի՛ր, Տէ՛ր, քո գթութիւններն ու ողորմութիւնները,
որոնք յաւիտենական են:
7 Իմ մանկութեան եւ տհասութեան մեղքերը մի՛ յիշիր,
այլ յիշի՛ր ինձ, Տէ՛ր, քո ողորմութեամբ՝ ըստ քո բարութեան,
8 քանզի դու քաղցր եւ ուղիղ ես, Տէ՛ր:
Դրա համար էլ մեղաւորներին
դնում ես օրէնքի գիտութեան ճանապարհի վրայ:
9 Հեզերին առաջնորդում ես դատաստանի մէջ,
հեզերին սովորեցնում քո ճանապարհները:
10 Տիրոջ բոլոր ուղիները
ողորմութիւն ու ճշմարտութիւն են նրանց համար,
ովքեր պահում են նրա ուխտն ու վկայութիւնը:
11 Յանուն քո անուան, Տէ՛ր, քաւութի՛ւն տուր իմ մեղքերին,
քանզի շատացան դրանք:
12 Ո՞վ է այն մարդը, որ վախենում է Տիրոջից,
Տէրը նրան սովորեցնելու է Իր ընտրած ուղին:
13 Նա բարութեան մէջ պիտի հանգչի,
եւ նրա սերունդը երկիրը պիտի ժառանգի:
14 Տէրը զօրացուցիչն է իր երկիւղածների
եւ իր ուխտը նրանց է սովորեցնում:
15 Աչքերն իմ մշտապէս Տիրոջն են ուղղուած,
եւ նա՛ պիտի հանի ոտքերս թակարդից:
16 Նայի՛ր ինձ եւ ողորմի՛ր ինձ,
քանզի միամօրիկ եմ ես եւ աղքատ:
17 Սրտիս նեղութիւնները խիստ շատացան,
ազատի՛ր ինձ իմ վշտերից:
18 Տե՛ս իմ նուաստացումն ու տառապանքը
եւ թողութի՛ւն արա իմ բոլոր մեղքերին:
19 Տե՛ս՝ թշնամիներս որքա՜ն բազմացան
եւ անիրաւ ատելութեամբ ինձ ատեցին:
20 Պահպանի՛ր ինձ ու փրկի՛ր ինձ,
եւ թող ամօթով չմնամ, որ յոյսս դրի քեզ վրայ:
21 Անբիծներն ու արդարներն ինձ կցորդ եղան,
եւ ես սպասեցի քեզ:
22 Փրկի՛ր, Աստուա՛ծ, Իսրայէլն իր բոլոր նեղութիւններից:

ԱՆՄԵՂ ՄԱՐԴՈՒ ԱՂՕԹՔԸ

25 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
1 Դա՛տ արա ինձ, Տէ՛ր,
քանզի անբասիր ընթացայ, յոյսս դրի Տիրոջ վրայ,
որ չլինեմ տկար:
2 Փորձի՛ր ինձ, Տէ՛ր, եւ քննի՛ր ինձ,
փորձի՛ր երիկամներս ու սիրտս:
3 Ողորմութիւնդ, Տէ՛ր, աչքիս առջեւ է,
եւ ճշմարտութիւնդ հաճելի է ինձ:
4 Ունայնամիտների աթոռին ես չեմ նստի
եւ անօրէնների մօտ ես չեմ գնայ:
5 Չարագործների ամբոխը ես ատեցի
եւ ամբարիշտների կողքին չեմ բազմի:
6 Սրբութեամբ կը լուսամ ձեռքերն իմ
եւ սեղանիդ շուրջը կը նստեմ, Տէ՛ր.
7 թող լսեմ քո օրհնութեան ձայնը
եւ պատմեմ քո բոլոր հրաշալիքները:
8 Տէ՛ր, սիրեցի քո տան վայելչութիւնը

եւ քո փառքի բնակութեան վայրը:
9 Մի՛ կործանիր ինձ ամբարիշտների հետ
եւ ոչ էլ կեանքս՝ արիւնահեղների հետ,
10 որոնց ձեռքերն անօրէնութեան մէջ են,
եւ աջը նրանց լի է կաշառքով:
11 Ես անբասիր ընթացայ,
փրկի՛ր ինձ, Տէ՛ր, եւ ողորմի՛ր ինձ:
12 Ոտքն իմ ուղիղ ճանապարհների վրայ թող լինի,
մեծ հաւաքներում քեզ պիտի օրհնեմ:

ԱՍՏԾՈՒ ՄՕՏ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՄ

26 Սաղմոս Դաւթի, երբ դեռ օծուած չէր

1 Տէրն իմ լոյսն է ու կեանքը,
ո՞ւմից վախենամ.
Տէրն իմ կեանքի ապաւէնն է,
ո՞ւմից ես դողամ:
2 Երբ չարագործ նեղիչներս ու թշնամիներս մօտեցան ինձ՝ մարմինս ուտելու,
նրանք թուլացան ու ընկան:
3 Եթէ իմ դէմ պատերազմ պատրաստուի,
սիրտս չի սոսկայ.
եթէ իմ դէմ ճակատամարտի ելնեն,
միեւնոյն է, Տէ՛ր, յոյսս քեզ վրայ եմ դնելու:
4 Մի բան եմ խնդրել Տիրոջից,
եւ նոյնն եմ աղաչում,
որ կեանքիս բոլոր օրերին բնակուեմ Տիրոջ տանը,
տեսնեմ Տիրոջ վայելչութիւնը
եւ վերահսկեմ նրա տաճարում:
5 Չար օրերին նա ինձ թաքցրեց իր վրանում,
պատսպարեց ինձ իր վրանի ծածկի տակ:
6 Ժայռից բարձր պահեցիր ինձ,
այժմ էլ գլուխն իմ բարձրացրո՛ւ թշնամիներիս վրայ:
Շրջեմ եւ օրհնութեան պատարագ մատուցեմ Նրա վրանում,
օրհներգեմ եւ սաղմոս երգեմ Տիրոջը:
7 Լսի՛ր ձայնն իմ, Տէ՛ր,
քանզի քեզ կանչեցի,
ողորմի՛ր ինձ եւ ակա՛նջ դիր,
8 քանզի սիրտն իմ քեզ դիմեց,
եւ հայեացքն իմ փնտռեց, փնտռեց քո երեսը, Տէ՛ր:
9 Մի՛ դարձրու երեսդ ինձնից
եւ բարկութեամբ մի՛ շրջուիր քո ծառայից:
Իմ օգնականն եղիր, Տէ՛ր,
եւ մի՛ անարգիր ինձ ու մի՛ լքիր, փրկիչ Աստուա՛ծ իմ:
10 Իմ հայրն ու մայրը լքեցին ինձ,
բայց Տէրն ինձ ընդունեց:
11 Սովորեցրո՛ւ ինձ, Տէ՛ր, քո ճանապարհը
եւ առաջնորդի՛ր ինձ քո ուղիղ շաւիղներով:
12 Իմ թշնամիների պատճառով ինձ նեղողների ձեռքը մի՛ մատնիր.
Իմ դէմ մեղսագործ վկաներ ելան
եւ չարախօսեցին ինձ իրենց անիրաւութեամբ:
13 Հաւատում եմ, որ կը տեսնեմ Տիրոջ բարութիւնը ողջերի երկրում:
14 Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերուի՛ր,
սիրտդ թող ամրապնդուի,
Տիրո՛ջն սպասիր:

ԱՂՕԹՔ Ի ՏԵՍ ՎԵՐԱՀԱՍ ՄԱՀՈՒԱՆ

27 Սաղմոս Դաւթի

1 Քեզ կանչեցի, Տէ՛ր,
անարձագանք մի՛ թողնիր ինձ, Աստուա՛ծ իմ.
եթէ երբեւէ լուռ մնաս,
կը նմանուեմ նրանց, ովքեր գերեզման են իջնում:
2 Լսի՛ր, Տէ՛ր, պաղատանքիս ձայնը,
երբ ես աղաչեմ քեզ,
երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ պարզեմ:
3 Ամբարիշտների շարքը մի՛ դասիր ինձ
եւ մի՛ կործանիր ինձ նրանց հետ,
որ անօրէնութիւն են գործում,
որ հաշտութեան մասին են խօսում իրենց ընկերների հետ,
բայց սրտներում չարութիւն կայ:
4 Վարձատրի՛ր նրանց, Տէ՛ր, ըստ իրենց արարքների,

իրենց անօրէն վարքի համեմատ հատուցի՛ր նրանց,
նրանց ձեռքերի գործին նայելով՝
տո՛ւր իրենց հատուցումն իրենց:
5 Նրանք ուշ չդարձրին Տիրոջ արածներին,
ոչ էլ նայեցին նրա ձեռքի գործերին:
Դու կը կործանես նրանց,
եւ այլեւս նրանք ոտքի չեն կանգնի:
6 Օրհնեալ է Տէրը,
քանզի լսեց ձայնն իմ աղօթքի:
7 Տէրն իմ օգնականն է ու պաշտպանը.
նրա վրայ դրեց իր յոյսը սիրտն իմ,
եւ մարմինս գոհացաւ ու զուարճացաւ.
ես յօժարակամ պիտի փառաբանեմ նրան:
8 Տէրը զօրութիւնն է իմ ժողովրդի, ապաւէնն իր օծեալի փրկութեան:
9 Փրկի՛ր քո ժողովրդին,
եւ օրհնի՛ր քո ժառանգորդներին,
հովուի՛ր ու յաւէտ բարձրացրո՛ւ նրանց:

ՏԻՐՈՋ ՁԱՅՆԸ ՓՈԹՈՐԿԻ ՄԷՋ

28 Սաղմոս Դաւթի. տաճարի նաւակատիքի օրհնութիւնը

1 Աստծո՛ւ որդիներ, մատուցեցէ՛ք Տիրոջը,
մատուցեցէ՛ք Տիրոջը խոյերի ճագեր:
2 Մատուցեցէ՛ք Տիրոջը փառք ու պատիւ,
տուէ՛ք Տիրոջը փառքն իր անուան
եւ երկրպագեցէ՛ք Տիրոջն իր սուրբ սրահում:
3 Տիրոջ ձայնը ջրերի վրայ է.
փառքի Աստուածը որոտաց,
Տէրն ինքն է անսպառ ջրերի վրայ:
4 Տիրոջ ձայնը ահարկու է,
Տիրոջ ձայնը փառահեղ է:
5 Տիրոջ ձայնը փշրում է մայրիները,
Տէրը կոտրատում է մայրիները Լիբանանի:
6 Տէրը կոտրատում է դրանք ինչպէս Լիբանանի մատաղ տունկերը,
որոնք սիրասուն են միեղջերուի ձագերի պէս:
7 Տիրոջ ձայնը ճեղքում է կրակի բոցը:
8 Տիրոջ ձայնը ցնցում է անապատը,
Տէրը դողացնում է Կադէսի անապատը:
9 Տիրոջ ձայնը ոտքի է կանգնեցնում եղնիկներին
եւ մերկացնում անտառները:
Նրա տաճարում բոլորը թող գովեն փառքը նրա:
10 Տէրը զսպում եւ ցածրացնում է ջրհեղեղները,
Տէրը յաւիտեան պիտի թագաւորի:
11 Տէրն իր ժողովրդին զօրութիւն պիտի տայ,
իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղութիւն պարգեւելով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

29 Սաղմոս Դաւթի. տաճարի նաւակատիքի օրհնութիւնը

1 Պանծացնում եմ քեզ, Տէ՛ր, քանզի ընդունեցիր ինձ
եւ չթողիր, որ թշնամիներս չարախնդան վրաս:
2 Տէր Աստուա՛ծ իմ,
3 կանչեցի քեզ,
եւ բուժեցիր ինձ:
4 Տէ՛ր, հոգիս դժոխքից հանեցիր
եւ փոսն իջնողների միջից փրկեցիր ինձ:
5 Սաղմո՛ս երգեցէք Տիրոջը, ո՛վ նրա սրբեր,
գոհութի՛ւն մատուցեցէք նրա սուրբ յիշատակին:
6 Նրա բարկութեան մէջ ցասում կայ,
իսկ նրա կամեցողութեան մէջ՝ կեանք:
Երեկոյեան լացը կը դադարի,
իսկ առաւօտեան ուրախութիւն կը լինի:
7 Իմ բարկութեան մէջ ես ասացի,
թէ յաւէտ չեմ սասանուի:
8 Տէ՛ր, քո կամքով ուժ տուիր իմ վայելչութեանը,
բայց երբ երեսդ դարձրիր ինձնից,
ես խռովայոյզ եղայ:
9 Քե՛զ կանչեցի, Տէ՛ր,
աղաչեցի իմ Աստծուն:
10 Ի՞նչ օգուտ ունես իմ արիւնից,

եթէ ապականութեան գրի մէջ թաղուեմ:
Միթէ հողը գոհութի՞ւն կը մատուցի քեզ
կամ կը պատմի՞ քո ճշմարտութիւնը:
11 *Լսեց ինձ Տէրն ու ողորմեց,*
Տէրը եղաւ իմ օգնականը:
12 *Սուգս դարձրեց ուրախութիւն,*
Հանեց քուրձն իմ եւ խնդութիւն հագցրեց ինձ,
13 *փառքս սաղմոս պիտի երգի քեզ,*
որպէսզի այլեւս չզղջամ ես:
Տէ՛ր իմ Աստուած, յաւիտեան գոհութիւն պիտի մատուցեմ քեզ:

ԱՂՕԹՔ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ

30 1 *Այսուհետեւ՝ Դաւթի հերոսութեան գովքի սաղմոսը*
2 *Ցոյսս դրի քեզ վրայ,*
Տէ՛ր, թող յաւէտ ամօթով չմնամ.
քո արդարութեամբ փրկի՛ր եւ ազատի՛ր ինձ:
3 *Դէպի ի՛նձ խոնարհիր ականջը քո,*
փութա՛ ինձ պաշտպանելու:
Եղի՛ր իմ պահպանը, Աստուա՛ծ,
եւ իմ փրկութեան ապաստարանը,
քանզի իմ ուժն ու ապաւէնն ես դու:
4 *Քո անուան համար ինձ առաջնորդ եղար եւ սնուցեցիր ինձ:*
5 *Ինձ կը հանես այն որոգայթից, որ լարեցին իմ դէմ:*
6 *Դու ես պաշտպանն իմ, Տէ՛ր,*
եւ քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին:
Տէ՛ր Աստուած, փրկեցիր ինձ քո ճշմարտութեամբ:
7 *Ատեցիր նրանց, ովքեր երկիւղ են կրում սնոտիաբար:*
8 *Ես յոյս դրի Տիրոջ վրայ,*
պիտի ցնծամ եւ ուրախանամ քո տուած փրկութեամբ:
Տեսար իմ նուաստացումն ու ինձ փրկեցիր վշտերից:
9 *Ինձ չմատնեցիր նեղիչներիս ձեռքը*
եւ ոտքերս լայնարձակ վայրում հաստատեցիր:
10 *Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի ճնշուած եմ ես.*
սրտնեղութիւնից խռոված են իմ աչքը, հոգին ու որովայնը:
11 *Կեանքս սպառուեց վիշտ ու ցաւերով,*
եւ տարիներս՝ հոգոց հանելով:
Թշուառութիւնից տկարացաւ ուժն իմ,
եւ ոսկորներս մաշուեցին:
12 *Իմ բոլոր թշնամիներից աւելի ես դրացիների՛ս համար նախատինք եղայ*
եւ ծանօթներիս համար՝ սոսկալի ահ ու սարսափ:
Բոլոր նրանք, ովքեր տեսնում էին ինձ,
հեռու էին փախչում ինձնից:
13 *Սրտերից մոռացուեցի ես ինչպէս մեռեալ*
եւ նմանուեցի անպէտք անօթի,
14 *քանզի բամբասանք լսեցի շատերից,*
որոնք իմ շուրջն էին:
Հաւաքուած իրար դէմի՝ նրանք ուզում էին առնել իմ հոգին:
15 *Բայց ես, Տէ՛ր, յոյս դրի քե՛զ վրայ՝ ասելով.*
«Դո՛ւ ես Աստուածն իմ,
16 *եւ քո ձեռքում է իմ ժառանգութիւնը:*
Փրկի՛ր ինձ թշնամիներիս ձեռքից եւ իմ հալածիչներից:
17 *Ցո՛յց տուր երեսդ քո այս ծառային,*
պահպանի՛ր ինձ, Տէ՛ր, քո ողորմութեամբ»:
18 *Տէ՛ր, ամօթով թող չմնամ, որ քեզ դիմեցի.*
Թող ամբարիշտնե՛րն ամաչեն ու դժոխք իջնեն:
19 *Եւ թող պապանձուեն նենգ շրթունքները,*
որոնք ամբարտաւանութեամբ եւ արհամարհանքով չարախօսում են արդարի մասին:
20 *Որքա՜ն շատ է քո ողորմութեան քաղցրութիւնը, Տէ՛ր,*
որ պահեցիր երկիւղածներիդ համար: Դու այն շնորհեցիր նրանց, որոնք իրենց յոյսը դրել են քեզ վրայ
մարդկանց որդիների առջեւ:
21 *Մարդկանց խռովութիւնից պաշտպանեցիր նրանց քո երեսի ծածկոյթով,*
լեզուների հակառակութիւնից թաքցրիր նրանց քո վրանում:

22 *Օրհնեալ է Տէրը,*
քանզի ողորմութիւնն իր հրաշագործեց ամուր քաղաքում:
23 *Շփոթութեան մէջ ես ասացի,*
թէ այլեւս հեռու մնացի աչքերիդ առջեւից:
Սակայն դու լսեցիր ձայնն իմ աղօթքի,
երբ աղաղակեցի քեզ:
24 *Սիրեցէ՛ք Տիրոջը, բոլոր սրբե՛ր նրա,*
քանզի Տէրը ճշմարտութիւն է փնտռում
եւ խստութեամբ հատուցում նրանց, ովքեր շատ են ամբարտաւանանում:
25 *Քաջալերուեցէ՛ք ամէքդ, որ յոյս էք դրել Տիրոջ վրայ,*
եւ ձեր սրտերը թող զօրանան:

ՆԵՐՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՆԸ

31 *Դաւթի իմաստութիւնը*
1 *Երանի նրան, ում մեղքերին թողութիւն տրուեց*
եւ ում բոլոր յանցանքները ծածկուեցին:
2 *Երանի այն մարդուն, որին Տէրն այլեւս մեղաւոր չի համարում,*
եւ որի բերանում նենգութիւն չկայ:
3 *Ես լռեցի, եւ իմ բոլոր ոսկորները մաշուեցին՝*
ամէն օր գիշեր-ցերեկ Տիրոջը կանչելուց:
4 *Քո ձեռքը ծանրացաւ ինձ վրայ.*
ես կրկին ընկայ թշուառութեան մէջ,
քանզի փշերն ինձ ծակեցին:
5 *Մեղքերս քեզ ցոյց կը տամ,*
եւ անօրէնութիւնս չեմ ծածկի քեզնից:
Ասացի, թէ կը խոստովանեմ մեղքերն իմ,
եւ դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտութեանը:
Հանգիստ:
6 *Դրա համար բոլոր սրբերն յարմար ժամին աղօթքի կը կանգնեն քո առջեւ,*
եւ սաստիկ ջրհեղեղների ժամանակ նրանց ոչինչ չի պատահի:
7 *Դու ես իմ յենարանն այն նեղութեան մէջ,*
որը շուրջս պատեց:
Ո՛վ ցնծութիւն իմ, փրկի՛ր ինձ նրանցից, ովքեր պաշարեցին ինձ:
8 *«Քեզ կ՚իմաստնացնեմ ու խելամիտ կը դարձնեմ քո ընթացած ճանապարհին*
եւ աչքերս վրադ կը պահեմ», ասում է Տէրը:
9 *Մի՛ եղէք ձիերի եւ ջորիների պէս, որոնք գիտակցութիւն չունեն.*
սանձով ու պախուրցով պէտք է նրանց կզակը ճմլել, որ քեզ չմօտենան:
10 *Շատ են մեղաւորների տանջանքները,*
բայց ովքեր իրենց յոյսը դրել են Տիրոջ վրայ,
Տիրոջ ողորմութիւնը կը պարուրի նրանց:
11 *Ուրա՛խ եղէք եւ ցնծացէ՛ք Տիրոջով, ո՛վ արդարներ.*
պարծեցէ՛ք բոլորդ, որ ուղիղ էք սրտով:

ՓԱՌԱՔԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ ԱՐԱՐԻՉ ԵՒ ՓՐԿԻՉ ԱՍՏՈՒՈՒՆ

32 *Սաղմոս Դաւթի*
1 *Ցնծացէ՛ք, արդարնե՛ր, Տիրոջով.*
արդարներին է վայել օրհնութիւնը:
2 *Գոհութի՛ւն յայտնեցէք Տիրոջը օրհներգութեամբ, տասլարանի նուագարանով սաղմո՛ս երգեցէք նրան:*
3 *Օրհներգեցէ՛ք Տիրոջը նոր օրհներգով,*
քանզի հաճելի է այն:
Սաղմո՛ս երգեցէք նրան օրհնութեամբ:
4 *Ճշմարիտ են Տիրոջ պատգամները,*
եւ յուսալի՝ նրա բոլոր գործերը:
5 *Տէրը ողորմութիւն եւ իրաւունք է սիրում,*
Տիրոջ ողորմութեամբ է լցուած երկիրը:
6 *Տիրոջ խօսքով ստեղծուեց երկինքը,*
եւ իր բերանի շնչով՝ նրա բոլոր զօրութիւնները:
7 *Ինչպէս մի տիկի մէջ՝ հաւաքեց ծովի ջրերը*
եւ իր գանձը դրեց անդունդների յատակը:
8 *Թող երկիւղ կրի Տիրոջից ողջ երկիրը,*
եւ նրանից թող դողան բոլոր բնակիչներն աշխարհի,

9 քանզի Նա ասաց՝ եւ ստեղծուեցին,
Նա հրամայեց՝ եւ հաստատուեցին:
10 Տէրը խափանում է հեթանոսների մտադրութիւնները,
Տէրն անարգում է ժողովուրդների դիտաւորութիւնները,
Տէրն արհամարհում է իշխանների խորհուրդները:
11 Տիրոջ մտածումը յաւիտեան կը մնայ,
եւ նրա սրտի խորհուրդը՝ սերնդից սերունդ:
12 Երանի այն ազգին, որի օգնականը Տէր Աստուած է,
երանի այն ժողովրդին, որին իր համար նա ժառանգութիւն ընտրեց:
13 Տէրը երկնքից նայեց բոլոր մարդկանց որդիներին:
14 Իր պատրաստած բնակատեղից դիտեց աշխարհի բոլոր բնակիչներին:
15 Նա, որ ստեղծել է նրանցից իւրաքանչիւրի սիրտը,
հաշուի է առնում նրանց բոլոր գործերը:
16 Թագաւորն իր զօրքի բազմութեամբ չի փրկուի,
եւ ոչ էլ հսկան՝ իր մեծ ուժով:
17 Ձին անօգուտ է փրկութեան համար,
իր մեծ ուժով հանդերձ չի փրկի հեծեալին:
18 Տիրոջ աչքն իր երկիւղածների
եւ իր ողորմութեանը յուսացողների վրայ է՝
19 մահից փրկելու նրանց անձը
եւ սովի ժամանակ կերակրելու համար նրանց:
20 Մեր հոգիներն սպասում են Տիրոջը,
քանզի նա մեր օգնականն է ու պաշտպանը:
21 Նրանով թող ուրախանան մեր սրտերը,
եւ մենք նրա սուրբ անուան վրայ յոյս դնենք:
22 Թող ողորմութիւնդ, Տէ՛ր, լինի մեզ վրայ,
ինչպէս որ մեր յոյսը դրինք քեզ վրայ:

ԱՍՏԾՈՒ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

33 1 Սաղմոս Դաւթի, երբ նա կերպարանափոխեց իր դէմքը Աբիմելէքի առջեւ, եւ սա բաց թողեց նրան, որ գնայ:
2 Ամէն ժամ Տիրոջն օրհներգեմ,
նրա օրհնութիւնն ամէն ժամ բերանումս լինի:
3 Անձս Տիրոջով թող պարծենայ,
հեզերը թող լսեն եւ ուրախանան:
4 Մեծարեցէ՛ք Տիրոջն ինձ հետ մէկտեղ,
բարձրացնենք նրա անունը միասին:
5 Խնդրեցի Տիրոջն, ու նա լսեց ինձ
եւ իմ բոլոր նեղութիւններից փրկեց ինձ:
6 Մօտեցէ՛ք Տիրոջն ու լո՛յս առէք,
եւ թող ձեր երեսը չամաչի:
7 Աղքատն այս Տիրոջը դիմեց, եւ Տէրը նրան լսեց
ու իր բոլոր նեղութիւններից փրկեց նրան:
8 Տիրոջ հրեշտակների բանակն իր երկիւղածների շուրջն է
եւ պահպանում է նրանց:
9 Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ որքան քաղցր է Տէրը.
երանելի է այն մարդը, որ յոյսը դրել է նրա վրայ:
10 Վախեցէ՛ք Տիրոջից, բոլոր սրբե՛րդ նրա,
քանզի նրանից վախեցողները ոչ մի պակասութիւն չեն ունենայ:
11 Մեծամեծներն աղքատացան ու սովի մատնուեցին,
բայց ովքեր Տիրոջն են փնտռում, նրանցից ոչ մի բարիք չի պակասելու:
12 Եկէ՛ք, իմ որդինե՛ր, եւ լսեցէ՛ք ինձ.
ես կը սովորեցնեմ ձեզ Տիրոջ երկիւղը:
13 Ո՞վ է մարդն այն, որ սիրում է կեանքը,
եւ ուզում է իր օրերը բարութեան մէջ տեսնել:
14 Լեզուդ պահի՛ր չարութիւնից,
եւ շրթներդ թող նենգութիւն չխօսեն:
15 Խուսափի՛ր չարից ու բարի՛ք գործիր,
խաղաղութիւն փնտռիր եւ դրա՛ն հետեւիր:

16 Տիրոջ աչքերն ուղղուած են արդարներին,
իսկ ականջները՝ նրանց աղօթքին:
17 Տիրոջ հայեացքը չարագործների վրայ է՝
նրանց յիշատակն աշխարհից ջնջելու համար:
18 Արդարները Տիրոջը աղօթեցին,
եւ Տէրը լսեց նրանց ու փրկեց նրանց իրենց բոլոր նեղութիւններից:
19 Տէրը նրանց կողքին է, ովքեր սրտամաշ են եղել,
եւ նա փրկում է հոգով խոնարհներին:
20 Արդարների նեղութիւնները շատ են,
Տէրն ազատում է նրանց այդ բոլորից:
21 Պահպանում է նրանց բոլոր ոսկորները,
եւ դրանցից ոչ մէկը չի փշրուելու:
22 Մեղաւորի մահը չարաչար է,
իսկ արդարին ատողը կը զղջայ:
23 Տէրը փրկում է իր ծառաներին,
եւ բոլոր նրանք, որ յոյս են դնում Նրա վրայ, չպիտի զղջան:

ՀԱԼԱԾՈՒԱԾ ԱՐԴԱՐԻ ԱՂՕԹՔԸ

34 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
1 Տէ՛ր, դատի՛ր նրանց, ովքեր դատում են ինձ,
մարտնչի՛ր նրանց դէմ, ովքեր մարտնչում են իմ դէմ:
2 Ա՛ռ զէնքն ու զրահը քո
եւ հասի՛ր ինձ օգնութեան:
3 Սուրդ հանի՛ր ընդդէմ իմ հալածիչների, վանի՛ր նրանց
եւ ասա՛ ինձ, թէ՝ «Քո փրկութիւնը ես եմ»:
4 Թող խայտառակուեն ու ամօթով մնան ինձ հետապնդողները,
թող ընկրկեն եւ ամօթահար լինեն ինձ չար կամեցողները:
5 Նրանք թող վերածուեն հողմից քշուող փոշու,
եւ թող Տիրոջ հրեշտակը չարչարի նրանց:
6 Նրանց ճանապարհը թող խաւար լինի ու սայթաքուն,
եւ Աստծու հրեշտակը թող հալածի նրանց:
7 Իզուր որոգայթ լարեցին իմ դէմ իրենց ապականութեամբ,
եւ իզուր նախատեցին ինձ:
8 Նրանց վրայ կը հասնի մի որոգայթ,
որի մասին չգիտեն նրանք.
իրենց թաքցրած թակարդը կը բռնի ոտքը նրանց,
եւ նրանք կ'ընկնեն այդ որոգայթի մէջ:
9 Իսկ հոգիս կը ցնծայ Տիրոջով,
ուրախ կը լինի նրա տուած փրկութեամբ:
10 Իմ բոլոր ոսկորները կ'ասեն.
«Տէ՛ր, ո՞վ է քեզ նման»:
Նա փրկեց աղքատին բռնակալի ձեռքից,
եւ խեղճին ու տնանկին՝ իրենց յափշտակողներից:
11 Իմ դէմ բարձրացան վկաները չար,
հարցաքննեցին ինձ մինչ ես անտեղեակ էի:
12 Բարու փոխարէն չար հատուցեցին ինձ,
խորհուրդ արին ինձ անժառանգ թողնել մարդկանց մէջ:
13 Նրանց հալածանքի ժամանակ ես քուրձ էի հագնում,
ծոմով խղճալի էի դարձնում ինձ,
եւ իմ աղօթքներն ինձ վերադարձան:
14 Եղբօր ու ընկերոջ նման սիրալիր էի,
սգաւորի ու վշտացեալի պէս՝ խոնարհ:
15 Հաւաքուեցին ու չարախնդացին ինձ վրայ.
տանջանքներ կուտակուեցին իմ դէմ, եւ ես չիմացայ.
նրանք ցրուեցին, բայց չզղջացին.
16 Փորձեցին ինձ ու անարգեցին,
ատամներն իրենց արհամարհանքով կրճտեցրին իմ դէմ:
17 Տէ՛ր, մինչեւ ե՞րբ պիտի տեսնես:
Հեռո՛ւ պահիր ինձ նրանց խորամանկութիւնից,
եւ միամօրիկիս՝ առիւծներից:
18 Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր,

մեծ հաւաքներում եւ ժողովրդի
բազմութեան մէջ պիտի օրհնեցեմ
քեզ:
19 Թշնամիներն իմ թող վրաս
չխնդան,
նրանք, որ ատում էին ինձ առանց
պատճառի
եւ իրար աչք էին անում ինձ հա-
մար:
20 Հետս խաղաղութիւնից էին խո-
սում,
բայց իրենք զայրացած՝ նենգութիւն
էին խորհում:
21 Բացին ինձ վրայ բերաններն
իրենց եւ ասացին.
«Այո՛, այո՛, մեր աչքերը տեսան»:
22 Տէ՛ր, ինքդ տեսար, մի՛ լռիր.
Տէ՛ր, մի հեռացի՛ր ինձանից:
23 Զարթնի՛ր, Տէ՛ր, նայի՛ր իմ իրա-
ւունքին ու արդարութեանը,
Աստուա՛ծ իմ եւ Տէ՛ր իմ:
24 Իմ դատն արա՛, արդարացրո՛ւ
ինձ ըստ քո արդարութեան,
ո՛վ Տէր իմ Աստուած:
Թշնամիներն իմ թող չուրախանան
ինձանով:
25 Եւ չասեն իրենց մտքում. «Երնէ՜կ,
երնէ՜կ մեզ,
քանզի խորտակեցինք նրան»:
26 Թող խայտառակուեն ու ամօթով
մնան ինձ հասած չարիքի համար
ուրախացողները.
Թող նախատինք ու անարգանք
կրեն իմ դէմ մեծախօսողները:
27 Բոլոր նրանք, ովքեր իմ արդա-
րութիւնն են կամենում
եւ քո ծառային խաղաղութիւն ցան-
կանում,
Թող ուրախութեամբ ցնծան քեզնով
եւ միշտ ասեն՝ «Մեծ է Աստուած»:
28 Լեզուս պիտի քո արդարութիւնը
պատմի
եւ հանապազ քեզ գովաբանի:

ՄԵՂԱՒՈՐԻ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՄՈՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ

35

1 *Այսուհետեւ՝ Տիրոջ ծառայ
Դաւթի սաղմոսը*
2 Անօրէնն ասում է իր մտքում
մեղանչելիս,
թէ իր աչքերի առջեւ Աստծու վախ
չկայ:
3 Նա խորամանկութիւն է գործում
նրա հանդէպ,
որ չտեսնի իր անօրէնութիւնն ու
չատի այն:
4 Նրա բերանի խօսքերն անարգար
ու նենգամիտ են,
նա չկամեցաւ հասկանալ բարին:
5 Անօրէնութիւն խորհեց իր անկող-
նում,
կանգնեց այն բոլոր ուղիների վրայ,
որոնք բարի չեն,
եւ չարից չձանձրացաւ:
6 Տէ՛ր, երկնքում է քո ողորմու-
թիւնը,
իսկ ճշմարտութիւնդ՝ մինչեւ ամ-
պերը:
7 Արդարութիւնդ, Աստուա՛ծ, լեռ-
ների պէս է,
իրաւունքդ՝ խոր անդունդի պէս.
մարդ ու անասուն դու ես ապ-
րեցնում, Տէ՛ր:
8 Որքա՜ն առատ է քո ողորմու-
թիւնն, Աստուա՛ծ,
մարդկանց որդիները թեւերիդ հո-
վանուն պիտի ապաւինեն:
9 Նրանք պիտի յագենան քո տան
լիութիւնից,
եւ նրանց պիտի խմեցնես քո
զրգանքի գետերից:
10 Տէ՛ր, քեզնից է կեանքի աղբիւրը,
եւ երեսիդ լոյսով ենք լոյսը տես-
նում:
11 Ողորմութիւնդ շնորհի՛ր քեզ ճա-
նաչողներին,
եւ արդարութիւնդ՝ սրտով ուղիղ-
ներին:
12 Թող ամբարտաւանների ոտքը
մեզ չհասնի,
եւ մեղաւորների ձեռքը չդողացնի
մեզ:
13 Այնտեղ բոլոր անօրէնութիւն
գործողները պիտի ընկնեն,
մերժուեն ու չկարողանան այլեւս
ոտքի կանգնել:

ՉՆԱԽԱՆՁԵԼ ՉԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ

36

Սաղմոս Դաւթի
1 Մի՛ նախանձիր չարամիտներին եւ
ոչ էլ նրանց, ովքեր անօրէնութիւն են
գործում,

2 քանզի նրանք խոտի պէս իսկոյն
կը չորանան,
դալար խոտի պէս արագ կ'անցնեն:
3 Յոյսդ դի՛ր Տիրոջ վրայ ու բա-
րութի՛ւն գործիր,
բնակուի՛ր երկրում եւ արածի՛ր նրա
ընդարձակութեան մէջ:
4 Գաղատի՛ր Տիրոջը,
եւ նա քեզ կը տայ սրտիդ ուզածը:
5 Յայտնի՛ դարձրու քո ճանա-
պարհները Տիրոջը
եւ դի՛ր յոյսդ նրա վրայ:
6 Նա այնպէս կ'անի, որ արդա-
րութիւնդ երեւայ ինչպէս լոյս,
եւ իրաւունքդ՝ ինչպէս ցերեկ:
7 Հնազա՛նդ եղիր Տիրոջն ու ծա-
ռայի՛ր նրան.
մի՛ նախանձիր նրանց, որոնց ճա-
նապարհը նշաւակելի է,
ոչ էլ այն մարդուն, որ անօրէ-
նութիւն է գործում:
8 Դադարի՛ր բարկանալուց, հան-
դարտուի՛ր սրտմտութիւնից
եւ մի՛ նախանձիր չարամիտներին:
9 Չարագործները շուտով կը վերա-
նան,
իսկ Տիրոջն սպասողները կը ժա-
ռանգեն երկիրը:
10 Եւս մի փոքր ժամանակ, եւ այլեւս
ամբարիշտ չի մնայ,
կը փնտռես նրա տեղն ու չես գտնի:
11 Իսկ ովքեր հեզ են, նրանք կը
ժառանգեն երկիրը
եւ կը զուարճանան մեծ խաղա-
ղութեան մէջ:
12 Մեղաւորը հետապնդում է ար-
դարին
եւ իր ատամներն է կրճտացնում
նրա վրայ:
13 Բայց Տէրը կը ծիծաղի նրա վրայ,
քանզի նախապէս գիտէ, որ հասել է
նրա օրը:
14 Մեղաւորները սուր քաշեցին եւ
լարեցին իրենց աղեղները՝
աղքատին ու տնանկին հարուա-
ծելու,
սրտով խոնարհներին սպանելու
համար:
15 Նրանց սրերը կը մխուեն իրենց
սրտերը,
եւ նրանց աղեղները կը փշրուեն:
16 Արդարի քիչն աւելի լաւ է,
քան մեղաւորների մեծ հարստու-
թիւնը:
17 Ամբարիշտների բազուկները կը
խորտակուեն,
եւ Տէրն արդարներին հաստատ կը
պահի:
18 Նա գիտէ անմեղների օրերը,
նրանց ժառանգութիւնը յաւիտեան
կը լինի:
19 Փորձանքի ժամանակ նրանք
ամօթով չեն մնայ,
իսկ սովի օրերին կը յագենան:
20 Արդ, մեղաւորները կորստեան կը
մատնուեն,
եւ Տիրոջ թշնամիներն իրենց փառքի
ու վերելքի ժամին կը սպառուեն,
ինչպէս ծուխն է սպառւում:
21 Մեղաւորը փոխ է առնում ու չի
վճարում,
իսկ արդարը ողորմում է ու տալիս:
22 Ովքեր օրհնում են Տիրոջը, կը
ժառանգեն երկիրը,
իսկ ովքեր անիծում են, կը ջնջուեն
Տիրոջ ձեռքով:
23 Տէրն ուղղում է այն մարդու
ընթացքը,
ով շատ է սիրում իր ճանապարհը:
24 Եթէ անգամ նա սայթաքի, չի
կործանուի,
քանզի Տէրը բռնել է նրա ձեռքը:
25 Մանուկ էի ես եւ ծերացայ,
բայց արդարին արհամարհուած
չտեսայ
կամ նրա զաւակին՝ հաց մուրալիս:
26 Ամէն օր նա ողորմում ու փոխ է
տալիս,
նրա սերունդը յաւիտեան օրհնեալ
կը լինի:
27 Խուսափի՛ր չարից ու բարութի՛ւն
արա
եւ յաւիտեան կ'ապրես երկրի վրայ:
28 Տէրը սիրում է իրաւունքը,
եւ իր սրբերին երեսի վրայ չի
թողնում,
այլ յաւիտեան պահպանում է
նրանց:
Անօրէնները կը քշուեն կը գնան
միասին,

եւ ամբարիշտների սերունդը
կ'ոչնչանայ:
29 Իսկ արդարները կը ժառանգեն երկիրը
եւ յաւիտեանս յաւիտենից կը բնակուեն նրա մէջ:
30 Արդարի բերանն իմաստութիւն է բարբառում,
իսկ լեզուն արդարութիւն է խօսում:
31 Նրա սրտում իր Աստծու օրէնքն է,
ուստի նրա երթն անսայթաք կը լինի:
32 Մեղաւորը նայում է արդարին
եւ ձգտում սպանել նրան:
33 Սակայն Տէրը նրա ձեռքում չի թողնի նրան
եւ դատաստանի ժամանակ նրան չի դատապարտի:
34 Սպասի՛ր Տիրոջն ու պահի՛ր նրա ճանապարհները,
նա քեզ կը բարձրացնի՝ երկիրը ժառանգելու,
եւ դու կը տեսնես մեղաւորների կործանումը:
35 Տեսայ ամբարշտին մեծացած ու բարձրացած,
ինչպէս Լիբանանի մայրիները:
36 Ես մօտով անցայ, եւ ահա նա չկար,
փնտռեցի՝ ու նրա տեղը չերեւաց:
37 Անարա՛տ ապրիր եւ նայի՛ր արդարութեանը,
քանզի խաղաղասէր մարդը ժառանգութիւն կ'ունենայ:
38 Անօրէնները կը քշուեն կը գնան գլխովին,
եւ ամբարիշտների սերունդը կորստեան կը մատնուի:
39 Արդարների փրկութիւնը Տիրոջից է,
նեղութեան ժամանակ նա է նրանց օգնականը:
40 Տէրը կ'օգնի ու կը փրկի նրանց,
կ'ազատի մեղաւորներից ու կը պահպանի նրանց,
քանզի նրանք իրենց յոյսը դրել են Նրա վրայ:

ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒ ԱՂՕԹՔԸ

37 1 Սաղմոս Դաւթի՝ շաբաթօրեայ յիշատակի առթիւ
2 Տէ՛ր, քո զայրոյթով մի՛ յանդիմանիր ինձ
եւ քո բարկութեամբ ինձ մի՛ խրատիր,
3 քանզի քո նետերն ինձ հարուածեցին,
եւ քո ձեռքն ինձ վրայ ծանրացաւ:
4 Մարմնիս համար բուժում չկայ քո բարկութեան դէմ,
ոսկորներս հանգստութիւն չունեն իմ մեղքերի պատճառով:
5 Անօրէնութիւններս գլխիցս վեր բարձրացան,
սաստիկ բեռան պէս ծանրացան վրաս:
6 Վէրքերն իմ նեխեցին ու փտեցին անզգամութեանս հետեւանքով:
7 Տառապեցի եւ խիստ նուաստացայ,
գիշեր-ցերեկ շրջեցի վշտացած,
8 քանզի հոգիս լցուեց տանջանքներով,
եւ մարմնիս համար բուժում չկայ:
9 Զարչարուեցի եւ սաստիկ կորացայ,
մռնչացի սրտիս հեծութիւնից:
10 Տէ՛ր, ամբողջ ցանկութիւնս առջեւդ է,
եւ հառաչանքս չծածկուեց քեզնից:
11 Սիրտս պղտորուեց իմ մէջ,
եւ ուժս լքեց ինձ, աչքերիս մէջ լոյսի նշոյլ իսկ չմնաց:
12 Բարեկամներս եւ ընկերներս մօտեցան ու կանգնեցին իմ առջեւ,
եւ մերձաւորներս ինձնից հեռու մնացին:
13 Ինձ հետապնդողները բռնադատեցին ինձ,
իմ դէմ չարիք նիւթողները անօրէնութիւն խօսեցին,
եւ գիշեր-ցերեկ նենգութիւն մտածեցին:
14 Իսկ ես դարձայ ինչպէս խուլ, որ չի լսում,
ինչպէս համր, որ բերանն իր չի բացում:
15 Ես դարձայ ինչպէս մարդ, որ չի լսում,
եւ որի բերանում խօսք չկայ:
16 Ես յոյս քեզ վրայ դրի, ո՛վ Տէր,
ու դու կը լսես ինձ, Տէ՛ր իմ Աստուած:

17 Ասացի՝ «Թող թշնամիներս չծիծաղեն վրաս».
երբ ոտքս սայթաքեց, նրանք յոխորտացին իմ դէմ:
18 Ես պատրաստ եմ տանջանքների,
եւ իմ ցաւերը միշտ առջեւս են:
19 Կը պատմեմ իմ անօրէնութիւնները
եւ կը հոգամ իմ մեղքերի մասին:
20 Բայց թշնամիներն իմ ողջ են ու աւելի հզօր, քան ես,
եւ բազմացել են նրանք, ովքեր յանիրաւի ատում են ինձ,
21 ովքեր ինձ չարութեամբ հատուցեցին բարու փոխարէն
եւ չարախօսեցին իմ մասին,
քանզի ես արդարութեամբ էի ընթանում:
22 Մի՛ լքիր ինձ, Տէ՛ր իմ Աստուած,
եւ մի՛ հեռացիր ինձնից:
23 Ո՛ւշ դարձրու, որ ինձ օգնես,
ո՛վ իմ փրկիչ Տէր:

ՄԱՐԴՈՒ ՈՁՆՁՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒՈՒ ԱՌԱՋ

38 1 Այսուհետեւ՝ օրհնութիւն Իդիթոմին
2 Ասացի՝ «Զգուշանամ իմ ճանապարհին,
որ լեզուովս չմեղանչեմ»:
Բերանիս պահպանակ դրի,
երբ մեղաւորը հակառակուեց ինձ:
3 Խուլ եղայ եւ խոնարհ դարձայ,
բարիքս լռութեան մատնեցի,
եւ ցաւերս նորոգուեցին իմ մէջ:
4 Սիրտս կրակ կտրեց իմ ներսում,
եւ մտքիս մէջ հուր բորբոքուեց:
5 Խօսեցի լեզուովս եւ ասացի.
«Տէր, ցո՛յց տուր ինձ, թէ ե՞րբ է իմ վախճանը,
եւ որքան է կեանքիս օրերի թիւը,
որպէսզի իմանամ, թէ ինչքան կորուստ եմ ունեցել»:
6 Ահա սահման դրիր իմ օրերին,
եւ կարողութիւնս ոչինչ է իմ աչքում,
բոլորովին ոչնչութիւն է ամէն մարդ, որ մարմին ունի:
7 Արդարեւ, մարդ շրջում է ինչպէս մի ուրուական.
բայց իզուր է նա տագնապում,
գանձ կուտակում՝ չիմանալով, թէ ում համար:
8 Իսկ արդ, ո՞վ է իմ համբերութիւնը, եթէ ոչ դու, Տէ՛ր,
կամ իմ ուժն ու կարողութիւնը քեզնից չէ՞ միթէ:
9 Բոլոր յանցանքներից փրկեցիր
եւ անզգամների համար նախատինք դարձրիր ինձ:
10 Ես խուլ եղայ եւ չբացեցի բերանն իմ,
քանզի դու էիր գործում:
11 Հեռացրո՛ւ ինձնից իմ տանջանքները,
որովհետեւ քո ձեռքի զօրութիւնից հիւծուեցի ես:
12 Մեղքերի համար կշտամբելով՝ խրատեցիր դու մարդուն,
սարդոստայնի պէս մաշեցիր նրան,
բայց սուտ է ամէն մարդ:
Հանգիստ:
13 Տէ՛ր, լսի՛ր իմ աղօթքը,
ակա՛նջ դիր խնդրանքներիս
եւ արտասուքս լռութեան մի՛ մատնիր:
Պանդուխտ եմ ես քո առաջ,
օտարական եւ անցորդ,
ինչպէս իմ բոլոր նախնիները:
14 Թո՛յլ տուր ինձ, որ հանգստանամ,
մինչեւ իմ գնալն այնտեղ, ուր այլեւս չեմ լինի:

ԱՂԵՐՍ ՕԳՆՈՒԹԵԱՆ

39 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
2 Համբերութեամբ սպասեցի Տիրոջը,
եւ նա նայեց ինձ ու լսեց իմ աղօթքը:
3 Նա ինձ հանեց տառապանքի փոսից, ցեխից ու տիղմից.
ոտքերս ժայռի վրայ հաստատեց եւ ուղղեց իմ քայլերը:
4 Բերանս դրեց մի նոր օրհներգ՝
օրհներգը մեր Տէր Աստծու:
Շատերը պիտի տեսնեն ու վախենան
եւ իրենց յոյսը դնեն Տիրոջ վրայ:
5 Երանի այն մարդուն, որի յոյսը Տիրոջ անունն է,
եւ որը ունայնութեանն ու սուտ մոլորութեանն ուշ չի դարձրել:

6 Բազում են քո սքանչելիքները,
Տէ՛ր իմ Աստուած,
քո խորհուրդներում ոչ ոք նման չէ քեզ:
Պատմեցի ու խօսեցի դրանց մասին,
բայց դրանք անթիւ են:
7 Զոհերն ու ընծաները հաճելի չեղան քեզ,
ինձ լսողութիւն տուիր եւ ողջակէզ ու մեղայագին չպահանջեցիր:
8 Այն ժամանակ ասացի, թէ՝ «Ահա գալիս եմ ես,
գրքի գլուխներում գրուած է իմ մասին:
9 Ուզեցի կամքդ կատարել, Աստուա՛ծ իմ,
եւ օրէնքդ, որ իմ ներսում է»:
10 Մեծ հաւաքներում ես քո արդարութիւնն աւետեցի,
եւ արդ շրթունքներս չեմ կտրում քեզնից:
11 Տէ՛ր, դու գիտես, որ քո արդարութիւնը, քո ճշմարտութիւնն ու փրկութիւնը
ծածուկ չեմ պահել իմ սրտում,
պատմել եմ եւ մեծ հաւաքներից չեմ թաքցրել քո ողորմութիւնն ու ճշմարտութիւնը:
12 Իսկ դու, Տէ՛ր, գթութիւնդ հեռու մի՛ պահիր ինձնից,
քո ողորմութիւնն ու ճշմարտութիւնը միշտ պահապան լինի ինձ:
13 Ինձ պաշարեցին չարիքներ, որոնք անթիւ էին.
անօրէնութիւններս ինձ վրայ հասան,
եւ ես չկարողացայ նկատել.
գլխիս մազերից աւելի շատ եղան դրանք, եւ սիրտս ինձ լքեց:
14 Կամեցի՛ր փրկել ինձ, Տէ՛ր, նայի՛ր, որ օգնես ինձ, Տէ՛ր:
15 Թող խայտառակուեն ու ամօթահար լինեն նրանք,
որ ուզում էին կործանել ինձ.
Թող ետ դառնան ու ամօթով մնան ինձ չար կամեցողները:
16 Թող շուտափոյթ անարգանք կրեն նրանք, որ չարախնդում էին իմ դէմ:
17 Թող քեզանով ցնծան ու ուրախանան բոլոր նրանք,
որ փնտռում են քեզ, Տէ՛ր:
Քո տուած փրկութիւնը սիրողներն
ամէն ժամ թող ասեն՝ «Մեծ է Աստուած»:
18 Ես աղքատ եմ եւ տնանկ, Աստուա՛ծ, հո՛գ տար իմ մասին.
իմ օգնականն ու պաշտպանը դու ես.
Աստուած իմ, մի՛ ուշացիր:

ԼՔՈՒԱԾ ՀԻԻԱՆԴԻ ԱՂՕԹՔԸ

40 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
2 Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին.
փորձանքի օրը Տէրը կը փրկի նրան:
3 Տէրը կը փրկի ու կը պահպանի նրան,
երանելի կը դարձնի երկրի երեսին
եւ չի մատնի նրան իր թշնամիների ձեռքը:
4 Տէրը նրան կ'օգնի տառապանքի մահճում
եւ նրա անկողինն ամբողջովին կը մաքրի իր հիւանդութիւնից:
5 Ես ասացի. «Տէ՛ր, ողորմի՛ր ինձ եւ բժշկի՛ր անձն իմ,
ես մեղանչեցի քո դէմ»:
6 Թշնամիներս չարութեամբ ասացին իմ մասին.
«Ե՞րբ պիտի մեռնի նա, եւ նրա անունը ջնջուի»:
7 Ինձ այցելութեան եկողը դատարկ բաներ էր խօսում իր սրտում,
անօրէնութիւն կուտակում իր մէջ,
դուրս էր գալիս եւ նոյն բանն էր պատմում:
8 Բոլոր թշնամիներս քրթմնջեցին իմ մասին եւ չարիք նիւթեցին իմ դէմ:
9 Նրանք անօրէն խօսքեր բարդեցին ինձ վրայ.
«Ով ննջում է, մի՞թէ այլեւս յարութիւն չի՞ առնի»:
10 Անգամ իմ բարեկամ մարդը, որին ես վստահում էի,
եւ որն ուտում էր հացն իմ,
յաճախակի իմ դէմ խաբէութիւն գործեց:
11 Բայց դու, Տէ՛ր, ողորմի՛ր եւ ոտքի՛ կանգնեցրու ինձ, որ հատուցեմ նրանց:

12 Եթէ թշնամիներս չչարախնդան վրաս,
դրանից ես կ'իմանամ, որ բարեհաճ ես իմ հանդէպ:
13 Դու իմ անմեղութեան համար ընդունեցիր ինձ
եւ յաւիտեան հաստատեցիր քո առջեւ:
14 Օրհնեալ լինի Տէր Աստուածն Իսրայէլի
յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:

ԱՐՏԱՔՍՈՒԱԾ ՂԵՒՏԱՑՈՒ ՈՂԲԸ

41 1 *Այսուհետեւ՝ Կորխի որդիների իմաստութիւնը*
2 Ինչպէս եղջերուն ջրի ակունքներին է փափագում,
այնպէս էլ ես քեզ եմ փափագում, ո՛վ Աստուած.
3 Հոգիս ծարաւ է քեզ, Աստուած հզօր եւ կենդանի.
ե՞րբ պիտի գամ ու երեւամ Աստծու առաջ:
4 Գիշեր-ցերեկ իմ արցունքներով սնուեցի,
քանզի ամէն օր ինձ ասում էին. «Քո Աստուածն ո՞ւր է»:
5 Դա յիշելիս՝ հոգիս տառապում էր իմ ներսում,
բայց քաջալերւում էի, որ պիտի մտնեմ
Աստծու տան սքանչելի յարկի տակ,
ցնծութեան ու օրհնութեան ձայնով
եւ ձայնով բարեբանութեան:
6 Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ,
կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ.
յոյսդ դի՛ր Աստծու վրայ, օրհնե՛ր նրան,
իմ անձը փրկողն Աստուած է:
7 Հոգին իմ խիստ խռովուեց,
դրա համար քեզ յիշեցի Յորդանանի երկրից
ու Հերմոնի փոքր սարից:
8 Անդունդից քեզ կանչեցին քո յորձանքների ձայնով:
Քո բոլոր կոհակներն ու ալիքներն անցան իմ վրայով:
9 Ցերեկը Տէրն իր ողորմութիւնը հաստատեց.
գիշերը՝ նոր օրհներգութիւն.
ես աղօթում եմ Աստծուն իմ կեանքի համար:
10 Աստծուն ասացի. «Ինձ ընդունողը դու ես, ինչո՞ւ մերժեցիր ինձ,
ինչո՞ւ տխուր լինեմ թշնամուս հալածանքի ժամանակ»:
11 Երբ ոսկորներս փշրուեցին,
թշնամիներն իմ նախատեցին ինձ՝
ամէն օր ասելով. «Քո Աստուածն ո՞ւր է»:
12 Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ,
կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում.
յոյսդ դի՛ր Աստծու վրայ, օրհներգի՛ր նրան,
իմ անձը փրկողն Աստուած է:

42 *Սաղմոս Դաւթի*
1 Դատի՛ր ինձ, Աստուա՛ծ,
եւ դատաստանիս ժամին արդարացրո՛ւ ինձ:
Անսուրբ ազգից, մեղսագործ ու նենգ մարդուց փրկի՛ր ինձ:
2 Դու ինձ ուժ տուողն ես, Աստուա՛ծ,
ինչո՞ւ ինձ մոռացար,
ինչո՞ւ տխուր լինեմ,
երբ թշնամիս ինձ հալածի:
3 Առաքի՛ր, Տէ՛ր, քո լոյսն ու ճշմարտութիւնը,
որ ինձ առաջնորդեն եւ հասցնեն քո սուրբ լեռն ու օթեւանը:
4 Ես կը մօտենամ Աստծու սեղանին,
Աստծուն, որ երջանկացնում է իմ երիտասարդութիւնը:
Գոհութիւն կը մատուցեմ քեզ օրհներգերով,
Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ:
5 Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ,
կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում,
յոյսդ դի՛ր Աստծու վրայ, օրհներգի՛ր նրան,
նա իմ փրկիչ Աստուածն է:

ԱՂՕԹՔ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

43 1 *Այսուհետեւ՝ Կորխի որդիների իմաստութիւնը.*
սաղմոս Դաւթի
2 Աստուա՛ծ, մեր ականջներով լսեցինք,

մեր հայրերը մեզ պատմեցին այն գործը,
որ կատարեցիր նրանց օրերում՝ հին օրերում:
3 Քո ձեռքն արմատախիլ արեց հեթանոսներին,
եւ նրանց փոխարէն մե՛զ տնկեցիր,
հաստատեցիր[†].
չարչարեցիր ժողովուրդներին ու արտաքսեցիր նրանց:
4 Նրանք երկիրն իրենց սրով չժառանգեցին,
ոչ էլ իրենց բազուկն էր, որ նրանց փրկեց,
այլ՝ քո աջը, քո բազուկը եւ քո երեսի լոյսը,
քանզի դու բարեհաճ եղար նրանց հանդէպ:
5 Դու ինքդ ես իմ թագաւորն ու իմ Աստուածը,
որ Յակոբի փրկութեան հրամանն արձակեց:
6 Քեզնո՛վ պիտի կործանենք մեր թշնամիներին,
եւ քո անուամբ արհամարհենք մեր դէմ ելնողներին:
7 Յոյսս չեմ դրել իմ աղեղի վրայ,
եւ ոչ էլ սուրս պիտի փրկի ինձ:
8 Այլ դու փրկեցիր մեզ մեր թշնամիներից
եւ մեզ ատողներին ամօթահար արեցիր:
9 Հանապազ Աստուծով պարծենանք
եւ յաւիտեան գոհութիւն մատուցենք նրա անուանը:
10 Սակայն դու մերժեցիր ու խայտառակեցիր մեզ
եւ մեր զօրքերի հետ մարտի չելար, ո՛վ Աստուած:
11 Մեզ յետ մղեցիր մեր թշնամիներից,
եւ մեզ ատողները մեզ կողոպտեցին:
12 Մեզ ոչխարի պէս մորթելու յանձնեցիր
եւ մեզ ցրեցիր հեթանոսների մէջ:
13 Քո ժողովրդին վաճառեցիր ոչինչ գնով,
եւ մեր աղաղակը չափ չունեցաւ:
14 Մեր հարեւանների նախատինքին արժանացրիր մեզ
եւ մեր շուրջը գտնուողների խայտառակ ծաղրուծանակին:
15 Մեզ խաղք դարձրիր հեթանոսների մէջ,
եւ ժողովուրդները գլուխ թափ տուեցին:
16 Ամէն օր իմ նախատինքն առջեւս է,
եւ երեսիս ամօթը պատել է ինձ՝
17 նախատողի ու չարախօսի ձայնից,
թշնամու եւ հալածողի երեսից:
18 Այս ամէնը մեզ վրայ եկաւ,
բայց մենք քեզ չմոռացանք,
չդրժեցինք քո ուխտը,
19 եւ մեր սրտերով յետ չդարձանք քեզանից.
դու չեղեցիր մեր շաւիղը քո ճանապարհից:
20 Տաժանավայրում մեզ ծնկի բերիր,
եւ մահուան ստուերները պատեցին մեզ:
21 Մի՞թէ մոռացե՞լ ենք մեր Աստծու անունը
կամ ձե՞ռք ենք մեկնել օտար աստուածների.
22 չէ՞ որ Աստուած դա կ'իմանայ,
քանի որ նա քննում է գաղտնիքները մեր սրտի:
Մենք ամէն օր զոհւում ենք քեզ համար,
կարծես մորթելու ոչխարներ լինենք:
23 Զարթնի՛ր, ինչո՞ւ ես ննջում, Տէ՛ր.
ելիր եւ մի՛ մերժիր մեզ իսպառ:
24 Ինչո՞ւ ես երեսդ շրջում մեզանից,
մոռանում մեր աղքատութիւնն ու նեղութիւնները:
25 Մեր անձերը մինչեւ գետին կորացան,
եւ մեր մէջքը դիպաւ հողին:
26 Ելի՛ր, Տէ՛ր, օգնի՛ր
եւ փրկի՛ր մեզ յանուն քո անուան:

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳ

44 1 *Այսուհետեւ՝ անցած ժամանակի մասին.*
Կորխի որդիների իմաստութիւնը. օրհնութեան սաղմոս սիրելիի մասին

[†]Գրաբար բնագիրը՝ իսկ նրանց դու տնկեցիր:

2 Սրտիցս քո բարի պատգամներն են բխում,
եւ իմ գործերը պատմում եմ թագաւորին:
Լեզուս նման է արագ գրող դպրի գրչի:
3 Տեսքով գեղեցիկ ես բոլոր մարդկանց որդիներից,
շրթունքներիդդ շնորհք է թափւում.
դրա համար Աստուած օրհնեց քեզ յաւիտեան:
4 Մէջքիդ սո՛ւր կապիր, ո՛վ հզօր,
քո վայելչութեամբ ու գեղեցկութեամբ:
5 Լարի՛ր աղեղդ, ուղղի՛ր եւ թագաւորի՛ր
յանուն ճշմարտութեան, հեզութեան ու արդարութեան,
եւ քո աջը թող սքանչելապէս առաջնորդի քեզ:
6 Քո նետերը սրուած են, ո՛վ հզօր,
ընդդէմ թագաւորի թշնամիների.
եւ ժողովուրդները պիտի ընկնեն ոտքերիդ տակ:
7 Քո գահը յաւիտեանս յաւիտենից է, Աստուա՛ծ.
քո արքայական գաւազանն արդարութեան գաւազան է:
8 Սիրեցիր արդարութիւնն ու ատեցիր անօրէնութիւնը,
դրա համար Աստուած՝ քո՛ Աստուածն օծեց քեզ ուրախութեան իւղով՝
աւելի, քան քո ընկերներին:
9 Քո զգեստներից ու փղոսկրեայ պալատներից
զմուռս, հալուէ եւ կինամոն է բուրում:
10 Արքայադուստրերն ուրախացնում ու պատուում են քեզ:
Թագուհին կանգնած է քո աջից՝
զարդարուած ու պաճուճուած ոսկեհուռ զգեստներով:
11 Դո՛ւստր, լսի՛ր ու տե՛ս,
մօտեցրո՛ւ ականջը քո,
մոռացի՛ր քո ժողովրդին եւ քո հօր տունը,
քանզի թագաւորը ցանկացաւ քո գեղեցկութիւնը:
12 Նա ինքն է քո Տէրը, որին պիտի երկրպագես.
նրան պիտի երկրպագի եւ դուստրը Տիւրոսի,
13 եւ ժողովրդի մեծամեծները պիտի պաշտեն նրան ընծաներով:
14 Արքայադստեր ողջ փառքը իր մէջ է՝
ոսկեհուռ զգեստների զարդարանքի ու պաճուճանքի տակ:
15 Թագաւորի մօտ նրա հետ կոյսեր պիտի տարուեն,
իր ընկերուհիները պիտի տարուեն նրա մօտ:
16 Ցնծութեամբ եւ ուրախութեամբ պիտի բերեն նրանց,
եւ պիտի տարուեն թագաւորի պալատը:
17 Եւ քո հայրերի փոխարէն որդիներ պիտի լինեն քեզ,
որոնց իշխան պիտի կարգես ողջ երկրի վրայ:
18 Քո անունը պիտի յիշուի սերնդից սերունդ.
դրա համար ժողովուրդները քեզ պիտի գովեն յաւիտեան,
եւ յաւիտեանս յաւիտենից:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶ ՀԵՏ է

45 1 *Այսուհետեւ՝ Կորխի որդիների գաղտնիքների մասին*
2 Աստուած ապաւէնն ու զօրութիւնն է մեր
եւ մեր օգնականը մեզ հասած խիստ նեղութիւնների մէջ:
3 Ուստի մենք չենք վախենայ, երբ երկիրը ցնցուի,
եւ լեռները ծովի խորքը տեղափոխուեն:
4 Դղրդացին ու ալեկոծուեցին ջրերը նրա,
լեռները դողացին նրա սաստկութիւնից:
5 Գետերի յորձանքները զուարճացնում են Աստծու քաղաքը.
եւ Բարձրեալը սրբացրել է իր օթեւանը:
6 Աստուած դրա մէջ է, եւ այն չի սասանուի.
Աստուած կ'օգնի դրան վաղորդայնից վաղորդայն:
7 Հեթանոսները խռովուեցին,

ու թագաւորութիւնները հնազանդ եղան.
Բարձրեալը ձայն տուեց, եւ երկիրը երերաց:
8 Մեզ հետ է Զօրութիւնների տէրը,
Յակոբի Աստուածն ապաւէնն է մեր:
9 Եկէք տեսէ՛ք գործերն Աստծու,
որ նշաններ ու զարմանահրաշ գործեր արեց երկրի վրայ:
10 Դադարեցրեց պատերազմը երկրի մի ծայրից մինչեւ միւսը,
աղեղներ փշրեց, զէնքեր խորտակեց
եւ վահանները մատնեց հրի:
11 Շտապեցէ՛ք ու իմացէ՛ք, որ ես Աստուածն եմ.
ես պիտի բարձրացուեմ հեթանոսների մէջ,
պիտի բարձրացուեմ երկրի երեսին:
12 Մեզ հետ է Զօրութիւնների Տէրը,
Յակոբի Աստուածն ապաւէնն է մեր:

ԳԵՐԱԳՈՅՆ ԻՇԽՈՂԸ

46 1 *Այսուհետեւ՝ Կորխի որդիների մասին.*
սաղմոս Դաւթի
2 Բոլո՛ր հեթանոսներ, ծա՛փ զարկէք,
ցնծութեան աղաղակով դիմեցէ՛ք Աստծուն:
3 Տէրը բարձրեալ եւ ահարկու է,
մեծ թագաւոր է ամբողջ երկրի վրայ:
4 Ժողովուրդներին մեզ հնազանդեցրեց,
եւ հեթանոսներին մեր ոտքերի տակ դրեց:
5 Ընտրեց մեզ համար որպէս ժառանգութիւն իրեն՝
Յակոբի վայելչութիւնը, որին նա սիրեց:
6 Աստուած բարձրացաւ օրհնութեամբ,
եւ մեր Տէրը՝ շեփորի ձայնով:
7 Սաղմո՛ս երգեցէք մեր Աստծուն,
սաղմո՛ս երգեցէք մեր թագաւորին,
սաղմո՛ս երգեցէք:
8 Ամբողջ երկրի մեծ թագաւորն Աստուած է,
սաղմո՛ս երգեցէք նրան իմաստութեամբ:
9 Աստուած թագաւորեց հեթանոսների վրայ,
Աստուած բազմեց իր սրբութեան գահին:
10 Ժողովուրդների իշխանները հաւաքուեցին Աբրահամի Աստծու մօտ,
քանզի Աստծու զօրութիւնները շատ բարձրացան երկրից:

ՍԻՈՆՆ ԱՍՏՄՈՒ ՔԱՂԱՔՆ Է

47 1 *Կորխի որդիների երկուշաբթի օրուայ օրհնութեան սաղմոսը*
2 Մեծ է Տէրը եւ յոյժ օրհնեալ
մեր Աստծու քաղաքում,
իր սուրբ լերան վրայ:
3 Մեծ ցնծութեամբ ցնծում է ամբողջ երկիրն հաստատարմատ,
ցնծում են Սիոնի լեռները, հիւսիսային կողմերը,
մեծ թագաւորի քաղաքը:
4 Աստուած յայտնւում է իր տաճարում,
երբ օգնական է դառնում նրանց:
5 Ահա երկրի թագաւորութիւնները հաւաքուեցին
ու միասին եկան անցան:
6 Անձամբ տեսնելով այդ բանը՝ նրանք զարմացան,
խռովուեցին ու սասանուեցին:
7 Այնտեղ դողը բռնեց նրանց
եւ երկունքը, ինչպէս ծննդաբերութեան ժամանակ:
8 Սաստիկ հողմով նա պիտի փշրի նաւերը Թարսիսում:
9 Ինչ որ լսեցինք, այն էլ տեսանք
Զօրութիւնների Տիրոջ քաղաքում՝
մեր Աստծու քաղաքում.
Աստուած դրա հիմքերը գցեց յաւիտեան:
10 Ստացանք ողորմութիւնդ, Աստուա՛ծ, քո ժողովրդի մէջ:
11 Ինչպէս որ անունդ է,
այնպէս էլ օրհնութիւնդ է ողջ տիեզերքում,
եւ քո աջը լի է արդարութեամբ:
12 Տէ՛ր, քո արդարադատութեամբ թող ուրախանայ լեռը Սիոնի
եւ ցնծան դուստրերը Յուդայի երկրի:
13 Պտտուեցէ՛ք Սիոնի շուրջը,
շրջանն արէք նրա եւ պատեցէ՛ք նրա աշտարակները:
14 Թող ձեր սրտերը կապուեն նրա ամրութիւններին,
զննեցէ՛ք նրա բերդերը, որ պատմել կարողանաք մէկ ուրիշ սերնդի:
15 Սա է Աստուածը, մեր Աստուածը յաւիտեանս յաւիտենից, եւ սա պիտի հովուի մեզ մինչեւ յաւիտենութիւն:

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆԸ

48 1 *Այսուհետեւ՝ Կորխի որդիների սաղմոսը*
2 Լսեցէ՛ք այս, համա՛յն ազգեր,
ակա՛նջ դրէք բոլորդ, որ բնակւում էք աշխարհում,
3 երկրածիններ՛ եւ մարդկա՛նց որդիներ,
ե՛ւ մեծամեծներ, ե՛ւ տնանկներ:
4 Բերանս իմաստութիւն պիտի խօսի,
եւ սրտիս խորհուրդը՝ խոհեմութիւն:
5 Առակներին պիտի ականջ դնեմ
եւ օրհներգով պիտի մեկնեմ առակները սկզբից:
6 Ինչո՞ւ արդեօք վախենամ չար օրերին,
երբ կեանքիս անօրէնութիւններն ինձ պաշարեցին:
7 Իրենց կարողութեան վրայ յոյս դնողները
պարծենում են իրենց մեծ հարստութեամբ:
8 Եղբայրն իր եղբօրը չի փրկի,
ոչ էլ մարդը կը փրկի նրան.
նա փրկանք չի տայ Աստծուն,
9 ոչ էլ իր հոգու փրկանքը:
10 Յաւիտեա՛ն ջանք թափի՛ր,
եւ դու կ'ապրես անվերջ
ու ապականութիւն չես տեսնի:
11 Երբ տեսնես, որ իմաստունները մեռնում են,
նրանց հետ կը կորչեն նաեւ անզգամներն ու անմիտները՝
իրենց հարստութիւնը թողնելով օտարներին:
12 Նրանց գերեզմանը յաւիտեան իրենց տունը կը լինի,
եւ սերնդից սերունդ՝ իրենց օթեւանը.
նրանց հողերը կը կոչուեն իրենց անունով:
13 Մարդը պատիւ ունէր՝ եւ չհասկացաւ,
հաւասարուեց անբան անասուններին
ու նմանուեց նրանց:
14 Այս է ճանապարհը նրանց գայթակղութեան,
որին յետոյ իրենց բերանով հաւանութիւն պիտի տան:
15 Ոչխարների պէս դժոխքի պիտի մատնուեն,
ու մահը պիտի հովուի նրանց,
եւ առաւօտեան արդարները պիտի նրանց տիրեն:
Նրանց օգնութիւնը կը սպառուի դժոխքում,
եւ նրանք իրենց փառքը կը կորցնեն:
16 Սակայն երբ դժոխքն ինձ ընդունելու լինի,
Աստուած կը փրկի իմ հոգին:
17 Մի՛ վախեցիր, երբ մարդ հարստանում է,
եւ մեծանում է փառքը նրա տան,
18 քանզի մեռնելիս հետը ոչինչ չի տանի,
եւ նրա տան փառքն իր հետ չի թաղուի:
19 Նրա անձը կ'օրհնուի իր կենդանութեան ժամանակ,
եւ քեզ շնորհակալ կը լինի,
երբ բարիք գործես նրան:
20 Նա կը միանայ իր նախնիների սերնդին,
մինչեւ յաւիտենութիւն լոյսը չի տեսնի:
21 Մարդը պատիւ ունէր՝ եւ չհասկացաւ,
հաւասարուեց անբան անասուններին
ու նմանուեց նրանց:

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՅՏՆԻՈՒՄ Է ԻՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ
ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

49 *Սաղմոս Ասափի*
1 Աստուածների Աստուած Տէրը խօսեց,
ձայն տուեց երկրին արեւելքից մինչեւ արեւմուտք:
2 Սիոնից է նրա մեծ վայելչութիւնն ու փրկութեան գեղեցկութիւնը:

3 Մեր Աստուածը պիտի գայ յայտնապէս,
եւ մեր Աստուածը պիտի չլռի,
Նրա առջեւ հուր պիտի բորբոքուի,
եւ նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ:
4 Նա վերեւից ձայն պիտի տայ երկնքին ու երկրին՝
իր ժողովրդին դատելու համար:
5 Մօտն է հաւաքելու իր սրբերին եւ նրանց,
ովքեր ուխտի զոհ են մատուցում իր սեղանին:
6 Երկինքը պատմելու է նրա արդարութիւնը,
քանզի Աստուած դատաւոր է:
Հանգիստ:
7 Լսի՛ր, իմ ժողովո՛ւրդ, ու ես քեզ կ'ասեմ,
եւ Իսրայէ՛լ՝ քեզ կը վկայեմ,
որ Աստուածը, ք'ո Աստուածը ես եմ:
8 Քո զոհաբերութիւնների համար չէ, որ կշտամբում եմ քեզ,
քանզի ողջակէզներդ միշտ առջեւս են:
9 Քո տնից հորթեր չեմ ընդունում,
ոչ էլ քո հօտից՝ նոխազներ:
10 Իմն են անտառի բոլոր գազանները,
լեռների երէները եւ բոլոր անասունները:
11 Գիտեմ ես երկնքի բոլոր թռչուններին,
եւ դաշտի գեղեցկութիւնն իմն է:
12 Եթէ քաղց զգամ, քեզ բան չեմ ասի,
քանզի իմն է աշխարհն իր ամբողջութեամբ:
13 Ես չեմ ուտում քո հորթերի միսը,
եւ քո նոխազների արիւնը չեմ խմում:
14 Աստծուն օրհնութեան պատարագ մատուցի՛ր
եւ Բարձրեալի առջեւ ուխտդ կատարի՛ր:
15 Քո նեղութեան օրը կանչի՛ր ինձ,
ես կը փրկեմ քեզ, ու դու կը փառաբանես ինձ:
Հանգիստ:
16 Սակայն մեղաւորին Աստուած ասում է.
«Իսկ դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարութիւնը,
կամ բերանդ չես առնում իմ ուխտը:
17 Զէ՞ որ դու ատեցիր իմ խրատը,
մերժեցիր ու անտեսեցիր բերանիս բոլոր խօսքերը:
18 Երբ գողեր էիր տեսնում,
նրանց հետ էիր ընթանում
եւ ընկերակցում շնացողներին:
19 Բերանդ չարութիւն էր տարածում,
եւ լեզուդ նենգութիւն էր նիւթում:
20 Նստած չարախօսում էիր եղբօրդ մասին
եւ մօրդ որդու վրայ զրպարտութիւն բարդում:
21 Այս բոլորն արեցիր, ու ես լուռ մնացի.
դու՝ անօրէնդ, կարծեցիր քո մտքում,
թէ ես էլ կը նմանուեմ քեզ:
Արդ, պիտի յանդիմանեմ քեզ
եւ այս ամէնը առջեւդ դնեմ»:
22 Իմացէ՛ք բոլորդ, որ մոռացել էք Աստծուն.
գուցէ երբեւէ յափշտակուէք տարուէք,
եւ ձեզ փրկող չգտնուի:
23 Օրհնութեան պատարագն ինձ կը փառաւորի.
եւ ճանապարհն այնտեղ է,
ուր ես նրան ցոյց պիտի տամ Աստծու փրկութիւնը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

50 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի.
2 այն ժամանակ, երբ նրա մօտ եկաւ Նաթան մարգարէն, երբ ինքը մերձեցել էր Բերսաբէին
3 Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, քո մեծ ողորմութեամբ
եւ քո գթառատութեամբ ջնջի՛ր իմ յանցանքները:
4 Առաւել եւս լուա՛ ինձ իմ անօրէնութիւնից
եւ իմ մեղքերից մաքրի՛ր ինձ:
5 Իմ անօրէնութիւններն ես ինքս գիտեմ,
եւ մեղքերն իմ միշտ առջեւս են:
6 Քո դէմ միայն մեղանչեցի, Տէ՛ր,
եւ չարիք գործեցի քո առջեւ,

որպէսզի արդար լինես քո խօսքերում,
եւ յաղթող՝ քո դատաստանի մէջ:
7 Անօրէնութեամբ յղիացաւ
եւ մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ:
8 Դու, Տէ՛ր, ճշմարտութիւնը սիրեցիր
եւ քո իմաստութեան անյայտն ու ծածուկն ինձ յայտնեցիր:
9 Ծողի՛ր ինձ սպունգով՝ եւ ես կը մաքրուեմ,
լուա՛ ու ձիւնից ճերմակ կը լինեմ:
10 Ինձ ցնծութիւն եւ ուրախութիւն լսել տո՛ւր,
եւ թող տառապեալ ոսկորներս ցնծան:
11 Երեսդ չո՛ւռ տուր իմ մեղքերից
եւ իմ բոլոր յանցանքները ջնջի՛ր ինձնից:
12 Իմ մէջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստուա՛ծ,
եւ արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում:
13 Մի՛ գցիր ինձ, Տէ՛ր, քո երեսից
եւ սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից:
14 Ինձ փրկութեան ցնծութի՛ւն տուր,
եւ քո տիրական Հոգով հաստատի՛ր ինձ:
15 Անօրէններին կը սովորեցնեմ քո ճանապարհը,
եւ ամբարիշտները քո կողմը կը դառնան:
16 Փրկի՛ր ինձ արիւնից, Աստուա՛ծ,
իմ փրկութեա՛ն Աստուած.
լեզուս թող ցնծայ քո արդարութեամբ:
17 Տէ՛ր, եթէ շրթներս բացես,
բերանն իմ կ'երգի օրհնութիւնը քո:
18 Եթէ ուզէիր՝ պատարագ կը մատուցէինք,
բայց դու ողջակէզներ չես սիրում:
19 Խոնարհ հոգին է պատարագն Աստծու,
մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում:
20 Քո բարեհաճութեամբ բարի՛ք գործիր Սիոնին, Տէ՛ր,
եւ Երուսաղէմի պարիսպները թող կառուցուեն:
21 Այնժամ դու կը հաւանես արդարութեան պատարագները,
եւ, իբրեւ ուխտի զոհեր, քո սեղանին հորթեր կը մատուցեն:

ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆՆ ՈՒ ՇՆՈՐՀՔԸ

51 1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի,
2 այն ժամանակ, երբ Դովեկ Եդոմայեցին եկաւ պատմեց Սաւուղին, թէ ահա Դաւիթն Աքիմելէքի տանն է:
3 Ինչո՞ւ է հզօրը պարծենում չարութեամբ ու անօրէնութեամբ:
4 Գիշեր-ցերեկ նա անիրաւութիւն նիւթեց իր լեզուով,
սուր ածելու նման նենգութիւն գործեց:
5 Բարութիւնից աւելի չարութիւն սիրեց
եւ արդար խօսքից աւելի՝ անօրէնութիւն:
6 Սիրեց նա ամէն տեսակ կործանարար խօսքեր
եւ նենգ լեզուներ:
7 Դրա համար Աստուած կը կործանի նրան իսպառ, կը խլի ու կը հանի նրան իր օթեւանից,
եւ նրա արմատները՝ ողջերի երկրից:
8 Արդարները կը տեսնեն ու կը վախենան
եւ կը ծաղրեն նրան՝ ասելով.
9 «Սա է այն մարդը, որն Աստծու օգնութեանը չապաւինեց,
այլ յոյսը դրեց իր մեծ հարստութեան վրայ
եւ զօրացաւ իր ունայնութեամբ»:
10 Իսկ ես Աստծու տան պտղաբեր ձիթենու նման եմ.
յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից յոյսս դրի Աստծու ողորմութեան վրայ:
11 Քեզ յաւիտեան գոհութիւն պիտի մատուցեմ արածիդ համար
եւ յոյսս պիտի դնեմ քո անուան վրայ,
քանզի բարի ես սրբերիդ հանդէպ:

ՄԱՐԴՈՒ ԱՆԶԳԱՄՈՒԹԻՒՆԸ

52 Այսուհետեւ՝ Մալալէթի մասին, իմաստութիւն Դաւթի
1 Անզգամն ասաց իր սրտում, թէ՝ «Աստուած չկայ»:

2 Ապականուեցին ու պղծուեցին
իրենց անօրէնութեան մէջ,
եւ չկայ մէկը, որ բարութիւն գործի:
3 Աստուած երկնքից նայեց բոլոր
մարդկանց որդիներին՝
տեսնելու, թէ կա՞յ մի իմաստուն,
որ Աստծուն է փնտռում:
4 Բոլորը միասին խոտորուեցին եւ
անպէտք դարձան:
Բարութիւն անող չկայ, չկայ
նոյնիսկ մէկ հոգի:
5 Ինչպէ՞ս չեն գիտակցում բոլոր
նրանք, որ անօրէնութիւն են գործում,
նրանք, որ խժռում են իմ ժո-
ղովրդին իբրեւ կերակրահաց
եւ չեն դիմում Աստծուն:
6 Այնտեղ, ուր երկիւղ չկայ, եր-
կիւղից սարսում են նրանք,
քանզի Աստուած ցրելու է երես-
պաշտների ոսկորները:
Նրանք պիտի խայտառակուեն ու
ամօթահար լինեն,
քանզի Աստուած անարգեց նրանց:
7 Ո՞վ կը տայ Սիոնից Իսրայէլի
փրկութիւնը:
Երբ Տէրն իր ժողովրդին վերա-
դարձնի գերութիւնից,
Յակոբը կը ցնծայ, եւ Իսրայէլն
ուրախ կը լինի:

ՀԱԼԱԾԵԱԼԻ ԱՂԵՐՍԱՆՔԸ

53 1 *Այսուհետեւ՝ Դաւթի իմաստութեան օրհնութիւնը,* 2 *այն ժամանակ, երբ Զիփացիները եկան եւ ասացին Սաւուղին. «Ահա Դաւիթը թաքուն նստած է մեզ մօտ»:*
3 Աստուա՛ծ, քո անունամբ փրկի՛ր
ինձ
եւ քո զօրութեամբ արդա՛ր հանիր
ինձ:
4 Աստուա՛ծ, լսի՛ր իմ աղօթքները,
ակա՛նջ դիր բերանիս խօսքերին:
5 Օտարներն ելան իմ դէմ,
հզօրներն իմ կեանքն ուզեցին
եւ քեզ իրենց աչքում Աստուած
չհամարեցին:
6 Ահա Աստուած իմ օգնականն է,
եւ Տէրը՝ իմ հոգու ապաւէնը:
7 Չարիքը շրջելով թշնամիներիս դէմ՝
քո ճշմարտութեամբ կործանի՛ր
նրանց:
8 Ես իմ բարի կամքով զոհ պիտի
մատուցեմ քեզ, Տէ՛ր,
եւ գոհանամ քո անուամբ, քանի որ
այն բարի է:
9 Իմ ողջ նեղութիւնից փրկեցիր ինձ,
եւ աչքս տեսաւ կորուստը թշնա-
միներիս:

ԱՂՕԹՔԸ ՄԻ ՄԱՐԴՈՒ, ՈՐԻՆ ՀԱԼԱԾԵԼ ԵՆ

54 1 *Այսուհետեւ՝ իմաստութեան օրհնութիւնը, սաղմոս Դաւթի*
2 Ակա՛նջ դիր, Աստուա՛ծ, իմ
աղօթքին,
եւ խնդրանքներս մի՛ անտեսիր:
3 Նայի՛ր ինձ ու լսի՛ր ինձ,
քանզի անձկութեամբ տրտմեցի ու
խռովուեցի:
4 Թշնամու ձայնից եւ մեղսագործի
հալածանքից
նրանք անիրաւութեամբ դէպի ինձ
շրջուեցին,
բարկութեամբ ոխ պահեցին իմ դէմ:
5 Սիրտս խռովուեց իմ մէջ,
եւ մահուան երկիւղն ինձ համակեց:
6 Ահ ու դող ընկաւ վրաս,
եւ խաւարը ծածկեց ինձ:
7 Ասացի. «Մէկն ինձ աղաւնու
թեւեր տար,
որ թռչելով բարձրանայի
8 եւ հեռանալով հանգիստ առնէի
անապատում:
9 Ցոյս ունէի, որ Աստուած ինձ կը
փրկէր կարճամիտ զայրոյթից
եւ փոթորկուող նեղսրտութիւնից:
10 Կորստեան մատնի՛ր, Տէ՛ր,
եւ թող նրանք իրար լեզու չհաս-
կանան,
քանզի անիրաւութիւն եւ հակա-
ռակութիւն տեսայ քաղաքում:
11 Գիշեր-ցերեկ նրա պարիսպների
շուրջը անօրէնութիւն է գործւում,
իսկ դրա ներսում՝ չարիք ու մեղք:
12 Եւ վաշխառութիւնն ու նենգու-
թիւնը չվերացան նրա հրապարակ-
ներից:
13 Եթէ թշնամին լինէր ինձ նա-
խատողը, կը համբերէի,
կամ իմ ատելին լինէր իմ դէմ
մեծախօսողը, կը թաքնուէի նրանից:

14 Այլ դու, մա՛րդ, իմ հաւասարն ես,
իմ առաջնորդն ու ծանօթը:
15 Զէ՞ որ դու էիր քաղցրացնում իմ
ուրախ կերակուրը,
եւ միաբանութեամբ էինք գործում
Աստծու տանը:
16 Մահը նրանց վրայ կը հասնի,
եւ նրանք ողջ-ողջ դժոխք կ'իջնեն,
քանզի իրենց բնակարանում ու
իրենց մէջ չարութիւն կայ:
17 Ես Աստծուն ձայն տուի,
եւ Տէրն ինձ լսեց:
18 Երեկոյեան, առաւօտեան ու կէսօ-
րին պատմեցի ու խօսեցի,
եւ նա իմ ձայնը կը լսի:
19 Նա ինձ խաղաղութեամբ կը փրկի
ինձ մերձեցողներից,
քանզի ուժով յարձակուեցին ինձ
վրայ:
20 Կը լսի եւ կ'ընկճի նրանց Աս-
տուած,
որ կար յաւիտենութիւնից առաջ,
քանզի չեն փոխւում նրանք,
եւ չեն վախենում Աստծուց:
21 Նա մեկնեց իր ձեռքը՝ պատժելու
նրանց.
նրանք պղծել էին Նրա օրէնքները:
22 Բաժանուեցին Նրա երեսի զայ-
րոյթից,
բայց Նա հասաւ նրանց սրտերին:
Զէթից փափուկ էին նրանց խօսքերը,
բայց իրենք կարծես նետեր լինէին:
23 Հոգսդ դի՛ր Տիրոջ վրայ,
ու նա քեզ կը կերակրի
եւ չի թողնի, որ արդարը յաւիտեան
սասանուի:
24 Դու, Աստուա՛ծ, նրանց կ'իջեցնես
ապականութեան փոսը.
արիւնահեղ ու նենգ մարդիկ իրենց
կեանքի օրերի կէսին չեն հասնի.
իսկ ես, Տէ՛ր, յոյս դրի քեզ վրայ:

ԱՂՕԹՔ ԱՍՏՄՈՒՆ ՎԱՏԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

55 1 *Այսուհետեւ՝ ժողովրդի մասին, որը հեռացել էր սրբերից. արձանագիր սաղմոս Դաւթի, երբ այլազգիները նրան բռնել էին Գէթում.*
2 Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ,
քանզի մարդն ինձ կոխոտեց,
ամենօրեայ պատերազմներն ինձ
նեղեցին:
3 Թշնամիներս գիշեր-ցերեկ ինձ
ոտնատակ արին,
եւ շատերն իմ դէմ մարտնչեցին
բարձունքից:
4 Օրը ցերեկով չեմ վախենայ,
քանզի յոյս դրել եմ Տիրոջ վրայ:
5 Աստծու խօսքով պիտի կատարեմ
իմ գովաբանութիւնը.
Աստծու վրայ դրի իմ յոյսը ու չեմ
սոսկալու.
մարդն ինձ ի՞նչ կարող է անել:
6 Ամէն օր խօսքերս անարգեցին,
նրանց չար խորհուրդներն իմ դէմ
եղան:
7 Նրանք պանդուխտ կը լինեն ու
գաղտագողի կը շրջեն:
Նրանք հետապնդում են ինձ,
ինչպէս իմ մահը ցանկացող մարդիկ:
8 Որպէս ոչնչութիւն դու կը մերժես
նրանց,
քո բարկութեամբ հնազանդ կը
դարձնես ժողովուրդներին:
9 Աստուա՛ծ, կեանքս քեզ կը պատ-
մեմ,
արցունքներս առջեւդ կը դնեմ, ինչ-
պէս դու ինձ խոստացար:
10 Թշնամիներս ետ կը դառնան այն
օրը, երբ օգնութեան կանչեմ քեզ.
ահա իմացայ, որ դու իմ Աստուածն
ես:
11 Աստծուն պիտի օրհնեմ իմ բերա-
նով
եւ բառերովս Տիրոջը պիտի գովեմ
իմ խօսքերով:
Աստծու վրայ դրի իմ յոյսը եւ վախ
չունեմ.
մարդն ինձ ի՞նչ կարող է անել:
12 Ինձնից է ուխտն իմ, որ օրհնու-
թեամբ քեզ պիտի մատուցեմ, Աս-
տուա՛ծ:
13 Ինձ փրկեցիր մահուանից,
աչքս՝ արտասուքից, եւ ոտքս՝ գայ-
թակղութիւնից.
ողջերի երկրում ես հաճելի կ'երեւամ
Տիրոջ առջեւ:

ԿԱՆՉՈՒՄ ԵՄ ԲԱՐՁՐԵԱԼ ԱՍՏԾՈՒՆ

56 1 *Այսուհետեւ՝ մի՛ ապականիր.*
արձանագիր Դաւթի, երբ նա Սաուղի երեսից փախել թաքնուել էր
քարայրում
2 *Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ողորմի՛ր ինձ,*
քանզի յոյսս դրի քեզ վրայ.
քո թեւերի հովանուն պիտի ապաւինեմ,
մինչեւ անօրէնութիւնն անցնի:
3 *Աղաղակեցի բարձրեալ Աստծուն՝*
իմ բարերար Աստծուն:
4 *Նա օգնութիւն ուղարկեց երկնքից եւ փրկեց ինձ,*
նախատելի դարձրեց ինձ ոտնահարողներին:
Աստուած իր ողորմութիւնն ու ճշմարտութիւնն ուղարկեց:
5 *Գազանների միջից ազատեց ինձ,*
քանզի ես խռովուած ննջում էի:
Մարդկանց որդիների ատամները զէնք եւ նետ են,
իսկ նրանց լեզուները՝ ինչպէս սուր սուսեր:
6 *Դու երկինք ես բարձրացել, Աստուա՛ծ,*
եւ ողջ աշխարհն է բռնել փառքը քո:
7 *Որոգայթ պատրաստեցին ոտքերիս համար, ընկճեցին ինձ,*
առջեւս փոս փորեցին, բայց նրա մէջ իրե՛նք ընկան:
8 *Պատրաստ է սիրտն իմ, Աստուա՛ծ, պատրաստ է սիրտն իմ՝*
օրհնելու եւ սաղմոսերգելու քեզ իմ փառաբանութեամբ:
9 *Արթնացի՛ր, փա՛ռք իմ,*
արթնացի՛ր սաղմոսներով եւ օրհներգութեամբ,
եւ ես կ'արթնանամ առաւօտեան:
10 *Գոհութիւն կը մատուցեմ քեզ ժողովուրդների մէջ, Տէ՛ր,*
եւ ազգերի մէջ քեզ սաղմոս կ'երգեմ:
11 *Քո ողորմութեան մեծութիւնը հասաւ մինչեւ երկինք,*
եւ քո ճշմարտութիւնը՝ մինչեւ ամպերը:
12 *Դու երկինք ես բարձրացել, Աստուա՛ծ,*
եւ ողջ աշխարհն է բռնել փառքը քո:

ԵՐԿՐԱՅԻՆ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՒՈՐԸ

57 1 *Այսուհետեւ՝ մի՛ ապականիր.*
արձանագիր Դաւթի
2 *Եթէ դուք արդարութեամբ խօսէիք,*
ուղիղ կը լինէին ձեր դատաստանները, մարդկա՛նց որդիներ:
3 *Զէ՞ որ այժմ իսկ ձեր սրտում անօրէնութիւն էք գործում երկրի երեսին,*
եւ ձեր ձեռքերն անիրաւութիւն են նիւթում:
4 *Մեղաւորներն իրենց ծննդեան օրից իսկ խոտորուեցին,*
արգանդից մոլորուեցին եւ սուտ խօսեցին:
5 *Նրանց կատաղութիւնը նման է օձի թոյնի,*
վիշապ օձի թոյնի, որ խցել է իր ականջները,
6 *որպէսզի ճարտար օձահմայի ձայնը չլսի*
եւ դեղ չառնի իմաստուն դեղատուից:
7 *Աստուած պիտի փշրի նրանց ատամներն իրենց բերանում.*
Տէրը կոտրատեց ժանիքներն առիւծների:
8 *Թող նրանք թափուող ջրի պէս անպիտան լինեն:*
Երբ նրանք իրենց աղեղները լարեն,
9 *թող հալուեն մոմի նման ու սպառուեն:*
Հուր թափուեց, եւ նրանք արեւ չտեսան:
10 *Դեռ իրենց փշերը չզգացած՝*
Աստուած նրանց դժնիկի պէս ողջողջ պիտի այրի բարկութեամբ:
11 *Արդարը պիտի ուրախանայ՝ տեսնելով հատուցումը,*
եւ ձեռքերն իր պիտի լուայ մեղաւորի արեան մէջ:
12 *Ու մարդ պիտի ասի, թէ իսկապէս արդարի համար վարձատրութիւն կայ,*
եւ կայ Աստուած, որ երկրի վրայ դատում է նրանց:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

58 1 *Այսուհետեւ՝ մի՛ ապականիր.*
արձանագիր Դաւթի, երբ Սաուղը կօրք ուղարկեց պաշարելու նրա տունը եւ սպանելու նրան. սաղմոս Դաւթի
2 *Աստուա՛ծ, թշնամիներից փրկի՛ր ինձ,*
ազատի՛ր նրանցից, ովքեր ելել են իմ դէմ:
3 *Ինձ փրկի՛ր անօրէնութիւն գործողներից,*
արիւնահեղ մարդկանցից պահպանի՛ր ինձ:
4 *Որսալ ուզեցին ինձ,*
եւ հզօր մարդիկ ինձ վրայ յարձակուեցին:
5 *Ո՛չ մեղք ունեմ եւ ո՛չ յանցանք,*
առանց մեղքի ընթացայ ու արդար եղայ:
6 *Ինձ ընդառա՛ջ ել եւ տե՛ս,*
դո՛ւ, Զօրութիւնների՛ Տէր, Աստուա՛ծ Իսրայէլի:
Նայի՛ր ու այցելի՛ր բոլոր հեթանոսներին
եւ մի՛ ողորմիր բոլոր նրանց, ովքեր անօրէնութիւն են գործում:
7 *Նրանք ետ կը դառնան երեկոյեան,*
քաղց կը զգան շների պէս
եւ քաղաքի շուրջը կը պտտուեն:
8 *Նրանք կը վայրահաչեն իրենց բերանով*
ու կը սրեն շրթերն իրենց:
9 *Իսկ արդ, ո՞վ կը լսի դա.*
դու, Տէ՛ր, կը ծիծաղես նրանց վրայ
եւ կ'արհամարհես բոլոր հեթանոսներին:
10 *Զօրութիւնս քեզնո՛վ կը պահեմ,*
քանզի Աստուած իմ օգնականն է:
11 *Իմ Աստծու ողորմութիւնը կը հանի ինձ,*
եւ իմ Աստուածն ինձ համար ի ցոյց կը հանի թշնամիներիս:
12 *Մի՛ սպանիր նրանց, որ չմոռանան քո ժողովրդին:*
Ցրի՛ր եւ ընկճի՛ր նրանց քո զօրութեամբ,
քանզի դու իմ պաշտպանն ես, Տէ՛ր:
13 *Իրենց բերանի մեղքերի եւ շրթունքների խօսքերի համար*
թող նրանք ընկղմուեն իրենց ամբարտաւանութեան մէջ
եւ անէծքի ու ստութեան մատնուեն:
14 *Բարկութեան ներգործութեամբ թող սպառուեն ու անհետանան:*
Թող իմանան, որ Աստուած տիրում է Յակոբին
ու երկրի բոլոր ծագերին:
15 *Նրանք ետ կը դառնան երեկոյեան,*
քաղց կը զգան շների պէս
եւ քաղաքի շուրջը կը պտտուեն:
16 *Նրանք կը թափառեն ուտելու համար*
եւ, եթէ չկշտանան, կը տրտնջան:
17 *Ես պիտի օրհնաբանեմ քեզ, Տէ՛ր,*
պիտի ցնծամ առաւօտեան քո ողորմութեամբ,
18 *քանզի դո՛ւ եղար իմ պաշտպանն ու ապաստանը*
եւ նեղութեանս օրերի օգնականը:
19 *Քեզ սաղմոս պիտի երգեմ, իմ ապաւէ՛ն Աստուած,*
իմ ողորմութեա՛ն Աստուած:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

59 1 *Այսուհետեւ անցած ժամանակների մասին ուսանելու համար.*
2 *արձանագիր սաղմոս Դաւթի, երբ նա հրի մատնեց Միջագետքն ու Սոբողի Ասորեստանը, իսկ ետ դառնալիս Յովաբն Աղի ձորում կոտորեց տասներկու հազար մարդ:*
3 *Աստուա՛ծ, մեզ լքեցիր ու քարուքանդ արիր,*
բարկացար, բայց պիտի գթաս մեզ:
4 *Ցնցեցիր երկիրն ու խռովութեան մատնեցիր այն,*
բուժի՛ր նրա ստացած հարուածները,
քանզի նա սասանուեց:
5 *Քո ժողովրդին խստութիւն ցոյց տուիր*
եւ մեզ թմրութեան գինի խմեցրիր:
6 *Երկիւղածներիդ նշան դու տուիր,*
որ փրկութիւն գտնեն աղեղից:
7 *Ինչպէս որ քո սիրելիները փրկուեցին,*
այնպէս էլ քո աջով պահպանի՛ր եւ լսի՛ր մեզ:

8 Աստուած խօսեց իր սրբարանից.
«Ես պիտի ցնծամ ու բարձրանալով՝
բաժանեմ Սիւքէմը
եւ վրանների հովիտը չափեմ:
9 Իմն է Գաղաադն ու իմն է Մանասէն,
Եփրեմն իմ գլխի սաղաւարտն է:
10 Ցուդան թագաւորս է,
Մովաբը՝ յոյսիս աւազանը:
Դէպի Եդոմէ պիտի ուղղեմ երթն իմ,
քանզի այլազգիներն ինձ հնազանդուեցին»:
11 Ո՞վ ինձ կը տանի բերդաքաղաք,
կամ ո՞վ ինձ կ'առաջնորդի մինչեւ Եդոմէ,
12 եթէ ոչ դու, Աստուա՛ծ, որ լքեցիր մեզ
եւ մեր զօրքերի հետ չելար, Աստուա՛ծ:
13 Նեղութեան մէջ օգնութիւն ցո՛յց տուր մեզ,
քանզի ունայն է փրկութիւնը մարդու:
14 Աստուծով քաջութիւն կը գործենք,
եւ նա կ'արհամարհի մեզ նեղողներին:

ԱՐՏԱՔՍՈՒԱԾԻ ԱՂՕԹՔԸ

60 1 *Այսուհետեւ՝ օրհնութեամբ սաղմոս Դաւթի*
2 Լսի՛ր, Աստուա՛ծ, աղօթքն իմ,
եւ ո՛ւշ դարձրու, Տէ՛ր, աղօթքիս:
3 Երկրի ծայրերից ես քեզ կանչեցի,
երբ սիրտս յոգնեց:
4 Ժայռից բարձր պահեցիր ինձ,
առաջնորդեցիր ինձ ու եղար իմ յոյսը,
եւ թշնամու դէմ հզօր աշտարակ դարձար ինձ համար:
5 Ես յաւիտեան պիտի բնակուեմ քո խորանում
ու թեւերիդ հովանու տակ պատսպարուեմ:
6 Դու, Աստուա՛ծ, աղօթքս լսեցիր
եւ ժառանգութիւն տուիր քո անունից ակնածողներին:
7 Թագաւորի կեանքի տարիներին օրեր աւելացրիր, օրեր սերնդէ սերունդ:
8 Նա կայ եւ յաւիտեան կը մնայ Աստծու առջեւ.
նաեւ նրանք, որոնք ողորմութիւն ու ճշմարտութիւն կը խնդրեն նրանից:
9 Այսպէս սաղմոս պիտի երգեմ քեզ յաւիտեանս յաւիտենից
եւ օրըստօրէ աղօթք պիտի մատուցեմ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԻԱԿ ՅՈՅՍԸ

61 1 *Այսուհետեւ՝ Իդիթոմի մասին սաղմոս Դաւթի*
2 Միայն Աստծո՛ւն հնազանդ եղիր, հոգի՛ իմ,
քանզի նրանից է փրկութիւնս:
3 Նա է Աստուածն իմ ու փրկիչն իմ,
ապաւէնն իմ, որ էլ չսասանուեմ:
4 Մինչեւ ե՞րբ ամէնքդ պիտի յարձակուէք մարդու վրայ՝
կործանելու նրան թեքուած պարսպի ու խախտուած ցանկապատի պէս:
5 Նրանք ինձ պատուից զրկելու մասին էին մտածում միայն՝
տոչորուելով նախանձից:
Իրենց բերանով օրհնում էին,
բայց իրենց սրտով անիծում:
6 Սակայն իմ հոգին հնազանդ կը մնայ Աստծուն,
քանզի նրանի՛ց է իմ համբերութիւնը:
7 Նա է Աստուածն իմ ու փրկիչն իմ,
ապաւէնն իմ, որ չսասանուեմ:
8 Աստծուց է զօրութիւնն ու փառքն իմ,
Աստուած է օգնականն իմ
եւ Աստծու վրայ է յոյսն իմ:
9 Ձեր յոյսը դրէ՛ք նրա վրայ, ժողովուրդների ո՛ղջ բազմութիւններ,
բացէ՛ք նրա առջեւ սրտերը ձեր,
քանզի Աստուած օգնականն է մեր յաւիտեանս յաւիտենից:
Հանգիստ:
10 Սակայն ունայն են մարդկանց որդիները,
սուտ են որդիները մարդկանց,
իրենց կշռով անարդար են
եւ իրենք ամէնքն էլ ունայնութեան մէջ են:
11 Ցոյս մի՛ դրէք անիրաւութեան վրայ,

յափշտակութիւն մի՛ ցանկանաք,
եթէ հարստութիւնն առուի պէս իսկ հոսի,
թող ձեր սրտերը չցանկանան:
12 Մի անգամ խօսեց Աստուած,
եւ երկու անգամ լսեցինք այս բանը:
13 Աստծունն է զօրութիւնը,
եւ քոնն է, Տէ՛ր, ողորմութիւնը,
դու ես հատուցում իւրաքանչիւրին ըստ իր գործերի:

ԱՍՏՈՒԾՈՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔԻՑ ԷԼ ԹԱՆԿ Է

62 1 *Սաղմոս Դաւթի, մինչ նա գտնուում էր Հրէաստանի անապատում*
2 Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ,
ես առաւօտից քեզ եմ դիմում.
հոգիս ծարաւ է քեզ, առաւել եւս մարմինն իմ,
3 ինչպէս մի անապատ եւ անջուր երկիր,
ուր ճամփայ չկայ:
Այդպէս էլ պիտի երեւամ քո սրբարանում՝
տեսնելու փառքդ եւ զօրութիւնդ,
4 քանզի ինձ համար քո ողորմութիւնն աւելի լաւ է, քան կեանքս,
եւ շրթունքներն իմ պիտի գովեն քեզ:
5 Այսպէս իմ կեանքում քեզ պիտի օրհնեմ
եւ քո անունով ձեռքս բարձրացնեմ:
6 Ասես պարարտ ճարպով պիտի յագենայ իմ հոգին,
եւ բերանս ցնծալից շրթունքներով քե՛զ պիտի օրհնի:
7 Երբ քեզ յիշում էի իմ անկողնում,
առաւօտեան կանուխ խօսում էի քեզ հետ:
8 Քանի որ դո՛ւ եղար իմ օգնականը,
քո թեւերի հովանու տակ ես պիտի ցնծամ:
9 Քեզ հետեւեց իմ հոգին,
եւ աջդ ընդունեց ինձ:
10 Նրանք, որ ինձ իզուր հետապնդեցին,
թող երկրի անդունդների խորքը մտնեն:
11 Թող սրի մատնուեն նրանք եւ աղուէսների բաժին դառնան:
12 Թագաւորը յոյսը դրեց Տիրոջ վրայ.
թող պարծենան բոլոր նրանք, որ երդւում են նրանով.
թող խցուեն բերանները նրանց, ովքեր անիրաւութիւն են խօսում:

ՋՐՊԱՐՏՈՂՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

63 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
2 Աստուա՛ծ, երբ աղաչեմ քեզ, աղօթքս լսի՛ր,
թշնամու սարսափից փրկի՛ր ինձ:
3 Թաքցրո՛ւ ինձ չարագործների ամբոխից
եւ անօրէնութիւն գործողների բազմութիւնից:
4 Նրանք սուսերի պէս սրեցին իրենց լեզուները
եւ իրենց աղեղները լարեցին դառն գործի համար,
5 որպէսզի գաղտագողի նետահարեն սրտով չիտակներին,
յանկարծակի նետահարեն նրանց առանց երկիւղի:
6 Նրանք զօրացան իրենց չարախօսութեամբ,
մտածեցին իմ դէմ որոգայթ լարել
եւ ասացին. «Տէրը դա չի տեսնի»:
7 Անօրէնութիւն փնտռեցին,
յոգնեցին փնտռելուց ու քննելուց:
8 Թող մարդ մերձենայ իր սրտի խորութեամբ,
եւ Աստուած թող բարձր լինի:
9 Մանուկների նետարձակումները խոցեցին նրանց,
նրանց լեզուները տկարացան,
եւ բոլոր նրանց տեսնողները պիտի խռովուեն:
10 Բոլոր մարդիկ վախեցան ու պատմեցին Աստծու գործերը
եւ հասու եղան նրա արածներին:
11 Արդարը պիտի ուրախանայ Տիրոջով՝
յոյսը դնելով նրա վրայ.
սրտով չիտակ բոլոր մարդիկ պիտի պարծենան նրանով:

ԱՍՏՈՒԱԾ ԱՐԾԱՆԻ Է ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

64 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի. Երեմիայի, Եզեկիէլի եւ ժողովրդի օրհնութիւնը, երբ ուղում էին վերադառնալ պանդխտութիւնից*

2 Աստուա՛ծ, քեզ վայել է օրհ-
նութիւն Սիոնում,
եւ քեզ աղօթք պիտի մատուցուի
Երուսաղէմում:
3 Լսի՛ր աղօթքս,
քանզի քեզ մօտ է գալու ամէն
մարմին:
4 Անօրէնների խօսքերը ծանրացան
մեզ վրայ,
դո՛ւ պիտի քաւութիւն տաս մեր
ամբարշտութիւններին:
5 Երանի նրանց, որոնց ընտրեցիր ու
ընդունեցիր,
որ բնակուեն քո գաւիթներում:
Մենք պիտի յագենանք քո տան
բարիքներից,
սուրբ է քո տաճարը:
6 Սքանչելի արդարութեամբ լսի՛ր
մեզ, Աստուա՛ծ, փրկի՛չ մեր՝
յոյսը երկրի բոլոր ծագերի եւ
հեռաւոր ծովաբնակների:
7 Նա, որ իր կարողութեամբ լեռներ
է հաստատում
եւ զօրութիւն է հագել:
8 Նա, որ ալեկոծում է ծովի ընդար-
ձակութիւնը
եւ ցածրացնում նրա ալիքների
ձայնը:
9 Հեթանոսները պիտի խռովուեն,
եւ երկրի բնակիչները պիտի սար-
սափեն քո նշաններից,
այգաբացին ու երեկոյեան պիտի
զուարճանան:
10 Նայեցիր երկրին, ջրով յագեցրիր
այն
եւ բազմացրիր նրա հարստութիւնը:
Աստծու գետը լցուեց ջրով.
դու պատրաստեցիր նրա կերակուրը,
քանզի այսպէս է պատրաստու-
թիւնը.
11 դու ոռոգեցիր նրա ակօսն ու
բազմացրիր նրա արմտիքը,
քո ցօղը զուարթ պիտի դարձնի նրա
բոյսը:
12 Տարուայ պսակը պիտի օրհնուի
քո քաղցրութեամբ,
դաշտերդ պարարտութեամբ պիտի
լցուեն:
13 Անապատի գեղեցկութիւնները
պիտի փթթեն,
բլուրները ցնծութեամբ պիտի
զգեստաւորուեն:
14 Մաքիների խոյերը պիտի զու-
գուեն,
հովիտներն առատ ցորեն պիտի
բերեն,
պիտի ցնծան ու օրհներգեն:

ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՓՐԿԻՉ ԱՍՏՎՈՒՆ

65 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի. յարութեան մասին*

2 Աղաղակեցէ՛ք Աստծուն, բոլո՛ր
երկրներ,
սաղմո՛ս երգեցէք նրա անունը
եւ փա՛ռք տուէք նրա օրհնութեանը:
3 Ասացէ՛ք Աստծուն. «Որքա՜ն ահեղ
են քո գործերը.
ի տես քո մեծ զօրութեան
քո թշնամիները ստեցին քո դէմ:
4 Ողջ աշխարհը պիտի երկրպագի
քեզ,
սաղմոս պիտի երգի քեզ
ու քո անունը սաղմոս ձօնի»:
5 Եկէ՛ք եւ տեսէ՛ք գործերն Աստծու,
թէ որքան ահեղ են խորհուրդներով՝
քան գործերը մարդկանց բոլոր
որդիների:
6 Նա էր, որ ծովը ցամաք դարձրեց,
եւ մարդիկ ոտքով անցան գետի
միջով:
7 Ահա պիտի ցնծանք նրանով,
որ յաւէտ տիրում է իր զօրութեամբ:
Նրա աչքերը նայում են հեթա-
նոսներին,
որոնք դառնացրին իրեն.
թող նրանք չպարծենան իրենց
հոգում:
8 Օրհնեցէ՛ք, հեթանոսնե՛ր, մեր
Աստծուն
եւ լսելի՛ դարձրէք նրա օրհնութեան
ձայնը:
9 Նա իմ հոգին դարձրեց կեանքին
եւ թոյլ չտուեց, որ ոտքերս դողան:
10 Քննեցիր մեզ, Աստուա՛ծ, ու
փորձեցիր,

ինչպէս արծաթն է փորձւում:
11 Մեզ որոգայթի մէջ գցեցիր,
նեղութիւն դրիր մեր թիկունքին,
12 եւ մարդկանց անցկացրիր մեր
գլխի վրայով:
Մենք անցանք հրի ու ջրի միջով,
բայց դու մեզ անդորր տուիր:
13 Զոհաբերութիւններով պիտի
մտնեմ տունը քո
եւ քեզ պիտի հատուցեմ իմ
ուխտերը,
14 որ խոստացան քեզ իմ շրթունք-
ները,
եւ բերանն իմ խօսեց նեղութեան
մէջ:
15 Պարարտ ողջակէզներ պիտի մա-
տուցեմ քեզ՝ խոյերով ու խնկերով,
քեզ պիտի մատուցեմ արջառներ ու
նոխազներ:
16 Եկէ՛ք ու լսեցէ՛ք ինձ, Աստծու
բոլո՛ր երկիւղածներ,
որ ձեզ պատմեմ, թէ ինչ արեց նա
իմ անձի համար:
17 Ես նրան դիմեցի իմ բերանով,
եւ լեզուովս մեծարեցի նրան:
18 Եթէ սրտումս մեղք տեսնէի,
Տէրն ինձ չէր ունկնդրի:
19 Դրա համար Աստուած լսեց ինձ
եւ ուշ դարձրեց իմ խնդրանքի
ձայնին:
20 Օրհնեալ է Աստուած, որ չվանեց
աղօթքն իմ,
ոչ էլ ողորմութիւնն իր՝ ինձնից:

ԹՈՂ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐՆ ՕՐՀՆԵՐԳԵՆ ԱՍՏՎՈՒՆ

66 1 *Այսուհետեւ՝ Դաւթի օրհնութեան սաղմոսը.*

2 Աստուա՛ծ, ողորմի՛ր մեզ եւ օրհ-
նի՛ր,
ցո՛յց տուր երեսդ եւ գթա՛ մեզ,
3 որպէսզի երկրի վրայ ճանաչեն
ճանապարհը քո,
եւ բոլոր ազգերի մէջ՝ փրկութիւնը
քո:
4 Ժողովուրդները քեզ գոհութիւն
պիտի մատուցեն, Աստուա՛ծ,
գոհութիւն պիտի մատուցեն քեզ
բոլոր ժողովուրդները:
5 Պիտի ուրախանան ու ցնծան ազ-
գերը,
քանզի դու արդարութեամբ ես
դատում ժողովուրդներին
եւ երկրի ազգերին դու ես առաջ-
նորդում:
6 Թող ժողովուրդները քեզ օրհնա-
բանեն, Աստուա՛ծ,
թող գոհութիւն մատուցեն քեզ
բոլոր ժողովուրդները:
7 Երկիրը տուեց իր պտուղը,
եւ Աստուած, Աստուածը մեր, օրհ-
նեց մեզ:
8 Մեր Աստուածը պիտի օրհնի մեզ,
եւ երկրի բոլոր ծագերում պիտի
սոսկան նրանից:

ԻՍՐԱՅԵԼԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ

67 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*

2 Թող ելնի Աստուած,
նրա բոլոր թշնամիները թող ցրուեն,
ու նրան ատողները փախչեն իր
առջեւից:
3 Ինչպէս ծուխն է ցնդում, այնպէս
պիտի անհետանան նրանք.
ինչպէս մոմն է հալւում կրակի
դիմաց,
այնպէս էլ մեղաւորները պիտի կոր-
չեն Աստծու երեսից:
4 Արդարները թող ուրախ լինեն,
թող ցնծան նրա առջեւ
եւ զուարճանան իրենց ուրախու-
թեամբ:
5 Օրհնեցէ՛ք Աստծուն, սաղմո՛ս եր-
գեցէք նրա անունը,
ճանապա՛րհ տուէք նրան, ով
նստում է արեւմուտքում.
եւ Տէր է անունը նրա:
Թող մարդիկ ցնծան նրա առջեւ,
եւ թող խռովուեն նրա երեսից,
6 որ հայրն է որբերի ու դատաւորն
այրիների՝
Աստուած իր սուրբ բնակարանում:
7 Աստուած բնակեցնում է միայ-
նակներին տան մէջ
եւ իր քաջութեամբ ազատում գե-
րեալներին
ու դառնացած գերեզմանաբնակ-
ներին:
8 Աստուա՛ծ, երբ քայլեցիր քո
ժողովրդի առջեւից,
երբ անցար անապատով,

9 ցնցուեց երկիրը, եւ երկինքը ցօղ
թափեց Սինայում՝ Աստծու շնորհիւ,
Իսրայէլի Աստծու առջեւ:
10 Ցանկալի անձրեւ պատրաստեցիր,
Աստուա՛ծ, քո ժառանգութեան համար,
որը թէեւ տկարացաւ,
բայց դու ոտքի կանգնեցրիր նրան:
11 Եւ քո ժողովուրդը պիտի բնակուի
նրա մէջ:
Աստուա՛ծ, քո քաղցրութեամբ
պատրաստութիւն տեսար աղքատի
համար:
12 Տէրը պատգամ պիտի տայ նրանց,
ովքեր մեծ զօրութեամբ աւետիս են
տալիս:
13 Սիրելիդ զօրքերի թագաւո՛ր,
քո տան գեղեցկութիւնը մատնուեց
աւարի:
14 Թէկուզեւ ննջէք կալուածքների
մէջ,
արծաթապատ թեւերով եւ ոսկեգոյն
թիկնամէջով աղաւնի կը լինէք:
15 Երբ երկնաւորը թագաւորներին
հաւաքի այնտեղ,
նրանք ձեան պէս կը թափուեն
Սաղմոնի լերան վրայ:
16 Աստծու լեռը պարարտ լեռ է,
հաստատուն լեռ եւ պարարտ լեռ:
17 Ո՛վ հպարտ լեռներ, ի՞նչ էք
նախանձում այն լերանը,
որտեղ բարեհաճեց բնակուել Աստուած,
եւ Տէրն իսկ բնակուելու է այնտեղ
յաւիտեան:
18 Աստծու կառքերը բիւրապատիկ
են՝ հազարաւոր կառավարներով,
որոնց մէջ է Տէրն իր սուրբ
Սինայից:
19 Նա ելաւ բարձունքներն ու գերեվարեց գերիներին.
աւար առաւ, պարգեւներ բաշխեց ու
տուեց մարդկանց որդիներին,
որ թերահաւատներն անգամ բնակուեն այնտեղ:
20 Օրհնեալ է Տէր Աստուածը,
օրհնեալ է Տէրն ամէն օր.
Աստուած՝ փրկիչը մեր, պիտի
առաջնորդի մեզ:
21 Աստուած մեր կենարար Աստուածն է,
եւ Տիրոջ ձեռքում է ելքը մահուան:
22 Սակայն Աստուած պիտի փշրի
մեր թշնամիների գլուխը
եւ կարճամազ պիտի պահի նրանց,
ովքեր ընթանում են իրենց անօրէնութեամբ:
23 Տէրն ասաց. «Անդունդների խորքից ես պիտի վերադարձնեմ
եւ ժանիքների միջից դուրս կորզեմ
նրան:
24 Այնպէս որ ոտքդ արեան մէջ
թրջուի,
եւ քո շների լեզուները թրջուեն
թշնամիներիդ արիւնից»:
25 Երեւաց քո երթն, Աստուա՛ծ,
Աստծու՝ մեր սուրբ թագաւորի
երթը:
26 Իշխաններն առաջ անցան օրհնութիւն մատուցելու
կոյսերի եւ գովերգուների մէջ:
27 Խմբովին օրհնեցէ՛ք Աստծուն,
Տիրոջը՝ Իսրայէլի աղբիւրների կողմից:
28 Այնտեղ են Բենիամին զարմանահրաշ մանուկը,
Ցուդայի երկրի առաջնորդ իշխանները
եւ Զաբուղոնի ու Նեփթալիմի իշխանները:
29 Հրամայի՛ր, Աստուա՛ծ, քո զօրութեամբ,
զօրացրո՛ւ այն, ինչ հաստատեցիր
մեր մէջ:
30 Երուսաղէմի քո տաճարից թագաւորները թող ընծաներ մատուցեն:
31 Սաստի՛ր եղէգնուտի գազանին՝
ցուլերի ու երինջների երամակներով
հանդերձ:
Թող արհամարհուեն նրանք, ովքեր
ընտրուել են արծաթով:
Ցրի՛ր հեթանոսներին ու պատերազմ
կամեցողներին:
32 Եգիպտոսից պատգամաւորներ
պիտի գան,
եւ Հնդիկներն աւելի առաջ ձեռք
պիտի մեկնեն Աստծուն:
33 Աշխարհի՛ թագաւորութիւններ,
օրհնեցէ՛ք Աստծուն,
եւ սաղմո՛ս երգեցէք Տիրոջը:
34 Ճանապա՛րհ բացէք նրա համար,
ով նստում է երկինքների երկնքում,
արեւելեան կողմում:
Ահա նա ձայն պիտի տայ, ձայնն իր
զօրութեան:
35 Փա՛ռք տուէք Աստծուն.
նրա մեծ վայելչութիւնն Իսրայէլի
վրայ է,
իսկ զօրութիւնը հասնում է մինչեւ
երկնքի ամպերը:
36 Սքանչելի է Աստուած իր սրբերի
մէջ.
նա Աստուածն է Իսրայէլի,
որ իր ժողովրդին հաստատ զօրութիւն պիտի տայ.
օրհնեալ է Աստուած:

ՍԷՐ ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԴԷՊ

68

1 *Այսուհետեւ՝ անցած ժամանակների մասին սաղմոս Դաւթի*
2 Փրկի՛ր ինձ, Աստուա՛ծ,
քանզի ջրերը հասան իմ անձին,
ես ընկղմուեցի խոր անդնդի մէջ,
որտեղ ինձ համար հանգիստ չկայ:
3 Մտայ ես խորքերը ծովի,
եւ յորձանքներն ինձ ընկղմեցին:
4 Ես յոգնեցի աղաղակելուց, կոկորդն իմ կերկերաց,
եւ աչքերս նուաղեցին քեզ վրայ
յոյս դնելուց, Տէ՛ր իմ Աստուած:
5 Գլխիս մազերից շատ եղան նրանք,
ովքեր յանիրաւի ատում էին ինձ,
թշնամիներս եւ ինձ իզուր ատողները զօրացան ինձնից աւելի,
իմ չյափշտակած բաների համար ես
վճարեցի նրանց:
6 Աստուա՛ծ, դու իմացար անմտութիւնն իմ,
եւ յանցանքներս չծածկուեցին քեզնից:
7 Թող իմ պատճառով չամաչեն քեզ
սպասողները,
Տէ՛ր, զօրութիւնների՛ Տէր.
Թող իմ պատճառով չամաչեն քեզ
փնտռողները, Աստուա՛ծ Իսրայէլի:
8 Քեզ համար նախատինք հանդուրժեցի,
եւ ամօթը ծածկեց երեսն իմ:
9 Եղբայրներիս համար ես օտար
եղայ,
եւ մօրս որդիների համար՝ հիւր:
10 Քո տան նախանձախնդրութիւնն
ինձ կերաւ,
եւ նախատողներիդ նախատինքն
ընկաւ ինձ վրայ:
11 Ծոմապահութեամբ խոնարհեցրի
ինձ,
եւ դա ինձ համար նախատինք
եղաւ:
12 Քուրձն ինձ հագուստ դարձրի,
եւ նրանց համար ծաղրուծանակի
առարկայ եղայ:
13 Ինձ չարախօսում էին դռանը
նստողները,
գինի խմողները ծաղրում էին ինձ:
14 Ընդունելի ժամին ես աղօթում էի
քեզ, Տէ՛ր:
Լսի՛ր ինձ, Աստուա՛ծ, քո առատ
ողորմութեամբ,
քո փրկութեան ճշմարտութեամբ:
15 Ազատի՛ր ինձ ցեխից, որ չխրուեմ
եւ փրկուեմ իմ ատելիներից ու խոր
ջրերից:
16 Ջրերի յորձանքները թող չկլանեն
ինձ,
եւ անդունդներն ինձ թող
չընկղմեն,
ոչ էլ ջրհորն ինձ վրայ բերանն իր
փակի:
17 Լսի՛ր ինձ, Տէ՛ր,
քանզի քաղցր է ողորմութիւնը քո,
նայի՛ր ինձ քո գթառատութեամբ:
18 Եւ մի՛ շրջիր երեսդ քո ծառայից,
փութով լսի՛ր ինձ,
քանզի նեղութեան մէջ եմ ես:
19 Հայեացքդ դարձրո՛ւ ինձ վրայ ու
փրկի՛ր ինձ,
եւ իմ թշնամիներից ինձ պահպանի՛ր:
20 Դու գիտես իմ կրած նախատինքն
ու ամօթը եւ խայտառակութիւնն իմ:
21 Քո առջեւ են բոլոր ինձ նեղողները:
Սիրտս համբերեց նախատինքների
եւ թշուառութեան:
Սպասում էի, թէ ո՞վ ինձ արդեօք
պիտի վշտակցէր,
բայց ոչ ոք չկար,
եւ ինձ համար մխիթարիչ
չգտնուեց:
22 Կերակրի տեղ ինձ լեղի տուին,
եւ ծարաւելիս քացախ խմեցրին:
23 Թող նրանց սեղաններն իրենց

առջեւ դառնան որոգայթ,
պատիժ ու գայթակղութիւն:
24 Թող նրանց աչքերը խաւարեն,
որպէսզի չտեսնեն,
եւ նրանց թիկունքը միշտ ծռա՛ծ պահիր:
25 Նրանց վրայ թափի՛ր քո զայրոյթը,
եւ քո բարկութեան սաստկութիւնը թող հարուածի նրանց:
26 Նրանց բնակավայրերը թող աւերակ դառնան,
եւ նրանց յարկերի տակ ոչ ոք չապրի.
27 քանզի ում որ դու հարուածեցիր՝ նրանք հալածեցին,
եւ իմ վէրքերին ցաւեր աւելացրին:
28 Նրանց մեղքերին մեղքե՛ր գումարիր,
որպէսզի մուտք չունենան քո արդարութեան մէջ:
29 Թող նրանք ջնջուեն կեանքի քո մատեանից,
եւ քո արդարների շարքում չարձանագրուեն:
30 Աղքատ ու վշտացած եմ ես. թող քո պարգեւած փրկութիւնն, Աստուա՛ծ, ինձ բռնած պահի:
31 Օրհնութեամբ պիտի օրհնեմ անունն իմ Աստծու,
եւ գովաբանութեամբ պիտի մեծարեմ նրան:
32 Դա հաճելի կը լինի Աստծուն՝ մատաղացու հորթից աւելի,
որ եղջիւրներ ու կճղակներ ունի:
33 Աղքատները կը տեսնեն ու կ'ուրախանան.
փնտռեցէ՛ք Աստծուն, եւ ձեր հոգիները կը փրկուեն,
34 քանզի Տէրը լսեց տնանկներին,
եւ իր գերեալներին չարհամարհեց:
35 Թող նրան օրհնեն երկինքն ու երկիրը
եւ ծովն իր մէջ վխտացող բոլոր կենդանի էակներով:
36 Աստուած կը փրկի Սիոնը,
եւ Հրէաստանի քաղաքները կը ծաղկեն:
Մարդիկ կը կառուցեն, կը բնակեցնեն ու կը ժառանգեն այն:
37 Քո ծառաների սերունդները կը հաստատուեն այնտեղ,
եւ քո անունը սիրողները կը բնակուեն նրա մէջ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

69 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի ի յիշատակ այն բանի, որ Տէրը փրկեց նրան*
2 Աստուա՛ծ, ինձ օգնութեա՛ն հասիր.
Տէ՛ր, փութա՛ ընկերակցել ինձ:
3 Թող խայտառակուեն ու ամօթահար լինեն ինձ հետապնդողները,
թող ետ դառնան ու անարգուեն իմ մասին չար խորհողները:
4 Թող խայտառակուած ընկրկեն նրանք,
ովքեր ինձ վա՛շ վա՛շ էին ասում:
5 Թող ցնծան եւ քեզնով ուրախանան բոլոր նրանք,
ովքեր փնտռում են քեզ, Տէ՛ր:
Քո պարգեւած փրկութիւնը սիրողները
թող միշտ ասեն. «Մե՛ծ է Աստուած»:
6 Ես աղքատ եւ տնանկ եմ, Աստուա՛ծ, օգնի՛ր ինձ.
օգնականն ու փրկիչն իմ դո՛ւ ես.
Տէ՛ր իմ, մի՛ ուշացիր:

ԾԵՐՈՒՆՈՒ ԱՂՕԹՔԸ

70 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի, Յոնադաբի որդիներից եւ առաջին գերութիւնից*
2 Տէ՛ր, յոյսս քեզ վրայ դրի,
թող յաւէտ ամօթով չմնամ,
քո արդարութեամբ ինձ փրկի՛ր ու պահպանի՛ր:
Ականջդ մօտեցրո՛ւ ինձ եւ ազատի՛ր ինձ:
3 Ինձ համար ապաւէն եւ ամուր վա՛յր եղիր, Աստուա՛ծ, որ ինձ փրկես,
քանզի իմ հիմքն ու յենարանը դու ես:
4 Աստուա՛ծ իմ, փրկի՛ր ինձ մեղաւորի ձեռքից,
անօրէնի եւ անիրաւի ձեռքից:
5 Դու ես իմ ակնկալութիւնը, Տէ՛ր.
Տէ՛ր, դո՛ւ ես իմ յոյսը մանկութիւնից ի վեր:

6 Քե՛զ կռուան ունեցայ ես արգանդից,
մօրս որովայնից դո՛ւ ես իմ ապաւէնը,
եւ յարաժամ քեզնի՛ց է իմ օգնութիւնը:
7 Ես շատերի համար ծաղր դարձայ,
բայց դու իմ օգնականն ու քաջալերողը եղար:
8 Բերանս թող գովաբանութեամբ լցուի,
որ օրհնեմ փառքը քո
եւ յաւիտեան՝ քո մեծ վայելչութիւնը:
9 Մերութեան ժամանակ ինձ մի՛ վանիր, Տէ՛ր.
երբ ուժս պակասի՝ դու ինձ մի՛ լքիր:
10 Թշնամիներս իմ մասին խօսեցին
եւ ինձ պաշարողները միասին խորհուրդ արեցին ու ասացին.
11 «Աստուա՛ծ լքել է նրան, հալածենք նրան ու հասնենք նրա վրայ,
քանզի չկայ մէկը, որ նրան փրկի»:
12 Աստուա՛ծ իմ, հեռու մի՛ մնա ինձնից,
եւ ինձ օգնութեա՛ն հասիր, Աստուա՛ծ:
13 Թող ամաչեն ու կորստեան մատնուեն ինձ չարախօսողները,
թող ամօթանք ու խայտառակութիւն կրեն իմ դէմ չար խորհողները:
14 Ես յարաժամ պիտի յուսամ
եւ աւելի ու աւելի պիտի օրհնեմ քեզ:
15 Բերանս պիտի պատմի քո արդարութիւնն ու ամէն օր՝ քո գովքը,
եւ ես մատեանում արձանագրուած դրանց թիւը չպիտի խարդախեմ:
16 Ես պիտի մտնեմ Տիրոջ զօրութեան տակ
եւ պիտի յիշեմ քո արդարութիւնը միայն, Տէ՛ր:
17 Աստուա՛ծ իմ, ինձ սովորեցրիր մանկութիւնից ի վեր,
եւ այժմ էլ քո արդարութիւնը պիտի պատմեմ:
18 Մինչեւ իմ ալեւորութիւնն ու ծերութիւնը
ինձ մի՛ լքիր, Աստուա՛ծ իմ,
մինչեւ որ գալիք բոլոր սերունդներին պատմուի ուժը քո բազկի:
Քո զօրութիւնն ու արդարութիւնը հասնում են մինչեւ բարձունքները,
19 Նոյնպէս եւ քո մեծամեծ գործերը, ո՛վ Աստուած.
ո՞վ է քեզ նման:
20 Որքան էլ որ բազում նեղութիւն եւ չարչարանք ցոյց տուիր ինձ,
դարձեալ մխիթարեցիր ինձ եւ հանեցիր երկրի խոր անդունդներից:
21 Բազմապատկեցիր քո զօրութիւնը,
դարձեալ մխիթարեցիր ինձ եւ մի անգամ եւս հանեցիր երկրի խոր անդունդներից:
22 Եւ արդ, սաղմոսերգութեամբ գոհութիւն պիտի մատուցեմ քեզ,
ճշմարի՛տ Աստուած.
պիտի օրհնութեամբ սաղմոս երգեմ քեզ, ո՛վ սուրբդ Իսրայէլի:
23 Երբ քեզ սաղմոս երգեմ, պիտի ցնծան շրթունքներն իմ,
եւ իմ հոգին, որը դո՛ւ փրկեցիր:
24 Ու լեզուս ամէն օր քո արդարութունից պիտի խօսի:
Իր ժամանակին պիտի խայտառակուեն ու ամօթահար լինեն
իմ մասին չար խորհողները:

ԹՈՂ ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

71 1 *Սաղմոս Սողոմոնի համար.*
2 Աստուա՛ծ, դատաստանդ արքայի՛ն տուր,
եւ արդարութիւնդ՝ թագաւորի որդո՛ւն,
որ քո ժողովրդին արդարութեամբ դատի
ու քո աղքատների իրաւունքը պահի:
3 Լեռները խաղաղութիւն կը բերեն ժողովրդին,
եւ բլուրներն՝ արդարութիւն:
4 Թող արքան իրաւունք տայ ժողովրդի աղքատներին,
պահպանի տնանկների որդիներին,
եւ ընկճի ամբարտաւաններին:
5 Նա թող ապրի ու մնայ որքան որ արեւը լինի,
լուսնից առաջ, սերնդից սերունդ:
6 Նա թող իջնի որպէս անձրեւ հնձած խոտի վրայ

եւ որպէս ցօղ՝ երկրի վրայ:
7 *Նրա օրօք արդարութիւն եւ մեծ խաղաղութիւն թող տիրի,*
մինչեւ լուսնի վախճանը:
8 *Նա թող իշխի ծովից մինչեւ ծով,*
եւ գետերից մինչեւ ծագերն աշխարհի:
9 *Հնդիկները ծնկի թող գան նրա առջեւ,*
եւ նրա թշնամիները հող ուտեն:
10 *Թարսիսի եւ կղզիների թագաւորները նուէրներ թող մատուցեն նրան,*
Արաբիայի եւ Սաբայի արքաներն ընծաներ թող բերեն նրան:
11 *Աշխարհի բոլոր թագաւորները թող խոնարհուեն նրա առաջ,*
եւ բոլոր ազգերը թող ծառայեն նրան,
12 *քանզի հզօրի ձեռքից նա փրկեց աղքատին՝*
աղքատին ու տնանկին, որոնք օգնական չունեն:
13 *Նա կը խղճայ աղքատին ու տնանկին,*
եւ տնանկների հոգին կը փրկի:
14 *Չար վաշխառուներից կ'ազատի նրանց:*
Նրա անունը փառաւոր է նրանց առաջ:
15 *Նա կ'ապրի, եւ արաբների ոսկին նրան պիտի տրուի:*
Ամէն ժամ աղօթքի կը կանգնեն նրա առջեւ
եւ գիշեր-ցերեկ կ'օրհնեն նրան:
16 *Ամբողջ երկրում եւ լեռների գագաթներին հաստատութիւն կը տիրի:*
Նրա բերքի առատութիւնը Լիբանանից աւելի բարձր կը լինի,
Տիրոջ քաղաքում նա կը ծաղկի երկրի խոտի նման:
17 *Տիրոջ անունը կ'օրհնուի յաւիտեան,*
քանզի արեւից հին է անունը նրա:
Աշխարհի բոլոր ազգերը կ'օրհնեն նրան,
եւ բոլոր ժողովուրդները երանի կը տան նրան:
18 *Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը,*
որ միայն ինքն է սքանչելիքներ գործում:
19 *Եւ օրհնեալ է յաւիտեան սուրբ անունը նրա փառքի,*
թող նրա փառքով ողջ երկիրը լցուի.
թող լինի, թող լինի:

ՉԱՐԻ ԹՈՒԱՑԵԱԼ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

72 *Սաղմոս Ասափի*

1 *Որքա՜ն բարի է Աստուած Իսրայէլի համար*
եւ սրտով շիտակների համար:
2 *Բայց ոտքերս քիչ մնաց, որ սասանուէին,*
մի փոքր եւս՝ եւ քայլերս պիտի մոլորուէին:
3 *Նախանձեցի ես անօրէններին՝*
մեղաւորների խաղաղութիւնը տեսնելով:
4 *Նրանք մահուան տագնապ չունեն:*
Սովորական են տանջանքները նրանց:
5 *Մարդկանց տքնութիւնը չեն կրում նրանք,*
եւ մարդկանց պէս չեն տանջւում:
6 *Դրա համար ամբարտաւանութիւնը պատեց նրանց,*
եւ նրանք համակուեցին իրենց ամբարշտութեամբ ու անիրաւութեամբ:
7 *Նրանց անիրաւութիւնները կարծես նրանց ճարպից են դուրս գալիս,*
քանզի նրանք իրենց սրտի խորհրդով են շարժւում:
8 *Չարամտօրէն մտածեցին ու խօսեցին*
եւ մեծամտութեամբ ապիրատութիւն խորհեցին:
9 *Բերաններն իրենց ուղղեցին երկնքին,*
եւ լեզուները երկրով մէկ քարշ տուին:
10 *Դրա համար ժողովուրդն իմ պիտի վերադառնայ այստեղ,*
եւ իմ օրերը լեցուն պիտի անցնեն նրանց հետ:
11 *Ասացին՝ «Ինչպէ՞ս իմացաւ Աստուած»,*
կամ՝ «Կա՞յ արդեօք իմացութիւն

Բարձրեալի մօտ»:
12 *Ահա մեղաւոր են, եւ սակայն բարգաւաճում են նրանք,*
կան եւ ունեն հարստութիւնն աշխարհի:
13 *Ասացի՝ «Իզուր ուրեմն արդար դարձրի սիրտս իմ,*
եւ ձեռքերս սրբութեամբ լուացի»:
14 *Գիշեր-ցերեկ ես խոշտանգուած էի,*
եւ առաւօտները կշտամբանք կրեցի:
15 *Թէպէտ ես ասում էի, թէ՝ եթէ այսպէս պատմեմ, դիմացս պիտի գտնեմ քո որդիների սերնդին,*
որոնց ուխտ արեցի:
16 *Բայց հասկացայ, որ սա եւս դժուար է ինձ համար,*
17 *մինչեւ մտնեմ Աստծու սրբարանը*
եւ իմանամ նրանց վախճանը:
18 *Բայց դու նրանց տարագիր կ'անես իրենց նենգութեան համար*
եւ կը կործանես նրանց իրենց ամբարտաւանութեան մէջ:
19 *Իսկ ինչպէ՞ս նրանք յանկարծակի աւերակ դարձան,*
կործանուեցին, սպառուեցին ու անհետացան իրենց անօրէնութեան համար
20 *եւ եղան ինչպէս քնից արթնացող մարդու երազ:*
Տէ՛ր, դու, արթնանալով, պիտի անարգես նրանց երազի պատկերը.
21 *քանզի հուր բորբոքուեց իմ սրտում,*
եւ երիկամներս դունափոխուեցին:
22 *Ես արհամարհուած եղայ ու չիմացայ այդ,*
քո առջեւ անասուն համարուեցի:
23 *Բայց ես միշտ քեզ հետ եմ.*
դու բռնեցիր իմ աջ ձեռքից,
24 *քո խորհուրդներով ինձ առաջնորդեցիր*
եւ փառքով ընդունեցիր ինձ:
25 *Արդարեւ, ինձ համար ի՞նչ կայ երկնքում,*
կամ քեզնից բացի ի՞նչ փնտռեմ երկրի վրայ:
26 *Սիրտս ու մարմինս մաշուեցին,*
իմ սրտի՛ Աստուած, յաւիտեան ինձ բաժի՛ն ընկած Աստուած:
27 *Ահաւասիկ իրենց անձը քեզնից հեռացնողները պիտի կորչեն,*
դու պիտի կործանես բոլոր նրանց, ովքեր ապստամբեցին քո դէմ:
28 *Ինձ համար բարիք է մերձենալ Աստծուն,*
յոյս դնել Տիրոջ վրայ
եւ աւետել քո ամբողջ օրհնութիւնը Սիոնի դստեր դռների առաջ:

ԱՂՕԹՔ ՏԱՃԱՐԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՒ

73 *Իմաստութիւն Ասափի*

1 *Աստուա՛ծ, ինչո՞ւ մերժեցիր ընդմիշտ,*
եւ զայրոյթդ սաստկացաւ քո արօտի ոչխարների վրայ:
2 *Ցիշի՛ր քո ժողովրդին, որ սկզբից ստացար,*
եւ փրկեցիր քեզ վիճակուած ժառանգութիւնը՝
լեռն այս Սիոնի, որտեղ դու բնակուեցիր:
3 *Նրանց ամբարտաւանութեան վրայ բարձրացրո՛ւ քո ձեռքն ընդմիշտ,*
քանզի թշնամին անիրաւութիւն գործեց քո սրբարանում:
4 *Քեզ ատողները պարծեցան իրենց բարձրութեամբ,*
նշաններն իրենց իբրեւ զինանշան դրին մուտքին,
5 *բայց իրենք չհասկացան, որ վերից է ելքը:*
6 *Ինչպէս անտառի փայտահատներ,*
կացիններով ջարդեցին դռները նրա,
տապարներով ու մուրճերով կործանեցին այն:
7 *Հրի մատնեցին քո սրբարանը,*
եւ հողին հաւասարեցրին քո անուան խորանը:
8 *Նրանց ազգակիցներն իրենց սրտում միասնաբար ասացին.*
«Եկէք վերացնենք Աստծու բոլոր տօներն երկրի երեսից»:
9 *Նշաններ մենք չտեսանք,*
այլեւս մարգարէ չմնաց, եւ ոչ ոք մեզ չի ճանաչում:
10 *Մինչեւ ե՞րբ, Աստուա՛ծ, թշնամին պիտի նախատի*
եւ հակառակորդն անարգի սուրբ անունդ:
11 *Ինչո՞ւ ես ետ քաշում քո ձեռքը,*

եւ քո աջը ծոցիդ մէջ է ընդմիշտ:
12 *Աստուա՛ծ, դու մեր թագաւորն ես*
յաւիտենութիւնից ի վեր,
դու, որ փրկութիւն գործեցիր երկրի
վրայ:
13 *Դու քո զօրութեամբ ծովը հաստատեցիր,*
եւ վիշապների գլուխը խորտակեցիր
ջրերում:
14 *Դու վիշապի գլուխը փշրեցիր*
եւ որպէս կերակուր տուիր հնդիկների զօրքերին:
15 *Դու աղբիւրներ ու վտակներ բխեցրիր,*
եւ անցամաքելի գետեր ցամաքեցրիր:
16 *Քոնն է ցերեկը, եւ քոնն է գիշերը,*
լոյսն ու արեւը դո՛ւ հաստատեցիր:
17 *Դո՛ւ հաստատեցիր երկրի բոլոր սահմանները,*
գարունն ու ամառը դո՛ւ ստեղծեցիր:
18 *Ցիշի՛ր այս. թշնամին նախատեց Տիրոջը,*
անզգամ ժողովուրդն անարգեց քո սուրբ անունը:
19 *Քեզ խոստովանողին մի՛ մատնիր գազաններին,*
եւ քո տնանկներին մի՛ մոռացիր երբեք:
20 *Նայի՛ր քո ուխտին,*
քանզի ապշահարների տները երկրի վրայ լցուեցին անիրաւութեամբ:
21 *Թող խեղճն ամօթով ետ չդառնայ,*
եւ աղքատն ու տնանկը թող օրհնեն սուրբ անունդ:
22 *Ելի՛ր, Աստուա՛ծ, եւ կատարի՛ր դատաստանդ,*
յիշի՛ր անզգամի ամենօրեայ նախատինքը:
23 *Մի՛ մոռացիր պաշտօնեաներիդ ձայնը.*
քեզ ատողների ամբարտաւանութիւնն անընդհատ պիտի աճի:

ԱՍՏՈՒԱԾ ԴԱՏԱՒՈՐ

74 1 *Այսուհետեւ՝ մի՛ ապականիր. Ասափի օրհներգութեան սաղմոսը*
2 *Գոհութիւն մատուցենք քեզ, Աստուա՛ծ,*
գոհութիւն մատուցենք եւ տանք քո անունը:
3 *Ես պիտի պատմեմ քո բոլոր հրաշագործութիւնները.*
երբ ժամը հասնի՝ ճշմարիտ դատաստան պիտի տեսնեմ:
4 *Մաշուեցին երկիրն ու նրա բոլոր բնակիչները,*
ես հաստատեցի նրա սիւները:
5 *Անօրէններին ասացի, թէ՝ անօրէնութիւն մի՛ գործէք,*
մեղաւորներին, թէ՝ մի՛ ցցէք ձեր կոտոշները:
6 *Ձեր կոտոշները վեր մի՛ տնկէք,*
եւ Աստծու մասին անիրաւաբար մի՛ խօսէք:
7 *Մեծութիւնը գալիս է ո՛չ արեւելքից,*
ո՛չ արեւմուտքից, ո՛չ էլ լեռների անապատից,
8 *այլ Աստուած է դատաւոր,*
որ ցածրացնում է մէկին եւ միւսին՝ բարձրացնում:
9 *Տիրոջ ձեռքի բաժակը լի է անապակ գինով,*
որ մատուցում է սրան ու նրան:
Սակայն նրա մրուրը չի պակասի,
եւ երկրի բոլոր մեղաւորները կը խմեն այն:
10 *Ես պիտի ցնծամ յաւիտեան,*
սաղմոս պիտի երգեմ Յակոբի Աստծուն:
11 *Մեղաւորների բոլոր եղջիւրները դու պիտի փշրես,*
եւ արդարի եղջիւրը պիտի բարձրանայ:

ՆԵՐԲՈՂ ԱՀԵՂ ԱՍՏԾՈՒՆ

75 1 *Այսուհետեւ՝ Ասափի օրհնութեան սաղմոսը. երգ ասորեստանցիների մասին*
2 *Աստուած յայտնի է Հրէաստանում,*
եւ Իսրայէլում մեծ է անունը նրա:
3 *Նրա տեղը խաղաղութեան մէջ է,*
եւ նրա բնակութիւնը՝ Սիոնում:
4 *Այնտեղ խորտակեց Տէրն աղեղի զօրութիւնը*
եւ զէնքը, սուրն ու ճակատամարտը:

5 *Դու սքանչելի լուսատուն ես յաւերժական լեռների:*
6 *Բոլոր անմիտ սիրտ ունեցողները պիտի խռովուեն,*
պիտի ննջեն եւ ոչինչ պիտի չգտնեն.
բոլոր մարդիկ, որոնց ձեռքում հարստութիւն կար, ննջեցին եւ ոչինչ չգտան:
7 *Յակոբի Աստուած, քո սաստից քուն մտան նաեւ ձի հեծնողները:*
8 *Դու ահաւոր ես,*
եւ ո՞վ կարող է կանգնել քո առջեւ:
9 *Երբ երեւացիր դու երկնքից՝*
յայտնուեց քո բարկութիւնը:
10 *Երկիրը սարսափեց ու դողաց,*
երբ Աստուած ելաւ դատաստան տեսնելու,
փրկելու աշխարհի բոլոր հեզերին:
11 *Մարդկանց խորհուրդները պիտի խոստովանեն քեզ,*
եւ իմաստութեամբ ծածկուածները պիտի օրհնեն քեզ:
12 *Ո՛ւխտ դրէք եւ կատարեցէ՛ք այն մեր Տէր Աստծու համար,*
ամէնքդ՝ որ շուրջն էք նրա:
13 *Ընծանե՛ր մատուցեցէք Ահաւորին,*
Նրան, որ քաղում է հոգիներն իշխանների.
ահաւոր է Նա աշխարհի բոլոր թագաւորներից աւելի:

ՄԻԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՏԱԳՆԱՊԻ ԺԱՄԻՆ

76 1 *Այսուհետեւ՝ Իդիթոմի մասին. սաղմոս Ասափի*
2 *Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի,*
իմ ձայնով դիմեցի Աստծուն,
եւ նա նայեց ինձ:
3 *Նեղութեանս օրերին Աստծուն փնտռեցի՝*
ձեռքերս գիշերով պարզած նրա առջեւ,
եւ չխաբուեցի:
4 *Հոգիս չէր ուզում մխիթարուել:*
Յիշեցի Աստծուն եւ ուրախացայ,
իսկ երբ հառաչում էի ,
նուաղում էր հոգիս իմ մէջ:
Հանգիստ:
5 *Աչքերն իմ բաց մնացին գիշերուայ պահին,*
խռովուեցի ու չխօսեցի:
6 *Խորհեցի հին օրերի մասին,*
եւ վաղնջական տարիները յիշեցի:
7 *Գիշերը սրտիս հետ խօսեցի,*
հառաչելիս տառապում էր հոգիս իմ մէջ:
8 *Միթէ յաւէտ մերժելո՞ւ է Տէրն ինձ,*
եւ այլեւս չի՞ շարունակելու բարեհաճ լինել:
9 *Կամ ընդմի՞շտ զրկելու է ինձ իր ողորմութիւնից,*
եւ դադարեցնելո՞ւ է խօսքն իր սերնդից սերունդ:
10 *Կամ այլեւս մոռանալո՞ւ է Աստուած գթալ ինձ,*
եւ բարկութեամբ մերժելո՞ւ է գթութիւնն իր:
Հանգիստ:
11 *Ասացի. «Այժմ հասկացայ. սա է նորացած աջը Բարձրեալի»:*
12 *Յիշեցի գործերը Տիրոջ,*
սկզբից յիշեցի սքանչելագործութիւնները նրա:
13 *Մտաբերեցի գործերը քո բոլոր,*
եւ քո ձեռակերտների մասին խորհեցի:
14 *Աստուա՛ծ, քո ճանապարհները սրբութեան մէջ են.*
ո՞ր աստուածն է մեծ՝ մեր Աստծու նման:
15 *Դու ես հրաշագործ Աստուածը.*
զօրութիւնդ ցոյց տուիր քո ժողովրդին:
16 *Բազկովդ փրկեցիր քո ժողովրդին՝*
Յակոբի եւ Յովսէփի որդիներին:
Հանգիստ:
17 *Քեզ տեսան ջրերն, Աստուա՛ծ,*
տեսան քեզ ջրերն ու սոսկացին,
եւ անդունդները խռովուեցին յորդառատ ջրերի ձայնից:
18 *Ամպերը ձայն տուին,*
ուստի եւ քո նետերը սլացան քո անուի որոտման ձայնից:
19 *Երեւացին քո փայլակները տիեզերքի,*
եւ երկիրը խռովուեց ու դողաց:
20 *Քո ճանապարհները ծովում են,*
շաւիղներդ՝ յորդառատ ջրերում,
եւ քո հետքերը չեն երեւում:

21 Քո ժողովրդին ոչխարների պէս առաջնորդեցիր
Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով:

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ

77 Իմաստութիւն Ասափի

1 Ժողովուրդնե՛ր, ո՛ւշ դարձրէք իմ
օրէնքներին,
եւ մօտեցրէ՛ք ձեր ականջները բե-
րանիս խօսքերին:
2 Առակով պիտի բացեմ բերանն իմ,
սկզբից եւեթ առակներով պիտի
խօսեմ,
3 ինչպէս լսեցինք ու իմացանք
դրանք,
եւ ինչպէս մեր հայրերը պատմեցին
մեզ:
4 Մենք ոչինչ չթաքցրինք նրանց
որդիներից,
միւս սերնդին պատմեցինք
օրհնութիւնն ու զօրութիւնը Տիրոջ
եւ այն սքանչելագործութիւնները,
որ նա արեց:
5 Յակոբի համար հաստատեց իր
վկայութիւնը,
եւ օրէնքներ դրեց Իսրայէլի վրայ,
մէկ անգամ ընդմիշտ պատուիրելով
մեր հայրերին,
որ նրանք այդ բոլորը ցոյց տան
իրենց որդիներին,
որ սովորեցնեն միւս սերնդին:
6 Որդիները, որ ծնուելու են,
պիտի ելնեն եւ պատմեն դա իրենց
զաւակներին,
7 որպէսզի իրենց յոյսը դնեն Աստ-
ծու վրայ
եւ չմոռանան Աստծու գործերը՝
հետեւելով նրա պատուիրաններին,
8 որ իրենց հայրերի պէս չար եւ
դառնացող ազգ չլինեն,
ազգ՝ որ չուղղեց սիրտն իր,
եւ իր հոգին չհաստատեց Աստծու
վրայ:
9 Եփրեմի որդիները ուժեղ աղեղ-
նաւորներ էին,
բայց պատերազմի օրը իրենց կա-
պարճները յետ դարձրին.
10 նրանք չմնացին Տիրոջ ուխտի մէջ
եւ չուզեցին ընթանալ ըստ նրա
օրէնքների:
11 Մոռացան նրա երախտիքներն ու
այն սքանչելագործութիւնները,
12 որ գործեց նրանց հայրերի առջեւ,
եգիպտացիների երկրում եւ Տայանի
դաշտում:
13 Նա ճեղքեց ծովը եւ անցկացրեց
նրանց,
ջրերը պահեց ինչպէս տիկերի մէջ:
14 Ցերեկն ամպով առաջնորդեց
նրանց,
իսկ ողջ գիշեր՝ հրեղէն լոյսով:
15 Պատռեց ժայռն անապատում,
եւ նրանց խմեցրեց ինչպէս մեծ
անդնդից:
16 Ժայռից ջուր բխեցրեց,
եւ ջրերն հոսեցրեց գետերի պէս:
17 Սակայն նրանք շարունակեցին
մեղանչել,
եւ աւելի եւս բարկացրին Բարձ-
րեալին անապատում:
18 Փորձեցին Աստծուն իրենց սրտե-
րում՝
կերակուր խնդրելով իրենց համար:
19 Տրտնջացին Աստծուց ու ասացին.
«Միթէ Աստուած կարո՞ղ է սեղան
պատրաստել անապատում»:
20 Ճիշտ է, որ նա հարուածեց
ժայռին,
եւ ջրեր հոսեցին ու վտակներ
բխեցին դրանից:
Բայց կարո՞ղ է նաեւ հաց տալ մեզ
կամ իր ժողովրդի համար սեղան
պատրաստել»:
21 Դրա համար էլ Տէրը լսեց այս ու
յապաղեց.
հուր բորբոքուեց Յակոբի սերնդի
մէջ,
եւ բարկութիւն իջաւ Իսրայէլի
վրայ:
22 Նրանք Աստծուն չհաւատացին
ու յոյս չդրին նրա փրկութեան
վրայ:
23 Տէրը վերեւից հրաման տուեց
ամպերին
ու բացեց դռները երկնքի:
24 Եւ մանանայ տեղացրեց նրանց
վրայ որպէս կերակուր:
25 Երկնքի հացը տուեց նրանց,
մարդիկ հրեշտակների հացը կերան.
եւ նա լիուլի ուտելիք իջեցրեց
նրանց համար:

26 Հանեց հարաւի հողմը,
եւ իր զօրութեամբ բերեց հիւսիսի
կողմը:
27 Նրանց վրայ հողի պէս միս
տեղացրեց,
եւ ծովի աւազի պէս՝ թեւաւոր
թռչուններ:
28 Նա դրանք նետեց նրանց բանա-
կատեղիի մէջ
եւ նրանց վրանների շուրջը:
29 Կերան եւ լիապէս յագեցան,
իրենց ցանկացածը տուեց նրանց:
30 Եւ նրանք իրենց ցանկութիւնից
ոչնչով զուրկ չմնացին:
Մինչ դեռ կերակուրն իրենց բերա-
նում էր,
31 Աստծու բարկութիւնն իջաւ
նրանց վրայ.
նրանցից շատերին նա սպանեց
եւ Իսրայէլի ընտրեալներին ոչնչաց-
րեց:
32 Հակառակ այս բոլորի, նրանք
նորից մեղանչեցին
ու չհաւատացին նրա հրաշագոր-
ծութիւններին:
33 Նրանց օրերն ունայնաբար սպա-
ռուեցին,
եւ նրանց տարիներն արագ անցան:
34 Երբ Տէրն սպանում էր նրանց,
նրանք փնտռում էին իրեն,
դարձի էին գալիս եւ փութով
դիմում էին Աստծուն:
35 Նրանք յիշեցին, որ Աստուած
իրենց օգնականն էր,
Բարձրեալն Աստուած փրկիչն էր
իրենց:
36 Սիրեցին նրան իրենց բերան-
ներով,
բայց իրենց լեզուներով ստեցին
նրան:
37 Նրանց սրտերը չիտակ չէին նրա
հանդէպ,
եւ նրանք չհաւատացին նրա ուխ-
տին:
38 Բայց ինքը գթասիրտ էր,
քաւութիւն էր տալիս նրանց
մեղքերին
ու չէր կործանում նրանց:
Յաճախ զսպում էր իր բարկութիւնը
եւ չէր թափում իր ողջ զայրոյթը:
39 Յիշում էր, որ նրանք մարմին են՝
շունչ,
որ, դուրս ելնելով, այլեւս ետ չի
դառնում:
40 Քանի՜-քանի՜ անգամ դառնաց-
րին նրան անապատում,
բարկացրին Բարձրեալին անջրդի
վայրում,
41 վերադարձան փորձեցին Աստ-
ծուն,
եւ Իսրայէլի սրբին զայրացրին:
42 Չյիշեցին նրա ձեռքը,
ձեռք, որ մի օր փրկեց նրանց իրենց
նեղողներից:
43 Չյիշեցին, թէ նա ինչպէս սքան-
չելիքներ ու զարմանահրաշ գործեր
արեց
եգիպտացիների երկրում եւ Տայանի
դաշտում:
44 Նրանց գետերն ու անձրեւներն
արիւն դարձրեց, որ չխմեն:
45 Նրանց վրայ շնաճանճեր ուղար-
կեց,
որոնք յօշոտեցին նրանց,
եւ գորտերով նրանց ապականեց:
46 Նրանց բերքը որդնոտութեան
մատնեց,
եւ նրանց վաստակը բաժին դարձրեց
մարախի:
47 Նրանց այգիները կարկտահար
արեց,
եւ նրանց թզենիները ծածկեց
եղեամով:
48 Նրանց անասուններին կարկտա-
հար արեց,
եւ նրանց ունեցուածքը հրոյ ճարակ
դարձրեց:
49 Նրանց դէմ ուղղեց իր սաստիկ
բարկութիւնը՝
բարկութիւնը, զայրոյթն ու նե-
ղուածութիւնը,
չար հրեշտակի ձեռքով տանջանք-
ներ ուղարկեց նրանց վրայ:
50 Նրանց վրայ թափեց իր
զայրալից բարկութիւնը,
նրանց հոգին զերծ չպահեց մա-
հուանից,
եւ կոտորեց նրանց անասունները:
51 Նա հարուածեց Եգիպտոսի բոլոր
անդրանիկ ծնունդներին՝
իրենց վաստակի առաջնեկներին

Քամի վրանների տակ:
Հանգիստ:
52 Իր ժողովրդին քշեց ոչխարների պէս,
եւ ինչպէս հօտ նրանց հանեց անապատ:
53 Նրանց առաջնորդեց յոյսով՝ եւ նրանք չվախեցան,
եւ ծովը ծածկեց նրանց թշնամիներին:
54 Նրանց բարձրացրեց իր սուրբ լեռը՝ լեռն այն,
որ իր Աջն էր նուաճել:
55 Նրանց առջեւից վանեց հեթանոսներին,
իր ժառանգութիւնից բաժին բաշխեց նրանց
եւ Իսրայէլի ցեղերին բնակեցրեց նրանց վրաններում:
56 Նրանք փորձեցին, դառնացրին Բարձրեալ Աստծուն
ու նրա վկայութիւնը չպահեցին:
57 Դարձեալ խոտորուեցին ինչպէս իրենց հայրերը,
դարձեալ նմանուեցին ծուռ աղեղի:
58 Դարձեալ բարկացրին նրան իրենց բագիններով,
եւ իրենց կուռքերով շարժեցին նախանձը նրա:
59 Լսեց Աստուած ու զայրացաւ նրանց վրայ,
եւ խիստ անարգեց Իսրայէլը:
60 Մերժեց նա խորանը Սելովի,
խորանն այն, որ հաստատել էր մարդկանց մէջ:
61 Նրանց զօրութիւնը գերութեան մատնեց,
իսկ նրանց գեղեցկութիւնն՝ իրենց թշնամիների ձեռքը:
62 Իր ժողովրդին սրի մատնեց
եւ անտեսեց իր իսկ ժառանգութիւնը:
63 Նրանց երիտասարդներին հուրը լափեց,
եւ նրանց կոյսերի համար ոչ ոք չսգաց:
64 Նրանց քահանաները սրի քաշուեցին,
եւ նրանց այրիներին ոչ ոք չվշտակցեց:
65 Տէրը կարծես քնից արթնացաւ,
ինչպէս գինուց սթափուող հսկայ:
66 Նա թշնամիներին ետ շպրտեց՝
յաւիտենական նախատինք տալով նրանց:
67 Մերժեց նա խորանը Յովսէփի,
եւ Եփրեմի ցեղին նա չընտրեց,
68 այլ նա ընտրեց Յուդայի ցեղին,
լեռը Սիոնի, որը եւ սիրեց:
69 Նրա սրբարանը շինեց միեղջերուի նմանութեամբ՝
յաւիտեան գետնի վրայ հաստատելով այն:
70 Ընտրեց Դաւթին՝ իր ծառային,
եւ նրան դուրս քաշեց ոչխարների հօտից:
71 Նորածին գառների միջից վերցրեց նրան,
որ հովուի իր ծառայ Յակոբի ցեղին
եւ իր ժառանգութիւնը՝ Իսրայէլը:
72 Նա արածեցնում էր նրանց իր սրտի իմաստութեամբ,
իր անմեղունակ ձեռքերով առաջնորդում էր նրանց:

ԱՂՕԹՔ ԱՋԳԻ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

78 Սաղմոս Ասափի

1 Աստուա՛ծ, հեթանոսները մտան քո ժառանգութեան մէջ,
պղծեցին քո սուրբ տաճարը,
Երուսաղէմը դարձրին ինչպէս մրգապահի հիւղակ:
2 Քո ծառաների դիակները որպէս կեր նետեցին երկնքի թռչուններին,
եւ քո սրբերի մարմինները՝ երկրի գազաններին:
3 Նրանց արիւնը ջրի պէս երուսաղէմի շուրջը թափեցին,
եւ չկար մէկը, որ թաղէր նրանց:
4 Մենք դարձանք մեր դրացիների նախատինքը
եւ մեր շուրջը եղողների ծաղրուծանակը:
5 Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր, պիտի բարկանաս դու անվերջ,
եւ քո նախանձը պիտի բորբոքուի հրի պէս:
6 Բարկութիւնդ թափի՛ր այն ազգերի վրայ,
որոնք քեզ չեն ճանաչում,
այն թագաւորների վրայ, որոնք անունդ չեն ոգեկոչում:
7 Նրանք յօշոտեցին Յակոբի ցեղին,
եւ նրա տեղն աւերեցին:
8 Մի՛ յիշիր հին մեղքերը մեր,
թող ողորմութիւնդ շուտով հասնի մեզ, Տէ՛ր,
քանզի սաստիկ աղքատացանք:
9 Օգնի՛ր մեզ, Աստուա՛ծ, փրկի՛չ մեր,
քո անուան փառքի համար.
Տէ՛ր, յանուն քո անուան փրկի՛ր մեզ
ու թողութի՛ւն տուր մեր մեղքերին:
10 Թող հեթանոսների մէջ երբեք չասեն՝ «Ո՞ւր է նրանց Աստուածը».
այլ հեթանոսների մէջ, մեր աչքի առջեւ,
թող յայտնուի քո ծառաների թափած արեան վրէժխնդրութիւնը:
11 Բանտարկեալների հեծեծանքը թող հասնի քեզ.
դու քո բազկի զօրութեամբ փրկի՛ր սպանուածների որդիներին:
12 Մեր դրացիների նախատինքը, որով անարգեցին մեզ,
եօթնապատիկ իրենց գիրկը վերադարձրու, Տէ՛ր:
13 Մենք՝ քո ժողովուրդն ու քո արօտի ոչխարները,
յաւիտեան քեզ գոհութիւն պիտի մատուցենք,
սերնդից սերունդ պիտի պատմենք քո օրհնութիւնը:

ԱՂՕԹՔ ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ

79 1 Այսուհետեւ՝ անցած ժամանակների մասին Ասափի վկայութիւնը. սաղմոս եթովպացիների մասին

2 Դու, որ հովւում ես Իսրայէլին՝ ո՛ւշ դարձրու,
դու, որ առաջնորդում ես Յովսէփի ցեղին ինչպէս հօտ,
դո՛ւ, որ քերովբէների վրայ ես նստում՝
յայտնուի՛ր 3 Եփրեմի, Բենիամինի ու Մանասէի առջեւ,
արթնացրո՛ւ քո զօրութիւնը
եւ արի՛ մեզ փրկելու:
4 Զօրութիւնների՛ Աստուած, մեզ ե՛տ դարձրու,
ցո՛յց տուր մեզ երեսը քո, որ ապրենք:
5 Զօրութիւնների Տէ՛ր Աստուած,
մինչեւ ե՞րբ պիտի բարկանաս քո ծառաների աղօթքի վրայ:
6 Մեզ արտասուախառն հացով սնեցիր,
եւ անչափ արտասուք խմեցրիր մեզ:
7 Մեզ դարձրիր նախատինքը մեր հարեւանների
եւ ծաղրուծանակը մեր թշնամիների:
8 Զօրութիւնների՛ Աստուած, մեզ ե՛տ դարձրու,
ցո՛յց տուր մեզ երեսը քո, որ ապրենք:
9 Դու Եգիպտոսից Իսրայէլ-որթատունկը հանեցիր,
վռնդեցիր հեթանոսներին
եւ այդ որթատունկը տնկեցիր:
10 Առաջնորդեցիր նրան,
հաստատուն դարձրիր նրա արմատները,
եւ այն լցրեց երկիրը:
11 Նրա ստուերը ծածկեց լեռները,
եւ նրա ճիւղը՝ Աստծու մայրիները:
12 Որթատունկն իր ճիւղերը ձգեց մինչեւ ծով,
իսկ բողբոջները՝ մինչեւ Եփրատ գետը:
13 Ինչո՞ւ քանդեցիր ցանկապատը նրա,
ճանապարհի անցորդները պոկոտում էին այն:
14 Ապականեց նրան խոզն անտառի,
եւ վայրի երէն արածեց նրա մէջ:
15 Զօրութիւնների՛ Աստուած, դարձի՛ր,
նայի՛ր երկնքից ու տե՛ս,
այցելի՛ր այս որթատունկին,
16 եւ խնա՛մք տար նրան, որին տնկեց Աջը քո,
նաեւ մարդու որդուն, որին դու զօրացրիր քեզնով:
17 Այլապէս, հրով վառուած ու աւերուած,
պիտի կորչեն քո խստութիւնից:
18 Քո ձեռքը թող լինի մարդու վրայ,
քո աջը՝ այն մարդու որդու վրայ, որին դու զօրացրիր քեզնով:
19 Մենք այլեւս չենք հեռանայ

քեզանից,
դու պիտի փրկես մեզ,
եւ մենք քո անունը պիտի ոգեկոչենք, Տէ՛ր:
20 Զօրութիւնների Տէ՛ր Աստուած,
մեզ ե՛տ դարձրու,
ցո՛յց տուր մեզ երեսը քո, որ ապրենք:

ԱՂՕԹՔ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

80 1 *Այսուհետեւ՝ հնձանների մասին. Ասափի հինգշաբթի օրուայ սաղմոսը*
2 Ցնծացէ՛ք Աստծու առջեւ, որ օգնականն է մեր,
աղաղակեցէ՛ք Յակոբի Աստծուն:
3 Սաղմո՛ս ասացէք եւ օրհնութի՛ւն տուէք,
նրան քաղցրաձայն սաղմո՛ս երգեցէք:
4 Փո՛ղ հնչեցրէք ամսագլխին՝
մեր նշանաւոր օրուայ տարեդարձին:
5 Դա հրաման է Իսրայէլի համար,
եւ օրէնք՝ Յակոբի Աստծու համար:
6 Յովսէփի ուխտն է դա, որը կնքեց Նրա հետ,
երբ նա դուրս էր գալիս եգիպտացիների երկրից:
Նա լսեց մի լեզու, որ չգիտէր.
7 «Նրանց թիկունքներն ազատի՛ր բեռներից
եւ նրանց ձեռքերը՝ այգու ու բահի ծառայութիւնից:
8 Նեղութեան մէջ ինձ ձայն տուիր՝ եւ փրկեցի քեզ.
քեզ լսեցի մրրիկի ծածկոյթի տակ
ու փորձեցի քեզ Հակառակութեան ջրերի վրայ:
9 Լսի՛ր, իմ ժողովո՛ւրդ, ու ես վկայ կը լինեմ քեզ,
եւ Իսրայէ՛լ, եթէ ինձ լսում ես:
10 Ժամանակաւորապէս պաշտուող աստուածներ չես ունենայ
ու չես երկրպագի օտար աստծու:
11 Ես եմ քո Տէր Աստուածը,
որ հանեցի քեզ եգիպտացիների երկրից.
բա՛ց բերանդ, եւ ես պիտի լցնեմ այն:
12 Իմ ժողովուրդը չունկնդրեց ձայնիս,
եւ Իսրայէլն ինձ չնայեց:
13 Բարձիթողի մատնեցի նրան,
որ գնան իրենց սրտի թելադրանքով,
քանզի շարժուեցին իրենց կամքով:
14 Եթէ իմ ժողովուրդը լսէր ինձ,
կամ Իսրայէլն ընթանար իմ ճանապարհով,
15 ապա որպէս ոչնչութիւն կ'ընկճէի նրա թշնամիներին
եւ ձեռքս կ'իջեցնէի նրան նեղողների վրայ:
16 Տիրոջ թշնամիները ստեցին նրան,
ուստի նրանց ժամանակն աշխարհում կը սպառուի:
17 Նրանց կերակրեց ցորենի առատութեամբ,
ժայռից հոսող մեղրով յագեցրեց նրանց»:

ԱՍՏՈՒԱԾ ԵՐԱՇԽԱՒՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

81 *Սաղմոս Ասափի*
1 Աստուած կանգնեց աստուածների ժողովում,
եւ նրանց մէջ դատապարտեց նրանց՝ ասելով.
2 «Մինչեւ ե՞րբ պիտի անիրաւութեամբ դատէք.
եւ աչառութիւն անէք մեղաւորներին:
3 Տեսէ՛ք դատաստանը որբի եւ այրու,
արդա՛ր դատեցէք աղքատին ու խեղճին:
4 Փրկեցէ՛ք աղքատին ու տնանկին,
մեղաւորի ձեռքից փրկեցէ՛ք նրանց»:
5 Չհասկացան, չըմբռնեցին, խարխափեցին խաւարի մէջ,
եւ երկրի բոլոր հիմքերը ցնցուեցին:
6 Ես ասացի՝ «Աստուածներ էք դուք,
կամ բոլորդ էլ որդիներն էք Բարձրեալի:
7 Բայց ահա մեռնում էք դուք որպէս մարդ
եւ ընկնում էք ինչպէս մի իշխան»:
8 Ելի՛ր, Աստուա՛ծ, ու դատի՛ր աշխարհը,
քանզի դո՛ւ պիտի ժառանգես բոլոր հեթանոսներին:

ԱՂՕԹՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

82 1 *Ասափի օրհնութեան սաղմոսը*
2 Աստուա՛ծ, ո՞վ է քեզ նման.
մի՛ լռիր ու կանգ մի՛ առ, Աստուա՛ծ:
3 Ահա թշնամիներդ աղաղակեցին,
եւ ատելիներդ բարձրացրին իրենց գլուխները:
4 Քո ժողովրդի դէմ խորամանկութիւն մտածեցին,
խորհուրդ արեցին քո սրբերի դէմ՝ ասելով.
5 «Եկէք ազգերի միջից վերացնենք նրանց,
որ այլեւս Իսրայէլի անունը չիշուի»:
6 Միաբանած՝ խորհեցին համատեղ,
դաշինք կնքեցին քո դէմ
7 եդոմայեցիների բանակներն ու խմայէլացիները,
մովաբացիներն ու հագարացիները,
8 Գեբալի, Ամոնի, Ամաղէկի բնակիչներն
ու բոլոր այլազգիները՝ Տիւրոսի բնակիչներով հանդերձ:
9 Նաեւ Ասուրի բանակն էր եկել նրանց հետ.
սրանք բոլորը զօրավիգ էին Ղովտի որդիներին:
10 Նրանց արա այնպէս, ինչպէս արեցիր Մադիամին,
Սիսարային ու Յաբինին՝ Կիսոնի հեղեղատներում:
11 Նրանք կոտորուեցին Դորի ակունքներում
եւ եղան ինչպէս գետնի աղբ:
12 Նրանց իշխաններին արա՛ այնպէս, ինչպէս արեցիր
Զէբէէին, Սաղմանային ու նրանց բոլոր իշխաններին,
13 որոնք ասացին. «Մեր ժառանգութիւնը դարձնենք Աստծու սրբարանը»:
14 Աստուա՛ծ իմ, նրանց արա՛ ինչպէս անիւ,
ինչպէս եղէգ՝ քամու հանդէպ,
15 ինչպէս հուր, որ անտառն է այրում,
ինչպէս բոց, որ լեռներն է խանձում:
16 Այսպէս հալածի՛ր նրանց քո մրրիկով,
ու քո բարկութեամբ խռովեցրո՛ւ նրանց:
17 Նրանց երեսն անարգանքո՛վ պատիր,
որ քո անունը փնտռեն, Տէ՛ր:
18 Թող ամաչեն ու խռովուեն յաւիտեանս յաւիտենից,
եւ ամօթահար թող կորստեան մատնուեն:
19 Թող իմանան, որ քո անունը Տէր է,
եւ դու միակ Բարձրեալն ես ամբողջ երկրի վրայ:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՐԳ

83 1 *Այսուհետեւ՝ հնձանների մասին. սաղմոս Կորխի որդիներին*
2 Որքա՞ն հաճելի է քո յարկի տակ,
զօրութիւնների՛ Տէր.
իմ հոգին քո դաւիթն է ցանկանում ու փափագում:
3 Սիրտս ու մարմինս ցնծում են կենդանի Աստուծով.
4 քանզի ճնճղուկը գտաւ տունն իր,
տատրակն իր բոյնը, որտեղ ձագեր պիտի դնի.
գտաւ քո սեղանը, զօրութիւնների՛ Տէր,
թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:
5 Երանի բոլոր նրանց, ովքեր բնակւում են Տիրոջ տանը,
նրանք յաւիտեանս յաւիտենից պիտի օրհնեն քեզ:
6 Երանի այն մարդուն, որի օգնութիւնը քեզնից է,
եւ որը մտքում դրեց ելնել
7 տրտմութեան հովտից այն վայրը, ուր ուխտ արեց:
Նա օրհնութիւն պիտի մատուցի օրէնսդրին:
8 Զօրութիւնից զօրութիւն պիտի ընթանայ, եւ Աստուած պիտի երեւայ Սիոնում:
9 Զօրութիւնների Տէ՛ր Աստուած,
լսի՛ր իմ աղօթքը,
ակա՛նջ դիր, Յակոբի՛ Աստուած:
10 Դու ապաւէնն ես մեր.
տե՛ս, Աստուա՛ծ, ու նայի՛ր քո օծեալի երեսին,

11 քանզի ինձ համար քո դաւթում
լինելու մէկ օրը հազար օր արժէ:
Ես նախընտրեցի ընկեցիկ լինել
Աստծու տան մէջ,
քան մեղաւորների յարկի տակ
բնակուել:
12 Ողորմութիւն ու ճշմարտութիւն է
սիրում Տէր Աստուածը մեր,
որը շնորհք ու փառք պիտի տայ:
13 Տէրն իր ողորմութիւնը չի զլանայ
նրանց,
ովքեր անմեղութեամբ են ընթա-
նում:
Զօրութիւնների՛ Տէր Աստուած,
երանելի է այն մարդը, ով յոյսը քեզ
վրայ է դրել:

ԱՂՕԹՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

84 1 *Այսուհետեւ՝ սաղմոս Կորխի
որդիներին*
2 Տէ՛ր, հաւանեցիր քո երկիրը
ու ե՛տ դարձրիր Յակոբին գերու-
թիւնից:
3 Ներեցիր ժողովրդիդ անիրաւու-
թիւնը,
ջնջեցիր նրա բոլոր մեղքերը:
4 Զսպեցիր ողջ սրտնեղութիւնդ,
ետ դարձար քո սաստիկ բարկու-
թիւնից:
5 Դէպի մե՛զ դարձիր, Աստուա՛ծ,
փրկի՛չ մեր,
ու ե՛տ պահիր զայրոյթդ մեզնից:
6 Մեզ վրայ յաւիտեան մի՛ բար-
կացիր, Տէ՛ր,
եւ բարկութիւնդ սերնդից սերունդ
Թող չձգուի:
7 Աստուա՛ծ, դու դարձեալ մեզ
պիտի փրկես,
եւ ժողովուրդդ պիտի ուրախանայ
քեզնով:
8 Ցո՛յց տուր մեզ քո ողորմութիւնը,
Տէ՛ր,
եւ քո փրկութիւնը շնորհի՛ր մեզ:
9 Լսեցինք, թէ ինչ է խօսում Տէր
Աստուածը մեր.
խաղաղութեան մասին պիտի խօսի
իր ժողովրդի,
իր սրբերի եւ սրտով դէպի իրեն
դարձողների հետ:
10 Արդարեւ, մօտ է նրա շնորհելիք
փրկութիւնն իր երկիւղն ունեցողների
համար,
որպէսզի մեր երկրում նրա փառքը
հաստատուի:
11 Ողորմութիւնն ու ճշմարտու-
թիւնը պիտի հանդիպեն,
արդարութիւնն ու խաղաղութիւնը
պիտի համբուրուեն:
12 Ճշմարտութիւնը երկրից բուսաւ,
արդարութիւնը երկնքից երեւաց:
13 Տէրը բարութիւն պիտի գործի,
իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի
տայ:
14 Արդարութիւնը նրա առջեւից
պիտի գնայ,
ճանապարհ տալով նրա ընթացքին:

ԱՂՕԹՔ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ

85 *Աղօթք Դաւթի*
1 Մօտեցրո՛ւ, Տէ՛ր, ականջը քո եւ
լսի՛ր ինձ,
քանզի աղքատ ու տնանկ եմ ես:
2 Հոգիս իմ սո՛ւրբ պահիր, Տէ՛ր.
փրկի՛ր, Աստուա՛ծ իմ, քո ծառային,
որ յոյսը դրել է քեզ վրայ:
3 Որորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի գիշեր-
ցերեկ քե՛զ կանչեցի:
4 Ուրախացրո՛ւ ծառայիդ հոգին,
Տէ՛ր,
քանզի հոգիս դէպի քեզ բարձրացրի.
5 որովհետեւ դու, Տէ՛ր, բարի ու
շիտակ ես,
գթառատ ես նրանց հանդէպ, ովքեր
կանչում են քեզ:
6 Ակա՛նջ դիր, Տէ՛ր, իմ աղօթքներին
եւ ո՛ւշ դարձրու խնդրանքիս ձայ-
նին:
7 Իմ նեղութեան օրը ես կանչեցի
քեզ,
եւ դու լսեցիր ինձ:
8 Աստուածների մէջ քեզ նմանը
չկայ, Տէ՛ր,
եւ ոչինչ չկայ, որ նմանուի քո
գործերին:
9 Բոլոր ազգերը, որոնց ստեղծեցիր,
պիտի գան երկրպագեն քո առջեւ,
յաւիտեան փառք պիտի տան քո
անունը:
10 Մեծ ես դու, Տէ՛ր, եւ հրա-
շագործութիւններ ես անում,

եւ միայն դո՛ւ ես Աստուած:
11 Առաջնորդի՛ր ինձ քո ճանա-
պարհով,
որ ընթանամ քո ճշմարտութեամբ,
եւ սիրտս ուրախանայ՝ ակնածելով
քո անունից:
12 Ամբողջ սրտովս գոհութիւն պիտի
մատուցեմ քեզ, Տէ՛ր Աստուած իմ,
յաւիտեան փառք պիտի տամ քո
անունը:
13 Մեծ եղաւ քո ողորմութիւնն իմ
հանդէպ,
հոգիս փրկեցիր խոր դժոխքից:
14 Աստուա՛ծ, անօրէններն յարձա-
կուեցին ինձ վրայ,
բռնակալների ամբոխներն հե-
տապնդեցին ինձ,
եւ քեզ իրենց առջեւ Աստուած
չհամարեցին:
15 Բայց դու, Տէ՛ր Աստուած իմ,
գթասիրտ ու ողորմած ես,
համբերատար, ողորմաշատ ու ճշմա-
րիտ:
16 Նայի՛ր ու ողորմի՛ր ինձ,
զօրութի՛ւն տուր քո ծառային,
պահպանի՛ր աղախնիդ որդուն:
17 Եւ ինձ բարութեան նշա՛ն ցոյց
տուր.
Թող ատելիներն իմ տեսնեն ու
ամօթահար լինեն,
որ դու, Տէ՛ր, օգնեցիր ու մխի-
թարեցիր ինձ:

ՍԻՈՆԸ՝ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՅՐԸ

86 1 *Կորխի որդիներին օրհնու-
թեան սաղմոս*
2 Նրա հիմքերն իր սուրբ լերան
վրայ են.
Տէրը սիրում է Սիոնի դարպասներն
աւելի,
քան Յակոբի բոլոր վրանները:
3 Ահաւասիկ փառաւորեալը խօսեց
քո մասին, քաղա՛քդ Աստծու:
4 Յիշեցի Ռահաբն ու Բաբելոնը,
որոնք ճանաչում են ինձ.
ահա եւ այլազգիներն ու Տիւրոսը,
եւ Հնդկաստանի ժողովուրդները,
որոնք գոյացան այնտեղ:
5 Սիոնը պիտի մայր կոչուի,
որտեղ մարդը ծնուեց,
եւ նրա հիմքերը Բարձրեալն ան-
ձամբ դցեց:
6 Տէրը գրքերում պիտի պատմի այն
ժողովուրդների եւ իշխանների մասին,
որոնք գոյացան այնտեղ:
7 Որքա՜ն պիտի ուրախանան քեզ-
նով բոլոր նրանք,
որոնց բնակութիւնը քեզնից է:

ԱՂՕԹՔ ՄԵՐՁԻՄԱՀ ՎԻՃԱԿՈՒՄ

87 1 *Այսուհետեւ՝ Մալալէթի ի-
մաստութեան մասին. իմաստու-
թիւն, որով պատասխան տուեց
Եման Եզրայելացին.*
2 Իմ փրկութեա՛ն Տէր Աստուած,
գիշեր-ցերեկ քե՛զ կանչեցի:
3 Թող աղօթքս հասնի քե՛զ, Տէ՛ր,
ականջդ Թող մօտենայ խնդրանքիս,
4 քանզի հոգիս չարչարանքով
լցուեց,
եւ կեանքս դժոխքին մերձեցաւ:
5 Ես համարուեցի նրանցից, ովքեր
մահուան փոսն են իջնում,
եղայ անօգնական մի մարդ,
լքուած՝ մեռեալների մէջ,
6 գերեզմանում պառկած սպա-
նուածների պէս,
որոնց դու չես յիշում,
եւ որոնք մերժուած են քեզնից:
7 Ինձ խորախոր փոսի մէջ դրին,
խաւարի եւ մահուան ստուերների
մէջ:
8 Բարկութիւնդ ծանրացաւ ինձ
վրայ,
ողջ յորձանքներդ իմ դէմ ուղղեցիր:
9 Իմ ծանօթներին ինձնից հե-
ռացրիր,
եւ նրանք ինձ նշաւակ դարձրին.
ես մատնուած էի դժբախտութեան
ու դուրս չէի գալիս:
10 Աչքերս տկարացան թշուառու-
թիւնից,
գիշեր-ցերեկ առ Տէր աղաղակեցի
եւ դէպի քեզ կարկառեցի ձեռքերն
իմ:
11 Մի՞թէ մեռելների՞ համար պիտի
հրաշագործութիւններ անես,
կամ բժիշկները պիտի կենդա-
նացնե՞ն նրանց,

եւ նրանք գոհութի՞ւն պիտի մատուցեն քեզ:
12 *Մի՞թէ որեւէ մէկը երբեւէ պիտի պատմի քո ողորմութիւնը գերեզմանում,*
կամ քո ճշմարտութիւնը՝ կորստեան մէջ:
13 *Քո հրաշալի գործերը մի՞թէ խաւարի՞ մէջ պիտի ճանաչուեն,*
կամ քո արդարութիւնը՝ մոռացուած երկրում:
14 *Ես, Տէ՛ր, առ քեզ աղաղակեցի, առաւօտեան իմ աղօթքը քեզ պիտի հասնի:*
15 *Ինչո՞ւ, Տէ՛ր, մերժում ես իմ հոգին,*
կամ շրջում երեսդ ինձնից:
16 *Տնանկ եւ չարքաշ եմ ես մանկութիւնից ի վեր,*
բարձրութիւնից ընկայ ու շուարեցի:
17 *Քո բարկութիւնը ծանրացաւ ինձ վրայ,*
քո արհաւիրքները խռովեցրին ինձ:
18 *Ջրի պէս օրնիբուն շրջապատեցին ինձ,*
պաշարեցին ինձ բոլորը միասին:
19 *Իմ թշուառութեան պատճառով*
բարեկամներիս ու ծանօթներիս հեռացրիր ինձնից:

ՕՐՀՆԵՐԳ ԵՒ ԱՂՕԹՔ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՍՏՎՈՒՆ

88

1 *Եման Եզրայելացու իմաստութիւնը*

2 *Քո ողորմութիւնները, Տէ՛ր, յաւիտեան պիտի օրհնեմ,*
սերնդից սերունդ պիտի պատմեմ իմ բերանով:
3 *Ասացիր՝ «Աշխարհս ողորմութեամբ պիտի շինուի».*
քո ճշմարտութիւնը երկնքում պիտի հաստատուի:
4 *Ուխտ կնքեցի իմ ընտրեալների հետ,*
երդուեցի իմ Դաւիթ ծառային՝
5 *որ իր սերունդը յաւիտեան պիտի հաստատեմ*
եւ նրա աթոռը դարէդար պիտի կառուցեմ:
6 *Երկինքը պիտի պատմի քո հրաշագործութիւնը, Տէ՛ր,*
եւ քո ճշմարտութիւնը՝ սրբերի ժողովում:
7 *Ամպերի մէջ ո՞վ է քեզ հաւասար,*
կամ Աստծու որդիների մէջ ո՞վ է Տիրոջը նման:
8 *Աստուած փառաւորուած է իր սրբերի խորհրդում,*
մեծ եւ ահաւոր է նա իր շուրջը եղողների համար:
9 *Զօրութիւնների՛ Տէր Աստուած,*
ո՞վ է քեզ նման.
հզօր ես դու, Տէ՛ր,
եւ ճշմարտութիւնդ քո շուրջն է:
10 *Դու տիրում ես ծովի զօրութիւններին,*
եւ նրա ալիքների խռովքը դու ես հանդարտեցնում:
11 *Դու վիրաւորների պէս խոնարհեցրիր ամբարտաւաններին*
եւ բազկիդ ուժով ցրեցիր քո թշնամիներին:
12 *Քոնն է երկինքը եւ քոնն է երկիրը,*
աշխարհն իր մէջ եղածով դո՛ւ հաստատեցիր:
13 *Հիւսիսն ու Հարաւը դո՛ւ ստեղծեցիր,*
Թաբորն ու Հերմոնը քո անուամբ պիտի ցնծան:
14 *Քոնն է բազուկը եւ քոնն է կարողութիւնը,*
թող զօրանայ քո աջը, եւ բարձր լինի քո ձեռքը:
15 *Քո աթոռը հաստատուած է արդարութեան ու իրաւունքի վրայ,*
ողորմութիւնն ու ճշմարտութիւնը քո առաջից պիտի ընթանան:
16 *Երանի այն ժողովրդին, որը գիտակցում է քո օրհնութիւնը, Տէ՛ր,*
նա քո երեսի լոյսով պիտի ընթանայ:
17 *Նա քո անուամբ պիտի ցնծայ գիշեր-ցերեկ,*
ու քո արդարութեամբ բարձր պիտի լինի:
18 *Դու ես պարծանքը մեր զօրութեան,*
եւ մեր եղջիւրը քո կամքով պիտի բարձրանայ:
19 *Տիրոջից է Իսրայէլի սրբի՝ մեր թագաւորի օգնութիւնը:*

ԴԱՒԹԻՆ ԱՐՈՒԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

20 *Այնժամ դու տեսիլքի մէջ խօսեցիր որդիներիդ հետ՝*
ասելով. «Օգնութի՛ւն ցոյց կը տամ հզօրին,
եւ կը բարձրացնեմ ժողովրդիս ընտրեալին:
21 *Գտայ իմ Դաւիթ ծառային,*
սուրբ իւղովս օծեցի նրան:
22 *Ձեռքս կ'ընդունի նրան,*
եւ բազուկս նրան կը զօրացնի:
23 *Թշնամին չի վնասի նրան,*
եւ անօրէնութեան որդին նրան չի չարչարի:
24 *Նրա թշնամիներին կը հարուածեմ նրա առաջ,*
եւ նրան ատողներին պարտութեան կը մատնեմ:
25 *Իմ ճշմարտութիւնն ու ողորմութիւնը նրա հետ են,*
եւ նրա եղջիւրն իմ անուամբ բարձր կը լինի:
26 *Նրա ձեռքը կը հաստատեմ ծովի վրայ,*
եւ նրա աջը՝ գետերի վրայ:
27 *Նա ձայն կը տայ ինձ. "Իմ հայրն ես դու, Աստուա՛ծ,*
հաճեցնողն իմ փրկութեան":
28 *Ես իմ անդրանիկ որդին կը դարձնեմ նրան,*
եւ բարձր՝ քան երկրի բոլոր թագաւորները:
29 *Յաւիտեան կը պահեմ նրա համար իմ ողորմութիւնը,*
եւ ուխտս նրա հանդէպ հաւատարիմ կը մնայ:
30 *Նրա սերունդը կը հաստատեմ յաւիտեանս յաւիտենից,*
եւ նրա գահն՝ ինչպէս օրերը երկնքի:
31 *Եթէ նրա որդիները լքեն իմ օրէնքը*
եւ իմ դատաստանով չկամենան ընթանալ,
32 *եթէ անարգեն իմ արդարութիւնը*
եւ իմ պատուիրանները չպահեն,
33 *գաւազանով կը հարուածեմ նրանց անօրէնութիւններին,*
եւ տանջանքներով՝ նրանց անիրաւութիւններին:
34 *Բայց իմ ողորմութիւնից չեմ զրկի նրանց,*
եւ ճշմարտութեանս չեմ դաւաճանի:
35 *Ոչ էլ իմ ուխտը կ'անարգեմ,*
կամ կ'արհամարհեմ այն, ինչ դուրս է գալիս իմ շրթունքներից:
36 *Մէկ անգամ ընդմիշտ ես երդուեցի իմ սրբութեամբ,*
որ Դաւթին չեմ խաբի:
37 *Նրա սերունդը յաւիտեան կը մնայ,*
եւ ինչպէս արեւ,
38 *ինչպէս լուսին, նրա աթոռն իմ առջեւ յաւերժ հաստատուած կը մնայ երկնքում,*
որպէս հաւատարիմ վկայ»:

ՈՂԲ ԹԱԳԱՒՈՐԻ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

39 *Բայց արդ, դու մերժեցիր, անարգեցիր*
ու գետին տապալեցիր քո օծեալին:
40 *Հրաժարուեցիր քո ծառայի ուխտից,*
նրա սրբութիւնը հողին հաւասարեցրիր:
41 *Քանդեցիր նրա բոլոր պարիսպները,*
եւ նրա բերդերը խարխլեցիր:
42 *Ճանապարհի անցորդները կողոպտեցին նրան,*
եւ նա իր հարեւանների նախատինքը դարձաւ:
43 *Բարձրացրիր նրան նեղողների աջը,*
ուրախացրիր նրա բոլոր թշնամիներին:
44 *Նրա սրից ետ դարձրիր քո օգնութիւնը,*
եւ պատերազմի մէջ նրան չհովանաւորեցիր:
45 *Անարգեցիր նրա սրբութիւնը,*
եւ նրա գահը գետին տապալեցիր:
46 *Նրա կեանքի օրերը նուազեցրիր,*
եւ նրան ամօթով ծածկեցիր:

ԱՂՕԹՔ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

47 *Մինչեւ ե՞րբ պիտի երեսդ շրջես խպտա,*
եւ բարկութիւնդ պիտի բորբոքուի՞ հրի պէս:

48 Իսկ արդ, յիշի՛ր ու տե՛ս, թէ ո՞րն
է իմ հանգիստը.
միթէ իզո՞ւր ստեղծեցիր մարդկանց
բոլոր որդիներին:
49 Ո՞վ է այն մարդը, որ պիտի ապրի
ու մահ չտեսնի,
կամ իր հոգին պիտի փրկի դժոխքից:
50 Ո՞ւր են քո նախկին ողորմութիւնները, Տէ՛ր,
որոնք քո ճշմարտութեամբ խոստացար Դաւթին:
51 Յիշի՛ր ծառայիդ նախատինքները,
որ ծոցումս կրեցի բազում ազգերից:
52 Տէ՛ր, քո թշնամիները նախատեցին նրան,
նախատելով հատուցեցին քո օծեալին:
53 Օրհնեալ է Տէր Աստուածը յաւիտեանս յաւիտենից.
թող լինի, թող լինի:

89 Աստծու մարդու՝ Մովսէսի աղօթքը

1 Տէ՛ր, սերնդից սերունդ մեր ապաւէնը եղար:
2 Դու կայիր, երբ դեռ չէին հաստատուել լեռները
եւ չէին ստեղծուել երկիրն ու ողջ տիեզերքը,
յաւիտենութիւնից մինչեւ յաւիտենութիւն:
3 Մարդուն մի՛ մատնիր տառապանքի,
քանզի ասացիր. «Մարդկա՛նց որդիներ, վերադարձէ՛ք ինձ»:
4 Հազար տարին Տիրոջ աչքում երէկուայ օրուայ պէս է, որ անցաւ,
կամ գիշերուայ մի պահի պէս:
5 Նրանց տարիները տառապալից պիտի լինեն.
առաւօտեան խոտի պէս պիտի բուսնեն,
6 առաւօտեան խոտի պէս պիտի դալարեն ու ծաղկեն.
երեկոյեան պիտի թոռոմեն, չորանան ու ընկնեն:
7 Մենք մաշուեցինք քո բարկութիւնից,
եւ քո զայրոյթից մենք խռովուեցինք:
8 Մեր մեղքերը առջեւդ դրիր,
իսկ մեր կեանքը՝ երեսիդ լոյսի տակ:
9 Մեր օրերը բոլորովին նուազեցին,
եւ մենք խռովուեցինք քո բարկութիւնից:
Մեր կեանքի ժամանակը դադար չունի սարդի նման:
10 Մեր կեանքի օրերի թիւն է եօթանասուն տարի,
կամ առաւելագոյնը՝ ութսուն տարի,
որոնց մեծ մասն անցնում է ցաւով ու հեծութեամբ:
Մեզ վրայ հեզութիւն իջաւ, եւ մենք խրատուեցինք:
11 Իսկ ո՞վ գիտէ քո բարկութեան ուժը,
կամ քո պատճառած ահից ո՞վ կը չափի քո զայրոյթը:
12 Այսպէս, ինձ ցո՛յց տուր քո աջը,
եւ սրտով խոնարհներին՝ քո իմաստութիւնը:
13 Դարձի՛ր, Տէ՛ր: Մինչեւ ե՞րբ ... Մխիթարի՛ր քո ծառաներին:
14 Առաւօտեան լիացանք քո ողորմութեամբ,
ցնծացինք եւ ուրախ եղանք մեր կեանքի բոլոր օրերին:
15 Ուրախացանք այն օրերի փոխարէն,
երբ հնազանդեցրիր մեզ,
եւ այն տարիների, երբ չարչարանք տեսանք:
16 Նայի՛ր, Տէ՛ր, քո ծառաներին ու քո ձեռակերտներին,
եւ առաջնորդի՛ր նրանց որդիներին:
17 Տէր Աստծու լոյսը թող մեզ վրայ իջնի.
ուղղի՛ր մեր ձեռքի գործերը, Տէ՛ր,
մեր ձեռքի գործերը յաջողեցրո՛ւ մեզ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆԸ

90 Դաւթի օրհներգը

1 Ով ապրում է Բարձրեալի աջակցութեամբ,
երկնքում կը հանգչի Աստծու հովանու տակ:
2 Տիրոջը կ'ասի. «Դու ես ինձ ընդունողը, ապաւէ՛ն իմ Աստուած,

որի վրայ եմ դրել իմ յոյսը»:
3 Նա ինձ կը փրկի որսորդի թակարդից
ու խռովեցուցիչ խօսքերից:
4 Իր ծոցում կը պահի քեզ, եւ դու ապահովութիւն կ'ունենաս նրա թեւերի հովանու տակ:
5 Նրա ճշմարտութիւնը որպէս զէնք քո շուրջը կը լինի:
6 Դու չես վախենայ գիշերուայ զարհուրանքից
եւ ոչ էլ ցերեկուայ սլացող նետից,
խաւարում շրջող բանից,
եւ կէսօրին դեւի գայթակղութիւնից:
7 Քո կողքին հազարներ կ'ընկնեն,
եւ քո աջին՝ տասնեակ հազարներ,
բայց քեզ ոչինչ չի մերձենայ:
8 Բաւական է, որ քո աչքով նայես,
եւ դու կը տեսնես մեղաւորների ստացած հատուցումը:
9 Դու, Տէ՛ր, իմ յոյսն ես:
Բարձրեալին քեզ ապաւէն դարձրիր:
10 Չարիքը չի հասնի քեզ,
եւ տանջանքները չեն մօտենայ քո տան յարկին:
11 Իր հրեշտակներին հրամայուած է քո մասին,
որ պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներին:
12 Իրենց բազուկների վրայ պիտի վերցնեն քեզ,
որ երբեք ոտքդ քարի չխփես:
13 Դու կը քայլես իժերի ու քարբերի վրայով,
ոտքով կը կոխոտես առիւծին ու վիշապին:
14 Քանի որ յոյսն ինձ վրայ դրեց,
ես կը փրկեմ նրան,
նրան հովանի կը լինեմ, քանզի անունս ճանաչեց:
15 Ինձ ձայն կը տայ՝ ու կը լսեմ նրան,
եւ նրա հետ կը լինեմ նեղութեան մէջ.
կը փրկեմ ու կը փառաւորեմ նրան:
16 Բազում օրերով նրան կը լիացնեմ
ու ցոյց կը տամ նրան իմ փրկութիւնը:

ՓԱՌԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

91 1 Շաբաթօրեայ օրհնութեան սաղմոսը

2 Բարի է գոհաբանել Տիրոջը,
սաղմոս երգել քո անունը, ո՛վ Բարձրեալ:
3 Առաւօտեան պատմել քո ողորմութիւնը,
եւ գիշերը՝ քո ճշմարտութիւնը,
4 տասնալար սաղմոսարանով, օրհնութեան ձայնով գովաբանել:
5 Ուրախացրիր ինձ, Տէ՛ր, քո արարումներով,
եւ պիտի ցնծամ ձեռքիդ գործերով:
6 Որքա՜ն մեծ են քո գործերը, Տէ՛ր,
եւ չափազանց խոր են խորհուրդները քո:
7 Անզգամ մարդը չի ըմբռնի,
եւ անմիտը չի հասկանայ այս:
8 Մեղաւորները՝ բուսնելով ինչպէս խոտ,
եւ անօրէնութիւն գործողները՝ ծաղկելով,
կը կործանուեն յաւիտեանս յաւիտենից:
9 Բայց դու, Տէ՛ր, Բարձրեալ ես յաւիտեան:
10 Ահա քո թշնամիները, Տէ՛ր,
ահա քո թշնամիները կը կորչեն,
կը ցրուեն բոլոր նրանք, ովքեր անօրէնութիւն են գործում:
11 Միեղջերուի պէս բարձր կը լինի եղջիւրն իմ,
իսկ ծերութիւնն իմ՝ առատ օծանելիքով:
12 Աչքս դիպաւ թշնամիներիս,
որոնք չարութեամբ յարձակուել են վրաս:
Ականջս կը լսի նրանց:
13 Արդարներն արմաւենու պէս կը ծաղկեն,
Լիբանանի մայրիների պէս կը բազմանան:
14 Դրանք կը տնկուեն Տիրոջ տանը,
ու կը ծաղկեն մեր Աստծու գաւիթներում:
15 Դրանք պտղաբեր կը լինեն նաեւ ծերութեան ժամանակ՝
գիրդ ու փափուկ,
16 որպէսզի աւետեն, թէ ճշմարիտ է Տէրը,

եւ նրա մէջ անիրաւութիւն չկայ:

ԱՍՏՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐ

92 *Առաջին շաբաթուայ օրը, երբ հաստատուեց երկիրը. Դաւթի օրհներգը*

1 *Տէրը թագաւորեց, վայելչութիւն հագաւ,*
զօրութիւն հագաւ Տէրն ու գօտեւորուեց,
հաստատեց աշխարհը, որ չսասանուի:
2 *Սկզբից է պատրաստուած գահը քո,*
եւ յաւերժ ես դու:
3 *Բարձրացան գետերը, Տէ՛ր,*
գետերը բարձրացրին ձայնն իրենց.
գետերը պիտի յորդեն իրենց հունից դուրս:
4 *Առատ ջրի ձայնից ծովի ալիքներն սքանչելի դարձան.*
սքանչելի ես դու բարձունքներում, Տէ՛ր:
5 *Մենք անչափ հաւատացինք քո վկայութիւններին.*
սրբութիւնը վայել է քո տանը, Տէ՛ր, երկար օրեր:

ԱՍՏՈՒԱԾ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԷԺԽՆԴԻՐ

93 *Դաւթի չորեքշաբթի օրուայ սաղմոսը*

1 *Աստուած՝ վրէժխնդի՛ր Տէր,*
Աստուա՛ծ վրէժխնդիր, դու յայտնուեցիր:
2 *Բա՛րձր եղիր, որ երկիրը դատես,*
հատուցո՛ւմ տուր ամբարտաւաններին:
3 *Մինչեւ ե՞րբ մեղաւորները, Տէ՛ր,*
մինչեւ ե՞րբ մեղաւորները պիտի պարծենան,
4 *յոխորտալով անիրաւութիւն բարբառեն,*
բարբառեն բոլոր նրանք, ովքեր անօրէնութիւն են գործում:
5 *Քո ժողովրդին, Տէ՛ր, ճնշեցին,*
եւ քո ժառանգութիւնը չարչարեցին:
6 *Այրուն ու պանդխտին սպանեցին,*
որբերին կոտորեցին ու ասացին.
7 *«Տէրը դա չի տեսնում,*
եւ Յակոբի Աստուածն ուշ չի դարձնում»:
8 *Ուշքի՛ եկէք, ժողովրդի անզգամնե՛ր ու անմիտնե՛ր,*
մինչեւ ե՞րբ պիտի չըմբռնէք:
9 *Միթէ ականջ ստեղծողն՝ ինքը չի՞ լսի,*
կամ աչք ստեղծողն՝ ինքը չի՞ տեսնի:
10 *Ազգերին խրատողն ու մարդուն գիտութիւն ուսուցանողը*
միթէ չի՞ յանդիմանի:
11 *Տէրը գիտէ մարդկանց խորհուրդները, որոնք ունայն են:*
12 *Երանի այն մարդուն, որին խրատում ես դու, Տէ՛ր,*
եւ օրէնքներդ նրան սովորեցնում:
13 *Դու նրան հանդարտեցնում ես չար օրերին,*
մինչեւ որ մեղաւորի համար խոր փոս փորուի:
14 *Տէրը չի մերժի իր ժողովրդին,*
եւ իր ժառանգութիւնը չի անտեսի,
15 *մինչեւ որ դատաստանն արդար դառնայ,*
եւ բոլոր նրանք, որ սրտով ուղիղ են, ընդունեն այն:
16 *Ո՞վ ինձ հետ պիտի ելնի չարամիտների դէմ,*
կամ ո՞վ ինձ հետ պիտի միաբանի ընդդէմ նրանց,
ովքեր անօրէնութիւն են գործում:
17 *Եթէ Տէրն ինձ չաջակցէր,*
մի փոքր եւս՝ եւ հոգիս կը բնակուէր դժոխքում:
18 *Երբ ասում էի, թէ՝ ահա ոտքերս սասանուեցին,*
քո ողորմութիւնը, Տէ՛ր, օգնում էր ինձ:
19 *Սրտիս ցաւերի բազմանալու ժամին*
քո մխիթարութիւնը հրճուեցնում էր իմ հոգին:
20 *Թող չհաւասարուի քեզ աթոռն անօրէնութեան,*
որ վնաս է պատճառում օրէնքին:
21 *Արդարի հոգին որսացին,*
եւ անմեղի արիւնն էին դատապարտում:

22 *Տէրն եղաւ իմ ապաւէնը,*
իմ յոյսի օգնական Աստուածը:
23 *Տէրը նրանց պիտի հատուցի իրենց անօրէնութեան համեմատ,*
իրենց չարութեան համեմատ պիտի կործանի նրանց Տէր Աստուածը մեր:

ԱՂԵՐՍ ՏԻՐՈՋ ԱՌԱՋ

94 *Դաւթի օրհներգը*

1 *Եկէ՛ք ցնծանք Տիրոջ առջեւ,*
աղաղակենք մեր փրկիչ Աստծուն:
2 *Փութանք նրա մօտ խոստովանութեամբ,*
սաղմոսերգութիւններով աղաղակենք առ Աստուած:
3 *Մեծ է Աստուած, Տէր,*
մեծ թագաւոր ողջ աշխարհում:
4 *Նրա ձեռքում են բոլոր եզերքները երկրի,*
եւ նրանն են բարձունքները լեռների:
5 *Նրանն է ծովը, եւ նա՛ արարեց այն,*
ու ցամաքը նրա ձեռքերն ստեղծեցին:
6 *Եկէ՛ք երկրպագենք նրան,*
խոնարհուենք ու լաց լինենք մեր Արարչի՝ Տիրոջ առջեւ:
7 *Տէր Աստուածն է նա մեր,*
մենք՝ նրա ձեռքի տակի ժողովուրդը եւ նրա արօտի ոչխարները:
8 *Այսօր, երբ լսէք ձայնը նրա,*
մի՛ խստացրէք սրտերը ձեր դառնութեամբ,
ինչպէս փորձութեան օրն անապատում,
9 *որտեղ ինձ փորձեցին ձեր հայրերը,*
քննեցին ինձ ու տեսան իմ գործերը:
10 *Քառասուն տարի տքնեցի այդ ազգի համար*
եւ ասացի. «Նրանք միշտ մոլորուած են սրտով,
ու ճանապարհներս չճանաչեցին»:
11 *Ուստի երդուեցի զայրոյթիս պահին,*
որ նրանք չեն մտնի իմ հանգստի մէջ:

ԱՍՏՈՒԱԾ ԳԵՐԱԳՈՅՆ ԹԱԳԱՒՈՐ

95 *Սաղմոս Դաւթի, այն ժամանակ, երբ տաճարը շինուեց*

1 *Օրհնեցէ՛ք Տիրոջը նոր օրհներգով,*
օրհնեցէ՛ք Տիրոջը, համայն աշխարհի մարդիկ:
2 *Օրհնեցէ՛ք Տիրոջն ու օրհնեցէ՛ք անունը նրա,*
օրըստօրէ աւետեցէ՛ք փրկութիւնը նրա:
3 *Հեթանոսների մէջ փառքը պատմեցէ՛ք նրա,*
եւ բոլոր ժողովուրդների մէջ՝ սքանչելագործութիւնները նրա:
4 *Մեծ է Տէրն ու անչափ օրհնեալ,*
ահարկու է նա բոլոր կուռքերից աւելի:
5 *Հեթանոսների բոլոր կուռքերը դեւեր են,*
իսկ Տէրն արարիչն է երկնքի:
6 *Խոստովանութիւն եւ վայելչութիւն կայ նրա առջեւ,*
սրբութիւն եւ մեծափառութիւն՝ նրա սրբարանում:
7 *Մատուցեցէ՛ք Տիրոջը, ազգատոհմե՛ր,*
մատուցեցէ՛ք Տիրոջը փառք ու պատիւ:
8 *Մատուցեցէ՛ք Տիրոջը փառքն իր անուան,*
ընծանե՛ր վերցրէք ու մտէ՛ք սրահները նրա:
9 *Երկրպագեցէ՛ք Տիրոջն իր սրբարանի գաւիթներում,*
քանզի ամբողջ երկիրը պիտի խռովուի նրա ներկայութիւնից:
10 *Հեթանոսների մէջ ասացէ՛ք, թէ՝ «Տէրը թագաւորեց,*
նա աշխարհն հաստատեց, որ չսասանուի,
եւ նա իր ժողովրդին արդարութեամբ պիտի դատի»:
11 *Թող ուրախ լինի երկինքն ու ցնծայ երկիրը,*
թող զուարճանայ ծովն իր մէջ եղած բոլոր կենդանի էակներով:
12 *Թող հրճուեն դաշտերը եւ նրանցում եղած ամէն ինչ,*
թող այնժամ ցնծան անտառի բոլոր ծառերը

13 Տիրոջ առջեւ, որ գալիս է,
գալիս է դատելու երկիրը:
Նա պիտի դատի տիեզերքն արդարութեամբ,
եւ բոլոր ժողովուրդներին՝ իր ճշմարտութեամբ:

ՏԷՐԸ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

96 Սաղմոս Դաւթի, այն ժամանակ, երբ երկիրը հաստատուեց

1 Տէրը թագաւորեց, թող երկիրը ցնծայ,
թող ուրախ լինեն բազում կղզիները:
2 Ամպ եւ մէգ է շուրջը նրա,
իրաւունքով ու արդարութեամբ է հաստատուած աթոռը նրա:
3 Նրա առջեւից հուր պիտի ընթանայ,
այրելով իր շուրջն եղող թշնամիներին:
4 Նրա կայծակները երեւացին տիեզերքում,
երկիրը տեսաւ դրանք ու սասանուեց:
5 Լեռները մոմի պէս պիտի հալուեն Տիրոջ ներկայութիւնից,
ամբողջ երկիրը՝ Տիրոջ ներկայութիւնից:
6 Երկինքը պիտի պատմի արդարութիւնը նրա,
բոլոր ժողովուրդները տեսան փառքը նրա:
7 Թող խայտառակուեն բոլոր նրանք, ովքեր երկրպագում են կուռքերին,
եւ պարծենում իրենց արձաններով:
Նրա բոլոր հրեշտակները պիտի երկրպագեն իրեն,
8 քանզի լսեց եւ ուրախ եղաւ Սիոնը.
Ցուդայի երկրի դուստրերը պիտի ցնծան
քո դատաստանների համար, Տէ՛ր:
9 Դու Բարձրեալ ես ողջ երկրի վրայ,
անչափ վեր եղար բոլոր կուռքերից:
10 Տիրո՛ջը սիրողներ, ատեցէ՛ք չարութիւնը.
Տէրը պահպանում է իր սրբերի հոգիները,
մեղաւորների ձեռքից փրկում է նրանց:
11 Արդարների համար լոյս ծագեց,
եւ սրտով չիտակների համար ուրախութիւն եղաւ:
12 Ցնծացէ՛ք, արդարնե՛ր, Տիրոջով,
գոհաբանեցէ՛ք յիշատակը նրա սրբութեան:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՇԽԱՐՀԻ ԻՇԽԱՆ

97 Սաղմոս Դաւթի

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը նոր օրհներգով,
քանզի սքանչելագործութիւններ արեց նա:
Իր Աջն ու իր սուրբ բազուկը փրկեցին նրան:
2 Տէրը ցոյց տուեց իրենից եկող փրկութիւնը,
ազգերի առջեւ յայտնեց իր արդարութիւնը:
3 Իր ողորմութեամբ յիշեց Յակոբին,
իր ճշմարտութեամբ՝ տունն Իսրայէլի.
եւ երկրի բոլոր ծայրերը տեսան մեր Աստծու շնորհած փրկութիւնը:
4 Աղաղակի՛ր Տիրոջ առջեւ, ո՛ղջ երկիր.
օրհնեցէ՛ք, ցնծացէ՛ք ու սաղմո՛ս երգեցէք:
5 Սաղմո՛ս երգեցէք մեր Աստծուն օրհնութեամբ,
օրհնութեամբ ու սաղմոսերգութեամբ:
6 Կոփածոյ շեփորի օրհնութեան ձայնով,
օրհնութեամբ, ցնծութեամբ ու եղջերափողի ձայնով
աղաղակեցէ՛ք Տիրոջ՝ թագաւորի առջեւ:
7 Թող խռովուի ծովն իր մէջ եղած բոլոր կենդանի էակներով,
տիեզերքն իր ամբողջ բնակիչներով:
8 Եւ գետերը թող ծափ տան միասին իրենց ձեռքերով,
ու լեռները ցնծան Տիրոջ առջեւ,
9 քանզի Տէրը եկել հասել է՝ երկիրը դատելու:
Նա պիտի դատի աշխարհն արդարութեամբ,
եւ իր ժողովուրդներին՝ ճշմարտութեամբ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՐԴԱՐ ԵՒ ՍՈՒՐԲ

98 Սաղմոս Դաւթի

1 Տէրը թագաւորեց, ժողովուրդները բարկացան:
Ո՛վ քերովբէների վրայ նստողդ, երկիրը սասանուեց:
2 Տէրը մեծ է Սիոնում
ու բարձր, քան ժողովուրդները բոլոր:
3 Գոհութիւն մատուցենք քո մեծ անունը,
քանզի ահաւոր ու սուրբ է նա:
4 Իրաւունք սիրելը պատիւ է բերում թագաւորին.
դո՛ւ հաստատեցիր իրաւունքն ու արդարութիւնը Յակոբի մէջ† :
5 Մեծարեցէ՛ք մեր Տէր Աստծուն,
երկրպագեցէ՛ք նրա ոտքերի պատուանդանին,
քանզի Նա սուրբ է:
6 Մովսէսն ու Ահարոնը՝ երէցները նրա,
Սամուէլը, որ նրա անունը կանչողների մէջ էր,
ձայն էին տալիս Տիրոջն,
ու նա լսում էր նրանց
7 եւ ամպի սիւնով խօսում նրանց հետ:
Նրանք պահպանում էին վկայութիւնը նրա
եւ հրամանները, որ տուեց իրենց:
8 Տէ՛ր Աստուած մեր, դու լսում էիր նրանց.
Աստուա՛ծ, դու քաւիչ եւ վրէժխնդիր էիր լինում
նրանց բոլոր գործերի համար:
9 Մեծարեցէ՛ք մեր Տէր Աստծուն,
երկրպագեցէ՛ք նրա սուրբ լերանը,
քանզի սուրբ է Տէր Աստուածը մեր:

ՄԵՆՔ ՆՐԱ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԵՆՔ

99 1 Դաւթի խոստովանութեան սաղմոսը

2 Աղաղակեցէ՛ք Տիրոջ առջեւ, երկրի բոլո՛ր բնակիչներ,
ծառայեցէ՛ք Տիրոջն ուրախութեամբ:
3 Նրա առջեւ ելէ՛ք ցնծութեամբ.
իմացէ՛ք, որ Նա է Տէր Աստուածը մեր.
Նա ստեղծեց մեզ, եւ ոչ թէ մենք եղանք.
Նրա ժողովուրդն ենք մենք ու ոչխարները նրա արօտի:
4 Մտէ՛ք նրա դռներով խոստովանութեամբ,
եւ մտէ՛ք նրա սրահները՝ օրհնութեամբ.
գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջն ու օրհնեցէ՛ք անունը նրա:
5 Քաղցր է Տէրը, նրա ողորմութիւնը յաւերժ է,
նրա ճշմարտութիւնը՝ սերնդից սերունդ:

ԻՐԱՒՈՒՆՔԸ ՅԱՐԳԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄ ՏԻՐՈՋ ԱՌԱՋ

100 Սաղմոս Դաւթի

1 Ողորմութեանդ ու արդարութեանդ մէջ պիտի օրհնեմ քեզ, Տէ՛ր,
սաղմոս պիտի երգեմ,
2 եւ ի մտի պիտի ունենամ անբիծ ճանապարհով ընթանալ,
մինչեւ որ նա գայ ինձ մօտ.
քանզի ես իմ տան մէջ սրտիս անարատութեամբ էի ընթանում:
3 Աչքերիս առջեւ անիրաւ բան չդրի,
եւ ուրացութիւն անողներին ատեցի:
4 Ծուռ սիրտ ունեցողն ինձ չմօտեցաւ.
անզգամն ինձնից խոտորուեց,
բայց ես հոգ չարեցի:
5 Ով ծածուկ խօսեց իր ընկերոջ դէմ,
նրան բացէիբաց հալածեցի,
ով ամբարտաւան էր աչքով եւ ագահ՝ սրտով,
նրա հետ հաց իսկ չկերայ:
6 Աչքերս սեւեռուած էին երկրի հաւատացեալներին,
որպէսզի նրանք ինձ հետ նստեն.
ով գնում էր անբիծ ճանապարհով,
նա՛ էր ինձ ծառայում:
7 Ամբարտաւանութիւն անողն իմ տան մէջ չէր բնակւում,
անիրաւութիւն խօսողն աչքերիս առջեւ յաջողութիւն չունէր:
8 Առաւօտներն սպանում էի երկրի բոլոր մեղաւորներին,
որ Տիրոջ քաղաքից վերացնեմ բոլոր

†Իսրայէլի մէջ:

նրանց, ովքեր անօրէնութիւն են գործում:

ԱՆՁԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՅՍ

101 1 *Բորոտի աղօթքը, երբ նա իր անձկութեան մէջ Տիրոջ առաջ դրեց իր խնդրանքները*

2 *Տէ՛ր, լսի՛ր իմ աղօթքը,*
աղաղակս թող հասնի քեզ:
3 *Մի՛ շրջիր երեսդ ինձնից,*
նեղութեանս օրը ի՛նձ մօտեցրու ականջը քո.
երբ ձայն տամ քեզ՝ իսկոյն լսի՛ր ինձ:
4 *Մխի պէս սպառուեցին օրերն իմ,*
եւ ոսկորներս չորացան ինչպէս խոռիւ:
5 *Սիրտս խոցուեց եւ ցամաքեց խոտի պէս,*
հեծութեանս ձայնից հաց ուտելս մոռացայ:
6 *Ոսկորս մարմնիս կպաւ,*
եւ նմանուեցի անապատի հաւալուսնին:
7 *Եղայ ինչպէս բու աւերակներում,*
տքնեցի ու դարձայ ինչպէս մենաւոր ճնճղուկ տանիքում:
8 *Թշնամիներս ամէն օր նախատեցին ինձ,*
եւ ինձ գովողներն ինձնով երդուեցին:
9 *Մոխիր կերայ հացի տեղ,*
եւ ըմպելիքս արտասուքով խառնեցի
10 *քո բարկութեան ու զայրոյթի պատճառով,*
քանզի դու ինձ բարձրացրիր եւ վայր գցեցիր:
11 *Օրերս անցան ստուերի պէս,*
եւ ես ցամաքեցի ինչպէս խոտ:
12 *Դու, Տէ՛ր, յաւերժ ես,*
եւ սերնդից սերունդ է յիշատակը քո:
13 *Դու պիտի ելնես, որ գթաս Սիոնին.*
ժամանակն է գթալու նրան, հասել է ժամը:
14 *Ծառաներդ նրա քարերը հաւանեցին,*
ու գթացին նրա հողին:
15 *Հեթանոսները պիտի սոսկան քո անունից,*
եւ երկրի բոլոր թագաւորները՝ քո փառքից:
16 *Տէրը պիտի Սիոնը վերաշինի,*
եւ իր փառքով երեւայ այնտեղ:
17 *Ուշ դարձրեց նա խեղճերի աղօթքին,*
եւ չարհամարհեց խնդրանքը նրանց:
18 *Սա պիտի գրուի այլ սերնդի համար,*
որպէս ժառանգութիւն ստացած նրա ժողովուրդը պիտի օրհնի Տիրոջը:
19 *Նայեց նա իր սրբութեան բարձրութիւնից,*
Տէրն երկնքից երկիր նայեց՝
20 *բանտարկեալների հառաչանքը լսելու*
եւ մահապարտների որդիներին ազատ արձակելու համար,
21 *որ Սիոնում պատմեն անունը Տիրոջ,*
եւ Երուսաղէմում՝ գովքը նրա,
22 *որ ժողովուրդներն իրար մօտ հաւաքուեն,*
եւ թագաւորները Տիրոջը ծառայեն:
23 *Նա պատասխանեց նրան իր հզօրութեան ճանապարհին.*
«Ասա՛ ինձ սակաւութիւնն իմ օրերի,
24 *եւ ինձ մի՛ վերցրու օրերիս կէսին,*
քանզի յաւերժ են տարիները քո:
25 *Ի սկզբանէ, Տէ՛ր, երկրի հիմքերն հաստատեցիր,*
եւ երկինքն էլ գործն է քո ձեռքերի:
26 *Կ՚անցնեն դրանք, բայց դու կաս եւ կը մնաս յաւիտեան.*
ամէն ինչ ձորձի պէս կը մաշուի,
դու վերարկուի պէս կը փոխես դրանք, ու դրանք կը փոխուեն:
27 *Բայց դու նոյնը կը մնաս,*
եւ քո տարիները չեն անցնի:
28 *Քո ծառաների որդիները կը բնակուեն այնտեղ,*
եւ նրանց սերնդին յաւիտեան յաջողութիւնը կ՚ուղեկցի:

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

102 *Սաղմոս Դաւթի*

1 *Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ,*
եւ իմ բոլոր ոսկորները թող օրհնեն սուրբ անունը նրա:
2 *Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ,*

եւ մի՛ մոռացիր բոլոր պարգեւները նրա,
3 *ով քաւութիւն է տալիս քո մեղքերին,*
բժշկում ախտերը քո բոլոր:
4 *Նա, որ քո կեանքը փրկում է ապականութիւնից,*
քեզ պսակում է ողորմութեամբ ու գթութեամբ,
5 *որ բարութեամբ յագեցնում է ցանկութիւնը քո,*
եւ քո երիտասարդութիւնը նորոգւում է արծուի պէս:
6 *Ողորմութիւն ու արդարութիւն է շնորհում Տէրը բոլոր զրկեալներին:*
7 *Տէրն իր ուղիները ցոյց տուեց Մովսէսին,*
եւ իր կամքը՝ Իսրայէլի որդիներին:
8 *Գթասիրտ, ողորմած է Տէրը,*
համբերատար ու ողորմաշատ:
9 *Տէրն խսպառ չի բարկանում*
եւ յաւիտեան ոխ չի պահում:
10 *Մեր մեղքերի համեմատ չվարուեց մեզ հետ,*
ոչ էլ մեր անօրէնութեան համեմատ հատուցեց մեզ:
11 *Այլ որքան բարձր է երկինքը երկրից,*
այնքան զօրեղ է Տիրոջ ողորմութիւնն իրենից երկիւղ կրողների վրայ:
12 *Որքան հեռու է արեւելքն արեւմուտքից,*
այնքան հեռացրեց նա մեր անօրէնութիւնները մեզնից:
13 *Ինչպէս որ մի հայր գթում է իր որդիներին,*
այնպէս Տէրը պիտի գթայ իրենից երկիւղ կրողներին:
14 *Նա գիտէ կազմուածքը մեր*
եւ յիշում է, որ հող ենք մենք:
15 *Մարդու օրերը խոտի պէս են.*
Նա ծաղկում է ինչպէս վայրի ծաղիկ:
16 *Երբ փչի քամին, նա կ՚անհետանայ,*
եւ նրա տեղն իսկ չի երեւայ:
17 *Բայց Տիրոջ ողորմութիւնը յաւիտեանս յաւիտենից իրենից երկիւղ կրողների վրայ է,*
եւ նրա արդարութիւնը՝ որդոց որդի նրանց հանդէպ,
18 *որոնք պահում են ուխտը նրա,*
յիշում նրա պատուիրաններն ու կատարում դրանք:
19 *Տէրն երկնքում հաստատեց իր աթոռը,*
նրա թագաւորութիւնը տիրում է բոլորին:
20 *Օրհնեցէ՛ք Տիրոջը, նրա բոլո՛ր հրեշտակներ,*
որ հզօր էք ուժով,
կատարում էք խօսքը նրա, լսում ձայնը նրա պատգամների:
21 *Օրհնեցէ՛ք Տիրոջը, նրա բոլո՛ր զօրքեր,*
սպասաւորնե՛ր եւ նրա կամքը կատարողնե՛ր:
22 *Օրհնեցէ՛ք Տիրոջը, նրա բոլոր գործերը,*
ամենուրեք է տէրութիւնը նրա:
Հոգի՛դ իմ, օրհնի՛ր Տիրոջը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՍՔԱՆՉԵԼԻՔՆԵՐԸ

103 *Սաղմոս Դաւթի, աշխարհագործ արարածների մասին*

1 *Օրհնիր Տիրոջը, ո՛վ իմ անձ.*
Տէ՛ր իմ Աստուած, անչափ մեծ ես,
գովաբանութեամբ ու մեծափառութեամբ զգեստաւորուեցիր:
2 *Լոյսը կրեցիր ինչպէս վերարկու,*
երկինքը փռեցիր վրանի պէս,
3 *քո վերնայարկը հաստատեցիր ջրերի վրայ:*
Երթեւեկում է նա ամպերի մէջ
եւ շրջում հողմերի թեւերին:
4 *Նա քամիները հրեշտակներ դարձրեց իրեն,*
եւ կիզիչ հուրը՝ սպասաւորներ:
5 *Երկիրն հաստատեց իր հիմերի վրայ,*
որ յաւիտեան չսասանուի:
6 *Խոր ծովերն ասես նրա զգեցած վերարկուն լինեն:*
Ջրերը կանգնած են լեռների վրայ:
7 *Նրանք պիտի փախչեն քո սաստից,*
եւ քո որոտի ձայնից պիտի սարսափեն:
8 *Լեռները պիտի ելնեն ու դաշտերն իջնեն այնտեղ,*
ուր դու հաստատեցիր դրանք:

9 Սահման դրիր, որպէսզի չանցնեն
եւ չողողեն երկիրը նորից:
10 Աղբիւրները դէպի ձորերն ուղղեցիր,
եւ ջրերը լեռների միջով պիտի հոսեն՝
11 յագեցնելու ծարաւը բոլոր գազանների ու վայրի էշերի:
12 Այնտեղ երկնքի թռչունները բոյն պիտի դնեն
եւ ժայռերի միջից ձայն պիտի տան:
13 Նա ջուր պիտի խմեցնի լեռներին իր շտեմարաններից,
նրա գործերի պտուղներով պիտի երկիրը լցուի:
14 Մարդկանց կարիքների համար լեռներում խոտ աճեցրիր ու բանջար,
եւ հողից հաց հանեցիր:
15 Գինին ուրախացնում է մարդուն,
իւղը՝ զուարթացնում,
եւ հացն ամրացնում է մարդու սիրտը:
16 Թող յագենան Տիրոջ ծառերն ու մայրիները Լիբանանի,
որ դու տնկեցիր:
17 Այնտեղ երկնքի թռչունները ձագ կը հանեն,
եւ արագիլի բոյնը նրանց ապաստան կը լինի:
18 Բարձր լեռներն եղջերուների համար են,
իսկ ժայռերը ապաստան են նապաստակների համար:
19 Դու հաստատեցիր լուսինը ժամանակը չափելու համար,
արեգակն իմացաւ պահն իր մայրամուտի:
20 Դու խաւարն ստեղծեցիր, ու գիշեր եղաւ,
որի մէջ շրջում են բոլոր գազաններն անտառի:
21 Առիւծների կորիւնները մռնչում են ու յօշոտում՝
Աստծուց իրենց ուտելիքը խնդրելով:
22 Արեւածագին նրանք հաւաքւում են եւ հանգչում իրենց որջերում:
23 Մարդ մինչեւ երեկոյ գնում է իր գործին
ու վաստակին իր ձեռքերի:
24 Որքա՜ն մեծ են գործերը քո, Տէ՛ր,
ամէն ինչ իմաստութեամբ ստեղծեցիր դու,
եւ աշխարհը լցուեց քո ստեղծածներով:
25 Ահա ծովը՝ մեծ եւ լայնատարած,
որի մէջ վխտացող կենդանիներին թիւ չկայ.
այնտեղ կան մեծամեծ ու փոքր գազաններ.
26 այնտեղ նաւեր նաւերն են լողում:
Այնտեղ է վիշապը, որ դու ստեղծեցիր,
որ խաղ անի ծովի հետ:
27 Բոլորը քեզ են սպասում,
որ նրանց ուտելիքը ժամանակին տաս:
28 Տալիս ես նրանց, ու նրանք կերակրւում են,
բացում ես ձեռքդ եւ քո հաճութեամբ սնում բոլորին:
29 Երբ շրջում ես երեսդ նրանցից, խռովւում են նրանք,
երբ նրանցից հանում ես նրանց շունչը,
սպառւում եւ հող են դառնում:
30 Ուղարկում ես քո շունչը եւ վերստեղծում նրանց,
ու նորոգում երեսն երկրի:
31 Թող Տիրոջ փառքը յաւիտեան լինի,
եւ Տէրն ուրախանայ իր արարածներով:
32 Նա նայում է երկրին ու դող պատճառում նրան,
մերձենում լեռներին՝ եւ նրանք ծուխ են արձակում:
33 Պիտի օրհնեմ Տիրոջն իմ կեանքում,
սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն՝ քանի դեռ կամ:
34 Օրհնութիւնն իմ քաղցր կը լինի նրան,
եւ ես կ'ուրախանամ Տիրոջով:
35 Թող մեղաւորները պակասեն աշխարհից,
եւ ամբարիշտներ թող չգտնուեն նրա մէջ:
Հոգի՛դ իմ, օրհնի՛ր Տիրոջը: Ալէլուիա:

ԱՍՏԾՈՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

104 Ալէլուիա

1 Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջն
ու նրա անո՛ւնը կանչեցէք,
հեթանոսների մէջ պատմեցէ՛ք գործերը նրա:
2 Օրհնեցէ՛ք ու սաղմո՛ս երգեցէք նրան,
պատմեցէ՛ք բոլոր հրաշագործութիւնները նրա:
3 Պարծեցէ՛ք նրա սուրբ անունով,
թող ուրախ լինի սիրտը նրանց, ովքեր փնտռում են Տիրոջը:
4 Փնտռեցէ՛ք Տիրոջն ու հզօրացէ՛ք,
փնտռեցէ՛ք նրա երեսն ամէն ժամ:
5 Յիշեցէ՛ք հրաշագործութիւնները նրա,
սքանչելիքներն ու բերանի պատուիրանները նրա:
6 Աբրահամի՛ սերունդներ, դուք ծառաներն էք նրա,
ընտրեալներն էք նրա, դուք՝ Յակոբի՛ որդիներ:
7 Նա ինքը Տէր Աստուածն է մեր,
եւ ողջ աշխարհում են դատաստանները նրա:
8 Իր ուխտը նա յաւիտեան յիշեց
եւ իր պատուիրած խօսքը՝ մինչեւ հազար տարի:
9 Ուխտ, որ Աբրահամի հետ կնքեց,
եւ երդումն իր՝ Իսահակի հետ:
10 Յակոբի համար իր հրամանն հաստատեց,
եւ Իսրայէլի համար՝ ուխտն իր յաւիտենական:
11 Ասաց. «Ձեզ պիտի տամ երկիրը Քանանի՝
բաժինը ձեր ժառանգութեան»:
12 Երբ սակաւ էին նրանք թուով,
տկար էին եւ օտար այդ երկրում,
13 դեգերում էին սերնդից սերունդ,
մի թագաւորութիւնից դէպի մի այլ ժողովուրդ,
14 նա թոյլ չտուեց մարդկանց, որ վնասեն նրանց,
կշտամբեց թագաւորներին նրանց համար:
15 «Մի՛ մօտեցէք, - ասաց, - իմ օծեալներին,
եւ մարգարէներիս վնաս մի՛ հասցրէք»:
16 Սովի մատնեց երկիրը նրանց,
հացի ամբողջ զօրութիւնը կոտրեց:
17 Նրանց առաջից մարդ ուղարկեց՝ Յովսէփին,
որ վաճառուեց որպէս ստրուկ:
18 Նրա ոտքերը ցաւեցրին շղթաների մէջ,
եւ նրա մարմինը երկաթով պնդեցրին,
19 մինչեւ որ նրա խօսքը կատարուեց,
եւ Տիրոջ խօսքը փորձեց նրան:
20 Թագաւորը մարդ ուղարկեց ու կապանքներից արձակեց նրան,
ժողովրդի իշխանը բաց թողեց նրան,
21 իր տան վրայ նրան տէր կարգեց
եւ իր ողջ ունեցուածքի տնօրինող,
22 որպէսզի իր ուզածի պէս խրատի նրանց իշխաններին,
եւ նրանց ծերերին իմաստուն դարձնի:
23 Իսրայէլը մտաւ Եգիպտոս,
Յակոբը պանդխտութեան գնաց երկիրը Քամի:
24 Խիստ բազմացրեց Տէրն իր ժողովրդին,
եւ նրան իր թշնամիներից զօրեղ դարձրեց:
25 Թշնամիների սիրտը շրջեց, որ ատեն իր ժողովրդին,
եւ իր ծառաների դէմ նենգութիւն գործեն:
26 Տէրն ուղարկեց իր ծառայ Մովսէսին
եւ իր ընտրեալ Ահարոնին՝
27 տալով նրանց իր նշանների ու սքանչելիքների խօսքը Քամի երկրում:
28 Խաւար ուղարկեց ու խաւարի մէջ թողեց նրանց,
քանզի դառնացրին իր խօսքը:
29 Նրանց գետերն արիւն դարձրեց,
եւ ոչնչացրեց բոլոր ձկները նրանց:
30 Նրանց երկիրն ու նրանց թագաւորների շտեմարանները լցրեց գորտերով:
31 Հրամայեց՝ եւ շնաճանճ ու մժեղ թափուեց
նրանց երկրի բոլոր սահմաններում:
32 Նրանց անձրեւները կարկտի վե-

բածեց,
եւ նրանց երկրում հուր բորբոքուեց:
33 *Հարուածեց այգիներն ու թզենիները նրանց,*
եւ փշրեց նրանց երկրի սահմաններում եղած ծառերը բոլոր:
34 *Ասաց՝ եւ եկաւ մարախ ու խառնիճ, որոնց թիւ չկար:*
35 *Մարախը կերաւ նրանց երկրի ամբողջ խոտը,*
սպառեց նրանց դաշտի ամբողջ բերքը:
36 *Տէրը հարուածեց եգիպտացիների բոլոր անդրանիկ ծնունդներին՝*
իրենց ամբողջ վաստակի առաջնեկներին:
37 *Նրանց հանեց Եգիպտոսից ոսկով ու արծաթով,*
եւ նրանց ցեղի մէջ հիւանդ չկար:
38 *Եգիպտոսն ուրախացաւ, որ նրանք դուրս եկան,*
քանզի Տիրոջ ահն ընկել էր իրենց վրայ:
39 *Ցերեկն ամպ սփռեց նրանց ստուերելու համար,*
եւ գիշերն հրով լուսաւորեց նրանց:
40 *Նրանք խնդրեցին՝ ու լորամարգիներ իջան,*
եւ Տէրը երկնային հացով կշտացրեց նրանց:
41 *Հարուածեց ժայռին՝ ու ջրեր բխեցին,*
եւ գետեր հոսեցին անապատով:
42 *Յիշեց խօսքն իր սուրբ,*
որ տուել էր իր Աբրահամ ծառային:
43 *Հանեց իր ժողովրդին ցնծութեամբ, եւ իր ընտրեալներին՝ ուրախութեամբ:*
44 *Նրանց տուեց դաւառներն հեթանոսների,*
եւ ժողովուրդների վաստակի ժառանգ դարձրեց նրանց,
45 *որ պահեն պատուիրաններն իր,*
ու հետեւեն իր օրէնքներին:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ, ՏԻՐՈՋ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

105 *Ալէլուիա*

1 *Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը,*
քանզի քաղցր է նա,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
2 *Ո՞վ պիտի պատմի զօրութիւնը Տիրոջ,*
լսելի դարձնի նրա ամբողջ օրհնութիւնը:
3 *Երանի նրանց, ովքեր իրաւունքն են պահում*
եւ ամէն ժամ արդարութիւն գործում:
4 *Յիշի՛ր մեզ, Տէ՛ր, ի հաճութիւն քո ժողովրդի,*
եւ այցելի՛ր մեզ քո շնորհելիք փրկութեամբ:
5 *Տեսնենք բարութիւնը քո ընտրեալների,*
ուրախանանք քո ազգի ուրախութեամբ,
ու պարծենանք քո ժառանգութեամբ:
6 *Մենք մեր հայրերի հետ մեղանչեցինք,*
անօրէնութիւն եւ յանցանք գործեցինք:
7 *Հայրերը մեր Եգիպտոսում չհասկացան քո հրաշագործութիւնները,*
չյիշեցին քո ողորմութեան առատութիւնը,
քեզ բարկացրին Կարմիր ծովն անցնելիս:
8 *Նա փրկեց նրանց իր անուան համար,*
որ ճանաչեն իր զօրութիւնը:
9 *Սաստեց Կարմիր ծովին՝ եւ այն ցամաքեց,*
նրանց առաջնորդեց անդնդի միջով ինչպէս անապատով:
10 *Նրանց ազատեց իրենց ատողներից*
եւ նրանց փրկեց իրենց թշնամիների ձեռքից:
11 *Մովը ծածկեց նրանց հալածողներին, եւ սրանցից ոչ ոք չփրկուեց:*
12 *Հաւատացին նրա խօսքերին եւ օրհներգեցին նրան:*
13 *Բայց շուտով մոռացան գործերը նրա,*
եւ չանսացին նրա խորհուրդներին:
14 *Անապատում ցանկութեամբ վառուեցին,*
ու փորձեցին Աստծուն անջրդի վայրում:
15 *Իրենց խնդրածը նա տուեց նրանց,*
եւ լիութիւն ուղարկեց նրանց:
16 *Բանակատեղիում բարկացրին Մովսէսին եւ Տիրոջ սրբին՝ Ահարոնին:*
17 *Գետինը բացուեց ու կլանեց Դաթանին,*
ծածկեց բանակն Աբիրոնի:
18 *Հուր բորբոքուեց նրանց հաւաքավայրերում,*
եւ բոցը լափեց մեղաւորներին:
19 *Քորեբում մի հորթ շինեցին,*
եւ երկրպագեցին արձանին:
20 *Իրենց Փառքը փոխարինեցին խոտակեր հորթի պատկերով:*
21 *Մոռացան իրենց կեանք տուած Աստծուն,*
որը մեծ գործեր կատարեց Եգիպտոսում,
22 *սքանչելագործութիւններ՝ Քամի երկրում,*
եւ ահաւոր բաներ՝ Կարմիր ծովի վրայ:
23 *Ասաց, թէ պիտի ոչնչացնի նրանց,*
եթէ նրա ընտրեալ Մովսէսն առջեւը կանգնած չլինէր:
Նա դիմեց Տիրոջն ու վերացրեց բարկութիւնը նրա,
որ նրանք չկոտորուեն:
24 *Անարգեցին երկիրը ցանկալի,*
ու չհաւատացին Տիրոջ խօսքին:
25 *Տրտնջացին իրենց բանակատեղիում,*
ու չլսեցին ձայնը Տիրոջ:
26 *Տէրն իր ձեռքը բարձրացրեց նրանց վրայ,*
որ նրանց հարուածի անապատում,
27 *որ նրանց սերունդը ցրուի հեթանոսների մէջ,*
նրանց սերունդը ցրուի գաւառներում:
28 *Նրանք Բելփեգորին*[†] *յարեցին,*
զոհի միս կերան ու մեռելոտի:
29 *Բարկացրին Տիրոջն իրենց գործերով,*
եւ նրանց վրայ կոտորած իջաւ:
30 *Ապա Փենէէսն եկաւ մէջտեղ,*
քաւութիւն տուեց, ու մահը վերջ գտաւ:
31 *Նա արդարացի համարուեց*
սերնդից սերունդ՝ մինչեւ յաւիտենութիւն:
32 *Նրան բարկացրին Հակառակութեան ջրերի մօտ,*
եւ Մովսէսը տանջուեց նրանց պատճառով,
33 *քանզի դառնացրել էին նրա հոգին:*
Նա հրամայեց իր շրթունքներով,
34 *եւ չկոտորուեցին այն ազգերը,*
որոնց մասին ասել էր Տէրը:
35 *Խառնուեցին հեթանոսների մէջ,*
ու սովորեցին գործերը նրանց:
36 *Ծառայեցին նրանց կուռքերին,*
որոնք իրենց դայթակղութիւնը դարձան:
37 *Իրենց որդիներին ու դուստրերին զոհեցին դեւերին,*
38 *եւ անմեղ արիւն թափեցին՝*
արիւնն իրենց որդիների ու դուստրերի,
որ զոհեցին Քանանի կուռքերին:
39 *Երկիրը շաղախուեց նրանց արեամբ,*
ու պղծուեց նրանց գործերից,
քանզի պոռնկացան իրենց ընթացքով:
40 *Սրտնեղած բարկացաւ Տէրն իր ժողովրդի վրայ,*
եւ խիստ զզուեց իր ժառանգութիւնից:
41 *Նրանց մատնեց հեթանոսների ձեռքը,*
եւ իրենց ատողները տիրեցին նրանց:
42 *Իրենց թշնամիները նեղեցին նրանց,*
եւ նրանք խեղճացան նրանց ձեռքի տակ:
43 *Տէրը շատ անգամ փրկեց նրանց,*
բայց նրանք դառնացրին նրան իրենց չար խորհուրդներով,
եւ ընկղմուեցին իրենց անօրէնութեան մէջ:
44 *Տէրը նայեց նրանց նեղութեանը՝*
լսելով ձայնը նրանց աղօթքի:
45 *Յիշեց ուխտն իր,*
եւ իր առատ ողորմածութեամբ զղջաց:
46 *Նրանց գթութեան արժանացրեց*

[†]Փեգորի Բահաղի չաստծու մասին է խօսքը:

իրենց բոլոր գերեվարողների դիմաց:
47 Փրկի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր,
եւ հաւաքի՛ր մեզ հեթանոսների մի-
ջից:
Մենք գոհութիւն պիտի մատուցենք
քո սուրբ անուանը
եւ պիտի պարծենանք քո օրհնու-
թիւններով:
48 Օրհնեալ է Տէր Աստուածն Իս-
րայէլի յաւիտեանս յաւիտենից.
ողջ ժողովուրդը թող ասի՝
«Թող լինի, թող լինի»:

ԱՍՏՈՒԱԾ ԱՋԱՏԱՐԱՐ

106 Ալէլուիա

1 Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը,
քանզի քաղցր է նա,
քանզի յաւերժ է ողորմութիւնը
նրա:
2 Այսպէս թող ասեն Տիրոջից
փրկուածները,
որոնց նա ազատեց թշնամու
ձեռքից:
3 Բոլոր գաւառներից հաւաքեց
նրանց՝
արեւելքից եւ արեւմուտքից, հիւսի-
սից եւ ծովի կողմից:
4 Մոլորուեցին նրանք անապատում,
անջրդի ճանապարհին,
եւ բնակուելու քաղաք չգտան:
5 Քաղց զգացին ու ծարաւեցին,
եւ նրանց հոգիները նուաղեցին
իրենց ներսում:
6 Աղաղակեցին Տիրոջն իրենց նե-
ղութեան մէջ,
եւ նա փրկեց նրանց իրենց վշտերից:
7 Առաջնորդեց նրանց ուղիղ ճանա-
պարհով,
որ գնան քաղաքն իրենց բնա-
կութեան:
8 Թող մարդկանց որդիները գոհու-
թիւն մատուցեն Տիրոջը
նրա ողորմութիւնների եւ հրաշա-
գործութիւնների համար,
9 քանզի նա յագեցրեց քաղցած հո-
գիները,
եւ բարութեամբ լիացրեց կարօտեալ
անձանց,
10 որոնք նստած էին խաւարում ու
մահուան ստուերների մէջ՝
գամուած աղքատութեանն ինչպէս
երկաթին,
11 քանի որ դառնացրին խօսքն
Աստծու,
եւ անարգեցին խորհուրդները
Բարձրեալի:
12 Ցաւից սեղմուեցին սրտերը
նրանց,
տկարացան նրանք ու օգնող չունե-
ցան:
13 Աղաղակեցին Տիրոջն իրենց նե-
ղութեան մէջ,
եւ նա ազատեց նրանց իրենց
վշտերից:
14 Նրանց փրկեց խաւարից ու
մահուան ստուերներից
եւ փշրեց շղթաները նրանց:
15 Թող մարդկանց որդիները գո-
հութիւն մատուցեն Տիրոջը
նրա ողորմութիւնների եւ հրաշա-
գործութիւնների համար,
16 քանզի նա փշրեց դռները
պղնձեայ
եւ երկաթեայ նիգերը խորտակեց:
17 Օգնեց նրանց, երբ իրենց անօրէ-
նութեան ճանապարհին էին,
քանզի սաստիկ խեղճացել էին
իրենց մեղքերից:
18 Ամէն տեսակ կերակուրից գարշեց
սիրտը նրանց,
եւ նրանք մօտեցան մահուան
դռներին:
19 Աղաղակեցին Տիրոջն իրենց նե-
ղութեան մէջ,
եւ նա ազատեց նրանց իրենց
վշտերից:
20 Առաքեց իր խօսքն ու բուժեց
նրանց,
եւ փրկեց նրանց իրենց ապականու-
թիւնից:
21 Թող մարդկանց որդիները գոհու-
թիւն մատուցեն Տիրոջը
նրա ողորմութիւնների եւ հրաշա-
գործութիւնների համար:
22 Թող նրան օրհնութեան պա-
տարագ մատուցեն,
եւ ցնծութեամբ նրա գործերը պատ-
մեն:
23 Ովքեր ծով էին իջնում նաւերով
եւ մեծ ջրերում գործեր կատարում,
24 նրանք տեսան Տիրոջ արարքները

եւ նրա հրաշագործութիւններն
անդնդի խորքերում:
25 Հրամայեց՝ եւ հողմ ու մրրիկ ելաւ,
եւ բարձրացան ալիքները նրա:
26 Մարդիկ բարձրացան երկինք ու
անդունդ իջան,
եւ նրանց հոգիները մաշուեցին
իրենց ներսում,
27 խռովուեցին նրանք, երերացին
հարբածի պէս,
եւ նրանց ողջ իմաստութիւնը կուլ
գնաց:
28 Աղաղակեցին Տիրոջն իրենց նե-
ղութեան մէջ,
եւ նա փրկեց նրանց իրենց վշտերից:
29 Մրրիկը վերածեց խաղաղ օդի,
եւ ալիքները դադարեցին:
30 Նրանք ուրախացան, որ ալիքները
հանդարտուեցին,
եւ Նա նրանց իրենց ուզած նա-
ւահանգիստն առաջնորդեց:
31 Թող մարդկանց որդիները գո-
հութիւն մատուցեն Տիրոջը
նրա ողորմութիւնների եւ հրաշա-
գործութիւնների համար:
32 Թող պանծացնեն նրան ժողո-
վուրդների հաւաքներում,
եւ ծերերի ատեաններում օրհնեն
նրան,
33 քանզի գետերը ցամաքի վերածեց,
եւ ջրերի ընթացքը՝ ծարաւած հողի:
34 Պտղաբեր երկիրն աղուտ դարձ-
րեց՝
նրա բնակիչների չարութեան դիմաց:
35 Անապատը վերածեց ջրառատ
վայրի,
եւ ծարաւած հողը՝ հոսող ջրերի:
36 Այնտեղ բնակեցրեց քաղցեալ-
ներին,
որոնք իրենց համար բնակութեան
քաղաք չինեցին:
37 Վարեցին արտերը, այգիներ
տնկեցին,
եւ բերք աճեցրին իրենց համար:
38 Տէրն օրհնեց նրանց՝ ու խիստ
բազմացան,
եւ նրանց անասունները չպակա-
սեցին:
39 Նուազեցին նրանք եւ տանջուե-
ցին
չարիքների նեղութիւնից ու վշտե-
րից:
40 Անարգանք թափուեց նրանց
իշխանների վրայ,
Տէրը մոլորեցրեց նրանց ճանա-
պարհազուրկ անապատներում:
41 Տնանկներին օգնեց աղքատու-
թեան մէջ,
ոչխարների պէս առաջնորդեց
նրանց, որ ազգ դառնան:
42 Թող արդարները տեսնեն եւ
ուրախանան,
եւ բոլոր անօրէնները փակեն բե-
բաններն իրենց:
43 Ո՞վ է իմաստունն այն, որ պիտի
պահպանի սա,
եւ հասկանայ ողորմութիւնը Տիրոջ:

ՎԱՂՈՐԴԵԱՆ ՕՐՀՆԵՐԳ

107 1 Դաւթի օրհնութեան սաղմոս

2 Պատրաստ է սիրտն իմ, Աստուա՛ծ,
պատրաստ է սիրտն իմ՝
օրհնելու եւ սաղմոսերգելու քեզ իմ
փառաբանութեամբ:
3 Արթնացի՛ր փառք իմ,
արթնացի՛ր սաղմոսով եւ օրհնու-
թեամբ,
եւ ես կ'արթնանամ առաւօտեան:
4 Գոհութիւն կը մատուցեմ քեզ
ժողովուրդների մէջ, Տէ՛ր,
եւ ազգերի մէջ սաղմոս կ'երգեմ
քեզ:
5 Մեծ է քո ողորմութիւնը եւ
երկնքից բարձր,
եւ քո ճշմարտութիւնը հասնում է
ամպերին:
6 Դու երկինք ես բարձրացած,
Աստուա՛ծ,
եւ ողջ աշխարհն է բռնել փառքը
քո:
7 Որպէսզի սիրելիներդ փրկուեն,
պահպանի՛ր քո աջով եւ լսի՛ր մեզ:
8 Աստուած խօսեց իր սրբարանից.
«Ես պիտի բարձրանամ, բաժանեմ
Սիւքէմը
եւ վրանների հովիտը պիտի չափեմ:
9 Իմն է Գաղաադն ու իմն է
Մանասէն,
Եփրեմն իմ գլխի սաղաւարտն է:

10 Ցուզան թագաւորս է,
Մովաբը՝ աւազանը յոյսիս:
Դէպի Եդոմէ պիտի ուղղեմ երթն իմ.
եւ այլազգիներն ինձ հնազանդուեցին:
11 Ո՞վ ինձ կը տանի բերդաքաղաք,
կամ ո՞վ ինձ կ'առաջնորդի մինչեւ Եդոմէ,
12 եթէ ոչ դու, Աստուա՛ծ, որ լքեցիր մեզ
եւ մեր զօրքերի հետ դուրս չելար, Աստուա՛ծ:
13 Նեղութեան մէջ օգնութի՛ւն տուր մեզ,
քանզի ունայն է փրկութիւնը մարդու:
14 Աստուծով զօրութիւն կը ստեղծենք,
եւ նա ամօթահար կ'անի մեր թշնամիներին:

ՄԱՐԴՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

108

1 Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
2 Ո՛վ իմ օրհնութեան Աստուած, մի՛ լռիր,
քանզի մեղաւորի բերանը՝
բերանը նենգաւորի, բացուեց ինձ վրայ:
Խօսեցին իմ մասին նենգամիտ լեզուով
3 եւ ատելութեան խօսքերով պաշարեցին ինձ՝
յանիրաւի մարտնչելով իմ դէմ:
4 Սիրուս փոխարէն մեղադրեցին ինձ,
բայց ես աղօթքի կանգնեցի:
5 Հատուցեցին ինձ չար՝ բարու փոխարէն,
եւ իմ սիրոյ դիմաց՝ ատելութիւն:
6 Նրա դէմ մի չարագործ հանի՛ր,
եւ սատանան թող կանգնի նրա աջ կողմում:
7 Իր դատաստանից թող նա յանցապարտ դուրս գայ,
եւ նրա աղօթքը մեղք թող համարուի:
8 Թող նուազեն օրերը նրա,
եւ նրա պաշտօնը թող ուրիշն առնի:
9 Նրա որդիները թող որբ դառնան,
իսկ նրա կինն՝ այրի:
10 Նրա որդիները թող թափառական շրջեն ու մուրացիկ լինեն,
եւ թող նրանք հեռանան իրենց բնակավայրից:
11 Պարտատէրը թող խուզարկի ողջ ունեցուածքը նրա,
օտարները թող յափշտակեն վաստակը նրա:
12 Թող ոչ ոք աջակից չլինի նրան,
եւ նրա որբերին ոչ ոք չգթայ:
13 Թող նրա որդիները կոտորուեն,
եւ նրա անունը թող ջնջուի սերնդի միջից:
14 Թող Տիրոջ առջեւ յիշուեն նրա հօր մեղքերը,
եւ նրա մօր մեղքերը չսրբուեն:
15 Թող նրանք ամէն ժամ Տիրոջ առջեւ լինեն,
եւ նրանց յիշատակը թող վերանայ երկրից,
16 քանզի նա ողորմութիւն անելը չյիշեց,
հալածեց աղքատ ու տնանկ մարդուն,
որ կործանի նրան, ով խոնարհ է սրտով:
17 Նա, որ անէծք սիրեց, թող այն իրեն դիպչի,
նա, որ չուզեց օրհնութիւն,
թող այն հեռու լինի նրանից:
18 Անէծքը, որ նա հագաւ ինչպէս հանդերձ,
թող ջրի պէս լցուի նրա փորը,
եւ ձէթի պէս՝ նրա ոսկորների մէջ:
19 Թող նրա համար հագնելու զգեստ լինի այն,
եւ մէջքին կապելու մշտական գօտի:
20 Այս է վարձը նրանց, ովքեր բամբասում էին ինձ Տիրոջ առջեւ,
եւ ովքեր չարախօսում էին իմ մասին:
21 Բայց դու, Տէ՛ր, Տէ՛ր, ինձ հետ վարուի՛ր ինչպէս վայել է անունդդ,
քանզի քաղցր է ողորմութիւնը քո:
22 Եւ փրկի՛ր ինձ, քանզի աղքատ ու տնանկ եմ ես,
եւ սիրտս խռովուած է իմ ներսում:
23 Ստուերի պէս երկարելով սպառուեցի,
եւ թափ տրուեցի ինչպէս մարախ:
24 Մնկներս թուլացան ծոմապահութիւնից,

եւ գունաթափուեց մարմինս իւղի պակասից:
25 Ես նրանց նախատինքը դարձայ,
տեսան ինձ ու շարժեցին գլուխներն իրենց:
26 Օգնի՛ր ինձ, Տէ՛ր Աստուած իմ,
եւ փրկի՛ր ինձ քո ողորմութեամբ:
27 Թող իմանան, որ քո ձեռքն այս է,
եւ որ, Տէ՛ր, դո՛ւ արեցիր այս:
28 Թող նրանք անիծեն, բայց դու օրհնի՛ր.
ինձ վրայ յարձակուողները թող ամօթահար լինեն,
բայց քո ծառան թող ուրախանայ քեզնով:
29 Իմ մասին չարախօսողները թող ամօթ հագնեն
եւ իրենց ամօթը թիկնոցի պէս կրեն իրենց վրայ:
30 Իսկ ես մեծ գոհութիւն պիտի մատուցեմ Տիրոջն իմ բերանով,
բազմութիւնների մէջ պիտի օրհնեմ քեզ,
31 քանզի նա կանգնեց տնանկիս աջ կողմը,
որ փրկի ինձ նրանցից, ովքեր հալածում են ինձ:

ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

109

Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի
1 Տէրն իմ Տիրոջն ասաց.
«Նստի՛ր իմ աջ կողմում,
մինչեւ որ քո թշնամիներին ոտքերիդ պատուանդան դարձնեմ»:
2 Տէրը քեզ իշխանութեան գաւազան կ'ուղարկի Սիոնից,
եւ դու կ'իշխես քո թշնամիների մէջ:
3 Քեզնով է սկսւում զօրացումն իմ օրերի,
քո սրբերի վայելչութեամբ.
քեզ արշալոյսից առաջ ծնեցի արգանդից:
4 Երդուեց Տէրը եւ չի զղջայ,
որ դու յաւիտենական քահանայ ես ըստ Մելքիսեդեկի կարգի:
5 Եւ Տէրը, որ քո աջ կողմում է,
բարկութեան օրը կը կործանի թագաւորներին:
6 Կը դատի հեթանոսներին ու կը բազմացնի իր հարուածները,
եւ շատերի գլուխը կը ջախջախի երկրի վրայ:
7 Ճանապարհին նա կը խմեցնի հեղեղատի ջրերից,
եւ դրա համար էլ գլուխները վեր կը պահի:

ԳՈՎՔ ՏԻՐՈՋ ՍՔԱՆՉԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ

110

Ալէլուիա
1 Ամբողջ սրտով քեզ պիտի գոհութիւն մատուցեմ, Տէ՛ր,
արդարների ժողովում, հաւաքոյթի մէջ:
2 Մեծ են գործերը Տիրոջ,
եւ քննուած է նրա կամքը ամէն ինչում:
3 Փառաւոր եւ վայելուչ են նրա գործերը,
նրա արդարութիւնը կը տեւի յաւիտեանս յաւիտենից:
4 Արդարներին նա յիշեցրեց իր հրաշագործութիւնները.
ողորմած եւ գթասիրտ է Տէրը:
5 Կերակուր է տալիս իրենից երկիւղ կրողներին,
յաւիտեան յիշում իր ուխտը:
6 Իր գործերի զօրութիւնը յայտնեց նա իր ժողովրդին՝
նրանց տալով ժառանգութիւնը հեթանոսների:
7 Նրա ձեռքի գործերն արդար են ու իրաւացի,
նրա բոլոր պատուիրանները՝ վստահելի:
8 Հաստատուած են դրանք յաւիտեանս յաւիտենից,
ստեղծուած ճշմարտութեամբ եւ արդարութեամբ:
9 Տէրը փրկութիւն ուղարկեց իր ժողովրդին,
յաւիտեանս պատգամեց իր ուխտը.
սուրբ եւ ահեղ է նրա անունը:
10 Զգօնութեան սկիզբն երկիւղն է Տիրոջ հանդէպ,
բարեմիտ են բոլոր նրանք, որ գործադրում են այն.
նրա օրհնութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից:

ԱՐԴԱՐ ՄԱՐԴՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

111 Ալէլուիա

1 Երանի այն մարդուն, որ վախենում է Տիրոջից,
եւ խիստ կամեցող է նրա պատուիրանների:
2 Նրա սերունդը հզօր կը լինի երկրի վրայ,
եւ ուղղամիտների ազգը կ'օրհնուի:
3 Փառք եւ հարստութիւն կը լինի նրա տան մէջ,
նրա արդարութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից:
4 Արդարների համար լոյս ծագեց խաւարում.
ողորմած, գթասիրտ եւ արդար է Տէրը:
5 Բարի մարդը ողորմած է եւ փոխ է տալիս,
խօսքն իր կատարում արդարութեամբ,
6 որպէսզի յաւէտ նա չսասանուի,
յաւիտեան մնայ յիշատակն արդարի:
7 Չար լուրից նա չի վախենայ,
նրա սիրտը պատրաստ է յոյս դնելու Աստծու վրայ:
8 Հաստատուն է սիրտը նրա եւ չի սոսկայ,
մինչեւ իր թշնամիների վերջը չտեսնի:
9 Բաժանեց նա ու տուեց աղքատներին.
նրա արդարութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից,
եւ նրա եղջիւրը բարձր կը լինի փառքով:
10 Մեղաւորը, տեսնելով, կը բարկանայ,
կը կրճտեցնի ատամներն իր ու հալումաշ կը լինի,
եւ մեղաւորների ցանկութիւնը կը կորչի:

ՕՐՀՆԵՐԳ ՓԱՌՔԻ ՈՒ ԳԹՈՒԹԵԱՆ ԱՍՏԾՈՒՆ

112 Ալէլուիա

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը, երիտասարդնե՛ր,
օրհնեցէ՛ք անունը Տիրոջ:
2 Թող Տիրոջ անունն օրհնեալ լինի
այսուհետեւ մինչեւ յաւիտեան:
3 Արեւելքից մինչեւ արեւմուտք
օրհնեալ լինի անունը Տիրոջ:
4 Բարձր է Տէրը բոլոր ազգերից վեր,
եւ երկնքում է փառքը նրա:
5 Ո՞վ է նման մեր Տէր Աստծուն,
որ բնակւում է բարձունքներում:
6 Նա տեսնում է հեզերին երկնքում
ու երկրի վրայ:
7 Բարձրացնում է աղքատներին գետնից,
եւ տառապեալներին վեր քաշում աղբանոցից:
8 Նրանց որպէս իշխան նստեցնում է
իր ժողովրդի իշխանների կողքին:
9 Ամուլ կնոջը բնակեցնում է ցնծալից տան մէջ՝
իբրեւ մայր, որ հրճւում է զաւակներով:

ՋԱՏԿԱԿԱՆ ԵՐԳ

113 Ալէլուիա

1 Երբ իսրայէլացիներն ելան Եգիպտոսից,
Յակոբի տունը՝ օտար ժողովրդի միջից,
2 Հրէաստանն եղաւ սրբարանը նրա,
եւ Իսրայէլը՝ իշխանութիւնը նրա:
3 Ծովը տեսաւ ու փախաւ,
եւ Յորդանան գետը ետ դարձաւ:
4 Լեռները ցնծացին խոյերի պէս,
եւ բլուրները՝ ինչպէս մաքիների գառներ:
5 Ի՞նչ եղաւ քեզ, ծո՛վ, ո՞ւմ տեսար ու փախար,
կամ դո՛ւ, գե՛տ Յորդանանի, ինչո՞ւ ետ դարձար:
6 Լեռնե՛ր, ցնծացիք ինչպէս խոյեր,
եւ բլուրներ՝ ինչպէս մաքիների գառներ:
7 Երկիրը սասանուեց Տիրոջ դիմաց՝
Յակոբի Աստծու դիմաց, նրա՛ դիմաց,
8 ով ժայռը դարձրեց ջրի վտակ, եւ ապառաժն՝ աղբիւրի ակունք:

ՄԻԱԿ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾԸ

1 Ոչ թէ մեզ, Տէ՛ր, ոչ թէ մեզ,
այլ քո անուա՛նը փառք տուր
քո ողորմութեան եւ ճշմարտութեան համար:
2 Թող երբեք հեթանոսների մէջ չասեն, թէ՝
«Նրանց Աստուածն ո՞ւր է»:
3 Մեր Աստուածը երկնքում է եւ երկրի վրայ.
ինչ որ նա ուզեց՝ արեց:
4 Հեթանոսների կուռքերը ոսկի եւ արծաթ են,
ձեռքի գործն են մարդկանց որդիների:
5 Բերան ունեն՝ բայց չեն խօսում,
աչքեր ունեն՝ բայց չեն տեսնում:
6 Ականջներ ունեն՝ բայց չեն լսում,
քիթ ունեն՝ բայց չեն հոտոտում:
7 Ձեռքեր ունեն՝ բայց չեն շօշափում,
ոտքեր ունեն՝ բայց չեն քայլում,
եւ նրանց կոկորդում ձայն չկայ:
8 Նրանց նման կը լինեն դրանք ստեղծողները
եւ բոլոր նրանք, որ իրենց յոյսը դնում են դրանց վրայ:
9 Իսրայէլի տունը յոյսը դրեց Տիրոջ վրայ,
որը նրա օգնականն ու ապաւէնն է:
10 Ահարոնի տունը յոյսը դրեց Տիրոջ վրայ,
որը նրա օգնականն ու ընկերակիցն է:
11 Տիրոջից երկիւղ կրողները յոյսը դրին Տիրոջ վրայ,
որը նրանց օգնականն ու փրկիչն է:
12 Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ,
Տէրն օրհնեց տունն Իսրայէլի,
Տէրն օրհնեց տունն Ահարոնի:
13 Տէրն օրհնեց իրենից երկիւղ կրողներին՝
փոքրերին ու մեծերին:
14 Տէրը պիտի լիացնի ձեզ՝
ձեզ եւ ձեր որդիներին:
15 Օրհնուած էք դուք Տիրոջից, որ երկինքն ու երկիրն ստեղծեց:
16 Երկինքների երկինքը Տիրոջն է,
բայց երկիրը նա տուեց մարդկանց որդիներին:
17 Մեռելները չէ, որ պիտի օրհնեն քեզ,
ոչ էլ բոլոր նրանք, ովքեր դժոխք են իջնում,
18 այլ ողջերս Տիրոջը պիտի օրհնենք՝
այսուհետեւ մինչեւ յաւիտեան:

ՄԱՀՈՒԱՆԻՑ ԱԶԱՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՒ ԱՂՕԹՔԸ

114 Ալէլուիա

1 Հաճելի է ինձ, որ Տէրը լսեց ձայնն իմ աղօթքի:
2 Ականջն իր մօտեցրեց ինձ,
եւ ես իմ օրերում նրա՛ն դիմեցի:
3 Ինձ պատեց երկունքը մահուան,
եւ դժոխքի վշտերն ինձ բռնեցին:
Նեղութիւն եւ անձկութիւն գտայ
4 եւ Տիրոջ անունը կանչեցի՝ ասելով.
«Ո՛վ Տէր, փրկի՛ր ինձ»:
5 Գթառատ եւ արդար է մեր Տէր Աստուածը:
6 Տէրը ողորմում եւ պահպանում է մանուկներին.
ես խոնարհ եղայ, եւ Տէրն ինձ փրկեց:
7 Դարձի՛ր, հոգի՛դ իմ, դէպի հանգիստը քո,
քանզի Տէրն օգնեց քեզ:
8 Նա ինձ փրկեց մահուանից,
աչքերս՝ արտասուքից եւ ոտքերս՝ սայթաքումից:
9 Թող ողջերի երկրում հաճելի լինեմ Տիրոջ առջեւ:

115 Ալէլուիա

10 Ինչ որ խօսեցի՝ հաւատացի դրան,
եւ չափազանց խղճալի եղայ:
11 Զարմանքիս մէջ ասացի. «Ամէն մարդ սուտ է»:
12 Ի՞նչ հատուցում պիտի անեմ Տիրոջն
այն ամենի համար, որ ինձ տուեց:
13 Փրկութեան բաժակը պիտի վերցնեմ ,
եւ Տիրոջ անունը կանչեմ:
14 Աղօթքս Տիրոջը պիտի մատուցեմ
իր ամբողջ ժողովրդի առջեւ:
15 Տիրոջ աչքում յարգելի է մահն իր սրբերի:
16 Ո՛վ Տէր, ես քո ծառան եմ,
քո ծառան եւ քո աղախնի որդին:
17 Դու քանդեցիր իմ կապերը,
ես քեզ օրհնութեան պատարագ պիտի մատուցեմ,

եւ Տիրոջ անունը կանչեմ:
18 Աղօթքս Տիրոջը պիտի նուիրեմ
իր ամբողջ ժողովրդի առջեւ,
19 Տիրոջ տան սրահներում
եւ քո մէջ, Երուսաղէ՛մ:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՒԱՆՈՒԹԻՒՆ

116 Ալէլուիա

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը, բոլո՛ր ազգեր,
գովեցէ՛ք նրան, բոլո՛ր ժողովուրդներ:
2 Թող նրա ողորմութիւնը հաստատուի մեզ վրայ,
Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտեա՛ն թող մնայ:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

117 Ալէլուիա

1 Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը,
քանզի բարի է նա,
քանզի յաւերժ է ողորմութիւնը նրա:
2 Տունն Իսրայէլի թող ասի, որ բարի է նա,
որ յաւերժ է ողորմութիւնը նրա:
3 Տունն Ահարոնի թող ասի, որ բարի է նա,
որ յաւերժ է ողորմութիւնը նրա:
4 Տիրոջից երկիւղ կրողները թող ասեն, որ բարի է նա,
որ յաւերժ է ողորմութիւնը նրա:
5 Նեղութեան ժամանակ ես Տիրոջը կանչեցի,
նա լսեց ինձ եւ հանդարտութեան առաջնորդեց:
6 Տէրն օգնականն է իմ,
եւ ես չեմ երկնչի.
մարդն ինձ ի՞նչ կարող է անել:
7 Տէրն օգնականն է իմ,
եւ ես կը տեսնեմ վախճանն իմ թշնամիների:
8 Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ,
քան յոյսը դնել մարդկանց վրայ:
9 Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ,
քան յոյսը դնել իշխանների վրայ:
10 Բոլոր ազգերը շրջապատեցին ինձ,
բայց Տիրոջ անուամբ յաղթեցի նրանց:
11 Շուրջբոլորս բռնեցին, միահամուռ պաշարեցին ինձ,
բայց Տիրոջ անուամբ վանեցի նրանց:
12 Մեղուների պէս շուրջս լցուեցին,
վառուեցին բորբոքուեցին ինչպէս հրաճարակ փուշ,
բայց Տիրոջ անուամբ վանեցի նրանց:
13 Երբ ինձ հրեցին, ես սասանուեցի եւ մօտ էի գլորուելու,
բայց Տէրը բռնեց ինձ:
14 Իմ զօրութիւնն ու օգնութիւնն է Տէրը,
նա իմ փրկութիւնը եղաւ:
15 Ցնծութեան եւ փրկութեան ձայն կայ արդարների սրահներում:
16 Տիրոջ աջը զօրութիւն գործեց,
Տիրոջ աջը բարձրացրեց ինձ,
եւ Տիրոջ աջը զօրութիւն գործեց:
17 Չպիտի մեռնեմ, այլ պիտի ապրեմ
եւ Տիրոջ գործերը պիտի պատմեմ:
18 Տէրն ինձ խրատելով պատժեց,
բայց չմատնեց մահուան:
19 Բացէ՛ք արդարութեան դռներն իմ առաջ,
որ մտնեմ ներս ու Տիրոջը գոհութիւն մատուցեմ:
20 Տիրոջ դուռն է սա,
եւ արդարները այս դռնո՛վ պիտի մտնեն:
21 Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր,
քանզի լսեցիր ինձ,
եւ ինձ համար փրկութիւն եղար:
22 Քարն այն, որ շինարարներն արհամարհեցին,
ա՛յն դարձաւ անկիւնաքար:
23 Տիրոջից եղաւ այս բանը,
եւ սքանչելի է մեր աչքերին:
24 Սա է օրն այն, որ Տէրն ստեղծեց.
եկէ՛ք ցնծանք եւ ուրախանանք այսօր:
25 Ո՛վ Տէր, փրկի՛ր, ո՛վ Տէր, առաջնորդի՛ր:
26 Օրհնեալ ես դու, որ պիտի գաս Տիրոջ անունով,
մենք օրհնեցինք քեզ Տիրոջ տնից:
27 Մե՛ր Տէր Աստուածը երեւաց մեզ,
կատարեցէ՛ք տօնն ուրախութեան մատաղաշ ճիւղերով՝

մուտքից մինչեւ անկիւնները սեղանի:
28 Դու իմ Աստուածն ես, պիտի գոհութիւն մատուցեմ քեզ,
դու իմ Աստուածն ես, պիտի մեծարեմ քեզ:
Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր,
քանզի լսեցիր ինձ,
եւ ինձ համար փրկութիւն եղար:
29 Գոհութիւն մատուցենք Տիրոջը,
քանզի բարի է նա,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը նրա:

118 Ալէլուիա

ԳՈՎՔ ԱՍՏՈՒՈՅ ՕՐԷՆՔԻ
Ալէֆ

1 Երանի նրանց, ովքեր անբիծ ուղի են բռնել,
եւ ընթանում են Տիրոջ օրէնքով:
2 Երանի նրանց, ովքեր հետեւում են նրա պատուիրաններին,
իրենց ամբողջ սրտով փնտռում են նրան:
3 Անօրէնութիւն գործողները չեն, որ պիտի ընթանան նրա ճանապարհներով:
4 Դու հրամայեցիր,
որ քո պատուիրանները խստօրէն պահեմ:
5 Իմ ճանապարհները յաջող կը լինեն,
եթէ քո պատուիրանները պահեմ:
6 Այն ժամանակ ես չէի ամաչում,
երբ զգոյշ էի քո պատուիրանների հանդէպ:
7 Ես գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, ուղիղ սրտով,
սովորելով քո արդար դատաստանները:
8 Պահեցի ես քո օրէնքները,
իսպառ մի՛ լքիր ինձ:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ
Բէթ

9 Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր,
եթէ ոչ քո խօսքերը պահելով:
10 Իմ ամբողջ սրտով քեզ փնտռեցի,
մի՛ զրկիր ինձ քո պատուիրաններից:
11 Քո խօսքերը սրտումս թաքցրի,
որ չմեղանչեմ քո դէմ:
12 Օրհնեալ ես դու, Տէ՛ր,
սովորեցրո՛ւ ինձ քո օրէնքները,
13 որ շրթունքներով իմ պատմեմ բերանիդ բոլոր դատաստանները:
14 Քո պատուիրանների ճանապարհին եմ գտնում ես իմ ուրախութիւնը,
աւելի քան ամէն տեսակ հարստութեան մէջ:
15 Քո պատուիրանների մասին խորհեցի,
հետեւեցի քո ճանապարհներին:
16 Քո օրէնքները կատարեցի
եւ չմոռացայ խօսքերը քո:

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔՈՒՄ
Գամէլ

17 Հատուցի՛ր քո ծառային,
որ ապրեմ ու պահեմ խօսքերը քո:
18 Բա՛ց իմ աչքերը,
որ տեսնեմ քո օրէնքի հրաշալիքները:
19 Պանդուխտ եմ ես երկրի երեսին,
պատուիրաններդ մի՛ թաքցրու ինձանից:
20 Ես փափագեցի ամէն ժամ ցանկանալ քո դատաստանները:
21 Դու սաստեցիր ամբարտաւաններին.
անիծեալ են նրանք,
ովքեր խոտորուեցին քո պատուիրաններից:
22 Հեռացրո՛ւ ինձանից նախատինքն ու արհամարհանքը,
քանզի ես նախանձախնդիր եղայ քո վկայութիւններին:
23 Թէեւ իշխանները նստած չարախօսում էին իմ մասին,
բայց քո ծառան խորհում էր քո օրէնքների մասին:
24 Քո վկայութիւններն իմ խօսքերն էին,
եւ քո արդարութիւնն՝ իմ խորհուրդը:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ
Դալէթ

25 Հողիս մերձեցաւ հողին.

Տէ՛ր, ըստ քո խոստման՝ փրկի՛ր ինձ:
26 Իմ ճանապարհների մասին պատմեցի քեզ,
ու դու ինձ լսեցիր.
դատաստաններդ սովորեցրո՛ւ ինձ:
27 Ինձ ճանաչե՛լ տուր քո արդարութիւնների ճանապարհը,
որ խորհեմ քո հրաշագործութիւնների մասին:
28 Հոգիս անքուն մնաց ձանձրոյթից,
ըստ քո խոստման՝ ամրապնդի՛ր ինձ:
29 Մեղքի ճանապարհները հեռացրո՛ւ ինձնից,
եւ քո օրէնքով ողորմի՛ր ինձ:
30 Քո ճշմարտութեան ճանապարհն ընտրեցի,
եւ քո օրէնքները ես չմոռացայ:
31 Մերձեցայ քո պատուիրաններին.
Տէ՛ր, մի՛ ամաչեցրու ինձ:
32 Քո պատուիրանների ճանապարհով ընթացայ,
քանզի անդորրութիւն տուիր իմ սրտին:

ԱՂՕԹՔ՝ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՏԻՐՈՋ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆը

Հէ

33 Տէ՛ր, իրաւունքիդ ճանապարհի օրէնսգէտն ի՛նձ դարձրու,
որ ամէն ժամ հետեւեմ դրան:
34 Իմաստո՛ւն դարձրու ինձ,
որ քննեմ քո օրէնքը
եւ ամբողջ սրտով պահպանեմ այն:
35 Առաջնորդի՛ր ինձ քո պատուիրանների շաւիղներով,
քանզի հաճելի են դրանք ինձ:
36 Սիրտս հակի՛ր դէպի քո պատուիրանները,
եւ ոչ թէ դէպի ագահութիւն:
37 Շրջի՛ր աչքերս, որ ունայնութիւն չտեսնեմ,
ինձ պահպանի՛ր քո ճանապարհին:
38 Քո ծառայի համար հաստատի՛ր քո խօսքը,
որ քո երկիւղի մէջ մնամ:
39 Ազատի՛ր ինձ նախատինքներից,
որոնցից կասկածում էի,
քանզի քաղցր են դատաստանները քո:
40 Ահա ցանկացայ քո պատուիրանները,
քո արդարութեամբ պահպանի՛ր ինձ:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ

Վաւ

41 Ողորմութիւնդ ինձ վրայ թող գայ, Տէ՛ր,
եւ փրկութիւնդ՝ ըստ քո խոստման:
42 Ես խօսքով պատասխան կը տամ ինձ նախատողներին,
քանզի յոյսս դրի քո խօսքերի վրայ:
43 Ճշմարտութեան խօսքը բնաւ մի՛ հեռացրու իմ բերանից,
քանզի յոյսս դրի քո դատաստանների վրայ:
44 Քո օրէնքը պահեցի ամէն ժամ,
յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:
45 Ես ընթացայ անդորրութեան մէջ,
քանզի քո պատուիրանները փնտռեցի:
46 Թագաւորների առաջ խօսեցի քո պատուիրանների մասին ու չամաչեցի:
47 Խորհեցի քո պատուիրանների մասին, որոնք սիրեցի:
48 Ձեռքս պարզեցի դէպի պատուիրանները քո, որոնք սիրեցի,
եւ խորհեցի քո արդարութեան մասին:

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔՈՒՄ

Զէ

49 Յիշի՛ր քո ծառային տրուած խօսքը,
որի վրայ էլ դրիր իմ յոյսը:
50 Դա է թշուառութեանս մէջ ինձ մխիթարողը,
քանզի քո խօսքն ինձ պահպանեց:
51 Ամբարտաւանները շատ անիրաւութիւն գործեցին իմ դէմ,
բայց ես քո օրէնքից չխոտորուեցի:
52 Քո յաւերժական օրէնքները յիշեցի, Տէ՛ր, ու մխիթարուեցի:
53 Տրտմութիւն իջաւ ինձ վրայ
մեղաւորների ու քո օրէնքը լքողների երեսից:
54 Պատուիրաններդ գովասանքի արժանի են ինձ համար
իմ պանդխտավայրում:
55 Գիշերն յիշեցի քո անունը, Տէ՛ր,

եւ քո օրէնքը պահեցի:
56 Դա՛ եղաւ կեանքիս ուղին, քանզի քո արդարութիւնը փնտռեցի:

ՆՈՒԻՐՈՒՄ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ

Խէ

57 Բաժինս դո՛ւ ես, Տէ՛ր,
ասացի որ օրէնքիդ պիտի հետեւեմ:
58 Ամբողջ սրտով աղօթեցի քո դիմաց,
ողորմի՛ր ինձ ըստ քո խոստման:
59 Իմ ճանապարհի մասին խորհեցի,
եւ քայլերս դէպի քո պատուիրանները շրջեցի:
60 Պատրաստուեցի եւ չվախեցայ պահել քո պատուիրանները:
61 Մեղքի ցանցերը պատեցին ինձ,
բայց քո օրէնքը ես չմոռացայ:
62 Կէսգիշերին ելնում էի գոհութիւն մատուցելու քեզ
քո արդար դատաստանների համար:
63 Հաղորդակցւում էի քեզնից երկիւղ կրող բոլոր մարդկանց հետ,
ովքեր պահում են պատուիրանները քո:
64 Երկիրը լցուել է Տիրոջ ողորմութեամբ,
սովորեցրո՛ւ ինձ արդարադատութիւնը քո:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻ ԱՐԺԷՔԸ

Թէ

65 Քաղցրութեամբ վարուեցիր ծառայիդ հետ, Տէ՛ր,
քո խօսքի համաձայն:
66 Քաղցրութիւն, խրատ եւ գիտութիւն սովորեցրո՛ւ ինձ,
քանզի հաւատացի քո պատուիրաններին:
67 Քանի դեռ չէի խեղճացել՝ մեղանչում էի,
դրա համար խստօրէն հետեւեցի քո խօսքերին:
68 Քաղցր ես դու, Տէ՛ր,
եւ քո քաղցրութեամբ քո արդարադատութիւնը սովորեցրո՛ւ ինձ:
69 Ամբարտաւանների անիրաւութիւններն իմ դէմ շատացան,
բայց ես ամբողջ սրտով քո պատուիրանները քննեցի:
70 Կաթի պէս թանձրացաւ սիրտը նրանց,
բայց ես քո օրէնքներով խօսեցի:
71 Լաւ է, որ դու խոնարհ դարձրիր ինձ,
որպէսզի քո արդարադատութիւնը սովորեմ:
72 Քո բերանից ելած օրէնքն ինձ համար աւելին է,
քան հազարներով արծաթ ու ոսկի:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆը

Եօդ

73 Քո ձեռքերն արարեցին ու ստեղծեցին ինձ,
ինձ իմաստո՛ւն դարձրու, որ սովորեմ պատուիրանները քո:
74 Քեզնից երկիւղ կրողները պիտի տեսնեն ինձ եւ ուրախանան,
քանզի յոյսս դրի քո խօսքերի վրայ:
75 Հասկացայ, Տէ՛ր, որ քո դատաստանն արդար է,
եւ իրաւացիօրէն խոնարհ դարձրիր ինձ:
76 Ողորմութիւնդ թող ինձ մխիթարութիւն լինի՝
ծառայիդ տրուած խօսքիդ համաձայն:
77 Գթութիւններդ թող ինձ վրայ գան, որպէսզի փրկուեմ,
քանզի քո օրէնքներն են իմ խօսքերը:
78 Ամբարտաւանները պիտի ամաչեն,
որ իզուր անիրաւութիւն գործեցին իմ դէմ,
իսկ ես քո պատուիրանների մասին պիտի խորհեմ:
79 Թող ինձ խրատեն քեզնից երկիւղ կրողները
եւ քո վկայութիւնները ճանաչողները:
80 Թող սիրտս անբիծ լինի քո արդարութեան մէջ, որպէսզի չամաչեմ:

ԱՂՕԹՔ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քափ

81 Հոգիս կարօտեց քո փրկութեանը,
քանզի յոյսս դրի քո խօսքի վրայ:
82 Աչքերս սպասեցին քո խօսքին,
ասացի՝ «ե՞րբ պիտի մխիթարես ինձ»:

83 Եղայ ես ինչպէս տիկը սառ-
նամանիքում,
քանի որ քո արդարադատութիւնը
չմոռացայ:
84 Որքա՞ն են քո ծառայի օրերը,
ե՞րբ պիտի տեսնես դատաստանն
ինձ հալածողների:
85 Անօրէններն ինձ խորհուրդներ
տուին,
բայց ոչ քո օրէնքի համեմատ:
86 Քո բոլոր պատուիրանները ճշմա-
րիտ են,
իզուր ինձ հալածեցին, օգնի՛ր ինձ:
87 Մի փոքր ես՝ եւ նրանք
կորստեան կը մատնէին ինձ երկրի
երեսին,
բայց ես չլքեցի քո պատուիրանները:
88 Քո ողորմութեամբ կեա՛նք տուր
ինձ,
եւ ես կը պահպանեմ քո բերանի
վկայութիւնները:

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ
Լամէխ

89 Քո խօսքը, Տէ՛ր,
յաւիտեան երկնքում է:
90 Սերնդից սերունդ մնում է քո
ճշմարտութիւնը,
դու հաստատեցիր երկիրը, որ կայ:
91 Քո հրամանին է սպասում ցերե-
կը,
քանզի բոլորը քո ծառաներն են:
92 Եթէ քո օրէնքն իմ խօսքը չլինէր,
վաղուց ես կործանուած կը լինէի իմ
թշուառութեան մէջ:
93 Յաւիտեան չպիտի մոռանամ քո
արդարութիւնները,
քանզի դրանցո՛վ ինձ պահպա-
նեցիր:
94 Քոնն եմ ես՝ փրկի՛ր ինձ,
քանզի արդարադատութիւնդ
փնտռեցի:
95 Մեղաւորները հետամտեցին, որ
կործանեն ինձ,
քանզի մտքումս քո վկայութիւն-
ները դրի:
96 Ամէն կատարելութեան վախճանը
տեսայ,
քո պատուիրանները խիստ ընդար-
ձակ էին ինձ համար:

ՍԷՐ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻ ՀԱՆԴԷՊ
Մէմ

97 Որքա՜ն սիրեցի օրէնքները քո,
նրանք գիշեր-ցերեկ իմ խոհերն էին:
98 Թշնամիներիցս աւելի խելացի
դարձրիր ինձ քո պատուիրաններով,
քանզի նրանք իմն էին միշտ:
99 Բոլոր ուսուցիչներիցս աւելի
իմաստուն եղայ,
քանզի քո վկայութիւններն իմ
խոհերն էին:
100 Մերուններից աւելի իմաստուն
դարձայ,
քանզի քո պատուիրանները քննեցի:
101 Ոտքերս ետ պահեցի չարիքի
բոլոր ճանապարհներից,
որպէսզի պահեմ քո խօսքերը:
102 Քո իրաւունքից չխոտորուեցի,
քանզի դու ինձ օրէնսդէտ դարձրիր:
103 Որքա՜ն քաղցր են քո խօսքերն
իմ քիմքին՝
աւելի քաղցր, քան մեղրն իմ բե-
րանին:
104 Քո պատուիրաններով իմաստ-
նանալով՝
ատեցի չարիքի բոլոր ճանա-
պարհները,
քանզի դու ինձ օրէնսդէտ դարձրիր:

ԼՈՅՍ՝ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՑ
Նուն

105 Քո խօսքը ճրագ է իմ ոտքերի
համար,
եւ լուսաւորում է իմ շաւիղները:
106 Երդուեցի ու որոշեցի,
որ պիտի պահեմ քո բոլոր արդար
դատաստանները:
107 Սաստիկ թշուառ եղայ.
Տէ՛ր, կեա՛նք տուր ինձ ըստ քո
խոստման:
108 Բարեհաճի՛ր ընդունել ընծան իմ
բերանի, Տէ՛ր,
եւ քո իրաւունքն ինձ սովորեցրո՛ւ:
109 Հոգիս ամէն ժամ քո ձեռքում է,
եւ ես քո օրէնքը չմոռացայ:
110 Մեղաւորները որոգայթ լարեցին
իմ դէմ,
ես քո պատուիրաններից չխոտոր-
ուեցի:
111 Յաւիտեան ժառանգեցի քո վկա-
յութիւնները,

քանզի նրանք իմ սրտի ցնծութիւնն
են:
112 Սիրտս առյաւէտ խոնարհեցրի,
որ հատուցման համար քո
օրէնքները կատարեմ:

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔՈՒՄ
Սամէք

113 Ատեցի անօրէններին,
եւ քո օրէնքը սիրեցի:
114 Օգնականն ու փրկիչն իմ դու ես,
եւ ես յոյսս դրի քո խօսքի վրայ:
115 Հեռացէ՛ք ինձնից, չարագործ-
նե՛ր,
որ ես իմ Աստծու պատուիրանները
քննեմ:
116 Օգնի՛ր ինձ ըստ քո խօսքի ու
պահպանի՛ր ինձ,
եւ իմ յոյսի մէջ ինձ մի՛ ամաչեցրու:
117 Օգնի՛ր ու փրկի՛ր ինձ,
որ շարունակ քո դատաստանի
մասին մտածեմ:
118 Անարգեցիր բոլոր նրանց, ովքեր
ընդվզեցին քո արդարադատութեան
դէմ,
քանզի անիրաւ էին նրանց խոր-
հուրդները:
119 Ցանցաւոր համարեցի աշխարհի
բոլոր մեղսագործներին,
դրա համար սիրեցի պատուիրան-
ները քո:
120 Մարմինն իմ գամի՛ր քո եր-
կիւղին,
քանզի սաստիկ վախեցայ քո դա-
տաստաններից:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ
Էյ

121 Դատաստան եւ արդարութիւն
գործեցի,
ինձ մի՛ մատնիր ինձ նեղողների
ձեռքը:
122 Ծառայիդ բարութե՛ամբ ընդու-
նիր,
որ ամբարտաւանները չչարչարեն
ինձ:
123 Աչքերն իմ սպասեցին քո
շնորհելիք փրկութեանը, Տէ՛ր,
եւ քո արդարութեան խօսքին:
124 Ծառայիդ հետ վարուի՛ր քո
ողորմութեան համեմատ,
քո արդարադատութիւնն ինձ սո-
վորեցրո՛ւ:
125 Ես քո ծառան եմ, ինձ իմաս-
տո՛ւն դարձրու,
որ ճանաչեմ քո վկայութիւնները:
126 Ժամն է, որ Տէրը վեր կենայ,
քանզի խափանեցին քո օրէնքը:
127 Ցիրաւի, սիրեցի քո պատուի-
րանները
ոսկուց ու տպազիոնից աւելի:
128 Քո բոլոր պատուիրաններն ինձ
յաջողութիւն բերին,
քանզի ատեցի ճանապարհը չարիքի:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԵԼՈՒ ՁԳՏՈՒՄ
Փէ

129 Սքանչելի են քո վկայու-
թիւնները, դրա համար հոգիս սիրեց
դրանք:
130 Քո խօսքերի յայտնութիւնը լու-
սաւորում
եւ իմաստնացնում է պարզամիտ-
ներին:
131 Բերանս բացեցի ու շունչ առայ,
հոգիս փափագեց պատուիրանները
քո:
132 Նայիր ի՛նձ եւ ողորմի՛ր ինձ
քո անունը սիրողների իրաւունքի
համեմատ:
133 Ճանապարհն իմ ուղղի՛ր քո
խօսքի համաձայն,
որ զանազան մեղքեր չտիրեն ինձ:
134 Փրկի՛ր ինձ մարդկանց զրպար-
տութիւնից,
եւ ես քո պատուիրանները կը
պահեմ:
135 Երեսդ ցո՛յց տուր քո ծառային,
եւ քո արդարադատութիւնը սովո-
րեցրո՛ւ ինձ:
136 Ջրերի վտակներ իջան իմ աչ-
քերից,
քանզի մարդիկ չհետեւեցին քո
օրէնքներին:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ
Ծադէ

137 Արդար ես դու, Տէ՛ր,
եւ շիտակ են քո դատաստանները:
138 Դու պատուիրեցիր քո վկայու-
թիւնները,
որոնք արդար եւ շատ ճշմարիտ են:

139 Նախանձախնդրութիւնը քո
հանդէպ մաշեց ինձ,
քանզի թշնամիներն իմ մոռացան
խօսքերը քո:
140 Խիստ ընտիր են խօսքերը քո,
եւ քո ծառան սիրեց դրանք:
141 Մանուկ եմ ես եւ արհամար-
հուած,
բայց քո արդարութիւնը չմոռացայ:
142 Քո արդարութիւնը յաւերժական
արդարութիւն է,
եւ քո օրէնքը՝ ճշմարիտ:
143 Նեղութիւնն ու վիշտն ինձ
պատեցին,
բայց քո պատուիրաններն իմ խօս-
քերն եղան:
144 Քո վկայութիւններն արդար են
յաւիտեան,
իմաստո՛ւն դարձրու եւ պահպանի՛ր
ինձ:

ԱՂՕԹՔ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կոփ

145 Ամբողջ սրտով քեզ ձայն տուի,
լսի՛ր ինձ, Տէ՛ր,
քանզի քո արդարութիւնը փնտռեցի:
146 Աղաղակեցի քո առջեւ՝ փրկի՛ր
ինձ,
եւ ես քո վկայութիւնները կը պա-
հեմ:
147 Ես վաղ առաւօտեան արթնացայ
ու աղաղակեցի
եւ իմ յոյսը դրի քո խօսքերի վրայ:
148 Առաւօտից շուտ բացուեցին
աչքերն իմ,
որ քո խօսքերն արտասանեմ:
149 Լսի՛ր իմ ձայնը, Տէ՛ր, ըստ քո
ողորմութեան.
Տէ՛ր, քո դատաստանով փրկի՛ր ինձ:
150 Հալածիչներս անօրէնութիւնը
մօտեցրին ինձ,
քանզի նրանք հեռու եղան քո
օրէնքից:
151 Մօտ ես դու, Տէ՛ր, եւ քո բոլոր
պատուիրանները ճշմարիտ են:
152 Սկզբից եւեթ ճանաչեցի քո վկա-
յութիւնները,
որոնք դու յաւիտեա՛ն հաստա-
տեցիր:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Րէշ

153 Տե՛ս իմ թշուառութիւնը եւ
փրկի՛ր ինձ,
քանզի քո օրէնքը ես չմոռացայ:
154 Տե՛ս իմ դատաստանը եւ
ազատի՛ր ինձ,
ու քո խօսքի համաձայն պահ-
պանի՛ր ինձ:
155 Փրկութիւնը հեռու է մեղա-
ւորներից,
քանզի նրանք քո օրէնքները չպա-
հեցին:
156 Քո գթութիւնները շատ են, Տէ՛ր,
եւ քո դատաստանի համաձայն
պահպանի՛ր ինձ:
157 Բազմաթիւ եղան իմ հալա-
ծիչներն ու ինձ նեղողները,
բայց քո վկայութիւններից ես չխ-
տորուեցի:
158 Մաշւում էի նայելով անո-
ղորմներին,
քանզի քո պատուիրանները չպահե-
ցին նրանք:
159 Տե՛ս, թէ որքա՜ն սիրեցի քո
պատուիրանները.
Տէ՛ր, քո ողորմութեամբ կեա՛նք
տուր ինձ:
160 Քո խօսքի սկիզբը ճշմարտու-
թիւնն է,
յաւերժ են քո բոլոր արդար դատաս-
տանները:

ԸՆԴԱՅՈՒՄ ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ

Շին

161 Իշխաններն իզուր հալածեցին
ինձ.
սիրտս միայն քո խօսքերից սար-
սափեց:
162 Ես ցնծացի քո խօսքերով
ինչպէս մէկը, որ մեծ աւար է
գտնում:
163 Ատեցի ու արհամարհեցի մեղքը,
եւ քո օրէնքը սիրեցի:
164 Օրուայ մէջ եօթն անգամ քեզ
պիտի օրհնեմ
քո արդար դատաստանի համար:
165 Քո օրէնքը սիրողները մեծ խա-
ղաղութեան մէջ են,
եւ նրանց համար չկայ գայ-
թակղութիւն:

166 Սպասեցի քո փրկութեանը, Տէ՛ր,
եւ քո պատուիրանները սիրեցի:
167 Հոգիս պահեց քո վկայութիւն-
ները,
եւ ես շատ սիրեցի դրանք:
168 Հետեւեցի քո պատուիրաններին
եւ վկայութիւններին,
քանզի իմ բոլոր ուղիներն առջեւդ
են:

ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թաւ

169 Իմ խնդրանքները թող մօտենան
քեզ, Տէ՛ր,
քո խօսքի համաձայն իմաստո՛ւն
դարձրու ինձ:
170 Իմ աղօթքը թող հասնի քեզ,
Տէ՛ր,
եւ քո խօսքով փրկի՛ր ինձ:
171 Իմ շրթունքները քեզ օրհնու-
թիւն կը բխեցնեն,
երբ ինձ սովորեցնես քո արդա-
րադատութիւնը:
172 Իմ լեզուն քո խօսքերը կ'եր-
տասանի,
քանզի քո բոլոր պատուիրաններն
արդար են:
173 Քո ձեռքն իմ պահապանը թող
լինի,
քանզի քո պատուիրաններն ընտ-
րեցի:
174 Քո շնորհելիք փրկութիւնը ցան-
կացայ, Տէ՛ր,
եւ քո օրէնքներն իմ խօսքերն եղան:
175 Թող ես ապրեմ,որ օրհնեմ քեզ,
եւ քո արդարադատութիւնն ինձ
թող օգնի:
176 Մոլորուեցի կորուսեալ ոչխարի
պէս,
փնտռի՛ր ծառայիդ, քանզի պա-
տուիրաններդ չեմ մոռացել:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

119 *Օրհներգութիւններ բարձունքի աստիճանների վրայ*

1 Նեղութեանս մէջ ես Տիրոջը ձայն
տուի,
եւ նա լսեց ինձ:
2 Տէ՛ր, փրկի՛ր ինձ նենգ շրթունք-
ներից ու չար լեզուից:
3 Ի՞նչ պիտի տրուի քեզ,
կամ ի՞նչ պիտի աւելանայ,
նե՛նգ լեզու.
– 4 դրանք հսկայի նետեր են,
որոնք կայծակներով մխւում են
կաղնու մէջ:
5 Վա՛յ ինձ, քանզի երկար տեւեց
պանդխտութիւնն իմ,
ես բնակուեցի Կեդարի վրաններում:
6 Շատ ժամանակ հոգիս բնակուեց
նրանց հետ,
ովքեր ատում են խաղաղութիւնը:
7 Ես խաղաղասէր էի.
երբ խօսում էի, նրանք մարտնչում
էին իմ դէմ:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄՆԵԼ ԻՆՁ

120 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*

1 Աչքերս դէպի լեռները բարձրացրի,
որտեղից ինձ օգնութիւն պիտի գայ:
2 Ինձ օգնութիւն պիտի գայ Տիրո-
ջից,
որ ստեղծեց երկինքն ու երկիրը:
3 Թող քո ոտքը չսասանուի,
եւ քո Պահապանը թող չննջի,
4 ինչպէս չի ննջում եւ քուն չի
մտնում Պահապանն Իսրայէլի:
5 Տէրը քեզ կը պահպանի,
Տէրը քեզ կ'ընդունի իր աջ ձեռքով:
6 Ցերեկն արեգակը քեզ չի վնասի,
ոչ էլ լուսինը՝ գիշեր ժամանակ:
7 Տէրը քեզ կը պահպանի ամէն
չարիքից,
Տէրը կը պահպանի քեզ:
8 Տէրը կը հսկի քո մուտքն ու ելքը՝
այսուհետեւ մինչեւ յաւիտեան:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՆ

121 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*

1 Ուրախանում էի, երբ ասում էին՝
«Գնանք Տիրոջ տուն»:
2 Մեր ոտքերը հասել կանգնել էին
քո դռներին, ո՛վ Երուսաղէմ:
3 Երուսաղէմը բարեշէն է որպէս
քաղաք,
եւ նրա բնակիչներն իր շուրջն են:

4 Ցեղերն այնտեղ բարձրացան՝ ցեղերը Տիրոջ,
որ Իսրայէլի վկայութեամբ
գոհութիւն մատուցեն Տիրոջ անունը:
5 Այնտեղ են դրուած դատաստանի աթոռները՝ աթոռներ դրուած Դաւթի տան մէջ:
6 Հարցրէ՛ք Երուսաղէմի խաղաղութեան ու շէնութեան մասին,
դուք՝ բոլորդ, որ սիրում էք այն:
7 Քո ամրութիւններում թող խաղաղութիւն լինի,
եւ քո բերդերի աշտարակներում՝ շէնութիւն:
8 Ի սէր իմ եղբայրների եւ ընկերների
քեզ խաղաղութիւն մաղթեցի:
9 Եւ մեր Տէր Աստծու համար քեզ բարութիւն ցանկացանք:

ԹՇՈՒԱՌՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ

122 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Աչքերս դէպի քեզ բարձրացրի, Տէ՛ր,
դու, որ բնակւում ես երկնքում:
2 Ինչպէս ծառաների աչքերն իրենց տէրերի ձեռքին,
ինչպէս աղախնի աչքերն իր տիրուհու ձեռքին,
այնպէս էլ մեր աչքերն ուղղուած են քեզ,
Տէ՛ր Աստուած մեր, մինչեւ որ գթաս մեզ:
3 Գթա՛ մեզ, Տէ՛ր, գթա՛ մեզ,
քանզի բազում արհամարհանքներ կրեցինք:
4 Մեր հոգիներն անչափ լցուեցին մեզ անպատուողների նախատինքներով
եւ ամբարտաւանների անարգանքով:

ԱՍՏՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՀԱՊԱՆ

123 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Եթէ Տէրը մեզ հետ չլինէր,
– թող ասի Իսրայէլը, –
2 եթէ Տէրը մեզ հետ չլինէր,
մարդիկ մեզ վրայ յարձակուելով՝
3 մեզ ողջ-ողջ կուլ կը տային,
երբ նրանց զայրոյթը բորբոքուած էր մեզ վրայ:
4 Եւ ջրերն անգամ մեզ կ'ընկղմէին,
երբ մեր հոգիներն անցան հեղեղի միջով:
5 Մեր հոգիներն անցան անհանդիստ ջրերի միջով:
6 Օրհնեալ է Տէրը,
որ մեզ նրանց ատամների որսը չդարձրեց:
7 Մեր հոգիները փրկուեցին ինչպէս ճնճղուկը որսորդի թակարդից:
Նրանց թակարդները փշրուեցին, եւ մենք ազատուեցինք:
8 Մեր օգնութիւնը Տիրոջ անունից է,
նա, որ երկինքն ու երկիրն ստեղծեց:

ԱՍՏՈՒԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

124 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Ով յոյսը դրել է Տիրոջ վրայ,
յաւիտեան չի սասանուի ինչպէս լեռը Սիոնի,
որ գտնւում է Երուսաղէմում:
2 Ինչպէս որ նա շրջապատուած է լեռներով,
այնպէս Տէրն իր ժողովրդի շուրջն է՝ այսուհետեւ մինչեւ յաւիտեան:
3 Տէրը չի թողնի, որ մեղաւորների գաւազանն որոշի արդարների վիճակը,
եւ արդարներն իրենց ձեռքերը պիտի չերկարեն անօրէնութեան:
4 Տէրը բարիք է գործում բարիներին
եւ նրանց, որ ուղիղ են սրտով:
5 Իսկ յափշտակութեամբ համակուածներին Տէրը կը կործանի նրանց հետ,
ովքեր անօրէնութիւն են գործում:
Խաղաղութիւն Իսրայէլին:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

125 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Երբ Տէրը Սիոնը վերադարձրեց գերութիւնից,
մենք մխիթարուեցինք:

2 Այնժամ մեր բերանները խնդութեամբ լցուեցին
եւ մեր լեզուները՝ ցնծութեամբ:
Այնժամ հեթանոսների մէջ ասացին.
«Տէրը մեծ բաներ գործեց սրանց համար»:
3 Մեծ բաներ գործեց Տէրը մեզ համար,
եւ մենք ցնծացինք:
4 Տէ՛ր, ե՛տ դարձրու մեզ գերութիւնից՝
հարաւի հեղեղների պէս:
5 Ովքեր ցանում էին արտասուքով,
ցնծութեամբ պիտի հնձեն:
6 Ովքեր շալակած տանում էին սերմերն իրենց ու լաց լինում գնալիս,
յետ պիտի դան ցնծալով
եւ բարձած պիտի բերեն խրձերն իրենց:

ԱՍՏՈՒՈ ԲԱՐՈՒՔԵԱՆ ՓԱՌՔԸ

126 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Եթէ Տէրը տունը չշինի,
իզուր են չարչարւում այն շինողները,
եթէ Տէրը քաղաքը չպահպանի,
իզուր են հսկում պահապանները նրա:
2 Իզուր էք վաղ արթնանում.
արդ, վե՛ր կացէք՝ քանի դեռ չէք ննջել:
Դուք տառապանքի հացն էք ուտում,
մինչ Նա քուն է տալիս իր սիրելիներին:
3 Տիրոջ ժառանգութիւնը նրա որդիներն են,
որոնք նրա վարձն են,
պտուղը նրա որովայնի:
4 Ինչպէս նետերը հզօրի ձեռքում,
այնպէս են որդիներն անկեալների:
5 Երանի՛ նրան, ով իր ուզածի չափ կ'առնի այդ նետերից.
երբ դարպասի մօտ իր թշնամիների հետ խօսելու լինի,
նա ամօթով չի մնայ:

ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

127 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Երանի՛ բոլոր նրանց, ովքեր վախենում են Տիրոջից
եւ ընթանում նրա ճանապարհներով:
2 Դու քո ձեռքի վաստակը պիտի ուտես.
երանի՛ քեզ, դա լաւ պիտի լինի քեզ համար:
3 Կինդ պիտի լինի վայելուչ որթատունկի պէս քո տան անկիւնում,
որդիներդ՝ նորատունկ ձիթենու պէս
քո սեղանի շուրջը:
4 Ահա այսպէ՛ս պիտի օրհնուի ամէն մարդ,
որ վախենում է Տիրոջից:
5 Քեզ պիտի օրհնի Տէրը Սիոնից,
կեանքիդ բոլոր օրերին դու պիտի տեսնես բարութիւնը Երուսաղէմի:
6 Դու պիտի տեսնես քո որդիների որդիներին:
Խաղաղութի՛ւն Իսրայէլին:

ԱՂՕԹՔ ԻՍՐԱՅԷԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԷՄ

128 Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ

1 Մանկութիւնից ի վեր բազում անգամ մարտնչեցին իմ դէմ,
– թող Իսրայէլն ասի այդ, –
2 մանկութիւնից ի վեր բազում անգամ մարտնչեցին իմ դէմ,
բայց չյաղթեցին ինձ:
3 Մեղաւորներն հարուածեցին իմ թիկունքին,
երկար ժամանակ գործեցին անօրէնութիւնն իրենց:
4 Տէրն արդար է,
մեղաւորների պարանոցը նա կը խորտակի:
5 Ամօթահար կը լինեն ու ետ կը դառնան
բոլոր նրանք, ովքեր ատում են Սիոնը:
6 Նրանք կը լինեն տանիքի խոտի պէս,
որ չորանում է դեռ չհնձած:
7 Դրանով հնձուորն իր բուռը չի լցնի,
ոչ էլ խուրձ կապողն՝ իր գիրկը:
8 Նրանց կողքից անցնողները չեն ասի՝
«Տիրոջ օրհնութիւնը ձեզ վրայ լինի,
եւ օրհնեալ լինէք Տիրոջ անունով»:

Ի ԽՈՐՈՒՆ ՍՐՏԻ

129 1 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*
Խորութիւններից քեզ կանչեցի, Տէ՛ր:
2 *Տէ՛ր, լսի՛ր իմ ձայնը,*
թող քոականջները լսեն ձայնն իմ աղօթքի:
3 *Եթէ անօրէնութիւններս քննես, Տէ՛ր,*
ո՞վ կարող է կանգնել քո առջեւ, Տէ՛ր,
4 *քանզի քեզնից է գալիս քաւութիւնը:*
5 *Քո անուան համար համբերեցի, Տէ՛ր,*
հոգիս սպասեց քո խօսքին:
6 *Հոգիս յոյսը դրեց Տիրոջ վրայ:*
Առաւօտեան պահից մինչեւ երեկոյ,
առաւօտեան պահից Իսրայէլը յոյսը դրեց Տիրոջ վրայ:
7 *Տիրոջից է ողորմութիւնը,*
ու նրանից են բոլոր փրկութիւնները:
8 *Եւ նա պիտի փրկի Իսրայէլն իր բոլոր նեղութիւններից:*

ՍԻՐՏՍ ՅԱՒԱԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՒՆԻ, ՏԷՐ

130 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*
1 *Տէ՛ր, սիրտս չգոռոզացաւ,*
եւ աչքերս վերեւից չնայեցին.
ես մեծամեծների հետ ոտք չդրի,
ոչ էլ նրանց հետ, ովքեր բարձր են ինձնից.
2 *այլ խոնարհ եղայ մօր կրծքից կտրուած մանկան նման,*
որի փափագը նոյն բանին դառնալն է.
իսկ եթէ հպարտացրի իմ հոգին,
այդպէս թող լինի հատուցումն անձիս:
3 *Իսրայէլը յոյսը դրեց Տիրոջ վրայ՝*
այսուհետեւ մինչեւ յաւիտեան:

ՍԻՈՆԸ ՏԻՐՈՋ ԿԱՑԱՐԱՆ ԵՒ ԴԱՒԹԻ ՔԱՂԱՔ

131 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*
1 *Տէ՛ր, յիշի՛ր Դաւթին եւ նրա ամբողջ հեզութիւնը,*
2 *թէ ինչպէս նա երդուեց Տիրոջը,*
եւ ուխտ արեց Յակոբի Աստծուն՝ ասելով.
3 «*Չեմ մտնի իմ տան յարկից ներս,*
չեմ մտնի իմ անկողինը,
4 *իմ աչքերին քուն չեմ տայ,*
կամ նինջ՝ իմ թարթիչներին,
եւ կամ հանգիստ՝ իմ մարմնին,
5 *մինչեւ Յակոբի Տէր Աստծու համար խորանի տեղ չգտնեմ»:*
6 *Ահա, խորանի մասին լսեցինք Եփրաթայում,*
եւ այն գտանք մայրիների դաշտերում:
7 *Մտնենք կացարանը նրա,*
երկրպագենք այն տեղին, ուր կանգնած են ոտքերը նրա:
8 *Ելի՛ր քո հանգստավայրը, Տէ՛ր,*
դու եւ տապանակը քո սուրբ կտակի:
9 *Քո երէցները թող արդարութիւն հագնեն,*
եւ քո սրբերը խնդութեամբ ցնծան:
10 *Յանուն քո սիրելի Դաւթի,*
մի՛ շրջիր երեսդ քո օծեալից:
11 *Տէրը ճշմարտութեամբ երդուեց Դաւթին ու չստեց նրան.*
«*Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին:*
12 *Եթէ որդիներդ պահեն իմ օրէնքն ու իմ վկայութիւնները,*
որոնք նրանց պիտի սովորեցնեմ,
ապա որդիները նրանց յաւիտեանս յաւիտենից կը նստեն քո գահին»:
13 *Տէրը սիրեց Սիոնը*
եւ նախընտրեց բնակուել այնտեղ:
14 *Ասաց.* «*Այս է հանգստավայրն իմ յաւիտեանս յաւիտենից,*
այստեղ պիտի բնակուեմ, քանզի հաւանեցի սա:
15 *Սրա բերքը պիտի շարունակ օրհնեմ,*
եւ սրա աղքատներին կշտացնեմ հացով:
16 *Սրա երէցներին փրկութիւն պիտի հագցնեմ,*
եւ սրա սրբերը խնդութեամբ պիտի ցնծան:
17 *Այնտեղ պիտի Դաւթին եղջիւրներ ծլեցնեմ,*
իմ օծեալի համար ճրագ պատրաստեմ:

18 *Նրա թշնամիներին ամօթ պիտի հագցնեմ,*
իսկ նրա վրայ պիտի ծաղկի սրբութիւնն իմ»:

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԷՐԸ ՓԱՌՔԻ ՄԷՋ

132 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*
1 *Որքա՜ն բարի, որքա՜ն վայելուչ է,*
որ եղբայրները բնակուում են միասին,
2 *ինչպէս ազնիւ իւղ, որ իջնում է Ահարոնի գլխին ու մօրուքին,*
եւ մօրուքից սահում դէպի նրա զգեստի քղանցքները,
3 *ինչպէս ցող, որ Հերմոնից ցօղւում է Սիոն լերան վրայ:*
Այնտեղ պատրաստեց Տէրն օրհնութիւնն ու կեանքը յաւիտենական:

ԱՍՏԾՈՒՆ ՓԱՌԱՒՈՐԵԼՈՒ ԿՈՉ

133 *Օրհներգութիւններ Բարձունքի աստիճանների վրայ*
1 *Այստեղ օրհնեցէ՛ք Տիրոջը, Տիրոջ բոլո՛ր ծառաներ,*
որ գտնուում էք Տիրոջ տանը
եւ մեր Աստծու գաւիթներում:
2 *Գիշերը դէպի սրբութի՛ւն պարզեցէք ձեռքերը ձեր,*
եւ օրհնեցէ՛ք Տիրոջը:
3 *Թող Տէրն օրհնի մեզ Սիոնից,*
Նա, որ երկինքն ու երկիրը ստեղծեց:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

134 *Ալէլուիա*
1 *Օրհնեցէ՛ք Տիրոջ անունը,*
օրհնեցէ՛ք Տիրոջը, Տիրո՛ջ ծառաներ,
2 *որ գտնուում էք Տիրոջ տանը,*
մեր Աստծու տան գաւիթներում:
3 *Օրհնեցէ՛ք Տիրոջը, քանզի բարի է Տէրը.*
սաղմո՛ս երգեցէք նրա անուանը, քանզի քաղցր է նա:
4 *Տէրն իր ընտրեալը դարձրեց Յակոբին,*
եւ Իսրայէլը՝ ժառանգութիւնն իր:
5 *Ես հասկացայ, որ մեծ է Տէրը,*
եւ Տէրը մեծ է բոլոր կուռքերից:
6 *Տէրն ինչ որ ցանկացաւ,*
կատարեց երկնքում ու երկրի վրայ,
ծովում եւ բոլոր անդունդներում:
7 *Ամպեր հանելով երկրի ծայրերից՝*
իր կայծակներն անձրեւի վերածեց,
եւ իր պահեստներից հողմեր դուրս բերեց:
8 *Նա հարուածեց եգիպտացիների բոլոր անդրանիկ ծնունդներին,*
ինչպէս մարդկանց, այնպէս էլ անասուններին:
9 *Իր նշաններն ու զարմանահրաշ գործերն ուղարկեց քեզ, ո՛վ Եգիպտոս,*
քո Փարաւոնին եւ նրա ամբողջ զօրքին:
10 *Նա հարուածեց բազում ազգերի,*
եւ սպանեց հզօր թագաւորների.
11 *ամորհացիների թագաւոր Սեհոնին,*
Բասանի թագաւոր Օգին
ու բոլոր թագաւորութիւնները Քանանի:
12 *Նրանց երկիրը որպէս ժառանգութիւն տուեց,*
որպէս ժառանգութիւն Իսրայէլի իր ժողովրդին:
13 *Տէ՛ր, քո անունը յաւերժ է,*
Տէ՛ր, քո յիշատակը՝ սերնդից սերունդ:
14 *Տէրը դատում է իր ժողովրդին,*
եւ մխիթարւում իր ծառաներով:
15 *Հեթանոսների կուռքերը ոսկի ու արծաթ են,*
ձեռքի գործն են մարդկանց որդիների:
16 *Բերան ունեն, բայց չեն խօսում,*
աչքեր ունեն, բայց չեն տեսնում:
17 *Ականջներ ունեն, բայց չեն լսում,*
եւ նրանց բերանում շունչ չկայ:
18 *Նրանց նման կը լինեն դրանք ստեղծողները*
եւ բոլոր նրանք, որ յոյսը դրել են նրանց վրայ:
19 *Օրհնի՛ր Տիրոջը, տո՛ւն Իսրայէլի,*
օրհնի՛ր Տիրոջը, տո՛ւն Ահարոնի:
20 *Օրհնի՛ր Տիրոջը, տո՛ւն Ղեւիի.*
Տիրոջից երկի՛ւղ կրողներ, օրհնեցէ՛ք Տիրոջը:
21 *Օրհնութի՛ւն Տիրոջը Սիոնից,*
Նրան, որ բնակուում է Երուսաղէմում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՓՐԿՉԻՆ

135 *Ալէլուիա*

1 Գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջը,
քանզի բարի է նա,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
2 Գոհութի՛ւն մատուցեցէք աստուածների Աստծուն,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
3 Գոհութի՛ւն մատուցեցէք տէրերի Տիրոջը,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
4 Միայնակ նա մեծ հրաշագործութիւններ արեց,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
5 Երկինքն ստեղծեց իր իմաստութեամբ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
6 Երկիրը հաստատեց ջրերի վրայ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
7 Միայնակ ստեղծեց լուսատուները մեծ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
8 Արեգակը կարգեց ցերեկուայ տիրակալ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը,
9 լուսինն ու աստղերը՝ գիշերուայ տիրակալ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
10 Կործանեց եգիպտացիների երկիրն իր անդրանիկ ծնունդներով հանդերձ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
11 Իսրայէլացիներին հանեց Եգիպտոսից,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը,
12 արեց այդ՝ բարձր ձեռքով եւ իր հզօր բազկով,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
13 Պատռեց մեծ ծովն ու բաժանեց երկու մասի,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
14 Իսրայէլացիներին անցկացրեց ծովի միջով,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
15 Փարաւոնին իր զօրքով ընկղմեց Կարմիր ծովում,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
16 Իր ժողովրդին հանեց դէպի անապատ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
17 Հարուածեց մեծամեծ ազգերի,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
18 Սպանեց հզօր թագաւորների,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը.
19 սպանեց ամորհացիների թագաւոր Սեհոնին,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը,
20 Բասանի թագաւոր Օգին,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
21 Նրանց երկիրը որպէս ժառանգութիւն տուեց,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը,
22 տուեց որպէս ժառանգութիւն Իսրայէլին՝ իր ծառային,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
23 Տէրը մեզ յիշեց մեր թշուառութեան մէջ,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
24 Նա փրկեց մեզ մեր թշնամիների ձեռքից,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
25 Նա կերակուր է տալիս բոլոր ապրող էակներին,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:
26 Գոհութի՛ւն մատուցեցէք երկնաւոր Աստծուն,
քանզի յաւերժ է նրա ողորմութիւնը:

ԻՍՐԱՅԷԼԻ ՈՂԲԸ ԱՔՍՈՐՈՒՄ

136 *Սաղմոս Դաւթի, Երեմիայի ձեռքով՝ անվերնագիր եբրայերէնում*

1 Բաբելոնի գետերի մօտ՝
այնտեղ նստած լալիս էինք,
երբ յիշում էինք Սիոնը:
2 Նրանց ուռիներից էինք կախել մեր կտակարանները[†]:
3 Այնտեղ մեզ գերեվարողները օրհնութեան խօսք էին պահանջում մեզնից,
մեզ տարագրողներն ստիպում էին՝ ասելով.
«Երգեցէ՛ք մեզ համար Սիոնի օրհներգերից»:
4 Իսկ մենք ինչպէ՞ս երգենք Տիրոջ օրհներգերը օտար երկրում:
5 Եթէ մոռանամ քեզ, Երուսաղէ՛մ,
թող իմ աջը մոռանայ ինձ:
6 Թող լեզուս քիմքիս կպչի,
թէ քեզ չյիշեմ,
եթէ իմ ուրախութեան սկզբում
նախ քե՛զ, Երուսաղէ՛մ, չգովաբանեմ:
7 Ցիշի՛ր, Տէ՛ր, թէ ինչ էին ասում եդոմացիները Երուսաղէմի օրերին.
«Քանդեցէ՛ք, քանդեցէ՛ք, հիմնայատա՛կ արէք»:
8 Ո՛վ Բաբելոնի թշուառ դուստր,
երանի՛ նրան, ով քեզ պիտի հատուցի այնպէս,
ինչպէս դու մե՛զ հատուցեցիր:
9 Երանի՛ նրան, ով կը բռնի քո մանուկներին
ու կը խփի քարին:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ի ԽՈՐՈՇ ՍՐՏԻ

137 *Սաղմոս Դաւթի*

1 Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, իմ ամբողջ սրտով,
հրեշտակների առջեւ սաղմոս պիտի երգեմ քեզ,
քանզի լսեցիր խօսքը բերանիս:
2 Պիտի երկրպագեմ սուրբ տաճարիդ
եւ անուանդ գոհութիւն պիտի մատուցեմ
քո ողորմութեան ու ճշմարտութեան համար,
քանզի ամէն ինչում մեծ ցոյց տուիր սուրբ անունդ:
3 Որ օրը որ քեզ ձայն տամ,
իսկոյն լսի՛ր ինձ,
եւ բազմապատկի՛ր զօրութիւններն հոգուս մէջ:
4 Գոհութիւն պիտի մատուցեն քեզ աշխարհի բոլոր թագաւորները,
քանզի լսեցին բերանիդ խօսքերը:
5 Նրանք պիտի փառաբանեն քո ճանապարհները,
քանզի մեծ է փառքը Տիրոջ:
6 Բարձր է Տէրը, նա տեսնում է խոնարհներին,
իսկ բարձրամիտներին հեռուից ճանաչում:
7 Երբ անցնեմ նեղութիւնների միջով,
դու կը փրկես ինձ թշնամու զայրոյթից:
Ձեռքդ կը մեկնես,
եւ քո աջը կը փրկի ինձ:
8 Տէրը կը հատուցի իմ փոխարէն.
Տէ՛ր, քո ողորմութիւնը յաւերժ է,
ձեռքիդ գործերը մի՛ անտեսիր:

ՄԵԾԱՐԱՆՔ ԱՄԵՆԱԳԷՏ ԱՍՏՎՈՒՆ

138 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*

1 Տէ՛ր, ինձ փորձեցիր ու ճանաչեցիր ինձ:
2 Դու իմացար իմ նիստուկացը,
հեռուից հասկացար իմ մտածումները:
3 Իմ շաւիղներն ու վիճակը դու քննեցիր,
եւ բոլոր ճանապարհներս նախապէս տեսար:
4 Իմացար, որ լեզուիս տակ նենգութիւն չկայ:
5 Ահա դու, Տէ՛ր, իմացար իմ սկիզբն ու վերջը,
դու ինձ ստեղծեցիր եւ ձեռքդ դրիր ինձ վրայ:
6 Զարմանալի է քո իմացութիւնն իմ մասին,
այնքան զօրեղ, որ չեմ կարող հասու լինել դրան:
7 Ո՞ւր գնամ ես քո հոգուց,
կամ քո դէմքից ո՞ւր փախչեմ:
8 Եթէ երկինք ելնեմ, այնտեղ ես դու,
եթէ դժոխք իջնեմ, դրան էլ մօտ ես:
9 Եթէ առաւօտեան թեւեր առնեմ
ու բնակուեմ ծովի եզերքին,
10 այնտեղ էլ քո ձեռքն ինձ կ'առաջնորդի,
եւ աջդ ինձ կ'ընդունի:
11 Ասացի՝ գուցէ խաւարն ինձ ծածկի,
կամ գիշերը պատի ինձ
իմ վայելքի լոյսի փոխարէն[†]:
12 Խաւարը քեզ համար խաւար չի լինի,
եւ գիշերը լուսաւոր ցերեկ կը դառնայ,
ու նրա մթութիւնն ինչպէս լոյս կ'երեւայ:
13 Դո՛ւ ստեղծեցիր երիկամներն իմ,
եւ մօրս որովայնից ինձ ընդունեցիր:
14 Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր,
քանզի ահեղ ու սքանչելի ես դու,
սքանչելի են գործերը քո,
որոնք ես շատ սիրեցի:
15 Ջծածկուեց քեզնից իմ ոսկորը,

[†]Եբրայերէն՝ գիշերն էլ լոյս է լինում շուրջս:

[†]Եբրայերէն՝ բնարները:

որն ստեղծեցիր դու Թաքուն,
ոչ էլ ծածկուեց կարողութիւնն իմ
երկրի խորքերում:
16 Իմ անկատարութիւնները տեսան
քո աչքերը,
եւ այդ բոլորը գրուեցին քո գրքում:
Ցերեկը դրանք մոլորուեցին,
ու չկար մէկը, որ առաջնորդէր
դրանք:
17 Ինձ համար խիստ պատուական
եղան քո բարեկամներն, Աստուա՛ծ,
եւ շատ զօրացան նրանց իշխան-
ները† :
18 Հաշուեցի նրանց, եւ աւազից շատ
դուրս եկան.
արթնացայ՝ եւ ահա քեզ հետ եմ:
19 Դու, Աստուա՛ծ, պիտի սպանես
մեղաւորներին.
արիւնարբո՛ւ մարդիկ, հեռացէ՛ք
ինձնից:
20 Հակառակութեամբ ու նախանձով
նրանք իզուր պիտի տիրեն քո
քաղաքներին:
21 Քեզ ատողներին ատեցի, Տէ՛ր,
եւ քո թշնամիների պատճառով մա-
շուեցի:
22 Կատարեալ ատելութեամբ ատեցի
նրանց,
եւ նրանք թշնամի դարձան ինձ:
23 Փորձի՛ր ինձ, Աստուա՛ծ,
ու ճանաչի՛ր իմ սիրտը,
քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շաւիղ-
ները,
24 եւ տե՛ս, եթէ իմ ճանապարհին
անօրէնութիւններ կան,
առաջնորդի՛ր ինձ քո յաւիտենական
ճանապարհներով:

ԸՆԴԴԷՄ ՁԱՐԵՐԻ

139

1 *Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի*
2 Ազատի՛ր ինձ, Տէ՛ր, չար մարդուց,
անիրաւ մարդուց փրկի՛ր ինձ:
3 Իրենց սրտում նրանք անօրէ-
նութիւն խորհեցին,
եւ գիշեր-ցերեկ պատերազմի պատ-
րաստուեցին:
4 Օձի պէս սրեցին լեզուներն իրենց,
եւ նրանց շրթների տակ թոյն կայ
իժի:

†Քո խորհուրդները, Աստուա՛ծ, որքա՜ն մեծ է դրանց թիւը:

5 Պահպանի՛ր ինձ, Տէ՛ր, մեղաւորի
ձեռքից,
եւ չար մարդուց փրկի՛ր ինձ.
նրանք խորհեցին խափանել ըն-
թացքն իմ:
6 Ամբարտաւաններն իրենց որոգայ-
թը թաքցրին ինձնից,
թակարդի լարեր ձգեցին ոտքերիս
առջեւ,
եւ իմ շաւղի շուրջը գայթակղու-
թիւններ դրին:
7 Ասացի. «Դու իմ Տէր Աստուածն
ես,
ակա՛նջ դիր, Տէ՛ր, աղօթքիս ձայ-
նին»:
8 Տէ՛ր, Տէ՛ր, իմ փրկութեան զօրու-
թի՛ւն,
գլխիս հովանի՛ն պատերազմի մէջ:
9 Մի՛ մատնիր ինձ, Տէ՛ր, մեղա-
ւորների կամքին,
որոնք նենգամտեցին իմ դէմ:
Ինձ երեսի վրայ մի՛ թող,
որ նրանք երբեք չբարձրանան,
եւ նրանց մտադրութիւնները չկա-
տարուեն:
10 Թող նրանց կատարածի վախ-
ճանն այս լինի.
իրենց շրթունքների վաստակը թող
ծածկի նրանց:
11 Դու նրանց վրայ կրակի կայծեր
թափի՛ր ու կործանի՛ր նրանց,
որ տառապանքներից չկարողանան
փրկուել:
12 Զարալեզու մարդը յաջողութիւն
չի ունենայ երկրի վրայ.
մեղաւոր մարդուն իր չարագործու-
թիւնները կորստեան կը մատնեն:
13 Գիտեմ, Տէ՛ր, որ դու աղքատին
արդար դատաստան ես անում
եւ տնանկի իրաւունքն ես պաշտ-
պանում:
14 Արդարները գոհութիւն պիտի
մատուցեն քո անունը,
ուղղամիտները պիտի բնակուեն քո
դիմաց:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

140

Սաղմոս Դաւթի
1 Տէ՛ր, ձայն տուի քեզ, լսի՛ր ինձ
եւ ո՛ւշ դարձրու աղօթքիս ձայնին,

երբ քեզ եմ կանչում:
2 Տէ՛ր, թող աղօթքս քեզ ուղղուի
որպէս խունկ,
ձեռքերիս կարկառումն՝ իբրեւ երե-
կոյեան պատարագ:
3 Պահապա՛ն դիր, Տէ՛ր, իմ բերանին,
եւ ամուր դուռ՝ իմ շրթներին,
4 որ սիրտս չհակուի չարութեան
խօսքին՝
մեղքի պատճառ դառնալով անօրէ-
նութիւն գործող մարդկանց նման.
ես նրանց հաճելի բաներին չեմ
հաղորդակցուի:
5 Թող արդարը խրատի ինձ ողոր-
մութեամբ ու յանդիմանի,
բայց մեղաւորի իւղը թող գլուխս
չօծի,
աղօթքս պիտի հակադրեմ նրա
կամքին:
6 Նրանց դատաւորները կուլ գնա-
ցին ժայռի մօտ,
թող լսեն խօսքերն իմ, որ քաղցր են.
7 «Ինչպէս թանձր հողը, որ
սփռուած է երկրի վրայ,
այնպէս պիտի ցրուեն նրանց
ոսկորները դժոխքի մօտերքում»:
8 Տէ՛ր, Տէ՛ր, քեզ են ուղղուած
աչքերն իմ,
յոյսս դրի քեզ վրայ,
մի՛ հանիր ինձնից իմ հոգին:
9 Պահպանի՛ր ինձ իմ դէմ լարուած
թակարդից
եւ անօրէնութիւն գործողների գայ-
թակղութիւնից:
Թող մեղաւորները նրա ցանցերն
ընկնեն,
եւ միայն ես անցնեմ գնամ:

ՀԱԼԱԾԵԱԼԻ ԱՂՕԹՔԸ

141

1 *Դաւթի իմաստութիւնը. աղօթք, երբ նա քարայրում էր*
2 Իմ ձայնով ես Տիրոջը կանչեցի,
իմ ձայնով Տիրոջն աղաչեցի:
3 Տիրոջ դիմաց պիտի սփռեմ
աղօթքն իմ
եւ նրա առջեւ նեղութիւնս պիտի
պատմեմ:
4 Երբ շունչս պակասեց իմ ներսում,
դու, Տէ՛ր, իմացար շաւիղներն իմ.
այն ճանապարհին, որով գնում էի,
ծածուկ որոգայթ լարուեց իմ դէմ:
5 Նայում էի աջ ու տեսնում,
որ ոչ ոք ինձ չի ճանաչում.
փախչելն ինձ համար անհնար
դարձաւ,
եւ չկար մէկը, որ փնտուէր ինձ:
6 Քե՛զ կանչեցի, Տէ՛ր, ու ասացի.
«Դու ես իմ յոյսը եւ իմ բաժինը
ողջերի երկրում:
7 Ո՛ւշ դարձրու, Տէ՛ր, իմ աղօթքին,
քանզի ես թաղուած եմ
թշուառութեան մէջ.
ազատի՛ր ինձ իմ հալածիչներից,
քանզի նրանք ինձանից հզօր եղան:
8 Տէ՛ր, բանտից հանի՛ր ինձ,
որ գոհութիւն մատուցեմ քո
անունը:
Արդարները պիտի սպասեն,
մինչեւ որ հատուցման արժա-
նացնես ինձ:

ԽՈՆԱՐՀ ԱՂԱՋԱՆՔ

142

Սաղմոս Դաւթի, այն ժամանակ, երբ նրան հալածեց իր որդի Աբիսողոմը
1 Տէ՛ր, լսի՛ր աղօթքն իմ,
քո ճշմարտութեամբ ակա՛նջ դիր իմ
խնդրանքին,
քո արդարութեամբ լսի՛ր ինձ:
2 Ծառայիդ հետ դատաստան մի՛
տես,
քանզի ոչ մի կենդանի մարդ չի
արդարանայ քո առջեւ:
3 Թշնամին հալածեց ինձ,
կեանքս հողին հաւասարեցրեց
եւ ինձ նստեցրեց խաւարի մէջ
յաւիտեան մեռածի պէս:
4 Հոգիս տաղտկացաւ իմ ներսում,
եւ սիրտս խռովուեց իմ մէջ:
5 Ցիշեցի օրերն առաջուայ,
մտաբերեցի բոլոր գործերը քո,
ձեռքերիդ ստեղծածների մասին
խորհեցի:
6 Դէպի քեզ կարկառեցի ձեռքերն
իմ.
հոգիս հողի պէս ծարաւի է քեզ:
7 Լսի՛ր ինձ փութով, Տէ՛ր,
քանզի շունչս պակասեց իմ ներսում,
մի՛ շրջիր երեսդ ինձնից,

որ չնմանուեմ գերեզման իջնողներին:
8 *Առաւօտեան քո ողորմութիւնն ինձ լսելի՛ դարձրու,*
քանզի, Տէ՛ր, յոյսս քեզ վրայ դրի.
ցո՛յց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ,
քանզի դէպի քեզ, Տէ՛ր, բարձրացրի հոգիս:
9 *Իմ թշնամիներից փրկի՛ր ինձ, Տէ՛ր,*
քանզի քեզ իմ ապաւէնը դարձրի:
10 *Սովորեցրո՛ւ ինձ կատարել կամքը քո,*
քանզի դու ես Աստուածն իմ,
քո բարի հոգին ինձ պիտի առաջնորդի դէպի արդար երկիր:
11 *Յանուն քո անուան, կեա՛նք տուր ինձ, Տէ՛ր,*
քո արդարութեամբ նեղութիւնից հանի՛ր հոգին իմ:
12 *Քո ողորմութեամբ կործանի՛ր իմ թշնամիներին,*
կորստեա՛ն մատնիր բոլոր ինձ նեղողներին,
քանզի ես ծառան եմ քո:

ՕՐՀՆԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ

143 *Սաղմոս Դաւթի՝ Գողիադի մասին*

1 *Օրհնեալ է Տէր Աստուածն իմ,*
որ ձեռքս վարժեցրեց պատերազմի
եւ մատներս՝ ճակատամարտի:
2 *Նա ողորմութիւնն ու ապաւէնն է իմ,*
օգնականը, փրկիչն ու պահպանիչն իմ:
Ես յոյսս դրել եմ նրա վրայ.
Նա է, որ ժողովուրդներին հնազանդեցնում է ինձ:
3 *Տէ՛ր, մարդն ի՞նչ է, որ յայտնուեցիր նրան,*
կամ մարդու որդին՝ որ բանի տեղ ես դնում նրան:
4 *Մարդը նման է ունայնութեան,*
եւ նրա օրերն անցնում են ստուերի պէս:
5 *Տէ՛ր, ցածրացրո՛ւ երկինքն ու իջի՛ր,*
մօտեցի՛ր լեռներին՝ եւ թող ծխեն դրանք:
6 *Արձակի՛ր կայծակները քո եւ խռովի՛ր նրանց,*
առաքի՛ր նետերը քո եւ ցրի՛ր նրանց:
7 *Ձեռքդ մեկնի՛ր վերից ու փրկի՛ր ինձ յորդացող ջրերից*
եւ օտարների որդիների ձեռքից,
8 *որոնց բերաններն ունայնութիւն են խօսում,*
եւ որոնց աջը մեղսագործ աջ է:
9 *Աստուա՛ծ, քե՛զ նոր օրհներգով պիտի օրհնեմ,*
տասնալար նուագարանով սաղմոս պիտի երգեմ քեզ:
10 *Նա ազատութիւն պիտի տայ մեր թագաւորներին,*
եւ չար սրից պիտի փրկի իր Դաւիթ ծառային:
11 *Փրկի՛ր եւ ազատի՛ր ինձ օտարների որդիների ձեռքից,*
որոնց բերաններն ունայնութիւն են խօսում,
եւ որոնց աջը մեղսագործ աջ է:
12 *Նրանց որդիները նոր տունկի պէս հաստատուած են իրենց մանկութիւնից,*
նրանց դուստրերը զարդարուած ու պճնուած են ինչպէս տաճար:
13 *Նրանց շտեմարանները լիքն են*
եւ մէկից միւսն են հոսում,
նրանց ոչխարները բազմածին են
եւ բազմանում են իրենց ճամփի վրայ:
14 *Նրանց արջառները պարարտ են,*
նրանց ցանկապատերը խրամատներ չունեն,
եւ նրանց հրապարակներում աղմուկ չկայ:
15 *Ես երանի եմ տալիս այն ժողովրդին, որն այս վիճակում է.*
նաեւ երանի՛ այն ժողովրդին, որի Տէրն Աստուած է:

ՔՈ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է

144 *Օրհնութիւն Դաւթի*

1 *ալեփ. Պիտի փառաբանեմ քեզ, Աստուած իմ եւ Թագաւոր իմ,*
ու յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից քո անունն օրհնեմ:

2 *բեթ. Գիշեր-ցերեկ քեզ օրհնութիւն պիտի մատուցեմ,*
ու յաւիտեանս յաւիտենից պիտի գովաբանեմ անունը քո:
3 *գամէլ. Մեծ է Տէրն ու անչափ օրհնեալ,*
եւ նրա մեծութիւնը սահման չունի:
4 *դալեթ. Սերնդից սերունդ պիտի գովեն գործերը քո,*
եւ պիտի պատմեն զօրութիւնները քո:
5 *հէ. Քո սուրբ փառքի մեծ վայելչութեան մասին պիտի խօսեն,*
եւ քո հրաշագործութիւնները պիտի պատմեն:
6 *վաւ. Քո ահաւոր զօրութիւնը պիտի նկարագրեն,*
եւ քո մեծութիւնը պատմեն:
7 *զէ. Քո մեծ բարութեան յիշատակը պիտի աւետեն,*
եւ պիտի ցնծան քո արդարութեամբ:
8 *խէթ. Գթասիրտ եւ ողորմած է Տէրը,*
համբերատար եւ ողորմաշատ:
9 *թէթ. Տէրը քաղցր է բոլորի հանդէպ,*
եւ նրա գթութիւնը տարածւում է նրա բոլոր արարածների վրայ:
10 *եօդ. Քո բոլոր գործերը, Տէ՛ր, քեզ գոհութիւն պիտի մատուցեն,*
եւ քո սրբերը պիտի օրհնեն քեզ:
11 *քափ. Քո արքայական փառքի մասին պիտի խօսեն,*
եւ քո զօրութիւնները պիտի պատմեն,
12 *լամէդ. որ մարդկանց որդիները ճանաչեն զօրութիւնները քո ,*
եւ մեծ վայելչութիւնը արքայական քո փառքի:
13 *մէմ. Քո արքայութիւնը ողջ յաւիտենութեան արքայութիւնն է,*
եւ քո տէրութիւնը՝ սերնդից սերունդ:
նուն. Հաւատարիմ է Տէրն իր բոլոր խօսքերում,
եւ արդար է նա իր բոլոր գործերում:
14 *սամքաթ. Տէրն ամուր է պահում բոլոր սայթաքողներին,*
եւ ոտքի կանգնեցնում բոլոր գլորուածներին:
15 *էյ. Բոլորի աչքերը քեզ վրայ են յառած յուսով,*
եւ դու ես տալիս նրանց կերակուրը ժամանակին.
տալիս ես դու նրանց, եւ սնւում են նրանք:
16 *փէ. Բացում ես ձեռքը քո,*
եւ քո քաղցր կամքով յագեցնում ես բոլորին:
17 *ծադէ. Արդար է Տէրն իր բոլոր ճանապարհներին,*
եւ սուրբ է նա իր բոլոր գործերում:
18 *կոփ. Տէրը մօտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն,*
բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն ճշմարտապէս:
19 *ռէշ. Իրենից ակնածողների կամքը կատարում է Տէրը,*
լսում է նրանց աղօթքն ու փրկում նրանց:
20 *շին. Տէրը պահպանում է բոլոր նրանց, ովքեր սիրում են իրեն,*
եւ Տէրը կործանում է բոլոր մեղաւորներին:
21 *թաւ. Բերանս Տիրոջ օրհնութիւնը պիտի խօսի.*
ամէն կենդանի էակ պիտի օրհնի սուրբ անունը նրա
յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

ԱՍՏՈՒԱԾ ՏԿԱՐՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ

145 1 *Ալէլուիա՝ Անգէոսի եւ Զաքարիայի*

2 *Օրհնի՛ր Տիրոջը, հոգիդ իմ.*
պիտի օրհնեմ Տիրոջն իմ կեանքում,
սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն, քանի կամ:
3 *Ցոյս մի՛ դրէք իշխանների՝*
մարդկանց որդիների վրայ, որովհետեւ նրանցից փրկութիւն չկայ:
4 *Երբ դուրս գայ նրանց հոգին,*
նրանք կրկին հող կը դառնան,
եւ նոյն օրը նրանց բոլոր մտածումները կ՚անհետանան:
5 *Երանի՛ նրան, ում օգնականը Յակոբի Տէր Աստուածն է,*
եւ ում յոյսը Տէր Աստծու վրայ է,
6 *Նա, որ ստեղծեց երկինքն ու երկիրը,*
ծովն ու դրանց մէջ եղած ամէն ինչ,

7 Նա, որ յաւիտեան պահպանում է
ճշմարտութիւնը,
եւ զրկեալներին արդարութիւն շնորհում.
Տէրը հաց է տալիս քաղցածներին
եւ արձակում բանտարկեալներին:
8 Տէրը բացում է կոյրերի աչքերը,
Տէրը ոտքի է կանգնեցնում գլորուածներին:
Սիրում է Տէրն արդարներին:
9 Տէրը պահպանում է պանդուխտներին,
Տէրն ընդունում է որբերին ու այրիներին,
եւ կործանում ճանապարհներն ամբարիշտների:
10 Ցաւէտ պիտի թագաւորի Տէրը,
քո Աստուածը, Սիո՛ն, սերնդից սերունդ:

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏՈՒՇ ՓԱՌՔԸ

146 Ալէլուիա՝ Անգէոսի եւ Զաքարիայի

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը, քանզի քաղցր են սաղմոսները.
հաճելի է օրհնութիւնը մեր Աստծուն:
2 Տէրը կառուցում է Երուսաղէմը,
եւ հաւաքում Իսրայէլի ցրուածներին:
3 Բժշկում է բեկեալ սրտերը,
եւ կապում բոլոր վէրքերը նրանց:
4 Նա հաշւում է աստղերի բազմութիւնը,
եւ կոչում բոլորն իրենց անուններով:
5 Մեծ է մեր Տէրը, եւ մեծ է նրա զօրութիւնը,
նրա իմաստութիւնը սահման չունի:
6 Տէրն ընդունում է հեզերին,
եւ մինչեւ գետին խոնարհեցնում ամբարտաւաններին:
7 Օրհնեցէ՛ք Տիրոջը գոհաբանութեամբ,
սաղմո՛ս երգեցէք նրան օրհնութեամբ:
8 Երկինքը նա պատեց ամպերով,
երկրի համար պատրաստեց անձրեւն իր,
լեռներում խոտ աճեցրեց
եւ բանջար՝ մարդկանց կարիքների համար:
9 Նա ուտելիք է տալիս անասուններին եւ ագռաւի ձագերին,
որոնք դիմում են իրեն:
10 Տէրը ձիու զօրութիւն չէ, որ կամենում է,
ոչ էլ հսկայի կազմուածքն է հաւանում,
11 այլ Տէրն իրենից երկիւղ կրողներին է հաւանում
եւ նրանց, որ իրենց յոյսը դրել են իր ողորմութեան վրայ:

147 Ալէլուիա՝ Անգէոսի եւ Զաքարիայի

12 Գովաբանի՛ր Տիրոջը, ո՛վ Երուսաղէմ,
եւ օրհներգի՛ր քո Աստծուն, Սիո՛ն,
13 քանզի նա դռներիդ նիգերն ամրացրեց,
եւ որդիներիդ օրհնեց քո մէջ:
14 Քո սահմանները խաղաղութեան մէջ պահեց,
եւ ցորենի առատութեամբ լիացրեց քեզ:
15 Նա երկիր է ուղարկում խօսքերն իր,
եւ արագ սլանում են պատգամները նրա:
16 Նա ձիւն է տեղացնում ինչպէս բուրդ,
եւ մառախուղը ցանում փոշու պէս:
17 Նա սառոյցներն արձակում է ինչպէս պատառներ.
ո՞վ կարող է դիմանալ նրա ցրտին:
18 Ուղարկում է խօսքն իր ու հալեցնում դրանք.
փչում են հողմերը, եւ հոսում ջրերը:
19 Իր խօսքը յայտնում է Յակոբին,
իր օրէնքներն ու դատաստանները՝ Իսրայէլին:
20 Տէրն այսպէս չվարուեց բոլոր ազգերի հետ,
եւ իր դատաստանները նրանց չյայտնեց:

ԱՍՏՈՒՇՆ ՓԱՌԱՒԱՆԵԼՈՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿՈՉ

148 Ալէլուիա՝ Անգէոսի եւ Զաքարիայի

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը երկնքից,
օրհնեցէ՛ք նրան բարձունքներից:
2 Օրհնեցէ՛ք նրան, նրա բոլո՛ր հրեշտակներ,
օրհնեցէ՛ք նրան, նրա բոլո՛ր զօրութիւններ:
3 Օրհնեցէ՛ք նրան, արեգա՛կ եւ լուսի՛ն,
օրհնեցէ՛ք նրան, բոլո՛ր աստղեր եւ լոյս:
4 Օրհնեցէ՛ք նրան, երկինքների՛ երկինքներ,
եւ ջրե՛ր՝ որ վեր էք երկնքից:
5 Օրհնեցէ՛ք անունը Տիրոջ,
քանզի նա ասաց՝ եւ դրանք ստեղծուեցին,
նա հրամայեց՝ եւ դրանք հաստատուեցին:
6 Նա կարգեց դրանք յաւիտեանս յաւիտենից.
կարգ սահմանեց, եւ այն չի խախտւում:
7 Օրհնեցէ՛ք Տիրոջը երկրի վրայից,
վիշապնե՛ր եւ բոլո՛ր անդունդներ:
8 Հուր եւ կարկուտ,
ձիւն եւ սառնամանիք,
հողմ ու մրրիկ,
դուք, որ նրա խօսքն էք կատարում,
9 լեռնե՛ր եւ բոլո՛ր բլուրներ,
պտղաբե՛ր ծառեր եւ բոլո՛ր մայրիներ,
10 գազաննե՛ր եւ ամէն տեսակ անասուննե՛ր,
սողունն՝ եւ ամէն տեսակ թեւաւոր թռչունն՝ե՛ր,
11 երկրի թագաւորնե՛ր՝ զօրքերով հանդերձ,
իշխանն՝ե՛ր եւ երկրի բոլո՛ր դատաւորներ,
12 երիտասարդնե՛ր ու կոյսե՛ր,
ծերե՛ր ու մանուկնե՛ր,
օրհնեցէ՛ք անունը Տիրոջ:
13 Փառաւորուեց միայն նրա՛ անունը.
երկնքում ու երկրի վրայ է վեհութիւնը նրա:
14 Տէրը բարձրացնում է եղջիւրն իր ժողովրդի.
օրհնութի՛ւն նրա բոլոր սրբերին՝ որդիներին Իսրայէլի,
այն ժողովրդին, որ մօտ է Տիրոջը:

ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳ

149 Ալէլուիա

1 Օրհնեցէ՛ք Տիրոջը նոր օրհնութեամբ,
սրբերի ժողովում է օրհնութիւնը նրա:
2 Իսրայէլն ուրախացաւ իր Արարչով,
Սիոնի որդիները թող ցնծան իրենց թագաւորով:
3 Թող գովեն նրա անունը օրհնութեամբ,
նուագարանով ու օրհներգով սաղմոս ասեն նրան:
4 Տէրը սիրում է իր սուրբ ժողովրդին,
եւ փառաւորում հեզերին փրկութեամբ:
5 Թող սրբերը պարծենան փառքով,
եւ ցնծան իրենց հանգստի մէջ:
6 Թող նրանք փառաբանեն Աստծուն իրենց բերաններով.
նրանց ձեռքերում երկսայրի սրեր կան,
7 որ վրէժ լուծեն հեթանոսներից
եւ պատժեն բոլոր ժողովուրդներին,
8 որ նրանց թագաւորներին կապեն շղթաներով,
եւ նրանց մեծամեծներին՝ երկաթեայ ձեռնակապերով,
9 որ գրուած դատաստանն իրագործեն նրանց հանդէպ:
Այս է փառքը նրա բոլոր սրբերի:

ՓԱՌԱՒԱՆՆՑԷ՛Ք ՏԻՐՈՋԸ

150 Ալէլուիա

1 Օրհնեցէ՛ք Աստծուն իր սրբարանում,
օրհնեցէ՛ք նրան իր զօրութեան երկնային հաստատութեան մէջ:
2 Օրհնեցէ՛ք նրան իր զօրութեան մէջ,
օրհնեցէ՛ք նրան իր անչափ մեծութեան մէջ:

3 Գովաբանեցէ՛ք նրան օրհնութեան ձայնով,
գովաբանեցէ՛ք նրան սաղմոսով եւ օրհներգութեամբ:
4 Օրհնեցէ՛ք նրան ցնծութեամբ,
գովաբանեցէ՛ք նրան ուրախութեամբ:
5 Օրհնեցէ՛ք նրան քաղցր խօսքերով,
օրհնեցէ՛ք նրան լսելի բառերով,
օրհնեցէ՛ք նրան գոհութեան ձայնով:
6 Բոլո՛ր հոգիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը:

Հաշուից դուրս այս սաղմոսը Դաւթի ինքնագիրն է, երբ նա մարտնչելու ելաւ Գողիադի դէմ, Սաւուղի առջեւ.

1 Փոքրն էի ես իմ եղբայրների մէջ,
եւ կրտսերն՝ իմ հօր տանը.
հօրս ոչխարներն էի արածեցնում:
2 Ձեռքերն իմ նուագարան ստեղծեցին,
եւ մատներս օրհներգութեան գործիք պատրաստեցին:
3 Իսկ արդ, ո՞վ պիտի պատմի այս բանն իմ Տիրոջը.
ամէն բանի Տէրն ինքը կը լսի այս ամէնը:
4 Նա ուղարկեց իր հրեշտակին,
ինձ վերցրեց հօրս ոչխարների հօտից,
եւ օծեց ինձ իր իւղի օծումով:
5 Գեղեցիկ ու մեծ էին եղբայրներն իմ,
բայց Տէրը չհաւանեց նրանց:
6 Ես ելայ այլազգու դէմ,
եւ նզովեցի կուռքերը նրա:
7 Առայ նրա սուրն իրենից,
կտրեցի գլուխը նրա,
եւ վերացրի նախատինքը Իսրայէլի որդիներից:

ԱՌԱԿՆԵՐ

Ներածութիւն

Այս գիրքը իմաստութեան վերաբերեալ բազմաթիւ առակների եւ ուսուցողական խրատների մի ժողովածու է, որի հեղինակը լինելու պատիւը վերագրւում է Սողոմոն թագաւորին, որը Իսրայէլում ճանաչուած է եղել որպէս գերազանցապէս իմաստուն մի մարդ:

Առակների գիրքը պատկանում է գրական այնպիսի մի ժանրի, որը մեծ ծաղկում է ապրել ամբողջ Հին Արեւելքում, որտեղ անհրաժեշտ էր, որ մարդկային կեանքում ձեռք բերուած փորձառութիւնը փոխանցուէր մէկ սերնդից միւսին: Գրքում պարունակուած առակները գալիս են տարբեր դարաշրջաններից: Դրանք կարելի է բաժանել երեք մեծ մասի.

Առաջին մասը հէնց առակներին վերաբերող մի երկար ներածութիւն է, կապակցուած մտածումների ձեւի տակ, որով բացատրւում է իմաստութեան դերն ու կարեւորութիւնը մարդու կեանքում:

Երկրորդը գրքի կենտրոնական մասն է կազմում, որից գիրքն ստացել է իր վերնագիրը: Այստեղ ընդգրկուած են Սողոմոնի առակները, որոնց վրայ աւելացուել են տարբեր իմաստութիւններին պատկանող այլ առակներ:

Երրորդ մասը բաղկացած է չորս անկախ կտորներից, որոնցից երկուսը մեզ փոխանցում են ոչ իսրայէլացի իմաստունների մտածումները կամ խրատները:

Առակների գիրքը չի շօշափում բնաւ իսրայէլացի ժողովրդի պատմութեանն ու ապագային վերաբերող հարցեր, ինչպէս այդ անում են Հին Կտակարանի միւս գրքերը, այլ առակների ուսուցումը ամենից առաջ վերաբերում է անհատներին, եւ այն խրատները, որ տրւում են այնտեղ, նպատակ ունեն թոյլ տալու իւրաքանչիւր անհատի, Աստծու առաջնորդութեան ներքոյ, ապրել հաւասարակշռուած եւ անբասիր մի կեանք:

ԱՌԱԿՆԵՐ

1 *Երուսաղէմում Իսրայէլի թագաւոր Դաւթի որդու՝ Սողոմոնի առակները*

2 Ճանաչել իմաստութիւնն ու խրատը,
իմանալ հանճարի խօսքերը,
3 ընկալել խօսքի բարդ դարձուածքները,
հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը՝
4 պարզամիտներին խորագիտութիւն
եւ երիտասարդներին միտք ու հանճար տալու համար,
5 որպէսզի, դրանք լսելով,
իմաստունն աւելի իմաստուն լինի,
իսկ հանճարեղը առաջնորդութիւն ստանայ,
6 թափանցի առակների եւ խորին ասոյթների մէջ,
իմաստունների ճառերի եւ նրանց այլաբանութիւնների մէջ:

ԽՐԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

7 Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է,
որ բարի հանճար է բոլոր նրանց համար,
ովքեր առաջնորդւում են նրանով,
իսկ զգօնութեան սկիզբը բարի աստուածապաշտութիւնն է,
բայց ամբարիշտներն արհամարհում են իմաստութիւնն ու խրատը:
8 Լսի՛ր, որդեա՛կ, հօրդ խրատը
եւ մի՛ մերժիր մօրդ պատուիրանը,
9 որպէսզի շնորհի պսակ կրես քո գլխին
եւ ոսկի մանեակ՝ քո պարանոցին:
10 Որդեա՛կ, թող քեզ չխաբեն ամբարիշտ մարդիկ,
11 եւ հաւանութիւն չտաս, եթէ քեզ կանչեն ու ասեն.
«Արի՛ մեզ հետ, մասնակի՛ց եղիր արիւնահեղութեան,
անմեղ տեղը սպանենք
եւ հողի տակ ծածկենք արդար մարդուն,
12 գերեզմանի պէս նրան ողջ-ողջ կուլ տանք
եւ նրա յիշատակը վերացնենք երկրից,
13 յափշտակենք նրա տեսակ-տեսակ ունեցուածքը
եւ մեր տները լցնենք աւարով:
14 Ե՛կ մեզ բաժնեկի՛ց դարձիր,
բոլորս մի ընդհանուր քսակ կ'ունենանք,
եւ միեւնոյն տեղը կը լինի մեր գանձարանը»:
15 Որդեա՛կ, ճանապարհ մի՛ գնա նրանց հետ,
ոտքդ չեղի՛ր նրանց շաւիղներից,
16 քանզի նրանց ոտքերը դէպի չարիք են ընթանում,
եւ նրանք շտապում են արիւն հեղելու:
17 Արդարեւ, իզուր թակարդ չեն լարում թռչունների համար:
18 Նրանք, որ սպանութեան մասնակից են դառնում,
չարիք են գանձում իրենց անձի համար.
չար է լինելու անիրաւ մարդկանց կործանումը:
19 Դա է ճանապարհը բոլոր նրանց,
որ անիրաւութիւն են գործում,
որովհետեւ ամբարտաւանութեամբ նրանք սպանում են իրենց հոգին:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԸ

20 Իմաստութիւնը գովաբանւում է ճանապարհների վրայ,
բարձր ձայնով հռչակւում հրապարակներում,
21 քարոզւում պարիսպների գլխից,
ազդարարւում հզօրների դռների առջեւ
եւ համարձակ խօսւում քաղաքների դարպասների մօտ:
22 Այնքան ժամանակ, քանի դեռ անմեղները հետամուտ կը լինեն արդարութեան,
չեն ամաչելու:
Բայց ամբարիշտները, որ թշնամութիւն են ցանկանում
եւ ամբարշտանալով ատում են իմաստութիւնը,
պիտի դատապարտուեն յանդիմանութեան:
23 Ահաւասիկ ես ձեր առջեւ կը բացեմ իմ հոգու պատգամները

եւ իմ խօսքերը կը սովորեցնեմ ձեզ.
24 որովհետեւ ես կանչում էի, բայց դուք չէիք լսում,
երկար թախանձում էի, բայց դուք չէիք ունկնդրում ինձ,
25 այլեւ զանց էիք առնում իմ խորհուրդները
եւ չէիք ուզում անսալ իմ յանդիմանութիւններին:
26 Ես այսուհետեւ պիտի ծիծաղեմ ձեր կորստեան վրայ
եւ խնդամ, երբ ձեր նեղութիւնն ու տագնապը պաշարեն ձեզ:
27 Եւ երբ յանկարծակի խռովութիւն հասնի ձեզ վրայ,
եւ, ինչպէս մրրիկ, կործանում գայ,
կամ երբ ձեր վախճանը հասնի,
28 գուցէ դուք կանչէք ինձ, բայց ես ձեզ չեմ լսելու.
չարերը պիտի փնտռեն ինձ, բայց չեն գտնելու,
29 քանզի ատեցին իմաստութիւնը
եւ Տիրոջ երկիւղը չընտրեցին,
30 չկամեցան անսալ իմ խորհուրդներին,
արհամարհեցին իմ յանդիմանութիւնները:
31 Այսուհետեւ նրանք կ'ուտեն իրենց ճանապարհների պտուղները
եւ կը յագենան իրենց ամբարշտութեամբ:
32 Քանի որ զրկում էին երեխաներին, պիտի կոտորուեն,
եւ կշտամբանքը պիտի սպանի ամբարիշտներին:
33 Իսկ նա, ով ինձ լսի, կ'ապրի ապահով
եւ երկիւղ չի ունենայ ոչ մի չարիքից:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՉԱՐԻՑ

2 Որդեա՛կ, եթէ իմ պատգամներն ու պատուիրաններն ընդունես
եւ պահես դրանք հոգուդ մէջ,
2 իմաստութիւնը պիտի հաճելի լինի քո ականջին,
սիրտդ պիտի հաճոյք գտնի գիտութեան մէջ,
եւ դրանք, իբրեւ խրատ, պիտի աւանդես որդուդ:
3 Արդարեւ, եթէ իմաստութիւնը քեզ մօտ կանչես
եւ ձայնդ մտքի հանճարին ուղղես,
4 փնտռես այն ընտիր արծաթի նման
եւ, ինչպէս գանձ, որոնես այն,
5 այն ժամանակ կը հասկանաս Տիրոջ երկիւղը,
եւ դու կը գտնես Աստծու գիտութիւնը:
6 Տէրն է տալիս իմաստութիւնը,
եւ նրանից են բխում գիտութիւնն ու հանճարը.
7 նա է արդարների համար փրկութիւն վերապահում
եւ հովանի լինում նրանց ընթացքին,
8 նա է պահպանում արդարների ճանապարհը
եւ հաստատ դարձնում իրենից երկիւղ կրողների ուղին:
9 Այն ժամանակ կը հասկանաս արդարութիւնն ու իրաւունքը
եւ բոլոր շաւիղներդ կ'ուղղես դէպի բարին:
10 Եւ երբ իմաստութիւնը մտնի սրտիդ մէջ,
եւ գիտութիւնը ախորժելի լինի հոգուդ,
11 այն ժամանակ բարի խոհերը պիտի զգուշացնեն քեզ,
եւ արդար մտքերը քեզ պիտի պահպանեն,
12 որպէսզի փրկութիւն գտնես չար ճանապարհից եւ նենգախօս մարդուց:
13 Վա՜յ նրանց, ովքեր ուղիղ ճանապարհը թողած՝
կը գնան խաւարի ճանապարհով,
14 ովքեր կ'ուրախանան չարիքներ գործելով
եւ կը խնդան դէպի չարը խոտորուելով.
15 Մուռ են լինելու նրանց ճանապարհները,
եւ շաւիղները՝ խոտորնակ,
16 նրանք պիտի փորձեն քեզ հեռացնել ուղիղ ճանապարհից
եւ օտարացնել արդար խորհուրդներից:
17 Որդեա՛կ իմ, թող քեզ չհասնեն չար խորհուրդներն այն մարդու,

որ երիտասարդ ժամանակ թողել է ուսումը
եւ մոռացել Աստծու ուխտը:
18 Այդպիսին իր տունը դրել է մահուան մօտիկ,
իր շաւիղները՝ դժոխքի մօտ, երկրածինների հետ:
19 Բոլոր նրանք, ովքեր գնում են այդպիսիների հետ,
յետ չեն դառնալու
եւ եթէ մինչեւ իսկ զգՋան էլ՝ չեն հասնելու ուղիղ ճանապարհի
եւ չեն ապրելու իրենց կեանքի տարիները:
20 Եթէ նրանք բարի ճանապարհներով գնացած լինէին,
դիւրին կը գտնէին արդարութեան շաւիղները.
քաղցրաբարոյ մարդիկ պիտի լինեն երկրի բնակիչները,
եւ արդարները պիտի ապրեն այնտեղ:
21 Իսկ ամբարիշտների ճանապարհները պիտի ջնջուեն երկրից,
եւ անօրէնները պիտի վտարուեն դրանից:

ԻՆՉՊԷՍ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

3 Որդեա՛կ, մի՛ մոռացիր իմ խրատները
եւ իմ խօսքերը պահի՛ր քո սրտում,
2 որպէսզի երկարեն քո կեանքի օրերն ու կենդանութեանդ տարիները
եւ խաղաղութիւն աւելացնեն:
3 Թող ողորմութիւնն ու հաւատարմութիւնը չպակասեն քեզնից.
կապի՛ր դրանք քո պարանոցին,
գրի՛ր դրանք քո սրտի լայն տախտակի վրայ,
եւ դու շնորհ կը գտնես:
4 Տիրոջ ու մարդկանց առջեւ խորհի՛ր բարու մասին:
5 Ամբողջ սրտով յոյսդ դի՛ր Աստծու վրայ
եւ մի՛ հպարտացիր քո իմաստութեամբ:
6 Քո բոլոր ճանապարհներին ճանաչի՛ր նրան,
որպէսզի նա ուղղի քո ճանապարհները,
եւ ոտքդ չսայթաքի:
7 Դու քո աչքին իմաստուն մի՛ թուա,
այլ վախեցի՛ր Տիրոջից եւ խուսափի՛ր ամենայն չարից:
8 Դա քո մարմնի համար՝ բուժում
եւ քո ոսկորների համար՝ դարման կը լինի:
9 Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից
եւ քո արդար բերքից պտո՛ւղ յատկացրու նրան,
10 որպէսզի քո շտեմարանները լցուեն առատ ցորենով,
եւ քո հնձաններն աւելի յորդ գինի բխեն:
11 Որդեա՛կ, մի՛ անարգիր Տիրոջ խրատը
եւ մի՛ դժգոհիր նրա յանդիմանութիւնից,
12 քանզի Տէրը ում սիրում՝ նրան խրատում է
եւ պատժում նրան, ում ընդունում է որպէս որդի:
13 Երանի այն մարդուն, որ իմաստութիւն կը գտնի,
եւ այն մահկանացուին, որ հանճար կը ստանայ,
14 քանզի իմաստութիւնն աւելի թանկ արժէ,
քան ոսկու եւ արծաթի գանձերը:
15 Այն առաւել յարգի է, քան անգին քարերը,
եւ չկայ ոչ մի չար բան, որ հակառակ կանգնի նրան:
Իւրաքանչիւրին, ով մերձեցել է իմաստութեանը,
յայտնի է, որ այն ամէնը, ինչ յարգի է համարւում,
չունի դրա արժէքը.
16 քանզի նրա աջ ձեռքում երկար օրեր ու կեանքի տարիներ,
նրա ձախ ձեռքում փառք եւ հարստութիւն կայ:
Նրա բերանից բխում է արդարութիւն,
իսկ իր լեզուի վրայ նա կրում է օրէնք ու ողորմութիւն
17 Նրա ճանապարհները բարու ճանապարհներ են,
եւ նրա բոլոր շաւիղները՝ խաղաղութեան:
18 Նա կենաց ծառ է բոլոր նրանց համար,
ովքեր ապաւինում են նրան
եւ վստահութեամբ յենւում նրա վրայ, ինչպէս Տիրոջ վրայ:
19 Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքերը
եւ իմացականութեամբ հաստատեց երկինքը,
20 իր հանճարով անդունդներ բացեց,
եւ ամպերն անձրեւներ տեղացին:
21 Որդեա՛կ, մի՛ անտեսիր, այլ պահի՛ր իմ խորհուրդներն ու իմաստութիւնը,
22 որպէսզի ապրի քո հոգին,
եւ դրանք քո պարանոցի վրայ զարդ լինեն,
բուժում լինեն մարմնիդ համար
եւ ոսկորներիդ համար՝ դարման:
23 Եւ դու ապահով կը գնաս քո բոլոր ճանապարհներով,
ու ոտքդ չի սայթաքի:
24 Եթէ նստես, անհոգիւղ կը լինես,
եթէ քնես, քունդ անուշ կը լինի,
25 եւ չես երկնչի յանկարծահաս սարսափներից,
ոչ էլ ամբարիշտների վերահաս յարձակումներից,
26 որովհետեւ Տէրը կը լինի քո բոլոր ճանապարհների վրայ
եւ ոտքդ հաստատուն կը պահի, որ չսայթաքես:

ՍԻՐԵԼ ՄԵՐՁԱՒՈՐԻՆ

27 Մի՛ յապաղիր կարօտեալին բարութիւն անել,
երբ քո ձեռքը կարող է օգնել նրան:
28 Զասես թէ՝ «Գնա՛, կը գաս՝ վաղը կը տամ»,
մինչդեռ կարող ես բարութիւնդ անել,
քանի որ չգիտես, թէ վաղն ինչ է բերելու քեզ:
29 Չարիք մի՛ նիւթիր բարեկամիդ դէմ,
որը քեզ վստահում է եւ յոյս է դրել քեզ վրայ:
30 Զուր տեղը մի՛ թշնամացիր մարդու հետ վիճելով,
որ նա քեզ չարիք չպատճառի:
31 Զգուշացի՛ր չարագործ մարդկանց նախատինքներից
եւ մի՛ նախանձիր նրանց ճանապարհներին,
32 քանզի անօրէնը պիղծ է Տիրոջ առջեւ
եւ չի հաղորդակցում արդարների հետ:
33 Տիրոջ անէծքն ամբարիշտների տներում է,
մինչդեռ արդարների տներն օրհնւում են:
34 Տէրը հակառակ է ամբարտաւաններին.
նա շնորհ է տալիս խոնարհներին:
Փառքը պիտի ժառանգեն իմաստունները,
իսկ ամբարիշտները պիտի բազմացնեն իրենց անարգանքը:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

4 Որդինե՛ր, լսեցէ՛ք ձեր հօր խրատը
եւ անսացէ՛ք ճանաչելու իմաստութիւնը,
2 քանզի ձեզ բարի պարգեւներ պիտի տամ.
մի՛ թողէք իմ պատուիրանները,
3 որովհետեւ ես եւս հնազանդ որդի էի հօրս համար
եւ սիրելի էի մօրս աչքին:
4 Նրանք սովորեցնում էին ինձ եւ ասում.
«Թող մեր խօսքը հաստատուի քո սրտում,
պահի՛ր մեր պատուիրանները եւ ապրի՛ր,
5 իմաստութի՛ւն ձեռք բեր, խե՛լք ձեռք բեր եւ մի՛ մոռացիր:
Մի՛ արհամարհիր իմ բերանի պատգամները
եւ մի՛ շեղուիր իմ շուրթերի խօսքերից:
6 Մի՛ թող իմաստութիւնը, եւ նա կը պաշտպանի քեզ,
սիրի՛ր այն, եւ նա կը պահպանի քեզ:
7 Իմաստութի՛ւն ձեռք բեր,
– ահա զգօնութեան սկիզբը, –

եւ խելացի՛ եղիր քո կեանքի բոլոր
ճանապարհներին:
8 Պարփակուի՛ր իմաստութեամբ,
եւ նա պիտի բարձրացնի քեզ,
մեծարի՛ր այն, եւ նա քեզ կ'առնի իր
գիրկը:
9 Նա շնորհի պսակ կը դնի քո գլխին
եւ փառքի պսակով կը պահպանի
քեզ:
10 Լսի՛ր, որդեա՛կ, եւ ընդունի՛ր իմ
խօսքերը,
եւ քո կեանքի տարիները պիտի
շատանան,
եւ պիտի աւելանան քո կեանքի ճա-
նապարհները:
11 Ես իմաստութեան ուղիներն եմ
ուսուցանում քեզ,
ես քեզ սովորեցնում եմ ընթանալ
ուղիղ շաւիղներով,
12 որպէսզի, եթէ գնաս, ընթացքդ
չխափանուի,
եթէ վազես, երբեք չյոգնես:
13 Ամո՛ւր բռնիր իմ խրատը եւ բաց
չթողնես այն,
այլ պահի՛ր, որովհետեւ քո կեանքն
է այն:
14 Մի՛ գնա ամբարիշտների ճանա-
պարհով
եւ մի՛ նախանձիր անօրէնների ճա-
նապարհներին:
15 Մի՛ անցիր այն վայրով, ուր
բնակւում են նրանք:
16 Խուսափի՛ր նրանցից եւ խորշի՛ր
այդ վայրից,
քանզի նրանք մինչեւ չարիք
չգործեն, չեն քնում:
Քունը փախչում է նրանց աչքից եւ
չեն քնում,
17 քանի որ նրանք ամբարշտութեան
հաց են ուտում
եւ հարբում են անօրէնութեան գի-
ն ո վ :
18 Արդարների ճանապարհները նման
են ծագող լոյսի,
որ առաջնորդում եւ լուսաւորում է
նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի:
19 Ամբարիշտների ճանապարհները
նման են խաւարի,
եւ նրանք չգիտեն, թէ ինչպէս պիտի
սայթաքեն:
20 Որդեա՛կ, անսա՛ իմ իմաստու-
թեանը
եւ ակա՛նջ դիր իմ խօսքերին,
որ քո աղբիւրները չպակասեն:
21 Պահի՛ր իմ խօսքերը քո սրտի մէջ,
22 քանզի դրանք կեանք են գտնող-
ների համար
եւ բժշկութիւն՝ ամբողջ մարմնի
համար:
23 Ամենայն զգուշութեամբ պահի՛ր
եւ պահպանի՛ր քո սիրտը,
որովհետեւ նրանից է բխում կեանքի
աղբիւրը:
24 Հեռո՛ւ վանիր ստախօսութիւնը քո
բերանից
եւ անիրաւ շրթունքները հեռացրո՛ւ
քեզանից:
25 Թող քո աչքերը նայեն ուղիղ,
եւ քո թարթիչները արդարութեամբ
շարժուեն:
26 Քո ոտքերին ուղիղ շաւիղներ
արա՛,
եւ քո ճանապարհները ուղղի՛ր:
27 Մի՛ խոտորուիր ո՛չ դէպի աջ եւ
ո՛չ էլ դէպի ձախ.
ոտքդ ե՛տ դարձրու չար ճանա-
պարհից:
Դէպի աջ տանող ճանապարհները
գիտէ Աստուած,
բայց դէպի ձախ տանող ճանա-
պարհները մոլոր են,
եւ Աստուած ինքն էլ կ'ուղղի քո
շաւիղները
եւ խաղաղութեամբ քեզ կ'առաջ-
նորդի քո ճանապարհներով:

ՋԳՈՒՇԱՆԱԼ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԿՆՈՋԻՑ

5 Որդեա՛կ, անսա՛ իմ իմաստութեանը
եւ ակա՛նջ դիր իմ խօսքերին,
2 որպէսզի բարի խորհուրդներ պա-
հես.
ես պատուիրան եմ թողնում քեզ իմ
շուրթերի իմաստութիւնը:
3 Մի՛ նայիր չար կնոջը,
որովհետեւ պոռնիկ կնոջ շուրթերից
մեղր է ծորում,
որ առժամանակ պարուրում է
քիմքդ,
4 բայց յետոյ զգում ես, որ աւելի
դառն է, քան լեղին,
եւ աւելի սուր, քան երկսայրի սուրը:

5 Անզգամի ոտքերը դէպի մահ են
տանում նրա մերձաւորներին
եւ դէպի դժոխք են իջեցնում նրանց.
Հաստատուն չեն նրա ոտնահետքե-
րը,
6 որովհետեւ նրա ոտքերը չեն գնում
կեանքի ճանապարհներով,
սայթաքուն եւ անյայտ են նրա ճա-
նապարհները:
7 Արդ, որդեա՛կ, լսի՛ր ինձ եւ մի՛
արհամարհիր իմ խօսքերը.
8 քո ճանապարհները հեռացրո՛ւ
նրանից
եւ մի՛ մօտեցիր նրա տան դռներին,
9 որպէսզի քո կեանքն օտարներին
չմատնես,
եւ քո ունեցուածքը՝ անողորմ մարդ-
կանց:
10 Մի՛ թող, որ օտարները լցուեն քո
ուժով,
եւ քո վաստակը մտնի ուրիշների
տունը:
11 Թող յետոյ այնպէս չլինի,
որ երբ մարմնիդ անդամները մա-
շուեն,
զղջաս եւ ասես, թէ՝ «Ինչո՞ւ ես
ատեցի խրատը,
12 ինչո՞ւ իմ սիրտն անարգեց յան-
դիմանութիւնը»:
13 Ես չէի լսում ո՛չ իմ խրատատուի
ձայնը,
ո՛չ էլ ականջ էի դնում իմ ուսուցչի
խօսքերին.
14 քիչ էր մնացել, որ ժողովի ու
ժողովրդի մէջ
մասնակից դառնայի ամէն չարիքի:
15 Քո ջուրը խմի՛ր քո ամանից եւ քո
ջրհորի աղբիւրից:
16 Թող քո ջրերը բխեն քո աղբիւրից,
եւ քո փողոցով թող հոսեն դրանք:
17 Թող դրանք միայն քոնը լինեն,
եւ օտար ոչ ոք չբաժանի դրանք քեզ
հետ:
18 Քո ջրի աղբիւրը թող առանձին
լինի,
եւ ուրա՛խ եղիր քո երիտասարդ
օրերի կնոջ հետ:
19 Թող քեզ համար եղնիկի պէս
սիրով
եւ այծեամի նման շնորհագեղ լինի
նա,
հաճելի լինի քո իմաստութեանը
եւ քեզ հետ լինի ամէն ժամ.
եւ եթէ նրա սիրով գնաս,
դու մեծարժէք պիտի լինես:
20 Մի՛ այցելիր օտար կանանց
եւ մի՛ փարուիր ուրիշի կրծքին, որ
քոնը չէ.
21 քանզի տղամարդու ճանապարհ-
ներն Աստծու աչքի առջեւ են,
եւ Նա գիտէ նրա բոլոր շաւիղները:
22 Չարագործին պիտի որսան նրա
անօրէնութիւնները,
եւ իւրաքանչիւրը պիտի կապկպուի
իր մեղքի թելերով:
23 Խրատ չլսելու պատճառով պիտի
մեռնի նա խրատի չանսացողների հետ,
պիտի զրկուի իր կեանքի երկա-
րութիւնից
եւ պիտի կորչի անզգամութեան
պատճառով:

ՈՒՐԻՇԻ ՊԱՐՏՔԻ ՀԱՄԱՐ ՅԱՆՁՆԱՌՈՒ ՉԼԻՆԵԼ

6 Որդեա՛կ, եթէ բարեկամիդ համար
երաշխաւոր լինես,
դու քեզ կը մատնես քո թշնամուն.
2 քանզի մարդուս շրթունքները
խիստ որոգայթ են իր համար,
եւ մարդ բռնւում է իր բերանի խօս-
քով:
3 Արդ, որդեա՛կ, վարուի՛ր այնպէս,
ինչպէս պատուիրում եմ քեզ,
եւ դու կ'ապրես, որովհետեւ բարե-
կամիդ համար չար մարդկանց ձեռքն
ընկար:
Սրտապնդուի՛ր եւ մի՛ յուսալքուի՛ր
եւ նո՛յնը հաղորդիր քո բարեկամին,
որի համար երաշխաւոր ես եղել:
4 Աչքերիդ քուն մի՛ տուր եւ թար-
թիչներիդ՝ նինջ,
5 որպէսզի փրկուես, ինչպէս այ-
ծեամը թակարդից եւ թռչունը՝ ծու-
ղակից:

ԽՈՒՍԱՓԵԼ ԾՈՒԼՈՒԹԻՒՆԻՑ

6 Մրջիւնի մօ՛տ գնա, ո՛վ ծոյլ,
նախանձի՛ր նրա գործերին եւ
իմաստո՛ւն եղիր նրանից աւելի.
7 քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ
վերակացու

եւ ո՛չ էլ գլխին տէր ունի,
8 բայց ամռանը նա պատրաստում է
իր ուտելիքը
եւ հնձի ժամանակ ամբարում է իր
առատ պաշարը:
Կամ մեղուի մօ՛տ գնա,
տե՛ս, թէ ինչպէ՛ս գործունեայ է նա
եւ թէ ինչպիսի ջանասիրութեամբ է
գործում,
որի վաստակը մատուցում են թա-
գաւորներին եւ տանկներին՝ բժշկու-
թեան համար:
Թէպէտեւ թոյլ է ուժով,
բայց սիրելի է ու մեծարելի բոլորի
համար,
որովհետեւ ինքը յարգեց իմաստու-
թիւնը եւ արժանի եղաւ յարգանքի:
9 Մինչեւ ե՞րբ պիտի գամուած
մնաս, ո՛վ ծոյլ,
կամ ե՞րբ պիտի զարթնես քնից:
10 Մի քիչ քնով ընկնես, մի քիչ
նստես,
մի քիչ ննջես, մի քիչ էլ ձեռքերդ
հանգչեցնես կրծքիդ,
11 եւ, ահա, աղքատութիւնը, ինչպէս
չար ուղեւոր, կը հասնի քեզ,
եւ կարիքը, իբրեւ ժիր սուրհանդակ,
կը կանգնի դռանդ:
Բայց եթէ ծոյլ չլինես,
ապա քո ամառը պիտի հասնի աղ-
բիւրի նման,
եւ կարիքը, ինչպէս ինքնահալած
չարամիտ այր, պիտի փախչի հեռու:

ՆԵՆԳ ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԸ

12 Անօրէն եւ անզգամ մարդը ծուռ
ճանապարհներով է գնում,
13 որովհետեւ հէնց ինքն է աչքերը
թարթում,
ոտքերով ցոյց տալիս
եւ նշանացի սովորեցնում մատ-
ներով:
14 Խոտորուած սիրտը չարիքներ է
նիւթում
եւ ամէն ժամանակ սերմանում է
խռովութիւն քաղաքում:
15 Այդ պատճառով էլ նրա կորուստը
պիտի յանկարծակի գայ,
նա պիտի հաշմուի ու մաշուի
առանց բուժումի:

ԱՍՏՄՈՒՆ ԱՏԵԼԻ ԲԱՆԵՐ

16 Նա ծիծաղում է այն ամէնի
վրայ, ինչ ատում է Տէրը,
եւ իր հոգու պղծութեան երեսից էլ
պիտի կործանուի:
17 Այն աչքերը, որ թշնամանքով են
նայում,
այն լեզուն, որ սուտ է խօսում,
18 այն ձեռքերը, որ արդար արիւն
են թափում,
այն սիրտը, որ չար խորհուրդներ է
նիւթում,
այն ոտքերը, որ շտապում են
չարիքներ գործել,
պիտի ոչնչանան:
19 Անիրաւ վկան բորբոքում է
ստութիւնը
եւ գրգռութիւն է գցում եղբայրների
միջեւ:

ՎԵՐՍՏԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

20 Որդեա՛կ, պահի՛ր հօրդ օրէնքը
եւ մի՛ մերժիր մօրդ խրատը:
21 Ընդունի՛ր դրանք հոգուդ մէջ,
մշտապէս պահի՛ր քո գլխում
եւ, իբրեւ մանեակ, գցի՛ր քո պա-
ռանոցին:
22 Երբ ճանապարհ գնաս, հե՛տդ
տար,
եւ թող դրանք քեզ հետ լինեն.
երբ քնած լինես, պիտի քեզ պահ-
պանեն,
երբ արթնանաս, պիտի զրուցակից
լինեն քեզ:
23 Օրէնքի պատուիրանը ճրագ է,
յանդիմանութիւնը եւ խրատը լոյս
են եւ կեանքի ճանապարհ:
24 Նրանք քեզ հեռու կը պահեն
ամուսնացած կնոջից
եւ օտար կնոջ չար լեզուից:
25 Որդեա՛կ, թող քեզ չյաղթի կնոջ
գեղեցկութեան ցանկութիւնը,
թող չբռնուեն քո աչքերը նրանով,
մի՛ հրապուրուիր նրա թարթիչնե-
րով,
26 քանզի պոռնիկ կնոջ պատճառով
կարող ես մի նկանակ հացի կարօտ
մնալ,
որովհետեւ չար կինը որսում է

պատուական մարդկանց հոգին:
27 Հնարաւո՞ր է արդեօք, որ մէկը
կրակը պահի իր գոգի մէջ
եւ շորը չայրի,
28 կամ որեւէ մէկը բոբիկ քայլի
կայծ ու կրակի միջով
եւ իր ոտքերը չայրի,
29 այդպէս էլ անհնարին է որեւէ
մէկին
մտնել ամուսնացած կնոջ ծոցը եւ
առանց պատժի մնալ.
ով էլ որ մերձենայ նրան, չի
արդարացուելու:
30 Զարմանալու ոչինչ չկայ, եթէ
մէկը բռնուի գողութեան մէջ.
գողանում է, որպէսզի յագեցնի իր
քաղցած անձը,
31 բայց եթէ բռնուեց, պիտի եօթնա-
պատիկ տուժի
եւ անձը փրկելու համար պիտի տայ
իր ողջ ունեցուածքը:
32 Իսկ եթէ մէկը շնանում է խելքի
պակասութեան պատճառով,
նա կորստի է մատնում ինքն իրեն,
33 նա ցաւ ու անարգանք պիտի կրի,
եւ երբեք չի ջնջուելու նրա նախա-
տինքը:
34 Կնոջ ամուսինը պիտի բորբոքուի
խանդով լցուած
եւ չի խնայելու վրէժխնդրութեան
օրը,
35 ոչ մի փրկագնի հետ չի փոխա-
նակելու իր թշնամութիւնը,
ոչ իսկ առատ կաշառքով:

7 Որդեա՛կ, պահի՛ր իմ խօսքերը
եւ իմ պատուիրանները պահպանի՛ր
քո մէջ:
Որդեա՛կ, պատուի՛ր Տիրոջը եւ
զօրացի՛ր,
եւ բացի նրանից ուրիշ ոչ ոքից մի՛
երկնչիր:
2 Որդեա՛կ, պահի՛ր իմ պատուիրան-
ները եւ դու կ'ապրես,
պահպանի՛ր իմ խօսքերը, ինչպէս
աչքի բիբը:
3 Կապի՛ր դրանք քո մատներին
եւ գրի՛ր սրտիդ տախտակի վրայ:
4 Իմաստութեանն ասա՛, որ քեզ
քոյր լինի,
եւ խելքը թող դառնայ քո մտերիմը,
5 որպէսզի դրանք քեզ պահպանեն
օտար ու չար կնոջից,
երբ նա իր խօսքերով հրապուրի քեզ:

ԱՆԻՐԱՐՈՅԱԿԱՆ ԿԻՆԸ

6 Իր տան պատուհանից աչքը ճա-
նապարհին յառած՝
7 նա նայում է անմիտ պատա-
նիներին եւ թեթեւամիտ երիտասարդ-
ներին,
8 որոնք գնում են փողոցներով,
անցնում նրա տան անկեան մօտով.
9 նա խօսում է երեկոյի խաւարի
միջից,
երբ գիշերը մթնում, եւ դադարում է
անցուդարձը:
10 Այդ կինը, պոռնիկի կերպարան-
քով,
ընդառաջ է գալիս երիտասարդ-
ներին,
որ բուռն հրայրքով ու պագչո-
տութեամբ խելքահան անի նրանց:
11 Նրա ոտքերը տանը դադար չեն
առնում,
եւ նա մերթ թափառում է դուրսը,
12 մերթ անցնում է փողոց ու հրա-
պարակ
եւ դարանամուտ է լինում ամէն
պատահած անկիւնում:
13 Ահա նա որսում է մէկին,
գրկում եւ համբուրում նրան
եւ լրբենի երեսով ասում է նրան.
14 «Ես խաղաղութեան ուխտ էի
արել,
այսօր ուխտս կատարեցի,
15 դրա համար էլ ընդառաջ ելայ
քեզ՝ երեսդ տեսնելու համար,
եւ ահա գտայ քեզ:
16 Ես գահաւորակս պատել եմ ծած-
կոցներով,
զարդարել եգիպտական ճոխ կտաւ-
ներով,
17 անկողինս պատրաստել եմ ու
քրքում ցանել վրան,
բնակարանս խնկել եմ կինամոնով,
18 ե՛կ մինչեւ առաւօտ սէր վայելենք
եւ հեշտանքի յանձնուենք.
19 իմ ամուսինը տանը չէ,
հեռու ճանապարհ է գնացել,
20 իր փողի քսակն էլ վերցրել է հետը

եւ շատ օրեր անց, թերեւս, տուն գ ա յ » :
21 Եւ այսպիսի բազում խօսքերով մոլորեցնում է նրան,
խեղդող շուրթերով կաշկանդում նրան,
22 եւ նա յիմարացած գնում է կնոջ յետեւից,
ինչպէս արջառը՝ սպանդանոց,
կամ շունը՝ թոկը վզին,
23 կամ ինչպէս լեարդը նետով խոցուած եղջերուն.
թռչնի նման նա շտապում է դէպի ծուղակը
եւ չի գիտակցում, որ կորստի է մատնում իր հոգին:
24 Արդ, լսի՛ր ինձ, որդեա՛կ,
եւ հնազա՛նդ եղիր իմ խօսքերին:
25 Սիրտդ մի՛ շեղիր դէպի նրա տան ճանապարհները
եւ մի՛ մոլորուիր նրա շաւիղներում,
26 որովհետեւ խոցոտելով՝ նա շատերին է դիտապաստ արել,
եւ անթիւ են նրա կողմից սպանուածները:
27 Դժոխքի ուղիներն են նրա տունը,
որոնք իջեցնում են դէպի մահուան շտեմարանները:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՈՉ

8 Դրա համար էլ դու քարոզի՛ր իմաստութիւնը,
որ հանճարը արձագանքի քեզ:
2 Այն գտնւում է բարձր լեռների գլխին եւ շաւիղների վրայ,
3 այն սպասում է նաեւ հզօրների դռան առջեւ,
եւ օրհնւում է նրանց մուտքերին:
4 «Ձեզ եմ աղաչում, ո՛վ մարդիկ,
եւ մարդու որդիներին եմ ես բաշխում իմ խօսքը:
5 Ո՛վ պարզամիտներ, խորագիտութի՛ւն իմացէք,
խրա՛տ դրէք ձեր սրտերում, ո՛վ անխրատներ,
6 ունկնդրեցէ՛ք ինձ, քանզի պարկեշտ խօսքեր պիտի ասեմ,
եւ շուրթերս պիտի բանամ ուղիղ բան խօսելու համար,
7 քանզի իմ կոկորդը միշտ ճշմարտութիւն է բարբառում,
եւ պիղծ են ինձ համար ստախօս շուրթերը:
8 Արդար են իմ բերանի բոլոր պատգամները,
եւ ոչ մի ծուռ ու թիւր բան չկայ նրանց մէջ,
9 բոլորն էլ ուղիղ են նրանց համար, որ իմաստուն են,
եւ հաճելի են նրանց համար, որ ձգտում են գիտութիւն ձեռք բերելու»:
10 Խրա՛տ ձեռք բերէք եւ ոչ թէ արծաթ,
գիտութիւն, քան թէ ընտիր ոսկի:
11 Իմաստութիւնը լաւ է անգին քարերից,
եւ թանկարժէք ոչ մի բան չի հաւասարուի նրան:
12 Ես՝ իմաստութիւնս, բնակուեցի խորագիտութեան մէջ,
եւ միշտ ինձ հետ են խորհուրդն ու գիտութիւնը:
13 Տիրոջ հանդէպ զգացուած երկիւղն ատում է անիրաւութիւնը,
թշնամանքն ու հպարտութիւնը եւ չարի ճանապարհը:
14 Իմն է խորհուրդը,
իմն է զգուշութիւնը,
իմն են հանճարը եւ զօրութիւնը:
15 Թագաւորներն ինձնով են թագաւորում,
եւ հզօրները՝ օրինադրում արդարութիւնը:
16 Ինձնով են բարձրանում մեծամեծները,
եւ տիրակալներն ինձնով են տիրում երկրին:
17 Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են ինձ,
եւ ով փնտռում է ինձ, շնորհ կը գտնի:
18 Իմն են հարստութիւնն ու փ ա ռ ք ը ,
կայուն ունեցուածքն ու արդարութիւնը:
19 Լաւ է ի՛նձ ունենալ, քան ոսկի եւ անգին քարեր,
ունենալ ի՛մ արդիւնքը, քան ոսկի եւ ընտիր արծաթ:
20 Ես քայլում եմ արդարութեան ճանապարհներով

եւ շրջում արդարութեան շաւիղներով,
21 որ բարիք բաշխեմ իմ սիրելիներին
եւ նրանց գանձարանները լցնեմ բարիքներով:
Սակայն որպէսզի ես ձեզ պատմեմ,
թէ ինչ է լինելու ամէն օր,
ապա պիտի յիշեցնեմ նաեւ,
թէ ինչ է եղել յաւիտենութեան սկզբից:
22 Տէրն ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար.
յաւիտենութիւնից էլ առաջ հաստատեց ինձ:
23 Նա ծնեց ինձ հէնց սկզբին,
դեռ երկիրն արարելուց առաջ,
24 աւելի առաջ, քան անդունդներ կը բացէր,
25 աւելի առաջ, քան աղբիւրների ջրեր կը բխեցնէր,
եւ էլ աւելի առաջ, քան կը հաստատէր լեռներն ու բոլոր բլուրները:
26 Տէրն ստեղծեց չէն ու անչէն վայրեր
եւ բնակելի աշխարհները երկնքի ներքոյ:
27 Ես նրա հետ էի, երբ նա պատրաստում էր երկինքը,
երբ նա իր աթոռն էր հաստատում հողմերի վրայ,
28 երբ նա զօրութիւն էր տալիս վերին ամպերին
եւ երբ նա աղբիւրներ էր հաստատում երկնքի ներքոյ:
29 Այն ժամանակ, երբ նա դնում էր ծովի հաստատութիւնը,
– որ ջրերը նրա ափերը չանցնեն, –
այն ժամանակ, երբ նա դնում էր երկրի ամուր հիմքերը,
ես նրա մօտ էի որպէս գործավար:
30 Ինձնով էր, որ Տէրն ուրախանում էր մշտապէս,
եւ ես ամէն ժամ ցնծում էի նրա առաջ.
31 բովանդակ տիեզերքը հրճւում էր,
եւ ուրախ էի մարդկանց որդիների հետ:
32 Արդ, որդեա՛կ, լսի՛ր ինձ.
երանի նրանց, որ պահում են իմ ճանապարհները:
33 Լսեցէ՛ք իմաստութիւնը,
եւ դուք կը լինէք իմաստուն.
մի՛ շեղուէք դրանից:
34 Երանի այն մարդուն, որ կը լսի ինձ,
եւ այն մարդուն, որ կը պահի իմ ճանապարհները,
մշտապէս կը տքնի իմ դռների առջեւ
եւ կը պահպանի իմ դռների շեմերը:
35 Իմ ուղիները կեանքի ուղիներ են,
եւ Տէրն է սահմանել իմ կամքը:
36 Բայց ովքեր մեղանչում են իմ դէմ, նրանք ամբարշտանում են իրենց հոգու մէջ,
եւ ովքեր ատում են ինձ,
նրանք սիրում են մահը:

ՀՐԱՒԷՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

9 Իմաստութիւնը շինեց իր տունը եւ կանգնեցրեց եօթը սիւներ,
2 մորթեց իր անասունները,
խառնեց պատրաստեց գինին,
պատրաստեց նաեւ իր սեղանը:
3 Նա ուղարկեց իր ծառաներին,
որ բարձր ձայնով հրաւիրեն իր հացկերոյթին, եւ ասաց.
4 «Ով անզգամ է, թող դայ ինձ մօտ»:
5 Իսկ պակասամիտներին ասաց.
«Եկէք կերէ՛ք իմ հացից եւ խմեցէ՛ք իմ գինուց,
որ պատրաստել եմ ձեզ համար:
6 Թողէ՛ք յիմարութիւնը, եւ դուք կ՚ապրէք,
իմաստութի՛ւն փնտռեցէք,եւ դուք կը փրկուէք,
իմացութեա՛մբ ուղղեցէք ձեր խոհեմութիւնը
եւ ճի՛շտ իմաստով հասկացէք խրատը»:
7 Ով խրատ է տալիս չարերին,
նա անարգանք է ստանում,
եւ ով յանդիմանում է ամբարիշտներին,
նա ատելութիւն է վաստակում:
8 Մի՛ յանդիմանիր չարերին, որ քեզ չատեն,
յանդիմանի՛ր իմաստունին, եւ նա կը սիրի քեզ,

խրատի՛ր յիմարին, եւ նա աւելի
շատ կ՚ատի քեզ:
9 *Իմաստունին բացատրի՛ր պատ-*
ճառը,
եւ նա աւելի՛ իմաստուն կը լինի,
սովորեցրո՛ւ արդարին,
եւ նա կ՚աւելացնի իր ընկալումը:
10 *Իմաստութեան սկիզբը Տիրոջ*
երկիւղն է,
արդարների խորհուրդը՝ խոհեմու-
թիւն,
օրէնքի իմացութիւնը մտքի
հարստութիւն է:
11 *Օրինա՛կ առ սրանք, եւ դու կ՚ապ-*
րես երկար,
ու կ՚աւելանան քո կեանքի տա-
րիները:
12 *Որդեա՛կ, եթէ իմաստուն լինես,*
պիտի լինես քե՛զ համար եւ քո
ընկերների.
եթէ անզգամ լինես, միայն դո՛ւ
չարիք պիտի գտնես:
Ով հաստատուում է ստի վրայ,
նոյնն է, թէ հողմեր է արածեցնում
կամ հալածում է թեւաւոր թռչուն-
ներ.
քանզի այդպիսին իր այգու ճանա-
պարհը թողած՝
մոլոր թափառում է իր հանդի շա-
փիղներում,
անջրդի դաշտ ու անապատ է գնում
եւ իր ձեռքով ոչ մի պտուղ չի հա-
ւաքում ծարաւակէզ հողից:
13 *Անզգամ եւ յանդուգն կինը հացի*
կարօտ պիտի մնայ,
նոյնպէս եւ նա, ով ամօթ չի զգում:
14 *Իր տան դռանը նստած աթոռին,*
որ երեւում է փողոցից,
15 *նա դիմում է անցորդներին,*
որոնք գնում են իրենց ուղիղ ճամ-
փով.
16 *«Ով ձեր մէջ առաւել յիմար է,*
թող գայ ինձ մօտ,
17 *իսկ պակասամիտներին հրամա-*
յում եմ ու ասում.
"Թաքցրած հացը համով է ուտւում,
եւ քաղցր է խմւում գողացուած
ջուրը"»:
18 *Եւ նա չգիտէ, թէ երկրածինները*
պիտի կորչեն իր մօտ,
եւ պիտի հասնեն խորքերը դժոխքի:
Բայց դու հեռո՛ւ թռիր եւ մի՛ դան-
դաղիր այդտեղ,
հայեացքդ մի՛ յառիր նրան,
որպէսզի այդպէս անցնես օտար
ջրից,
անցնես օտար գետից,
հեռու մնաս օտար ջրից
եւ ջուր չխմես օտար աղբիւրից.
որպէսզի դու երկար ապրես ,
եւ աւելանան քո կեանքի տարիները:

Սողոմոնի առակները
Երկրորդ մաս

10 *Իմաստուն որդին ուրախացնում*
է հօրը,
անմիտ որդին տրտմութիւն է մօր
համար:
2 *Գանձերը չեն օգնի անօրէններին,*
մինչդեռ արդարութիւնը փրկում է
մահից:
3 *Տէրը սովամահ չի անում*
արդարին,
բայց ամբարիշտների կեանքը պիտի
կործանի:
4 *Աղքատութիւնը խեղճացնում է*
մարդուն,
ժրաջան ձեռքերը հարստացնում են
նրան:
5 *Խրատուած որդին իմաստուն կը*
լինի,
իսկ անմիտը ծառայ կը դառնայ:
Իմաստուն որդին ազատւում է խոր-
շակից,
անօրէն որդին խորշակահար է
լինում ամռանը:
6 *Տիրոջ օրհնութիւնն արդարների*
գլխին է,
բայց տարաժամ սուգը պիտի փակի
ամբարիշտների բերանը:
7 *Արդարների յիշատակը մնալու է*
գոհաբանութեամբ,
բայց ամբարիշտների անունը պիտի
ջնջուի:
8 *Իմաստուն սիրտն ընդունում է*
պատուիրանները,
բայց զազրախօսը պիտի կործանուի
իր գայթակղող շուրթերի պատճառով:
9 *Ողջամտութեամբ ընթացողը*
գնում է ապահով,
իսկ ով ծռում է իր ճանապարհները,

թաքուն պիտի չմնայ:
10 *Ով նենգ աչքով ակնարկ է անում,*
նա տրտմութիւն պիտի կրի մարդ-
կանցից,
բայց համարձակ յանդիմանողը
խաղաղութիւն է բերում:
11 *Արդարի ձեռքին է կեանքի աղ-*
բիւրը,
բայց ամբարշտի կորուստը կը փակի
նրա բերանը:
12 *Հակառակութիւնն ատելութիւն է*
գրգռում,
բայց սէրը ծածկում է ամէն մի
ներհակութիւն:
13 *Ում շուրթերից իմաստութիւն է*
բխում,
նա, ինչպէս գաւազան, հարուածում
է անմիտ մարդուն:
14 *Իմաստունները իմաստութիւն են*
հաւաքում,
բայց յանդուգն մարդու բերանը մօտ
է կործանման:
15 *Մեծատունների հարստութիւնն*
իրենց ամուր քաղաքն է,
աղքատութիւնը կորստեան պատ-
ճառ է ամբարիշտների համար:
16 *Արդարների գործերը կեանք են*
տալիս,
ամբարիշտների բերքը՝ մեղքեր:
Կեանքի ճանապարհները պահպա-
նում է Տէրը:
17 *Առանց յանդիմանութեան խրա-*
տը սխալ է:
18 *Արդար շուրթերը լռեցնում են*
թշնամանքը,
իսկ բամբասանք տարածողները
անզգամներ են:
19 *Շատախօսութեամբ չես խուսափի*
մեղքից.
շուրթերդ եթէ զսպես, իմաստուն կը
լինես:
20 *Արդար լեզուն ընտիր արծաթ է,*
ամբարշտի սիրտը պիտի նուազի:
21 *Արդարների շուրթերը ճանաչում*
են բարձր մարդկանց,
իսկ անզգամները պիտի կործանուեն
խելքի պակասութիւնից:
22 *Տիրոջ օրհնութիւնն արդարների*
գլխին է,
եւ նա էլ հարստացնում է նրանց
եւ չի աւելացնում նրանց սրտի
տրտմութիւնը:
23 *Անզգամը ծիծաղելով չարիք է*
գործում,
բայց խոհեմ մարդը իմաստութիւն
հաւաքում:
24 *Ամբարիշտը շրջում է կորուստը իր*
հետ,
բայց արդարի ցանկութիւնը պիտի
կատարուի:
25 *Ամբարիշտը պիտի ջնջուի ինչպէս*
անցնող մրրիկ,
բայց արդարը խուսափելով՝ կ՚ապրի
յաւիտեան:
26 *Ինչպէս ազոխը վնասակար է*
ատամներին,
իսկ ծուխը՝ աչքերին,
այդպէս էլ անօրէնութիւնը վնասա-
կար է նրանց համար,
ովքեր առաջնորդւում են նրանով:
27 *Տիրոջ երկիւղն աւելացնում է*
կեանքի օրերը,
բայց ամբարիշտների տարիները
պիտի կրճատուեն:
28 *Արդարների ուրախութիւնը պիտի*
երկարի,
իսկ ամբարիշտների յոյսը պիտի
կորչի:
29 *Տիրոջ երկիւղը ոգու ամրութիւն է*
մաքուր մարդկանց համար,
բայց սրտաբեկութիւն է նրանց
համար,
ովքեր չարիք են գործում:
30 *Արդարը երբեք չպիտի դողայ,*
ամբարիշտները չպիտի բնակուեն
երկրի վրայ:
31 *Արդարի բերանն իմաստութիւն է*
բխեցնում,
բայց անիրաւի լեզուն պիտի
կտրուի:
32 *Արդար մարդկանց շուրթերը*
շնորհներ պիտի բխեցնեն,
բայց ամբարիշտների բերանը պիտի
կործանուի:

11 *Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ*
առջեւ,
բայց արդար կշեռքը հաճելի է
նրան:
2 *Ուր թշնամանք է մտնում,*
այնտեղ կայ նաեւ անարգանք:

Խոնարհների բերանն իմաստութիւն է խորհում:
3 Ուղղամիտներին առաջնորդելու է իրենց կատարելութիւնը,
բայց անօրէններին կործանելու է իրենց գայթակղութիւնը:
4 Հարստութիւնը չի օգնի բարկութեան օրը,
բայց արդարութիւնը կը փրկի մահից:
Արդարը մեռնում է եւ մեծ ափսոսանք թողնում,
ամբարիշտների կորուստը պիտի լինի բիրտ ու անարդ:
5 Անբիծ մարդու արդարութիւնը ուղղում է նրա ճանապարհները,
բայց ամբարիշտ մարդուն կորստի է մատնում անիրաւութիւնը:
6 Ուղղամիտ մարդկանց արդարութիւնը փրկում է իրենց,
բայց անօրէնները պիտի կորչեն անմտութիւնից:
7 Երբ արդար մարդը վախճանուի,
նրա յոյսը չի կորչում,
բայց ամբարիշտների սնափառութիւնը պիտի կորչի:
8 Արդարը պիտի խոյս տայ որսացողներից,
իսկ նրա փոխարէն ամբարիշտը պիտի մատնուի կորստի:
9 Անօրէնների բերանը որոգայթ է ընկերների համար,
իսկ արդարների իմաստութիւնը երաշխիք է յաջողութեան:
10 Արդարների բարութեամբ բարեկարգւում է քաղաքը,
իսկ ամբարիշտների կորստեամբ ուրախութեան հանդէս է լինում:
11 Ուղղամիտների օրհնութեամբ բարձրանում է քաղաքը,
բայց կը կործանուի ամբարիշտների բերանով:
12 Պակասամիտ մարդն արհամարհում է ընկերներին,
իմաստուն մարդը լռութիւն է սիրում:
13 Նենգամիտ մարդը գաղտնիքը յայտնում է ատեանում,
բայց հոգով հաւատարիմը ծածկում է գործը:
14 Նրանք, որ առաջնորդ չունեն,
պիտի ցած թափուեն տերեւների պէս,
բայց երբ շատ են խորհրդականները,
փրկութիւն կը գտնուի:
15 Անզգամը չարիք է նիւթում, երբ գործ է ունենում արդարի հետ
եւ ատում է զգուշութեան ձայնը:
16 Շնորհալի կինը բարձրացնում է ամուսնու փառքը,
մինչդեռ անարգանքի աթոռ է իրաւունքն ատող կինը:
Ծոյլերը կարօտ պիտի մնան մեծութեան,
բայց ժրաջանները կը հասնեն մեծութեան:
17 Ողորմած մարդը բարութիւն է անում իր հոգուն,
բայց անողորմ մարդը խորտակում է իր մարմինը:
18 Ամբարիշտն անիրաւ գործեր է կատարում,
բայց արդարների զաւակը ճշմարտութեան վարձկան է:
19 Արդար որդին ծնւում է կեանքի համար,
ամբարիշտը՝ հալածանքի ու մահուան:
20 Թիւր ճանապարհները պիղծ են Աստծու համար,
ուղիղ ճանապարհով գնացողները հաճելի են նրան:
21 Ով որ զուր տեղը վնաս է հասցնում մէկին,
նա անպատիժ չի մնայ:
Իսկ ով արդարութիւն է սերմանում,
արժանի վարձ կը ստանայ:
22 Ինչպէս ոսկէ գինդը խոզի դնչին,
նոյնպէս էլ գեղեցկութիւնն է չարաբարոյ կնոջ համար:
23 Արդարների ցանկութիւնը կատարւում է ամենայն բարութեամբ,
բայց ամբարշտի յոյսը պիտի կորչի:
24 Կան մարդիկ, որոնք ցանում են իրենց ունեցածը եւ ստանում բազմապատիկը,
կան էլ, որ անիրաւօրէն են հաւաքում, բայց մնում են կարօտեալ:
25 Ամէն օրհնուած մարդ պարզամիտ է,
բայց բարկացող մարդը տգեղ է կերպարանքով:

26 Ով ցորենը խնայի ժողովրդից,
այն պիտի թողնի օտարներին.
ով ագահօրէն կուտակի, պիտի արժանանայ ընդհանուրի անէծքին,
բայց ով բաշխի առատօրէն՝ օրհնուած կը լինի:
27 Ով բարիք է անում, նա բարութեան շնորհ կը գտնի,
իսկ ով չարիք է նիւթում, չարիք կը հասնի նրան:
28 Ով յոյսը դնում է հարստութեան վրայ, պիտի կործանուի,
իսկ ով հովանաւորում է արդարներին, պիտի բարգաւաճի:
29 Ով չի մտածում իր տան մասին, նա հողմ է ժառանգելու,
եւ անմիտը պիտի ծառայի իմաստունին:
30 Կեանքի ծառը բուսնում է արդարութեան պտղից,
իսկ անօրէն անձինք տարաժամ պիտի վերանան:
31 Եթէ արդարը հազիւ է ապրում,
ապա ի՞նչ կը լինի մեղաւորի եւ ամբարշտի կեանքը:

12 Ով խրատ է սիրում, նա իմաստութիւն է սիրում.
ով ատում է յանդիմանութիւնը, նա անմիտ է:
2 լաւ է, որ մարդ Տիրոջից շնորհ է գտնում,
իսկ անօրէն մարդու բերանը պիտի կարկամի:
3 Մարդ անօրէնութեամբ յաջողութեան չի հասնի.
արդարների արմատները չպիտի կտրուեն:
4 Ժրաջան կինն իր ամուսնու պսակն է.
ինչպէս փայտի համար վնասակար է որդը,
այնպէս էլ չարագործ կինը կորստի կը մատնի ամուսնուն:
5 Արդարների խորհուրդները իրաւացի են,
իսկ ամբարիշտները նենգութիւնների առաջնորդներ են:
6 Ամբարիշտների բերանները նենգաւոր են.
ուղղամիտների բերանը կը փրկի իրենց:
7 Ամբարիշտը որ կողմ էլ դառնայ, պիտի բնաջնջուի,
բայց արդարների տները պիտի յարատեւեն:
8 Իմաստունի բերանը պիտի գովաբանուի մարդկանցից,
բայց ծուռ սիրտ ունեցողը պիտի արհամարհուի:
9 Լաւ է խոնարհ ծառայ լինել իր անձի համար,
քան իր անձը մեծարել եւ հաց մուրալ:
10 Արդարը խղճում է իր անասունին,
բայց ամբարիշտները անողորմ են:
11 Ով մշակում է իր հողը, պիտի կշտանայ հացով,
իսկ ով դատարկ բաների յետեւից է գնում, նա պակասամիտ է:
Ով ժամանակը վատնում է գինարբուքի մէջ,
նա անարգանք է թողնելու իր շրջապատի վրայ:
12 Ամբարիշտների ցանկութիւնները չար են,
իսկ բարեպաշտների արմատները՝ հաստատուն:
13 Մեղաւորն իր լեզուի պատճառով որոգայթի մէջ կ'ընկնի,
բայց արդարը զերծ կը մնայ դրանից:
Քաղցրահայեաց մարդը գթութիւն է գտնում,
բայց ով դռների արանքում է պատահում մարդկանց,
նեղութիւն է պատճառում հոգուն:
14 Մարդ պիտի լցուի բարիքներով իր բերանի պտղից,
եւ իր շուրթերի տուածի համեմատ՝ ստանայ հատուցում:
15 Անմիտներին իրենց ճանապարհները թւում են ուղիղ:
16 Իմաստունն ունկնդիր է լինում խրատին,
իսկ անմիտն իսկոյն յայտնի է դարձնում իր բարկութիւնը:
17 Խորագէտ մարդը թաքցնում է իր անարգանքը.
արդարը հաւատարմօրէն յայտնում է ճշմարտութիւնը.

Նենգամիտ է անօրէնի վկայութիւնը:
18 *Մարդիկ կան, որ իրենց խօսքով*
խոցում են թրի պէս,
բայց իմաստունների լեզուները բու-
ժում են:
19 *Ճշմարտախօս շուրթերը հաստա-*
տում են վկայութիւնը,
բայց շտապող վկան անիրաւ լեզու
ունի:
20 *Չարամիտների սրտում նենգու-*
թիւն կայ,
բայց ովքեր խաղաղութիւն են
ուզում, ուրախ պիտի լինեն:
21 *Անիրաւացի ոչ մի բան հաճելի չէ*
արդարին,
բայց ամբարիշտները լցուած են
չարութեամբ:
22 *Ստախօս շուրթերը պիղծ են*
Տիրոջ առջեւ,
ճշմարտութեան հաւատարիմ բե-
րանը հաճելի է նրան:
23 *Հանճարի աթոռը իմաստուն*
մարդն է,
բայց անզգամների սիրտը պիտի
ենթարկուի նզովքի:
24 *Ընտրեալների ձեռքը պիտի հեշտ*
յաղթի,
բայց նենգաւորները պիտի գերու-
թեան մատնուեն:
25 *Ահեղ խօսքը խռովում է արդարի*
սիրտը,
բարի խօսքը ուրախացնում է նրան:
Արդարը սիրում է իրաւադատ անձը,
բայց ամբարիշտների մտքերը կեղծ
են:
26 *Չարիքները հալածում են յանցա-*
ւորներին,
բայց բարիքները պիտի հասնեն
արդարներին:
27 *Ամբարիշտների ճանապարհները*
մոլորեցնում են նրանց.
որսը չի հանդիպում նենգաւորին:
28 *Անարատ մարդու ունեցուածքը*
պատուական է եւ առատ:
Արդարութեան ճանապարհը տա-
նում է դէպի կեանք,
ոխակալների ճանապարհը՝ դէպի
մահ:

13 *Խելացի որդին հնազանդ է հօրը,*
բայց անհնազանդ որդին կորստեան
պիտի մատնուի:
2 *Մարդ առատօրէն պիտի ճաշակի*
արդարութեան պտղից,
բայց անօրէն անձինք տարաժամ
պիտի կործանուեն:
3 *Իր լեզուն զսպողը պիտի պահ-*
պանի իր անձը,
բայց ում բերանը յանդուգն է, պիտի
խռովի իր հոգին:
4 *Ծոյլը միշտ կարիքի մէջ պիտի*
լինի,
բայց ժրաջան ձեռքը ճար կը գտնի:
5 *Արդարն ատում է անիրաւ գործը,*
բայց ամբարիշտը պիտի ամաչի եւ
համարձակութիւն պիտի չգտնի:
6 *Արդարութիւնն անմեղներին պահ-*
պանում է իրենց ճանապարհներին,
բայց մեղքերն անզգամ են դարձ-
նում ամբարիշտներին:
7 *Մարդիկ կան, որ իրենց հարուստ*
են ձեւացնում, բայց ոչինչ չունեն,
կան էլ, որ իրենց խեղճ են ձեւաց-
նում, բայց լի են մեծ հարստութեամբ:
8 *Մարդս իր հարստութեամբ*
փրկագնում է իր անձը,
բայց աղքատը չի հանգստանում
պատուհասներից:
9 *Արդարի լոյսը պիտի վառ լինի*
յարաժամ,
բայց ամբարիշտների լոյսը պիտի
հանգչի:
Նենգամիտ հոգիները պիտի մոլո-
րուեն մեղքերի մէջ,
բայց արդարները գթութիւն եւ
ողորմութիւն պիտի գտնեն:
10 *Անզգամն ամբարտաւանութեամբ*
չարիք է գործում,
բայց իրաւախոհ մարդը իմաստուն
է:
11 *Անիրաւութեամբ դիզուած*
հարստութիւնը պիտի պակասի,
բայց աստուածապաշտութեամբ
ձեռք բերուած ունեցուածքը պիտի
բազմապատկուի:
12 *Լաւ է սկզբից եւեթ սրտով օգնել,*
քան շուտափոյթ խոստանալ եւ եր-
կար ժամանակ յոյսով թողնել:
Արդարը ողորմում եւ փոխ է տալիս.
բարի ցանկութիւնը կեանքի ծառ է:
13 *Ով ինչ արհամարհի, դրանից էլ*
պիտի արհամարհուի.

ով երկիւղ է կրում պատուիրանից,
առողջ պիտի լինի:
Նենգամիտ որդին բարիք չի գտնի,
բայց խելացի ծառայի գործերը
պիտի յաջողուեն,
եւ ուղիղ պիտի լինեն նրա ճանա-
պարհները:
14 *Իմաստունի համար օրէնքը*
կեանքի աղբիւր է,
բայց անմիտը պիտի մեռնի
որոգայթի մէջ ընկնելով:
15 *Բարւոք խոհեմութիւնը շնորհ է*
պարգեւում,
եւ օրէնքի իմացութիւնը մտքի բա-
րիք է.
կորստաբեր է օրէնքն արհամար-
հողների ճանապարհը:
16 *Խորագէտ անձն իմաստութեամբ*
է գործում,
բայց անմիտն ինքնակամ չարիքներ
է տարածում:
17 *Ցանդուգն թագաւորը չարիքի*
մէջ պիտի ընկնի,
բայց հաւատարիմ պատգամաւորը
կը փրկի նրան:
18 *Խրատը հեռու է վանում աղքա-*
տութիւնն ու անարգանքը,
իսկ յանդիմանութեան անսացողը
պիտի փառաւորուի:
19 *Բարեպաշտների ցանկութիւնները*
քաղցրացնում են հոգին.
ամբարիշտների գործերը հեռու են
իմաստութիւնից:
20 *Իմաստուններին ընկերացողը*
իմաստուն կը լինի,
բայց անզգամներին ընկերացողը
թաքուն պիտի չմնայ:
21 *Չարիքները հալածում են մեղա-*
ւորներին,
բայց բարիքները պիտի հասնեն
արդարներին:
22 *Առատաձեռն մարդը ճոխ*
ժառանգութիւն պիտի թողնի
որդիների որդիներին,
բայց ամբարիշտների հարստու-
թիւնը արդարները պիտի ստանան:
23 *Արդարները երկար տարիներ*
պիտի վայելեն իրենց հարստութիւնը,
բայց անիրաւները շուտով պիտի
կործանուեն:
24 *Ով չի գործադրում խրատի*
գաւազանը, նա ատում է որդուն.
իսկ ով սիրում է իր որդուն, նրան
խրատում է հոգածութեամբ:
25 *Արդարն իր անձը յագեցնում է*
ուտելու ժամանակ,
բայց ամբարշտի որկորը միշտ
անկուշտ է լինում:

14 *Իմաստուն կանայք շինում են*
իրենց տները,
իսկ անզգամ կանայք կործանում են
դրանք իրենց ձեռքով:
2 *Ուղիղ ընթացողը երկիւղ է կրում*
Տիրոջից,
բայց ով ծռմռում է իր ճանապարհը՝
պիտի անարգուի:
3 *Ցիմարների բերանները թշնա-*
մանքի գաւազաններ են,
բայց իմաստունների լեզուները
պահպանում են դրանցից:
4 *Ուր որ եզներ չկան, մաքուր են*
մսուրները,
բայց ուր որ շատ արդիւնք կայ,
այնտեղ երեւում է եզան զօրութիւնը:
5 *Հաւատարիմ վկան չի ստում,*
բայց անիրաւ վկան ստերի կրակ է
թափում:
6 *Չարերի մօտ եթէ իմաստութիւն*
փնտռես, չես գտնի,
բայց հեշտութեամբ իմաստութիւն
կը գտնես իմաստունների մօտ:
7 *Անզգամը հակառակ է ամէն ինչի,*
բայց իմաստուն շրթները հանճարի
գէնքն են:
8 *Խելացի մարդու իմաստութիւնը*
երեւում է նրա ճանապարհից,
իսկ անզգամների անմտութիւնը՝
իրենց մոլորութիւնից:
9 *Անօրէնների տները պիտի դատա-*
պարտուեն արդարութեան կողմից,
բայց արդարների տները հաճելի են
դրան:
10 *Զգայուն մարդու սիրտը տրտմու-*
թիւն է իր համար,
բայց ուրախութեան ժամանակ նա
թշնամանքի չի խառնուում:
11 *Ամբարիշտների տները պիտի*
կործանուեն,
բայց արդարների բնակարանները
պիտի հաստատ լինեն:

12 Ճանապարհներ կան, որ մարդկանց թւում են ուղիղ,
բայց դրանց վերջաւորութիւնը դժոխքի յատակն է գնում:
13 Տրտմութիւնը չի խառնւում ուրախութեան հետ,
բայց ուրախութիւնը յետոյ վերածւում է սգի:
14 Խստասիրտը պիտի յագենայ իր ճանապարհներից,
իսկ բարերար մարդը ուղղուելու է իր խոհերի շնորհիւ:
15 Անմեղը հաւատում է ամէն բանի,
բայց խորագէտը պիտի զգոյշ:
16 Իմաստունը զգոյշանալով՝ իր ճամփան շեղում է չարից,
իսկ անզգամը ինքնավստահ ընկերանում է անօրէնի հետ:
17 Զայրացկոտ մարդը գործում է առանց մտածելու,
իսկ իմաստուն մարդը խիստ համբերատար է:
18 Ամբարիշտները պիտի բաժանեն չարիքները,
բայց խորագէտները պիտի զօրանան իրենց իմաստութեամբ:
19 Չարերը ծնկի պիտի գան բարիների առջեւ,
եւ ամբարիշտները պիտի պաղատեն արդարների դռների մօտ:
20 Աղքատներին ատում են նոյնիսկ իր բարեկամները,
մինչդեռ հարուստներին շատերն են դառնում բարեկամ:
21 Ով անարգում է տնանկին, մեղք է գործում,
բայց ով ողորմում է աղքատին, արժանի է երանութեան:
22 Մոլորեալները չարիքներ են նիւթում,
բարիք խորհողները՝ ողորմութիւն եւ ճշմարտութիւն արարում:
Չարիքներ նիւթողները չեն ճանաչում ողորմութիւնն ու հաւատը,
բայց բարիք արարողները կը ժառանգեն ողորմութիւնն ու հաւատը:
23 Իմաստութիւն է, որ մարդ աշխատում եւ մի բան է աւելացնում,
բայց անհոգ դատարկապորտը միշտ կարիքի մէջ պիտի լինի:
24 Իմաստունների պսակը իրենց խորագիտութիւնն է,
իսկ անմիտների ուղին՝ իրենց չարութիւնը:
25 Հաւատարիմ վկան մարդ է փրկում,
բայց նենգամիտը բորբոքում է ստերի կրակը:
26 Տիրոջից երկիւղ կրելու մէջ վստահ յոյս կայ,
որովհետեւ Աստուած իր որդիների համար խաղաղ ապաւէն է:
27 Տիրոջ հրամանը կեանքի աղբիւր է,
որը խուսափել է տալիս մահուան որոգայթներից:
28 Թագաւորի փառքն իր զօրքերի բազմութեան մէջ է,
հզօրների կործանումը՝ իրենց ժողովրդի նուազելու մէջ:
29 Համբերատար մարդն օժտուած է մեծ խոհեմութեամբ,
բայց կարճամիտը շատ է անխելք:
30 Հեզաբարոյ մարդը սրտի բժիշկ է,
հոգս անող սիրտը՝ ոսկորների փտութիւն:
31 Տնանկին զրպարտողը բարկացնում է նրա Արարչին,
բայց ով պատւում է Աստծուն, նա ողորմում է աղքատին:
32 Ամբարիշտը պիտի մերժուի իր չարիքի պատճառով,
բայց իր անձի համար մաքրութիւն ցանկացողը արդար կը լինի:
33 Իմաստութիւնը հանգիստ է գտնում բարի սրտում,
բայց անմիտների սիրտը չի ճանաչում այն:
34 Արդարութիւնը բարձրացնում է ազգը,
բայց մեղքը ազգեր է նուազեցնում:
35 Խելացի սպասաւորը հաճելի է թագաւորին.
իր փութաջանութեամբ նա թօթափում է անարգանքը:
Բարկութիւնը կործանում է նոյնիսկ իմաստուններին:

15 Սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրոյթը,
բայց խիստ խօսքը բարկութիւն է յարուցում:
2 Իմաստունների լեզուն գիտէ բարիքը,
իսկ անզգամների բերանը խօսում է չարիքների մասին:
3 Տիրոջ աչքը ամէն տեղ դիտում է չարերին եւ բարիներին:
4 Բուժող լեզուն կեանքի ծառ է,
եւ ով պահում է այն՝ նրա հոգին պիտի լցուի:
5 Անզգամն անարգում է հօր խրատը,
բայց յանդիմանութեանը հնազանդ որդին ողջախոհ է:
Արդարութեան աւելացումով՝ աւելանում է զօրութիւնը,
բայց ամբարիշտները արմատախիլ պիտի լինեն երկրից:
6 Արդարների տները պիտի մնան մեծ զօրութեամբ,
բայց ամբարիշտների պտուղները պիտի ոչնչանան:
7 Իմաստունների շուրթերը իմաստութիւն են հաստատում,
անմիտների սրտերը անսխալ լինել չեն կարող:
8 Ամբարիշտների զոհագործութիւնները պիղծ են Տիրոջ առջեւ,
բայց ուղղամիտների ուխտը հաճելի է նրան:
9 Ամբարիշտների ճանապարհները պիղծ են Տիրոջ առջեւ,
բայց ով հետեւում է արդարութեանը, Տէրը սիրում է նրան:
10 Անմեղի խրատն ընդունելի է մերձաւորների համար,
բայց ով ատում է յանդիմանութիւնը, պիտի վախճանուի անարգանքով:
11 Դժոխքն ու կորուստը յայտնի են Տիրոջ առջեւ,
էլ ուր մնաց՝ մարդկանց սրտերը:
12 Մեծամիտը չի սիրում իրեն յանդիմանողին
եւ չի հաղորդւում իմաստունների հետ:
13 Սրտի բերկրանքից ծաղկում է դէմքը,
իսկ տրտում հոգին չրջում է թախծոտ:
14 Ուղիղ սիրտը իմաստութիւն է որոնում,
բայց անզուսպ բերանը ծանօթ է չարիքներին:
15 Չարի աչքն ամէն ժամանակ սպասում է չարիքի,
բայց բարի աչքը պիտի խաղաղուի ամէն ժամ:
16 Լաւ է քիչ բաժինը՝ Տիրոջ երկիւղով,
քան թէ շատ գանձը՝ առանց երկիւղածութեան:
17 Լաւ է բանջարեղէնի ճաշ ուտել՝ սիրով ու շնորհքով,
քան թէ մսուրի արջառի միս՝ թշնամութեամբ:
18 Զայրացկոտ մարդը կռիւ է յարուցում,
բայց համբերատարը խաղաղեցնում է այն:
Համբերատար մարդը մեղմում է դատաստանը,
բայց ամբարիշտն աւելի է գրգռում այն:
19 Ծոյլի ճանապարհը ծածկուած է փշերով,
բայց հարթ ու բաց է ջանասէրի ճամփան:
20 Իմաստուն որդին ուրախացնում է հօրը,
իսկ անմիտ որդին արհամարհում է մօրը:
21 Անմիտ մարդու սիրտը կարօտ է խելացի խորհրդի,
բայց խելացի մարդն ինքն է ուղղում իր ընթացքը:
22 Իրենց խորհուրդը յապաղում են յայտնել նրանք,
որ չեն յարգում իրենց խորհրդակիցներին:
Խորհուրդները հաստատ են մնում խոհեմների սրտում,
23 բայց անզգամը չի հետեւում նրանց
եւ չի ասում պատշաճ բան,
որ բարի լինի ընդհանուրի համար:
24 Իմաստունի խորհուրդը կեանքի ճանապարհ է,
եւ մարդ դրանով դժոխքից խորշելով՝ կը փրկուի:
25 Տէրը կործանում է ոխակալների տները,

բայց որբերի եւ այրիների սահմանը
հաստատ է պահում:
26 Անիրաւ խորհուրդը պիղծ է Տիրոջ առջեւ,
բայց սրբերի խօսքերը պարկեշտ են:
27 Կաշառակերը սպանում է իր հոգին,
բայց կաշառք ատողը պիտի ապրի:
Ողորմութեամբ ու հաւատով մաքրւում է մեղքը,
եւ Տիրոջ երկիւղով ամէն ոք խորշում է չարից:
28 Արդարների սրտերը խորհում են հաւատի մասին,
բայց ամբարշտի բերանը իբրեւ պատասխան ունի չարիքը:
Տիրոջը հաճելի են արդար մարդկանց ճանապարհները.
նրանց շնորհիւ թշնամիները դառնում են բարեկամներ:
29 Աստուած հեռու է ամբարիշտներից,
բայց նա լսում է արդարների աղօթքը:
Լաւ է քիչ վերցնել՝ արդարութեամբ,
քան թէ շատ արդիւնք ստանալ՝ առանց երկիւղածութեան:
30 Մարդուս սիրտը պիտի խորհի իրաւունքի մասին,
որպէսզի Աստուած ուղղի նրա ընթացքը:
31 Բարին տեսնող աչքը ուրախացնում է սիրտը,
իսկ բարի լուրը պարարում է ոսկորները:
32 Խրատ մերժողն ատում է իր հոգին,
բայց յանդիմանութիւն լսողը խոհեմութիւն պիտի ստանայ:
33 Տիրոջ երկիւղը խրատ է եւ իմաստութիւն,
եւ փառքը ծագում է դրանից:

16 Ինչ որ մարդ դրել է սրտում՝
վերաբերում է իրեն,
բայց Տիրոջից է նրա լեզուի պատասխանը:
2 Խոնարհ մարդու բոլոր գործերը յայտնի են Տիրոջը,
եւ Տէրն է դատում հոգիները:
3 Քո գործերը յանձնի՛ր Տիրոջ ձեռքը,
եւ քո մտադրութիւնները պիտի կատարուեն:
Ինչպիսի մեծութեան էլ հասնես,
դու քեզ խոնա՛րհ պահիր,
եւ դու շնորհ կը գտնես Տիրոջ առջեւ:
4 Տէրն ամէն ինչ արել է մի նպատակի համար.
ամբարիշտները չար օրը պիտի մատնուեն կորստեան:
5 Ամէն մեծամիտ պիղծ է Տիրոջ առջեւ,
եւ ով զուր տեղը ձեռնամուխ է լինում չարիքի, չի արդարացուելու:
Բարու ճանապարհի սկիզբը արդարութիւն գործելն է,
եւ Աստծուն աւելի հաճելի է աղօթքը, քան զոհ մատուցելը:
6 Ով փնտռում է Տիրոջը,
նա գիտութիւն կը գտնի՝ արդարութեամբ հանդերձ,
եւ ովքեր ուղիղ սրտով փնտռեն նրան,
խաղաղութիւն կը գտնեն:
7 Աստծու բոլոր գործերը արդարութեամբ են արուած,
ամբարիշտն էլ պահւում է չար օրուայ համար:
8 Լաւ է քիչ վերցնել՝ Տիրոջ երկիւղով,
քան թէ մեծ գանձեր՝ ամբարշտութեամբ:
9 Մարդու սիրտը պիտի խորհի իրաւունքի մասին,
որպէսզի Աստուած էլ ուղղի նրա ընթացքը:

ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10 Թագաւորի շուրթերին մարգարէական պատգամ կայ,
եւ նրա բերանը չի սխալուի դատաստանի ժամանակ:
11 Կշռաքարի արդարութիւնը Տիրոջից է.
արդար նժարներ են նրա գործերը:
12 Ով չարիք է գործում,
նա գարշելի է թագաւորի համար,
քանի որ նրա իշխանութեան աթոռը

հաստատ է մնում արդարութեան շնորհիւ:
13 Արդար շուրթերը հաճելի են թագաւորին,
քանի որ Տէրը սիրում է ուղիղ խօսքը:
14 Թագաւորի զայրոյթը մահուան պատգամաբեր է,
բայց իմաստունը մեղմացնում է այն:
15 Թագաւորի որդու երեսի լոյսը կեանք է,
եւ նրա բարեհաճութիւնը սպասուող անձրեւաբեր ամպի պէս է:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

16 Առաւել ցանկալի է իմաստութիւն ստանալ, քան ոսկի.
եւ առաւել բաղձալի է խոհեմութիւն ձեռք բերել, քան արծաթ:
17 Կեանքի շաւիղները հեռացնում են չարիքներից,
եւ արդարութեան ճանապարհների վրայ է գտնւում կեանքի երկարութիւնը:
Խրատ ընդունողը բարիքների մէջ կը լինի,
եւ յանդիմանութիւն պահողը կ'իմաստնանայ:
Տիրոջ ճանապարհից զգոյշ գնացողը պահպանում է իր անձը,
կեանքը սիրողը զսպում է իր լեզուն:
18 Կործանմանը նախորդում է թշնամանքը,
անկմանը՝ չար բարքը:
19 Լաւ է հեզասիրտ լինել խոնարհների հետ,
քան աւար բաժանել ամբարտաւանների հետ:
20 Գործի մէջ խելացի մարդը բարիքներ կը գտնի,
եւ երանելի է նա, ով յոյսը դնում է Տիրոջ վրայ:
21 Իմաստուններին եւ հանճարներին անմիտ են կոչում,
բայց նրանց, որ քաղցր-մեղցր խօսքեր ունեն, աւելի շատ են լսում:
22 Միտքը կեանքի աղբիւր է այն ունեցողի համար,
բայց անմիտների խրատը չար է:
23 Իմաստունի սիրտը գիտէ իր բերանի խօսքը,
եւ նա իր շուրթերով իրաւադատութիւն է խորհում:
24 Բարի խօսքը մեղրի խորիսխ է,
եւ հոգու բժշկութիւն է նրա քաղցրութիւնը:
25 Ճանապարհներ կան, որ մարդու աչքին ուղիղ են թւում,
բայց նրանց վերջաւորութիւնը տանում է դէպի դժոխքի յատակ:
26 Աշխատողը վաստակում է իր անձի համար՝
իր կորուստը հեռու վանելով իրենից,
բայց անմիտը կորուստը կրում է իր բերանի մէջ:
27 Անզգամ մարդն իր հոգում չարիքներ է յղանում
եւ կրակ է կուտակում իր շուրթերի վրայ:
28 Խորամանկ մարդը չարիքներ է նիւթում,
չարութեամբ բորբոքում է նենգութեան լապտերը
եւ բարեկամներին բաժանում է իրարից:
29 Անօրէն մարդը փորձութեան է ենթարկում իր բարեկամներին
եւ նրանց տանում է վատ ճանապարհներով:
30 Նա, որ իր աչքերը փակում եւ ծուռ բաներ է խորհում,
որ շուրթերը փակ ամէն տեսակ չարիքներ է մտորում՝
այդպիսին չարի հնոց է:
31 Մերութիւնը պարծանքի պսակ է,
որ մարդ գտնում է միայն արդարութեան ճանապարհին:
32 Համբերատար մարդը լաւ է հզօրից,
իմաստութիւն ունեցողը՝ մեծատարած հանդեր ունեցողից,
իր բարկութիւնը զսպողը՝ մեծազօր քաղաք գրաւողից:
33 Անիրաւների չարիքները նորից իրենց ծոցն են դառնալու,
քանզի Տէրն է սահմանում բոլորի իրաւունքը:

17 Լաւ է մի պատառ համով հացը՝
խաղաղութեամբ,

քան միս ու բարիքով լի տունը՝
թշնամութեամբ:
2 Խելացի ծառան պիտի իշխի ան-
միտ տէրերի վրայ
եւ ժառանգութիւնը պիտի բաժանի
եղբայրների հետ:
3 Ինչպէս արծաթը եւ ոսկին
փորձւում են քուրայի մէջ,
այնպէս էլ Աստուած ընտրում է
սրտերը:
4 Չարագործը հնազանդւում է
անօրէնի լեզուին,
բայց արդարը չի նայում ստախօս
շուրթերին:
Հաւատարիմ մարդու համար ամ-
բողջ աշխարհը լի է հարստութեամբ,
բայց անհաւատարիմը մէկ գրոշ իսկ
չունի:
5 Ով ծաղրում է աղքատին, նա
զայրացնում է նրա Արարչին,
եւ ով հարուածում է ընկածին, նա
չի արդարացուելու,
բայց ով խղճում է՝ ողորմութիւն
պիտի գտնի:
6 Մեծերի պսակն իրենց որդիների
որդիներն են,
որդիների պարծանքը՝ իրենց
հայրերը:
7 Անզգամներին վայել չեն ճշմար-
տախօս շուրթերը,
եւ ոչ էլ արդարներին՝ ստախօս
շուրթերը:
8 Խրատը այն ունեցողի համար նրա
շնորհի վարձն է,
եւ նա դէպի որ կողմն էլ դառնայ՝
յաջողութիւն պիտի գտնի:
9 Ցանցանքը ծածկողը բարեկա-
մութիւն է փնտռում,
բայց այն բացայայտողը բարեկամ-
ներին եւ ընտանիքը բաժանում է
իրարից:
10 Սպառնալիքները փշրում են
իմաստունների սրտերը,
բայց անմիտը թէկուզ եւ բազում
հարուածներ ուտի՝ չի ազդւում:
11 Ամէն չարակամ հակառակութիւն
է յարուցում,
բայց Տէրն էլ անողորմ հրեշտակ է
ուղարկում նրա դէմ:
12 Հոգսը ծանրանում է իմաստունի
սրտին,
իսկ անմիտները մտածում են
չարիքների մասին:
13 Ով բարիքի փոխարէն չարիք է
հատուցում,
չարը չի պակասի նրա տնից:
14 Արդարութեան սկիզբը խօսքին
իշխանութիւն է տալիս,
իսկ հակառակութիւնը եւ կռիւը
տանում են դէպի չքաւորութիւն:
15 Ովքեր անիրաւին համարում են
արդար ու արդարին՝ անիրաւ,
նրանք պիղծ ու գարշելի են Տիրոջ
առջեւ:
16 Ինչպէ՞ս է անմիտը հարստութիւն
գտնում,
քանի որ չգիտէ, թէ ինչ բան է
իմաստութիւնը:
Նա, որ շատ վեր է բարձրացնում իր
տունը, պատճառ է դառնում նրա
կործանման,
իսկ ով խուսափում է ուսումից,
պիտի ընկնի չարիքի մէջ:
17 Բարեկամներ կարող ես ունենալ
ամէն ժամանակ,
բայց եղբայրներդ քեզ պէտք են
վշտի ժամանակ,
քանզի հէնց դրա համար էլ ծնուել
են նրանք:
18 Անմիտ մարդը պարում եւ ցնծում
է բարեկամների համար երաշխաւոր
լինելիս,
վնասասէրը ուրախանում է նրանց
վէճ ու կռուի ժամանակ:
19 Նա, որ շատ վեր է բարձրացնում
իր տունը, պատճառ է դառնում նրա
կործանման,
եւ խստասիրտն էլ բարիք չի գտնի:
20 Լեզուով յեղյեղուկ մարդը պիտի
ընկնի չարիքի մէջ,
21 եւ անզգամի սիրտը ցաւ է իր
մարմնի անդամների համար:
Հայրը չի կարող ուրախ լինել
անխելք որդու համար,
բայց խելացի որդին ուրախացնում է
մօրը:
22 Ուրախ սիրտը առողջարար է.
Հոգսերի մէջ ընկած մարդու
ոսկորները ցամաքում են:
23 Կաշառքի համար գիրկը բացողը
յաջողութիւն չի գտնի իր ճամփին,
ամբարիշտը խոտորւում է արդարու-

թեան ճանապարհներից:
24 Հանճարեղ մարդու երեսն իմաս-
տուն է,
իսկ անմիտ մարդու աչքերը այս ու
այն կողմ են նայում:
25 Անմիտ որդին հօր տրտմութիւնն
է եւ դառն ցաւ է իր ծնողների համար:
26 Արդար մարդուն տոյժի ենթար-
կելը բարի գործ չէ,
եւ ոչ էլ իրաւունքի մէջ իշխանի
նենգելը՝ արդարի նկատմամբ:
27 Իր խիստ խօսքը զսպողն իմաս-
տուն է, համբերատարը՝ խելացի:
28 Անմիտ մարդուն հարցրին, թէ
ինչ է իմաստութիւնը,
եւ նա գտնո՞ւմ է արդեօք, որ իմաս-
տութիւն կայ.
նա պապանձուեց, եւ կարծեցին, թէ
իմաստուն է:

18 Ով ցանկանում է բարեկամներից
հրաժարուել, պատճառներ է փնտռում.
այդպիսին ամէն ժամանակ նախա-
տինք պիտի կրի:
2 Իմաստութիւնը պակասամիտի
համար ոչ մի բանի պէտք չէ,
քանի որ նա կը վարուի առաւել
անզգամութեամբ:
3 Ամբարիշտն արհամարհում է չա-
րիքները, երբ հասնում է դրանց
խորքերը,
բայց իր վրայ էլ անարգանք ու
նախատինք են հասնում:
4 Խորհուրդը խոր ջուր է մարդու
սրտում,
բխող գետ է եւ կեանքի աղբիւր:
5 Վայել չէ աչառու լինել ամբարշտի
նկատմամբ,
եւ ոչ էլ դատաստանի ժամանակ
արհամարհել արդարի իրաւունքը:
6 Անզգամի շուրթերը նրան
հասցնում են չարիքների,
եւ նրա յանդուգն բերանը մահ է
հրաւիրում իր վրայ:
7 Անզգամի բերանը կործանում է
նրա համար,
եւ նրա շուրթերը որոգայթ են իր
հոգու համար:
8 Վատին կործանում է վախը,
իսկ կնաբարոյ անձինք պիտի քաղցի
մատնուեն:
9 Ով իր հոգին չի բուժում իր
գործով,
նա իրեն ապականողի եղբայրն է:
10 Տիրոջ անունը յայտնի է նրա
զօրութեան մեծութիւնից,
եւ դէպի նա ընթացող արդարները
բարձրանում են:
11 Մեծատուն մարդու հարստու-
թիւնն ամուր քաղաք է նրա համար,
եւ նրա փառքը մեծ հովանի ունի:
12 Տղամարդու սիրտը գոռոզանում է
կործանումից առաջ
եւ խոնարհւում է փառքի հասնելուց
առաջ:
13 Ով առանց բան լսելու պատաս-
խան է տալիս,
դա անզգամութիւն է նրա համար
եւ նախատինք:
14 Իմաստուն ծառան մեղմացնում է
մարդու ցասումը,
բայց ո՞վ կարող է դիմանալ
մարդուս նեղսրտութեանը:
15 Խելացի սիրտը ձեռք է բերում
ճանաչում,
իմաստունների ականջները
փնտռում են ուսանելի խորհուրդներ:
16 Ընծաներն ընդլայնում են
մարդուս շրջապատը
եւ նրան նստեցնում իշխանների
հետ:
17 Արդարն ինքն իր մասին չա-
րախօսում է իր խօսքի սկզբին,
երբ սկսում է յանդիմանուել ոսոխի
կողմից:
18 Լուռումունջ մնալը մեղմացնում
է հակառակութիւնները
եւ զօրեղների միջեւ վճռում է
հարցը:
19 Եղբօրից օգնութիւն ստացած
եղբայրը նման է ամուր քաղաքի.
նա հզօր ու բարձր է ինչպէս
հաստատուն թագաւորութիւնը:
20 Մարդ իր բերանի պտղով պիտի
կշտացնի իր փորը
եւ իր շուրթերի պտղով պիտի
յագենայ:
21 Մահն ու կեանքը լեզուի ձեռքին
են,
եւ ով յաղթահարում է այն, պիտի
վայելի նրա պտուղը:

22 Ով բարի կին է գտել՝ շնորհք է գտել
եւ ուրախութիւն է ստացել Աստծուց:
Ով հեռացնում է բարեբարոյ կնոջը, նա հեռացնում է բարիքը,
իսկ ով շնաբարոյ կին ունի, նա անմիտ է եւ ամբարիշտ:
23 Աղքատն աղաչում է ողոքիչ խօսքով,
բայց հարուստը յանդուգն պատասխան է տալիս:
24 Տղամարդը լկտիութեան պատճառով է բոզանոց գնում:
Մտիկ բարեկամը լաւ է հեռաւոր եղբօրից:

19 Լաւ է տգէտ լինել, բայց միամիտ,
քան թէ անզգամ ու շաղակրատ:
2 Տգիտութիւնն էլ, սակայն, լաւ չէ հոգու համար,
եւ ով իր ոտքերին ստիպում է շտապել՝ սխալներ է գործում:
3 Մարդու անզգամութիւնը ապականում է նրա ճանապարհները,
բայց իր սրտում նա մեղքը գցում է Աստծու վրայ:
4 Հարստութիւնը աւելացնում է շատ բարեկամներ,
բայց աղքատը բաժանւում է նոյնիսկ հարազատ բարեկամից:
5 Ստախօս վկան առանց պատժի չի մնայ,
եւ չի փրկուի նա, ով զուր տեղն է մեղադրում:
6 Շատերն են հաճոյախօսում թագաւորի դիմաց,
բայց ամէն մի չարակամ պիտի նախատուի մարդկանցից:
7 Ով ատում է իր աղքատ եղբօրը,
ինքն էլ հեռու պիտի լինի նրա սիրուց:
Բարի խորհուրդը մերձենում է իրեն ճանաչողին,
եւ իմաստուն մարդը կը գտնի այն:
Ով խիստ բան է անում չարամտօրէն,
նա չարիք է գործում,
եւ ով վէճեր է յարուցում, փրկութիւն չի գտնի,
մանաւանդ որ այնպիսի բան է անում,
որ չի վերաբերում իրեն:
8 Խելք ձեռք բերողը սիրում է իր հոգին,
եւ իմաստութիւն պահողը բարիք է պահում:
9 Ստախօս վկան առանց պատժի չի մնայ,
եւ ով թշնամանք է բորբոքում,
ով չարութիւն է դրդռում, պիտի կործանուի:
10 Անզգամին վայել չէ փափկակեցութիւնը,
եւ ոչ էլ գոռոզութիւնը՝ ծառային,
երբ նա սկսի իշխել:
11 Գթասիրտ մարդը համբերատար կը լինի,
եւ նրա համար պարծանք է բարձր լինել անզգամներից:
12 Թագաւորի սպառնալիքը նման է առիւծի մռնչիւնի,
իսկ նրա զուարթութիւնը՝ դալարիքի վրայ կաթած ցօղի:
13 Անմիտ որդին ամօթանք է հօր համար.
ընդունելի չէ բոզերի վարձով կատարուած ուխտը:
14 Տներն ու ստացուածքը հայրերը բաժանում են որդիներին,
բայց առաքինի կին՝ Աստուած է տալիս տղամարդուն:
15 Ծուլութիւնը յատուկ է թուլամորթին,
եւ գործ անել չսիրող մարդը քաղցած կը մնայ:
16 Պատուիրաններ պահողը պահպանում է իր անձը,
բայց նա, ով արհամարհում է իր ճանապարհը, պիտի կործանուի:
17 Աղքատին ողորմութիւն տուողը փոխ է տալիս Աստծուն,
եւ ըստ նրա տուածի էլ Աստուած պիտի հատուցի նրան:
18 Խրատի՛ր որդուդ, որպէսզի այդպէս բարի յոյս լինի քեզ համար,
եւ մի՛ նայիր նրա թշնամական վերաբերմունքին.
եթէ դու բրածեծ անես նրան, նա չի մեռնի,
բայց նրա հոգին կը փրկես մահից:

19 Զարաբարոյ մարդը շատ է տուժելու,
եւ եթէ աւելի դաժան վարուի, հոգին էլ վրայ կը տայ:
20 Լսի՛ր, որդեա՛կ, օրդ խրատը,
որպէսզի իմաստուն դառնաս յետագայում:
21 Բազմաթիւ խորհուրդներ կան մարդուս սրտում,
բայց Աստծու խորհուրդը մնում է յաւիտեան:
22 Մարդու ողորմածութիւնը նրա հոգու պտուղն է,
եւ արդար աղքատը լաւ է, քան ստախօս հարուստը:
23 Տիրոջ երկիւղը կեանք է մարդու համար.
ով չունի այդ երկիւղը, մոլորուած շրջում է դռներին,
ապրում է այն տեղերում, ուր յաւիտեան այցելու չի ունենայ:
24 Ով անգործութեամբ ձեռքերը թաքցնում է ծոցում,
նա իր ձեռքը նոյնիսկ իր բերանն էլ չի տանի:
25 Անզգամի պատիժը տեսնելով՝ անմեղն աւելի խելացի է դառնում,
իսկ եթէ յանդիմանես իմաստունին, նա առաւել իմաստութիւն կ'ունենայ:
26 Այն որդին, որ անարգում է հօրը եւ հեռացնում մօրը,
պիտի ամօթ կրի եւ նախատինք:
27 Հօր խրատը չպահող որդին չար խորհուրդներ է խորհում:
28 Անմիտ երիտասարդին երաշխաւոր եղողը ծաղրում է արդարութիւնը.
ամբարիշտների բերանը կուլ է տալիս դատ ու դատաստան:
29 Տանջանքները պատրաստուած են անխելք մարդկանց համար,
պատիժները՝ անզգամների:

20 Գինին անառակութեան է մղում,
հարբեցողութիւնը՝ թշնամութեան,
եւ ով անճնատուր է լինում դրանց՝ խելացի չէ:
2 Թագաւորի պատուհասը պակաս վնասաբեր չէ առիւծի ցասումից,
եւ ով զայրացնում է նրան, վնաս է պատճառում ինքն իրեն:
3 Մարդու համար փառք է հեռու մնալ հայհոյանքներից,
բայց ամէն մի անզգամ խառնւում է այդպիսի բաների:
4 Ծոյլը թէեւ նախատւում է, բայց չի ամաչում,
ինչպէս մէկը, որ ցորեն է փոխառնում ամռանը:
5 Մարդու սրտի խորհուրդը խոր ջրի պէս է,
բայց իմաստուն մարդը երես է հանում այն:
6 Մեծանուն եւ պատուական է գթասիրտ մարդը,
բայց դժուար է գտնել հաւատարիմ մարդ:
7 Ով անարատ է քայլում արդարութեան ճամփով,
նա իրենից յետոյ երանութեան արժանի որդիներ պիտի թողնի:
8 Երբ արդար մի թագաւոր նստի գահին,
ոչ մի չարագործ չի վրիպի նրա աչքից:
9 Ո՞վ կարող է պարծենալ, թէ ինքը սուրբ սիրտ ունի,
կամ ո՞վ կը համարձակուի ասել, թէ ինքը զերծ է մեղքերից:
10 Թէ՛ մեծ, թէ՛ փոքր ծուռ կշեռքը եւ թէ՛ երկակի չափը,
երկուսն էլ պիղծ են Տիրոջ առջեւ.
պիտի խափանուեն թէ՛ դրանք եւ թէ՛ դրանք գործադրողները.
այդպէս էլ պիտի խափանուի իր կեանքի մէջ նոյն կերպ վարուող մարդը:
11 Ուղիղ են այն երիտասարդի ճամփաները,
որ մաքրութեամբ է ընթանում:
12 Ականջը լսում է, աչքը՝ տեսնում.
եւ երկուսն էլ Տէրն է ստեղծել:
13 Մի՛ սիրիր չարախօսել, որպէսզի չզրկուես կեանքից.
աչքերդ բա՛ց արա եւ կշտացի՛ր հացով:
14 «Վատ է, վատ է», ասում է գնորդը,
իսկ հեռանալիս պարծենում է իր գնումով:
15 Կայ ոսկի էլ, հանդերի հարստութիւն էլ,

բայց գիտուն շուրթերն են թանկարժէք անօթ:
16 Հանի՛ր ու վերցրո՛ւ նրա հանդերձանքը,
քանզի նա երաշխաւոր եղաւ մի օտարականի եւ հիւրընկալեց նրան:
17 Խաբէութեան հացը քաղցր է թւում մարդու,
բայց յետոյ նրա բերանը պիտի լցուի խիճով:
18 Դիտաւորութիւնը հաստատւում է մտքի խորհուրդներով.
պատերազմը մղւում է խելամտութեամբ:
19 Գաղտնիք յայտնողը նենգամտութեամբ է վարւում.
մի՛ հաղորդակցիր շողոքորթ լեզու ունեցողի հետ:
20 Ով հայհոյում է իր հօրն ու մօրը,
նրա լոյսը պիտի հանգչի.
նրա աչքերի բիբերը պիտի զգան խաւարը:
21 Այն ժառանգութիւնը, որ սկզբից շուտ է ձեռք բերուել
վերջաւորութեան չի կարող օրհնուած լինել:
22 Մի՛ ասա, թէ՝ վրէժ պիտի առնեմ թշնամուց,
այլ համբերութիւն ունեցիր Տիրոջ հանդէպ,
որ նա օգնական լինի քեզ:
23 Տիրոջ առջեւ պիղծ է երկու տեսակի չափը,
եւ խարդախ կշեռքը մերժելի է նրա համար:
24 Տէրն է, որ ուղղում է մարդու քայլերը,
էլ ինչպէ՞ս մահկանացուն խելամուտ լինի իր ճամփաներին:
25 Որոգայթ է մարդու համար շտապելը եւ իր ունեցուածքից բան նուիրելը,
հապճեպ ուխտ անելը եւ յետոյ զղջալը:
26 Իմաստուն թագաւորը ցրում է ամբարիշտներին
եւ անուի տակ է գցում նրանց:
27 Մարդու հոգին Տիրոջ լոյսն է,
որը քննում է սրտի շտեմարանները:
28 Ողորմածութիւնը եւ ճշմարտութիւնը թագաւորի պահապաններն են,
եւ նրանք արդարութեամբ են շրջապատում նրա գահը:
29 Երիտասարդների զարդը իմաստութիւնն է,
ծերերի փառքը՝ նրանց ալեհերութիւնը:
30 Չարագործների համար են թէ՛ վէրքերն ու հարուածները
եւ թէ՛ տանջանքները նրանց որովայնի խորքերում:

21 Ինչպէս ջրի հոսանքը,
այնպէս էլ թագաւորի սիրտը Աստծու ձեռքին է.
Նա ո՛ր կողմ կամենայ, այն կողմն էլ կը դարձնի այն:
2 Ամէն մարդ ինքն իր աչքին արդար է թւում,
բայց Տէրն է դատում սրտերը:
3 Արդարութիւն գործելը եւ ճշմարտութիւն խօսելը աւելի հաճելի է Տիրոջը,
քան զոհերի արիւնը:
4 Ամբարտաւանը մեծամիտ է իր յոխորտանքի մէջ.
ամբարիշտների լապտերը մեղքն է:
5 Կարճ խորհրդածութիւնն էլ կարող է առատութիւն բերել,
սակայն ամէն մի հապճեպութիւն կարօտութիւն է բերում:
6 Ով հարստութիւն է կուտակում լեզուի ստութեամբ,
նա գնում է սնոտի բաների յետեւից
եւ պիտի հասնի մահուան որոգայթների:
7 Ամբարիշտները պիտի կործանուեն, քանզի չեն ուզում գործադրել իրաւունքը:
8 Խոտորնակին Աստուած խոտոր ճանապարհ է առաքում,
քանզի Տիրոջ գործերը սուրբ են եւ ուղիղ:
9 Լաւ է բաց օդի մէջ մի անկիւնում ապրել, քան անիրաւութեամբ ծեփուած եւ խառնակ տան մէջ:
10 Ամբարշտի հոգին չարիքներ է ցանկանում,
եւ նա ողորմածութիւն չի գտնի ոչ ոքից:
11 Անխելքի պատիժը տեսնելով՝
անմեղն աւելի խորագէտ է դառնում,
իմաստունն էլ խորհելով՝ դառնում է առաւել գիտուն:
12 Արդարին մտահոգում է ամբարիշտների սիրտը,
բայց չարիքներն էլ ապականում են ամբարիշտներին:
13 Ով իր ականջը փակում է տնանկին չլսելու համար,
ինքն էլ երբ կանչի Տիրոջը, Տէրն էլ իրեն չի լսի:
14 Գաղտնի պարգեւը մեղմացնում է բարկութիւնը,
իսկ ով խնայում է պարգեւ տալ, զայրոյթ է յարուցում:
15 Իրաւունքի գործադրումը ուրախութիւն է արդարի համար,
բայց սուրբ գործը պիղծ է թւում չարագործներին:
16 Արդարութեան ճանապարհից մոլորուած մարդը
հանգրուան է գտնում հսկաների ժողովում:
17 Ով ուրախութիւն է սիրում, կարիքի մէջ կ'ընկնի,
ով գինի ու ձէթ է սիրում, չի հարստանայ:
18 Անօրէնն արդար մարդու համար փրկանք պիտի լինի,
երդմնազանցը՝ ուղղամիտ մարդկանց համար:
19 Լաւ է բնակուել անապատում,
քան թէ անզգամ, լեզուանի եւ բարկացկոտ կնոջ հետ:
20 Իմաստունի բերանը ցանկալի գանձ է պահում,
բայց տգէտները կուլ են տալիս այն:
21 Նա, ով հետեւում է արդարութեան եւ ողորմածութեան ճանապարհին,
կեանք, արդարութիւն եւ փառք պիտի գտնի:
22 Իմաստութիւնը հասաւ ամուր քաղաքներին
եւ քանդեց այն ամրոցները,
որոնց վրայ յոյս էին դրել ամբարիշտները:
23 Ով զսպում է իր բերանն ու լեզուն,
իր անձը պահպանում է նեղութիւնից:
24 Դաժանը, յանդուգնը եւ գոռոզը կոչւում են չարագործ,
իսկ ով ոխ է պահում, անօրէն է:
25 Ծոյլին սպանում են ցանկութիւնները,
որովհետեւ նրա ձեռքերը յօժար չեն որեւէ բան անելու:
26 Ամբարիշտն ամէն օր չարիքների ցանկութիւն է յղանում,
իսկ արդարն առանց խնայելու ողորմութիւն է տալիս:
27 Ամբարիշտների զոհաբերումները պիղծ են Տիրոջ առջեւ,
որովհետեւ մատուցւում են անօրէն խորհրդով:
28 Ստախօս վկան կորստեան պիտի մատնուի.
խոնարհ մարդը խօսում է զգուշութեամբ:
29 Ամբարիշտ մարդը դէմդ է ելնում յանդուգն երեսով,
բայց արդարն ինքը գիտի իր ճանապարհը:
30 Աստծու համեմատութեամբ՝ մարդո՛ չ իմաստութիւն ունի,
ո՛չ արիութիւն եւ ո՛չ էլ խորհուրդ:
31 Երիվարը պատրաստւում է պատերազմի օրուայ համար,
բայց Տիրոջից է գալիս յաղթանակի օգնութիւնը:

22 Բարի անունը լաւ է մեծ հարստութիւնից,
ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց:
2 Հարուստն ու աղքատը հանդիպում են իրար.
երկուսին էլ այցելում է Տէրը:
3 Չարագործին պատժուած տեսնելով՝
խորագէտն աւելի հաստատութեամբ է խրատում իրեն,
բայց անմիտները զանց առնելով այն՝ աւելի են վնասւում:
4 Տիրոջ երկիւղն իմաստութեան սկիզբն է.
դա է ե՛ւ հարստութիւնը, ե՛ւ փառքը, ե՛ւ կեանքը:
5 Թիւրամիտ մարդկանց ճանապարհներին տատասկ կայ եւ որոգայթ,

բայց ով զգուշանում է իր հոգու
համար, հեռանում է նրանցից:
6 Երիտասարդը դաստիարակւում է
ըստ իր ընտրած ճանապարհի
եւ ծերութեան ժամանակ էլ չի
հեռանում դրանից:
7 Աղքատները պիտի տիրեն հա-
րուստներին,
եւ ծառաները պիտի փոխ տան
իրենց տէրերին:
8 Ով անզգամութիւն է ցանում,
չարիքներ է հնձելու
եւ պատուհաս է կրելու իր գործերին
համապատասխան:
9 Աստուած սիրում է ուրախ եւ
առատաձեռն մարդուն.
աղքատին ողորմութիւն անողն
ինքն էլ պիտի կերակրուի,
որովհետեւ տնանկին իր հացից է
բաժին հանել:
Կաշառք տուողը յաղթութիւն եւ
պատիւ է ձեռք բերում,
բայց կաշառքը սպանում է առնող-
ների հոգին:
10 Ժանտ մարդուն դո՛ւրս վռնդիր
ատեանից,
եւ հակառակութիւնը կը վերանայ
նրա հետ,
որովհետեւ երբ նա նստած է լինում
ատեանում,
անարգում է բոլորին:
11 Տէրը սիրում է մաքուր սիրտը,
եւ բոլոր անարատ մարդիկ ընդու-
նելի են նրան:
12 Թագաւորը հովւում է շուրթերով,
Տիրոջ աչքերը պահպանում են գի-
տութիւնը,
բայց Տէրն արհամարհում է անօրէն
խօսքերը:
13 Մոյլը պատճառ է բռնում եւ
ասում.
«Ճամփին առիւծ կայ, փողոցների
մատոյցներում՝ մարդասպաններ»:
14 Անօրէնի բերանը խոր հոր է,
եւ Տիրոջն ատելի անձը նրա մէջ
պիտի ընկնի:
Վատ ճանապարհներ կան մարդու
առջեւ,
եւ նա չի ուզում յետ դառնալ
դրանցից,
բայց հարկաւոր է յետ դառնալ ծուռ
ու վատ ճանապարհից:
15 Անմտութիւնը բորբոքուած է
երիտասարդի սրտում.
ուրեմն՝ գաւազանը եւ խրատը հեռու
են նրանից:
16 Աղքատին զրպարտողը բազ-
մացնում է իր չարիքները.
եւ նա, ով զրկում է նրան եւ տալիս
է հարստին,
կարօտութեան մէջ պիտի մնայ:

ԵՐԵՍՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

17 Ականջդ մո՛տ պահիր իմաս-
տունների խօսքերին.
լսի՛ր իմ խօսքերը, հաստատի՛ր
սրտիդ մէջ
եւ կ'իմանաս, որ դրանք բարի են:
18 Եւ եթէ դրանք պահես սրտիդ մէջ,
կ'ուրախացնեն քեզ եւ միշտ կը
մնան շուրթերիդ վրայ:
19 Որպէսզի քո յոյսը Տիրոջ վրայ
լինի,
ես քեզ ցոյց կը տամ նրա ճա-
նապարհները:
20 Եւ դու այդ խօսքերը երի՛ցս գրիր
հոգուդ մէջ,
քո մտքի, գիտութեան եւ բանա-
կանութեան մէջ:
21 Ահաւասիկ ես քեզ սովորեցնում
եմ ճշմարիտ խօսքեր եւ գիտութիւն,
որպէսզի քեզ հարցնողներին
յօժարութեամբ ճշմարտութեան
խօսքերով պատասխաններ տաս:

- 1 -

22 Մի՛ բռնացիր աղքատի վրայ,
որովհետեւ նա խեղճ է,
եւ մի՛ անարգիր տնանկին դա-
տարանի մէջ,
23 որովհետեւ Տէրն է նրա դատն ու
դատաստանն անելու,
եւ Տէրն է, որ անկորուստ պիտի
փրկի քո հոգին:

- 2 -

24 Ընկեր մի՛ լինիր բարկացող
մարդուն
եւ մի՛ առնչուիր դիւրաբորբոք

բարեկամի հետ,
25 որ չլինի թէ սովորես նրա ճանա-
պարհները
եւ ծուղակն ընկնելով՝ խեղդամահ
լինես:

- 3 -

26 Որեւէ մէկից ակնածելով՝
պարտքի համար անձդ երաշխաւոր
մի՛ դարձրու,
27 որովհետեւ եթէ չունես, որտեղի՞ց
պիտի վճարես,
եւ ինչո՞ւ առնեն տանեն քո անկո-
ղինը,
որի վրայ հանգստանում են կողերդ:

- 4 -

28 Մի՛ փոփոխիր քո հայրերի դրած
յաւիտենական սահմանները:

- 5 -

29 Իր գործի մէջ փութկոտ եւ
խելամիտ մարդուն
պէտք է կանգնեցնել թագաւորների
եւ ոչ թէ ծոյլ ու անպէտք մարդ-
կանց առջեւ:

- 6 -

23 Երբ հզօրների հետ սեղան
նստես՝ ընթրիքի,
ուտելուց առաջ լա՛ւ իմացիր,
թէ ինչ են դրել քո առաջ,
եւ նոր միայն ձեռքդ մեկնի՛ր:
2 Իմացի՛ր նաեւ, որ դու եւս պար-
տաւոր ես նոյնը պատրաստել:
3 Եւ եթէ ագահ էլ լինես,
մի՛ ցանկացիր նրա խորտիկները,
քանի որ դրանք էլ կ'անցնեն կը
գնան սուտ կեանքի հետ:

- 7 -

4 Եթէ ունեւոր չես, մի՛ ձգտիր
հասնել հարստին,
այլ քո իմաստութեամբ հեռացի՛ր
նրանից:
5 Հէնց որ աչքդ տնկես մի բանի
վրայ,
այն իսկոյն կը չքանայ.
հարստութիւնն արծուի թեւեր է
շինում իր համար
եւ վերադառնում է իր նախնիների
տունը:

- 8 -

6 Զարաչք մարդու հետ հաց մի՛ կեր
եւ մի՛ ցանկացիր նրա կերակուրը,
7 քանզի նա ուտում եւ խմում է
այնպէս,
ինչպէս մէկը մազ կուլ տար:
8 Նրան մի՛ ընդունիր քո տունը
եւ քո հացը մի՛ կեր նրա հետ,
քանի որ նա նոզկանք կը պատճառի
քեզ
եւ կ'ապականի քո բարի խօսքերը:

- 9 -

9 Ամենեւին բան մի՛ ասա անզգամի
ականջին,
որ նա չանարգի քո իմաստուն
խօսքերը:

- 10 -

10 Մի՛ փոփոխիր վաղեմի սահման-
ների նշանները.
եւ ձեռք մի՛ տուր որբերի ունե-
ցուածքին,
11 որովհետեւ հզօր է նրանց պաշտ-
պանը՝ Տէրը,
եւ նրանց դատը նա կը պաշտպանի
քո դէմ:

- 11 -

12 Սիրտդ տո՛ւր խրատին,
եւ ականջներդ պատրաստ պահի՛ր
իմաստութեան խօսքերը լսելու համար:

- 12 -

13 Քո խրատը մի՛ խնայիր երե-
խային,
որովհետեւ եթէ գաւազանով էլ
խփես նրան՝ չի մեռնի,
14 դու նրան կը հարուածես
գաւազանով,
բայց նրա հոգին կը փրկես մահից:

- 13 -

15 Որդեա՛կ, եթէ քո սիրտն իմաստուն լինի,
ապա կ՚ուրախացնես եւ իմ սիրտը:
16 Իմ շուրթերը պիտի ձուլուեն քո շուրթերին,
միայն թէ դու ուղիղ խօսես:

- 14 -

17 Թող քո սիրտը չնախանձի մեղաւորներին,
այլ միշտ Տիրոջ երկիւղը պահի՛ր սրտիդ մէջ:
18 Եւ եթէ պահես, դու զաւակ կ՚ունենաս,
եւ քո յոյսը չի կտրուի:

- 15 -

19 Լսի՛ր, որդեա՛կ, իմաստո՛ւն եղիր
եւ ուղղի՛ր քո սրտի խորհուրդները:
20 Մի՛ լինիր հարբեցող
եւ մի՛ նախանձիր իրենց մարմինը մսով պարարտացնողներին,
21 որովհետեւ գինեմոլն ու բոզաբածը պիտի աղքատանան,
եւ քնի մէջ թմրած ամէն մարդ պիտի քրջոտ հանդերձ հագնի:

- 16 -

22 Լսի՛ր, որդեա՛կ, քեզ ծնող հօրը
եւ մի՛ արհամարհիր քո մօր ծերութիւնը:
23 Ճշմարտութի՛ւն ձեռք բեր
եւ չթողնես իմաստութիւնը, խրատը եւ խոհեմութիւնը:
24 Արդար հայրը բարութեամբ է կրթում զաւակին,
եւ նրա սիրտը պիտի ուրախ լինի իմաստուն որդու համար:
25 Թող քո հայրն ու մայրն ուրախ լինեն քեզ համար,
եւ թող ուրախանայ նա, ով ծնել է քեզ:

- 17 -

26 Տո՛ւր ինձ, որդեա՛կ, քո սիրտը,
եւ թող աչքերդ սպասեն ինձ՝ իմ ճանապարհին:
27 Օտար տունը ծակ կարաս է,
օտար բանը՝ նեղ ջրհոր:
28 Եւ ով այնտեղ է շտապում, շուտով պիտի կործանուի,
եւ ամէն մի անօրէն պիտի ջնջուի խսպառ:

- 18 -

29 Ո՞ւմ համար է վայը,
ո՞ւմ համար է խռովութիւնը,
ո՞ւմ համար են դատաստանները,
ո՞ւմ համար են դաժանութիւններն ու տարակուսանքները,
ո՞ւմն են աչ ու ձախ տրուած հարուածները,
եւ ո՞ւմն են հարուածից կապտած աչքերը,
30 – ո՞չ արդեօք նրանցը, ովքեր տարուում են գինով,
ովքեր նայում են, թէ որտեղ գինարբուք կայ:
31 Մի՛ հարբէք գինով, այլ զրուցեցէ՛ք արդար մարդկանց հետ,
եւ խօսեցէ՛ք միմեանց հետ հրապարակներում:
Իսկ եթէ աչքդ գցես թաս ու բաժակի,
յետոյ պիտի սանդի կոթի պէս տկլոր ման գաս,
32 վերջն էլ օձից խայթուածի պէս պիտի ցած ընկնես,
եւ գինին, ինչպէս իժի թոյն, պիտի տարածուի քո մէջ:
33 Եւ երբ աչքերդ օտար կին տեսնեն,
բերանդ խառն ու շփոթ պիտի խօսի,
34 եւ պիտի ծփաս՝ ասես ծովի մէջ,
ինչպէս նաւավարը՝ սաստիկ մրրիկի մէջ:
35 Եւ պիտի ասես.
«Ինձ ծեծում էին, բայց ես ցաւ չէի զգում,
ինձ ծաղրում էին, բայց ես չէի գիտակցում,
ե՞րբ է բացուելու առաւօտը, որ վեր կենամ գտնեմ,
թէ ո՞ւմ հետ պիտի էլի շրջեմ»:

- 19 -

24 Որդեա՛կ իմ, մի՛ նախանձիր չար մարդկանց
եւ մի՛ ցանկացիր ապրել նրանց հետ,
2 որովհետեւ նրանց սիրտը խաբէութիւն է խորհում,
եւ նրանց շուրթերը խօսում են ցաւեր պատճառելու մասին:

- 20 -

3 Տունը շինւում է իմաստութեամբ,
հաստատւում է խելացիութեամբ,
4 եւ շտեմարաններն ամէն տեսակ հարստութեամբ
ու բարիքներով լցւում են գիտութեամբ:

- 21 -

5 Իմաստունը լաւ է հզօր մարդուց,
եւ խոհեմ մարդը՝ մեծամեծ դաստակերտներ ունեցողից:
6 Պատերազմը մղւում է ռազմավարութեամբ,
եւ յաջողութիւնը կախուած է սրտի խորհուրդներից:

- 22 -

7 Իմաստութիւնն ու բարի խորհուրդները
գտնւում են իմաստունների դռներին:

- 23 -

8 Իմաստունները չեն խոտորւում Տիրոջ խօսքից,
այլ խորհուրդ են անում իրենց հաւաքոյթներում:
9 Մահը պատահում է խրատ չսողներին,
իսկ անզգամը մեռնում է մեղքերի մէջ:

- 24 -

10 Պղծութիւնը խայտառակում է ժանտագործին՝
նրա չար եւ նեղ օրերին,
քանի նա դեռ չի մեռել:

- 25 -

11 Փրկի՛ր նրանց, ում մահուան են տանում,
եւ ոչինչ մի՛ խնայիր մահապարտներին փրկագնելու համար:
12 Բայց եթէ ասես, թէ՝
«Ես նրան չեմ ճանաչում, ոչ էլ նա՝ ինձ»,
– ապա իմացի՛ր, որ Տէրը ճանաչում է բոլորի սրտերը.
եւ Նա, որ ստեղծեց բոլորի շունչը,
ճանաչում է բոլորին
եւ իւրաքանչիւրին հատուցելու է ըստ նրա գործերի:

- 26 -

13 Մե՛ղր կեր, որդեա՛կ, որովհետեւ հաճելի է,
եւ խորիսխ, որպէսզի կոկորդդ քաղցրանայ:
14 Այդպէս էլ իմաստութեան գիտութիւնը քաղցր պիտի լինի քո հոգու համար,
որովհետեւ եթէ գտնես այն,
քո վախճանը լինելու է բարի,
եւ չի կտրուելու քո յոյսը:

- 27 -

15 Ամբարշտին մի՛ մօտեցրու արդարների արօտին,
եւ մի՛ խաբուիր, որ նրա որովայնը լիքն է:
16 Բայց եթէ արդարը եօթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի,
մինչդեռ ամբարիշտները պիտի տկարանան չարիքների մէջ:

- 28 -

17 Եթէ թշնամիդ ցած գլորուի, մի՛ տրորիր նրան,
եւ եթէ սայթաքի, ամբարտաւանութեամբ մի՛ վարուիր նրա հետ,
18 քանզի Տէրը կը տեսնի,
եւ դա հաճոյ չի լինի նրան,

եւ իր բարկութիւնը կը հեռացնի նրանից:

- 29 -

19 *Մի՛ ուրախացիր չարագործների հետ*
եւ մի՛ նախանձիր մեղաւորներին,
20 *որովհետեւ չարերը ժառանգորդ չեն ունենայ,*
եւ ամբարիշտների ճրագը պիտի հանգչի:

- 30 -

21 *Որդեա՛կ, վախեցի՛ր Աստծուց ու թագաւորից,*
եւ նրանցից ոչ մէկի դէմ մի՛ ապստամբիր,
22 *որովհետեւ ամբարիշտների կործանումը յանկարծահաս է լինելու,*
եւ ո՞վ է ճանաչելու թէ՛ մէկի, թէ՛ միւսի պատուհասը:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

23 *Ձեզ՝ իմաստուններիդ, այս էլ ասեմ.*
«Մի՛ ամաչէք խելամուտ լինել իրաւունքի մէջ»,
քանզի լաւ չէ աչառու լինել դատաստանի ժամանակ:
24 *Ամբարշտին արդար ասողը պիտի արժանանայ ժողովուրդների անէծքին*
եւ ատելի պիտի լինի ազգերից:
25 *Իսկ նրանք, որ կը յանդիմանեն ամբարիշտներին,*
պիտի բարի համարուեն, եւ բարի օրհնութիւն պիտի գայ նրանց վրայ:
26 *Շուրթերը սիրում են բարի խօսքերի պատասխաններ,*
իսկ ով պատասխան է տալիս գիմադարձ խօսքերով,
նա իր վրայ հրաւիրում է հեռացման խօսքեր:
27 *Հո՛գ տար դրսի գործերիդ համար,*
վերջացրո՛ւ դաստակերտիդ աշխատանքը,
ապա ե՛կ իմ յետեւից եւ նորի՛ց շինիր քո տունը:
28 *Սուտ վկայ մի՛ լինիր քո ընկերոջ հանդէպ,*
եւ քո շուրթերով մի՛ խաբիր նրան:
29 *Մի՛ ասա, թէ՝ «Ինչպէս նա վարուեց ինձ հետ,*
այնպէս էլ ես եմ վարուելու նրա հետ»,
եւ թէ՝ «Այնպէս պիտի հատուցեմ նրան,
ինչպէս ինքն ինձ գրկեց»:
30 *Անզգամ մարդը նման է արտի, թերամիտը՝ այգու.*
31 *եթէ անխնամ թողնես, խոպան կը դառնայ արտը,*
ամենուր մոլախոտ կը բուսնի, այն կը մնայ լքուած,
գետին կը թափուեն նրա ցանկապատի քարերը,
32 *բայց նա յետոյ միայն կ'ասի.*
«Ես զղջացի, տեսայ եւ ընտրեցի բարի խրատը»:
Մինչեւ ե՞րբ պիտի պառկես, ո՛վ ծոյլ,
ե՞րբ պիտի զարթնես քնից:
33 *Մի քիչ էլ որ ննջես, մի քիչ էլ նիրհես,*
մի քիչ էլ հանգստանաս,
մի քիչ էլ ձեռքերդ դնես կրծքիդ,
34 *եթէ այդպէս անես,*
ապա քեզ վրայ պիտի հասնի աղքատութիւնը ինչպէս ուղեւոր,
եւ կարիքը՝ արագընթաց սուրհանդակի նման:

1 *Խօսքից զգուշացող որդին կորստեան չի մատնուի,*
քանի որ նա խնամքով է ընդունում այն:
2 *Թագաւորի լեզուից թող ոչ մի սուտ բան դուրս չգայ.*
թող նրա լեզուից խաբէութիւն էլ դուրս չգայ:
3 *Սուր սուսեր է թագաւորի լեզուն եւ ոչ մարմնեղէն մի բան.*
ով որ մօտենայ դրան, կը խորտակուի:
4 *Եթէ նրա բարկութիւնը բորբոքուի,*
մարդկանց կը կործանի իրենց յօդերով հանդերձ,
մարդկանց ոսկորները կը փշրի
եւ դրանք կ'այրի ինչպէս բոց:
Մարդկանց մարմինը կը նմանուի արծիւների բոյներում եղած լէշի:
5 *Որդեա՛կ, վախեցի՛ր իմ խօսքերից,*
եւ եթէ դրանք ընդունես, զգոյշ կը լինես:

25 1 *Առակներ, որ յայտնի չեն Սողոմոնի անունով եւ որոնք գրել են Հրէաստանի արքայ Եզեկիայի բարեկամները:*
2 *Աստծու փառքը ծածկում է նրա խօսքերը,*
թագաւորի փառքը երեւում է նրա հրամանները պատուելու մէջ:
3 *Անքննելի են երկնքի բարձրութիւնները,*
երկրի խորութիւնները, թագաւորի սիրտը:
4 *Կրակի բովից անցկացրո՛ւ չմշակուած արծաթը,*
եւ կը տեսնես, որ այն կը մաքրուի ամէն խառնուրդից:
5 *Ամբարիշտներին հեռացրո՛ւ թագաւորի երեսից,*
եւ նրա գահը պիտի հաստատուի արդարութեան վրայ:
6 *Մի՛ պարծեցիր թագաւորի մօտ,*
մի՛ մօտեցիր մեծամեծների տեղերին,
7 *որովհետեւ լաւ է, որ մէկը քեզ ասի՝ «Արի՛ վեր, ինձ մօտ»,*
քան թէ գլխահակ խոնարհուես իշխանի առաջ:
8 *Խօսի՛ր քո աչքով տեսածի մասին.*
յանդգնօրէն կռուի մէջ մի՛ նետուիր,
որ յետոյ չզղջաս:
Եթէ բարեկամդ նախատի քեզ,
խո՛յս տուր, մի՛ արհամարհիր:
9 *Գուցէ բարեկամդ քեզ նախատի,*
10 *եւ դու էլ շարունակես քո թշնամութիւնն ու կռիւը,*
եւ մահուան պէս ծանր լինի քեզ համար:
Շնորհն ու բարեկամութիւնն ազատ են.
քո սրտի մէջ հաստատի՛ր դրանք եւ չես նախատուի,
այլ հաշտ ու խաղաղ կ'անցնի կեանքդ:
11 *Պատշաճ ասուած իմաստուն խօսքերը նման են սարդիոնով շարուած ոսկի խնձորի:*
12 *Պայծառ շարուած սարդիոն եւ ոսկի գինդեր են իմաստուն խօսքերը լսող ականջների համար:*
13 *Ինչպէս ամռան տօթից տանջուողի համար օգնութիւն է ձիւն գալը,*
այնպէս էլ հաւատարիմ պատգամատարը օգնութիւն է իրեն ուղարկողների համար,
որոնք իրենց յոյսը կապել են նրա հետ:
14 *Սուտ խոստումներով պարծեցող մարդիկ նման են սաստիկ քամիների, ամպերի ու անձրեւների:*
15 *Համբերատարութեամբ թագաւորը յաջողութիւն է գտնում,*
մեղմ լեզուն փշրում է ոսկորները:
16 *Երբ մեղր գտնես, որդեա՛կ, կե՛ր չափով.*
չլինի թէ յագենաս եւ փսխես:
17 *Քո ոտքով շատ մի՛ յաճախիր բարեկամիդ մօտ,*
գուցէ թէ քեզնից կշտանայ եւ քեզ ատի:
18 *Սրած սուսեր եւ սուր նետ է սուտ վկայութիւն տուող մարդը իր բարեկամի մասին:*
19 *Ձարի ճանապարհները եւ անօրէնի ոտքերը պիտի կորչեն նրանց չար օրում:*
20 *Ինչպէս քացախն է անօգուտ վէրքին,*
այնպէս էլ մարմնին հասած ցաւերից տրտմում է սիրտը:
Ինչպէս ցեցը վնասում է հագուստին, եւ որդը՝ փայտին,
այնպէս էլ տրտմութիւնն է վնասակար մարդու սրտին:
21 *Եթէ թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան,*
եթէ ծարաւ է, ջո՛ւր տուր խմելու,
22 *քանզի այդպէս անելով՝ դու նրա գլխին կրակի կայծեր կը դիզես,*
եւ Տէրը քեզ պիտի բարութիւն հատուցի:
23 *Հիւսիսային քամին ամպեր է յարուցում,*
լիրբ երեսը գրգռում է լեզուն:
24 *Լաւ է մենակ ապրել կտուրի տակ՝ անկիւնում,*

քան թէ բամբասող կնոջ հետ բնակուել մի տան մէջ:
25 Ինչպէս պաղ ջուրն ախորժելի է ծարաւած մարդուն,
այնպէս էլ ախորժելի է հեռու երկրից եկած բարի աւետիքը:
26 Ինչպէս որ մէկը խցանելով աղբիւրի ակը՝
խափանում է ջրերի հոսանքը,
այնպէս էլ տգեղ է արդարի խոնարհուելը ամբարիշտ մարդու առաջ:
27 Ինչպէս որ լաւ չէ շատ մեղր ուտելը,
այնպէս էլ հարկաւոր է յարգել միայն պատուական խօսքերը:
28 Առանց խորհրդի գործ անող մարդը նման է պարիսպները կործանուած քաղաքի:

26 Ինչպէս ցօղը՝ ամռանը, եւ անձրեւը՝ հնձի ժամանակ,
այնպէս էլ պատիւը անտեղի է անզգամին:
2 Ինչպէս թռչուններն ու ճնճղուկները զուր տեղը չեն թռչում,
այնպէս էլ ոչ մէկն իզուր անէծքներ չի տալիս:
3 Ինչպէս մտրակը ձիու համար է, խթանը՝ էշի,
այնպէս էլ գաւազանն է անմիտների համար:
4 Անզգամին մի՛ պատասխանիր ըստ նրա անզգամութեան,
որ չլինի թէ նմանուես նրան:
5 Բայց անզգամին նրա անզգամութեանն արժանի պատասխա՛ն տուր,
որպէսզի ինքն իրեն աւելի իմաստուն չկարծի:
6 Իր բռնած ճամփի համար նախատինք պիտի ստանայ այն մարդը,
որն անմիտ լրտարի հետ խօսք կ'ուղարկի:
7 Խափանի՛ր անզգամի գնալ-գալը եւ նրա բերանի խօսքն ու առակը:
8 Ով պատիւ է տալիս անզգամին,
նման է այն մարդուն, որ թանկարժէք քար է դնում պարսատիկի մէջ:
9 Հարբեցողի ձեռքերը փշերն են ծակծկում,
անմիտ մարդու ձեռքերը ծառայում են անզգամին:
10 Բոլոր անզգամների մարմիններն էլ պիտի ալեկոծուեն շատ խռովքներից,
որպէսզի խորտակուեն նրանց յիմարութիւնները:
11 Ինչպէս շունը դառնում է ատելի, երբ վերադառնում է իր փսխածին,
այնպէս էլ անզգամն է իր չարութեամբ, երբ վերադառնում է դէպի իր մեղքերը:
Ամօթ կայ, որ մեղքերի մէջ է գցում մարդուն,
ամօթ էլ կայ, որ նրան պարգեւում է փառք ու շնորհ:
12 Մարդ եմ տեսել, որ պարծեցել է, թէ ինքն իմաստուն է,
բայց անզգամից աւելի շատ բան կարելի է յուսալ, քան նրանից:
13 Երբ ծոյլին ուզում ես մի տեղ ուղարկել, ասում է.
«Ճանապարհին առիւծ կայ, հրապարակում՝ մարդասպաններ»:
14 Ինչպէս դուռը շուռ է գալիս իր ծխնիի վրայ,
այնպէս էլ ծոյլն է թաւալւում իր մահճում:
15 Ծոյլն իր ձեռքերը թաքցնում է ծոցում եւ ալարում է նոյնիսկ իր բերանը տանել:
16 Ծոյլն իր աչքին աւելի իմաստուն է թւում,
քան այն անձը, որ հարստութեան բարի լուր է աւետում:
17 Ուրիշի դատ ու վէճին խառնուող մարդը նման է նրան,
ով ձեռքը գցում է շան պոչը բռնելու:
18 Փորձող անձեր կան, որ առարկում են մարդկանց,
բայց երբ որեւէ մէկը շտապում է կանխել՝
հակադրուելով նրանց, ընկճւում են,
19 այդպէս էլ վարւում են այն բոլոր մարդիկ,
որ դարանամուտ են լինում իրենց բարեկամների հանդէպ,
բայց երբ կշտամբանքի են ենթարկւում, ասում են՝
«Մենք կատակ էինք անում»:

20 Շատ փայտ աւելացնելուց բորբոքւում է կրակը,
բայց ուր երկմիտ մարդ չկայ, այնտեղ դադարում է վէճը:
21 Կրակարանը շիկանում է ածուխից,
փայտը բորբոքում է կրակը,
բանսարկուն էլ հրահրում է կռիւը:
22 Շողոքորթների խօսքերը փաղաքշող են,
բայց դառնում են կռուի բուն:
23 Նենգամտութեամբ տրուած արծաթը նման է խեցու.
ողորկ շուրթերը թաքցնում են տրտում սրտերը:
24 Ով լաց է լինում թշնամու վրայ,
շուրթերով յայտնում է ամէն ինչ,
մինչդեռ իր սրտում նենգութիւն է նիւթում:
25 Եթէ քո թշնամին քեզ աղաչի եւ բարձր ձայնով աղերսի, մի՛ հաւատա նրան,
քանզի եօթը չարիք կայ նրա սրտում:
26 Ով թաքցնում է ատելութիւնը,
նա յայտնի է դարձնում նենգութիւնը.
բանիմաց մարդն ատեանում իր վնասը հեռու է վանում:
27 Ընկերոջ համար հոր փորողն ինքն է ընկնելու նրա մէջ.
ով քար է գլորում ուրիշի վրայ,
ինքն իր վրայ է գլորում այն:
28 Ստախօս լեզուն ատում է ճշմարտութիւնը.
շաղակրատ բերանը խռովութիւն է ստեղծում:

27 Մի՛ պարծեցիր վաղուայ օրով,
որովհետեւ չգիտես, թէ վաղն ինչ է բերելու քեզ:
2 Թող քեզ քո ընկե՛րը գովի եւ ոչ թէ քո բերանը,
օտա՛րը եւ ոչ թէ քո շուրթերը:
3 Քարը ծանր է, աւազը դժուար է բարձրացնել,
բայց երկուսից էլ առաւել ծանր է անզգամի բարկութիւնը:
4 Անողորմ է զայրոյթը, բարկութիւնը՝ սաստիկ,
բայց ոչ մէկից էլ պակաս չէ նախանձը:
5 Բացայայտ յանդիմանութիւնը լաւ է սքօղուած բարեկամութիւնից:
6 Լաւ է բարեկամի ապտակը, քան թշնամու նենգ համբոյրը:
7 Կուշտ մարդն արհամարհում է խորիսխն ու մեղրը,
բայց քաղցածի համար դառն բանն էլ քաղցր է թւում:
8 Իր բոյնը լքած թռչունի նման՝ իր տեղից օտար վայր գնացած մարդն իրեն ստրուկ է զգում:
9 Իւղով, խնկով եւ գինով զուարճանում է սիրտը,
եւ հոգին թօթափւում է տրտմութիւնից:
10 Քո բարեկամին, ինչպէս նաեւ հօրդ բարեկամին, մի՛ լքիր,
եւ թշուառացած մի՛ մտնիր եղբօրդ տունը.
մօտիկ բարեկամը լաւ է հեռու տեղ բնակուող եղբօրից:
11 Իմաստո՛ւն եղիր, որդեա՛կ, որ քո սիրտն ուրախ լինի,
քեզնից հեռո՛ւ վանիր նախատինքի խօսքերը:
12 Խորագէտը տեսնում է գալիք չարիքը եւ խոյս է տալիս,
բայց անզգամներն ընդառաջ են գնում եւ տուժում:
13 Հագից հանի՛ր հանդերձանքը նրա,
ով չափից անց է թշնամանք տածում,
որովհետեւ նա ուրիշին էլ է ապականում:
14 Ով առաւօտ կանուխ բարձր ձայնով գովում է բարեկամին,
նա աւելի լաւ չէ, քան նրան անիծողը:
15 Ինչպէս կաթոցը ձմեռային օրը մարդուն հանում է իր տնից,
այնպէս էլ անզգամ կինն է իր տնից դուրս հանում ամուսնուն:
16 Խստաշունչ է հիւսիսային քամին,
բայց յաջողութեան նշան է համարւում:
17 Երկաթը երկաթ է խարտում,
մարդն էլ՝ ընկերոջ երեսը:
18 Թզենի տնկողը պիտի ուտի նրա

պտուղը,
իր տիրոջը պահողը պիտի պատիւ գտնի:
19 Ինչպէս մարդկանց դէմքերը նման չեն իրար,
այնպէս էլ նման չեն նրանց սրտերը:
20 Ինչպէս անյագ են դժոխքն ու կորուստը,
այնպէս էլ անյագ են ագահ մարդու աչքերը:
Տիրոջ առջեւ պիղծ են յանդուգն աչքերով, խրատ չլսող եւ ցոփ լեզու ունեցող մարդիկ:
21 Արծաթն ու ոսկին փորձում է հալոցը,
իսկ մարդուն՝ նրան գովաբանողների բերանը:
Անօրէնի սիրտը չարիքներ է որոնում,
ուղիղ սիրտը փնտռում է գիտութիւն:
22 Անզգամին կարող ես ծեծ տալ եւ անարգել ատեանում,
բայց նրա անզգամութիւնը չես հեռացնի նրանից:
23 Խելամտօրէն հոգատա՛ր եղիր քո հօտերի անասունների նկատմամբ,
սրտացա՛ւ եղիր քո երամակների համար,
24 որովհետեւ մարդու ուժը, զօրութիւնն ու իշխանութիւնը յաւիտենական չեն,
եւ դրանք չեն տրւում սերնդից սերունդ:
25 Խնամքո՛վ վարուիր դաշտի կանաչի հետ, որ խոտ հնձես,
26 դալար խո՛տ հաւաքիր, որ ոչխարներդ գեղմնաբեր լինեն,
եւ դաշտերը լա՛ւ պահիր, որ գառներ ունենաս:
27 Որդեա՛կ, սովորի՛ր ինձնից այս զօրաւոր պատգամները քո տան ապրուստի եւ քո բարեկամների ապրուստի համար:

ՄԱՆՕԹԻԹԻՆ

28 Ամբարիշտը փախչում է առանց որեւէ մէկից հալածուած լինելու,
բայց արդարն անձնապաստան է լինում, ինչպէս առիւծ:
2 Ամբարիշտների յանցանքների մասին վէճերը յուզում են դատական ատեանները,
բայց խորագէտ մարդը հանգցնում է դրանք:
3 Հզօրը, որ ամբարտաւանութեամբ ընկճում է տնանկին,
նման է սաստիկ անձրեւի, որից օգուտ չկայ.
4 նոյնպէս էլ նրանք, որ մերժում են օրէնքը,
գովում են ամբարշտութիւնը.
բայց նրանք, ովքեր սիրում են օրէնքը,
իրենց շրջապատում են պարսպով:
5 Չար մարդիկ չեն հասկանում իրաւունքը,
բայց Տիրոջը փնտռողները խելամուտ են ամէն բանի:
6 Ճշմարտութեան հետ գնացող աղքատն աւելի լաւ է ստի հետ ընթացող հարստից:
7 Իմաստուն որդին պահում է օրէնքը,
բայց որկրամոլներին ընկերացողը անարգում է իր հօրը:
8 Ով իր տունը լցնում է տոկոսներով ու վաշխով,
նա կուտակում է այն մարդու համար, ով ողորմում է աղքատին:
9 Ով իր ականջը շեղում է, որ չլսի օրէնքը,
նա ինքն է պղծում իր ուխտը:
10 Ով ուղիղներին մոլորեցնում է չարի ճանապարհով,
ինքն է ընկնելու ապականութեան մէջ:
Անարատ մարդիկ պիտի բաժանեն բարիքները,
բայց անօրէնները պիտի անցնեն բարիքների մօտով եւ չեն մտնելու դրանց մէջ:
11 Հարուստն իր աչքին իմաստուն է թւում,
բայց խելացի աղքատը դատապարտում է նրան:
12 Արդարներին օգնական դառնալուց մեծ փառք է ձեռք բերւում,
բայց ամբարիշտների շրջանում կոտորւում են մարդիկ:

13 Իր ամբարշտութիւնը ծածկողը յաջողութիւն չի ունենայ,
բայց բացայայտողը եւ իրեն պախարակողը կը դառնայ սիրելի:
14 Երանի այն մարդուն, որ Աստծու հանդէպ երկիւղածութեան պատճառով արհամարհում է ամէն բան,
բայց խստասիրտը չարիքների մէջ կ'ընկնի:
15 Նա, ով աղքատ է, քաղցած առիւծի եւ ծարաւած գայլի պէս դաժան կը լինի թշուառ ժողովրդի նկատմամբ:
16 Խոհեմութիւնից զուրկ թագաւորը մեծ անիրաւութիւն անող է,
բայց անիրաւութիւնն ատողը երկար կեանք կ'ունենայ:
17 Մահապարտի համար երաշխաւոր եղած մարդը փախստական է դառնում
եւ չի հաստատւում ոչ մի տեղ:
Խրատի՛ր որդուդ, եւ նա հանգստութիւն կը տայ քեզ,
զարդ կը լինի քո հոգու համար
եւ չի հնազանդուի անօրէն ազգի:
18 Ով գնում է արդարութեան ճանապարհով, օգնութիւն է գտնելու,
իսկ ով ծուռ ճանապարհ է ելնում, նրա ոտքը պիտի կապուի:
19 Ով մշակում է իր հողը, կը կշտանայ հացով,
իսկ ով հետեւում է դատարկ բաների, տնանկ կը մնայ:
20 Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւն պիտի գտնի,
բայց չարագործը չի փրկուելու պատուհասից:
Գովասանքի արժանի չէ այն անձը,
ով չի պատկառում արդարներից:
21 Բարի չէ նա, ով երեսպաշտօրէն խուսափում է անօրէններին յանդիմանելուց.
նա պատրաստ է մարդ վաճառել մի կտոր հացով:
22 Չարաչք մարդը շտապում է հարստանալ,
բայց չգիտի, որ ողորմած մարդը պիտի յաղթի իրեն:
23 Մարդուն՝ նրա ճանապարհի համար յանդիմանողը աւելի շնորհ պիտի գտնի,
քան նրան լեզուով շողոքորթողը:
24 Ով մերժում է իր հօրը կամ մօրը եւ դա մեղք չի համարում,
նա համախոհ է ամբարիշտ մարդկանց:
25 Ագահ մարդը հակառակութիւն է գրգռում,
բայց յոյսը Տիրոջ վրայ դնողը հոգածութիւն կը գտնի:
26 Ով յոյսը դնում է իր սրտի յանդգնութեան վրայ, նա անզգամ է,
բայց իմաստութեամբ վարուողը կը փրկուի:
27 Աղքատներին բաժին տուողը չի աղքատանայ,
բայց ով իր աչքը թեքում է նրանցից,
նա շատ բանի կարօտ կը մնայ:
28 Ամբարիշտների շատանալուց հեծում են արդարները,
բայց նրանց կորստեամբ բազմանում են արդարները:

29 Լաւ է յանդիմանող, քան յամառ մարդը,
որովհետեւ եթէ սրան կրակը յանկարծակի հարուածի, փրկութիւն չի լինի:
2 Երբ արդարները գովասանքի են արժանանում,
ուրախանում են ժողովուրդները.
արդարները հեծում են ամբարիշտների իշխանութեան տակ:
3 Իմաստութիւն սիրողը ուրախացնում է իր հօրը,
մինչդեռ բոզարածը վատնում է նրա հարստութիւնը:
4 Արդար թագաւորը բարձրացնում է իր երկիրը,
իսկ անօրէնը կործանում է այն:
5 Ով կռիւ է փնտռում բարեկամի դէմ,
նա թակարդ է լարում իր ոտքերի համար:
6 Մեղաւոր մարդու համար խիստ որոգայթ կը լարուի,
բայց արդարը պիտի լինի ուրախութեան եւ խնդութեան մէջ:
7 Արդարը գիտէ տնանկներին իրաւունքով դատել,
բայց ամբարիշտը խելամուտ չի

լինում այն գիտենալու մէջ,
իսկ աղքատն էլ իրաւախոհ միտք չունի:
8 Անօրէն մարդիկ քաղաքը մատնում են կրակի,
բայց իմաստունները վանում են բարկութիւնը:
9 Իմաստուն մարդը դատում է ազգերին,
բայց անզգամ մարդն իր բարկութեան մէջ ծաղրելի է դառնում եւ չի պատկառում:
10 Արիւնարբու մարդիկ ատում են արդարին,
իսկ ուղղամիտները համակրանք են տածում նրա անձի նկատմամբ:
11 Անզգամն իր ողջ բարկութիւնը թափում է միանգամից,
բայց իմաստունը համբերում է մեղմութեամբ:
12 Այն թագաւորը եւ նրա հետ բոլոր նրանք, որ ականջ են դնում անիրաւութեան խօսքերին, անօրէններ են:
13 Փոխ տուողը եւ փոխ առնողը հանդիպում են նոյն տեղը,
եւ երկուսին էլ առերեսելու է Տէրը:
14 Տնանկներին արդարութեամբ դատող թագաւորի աթոռը միշտ հաստատուն պիտի մնայ:
15 Մեծն ու կշտամբանքն իմաստութիւն են տալիս.
ճամփից շեղուած երեխան ամօթահար է անելու իր ծնողներին:
16 Ամբարիշտների բազմանալու դէպքում բազմապատկւում են յանցանքները,
բայց արդարները ահով պիտի համակուեն նրանց կործանման ժամանակ:
17 Խրատի՛ր որդուդ, եւ նա քեզ հանգիստ պիտի պարգեւի
եւ զարդ պիտի լինի հոգուդ համար:
18 Անօրէն ազգն առաջնորդ չի գտնի,
իսկ ով պահում է օրէնքը, նա երանելի է:
19 Խօսքով չի խրատւում կամակոր ծառան,
որ թէեւ հասկանում, բայց բանի տեղ չի դնում այն:
20 Երբ յանդգնութեամբ խօսող մարդ տեսնես,
իմացի՛ր, որ աւելի յոյս կայ անզգամի, քան նրա համար:
21 Ով փափկասուն է լինում մանկուց,
պիտի ծառայ դառնայ եւ յետոյ մորմոքի ինքն իր մէջ:
22 Անզգամ մարդը հակառակութիւն է գրգռում,
հեզաբարոյ մարդը դադարեցնում է մեղքերը,
իսկ բարկասիրտ մարդը խորացնում է դրանք:
23 Ամբարտաւանութիւնը պիտի նուաստացնի մարդուն,
բայց Տէրը խոնարհներին պիտի արժանացնի փառքի:
24 Ով բաժնեկից է դառնում գողերին,
նա ատում է իր հոգին.
նրանք երդում են տալիս, որ իմացածի մասին չպատմեն,
25 բայց մարդկանցից ունեցած վախի եւ ամօթի պատճառով պիտի յայտնեն եւ կործանուեն.
իսկ ով յոյսը դրել է Տիրոջ վրայ, պիտի ուրախ լինի:
Ամբարշտութիւնը մարդուն գցում է գայթակղութեան մէջ,
բայց ով ապաւինում է Տիրոջը, պիտի փրկուի:
26 Շատերն են հաճոյախօսում իշխաններին,
բայց մարդուս իրաւունքը բխում է Տիրոջից:
27 Արդարի համար պիղծ է անօրէն մարդը,
իսկ անօրէնի համար պիղծ է ուղիղ ճանապարհը:

30

Մարդս Աստծու հաւատացեալներին պիտի ասի այսպէս.
«Վաւ է լռեմ, որովհետեւ բոլոր մարդկանցից աւելի անմիտ եմ,
2 եւ իմ մէջ մարդկային իմաստութիւն չկայ:
3 Աստուած իմաստութիւն սովորեցրեց ինձ,
եւ ես խելամուտ եղայ սրբերի գիտութեանը
եւ ճանաչեցի սրբութիւնները.
4 ո՞վ ելաւ երկինք եւ իջաւ,
ո՞վ հաւաքեց հողմերը իր գոգի մէջ,
ո՞վ ամփոփեց ջրերը իր հանդերձանքի մէջ,
ո՞վ հաստատեց երկրի ծագերը:
Ի՞նչ է նրա անունը, կամ՝ ի՞նչ է նրա որդու անունը:
5 Իմացի՛ր, որ Աստծու բոլոր գործերն էլ ընտրեալ են,
եւ նա ինքն է իրենից երկիւղ կրողների վերակացուն:
6 Ոչինչ մի՛ աւելացրու նրա խօսքերին,
որ քեզ չյանդիմանի, եւ դու ստախօս չերեւաս»:

ԱՌԱԿՆԵՐ

7 Երկու բան եմ խնդրում քեզանից.
մինչեւ մեռնելս ինձ չզրկես քո շնորհներից:
8 Զուր եւ սուտ խօսքը հեռո՛ւ վանիր ինձանից:
Հարստութիւն եւ աղքատութիւն մի՛ տուր ինձ,
այլ ինձ համար կշռի՛ր արժանին, որ բաւական է:
9 Չլինի թէ հարստանամ եւ ուրանամ քեզ ու ասեմ.
«Ո՞վ է ինձ տեսնում».
կամ աղքատանամ ու բան գողանամ
եւ երդում ուտեմ իմ Աստծու անունով:
10 Մի՛ մատնիր ծառային իր տիրոջ ձեռքը,
որ երբեք քեզ չանիծի, եւ դու ապականուած չմնաս:
11 Զար ծնունդն անիծում է իր հօրը
եւ իր մօրը չի օրհնում:
12 Զար ծնունդն իր աչքին արդար է երեւում,
բայց նա չի լուացել իր հոգու կեղտը:
13 Զար ծնունդն ամբարտաւան աչքեր ունի,
եւ գոռոզ են նրա թարթիչները:
14 Զար ծնունդի ատամները սուսեր են, եւ ժանիքները՝ դանակներ,
երկրիս խոնարհներին եւ աղքատ մարդկանց կեղեքելու եւ ուտելու համար:

ԹՈՒԱՐԿՈՒՄ ՉԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՌԱԿՆԵՐ

15 Տզրուկը սրտով սիրած երեք դուստր ունէր,
եւ սրանք երեքն էլ չկշտացրին նրան,
չորրորդն էլ չկարողացաւ կշտացնել,
որպէսզի նա ասէր. «Բաւական է»:
16 Գերեզմանն ու մահը,
կանանց սէրն ու տարտարոսը,
հողը, որ չի յագենում ջրով,
ջուրը եւ կրակը երբեք չեն ասում. «Բաւական է»:
17 Այն աչքը, որ արհամարհում է հօրը եւ անարգում է մօր ծերութիւնը,
ձորերի ագռաւները պիտի հանեն,
եւ արծիւների ճագերը պիտի յօշոտեն այն:
18 Երեք բան կայ, որ ինձ անհնարին է իմանալ,
եւ մի չորրորդն էլ, որ չեմ ճանաչում.
19 Թռչող արծուի ուղին՝ օդում,
օձի ճամփան՝ ապառաժի վրայ,
ծովով անցնող նաւի ծիրը
եւ երիտասարդ տղամարդու ճանապարհները:
20 Այդպէս է նաեւ շնացող կնոջ ճանապարհը.
երբ նա որեւէ վատ բան է անում,
լուացւում է եւ ասում. «Ես ոչինչ չեմ արել»:
21 Երեք բան կայ, որոնցից դողում է երկիրը,
եւ մի չորրորդն էլ կայ, որից չի կարողանում հանդարտուել.
22 ծառան, եթէ թագաւոր է դառնում,
անմիտը, եթէ կշտանում է հացով,
23 աղախինը, եթէ վռնդում է իր տիրուհուն,
եւ ատելի կինը, որ ամուսնանում է բարի մարդու հետ:
24 Զորս բան կայ, որ մանր են երկրի վրայ,
բայց իմաստուններից աւելի իմաստուն են.
25 մրջիւնը, որ զօրութիւն չունի,

բայց իր կերակուրը պատրաստում է ամռանը,
26 ճագարը, անզօր մի կենդանի,
բայց իր բոյնը շինում է քարերի մէջ,
27 մորեխը, որ թագաւոր չունի, բայց
կարծես մէկի հրամանով հաւաքւում է
զօրաժողովի,
28 եւ ճանկերով պատից կառչող
սարդը, որին թէեւ հեշտ է որսալ,
բայց բնակւում է թագաւորների
յարկերի տակ:
29 Երեք բան կայ, որ շրջում են
սիգապանծ,
եւ մի չորրորդն էլ, որ ճեմում է
գեղեցիկ.
30 առիւծի կորիւնը, որ հզօր է բոլոր
կենդանիներից,
որ երբեք չի վախենում եւ թիկունք
չի դարձնում անասուններին,
31 աքաղաղը, որ սիգալով շրջում է
հաւերի մէջ,
նոխազը, որ առաջնորդում է հօտը,
եւ թագաւորը, որ ժողովրդի առաջ
խօսում է հրապարակաւ:
32 Եթէ դու քեզ անհոգութեան
մատնես
եւ ձեռքդ դժուարութեամբ տանես
բերանդ,
պիտի արհամարհուես:
33 Կա՛թ կթիր, եւ իւղ կը լինի,
բայց եթէ պտուկները շատ ճմլես,
արիւն կը գայ:
Այդպէս էլ՝ եթէ խօսքը ճգճգես,
դատաստան ու կռիւ դուրս կը գայ:

ՊԱՏԳԱՄ ԹԱԳԱՒՈՐԻՆ

31 Իմ խօսքերն ասուած են Աստծու
կողմից,
իբրեւ թագաւորին ուղղուած պատ-
գամ,
որով նրան խրատել է իր մայրը:
2 Դէ՛ ինչ, որդեա՛կ, Աստծու խօսքեր
են,
անգրանիկդ իմ, քեզ եմ ասում,
որդի՛.
դէ՛ ինչ, որդեա՛կ, իմ որովայնի
պտուղն ես.
դէ՛ ինչ, որդեա՛կ, իմ ուխտերի զա-
ւակն ես:
3 Քո հարստութիւնը մի՛ տուր
կանանց
եւ ոչ էլ քո միտքն ու կեանքը՝ յե-
տին խորհուրդների.
մտածուա՛ծ գործիր ամէն բան
եւ խոհեմութեա՛մբ խմիր գինի:
4 Մեծամեծները բարկասիրտ են,
թող գինի չխմեն,
5 որպէսզի չհարբեն ու մոռանան
իմաստութիւնը
եւ չկարողանան տկարին ուղիղ դա-
տել:
6 Ըմպելի՛ք մատուցեցէք վշտացած-
ներին,
գինի՛ տուէք ըմպելու տառապեալ-
ներին,
7 թող խմեն ու մոռանան իրենց
աղքատութիւնը
եւ թող չյիշեն իրենց ցաւերը:
8 Աստծու խօսքո՛վ բաց քո բերանը
եւ ողջամտութեա՛մբ դատիր բո-
լորին,
9 քննի՛ր եւ տարբերի՛ր աղքատին ու
խեղճին:

ԱՌԱՔԻՆԻ ԿԻՆԸ

10 Թէ առաքինի կին գտնուի,
այդպիսին թանկ է բոլոր գոհար-
ներից:
11 Ամուսնու սիրտը վստահ է նրա
հանդէպ,
եւ իր ունեցածը երբեք քամուն չի
տրուի:
12 Ողջ կեանքում նման կինը գոր-
ծակից է լինում ամուսնուն
բարիքների եւ ոչ թէ չարիքների
մէջ:
13 Բուրդ եւ կտաւ ձեռք բերելով՝ նա
իր ձեռքով պիտանի հանդերձներ է
պատրաստում
14 եւ, ինչպէս շահութաբեր նաւ, նա
հեռուից ժողովում է գանձերը:
15 Նա ոտքի է ելնում արշալոյսին,
տնեցիներին կերակուր է տալիս
եւ գործի է դնում նաժիշտներին:
16 Թէ գեղեցիկ հանդ է տեսնում,
գնում է այն
եւ իր ձեռքի վաստակով մշակում է
հողը:
17 Իր մէջքին պինդ գօտի կապած՝
նա թեւերը մխրճում է գործի մէջ

18 եւ ճաշակում է աշխատանքի
քաղցր հաճոյքը,
եւ ողջ գիշերն էլ չի հանգչում նրա
ճրագը:
19 Ձեռքը միշտ իր օգուտին մեկնած՝
նա առանց ճանձրոյթի իր մատ-
ներով իլիկ է մանում:
20 Նրա ձեռքը բաց է աղքատների
համար,
եւ նա բաժին է տալիս խեղճերին:
21 Նրա ամուսինը, եթէ ինչ-որ
պատճառով ուշանայ էլ,
չի մտահոգւում տան համար,
որովհետեւ գիտէ, որ, եթէ տանը
ցուրտ է,
կինը կրկնակի հագուստ է հագցրել
բոլորին:
22 Նա բեհեզ եւ ծիրանի է գործել
ամուսնու համար
եւ իր համար՝ ծածկոցներ:
23 Նրա ամուսինը յայտնի մարդ է
դրսում,
երբ նստում է ժողովրդի մէջ՝ երկրի
բնակիչների ու ծերերի մէջ:
24 Կինը կտաւ է գործում ու
վաճառում,
եւ ծածկոցներ է ծախում քանա-
նայիներին:
25 Ուժ ու վայելչութիւն զգեցած՝
նա պիտի ուրախ լինի իր վերջին
օրերին:
26 Նա չափով եւ իմաստութեամբ է
բացում իր բերանը
եւ սահման է դնում իր լեզուին:
27 Պարկեշտ են նրա տան ճանա-
պարհները,
եւ նա դատարկապորտութեամբ հաց
չի կերել:
28 Իր ողորմածութիւնները ոտքի են
կանգնեցնում իր որդիներին եւ
մեծացնում:
29 Նրա ամուսինը գովում է նրան՝
ասելով.
«Շատ դուստրեր հարստութիւն
ձեռք բերին,
շատերն էլ սխրագործութիւններ
կատարեցին,
բայց դու գերազանցեցիր նրանց եւ
անցար բոլորից:
30 Քո մէջ կանացի կեղծ
բարեհաճութիւն չկայ
եւ ոչ էլ սին գեղեցկութիւն»:
Արդարեւ, իմաստուն եւ բարեպաշտ
կինը պիտի օրհնուի:
31 Նա պատիւ է տալիս Աստծուց
երկիւղ կրողներին,
դուք էլ նրա շուրթերի պտղից
պատի՛ւ տուէք նրան,
եւ թող նրա ամուսինը գովաբանուի
դրսում.
քանզի եթէ մարդուս ճամփան բաց
է նրա հայեացքի առջեւ,
ապա նա յաջողութիւն պիտի գտնի
յաւիտեանս յաւիտենից:

ԺՈՂՈՎՈՂ

Ներածութիւն

Իր գրքի հէնց առաջին նախադասութիւնից Ժողովողի հեղինակը մեզ ներկայանում է որպէս մի իմաստուն մարդ: Բայց, ի տարբերութիւն առակների գրքի իմաստունների, սրա հեղինակը մեզ փոխանցում է ոչ աւանդական մի իմաստութիւն: Այն բազմաթիւ փորձառութիւններից, որ նա ձեռք է բերել կեանքում, յիրաւի յանգել է այն ազրակացութեան, որ երջանկութիւնը անկայուն մի բան է, եւ որ մարդկանց ջանքերը դրան հասնելու համար շատ յաճախ անօգուտ են: Հետեւաբար նա իրեն հարց է տալիս, թէ կեանքն արդեօք որեւէ իմաստ ունի՞ եւ ընդհանրապէս արժի՞ այն ապրել: Նա ստիպում է ընթերցողին եւս նոյն հարցերը տալ ինքն իրեն: Ինչպէս Յոբի գրքում, այստեղ եւս հարցականի տակ են դրւում առաջադրուած հարցին տրուած հեշտ պատասխանները: Տարբերութիւնը շեշտադրման մէջ է միայն: Մինչ Յոբը բողոքում է մարդկային տառապանքի անհեթեթութեան դէմ, Ժողովողի գրքի Իմաստունը իր երկմտութիւնն է արտայայտում մարդկային երջանկութեան իմաստի մասին:

Մարդու ուրախութիւնների եւ ձգտումների (երիտասարդութիւն, հարստութիւն, փառք, աշխատանք, իմաստութիւն, արդարութիւն եւ այլն) անհեթեթ եւ անօգուտ լինելու հաստատումը յանկերգի նման անցնում է գրքի մէկ ծայրից միւսը: Մահուան յարատեւ սպառնալիքի եւ մարդկային կեանքում տիրող անարդարութեան պատճառով մարդու զգացած անապահովութիւնը, ինչպէս նաեւ Աստծու ծրագրերը ճանաչելու անհնարինութիւնը մարդու ճակատագիրը դարձնում են անհաստատ եւ անորոշ: Այս ժխտական հաշուեկշիռը առիթ է հանդիսանում ընթերցողին մի շարք խորհրդածութիւններ անելու այն մասին, թէ ինչպիսի վարուելակերպ է հնարաւոր որդեգրել կեանքում:

ԿԵԱՆՔՆ ԱՆԻՄԱՍՏ է

1 *Դաւթի որդու՝ Երուսաղէմում Իսրայէլի թագաւոր Ժողովողի խօսքերը*

2 *Ունայնութիւն ունայնութեանց, - ասաց Ժողովողը, - ունայնութիւն ունայնութեանց. ամէն ինչ ունայն է:*
3 *Ի՞նչ օգուտ ունի մարդ իր ողջ չարչարանքից, որ տանջւում է արեգակի ներքոյ:* 4 *Սերունդ է գնում, սերունդ է գալիս, բայց երկիրը մնում է յաւերժ:*
5 *Արեգակը ծագում, արեգակը մայր է մտնում եւ վերադառնում է իր տեղը, որտեղից ծագել է:* 6 *Հողմը ելնում է դէպի հարաւ եւ դառնում է դէպի հիւսիս, պտտուելով պտտւում՝ փչում է հողմը եւ վերադառնում նորից իր շրջապտոյտին:* 7 *Բոլոր գետերը գնում են դէպի ծով, բայց ծովը չի լցւում, եւ նորից գետերը վերադառնում են այնտեղ, որտեղով հոսել են:* 8 *Ամէն ինչ ջանք ու տքնանքով է լինում, եւ չի կարող մարդ այն պատմել. աչքը տեսնելով չի յագենում, եւ ականջը լսելով չի լցւում:* 9 *Այն, ինչ եղել է, նոյնն էլ պիտի լինի, եւ այն, ինչ կատարուել է, նոյնն էլ պիտի կատարուի:* 10 *Եւ ոչ մի նոր բան չկայ արեգակի ներքոյ. որովհետեւ ոչ ոք չի կարող ասել՝ «Ահա սա նոր է, քանի որ դա եղել է վաղուց, յաւիտենապէս՝ մեզնից առաջ եղածների մէջ»:* 11 *Նախկինների յիշատակը չկայ, չի լինելու նաեւ դրանցից յետոյ գալիքների յիշատակը՝ ամենավերջում եկողների մէջ:*

ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

12 *Ես՝ Ժողովողս, Իսրայէլի թագաւոր եղայ Երուսաղէմում.* 13 *եւ սիրտս տուի իմաստութեամբ քննելու եւ խորհելու այն ամենի մասին, ինչ եղել է արեգակի ներքոյ: Աստուած դաժան զբաղմունք է տուել մարդու որդիներին, որ զբաղուեն արեգակի ներքոյ:* 14 *Ես տեսայ այն բոլոր գործերը, որ կատարուել են արեգակի ներքոյ, եւ, ահա, ամէն ինչ ունայնութիւն է եւ հոգու տանջանք:*
15 *Ծուռն ուղղել չի լինի, եւ չեղածը՝ հաշուել:* 16 *Սրտիս մէջ ինքս ինձ ասացի, թէ՝ «Ահա ես աւելի մեծ եղայ, քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղէմում». եւ ես իմ սիրտը տուի ճանաչելու իմաստութիւնն ու գիտութիւնը եւ աւելի շատ իմաստութիւն ստացայ, քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղէմում:* 17 *Իմ սիրտը ճանաչեց բազում իմաստութիւն եւ գիտութիւն, առակներ եւ խորհուրդներ: Ես հասկացայ, սակայն, որ դա եւս հոգու տանջանք է,* 18 *քանզի շատ իմաստութեան մէջ շատ գիտութիւն կայ, եւ իր գիտութիւնն աւելացնողը իր ցաւն է աւելացնում:*

2 *Սրտիս մէջ ասացի. «Արի՛ քեզ փորձեմ նաեւ վայելքի տալով, տեսնեմ՝ ինչ ես դու բարիքների մէջ». եւ ահա դա էլ ունայնութիւն է:* 2 *Տեսայ, որ ծիծաղը յիմար բան է, եւ ուրախութիւնը՝ անօգուտ:* 3 *Եւ ես խորհեցի, որ սիրտս զուարթացնեմ, ինչպէս գինին զուարթացնում է մարմինս. եւ ես ինձ հաճոյքի տուի. սիրտս, սակայն, իմաստութեամբ առաջնորդեց ինձ մինչեւ որ տեսնէի, թէ որն է բարին մարդու որդիների համար, որպէսզի նրանք այն անեն արեգակի ներքոյ՝ իրենց պարգեւուած կեանքի օրերին:* 4 *Ես շատ գործերի ձեռնամուխ եղայ, ինձ համար ապարանքներ շինեցի, ինձ համար այգիներ տնկեցի,* 5 *ինձ համար պարտէզներ եւ ծաղկանոցներ շինեցի եւ ամէն տեսակ պտղաբեր ծառեր տնկեցի նրանց մէջ:* 6 *Ջրաւազաններ շինեցի ինձ համար, որ ջրերը ոռոգեն մայրիների խիտ անտառները:* 7 *Ծառաներ եւ աղախիններ ունեցայ, եւ նրանք ընդոծիններ ունեցան ինձ համար, եւ աւելի շատ նախիրներ ու հօտեր ունեցայ, քան բոլոր նրանք, որ եղել են ինձնից առաջ Երուսաղէմում:* 8 *Ինձ համար արծաթ ու ոսկի կուտակեցի եւ թագաւորներից ու գաւառներից մեծ գանձեր դիզեցի: Գուսաններ եւ երգիչներ ու երգչուհիներ ունեցայ եւ մարդու որդու համար՝ ամէն մեղկութիւն: Տղամարդ եւ կին մատակարարներ բերեցի ինձ համար,* 9 *եւ ես աւելի մեծ եղայ, քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղէմում. եւ*

աւելացաւ նաեւ իմ իմաստութիւնը:
10 Ինչ որ աչքս ուզեց, ինձ չզրկեցի
դրանից, եւ ոչ մի ուրախութեան համար
սրտիս վրայ արգելք չդրի: Իմ սիրտն
ուրախ եղաւ, որովհետեւ վայելեց իմ
աշխատանքի պտուղները, եւ դա էլ իմ
բաժինը եղաւ իմ բոլոր վաստակներից:
11 Ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր
գործերին եւ դրանք անելու համար իմ
քաշած չարչարանքներին, եւ, ահա՛
ամէն ինչ ունայնութիւն է եւ հոգու
տանջանք, եւ ոչ մի օգուտ չկայ
արեգակի ներքոյ:
12 Ես դարձայ տեսնելու իմաստու-
թիւնը, նաեւ յիմարութիւնն ու անմտու-
թիւնը, թէ այն ո՞ր մարդն է, որ իր
գործն անելիս միշտ հետեւում է իմաստ-
ութեան: 13 Եւ տեսայ, որ իմաստու-
թիւնն աւելի օգտակար է անմտութիւ-
նից, ինչպէս լոյսը՝ խաւարից: 14 Ի-
մաստունի աչքերն իր գլխի մէջ են, իսկ
անմիտը գնում է խաւարի միջով. բայց
ես հասկացայ, որ նրանց բոլորին միեւ-
նոյն դիպուածն է սպասում:
15 Եւ սրտիս մէջ ասացի. «Եթէ նոյն
դիպուածն է պատահելու ինչպէս
անզգամին, այնպէս էլ ինձ, էլ ինչո՞ւ ես
աւելի իմաստուն դարձայ»: Եւ մէկ ան-
գամ ես ասացի սրտիս մէջ, թէ սա
նոյնպէս ունայնութիւն է, քանի որ
անմիտն է աւելորդ խօսում, 16 որով-
հետեւ թէ՛ յիմարի եւ թէ՛ իմաստունի
համար յաւիտենական յիշատակ չկայ:
Արդարեւ, գալիք օրերին մոռացուելու է
ամէն բան, եւ իմաստունը ես պիտի
մեռնի ինչպէս յիմարը:
17 Ես ատեցի իմ կեանքը, որովհետեւ
ինձ համար չար էին այն գործերը, որ
կատարուել են արեգակի ներքոյ, քանի
որ ամէն ինչ ունայնութիւն է եւ հոգու
տանջանք: 18 Ես ատեցի իմ ամբողջ
վաստակը, որ արել էի արեգակի տակ,
քանի որ ես այն թողնելու եմ մի մարդ-
ու, որ գալու է ինձնից յետոյ: 19 Եւ ո՞վ
գիտէ, իմաստո՞ւն է լինելու նա, թէ՞
յիմար, կամ՝ տիրելո՞ւ է արդեօք իմ
բոլոր վաստակին, որ ես վաստակեցի եւ
որի շնորհիւ էլ իմաստուն դարձայ
արեգակի ներքոյ. սակայն սա ես
ունայնութիւն է:
20 Ի սրտէ ես հրաժարուեցի իմ բոլոր
վաստակներից, որ վաստակեցի արեգա-
կի ներքոյ. 21 որովհետեւ մարդ կայ, որի
վաստակը իմաստութեամբ, գիտու-
թեամբ եւ առաքինութեամբ է լինում,
մարդ էլ կայ, որ ոչինչ չի արել, բայց
այդ վաստակը բաժին է ընկնում նրան:
Սակայն սա ես ունայնութիւն է եւ մեծ
չարիք: 22 Ուստի ի՞նչ է մնում մարդուս
իր բոլոր չարչարանքից եւ սրտի տան-
ջանքից, որ ջանք է թափել արեգակի
ներքոյ, 23 որովհետեւ նրա բոլոր օրերը
ցաւերով են լի եւ հաճոյքը՝ տրտմու-
թեամբ, եւ գիշերն էլ նրա սիրտը չի
ննջում: Սակայն սա ես ունայնութիւն
է:
24 Մարդուս համար չկայ ուրիշ լաւ
բան, բացի ուտելուց, խմելուց եւ իր
վաստակով իր հոգուն հաճոյք պատ-
ճառելուց: Բայց ես տեսայ, որ այդ ես
լինում է Աստծուց, 25 քանզի ո՞վ կարող
է ուտել եւ խմել առանց Նրա: 26 Աս-
տուած իմաստութիւնը, գիտութիւնը եւ
ուրախութիւնը տալիս է այն մարդուն,
որը հաճելի է իր առջեւ, իսկ մեղաւորին
տալիս է հաւաքելու եւ դիզելու հոգս,
որպէսզի նա ձեռք բերածը տայ այն
մարդուն, որը հաճելի է Աստծու առջեւ:
Բայց սա ես ունայնութիւն է եւ հոգու
տանջանք:

ԱՄԷՆ ԲԱՆ ԻՐ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒՆԻ

3 Ամէն բանի ժամանակը կայ, եւ աշ-
խարհում ամէն գործ ունի իր ժամա-
նակը. 2 ծնուելու ժամանակը եւ մեռնել-
ու ժամանակը, տնկելու ժամանակը եւ
տնկածը հանելու ժամանակը, 3 սպանել-
ու ժամանակը եւ բժշկելու ժամանակը,
քանդելու ժամանակը եւ շինելու ժամա-
նակը, 4 լալու ժամանակը եւ ծիծաղելու
ժամանակը, ողբալու ժամանակը եւ
պարելու ժամանակը, 5 քարեր կորելու
ժամանակը եւ քարերը հաւաքելու ժա-
մանակը, գրկելու ժամանակը եւ գրկից
հեռանալու ժամանակը, 6 փնտռելու
ժամանակը եւ կորցնելու ժամանակը,
պահելու ժամանակը եւ դուրս նետելու
ժամանակը, 7 պատռելու ժամանակը եւ
կարկատելու ժամանակը, լռելու ժամա-
նակը եւ խօսելու ժամանակը, 8 սիրելու
ժամանակը եւ ատելու ժամանակը,

պատերազմի ժամանակը եւ խաղա-
ղութեան ժամանակը: 9 Արդ, ի՞նչ օգուտ
կայ մարդուն իր աշխատանքից, որի
համար նա ջանք է թափում:
10 Ես տեսայ այն բոլոր զբաղմունք-
ները, որ Աստուած տուել է մարդու
որդիներին, որ զբաղուեն: 11 Նա ամէն
ինչ լաւ է արել իր ժամանակի համար,
մինչեւ իսկ յաւիտենութիւնը ճանաչելու
իղձ տուեց նրանց սրտերին, բայց եւ
այնպէս մարդս չի կարող հասկանալ
Աստծու արած գործը՝ սկզբից մինչեւ
վերջ: 12 Ես հասկացայ, որ մարդկանց
համար չկայ ուրիշ լաւ բան, քան
ուրախ լինել եւ բարիք գործել իրենց
կեանքում, 13 քանի որ ով որ ուտում,
խմում եւ իր աշխատանքի բարիքն է
վայելում, Աստծու պարգեւն է դա: 14 Ես
իմացայ, որ այն ամէնը, ինչ Աստուած է
արել, պիտի մնայ յաւիտեան, որ ոչինչ
չի կարելի աւելացնել դրանց վրայ եւ
ոչինչ չի կարելի պակասեցնել դրանցից:
Եւ Աստուած այդպէս է արել, որ իրենից
երկիւղ ունենան: 15 Ինչ որ եղել է, հիմա
էլ կայ, եւ ինչ որ պիտի լինէր, եղել է
արդէն, եւ Աստուած կը փնտռի
հալածուածին:

ԱՄԷՆ ԻՆՉ ՎԵՐՋ Է ԳՏՆՈՒՄ ՄԱՀՈՎ

16 Արեգակի ներքոյ, ես տեսայ դար-
ձեալ, որ, ուր դատ ու դատաստան կար,
ամբարիշտն այնտեղ էր, եւ ուր արդա-
րութիւն կար, այնտեղ էր բարեպաշտը:
17 Եւ սրտիս մէջ ասացի, թէ՝ «Աստուած
պիտի դատի արդարին եւ ամբարշտին,
քանի որ ամէն բանի ժամանակը կայ, եւ
ժամ ու ժամանակ կայ բոլոր գործերի
համար»: 18 Եւ սրտիս մէջ մարդու
որդիների խօսքերի համար ասացի, որ
Աստուած պիտի դատի նրանց, որպէսզի
ցոյց տայ, թէ իրենք էլ անասուններ են:
19 Արդարեւ, նոյն դիպուածն է պա-
հուած թէ՛ մարդու որդիների եւ թէ՛
անասունների համար, նոյն պատահարն
է լինելու նրանց բոլորի համար: Ինչպէս
որ մէկի մահն է, նոյնպէս եւ՝ միւսի
մահը, եւ բոլորի մէջ նոյն շունչը կայ. էլ
ի՞նչ առաւելութիւն ունի մարդն
անասունից. ո՛չ մի, քանի որ ամէն ինչ
ունայնութիւն է: 20 Ամէն բան մի տեղ է
գնում, ամէն ինչ հողից է եղել, եւ ամէն
ինչ հող է դառնում: 21 Եւ ո՞վ գիտէ, թէ
մարդու որդիների հոգին ելնում է վեր,
իսկ անասունների շունչը իջնում է ցած՝
հողի մէջ: 22 Տեսայ նաեւ, որ մարդուս
համար չկայ ուրիշ աւելի լաւ բան, քան
ուրախ լինել իր վաստակով, որովհետեւ
դա է նրա բաժինը, քանի որ ո՞վ պիտի
նրան նորից բերի, որ նա տեսնի, թէ ինչ
է լինելու իրենից յետոյ:

ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔՈՒՄ

4 Ես դարձայ ու տեսայ այն բոլոր
զրկանքները, որ լինում են արեգակի
ներքոյ. եւ ահա զրկուածներն արցունք-
ների մէջ են, եւ ոչ ոք չկար, որ
մխիթարէր նրանց, եւ ուժը նրանց
զրկողների ձեռքին էր: 2 Եւ ես երանի
տուի բոլոր նրանց, որ արդէն մահացել
են, քան կենդանի մարդկանց, որ
ապրում են մինչեւ այժմ: 3 Բայց այդ
երկուսից էլ աւելի լաւ է նա, որ բնաւ չի
եղել եւ չի տեսել այն բոլոր չար
գործերը, որ կատարւում են արեգակի
ներքոյ: 4 Ես տեսայ նաեւ, որ ամէն
վաստակի եւ յաջողութեան համար
մարդուս նախանձում է իր մերձաւորը.
սակայն սա ես ունայնութիւն է եւ
հոգու տանջանք: 5 Ցիմարը ձեռնածալ
նստում եւ ինքն իրեն է ուտում:
6 Լաւ է հանգիստ վաստակել մի
բուռ, քան չարչարանքով ու տանջան-
քով՝ երկու բուռ: 7 Դարձայ եւ ես մի
ունայնութիւն էլ տեսայ արեգակի ներ-
քոյ. 8 մարդ կայ, որ մենակ է եւ ոչ ոք
չունի՝ ո՛չ որդի եւ ո՛չ էլ եղբայր, բայց
նրա աշխատանքն էլ վերջ չունի, եւ
աչքն էլ չի կշտանում հարստութեամբ.
նա չի ասում, թէ՝ «Ո՞ւմ համար եմ
ջանք թափում եւ ինչո՞ւ եմ հոգիս
զրկում բարիքից». սա ես ունայնու-
թիւն է եւ դաժան զբաղմունք: 9 Երկու
հոգով աւելի լաւ է, քան մենակ, որով-
հետեւ աւելի վարձ կայ նրանց վաս-
տակի համար, 10 քանի որ եթէ մէկն
ընկնի, նրա ընկերը կը կանգնեցնի նրան,
բայց վա՛յ մենակին, որ ընկնի, երբ
ուրիշ մէկը չկայ, որ բարձրացնի նրան:
11 Եւ եթէ երկուսը միասին քնեն, կը
տաքացնեն միմեանց, բայց միայնակ

մարդն ինչպէ՞ս պիտի տաքանայ: 12 Եւ եթէ մէկի վրայ բռնանան, երկուսը դէմ կը կանգնեն. չէ՞ որ երեքտակ թելն էլ հեշտ չի կտրւում:

13 Լաւ է աղքատ եւ իմաստուն տղան, քան թէ ծեր եւ անմիտ թագաւորը, որ էլ չի կարող խորհուրդներ ընկալել, 14 որովհետեւ տղան կարող է կալանատնից դուրս գալ եւ թագաւորել, հակառակ որ իր թագաւորութեան մէջ ծնուել էր աղքատ: 15 Ես տեսայ, որ արեգակի ներքոյ բոլոր ապրողները գնում են այն տղայի՝ այն երկրորդի հետ, որ պիտի փոխարինի նրան: 16 Վերջ չկար ամբողջ ժողովրդին, բոլորին, որ եղել էին նրանցից առաջ, բայց յետոյ եկողներն էլ պիտի չուրախանան նոր թագաւորով. բայց դա եւս ունայնութիւն է եւ հոգու տանջանք:

17 Զգո՛յշ եղիր քայլիդ համար, երբ Աստծու տուն ես գնում, 18 եւ մօտեցի՛ր լսելու համար. որովհետեւ քո զոհն աւելի յարգի է, քան ընծաներն անզգամների, որոնք չգիտեն բարիք գործել:

ԱՆԽՈՀԵՄ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՉԱՆԵԼ

5 Թող քո բերանը չշտապի, եւ ոչ էլ սիրտդ հապճեպ խօսք ասի Աստծու առջեւ, որովհետեւ Աստուած երկնքում է, իսկ դու՝ երկրի վրայ. դրա համար էլ թող քո խօսքերը սակաւ լինեն: 2 Երազը հոգսերի շատութիւնից է առաջ գալիս, իսկ յիմարի ձայնը՝ շատախօսութիւնից: 3 Եւ ինչ ուխտ որ արել ես Աստծուն՝ մի՛ դանդաղիր այն կատարել, քանի որ անզգամները հաճելի չեն նրան[†]: 4 Որքան որ ուխտ անես՝ կատարի՛ր, քանի որ լաւ է ուխտ չանել, քան թէ ուխտ անել եւ չկատարել: 5 Մի՛ թոյլ տուր, որ բերանդ մարմնիդ դրդի մեղքեր գործելու, եւ Աստծու առջեւ մի՛ ասա, թէ անգիտութիւնից էր, որպէսզի խօսքիդ համար Աստուած չբարկանայ եւ չաւերի ձեռքիդ գործերը, 6 որովհետեւ, ինչպէս երազների առատութեան, այնպէս էլ խօսքերի շատութեան մէջ եւս ունայնութիւն կայ. եւ դու վախեցի՛ր Աստծուց:

[†]Իմաստի յստակութեան համար այստեղ հետեւել ենք եբրայերէն բնագրին:

7 Եթէ դու երկրի վրայ աղքատի զրկանք տեսնես եւ իրաւունքի ու արդարութեան յափշտակութիւն, մի՛ զարմացիր այդ բաների վրայ, որովհետեւ բարձր դիրքի մի պաշտօնեայ պաշտպանուած է մէկ այլ բարձր դիրքի պաշտօնեայի կողմից, իսկ դրանցից էլ աւելի բարձր մի երրորդ պաշտօնեայ կայ: 8 Բայց հողի բարիքը բոլորի համար է, եւ բոլորի վրայ թագաւորն է, որը օգտւում է մշակուած հողից: Եւ դու հաւատարի՛մ եղիր այն ամենին, ինչ ծանր աշխատանքով վերցնում են հողից:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ ԱՆՕԳՈՒՏ Է

9 Արծաթ սիրողը չի կշտանայ արծաթից, ոչ էլ հարստութիւն սիրողը՝ իր եկամուտներից. ուստի դա եւս ունայնութիւն է: 10 Արդար բարիքները բազմանալու հետ շատանում են նաեւ ուտողները. եւ ի՞նչ օգուտ ունի տէրն իր ունեցուածքից, եթէ ոչ այն, որ իր աչքով է տեսնում իր ունեցուածքն սկզբից: 11 Քաղցր է աշխատաւորի քունը, քիչ ուտի նա, թէ շատ: Բայց կուշտ լինելը չի թողնում, որ հարուստը հանգիստ քնի:

12 Մի բան էլ տեսայ արեգակի ներքոյ. դա այն հարստութիւնն է, որ մարդ պահում է իր սեւ օրուայ համար, 13 բայց մի չար դիպուածով կորչում է նրա հարստութիւնը. որդի է ծնուել նրան, բայց նրա ձեռքին ոչինչ, ոչ մի բան չկայ: 14 Ինչպէս որ իր մօր որովայնից նա մերկ է ելել, մերկ էլ ետ կը դառնայ. ինչպէս եկել է, այնպէս էլ կը գնայ, եւ երբ գնայ՝ ոչինչ չի վերցնելու իր վաստակից, որպէսզի տանի իր հետ: 15 Սա էլ մի ծանր ցաւ է, ինչպէս որ եկել է, այնպէս էլ կը գնայ. էլ ի՞նչ օգուտ ունի մարդն իր վաստակից, որ ջանք է թափում ... քամու համար: 16 Եւ յետոյ նրա բոլոր օրերը խաւար են ու սուգ եւ անցնում են շատ հոգսերի, հիւանդութիւնների եւ բարկութեան մէջ: 17 Ահաւասիկ եւ այն լաւը, որ ես տեսայ. դա ուտելն ու խմելը եւ բարիք տեսնելն է իր ամբողջ վաստակից, որի համար նա ջանք է թափել արեգակի ներքոյ՝

Աստծու կողմից նրան տրուած իր կեանքի բոլոր օրերին, որովհետեւ դա է նրա բաժինը: 18 Աստուած ամէն մարդու հարստութիւն եւ ունեցուածք ու դրանից ուտելու, իր բաժինը վերցնելու եւ իր աշխատանքից ուրախ լինելու իշխանութիւն է տուել: Դա եւս Աստծու պարգեւն է: 19 Նա իր կեանքի շատ օրերը չի յիշելու, որովհետեւ Աստուած նրա սրտի ուրախութեան համար հաճոյք է տուել նրան:

6 Մի չարիք էլ տեսայ արեգակի ներքոյ, որ շատ յաճախ է պատահում մարդկանց: 2 Մարդ կայ, որին Աստուած թէ՛ հարստութիւն եւ թէ՛ ունեցուածք ու փառք է տուել, եւ ինչ ցանկանայ նրա հոգին՝ ոչ մի բանի պակաս չի զգում, բայց Աստուած դրանցից ուտելու իշխանութիւն չի տուել նրան, այլ օտար մարդ է վայելում դրանք. եւ սա եւս ունայնութիւն է եւ ծանր ցաւ: 3 Եթէ մի մարդ հարիւր զաւակ էլ ծնի եւ բազում տարիներ էլ ապրի, եւ կամ է՛լ առաւել շատանան նրա տարիների օրերը, բայց եթէ նրա հոգին չի կշտացել բարիքներից, եւ մի գերեզման իսկ չի գտնուել նրա համար, ապա ես կ'ասեմ, որ վիժածն աւելի լաւ է նրանից, 4 որովհետեւ վիժածն ունայնութեամբ գալիս եւ գնում է խաւարով, եւ խաւարում էլ ծածկւում է նրա անունը, 5 որովհետեւ նա ոչ արեւ տեսաւ եւ ոչ էլ իմացաւ, թէ ինչ է հանգիստը իր կամ մէկ ուրիշի համար: 6 Իսկ եթէ մէկ ուրիշն էլ ապրել է հազար տարի, բայց ոչ մի բարիք չի վայելել, մի՞թէ բոլորի նման նա էլ նոյն տեղը չի գնալու: 7 Մարդու բոլոր աշխատանքներն իր բերանի համար են, բայց նրա հոգին չի յագենում: 8 Ի՞նչ առաւելութիւն ունի իմաստունը յիմարից, քանի որ տնանկը գիտէ ընթանալ իր կեանքի առջեւից: 9 Լաւ է աչքով տեսնել, քան հոգով ցանկալ. սակայն սա եւս ունայնութիւն է եւ հոգու տանջանք:

10 Ինչ որ գոյութիւն ունի, կանխաւ սահմանուած է եղել. եւ սկզբից արդէն յայտնի է, թէ ինչ է մարդը, եւ որ երբեք նա չի կարող չափուել իրենից հզօրի հետ, 11 որովհետեւ շատ բաներ կան, որ բազմապատկում են ունայնութիւնը:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

7 Ի՞նչ է մարդու առաւելութիւնը, եւ ո՞վ գիտէ, թէ ինչն է լաւ նրա ունայն կեանքի սակաւաթիւ օրերին, որ անցնում են ստուերի նման, որովհետեւ ո՞վ պիտի պատմի մարդուն, թէ ինչ է լինելու նրանից յետոյ արեգակի ներքոյ: 2 Բարի անունը լաւ է հոտաւէտ իւղից, եւ մահուան օրը՝ ծննդեան օրից:

3 Խնջոյքի տուն գնալուց լաւ է սգոյ տուն գնալը, որովհետեւ դա է ամէն մարդու վախճանը, եւ դա կենդանի մարդու սրտին բարութիւն է տալիս: 4 Տխրութիւնը լաւ է ծիծաղից, որովհետեւ դէմքի վշտալի տեսքից զուարթանում է սիրտը: 5 Իմաստունի սիրտը սգոյ տանն է, իսկ յիմարի սիրտը՝ ուրախութեան տանը: 6 Աւելի լաւ է մարդ լսի իմաստունի յանդիմանութիւնը, քան թէ յիմարի երգը: 7 Արդարեւ, յիմարի ծիծաղը նման է կաթսայի տակ կրակի մէջ ճարճատող փշերի ձայնին: Բայց սա եւս ունայնութիւն է: 8 Զրպարտութիւնը խռովում է իմաստունին եւ կործանում նրա ազնիւ սիրտը: 9 Գործի վախճանը լաւ է նրա սկզբից, համբերատար հոգին՝ գոռոզամիտ հոգուց: 10 Մի՛ շտապիր հոգուդ մէջ բարկանալ, որովհետեւ բարկութիւնը հանգչում է յիմարների ծոցում:

11 Մի՛ ասա, թէ ի՛նչ կատարուեց, թէ ինչո՛ւ առաջուայ օրերն այս օրերից լաւ էին, որովհետեւ իմաստութեամբ չէ, որ հարցնում ես այդ մասին: 12 Իմաստութիւնը ժառանգութեան պէս լաւ բան է եւ առաւելութիւն արեգակը տեսնողների համար: 13 Արեգակի հովանու ներքոյ իմաստութիւնը նման է արծաթի հովանու ներքոյ լինելուն, բայց գիտութեան օգուտն այն է, որ նա ապրեցնում է իմաստութիւն ստացողին: 14 Նայի՛ր Աստծու գործերին. ո՞վ կարող է ուղղել այն, ինչ խախտել է Աստուած: 15 Քո լաւ օրը բարիքների մէջ ապրիր, բայց յիշի՛ր, որ վատ օր էլ կայ: Եւ տե՛ս, որ Աստուած դրանք միահիւսեց իրար, որպէսզի մարդ այնուհետեւ խօսելու

բան չունենայ: 16 Ես իմ ունայնութեան
օրերին տեսայ ամէն ինչ. արդար կայ,
որ իր արդարութեան մէջ կորչում է,
ամբարիշտ էլ կայ, որ ապրում է իր
չարութեամբ: 17 Զգուշացիր արդար մի՛
լինիր եւ ոչ էլ շատ ճարտար, որ չլինի
թէ սխալուես: 18 Շատ ամբարիշտ մի՛
լինիր եւ մի՛ լինիր խստաբարոյ, որ
չլինի, թէ տարաժամ մեռնես: 19 Լաւ է,
որ մէկը բռնես եւ միւսից էլ ձեռքդ
չքաշես, որովհետեւ ով երկնչում է
Աստծուց, նա կ'ազատուի ամէն բանից:
20 Իմաստութիւնն աւելի շատ է օգնում
իմաստունին, քան քաղաքում գտնուող
տասը իշխան: 21 Երկրի վրայ չկայ
արդար մի մարդ, որ բարի գործ անի եւ
չմեղանչի: 22 Բայց դու ամբարիշտների
ասած ամէն խօսք սրտիդ շատ մօտ մի՛
ընդունիր, որ ծառայիդ անէծքը չլսես,
երբ նա քեզ անիծի: 23 Մառան շատ
անգամ քեզ կարող է վատութիւն անել
եւ շատ անգամ սրտիդ տանջանք
պատճառել, սակայն դու էլ ուրիշներին
չանիծես:

24 Այս ամէնը փորձեցի իմաստու-
թեամբ եւ ասացի. «Ահա իմաստուն
դարձայ». բայց իմաստութիւնը հեռու
էր ինձնից: 25 Եւ ո՞վ կարող է իմանալ
նրա խորութեան չափը: 26 Ես սրտով
շրջեցի ամէն տեղ, որ իմանամ, քննեմ եւ
որոնեմ իմաստութիւնն ու հանճարը,
հասկանամ ամբարիշտների ուրախու-
թիւնը, նրանց խռովքներն ու յուզ-
մունքները: 27 Եւ ես գտայ ու պիտի
ասեմ, որ մահից աւելի դառն է այն
կինը, որի սրտում որոգայթ ու թակարդ
կայ, իսկ ձեռքերի մէջ՝ կապանքներ: Ով
հաճելի է Աստծու առջեւ, նա պիտի
ազատուի այդ կնոջից, իսկ ով մեղաւոր
է, պիտի նրանից բռնուած լինի: 28 Ահա
այս բոլորը գտայ, – ասում է Ժողովողը,
– մէկ առ մէկ հաշուելով՝ գտնելու
համար խորհուրդները. հոգիս փնտռեց,
բայց չգտայ. հազարի մէջ մի տղամարդ
գտայ, բայց կին ամենեւին չգտայ:

29 Բայց ահա գտայ այն, որ
Աստուած մարդուն ուղղամիտ է ստեղ-
ծել, բայց մարդիկ չար խորհուրդներ
փնտռեցին: Ո՞վ է ճանաչում իմաս-
տուններին, եւ ո՞վ կարող է այս
հարցերի մեկնութիւնը տալ:

8 Մարդու իմաստութիւնը լոյս է
տալիս նրա երեսին, բայց անամօթի
երեսը ատելի է լինում:

ԻՄԱՍՏՈՒՆ ԲԱՆ Է ՀՆԱԶԱՆԴՈՒԵԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ

2 Թագաւորի բերանից ելած խօսքից
զգո՛յշ եղիր եւ մի՛ շտապիր երդման
խօսք ասել Աստծուն: 3 Մի՛ շտապիր
հեռանալ նրա աչքից եւ ոչ էլ մնա չար
գործի մէջ, որովհետեւ նա ինչ որ
կամենայ, կարող է անել: 4 Որպէս
թագաւոր նա խօսում է իշխանութեամբ,
եւ ո՞վ կարող է նրան ասել, թէ՝ ի՞նչ
արեցիր: 5 Այն մարդը, որ պատուիրան
է պահում, չարիքի չի հանդիպի. իմաս-
տուն սիրտը գիտէ պատուիրանը կա-
տարելու ժամանակն ու եղանակը: 6 Ա-
մէն բանի ժամանակը կայ եւ կայ ճիշտ
կատարելու եղանակը. բայց շատ բան էլ
կայ, որ մարդ չգիտէ, 7 որովհետեւ
չգիտէ, թէ ինչ է լինելու, եւ ինչ էլ որ
լինի՝ ո՞վ պիտի պատմի նրան: 8 Մարդս
չի կարող իշխել իր հոգուն եւ ոչ էլ իր
հոգուն արգելք հանդիսանալ. եւ ոչ էլ
նա իշխանութիւն ունի իր մահուան
օրուայ հանդէպ. ոչ կարող է խոյս տալ
հոգեվարքի պայքարից, եւ ոչ էլ ամ-
բարշտութիւնը կարող է փրկել ամ-
բարշտին:

ԱՄԲԱՐԻՇՏԸ ԵՒ ԱՐԴԱՐԸ

9 Ես տեսայ այս բոլորը եւ սրտով
քննեցի այն բոլոր գործերը, որ կա-
տարուել են արեգակի ներքոյ, եւ այն,
որ մարդն իշխում է մարդու վրայ ու
չարչարում է նրան: 10 Տեսայ, որ
ամբարիշտներին թաղեցին գերեզման-
ների մէջ. գնացին նրանք սուրբ տեղից,
եւ նրանց համար սուգ արեցին քաղա-
քում: Սակայն սա եւս ունայնութիւն է:
11 Չարի դատաստանն անմիջապէս չի
կատարւում, այդ պատճառով էլ մարդ-
կանց որդիների սրտերը համարձակւում
են չարիք գործել: 12 Մեղաւորը չարիք
է գործում՝ լինի այժմ, աւելի առաջ թէ
յետոյ. իսկ ես գիտեմ, որ բարիքը
հասնում է միայն նրանց, ովքեր երկիւղ
են կրում Աստծուց եւ երկնչում են նրա

առջեւ: 13 Բայց ամբարշտի համար
բարութիւն պիտի չլինի. նա իր օրերը
պիտի չերկարեցնի, այլ դրանք պիտի
լինեն ստուերի նման, քանի որ նա
երկիւղ է կրում Աստծու ներկայու-
թիւնից:

14 Մի ունայնութիւն էլ կայ երկրի
վրայ. արդարներ կան, որոնց հետ պա-
տահում են գործեր, որ արժանի են
ամբարիշտներին, եւ ամբարիշտներ կան,
որոնց հետ պատահում է այն, ինչ
արժանի է արդարների գործերին: Եւ ես
ասացի. «Սակայն դա եւս ունայնութիւն
է»: 15 Եւ ես գովեցի ուրախութիւնը,
որովհետեւ արեգակի ներքոյ մարդու
համար ուտելուց, խմելուց եւ ուրախ
լինելուց բացի ուրիշ աւելի լաւ բան
չկայ, քանի որ նրա ողջ կեանքում, որ
Աստուած տուել է նրան արեգակի
ներքոյ, դա է մնալու միայն նրա վաս-
տակից: 16 Մի անգամ որ ես սիրտս
տուի ճանաչելու իմաստութիւնը եւ
տեսնելու այն զբաղմունքները, որ կա-
տարւում են երկրի վրայ (որովհետեւ
մարդ կայ, որի աչքին գիշեր թէ ցերեկ
քուն չի գալիս), 17 Աստծու բոլոր գոր-
ծերից ես հասկացայ, որ մարդ չի կարող
գտնել այն գործը, որ կատարուել է
արեգակի ներքոյ. որքան էլ մարդ աշ-
խատի որոնել այն, չի գտնելու, եւ
մինչեւ իսկ իմաստունն էլ ինչքան էլ
ասի, թէ գիտէ, դարձեալ չի կարող
գտնել:

9 Արդ, այս բոլորը ես դրի սրտիս մէջ,
սիրտս էլ քննեց այս բոլորը. թէ՛
արդարներն ու իմաստունները եւ թէ՛
նրանց գործերը Աստծու ձեռքին են,
քանզի մարդ սէրն ու ատելութիւնն էլ
չգիտէ: 2 Ամէն ինչ մարդու առջեւ է, եւ
ունայնութիւն կայ ամէն ինչի մէջ: Նոյն
դիպուածն է վերապահուած արդարի եւ
ամբարշտի, բարու եւ չարի, մաքուրի եւ
անմաքուրի, զոհ մատուցողի եւ չմա-
տուցողի, ինչպէս բարեգործի, այնպէս
էլ մեղսագործի, ինչպէս երդում տուողի,
այնպէս էլ երդումից վախեցողի համար:
3 Բայց արեգակի տակ եղած բոլոր
բաների մէջ ամենից վատթարը սա է, որ
նոյն դիպուածն է վիճակուած բոլորին:

Արդարեւ, մարդկանց որդիների
սրտերը լի են չարութեամբ եւ իրենց
կենդանութեան ժամանակ՝ հոգս կայ
նրանց սրտերում, բայց յետոյ իրենք էլ
պիտի մեռնեն: 4 Նրանցից ո՞վ կարող է
հաւասարուել ողջերին. մարդ յոյս է
տածում, թէ կենդանի շունը լաւ է, քան
սատկած առիւծը: 5 Նրանք, որ կենդանի
են, գիտեն, թէ իրենք մեռնելու են, իսկ
մեռածները ոչինչ չգիտեն, եւ այլեւս
վարձ չկայ նրանց համար, որովհետեւ
մոռացուել է նրանց յիշատակը, 6 եւ
կորել է, ահա, թէ՛ նրանց սէրն ու
թշնամանքը եւ թէ՛ նախանձը, եւ նրանք
յաւիտեան բաժին էլ չունեն այն բոլորի
մէջ, ինչ ստեղծուած է արեգակի ներքոյ:
7 Արի ուրախութեամբ կե՛ր քո հացը եւ
զուարթ սրտով խմի՛ր քո գինին, քանզի
Աստուած արդէն իսկ հաւանել է քո
արած գործերը: 8 Թող հագուստներդ
միշտ սպիտակ լինեն, եւ օծման իւղը
չպակասի քո գլխից: 9 Կեանքդ վայելի՛ր
քո կնոջ հետ, որին սիրեցիր քո ունայն
կեանքի այն բոլոր օրերին, որոնք
արեգակի ներքոյ տրուած են քեզ մինչեւ
քո օրերի վախճանը, որովհետեւ դա է
քո բաժինը քո կեանքի եւ քո վաստակի
մէջ, որ ձեռք ես բերել արեգակի ներքոյ:
10 Այն ամէնը, ինչ քո ձեռքից կը գայ
անելու, արա՛ քո կարողութեան չափով,
որովհետեւ գերեզմանի մէջ, ուր պիտի
գնաս, ո՛չ գործ կայ, ո՛չ խորհուրդ, ո՛չ
գիտութիւն եւ ո՛չ էլ իմաստութիւն:

11 Դարձեալ տեսայ արեգակի ներքոյ,
որ ասպարէզը վազողներինը չէ, ոչ էլ
պատերազմը՝ քաջերինը, ոչ էլ հացը՝
իմաստուններինը, ոչ էլ հարստութիւնը՝
հանճարներինը եւ ոչ էլ շնորհը՝ գի-
տուններինը, որովհետեւ կը գայ ժամա-
նակ, երբ բոլորին էլ կը պատահի նոյն
դիպուածը: 12 Բայց մարդն իր ժամա-
նակն անգամ չգիտէ եւ, ինչպէս ձկները,
որ որսւում են նենգ ցանցերից, եւ
թռչունները, որ բռնւում են ծուղակների
մէջ, այնպէս էլ մարդկանց որդիներն են
ընկնում չար ժամանակի որոգայթների
մէջ, որ յանկարծակի բռնում է նրանց:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

13 Այս մի իմաստութիւնն էլ տեսայ արեգակի ներքոյ, որ մեծ է թւում ինձ. 14 փոքրիկ մի քաղաք կար եւ նրա մէջ՝ սակաւաթիւ մարդիկ. մեծազօր մի թագաւոր յարձակուեց դրա վրայ, պաշարեց այն եւ մեծամեծ պատնէշներ շինեց նրա դէմ: 15 Իսկ այնտեղ աղքատ եւ իմաստուն մի մարդ կար, եւ նա իր իմաստութեամբ փրկեց քաղաքը, բայց յետոյ ոչ ոք չյիշեց այդ տնանկ մարդուն: 16 Եւ ես ասացի. «Իմաստութիւնը լաւ է ուժից, մինչեւ իսկ եթէ աղքատի իմաստութիւնը արհամարհուած լինի, եւ չուզենան լսել նրա խօսքերը»: 17 Իմաստունների մեղմ խօսքերն աւելի լաւ են լսւում, քան անզգամ իշխանների աղաղակը: 18 Իմաստութիւնը լաւ է պատերազմի գործիքներից, բայց մէ՛կ մեղաւորը շատ զօրութիւններ կարող է կորստեան մատնել:

10 Սատկած ճանճերը ապականում են անուշ իւղերը: Սակաւ-ինչ իմաստութիւնն աւելի յարգի է, քան մեծ ու անմիտ փառքը: 2 Իմաստունի սիրտը իր աջ կողմն է, յիմարի սիրտը՝ իր ձախ կողմը: 3 Երբ յիմարը ճանապարհ գնայ, պիտի երեւայ, որ խելքը պակաս է, եւ ինչի մասին էլ նա մտածի՝ ամբողջն անմտութիւն է: 4 Եթէ իշխանի զայրոյթը բռնկուի քո դէմ, դու մի՛ լքիր քո տեղը. քաղցր աղաչանքը կարող է կանխել մեծ մեղքերը:

5 Մի չարիք էլ տեսայ արեգակի ներքոյ, որ ակամայ լինում է իշխանի պատճառով: 6 Յիմարին բարձր դիրք է տրւում, իսկ հարուստներին ցածր տեղ են նստեցնում: 7 Ես ծառաներ եմ տեսել, որ ձի հեծած են շրջել, եւ իշխաններ, որոնք երկրի վրայ քայլել են ծառաների նման:

8 Հոր փորողն ինքը կ'ընկնի հորի մէջ, ցանկապատ քանդողին կը խայթի օձը: 9 Քար հանողին քարը վնաս կը տայ, փայտ ճեղքողին՝ փայտից վտանգ կը գայ: 10 Եթէ կացինը բթանայ, եւ մարդը չսրի նրա բերանը, ապա պիտի աւելի շատ ուժեր վատնի, մինչդեռ յաջողութեան մեծ օգուտը իմաստութիւնն է:

11 Եթէ հմայելիս օձը պիտի խայթի, դա առաւելութիւն չէ հմայողի համար: 12 Իմաստունի բերանում խօսքերը շնորհ են, իսկ յիմարի շրթները կործանում են իրեն: 13 Նրա խօսքերի սկիզբը յիմարութիւն է, եւ նրա խօսքի վախճանը՝ կատարեալ խենթութիւն :

14 Յիմարը միայն խօսքերն է շատացնում: Մարդը չգիտէ, թէ ինչ է եղել եւ ոչ էլ իմանալու է, թէ ինչ է լինելու, քանի որ նրանից յետոյ ո՞վ կարող է պատմել նրան: 15 Յիմարի աշխատանքը տանջում է իրեն, ինչպէս քաղաքի ճամփան՝ չիմացողին: 16 Վա՜յ քեզ, քաղա՛ք, որ թագաւորդ մանուկ է, եւ իշխաններդ կերուխում են անում մինչեւ առաւօտ: 17 Երանի՜ քեզ, երկի՛ր, որ թագաւորդ ազատորդի է, եւ իշխաններդ էլ ուտում են ժամանակին՝ ուժի համար եւ չեն ամաչելու:

18 Ծուլութեան պատճառով չէնքի գերանները կ'ընկնեն ցած, եւ ձեռքերի պարապութիւնից տունը կը կաթի: 19 Հացը տալիս են խնդութեան համար, գինին եւ իւղն ուրախացնում են ապրողներին, բայց արծաթն է լուծում ամէն բան: 20 Սակայն դու քո մտքում անգամ մի՛ նզովիր թագաւորին եւ քո ննջարանում էլ մի՛ անիծիր մեծաւորին, որովհետեւ երկնքի թռչունները ձայնդ կը տանեն, եւ թեւաւորները կը յայտնեն քո խօսքը:

Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ԻՄԱՍՏՈՒՆԸ

11 Հացդ ջրի՛ն տուր՝ թող տանի, շատ օրեր անց պիտի նորից գտնես այն: 2 Բաժի՛ն տուր եօթին էլ, ութին էլ, որովհետեւ ի՞նչ իմանաս, թէ ի՛նչ չարիք պիտի լինի երկրի վրայ: 3 Երբ ամպերը լցւում են անձրեւով, այն թափում են երկրի վրայ, բայց երբ ծառն ընկնում է դէպի հարաւ կամ դէպի հիւսիս, ուր էլ ընկնի՝ այնտեղ էլ պիտի մնայ: 4 Քամուն նայողը սերմ չի ցանի, ամպին նայողը հունձ չի անի: 5 Ի՞նչ իմանաս՝ ո՛րն է քամու ճանապարհը: Ինչպէս որ չգիտես, թէ ինչպէս են յղի կնոջ արգանդում ոսկորներ գոյանում, այնպէս

էլ չես կարող իմանալ Աստծու բոլոր գործերը: 6 Առաւօտեան քո սերմը կը ցանես, բայց երեկոյեան էլ ձեռքդ պարապ չթողնես, որովհետեւ չգիտես, թէ ո՛րը յաջող կը լինի՝ սա՞, թէ՞ նա, կամ գուցէ երկուսն էլ լաւ լինեն միասին: 7 Քաղցր է լոյսը, եւ աչքի համար հաճելի է արեգակը տեսնել, 8 որովհետեւ եթէ մարդ բազում տարիներ էլ ապրի եւ այդ բոլոր տարիներին էլ ուրախ լինի, պիտի յիշի նաեւ խաւարի այն օրերը, որոնք խիստ շատ են լինելու, քանզի այն ամէնը, որ յետոյ է գալու, ունայնութիւն է:

ԽՐԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

9 Ուրախացի՛ր, երիտասա՛րդ, քո երիտասարդութեամբ, թող սիրտդ քեզ զուարճացնի քո երիտասարդ օրերին:

Գնա՛ քո սրտի անբիծ ճանապարհով եւ քո աչքերի տենչանքով, բայց եւ իմացի՛ր, որ այս բոլորի համար Աստուած պիտի քեզ դատաստանի ենթարկի: 10 Եւ քո սրտից հեռո՛ւ վանիր տրտմութիւնը եւ չարութիւնը հանի՛ր քո մարմնից, որովհետեւ թէ՛ երիտասարդութիւնը եւ թէ՛ յիմարութիւնը ունայնութիւն են:

12 Յիշի՛ր քո Արարչին քո երիտասարդութեան օրերին, քանի դեռ չեն եկել դառնութեան օրերը, եւ չեն հասել այն տարիները, որոնց մասին պիտի ասես. «Կեանքից այլեւս հաճոյք չեմ զգում», 2 քանի դեռ քեզ համար չեն խաւարել արեգակն ու լոյսը եւ լուսինն ու աստղերը, քանի դեռ ամպերը չեն վերադարձել անձրեւից յետոյ, 3 որովհետեւ քեզ համար էլ է գալու այն օրը, երբ քո տան պահապանները պիտի երերան, պիտի կքեն զօրաւոր այրերը, պիտի պակասեն եւ դատարկ մնան աղօրիքները, պիտի խաւարեն անցքերից նայողները, 4 ու երբ աղօրիքի ձայնը տկարանայ, պիտի փակուեն փողոցների դռները, պիտի զարթնես աքլորականչից առաջ, եւ պիտի նկուն լինեն երգող աղջիկները, 5 պիտի նայեն բարձունքներին եւ սարսափեն ճանապարհից: Պիտի ծաղկի նշենին, ու մորեխը պիտի բազմանայ, կապարը պիտի տարածուի, որովհետեւ մարդը գնաց իր յաւիտենական տունը. հրապարակներում պիտի բոլորուեն նրա շուրջը լացուկոծ անողները: 6 Եւ մինչ արծաթի լարը կը կտրուի, եւ կը քանդուի ոսկի մանեակը, մինչ սափորը կը փշրուի աղբիւրի ճանապարհին, եւ կը կոտրուի ջրհորի անիւը, 7 նրա աճիւնը, ինչպէս որ հող էր, հող պիտի դառնայ, եւ հոգին, որ Աստուած էր տուել, պիտի վերստին նրա մօտ գնայ:

8 Ունայնութիւն ունայնութեանց, - ասաց Ժողովողը, - ամէն ինչ ունայն է:

ՎԵՐՋԱԲԱՆ

Եւ այսպիսով Ժողովողը ոչ միայն դարձաւ աւելի իմաստուն, 9 այլեւ նա գիտութիւն սովորեցրեց ժողովրդին, քանի որ ականջի համար հաճելի է խրատի զեղեցկութիւնը: 10 Ժողովողը շատ որոնեց, որ ցանկալի խօսքեր գտնի, գրի ճշմարիտ խօսքերի ուսանելի մի գիրք: 11 Իմաստունների խօսքերը նման են եզների խթանի կամ մեծաւորի տուած մուրհակի վրայ խփած կնիքի: 12 Մի խօսք եւս, որդեա՛կ իմ. զգուշացի՛ր շատ գրքեր ունենալուց, որովհետեւ նրանք վերջ չունեն, եւ շատ կարդալը մարմնի համար յոգնութիւն է: 13 Եւ ահա լսի՛ր իմ բոլոր խօսքերի վերջաբանը. վախեցի՛ր Աստծուց եւ պահի՛ր նրա պատուիրանները. ահա այս է մարդն ամբողջովին, 14 որովհետեւ Աստուած պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թէ բարի:

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Ներածութիւն

Աստուածաշնչի մէջտեղում զետեղուած է սիրային երգերի մի ժողովածու, որի մէջ բանաստեղծական թարմ շնչով եւ առանց կեղծ ամօթխածութեան արտայայտուած են երկու սիրահարների սիրոյ յոյզերն ու ապրումները: Այս իրողութիւնը մշտապէս զարմացրել է եւ դեռ այսօր էլ վիրաւորում է մեծ թուով հաւատացեալ ընթերցողների զգացմունքները: Դրա համար էլ, հնադարից սկսած, Երգ երգոցը մեկնաբանուել է որպէս խորհրդանշական, այլաբանական մի բանաստեղծութիւն, որի մէջ նկարագրուած են, օրինակ, Աստծու յարաբերութիւնները իր ժողովրդի հետ: Սակայն չպէտք է մոռանալ, որ տղամարդու եւ կնոջ սէրը միմեանց նկատմամբ Աստծու մէկ պարգեւն է: Հետեւաբար այն իր տեղն ունի Աստուածաշնչի մէջ, եւ Երգ երգոցն ուրեմն կարող է պարզապէս հասկացուել որպէս Արարչագործութեան պատմութեան հրաշալի արձագանքը:

Երգ երգոցը կարելի է բաժանել եօթը բանաստեղծութիւնների, որոնք սիրային երկխօսութիւններ են, եւ որոնց մէջ տարփանքը նրբօրէն քօղարկուած է դաշտային խորհրդանշանների տակ: Իրար որոնող, իրար կորցնող, իրար գտնող տղամարդու եւ կնոջ այս երկխօսութիւնները երբեմն ընդմիջւում են ոչ բարեացակամ օտարոտի ձայներով. դրանք հովիւների (երիտասարդ տղամարդու ընկերներ), դեռատի աղջկայ մօր, եղբայրների կամ ընկերուհիների ձայներն են, որոնք յաւակնում են, թէ կը կարողանան, միջամտելով, խանգարել երկու սիրահարների սէրը: Բայց այդ սէրը նրանց չի պատկանում, այդ սէրը Աստծու պարգեւն է՝ տրուած նրանց, ովքեր սիրում են միմեանց:

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԻՍՐԱՅԷԼԻ ՍՈՂՈՄՈՆ ԱՐՔԱՅԻ ԱՍԱԾ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Հարսն ասում է.

1 *Թող ինձ համբուրի իր բերանի համբոյրներով:*
2 *Քո ստինքներն աւելի լաւ են գինուց,*
եւ քո օծման իւղերի հոտը՝ բոլոր խնկերից:
Քո անունը թափուած իւղ է անուշ.
սրա համար էլ օրիորդները սիրեցին քեզ,
3 *եւ դէպի իրենց ձգեցին քեզ:*
Մենք կը գանք քո օծման իւղերի հոտի յետեւից»:
Հարսն օրիորդներին պատմում է, թէ Փեսան ինչ է շնորհել իրեն.
«Արքան ինձ իր սենեակը տարաւ»:
Հարսը պատմում է օրիորդներին, եւ նրանք ասում են.
«Մենք պիտի ցնծանք եւ ուրախ լինենք քեզնով,
եւ պիտի սիրենք քո ստինքները գինուց աւելի»:
Օրիորդները Հարսին յայտնում են Փեսայի անունը.
«Արժանին սիրեց քեզ»:
Հարսն ասում է.
4 *«Ես սեւ եմ եւ գեղեցիկ,*
ո՜վ Երուսաղէմի դուստրեր,
Կեդարի վրանների պէս
եւ Սողոմոնի խորանի նման:
5 *Մի՛ նայէք ինձ, որ թխացել եմ ու սեւացել,*
քանզի խէթ նայեց արեգակն ինձ:
Իմ մօր որդիները կռուեցին ինձ հետ,
ինձ այգեստանի պահապան դրին,
բայց ես իմ այգին չպահպանեցի»:
Հարսն ասում է Փեսային.
6 *«Պատմի՛ր ինձ, իմ հոգո՛ւ սիրած,*
ու՞ր ես քո հօտը հովուում,
ո՞ւր ես հանգստի տանում միջօրէին,
որ չմոլորուեմ քո ընկերների երամակների մէջ»:

ՄԱՐԴԸ

Փեսան ասում է հարսին.
7 *«Եթէ չգիտես, ո՜վ գեղեցիկդ կանանց մէջ,*
թէ որտեղ կը գտնես ինձ,
գնա՛ հօտերի ոտնահետքերով
եւ քո ուլերն արածեցրո՛ւ հովիւների վրանների մօտ:
8 *Ո՜վ իմ սիրելի, ես քեզ նմանեցրի փարաւոնի կառքին լծուած իմ երիվարներին»:*
Օրիորդներն ասում են Հարսին.
9 *«Գեղեցիկ են քո ծնօտները տատրակի ծնօտների նման,*
եւ գեղեցիկ է քո պարանոցը,
ասես մանեակներով զարդարուած լինի:
10 *Մենք քեզ կը զուգենք ոսկէ զարդի պէս,*
որ ընդելուզուած է արծաթէ կիտուածքներով,
11 *մինչեւ որ արքան քեզ իր գիրկն առնի»:*
Հարսն ասում է իր եւ Փեսայի մասին.
12 *«Իմ նարդոսը իր հոտը բուրեց.*
ստաշխի փունջ է իմ սիրեցեալն ինձ համար,
որ պիտի հանգստանայ իմ ստինքների միջեւ:
13 *Նոճու ողկոյզ է իմ սիրեցեալն ինձ համար՝*
Ենգադդի այգիների մէջ»:
Փեսան ասում է Հարսին.
14 *«Ահաւասիկ, ի՜նչ գեղեցիկ ես, ո՜վ իմ սիրելի,*
ի՜նչ գեղեցիկ ես.
քո աչքերը նման են աղաւնիների»:
Հարսն ասում է Փեսային.
15 *«Ի՜նչ բարեհաս ես, ահա, ո՜վ իմ սիրեցեալ,*
եւ որքա՜ն գեղեցիկ ես գահաւորակի վրայ՝ հովանու ներքոյ:
16 *Մեր տան գերանները մայրիներ են,*
եւ նոճիներ են մեր առաստաղները»:
2 *Փեսան ասում է իր եւ Հարսի մասին.*
«Ես դաշտերի ծաղիկ եմ,
հովիտների շուշան:
2 *Ինչպէս շուշանն է փշերի մէջ,*
այնպէս էլ իմ սիրելին է դուստրերի մէջ»:
Հարսն ասում է Փեսային.

3 «Ինչպէս խնձորենին է անտառի
ծառերի մէջ,
այնպես էլ իմ սիրեցեալն է տղաների
մէջ:
Ցանկացայ նստել նրա հովանու տակ
եւ նստեցի.
եւ քաղցր է նրա պտուղն իմ կոկոր-
դում»:
Հարսն ասում է օրիորդներին.
4 «Դուք ինձ խնջոյքի սենեա՛կը տա-
րէք,
եւ թողէ՛ք մնամ ես իմ սիրոյ հետ:
5 Զօրացրէ՛ք ինձ իւղերով եւ խնձո՛ր
դիզեցէք վրաս,
քանզի այրւում եմ խանդակաթ սիրով:
6 Թող նրա ձախը լինի գլխիս տակ,
եւ աջը նրա թող գրկի ինձ»:
Հարսն ասում է օրիորդներին.
7 «Երդուեցէ՛ք, ո՛վ Երուսաղէմի
դուստրեր,
հողի եւ հանդի զօրութեան վրայ,
որ երբ վեր կենաք,
դուք իմ սիրածին չէք արթնացնի,
մինչեւ որ ինքը չկամենայ»:
Լսում է Փեսայի ձայնը եւ ասում.

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

8 «Իմ սիրեցեալի ձայնն է.
ահա գալիս է նա,
վազքով անցնում է լեռների վրայով
եւ ցատկոտում բլուրների վրայ:
9 Իմ սիրեցեալը նման է այծեամի
կամ եղնիկի հորթերի,
որ լինում են Բեթէլի լեռներում»:
Հարսն օրիորդներին պատմում
է, թէ ինչպիսին է Փեսան եւ ասում.
«Ահա նա կանգնած է մեր պատի
յետեւում,
եւ ձգուելով դէպի պատուհանները՝
նայում է ճաղերից:
10 Ինձ պատասխան է տալիս իմ
սիրեցեալը եւ ասում՝
«Վե՛ր կաց, իմ սիրելի, իմ գեղեցիկ,
իմ աղաւնի:
11 Ահա ձմեռն անցաւ,
անձրեւները անցան-գնացին,
ծաղիկները երեւացին մեր երկրում,
12 էտելու ժամանակը հասաւ,
տատրակի ձայնը լսուեց մեր երկ-
րում:
13 Թզենին իր բողբոջն արձակեց,
ծաղկած որթերը տարածեցին իրենց
հոտը:
14 Վե՛ր կաց, իմ սիրելի, իմ գեղեցիկ,
իմ աղաւնի:
Ո՛վ իմ աղաւնեակ,
դու, որ պատսպարուել ես վէմի հո-
վանու տակ,
ցո՛յց տուր քո երեսն ինձ
եւ լսելի՛ դարձրու ինձ քո ձայնը,
քանզի քաղցր է քո ձայնը,
եւ գեղեցիկ է երեսը քո»:
Փեսան այսպէս է ասում օրիորդ-
ներին.
15 «Բռնեցէ՛ք փոքրիկ աղուէսներին,
որ ապականում են այգիները,
որպէսզի ծաղկեն մեր որթերը»:
Հարսն ասում է այսպէս.
16 «Իմ սիրեցեալն իմն է, իսկ ես՝
նրանը.
նա, որ հովուում է հօտը շուշանների
մէջ,
17 քանի դեռ ցերեկը կը լուսաւորի,
եւ դեռ կը շարժուեն ստուերները:
Վերադարձի՛ր, ո՛վ իմ սիրեցեալ,
այծեամի պէս կամ եղնիկների հոր-
թերի նման,
որ լինում են խնկաբեր լեռների
վրայ»:

ՄԱՐԴԸ

3 «Գիշերն անկողնուս մէջ փնտռեցի
իմ հոգու սիրածին,
փնտռեցի նրան, բայց չգտայ,
կանչեցի, բայց ինձ ձայն չտուեց:
2 Վեր կենամ, շրջեմ քաղաքում,
անցնեմ փողոցներ ու հրապարակներ
եւ փնտռեմ նրան՝ իմ հոգու սիրածին:
Փնտռեցի նրան, բայց չգտայ,
կանչեցի նրան, բայց ինձ ձայն
չտուեց:
3 Քաղաքում շրջող պահապանները
հանդիպեցին ինձ»:
Հարսն ասում է պահապան-
ներին.
«Արդեօք չէ՞ք տեսել իմ հոգու
սիրածին»:
4 Երբ նրանցից փոքր-ինչ անցայ,
ես գտայ իմ հոգու սիրածին:
Գտնելով Փեսային՝ ասում է.
«Բռնեցի նրան եւ բաց չթողեցի,

մինչեւ որ նրան իմ մօր տունը
չտարայ
եւ այն սենեակը, ուր իմ մայրն յղիա-
ցել է ինձնով»:
Հարսն օրիորդներին երդուեց-
նում է երկրորդ անգամ.
5 «Երդուեցէ՛ք, ո՛վ Երուսաղէմի
դուստրեր,
հողի եւ հանդի զօրութեան վրայ,
որ երբ վեր կենաք,
դուք իմ սիրածին չէք արթնացնի,
մինչեւ որ ինքը չկամենայ»:
Փեսան ասում է Հարսի մասին.

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ
ԿԻՆԸ

6 «Ո՞վ է սա, որ ելել գալիս է անա-
պատից,
բարձրանալով, ինչպէս ծառացած
ծուխ,
ինչպէս զմուռսի եւ կնդրուկի
եւ ամէն տեսակ իւղերի փոշու սիւն»:
Օրիորդներն այսպէս են ասում.
7 «Ահա Սողոմոնի գահաւորակը.
նրա շուրջը Իսրայէլի վաթսուն սպա-
ռազէն քաջեր են կանգնած,
8 բոլորն էլ սուսերաւորներ եւ հմուտ
պատերազմողներ,
եւ իւրաքանչիւրը սուր ունի ազդրին՝
գիշերուայ արհաւիրքների համար:
9 Սողոմոն արքան իր համար գա-
հաւորակ պատրաստեց
Լիբանանի մայրի փայտերից.
10 նրա սիւները շինեց արծաթից,
նրա սնարները՝ ոսկուց,
իսկ ձեղունը՝ ծիրանի կերպասից:
Նրա ներսը ակնազարդ է,
Երուսաղէմի դուստրերի սէրն է
սփռուած:
11 Ելէ՛ք, ո՛վ Սիոնի դուստրեր,
եւ նայեցէ՛ք Սողոմոն արքային ու
նրա պսակին,
որով մայրը նրա հարսանիքի օրը՝
իր որդու սրտի ուրախութեան օրը
պսակեց նրան»:

ՄԱՐԴԸ

Փեսան ասում է Հարսին.

4 «Ահա դու, ի՜նչ գեղեցիկ ես, ո՛վ իմ
սիրելի,
ի՜նչ գեղեցիկ ես.
քո աչքերը նման են աղաւնիների՝
հարսնաքօղիդ տակ:
Քո վարսերը նման են այծերի հօ-
տերի,
որոնք իջնում են Գաղաադից:
2 Քո ատամները նման են խուզած
ոչխարների հօտերի,
որոնք ելնում են լողաւազանից.
բոլորն էլ զուգաշար են,
եւ ոչ մի ստերջ չկայ նրանց մէջ:
3 Քո շուրթերը նման են որդան կար-
միր թելի,
եւ գեղեցիկ է քո խօսքը՝ քո շուր-
թերին:
Քո այտերը նման են կիսած նռան՝
հարսնաքօղիդ տակ:
4 Քո պարանոցը նման է Դաւթի աշ-
տարակին,
որ շինուած է Թալպիոթում.
հազար վահան է կախուած նրանից,
նաեւ՝ ռազմիկների բոլոր նետերը:
5 Քո երկու ստինքները նման են
այծեամի երկուորեակ ուլերի,
որոնք արածում են շուշանների մէջ,
6 մինչեւ ցերեկն անցնի, եւ ստուեր-
ները շարժուեն:
Ես էլ առանձին գնամ զմուռսի սարը
եւ կնդրուկի բլուրը:
7 Դու բոլորովին գեղեցիկ ես, ո՛վ իմ
սիրելի,
եւ ոչ մի արատ չկայ քո մէջ:
8 Ե՛կ Լիբանանից, ո՛վ հարս,
այստե՛ղ եկ Լիբանանից.
արի անցի՛ր Հաւատքի գագաթից,
Սանիրի եւ Հերմոնի կատարներից,
առիւծների որջերից եւ ինձերի լեռ-
ներից:
9 Կարօտով լցրիր մեր սիրտը, ո՛վ մեր
քոյր հարս,
քո մի հայեացքով,
քո պարանոցի մի մանեակով
կարօտով լցրիր սիրտը մեր:
10 Գեղեցկացան քո ստինքները, ո՛վ
մեր քոյր հարս,
գինուց գեղեցկացան քո ստինքները,
եւ քո զգեստների հոտը քաղցր է
բոլոր խնկերից:
11 Մեղը է կաթում քո շուրթերից,
քո՛յր իմ հարս,

մեղր ու կաթ կայ քո լեզուի տակ.
եւ քո զգեստների հոտը նման է կնդրուկի հոտի:
12 Փակուած պարտէզ ես, քո՛յր իմ հարս,
փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր:
13 Քո տնկիները նռնենիների դրախտ են՝
մրգատու ծառերի պտուղներով,
նոճով ու նարդոսով,
14 նարդոս են ու քրքում,
խնկեղէգն ու կինամոն՝
Լիբանանի ամէն տեսակ ծառերով,
զմուռս ու հալուէ՝
բոլոր լաւագոյն խնկերով հանդերձ,
15 բուրաստանների աղբիւր են
եւ կենդանի ջրի ակունք,
որ բխում է Լիբանանից:

ԿԻՆԸ

16 Վե՛ր կաց, հիւսիսի՛ քամի,
եւ ե՛կ, հարաւի՛ հով,
փչի՛ր իմ պարտէզի մէջ,
եւ թող իմ խնկերն իրենց բոյրը տարածեն:

ՄԱՐԴԸ

Հարսն աղաչում է, որ իր Փեսան ցած իջնի:

5 «Թող իմ սիրեցեալն իջնի իր պարտէզը,
եւ իր ծառերի պտուղներն ուտի»:
Փեսան ասում է Հարսին.
«Ես իմ պարտէզը մտայ, քո՛յր իմ հարս,
զմուռս քաղեցի իմ խնկերի հետ,
հացս կերայ իմ մեղրով,
իմ կաթի հետ խմեցի գինիս:
Կերէ՛ք, ո՛վ իմ սիրելիներ,
խմեցէ՛ք եւ հարբեցէ՛ք, ո՛վ իմ սիրելիներ»:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

ԿԻՆԸ

2 «Ես քնած եմ, բայց իմ սիրտն արթուն է»:
Հարսն կգում է, որ Փեսան բախում է դուռը.
«Իմ սիրեցեալն է, նրա ձայնն է.
դուռն է բախում»:

ՄԱՐԴԸ

Փեսան ասում է.
«Բա՛ց, քո՛յր իմ, ո՛վ իմ սիրելի,
իմ աղաւնի՛, իմ կատարեա՛լ.
գլուխս, ահա, թրջուել է ցօղով,
մազերս՝ գիշերուայ շաղով»:

ԿԻՆԸ

Հարսն այսպէս է ասում.
3 «Ես հանել եմ իմ պատմուճանը,
ինչպէ՞ս հագնեմ այն.
ես լուացել եմ իմ ոտքերը,
ինչպէ՞ս կեղտոտեմ դրանք:
4 Իմ սիրեցեալը ձեռքը ձգեց պատուհանից,
եւ որովայնս սարսռաց նրա համար:
5 Վեր կացայ դուռը բացելու իմ սիրեցեալի համար.
իմ ձեռքերից զմուռս կաթեց,
եւ իմ մատներից զմուռսը լցուեց փականի բռնակի վրայ:
6 Ես բացեցի դուռն իմ սիրեցեալի համար,
բայց նա գնացել էր արդէն,
եւ խելքս մաղուեց նրա խօսքի համար:
Փնտռեցի նրան, բայց չգտայ,
կանչեցի նրան, բայց ձայն չտուեց ինձ:
7 Ինձ գտան քաղաքում շրջող պահապանները,
խփեցին եւ վիրաւորեցին ինձ,
իսկ պարիսպների պահակները քօղս հանեցին իմ վրայից:
8 Երդուեցէ՛ք, ո՛վ Երուսաղէմի դուստրեր,
հողի ու հանդի զօրութեան վրայ,
եթէ դուք գտնէք իմ սիրեցեալին,
կը պատմէք նրան, որ ես այրուում եմ նրա սիրուց»:

ԿԱՆԱՅՔ

Երուսաղէմի աղջիկները եւ պարիսպների պահապանները հարցնում են Հարսին.
9 «Ինչո՞վ է առաւել քո սիրելին միւս տղաներից,

ո՛վ գեղեցիկդ կանանց մէջ,
ինչո՞վ է նա առաւել,
որ այդպէս երդուեցնում ես մեզ»:

ԿԻՆԸ

Հարսը պատմում է սիրածի մասին՝ ասելով, թէ ինչպիսին է նա.
10 «Իմ սիրեցեալը սպիտակ է եւ կարմիր,
ընտրեալ է՝ տասը հազարից:
11 Նրա գլուխը ոսկի է ազնիւ,
նրա մազերը գանգուր են, սեւ, ինչպէս ագռաւ:
12 Նրա աչքերը նման են աղաւնիների՝
հակուած առատ ջրերի վրայ,
կաթով լուացուած եւ թառած՝ առատ ջրերի վրայ:
13 Նրա ծնօտները նման են խնկէ անօթների,
որոնք, ինչպէս օծման իւղեր,
անուշահոտութիւն են բուրում.
Նրա շուրթերը շուշաններ են,
որոնցից առատ զմուռս է բխում:
14 Նրա ձեռքերը ճախարակուած ոսկի են՝
թարսիսի ակնաքարերով պատուած:
Նրա որովայնը փղոսկրեայ տախտակ է՝
շափիւղայ քարերով ընդելուզուած:
15 Նրա սրունքները մարմարեայ սիւներ են՝
հաստատուած ոսկէ խարիսխների վրայ:
Նրա տեսքն ասես Լիբանանի ընտիր եղեւնափայտ լինի:
16 Նրա կոկորդը լի է քաղցրութեամբ,
եւ ամբողջովին հաճելի է նա:
Այսպիսին է, ահա, իմ սիրեցեալը,
ո՛վ Երուսաղէմի դուստրեր,
այսպիսին է իմ հոգու սիրածը:»
Երուսաղէմի դուստրերը հարցնում են, թէ ուր է գնացել նրա, այսինքն՝ Հարսի սիրեցեալը.
17 «Ու՞ր գնաց քո սիրեցեալը,
ո՛վ գեղեցիկդ կանանց մէջ,
ո՞ր կողմը գնաց քո սիրեցեալը,
որ մենք էլ քեզ հետ որոնենք նրան»:

ԿԱՆԱՅՔ

Հարսը պատասխան է տալիս եւ ասում.
6 «Իմ սիրեցեալն իջաւ իր պարտէզը՝
խնկածաղիկների մարգերի մէջ,
որ հօտն արածեցնի բուրաստաններում
եւ շուշաններ քաղի:
2 Իմ սիրեցեալն իմն է,
իսկ ես՝ նրանը.
նա, որ հովուում է հօտը շուշանների մէջ»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

Փեսան ասում է Հարսին.
3 «Դու բարեկազմ ես, ի՛մ սիրելի,
ամբողջովին հաճելի ես
եւ Երուսաղէմի պէս գեղեցիկ՝
զարմանալի յօրինուած:
4 Թեքի՛ր աչքերդ ինձնից,
քանզի դրանք սիրով արբեցրին ինձ.
քո վարսերը նման են այծերի հօտերի,
որոնք իջնում են Գաղաադից:
5 Քո ատամները նման են խուզած ոչխարների հօտերի,
որոնք ելնում են լողաւազանից.
բոլորն էլ զուգաշար են,
ոչ մի ատերջ չկայ նրանց մէջ:
6 Քո շուրթերը նման են որդան կարմիր թելի,
եւ գեղեցիկ է քո խօսքը՝ քո շուրթերին:
Քո այտերը նման են կիսուած նռան՝
հարսնաքօղիդ տակ:
7 Թող վաթսուն թագուհի եւ ութսուն հարճ լինեն,
թող ազնիւ օրիորդներ ունենայ արքան,
8 մինչդեռ մէ՛կն է իմ աղաւնին, իմ կատարեալը.
իր մօր միա՛կն է նա,
իր ծնողի ընտրեա՛լը:
Դուստրերը տեսան նրան եւ երանի տուին,
թագուհիները եւ հարճերը գովեցին նրան»:
Դուստրերը եւ թագուհիները տեսան Հարսին եւ երանի տուին նրան.

9 «Ո՞վ է սա, որ ելնում է ինչպէս առաւօտ,
եւ գեղեցիկ է, ինչպէս լուսին,
ընտիր, ինչպէս արեգակ՝
զարմանալի յօրինուած»:
Փեսան ասում է Հարսին.
10 «Ես ընկուզենիների պարտէզն իջայ՝
նայելու, թէ առուներն ինչպէս են ջրում,
տեսնելու, թէ արդեօք ծաղկե՞լ է որթատունկը,
ծաղկե՞լ է արդեօք նռնենին»:
Հարսն ասում է Փեսային.
11 «Այնտեղ քեզ կը տամ իմ ստինքները.
հոգիս չիմացաւ, բայց ցանկութիւնս տանում է ինձ,
ինչպէս Ամինադաբի կառքը»:

ԿԻՆԸ

Դուստրերը եւ թագուհիները ասում են Հարսին.
12 «Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, ո՛վ սոմնացիդ,
վերադարձի՛ր, որ մենք տեսնենք քեզ»:

ՄԱՐԴԸ

Փեսան դուստրերին եւ թագուհիներին այսպէս է ասում.

7 «Ի՞նչ էք տեսնում այդ սոմնացու վրայ,
որ գալիս է դէպի մեզ
զօրաբանակի գնդերի նման:
Որքա՜ն գեղեցիկ է քո քայլքը կօշիկներով,
ո՛վ Ամինադաբի դուստր:
Քո ազդրերի ձեւը նման է
ճարտար վարպետի յղկած ուլունքների:
2 Քո պորտը ճախարակուած ըմպանակ է,
որից անպակաս է անխառն գինին:
Քո որովայնը ցորենի շեղջ է՝
ծածկուած շուշանով:
3 Քո երկու ստինքները ասես այծեամի երկուորեակ ուլեր են,
4 քո պարանոցը՝ փղոսկրեայ աշտարակ:
Քո աչքերը նման են Եսեբոնի ծովակին՝
Բազում դուստրերի դարպասների մօտ:
Քո քիթը նման է Լիբանանի աշտարակին,
որ նայում է դէպի Դամասկոս:
5 Գլուխդ քո վրայ նման է Կարմելոսին,
մազերիդ հիւսերը կարծես ծիրանի լինեն,
ասես թագաւոր ես՝ թագը գլխիդ,
հանդիսարանների մէջ:
6 Որքա՜ն գեղեցիկ, որքա՜ն քաղցր ես դու, սէ՛ր իմ,
քո քնքշութեան մէջ:
7Քո հասակը նման է արմաւենու,
իսկ ստինքներդ՝ ողկոյզների:
8 Ասացի. "Բարձրանամ արմաւենու վրայ,
ձեռքս ձգեմ նրա ճիւղերին,
եւ թող քո ստինքները լինեն խաղողի ողկոյզների պէս,
քո ռունգերի շունչը՝ խնձորի հոտի նման,
եւ քո կոկորդը՝ ազնիւ գինու պէս"»:
Հարսն ասում է դուստրերին եւ թագուհիներին.
9 «Այն ուղիղ գնում է իմ սիրեցեալին՝
հոսելով ննջողների շրթների և ատամների վրայ† :

ԿԻՆԸ

10 Ես իմ սիրեցեալինն եմ,
եւ նա պիտի վերադառնայ ինձ մօտ:
11 Ե՛կ, իմ սիրեցեա՛լ, ելնենք ագարակները,
գիշերենք շէների ու պարտէզների մէջ,
վաղ առաւօտեան այգիները գնանք:
12 Տեսնենք, թէ արդեօք ծաղկե՞լ է որթատունկը,
ծաղկե՞լ է արդեօք նռնենին:
Այնտեղ քեզ կը տամ իմ ստինքները:
13 Մանրագործներն իրենց հոտն են բուրում,

†Իմաստի յստակութեան համար հետեւել եմ եբրայերէն բնագրին:

մեր դռների մօտ ամէն տեսակ հին ու նոր մրգատու ծառեր կան,
որ իմ մայրն է տուել ինձ,
ես պահել եմ քե՛զ համար, իմ սիրեցեա՛լ:

8 Ո՛վ իմ սիրեցեալ, երանի՜ թէ իմ եղբայրը լինէիր՝
մօրս կաթով սնուած,
եւ երբ հանդիպէի քեզ դրսում, համբուրէի քեզ,
եւ ոչ ոք չնախատէր ինձ:
2 Վերցնէի քեզ, բերէի իմ մօր տունը,
այն սենեակը, ուր նա յղիացել է ինձնով,
քեզ ազնիւ գինի տայի խմելու,
օշարակ տայի իմ նռնենիներից:
3 Թող նրա ձախը լինի գլխիս տակ,
եւ նրա աջը թող գրկի ինձ:
4 Երդուեցէ՛ք, ո՛վ Երուսաղէմի դուստրեր,
հողի ու հանդի զօրութեան վրայ,
որ երբ վեր կենաք,
դուք իմ սիրածին չէք արթնացնի,
մինչեւ որ ինքը չկամենայ»:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ
ԿԱՆԱՅՔ

Դուստրերը եւ թագուհիները ասում են.
5 «Ո՞վ է սա, որ գալիս է սպիտակ հագած,
գալիս է՝ յենած իր սիրեցեալին»:
Փեսան ասում է Հարսին.
«Ես քեզ արթնացրի խնձորենու տակ.
այնտեղ քո մայրը երկնել է քեզ,
այնտեղ քո ծնողը ծնել է քեզ:
6 Ինձ իբրեւ կնիք դի՛ր քո սրտի վրայ,
իբրեւ մատանի դի՛ր քո աջ ձեռքին,
քանզի հզօր է սէրը մահուան պէս,
խանդը դաժան է դժոխքի նման,
նրա թռիչքը նման է հրի բոցի թռիչքին:
7 Առատ ջրերը չեն կարող սէրը մարել,
եւ ոչ էլ գետերը կարող են արգելել այն:
Եթէ մի մարդ իր ողջ հարստութիւնը տար սէր գնելու համար,
նրան արհամարհելով կ՝արհամարհէին մարդիկ»:

ԿՆՈՋ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

8 «Մեր քոյրը փոքրիկ է
եւ դեռ չունի ստինքներ .
ի՞նչ պիտի անենք այն օրը,
երբ գան նրան ուզելու:
9 Եթէ պարիսպ լինէր նա,
վրան արծաթէ աշտարակներ կը կանգնեցնէինք,
եթէ դուռ լինէր նա,
եղեւնափայտի տախտակներ կը շինէինք վրան»:
Հարսը համարձակւում է եւ ասում.
10 «Ես պարիսպ եմ,
եւ իմ ստինքները նման են աշտարակների.
նրա աչքին ես երեւում եմ ինչպէս մէկը,
որ իր խաղաղութիւնն է գտել»:

ՄԱՐԴԸ

11 Սողոմոնը մի այգի ունէր Բեէլմաւոնում.
իր այգին նա տուեց պահապաններին:
Նրանցից իւրաքանչիւրը հազար արծաթ պիտի բերէր պտղի փոխարէն:
12 Իմ այգին իմ առջեւն է.
հազարը Սողոմոնին,
եւ երկու հարիւրը՝ պահապաններին,
որ պահում են նրա պտուղը:
Հարսն ասում է.
13 «Դու՛, որ նստել ես պարտէզների մէջ,
եւ ուրիշները լսում են քեզ,
քո ձայնը լսելի՛ դարձրու նաեւ ինձ»:

ԿԻՆԸ

14 «Փախի՛ր, իմ սիրեցեալ, այծեամի պէս,
կամ եղնիկների հորթերի նման,
որ լինում են խնկաբեր լեռների վրայ»:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ

Ներածութիւն

Իմաստութեան այս գիրքը հաւանաբար յոյս է ընծայուել Եգիպտոսում, Ալեքսանդրիայում բնակուող հրէական համայնքի կողմից, մեր թուագրութիւնից շուրջ երեսուն տարի առաջ: Նրա հեղինակն արտայայտւում է բաւականին բարձրառոճ յունարէնով, սակայն, ինչպէս գրքի վերնագիրն է ցոյց տալիս, նրա երկը պատկանում է «իմաստալից գրուածքներ»-ի շարքին, ինչպիսիք են՝ Առակների, Յոբի եւ Ժողովողի եբրայական գրքերը կամ որոշ Սաղմոսներ: Գրքի հեղինակը քաջածանօթ է Ծննդոց, Ելից գրքերին, Եսայու մարգարէութեանը, Առակներին, բայց նաեւ յունական գրականութեանը՝ Հոմերոս, Պլատոն եւ այլն: Նա աշխատում է իր հրէական հաւատի մասին վկայել յունական մտածողութեան միջոցներով: Նա դիմում է իր կրօնակիցներին, որոնք եբրայերէն չգիտեն, ինչպէս նաեւ յոյն ընթերցողներին, որոնց ուզում է գիտակցել տալ Իսրայէլի հոգեւոր ժառանգութեան արժէքը:

Գրքի առաջին բաժինը նուիրուած է առաքինի եւ չար մարդկանց ճակատագրի մասին համեմատական մի խորհրդածութեան: Այստեղ կայ ուշագրաւ մի շարադրանք «արդար մարդու» հալածանքի մասին:

Գրքի երկրորդ բաժնում ներբողում է Իմաստութիւնը, որն անհրաժեշտ է բոլորին, բայց մասնաւորապէս նրանց, որոնց վրայ ծանրանում է ազգերին առաջնորդելու պատասխանատուութիւնը: Այդ բանը բացատրելու համար հեղինակն իրեն նոյնացնում է Սողոմոն թագաւորի հետ, որին հրէական աւանդութիւնը համարում է գերագոյն Իմաստունը:

Երրորդ բաժինը կարող է վերնագրուել՝ «Իմաստութիւնը սրբազան պատմութեան մէջ»: Սողոմոնեան աղօթքի ձեւով այս բաժնում յաջորդաբար քննութեան են առնւում Ծննդոցի, Ելիցի պատմութիւնները, ինչպէս նաեւ կռապաշտութեան հարցը:

Այսպիսով հեղինակն առաջարկում է վերաիմաստաւորել կամ մեկնաբանել աստուածաշնչական պատումները յունական մտայնութեան տեսանկիւնից: Զարմանալի չէ, հետեւաբար, հանդիպել այստեղ եբրայական Հին Կտակարանին անծանօթ մտքերի, որոնք վերաբերում են հոգու եւ մարմնի բաժանուածութեանը կամ հոգու անմահութեանը:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ

ՓՆՏՌԵԼ ԱՍՏՄՈՒՆ ԵՒ ՓԱՌՋԵԼ ՄԵՂՔԻՑ

1 *Սիրեցէ՛ք արդարութիւնը, երկրի՛ դատաւորներ:*
Բարի՛ խորհեցէք Տիրոջ մասին
եւ պարզ սրտով փնտռեցէ՛ք նրան:
2 *Աստուած պիտի գտնի նրանց,*
ովքեր չեն փորձում նրան,
եւ պիտի երեւայ նրանց, ովքեր թերահաւատ չեն նրա նկատմամբ:
3 *Արդարեւ, անիրաւ խորհուրդները բաժանում են մարդուն Աստծուց,*
իսկ իր զօրութիւնը փորձելու համար Աստուած յանդիմանում է անզգամներին:
4 *Իմաստութիւնը չի մտնի չարանենգ անձի մէջ*
եւ ոչ էլ կը բնակուի այն մարմնի մէջ, որ մեղք է գործում:
5 *Իմաստուն եւ անբիծ հոգին փախչում է նենգութիւնից*
ու մերժում անմիտների խորհուրդները,
եւ երբ անիրաւութիւն է վրայ հասնում, յանդիմանում է այն:
6 *Իմաստուն եւ մարդասէր հոգին չի արդարացնում նրան,*
ով հայհոյում է իր բերանով,
որովհետեւ Աստուած վկայ է նրա ներքին ցանկութիւններին,
նրա սրտի ճշմարիտ վերակացուն է
եւ նրա լեզուի ունկնդիրը:
7 *Արդարեւ, Տիրոջ հոգին լցնում է տիեզերքը,*
եւ Նա, որ պահում է ամէն ինչ, գիտէ, թէ ով ինչ է բարբառում:
8 *Ուստի նա, ով անիրաւ բաներ է շշնջում,*
չի ծածկուելու եւ չի խուսափելու արդարացի դատապարտութիւնից:
9 *Ամբարիշտների խորհուրդների քննութիւն պիտի լինի,*
նրանց ասածների լուրը պիտի հասնի Տիրոջը,
եւ նրանք պիտի կրեն իրենց անիրաւութիւնների պատիժը:
10 *Նախանձախնդիր ականջը լսում է ամէն բան,*
եւ քրթմնջիւնն ու շշնջիւնն անգամ չեն մնայ ծածուկ:
11 *Ուստի այսուհետեւ զգո՛յշ եղէք անօգուտ քրթմնջիւնից*
եւ բամբասանքներից խնայեցէ՛ք ձեր լեզուն,
որովհետեւ գաղտնի շշնջիւնը զուր չի անցնի,
եւ ստախօս բերանը կը սպանի հոգին:
12 *Ձեր կեանքի մոլորութեամբ ձեզ մահ մի՛ ցանկացէք*
եւ մի՛ սպանէք ձեր անձերը՝ ձեր իսկ ձեռքերի գործերով:
13 *Արդարեւ, Աստուած մահ չի ստեղծել,*
եւ նա չի ուրախանում ողջերի կորստեան համար:
14 *Նա ամէն ինչ հաստատել է լինելու համար,*
եւ աշխարհի գործերը փրկութեան համար են:
Ո՛չ մահաբեր թոյն կայ նրանց մէջ
ե՛ւ ոչ էլ դժոխքի թագաւորութիւն՝ երկրի վրայ,
15 *որովհետեւ արդարութիւնը անմահ է:*
16 *Իսկ ամբարիշտները ձեռքով ու խօսքով իրենց մօտ կանչեցին մահը,*
նրան իրենց բարեկամ համարեցին,
հալումաշ եղան եւ դաշինք կնքեցին նրա հետ.
եւ իսկապէս արժանի են բաժնեկից լինելու նրան:

2 *Անուղղայ մարդիկ այսպէս խորհեցին իրենց սրտի մէջ՝ ասելով.*
«Մեր կեանքը կարճ է եւ ցաւերով լի.
եւ երբ մարդ հասնի իր վախճանին, ոչ մի փրկութիւն չկայ,
եւ չկայ մէկը, որ վերադարձած լինի մահուան գերեզմանից:
2 *Մենք պատահաբար ենք ծնուել*
եւ սրանից յետոյ էլ չեղածների պէս ենք լինելու,
որովհետեւ մեր ռունգերի շունչը ծուխ է ասես,
իսկ մեր խօսքը՝ կայծ, որ ծնուել է մեր սրտի տրոփից:
3 *Կայծի մարումով մարմինը մոխիր է դառնում,*
իսկ հոգին սփռւում է ինչպէս թոյլ օդ:

4 Մեր անունը պիտի մոռացուի ժամանակի ընթացքում,
եւ ոչ ոք չի յիշելու մեր գործերը:
Եւ, ինչպէս ամպի հետք, պիտի անցնի մեր կեանքը
եւ պիտի ցրուի շամանդաղի նման՝
արեգակի ճառագայթներից հալածուած ու քշուած նրա տապից:
5 Արդարեւ, մեր կեանքը սահող ստուեր է,
եւ ոչինչ չի կարող արգելել մարդուս վախճանը,
քանզի երբ վախճանը կնքուի, այլեւս ոչ ոք չի կարող վերադարձնել:
6 Արդ, եկէ՛ք վայելենք այն բարիքները, որ կան,
եւ, ինչպէս մանկութեան օրերին, ըմբոշխնենք այն, ինչ ստեղծուած է:
7 Եկէ՛ք յագենանք պէս-պէս գինիներով եւ անուշ իւղերով,
եւ թող գարնան ծաղիկը չանցնի մեր կողքով:
8 Կոկոն վարդերից պսակներ կրենք,
քանի դրանք չեն թառամել:
9 Թող մեծաշուք մեր այս ուրախութիւնից ոչ ոք ամենեւին անմասն չմնայ,
ամէն տեղ ուրախութեան մի նշան թողնենք,
որովհետեւ դա է մեր բաժինը, դա է մեզ վիճակուել:
10 Եկէ՛ք անիրաւութեամբ բռնադատենք տնանկին,
չխնայենք որբեւայրուն,
չխորշենք ծերի բազմամեայ ալեհերութիւնից:
11 Թող մեր ուժը դառնայ արդարութեան օրէնքը,
որովհետեւ տկարութիւնը պիտանի չէ եւ ոչ մի բանի:
12 Դարանակալ լինենք արդարին,
որովհետեւ դժկամ է նա մեր հանդէպ եւ հակառակ մեր գործերին,
նախատինք է տալիս մեզ՝ օրէնքների դէմ մեղանչելու համար,
եւ պարսաւում է մեզ՝ մեր երիտասարդական մեղքերի համար:
13 Նախ խոստովանում է, թէ աստուածգիտութիւն ունի,
եւ իր անձը Տիրոջ որդի է անուանում:
14 Մեր առջեւ՝ մեր խորհուրդների յանդիմանութիւնն է նա:
15 Ծանր է մեզ համար նաեւ նրան տեսնելը,
որովհետեւ նրա կեանքը նման չէ ուրիշների կեանքին,
եւ այլազան են նրա վարքի շաւիղները:
16 Նա մեզ գարշանք է համարում
եւ խորշում է մեր ճանապարհներից, ինչպէս պղծութիւնից.
երանի է տալիս արդարների վախճանին
եւ հպարտանալով Աստծուն հայր է կոչում:
17 Տեսնենք արդեօք ճշմարի՞տ են նրա խօսքերը
եւ փորձենք իմանալ, թէ ի՛նչ է լինելու նրա վախճանը:
18 Եթէ, արդարեւ, Աստծու որդի է,
ապա թող Աստուած պաշտպանի
եւ ազատի նրան հակառակորդների ձեռքից:
19 Թշնամանքով եւ ծեծով խոշտանգենք նրան,
որպէսզի տեսնենք նրա հեզութեան չափը
եւ խելամուտ լինենք նրա համբերատարութեանը:
20 Խայտառակ մահուան դատապարտենք նրան.
արդեօք Աստուած օգնական կը լինի՞ նրան»:

ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԻ ՍԽԱԼԸ

21 Այսպէս խորհեցին եւ խաբուեցին ամբարիշտները,
որովհետեւ նրանց կուրացրել էր իրենց չարութիւնը:
22 Չճանաչեցին Աստծու խորհուրդները
եւ չակնկալեցին ո՛չ սրբութեան վարձը
եւ ո՛չ էլ ընտրեցին անարատ հոգիների պատիւը:
23 Աստուած մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար
եւ արարել է նրան ըստ իր բարերարութեան պատկերի:
24 Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով.
25 եւ ովքեր նրա բաժինն են, նրանք էլ պիտի կրեն այն:

ԱՐԴԱՐՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

3 Բայց արդարների հոգիներն Աստծու ձեռքին են,
եւ մահը չի մօտենալու նրանց:
2 Անզգամների աչքին թուաց, թէ նրանք մեռան,
եւ նրանց ելքն այս աշխարհից համարուեց տանջանք,
իսկ նրանց հեռանալը մեզնից՝ կործանում,
3 բայց նրանք գտնուում են խաղաղութեան մէջ:
4 Ու թէպէտեւ մարդկանց թւում է, թէ նրանք տանջուեցին,
բայց նրանք անմահութեան հաստատ յոյս ունեն,
5 ինչպէս եւ նրանք, որոնք չխուսափեցին սակաւ ինչ տառապանքից, պիտի բարիքներ գտնեն,
քանի որ Աստուած փորձեց նրանց
եւ նրանց էլ արժանի գտաւ իրեն:
6 Նրանց փորձեց, ինչպէս ոսկին բովի մէջ,
եւ իբրեւ ողջակէզի զոհ ընդունեց նրանց:
7 Եւ երբ Տէրն այցելի նրանց,
նրանք պիտի պայծառանան ու վեր ընթանան,
ինչպէս կայծը եղէգի միջով:
8 Պիտի դատեն ազգերին եւ տիրեն ժողովուրդներին,
եւ նրանց վրայ յաւիտեան թագաւորելու է Տէրը:
9 Նրանք, որ իրենց յոյսը դրել են Աստծու վրայ,
պիտի իմանան ճշմարտութիւնը,
եւ նրանք, որ հաւատարիմ են, սիրով պիտի սպասեն նրան,
քանզի սրբերի համար են նրա շնորհները եւ ողորմութիւնը,
եւ իր ընտրեալների համար է նրա այցելութիւնը:
10 Իսկ ամբարիշտները, որոնք արհամարհեցին արդարութիւնն ու ապստամբեցին Տիրոջ դէմ,
պիտի կրեն իրենց պատիժը՝ իրենց խորհուրդներին համապատասխան:
11 Արդարեւ ով անարգում է իմաստութիւնն ու խրատը, թշուառական է.
ունայն է նրա յոյսը, անօգուտ է նրանց վաստակը,
եւ պիտանի չեն նրանց գործերը:
12 Նրանց կանայք անմիտ են,
նրանց երեխաները՝ չարաբարոյ,
եւ անիծուած են նրանց ծնունդները:

ԱՒԵԼԻ ԼԱՒ Է ԱՄԼՈՒԹԻՒՆԸ, ՔԱՆ ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

13 Երանելի է անարատ ամուլը, որ մեղքի անկողին չի ճանաչել.
նա վարձ կ՚ընդունի դատաստանի օրը:
14 Նաեւ ներքինին, որ իր ձեռքով անիրաւութիւն չի գործել
եւ ոչ էլ չարութիւն է խորհել Տիրոջ մասին,
նրան ըստ իր հաւատի ընտիր շնորհ է տրուելու
եւ ցանկալի վիճակ՝ Տիրոջ տաճարում:
15 Արդարեւ, փառաւոր է բարի վաստակների պտուղը,
եւ անսխալ՝ իմաստութեան արմատը:
16 Շնացողների որդիները լինելու են պակասաւոր,
եւ պիտի ոչնչանայ ապօրինի անկողնու զաւակը:
17 Եւ եթէ նոյնիսկ երկարակեաց էլ լինեն, ոչնչութիւն են համարուելու.
իրենց կեանքի վախճանին էլ անարգուելու է նրանց ծերութիւնը:
18 Իսկ եթէ շուտ էլ լինի նրանց վախճանը, յոյս չեն ունենալու,
եւ ոչ էլ դատաստանի օրը՝ մխիթարութիւն:
19 Այո՛, այսպէս է կարգը. անիրաւ սերնդին՝ չարաչար վախճան:

4 Լաւ է անզաւակ լինել, բայց առաքինի,
որովհետեւ առաքինի մարդու յիշատակն անմահութիւն է,
որ ճանաչուում է թէ՛ Աստծու կողմից եւ թէ՛ մարդկանց:
2 Առաքինութեանը հպուելիս՝ մարդիկ նմանուում են նրան,

հեռանալուց յետոյ՝ անձկագին փա-
փագում:
Ցաւիտենութեան մէջ նրանք, պսա-
կաւորուած, պիտի ճեմեն
եւ տօնեն իրենց յաղթանակը՝
անթառամ նահատակութեան պատե-
րազմում յաղթած լինելու համար:
3 Ամբարիշտների բազմածին զաւակ-
ները պիտանի չեն լինի,
փտած շիւերը խոր արմատներ չեն
տայ,
եւ հաստատուն չի լինի խախուտ
հիմքը:
4 Ու թէեւ միառժամանակ ճիւղերը
կարող են բողբոջել,
բայց լինելով անկայուն հաստա-
տուած՝ պիտի տարուբերուեն հողմից
եւ հողմի ուժով էլ պիտի արմա-
տախիլ լինեն:
5 Արմատի շուրջն աճած թոյլ շիւերը
պիտի կոտրատուեն,
ժամանակին չի հասունանալու նրանց
պտուղը՝ ուտելու համար
եւ ոչ մի բանի պիտանի չի լինելու:
6 Ապօրինի անկողնուց ծնուած որդի-
ները
դատաքննութեան ժամանակ իրենց
ծնողների անբարոյականութեան վկա-
ներն են լինելու,
7 իսկ արդարը, եթէ ժամանակից շուտ
էլ վախճանուի, հանգիստ կը գտնի:
8 Պատուաբեր ծերութիւնը ո՛չ եր-
կարակեցութեամբ է չափւում
եւ ո՛չ էլ ապրած տարիների թուով,
9 այլ մարդու համար իմաստութի՛ւնն
է նրա ալեհերութիւնը,
եւ անարատ կեա՛նքն է նրա ծերու-
թեան հասակը:
10 Կար մի արդար մարդ, որ հաճելի
եղաւ Աստծուն,
Աստուած սիրեց նրան,
եւ նրան՝ իր կենդանութեան ժամա-
նակ՝ մեղաւորների միջից փոխադրեց
երկինք:
11 Նա յափշտակուեց, որպէսզի չա-
րութիւնը չայլափոխի նրա իմաս-
տութիւնը,
կամ նենգութիւնը չխաբի նրա հոգին:
12 Անզգամութեան չար նախանձը
շեղում է բարուց,
եւ ցանկասիրութեան կիրքը խուճա-
պի է մատնում անմեղների միտքը:
13 Այդ արդարը կատարելութեան
հասաւ կարճ ժամանակում,
եւ որովհետեւ նրա հոգին ցանկալի
էր Տիրոջը,
ուստի նա տագնապեց չարերի մէջ:
14 Իսկ մարդիկ տեսան դա եւ
չհասկացան,
ոչ էլ նոյնիսկ մտածեցին,
15 թէ Աստծու արդարութիւնը իր
սրբերի վրայ է,
եւ նրա ձեռքն անպակաս է իր
ընտրեալների վրայից:
16 Հանգուցեալ արդարը դատապար-
տում է կենդանի ամբարիշտներին,
եւ վաղ հասունութեան հասած երի-
տասարդութիւնը դատապարտում է
բազմամեայ անիրաւ ծերութիւնը:
17 Իմաստունի վախճանը տեսնում եւ
չեն հասկանում,
թէ ինչ է խորհել Տէրը նրա մասին
եւ ինչից է զգուշացրել նրան:
18 Մարդիկ կը տեսնեն եւ
կ'արհամարեն նրան,
մինչդեռ Տէրը պիտի ծիծաղի նրանց
վրայ:
19 Եւ դրանից յետոյ նրանք պիտի
լինեն անարգ կործանման եւ ամօթանքի
մէջ՝
յաւիտենական մեռելների հետ,
որովհետեւ Տէրը պիտի պայթեցնի
նրանց ուռած անշշունջ մարմինները,
հիմքերից պիտի շարժի նրանց,
մինչեւ որ նրանք իսպառ խոպան
դառնան, տանջուեն ցաւերի մէջ.
եւ պիտի կորչի նրանց յիշատակը:
20 Իրենց կուտակած մեղքերից տագ-
նապած՝
նրանք պիտի հասնեն դատաստանի
օրուան,
եւ նրանց գործած անիրաւութիւն-
ները պիտի կշտամբեն նրանց ճակատ-
առ ճակատ:

5 Այն ժամանակ արդարը շատ հա-
մարձակ պիտի կանգնի իրեն նեղողների
հանդէպ,
եւ նրանք, ովքեր արհամարում էին
նրա վաստակը,
2 տեսնելով նրան, պիտի խռովուեն

սաստիկ երկիւղից
եւ պիտի զարհուրեն նրա սքանչելի
փրկութեան համար:
3 Նրանք պիտի զղջան իրենց մտքում
եւ հոգու նեղութիւնից ճնշուած՝ պի-
տի հառաչեն ու ասեն.
«Սա այն մարդն է, որին մենք ծաղ-
րում էինք մի ժամանակ
եւ նախատինք էինք տալիս:
4 Մենք՝ անմիտներս, նրա վարքը
մոլորութիւն էինք համարում,
իսկ նրա վախճանը՝ անարգանք:
5 Բայց նա ինչպէ՞ս դասուեց Աստծու
որդիների շարքը՝
դառնալով սրբերին վիճակակից:
6 Ուրեմն մենք մոլորուեցինք ճշմար-
տութեան ճանապարհից,
արդարութեան լոյսը չլուսաւորեց
մեզ,
եւ մեր սրտերում չծագեց արդարու-
թեան արեգակը:
7 Մենք խրուեցինք անօրէնութեան եւ
կորստեան շաւիղների մէջ,
գնացինք անկոխ անապատներով եւ
չճանաչեցինք Տիրոջ ճանապարհները:
8 Ի՞նչ շահ բերեց մեզ հպարտու-
թիւնը,
եւ ի՞նչ նպաստ բերեց մեզ հարստու-
թեամբ պարծենալը:
9 Այդ ամէնն անցաւ ինչպէս ստուեր
եւ թռաւ ինչպէս մարդու վաղանցուկ
համբաւ,
10 ինչպէս ուռած ջրերը ճեղքող նաւ,
որի անցնելուց յետոյ անհնարին է
գտնել նրա հետքերը
եւ թողած շաւիղները ալիքների մէջ.
11 կամ՝ ինչպէս օդում ճախրող
թռչունը,
որի ընթացքից չի մնում նշմարելի մի
բան.
մագիլներով բախուելով եւ ճեղքելով
թեթեւ հողմը,
նա բուռն ուժով մտնում է ոլորտից
ոլորտ
եւ, թեւերը թափահարելով, սլանում
դէպի առաջ.
դրանից յետոյ նրա սլացքից չի մնում
եւ ոչ մի նշան.
12 կամ՝ ինչպէս դէպի նպատա-
կակէտն արձակուած նետ,
որ թռչում է օդը ճեղքելով,
բայց օդը կրկին արագ իրար է գալիս,
եւ չգիտես, թէ նետը որտեղից ան-
ցաւ,
– 13 այդպէս էլ մենք. ծնուեցինք ու
դադարեցինք գոյութիւն ունենալուց
14 եւ չկարողացանք առաքինութեան
ոչ մի նշան ցոյց տալ,
այլ մաշուեցինք մեր իսկ չարիքների
մէջ:
15 Արդարեւ, ամբարշտի յոյսը կոր-
չում է ինչպէս քամուց բարձրացուած
փոշի,
իբրեւ մրրիկից հալածուած մանրիկ
եղեամ,
իբրեւ հողմից ցրուած ծուխ
կամ ինչպէս մէկ օրուայ հիւրի
յիշատակ:
16 Բայց արդարները պիտի ապրեն
յաւիտեան.
նրանց վարձը Տիրոջից է,
եւ նրանց խնամքը Բարձրեալից:
17 Դրա համար էլ նրանք Տիրոջ ձեռ-
քից պիտի ընդունեն
արքայութեան վայելչութիւնն ու
գեղեցիկ թագը,
քանի որ Տէրն իր աջով նրանց հովա-
նի եւ իր բազկով նրանց պաշտպան է
լինելու:
18 Տէրը պիտի սպառազինուի իր
նախանձախնդրութեամբ
եւ պիտի զինավառի իր արարած-
ներին՝
թշնամիներից վրէժ լուծելու համար.
19 իբրեւ զրահ նա պիտի հագնի ար-
դարութիւնը
եւ անաչառ դատաստանը իբրեւ
սաղաւարտ պիտի դնի գլխին,
20 որպէս վահան պիտի վերցնի իր
անպարտելի սրբութիւնը
21 եւ որպէս հատու սուսեր պիտի սրի
բարկութիւնը:
Եւ Տիրոջ հետ միասին ու խառն,
աշխարհը պիտի պատերազմի
անզգամների դէմ:
22 Ամպերից, ինչպէս լայնալիճ ա-
ղեղներից,
փայլակների կորովի նետեր պիտի
տեղան
եւ թռչեն դէպի նպատակակէտը,
23 եւ բարկութիւնից, ինչպէս քարա-
նետից, առատ կարկուտ պիտի թափուի,

ծովի ջրերը պիտի զայրագին յորդեն
նրանց վրայ,
գետերը պիտի անխնայ ողողեն,
24 բուռն հողմը պիտի հարուածի
նրանց դէմքին
եւ, ինչպէս մրրիկը, պիտի քշի նրանց:
Անօրէնութիւնը պիտի աւերի ողջ
երկիրը,
եւ խարդախութիւնը պիտի կործանի
բռնակալների գահերը:

ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

6 Լսեցէ՛ք, ո՛վ թագաւորներ, եւ հասկացէ՛ք.
2 սովորեցէ՛ք, երկրի բոլո՛ր ծագերի
թագաւորներ:
3 Ակա՛նջ դրէք դուք, որ բազմութիւններ ունէք ձեր ձեռքի տակ
եւ հպարտանում էք, որ տիրում էք
բազում ազգերի վրայ.
4 ձեզ այդ իշխանութիւնը Տիրոջ
կողմից է տրուած,
տէրութիւնը՝ Բարձրեալից.
նա էլ հաշիւ է պահանջելու ձեր
գործերի համար
եւ քննելու է ձեր մտածումներ:
5 Դուք նրա թագաւորութեան սպասաւորներն էք,
բայց ուղիղ դատ չէք վարում,
չէք պահում նրա օրէնքները
եւ չէք հետեւում Աստծու կամքին,
իսկ նա ահ ու տագնապով պիտի
հասնի ձեզ վրայ,
6 քանի որ իշխանների համար անաչառ դատաստան է լինելու,
մինչդեռ ռամիկի համար կայ ներման
ողորմածութիւնը:
7 Հզօրներն աւելի խիստ են դատուելու,
8 որովհետեւ Տէրը ոչ ոքի յատկապէս
իր աչքի տակ չի ունենում,
չի խորշում ոչ մի մեծութիւնից,
քանզի ինքն է ստեղծել թէ՛ մեծին եւ
թէ՛ փոքրին
եւ հաւասարապէս խնամք է տածում
բոլորի նկատմամբ:
9 Բայց զօրաւորների նկատմամբ
աւելի խիստ քննութիւն պիտի լինի:
10 Արդ, ձեզ են ուղղուած իմ խոսքերը, ո՛վ բռնակալներ,
որպէսզի իմաստութիւն սովորէք եւ
չսխալուէք:
11 Այն ամէնը, ինչ սուրբ է, պահեցէ՛ք
սրբութեամբ,
եւ դուք պիտի սրբանաք.
նրանք, ովքեր սովորեն այդ բաները,
պաշտպանութիւն պիտի գտնեն:
12 Արդ, ձգտեցէ՛ք հետեւել իմ խոսքերին,
փափագեցէ՛ք եւ պիտի խրատուէ՛ք:
13 Լուսաւոր եւ անթառամ է իմաստութիւնը,
դիւրին է յայտնւում իրեն սիրողներին
եւ հեշտ է գտնւում փնտռողներից:
14 Նա ինքն է հասնում իրեն ցանկացողներին՝ աւելի շուտ ճանաչուելու
համար:
15 Ով վաղ է ելնում նրան փնտռելու,
նա չի չարչարուի,
որովհետեւ դեգերելիս կը գտնի այն
իր դռան մօտ:
16 Նրա մասին մտածելն արդէն կատարեալ իմաստութիւն է,
եւ ով տքնում է նրա համար, շատ
շուտ էլ կը թեթեւանայ հոգսից:
17 Արդարեւ, իմաստութիւնն ինքն է
շրջում՝ գտնելու իրեն արժանի եղողներին,
եւ քաղցրութեամբ յայտնուելով
նրանց շաւիղների վրայ,
ինքն է նրանց տալիս ամէն մի հնարագիտութիւն:
18 Իմաստութեան սկիզբը իմաստութիւն սովորելու ճշմարիտ ցանկութիւնն
է.
19 իսկ սովորելու ցանկութիւնը նրա
նկատմամբ տածած սէրն է,
նրա օրէնքների պահպանութիւնը
գութն է,
նրա օրէնքների իւրացումը՝ անեղծութեան հաստատունութիւնը:
20 Իսկ անեղծութիւնը մարդուն մօտեցնում է Աստծուն,
21 եւ իմաստութեան ցանկութիւնը
տանում է դէպի արքայութիւն:
22 Արդ, ո՛վ ժողովուրդների բռնակալներ,
եթէ իշխանութեան գահեր եւ մականներ էք տենչում,
ապա պատուեցէ՛ք իմաստութիւնը,

որպէսզի յաւիտեան թագաւորէք:
23 Իսկ թէ ի՞նչ է իմաստութիւնը
եւ ինչպէ՞ս է ծագել այն, ես կը
պատմեմ.
24 ես չեմ թաքցնի ձեզնից նրա
գաղտնիքները,
այլ այն կը քննեմ արարածների
ստեղծման սկզբից
եւ կը բացայայտեմ նրա իմացութիւնը:
25 Ես չեմ շեղուի ճշմարտութիւնից
եւ ոչ էլ նրան կը հետեւեմ այն անձի
նման, որ մաշուել է նախանձից,
քանի որ այդպիսի մէկը հաղորդ չէ
իմաստութեանը:
26 Իմաստունների բազմութիւնն աշխարհի փրկութիւնն է,
իմաստուն թագաւորը՝ ժողովուրդների ամրութիւնը:
27 Այսուհետեւ որպէս խրա՛տ առէք
իմ խոսքերը եւ օգտուեցէ՛ք դրանցից:

ՍՈՂՈՄՈՆԸ ՊԱՐԶԱՊԷՍ ՄԻ ՄԱՐԴ ԷՐ

7 Ես ինքս էլ մահկանացու մարդ եմ
բոլորի նման
եւ նախաստեղծ հողածնի ծնունդ:
2 Ես եւս մարմին եմ առել մօր որովայնում տասնամսեայ ժամանակի մէջ՝
մածուելով արեամբ տղամարդու սերմից եւ համատեղ քնի ցանկալի հաճոյքից:
3 Ես էլ ծնուելով՝ շնչեցի նոյն ընդհանուր օդը
եւ համանման վշտերի նոյն երկիրն
ընկայ:
4 Առաջին բարբառս բոլորի նման
նոյն լացը եղաւ,
եւ ես էլ սնուեցի խանձարուրի եւ
հոգսերի մէջ:
5 Թագաւորներից ոչ ոք ուրիշ սկիզբ
չի ունեցել.
6 աշխարհը մէկ մուտք ունի բոլորի
համար եւ մէկ ընդհանուր ելք:
7 Դրա համար էլ աղօթելով խնդրեցի,
եւ ինձ իմաստութիւն տրուեց,
կանչեցի առ Աստուած, եւ իմաստութեան հոգի եկաւ իմ մէջ:
8 Ես նախամեծար համարեցի այն,
քան իշխանութիւնն ու գահը,
եւ հարստութիւնը ոչինչ համարեցի
նրա համեմատութեամբ:
9 Ես այն չնմանեցրի թանկարժէք
քարերի,
որովհետեւ ոսկին մի բուռ աւազ է
նրա առաջ,
իսկ արծաթը նրա համեմատութեամբ՝
մի բուռ կաւ:
10 Առողջութիւնից եւ գեղեցկութիւնից առաւել՝ ես սիրեցի այն,
եւ նախընտրեցի լոյսից առաւել,
որովհետեւ անմարելի է նրանից բխող
լոյսը:
11 Ես նրա շնորհիւ շռայլ բարիքներ
ստացայ,
եւ նրա օգնութեամբ հասայ անթիւ
հարստութեան:
12 Ես հրճուեցի բոլոր նրանց հետ, ում
առաջնորդում էր իմաստութիւնը,
բայց չգիտէի, որ ամէն ինչի ծնունդ
տուողը նա էր:
13 Ես սովորեցի առանց նենգութեան
եւ առանց նախանձի էլ բաշխում եմ,
չեմ թաքցնում նրա հարստութիւնը,
որովհետեւ նա անսպառ գանձ է
մարդկանց համար:
14 Նրանք, որ վարւում են այսպէս,
բարեկամանում են Աստծու հետ՝
նրա կրթութեան ընծայած պարգեւների շնորհիւ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՂԲԻՒՐ ԱՄԷՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

15 Տայ Աստուած, որ ես խօսեմ
իրաւախոհութեամբ
եւ ունենամ նրա տուած շնորհներին
արժանի մտածումներ,
որովհետեւ նա ինքն է իմաստութեան
առաջնորդը եւ իմաստուններին ուղղութիւն տուողը,
16 որովհետեւ նրա ձեռքում ենք թէ՛
մենք, թէ՛ մեր խօսքերը
եւ թէ՛ ամէն մի իմաստութիւն եւ
խելամիտ գործ:
17 Նա ինձ տուել է եղած բաների
մասին անսխալ գիտութիւնը,
որ ճանաչեմ աշխարհի հաստատման
կարգը եւ տարրերի ներգործութիւնը,
18 ժամանակների սկիզբը, վախճանը
եւ միջին մասը,
արեգակի շրջանների փոփոխութիւնները եւ եղանակների շրջադարձերը,

19 տարրերի պտոյտներն ու աստղերի դիրքերը,
20 անասունների բարքերը եւ գազանների գազանային յատկանիշները,
հողմերի շարժումներն ու մարդկանց մտքերը,
տունկերի ձեւափոխութիւններն ու արմատների զօրութիւնը:
21 Ես իմացայ այն ամէնը, ինչ ծածուկ էր կամ բացայայտ,
որովհետեւ իմաստութիւնը, որ բոլորի ճարտարապետն է, ուսուցանեց ինձ:

ՆԵՐԲՈՂ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

22 Նրա մէջ կայ բանական հոգի, որ սուրբ է,
միածին, բազմաբաշխ,
նուրբ, դիւրաշարժ,
պարզ, անարատ,
յայտնի, անվրէպ,
բարեսէր, արագ, անարգել, բարերար,
23 մարդասէր, հաստատուն,
զգուշաւոր, անհոգ,
ամենազօր, ամենահայեաց
եւ կարող՝ թափանցելու մտաւոր, մաքուր եւ նրբին բոլոր բաների մէջ:
24 Արդարեւ, իմաստութիւնն աւելի շարժուն է բոլոր շարժումներից
եւ իր յատակութեան պատճառով թափանցում եւ անցնում է ամէն ինչից ներս:
25 Նա Աստծու զօրութեան ճաճանչն է,
Ամենակալի ճշմարիտ փառքի ծագումը,
եւ դրա համար էլ ոչ մի պիղծ բան չի խառնւում նրան:
26 Նա մշտնջենաւոր լոյսի նշոյլ է,
Աստծու ներգործութեան անարատ հայելին
եւ նրա վեհութեան պատկերը:
27 Նա մի է, բայց ամենակարող.
նա ինքնակայ է, բայց նորոգում է ամէն բան,
սերնդից սերունդ անցնում է մաքուր հոգիների մէջ
եւ պատրաստում Աստծու բարեկամներ եւ մարգարէներ:
28 Աստուած չի սիրում ուրիշ ոչ ոքի, բացի իմաստութեամբ ապրողից:
29 Արդարեւ, իմաստութիւնն աւելի գեղեցիկ է, քան արեգակը եւ բոլոր աստղաբոյլերը,
իսկ լոյսի հետ համեմատած՝ առաւել է նրանից,
30 որովհետեւ լոյսը փոխւում է գիշերի,
մինչդեռ իմաստութեանը չի կարող յաղթել չարութիւնը:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԻԴԷԱԼԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԻՑ ՍՈՂՈՄՈՆԻ ՀԱՄԱՐ

8 Օգտակար առողջութեամբ տարածուելով ծագից ծագ,
իմաստութիւնը քաղցրութեամբ բուժում է բոլորին:
2 Սիրեցի այն, հետամուտ եղայ նրան իմ պատանեկութեան օրերից,
խնդրեցի նրան, որ ինձ հարսնանար,
եւ ցանկացայ նրա գեղեցկութիւնը:
3 Փառաւոր է նրա ազնուական ծագումը,
քանզի նա կեանքի հաղորդութիւն ունի Աստծու հետ,
եւ բոլորի Տէրը սիրեց այն:
4 Նա խորհրդակից է Աստծու իմաստութեանը
եւ ինքն էլ տեսնում է նրա գեղեցկութիւնը:
5 Եթէ կեանքում հարստութիւնն է ցանկալի ունեցուածքը,
ապա ո՞ր հարստութիւնն է աւելի մեծ, քան իմաստութիւնը,
որ կարող է ամէն ինչ անել:
6 Եթէ իմացականութեամբ է, որ գործում է այս կամ այն բանը,
ապա ո՞վ կարող է առաւել լաւ ճարտարապետ լինել եղած բաների մէջ, քան իմաստութիւնը:
7 Եթէ մարդ արդարութիւն է սիրում, ապա արդարութեան վաստակի արդիւնքը առաքինութիւնն է,
որովհետեւ նա է, որ սովորեցնում է գիտութիւն եւ խոհեմութիւն,
արդարամտութիւն եւ արիութիւն,
որոնցից առաւել պիտանի բան չկայ մարդու կեանքում.
8 իսկ ով ցանկանում է բազմահմուտ լինել,
թող նա տեսնէ այս իմաստութիւն, որ

գիտի անցեալը եւ կռահում է գալիքը,
հասկանում է թէ՛ խօսքի իմաստները եւ թէ՛ առակների մեկնութիւնը,
կանխապէս ճանաչում է թէ՛ նախանշանները, թէ զարմանահրաշ բաները
եւ թէ՛ ժամ ու ժամանակների ելքերը:
9 Եւ ահա ես որոշեցի, որ նա կեանքում անբաժան լինի ինձնից,
գիտակցելով, որ նա բարի խորհրդատու կը լինի ինձ համար
եւ կը մխիթարի ինձ հոգսերից եւ տրտմութիւնից:
10 Ես նրա շնորհիւ փառք կը վաստակեմ ժողովրդի մէջ
եւ պատիւ՝ ծերերի առջեւ:
11 Դեռ պատանի՝ միտքս սուր կը լինի դատ ու դատաստանի ժամանակ,
եւ ես փառաւոր կ'երեւամ հզօրների աչքին:
12 Երբ լռեմ, պիտի սպասեն, որ ինձ լսեն,
երբ սկսեմ խօսել, ուշադիր պիտի հետեւեն ինձ,
եւ երբ խօսելիս լինեմ, պիտի զարմանքից ափ ի բերան մնան:
13 Իմաստութեան շնորհիւ ես անմահութիւն պիտի գտնեմ
եւ յաւերժ յիշատակ թողնեմ իմ յետնորդների մէջ:
14 Դարման պիտի լինեմ ժողովուրդներին,
եւ ազգերը պիտի հնազանդուեն ինձ:
15 Սոսկալի բռնակալները պիտի սարսափեն ինձնից՝ լսելով իմ մասին.
բազմութեան մէջ ես շնորհաշատ պիտի երեւամ
եւ պատերազմի մէջ՝ առաքինի:
16 Մտնելով իմ տունը՝ ես պիտի հանգստանամ իմաստութեան հետ,
քանզի նրա ընկերակցութեան մէջ դառնութիւն չկայ,
եւ նրա կեանքի հետ հաղորդակցուելն էլ վիշտ ու ցաւ չունի,
այլ՝ ուրախութիւն եւ խնդութիւն:

ՍՈՂՈՄՈՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ

17 Իմ մէջ խորհելով այսպէս՝ ես վճռեցի իմ սրտում,
որ անմահութիւնը ազգակից է իմաստութեանը,
18 որ բարիքների վայելչութիւնը բխում է նրա բարեկամութիւնից,
անսպառ հարստութիւնը՝ նրա ձեռքի վաստակներից,
իմաստութիւնը՝ նրա խօսքերի կրթութիւնից,
փառքի ձեռքբերումը՝ նրա մտքերին հաղորդակից լինելուց,
ուստի ես շրջում եւ փնտռում էի այն,
որ վերցնէի ինձ մօտ:
19 Ես մտավարժ մանուկ էի եւ բարի հոգու հանդիպեցի.
20 մանաւանդ՝ խիստ ազնիւ էի, եւ մարմինս էլ՝ անարատ:
21 Եւ այն էլ հասկացայ, որ եթէ Աստուած ինձ չտար,
ես այլ կերպ չէի կարող լինել իմաստուն:
Իմաստութիւնը նաեւ այն է,
որ ճանաչես, թէ ումից է շնորհը տրւում:
Ես ընկայ Տիրոջ առջեւ եւ ամբողջ սրտով աղաչեցի նրան:

ԱՂՕԹՔ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

9 Ո՛վ իմ հայրերի Աստուած եւ Տէրդ ողորմութեան,
դու ես, որ քո խօսքով ստեղծեցիր բոլորին.
2 եւ քո իմաստութեամբ ձեւաւորեցիր մարդուն,
որ տիրի քո ստեղծած արարածներին,
3 սրբութեամբ ու արդարութեամբ կառավարի աշխարհը
եւ ուղիղ հոգով դատ ու դատաստան անի:
4 Տո՛ւր ինձ քեզ գահակից իմաստութիւնից
եւ խոտան մի՛ համարիր ինձ քո ծառաներից:
5 Արդարեւ, ես քո ծառան եմ եւ քո աղախնի որդին,
ես տկար մարդ եմ եւ կարճատեւ կեանքի տէր,
ես հասուն չեմ դատի ու օրէնքի իմացութեան մէջ:
6 Եւ եթէ նոյնիսկ որեւէ մէկը կարող է կատարեալ լինել մարդու որդիների մէջ,
բայց եթէ քո իմաստութիւնը հեռու է

նրանից, նա ոչինչ պիտի համարուի:
7 Դու ինձ ընտրեցիր քո ժողովրդի թագաւոր
եւ քո տղաների եւ աղջիկների դատաւոր:
8 Դու ասացիր, որ ես տաճար շինեմ քո սուրբ լերան վրայ
եւ զոհասեղան՝ քո բնակութեան քաղաքում,
քո այն սուրբ խորանի նմանութեամբ,
որ սկզբից եւեթ, նախապէս, ինքդ պատրաստեցիր:
9 Քեզ հետ է նաեւ իմաստութիւնը , որ գիտի քո գործերը,
քեզ մօտ էր նա, երբ դու արարում էիր աշխարհը,
եւ գիտէր, թէ որն է հաճելի քո աչքին
ու որն է քո պատուիրաններին համապատասխան:
10 Առաքի՛ր դրան քո սուրբ երկնքից,
քո փառքի աթոռից ուղարկի՛ր դրան,
որ գայ եւ տեղ գտնի իմ մէջ,
եւ ես գիտենամ, թէ ինչն է հաճելի քո առջեւ,
11 քանզի նա գիտէ ամէն ինչ եւ խելամուտ է բոլորին,
իմ գործերի մէջ ինձ կ'առաջնորդի զգաստութեամբ
եւ իր փառքով կը պահպանի ինձ,
12 իմ գործերն ընդունելի կը լինեն,
ես արդարութեամբ կը դատեմ քո ժողովրդին
եւ արժանի կը լինեմ իմ հօր գահին:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԱՐԴՈՒՆ

13 Ո՞ր մարդը կարող է իմանալ Աստծու խորհուրդները,
եւ կամ ո՞վ կարող է խելամուտ լինել, թէ ինչ է կամենում Տէրը.
14 քանզի մահկանացուների մտածումները անստոյգ են,
իսկ մեր գիտելիքները՝ անհաստատ:
15 Եղծանելի մարմինը ծանրացնում է հոգին,
եւ հողեղէն այս յարկը բազմահոգ է դարձնում միտքը:
16 Ուստի մենք հազիւ ենք նկատում երկրային բաները
եւ չարչարանքով ենք գտնում այն, ինչ ընկած է մեր ոտքերի մօտ:
17 Իսկ այն, ինչ գտնուում է երկնքում, ո՞վ կարող է քննել,
եւ ո՞վ կարող է գիտենալ քո խորհուրդները, եթէ դու իմաստութիւն չտաս
եւ քո սուրբ Հոգին չառաքես քո բարձունքներից:
18 Այսպէս է, որ երկրայիններն ուղղեցին իրենց շաւիղները
սովորեցին այն, ինչ հաճելի է քեզ,
եւ փրկուեցին քո իմաստութեամբ:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ԱԴԱՄԻՑ ՄԻՆՉԵՒ ՄՈՎՍԷՍ

10 Իմաստութիւնը հաստատուն պահեց աշխարհի նախաստեղծ հօրը՝
միայնակ ստեղծեալին:
2 Նա փրկեց նրան իր յանցանքներից
եւ զօրութիւն տուեց նրան բոլորի վրայ իշխելու:
3 Իսկ անիրաւը բարկութեամբ հեռացաւ դրանից
եւ կործանուեց իր եղբայրասպան զայրոյթի մէջ:
4 Դրա համար էլ իմաստութիւնը երկրորդ անգամ փրկեց հեղեղուած երկիրը չնչին այն փայտի շնորհիւ,
որի նաւապետն էր արդարը:
5 Իմաստութիւնն էր նոյնպէս, որ միաբանութեամբ չարութեան մէջ խռնուած ազգերի միջից ճանաչեց արդարին,
նրան անարատ պահեց Աստծու առջեւ
եւ հզօրին պահպանեց որդու նկատմամբ տածած գթութեամբ:
6 Իմաստութիւնն ամբարիշտների կորստի ժամանակ փրկեց արդարին՝
փախցնելով նրան հինգ քաղաքների վրայ իջնող հրից,
7 ուր որպէս չարիքի վկայ՝ հողերը ծխալով դեռեւս մնում են խոպան,
ուր պտղատու տունկերը ժամանակին պտուղ չեն տալիս,
եւ ուր որպէս անհաւատ հոգու յիշատակ՝ կանգուն է աղի արձանը:
8 Զանց անելով իմաստութիւնը՝ նրանք ոչ միայն վնաս կրեցին բարին չճանաչելու համար,
այլեւ աշխարհում անմտութեան յիշատակ թողեցին,

որպէսզի իրենց յանցանքները ծածկուած չմնան:
9 Իսկ իմաստութիւնն իրեն ծառայողներին փրկեց վշտերից:
10 Նա եղբօր բարկութիւնից փախածին առաջնորդեց դէպի ուղիղ շաւիղներ,
ցոյց տուեց նրան Աստծու արքայութիւնը
եւ սրբութիւնները ճանաչելու գիտութիւնը:
Ցաջողութիւն եւ շահ տուեց նրան իր տքնութիւնների մէջ
եւ բազմացրեց նրա վաստակը:
11 Բռնացողների ագահութիւնից պաշտպանեց նրան,
12 աւելի հարստացրեց նրան
եւ պահպանեց թշնամիներից:
Նրան զգուշացրեց դարանակալներից
եւ յաղթող դարձրեց բուռն պատերազմում,
որպէսզի գիտենայ, թէ աստուածպաշտութիւնը զօրաւոր է ամէն բանից:
13 Իմաստութիւնը չլքեց վաճառուած արդարին,
այլ մեղքերից փրկեց նրան,
14 նրա հետ իջաւ փոսը
եւ կապանքների մէջ չթողեց նրան,
մինչեւ իսկ նրա ձեռքը թագաւորական գաւազան դրեց
եւ նրան իշխանութիւն տուեց իրեն նեղողների վրայ,
ցոյց տուեց, որ ստախօսներ էին իրեն բամբասողները,
եւ յաւիտենական փառք տուեց նրան:

ԵԼՔ

15 Իմաստութիւնը փրկեց սուրբ ժողովրդին եւ անարատ սերնդին՝
իրեն նեղող ազգի ձեռքից:
16 Իմաստութիւնը մտաւ Տիրոջ ծառայի հոգու մէջ
եւ հրաշագործութիւններով ու սքանչելիքներով դիմագրաւեց ահաւոր թագաւորներին.
17 սրբերին հատուցեց իրենց վաստակի վարձը,
նրանց առաջնորդեց սքանչելի ճանապարհով,
ցերեկը նրանց հովանի եղաւ,
իսկ գիշերը՝ աստղալոյս:
18 Նրանց անցկացրեց Կարմիր ծովով
եւ տարաւ նրանց առատ ջրերի միջով:
19 Ընկղմեց նրանց թշնամիներին,
իսկ իրենց վերեւ հանեց անդնդի խորքերից:
20 Դրա համար էլ արդարները կողոպտեցին ամբարիշտներին
եւ օրհնեցին, Տէ՛ր, քո սուրբ անունը.
քո ձեռքը, որ մարտնչում էր իրենց համար, օրհնեցին միահամուռ:
21 Իմաստութիւնը բացեց համրերի բերանը
եւ յստակախօս դարձրեց մանուկների լեզուն:

11 Իմաստութիւնը սուրբ մարգարէի ձեռքով յաջողեցրեց նրանց գործերը:
2 Նրանք չրջեցին անբնակ անապատում
եւ վրաններ խփեցին անկոխ վայրերում,
3 կանգնեցին պատերազմողների դէմ
եւ վանեցին թշնամիներին,
4 ծարաւեցին եւ աղերսեցին քեզ,
նրանց ջուր տրուեց ապառաժ քարից,
եւ նրանց պապակը յագեցաւ կարծր քարից:
5 Արդարեւ, ինչ բանով որ պատժուեցին իրենց թշնամիները,
6 նոյն այդ բանից նրանք, երբ կարիքի մէջ էին, բարերարութիւն գտան:
7 Արիւնով կարմրած եւ ալեխառով մշտնջենական գետի փոխարէն,
8 որպէս կշտամբանք մանկակոտոր հրամանի,
դու առատ ջուր տուիր անյոյսներին՝
9 ցոյց տալով, թէ ծարաւի ժամին ինչպէս ես տանջել հակառակորդներին.
10 երբ իրենց պատժի չափն առան,
քո ողորմածութեամբ խրատուած՝ հասկացան,
թէ ինչպէս են տանջւում քո բարկութեամբ դատապարտուած ամբարիշտները:
11 Սրանց, իբրեւ խրատող հայր, փորձութեան ենթարկեցիր,
իսկ ամբարիշտներին, իբրեւ խիստ թագաւոր, կշտամբեցիր դատապարտելով:

12 Նոյն վտանգին ենթարկուեցին թէ՛
հեռու եւ թէ՛ մօտիկ գտնուողները,
13 եւ նրանց կրկին համակեց ան-
ցեալի յիշողութիւնների տրտմութիւնն
ու հեծութիւնը,
14 որովհետեւ, երբ նրանք լսում էին,
թէ իրենց կրած պատժի միջոցով
բարեպաշտները երախտիքի են արժա-
նացել,
ճանաչում էին քո չափը, Տէ՛ր:

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԸ ՊԱՏԺԻՈՒՄ ԵՆ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ

15 Դեռ երէկ եւ վաղուց ի վեր ում
նրանք ուրացել եւ ծաղրում էին,
դէպքերի վերջին ելքից դրդուած՝
զարմացան, թէ իրենք արդարների նման
չէին եւ պիտի ծարաւէին:
16 Իրենց անիրաւ ու անմիտ մտա-
ծումների փոխարէն,
որոնցով մոլորուած՝ նրանք անխօս
սողուններ եւ վատթար ճիճուներ էին
պաշտում,
նրանց վրայ արձակեցիր անբան
անասունների մի բազմութիւն՝
վրէժխնդիր լինելու համար,
17 որպէսզի գիտենան, թէ ինչով որ
մեղանչում է մարդ,
նոյն բանով էլ պիտի պատժուի:
18 Ամենազօր քո ձեռքի համար, որ
անկերպարան նիւթից հաստատեց այս
աշխարհը,
դժուար չէր արձակել նրանց վրայ
արջերի մի բազմութիւն
կամ վայրագ առիւծներ
19 կամ նորաստեղծ, անծանօթ կա-
տաղի այլ գազաններ՝
հուր ու կրակ շնչող,
շարաւալից ծուխ արձակող,
աչքերից սաստիկ կայծեր
փայլատակեցնող:
20 Նրանց խորտակելու համար բա-
ւական էր ոչ միայն դրանց պատճառած
վնասը,
այլեւ դրանց տեսքից զգացուած
սարսափը կը սպանէր նրանց:
21 Բայց առանց դրան էլ նրանց
կարող էին կործանել՝
մի հողմով իսկ հալածելով ու ցրելով
նրանց
քո հոգու զօրութեամբ եւ արդարա-
դատութեամբ:
22 Բայց դու ամէն ինչ կարգեցիր
չափով, թուով ու կշռով,
որովհետեւ իւրաքանչիւր ժամ քեզ
հետ է քո ամենազօր ուժը,
եւ ո՞վ կարող է դէմ կանգնել քո
բազկի զօրութեանը,
23 որովհետեւ ամբողջ աշխարհը քո
առջեւ է իբրեւ կշեռքի նժար
եւ կամ ինչպէս ցօղի մի կաթիլ, որ
իջնում է երկիր:
24 Բայց դու ողորմում ես բոլորին,
որովհետեւ կարող ես անել ամէն բան
եւ թողնում ես, որ ապաշխարու-
թեամբ քաւուեն մարդկային մեղքերը:
25 Քանի որ ատելո՛վ չէ, որ ստեղծել
ես ամէն ինչ,
այդ պատճառով էլ սիրում ես ինչ որ
կայ
եւ գարշանք չես զգում քո ա-
րարածներից եւ ոչ մէկից:
26 Ինչպէ՞ս կարող էր որեւէ բան
լինել,
եթէ դու չկամենայիր,
եւ ինչպէ՞ս կարող էր գոյատեւել մի
բան,
եթէ դու գոյութեան կանչած չլինէիր
այն:
27 Խնայի՛ր բոլորին, ո՛վ հոգեսէր Տէր,
քանզի քոնն է ամէն բան:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԺԻ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՆԸ ՓԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

12 Ամէն բանի մէջ է քո անեղծ հոգին:
2 Դրա համար էլ մեղապարտներին
յանդիմանում ես սակաւ առ սակաւ
եւ յիշեցնելով, թէ ինչ մեղքեր են
գործում, սովորեցնում ես,
որ չարիքներից խուսափելով՝ հաւա-
տան քեզ, Տէ՛ր:
3 Դու ատեցիր նաեւ քո սուրբ երկրի
հին բնակիչներին
4 իրենց կատարած գարշելի գործերի՝
կախարդութիւնների, անսուրբ զոհա-
բերութիւնների,
մանուկների անողորմ կոտորածների
5 եւ աստուածութեանդ նուիրուած
խորհրդաւոր ծէսերի ժամանակ՝
մարդկային մարմնի փորոտիք եւ
արիւն ուտելու համար:

6 Եւ այն ծերերին ու ծնողներին, որոնք
սպանեցին անօգնական հոգիներին,
դու կամեցար կորստի մատնել մեր
հայրերի ձեռքով,
7 որպէսզի այն երկիրը, որ ամենից
թանկ էր քեզ համար,
իր մէջ ընդունէր Աստծուն արժա-
նաւոր ծառաներ:
8 Բայց նրանց եւս, որպէս մարդկանց,
խնայեցիր,
արձակելով քո զօրքի առաջամար-
տիկներին՝
պիծակներին, որ սակաւ առ սակաւ
սպանեն նրանց,
9 թէեւ դու անզօր չէիր ամբարիշտ-
ների դէմ պատերազմելու
արդարների ձեռքով կամ ամեհի
գազաններով,
կամ հէնց մի խօսքով միանգամից
կործանելու նրանց.
10 բայց դու կամաց-կամաց դա-
տաստան տեսնելով՝
ապաշխարութեան տեղ էիր թողնում՝
չմոռանալով սակայն, որ չար է
նրանց արարքը,
բնածին է նրանց չարութիւնը,
եւ յաւիտեան չեն փոխուելու նրանց
մտածումները,
11 քանզի սկզբից եւեթ անիծուած էր
նրանց ծնունդը:
Դու երկիւղ չէիր կրում որեւէ մէկից,
երբ ներում էիր շնորհում մեղա-
ւորներին:
12 Արդարեւ, ո՞վ կարող է ասել քեզ,
թէ ինչ ես անում,
եւ ո՞վ կարող է դէմ կանգնել քո
դատաստանին,
կամ ո՞վ կարող է քեզ կշտամբել ազ-
գեր կործանելու համար, որ դու արել
ես,
եւ կամ ո՞վ կարող է քեզ հակա-
ռակուել՝ անիրաւ մարդկանցից
վրէժխնդիր լինելու համար:
13 Ո՛չ, քեզնից բացի չկայ այլ Աստ-
ուած, որ հոգար բոլորի համար,
որին յայտնի դարձնէիր, թէ անար-
դար չես դատել:
14 Եւ ոչ մի թագաւոր ու ոչ մի բռնա-
կալ չի կարող հայեացքը վեր բարձ-
րացնել քո դէմ նրանց համար, ում
պատժել ես դու.
15 որովհետեւ արդար ես եւ արդա-
րութեամբ ես կառավարում բոլորին:
Ով արժանի է պատիժ կրելու, պատ-
ժում ես,
եւ քո ուժին օտար է անարդար
պատիժը:
16 Քո զօրութիւնը արդարութեան իշ-
խան է,
եւ բոլորի վրայ քո տիրելը մղում է
քեզ բոլորին խնայելու:
17 Դու թերահաւատին ցոյց ես
տալիս քո ուժը կատարեալ զօրութեամբ
եւ յանդիմանում ես նրանց, ովքեր
չեն ճանաչում քո զօրութիւնը:
18 Դու զօրութեամբ ես տիրում, բայց
դատում ես հեզութեամբ
եւ մեծ խնամքով խնամում ես մեզ,
քանի որ քո զօրութիւնը քեզ հետ է
միշտ,
եւ դու երբ կամենաս, կարող է քո
կամքը լինել:

ԱՍՏՈՒԱԾ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

19 Այսպիսի գործերով էլ դու սո-
վորեցրիր քո ժողովրդին,
թէ արդարը պարտաւոր է մարդասէր
լինել,
եւ բարի յոյս ներշնչեցիր քո որդի-
ներին,
թէ նրանց մեղքերին ապաշխա-
րութիւն կը տաս:
20 Եթէ քո ծառաների թշնամիներին
եւ մահապարտներին
այդչափ ներելով դու պատժեցիր եւ
փրկեցիր՝
նրանց տեղ ու ժամանակ տալով,
որ կարողանան ազատուել չարիք-
ներից,
21 ապա որքա՜ն ճշմարիտ դատեցիր
քո որդիներին,
որոնց հայրերի հետ երդում եւ
դաշինք ես կնքել՝
բարի աւետիք տալու համար:
22 Արդ, մեզ խրատելու համար դու
բիւրապատիկ պատժում ես թշնա-
միներին,
որպէսզի մենք, քո բարերարութեան
չափն առնելով, հոգատար լինենք
եւ երբ դատուած լինենք, յուսանք
ողորմութեան:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՊԱՇՏՈՂՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

23 Ուստի եւ նրանց, որ անմիտ եւ տարապարտ կեանքով էին ապրել,
դու տանջեցիր իրենց իսկ գարշելի կուռքերով,
24 քանի որ նրանք շատ հեռու գնացին իրենց մոլորութեան ճանապարհներով
եւ անմիտ երեխաների նման խաբուելով՝
աստուածներ համարեցին անգամ այն կենդանիներին,
որ անարգ էին իրենց իսկ թշնամիների համար:
25 Դրա համար էլ նրանց, ինչպէս անխօս մանուկների,
դատաստանի փոխարէն ծաղր ու ծանակ արիր:
26 Եւ որովհետեւ նրանք ծաղր ու ծանակի սաստից չխրատուեցին,
Աստծու արժանի դատաստանին պիտի ենթարկուեն:
27 Նրանք պատիժ են կրելու հէնց այն անասուններից,
որոնց չարչարելիս զայրանում էին
եւ որոնց աստուածներ էին համարում:
Եւ տեսնելով Նրան, ում առաջ ուրանում էին,
ճանաչեցին, որ նա ճշմարիտ Աստուած է,
եւ այդ պատճառով էլ դատապարտութեան նշանը եկաւ իրենց վրայ:

ԱՍՏՂԵՐԻ ԵՒ ԲՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

13 Իսկապէս բնութեամբ յիմար էին բոլոր այն մարդիկ, որ աստուածգիտութիւն չունէին
եւ անկարող էին տեսանելի բարի բաներից գիտենալ, թէ որն է Գոյը,
եւ ոչ էլ նայելով գործերին՝ ճանաչեցին նրանց Ճարտարապետին:
2 Այլ նրա փոխարէն աստուածներ համարեցին կա՛մ կրակը,
կա՛մ հողմը, կա՛մ արագահոս օդը,
կա՛մ աստղերի շրջանները,
կա՛մ յորդ ջրերը
եւ կա՛մ երկնային լուսատուները՝ աշխարհիս արքաները:
3 Եւ եթէ դրանց գեղեցկութեամբ հրճուելով՝ նրանց աստուածներ կարծեցին,
ապա պիտի գիտենային, թէ որքա՜ն առաւել եւս լաւ է դրանց Տէրը,
որովհետեւ նա, որ գեղեցկութեան արարչապետն է,
նա էլ ստեղծել է դրանք:
4 Իսկ եթէ զարմանում են դրանց ուժի եւ ազդեցութեան վրայ,
ապա թող իմանան, թէ որքա՜ն առաւել եւս զօրաւոր է նա,
որ ստեղծել է դրանք.
5 քանզի արարուածների մեծութիւնից եւ գեղեցկութիւնից՝
նոյն համեմատութեամբ էլ երեւում է դրանք արարչագործողը:
6 Սակայն այդ մարդկանց մեղադրելու տակաւին քիչ բան կայ,
քանի որ, թէեւ մոլորուած, բայց նրանք Աստուած են որոնել
եւ ուզել են գտնել նրան:
7 Անդրադառնալով նրա գործերին՝
քննում եւ տեսողութեամբ հաւանելով տեսանելիները՝
համոզւում են, թէ դրանք գեղեցիկ են:
8 Բայց նրանք եւս արժանի չեն ներման,
9 որովհետեւ եթէ կարողացան այդքան խելամուտ լինել,
որ ընդունակ եղան զննելու աշխարհը,
ապա ինչո՞ւ անմիջապէս չկարողացան յայտնաբերել նրա Տիրոջը:

ԿՈՒՌՔԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

10 Թշուառական են նաեւ այն մարդիկ,
եւ մեռեալ իրերի վրայ է նրանց յոյսը,
ովքեր աստուածներ համարեցին մարդկային ձեռքի գործերը,
ոսկին եւ արծաթը,
արուեստի ճարտար կերտուածքները,
կենդանիների նմանութիւնները
կամ նախնիների ձեռակերտ չնչին ինչ-որ քար:
11 Եւ եթէ որեւէ ատաղձագործ,
սղոցելով ինչ-որ գեղեցիկ մի ծառ,
վարպետօրէն քերել է նրա ողջ կեղեւը

եւ կեանքում օգտագործելու համար պատրաստել վայելուչ եւ պիտանի մի անօթ,
12 իսկ տաշեղը վառել կերակուր պատրաստելու համար եւ յագեցել,
13 կամ անպէտք, խոտելի եւ ծռտիկ-մռտիկ փայտը վերցրել ու տաշել է գործի խոր իմացութեամբ
եւ իմաստուն խելամտութեամբ ձեւաւորել՝
նմանեցրել մարդու կերպարանքին
14 կամ դարձրել անարգ կենդանու ճշգրիտ նմանութիւն,
կրով ծեփել եւ կարմիր սնգոյրով ներկել այն,
կաւով սուաղել նրա բոլոր խորդուբորդ մասերը,
15 եւ նրա համար ըստ արժանւոյն տուն շինելով՝
դրել պատի մօտ եւ ամրացրել երկաթով,
16 զգուշանալով, որ չկործանուի,
որովհետեւ գիտէր,
թէ նա ինքն իր անձին օգնել չի կարող,
քանզի արձան է եւ կարօտ օգնութեան:
17 Այնուամենայնիւ ամուսնութեան, որդիների եւ ունեցուածքի համար մտտենում ու շշնջում է այդ անշունչ կերտուածքին,
աղաչում է եւ չի ամաչում,
18 իր առողջութեան համար դիմում է այդ ապիկարին,
իր կեանքի համար աղերսում է այդ մեռեալին,
աղօթում է այդ անկարին,
որ թեւ ու թիկունք լինի իրեն.
19 եւ նրանից, որ ոտքն առաջ տանել չի կարող,
ճանապարհորդութեան, հարստութեան եւ գործերի յաջողութեան համար է խնդրում,
եւ նրանից, որ ձեռքը շարժել չի կարող,
խնդրում է ձեռքերի կորով եւ արդասաւորութիւն:

ԿՈՒՌՔԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԻ ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

14 Դարձեալ. եթէ մէկը, նաւ բարձրանալով,
կամենում է ճանապարհորդել ամեհի ալիքների վրայով,
օգնութեան է կանչում այդ փայտին,
որն աւելի տկար է, քան նաւի տախտակը,
2 քանի որ թէեւ նաւը ստեղծուել է շահի ցանկութիւնից,
եւ ճարտարապետն էլ իմաստութեամբ է կառուցել,
3 սակայն քո նախախնամութիւնն է, Հա՛յր, որ վարում է այն,
որովհետեւ դու ես, որ ծովի մէջ ճանապարհ եւ ալիքների մէջ ապահով շաւիղ ես տուել՝
4 ցոյց տալով, թէ ամէն ինչից կարող ես փրկել մինչեւ իսկ նրան,
ով ծով է մտել նոյնիսկ առանց փորձ ունենալու:
5 Բայց դու կամենում ես, որ քո իմաստութեան գործը զուր չանցնի,
դրա համար էլ մարդիկ իրենց անձերը վստահում են չնչին փայտին
եւ, շրջելով ալիքների վրայով,
փրկւում աննշան լաստի շնորհիւ:
6 Արդարեւ, հէնց սկզբից, երբ կործանւում էին ամբարտաւան հսկաները,
աշխարհի յոյսը, ապաւինելով լաստանաւին եւ ղեկավարուելով քո ձեռքով,
փրկուեց, որ աշխարհի վրայ սերունդ լինի.
7 քանզի օրհնեալ է այն փայտը, որով արդարութիւն է լինում,
8 եւ անիծեալ է ձեռակերտ կուռքը, ինչպէս նաեւ այն շինողը,
որովհետեւ նա կերտեց,
իսկ այս եղծանելին աստուած անուանուեց:
9 Առհասարակ Աստծուն ատելի են թէ՛ ամբարիշտը եւ թէ՛ նրա ամբարշտութիւնը,
10 որովհետեւ գործն էլ, գործողն էլ հաւասարապէս պիտի պատժուեն:
11 Դրա համար էլ հեթանոսների կուռքերի համար եւս դատաստան է լինելու,
քանզի Աստծու արարածների մէջ նրանք գարշութիւն են,
մարդկանց որդիների համար՝ գայթակղութիւններ,

անզգամների համար՝ ոտքերի որոգայթներ:

ԿՈՒՌՔԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ

12 Ցոունկութիւնը սկիզբ առաւ կուռքերի հնարագործութիւնից,
իսկ կեանքի ապականութիւնը՝ նրանց գիւտից:
13 Ի սկզբանէ դրանք չեն եղել եւ յաւիտեան էլ չեն մնալու,
14 դրանք աշխարհ եկան մարդկանց ունայնամտութեան հետեւանքով,
ուստի նրանց վախճանն էլ շուտ է սահմանուած:
15 Իր վաղամեռիկ որդու տարաժամ մահուան սգով թախծող մի հայր շինել տուեց նրա արձանը
եւ արդէն մահացած այդ մարդուն մեծարեց որպէս աստուած
եւ իր հպատակներին աւանդ թողեց գաղտնի ծէսեր եւ ընծաներ մատուցել:
16 Յետոյ ամբարիշտ այդ սովորութիւնը մնաց երկար ժամանակ
եւ պահպանուեց որպէս օրէնք,
եւ բռնակալների հրամանով կուռքերը պաշտելու կարգ սահմանուեց:
17 Իսկ նրանց, որ հեռու բնակուելու պատճառով մարդիկ չէին կարող դէմառդէմ պատուել,
նոյն օրինակով քանդակեցին նրա հեռաւոր կերպարը
եւ կերտեցին թագաւորի յայտնի պատկերը պատուելու համար,
որպէսզի հեռաւորին, իբրեւ մօտիկի, ողջոյն փութաջանութեամբ:
18 Անգէտների մէջ պաշտամունքի տարածմանը նպաստեց արուեստագէտ վարպետի փառասիրութիւնը,
եւ նա շատ արձաններ կերտեց.
19 քանզի նա, թերեւս ցանկանալով հաճելի լինել իշխանին,
ջանք չինայեց իր արուեստով նրա պատկերը քանդակելու իբրեւ գեղեցկութիւն:
20 Իսկ բազմութիւնը, արուեստագէտի գործի հմայքից հրապուրուած,
նրան, որ քիչ ժամանակ առաջ մեծարում էր որպէս մարդու,
այժմ արդէն պաշտամունքի առարկայ դարձրեց.
21 եւ դա էլ դարձաւ կեանքի որոգայթ եւ գայթակղութիւն,
որովհետեւ ում ժամանակին մարդիկ ծառայում էին կարիքից ու բռնութիւնից դրդուած,
այժմ արդէն նրա անհաղորդակցելի անունը դրին քարի ու փայտի վրայ:

ԿՈՒՌՔԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

22 Բաւական չէ, որ նրանք մոլորուել էին Աստծու գիտութիւնից,
այլեւ, լինելով անգիտութեան պայքարի մէջ,
դեռ այդ չարիքն էլ խաղաղութիւն էին կոչում՝
23 մանկասպան զոհաբերութիւններ կամ գաղտնի ծէսեր կատարելով
եւ կամ ուրիշ կրօնների մոլեգին անառակութիւններ վերցնելով:
24 Նրանք սուրբ չեն պահում ո՛չ իրենց կեանքը եւ ո՛չ էլ ամուսնութիւնը.
ընկերը կասկածամտութեամբ կա՛մ սպանում է ընկերոջը,
կա՛մ թաքուն խաբէութեամբ խղճալի վիճակի է հասցնում նրան:
25 Եւ խառնիխուռն է ամէն ինչ՝
արիւնը եւ սպանութիւնը,
գողութիւնը եւ նենգութիւնը,
ապականութիւնը, ուխտադրժութիւնը,
խռովութիւնը, երդմնազանցութիւնը,
գրգռութիւնը,
26 բարի երախտիքների մոռացութիւնը,
հոգեպղծութիւնը, այլասերուածութիւնը,
ամուսնական անառակութիւնը,
շնութիւնն ու գիշութիւնը:
27 Արդարեւ, կուռքերի անունն ու նրանց պաշտամունքը
հէնց բոլոր չարիքների սկիզբն են, պատճառն են ու վախճանը:
28 Դրանք պաշտողները եթէ ուրախ են լինում, ապա մոլեգնում են,
եթէ մարգարէանում են, ապա սուտ են,
եթէ ապրում են, ապա՝ անիրաւութեամբ,
եթէ երդւում են, ապա դրժում են խոկոյն:

29 Եւ սուտ են երդւում, քանի որ յոյսը դրել են անշունչ կուռքերի վրայ,
որոնցից պատժի ակնկալութիւն չունեն:
30 Արդ, նրանց համար կրկնակի պատիժ պիտի լինի յիրաւի,
քանի որ սխալ դաղափար ունեցան Աստծու մասին՝
ունկնդիր լինելով կուռքերին,
եւ սուտ երդուեցին կուռքերին՝
արհամարհելով սրբութիւնը:
31 Արդարեւ, ոչ թէ նրանց զօրութիւնն է, ում երդուեցին,
այլ մեղաւորներին սահմանուած արդար դատաստանն է,
որ պատժելու է ամբարիշտներին յանցանքների համար:

ԻՍՐԱՅԷԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿՌԱՊԱՇՏ ՉԷ

15 Բայց դու, Աստուա՛ծդ մեր, քաղցր ես եւ ճշմարիտ,
համբերատար ես եւ ողորմածութեամբ ղեկավարում ես բոլորին:
2 Եթէ մեղք էլ ենք գործում, քոնն ենք,
որովհետեւ գիտենք քո զօրութիւնը,
բայց չենք մեղանչի, որովհետեւ գիտենք, որ քեզ ենք պատկանում:
3 Զէ՞ որ քեզ ճանաչելն իսկ բովանդակ արդարութիւն է,
եւ քո զօրութիւնը գիտենալը՝ արմատ անմահութեան:
4 Մեզ չմոլորեցրեց մարդկային չարաբուեստ հնարագիտութիւնը,
եւ ոչ էլ կարծեցեալ նկարիչների անպտուղ աշխատանքը՝
պէս-պէս գոյներով ծեփուած այն պատկերները,
5 որոնց տեսքը ցանկալի է անմիտներին,
եւ որոնք փափագում են մեռեալ արձանի այդ անշունչ կերպարանքը:
6 Զարիքի արուեստագէտներ են բոլոր նրանք,
ովքեր փայփայում են այդ յոյսը.
նաեւ՝ թէ՛ նրանք, որ կերտում են այդ կուռքերը,
թէ՛ նրանք, որ փափագում են, եւ թէ՛ նրանք, որ պաշտում են դրանք:

ԿՈՒՌՔԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ

7 Բրուտը շաղելով փափուկ կաւը՝ դնում է պտտուող գործիքի վրայ
եւ անօթ է շինում մեր բոլորի կարիքների համար.
սակայն միեւնոյն կաւից միանման շինուած այդ անօթներից թէ ո՛րն է ծառայելու սրբութիւններին,
ո՛րը՝ բոլորովին հակառակ գործերի,
թէ ո՛րն ինչի հարկաւոր կը լինի,
– դրա համար նոյն կաւագործն է դատաւորը եւ հոգածուն:
8 Եւ իզուր է, որ նա նոյն կաւից աստուած է կերտում,
քանզի ինքն էլ ոչ շատ ժամանակ առաջ ստեղծուել է հողից
եւ քիչ ժամանակ յետոյ, երբ իր հոգու պարտքը պահանջուի,
նոյն հողին է գնալու, որից իր սկիզբն է առել:
9 Սակայն նրա հոգսն այն չէ, որ ինքը պէտք է տքնի,
եւ ոչ էլ այն, որ կարճատեւ է կեանքը,
այլ այն, որ նա ձգտում է մրցել ոսկերիչների եւ արծաթագործների հետ,
նմանւում է պղնձագործներին ու փառք է համարում,
որ գարշելի բաներ է շինում:
10 Նրա սիրտը մոխիր է, յոյսը՝ արհամարհելի հող,
իսկ նրա կեանքը առաւել անարգ է, քան կաւը,
11 որովհետեւ նա չճանաչեց իր ստեղծողին
եւ ոչ էլ նրան, որ ներգործող շունչ արարեց իր մէջ ու իր մէջ փչեց կենդանի հոգի:
12 Աւելին, նա մեր գոյութիւնը խաղ համարեց,
իսկ մեր կեանքը՝ շահութաբեր տօնավաճառ,
քանի որ, ասում են, որտեղից ուզում է լինի,
թէկուզ հէնց չարիքից, հարկաւոր է բան շահել:
13 Եւ նա բոլորից էլ լաւ գիտի, որ ինքը մեղք է գործում՝
հողեղէն նիւթից դիւրաբեկ անօթներ եւ կուռքեր շինելով:

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԿՈՒԱԳԱՇՏԱԿԱՆ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ

14 Նրանք բոլորը մանուկներից անգամ անմիտ եւ խելապակաս են:
Քո ժողովրդի թշնամիները բռնադատեցին նրան,
15 որովհետեւ աստուածներ համարեցին հեթանոսների բոլոր կուռքերը,
որոնց ո՛չ աչքերն են պիտանի տեսնելու համար,
ո՛չ ռունգերը՝ օդ շնչելու համար,
ո՛չ ականջները՝ լսելու համար,
ո՛չ էլ ձեռքերի մատները՝ շօշափելու համար.
ոտքերն էլ ընդունակ չեն քայլելու:
16 Մարդն է արարել դրանք,
մուրացիկ ոգին է դրանք ստեղծել:
Ոչ մի մարդ չի կարող ստեղծել Աստծու պատկերը,
17 քանի որ մահկանացու է եւ անօրէն ձեռքով մեռեալ գործ է կերտում:
Կերտողն ինքն աւելի լաւ է իր պաշտած կուռքերից,
որովհետեւ ինքը կեանք է ունեցել, իսկ նրանք՝ երբեք:
18 Նաեւ գարշելի կենդանիներ են պաշտում,
ինչն արդէն ծայրայեղ անմտութիւն է:
19 Եթէ այդ կենդանիները համեմատուեն ուրիշների հետ,
ապա աւելի վատթար պիտի համարուեն,
որովհետեւ անասունը չունի այն գեղեցկութիւնը, որ կարելի է ցանկանալ:

ԻՍՐԱՅԵԼԸ ՍՆՈՒՈՒՄ Է, ՆՐԱ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՍՈՎԻ ՄԷՋ ԵՆ

16 Բայց քանի որ նրանք վրիպեցին Աստծու ճանաչողութիւնից եւ նրա օրհնութիւնից,
այդ պատճառով էլ, ըստ նրանց նմանութեան, արժանի պատիժ կրեցին՝
խոշտանգուելով ճիճուների բազմութիւնից:
2 Այդ տանջանքների փոխարէն, սակայն, դու դիւրացրիր քո ժողովրդի դրութիւնը,
նրա սաստիկ ցանկութեան համաձայն՝
նրա համար լորամարգուց նուրբ կերակուր պատրաստեցիր:
3 Իսկ եգիպտացիները, որ կերակուր էին ցանկանում,
իրենց վրայ ուղարկուած զզուելի անասունների պատճառով
հրաժարուեցին անգամ անհրաժեշտ կերակուրն ուտելու ցանկութիւնից,
մինչդեռ քո ժողովուրդը,
սակաւ ինչ կարիքի մէջ մնալով,
վայելում էր նոր տեսակի կերակուրներ,
4 քանի որ թշնամիներդ իրենց գործած բռնութեան համար պէտք է անհրաժեշտ կարիքի մէջ ընկնէին,
մինչդեռ քո ժողովրդին հարկաւոր էր ցոյց տալ միայն,
թէ ինչպէս տանջուեցին իր թշնամիները:

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՒ ԻՍՐԱՅԵԼԸ. ՄՈՐԵԽՆԵՐ ԵՒ ՕՁԵՐ

5 Բայց այն ժամանակ, երբ գազանների սոսկալի բարկութիւնը հասաւ նաեւ քո ժողովրդի վրայ,
եւ մարդիկ մեռնում էին գալարապտոյտ օձերի հարուածներից,
6 քո բարկութիւնը չտեւեց այնքան,
որ նրանք խսպառ ոչնչանան,
այլ որ մի կարճ ժամանակ խռովուեն,
որպէսզի խրատուեն եւ փրկութեան նշան ունենան՝ յիշելու համար քո Օրէնքի պատուիրանները:
7 Եւ ով շրջւում էր նայելու՝
փրկւում էր ոչ թէ իր տեսածի,
այլ քո՛ շնորհիւ, որ փրկիչդ ես բոլորի:
8 Դրանով իսկ համոզում էիր մեր թշնամիներին,
թէ դու ես, որ փրկում ես ամէն չարիքից,
9 որովհետեւ ոմանց մորեխի եւ մկների պատուհասները կոտորեցին,
եւ նրանց համար բուժում չգտնուեց,
քանի որ արժանի էին այդ պատուհասներից տանջուելու.
10 իսկ քո որդիներին թունաւոր օձերի ժանիքներն իսկ չյաղթեցին,
որովհետեւ քո ողորմածութիւնը անջրպետեց որդիներիդ եւ բուժեց նրանց:

11 Քո խօսքերը յիշելով՝ նրանք վերստին պատուաստուում եւ փրկւում էին չուտափոյթ,
որպէսզի խոր մոռացման մէջ չընկնեն
եւ անպաշտպան չմնան քո բարերարութիւնից:
12 Արդարեւ, նրանց ո՛չ դեղերը բժշկեցին եւ ո՛չ էլ սպեղանիները,
այլ քո խօսքն է, Տէ՛ր, որ բուժում է ամէն ինչ.
13 քանզի դու ունես կեանքի եւ մահուան իշխանութիւն,
եւ դու ես դժոխք իջեցնում եւ հանում:
14 Մարդը, սակայն, իր չարութիւնից է սպանութիւն գործում,
եւ մարմնից դուրս ելած հոգին կրկին ետ չի գալիս,
15 քանզի անհնարին է փախչել քո ձեռքից:

ԿԱՐԿՈՒՏ ԵՒ ՄԱՆՆԱՆԱՅ

16 Ամբարիշտներն ուրացան քեզ ճանաչել,
ուստի տանջուեցին քո բազկի զօրութեամբ:
Կարկտի նոր անձրեւներով
եւ անդիմադրելի փոթորիկներով հալածուեցին ու ոչնչացան հրով:
17 Բայց նորայայտ հրաշքն այն էր,
որ ամէն ինչ հանգցնող ջրի մէջ կրակն աւելի ուժեղ էր գործում,
քանի որ աշխարհը մարտնչում է արդարների համար:
18 Երբեմն բոցը մեղմանում էր,
որպէսզի ամբարիշտների վրայ արձակուած գազանները չայրուէին,
այլ նրանք տեսնէին, որ խուճապի են մատնուել Աստծու դատաստանից:
19 Երբեմն էլ ջրի մէջ աւելի ուժեղ էր բորբոքւում կրակի զօրութիւնը,
որպէսզի ոչնչացնէր մեղանչական երկրի արդիւնքները:
20 Դրա փոխարէն դու քո ժողովրդին սնեցիր հրեշտակների կերակրով
եւ նրանց համար, առանց իրենց ջանքերի, երկնքից պատրաստի հաց տուեցիր,
որ բաւարարէր բոլորի պահանջն ու հաճելի լինէր իւրաքանչիւրի ճաշակին:
21 Քո գոյացրած սնունդը ցոյց տուեց քո որդիներին քո տածած քաղցրութիւնը նրանց նկատմամբ,
եւ նրա համը մատակարարուելով ճաշակողներից իւրաքանչիւրին,
փոխւում էր ամէն մէկի ցանկութեան համապատասխան:
22 Ձիւնը եւ սառոյցը կրակի դէմ մնում եւ չէին հալւում,
որպէսզի իմանայինք, թէ այն կրակը,
որ այրւում էր կարկտի մէջ
եւ փայլատակում անձրեւի ջրերում,
ոչնչացնում էր թշնամիների պտուղը.
23 եւ, ընդհակառակը, որպէսզի արդարները կերակրուէին,
կրակը կորցնում էր իր զօրութիւնը:
24 Քո արարածները, քեզ ծառայելով իբրեւ Արարչի,
հզօրանում են անիրաւներին պատժելու ժամանակ
եւ բարերարութեան դիմաց օրհնւում քեզ վրայ յոյս դնողներից:
25 Դրա համար էլ կրակն այն ժամանակ, ամէն ինչով փոխուած,
դառնում էր քո ամենափրկիչ պարգեւի սպասաւորը՝
քո կարօտեալների ցանկութեան համաձայն,
26 որպէսզի քո որդիները, որոնց դու սիրեցիր, Տէ՛ր,
սովորեն, թէ ոչ թէ արմտիքների արդիւնքներն են մարդուն կերակրում,
այլ քո խօսքն է հաւատացեալներին պահում քեզ համար:
27 Այն, ինչը չէր քայքայւում կրակից,
յանկարծակի հալւում էր արեւի դոյզն ճառագայթներից ջերմանալով,
28 որպէսզի յայտնի դառնայ,
թէ պէտք է արեգակի ծագելուց առաջ ելնել՝ քեզ գոհութիւն տալու,
եւ աղօթքի կանգնել լոյսը բացուելուց առաջ.
29 քանզի անշնորհապարտ մարդու յոյսը պիտի հալուի ինչպէս ձմռան սառոյց
եւ հոսի՝ իբրեւ անօգուտ ջուր:

ԽԱՒԱՐԸ ԵՒ ԿՐԱԿԷ ՍԻՒՆԸ

17 Մեծ եւ անպատմելի են քո դատաստանները,
դրա համար էլ անխոհեմ անձերը մոլորուեցին:

2 Անօրէնները կարծում էին, թէ
կարող են բռնադատել սուրբ ազգը,
մինչդեռ նրանք կապուած էին խա-
ւարին
եւ երկարատեւ գիշերով կաշկան-
դուած,
իրենց յարկի տակ արգելափակուած
փախստականներ էին նրանք՝
լքուած յաւիտենական նախախնա-
մութիւնից:
3 Մտածելով, թէ իրենց մեղքերը
գաղտնի են պահուած,
նրանք յիմարութեան անճաճանչ
առագաստի ներքոյ ցրուեցին
ծայր աստիճան յիմարացած եւ խու-
ճապի ու խռովքների մատնուած:
4 Արդարեւ, այն մութ վայրը, որ
թաքցնում էր նրանց, չփրկեց երկիւղից.
նրանց սարսափեցնում էին իրենց
շուրջը թնդացող բոմբիւնները,
նրանց աչքին անժպիտ ու խոժո-
ռադէմ ցնորքներ էին երեւում:
5 Կրակի եւ ոչ մի ուժ չկարողացաւ
լուսաւորել մութը,
եւ խարոյկից ծնուած ոչ մի բորբոք
բոց ի վիճակի չեղաւ փարատելու
տխուր գիշերը:
6 Նրանց միայն ինքնակէզ երկիւղալի
խարոյկ էր երեւում,
եւ դրա աներեւոյթ տեսիլքից զար-
հուրած՝
այն, ինչ տեսնում էին, համարում էին
առաւել եւս մեծ չարիք:
7 Նրանք ընկնում էին հմայական
արուեստի խաբկանքների յաւակնոտ
մտածումների մէջ
եւ արժանանում թշնամանքով լի
կշտամբանքի.
8 որովհետեւ, ովքեր խոստանում էին
հիւանդների հոգուց հալածել զարհու-
րանքն ու խռովքները,
իրենք էին բռնւում ծաղրելի երկիւղի
այդ ախտով:
9 Թէպէտեւ նրանց ինչ-որ նորանշան
բան չէր զարհուրեցնում,
բայց ճիճուների անցնելուց եւ
սողունների շչիւնից խուճապահար՝
դողալով մեռնում էին,
վախենալով նայել անգամ այդ օդին,
որից չէին կարող խուսափել ոչ մի
կերպ:

10 Արդարեւ, երկչոտն ինչ-որ ա-
ռանձնայատուկ չարութիւն ունի,
որն ինքն է վկայում՝ դատա-
պարտելով իրեն
եւ, խղճմտանքից նեղուելով, միշտ
անհնարին է կանխազգում,
11 քանի որ երկիւղն այլ բան չէ, քան
մտքի օգնականութիւնից զրկուած
լինելը:
12 Եւ քանի դեռ մէկի ներսը վախ
կայ,
փոքր է նրա ակնկալութիւնը,
եւ շատ են չգիտակցուած այն պատ-
ճառները,
որոնք տանջանքներ են յարուցում:
13 Նրանք դժոխքի անմատչելի խա-
ւարից վրայ հասած այդ սոսկալի
գիշերը եւս քնեցին սովորական քնով,
14 բայց մերթ սահմռկում էին
ուրուատեսիլ ցնորքներից,
մերթ լքուած հոգով վհատութեան
էին մատնւում,
քանի որ յանկարծահաս եւ
անակնկալ ահը մերուել էր նրանց.
15 եւ ով որտեղ էլ գտնւում էր,
այնտեղ էլ ցած ընկաւ
եւ վախից փակուեց չերկաթապա-
տուած բանտի մէջ:
16 Հողագործ լինէր թէ հովիւ,
կամ թէ դաշտային ծանր աշխա-
տանքներով զբաղուող գործաւոր,
ահով բռնուած՝ ընկնում էր ան-
խուսափելի տագնապի մէջ,
17 քանզի բոլորն էլ կապուել էին
խաւարի անքակտելի մի շղթայով:
Եթէ հողմ էր փչում,
կամ եթէ թանձրախիտ ոստերի միջից
քաղցրաձայն թռչունների դայլայլ էր
հնչում,
կամ բուռն թափով հոսող յորդ ջրերն
էին յորձանք տալիս,
18 կամ գլորուող քարերի սպառնալից
դղրդիւն էր լսւում,
կամ կայտառ կենդանիների աներե-
ւոյթ վազքի ոտնաձայն,
կամ ահռելի գազանների գոչիւն,
կամ լեռների քարանձաւներից
անդրադարձող սրտաբեկ ձայն ու
արձագանքներ,
– այս ամէնը զարհուրեցրեց եւ յու-
սալքեց նրանց:

19 Իսկ ողջ աշխարհը լուսաւորուում
էր պայծառ լոյսով,
եւ ամէն ոք աշխատում էր իր գործին
ամուր կպած,
20 մինչդեռ միայն նրանց վրայ էր
տարածւում ծանր գիշերը,
խաւարի այն պատկերը, որ ի վերջոյ
պատելու էր նրանց.
բայց իրենք իրենց վրայ աւելի ծանր
էին, քան խաւարը:

ԿՐԱԿԷ ՍԻՒՆԸ

18 Բայց մեծ էր լոյսը քո սրբերի
համար.
իսկ նրանք, որ ձայներ էին լսում,
սակայն կերպարանքները չէին տես-
նում,
հէնց նրանք էլ երանի էին տալիս
սրբերին,
որոնք այդպիսի չարչարանքներ
չկրեցին:
2 Սրբերը իրենց կրած նախկին
զրկանքների համար ոչ թէ անարգում,
այլ գոհութիւն էին մատուցում Աստ-
ծուն
եւ թողութիւն հայցում անցեալում
տեղի ունեցածի համար:
3 Խաւարի փոխարէն քո ժողովրդին
առաջնորդում էր բոցի սիւնը անծանօթ
ճանապարհին,
որն անվնաս արեգակ էր նրանց հա-
մար՝ իրենց բազմախուռն գաղթի ժա-
մանակ:
4 Իսկ անօրէններն արժանի էին լոյ-
սից զրկուելու եւ խաւարի մէջ
արգելափակուելու,
որովհետեւ արգելքի տակ էին պա-
հում քո որդիներին,
որոնց միջոցով անեղծ օրէնքի կենաց
լոյսը պիտի պարգեւուէր աշխարհին:

ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ ԵՒ ԱՋԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ

5 Երբ նրանք խորհեցին կոտորել
սրբերի երեխաներին,
ու թէեւ նրանցից մի ընկեցիկ մանուկ
փրկեցին,
բայց դու, որպէս պատիժ, ոչնչացրիր
նրանց բազմաթիւ որդիներին
եւ բոլորին էլ կործանեցիր յորդահոս
ջրերում:
6 Այդ գիշերը նախագուշակ եղաւ մեր
հայրերի համար,
որպէսզի նրանք հաստատ տեսնելով
այն երդումը,
որին հաւատում էին, սրտանց
հրճուէին:
7 Եւ քո ժողովուրդն ակնկալեց ինչ-
պէս արդարների փրկութիւնը,
այնպէս էլ թշնամիների կորուստը:
8 Արդարեւ, ինչով որ պատժեցիր
հակառակորդներին,
նոյն միջոցով էլ քեզ մօտ կանչելով՝
փառաւորեցիր մեզ:
9 Ազնիւների որդիները գաղտնօրէն
զոհաբերութիւններ էին կատարում
եւ միաբան ուխտում սրբութեան
օրէնքը,
որը պահանջում էր, որ սրբերը
հաւասարապէս հաղորդակից լինէին
թէ՛ բարիքներին եւ թէ՛ զրկանք-
ներին:
10 Ուստի այնտեղ, ո՛վ Հայր, քաղցր
օրհնութիւններ էին երգում,
մինչդեռ հակառակ կողմից հնչում էր
թշնամիների խառնաշփոթ բարբառը,
եւ բարձրանում էր սգացող մանուկ-
ների խղճալի ձայնը:
11 Նոյն ձեւով ծառաները տէրերի
հետ տանջուեցին,
եւ ռամիկը թագաւորի հետ նոյն
չարչարանքը կրեց:
12 Առհասարակ բոլորն էլ նոյն մահով
մահացած անթիւ-անհամար մեռեալներ
ունէին,
այնպէս որ կենդանի մնացածները
նոյնիսկ բաւական չէին թաղելու մե-
ռածներին,
որովհետեւ մի վայրկեանի մէջ կոր-
ծանուել էր նրանց պատուական սե-
րունդը:
13 Ու թէեւ կախարդութիւնների
պատճառով ոչ մի բանի չէին հա-
ւատում,
բայց տեսնելով իրենց անդրանիկ
ծնունդների վախճանը,
խոստովանեցին, որ դա քո
ժողովուրդն է:
14 Եւ մինչդեռ խաղաղ անդորրը պա-
տել էր ամէն ինչ,
եւ գիշերն արագօրէն իր ընթացքը

կիսել,
15 երկնային արքայական գահերից
ամենազօր քո խօսքը
ահեղ ռազմիկի նման հասաւ՝ կոր-
ծանելու այս երկիրը:
16 Քո անաչառ հրամանը պողպատէ
սուսեր բերելով եւ միջամուխ լինելով՝
բոլորին մահ էր պատճառում.
այնտեղ երկինքն էր քերում, այստեղ՝
հասնում երկրին:
17 Այն ժամանակ յանկարծակի նրանց
խռովեցին ծանր երազների ցնորքները,
անսպասելի զարհուրանքները
պաշարեցին նրանց,
18 եւ մէկն այստեղ, միւսն էլ այլ տեղ
կիսամահ ընկած՝
յայտնի էին դարձնում այն
պատճառը, որից մեռնում էին:
19 Նրանց խռովեցնող այդ երազները
նոյնն էին նախագուշակում,
որպէսզի նրանք չկործանուէին
առանց իմանալու,
թէ ինչու էին չարաչար տանջւում:

ԱՀԱՐՈՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ

20 Թէեւ երբեմն-երբեմն արդարներն
էլ մատնուեցին մահուան փորձութեան,
եւ շատերը մահ գտան անապատում,
բայց քո բարկութիւնը երկար չտեւեց,
21 որովհետեւ անարատ մի այր
շտապեց իր պաշտամունքի զէնքով՝
աղօթքով եւ խնկով յղելով իր ուղերձը
քաւութեան համար՝
կանգնելու քո բարկութեան դիմաց եւ
վերջ դնելու հարուածներին,
դրանով իսկ ցոյց տալով, որ ինքը քո
ծառան է:
22 Եւ նա յաղթեց խուռներամ բազ-
մութեանը ոչ թէ մարմնի ուժով կամ
զէնքի զօրութեամբ,
այլ սոսկ խօսքով հնազանդեցրեց
պատժողին՝
յիշեցնելով հայրերի երդումն ու
դաշինքը:
23 Միմեանց վրայ շեղջ-շեղջ կուտա-
կուած դիակների մէջ կանգնած՝
նա դադարեցրեց բարկութիւնը
եւ ողջերի ու մեռածների միջով ճա-
նապարհ բացեց:
24 Նրա ծոպաւոր պարեգօտի վրայ
ողջ աշխարհն էր դրուագուած,
քառաշար թանկագին քարերի վրայ
քանդակուած էր հայրերի փառքը,
իսկ նրա գլխի թագի վրայ՝ քո մե-
ծութիւնը:
25 Դրանցից էլ խորշեց կործանիչը եւ
հէնց դրանցից էլ զարհուրեց,
քանզի բաւական էր միայն քո
բարկութեան այդ փորձը:

ԱՆՑՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԾՈՎԻՑ

19 Բայց անողորմ այդ բարկութիւնը
ամբարիշտների վրայ տարածուեց
մինչեւ վերջ,
քանզի Տէրը գիտէր նրանց եւ նրանց
կատարելիք գործերը.
2 թէեւ նրանք արձակեցին քո ժո-
ղովրդին եւ շտապ ճանապարհեցին,
սակայն փոքր-ինչ յետոյ զղջալով՝
սկսեցին հալածել,
3 որովհետեւ քանի դեռ նրանք իրենց
սգի մէջ էին
եւ կոծում էին մահացածների գերեզ-
մանների վրայ,
ուրիշ մի անմիտ խորհուրդ էլ յղա-
ցան.
նրանց, ում աղաչանքով ճանապար-
հել էին,
սկսեցին հետապնդել որպէս
փախստականների:
4 Այդ տագնապը նրանց մղում էր
դէպի այն վախճանը,
որին արժանի էին իրենք,
եւ այլեւս չէին մտաբերում անցեալի
դէպքերը,
որպէսզի մնացած տանջանքների
պատիժները եւս իրենց լրումին
հասնէին,
5 քո ժողովուրդը գնար նոր ու սքան-
չելի ճանապարհով,
եւ իր որդիները փառաւոր մահ
գտնէին,
6 որովհետեւ արարածներից իւրա-
քանչիւրը վերստին պիտի նորոգուէր
ըստ իր բնութեան՝
հնազանդուելով քո հրամաններին:
7 Եւ որպէսզի քո որդիներն անվնաս
մնային,
ամպը պիտի ծածկէր բանակը, ջուրը
պիտի ցամաքէր,

նրա տակից հողի յատակը երեւար,
կարմիր ծովի մէջ պիտի բացուէր
անխափան մի ճանապարհ,
իսկ յորդ ջրերի յորձապտոյտներից՝
ծաղկաւէտ մի դաշտ:
8 Քո ձեռքի հովանու ներքոյ նրանք
միահամուռ անցան այդտեղից՝
տեսնելով քո սքանչելի գործերը:
9 Նրանք կերակրուեցին ձիերի նման
եւ խայտացին գառների պէս՝
օրհնելով քեզ, Տէ՛ր, որ փրկեցիր
իրենց:
10 Նրանք տակաւին յիշում էին այն
դէպքերը,
որ տեղի ունեցան իրենց պանդխտու-
թեան ժամանակ.
թէ ինչպէս անասունների ծնունդների
փոխարէն հողը խայթող մոծակներ
դուրս բերեց,
իսկ գետը ջրային էակների փոխա-
րէն՝ գորտերի բազմութիւն:
11 Յետոյ նաեւ թռչունի նոր տեսակի
ծնունդ տեսան,
երբ կերակրուելու ցանկութեամբ
տենչալի խորտիկներ խնդրեցին:
12 Նրանց համար, որպէս մխիթա-
րութիւն, ծովից լորամարգիներ ելան,
իսկ մեղաւորներին, ոչ առանց կան-
խերեւ հրաշքների,
պատիժներ հասան բուռն բար-
կութեան կայծակների տեսքով.
եւ նրանք արդարացի չարչարանք
կրեցին իրենց չարութեան համապա-
տասխան,
որովհետեւ խիստ օտարատեաց էին:

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԸ. ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ՕՏԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

13 Ոմանք եկուոր անծանօթներին
չէին ընդունում,
իսկ ոմանք էլ բարեգործ հիւրերին
ստիպում էին ծառայել իրենց:
14 Եւ ոչ միայն այսքանը,
այլեւ դատաստան է լինելու նրանց
համար,
ովքեր ատելութեամբ էին ընդունում
օտարներին:
15 Զէ՞ որ նրանք տօնական խնդու-
թեամբ օտարականներին ընդունելուց
յետոյ
անտանելի վիշտ ու չարչարանքներ
պատճառեցին նրանց,
մինչդեռ սկզբի օրերին հաւասարներ
էին միմեանց:
16 Դրա համար էլ կուրութիւնը
հարուածեց նրանց,
ինչպէս մի ժամանակ այն մարդկանց,
որ կանգնել էին արդարի դռանը.
նրանց պատեց անշող ու անփարատ
խաւարը,
եւ նրանցից ամէն մէկն իր դռան ելքն
էր փնտռում:

ԱՍՏՈՒԱԾ ՄԻ ՆՈՐ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԻՋ

17 Այսպէս ամէն ինչ ըստ պատշաճի
փոխեց իր բնութիւնը,
ինչպէս նուագարանի իւրաքանչիւր
եղանակն է փոխում իր բնոյթը,
սակայն միշտ նուագի նոյն հնչիւն-
ներն են մնում՝
ստեղծուած նոյն ձայնեղանակի հա-
մար:
Այս բանը ճշմարտօրէն կարելի է
նկատել գոյերի փոփոխութիւնից:
18 Զէ՞ որ ցամաքային կենդանիները
տեղափոխւում էին ջրերի մէջ,
իսկ ջրային կենդանիները վերա-
դառնում էին ցամաք:
19 Կրակն իր զօրութեամբ յաղթում էր
ջրին,
իսկ ջուրը մոռանում էր իր մարիչ
բնութիւնը:
20 Բոցերը չէին այրում-սպառում
թափառող անասունների դիւրավառ
մարմինները
եւ ոչ էլ հալում էին սառցանման եւ
դիւրահալ անուշ կերակրի տեսակը:

ՆԵՐԲՈՂ-ՎԵՐՋԱԲԱՆ

21 Արդարեւ, ամէն ինչում դու
բարձրացրիր եւ փառաւորեցիր քո
ժողովրդին, Տէ՛ր,
եւ ամէն ժամ ու ամենուրեք անտես
չարեցիր նրան քո պաշտպանութեամբ:

ՍԻՐԱՔ

Ներածութիւն

Այս գիրքը հեղինակութիւնն է Սիրաքի որդի (եբրայերէն՝ Բեն Սիրա) Յիսուս (Եօշուա) անունով մի մարդու, որից եւ գիրքը ստացել է իր անունը: Հեղինակը ապրել է Երուսաղէմում մակաբայեցիների ապստամբութիւնից առաջ: Նա նուիրուած մասնագէտ էր Իսրայէլի սրբազան գրքերի, շատ էր ճանապարհորդել եւ պատկանում էր Իմաստունների դասին:

Սիրաքի գրքի նպատակն է եղել հելլէնիզմի մեծացող ազդեցութեան դէմ պաշտպանել իսրայէլացի ժողովրդի՝ անցած սերունդներից փոխանցուած մշակութային եւ կրօնական ժառանգութիւնը: Օգնելու համար իր հրեայ ժամանակակիցներին, որպէսզի պահպանեն իրենց ազգային ինքնութիւնը խռովայոյզ եղելութիւններով հարուստ ժամանակաշրջանում, հեղինակը աշխատում է համոզել նրանց, որ Իսրայէլը ոչ մի պատճառ չունի նախանձելու հելլէնիստական մշակոյթին, սովորոյթներին եւ կրօնին:

Սիրաքի գրքի եբրայերէն բնագիրը, որից կարեւոր հատուածներ են գտնուել, դժբախտաբար լրիւ չի պահպանուել: Գիրքը ամբողջութեամբ մեզ է հասել միայն յունական թարգմանութեամբ, որ կատարել է հեղինակի թոռը:

Դժուար է որոշակիօրէն ասել, թէ գրուածքն ունի ընդհանուր մի ծրագիր: Այսուհանդերձ թւում է, թէ հեղինակն իր ուսուցումը բաժանել է հինգ մասի: Վերջին մասում նա փառաբանում է Աստծուն որպէս Արարչի եւ գովքն է հիւսում իր նախնիների՝ Ենոքից եւ Նոյից սկսած մինչեւ Նէեմի:

Լինելով ժառանգորդը իմաստալից գրուածքների, ինչպիսիք են Յոբի գիրքը եւ մանաւանդ Առակները, հեղինակը իր ամբողջ գիտելիքներն ու փորձառութիւնը ի սպաս է դնում ժամանակի երիտասարդութեանը՝ ուսուցանելու համար նրան, թէ բոլոր հանգամանքներում հարկաւոր է գործել Աստծու կամքի համաձայն:

ՅԵՍՈՒԻ ՈՐԴԻ ՍԻՐԱՔԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ՀՈԳԵՒՈՐ ԽՐԱՏՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ†

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

1 *Բովանդակ իմաստութիւնը Տիրոջից է, եւ այն յաւիտեան կը մնայ նրա հետ:*
2 *Ո՞վ կարող է հաշուել երբեւէ ծովի աւազը, անձրեւների չիթերը եւ յաւիտենութեան օրերը:*
3 *Ո՞վ կարող է քննել երկնքի բարձրութիւնը, երկրի լայնութիւնը եւ իմաստութեան խորքերը:*
4 *Իմաստութիւնն ստեղծուեց ամէն ինչից առաջ, զգօնութիւնը եւ հանճարը ի յաւիտենից կային:*
5 *Իմաստութեան աղբիւրը բարձրեալ Աստծու խօսքն է, եւ նրա ճանապարհները յաւիտենական պատգամներ են:*
6 *Իմաստութեան արմատները նրա մէջ յայտնուեցին:*
7 *Ո՞ւմ տրուեց իմաստութեան գիտութիւնը, եւ ո՞վ հասկացաւ նրա արուեստը:*
8 *Իմաստութիւնը մէկ է եւ խիստ ահեղ, որ նստում է իր գովութեան աթոռին:*
9 *Ինքը՝ Տէրը հաստատեց այն, տեսաւ եւ չափեց այն ու հեղեց իր գործերի վրայ,*
10 *ամէն մարմնի վրայ, ըստ իր պարգեւի, եւ այն բաշխեց իր սիրելիներին:*
11 *Տիրոջ հանդէպ երկիւղը փառք է ու պարծանք, ուրախութիւն է եւ ցնծութեան պսակ:*
12 *Տիրոջ հանդէպ երկիւղը զուարճացնում է սիրտը եւ պարգեւում ուրախութիւն, խնդութիւն ու երկար կեանք:*
13 *Ով երկիւղ է կրում Տիրոջից, նա բարիք կը ստանայ յետոյ եւ իր վախճանի օրը կ'օրհնուի:*
14 *Տիրոջ հանդէպ երկիւղը Տիրոջ պարգեւն է, որ հաստատւում է սիրոյ ճանապարհներին:*
15 *Տիրոջ հանդէպ սէրը փառաւոր իմաստութիւն է, եւ ում կամենում է՝ Տէրը շնորհում է համաձայն իր հայեցողութեան:*
16 *Իմաստութեան սկիզբը երկիւղն է Տիրոջից, որ հաւատացեալների համար հաստատուել է մայրական արգանդից ի վեր, մարդկանց հետ բնաւորուել է յաւիտենական հիմքից եւ հաւատարիմ կը մնայ նրանց սերնդի հետ:*
20 *Իմաստութեան լրումը երկիւղն է Տիրոջից. այն կը սնի մարդկանց իր պտուղներով,*
21 *մարդու ամբողջ տունը կը լցնի ցանկալի բաներով եւ շտեմարանները՝ նրա վաստակով:*

ԼԻՆԵԼ ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ԵՒ ՋՈՒՍՊ

22 *Իմաստութեան պսակը Տիրոջ հանդէպ երկիւղն է:*
23 *Նա է, որ ծլեցնում է խաղաղութիւն եւ կատարեալ առողջութիւն, տեսնում եւ քննում է ամէն բան:*
24 *Նա է, որ բխեցրեց իմաստունի խրատը եւ գիտութիւնը, բարձրացրեց նրանց փառքը, ովքեր ունեն այն:*
25 *Իմաստութեան արմատը երկիւղն է Տիրոջից, եւ նրա ոստերը՝ երկար կեանքը:*
26 *Տիրոջ հանդէպ երկիւղը վանում է մեղքը,*
27 *իսկ երկիւղ չունեցողը չի կարող արդարանալ:*
28 *Անիրաւ զայրոյթը չի կարող արդարանալ, քանզի նրա զայրոյթի ընթացքը նրան տանում է դէպի կործանում.*
29 *համբերատարը միառժամանակ զսպում է իրեն, եւ յետոյ դարձեալ ուրախութիւնը տիրում է նրան:*
30 *Նա միառժամանակ կը թաքցնի իր խօսքերը, եւ շատերի շուրթերը կը պատմեն նրա իմաստութեան մասին:*
31 *Իմաստութեան գանձերի մէջ խրատի առակներ կան:*
32 *Մեղաւորի համար աստուածապաշտութիւնը գարշելի է:*
33 *Եթէ իմաստութեան ես ձգտում, պահի՛ր Տիրոջ պատուիրանները, եւ Տէրը քեզ կը պարգեւի այն:*
34 *Արդարեւ, իմաստութիւնն ու խրատը երկիւղն է Տիրոջից, եւ հաւատն ու հեզութիւնը հաճելի են Տիրոջը:*
35 *Մի՛ անտեսիր Տիրոջ հանդէպ երկիւղը եւ նրան մի՛ մօտեցիր երկբա-*

†Հայերէն տպագիր թարգմանութեան մէջ բացակայում են Ը, ԽԳ-ՄԱ գլուխները: Տների համարակալման մէջ կան շեղումներ:

յութեամբ:
37 *Կեղծաւորութիւն մի՛ արա մարդկանց առջեւ եւ զգո՛յշ եղիր քո շրթունքներից:*
38 *Մի՛ բարձրացրու քեզ, որպէսզի չընկնես, քո վրայ անարգանք չբերես, եւ Տէրը չնուաստացնի քեզ,*
40 *քանզի նրան չմտեցար Տիրոջ երկիւղով, եւ քո սիրտը լի է նենգութեամբ:*

ՏԻՐՈՋ ԵՐԿԻՒՂԸ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԻՆ

2 *Որդեա՛կ, եթէ նուիրուում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձութիւնների պատրաստիր:*
2 *Ուղղի՛ր քո սիրտը, համբերի՛ր եւ չփոթութեան մի՛ մատնուիր աղէտների ժամանակ:*
3 *Փարուի՛ր Տիրոջը եւ մի՛ հեռացիր, որպէսզի յետագայում բարձրանաս:*
4 *Ինչ էլ որ գայ քո գլխին, ընդունի՛ր յօժարութեամբ եւ յաճախադէպ տառապանքների ժամանակ համբերատա՛ր եղիր:*
5 *Ոսկին փորձւում է կրակի մէջ, իսկ մարդը՝ տառապանքների բովում:*
6 *Հաւատա՛ Տիրոջը, եւ նա կը պաշտպանի քեզ, ուղղի՛ր քո ճանապարհները եւ յոյսդ դի՛ր նրա վրայ:*
7 *Դուք, որ երկիւղ էք կրում Տիրոջից, ակնկալեցէ՛ք նրա ողորմութիւնը եւ մի՛ խոտորուէք, որպէսզի չգլորուէք:*
8 *Դուք, որ երկիւղ էք կրում Տիրոջից, հաւատացէ՛ք նրան, եւ չի կորչի ձեր վարձը:*
9 *Դուք, որ երկիւղ էք կրում Տիրոջից, ակնկալեցէ՛ք բարիքներ, յաւիտենական ուրախութիւն եւ ողորմութիւն:*
11 *Նայեցէ՛ք հին ազգերին եւ տեսէք՝ ո՞վ հաւատաց Տիրոջը եւ ամօթով մնաց:*
12 *Կամ ո՞վ մնաց Տիրոջ երկիւղի մէջ՝ եւ յուսահատուեց. կամ ո՞վ կանչեց Տիրոջը, եւ նա անտես արեց նրան:*
13 *Արդարեւ, Տէրը գթած է եւ ողորմած, ներում է մեր մեղքերը եւ փրկում է մեզ նեղութեան ժամանակ:*
14 *Վա՛յ վատթար սրտերին, յուսալքուած ձեռքերին եւ այն մեղաւորին, որ քայլում է երկու շաւիղներով:*
15 *Վա՛յ յուսաբեկ սրտին, որ չի հաւատում. դրա համար էլ նա չի գտնի պաշտպանութիւն:*
16 *Վա՛յ ձեզ, որ կորցրել էք համբերութիւնը, եւ ի՞նչ պիտի անէք, երբ Տէրն այցելի հաշիւ պահանջելու:*
18 *Ովքեր երկիւղ են կրում Տիրոջից, զանց չեն առնի նրա խօսքերը, եւ ովքեր սիրում են նրան, կը պահեն նրա ճանապարհները:*
19 *Ովքեր երկիւղ են կրում Տիրոջից, կը փնտռեն նրա բարեհաճութիւնը, եւ ովքեր սիրում են նրան, կը լցուեն նրա օրէնքով:*
20 *Ովքեր երկիւղ են կրում Տիրոջից, նրանց սրտերը պատրաստ կը լինեն Տիրոջ առաջ, նրանց անձերը՝ խոնարհ:*
22 *Լաւ է Տիրոջ ձեռքն ընկնենք եւ ոչ թէ՝ մարդկանց,*
23 *քանզի ինչպէս նրա մեծութիւնն է, այնպէս էլ՝ նրա ողորմածութիւնը:*

ԽՐԱՏ ՈՐԴԻՆԵՐԻՆ

3 2 *Լսեցէ՛ք ինձ՝ ձեր հօրը, որդինե՛ր, եւ արէ՛ք այդպէս, որպէսզի փրկուէք.*
3 *քանզի Տէրը փառաւորում է հօրն իր զաւակների նկատմամբ եւ հաստատում մօր իրաւունքները որդիների վրայ:*
4 *Ով պատուում է հօրը, քաւում է իր մեղքերը, եւ ով յարգում է իր մօրը, նման է գանձ դիզողի:*
5 *Ով պատուում է հօրը, ինքն էլ կ'ուրախանայ իր որդիներով, եւ նրա աղօթքը լսելի կը լինի:*
6 *Ով փառաւորում է հօրը, երկարակեաց կը լինի:*
8 *Ով լսում է Տիրոջը, կը հանգստացնի իր մօրը եւ իր ծնողներին կը ծառայի այնպէս, ինչպէս տէրերին:*
9 *Գործով եւ խօսքով պատուի՛ր քո հօրը, որպէսզի նրա կողմից օրհնութիւն գայ քեզ վրայ:*
11 *Հօր օրհնութիւնը ամրացնում է որդիների տները, իսկ մօր անէծքը խարխլում է հիմքերը:*
12 *Մի՛ փնտռիր փառք քո հօր անարգանքի մէջ, որովհետեւ քո հօր անարգանքը փառք չէ քեզ համար:*

13 *Արդարեւ, մարդու փառքը իր հօր պատուից է գալիս, որդիների նախատինքը՝ մօր անպատուութիւնից:*
14 *Որդեա՛կ, զօրավի՛դ եղիր քո հօրը ծերութեան ժամանակ եւ նրան մի՛ տրտմեցրու իր կեանքի ընթացքում:*
15 *Եւ եթէ պակասի նրա խելքը, ների՛ր նրան, մի՛ անարգիր նրան քո ամբողջ ուժով:*
16 *Ով հոգատար է հօր հանդէպ, Աստուած չի մոռանայ նրան:*
17 *Դրա փոխարէն չարը կը ներուի քեզ, քո նեղութեան օրը Տէրը կը յիշի քեզ եւ, ինչպէս սառոյցն է հալւում ջերմութիւնից, այնպէս էլ կը հալուեն քո մեղքերը:*
18 *Ով լքում է հօրը, նման է Աստծուն անարգողի, ով բարկացնում է իր մօրը, անիծուած է Տիրոջից:*

ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

19 *Որդեա՛կ, քո գործը հեզութեա՛մբ կատարիր եւ կը սիրուես ընտիր մարդկանցից:*
20 *Ինչքան մեծ լինես, այնքան խոնարհեցրո՛ւ քո անձը, եւ շնորհ կը գտնես Տիրոջ առջեւ, քանզի մեծ է Տիրոջ զօրութիւնը, եւ նա փառաւորում է իր կամքը կատարող խոնարհներին:*
22 *Քո ուժերից վեր բաներ մի՛ ձեռնարկիր, եւ այն, ինչ հզօր է քեզանից, մի՛ քննիր: Մտքիդ մէջ պահի՛ր այն, ինչ հրամայուեց քեզ,*
23 *քանզի քեզ պէտք չեն գաղտնի բաներ:*
24 *Աւելորդ գործեր քննող մի՛ եղիր, որովհետեւ աւելի իմաստութիւն է տրուած քեզ, քան շատ մարդկանց:*
26 *Արդարեւ, շատերին մոլորեցրեց իրենց մասին մեծ կարծիք ունենալը, եւ դրանով չար մտածումը սողոսկեց նրանց միտքը:*
27 *Ով որ սիրում է տագնապը, նրա մէջ էլ պիտի կորչի:*
28 *Ցամաք սիրտը ի վերջոյ չարաչար պիտի կործանուի,*
29 *քանզի դաժան սիրտը ցաւերով կը ծանրանայ, եւ մեղաւորը մեղքերի վրայ մեղքեր կ'աւելացնի:*
30 *Ամբարտաւանի հարուածներից բժշկութիւն չկայ, որովհետեւ չարութեան բոյսը արմատաւորուեց իր մէջ:*
31 *Իմաստունի սիրտը իր միտքն է բերում առակը. իմաստունի ցանկութիւնն է, որ լինի լսող ականջ:*
33 *Ջուրը հանգցնում է բորբոքուած կրակը, եւ ողորմածութիւնը քաւում է մեղքերը:*
34 *Ով բարիք է հատուցում, պիտի յիշուի յետագայում, իսկ սայթաքելիս նեցուկ պիտի գտնի:*

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹԻՒՆ

4 *Որդեա՛կ, մի՛ զլացիր օգնել աղքատներին եւ թոյլ մի՛ տուր, որ տուայտեն կարօտեալների աչքերը:*
2 *Քաղցած մարդուն մի՛ տրտմեցրու եւ մի՛ զայրացրու մարդուն նրա չքաւորութեան մէջ:*
3 *Մի՛ խռովի՛ր արդէն նեղուած սիրտը եւ մի՛ դանդաղիր օգնել կարօտեալներին:*
4 *Մի՛ մերժիր նեղութեան մէջ եղողի պաղատանքը եւ քո երեսը մի՛ դարձրու տնանկից:*
5 *Քո հայեացքը մի՛ շրջիր կարօտեալից եւ առիթ մի՛ տուր, որ մարդ անիծի քեզ,*
6 *քանզի երբ նա իր հոգու դառնութեան պահին քեզ անիծի, նրա խնդրանքը կը լսի Տէրը:*
7 *Քո անձը սիրելի՛ դարձրու ժողովրդին եւ քո գլուխը խոնարհեցրո՛ւ մեծի առջեւ:*
8 *Քո ականջը խոնարհեցրո՛ւ տնանկին եւ խաղաղ հեզութեամբ պատասխա՛ն տուր նրան:*
9 *Զրկուածին փրկի՛ր հզօրի ձեռքից եւ կարճամիտ մի՛ եղիր, երբ դատում ես:*
10 *Որբերի համար եղիր ինչպէս հայր եւ նրանց մօր հանդէպ՝ որպէս ամուսին,*
11 *եւ դու կը լինես Բարձրեալի որդու նման, որը քեզ աւելի կը սիրի, քան քո մայրը:*

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵԱԼ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՄԱՐԴՈՒՆ

12 *Իմաստութիւնը բարձրացնում է իր որդիներին եւ պաշտպան է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն:*
13 *Ով սիրում է նրան, կեա՛նքն է սիրում, եւ ովքեր առաւօտից շտապում են դէպի նա, ուրախութեամբ պիտի լցուեն:*
14 *Ով ունի այն, փառք պիտի ժառանգի, եւ ուր որ մտնի նա, պիտի օրհնի Տիրոջը:*
15 *Ովքեր երկրպագում են նրան, ծառայում են սրբութեանը, եւ Տէրը սիրում է այն սիրողներին:*
16 *Ով լսում է նրան, դատելու է ազգերին, եւ ով իր մտքի մէջ դնի այն, կ'ապրի յուսով:*
17 *Ով հաւատայ, կը ժառանգի այն, եւ երբ վրայ հասնի չարութիւնը, նրա սերունդը կը յարատեւի:*
18 *Սկզբից իմաստութիւնը կը գնայ այդ սերնդի հետ սայթաքուն ճանապարհներով,*
19 *երկիւղ եւ վստահութիւն կը բերի նրան եւ նրան փորձութեան կը մատնի իր խրատով, մինչեւ որ վստահի նրա անձին եւ նրան փորձի իր հրահանգներով:*
20 *Ապա դարձեալ ընդառաջ դուրս կը գայ նրան, ուղիղ ճանապարհի վրայ, կ'ուրախացնի նրան, եւ իր գաղտնիքները նրան կը յայտնի:*
22 *Բայց եթէ մոլորուի, կը թողնի նրան եւ կը մատնի նրան իր իսկ գլորմանը:*

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԿԵՂԾ ԱՄՕԹ

23 *Առժամանակ դանդաղի՛ր եւ զգո՛յշ եղիր չարից,*
24 *եւ դու քո անձի համար ամօթահար չես լինի,*
25 *քանզի ամօթ կայ, որ դէպի մեղք է տանում, ամօթ էլ կայ, որ փառք է եւ շնորհ:*
26 *Մի՛ եղիր աչառու հակառակ քո անձի եւ մի՛ ամաչիր ի վնաս քեզ:*
28 *Նեղութեան պահին խօսքը մի՛ արգելիր, քանզի ասուածից է ճանաչւում իմաստութիւնը, եւ խրատը՝ լեզուի խօսքերից:*
30 *Մի՛ եղիր ընդդէմ ճշմարտութեան եւ ամաչի՛ր քո անարժանութեան համար:*
32 *Մի՛ ամաչիր խոստովանել քո մեղքերը, մի՛ դիմակայիր գետի հոսանքին, մի՛ ենթարկիր քո անձը յիմարին,*
33 *մի՛ ակնածիր հզօրից, մինչեւ մահ պայքարի՛ր յանուն ճշմարտութեան, եւ Տէր Աստուած կը պայքարի քեզ հետ:*
34 *Մի՛ եղիր յանդուգն քո լեզուով եւ ծոյլ ու դանդաղկոտ՝ քո գործերում:*
35 *Մի՛ եղիր քո տան մէջ առիւծի պէս եւ դաժան՝ քո ծառաների հանդէպ:*
36 *Թող ձեռքդ բաց չլինի վերցնելու համար եւ փակ՝ տալու ժամանակ:*

ԽՐԱՏ ԻՐ ԱՆՁԻ ԲԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

5 *Ցոյսդ քո ունեցուածքի վրայ մի՛ դիր եւ մի՛ ասա, թէ դա բաւական է ինձ:*
2 *Գերի մի՛ դարձիր քո անձին եւ քո ուժին, մի՛ հպարտացիր քո հարստութեամբ, մի՛ եղիր յանձնապաստան եւ մի՛ ասա, թէ՝ «Իմ ունեցուածքը շատ է»:*
3 *Մի՛ ասա, թէ՝ «Ո՞վ կը յաղթի ինձ» եւ մի՛ ասա, թէ՝ «Ո՞վ չարութիւն կ'անի ինձ», որովհետեւ Տէրը քեզանից վրէժխնդիր կը լինի:*
4 *Մի՛ ասա՝ «Մեղք գործեցի, բայց ի՞նչ եղաւ ինձ»:*
5 *Տէրը համբերատար է քո դարձի եւ քաւութեան համար. քեզ անվախ մի՛ համարիր՝ մեղքերի վրայ մեղքեր աւելացնելով:*
6 *Մի՛ ասա՝ «Տիրոջ գթութիւնը շատ է, նա իմ բազում մեղքերը կը քաւի»,*
7 *քանզի ողորմութիւնն ու բարկութիւնը նրանից է, եւ մեղաւորների վրայ է իջնում նրա զայրոյթը:*
8 *Որդեա՛կ, մի՛ յապաղիր քո մեղքերից դառնալ դէպի Տէրը, որպէսզի մեղքերիդ մէջ չմեռնես:*
9 *Ցոյսդ մի՛ դիր անարդար դանձերի վրայ, որովհետեւ դրանք քեզ չեն օգնի բարկութեան օրը:*
11 *Մի՛ ենթարկուիր ամէն հողմի եւ մի՛ գնա ամէն շաւղով, քանզի դրանք մեղաւորի ու երկերեսանի մարդու բաժինն են:*

12 *Հաստա՛տ եղիր քո իմաստութեան մէջ, եւ քո խօսքը թող մէ՛կ լինի:*
13 *Լսելու մէջ փութկո՛տ եղիր եւ պատասխան խօսքի մէջ՝ համբերո՛ղ:*
14 *Եթէ քո մէջ իմաստութիւն կայ, պատասխա՛ն տուր մերձաւորիդ, իսկ եթէ ոչ՝ քո ձեռքը թող բերանիդ վրայ լինի:*
15 *Փառքն ու անարգանքը խօսքի մէջ է, եւ մարդու կործանումն՝ իր լեզուի վրայ:*
16 *Մի՛ ունեցիր բանսարկուի համբաւ եւ քո լեզուով չարիք մի՛ նիւթիր.*
17 *որովհետեւ գողի վրայից անպակաս է ամօթը, երկերեսանու վրայից՝ չար պարսաւանքը:*
18 *Մի՛ եղիր անխոհեմ ո՛չ մեծ եւ ո՛չ փոքր բաների մէջ:*

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

6 *Բարեկամ լինելու փոխարէն մի՛ եղիր թշնամի, քանզի չար անունը իր հետ կը բերի ամօթ եւ նախատինք մեղաւորին ու երկերեսանուն:*
2 *Քո հոգու խորհուրդների մէջ մի՛ բարձրացրու քեզ, որպէսզի քո անձը չմորթոտուի զուարակի նման,*
3 *այլապէս քո տերեւները կ'ոչնչացնես, քո պտուղները կը կորցնես եւ կը մնաս իբրեւ չորացած ծառ:*
4 *Չար հոգին կործանում է իր տիրոջը եւ նրան ոտնատակ դարձնում թշնամիներին:*
5 *Քաղցր բերանը շատացնում է իր բարեկամներին, քաղցրախօս լեզուն մեծացնում է մտերմութիւնը:*
6 *Ովքեր քեզ հետ խաղաղութեան մէջ են, թող մեծաթիւ լինեն, բայց քո խորհրդակիցը հազարից մէկը թող լինի:*
7 *Եթէ բարեկամ ես ձեռք բերում, փորձո՛վ ձեռք բեր նրան եւ իսկոյն մի՛ վստահիր նրան,*
8 *քանզի բարեկամ կայ, որ բարեկամ է իրեն պէտք եղած ժամանակ միայն եւ քեզ հետ բարեկամ չի մնայ քո նեղութեան օրը.*
9 *բարեկամ կայ, որ թշնամի է դառնում քեզ, եւ քո վէճն ու նախատինքը հրապարակում:*
10 *Բարեկամ էլ կայ, որ սեղանակից է քեզ, սակայն քեզ մօտ չի մնայ քո նեղութեան օրը:*
11 *Քո բարեկեցութեան ժամանակ նա քեզ նման կը լինի եւ յանդուգն կը վերաբերուի քո ծառաների հետ:*
12 *Եթէ սնանկանաս, նա քեզ հակառակ կը լինի եւ կը թաքնուի քեզնից:*
13 *Հեռո՛ւ մնա քո թշնամիներից եւ զգո՛յշ եղիր բարեկամներից:*
14 *Հաւատարիմ բարեկամը հզօր պատուար է, իսկ ով գտնի նրան՝ գանձ է գտել:*
15 *Հաւատարիմ բարեկամն անփոխարինելի է, եւ անկշռելի է նրա բարութիւնը:*
16 *Հաւատարիմ բարեկամը կեանքի դեղ է, եւ Տիրոջից երկնչողները միայն կը գտնեն նրան:*
17 *Ով երկնչի Տիրոջից, կը յաջողի բարեկամութեան մէջ, որովհետեւ ինչպիսին ինքն է, այնպիսին էլ՝ իր մերձաւորը:*

ՍՈՎՈՐԵԼՈՒ ԴԺՈՒԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

18 *Որդեա՛կ, ուսո՛ւմ փնտռիր քո մանկութիւնից, եւ մինչեւ ծերութիւն իմաստութիւն պիտի գտնես:*
19 *Մօտեցի՛ր նրան վարողի եւ սերմանողի նման, եւ սպասի՛ր նրա բարի պտուղներին.*
20 *թէեւ այն մշակելու պահին մի փոքր կը յոգնես, բայց շուտով կ'ուտես նրա պտուղները:*
21 *Տգէտների համար այն քարքարոտ ճանապարհ է, եւ անմիտ մարդը նրա մէջ երկար չի մնայ:*
22 *Փորձութեան ծանր քարի նման այն բեռ է նրա վրայ, եւ նա չի դանդաղի այն դէն շպրտել:*
23 *Արդարեւ, իմաստութիւնը համապատասխանում է իր անուանը եւ շատերին չէ, որ յայտնի է:*
24 *Լսի՛ր, որդի՛ս, եւ ընդունի՛ր իմ խրատը, մի՛ մերժիր իմ այս խորհուրդը:*

25 Դի՛ր քո ոտքը նրա ոտնակապերի մէջ եւ քո պարանոցը՝ նրա շղթաների մէջ:
26 Խոնարհեցրո՛ւ քո ուսը, վերցրո՛ւ այն եւ մի՛ ձանձրացիր նրա կապանքներից:
27 Քո բովանդակ հոգով մօտեցի՛ր նրան եւ քո բովանդակ զօրութեամբ պահի՛ր նրա ճանապարհները:
28 Քննի՛ր, փնտրիր, եւ դու կը ճանաչես այն. եւ երբ բռնես՝ մի՛ թող նրան,
29 քանզի ի վերջոյ դու հանգիստ կը գտնես նրա մէջ, եւ քեզ համար նա ուրախութիւն կը դառնայ:
30 Քեզ համար նրա կապանքները զօրութեան պատուար կը լինեն, եւ նրա շղթաները՝ փառքի պատմուճան:
31 Արդարեւ, ոսկեղէն զարդ կայ նրա վրայ, եւ նրա կապանքները յակինթի շար են:
32 Այն կը հագնես իբրեւ փառքի զգեստ եւ քո վրայ կը դնես իբրեւ ցնծութեան պսակ:
33 Որդեա՛կ, եթէ ցանկանաս, կը դաստիարակուես եւ եթէ հոգով նուիրուես, խորագէտ կը լինես:
34 Եթէ լսել սիրես, կը հասկանաս եւ եթէ մօտեցնես քո ականջը, իմաստուն կը լինես:
35 Եղի՛ր ծերերի բազմութեան մէջ, եւ ով իմաստուն է, հակուի՛ր դէպի նա: Ցանկացի՛ր լսել բոլոր աստուածառաք զրոյցները, եւ թող հանճարեղ ասոյթները չվրիպեն քեզնից:
36 Եթէ իմաստուն մարդ տեսնես, առաւօտից նրա մօ՛տ եղիր, եւ թող քո ոտքը մաշի նրա դռան սեմը:
37 Խորհի՛ր Տիրոջ հրամանների մասին եւ տեւապէս ձգտի՛ր նրա պատուիրաններին: Նա կը հաստատի քո սիրտը եւ իմաստութեան ցանկութիւն կը տայ քեզ:

ԱՅԼԱԶԱՆ ԽՐԱՏՆԵՐ

7 Չարիք մի՛ գործիր, եւ քո վրայ չարիք չի գայ:
2 Հեռո՛ւ մնա անիրաւութիւնից, եւ այն հեռու կը մնայ քեզնից:
3 Որդեա՛կ, մի՛ սերմանիր անիրաւութեան ակօսի մէջ, որպէսզի այն եօթնապատիկ չհնձես:
4 Տիրոջից իշխանութիւն մի՛ խնդրիր եւ թագաւորից՝ փառքի աթոռ:
5 Տիրոջ առջեւ մի՛ փորձիր արդարանալ եւ թագաւորի առջեւ ճարտարախօս մի՛ երեւար:
6 Մի՛ ձգտիր դատաւոր լինել, գուցէ չկարողանաս վերացնել անիրաւութիւնը: Գուցէ երբեւէ ակնածելով հզօրից՝ սայթաքես քո արդարութիւնից:
7 Քաղաքի բազմութեան հանդէպ մի՛ մեղանչիր եւ քեզ մի՛ նուաստացրու ամբոխի առջեւ:
8 Մեղքի վրայ մեղք մի՛ աւելացրու, որպէսզի որեւէ մէկից չմեղադրուես:
9 Մի՛ ծուլացիր քո ուխտի մէջ,
10 անփոյթ մի՛ լինիր ողորմածութիւն անելու մէջ:
11 Մի՛ ասա, թէ Տէրը կը նայի իմ բազմաթիւ զոհաբերումներին եւ բարձրեալ Աստծուն մատուցելիս՝ նա կ'ընդունի:
12 Մի՛ ծաղրիր այդ մարդուն, որի հոգին դառնացած է, քանզի Տէ՛րն է, որ նուաստացնում եւ բարձրացնում է նրան:
13 Քո եղբօր մասին ստեր մի՛ սերմանիր, նոյնը՝ եւ բարեկամի մասին:
14 Մի՛ ախորժիր ստեր ասել ամէն բանի մասին, քանզի յաճախակի ստելը լաւ բան չէ:
15 Մի՛ շատախօսիր ծերերի մէջ եւ մի՛ կրկնաբանիր քո աղօթքի մէջ:
16 Մի՛ ատիր աշխատանքի տքնութիւնը եւ ոչ էլ այն մշակութիւնը, որ հաստատուել է Բարձրեալի կողմից:
17 Մի՛ գտնուիր մեղաւորների բազմութեան մէջ. յիշի՛ր, որ Տիրոջ բարկութիւնը չի ուշանայ:
18 Մի՛շտ խոնարհեցրու քո անձը,
19 որովհետեւ ամբարշտի վրէժխնդրութիւնը կրակ ու որդ է:
20 Բարեկամիդ մի՛ փոխանակիր կայք ու ինչքի հետ եւ հարազատ եղբօրդ՝ Սափիրական ոսկու† հետ:
21 Մի՛ լքիր իմաստուն եւ բարի կնոջը, քանզի նրա շնորհը ոսկուց էլ

†Այսինքն՝ մաքուր ոսկու:

առաւել է:
22 Մի՛ չարչարիր ծառային, որ ջանասիրութեամբ է աշխատում եւ՝ վարձկանին, որ քեզ նուիրուած է հոգով:
23 Քո հոգին թող սիրի իմաստուն ծառային եւ նրան չզրկի ազատութիւնից:
24 Եթէ անասուն ունես, հո՛գ տար դրանց, եւ եթէ դրանք քեզ պիտանի են, թող քեզ մօտ մնան:
25 Եթէ զաւակներ ունես, խրատի՛ր նրանց, մանկութիւնից խոնարհեցրո՛ւ նրանց պարանոցը:
26 Եթէ դուստրեր ունես, զգո՛յշ եղիր նրանց մարմինների համար եւ քո դէմքի լրջութիւնն անպակա՛ս արա նրանցից:
27 Ամուսնացրո՛ւ քո դստերը, եւ դու մեծ գործ արած կը լինես. տո՛ւր նրան իմաստուն մարդու:
28 Քո սրտո՞վ է կինդ՝ մի՛ վտարիր:
29 Քո բովանդակ հոգով պատուի՛ր հօրդ եւ մի՛ մոռացիր մօրդ երկունքը:
30 Յիշի՛ր, որ դու նրանցից ես ծնուել եւ ի՞նչ կարող ես հատուցել նրանց՝ քեզ նրանց տուածի փոխարէն:
31 Քո ամբողջ սրտով երկի՛ւղ կրիր Տիրոջից եւ յարգի՛ր նրա քահանաներին:
32 Քո ամբողջ ուժով սիրի՛ր Արարչիդ եւ նրա սպասաւորներին մի՛ անտեսիր:
33 Երկի՛ւղ կրիր Տիրոջից եւ մեծարի՛ր քահանաներին:
34 Ինչպէս հրամայուած է քեզ, տո՛ւր նրանց տուրքի մի մասը.
35 պտուղը, յանցանքների համար սահմանուածը, զոհաբերուած անասունի թիակները, սրբութեան զոհը եւ սրբազան ընծաները:
36 Քո ձեռքը մեկնի՛ր տնանկին, որպէսզի կատարեալ լինի քեզ տրուող օրհնութիւնը:
37 Ողորմութեան շնորհը թող բաշխուի բոլոր ողջերին, բայց եւ մեռածի համար մի՛ խնայիր շնորհներդ:
38 Մի՛ խուսափիր լացողներից եւ սգա՛ սգացողների հետ:
39 Մի՛ յապաղիր հիւանդին տեսութեան գնալ, եւ դա շնորհ կը համարուի քեզ համար:
40 Քո բոլոր գործերի մէջ յիշի՛ր վախճանդ, եւ չես մեղանչի երբեք:

ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ ԽՐԱՏՆԵՐ

9 Մի՛ խանդիր սրտակից կնոջդ եւ չար խորհուրդներ մի՛ յարուցիր քո նկատմամբ:
2 Քո սիրտը կնոջ մի՛ տուր, որպէսզի նա չիշխի քեզ վրայ:
3 Մի՛ ընդառաջիր բոզ կնոջը, որպէսզի յանկարծ նրա որոգայթների մէջ չընկնես:
4 Մի՛ յաճախիր երգող ու կաքաւող կնոջ մօտ, որպէսզի յանկարծ կուլ չգնաս նրա լրբութեանը:
5 Երկար մի՛ նայիր կոյսին, որպէսզի չգայթակղուես նրա հմայքով:
6 Քո անձը մի՛ տուր պոռնիկներին, որպէսզի չկորցնես քո ունեցուածքը:
7 Դէս ու դէն մի՛ գցիր աչքերդ քաղաքի փողոցներում եւ մի՛ թափառիր նրա աւերակների մէջ:
8 Աչքդ հեռացրո՛ւ գեղեցիկ կնոջից եւ երկար մի՛ նայիր օտարի գեղեցկութեանը:
9 Շատերը մոլորուեցին կնոջ գեղեցկութիւնից. դրանից կրակի նման սէր է բորբոքւում:
12 Ամենեւին մի՛ նստիր ամուսնացած կնոջ մօտ եւ նրա հետ գինի մի՛ խմիր. գուցէ քո անձը շեղուի դէպի նա, եւ քո հոգով կորստեան մատնուես:
14 Մի՛ լքիր հին բարեկամին, քանզի նորը հաւասար չէ նրան:
15 Նոր գինի՝ նոր բարեկամ. երբ հնանայ, ուրախութեա՛մբ վայելիր:
16 Մեղաւորի փառքին մի՛ նախանձիր, որովհետեւ չգիտես, թէ ինչպիսին կը լինի նրա կործանումը:
17 Հաւանութիւն մի՛ տուր ամբարիշտների հաւանած բանին. յիշի՛ր, որ մինչեւ դժոխք չես արդարանայ:
18 Հեռո՛ւ մնա այն մարդուց, որ սպանելու իշխանութիւն ունի, եւ դու չես տագնապի մահուան երկիւղից:
19 Եթէ մօտ էլ լինես, զգո՛յշ եղիր սխալ գործելուց, որպէսզի նա չխլի կեանքդ.
20 համարի՛ր, թէ որոգայթների

միջով ես անցնում եւ քաղաքի պարիսպների վրայով ես քայլում:
21 Ըստ քո կարողութեան ճանաչի՛ր մերձաւորիդ եւ իմաստունների հետ խորհրդակցի՛ր:
22 Արդարները թող քո սեղանակիցները լինեն, եւ Տիրոջ երկիւղը՝ քո պարծանքը:
23 Զրուցի՛ր իմաստունների հետ, եւ քո բոլոր զրոյցները թող լինեն Բարձրեալի Օրէնքի մասին:
24 Ճարտար վարպետները գովաբանւում են իրենց ձեռքի գործով, իսկ ժողովրդի առաջնորդը՝ իր իմաստուն խօսքով:
25 Լեզուանի մարդը ահաւոր է իր քաղաքում, եւ ատելի է նա, ով յանդուգն է իր խօսքով:

ԵՐԿՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԻՐՈՋԻՑ Է

10 Իմաստուն դատաւորը խրատում է իր ժողովրդին, խելամիտ մարդու իշխանութիւնը կարգաւորուած է լինում:
2 Ինչպիսին ժողովրդի իշխանն է, այնպիսին նրա սպասաւորներն են, ինչպիսին քաղաքի առաջնորդն է, այնպիսին՝ նրա բնակիչները:
3 Տգէտ թագաւորը կորստեան է մատնում իր ժողովրդին. քաղաքը կառուցւում է հզօրների իմաստութեամբ:
4 Երկրի իշխանութիւնը Տիրոջ ձեռքին է. նա է ժամանակին արժանի մարդուն բարձրացնում իշխանութեան:
5 Տիրոջ ձեռքին է մարդու յաջողութիւնը. նա է իր փառքը դնում օրէնսգէտի վրայ:
6 Մերձաւորիդ նկատմամբ ոխ մի՛ պահիր նրա բոլոր մեղանչումների պատճառով եւ թշնամական արարքներ մի՛ գործիր նրա դէմ:
7 Ամբարտաւանութիւնը ատելի է թէ՛ Տիրոջ եւ թէ՛ մարդկանց համար. դա երկուսի համար էլ անիրաւութիւն է:
8 Թագաւորութիւնն անցնում է մի ազգից միւսին անիրաւութեան, թշնամանքի եւ ընչաքաղցութեան պատճառով:
9 Ինչո՞ւ է հպարտանում մարդը, որ հող է ու մոխիր:
10 Դեռեւս կենդանի՝ թափւում է նրա փորոտիքը:
11 Բժիշկը կարճեցնում է երկարատեւ ցաւերը:
12 Թագաւորն այսօր կայ, իսկ վաղը վախճանւում է:
13 Երբ մարդը մեռնում է, սողունները, ճիճուները եւ որդեր է ժառանգում:
14 Մարդու ամբարտաւանութեան սկիզբը նրա ապստամբելն է Տիրոջ դէմ, նրա սրտի ստահակութիւնը՝ իր Արարչի դէմ:
15 Մեղքի սկիզբն ամբարտաւանութիւնն է, եւ ով ունի այն, նրանից պղծութիւն պիտի ժայթքի:
16 Դրա համար էլ Տէրը նրան սարսափելի հարուածներ հասցրեց եւ խպառ կործանեց նրան:
17 Տէրը ջախջախեց իշխանների թոռները եւ նրանց փոխարէն հեզերին նստեցրեց:
18 Տէրն արմատախիլ արեց հեթանոսներին եւ նրանց փոխարէն խոնարհներին տնկեց:
19 Տէրը քարուքանդ արեց ժողովուրդների բնակավայրերը եւ դրանք կորստեան մատնեց մինչեւ հիմքերը:
20 Կործանեց եւ կորստեան մատնեց դրանք, եւ դրանց յիշատակը վերացրեց երկրից:

ՏԷՐԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ԱՐԺԱՆԱՒՈՐԻՆ

22 Ամբարտաւանութիւնը մարդկանց համար չի հաստատուած, եւ ոչ էլ զայրալից բարկութիւնը՝ կանանցից ծնուածների համար:
23 Ո՞վ է մարդու պատուական զաւակը. նա, ով երկնչում է Տիրոջից: Ո՞վ է մարդու անարդ զաւակը. նա, ով զանց է առնում Տիրոջ պատուիրանները:
24 Բազում եղբայրների մէջ աւագն է պատուականը, իսկ Տիրոջ աչքում՝ իրենից երկնչողները:
25 Հարուստ լինի, անուանի թէ աղքատ, նրա պարծանքը Տիրոջ երկիւղն է:
26 Արդարացի չէ անպատուել իմաստուն աղքատին, եւ օրինաւոր չէ պատուել անարդար մարդուն:

27 Հարուստը, դատաւորը եւ իշխանը գովաբանւում են, սակայն նրանցից եւ ոչ մէկը մեծ չէ նրանից, ով երկնչում է Տիրոջից:
28 Իմաստուն ծառային ազատներն են սպասաւորում, եւ խելամիտ մարդը չի տրտնջում դրա համար:
29 Քո գործը կատարելու համար մի՛ պերճաբանիր եւ մեծութիւն մի՛ ծախիր քո նեղութեան ժամանակ:
30 Աւելի լաւ է նա, ով փողոց է մաքրում, քան նա, ով սիգալով ճեմում է, բայց մնում է հացի կարօտ:
31 Որդեա՛կ, հեզութեա՛մբ փառաւորիր քո հոգին եւ նրան պատի՛ւ տուր ըստ իր արժանիքների:
32 Ո՞վ կ'արդարացնի նրան, որ մեղանչում է իր հոգու մէջ, կամ ո՞վ կը փառաբանի նրան, որ անարգում է իր կեանքը:
33 Աղքատը մեծարւում է իր իմաստութեան համար, իսկ հարուստը փառաբանւում իր հարստութեան համար:
34 Ով իմաստութեամբ փառաւորւում է հարստութեան մէջ, որքա՜ն եւս կը փառաւորի աղքատութեան մէջ, իսկ նա, ով չի մեծարւում աղքատութեան մէջ, առաւել եւս չի մեծարուի հարստութեան մէջ:

ՁԴԱՏԵԼ ԸՍՏ ՏԵՍՔԻ

11 Խոնարհ մարդու իմաստութիւնը բարձր է պահում նրա գլուխը եւ մեծամեծների մէջ է բազմեցնում նրան:
2 Մարդուն մի՛ գովիր իր գեղեցկութեան համար եւ մի՛ արհամարհիր իր խեղճ տեսքի համար:
3 Մեղուն փոքր է թռչողների մէջ, սակայն նրա պտուղը քաղցրութեան սկիզբն է:
4 Մի՛ պարծեցիր զգեստների պերճութեամբ եւ փառքիդ օրը մի՛ հպարտացիր, քանզի սքանչելի են Տիրոջ գործերը եւ դրանք ծածկուած են մարդկանցից:
5 Բազում բռնակալներ գետին նստեցին†, եւ նա, որից չէին սպասում, թագ ստացաւ:
6 Բազում հզօրներ խիստ անարգուեցին, եւ անուանի մարդիկ մատնուեցին այլոց ձեռքը:
7 Քանի դեռ չի քննուել, մի՛ մեղադրիր մարդուն, իմացի՛ր՝ յետո՛յ պատժիր:
8 Քանի դեռ չես լսել, մի՛ պատասխանիր եւ մի՛ միջամտիր խօսակցութեանը:
9 Մի՛ պայքարիր այն բաների համար, որ քեզ չեն վերաբերում, եւ մի՛ նստիր մեղաւորների ատեանում նրանց կողքին:
10 Որդեա՛կ, շատ գործեր մի՛ ձեռնարկիր, քանզի բազում գործերի մէջ չես կարող անպարտ մնալ, եւ եթէ հետամուտ լինես դրանց, չես հասնի վերջին եւ չես խուսափի կործանումից:

ԽՐԱՏ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

11 Մարդ կայ, որ տքնում, աշխատում ու աճապարում է, եւ սակայն առաւել եւս կարիքի մէջ է մնում,
12 մարդ էլ կայ, որ ծոյլ է, օգնութեան կարօտ, զօրութիւնից զուրկ, աղքատութեան մէջ թաղուած,
13 սակայն Տիրոջ աչքը նրան նայում է բարութեամբ, ոտքի է կանգնեցնում նրան իր աղքատութիւնից, բարձրացնում է նրա գլուխը, եւ շատերը զարմանում են դրա վրայ:
14 Բարիքը, չարիքը, կեանքը եւ մահը, աղքատութիւնն ու հարստութիւնը Տիրոջից են:
17 Տիրոջ պարգեւը բարեպաշտներին է մնում, եւ յաւիտեան է նրա բարեհաճութիւնը:
18 Ով հարստանում է ժլատութեամբ եւ կուտակելով, նրա վարձի բաժինը այս է լինում.
19 երբ նա ասում է, թէ, «Հանգիստ գտայ եւ այժմ պիտի վայելեմ իմ հարստութիւնը»,
20 սակայն չգիտի, թէ, երբոր գայ օրհասը, նա այլոց կը թողնի այն ու կը մեռնի:
21 Հաւատարի՛մ մնա քո ուխտին, նուիրուի՛ր նոյն ուխտին եւ ծերացի՛ր քո գործի մէջ:
22 Մի՛ զարմացիր մեղաւոր մարդու

†Կորցրին իրենց գահը:

գործերի վրայ, հաւատա՛ Տիրոջը ու տոկա՛ քո տքնութեան մէջ:
23 Տիրոջ համար դիւրին է աղքատին անակնկալ հարստացնելը:
24 Տիրոջ օրհնութիւնը բարեպաշտների վարձն է, եւ շատ շուտով Նրա օրհնութիւնը խնդութիւն է տալու նրանց:
25 Մի՛ ասա, թէ՝ «Էլ ինչի՞ կարիք ունեմ» եւ՝ «Սրանից յետոյ էլ ի՞նչ բարիք պիտի լինի ինձ»:
26 Մի՛ ասա, թէ՝ «Սա բաւական է ինձ. սրանից յետոյ էլ ի՞նչ չարիք կարող է լինել»:

ՄԱՀՈՒԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

27 Երջանկութեան օրը մոռացուում են չարիքները, չարիքի օրը չեն յիշուում բարիքները,
28 քանզի Տիրոջ համար դիւրին է վախճանի օրը մարդուն հատուցել ըստ իր անցած ճանապարհների:
29 Մէկ ժամուայ տանջանքը մոռացնել է տալիս հաճոյքները, եւ մարդու վախճանի ժամին յայտնի են դառնում նրա գործերը:
30 Մարդու վախճանից առաջ երանի մի՛ տուր նրան. մարդ ճանաչւում է իր որդիներով:
31 Ամէն մարդու մի՛ ընդունիր քո տունը, քանզի բազմաթիւ են նենգաւոր մարդու որոգայթները:
32 Ինչպէս որսորդն է դարան մտնում կաքաւ որսալու համար, այնպէս էլ ամբարտաւանը, որի ուշքն ու միտքը քեզ գլորելն է:
33 Նա բարիքը վերածում է չարիքի եւ արատաւորում այն, ինչ ցանկալի է:
34 Կայծերի շատութիւնից բորբոքւում է կրակը, այդպէս էլ մեղաւոր մարդը մահ է նիւթում:
35 Զգուշացի՛ր խորամանկ մարդուց, քանզի նա չարիք է նիւթում. գուցէ նա քեզ յաւիտենական պարսաւանքի տակ դնի:
36 Քո տանը բնակեցրո՛ւ օտարին, եւ նա խռովութիւն կը գցի քո տան մէջ ու կ՝օտարացնի քեզ քո իւրայիններից:

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

12 Եթէ բարիք ես անում, իմացիր՝ ում ես անում, եւ շնորհ կը ստանաս քո բարիքի դիմաց:
2 Բարի՛ք արա բարեպաշտին եւ փոխարէնը հատուցում կը ստանաս եթէ ոչ նրանից, ապա՝ Բարձրեալից:
3 Բարիք չկայ նրա համար, ով մշտապէս չարիք է գործում եւ ողորմածութիւն չի ցուցաբերում:
4 Օգնի՛ր բարեպաշտին եւ ձեռք մի՛ երկարիր մեղաւորին:
5 Բարի՛ք արա խոնարհին եւ մի՛ օգնիր ամբարշտին,
6 պահի՛ր քո հացը եւ մի՛ տուր նրան, որպէսզի դրանով նա քեզ չյաղթի,
7 այլապէս կրկնակի չարիք կը ստանաս նրան արած քո բոլոր բարութիւնների դիմաց, որովհետեւ Բարձրեալն ատում է մեղաւորներին եւ վրէժ առնում ամբարիշտներից: Օգնի՛ր բարի մարդուն եւ զօրավիգ մի՛ եղիր մեղաւորին:
8 Բարեկամը չի ճանաչւում երջանկութեան մէջ, եւ ոչ էլ թշնամիդ վշտակից կը լինի քեզ:
9 Մարդու երջանկութեան ժամանակ տրտմութեան մէջ են լինում նրա թշնամիները, իսկ նրա վշտի ժամանակ նրա բարեկամը լքում է նրան:
10 Ցաւիտեան մի՛ հաւատա քո թշնամուն, քանզի ինչպէս պղինձն է ժանգոտւում, այնպէս էլ՝ նրա չարութիւնը:
11 Եթէ թէկուզ նա խոնարհուի եւ գլխահակ գնայ, ուշքդ վրա՛ն պահիր եւ զգուշացի՛ր նրանից, նրա առջեւ մաքուր հայելու նման եղիր ու կ՝իմանաս, որ նա իսպառ չի մաքրուել ժանգից:
12 Նրան մի՛ պահիր քեզ մօտ, որպէսզի քեզ կործանելով չգրաւի քո տեղը: Նրան մի՛ նստեցրու քո աջ կողմը, որպէսզի երբեւէ չյաւակնի քո աթոռին. ի վերջոյ դու կը հասկանաս իմ խօսքերը եւ չես ափսոսայ իմ խրատների համար:
13 Ինչպէս նա, ով կարեկցում է խայթուած օձահմային, եւ նա, ով

գնում է գազանների դէմ, այդպէս է եւ նա, ով ընդառաջ է գնում մեղաւոր մարդուն ու շաղախւում նրա մեղքերին:
14 Մի պահ նա կը լինի քեզ հետ, եւ երբ բաժանուես, չի համբերի:
15 Թշնամին քաղցր է իր շրթունքներով, բայց իր սրտում խորհում է խորխորատի մէջ քեզ կործանելու մասին:
17 Թշնամին իր աչքերով է արտասւում, բայց եթէ յարմար պահ գտնի, արիւնից չի յագենայ:
18 Եթէ քեզ չարիք պատահի, նրան այնտեղ կը գտնես քեզանի՛ց առաջ եւ, օգնութեան փոխարէն, նա ոտք կը դնի քո առջեւ:
19 Նա թափ կը տայ իր գլուխը, ծափ կը զարկի ձեռքով, իբր շատ է տագնապում, եւ կեղծ զարմանքով կ՝այլայլի իր երեսը:

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13 Ով դիպչի ձիւթին, նրանով կը շաղախուի, եւ ով շփուի ամբարտաւանի հետ, նրան կը նմանուի:
2 Այն, ինչ քեզնից ծանր է, մի՛ վերցրու, եւ ով քեզնից հարուստ ու հզօր է, մի՛ եղիր նրա հետ:
3 Ի՞նչ յարաբերութիւն ունի կաւէ սափորը մետաղեայ կաթսայի հետ. սա հարուածում է, եւ այն փշրւում:
4 Հարուստը զրկում եւ ի՛նքն է սպառնում, աղքատը զրկւում եւ ի՛նքն է ներողութիւն խնդրում:
5 Եթէ դու նրան պէտք լինես, նա քեզ կ՝օգտագործի, իսկ եթէ պէտք չես, քեզ կը լքի:
6 Եթէ ունեւոր ես, նա քո ընկերը կը լինի, քեզ կը քամի եւ չի էլ կարեկցի:
7 Երբ քո կարիքը ունենայ, կը մոլորեցնի քեզ, կը ժպտայ երեսիդ եւ յոյս կը տայ քեզ:
8 Քեզ հետ կը խօսի ազնուութեամբ եւ կ՝ասի. «Քեզ ի՞նչ է պէտք», ու քեզ կ՝ամաչեցնի իր հիւրասիրութեամբ,
9 մինչեւ որ երկու-երեք անգամ կողոպտի եւ ապա խաբի քեզ, որից յետոյ երբ տեսնի քեզ, կ՝արհամարհի ու երես կը թեքի քեզանից:
10 Զգո՛յշ եղիր, որպէսզի չմոլորուես, եւ մի՛ նուաստացիր քո ուրախութեան մէջ:
12 Եթէ հզօրը քեզ հրաւիրի, խուսափի՛ր, եւ նա առաւել եւս պնդելով՝ կը հրաւիրի քեզ իր մօտ:
13 Շատ մէջ մի՛ ընկիր, որ չվոնդուես, ոչ էլ շատ հեռու մնա, որ մոռացուես:
14 Մի՛ ձգտիր նրան հաւասարուել եւ մի՛ հաւատա նրա երկար խօսքերին, որովհետեւ երկար խօսքով նա քեզ կը գայթակղեցնի եւ քո երեսին ժպտալով՝ կը քննի քեզ:
15 Անողորմ է նա, ով չի չափաւորում իր խօսքը եւ չի զգուշանում տանջանքից ու կապանքներից:
16 Ուշադի՛ր եղիր եւ չափազանց զգոյշ, քանզի ամէն բոպէ կարող ես կործանուել:
19 Իւրաքանչիւր կենդանի էակ իր նմանին է սիրում, եւ իւրաքանչիւր մարդ՝ իր մերձաւորին:
20 Իւրաքանչիւր մարմին միանում է իր տեսակին, եւ իւրաքանչիւր մարդ յարում իր նմանին:
21 Ի՞նչ յարաբերութիւն կարող է լինել գայլի եւ գառան միջեւ:
22 Ի՞նչ խաղաղութիւն կարող է լինել բորենու եւ շան միջեւ, եւ ի՞նչ խաղաղութիւն՝ հարուստի եւ աղքատի միջեւ:
23 Առիւծների որսը անապատի վայրի էշերն են, այդպէս էլ հարուստների կերակուրը աղքատներն են:
24 Հպարտի համար արգահատելի է խոնարհութիւնը, այդպէս էլ հարուստի համար արգահատելի է աղքատը:
25 Եթէ հարուստը վտանգուի, բարեկամները նեցուկ կը լինեն նրան, իսկ երբ աղքատն է ընկնում, ծանօթներից իսկ հեռու է վանւում:
26 Սխալուելիս հարուստը բազում պաշտպաններ է ունենում, իսկ աղքատը՝ եւ ոչ մի. հարուստն անմիտ բաներ խօսեց, եւ նրան իրաւունք տրուեց,
27 բայց երբ աղքատը խօսեց, դատափետեցին նրան. թէեւ նա խելացի խօսեց, բայց նրան տեղ չտրուեց:
28 Երբ հարուստը խօսեց, բոլորը

լռեցին եւ նրա խօսքերը մինչեւ երկինք բարձրացրին:
29 Աղքատը խօսեց, եւ ասացին. «Սա ո՞վ է». իսկ եթէ նա սայթաքի, աւելի կը հրեն նրան:
30 Լաւ է այն հարստութիւնը, որի մէջ չկայ մեղք, եւ վատ է աղքատութիւնն ամբարշտի շուրթերին:
31 Թէ՛ բարիք եւ թէ՛ չարիք գործելիս մարդու սիրտը այլափոխում է նրա երեսը:
32 Բարի սրտի նշանը զուարթ դէմքն է, բայց իմաստութեան գիւտը արդիւնք է տանջալից խորհրդածութեան:

ԺԼԱՏԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

14 Երանի այն մարդուն, որ չի մեղանչել իր շուրթերով եւ խոցուած չէ մեղքի յարուցած տրտմութեամբ:
2 Երանի այն մարդուն, որին չի տանջում իր խիղճը, եւ ով չի կորցրել իր յոյսը:
3 Հարստութիւնը բարիք չէ ժլատ մարդու համար, եւ չկամ մարդու ինչի՞ն է պէտք իր ունեցուածքը:
4 Ով հաւաքում է իրեն զրկելով, նա հաւաքում է այլոց համար, եւ նրա բարիքները ուրիշները պիտի վայելեն:
5 Ով չար է իր անձի հանդէպ, ո՞ւմ համար բարի կը լինի. նա ուրախ չի լինի նոյնիսկ իր բարիքների մէջ:
6 Աւելի չար մարդ չկայ, քան նա, ով չարակամ է ինքն իր նկատմամբ, եւ դա նրա չարութեան հատուցումն է:
7 Թէկուզեւ բարիք անի՝ պատահաբար կ'անի, եւ յետոյ յիշելով՝ դարձեալ իր չարութիւնը կ'անի:
8 Չար է նա, ով նախանձոտ աչքերով է նայում, երեսը թեքում է եւ անտեսում մարդկանց:
9 Ագահի աչքը քչով չի յագենայ, եւ չար անօրէնութիւնը չորացնում է հոգին:
10 Չար աչքը նախանձոտ է նոյնիսկ իր հացին եւ կարօտ է իր սեղանին:

ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

11 Որդեա՛կ, ըստ քո ունեցուածքի բարութի՛ւն արա եւ Տիրոջն արժանի զո՛հ մատուցիր:
12 Յիշի՛ր, որ մահը չի ուշանայ, եւ գերեզմանի ուխտը† քեզ յայտնի չէ:
13 Մինչեւ վախճանուելդ բարի՛ք արա քո բարեկամին, ձե՛ռք մեկնիր ըստ քո կարողութեան եւ տո՛ւր նրան:
14 Քեզ մի՛ զրկիր լաւ օրից, եւ բարի ցանկութեան մասնիկն իսկ թող չվրիպի քեզնից:
15 Արդեօ՞ք քո վաստակն ուրիշին չես թողնելու, եւ մի՞թէ զրկանքներիդ պտուղը բաժանելու համար վիճակ չի գցուելու:
16 Տո՛ւր եւ վերցրո՛ւ եւ ուրախացրո՛ւ քո հոգին,
17 քանզի գերեզմանում չի կարելի վայելք փնտռել:
18 Ամէն մարմին շորի նման մաշւում է, քանզի յաւիտենութիւնից ի վեր օրէնք է, թէ՝ «Մահով պիտի մեռնես»:
19 Ինչպէս սաղարթախիտ ծառի դալար տերեւը մերթ թափւում է եւ մերթ բուսնում, այնպէս էլ մարմնի եւ արեան տեսակն է. մէկը վախճանւում է, միւսը՝ ծնւում:
20 Ամէն գործ, որ ենթակայ է փտելու, վերանում է, եւ այն ստեղծողը նրա հետ էլ պիտի գնայ:
22 Երանի՛ այն մարդուն, որ կը վախճանուի իմաստութեամբ, կը խօսի իր բանականութեամբ եւ իր մտքով կը թափանցի նրա գաղտնիքների մէջ:
23 Հետամո՛ւտ եղիր նրան իբրեւ որսորդ եւ դարանակա՛լ եղիր նրա ճանապարհին:
24 Ով կը կանգնի նրա պատուհանների դէմ, նա ունկնդիր կը լինի նաեւ նրա դռների մօտ,
25 ով իջեւան հաստատի նրա տան մօտ, նա ցից կը խփի նրա պատերին
26 եւ իր վրանը կը կանգնեցնի նրա հովանու տակ, կը հանգստանայ բարիքի բնակարանում, իր զաւակներին կը դնի նրա հովանու տակ եւ նրա ճիւղերի ներքոյ:
27 Նրանով կը պատսպարուի խորշակից եւ կը հանգստանայ նրա փառքի մէջ:

†Յունարէնում՝ Գերեզմանի հետ պայմանաժամ չունես:

ԱՐԴԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

15 Ահա այսպէս կ'անի նա, ով երկնչում է Տիրոջից. եւ ով ընդունում է օրէնքը, կը հասնի իմաստութեան:
2 Նրան կը դիմաւորի մօր նման եւ նրան կ'ընդունի իբրեւ կոյս աղջիկ:
3 Նրան կը ջամբի հացն իմաստութեան, նրան կը խմեցնի ջուրն իմացութեան:
4 Նա կը յենուի նրան եւ չի ընկնի, նրա մէջ ապաստան կը գտնի, ամօթով չի մնայ եւ նրան ընկերներից աւելի վեր կը բարձրացնի:
5 Ժողովուրդների մէջ կը բացի նրա շուրթերը:
6 Նա ուրախութիւն, ցնծութեան պսակ եւ յաւիտենական անուն կը ժառանգի:
7 Անմիտ մարդկանց հասու չէ իմաստութիւնը, եւ մեղաւորներն այն չեն տեսնի:
8 Այն հեռու է հպարտութիւնից, եւ խաբեբայ մարդիկ չեն յիշի նրան:
9 Օրհնութիւնը գեղեցիկ չէ մեղաւորի շուրթերին, քանզի այն Տիրոջից չառաքուեց նրան:
10 Թող իմաստութեամբ ասուի օրհնութիւնը, եւ Տէրը յաջողութիւն կը տայ նրան:
11 Մի՛ ասա, թէ յանուն Տիրոջ ապստամբեցի, քանզի պէտք չէ անել այն, ինչ ատեց Տէրը:
12 Մի՛ ասա, թէ նա՛ ինձ մոլորեցրեց, քանզի նրան հարկաւոր չէ մեղաւոր մարդը:
13 Տէրն ատեց բոլոր գարշելի բաները, դրանք հաճելի չեն Տիրոջից երկնչողներին:
14 Նա ի սկզբանէ մարդուն ստեղծեց եւ նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին:
16 Եթէ կամենաս, կը պահես պատուիրանները եւ հաճութեամբ կը պահպանես քո հաւատը:
17 Քո առջեւ Տէրը կրակ եւ ջուր է դրել. որին կամենաս՝ կը մեկնես քո ձեռքը:
18 Մարդու առջեւ է կեանքն ու մահը. ինչ հաճելի կը թուայ իրեն՝ կը տրուի նրան:
19 Արդարեւ, մեծ է Տիրոջ իմաստութիւնը, նա հզօր է իր կաթողութեամբ եւ տեսնում է ամէն բան:
20 Նրա աչքը իրենից երկնչողների վրայ է, եւ ինքը կ'իմանայ մարդու բոլոր գործերը:
21 Նա ոչ մէկին չպատուիրեց ամբարշտութիւն անել եւ ոչ մէկին չքաջալերեց մեղանչել:

ՏԻՐՈՋ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՍՏՈՒԹԻՒՆԸ

16 Մի՛ ցանկացիր անպիտան որդիների շատութիւն եւ մի՛ ուրախացիր ամբարիշտ որդիներով. եթէ նրանք շատանան, մի՛ ուրախացիր նրանցով:
2 Եթէ նրանց մէջ չկայ Տիրոջ երկիւղը, դու նրանց կեանքի նկատմամբ վստահ մի՛ եղիր եւ մի՛ ապաւինիր նրանց շատութեանը:
3 Լաւ է մէկը, քան հազարը, եւ լաւ է մեռնել անզաւակ,
4 քան ունենալ ամբարիշտ որդիներ:
5 Արդարեւ, միայն մէկ իմաստուն է կառուցում քաղաքը, բայց այն կործանւում է անօրէնների ցեղից:
6 Բազում այսպիսի բաներ տեսայ իմ աչքերով, եւ սրանից էլ առաւել զօրաւոր բաներ լսեց իմ ականջը:
7 Մեղաւորների հաւաքոյթներին կրակ կը բորբոքուի, եւ Տիրոջ բարկութիւնը կը թափուի անհնազանդ ազգի վրայ:
8 Տէրը քաւութիւն չտուեց հին հսկաներին, ովքեր, իրենց զօրութեան վրայ վստահ, ապստամբեցին:
9 Չխնայեց նաեւ Ղովտի համաքաղաքացիներին, որոնցից զզուեց նրանց ամբաստանութեան պատճառով:
10 Զգթաց իրենց մեղքերի համար կորստեան դատապարտուած ազգին:
11 Այսպէս վարուեց նաեւ վեց հարիւր հազար հետեւակների հետ, ովքեր հպարտացել էին իրենց խստասրտութեամբ:
Թէկուզ եւ նրանցից մէկն իսկ խստապարանոց լինէր, զարմանալի կը լինէր, եթէ չդատապարտուէր.
12 քանզի թէ՛ ողորմութիւնը, թէ՛ բարկութիւնը նրանն է:
13 Նա հզօր է ինչպէս իր ներման, այնպէս էլ իր բարկութիւնը թափելու

մէջ. որքան մեծ է նրա ողորմութիւնը, այնքան էլ մեծ է նրա յանդիմանութիւնը:

14 Մարդը դատւում է ըստ իր գործերի. մեղաւորն իր յափշտակութեան համար չի ճողոպրի, իսկ բարեպաշտ մարդը շնորհ կը գտնի իր համբերութեան համար:

15 Ամէն ողորմածութեան համար Տէրը տեղ կ'անի. իւրաքանչիւր ոք հատուցում կը գտնի ըստ իր գործերի:

16 Մի՛ ասա, թէ՝ «Կը թաքնուեմ Տիրոջից», եւ՝ «Ո՞վ կը յիշի ինձ»:

17 «Բազում ժողովրդի մէջ չեմ նկատուի, որովհետեւ իմ հոգին ի՞նչ է այդչափ արարածների մէջ»:

18 Ահաւասիկ, երկինքը, երկինքների երկինքը, անդունդներն ու երկիրը դղրդում են նրա այցելութիւնից,

19 նոյնպէս լեռներն ու երկրի հիմքերը ցնցւում նրա հայեացքից:

20 Բայց սիրտը չի կարող խորհել այդ մասին:

21 Ո՞վ կը մտածի նրա ճանապարհների եւ այն որոգայթների մասին, որոնք մարդ չի տեսել:

22 Իսկ նրա գործերից շատերը ծածուկ են. արդարութեան գործերը ո՞վ կը յայտնի, կամ ո՞վ համբերութեամբ կը սպասի, որովհետեւ կ'ասի, թէ՝ «Ուխտը հեռու է»:

23 Ով պակասամիտ է, այսպէս կը խորհի, եւ անզգամ ու մոլորուած մարդը յիմարութիւններ կը մտածի:

ՏԻՐՈՋ ՍԱՀՄԱՆԱԾ ՏԻԵԶԵՐԱԿԱՐԳԸ

24 Որդեա՛կ, լսի՛ր ինձ, սովորի՛ր գիտութիւնը եւ իմ խօսքերին ունկնդի՛ր եղիր քո սրտով:

25 Ես քեզ ցոյց կը տամ կշռադատուած գիտութիւնը եւ ճշմարտութեամբ կը յայտնեմ իմացութիւնը:

26 Տիրոջ գործերը սկզբից եւեթ ճշմարտութեամբ էին, եւ նա արարչագործութիւնից իսկ զատեց նրանց մասերը:

27 Ցաւիտեան կարգաւորեց իր գործերը եւ կարգեր սահմանեց նրանց տեսակների մէջ:

28 Դրանք ո՛չ քաղց ունեն եւ ոչ էլ յոգնութիւն, չեն դադարում իրենց գործերից, եւ դրանցից իւրաքանչիւրը նեղութիւն չի տալիս իր մերձաւորին:

29 Դրանք յաւիտեան չեն հակառակուի Տիրոջ խօսքերին:

30 Այնուհետեւ Տէրը նայեց երկրին եւ այն լցրեց նրա բարիքներով:

31 Բոլոր կենդանի էակների շունչը ծածկեց երկրի երեսը, եւ բոլորը դարձեալ վերադառնալու են երկիր:

17 Տէրը մարդուն ստեղծեց հողից եւ դարձեալ նրան վերադարձրեց հողին:

2 Նա մարդկանց տուեց հաշուած օրեր ու ժամանակներ եւ նրանց իշխանութիւն տուեց այն ամենի վրայ, ինչ կայ երկրում:

3 Ըստ իրենց բնոյթի, զօրութեամբ զգեստաւորեց նրանց եւ ըստ իր պատկերի, արարեց նրանց:

4 Մարդու ահը դրեց ամէն կենդանի էակի վրայ՝ տիրելու համար գազաններին եւ թռչուններին:

5 Մարդկանց միտք, լեզու, աչք, ականջ եւ սիրտ տուեց՝ դրանցով իմացութիւն ստանալու համար:

6 Նրանց լցրեց գիտութեան հանճարով եւ նրանց ցոյց տուեց չարն ու բարին:

7 Իր աչքը դրեց նրանց սրտի մէջ՝ ցոյց տալու համար նրանց իր գործերի մեծութիւնը, որպէսզի օրհնեն իր սուրբ անունը.

8 նաեւ, որպէսզի պատմեն իր գործերի մեծութիւնը:

9 Աւելացրեց նրանց գիտութիւնը եւ նրանց ժառանգութիւն տուեց կեանքի օրէնքը:

10 Ցաւիտենական ուխտ հաստատեց նրանց հետ եւ իր դատաստանները ցոյց տուեց նրանց:

11 Նրանց աչքը տեսաւ նրա փառքի մեծութիւնը, եւ նրանց ականջը լսեց նրա ձայնի փառքը: Տէրը նրանց ասաց. «Զգո՛յշ եղէք ամէն մի անիրաւութիւնից»:

12 Նա նրանցից իւրաքանչիւրին պատուիրեց հոգ տանել մերձաւորին:

13 Նրանց ճանապարհները միշտ

նրա առջեւ են եւ չեն վրիպում նրա հայեացքից:

14 Իւրաքանչիւր ազգի համար առաջնորդ կարգեց, բայց Տիրոջ բաժինը Իսրայէլն է:

16 Նրանց բոլոր գործերը արեգակի նման նրա առջեւ են, եւ նրա աչքը միշտ նրանց ճանապարհի վրայ է:

17 Նրանց անիրաւութիւնները չծածկուեցին նրանից, նրանց բոլոր մեղքերը Տիրոջ առջեւ են:

18 Մարդու ողորմածութիւնը կնիք է նրա համար, եւ մարդու շնորհները նա պահպանելու է բիբի նման:

19 Սրանից յետոյ Տէրը պիտի ելնի ու հատուցի նրանց եւ նրանց արածների փոխարէնը պիտի բերի իրենց գլխին:

20 Սակայն ապաշխարողներին նա վերստին դարձի է բերում եւ մխիթարում նրանց, որոնց համբերութիւնը նուազել էր:

ԿՈՉ ՏԻՐՈՋԸ ԴԱՌՆԱԼՈՒ

21 Դարձի՛ր դէպի Տէրը եւ թո՛ղ մեղքերդ:

22 Աղերսի՛ր նրա առջեւ, եւ նա կը նուազեցնի յանցանքներդ:

23 Դարձի՛ր դէպի Բարձրեալը, յե՛տ դարձի՛ր անիրաւութիւնից եւ խի՛ստ ատիր գարշութիւնը:

25 Բարձրեալին ո՞վ գոհութիւն կը տայ գերեզմանում նրանց փոխարէն, ովքեր ողջ են եւ գոհութիւն են տալիս նրան:

26 Մեռեալից, իբրեւ անգոյից, կորած է փառաբանութիւնը: Կենդանի եւ ողջ մարդը միայն կը գովի Տիրոջը:

27 Որքան մեծ է Տիրոջ ողորմութիւնը,

28 նոյնքան էլ՝ քաւութիւնը նրանց նկատմամբ, ովքեր դառնում են դէպի Տէրը:

29 Ամէն ինչ չէ, որ մարդ կարող է անել, քանզի մարդու որդին անմահ չէ:

30 Ի՞նչն է աւելի լուսաւոր, քան արեգակը, բայց նա էլ է նուազում. մարդու մարմինն ու արիւնը չարի մասին են մտածում:

31 Տէրն ինքն է հետեւում երկնքի բարձր զօրքերին. բոլոր մարդիկ հող եւ մոխիր են:

ԱՍՏԾՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

18 Նա, որ կենդանի է յաւիտեան, ամէն ինչ ստեղծեց հաւասարապէս, եւ միայն Տէրն է արդար համարւում: Ոչ մէկին չի տրուած պատմել նրա գործերը:

2 Ո՞վ կը քննի նրա մեծագործութիւնները:

3 Ո՞վ կը չափի նրա հզօրութեան մեծութիւնը,

4 եւ ո՞վ կը համարձակուի պատմել նրա ողորմութեան մասին:

5 Հնարաւոր չէ ո՛չ նուազեցնել, ո՛չ աւելացնել եւ ո՛չ էլ հետազօտել Տիրոջ զարմանահրաշ գործերը:

6 Երբ մարդը համարի, թէ աւարտել է, կը զգայ, թէ նոր է սկսել, եւ երբ դադարի պատմեզուց, ապշահար կը մնայ:

ՄԱՐԴՈՒ ՈՉՆՉՈՒԹԻՒՆԸ

7 Ի՞նչ է մարդը, եւ ի՞նչ է նրա օգուտը:

8 Ո՞րն է նրա բարիքը, ո՞րն է նրա չարիքը: Մարդու օրերի թիւը ինչքան էլ շատ լինի, հարիւր տարի է: Ինչպէս ջրի կաթիլը ծովի համեմատութեամբ եւ խիճը՝ աւազի, այնպէս տարիներն են սակաւ յաւիտենական օրերի համեմատ:

9 Սրա համար է, որ Տէրը համբերատար է նրանց նկատմամբ եւ նրանց վրայ հեղում է իր ողորմութիւնը:

10 Նա տեսաւ եւ իմացաւ նրանց կործանումը, որ դաժան էր:

11 Սրա համար էլ բազմապատկեց իր ներողամտութիւնը:

12 Մարդու ողորմութիւնն իր մերձաւորի վրայ է, իսկ Տիրոջ ողորմութիւնը՝ բովանդակ մարմնաւորի:

13 Տէրը յանդիմանում, խրատում եւ ուսուցանում է եւ, իբրեւ հովիւ, նրան իր հօտն է վերադարձնում:

14 Ողորմում է նրանց, ովքեր ընդունում են խրատը եւ շտապում են լսել նրա վճիռները:

ՏԱԼՈՒ ԱՋՆԻՒ ՁԵՒԸ

15 Որդեա՛կ, քո բարիքին արատ մի՛ խառնիր եւ քո տուածներին՝ տրտմութեան խօսքեր:
16 Միթէ ցօղը չի՞ զովացնում տօթը. այդպէս էլ լաւ խօսքն աւելի լաւ է, քան նուէրը: Շնորհալի մարդը երկուսն էլ ունի:
17 Ցիմարն ապերախտութեամբ նախատում է,
18 եւ չարակամ մարդու նուէրը արցունք է բերում աչքերին:

ԻՄԱՍՏՈՒՆԻ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆԸ

19 Խօսելուց առաջ մտածի՛ր եւ դեռ չհիւանդացած՝ հո՛գ տար քո մասին.
20 նախքան Տիրոջ դատաստանը քննի՛ր քո անձը եւ նրա այցելութեան ժամանակ ողորմութիւն կը գտնես:
21 Մեղանչելու ժամանակ ցո՛յց տուր, որ դարձի ես գալիս:
22 Մի՛ յապաղիր ժամանակին կատարել խոստումդ եւ մինչեւ մահ մի՛ յետաձգիր արդարացումդ:
23 Աղօթելուց առաջ նախապատրաստի՛ր քեզ եւ մի՛ եղիր այն մարդու նման, որ փորձում է Տիրոջը:
24 Ցիշի՛ր վախճանի օրուայ ցասումը եւ վրէժխնդրութեան ժամանակը, երբ Տէրը քեզնից կը շրջի իր երեսը:
25 Լիութեան ժամանակ յիշի՛ր աղքատութեան ժամանակը եւ հարստութեան օրերին՝ աղքատութիւնն ու նեղութիւնը:
26 Առաւօտից մինչեւ երեկոյ փոփոխւում է ժամանակը, եւ Տիրոջ առջեւ ամէն ինչ յարափոփոխ է:
27 Իմաստուն մարդը ամէն ինչում զգոյշ կը լինի եւ մեղքի ժամանակ կը խուսափի բազում յանցանքներից:
28 Ամէն խելամիտ մարդ ճանաչում է իմաստութիւնը եւ գոհութիւն կը տայ նրան, ով գտել է այն:
29 Խելամիտ խօսքերով իրենք էլ են իմաստնանում եւ ճշմարիտ ու տեղին առակներ բերում:
30 Որդեա՛կ, անձնատուր մի՛ եղիր հեշտասիրութեանը
31 եւ թշնամիներից ոտնակոխ չես լինի:
32 Մի՛ ուրախացիր փափուկ կեանքով եւ մի՛ կապուիր դրա հետ:
33 Գրաւ դրած եւ պարտք վերցրած փողերով մի՛ աղքատացիր†, քանզի հարբեցող մշակը նոյնպէս հարստութեան չի հասնի:

19

Ով անարգում է փոքրագոյն բաները, քիչ-քիչ կը կործանուի:
2 Կանայք եւ գինին կործանում են իմաստութիւնը, եւ լկտի մարդը պիտի սատակի‡:
4 Ով փութկոտ է հաւատալու մէջ, նա թեթեւամիտ է, եւ ով յանցանք է գործում, մեղանչում է իր հոգու դէմ:
5 Ով մտքով լիրբ է, շատերից կը մեղադրուի§:

ՇԱՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ

7 Մի՛ յօժարիր խօսքդ կրկնել ո՛չ բարեկամին եւ ո՛չ թշնամուն:
8 Եթէ ներսդ մեղքեր չունես, ընաւ մի՛ ասա ուրիշին, քանզի նա կը լսի եւ կը զգուշանայ քեզանից:
9 Լսեցի՞ր որեւէ խօսք՝ թող մեռնի այն քո սրտում.
10 պի՛նդ կաց, քանզի այն քեզ չի պատռի եւ դուրս չի գայ:
11 Տխմարն իր խօսքից այնպիսի տանջանք է կրում, ինչպէս երեխայից ծնուածը:
12 Ինչպէս մարդու մարմնի մէջ մխրճուած նետն է, այնպէս էլ խօսքն է անմիտ մարդու սրտում:

ՈՒՂՂԵԼ ԲԱՐԵԿԱՄԻՆ

13 Քննի՛ր բարեկամիդ, գուցէ ոչնչով նա չի մեղանչել:
14 Իսկ եթէ մեղանչել է, դարձեա՛լ

†Ցուցարէն՝ Մի՛ դարձիր մուրացկան խրախճանք անելով պարտք վերցրած դրամով, երբ ոչինչ չկայ քո քսակում: Յաջորդ պարբերութիւնը 19-րդ գլխի սկիզբն է:

‡Ցուցարէն՝ Գինին եւ կանայք այլասերում են ողջախոհ մարդկանց, իսկ անառակներին կապուողը դառնում է յանդուգն: Յ Նա փոած է, որդերը կը ժառանգեն նրան, եւ յանդուգն հոգին կ'ոչնչանայ:

§Ցուցարէն՝ Սիրտը հանոյքներին տուած մարդը կը դատապարտուի:

զգուշացրու, որպէսզի բարեկամութիւնը հաստատ մնայ:
15 Բանսարկութիւնները շատ են, բայց դու ամէն խօսքի մի՛ հաւատա:
17 Մարդ կայ, որ մեղանչում է լեզուով եւ ոչ թէ մտքով, քանզի ո՞վ է, որ մեղք չի գործում մտքով կամ լեզուով:
18 Ամէն իմաստութիւն երկիւղն է Տիրոջից: Նախքան սպառնալը՝ հարցուփո՛րձ արա քո մերձաւորին եւ տե՛ղ թող Բարձրեալի օրէնքի համար:
19 Զարերի խրատն իմաստութիւն չէ եւ ոչ էլ՝ մեղաւորների խորհուրդը:
20 Նենգութիւն կայ, որ գարշանք է, եւ կայ աղքատամտութիւն, որ զուրկ է իմաստութիւնից:
21 Լաւ է երկիւղած աղքատամիտը, քան գիտելիքով հարուստը, որ յանդգնում է զանց առնել օրէնքը:
22 Կայ նրբին խորագիտութիւն, որ լեցուն է ապիրատութեամբ եւ անիրաւութեամբ:
23 Մարդ կայ, որ կորցնում է իր շնորհները, որպէսզի երեւան հանի արդարութիւնը, խորամանկ էլ կայ, որ քայլում է խոնարհ եւ գլխահակ, սակայն նրա փորը լիքն է նենգութեամբ:
24 Նա դէմքով խոնարհ է եւ խուլ է ձեւանում, բայց քեզ կը սպասի այնտեղ, ուր չես էլ կարծում:
25 Եւ եթէ ուժի պակասութիւնը նրան արգելք հանդիսանայ վնասելու քեզ, ապա նա քեզ չարիք կը պատճառի, երբ պահը գտնի:
26 Մարդը ճանաչւում է իր հայեացքից իսկ, եւ դէմքի տեսքից երեւում է իմաստութիւնը:
27 Մարդու հագուստը, երեսի ծիծաղը եւ ոտքի քայլը յայտնի է դարձնում նրան:
28 Ցանդիմանութիւն կայ, որ բարի չէ, եւ լռութիւն կայ, որ իմաստութիւն է:

ԽՐԱՏ ՏԵՂԻՆ ԽՕՍԵԼՈՒ ԵՒ ԼՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 Որքա՜ն աւելի լաւ է յանդիմանել, քան ինքն իր մէջ զայրանալ†:
2 Ով բռնութեամբ է դատ անում, նման է այն ներքինուն, որ բռնանում է կոյսի կուսութեանը:
5 Մարդ կայ, որ շատախօսութեան պատճառով ատելի է դառնում բոլորին, մարդիկ էլ կան, որոնց բերանում խօսք չկայ:
6 Կան որ լուռ են, քանզի չգիտեն խօսելու ժամանակը:
7 Իմաստուն մարդը լռում է մինչեւ խօսելու պահը, բայց ով անզգամ եւ ամբարիշտ է, առաջ է վազում:
8 Ով շատախօսում է, կ'արհամարհուի, եւ ով անչափ սաստում է իր խօսքով, ատելի կը լինի:

ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

9 Կայ յաջողութիւն, որ չարիք է մարդուն, գիւտ էլ կայ, որ կորուստ է:
10 Կայ ողորմութիւն, որ չի օգնում, բայց ողորմութիւն էլ կայ, որ կրկնակի հատուցում ունի:
11 Նուաստութիւն կայ, որ փառքից է գալիս, փառք էլ կայ, որ խոնարհութիւն է տալիս:
12 Կան որ փոքր բանի համար գլուխ են բարձրացնում, եւ կան, որ մեծ բանը փոքր բանի տեղ են դնում, բայց կան, որ եօթնապատիկ տուժում են:
13 Ով խօսքով իմաստուն է, իր անձը սիրելի է դարձնում, բայց տխմարների շնորհներն ամաչեցնում են իրենց:
14 Անզգամների ողորմութիւնը օգուտ չի բերի, քանզի նրանց աչքը մէկի փոխարէն շատն է ակնկալում:
15 Քիչ է տալիս, բայց շատ է նախատում, եւ իր բերանը բացում է իբրեւ քարոզիչ:
16 Հիմա փոխ կը տայ, իսկ վաղը յետ կը պահանջի. այդպիսին Տիրոջ եւ մարդկանց համար ատելի է:
17 Տխմարն այսպէս է ասում. «Ես բարեկամ չունեմ, եւ իմ բարի գործերի համար հատուցում չկայ:
18 Իմ հացն ուտողները կեղծաւոր են»:
19 Որքա՜ն յաճախ եւ ինչքա՜ն շատերը պէտք է ծիծաղեն նրանց վրայ:
20 Լաւ է ոտքից սայթաքել, քան լեզուից. այդպէս էլ չարերի կոր-

†Ցուցարէնն աւելացնում է՝ եւ խոստովանողը կը զգուշանայ վնասից:

ծանումը չուտ կը հասնի:

21 Ապաշնորհ մարդը նման է տարդէպ առասպելի:

22 Անմիտ մարդու շուրթերին առակներն անարժէք են դառնում, քանզի նա չի ասում ժամանակին:

23 Մարդ կայ, որ տկարութեան պատճառով անկարող է մեղք գործել. նա իր հանգստութեան մէջ խղճի խայթ չի զգում:

24 Մարդ կայ, որ ամօթի պատճառով է հոգին կորցնում. նա կը կորչի իր մարդահաճութեան համար:

25 Մարդ էլ կայ, որ բարեկամի պատճառով է ամօթը յանձն առնում եւ իզուր նրան թշնամի դարձնում իրեն[†]:

26 Մարդու մէջ չար բիծ է սուտը[‡]:

27 Այլ բան է գողութիւնը եւ այլ բան՝ ստութիւնը, սակայն երկուսից էլ կորուստ են ժառանգում:

28 Մարդու հոգուն անարգանք են իր սրտի վատ խօսքերը, եւ նրա ամօթը միշտ մնում է իր հետ:

ՀԵՏԵՒԵԼ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԻՆ

Որդեա՛կ, պահի՛ր իմ խօսքերը եւ օր ու գիշեր դրանց մասի՛ն մտածիր իբրեւ հարազատ որդի եւ ազնիւ ժառանգ, իսկ նա, ով չի նորոգում եւ բարձրացնում նախնիների առաքինութիւնը, նա ամօթ եւ նախատինք է իր պապերի համար եւ մի նոր անէծք:

29 Ով խօսքով իմաստուն է, առաջ կը տանի իրեն, եւ գիտուն մարդը հաճելի կը լինի մեծամեծներին:

30 Ով որ մշակի հողը, կը բարձրացնի իր ցորենի դէզը, եւ ով որ հաճելի լինի մեծամեծներին, կը քաւի իր անիրաւութիւնը:

31 Նուէրներն ու կաշառքը կուրացնում են իմաստունների աչքը եւ, ինչպէս բերանի կապ, կաշկանդում յանդիմանութիւնը:

32 Թաքուն է իմաստութիւնը, եւ անյայտ՝ գանձը. երկուսից էլ ի՞նչ օգուտ:

33 Լաւ է այն մարդը, որ թաքցնում է իր յիմարութիւնը, քան այն մարդը, որ թաքցնում է իր իմաստութիւնը:

ՋԳՈՒՇԱՆԱԼ ՄԵՂՔԻՑ

21 Որդեա՛կ, եթէ մեղք գործեցիր, այլեւս մի՛ արա եւ աղօթի՛ր հին մեղքերի համար:

2 Փախի՛ր մեղքերից, ինչպէս օձից. եթէ մօտենաս կը խայթի քեզ:

3 Մեղքի ժանիքները առիւծի ժանիքներ են, որ սպանում են մարդկանց հոգիները:

4 Ամէն տեսակ անօրէնութիւն նման է երկսայրի սրի. նրա տուած վէրքերին բժշկութիւն չկայ:

5 Արհաւիրքն ու թշնամանքը աւերում են հարստութիւնը. այդպէս էլ կ'աւերուի ամբարտաւանների տունը:

6 Խոնարհների խնդրուածքները հասնում են մինչեւ Տիրոջ ականջները, եւ նրա արդարութիւնը փութով կը հասնի:

7 Ով որ ատի յանդիմանութիւնը, նա կը լինի մեղաւորների շաւիղների մէջ, եւ ով որ երկիւղ է կրում Տիրոջից, սրտով նրան կը դառնայ:

8 Լեզուով հզօրը հեռուից է ճանաչւում, իսկ ով գիտուն է, տեսնում է իր սայթաքումը:

9 Ով իր տունը կառուցում է այլոց ունեցուածքով, նման է նրան, որ քարեր է հաւաքում ձմռանը:

10 Անօրէնների խումբը նման է դիզուած վուշի, եւ նրանց վախճանը կրակի բոցի մէջ է:

11 Մեղաւորների ճանապարհները հարթ են՝ քարերից մաքրուած, բայց վերջը դժոխքի խորխորատն է:

12 Ով պահում է օրէնքը, իշխում է իր մտքերին,

13 եւ Տիրոջ երկիւղի վերջը իմաստութիւնն է:

14 Ով խորագէտ չէ, չի սովորի:

15 Բայց խորագիտութիւն էլ կայ, որ շատացնում է դառնութիւնը:

[†]Յունարէն՝ 23 Մարդ էլ կայ, որ ամօթի պատճառով է խոստում տալիս ընկերոջը եւ առանց պատճառի յանձին նրա թշնամի է ձեռք բերում:

[‡]Յունարէնն աւելացնում է՝ Այն յարատեւում է տգէտների շուրթերին:

ԻՄԱՍՏՈՒՆԻ ԵՒ ՅԻՄԱՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

16 Իմաստունի գիտութիւնը հեղեղի նման կը սաստկանայ, եւ նրա խորհուրդները ակնաղբիւրի նման են:

17 Տգէտի փորը նման է ծակոտկէն ամանի. ոչ մի գիտելիք այնտեղ չի մնայ:

18 Եթէ գիտունը իմաստուն խօսք լսի, կը գովի այն եւ կ'աւելացնի այն, մինչդեռ թեթեւամիտը լսեց ու նրան հաճելի չթուաց այն եւ նետեց իր թիկունքի յետեւը:

19 Տխմարի խօսքը ճանապարհի բեռան նման է, սակայն իմաստունների շուրթերի վրայ այն շնորհ է ստանում:

20 Իմաստունների խօսքերը փընտռուելու են ժողովրդի մէջ, եւ դրանց մասին խորհելու են իրենց սրտում:

21 Աւերուած տան նման է յիմարի իմաստութիւնը, եւ տխմար մարդու գիտութիւնը անմիտ խօսք է:

22 Անմիտների համար խրատը ոտնակապ է եւ աջ ձեռքի ձեռնակապ:

23 Միծաղելիս տխմարը բարձրացնում է իր ձայնը, իսկ խորագէտ մարդը հազիւ ժպտում է հանդարտ:

24 Գիտունի համար խրատը նման է ոսկեղէն զարդի եւ աջ բազկի ապարանջանի:

25 Տխմարի ոտքը արագ դիմում է դէպի տուն, սակայն բազմափորձ մարդը պատկառում է մարդկանցից:

26 Անմիտը դռան արանքից է տան մէջ նայում, իսկ բարեկրօն մարդը մնում է դրսում:

27 Մարդու համար անվայել բան է դռան մօտ ականջ դնելը,

իսկ իմաստունը վշտանում է այդ անարգ արարքից:

28 Շատախօս օտար բերանները պատմում են, ինչ որ լսել են, իսկ իմաստունների խօսքերը կշռադատուած են:

29 Յիմարների սիրտը իրենց բերանում է, իսկ իմաստունների բերանը՝ իրենց սրտում:

30 Ամբարիշտը սատանային անիծելիս՝ ինքն իր հոգին է անիծում:

31 Բամբասողը պղծում է իր հոգին, նա ուր էլ բնակուի, ատելի կը լինի:

ՄՈՅԼԻ ՄԱՍԻՆ

22 Մոյլը նման է շաղախուած կղկղանքի. ամէն ոք զզուանքով կը թքի նրա վրայ:

2 Մոյլը հաւասար է աղբի եւ թրիքի. ամէն ոք, ով այն վերցնի, թափ կը տայ իր ձեռքը:

ՎԱՏԱԲԱՐՈՅ ՋԱՒԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3 Անդաստիարակ որդու ծնունդը հօր ամօթն է, իսկ դստեր ծնունդը՝ նրա նուաստացումը:

4 Ողջախոհ դուստրն իր ամուսինը կ'ունենայ, իսկ անամօթը տրտմութիւն է ծնողների համար:

5 Անառակը ամօթով կը թողնի իր հօրն ու մօրը[†] եւ երկուսից էլ կ'անարգուի:

6 Տարադէպ պատմութիւնը նոյնն է, ինչ որ երաժշտութիւնը սգի ժամանակ, իսկ ծեծն ու խրատը իմաստութիւն է ամէն ժամանակ:

7 Յիմարին սովորեցնողը նման է կոտրած խեցի կպցնողի

8 եւ քնածին խոր քնից արթնացնողի:

ՅԻՄԱՐՆ ԱՆՈՒՂՂԵԼԻ Է

9 Ով պատմում է յիմարին, նոյնն է թէ պատմում է նիրհողին, որը վերջում հարցնում է՝ «Ի՞նչ»:

10 Լա՛ց եղիր նաեւ տխմարի վրայ, քանզի նրա համար չքացաւ իմաստութիւնը:

11 Մեղմ լա՛ց եղիր մեռելի վրայ, քանզի նա գտաւ իր հանգիստը, իսկ յիմարի համար ապրելը մահից վատ է:

12 Մեռելի վրայ սուգը եօթն օր է,

13 իսկ անմիտ եւ ամբարիշտ մարդու համար՝ իր կեանքի բոլոր օրերին:

14 Անզգամի հետ շատ մի՛ խօսիր եւ անմիտ մարդու մօտ մի՛ գնա:

15 Զգո՛յշ եղիր նրանից, որպէսզի տանջանք չկրես եւ նրանից հեռանալիս կեղտով չչաղախուես,

16 այլ զատուի՛ր նրանից, եւ հանգիստ կը գտնես ու չես ձանձրանայ

[†]Յունարէն՝ ամուսնուն:

նրա անմտութիւնից:
17 Կապարից աւելի ծանր ի՞նչ կայ, եւ ի՞նչ է նրա անունը, եթէ ոչ՝ յիմար:
18 Աւելի դիւրին է տանել աւազը, աղը եւ չիկացած երկաթը†, քան անմիտ մարդուն:
19 Ինչպէս փայտէ պահանգով ամրացուած շինուածքը ցնցումներից չի խախտւում, այդպէս էլ անխախտ է մնում իմացութեան խորհրդով հաստատուած սիրտը:
20 Իմաստութեան խորհրդով հաստատուած սիրտը վախի ժամանակ չի վհատուի:
21 Ինչպէս բարձրաւանդակի վրայ գտնուող յարդը եւ աւազաշաղախ քարաշէն պատի խճաքարերը հողմերի առաջ չեն դիմանայ,
22 այնպէս էլ վախկոտ սիրտը տխմար խորհուրդների պատճառով չի տոկայ ամէն տեսակ երկիւղի առաջ:

ԲԱՐԵԿԱՄԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

24 Ով աչքն է խոցում, արտասուք է բերում, եւ ով սիրտն է խոցում, զգացմունքներ է յարուցում:
25 Ով քար է նետում թռչուններին, քշում է նրանց, եւ ով նախատում է բարեկամին, խզում է բարեկամութիւնը:
26 Թէ սուր էլ քաշես բարեկամի վրայ, անյոյս մի՛ եղիր, քանզի դարձ կայ:
27 Թէ բարեկամի վրայ բերան էլ բացես, մի՛ վախեցիր, քանզի հաշտութիւն կայ, միայն թէ դա չլինի նախատինք, ամբարտաւանութիւն, գաղտնիք յայտնել եւ նենգ վիրաւորանք:
28 Ամէն տեսակ բարեկամ փախչում է սրանցից: Մերձաւորի մօտ հաւատարմութի՛ւն ունեցիր նրա աղքատութեան ժամանակ, որպէսզի նրա հարստութեան օրօք ուրախ լինես‡:
29 Նեղութեան ժամանակ մօ՛տ եղիր նրան, որպէսզի դու էլ ժառանգես նրա ժառանգութիւնից:
30 Ինչպէս հնոցում կրակից առաջ գոլորշի եւ ծուխ է դուրս գալիս, այդպէս էլ արիւնահեղութիւնից առաջ՝ բամբասանքը:
31 Ես չեմ ամաչի բարեկամիս պաշտպանել եւ նրա երեսից չեմ թաքնուի, թէկուզ ինձ չարիք պատահի նրա պատճառով,
32 մինչդեռ ամէն ոք, ով լսի այդ մասին, պիտի խորշի նրանից:
33 Ո՞վ ինձ կը տար պահապան իմ բերանի վրայ եւ խորագիտութեան կնիք՝ իմ շուրթերին, որպէսզի չխորտակուեմ, եւ իմ լեզուն չկործանի ինձ:

23

Տէ՛ր, Հա՛յր եւ Իշխա՛ն իմ կեանքի, մի՛ թող ինձ դրանց խորհուրդների մէջ†:
2 Ո՞վ կապանք կը դնէր իմ մտքերի վրայ եւ իմաստութեան խրատ՝ իմ սրտի վրայ,
3 որպէսզի դրանք չխնայեն իմ տգիտութեանը եւ թոյլ չտան, որ մեղք գործեմ, որպէսզի չծանրանան իմ զանցանքները, եւ չմեծանան իմ մեղքերը, որպէսզի չընկնեմ հակառակորդների առջեւ, եւ իմ թշնամին ինձ ոտնատակ չանի‡:
4 Տէ՛ր, Հա՛յր եւ իմ կեանքի՛ Աստուած,
5 մի՛ տուր§ ինձ աչքերի ունայն խաղ եւ հեռացրո՛ւ ինձնից սրտի ցանկութիւնը:
6 Թող ինձ չհասնեն որովայնի ցանկութիւնն ու անառակութիւնը, եւ մի՛ մատնիր ինձ անամօթ մարդու ձեռքը:

ԽՐԱՏՆԵՐ ԼԵԶՈՒԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 Որդինե՛ր, լսեցէ՛ք բերանի մասին այս խրատը. ով որ պահի այն, չի որսուի:
8 Մեղաւորն իր շուրթերով է որսւում, եւ հայհոյիչն ու ամբարտաւանը դրանցով է սայթաքում:
9 Մի՛ ընտելացրու քո բերանը երդումի:
10 Մի՛ վարժուիր Սրբի անունով երդուել:
11 Ինչպէս այն ծառան, որ յաճախ պատժի է ենթարկւում, անպակաս չէ վէրքերից, այնպէս էլ ով երդւում եւ մշտապէս Սրբի անունն է տալիս, չի մաքրւում մեղքերից:
12 Շատ երդուող մարդը անօրէնութեամբ է լցւում, եւ հարուածներն անպակաս կը լինեն նրա տնից:
13 Եթէ յանցանք գործի, իր մեղքն իր վրայ է, եւ եթէ չփոթուի, կրկնակի մեղք է գործում:
14 Եթէ ի զուր երդուեց, չի արդարանայ, որովհետեւ նրա տունը տանջանքով է լցուելու:

ԱՆԳԱՏԵՀ ԽՕՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 Խօսք կայ, որ հաւասար է մահուան. թող այն չգտնուի Յակոբի տոհմի ժառանգութեան մէջ:
16 Թող այս ամէնը բարեպաշտներից հեռու մնայ, եւ նրանք մեղքի մէջ չեն թաւալուի:
17 Մի՛ ընտելացրու քո շուրթերը տգիտութեան, քանզի դրա մէջ մեղաւոր խօսքեր կան:
18 Երբ մեծամեծների մէջ նստես, յիշի՛ր քո հօրն ու մօրը,
19 որպէսզի քեզ չկորցնես նրանց առջեւ եւ, ըստ քո սովորութեան, յիմարութիւն չանես ու չասես, թէ՝ «Լաւ էր չծնուէի», եւ քո ծննդեան օրն անիծես:
20 Այն մարդը, որ վարժուած է նախատինքի, իր բոլոր օրերում չի խրատուի:

ԱՆԳԱՐԿԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

21 Երկու բան կայ, որ շատացնում է մեղքերը, մի երրորդ բան էլ՝ որ բարկութիւն է առաջ բերում:
22 Ցասկոտ հոգին բորբոքուած կրակի նման է՝ չի մարի մինչեւ չսպառուի:
23 Բոզաբարոյ մարդը չի դադարի իր մարմնի անդամների հետ անառակութիւն անելուց, մինչեւ որ կրակը վառի նրան:
24 Պոռնիկ մարդուն ամէն տեսակ հաց քաղցր է, նա չի դադարի, մինչեւ որ մեռնի:
25 Մարդը, որ մեղք է գործում իր մահճի դէմ, իր սրտում ասում է. «Ո՞վ կը տեսնի ինձ:
26 Իմ շուրջը խաւար է, պատերը ծածկում են ինձ, ոչ ոք չի տեսնում ինձ. ինչո՞ւ կասկածեմ, չէ՞ որ Բարձրեալը չի տեսնում իմ մեղքը»:
27 Նրա երկիւղը մարդկանց աչքն է:
28 Նա չգիտի, որ Տիրոջ աչքը բիւր անգամ լուսատու է արեգակից, տեսնում է մարդկանց բոլոր ճանապարհները եւ նկատում նրանց բոլոր գաղտնի տեղերը:
29 Մինչեւ նրանց ստեղծուելը ամենայն ինչ ծանօթ էր նրան, այդպէս էլ կը լինի նրանց վախճանուելուց† յետոյ:
30 Այդպիսին կը պատժուի քաղաքի հրապարակներում եւ կը բռնուի այնտեղ, ուր չէր ենթադրի:

ԱՆԲԱՐՈՅ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

32 Այդպէս կը պատժուի նաեւ այն կինը, որ թողել է իր ամուսնուն եւ օտարից ժառանգ է բերել:
33 Նախ՝ որովհետեւ Բարձրեալի օրէնքին չհնազանդուեց, երկրորդ՝ յանցանք գործեց իր ամուսնու դէմ, եւ երրորդ՝ շնացաւ պոռնկութեամբ եւ օտար մարդուց որդի բերեց:
34 Նա ժողովրդից պիտի վտարուի, եւ նրա որդիներին պիտի հոգ չտանեն:
35 Նրա որդիները արմատներ պիտի չարձակեն, եւ նրա ոստերը պտուղ չպիտի տան:
36 Նա անէծք է թողնելու իր յիշատակին, եւ նրա նախատինքը չի ջնջուելու:
37 Աւելի լաւ բան չկայ, քան երկիւղը Տիրոջից, եւ չկայ աւելի քաղցր բան, քան անսալ Տիրոջ պատուիրաններին:

†Յունարէնում՝ երկաթի մեծ կտորը:
‡Յունարէն՝ ուրախ լինես նրա հետ:
†Յունարէնն աւելացնում է՝ եւ մի՛ թող, որ ընկնեմ դրանց պատճառով:
‡Յունարէնում՝ եւ որպէսզի իմ թշնամին չուրախանայ:
§Հայերէն՝ տանիր. տո՛ւր բառը դրել եմ ըստ յունարէնի:
†Յունարէնում՝ կատարուելուց:

ԳՈՎՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

24 Իմաստութիւնը կը գովի իրեն եւ պիտի պարծենայ իր ժողովրդի մէջ:
2 Բարձրեալի տաճարում պիտի բացի իր բերանը եւ նրա զօրութեան առջեւ պիտի պարծենայ.
5 «Ես դուրս ելայ Բարձրեալի բերանից եւ մշուշի նման ծածկեցի երկիրը:
7 Ես բնակուեցի բարձունքներում, եւ իմ Աթոռը ամպի սեան մէջ է:
8 Միայն ես պտտուեցի երկնքի ծիրով մէկ, գնացի անդունդների խորքերը,
9 իշխեցի ծովի ալիքներին,
10 բոլոր երկրներին եւ բոլոր ժողովուրդներին ու ազգերին:
11 Այս բոլորի մէջ հանգիստ փնտռեցի եւ այն երկիրը, ուր ես հանդարտուեմ:
12 Այն ժամանակ բոլորի Արարիչը պատուիրեց ինձ, եւ նա, ով ստեղծեց ինձ, ցոյց տուեց իմ խաղաղութեան խորանը:
13 Նա ասաց. "Դու բնակուի՛ր Յակոբի տոհմի մէջ եւ Իսրայէլի մէջ ժառանգութի՛ւն ստացիր":
14 Սկզբից, յաւիտենութիւնից առաջ Տէրն ստեղծեց ինձ, եւ ես յաւիտեան չեմ նուազելու:
15 Ես պաշտամունք մատուցեցի նրա սուրբ խորանի առջեւ, ապա հաստատուեցի Սիոնի մէջ, Տէրը նոյնպէս բնակեցրեց ինձ սուրբ քաղաքում, եւ իմ իշխանութիւնը Երուսաղէմի մէջ է:
16 Ես արմատաւորուեցի փառաւոր ժողովրդի մէջ, Տիրոջ բաժնում՝ նրա ժառանգութեան մէջ:
17 Բարձրացայ Լիբանանի նոճու պէս եւ Ահերմոնի լեռների դափնու նման:
18 Բարձրացայ ինչպէս արմաւենին Ենգադիում եւ ինչպէս վարդենու տունկը Երիքովի մէջ:
19 Բարձրացայ դաշտի վայելուչ ձիթենու պէս, բարձրացայ սօսու նման:
20 Բուրեցի իբրեւ կինամոն եւ խնկի ծառ,
21 իբրեւ քաղբան, խունկ, ստաշխ եւ իբրեւ կնդրուկի անուշ հոտ վրանում:
22 Բեւեկնի նման արձակեցի իմ ոստերը, եւ իմ ոստերը փառքի եւ շնորհների ոստեր են:
23 Ես իբրեւ այգի† շնորհներ եմ բխում, եւ իմ ծաղիկները փառքի եւ հարստութեան պտուղներ են:
26 Մօտեցէ՛ք ինձ ամէնքդ, որ ցանկանում էք ինձ, եւ ճաշակեցէ՛ք իմ արմատներից,
27 քանզի իմ յիշատակը մեղրից քաղցր է, եւ իմ ժառանգութիւնը աւելի քաղցր է, քան մեղրի խորիսխը:
29 Ովքեր ուտեն ինձ, տակաւին պիտի քաղցած մնան, եւ ովքեր ըմպեն ինձ, տակաւին պիտի ծարաւեն:
30 Ով ինձ լսի, չի ամաչի, եւ ովքեր ինձ հետ գործեն, չեն մեղանչի»:
32 Այս ամէնը բարձրեալ Աստծու ուխտի Գիրքն է եւ Օրէնքը,
33 որ մեզ պատուիրեց Մովսէսը իբրեւ Յակոբի ժողովուրդների ժառանգութիւն:
34 Նա իմաստութիւնը հեղում է Փիսոն գետի նման
35 եւ ինչպէս Տիգրիսը՝ նորահաս բերքի օրերին:
36 Նա գիտութիւնը լցնում է Եփրատի նման եւ ինչպէս Յորդանանը՝ հնձի օրերին:
37 Նա խրատը սփռում է իբրեւ լոյս եւ տարածում ինչպէս Գեհոնը՝ բերքահաւաքի օրերին:
38 Նրան չհասցրեց ճանաչել առաջին մարդը, նրան չքննեց վերջինը եւս,
39 քանզի նրա խոհամտութիւնը ծովից անհուն է, եւ նրա խորհուրդը խոր է մեծ անդունդներից աւելի:
41 Ես իբրեւ ջրմուղ ելայ գետից եւ իբրեւ վտակ ելայ դրախտից:
42 Ասացի՝ ջրեմ պարտէզը եւ ջրեմ ածուն:
43 Եւ ահա ինձ համար ջրմուղը գետ դարձաւ եւ ինձ համար գետը՝ ծով:
44 Տակաւին ես գիտութիւնը պիտի լուսաւորեմ ինչպէս առաւօտ եւ նրա լոյսը պիտի տարածեմ մինչեւ հեռաստանները:
46 Եւ տակաւին ուսմունքը պիտի սփռեմ իբրեւ մարգարէութիւն եւ այն

†Յունարէնում՝ իբրեւ խաղողի որթ:

յաւիտեանս պիտի թողնեմ ազգերի մէջ:
47 Տեսէ՛ք, ես ոչ միայն ինձ համար աշխատեցի, այլեւ բոլոր նրանց համար, ովքեր փնտռում են այն:

ԽՐԱՏ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25 Երեք բանով գեղեցկացայ եւ վայելուչ երեւացի Տիրոջ եւ մարդկանց առջեւ:
2 Դրանք են՝ եղբայրների միաբանութիւնը, մերձաւորների սէրը եւ՝ երբ կինն ու տղամարդը համերաշխ են իրար հետ:
3 Իմ հոգին ատեց երեք տեսակ մարդկանց եւ խիստ գարշեց նրանց կեանքից:
4 Դրանք են՝ հպարտ աղքատը, ստախօս հարուստը եւ վաւաշոտ ու պակասամիտ ծերը:
5 Եթէ պատանեկութեանդ ժամանակ չհաւաքեցիր, ինչպէ՞ս կը գտնես ծերութեանդ ժամանակ:
6 Որքա՜ն պատշաճ է ալեհեր մարդուն՝ դատելը եւ ծերերին՝ խորհուրդ տալը:
7 Որքա՜ն գեղեցիկ է ծերերի իմաստութիւնը եւ պատուաւոր մարդկանց իմացութիւնն ու խորհուրդը:
8 Մերերի պսակը բազմահմտութիւնն է եւ նրանց պարծանքը՝ երկիւղը Տիրոջից:
9 Ինը խորհրդի եմ երանի տալիս իմ մտքում, իսկ տասներորդը կ'ասեմ լեզուով:
10 Դա այն մարդն է, որ ուրախ է որդիներով եւ իր կենդանութեան ժամանակ տեսնում է թշնամիների կործանումը:
11 Երանի՜ նրան, ով ապրում է իմաստուն կնոջ հետ, իր լեզուով չի սխալւում եւ չի ծառայում մէկին, որ անարժան է իրեն:
12 Երանի՜ նրան, ով իմաստութիւն գտաւ եւ այն կը պատմի լսողների ականջին:
13 Որքա՜ն մեծ է նա, ով իմաստութիւն է գտել, բայց նա աւելի մեծ չէ, քան նա, ով երկիւղ է կրում Տիրոջից:
14 Երկիւղը Տիրոջից գերազանցում է ամէն բան:
16 Եւ ով ունի այն, ո՞ւմ կարելի է նմանեցնել:
18 Կարելի է տանել ամէն տեսակ վէրք, բայց ոչ՝ սրտի վէրքը,
19 ամէն տեսակ չարութիւն, բայց ոչ՝ կնոջ չարութիւնը,
20 ամէն տեսակ հարուած, բայց ոչ՝ ատելիների հարուածը,
21 ամէն տեսակ վրէժ, բայց ոչ՝ թշնամիների վրէժը:
22 Օձի գլխից չար գլուխ չկայ եւ ոչ էլ թշնամու ցասումից աւելի մեծ ցասում:

ՉԱՐ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

23 Նախընտրեցի բնակուել առիւծի եւ վիշապի հետ, քան ապրել չար կնոջ հետ:
24 Կնոջ չարութիւնը այլափոխում է նրա տեսքը եւ քուրձի նման սեւացնում նրա երեսը:
25 Նրա ամուսինը կը նստի իր ընկերների հետ եւ, լսելով, հոգոց կը հանի:
26 Ամէն տեսակ չարութիւն փոքր է կնոջ չարութեան մօտ. թող նրան ընկնի մեղաւորի վիճակը:
27 Աւազուտ զառիվերը ծերունու ոտքերի տակ նոյնն է, ինչ հեզ ամուսնու համար լեզուանի կինը:
28 Մի՛ նայիր կնոջ գեղեցկութեանը եւ մի՛ փափագիր:
29 Բարկութիւն է, լրբութիւն եւ մեծ ամօթ,
30 եթէ կինն է ամուսնուն հրամայողը:
31 Թշուառացած սիրտ, խոժոռ դէմք եւ սրտի վէրք է չար կինը:
32 Թուլացած ձեռք եւ կթոտած ծունկ է այն կինը, որ երանի չի տալիս† իր ամուսնուն:
33 Մեղքի սկիզբը կնոջից է, եւ նրա պատճառով ենք մեռնում բոլորս:
34 Ելք մի՛ տուր ջրին եւ չար կնոջ համարձակութեանը. եթէ նա չի գնում ըստ քո ձեռքի ցոյց տուած ուղղու-

†Յունարէնում՝ չի երջանկացնում:

թեան, կտրի՛ր քո մարմնից եւ հեռո՛ւ նետիր նրան:

ԵՐՋԱՆԻԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

26 Երանելի է բարի կնոջ ամուսինը, եւ բազում է նրա օրերի թիւը:
2 Բարեգործ կինն ուրախացնում է իր ամուսնուն եւ նրա տարիները լցնում խաղաղութեամբ:
3 Բարի կինը մի բարի բաժին է, որ Տէրը տալիս է իրենից երկնչողներին. հարուստ թէ աղքատ՝ նրանց սիրտը գոհ է նրանից,
4 եւ նրանց դէմքը միշտ ուրախ է:

ՋԳՈՒՇԱՆԱԼ ՁԱՐ ԿԱՆԱՆՑԻՑ

5 Երեք բանի վրայ կասկածեց իմ սիրտը, բայց կայ մի չորրորդը, որի համար աղօթում եմ վախից:
6 Դրանք են՝ քաղաքի բանսարկութիւնը, ամբոխի վրդովմունքը
7 եւ սուտ չարախօսութիւնը, որոնք մահից աւելի դաժան են:
8 Բայց սրտի ցաւ եւ սուգ է այն կինը, որ չարանախանձ է մէկ այլ կնոջ,
9 լեզուանի գազան է, որ խոցում է բոլորին:
10 Չար կինը եզան երերացող լուծ է. ով բռնի այն՝ իժ† է բռնում:
11 Մեծ խայտառակութիւն է հարբեցող կինը, որ չի ծածկում իր ամօթը:
12 Կնոջ պոռնկութիւնը իմացւում է նրա շարժուձեւերից, նրա աչքերի հայեացքից եւ նրա արտեւանունքներից:
13 Անամօթ դստեր վրայ հսկողութի՛ւն հաստատիր, որպէսզի համարձակութիւն ստանալով՝ նա ինքնագլուխ չլինի:
14 Լիրբ կնոջ աչքից զգո՛յշ եղիր եւ մի՛ զարմացիր, եթէ քո դէմ էլ յացանք գործի:
15 Ինչպէս ծարաւած ճանապարհորդը, նա բերանը բացում եւ խմում է ամէն տեսակ մօտիկ ջրերից, նստում է ամէն տեսակ վրանի առջեւ եւ կապարճի պէս բացւում առաջին իսկ նետի դէմ:

†Յունարէնում՝ կարին:

ԳՈՎԻՐ ԿԱՏԱՐԵԱԼ ԿՆՈՋ

16 Կնոջ չնորհը հրճուանք է նրա ամուսնուն, եւ նրա ողջախոհութիւնը զօրացնում է նրա ոսկորները:
17 Խոնարհ կինը Տիրոջ պարգեւն է, անփոխարինելի է առաքինի հոգին:
18 Շնորհների վրայ չնորհ է ամօթխած կինը,
19 եւ համարժէք կշիռ չկայ նրա զուսպ հոգու համար:
20 Տիրոջ բարձունքներում ծագող արեգակ է
21 բարի կնոջ գեղեցկութիւնն իր տան յարդարանքի մէջ:
22 Ինչպէս լուսատու ճրագն է մաքուր աշտանակի վրայ, այնպէս էլ երեսի գեղեցկութիւնն է հանդարտ հասակի վրայ†:
23 Ինչպէս ոսկեղէն սիւներն են արծաթեղէն խարիսխների վրայ, այնպէս էլ գեղեցիկ ոտքերն են խոնարհ գարշապարների վրայ:
25 Սիրտս տխուր է երկու բանի համար, եւ կայ մի երրորդ բան, որից իմ մէջ ցասում առաջացաւ:
26 Դրանք են՝ պատերազմող մարդը, որն աղքատութեան պատճառով է թշուառ, եւ իմաստուն մարդիկ, որոնք արհամարհուած են:
27 Բայց ով արդարութիւնից դառնում է դէպի մեղքը, Տէրը նրա համար սուր է պատրաստում:
28 Դժուար թէ վաճառականը խուսափի յանցանքներից, եւ պանդոկապանը արդարանայ մեղքերից:

ԽՐԱՏՆԵՐ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27 Շատերը մեղանչում են կայքի‡ համար, եւ ով ուզում է շատացնել այն, դէմքը շրջում է:
2 Ինչպէս իրար կից քարերի միջեւ ցից է խփւում,
3 այնպէս էլ մեղքն է տեղ գտնում վաճառելու եւ գնելու միջեւ:
4 Եթէ մէկը նախանձախնդրութեամբ հաստատակամ չէ Տիրոջ երկիւղի մէջ, արագ կը կործանուի նրա տունը:

†Յունարէնը չունի:
‡Յունարէնում՝ փողի:

5 Մաղելիս մաղի մէջ աղբն է մնում, ինչպէս մարդու կղկղանքը՝ նրա մտքերի մէջ:
6 Բրուտի անօթները փորձւում են կրակի մէջ, իսկ մարդը փորձւում է իր խորհուրդների մէջ:
7 Ծառերի մշակութիւնը երեւում է նրա պտղից, ինչպէս խօսքից՝ մարդու սրտի խորհուրդները:
8 Մի՛ գովիր մարդուն նրա խօսելուց առաջ. այսպէս են փորձում մարդկանց:
9 Եթէ արդարութեան յետեւից գնաս, կը հասնես նրան, եւ այն կը հագնես իբրեւ փառքի զգեստ:
10 Թռչունները հանգստանում են իրենց նմանների մօտ, եւ ճշմարտութիւնը վերադառնում է իրեն փնտռողների մօտ:
11 Ինչպէս առիւծն է դարանակալ որսին, այնպէս էլ մեղքը՝ անիրաւութիւն անողին:
12 Բարեպաշտի զրոյցը յարատեւ իմաստութիւն է, իսկ անզգամը լուսնի պէս այլափոխւում է:
13 Խնայի՛ր ժամանակդ, երբ անմիտների մէջ ես, բայց տեւապէ՛ս մնա խելացիների հետ:
14 Ցիմարների զրոյցները ձանձրալի են, եւ ծաղրելու համար նրանք պիտի մեղքեր գործեն:
15 Շատ երդուողի խօսքից ցցւում են լսողի մազերը,
իսկ նրանց վէճը ականջ է խլացնում:
16 Ամբարտաւանների վէճն արիւնահեղութիւնն է, եւ նրանց բամբասանքը ձանձրալի է լսել:
17 Ով յայտնում է գաղտնիքները, կորցնում է հաւատարմութիւնը եւ չի գտնի բարեկամ իր հոգու համար:
18 Երկա՛ր մնա բարեկամի մօտ եւ հաւատարի՛մ եղիր նրան.
19 իսկ եթէ յայտնես նրա գաղտնիքները, չես գնայ նրա յետեւից:
20 Ինչպէս մարդ կորցնում է իր թշնամուն, այնպէս կորցնում է մերձաւորի սէրը:
21 Ինչպէս թռչունին, որ քո ձեռքից բաց ես թողնում եւ էլ չես կարող բռնել, այնպէս էլ չես բռնի մերձաւորին, որին բաց ես թողնում:
22 Մի՛ գնա նրա յետեւից, քանզի նա հեռացաւ եւ այծեամի պէս փրկուեց որոգայթից:
23 Վէրքը կարելի է կապել, եւ հայհոյանքից յետոյ հաշտութիւն կայ:
24 Ով յայտնում է գաղտնիքները, նա կորցնում է հաշտութեան յոյսը:

ԵՐԿԱԿԻ ԼԵԶՈՒ

25 Ով ակնարկում է աչքով, չարիք է նիւթում, եւ ով տեսնում է այն, թող հեռու մնայ նրանից:
26 Քո աչքի առջեւ նա կը քաղցրացնի իր բերանը, կը զարմանայ քո խօսքի վրայ, իսկ յետոյ կը ծռի իր բերանը եւ քո խօսքը գայթակղութեան առարկայ կը դարձնի:
27 Շատ բան ատեցի, բայց ոչ մի բան այնպէս չեմ ատել, ինչպէս նրան. Տէրը նոյնպէս ատելու է նրան:
28 Ով քարը երկինք† է նետում, այն իր գլխին կ'ընկնի. նենգաւոր մարդու հարուածները բացում են վէրքերը:
29 Ով հոր փորի, նրա մէջ կ'ընկնի, եւ ով որոգայթ լարի, կը բռնուի նրա մէջ:
30 Ով չարութիւն անի, կը գլորուի նրա մէջ եւ չի էլ իմանայ, թէ այն որտեղից հասաւ իրեն:
31 Ամբարտաւանների ծաղրն ու նախատինքը, նաեւ վրէժխնդրութիւնը առիւծի նման դարանակալ է նրանց:
32 Որոգայթով կը բռնուեն նրանք, ովքեր ուրախանում են բարեպաշտների անկումով. իրենց մահից առաջ հեծութիւնը պիտի մաշի նրանց:
33 Ինչ եւ բարկութիւնը նոյնպէս գարշելի են, եւ մեղաւոր մարդը ամուր կառչում է նրանցից:

ՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 Ով վրէժ առնի, Տիրոջից վրէժխնդրութիւն կը գտնի, եւ Տէրը խստօրէն կը հաստատի նրա մեղքերը‡:
2 Ների՛ր քո եղբօր անիրաւութիւնը,

†Յունարէնում՝ վերեւ:
‡Յունարէնում՝ նրա մեղքերը պահպանելով կը պահպանի:

եւ միայն այն ժամանակ աղօթելիս քո մեղքերը կը ներուեն:
3 Մարդը մարդու հանդէպ բարկութիւն է կուտակում, իսկ Տիրոջից բժշկութիւն է խնդրում:
4 Իր նման մարդու հանդէպ նա չունի ողորմածութիւն, բայց աղերսում է իր մեղքերի թողութեան համար:
5 Ինքը եւս մարմին[†] է, բայց ո՞վ է պահում: Ո՞վ քաւութիւն կը տայ նրա մեղքերին:
6 Ցիշի՛ր քո վախճանը եւ դադարի՛ր թշնամութիւն անելուց, յիշի՛ր ապականացու լինելդ ու մահդ
7 եւ մնա՛ պատուիրանների մէջ:
8 Ցիշի՛ր պատուիրանները եւ ոխ մի՛ պահիր մերձաւորիդ հանդէպ,
9 յիշի՛ր Բարձրեալի ուխտը եւ արհամարհի՛ր տգիտութիւնը:
10 Հեռո՛ւ մնա վէճից եւ դու կը նուազեցնես մեղքերդ, քանզի զայրացած մարդը կռիւ է բորբոքում, մեղաւոր մարդը գժտեցնում է իր բարեկամներին
11 եւ նրանց մէջ, ովքեր խաղաղութեամբ են ապրում, բանսարկութիւն է գցում:
12 Կրակը վառւում է ըստ իրեն սնող նիւթի, իսկ կռիւն էլ բորբոքւում է ըստ նրան գրգռող սաստկութեան. մարդու զայրոյթը լինում է ըստ նրա զօրութեան, եւ ըստ նրա հարստութեան սաստկանում է նրա բարկութիւնը:
13 Անզիջում հակառակութիւնը կրակ է բորբոքում, եւ անզիջում կռիւը արիւն է հեղում:
14 Եթէ կայծի վրայ փչես, կը բորբոքուի, եւ եթէ նրա վրայ թքես, կը մարի. այդ երկուսն էլ քո բերանից են դուրս գալիս:
15 Քսուն եւ երկերեսանին թող անիծուեն, քանզի բազում խաղաղ ապրողներ կործանուեցին:

ՉԱՐ ԼԵԶՈՒՆ

16 Մի երրորդ մարդու լեզուն շատերին սասանեց, նրանց ազգից ազգ հալածեց,
17 ամուր քաղաքներ կործանեց
18 եւ մեծամեծների տներն աւերեց:
19 Մի երրորդ մարդու լեզուն ջնասէր կանանց վռնդեց եւ նրանց զրկեց իրենց վաստակից:
20 Ով նրան լսի, հանգիստ չի գտնի եւ վստահ ու ապահով չի ապրի:
21 Մտրակի հարուածը վէրք է առաջացնում, իսկ լեզուի հարուածը ոսկորներ է փշրում:
22 Շատերն են ընկել սուրերի սայրից, բայց ոչ նրանց չափ, ովքեր ընկել են լեզուի երեսից:
23 Երջանիկ է նա, ով թաքնուում է նրանից, ով չի ճաշակել նրա ցասումը, ով չի քաշել նրա լուծը եւ ով չի կապուել նրա կապանքներով:
24 Նրա լուծը երկաթեայ լուծ է, եւ նրա կապանքները՝ պղնձէ կապանքներ:
25 Դաժան մահ է նրա մահը, դժոխքը լաւ է նրանից:
26 Թող նրա ձեռքը չլինի բարեպաշտների վրայ, եւ թող նրանք չայրուեն նրա բոցում:
27 Ովքեր Տիրոջը թողնեն, կ'ընկնեն չար լեզուի ձեռքը, նրանց մէջ կը բորբոքուի այն ու չի մարի, նրանց վրայ կ'ուղարկուի իբրեւ առիւծ ու նրանց կ'ոչնչացնի ինձի նման:
28 Տե՛ս, քո կալուածքը ամրացրո՛ւ փշէ ցանկապատով:
29 Պի՛նդ կապած պահիր քո ոսկին եւ արծաթը, քո խօսքին չափ ու կշի՛ռ տուր եւ քո բերանին դուռ ու նի՛գ դիր:
30 Զգո՛յշ եղիր, որպէսզի չգայթակղուես լեզուից, չընկնես դարանակալ մարդու առջեւ:

ՓՈԽԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

29 Ով ողորմութիւն է անում, նա փոխ է տալիս մերձաւորին:
2 Ով իր ձեռքով նրան սատար է լինում, պահում է պատուիրանները:
3 Մերձաւորիդ փո՛խ տուր ժամանակին, հաստա՛տ պահիր խօսքդ, հաւատարի՛մ եղիր նրան եւ միշտ կը գտնես քեզ համար անհրաժեշտը:
4 Շատերը փոխ վերցրածը գտած բան համարեցին եւ դառնութիւն պատճառեցին իրենց օգնողներին:

[†]Այսինքն՝ հողեղէն:

5 Մինչեւ վերցնելը մարդ համբուրում է մերձաւորի ձեռքը եւ խոնարհ ձայնով է խօսում նրա ունեցուածքի մասին:
6 Վերադարձնելու ժամանակ նա կը յետաձգի ժամկէտը, ցաւալի խօսքեր կ'ասի եւ կը գանգատուի ժամանակից:
7 Եթէ փոխատուն կարողանայ տուածի հազիւ կէսը յետ առնել, ապա այն կը համարի գտած բան.
8 իսկ եթէ չկարողանայ, կը զրկուի իր ունեցուածքից եւ նրան զուր տեղը թշնամի կը դարձնի իրեն:
9 Սա էլ անէծք եւ բամբասանք կը հատուցի եւ պատիւ տալու փոխարէն կ'անարգի նրան:
10 Արդ, շատերը նման չարութեան պատճառով երես են թեքում եւ զգուշանում զուր տեղը զրկուել ունեցուածքից:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

11 Սակայն դու աղքատի նկատմամբ բարեհա՛ճ եղիր եւ նրան մի՛ուշացրու ողորմութիւնդ:
12 Ի սէր պատուիրանի ձե՛ռք մեկնիր աղքատին ըստ նրա կարօտութեան եւ ձեռնունայն մի՛ վերադարձրու նրան:
13 Արծաթը ծախսի՛ր եղբօր եւ բարեկամի վրայ եւ մի՛ թող որ ժանգոտուի քարի տակ ի կորուստ:
14 Քո գանձն օգտագործի՛ր համաձայն Բարձրեալի պատուիրանների, եւ դա քեզ օգուտ կը լինի ոսկուց աւելի:
15 Ողորմութի՛ւն հաւաքիր քո շտեմարաններում, եւ այն կը փրկի քեզ զանազան չարչարանքներից,
16 թշնամու դէմ կը ճակատի քեզ համար հզօր վահանից եւ ծանր նիզակից աւելի:

ԵՐԱՇԽԱՒՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 Բարերար մարդը երաշխաւորում է իր մերձաւորին, իսկ ով կորցրել է ամօթը, կը թողնի նրան:
20 Մի՛ մոռացիր երաշխաւորողի շնորհը, քանզի նա իր անձը տուեց քեզ համար:
22 Մեղաւորը վատնում է իր երաշխաւորողի բարիքը, եւ սրտով երախտամոռը կը լքի իր փրկարարին:
24 Երաշխաւորութիւնը բազում յաջողակների կործանեց եւ նրանց ցնցեց ծովի ալիքների նման:
25 Հզօր մարդկանց զրկեց իրենց բնակավայրից, եւ նրանք դեգերեցին օտար ազգերի մէջ:
26 Իր շահին հետամուտ մեղաւորը, որը երաշխաւոր է դառնում, դատաստանի մէջ կ'ընկնի:
27 Պաշտպա՛ն եղիր մերձաւորին ըստ քո կարողութեան եւ զգո՛յշ եղիր, որպէսզի չլինի թէ ծուղակ ընկնես:

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

28 Մարդու կեանքի սկիզբը ջուրն է, հացն է, շորն է եւ տունն է, ուր նա ծածկում է իր ամօթը:
29 Լաւ է աղքատի ապրուստը իր գերանապատ յարկի տակ, քան այլոց տների ճոխ կերակուրը:
30 Գո՛հ եղիր թէ՛ շատից եւ թէ՛ քչից:
31 Թշուառ կեանք է տնից տուն փոխադրուելը. ուր պանդխտես՝ չես կարող բանալ բերանդ:
32 Հաց եւ ջուր կը տաս՝ շնորհակալութիւն չես ստանայ, եւ դեռ աւելին՝ այսպիսի բաներ կը լսես.
33 «Ե՛կ, օտարակա՛ն, սեղա՛ն պատրաստիր եւ, ինչ որ քո ձեռքին կայ, կերակրի՛ր ինձ:
34 Դո՛ւրս գնա տնից, օտարակա՛ն, պատուաւոր մարդ է հիւր եկել, իմ եղբայրը հիւր է եկել, տունը պէտք է ինձ»:
35 Այս բոլորը ծանր են այն մարդու համար, որ հոգի ունի, անարգուած ծառայ է եւ կրում է փոխատուի նախատինքը:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

30 Ով սիրում է իր որդուն, պէտք է յաճախակի պատժի նրան, որպէսզի վերջում ուրախ լինի:
2 Ով խրատում է իր որդուն, նրանից օգուտ կը տեսնի եւ ծանօթների մէջ

նրանով կը պարծենայ:
3 Ով ուսուցանում է իր որդուն, թշնամու նախանձը կը շարժի եւ բարեկամների առջեւ նրանով կը պարծենայ:
4 Երբ նրա հայրը վախճանուի, կարծես թէ չի մեռել, որովհետեւ իրենից յետոյ թողնում է իր նմանին:
5 Հայրը նրան տեսաւ իր կեանքում եւ ուրախացաւ եւ իր վախճանի մասին չտրտմեց:
6 Թշնամիների առջեւ վրիժառու թողեց նրան եւ բարեկամների առջեւ՝ շնորհներ հատուցող:
7 Ով գուրգուրում է իր որդուն, նրա վէրքերը կը կապի, եւ նրա ամէն մի ճիչի հետ կը գալարուեն նրա աղիքները:
8 Անվարժ ձին կամակոր է լինում, եւ քմահաճ որդին՝ լկտի:
9 Գգուի՛ր որդուդ, եւ նա քեզ կը վախեցնի, խաղա՛ նրա հետ, եւ նա քեզ կը տրտմեցնի:
10 Մի՛ ծիծաղիր նրա հետ, որպէսզի ցաւ չպատճառի քեզ, եւ յետոյ ատամներդ չառնեն դառնութիւնից:
11 Մանկութեան ժամանակ իշխանութիւն մի՛ տուր նրան. քանի դեռ տղայ է, ջարդի՛ր նրա կողերը,
12 որպէսզի չլինի թէ երբեւէ յամառելով չհնազանդուի քեզ:
13 Խրատի՛ր քո որդուն եւ գործի՛ դիր նրան, որպէսզի խայտառակութեան մէջ չընկնես:

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

14 Լաւ է առողջ եւ ուժեղ աղքատը, քան հաշմուած մարմնով հարուստը:
15 Լաւ է առողջութիւնն ու առոյգութիւնը, քան ամէն տեսակ ոսկին, եւ լաւ է կարող մարմինը, քան անսպառ հարստութիւնը:
16 Մարմնի առողջութիւնից աւելի մեծ հարստութիւն չկայ եւ մարմնի խնդութիւնից՝ աւելի մեծ ուրախութիւն:
17 Լաւ է մահը, քան դառն կեանքը կամ երկար ցաւը:
18 Փակ բերանին մօտեցուած քաղցրաւենիքը նոյնն է, ինչ գերեզմանին դրուած կերակուրը:
19 Ի՞նչ օգուտ զոհերը կուռքերին, քանի որ ո՛չ ուտում են եւ ո՛չ էլ հոտոտում:
20 Այնպէս էլ՝ ովքեր հալածուեն Տիրոջից, աչքով կը տեսնեն ու կը հառաչեն այն ներքինու նման,
21 որը գրկում է կոյսին եւ հոգոց հանում:

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

22 Անձնատուր մի՛ եղիր տխրութեանը եւ քեզ մի՛ նեղիր քո խորհուրդներով:
23 Մարդու կեանքը սրտի ուրախութիւնն է, եւ կեանքի երկարութիւնը՝ նրա ցնծութիւնը:
24 Սփոփի՛ր քո հոգին, մխիթարի՛ր քո սիրտը եւ քեզանից հեռո՛ւ վանիր տխրութիւնը,
25 քանզի շատերին սպանեց տխրութիւնը, եւ դրանից ոչ մի օգուտ չկայ:
26 Նախանձն ու բարկութիւնը կարճեցնում են կեանքի օրերը, եւ հոգսերը ծերացնում ժամանակից առաջ:
16† Տիրոջ օրհնութիւնը հասնում է բերք հաւաքողների յետեւից ինչպէս ճռաքաղը
17 եւ բերք հաւաքողի նման լցնում հնձանը:
18 Հասկացէ՛ք, միայն ինձ համար չէ, որ աշխատեցի, այլ՝ բոլորի համար, ովքեր խրատ են փնտռում:
19 Լսեցէ՛ք ինձ, ժողովրդի՛ իշխաններ, եւ ունկնդի՛ր եղէք, եկեղեցո՛ւ առաջնորդներ:
20 Որդուդ, կնոջդ, եղբօրդ եւ բարեկամիդ իրաւունք մի՛ տուր քո կեանքում եւ քո ունեցուածքը մի՛ տուր ուրիշի, որպէսզի զղջալով կարիքի մէջ չընկնես:
21 Քանի դեռ կենդանի ես, եւ շունչդ վրադ է, թող ոչ մէկը չփոխարինի քեզ,
22 քանզի աւելի լաւ է, որ որդիներդ քո կարիքն զգան, քան դու նայես նրանց ձեռքին:

†16-ը եւ շարունակութիւնը համապատասխանում են յունարէն բնագրի 33 գլխի 17-ին եւ նրա շարունակութեանը: Յունարէն 30,27-ը համապատասխանում է հայերէն 33, 13-ին, իսկ յունարէն 31, 1-ը՝ հայերէն 34, 1-ին:

23 Քո բոլոր գործերի մէջ զգաւո՛ր եղիր:
24 Քո պատուի վրայ պարսաւանք մի՛ բեր: Քո կեանքի աւարտի օրը եւ վախճանի ժամանակ միայն բաշխի՛ր եւ տո՛ւր ժառանգութիւնդ:

ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25 Կերը, գաւազանը եւ բեռը էշինն է. հացը, ծեծը եւ գործը՝ ծառայինը:
26 Գործը կատարի՛ր ծառայով‡, եւ դու հանգիստ կ'ունենաս, անգո՛ր թող նրա ձեռքերը, եւ նա ազատութիւն կը փնտռի:
27 Լուծը եւ շղթաները վիզն են խոնարհեցնում, իսկ լկանքն ու տանջանքը՝ չարագործ ծառային:
28 Նրան գործի՛ դիր, որպէսզի պարապ չմնայ,
29 քանզի բազում չարիք է ծնում անգործութիւնը:
30 Նրան գործի՛ մէջ պահիր, ինչպէս վայել է նրան, եւ եթէ նա չհնազանդուի, ծանրացրո՛ւ կապանքները, բայց ամբողջ մարմինը աւելորդ մի՛ ծանրաբեռնիր եւ մի՛ գործիր անարդարութեամբ:
31 Եթէ դու ծառայ ունես, թող նա քեզ նման լինի, քանզի նրան ձեռք բերեցիր արեամբ: Եթէ դու ծառայ ունես, նրա հետ եղբօր նման վարուիր, քանզի նրա կարիքը կը զգաս, ինչպէս քո անձի կարիքը:
32 Եթէ չարչարես նրան, նա խրտնելով կը փախչի.
33 էլ ո՞ր ճանապարհի վրայ նրան պիտի փնտռես:

ԵՐԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31‡ Դատարկ եւ սուտ են անմիտ մարդու յոյսերը. անուրջները թեւաւորում են անզգամներին:
2 Ով հաւատում է երազներին, նա նման է մէկին, որը փորձում է բռնել ստուերը եւ վազել քամու յետեւից:
3 Ինչպէս ունայն է դէմքի անդրադարձը դէմքի դիմաց, այնպէս էլ՝ երազներ տեսնելը:
4 Պիղծ բանից մաքուր բան չի լինի, եւ սուտ բանից՝ ստոյգ բան:
5 Ունայն են այն գուշակութիւնները, նշաններն ու երազները,
6 որ երկնում է բանդագուշակի սիրտը, եթէ դրանք Բարձրեալից չեն առաքուած:
7 Մի՛ տուր քո սիրտը դրանց, քանզի շատերին մոլորեցրին երազները, եւ դրանց վրայ յոյս դնողները խոտորուեցին:
8 Օրէնքը գործադրւում է առանց խաբէութեան, եւ իմաստութիւնը հաւատարիմ շուրթերի վրայ մարդու կատարելութիւնն է:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ

9 Ճանապարհորդող մարդը շատ բան իմացաւ, եւ բազմափորձ մարդը խելամտորէն է պատմում:
10 Ով փորձառու չէ, քիչ բան գիտի,
իսկ ճանապարհորդողը կը մեծացնի իր գիտելիքը:
12 Շատ բան տեսայ իմ պանդխտութեան ժամանակ, եւ իմ իմաստութիւնն աւելին է, քան իմ խօսքը:
13 Շատ անգամ մահու չափ վտանգուեցի եւ փրկուեցի իմ փորձառութեամբ:

ՏԻՐՈՋ ԵՐԿԻՐՊԸ

14 Տիրոջից երկնչողների հոգին ապրելու է, քանզի նրանց յոյսն իրենց փրկարարի վրայ է:
15 Ով երկնչում է Տիրոջից, նա ոչ մէկից երկիւղի կասկած չի ունենայ,
16 ոչ ոքից չի վախենայ, քանզի նրա յոյսը Տէրն է:
17 Ով երկնչում է Տիրոջից, երանելի է նրա հոգին:
18 Ո՞ւմ է ապաւինում նա, եւ ո՞վ է նրա նեցուկը:
19 Տիրոջ աչքն իր սիրելիների վրայ է, Նա նրանց զօրութեան պաշտպանն է, ուժի ամրութիւնն է, ապաստան է խորշակից եւ հովանի՝ միջօրէի տապից:

†Յունարէնում՝ ստրուկին զբաղեցրո՛ւ աշխատանքով:
‡Յունարէնում՝ 34:

20 Պահպանութիւն է գայթակղութիւնից եւ ապահովութիւն գլորումից. վեհացնում է հոգին, լուսաւորում աչքը, մարդկանց տալիս է բժշկութիւն, օրհնութիւն եւ կեանք:

ՃՇՄԱՐԻՏ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

21 Ով անարդար զոհ է մատուցում, նրա զոհաբերումը արհամարհուած է. հաճելի չէ անօրէնների մատուցած զոհը:

23 Բարձրեալը չի ընդունում ամբարիշտների զոհաբերութիւնները եւ ոչ էլ դրանց շատութեամբ է քաւութիւն տալիս մեղքերին:

24 Ով զոհ է մատուցում օտարների ունեցուածքից, նոյնն է, թէ որդուն զոհում է իր հօր առաջ:

25 Կարօտեալների հացը աղքատների կեանքն է. ովքեր զրկում են նրանց, մարդասպաններ են:

26 Ով զրկում է մերձաւորին կերակրից, նա սպանում է նրան:

27 Ով զլանում է տալ վարձկանի վարձը, նա թափում է նրա արիւնը:

28 Մէկը չինում է, եւ միւսն՝ աւերում. ի՞նչ օգուտ կայ դրանից, բացի տանջանքից:

29 Մէկն աղօթում է, եւ միւսն՝ անիծում. ո՞ւմ ձայնը կը լսի Տէրը:

30 Ով որ մաքրւում է մեռելին դիպչելուց եւ դարձեալ հպւում է նրան, ի՞նչ օգուտ ունեցաւ իր լուացուելուց:

31 Ինչպէս այն մարդը, որ մեղքի պատճառով ծոմ է պահում եւ դարձեալ գնում ու նոյն բանն է անում, ո՞վ կը լսի նրա աղօթքը, եւ ի՞նչ օգուտ ունեցաւ նա իր խոնարհուելուց:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

32† Ով պահում է օրէնքը, նա բազմացնում է զոհաբերութիւնները:

2 Ով լսում է պատուիրանները, զոհ է մատուցում փրկութեան համար:

4 Ով ընտիր ալիւր է մատուցում, շնորհ է փոխհատուցում, եւ ով ողորմութիւն է անում, օրհնութեան զոհ է մատուցում:

5 Տիրոջը հաճելի է, որ մարդ զերծ մնայ չարութիւնից, եւ մարդու համար քաւութիւն է հեռու մնալ անիրաւութիւնից:

6 Տիրոջ առջեւ ձեռնունայն մի՛ երեւա,

7 քանզի այս բոլորը արւում է պատուիրանի համար:

8 Արդարի ընծան լիացնում է զոհասեղանը, եւ դրա անուշահոտութիւնը Տիրոջ առջեւ է:

9 Արդար մարդու զոհն ընդունելի է, եւ դրա յիշատակը չի մոռացուի:

10 Լիառատ աչքով փառաւորի՛ր Տիրոջը եւ նրա համար մի՛ պակասեցրու քո ձեռքի պտուղը:

11 Քո դէմքը թող զուարթ լինի ամէն տեսակ պտուղ եւ ընծայ մատուցելիս եւ ուրախութեա՛մբ ընծայիր տասանորդը:

12 Բարձրեալին տո՛ւր ըստ նրա տուածների եւ լիառատ† աչքով տո՛ւր քո ձեռքի բարիքներից,

13 քանզի Տէրը հատուցող է եւ եօթնապատիկ կը հատուցի քեզ:

14 Մի՛ տուր կաշառքի նման, քանզի այն ընդունելի չի լինի:

15 Ցոյս մի՛ դիր անարդար զոհի վրայ, քանզի Տէրը դատաւոր է, եւ նրա մօտ չկայ աչառութիւն:

16 Նա կողմնակալ չէ աղքատի հանդէպ‡ եւ կը լսի զրկուածի աղօթքը:

17 Անտես չի անի ո՛չ որբերի պաղատանքը եւ ոչ էլ՝ այրու, երբ նա աղօթք է մատուցում:

18 Միթէ արտասուք չի՞ իջնում այրու այտերից, եւ միթէ նրա աղաղակը նրանց դէմ չէ՞, ովքեր արտասուք են թափել տալիս նրան:

20 Ով յօժարութեամբ է պաշտամունք մատուցում, ընդունելի կը լինի այն, եւ նրա խնդրուածքները կը հասնեն մինչեւ երկինք:

21 Տառապեալի աղօթքները կ'անցնեն ամպերի միջով եւ մինչեւ չմօտենան Աստծուն, չեն մխիթարի նրան եւ չեն հեռանայ, մինչեւ Բարձրեալը չայցելի,

†Ցունարէնում՝ *35:*

†Ցունարէնում՝ *բարի:*

‡Ցունարէն բնագրի 13 համարը՝ *Նա երեսը չի դարձնի աղքատից:*

22 չդատի արդարութեամբ† եւ չհրապարակի վճիռը‡. Տէրը չի ուշանայ ու չի հանդուրժի նրանց, մինչեւ չփշրի անողորմների մէջքը՝ վրէժխնդիր չլինի հեթանոսներից,

23 մինչեւ չոչնչացնի թշնամիների բազմութիւնը եւ չփշրի անիրաւների գաւազանները,

24 մինչեւ չհատուցի արդարներին ըստ իրենց գործերի եւ մարդկանց գործերն էլ՝ ըստ իրենց խորհուրդների,

25 մինչեւ չդատի իր ժողովրդին եւ իր ողորմութեամբ չուրախացնի նրանց:

26 Բարեպատեհ է նրա ողորմութիւնը նեղութեան ժամանակ, ինչպէս անձրեւաբեր ամպը՝ երաշտի ժամանակ:

ԱՂՕԹՔ ՏԻՐՈՋ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

33§ Ողորմի՛ր մեզ, բոլորի Տէ՛ր Աստուած, եւ նայի՛ր:

2 Քո ահը դի՛ր բոլոր հեթանոսների մէջ:

3 Քո ձեռքը բարձրացրո՛ւ օտար ազգերի վրայ, եւ նրանք թող տեսնեն քո զօրութիւնը:

5 Ինչպէս նրանց առջեւ ցոյց տուեցիր մեր մէջ եղած քո սրբութիւնը, այնպէս մեր առջեւ ցո՛յց տուր նրանց մէջ եղած քո մեծութիւնը, եւ թող ճանաչեն քեզ, ինչպէս որ մենք ճանաչեցինք, քանզի չկայ Աստուած քեզանից բացի, Տէ՛ր:

6 Նորոգի՛ր նշանները եւ նոր զարմանահրաշ գործե՛ր կատարիր:

7 Փառաւորի՛ր քո ձեռքն ու աջ բազուկը:

8 Զարթնեցրո՛ւ քո զայրոյթը եւ թափի՛ր բարկութիւնդ:

9 Վերացրո՛ւ ախոյեանին, ոչնչացրո՛ւ թշնամուն:

10 Փութա՛ հասնել ժամանակին եւ յիշի՛ր ժամադրութիւնը*, եւ թող պատմեն քո մեծագործութիւնները:

11 Կրակի բարկութեամբ թող ոչնչանայ սրից փախչողը, եւ ովքեր չարչարում են քո ժողովրդին, թող կորուստ գտնեն:

12 Փշրի՛ր թշնամի այն իշխանների գլուխը, ովքեր ասում են. «Ոչ ոք չկայ մեզանից բացի»:

13 Հաւաքի՛ր Յակոբի բոլոր ցեղերին, թող նրանց սիրտը լինի պայծառ, թող մտահոգուեն առատ խորտիկների սեղանների համար: Նրանց դարձրո՛ւ քո ժառանգութիւնը, ինչպէս սկզբում էր:

ՈՍԿՈՒ ԿԻՐՔ

34 Հարստութեան համար տքնութիւնը մաշում է մարմինը, եւ ծանր հիւանդութիւնը† վանում է քունը:

2 Մտահոգ տքնութիւնը փախցնում է քունը:

3 Հարուստը տանջւում է ունեցուածք կուտակելու համար եւ հանգստանալիս յագենում է շուայտորէն վատնելով այն:

4 Աղքատն աշխատում է զրկանքներով եւ հանգստանալիս էլ կարիքի մէջ է մնում:

5 Ով ոսկի է սիրում, չի արդարանայ, եւ ով ապականութիւն է սիրում, նրանով կը լցուի:

6 Շատերը կործանուեցին ոսկու պատճառով եւ կանգնեցին հէնց իրենց կորստի դէմյանդիման:

7 Գայթակղութեան ծառ է դա նրանց համար, ովքեր զոհ են մատուցում նրան. բոլոր անմիտները կուլ են գնում դրան:

8 Երանելի է այն հարուստը, որ անարատ գտնուեց եւ չգնաց ոսկու յետեւից:

9 Ո՞վ է նա, երանի տանք նրան, քանզի զարմանալի բաներ արեց իր ժողովրդի մէջ:

10 Ո՞վ փորձուեց դրանով եւ կատարեալ մնաց. այդ նրան թող պարծանք համարուի. ո՞վ կարող էր զանցառու լինել՝ եւ չեղաւ, չարիք գործել՝ եւ չգործեց:

11 Թող նրա բարօրութիւնը հաստատուն լինի, եւ թող մարդիկ պատ-

†Հայերէնում արդարոց, դնում եմ ըստ յունարէնի:

‡Հայերէնում *իրաւունս*, դնում եմ ըստ յունարէնի:

§Ցունարէնում՝ 36, 1-10 (11-23 համարները հայերէնում չիք)

*Ցունարէն բնագրի 7 համարը՝ *երդումը:*

†Ցունարէնում՝ *նրա հոգսը:*

մեն նրա ողորմածութեան մասին:

ԽՐԱՏ ՍԵՂԱՆ ՆՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 Երբ ճոխ սեղան ես նստում, քո կոկորդը բաց մի՛ արա ուտելու համար:
13 Մի՛ ասա՝ «Ինչքա՜ն շատ բան կայ սրա վրայ»:
14 Ցիշի՛ր, որ վատ է չար աչքը. ի՞նչ կայ չար աչքից աւելի չար:
15 Դրա համար ինչ էլ որ տեսնի, լաց կը լինի:
16 Ուր որ նայես՝ ձեռքդ մի՛ երկարիր: Մի՛ փութա ձեռքդ երկարել† նրա ափսէի մէջ:
17 Մերձաւորի մասին դատի՛ր քո մէջ եւ ամէն գործի մասին խորհի՛ր:
18 Մարդու պէս կե՛ր այն, ինչ կայ քո առջեւ,
19 եւ մի՛ ծամծմիր, որպէսզի ատելի չլինես:
20 Ի սէր բարեկրթութեան առաջինը դո՛ւ դադարիր ուտելուց եւ ագահութիւն մի՛ արա, որպէսզի չդայթակղուես:
21 Եթէ շատերի մէջ նստես, նրանցից առաջ ձեռքդ մի՛ երկարիր:
22 Բարեկիրթ մարդը բաւարարւում է քչով եւ իր անկողնում ծանր չի քնում:
24 Առողջ քունը լինում է չափաւոր ստամոքսի դէպքում. մարդ վեր է կենում արշալոյսին, եւ նրա հոգին էլ թեթեւ է լինում:
23 Ժլատ‡ մարդն ունենում է անքնութեան ցաւեր, սրտխառնուք եւ որովայնի խիթեր:
25 Եթէ ծանրացար կերակուրներով, կէսից վե՛ր կաց եւ հանգստացի՛ր:
26 Լսի՛ր ինձ, որդեա՛կ, մի՛ արհամարհիր ինձ եւ վերջում կը հասկանաս իմ խօսքերը:
27 Քո ամէն գործի մէջ կայտա՛ռ§ եղիր, եւ ոչ մի հիւանդութիւն քեզ չի հանդիպի:
28 Շրթունքները կ'օրհնեն հաց ու խրախճանք տուողին, դա է նրա լաւութեան ճշմարիտ վկայութիւնը:
29 Քաղաքը կը տրտնջայ հաց տալու մէջ ժլատ մարդուց, եւ դա է նրա վատութեան ճշմարիտ վկայութիւնը:

ԽՐԱՏ ԳԻՆՈՒ ՄԱՍԻՆ

30 Գինու մօտ քեզ քաջ մի՛ ցոյց տուր, քանզի գինին կործանել է շատերին:
31 Ինչպէս քուրան փորձում է սրի սայրի ջրդեղուած լինելը, այդպէս էլ գինին հպարտների սիրտը փորձում է վէճով:
32 Գինին հաւասար է մարդու կեանքին, եթէ այն խմում ես չափով:
33 Ի՞նչ է կեանքն առանց գինու. այն ստեղծուած է մարդկանց ուրախութեան համար:
36 Սրտի ցնծութիւն եւ հոգու ուրախութիւն է գինին, երբ այն խմում են չափաւոր եւ ժամանակին:
38 Գինին հոգու դառնութիւն է, երբ այն խմում են շատ եւ ընկնում գրգռութեան եւ հակառակութեան մէջ:
39 Հարբեցողութիւնը շատացնում է անզգամի բարկութիւնը՝ դառնալով գայթակղութիւն,
40 թուլացնում է ուժը եւ վէրք պատճառում:
41 Խրախճանքի մէջ, երբ գինի են խմում, մի՛ յանդիմանիր մերձաւորիդ եւ մի՛ արհամարհիր նրան ուրախութեան պահին:
42 Նախատինքի խօսք մի՛ ասա նրան եւ մի՛ նեղիր նրան քո պահանջներով:

ԽՐԱԽՃԱՆՔԻ ՄԷՋ ԻՐԵՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

35† Եթէ քեզ առաջնորդ են կարգել խրախճանքի մէջ, մի՛ հպարտացիր, նրանց մէջ եղի՛ր իբրեւ նրանցից մէկը:
2 Հո՛գ տար նրանց մասին եւ յետոյ նստիր, նրանց բոլոր կարիքները կատարելուց յետոյ բազմի՛ր, որպէսզի ուրախանաս նրանց հետ
3 եւ լաւ կառավարելու համար պսակ ստանաս:
4 Խօսի՛ր, երբ աւագը դու ես, քանզի քեզ է վայել խօսել ստոյգ իմաստութեամբ.

†Ցունարէն բնագրի 14 համարը՝ մի՛ բախուիր:
‡Ցունարէն բնագրի 20 համարը՝ անկուշտ:
§Ցունարէնում՝ շրջահայեաց:

†Ցունարէնում՝ 32:

5 մի՛ խանգարիր երաժիշտներին:
6 Երբ ունկնդրում են քեզ, խօսքդ մի՛ երկարիր եւ իզուր մի՛ իմաստախօսիր:
7 Ինչպէս փայլուն ակն է ոսկէ զարդի վրայ,
8 եւ զմրուխտէ ակը՝ ոսկու շրջանակի վրայ, այնպէս էլ երաժիշտների նուագը քաղցր է գինու վրայ†:
10 Եթէ երիտասարդ ես, խօսի՛ր եթէ քեզ պէտք է, հազիւ մէկ-երկու խօսք ասա, եթէ հարցնեն:
11 Ասա՛ գլխաւորը, քիչ խօսքով՝ շատը:
12 Եղի՛ր նրա նման, ով իմանում է, բայց լուռ է լինում:
13 Մեծամեծներին մի՛ հաւասարուիր, եւ ուր նրանք խօսում են, մի՛ շաղակրատիր:
14 Որոտից առաջ փայլակն է շուտ երեւում, իսկ ամօթխածից առաջ շնորհն է շտապում:
15 Զարթնի՛ր ժամանակին, մի՛ եղիր վերջինը, գնա՛ քո տունը եւ մի՛ ծուլացիր:
16 Զուարճացի՛ր այնտեղ եւ քո կա՛մքն արա, բայց ոչ մեղք գործելով եւ ամբարտաւանութեամբ:
17 Այս բաների համար օրհնի՛ր քո Արարչին, որ կերակրում է քեզ իր բարիքներով:

ԸՆԹԱՆԱԼ ԸՍՏ ՏԻՐՈՋ ԿԱՄՔԻ

18 Ով Տիրոջից երկնչում է, խրատ կը ստանայ, եւ ովքեր առաւօտ կանուխ դիմում են նրան, հաճութիւն կը գտնեն:
19 Ով օրէնք է փնտռում, կը լցուի նրանով, եւ ով կեղծաւորութիւն անի, նրանո՛վ կը գայթակղուի:
20 Ովքեր երկնչում են Տիրոջից, իրաւունք կը գտնեն եւ արդարութիւնն իբրեւ լոյս կը վառեն:
21 Մեղաւոր մարդը խորշում է յանդիմանութիւնից եւ ըստ իր հայեցողութեան գտնում է արդարացման օրինակներ:

†Ցունարէն բնագրում 5 համարը. Ինչպէս ածուխի կնիքն է ոսկէ զարդի վրայ, այդպէս երաժշտութեան բարեհնչութիւնն է խրախճանքի ժամանակ գինու վրայ:

24 Առանց խորհրդածութեան ոչինչ մի՛ արա եւ անելուց էլ մի՛ զղջա:
23 Առանց մտածելու մի՛ անտեսիր իմացութիւնը:
22 Հպարտը եւ ամբարտաւանը չեն զարհուրում Տիրոջ երկիւղից:

ՍԳԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԵՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

38† 15 Ով մեղանչում է իր Արարչի առջեւ, նա կ'ընկնի բժշկի ձեռքը:
16 Որդեա՛կ, մեռեալի վրայ արտասո՛ւք թափիր եւ սկսի՛ր ողբալ՝ իբրեւ թէ նա վնաս է կրել, եւ, ըստ օրինի, պատի՛ր նրա մարմինը ու մի՛ անտեսիր նրա թաղումը:
17 Դառնօրէն լա՛ց եղիր, աղի արցո՛ւնք թափիր
18 եւ, ըստ նրա արժանիքի, մէկ-երկու օր սգա՛՝ պարսաւանքից խուսափելու համար եւ ապա մխիթարուի՛ր տրտմութիւնից,
19 քանզի տրտմութիւնից մահ է լինում, եւ սրտի տրտմութիւնը թուլացնում է ուժը:
20 Հարուածների հետ գալիս է նաեւ տրտմութիւնը, եւ աղքատի կեանքը սիրտ է մաշում:
21 Քո սիրտը մի՛ տուր տրտմութեան, վանի՛ր այն, յիշի՛ր վախճանը:
22 Մի՛ մոռացիր, որ վերադարձ չկայ, վախճանուածին օգուտ չես բերի եւ դու ինքդ կը չարչարուես:
23 Ցիշի՛ր իմ դատաստանը, քանզի այդպէս է լինելու եւ քո՛նը. իմը՝ երէկ, եւ քոնն՝ այսօր:
24 Մեռեալի հանգչելուց յետոյ հանգի՛ստ թող նրա յիշատակը եւ մխիթարուի՛ր, որ նա աւանդել է իր հոգին:

ՕՐԷՆՍԳԷՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻ ՎՐԱՅ

25 Օրէնսգէտի իմաստութիւնը ձեռք է բերւում հանգստի հաճելի ժամին, եւ ով մի բանի կարիք ունի, ջանք կը թափի եւ կ'իմաստնանայ:
26 Ինչպէ՞ս կարող է իմաստնանալ նա, ով աշխատում է մաճով, պարծենում խթանի ցուպով, եզներ է

†36, 37 չիք:

քշում, զբաղւում իր գործերով, եւ նրա զրոյցը իր որդիների հետ հորթերի մասին է:

27 Նրա սիրտը զբաղուած է լինում ակօս բացելով, եւ նրա հոգսը հորթերին կերակրելն է:

28 Այդպէս են նաեւ ամէն հիւսն եւ ճարտարապետ, որ գիշերն անցկացնում են իբրեւ ցերեկ, նաեւ նրանք, ովքեր արձաններ են քանդակում. նրանցից իւրաքանչիւրի զբաղմունքը ձեւերի բազմազանութիւն ստեղծելն է: Ամէն մէկն իր սիրտը տալիս է պատկերներ նմանեցնելուն, եւ նրա հոգսը իր գործն աւարտելն է:

29 Այդպէս է եւ դարբինը, որ նստում է սալի մօտ եւ մտածում երկաթէ առարկայի մասին. տաք գոլորշին մաշում է նրա մարմինը, եւ նա ոգորում է հնոցի տապի դէմ:

30 Մուրճի ձայնը խլացնում է նրա ականջը, իսկ նրա աչքի առաջ միշտ պատրաստուող անօթի նմանութիւնն է:

31 Նրա սիրտը ձգտում է գործի աւարտին, եւ աւարտելիս նրա մտահոգութիւնը այն բարեզարդելն է:

32 Այդպէս է եւ բրուտը, որ նստած իր գործն է անում եւ ոտքով պտտում է դուրգը. նա իր գործի համար տեւապէս հոգսի մէջ է, եւ նրա ամբողջ աշխատանքը կապուած է հաշուարկի հետ:

33 Իր բազկով նա ձեւ է տալիս կաւին եւ ոտքով մեղմում նրա պնդութիւնը:

34 Նրա սիրտը ձգտում է աւարտել ծեփը, եւ նրա հոգսը թրծարանը մաքրելն է:

35 Նրանք բոլորն էլ վստահ են իրենց ձեռքերի վրայ, եւ իւրաքանչիւրը հմուտ է իր գործի մէջ:

36 Առանց սրանց քաղաք չի կառուցուի, մարդիկ չեն բնակուի այնտեղ եւ չեն շրջի,

37 բայց սրանց ժողովարան չեն հրաւիրում,

38 սրանք դատաւորի աթոռին չեն նստում, արդարութեան եւ իրաւունքի մասին դատողութիւն չեն անում, չեն արդարացնում, չեն մեղադրում եւ չեն զբաղւում առակներով:

39 Սրանք միայն այս աշխարհի շինուածքն են ամրացնում, եւ սրանց աղօթքը միայն իրենց արհեստի համար է. բայց այդպէս չէ նա, ով իր անձը նուիրում եւ խորհրդածում է Բարձրեալի մասին:

ԳՈՎՔ ՕՐԷՆՍԳԷՏԻ ՄԱՍԻՆ

39 Օրէնսգէտը կը քննի իմաստութիւնը եւ կը պարապի ու կը հմտանայ իր բոլոր նախորդների մարգարէութիւնների մէջ[†]:

2 Կը մտապահի անուանի մարդկանց պատմութիւնները եւ կը թափանցի առակների նրբին դարձուածքների մէջ:

3 Կը փնտռի առակների խորհուրդը եւ կը զբաղուի առակների իմաստների բացայայտմամբ:

4 Նա կը ծառայի մեծամեծների մօտ եւ կ'երեւայ իշխանների առջեւ:

5 Կը ճամփորդի օտար ազգերի երկրներով, որպէսզի ձեռք բերի մարդկանց չար եւ բարի փորձառութիւնը:

6 Վաղ առաւօտից սրտով կը դիմի Տիրոջը, որ ստեղծեց իրեն, եւ կը պաղատի Բարձրեալի առջեւ:

7 Աղօթքի մէջ կը բացի իր շուրթերը եւ կը թախանձի իր մեղքերի համար:

8 Եթէ մեծազօր Տէրը կամենայ, նա կը լցուի իմաստութեան հոգով:

9 Նրա սրտից կը բխեն Տիրոջ իմաստութեան խօսքերը, եւ նա աղօթքով կը փառաբանի նրան:

10 Տէրն ինքը կ'ուղղի նրա խորհուրդներն ու իմաստութիւնը, իսկ նա էլ կը մտածի Նրա գաղտնիքների մասին:

11 Նա ցոյց կը տայ իր ստացած ուսմունքի իմաստութիւնը եւ կը պարծենայ Տիրոջ պատուիրանի օրէնքով:

12 Շատերը նրա իմաստութիւնը կը գովեն, եւ նա չի մոռացուի յաւիտեանս:

13 Նրա յիշատակը չի անցնի, եւ նրա անունը կը մնայ սերնդից սերունդ:

14 Ազգերը կը պատմեն նրա իմաստութեան մասին, եւ ժողովուրդը կը

†Յունարէնում այս համարը նախորդ գլխի վերջին համարի վերջին պարբերութեան («Բայց նա ...») հետ մէկ համար է կազմում (39, 1):

տարածի նրա գովքը:

15 Քանի դեռ կ'ապրի, հազարաւոր մարդկանցից աւելի մեծ անուն կ'ունենայ, եւ երբ վախճանուի, լաւ կը լինի նրա համար:

ԳՈՎՔ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

16 Դարձեալ խորհրդածելով պիտի պատմեմ, քանզի լցուեցի լիալուսնի նման:

17 Լսեցէ՛ք ինձ, ո՛վ սրբեր, ծաղկեցէ՛ք վարդենու նման, որ աճում է հոսող ջրերի մօտ:

18 Անուշահոտ կնդրուկի նման հո՛տ բուրեցէք:

19 Ծաղկեցէ՛ք շուշանի նման, հո՛տ տարածեցէք, օրհնութեան ե՛րգ երգեցէք, Տիրո՛ջն օրհնեցէք իր բոլոր գործերի մէջ:

20 Փա՛ռք տուէք նրա մեծ անուանը եւ նրան փառաբանեցէ՛ք օրհնութեամբ. շուրթերի երգով եւ տաւղով այսպէ՛ս ասացէք՝ գոհաբանելով.

21 «Տիրոջ բոլոր գործերը շատ բարի են, եւ նրա բոլոր հրամանները կատարւում են իրենց ժամանակին. վայել չէ ասել՝ ի՞նչ է սա, կամ ինչո՞ւ է սա, քանզի ամէն ինչ պիտի կատարուի իր ժամանակին:

22 Նրա խօսքով ջուրը կանգնեց դէզի նման, նրա բերանի պատգամով ջրերի շտեմարաններ յայտնուեցին:

23 Նրա հրամանների մէջ է իր հաճութիւնը, եւ ոչ ոք չի կարող նսեմացնել նրա բերած փրկութիւնը:

24 Նրա առջեւ է ամէն մարմնեղէն էակի մարմնի գործը, եւ անկարելի է թաքնուել նրա աչքից:

25 Նա տեսնում է յաւիտենութիւնից յաւիտենութիւն, եւ չկայ մի բան, որ զարմանալի լինի նրա համար:

26 Վայել չէ ասել՝ ի՞նչ է սա, կամ ինչո՞ւ է սա, քանզի ամէն ինչ ստեղծուած է ըստ իր կարիքի:

27 Նրա օրհնութիւնը յորդում է գետի նման եւ հեղեղի նման ջրում ցամաքը:

28 Հեթանոսները պիտի ժառանգեն նրա բարկութիւնն այնպէս,

29 ինչպէս նա քաղցր ջուրը վերածեց աղաջրի: Նրա ճանապարհները սրբերի համար ուղիղ են, իսկ անօրէնների համար՝ սայթաքուն»:

30 Ինչպէս բարիքները բարիների համար ստեղծուել են սկզբից, այնպէս էլ չարիքները՝ մեղաւորների համար:

31 Մարդու կեանքի համար ամէն տեսակ կարիքների սկիզբը ջուրն է, կրակը, երկաթը, աղը, ցորենի ալիւրը,

32 կաթը, մեղրը, խաղողի հիւթը, ձէթը եւ հագուստը:

33 Այս բոլորը բարիք է բարեպաշտների համար, իսկ մեղաւորների համար չարիք կը դառնայ:

34 Այն հոգիները, որոնք ստեղծուած են վրէժխնդրութեան համար եւ իրենց սրտմտութեամբ սաստկացրել են իրենց տանջանքները, նրանք իրենց վախճանի ժամանակ հեղում են իրենց ուժն ու զայրոյթը, եւ դա հանդարտեցնում է իրենց Արարչի ցասումը:

35 Կրակը, կարկուտը, սովը եւ մահը, այս բոլորը վրէժխնդրութեան համար են ստեղծուած:

36 Գազանների ժանիքները, իժերը, օձերը եւ սուրը վրիժառութեան համար են՝ ամբարիշտներին սատակեցնելու համար:

37 Նրանք ուրախ կը լինեն նրա պատուիրանները կատարելու համար, երկրի վրայ պատրաստ են հոգալու նրա կարիքները եւ իր ժամանակին չեն խախտի նրա խօսքը:

38 Դրա համար էլ ես սկզբից հաստատուեցի, մտածեցի ամէն բան եւ գրով թողեցի:

39 Արդարեւ, Տիրոջ բոլոր գործերը բարի են, եւ բոլոր պէտքերը նա ժամանակին է բաշխում:

40 Չի կարելի ասել, թէ սա նրանից վատ է, քանզի ամէն ինչ իր ժամանակին լաւ կը լինի:

41 Իսկ այժմ ամբողջ սրտով եւ լիաբերան օրհնեցէ՛ք եւ բարեբանեցէ՛ք Տիրոջ անունը:

ՄԱՐԴՈՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

40 Մեծ աշխատանք է սահմանուած ամէն մարդու համար, եւ ծանր լուծ է դրուած մարդու որդիների վրայ

իրենց մօրից ելնելու օրից մինչեւ բոլորի մօր ծոցում թաղուելու օրը:
2 Ակնկալիքի եւ վախճանի օրուայ մասին մտածումը նրանց խորհրդածութեան նիւթն ու սրտի ահն է.
3 սկսած նրանից, ով նստած է ինքնագոհ փառքի աթոռին, մինչեւ նա, ով թշուառացել եւ հող ու մոխրի մէջ է,
4 սկսած նրանից, ով կրում է յակինթ եւ պսակ, մինչեւ նա, ով ցնցոտի է հագնում, ամէն ոք ունի ցասում եւ նախանձ, խռովք եւ անհանգստութիւն, մահուան երկիւղ, ոխ եւ հակառակութիւն:
5 Հանգստի ժամանակ անկողնում գիշերուայ երազը մթագնում է նրա միտքը:
6 Քիչ հանգիստ, համարեա նա հանգիստ չունի, որից յետոյ երազների մէջ տանջւում է ինչպէս ցերեկը:
7 Իր սրտի տեսիլքներից ցնցուած՝ նա նման է պատերազմից մազապուրծ եղածի. արթնանում է իր տեսիլքներից փրկուելու պահին եւ զարմանում է, որ սարսափել է ոչինչ բանից:
8 Թէպէտ այս պատահում է ամէն էակի հետ՝ մարդուց մինչեւ անասուն, բայց մեղաւորների հետ դա լինում է սրանից եօթնապատիկ աւելի:
9 Մահն ու հակառակութիւնը, արիւնն ու սուրը, հարուածներն ու սովը, կործանումն ու տանջանքը, այս բոլորը ստեղծուել են մեղաւորների համար:
10 Նաեւ նրանց պատճառով եղաւ ջրհեղեղը:
11 Ամէն ինչ, որ հողից է, հողին է վերադառնում, ինչ որ ջրից է, ծովին է վերադառնում, այդպէս էլ ամբարիշտները գնում են նզովքից դէպի կորուստ:

ԿԵՂԾ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԻՔՆԵՐ

12 Ամէն տեսակ կաշառք եւ անիրաւութիւն կը կործանուի, իսկ հաւատարմութիւնը յաւիտեան կը մնայ:
13 Անիրաւ մարդկանց ունեցուածքը գետի նման պիտի ցամաքի, եւ նրանք պիտի գոռան տեղատարափ[†] անձրեւի որոտի պէս:
14 Նրանցից ով բացի իր ձեռքը, ուրախ կը լինի, այդպէս էլ յանցագործներն ի վերջոյ կը ցամաքեն[‡]:
15 Ամբարիշտների սերունդը չի շատացնի ճիւղերը, իսկ պիղծ արմատները ապառաժ քարի վրայ են լինում:
16 Ոսկեծաղիկը, որ բուսնում է ամէն տեսակ ջրի մօտ, գետեզրին, ամէն տեսակ խոտից առաջ է արմատախիլ լինում:
17 Բարեգործութիւնը, սակայն, իբրեւ դրախտ, յաւիտեան կը մնայ օրհնութեան մէջ[§]:

ԽՐԱՏՆԵՐ ԼԱՒԻ ԵՒ ԼԱՒԱԳՈՅՆԻ ՄԱՍԻՆ

18 Աշխատաւորի եւ ինքնագոհ մարդու կեանքը քաղցր է, բայց երկուսին գերազանցում է նա, ով գանձ է գտնում:
19 Որդիներ ունենալն ու քաղաք կառուցելը յաւերժացնում են մարդու անունը, բայց անբիծ կինն այս երկուսից էլ առաւել յարգելի է:
20 Գինին եւ երգը ուրախացնում են սիրտը, բայց իմաստութեան սէրը երկուսից էլ առաւել է:
21 Սրինգն ու տաւիղը հաճելի են դարձնում նուագը, բայց քաղցր լեզուն երկուսից էլ առաւել է:
22 Աչքը ցանկանում է շնորհ եւ գեղեցկութիւն, բայց այս երկուսից աւելի՝ բոյսերի գեղեցկութիւնը:
23 Ժամանակին հանդիպած բարեկամն ու ընկերը լաւ են, բայց այս երկուսից աւելի՝ բարի կինը*:
24 Եղբայրներն ու օգնութիւնը փրկում են նեղութեան ժամանակ, բայց այս երկուսից աւելի՝ ողորմածութիւնը:
25 Ոսկին եւ արծաթը հաստատուն են պահում ոտքերը, բայց ընտիր խորհուրդն այս երկուսից առաւել է համարւում:
26 Հարստութիւնը եւ ուժը հպարտութիւն են տալիս սրտին, բայց բոլորից առաւել է երկիւղը Տիրոջից:
27 Ով երկիւղ ունի Տիրոջից, նա պակասութիւն չի զգայ:
28 Երկիւղը Տիրոջից օրհնեալ դրախտի նման է, եւ այն հովանի է ամէն տեսակ փառքից աւելի:

ՉԱՊՐԵԼ ՄՈՒՐԱՑԿԱՆԻ ՆՄԱՆ

29 Որդեա՛կ, մի՛ ապրիր մուրացկանի կեանքով. լաւ է մեռնել, քան մուրալ:
30 Ով նայում է ուրիշի սեղաններին, նրա կեանքը չի կարելի կեանք համարել. նա իր հոգին ստորացնում է ուրիշի կերակուրներով:
31 Իսկ իմաստուն եւ խելացի մարդը զգոյշ է լինում:
32 Անամօթի բերանին քաղցր է մուրալով ստացածը, բայց նրա որովայնի մէջ կրակ պիտի վառուի:

ՄԱՀԸ

41 Ո՛վ մահ, որքան դառն է քեզ յիշելն այն մարդու համար, ով խաղաղ ապրում է իր հարստութեան մէջ,
2 ով անվիշտ է ու ամէն ինչում յաջողակ եւ կարող է դեռ կերակուր ճաշակել:
3 Ո՛վ մահ, բարի է քո դատաստանն այն մարդու համար , որ կարիքի մէջ է եւ ուժից ընկած,
4 որ ծերացած եւ ամէն տեսակ հոգսերով ծանրաբեռնուած եւ կորցրած է հաւատն ու համբերութիւնը:
5 Մի՛ վախեցիր մահուան դատաստանից. յիշի՛ր քո նախնիներին եւ յետնորդներին. այս դատաստանը Տիրոջից է ամէն մի կենդանի մարմնի համար:
6 Էլ ինչո՞ւ է քեզ ծանր թւում Բարձրեալի բարեհաճութիւնը.
7 Թէկուզ տասը, թէկուզ հարիւր, թէկուզ հազար տարի էլ լինի՝ գերեզմանում չկայ յանդիմանութիւն կեանքի համար:

ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

8 Մեղաւորների որդիները պիղծ որդիներ են լինում, նրանք շրջում են ամբարիշտների մէջ:
9 Մեղաւորների որդիների ժառանգութիւնը կորչում է, բայց նրանց սերնդի հետ միշտ մնում է նախատինքը:
10 Որդիները մեղադրում են ամբարիշտ հօրը, որովհետեւ նրա պատճառով նախատինք են կրում:
11 Վա՜յ ձեզ ամբարիշտ մարդիկ, որ լքել էք բարձրեալ Աստծու օրէնքը:
12 Եթէ ծնւում էք՝ անէծքի համար էք ծնւում, եւ եթէ մեռնում էք՝ անէծքն է ձեր բաժինը:
13 Այն ամէնն, ինչ հողից է, հողին է գնում. այդպէս էլ ամբարիշտները անէծքից գնում են դէպի կորուստ:
14 Մարդկանց սուգն իրենց մարմնի համար է, իսկ մեղաւորների անունը բարի չէ, պիտի ջնջուի:
15 Հո՛գ տար քո անուան համար, քանզի այն քեզ հետ է լինելու աւելի քան ոսկու հազարաւոր մեծ գանձերը:
16 Բարի կեանքի օրերը համրանք չունեն, եւ բարի անունը յաւիտեան կը մնայ:

ԻՆՉԻ՞Ց ՊԷՏՔ Է ԱՄԱՉԵԼ

17 Որդինե՛ր, պահպանեցէ՛ք խաղաղութեան խրատը. ծածուկ իմաստութիւն լինի թէ թաքցուած գանձ, ի՞նչ օգուտ երկուսից:
18 Աւելի լաւ է այն մարդը, որ թաքցնում է իր յիմարութիւնը, քան այն մարդը, որ թաքցնում է իր իմաստութիւնը:
19 Արդ, պատկառեցէ՛ք իմ այս խօսքերից,
20 որ մի բանի մասին պիտի ասեմ. լաւ չէ ամէն ինչից ամօթ զգալ եւ ոչ էլ բոլորին հաւատարմութեամբ հաճելի լինել:
21 Հօրից ամաչեցէ՛ք պոռնկութեան համար,
22 դատաւորից եւ իշխանից՝ յանցանքի համար, ժողովականներից եւ ժողովրդից՝ անօրինութեան համար,

---

†Յունարէնում՝ մեծ:
‡Յունարէնում՝ կը մեռնեն:
§Յունարէնում՝ բարեգործութիւնն իբրեւ դրախտ լի է օրհնութեամբ, եւ ողորմութիւնը յաւիտեանս կը մնայ:
*Յունարէնում՝ Բարեկամն ու ընկերը հանդիպում են ժամանակ առ ժամանակ, իսկ երկուսից աւելի՝ կինը ամուսնու հետ:

23 ընկերոջից եւ բարեկամից՝
զրկանքների համար, պանդխտութեան
վայրում՝ գողութեան համար,
24 Աստծու ճշմարտութիւնից եւ
ուխտից՝ ստութեան համար, ուրիշների
հացի վրայ ձեռք դնելու համար,
տալու եւ առնելու մէջ նախատինք
կրելու համար, ողջոյնին ի պատաս-
խան ձեր լռութեան համար,
25 բոզ կնոջ երեսին նայելու համար,
ազգականից երես թեքելու համար,
26 մէկի բաժինը կամ նրան տրուածը
խլելու համար, ամուսնացած կնոջը
ակնապիշ նայելու համար,
27 նրա սպասուհուն հետամտելու,
առաւել եւս նրա անկողնուն մօտենա-
լու համար:
28 Ամաչի՛ր բարեկամներին նախա-
տինքի խօսքեր ասելու համար եւ
տալուց յետոյ մի՛ յանդիմանիր. ամա-
չի՛ր նրանցից քո լսած խօսքերը
կրկնելու եւ նրանց գաղտնիքները
հրապարակելու համար:

42 Եթէ ճշմարտապէս ամօթխած
լինես, բոլոր մարդկանց առջեւ շնորհ
կը գտնես[†]:

ԻՆՉԻ՞Ց ՊԷՏՔ ՉԷ ԱՄԱՉԵԼ

Բայց այն բանի համար, որ պիտի
ասեմ, դու չես ամաչի, եւ մեղանչելու
պատճառ չի լինի:
2 Մի՛ ամաչիր Աստծու օրէնքը եւ
ուխտը կատարելու եւ ամբարշտին ար-
դար դատաստան անելու համար:
3 Մի՛ ամաչիր գործընկերոջ եւ
ուղեկցի հետ հաշիւները պահելու եւ
ժառանգութիւնը ուրիշների հետ բա-
ժանելու համար,
4 կշռի եւ չափի ճշգրտութեան, քիչ
կամ շատ ունեցուածքի համար,
5 վաճառականներին ապրանքը
թանկ վաճառելու համար, որդիներին
շատ խրատելու եւ չար ծառաների
կողերն արնոտելու համար:
6 Չար կնոջ հետ լաւ է կնիք դնել
բերանին, եւ ուր շատ ձեռքեր կան,
ունեցուածքդ պահի՛ր փակի տակ:
7 Ինչ տալիս ես, հաշուով եւ կշռո՛վ
տուր, իսկ առեւտուրը գրանցի՛ր:
8 Մի՛ ամաչիր անմիտ մարդուն,
յիմարին եւ պոռնկութեան պատճառով
դատուող[†] ծերունուն խրատելու հա-
մար. այդպիսով ցոյց կը տաս, որ դու
ճշմարտապէս խրատուած մարդ ես, եւ
բոլորի առջեւ փորձառու կ'երեւաս:[‡]:

ՀՕՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԴՍՏԵՐ ՀԱՄԱՐ

9 Դուստրը հօր գաղտնի հոգսն է, եւ
նրա այդ հոգսը վանում է քունը. չլինի
թէ աղջիկ ժամանակ նա թառամի,
չլինի թէ, երբ ամուսնանայ, ատելի
դառնայ,
10 չլինի թէ կուսութեան ժամանակ
պղծուի եւ յղի լինի իր հայրական
տանը, չլինի թէ, երբ ամուսնանայ,
դաւաճանի ամուսնուն եւ երբ նրա հետ
ապրի, չլինի թէ ամուլ մնայ:
11 Անամօթ դստեր վրայ հսկողու-
թի՛ւն հաստատիր, որպէսզի քեզ
ծաղրի չենթարկի թշնամիների առջեւ,
որպէսզի զրոյցի նիւթ չդառնաս
քաղաքում եւ նախատինք՝ ժողովրդի
մէջ, որպէսզի նա քեզ ամօթահար
չանի ամբոխի առջեւ:

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԱՆԱՆՑԻՑ

12 Մի՛ նայիր ամէն մարդու գեղեց-
կութեանը եւ մի՛ նստիր կանանց մէջ,
13 քանզի ինչպէս շորից ծնւում է
ցեցը, այնպէս էլ կնոջից՝ չարութիւնը:
14 Լաւ է տղամարդու չարութիւնը,
քան կնոջ բարութիւնը եւ նրա ամօթը,
որ պատճառ է դառնում նախատինքի:

ԱՍՏՄՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՀՈՒԹԻՒՆԸ

15 Այժմ ես պիտի յիշեմ Տիրոջ
գործերը եւ պիտի պատմեմ, ինչ որ
տեսել եմ. Տիրոջ խօսքերով են կա-
տարւում նրա գործերը:
16 Արեգակը բոլորին նայում է լու-

†Ցուցարէնում այս նախադասութիւնը նախորդ գլխի վերջն է:

†Ցուցարէնում՝ երիտասարդների հետ մրցող:

‡Ցուցարէնում՝ մարդկանց հաւանութեանը կ'արժանանաս:

սաւորելով, եւ Տիրոջ գործերը լի են
նրա փառքով:
17 Տիրոջ սրբերին իսկ չտրուեց
պատմել նրա բոլոր հրաշալի գործերը,
որ հաստատեց Ամենակալ Տէրը, որ-
պէսզի ամենայն ինչ հաստատ մնայ
նրա փառքի մէջ:
18 Նա է, որ քննեց անդունդներն ու
սրտերը, եւ դու յիշի՛ր նրա խորա-
գիտութիւնը:
19 Բարձրեալն է, որ իմանում է
բոլոր մեղքերը եւ նայում յաւիտե-
նութեան նշաններին, յայտնի է
դարձնում անցեալն ու լինելիքը, բա-
ցայայտում գաղտնի բաների հետքերը:
20 Նրանից չի խուսափում եւ ոչ մի
մտածութիւն, նրանից չի թաքնւում եւ
ոչ մի բան:
21 Նա կարգաւորեց իր իմաստուն
մեծագործութիւնները. նա յաւիտենու-
թիւնից առաջ է եւ յաւիտենական,
22 նա երբեք չաւելացաւ ու չնուա-
զեց եւ կարիք չունեցաւ որեւէ
խորհրդատուի:
23 Որքա՜ն ցանկալի են նրա գոր-
ծերը, թէպէտ դրանք երեւում են սոսկ
իբրեւ փայլակ:
24 Այս ամէնը կենդանի է եւ
յաւիտեան մնում է բոլոր կարիքների
համար, ամէն ինչ հնազանդ է նրան:
25 Ամէն ինչ զոյգ է, մէկը միւսին
ներհակ չէ, եւ ոչ մի բան նա չի
ստեղծել թերի:

ՅՈԲ

Ներածութիւն

Յոբի գիրքն սկսւում է մի պատմութեամբ: Յոբը կեանքի բարիքներով լիացած մի անբասիր մարդ է: Նա հաւատարիմ է Աստծուն: Բայց արդեօ՞ք դա պայմանաւորուած չէ շահասիրութեամբ: Եւ ահա նա ենթարկւում է փորձութեան. զրկւում է իր ունեցուածքից, երեխաներից, հարստութիւնից: Իր այդ տառապանքների մէջ նա արդեօք հաւատարիմ կը մնա՞ Աստծուն:

Բայց ո՞վ է Աստուած: Եթէ Յոբը արդար է, ապա ինչո՞ւ այս դժբախտութիւնը հարուածում է նրան: Երեք մարդ, որոնք Յոբի բարեկամներն են, ուզում են համոզել նրան, որ նրա տառապանքները Աստծու կողմից անհրաժեշտօրէն նրան տրուած մի պատիժ են ինչ-որ յանցանքի համար, որ նա հաւանաբար գործել է: Այսպէս է սկիզբ առնում այն մեծ բանավէճը, որը, բանաստեղծութեան ձեւով, գրաւում է գրքի կենտրոնական մասը եւ ամենից երկարն է: Երեք բարեկամները առաջ են քաշում աւանդական փաստարկումները, մինչդեռ Յոբը ժխտում է նրանց տեսակէտը՝ հակադրելով դրան մարդկային վիճակի անարդարութիւնը: Նա ըմբոստանում է Աստծու մասին իր բարեկամների ունեցած պատկերացման դէմ եւ շարունակ կրկնում է, որ ինքը անմեղ է:

Այդ ժամանակ հանդէս է գալիս մի նոր անձնաւորութիւն՝ Եղիհուը: Սա իր հերթին փորձում է հերքել Յոբին: Ըստ նրա, Աստուած տառապանքն ուղարկում է մարդուն՝ ազդարարելու համար նրան ինչ-որ բան, եւ ոչ ոք չի կարող պահանջել Աստծուց, որ նա դրա համար հաշիւ տայ իրեն:

Վերջապէս Աստուած ինքն է միջամտում: Բայց նա փոխանակ տրուած հարցին մի պատասխան տալու, ինքն է հարցապնդում: Այն ժամանակ Յոբը ընդունում է իր սխալը. նա Աստծու մասին խօսել էր առանց իսկապէս գիտենալու, թէ ո՛վ է Աստուած:

Գիրքն աւարտւում է վերադառնալով իր սկզբնական ձեւին՝ արձակ պատմութեան: Աստուած հաստատում է, որ Յոբն է միայն ուղիղ խօսել իր մասին: Եւ նա Յոբին վերադարձնում է նրա կորցրածի կրկնակին:

Ո՞վ է իսկապէս Աստուած: Այս հարցը լռելեայն ներկայ է ամբողջ գրքում, հարց, որ առանձնապէս արդիական է հնչում մեր դարում, որը հարցականի տակ է դնում վստահելի համարուած այնքան համոզմունքներ: Սակայն Յոբի գիրքը աւելի շուտ մեզ ասում է, թէ Աստուած ո՛վ չէ: Այն մեզ հրաւիրում է երբեք չշփոթել Աստծուն այն գաղափարի կամ պատկերացման հետ, որ մենք ունենք նրա մասին:

ՅՈԲԻ ԳԻՐՔԸ

ՅՈԲԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

1 Ուսիդ[†] քաղաքում մի մարդ կար, որի անունը Յոբ էր: Այդ մարդը ճշմարտախօս էր ու անարատ, արդար էր ու աստուածապաշտ, ամէն տեսակի չար ու մեղաւոր գործերից հեռու: 2 Եօթը տղաներ ու երեք աղջիկներ ունեցաւ նա: 3 Նրա հօտի մէջ եօթը հազար ոչխարներ կային, երեք հազար ուղտեր, հինգ հարիւր լուծ եզներ եւ արածող հինգ հարիւր մատակ էշեր. ունէր եւ բազմաթիւ սպասաւորներ: Մեծամեծ գործեր ունէր նա երկրի վրայ: Այդ մարդը բոլոր արեւելաբնակներից ամենաազնուականն էր:

4 Նրա որդիները, համաձայնելով, իրենց հետ իրենց երեք քոյրերին վերցնելով, իրար մօտ էին գալիս, խրախճանքներ սարքում, նրանց հետ ուտում-խմում: 5 Եւ երբ աւարտւում էին խրախճանքի օրերը, Յոբը նրանց յետեւից մարդիկ էր ուղարկում եւ սրբագործում էր նրանց. առաւօտեան վեր կենալով՝ նրանց համար, ըստ նրանց թուի, զոհեր էր մատուցում՝ մէկական զուարակ[‡], նրանց մեղքերի համար: Յոբն ասում էր. «Գուցէ իմ զաւակներն իրենց մտքում չար բան մտածեցին Աստծու մասին»: Այսպէս էր անում Յոբը՝ նրանց խրախճանքների բոլոր օրերին:

6 Եւ մի օր ահա Աստծու հրեշտակները եկան կանգնեցին Տիրոջ առաջ. նրանց հետ սատանան էլ եկաւ՝ մանգալով երկրի երեսին, շրջելով նրա վրայ: 7 Եւ Տէրն ասաց սատանային. «Որտեղի՞ց ես գալիս դու»: Պատասխան տուեց սատանան Տիրոջն ու ասաց. «Երկրի երեսին շրջելով ու երկնքի տակ մանգալով եմ եկել»: 8 Եւ Տէրն ասաց նրան. «Ուշադրութիւն դարձրի՞ր իմ ծառայ Յոբին, որի նման անարատ, ճշմարտախօս, աստուածապաշտ, ամէն տեսակի չար գործերից հեռու մնացող մարդ չկայ երկրի վրայ»: 9 Պատասխան տուեց սատանան՝ ընդդիմանալով Տիրոջը. «Մի՞թէ Յոբը ձրի՞ է պաշտում Տիրոջը. 10 չէ՞ որ դու ես պաշտպանել նրան արտաքուստ ու նրա տունը՝ ներքուստ, եւ ամէն ինչ, որ կայ նրա շուրջը. նրա ձեռքի գործերը դու ես օրհնել, երկրի վրայ նրա անասունները դու ես բազմացրել: 11 Բայց դէ փորձի՛ր մեկնել ու գցել քո ձեռքը նրա ամբողջ ունեցուածքին, ու կը տեսնես, որ նա դէմառդէմ կ'անիծի քեզ»: 12 Այն ժամանակ Տէրն ասաց սատանային. «Ահա նրա ամբողջ ունեցուածքը քո ձեռքն եմ տալիս, պայմանով որ նրա անձին ձեռք չտաս»: Եւ սատանան հեռացաւ Տիրոջ առաջից:

ՅՈԲԻ ՁԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԾԱՆՈՒՄ ԵՆ

13 Եւ այդ այն օրն էր, երբ Յոբի տղաներն ու աղջիկները իրենց աւագ եղբօր տանը ուտում ու գինի էին խմում: 14 Եւ ահա մի պատգամաբեր եկաւ Յոբի մօտ ու ասաց նրան. «Լծկան եզները վար էին անում, մատակ էշերն էլ՝ արածում նրանց մօտերքը. 15 գերեվարողները[†] եկան ու տարան նրանց, իսկ քո ծառաներին սրով կոտորեցին: Միայն ես ազատուելով՝ եկայ քեզ պատմելու»: 16 Եւ մինչ նա խօսում էր, մի ուրիշ պատգամաբեր եկաւ ու Յոբին ասաց. «Երկնքից կրակ թափուեց ու այրեց հօտերը, հովիւներին էլ նոյն ձեւով ճարակեց: Միայն ես մնացի ու եկայ քեզ պատմելու»: 17 Եւ մինչ նա խօսում էր, մի ուրիշ պատգամաբեր եկաւ ու Յոբին ասաց. «Ասպատակներ[‡] ասպատակեցին մեզ երեք խմբերով, շրջապատեցին ուղտերն ու տարան դրանք, իսկ քո ծառաներին սրով կոտորեցին: Միայն ես ազատուելով՝ եկայ քեզ պատմելու»: 18 Եւ մինչ նա խօսում էր, մի ուրիշ պատգամաբեր եկաւ ու Յոբին ասաց. «Մինչ քո տղաներն ու աղջիկներն իրենց աւագ եղբօր մօտ ուտում-խմում էին, 19 անապատից յանկարծակի սաստիկ հողմ փչեց ու խփեց տան չորս անկիւններին.

[†]Եբրայերէն՝ *Ցուս* կամ *Ուզ*:

[‡]Եզ կամ հորթ (սովորաբար զոհաբերութեան):

[†]Եբրայերէն՝ *սեբայեցիք*:

[‡]Եբրայերէն՝ *քաղդէացիք*:

տունը փլուեց քո զաւակների վրայ, ու նրանք վախճանուեցին: Միայն ես ազատուելով՝ եկայ քեզ պատմելու»:
20 Ապա Յոբը վեր կացաւ, պատառոտեց իր հագուստները, կտրեց իր գլխի մազերը եւ գետին փռուելով՝ երկրպագեց Տիրոջն ու ասաց. 21 «Իմ մօր որովայնից ես մերկ դուրս եկայ, մերկ էլ կը վերադառնամ: 22 Տէրը տուեց, Տէրն էլ յետ առաւ: Ինչպէս որ հաճելի էր Տիրոջը, այնպէս էլ եղաւ: Թող օրհնեալ լինի Տիրոջ անունը»:
23 Եւ նրան պատահած այս բոլոր դէպքերի ժամանակ Յոբը չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամութիւն հանդէս բերեց Աստծու հանդէպ:

ՅՈԲԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

2 Մի օր Աստծու հրեշտակները եկան կանգնեցին Աստծու առաջ. նրանց մէջ էր ու նրանց հետ Տիրոջ առաջ եկաւ կանգնեց նաեւ սատանան: 2 Եւ Տէրն ասաց սատանային. «Որտեղի՞ց ես գալիս»: Այն ժամանակ սատանան Տիրոջն ասաց. «Եկել եմ՝ թափառելով անցնելով երկնքի ներքոյ եւ շրջելով ամէն տեղ»: 3 Եւ Տէրն ասաց սատանային. «Տեսա՞ր արդեօք իմ ծառայ Յոբին, որի նման ճշմարտախօս, անարատ, աստուածապաշտ, ամէն չար գործից հեռու մնացող մարդ չկայ երկրի վրայ. դեռ հաստատուն էլ մնում է նա իր անմեղութեան մէջ: Իսկ դու իզուր էիր ասում, որ կորստեան մատնեմ նրա ունեցուածքը»: 4 Պատասխան տուեց սատանան ու ասաց Տիրոջը. «Մորթի դէմ՝ մորթ. մարդն ինչ որ ունի՝ իր կեանքի համար կը տայ: 5 Բայց ահա մեկնի՛ր ձեռքդ, ձե՛ռք տուր նրա ոսկորին ու մարմնին, ու կը տեսնես, որ նա դէմառդէմ կ'անիծի քեզ»: 6 Տէրն ասաց սատանային. «Ահա նրան քո ձեռքն եմ մատնում, պայմանով որ նրա կեանքը պահես»:
7 Եւ սատանան հեռացաւ Տիրոջ առաջից եւ ոտից գլուխ չարորակ վէրքերով պատեց Յոբին: 8 Եւ Յոբը խեցու մի կտոր առնելով՝ քերում էր թարախը. նստում էր աղբիւսում, քաղաքից դուրս:
9 Ու երբ այս դէպքից շատ ժամանակ անցաւ, կինն ասաց նրան. «Մինչեւ ե՞րբ, դիմանալով, պիտի ասես, որ համբերելու ես դեռ մի որոշ ժամանակ՝ փրկութեան յոյս ակնկալելով: Ահա ջնջուած է յիշատակդ երկրի երեսից, ոչնչացուած են տղաներդ ու աղջիկներդ՝ իմ որովայնի ծնունդները, որոնց ես իզուր վաստակեցի տառապանքով: Դու ինքդ էլ զազրելի որդերի մէջ նստած ես բացօթեայ, իսկ ես, մոլորուած, ծառայի պէս տնից տուն, տեղից տեղ ընկած՝ սպասում եմ, թէ ե՛րբ է արեգակը մայր մտնելու, որ հանգստանամ իմ տառապանքներից ու ցաւերից, որոնք այժմ պատել են ինձ: Արդ, մի խօ՛սք ասա Տիրոջն ու մեռի՛ր»: 10 Եւ Յոբը նրան նայելով՝ ասաց. «Խօսեցիր ինչպէս մի անզգամ կին. եթէ Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք»: Եւ իր հետ պատահած այս բոլոր դէպքերի ժամանակ Յոբն իր շրթունքներով չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամութիւն հանդէս բերեց Աստծու հանդէպ:

ԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԳԱԼՈՒՍՏԸ

11 Երեք բարեկամներ՝ Թեմնացիների արքայ Եղիփազը, սոքեցիների բռնակալ Բաղդատը եւ մինեցիների արքայ Սոփարը, լսելով այն բոլոր չարիքների մասին, որ հասել էին Յոբի վրայ, համաձայնելով եկան նրա մօտ, իւրաքանչիւրն իր աշխարհից՝ մխիթարելու եւ ամոքելու նրան: 12 Նրան հեռուից տեսնելով՝ չճանաչեցին. բարձրաղաղակ լաց եղան. իւրաքանչիւրն իր պատմուճանը պատառոտեց. երկինք նայելով՝ հող ցանեցին գլխներին: 13 Եօթն օր ու եօթը գիշեր նստեցին նրա շուրջը. նրանցից ոչ ոք մի բան չխօսեց հետը, որովհետեւ տեսնում էին նրան հասած սաստիկ մեծ հարուածները:

ՅՈԲՆ ԱՆԻԾՈՒՄ Է ԻՐ ԾՆՈՒԱԾ ՕՐԸ

3 Ապա Յոբը դժուարութեամբ բաց արեց բերանը, անիծեց իր ծնուած օրը,

2 խօսեց ու ասաց.
3 «Կորչի թող օրն այն, երբ ես ծնուեցի,
ու գիշերն էլ, երբ ասացին ինձ, թէ՝
արու մի զաւակ է սաղմնաւորուել:
4 Խաւար թող դառնայ այն գիշերը,
եւ Տէրը վերեւից չփնտռի թող այն:
5 Նրա վրայ է՛լ լոյսը չծագի.
թող պատեն խաւարն, ստուերները մահուան,
ու մէգը իջնի թող նրա վրայ:
6 Անիծեալ լինի այն օրն, գիշերն էլ.
խաւարը տանի:
Չլինի թող այն՝ տարուայ օրերում,
ու չթուարկուի նաեւ օրերում
այն ամիսների:
7 Այլ գիշերը այն լինի ցաւերում,
եւ թող չայցելեն նրան խնդութիւն,
ոչ էլ ցնծութիւն:
8 Նզովի թող նա, ով պիտ անիծի
օրն այն, ով ձեռքն իր գցի
վիշապին:
9 Խաւարեն թող այն աստղերն
գիշերուայ.
գիշերն սպասի, բայց լոյս չգայ թող,
ու չտեսնի թող երբեք ծագելը
վառ արուսեակի.
10 քանզի չփակեց իմ մօր արգանդի
դռները, որով գուցէ եւ վանէր
ցաւերն իմ աչքից:
11 Ինչո՞ւ չմեռայ ես էլ արգանդում,
դուրս եկայ այսպէս եւ տեղնուտեղը
չչքացայ գէթ:
12 Ինչո՞ւ ծնուեցի, ինչո՞ւ ծծեցի
ստինքներն իմ մօր:
13 Մինչ հիմա հանգչած ես կը
լինէի,
14 կը ննջէի ու կը հանգչէի ես
արքաների հետ, երկրի իմաստնոց,
որ յոխորտում են սրերով† իրենց,
15 կամ իշխանների,
որ բազում ոսկի ունեն եւ որոնք
լցրել են իրենց տներն արծաթով,
16 կամ ինչպէս վիժուածք, որ դուրս
է ընկնում
արգանդից իր մօր, կամ զերթ
մանուկներ,
որոնք որ լոյսը չտեսան երբեք:
17 Այնտեղ են հիմա ամբարիշտները,
որ բորբոքեցին զայրոյթը Տիրոջ:
Այնտեղ հանգչեցին մարմնով տանջուածներ,
18 անցեալի մարդիկ, որ չեն լսում էլ
ձայնն հարկահանի:
19 Այնտեղ են փոքրն ու մեծը միասին,
նոյնպէս եւ ծառան, որ չունի երբեք
տիրոջից երկիւղ:
20 Ինչո՞ւ է տրւում լոյսը այն անձանց,
որ դառնացած են,
կեանքը՝ ցաւագնած այն հոգիներին,
21 որ մահ են տենչում՝ չեն հասնում
դրան,
փորում են, ինչպէս գանձ կը
փորէին,
կ'ուրախանային, թէ մահ գտնէին:
22 Մահն մարդու համար հանգիստ
է,
23 սակայն ճամփան դէպի այն
ծածկուեց նրանից.
փակեց նրա շուրջը ինքը Աստուած:
24 Կերակրից առաջ՝ հեծութիւնն
հասաւ.
արցունքներով ու ահով եմ ընկճուած,
25 քանզի ինչ բանի երկիւղն ունէի՝
հասաւ ինձ վրայ.
ինչից որ վախ կար՝ հէնց ի՛նձ
պատահեց:
26 Չխաղաղուեցի, դադար չառայ ես,
ոչ էլ հանգչեցի, քանի որ վրաս
բարկութիւնն իջաւ»:

ԵՂԻՓԱԶ. ՎԱՍԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՄՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ
(4. 1-14. 22)

4 Եղիփազ Թեմնացին ասաց.
2 «Մի՞թէ շատ անգամներ են
ասուել քեզ խօսքեր տանջալից.
եւ ո՞վ կը դիմանայ խօսքերիդ
զօրութեան:
3 Որովհետեւ եթէ խրատել ես դու
շատերին,
բռնել ես ձեռքը տկարի
ու մխիթարել,
4 խօսքովդ կանգնեցրել ոտքի ան-
զօրին,
եղել քաջալեր ծնկին կթոտած,
– 5 արդ քեզ վրայ են հասել

†Երրայերէն՝ սարքած աւերակներով:

տանջանքներ:
Բայց տագնապել ես:
6 Չէ՞ որ երկիւղդ անզգամութիւն է,
ինչպէս կասկածդ՝ ճամփի վրայ անչար:
7 Ցիշի՛ր դու արդ. այն ո՞ր անմեղն է
կորել-գնացել, կամ երբեւէ արդարները
եղե՞լ են արմատախիլ:
8 Ինչպէս որ ես եմ տեսել միշտ.
ով որ վարել է ու անպատշաճ սերմեր ցանել,
փոխարէնը ցաւ է հնձելու:
9 Կորչելու են Տիրոջ հրամանով,
ոչնչացուելու զայրալից շնչից:
10 Հանգել են զօրութիւնն առիւծի,
գոչիւնը էգ առիւծի† եւ պերճութիւնը վիշապների:
11 Սատկել է մրջնառիւծը՝ կեր չլինելուց.
իրար են լքել կորիւններն առիւծի:
12 Եթէ քո խօսքերում դեռ
ճշմարիտ բան գոյութիւն ունենար,
այդպիսի չար բաներ քեզ չէին պատահի:
Ուրեմն ականջն իմ չի՞ ընդունելու
հրաշակերտ բաներ նրանից:
13 Գիշերային արհաւիրքներ ու դղրդիւններ
ահ են գցել մարդկանց սրտում.
14 դողումն ու սոսկումն են պատել ինձ
եւ սաստիկ ցնցել ոսկորներն իմ:
15 Մի շունչ դիպաւ իմ երեսին.
քստմնեցին մազերս ու մարմինն իմ:
16 Կանգնեցի, բայց չհասկացայ.
տեսայ, բայց կերպարանք չկար աչքերիս առաջ:
Միայն շունչ ու մի ձայն էի լսում:
17 Մահկանացուն միթէ Տիրոջ մօտ աւելի մաքո՞ւր է,
կամ մի մարդ աւելի անարա՞տ է, քան գործերը Նրա,
18 եթէ չի հաւատում իր ծառաներին,
իսկ հրեշտակների վրայ խոտոր բաներ է նկատում:

†Ներայերէն՝ Փշրուել են առիւծի կորիւնների ժանիքները:

19 Արդ, գալով կաւէ տներում բնակուածներին
(մենք էլ միեւնոյն կաւից ենք),
ցեցի պէս կերաւ նրանց,
20 եւ առաւօտից մինչեւ երեկոյ
նրանք գոյութիւն չեն ունենայ:
Քանի որ իրենք իրենց չէին կարող օգնել՝ կորան:
21 Փչեց նրանց վրայ, ու չորացան,
ոչնչացան նրանք,
զի չունէին իմաստութիւն:

5 Արդ, կանչի՛ր, եթէ մէկը քեզ ձայն է տալու,
կամ եթէ տեսնելու ես
սուրբ հրեշտակներից որեւէ մէկին:
2 Ցիրաւի, բարկութիւնն անզգամին սպանում է,
մոլորեալին մեռցնում:
3 Ես տեսել եմ ահա անզգամներին
արմատ գցելիս,
բայց իսկոյն խորտակուել են
տները նրանց:
4 Հեռու լինեն թող նրանց զաւակները փրկութիւնից,
եւ խղճուկ քարշ գան թող վատթարների դռներին.
բայց ոչ ոք չի գտնուելու, որ փրկի նրանց:
5 Ինչ որ նրանք ժողովել են՝
արդարներն են ուտելու,
իսկ իրենք չեն ազատուելու պատուհասներից.
քամուելու է զօրութիւնը նրանց:
6 Արդարեւ, հողից չէ որ ելնում է տառապանքը,
ոչ էլ լեռներից են բուսնում ցաւերը:
7 Այլ մարդը տանջանքով է ծնւում.
արծիւների ձագերը բարձունքներում են ճախրում:
8 Սակայն ես Տիրոջից եմ խնդրելու,
Տիրոջը՝ բոլորի իշխանին եմ ձայն տալու,
9 որ կատարում է մեծ ու անքննելի,
փառաւոր ու հրաշակերտ գործեր,
որոնք թիւ ու համար չունեն,
10 որ տալիս է անձրեւ՝ երկրի վրայ,
ուղարկում ջրեր՝ երկնքի ներքոյ,
11 որ բարձրացնում է խոնարհներին
եւ ոտքի է կանգնեցնում կորուսեալներին,

12 որ փոխում է մտադրութիւնները խորամանկների,
որոնց ձեռքերը ճշմարիտ գործեր չեն կատարում,
13 որ վրայ է հասնում իմաստուններին՝ հանճարով,
ջախջախում մտադրութիւնները բազմադաւների:
14 Ցերեկը խաւարն է նրանց վրայ հանելու,
իսկ կէսօրին խարխափելու են ինչպէս գիշեր ժամանակ:
15 Պատերազմով են ոչնչանալու,
եւ աղքատն ազատուելու է հզօրի ձեռքից:
16 Ցոյս է ունենալու տկարը,
եւ փակուելու է անիրաւի բերանը:
17 Երանելի է այն մարդը,
որին Տէրն ուղղում է երկրի վրայ.
ուստի, Ցո՛բ, չհրաժարուես Ամենակալի խրատից:
18 Տէրն է, որ ցաւ է պատճառում,
բայց յետոյ նորից ամոքում,
խփում է, բայց նրա ձեռքն է բժշկում:
19 Վեց անգամ փրկելու է քեզ վշտերից,
իսկ եօթներորդին չարը քեզ չի մօտենալու:
20 Սովի ժամանակ քեզ մահից է փրկելու,
պատերազմի ժամանակ կապանքներից է ազատելու քեզ:
21 Պահելու է քեզ լեզուի հասցրած տառապանքներից,
ու չես սարսափելու քեզ վրայ եկած չարիքներից:
22 Արհամարհելու ես անիրաւներին ու անօրէններին
եւ երկիւղ չես կրելու վայրի գազաններից,
23 որովհետեւ դաշտի քարերի հետ ես դաշինք կնքելու,
վայրի գազանների հետ խաղաղութեան մէջ ես լինելու:
24 Ապա իմանալու ես, որ խաղաղութիւն կայ քո տան մէջ,
եւ քո յարկի տակ բան չի պակասելու:
25 Իմանալու ես, որ բազում են քո սերունդները,
եւ քո որդիները դաշտի խոտի պէս են լինելու:
26 Գերեզման ես իջնելու
ժամանակին հնձուած հասուն ցորենի պէս,
կամ ինչպէս ժամանակին մէկտեղուած կալի շեղջը:
27 Ահա սա այսպէս քննեցինք,
սա է, ինչ որ լսեցինք.
բայց դու ինքդ իմացիր, թէ ի՞նչ ես արել»:

ԸՆԿՁՈՒԱԾ ՄԱՐԴՆ Է ՍՈՍԿ ԻՄԱՆՈՒՄ ԻՐ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

6 Ցոբը խօսեց ու ասաց.
2 «Թէ որ կշռելով կշռէր մէկը իմ սրտմտութիւնը,
ցաւերս էլ բարձէր նժարին կշռի,
ծովի աւազներից էլ ծանր կը լինէին դրանք:
3 Խօսքերս կարծես խենթ-խելառ լինեն,
4 զի նետերն Տիրոջ մէջն են իմ մարմնի,
զայրոյթը նրա արիւնս է ծծում.
բերան բացելիս կարտում են ինձ:
5 Արդ, մի՞թէ զուր է էշն վայրի զռում,
եթէ չի խնդրում իր համար նա կեր:
Կամ թէ կը գոռա՞յ եզը մսուրում,
եթէ ունենայ առատ կերակուր:
6 Կամ կ'ուտուի՞ առանց աղի հաց:
Կամ համ կը լինի՞ դատարկ խօսքերում:
7 Չի կարող հանդարտուել իմ հոգին,
քանի որ չարաւոտ եմ տեսնում կերակուրս,
ինչպէս հոտն առիւծի:
8 Երանի կատարուի խնդիրքն իմ,
եւ յոյսս լիացնի Տէրը:
9 Սկսեց Տէրը ինձ խոցոտել,
սակայն թող չսպանի ինձ խպառ:
10 Գերեզմանս թող լինի քաղաքն իմ, որի պարսպի վրայ ճեմում էի.
չպիտի խնայեմ ես նրան,
որպէսզի սուտ չելնեն խօսքերը սուրբ Աստծուս:
11 Զօրութիւնս ի՞նչ է, որ համբերեմ.

Ժամանակս ի՞նչ է, որ դիմանայ իմ
հոգին:
12 Մի՞թէ քար զօրութիւն է ուժն իմ.
մարմինս պղնձի՞ց է միթէ:
Կամ չէի վստահում ես դրան:
13 Զրկուեցի ինքս իմ նեցուկից.
Օգնութիւնն հեռացաւ արդ ինձնից.
Տիրոջ այցն անտեսեց ինձ լրիւ:
14 Մերձաւոր չնայեց երբեք ինձ.
նուազած առուի պէս, ալիքի պէս
անցան իմ կողքով:†
15 Ովքեր դողում էին ինձանից,
16 այժմ ահա եկել են ինձ վրայ:
17 Ձիւնն ինչպէս կամ ինչպէս
քարացած սառոյցը,
որ իսկոյն հալչում է ջերմոյթից,
չի յիշում, թէ ինչ էր ինքն առաջ,
– 18 նոյն ձեւով լքուեցի բոլորից
նաեւ ես,
կորստեան մատնուեցի ու դարձայ
ես տնանկ:
19 Եւ դուք, որ նայում էք Սաբայի
շաւիղին,
տեսէք եւ ճամփաներն Թեմնացւոց.
20 ամօթով կը մնան, ովքեր որ յոյս
դրին քաղաքի, ինչքերի վրայ այս:
21 Դէ ահա դուք նոյնպէս անողորմ
հասել էք ինձ վրայ.
դէթ վէրքիս նայելով դուք երկիւղ
կրեցէք:
22 Այժմ բան խնդրեցի՞ ես ձեզնից,
23 կամ մի՞թէ ձե՞ր ուժով կարող եմ
փրկել ինձ թշնամուց,
կամ փրկել հզօրաց ձեռքերից:
24 Ուսուցէք դուք էլ ինձ՝ կը լռեմ:
Իսկ եթէ մոլորուած ես լինեմ,
ինձ խելքի՛ բերէք դուք:
25 Բայց կարծէք իզուր են խօսքերն
այս ճշմարիտ.
չէ՞ որ ես ձեզանից զօրութիւն չեմ
խնդրում:
26 Ոչ էլ ձեր կշտամբանքի բառերն
են կարող լռեցնել.
պիտ չանսամ նաեւ ձեր բարբառած
խօսքերին:
27 Բայց քանի հասել էք ինձ վրայ,
իբրեւ մի որբուկի,
շարժուել էք բարեկամի վրայ ձեր,
– 28 էլի ես նայելով ձեր դէմքին՝
պիտ երբեք չստեմ:

†Եբրայերէն 14–30-ը տարբեր են:

29 Նստեցէ՛ք. դատի մէջ անիրաւ
բան չլինի.
եւ դարձեալ արդարին հետեւէ՛ք,
30 քանի որ իմ լեզուին անիրաւ բան
չկայ,
քիմքս էլ չի ձգտում երբեք
իմաստութեան»:

ՅՈԲԸ ԳԱՆԳԱՏԻՈՒՄ Է ԱՍՏՈՒԾՈՒՑ

7 «Փորձութիւն չէ՞ միթէ երկրի վրայ
կեանքն մարդու.
վարձկանի օրական վարձը չէ՞
կեանքը իր:
2 Ինչպէս որ ծառան է վախենում
տիրոջից ու պահւում ստուերում,
կամ ինչպէս վարձկանն է սպասում
իր վարձին,
– 3 այնպէս էլ ես զուր եմ սպասել
ամիսներ:
Ցաւագին գիշերներ են բաժին ընկել
ինձ.
4 թէ քնեմ՝ ասում եմ. "Ե՞րբ պիտի
բացուի լոյս",
արթնանամ՝ դարձեալ թէ՝ "Ե՞րբ կը
լինի երեկոյ":
Ցաւով եմ լեցուն ես իրիկուն-
առաւօտ:
5 Ծածկուած է մարմինս զազրելի
որդերով.
խեցեր եմ մաշել ես թարախոտ
վէրքերն իմ քերելու:
6 Եւ կեանքս խօսքից էլ թեթեւ է.
կորել է նա ունայն յոյսերում:
7 Ցիշի՛ր, որ քամի է կեանքը իմ.
աչքերս է՛լ չեն տեսնի բարի բան.
8 չեն նայի այլեւս ինձ աչքերն
տեսնողի:
Աչքերդ ինձ վրայ ես յառում.
այլեւս չեմ լինի՝ երկնքից ջնջուած
ամպի պէս:
9 Չի եթէ իջնի մարդ գերեզման,
10 չի ելնի այլեւս, չի դառնայ՝ իր
տունը.
իր տեղն էլ նրան չի ճանաչի:
11 Այսուհետ չպիտի զսպեմ ես
բերանս.
պիտ խօսեմ, քանի դեռ վիշտ ունեմ,
տագնապով պիտ բացեմ դառնու-
թիւնն իմ հոգու:
12 Մո՞վ եմ ես, թէ՞ կէտ ձուկ, որ

չուրջս պահակ ես դու կարգել:
13 Ասացի՝ ամոքեն պիտի ինձ
մահիճներս.
եւ ինքս պիտ քննեմ անկողնում իմ
բոլոր գործերը:
14 Երազով վախեցնում, տեսիլքով
հարուածում ես դու ինձ:
15 Իմ հոգին հանում ես դու ինձնից,
մարմնիցս՝ շունչը իմ, մահուանից՝
կեանքը իմ:
16 Քանի որ յաւիտեան չեմ ապրի,
թող որ ես համբերող միշտ լինեմ:
Հեռո՛ւ կաց դու ինձնից, քանի որ
իզուր է կեանքը իմ:
17 Եւ ի՞նչ է մարդը, որ դու այդքան
մեծարել ես նրան,
կամ էլ՝ որ միտքդ ես սեւեռում իր
վրայ,
18 կամ էլ՝ որ քննում ես նրան մինչ
առաւօտ,
հանգստի ժամերին, փորձում միշտ:
19 Մինչեւ ե՞րբ դու ինձ չես
թողնելու,
արձակելու չես ինձ, մինչեւ որ
ցաւերով կուլ տամ ես լորձունքս:
20 Թէ ես մեղք գործեցի՝ ի՞նչ կարող
եմ անել քեզ, որ միտքն ես մարդկանց
քննում միշտ:
Ինչո՞ւ ես ինձ դարձրել քեզ ոսոխ,
որ լինեմ քեզ համար ես մի բեռ:
21 Ինչո՞ւ չես ներել դու յան-
ցանքներս,
չես թողել մեղքերն իմ:
Եւ ահա երկիր եմ դառնում ես շատ
կանուխ.
այլեւս չեմ լինի»:

ՍԻԱԼՆԵՐԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՆ ՎԱՂ ԹԷ ՈՒՇ

8 Բաղդատ Սոքեցին խօսեց ու ասաց.
2 «Մինչեւ ե՞րբ ես այդպէս խօսելու:
Մեծաբանութեան հովեր կան քո
բերանում:
3 Մի՞թէ անիրա՞ւ դատաստան կը
տեսնի Տէրը,
կամ նա, որ ամէն ինչ ստեղծեց,
իրաւունքը կ'աղաւաղի՞:
4 Եթէ քո զաւակները մեղանչեցին
նրա առաջ,
ինքն էլ պատիժներ ուղարկեց
անօրէնութիւնների համար:
5 Բայց դու աղօթքներով վաղ
առաւօտեան դիմի՛ր Ամենակալ Տիրոջը.
6 եթէ սուրբ ու ճշմարիտ լինես՝
քո աղօթքներին ականջ կը դնի,
քեզ կը վերադարձնի արդար յարկը
քո:
7 Եթէ սկզբում քոնը քիչ էր,
վերջում այն անբաւ կը լինի:
8 Բայց դու տեղեկացի՛ր հին ազ-
գերից
եւ քննի՛ր տոհմերի գլխաւորներին:
9 Քանի որ մենք երէկուան ենք
պատկանում, բան չենք իմանում.
ստուեր է երկրի վրայ կեանքը մեր:
10 Մի՞թէ նրանք պիտի չսովորեցնե՞ն
քեզ ու պատմեն,
իրենց իմաստութիւնից պիտի չբխե-
ցնե՞ն խօսքերն իրենց:
11 Մի՞թէ պրտուն† կը կանաչի՞
առանց ջրի,
կամ կը բարձրանա՞յ կնիւնն առանց
ջրուելու:
12 Չի՞ հնձուելու այն, մինչ իր
արմատների վրայ է.
եթէ ամէն խոտ մինչեւ յագեցում
չոռոգուի՝ չի՞ չորանայ:
13 Արդ, բոլորի վախճանն այնպիսին
կը լինի,
որ կը մոռանան Տիրոջը,
այդպէս էլ ամբարշտի յոյսը կը
կորչի:
14 Շէն չի լինի տունը նրա.
սարդոստայնի պէս կ'անհետանայ
յարկը նրա:
15 Թէկուզ եւ հաստատի տունն իր՝
այն չի մնայ կանգուն.
Հէնց իր ձեռքը գցի դրան՝ այն չի
խարխլի:
16 Արեգակից է խոնաւութիւնը,
եւ նրա նեխուածքից է դուրս գալու
իր շիւղ‡:
17 Քարակարկառի վրայ է ննջելու
ու մանրախիճ քարերի վրայ ապրելու.
իսկ եթէ արմատախիլ արուի իր
տեղից,
նրա տեղն էլ ուրանալու է նրան:
18 Այսպիսի բան չե՞ս տեսել միթէ.
19 ամբարշտի կործանումն այսպի-

†Պապիրուս բոյսը:

‡Եբրայերէն՝ Զար մարդիկ մոլախոտերի պէս ծլարձակում են արեւի տակ, մոլախոտեր, որ տարածւում են պարտէզով մէկ:

սին է լինելու,
իսկ հողից ուրիշն է բուսնելու:
20 Տէրը չի մերժում անմեղին՝
ամբարշտի ամէն ընծայ ընդունելի չի լինելու:
21 Ճշմարիտ մարդկանց բերանները ծիծաղով են լցուելու,
նրանց շրթունքները՝ գոհութեամբ:
22 Նրանց թշնամիներն ամօթով են ծածկուելու.
ամբարշտի բնակավայրերն այլեւս չեն մնալու»:

ԱՍՏՈՒԱԾ ՇԱՏ ՀԶՕՐ Է

9 Յոբը խօսեց ու ասաց.
2 «Ճշմարտապէս գիտեմ, որ այդ այդպէս կը լինի.
ինչպէ՞ս կարող է մարդ արդար լինել Աստծու առաջ:
3 Եթէ Աստուած ուզի դատ տեսնել իր հետ՝ նրան չի լսելու,
որովհետեւ հազար խօսքին մի խօսքով իսկ պատասխան չի տալու:
4 Աստուած մտքով իմաստուն է, զօրաւոր ու մեծ.
այդ ո՞վ է նրա դէմ յամառել ու յաջողութիւն գտել:
5 Ձեն իմանում, թէ Նա, որ մաշեցնում է լեռները,
բարկութեամբ կը տապալի էլ դրանք:
6 Նա է, որ երկնքի ներքոյ շարժում է գետինը հիմքերից,
եւ նրա սիւները դողում են:
7 Նա է, որ հրամայում է արեգակին, ու սա չի ծագում,
փակում է աստղերի դէմը:
8 Նա է, որ մենակը տարածել է երկինքը
եւ ծովի վրայ այնպէս է շրջում, ինչպէս ցամաքի վրայ:
9 Նա է, որ ստեղծել է Բազմաստղն† ու Գիշերաստղը‡,
Սայլն ու Մազարոթը§:
10 Նա է, որ արարում է մեծամեծ ու անքննելի,
փառաւոր ու հրաշակերտ բաները,
որոնց թիւ ու համար չկայ:
11 Եթէ ինձանից վեր բարձրանայ՝ չեմ տեսնի,
իսկ եթէ կողքովս անցնի՝ այդպէս էլ չեմ իմանայ:
12 Եթէ ոչնչացնի՝ ո՞վ յետ կը պահի նրան,
կամ ո՞վ նրան կ'ասի՝ ի՞նչ արեցիր:
13 Ետ դարձաւ նա բարկութիւնից,
եւ նրանից սարսեցին կէտերը,
որ երկնքի ներքոյ են:
14 Երանի՜ թէ լսի ինձ եւ իրաւացի համարի իմ խօսքերը:
15 Եթէ արդար լինեմ, ու ինձ չլսի՝
նրա դատաստանն եմ աղերսելու:
16 Իսկ եթէ աղաղակեմ իրեն, ու լսի՝
հաւատալս էլ չի գալու, որ հէնց լսել է ինձ:
17 Փոթորիկով չի ոչնչացնելու ինձ:
Բազում են հարուածները, որ ինձ զուր տեղը հասցրել է.
ինձ հանգիստ էլ չի տալիս:
18 Դառնութեամբ է լցրել ինձ.
19 քանի որ հզօր է՝ բռնանում է:
Եւ հիմա այն ո՞վ է, որ նրա դատաստանին հակառակ կը կանգնի:
20 Եթէ արդար իսկ լինեմ,
բերանս ինձ ամբարիշտ կը դարձնի,
անարատ լինեմ՝ կամակոր կը դառնամ:
21 Իսկ եթէ հոգով մեղանչել եմ՝ չգիտեմ.
գիտեմ միայն, որ կեանքս խլում են ինձանից:
22 Դրա համար եմ ասել.
"Բարկութիւնը կործանում է մեծին ու հզօրին":
23 Չարերը սաստիկ մահով են կորչելու.
արդարներն էլ ծաղրի են ենթարկուում,
քանի որ մատնուում են ամբարշտի ձեռքը:
24 Նա դատաւորների երեսն է ծածկում.
եթէ նա չէ ծածկողը, ապա ո՞վ է:
25 Սակայն սուրհանդակից էլ արագ անցաւ իմ կեանքը.
փախաւ այն ու չերեւաց:

†Գլէադ համաստեղութիւնը:

‡Եբրայերէն՝ Օրիոն (=Հայկ) համաստեղութիւնը:

§Եբրայերէն՝ Մեծ Արջ համաստեղութիւնը:

26 Կը գտնուի՞ նաւերի ճանապարհի կամ թռչող, կեր փնտռող արծուի հետքը:
27 Եթէ ասեմ, թէ մոռանալու եմ դանգատուելը,
երեսս գետին խոնարհելով՝ հեծեծեմ,
28 դողը կը պատի իմ բոլոր անդամները,
քանզի գիտեմ, որ ինձ անմեղ չես համարելու:
29 Եթէ ամբարշտութիւն էի անում՝ ինչո՞ւ չմեռայ:
30 Եթէ ձիւնով իսկ լուացուէի
ու ձեռքերս էլ օշնանով մաքրէի,
31 դարձեալ սաստիկ աղտեղութեամբ կը ներկէիր ինձ՝
պատմուճանս իմ աչքերին զզրելի դարձնելով.
32 քանզի դու մարդ չես ինձ նման, որի հետ դատ անէի ես,
եւ որպէս հաւասար դատաստանի դայինք:
33 Ուր է թէ մի միջնորդ լինէր,
դիմացս դար ու դատ անէր երկուսիս միջեւ:
34 Նա անպայման կը հեռացնէր ինձանից խարազանը,
եւ դրա ահն ինձ չէր սարսափեցնի.
35 էլ չէի վախենայ, այլ կը խօսէի.
բայց գիտեմ, որ այդպէս չէ.
որ ինքս մենակ եմ տանջուում»:

ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՍՏԵՂԾԵԼ Է ԿՈՐԾԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

10 «Հծծիւնով կը հասցնեմ նրան իմ խօսքերը.
կը խօսեմ թախծոտած իմ հոգու դառնութեամբ:
2 Ու կ'ասեմ. "Տէ՛ր, մի՛ սովորեցրու ինձ,
որ լինեմ ամբարիշտ".
Եւ ինչո՞ւ դատեցիր այսպէս ինձ:
3 Բարո՞ք է քեզ թուում անիրաւուած լինելս.
մերժել ես քո ձեռքի գործերը,
նայել պիղծերի խորհրդին:
4 Մի՞թէ դու նայում ես, ինչպէս մարդն է նայում,
կամ տեսնում, ինչպէս մահկանացուն է տեսնում:
5 Տարիներդ մարդու տարինե՞ր են միթէ,
6 որ փնտռում ես կրկին յանցանքներս ու քննում մեղքերս:
7 Գիտես, որ երբեք չեմ մեղանչել,
բայց ո՞վ ինձ կ'ազատի քո ձեռքից:
8 Քո ձեռքն է արարել ու ինձ ձեւ է տուել,
բայց յետոյ դարձել ես, զարկել ինձ:
9 Ցիշի՛ր, որ կաւից ես ստեղծել.
վերստին դու հող ես ինձ դարձնում:
10 Մի՞թէ չես կաթի պէս կթել ինձ,
պանրի պէս մակարդել:
11 Մորթ ու միս հագցրել, ոսկրերով, ջիլերով ես օժտել:
12 Կեանք ու կարեկցանք ես դրել ինձ վրայ.
հոգատարութեամբ ես պահել իմ ոգին:
13 Եւ քանի այս բոլորն ունես դու՝
գիտեմ, որ ամէն բան կարող ես.
քեզ համար չի լինի ոչ մի բան ուժից վեր:
14 Մեղանչեմ թէկուզ ես՝ կը պահես.
չես պահել զերծ դու ինձ՝ մեղքերից:
15 Ամբարիշտ թէ եղայ՝ օ՜, վա՜յ ինձ.
արդար էլ թէ լինեմ՝ չեմ կարող հայեացքս բարձրացնել,
զի մէջս անարգանք կայ լեցուն:
16 Որսուած եմ իբր առիւծ, որին պիտ սպանեն:
Ինձ դարձեալ չարաչար ջնջում ես,
17 նորոգում հարուածներս իմ դէմին:
Բարկութեամբ ես ձեռքդ իջեցրել ինձ վրայ,
փորձիչներ ես բերել դու իմ դէմ:
18 Ինչո՞ւ ինձ հանեցիր արգանդից, ու տեղում չմեռայ:
Ոչ մի աչք չէր տեսնի ինձ այնժամ,
ու կարծես թէ եղած էլ չէի լինի ես:
19 Եւ ինչո՞ւ արգանդից ուղղակի գերեզման չիջայ ես,
20 կամ մի՞թէ շատ կարճ չէ ժամանակն իմ կեանքի:
Թո՛յլ տուր ինձ, որ փոքր-ինչ հանգչեմ ես,
21 մինչեւ այնտեղ գնամ, որտեղից երբեք չեմ դառնալու՝
երկիրն այն խաւարին ու մթին†,

†Եբրայերէն՝ մահուան ստուերով:

22 երկիրը, ուր յաւերժ աղջամուղջ է տիրում,
եւ որտեղ լոյս չկայ,
ու ոչ ոք չի կարող տեսնել կեանք մարդկային»:

11 Սոփար Մինեցին ասաց†.
2 «Ով շատ է խօսում, պարտաւոր է նոյն ձեւով էլ լսել.
խօսողը կարո՞ղ է խօսքերով արդարանալ:
3 Օրհնեալ է սակաւակեաց կանանց ծնունդը:
Շատ էլ մի՛ շաղակրատիր,
որովհետեւ մէկը չկայ, որ քեզ պատասխան տայ:
4 Մի՛ ասա՝ "Գործերովս մաքուր ու անարատ եմ Տիրոջ առաջ":
5 Այլ մտածի՛ր, թէ ինչպէ՞ս է Տէրը շրթունքները բաց անելու եւ հետդ խօսելու:
6 Քեզ կը հասկացնի իմաստութեան զօրութիւնը,
որ կը լինի կրկնակի, քան քոնը:
Ապա կ'իմանաս, թէ ինչ որ գլխիդ բերել է Տէրը՝
արժանի էր քո գործած մեղքերին:
7 Կը գտնե՞ս Տիրոջ ճանապարհը,
կամ վերահասու կը լինե՞ս այն դէպքերին,
որ սահմանել է քեզ համար Ամենակալը:
8 Բարձր է երկինքը. ի՞նչ կարող ես անել:
Խորն է դժոխքը. ի՞նչ կ'իմանաս:
9 Երկար են երկրի չափերը. լայն է ծովը:
10 Եւ եթէ Աստուած կործանի այդ բոլորը,
ո՞վ կ'ասի նրան՝ այդ ի՞նչ արեցիր:
11 Ինքը գիտէ անօրէնների գործերը.
անարժան բաներ տեսնելով՝ անտես չի առնի:
12 Դատարկաբան մարդը խօսքերի մէջ է թաքնւում:
Կնոջից ծնուած մարդը նման է անապատի վայրի էշի:
13 Իսկ եթէ դու մաքուր ես պահել քո սիրտը՝
ձեռքդ մեկնի՛ր դէպի Աստուած:
14 Եւ եթէ քո մէջ անօրէնութիւն կայ՝
հեռո՛ւ վանիր այն քեզանից,
եւ անօրէնութիւնը քո յարկի տակ թող չիջեւանի:
15 Եւ ահա քո դէմքը կը փայլի վճիտ ջրի պէս,
կը մերկանաս աղտեղութիւնից ու երկիւղ չես կրի,
16 կը մոռանաս նեղութիւններդ,
ինչպէս անցած ալիքը, ու չես զարհուրի†:
17 Աղօթքդ քեզ համար արուսեակի պէս կը լինի.
կէսօրին կը ծագի կեանքը քո,
ու վստահ կը լինես, որ յոյս ունես.
Հոգսերի ու տարակուսանքների միջից խաղաղութիւնը կ'երեւայ քեզ:
18 Անդորը կը գտնես, եւ ոչ ոք չի պատերազմի քեզ հետ:
19 Շատերը շուռ կը գան ու քո հաճութիւնը կը փնտռեն.
փրկութիւնը կը վրիպի նրանցից,
20 որովհետեւ նրանց յոյսն իրենց իսկ կորուստն է:
Ամբարիշտների տեսողութիւնը կը սպառուի»:

12 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Արդ դո՞ւք էք լոկ մարդիկ.
հանճարը ձեզ հե՞տ է մեռնելու‡:
3 Ես նոյնպէս ձեզ նման սիրտ ունեմ:
4 Արդար ու անարատ մի մարդ է ենթարկուել ծաղրանքի:
5 Սահմանուած ժամանակ պատրաստուեց.
տեսաւ իր տները՝ կործանուած օտարից,
անօրէնների ձեռքով աւերուած:
6 Բայց ով որ չար լինի՝ թող երբէք չյուսայ,
թէ անպարտ կը լինի:
Եւ ով որ բարկացնի Տիրոջը,
նրանից մի՞թէ չի պահանջուի պատասխան:
7 Բայց դէ ե՛կ ու հարցրո՛ւ գազանին՝
թէ կը տայ պատասխան,
երկնքի թռչունին՝ թէ մի՛ բան կ'ասի քեզ.
8 ու պատմի՛ր դու երկրին՝ թէ մի բան հասկացնի.
կամ ձկները ծովի կը պատմե՞ն մի բան քեզ:
9 Եւ սակայն ո՞վ է, որ չիմացաւ, թէ Տիրոջ ձեռքն է ստեղծել ամէն ինչ:
10 Եւ մի՞թէ իր Տիրոջ ձեռքին չէ կեանքը կենդանի շնչերի ու հոգին ամէն մարդ էակի:
11 Զի միտքն† է քննում խօսքն,
ու քիմքն է համտեսում կերակուր:
12 Ժամանակի երկարութեան մէջ կայ իմաստութիւն,
եւ կեանքի երկարութեան մէջ՝ միտքը հանճարեղ:
13 Նրանի՛ց գալիս են ուժ, իմաստութիւն,
Նրա՛նն են խորհուրդներն ու հանճար:
14 Թէ Նա կործանի՝ ո՞վ կը շինի այն,
թէ Նա փակ դնի մարդկանց առաջ՝
ո՞վ բաց կ'անի այն:
15 Թէ Նա արգելք դնի ջրերի առաջ՝
կը չորանայ հողը,
իսկ թէ որ թոյլ տայ՝ կը կործանի երկիրը:
16 Նրանի՛ց գալիս են ուժ ու զօրութիւն, Նրա՛նն են հանճար եւ իմաստութիւն‡:
17 Գերի է քշում խորհրդականներին,
յիմարացնում է երկրի դատաւորներին,
18 գահերին է նստեցնում արքաներին
եւ գօտի կապում նրանց մէջքին:
19 Գերութեան է ուղարկում քահանաներին
ու կործանում է երկրի հզօրներին:
20 Փոխում է խօսքը հաւատարիմի,
ծերունիների խելքը ճանաչում:
21 Անարգանք թափում իշխանի գլխին
եւ խոնարհներին բժշկում է նա:
22 Երեւան հանում խորքը խաւարի
եւ լոյսի բերում ստուերը մահի:
23 Թափառական է դարձնում ազգերին, կործանում նրանց.
սփռում է նրանց, եւ՝ առաջնորդում:
24 Երկրի իշխանաց սիրտն է շուռ տալիս,
մոլորեցնում է ճանապարհներին,
որոնց ծանօթ չեն:
25 Խաւարի միջին միշտ կը խարխափեն ու չեն տեսնի լոյս
եւ հարբածի պէս միշտ կը մոլորուեն:

ԱՋԱՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՀԵՏ

13 Ահա այս բոլորն են տեսել աչքերն իմ, լսել ականջներս:
2 Ես այնքան գիտեմ,
որքան ինքներդ տեղեակ էք լինում.
անմիտ չեմ ձեզնից:
3 Սակայն Տիրոջ հետ պիտի խօսէի,
ես նրա առաջ պիտի կանգնէի,
թէ որ կամենար:
4 Բայց բժիշկներ էք դուք խիստ չարագործ.
ողջացնում էք դուք ամէնքդ էլ չարիքներ միայն:
5 Սակայն համբանաք՝ իմաստութիւնն էլ
ի վերջոյ կը գայ ձեզ այցելութեան:
6 Լսեցէ՛ք բերնիս գանգատները դուք
եւ շրթունքներիս դատաստանին էլ ակա՛նջ դրեցէք:
7 Զէ՞ որ մեր Տիրոջ առաջ էք խօսում,
նրա յանդիման նենգ բարբառում էք:
8 Ետ պիտի քաշուէ՞ք:
Ո՛չ, ինքներդ ձեզ եղէք դատաւոր:
9 Բայց բարւոք է, որ ինքը քննի ձեզ:
Զի թէ արուածը իրեն վերագրէք՝
նա էլ ձեզ նուազ չի կշտամբելու:
10 Իսկ եթէ ծածուկ՝ աչառու լինէք մարդկանց նկատմամբ,
11 Իր արհաւիրքը ահի կը մատնի,
նրա երկիւղը կը թափուի ձեզ վրայ:
12 Պերճանքը ձեր մոխրի պէս կը լինի,

†Եբրայերէն՝ 1–8-ը տարբեր են:

†Եբրայերէն՝ 16–20-ը տարբեր են:

‡Եբրայերէն՝ 2–6-ը տարբեր են:

†Եբրայերէն՝ ականջներն են . . .

‡Եբրայերէն՝ խաբողն ու խաբուողը:

մարմինը՝ կաւի:
13 Լռեցէ՛ք, զի ես եմ խօսելու,
գտնելու անդորը իմ զայրոյթից:
14 Մարմինս առնեմ ատամներիս մէջ,
հոգիս ամփոփեմ ձեռքերի մէջ իմ:
15 Թէ որ իջեցնի Ամենազօրը ձեռքը ինձ վրայ
(սկսել էլ է)՝ չե՞մ խօսելու ես Նրա առաջին
եւ պաշտպանուելու փորձեր անելու:
16 Կը դառնայ դա ինձ իբրեւ փրկութիւն,
զի նրա առաջ նենգ բան չի կանգնի:
17 Լսեցէ՛ք, անսացէ՛ք խօսքերիս.
ի լուր ամենքիդ եմ ասում ես սա:
18 Մօտ եմ ես ահա իմ դատաստանին.
գիտեմ, արդար եմ երեւալու ես:
19 Ո՞վ է ոսոխն իմ, որ դէմ կանգնի ինձ.
ինչո՞ւ կաշկանդուեմ եւ կամ էլ մեռնեմ:
20 Երկու բաներ են լոկ անհրաժեշտ ինձ.
այն ժամանակ է՛լ հո չե՞մ թաքնուի ես Քո երեսից:
21 Ե՛տ քաշիր ինձնից ձեռքդ.
եւ ահդ թող ինձ չսարսափեցնի:
22 Ցեռոյ դիմի՛ր ինձ, ու Քեզ կը լսեմ,
թէ խօսես ինձ հետ՝ պատասխան կը տամ:
23 Որքա՞ն մեղք ունեմ, անօրէնութիւն,
հասկացրո՛ւ Դու ինձ՝ որքա՞ն են դրանք:
24 Ինչո՞ւ ես պահում դրանք ինձանից:
Ինձ Քեզ թշնամի՞ ես հաշւում արդեօք,
25 թէ՞ քամուց շարժուող տերեւից ես Դու վախենում այդպէս,
կամ թէ հակառա՞կ ես կանգնում Դու ինձ՝
հողմավար խոտիս:
26 Իմ դէմ չար վճիռներ գրեցիր
ու վրաս գցեցիր ջահելի մեղքերս:
27 Ոտքերս դրեցիր կոճղի մէջ,
խուզարկու դարձար իմ գործերին,
քննեցիր նոյնիսկ ոտնահետքերս,
մինչդեռ մարմինս է հին տիկի պէս,
կամ էլ ցեցակեր՝ ձորձի պէս»:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԽՈՒՐ ՊԱՅՄԱՆ

14 «Կնոջածին մարդն է սակաւակեաց
ու լի դառնութեամբ:
2 Ով որ ծաղկել էր որպէս մի ծաղիկ՝
թափուեց ու ընկաւ, փախաւ իբր ստուեր.
հաստատ չի մնայ:
3 Մի՞թէ նրան ես հաշուի առնելու
եւ ներս տանելու Քո դատաստանին:
4 Իսկ այն ո՞վ է, որ մաքուր է աղտից.
ո՛չ ոք. թէկուզ եւ կեանքն երկրի վրայ մէկօրեայ լինի:
5 Արդ, հաշուուած են օրերը նրա.
ժամ ես դրել Դու, խոյս չի տայ երբեք:
6 Հեռո՛ւ նրանից, որ հանգչի մի քիչ,
հաճոյք ստանայ իր կեանքից գէթ իբր մի վարձկան:
7 Ծառի համար իսկ գտնւում է յոյս.
թէեւ կտրում են, նորից է ծաղկում:
Ճիւղերը նրա դեռ չեն պակասում:
8 Անդամ արմատը թէ որ ծերանայ
խորքի մէջ հողի,
քարերի մէջ էլ խեղդուի բունը,
– 9 ջրի հոտից իսկ կը ծաղկի իսկոյն,
նորատունկի պէս պտուղներ կը տայ:
10 Բայց մահկանացուն՝ վախճանուած մարդը
գնում է եւ է՛լ գոյութիւն չունի:
11 Մանծաղում է ծովն իր ժամանակին.
սպառած գետերը ցամաքում են.
12 նոյնպէս մարդիկ թէ ննջեն՝ է՛լ վեր չեն կենայ:
Մինչեւ երկինքը խսպառ չլուծուի՝ չեն զարթնի քնից:
13 Ու երանի թէ գերեզմաններում պահէիր դու ինձ,
մինչեւ որ անցնէր բարկութիւնը քո,
եւ ժամանակ ինձ նշանակէիր, յիշէիր դու ինձ:
14 Մարդը թէ մեռնի՝ կ'ապրի՞ նա դարձեալ՝
ամբողջացնելով օրերն իր կեանքի:

Պիտի սպասեմ, մինչեւ որ կրկին գոյութիւն առնեմ:
15 Դու ձայն կը տաս ինձ՝ կը պատասխանեմ:
Մի՛ մերժիր գործը քո սուրբ ձեռքերի:
16 Նկատել ես վարքը իմ.
չի վրիպի քեզանից մեղքերիցս ոչ մին:
17 Ցանցանքներս կնքել ես քսակի մէջ.
նշել, թէ ի՞նչ յանցանք եմ գործել ակամայ:
18 Փլուելու ենթակայ լեռը պէտք է փլուի.
եւ վէմն էլ պիտ շարժուի իր տեղից:
19 Եւ ինչպէս ջրերն են քարերը ողորկում,
հեղեղում դաշտերը կոչտ հողի,
այնպէս էլ դու մարդու յոյսերն ես չքացրել:
20 Մերժել ես նրան խսպառ.
նա անցել գնացել է:
Դու նրա երեսն ես աւերել ու այդպէս արձակել:
21 Թէպէտեւ նա բազում որդիներ ունենայ,
նա այդ չի իմանայ,
իսկ եթէ սակաւ էլ լինեն, չի ճանաչի:
22 Բայց անդամներն իր ախտահարուած են,
իսկ հոգին նրա սգում է իր մէջ»:

ՁԱՐԸ ՊԱՏԺԻՑ ՉԻ ԽՈՒՍԱՓԻ

15 Եղիփազ Թեմնացին նորից խօսեց ու ասաց.
2 «Հոգով հանճարեղն իմաստութեամբ պատասխան կը տա՞յ արդեօք,
կ'անցկացնի՞ իր որովայնի ցաւը,
3 եթէ յանդիմանի արտայայտութիւններով, որոնք արժանի չեն,
եւ խօսքերով, որոնցից օգուտ չկայ:
4 Դրանց երկիւղը դու էլ մերժեցիր
ու Տիրոջ առաջ չարաշահեցիր այսպիսի խօսքեր:
5 Ցանցաւոր եղար բերանիդ խօսքերով,
իսկ հզօրների խօսքերը չքննեցիր:
6 Քո իսկ բերանն է կշտամբելու քեզ,
ոչ թէ ես.
շրթունքներդ քո դէմ վկայութիւն են տալու:
7 Ի՞նչ է, բոլոր մարդկանցից առա՞ջ ես ծնուել,
թէ՞ բոլոր բլուրներից վաղ ես հաստատուել:
8 Դո՞ւ ես լսել Տիրոջ հրամանը,
թէ՞ քեզ է օժտել նա իմաստութեամբ:
9 Այն ի՞նչ է, որ դու գիտես, իսկ մենք՝ ոչ,
կամ ի՞նչն է, որ դու կ'իմանաս, իսկ մենք՝ ոչ:
10 Մեր մէջ էլ կան ծերեր, ալեհեր մարդիկ,
տարիքով շատ աւելի մեծեր, քան քո հայրը:
11 Մեղքերիդ համեմատ շատ քիչ տանջանքներ ես կրել
ու աւելի շատ ես մեծաբանել:
12 Ինչո՞ւ յանդուգն դարձաւ քո սիրտը,
ինչո՞ւ լկտի նայեցին քո աչքերը.
13 սրտմտութիւնդ դուրս թափեցիր Տիրոջ առաջ
եւ այդպիսի բառեր հանեցիր քո բերանից:
14 Այն ո՞ր մահկանացուն է անարատ եղել,
կամ այն ո՞ր կնոջածինն է արդար լինելու:
15 Եթէ Աստուած սրբերին չի հաւատում,
ու երկինքը նրա առաջ անարատ չէ,
16 առաւել եւս գարշելի ու պիղծ է այն մարդը,
որ անօրէնութիւններն ըմպելիքի նման է խմում:
17 Պատմելու եմ քեզ, ծո՛ւ, լսի՛ր ինձ:
Ինչ որ տեսել եմ,
18 ինչ որ իմաստուններն են ասում,
ինչ որ չեն թաքցրել նրանց հայրերը,
– պատմելու եմ քեզ:
19 Նրանց է միայն տրուել երկիրը,
եւ ոչ մի օտարածին չի խառնուել նրանց:
20 Ամբարշտի ամբողջ կեանքը հոգսերով է անցնում,

Թիւնը նրա բերանում,
Թաքցնի այն իր լեզուի տակ,
– 13 չի՛ խնայելու նրան, Թողութիւն
չի՛ շնորհելու:
14 Կուտակելու է այն իր կոկորդում,
ու ինքն էլ չի կարողանալու իրեն
օգնութեան հասնել.
իժի Թոյն կայ նրա փորում:
15 Անիրաւութեամբ հաւաքուած նրա
հարստութիւնը դուրս է փսխուելու.
հրեշտակը նրան քաշել հանելու է
տնից:
16 Վիշապների զայրոյթն է նա
ծծելու,
եւ նրան օձի լեզուն է սպանելու:
17 Չի տեսնելու նա արածող կեն-
դանիների կիթը,
ոչ էլ մեղրի ու կարագի պաչարներ:
18 Զուր ու պարապ տեղն է նա
հարստութիւն վաստակել,
ուստի չի վայելելու այն ու չի
կարողանալու կուլ տալ,
ինչպէս չծամուող ու չկտրտուող
կարծր բան,
19 որովհետեւ շատ տկարների տներ
է խորտակել,
բնակարաններ խլել, բայց չի կա-
ռուցել:
20 Նրա ունեցուածքին փրկութիւն
չկայ.
իր ցանկացած ձեւով չի ազա-
տուելու:
21 Ուտելու մթերք չի ունենալու:
Դրա համար նրա բողբոջները չեն
ծաղկելու:
22 Երբ իրեն թուայ, թէ ահա
առատութեան մէջ է՝
նեղութիւն է կրելու:
Ամէն անգամ տագնապի մէջ է
լինելու,
23 թէ ինչպէ՛ս է լցուելու իր որո-
վայնը:
Աստուած նրա վրայ է ուղարկելու
իր սրտմտութիւնն ու զայրոյթը,
վրան ցաւեր է թափելու,
24 եւ նա սրի ձեռքից չի ազա-
տուելու:
25 Պղնձէ աղեղն է խոցոտելու նրան.
նետն է թափ անցնելու նրա
մարմնով:
Նրա յարկի տակ աստղեր են շուռ
գալու,
եւ արհաւիրքներ են թափուելու
գլխին:
26 Համակ խաւարն է սպասում
նրան,
եւ անշէջ հուրն է ճարակելու նրան:
Եկուորն է չարչարելու նրա
ընտանիքը:
27 Երկինքը մէջտեղ է հանելու նրա
անօրէնութիւնները,
եւ աշխարհն է վեր կենալու նրա
դէմ:
28 Կործանումն է իսպառ քանդելու
նրա տունը.
հանելու է նրա վրայ ցասման օրը:
29 Տիրոջից այս է բաժին հասնելու
ամբարիշտ մարդուն,
եւ այս է լինելու նրա ունեցուածքը՝
Վերակացուից սահմանուած»:

ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՐՔՈՒՄԸ

21 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Ակա՛նջ դրէք, ակա՛նջ դրէք խօս-
քերիս:
Երանի չլինէր ձեզանից եկած մխի-
թարանքը:
3 Թո՛յլ տուէք դուք ինձ, ու ես կը
խօսեմ.
գուցէ չայպանէք խօսքերիս համար:
4 Իմ կշտամբանքը մարդկա՞նց կող-
մից է.
եւ ինչո՞ւ պէտք չէ,
որ բարկանամ ես:
5 Զարմանում էք դուք՝ նայելով
վրաս,
ձեռքներդ դրած ծնօտներին ձեր:
6 Հէնց որ յիշում եմ՝ տագնապում
եմ ես,
քանզի ցաւերն են պատել մարմինս:
7 Այդ ինչպէ՞ս է, որ ամբարիշտները
միշտ ողջ են մնում,
տարիքը առնում, նոյնիսկ լողում են
հարստութեան մէջ:
8 Նրանց սերունդը ըստ ցանկու-
թեան է,
եւ զաւակները՝ աչքների առաջ:
9 Նրանց տները՝ երջանկութեան
մէջ,
եւ ոչ մի տեղից՝ դոյզն ինչ երկիւղ:
Տիրոջից տանջանք չի հասնում

նրանց:
10 Նրանց կովերը հաստատ ծնում
են,
յղիութիւնը երբեք չի վիժում.
11 հորթերը նրանց յաւերժական են,
ինչպէս գառնուկներ:
Երեխաները խաղում են նրանց
աչքերի առաջ՝
12 ձեռքներին քնար ու սաղմոսա-
րան, ուրախանում են երգերի ձայնից:
13 Ամբարիշտները կեանքները ահա
բարիքների մէջ են աւարտել դեռ,
գերեզմաններում հանգիստ ննջել
են:
14 Եւ Տիրոջ կ'ասեն. "Հեռո՛ւ ին-
ձանից.
քո ուղիները չեմ կամենում ես
ճանաչել հիմա:
15 Ի՞նչ շահ ունենք, որ ծառայենք
նրան,
ի՞նչ օգուտ կայ, որ նրան մօտե-
նանք":
16 Չի նայում բնաւ ամբարիշտների
արարքներին նա.
սրանց ձեռքին են բարիքները բիւր:
17 Սակայն կը մարի ամբարիշտների
ճրագը նոյնպէս.
նրանց կը հասնի կործանումը մեծ.
զայրոյթից վրէժի երկունքը կը բռնի
նրանց:
18 Ու կը լինեն յարդ՝ հողմի բե-
րանին,
կամ թէ չէ փոշի՝ մրրիկից քշուող:
19 Իր ունեցուածքը վերջ կը տայ մի
օր իր որդիներին.
կը հատուցի եւ ճանաչել կը տայ
Տէրը հէնց իրեն:
20 Նրա աչքերը կը տեսնեն անշուշտ
իր սպանուելը,
ու Տիրոջ ձեռքից չի ազատուի նա:
21 Զուարճութիւնը իր տան մէջ է
միշտ, իր հետ.
կեանքի ամիսներն արդ կը կտրուեն:
22 Զէ՞ որ Տէրն է, որ ուսուցանում է
հանճար, գիտութիւն,
քանի որ ինքն է քննում ու դատում
իմաստուններին:
23 Խիստ բարեկեցիկն ու երջանիկը
ստոյգ կը մեռնի
սաստիկ անզգամ լինելու համար:
24 Իր որովայնը ճարպակալած է.
ու քամուելու է իր ուղն ու ծուծը:
25 Դառնութիւնն հոգու կը սպանի
նրան,
ու չի ճաշակի իր բարիքներից:
26 Կը ննջեն նրանք, բոլորը մէկտեղ,
երկրի ընդերքում.
ծածկել է նրանց փտութիւնն հա-
մակ:
27 Եւ հիմա գիտեմ, որ յանդգնու-
թեամբ հասել էք վրաս:
28 Հիմա դուք կ'ասէք, "Իշխանի
տունը այն որտե՞ղ է որ.
ո՞ր յարկի տակ են ամբարիշտները
բնակւում հիմա":
29 Դուք դա հարցրէ՛ք լոկ անցորդ-
ներին ճանապարհների.
նրանց նշաններն օտար ցոյց մի՛
տաք:
30 Զարն շտապում է դէպի այն օրը
անդարձ կորստեան.
քշւում է դէպի օրը հատուցման:
31 Ո՞վ է պատմելու նրա առաջին՝ իր
վարքի մասին,
արածի համար ո՞վ է, որ պիտի
հատուցի նրան:
32 Եւ ինքը դէպի գերեզման ուղ-
ղուեց.
անքուն անցկացրեց-մնաց տապա-
նում.
ձորի խիճերը քաղցր թուացին:
33 Նրա յետեւից կ'երթան բոլորը,
իսկ առջեւից էլ՝ մարդիկ բիւրաւոր:
34 Եւ ինչո՞ւ էք դուք զուր տեղը
ջանում ինձ մխիթարել.
ձեզանից կեանքում հանգիստ օր
բնաւ չեմ ունենայ ես»:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՅԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

22 Եղիփազ Թեմանացին նորից խօսեց
ու ասաց.
2 «Զէ՞ որ Տէրն է, որ ուսուցանում է
իմաստութիւն եւ գիտութիւն:
3 Արդ, Տիրոջն ի՞նչ փոյթ, թէ դու
անարատ ես քո գործերով,
կամ ի՞նչ օգուտ, որ դու ուղղես
վարքդ:
4 Կամ բանի տեղ դնելով՝ կը
յանդիմանի՞ քեզ,
քեզ հետ դատաստանի՞ կը նստի:

5 Չէ՞ որ քո չար արարքները բազմաթիւ են, մեղքերդ՝ անթիւ:
6 Առանց պատճառի քո եղբայրներին գրաւ ես վերցրել,
մերկերի զգեստները յափշտակել:
7 Մարաւածներին ջուր չես խմեցրել,
նաեւ քաղցածների հացը կտրել:
8 Ոմանց աչքի տակ ես առել ու նրանց բնակեցրել երկրի վրայ:
9 Այրիներին ձեռնունայն ես արձակել եւ որբերին չարչարել:
10 Հիմա քո շուրջը որոգայթներ են դրուած,
եւ սաստիկ պատերազմն է քեզ տագնապի մէջ դցել:
11 Լոյսդ քեզ խաւար թուաց.
քնի մէջ քեզ ջրերը ծածկեցին:
12 Միթէ Նա, ով բարձունքում է ու նայում է՝ չի՞ տեսնելու.
նա չէ՞ր, որ ահա ամբարտաւանութեամբ զգեստաւորուածներին խոնարհեցրեց:
13 Եւ ասացիր. "Ի՞նչ գիտէ Հզօրը",
կամ թէ՝ "Ամպի մէ՞ջ է դատ անելու":
14 Ամպն է նրա ծածկոյթը, ու երբ շրջում է նա երկնի ծիրի մէջ,
ոչինչ տեսանելի չէ:
15 Չե՞ս պահելու այն յաւիտենական շաւիղները,
որոնց վրայ կոխեցին տարաժամ յափշտակուած արդար այրերը:
16 Նրանց հիմքերը յորդաբուխ գետ են:
17 Նրանք ասում էին. "Տէրը մեզ ի՞նչ կ'անի",
կամ՝ "Ամենակալն ի՞նչ կը թափի մեր գլխին":
18 Նա սրանց տները բարիքներով լցրեց:
Բայց ամբարիշտների մտադրութիւնը հեռու է նրանից:
19 Արդարները տեսան ամբարիշտների կործանումը ու ծիծաղեցին.
անարատն էլ տեսաւ ու արհամարհեց՝ ասելով.
20 "Արդարեւ, նա չքանդե՞ց դրանց նեցուկը:
Դրանց ունեցուածքների մնացորդները հուրն է ճարակելու":
21 Բայց եկ խստակեա՛ց եղիր, թէ կարող ես համբերել.
եւ քո պտուղը կը փարթամանայ:
22 Ուսմո՛ւնք ընդունիր նրա բերանից,
նրա խօսքերը սրտիդ մէ՛ջ վերցրու:
23 Եւ եթէ դարձի գաս ու քո անձը խոնարհեցնես Տիրոջ առաջ,
անիրաւութիւնը հեռացրած կը լինես քո յարկից:
24 Կը բազմես ամուր վէմի վրայ, ինչպէս Սոփերի ձորի ժայռի վրայ:
25 Եւ Ամենակալը քեզ օգնական կը լինի թշնամիներիդ դէմ
ու յայտնապէս կը վարձատրի քեզ,
ինչպէս զտած արծաթ:
26 Ապա համարձակ կը կանգնես Տիրոջ առաջ
ու զուարթ կը նայես դէպի երկինք:
27 Երբ նրան աղերսես՝ կը լսի քեզ
ու կատարել կը տայ քեզ՝ քո ուխտը:
28 Քեզ կը վերադարձնի արդար բնակարանդ:
Քո ճանապարհներին լոյս կը լինի,
29 որովհետեւ ինքդ քեզ խոնարհ պահած կը լինես
ու կ'ասես, թէ ամբարտաւանութիւն ես արել:
30 Կ'ապրեցնի նրանց, ում աչքերը խոնարհ են.
կը փրկի անարատին:
Քո մաքուր ձեռքերով կ'ազատես քեզ»:

ԱՍՏՈՒԱԾ ՀԵՌՈՒ Է, ԵՒ ՁԱՐԸ ՅԱՂԹԱՆԱԿՈՒՄ

23 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Ես էլ գիտեմ, որ իմ երեսից եմ յանդիմանւում ես.
իմ հեծութեան մէջ ծանրացել է այդ ձեռքը ինձ վրայ:
3 Իսկ ո՞վ կ'իմացնի՝ կը գտնե՞մ Նրան, եւ ես վերջապէս կը հասնե՞մ նրան:
4 Կը ներկայացնեմ ես նրա առաջ դատս ու փաստեր:
5 Ու կ'իմանամ ես բուժիչ խօսքերը, որ ինձ կ'ասի նա.
լաւ կը հասկանամ, ինչ որ խօսի ինձ:
6 Թէկուզ մեծ ուժով գայ նա ինձ վրայ՝

իր պատուհասներն ի գործ չի դնի[†]:
7 Ճշմարտութիւնն էլ, յանդիմանանքն էլ գալիս են նոյնից,
ուստի վերջապէս իրաւունքներս մէջտեղ կը հանի:
8 Թէ առաջ գնայ, ու ես չլինեմ՝
ինչպէ՞ս կ'իմանամ դէպքերը վերջին:
9 Իր ձախ ձեռքը, որ ստեղծեց նրան, ես չբռնեցի:
Թէ որ իջեցնի աջն էլ ի՜նձ վրայ՝
դա, միեւնոյնն է, չեմ նկատի ես,
10 քանի որ ինքը գիտէ իմ վարքը,
քննել-կշռել է, կարծես թէ ոսկի:
11 Կ'ըմբռնեմ նրա պատուիրանները,
կ'ընթանամ նրա ճանապարհներով ու էլ չեմ շեղուի:
12 Պատուիրաններից դուրս չեմ գայ բնաւ, որ չմեռնեմ ես:
Խօսքերը նրա ծոցումս կը պահեմ:
13 Հապա եթէ նա այսպէս դատ անի՝ էլ ո՞վ կը լինի, որ դիմադարձի,
որովհետեւ նա ինչ որ կամեցել՝ այն էլ արել է:
14 Ահա թէ ինչու կը փութամ մօտը ու խրատուելով՝
կը մտմտամ ես միայն իր մասին:
15 Ի լրումն սրանց՝ տագնապ կ'ապրեմ ես նրա առաջին
ու խելքի գալով՝ ես կը զարհուրեմ:
16 Սիրտս Տէրն էր, որ հիւանդացրեց,
Ամենակալը նեղը լծեց ինձ:
17 Չէի իմանում, թէ իջնելու էր խաւարը վրաս.
թանձր մէգով է ծածկուել դիմացս:»

ԱՍՏՈՒԱԾ ԹՈՅԼ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՁԱՐԵՐԸ ԳՈՐԾԵՆ

24 «Ինչո՞ւ մոռացան ամբարտաւանները մեր Տիրոջը.
ամբարիշտները սահմանը անցան:
2 Հօտը հովուի հետ յափշտակեցին,
3 որբուկի էշը քշեցին տարան
ու իւրացրին այրու եզն անգամ:
4 Շեղեցին խեղճին ուղիղ շաւիղից.
երկրի հեզերին, բոլորին մէկտեղ, ընկճեցին նրանք,
ու սրանք դարձան մի-մի վայրի էշ դաշտերի վրայ:
5 Վատնեցին իրենց գործերն ինձ համար.
քաղցը եղաւ հացը լկտի մանկանց հետ:
6 Ձհասած արտը, որ իրենցը չէր, հնձեցին նրանք.
ամբարիշտների այգին խեղճերը մշակեցին, բայց չստացան հաց, վարձ:
7 Բազում մերկերի քնեցրին նրանք առանց հագուստի,
զգեստն հանեցին նրանց վրայից:
8 Նրանք թրջւում են լեռների ցօղից.
քանի որ չունեն բնակուելու տեղ՝ ժայռերի տակ են ապաստան գտնում:
9 Ծափշտակեցին ստինքից որբին եւ տնանկներին տառապեցրին:
10 Իզուր քնեցրին մերկին անհագուստ,
սովահարի էլ հացը կտրեցին:
11 Դարան սարքեցին կիրճերում իզուր.
ճանապարհն ուղիղ՝ չիմացան երբեք:
12 Մարդիկ զրկուեցին քաղաքից, տնից.
հոգիներն մանկանց խիստ հեծեծեցին:
Իսկ Նա ինչո՞ւ չի այցելում սրանց:
13 Երկրում ապրեցին, սակայն չիմացան.
ճանապարհն արդար չճանաչեցին. Աստծու շաւիղով երբեք չընթացան:
14 Տեղեկանալով նրանց գործերին՝ խաւարի մատնեց Տէր Աստուած նրանց.
ու կը նմանուեն գիշերուայ գողի:
15 Շնացողն աչքը խաւարին է լոկ յառում-սեւեռում:
Եւ կ'ասի՝ "Թող ոչ մէկի աչքը չտեսնի իրեն.
քող է գցել նա հիմա երեսին":
16 Մութի միջով է փորել իր տունը.
ցերեկի դիմաց փակել են իրենց ու չեն իմացել՝ ի՜նչ բան է լոյսը:
17 Այգն իրենց համար մահուան ստուեր է,
եւ ըմբռնում են նրանք տագնապը մահուան ստուերի:
18 Ամբարիշտները աւելի թեթեւ են ջրի երեսին:
Նրանց մի մասը երկրի վրայ կը կործանուի.

[†]Եբրայերէն՝ 6–11 համարները տարբեր են:

եւ նրանց տունկերը կը լինեն
ցամաքած հողի վրայ.
19 խլեցին որբից խուրձը ցորենի:
Նրանց մեղքերը երեսով տուին:
Ու ցողի մշուշի նման նա անյայտ էլ
կը մնայ:
20 Եւ թող նա ստանայ արածի
համեմատ.
անիրաւ ամէն մարդ թող ջարդուի
քայքայուած ծառի պէս,
21 քանի որ ամուլ կնոջ բարի բան չի
արել,
22 որբեւայրուն չի ողորմել,
աղքատին կործանել է բարկու-
թեամբ:
Ու անգամ թէ ոտքի կանգնի նա՝
հաւատ չի ունենայ իր կեանքի
հանդէպ մարդ:
23 Հիւանդանալիս չի ակնկալի,
որ կ՝առողջանայ,
այլ կը խրուի նա հիւանդութեան
մէջ.
իր յոխորտանքով շատ-շատերի է
նա տառապեցրել:
24 Կը թառամի նա տօթ եղանակին,
ինչպէս որ խոտը կամ ինչպէս
հասկը՝ ընկած ցողունից:
25 Թէ լինի մէկը, որ ասի, թէ ես
ստե՛ր եմ խօսում,
թող որ բանի տեղ չդնի նա էլ իմ
ասածները»:

ԱՍՏՈՒՈՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՋՕՐՈՒԹԻՒՆԸ

25 Բաղդատ Սոքեցին նորից խօսեց
ու ասաց.
2 «Արդ, մի՞թէ առասպել է, որ երկ-
իւղում են նրանից,
ով բարձունքներում ամէն ինչ
անում է:
3 Ոչ ոք թող չկարծի, թէ նրա
գնդերը կը յաղթեն պատժել.
ո՞ւմ վրայ չի իջնի նրա որոգայթը:
4 Մահկանացուն ինչպէ՞ս արդար կը
լինի Տիրոջ առաջ,
կամ կնոջից ծնուածներից ո՞վ կը
մաքրի իր հոգին,
5 որովհետեւ եթէ լուսնին հրամայի
Նա՝ չի ծագի:
Աստղերն իսկ մաքուր չեն Նրա
առաջ,
6 ուր մնաց մարդը, որ ապակա-
նուած է,
եւ մարդու որդին, որ որդ է»:

26 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Ո՞ւմ ես մերձենում կամ ո՞ւմ
օգնականն ես լինելու դու.
արդեօք ո՞չ նրա, ում ուժն անբաւ է,
ու բազուկն՝ հզօր:
3 Ո՞ւմ խորհրդակից ես լինելու դու.
արդեօք ո՞չ նրան, ով ամբողջապէս
իմաստութիւն է:
4 Ո՞ւմ յետեւից ես արդ գնալու դու.
արդեօք ո՞չ նրա, որի զօրութիւնը
այնքա՜ն մեծ է:
Ո՞ւմ ես բան ասել, եւ կամ ո՞ւմ
շունչն է դուրս եկել քեզնից:
5 Միթէ երբեւէ կը ծնուե՞ն ջրի
խորքից հսկաներ,
կամ էլ այնտեղի բնակիչներից:
6 Մերկ է դժոխքը Աստծու առաջ,
եւ կործանումը չունի վրան քող:
7 Ոչնչի շուրջը փռեց երկինքը,
կախեց երկիրը ոչնչի վրայ:
8 Իր ամպերի մէջ ջուրն է ծրարում,
եւ չի պատռուի մէգը նրանց տակ:
9 Նա, ով պահում է երեսն իր գահի,
փռում է վրան իր մառախուղը:
10 Իր հրամանով սահման է քաշել
ջրի երեսին,
մինչեւ վախճանը լոյսի ու մութի:
11 Երկնի սիւները սարսուել են
այնպէ՜ս
ու զարհուրել են նրա սաստումից:
12 Հանդարտեցրել է ծովն իր զո-
րութեամբ,
եւ ովկիանոսը իր իմաստութեամբ
տարածուել-փռուել:
13 Սարսուել են նրանից փականք-
ներն երկնի.
սպանել է նա իր հրամանով վիշապն
ապստամբ:
14 Ահա այս է մասն իր ճա-
նապարհի,
եւ դեռ պիտ լսենք խօսքերը նրա,
մինչեւ վերջին շիթ:
Եւ ո՞վ կ՝իմանայ նրա որոտման
զօրութիւնը մեծ,
երբ այն արձակուի»:

ՄԵՂԱՒՈՐԸ ԿԱՐՈ՞Ղ Է ԴԻՄԵԼ ԱՍՏՈՒՈՅՆ

27 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Կենդանի է Տէրն, որ ինձ հետ
այսպէս դատաստան տեսաւ,
Ամենակալը դառնացրեց հոգիս:
3 Եթէ տակաւին իմ մէջ է հոգիս,
եւ աստուածային շունչը ապրում է
իմ ռունգերի մէջ,
- 4 իմ շրթունքները անօրէնութիւն
չեն արտասանի,
եւ ոչ էլ հոգիս անիրաւութեան
մասին կը խորհի:
5 Մինչեւ մեռնելս էլ չի լինի, որ ես
ձեզ արդար կոչեմ,
քանզի չեմ փոխի անմեղութիւնն
իմ:
6 Եւ արդարութեան ձայնին անսա-
լով՝ չեմ հրաժարուի,
քանզի չգիտեմ, որ ինքս անպատեհ
բան արած լինեմ:
7 Առաւել եւս՝ թող թշնամիներս
լինեն կործանուող ամբարիշտները,
իմ դէմ դուրս եկած, կորստի մատ-
նուած անօրէնները:
8 Եւ ի՞նչ յոյս ունի ամբարիշտը, որ
հաստատ կը մնայ.
գուցէ Տիրոջը ապաւինելով կարենայ
փրկուե՞լ,
9 կամ թէ Տէր Աստուածն ականջ կը
դնի՞ իր խնդրանքներին:
10 Եթէ մի տագնապ հասնի իր վրայ,
նա վստահութիւն պիտի չունենայ
Աստծու առաջ:
Դիմի էլ Նրան՝ ունկն կը դնի՞
արդեօք Նա իրեն:
11 Կ՝ասեմ հիմա ձեզ, թէ այն ի՞նչն
է, որ Տիրոջ ձեռքին է,
ու չեմ ծածկի ես ձեզնից այն բանը,
ինչ որ ձեռքին է Ամենակալի:
12 Ահա բոլորդ հէնց քաջ գիտէք, որ
ունայն բաներին
ունայնութիւն էք աւելացնում դուք:
13 Այս է բաժինը ամբարիշտ
մարդու՝ Տիրոջից գծուած.
Ամենակալի կամքով անպայման
զօրաւորների ունեցուածքը հէնց
իրենց դէմ կ՝ելնի:
14 Ու եթէ անգամ բազում զաւակ-
ներ ունենան նրանք՝ պիտի սպանուեն,
իսկ թէ պատահի՝ չափահաս դառ-
նան,
մուրացկանութեամբ պիտի դեգերեն:
15 Ովքեր որ նրա շուրջը կը լինեն՝
մահով կը մեռնեն.
նրանց այրիներին մէ՛կը չի գթայ:
16 Ու եթէ անգամ հողի պէս արծաթ
հաւաքեն նրանք
կամ կաւի նման պատրաստեն ոսկի՝
17 դրանք բոլորը արդարներին լոկ
բաժին կը դառնան,
ու արդար մարդիկ կը տիրեն նրանց
ունեցուածքներին:
18 Դարձել է նրանց տունը ցեցի կեր,
սարդոստայնի բոյն:
19 Քնում է հարուստ, բայց արթ-
նանում է ոչ իբր մեծատուն,
աչքերն է բացում, տեսում ամէն
բան չքացած ընդմիշտ:
20 Ցաւեր պիտի գան վրան՝ ջրի պէս,
գիշերուայ խաւարն պիտ ծածկի
նրան:
21 Պիտ խլի նրան խորշակն ու գնայ,
22 պիտ քշի նրան տեղից հարազատ,
շպրտի նրան ու չխնայի:
Փախչելով պիտի փախչի խորշակից:
23 Մափ պիտի զարնի սա նրա
դիմաց,
եւ քարշ պիտի տայ տեղից հարա-
զատ»:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

28 «Ցայտնի է տեղը արծաթի, որ-
տեղից այն հանւում է,
եւ տեղը ոսկու, ուր այն զտւում է:
2 Երկաթը հողից է դուրս գալիս,
պղինձն էլ քարի պէս տաշւում է:
3 Կարգ է սահմանել խաւարի հա-
մար.
ինքն է ճշգրտում բոլոր ծիրերը՝
4 քարի, խաւարի, մահուան ստուերի,
ինչպէս փոշուց է կտրում-բաժանում
խրամն հեղեղատի:
Ով մոռանում է ճամփան ճշմարիտ,
մարդկանց մէջ տկար պիտի լինի
նա:
5 Գալով այս հողին՝ ապա այն-
տեղից է ելնում հացը.
իսկ իր ընդերքը շուռ-մուռ է
տրուած, ինչպէս կրակից:

6 Նրա քարերը չափիւղայ ունեն, իսկ
հողը՝ ոսկի:
7 Շաւիղ կայ՝ երբեք ծանօթ չէ
թռչնին,
եւ ոչ էլ անգղի աչքն է այն տեսել,
8 ուր ոտք չի դրել մարդն ամբար-
տաւան,
որտեղով առիւծ չի անցել անգամ:
9 Մարդ ձեռքն է գցել ապա-
ռաժներին,
հիմքից սասանել բարձրաբերձ լեռ-
ներ:
10 Պատառոտել է գետի յորձանք-
ներ:
Բոլոր պատուական այս բաները ես
աչքովս եմ տեսել:
11 Գետերի խորքն է երեւան հանել,
իր զօրութիւնը ցոյց տուել լոյսին:
12 Այդ որտեղի՞ց է իմաստութիւնը,
եւ ո՞րն է տեղը խելք ու հանճարի:
13 Բայց մահկանացուն չգիտէ ուղին
դէպ իմաստութիւն.
չի էլ երեւում սա մարդկանց միջին:
14 Անդունդը ասաց. "Ինձ մօտ դա
չկայ",
իսկ ծովը ասաց. "Իմ խորքում չէ
դա":
15 Դրա փոխարէն գրաւ չի դրւում,
ու չի կշռւում դրա գնով մէկ՝ որեւէ
արծաթ:
16 Սոփերի ոսկու հետ չի դրուի այն
նժարի վրայ,
ոչ էլ պատուական եղնգաքարի ու
շափիւղայի:
17 Ձեն համեմատուի նրա հետ ոսկի,
ոչ էլ ապակի,
ու չի ճարուի նրա գնով անօթ
ոսկեղէն:
18 Բարձրութիւններ†, խորութիւն-
ներ թող չյիշուեն է՛լ.
խորքում է փռել Նա ճշմար-
տութիւնն:
19 Չի չափուի հետը եւ տպազիոնը
այն եթովպացւոց,
ոսկիների հետ չի դրուի երբեք
նժարի վրայ:
20 Այդ որտեղի՞ց է իմաստութիւնը,
եւ ո՞րն է տեղը խելք ու հանճարի:
21 Թաքնուած է այն բոլոր
մարդկանցից,
ծածկուած՝ երկնի ամէն թռչունից:
22 Կորուստը, մահը ասացին. "Շատ
ենք մենք լսել նրա համբաւի մասին":
23 Տէրը հեշտութեամբ պատրաստեց
նրա ճանապարհները,
քանզի նրա տեղն Ինքը լոկ գիտէ.
24 Ինքը ամէն բան երկնքի ներքոյ
տեսնում է անձամբ:
Գիտէ ամէն ինչ, որ ստեղծել է
աշխարհի վրայ՝
25 կշիռը հողմի, չափը ջրերի, որ
Ինքն է կարգել:
26 Նա Ինքն է տեսել ու մէկ-մէկ
հաշուել:
Եւ ճանապարհ է սահմանել ամպի
որոտման ձայնով:
27 Այն ժամանակ էլ տեսել է Ինքը
իմաստութիւնը
ու նրա մասին յայտնել է մարդուն:
28 Պատրաստել, քննել ու ասել է
Նա.
"Աստուածպաշտութիւնն է իմաս-
տութիւն,
ու չարիքներից հեռու մնալը՝ խե-
լացիութիւն"»:

ՈՎ ԱՆՑԵԱԼԻ ՓԱՂՑՐ ՕՐԵՐ...

29 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Ո՞վ ինձ կը դարձնէր նախկին
օրերիս, ամիսներին իմ,
երբ պաշտպանում էր ինձ Ինքը
Աստուած,
3 երբ լուսաւոր էր նրա ճրագը իմ
գլխի վերեւ,
երբ նրա լոյսով էի ընթանում
խաւարի միջով,
4 երբ զուարճութեան ճամփի մէջ էի,
երբ Տէրն այցի էր գալիս իմ տունը,
5 երբ լողում էի հարստութեան մէջ,
շուրջս՝ ծառաներ,
6 երբ կարագով էր ճամփաս ողո-
ղուած,
լեռներս կաթով էին ոռոգւում,
7 երբ առաւօտեան քաղաք դուրս
գալիս՝
հրապարակում էր դրւում աթոռս:
8 Տեսնում էին ինձ երիտասարդներ
եւ քաշւում էին,
ու կանգնում էին ծերերը ոտքի:

†Ցուցարէն՝ երկնային մարմիններ:

9 Ընդհատում էին իրենց խօսքն
անգամ մեծատունները,
մատները դնում իրենց բերանին:
10 Ովքեր բան էին լսում իմ մասին՝
երանի տալիս,
ու նրանց լեզուն քիմքին էր կպչում:
11 Չի ականջը, որ ունկնդրում էր
ինձ, երնէկ էր տալիս,
ինձ տեսնող աչքը մի կողմ էր
շրջում:
12 Չի աղքատին ես հզօրի ձեռքից էի
ազատել
ու օժանդակել անօգ որբուկին:
13 Կեանքից հեռացող մարդկանց
օրհնանքը տեղում էր վրաս,
այրու բերանը օրհնաբանում ինձ:
14 Արդարութեամբ էի զգեստաւո-
րուել
եւ իրաւունքը թիկնոցի նման գցել
ինձ վրայ:
15 Կոյրին աչք էի եւ կաղ մարդուն՝
ոտք ու խեղճերին՝ հայր:
16 Դատ էի անում նրան, ում բնաւ
չէի ճանաչում:
17 Անիրաւների ծնօտը ջարդում,
յափշտակուածը խլում էի ես նրանց
ժանիքից:
18 Ասում էի, թէ գուցէ տարիքս
ծերութեան հասնի,
արմաւենու պէս երկար ժամանակ
կարենամ ապրել:
19 Ջրերի վրայ իմ արմատները լայն
տարածուէին,
ու ցօղն էլ հանգչէր իմ հնձի վրայ:
20 Ակնկալիքս ընդունայն եղաւ.
իմ գործիքն, աղեղն իր ձեռքին՝
անցաւ նա:
21 Մարդիկ ինձ լսում ու անսում
էին,
խորհուրդներս տալիս՝ միշտ լռում
էին,
22 խօսքերիս չէին բան աւելացնում:
23 Ենդակցում էին, երբ որ հետները
խօսում էի ես.
սպասում էին նրանք իմ խօսքին,
ինչպէս ծարաւ հողն՝ անձրեւի
գալուն:
24 Երբ ես նրանց հետ ծիծաղում էի,
չէին հաւատում,
բայց չէր նուազում լոյսը իմ
դէմքից:
25 Ինքս էի ընտրում բոլորի ուղին,
զերթ իշխան նստում,
զօրքի մէջ բազմում իբրեւ թա-
գաւոր»:

ԻՍԿ ՀԻՄԱ...

30 «Ես, որ գրգանքով ամոքում էի,
արդ յետին մարդիկ քամահրում են
ինձ:
Խրատում են ինձ բոլորը մէկտեղ,
որոնց հայրերին նախատում էի,
որոնց հաւասար չէի համարի շներին
անգամ ես իմ հովուական:
2 Իմ ինչի՞ն էր պէտք նրանց
ձեռքերի զօրութիւնը փուչ:
3 Եկել է նրանց կեանքի վախճանը.
կարօտութեան ու սովամահութեան
մէջ են, անծնունդ:
Նրանք, որ երէկ անձկութիւնից ու
թշուառութիւնից
հէնց փախչում էին անջրդի վայրեր:
4 Նաեւ նրանք, որ խշխշան խոտով
էին փաթաթւում,
որոնց կերակուրն հէնց խոտն էր, որ
կար:
5 Անարգներ նրանք, արհամար-
հուածներ,
կարօտ մնացած ամէն բարիքի,
նրանք, որ սովից ծառի արմատներ
էին ծամծմում:
6 Գողերն են հիմա վեր կացել իմ
դէմ,
որոնց տները քարայրներն էին,
7 ձայն էին տալիս արձագանքի մէջ
եւ ապրում էին չոր ճիւղերի տակ:
8 Զաւակներն էին անզգամների,
որոնց անունը, ինչպէս եւ փառքը
մարել են երկրում:
9 Հիմա քնար եմ դարձել ձեռք-
ներին,
եւ իմ մասին են նրանք բամբասում:
10 Հեռու մնացին՝ զզուելով ինձնից,
եւ չքաշուեցին դէմքիս թքելուց,
11 քանի որ Տէրն էլ կապարճը բացել,
խոցոտել էր ինձ,
սանձ գցել դէմքիս:
12 Վեր են կացել արդ ողջ սե-
բունդներով,
ոտքերն են պարզել ու ճամփայ ելել՝
յարձակուեն վրաս:

13 Ու խաչուել են ճամփաներս
կորստաբեր ուղիների հետ նրանց:
14 Մերկացրեց Տէրն ինձ իմ պատ-
մուճանից,
խոցոտեց անձս իր սուր նետերով՝
մօտենալով ինձ, ինչպէս կամեցաւ:
15 Ախտերով եմ վարակուած.
ցաւերս յետ են դարձել:
Քամու պէս անցաւ յոյսը ինձանից,
եւ մշուշի պէս՝ իմ փրկութիւնը:
16 Հոգիս է լցուել բերնէ ի բերան:
Ինձ համակել են ցաւալից օրեր:
17 Գիշերը ոսկորներս են խաշւում.
ջղերս են քայքայուել:
18 Տէրն իր զօրութեամբ ձեռքը դցել
է իմ պատմուճանին
ու պատմուճանիս ժապաւէնի պէս
պատել է շուրջս:
19 Մի կաւի տեղ է ընդունում նա
ինձ.
հողն ու մոխիրն են բաժինս դարձել:
20 Քեզ դիմեցի ես, բայց չլսեցիր.
կանգնեցին նրանք ու դիտեցին ինձ:
21 Իմ նկատմամբ դու անողորմ
եղար. ինձ հզօր ձեռքովդ հարուա-
ծեցիր դու:
22 Ցաւի մէջ դրիր ինձ, զրկեցիր
փրկութեան միջոցից:
23 Գիտեմ, որ մահը ինձ պիտի ջնջի,
քանզի երկիրն է տունը ամենայն
մահկանացուի:
24 Ու երանի թէ կարողանայի իմ
հոգին կրթել
եւ կամ ուրիշին խնդրել, աղաչել, որ
նոյնը անէր:
25 Ես, որ հեծեծում ու ողբում էի
դժբախտի վրայ,
երբ տեսնում էի մարդուն վշտի մէջ:
26 Ես յոյս ունէի բարութիւն տեսնել,
մինչդեռ չար օրեր են ինձ պա-
տահել:
27 Իմ որովայնը եռեւեփում է ու չի
հանդարտւում.
թշուառ օրերն են հասել ինձ վրայ:
28 Պիտի շրջեմ ես նեղացած սրտով,
անսանձ բերանով.
ու հաւաքոյթի մէջտեղում կանգ-
նած՝ ձայնս բարձրացնեմ:
29 Համբարուների† եղբայր եմ դար-
ձել, ջայլամին՝ ընկեր:

†Առասպելական ճիւաղ:

30 Սաստիկ սեւացել է մորթս հիմա,
ու ոսկորներս այրուել են տօթից:
31 Քնարս է սուգ դարձել,
սիրտս եւ երգս՝ լացուկոծի մէջ»:

ՅՈԲԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ԱՍՏՈՒՆ ՀԱԿԱՏԸ ԲԱՑ

31 «Դաշինք կնքեցի աչքերիս հետ
ես,
ու չնայեցին նրանք մի կոյսի:
2 Աստուած բաժին է հանել ինձ
վերուստ
եւ բաւականին մեծ ժառանգութիւն՝
իր այն բարձունքից:
3 Անիրաւ մարդու կործանումը չէ՞
միթէ դա հէնց կամ վտարումը այն
մարդկանց,
ովքեր անօրէնութիւն են գործում
կեանքում:
4 Ինքը չէ՞ միթէ, որ պարզ տեսնում
է իմ ճանապարհը
ու հաշուի առնում քայլերս բոլոր:
5 Թէ ծաղրողի հետ գնացած լինեմ,
թէ իմ ոտքերը նենգութեան ճամ-
փով շտապած լինեն
6 (բայց կշռուել եմ արդար կշեռքով,
եւ գիտէ Տէրն իմ անմեղութիւնը),
7 թէ շեղուած լինի ոտքս ճիշտ
ուղուց,
սիրտս՝ ընթացած աչքիս յետեւից,
թէ կպած լինեմ ձեռքով՝ կաշառքի,
– 8 ապա թող որ ես սերմանեմ,
սակայն ուրիշներն ուտեն,
ու ես անարմատ լինեմ երկրի վրայ:
9 Թէ գնացել է սիրտս ուրիշի կնոջ
յետեւից,
թէ դարանակալ եմ եղել իր տան
դարպասների մօտ,
– 10 ապա թող կինս նոյնպէս
հաճելի լինի ուրիշի,
ու թող տառապեն իմ մանուկները.
11 քանզի այլ մարդու կնոջ պղծելը
անզուսպ բարկութեան է լոկ արժանի.
12 կրակ կը վառուի իր մարմնի բոլոր
անդամների մէջ.
ո՛ր կողմն էլ հասնի՝ հիմքից կը
ջնջի:
13 Իրաւունքն արդար թէ անտեսել
եմ ես իմ ծառայի կամ իմ աղախնի,
որ մօտ է եկել իմ դատաստանին,
– 14 ի՞նչ եմ անելու, եթէ հարցու-

փորձ անի ինձ Տէրը,
կամ թէ դատ անի՝
ի՞նչ պատասխան եմ ես տալու
նրան:
15 Չէ՞ որ ինձ նման նրանք էլ մի օր
պողաւորուել են ինչ-որ արգանդում.
նոյն որովայնում ենք գոյացել
մենք:
16 Իսկ այն խեղճին, որ կարիքի մէջ
էր,
արդեօք երբեւէ օգնութեան չեկա՞յ:
Թողեցի՞ արդեօք, որ այրու աչքերն
ողբալուց մաշուեն:
17 Կամ թէ պատառս մենա՞կ կերայ
ես
ու չհանեցի՞ բաժին որբերին:
18 Իմ երիտասարդ օրերից հօր պէս
սնունդ տուեցի,
մօրս արգանդից ուղի ցոյց տուի:
19 Կորած մերկերին անտեսեցի՞ ես
ու չհագցրի՞:
20 Զքաւորներն ինձ չօրհնեցի՞ն
միթէ,
նրանց թիկունքը խաչներիս բրդով
էլ չտաքացա՞ւ:
21 Թէ որբի վրայ ձեռք եմ բարձ-
րացրել՝
հաշուելով, թէ շատ են օգնա-
կաններս,
22 ապա թող ուսս թափուի ան-
րակից,
իսկ բազուկս էլ պոկուի արմունկից.
23 քանզի ինձ Տիրոջ սարսափն է
պատել,
ու նրա առաջ չեմ կարող կանգնել:
24 Եթէ հողիս մէջ ոսկի պահեցի,
յոյս դրի ես թանկ քարերի վրայ,
25 թէ ուրախացայ հարստութեանս
վրայ անսահման,
թէ անթիւ գանձի վրայ ձեռք դրի
26 (չե՞նք տեսնում միթէ, որ լու-
սաւորող արեգակն անգամ
հիւծւում է մի օր, լուսինը՝ մաշւում.
այդ նրանցից չէ),
27 եթէ գաղտնաբար սիրտս հրա-
պուրուեց,
թէ ձեռքս դրի բերանիս վրայ ու
համբուրեցի,
– 28 թող այս բոլորն մեծ անօրէ-
նութիւն դիտուեն ինձ համար,
որ սուտ եմ եղել Բարձրեալ Աստծու՝
Տիրոջ առաջին:
Ուժ, կարողութիւն, խելք, իմաստու-
թիւն Նրանից են լոկ:
29 Թէ ուրախացայ գետնին թաւա-
լուող թշնամուս վրայ,
եւ «վա՜յ» ասացի իմ սրտի խորքում,
– 30 թող ականջներս լսեն անէծքն
իմ,
թող արհամարհուեմ ու քա-
մահրուեմ իմ ժողովրդից:
31 Եթէ իմ մասին աղախիններիս
բազմութիւնն ասի՝ "Երանի՛ նրա մսով
յագենանք",
քանզի քաղցր էի ես նրանց համար
32 (օտարը դրսում չէր օթեւանում.
իմ դուռը բաց էր եկուորի առաջ),
33 թէ թաքցրեցի ակամայ գործած
ես իմ մեղքերը
34 (չէի ամաչում ես բազմութիւնից,
որ նրա առաջ չասէի դրանք),
եթէ աղքատին ես դատարկ ձեռքով
դուրս արի դռնից
35 (երնէ՜կ լսէի, թէ Տիրոջ ձեռքը չի
զարհուրեցրել),
կամ եթէ մէկից առած մուրհակը,
36 իբրեւ մի պսակ ուսերիս դրած՝
կարդալով
37 պատառ-պատառ չարեցի,
յետ չդարձրի այն՝ ոչինչ չառնելով
իմ պարտապանից,
38 թէ իմ պատճառով հեծեծեց հողը,
թէ ակօսները նրա լաց եղան,
39 եթէ կերայ ես արդիւնքը նրա
առանց վճարի,
կամ տակնուվրայ արեցի հոգին
հողի տէրերի,
– 40 ապա ցորենի փոխարէն եղինջ
թող բուսնի այնտեղ,
գարու փոխարէն՝ մորենի միայն»:

ԵՂԻՈՒՍԻ ԽՕՍՔԸ
(32:1 - 37:24)

32 Ցոբը դադարեց խօսելուց: Այ-
նուհետեւ նրա երեք բարեկամներն էլ
լռեցին ու չխօսեցին Ցոբի դէմ, որով-
հետեւ Ցոբն արդար էր նրանց աչքին:
2 Բարկացաւ Բարաքիէլի որդի Եղիուս
Բուզացին, Օստացիների աշխարհից,
Արամի արենակիցներից. սաստիկ զայ-
րացաւ Ցոբի վրայ, քանի որ սա իրեն
արդար էր ցոյց տալիս Տիրոջ առաջ:

3 Նա սաստիկ բարկացաւ նաեւ նրա
երեք բարեկամների վրայ, քանի որ
Յոբի պատասխանը չէին կարողացել
տալ, նրա ամբարիշտ լինելը ցոյց չէին
տուել: 4 Սակայն Եղիուսը յապաղեց
Յոբի պատասխանը տալու, քանի որ
միւսներն իրենից աւելի տարեց էին:
5 Տեսաւ Եղիուսը, որ այն երեք մարդ-
կանց բերանում պատասխան չկայ, ու
նրա բարկութիւնը բորբոքուեց:
6 Բարաքիէլի որդի Եղիուս Բուզա-
ցին նորից խօսեց ու ասաց.
«Ես երիտասարդ եմ տարիքով,
իսկ դուք՝ աւելի երէց:
Դրա համար ես լուռ եմ մնացել՝
վախենալով ինքս իմ իմաստութիւնն
յայտնելուց:
7 Ասացի, թէ շատ տարեց մարդիկ են
նրանք, որ խօսում են,
ու տարիներից ի վեր ճանաչել են
իմաստութիւնը:
8 Սակայն այդպէս էլ չէ. մարդիկ
հոգի ունեն.
Ամենակալի շունչն է, որ
ուսուցանում է դրանք:
9 Միայն տարեց մարդիկ չէ, որ
իմաստուն են,
ոչ էլ ծերերն են միայն, որ
ճշմարիտը գիտեն:
10 Դրա համար էլ ասացի.
"Լսեցէ՛ք ինձ, ու ես կը յայտնեմ
ձեզ, ինչ որ գիտեմ,
ակա՛նջ դրէք իմ խօսքերին.
11 կ'ասեմ ի լուր ամենքիդ, մինչեւ
որ քննէք խօսքերս,
թէ ձեր չափ բան գիտեմ":
12 Ահա ձեր մէջ ոչ ոք չկար, որ
յանդիմանէր Յոբին,
նրա խօսքերի պատասխանը տար:
13 Զլինի, թէ ասէք՝ Տիրոջ իմաս-
տութեանը բան ենք աւելացրել:
14 Դուք էք մի մարդու համար-
ձակութիւն տուել այսպիսի խօսքեր
ասելու»:
15 Զարհուրեցին ու պատասխան
չտուին այլեւս:
Բառերը պակասեցին նրանց:
16 Համբերեցին ու չխօսեցին, որով-
հետեւ մնացին առանց պատասխանի:
17 Եղիուսը նորից խօսեց ու ասաց.
18 «Դարձեալ խօսելու եմ, որով-
հետեւ լեցուն եմ խօսքերով,
որովհետեւ շունչս իմ ներսում ինձ
սպանում է,
19 որովայնս տիկի մէջ դրուած ու
կապուած նոր գինու պէս եռում է,
կամ դարբինների փուքսի պէս ուռել
է:
20 Շրթներս բաց անելով՝ խօսելու
եմ, որ հանգստանամ.
21 ոչ մէկից չեմ ամաչելու,
մարդկանցից էլ չեմ պատկառելու,
22 քանզի երեսպաշտութիւն անել
չգիտեմ,
այլապէս ցեցն ինձ կ'ուտի»:

ԱՍՏՈՒԱԾ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ

33 «Բայց դու, Յո՛բ, լսի՛ր խօսքերս,
ակա՛նջ դիր իմ խօսքերին:
2 Ահա բաց եմ արել բերանս, ու
խօսում է իմ լեզուն:
3 Սրտիս խօսքերն անարատ են,
եւ իմ շուրթերի իմաստութիւնը
յստակօրէն կ'իմացուի:
4 Աստուածային հոգին է, որ ստեղ-
ծել է ինձ,
եւ Ամենակալի շունչն է, որ ուսու-
ցանում է ինձ:
5 Եթէ կարող ես՝ այս մասին տո՛ւր
քո պատասխանը,
ապա թէ ոչ համբերո՛ղ եղիր,
6 դու ի՛մ դիմաց կանգնիր, ես էլ՝ քո:
Դու էլ, ինձ պէս, կաւից ես ստեղ-
ծուած.
նոյն նիւթից ենք ստեղծուած մենք:
7 Արդ, թող իմ ահը չհամակի քեզ,
ոչ էլ ձեռքս ծանրանայ թող քեզ
վրայ:
8 Սակայն դու խօսեցիր իմ ականջին,
ու քո խօսքի ձայնը լսեցի ես:
9 Ասացիր. "Մաքուր եմ ու չեմ մե-
ղանչել,
անարատ եմ, որովհետեւ անօրէ-
նութիւն չեմ արել:
10 Մեղադրանքներ է բարդել ինձ
վրայ Աստուած
ու ինձ հակառակորդ համարել:
11 Կոճղի մէջ է դրել ոտքերս ու
կապել բոլոր ճանապարհներս":
12 Ինչպէ՞ս ես ասում, թէ արդար ես,
ու Տէրը չի լսել քեզ:

Մինչդեռ յաւիտենական է Նա,
որ մարդկանց վերեւում է:
13 Նաեւ ասում ես, թէ ինչո՛ւ իր
ատեանում
դեռ ականջ չի դրել քո բոլոր
խօսքերին:
14 Մի անգամ է խօսում Տէրը,
կամ երկրորդ անգամ՝ երազի միջո-
ցով,
կամ էլ գիշերային այցելութեամբ
15 (երբ սաստիկ արհաւիրքներ են
վրայ հասնում մարդկանց՝ անկողնում
նիրհելիս,
16 այն ժամանակ են մտքերը
յայտնւում նրանց):
17 Այդպիսի ահաւոր տեսիլքով է
ահա,
որ զարհուրեցրեց Աստուած նրանց՝
մարդուն անիրաւութիւնից յետ
կանգնեցնելու
եւ նրա մարմինը կործանումից
փրկելու համար:
18 Նրա հոգին զերծ պահեց մա-
հուանից,
որպէսզի նա պատերազմում չընկնի:
19 Նաեւ կշտամբեց նրան անկող-
նային հիւանդութեամբ,
ընդարմացում բերեց նրա բազ-
մակոյտ ոսկորներին:
20 Թէեւ հոգին կերակուր պիտի
տենչայ,
բայց ինքը պիտի չկարողանայ
ուտելու սնունդ ակնկալել,
21 մինչեւ որ մաշուեն նրա մսերը,
ու սոսկ ոսկորները երեւան:
22 Նրա մարմինը մօտեցել է մա-
հուան,
կեանքը՝ գերեզմանին:
23 Եթէ մահաբեր հազար հրեշ-
տակներ էլ լինեն,
նրանցից ոչ մէկը նրան չի խոցի,
24 թէ որ գիտակցի ու իր սրտով
դառնայ դէպի Տէրը,
խոստովանի մարդն իր մեղքերը,
ցոյց տայ իր անմտութիւնը:
Այն ժամանակ Տէրը կը պաշտպանի
նրան,
որ մահուան գիրկը չընկնի:
25 Կը նորոգի մարմինը նրա, ինչպէս
ծեփը պատի,
ու ոսկորները նրա ծուծով կը լցուեն:
Կը փափկացնի մարմինը նրա,
ինչպէս մարմինը մանկան,
ու մարդկանց մէջ կը հաստատի
նրան՝ երիտասարդացած:
26 Երբ Տիրոջն աղերսի, կ'ընդունուի
նրա կողմից,
լուրջ դէմքով կը մտնի խոստո-
վանութեան,
քանի որ Աստուած արդարութեան
համար կը հատուցի մարդկանց:
27 Ապա կը մեղադրի մարդն ինքն
իրեն ու կ'ասի.
"Այդ ինչե՛ր էի անում ես,
եւ իմ մեղանչումների համեմատ
ըստ արժանւոյն Նա չպատժեց ինձ:
28 Փրկեց հոգիս, որպէսզի այն
ապականութեան մէջ չմտնի,
եւ որպէսզի կեանքս լոյսը տեսնի":
29 Այս ամէնն ահա կատարում է
մարդու նկատմամբ Ամենազօրը՝
երեք ճանապարհներով:
30 Հոգիս փրկել է մահից,
եւ կեանքս լոյսի մէջ օրհնելու է
նրան:
31 Ակա՛նջ դիր, Յո՛բ, լսի՛ր ինձ,
կորի՛ր ձայնդ, ու ես կը խօսեմ:
32 Եթէ բան ունես՝ պատասխա՛ն
տուր ինձ,
քանի որ ուզում եմ, որ արդա-
րանաս:
33 Ապա թէ ոչ, դու ինձ լսի՛ր, կորի՛ր
ձայնդ,
եւ քեզ իմաստութիւնը կ'ուսու-
ցանեմ»:

ԵՂԻՈՒՍԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՅՈԲԻՆ

34 Եղիուսը նորից խօսեց ու ասաց.
2 «Ո՛վ իմաստուններ, լսեցէ՛ք ինձ,
եւ դուք՝ հանճարեղնե՛ր, ակա՛նջ
դրէք.
3 քանզի ականջն է քննում խօս-
քերը,
իսկ կոկորդը կերակուրներ է ճաշա-
կում:
4 Արդ, մենք մեզ համար ատեան
ընտրենք
ու մեր մէջ իմանանք, թէ ի՛նչն է
բարի»:
5 Յոբն ասաց. «Ես արդար եմ,
բայց Տէրը մի կողմ նետեց իմ

իրաւունքները,
6 արդար դատաստան չարեց իմ հանդէպ.
սաստիկ է նետի յարուցած վէրքը,
եւ ես անիրաւութիւն չեմ գործել»:
7 Արդ, կա՞յ մարդ, որ, Յոբի պէս,
արհամարհանքն իբրեւ ջուր խմի,
8 չմեղանչելով, ամբարշտութիւն չանելով,
անօրէնութիւն անող մարդկանց գործերին չմասնակցելով՝ ընթանայ ամբարիշտների հետ:
9 Զասես՝ "Ոչ մէկին պատիժ վրայ չի հասնի,
մինչդեռ այցը Տիրոջ կողմից է լինելու":
10 Դրա համար էլ, սրտո՛վ հանճարեղներ, ի՛նձ լսեցէք:
Այնպէս չլինի թող, որ ես ամբարշտութիւն անեմ Տիրոջ հանդէպ
ու Ամենակալի առաջ աղմկեմ,
թէ արդար եմ ես:
11 Իւրաքանչիւր մարդու, ըստ նրա արարքների, կը հատուցի Նա,
ըստ նրա վարքի կը փոխադարձի նրան:
12 Գուցէ Տիրոջ մասին մտածում ես,
որ կարող է անկարգ բանե՞ր անել,
կամ կը պղծի՞ իրաւունքն Ամենակալը, Նա, որ երկիրն է ստեղծել:
13 Այն ո՞վ է, որ ստեղծել է երկնքի ներքոյ
ու միջոցի մէջ եղած ամէն բան:
14 Եթէ կամենար սահմանափակել
եւ հոգին յետ իր մէջ պահել,
15 առհասարակ ամէն մարմին վերջ կը գտնէր,
ամէն մարմին կը դառնար հող,
որից որ ստեղծուել էր:
16 Իսկ եթէ չես խրատուել, սա՛ էլ լսիր,
ակա՛նջ դիր խօսքիս ու բառերիս:
17 Չե՞ս մտածում, որ նա, ով ատել է անիրաւութիւնը,
խորտակել է նաեւ չարիքը. արդարները յաւիտեան են ապրում:
18 Ամբարիշտ է նա, ով թագաւորին
ասում է՝ անիրաւ ես դու,
իսկ իշխաններին համարում է է՛լ աւելի ամբարիշտ:
19 Նա չի պատկառել մեծապատիւ մարդկանցից,
աւելի պատիւ չի ընծայել երեւելի մարդկանց, քան աղքատներին:
20 Ի զուր կը լինի նրանց՝ ուրիշներին ձայն տալն ու աղերսելը,
որովհետեւ անօրէնութեամբ են շարժուել՝
խեղճերին էլ խոտորեցնելու համար.
21 քանզի Տէրն ինքը տեսնում է մարդկանց արարքները,
ինչ որ սրանք արել են.
նրանից ոչինչ ծածուկ չի մնում:
22 Եւ թաքնուելու տեղ չեն ունենայ նրանք,
ովքեր անօրէնութիւն են գործում,
23 որովհետեւ մարդու վրայ ոչինչ չի դնելու բացի իրաւունքից,
որովհետեւ Տէրը տեսնում է ամէն ինչ,
24 քննում, վերահասու է լինում անքննելի,
փառաւոր ու հրաշակերտ բաների,
որ թիւ ու համար չունեն:
25 Ինքն է, որ ճանաչում է նրանց գործերը
եւ մի գիշերում տապալելու է նրանց, ու խորտակուելու են:
26 Խաւարեցրել է ամբարիշտներին,
եւ սրանք մատնուել են իրենց թշնամիների ձեռքը:
27 Արդարեւ, նրանք շեղուել են Աստծու արդար օրէնքից,
նրա կարգն ու կանոնը չեն ճանաչել:
28 Ձեն հասցրել նրան աղաղակը տնանկի,
բայց աղքատի բողոքը նա լսելու է:
29 Թէ ինքը լռութիւն պահի՝ ո՞վ է դատապարտելու,
թէ դէմքը ծածկի՝ ո՞վ է նրան տեսնելու:
30 Ժողովրդի խստասրտութեան պատճառով ազգերի ու մարդկանց վրայ
կեղծաւորին է թագաւոր կարգելու:
31 Մէկն ասելու է Ամենազօրին.
"Առել ու գրաւել եմ առանց քեզ.
32 թէ անիրաւութիւնս տեսել ես՝ ցո՛յց տուր ինձ,
իսկ եթէ անօրէնութիւն եմ արել՝
այլեւս չեմ անի":

33 Մի՞թէ մէկը քեզնից դա պահանջելու է,
որ դու մերժում ես:
Դու ես ընտրել, ոչ թէ ես,
իսկ եթէ մի բան գիտես՝ ասա՛:
34 Դրա համար սրտով իմաստունները,
նոյնպէս եւ ամէն խելացի մարդ, որ լսում է դա, պիտի ասի.
35 "Բայց Յոբն իմաստութեամբ չխօսեց,
եւ նրա խօսքերը խելացի չեն":
36 Բայց հաշուի՛ առ, Յո՛բ,
եւ անզգամի պէս մի՛ պատասխանիր դեռ,
37 որպէսզի ձեր մեղքերը չաւելացնէք.
Տիրոջ առաջ շատ բան խօսելն անօրէնութիւն է համարուելու ձեզ համար»:

ԱՍՏՈՒԱԾ ԱՆՏԱՐԲԵՐ ՉԷ ՄԱՐԴՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆԴԷՊ

35 Եղիուսը նորից խօսեց ու ասաց.
2 «Այդ ի՞նչն ես իրաւունք համարել,
3 դու ո՞վ ես, որ ասում ես.
"Արդար եմ Տիրոջ առաջ",
կամ՝ "Մեղանչեցի, ի՞նչ անեմ":
4 Կը պատասխանեմ քեզ ու երեք բարեկամներիդ.
5 երկնքի՛ն նայիր ու տե՛ս,
նկատի՛ր ամպերը.
քեզնից որքա՜ն բարձր են:
6 Եթէ մեղք ես գործել, ի՞նչ ես անելու,
ու եթէ բազում անիրաւութիւններ ես կատարել,
ի՞նչ կարող ես անել:
7 Արդ, եթէ արդար ես, ի՞նչ ես տալու Նրան,
կամ ինքն ի՞նչ է ստանալու քո ձեռքից:
8 Ամբարշտութիւնդ՝ քեզ նման մարդկանց,
արդարութիւնդ էլ՝ մարդու որդիների համար օգուտ չունեն:
9 Շատերի կողմից զրպարտուածները կ'աղաղակեն,
ձայն կը բարձրացնեն շատերի բռունցքի պատճառով:
10 Սակայն մէկը չի ասել.
"Ո՞ւր է Աստուած, որ այս ամէնն ստեղծել է,
որ կարգում է գիշերային պահակութեան ժամերը,
11 որ ինձ զատում է երկրի չորքոտանիներից ու երկնքի թռչուններից":
12 Այն ժամանակ ձայն կը տան, բայց չես լսի,
որովհետեւ ինչ որ պատահում է,
տեղի է ունենում չարերի ամբարտաւանութիւնից:
13 Տէրը չի ուզում անկարգութիւններ տեսնել,
որովհետեւ Ամենակալն ինքը տեսնում է բոլորին,
ովքեր անօրէնութիւն են գործում.
իսկ ինձ կը փրկի:
14 Խնդիրքդ ներկայացրո՛ւ նրան,
եթէ կարող ես գովել նրան այնպէս,
ինչպէս որ նա կայ:
15 Եւ արդ, քանի որ չկայ մէկը,
որ կրել է նրա բարկութիւնը,
մէկը, որ գիտակցել է իր ծանր մեղքերը,
– 16 ապա ուրեմն Յոբն էլ զուր է բացում բերանը
եւ իր անգիտութեամբ ծանրացնում խօսքերը»:

ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ԱՍՏՈՒԱԾ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ

36 Եղիուսը նորից խօսեց ու ասաց.
2 «Ինձ դեռ մի փոքր բան է մնում,
որ քեզ սովորեցնեմ այն,
ինչ դու չգիտես,
քանի որ մէջս դեռ ունեմ խօսքեր,
3 որ միտքս ընկալել է հեռուից-հեռու:
4 Արդարօրէն ասելու եմ ճշմարիտ բաներ
եւ ոչ թէ լսուած անիրական ու դատարկ խօսքեր:
5 Իմացի՛ր, որ Տէրը չի մերժում անմեղին.
հզօր է իր զօրութեամբ.
6 ամբարշտի կեանքը չի խնայելու
եւ պաշտպանելու է աղքատի իրաւունքը:
7 Իր աչքը չի դարձնելու արդարից,
եւ ով որ իր առաջ գտնուի՝

Թագաւորների հետ գահի վրայ է
լինելու.
Նրանց հաստատապէս նստեցնելու
է,
եւ նրանք բարձրանալու են:
8 Իսկ չարերը, ձեռնակապերով կաշ-
կանդուած,
Թշուառութեան պարաններով են
կապկպուելու:
9 Նրանց յայտնելու է իրենց
արարքները,
նաեւ յանցանքները, որ սաստկացել
են:
10 Լսելու է արդարին ու ասելու է,
որ յետ կանգնեն անիրաւութիւնից:
11 Եթէ լսեն ու իրեն ծառայեն,
իրենց օրերը բարիքների մէջ են
աւարտելու,
տարիները՝ շքեղութեան մէջ:
12 Բայց ամբարիշտներին չի
ապրեցնելու,
որովհետեւ նրանք չուզեցին Տիրոջը
ճանաչել,
որովհետեւ խրատուել էին, բայց
չէին հնազանդուել:
13 Սրտով կեղծաւորներն իրենց
հանդէպ զայրոյթ են գրգռելու,
ճիչ ու աղաղակ չեն բարձրացնելու,
որովհետեւ Տէրը կապել է նրանց:
14 Նրանք երիտասարդ տարիքում են
մեռնելու,
նրանց կեանքը խոցոտուելու է
մահուան հրեշտակների կողմից
15 այն բանի համար, որ խեղճին ու
անզօրին են նեղել:
Տէրը բարձրացնելու է հեզերի
իրաւունքները.
16 քեզ էլ փրկեց Թշնամու երախից:
Քո տակ գտնուող անդնդից
ազատեց քեզ
ու առաջդ պարարտութեամբ լի
սեղան դրեց:
17 Չի պակասելու արդարների ուղիղ
դատաստանը,
բայց զայրոյթ է իջնելու
ամբարիշտների վրայ
18 անօրէն կաշառքի համար, որ
ընդունում էին անիրաւութեամբ:
19 Թող քո միտքը կամովին երես
չդարձնի խնդրանքներից,
երբ տկարները ցաւի մէջ են:
Զօրութեամբ բոլոր օժտուածներին
առաջ չտանես գիշերը,
20 որպէսզի ժողովուրդը նրանց
փոխարէն դուրս չգայ:
21 Այլ զգո՛յշ եղիր, գուցէ անպատեհ
բաներ անես,
որովհետեւ նրան փրկել ես
աղքատութիւնից:
22 Ահա Ամենազօրը կը զօրացնի իր
զօրութեամբ,
որովհետեւ այն ո՞վ է, որ նրա պէս
ուժեղ է,
23 կամ այն ո՞վ է, որ քննում է նրա
գործերը,
կամ այն ո՞վ է, որ կ'ասի.
"Ինչ որ արել է, անիրաւութեամբ է
արել":
24 Ցիշի՛ր, շա՜տ մեծ են նրա
գործերը,
որ սկսել են գովերգել արդար
մարդիկ:
25 Ամէն մարդ անձամբ է տեսել,
Թէ որքա՜ն են մարդիկ խոցոտուած:
26 Ահա, Ամենազօրը շատ մեծ է,
բայց մենք չենք իմանայ.
Նրա տարիների համրանքն անսպառ
է:
27 Նա հաշուել է անձրեւի շիթերը,
եւ սրանք անձրեւի տեսքով կը
լցուեն ամպերի մէջ:
28 Երկնքի ամպերը կը յորդեն:
Ամպերը հովանի է դարձրել անթիւ
մարդկանց.
դրանք մէգ են դարձել մարդկանց
վրայ:
Ժամանակ է սահմանել անասուն-
ների համար,
եւ դրանք գիտեն ծնելու կարգը:
Այս բոլորի վրայ զարմացած չէ՞ քո
միտքը,
չի՞ դողում սիրտդ կրծքիդ տակ,
քանի որ Նա կատարել է մեծ-մեծ
բաներ,
որ մենք չգիտէինք:
Հրամայում է ձիւնին՝ "Իջի՛ր լերան
վրայ",
նաեւ ձմեռային անձրեւներին,
որ ցոյց տան իրենց զօրութիւնը:
Ամէն մարդու միջոցով է վկայում
այս բոլորը,
որպէսզի իւրաքանչիւր ոք իմանայ

իր թոյլ լինելը:
29 Իսկ դու կ'իմանա՞ս ամպերի
սփռուելը
կամ նրա վրանի չափերը:
30 Ահա ճանապարհով մէկ լոյս է
ցցել դրա վրայ
եւ ծովի խորքերն է ծածկել,
31 որպէսզի դրանցով դատի ժողո-
վուրդներին,
կերակուր պարգեւի զօրացածին:
32 Ձեռքերով լոյսն է ծածկել ու
հրահանգ տուել,
թէ ե՛րբ պէտք է դա լինի:
33 Իր բարեկամներին կը պատմի
դրա,
ինչպէս նաեւ ինչքերի ու անիրաւու-
թեան մասին»:

37 «Ու դրա վրայ խռովուել է սիրտս,
շարժուել իր տեղից:
2 Լսի՛ր Տիրոջ սրտմտութեան ու
զայրոյթի լուրը.
Նրա բերանից խորհուրդ է դուրս
գալու:
3 Ամէն ինչ նրա երկնային իշխա-
նութեան տակ է,
իսկ նրա լոյսը՝ երկրի ծագերի վրայ:
4 Նրա յետեւից մի ձայն է գոչելու,
որոտալու է իր բարձր ձայնով
եւ դրանք ուրիշներով չի փոխա-
նակելու,
որ լսելի դարձնի ի՛ր ձայնը:
5 Ամենազօրը որոտալու է սքանչելի
ձայնով,
քանի որ կատարել է մեծամեծ
բաներ,
որ մենք չգիտենք:
6 Հրամայել է ձիւնին՝ "Իջի՛ր լերան
վրայ",
նաեւ ձմեռային անձրեւներին,
որ ցոյց տան իրենց զօրութիւնը:
7 Խափանում է ամէն մարդու ձեռքի
գործը,
որպէսզի իւրաքանչիւր ոք իմանայ
իր թոյլ լինելը:
8 Գազաններն իրենց որջերն են
մտել,
խշտիներով ծածկուել:
9 Հարաւային քամու շտեմարան-
ներից խորշակ է դուրս գալիս,
բարձրաւանդակներից՝ ցուրտ,
10 եւ Ամենազօրի շնչից սառնա-
մանիք է սփռուելու:
11 Ուղղութիւն է տալիս ջրերին,
ինչպէս կամենայ,
խիտ ամպերը ցիրուցան է անելու:
12 Մէգը ցրելու է նրա լոյսը,
իսկ ինքը դարձնելու է շրջանակ-
ները:
Ուր որ կամեցել՝ տնօրինել է դրանց
գործը եւ այն ամէնը, ինչ կը հրամայի
նրանց:
Սրանք երկրի վրայ կարգուած են իր
կողմից՝
13 խրատի համար լինի թէ երկիւղ
գցելու
կամ ողորմութեան համար,
եւ բոլորը կը գտնեն Նրան:
14 Ակա՛նջ դիր սրան, Յո՛բ,
եկ խրատուի՛ր Տիրոջ զօրութեամբ:
15 Գիտենք, որ Աստուած տնօրինել է
իր գործերը.
լոյսն է ստեղծել խաւարի մէջ:
16 Գիտէ ամպերի էութիւնը:
Զարագործների յանցանքներն ար-
հաւիրք են:
17 Ինչո՞ւ է պատմուճանդ տաքա-
նում,
երբ երկիրը հանգստանում է հա-
րաւային հողմից:
18 Այդ Տէրն է հաստատել երկինքը
եւ նրա մէջ գտնուող ջրալի ամպերը,
որոնք իր զօրութեամբ ցած է թա-
փում:
19 Բայց հէնց ինչո՞ւ, դէ հաս-
կացրո՛ւ ինձ,
ի՞նչ ենք ասելու նրան,
ու ապա դադարենք շատ բաների
մասին խօսելուց:
20 Մի՞թէ մօտս մատեա՞ն կայ,
կամ դպի՞ր է կանգնած,
որ մարդկանց գրածը լինելով՝ լուեց-
նեմ:
21 Ամէն մարդու չէ, որ լոյսը
տեսանելի է.
փայլածուն ամպերի մէջ է,
ինչպէս որ լոյսը՝ ամպերի վերեւում:
22 Հիւսիսից ոսկեճաճանչ ամպերն
են.
սրանց համեմատութեամբ մեծ են
Ամենակալի փառքն ու պատիւը:

23 Զգիտենք մենք նրա զօրութեանը
նմանուող ուրիշ ոչ ոքի,
որ արդար դատելիս լինի,
եւ դու պէտք չէ՞ որ լսես նրան:
24 Դրա համար են մարդիկ նրանից
երկիւղ կրում.
նրանից վախենում են նաեւ սրտով
իմաստունները»:

ԱՍՏՈՒԱԾ ԱՆԿԵՆԴԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԷՐՆ Է

38 Երբ Եղիւսը դադարեց խօսելուց,
Տէրն ասաց Յոբին՝ փոթորկի ու ամպի
միջից.
2 «Այդ ո՞վ է, որ իր խորհուրդները
թաքցնում է ինձնից,
խօսքերը հաւաքելով իր սրտում՝
կարծում է, թէ ինձնից պահում է
դրանք:
3 Տղամարդու պէս պնդացրո՛ւ
մէջքդ. հարցեր եմ տալու քեզ,
ու պատասխա՛ն տուր ինձ:
4 Որտե՞ղ էիր դու, երբ ես երկրի
հիմքերն էի գցում:
Ասա՛ ինձ, եթէ խելամիտ ես ու
իմաստուն:
5 Ո՞վ է սահմանել դրա չափը, եթէ
գիտես,
կամ ո՞վ է լար գցել դրա վրայ:
6 Ինչի՞ վրայ է հաստատուել օղակը
դրա,
ո՞վ է դրել անկիւնաքարը դրա:
7 Երբ աստղերը ցիրուցան եղան†,
աստղերի բոլոր հրեշտակները
մեծաձայն օրհնեցին ինձ,
իմ բոլոր հրեշտակներն էլ գովեցին:
8 Ծովը փակեցի դարպասներով,
երբ այն իր մօր որովայնից ծնուեց
դուրս եկաւ:
9 Մէգը նրան իբրեւ հանդերձ
սահմանեցի,
մառախուղը՝ իբրեւ խանձարուր:
10 Սահմաններ դրեցի նրա համար՝
փականքներ ու դարպասներ, եւ
ասացի.
11 "Կը գաս մինչեւ այդ վայրն ու
այլեւս առաջ չես անցնի".
այդտեղ, քո մէջ կը խորտակուեն
ալիքները քո:

†Գրաբար բնագրում՝ եղեն ծերք - ծեր եղան (ծերացան):

12 Թէ քո՞ կողքին կարգեցի լոյսն
առաւօտեան:
13 Արուսեակը տեսաւ իր համար
սահմանուածը՝
հասնել երկրի թեւերի վրայ,
թափ տալ ամբարիշտներին դրա
վրայից:
14 Կամ թէ դո՞ւ ես, որ կաւն առ-
նելով ստեղծեցիր կենդանի արարածին
եւ, խօսուն, զետեղեցիր երկրի վրայ:
15 Մերժեցի՞ր լոյսն ամբարիշտ-
ներին,
խորտակեցի՞ր բազուկներն ամբար-
տաւանների:
16 Հասա՞ր ծովի ակունքին,
շրջեցի՞ր խորքերն անդունդների:
17 Քո առաջ ահով բացուելո՞ւ են
դռները մահուան.
դժոխքի դռնապանները սարսելո՞ւ
են քեզ տեսնելով:
18 Վերահասու լինելո՞ւ ես երկնքի
ներքոյ եղած տարածութեան.
ասա՛ ինձ տեսնեմ՝ որքա՞ն է այն:
19 Ո՞րն է այն երկիրը, ուր լոյսն է
օթեւանում,
կամ ո՞րն է տեղը խաւարի:
20 Տանելո՞ւ ես ինձ նրա սահ-
մաններին, եթէ գիտես ճանապարհ-
ները դրանց:
21 Գուցէ գիտե՞ս կամ ա՞յն ժա-
մանակներում ես ծնուել.
քո օրերը բազո՞ւմ են:
22 Գնացե՞լ ես շտեմարանները ձեան,
կամ տեսե՞լ ես պահեստները
կարկտի:
23 Կուտակե՞լ ես դրանցից՝ քո
թշնամիների վրայ հասնելու,
մարտի ու պատերազմի օրուայ
համար:
24 Որտեղի՞ց է դուրս գալու եղեամը,
կամ տարածուելու է հարաւային
հողմը երկնքի ներքոյ:
25 Ո՞վ է պատրաստել սաստիկ
անձրեւների հոսանքները
26 եւ ճանապարհներն ամպրոպների,
որ տեղան երկրի վրայ,
27 ուր անմարդաբնակ անապատում
ոչ ոք չկայ,
որ յագեցնի անկոխ ու անշէն հողը,
այնտեղ բխեցնի բոյսը դալար:
28 Ո՞վ է հայրն անձրեւի,

եւ ո՞վ է, որ ծնունդ է տուել ցօղի
շաղերին:
29 Ո՞ւմ արգանդից է դուրս գալիս
սառոյցը,
30 եւ ո՞վ է երկնքում եղեամ ծնել,
որ ջրի պէս հոսելով իջնում է.
ո՞վ է հալեցնում երկնքի երեսը:
31 Վերահասու եղե՞լ ես Բազ-
մաստեղեանի կարգին,
բացե՞լ ես քօղը Հայկ համաս-
տեղութեան:
32 Կամ Մազարոթը† կարո՞ղ ես բա-
ցել իր ժամանակին,
Գիշերավարն իր շառաւիղներով
հանդերձ կարո՞ղ ես տանել նրանց
հետ:
33 Կ'իմանա՞ս երկնքի բարեշրջու-
թիւնները
կամ առհասարակ երկնքի ներքոյ
տեղի ունեցածները:
34 Ձայնովդ կը կանչե՞ս մէգը.
նա էլ, սարսուռով համակուած,
ջրի յորդութեամբ կը լսի՞ քեզ:
35 Շանթեր կ'արձակե՞ս, ու կը
սլանա՞ն դրանք.
եւ կ'ասե՞ն քեզ՝ թէ ինչ է սա:
36 Ո՞վ է կանանց տուել ոստայ-
նանկութեան հմտութիւն
ու երփներանգ գործուածքներ
ստեղծելու շնորհ:
37 Ո՞վ է հաշուում ամպերն իմաս-
տութեամբ:
Ո՞վ է խոնարհեցրել երկինքը երկրի
վրայ,
38 հողը փոշու պէս թափել:
Ես եմ կպցրել դա,
ինչպէս խորանարդ քարերը՝ իրար:
39 Կերակուր կ'որսա՞ս առիւծների
համար,
վիշապների մարմինը կը կշտացնե՞ս,
երբ դրանք կուչ են եկած:
40 Սարսելու են իրենց խշտիներում
ու դարանակալ նստելու մայրիների
անտառում:
41 Ո՞վ է ագռաւների համար կեր
պատրաստել,
որ նրանց ձագերը ձայները Տիրոջն
ուղղեն,
մոլորուած՝ ուտելիք խնդրեն:

†Հարաւային համաստեղութիւնները:

39 Գիտես քարայծների ծննդա-
բերութեան ժամանակը
կամ լաւ հետեւե՞լ ես եղնիկների
երկունքին:
2 Կարո՞ղ ես լրիւ թուել նրանց ծնե-
լու ամիսները,
կարո՞ղ ես մեղմացնել երկունքը
նրանց:
3 Առանց երկիւղի կարո՞ղ ես կե-
րակրել նրանց ձագերին,
նրանց զերծ պահել երկունքի
ցաւերից:
4 Ազատութիւն կ'ունենան նրանց
ձագերը,
ծնելով՝ կը բազմանան, դուրս կը
գան
ու այլեւս չեն վերադառնայ:
5 Ո՞վ է վայրի էշին բաց թողել
ազատ,
ո՞վ է արձակել կապանքները նրա:
6 Նրան իբրեւ կայան սահմանել եմ
առապարները,
իբրեւ բնակավայր՝ աղուտները:
7 Ծաղրում է նա քաղաքների
խաժամուժին
ու չի լսում մեղադրանքներն հար-
կահանների:
8 Դիտում է իր լեռնոտ արօտա-
վայրերը
ու շրջում է՝ ամէն դալարիք
փնտռելու:
9 Միեղջերուն յօժար կը լինի՞ ծա-
ռայելու քեզ
կամ հանգստանալու քո մսուրի մէջ:
10 Ջուանով նրան լուծ կը կապե՞ս,
կամ նա ակօս կը քաշի՞ քո դաշ-
տում:
11 Ցոյսդ կը դնե՞ս նրա վրայ,
քանի որ նրա զօրութիւնը մեծ է,
եւ նրան կը թողնե՞ս գործերդ քո
բոլոր:
12 Կը հաւատա՞ս, որ սերմանուելիք-
ներդ հատուցելու է
ու հաւաքելու քո կալում:
13 Գեղեցիկ են թռչող նէեղասների
թեւերը.
եթէ ասիդն ու նէեսան† էլ բեղմնա-

†Ըստ Հայկազեան եւ այլ բառարանների՝ անյայտ թռչուններ են, ըստ օտար թարգմանութիւնների՝ նէեղասը սիրամարգն է, ասիդը՝ արագիլը, իսկ նէեսան՝ չայլամը:

ւորւում են, արժէ տեսնել,
14 *որովհետեւ նէեսան իր ձուերը*
գետին է դնում, հողով տաքացնում է
15 *ու մոռանում, թէ ոտքի տակ ցրիւ*
կը գան,
եւ անապատի գազանները կը կոխո-
տեն դրանք:
16 *Հեռանում է նա իր ձագերից,*
կարծես իրենը չլինեն դրանք.
իր վաստակի կորստեան վախը չունի
նա,
17 *որովհետեւ Աստուած նրանից*
վերցրել է իմաստութիւնը եւ խելքի
բաժին չի տուել նրան:
18 *Բայց երբ դէպի վեր ու բար-*
ձունքներ սլանայ,
կը ծիծաղի երիվարի ու հեծեալի
վրայ:
19 *Դո՞ւ ես միթէ օժտել ձիուն զո-*
րութեամբ,
20 *պարանոցին զրահ հագցրել,*
վրան սպառազինութիւն գցել,
նրա լանջը փառաւոր դարձրել
ու խիզախութիւն տուել նրան:
21 *Որոտում է դաշտում ու դոփում,*
զօրութեամբ դուրս է գալիս դաշտ:
22 *Երբ նետերի է հանդիպում, ար-*
համարհում է, թրի առաջ էլ չի
նահանջում նա:
23 *Նրա վերեւում շողշողում են*
աղեղն ու սուրը, շարժւում՝ վահանն ու
նիզակը:
24 *Իսկ ինքը բարկութեամբ գետինն*
է փորփրում:
Չի հաւատում մինչեւ փողը չհնչի:
25 *Իսկ երբ հնչում է փողը,*
«վա՛շ-վա՛շ» է կանչում:
Հեռուից է առնում պատերազմի
հոտը՝ սուրալով ու փնչացնելով:
26 *Քո խելքի՞ց է, որ բազէն թեւերը*
տարածելով կանգնած է մնում օդում՝
անշարժ դիտելով հարաւի կողմը,
27 *կամ քո՞ հրամանով է արծիւը*
բարձրանում,
իսկ անգղն էլ քարանձաւներում ու
ծածուկ տեղերում
նստում հանգստանում է իր բոյնի
վրայ,
28 *մնում է այնտեղ ու կեր է*
փնտռում:
29 *Նրա աչքերը դիտում են հեռուից,*

30 *իսկ նրա ձագերը զոհի արեան*
մէջ են թաթախուած:
Ուր որ դիակ գտնեն՝ իսկոյն այնտեղ
են յայտնւում»:
31 *Եւ Տէր Աստուած խօսեց ու Յոբին*
ասաց.
32 *«Միթէ մէկը պիտի կարողանա՞յ*
իմ դատաստանը ծռել, պիտի յան-
դիմանի՞ Աստծուն ու նրա առաջ
պատասխա՞ն պիտի տայ»:
33 *Յոբը նորից խօսեց ու Տիրոջն*
ասաց.
34 *«Էլ ինչո՞ւ դատ անեմ դեռ,*
կշտամբեմ ու յանդիմանեմ:
Տիրոջից եմ լսում այդ բաները ես:
Ոչնչութիւն եմ, ի՞նչ պատասխան
պիտի տամ ես այդ մասին.
միայն պիտի պապանձուեմ:
35 *Բերանս բացի մի անգամ արդէն,*
էլ երկրորդ անգամ բան չեմ աւե-
լացնի»:

40 *Տէրը ամպերի միջից նորից խօսեց*
ու ասաց Յոբին.
2 *«Այդպէս չէ. տղամարդու պէս*
պնդացրո՛ւ մէջքդ.
Հարցեր եմ տալու քեզ, ու պա-
տասխա՛ն տուր ինձ:
3 *Մի կողմ մի՛ նետիր իմ դա-*
տաստանը
ու մի՛ մտածիր, թէ ես քեզ այլ
ազգարարութեամբ չեմ յայտնուել,
քան այնպէս, որ դու արդար երե-
ւաս:
4 *Թէ՞ կարծում ես, որ Տիրոջ հետ*
նոյն բազուկն ունես
կամ նրա հետ նոյն ձայնով ես
որոտում:
5 *Դէ ուրեմն, բարձր կեցուածք ըն-*
դունի՛ր,
զօրութիւն, փառք ու պատիւ ա՛ռ
վրադ:
6 *Սուրհանդակնե՛ր ուղարկիր բար-*
կութեամբ,
խոնարհեցրո՛ւ բոլոր գոռոզներին,
խոնարհեցրո՛ւ-սառեցրո՛ւ ամբարտա-
ւաններին:
7 *Անմիջապէս խորտակի՛ր ամբա-*
րիշտներին,
8 *առհասարակ բոլորին հողի մէջ*

ծածկի՛ր իսպառ,
նրանց երեսներն անարգանքո՛վ
ողողիր:
9 *Համաձայնուե՞մ արդեօք, որ աջդ*
կարող է փրկել:

ԳԵՏԱՁԻՆ

10 *Իսկ ահա քո առաջն է,*
որովհետեւ գազաններն† *արջառի*
պէս խոտ են ճարակում:
11 *Ահա նրա ուժը մէջքին է,*
զօրութիւնը՝ որովայնի պորտի շուրջ:
12 *Իր պոչը նոճու պէս տնկել է,*
13 *ջլերն իրար են հիւսուած,*
կողերը պղնձից են,
ողնաշարը՝ ճոյլ երկաթից:
14 *Տիրոջ արարածների սկիզբը նա է՝*
խաղալիք դարձած հրեշտակների
ձեռքին:
15 *Ապառաժ լերան վրայ հասնելով՝*
տարտարոսում չորքոտանիների
խրախճանք է սարքել:
16 *Տեսակ-տեսակ ծառերի տակ է*
քուն մտնում՝
շամբի, եղէգի ու կնիւնի տակ:
17 *Նրա գլխաւերեւում հովանի են*
դառնում մեծամեծ ծառեր՝ անտառով
մէկ,
եւ բարդու սիւները:
18 *Հեղեղ էլ լինի՝ նա չի զգայ:*
Անձնապաստան է. եթէ Յորդանան
գետն էլ դէպի իր բերանը դիմի՝
19 *իր ակնակապիճների մէջ կ՚առնի*
այն:

ՎԻՇԱՊԸ

20 *Եթէ վիշապը խոյս տայ, կը*
ծակե՞ս նրա ռունգերը:
Կարո՞ղ ես կարթով բարձրացնել
նրան,
նրա դնչին պախուրց կը դնե՞ս:
21 *Թէ՞ շղթայ կը կապես նրա քթին:*
Սանձ կ՚անցկացնե՞ս նրա կզակին:
22 *Քեզ հետ կը խօսի՞ հեզութեամբ,*
քաղցր լեզուով:
Հետդ ուխտ կը դնի՞:
23 *Նրան քեզ իբրեւ յաւիտենական*
ծառայ կը նուաճե՞ս:

24 *Նրա հետ կը խաղա՞ս, ինչպէս*
թռչնի հետ,
կամ ձագի պէս թելով կը կապե՞ս
նրան:
25 *Ազգեր կը կերակրուեն նրանով,*
եւ փիւնիկեցիների տոհմերը նրան
իրենց մէջ կը բաժանեն:
26 *Բոլոր նաւաստիները, մի տեղ*
հաւաքուելով, նրա պոչից մի թեփ
անգամ չեն վերցնի.
Նրա գանգը ձկնորսների նաւերում
է:
27 *Հէնց որ ձեռքդ վրան դնես՝ կը*
մտաբերես այն պայքարը,
որ տեղի է ունենալու նրա մարմնի
մէջ.
ու այլեւս չես անի:
28 *Չես տեսել դու նրան,*
ոչ էլ կը զարմանաս իմ ասած այս
խօսքերի վրայ:

41 *Չես երկնչի, որովհետեւ ես եմ*
այդ բոլորը պատրաստել:
Բայց ո՞վ է, որ ինձ պիտի հա-
կառակուի,
կամ ո՞վ է, որ ինձ պիտի դի-
մադարձի ու դիմանայ,
2 *երբ այն ամէնը, ինչ որ կայ*
երկնքի ներքոյ, իմն է:
3 *Ցանուն նրա՝ վիշապի, ես չեմ*
լռելու:
Նրա գործն ուժեղ լինելով՝ խղճալու
են նրա զուգընկերոջը:
4 *Ո՞վ կը մերկացնի նրա երեսի քօղը,*
եւ ո՞վ կը մտնի նրա փակ պա-
տեանից ներս,
5 *ո՞վ բաց կ՚անի նրա երախի*
դռները:
Ահն է իշխում նրա ատամների
շուրջբոլորը.
6 *փորը պղնձէ վահան է,*
յօդերը՝ սուր-սուր քարեր,
մէկը միւսի յետեւից կպած են,
7 *նրա միջով օդ չի անցնի:*
8 *Ասես եղբայրն իր եղբօր հետ*
գնայ.
Իրարից կը բռնեն ու չեն բաժանուի:
9 *Նրա փռնչոցից փայլակներ են*
դուրս թռչում.
Նրա աչքերը փայլածուի տեսք ունեն:

†Եբրայերէն՝ բեհեմոթը (գետաձին)՝ վիշապը:

10 Նրա բերանից վառուած լապտերներ են դուրս ժայթքում,
եւ հրեղէն շանթեր են արձակւում:
11 Նրա ռունգերից, ինչպէս հնոցի կրակից, ծուխ է ելնում:
12 Նրա շնչից կայծեր են դուրս թռչում,
եւ բերանից բոց է դուրս գալիս:
13 Նրա պարանոցում զօրութիւնն է հաստատուած.
նրա առջեւից կործանումն է ընթանում:
14 Նրա մարմնի անդամները ամուր կպած են իրար.
եթէ մէկը վրան ընկնի, նա չի էլ խլրտայ,
15 որովհետեւ նրա սիրտն ապառաժ քար է կտրել
եւ դարբնի սալի նման անշարժ, հաստատուն է:
16 Երբ խլրտայ՝ ահը կը համակի երկրի զաւաններին,
չորքոտանիներին ու գետուններին:
17 Թէ նրան տէգեր, զէնքեր ու նիզակներ հանդիպեն, վնաս չեն հասցնի,
18 որովհետեւ նա երկաթը յարդ է համարում,
պղինձը՝ փտած փայտ:
19 Նրան չի խոցում պղնձէ աղեղը:
20 Ռմբաքարը նա խոտի տեղ է ընդունում, լախտը՝ եղէգի:
Մի ծաղում է իր դիմաց ճօճուող կրակի վրայ:
21 Սուր-սուր տէգերը նրա անկողինն են:
Մովի ամբողջ ոսկին նրա տակ՝ անբաւ կաւի պէս է:
22 Անդունդները կաթսայի պէս է եռացնում:
Մովը ոչնչութիւն է համարում,
անդնդային տարտարոսը՝ մի գերի,
23 անդունդները՝ զբօսավայր:
24 Երկրի վրայ չկայ բան, որ նման լինի նրան:
Նա ստեղծուել է իբրեւ խաղալիք իմ հրեշտակների համար:
25 Արհամարհանքով է նայում ամէն բարձր բանի,
եւ ջրերում եղած ամէն ինչի թագաւորն ինքն է»:

ՅՈԲԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ Է ԻՐ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

42 Յոբը նորից խօսեց ու Տիրոջն ասաց.
2 «Գիտեմ, պատում է ուժդ ամէն ինչի,
ու չի թուլանում քո մէջ ոչ մի բան:
3 Այն ո՞վ կը ծածկի քեզնից իր միտքը,
խօսք կը խնայի ու կը կարծի, թէ կարող է պահել:
Այն ո՞վ կ'ասի ինձ, ինչ որ չգիտեմ,
մեծ ու ապշելի բաներ, որոնց ես իրազեկ չէի:
4 Արդ, լսի՛ր ինձ, Տէ՛ր. ես եմ խօսելու, հարցնելու բաներ. սովորեցրո՛ւ ինձ:
5 Սրանից առաջ ես ականջներովս էի լոկ լսել,
բայց հիմա աչքերս էլ տեսան հէնց քեզ:
6 Այդ պատճառով նուաստ համարեցի ինձ ու հալուեցի ես:
Ինքս ինձ հող ու մոխիր եմ դիտում»:

ՏԷՐԸ ԿՇՏԱՄԲՈՒՄ Է ԵՐԵՔ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻՆ

7 Երբ Տէրը Յոբի հետ այս բաները խօսեց, Աստուած ասաց Եղիփազ Թեմնացուն.
«Մեղք գործեցիր դու, նաեւ քո երկու բարեկամները,
քանի որ իմ առաջ ճշմարիտ բան չասացիք,
ինչպէս իմ ծառայ Յոբը:
8 Բայց հիմա եօթը զուարակ առէ՛ք ու եօթը խոյ,
գնացէ՛ք իմ ծառայ Յոբի մօտ,
ու թող նա ողջակէզ անի ձեզ համար,
իմ ծառայ Յոբը թող նաեւ աղօթի ձեզ համար,
քանի որ, եթէ ես նկատի ունեցած չլինէի նրան,
ու նրա համար չլինէր այս,
ես արդարեւ կորստի մատնած կը լինէի ձեզ,
որովհետեւ իմ ծառայ Յոբի մասին ճշմարիտ բաներ չասացիք»:
9 Եղիփազ Թեմնացին, Բաղդատ

Սոքեցին ու Սոփար Մինեցին գնացին ու արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել իրենց: Եւ թողութիւն շնորհեց նրանց մեղքերին՝ յանուն Յոբի:

ՏԷՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՅՈԲԻՆ

10 Ու Տէրը ճոխացրեց Յոբին, եւ երբ սա աղօթեց իր բարեկամների համար, Տէրը թողութիւն շնորհեց նրանց մեղքերին: Տէրը կրկնակի աւելի շատ տուեց, քան այն հարստութիւնը, որ առաջ Յոբն ունէր: 11 Նրա բոլոր եղբայրներն ու քոյրերը լսեցին այն բոլոր դէպքերի մասին, որ պատահել էին նրան, եկան մօտը, եկան նաեւ բոլոր նրանք, ովքեր առաջ ճանաչում էին նրան: Կերան-խմեցին նրա մօտ, սփոփեցին նրան ու զարմացան այն բոլոր բաների վրայ, որ նրա գլխին բերել էր Տէրը: Իւրաքանչիւրը նրան մի գառ տուեց ու չորսդրեհմանոց անդրոշմ ոսկի[†]: 12 Ու Տէրը Յոբի կեանքի վերջին շրջանն աւելի օրհնեց, քան առաջին շրջանը. նրա հօտի մէջ կային տասնչորս հազար ոչխարներ, վեց հազար ուղտեր, հազար լուծ եզներ, հազար արածող մատակ էշեր: 13 Նա ունեցաւ եօթը տղայ եւ երեք աղջիկ: 14 Առաջին աղջկան Տիւ կոչեց, երկրորդին՝ Կասիա, իսկ երրորդին՝ Ամաղթեղջիւր: 15 Եւ երկնքի ներքոյ Յոբի դուստրերի պէս ու նրանցից աւելի գեղեցիկներ չգտնուեցին: Յոբն իր աղջիկներին ժառանգութեան բաժին տուեց նրանց եղբայրների հետ:

16 Յոբը, այն հարուածներից յետոյ, ապրեց հարիւր եօթանասուն[†] տարի (նա ապրեց ընդամէնը երկու հարիւր քառասուն եւ ութ տարի): Յոբը տեսաւ իր զաւակներին, որդիների որդիներին, մինչեւ չորրորդ սերունդը: Ու վախճանուեց Յոբը զառամեալ հասակում, տարիների բեռան տակ կքած: Նաեւ գրուած է, որ նա էլ յարութիւն է առնելու նրանց հետ, ում Տէրը յարութիւն պիտի տայ:
17 Սա[‡] թարգմանուած է ասորերէն գրքից: Յոբը բնակւում էր Աւստայ երկրում, եդոմայեցիների ու արաբների սահմաններում: Առաջ նրա անունը Յոբաբ էր: Արաբ կին առնելով՝ որդի ունեցաւ, որի անունն էր Ենոով: Նրա հայրը Զարեհն էր՝ Եսաւի որդու որդին: Նրա մայրը բոսորացի էր: Այնպէս որ նա Աբրահամից սկսած՝ հինգերորդ սերունդն էր:
Սրանք են այն թագաւորները, որ թագաւորեցին Եդոմում. առաջինը՝ Բէորայ Բաղակը (սրա քաղաքի անունն էր Դենաբայ), Բաղակից յետոյ՝ Յոբաբը (որ Յոբ կոչուեց), սրանից յետոյ՝ Ասոմը (որ թեմնացիների երկրի զօրավարն էր), սրանից յետոյ՝ Բարադի որդի Ադադը (որ Մադիամին ջարդեց Մովաբի դաշտում. նրա քաղաքի անունն էր Գէթեմ): Իսկ այն բարեկամները, որ նրա մօտ եկան, սրանք էին. Եղիփազը՝ թեմնացիների արքան (Եսաւի որդիներից), սոքեցիների բռնակալ Բաղդատը, մինեցիների արքայ Սոփարը:

---

†Մի գառի արժողութեամբ:

†Եբրայերէն՝ հարիւր քառասուն:

‡Այսինքն՝ Յոբի գիրքը, ոչ թէ գրաբար թարգմանութիւնը:

ու տարիները բռնակալ մարդուն
հաշուով են տրուած:
21 Նրա ահի ձայնն իր ականջում է:
Երբ նա կարծի, թէ խաղաղութեան
մէջ է՝
նրա վրայ կործանում է գալու:
22 Թող չհաւատայ, թէ կը վերա-
դառնայ խաւարից,
որովհետեւ արդէն սրի է դատա-
պարտուած:
23 Սահմանուած է իբրեւ անգղերին
կեր.
իր ներսում ինքն էլ գիտէ,
որ հաստատ կործանուելու է:
24 Մթին օրը զարհուրեցնելու է
նրան.
անձկութիւնն ու նեղութիւնն են
նրա վրայ հասնելու.
կործանուելու է իբրեւ առաջին գծի
զօրավար,
25 որովհետեւ ձեռք է բարձրացրել
Տիրոջ դէմ
ու ընդվզել է Ամենակալ Տիրոջ դէմ:
26 Գոռոզութեամբ, իր վիթխարի
վահանով է յարձակուել նրա վրայ:
27 Երեսը ծածկել է իր ճարպով
ու երկայրի սուր դրել ազդրին:
28 Աւերակ քաղաքներում է բնա-
կուելու
եւ անմարդաբնակ տներ մտնելու.
ինչ որ իրենք պատրաստել էին,
ուրիշներն են տանելու:
29 Չի հարստանալու, ունեցուածքը
չի մնալու,
երկրի վրայ ստուեր չի գցելու,
խաւարից էլ չի փրկուելու:
30 Նրա բողբոջը հողմն է թառա-
մացնելու.
թափուելու է ծաղիկը նրա:
31 Թող չհաւատայ, որ հանգիստ է
գտնելու.
վախճանը փուչ է լինելու:
32 Վաղաժամ են կտրուելու ճիւղերը
նրա,
չիւերն էլ չեն ծաղկելու:
33 Խակ պտուղի պէս վաղաժամ է
քաղուելու.
ձիթենու ծաղկի պէս ցած է
թափուելու,
34 քանզի մահն է ամբարշտի վկան.
հուրն է այրելու կաշառակերների
տները:
35 Իր մէջ ցաւեր է սաղմնաւորելու.
վախճանը փուչ է լինելու.
նրա արգանդը նենգութիւն է
ծնելու»:

ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԻՑ ԴԷՊԻ ԱՍՏԾՈՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

16 Յոբը նորից խօսեց ու ասաց.
2 «Շատ եմ լսել ես այդպիսի բաներ.
խեղճ ամոքիչներ էք դուք բոլորդ
էլ†:
3 Բայց հիմա ի՞նչ ժամանակն է
դատարկ խօսքերի,
կամ մէկը խնդրո՞ւմ է քեզ, որ
պատասխանես:
4 Ես էլ ձեզ պէս կը խօսէի,
եթէ ձեր հոգին էլ իմի պէս լինէր:
5 Ձեզ պէս ես էլ կարող էի գլուխս
շարժել,
ձեզ կսկիծ պատճառել խօսքերով:
6 Գուցէ իմ բերանում ուժ ունենայի,
ու ես չզլանայի շրթունքներս
շարժել,
7 քանզի թէ խօսեմ՝ չի փարա-
տուելու ցաւը վէրքերիս,
իսկ եթէ լռեմ՝ աւելի՞ քիչ եմ
խոցոտուելու ես:
8 Արդ, դարձրել է ինձ ջարդուած,
փտած ու ընդարմացած:
9 Ձեռքը գցել է ահա ինձ վրայ.
մարտիրոսուել եմ:
Դէմս է կանգնեցրել իմ ստուերը,
երեսովս տուել պատասխաններս:
10 Բարկութեամբ մղուած՝ կործանել
է ինձ,
ատամ կրճտացրել իմ անձի վրայ:
Նրա հէնների նետերն են վրաս
տեղացել ուժգին,
աչքերի տէգով շարժուել ինձ վրայ:
11 Իրար յետեւից խփել է ծնկիս.
բոլորը մէկտեղ խուժել են վրաս:
12 Տէրն ինձ մատնել է ձեռքն
անիրաւի,
ամբարիշտների մէջ է գցել ինձ:
13 Մինչ խաղաղ էի՝ քայքայել է
ինձ,
քաշել մազերիցս ու փետել դրանք:

†Երրայերէն՝ 2-11-ը տարբեր են:

14 Թիրախ կանգնեցրել, տէգեր են
պատել:
Երիկամներս են խոցել անխնայ,
գետին են թափել մաղձն իմ.
15 ինձ կործանել են՝ հարուած
հարուածի վրայ իջեցնելով:
Վրաս են թափուել զօրաւորները,
16 եւ քուրձ են կարել մորթիս վրայ
նրանք:
17 Հանգել է գետնին զօրութիւնը իմ.
լալուց խաշուել են աղիքները իմ.
մահուան ստուերն է իջել կոպերիս:
18 Անիրաւութիւն չկար իմ ձեռքին,
եւ անարատ էր աղօթքն իմ հոգու:
19 Երկի՛ր, մի՛ ծածկիր արիւնն իմ
մարմնի.
թող աղաղակս կանգ չառնի բնաւ:
20 Եւ ահա հիմա վկաս երկնքում,
դատապաշտպանս այն բարձուն-
քում են:
21 Խնդիրքս թող որ Տիրոջը հասնի,
ու նրա առաջ աչքերս արտասուեն:
22 Երանի մէկը պաշտպան կանգնի
ինձ Տիրոջ յանդիման,
ինչպէս որ մարդը՝ իր ընկերոջը:
23 Իմ տարիները հաշուուած են արդ.
բռնել եմ արդէն անդարձի ուղին»:

ԱՆՅՈՒՍՈՒԹԻՒՆ

17 «Կորչում եմ հողմավար. կարօտ
եմ շիրիմի,
բայց դրան չեմ հասնում†:
2 Նեղւում, տանջւում եմ. ի՞նչ եմ
անելու:
Գողացան օտարներն ինչքերս:
3 Այն ո՞վ է, որ ձեռքն իր իմ ձեռքի
մէջ դնի:
4 Քանի որ սրտները հեռու է
դատումից,
ուստի չես բարձրացնի Դու նրանց:
5 Նրանց փոխարէն են պատմելու
չարիքները բիւր:
Աչքերս որդոցս համար հալուեցին:
6 Ողջ սերունդների չարախօսութեան
ենթարկեցիր ինձ.
նրանց ծաղրանքի առարկան դար-
ձայ:
7 Բարկութիւնից իմ մթնեցին
աչքերս.
խիստ պաշարուած եմ բոլորի
կողմից:
8 Ճշմարիտ մարդիկ զարմացած են
այս ամենի վրայ.
արդարը հիմա վեր է կենալու
անիրաւի դէմ:
9 Հաւատարիմը թող հաստատ մնայ
իր ճանապարհին,
իր մաքուր ձեռքով քաջալերութիւն
ստանայ թող միշտ:
10 Բայց դուք էլ, ամէնքդ, վե՛ր
կացէք, եկէ՛ք.
ձեր մէջ չեմ գտնում ճշմարտութիւն
ես:
11 Իմ օրերը խիստ շարաւոտ եղան.
սրտիս երակներն ամէն պայթեցին:
12 Գիշերս ցերեկուայ տեղ դրին
նրանք.
լոյսը մերժուեց մութի երեսից:
13 Թէ համբերեմ ես՝ դժոխք կը
դառնայ ինձ համար տունս:
Խաւարի մէջ է փռուած մահիճս:
14 Մահը ինձ համար ես հայր
կոչեցի,
նեխուածքը† մայր, քոյր:
15 Ո՞ւր է յոյսը իմ, կամ բարիքներս
պիտի տեսնե՞մ ես:
16 Թէ՞ այդ բոլորը պիտի գերեզման
իջեցնեմ հետս.
բոլորս իրար հետ հո՞ղն ենք
իջնելու»:

ՈՐՈԳԱՅԹ ՋԱՐԻ ՀԱՄԱՐ

18 Բաղդատ Սոքեցին նորից խօսեց
ու ասաց.
2 «Մինչեւ ե՞րբ դադար չես առնելու.
հանդարտուի՛ր, որ մենք էլ խօսենք:
3 Ինչո՞ւ ենք մենք չորքոտանիների
պէս լռել քո առաջ,
4 իսկ դու համակ բարկութիւն ես:
Հիմա եթէ դու մեռնես՝
երկնքի ներքոյ ամայութի՞ւն է
տիրելու,
թէ՞ լեռներն են հիմնայատակ
կործանուելու:
5 Հանգելու է ամբարիշտների լոյսը.
նրանց բոցը չի փայլելու:
6 Նրա լոյսը խաւարելու է իր յարկի
տակ,

†Երրայերէն՝ պալարը:

ԵՍԱՅԻ
Ներածութիւն

Եսայի անունը եբրայերէն նշանակում է «Տէրը փրկում է»: Այս անունն ինքնին ամփոփում է գրքի բովանդակութիւնը եւ ծառայում իբրեւ վերնագիր:

Գրքի 66 գլուխները կցուած են իրար իրենց երեք գլխաւոր մասերով, որոնք համապատասխանում են իսրայէլացի ժողովրդի պատմութեան երեք տարբեր ժամանակաշրջաններին:

Առաջին մասը վերաբերում է (Ն. Ք.) 740-ից մինչեւ շուրջ 700 թուականների մարդկանց եւ այդ տարիների իրադարձութիւններին: Եսային Երուսաղէմում դառնում է Աստծու խօսքի տարածողը միջազգային լարուածութեան վտանգաւոր մի ժամանակաշրջանում. Եգիպտոսը՝ հարաւի այդ հզօր պետութիւնը, իր լիակատար անկումն էր ապրում, մինչդեռ հիւսիսում Ասորեստանի հզօրացումը օրէցօր աւելի սպառնալից էր դառնում:

Ահա այս ժամանակաշրջանում է, որ հանդէս է գալիս Եսային որպէս Աստծու անհաշտ առաջամարտիկը, որի պատգամները ներգործում էին միշտ հոսանքի հակառակ ուղղութեամբ: Նա ասորեստանեան սպառնալիքը ներկայացնում է որպէս Աստծու միջամտութիւնը իրեն անհաւատարիմ ժողովրդի դէմ, բողոքում է Երուսաղէմի ղեկավարների քաղաքական մութ հաշիւների, մարդկային իրաւունքի եւ ընկերային արդարութեան մշտական խախտումների, փառքի տիրանալու ցանկութեան դրսեւորումների, ինչպէս նաեւ կրօնական պարտականութիւնների ձեւական կատարման դէմ, որոնց յետեւում են պատսպարում խեղճերին եւ աղքատներին շահագործողները: Սակայն երբ ժողովուրդը իրական մի վտանգի առաջ է գտնւում, նոյն մարգարէի պատգամը որպէս պատուար ցցում է խուճապի եւ յուսահատութեան դէմ: Բոլոր հանգամանքներում Եսային կոչ է անում հաւատալ, չկորցնել վստահութիւնը Աստծու խոստումների նկատմամբ: Հաւատը պէտք է միշտ ի յայտ գայ գործերով ինչպէս ընկերային ու քաղաքական ասպարէզում, այնպէս էլ անհատական յարաբերութիւններում:

Գրքի առաջին մասը բաղկացած է բազմաթիւ պատգամներից, որոնք խմբաւորուած են աւելի շուտ ըստ թեմաների, քան ըստ ժամանակագրական կարգի:

Գրքի երկրորդ մասը յաճախ կոչուել է Իսրայէլի մխիթարութեան գիրք:

Այս մասում հանդէս են գալիս բաբելոնացիները, որոնք փոխարինել էին ասորեստանցիներին որպէս այդ ամբողջ շրջանին տիրապետող ուժ, գրաւել էին Երուսաղէմը 587 թուականին (Ն. Ք.) եւ տեղահանել նրա բնակիչներին: Հեռու գտնուելով այն երկրից, որ Տէրն էր տուել նրանց, զրկուած լինելով իրենց տաճարից, որտեղ հանդիպում էին Աստծուն, աքսորեալներն ընկնում են յուսահատութեան մէջ՝ համոզուած լինելով, որ Աստուած իրենց լքել է կամովին կամ անկարողութեան պատճառով:

Մի նոր ազատագրութիւն, որ յիշեցնում է Եգիպտոսից ելքը, թոյլ է տալիս նրանց վերադառնալ Աւետեաց երկիրը:

Ցուսադրող այս պատգամների միջեւ զետեղուած են չորս բանաստեղծութիւններ, որոնք ներկայացնում են խորհրդաւոր մի անձնաւորութեան՝ Տիրոջ ծառային, ի դէմս որի Նոր Կտակարանը տեսնում է Յիսուսի նախնական մէկ դիմանկարը (տե՛ս Գործք 8, 30-35):

Գրքի երրորդ մասը վերաբերում է այն ժամանակաշրջանին, որը յաջորդում է գերութիւնից վերադարձին: 538 թուականին (Ն. Ք.) պարսից Կիւրոս թագաւորը ստորագրում է մի հրամանագիր, որով աքսորեալներին թոյլատրւում էր վերադառնալ իրենց երկիրը եւ վերաշինել կործանուած տաճարը: Այն աքսորեալները, որոնք ընտրել էին վերադարձի ճանապարհը, հասնելով իրենց երկիրը, այնտեղ գտնում են միայն թշուառութիւն եւ ծանր ու անհնարին կեանք. փլատակների վերածուած մի քաղաք, տեղում մնացած բնակիչների կողմից թալանուած մի երկիր, խլեակների վերածուած հաւատացեալների մի խումբ, անկայուն նիւթական դրութիւն, ընկերային անարդարութեան վերածնունդ, բոնի վերադարձ կուապաշտութեան եւ այլն:

Սակայն Եսային ներկայանում է որպէս Տիրոջ Հոգուց ուղարկուած մի մարգարէ՝ «աւետելու բարի լուրը աղքատներին եւ հոգ տանելու յուսահատուածներին»: Ցետագայում մարգարէի այս առաքելութեան մէջ Յիսուս պիտի տեսնէր այն ծրագիրը, որ ինքն իսկ եկաւ իրականացնելու այս աշխարհում (Ղուկ. 4. 16-21):

ԵՍԱՅՈՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 1 *Ամոսի որդի Եսայու տեսիլքը, որ նա տեսաւ Հրէաստանի եւ Երուսաղէմի վրայ, երբ Հրէաստանում թագաւորում էին Օզիան, Յովաթամը, Աքազը եւ Եզեկիան:*

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

2 *Լսի՛ր, երկի՛նք, եւ ակա՛նջ դիր, երկի՛ր,*
քանզի Տէրն է խօսում.
«Զաւակներ ունեցայ եւ մեծացրի,
իսկ նրանք ինձ անարգեցին:
3 *Եզն իր տիրոջն է ճանաչում, եւ էշը՝ իր տիրոջ մսուրը,*
բայց Իսրայէլն ինձ չճանաչեց,
իմ ժողովուրդն ինձ չհասկացաւ:
4 *Վա՜յ մեղաւոր ազգին.*
մեղքերով լի ժողովո՛ւրդ,
չարագո՛ծ սերունդ,
անօրէ՛ն ծնունդներ,
թողեցիք Տիրոջը,
բարկացրիք Իսրայէլի սրբին:
Նրանք օտարացան ու յետ քաշուեցին:
5 *Ինչո՞ւ էք անօրէնութիւնների վրայ նոր վէրքեր աւելացնում*[†]*:*
Ամէն գլուխ ցաւի մէջ է, ամէն սիրտ՝ տրտմութեան:
6 *Ոտքերից մինչեւ գլուխ նրա վրայ առողջ տեղ չկայ.*
վէրքերի, այտուցների եւ շարաւոտ խոցերի վրայ դնելու ո՛չ սպեղանի կայ,
ո՛չ ձէթ եւ ո՛չ էլ վիրակապ:
7 *Ձեր երկիրն աւերակ է, ձեր քաղաքները՝ հրոյ ճարակ.*
թշնամի ցեղերից աւերուած ու ամայացած ձեր հողի բարիքները
ձեր իսկ աչքի առաջ օտարներն են ուտում:
8 *Սիոնի դուստր Երուսաղէմը պիտի մնայ լքուած,*
ինչպէս տաղաւարը՝ այգում, մրգապահների հիւղակը՝ սեխի պարտէզում,
ինչպէս պաշարման մէջ գտնուող քաղաքը:
9 *Եթէ Զօրութիւնների Տէրը մեզ սերունդ թողած չլինէր,*
կը դառնայինք Սոդոմի պէս, կը նմանուէինք Գոմորին:
10 *Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Սոդոմի իշխաններ,*
ակա՛նջ դրէք Աստծու օրէնքներին, ո՛վ Գոմորի մարդիկ:
11 *«Իմ ինչի՞ն են պէտք ձեր բազմաթիւ զոհերը,— ասում է Տէրը,—*
ես կշտացել եմ ձեր խոյերի ողջակէզներից.
ձեր գառների ճարպը, ցուլերի ու նոխազների արիւնը չէ, որ ուզում եմ,
12 *եւ ոչ էլ այն, որ գաք ու կանգնէք իմ առաջ:*
Ո՞վ խնդրեց դա ձեզնից.
մի՛ շարունակէք կոխոտել իմ գաւիթները:
13 *Եթէ ազնիւ ալիւրի հաց մատուցէք ինձ՝ զուր է լինելու.*
ձեր խնկերն էլ պիղծ են ինձ համար.
ձեր ամսամուտները, շաբաթները եւ տօնական մեծ օրը ես անընդունելի են ինձ.
14 *ձեր պահեցողութիւնն ու հանգիստը,*
ձեր ամսամուտներն ու տօները ատեց իմ հոգին:
Կշտացել եմ ձեզնից,
այլեւս չեմ ների ձեր մեղքերը:
15 *Երբ աղօթքի համար դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռքերը,*
երես եմ դարձնելու ձեզանից,
եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ,
որովհետեւ ձեր ձեռքերը լի են արիւնով:
16 *Լուացուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք,*
իմ աչքի առաջ ձեր չար արարքները թօթափեցէ՛ք ձեզնից,
վե՛րջ տուէք ձեր չարագործութիւններին:
17 *Սովորեցէք բարի՛ք գործել,*
արդարութի՛ւն փնտռեցէք,
փրկեցէ՛ք զրկուածի՛ն,
արդարադա՛տ եղէք որբի հանդէպ,
իրաւո՛ւնք տուէք այրուն:
18 *Եկէ՛ք խօսենք իրար հետ,— ասում է Տէրը.—*
եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են,
ապա ես ձեան պէս ճերմակ կը

[†]Եբրայերէնում՝ *ի՞նչ պտիժ սահմանենք, երբ աւելի ապստամբէք:*

դարձնեմ,
եթէ որդան կարմիր լինեն,
կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ:
19 Եւ եթէ յօժար լինէք ու լսէք ինձ,
դուք կը ճաշակէք երկրի բարիքները.
20 իսկ եթէ չկամենաք ինձ լսել,
սո՛ւրը պիտի ուտի ձեզ,
քանզի Տիրոջ շուրթերն ասացին այս»:

ԱՊԱԿԱՆՈՒԱԾ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

21 «Ինչպէ՜ս պոռնիկ դարձաւ հաւատարիմ քաղաք Սիոնը,
որը լի էր հաւատով,
ուր արդարութիւնն էր բնակւում,
իսկ այժմ՝ մարդասպանները:
22 Ձեր արծաթը փորձուած չէ,
ձեր վաճառականները գինուն ջուր են խառնում,
23 ձեր իշխաններն ապստամբներ են եւ գողերին գողակից,
կաշառք սիրող են եւ վրէժխնդիր,
որբերի իրաւունքը չեն պաշտպանում
եւ ուշադրութիւն չեն դարձնում այրիների դատին»:
24 Դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝
Իսրայէլի ամենազօր Աստուածը.
«Վա՜յ ձեզ, Իսրայէլի հզօրնե՛ր,
բարկութիւնն իմ այլեւս չի դադարելու իմ հակառակորդների հանդէպ,
դատ ու դատաստանով պիտի պատժեմ իմ թշնամիներին:
25 Ձեռքս պիտի ձգեմ քեզ վրայ,
մաքրելու համար քեզ քուրայում պիտի այրեմ,
կորստեան պիտի մատնեմ ապստամբներիդ,
քո միջից պիտի վերացնեմ բոլոր անօրէններին,
բոլոր ամբարտաւաններին պիտի խոնարհեցնեմ:
26 Քեզ վրայ, ինչպէս առաջ,
դատաւորներ պիտի կարգեմ ու խորհրդականներ՝ ինչպէս նախկինում,
եւ այն ժամանակ դու կը կոչուես Քաղաք արդարութեան՝ քաղաքների մայր Հաւատարիմ Սիոն»:
27 Արդարեւ, նա գերութիւնից պիտի փրկուի իրաւունքով,
արդարութեամբ եւ ողորմածութեամբ:
28 Բայց անօրէններն ու մեղաւորները պիտի խորտակուեն միասին,
եւ նրանք, որ լքեցին Տիրոջը, պիտի բնաջնջուեն միասին:
29 Նրանք ամաչելու են այն կուռքերի համար,
որոնց հանդէպ սէր էին տածում,
ամօթահար են լինելու այն դիւապատկերների համար,
որ իրենք կերտեցին,
խայտառակուելու են այն պարտէզների† համար,
որոնց ցանկանում էին:
30 Լինելու են ինչպէս տերեւաթափ բեւեկնի,
նմանուելու են այգու, որը ջուր չունի:
31 Նրանց զօրութիւնը վերածուելու է ծեծուած վուշի խուրձի,
իսկ նրանց գործերը՝ կրակի կայծերի,
եւ անօրէններն ու մեղաւորները այրուելու են միասին.
եւ չի լինելու ոչ ոք, որ հանգցնի կրակը:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

2 1 *Ամոսի որդի Եսայուն ուղղուած խօսքը Հրէաստանի եւ Երուսաղէմի մասին*
2 Վերջին օրերին պիտի յայտնուի Տիրոջ լեռը,
Աստծու տունը՝ լեռների գագաթներին,
պիտի բարձրանայ բլուրների վրայ,
եւ բոլոր հեթանոսները պիտի շարժուեն դէպի նա:
3 Գալու են բազում ժողովուրդներ՝ ասելով.
«Եկէ՛ք ելնենք Տիրոջ լեռն ու Յակոբի Աստծու տունը: Նա մեզ կը սովորեցնի իր ճանապարհները, որոնցով եւ կը գնանք»:
Օրէնքները Սիոնից են դուրս գալիս,

†պարտէզներ — սուրբ անտառներ, ուր զոհեր էին մատուցում եւ ամէն կարգի արգելուած բաներ ուտում. տե՛ս նաեւ 65, 3 եւ 66, 17:

եւ Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից:
4 Նա դատաստան պիտի տեսնի հեթանոսների մէջ ու պիտի յանդիմանի բազում ժողովուրդների:
Նրանք իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն,
եւ իրենց սուիններից՝ մանգաղներ.
ազգ ազգի վրայ սուր չպիտի բարձրացնի,
եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել:

ՏԻՐՈՋ ՕՐԸ

5 Արդ, ո՛վ տունդ Յակոբի, եկէ՛ք քայլենք Տիրոջ լոյսի մէջ:
6 Նա երես դարձրեց իր ժողովրդից՝ Յակոբի տնից,
որովհետեւ նրանց երկիրը, ինչպէս այլազգիներինը,
առաջուայ պէս լցուեց կախարդներով,
եւ նրանք բազում այլազգի որդիներ ունեցան:
7 Նրանց երկիրը լցուեց ոսկով ու արծաթով,
նրանց գանձերին թիւ չկար.
նրանց երկիրը լցուեց երիվարներով,
նրանց ռազմակառքերին թիւ չկար:
8 Նրանց երկիրը լցուեց իրենց իսկ ձեռքերով կերտուած դարշելի կուռքերով,
եւ նրանք երկրպագեցին նրա՜նց, որ իրենց մատներն էին ստեղծել:
9 Ստորացաւ մարդը,
գետնամած խոնարհուեց տղամարդը,
ես չեմ ների նրանց:
10 Արդ, Տիրոջ սարսափից ու նրա փառքի զօրութիւնից
գնացէք քարերի տա՛կ մտէք,
հողի մէ՛ջ թաքնեցուէք,
երբ նա կը յառնի երկիրը պատուհասելու:
11 Տէրը նայում է բարձունքից,
իսկ մարդը խեղճ ու ողորմելի է.
մարդկանց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհուի,
ու այդ օրը միայն Տէրը պիտի բարձրանայ,
12 քանզի Զօրութիւնների Տիրոջ օրը բոլոր հպարտների ու ամբարտաւանների վրայ է,
բոլոր մեծամիտների ու գոռոզների վրայ, որոնք պիտի խոնարհուեն,
13 նաեւ Լիբանանի բոլոր բարձր ու սլացիկ մայրիների վրայ
եւ Բասանի բոլոր կաղնի ծառերի վրայ,
14 բոլոր բարձր լեռների եւ բարձրիկ բլուրների վրայ,
15 բոլոր վերասլաց աշտարակների եւ բարձր պարիսպների վրայ,
16 ծովի բոլոր նաւերի վրայ,
բոլոր վեհաշուք նաւերի վրայ:
17 Ամէն մարդ պիտի խոնարհուի,
մարդկանց հպարտութիւնը պիտի իջնի,
եւ միայն Տէրը պիտի բարձրանայ այդ օրը:
18 Նրանք իրենց բոլոր ձեռակերտ կուռքերը պիտի տանեն թաքցնեն
19 քարայրներում, ժայռերի ծերպերում ու գետնի խոռոչներում՝
սարսափած Տիրոջից ու նրա փառքի զօրութիւնից,
երբ նա կը յառնի՝ երկիրը պատուհասելու:
20 Այն օրը մարդ իր արծաթէ ու ոսկէ գարշելի կուռքերը, որ պատրաստել էր սնոտի բաներին ու չղջիկներին երկրպագելու համար, պիտի հանի՝ 21 Տիրոջ սարսափից եւ նրա փառքի զօրութիւնից մտնելով ամրակուռ ապառաժների խոռոչներն ու ծերպերը, երբ Տէրը կը յառնի՝ երկիրը պատուհասելու:
22 Դադարեցէ՛ք յոյս դնել այն մարդու վրայ,
որի շունչը ռունգերի մէջ է,
որովհետեւ ի՞նչ վստահութիւն կարող է ներշնչել նա:

ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ

3 *Ահաւասիկ Զօրութիւնների Տէր Աստուածը*
Հրէաստանից եւ Երուսաղէմից պիտի վերացնի հզօր տղամարդուն եւ զօրաւոր կնոջը,
հացի զօրութիւնը եւ ջրի զօրութիւնը,

2 Հսկային, զօրեղին եւ քաջամարտիկին,
դատաւորին, մարգարէին, քննիչին եւ ծերին,
3 յիսնապետին եւ սքանչելի խորհրդականին,
իմաստուն ճարտարապետին եւ խելամիտ ատենակալին† :
4 Նրանց վրայ իշխան պիտի կարգեմ մանուկներին,
խաբեբաները պիտի տիրեն նրանց:
5 Ժողովուրդն իրար պիտի անցնի,
տղամարդը տղամարդու դէմ պիտի ելնի,
ընկերն՝ ընկերոջ դէմ,
մանուկը ծերի հետ պիտի ընդհարուի,
անարժանն՝ արժանաւորի հետ:
6 Ու մարդ պիտի բռնի իր եղբօրը կամ իր հօր ընտանիքից մէկին եւ ասի.
«Դու վերարկու ունես, մեզ իշխա՛ն դարձիր,
թող մեր կերակուրը քո հրամանով լինի»:
7 Այն ժամանակ նա պատասխան է տալու՝ ասելով.
«Իշխան չեմ լինի, որովհետեւ իմ տանը ո՛չ հաց կայ եւ ո՛չ էլ հագուստ.
ես այս ժողովրդի վրայ իշխան չեմ դառնայ»:
8 Եւ այսպէս, Երուսաղէմը լքուեց, Հրէաստանը կործանուեց,
եւ նրանց լեզուները անօրէնութեամբ ապստամբեցին Տիրոջ դէմ:
9 Ահա թէ ինչու նրանց փառքը նսեմացաւ,
ամօթը ծածկեց նրանց երեսը,
եւ նրանք, սոդոմայեցիների նման, իրենց մեղքերը պատմեցին ու յայտնի դարձրին:
Վա՜յ նրանց հոգիներին,
որովհետեւ իրենք իրենց համար չար խորհուրդներ խորհեցին
10 եւ ասացին. «Կապենք արդարին, քանի որ նա մեզ անհաճոյ է»:
Այսուհետեւ նրանք իրենց արարքների պտուղները պիտի ուտեն:
11 Վա՜յ անօրէնին,
չարիքներ պիտի գան նրա վրայ՝ ըստ իրենց կատարած չար գործերի:

†Եբրայերէնում՝ կախարդին:

12 Ո՛վ իմ ժողովուրդ, ձեր հարկահաններ ձեզ ճռաքաղ են անում,
հարկապահանջները տիրում են ձեզ.
ո՛վ իմ ժողովուրդ,
նրանք, ովքեր երանի են տալիս ձեզ,
խաբում են ձեզ եւ խոտորում ձեր շաւիղները:

ՏԷՐԸ ԴԱՏԵԼՈՒ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

13 Բայց ահա ներկայանալու է Տէրը, որ դատաստան անի,
եւ իր ժողովրդին կանգնեցնելու է ատեանում:
14 Տէրն ինքը դատելու է իր ժողովրդի ծերերին եւ նրանց իշխաններին.
«Դուք ինչո՞ւ հրկիզեցիք իմ այգին.
տնանկից յափշտակուածը ձեր տներում է:
15 Դուք ինչո՞ւ էք զրկում իմ ժողովրդին եւ ամօթահար անում տնանկներին», —
ասում է Տէրը, Զօրութիւնների Տէրը:

ՍԻՈՆԻ ՊՃՆԱՋԱՐԴ ԴՈՒՍՏՐԵՐԻ ԴԷՄ

16 Այսպէս է ասում Տէրը.
«Սիոնի դուստրերը հպարտացան,
քայլում էին բարձրապարանոց,
աչքով-ունքով էին անում,
շարժուելիս իրենց քղանցքներն էին քարշ տալիս ու ոտքերով կաքաւում»:
17 Դրա համար էլ Աստուած պիտի խոնարհեցնի Սիոնի իշխանուհի դուստրերին,
այն օրը Տէրը պսակազերծ պիտի անի նրանց:
18 Տէրը նրանց վրայից պիտի հանի նրանց վայելուչ զգեստները եւ պատմուճանները,
19 պիտի քանդի նրանց հիւսերը,
վերացնի նրանց ծամակալները,
20 նրանց պսակակալներն ու մահիկաձեւ վզնոցները,
նրանց դէմքի քօղազարդերն ու վայելուչ պաճուճազարդերը,
քօղէքներն ու ապարանջանները,
մեհեւանդներն ու գինդերը,
21 նրանց մատանիներն ու ոսկեշար մանեակները,

դիպակներն ու թելաւոր զարդերը,
22 եզրածիրանին ու միջնածիրանին,
առտնին հագուստն ու պերճաշուք լակոնականը,
23 բեհեզն ու երկնագոյնը,
կարմիր շղարշաքողը,
բանուածոյ, ոսկեճամուկ ու ոսկեծոպ զգեստներն ու գօտիները:
24 Եւ քո արարքների պատճառով անուշահոտութիւնների փոխարէն փոշի պիտի լինի,
զարդանախշ զգեստների փոխարէն՝ չուան գօտի,
ոսկեայ գլխազարդի փոխարէն՝ ճաղատութիւն,
իսկ ոսկեհիւս դիպակի փոխարէն քուրձ պիտի հագնես:
25 Քո գեղեցիկ զաւակը, որին դու սիրում ես, սրով պիտի մեռնի,
ձեր իշխանները եւս սրով պիտի ընկնեն:
26 Ձեր զարդատուփերը դատարկ պիտի մնան,
պիտի մատնուեն սգի,
իսկ դու պիտի մնաս մեն-մենակ ու տապալուես գետին:

4 Այն օրը եօթը կին պիտի բռնեն մի տղամարդու եւ ասեն.
«Մեր հացը կ՚ուտենք եւ մեր զգեստը կը հագնենք,
միայն թէ քո անունը լինի մեզ վրայ.
մեր այրիութեան նախատինքը վերացրո՛ւ մեզնից»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԻ

2 Այն օրն Աստուած իր խորհրդաւորութեամբ ու փառքով պիտի ճառագի երկրի վրայ՝ բարձրացնելու եւ փառաւորելու համար Իսրայէլի մնացորդացին: 3 Թէ՛ Սիոնից մնացածները եւ թէ՛ Երուսաղէմից մնացածները, բոլորը, որոնք Երուսաղէմի կենաց գրքի մէջ են գրուած, սուրբ պիտի կոչուեն, 4 քանզի Տէրը Սիոնի եւ Երուսաղէմի տղաների ու աղջիկների աղտեղութիւնը պիտի լուանայ, դատաստանի հոգով եւ այրման հոգով արիւնը նրանց միջից պիտի սրբի: 5 Նա պիտի գայ, եւ Սիոն լեռան բոլոր տեղերը ու նրա շուրջն եղած ամէն ինչ ցերեկն ամպհովանի պիտի ունենան, իսկ գիշերը պիտի ծածկուեն ամենայն փառաւորութեամբ, կարծես բորբոքուած կրակի լոյսով ու ծխով: 6 Հովանի պիտի լինի տօթի դէմ, եւ ապաստարան ու ծածկ՝ սաստկաշունչ եղանակի ու անձրեւի դէմ:

ՏԻՐՈՋ ԱՅԳԻՆ

5 Իմ սիրեցեալի համար պիտի երգեմ նրա սիրելի այգու երգը.
Մի անկիւնում, արգաւանդ մի տեղում, այգի ունէր իմ սիրելին:
2 Ցանկապատեցի, բարձր ձողեր կանգնեցրի
եւ ընտիր որթատունկ տնկեցի:
Աշտարակ շինեցի նրա մէջ,
նաեւ հնձան փորեցի այնտեղ
եւ սպասեցի, որ խաղող բերի,
բայց փուչ† բերեց:
3 Այժմ, Ցուդայի երկրի մարդի՛կ եւ Երուսաղէմի բնակիչնե՛ր,
իմ ու իմ այգու դա՛տն արէք.
4 էլ ի՞նչ պիտի անէի իմ այգու համար, որ չարեցի:
5 Սպասեցի, որ խաղող բերի,
բայց փուչ բերեց:
Հիմա ես ինքս կ՚ասեմ, թէ ինչպէս եմ վարուելու իմ այգու հետ.
կը քանդեմ նրա ցանկապատը,
եւ թող յափշտակութեան ենթարկուի այն.
կը կործանեմ նրա պարիսպները,
եւ թող ոտքի կոխան լինի այն:
6 Կը լքեմ իմ այգին, թող չէտուի ու չփորուի,
թող նրա մէջ փուշ բուսնի, ինչպէս խոպան տեղում,
եւ կը պատուիրեմ իմ ամպերին, որ չանձրեւեն իմ այգում:
7 Զօրութիւնների Տիրոջ այգին Իսրայէլի տունն է,
Ցուդայի երկրի մարդը՝ նրա սիրած դալար որթատունկը.
սպասեցի, որ նա իրաւունքը պահի, առաջ տանի,
բայց նա անիրաւութիւն արեց,

†Եբրայերէնում՝ ազոխ:

արդարութեան փոխարէն՝ ողբ ու աղաղակ:
8 Վա՜յ նրանց, որոնք տանը տուն են կցում
եւ ագարակին ագարակ միացնում,
որպէսզի ընկերոջն արտաքսեն.
բայց մի՞թէ երկրի վրայ մենակ դուք էք ապրելու:
9 Ահաւասիկ այդ ամէնը հասաւ Զօրութիւնների Տիրոջ ականջին:
Եւ թէկուզ տները բազմաթիւ լինեն,
նրանք աւերակ են դառնալու.
եթէ մեծ ու գեղեցիկ էլ լինեն, մարդ չի գտնուելու, որ բնակուի նրանց մէջ:
10 Տասը լուծ եզան վարատեղը տալու է մէկ սափոր արդիւնք,
տասը արդու սերմանողը երեք գրիւ է հաւաքելու:
11 Վա՜յ նրանց, ովքեր առաւօտեան վեր կենալով՝ ընկնում են օղու յետեւից
եւ օրն անցկացնում դրանով,
եւ հէնց գինին նորից բորբոքում է նրանց:
12 Փողով ու թմբուկով, քնարով ու երգով գինին խմում,
բայց չեն նայում Տիրոջ գործերին,
նրա ձեռքի կատարածներին ուշադրութիւն չեն դարձնում:
13 Իմ ժողովուրդն այսուհետեւ գերութեան է մատնուելու այն պատճառով,
որ չի ճանաչում Տիրոջը.
հացի սովից եւ ջրի ծարաւից բազմանալու են նրանց դիակները:
14 Դժոխքն էլ ինքն իրեն լայնացրել եւ բացել է իր երախները,
որպէսզի դադար չունենայ.
փառաւորուածները, մեծամեծներն ու հարուստները,
չարագործներն ու զուարճամոլները նրա մէջ պիտի իջնեն:
15 Մարդը պիտի ստորացուի,
անուանի տղամարդը պիտի անարգուի,
ամբարտաւան աչքերը պիտի խոնարհուեն,
16 եւ Զօրութիւնների Տէրն արդարութեամբ պիտի բարձրանայ,
սուրբ Աստուածն արդարութեամբ պիտի փառաւորուի:
17 Ցափշտակուածները պիտի արածեն ինչպէս ցուլեր,
եւ մնացածների աւերակների վրայ գառները պիտի ճարակեն:
18 Վա՜յ նրանց, ովքեր կարծես երկար պարանով իրենց մեղքերն են քարշ տալիս
եւ ասես երինջների լծափոկով՝ իրենց անօրէնութիւնները:
19 Նրանք ասում են. «Այն, ինչ որ կատարելու է,
թող շուտ վրայ հասնի, որ տեսնենք.
թող ժամանի Իսրայէլի սրբի խորհուրդը, որ իմանանք»:
20 Վա՜յ նրանց, որոնք չարը բարի կ'անուանեն եւ բարին՝ չար,
որոնք լոյսը խաւար կը համարեն եւ խաւարը՝ լոյս,
որոնք դառնը քաղցր կը համարեն եւ քաղցրը՝ դառն:
21 Վա՜յ նրանց, որոնք իրենք իրենց իմաստունի տեղ կը դնեն,
իրենք իրենց աչքին խորագէտ կ'երեւան:
22 Վա՜յ ձեր այդ հզօրներին, որոնք գինի են ըմպում,
եւ ձեր իշխաններին, որոնք խառնուած թունդ օղի են խմում,
23 որոնք կաշառքի համար արդարացնում են ամբարշտին
եւ արդարի իրաւունքն են գողանում:
24 Դրա համար էլ, ինչպէս եղէգն է վառուում կրակի կայծերից,
այնպէս էլ նրանք են այրուելու բորբոքուած բոցից,
նրանց արմատը դառնալու է մղեղի նման,
նրանց ծաղիկը փոշու պէս վեր է ելնելու,
որովհետեւ նրանք մերժեցին Զօրութիւնների Տիրոջ օրէնքը,
առաւել եւս անարգեցին Իսրայէլի սրբի խօսքը:

ՏԻՐՈՋ ՁԱՅՐՈՅԹԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԷՄ

25 Եւ սաստկացաւ Զօրութիւնների Տիրոջ զայրոյթն իր ժողովրդի դէմ.
Նա ձեռքը ձգեց նրանց վրայ եւ ոչնչացրեց՝ իր բարկութիւնը տարածելով նաեւ լեռների վրայ,

եւ նրանց դիակները, իբրեւ աղբ, թափուած են ճանապարհներին:
Բայց այս բոլորով հանդերձ՝ նրա բարկութիւնը չիջաւ.
տակաւին նրա ձեռքը մնում է բարձրացած:
26 Այսուհետեւ ազդանշան կը տայ հեռաւոր ազգերին
ու նրանց կը բերի երկրի ծայրերից.
եւ ահա նրանք առանց յապաղելու արագ կ'ընթանան եւ թեթեւօրէն տեղ կը հասնեն:
27 Ո՛չ քաղց են զգալու եւ ո՛չ էլ յոգնելու,
ո՛չ նիրհելու են եւ ո՛չ էլ ննջելու,
ո՛չ իրենց մէջքի գօտիներն են արձակելու,
ո՛չ էլ իրենց կօշիկների կապերն են քանդուելու:
28 Նրանց նետերը սուր են, աղեղները՝ լարուած,
նրանց երիվարների սմբակները կարծր ապառաժի նման են,
մարտակառքերի անիւները՝ մրրիկի պէս:
29 Նրանք յարձակուելու են ինչպէս առիւծներ,
վրայ են հասնելու ինչպէս առիւծի կորիւններ.
գոչիւն են հանելու, յարձակուելու են եւ գազանաբար կոտորելու.
եւ չի լինելու ոչ ոք, որ փրկի նրանց:
30 Այն օրը, ինչպէս ալեծուփ ծովի ձայնը,
աղաղակ պիտի բարձրացնեն նրանց վրայ:
Պիտի նայեն դէպի վեր՝ երկնքին,
եւ դէպի վար՝ երկրին,
բայց ահա նրանց տագնապին ի պատասխան լինելու է դաժան խաւար:

ԵՍԱՅՈՒ ԿՈՉՈՒՄԸ

6 Այն տարին, երբ մեռաւ Օզիա արքան, տեսայ Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, իսկ տաճարը լի էր նրա փառքով: 2 Նրա շուրջը սերովբէներ կային, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում էին: 3 Զայնակցում էին իրար եւ ասում.
«Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զօրութիւնների Տէրը,
եւ ամբողջ երկիրը լի է նրա փառքով»:
4 Կանչողների ձայնից դռան բարաւորը վեր բարձրացաւ, ու տունը լցուեց ծխով: 5 Եւ ես ասում եմ. «Վա՜յ ինձ. ես մի տառապած մարդ եմ[†]. ինչո՞ւ եմ ապշած կանգնել մնացել. չէ՞ որ ես մարդ եմ, պիղծ շուրթեր ունեմ եւ պղծաշուրթ ժողովրդի մէջ եմ ապրում, բայց ահա իմ աչքերով տեսայ Զօրութիւնների Տիրոջը»: 6 Եւ ահա ինձ ներկայացաւ սերովբէներից մէկը՝ ձեռքին կայծ բռնած, որ ունելով վերցրել էր զոհասեղանից: 7 Բերեց մօտեցրեց իմ բերանին եւ ասաց.
«Ահա մօտեցրի քո շուրթերին. դա կը հանի քո անօրէնութիւնները,
եւ քո մեղքերը կը սրբի քեզնից»:
8 Եւ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր.
«Ո՞ւմ ուղարկեմ, եւ կամ ո՞վ կը գնայ այդ ժողովրդի մօտ»:
Ու ես ասացի. «Ահաւասիկ ես, ի՛նձ ուղարկիր»:
9 Նա ասաց. «Գնա՛ եւ յայտնի՛ր այդ ժողովրդին.
"Լսելով պիտի լսէք, բայց չիմանաք,
տեսնելով պիտի տեսնէք, բայց չճանաչէք".
10 քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է,
ծանր են լսում իրենց ականջներով,
իրենց աչքերն էլ փակել են,
որպէսզի չլինի թէ երբեւէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն,
սրտով իմանան ու դարձի գան,
եւ ես էլ բժշկեմ նրանց»:
11 Եւ ես ասացի. «Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր»:
Իսկ նա պատասխանեց. «Մինչեւ որ քաղաքներն աւերուեն բնակիչ չլինելու
եւ տները՝ մարդ չլինելու պատճառով,
եւ այդ երկիրը մնայ ամայի»:
12 Դրանից յետոյ Աստուած կը հանդուրժի մարդկանց,

[†]Եբրայերէնում՝ որովհետեւ կորչում եմ:

եւ կենդանի մնացածները կը բազ-
մանան երկրի վրայ:
13 *Սակայն սրանցից էլ մէկ տաս-*
ներորդը կը պահպանուի.
նորից կ'ենթարկուեն գերութեան ու
յափշտակութեան,
եւ սուրբ սերունդը, ինչպէս իրենց
պատեանը թօթափած բեւեկն ու կա-
ղին,
նրա հաստատութիւնը կը դառնայ:

ՊԱՏԳԱՄ ՕՋԻԱ ԹԱԳԱՒՈՐԻՆ

7 *Այնպէս պատահեց, որ Հրէաստանի*
թագաւոր Օզիայի որդի Յովաթամի
որդու՝ Աքազի օրօք Ասորիքի արքայ
Ռասիմը եւ Իսրայէլի արքայ Ռոմելայի
որդի Փակէէն յարձակուեցին Երուսա-
ղէմի վրայ, որպէսզի պատերազմեն
նրա դէմ, բայց չկարողացան պաշարել
այն: 2 *Դաւթի տանը լուր հասաւ, թէ*
Ասորիքը դաշնակցել է Եփրեմի երկրի
հետ, ու դողն ընկաւ նրա սիրտը, նրա
ժողովրդի սիրտը. կարծես անտառում
ծառը շարժուէր հողմից:
3 *Տէրն ասաց Եսայուն. «Դու քո*
փրկուած որդու՝ Յասուբի† *հետ Կտաւ*
սպիտակեցնողի ագարակի ճանապար-
հի վրայ, վերեւի ջրաւազանի դիմաց,
ընդառա՛ջ ել Աքազին 4 *եւ ասա՛ նրան.*
"Զգո՛յշ եղիր եւ հանդարտուի՛ր.
մի՛ վախեցիր, եւ թող քո անձը
չզարհուրի ծխացող այդ երկու կիսա-
խանձ փայտերից,
քանզի երբ վրայ հասնեն իմ
բարկութիւնն ու զայրոյթը,
ձեզ դարձեալ պիտի ոտքի կանգ-
նեցնեմ:
Արամի որդին եւ Ռոմելայի որդին
5 *քո դէմ չար խորհուրդ խորհեցին:*
Եփրեմը եւ Ռոմելայի որդին ոխով
ասացին.
6 *'Գնանք Հրէաստանի վրայ,*
խօսենք նրանց հետ‡*, նրանց մեզ*
ենթարկենք
եւ նրանց վրայ թագաւոր կարգենք
Տաբէլի որդուն':

†Եբրայերէնում՝ սեար-Յասուբ, որ նշանակում է՝ մնացորդը դարձի պիտի գայ:

‡Եբրայերէնում՝ բռնութիւն գործադրենք նրա նկատմամբ:

7 *Այսպէս է ասում Զօրութիւնների*
Տէրը.
'Այդ խորհուրդը չի կատարուելու եւ
չի լինելու.
8 *քանզի Ասորիքի գլուխը Դա-*
մասկոսն է,
իսկ Դամասկոսի գլուխը՝ Ռասիմը:
Ե՛ւս վաթսունհինգ տարի,
եւ Եփրեմի թագաւորութիւնն իբրեւ
ժողովուրդ պիտի դադարի':
9 *Եփրեմի գլուխը Սոմորոնն է,*
իսկ Սոմորոնի գլուխը՝ Ռոմելայի
որդին.
եթէ չհաւատաք, չէք էլ հաս-
կանայ† *"»:*

ԷՄՄԱՆՈՒԷԼԸ ՊԻՏԻ ՏԱՐԲԵՐԻ ՁԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

10 *Տէրը նորից շարունակեց խօսել*
Աքազի հետ՝ ասելով.
11 *«Խորխորատում լինի թէ բար-*
ձունքում՝ քեզ համար նշա՛ն խնդրիր
քո Տէր Աստծուց»: 12 *Իսկ Աքազը*
պատասխանեց. «Չեմ խնդրի եւ Տիրոջը
չեմ փորձի»: 13 *Եւ նա ասաց. «Արդ,*
լսեցէ՛ք դուք, որ Դաւթի տնից էք. ձեզ
թեթե՞ւ բան է թւում մարդկանց նե-
ղութիւն պատճառելը, ինչո՞ւ էք
ուզում Տիրոջը եւս նեղացնել: 14 *Դրա*
համար էլ Տէրն ինքը ձեզ նշան է
տալու: Ահա կոյսը պիտի յղիանայ ու
որդի ծնի, եւ նրա անունը պիտի լինի
Էմմանուէլ‡*.* 15 *իւղ ու մեղր պիտի*
ուտի նա. նախքան չարը ճանաչելը
կամ այն ցանկանալը նա պիտի ընտրի
բարին: 16 *Դրա համար մանուկը բարին*
կամ չարը ճանաչելուց առաջ պիտի
անարգի չարը եւ ընտրի բարին, եւ այն
երկիրը, որից դու վախենում ես, պիտի
լքուի երկու թագաւորների պատճա-
ռով: 17 *Աստուած քեզ վրայ, քո*
ժողովրդի եւ քո հօր տան վրայ
այնպիսի օրեր պիտի բերի, որ չեն եկել
այն ժամանակից ի վեր, երբ Եփրեմն
անջատուեց Հրէաստանից. — պիտի
բերի Ասորեստանի արքային:
18 *Այդ օրը Տէրը պիտի շարժի*
ճանճերին,
որոնք Եգիպտոսի գետի միւս կողմն

†Եբրայերէնում՝ հաստատ համոզուած չէք:

‡Եբրայերէնում՝ Աստուած մեզ հետ (տե՛ս նաեւ Մատթ. 1, 23):

են գտնուում,
եւ գոռեխներին, որոնք Ասորեստանի
երկրում են:
19 *Բոլորը պիտի գան ու նստեն քո*
երկրի ձորերում,
ժայռերի ծերպերում ու քարայր-
ներում,
բոլոր փապարներում ու ամէն ծառի
վրայ:
20 *Այդ օրը Տէրը մեծ եւ արիւնով*
հարբած սրով՝
գետի այն կողմում եղած Ասորեստանի թագաւորի ձեռքով
պիտի սափրի նրանց գլուխն ու
ոտքի մազերը,
խուզի նրանց մօրուքները:
21 *Եւ այդ օրն այնպէս պիտի լինի,*
որ ամէն մարդ, մի երինջ եւ երկու
ոչխար պահելով,
22 *կաթի առատութիւնից իւղ պիտի*
ուտի.
իւղ ու մեղր պիտի ուտի ամէն ոք,
ով կենդանի կը մնայ այդ երկրում:
23 *Այդ օրն այնպէս պիտի լինի,*
որ ամէն տեղ, ուր հազար որթա-
տունկ էր աճում՝ հազար սիկղ արծաթի
արժէքով,
խոպան պիտի դառնայ եւ փշով
լցուի:
24 *Նետաձիգներ եւ աղեղնաւորներ*
պիտի մտնեն այնտեղ:
Ողջ երկիրը խոպան պիտի դառնայ
ու փուշ բերի,
եւ ամէն սարալանջ, ուր արօրն էր
վարում,
այլեւս ակօս չի ունենալու:
Երկիւղը չի հասնելու այնտեղ,
որովհետեւ այդ խոպան ու փշոտ
վայրերը պիտի դառնան գառան
արօտավայր
եւ եզան ոտքի կոխան պիտի լինեն»:

ԵՍԱՅՈՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

8 *Տէրն ինձ ասաց. «Ահա քեզ մի նոր*
մեծադիր մատեան. նրա մէջ ճարտար
մարդու գրչով գրի՛ր՝ արագօրէն աւա-
րառութեա՛ն ենթարկել, շուտափոյթ
կողոպո՛ւտ կուտակել†*, քանզի ժամը*
հասել է: 2 *Ինձ համար վկաներ կը*
կարգես հաւատարիմ մարդկանց՝ Ու-
րիա քահանային եւ Բարաքիայի որդի
Զաքարիային»: 3 *Եւ ես մերձեցայ իմ*
մարգարէուհի կնոջը. նա յղիացաւ ու
մի որդի ծնեց: Տէրն ինձ ասաց. «Նրա
անունը դի՛ր Արագ-արագ կողոպտի՛ր
եւ շուտ-շուտ աւար ա՛ռ, 4 *քանզի մինչ*
մանուկը կը սովորի հայր կամ մայր
ասել, Դամասկոսի հարստութիւնը եւ
Սամարիայի աւարը կը բերուեն Ասո-
րեստանի թագաւորի առաջ»:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

5 *Ապա Տէրը նորից խօսեց ինձ հետ*
եւ ասաց.
6 *«Քանի որ այդ ժողովուրդը ար-*
համարհեց Սելովայի հանդարտահոս
ջուրը
եւ ուզեց իր համար թագաւոր ընտ-
րել Ռասիմին եւ Ռոմելայի որդուն,
7 *դրա համար էլ Տէրը ձեզ վրայ*
պիտի թափի յորդ ու հզօր գետի ջուրը՝
Ասորեստանի արքային ու նրա
զօրութիւնը:
Նա պիտի գայ հասնի ձեր բոլոր
ձորերը
եւ շարժուի ձեր պարիսպների վրա-
յով.
8 *այն մարդուն, որ ի վիճակի կը*
լինի բարձրացնել իր գլուխը,
եւ այն զօրաւորին, որ ունակ կը լինի
որեւէ բան անելու,
պիտի վերացնի Հրէաստանի երկրից.
նրա բանակը պիտի լցուի ձեր լայ-
նարձակ երկիրը»:
9 *Գիտցէ՛ք, հեթանոսնե՛ր,*
Աստուած մեզ հետ է,
պիտի պարտուէք.
լուրը հասցրէք աշխարհի չորս կող-
մե՛րը.
դուք, որ հզօրացել էք, պիտի
պարտուէք:
Թէեւ դուք դարձեալ ուժեղանալու
էք,
բայց էլի պարտութեան էք մատ-
նուելու:
10 *Ինչ խորհուրդ էլ անէք՝*
Տէրը խափանելու է այն,
եւ ինչ էլ ասելու լինէք՝ չի հաս-
տատուելու,

†Եբրայերէնում՝ Մահեր-Շալալ-Հաշ-Բազ:

քանզի Տէր Աստուած մեզ հետ է:
11 Այսպէս է ասում Տէրը նրանց,
ովքեր ընդդիմանում են նրա ձեռքի
զօրութեանը՝ հետեւելով այս ժողովրդի
ճանապարհին.
12 «Ասում են, թէ երբեք չար բան
չեն խօսում.
բայց չէ՞ որ ինչ խօսում է այդ
ժողովուրդը՝ չարութիւն է:
Մի՛ սարսափէք այն բանից, ինչից
նրանք են վախենում,
եւ մի՛ անհանգստացէք:
13 Իրեն՝ Զօրութիւնների Տիրո՛ջը
սրբացրէք,
թող ձեր վախը Նա՛ լինի:
Եթէ յոյսդ նրա վրայ դնես,
14 նա քեզ համար սրբութիւն կը
լինի,
եւ քո ոտքը քարի չի դիպչի, դու չես
սայթաքի:
Բայց Յակոբի տունը որոգայթի եւ
Երուսաղէմի դարանակալ ծորձորների
մէջ է:
15 Դրա համար էլ այնտեղ շատերը
պիտի ուժասպառ լինեն,
ընկնեն ու խորտակուեն.
մարդիկ, որոնք ապահովութեան մէջ
էին,
պիտի ենթարկուեն պաշարման:

ԶԳՈՒՇԱՆԱԼ ՎՀՈՒԿՆԵՐԻՑ ԵՒ ՀԵՏԵՒԵԼ ԱՍՏՈՒՈՒՆ

16 Այն ժամանակ պիտի յայտնուեն
նրանք, ովքեր փակի տակ են դնելու
օրէնքները, 17 որպէսզի որեւէ մէկը
չկարողանայ սովորել եւ ասել. "Կը
մնամ ու կը սպասեմ Աստծուն, որն իր
երեսը դարձրեց Յակոբի տնից, յոյս կը
դնեմ նրա վրայ"»: 18 Ահաւասիկ ես եւ
իմ զաւակները, որ Աստուած ինձ
պարգեւեց. եւ Իսրայէլի տան վրայ
թող նշաններ ու հրաշքներ լինեն
Զօրութիւնների Տիրոջից, որ բնակւում
է Սիոն լեռան վրայ: 19 Եւ եթէ ձեզ
ասեն, թէ՝ "Հարցրէ՛ք վհուկներին ու
մեռելահարցուկներին, նանրախօս-
ներին ու որովայնախօսներին", այն
ժամանակ ասացէ՛ք. "Մի՞թէ որեւէ
ժողովուրդ իր Աստծուն չպիտի դիմի,
ողջերի համար մեռածնե՞րն պիտի
հարցնեն: 20 Չէ՞ որ օրէնքը տուեց՝
օգնութեան համար, որպէսզի ասեն, թէ
սրանք այն խօսքերը չեն, որոնց
համար պէտք է կաշառք տալ":

ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

21 Սոսկալի սովը պիտի սպառնայ
ձեզ,
եւ երբ քաղցած լինէք, պիտի
վշտանաք,
հայհոյանք թափէք իշխանի ու
աշխարհի հասցէին:
22 Ձեր հայեացքը պիտի ուղղէք
դէպի վեր՝ երկնքին,
պիտի նայէք դէպի վար՝ երկրին,
եւ կարիքը, տառապանքն ու խաւա-
րը,
նեղութիւնը, անձկութիւնն ու
մթութիւնը պիտի դիմաւորեն ձեզ:
Ոչ ոք չպիտի կարողանայ տեսնել:
Եւ նա, ով նեղութեան մէջ լինի,
չի տկարանալու, մինչեւ որ գայ
ժամանակը:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՏԵՍՆԻ ՄԵԾ ԼՈՅՍԸ

9 Նախ դուք ա՛յդ նեղութիւնները
տարէք եւ չո՛ւտ թօթափեցէք,
Զաբուղոնի՛ երկիր, երկի՛ր Նեփթա-
ղիմի, ճանապա՛րհ ծովի,
նաեւ միւսներդ, որ բնակւում էք
ծովեզերքին
եւ Յորդանան գետի այն կողմում,
հեթանոսների՛ Գալիլիա եւ Հրէաս-
տանի՛ կողմեր:
2 Այն ժողովուրդը, որն ընթանում
էր խաւարի միջով,
տեսաւ մեծ լոյս.
ձեզ համար էլ, որ բնակւում էք
աշխարհում եւ մահուան ստուերների
մէջ†,
լոյս պիտի ծագի:
3 Ժողովրդի մեծ մասը, որին մաս-
նակից դարձրիր քո ուրախութեանը,
ուրախանալու է քո առաջ,
ինչպէս հնձի ժամանակ են ուրա-
խանում եւ կամ աւարը բաժանելիս,
4 որովհետեւ վերացաւ այն մեծ
լուծը,

†Եբրայերէնում՝ մահուան ստուերի երկրում:

որ նրանց վրայ էր դրուած,
եւ գաւազանը, որ նրանց պարա-
նոցին էր:
Ինչպէս Մադիամի օրերին, նա մեր-
ժեց հարկապահանջների գաւազանը:
5 Ամէն մի պատմուճանի եւ հան-
դերձի համար, որ նենգութեամբ էին
հաւաքել,
տուգանքով պիտի հատուցեն,
նոյնիսկ եթէ դրանք այրուած
լինէին,
նրանք պիտի յօժարէին հատուցել,
6 քանզի մեզ համար մանուկ
ծնուեց,
մի որդի տրուեց մեզ,
որի իշխանութիւնն իր ուսերի վրայ
պիտի լինի.
նա պիտի կոչուի Մեծ խորհրդի
հրեշտակ†,
Սքանչելի խորհրդակից,
Աստուած հզօր, Իշխան,
Հայր հանդերձեալ աշխարհի‡:
7 Ես խաղաղութիւն կը բերեմ նրա
իշխաններին,
իսկ իրեն՝ առողջութիւն:
Մեծ է նրա իշխանութիւնը,
եւ նրա խաղաղութիւնը սահման
չունի:
Նա պիտի նստի Դաւթի աթոռին,
առաջ պիտի տանի նրա թագաւ-
որութիւնը,
իրաւունքով ու արդարութեամբ պի-
տի զօրացնի այն
այսուհետեւ եւ յաւիտեանս յա-
ւիտենից:
Զօրութիւնների Տիրոջ նախանձա-
խնդրութեամբ պիտի կատարուի դա:

ԱՍՏՈՒՈՒ ՍՊԱՌՆԱԼԻ ՁԵՌՔԸ

8 Տէրը Յակոբի տան վրայ մահ
արձակեց,
բայց այն եկաւ հասաւ Իսրայէլի
վրայ:
9 Թող Եփրեմի ողջ ժողովուրդը եւ
Սամարիայում ապրողներն իմանան,
որ հպարտութեամբ եւ ամբարտա-
ւան սրտով խօսեցին՝ ասելով.
10 «Աղիւսները թափուեցին,
բայց եկէք քար տաշենք,
մայրիներ ու եղեւնու ծառեր կտրենք
եւ մեզ համար աշտարակ կա-
ռուցենք»:
11 Աստուած պիտի կործանի Սիոնի
լերան վրայ բարձրացածներին
եւ ցիրուցան պիտի անի Յուդայի
երկրի թշնամիներին,
12 արեւելքից՝ ասորեստանցիներին
եւ արեւմուտքից՝ յոյներին§,
որոնք լիաբերան կերան Իսրայէլին:
Այնուամենայնիւ, նրա բարկու-
թիւնը տեղի չտուեց,
տակաւին նրա ձեռքը բարձրացած
է:
13 Ժողովուրդն էլ դարձի չեկաւ,
մինչեւ չենթարկուեց հարուածի:
Զօրութիւնների Տիրոջը փնտռող
չեղաւ:
14 Եւ Տէրը մէկ օրում վերացրեց
Իսրայէլի գլուխն ու պոչը,
մեծին ու փոքրին:
15 Մերն ու ականաւորը գլուխն են,
իսկ մարգարէն, որ անօրէնութիւն էր
ուսուցանում, պոչն է:
16 Եւ պիտի այնպէս լինի, որ երանի
պիտի տան այս ժողովրդին,
բայց մոլորեալները պիտի մոլորեց-
նեն նրան,
որպէսզի կուլ տան:
17 Դրա համար էլ Տէրը բարեհաճ չի
լինելու նրանց երիտասարդների հան-
դէպ,
նրանց որբերին ու այրիներին չի
գթալու,
որովհետեւ նրանք ամէնքն էլ անօ-
րէն են ու չար,
ամէն բերան անարդարութիւն է
խօսում:
Այս ամենի հետեւանքով Տիրոջ
զայրոյթը չի իջել,
տակաւին նրա ձեռքը մնում է
բարձրացած:
18 Անօրէնութիւնը պիտի վառուի
ինչպէս կրակ,
չորացած սիզախոտի պէս պիտի
այրուի կրակից,
պիտի վառուի մայրիների անտա-
ռում,
որոնց շուրջը, բոլոր բլուրների վրայ,

†Եբրայերէնում՝ չիմ:
‡Եբրայերէնում՝ Իշխան յաւիտենականութեան, Հայր խաղաղութեան:
§Եբրայերէնում՝ փղշտացիներին:

հուրը պիտի ճարակի նրանց:
19 Տիրոջ զայրոյթի ու բարկութեան
հետեւանքով համայն երկիրը կրակի
պիտի մատնուի,
եւ ժողովուրդն էլ հրով կիզուածի
պէս պիտի լինի:
Մարդ իր եղբօրը չի խղճալու,
20 քաղցից նա պիտի շրջուի դէպի
աջ,
պիտի շրջուի դէպի ձախ,
պիտի ուտի, բայց չյագենայ՝
մինչեւ իսկ իր բազուկների միսն
ուտելով:
21 Մանասէն Եփրեմին պիտի ուտի,
եւ Եփրեմը՝ Մանասէին,
ապա միասին պիտի պաշարեն Յու-
դայի երկիրը:
Այս ամենի հետեւանքով Տիրոջ
զայրոյթը չի իջել,
տակաւին նրա ձեռքը մնում է
բարձրացած:

ՎԱ՛Յ ԱՆԻՐԱՒ ԻՇԽԱՆԱՒՈՐՆԵՐԻՆ

10 Վա՛յ նրանց, ովքեր չար գործեր
են արձանագրում,
անընդհատ գրի են առնում իրենց
չարութիւնը,
2 խեղաթիւրում են աղքատների
դատն ու դատաստանը,
խլում իմ ժողովրդի տնանկների
իրաւունքը,
որպէսզի որբեւայրին յափշտա-
կութեան ենթարկուի, որբը՝ աւարի:
3 Բայց նրանք ի՞նչ պիտի անեն
դատաստանի օրը:
Ձեր նեղութիւնը հեռուներից պիտի
գայ.
ո՞ւմ մօտ պիտի փախչէք օգնութեան
համար,
ո՞ւր պիտի թողնէք ձեր հարստու-
թիւնը:
4 Գերութեան չմատնուելու համար
նրանք սպանուածների տակ պիտի
թաքնուեն:
Այս ամենի հետեւանքով Տիրոջ
զայրոյթը չի իջել,
տակաւին նրա ձեռքը մնում է
բարձրացած:

ՎԱ՛Յ ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

5 Վա՛յ ասորեստանցիներին,
որոնց ձեռքին է իմ բարկութեան ու
զայրոյթի գաւազանը.
6 քանզի իմ բարկութիւնն անօրէն
ազգի վրայ պիտի արձակեմ,
պիտի կարգադրեմ, որ իմ ժողովրդին
ենթարկեն աւարի ու յափշտակու-
թեան,
ոտքի կոխան անեն նրանց քաղաք-
ները եւ թաղեն նրանց փոշու տակ:
7 Իսկ Ասորեստանի իշխանն այդպէս
չմտածեց,
ինքն իր մտքում այդպէս չխորհեց,
այլ մտադրուեց բնաջնջել ոչ քիչ
ազգերի:
8 Եւ եթէ նրան ասեն, թէ՝ «Միայն
դո՞ւ ես լինելու իշխան»,
9 կը պատասխանի. «Մի՞թէ ես
չնուաճեցի այն աշխարհը,
որ բարձր է Բաբելոնից,
եւ Քաղանէն, ուր աշտարակը կա-
ռուցուեց:
Ես գրաւեցի նաեւ Արաբիան,
Դամասկոսն ու Սամարիան:
10 Ինչպէս որ դրանք իմ ձեռքով
գրաւեցի,
այնպէս էլ պիտի նուաճեմ բոլոր
իշխանութիւնները»:
Ողբացէ՛ք, ո՛վ կուռքեր, որ Երու-
սաղէմում եւ Սամարիայում էք,
11 քանզի ինչպէս որ վարուեցի Սա-
մարիայի եւ նրա ձեռակերտների հետ,
նոյն կերպ էլ վարուելու եմ Երու-
սաղէմի եւ նրա կուռքերի հետ:
12 Այնպէս պիտի լինի, որ, երբ Տէրը
վերջացնի ամէն ինչ, որ կատարելու է
Սիոնի բարձունքի վրայ եւ Երուսա-
ղէմում, իր բարկութիւնը պիտի թափի
նաեւ մեծամտացողի վրայ, Ասորես-
տանի իշխանի եւ գոռոզութեամբ
փայլող նրա աչքերի վրայ:
13 Արդարեւ, նա ասաց.
«Իմ զօրութեամբ կը կատարեմ
եւ իմ իմաստութեամբ ու խելքով կը
վերացնեմ ազգերի սահմանները,
կը յափշտակեմ նրանց հարստու-
թիւնները,
կը ցնցեմ շէն քաղաքները,
14 իմ բազկով կը յարձակուեմ բոլոր

երկրների վրայ՝
ինչպէս հաւաքնի վրայ,
եւ բոլորին կը վերցնեմ՝ ինչպէս
մնացած ձուեր.
ոչ ոք իմ ձեռքից չի փրկուի,
ոչ ոք ինձ չի ընդդիմանայ,
բերանը չի բացի եւ ծպտուն չի
հանի»:
15 Այսպէս ասաց Տէրը.
«Մի՞թէ կացինը կը բարձրանա՞յ
առանց փայտահատի,
կամ սղոցը վերեւ կ'ելնի՞ առանց որ
մէկը ձգի այն.
այնպէս էլ՝ գաւազանը կամ ցուպը,
եթէ մէկը չբռնի այն: Այդպէս չի
կարող լինել»:
16 Զօրութիւնների Տէրը քո պատուի
վրայ անարգանք է ուղարկելու,
եւ քո փառքի վրայ բոցավառ հուրն
է բորբոքուելու:
17 Լոյսն† Իսրայէլի կրակ պիտի դառ-
նայ եւ նրան‡ սրբի բորբոքուն հրով,
խոտի պէս պիտի լափի անտառը:
18 Այն օրը լեռները, բլուրներն ու
անտառները պիտի մոխրանան,
կրակը հոգի ու մարմին պիտի լափի,
եւ փրկուողը նման պիտի լինի
բորբոքուած բոցից ազատուածի:
19 Կենդանի մնացածները թուով
այնքան պիտի լինեն,
որ մանուկ երեխան էլ կարողանայ
հաշուել նրանց:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐԱՓՐՈՂՆԵՐԸ

20 Այն օրը Իսրայէլից մնացածները
եւ Յակոբի տնից փրկուածներն այլեւս
մեղքի մէջ չեն ընկնելու եւ ոչ էլ
ապաւինելու են իրենց զրկողներին,
այլ արդար սրտով ապաւինելու են
Աստծուն՝ Իսրայէլի Սրբին: 21 Յակոբի
տնից մնացածները պիտի շուռ գան
դէպի զօրաւոր Աստուածը: 22 Եւ եթէ
Իսրայէլի ժողովուրդը ծովի աւազի
չափ էլ լինի, նրանից սակաւաթիւ
մարդիկ են միայն մնալու: Դա կատա-
րուելու է կարճ ու կտրուկ եւ արդա-
րութեամբ, 23 այդ բանը Զօրութիւն-
ների Տէրը վճռականօրէն է կատարելու
համայն աշխարհում:

ՁՎԱԽԵՆԱԼ ԱՍՈՐԵՍՏԱՆԻՑ

24 Դրա համար էլ այսպէս է ասում
Աստուած՝ Զօրութիւնների Տէրը. «Ո՛վ
իմ ժողովուրդ, որ բնակւում ես Սիո-
նում, մի՛ վախեցիր ասորեստանցի-
ներից, երբ նրանք քեզ հարուածեն
գաւազանով, քանզի այդ հարուած-
ները ես եմ բերում քեզ վրայ, որպէսզի
ճանաչես եգիպտացիների ճանապար-
հը: 25 Բայց փոքր-ինչ անց իմ բար-
կութիւնը պիտի իջնի, եւ իմ զայրոյթը
պիտի ուղղուի նրանց դիտաւորու-
թիւնների դէմ»: 26 Տէր Աստուած
հարուածներ պիտի յարուցի նրանց
դէմ, նման այն հարուածներին, որոնք
հասան Մադիամին՝ հարիւրանքների
տեղում. նրա զայրոյթը պիտի երեւայ,
ինչպէս Եգիպտոսից դուրս գալու
ժամանակ՝ ծովն անցնելիս:
27 Այն օրը նրա երկիւղը պիտի
վերանայ քո վրայից,
նրա լուծը՝ քո պարանոցից.
եւ ձեր ուսերից պիտի խորտակուի
նրա լուծը:

ԹՇՆԱՄԻՆ ՅԱՐՁԱԿԻՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎՐԱՅ

28 Նա պիտի գայ հասնի Անդէ
քաղաքը,
անցնի Մակեդդովով եւ իր բեռը
վայր դնի Մաքմասում:
29 Պիտի անցնի ձորերով,
յարձակուի գաբաւոնացիների վրայ,
ահաբեկի Ռաման՝ Սաւուղի քա-
ղաքը.
Գալիմի դուստրը պիտի փախչի:
30 Խրխի՛նջ բարձրացրու քո ձայնով.
թող լուրը հասնի Լաիս,
թող լուրը հասնի Անաթոթ.
31 թող զարհուրի Մադեբենան,
նաեւ նրանք, որ բնակւում են
Գեբիմում:
32 Նա պիտի մխիթարուի այսօր՝
գիշերելով ճանապարհին,
ձեռքով պիտի մխիթարի Սիոնի
դուստր լեռանը
եւ այն բլուրներին, որոնք Երու-
սաղէմում են:

† իմա՛ Աստուած:
‡ իմա՛ Ասորեստանը:

33 Ահաւասիկ Զօրութիւնների Տէրը՝ Աստուած,
իր ուժով ահուսարսափի պիտի մատնի փառաւորուածներին,
եւ ամբարտաւանութեամբ բարձրացածները պիտի խորտակուեն ու խոնարհուեն.
34 բարձրադիր սրով պիտի ընկնեն,
եւ Լիբանանն իր բարձունքներով պիտի կործանուի:

ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ ՄԻԱՍԻՆ

11 Յեսսէի արմատից գաւազան պիտի ընձիւղուի,
ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից:
2 Նրա վրայ պիտի իջնի Աստծու հոգին,
իմաստութեան եւ հանճարի հոգին,
խորհրդի ու զօրութեան հոգին,
գիտութեան եւ աստուածպաշտութեան հոգին.
3 Աստծու երկիւղի հոգին պիտի լցնի այն:
Ո՛չ ըստ կարծիքի պիտի դատի նա եւ ո՛չ էլ ըստ խօսքերի յանդիմանի:
4 Նա տնանկի իրաւունքը պիտի պաշտպանի
եւ արդարութեամբ պիտի դատի երկրի տառապեալներին.
իր բերանի խօսքով հարուածի երկրին
եւ իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին:
5 Արդարութեամբ պիտի գօտեւորի իր մէջքը
եւ ճշմարտութեամբ կապի իր կողերը:
6 Գայլն ու գառը միասին պիտի ուտեն,
ընձառիւծը ուլի հետ պիտի մակաղի,
հորթը, ցուլն ու առիւծը միասին պիտի սնուեն,
եւ մատաղատի մանուկը պիտի հովուի նրանց:
7 Եզն ու արջը միասին պիտի ուտեն,
նրանց ձագերը խառը պիտի շրջեն,
եւ առիւծը, ինչպէս եզը, յարդ պիտի ուտի:
8 Մատաղատի մանուկն իր ձեռքը պիտի մտցնի իժերի բունը եւ իժերի ձագերի բունը,
9 ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել եւ խայթել իմ սուրբ լերան վրայ,
քանզի ամբողջ երկիրը լցուելու է Տիրոջ գիտութեամբ,
նման առատ ջրերին, որոնք ծածկում են ծովերը:

ԱՖՍՈՐՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՐՆԱՅ

10 Այն օրը հեթանոսներն իրենց յոյսը դնելու են Յեսսէի արմատի վրայ,
որն իշխան է կանգնելու հեթանոսներին,
եւ նրա հանգիստը փառահեղ է լինելու:
11 Այն օրը Տէրը նորից պիտի ցոյց տայ իր ձեռքը՝
նախանձելի դարձնելու համար իր ժողովրդի մնացորդներին,
որոնք պահպանուած են լինելու Ասորեստանում եւ Եգիպտոսում,
Բաբելոնում եւ Եթովպիայում,
Էլամում եւ Արեւելքում,
Արաբիայում եւ ծովի կղզիներում:
12 Հեթանոսներին դրօշ պիտի պարզի եւ հաւաքի Իսրայէլի կորուսեալներին,
Յուդայի տնից ցրուածներին պիտի հաւաքի աշխարհի չորս անկիւններից:
13 Եփրեմի նախանձը պիտի վերանայ,
եւ Յուդայի թշնամիները կորստեան պիտի մատնուեն.
Եփրեմը չպիտի նախանձի Յուդային,
եւ Յուդան էլ չպիտի նախանձի Եփրեմին:
14 Այլազգիների նաւերը պիտի չուեն,
միանգամից աւարի պիտի ենթարկեն ծովակողմը,
թէ՛ արեւելցիներին եւ թէ՛ եդոմայեցիներին.
իրենց ձեռքը պիտի բարձրացնեն նախ Մովաբի վրայ,
եւ ամենից առաջ ամոնացիներին են հնազանդուելու:
15 Տէրը պիտի ցամաքեցնի Եգիպտոսի ծովը,
իր շնչի սաստկութեամբ իր ձեռքը

պիտի երկարի գետի վրայ
ու հարուածի եօթը գետաբերաններին,
որպէսզի կօշիկով համարձակ կարողանան անցնել այնտեղով:
16 Մի անցուղի պիտի լինի Եգիպտոսում պահպանուած իմ ժողովրդի համար,
եւ Իսրայէլը պիտի լինի այնպէս,
ինչպէս այն օրը, երբ ելաւ Եգիպտացիների երկրից:

ԳՈՎՔ ՓՐԿԻՉ ԱՍՏՄՈՒՆ

12 Այն օրը պիտի ասես.
«Օրհներգում եմ քեզ, Տէ՛ր,
որ բարկացար ինձ վրայ,
բայց քո զայրոյթը հեռացրիր ինձնից եւ ողորմեցիր ինձ:
2 Ահա Աստուածն իմ եւ փրկիչ Տէրն իմ.
ես յոյսս դրեցի նրա վրայ
եւ երկիւղ չեմ կրելու,
քանզի Տէրն իմ փառքն է ու իմ օրհնութիւնը,
եւ փրկութիւն եղաւ ինձ համար»:
3 Ուրախութեան ջո՛ւր առէք փրկութեան աղբիւրներից:
4 Եւ այն օրը պիտի ասես.
«Օրհներգեցէ՛ք Տիրոջը,
հնչեցրէ՛ք նրա անունը,
նրա փառքը տարածեցէ՛ք հեթանոսների մէջ,
յիշեցէ՛ք, որ բարձր է նրա անունը:
5 Օրհնեցէ՛ք Տիրոջ անունը, քանզի նա մեծամեծ գործեր կատարեց,
պատմեցէ՛ք այդ մասին արար աշխարհում:
6 Ցնծացէ՛ք եւ ուրա՛խ եղէք, Սիոնի՛ բնակիչներ,
քանզի Իսրայէլի սուրբը վեր բարձրացաւ նրա մէջ»:

ԲԱԲԵԼՈՆԻ ՎԱԽՃԱՆԸ

13 Ամոսի որդի Եսայու տեսիլքը բաբելացիների մասին
2 «Լերան բարձունքին, սարահարթի վրայ դրօ՛շ կանգնեցրէք,
ձեր ձայնը բարձրացրէ՛ք նրանց վրայ,
մի՛ վախեցէք, ձեռքով նշա՛ն արէք,
դո՛ւրս եկէք, իշխանները՛,
որ ես հրաման տամ:
3 Իմ նուիրեալներն են նրանք, որոնց ես եմ բերել.
ելել գալիս են հսկաները,
որպէսզի գոհացում տան իմ բարկութեանը.
միահամուռ գալիս են խինդով ու նախատինք թափում»:
4 Լեռների վրայ բազում ցեղերի ձայնն է հնչում,
կարծես անհամար ժողովուրդներ լինեն.
միահամուռ հաւաքուած թագաւորների ու ցեղերի ձայնն է հնչում»:
Զօրութիւնների Տէրը հրաման է արձակել սպառազէն ազգերին,
5 որ գան հեռու երկրներից.
երկնային հաստատութեան ծայրերից հասել է Տէրն իր սպառազէններով՝
բնաջնջելու ամբողջ աշխարհը:
6 Ողբացէ՛ք, քանզի մօտ է Տիրոջ օրը,
եւ հասել է Աստծու պատուհասը:
7 Ահա թէ ինչու բոլորի ձեռքերը պիտի թուլանան,
ամէն մարդու սիրտը պիտի դողայ:
8 Պատգամախօսները տագնապի մէջ պիտի ընկնեն,
երկունքի ցաւը պիտի բռնի նրանց,
ինչպէս ծննդաբերող կանանց:
Տրտնջալով մէկը միւսին պիտի նայի,
պիտի զայրանան, եւ զայրոյթից պիտի կարմրեն իրենց դէմքերը,
9 քանզի Տիրոջ օրն ահաւասիկ հասել է՝
լի անսահման բարկութեամբ,
ոխակալութեամբ ու զայրոյթով,
որպէսզի աշխարհն անապատ դարձնի
եւ մեղաւորներին վերացնի այնտեղից:
10 Արդարեւ, երկնքի աստղերը,
Հայկի համաստեղութեան եւ երկնային բոլոր լուսատուների հետ միասին,
լոյս չեն տալու,
արեգակն իր ծագման պահին պիտի խաւարի,
լուսինը նոյնպէս իր լոյսը չպիտի տայ»:

11 Զարիքի համար, ամբարիշտների
մեղքերի համար
վճիռ պիտի արձակեմ համայն
աշխարհին,
պիտի կործանեմ անիրաւների
հպարտութիւնը,
ամբարտաւանների մեծամտութիւնը
պիտի խոնարհեցնեմ:
12 Իսկ մնացածներն աւելի յարգի
պիտի լինեն, քան մաքուր ոսկին,
մարդն աւելի յարգանքի պիտի ար-
ժանանայ, քան սոփերական թան-
կագին քարերը[†] »:
13 Այն օրը, երբ Զօրութիւնների
Տիրոջ բարկութիւնը վրայ հասնի,
նրա զայրոյթից ու ցասումից եր-
կինքը պիտի մոլեգնի,
եւ երկիրն իր հիմքերից պիտի
սասանուի:
14 Կենդանի մնացածները պիտի լի-
նեն ինչպէս սարսափից փախած
այծեամ եւ մոլորեալ ոչխար,
նրանց հաւաքող չի լինելու,
ամէն մարդ իր ժողովրդի մօտ պիտի
վերադառնայ,
իւրաքանչիւր մարդ իր երկիրը պիտի
փախչի:
15 Ով որ բռնուի, պարտութեան
պիտի մատնուի,
իսկ մի տեղ հաւաքուածները սրով
պիտի ընկնեն:
16 Նրանց որդիներին նրանց աչքերի
առաջ պիտի սպանեն,
նրանց տները պիտի կողոպտեն,
իսկ նրանց կանանց պիտի խայտա-
ռակեն:
17 «Ահա նրանց վրայ պիտի հանեմ
մարերին,
որոնք արհամարհում են արծաթն
ու ոսկին:
18 Նրանք երիտասարդների աղեղ-
ները պիտի ջարդեն,
ձեր որդիներին չեն գթալու,
նրանց աչքը չի խնայելու ձեր
մանուկներին»:
19 Եւ Բաբելոնը, որ քաղդէացի
թագաւորից փառապանծ է կոչւում,
պիտի դառնայ այնպէս, ինչպէս
Սոդոմն ու Գոմորը,
որոնց Աստուած կործանեց:

[†]Եբրայերէնում՝ բան Ոփիրի ոսկին:

20 Այնտեղ յաւիտեանս յաւիտենից
բնակուող չպիտի լինի,
բազմաթիւ ցեղեր այլեւս այնտեղ
մուտք չպիտի գործեն,
արաբացիներն այլեւս այնտեղով
չպիտի անցնեն,
հովիւներն այնտեղ այլեւս հան-
գիստ չպիտի առնեն:
21 Այնտեղ կայան են գտնելու
վայրի գազանները,
նրանց տները լցուելու են ագ-
ռաւներով,
այնտեղ բուն են դնելու համբա-
ռները,
դեւերն են կաքաւելու այնտեղ,
յուշկապարիկներն են բնակուելու
նրա մէջ,
ոզնիներն են ձագ հանելու նրա
ապարանքներում:

ՎԵՐԱԴԱՐՁ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ

14 Պիտի գայ ժամանակը, շտապ
հասնի, չի յապաղելու, օրերը երկար
սպասել չեն տալու: Տէրը գթալու է
Յակոբին, Իսրայէլին դարձեալ իր
ընտրեալն է դարձնելու:
Նրանք հանգիստ են գտնելու իրենց
երկրում, եւ պանդուխտներն աւելա-
նալու են Յակոբի տանը:
2 Նրանց ընդունելու են հեթա-
նոսները եւ բերելու են իրենց տեղերը,
որ ժառանգեն եւ բազմանան Աստծու
երկրում՝ ծառաներով ու աղախիններ-
ով: Նրանց գերեվարողները գերիներ
են դառնալու, նրանց տիրողները
նրանց ծառայութեան տակ են ընկ-
նելու:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՄԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ

3 Այն օրը Տէրը հանգստացնելու է
քեզ քո ցաւերից ու նեղութիւններից եւ
այն դաժան ծառայութիւնից, որ
նրանց համար կատարեցիր: 4 Ու այս
ողբը պիտի յօրինես Բաբելոնի թա-
գաւորի վրայ եւ ասես այն օրը.
«Ինչպէ՜ս այլեւս չկայ հարկա-
պահանջը,
ինչպէ՜ս լռեց կողոպտիչը:
5 Տէրը խորտակեց մեղաւորների

լուծը, իշխանների լուծը,
6 զայրոյթով, սոսկալի հարուած-
ներով ու անողոք բարկութեամբ
ոչնչացրեց նրանց ցեղերին:
7 Ողջ երկիրը յոյսով խաղաղուեց
եւ կանչում է ցնծութեամբ:
8 Անգամ Լիբանանի ծառերը ցնծում
են քեզ համար,
Լիբանանի մայրիներն ասում են.
"Այն օրից, երբ դու ընկար,
անտառահատները մեզ չեն դիպել":
9 Այդ բանը երբ պատահեց քեզ հետ,
դժոխքն ալեկոծուեց ներքեւում,
միանգամից ոտքի կանգնեցին բոլոր
հսկաները,
որոնք երկրի իշխաններն էին եղել,
եւ բոլոր ազգերի թագաւորներին
վերացրին իրենց գահերից:
10 Ամէնքը դիմեցին քեզ՝ ասելով.
"Դու էլ մեզ նման բռնուեցիր եւ
դարձար մեզ պէս":
11 Քո փառքը, քո մեծ ուրախու-
թիւնը դժոխք իջան.
ցեցը պիտի տարածուի քո տակ,
իսկ վրադ որդը պիտի պատի:
12 Արդ, ինչպէ՜ս երկնքից ընկաւ
արուսեակը,
որ ծագում էր առաւօտեան.
նա, որ ուղարկւում էր բոլոր ազ-
գերին,
ընկաւ գետին ու խորտակուեց:
13 Մտքիդ մէջ ասում էիր.
"Երկինք կը բարձրանամ,
իմ գահը կը դնեմ երկնային
աստղերից աւելի վեր.
կը նստեմ բարձր լեռան վրայ,
Հիւսիսի բարձր լեռների վրայ.
14 կը բարձրանամ ամպերից էլ վեր,
կը նմանուեմ Բարձրեալին":
15 Բայց ահաւասիկ դժոխք ես
իջնելու եւ երկրի խորքերը:
16 Ովքեր տեսնեն քեզ,
պիտի զարմանան քեզ վրայ եւ
ասեն.
"Սա այն մարդն է, որ ահաբեկում էր
երկիրը,
ցնցում թագաւորներին,
17 աւերակ էր դարձնում աշխարհ-
ներ,
քանդում նրանց քաղաքները,
գերիներին չէր թողնում վերա-
դառնալ":
18 Բոլոր ազգերի թագաւորները
պատուով ննջեցին՝
ամէն մէկն իր տանը,
19 իսկ դու պիտի ընկնես լերան
վրայ՝ իբրեւ մեռել գարշելի՝
սրակոտոր բազում դիակների մէջ,
որոնք դժոխք են իջնելու:
Ինչպէս արնաթաթախ անմաքուր
ձորձը,
այնպէս էլ դու չպիտի մաքրուես,
20 որովհետեւ ապականեցիր իմ
երկիրը
եւ կոտորեցիր իմ ժողովրդին.
յաւիտեանս յաւիտենից դու չպիտի
յիշուես:
21 Զա՛ր զաւակ, պատրաստի՛ր քո
որդիներին՝
իրենց հայրերի մեղքերի պատճառով
սպանուելու համար,
որպէսզի ոտքի չելնեն նրանք,
չնուաճեն երկիրը
եւ այն չլցնեն պատերազմներով»:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ Է ԲԱԲԵԼՈՆԸ

22 «Պիտի ելնեմ նրանց դէմ, —
ասում է Զօրութիւնների Տէրը,—
պիտի կորցնեմ նրանց անունը,
նրանց զարմն ու զաւակը»:
Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Բաբելոնն աւերակ պիտի դարձնեմ,
23 որ այնտեղ ոզնիները բնակուեն,
եւ նա ոչնչութեան վերածուի.
այն պիտի դարձնեմ տիղմի ու
կորստեան խորխորատ»:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ Է ԱՍՈՐԵՍՏԱՆԸ

24 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Ինչպէս ասացի, այնպէս պիտի
լինի,
25 եւ ինչպէս մտածել եմ, այնպէս էլ
պիտի կատարուի.
ասորեստանցիներին իմ երկրի մէջ
եւ իմ լեռների վրայ պիտի կոտորեմ,
թող նրանք ոտքի տակ գնան,
եւ նրանց լուծն ընկնի ձեր վրայից,

նրանց բռնութիւնը վերանայ ձեր պարանոցից»:
26 Այս է այն խորհուրդը, որ խորհեց Տէրը համայն աշխարհի մասին,
եւ այս ձեռքն է, որ բարձրացել է հանուր ազգերի վրայ:
27 Արդարեւ, այն, ինչ սուրբ Աստուած խորհեց,
ո՞վ կարող է խափանել,
եւ ո՞վ կարող է նրա բարձրացած ձեռքը կասեցնել:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ Է ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻՆ

28 Այլազգիներին† ուղղուած այս պատգամը եղաւ այն տարում, երբ մեռաւ Աքազ արքան.
29 «Մի՛ ուրախացէք, ո՛վ դուք, բոլո՛ր այլազգիներ,
թէ ձեզ հարուածողների լուծը խորտակուեց,
որովհետեւ օձի զարմից դուրս են գալիս իժի ծնունդներ,
իսկ սրանց ծնունդներից էլ՝ թեւաւոր օձեր:
30 Աղքատները պիտի կերակրուեն Տիրոջ շնորհիւ,
տկար մարդիկ պիտի ապրեն խաղաղութեան մէջ,
իսկ քո զաւակին Նա քաղցով պիտի սպանի,
քո մնացորդներին էլ պիտի կոտորի:
31 Ողբացէ՛ք, քաղաքների՛ դարպասներ,
ճա՛յն բարձրացրէք, տագնապա՛ծ քաղաքներ եւ բոլո՛ր այլազգիներ,
ծուխ ելաւ հիւսիսից,
եւ այլեւս ոչ ոք չի լինի:
32 Իսկ ի՞նչ պատասխան են տալու ազգերի թագաւորները,
քանզի Տէրը հաստատեց Սիոնի հիմքերը,
եւ նրա շնորհիւ պիտի փրկուեն ժողովրդի թշուառները»:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ Է ՄՈՎԱԲԸ

15 1 Պատգամ մովաբացիների մասին
2 Գիշերով պիտի կոտորուի մովաբացին,
գիշերով պիտի կործանուի Մովաբի պարիսպը:
Սգացէ՛ք ձեզ, որովհետեւ կործանուելու է Դեղեբոնը՝
ձեր մեհեանի տեղը:
Այնտեղ պիտի բարձրանաք՝
մովաբացիների Նաբաւի վրայ լաց լինելու:
Ողբացէ՛ք, քանզի ամէն գլուխ ճաղատ է դարձել,
բոլոր բազուկները՝ խորտակուել:
3 Նրա հրապարակներում քո՛ւրձ հագէք,
նրա տանիքների վրայ լաց ու կո՛ծ արէք
եւ նրա փողոցներում ամէնքդ ողբացէ՛ք ու լացէ՛ք:
4 Եսեբոնն ու Ելէիլան գոյժ բարձրացրին,
նրանց ձայները մինչեւ Յասսա հասան,
ահա թէ ինչու մովաբացու ձայնը հնչում է երկար,
եւ նա ճանաչում է իրեն:
5 Մովաբացու սիրտն իր մէջ գոչում է մինչեւ Սեգոր,
որովհետեւ նա երեք տարեկան երինջ է:
Լուիթի զառիվերով նրանք լաց լինելով
պիտի բարձրանան քեզ մօտ,
Արոնիիմի ճանապարհին կոտորածի վայնասուն
եւ իրարանցում պիտի ընկնի:
6 Նեմերիմի ջուրը պիտի պակասի ու ցամաքի,
նրա խոտը պիտի չորանայ,
եւ այնտեղ դալար բոյս չպիտի ճարուի.
մի՞թէ այդպէս հնարաւոր կը լինի ապրել:
7 Նրա ձորերի վրայ պիտի բերեմ արաբացիներին, որ գրաւեն,
8 քանզի մովաբացու սահմանների բողոքը միացաւ գալիմացու բողոքին,
նրա ողբը, նրա հեծեծանքը հասաւ մինչեւ Ելիմի ջրհորը:
9 Եւ Ռեմոնի ջուրը պիտի լցուի արեամբ,
քանզի Ռեմոնի վրա՛յ պիտի բերեմ

†Երրայերէնում՝ փղշտացիներին:

արաբացիներին,
սողունների պէս պիտի ուղարկեմ երկրի վրայ
ու վերացնեմ Մովաբի զաւակին,
Արիէլին եւ Ադեմի մնացորդներին:

ՄՈՎԱԲԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

16 Մի՞թէ Սիոնի դստեր լեռը աւերակ ապառաժ է լինելու:
2 Մովաբացիների դո՛ւստր,
դու պիտի լինես ինչպէս թռած թռչնի անտէր մնացած ձագը:
3 Սակայն դու էլ, Առնո՛ն,
փոքր-ինչ երկա՛ր մտածիր՝
նրանց համար սգոյ տներ կառուցելու,
որոնք, կարծես խաւարի մէջ, միջօրէի ժամին հանապազ փախչում են:
4 Նրանք զարհուրած են,
բայց դու չես առաջնորդում.
Մովաբի փախստականները քեզ մօտ են պանդխտելու,
հալածողից քեզ մօտ են ապաւինելու,
քանզի ընկաւ քո մարտակից ընկերը,
կորաւ իշխանը, որ ոտքի տակ էր տալիս երկիրը:
5 Ողորմածութեամբ պիտի հաստատուի աթոռը,
ու նրա վրայ, Դաւթի խորանի մէջ,
ճշմարտութեամբ պիտի բազմի նա,
ով դատելիս իրաւունքին հետամուտ պիտի լինի,
պիտի ջանայ արդարութիւն անել:
6 Լսեցինք Մովաբի ամբարտաւանութեան մասին,
քանզի նա խիստ հպարտացել էր,
գոռոզացել ու ոխակալ դարձել.
քո ամբարտաւանութիւնը ես վերացրի քեզնից,
7 բայց ոչ այնպէս, ինչպէս քո կախարդութիւնը,
եւ ոչ էլ այնպէս, ինչպէս նրանք, որ Մովաբի ողբն են անում:
Մովաբի վրայ պիտի ողբան բոլոր նրանք, որոնք բնակւում են Դեսեթում,
պիտի մրմնջան ու չամաչեն,
8 քանզի Եսեբոնի դաշտերն ու Սեբիմայի այգիները նուազեցին,
ազգերի իշխանները կոտորեցին նրա ընտիր-ընտիր որթատունկերը,
որոնք հասնում էին մինչեւ Յազեր,
տարածւում անապատում,
եւ նրանց շառաւիղները ձգուելով անցնում ծովից այն կողմ† :
9 Դրա համար էլ Յազերի լացով պիտի լամ Սեբիմայի այգիների վրայ:
Ո՛վ Եսեբոն եւ Ելէիլա,
ձեր ծառերը կոտորուեցին,
որպէսզի ձեր հունձն ու այգեկութը վերանան,
եւ ամէն ինչ կործանուի:
10 Ուրախութիւնն ու ցնծութիւնը պիտի վերանան այգիներից,
ձեր այգեստանում ուրախութիւն չի լինելու,
ձեր հնձաններում գինի չեն քամելու,
որովհետեւ է՛լ այգեկութ չի լինի:
11 Ահա թէ ինչու իմ աղիքները քնարի նման պիտի հնչեն Մովաբի համար,
իսկ իմ փորը, իբրեւ պարիսպ, նորոգեցիր:
12 Եւ դա քեզ համար պիտի լինի ամօթանք,
որովհետեւ Մովաբը տանջուեց իր մեհեաններում
եւ ուխտաւորի նման պիտի մտնի իր ձեռակերտ կռատների մէջ,
որոնք չպիտի կարողանան փրկել նրան:
13 Սա է այն խօսքը, որ Տէրը մի ժամանակ ասաց Մովաբի մասին 14 եւ այժմ նորից խօսեց՝ ասելով. «Երեք տարուայ ընթացքում, վարձկանի տարիների պէս, պիտի անարգուի Մովաբի փառքը՝ իր ողջ անսահման մեծութեամբ, եւ նա պիտի դառնայ սակաւամարդ ու աննշան»:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺԵԼՈՒ Է ԴԱՄԱՍԿՈՍՆ ՈՒ ԻՍՐԱՅԵԼԸ

17 1 Պատգամ Դամասկոսի մասին:
«Դամասկոսն ահաւասիկ պիտի վերանայ քաղաքների միջից,
պիտի կործանուի.
2 յաւիտեան լքուած՝ պիտի դառնայ հօտերի մակաղատեղի
եւ նախիրների հանգրուան,

†Մտքի յստակութեան համար այս համարում հետեւել են երրայերէն բնագրին:

եւ ճրագը հանգելու է նրա վրայ:
7 Ցեփին մարդիկ յափշտակելու են
նրա ունեցուածքը.
սխալ են դուրս եկել նրա խոր-
հուրդները:
8 Ոտքը ծուղակն է ընկնելու,
եւ նա թպրտալու է ուռկանում:
9 Դարաններ են վրան թափուելու.
ծարաւիներին զօրացնելու է նրա
դէմ:
10 Նրա համար հողում թակարդ է
թաքցուած,
իսկ ճանապարհին՝ որոգայթներ:
11 Ցաւերը բոլոր կողմերից ոչնչաց-
նելու են նրան.
շատեր նրա ձեռքն ու ոտքն են
կապելու տանջահարող սովով:
12 Նրա համար ահաւոր կործանում
է պատրաստուած.
ոտքի ներբանները մաշուելու են:
13 Տարաժամ մահը ուտելու է
գեղեցկութիւնը նրա.
14 առողջութիւնը դուրս է քշուելու
նրա յարկից:
Տագնապով նրան է հասնելու Մահ-
արքայի պատուհասը:
15 Գիշերը նա բնակուելու է նրա
յարկի տակ.
նրա վայելչութիւնը ծծումբի բոցով
է փչանալու:
16 Նրա արմատները խորքից են
ցամաքելու,
հունձն էլ վերեւից է թափուելու:
17 Ցիշատակը նրա կորչելու է երկրի
երեսից,
անունն էլ ջնջուելու է հրապա-
րակաւ:
18 Լոյսից խաւար են քշելու նրան,
եւ իր ժողովրդի մէջ ծանօթ չի
ունենալու:
19 Երկնքի ներքոյ նրա տունը չի
փրկուելու,
այլ այնտեղ օտարներ են բնա-
կութիւն հաստատելու:
20 Ցետին մարդիկ† հեծեծելու են
նրա վրայ,
առաջինները‡ զարմանքով են հա-
մակուելու,
21 թէ սրա՞նք են անիրաւների
տները,
սրա՞նք են այն մարդկանց տեղերը,
ովքեր Տիրոջը չճանաչեցին»:

ՎԵՐՋՈՒՄ ԻՄ ՊԱՇՏՊԱՆԸ ՊԻՏԻ ՄԻԱՋԱՄՏԻ

19 Ցոբը խօսեց ու ասաց.
2 «Մինչեւ ե՞րբ պիտ տանջէք իմ
հոգին,
խօսքերով պիտ ընկճէք իմ անձը:
3 Իմացէ՛ք, որ Տէրը ինձ հետ
այսպէս վարուեց:
Բամբասում էք ինձ, յարձակւում
վրաս, չէք էլ ամաչում:
4 Այո՛, արդարեւ ես մոլորուեցի
(մոլորութիւնս իմ ներսում է
հանգուցուել)՝
ասելով բաներ, որոնք արժան չեն:
Խօսքերս եւս մոլորութիւն են ու չեն
պատշաճում մեր ժամանակին:
5 Մի կողմ թողնենք այն, որ դուք
ինձ վրայ մեծ-մեծ խօսում էք,
յարձակւում վրաս նախատինք-
ներով:
6 Արդ, իմացէ՛ք դուք, որ իմ Տէրն է
ինձ տակնուվրայ արել,
վրաս անխնայ պատնէշ բարձրաց-
րել:
7 Ահա ծաղրւում եմ նախատինք-
ներով՝
բերան չեմ բացում.
աղաղակեմ էլ՝ եւ ոչ մի տեղից
ինձ համար արդար դատաստան
չկայ:
8 Շրջապատուած եմ՝ չեմ կարող
խոյս տալ:
Խաւարն է չոքել համակ ինձ վրայ:
9 Մերկացրել է ինձ փառքերից
բոլոր,
հանել իմ գլխից պսակը նաեւ:
10 Պաշարել է ինձ բոլոր կողմերից,
ու կործանուած եմ.
յոյսս կտրել է յաւէտ՝ ծառի պէս:
11 Սաստիկ բարկութեամբ է վարուել
ինձ հետ
ու իր թշնամին է համարել ինձ:
12 Գնդերը նրա, բոլորը մէկտեղ,
հասել են վրաս.
դարանակալներ կտրել են բոլոր
ճանապարհներս:
13 Ինձնից հեռացել են եղբայրներս.

†Եբրայերէն՝ արեւելքի մարդիկ:
‡Եբրայերէն՝ արեւմուտքի մարդիկ:

ինձնից առաւել՝ օտարներին են
ճանաչել նրանք:
14 Բարեկամներս անողորմ դարձել,
անգոսնել են ինձ մերձաւորներս,
իսկ ծանօթներս անունս անգամ
արդ մոռացել են:
15 Հիւրընկալուածներն իմ յարկի
ներքոյ,
աղախիններն իմ համարել են ինձ
լիովին օտար.
մի այլազգի եմ թուացել նրանց:
16 «Մառա՛յ» եմ կանչել, բայց նա չի
լսել.
17 ես իմ բերանով կնոջս աղաչում,
աղերսում էի:
Պաղատանքներով կանչում էի ես
որդիներին իմ բոլոր հարճերի,
18 յաւէտ ուրացել են նրանք էլ ինձ.
Հէնց վեր եմ կենում՝ բամբասում են
ինձ:
19 Զզուել են ինձնից իմ ծանօթները.
ում սիրում էի՝ իմ դէմ են ելել:
20 Իմ այս մորթի տակ մսերս են
փտել.
ատամներիս մէջ իմ ոսկորներն եմ
պահում սեղմելով:
21 Ո՛վ բարեկամներ, ողորմեցէ՛ք
ինձ, ողորմեցէ՛ք ինձ,
զի Տիրոջ ձեռքն է բարձրացել վրաս:
22 Տիրոջ պէս ինչո՞ւ էք ինձ
հալածում.
մի՞թէ իմ մարմնով չէք յագեցել
դուք:
23 Ի՜նչ կը լինէր, որ կարողանայի ես
գրել խօսքերս,
յաւիտենական մի մատեանի մէջ
գրանցել դրանք՝
24 երկաթէ գրչով կապարի կամ թէ
վէմերի վրայ փորագրելով,
25 քանի որ գիտեմ՝ յաւերժական է
Նա, ով երկրի վրայ պիտի փրկի ինձ՝
26 յարութիւն տալով մարմնիս,
որ այս բոլորը համբերեց, տարաւ:
Տիրոջ կողմից են հասել բոլորը,
27 որ ինքս անձամբ քաջ գիտակցում
եմ,
ինչ որ տեսել եմ ես իմ աչքերով, ոչ
թէ ուրիշը:
Այդպէս ամէն ինչ իմ ծոցում
հանգաւ:
28 Իսկ թէ հարցնէք՝ "Ինչի՞ մասին
մենք խօսենք իր առաջ,
ինչպէ՞ս գտնենք մենք արմատը
գործի",
– 29 դո՛ւք էլ վախեցէք մթին գոր-
ծերից:
Զի բարկութիւնն է անօրէնների
վրայ հասնելու.
ապա կ'իմանան, թէ ո՛ւր է իրենց
բուն էութիւնը»:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ

20 Սոփար Մինեցին նորից խօսեց ու
ասաց.
2 «Զէի կարծում, թէ դու մեր դիմաց
այդպէս կը խօսես:
Մի՞թէ դու ինձնից աւելի իմաստուն
ես:
3 Ես ունկնդրելու եմ իմ ակնածալից
խրատին,
եւ իմ բանականութեան ոգին է, որ
պատասխան է տալու ինձ:
4 Մի՞թէ դու դա հիմա ես իմացել եւ
ոչ թէ այն ժամանակուանից,
երբ երկրի վրայ մարդն է ստեղ-
ծուել:
5 Ամբարիշտների ուրախութիւնը
չարաչար կործանման նշան է,
անօրէնների խնդութիւնը՝ կորուստ:
6 Եթէ անգամ երկինք բարձրանան
նրա ընծաները,
ողջակէզներն էլ ամպերին հասնեն,
– 7 երբ թուայ, թէ հաստատուած է՝
այն ժամանակ իսպառ կորչելու է.
իսկ ովքեր որ նրան ճանաչում էին,
ասելու են՝ ո՞ւր է:
8 Երազի պէս է թռչելու եւ չի
գտնուելու.
գիշերային տեսիլքի պէս է թռչելու
նա:
9 Այն աչքը, որ նայել է նրան,
այլեւս չի տեսնելու,
ոչ էլ նրա բնակավայրն է նրան
ընդունելու:
10 Նրա որդիներին վատ մարդիկ են
սպանելու.
ձեռքերը ախտերից են բորբոքուելու:
11 Ոսկորներն իր, որ երիտասար-
դական ուժով էին յագեցած,
իր հետ էլ հողում են ննջելու:
12 Եթէ անգամ քաղցրանայ չարու-

եւ ոչ ոք չի լինելու, որ քշի նրանց:
3 Այլեւս Եփրեմի համար այն չի դառնալու ամուր ապաստան,
այլեւս թագաւորութիւն չի մնալու Դամասկոսում,
եւ ոչ էլ ասորիներից կենդանի մնացածներն են այնտեղ ապրելու,
որովհետեւ նա աւելի լաւ չէ,
քան իսրայէլացիներն ու նրանց փառքը», —
այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը:
4 «Այն օրը Յակոբի փառքը պիտի նսեմանայ,
նրա փառքի մեծութիւնը պիտի սասանուի:
5 Այնպէս պիտի լինի, ինչպէս եթէ մէկը կանգնած ցորենը խուրձ-խուրձ հաւաքի իր գիրկը,
ապա նրա յետեւից ընթանայ հասկաքաղը,
կամ եթէ մէկը Հաստատութեան հովտում հասկ քաղի,
ապա այնտեղ մնայ խոզանը.
6 կամ էլ նմանուելու է այն ձիթենուն,
որի բարձր ճիւղերին մնացել է երկու-երեք պտուղ,
չորս-հինգ հատ էլ՝ նրա ոստերին», -
այսպէս է ասում Տէր Աստուած:
7 Այն օրը մարդն իր յոյսը դնելու է իր Արարչի վրայ, եւ նրա աչքերը պիտի նայեն Իսրայէլի սրբին: 8 Այլեւս չպիտի ապաւինեն մեհեաններին եւ ոչ էլ իրենց ձեռակերտ կուռքերին, որ իրենց իսկ մատները պատրաստեցին, այլ ապաւինելու են Իսրայէլի սրբին. ո՛չ իրենց սրբազան կոթողներին են նայելու, ո՛չ էլ իրենց գարշելի կուռքերին:
9 Այն օրը քո քաղաքները պիտի լքուեն ու աւերակ դառնան, ինչպէս որ Իսրայէլի զաւակների երեսից անհետացան ամորհացիներն ու խեւացիները:
10 Քանի որ դու թողեցիր քո փրկիչ Աստծուն
եւ չյիշեցիր Տիրոջը՝ քո օգնականին,
դրա համար էլ անհաւատ տունկ
եւ անհաւատ սերմ պիտի տնկես:
11 Այն օրը, երբ տնկես, պիտի մոլորուես:
Եթէ անգամ կանուխ սերմանես,
պիտի ծաղկի ամռանը, այն օրը,
երբ կտակելու ես,
ինչպէս հայրն է ժառանգութիւն թողնում իր որդիներին:

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ԱԶԳԵՐԻՆ

12 Վա՜յ ձեզ, բիւրաւոր ազգերի բազմութիւննե՛ր,
այնպէս պիտի խռովուէք,
ինչպէս ալեկուտակ ծովը.
բիւրաւոր ազգերի ալիքները պիտի շառաչեն ջրերի նման:
13 Բիւրաւոր ազգերը նման են յորդառատ ջրերի,
առատաբուխ ջրերի բուռն հոսանքների,
բայց Տէրը նրանց պիտի խեղճացնի եւ հալածի հեռու, հեռու:
Ցարդի մղեղի պէս նրանք պիտի քշուեն քամուց,
անիւի փոշու նման փոթորկից հողմացրիւ պիտի արուեն:
14 Երեկոյեան դէմ սուգ պիտի անեն,
առաւօտը չբացուած այլեւս գոյութիւն չեն ունենալու:
Այս է ձեր աւարառուների բաժինը,
եւ ժառանգութիւնը նրանց,
որոնք կողոպտում էին ձեզ:

ՎԱՅ ԵԹՈՎՊԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐԻՆ

18 Վա՜յ եթովպացիների գետի այն կողմում
առագաստներին ապաւինած երկրին,
2 որ ընծաներ էր ուղարկում ծովով
եւ մագաղաթեայ հրովարտակներ՝ ջրերի կոհակների վրայով,
որպէսզի արագընթաց սուրհանդակները գնան գոռոզացած ազգի մօտ,
ազգ, որ օտար է ու չար,
եւ դրանից աւելին ոչ ոք չի կարող լինել,
ազգ, որ անյոյս է ու ոտքի տակ տրուած:
3 Եւ այժմ ամբողջ երկրի գետերը, ինչպէս աշխարհ, բնակեցուած են.
պիտի բնակեցուի նրանց աշխարհը,
երբ նշանը լերան վրայից վերանայ,
եւ լսելի լինի փողի ձայնը,
4 քանզի այսպէս ասաց ինձ Տէրը.
«Զգոյշ պիտի լինեն իմ քաղաքում,
ինչպէս միջօրէի տօթ արեւից
կամ ամառային օրերի անձրեւաբեր ամպից»:
5 Նախքան հունձը, երբ ծաղիկը բողբոջելու լինի,
երբ խաղողի ծաղիկը բացուի ու ազոխ դառնայ,
մանր-մունր ողկոյզները պիտի կտրեն մանգաղով,
ճիւղերը պիտի հատեն ու դէն նետեն:
6 Ամէն ինչ պիտի թողնեն երկնքի թռչուններին
եւ երկրի գազաններին.
նրանց վրայ պիտի հաւաքուեն երկնքի թռչունները,
երկրի բոլոր գազանները պիտի հասնեն նրանց վրայ:
7 Այն ժամանակ Զօրութիւնների Տիրոջն ընծաներ պիտի մատուցուեն տանջուած ու խոնարհ ժողովրդի կողմից, այդ օրերից յետոյ եւ յաւիտենական ժամանակներում՝ մեծ ժողովրդի կողմից, մի ազգից, որ ոտնատակ է տրուել, բայց յոյսով է մնացել եւ ապրում է իր աշխարհում, գետի այն կողմում, այն տեղում, ուր կոչուեց Զօրութիւնների Տիրոջ անունը Սիոն լերան վրայ:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺԵԼՈՒ Է ԵԳԻՊՏՈՍԸ

19 Տեսիլք եգիպտացիների վրայ
1 Ահաւասիկ Տէրը, բազմած թեթեւասահ ամպերի վրայ,
գալու է Եգիպտոս.
եգիպտացիների կուռքերը նրա ահից պիտի դողան,
նրանց սրտերը պիտի յուսալքուեն:
2 Եգիպտացիները ելնելու են եգիպտացիների դէմ,
պատերազմելու են եղբայրը՝ եղբօր,
ընկերը՝ ընկերոջ,
քաղաքը՝ քաղաքի,
գաւառը՝ գաւառի դէմ:
3 «Եգիպտացիների հոգիները պիտի խռովուեն,
նրանց խորհուրդը պիտի ցրեմ,
եւ նրանք հարցում պիտի անեն իրենց աստուածներին ու կուռքերին,
իրենց մեռելահարցուկներին ու վհուկներին:
4 Եգիպտացիներին պիտի մատնեմ խստասիրտ մարդկանց ու տէրերի ձեռքը,
դաժան թագաւորները պիտի տիրեն նրանց», -
այսպէս է ասում ահա Զօրութիւնների Տէրը:
5 Եգիպտացիները ծովափնեայ ջրակոյտերից են խմելու,
որովհետեւ գետը նուազելու է եւ ցամաքելու:
6 Գետերն ու գետերի ջրադարձները քաշուելու են,
հաւաքուած բոլոր ջրերը ցամաքելու են,
եւ բոլոր մարգագետինները,
եղէգի ու կնիւնի բոլոր խիտ թաւուտներն ու լոռամարգերը,
7 գետի եզերքներին եղած ողջ կանաչը
եւ բոլոր հերկերը, որոնք գետի ջրով են մշակւում,
խորշակահար չորանալու են:
8 Ձկնորսները տրտմելու են,
գետի մէջ բոլոր կարթ գցողները հոգոց են հանելու,
ցանց եւ ուռկան գցողները սուգ են անելու:
9 Ամաչելու են նաեւ բարակ կտաւ մանող կտաւագործները,
եւ նրանք, որ բեհեզ են գործում:
10 Բոլոր արհեստաւորները տրտմութեամբ են համակուելու,
բոլոր տարազագործները տխրելու են,
եւ նրանց սրտերը ցաւելու են:
11 Տայանի իշխանները՝ թագաւորի իմաստուն խորհրդականները,
յիմարանալու են,
նրանց ժողովը դառնալու է անմիտ:
Էլ ինչպէ՞ս կ՝ասէք արքային.
«Իմաստունների զաւակներ ենք մենք,
նախկին թագաւորների զաւակներ»:
12 Արդ, ո՞ւր են քո իմաստունները,
թող պատմեն քեզ եւ ասեն,
թէ ինչ խորհուրդ խորհեց Զօրութիւնների Տէրը Եգիպտոսի մասին:
13 Տայանի իշխանները յիմարացան,

մեմփացիների իշխանները մեծամտացան,
որոնք մոլորեցնելու են եգիպտացիներին՝
իրենց բոլոր ցեղերով:
14 Տէրը մոլորութեան ոգի խառնեց նրանց,
եւ նրանք Եգիպտոսն ամէն բանի մէջ մոլորեցրին այնպէս,
ինչպէս մոլորւում է այն հարբածը,
որ փսխում է:
15 Եւ թող եգիպտացիներն այլեւս գործ չունենան՝ ո՛չ յետոյ եւ ո՛չ էլ առաջ†, ո՛չ սկզբում եւ ո՛չ էլ վերջում:

ԵԳԻՊՏՈՍԸ ՊԱՇՏԵԼՈՒ Է ՏԻՐՈՋԸ

16 Այն օրը եգիպտացիները պիտի դառնան կանանց նման՝ դողալով եւ զարհուրելով Զօրութիւնների տիրոջ ձեռքից, որ երկարելու է նրանց վրայ:
17 Իսկ Հրէաստան երկիրը պիտի ահի մատնի եգիպտացիներին, եւ ամէնքն էլ, ովքեր այդ երկրի անունը տալու լինեն նրանց մօտ, պիտի սարսափեն այն խորհրդից, որ Զօրութիւնների Տէրը խորհեց իրենց մասին: 18 Այն ժամանակ Եգիպտացիների երկրում պիտի լինի հինգ քաղաք, որտեղ մարդիկ խօսելու են քանանացիների լեզուով եւ երդուելու են Զօրութիւնների Տիրոջ անունով: Մի քաղաքը կոչուելու է Ասեղեկ քաղաք: 19 Այն օրը Տիրոջ զոհասեղանը լինելու է Եգիպտացիների երկրում, նրանց սահմաններում Տիրոջ պատուին կանգնեցուելու է յուշակոթող, 20 որը Եգիպտացիների երկրում Տիրոջ համար յաւիտենական նշան է լինելու: Իրենց նեղութիւնների պատճառով նրանք պիտի աղաղակեն Տիրոջը, եւ Տէրը նրանց մօտ պիտի ուղարկի մի մարդու, որը պիտի փրկի նրանց, դատաստանով է փրկելու նրանց: 21 Տէրը յայտնի պիտի դառնայ եգիպտացիներին, ու այն օրը եգիպտացիները պիտի ճանաչեն Տիրոջը եւ մատուցեն զոհեր ու ընծաներ, ուխտ պիտի դնեն Աստծուն եւ կատարեն այն: 22 Տէրը մեծամեծ հարուածներ պիտի հասցնի եգիպտացիներին, բայց եւ պիտի լսի ու բժշկի նրանց, ու նրանք պիտի դառնան դէպի Տէրը, որը պիտի լսի ու բժշկի նրանց: 23 Այն օրը Եգիպտոսից դէպի Ասորեստան ճանապարհ պիտի լինի, ասորեստանցիները պիտի մտնեն Եգիպտոս, եգիպտացիներն էլ պիտի գնան ասորեստանցիների մօտ. եգիպտացիները պիտի ծառայեն ասորեստանցիներին†: 24 Այն օրն Իսրայէլը եգիպտացիների ու ասորեստանցիների շարքում երրորդը պիտի լինի՝ 25 օրհնութեան արժանանալով այն երկրում, որն օրհնելու է Զօրութիւնների Տէրը՝ ասելով. «Օրհնեալ լինի իմ ժողովուրդը, որը Եգիպտոսում է եւ Ասորեստանում, օրհնեալ լինի իմ ժառանգութիւնը՝ Իսրայէլը»:

†Երբայերէնում՝ եգիպտացիները թող խորհրդական չունենան, ո՛չ մեծ եւ ո՛չ փոքր:

†Երբայերէնում՝ եգիպտացիները եւ ասորեստանցիները միասին պիտի պաշտեն Աստծուն:

ԵՍԱՅԻՆ ՇԲՋՈՒՄ Է ՄԵՐԿ ՈՒ ԲՈԿՈՏՆ

20 1 Այն տարին, երբ Տանաթանը, Ասորեստանի Առան արքայի կողմից ուղարկուելով, եկաւ Ազոտոս, պատերազմ մղեց Ազոտոսի դէմ եւ գրաւեց այն, 2 ահա այդ ժամանակ Տէրը խօսեց Ամոսի որդի Եսայու հետ եւ ասաց. «Գնա՛ ու քուրձդ հանի՛ր քո մէջքից եւ հողաթափերդ արձակի՛ր քո ոտքերից»: Այդպէս էլ արեց՝ քայլելով մերկ ու բոկոտն: 3 Եւ Տէրն ասաց. «Ինչպէս որ իմ ծառայ Եսային քայլեց մերկ ու բոկոտն, այդպէս երեք տարի եգիպտացիների եւ եթովպացիների համար հրաշքներ ու նշաններ պիտի լինեն: 4 Թող հասկանան, որ այդպէս Ասորեստանի արքան գերի է տանելու եգիպտացիներին ու եթովպացիներին, երիտասարդներին ու ծերերին՝ մերկ ու ամօթոյքը բաց, խայտառակելով եգիպտացիներին: 5 Եւ պարտութեան մատնուած եգիպտացիները պիտի ամաչեն եթովպացիների պատճառով, որոնց վրայ յոյս էին դրել, եւ որոնք նրանց համար զօրութիւն էին»: 6 Ապա այն օրը այդ կղզու բնակիչները պիտի ասեն. «Ահաւասիկ մենք մեր յոյսը դրել էինք սրանց վրայ, ապաւինել սրանց օգնութեանը, բայց սրանք

իրենց անձն անգամ չկարողացան փրկել Ասորեստանի արքայից, իսկ մենք ինչպէ՞ս պիտի փրկուենք»:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

21 1 Տեսիլք ծովափնեայ անապատի վրայ:
Ինչպէս անապատով անցնող մրրիկ,
այդպէս նա եկաւ անապատային երկրից:
2 Ահաւոր էր եւ սարսափելի այն տեսիլքը, որ երեւաց ինձ:
Անարգողն անարգում է,
անիրաւը՝ անիրաւութիւն գործում:
Ինձ վրայ յարձակուեցին էլամացիք,
ինձ վրայ եկան պարսից պատգամաւորները:
Հեծեծում եմ ու ինքս ինձ քաջալերում:
3 Ահա թէ ինչու մէջս սարսուռ ընկաւ,
ցաւերը բռնեցին ինձ, ինչպէս ծննդկան կնոջը:
Փախայ, որպէսզի չլսեմ,
շտապեցի, որպէսզի չտեսնեմ:
4 Միտքս շուարեց,
յանցանքի զգացումը պատեց ինձ,
մարմինս դող ընկաւ:
Նայի՛ր, թէ ինչ դիտաւորութիւն ունես.
5 սեղա՛ն պատրաստիր, կե՛ր, խմի՛ր:
Եկէ՛ք, իշխանե՛ր, պատրաստեցէ՛ք ձեր վահանները,
6 քանզի այսպէս ասաց ինձ Տէրը.
«Ինքդ անձամբ գնա դէ՛տ եղիր,
ինչ որ տեսնես՝ կը պատմես»:
7 Եւ ես տեսայ երկու հեծեալ,
մի հեծեալը՝ էշի վրայ, միւս հեծեալը՝ ուղտի:
Մեծ ուշադրութեամբ ականջ դրեցի:
«Ուրիշային կանչիր քո դիտանո՛ցը», — ասաց Տէրը:
8 Ու ամբողջ ցերեկը եւ ողջ գիշերը հետեւեցի բանակին
9 ու տեսայ, որ գալիս է նոյն հեծեալ զոյգը՝
ձայն տալով եւ ասելով.
«Ընկաւ, կործանուեց Բաբելոնը,
նրա բոլոր արձաններն ու կուռքերը գետին տապալուեցին»:
10 Լսեցէ՛ք, կենդանի մնացածնե՛ր եւ տանջուածնե՛ր,
լսեցէ՛ք այն, ինչ ես լսեցի Զօրութիւնների Տիրոջից,
ինչ մեզ պատմեց Իսրայէլի Աստուածը:

ՊԱՏԳԱՄ ԵԴՈՄԻ ՄԱՍԻՆ

11 Տեսիլք եդոմայեցիների վրայ:
Մի ձայն ինձ կանչում է Սէիր լերան վրայից.
«Պահպանեցէ՛ք պարսպաբուրգերը»:
12 Ես կը պահպանեմ առաւօտ ու գիշեր:
Եթէ դու ինձ հարցնես, հարցրո՛ւ եւ եկ ինձ մօ՛տ բնակուիր»:
13 Պատգամ արաբացիների մասին:
Գիշերները կը ննջես անտառում,
Դոդանիմի ճանապարհին:
14 Ընդառա՛ջ եկէք եւ ջո՛ւր բերէք ծարաւածներին,
ո՛վ Թեմանի բնակիչներ,
հացո՛վ ընդառաջ ելէք փախստականներին,
15 որովհետեւ անթիւ են սպանուածները
եւ բազում՝ մոլորեալները,
անթիւ են սրերը
եւ բազում՝ լարուած աղեղները,
որովհետեւ բազմաթիւ են պատերազմում ընկածները:
16 Այսպէս ասաց ինձ Տէրը.
«Եւս մի տարի՝ նման վարձկանի տարուան, եւ կը վերանայ Կեդարի որդիների փառքը: 17 Կեդարի աղեղնաւոր ու զօրաւոր որդիներից մնացածները եւս սակաւաթիւ կը լինեն», — քանզի Իսրայէլի Տէր Աստուա՛ծը խօսեց:

ՊԱՇԱՐՈՂՆԵՐԸ ՄՕՏԵՆՈՒՄ ԵՆ

22 1 Պատգամ Սիոնի հովտի մասին
Ի՞նչ եղար, ի՞նչ պատահեց քեզ,
այժմ ինչո՞ւ դուք բոլորդ իզուր տանիք բարձրացաք:
2 Ձեր քաղաքը լցուեց գուժկաններով:

Ո՛վ պերճացեալ քաղաք,
քո վիրաւորները սուսերով վիրաւորուածներ չեն,
եւ քո դիակներն էլ պատերազմում ընկած դիակներ չեն:
3 Բոլոր իշխաններդ փախստական են դարձել, գերեալներդ խստօրէն կալանաւորուած են,
քո հզօրները, որոնք հեռու էին փախել,
անխտիր կապանքների մէջ են:
4 Դրա համար էլ ասացի.
«Թո՛յլ տուէք ինձ՝ դառնօրէն լաց լինեմ,
մի՛ աշխատէք ինձ մխիթարել
իմ ժողովրդի դստեր կործանման առիթով»:
5 Արդարեւ, Սիոնի Հովտում Զօրութիւնների Տիրոջ կողմից խռովութեան,
ոտնատակ տալու եւ շփոթութեան օր է.
մեծ ու փոքր առհասարակ մոլորուած՝
տարուբերւում են լեռների վրայ:
6 Իսկ էլամացիները, կապարճներ առած,
ձի հեծած եւ յարձակուող գնդերով պիտի գան,
7 եւ քո ընտիր-ընտիր հովիտները պիտի լցուեն կառքերով,
հեծեալները երիվարներով պիտի խցանեն քո դռները:
8 Նրանք պիտի կործանեն Ցուդայի երկրի դարպասները
եւ այն ժամանակ պիտի տեսնեն քաղաքի ընտիր-ընտիր ապարանքները,
9 ի յայտ պիտի բերեն Դաւթի բարձր ապարանքի գաղտնի անցքերը:
Եւ պիտի տեսնեն, որ դրանք շատ են:
Հին ջրմուղը պիտի շուռ տան դէպի քաղաք,
10 պիտի քանդեն Երուսաղէմի ապարանքները՝
քաղաքի պարիսպներն ամրացնելու նպատակով:
11 Իսկ դուք երկու պարիսպների մէջտեղը,
հին ջրմուղից աւելի ներս,
պիտի ջուր հանէք ձեզ համար,
առանց ձեր հայեացքն ուղղելու նրան,
որ առաջուց չինել էր այն,
առանց նրա հիմնադրողին հեռուից-հեռու ճանաչելու:
12 Այն օրը Զօրութիւնների Տէրը կանչեց լաց ու կոծ անելու,
ողբալու, մազերը պոկոտելու եւ քուրձ հագնելու:
13 Իսկ նրանք ուրախութիւն ու ցնծութիւն արեցին.
արջառներ էին սպանում,
ոչխարներ էին մորթում,
որպէսզի միս ուտեն, գինի խմեն եւ ասեն.
«Ուտենք ու խմենք,
որովհետեւ վաղը մեռնելու ենք»:
14 Բայց դա հասնելու է Զօրութիւնների Տիրոջ ականջին: «Եւ ձեր այդ մեղքերին մինչեւ ձեր մահը թողութիւն չի տրուելու», —
ասում է Զօրութիւնների Տէրը:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՄՆԱՅԻ ՄԱՍԻՆ

15 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը. «Դու գնա՛, մտի՛ր դիւան, Սոմնաս հանդերձապետի մօտ, եւ ասա՛ նրան.
16 "Ինչո՞ւ ես եկել այստեղ,
ի՞նչն է բերել քեզ այստեղ.
դու քեզ համար գերեզման ես փորել այստեղ,
ժայռի մէջ քեզ համար օթեւան ես շինել"»:
17 Ահաւասիկ Զօրութիւնների Տէրը դուրս պիտի հանի
ու սպանի քեզ, ո՛վ մարդ,
պիտի մերկացնի քեզ քո պատմուճանից եւ փառապակից:
18 Քեզ պիտի նետի մեծ ու անսահման երկիրը,
եւ այնտեղ դու պիտի մեռնես.
քո շքեղ կառքերը անարգանքի առարկայ պիտի դարձնի,
քո իշխանական տունը ոտնատակ պիտի տայ:
19 Քո դիրքից ու աստիճանից պիտի զրկուես:
20 Այն օրը պիտի կանչեմ իմ ծառայ Եղիակիմին՝ Քեղկիայի որդուն,

21 նրան պիտի հագցնեմ քո պատմուճանը,
պիտի տամ նրան քո պսակն իր ճոխութեամբ,
քո հազարապետութիւնը նրա ձեռքը պիտի տամ,
եւ թող նա հայր դառնայ Երուսաղէմի ու Ցուդայի երկրի բնակիչների համար:
22 Դաւթի բանալիները պիտի տամ նրան.
նա պիտի իշխի,
եւ ոչ ոք չի կարողանալու նրան հակառակ կանգնել:
23 Նրան իշխան պիտի կարգեմ հաստատուն մի տեղ,
եւ թող նա բազմի իր հօր տան փառքի աթոռին:
24 Թող նրան ապաւինեն իր հօր տան բոլոր պատուաւոր մարդիկ՝ փոքրից մինչեւ մեծը: Բոլոր անօթները, մանր թէ մեծ, մինչեւ կարասները, նա պիտի բացի, եւ ոչ ոք չի կարողանալու փակել, պիտի փակի, եւ ոչ ոք չի կարողանալու բացել: Այն ժամանակ ամէն ինչ կախուած է լինելու նրանից:
25 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը. «Աներեր մարդը պիտի շարժուի իր հաստատուն տեղից, պիտի ընկնի ու կործանուի, եւ նրա փառքը պիտի վերանայ նրանից», - քանզի Տէ՛րը խօսեց:

ՏԻՐՈՍԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

23 1 Պատգամ Տիւրոսի մասին

Ողբացէ՛ք, Կարքեդոնի՛ նաւեր,
քանզի Կարքեդոնացիները կործանուեցին
եւ այլեւս չեն վերադառնայ Կիտացիների երկրից,
ուր գերութեան քշուեցին:
2 Ո՞ւմ են նման այդ կղզու բնակիչները.
նման են փիւնիկեցի վաճառականներին,
որոնք անցնում են ծովով ու մեծ ջրերով.
3 վաճառականների սերունդ են.
ինչպէս ամառնը հունձն է հաւաքւում,
այդպէս են այդ վաճառականները ազգերի համար:
4 «Ամաչի՛ր, Սիդո՛ն», — ասում է ծովը:
Ծովի զօրութիւնն էլ ասում է.
«Մի՞թէ ես երկունքի ցաւով չե՞մ բռնուել, չե՞մ ծնել,
երիտասարդներ չե՞մ սնել,
կոյսեր չե՞մ մեծացրել»:
5 Երբ լուրը Եգիպտոսի երկիրը հասնի,
վիշտը պիտի պատի նրան Տիւրոսի համար:
6 Գնացէ՛ք Կարքեդոն,
դուք, որ այդ կղզու բնակիչներն էք,
ողբացէ՛ք:
7 Արդեօք սկզբից իսկ ձեր այդ ամբարտաւանութիւնը չէ՞ր,
որ նրա մատնութեան պատճառ դարձաւ.
Նա իր իսկ ոտքերով հեռաւոր պանդխտութեան պիտի քշուի:
8 Իսկ այդ բանն ո՞վ մտածեց Տիւրոսի մասին.
մի՞թէ նա յետին մէ՞կն էր կամ տկար մի ոք:
Նա, նրա վաճառականները քանանացիների պատուաւոր մարդիկ էին,
նրա առեւտրականները երկրի իշխաններն էին:
9 Զօրութիւնների Տէրը մտածեց վերջ տալ ականաւոր մարդկանց ողջ ամբարտաւանութեանը
եւ երկրի երեսին անարգանքի ենթարկել բոլոր պատուաւորներին:
10 Քո հո՛ղը մշակիր,
որովհետեւ այսուհետեւ նաւերը չեն գալու Կարքեդոնից,
11 քո ձեռքի զօրութիւնը այլեւս չի երեւալու ծովի վրայ,
դու, որ սարսեցնում էիր թագաւորներին:
Զօրութիւնների Տէրը Քանանի համար հրամայեց՝
կործանե՛լ նրա հզօրութիւնը:
12 Պիտի ասեն, թէ՝ «Էլ չշարունակենք թշնամանքը
եւ չզրկենք Սիոնի կոյս դստերը»:
Ոտքի՛ կանգնիր եւ ծովո՛վ անցիր:
Սակայն թէկուզեւ դիմես դէպի Կիտիիս,

այնտեղ էլ քեզ համար հանգիստ չի լինելու:
13 Եւ եթէ քաղդէացիների երկիրը գնաս,
որը, սակայն, նոյնպէս աւերուած է ասորեստանցիներից,
այնտեղ եւս քեզ համար դուլ ու դադար չի լինելու:
Սիհիմը նրա հիմքը գցեց,
կանգնեցրեց նրա պարսպաբուրգերը,
բարձրացրեց նրա աշտարակները,
բայց ահա նրա պարիսպը տապալուեց ու կործանուեց:
14 Ողբացէ՛ք, Կարքեդոնի՛ նաւեր,
քանզի կործանուեց ձեր ամրութիւնը:
15 Եւ պիտի դայ մի օր, երբ Տիւրոսը եօթանասուն տարի լքուած պիտի լինի, այնքան, որքան մի թագաւորի իշխանութեան ժամանակն է լինում, որքան մի մարդու կեանքի ժամանակը: Ու եօթանասուն տարի յետոյ Տիւրոսը պիտի դառնայ այնպիսին, ինչպէս ասւում է պոռնիկի երգում.
16 "Քնա՛ր վերցրու, շրջի՛ր ու կոծի՛ր,
ո՛վ դու պոռնկութեան լքուա՛ծ քաղաք,
լա՛ւ նուագիր, նորից ու նորից երգիր,
որ քո յիշատակը մնայ:
17 Ու եօթանասուն տարի յետոյ Տէրը պիտի այցելի Տիւրոսին, որը նորից նոյն կարգով պիտի վերահաստատուի, ինչպէս առաջ էր, եւ այնտեղ պիտի կատարուի աշխարհի երեսին գոյութիւն ունեցող բոլոր երկրների թագաւորների առեւտուրը: 18 Նրա վաճառքի շահը Տիրոջը պիտի նուիրաբերուի. ոչ թէ առանձին մարդկանց համար պիտի հաւաքեն, այլ նրա վաճառքի շահը պիտի պատկանի Տիրոջ առջեւ բնակուողներին, որպէսզի ուտեն, խմեն եւ, ի նշան Տիրոջ հանդէպ իրենց երախտագիտութեան, ուրախ լինեն:

ԱՄԲԱՐՏԱՒԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ԽՈՆԱՐՀՈՒԻ

24 Ահաւասիկ Տէրը ամայացնելու է աշխարհը,
աւերելու է այն,
խորտակելու է նրա հիմքերը
եւ ցանուցիր է անելու նրա բնակիչներին:
2 Նոյն բախտին պիտի արժանանան ժողովուրդը եւ քահանան,
ծառան եւ տէրը,
աղախինը եւ տիրուհին,
միմեանցից չպիտի տարբերուեն գնողն ու վաճառողը,
փոխատուն եւ փոխառուն,
պարտապանը եւ պարտատէրը:
3 Ամբողջովին պիտի աւերուի երկիրը,
լրիւ պիտի կողոպտուի երկիրը,
քանզի Տէրն իր բերանով ասաց այդ.
4 «Սո՛ւգ արա, որովհետեւ երկիրը կործանուեց,
աշխարհն աւերուեց ու ամայացաւ,
երկրի բարձունքները սուգ մտան»:
5 Երկիրն իր բնակիչներով մեղանչեց,
քանզի զանց առան Տիրոջ օրէնքները,
խեղաթիւրեցին նրա պատուիրանները
եւ դրժեցին յաւիտենական ուխտը:
6 Նզովքը պիտի ճարակի երկիրը,
որովհետեւ նրա բնակիչները մեղք գործեցին:
Դրա համար էլ նրա բնակիչները տնանկ պիտի դառնան,
եւ սակաւաթիւ մարդիկ են կենդանի մնալու:

ԱՆՄԽԻԹԱՐ ՓԱՂԱՔԸ

7 Պիտի սգայ գինին,
պիտի սգայ այգին,
խրախճանքով տարուածները բոլորը հոգոց պիտի հանեն:
8 Թմբուկների ցնծութիւնը դադարեց,
ամբարիշտների հպարտութիւնն ու մեծութիւնը տեղի տուեցին,
քնարների ձայները լռեցին:
9 Խմողներն ամօթահար եղան
ու այլեւս գինի չէին խմում,
օղին դառնութեան փոխուեց նրանց համար:
10 Բոլոր քաղաքներն աւերակ դարձան,
ապարանքների դռները գոց մնացին,
որովհետեւ ներս մտնող չկար:
11 Ամէն, ամէն տեղ գինու վրա՛յ ողբացէք.
ամէն ուրախութիւն լռեց,
վերացաւ ողջ երկրի ցնծութիւնը:
12 Աւերակ քաղաքները պիտի լքուեն,
կանգուն մնացած ապարանքները պիտի կործանուեն:
Այս ամէնը պիտի կատարուի երկրի վրայ, հեթանոսների մէջ:
13 Ինչպէս վերջին պտուղը քաղելու համար ճռաքաղ են անում ձիթենին,
այդպէս ճռաքաղ պիտի անեն եւ նրանց:
Եւ երբ այգեկութը դադարի,
նրանք բարձրաձայն պիտի աղաղակեն:

ՏԻՐՈՋ ՓԱՌՔԻ ԵՐԳԸ

14 Իսկ երկրի վրայ կենդանի մնացածները
միահամուռ պիտի ուրախանան Տիրոջ փառքով,
եւ ծովի ջրերը պիտի յուզուեն:
15 Դրա համար էլ Տիրոջ փառքը պիտի պարուրի ծովի կղզիները,
եւ Տիրոջ անունը պիտի փառաւորուի:
Ո՛վ Տէր Աստուած Իսրայէլի,
16 երկրի ծայրերից հրաշալի օրհնութիւն լսեցինք.
«Ցո՛յս բարեպաշտին».
եւ թող ասեն.
«Ինձ համար է իմ խորհուրդը,
իմ խորհուրդն ինձ եւ իւրայիններիս համար է»:
Վա՛յ նրանց, որոնք արհամարհում են,
արհամարհելով արհամարհում են օրէնքները:
17 Ահը, գուբը եւ որոգայթը թող սպառնան ձեզ,
ո՛վ երկրի բնակիչներ:
18 Ով որ ահից փախչի՝ թող ընկնի գուբը,
եւ ով որ ելնի գբից՝ թող բռնուի որոգայթի մէջ:
Ահա բացուեցին երկնքի պատուհանները,
եւ երկրի հիմքերը ցնցուեցին:
19 Երկիրը չփոթի ու խռովութեան մէջ պիտի ընկնի,
երկիրը պիտի տագնապի,
տարակուսի եւ խոնարհուի:
20 Երկիրը պիտի շարժուի ու ցնցուի
ինչպէս այգու պահապանի տնակ,
հարբածի ու երերուողի պէս պիտի գլորուի
եւ պիտի չկարողանայ ոտքի կանգնել,
որովհետեւ նրա վրայ ծանրացել է անօրէնութիւնը:

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

21 Այն օրը Աստուած իր ձեռքը պիտի տարածի երկնային լուսատուների վրայ, իսկ երկրում՝ երկրի թագաւորների վրայ: 22 Եւ պիտի հաւաքեն նրա ժողովրդին ու դնեն կապանքների մէջ, պիտի պաշարեն ամրոցները եւ շատ սերունդներ անց պիտի պատժեն նրանց:
23 Ու պիտի հալուի աղիւսը,
կործանուի պարիսպը,
քանզի Սիոնի լեռան վրայ եւ Երուսաղէմում
Տէրն է թագաւորելու եւ փառաւորուելու ծերերի առաջ:

ՓԱՌԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

25 Տէ՛ր Աստուած իմ,
ես պիտի փառաբանեմ քեզ,
պիտի օրհնեմ քո անունը,
քանզի սքանչելի գործեր կատարեցիր՝
առաջին խորհուրդը ճշմարիտ:
2 Այո՛, Տէ՛ր, քաղաքները վերածեցիր հողաբլուրների,
բերդաքաղաքներն իրենց հիմքերից կործանեցիր.
թող ամբարիշտների քաղաքը յաւիտենապէս չվերաշինուի:
3 Դրա համար էլ աղքատ ժողովուրդը պիտի օրհնի քեզ,
զրկուած մարդկանց քաղաքները պիտի օրհնեն քեզ,
4 որովհետեւ բոլոր խոնարհ քա-

ղաքներին օգնական դարձար,
իսկ թշուառութիւնից տանջուածին՝ ապաւինութեան յարկ,
չար մարդկանցից փրկելով նրանց:
5 *Դու ծարաւածների համար ապաւէն ես*
եւ զրկուած մարդկանց համար՝ ոգի այն ամբարիշտների դէմ,
որոնց ձեռքը մատնեցիր մեզ՝
իբրեւ Սիոնին ծարաւի տոչորուած մարդկանց[†]*:*

ՏԷՐԸ ՍՐԲՈՒՄ Է ԱՐՑՈՒՆԳՆԵՐԸ

6 *Զօրութիւնների Տէրն այնպէս պիտի անի,*
որ բոլոր հեթանոսներն այս լեռներում ուրախութիւն վայելեն,
գինի խմեն,
օծուեն մրուրից մաքրուած իւղով
եւ հանգչեն այս լեռների վրայ:
7 *Պատմի՛ր սա բոլոր հեթանոսներին,*
քանզի բոլոր ազգերի համար Տէրն այս խորհուրդն ունի:
8 *Մահը զօրացաւ եւ կուլ տուեց,*
բայց Աստուած բոլորի երեսից արցունքն իսպառ պիտի կտրի,
ժողովրդի նախատինքը պիտի վերացնի ամբողջ աշխարհից,
քանզի սա Տիրոջ բերանը խօսեց.
ինչպէս ամպի հովանին յաղթահարում է տապը,
այնպէս էլ Նա պիտի ընկճի հզօրների բազուկները:
9 *Ու այն օրը պիտի ասեն.*
«Ահա մեր Տէր Աստուածը, որի վրայ յոյս էինք դրել մենք,
նա՛ փրկեց մեզ,
քանզի նա է Տէրը, որին սպասում էինք.
եկէ՛ք ցնծանք եւ ուրախանանք մեր փրկութեամբ»:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺՈՒՄ Է ՄՈՎԱԲԻՆ

10 *Աստուած մեզ հանգիստ է պարգեւելու այս լեռներում,*
իսկ մովաբացին ոտքի կոխան պիտի լինի,
ինչպէս որ օրանն է ճզմւում կամնասայլի տակ:
11 *Տէրն իր ձեռքերը պիտի երկարի այնտեղ*
եւ այդպէս նրան պիտի թշուառացնի ու կործանի,
հողին պիտի հաւասարեցնի նրա հպարտութիւնը՝
նրա վրայ տարածելով իր ձեռքերը:
12 *Քո բարձր պարիսպների ամրութիւնը պիտի խոնարհեցնի՝*
գետնին հաւասարեցնելով այն:

ՏԻՐՈՋՆ ԱՊԱՒԻՆԱԾ ՔԱՂԱՔԻ ԵՐԳԸ

26 *Այն օրը Հրէաստան երկրում այս երգն են երգելու.*
«Ահա մեր զօրաւոր քաղաքը եւ մեր փրկութիւնը,
որ կանգնելու է ինչպէս պարիսպ ու պատուար:
2 *Բացէ՛ք ձեր դռները.*
թող մտնի ժողովուրդը,
որ յարգում է արդարութիւնը,
պահպանում ճշմարտութիւնը,
3 *որ հոգում է ճշմարտութեան մասին*
եւ ապահովում խաղաղութիւնը:
4 *Ցոյսով ապաւինեցինք քեզ յաւիտենապէս, ո՛վ Տէր:*
5 *Դու, որ խոնարհեցրիր եւ ներքեւ իջեցրիր բարձունքների բնակիչներին,*
հզօր քաղաքներն ես կործանում
եւ գետնին հաւասարեցնում դրանք:
6 *Հեզ ու խոնարհ մարդիկ՝ կոխոտում,*
եւ աղքատները ոտքի տակ են տալիս դրանք»:
7 *Բարեպաշտների ճանապարհներն ուղիղ են,*
հարթ ու դիւրին են աստուածապաշտների ճանապարհները:
8 *Տիրոջ ճանապարհներն արդար են:*
Քո անունն ենք ապաւինել մենք եւ քո յիշատակին,

[†]Եբրայերէնում՝ կեանք եղար Սիոնի մէջ բնակուող անիրաւուածների համար, ինչպէս ջուրը՝ ծարաւից նուաղած մարդկանց համար: Այսպան զրկանքներ կրեցիր անհաւատներից, որոնց ձեռքը մատնեցիր մեզ. բայց ինչպէս տապը կը չմանայ, երբ երկինքն ամպերով ծածկուի, նոյնպէս էլ հզօրների զօրութիւնը պիտի խոնարհուի Տիրոջ առաջ:

որին տենչում է մեր հոգին:
9 *Գիշերով իմ հոգին դէպի քեզ է շտապում, Աստուա՛ծ,*
քանզի քո հրամանները լոյս են երկրի վրայ:
Արդարութի՛ւն սովորեցէք, ո՛վ երկրի բնակիչներ,
10 *որովհետեւ ամբարիշտը պապանձուեց:*
Ով երկրի վրայ արդարութիւն չի ուսանում,
նա ճշմարիտ բան չի կատարի:
Թող կորչի ամբարիշտը,
որպէսզի չտեսնի փառքը Տիրոջ:
11 *Տէ՛ր, բարձր է քո բազուկը,*
բայց նրանք դա չգիտեն.
պիտի գիտենան ու ամաչեն,
վրէժխնդրութիւնը պիտի սպառնայ չխրատուող ժողովրդին,
եւ այժմ էլ թող կրակը լափի հակառակորդներին:
12 *Տէ՛ր Աստուած մեր, տո՛ւր մեզ խաղաղութիւն,*
դու, որ ամէն ինչով վարձատրել ես մեզ:
13 *Տէ՛ր Աստուած մեր, թող քոնը լինենք մենք.*
քեզնից բացի ուրիշ ոչ ոքի չգիտենք, ո՛վ Տէր,
եւ քո անունն ենք տալիս:
14 *Իսկ մեռածները կեանքը չեն տեսնելու.*
բժիշկները յարութիւն չեն կարող տալ:
Դրա համար էլ ոչնչացրիր ու կորստեան մատնեցիր նրանց բոլոր արուներին.
15 *դու նրանց գլխին չարիք կուտակեցիր, ո՛վ Տէր,*
չարիք աւելացրիր երկրի փառաւորուածների վրայ,
տարածեցիր աշխարհի բոլոր կողմերում:
16 *Տէ՛ր, նեղութեան մէջ յիշեցինք քեզ,*
որովհետեւ քո տուած փոքր նեղութիւնը խրատ է մեզ համար:
17 *Ինչպէս որ երկունքի մէջ գտնուողը, որ մօտ է ծննդաբերելու,*
ճչում է իր ցաւերից,
այդպէս եղանք նաեւ մենք քո երկիւղից, Տէ՛ր,
մենք, որ քո սիրելին ենք.
18 *յղիացանք, երկունքով բռնուեցինք,*
ծնեցինք ու երկրի վրայ ստեղծեցինք փրկութեան քո ոգին:
Այլեւս մենք չենք կործանուի,
կը կործանուեն աշխարհի բնակիչները:
19 *Պիտի յառնեն ու կանգնեն մեռածները,*
որոնք գերեզմաններում են,
եւ ուրախանալու են երկրի վրայ,
որովհետեւ այն ցողը, որ քեզնից է,
բժշկութիւն է նրանց համար,
իսկ ամբարիշտների երկիրը պիտի կործանուի:
20 *Գնա՛, ո՛վ իմ ժողովուրդ, մտի՛ր քո շտեմարանները, փակի՛ր քո դռները,*
թաքնուի՛ր միառժամանակ, մինչեւ որ անցնի Տիրոջ բարկութիւնը, 21 *քանզի Տէրն ահաւասիկ իր սրբարանից բարկութիւն է բերում երկրի բնակիչների վրայ, իսկ երկիրը պիտի ցոյց տայ իր արիւնը եւ չպիտի թաքցնի սպանուածներին:*

ՏԻՐՈՋ ԱՅԳԻՆ

27 *Այն օրը Տէրը պիտի քաշի սուրը, մեծ ու հզօր սուրը փախչող վիշապ օձի վրայ, գալարուող վիշապ օձի վրայ՝ ծովի մէջ սպանելով վիշապին:*
2 *Այն ժամանակ մի սքանչելի այգի է լինելու, որին տիրանալը ցանկալի պիտի լինի:*
3 *«Ես մի անառիկ քաղաք եմ,*
քաղաք, որին պաշարելը զուր է:
Ես պիտի հարբեցնեմ նրան, որ գիշերը գրաւուի,
իսկ ցերեկը խորտակուի նրա պարիսպը:
4 *Զեղաւ մէկը, որ ձեռք չտար նրան:*
Ո՞վ է, որ կ՚օգնի ինձ ագարակի մէջ պահպանելու արտի հունձը:
Սրա համար պատերազմողին այսուհետեւ պիտի անարգեմ:
Ահա թէ ինչու Տէրը կատարեց այն ամէնը,
ինչ որ կարգադրեց:
"Այրուեցինք", — ասում են ու

բողոքում նրա բնակիչները.—
5 եկէ՛ք նրա հետ խաղաղութիւն պահենք»:
6 Յակոբի հաւաքուած որդիները նոր տունկի նման պիտի ընձիւղներ տան.
Պիտի ծաղկի Իսրայէլը,
եւ աշխարհը պիտի լցուի նրա պտղով:
7 Մի՞թէ սա այնպէս պիտի վիրաւորուի,
ինչպէս որ Նա հարուածեց նրան,
կամ այնպէս պիտի սպանուի,
ինչպէս որ սպանեց նրան:
8 Նա պատերազմով ու նախատինքով է արձակելու նրանց.
«Դու չէի՞ր, արդեօք, որ խստասրտօրէն
եւ բարկացած հոգով մտածում էիր սպանել նրանց»:
9 Ուստի Յակոբի անօրէնութիւնը պէտք է վերանայ,
եւ այս է լինելու նրա օրհնութիւնը,
երբ ազատեմ նրան իր մեղքերից:
Այն ժամանակ նրա մեհեանների բոլոր քարերը մանր փոշու պէս պիտի փշրեն,
այլեւս չեն պահպանուելու նրանց պաշտամունքի կուռքերը,
10 այլ կտոր-կտոր պիտի արուեն,
ինչպէս մայրի ծառը՝ փայտահատի ձեռքով:
Եթէ մի շէն վայր մնայ,
ապա պիտի վերածուի այնպիսի տեղի,
ուր հօտն է մակաղելու կամ ուր լքուած ոչխարներ են լինելու,
երկար ժամանակ անասունների արօտավայր է դառնալու այն,
որտեղ եւ նրանք հանգրուանելու են:
11 Երկար ժամանակ անց այնտեղ դալար բոյս չի գտնուելու,
որովհետեւ այդ տեղը պիտի չորանայ:
Ո՛վ կանայք, որ ահա գալիս էք հանդէսից,
առա՛ջ եկէք,
դուք, որ այն ժողովուրդը չէք, որն իմաստուն է:
Ահա թէ ինչու ձեզ չի գթալու Աստուած,
նա, որ ստեղծել է ձեզ:
Ձեր Արարիչը ձեզ չի ողորմելու:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ՊԻՏԻ ՀԱՒԱՔՈՒԻՆ

12 Այն օրը Տէրն արգելք պիտի դնի
գետի փոսից մինչեւ Ռինոկորուրի կողմերը,
բայց դուք մէկ առ մէկ հաւաքեցէ՛ք իսրայէլացիներին:
13 Այն օրը պիտի հնչեցնեն մեծ փողը,
եւ նրանք, ովքեր ցրուած են Ասորեստանի երկրում
եւ կորած՝ Եգիպտոսի երկրում,
պիտի վերադառնան
ու Երուսաղէմի սուրբ լերան վրայ երկրպագեն Տիրոջը:

ՈՒՐՈՒԱԿԱՆ ՍԱՄԱՐԻԱՅԻ ՎՐԱՅ

28 Վա՜յ Եփրեմի վարձկանների հպարտութեան պսակին,
փառքից թառամած մի ծաղիկ՝ փարթամ լերան գագաթին.
դուք հարբած էք, բայց ոչ գինուց:
2 Ահաւասիկ Տիրոջ ահաւոր ու խիստ բարկութիւնը,
որ թափւում է ինչպէս կարկուտ,
եւ ապաստանելու ոչ մի տեղ չկայ.
նա նման է բուռն հեղեղներին ու յորդառատ ջրերին,
որ ողողում են երկիրը,
եւ երկրին հանգստութիւն է բերելու:
3 Եփրեմի վարձկանների հպարտութեան պսակը ոտքի կոխան պիտի լինի,
4 եւ բարձր լերան գագաթին յուսոյ ծաղիկը փառքից պիտի թառամի
ինչպէս վաղահաս թուզ, որ, երբ որեւէ մէկը նկատում է,
դեռ ձեռքը չառած՝ ուզում է կուլ տալ:
5 Այն օրը Զօրութիւնների Տէրը յոյսի նրբահիւս պսակ պիտի դառնայ՝ պատրաստուած ի փառս ժողովրդի մնացորդների, 6 որպէսզի նրանք լինեն հոգով արդար ու դատաստանի երկիւղով յետ կանգնեն ծուլութիւնից:
7 Արդարեւ, նրանք մոլորուած են գինիով,

նրանք իրենց կորցրին օղու համար.
քահանան ու մարգարէն օղու համար յիմարացան,
գինու համար ցնորուեցին.
օղով հարբած՝ նրանք դանդաչեցին ու մոլորուեցին,
որովհետեւ դա ինքնին յիմարութիւն է:
8 Թող այդ մոլութիւնն անէծքի բաժին դառնայ,
որովհետեւ այդ մոլութիւնը ագահութիւնից է:
9 Ո՞ւմ պատմենք չարիքների մասին,
ո՞ւմ գուժենք այդ,
կաթից բաժանուածների՞ն,
կրծքից կտրուածների՞ն:
10 Ո՛չ, ընդունի՛ր նեղութիւններ նեղութիւնների վրայ.
ընդունի՛ր կասկածներ կասկածների վրայ:
Մի քիչ էլ, մի քի՛չ էլ ընդունիր շրթունքներիդ անզգամութեան համար.
11 այդ ժողովրդի հետ խորթ լեզուով պիտի խօսեն
12 եւ ասեն դրանց, թէ քաղցածի հանգիստը դա է,
եւ դա է աղէտը.
բայց նրանք չեն կամենում լսել:
13 Հետեւապէս նրանց է ուղղուած Տիրոջ խօսքը. «Ընդունի՛ր նեղութիւններ նեղութիւնների վրայ. ընդունի՛ր կասկածներ կասկածների վրայ: Մի քիչ էլ, մի քի՛չ էլ ընդունիր, մինչեւ որ գնան, թիկունքի վրայ տապալուեն, խորտակուեն, տանջուեն ու մեռնեն»:

ԸՆՏԻՐ ԱՆԿԻՒՆԱՔԱՐ ՍԻՈՆԻ ՀԱՄԱՐ

14 Ուրեմն լսեցէ՛ք Տիրոջ խօսքը,
ո՛վ նեղուած մարդիկ եւ Երուսաղէմի ժողովրդի իշխանները:
15 Դուք ասացիք.
«Ուխտ կնքեցինք դժոխքի հետ
եւ դաշինք կռեցինք մահուան հետ.
եթէ փոթորկուող մրրիկ էլ բարձրանայ,
մեզ վրայ չի գայ,
քանզի սուտը մեզ համար յոյս դարձրինք,
ուրեմն ստութեամբ էլ կը պաշտպանուենք»:
16 Դրա համար էլ այսպէս է ասում Տէր Աստուած.
«Ահա ես Սիոնի հիմքում մեծագին քար եմ դնում,
պատուական ու ազնիւ անկիւնաքար՝ նրա հիմքում,
եւ ով որ հաւատայ նրան՝ չի ամաչի:
17 Յոյսով պիտի հաստատեմ իմ իրաւունքը
եւ կշեռքով՝ իմ ողորմութիւնը,
եւ իզուր իրենց յոյսը պիտի դնեն ստութեան վրայ՝
ասելով, թէ՝ "Մեզ չի հասնի մրրիկը,
18 չի վերացնի մահուան հետ կնքած մեր ուխտը"»:
Ձեր յոյսը, որ դժոխքի վրայ է, չի հաստատուելու,
որովհետեւ եթէ փոթորկուող մրրիկը սպառնայ,
ոտքի տակ պիտի գնաք:
19 Իսկ երբ այն գայ անցնի, պիտի վերցնի ու տանի ձեզ,
առաւօտից առաւօտ, օր ու գիշեր պիտի անցնի,
եւ դուք պիտի լինէք չարիքների կասկածի մէջ:
Ո՛վ դուք նեղեալներ, սովորեցէ՛ք լսել:
20 Մարտնչել եւս չենք կարող,
որովհետեւ երբ հաւաքուեցինք,
տկարացանք ինչպէս ամբարիշտների լեռը:
21 Տէրը, բարկութեամբ լի, յառնելու է Գաբաւոնացիների հովտում
եւ կատարելու է իր գործը, դառն գործը,
քանզի նրա բարկութիւնը օտարի պէս է դատելու,
եւ օտարի պէս է վրայ հասնելու նրա դառնութիւնը:
22 Իսկ դուք մի՛ ցնծացէք, որ չամրանան ձեր կապանքները, քանզի Տիրոջից, Զօրութիւնների Տիրոջից լսեցի այնպիսի հաստատուն ու կտրուկ բաներ, որ Նա կատարելու է ողջ երկրի վրայ:

ԱՍՏՎՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

23 Ունկնդի՛ր եղէք եւ անսացէ՛ք իմ ձայնին,

ո՛ւշ դրէք եւ լսեցէ՛ք իմ խօսքերը:
24 Մի՞թէ հերկուորն ամբողջ օրը կը հերկի,
կամ մի՞թէ սերմը նախապէս կը ցանի,
քանի դեռ նա հողը չի հերկել:
25 Մի՞թէ նախ նրա երեսը չի փխրեցնի,
յետոյ մի փոքր արջնդեղ եւ չաման չի ցանի,
ապա սահմանուած տեղում ցորեն ու գարի,
կորեկ ու հաճար չի սերմանի:
26 Իսկ դու պիտի սովորես դա քո Աստծու արդարութեամբ,
որով եւ ուրախ ես լինելու:
27 Արջնդեղը կալսելով չի մաքրուի,
եւ կամնասայլի անիւը չամանի վրայ չեն պտտեցնի.
արջնդեղը թակիչով է ծեծուումանջատուում,
իսկ չամանը հացով է ուտուում:
28 Բայց ես ձեզ վրայ յաւիտեան չպիտի բարկանամ,
եւ ոչ էլ իմ դառնութեան ձայնն է ձեզ ճնշելու:
29 Այս իմաստուն գործերը եղան Զօրութիւնների Տիրոջից:
Արդ, մտածեցէ՛ք, վերացրէ՛ք ձեզնից ձեր ունայն մխիթարութիւնը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

29 Վա՛յ քեզ, Արիէ՛լ քաղաք,
Արիէլ, որը Դաւիթը պաշարեց,
քանզի տօները խառնուեցին իրար:
Արմտի՛ք հաւաքեցէք եւ տարէցտարի կերէ՛ք,
կերէ՛ք Մովաբի հետ միասին:
2 Ես նեղը պիտի գցեմ Արիէլին,
որ նրա զօրութիւնն ու մեծութիւնը իմը լինեն:
3 Ես Դաւթի պէս պիտի պաշարեմ քեզ,
պատնէշեմ քեզ շուրջանակի
եւ քո շուրջբոլորը աշտարակներ պիտի կանգնեցնեմ:
4 Եւ քո խօսքերը դէպի հողը պիտի խոնարհուեն,
քո պատգամները գետնի մէջ մտնեն.
քո կանչը պիտի լինի ինչպէս վհուկներինը,
եւ հողի ընդերքում քո ձայնը պիտի տկարանայ:
5 Ամբարիշտների մեծութիւնը պիտի դառնայ անուի փոշու նման,
քեզ զրկողների բազմութիւնը՝ մաղուած խնկի պէս:
6 Եւ մի ակնթարթում այցելութեան պիտի գայ Զօրութիւնների Տէրը՝ թնդիւնով,
որոտումով ու բարձրաբարբառ կանչով,
փոթորկուած մրրիկով եւ լափող կրակի բոցով:
7 Ինչպէս գիշերուայ երազի մէջ յայտնուած տեսիլքում,
բոլոր հեթանոսների բազմութիւնը յարձակուելու է Երուսաղէմի ու այնտեղ հաւաքուածների վրայ,
նաեւ նրանց վրայ, որոնք նեղում են նրան:
8 Բայց ինչպէս որ երազի մէջ քաղց են զգում եւ ուտում
ու արթնանալով տեսնում, որ դա սին երազ էր,
եւ կամ ինչպէս մէկը, որ երազում ծարաւում է եւ խմում
ու արթնանալով նորից ծարաւ է մնում,
եւ իզուր է անցնում հոգու այդ ցանկութիւնը,
— այդպէս պիտի լինի նաեւ բոլոր հեթանոսների մեծութիւնը,
որոնք զօրքով հաւաքուեցին եւ ելան ընդդէմ Երուսաղէմի եւ Սիոն լերան:

ԱՆԸՆԹԵՌՆԵԼԻ ՊԱՏԳԱՄ

9 Ապշահար եղաք, յիմարացաք,
թմրեցիք, է՛լ աւելի թմրեցիք,
հարբեցիք, բայց ո՛չ գինուց եւ ո՛չ էլ օղուց.
10 քանզի Տէրը ձեզ յիմարութեան ոգի խմեցրեց
եւ խցանեց ձեր, ձեր մարգարէների, ձեր իշխանների
ու ձեր տեսանողների աչքերը:
11 Թող այս բոլոր պատգամները ձեզ համար լինեն ինչպէս կնքուած նամակի խօսքեր, որը երբ տան որեւէ գրագէտ մարդու եւ ասեն նրան՝ ընթերցի՛ր այդ, պիտի ասի. «Չեմ կարող ընթերցել, որովհետեւ կնքուած է»: 12 Եւ նոյն գիրը պիտի տան մի մարդու ձեռքը, որը տառեր չի ճանաչում, ու ասեն նրան՝ ընթերցի՛ր այդ, նա պիտի պատասխանի՝ կարդալ չգիտեմ:
13 Տէրն ասում է.
«Այս ժողովուրդը մօտ է ինձ իր բերանով,
իր շրթունքներով է մեծարում ինձ,
բայց սրտով հեռացել ու մեկուսացել է ինձնից.
զուր է ինձ պաշտում,
մարդկանց պատուիրաններն ու վարդապետութիւններն է ուսուցանում:
14 Դրա համար ես էլ պիտի փոխեմ այդ ժողովրդին,
պիտի այլափոխեմ նրան,
պիտի կորցնեմ իմաստունների իմաստութիւնը
եւ արհամարհեմ խորհրդականների խորհուրդները»:

ՍՏԵՂԾՈՂՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է ԻՐ ՍՏԵՂԾԱԾԻՑ

15 Վա՛յ նրանց, ովքեր խորին խորհուրդներ են խորհում, բայց առանց Տիրոջ.
վա՛յ նրանց, ովքեր թաքուն խորհուրդներ են խորհում,
ու նրանց գործերը խաւարի հետ են:
Նրանք ասում են. «Ո՞վ կը տեսնի մեզ,
ո՞վ պիտի իմանայ, թէ ինչ ենք անում»:
16 Բայց չէ՞ որ դուք բրուտի կաւ էք.
մի՞թէ ստեղծուածն իր ստեղծողին կ'ասի, թէ՝
դո՛ւ չես ինձ ստեղծել,
կամ արարածն՝ Արարչին, թէ՝
իմաստութեամբ չես արարել ինձ:
17 Շատ չէ՝ քիչ ժամանակ կ'անցնի,
եւ Լիբանանը կը դառնայ ինչպէս Քերմէլ լեռը,
իսկ Քերմէլն անտառ կը համարուի:
18 Այն ժամանակ խուլերը պիտի լսեն այդ գրուածքի խօսքերը,
եւ խաւարի ու մէգի մէջ գտնուող կոյրերի աչքերը պիտի տեսնեն.
19 աղքատներն ուրախութեամբ պիտի ցնծան Տիրոջ համար,
եւ յոյսը կորցրած մարդիկ պիտի լցուեն խնդութեամբ:
20 Անօրէնը պիտի վերանայ,
ամբարտաւանը պիտի անհետ կորչի,
անիրաւները պիտի ոչնչանան չարիքների մէջ,
21 նրանց հետ՝ նաեւ նրանք,
ովքեր խօսքով ստիպում էին մարդկանց մեղանչել,
իրենց յանդիմանողների բոլորի դռներին թակարդ էին լարում
եւ անարդարութեամբ ծռում իրաւունքը:
22 Ուստի եւ Տէրն այսպէս է ասում Յակոբի տան մասին,
որ նա ընտրեց Աբրահամից.
«Հիմա Յակոբը չի ամաչելու,
Իսրայէլը հիմա երեսի գոյնը չի փոխելու,
23 բայց երբ նրանց որդիները տեսնեն իմ գործերը,
պիտի սրբացնեն իմ անունը,
պիտի սրբացնեն Յակոբի սրբին
ու պիտի երկնչեն Իսրայէլի Աստծուց:
24 Հոգով մոլորուածները պիտի ճանաչեն իմաստութիւնը,
տրտնջացողները պիտի սովորեն հնազանդուել,
թոթովախօս լեզուները պիտի սովորեն բարբառել խաղաղութիւն»:

ԱՄՕԹԱԼԻ ԴԱՇԻՆՔ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ

30 Այսպէս է ասում Տէրը.
«Վա՛յ ձեզ, ապստա՛մբ որդիներ,
քանզի խորհուրդ էք անում,
բայց ոչ իմ կամքով,
դաշինք էք կռում,
բայց ոչ իմ հոգով,
մեղքերի վրայ մեղքեր էք բարդում:
2 Առանց ինձ հարցնելու գնում իջնում էք Եգիպտացիների երկիրը՝
Փարաւոնից օգնութիւն գտնելու եւ եգիպտացիներին ձեզ թիկունք դարձնելու:
3 Բայց Փարաւոնի պաշտպանութիւնը ձեզ համար ամօթ է լինելու,
իսկ եգիպտացիներին ապաւինելը՝

նախատինք.
4 քանզի Տայանիս երկրում իշխանները չար պատգամաբերներ են.
5 զուր տեղը ջանք կը թափե՞ն մի ժողովրդի համար,
որից ո՛չ շահ եւ ո՛չ էլ օժանդակութիւն ու օգուտ է լինելու իրենց,
այլ՝ ամօթ ու նախատինք»:

Տեսիլք անապատում նեղութեան եւ տառապանքի մէջ գտնուող չորքոտանիների մասին:

6 Առիւծն ու առիւծի կորիւնը
եւ իժերն ու թռչող իժերի ձագերը,
իրենց գանձերը բարձած էշերին
եւ իրենց հարստութիւնը դրած ուղտերի վրայ,
գնում են մի ազգի մօտ,
որից իրենց օգուտ ու օժանդակութիւն չի լինելու,
այլ՝ ամօթ ու նախատինք:
7 Եգիպտացիներին, որոնք իզուր եւ ապարդիւն են օգնում ձեզ, յայտնի՛ր.
«Զուր է ձեզնից ստացած մեր մխիթարանքը»:

ԱՆՀՆԱԶԱՆԴ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

8 Արդ, նստի՛ր ու գրի՛ր տախտակի վրայ եւ գրքի մէջ,
որպէսզի դա պահպանուի իր ժամանակի համար եւ յաւիտեանս յաւիտենից,
9 քանզի ժողովուրդն անհաւատ է, որդիները՝ սուտ,
որոնք չկամեցան հետեւել Աստծու օրէնքին:
10 Նրանք մարգարէներին ասում էին.
«Մի՛ մարգարէացէք, այլ խօսեցէ՛ք մեզ հետ
ու մեզ պատմեցէ՛ք մի այլ մոլորութեան մասին.
11 մեզ յե՛տ դարձրէք այդ ճանապարհից,
հեռացրէ՛ք մեզ այդ շաւղից,
մեր միջից հանեցէ՛ք Իսրայէլի Աստծու օրէնքները»:
12 Դրա համար էլ այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի սուրբը.
«Որովհետեւ դուք անարգեցիք այդ խօսքերը
եւ ապաւինեցիք սնոտի ստին,
տրտնջացիք եւ յոյս դրիք դրա վրայ,
13 այդ պատճառով էլ ձեր մեղքերը ձեզ համար պիտի դառնան այն անառիկ քաղաքի՝
իսկոյն խորտակուած պարսպի պէս,
որը գրաւուած է,
եւ որին հասել է յանկարծակի կործանում:
14 Նրա կործանումը նման է լինելու բրուտի խեցէ անօթի ջարդուելուն,
այնքան մանր փշրուած,
որ որեւէ մէկը դրանից մի կտոր էլ չգտնի,
որպէսզի դրանով կրակ վերցնի
եւ կամ կարողանայ մի քիչ ջուր առնել»:

ԽՈՒՃԱՊԱՀԱՐ ՓԱԽՈՒՍՏ

15 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի սուրբ Աստուածը.
«Երբ դարձի գաս եւ հոգոց հանես,
այն ժամանակ կ'ապրես եւ կ'իմանաս,
թէ որտեղ ես գտնուում»:
Որովհետեւ յոյսդ դրել էիր սնոտի բաների վրայ,
դրա համար էլ սնոտի դարձաւ եւ ձեր զօրութիւնը:
Դուք չէիք կամենում լսել,
16 այլ ասում էիք.
«Մենք կը փախչենք մեր երիվարներով»:
Դրա համար էլ փախստական պիտի դառնաք:
Ասում էիք. «Մենք կը փախչենք մեր արագընթաց երիվարներով»:
Դրա համար առաւել արագընթաց պիտի լինեն նրանք,
որոնք ձեզ հալածելու են.
17 քանզի մէկի աղաղակից հազարը պիտի փախչի,
հինգի աղաղակից՝ տասը հազարը,
մինչեւ որ մնաք լերան վրայ ցցուած ձողի նման
եւ կամ ինչպէս բլրի վրայ կանգնեցուած քարակոթող:
18 Սակայն շուտով Աստուած նորից գթալու է ձեզ,

վեր է կենալու, որպէսզի ողորմի ձեզ:
Տէր Աստուած մեր դատաւորն է:
Երանի՜ բոլոր նրանց, ովքեր սպասում են նրան,
19 որովհետեւ արդար ժողովուրդը պիտի բնակուի Սիոնում:
Եւ Երուսաղէմը լալով պիտի պաղատի,
թէ՝ ողորմի՛ր ինձ:
Պիտի ողորմի քեզ,
պիտի գթայ քո ձայնին ու աղաղակին,
հէնց որ տեսնի ու լսի քեզ:
20 Տէրը նեղութեան մէջ քեզ՝ հաց
եւ թշուառութեան մէջ ջուր պիտի տայ.
էլ քեզ չեն մոտենալու նրանք,
ովքեր մոլորեցնում էին քեզ,
որովհետեւ աչքերդ բացուելու են քեզ մոլորեցնողների հանդէպ,
21 եւ ականջներդ քեզ մոլորեցնողների յետեւից լսելու են նրանց ասած խօսքերը, թէ՝
"Սա է ճանապարհը, այստեղով գնանք", եւ կամ թէ՝
"Դէպի ա՛ջ, կամ՝ դէպի ձա՛խ":
22 Դու պիտի պղծես արծաթապատ եւ ոսկեպատ կուռքերը,
պիտի փշրես դրանք եւ թափես ինչպէս դաշտանի ջուր,
ինչպէս աղբ՝ պիտի հեռացնես դրանք:
23 Այն ժամանակ քո հողի սերմերի համար անձրեւ պիտի լինի,
քո հողի հացն ու բերքը պիտի լինեն առատ ու յուռթի,
եւ այն օրը քո հօտերը պիտի արածեն փարթամ ու ընդարձակ վայրում:
24 Ձեր արջառներն ու եզները, որոնք հողն են վարում,
պիտի ուտեն յարդ՝ խառնուած գարու հետ,
որ բերելու են կալից:
25 Այն օրը բոլոր բարձր լեռների եւ բոլոր բարձրաբերձ բլուրների վրայ ջուր պիտի բխի,
երբ ոչնչանան շատերը, եւ կործանուեն աշտարակները:
26 Այն օրը լուսնի լոյսն արեգակի լոյսի պէս պիտի լինի,
իսկ արեգակի լոյսը պիտի լինի եօթնապատիկ շատ,
պիտի դառնայ եօթը օրուայ լոյսի չափ,
ու Տէրը պիտի բուժի իր ժողովրդի կրած հարուածը,
պիտի բուժի քո վէրքերի ցաւերը:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺԵԼՈՒ Է ԱՍՈՐԵՍՏԱՆԸ

27 Ահաւասիկ, երկար տարիներ ու բազում ժամանակներ անց
պիտի գայ Տիրոջ անունը՝
բարկութեամբ վառուած եւ փառքով լի.
բարկութեամբ լի են լինելու նրա շուրթերի ու բերանի խօսքերը:
Նրա բարկութիւնն ու ցասումը կրակի պէս պիտի լափեն,
28 իսկ նրա հոգին, ինչպէս ձորը լցուող յորդահոս հեղեղ,
պիտի հասնի մինչեւ պարանոցը:
Եւ պիտի բաժանի ու խռովութեան մատնի ազգերին՝
իրենց սնոտի մոլորութեան համար,
պիտի հալածի նրանց մոլորութիւնը
եւ նրանց հանի միմեանց դէմ:
29 Մի՞թէ դուք հանապազ ուրախութեամբ պիտի մտնէք իմ սրբութիւնները,
մի՞թէ ամէն ժամ տօնախմբութիւններով,
ցնծութեամբ ու փողերով պիտի մուտք գործէք Տիրոջ լեռը՝
Իսրայէլի սուրբ Աստծու մօտ:
30 Տէրը լսելի պիտի դարձնի իր փառաւոր ձայնը,
ցոյց պիտի տայ իր բազկի զայրոյթը՝
սրտմտութեամբ ու ցասման ամենակուլ բոցով,
կրակ սփռող իր ահաւոր բարկութեամբ,
ինչպէս եւ ջրհեղեղով ու սաստկատարափ կարկուտով:
31 Ասորեստանցիները պիտի ընկճուեն Տիրոջ ձայնից
եւ այն հարուածներից, որ Նա հասցնելու է նրանց:
32 Եւ իրենց օգնականները, որոնց վրայ յոյս էին դրել, ամէն կողմից

չրջապատման մէջ են առնելու նրան.
փողերով ու թմբուկով նրանք շատ
անգամ փոխնիփոխ պիտի կռուեն
նրանց դէմ ու ոչ թէ վաղօրօք, այլ
հէնց ժամանակին վրէժխնդիր պիտի
լինեն նրանցից:
33 *Եւ արդ, մի՞թէ ձեզ համար եւս*
նախատեսուած է թագաւորել:
Խոր ձորի մէջ փայտ է դիզուած,
մեծ փայտակոյտն է բորբոքուել
հրով.
Տիրոջ զայրոյթն է բորբոքուած,
ինչպէս ծծմբով լի ձոր:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

31 *Վա՛յ նրանց,*
ովքեր օգնութիւն գտնելու համար
իջնում են Եգիպտոս,
ովքեր հեծեալներին ու
մարտակառքերին են ապաւինում, թէ
շատ են,
եւ ձիերի մեծ բազմութեանը.
Նրանք Իսրայէլի սրբի վրայ յոյս չեն
դնում,
Աստծուն չեն փնտռում:
2 *Բայց Տէրն իմաստուն է,*
Նրանց վրայ չարիք է բերելու,
եւ նրա խօսքը չի անարգուի.
Նա կը կանգնի չար մարդկանց
տների,
Նրանց սնոտի յոյսի վրայ:
3 *Եգիպտացի մարդուն են ապա-*
ւինում եւ ոչ թէ Աստծուն,
ձիերի մարմիններին,
—բայց օգնութիւն չի լինի.
Տէրը իր ձեռքը կ'երկարի նրանց
վրայ,
եւ օգնողները տանջանքի կ'ենթար-
կուեն,
իսկ նրանցից օգնութիւն սպասող-
ները կը կործանուեն,
ամէնքն անխտիր կ'ոչնչանան:
4 *Այսպէս ասաց ինձ Տէրը.*
«Ինչպէս որ առիւծը եւ առիւծի
կորիւնը մնչում են դէպի այն որսը,
որի վրայ են յարձակւում,
այնպէս էլ ինքը պիտի բացականչի,
լեռները լցնի իր ձայնով,
եւ նրանք պարտութեան պիտի
մատնուեն,
նրա բարկութեան սաստկութիւնից
պիտի հալուեն.
այդպէս է իջնելու Զօրութիւնների
Տէրը Սիոն լեռան
եւ նրա բլուրների վրայ»:
5 *Ինչպէս թեւածող թռչունները,*
այդպէս էլ Զօրութիւնների Տէրը
պիտի հովանի լինի Երուսաղէմին,
նրա թիկունքին կանգնի,
օգնի, փրկի եւ ապրեցնի:
6 *Դարձէ՛ք դէպի Տէրը, ո՛վ Իսրայէլի*
որդիներ,
որ գաղտնի ու չար խորհուրդներ էք
խորհում.
7 *քանզի այն օրը մարդիկ պիտի*
վերացնեն
իրենց արծաթէ եւ ոսկէ կուռքերը՝
իրենց ձեռքերի գործած մեղքերը:
8 *Եւ ասորեստանցին պիտի ընկնի,*
բայց ոչ մարդու սրով.
մարդու սուրը չի ուտելու նրան,
նա փախուստի պիտի մատնուի,
բայց ոչ սուսերի պատճառով.
Նրա երիտասարդները եւս պարտու-
թեան պիտի մատնուեն:
9 *Նրանք, ովքեր բանտարկուածների*
պէս թաքնուած են լինելու ժայռերի
մէջ,
նոյնպէս պարտութեան են մատ-
նուելու.
փախչողն էլ պիտի բռնուի:
Այսպէս է ասում Տէրը.
«Երանի՛ նրան, ով զաւակ ունի
Սիոնում,
եւ ում տանեցիները Երուսաղէմում
են»:

ԱՐԴԱՐԱԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԸ

32 *Ահա մի թագաւոր, որ արդա-*
րութեամբ պիտի թագաւորի,
եւ իշխաններ, որոնք իրաւունքով
պիտի իշխեն:
2 *Եւ այն մարդը, որն իր մտքերն է*
թաքցնում,
այնպէս պիտի լինի,
ինչպէս յորդ ջրերի մէջ թաքնուած
մէկը:
Իսկ Սիոնը նմանուելու է մի փա-
ռաւոր գետի,
որ յորդել է տոչորուած երկրում:

3 *Այլեւս յոյս չեն դնելու մարդկանց*
վրայ,
այլ իրենց ականջները պահելու են
լսելու համար.
4 *տկարների սրտերը պիտի անսան*
ու հնազանդուեն,
թոթովախօս լեզուներն արագօրէն
պիտի սովորեն բարբառել խաղա-
ղութիւն:
5 *Էլ չեն դիմելու յիմարին,*
որ լինի իրենց իշխան,
եւ ոչ էլ քո պաշտօնեաներն են
ասելու,
թէ՝ լո՛ւռ կաց.
6 *քանզի յիմարը յիմարութիւն*
դուրս կը տայ
եւ իր սրտում փուչ բաներ կը
մտածի՝
անօրէնութիւն անելով,
Աստծու մասին մոլորութիւններ
խօսելով,
հալածելով քաղցած հոգիներին
եւ ծարաւած մարդկանց դատարկ
արձակելով:
7 *Չարագործներն անօրէն խորհուրդ-*
ներ են խորհում՝
անիրաւ խօսքերով ապականելով
խեղճերին
եւ դատի ժամանակ արհամարհելով
աղքատների խօսքը.
8 *իսկ արդարները իմաստուն բաներ*
են խորհում,
եւ այդ խորհուրդը կայ ու կը մնայ:

ՁԳՈՒՇԱՑՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՆԱՆՑ

9 *Ո՛վ բարեկեցիկ կանայք,*
եկէք ակա՛նջ դրէք իմ ձայնին,
եւ դուք, դուստրե՛ր,
խոհե՛մ եղէք ու լսեցէ՛ք իմ խօսքերը:
10 *Ցաւով ու տագնապով պիտի*
յիշէք տարեկան տօների օրերը,
քանզի այգեկութը նուազեց, ցանքսը
դադարեց,
եւ այլեւս յետ չեն գալու:
11 *Զարհուրեցէ՛ք, բարեկեցիկնե՛ր,*
տրտմեցէ՛ք, մեծամիտնե՛ր,
հանուեցէ՛ք, մերկացէ՛ք, քո՛ւրձ
հագէք,
12 *լա՛ց եղէք եւ կո՛ւրծք ծեծեցէք*
սիրելի հանդերի համար
եւ այգիների բերքի համար:
13 *Իմ ժողովրդի հողում փուշ ու*
մոլախոտ պիտի բուսնի,
եւ բոլոր ապարանքների միջից
ուրախութիւնը պիտի վերանայ.
փարթամ քաղաքի ապարանքները
պիտի լքուեն:
14 *Պիտի լքեն այդ քաղաքի*
հարստութիւնը եւ ցանկալի տները,
քո աւանները յաւիտենապէս քա-
րանձաւների պիտի վերածուեն,
ցիռերը պիտի զուարճանան այնտեղ,
եւ հօտերը պիտի արածեն,
15 *մինչեւ որ բարձրից ձեզ վրայ գայ*
Հոգին,
եւ Քերմէլն† *անապատ դառնայ,*
Քերմէլ լեռն անտառ համարուի,
16 *եւ իրաւունքը հանգրուանի անա-*
պատում,
արդարութիւնը բնակուի Քերմէլում:
17 *Արդարութեան գործերը խաղա-*
ղութեամբ պիտի կատարուեն,
արդարութիւնը անդորրութիւն պի-
տի հաստատի,
յոյս ունեցողները յաւիտեան պիտի
մնան:
18 *Եւ իմ ժողովուրդը պիտի բնակուի*
խաղաղութեան քաղաքում,
պիտի բնակուի յոյսով եւ լինի
ապահով ու հանգիստ:
19 *Եթէ կարկուտ էլ թափուի,*
նրանց վրայ չի գալու:
Անտառում բնակուողները նոյնպէս
պիտի լինեն այնպէս ապահով,
ինչպէս նրանք, որոնք դաշտում են:
20 *Երանի՛ նրանց, ովքեր սերմ են*
ցանում այն բոլոր ջրերի մօտ,
ուր ոտք են դնում եզն ու էշը:

ՎԱ՛Յ ԿՈՂՈՊՏՈՂՆԵՐԻՆ

33 *Վա՛յ նրանց, ովքեր թշուա-*
ռացնում են ձեզ:
Սակայն ձեզ ոչ ոք չի կարող
թշուառութեան մատնել.
ով որ արհմարհում է,
ձե՛զ չէ, որ արհամարհում է,
քանզի ձեզ արհամարհողները
պարտութեան պիտի մատնուեն.
ինչպէս *որ ձորձերի վրայի ցեցը,*

†Եբրայերէնում՝ մարգագետին, նաեւ՝ լեռ:

այնպէս էլ նրանք պարտութեան
պիտի մատնուեն:
2 Տէ՛ր, ողորմի՛ր մեզ,
քանզի մենք մեր յոյսը դրել ենք
քեզ վրայ:
Անհաւատների սերունդը կործա-
նուեց,
իսկ մեր փրկութիւնը նեղութեան
ժամին քեզնից է գալու:
3 Քո ձայնի ահից ժողովուրդները
յիմարացան,
եւ քո երկիւղից հեթանոսները
ցրուեցին:
4 Ահա ձեր մեծ ու փոքրի կո-
ղոպուտը պիտի հաւաքուի այնպէս,
ինչպէս մէկը, որ մորեխ է հաւաքում
փոսից.
այդպէս էլ ծաղրելու են ձեզ:
5 Սուրբ է մեր Տէր Աստուածը,
որ բարձունքներում է բնակւում,
որի շնորհիւ Սիոնն իրաւունքով ու
արդարութեամբ է լցուել:
6 Նրանք իրաւացիօրէն պարտու-
թեան մատնուեցին,
իսկ մեր փրկութիւնը պիտի լինի մեր
գանձերի շնորհիւ:
Մեզ հասան Տիրոջ իմաստութիւնը,
հանճարը եւ աստուածպաշտութիւնը.
ահա դրանք են արդարութեան
գանձերը† :
7 Ահաւասիկ նրանք սարսափում են
ձեր ահից.
ումից որ վախենում էիք,
իրե՛նք են ձեզնից վախենում.
պատգամաւորներ են ուղարկում,
որպէսզի դառնօրէն լաց լինելով՝
խաղաղութիւն աղերսեն:
8 Նրանց ճանապարհները կտրուե-
ցին,
հեթանոսների ահը հանդարտուեց,
եւ վերացաւ նրանց հետ կնքուած
ուխտը.
այլեւս նրանց մարդ մի՛ համարէք:
9 Սուգ արեց եւ տկարացաւ երկիրը,
Լիբանանն ամօթահար եղաւ,
Սարոնը մարգագետնի դաշտի վե-
րածուեց,
Գալիլիան եւ Կարմելոսը մերկացան:

ԱՐԴԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԱՊՐԵՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

10 «Այժմ ելնելու եմ ես, — ասում է
Տէրը, — այժմ փառաւորուելու եմ,
այժմ բարձրանալու եմ:
11 Ահա պիտի տեսնէք,
ահա ամօթահար պիտի լինէք,
զուր պիտի լինի ձեր հոգու
զօրութիւնը,
եւ կրակը ձեզ պիտի ճարակի:
12 Հեթանոսները ագարակի մէջ
խանձուած փշի նման պիտի դառնան՝
այրուած ու լքուած:
13 Թող հեռւում գտնուողները լսեն՝
ինչ որ կատարեցի,
եւ մօտ եղողները ճանաչեն իմ
զօրութիւնը»:
14 Անօրէնները մերժուեցին Սիոնից.
դողն է բռնել ամբարիշտներին:
Եւ արդ, ո՞վ պիտի պատմի ձեզ,
թէ կրակը բորբոքուել է,
կամ ո՞վ պիտի յայտնի ձեզ
յաւիտենական կայանի մասին:
15 Ով արդարութեամբ է ընթանում,
խօսում ճշմարիտ ուղու մասին,
ատում անօրէնութիւնն ու
անիրաւութիւնը,
իր ձեռքերը հեռու պահում
կաշառքից,
ծանրացնում ականջները,
որպէսզի չլսի արեան
վրիժառութեան մասին,
փակում աչքերը,
որպէսզի անարդարութիւնը չտեսնի,
— 16 նա հաստատուն ապառաժի
բարձր անձաւի մէջ է բնակուելու.
հաց պիտի տրուի նրան,
ջրով եւս ապահովուած պիտի լինի
նա:

ԱՋԱՏԱԳՐՈՒԱԾ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

17 Դուք տեսնելու էք թագաւորին իր
փառքի մէջ,
ձեր աչքերը հեռուից դիտելու են
երկիրը,
18 ու ձեր հոգին խորհելու է Աստծու
երկիւղի մասին:

†Եբրայերէնում՝ Այն ժամանակ հեթանոս-
ներն օրէնքի ձեռքը պիտի մատնուեն, իսկ մենք
մեր գանձերով պիտի փրկուենք. իմաստու-
թիւնը, գիտութիւնը եւ աստուածպաշտութիւնը
պիտի լինեն այն գանձերը, որոնցով պիտի
արդարանանք:

Ո՞ւր են գրագիրները,
ո՞ւր են խրատատուները,
ո՞ւր է նա, որի ձեռքին է ժողովրդի
մեծ ու փոքրին սնուցողների հաշիւը† .
19 Նա խորհրդի չնստեց ժողովրդի
հետ,
որն անտեղեակ էր ու ծանրալեզու,
որովհետեւ չէր լսում.
վատթարացած մի ժողովուրդ,
որ լսածի մասին չէր ուզում
մտածել‡ :
20 Ահա մեր փրկութեան քաղաք
Սիոնը.
ձեր աչքերը պիտի տեսնեն Երու-
սաղէմ քաղաքը՝ մեծացած,
այնպիսի վրաններով, որոնք չեն
տեղաշարժուելու,
յաւիտեանս յաւիտենից չեն շար-
ժուելու նրա վրանների ցցերը,
չեն խզուելու եւ դրանց պարանները,
21 քանզի ձեզ համար մեծ է Տիրոջ
անունը:
Ձերն է լինելու այն երկիրը,
ուր գետերը եւ ջրանցքները լայ-
նահուն են ու ջրառատ.
այն ճանապարհով դու այլեւս չես
գնալու,
չեն գնալու եւ քո վարած նաւերը,
որովհետեւ մեծ է մեր Աստուածը
եւ մեզ չի անտեսի:
22 Տէրն է մեր հայրը,
Տէրն է մեր դատաւորը,
Տէրն է մեր իշխանը,
Տէրն է մեր թագաւորը,
Տէրն է մեր փրկիչը,
նա է փրկելու մեզ:
23 Կտրուեցին քո պարանները,
որովհետեւ չդիմացան,
կայմն էլ թեքուեց եւ չի բացելու
առագաստը
ու չի պարզելու դրօշը մինչեւ
կորստեան մատնուելը§ :
24 Այնուհետեւ բազում կաղեր
աւարառութիւն պիտի կատարեն:
Ժողովուրդը, որ բնակւում է դրանց
մէջ,
չպիտի ասի, թէ՝ տանջուեցինք,
որովհետեւ նրա մեղքերին թողու-
թիւն է լինելու:

ԵԴՈՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

34 Մո՛տ եկէք ու լսեցէ՛ք, ո՛վ հեթա-
նոսներ,
ակա՜նջ դրէք, ո՛վ իշխաններ.
թող լսի երկիրը՝ իր մէջ
գտնուողների հետ,
աշխարհը՝ իր մէջ ապրող
ժողովուրդների հետ:
2 Տիրոջ զայրոյթը բոլոր ազգերին է
ուղղուած,
բարկութիւնը նրանց բոլոր բազմու-
թիւնների դէմ է,
որպէսզի ոչնչացնի նրանց՝ մատ-
նելով սպանութեան.
3 իսկ նրանց վիրաւորները պիտի
ընկնեն դիտապաստ,
նրանցից նեխահոտ պիտի փչի,
լեռները պիտի թրջուեն նրանց
արեամբ:
4 Երկնային բոլոր զօրութիւնները
պիտի հալուեն,
երկինքը մագաղաթի պէս պիտի
գալարուի,
բոլոր աստղերը ցած պիտի թափուեն
ինչպէս որթատունկի տերեւ
կամ ինչպէս թզենուց վայր ընկնող
տերեւ:
5 Սուրն իմ, որ հարբել է երկնքում,
այժմ իջնելու է եդոմայեցիների
վրայ
եւ կորստեան դատապարտուած ժո-
ղովրդի վրայ՝
դատաստանի համար:

ԵԴՈՄԻ ԿՈՏՈՐԱԾԸ

6 Տիրոջ սուրը յագեցել է արեամբ,
ուռել է գառների, ցուլերի ու խոյերի
ճարպով,
քանզի Տիրոջ համար Բոսորայում՝
զոհաբերութիւն,
իսկ եդոմայեցիների երկրում մեծ

†Եբրայերէնում՝ Այն ժամանակ այլեւս ո՛չ
մարդահամար կատարողներ պիտի գան, ո՛չ
հարկահաւաքներ եւ ո՛չ էլ ձեր ամրութիւնները
լրտեսողներ:

‡Եբրայերէնում՝ Այլեւս չպիտի լսէք Ասո-
ր-ստանի ամբարտաւան առաջարկները, ոչ էլ
նրա խուժդուժ լեզուն, որ անկարելի է
հասկանալ:

§Եբրայերէնում՝ Այն ժամանակ նաւերդ
պարանները պիտի փտեն, կայմերը ընկնեն,
այլեւս ո՛չ առագաստ եւ ո՛չ էլ դրօշ պարզելու
անհրաժեշտութիւն պիտի լինի. նաւերդ մնալով
պիտի քայքայուեն:

սպանդ է լինելու:
7 Նրանց հետ պիտի ճզմուեն մեծամեծները,
նաեւ խոյերն ու ցուլերը.
երկիրը պիտի հարբի նրանց արեամբ,
եւ հողը նրանց ճարպով պիտի լցուի:
8 Արդարեւ, Տիրոջ դատաստանի օրն է,
Սիոնի դատաստանի հատուցման տարին.
9 եւ նրա ձորերը ձիւթ պիտի դառնան,
իսկ նրա հողը՝ ծծումբ.
10 նրա հողը, ինչպէս ձիւթ, զօր ու գիշեր պիտի վառուի
եւ յաւիտենապէս չի հանգչելու:
Նրա ծուխը վեր պիտի բարձրանայ,
եւ նա սերնդից սերունդ պիտի աւերուի,
շատ ու շատ ժամանակներ պիտի աւերուի,
եւ չի լինելու ոչ ոք, որ անցնի այնտեղով:
11 Այնտեղ բնակութիւն պիտի հաստատեն թռչուններն ու ոզնիները,
ցիներն ու ագռաւները,
նրա մէջ պիտի ջնջուեն ու աւերակ դառնան չափուած սահմանները,
յուշկապարիկները պիտի բնակուեն այնտեղ:
12 Նրա իշխանները պիտի դադարեն գոյութիւն ունենալուց,
նրա թագաւորներն ու մեծամեծները պիտի կործանուեն:
13 Նրա քաղաքներում եւ ամրոցներում փշաբեր ծառ պիտի բուսնի:
Համբարուների բնակատեղի եւ ջայլամների հանգրուան պիտի դառնայ նա,
14 ուր դեւերն ու յուշկապարիկներն են հանդիպելու
եւ միմեանց ձայն տալու:
Այնտեղ պիտի հանգրուանեն յուշկապարիկները,
որովհետեւ իրենց համար հանգիստ են գտնելու:
15 Այնտեղ ոզնին ձագեր պիտի հանի,
եւ երկիրը զգուշութեամբ սնուցելու է նրա ձագերին:
Այնտեղ միմեանց են հանդիպելու եղջերուները եւ իրար երես են տեսնելու.
16 նրանք թուով պիտի բազմապատկուեն,
նրանցից մէկն անգամ չի նուազելու,
ընկերն ընկերոջ պակաս չի զգալու,
քանզի Տէրն է այդպէս հրամայել նրանց,
Նրա Հոգին է նրանց հաւաքել:
17 Նա է նրանց այդ վիճակին արժանացրել,
նրա ձեռքն է նրանց կեր բաժանել՝
յաւիտեանս յաւիտենից:
Նրանք պիտի ժառանգեն սերնդից սերունդ
եւ հանգրուան գտնեն այնտեղ:

ԾԱՂԿԱԾ ԱՆԱՊԱՏԸ

35 Թող ուրախանայ ծարաւած անապատը,
թող ցնծայ անապատը ու ծաղկի ինչպէս շուշանը:
2 Թող ծաղկի ու ցնծայ Յորդանանի անապատը.
նրան պիտի տրուի Ե՛ւ փառքը Լիբանանի,
Ե՛ւ պատիւը Կարմելոսի,
ու իմ ժողովուրդը պիտի տեսնի փառքը Տիրոջ
ու վեհութիւնը մեր Աստծու:
3 Ո՛ւժ առէք, լքուա՛ծ ձեռքեր ու տկարացա՛ծ ծնկներ,
4 մխիթարուեցէ՛ք, թուլասի՛րտ մարդիկ,
զօտեպնդուեցէ՛ք եւ մի՛ երկնչէք:
Ահաւասիկ մեր Աստուածը դատաստանով պիտի հատուցի
եւ վրէժխնդիր լինի,
նա ինքը պիտի գայ ու փրկի մեզ:
5 Այն ժամանակ կոյրերի աչքերը պիտի բացուեն,
եւ խուլերի ականջները լսեն:
6 Այն ժամանակ կաղը եղջերուի պէս պիտի վազի,
եւ ծանրախօսների լեզուն պարզ պիտի դառնայ,
քանզի ջուր պիտի բխի անապատում,

եւ գետ՝ ծարաւած հողում:
7 Ջրազուրկ տեղերը լճակների պիտի վերածուեն,
եւ տոչորուած հողում աղբիւրի ջրեր պիտի բխեն:
Այնտեղ թռչուններն ուրախ պիտի ճռուողեն,
եւ հօտերը մակաղատեղ պիտի գտնեն,
այնտեղ մարգագետիններ են լինելու եւ ճահճուտներ:
8 Այնտեղ մաքուր ճանապարհ պիտի լինի,
եւ ճանապարհը սուրբ պիտի կոչուի,
այդ տեղով պիղծը չպիտի անցնի,
— պիղծ մարդկանց համար այնտեղ ճանապարհ չի լինելու, —
մտամոլոր մարդիկ անգամ, այդ տեղով ընթանալով,
չպիտի մոլորուեն:
9 Այնտեղ առիւծ չի լինելու,
ու չար գազաններից ոչ մէկն այնտեղով չի անցնելու
եւ այնտեղ ամենեւին չի լինելու.
այդ տեղով պիտի գնան փրկուածները
եւ Տիրոջ համար հաւաքուածները:
10 Պիտի վերադառնան ու ցնծութեամբ գան Սիոն,
եւ նրանց գլխի վրայ յաւիտենական ուրախութիւն պիտի լինի,
օրհնութիւն ու ցնծութիւն պիտի լինի նրանց գլխի վրայ,
ուրախութիւնը պիտի դիմաւորի նրանց,
ցաւը, տրտմութիւնն ու հեծութիւնը պիտի անհետանան:

ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻՆ
(Դ Թագ., 18. 13-27, Բ Մնաց., 32. 1-19)

36 Այնպէս պատահեց, որ Եզեկիայի թագաւորութեան տասնչորսերորդ տարում Ասորեստանի Սենեքերիմ արքան յարձակուեց Հրէաստանի ամուր քաղաքների վրայ եւ գրաւեց: 2 Ասորեստանի արքան Լաքիսից մեծ զօրքով Երուսաղէմ, Եզեկիա արքայի մօտ ուղարկեց Ռափսակին, որը եկաւ կանգ առաւ Կտաւ սպիտակեցնողների ագարակի ճանապարհի վերեւի աւազանի ջրմուղի մօտ: 3 Նրան ներկայացան Քեղկիայի որդի Եղիակիմը, որը հազարապետն էր, գրագիր Սոմնասը, որ հրովարտակներ էր գրում, եւ Ասափի որդի Յովաքը, որը ատենադպիրն էր: 4 Ռափսակը նրանց ասաց. «Գնացէք յայտնեցէ՛ք Եզեկիային, որ այսպէս է ասում Ասորեստանի մեծ արքան. "Ո՞ւմ վրայ ես յոյս դրել. 5 խորհրդով կամ բերանի խօսքերով պատերազմի հարց կը լուծուի՞. իսկ հիմա ո՞ւմ վրայ ես յոյս դրել, որ չես հնազանդւում ինձ: 6 Ահա դու յոյսդ դրել ես ջախջախուած եղեգնեայ ցուպի՝ եգիպտացու վրայ, որին եթէ որեւէ մէկը յենուի՝ պիտի խորտակուի, եւ այն պիտի ընկնի ձեռքից. ահա այդպիսին է Եգիպտոսի Փարաւոն արքան ամենքի համար, որոնք ապաւինել են նրան: 7 Իսկ եթէ ասէք, թէ՝ մեր Տէր Աստծուն ենք ապաւինել, ապա մի՞թէ դա նա չէ, որի բարձրադիր մեհեանները ու զոհասեղանները Եզեկիան քանդեց եւ Հրէաստանին ու Երուսաղէմին հրաման տուեց, որ միայն իր առջեւ գտնուող զոհասեղանին երկրպագութիւն մատուցեն: 8 Դէ ուրեմն եկէք միացէ՛ք իմ տիրոջը՝ Ասորեստանի արքային, եւ ես ձեզ երկու հազար երիվար կը տամ, եթէ դուք կարողանաք դրանց համար հեծեալներ տալ: 9 Եւ դուք, որ յոյս էք դրել Եգիպտոսի վրայ, նրանց հեծեալների ու երիվարների վրայ, ինչպէ՞ս պիտի կարողանաք կռուել իմ տիրոջ աշխարհակալ զօրապետներից որեւէ մէկի հետ: 10 Արդ, ի՛նչ է, առանց Տիրոջ հրամանի՞ ենք եկել այս երկիրը՝ նրա հետ պատերազմելու համար: Տէրն ինձ ասաց. "Գնա՛ այդ երկիրը եւ աւերի՛ր այն"»:
11 Ապա Եղիակիմը, Սոմնասը եւ Յովաքը ասացին նրան. «Մեզ՝ քո ծառաների հետ խօսի՛ր ասորերէն, որովհետեւ մենք այն հասկանում ենք, մեզ հետ հրէերէն մի՛ խօսիր. ինչո՞ւ ես այդպէս խօսում, որ հասնի այն մարդկանց ականջին, որոնք պարիսպների վրայ են»:
12 Ռափսակը նրանց ասաց. «Մի՞թէ միայն ձեր տիրոջ մօտ կամ ձեզ մօտ է ուղարկել ինձ իմ տէրը, որ խօսեմ այս

բաները, եւ ո՞չ արդեօք այն մարդկանց մօտ, որոնք նստում են այդ պարսպի վրայ, որպէսզի ձեզ հետ միասին չուտեն իրենց աղբը եւ չխմեն իրենց մէզը»:

13 Ռափսակը ոտքի ելաւ եւ բարձր ձայնով հրէերէն կանչեց ու ասաց. «Լսեցէ՛ք Ասորեստանի մեծ արքայի թագաւորական պատգամները: 14 Այսպէս է ասում արքան. "Թող Եզեկիան ձեզ չմոլորեցնի այնպիսի խօսքերով, որոնցով չի կարող փրկել ձեզ: 15 Եւ թող չխաբի ձեզ Եզեկիան, թէ Աստուած փրկելու է ձեզ, եւ այս քաղաքը Ասորեստանի թագաւորի ձեռքը չի մատնուելու: Մի՛ լսէք Եզեկիային": 16 Այսպէս է ասում Ասորեստանի արքան. "Եթէ դուք ձեր բարին էք կամենում, ելէք ի՛նձ յանձնուէք, եւ իւրաքանչիւրդ կ'ուտէք ձեր այգու եւ թզենու պտուղը ու կը խմէք ձեր ջրհորի ջուրը, 17 մինչեւ որ գամ եւ տանեմ ձեզ մի երկիր, որ նման է ձեր երկրին, երկիր ցորենի ու գինու, հացառատ ու այգեշատ: 18 Թող ձեզ չխաբի Եզեկիան՝ ասելով, թէ՝ "Աստուած պիտի փրկի ձեզ". արդեօք ազգերի աստուածները կարողացա՞ն Ասորեստանի արքայի ձեռքից փրկել իրենց այս կամ այն երկիրը: 19 Ո՞ւր են Եմաթի ու Արփաթի աստուածները, ո՞ւր է Սեփարուիմ քաղաքի աստուածը. միթէ իմ ձեռքից կարողացա՞ն փրկել Սամարիան: 20 Այդ բոլոր ազգերի աստուածներից արդեօք ո՞ր մէկն էր, որ կարողացաւ իմ ձեռքից փրկել իր երկիրը, որ ձեր Աստուածն էլ կարողանայ իմ ձեռքից փրկել Երուսաղէմը"»:

21 Լուռ մնացին նրանք եւ ոչ մի պատասխան չտուին, որովհետեւ թագաւորը հրամայել էր պատասխան չտալ: 22 Ապա Քեղկիայի որդի Եղիակիմը, որը հազարապետն էր, գրագիր Սոմնասը, որը հրովարտակներ էր գրում, Ասափի որդի Յովաքը, որը ատենադպիրն էր, օձիքները պատռելով, վերադարձան Եզեկիայի մօտ եւ նրան հաղորդեցին Ռափսակի խօսքերը:

ԵԶԵԿԻԱՆ ԴԻՄՈՒՄ Է ՄԱՐԳԱՐԷԻ ԽՈՐՀՐԴԻՆ
(Դ Թագ., 19. 1-7)

37 Եզեկիա արքան, լսելով այս խօսքերը, պատռեց իր պատմուճանը, քուրձ հագաւ եւ մտաւ Տիրոջ տունը: 2 Այնուհետեւ Եղիակիմ հազարապետին, գրագիր Սոմնասին եւ ծեր քահանաներին, որոնք քուրձ էին հագել, ուղարկեց Ամոսի որդու՝ Եսայի մարգարէի մօտ, 3 որ ասեն նրան. «Այսպէս է ասում Եզեկիան. "Այսօր նեղութեան ու նախատինքի, կշտամբանքի ու բարկութեան օր է, մի օր, երբ ծնդկանի երկունքի ժամն է հասել, բայց նա չի կարողանում ծնդաբերել: 4 Թող քո Տէր Աստուածը լսի Ռափսակի խօսքերը, որին ուղարկեց իր տէրը՝ Ասորեստանի արքան, որպէսզի նա նախատի կենդանի Աստծուն, նախատի այնպիսի խօսքերով, որոնք լսեց քո Տէր Աստուածը: Արդ, աղերսի՛ր քո Տէր Աստծուն մնացածներիս համար"»:

5 Եզեկիա արքայի պաշտօնեաները ներկայացան Եսայուն: 6 Եւ Եսային ասաց նրանց. «Այս բանը կը հաղորդէք ձեր տիրոջը: Այսպէս է ասում Տէրը. "Զվախենաս այն խօսքերից, որ լսեցիր, եւ որոնցով նախատեցին ինձ Ասորեստանի արքայի պատգամաւորները: 7 Ահա ես արքայի մէջ խռովութեան ոգի կը սերմանեմ. լուր առնելով՝ նա կը վերադառնայ իր աշխարհը եւ իր երկրում սրի բաժին կը դառնայ"»:

ՌԱՓՍԱԿԻ ՆԱՄԱԿԸ ԵԶԵԿԻԱ ԱՐՔԱՅԻՆ
(Դ Թագ., 19. 8-19)

8 Ռափսակը իմանալով, որ Ասորեստանի արքան հեռացել է Լաքիսից, քանի որ պաշարել է Լոբնան, վերադարձաւ ու հասաւ Ասորեստանի արքայի մօտ: 9 Եւ երբ եթովպացիների թարակ արքան դուրս եկաւ սրան պաշարելու, նա յետ եկաւ այնտեղից եւ պատգամաւորներ յղեց Եզեկիայի մօտ՝ յայտնելով. 10 «Այսպէ՛ս ասացէք Հրէաստանի Եզեկիա արքային. "Թող քեզ չմոլորեցնի Աստուած, որին դու ապաւինել ես՝ ասելով, թէ Երուսաղէմը չի մատնուի Ասորեստանի արքայի ձեռքը: 11 Բայց մի՞թէ դու չես լսել, թէ Ասորեստանի թագաւորներն ի՛նչ օրը գցեցին բոլոր երկրներին, ինչպէ՛ս կործանեցին նրանց: Իսկ, ի՛նչ է, դու փրկուելո՞ւ ես: 12 Մի՞թէ աստուածները փրկեցին իմ այն ազգերին, որոնց իմ հայրերը կորստեան մատնեցին. Գոզանը, Խառանը, Ռափեթը, որոնք գտնւում են Եմաթի երկրում: 13 Ո՞ւր են Եմաթի եւ Արփաթի թագաւորները, ո՞ւր են Սեփարուիմ քաղաքի, Անայի եւ Գաւայի թագաւորները"»:

ԵԶԵԿԻԱՅԻ ԱՂՕԹՔԸ

14 Եզեկիան, պատգամաւորների ձեռքից վերցնելով հրովարտակը, կարդաց, մտաւ Տիրոջ տունն ու այն փռեց Տիրոջ առաջ: 15 Եզեկիան աղօթքի կանգնեց Տիրոջ առաջ եւ ասաց. 16 «Զօրութիւնների՛ Տէր, Աստուա՛ծ Իսրայէլի, որ բազմում ես քերովբէների վրայ, դու ես աշխարհի բոլոր թագաւորութիւնների միա՛կ Աստուածը, դո՛ւ արարեցիր երկինքն ու երկիրը: 17 Խոնարհի՛ր քո ականջը, ո՛վ Տէր, եւ լսի՛ր. Տէ՛ր, բա՛ց քո աչքերը եւ նայի՛ր, ո՛վ Տէր. լսի՛ր, Տէ՛ր, եւ իմացի՛ր այն պատգամները, որ ուղարկեց Ասորեստանի Սենեքերիմ արքան՝ նախատելու համար կենդանի Աստծուն: 18 Արդարեւ, Ասորեստանի թագաւորներն աւերեցին համայն աշխարհն իր երկրներով, 19 հրոյ ճարակ դարձրին նրանց կուռքերը եւ կործանեցին, քանի որ նրանք աստուածներ չէին, այլ՝ մարդու ձեռքով կերտուած փայտէ ու քարէ կուռքեր: 20 Բայց արդ, Տէ՛ր Աստուած մեր, ազատի՛ր մեզ նրանց ձեռքից, որպէսզի աշխարհի բոլոր թագաւորութիւնները գիտակցեն, որ դու ես միակ Աստուածը»:

ԵՍԱՅՈՒ ՊԱՏԳԱՄԸ ԹԱԳԱՒՈՐԻՆ
(Դ Թագ., 19. 20-37)

21 Ապա Ամոսի որդի Եսային ուղարկուեց Եզեկիայի մօտ ու ասաց նրան. «Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Լսեցի այն աղօթքները, որոնցով պաղատեցիր ինձ՝ ընդդէմ Ասորեստանի Սենեքերիմ արքայի"»:

22 Ահա այս է այն պատգամը, որ յայտնեց Աստուած նրա մասին.

«Ծաղրեց ու արհամարհեց քեզ, Սիոնի կոյս դուստրը,
քո յետեւից հեգնանքով նայեց Երուսաղէմի դուստրը:
23 Ո՞ւմ վրայ թափեցիր քո նախատինքն ու չարութիւնը,
ո՞ւմ վրայ ես բարձրացրել ձայնդ,
ինչո՞ւ հայեացքդ չես յառում բարձունքին՝ դէպի Իսրայէլի սուրբը:
24 Ինչո՞ւ պատգամաւորների միջոցով նախատինք հասցրիր Տիրոջը:
Դու ասում էիր, թէ՝
"Իմ կառքերի բազմութեամբ լեռների բարձունքը,
Լիբանանի ծայրերը ելայ,
կոտորեցի նրա բարձր մայրիները,
նրա գեղեցիկ նոճիները եւ մտայ նրա անտառի ամենաբարձր կողմերը,
25 կամուրջ գցեցի եւ ցամաքեցրի ջրերն ու բոլոր ջրամբարները":
26 Մի՞թէ դու չես լսել, թէ աւելի առաջ, հին ժամանակ, ինչ եմ արել ես.
կանխատեսել եմ եւ այժմ էլ յայտնում եմ,
որ կործանելու եմ հեթանոսներին իրենց ամրոցների մէջ,
27 նաեւ բոլոր բերդաքաղաքների բնակիչներին:
Ձեռքից բաց թողի,
եւ նրանք չորացան, դարձան ինչպէս տանիքի վրայ այրուած խոտ,
ինչպէս չորացած սէգ:
28 Արդ, ես գիտեմ քո տեղն ու հանգրուանը,
գիտեմ, թէ որ ճամփով ես գնում ու գալիս:
29 Քո զայրոյթն ու բարկութիւնը,
քո մաղձոտութիւնն ինձ համար ակներեւ են,
դրա համար էլ լկամ պիտի հագցնեմ քո մռութին ու սանձ՝ քո կզակին
եւ յետ պիտի դարձնեմ քեզ նոյն ճանապարհով, որով եկար:
30 Իսկ քեզ համար, Եզեկիա՛, թող սա նշան լինի. այս տարի պիտի ուտէք սերմանուածը, միւս տարին պիտի ուտէք մնացորդները, իսկ երրորդ տարին պիտի ցանէք ու հնձէք, այգի-

ներ տնկէք եւ ուտէք նրանց պտուղը:
31 Հրէաստանում մնացածները արմատներ պիտի արձակեն դէպի ներքեւ
եւ պտուղ պիտի տան վերեւում, 32 որովհետեւ նրանք Երուսաղէմում պիտի լինեն, եւ փրկուածները՝ Սիոն լեռան վրայ. Զօրութիւնների Տիրոջ նախանձախնդրութեամբ է այդպէս լինելու»:
33 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում Ասորեստանի թագաւորի մասին.
«Նա չպիտի մտնի այդ քաղաքը,
նետեր չպիտի արձակի դրա վրայ, դա չպիտի փակի վահաններով եւ ոչ էլ պատնէշներով պիտի պաշարի դա,
34 այլ պիտի վերադառնայ այն նոյն ճանապարհով, որով եկել է, եւ չպիտի մտնի այդ քաղաքը»: 35 Այսպէս է ասում Տէրը. «Պիտի պահպանեմ այդ քաղաքը, որպէսզի փրկեմ դա՝ ինձ եւ իմ ծառայ Դաւթի համար»:
36 Ապա Տիրոջ հրեշտակը ելաւ եւ Ասորեստանի բանակից հարիւր ութսունհինգ հազարին սպանեց: Առաւօտեան վեր կենալով՝ գտան բոլորի անշունչ դիակները: 37 Եւ Ասորեստանի Սենեքերիմ արքան նորից դարձաւ, գնաց ու բնակուեց Նինուէում: 38 Եւ մինչ նա իր Նասրաք աստծու տաճարի մէջ երկրպագում էր իր կուռքին, նրա որդիները՝ Ադրամելէքը եւ Սարասարը, սրով սպանեցին նրան եւ իրենք փախստական գնացին Հայաստան: Իսկ նրա փոխարէն թագաւորեց նրա որդին՝ Ասորդանը:

ԵԶԵԿԻԱՅԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊԱԳԻՆՈՒՄԸ

(Դ Թագ., 20. 1-11, Բ Մնաց., 32. 24-26)

38 Այն ժամանակ Եզեկիան հիւանդացաւ մահացու հիւանդութեամբ. Ամոսի որդի Եսային եկաւ նրա մօտ ու ասաց. «Այսպէս է ասում Տէրը. "Պատուէ՛ր տուր տանդ համար, որովհետեւ մեռնելու ես, չես ապրելու"»:
2 Եւ Եզեկիան երեսը շրջեց դէպի պատը, աղօթք արեց ու ասաց. 3 «Ո՛վ Տէր. յիշի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի քո առաջ արդարութեամբ ու ճշմարիտ սրտով ընթացայ եւ քեզ համար հաճելի գործեր կատարեցի»: Ապա մեծ ցաւով լաց եղաւ Եզեկիան:
4 Եւ Տէրը, խօսքն ուղղելով Եսայուն, ասաց. 5 «Գնա՛ եւ ասա՛ Եզեկիային, թէ այսպէս է ասում քո հօր՝ Դաւթի Տէր Աստուածը. "Լսեցի քո աղօթքի ձայնը եւ տեսայ քո արցունքները. ահաւասիկ քո կեանքի ժամանակի վրայ աւելացնում եմ տասնհինգ տարի. 6 Ասորեստանի արքայի ձեռքից պիտի փրկեմ քեզ ու այս քաղաքը, պիտի պահպանի այս քաղաքին"»: 7 Եւ Տիրոջ կողմից թող սա նշան լինի քեզ, թէ Աստուած կատարելու է այն խօսքը, որ ասաց. 8 "Ահաւասիկ ես յետ եմ դարձնելու քո աստիճաններին ընկած ստուերը. քո տան տասը աստիճաններով ներքեւ իջած շողքը ես տասը աստիճանով յետ եմ շրջելու"»: Եւ շողքը բարձրացաւ տասը աստիճան, հասաւ այնտեղ, ուր ստուերն էր իջել:

9 Հրէաստանի արքայ Եզեկիայի աղօթքը այն ժամանակ, երբ նա հիւանդացաւ եւ ապաքինուեց հիւանդութիւնից.

10 «Ես ասում էի, թէ երբ իմ օրերն սպառուեն,
մնացած տարիներս թողած՝ ընկնելու եմ գերեզմանի դռները:
11 Ասում էի, թէ երկրի վրայ այլեւս չեմ տեսնի Աստծու փրկութիւնը,
էլ չեմ տեսնի մարդ ու բնակիչ:
12 Զրկուեցի ես իմ ազգատոհմից,
թողի իմ մնացած կեանքը,
որը ելաւ ու հեռացաւ ինձնից,
ինչպէս քանդւում է կանգուն տաղաւարը:
Իմ հոգին ինձնից ահա ուր որ է պիտի անջատուի,
ինչպէս ջուլհակի ոստայնը, որ մօտ է կտրուելու:
13 Այն օրը դատապարտուած մնացի մինչեւ առաւօտ.
ասես առիւծը ջարդէր իմ բոլոր ոսկորները,
զօր ու գիշեր դատապարտուած մնացի:
14 Ճչում էի ինչպէս ծիծեռնակը
եւ աղաւնու նման մնչում,
որովհետեւ աչքերս տկարացան նայելուց դէպի երկնքի բարձունքը՝
դէպի Տէրը, որը փրկեց ինձ,

փարատեց իմ հոգու ցաւերը
15 եւ ինքն էլ սահմանեց իմ բոլոր տարիները՝ ի դառնութիւն իմ անձի:
16 Այդ մասին քեզ պատմուեց, Տէ՛ր,
եւ դու արթնացրիր իմ հոգին,
ես մխիթարուեցի եւ ապրեցի:
17 Ահաւասիկ խաղաղութեան փոխուեց իմ դառնութիւնը.
դու փրկեցիր իմ հոգին, որ չկործանուեմ,
ինձնից յետ վանեցիր իմ բոլոր մեղքերը:
18 Գերեզմանում գտնուողները չէ, որ պիտի խոստովանեն քեզ,
մեռածները չեն, որ պիտի օրհնեն քեզ,
եւ ոչ էլ քո ողորմութեանն են յուսալու նրանք,
ովքեր գերեզման են իջնում:
19 Ապրողները պիտի օրհնեն քեզ, ինչպէս ես այժմ:
Այսուհետեւ մանուկներ պիտի ծնեմ,
որ պատմեն քո արդարութեան մասին,
20 ո՛վ փրկիչ իմ Տէր:
Եւ իմ կեանքի բոլոր օրերին
քո աստուածային տաճարի առաջ
չեմ դադարելու սաղմոսարանով օրհներգելու քեզ»:
21 Ապա Եսային Եզեկիային ասաց.
«Թզի չի՛ր վերցրու, մանրի՛ր եւ դի՛ր վէրքիդ վրայ, եւ պիտի առողջանաս»:
22 Իսկ նա պատասխանեց. «Դա նշան է, որ Աստծու տաճա՞րը պիտի մտնեմ»:

ԲԱԲԵԼՈՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ ԵԶԵԿԻԱՅԻ ՄՕՏ

(Դ Թագ., 20. 12-19)

39 Այն ժամանակ Բաբելոնի արքան Մարոդաք Բաղդանը՝ Բաղդանի որդին, պատգամաւորներ ուղարկեց Եզեկիայի մօտ՝ հրովարտակներով ու նուէրներով, որովհետեւ լսել էր, թէ նա հիւանդացել է մերձիմահ եւ առողջացել: 2 Նրանք ուրախութիւն պատճառեցին Եզեկիային, որը ցոյց տուեց նրանց իր գանձերի տները, խնկերի ու օծանելիքների, ոսկու եւ արծաթի, զէնքերի բոլոր պահեստները, ամէն բան, ինչ կար իր գանձարաններում: Իր տանը, իր ամբողջ տէրութեան սահմաններում բան չմնաց, որ Եզեկիան նրանց ցոյց չտար:
3 Եւ ահա Եսայի մարգարէն ներկայացաւ Եզեկիա արքային եւ ասաց նրան. «Ի՞նչ են ասում այդ մարդիկ, ո՞ր կողմերից են եկել մօտդ»: Իսկ Եզեկիան պատասխանեց. «Հեռաւոր աշխարհից են եկել մօտս, Բաբելոնից»:
4 Եսային ասաց. «Ի՞նչ տեսան քո տան մէջ»: Եզեկիան պատասխանեց. «Ամէն բան, ինչ որ կայ իմ տանը, տեսան: Բան չկայ իմ տան մէջ, որ չտեսնէին, տեսան նաեւ իմ գանձերը»: 5 Եսային ասաց նրան. «Հիմա դու լսի՛ր Զօրութիւնների Տիրոջ պատգամները. 6 "Ահա գալու են օրեր, երբ պիտի խլեն ամէն բան, ինչ որ կայ քո տան մէջ, ինչ որ հաւաքել են քո հայրերը մինչեւ այսօր: Դրանք Բաբելոն պիտի տարուեն, ոչ մի բան չեն թողնելու": Աստուած ասաց, 7 թէ պիտի տարուեն նաեւ քո որդիներից շատերը, որոնք քեզնից են լինելու, որոնց դու ես ծնելու, տանելու եւ ներքինիներ են դարձնելու Բաբելոնի թագաւորի պալատում»: 8 Իսկ Եզեկիան ասաց Եսային. «Տիրոջ այդ խօսքը, որ դու յայտնեցիր, բարի է. թող արդարութիւն ու խաղաղութիւն լինի իմ օրերում»:

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱՐ

40 «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք իմ ժողովրդին,
— ասում է Աստուած, —
2 դուք՝ քահանաներդ, Երուսաղէմի սրտո՛վ խօսեցէք
եւ մխիթարեցէ՛ք նրան,
որովհետեւ նա լի է տառապանքով»:
Թող նրա մեղքերին թողութիւն լինի,
քանզի իր մեղքերի համար
նա Տիրոջ կողմից կրկնակի հատուցում ստացաւ:
3 Անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը
եւ հարթեցէ՛ք մեր Աստծու շաւիղները:
4 Բոլոր ձորերը պիտի լցուեն,
եւ բոլոր լեռներն ու բլուրները պիտի

ցածրանան,
դժուարին տեղերը պիտի դիւրին դառնան,
եւ առապարները՝ դաշտեր:
5 Պիտի յայտնուի Տիրոջ փառքը,
եւ ամէն մի մարմնաւոր պիտի տեսնի Աստծու փրկութիւնը,
քանզի Տէրը խօսեց»:
6 Մի ձայն ասում է՝ կանչի՛ր:
Ասում եմ՝ ի՞նչ կանչեմ:
«Իմացի՛ր, ամէն մարմին նման է խոտի,
եւ մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի:
7 Խոտը չորանում է,
նրա ծաղիկը թափւում,
որովհետեւ նրա վրայ փչում է Տիրոջ շունչը:
Արդարեւ, իմ այս ժողովուրդը նման է խոտի:
8 Խոտը չորանում է, ծաղիկը թափւում,
բայց Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան»:
9 Ե՛լ այդ բարձր լերան վրայ,
ո՛վ աւետաբերդ Սիոնի,
ո՛ւժ տուր քո ձայնին,
ո՛վ աւետաբերդ Երուսաղէմի,
ո՛ւժ տուր, մի՛ վախեցիր եւ յայտնի՛ր Յուդայի երկրի այդ քաղաքներին.
10 «Ահաւասիկ ձեր Աստուածը.
ահա Տէրը, որ գալիս է զօրութեամբ
եւ իր բազկի իշխանութեամբ.
ահաւասիկ իր վարձն իր հետ է,
ու գործերն էլ իր աչքի առաջ են:
11 Հովուի նման հովուելու է իր հօտերը,
իր բազկով հաւաքելու է գառներին,
կրելու է նրանց իր ծոցում,
մխիթարիչ է լինելու յղիներին»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԸ

12 Ո՞վ կարողացաւ իր ափով չափել ջրերը,
թզով՝ երկինքը եւ քլով†՝ համայն երկիրը.
ո՞վ կարողացաւ լեռները կշռել կշեռքով եւ դաշտերը՝ նժարով:

†Լայն բացուած բթամատի եւ ցուցամատի միջեւ եղած տարածութիւնը:

13 Ո՞վ իմացաւ Տիրոջ մտքերը,
ո՞վ խորհրդատու դարձաւ նրան՝
իբրեւ թէ նրան խելամիտ դարձնելու համար:
14 Կամ թէ ո՞ւմ հետ խորհրդակցեց նա, որ իրեն խելամիտ դարձնի,
եւ կամ ո՞վ նրան ցոյց տուեց արդարադատութիւնն ու իմաստութեան ճանապարհը,
կամ անցեալում ո՞վ փոխ տուեց իրեն, որ հատուցի նրան:
15 Բոլոր հեթանոսները նման են դոյլի մի կաթիլին,
նոյնն են, ինչ փոշեհատիկը՝ կշեռքի վրայ
եւ կամ ինչպէս բերանից ցայտող շիթը:
16 Այրելու համար Լիբանանը բաւական չէ,
բոլոր չորքոտանիները ողջակէզի համար բաւական չեն,
17 եւ բոլոր հեթանոսները նրա համար ոչինչ են,
ոչնչութիւն են համարւում:
18 Արդ, ո՞ւմ նմանեցրիք Տիրոջը,
ո՞ւմ նման համարեցիք նրան:
19 Միթէ կո՞ւռք է նա, որին կերտել է արուեստաւորը,
եւ կամ ոսկերիչը, ձուլելով ոսկին, պատել է նրան ոսկով՝
պատկերի նմանութիւն ու կերպարանք տալով նրան:
20 Հիւսնն էլ անփտելի փայտն է ընտրել
եւ խելք ու հնարքի դիմել,
թէ ինչպէս կանգնեցնի այն, որ չշարժուի:
21 Միթէ չլսեցի՞ք ու չիմացա՞ք,
ի սկզբանէ ձեզ չպատմուե՞ց,
չհասկացա՞ք, թէ ով հաստատեց երկրի հիմքերը:
22 Նա է, որ նստած է երկրի շրջածիրից վերեւ,
եւ բնակիչները նրան մորեխի չափ են երեւում:
Նա է կանգնեցրել երկինքն ինչպէս կամար,
ձգել՝ ինչպէս վարագոյր
եւ հիմնել երկիրը՝ նրա մէջ բնակուելու համար:
23 Նա է, որ իշխաններին անիշխանութեան է դատապարտում
եւ երկիրն ամայացնում,
24 որպէսզի չսերմանեն ու տունկեր չտնկեն,
եւ նրանց արմատը հողի մէջ չհաստատուի:
Նա կը փչի նրանց վրայ, եւ կը չորանան,
ու փոթորիկը խռիւի նման կը քշի դրանք:
25 «Արդ, ո՞ւմ կ'ուզենայիք նմանեցնել ինձ,
որին զուգահաւասար լինէի»,
— ասում է Իսրայէլի սուրբը:
26 Աչքներդ դէպի երկի՛նք բարձրացրէք եւ տեսէ՛ք՝
ո՞վ հաստատեց այս ամէնը, ո՞վ ստեղծեց նրա համակարգութիւնը՝
մեծ փառքով եւ անհնարին ուժով ամէն ինչի տալով իր անունը.
ոչ մի բան ծածուկ չի մնում նրանից:
27 Մի՛ ասա, Յակո՛բ, կամ՝ ի՞նչ ես խօսում, Իսրայէ՛լ, թէ՝ "Իմ ճանապարհները գաղտնի մնացին Աստծուց,
եւ իմ Աստուածը վերացրեց իմ իրաւունքներն ու հեռացաւ":
28 Արդ, չիմացա՞ր, չլսեցի՞ր,
որ յաւիտենական Աստուածը,
երկրի սահմանները հաստատող Աստուածը
ո՛չ քաղց է զգում եւ ո՛չ էլ յոգնում,
նրա իմաստութիւնն անքննելի է:
29 Նա քաղցածներին ուժ է տալիս,
բայց ցաւ չունեցողներին էլ՝ տրտմութիւն:
30 Երիտասարդները քաղց պիտի զգան,
մանուկները պիտի յոգնեն,
քաջընտիր մարդիկ անզօր պիտի դառնան,
31 իսկ նրանք, որոնք Տիրոջն են ապաւինում,
նոր ուժ պիտի ստանան
եւ նոր փետուրներով զարդարուեն ինչպէս արծիւներ,
պիտի վազեն, բայց չպիտի յոգնեն,
պիտի գնան, բայց քաղց չպիտի զգան:

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԱՐԴԱՐԻՆ

41 Նորոգուեցէ՛ք իմ առաջ, ո՛վ կղզիներ,
քանզի իշխանները նորոգուելու են զօրութեամբ,
մօտենալու են ու միասին խօսելու եւ պատմելու են արդար դատաստանի մասին:
2 Ո՞վ արթնացրեց արդարին Արեւելքից եւ կանչեց իր յետեւից.
նա գնալու է եւ հեթանոսների յանդիման հատուցում է տալու,
սարսափահար է անելու թագաւորներին,
հողին է յանձնելու նրանց սրերը,
խռիւի պէս վանելու է նրանց նետերը,
3 նրանց փախստական է դարձնելու
եւ խաղաղութեամբ անցնելու է այն ճանապարհները,
որոնք իր ոտքերի համար են:
4 Արդ, կ'ասէ՞ք, թէ Նա չի գալու.
ո՞վ արեց ու կատարեց այս ամէնը,
ո՞վ կանչեց նրան, որ կանչւում էր առաջին ցեղերից:
Ես եմ Տէրն առաջին,
նոյնն եմ լինելու եւ յաւիտեան:
5 Տեսան ինձ հեթանոսները եւ վախեցան,
երկրի բոլոր ծագերը սարսափեցին.
իրար մօտեցան եւ միասին եկան:
6 Ամէն մէկը մտքում դրեց
ընկերոջն ու եղբօրն օգնական լինել՝ ասելով.
7 «Թող հիւսնը քաջալերի դարբնին՝
կռելու, կոփելու եւ մուրճով հարուածելու, եւ ասի՝
ինձ համար լաւ օգնութիւն եղաւ»:
Գամերով գամում են կուռքերը,
դնում գետնի վրայ, որպէսզի չշարժուեն:
8 Բայց դու, ո՛վ իմ ծառայ Իսրայէլ,
ո՛վ Յակոբ, որին ընտրեցի,
ո՛վ դու Աբրահամի զաւակ, որին սիրեցի,
9 որին օգնական եղայ՝
երկրի ծայրերից ու նրա եզերքներից կանչելով նրան եւ ասելով, թէ՝
«Դու իմ ծառան ես, քեզ ընտրեցի ես եւ չեմ լքի քեզ», —

10 դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ
հետ եմ,
մի՛ խաբուիր, քանզի ես եմ քո
Աստուածը,
ես, որ զօրացրի քեզ,
օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ
արդար աջով:
11 Ահա պիտի ամաչեն ու պատ-
կառեն քո բոլոր հակառակորդները,
չեղածի նման պիտի լինեն նրանք,
եւ բոլոր քեզ ամբաստանողները
պիտի կորչեն:
12 Եթէ փնտռես էլ, չես գտնելու այն
մարդկանց,
որոնք քո դէմ թշնամութիւն էին
անում,
քեզ հետ պատերազմողներն ի չիք
պիտի դառնան:
13 Արդարեւ, ես եմ քո Տէր
Աստուածը,
որ բռնել եմ քո աջ ձեռքից,
որ ասում եմ քեզ, թէ՝
«Մի՛ վախեցիր, ես կ'օգնեմ քեզ»:
14 «Զվախենաս, Յակո՛բ, որ որդ ես
հիմա,
եւ դու, Իսրայէ՛լ, որ սակաւամարդ
ես այժմ,
ես օգնեցի քեզ»,
— ասում է Աստուած՝ Իսրայէլի
սուրբը, որը փրկելու է քեզ: —
15 Ահա քեզ դարձրի սղոցատամ
կամնասայլի նոր անիւների պէս.
լեռները պիտի կալսես,
բլուրները պիտի մանրես,
փոշու պիտի վերածես դրանք ու
քշես տանես:
16 Հողմերը պիտի տանեն դրանք,
եւ մրրիկները պիտի ցրեն:
Բայց դու ուրախ պիտի լինես
Տիրոջով՝ Իսրայէլի սրբով:
17 Պիտի ցնծան տնանկներն ու
չքաւորները,
որոնք ջուր էին փնտռում ու չէին
գտնում,
եւ նրանց լեզուները ծարաւից
ցամաքում էին:
Ես՝ Տէր Աստուածս, Իսրայէլի
Աստուածս,
կը լսեմ նրանց եւ չեմ լքի նրանց:
18 Գետեր կը բխեցնեմ լեռների վրայ
եւ դաշտերի մէջ՝ աղբիւրներ,
անապատը կը վերածեմ ջրերի լճակ-
ների
եւ տոչորուած երկիրը՝ վտակների:
19 Անջրդի հողում մայրի ու տօսախ,
մրտենի ու նոճի, սօսի ու դափնի,
սոճի ու կաղամախի,
գիհի ու ձիթենի կ'աճեցնեմ,
20 որպէսզի տեսնեն ու գիտենան,
ճանաչեն ու իմանան բոլորը,
թէ Տիրո՛ջ ձեռքը կատարեց այդ
ամէնը,
եւ Իսրայէլի սո՛ւրբը հաստատեց»:

ՄԱՐՏԱՀՐԱՒԻՐ ԿՈՒՌՔԵՐԻՆ

21 «Մօտեցել է ձեր արդար դատաս-
տանը,
— ասում է Տէր Աստուած, —
մօտեցել է ձեր արդար դատաս-
տանը»,
— ասում է Յակոբի Թագաւորը:
22 Թող մօտենան ու պատմեն ձեզ,
թէ ի՞նչ դէպքեր են կատարուելու:
Եւ կամ առաջներում կատարուած-
ներն էլ թող մեզ պատմեն,
որպէսզի մտքներս պահենք եւ
գիտենանք,
թէ ի՞նչ եղաւ առաջ,
եւ ի՞նչ է լինելու յետոյ:
23 Ասացէ՛ք, պատմեցէ՛ք մեզ, թէ
վերջում ի՞նչ է լինելու, որ իմանանք.
եթէ աստուածներ էք՝ բարի՞ն կա-
տարեցէք,
չա՛րը կատարեցէք,
որպէսզի տեղնուտեղը տեսնենք ու
զարմանանք,
թէ ո՛րտեղից էք դուք,
եւ ո՛րտեղից է գալիս ձեր արածը,
24 որովհետեւ պիղծ են նրանք, որ
երկրից ընտրել են ձեզ:
25 Բայց ես պիտի արթնացնեմ
հիւսիսային մարդուն եւ արեւելեանին,
նրանք պիտի կանչուեն իմ անունից,
պիտի գան իշխանները,
եւ բրուտի կաւի նման դուք պիտի
տրորուէք այնպէս,
ինչպէս բրուտն է տրորում:
26 Ո՞վ կը պատմի սկզբում եղածի
մասին, որ գիտենանք,
եւ կամ աւելի առաջ կատարուածի
մասին,

որ ասենք, թէ ճշմարիտ է.
ո՛չ առաջներում եղածի մասին
պատմող կայ,
եւ ո՛չ էլ մէկը, որ լսի ձեր խօսքերը:
27 Սկսեմ Սիոնից եւ ճանապարհին
մխիթարեմ Երուսաղէմին:
28 Ահաւասիկ ոչ մի հեթանոս չկայ,
չկայ նաեւ նրանց կուռքերից ոչ
մէկը, որ պատմի,
ու եթէ հարցնեմ իսկ նրանց, թէ՝
որտեղի՞ց էք,
ինձ պատասխան չեն տայ:
29 Ունայն են նրանք, որ կերտել են
ձեզ,
սնոտի են նրանք, որ ստեղծել են
ձեզ:

ՏԻՐՈՋ ԾԱՌԱՆ

42 Յակոբն իմ ծառան է.
օգնական պիտի լինեմ նրան:
Իմ ընտրեալն է Իսրայէլը,
որը հաճելի եղաւ իմ հոգուն:
Իմ շունչը կը տարածեմ նրա վրայ,
եւ նա հեթանոսների դատաստանը
կը տեսնի:
2 Նա չի աղաղակելու եւ չի վիճելու,
ոչ ոք դրսում նրա ձայնը չի լսելու,
3 անգամ ջախջախուած եղէգը նա
չի ջարդելու
եւ առկայծող պատրոյգը չի մա-
րելու,
այլ արդարութեամբ դատաստան է
տեսնելու:
4 Նա պիտի ծագի եւ չպիտի
խորտակուի,
քանի դեռ երկրի վրայ չի հաստատել
դատաստանը.
եւ հեթանոսները իրենց յոյսը պիտի
դնեն նրա անուան վրայ:
5 Այսպէս է ասում Տէր Աստուած,
որ ստեղծեց երկինքը եւ կանգնեցրեց
այն,
հաստատեց երկիրն ու ամէն բան,
ինչ կայ նրա վրայ,
շունչ տուեց այնտեղ գտնուող
մարդկանց,
հոգի՝ բոլոր նրանց, ովքեր ոտք են
դնում երկրի վրայ.
6 «Ես՝ Տէր Աստուածս,
արդարութեամբ կանչեցի քեզ,
բռնեցի քո աջ ձեռքից եւ զօրաւոր
դարձրի քեզ,
իբրեւ ուխտ տուեցի քեզ ժողովրդին
եւ իբրեւ լոյս՝ հեթանոսներին,
7 որպէսզի կոյրերի աչքերը բանաս
եւ խաւարի մէջ նստած կալա-
նաւորներին հանես բանտից ու
զնդանից:
8 Ես եմ Տէր Աստուածը, սա է իմ
անունը,
իմ փառքը ուրիշին չեմ տայ,
ոչ էլ իմ քաջութիւնը՝ կուռքերին»:
9 Ինչ որ նախասահմանուած էր,
այն էլ կատարուեց,
իսկ ինչ որ նոր պիտի կատարուի,
ե՛ս կը պատմեմ ձեզ,
մինչեւ պատմուելն էլ այն յայտնի
կը դառնայ ձեզ:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

10 Օրհնեցէ՛ք Տիրոջը նոր օրհներ-
գութեամբ,
քանզի նրա իշխանութիւնը բար-
ձունքներում է փառաբանւում,
եւ նրա անունը՝ երկրի ծագերից,
ծովերում նաւարկողներից,
կղզիներից ու նրանց բնակիչներից:
11 Թող ուրախ լինեն անապատն ու
նրա աւանները,
Կեդարի բանակատեղիներն ու
բնակիչները,
Թող ուրախանան Վէմի բնա-
կիչները,
լեռների գագաթներից կանչեն,
12 փառք տան Աստծուն,
իսկ կղզիները պատմեն նրա քա-
ջութեան մասին:
13 Զօրութիւնների Տէր Աստուածը
պիտի գայ ու պատերազմ մղի,
նախանձ պիտի յարուցի
եւ բարձրաձայն պիտի գոչի իր
թշնամիների վրայ:

ՏԷՐԸ ՊԻՏԻ ՕԳՆԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

14 Սկզբից իսկ լուռ եմ եղել.
մի՞թէ պիտի լսեմ ու միշտ լուռ
մնամ.
համբերող եղայ ինչպէս ծննդկան,
հիմա պիտի սարսափեցնեմ ու

միանգամից ցամաքեցնեմ:
15 Լեռներն ու բլուրները պիտի
հարթեցնեմ
եւ նրանց ամբողջ խոտը չորացնեմ,
գետերը պիտի վերածեմ կղզիների
եւ ճահճուտները ցամաքեցնեմ:
16 Կոյրերին պիտի առաջնորդեմ մի
ճանապարհով, որ նրանք չգիտեն,
պիտի քայլել տամ այնպիսի
շաւիղներով, որոնք ծանօթ չեն նրանց.
խաւարը լոյս պիտի դարձնեմ նրանց
համար
եւ դժուարանցանելին՝ դիւրին:
Այս բաները պիտի անեմ նրանց
համար եւ չեմ լքելու նրանց:
17 Բայց նրանք երես դարձրին
ինձնից:
Ամօթ ու պատկառա՛նք ունեցէք
դուք, որ ապաւինել էք կուռքերին
եւ ասում էք ձուլածոներին, թէ՝
"Մեր աստուածներն էք դուք":

ԿՈՅՐ ԵՒ ԽՈՒԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

18 Խուլե՛ր, լսեցէ՛ք, կոյրե՛ր, նա-
յեցէ՛ք ու տեսէ՛ք.
19 ո՞վ է կոյրը, եթէ ոչ իմ
ծառաները,
ովքե՞ր են խուլերը, եթէ ոչ այն
մարդիկ, որ տիրում են նրանց:
Ո՞վ է կոյրը, եթէ ոչ ուծացածը:
Կուրացան Աստծու ծառաները:
20 Շատ անգամ տեսաք, բայց
չզգուշացաք,
բաց էին ձեր ականջները, բայց
չլսեցիք:
21 Տէր Աստուած կամենում էր, որ
արդարութիւն լինի,
գոհութիւն մատուցեն,
22 բայց տեսայ, որ ժողովուրդը
կողոպտուեց ու աւարի մատնուեց.
բոլոր շտեմարաններում,
միաժամանակ եւ բոլոր
ապարանքներում,
ուր եւ թաքցրին նրանց,
որոգայթներ կային.
նրանք յափշտակութեան մատ-
նուեցին,
եւ ոչ ոք չկար, որ նրանց փրկէր,
աւարառութեան ենթարկուեցին,
եւ չգտնուեց մէկը, որ ասէր, թէ՝ ե՛տ
տուր:
23 Ձեզնից ո՞վ է նա, որ ականջ կը
դնի այս ամենին
եւ կը մտածի այն մասին, թէ ինչ է
կատարուելու յետագայում:
24 Ո՞վ մատնեց Յակոբին յափշտա-
կութեան,
Իսրայէլը՝ աւարառութեան.
ո՞չ արդեօք Աստուած, որի հանդէպ
մեղք գործեցին,
չկամեցան ընթանալ նրա ճանա-
պարհներով
եւ չլսեցին նրա օրէնքները:
25 Նա նրանց վրայ թափեց իր
զայրոյթն ու բարկութիւնը,
պատերազմի դատապարտեց նրանց,
բոլոր կողմերից կրակի մէջ առաւ
նրանց,
բայց նրանցից ոչ մէկը չգիտակցեց,
խելքի չեկաւ:

ՏԷՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ՓՐԿԵԼ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

43 Արդ, այսպէս է ասում Տէր
Աստուած,
որ արարեց քեզ, Յակո՛բ,
եւ ստեղծեց քեզ, Իսրայէ՛լ.
«Մի՛ վախեցիր,
որովհետեւ փրկեցի քեզ եւ կոչեցի
քեզ քո անունով, թէ իմն ես:
2 Եթէ ջրերի միջով անցնես՝ քեզ
հետ կը լինեմ,
եւ գետերը քեզ չեն խեղդի.
եթէ կրակի միջով անցնես՝ չես
այրուի,
եւ նրա բոցը քեզ չի կիզի.
3 քանզի ես եմ քո Տէր Աստուածը՝
Իսրայէլի սուրբը, որ պիտի փրկեմ
քեզ:
Եգիպտոսն ու Եթովպիան որպէս
փրկագին տուի քեզ համար
եւ Սուէհէնը քեզ հետ փոխանակեցի:
4 Ուստի թանկ եղար ինձ համար,
իմ առաջ փառաւորուեցիր, ու ես
սիրեցի քեզ.
մարդիկ կը տամ քո փոխարէն,
իշխաններ՝ քո գլխի դիմաց:
5 Մի՛ վախեցիր, որովհետեւ քեզ հետ
եմ.
արեւելքից կը բերեմ քո սերունդը
եւ արեւմուտքից կը հաւաքեմ քեզ:

6 Հիւսիսին կ'ասեմ՝ բե՛ր,
եւ հարաւին, թէ՝ մի՛ արգելիր.
բերէ՛ք իմ որդիներին հեռաւոր
երկրից
եւ իմ դուստրերին՝ երկրի ծագերից,
7 բոլորի՛ն, որոնք երբեւէ կոչուել են
իմ անունով.
որովհետեւ իմ փառքով հաստատեցի
նրան,
ստեղծեցի եւ արարեցի նրան:
8 Բարձրացրի կոյր ժողովրդին.
եւ թէպէտ աչքեր ունեն, սակայն
կուրացած են նրանք,
եւ խցանուած են նրանց ականջ-
ները:
9 Թող բոլոր ազգերը հաւաքուեն
միասին,
թող նրանց իշխանները ժողովուեն,
բայց ո՞վ կարող է պատմել այս,
եւ կամ ո՞վ կարող է ձեզ
ազդարարել այն,
ինչ առաջ է կատարուել.
թող բերեն իրենց վկաներին եւ
արդարանան,
թող լսեն եւ ասեն ճշմարտութիւնը:
10 Եղէ՛ք ինձ համար վկաներ,
ես էլ ձեզ համար վկայ լինեմ,
— ասում է Տէր Աստուած.—
ծառայ ընտրեցի ձեզ, որ հասկանաք
ու հաւատաք ինձ
եւ գիտակցէք, թէ ո՛վ եմ ես:
Ինձնից առաջ ուրիշ Աստուած չի
եղել,
ինձնից յետոյ եւս չի լինի:
11 Ե՛ս եմ Աստուած,
ինձնից բացի չկայ մէկը, որ
փրկութիւն տայ:
12 Ցայտնեցի եւ փրկեցի.
նախատեցի, ու ձեր մէջ օտար չկար.
դուք ինքներդ կարող էք վկայ լինել
ինձ համար:
13 Ես եմ Տէր Աստուած ի սկզբանէ
եւ միշտ.
չկայ մէկը, որ իմ ձեռքից կարողա-
նայ ազատուել.
ինչ որ ես անեմ, ոչ ոք չի կարող
հակառակն անել»:

ՄԻ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՆԱՊԱՏՈՒՄ

14 Այսպէս է ասում Տէր Աստուած՝
Իսրայէլի սուրբը, որ փրկելու է ձեզ.
«Ձեզ համար Բաբելոն կ'ուղարկեմ,
բոլորին տեղահան կ'անեմ ու
փախստական կը դարձնեմ,
եւ քաղդէացիները նաւերով պաշար-
ման մէջ կ'առնուեն:
15 Ե՛ս եմ Տէր Աստուած՝
ձեր սուրբը, որ ցոյց տուի ձեզ
Իսրայէլի թագաւորին»:
16 Այսպէս է ասում Տէրը, որ ճա-
նապարհ է բացում ծովում
եւ շաւիղներ՝ յորդահոս ջրերի մէջ,
17 Նա, որ կառքեր ու նժոյգներ է
հանում եւ բազմահամար զօրքեր.
բայց նրանք կարող են քնել ու վեր
չկենալ,
մարել ինչպէս հանգած պատրոյգ:
18 «Առաջուայ բաները մի՛ յիշէք,
հինը մտքներդ մի՛ բերէք,
19 քանզի ես նորն եմ անելու, որ
հիմա յայտնուելու է,
եւ դուք պիտի ճանաչէք.
ճամփայ պիտի բացեմ անապատով
եւ անջրդի հողում գետեր պիտի
բխեցնեմ:
20 Ինձ պիտի օրհնեն անապատի
գազանները,
համբարուներն ու ջայլամների ձա-
գերը,
որովհետեւ ես ջուր եմ տալու անա-
պատին
եւ անջրդի երկրին՝ գետեր, խմեց-
նելու համար իմ ընտրեալ ազգին:
21 Եւ իմ ժողովուրդը, որին ստեղ-
ծեցի,
պիտի պատմի իմ սխրանքների
մասին»:

ՏԷՐԸ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ՅԱԿՈԲԻՆ

22 «Հիմա չէ, որ կանչեցի քեզ,
Յակո՛բ,
եւ ոչ էլ չարչարեցի քեզ, Իսրայէ՛լ:
23 Ողջակէզներից ոչխարներ չմա-
տուցեցիր ինձ
եւ ոչ էլ քո զոհերով փառաւորեցիր
ինձ.
քո ընծաներով չծառայեցիր ինձ,
եւ ոչ էլ ես նեղութիւն պատճառեցի
քեզ՝
ծախսել տալով քո կնդրուկները:

24 Ինձ համար արծաթով խունկ չգնեցիր,
եւ ոչ էլ քո զոհերի ճարպին ես ցանկացող եղայ,
բայց քո մեղքերի ու անօրէնութիւնների մէջ քեզ վերակացու եմ լինելու:
25 Ե՛ս եմ, ե՛ս եմ այն նոյնը,
որ ջնջում եմ իմ հանդէպ կատարած քո անօրէնութիւնները
եւ քո մեղքերն այլեւս չեմ յիշելու:
26 Բայց դու յիշի՛ր, որ իրար հետ դատ ենք ունենալու.
նախ դու խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես:
27 Նախ ձեր հայրերը մեղք գործեցին,
եւ ձեր իշխանները օրինազանց եղան իմ հանդէպ:
28 Իշխանները պղծեցին իմ սրբութիւնները,
ուստի Յակոբին կորստեան մատնեցի եւ Իսրայէլը՝ նախատինքի»:

ՏԷՐՆ ՕՐՀՆՈՒՄ Է ՅԱԿՈԲԻ ՍԵՐՆԴԻՆ

44 «Իսկ այժմ լսի՛ր, ո՛վ իմ ծառայ Յակոբ,
եւ դու, Իսրայէ՛լ, ում ընտրել եմ:
2 Այսպէս է ասում Տէր Աստուած,
որ արարեց քեզ,
ստեղծեց քեզ որովայնից,
եւ տակաւին օգնութիւն պիտի գտնես.
Մի՛ վախեցիր, ծառա՛յ իմ Յակոբ,
եւ դու, սիրեցեա՛լ իմ Իսրայէլ, ում ընտրել եմ:
3 Ես ջուր պիտի տամ ծարաւածներին,
որոնք ընթանում են անջրդի տեղերով.
իմ հոգին պիտի դնեմ քո զաւակի վրայ
եւ իմ օրհնանքները՝ քո որդիների վրայ:
4 Նրանք պիտի ծլեն ու ծաղկեն ինչպէս ջրարբի խոտը,
ինչպէս ուռենին՝ հոսող ջրերի մօտ:
5 Մէկը պիտի ասի՝ Աստծունն եմ ես,
մէկ ուրիշը խրախոյս պիտի բարձրացնի յանուն Յակոբի Աստծու,
իսկ միւսը գիր պիտի գրի իր ձեռքով,
թէ՝ ես Աստծունն եմ պատկանում,
եւ յանուն Իսրայէլի քաջալերութեան կոչ պիտի անի»:
6 Այսպէս է ասում Աստուած՝
Իսրայէլի թագաւորը եւ նրա փրկիչ Զօրութիւնների Տէրը.
«Ես եմ առաջինը եւ ես եմ վերջինը,
ինձանից բացի ուրիշ Աստուած չկայ:
7 Ո՞վ է ինձ նման, թող առաջ գայ,
ձայն հանի, պատմի ու ամէն ինչ ներկայացնի ինձ այն ժամանակից սկսած,
երբ ես արարեցի մարդուն,
նաեւ այն, ինչ գալու է.
մինչեւ գալը թող պատմեն ձեզ:
8 Մի՛ զարմացէք եւ մի՛ շփոթուէք.
չէ՞ որ դուք սկզբից լսեցիք,
եւ ես ձեզ ասացի, որ դուք ինքներդ իսկ կարող էք վկայ լինել ինձ համար,
թէ կա՞յ այլ Աստուած, բացի ինձանից»:

ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐ ՍՆՈՏԻ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻՆ

9 Բոլոր նրանք, որ ստեղծում ու կերտում էին սնոտի աստուածներ,
այն ժամանակ իսկ ոչնչութիւն էին:
Նրանք այդ անում էին ըստ իրենց ցանկութեան,
սակայն դրանք չեն օգնելու նրանց,
քանզի ո՛չ տեսնում են եւ ո՛չ էլ ըմբռնում,
եւ դուք էլ կարող էք վկայել այդ մասին:
10 Թող ամաչի նա, ով ստեղծում է ստեղծուածը
եւ անօգուտ կերպով կուռք է ձուլում,
նաեւ բոլոր նրանք, որ հաղորդակից են դառնում նրան:
11 Բայց ամօթահար պիտի լինեն բոլոր նրանք, որ կուռքեր են ստեղծում
եւ կերտում անօգուտ բաներ,
որոնք, ինչից էլ պատրաստուած լինեն,
բոլորովին պիտի չօրանան եւ անտեսուեն մարդկանցից:
Պիտի հաւաքուեն ամէնքը,
դէմառդէմ կանգնեն միասին,
պիտի ամաչեն եւ առհասարակ ամօթահար լինեն:

12 Երկաթագործը† իր համար գործիք կռեց,
ուրագը սրեց եւ տաշեց նրանով,
դուրը գործի դրեց ու յղկեց
եւ իր բազկի ուժով կանգնեցրեց այն:
Իսկ ինքը քաղց է զգալու,
տկարանալու, ջուր իսկ չի խմելու:
13 Հիւսնը փայտ ընտրեց,
չափեց այն ու գծեց,
պատկերի ձեւ ու նմանութիւն տուեց,
դուրով յղկեց այն, սոսնձապատեց,
նրան տուեց տղամարդու կերպարանք,
մարդու դէմքի ձեւ ու գեղեցկութիւն
եւ կանգնեցրեց իր տան մէջ:
14 Այն փայտը, որ կտրեց,
— սոճին կամ սօսին,
կաղնին կամ թեղօշը,
որոնք տնկեց Տէրը,
եւ անձրեւը աճեցրեց,
15 որպէսզի մարդու համար վառելիք լինեն,
— ահա դրանից վերցրեց,
վառեց ու տաքացաւ,
մի կէսից հաց եփեց,
իսկ մի կէսն էլ արձան շինեց եւ երկրպագեց նրան.
իր իսկ շինած արձանի առաջն ընկած՝ երկրպագեց նրան:
16 Նրա կէսն այրեց խարոյկի վրայ,
որի կրակով հաց եփեց եւ միս խորովեց,
կերաւ, կշտացաւ ու տաքացաւ՝
ասելով, թէ՝ «Երանի՜ ինձ, որ տաքացայ եւ կրակը տեսայ»:
17 Իսկ կէսից քանդակուած աստուած շինեց
եւ, խոնարհուելով, երկրպագեց նրան,
աղօթեց նրա առաջ եւ ասաց՝
«Փրկի՛ր ինձ, քանզի դու իմ աստուածն ես»:
18 Նրանք անկարող եղան մտածել եւ իմանալ,
որովհետեւ նրանց աչքերը՝ տեսնելու համար
եւ նրանց սրտերը՝ հասկանալու համար բթացան:
19 Նրանք չմտածեցին,
չգիտակցեցին ու չհասկացան,
որ փայտի կէսը կրակով այրեցին
եւ նրա կրակի վրայ հաց եփեցին,
միս խորովեցին ու կերան,
իսկ նրա կէսից կուռք պատրաստեցին
եւ երկրպագում են նրան:
20 Իմացի՛ր, նրանց սիրտը մոխիր է,
եւ նրանք մոլորուած են,
նրանցից ոչ ոք չի կարող փրկել նրանց հոգիները.
դուք տեսնում էք, բայց չէք ասում, թէ՝ «Խաբէութիւն է մեր ձեռքերի մէջ»:

ՏԷՐԸ ՓՐԿՈՒՄ Է ՅԱԿՈԲԻՆ

21 «Յիշի՛ր դա, Յակո՛բ,
նաեւ դու, Իսրայէ՛լ,
քանզի իմ ծառան ես դու.
քեզ ստեղծեցի ինձ ծառայելու համար,
եւ դու, Իսրայէ՛լ, մի՛ մոռացիր ինձ:
22 Ահաւասիկ ջնջեցի քո անօրէնութիւնները ինչպէս ամպ
եւ քո մեղքերը՝ ինչպէս մէգ.
ինձ մօ՛տ դարձիր, որպէսզի փրկեմ քեզ»:
23 Ուրախացի՛ր, երկի՜նք,
քանզի Աստուած ողորմեց Իսրայէլին,
փո՛ղ փչեցէք, երկրի հիմքե՛ր,
ուրախութեան կանչե՛ր արձակեցէք,
լեռնե՛ր, բլուրնե՛ր եւ նրանց վրայ գտնուող բոլո՛ր ծառեր,
որովհետեւ Աստուած փրկեց Յակոբին,
եւ Իսրայէլը պիտի փառաւորուի:
24 Տէրը, որ փրկեց քեզ,
ստեղծեց քեզ որովայնից,
այսպէս է ասում. «Ես եմ Տէրը,
որ անում, կատարում եմ ամէն ինչ,
միայնակ տարածեցի երկինքը եւ հաստատեցի երկիրը:
25 Էլ ո՞վ է, որ ի չիք դարձրեց վհուկների կախարդութիւնները
եւ դիւթութիւնները՝ սրտերից,
ո՞վ է, որ իմաստուններին յետ է դարձնում
եւ նրանց խորհուրդները յիմարու-

†Գրաբար բնագրում՝ հիւսնը

թեան վերածում,
26 իր ծառաների խօսքերն է հաստատում
եւ արդարացնում իր պատգամաբերների խորհուրդները:
Ե՛ս եմ, որ ասում եմ Երուսաղէմին, թէ՝ բնակելի՛ դարձիր,
եւ Հրէաստանի քաղաքներին, թէ՝ վերստի՛ն կառուցուեցէք.
եւ ես պիտի վերականգնեմ նրանց աւերակները:
27 Ես ասում եմ անդունդին, թէ՝ աւերուի՛ր.
եւ ես պիտի ցամաքեցնեմ նրա գետերը:
28 Ես ասում եմ Կիւրոսին, թէ՝ իմաստնացի՛ր,
որ կատարես իմ բոլոր ցանկութիւնները:
Ես ասում եմ Երուսաղէմին, թէ՝ կառուցուի՛ր,
եւ ես պիտի հաստատեմ իմ սուրբ տաճարը»:

ՏԷՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԿԻՒՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

45 Այսպէս է ասում Տէր Աստուած
իր օծեալ Կիւրոսին.
«Ես բռնեցի քո աջ ձեռքը,
որպէսզի ազգերին հնազանդեցնեմ քեզ,
խորտակեմ թագաւորների զօրութիւնը,
բացեմ քո առաջ դռները,
եւ քաղաքները չփակուեն:
2 Ես կ'ընթանամ քո առջեւից,
կը հարթեցնեմ լեռները,
կը խորտակեմ պղնձէ դռները
եւ կը փշրեմ երկաթէ նիգերը:
3 Ես քեզ կը տամ խաւարի մէջ պահուող գանձերը
եւ քեզ համար կը բացեմ աներեւոյթ հարստութիւնները,
որպէսզի իմանաս, որ ես եմ Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը,
որը կանչեց քո անունը:
4 Իմ Յակոբի համար եւ իմ ընտրեալ Իսրայէլի համար
ես քո անունով կանչեցի քեզ եւ ընդունեցի,
բայց դու ինձ չճանաչեցիր,
5 որ ես եմ Տէր Աստուածը,
եւ չկայ մէկ ուրիշը:
6 Թող իմանան արեւելքից ու արեւմուտքից,
որ ինձնից բացի մէկ ուրիշը չկայ:
7 Ես եմ, որ հաստատեցի լոյսը եւ ստեղծեցի խաւարը,
ես եմ, որ խաղաղութիւն եմ անում եւ հաստատում չարը,
ես եմ Տէր Աստուածը, որ կատարում եմ այս ամէնը:
8 Երկինքը թող ուրախ լինի վերուստ,
եւ ամպերը արդարութիւն ցօղեն,
թող երկիրը ողորմութիւն բխեցնի,
լիովին արդարութիւն թող բխեցնի:
Ես եմ Տէրը, որ հաստատեցի քեզ որպէս մի լաւ բան,
ստեղծեցի քեզ իբրեւ բրուտի կաւ»:

ԿԱՒԻԼ ԵՒ ԲՐՈՒՏԸ

9 Մի՞թէ նա, որ հողն է հերկում, ամէն օր հերկ կ'անի.
մի՞թէ կաւը բրուտին կարող է ասել, թէ՝ ի՞նչ ես անում,
ինչո՞ւ չես աշխատում, ձեռքեր չունե՞ս.
մի՞թէ ստեղծուածն իր ստեղծողին կարող է ասել, թէ՝
ինչո՞ւ այսպէս ստեղծեցիր ինձ:
10 Վա՜յ նրան, որ իր հօրը կ'ասի, թէ՝ ինչո՞ւ ծնեցիր ինձ,
եւ մօրը, թէ՝ ինչո՞ւ ծննդաբերեցիր ինձ:
11 Այսպէս է ասում Տէր Աստուած՝ Իսրայէլի սուրբը,
որ արարեց նրանց, ովքեր յետոյ են գալու.
«Դուք ինձ հարցնում էք իմ որդիների ու դուստրերի մասին
եւ իմ ձեռքի գործերի համար պատուէր էք տալիս ինձ:
12 Ես ստեղծեցի երկիրը, եւ մարդուն՝ նրա վրայ.
ես իմ ձեռքով հաստատեցի երկինքը,
ես հրաման տուեցի բոլոր աստղերին:
13 Ես արդարութեամբ նրան թագաւոր հաստատեցի,
եւ նրա բոլոր ճանապարհներն ուղիղ

են.
նա կը կառուցի իմ քաղաքը եւ իմ գերուած ժողովրդին յետ կը բերի՝
առանց կաշառքի եւ առանց ընծաների»,
— ասում է Զօրութիւնների Տէրը:
14 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
«Եգիպտացիների երկրի վաստակը,
եթովպացիների առեւտուրը
եւ սաբայեցի մեծամեծ այրերը քո ձեռքը պիտի անցնեն եւ քեզ ծառայեն,
ձեռնակապերով շղթայուած՝ քո յետեւից պիտի շրջեն
եւ քեզ պիտի ներկայանան,
քեզ պիտի երկրպագեն
եւ ուխտ պիտի դնեն քեզ հետ,
որովհետեւ Աստուած քո մէջ է,
ու պիտի ասեն, թէ՝ ուրիշ Աստուած չկայ, բացի քեզնից»:
15 Դու ես Աստուածը,
իսկ մենք չգիտէինք, ո՛վ Աստուած՝ փրկիչդ Իսրայէլի:
16 Պիտի ամաչեն, ամօթահար պիտի լինեն նրա բոլոր հակառակորդները,
ամօթով պիտի հեռանան:
17 Նորոգուեցէ՛ք իմ առաջ, ո՛վ կղզիներ,
քանզի Իսրայէլը փրկուեց յաւիտենական փրկութեամբ:
Դուք չէք ամաչելու,
այլեւս ամօթահար չէք լինելու մինչեւ յաւիտենութիւն:
18 Արդարեւ, այսպէս է ասում Տէրը, որ ստեղծեց երկինքը,
Աստուած, որ արարեց ու հաստատեց երկիրը,
նա, որ կարգաւորեց այն.
զուր տեղը չստեղծեց այն,
այլ ստեղծեց բնակութեան համար.
«Ես եմ Տէրը, ուրիշը չկայ:
19 Ո՛չ գաղտնի խօսեցի եւ ո՛չ էլ երկրի մութ տեղում.
Յակոբի սերնդին չասացի, թէ՝ սնոտի բաներ էք փնտռում:
Ես եմ, ես եմ Տէրը, որ խօսում եմ արդարութիւնը եւ յայտնում ճշմարտութիւնը»:

ԱՇԽԱՐՀԻ ՏԷՐԸ ԵՒ ԲԱԲԵԼՈՆԻ ԿՈՒՌՔԵՐԸ

20 «Հաւաքուեցէ՛ք եւ եկէք միասին խորհեցէ՛ք,
ո՛վ դուք հեթանոսներից փրկուածներ:
Ովքեր վերցրել, բերում էին փայտէ կուռքը եւ աղօթում էին աստուածներին,
չգիտակցեցին, որ նրանք չէին կարող փրկել իրենց:
21 Երբ նրանց յայտնեն, թող մօտ գան,
որպէսզի միասին իմանան,
թէ այդ ամենի մասին սկզբից ո՛վ լուր տուեց.
եւ այժմ էլ ասում է ձեզ.
"Ես եմ Աստուածը, ինձնից բացի ուրիշը չկայ,
արդար ու փրկող Աստուածը,
ինձնից բացի մէկ ուրիշը չկայ":
22 Դարձէ՛ք ինձ մօտ, եւ կը փրկուէք,
դուք, որ եկել էք երկրի չորս ծագերից:
Ես եմ Աստուածը, ուրիշը չկայ:
23 Անձամբս եմ երդւում,
որ ինչ էլ դուրս գայ իմ բերանից՝ արդարութիւն է,
եւ իմ խօսքերը չեն եղծուելու:
Ամէն ծունկ ինձ է խոնարհուելու,
ամէն լեզու Աստծուն է խոստովանելու
24 եւ ասելու, թէ արդարութիւնն ու փառքը նրա միջոցով են գալու:
Եւ բոլոր նրանք, ովքեր իրենց անձը բաժանելու են Աստծուց,
ամօթով են մնալու:
25 Աստուծով պիտի արդարանայ եւ փառաւորուի իսրայէլացիների ամէն մի սերունդ»:

ՏԷՐԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ

46 «Ընկաւ Բէլը, խորտակուեց Դագոնը.
նրանց կուռքերը յայտնուեցին կենդանիների եւ անասունների վրայ:
Իբրեւ բեռ դրանք կապեցիք ու բարձեցիք տանջուած ու քաղցած կենդանիների վրայ.
2 անզօր լինելով փրկուելու պա-

տերազմից՝
գրաստների հետ միասին գերու-
թեան քշուեցին լքուած ու խեղճ
կուռքերը:
3 Լսեցէ՛ք ինձ, ո՛վ դու Յակոբի տուն
եւ դուք, Իսրայէլի բոլոր կենդանի
մնացածներդ,
դուք, որ որովայնից իսկ ընտրեալ էք
եւ մանկութիւնից մինչեւ ծերու-
թիւն՝ խրատուած,
4 քանզի ես նոյնն եմ:
Դուք մինչեւ խոր ծերութիւն էլ որ
հասնէք, ես նոյնն եմ.
ես համբերութեամբ պիտի տանեմ
ձեզ,
ե՛ս ստեղծեցի եւ ե՛ս էլ պիտի
հանդուրժեմ,
ե՛ս պիտի ընդունեմ ու փրկեմ ձեզ:
5 Ո՞ւմ կը նմանեցնէիք ինձ,
հապա մտածեցէ՛ք, ո՛վ դուք
մոլորեալներ,
6 որ ոսկու մեծ բաժին էք գցում
քսակից,
արծաթ էք կշռում կշեռքով
եւ ոսկերիչներ վարձում,
որպէսզի ձեռակերտ կուռքեր
պատրաստեն,
եւ խոնարհուելով երկրպագում էք
դրանց:
7 Վերցնում, ուսերիդ վրայ դրած՝
բերում էք,
եւ երբ գետնին էք դնում,
այդպէս մնում են տեղում ու չեն
շարժւում.
եթէ որեւէ մէկը կանչի դրանց,
չեն լսի եւ չար փորձանքներից չեն
փրկի նրան:
8 Յիշեցէ՛ք այս եւ հոգո՛ց հանեցէք,
զղջացէ՛ք դուք, մոլորեալնե՛րդ,
սրտա՛նց դարձի եկէք,
9 մտաբերեցէ՛ք առաջին գործերը՝
վաղուց ի վեր կատարուածները,
քանզի ե՛ս եմ Աստուածը,
եւ ինձնից բացի մէկ ուրիշը չկայ,
10 որ առաջուց պատմի վերջում
կատարուելիք բաների մասին,
երբ դեռ չեն եղել,
բայց անպայման կատարուելու են:
Ես ասացի, որ իմ բոլոր խոր-
հուրդներն իրականանալու են,
եւ ամէն բան, ինչ որ ցանկանամ,
կատարելու եմ:
11 Ես արեւելքից կանչեցի թռչուն-
ներին,
իսկ հեռաւոր երկրից՝ նրան, ում
մասին մտածեցի.
խօսեցի ու բերի,
հաստատեցի եւ կատարեցի,
բերի նրան եւ դրի յաջող ճա-
նապարհի վրայ:
12 Լսեցէ՛ք ինձ դուք, սրտով մոլո-
րուածնե՛րդ
եւ արդարութիւնից հեռացածնե՛րդ.
13 մօտեցրի իմ արդարութիւնը,
եւ այն այլեւս չի հեռանայ,
իմ ճշմարտութիւնն ու փրկութիւնը
չեմ ուշացնի.
ես Սիոնում տուեցի Իսրայէլի
փրկութիւնը՝
յանուն իմ փառքի»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

47 «Իջի՛ր ու նստի՛ր հողին,
ո՛վ Բաբելոնի կոյս օրիորդ,
նստի՛ր գետնին,
որովհետեւ աթոռ չկայ,
խաւարի մէ՛ջ մտիր, քաղդէացիների՛
դուստր,
դու, որ այլեւս չես շարունակելու
կոչուել քնքուշ ու փափկասուն:
2 Երկա՛նք առ, ալի՛ւր աղա,
դէ՛ն նետիր քօղդ, քաշի՛ր մազերդ.
3 մերկացրո՛ւ սրունքներդ եւ անցի՛ր
գետի միջով,
ու թող յայտնուի քո ամօթը,
թող երեւայ քո նախատինքը,
քանզի քեզնից վերցնելու եմ քո
իրաւունքները:
Նա, որ փրկեց քեզ,
այլեւս չի մատնի քեզ մարդկանց.
4 Նրա անունը Զօրութիւնների Տէր
է, Իսրայէլի սուրբ:
5 Նստի՛ր թախծոտ ու զղջացած,
մտի՛ր խաւարի մէջ, ո՛վ քաղդէա-
ցիների դուստր,
էլ չես կոչուի թագաւորութիւնների
զօրութիւն:
6 Ես բարկացել էի իմ ժողովրդի
վրայ,
որովհետեւ պղծեցին իմ ժառան-
գութիւնը:

Ես նրանց մատնեցի քո ձեռքը,
իսկ դու ողորմածութիւն չարեցիր
նրանց նկատմամբ:
7 Մերերի լուծը սաստիկ ծանրացրիր
եւ ասացիր.
"Ես յաւիտեան իշխան կը մնամ":
Երբեք չմտածեցիր ու չյիշեցիր վախ-
ճանի մասին:
8 Արդ, լսի՛ր այս, ո՛վ դու փափ-
կասուն,
որ նստել էիր ինքնագոհ եւ սրտիդ
մէջ ասում էիր, թէ՝ "Ե՛ս եմ, եւ ինձ
հաւասար ոչ ոք չկայ,
որբեւայրութիւն չեմ քաշելու
եւ որբութիւն չեմ ճանաչելու":
9 Սակայն դրանք երկուսն էլ՝
որբեւայրութիւնն ու
անզաւակութիւնը,
մէկ օրուայ մէջ յանկարծակի քեզ
վրայ են հասնելու,
անսպասելի քեզ վրայ են գալու քո
դիւթութիւնների,
քո սաստկացող կախարդութիւնների
պատճառով,
10 քո ինքնավստահութեան ու
չարութեան պատճառով,
որովհետեւ ասում էիր, թէ՝ "Ե՛ս եմ,
եւ ինձ հաւասար ոչ ոք չկայ":
Դո՛ւ, որ այդպէս ես մտածում,
իմացի՛ր, որ քո պոռնկութիւնը ամօ-
թանք պիտի լինի քեզ համար,
քանզի քո սրտի մէջ ասացիր.
"Ե՛ս եմ, եւ ինձ հաւասար ոչ ոք
չկայ":
11 Քեզ այնպիսի կորուստ է վրայ
հասնելու,
որ չես իմանալու,
այնպիսի խորխորատ,
որ ընկնելու ես նրա մէջ.
քեզ վրայ մի թշուառութիւն է
գալու,
որ չես կարողանալու յետ մղել,
քեզ վրայ յանկարծակի աւերում է
գալու,
որ դու չես գիտակցելու:
12 Դէ հիմա մնա՛ քո դիւթու-
թիւնների
ու քո բազում կախարդութիւնների
մէջ,
որոնք քո մանկութիւնից սկսած
սովորեցիր.
գուցէ կարողանաս օգո՞ւտ քաղել,
գուցէ կարողանաս ո՞ւժ առնել:
13 Զարչարուեցիր քո խորհուրդ-
ներով:
Թող վեր կենան ու քեզ փրկեն
աստղագուշակները,
որոնք դիտում են երկնքի աստղերը,
թող պատմեն քեզ,
թէ ի՞նչ է գալու քո դէմին:
14 Ահաւասիկ նրանք բոլորը, ինչպէս
խուռ,
պիտի այրուեն կրակի մէջ
եւ իրենց հոգիները չպիտի կարո-
ղանան փրկել բոցից.
Նստած ես կրակի կայծերի վրայ.
դրանք քեզ համար օգնութիւն
պիտի լինեն:
15 Քո վաստակն այն վաճառա-
կանները եղան,
որոնց հետ առեւտուր արեցիր քո
մանկութիւնից.
Նրանք բոլորն էլ իրար յետեւից
մոլորուեցին,
եւ դու փրկութիւն չունես»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՁԻ ԼՍՈՒՄ ՏԻՐՈՋԸ

48 «Լսեցէ՛ք այս, ո՛վ Յակոբի տուն,
Իսրայէլի անունով կոչուածներդ եւ
Յուդայի սերնդից ծնուածներդ,
որ երդւում էք Իսրայէլի Աստծու
անունով եւ յիշում նրան,
բայց ո՛չ ճշմարտութեամբ, ո՛չ
արդարութեամբ:
2 Դուք ձեզ խրախուսում էք սուրբ
քաղաքի անունով
եւ ձեզ հաստատուն էք համարում
Իսրայէլի Աստծու շնորհիւ,
որի անունը Զօրութիւնների Տէր է:
3 Մինչեւ հիմա պատմում էի
առաջին եղելութիւնների մասին.
դրանք իմ բերանից ելան եւ լսելի
դարձան.
ես յանկարծակի կատարեցի,
եւ դրանք վրայ հասան:
4 Գիտէի, որ դու խիստ ես,
քո պարանոցը երկաթէ ջղերից է,
ու քո ճակատը՝ պղնձից:
5 Քեզ պատմուեց մինչեւ այժմ
կատարուածը,
դեռ չեղած՝ դրանց մասին լուր տուի
քեզ,

որպէսզի երբեք չասես, թէ՝ “Դրանք
իմ կուռքերը կատարեցին”,
չասես, թէ՝ “Քանդակուածները եւ
ձուլածոյ կուռքերը պատմեցին ինձ”:
6 Լսեցիք ամէն ինչ եւ մտքներդ
չպահեցիք,
սակայն քեզ լուր պիտի տամ այն
նորի մասին,
որ այսուհետեւ պիտի լինի:
7 Բայց չես ասում, որ՝ հիմա պիտի
լինի եւ ոչ թէ վաղուց է եղել,
հին ժամանակներում, ու դու չես
լսել այդ մասին:
8 Մի՛ ասա, թէ՝ “Այո՛, գիտեմ դա”,
որովհետեւ ո՛չ գիտես եւ ո՛չ էլ
իմացել ես,
եւ սկզբից իսկ քո ականջները
չբացեցիր.
քանզի գիտեմ, որ չափազանց
արհամարհող ես
եւ դեռ որովայնից անօրէն ես
կոչւում:
9 Իմ անուան համար ես քեզ պէտք
է ցոյց տամ իմ բարկութիւնը եւ իմ
փառքը,
որ բերել եմ քեզ վրայ,
բայց քեզ չեմ ոչնչացնելու:
10 Ահաւասիկ վաճառեցի քեզ,
բայց ոչ յանուն արծաթի,
եւ փրկեցի քեզ աղքատութեան
հնոցից:
11 Իմ անուան համար արեցի այդ,
որպէսզի իմ անունը չհայհոյուի.
ես իմ փառքը ուրիշին չեմ տայ»:

ՏԷՐԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ Է ԵԼՆԵԼ ԲԱԲԵԼՈՆԻՑ

12 «Լսի՛ր ինձ, Յակո՛բ,
եւ դու, Իսրայէ՛լ, ում ես կանչում եմ.
ե՛ս եմ առաջինը,
ե՛ս եմ եւ յաւիտենականը:
13 Իմ ձե՛ռքը դրեց երկրի հիմքերը,
եւ իմ ա՛ջը հաստատեց երկինքը.
կը կանչեմ նրանց բոլորին, եւ
նրանք միասին կը գան:
14 Կը հաւաքուեն ամէնքը եւ կը
լսեն,
թէ սա ո՞վ պատմեց նրանց:
Յանուն քո սիրոյ կատարեցի կամքդ
Բաբելոնի նկատմամբ՝
վերացնելու համար քաղդէացիների
սերունդը:
15 Ե՛ս կանչեցի եւ ե՛ս խօսեցի,
ե՛ս բերի նրան եւ յաջողեցրի նրա
ճանապարհը:
16 Մօտեցէ՛ք ինձ եւ լսեցէ՛ք այս.
սկզբից իսկ ես ո՛չ գաղտնի խօսեցի
եւ ո՛չ էլ ինչ-որ խաւար տեղում.
երբ դրանք կատարւում էին, ես
այնտեղ էի»:
Եւ այժմ Տէրն ինձ ուղարկեց,
Տէրը եւ նրա Հոգին:
17 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի
սուրբը, որ փրկեց քեզ.
«Ես եմ քո Աստուածը,
ե՛ս քեզ ճանապարհ ցոյց տուի, որով
դու գնացիր:
18 Եւ եթէ դու հետեւէիր իմ պա-
տուիրաններին,
ապա քո խաղաղութիւնը գետի
նման կը լինէր,
եւ քո արդարութիւնը՝ ծովի ալիք-
ների նման:
19 Քո սերունդը աւազի չափ կը
լինէր,
եւ քո որովայնից ծնուածները՝
երկրի հողի չափ:
Եւ սակայն դու այժմ չես ոչնչա-
նալու,
եւ քո անունը չի կորչելու իմ
առաջ»:
20 Դո՛ւրս եկէք Բաբելոնից,
փախչո՛ք քաղդէացիներից,
ուրա՛խ ձայնով պատմեցէք,
թող լսելի լինի այն,
մինչեւ աշխարհի ծագերը յայտ-
նեցէ՛ք ու ասացէ՛ք,
թէ՝ «Տէրը փրկեց իր ծառայ
Յակոբին»:
21 Եւ եթէ անապատում ծարաւեն
նրանք,
նրանց համար նա քարից ջուր պիտի
հանի:
Քարը պիտի պատռուի,
ջրերը պիտի բխեն,
եւ իմ ժողովուրդը պիտի խմի:
«Ամբարիշտներն ուրախութիւն չեն
տեսնելու»,— ասում է Տէրը:

ԻՍՐԱՅԷԼԸ՝ ԱԶԳԵՐԻ ԼՈՅՍ

49 «Լսեցէ՛ք ինձ, կղզիների՛ բնա-
կիչներ,

ակա՛նջ դրէք, հեթանոսնե՛ր.
շատ ժամանակներ անց պիտի
հաստատուի դա»,— ասում է Տէրը:
Ինձ կանչեց, երբ ես դեռ արգանդում
էի,
իմ անունը տուեց, երբ ես դեռ իմ
մօր որովայնում էի:
2 Իմ բերանը հաստատեց ինչպէս
սուր սուսեր
եւ ինձ թաքցրեց իր ձեռքի հովանու
տակ,
ինձ դարձրեց ինչպէս մի ընտիր նետ
եւ թաքցրեց իր կապարճում:
3 Նա ինձ ասաց.
«Դու իմ ծառան ես, Իսրայէ՛լ,
քեզնով պիտի ես փառաւորուեմ»:
4 Իսկ ես ասացի.
«Ուրեմն զուր տեղը չարչարուեցի,
իմ ուժն անմիտ բաների վրայ
ծախսեցի,
բայց իմ իրաւունքը Տիրոջից է,
եւ իմ վաստակն իմ Աստծու առաջ
է:
5 Արդ, Տէրը, որն ինձ որովայնից իր
համար ծառայ ստեղծեց,
ասաց, որ Յակոբին եւ Իսրայէլին իր
շուրջը հաւաքեմ:
Պիտի հաւաքուեմ ու փառաւորուեմ
Տիրոջ առաջ,
եւ իմ Աստուածը ինձ համար
զօրութիւն է լինելու:
6 Ապա ասաց ինձ.
«Մեծ բան է քեզ համար այն, որ
քեզ իմ ծառան եմ կոչում,
որպէսզի հաստատես Յակոբի ազգը
եւ Իսրայէլի ցրուածներին վերա-
դարձնես:
Ահաւասիկ ազգի համար քեզ իբրեւ
ուխտ հաստատեցի
եւ հեթանոսների համար՝ իբրեւ լոյս,
որպէսզի փրկութիւն լինես մինչեւ
աշխարհի չորս ծագերը»:
7 Այսպէս է ասում Տէրը՝
Իսրայէլի Աստուածը, որ փրկեց քեզ.
«Սրբացրէ՛ք նրան, ով անարգում է
իր անձը,
ով արհամարհուած է ազգերի
կողմից եւ իշխանների ծառաներից,
թագաւորները պիտի տեսնեն նրան
եւ ոտքի ելնեն,
իշխանները պիտի երկրպագեն նրան
յանուն Տիրոջ, որը հաւատարիմ է,
եւ յանուն Իսրայէլի սրբի, որն
ընտրեց քեզ»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵԾ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ

8 Այսպէս է ասում Տէրն Իսրայէլին.
«Պատեհ ժամանակ քեզ լսեցի
եւ փրկութեան օրը օգնեցի.
ես քեզ ստեղծեցի եւ ուխտի նպա-
տակով հեթանոսներին տուեցի քեզ՝
երկիրը վերականգնելու եւ աւերակ
ժառանգութիւնները ժառանգներին
վերադարձնելու համար,
9 շղթայուածներին ասելու, թէ՝
ելէ՛ք,
իսկ խաւարի մէջ գտնուողներին,
թէ՝ յայտնուեցէ՛ք:
Նրանք պիտի արածեն բոլոր
ճանապարհներին,
նրանց արօտը պիտի լինի բոլոր
շաւիղների վրայ:
10 Նրանք ո՛չ քաղց են զգալու, ո՛չ
ծարաւելու,
ո՛չ էլ արեւից խորշակահար են
լինելու,
եւ նա, որ ողորմելու է,
պիտի մխիթարի նրանց,
աղբիւրների ակունքների մօտ պիտի
տանի նրանց:
11 Իմ բոլոր լեռները նրանց համար
ճանապարհ պիտի դարձնեմ
եւ բոլոր շաւիղներս արօտների
վերածեմ:
12 Ահա ոմանք պիտի գան հեռաս-
տանից,
ոմանք՝ հիւսիսից եւ ծովից,
եւ ոմանք՝ Պարսից[†] երկրից»:
13 Ուրախացի՛ր, երկի՛նք,
եւ ցնծա՛, երկի՛ր,
թող լեռները ցնծութիւն կանչեն,
եւ բլուրները՝ արդարութիւն,
քանզի Աստուած ողորմեց իր
ժողովրդին,
մխիթարեց իր ժողովրդի տառա-
պեալներին:
14 Բայց Սիոնն ասաց.
«Տէրն ինձ թողեց, Աստուած ինձ
մոռացաւ»:
15 «Մի՞թէ կինը կը մոռանայ իր

[†]Եբրայերէնում՝ Սինիմ երկրից:

մանկանը կամ չի գթայ իր որովայնի
ծնունդներին,
եւ եթէ կինը մոռանալու էլ լինի այդ,
ես, սակայն, քեզ չեմ մոռանայ», — ասում է Տէրը: —
16 «Ահա իմ ձեռքերի ափերի մէջ
գծագրեցի քո պարիսպը,
եւ ամէն ժամ դու իմ առաջ ես:
17 Դու արագօրէն պիտի վերա-
շինուես նրանց ձեռքով,
որոնք քանդեցին քեզ:
Քեզ աւերողները քո միջից պիտի
վտարուեն:
18 Բարձրացրո՛ւ քո աչքերը,
նայի՛ր շուրջդ եւ տե՛ս բոլորին.
ահա հաւաքուել ու գալիս են դէպի
քեզ:
Կենդանի եմ ես, — ասում է Տէրը:
Նրանց բոլորին պիտի հագնես
ինչպէս պատմուճան,
նրանց քո վրայ պիտի կրես ինչպէս
հարսի զարդ:
19 Արդարեւ, քո աւերակները,
ամայացած ու կործանուած երկիրը
նեղուածք պիտի լինեն իրենց բնակիչ-
ների համար,
եւ քեզ կուլ տուողները քեզնից պիտի
հեռանան:
20 Քո որդիները, որոնց դու կորցրիր,
քո ականջին պիտի ասեն.
"Այս տեղը նեղ է մեզ համար.
ընդարձակի՛ր, որ բնակուենք":
21 Եւ քո մտքում պիտի ասես.
"Ո՞վ ինձ համար ծնեց սրանց.
չէ՞ որ ես անզաւակ ու այրի էի,
պանդուխտ ու արգելափակուած.
ո՞վ սրանց սնեց ինձ համար,
չէ՞ որ ես միայնակ էի մնացել,
ո՞ւր էին սրանք"»:
22 Այսպէս է ասում Տէր Աստուած.
«Ահա իմ ձեռքը պիտի բարձրացնեմ
ազգերի վրայ
եւ իմ դրօշը կանգնեցնեմ կղզիներում,
ու քո որդիներին, իրենց գիրկն
առած,
եւ քո դուստրերին, իրենց ուսերին
դրած, պիտի բերեն:
23 Թագաւորները քո խնամակալներն
են դառնալու,
իսկ նրանց կանայք՝ քո ծծմայրերը,
երկրի երեսին քեզ են երկրպագելու
եւ լիզելու քո ոտքերի փոշին.
պիտի գիտակցես, որ ես եմ Տէրը,
ու ինձ ապաւինողները չպիտի
ամաչեն:
24 Որեւէ մէկը կարո՞ղ է միթէ խլել
հսկայի կողոպուտը
կամ կարո՞ղ է յանիրաւի գերեվարել
ու ազատուել»:
25 Այսպէս է ասում Տէրը.
«Եթէ որեւէ մէկը հսկային գերեվարի,
կ'առնի նրա աւարը.
նա, ով հսկայի աւարը կը վերցնի,
շատ լաւ էլ կ'ազատուի:
Բայց ես իմ դատաստանն եմ անելու
եւ փրկելու եմ իմ որդիներին:
26 Մեզ նեղողներն իրենց մարմինը
պիտի ուտեն
եւ, ինչպէս նոր գինի, պիտի խմեն
իրենց արիւնն ու հարբեն:
Եւ ամէն մարմին պիտի իմանայ,
թէ ես եմ Տէրը, որ փրկեցի ու օգնեցի
քեզ
եւ զօրաւոր դարձրի Յակոբին»:

ԻՍՐԱՅԵԼԸ ԲԱԺԱՆՈՒԱԾ ՉԷ ԻՐ ՏԻՐՈՋԻՑ

50 Այսպէս է ասում Տէրը.
«Ո՞ւր է ապահարզանի թուղթը, որով
արձակեցի ձեր մօրը,
կամ ո՞ւր է վաճառականների մուր-
հակը, որով վաճառեցի ձեզ:
Դուք ձեր մեղքերով վաճառուեցիք,
եւ ձեր անօրէնութիւնների պատճա-
ռով արձակեցի ձեր մօրը:
2 Եկայ, եւ մարդ չկար.
կանչեցի, բայց ոչ ոք չկար, որ լսէր.
մի՞թէ իմ ձեռքը չի կարող փրկել,
կամ մի՞թէ ես ի զօրու չեմ
ազատելու:
Ահա իմ կշտամբանքով կը
ցամաքեցնեմ ծովը,
կը չորացնեմ գետերը,
եւ նրանց ջրերի պակասութիւնից կը
չորանան նրանց ձկները
ու կը սատկեն ծարաւից:
3 Խաւար կը հագցնեմ երկնքին,
նրա համար քուրձը կ'անեմ հա-
գուստ»:

ՄԱՐԱՆ ԱՊԱՒԻՆՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՕԳՆՈՒԹԵԱՆԸ

4 Տէր Աստուած ինձ խրատող լեզու
տուեց,
որ կարողանամ ճիշտ ժամանակին
խօսք ասել,
ամէն առաւօտ ինձ զգուշացրեց,
սրեց իմ լսելիքը, որ ունկնդիր լինեմ:
5 Տիրոջ խրատը կը բացի իմ
ականջները,
եւ ես խստասիրտ չեմ դառնայ ու
չեմ ընդդիմանայ:
6 Թիկունքս հարուածների տուեցի,
ծնօտներս՝ ապտակի,
եւ երեսս շուռ չտուի նախատինքից
ու թքից:
7 Տէր Աստուած եղաւ ինձ օգնական,
դրա համար էլ ամօթ չզգացի,
այլ իմ երեսը դարձրի ինչպէս կարծր
քար:
Գիտեմ, որ չեմ ամաչելու,
8 քանզի մօտ է նա, ով արդա-
րացնելու է ինձ:
Ո՞վ է իմ ոսոխը, թող գայ եւ
կանգնի մէջտեղը.
ո՞վ է նա, որ դատապարտելու է ինձ,
թող մօտենայ ինձ.
9 քանզի ահաւասիկ Տէրը, Տէրն է
ինձ օգնական,
եւ ո՞վ է, որ չարչարելու է ինձ:
Ահա դուք բոլորդ, ինչպէս ձորձեր,
պիտի հնանաք,
ցեցն ու որդը պիտի ուտեն ձեզ:
10 Ձեր մէջ ո՞վ է, որ վախենում է
Տիրոջից,
լսում է նրա ծառայի ձայնը:
Ովքեր գնում էին դէպի խաւարը,
եւ լոյս չկար նրանց համար,
թող իրենց յոյսը դնեն Տիրոջ
անուան վրայ եւ խրախուսուեն
Աստուծով:
11 Ահա դուք ամէնքդ, որ վառուած
էք հրով,
պիտի պարտուէք բոցից, պիտի
ընթանաք ձեր իսկ կրակի լոյսի միջով
ու պիտի բորբոքուէք բոցով:
Դա իմ պատճառով պիտի հասնի
ձեզ,
եւ դուք տրտմութեան մէջ պիտի
մեռնէք:

ԽՐԱԽՈՅՍ ՏԻՐՈՋԸ ՓՆՏՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

51 «Լսեցէ՛ք ինձ, դուք, որ ար-
դարութեան էք հետամուտ
եւ փնտռում էք Տիրոջը,
նայեցէ՛ք այն հաստատուն վէմին,
որից կերտուել էք,
եւ այն հորի փոսին, որից հանուել
էք:
2 Ձեր հայր Աբրահամի՛ն նայեցէք
եւ Սառայի՛ն, որ ծնեց ձեզ.
քանզի ում ես կանչեցի, նա մէկն էր,
օրհնեցի նրան, սիրեցի նրան եւ
բազմացրի նրան:
3 Արդ, ես մխիթարելու եմ քեզ,
Սիո՛ն,
մխիթարելու եմ քո բոլոր աւերակ-
ները.
քո բոլոր աւերակները դրախտի եմ
վերածելու,
արեւմտեան կողմն էլ՝ Տիրոջ
դրախտի.
ուրախութիւն ու ցնծութիւն են նրա
մէջ տեղ գտնելու,
փառաբանութիւն ու օրհնութեան
ձայն:
4 Լսի՛ր ինձ, լսի՛ր ինձ, ո՛վ ժո-
ղովուրդ,
ակա՛նջ դրէք ինձ, ո՛վ թագաւորներ,
քանզի ինձնից է դուրս գալիս
օրէնքը,
եւ իմ դատաստանը լոյս է հեթա-
նոսների համար:
5 Արագ, արա՛գ պիտի մօտենայ իմ
արդարութիւնը,
եւ իմ փրկութիւնը պիտի ելնի
ինչպէս լոյս.
հեթանոսներն իմ բազկին պիտի
ապաւինեն,
կղզիները պիտի սպասեն ինձ եւ
յոյս դնեն իմ բազկի վրայ:
6 Դէպի երկի՛նք բարձրացրէք ձեր
աչքերը
եւ նայեցէ՛ք դէպի ցած՝ երկրին.
երկինքը պիտի անցնի ինչպէս
ծուխը,
եւ երկիրը պիտի մաշուի ինչպէս
ձորձերը,
նրա բնակիչները եւս նոյն կերպ
պիտի կորչեն,

բայց իմ փրկութիւնը յաւիտենապէս
պիտի մնայ,
եւ իմ արդարութիւնը չի պակասելու:
7 Դուք, որ ճանաչում էք իրաւունքը,
եւ դու, իմ ժողովո՛ւրդ, որ սրտիդ
մէջ իմ օրէնքն ես կրում,
լսեցէ՛ք ինձ.
մի՛ վախեցէք մարդկանց նախա-
տինքից,
եւ նրանց բամբասանքը թող ձեզ
ամօթանք չպատճառի,
8 քանզի ժամանակի ընթացքում
դրանք պիտի մաշուեն ինչպէս ձորձեր
եւ ինչպէս բուրդ, որին ուտում է
ցեցը,
բայց իմ արդարութիւնը պիտի մնայ
յաւիտեան,
եւ իմ փրկութիւնը՝ սերնդից
սերունդ»:

ԶԱՐԹՆԻ՛Ր, ԵՐՈՒՍԱՂԷ՛Մ

9 Զարթնի՛ր, զարթնի՛ր, Երուսաղէ՛մ,
եւ հագի՛ր քո բազկի զօրութիւնը,
զարթնի՛ր, ինչպէս հին օրերում,
ինչպէս վաղեմի ժամանակներում:
Մի՞թէ դու նա չես, որ հատեցիր
ովկիանոսի լայնութիւնը[†],
վանեցիր վիշապին.
10 Դու այն չե՞ս, որ ցամաքեցրեց
ծովը,
անդունդների ջրերի յորդութիւնը
եւ ծովերի խորութիւնները ճանա-
պարհ դարձրեց,
որպէսզի այնտեղով անցնեն
փրկուողներն ու ազատուողները:
11 Տիրոջ շնորհիւ պիտի լինի վե-
րադարձը,
եւ նրանք Սիոն են գալու ցնծու-
թեամբ ու յաւիտենական ուրախու-
թեամբ.
նրանց գլխի վրայ օրհնութիւն
պիտի լինի,
եւ ուրախութիւնը պիտի հասնի
նրանց.
ցաւը, տրտմութիւնն ու հեծութիւնը
պիտի հեռանան:
12 «Ես եմ, ես այն նոյնն եմ, որ
մխիթարեցի ձեզ:
Իմացի՛ր, թէ դու ո՛վ էիր,
որ վախեցար մահկանացու մարդուց
եւ ադամորդուց,
որոնք չորացան ինչպէս խոտ:
13 Դու մոռացար Աստծուն՝ քո
Արարչին,
որ ստեղծեց երկինքը եւ հաստատեց
երկիրը,
ու դու միշտ, ամէն օր վախենում
էիր քեզ նեղողի բարկութիւնից՝
մտածելով, թէ նա կը բնաջնջի քեզ:
Բայց ո՞ւր է քեզ նեղողի
բարկութիւնը:
14 Քո փրկութիւնը նա չի կարող
կասեցնել,
չի կարող ուշացնել,
ոչ էլ կարող է քեզ ոչնչացնելով
սպանել.
եւ քո հացը չի պակասելու:
15 Ես եմ քո Տէր Աստուածը,
որ ալեկոծում եմ ծովը
եւ նրա ալիքներին ստիպում
մռնչալ.
Զօրութիւնների Տէր է իմ անունը:
16 Իմ խօսքերը քո բերանը դրեցի
եւ իմ ձեռքի հովանու տակ առայ
քեզ,
որպէսզի երկինքը կանգնեցնեմ,
երկրի հիմքերը հաստատեմ եւ ասեմ
Սիոնին.
"Դու իմ ժողովուրդն ես"»:
17 Զարթնի՛ր, զարթնի՛ր, ել կանգ-
նի՛ր, Երուսաղէ՛մ,
դու, որ Տիրոջ ձեռքից խմեցիր նրա
բարկութեան բաժակը,
կործանման բաժակը,
ցասման բաժակը,
որ խմեցիր ու դատարկեցիր:
18 Եւ քո բոլոր որդիների մէջ, որոնց
դու ծնեցիր,
մէկը չեղաւ, որ մխիթարէր քեզ.
քո բոլոր որդիների մէջ, որոնց դու
մեծացրիր,
մէկը չեղաւ, որ զօրավիգ դառնար
քեզ:
19 Երկու բան կայ քեզ հակառակ.
եւ ո՞վ է, որ ցաւակից է լինելու քեզ.
կործանում եւ կոտորած, սով եւ սուր
է լինելու,
եւ ո՞վ է, որ մխիթարելու է քեզ:
20 Քո որդիները, տարակուսած, քուն
են մտել բոլոր ճանապարհների

[†]Եբրայերէնում՝ Ռահաբը:

խաչմերուկներում:
Նրանք կարծես կիսեփ ճակնդեղ
լինեն:
Նրանց մէջ Տիրոջ բարկութիւնն է
լցուած,
նրանք խոտորուած են Տէր
Աստծուց:
21 Դրա համար էլ լսի՛ր, ո՛վ տա-
ռապեալդ,
որ հարբած ես, բայց ոչ գինուց:
22 Այսպէս է ասում Տէր Աստուած,
որ դատում է իր ժողովրդին.
«Ահա քո ձեռքից հեռացրի կործան-
ման բաժակը,
իմ բարկութեան բաժակը,
եւ դու այլեւս չես խմելու այն:
23 Այն տալիս եմ քեզ վնասողների
ձեռքը,
նրանց ձեռքը, ովքեր տառապանքի
դատապարտեցին քեզ,
ովքեր քեզ ասում էին.
"Խոնարհուի՛ր, որ անցնենք":
Եւ քո մէջքը գետնին հաւասար
դարձրին քո վրայով անցնողների
համար»:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՈՒՐԱԽ ԼՈՒՐԸ

52 Զարթնի՛ր, զարթնի՛ր, Սիո՛ն,
հագի՛ր քո զօրութիւնը, Սիո՛ն.
դու էլ քո փա՛ռքը հագիր,
ո՛վ սուրբ քաղաքդ Երուսաղէմ,
որովհետեւ պիղծերն ու անթլփատ-
ներն այլեւս չեն անցնելու քո միջով:
2 Թօթափի՛ր քո փոշին, ոտքի՛ ել ու
նստի՛ր, ո՛վ Երուսաղէմ,
քանդի՛ր քո պարանոցի կապը,
ո՛վ դու Սիոնի գերի դուստր:
3 Արդարեւ, այսպէս է ասում Տէրը.
«Դուք ձրի վաճառուեցիք եւ արծաթով
չէք փրկուելու»: 4 Այսպէս է ասում
Տէրը. «Իմ ժողովուրդը նախ Եգիպտա-
ցիների երկիրն իջաւ, որպէսզի իբրեւ
նժդեհ ապրի այնտեղ, ապա բռնու-
թեամբ Ասորեստան քշուեց: 5 Բայց
այժմ ինչո՞ւ էք այստեղ»: Այսպէս է
ասում Տէրը. «Իմ ժողովուրդը զուր
տեղը քշուեց. նրանք ապշահար էին
մնացել եւ լաց էին լինում»: Այսպէս է
ասում Տէրը. «Ձեր պատճառով իմ
անունը մշտապէս հայհոյւում է
հեթանոսների մէջ: 6 Դրա համար իմ
ժողովուրդն այդ օրը պիտի ճանաչի իմ
անունը, գիտենայ, որ ես նոյնն եմ, որի
մասին խօսում էին, եւ ահա եկել հասել
եմ»:
7 Լեռների վրայ ի՜նչ գեղեցիկ են
ոտքերը նրա,
ով խաղաղութեան լուրն է աւետում,
ով բարութեան աւետիսն է բերում
եւ քո փրկութեան մասին յայտնում՝
ասելով Սիոնին, թէ՝ «Քեզ վրայ թա-
գաւորելու է Աստուած»:
8 Քո պահապանների ձայնն է
հնչելու,
բոլորն առհասարակ ցնծալով ձայն
են տալու,
որովհետեւ իրենց աչքերով են
տեսնելու այն ժամանակը,
երբ Տէրը ողորմելու է Սիոնին:
9 Լեռները Երուսաղէմի աւերակների
հետ միասին ցնծութեան կոչ պիտի
արձակեն,
քանզի Տէրը ողորմեց նրանց եւ
փրկեց Երուսաղէմը:
10 Տէրն իր սուրբ բազուկը պիտի
ցոյց տայ ի տես բոլոր ազգերի,
եւ երկրի բոլոր կողմերը պիտի
տեսնեն մեր Աստծու փրկութիւնը:
11 Հեռացէ՛ք, հեռացէ՛ք,
ելէ՛ք այդտեղից եւ պիղծերին մի՛
մօտեցէք.
ելէ՛ք այդ երկրի միջից եւ հեռացէ՛ք,
դուք, որ վերցրել բերում էք Տիրոջ
սպասքը:
12 Ո՛չ խռովութեամբ պիտի ելնէք
եւ ո՛չ էլ փախչելով գնաք,
քանզի ձեր առջեւից Տէրն ինքն է
ընթանալու,
եւ ձեզ հաւաքելու է նա, որ
Աստուածն է Իսրայէլի:

ՏԻՐՈՋ ԾԱՌԱՆ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ

13 Ահաւասիկ խելահաս պիտի
դառնայ իմ ծառան,
պիտի յառնի, բարձրանայ ու
մեծապէս փառաւորուի:
14 Ինչպէս որ շատերը քեզ վրայ
պիտի զարմանան,
երբ անչքանան մարդկային քո
տեսքը եւ քո փառքը, որ մարդկանց
որդիներից է,

15 այդպէս էլ բազում ազգեր զարմանալու են քեզ վրայ,
եւ թագաւորների բերանները պապանձուելու են,
որովհետեւ տեսնելու են այն,
ինչի մասին նրանց չի պատմուել,
եւ իմանալու են այն,
ինչի մասին չեն լսել:

ՏԻՐՈՋ ԵԱՌԱՆ ՊԻՏԻ ԱՆԱՐԳՈՒԻ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ

53 Ո՞վ հաւատաց Տիրոջ մասին մեր տուած լուրին,
եւ ո՞ւմ յայտնի դարձաւ Տիրոջ բազուկը:
2 Նրա առաջ մենք յայտնուեցինք որպէս մանուկ,
որպէս արմատ՝ ելած անջրդի հողից†.
ո՛չ տեսք ունէր նա եւ ո՛չ էլ վեհութիւն:
Նայեցինք մենք նրան,
բայց նա ո՛չ տեսք ունէր եւ ո՛չ էլ գեղեցկութիւն:
3 Նրա տեսքն աւելի անարգ էր ու նսեմ,
քան բոլոր մարդկանց որդիներինը:
Նա հարուածների ենթակայ մի մարդ եղաւ,
որ ցաւերին համբերել գիտէ.
իր երեսը դարձնելով՝ արհամարհուեց ու բանի տեղ չդրուեց‡:
4 Նա մեր մեղքերն էր վերցնում
եւ մեզ համար չարչարւում,
սակայն մենք նրա ցաւերը,
հարուածներն ու չարչարանքները համարեցինք
իբրեւ Աստծուց եկած բան:
5 Բայց նա խոցուեց մեր մեղքերի համար
եւ մեր անօրէնութիւնների համար դատապարտուեց.
մեր խաղաղութեան համար նա՝ պատիժ կրեց,
եւ նրա՝ վէրքերով մենք բժշկուեցինք:
6 Ամէնքն էլ մոլորուած ոչխարներ են.
մարդն իր ճանապարհին մոլորուեց,
բայց Տէրը նրա՛ն մատնեց մեր մեղքերի համար:
7 Ու նա վշտից իր բերանն անգամ չի բացում:
Ինչպէս ոչխար՝ նա մորթուելու տարուեց,
եւ ինչպէս գառ՝ անմռունչ կանգնած է խուզողի առաջ
եւ նրա նման իր բերանը չի բացում:
8 Խոնարհութեան շնորհիւ նրա դատաստանը վերացաւ,
եւ նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի:
Երկրի վրայ վերջ տուին նրա կեանքին.
իմ ժողովրդի անօրէնութիւնների պատճառով նա մահուան մատնուեց:
9 Նրա գերեզմանի համար՝ չարութեամբ,
իսկ նրա մահուան համար մեծամեծ հարուածներով պիտի վրէժխնդիր լինեմ†,
որովհետեւ նա անօրէնութիւն չգործեց,
եւ նենգութիւնը տեղ չգտաւ նրա բերանում:
10 Տէրը կամենում է մաքրել նրան վէրքերից:
Եթէ մեղքերի համար հատուցում տաք,
ապա երկարակեաց սերնդի կ'արժանանաք,
որի միջոցով Տէրը կը ցանկանայ ազատել նրան իր ցաւերից‡,
11 ցոյց տալ նրան լոյս եւ օժտել իմաստութեամբ,
արդարացնել արդարին,
որը յօժարակամ ծառայեց շատերին
եւ իր վրայ է վերցնելու նրանց մեղքերը§:

†Եբրայերէնում՝ որովհետեւ նա դալար ոստի պէս եւ տոչորուած հողում արմատի պէս բուսաւ նրա առաջ:

‡Եբրայերէնում՝ Նա մարդկանցից անարգուեց ու այրից ընկաւ, վշտի տէր դարձաւ եւ ցաւերին հաղորդակից. նրանից երես դարձրինք. նա անարգուեց, եւ նրան չյարգեցինք:

12 Ահա թէ ինչու նա շատ բան պիտի ժառանգի
եւ հզօրների աւարը պիտի բաժանի,
որովհետեւ նրա անձը մահուան մատնուեց,
եւ նա յանցաւորներին հաւասար համարուեց:
Նա շատերի մեղքերը կրեց
եւ նրանց անօրէնութիւնների համար դատապարտուեց†:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԸ ՁԻ ԽԱԽՏՈՒԻ

54 Ուրախացի՛ր, ո՛վ ամուլ, որ չծնեցիր,
կանչի՛ր ու աղաղա՛կ բարձրացրու, որ երկունքի ցաւով չբռնուեցիր,
քանզի բազում են ամուսնուց լքուածիդ որդիները,
աւելի շատ, քան որդիները արամբի կնոջ:
Զէ՞ որ Տէրն ասաց.
2 «Ընդարձակի՛ր քո վրանի եւ քո սրահների տեղը,
կանգնեցրո՛ւ եւ խնայողութիւն մի՛ արա.
երկարացրո՛ւ քո պարանները,
հաստատի՛ր քո ցցերը:
3 Աջ ու ձա՛խ տարածուիր,
եւ քո սերունդը պիտի ժառանգի հեթանոսներին
եւ պիտի կառուցի աւերուած քաղաքները:
4 Մի՛ վախեցիր, որ քեզ ամօթահար արին,
մի՛ նեղուիր, որ քեզ նախատեցին,
որովհետեւ վաղնջական ամօթը պիտի մոռանաս
եւ որբեւայրութեանդ նախատինքն այլեւս չպիտի յիշես»:
5 Տէրն է, որ քեզ համար անելու է այդ,
Զօրութիւնների Տէր է նրա անունը,
եւ նա, որ փրկեց քեզ,
Իսրայէլի Նոյն Աստուածն է, որ համայն երկրինը պիտի համարուի‡:
6 Տէրը քեզ չկանչեց որպէս լքուած ու վարանած կնոջ
եւ ոչ էլ իբրեւ մի կնոջ, որ մանկուց ատելի է եղել,
այլ Աստուած ասաց.
7 «Մի առժամանակ լքեցի քեզ,
բայց մեծ գթութեամբ պիտի ողորմեմ քեզ:
8 Փոքր-ինչ բարկանալու պատճառով երեսս շրջեցի քեզնից,
բայց յաւիտենական կարեկցութեամբ պիտի ողորմեմ քեզ»:
Այդպէս ասաց Տէրը, որ փրկեց քեզ:
9 «Սա ինձ համար նոյնն է, ինչ Նոյի օրօք, ջրհեղեղի ժամանակ.
ինչպէս որ այն ժամանակ նրան երդուեցի,
որ չեմ բարկանայ երկրի վրայ,
այնպէս էլ երդուեցի, որ չեմ բարկանայ քեզ վրայ:
10 Իմ սպառնալիքով չեմ շարժելու լեռները,
չեմ փոփոխելու բլուրները.
ո՛չ իմ ողորմութիւնն է պակասելու քեզնից,
եւ ո՛չ էլ քո խաղաղութեան ուխտը պիտի վերանայ», — ասաց Տէրը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՊԻՏԻ ԳԵՂԵՑԿԱՆԱՅ

11 «Ո՛վ դու, որ տառապեալ ես եւ խախտուած,
ես հաշտուել եմ քեզ հետ,
մինչեւ որ դու մխիթարուես:
Ահա ես քո քարերը՝ սուտակից
եւ քո հիմքերը շափիւղայից պիտի պատրաստեմ.
12 քո աշտարակները յասպիսից պիտի կանգնեցնեմ, դռներդ՝ բիւրեղից
եւ քո շուրջը պարիսպ պիտի քաշեմ թանկագին եւ ընտիր-ընտիր քարերից:
13 Աստծուց խրատուած որդիներ պիտի ունենաս,
քո մանուկները մեծ խաղաղութեան մէջ պիտի լինեն:
14 Արդարութեամբ պիտի շէնանաս:
Հեռո՛ւ կանգնիր անիրաւից, որ ահ չունենաս,
եւ դողը քեզ չբռնի:
15 Ահա եկողները իմ անունով պիտի մօտենան քեզ,

արդար ծառան շատերին պիտի արդարացնի եւ նրանց անօրէնութիւնները ինքը պիտի կրի:

†Եբրայերէնում՝ յանցաւորների համար միջնորդ եղաւ:

‡Եբրայերէնում՝ որովհետեւ քո ամուսինը քո ստեղծիչն է, նրա անունը Ամենակալ Աստուած է, եւ քո փրկիչը Իսրայէլի սուրբն է:

քեզ մօտ պիտի պանդխտեն եւ քեզ
ապաստան դարձնեն[†]*:*
16 *Ահաւասիկ ես քեզ հաստատեցի,*
բայց ոչ որպէս մի դարբին,
որ փուքսով կայծեր է արծարծում
եւ գործիքներ է շինում իր համար.
ես քեզ հաստատեցի ոչ կորստի ու
ոչնչացման համար[‡]*:*
17 *Ոչ մի վնասակար գործիք քո դէմ*
յաջողութիւն չպիտի ունենայ,
եւ դու քո դէմ դատաստանի ելնող
ամէն մի լեզու պարտութեան ես
մատնելու,
նրա հետ՝ եւ քո բոլոր դատա-
խաղներին:
Դա է Տիրոջ ծառաների ժառան-
գութիւնը,
եւ ինձ համար դուք էք լինելու
իրաւացի»,— ասում է Տէրը:

ԵԿԷՔ ԱՌԱՆՑ ԱՐԾԱԹԻ

55 *«Ո՛վ դուք, որ ծարաւած էք,*
գնացէ՛ք ջրի,
եւ դուք, որ բոլորովին արծաթ
չունէք,
գնացէք գնեցէ՛ք ու կերէ՛ք առանց
արծաթի
եւ առանց գինու համար վճարելու[§]*:*
2 *Բայց ինչո՞ւ արծաթով ճարպ էք*
գնում եւ ոչ թէ հաց,
ձեր վաստակն ինչո՞ւ կշտանալու
համար չէք ծախսում:
Լսեցէ՛ք ինձ եւ բարիքնե՛ր ճա-
շակեցէք,
ու բարութեան մէջ ձեր հոգիները
վայելք պիտի զգան:
3 *Ակա՛նջ դրէք ինձ եւ հետեւեցէ՛ք*
իմ ճանապարհին:
Լսեցէ՛ք ինձ, եւ ձեր հոգիները
կ'ապրեն բարութեան մէջ,
ու ես ձեզ հետ յաւիտենական ուխտ
կը կնքեմ՝
շնորհելով ձեզ Դաւթին խոստա-
ցուած անանց սրբութիւնները[†]*:*
4 *Ահա նրան տուեցի որպէս հեթա-*
նոսների վկայ,
որպէս ազգերի իշխան եւ հրաման-
ատար:
5 *Քեզ չիմացող ազգերը պիտի*
դիմեն քեզ,
եւ քեզ չճանաչող ժողովուրդներն
ապաւէն պիտի դարձնեն քեզ
յանուն քո Տէր Աստծու՝ Իսրայէլի
սրբի, որը փառաւորեց քեզ»:
6 *Փնտռեցէ՛ք Տիրոջը եւ, երբ գտնէք,*
կանչեցէ՛ք նրան.
երբ նա ձեզ մօտենայ,
7 *ամբարիշտը թող հրաժարուի իր*
ընթացքից,
անօրէն մարդը՝ իր խորհուրդներից,
թող նա վերադառնայ Տիրոջ մօտ՝
եւ ողորմութիւն կը գտնի,
մեր Աստծո՛ւ մօտ,
որը բազմապատիկ թողութիւն պի-
տի շնորհի ձեր անօրէնութիւններին:
8 *«Իմ խորհուրդները նման չեն ձեր*
խորհուրդներին,
եւ ոչ էլ իմ ճանապարհները՝ ձեր
ճանապարհներին,— ասում է Տէրը,—
9 *այլ, ինչպէս երկինքն է հեռու*
երկրից,
այնպէս էլ իմ ճանապարհներն են
հեռու ձեր ճանապարհներից,
եւ իմ խորհուրդները՝ ձեր խոր-
հուրդներից:
10 *Ինչպէս որ, ասենք, երբ անձրեւ*
կամ ձիւն է իջնում երկնքից
եւ կրկին այնտեղ չի վերադառնում,
քանի դեռ չի ոռոգել երկիրը,
չի ծլեցրել ու պտղաբերել այն,
սերմանողին սերմ եւ ուտելու հաց
չի տուել,
11 *այդպէս էլ պիտի լինի իմ խօսքը,*
որ ելնում է իմ բերանից.
նա դատարկ չի վերադառնալու,
մինչեւ որ չկատարի այն,
ինչ կամենում եմ ես:
Պիտի հեշտացնեմ քո ճանապարհ-
ները,
որպէսզի իմ ճանապարհներն էլ դու
պահպանես:
12 *Ուրախութեամբ պիտի ելնէք եւ*
ցնծութեամբ պիտի սովորէք.
լեռներն ու բլուրները պիտի

[†]Երրայերէնում՝ եթէ մէկը ինձ վրայ յարձակուի, հակառակ իմ կամքի է լինելու. նա, որ ինձ վրայ յարձակուի, ինձ պիտի յանձնուի:

[‡]Երրայերէնում՝ ես ստեղծեցի դարբնին, որ արծարծում է կրակը եւ իր համար պիտանի գործիքներ պատրաստում. ես ստեղծեցի կործանողին, որ աւերում է:

[§]Երրայերէնում՝ գինի եւ կաթ ծախու առէք:

[†]Երրայերէնում՝ ողորմութիւնները:

խայտան,
խնդութեամբ ընդունեն ձեզ,
եւ անտառի բոլոր ծառերը պիտի
ծափահարեն ձեզ:
13 *Գիհու փոխարէն նոճի պիտի*
բուսնի,
դժնիկի փոխարէն մրտենի պիտի
աճի.
եւ դա պիտի լինի յանուն Տիրոջ
եւ ի նշան յաւիտենականութեան ու
չի նուազելու»:

ԱՂՕԹՔԻ ՏՈՒՆ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

56 *Այսպէս է ասում Տէրը.*
«Պահպանեցէ՛ք իրաւունքը եւ
կատարեցէ՛ք արդարութիւնը,
քանզի եկել հասել է իմ փրկու-
թիւնը,
եւ յայտնուելու է իմ ողորմութիւնը:
2 *Երանի՛ այն մարդուն, որ կ'անի*
այդ,
եւ նրան, որ հաւատարիմ կը մնայ
դրան,
կը պահի իմ շաբաթներն ու չի պղծի
եւ իր ձեռքը ետ կը քաշի
անիրաւութիւն անելուց»:
3 *Օտարազգին, որ եկել յարել է*
Տիրոջը, թող չասի, թէ՝
"Տէրը մերժեց ու վանեց ինձ իր
ժողովրդից",
եւ ներքինին էլ թող չասի, թէ՝
"Ես չոր փայտ եմ":
4 *Այսպէս է ասում Տէրը ներքի-*
նիներին.
«Ովքեր կը պահեն իմ պատուի-
բանները,
կը նախընտրեն այն, ինչ ես եմ
կամենում,
եւ իմ ուխտի մէջ կը մնան,
5 *նրանց իմ Տան մէջ եւ իմ պարսպի*
ներսում աւելի անուանի տեղ կը տամ,
քան որդիներին ու դուստրերին,
կը տամ նրանց յաւիտենական մի
անուն, որ չի կորչելու:
6 *Իսկ այն այլազգիներին, որոնք*
եկել յարել են Տիրոջը,
որպէսզի ծառայեն նրան եւ սիրեն
նրա անունը,
լինեն նրա համար ծառաներ եւ
աղախիններ,
ու բոլոր նրանց, որոնք կը պահեն իմ
շաբաթները եւ չեն պղծի,
ու կը մնան իմ ուխտի մէջ,—
7 *նրանց կը տանեմ իմ սուրբ լեռը,*
կ'ուրախացնեմ նրանց իմ աղօթքի
Տան մէջ,
նրանց ողջակէզներն ու ընծաներն
ընդունելի կը լինեն իմ սեղանի վրայ,
քանզի իմ Տունը բոլոր հեթա-
նոսների համար աղօթքի Տուն պիտի
կոչուի»:
8 *Այսպէս է ասում Տէր Աստուած,*
որ հաւաքում է Իսրայէլի բոլոր
ցրուածներին.
«Նրանց վրայ ես պիտի հաւաքեմ
անապատի բոլոր գազանների բազմու-
թիւնները[†]*»:*

ԿՈՅՐ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ

9 *Եկէք կերէ՛ք, ո՛վ դուք անտառի*
բոլոր գազաններ:
10 *Տեսէ՛ք, ամէնքն էլ*[‡] *կուրացել են*
եւ չգիտեն, թէ ի՞նչ է իմաս-
տութիւնը.
ամէնքն էլ կարծես համրացած շներ
են, որ չեն կարողանում հաչել,
իրենց անկողիններում երազներով
են տարուած,
սիրում են նիրհել:
11 *Իրենց հոգով լիրբ եղան շների*
նման,
որ անկուշտ են, չար են եւ չգիտեն,
թէ ի՞նչ է իմաստութիւնը.
ամէնքն իրենց ճանապարհներով
գնացին:
12 *«Եկէ՛ք,— ասում են,—*
գինի առնենք եւ հարբենք գինով.
այդպիսի օրը մեզ համար
ամենամեծ զոհաբերութիւնը կը
լինի[§]*»:*

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԿՈՒԱՊԱՇՏՆԵՐԻՆ

57 *«Տեսէ՛ք, ինչպէ՞ս կորաւ արդարը,*
եւ չկայ մէկը, որ սրտով կարեկցի.

[†]Երրայերէնում՝ նրա մօտ հաւատուածների վրայ ուրիշներին էլ պիտի հաւաքեմ:

[‡]Երրայերէնում՝ նրա առաջնորդները:

[§]Երրայերէնում՝ վաղը նոյնպէս այսօրուայ նման, նոյնիսկ աւելի առատ պիտի լինի:

արդար մարդիկ վերանում են,
եւ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում,
որ արդարն անիրաւութեան պատճառով է վերանում:
2 Թող խաղաղ լինի նրա գերեզմանը,
ով վերացաւ մէջտեղից† :
3 Բայց դուք մօտեցէ՛ք, առա՛ջ եկէք,
անօրէ՛ն որդիներ,
պոռնկածի՛ն որդիներ, շնութեա՛ն որդիներ:
4 Ինչո՞վ էք պարծենում,
ո՞ւմ վրայ էք բացում ձեր բերանները
եւ կամ ո՞ւմ վրայ էք հանում ձեր լեզուները.
մի՞թէ դուք կորստեան որդիներ չէք,
անօրէնութեան սերունդ,
5 որ անտառախիտ ծառերի տակ ընկած՝
աղաչում էիք ձեր կուռքերին,
անդունդներում՝ ժայռերի կատարներին եւ խոր ձորերում
զոհում էիք ձեր որդիներին:
6 Այդ է քո բաժինը, այդ նոյնն է քո վիճակը.
նրանց առաջ նուէրներ թափեցիր,
նրանց զոհեր մատուցեցիր,
եւ այս ամենի վրայ միթէ չե՞մ բարկանալու, — ասում է Տէրը:
7 Այնտեղ, բարձր ու մեծ լերան վրայ է քո անկողինը,
եւ դու այնտեղ ելար զոհեր մատուցելու:
8 Ապա դռների դրանդիների վրայ հաստատեցիր քո յիշատակները:
Կարծում էիր՝ եթէ ինձնից հեռանաս,
աւելի՞ բան պիտի գտնես:
Քո անկողինները լայնացրիր եւ փռուեցիր դրանց վրայ.
սիրեցիր քո հոմանիներին
9 եւ յաճախակի դարձրիր քո պոռնկութիւնը նրանց հետ:
Հեռաւորներից շատերին քե՛զ կապեցիր
եւ պատգամաւորներ ուղարկեցիր քո սահմաններից դուրս:

†Եբրայերէնում՝ նա խաղաղութեան մէջ պիտի մտնի, ուղիղ ընթացողները հանգստութիւն պիտի գտնեն իրենց անկողիններում:

10 Նկուն դարձար ու իջար գերեզման,
յոգնատանջ եղար քո բազում ճանապարհորդութիւններից
եւ չասացիր, թէ՝ "Այժմ հանգստանամ",
որովհետեւ ուժիդ համեմատ էիր գործում,
դրա համար էլ չհնազանդուեցիր ինձ:
11 Ո՞ւմից վախեցար ու զարհուրեցիր,
որ ստեցիր եւ չյիշեցիր ինձ,
միտքդ չբերիր, սրտիդ մէջ չդրիր,
իսկ ես քեզ տեսայ ու անտեսեցի:
Ես այն եմ, որ յաւիտենական եմ,
իսկ դու ինձնից չվախեցար:
12 Արդ, ես պիտի պատմեմ իմ արդարութեան եւ քո չարիքների մասին,
13 որոնք քեզ չեն օգնելու, երբ աղաղակես,
եւ քեզ չեն փրկելու քո նեղութիւնից.
դրանց բոլորին հողմերը պիտի տանեն
եւ մրրիկները բաժան-բաժան պիտի անեն:
Իսկ նրանք, ովքեր ինձ վրայ են յոյս դրել,
պիտի ստանան երկիրը եւ ժառանգեն իմ սուրբ լեռը:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԵՌԱՒՈՐՆԵՐԻՆ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐՆԵՐԻՆ

14 Նրանք պիտի ասեն.
"Բացէ՛ք նրա առաջ ճանապարհները,
խոչ ու խութերը հեռացրէ՛ք իմ ժողովրդի ճանապարհից"»:
15 Այսպէս է ասում Բարձրեալը,
որ յաւիտենապէս բնակւում է բարձունքներում,
սուրբը սրբերի մէջ.
նրա անունը Բարձրեալ է,
եւ նա սրբերի մէջ է մնում,
համբերութիւն է տալիս տարակուսանքի մէջ ընկածներին
եւ կեանք՝ նրանց, որոնք սրտամաշ են եղել:

16 Ես յաւիտեան վրէժխնդիր չեմ լինելու ձեզանից
եւ ոչ էլ մշտապէս բարկանալու եմ ձեզ վրայ,
քանզի հոգին ինձնից է բխում,
եւ ամէն շունչ ես եմ ստեղծել:
17 Մեղքի պատճառով սակաւ ժամանակ տրտմութիւն հասցրի նրան,
հարուածեցի նրան ու իմ երեսը շրջեցի նրանից,
եւ նա տրտմեց ու իմ առաջ թախծոտ՝ անցաւ իր ճանապարհները:
18 Ես տեսայ նրա սրտի ճանապարհները եւ բժշկեցի նրան,
սփոփեցի ու ճշմարիտ մխիթարութիւն տուի նրան:
Նրա սգաւորների համար պտուղ ստեղծեցի:
19 Թող խաղաղութիւն, խաղաղութիւն լինի հեռաւորներին եւ մերձաւորներին, — ասում է Տէրը, —
ու ես պիտի բժշկեմ նրանց:
20 Իսկ անօրէնները պիտի ծփան ծովի նման եւ հանգիստ չգտնեն,
ու նրա ջրերը պիտի անհետանան՝ կաւի հետ խառնուելով:
Ամբարիշտների համար խաղաղութիւն չկայ», — ասում է Տէրը:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

58 Ուժգի՛ն կանչիր եւ մի՛ խնայիր,
չեփորի պէս բարձրացրո՛ւ ձայնդ,
պատմի՛ր իմ ժողովրդին իր մեղքերի
եւ Յակոբի տանը՝ իր անօրէնութիւնների մասին:
2 Օր օրի ինձ են փնտռում
եւ ցանկանում ճանաչել իմ ճանապարհները,
իբրեւ մի ժողովուրդ, որ արդարութիւն է գործել
եւ իր Աստծու իրաւունքը զանց չի առել.
ահա նրանք եկել եւ իրաւունք ու արդարութիւն են որոնում:
Փափագում են մերձենալ Աստծուն
3 եւ ասում են. «Այդ ինչպէ՞ս է, որ մենք ծոմ պահեցինք,
եւ դու չտեսար,
զրկանքների ենթարկեցինք մեզ,
եւ դու չիմացար:

Արդ, ձեր ծոմապահութեան օրերին ձեր ցանկութիւններն էք կատարում
եւ կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակայ են ձեզ:
4 Հակառակութեան եւ կռիւների մէջ էք պահում
եւ բռնցքահարում տկարին:
Իսկ իմ ինչի՞ն է պէտք այդպիսի ծոմապահութեան օրը.
դուք պիտի գաք բողոքէք ինձ,
եւ ես չպիտի լսեմ ձեզ:
5 Այդպիսի ծոմապահութիւնը չէ, որ ես ընտրեցի,
եւ ոչ էլ այնպիսի օրը, երբ մարդ իր անձն է տանջում:
Եթէ պարանոցդ կորացնես օղակի նման
ու տակդ քուրձ ու մոխիր տարածես,
այդ էլ, սակայն, չեմ համարի ծոմ եւ ընդունելի օր.
այդպիսի ծոմապահութիւնը չէ, որ ես ընտրեցի, — ասում է Տէրը: —
6 Քանդի՛ր անիրաւութեան հանգոյցը,
խորտակի՛ր քո վաճառականական խարդախութիւնն ու բռնութիւնը,
ների՛ր ու արձակի՛ր նեղեալներին
եւ պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները:

ՀԱՑԴ ԿԻՍԻՐ ՔԱՂՑԱԾԻ ՀԵՏ

7 Քաղցածների՛ն բաժանիր քո հացը
եւ անօթեւան աղքատների՛ն տար քո տունը.
եթէ մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան,
բայց քո ընտանիքի զաւակին մի՛ անտեսիր:
8 Այն ժամանակ այգաբացի պէս պիտի ծաւալուի քո լոյսը,
եւ արագօրէն պիտի հասնի քո ապաքինումը,
քո առջեւից պիտի ընթանայ քո արդարութիւնը,
եւ Աստծու փառքը պիտի պահպանի քեզ:
9 Այն ժամանակ պիտի կանչես,
եւ Աստուած պիտի լսի քեզ.
մինչեւ դու խօսես, նա պիտի ասի, թէ՝ «Ահա հասել եմ»:

Եթէ դու քո միջից հեռացնես
խարդախութիւնը,
ձեռնձգութիւնն ու տրտունջի
խօսքերը,
10 քո հացը յօժար սրտով քաղցածներին տաս
եւ չքաւոր մարդկանց կշտացնես,
այն ժամանակ խաւարի մէջ կը
ծագի քո լոյսը,
քո խաւարը կը վերածուի միջօրէի:
11 Քո Աստուածը ամէն ժամ քեզ
հետ կը լինի,
քո անձն ըստ ցանկութեան
յագեցում կը ստանայ,
եւ քո ոսկորները կը լիանան ու կը
լինեն ինչպէս ջրարբի պարտէզ,
ինչպէս աղբիւր, որից ջուրը չի
պակասի:
12 Քո դարաւոր աւերակները կը
վերաշինուեն,
եւ քո հիմքերը մշտնջենական կը
լինեն սերնդից սերունդ.
դու պիտի յառնես ու կոչուես
պարսպապատերի փլատակները
վերականգնող
եւ նրանց ճամփամիջեան դարուփոսերը վերացնող:
13 Եթէ ոտքդ յետ քաշես
եւ սրբութեան օրը քո ուզածը
չկատարես,
զուարճութեան շաբաթները համարես Աստծուն նուիրուած եւ փառաւոր,
ոտքդ դուրս չդնես գործի համար
ու քո բերանով բարկութեան ոչ մի
խօսք չասես,
այն ժամանակ կարող ես ապաւինել
Տիրոջը:
14 Նա քեզ կ'առաջնորդի դէպի
երկրի բարիքները
եւ իբրեւ սնունդ քեզ կը տայ քո
հայր Յակոբի ժառանգութիւնը,
քանզի Տիրոջ բերանը խօսեց այս:

ՄԱՐԳԱՐԷՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՂՔԸ

59 Մի՞թէ Տիրոջ ձեռքն անկարող է
փրկել,
կամ նա ծանրացրել է իր ականջը,
որ չլսի.
2 ո՛չ, ձեր մեղքերն են պատնէշ
դարձել ձեր եւ Աստծու միջեւ,
ձեր անօրէնութիւնների պատճառով
է նա իր երեսը շրջել ձեզնից, որ
չգթայ:
3 Արդարեւ, ձեր ձեռքերը պղծուած
են արեամբ,
եւ ձեր մատները՝ մեղքով.
ձեր շուրթերն անօրէնութիւն
խօսեցին,
եւ ձեր լեզուները խորհում են
անիրաւութիւն:
4 Զկայ մէկը, որ արդարութիւն
խօսի,
եւ բացակայում է ճշմարտութեան
իրաւունքը.
յոյս են դրել սնոտի բաների վրայ եւ
ունայնութիւն են խօսում,
յղանում են ցաւեր եւ ծնում
անօրէնութիւն:
5 Քարբ օձի ձուեր են ծակում եւ
սարդերի ոստայն հիւսում.
եթէ որեւէ մէկը կամենայ ուտել
դրանցից,
ծակ բացելով՝ նրա մէջ կը գտնի
ջուր եւ քարբ օձ[†]:
6 Նրանց ոստայնները հագուստ չեն
դառնայ,
եւ ոչ էլ նրանք կարող են զգեստաւորուել իրենց ձեռքի գործերով,
քանզի նրանց գործերն անօրէնութեան գործեր են,
նրանց ձեռքերի մէջ անիրաւութեան
գործեր կան:
7 Նրանց ոտքերը դէպի չարն են
ընթանում,
շտապում են անմեղ արիւն թափել.
նրանց խորհուրդներն անզգամների
խորհուրդներ են,
նրանց ճանապարհներին կործանում
է ու թշուառութիւն:
8 Նրանք չճանաչեցին խաղաղութեան ճանապարհը,
ու նրանց ուղիներում արդարութիւն
չկայ,
որովհետեւ նրանց շաւիղները, որոնցով ընթանում են, խոտորուած են,
եւ նրանք խաղաղութիւնը չեն
ճանաչում:

[†]Եբրայերէնում՝ նրանց ձուերն ուտողը կը մեռնի, եթէ ջարդեն, իժ դուրս կը գայ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՃԱՆԱՉՈՒՄ Է ԻՐ ՄԵՂՔԸ

9 Ահա թէ ինչու իրաւունքը հեռացաւ նրանցից,
եւ արդարութիւնը չի հասնելու
նրանց.
մինչ նրանք լոյս էին ակնկալում՝
խաւար եղաւ նրանց համար,
մինչ լոյսի էին սպասում՝
շուռ եկան դէպի մութը:
10 Կոյրերի պէս նրանք պատերն են
շօշափելու,
խարխափելու են աչքերից զրկուածների պէս,
կէսօրին գլորուելու են, ինչպէս
կէսգիշերին,
օրհասական մարդկանց պէս հոգեվարքի տանջանքներ են տանելու
11 եւ առհասարակ թափառելու են
արջերի ու աղաւնիների նման:
Մենք երկար սպասեցինք դատաստանի, բայց չեղաւ,
սպասեցինք փրկութեան, բայց այն
հեռացաւ մեզնից,
12 քանզի բազում են մեր
անօրէնութիւնները քո առաջ,
եւ մեր մեղքերը հակառակ կանգնեցին մեզ.
մեր անօրէնութիւնները մե՛ր մէջ են,
մենք ինքնե՛րս գիտենք մեր անիրաւութիւնները:
13 Ամբարիշտ դարձանք եւ ստեցինք
Տիրոջ առաջ,
յետ կանգնեցինք մեր Աստծուց,
անիրաւութիւն խօսեցինք եւ
ապստամբեցինք,
մեր սրտերում անիրաւութեան խօսքեր յղացանք ու որոճացինք:
14 Յետ վանեցինք իրաւունքը,
եւ արդարութիւնը հեռացաւ մեզնից:
Ճշմարտութիւնը սայթաքեց նրանց
ճանապարհներից.
նրանք ուղիղ ճանապարհով չկարողացան գնալ,
15 եւ արդարութիւնը վերացաւ
նրանց միջից.
արգելք դրեցին իրենց սրտերին, որ
չիմանան:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՀԱՏՈՒՑԻ

Տեսաւ Տէրը եւ չհաւանեց,
որովհետեւ իրաւունքը բացակայում
էր:
16 Նայեց, բայց մարդ չկար,
դիտեց, բայց չկար մէկը, որ
օգնական լինէր.
եւ իր բազկով հատուցեց ու ըստ իր
ողորմութեան հաստատեց նրանց:
17 Իբրեւ զրահ հագաւ արդարութիւնը,
իբրեւ սաղաւարտ՝ գլխին դրեց
փրկութիւնը,
իբրեւ հանդերձ ու պատմուճան՝
իր վրայ գցեց վրէժխնդրութիւնը,
որ հատուցում տայ նրանց:
18 Նա նախատինք ու հատուցում
պիտի տայ հակառակորդներին ու
կղզիների բնակիչներին:
19 Արեւմուտքում Տիրոջ անունից
պիտի սարսափեն,
արեւելքում՝ նրա փառքից ու
համբաւից:
Բարկութիւնն, ինչպէս գետ, ուժգնօրէն պիտի գայ Տիրոջից,
կատաղօրէն վրայ պիտի հասնի:
20 «Մի փրկիչ պիտի գայ Սիոնից
ու պիտի վանի Յակոբի ամբարշտութիւնները», — ասում է Տէրը:
21 «Այս է իմ ուխտը նրանց հետ, —
ասում է Տէրը: — Իմ հոգին, որ քեզ
վրայ է, եւ իմ խօսքերը, որ քո բերանը
դրեցի, այսուհետեւ մինչեւ յաւիտենութիւն չպիտի պակասեն քո բերանից,
քո զաւակի բերանից եւ քո զաւակի
զաւակի բերանից», — ասում է Տէրը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԼՈՒՍԱՒՈՐՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԸ

60 Լուսաւորուի՛ր, լուսաւորուի՛ր, Երուսաղէ՛մ,
քանզի հասել է քո լոյսը,
եւ Տիրոջ փառքը քեզ վրայ է
ծագելու:
2 Ահա խաւարը ծածկեց երկիրը,
մառախուղը՝ հեթանոսներին,
բայց քո մէջ է յայտնուելու Տէրը,
եւ նրա փառքը քո մէջ է երեւալու:
3 Թագաւորները գալու են դէպի քո
լոյսը,
հեթանոսները՝ դէպի քո լոյսի
փայլը:
4 Աչքերդ բարձրացրո՛ւ եւ շո՛ւրջդ
նայիր

ու տե՛ս մօտդ հաւաքուած քո բոլոր մանուկներին.
քանզի որդիներդ եկան հասան հեռուներից
եւ, իրենց ուսերին առած, բերում են քո դուստրերին† :
5 Ահա դու պիտի տեսնես ու խնդաս,
զարմանաս ու ապշես քո մտքում,
որովհետեւ ծովերի, ազգերի ու ժողովուրդների հարստութիւնը
քո կողմը պիտի դառնայ:
6 Դէպի քեզ են գալու ուղտերի երամակները,
քեզ ծածկելու են Մադիամի եւ Գեփայի ուղտերի երամակները.
բոլորը Սաբայից պիտի գան՝
բերելով ոսկի, կնդրուկ ու թանկագին քարեր
եւ տալու են Տիրոջ փրկութեան աւետիսը:
7 Կեդարի ոչխարների բոլոր հօտերը
քեզ մօտ պիտի հաւաքուեն,
Նաբէօթի խոյերը պիտի բերուեն
ու իմ սեղանի վրայ պիտի մատուցուեն իբրեւ ընդունելի զոհ,
եւ իմ աղօթքի Տունը պիտի փառաւորուի:
8 Ովքե՞ր են սրանք, որ թռել են ինչպէս ամպ
եւ ինչպէս ճագերի հետ խառնուած աղաւնիներ՝
երամով գալիս են ինձ մօտ:
9 Ինձ են սպասում կղզիները եւ Թարսիսի նաւերը,
որպէսզի նախօրօք հեռուներից բերեն քո որդիներին
եւ նրանց հետ՝ արծաթն ու ոսկին,
Տիրոջ սուրբ անուան համար,
Իսրայէլի փառաւորեալ սրբի համար:
10 Օտարազգիների որդիները պիտի շինեն քո պարիսպները,
ու նրանց թագաւորները պիտի ծառայեն քեզ,
որովհետեւ իմ բարկութեան պատճառով հարուածեցի քեզ
եւ իմ գթասրտութեան համար սիրեցի քեզ:
11 Քո դռներն օր ու գիշեր միշտ բաց պիտի լինեն եւ չպիտի փակուեն,
որպէսզի քո մէջ տեղափոխեն ազգերի հարստութիւնը
եւ նրանց թագաւորներին բերեն քեզ մօտ:
12 Իսկ այն ազգերն ու թագաւորները,
որոնք քեզ չեն ծառայելու,
կորչելու են.
ազգերը բոլորովին պիտի կործանուեն:
13 Լիբանանի փառքը դէպի քեզ է գալու՝
դափնիով, սօսիով, նոճիով ու մայրիով,
որպէսզի լիապէս փառաւորեն իմ սրբարանի տեղը,
եւ ես փառաւորեմ իմ ոտքերի տեղը:
14 Քեզ մօտ պիտի գան քեզ նեղողների եւ զայրացնողների զարհուրած որդիները,
քո ոտնահետքերին երկրպագութիւն պիտի անեն բոլոր նրանք,
որոնք զարհուրեցնում էին քեզ,
ու դու պիտի կոչուես Տիրոջ քաղաք,
Իսրայէլի սրբի Սիոն:

ՏԻՐՈՋ ՓԱՌՔԸ՝ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԼՈՅՍ

15 Դու եղար լքուած ու ատելի,
եւ ոչ ոք չկար, որ օգնէր քեզ,
ես քեզ կը դարձնեմ յաւիտենական ուրախութիւն,
ցնծութիւն՝ սերնդից սերունդ:
16 Դու պիտի ծծես հեթանոսների կաթը
եւ ուտես թագաւորների հարստութիւնը,
պիտի գիտակցես, որ ես եմ Տէրը՝
Իսրայէլի Աստուածը, որ ազատում ու փրկում եմ քեզ:
17 Պղնձի փոխարէն ոսկի եմ բերելու քեզ,
երկաթի փոխարէն արծաթ եմ բերելու քեզ,
փայտի փոխարէն պղինձ եմ բերելու քեզ,
քարի փոխարէն երկաթ եմ տալու քեզ,
խաղաղութիւն եմ տալու քո իշխաններին,
եւ քո վերակացուներին՝ արդարութիւն:
18 Քո երկրում անիրաւութեան մասին այլեւս չի լսուելու
եւ ոչ էլ քո սահմաններում՝ կոտորածի ու թշուառութեան մասին.
քո պարիսպները պիտի անուանուեն փրկութիւն,
եւ քո դռները՝ ցնծութիւն:
19 Այլեւս արեգակը չէ, որ քեզ համար ցերեկուայ լոյս է լինելու,
եւ ոչ էլ լուսնի ծագումն է, որ քեզ գիշերը լոյս է տալու,
այլ քեզ համար Տէրն է յաւիտենական լոյս լինելու,
եւ Աստուած՝ քո փառքը:
20 Արեգակը քեզ համար մայր չի մտնելու,
եւ լուսինը քեզնից չի պակասելու,
որովհետեւ Տէրը քեզ համար յաւիտենական լոյս է լինելու:
Քո սգոյ օրերը պիտի վերջանան:
21 Քո ժողովուրդը բոլորովին արդար պիտի լինի
եւ յաւիտենապէս պիտի ժառանգի երկիրը՝
պահպանելով իր նոր տունկը՝ իր ձեռքի գործը յանուն իմ փառքի:
22 Սակաւաթիւը հազարաւոր պիտի դառնայ,
փոքրը՝ մեծ ազգ,
քանզի ես՝ Տէրս, ժամանակ առ ժամանակ պիտի հաւաքեմ նրանց:

ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԲԱՐԻ ԼՈՒՐԸ

61 Տիրոջ Հոգին ինձ վրայ է,
դրա համար իսկ նա օծեց ինձ,
ուղարկեց ինձ՝ աւետարանելու աղքատներին,
բժշկելու սրտով բեկուածներին,
գերիներին ազատութիւն քարոզելու
եւ կոյրերին՝ տեսողութիւն,
2 հռչակելու Տիրոջ ընդունելի տարին
եւ մեր Աստծու վրէժխնդրութեան օրը,
մխիթարելու բոլոր սգաւորներին,
3 փառաւորելու Սիոնի սգաւորներին,
որ մոխրի փոխարէն ուրախութեան օծման իւղի պիտի արժանանան,
իսկ սգաւորները վհատ հոգու փոխարէն՝ փառքի զգեստի:
Եւ նրանք պիտի կոչուեն ազգ արդարութեան,
տունկ՝ ի փառս Տիրոջ:
4 Պիտի վերաշինեն դարաւոր աւերակները,
նախկինում աւերուածները պիտի վերականգնեն
եւ նորոգեն դարերից ի վեր փլատակուած քաղաքները:
5 Օտարածինները պիտի գան ու լինեն քո ոչխարների հօտերի հովիւները,
այլազգիները՝ քո մաճկալներն ու այգեգործները:
6 Իսկ դուք Տիրոջ քահանաներ պիտի կոչուէք,
մեր Աստծու պաշտօնեաներ պիտի անուանուէք,
ազգերի հարստութիւնը պիտի ուտէք
եւ նրանց մեծութեամբ պիտի փառաւորուէք:
7 Ձեր ամօթի փոխարէն՝ կրկնակի ուրախութիւն,
ձեր անարգանքի փոխարէն ցնծութիւն պիտի վայելէք
եւ ապա դարձեալ պիտի ժառանգէք երկիրը,
եւ յաւիտենական ուրախութիւն պիտի լինի ձեզ համար:
8 Ես՝ Տէրս, սիրում եմ արդարութիւնը
եւ ատում յափշտակութիւնն ու անիրաւութիւնը,
արդարներին պիտի տամ իրենց վաստակը
եւ յաւիտենական ուխտ պիտի անեմ նրանց հետ:
9 Պիտի ճանաչուեն նրանց սերունդը ազգերի մէջ
եւ նրանց զաւակները՝ ժողովուրդների մէջ.
ամէնքն էլ, երբ տեսնեն,
պիտի ճանաչեն նրանց եւ ասեն, թէ՝
«Սրանք Աստծու օրհնեալ զաւակներն են»,
ու ցնծութեամբ պիտի ուրախ լինեն ի Տէր:
10 Ես պիտի հրճուեմ Տիրոջով,
որովհետեւ նա ինձ փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան հագցրեց,
որպէս փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին

† Եբրայերէնում՝ ամէնքը հաւաքւում եւ քեզ մօտ են գալիս: Քո տղաները գալիս են հեռուից եւ քո աղջիկներին գրկած տանում են:

եւ որպէս հարսի՝ զուգեց ինձ
զարդով:
11 Ինչպէս երկիրը, որ աճեցնում է իր
ծաղիկները,
եւ ինչպէս պարտէզը, որ ծլեցնում է
իր սերմերը,
այնպէս էլ Տէրն է ի յայտ բերելու
իր արդարութիւնն ու ցնծութիւնը
բոլոր ազգերի առաջ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԳՏՆԻ ԻՐ ՓԱՌՔԸ

62 Չեմ լռի յանուն Սիոնի եւ չեմ
ների յանուն Երուսաղէմի,
մինչեւ չծագի նրա արդարութիւնը՝
ինչպէս լոյս,
եւ չբոցավառուի նրա փրկութիւնը՝
ինչպէս փայլակ:
2 Հեթանոսները պիտի տեսնեն քո
արդարութիւնը,
թագաւորները՝ քո փառքը,
եւ դու նոր անունով ես կոչուելու,
որ Տէրն է անուանելու:
3 Տիրոջ ձեռքին վայելչութեան
պսակ պիտի դառնաս
եւ քո Աստծու ձեռքին՝ արքայական
թագ:
4 Այլեւս չես կոչուելու Լքեալ,
ոչ էլ քո երկիրն է կոչուելու Աւերակ:
Քեզ պիտի կոչեն՝ Իմ կամքը,
իսկ քո երկիրը՝ Շէն բնակութիւն,
որովհետեւ Տէրը սէր է տածում քո
նկատմամբ,
եւ քո երկիրը բնակութեամբ պիտի
լցուի:
5 Ինչպէս որ երիտասարդն է ամուս-
նանում կոյսի հետ,
այնպէս էլ քո որդիները պիտի
ապրեն քեզ հետ,
եւ ինչպէս որ, օրինակ, փեսան է
ուրախանում հարսի համար,
այնպէս էլ Տէրն է ուրախ լինելու
քեզ համար:
6 Քո պարիսպների վրայ, ո՛վ
Երուսաղէմ,
ամբողջ օրն ու ողջ գիշերը
պահապաններ պիտի կարգեմ,
որ մինչեւ վերջ չդադարեն յիշել
Տիրոջը:
7 Ձեր նմանը չի լինի, երբ նա
վերստին ուղղի
եւ Երուսաղէմը դարձնի պարծանք
երկրի վրայ:
8 Տէրը երդուեց իր փառքով եւ իր
բազկի զօրութեամբ,
որ քո ցորենն ու կերակուրը չի տայ
քո թշնամիների ձեռքը,
եւ օտարների որդիները չեն խմի քո
գինին,
որի համար դու ջանք թափեցիր,
9 այլ ովքեր այդ ամբարեցին՝
նրա՛նք պիտի ուտեն եւ օրհնեն
Տիրոջը,
եւ ովքեր այդ հաւաքեցին՝
նրա՛նք պիտի խմեն իմ սրբարանի
սրահներում:
10 Գնացէք նե՛րս մտէք իմ դռներով,
պատրաստեցէ՛ք ճանապարհները,
շտկեցէ՛ք շաւիղները,
ճամփա՛յ բացէք իմ ժողովրդի
համար,
հեռացրէ՛ք քարերը ճանապարհից
եւ դրօշա՛կ բարձրացրէք հեթանոս-
ների համար:
11 Ահա թէ ինչ ազդարարեց Տէրը
մինչեւ երկրի ծագերը.
«Ասացէ՛ք Սիոնի դստերը.
ահաւասիկ գալիս է քո Փրկիչը,
եւ իր վարձն իր հետ է,
գործը՝ իր աչքի առաջ»:
12 Տիրոջ ձեռքով փրկուած Սուրբ
ժողովուրդ է կոչելու նրան,
իսկ դու կոչուելու ես Փնտռուած
քաղաք եւ ոչ թէ Լքուած»:

ՏԷՐԸ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ Է ԱՐԴԱՐ ԻՐԱՒՈՒՆՔԻ

63 Ո՞վ է սա, որ ելել գալիս է
Եդոմից.
նրա հագուստների կարմիրը Բոսո-
րայից է,
նա գեղեցիկ պատմուճանով է եւ
հուժկու զօրութեամբ:
Ես խօսում եմ արդարութեան եւ
փրկութեան իրաւունքի մասին:
2 Քո հագուստներն ինչո՞ւ են
կարմիր,
քո հագուստներն, ասես, հնձանա-
հարի հագուստներ լինեն,
որ տրորում է լեցուն հնձանը:
3 Ես մենակ ճմլեցի հնձանը,
հեթանոսներից ոչ ոք ինձ հետ չէր.
զայրոյթով տրորեցի նրանց,
բարկութեամբ ճմլեցի նրանց եւ
գետնին հաւասարեցրի
ու իմ բոլոր զգեստներն արիւնա-
թաթախ արի.
4 քանզի հասել էր նրանց հատուց-
ման օրը,
փրկութեան տարին եկել հասել էր:
5 Նայեցի, բայց օգնող չկար,
մտածեցի, թէ ինչու ոչ ոք չկար,
որ թիկունք դառնար ինձ:
Իմ բազուկը փրկեց նրանց,
եւ միայն իմ բարկութիւնն ինձ զօ-
րավիգ եղաւ:
6 Իմ բարկութեամբ տրորեցի եւ իմ
զայրոյթով մորթեցի նրանց,
գետնին հաւասարեցրի նրանց:

ՏԻՐՈՋ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԱՆԴԷՊ

7 Տիրոջ ողորմութիւնը պիտի յիշեմ,
Տիրոջ մեծագործութիւնը միտքս
պիտի բերեմ այն բարիքների համար,
որ Տէրն է հատուցելու մեզ:
Տէրն Իսրայէլի տան բարերար դա-
տաւորն է,
որ իր ողորմածութեամբ եւ իր մեծ
արդարութեամբ վարձատրելու է մեզ:
8 Նա էր, որ ասաց.
«Իմ ժողովուրդն իմ որդիներն են,
որոնք չեն անարգի ինձ».
եւ նա նրանց փրկութիւն բերեց
իրենց բոլոր նեղութիւններից:
9 Ոչ թէ ինչ-որ պատգամաւոր կամ
հրեշտակ փրկեց նրանց, այլ՝ Տէրն ինքը.
եւ որովհետեւ նա սիրում ու խնա-
յում էր նրանց,
ինքն էլ փրկեց նրանց,
ոտքի կանգնեցրեց եւ բարձրացրեց
նրանց յար ու յաւիտեան:
10 Բայց նրանք ըմբոստացան ու
բարկացրին նրա Սուրբ Հոգին,
եւ Տէրը նրանց թշնամի դարձաւ,
ինքն իսկ պատերազմեց նրանց դէմ:
11 Այնժամ նրանք հին ժա-
մանակները յիշեցին՝ ասելով.
«Ո՞ւր են Մովսէսը եւ նրա ժողո-
վուրդը,
ո՞ւր է նա, որ երկրից դուրս բերեց
հօտերի հովուին,
ո՞ւր է նա, որ նրանց մէջ դրեց Սուրբ
Հոգին.
12 ո՞վ էր, որ իր աջով բարձրացրեց
Մովսէսին
եւ որի առաջ իր փառաւոր բազկով
կասեցրեց ջրերը՝
իր անունը յաւերժացնելու համար:
13 Նրանց անցկացրեց անդունդ-
ներով,
ինչպէս ձին է անցնում անապատով,
կամ ինչպէս դրաստը՝ դաշտով,
ու նրանք չյոգնեցին:
14 Տիրոջ Հոգին իջաւ եւ առաջ-
նորդեց նրանց»:
Քո ժողովրդին դու այնպէս առաջ-
նորդեցիր,
որ քո անունը փառաւորեն:

ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ

15 Արդ, դարձի՛ր երկնքից
եւ քո սուրբ ու փառաւոր տաճարից
նայիր,
թէ ո՛ւր են քո նախանձախնդրու-
թիւնն ու զօրութիւնը,
ո՛ւր են քո մեծ ողորմութիւնն ու
գթութիւնը,
որոնցով ներում էիր մեզ:
16 Դու ես մեր Հայրը:
Աբրահամը չգիտէր մեզ,
Իսրայէլը մեզ չէր ճանաչում,
բայց դու, Տէ՛ր, Հա՛յր մեր, փրկի՛ր
մեզ,
որովհետեւ սկզբից ի վեր մեզ վրայ
է քո անունը:
17 Ինչո՞ւ մեզ թողեցիր, որ մոլո-
րուենք քո ճանապարհներից, ո՛վ Տէր,
ինչո՞ւ կարծրացրիր մեր սրտերը, որ
քեզնից չվախենանք.
դարձի՛ր ի սէր քո ծառաների,
դարձի՛ր ի սէր քո ժողովրդի,
որ քո ժառանգութիւնն է:
18 Գուցէ քո սուրբ լեռը չկարողա-
նանք ժառանգել:
Մեր թշնամիները նեղեցին մեզ
եւ ոտնակոխ արին քո սրբութիւնը:
19 Եղանք ինչպէս առաջ էինք,
երբ դու մեզ չէիր տիրում,
եւ մենք քեզ չէինք պատկանում:

ԱՂՕԹՔ ԳԹՈՒԹԵԱՆ

64 Եթէ բացես երկինքը,
քո ահից լեռները կը սասանուեն եւ
կը հալուեն,

ինչպէս մոմը՝ կրակի դիմաց:
2 Կրակը կ՚այրի քո հակառակորդ-
ներին,
եւ քո անունը յայտնի կը դառնայ
թշնամիներիդ.
քո պատճառով հեթանոսները խռո-
վութեան կը մատնուեն:
3 Երբ հրաշալի գործեր կատարես,
քո ահից լեռները կը սասանուեն:
4 Հնուց ի վեր չլսեցինք,
եւ ոչ էլ մեր աչքերը քեզնից բացի
տեսան մէկ այլ Աստուած,
որ իր ողորմութեան վրայ յոյս
դնողների համար այսպիսի բաներ
անէր,
5 ընդառաջ գնար նրանց, որոնք
արդարութիւն են գործում
եւ յիշում քո ճանապարհները:
Եւ ահա դու բարկացար,
որովհետեւ մենք մեղք գործեցինք
եւ դրա համար էլ մոլորուեցինք:
6 Մենք ամէնքս պիղծ դարձանք,
եւ մեր ամբողջ արդարութիւնը դաշ-
տանի շորերի նմանուեց,
մեր անօրէնութիւնների պատճառով
մենք ամէնքս ցած թափուեցինք
ինչպէս տերեւ.
հողմերը քշեցին մեզ:
7 Ոչ մէկը չի կանչում քո անունը,
ոչ ոք չի մտածում քեզ ապաստան
դարձնել.
ահա թէ ինչու քո երեսը մեզնից
շրջեցիր
եւ մեր մեղքերի համար մեզ դատա-
պարտեցիր:
8 Տէ՛ր, մեր Հայրն ես դու.
մենք կաւ ենք, իսկ դու՝ մեր
ստեղծիչը,
մենք ամէնքս քո ձեռքի գործն ենք:
9 Տէ՛ր, սաստիկ մի՛ բարկացիր մեզ
վրայ
եւ մեր մեղքերը յաւիտեան մի՛
յիշիր:
Եւ հիմա նայի՛ր, Տէ՛ր,
մենք ամէնքս քո ժողովուրդն ենք:
10 Քո սուրբ քաղաք Սիոնն աւերակ
դարձաւ,
Երուսաղէմը՝ անապատ:
11 Անէծքի մատնուեց մեր սուրբ ու
փառաւոր տաճարը,
որտեղ մեր հայրերն օրհներգում էին
քեզ,
հրոյ ճարակ դարձաւ,
եւ մեր ամբողջ փառաւորութիւնը
կործանուեց:
12 Եւ այս ամենի վրայ դու աչք ես
փակում, Տէ՛ր,
լռութիւն ես պահում ու սաստիկ
ստորացնում մեզ:

ՏԷՐԸ ԿԸ ՀԱՏՈՒՑԻ ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

65 Ցայտնուեցի նրանց, որոնք իմ
մասին չէին հարցնում,
ինձ գտան նրանք, որոնք ինձ չէին
փնտռում:
«Ահաւասիկ ես կամ», ասացի այն
ազգին,
որն իմ անունը չկանչեց:
2 Ամէն օր իմ ձեռքը երկարեցի դէպի
անհնազանդ ու թշնամի ժողովուրդը,
որ ընթանում էր ոչ թէ բարի
ճանապարհով,
այլ իր մեղքերի յետեւից:
3 Այս ժողովուրդը բարկացնում էր
ինձ.
իմ առաջ միշտ զոհեր էին մատու-
ցում իրենց պարտէզներում
եւ իրենց աղիւսների վրայ խունկ
ծխում դեւերին,
որոնք նրանց համար յիշատակ
դառնալ չէին կարող:
4 Քարայրներում էին պառկում ու
քնում,
որպէսզի երազ տեսնէին.
խոզի միս էին ուտում ու զոհերի
մսաջուր,
եւ նրանց բոլոր ամանները
պղծուած էին:
5 Ասում էին. «Հեռո՛ւ կաց ինձնից,
մի՛ մօտեցիր ինձ,
որովհետեւ ես սուրբ եմ»:
Դա ծուխն է իմ բարկութեան,
որի մէջ ամէն օր բորբոքւում է
կրակը:
6 Ահա իմ առջեւ գրուած է.
«Չեմ լռելու, մինչեւ որ չհատուցեմ
նրանց մեղքերը՝
վերադարձնելով իրենց ծոցը:
7 Նրանց հետ միասին՝ նաեւ նրանց
հայրերի մեղքերը,— ասում է Տէրը,—
որոնք խնկարկում էին լեռների վրայ

եւ բլուրների վրայ նախատում էին
ինձ.
Հատուցելու եմ նրանց առաջուայ
արարքները՝
վերադարձնելով իրենց ծոցը»:
8 Այսպէս է ասում Տէրը.
«Ճիշտ այնպէս, ինչպէս ողկոյզների
մէջ մի ճութ է գտնւում,
եւ ասում են՝ "Մի՛ փչացնիր դա,
որովհետեւ Տիրոջ օրհնութիւնը կայ
դրա մէջ",
այնպէս էլ ես նոյն կերպ պիտի
վարուեմ իմ ծառայի համար.
յանուն նրա չեմ կործանելու
բոլորին:
9 Յակոբի եւ Յուդայի սերնդին
պիտի բարձրացնեմ,
որպէսզի ժառանգեն իմ սուրբ լեռը.
իմ ընտրեալներն ու ծառաները
պիտի ժառանգեն այն
եւ բնակուեն այնտեղ:
10 Անտառի մէջ պիտի լինեն
հովիւների մակաղատեղերը,
եւ Աքորի ձորը պիտի դառնայ նա-
խիրների հանգստավայրն իմ ժո-
ղովրդի,
որն ինձ է փնտռել:
11 Դուք թողեցիք ինձ,
մոռացաք իմ սուրբ լեռը
եւ սեղան գցեցիք դեւերին՝
բաժակ բարձրացնելով Բախտի
աստծու պատուին:
12 Ես էլ ձեզ սրի եմ մատնելու,
եւ ամէնքդ կոտորուելու էք,
որովհետեւ կանչեցի ձեզ, բայց
լսեցիք,
խօսեցի, բայց դուք ականջ չդրեցիք,
իմ առաջ չարութիւն կատարեցիք
եւ, ինչ չէի ցանկանում, ա՛յն
ընտրեցիք»:
13 Դրա համար էլ Տէրն այսպէս է
ասում.
«Ահաւասիկ նրանք, որ ինձ են
ծառայում, պիտի ուտեն,
իսկ դուք քաղցած էք մնալու.
ահաւասիկ նրանք, որ ինձ են
ծառայում, պիտի խմեն,
իսկ դուք ծարաւ էք մնալու.
ահաւասիկ նրանք, որ ինձ են
ծառայում, ուրախ պիտի լինեն,
իսկ դուք ամօթով էք մնալու:
14 Ահաւասիկ նրանք, որ ինձ են
ծառայում,
սրտի ուրախութեամբ պիտի ցնծան,
իսկ դուք ձեր սրտի ցաւից աղա-
ղակելու էք,
ձեր հոգու կսկծից ողբալու էք:
15 Ձեր անունն իմ ընտրեալների
նողկանքի համար պիտի թողնէք,
եւ Տէրը ձեզ պիտի մեռցնի:
Իմ ծառաներին նոր անուն պիտի
տրուի,
որը պիտի օրհնաբանուի երկրի
վրայ:
16 Որպէսզի օրհնեն ճշմարիտ Աստ-
ծուն,
երկրի վրայ երդուողները պիտի
երդուեն ճշմարիտ Աստուծով,
առաջուայ նեղութիւնը պիտի մո-
ռանան,
այլեւս իրենց միտքը չպիտի բերեն:

ՆՈՐ ԵՐԿԻՆՔ, ՆՈՐ ԵՐԿԻՐ

17 Քանի որ նոր երկինք ու նոր
երկիր պիտի ստեղծեմ,
առաջուաններն այլեւս չպիտի յիշեն
եւ այլեւս իրենց միտքը չպիտի
բերեն:
18 Ուրախութիւն ու ցնծութիւն են
գտնելու այն բանի մէջ,
ինչ ես հաստատելու եմ:
Ահա ես Երուսաղէմն ստեղծում եմ
ցնծութեան համար
եւ իմ ժողովրդին՝ ուրախութեան
համար:
19 Պիտի ցնծամ Երուսաղէմով,
պիտի ուրախանամ իմ ժողովրդով.
Նրա մէջ այլեւս լացի ձայն եւ կամ
բօթի ձայն չպիտի հնչի:
20 Այնտեղ չի լինելու մանկահասակ
եւ կամ ծեր,
որ լցրած չլինի իր կեանքի ժա-
մանակը,
քանզի կրտսեր որդին հարիւր
տարեկան պիտի լինի,
իսկ հարիւր տարեկանում մեռնողը
մեղաւոր եւ անիծեալ պիտի համարուի:
21 Տներ պիտի շինեն եւ իրե՛նք
պիտի բնակուեն,
այգիներ պիտի տնկեն եւ նրանց
պտուղն իրե՛նք պիտի ուտեն:

22 Այլեւս նրանք չպիտի շինեն, որ ուրիշները բնակուեն,
նրանք չպիտի տնկեն, որ ուրիշներն ուտեն:
Իմ ժողովրդի օրերը կենաց ծառի օրերի չափ պիտի լինեն,
նրանք երկար պիտի վայելեն իրենց ձեռքի գործերը:
23 Իմ ընտրեալներն այլեւս զուր տեղը չպիտի չարչարուեն
եւ անէծքի համար որդիներ չպիտի ծնեն,
որովհետեւ նրանք իրենց զաւակների հետ միասին Աստծուց օրհնուած սերունդ են:
24 Այնպէս պիտի լինի, որ դեռ նրանք ձայն չտուած՝ պիտի լսեմ նրանց,
դեռ նրանք չխօսած՝ պիտի ասեմ, թէ՝ ի՞նչ էք ուզում:
25 Այն ժամանակ գայլերն ու գառները միասին պիտի արածեն,
եւ առիւծը, ինչպէս եզը, յարդ պիտի ուտի,
օձը հող պիտի ուտի իբրեւ հաց:
Մարդիկ չեն մեղանչելու եւ չեն վնասելու իմ սուրբ լերան վրայ», — ասում է Տէրը:

ՏԷՐԸ ԴԱՏԵԼՈՒ Է ԱԶԳԵՐԻՆ

66 Այսպէս է ասում Տէրը.
«Երկինքն իմ աթոռն է,
եւ երկիրը՝ իմ ոտքերի պատուանդանը:
Ի՞նչ տուն պիտի շինէք ինձ համար, — ասում է Տէրը, —
եւ կամ իմ հանգստեան տեղն ինչպիսի՞ն պիտի լինի:
2 Չէ՞ որ այդ ամէնն իմ ձեռքը պատրաստեց,
եւ ամէն ինչ իմն է, — ասում է Տէրը.-
ու ես ո՞ւմ եմ նայելու, եթէ ոչ հեզերին ու խոնարհներին
եւ նրանց, ովքեր դողում են իմ խօսքից:
3 Բայց անօրէնը, որ ինձ եզ է զոհաբերում,
նոյնն է, թէ մարդու գանգ է ջախջախում,
իսկ նա, որ ոչխար է զոհաբերում,
նոյնն է, թէ շուն է մորթում,
իսկ նա, որ ընտիր ալիւր է ընծայաբերում,
նոյնն է, թէ խոզի արիւն է թափում,
իսկ նա, որ յիշատակների խնկարկման համար կնդրուկ է մատուցում,
նոյնն է, թէ հայհոյում է:
Նրանք ընտրեցին իրենց ճանապարհները
եւ իրենց այն գարշելի բաները,
որոնք ախորժելի էին իրենց հոգիներին:
4 Ու ես պիտի բռնեմ նրանց խաբէութիւնները
եւ հատուցեմ նրանց ըստ իրենց մեղքերի,
որովհետեւ կանչեցի, բայց ինձ չլսեցին,
խօսեցի, բայց ականջ չդրին,
չարիք գործեցին իմ առաջ
եւ ընտրեցին այն, ինչ ես չէի կամենում»:
5 Տիրոջ պատգամնե՛րը լսեցէք դուք,
որ դողում էք նրա խօսքերից:
Ո՛վ մեր եղբայրներ,
խօսեցէ՛ք ձեր ատելիների եւ ձեզ զզուանք պատճառողների հետ,
որպէսզի փառաւորուի Տիրոջ անունն ու այն յայտնուի ձեր ուրախութեան ժամին,
եւ նրանք ամաչեն:
6 Աղաղակի ձայն է հնչում քաղաքից, ձայն՝ տաճարից.
Տիրոջ ձայնն է դա, որ պատժով է հատուցելու թշնամիներին:
7 Քանի դեռ յղին չէր ծնել,
քանի դեռ երկունքի ցաւերը չէին հասել,
նա ազատուեց, եւ ծնուեց մի արու զաւակ:
8 Ո՞վ է լսել, ո՞վ է տեսել այսպիսի բան,
որ երկիրը մէկ օրում ծննդաբերի,
եւ միանգամից մի ամբողջ ազգ ծնուի.
քանզի Սիոնը երկունքի ցաւով բռնուեց եւ ծնեց իր մանուկներին:
9 «Ե՛ս տուեցի քեզ այդ յոյսը,
բայց դու ինձ չյիշեցիր, — ասում է Տէրը.—
մի՞թէ ես չստեղծեցի ամուլին եւ ծննդկանին», —

ասում է քո Աստուածը:
10 Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ,
եւ դուք էլ հաւաքուեցէ՛ք,
որպէսզի ցնծաք նրա մէջ.
ամէնքդ էլ, որ սիրում էք նրան
եւ սուգ էք մտել նրա համար,
խնդացէ՛ք եւ ուրախացէ՛ք միասին:
11 Պիտի սնուէք ու յագենաք նրա մխիթարող ստինքներից
եւ կուշտ ու պինդ վայելք պիտի առնէք նրա գալիք փառքից:
12 Այսպէս է ասում Տէրը.
«Ահա ես դէպի նրանց պիտի դարձնեմ խաղաղութիւնը՝ ինչպէս գետ
եւ հեթանոսների փառքը՝ ինչպէս յորդահոս հեղեղ.
իրենց ուսերին առած՝ նրանք պիտի բերեն դրանց մանուկներին
եւ, իրենց ծնկներին դրած, պիտի գգուեն նրանց:
13 Ինչպէս որ մայրն է գգւում իր մանկանը,
այնպէս էլ ես պիտի գգուեմ ձեզ,
եւ դուք պիտի մխիթարուէք Երուսաղէմում:
14 Պիտի տեսնէք, ու պիտի խնդան ձեր սրտերը,
ձեր ոսկորները դալար խոտի պէս պիտի ծաղկեն»:
Տիրոջ ձեռքը պիտի յայտնուի իր բարեպաշտներին
եւ սպառնայ անհաւատներին:
15 Ահա գալու է Տէրը ինչպէս կրակ,
եւ նրա կառքը՝ ինչպէս մրրիկ,
որպէսզի բարկութեամբ տայ իր հատուցումը
եւ կրակի բոցով՝ իր արհամարհանքը,
16 քանզի համայն երկիրը պիտի դատուի Տիրոջ կրակով,
եւ ամէն մի մարմին՝ նրա սրով.
շատերը պիտի վիրաւորուեն Տիրոջ ձեռքից:
17 «Նրանք, որ իրենց սրբում եւ մաքրում են իրենց պարտէզների ու սրահների մէջ,
որ ուտում են խոզի միս, պիղծ բաներ եւ մուկ,
նրանք միասին պիտի բնաջնջուեն, — ասում է Տէրը: —
18 Ես նրանց գործերն ու խորհուրդները գիտեմ.
պիտի գամ, որպէսզի հաւաքեմ բոլոր ազգերին ու բոլոր լեզուները.
թող գան ու տեսնեն իմ փառքը:
19 Նրանց վրայ նշան պիտի թողնեմ:
Նրանց միջից փրկուածներին պիտի ուղարկեմ ազգերի մէջ՝
դէպի Թարսիս ու Փուդ†,
դէպի Լուդ, Մոսոք եւ Թոբէլ,
դէպի Հելլադա եւ հեռաւոր կղզիները,
որոնք չեն լսել իմ անունը
եւ ոչ էլ իմ փառքն են տեսել.
նրանք պիտի պատմեն իմ փառքն ու իմ անունը ազգերի մէջ:
20 Եւ ինչպէս որ Տիրոջ Տանն Իսրայէլի որդիները
սաղմոսներով մատուցեցին ինձ իրենց նուէրները,
նրանք բոլոր ազգերից Երուսաղէմ սուրբ քաղաքը
Տիրոջն ընծայ պիտի բերեն իրենց եղբայրներին՝ կառքերի վրայ հեծած,
շքեղազարդ ձիերով ու հովանոցներով հանդերձ, — ասում է Տէրը: —
21 Եւ նրանցից եմ վերցնելու ինձ համար քահանաներ ու դեւտացիներ, — ասում է Տէրը: —
22 Ինչպէս որ նոր երկինքն ու նոր երկիրը, որ ես եմ ստեղծում,
մնալու են իմ առաջ, — ասում է Տէրը, —
այդպէս մնալու է եւ ձեր սերունդը:
23 Եւ այնպէս պիտի լինի,
որ ամսից ամիս ու շաբաթից շաբաթ
իւրաքանչիւր անձ պիտի գայ
Երուսաղէմում իմ առաջ երկրպագելու,
— ասում է Տէր Աստուածը: —
24 Պիտի ելնեն ու տեսնեն իմ հանդէպ յանցանք կատարած մարդկանց ոսկորները,
քանզի նրանց որդը չի մեռնելու,
նրանց կրակը չի հանգչելու,
նրանք յայտնի պիտի լինեն† բոլոր մարմնաւորներին»:

---

†Եբրայերէնում՝ Փուդ:
†Եբրայերէնում՝ զզուելի պիտի լինեն:

ՕՍԷԷ

Ներածութիւն

Օսէէն Իսրայէլի թագաւորութեան մէջ (Հիւսիսային թագաւորութիւն) Աստծու խօսքի տարածողը դարձաւ Ամոսից մի տասնեակ տարի յետոյ, այսինքն՝ 750 թուականին (Ն. Ք.): Նա այդպիսին մնաց շուրջ քսանհինգ տարի, համարեա մինչեւ Սամարիայի գրաւումը ասորեստանցիների կողմից եւ Իսրայէլի թագաւորութեան վերացումը 722-721 թուականներին:

Այս ժամանակաշրջանում պետութիւնը գտնւում էր կազմալուծուած վիճակում. Յերոբովամ Բ թագաւորի իշխանութիւնից յետոյ Ասորեստանի հզօրացումը դարձել էր սպառնալի: Սամարիայում պետական յեղաշրջումները յաջորդում էին միմեանց՝ իշխանութեան գլուխ բերելով այնպիսի մարդկանց, որոնք վարում էին իրար հակառակ քաղաքականութիւն: Ընկերային անհաւասարութիւնները, որոնք արդէն դատապարտուել էին Ամոսի կողմից, սկսել էին լուրջ բնոյթ ստանալ: Բայց մանաւանդ իսրայէլացիների հաւատը ծանր տագնապ էր ապրում. քանանացիների կրօնի ազդեցութիւնը գնալով մեծանում էր ժողովրդի մէջ:

Ամուսնական մի դրամայի պատճառով Օսէէն առաւել ծանր պիտի ապրէր այդ կացութիւնը եւ դրա հետեւանքները: Խոր վիրաւորանքի ենթարկուած նրա սէրը համազօր է այն տառապանքին, որ Աստուած զգում է իր ժողովրդի անհաւատարմութեան (մի տեսակ պոռնկացման) պատճառով: Սակայն Օսէէի հոգում ամուր է մնում նաեւ ապաքինման եւ կորցրած սէրը վերագտնելու յոյսը:

Օսէէն սէրը զետեղում է Աստծու եւ մարդկանց յարաբերութեան կենտրոնում եւ հէնց դրանով էլ նա կանգնած է աւետարանի գծի վրայ (Մաթ. 9. 13, 12. 7):

Օսէէի գրքում մարգարէութիւնները դասաւորուած են աւելի շուտ ըստ թեմաների, քան ժամանակագրական կարգի: Այսպէս՝

1. Օսէէի ամուսնական փորձառութիւնը եւ նրա պատգամը (գլ. 1-3):
2. Իսրայէլի կացութիւնը եւ նրա հոգեւոր նշանակութիւնը (գլ. 4. 1-9. 9):
3. Իսրայէլացիների անհաւատարմութեան հետեւոր արմատները (գլ. 9. 10-14. 1):
4. Աստծու սէրը մնում է ամենաուժեղը (գլ. 14. 2-10):

ՕՍԷԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ 1, 2

1 *Տիրոջ խօսքը, որ հասաւ Երիի որդի Օսէէին, Յուդայի երկրի թագաւորներ Օզիայի, Յովաթամի, Աքազի եւ Եզեկիայի օրերին եւ Իսրայէլի թագաւոր Յովասի որդի Յերոբովամի ժամանակ:*

ՕՍԷԷԻ ԿԻՆՆ ՈՒ ՁԱՒԱԿՆԵՐԸ

2 *Օսէէին տրուած Տիրոջ խօսքի սկիզբը: Տէրը ասաց Օսէէին.*
«Դու գնա՛ եւ քեզ համար մի պոռնիկ կին ա՛ռ
եւ պոռնկութեան որդիներ,
որովհետեւ երկիրը չափից դուրս պիտի պոռնկանայ Տիրոջ դէմ»:
3 *Նա գնաց ու առաւ Գոմերին՝ Դաբելայիմի աղջկան, որը յղիացաւ եւ որդի ծնեց նրա համար:* 4 *Եւ Տէրն ասաց նրան.*
«Նրա անունը Յեզրայէ՛լ դիր,
որովհետեւ մի քիչ ժամանակ եւս,
եւ ես Յեզրայէլի արեան վրէժը պիտի պահանջեմ Յէուիի տնից
եւ պիտի դադարեցնեմ Իսրայէլի տան թագաւորութիւնը:
5 *Այն օրը պիտի խորտակեմ Իսրայէլի աղեղը Յեզրայէլի Հովտում»:*
6 *Գոմերը երկրորդ անգամ յղիացաւ եւ մի աղջիկ ծնեց, ու Տէրը ասաց նրան.*
«Նրա անունը դի՛ր Չողորմած,
որովհետեւ այլեւս պիտի չշարունակեմ ողորմել Իսրայէլի տանը,
այլ նրանց դէ՛մ պիտի կանգնեմ հակառակութեամբ:
7 *Բայց Յուդայի որդիներին պիտի ողորմեմ եւ պիտի փրկեմ նրանց,*
ես՝ իրենց Տէր Աստուածը,
բայց չեմ փրկելու նրանց աղեղով,
ո՛չ սրով, ո՛չ պատերազմով, ո՛չ կառքերով,
ո՛չ ձիերով եւ ո՛չ հեծեալներով»:
8 *Եւ Չողորմածին կտրեց կաթից: Գոմերը դարձեալ յղիացաւ եւ մի որդի ծնեց:*
9 *Տէրը ասաց. «Նրա անունը դի՛ր Ոչ իմ ժողովուրդ,*
քանի որ դուք իմ ժողովուրդը չէք,
եւ ես ձեր ոչ մի բանը չեմ»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՊԻՏԻ ՎԵՐԱՀԱՍՏատուի

10 *Բայց իսրայէլացիների քանակը*
ծովի աւազի պէս անչափ ու անթիւ կը լինի.
եւ այնտեղ, որտեղ ասուեց՝
"Դուք իմ ժողովուրդը չէք",
այնտեղ "կենդանի Աստծու որդիներ կը կոչուեն":
11 *Եւ Յուդայի ու Իսրայէլի որդիները միասին կը հաւաքուեն,*
իրենց համար մի իշխանութիւն կը հաստատեն
եւ կ'ելնեն այն երկրից,
քանի որ մեծ է Յեզրայէլի օրը:

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԳՈՄԵՐԸ ԵՒ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԻՍՐԱՅԷԼԸ

2 *«Ձեր եղբօրն ասացէ՛ք՝ "Իմ ժողովո՛ւրդ",*
եւ ձեր քրոջը՝ "Ողորմած":
2 *Դա՛տ արէք ձեր մօր հետ, դա՛տ արէք,*
քանի որ նա իմ կինը չէ,
եւ ես նրա ամուսինը չեմ:
Ես կը վերացնեմ նրա պոռնկութիւնը իմ ներկայութիւնից
եւ շնութիւնը՝ իր ստինքների միջից,
3 *որովհետեւ նրան կը մերկացնեմ*
եւ նրան կ'անեմ այնպէս, ինչպէս ծնուած օրը.
նրան անբնակ կը դարձնեմ,
կը վերածեմ անջուր հողի
եւ կը սպանեմ նրան ծարաւից:
4 *Նրա որդիներին չեմ գթայ,*
քանի որ պոռնկութեան որդիներ են,
5 *քանի որ չափից դուրս պոռնկացաւ նրանց մայրը*
եւ ամօթի մէջ թողեց ում որ ծնեց,
քանի որ ասաց. "Կը գնամ իմ սիրածների յետեւից,
որոնք կը տան ինձ իմ հացն ու ջուրը,
իմ հագուստն ու ներքնազգեստը,
իմ գինին ու իմ ձէթը
եւ ամէն ինչ, որ պէտք է ինձ":
6 *Դրա համար ես կը փակեմ նրա ճանապարհները,*
կը պատնէշեմ նրա ուղիները,

եւ նա իր շաւիղները չի գտնի:
7 Նա կը գնայ իր սիրածների յետեւից եւ չի հասնի նրանց,
կը փնտռի, բայց չի գտնի նրանց
եւ կ'ասի. "Կը գնամ եւ կը վերադառնամ իմ նախկին ամուսնու մօտ,
որովհետեւ այն ժամանակ աւելի լաւ էր ինձ համար, քան հիմա":
8 Եւ նա չիմացաւ, որ ե՛ս տուեցի նրան ցորենը, գինին եւ ձէթը,
բազմացրի նրա դրամը,
իսկ նա շատ արծաթէ եւ ոսկէ արձաններ սարքեց Բահաղին:
9 Դրա համար ես կը դառնամ եւ յետ կ'առնեմ իմ ցորենն իր ժամանակին,
իմ գինին եւ իմ ձէթն իրենց ժամանակին
եւ կը հանեմ նրա վրայից իմ հագուստն ու ներքնազգեստը,
որ չծածկի իր մերկութիւնը:
10 Եւ արդ, կը պարզեմ նրա պղծութիւնը իր սիրածների առաջ,
եւ ոչ ոք չի ազատի նրան իմ ձեռքից:
11 Կը խափանեմ նրա բոլոր ուրախութիւնները,
նրա տօները, ամսագլուխներն ու շաբաթները
եւ նրա բոլոր տօնախմբութիւնները:
12 Կը կործանեմ նրա այգիներն ու թզենիները,
որոնց համար մի անգամ ասաց, թէ՝
"Իմ վարձն են սրանք, որ տուեցին ինձ իմ սիրածները".
Նրան որպէս վկայութիւն կը դնեմ,
կ'ուտեն նրան անապատի գազանները,
երկնքի թռչուններն ու երկրի սողունները:
13 Կը պատժեմ նրան Բահաղիմի օրերի համար,
երբ զոհ էր մատուցում նրանց,
ականջողեր էր դնում,
իր քառամանեակներն էր գցում,
գնում էր իր սիրածների հետ
եւ մոռացել էր ինձ», - ասում է Տէրը:

ՏԻՐՈՋ ՍԷՐԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԷՊ

14 «Դրա համար ահա կը մոլորեցնեմ նրան
եւ կը դարձնեմ նրան ինչպէս անապատ†,
կը խօսեմ նրա սրտին,
15 ապա կը տամ նրան իր ունեցուածքը
եւ Աքորի հովիտը՝ բացելու նրա միտքը,
եւ նա խոնարհ կը դառնայ այնտեղ,
ինչպէս իր մանկութեան օրերին,
եւ ինչպէս նրա՝ Եգիպտացիների երկրից ելնելու օրերին:
16 Այն օրը, - ասում է Տէրը, - ինձ կ'անուանի՝ "Իմ ամուսին"
եւ Բահաղիմ չի կոչի ինձ:
17 Կը վերացնեմ Բահաղիմի անունները նրա բերանից,
եւ այլեւս չեն յիշուի նրանց անունները:
18 Այն օրը ուխտ կը կնքեմ նրանց հետ՝
անապատի գազաններով, երկնքի թռչուններով եւ երկրի սողուններով
հանդերձ.
եւ աղեղը, սուրն ու ճակատամարտը կը վերացնեմ երկրից
եւ կը բնակեցնեմ քեզ յոյսով:
19 Քեզ կը նշանեմ ինձ յաւիտեան,
քեզ կը նշանեմ ինձ արդարութեամբ եւ իրաւունքով,
ողորմութեամբ եւ գթութեամբ:
20 Քեզ կը նշանեմ ինձ հաւատով,
եւ դու կը ճանաչես Տիրոջը:
21 Այն օրը, - ասում է Տէրը, - ես կ'ունկնդրեմ երկնքին,
երկինքը կ'ունկնդրի երկրին,
22 երկիրը կ'ունկնդրի ցորենին, գինուն ու ձէթին,
եւ նրանք կ'ունկնդրեն Յեզրայէլին:
23 Ես նրան կը սերմանեմ երկրի վրայ ինձ համար,
կը գթամ Ողորմածին, կ'ասեմ ինձ օտար ժողովրդին՝
24 "Իմ ժողովուրդն ես դու",
եւ նա կ'ասի՝ "Իմ Տէր Աստուածն ես դու"»:

ՕՍԷԷՆ ԵՒ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

3 Եւ Տէրն ասաց. «Դարձեալ դու գնա՛

†Եբրայերէն՝ Ահա ես կը հրապուրեմ նրան, անապատ կը տանեմ նրան եւ կը խօսեմ նրա հետ նրա սրտի համեմատ:

եւ սիրի՛ր մի կին, որ սիրի չարութիւնը
եւ շնացող լինի, ինչպէս որ Աստուած սիրեց իսրայէլացիներին, իսկ նրանք օտար աստուածներին էին նայում եւ սիրում էին չամիչով պատրաստուած բլիթներ»: 2 Ես վարձեցի նրան ինձ համար տասնհինգ արծաթով, մի քոռ գարիով եւ մի մատնաչափ գինով: 3 Եւ ասացի նրան. «Շատ օրեր կը նստես ինձ մօտ եւ այլեւս չես պոռնկանայ ու այլեւս ուրիշ տղամարդունը չես լինի»:
4 Արդարեւ, շատ օրեր իսրայէլացիները կը նստեն առանց թագաւորի, առանց իշխանի, առանց զոհաբերութեան, առանց սեղանի, առանց քահանայութեան եւ առանց յայտնութիւնների: 5 Դրանից յետոյ իսրայէլացիները կը դառնան եւ կը փնտռեն իրենց Տէր Աստծուն ու իրենց Դաւիթ արքային. կը զօրանան Տիրոջով եւ նրա բարութիւններով՝ վերջին օրերին:

ՏԷՐՆ ԱՄՐԱՍՏԱՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ

4 Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, իսրայէլացինե՛ր,
որովհետեւ Տէրը դատ ունի երկրի բնակիչների հետ.
«Չկայ ճշմարտութիւն, չկայ ողորմութիւն
եւ չկայ Աստծու ճանաչում երկրի վրայ:
2 Անէծք, ստութիւն, սպանութիւն,
գողութիւն եւ շնութիւն ողողել են երկիրը
եւ արիւնը արեան են խառնում:
3 Դրա համար սուգը կը պատի երկիրը,
եւ կը նուազեն նրա բոլոր բնակիչները՝
անապատի գազանները, գետնի սողունները եւ երկնքի թռչունները,
կը պակասեն ծովի ձկները.
4 քանի որ չի լինելու մէկը, որ դատի,
ոչ էլ մէկը, որ յանդիմանի»:

ՏԷՐՆ ԱՄՐԱՍՏԱՆՈՒՄ Է ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

5 «Բայց իմ ժողովուրդը նման է քահանային հակաճառողի.
նրանք կը տկարանան ցերեկով,
եւ մարգարէն էլ կը տկարանայ քեզ հետ.
քո մօրը նմանեցրի գիշերուան:
6 Իմ ժողովուրդը նմանուեց նրան, ով իմացութիւն չունի.
քանի որ դու մերժեցիր իմացութիւնը,
ես էլ քեզ կը մերժեմ,
որպէսզի քահանայութիւն չանես ինձ համար.
քանի որ մոռացար քո Աստծու օրէնքները,
ես էլ կը մոռանամ քո որդիներին:
7 Քահանաները իրենց թուի աճի համեմատ մեղք գործեցին իմ նկատմամբ,
նրանց փառքը անարգանքի կը վերածեմ:
8 Իմ ժողովրդի մեղքերով կ'ուռճանան
եւ իրենց անիրաւութեամբ կը հարստացնեն իրենց անձերը:
9 Ինչպէս ժողովուրդը, այնպէս էլ քահանան կը լինի,
եւ ես կը պատժեմ նրան,
նրա ճանապարհների եւ նրա խորհուրդների համաձայն կը հատուցեմ նրան.
10 կ'ուտեն եւ չեն յագենայ,
կը պոռնկանան, բայց յաջողութիւն չեն գտնի,
քանի որ լքեցին Տիրոջը՝ ամբողջապէս պոռնկանալու համար»:

ՏԷՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

11 «Գինին եւ հարբեցողութիւնը գրաւեցին իմ ժողովրդի սիրտը:
12 Վիճակաքարեր գցելով խորհուրդ էին հարցնում,
եւ քահանաներն իրենց փայտիկներով պատասխանում էին նրանց.
պոռնկութեան սատանայից մոլորուեցին
եւ պոռնկացան իրենց Աստծու նկատմամբ:
13 Լեռների գլխին զոհ էին մատուցում
եւ բլուրների վրայ ողջակէզ էին անում

կաղնիների, կաղամախիների եւ սաղարթախիտ ծառերի տակ,
քանզի հովանին հաճելի էր նրանց.
դրա համար ձեր դուստրերը կը պոռնկանան;
եւ ձեր հարսները կը շնանան:
14 Ես չեմ պատժելու ձեր դուստրերին, երբ պոռնկանան,
եւ ձեր հարսներին՝ երբ շնանան,
քանի որ այրերն իրենք էին պոռնիկների հետ կենակցում,
զոհ էին մատուցում մեհեաններին նուիրուածների հետ,
եւ քո ժողովուրդը, որ չէր հասկանում այդ,
խառնակւում էր պոռնիկների հետ:
15 Բայց դո՛ւ, Իսրայէ՛լ, տգէտ մի՛ լինիր,
եւ Ցուդայի՛ որդիներ, մի՛ մտէք Գաղգաղա,
մի՛ բարձրացէք Ովնի տուն
եւ մի՛ երդուէք կենդանի Տիրոջ անունով,
16 քանի որ Իսրայէլն ինձ համար եղաւ ինչպէս լուծը թօթափած երինջ»:
Արդ, Տէրը նրանց որպէս գառ կ'արածացնի բաց դաշտում: 17 Եփրեմը յարեց կուռքերին, գայթակղութեան մատնեց իր անձը. բոլորը տենչացին քանանացիների կուռքերին, գինի սիրեցին. թողէ՛ք նրանց: 18 Զափից դուրս պոռնկացան, սիրեցին անպատուութիւնը իրենց հպարտութեան պատճառով: 19 Քամու մրրիկ կը փչի նրանց թեւերի տակ, եւ կ'ամաչեն իրենց զոհասեղանների համար:

5 Լսեցէ՛ք սա, ո՛վ քահանաներ, մտի՛կ արէք, ո՛վ Իսրայէլի տուն,
թագաւորի՛ տուն, ակա՞նջ դրէք,
քանի որ ձերն է դատաստանը.
2 կը լինէք ինչպէս թակարդ դիտանոցում
եւ ինչպէս մի ցանց՝ ձգուած բարձրադիր վայրում,
որ որսորդները դրեցին որսի համար:
3 «Ես եմ ձեր ուղղիչը.
ես ճանաչեցի Եփրեմին,
եւ Իսրայէլը հեռու չէ ինձնից,
քանի որ այժմ Եփրեմը պոռնկացաւ,
եւ Իսրայէլը պղծուեց»:
4 Նրանք չմտածեցին վերադառնալ իրենց Աստծուն,
որովհետեւ պոռնկութեան չար ոգին նրանց մէջ է,
եւ Տիրոջը չճանաչեցին:
5 Իսրայէլի հպարտութիւնը կը խոնարհուի նրա առաջ.
ե՛ւ Իսրայէլը, ե՛ւ Եփրեմը կը տկարանան իրենց անօրէնութեան մէջ,
կը տկարանայ եւ Ցուդան նրանց հետ:
6 Նրանք ոչխարներով եւ զոհերով կը գնան Տիրոջը որոնելու
եւ չեն գտնի նրան,
որովհետեւ նա խուսափեց նրանցից:
7 Նրանք Տիրոջը թողեցին,
քանի որ օտար որդիներ ծնուեցին նրանց:
Ահա այժմ թրթուրը կ'ուտի նրանց,
նրանց եւ նրանց երկիրը:

ՊԱՏԵՐԱԶՄ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՋԵՒ

8 Փո՛ղ հնչեցրէք բլուրների վրայ,
գոռացէ՛ք բարձունքների վրայ,
յայտարարեցէ՛ք Ովնի տանը, թէ յիմարացաւ Բենիամինը,
9 եւ Եփրեմը կործանուեց յանդիմանութեան օրերին.
«Իսրայէլի ցեղերին հաւատարմութիւն ցոյց տուեցի:
10 Ցուդայի երկրի իշխանները նմանուեցին սահմանները փոփոխողների.
նրանց վրայ ջրի պէս կը թափեմ իմ կատաղութիւնը:
11 Եփրեմը ճզրկեց իր թշնամուն
եւ ոտնակոխ արեց արդարադատութիւնը,
քանի որ սկսեց սնոտի բաների յետեւից գնալ[†]:
12 Ես Եփրեմի համար սարսափ կը լինեմ
եւ Ցուդայի տան համար՝ ինչպէս խայթոց:
13 Եփրեմը տեսաւ իր ախտը,
եւ Ցուդան՝ իր ցաւերը.
Եփրեմը գնաց ասորեստանցիների մօտ

[†]Եբրայերէն բնագրում 11-րդ եւ 12-րդ համարները տարբերւում են:

եւ պատգամաւորներ ուղարկեց Ցարիմի արքային,
բայց նա չկարողացաւ փրկել ձեզ
եւ ոչ էլ հանգստացնել ձեզ ցաւերից:
14 Քանզի ես Եփրեմի համար յովազի պէս եմ
եւ Ցուդայի տան համար՝ առիւծի նման.
կը յարձակուեմ, կը յափշտակեմ,
15 կ'առնեմ նրանց, ու ոչ ոք չի լինի, որ փրկի.
կը գնամ եւ կը վերադառնամ իմ տեղը,
մինչեւ որ նրանք կործանուեն եւ փնտռեն ինձ»:

ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՂԾ ԶՂՋՈՒՄԸ

6 «Իրենց նեղութիւնների մէջ կը շտապեն ինձ մօտ եւ կ'ասեն.
"Գնանք եւ վերադառնանք մեր Տէր Աստծուն.
2 որովհետեւ նա հարուածեց մեզ եւ ինքն էլ կը բժշկի,
վիրաւորեց եւ կը կապի մեր վէրքերը:
3 Երկու օր յետոյ նա կը կենդանացնի մեզ,
եւ երրորդ օրը կ'ելնենք կը կանգնենք նրա առաջ,
կը ճանաչենք Տիրոջը
եւ հետամուտ կը լինենք ճանաչելու նրան:
Մենք նրան պատրաստ կը գտնենք ինչպէս առաւօտը,
եւ նա կը գայ դէպի մեզ՝ ինչպէս վաղ եւ ուշացած անձրեւը՝ դէպի հողը":
4 Ի՞նչ անեմ քեզ, Եփրե՛մ,
կամ ի՞նչ պատճառեմ քեզ, Ցուդա՛,
որովհետեւ ձեր ողորմութիւնը վաղորդեան ամպի պէս է
եւ առաւօտեան ցօղի պէս, որ անհետանում է:
5 Դրա համար հնձեցի ձեր մարգարէներին
եւ կոտորեցի նրանց իմ բերանի խօսքով.
իմ արդարադատութիւնը իբրեւ լոյս կը ծագի:
6 Քանզի ողորմութիւն եմ ցանկանում եւ ոչ թէ զոհաբերում,
Աստծու ճանաչումն աւելի եմ ցանկանում, քան ողջակէզները.
7 բայց նրանք եղան ինչպէս մի մարդ, որ դրժում է ուխտը:
8 Գաղաադն այնտեղ արհամարհեց ինձ,
քաղաք, որ սնոտի բաներ է անում եւ խառնում ջրերը:
9 Քո զօրութիւնը աւազակ մարդու զօրութեան պէս է:
Քահանաները թաքցրին ճանապարհը,
սպանեցին Սիկիմը, որովհետեւ անօրէնութիւն գործեցին:
10 Իսրայէլի տան մէջ տեսայ արհաւիրքներ.
այնտեղ պոռնկացաւ Եփրեմը,
եւ պղծուեց Իսրայէլը:
11 Ցուդան սկսեց այգեկութը,
երբ ես գերութիւնից վերադարձրի իմ ժողովրդին»:

7 «Իսրայէլին բժշկելիս
ի յայտ կը գան Եփրեմի չարիքներն ու Սամարիայի չարիքները,
քանի որ սխալ բաներ արեցին.
գող կը մտնի նրա տուն,
իսկ աւազակը կը թալանի նրա ճանապարհներին.
2 նրանք միասին կը մրմնջեն,
ինչպէս մրմնջում են մարդիկ իրենց մտքում.
նրանց բոլոր չարիքները յիշեցի.
նրանց խորհուրդները պաշարեցին նրանց,
եւ նրանք յայտնուեցին իմ առաջ:

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՂԱՏՈՒՄ

3 Իրենց չարիքներով ուրախացրին թագաւորին
եւ իրենց ստերով՝ իշխաններին:
4 Բոլորը շնացան, ինչպէս թոնիրն է վառւում
հաց թխելու համար բորբոքուած կրակից եւ ճարպի զանգուածից,
մինչեւ այն խմորուի.
5 այդպէս ձեր թագաւորների օրերին

իշխաններն սկսեցին վառուել գինուց
եւ ձեռք մեկնեցին չարագործներին,
6 որովհետեւ սրտերն իրենց հնոցի պէս բորբոքուեցին՝ անիծելու նրանց:
Գիշերն ամբողջ քնից յագեցաւ Եփրեմը.
առաւօտ եղաւ,
եւ բորբոքուեցին որպէս կրակի բոց:
7 Բոլորը տաքացան ինչպէս վառուած հնոց,
եւ կրակը կերաւ նրանց դատաւորներին.
նրանց բոլոր թագաւորներն ընկան,
եւ նրանց մէջ չկար մէկը, որ կանչէր ինձ:

ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

8 Եփրեմը խառնւում էր ժողովուրդներին,
Եփրեմը նմանուեց շուռ չտուած հացիկի.
9 օտարները կերան նրա զօրութիւնը, եւ նա չիմացաւ.
սպիտակեցին նրա մազերը, եւ նա չզգաց:
10 Իսրայէլի հպարտութիւնը կը խոնարհուի նրա առաջ.
նրանք չվերադարձան իրենց Տէր Աստծուն
եւ չփնտռեցին նրան այս բոլորի մէջ:
11 Եփրեմը նման էր անմիտ աղաւնու, որ սիրտ չունի.
Եգիպտոս էին կանչւում,
բայց գնացին Ասորեստան:
12 Ուր էլ որ գնան, նրանց վրայ կը գցեմ իմ ցանցը,
երկնքի թռչունների նման ցած կը բերեմ նրանց
եւ կը պատժեմ նրանց իրենց գլխին գալիք նեղութեան լուրով:
13 Վա՛յ նրանց, քանի որ նրանք խոյս տուեցին ինձնից,
ողորմելի են, քանի որ ամբարշտացան իմ դէմ:
Ես փրկեցի նրանց, իսկ նրանք ստութեամբ բամբասեցին ինձ:
14 Նրանց սրտերը չկանչեցին ինձ, այլ ողբում էին իրենց անկողիններում.
նրանք ցորենի ու գինու համար ծուատում էին իրենց:
15 Ես խրատեցի նրանց
եւ զօրացրի նրանց բազուկները,
բայց նրանք չարիք խորհեցին իմ դէմ:
16 Նրանք դարձան անգոյին
եւ եղան ինչպէս լարուած աղեղ:
Սրով կ'ընկնեն նրանց իշխանները
իրենց լեզուի անսանձ խստութեան պատճառով,
եւ սա կը լինի նրանց նախատինքը Եգիպտոսում»:

ՏԷՐԸ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

8 «Կ'իջնի նա նրանց կենտրոնում ինչպէս հողը
եւ ինչպէս արծիւ՝ Տիրոջ տան վրայ,
որովհետեւ անտեսեցին իմ ուխտը
եւ իմ օրէնքի դէմ ամբարշտացան:
2 Կ'աղաղակեն դէպի ինձ. "Աստուա՛ծ, ճանաչեցինք քեզ".
3 քանի որ Իսրայէլը հեռացաւ բարիքներից
նրանք հալածեցին թշնամուն:
4 Անձամբ թագաւորներ կարգեցին,
բայց ոչ իմ միջոցով.
տիրեցին, բայց ցոյց չտուեցին ինձ,
իրենց արծաթից ու ոսկուց կուռքեր շինեցին իրենց,
որպէսզի կործանուեն:
5 Խորտակի՛ր քո հորթը, Սամարիա՛.
իմ բարկութիւնը բորբոքուեց նրանց դէմ.
մինչեւ ե՞րբ պիտի չկարողանան մաքրուել Իսրայէլում:
6 Արհեստաւորը պատրաստեց այն,
եւ նա Աստուած չէ,
քանի որ քո հորթը մոլորեցուցիչ է, Սամարիա՛,
7 որովհետեւ խորշակահար սերմ սերմանեցին,
եւ նա էլ կը կործանուի նրանց նման.
նրանց ցորենի խուրձը ուժ չի ունենայ խիւս դառնալու.
եթէ նոյնիսկ դառնայ, օտարները կ'ուտեն այն:
8 Իսրայէլն ընկղմուեց.

այժմ նա ազգերի մէջ դարձաւ ինչպէս անպիտան անօթ:
9 Քանի որ գնացին դէպի ասորեստանցիները,
ուրախացաւ Եփրեմն առանձին,
սիրեց կաշառքը.
10 դրա համար էլ կը մատնուի ազգերին:
Բայց այժմ կ'ընդունեմ նրանց,
եւ մի փոքր կը դադարեն թագաւորներ եւ իշխաններ օծելուց:
11 Եփրեմն առատացրեց զոհասեղանները,
եւ նրա սիրելի զոհասեղանները մեղք դարձան նրան:
12 Բազմաթիւ պատգամներ կը գրեմ նրանց,
բայց նրա կուռքերը օտարոտի կը համարուեն,
նաեւ նրա սիրելի զոհասեղանները:
13 Թէպէտ եւ զոհեր կը մատուցեն եւ դրանց միսը կ'ուտեն,
Տէրը չի ընդունի այն:
Այժմ կը յիշի նրանց անիրաւութիւնները
եւ վրէժ կը լուծի նրանց անօրէնութիւնների համար,
քանի որ նրանք վերադարձան Եգիպտոս
եւ պիղծ բաներ պիտի ուտեն ասորեստանցիների մէջ:
14 Իսրայէլը մոռացաւ իր Արարչին,
եւ մեհեաններ շինեցին.
Յուդան շատացրեց պարսպապատ քաղաքները,
բայց ես կրակ կ'ուղարկեմ նրա քաղաքների վրայ,
եւ այն կ'ուտի դրանց հիմքերը»:

ՕՍԷԷՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏԻԺԸ

9 Մի՛ խնդար, Իսրայէ՛լ, եւ մի՛ ուրախացիր ինչպէս երկրի ժողովուրդները,
որովհետեւ պոռնկացար քո Աստծու դէմ,
սիրեցիր կաշառքը ցորենի բոլոր կալերի վրայ:
2 Կալերն ու հնձանները չճանաչեցին նրանց,
եւ գինին խաբեց նրանց:
3 Նրանք չեն բնակուի Տիրոջ երկրում.
Եփրեմը կը բնակուի Եգիպտոսում,
եւ նրանք ասորեստանցիների մէջ պիղծ բաներ պիտի ուտեն:
4 Տիրոջը գինի չնուիրեցին
եւ նրա սիրտը չքաղցրացրին իրենց վրայ,
նրանց զոհերը սգոյ հոգեճաշ կը դառնան նրանց,
բոլոր նրանք, ովքեր կ'ուտեն նրանից, կը պղծուեն,
քանի որ իրենց հացը միայն իրենց կը մնայ եւ չի մտնի Տիրոջ Տան մէջ:
5 Ի՞նչ պիտի անէք տարեկան հաւաքի օրը
եւ Տիրոջ տօնի օրը:
6 Դրա համար ահա կը գնան դէպի եգիպտացիների թշուառութիւնը.
Մեմփիսը կ'ընդունի նրանց,
եւ Մաքմասը կը թաղի նրանց,
կորստի կը մատնի նրանց արծաթը,
եւ նրանց բնակարանում փուշ կը բուսնի:
7 Հասել են քո վրէժխնդրութեան օրերը,
հասել են օրերը քո հատուցման,
եւ Իսրայէլը կը չարչարուի ինչպէս յիմարացած մարգարէ,
ինչպէս այսահար մի մարդ.
քո անիրաւութիւնների շատութեան պատճառով վրայ հասաւ մոլորութիւնը:
8 Եփրեմը դիտորդ է Աստծու հետ,
մարգարէն գայթակղութեան թակարդ է նրա բոլոր ճանապարհների վրայ.
նրանք մոլորութիւն հաստատեցին Աստծու տան մէջ,
9 ապականուեցին ինչպէս բարձունքի օրերին.
Տէրը կը յիշի նրանց անօրէնութիւնները
եւ վրէժ կը լուծի նրանց մեղքերի համար:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵՂՔԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔԸ

10 Գտայ Իսրայէլին՝ ինչպէս խաղող անապատում,
եւ տեսայ նրանց հայրերին՝ որպէս պահակ վաղահաս թզենու մէջ:

Նրանք մտան Բելփեգոր եւ օտարացան ամօթահար լինելով.
գարշելիները դարձան սիրելիներ:
11 Եփրեմը թռչունի պէս թռաւ,
եւ փառք չի լինի նրանց ծնունդներից, երկունքից եւ յղութիւնից:
12 Թէպէտեւ կը մեծացնեն իրենց որդիներին,
սակայն զուրկ կը մնան մարդկանցից:
Արդարեւ, վայ է նրանց, թէեւ իմ մարմինը նրանցից է:
13 Ինչպէս Եփրեմին տեսայ,
Նրանք իրենց որդիներին որպէս զոհ կանգնեցրին,
եւ Եփրեմն սկսեց իր որդիներին դուրս բերել սպանդի:
14 Տո՛ւր նրանց, Տէ՛ր,
– ի՞նչ ես տալու նրանց, –
տո՛ւր նրանց անորդի արգանդ եւ ցամաքած ստինքներ:

ԱՍՏՈՒՈ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԻՍՐԱՅԷԼԻՆ

15 «Նրանց ամբողջ չարութիւնը Գաղգաղայում է,
ուստի եւ այնտեղ ատեցի նրանց.
իրենց չար ընթացքի համար իմ տնից կը հեռացնեմ նրանց
եւ այլեւս չեմ սիրի նրանց.
նրանց բոլոր իշխանները ապստամբներ են:
16 Ախտահարուեցին Եփրեմի արմատները,
չորացան եւ այլեւս պտուղ չեն տայ,
որովհետեւ նոյնիսկ եթէ ծնեն,
կ'ոչնչացնեմ նրանց որովայնների ցանկալի պտուղները»:

ՄԱՐԳԱՐԷՆ ԽՕՍՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՄԱՍԻՆ

17 Աստուած կը մերժի նրանց,
քանի որ չլսեցին նրան,
եւ նրանք մոլորուած կը լինեն ազգերի մէջ:

10 Ճիւղառատ պտղալից որթատունկ է Իսրայէլը.
նա իր պտուղների առատութեան չափ բազմացրեց իր զոհասեղանները,
իր պարարտութեան չափ արձաններ կանգնեցրեց:
2 Նրանք բաժանեցին իրենց սրտերը,
նրանք կ'ապականուեն:
Նա կը կործանի նրանց զոհասեղանները,
ողբալի կը դառնան նրանց արձանները,
3 քանի որ հիմա կ'ասեն. «Թագաւոր չունենք,
որովհետեւ Տիրոջից չվախեցանք,
բայց թագաւորը ի՞նչ կարող է անել մեզ համար»:
4 Եթէ խօսքեր ասի՝ ստայօդ են.
ուխտ կը կնքի,
եւ արդարադատութիւնը որպէս սէզ կ'աճի ագարակի անմշակ հողում:
5 Ովնի տան հորթի պէս պանդուխտ կը դառնան Սամարիայի բնակիչները,
որովհետեւ նրա ժողովուրդը սուգ արեց նրա վրայ.
եւ ինչպէս որ դառնացրին նրան,
ոտնակոխ կը լինեն նրա փառքի համար,
քանի որ գերուեցին նրա կողմից:
6 Եւ նրան կապկած Ասորեստան կը տանեն որպէս նուէր Ցարիմ արքային:
Նա կաշառքով կ'ընդունի Եփրեմին.
Իսրայէլը կ'ամաչի իր խորհուրդներից:
7 Սամարիան մերժեց իր թագաւորին,
ինչպէս տաշեղ ջրի երեսին:
8 Կը վերանան Ովնի մեհեանները՝ Իսրայէլի մեղքերը,
փուշ ու տատասկ կը բուսնեն նրանց զոհասեղաններին,
եւ լեռներին կ'ասեն, թէ՝ «Ընկէ՛ք մեզ վրայ»
եւ բլուրներին, թէ՝ «Ծածկեցէ՛ք մեզ»:

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՎՃԻՌԸ

9 «Այն օրից, երբ բարձունքները գոյութիւն ունեն,
Իսրայէլը մեղք գործեց:
Այնտեղ տեղաւորուեցին նրանք:
Եւ բարձունքի վրայ չի հասնի նրանց պատերազմը,

10 որ եկաւ խրատելու նրանց անօրէնութեան որդիների դէմ.
ազգերը կը հաւաքուեն նրանց դէմ՝ խրատելու նրանց իրենց կրկնակի անիրաւութիւնների համար:
11 Եփրեմը մարզուած երինջ է,
որ սիրում է հակառակութիւնը,
բայց ես կը նետուեմ նրա գեղեցիկ պարանոցի վրայ,
կը բարձրանամ Եփրեմի վրայ,
կ'անտեսեմ Ցուդային, եւ Ցակոբը կը յաղթի նրան:
12 Ձեզ համար արդարութեան սերմեր ցանեցէ՛ք
եւ կենաց պտուղ քաղեցէ՛ք.
վառեցէ՛ք ձեզ համար գիտութեան լոյսը,
փնտռեցէ՛ք Տիրոջը,
մինչեւ որ արդարութեան պտուղները հասնեն ձեզ:
13 Ինչո՞ւ էք փորփրում ամբարշտութիւնը,
փխրեցնում նրա անօրէնութիւնները
եւ ուտում ստութեան պտուղը.
որովհետեւ յոյս դրեցիր քո կառքերի վրայ,
քո զօրքի բազմութեան վրայ:
14 Քո ժողովուրդը կորստեան կը մատնուի,
եւ քո բոլոր պարսպապատ ամրոցները կը կործանուեն:
Ինչպէս Ցերոբովազի տնից Սաղաման իշխանի պատերազմի ժամանակ,
երբ մայրերին սպանեցին որդիների կողքին,
15 այդպէս էլ կ'անեն ձեզ, ո՛վ Իսրայէլի տուն,
ձեր չարիքների պատճառով»:

ԱՍՏՈՒՈ ՍԷՐԸ ԱՊՍՏԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԷՊ

11 «Առաւօտեան նրանք ընկան,
ընկաւ Իսրայէլի թագաւորը:
Քանի դեռ մանուկ էր Իսրայէլը,
ես սիրեցի նրան եւ Եգիպտոսից կանչեցի նրա որդիներին:
2 Եւ ինչպէս կանչեցի նրանց, այնպէս էլ հեռացան իմ ներկայութիւնից:
Նրանք Բահաղիմին էին զոհ մատուցում
եւ խնկարկում էին կուռքերին:
3 Ես խափանեցի Եփրեմի ընթացքը
եւ նրան վերցրի իմ բազուկների վրայ.
4 չիմացան, որ ես բժշկում եմ նրանց:
Երբ մարդիկ ապականուեցին,
ես կապեցի նրանց իմ սիրոյ կապերով
եւ նրանց համար դարձայ այնպիսին,
որ ապտակում է ուրիշի ծնօտին:
Ես հոգ կը տանեմ եւ կը յաղթեմ նրան:
5 Եփրեմը բնակուեց Եգիպտոսում,
իսկ ասորեստանցին նրա թագաւորն էր,
քանի որ չուզեցին վերադառնալ:
6 Նա սրով տկարացաւ իր քաղաքներում
եւ դադարեց կռիւ մղել իր ձեռքերով:
Նրանք կը ճաշակեն իրենց խորհուրդների պտուղը:
7 Նրա ժողովուրդը կախուած կը մնայ իր բնակավայրից,
եւ Աստուած կը բարկանայ նրա պատուական բաների վրայ
ու չի մեծարի նրան:
8 Ինչպէ՞ս վարուեմ քեզ հետ, Եփրե՛մ,
ինչպէ՞ս պաշտպան լինեմ քեզ, Իսրայէ՛լ,
ինչպէ՞ս վարուեմ քեզ հետ.
քեզ կը դարձնեմ ինչպէս Ադամ եւ ինչպէս Սեբոյիմ:
9 Սիրտս շուռ եկաւ, գութս շարժուեց,
եւ իմ սաստիկ բարկութեան թելադրանքով չեմ վարուի
ու չեմ թողնի, որ Եփրեմը ջնջուի,
քանի որ ես Աստուած եմ եւ ոչ թէ մարդ,
Սուրբ եմ ձեր մէջ եւ քաղաք չեմ մտնի:
10 Տիրոջ յետեւից կը գնան:
Նա առիւծի պէս կը մռնչայ.
քանի որ նա կը մռնչայ եւ ջրերի որդիներին կ'ապշեցնի:
11 Որպէս թռչուն կը թռչեն, կը գան Եգիպտոսից,

եւ որպէս աղաւնիներ՝ Ասորեստանից.
«Կը պատսպարեմ նրանց իրենց տներում», – ասում է Տէրը:
12 Եփրեմն ինձ ստութեամբ պաշարեց,
իսկ Իսրայէլի եւ Յուդայի տունը՝ անբարշտութեամբ:
Բայց այժմ Աստուած ճանաչեց նրանց,
եւ նրանք կը կոչուեն Աստծու սուրբ ժողովուրդ:

ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ՅՈՒԴԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԵՆ

12 Սակայն այս Եփրեմը չար է.
հետեւեց խորշակին,
ամբողջ օրը դատարկ եւ սնոտի բաներ շատացրեց,
դաշինք կնքեց ասորեստանցիների հետ
եւ իւղ էր տանում Եգիպտոս:
2 Տէրը վէճ ունեցաւ Յուդայի հետ
եւ կը պատժի Յակոբին.
ըստ նրա ճանապարհի եւ ընթացքի կը հատուցի նրան:
3 Արգանդում նա խաբեց իր եղբօրը
եւ իր գործերով ուժ ցոյց տուեց Աստծու դէմ.
նա չափուեց Հրեշտակի հետ եւ յաղթեց նրան:
4 Լաց եղան, աղաչեցին ինձ եւ գտան ինձ իմ տանը.
այնտեղ խօսք ուղղուեց նրանց,
5 եւ Ամենակալ Տէր Աստուածը կը դառնայ յիշատակը նրանց:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՅԼ ԽՕՍՔԵՐ

6 «Դու կը դառնաս քո Աստծուն,
կը պահպանես ողորմութիւն եւ արդարութիւն
եւ ամէն ժամ կը մերձենաս քո Տէր Աստծուն»:
7 Անիրաւութեան կշեռքը Քանանի ձեռքում է,
եւ նա սիրեց բռնանալ:
8 Եփրեմն ասաց. «Հարստացայ,
հանգիստ գտայ իմ անձի համար».
Նրա բոլոր վաստակները չեն մնայ նրան,
քանի որ անօրէնութիւնների համար յանցանք գործեց:
9 «Բայց ես՝ քո Տէր Աստուածը,
որ հանեցի քեզ Եգիպտացիների երկրից,
դարձեալ կը բնակեցնեմ քեզ վրանների տակ ինչպէս տօն օրերին:
10 Կը խօսեմ մարգարէների հետ,
կը շատացնեմ տեսիլքները
եւ մարգարէների միջոցով կը ներկայանամ:
11 Եթէ Գաղաադը չկար, ապա սուտ էին իշխանները,
որ զոհ էին մատուցում Գաղգաղայում,
եւ նրանց զոհասեղանները նման էին կրիաների խոպան հողում:
12 Յակոբը գնաց ասորիների դաշտը,
Իսրայէլը ծառայեց կնոջ համար
եւ կնոջ համար պահակութիւն արեց:
13 Տէրը մարգարէի միջոցով Իսրայէլը հանեց Եգիպտոսից,
եւ նա պահպանուեց մարգարէի միջոցով:
14 Իսրայէլը ինձ բարկացրեց ու զայրացրեց,
նրա արիւնը իր վրայ կը թափուի,
եւ Տէրը կը հատուցի նրան նրա նախատինքների համար»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՃԻՌԸ

13 Ըստ Եփրեմի խօսքի, նա ստացաւ Իսրայէլի Աստծու վճիռը,
նրան հաստատեց Բահաղի համար ու մեռաւ:
2 Այժմ դարձեալ շարունակեցին մեղանչել
եւ իրենց համար կուռքերի պատկերների նման
ձուլածոյ արձաններ պատրաստեցին իրենց արծաթից՝
ճարտար արհեստաւորների գործ տալու նրանց:
Նրանք ասացին. «Մարդի՛կ, զո՛հ մատուցեցէք,
որովհետեւ հորթերը նուազեցին»:
3 Դրա համար կը լինեն ինչպէս առաւօտեան ամպ
եւ վաղորդեան ցող, որ անցնում է,
ինչպէս փոշի՝ կալից քշուած,
եւ ինչպէս ծուխ՝ պատուհանից դուրս եկող:
4 «Ես եմ քո Տէր Աստուածը,
որ հաստատեցի երկինքը եւ հաստատեցի երկիրը,
ես, որի ձեռքերը հաստատեցին երկնքի բոլոր զօրքերը,
բայց քեզ ցոյց չեմ տայ, որ գնաս նրանց յետեւից.
ես հանեցի քեզ Եգիպտացիների երկրից,
ինձնից բացի Աստուած չես ճանաչի,
եւ ինձնից բացի փրկիչ չկայ:
5 Ես էի քեզ հովւում անապատում՝ անշէն երկրում:
6 Նրանք իրենց արօտավայրերի չափ յագեցան եւ զմայլուեցին,
գոռոզացան իրենց սրտերով,
դրա համար էլ մոռացան ինձ:
7 Ես նրանց համար կը լինեմ ինչպէս յովազ
եւ ինչպէս ընձառիւծ Ասորեստանի ճանապարհին:
8 Կը պատահեմ նրանց ինչպէս սոված արջ,
կը պատառոտեմ նրանց սրտերի վարագոյրը.
անտառի կորիւնները կ'ուտեն նրանց,
եւ վայրի գազանները կը յօշոտեն նրանց:
9 Քո ապականութեան մէջ, Իսրայէ՛լ,
ո՞վ է, որ պիտի օգնի քեզ:
10 Ո՞ւր է քո թագաւորը, որ փրկի քեզ քո բոլոր քաղաքներում,
որ դատի քեզ,
եւ որի մասին ասացիր, թէ՝
"Տո՛ւր ինձ թագաւոր եւ իշխան":
11 Ես քեզ թագաւոր տուեցի իմ բարկութեամբ
եւ յետ վերցրի նրան իմ սրտմտութեամբ:
12 Եփրեմը անիրաւութիւնների կծիկ է,
եւ նրա մեղքերը թաքնուած են:
13 Ծննդկանի պէս երկունք կը պատահի նրան.
դա է քո իմաստուն որդին.
դրա համար այժմ նա չի կարող տոկալ քո որդիների կործանմանը:
14 Ես դժոխքից կ'ազատեմ նրանց եւ մահից կը փրկեմ նրանց:
Որտե՞ղ է քո յաղթանակը, մա՛հ,
որտե՞ղ է քո խայթոցը, դժո՛խք:
15 Մխիթարութիւնը ծածկուած է իմ աչքերից,
քանի որ նա խորութիւն է դնում եղբայրների միջեւ»:
Տէրը նրա վրայ կը բերի խորշակի հողմ անապատից,
կը ցամաքեցնի նրա երակները
եւ կ'աւերի նրա աղբիւրները:
Նա կը չորացնի նրա երկիրը եւ նրա բոլոր թանկագին անօթները:

ՕՍԷԷԻ ԱՂԵՐՍԸ ԻՍՐԱՅԷԼԻՆ

14 Կը կործանուի Սամարիան,
որովհետեւ նա իր Աստծու դէմ դուրս եկաւ.
նրանք սրով կ'ընկնեն,
նրանց ծծկեր երեխաները քարի կը զարնուեն,
եւ նրանց յղի կանայք կը պատռուեն:
2 Դարձի՛ր, Իսրայէ՛լ, դէպի՛ քո Տէր Աստուածը,
քանի որ տկարացար քո անօրէնութիւնների մէջ:
3 Առէ՛ք այս խօսքերը ձեզ հետ,
դարձէ՛ք ձեր Տէր Աստծուն եւ ասացէ՛ք նրան.
«Դու կարո՛ղ ես ներել մեր մեղքերը,
որ անիրաւութիւն չանենք,
այլ բարին ընդունենք եւ հատուցենք քեզ մեր շրթունքների պտուղը.
– եւ ձեր սրտերը բարութեան մէջ կը գտնեն: –
4 Ասորեստանը չի փրկի մեզ,
եւ մենք ձի չենք հեծնի
ու այլեւս մեր ձեռակերտներին "աստուած մեր" չենք ասի,
որովհետեւ նա, որ քո մէջ է, կը գթայ որբերին»:

ՏԷՐԸ ՆՈՐ ԿԵԱՆՔ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ

5 «Կը վերականգնեմ նրանց բնակարանները
եւ ամբողջ սրտով կը սիրեմ նրանց,
որովհետեւ անցաւ նրանց դէմ

ունեցած իմ բարկութիւնը:
6 *Ես ցող կը դառնամ Իսրայէլի համար,*
նա կը ծաղկի ինչպէս շուշան
եւ իր արմատները կը կը տարածի ինչպէս լիբանոսը:
Կ'ընդարձակուեն նրա ճիւղերը,
7 *նա կը դառնայ ինչպէս պտղալից ձիթենի,*
եւ նրա հոտը կը բուրի ինչպէս կնդրուկի բոյր:
8 *Կը դառնան եւ կը նստեն նրա յարկի տակ,*
կ'ապրեն եւ ապահով կը լինեն ցորենով,
նա կը բողբոջի ինչպէս որթատունկ,
9 *եւ նրա յիշատակը կը լինի ինչպէս Լիբանանի գինի Եփրեմի համար:*
Այլեւս ի՞նչ գործ ունի նա կուռքերի հետ.
ե՛ս խոնարհեցրի նրան,
ես էլ կը զօրացնեմ նրան.
ես նման եմ պտղառատ այգու,
ինձանից է քո պտուղը»:
10 *Ով իմաստուն է, կը հասկանայ այս բաները,*
ով հանճարեղ է, կ'իմանայ սրանք,
քանի որ ուղիղ են Տիրոջ ճանապարհները.
արդարները դրանցով կ'անցնեն,
իսկ ամբարիշտները կը սայթաքեն դրանց մէջ:

ԱՄՈՍ

Ներածութիւն

Շուրջ 760 թուականին (Ն. Ք.) Ամոսը Թեկուա կոչուած իր հայրենի գիւղից (Յուդայի թագաւորութիւն) գալիս է Բեթէլ, որը Իսրայէլի թագաւորութեան գլխաւոր սրբավայրն էր: Նրա գալուստն իսկոյն որոտի նման պայթում է Բեթէլի խաղաղ երկնակամարում:

Մինչ Իսրայէլի թագաւորութիւնը Յերոբովամ Բ-ի իշխանութեան օրօք (787-747), օգտուելով հարեւան Ասորեստանի իր դէմ ուղղուած ռազմական գործողութիւնների դադարեցումից, խաղաղ եւ բարգաւաճ մի շրջան էր ապրում, Ամոսը յանկարծ յայտնում է Աստծու ընտրեալ ժողովրդի վախճանը: Թագաւորութեան մէջ կրօնի որեւէ հալածանք կամ արգելք չկար. ինչո՞ւ, հետեւաբար, այս անսպասելի յայտարարութիւնը:

Իւրաքանչիւր մարդ, ինչպէս եւ ժողովուրդ, պիտի կարողանայ ապրել այլ մարդկանց կամ ժողովուրդների մէջ: Դրա համար Աստուած հաստատել էր իրաւունք: Արդ, այդ իրաւունքը տեւապէս ոտնահարւում էր ուժեղների կողմից: Աստուած, հետեւաբար, հանդէս է գալիս որպէս թոյլերի իրաւունքի խստապահանջ պաշտպան:

Ամոսը պատմում է, թէ ինչու ինքը դարձել է աստուածային այդպիսի արմատական մի պատգամի տարածիչը: Նրա այդ առաքելութիւնն էլ պատճառ է դառնում, որ նա իսկոյն վտարուի Իսրայէլից:

Ամոսի գրքի 7-9 գլուխները բացայայտում են նրա պատգամի աղբիւրները. դրանք այն հինգ տեսիլքներն են, որոնք հանդիսանում են Աստծու յետագայ միջամտութեան խորհրդանշանները:

Ամոսի գիրքը մտածել է տալիս մեզ, թէ ինչպիսի յեղաշրջող ազդեցութիւն ունի Աստծու պատգամը մեր աշխարհում: Իսկ հայրենիքից վտարուած մարգարէի կերպարն էլ թոյլ է տալիս խորհել այն ճակատագրի մասին, որ պիտի վերապահուէր Քրիստոսին, որը նոյնպէս հանդիսացաւ պատգամաբերը մի մեծ յեղաշրջման: Այդ յեղաշրջումը, ճիշտ է, բռնութեամբ կատարուած մի յեղաշրջում չէր, բայց որքա՜ն աւելի արմատական էր, քան այն յեղաշրջումը, որ յայտնուել էր Ամոսի կողմից:

ԱՄՈՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Ամոսի պատգամները Թեկուա Ակկարիմում†, որոնք նրան յայտնուեցին մի տեսիլքում Երուսաղէմի մասին, երկրաշարժից երկու տարի առաջ Հրէաստանի Օզիա արքայի եւ Իսրայէլի արքայ Յովասի որդի Յերոբովամի ժամանակ:*

2 *Նա ասաց.*
Տէրը խօսեց Սիոն լեռից,
եւ ձայն տուեց Երուսաղէմից.
չորացան հօտերի արօտները
եւ ցամաքեցին Կարմէլի բարձունքները:

ՏԷՐԸ ԴԱՏՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ ԵՒ ՆՐԱ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻՆ

ա) ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴԷՄ

3 *Տէրն ասում է.*
«Դամասկոսի գործած երեք անօրէնութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար,
քանի որ նրանք գաղաադացիների յղիներին կտրատում էին երկաթէ սղոցներով,
ես պիտի պատժեմ նրանց:
4 *Կրակ պիտի գցեմ Ազայէլի տունը,*
եւ այն պիտի ոչնչացնի Ադերի որդու տան հիմքերը:
5 *Պիտի խորտակեմ Դամասկոսի նիգերը:*
Պիտի ոչնչացնեմ Ովնի դաշտի բնակիչներին:
Պիտի կոտորեմ Խառանի տոհմը:
Գերի պիտի ընկնի ասորիների ընտիր ժողովուրդը», - ասում է Տէրը:
6 *Այսպէս է ասում Տէրը.*
«Գազայի երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար,
քանի որ գերեցին Սողոմոնի ամբողջ ժողովուրդը
եւ արգելափակեցին Եդոմում,
ես պիտի պատժեմ նրանց:
7 *Կրակ պիտի գցեմ Գազայի պարիսպները,*
եւ այն պիտի լափի նրա հիմքերը:
8 *Պիտի ոչնչացնեմ Ազոտի բնակիչներին,*
եւ պիտի վերանայ ժողովուրդը Ասկաղոնից†,
պիտի հարուածեմ Ակկարոնը,
եւ պիտի կորչեն այլազգիների մնացորդները», - ասում է Տէրը:

բ) ՏԻՒՐՈՍԻ ԴԷՄ

9 *Այսպէս է ասում Տէրը.*
«Տիւրոսի երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար,
քանի որ նրանք Եդոմի մէջ արգելափակեցին Սողոմոնի գերիներին
եւ չյիշեցին եղբայրների ուխտը,
ես պիտի պատժեմ նրանց:
10 *Կրակ պիտի գցեմ Տիւրոսի պարիսպները,*
եւ այն պիտի լափի նրա հիմքերը»:

գ) ԵԴՈՄԻ ԴԷՄ

11 *Այսպէս է ասում Տէրը.*
«Եդոմի երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար,
քանի որ նա սրով հալածեց իր եղբօրը,
անգութ գտնուեց եղբօր նկատմամբ երկրում,
բորբոքեց իր բարկութիւնը
եւ նրա հանդէպ պահեց իր թշնամանքի յանդգնութիւնը,
ես պիտի պատժեմ նրան:
12 *Կրակ պիտի գցեմ Թեմանը*
եւ կրակը պիտի լափի նրա պարիսպների հիմքերը‡»:

դ) ԱՄՈՆԻ ԴԷՄ

13 *Այսպէս է ասում Տէրը.*
«Ամոնացիների երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար,
քանի որ նրանք ճեղքեցին գաղաադացիների յղի կանանց փորը,
որպէսզի ընդարձակեն իրենց սահմանները,
ես պիտի պատժեմ նրանց:
14 *Ռաբի պարիսպների վրայ կրակ պիտի բորբոքեմ,*

†Եբրայերէնում՝ *Ասկաղոնի գաւազանակիրը:*
‡*Բոսրայի պալատները:*

†Եբրայերէնում՝ *հովիւներից:*

եւ այն պիտի լափի նրա հիմքերը պատերազմի օրուայ աղաղակի ձայնով:
Եւ նա պիտի սասանուի իր վախճանի օրը:
15 *Նրանց թագաւորները գերի պիտի տարուեն*
նրանց քրմերով ու իշխաններով հանդերձ», - ասում է Տէր Աստուածը:

ե) ՄՈՎԱԲԻ ԴԷՄ

2 *Այսպէս է ասում Տէրը.*
«Մովաբի երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար
ես պիտի պատժեմ նրանց,
քանի որ նրանք այրեցին եդոմայեցիների թագաւորների ոսկորները,
մինչեւ որ դրանք մոխիր դարձան:
2 *Կրակ պիտի գցեմ Մովաբի վրայ,*
եւ կրակը պիտի լափի նրանց քաղաքների հիմքերը.
Մովաբը պիտի մեռնի տկարութեան մէջ՝
աղաղակով եւ փողի ձայնով:
3 *Պիտի սպանեմ նրա դատաւորին*
եւ նրա հետ պիտի կոտորեմ բոլոր իշխաններին», - ասում է Տէրը:

զ) ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԴԷՄ

4 *Այսպէս է ասում Տէրը.*
«Յուդայի երկրի որդիների երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար
ես պիտի պատժեմ նրանց,
քանի որ նրանք մերժեցին Տիրոջ օրէնքներն ու չկատարեցին նրա հրամանները,
մոլորեցրին նրանց իրենց ստեղծած սնոտի կուռքերով,
որոնց յետեւից գնացին նրանց հայրերը:
5 *Կրակ պիտի գցեմ Հրէաստանի վրայ,*
եւ այն պիտի լափի Երուսաղէմի հիմքերը»:

է) ԻՍՐԱՅԷԼԻ ԴԷՄ

6 *Այսպէս է ասում Տէրը.*
«Իսրայէլի երեք ամբարշտութիւնների
եւ մանաւանդ չորրորդի համար
ես պիտի պատժեմ նրանց,
քանի որ նրանք արդարին ծախեցին արծաթով
եւ տնանկին՝ մի զոյգ կօշիկի դիմաց,
7 *Նրանց, որ տրորում են երկրի հողը,*
որ կուփահարում էին աղքատների գլուխները,
շեղում խոնարհների ճանապարհը,
եւ հայր ու որդի մի բոզի մօտ էին մտնում,
որպէսզի պղծեն իրենց Աստծու անունը:
8 *Նրանք իրենց զգեստները որպէս ծածկոց էին գցում իրենց վրայ եւ զոհասեղանին†*
եւ բռնագրաւուած գինի էին խմում իրենց Աստծու տան մէջ:
9 *Բայց ես նրանց առաջից վերացրի Ամորհացուն,*
որի հասակը մայրու բարձրութիւն ունէր,
եւ նա հզօր էր կաղնու պէս,
վերացրի նրա պտուղները՝ վերեւից,
եւ նրա արմատները՝ ներքեւից:
10 *Ես հանեցի ձեզ Եգիպտացիների երկրից*
եւ քառասուն տարի շրջեցրի ձեզ անապատում՝
ժառանգել տալու համար ամորհացիների երկիրը:
11 *Ես մարգարէներ վերցրի ձեր որդիներից*
եւ ուխտաւորներ՝ ձեր երիտասարդներից:
Մի՞թէ դա այդպէս չի եղել, իսրայէլացինե՛ր», - ասում է Տէրը: -
12 *Դուք Իմ ուխտաւորներին գինի էիք խմեցնում*
եւ մարգարէներին պատուիրում, որ չմարգարէանան:
13 *Դրա համար էլ ահա ես ձեզ պիտի ճզմեմ տեղում,*
ինչպէս ճզմում է օրանով լի սայլը

†Եբրայերէնում՝ *եւ ամէն սեղանի մօտ ընկողմանում էին գրաւ առնուած հագուստների վրայ:*

իր անցած տեղը:
14 Փախչողին լքելու է նրա ուժը,
զօրաւորը զօրեղ չի մնայ իր զօրութեամբ,
եւ պատերազմողը չի փրկի ինքն իրեն:
15 Աղեղնաւորը չի կարող դէմ կանգնել,
արագավազը չի փրկուի,
հեծեալն էլ չի ազատի իր անձը:
16 Սիրտը չի գտնի իր զօրութիւնը,
մերկն էլ կը հալածուի այն օրը», - ասում է Տէրը:

ՏԻՐՈՋ ԿՇՏԱՄԲԱՆՔԸ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ

3 Լսեցէ՛ք այս պատգամը,
որ Տէրը խօսեց Իսրայէլի ձեր այդ տան
եւ բոլոր այն տոհմերի դէմ,
որոնց հանեց Եգիպտացիների երկրից:
2 «Երկրի բոլոր ազգերից միայն ձե՛զ ընտրեցի,
այդ պատճառով էլ ձե՛զ պիտի պատժեմ ձեր բոլոր չարիքների համար»:

ՄԱՐԳԱՐԷՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԼՌԵԼ

3 Երկու մարդ միասին կը գնա՞ն երբեւէ, եթէ չճանաչեն իրար:
4 Առիւծը կը մռնչի՞ անտառում, եթէ նա որս չի արել,
առիւծի կորիւնը ձայն կը տա՞յ իր որջից, եթէ նա ոչինչ յափշտակած չլինի:
5 Թռչունը գետին կ'ընկնի՞ առանց թռչնորսի,
գետնի վրայ թակարդը կը շրխկա՞յ, եթէ ոչինչ չի բռնուել:
6 Կը լինի՞, որ քաղաքում փող հնչի,
եւ ժողովուրդը չխռովուի.
քաղաքում չարիք կը պատահի՞, եթէ Տէրը չի արել այն:
7 Դրա համար Տէրը ոչինչ չի անի,
եթէ իր գաղտնի խորհուրդը չյայտնի իր ծառայ մարգարէներին:
8 Եթէ առիւծը մռնչայ,
ո՞վ է որ չի սարսռայ:
Եթէ Տէր Աստուածը խօսեց,
ո՞վ է, որ չի մարգարէանայ:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ԴԷՄ

9 Ցայտնեցէ՛ք Ասորեստանի գաւառներում,
Եգիպտացիների երկրի գաւառներում եւ ասացէ՛ք.
«Հաւաքուեցէ՛ք Սամարիայի լերան վրայ
եւ տեսէ՛ք բազում զարմանալի գործերն ու բռնութիւնը,
որ կատարւում են այնտեղ:
10 Նրանք չիմացան իրենց պատահելիք եղեռնը, - ասում է Տէրը, -
քանի որ նրանք անօրէնութիւն եւ թշուառութիւն էին գանձում իրենց գաւառներում»:
11 Դրա համար այսպէս է ասում Տէրը Տիւրոսին.
«Այն երկիրը, որ քո շուրջն է, կ'աւերուի,
կը խորտակուի քո ամբողջ զօրութիւնը,
եւ կը յափշտակուեն քո գաւառները»:
12 Այսպէս է ասում Տէրը.
«Ինչպէս հովիւը կը կարողանայ
առիւծի բերանից ազատել երկու սրունք
կամ ականջի մի բլթակ,
այնպէս պիտի փրկուեն իսրայէլացիները,
որոնք ապրում են Սամարիայում
նրանց ազգի դէմ դիմաց
եւ դամասկացիների մէջ:
13 Քահանանե՛ր, լսեցէ՛ք եւ վկայութի՛ւն տուէք Յակոբի այդ տանը, -
ասում է Ամենակալ Տէրը,
14 քանի որ այն օրը, երբ Իսրայէլի ամբարշտութեան պատճառով պիտի պատժեմ նրան,
վրէժ պիտի առնեմ նաեւ Բեթէլի զոհասեղանից,
պիտի փշրուեն զոհասեղանի եղջիւրները եւ գետին ընկնեն:
15 Ես պիտի խորտակեմ ընդարձակ ապարանքներն ու ամարանոցները,
պիտի անհետանան փղոսկրեայ ապարանքները,

եւ շատ ուրիշ ապարանքներ պիտի ընկնեն», - ասում է Տէրը:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ԿԱՆԱՆՑ ԴԷՄ

4 «Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, Բասանի՛ երինջներ,
որ Սամարիայի լեռներում էք,
որ զրկում էք աղքատներին եւ ոտքի տակ էք դցում տնանկին,
դուք որ ասում էիք ձեր ամուսիններին՝
"Գինի՛ մատուցեցէք մեզ, որ խմենք":
2 Տէրը երդւում է իր սրբութեամբ,
որ ահա օրեր պիտի գան ձեզ վրայ,
եւ ձեզ զէնքով† պիտի քշեն,
եւ նրանց, որ ձեզ հետ են,
պիտի նետեն եռացած կաթսաների մէջ:
3 Դուք մերկ դուրս պիտի գաք միմեանց դէմ
եւ պիտի ընկնէք Ռեմանի լերան վրայ», - ասում է Տէրը:

ԻՍՐԱՅԷԼԻ ՉԱՆՑԱՌՈՒԹԻՒՆԸ

4 «Մտէ՛ք Բեթէլ, ամբարշտացէ՛ք,
գնացէ՛ք Գաղգաղա եւ շատացրէ՛ք ամբարշտութիւնը,
առաւօտեան մատուցեցէ՛ք ձեր զոհերը
եւ երեք օրը մէկ՝ ձեր տասանորդները:
5 Ընթերցում էին արտաքին օրէնքները եւ հրաւիրում խոստովանութեան.
յայտնեցէ՛ք, որ իսրայէլացիները սիրեցին սա», - ասում է Տէրը:
6 «Ես ձեր բոլոր քաղաքներում ատամի ցաւ պատճառեցի ձեզ
եւ հացի կարօտ թողեցի ձեր բոլոր բնակավայրերում,
բայց դուք էլի չդարձաք դէպի ինձ», - ասում է Տէրը:
7 «Եւ ձեզ անձրեւից զրկեցի բերքահաւաքից երեք ամիս առաջ.
մի քաղաքում անձրեւ տեղացրի,
իսկ միւս քաղաքում չտեղացրի.
մի մասը, ուր անձրեւ տեղացրի, խոնաւ պիտի մնայ,
իսկ միւսը, ուր չտեղացրի, պիտի ցամաքի:
8 Երկու ու երեք քաղաքներ պիտի հաւաքուեն մի քաղաքում՝ ջուր խմելու,
եւ չեն յագենալու,
բայց դուք էլի չէք դառնայ դէպի ինձ», - ասում է Տէրը:
9 «Հարուածեցի ձեզ տապով
եւ դալկութիւն բերի ձեր բերքի վրայ:
Գնացիք ձեր պարտէզները եւ այգիները,
ձեր թզենիներն ու ձեր ձիթենիները թրթուրը կերաւ,
սակայն եւ այնպէս դուք չդարձաք դէպի ինձ», - ասում է Տէրը:
10 «Եգիպտոսի ճանապարհին մահ ուղարկեցի ձեզ վրայ
եւ կոտորեցի ձեր երիտասարդներին՝
գերի տարուած ձեր երիվարների հետ,
սպառեցի ձեր բանակները իմ բարկութեան հրով,
սակայն եւ այնպէս դուք չդարձաք դէպի ինձ», - ասում է Տէրը:
11 «Կործանեցի ձեզ, ինչպէս Աստուած կործանեց Սոդոմն ու Գոմորը,
եւ դուք կրակից փրկուած փայտի պէս եղաք,
սակայն եւ այնպէս չդարձաք դէպի ինձ», - ասում է Տէրը:
12 «Դրա համար էլ ես այսպէս պիտի անեմ քեզ, Իսրայէ՛լ,
բայց քանի որ այսպէս պիտի անեմ քեզ,
պատրա՛ստ եղիր կանչելու քո Աստծու անունը, Իսրայէ՛լ:
13 Ահաւասիկ ես եմ, որ հաստատում եմ երկինքը,
հաստատում եմ հողմերը,
ես եմ նա, որ իր օծեալին ի յայտ է բերում մարդկանց մէջ,
ստեղծում է առաւօտն ու մէգը
եւ ելնում է երկրի բարձունքների վրայ.
Ամենակալ Տէր Աստուած է նրա անունը»:

† Ըստ յերէնում՝ կարթերով:

ՏԷՐԸ ԳԹԱՍԻՐՏ Է ՅՈՎՍԷՓԻ ՏԱՆ ՀԱՆԴԷՊ

5 Լսեցէ՛ք Տէր Աստծու խօսքը,
որով ես պիտի ողբամ ձեզ վրայ:
Ընկա՛ւ Իսրայէլի տունը եւ այլեւս
չի կարողանայ ոտքի կանգնել:
2 Իսրայէլի կոյսը կործանուեց իր
երկրում,
եւ չկայ մէկը, որ կանգնեցնի նրան:
3 Այսպէս է ասում Տէր Աստուածը.
«Այն քաղաքից, որից հազար մարդ
էր դուրս գալիս, պիտի մնայ հարիւրը,
եւ որից հարիւրն էր ելնում, պիտի
մնայ տասը Իսրայէլի այդ տնից»:
4 Ահա այսպէս է ասում Տէրը Իս-
րայէլի այդ տանը.
«Փնտռեցէ՛ք ինձ, եւ դուք կ'ապրէք.
5 մի՛ փնտռէք Բեթէլը եւ Գաղգաղա
մի՛ մտէք,
Երդման ջրհորից մի՛ ելնէք,
քանի որ Գաղգաղան գերուելով
պիտի գերուի,
եւ Բեթէլը կարծես թէ չի եղել»:
6 Փնտռեցէ՛ք Տիրոջը, եւ դուք կ'ապ-
րէք,
որպեսզի կրակի պէս չբորբոքուի
Յովսէփի տունը,
կրակը չուտի այն,
եւ ոչ ոք չի լինի, որ հանգցնի
Իսրայէլի այդ տունը:
7 Նա, ով իրաւունք է հաստատում
բարձունքներում
արդարութիւն է դրել երկրում,
8 ով ստեղծում է ամէն ինչ եւ նո-
րոգում,
ով մահուան ստուերը այդ է դարձ-
նում
եւ ցերեկը մթնեցնում ինչպէս գիշեր,
ով վերեւ է կանչում ծովի ջրերը
եւ հեղում երկրի երեսին,
9 Ամենակալ Տէր է նրա անունը.
Նա, որ կոտրում է ուժեղի զօրու-
թիւնը
եւ թշուառութիւն է բերում ամրոց-
ների վրայ:
10 Դռների առաջ նրանք ատեցին
յանդիմանողներին
եւ սուրբ խօսքերը պիղծ դարձրին:
11 Դրա համար աղքատներին նեղե-
լով
եւ նրանցից ընտրութեամբ կաշառք
առնելով՝
չքեղազարդ ապարանքներ պիտի
չինէք,
բայց չէք բնակուի նրանց մէջ,
գեղեցիկ այգիներ պիտի տնկէք,
սակայն նրանց գինին չէք խմի,
12 քանի որ ես իմացայ ձեր բազում
ամբարշտութիւնները,
եւ սարսափելի են ձեր մեղքերը:
Արդարին ոտնակոխ էիք անում՝
կաշառք առնելով
եւ աղքատին դռնէ դուռ էիք գցում:
13 Ահա թէ ինչու նա, ով իմաստուն
է, այդ ժամանակ կը լռի,
քանի որ ժամանակը չար է:
14 Բարի՛ն փնտռեցէք եւ ոչ թէ չարը,
որպէսզի ապրէք,
եւ ձեզ հետ կը լինի Ամենակալ Տէր
Աստուածը.
ինչպէս որ ասում էիք, թէ՝
«Ատեցինք չարը եւ սիրեցինք բա-
րին»:
15 Իրաւո՛ւնք հաստատեցէք ձեր
դռանը,
որպէսզի Տէր Աստուածը ողորմի
Յովսէփի մնացորդներին:
16 Դրա համար այսպէս է ասում
Ամենակալ Տէր Աստուածը.
«Բոլոր հրապարակներում կոծ կը
լինի
եւ բոլոր ճանապարհներին վա՛յ,
վա՛յ կ'ասուի.
17 մշակը կը կանչուի սուգի ու կոծի
եւ ձայնարկու կը դառնայ,
բոլոր ճանապարհներին կոծ կը լինի,
որովհետեւ ես պիտի անցնեմ քո մի-
ջով», – ասում է Տէրը:
18 Վա՛յ Տիրոջ օրը ցանկացողին.
ձեր ինչի՞ն է պէտք Տիրոջ օրը,
այն խաւար է եւ ոչ թէ լոյս:
19 Որպէս թէ մի մարդ փախչի
առիւծից,
մի արջ պատահի նրան, նա տուն
փախչի,
ձեռքը պատին յենի եւ օձը խայթի
նրան:
20 Չէ՞ որ խաւար է Տիրոջ օրը եւ ոչ
լուսաւոր,
աղջամղջային է, եւ լոյսի ճաճանչ
չկայ նրա մէջ:
21 «Ատեցի, մերժեցի ձեր տօները

եւ ձեր տարեկան հաւաքների հոտը
չեմ շնչի.
22 եւ եթէ ձեր ողջակէզներն ու
զոհերը մատուցէք,
չեմ ընդունի դրանք եւ չեմ նայի
ձեր փրկութեան նշաններին:
23 Հեռացրո՛ւ ինձնից քո երգերի
ձայնը,
քո սրինգների նուագը ես չեմ լսի:
24 Թող յորդի իրաւունքը ինչպէս
ջուր,
եւ արդարութիւնը՝ ինչպէս անհուն
հեղեղ:
25 Միթէ ողջակէզ եւ զոհեր մա-
տուցեցի՞ք ինձ այնտեղ,
անապատում, քառասուն տարի, ո՛վ
տունդ Իսրայէլի:
26 Սակայն դուք վերցրիք Մոլոքի
խորանը,
ձեր Ռեմփա աստծու աստղը եւ
նրանց պատկերները,
որ պատրաստեցիք ձեզ համար:
27 Ես ձեզ պիտի փոխադրեմ Դա-
մասկոսից այն կողմ», – ասում է Տէրը,
որի անունն է Աստուած Ամենակալ:

ՏԻՐՈՋ ՋԱՅՐՈՅԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՆ ԴԷՄ

6 Վա՛յ նրանց, ովքեր արհամարհում
են Սիոնը
եւ յոյս են դրել Սամարիայի լերան
վրայ:
Հաւաքեցին ազգերի իշխաններին,
եւ Իսրայէլի տունը մտաւ նրանց
մէջ:
2 Բոլորդ անցէ՛ք Քաղանէից եւ
տեսէ՛ք,
այնտեղից անցէ՛ք մեծ Եմաթ Ռաբա
եւ իջէ՛ք օտարազգիների Գէթ քաղաքը,
որն աւելի զօրաւոր է, քան այդ
բոլոր քաղաքները.
միթէ նրանց սահմաններն աւելի
մե՞ծ կը լինեն, քան ձեր սահմանները:
3 Դուք, որ գալիս էք դէպի չա-
րիքների օրը,
մօտենում էք հասնելու ստութիւն-
ների շաբաթին,
4 դուք, որ ննջում էք փղոսկրեայ
գահաւորակներում,
մեղկանում ձեր անկողիններում,
հօտերից ուլեր էք ուտում
եւ նախիրներից՝ պարարտ հորթեր,
5 դուք, որ պարում էք սրինգների
նուագի տակ,
եւ դրանք մնայուն բան համարեցիք
եւ ոչ՝ անցաւոր,
6 դուք, որ խմում էք անխառն գինի
եւ օծւում անուշ իւղերով
եւ ցաւ չէիք զգում Յովսէփի տան
կործանման համար,
7 ահա դրա համար էլ այժմ այժմ
գերի պիտի տարուէք
բռնակալների իշխանութեան կող-
մից,
եւ պիտի կտրուի Եփրեմի տան
երիվարների խրխինջը:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

8 Տէրը երդուեց իր անձով
եւ այսպէս է ասում Ամենակալ Տէր
Աստուածը.
«Ես գարշելի պիտի դարձնեմ Յա-
կոբի տան ամբողջ հպարտութիւնը,
նրա երկիրը պիտի ատեմ
եւ պիտի վերացնեմ նրա քաղաք-
ներն իրենց բոլոր բնակիչներով»:
9 Եւ եթէ լինի, որ տասը մարդ էլ
մնայ մի տանը,
նրանք պիտի մեռնեն,
10 մնացողները պիտի վերցնեն իրենց
հարազատներին
եւ իջնեն հանելու նրանց ոսկորներն
այդ տնից
եւ ասեն տան առաջ կանգնած-
ներին, թէ՝
"Ուրիշ մի բան մնա՞ց այնտեղ, քեզ
մօտ":
Նա կ'ասի, թէ՝ ոչ:
11 Չի ասի, թէ՝ լո՛ւռ կաց:
Եւ դա նրա համար որ Տիրոջ անունը
չէին տալիս:
12 Ահա Տէրը հրաման պիտի տայ
եւ հարուածի մեծ ապարանքները՝
կործանելով,
եւ փոքր ապարանքները՝ աւերելով:
13 Միթէ երիվարները կ'արշաւե՞ն
ժայռերի վրայ,
կամ կը հանդարտուե՞ն մատակ
ձիերի մէջ:
«Դուք, որ իրաւունքը ցասման
փոխարկեցիք,

արդարութեան պտուղը դարձրիք լեղի
եւ ուրախանում էիք ոչինչ բաներով,
14 դուք, որ ասում էիք, թէ՝ "Մեր ուժով չէ՞, որ մենք հզօր եղջիւրներ ունեցանք",
15 ահա դրա համար էլ, ո՛վ Իսրայէլի տուն,
ձեր դէմ մի ազգ պիտի հանեմ, որը պիտի նեղի ձեզ,
որպէսզի այլեւս Եմաթ չմտնէք
ու չհասնէք մինչեւ արեւմտեան հեղեղատը», - ասում է Զօրութիւնների Տէրը:

ԱՄՈՍԻ ՏԵՍԻԼՔՆԵՐԸ.
ա) ՄՈՐԵԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7 Այսպիսի տեսիլք ցոյց տուեց ինձ Տէր Աստուած,
ահա մորեխի մի պարս էր գալիս արեւելքից առաւօտեան դէմ.
եւ ահա մի ջորեակ՝ մի Գոգ արքայ:
2 Եւ երբ այնպէս եղաւ, որ դրանք ուտելով վերջացրին երկրի խոտը,
ես ասացի. «Տէ՛ր, Տէ՛ր, խնայի՛ր,
որովհետեւ ո՞վ կը վերականգնի Յակոբի տունը,
քանի որ նա սակաւաթիւ է:
3 Գթա՛ այդ բանի համար, Տէ՛ր»:
«Դա այլեւս չի լինի», - ասում է Տէրը:

բ) ԿՐԱԿԻ ՄԱՍԻՆ

4 Այսպիսի մի տեսիլք ցոյց տուեց ինձ Տէր Աստուածը.
ահա կրակով դատաստան արեց Տէր Աստուածը,
կրակը լափեց շատ խորութիւններ եւ կերաւ երկրի մի մասը:
5 Ես ասացի. «Տէ՛ր Աստուած, դադարեցրո՛ւ դա,
որովհետեւ ո՞վ է, որ ոտքի կը կանգնեցնի Յակոբի տունը,
քանի որ նա սակաւաթիւ է:
6 Գթա՛ այդ բանի համար, Տէ՛ր»:
«Դա այլեւս չի լինի», - ասում է Տէրը:

գ) ԱԴԱՄԱՆԴԻ ՄԱՍԻՆ

7 Այսպիսի մի տեսիլք ցոյց տուեց ինձ Տէր Աստուածը.
ահա մի մարդ կանգնած էր ադամանդեայ պարսպի վրայ,
ձեռքին՝ մի ադամանդ:
8 Եւ ասաց ինձ Տէրը. «Ի՞նչ ես տեսնում, Ամո՛ս»:
Ես ասացի՝ ադամանդ:
Տէրն ասաց ինձ. «Ահաւասիկ ես ադամանդ պիտի հաստատեմ Իսրայէլի իմ ժողովրդի մէջ
եւ այլեւս ոչ մի յանցանք չեմ ներելու նրան:
9 Պիտի ապականուեն նրանց ուրախութեան բագինները,
պիտի աւերուեն Իսրայէլի մեհեանները,
եւ ես սուր պիտի բարձրացնեմ Յերոբովամի տան վրայ»:

ԱՄԱՍԻԱ ՔՈՒՐՄԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԱՄՈՍԻՆ

10 Բեթէլի քուրմ Ամասիան մարդ ուղարկեց Իսրայէլի Յերոբովամ արքայի մօտ եւ ասաց.
«Ամոսը քո դէմ խռովութիւններ է յարուցում Իսրայէլի տանը,
եւ երկիրը չի կարող տանել նրա բոլոր խօսքերը,
11 քանի որ այսպէս է ասում Ամոսը.
"Յերոբովամը սրով պիտի վախճանուի,
եւ Իսրայէլը գերուելով պիտի գերուի իր երկրից»:
12 Իսկ Ամասիան ասաց Ամոսին.
«Ով դու գուշակդ, թո՛ղ այս տեղդ, գնա՛ Հրէաստան երկիրը,
այնտե՛ղ ապրիր եւ այնտե՛ղ մարգարէացիր,
13 այլեւս չշարունակես մարգարէանալ Բեթէլում,
որովհետեւ սա թագաւորի սրբութիւնն է եւ թագաւորութեան տաճարը»:
14 Պատասխան տուեց Ամոսը եւ ասաց Ամասիային.
«Ես ո՛չ մարգարէ էի եւ ո՛չ մարգարէի որդի,
այլ հովիւ էի եւ թութ էի քաղում.
15 Տէրը վերցրեց ինձ հօտից եւ ասաց ինձ.

"Դու գնա՛ եւ մարգարէացի՛ր Իսրայէլի իմ ժողովրդի մասին":
16 Արդ, լսի՛ր Տիրոջ պատգամները.
դու ասում ես՝ "Մի՛ մարգարէացիր Իսրայէլի մասին,
մարդ մի՛ հաւաքիր ու մի՛ խօսիր Յակոբի տան դէմ":
17 Դրա համար այսպէս է ասում Տէր Աստուած. «Քո կինը այդ քաղաքում պիտի պոռնկանայ,
եւ քո որդիներն ու դուստրերը սրով պիտի ընկնեն,
քո երկիրը լարերով պիտի բաժանուի,
ինքդ պիտի վախճանուես պիղծ երկրում,
եւ Իսրայէլը գերուելով պիտի գերուի իր երկրից»:

դ) ՏԵՍԻԼՔ ԹՌՉՆՈՐՍՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

8 Այսպիսի մի տեսիլք էլ ցոյց տուեց ինձ Տէր Աստուածը. թռչնորսների մի գործիք էր:
Տէրն ասաց. «Ի՞նչ ես տեսնում, Ամո՛ս»:
Ես ասացի՝ թռչնորսների գործիք:
2 Եւ Տէրն ասաց ինձ. «Հասել է Իսրայէլի իմ ժողովրդի վախճանը,
եւ ես այլեւս ոչ մի յանցանք չեմ ներելու նրան:
3 Տաճարի յարկերի տակ այդ օրը ողբեր պիտի հնչեն, - ասում է Տէրը, -
շատերը պիտի ընկնեն,
եւ ամէն տեղ լռութիւն պիտի հաստատեմ»:

ԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՂԷՏ Է ԲԵՐՈՒՄ

4 Լսեցէ՛ք սա, դուք, որ առաւօտեան նեղում էիք տնանկներին,
երեկոյեան զրկում աղքատներին
5 եւ ասում էիք. «Երբ պիտի անցնի այս ամիսը, որ չահ անենք,
եւ այս շաբաթը, որ բացենք պահեստները,
փոքրացնենք չափը եւ մեծացնենք կշիռը,
սուտ կշռաքարեր սարքենք,
6 ծախու առնենք աղքատներին արծաթով,
տնանկներին՝ մի զոյգ կօշիկով,
եւ չահ ստանանք մեր բոլոր վաճառքներից»:
7 Տէրը երդւում է Յակոբի հպարտութեամբ՝
ասելով, թէ ձեր գործերը իսպառ չեն մոռացուի,
8 եւ որ դրանց պատճառով երկիրը պիտի խռովուի,
նրա բոլոր բնակիչները սուգ պիտի անեն,
նրա վախճանը պիտի գայ
ու եգիպտացիների գետի պէս ելնի ու իջնի:
9 «Այդ օրը, - ասում է Տէր Աստուած, - այնպէս պիտի լինի,
որ արեգակը մայր պիտի մտնի միջօրէին,
եւ երկրում լոյսը պիտի խաւարի ցերեկով,
10 ձեր տօնը սուգ պիտի դարձնեմ,
ձեր բոլոր երգերը՝ ողբեր,
ամէն տարիքի մարդկանց վրայ քուրձ պիտի գցեմ
եւ կնտութիւն՝ բոլոր գլուխներին,
այդ օրը պիտի դարձնեմ սիրելիի սգի օր,
եւ բոլոր նրանց համար, որ նրա հետ կը լինեն՝ ցաւերի օր:
11 Ահա օրեր պիտի գան, - ասում է Տէր Աստուածը, -
եւ ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը,
ոչ թէ հացի սով կամ ջրի ծարաւ,
այլ Տիրոջ խօսքը լսելու սով:
12 Ջրերը պիտի յուզուեն ծովից մինչեւ ծով
եւ հիւսիսից մինչեւ արեւելք.
նրանք պիտի գնան Տիրոջ խօսքը փնտռելու եւ չեն գտնելու:
13 Այդ օրը գեղեցիկ կոյսերն ու երիտասարդները ծարաւից պիտի թուլանան:
14 Նրանք, որ երդւում էին Սամարիայի սրբութիւն սրբոցով
եւ ասում էին՝ "Կենդանի է քո Աստուածը՝ Դանը,
կենդանի է քո Աստուածը՝ Բերսաբէէն",
պիտի կործանուեն եւ այլեւս ոտքի չեն կանգնելու»:

ՏԱՃԱՐԻ ԿՈՐՄԱՆՄԱՆ ՏԵՍԻԼՔԸ

9 Տեսայ Տիրոջը. նա զոհասեղանի
վրայ էր եւ ասաց.
«Հարուածի՛ր այդ զոհասեղանին,
եւ թող շարժուեն դրանդիները.
կտրիր գցի՛ր դրանք բոլորի գլուխներին,
իսկ մնացածներին ես սրով պիտի
կոտորեմ.
Նրանցից փախածը չի փրկուի,
եւ չի ազատուի նրանցից ազատուածը:
2 Թէկուզ նրանք դժոխքում էլ թաքնուեն,
իմ ձեռքը այնտեղից էլ դուրս կը
բերի նրանց.
եթէ երկինք բարձրանան,
ես այնտեղից էլ կ'իջեցնեմ նրանց,
իսկ եթէ թաքնուեն Կարմէլի բարձունքներում,
այնտեղ էլ կը փնտռեմ եւ կը բռնեմ
նրանց:
3 Եթէ իմ աչքից խոյս տան եւ
պահուեն ծովի խորքերում,
այնտեղ էլ վիշապին կը հրամայեմ,
որ խայթի նրանց:
4 Եթէ գերի տարուեն իրենց թշնամիների կողմից,
ես այնտեղ հրաման կը տամ սրին,
որ ոչնչացնի նրանց:
Իմ աչքը նրանց վրայ կը լինի՝
չարութեան եւ ոչ թէ բարութեան
համար»:
5 Երբ Ամենակալ Տէր Աստուածը
դիպչի երկրին եւ շարժի այն,
պիտի սգան նրա բոլոր բնակիչները,
Նրա վախճանը պիտի դայ
ու եգիպտացիների գետի պէս ելնի
ու իջնի:
6 Նա, ով պատրաստում է իր համբառնալը դէպի երկինք,
ով իր աւետիսն է հաստատում
երկրում,
ով վերեւ է կանչում ծովի ջրերը եւ
հեղում երկրի երեսին,
Ամենակալ Տէր է նրա անունը:
7 «Միթէ ինձ համար եթովպացիների պէս չէ՞ք դուք,
իսրայէլացի՛ներ, - ասում է Տէրը. -
իսրայէլացիներին չհանեցի Եգիպտացիների երկրից,
այլազգիներին՝ Գամրից եւ ասորիներին՝ Բոթորից»:

ՏԷՐԸ ԽՆԱՅՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻՆ

8 Ահա Տիրոջ աչքը մեղաւորների
այդ թագաւորութեան վրայ է.
«Ես դա պիտի վերացնեմ երկրի
երեսից,
սակայն չեմ ջնջի Յակոբի տունը, -
ասում է Տէրը: -
9 Ահա ես հրաման եմ տալիս ձեզ,
ո՛վ Իսրայէլի տուն,
ես պիտի ցրեմ ձեզ բոլոր ազգերի
մէջ այնպէս,
ինչպէս հեծանոցով ցորենն են զատում,
եւ ոչ մի մանրուքը գետին չի ընկնի:
10 Սրով պիտի վախճանուեն իմ
ժողովրդի բոլոր մեղաւորները,
որոնք ասում էին, թէ՝
"Չարիքները չեն մօտենայ մեզ,
չեն հասնի մեզ վրայ"»:

ԴԱՒԹԻ ԽՈՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

11 «Այդ օրը պիտի կանգնեցնեմ
Դաւթի խորանը,
պիտի վերականգնեմ նրա աւերակները,
գետնին հաւասարուած նրա տեղերը
վերստին պիտի կանգնեցնեմ
եւ պիտի վերաշինեմ այն հին օրերի
նման,
12 որպէսզի մնացած մարդիկ եւ
բոլոր ազգերը,
որոնց վրայ կայ իմ անունը,
փնտռեն ինձ» - ասում է Տէրը, որ
անում է սա:
13 «Ահա օրեր են գալիս, - ասում է
Տէրը, -
երբ կալերը պիտի հասնեն բերքահաւաքին,
խաղողը պիտի հասնի հնձանների
համար,
լեռները քաղցրութիւն պիտի բխեցնեն,
եւ բոլոր բլուրները անտառախիտ
պիտի դառնան:
14 Ես պիտի վերադարձնեմ Իսրայէլի

իմ ժողովրդին գերութիւնից,
նրանք պիտի շինեն աւերուած քաղաքներն ու պիտի բնակուեն այնտեղ,
այգիներ պիտի տնկեն եւ պիտի
խմեն դրանց գինին,
պարտէզներ պիտի աճեցնեն եւ
ուտեն դրանց պտուղները:
15 Ես նրանց պիտի հաստատեմ
իրենց երկրում,
եւ այլեւս նրանք չեն հեռացուի
իրենց երկրից,
որ ես տուեցի նրանց», - ասում է
Ամենակալ Տէր Աստուածը:

ՄԻՔԻԱ

Ներածութիւն

Միքիա մարգարէն, որ Եսայի մարգարէի ժամանակակիցներից է եղել, իր առաքելութիւնը կատարել է հաւանաբար 740-ից 700 թուականներին (Ն. Ք.): Ինչպէս Եսային, սա եւս իր խօսքն ուղղում է Յուդայի թագաւորութեան բնակիչներին այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ վերջիններս գտնւում էին ասորեստանեան բանակների յարձակման սպառնալիքի տակ:

Միքիան իր ունկնդիրներին ազդարարում է, որ իրենց երկիրը եւ մասնաւորապէս իրենց մայրաքաղաք Երուսաղէմը արժանանալու է նոյն ճակատագրին, ինչ ճակատագրի որ արժանացաւ Սամարիան՝ Իսրայէլի թագաւորութեան մայրաքաղաքը, որը նուաճուեց 722-721 թուականներին (Ն. Ք.): Նա նրանց նախազգուշացնում է, որ գալիք աղէտը հետեւանքն է լինելու իրենց գործած մեղքերի, յատկապէս այն ընկերային անարդարութեան, որ գոյութիւն ունի իրենց մէջ: Մարգարէն Աստծու կողմից հաշիւ է պահանջում նրանցից, նա մինչեւ իսկ դէմ է դուրս գալիս ժողովրդի մեծամեծների ու պատասխանատու պաշտօնատար անձանց՝ խոշոր կալուածատէրերի, պետական ղեկավարների, դատաւորների, կառավարիչների, քահանաների եւ այլն: Նա բանավէճի է բռնւում նաեւ այն մարգարէների հետ, որոնք ապահովութիւն ներշնչող խօսքերով մոլորեցնում էին ժողովրդին եւ դրանով իսկ վերացնում Աստծու եւ միմեանց հանդէպ ժողովրդի վերաբերմունքը փոխել տալու ամէն հնարաւորութիւն: Իր այս ազդարարութիւններով Միքիան ցանկանում է իր ունկնդիրներին մղել խորհելու եւ ընտրութիւն կատարելու, այսինքն՝ պարզապէս հնազանդելու Աստծու կամքին՝ յարգելով եւ սիրելով իրենց մերձաւորներին: Այս ազդարարութիւններն ուղեկցւում են փրկութեան նոր գործերի աւետիսով, որ Աստուած իրականացնելու է ապագայում իր ժողովրդի համար:

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Յուդայի Յովաթամ, Աքազ եւ Եզեկիա թագաւորների ժամանակ Մորստացի Միքիային հասաւ Տիրոջ պատգամը, որ յայտնուեց նրան Սամարիայի եւ Երուսաղէմի մասին:*

ԱՍՏՈՒԱԾ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

2 *Լսեցէ՛ք, բոլո՛ր ժողովուրդներ,*
եւ թող երկիրն ու նրա բոլոր բնակիչներն ունկնդրեն:
Տէր Աստուած թող լինի ձեր մէջ վկայութեան համար,
Տէրը՝ իր սուրբ տնից:
3 *Ահա նա առաջ կը շարժուի իր տեղից,*
կ'իջնի եւ կը հասնի երկրի բարձունքների վրայ:
4 *Լեռները կը շարժուեն նրա ոտքերի տակ,*
ձորերը կը հալուեն, ինչպէս մոմը՝ կրակի առաջ,
եւ ինչպէս զառիվայր հոսող ջուրը:
5 *Այդ բոլորը Յակոբի ամբարշտութեան պատճառով է եւ Իսրայէլի տան մեղքերի համար:*
Իսկ արդ, ո՞վ է պատճառը Յակոբի ամբարշտութեան, ո՞չ Սամարիան,
եւ ո՞վ է Յուդայի տան մեղքի պատճառը, եթէ ոչ Երուսաղէմը:
6 *Ես Սամարիան կը դարձնեմ ագարակի մրգապահների տաղաւար,*
այգի հսկելու տեղ,
խորխորատ կը նետեմ նրա քարերը
եւ կը մերկացնեմ նրա հիմքերը:
7 *Նրա բոլոր քանդակները կը կոտորեն,*
նրա բոլոր արձանները կրակով կ'այրեն.
ես կ'ապականեմ նրա բոլոր կուռքերը,
քանի որ նա պոռնկութեան վարձից ժողովեց
եւ պոռնկութեան վճարից հաւաքեց դրանք:

ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆ Է ՀԱՍՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՆ

8 *Այդ պատճառով նա լաց ու կոծ կ'անի եւ կ'ողբայ,*
մերկ ու բոբիկ կը քայլի,
վիշապների պէս ողբ ու կոծ կ'անի
եւ կը սգայ ինչպէս յաւերժահարսերի դուստրերը,
9 *քանի որ սաստկացան նրա հարուածները,*
քանի որ մինչեւ Յուդայի երկիր հասան դրանք,
մօտեցան մինչեւ իմ ժողովրդի դռները եւ Երուսաղէմ:
10 *Դուք, որ Գէթում էք, մի՛ գոռոզաբանէք,*
եւ դուք, որ Ակկարիմում էք, մի՛ նորոգէք տան խայտառակութիւնը.
ձեր խայտառակութեան պատճառով հո՛ղը ձեր գլխին:
11 *Բարութեամբ բնակուողը չելա՞ւ իր քաղաքներից.*
Սենարի՛ բնակիչներ, ողբացէ՛ք նրան մօտիկ գտնուող տան վրայ,
նա կը վերացնի ձեզնից ցաւի հարուածները:
12 *Ո՞վ սկսեց բարիք անել ցաւի մէջ բնակուողին,*
քանի որ Տիրոջ կողմից չարիք իջաւ Երուսաղէմի դռների վրայ:
13 *Կառքերի շաչիւն ու երիվարների դղրդիւն թող լինի,*
Լաքիսի՛ բնակիչներ, նա է Սիոնի դուստրերի մեղքերի սկիզբը,
քանի որ քո մէջ կատարուեցին Իսրայէլի ամբարշտութիւնները:
14 *Այդ պատճառով Գէթի տոհմից արձակուածներին կը տայ դատարկ տներ,*
որոնք Իսրայէլի թագաւորների համար ունայնութիւն դարձան:
15 *Լաքիսի բնակիչները ժառանգութիւն կը բերեն մինչեւ քո ժառանգորդները,*
մինչեւ Ադղամ կը հասնի Սիոնի դստեր փառքը:
16 *Ածիլուի՛ր եւ կտրի՛ր մազերդ քո սիրասուն որդիների համար,*
գնտի՛ր քո գլուխը արծուի պէս†,
քանի որ նրանք գերի տարուեցին քեզանից հեռու:

†Սրբայներ.Նում՝ ջայլամի պէս:

ԸՆԴԴԷՄ ՉԱՐԱՇԱՀՈՂՆԵՐԻ

2 Իրենց շահը մտածեցին,
չարիք են խորհում իրենց անկողիններում
եւ առաւօտ կանուխ կատարում են այն,
քանի որ իրենց ձեռքը չբարձրացրին դէպի Աստուած:
2 Աչք էին տնկում հանդերին,
յափշտակում որբերին,
բռնագրաւում տները,
յափշտակում էին մարդուն եւ նրա տունը,
մարդուն եւ նրա ժառանգութիւնը:
3 Այդ պատճառով այսպէս է ասում Տէրը.
«Ահաւասիկ ես մտածում եմ չարիք բերել այդ ազգի վրայ,
ուստի վեր մի՛ ցցէք ձեր վզերը
եւ գլուխներդ բարձր մի՛ քայլէք,
քանի որ վատ ժամանակ է»:
4 Այն օրը ձեր մասին առակ կը յօրինեմ,
ողբ կը հնչեցնեն, կ'ողբան եւ կ'ասեն.
"Ամբողջութեամբ թշուառացանք,
իմ ժողովրդի բաժին հողը լարով չափուեց,
եւ մէկը չկար, որ արգելէր այդպէս անել,
մեր հանդերը բաժանուեցին":
5 Դրա համար չի գտնուի մէկը, որ վիճակով լարաբաժին գցի ժողովում:

ՄԱՐԳԱՐԷԻ ՊԱՏԳԱՄԻՆ ՀԱԿԱԴՐՈՒՈՂՆԵՐԸ

6 Լաց մի՛ եղէք արցունքներով,
եւ թող լաց չլինեն նրա վրայ,
քանի որ նա չի մերժի նախատինքները:
7 Նա ասաց, թէ Իսրայէլի տունը բարկացրեց Տիրոջ հոգին.
եթէ սա լինի նրա ընթացքը,
լաւ չեն լինի Տիրոջ խօսքերը նրա հետ.
իմ ժողովուրդը ուղիղ չի գնում ինձ հետ:
8 Թշնամութեամբ հակառակ կանգնեց իր խաղաղութեանը:
Նրան մորթազերծ կ'անեն՝ բառնալու յոյսը եւ վերացնելու պատերազմի կսկիծը:
9 Այդ պատճառով իմ ժողովրդի առաջնորդները դուրս կ'ընկնեն իրենց ճոխ տներից.
նրանք իրենց չար ընթացքի համար մերժուեցին:
Մօտենանք յաւիտենական լեռներին:
10 Ոտքի՛ կանգնիր եւ գնա՛, քանի որ դու հանգիստ չունես այնտեղ,
պղծութեան պատճառով սաստիկ ապականուեցիք,
հալածուեցիք առանց որեւէ մէկի հալածանքի:
11 Սա սուտ դուրս եկաւ,
քո մէջ գինի եւ արբեցութիւն կաթեց,
եւ այդ կաթումից բաժին կ'ընկնի նաեւ այս ժողովրդին:
12 Կը հաւաքուի Յակոբը բոլորով հանդերձ,
ամբողջովին կ'ընդունի Իսրայէլի մնացորդներին.
ես նրանց միասին կը վերադարձնեմ ինչպէս նեղութեան մէջ գտնուող ոչխարներ,
ինչպէս հօտերը իրենց մակաղատեղի մէջտեղում:
Նրանք մարդկանց կողմից դէպի խրամատները կ'առաջնորդուեն,
13 քանի որ նրանց աչքի առաջ խրամատ բացեցին,
նրանք անցան դռնով եւ դուրս ելան դրա միջից:
Թագաւորը նրանց առաջ ացաւ,
եւ Տէրը կ'առաջնորդի նրանց:

ՄԻՔԻԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ

3 Նա կ'ասի.
«Լսեցէ՛ք, Յակոբի՛ տան իշխան եւ Իսրայէլի՛ տան մնացորդներ:
2 Դուք չէ՞, որ պիտի իմանաք իրաւունքը,
դուք, որ ատում էք բարին եւ չարիք էք որոնում,
մորթազերծ էք անում նրանց
եւ պոկում էք նրանց մարմիններն իրենց ոսկորներից»:

3 Նրանք, որ կերան իմ ժողովրդի մարմինը,
նրանց մորթը հանեցին վրաներից,
նրանց ոսկորները փշրեցին,
կտրատեցին նրանց մարմինները,
ինչպէս կտրատում են կաթսայում եփելու համար,
եւ նրանց միսն այնպէս, ինչպէս պտուկի մէջ եփելու համար:
4 Այդպէս էլ կ'աղաղակեն Տիրոջը,
եւ նա չի լսի նրանց,
երես կը դարձնի նրանցից այդ ժամանակ,
քանի որ նրանք իրենց արարքով չարիք գործեցին:

ԸՆԴԴԷՄ ԱՅՆ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՄՈԼՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ԻՍՐԱՅԷԼԻՆ

5 Այսպէս ասաց Տէրը մարգարէների մասին,
որոնք մոլորեցնում են իմ ժողովրդին,
որոնք խածատում են նրան ատամներով
եւ խաղաղութիւն են քարոզում նրան:
Բայց ոչինչ չդրուեց նրանց բերանը,
եւ նրա դէմ պատերազմ յարուցեցին:
6 Այդ պատճառով ձեր տեսիլքը խաւար գիշեր պիտի դառնայ,
ձեր իղձը պիտի նսեմանայ,
արեգակը մայր պիտի մտնի մարգարէների վրայ,
եւ ցերեկը պիտի խաւարի նրանց վրայ:
7 Պիտի ամաչեն երազատեսները, ծաղրուեն գուշակները,
եւ բոլորը պիտի բամբասեն նրանց,
քանի որ ոչ ոք չի լսելու նրանց:
8 Բայց ես լցուեցի Տիրոջ Հոգու զօրութեամբ,
արդարամտութեամբ եւ զօրութեամբ՝
պատմելու Յակոբին իր ամբարշտութիւնը եւ Իսրայէլին՝ իր մեղքերը:

ՄԻՔԻԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

9 Լսեցէ՛ք սա, Յակոբի՛ տան առաջնորդներ
եւ Իսրայէլի՛ տան մնացորդներ,
որ անարգում էք իրաւունքը
եւ շեղում էք բոլոր ուղիղ ընթացողներին,
10 որ Սիոնը կառուցում էք արեան վրայ
եւ Երուսաղէմը՝ անիրաւութեան:
11 Նրա առաջնորդները կաշառքներով էին դատում,
նրա քահանաները վարձով էին պատասխան տալիս,
նրա մարգարէները արծաթով էին գուշակութիւններ անում
եւ Տիրոջն էին ապաւինում ու ասում. "Արդարեւ, Տէրը մեզ հետ չէ՞.
ո՛չ, մեզ վրայ չարիք չի գայ":
12 Դրա համար Սիոնը ձեր պատճառով պիտի հերկուի արօրով,
Երուսաղէմը պիտի դառնայ ինչպէս մրգապահների տաղաւար,
եւ Տիրոջ տաճարի լեռը՝ մայրիների անտառ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

4 Գալիք օրերում յայտնի կը դառնայ Տիրոջ տաճարի լեռը՝
հաստատուած լեռների գագաթների վրայ,
կը բարձրանայ բլուրների վրայ,
եւ շատ ժողովուրդներ կը շտապեն դէպի նա:
2 Եւ շատ ազգեր կը գնան եւ կ'ասեն.
«Եկէ՛ք բարձրանանք Տիրոջ լեռը եւ Յակոբի Աստծու տունը.
մեզ ցոյց կը տան նրա ճանապարհը,
եւ մենք կը գնանք նրա շաւիղով»:
Արդարեւ, Սիոնից են դուրս գալիս օրէնքները,
եւ Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից:
3 Նա դատ կ'անի բազում ժողովուրդների մէջ
եւ կը յանդիմանի հզօր ազգերին,
մինչեւ իսկ հեռաւորներին,
նրանք իրենց սրերից խոփ կը ձուլեն, գեղարդներից՝ մանգաղ,
եւ այլեւս մի ազգ միւսի վրայ սուր չի բարձրացնի,
եւ մարդիկ այլեւս չեն սովորի պատերազմել:

4 Իւրաքանչիւրը կը հանգստանայ
իր որթատունկի եւ իր թզենու տակ,
եւ չի լինի ոչ ոք, որ սարսափ ազդի,
քանի որ Ամենակալ Տիրոջ բերանը
խօսեց այս բանը:
5 Թող բոլոր ժողովուրդներից իւրա-
քանչիւրն իր ճանապարհով գնայ,
սակայն մենք կը գնանք մեր Տէր
Աստծու անուամբ մշտապէս:

ԱՍՏՈՒԱԾ ՀԱՒԱՔՈՒՄ Է ՑՐՈՒԱԾՆԵՐԻՆ

6 «Այն օրը, - ասում է Տէրը, -
կը հաւաքեմ ցրուածներին եւ հեռա-
ցածներին,
կ'ընդունեմ նաեւ մերժուածներին,
7 բեկուածին զօրեղ կը դարձնեմ եւ
մանրացածին՝ հզօր ազգ,
եւ Տէրը Սիոն լերան վրայ կը թա-
գաւորի այսուհետեւ մինչեւ յա-
ւիտեան:
8 Եւ դու՝ ոչխարների հօտի՛ աշտա-
րակ,
Սիոնի անչքացա՛ծ դուստր,
դէպի քեզ կը գայ ու կը մտնի
Երուսաղէմի դստեր՝
Բաբելոնի թագաւորութեան նախ-
կին իշխանութիւնը»:
9 Իսկ արդ, ինչո՞ւ չար գործեցիր,
միթէ դու թագաւոր չունէի՞ր,
կամ կորա՞ւ քո խորհրդատուն,
քանի որ սաստկացաւ քո երկունքը
ծննդկանի պէս:
10 Սիոնի՛ դուստր, երկունքի մէջ
ընկի՛ր,
զօրացի՛ր եւ մօտեցի՛ր ինչպէս
ծննդկան, որովհետեւ հիմա դուրս
պիտի գաս քաղաքից,
քեզ պիտի բնակեցնեմ դաշտում,
դու պիտի հասնես մինչեւ Բաբելոն.
եւ քո Տէր Աստուածը այնտեղ կը
փրկի քեզ,
այնտեղ կ'ազատի քեզ քո թշնա-
միների ձեռքից:
11 Ահա հաւաքուեցին քեզ վրայ
բազում ժողովուրդներ, որոնք ասում
էին.
«Եկէ՛ք ոտնահարենք նրան,
եւ մեր աչքերը թող տեսնեն Սիոնի
անկումը»:
12 Նրանք չիմացան Տիրոջ խորհուր-
դը, եւ նկատի չառան նրա կամքը,
քանի որ Նա հաւաքեց նրանց
ինչպէս հասկը կալում:
13 «Կանգնի՛ր եւ կալսի՛ր նրանց,
դո՛ւստր Սիոնի,
որովհետեւ քո եղջիւրները երկաթ կը
դարձնեմ, քո կճղակները՝ պղինձ,
եւ դու կը մանրես բազում ժողո-
վուրդներ,
դրանցով ազգեր կը փշրես,
նրանց բազմութիւնը կ'ընծայես
Տիրոջը
եւ նրանց զօրութիւնը՝ ամբողջ
աշխարհի Տիրոջը»:

5 Արդ, դուստրը պիտի ցանկապա-
տուի,
քանի որ նեղութիւն բերեց ձեզ
վրայ,
գաւազանով պիտի հարուածեն Իս-
րայէլի ազգի ծնօտներին:

ՏԷՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ՓՐԿԻՉ ԲԵԹՂԵՀԷՄԻՑ

2 «Եւ դու, Բեթղեհէ՛մ,
Եփրաթայի սակաւամա՛րդ տուն,
կը լինես Յուդայի երկրի հազարա-
ւորների մէջ,
քեզնից պիտի ելնի ինձ համար
Իսրայէլի մի իշխան,
եւ նրա ծագումը աշխարհի սկզբի
օրերից է»:
3 Այդ պատճառով Տէրը նրանց կը
թողնի մինչեւ ծննդկանի ժամանակը.
նա կը ծնի, եւ նրա մնացած եղ-
բայրները կը վերադառնան իսրայէլա-
ցիների մօտ:
4 Նա† կը կանգնի, կը տեսնի եւ կը
հովուի իր հօտը Տիրոջ զօրութեամբ,
եւ նրանք կը հաստատուեն իրենց
Տէր Աստծու անուան փառքի մէջ,
քանի որ այժմուանից նրա հզօ-
րութիւնը պիտի տարածուի մինչեւ
երկրի ծագերը:
5 Եւ խաղաղութիւն կը լինի
նրանով:
Երբ ասորեստանցիները գան ձեր
երկիրը,

†Նա դերանունը ցոյց է տալիս խոստացուած Փրկիչը:

եւ երբ նրանք հասնեն ձեր աշ-
խարհը,
Տէրը կը բարձրացնի նրանց դէմ
եօթը հովիւ եւ ութ ղեկավար մարդիկ:
6 Նրանք կը հովուեն Ասորեստանը
սրով եւ Նեբրոթի երկիրը՝ իր պա-
րիսպների մէջ.
նա կը փրկի քեզ Ասորեստանից,
երբ գայ ձեր երկիրը եւ երբ յար-
ձակուի ձեր սահմանների վրայ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄՆԱՑՈՐԴԱՑԸ ԱԶԳԵՐԻ ՄԷՋ

7 Յակոբի սերնդի մնացորդացը հե-
թանոս բազում ազգերի մէջ կը լինի
ինչպէս Տիրոջից եկած ցող
եւ ինչպէս գառները խոտի վրայ,
որպէսզի չհաւաքուի առանձին-ա-
ռանձին եւ չմնայ մարդկանց որդիների
մէջ:
8 Յակոբի մնացորդները կը լինեն
բազում ազգերի մէջ,
ինչպէս առիւծը կենդանիների մէջ՝
անտառում,
եւ ինչպէս առիւծի կորիւնը ոչխար-
ների հօտի մէջ,
որը եթէ անցնի,
կը զատի եւ կը յափշտակի,
եւ ոչ ոք չի լինի, որ յետ պահի
նրան:
9 «Քո ձեռքը թող բարձրանայ քեզ
նեղողների վրայ,
եւ քո բոլոր թշնամիները թող սա-
տակեն:
10 Այդ օրը, - ասում է Տէրը, -
կը սատկեցնեմ քո ձիերը քո միջից
եւ կորստի կը մատնեմ քո կառքերը.
11 կը կործանեմ քո երկրի քաղաք-
ները,
կը վերացնեմ քո բոլոր ամրոցները,
կը խլեմ քո բոլոր կախարդու-
թիւնները քո ձեռքից,
եւ այլեւս գուշակներ չեն լինի քո
մէջ:
12 Կը ջնջեմ քո քանդակներն ու քո
արձանները,
եւ այլեւս չես երկրպագի քո ձեռա-
կերտներին:
13 Կը կոտորեմ անտառները քո
միջից եւ կ'ապականեմ քո քաղաքները:
14 Բարկութեամբ ու ջղայնութեամբ
վրէժ կը լուծեմ ազգերից,
քանի որ նրանք չլսեցին ինձ»:

ՏԻՐՈՋ ԴԱՏԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԷՄ

6 Լսեցէ՛ք, ինչ որ ասաց Տէրը.
Ե՛լ եւ դա՛տ արա լեռներում,
եւ բլուրները թող լսեն քո ձայնը:
2 Լսեցէ՛ք Տիրոջ դատաստանը,
բլուրնե՛ր, ձորե՛ր եւ երկրի ընդե՛րք:
Ահա Տէրը դատ ունի իր ժողովրդի
հետ, Իսրայէլի հետ դէմ դիմաց կը
կանգնի:
3 «Ժողովո՛ւրդ իմ, ի՞նչ արեցի քեզ,
ինչո՞վ տխրեցրի քեզ եւ կամ ինչո՞վ
նեղեցի քեզ,
պատասխա՛ն տուր ինձ 4 այն բանի
փոխարէն,
որ հանեցի քեզ Եգիպտացիների
երկրից,
փրկեցի քեզ ծառայութեան տնից
եւ քեզ առաջնորդ ուղարկեցի Մով-
սէսին, Ահարոնին եւ Մարիամին:
5 Ժողովո՛ւրդ իմ, յիշի՛ր, թէ ինչ
մտածեց քո մասին Մովաբացիների
Բաղակ թագաւորը,
եւ թէ ինչ պատասխան տուեց նրան
Բէօրի որդի Բաղաամը այս շրջան-
ներից մինչեւ Գաղգաղա,
որպէսզի յայտնի դառնայ Տիրոջ
արդարութիւնը»:
6 Ինչո՞վ փութամ Տիրոջ մօտ,
ապաւինեմ իմ բարձրեալ Աստծուն,
ընդառաջ գնամ նրան ողջակէզ-
ներով եւ մէկ տարեկան հորթերով:
7 Տէրը կ'ընդունի՞ հազարաւոր խո-
յեր կամ բիւրաւոր պարարտ նոխազ-
ներ,
տա՞մ իմ անդրանիկը ամբարշտու-
թեան պատճառով
եւ իմ որովայնի պտուղը՝ իմ անձ-
նական մեղքերի համար:
8 Պատմուե՞ց քեզ, ո՛վ մարդ,
թէ ի՛նչ է բարին եւ ի՞նչ է ուզում
քեզնից Տէրը.
իրաւունք հաստատել, ողորմութիւն
սիրել եւ պատրաստ լինել քո Տէր Աստ-
ծու յետեւից գնալու:
9 Տիրոջ ձայնը քաղաքի վրայ կը
հնչի եւ կը փրկի նրա անունից
վախեցողներին:

«Լսի՛ր, ժողովո՛ւրդ, ո՞վ կը լցնի
քաղաքը, եթէ ոչ Հուրը
10 եւ անօրէն տունը, որ անօրէն
գանձեր է գանձում հպարտութեամբ
եւ անիրաւութեամբ:
11 Եւ կը լինի՞, որ անօրէնը կշեռքով
արդարանայ
կամ խարդախուած կշռի պայուսակով:
12 Դրա համար էլ իրենց տունը
լցրին ամբարշտութեամբ,
նրա բնակիչները անիրաւ բաներ
խօսեցին,
եւ նրանց լեզուները գոռոզաբանեցին իրենց բերաններում:
13 Ես քեզ ապականութեամբ հարուածեցի քո մեղքերի համար:
14 Դու կ'ուտես եւ չես յագենայ.
ես մերժեցի քեզ.
կը բռնուես եւ չես փրկուի,
եւ նրանք, որ երբեմն փրկուեցին,
սրի կը մատնուեն:
15 Դու կը սերմանես, բայց չես հնձի,
դու ձէթ կը քամես, բայց չես օծուի
իւղով,
խաղող կը ճմռես, բայց գինի չես
խմի:
16 Կ'ապականուեն իմ ժողովրդի
անօրէնները
եւ Աքաաբի տան բոլոր գործերը,
դուք էլ շարժուեցէ՛ք ըստ նրա խորհուրդների,
որովհետեւ ձեզ ապականութեան
պիտի մատնեմ,
քո բնակիչներին պիտի դարձնեմ
սուլոցի արժանի,
եւ դուք ժողովուրդների նախատինքը պիտի ստանաք»:

ՄԱՐԳԱՐԷԻ ՈՂԲԸ

7 Վա՛յ ինձ, որովհետեւ նմանուեցի
հնձի ժամանակ մնացած հասկերը
հաւաքողի
եւ այգեկութի ժամանակ ճռաքաղ
անողի,
բայց ողկոյզ չկար առաջին բերքից,
որից ուտում էի:
2 Վա՛յ ինձ, որովհետեւ երկիւղածութիւնը վերացաւ երկրից,
եւ մարդկանց մէջ չկայ մէկը, որ
ուղիղ լինի.
բոլորը արեամբ են դատում,
իւրաքանչիւրը սաստիկ նեղում է իր
ընկերոջը,
եւ իրենց ձեռքը չարիք անելու սովոր
են դարձնում:
3 Իշխանը նուէր է խնդրում,
իսկ դատաւորը խաղաղութեան
խօսքեր է ասում իրեն պէտք եղած
ձեւով:
4 Ես կը հանեմ նրանց միջից այն
բարութիւնը,
որը ցեցի նման ուտում եւ պտտւում
է կանոնի վրայ դատաքննութեան օրը:
Վա՛յ, վա՛յ, եկաւ հասաւ քո
վրէժխնդրութիւնը.
արդ, թող լաց լինեն նրանք:
5 Մի՛ հաւատացէք սիրելիներին,
մի՛ապաւինէք իշխաններին,
զգո՛յշ եղիր քո անկողնակցից, որ
որեւէ բան չպատմես նրան,
6 որովհետեւ որդին անարգում է
հօրը,
եւ դուստրը կը կանգնի իր մօր դէմ,
հարսը՝ իր ընկերոջ դէմ,
եւ մարդու թշնամին իր իսկ
ընտանիքը կը լինի:
7 Սակայն ես Տիրոջը կը սպասեմ,
կը սպասեմ իմ փրկիչ Աստծուն,
եւ իմ Տէր Աստուածը կը լսի ինձ:

ԺՈՂՈՎՐԴԻ ՅՈՅՍՆ ՈՒ ԱՂՕԹՔԸ

8 Մի՛ ոտնահարիր ինձ, ո՛վ իմ
թշնամի.
թէ գլորուեցի, նորի՛ց կը կանգնեմ,
քանի որ, եթէ խաւարում նստեմ,
Տէրն է իմ լոյսը:
9 Քանի որ մեղանչեցի Տիրոջ դէմ,
համբերութեամբ կը տանեմ նրա
բարկութիւնը,
մինչեւ որ նա արդարացնի իմ
դատաստանը, իրաւունք տայ ինձ,
ինձ հանի դէպի լոյսը, եւ ես տեսնեմ
նրա արդարութիւնը:
10 Ինձ կը տեսնի իմ թշնամին,
եւ ամօթը կը պատի նրան, որ ասում
էր ինձ.
«Ո՞ւր է քո Տէր Աստուածը»:
Իմ աչքերը կը տեսնեն նրան:
Արդ, նա ոտքի կոխան կը դառնայ,
ինչպէս ճանապարհի կաւը:

11 Աղիւսի ծեփի օր եւ քո ջնջման օր
կը լինի այն օրը.
այդ օրը կը մերժի քո իրաւունքները:
12 Քո քաղաքները կ'ենթարկուեն
ասորեստանցիների պաշարման եւ
աւարին:
Քո ամուր քաղաքները կը բաժանուեն Տիւրոսից մինչեւ գետը,
ծովից ծով եւ լեռից լեռ:
13 Եւ երկիրը կ'ապականուի իր բնակիչներով հանդերձ՝
իր գործերի պտուղի պատճառով:
14 Արածացրո՛ւ քո ժողովրդին քո
ցեղերի գաւազանով,
նաեւ քո ժառանգութեան ոչխարի
հօտերը,
որոնք առանձին բնակւում են
Կարմէլի անտառում,
թող նրանք արածեն Բասանում եւ
Գաղաադում մշտապէս:
15 Եւ ինչպէս Եգիպտացիների երկրից քո ելքի օրերին,
ես հրաշքներ ցոյց պիտի տամ
նրանց:
16 Պիտի տեսնեն հեթանոսներն ու
պիտի ամաչեն իրենց ամբողջ զօրութիւնից,
ձեռքները պիտի դնեն իրենց բերանների վրայ,
եւ նրանց ականջները պիտի խլանան:
17 Նրանք պիտի լիզեն հողը ինչպէս
օձերը, որ սողում են երկրի վրայ:
Պիտի խռովուեն իրենց պաշարման
մէջ,
մեր Տէր Աստծուց պիտի սարսափեն
եւ պիտի վախենան քեզնից:
18 Ո՞վ է Աստուած քեզ նման, որ
վերացնում է անօրէնութիւնը,
զանց է առնում իր ժառանգութեան
երկրի մնացորդների անիրաւութիւնը
եւ գործի չի դնում իր բարկութիւնը,
քանի որ ողորմութիւն է կամենում:
19 Նա պիտի դառնայ ու գթայ մեզ,
պիտի թաղի մեր մեղքերը
եւ ծովի խորքը պիտի նետի մեր
բոլոր անօրէնութիւնները:
20 Ճշմարտութիւն պիտի տայ Յակոբին,
ողորմածութիւն՝ Աբրահամին,
ինչպէս որ երդումով խոստացել էր
մեր հայրերին սկզբից ի վեր:

ՅՈՎԷԼ

Ներածութիւն

Յովէլ մարգարէի պատգամը դարերի ընթացքում չի կորցրել իր արտակարգ հաղորդական ուժը հակառակ նրան, որ մենք չգիտենք, թէ ո՛վ է եղել եւ ո՛ր դարաշրջանում է ապրել նա: Յովէլի գրքի կենտրոնական թեման յայտնութիւնն ու նկարագրութիւնն է այն օրուայ, երբ Տէրը ցոյց է տալիս իր զօրութիւնը եւ դատում ժողովուրդներին. Իսրայէլի ժողովրդին՝ Աստծու նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի համեմատ եւ օտար ժողովուրդներին՝ Իսրայէլի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի համեմատ: Դատաստանի օրուայ գալստին նախորդում են մի շարք կորստաբեր երեւոյթներ՝ միջատների ներխուժում, երաշտ, հրդեհ, ռազմական արշաւանք եւ այլն, որոնք ցոյց են տալիս այդ օրուայ կործանարար ուժը (1. 2-12, 15-18, 2. 1-11): Յայտնի չէ, թէ մարգարէն արդեօք իրեն ժամանակակից իրական դէպքերի՞ն է անդրադառնում, թէ՞ այդպիսի ահարկու պատկերներով ուզում է մարմին տալ իր յայտնութեանը:

Ինչ էլ որ լինի, նրա քարոզութեան նպատակը յստակ է. Իսրայէլի ժողովուրդը, որ զրկուած է ամէն ինչից, այդ թւում եւ Աստծու տաճարի սպասաւորութիւնն ապահովելու հնարաւորութիւնից, հրաւիրւում է դառնալու իր Աստծուն եւ աղաչելու նրան (1. 13-14, 19-20, 2. 12-17): Ժողովրդի զրկանքն ի վերջոյ նրա փրկութեան պայմանն է: Խոստացուած առատութիւնն այստեղ հակադրւում է զրկանքին ու դատարկութեանը, որոնք նախապէս հետեւանքն էին Աստծու բարկութեան: Օտար ժողովուրդները պիտի կործանուեն դատաստանով (4. 1-16), սակայն Իսրայէլի ժողովուրդը վերջապէս պիտի հասկանայ, թէ ինչ է նշանակում Աստծու ներկայութիւնը իր մէջ:

Յովէլի գիրքը մարգարէաբար յայտնում է, որ մի օր այդ ներկայութիւնը տրուելու է բոլորին, որովհետեւ Աստուած իր Հոգին տարածելու է բոլոր մարդկանց վրայ հաւասարապէս (3. 1-2): Առաջին քրիստոնեաները այդ խոստման իրականացմանը վկայ եղան Հոգեգալստեան օրը (Գործք 2. 16-21):

ՅՈՎԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Տիրոջ պատգամը, որ հասաւ Բաթուէլի որդի Յովէլին Եկեկիայի ժամանակ:*

ՄԻՋԱՏՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԵՒ ԵՐԱՇՏ

2 *Լսեցէ՛ք սա, ծերունինե՛ր,*
ակա՛նջ դրէք, երկրի բոլո՛ր բնակիչներ.
եղե՞լ է արդեօք այսպիսի բան ձեր օրերում կամ ձեր հայրերի ժամանակ:
3 *Պատմեցէ՛ք սա ձեր որդիներին,*
ձեր որդիները՝ իրենց որդիներին,
եւ նրանց որդիները՝ յաջորդ սերնդին:
4 *Թրթուրից մնացածները մորեխը կերաւ,*
մորեխից մնացածները կերաւ ջորեակը,
եւ ջորեակից մնացածները կերաւ բուսակեր ճիճուն:
5 *Սթափուեցէ՛ք գինուց հարբածնե՛ր,*
լացէ՛ք եւ ողբացէ՛ք բոլորդ,
որ մինչեւ հարբելը գինի էք խմում,
որովհետեւ չքացաւ ձեր բերանից ուրախութիւնն ու խնդութիւնը,
6 *քանի որ մի ազգ յարձակուեց իմ երկրի վրայ՝ հզօր եւ անթիւ.*
նրա ատամները առիւծի ատամներ են,
նրա ժանիքները՝ առիւծի կորիւնի ժանիքներ:
7 *Նա ապականեց իմ որթատունկը եւ իմ թզենիները խորտակեց,*
ցնցելով ցնցեց, գցեց այն եւ կեղեւից մերկացրեց նրա ճիւղերը:
8 *Ողբա՛ ինձ, ինչպէս քուրձ հագած հարսը՝ իր ամուսնու վրայ:*
9 *Վերացան զոհերն ու զենումը Տիրոջ տնից,*
սգացէ՛ք քահանանե՛ր՝ խորանի պաշտօնեանե՛ր,
10 *քանի որ չորացան դաշտերը:*
Թող սգայ երկիրը, որովհետեւ չորացաւ ցորենը,
ցամաքեց գինին, նուազեց ձէթը:
11 *Ողբացէ՛ք, մշակնե՛ր, ձեր ունեցուածքի՝ ցորենի եւ գարու վրայ,*
որովհետեւ վերացաւ այգեկութը ագարակից,
ցամաքեց որթատունկը,
12 *նուազեցին թուզը, նուռը, արմաւը եւ խնձորը,*
եւ ագարակի ամէն ծառ գօսացաւ,
քանի որ ուրախութիւնը ամօթ համարեցին:

ԿՈՉ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՕԹՔԻ

13 *Մարդո՛ւ որդիներ, քուրձե՛ր հագէք,*
ողբացէ՛ք քահանանե՛ր,
սգացէ՛ք, խորանի՛ պաշտօնեաներ,
մտէ՛ք, ննջեցէ՛ք, քուրձ հագած Աստծո՛ւ պաշտօնեաներ,
քանի որ ձեր Աստծու տնից պակասեցին զոհերն ու զենումը:
14 *Ծոմի օ՛ր նշանակեցէք,*
աղո՛թք կազմակերպեցէք,
հաւաքեցէ՛ք ծերերին, երկրի բոլոր բնակիչներին ձեր Աստծու Տանը
եւ աղօթեցէ՛ք Տիրոջը անկեղծ սրտով:

ՏԻՐՈՋ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՕՐԸ

15 *Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ այն օրը,*
որովհետեւ մօտ է Տիրոջ օրը.
թշուառութիւն թշուառութեան վրայ պիտի հասնի:
16 *Ձեր աչքերի առաջ պակասեցին կերակուրները,*
ձեր Աստծու տնից՝ ուրախութիւնը եւ խնդութիւնը:
17 *Խայտացին երինջները իրենց մսուրներում,*
ապականուեցին գանձերը,
տապալուեցին շտեմարանները,
քանի որ ցորենը խորշակահար եղաւ:
18 *Ի՞նչ ամբարեմ նրանց մէջ:*
Լացեցին նախիրների խմբերը,
որովհետեւ նրանք արօտ չունէին,
եւ ոչխարների հօտերը սատկեցին:

ՄԱՐԳԱՐԷԻ ԱՂՕԹՔԸ

19 *Քեզ եմ աղօթում, Տէ՛ր,*
որովհետեւ հուրը սպանեց անա-

պատի գեղեցկութիւնը,
բոցը լափեց ագարակի իւրաքանչիւր ծառ,
20 վայրի կենդանին քեզ նայեց,
քանի որ ցամաքեցին ջրի վտակները,
եւ հուրը կերաւ անապատի գեղեցկութիւնը:

ՄՕՏ Է ՏԻՐՈՋ ՕՐԸ

2 Փո՛ղ զարկէք Սիոնի մէջ,
կո՛չ արձակեցէք իմ սուրբ լերան վրայ,
թող հաւաքուեն երկրի բոլոր բնակիչները,
քանի որ հասել է Տիրոջ օրը,
2 քանի որ մօտ է խաւարի եւ մէգի օրը, ամպի եւ մառախուղի օրը:
Ինչպէս առաւօտ, լեռների վրայ կը տարածուի բազմամարդ եւ հզօր զօրքը.
այդպիսին չի եղել յաւիտենական ժամանակներից
եւ նրանից յետոյ այլեւս չի լինի սերնդից սերունդ:
3 Նրա առջեւից լափող կրակն է,
նրա յետեւից՝ բորբոքեալ բոցը.
նրանից առաջ երկիրը դրախտային այգի,
իսկ նրանից յետոյ՝ ապականուած դաշտ.
եւ փրկուող չի լինի նրանից:
4 Նրա տեսքը երիվարների նման է.
նրանք կ'արշաւեն որպէս հեծեալներ.
5 որպէս կառքերի դղրդիւն կ'ասպատակեն լեռների գագաթներին,
որպէս ձայնը բոցակէզ կրակի, որ ուտում է եղէգը,
որպէս պատերազմի պատրաստուած բազմամարդ ու հզօր զօրք:
6 Նրանց առաջ ազգեր կը խորտակուեն,
եւ բոլոր դէմքերը կը դառնան ինչպէս սեւացած պուտուկ:
7 Նրանք կը յարձակուեն որպէս ախոյեաններ
եւ որպէս ռազմիկներ կը բարձրանան պարիսպների վրայ.
իւրաքանչիւրն իր ճանապարհով կը գնայ,
եւ չեն շեղուի իրենց շաւիղներից,
8 Մարդն իր եղբօրից եւ ընկերոջից չի զատուի:
Իրենց զէնքերով ծանրացած կը գնան
եւ իրենց նետերի վրայ կ'ընկնեն եւ չեն մեռնի:
9 Կը խուժեն քաղաք, կը քայլեն պարիսպների վրայ,
կը մագլցեն տները եւ գողերի նման ներս կը մտնեն պատուհաններից:
10 Նրանց առաջ երկիրը կը խռովուի, երկինքը կը ցնցուի,
արեգակն ու լուսինը կը խաւարեն,
եւ աստղերը կը թաքցնեն իրենց լոյսը:
11 Եւ Տէրն իր ձայնը կը բարձրացնի իր զօրքի առաջ,
քանի որ չափազանց շատ է նրա բանակը,
եւ հզօր՝ նրա պատերազմական գործը,
որովհետեւ մեծ է Տիրոջ օրը, մեծ եւ շատ նշանաւոր.
ո՞վ կարող է դիմանալ դրան:

ԿՈՉ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

12 «Եւ արդ, - ասում է ձեր Տէր Աստուածը, -
դարձէ՛ք ինձ ձեր ամբողջ սրտով,
ծոմապահութեամբ, լալով ու կոծելով:
13 Ձեր սրտե՛րը պատռեցէք եւ ոչ թէ ձեր հագուստները»:
Այո՛, դարձէ՛ք ձեր Տէր Աստծուն,
որովհետեւ նա ողորմած է եւ գթասիրտ,
համբերատար եւ բազումողորմ
եւ ափսոսում է մարդկանց չարիքների համար:
14 Ո՞վ գիտի, թերեւս դառնայ ու խղճայ,
եւ իրենից յետոյ լինի օրհնութիւն, զոհ եւ գինում մեր Տէր Աստծուն:

ԿՈՉ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔԻ

15 Փո՛ղ զարկէք Սիոնի մէջ,
ծոմի օ՛ր նշանակեցէք,
պաղատա՛նք քարոզեցէք, հաւաքեցէ՛ք ժողովրդին,

16 սուրբ ժողո՛վ գումարեցէք,
ընտրեցէ՛ք ծերերին,
հաւաքեցէ՛ք կաթնակեր երեխաներին,
թող փեսան դուրս գայ իր սենեակից եւ հարսը՝ առագաստից:
17 Աստիճանների ու խորանի միջեւ
Տիրոջ քահանաներն ու պաշտօնեաները լաց կը լինեն եւ կ'ասեն.
«Խնայի՛ր, Տէ՛ր, քո ժողովրդին,
եւ քո ժառանգութիւնը նախատինքի մի՛ ենթարկիր,
որ ազգերը տիրեն նրան,
որպէսզի հեթանոսները չասեն, թէ՝
"Ո՞ւր է նրանց Աստուածը"»:

ՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԸ

18 Տէրը նախանձախնդիր եղաւ իր երկրի համար ու խնայեց իր ժողովրդին:
19 Տէրը պատասխանեց իր ժողովրդին եւ ասաց.
«Ահա ես ուղարկում եմ ձեզ ցորեն, գինի եւ իւղ,
եւ դուք կը կշտանաք դրանցով,
ու այլեւս ձեզ չեմ յանձնի ազգերի նախատինքին:
20 Հիւսիսային բանակը կը հալածեմ ձեզնից,
նրան կը վտարեմ դէպի անջուր երկիր,
կը կործանեմ նրա առաջապահ գնդերը առաջին ծովում†
եւ նրա վերջապահ գունդը՝ վերջին ծովում‡.
նրա թարախը կը հոսի, եւ նրա հոտը դուրս կը գայ,
քանի որ նրա կատարած գործերը չափն անցան:
21 Քաջալերուի՛ր, երկի՛ր, ցնծա՛ եւ ուրախացի՛ր,
որովհետեւ Տէրը մեծ գործեր կատարեց քեզ հետ:
22 Քաջալերուի՛ր, վայրի՛ կենդանի,
որովհետեւ անապատի դաշտերը դալարեցին,
որովհետեւ ծառը տուեց իր պտուղը,
որթատունկն ու թզենին տուեցին իրենց բերքը:
23 Սիոնի՛ որդիներ, ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք ձեր Տէր Աստուծով,
քանի որ Տէրը արդար կերակուր տուեց ձեզ
եւ ձեզ համար կը տեղացնի գարնան առաջին
եւ աշնան վերջին անձրեւը՝ ինչպէս առաջ:
24 Կը լցուեն ցորենի կալերը,
եւ կը յորդեն գինու եւ իւղի հնձանները:
25 Եւ այն տարիների դիմաց,
ինչ որ մորեխը, ջորեակն ու թրթուրը կերան,
կը հատուցեմ ձեզ իմ մեծ զօրքով, որ ուղարկեցի ձեզ վրայ:
26 առատօրէն կ'ուտէք, կը յագենաք
եւ կ'օրհնէք ձեր Տէր Աստծու անունը,
որ հրաշքներ գործեց ձեզ համար,
եւ այլեւս իմ ժողովուրդը չի ամաչի յաւիտեան:
27 Եւ կը լինի այնպէս,
որ սրանից յետոյ իմ Հոգուց կը հեղեմ ամէն մարմնի վրայ,
կը մարգարէանան ձեր տղաներն ու աղջիկները,
ձեր ծերերը երազներ կը տեսնեն,
եւ ձեր երիտասարդները տեսիլքներ կ'ունենան:
28 Եւ կ'իմանաք, որ Իսրայէլի մէջ եմ ես,
որ ես եմ ձեր Տէր Աստուածը,
ու չկայ ոչ ոք ինձնից բացի,
եւ իմ ժողովուրդը չի ամաչի յաւիտեան:
29 Այն օրերին իմ Հոգուց կը հեղեմ իմ ծառաների վրայ,
իմ աղախինների վրայ, որոնք կը մարգարէանան:
30 Հրաշքներ ցոյց կը տամ երկնքում
եւ երկրի վրայ՝ արիւն, հուր եւ ծխի մրրիկ.
արեգակը կը խաւարի, եւ լուսինը արիւն կը դառնայ,
քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երեւելի օրը»:
31 Այո՛, կը լինի այնպէս, որ, ով որ կանչի Տիրոջ անունը՝ կ'ապրի:
Սիոն լերան վրայ եւ Երուսաղէմում

†Նկատի ունի Մեռեալ ծովը:
‡Նկատի ունի Միջերկրական ծովը:

փրկութիւն կը լինի,
Տէրը կը կանչի իր մօտ,
ինչպէս որ ասաց եւ ծանուցեց:

ՏԷՐԸ ԴԱՏՈՒՄ Է ԱԶԳԵՐԻՆ

3 «Ահա ես այն օրերին եւ այն ժամանակ
կը վերադարձնեմ Հրէաստանին եւ Երուսաղէմին գերութիւնից,
2 կը հաւաքեմ բոլոր ազգերին, կ'իջեցնեմ նրանց Յոսափաթի ձորը
եւ կը դատեմ նրանց այնտեղ՝
իմ ժողովրդի եւ իմ ժառանգութեան՝ Իսրայէլի համար,
որին ցրուեցին բոլոր ազգերի մէջ:
3 Նրանք իմ երկիրը բաժանեցին,
իմ ժողովրդի համար վիճակ էին գցում,
պատանիներին տալիս էին որպէս պոռնիկների վարձ,
աղջիկներին վաճառում էին գինու դիմաց եւ խմում էին:
4 Եւ դուք տակաւին ի՞նչ ունէք ինձ հետ,
ո՛վ Տուր եւ Մայդան† եւ այլազգիների ո՛ղջ Գալիլիա,
մի՞թէ ինչ-որ հատուցում կը տաք ինձ կամ ոխ կը պահէք իմ դէմ.
ես շուտով ձեր հատուցումը տագնապով կը բերեմ ձեր գլխին
5 այն բանի փոխարէն, որ իմ արծաթն ու ոսկին առաք
իմ ընտիր-ընտիր ու գեղեցիկ անօթները տարաք ձեր մեհեանները
6 ու Յուդայի երկրի եւ Երուսաղէմի որդիներին վաճառեցիք յոյներին,
որպէսզի նրանց հեռացնէք իրենց սահմաններից:
7 Արդ, ես ուրքի կը կանգնեցնեմ նրանց այնտեղ,
որտեղ վաճառեցիք նրանց,
եւ կը բերեմ ձեր հատուցումը ձեր գլխին:
8 Ձեր տղաներին եւ ձեր աղջիկներին կը մատնեմ Յուդայի երկրի որդիների ձեռքը,
եւ նրանք գերի կը վաճառեն նրանց հեռու-հեռաւոր մի ազգի,
քանի որ Տէրը խօսեց»:

†Տիւրոս եւ Սիդոն քաղաքները:

9 Յայտարարեցէ՛ք ազգերին. «Մարտի ժա՛մ նշանակեցէք,
արթնացրէ՛ք պատերազմողներին,
հաւաքուեցէ՛ք եւ ելէ՛ք, բոլո՛ր ռազմիկներ:
10 Ձեր խոփերից սրե՛ր կռեցէք
եւ ձեր գերանդիներից՝ գեղարդներ:
11 Տկարը թող խրախուսի՝ ասելով, թէ՝ ես հզոր եմ.
հաւաքուեցէ՛ք եւ նե՛րս մտէք, շրջակայ բոլո՛ր ազգեր,
խմբուեցէք† այստեղ.
Հանդարտ մարդն էլ պատերազմող թող դառնայ»:
12 «Թող ելնեն ու գնան բոլոր ազգերը Յոսափաթի ձորը,
քանի որ այնտեղ պիտի նստեմ՝ դատելու բոլոր ազգերին:
13 Գործի՛ դրէք մանգաղը, որովհետեւ հասել է հունձը,
եւ մտէ՛ք, կոխոտեցէ՛ք,
որովհետեւ լցուել է հնձանը, եւ փոսերը յորդում են,
քանի որ շատացան նրանց չար գործերը»:
14 Ձայներ հնչեցին Դատաստանի ձորում,
որովհետեւ մօտ է Տիրոջ օրը Դատաստանի ձորում:
15 Արեգակն ու լուսինը կը խաւարեն,
եւ աստղերը կը թաքցնեն իրենց լոյսը:
16 Տէրը Սիոնից կը կանչի,
Երուսաղէմից ձայն կը տայ,
եւ կը շարժուեն երկինքն ու երկիրը.
17 սակայն Տէրը կը խնայի իր ժողովրդին,
կը զօրացնի իսրայէլացիներին:
18 «Դուք կը ճանաչէք, թէ ես եմ Տէր Աստուածը,
որ բնակւում եմ իմ սուրբ Սիոն լերան վրայ.
Երուսաղէմը կը սրբանայ,
եւ այլազգիները այլեւս չեն անցնի նրա միջով»:
19 Այո՛, կը լինի այնպէս,
որ այն օրը լեռները քաղցրութիւն կը բխեցնեն,

†Եբրայերէն՝ *ֆո մարտիկները թող այնտեղ իջնեն, ո՛վ Տէր:*

բլուրները կաթ կը յորդեցնեն,
Յուդայի երկրի բոլոր աղբիւրները ջուր կը բխեցնեն,
Տիրոջ Տանից աղբիւր կը բխի եւ կ'ոռոգի շրջակայքի ձորը:
20 Եգիպտոսը եւ Եդոմը ամայի դաշտ կը դառնան
Յուդայի երկրի որդիներին արուած անիրաւութիւնների պատճառով,
քանի որ արդար արիւն թափեցին իրենց երկրում:
21 Սակայն Հրէաստանը յաւիտենապէս կը բնակեցուի,
նաեւ Երուսաղէմը՝ սերնդից սերունդ:
22 «Եւ ես – ասում է Տէրը, –
նրանց արեան վրէժը կը լուծեմ,
անպարտ չեմ դարձնի նրանց եւ կը բնակուեմ Սիոնի մէջ»:

ԱԲԴԻՈՒ

Ներածութիւն

Այս փոքրիկ գիրքը պարունակում է պատգամը մի մարգարէի, որի միայն անունանն ենք ծանօթ: Նա հաղորդում է մեզ այն վերաբերմունքի մասին, որ Եդոմի ժողովուրդը (Եսաւի յետնորդները) ունեցել է Իսրայէլի ժողովրդի (Եսաւի եղբայր Յակոբի յետնորդները) նկատմամբ: Եդոմայեցիները, որոնք հաստատուել էին Մեռեալ ծովի հարաւ-արեւելեան մասում, մշտապէս թշնամութեամբ էին լցուած իսրայէլացիների հանդէպ, բայց Յուդայի թագաւորութեան անկման եւ Երուսաղէմի գրաւման ժամանակ նրանք այդ վերաբերմունքը հասցրին ծայրայեղութեան: Արդարեւ, նրանք ոչ միայն չօգնեցին իրենց հարեւաններին, այլեւ ստեղծուած կացութիւնից օգուտ քաղելով՝ յափշտակեցին նրանց հողերի մի մասը եւ մասնակցեցին Երուսաղէմի կողոպուտին:

Հաւանաբար գրուած լինելով 587 թուականին (Ն. Ք.), բաբելոնացիների կողմից Երուսաղէմի գրաւումից քիչ առաջ, Աբդիուի գիրքը յայտնում է, որ Իսրայէլին թշնամի միւս ժողովուրդների հետ միաժամանակ կործանուելու է նաեւ Եդոմի ժողովուրդը եւ դրանով էլ մխիթարութեան պատգամ է տալիս իսրայէլացիներին. այն է՝ վերջին խօսքը պատկանում է Աստծուն, որը գալու է դատելու բոլոր ժողովուրդներին:

ԱԲԴԻՈՒԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Աբդիուի տեսիլքը, որ երեւաց Աքաաբի օրօք Ասորեստանից դուրս գալուց առաջ:

ՏԷՐԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԵԴՈՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

1 *Սա է Աբդիուի տեսիլքը: Այսպէս է*
ասում Տէրը Եդոմի մասին. լուր իմ-
ցայ Տիրոջից, որ պաշարման հրահանգ
ուղարկեց հեթանոսներին. "Ելէ՛ք, պա-
տերազմի դուրս գանք նրա դէմ":
2 *«Ահա ես քեզ փոքրաթիւ թողեցի*
ազգերի մէջ,
եւ դու շատ ես անարգուած:
3 *Քո հպարտութիւնը քեզ վերեւ*
բարձրացրեց՝
բնակուելու ժայռերի ծմակներում,
բարձրացնելու քո բնակատեղին
եւ ասելու ինքդ քեզ.
"Ո՞վ ինձ գետին կ'իջեցնի":
4 *Եթէ արծուի պէս էլ բարձրանաս,*
եւ եթէ աստղերի մէջ էլ դնես քո
բոյնը,
այնտեղից անգամ կ'իջեցնեմ քեզ, -
ասում է Տէրը:
5 *Եթէ գողերն ու գիշերային աւա-*
զակները մտնէին քեզ մօտ,
որտեղ էլ որ թաքնուէիր,
իրենց բաւարարելու չափ բան չէի՞ն
գողանայ:
Եթէ քաղողները մտնէին քո մէջ,
արդեօ՞ք վերջին ողկոյզն անգամ
չէին քաղի:
6 *Ինչպէ՞ս քննութեան ենթարկուեց*
Եսաւը,
եւ բացայայտուեցին նրա թաքցրած-
ները:
7 *Քո բոլոր դաշնակիցները քեզ մին-*
չեւ սահմանները ուղարկեցին.
նրանք քո դէմ ելան,
քեզ հետ խաղաղութիւն կնքող
մարդիկ իշխեցին քեզ վրայ,
խաբեցին քեզ՝ ասելով.
"Նա խելք չունէր":
8 *Տէրն ասաց այդ օրը. «Կը վե-*
ցնեմ իմաստութիւնը Եդոմի երկրից
եւ հանճարը՝ Եսաւի լեռից:
9 *Եւ Թեմանում գտնուող քո պատե-*
րազմողները խուճապահար կը լինեն,
քանի որ պիտի վերանայ մարդը
Եսաւի լեռից»:

ԵԴՈՄԻ ՄԵՂՔԸ

10 *«Քո եղբօր՝ Յակոբի սպանութեան*
եւ ամբարշտութեան պատճառով
ամօթը պիտի ծածկի քեզ,
եւ դու պիտի ջնջուես յաւիտեան
11 *այն օրուանից, որ հակառա-*
կուեցիր,
երբ օտարազգիները սպառեցին նրա
ուժը,
օտարներ մտան նրա դռներից,
վիճակ էին գցում Երուսաղէմի
համար,
եւ դուք նրանցից մէկն էիք:
12 *Դու պէտք չէ տեսնէիր քո եղբօր*
անկումը օտարների կողմից,
պէտք չէ ոտքով հարուածէիր Յու-
դայի երկրի որդիներին՝ նրանց կորստի
պահին
եւ պէտք չէ գոռոզանայիր նրա
նեղութեան օրը:
13 *Պէտք չէ ներս մտնէիր ժողովրդի*
դռներից նրանց ցաւերի ժամանակ,
պէտք չէ տեսնէիր նրանց հաւաքը
նրանց սպանութեան օրը
եւ պէտք չէ հարուած հասցնէիր
նրանց զօրութեանը նրանց կորստի
օրը:
14 *Պէտք չէ գրաւէիր նրանց կիրճերը*
նրանցից փրկուածներին սպանելու
համար
եւ պէտք չէ պաշարէիր նրանց
փախստականներին նրանց նեղութեան
ժամանակ»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

15 *«Արդարեւ, մօտ է Տիրոջ օրը բոլոր*
ազգերի վրայ:
Ինչպէս որ դու արեցիր, այդպէս էլ
քե՛զ կը պատահի,
եւ քո հատուցումը կ'իջնի քո գլխին.
16 *քանզի ինչպէս որ դու հարբեցիր*
իմ սուրբ լեռան վրայ,
բոլոր ժողովուրդները գինի կը խմեն,
կը հարբեն, կը թուլանան
եւ կը դառնան այնպէս, կարծես թէ
չեն եղել»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

17 «*Բայց Սիոն լերան վրայ փրկու-*
թիւն կը լինի,
եւ այդ վայրը սուրբ կը դառնայ:
Յակոբի տոհմը կը տիրանայ իր
ժառանգութեանը:
18 *Յակոբի տունը կրակ կը դառնայ,*
Յովսէփի տունը՝ բոց,
իսկ Եսաւի տունը՝ եղէգ.
նրանք կը վառուեն նրա շուրջը
եւ կ'ուտեն այն,
եւ Եսաւի տանը կրակ անող չի
մնայ,
քանի որ Տէրը խօսեց:
19 *Նագեբացիները կը ժառանգեն*
Եսաւի լեռը,
Սեփելացիները՝ օտարազգիներինը,
նրանք կը ժառանգեն Եփրեմի լեռը,
Սամարիայի դաշտը,
ինչպէս նաեւ Բենիամինի ու Գա-
ղաադի երկիրը:
20 *Իսրայէլի առաջին աքսորեալները*
կը ժառանգեն Քանանացիների երկիրը
մինչեւ Սարփաթ,
իսկ Երուսաղէմի աքսորեալները,
որոնք Եփրաթայում էին,
կը ժառանգեն Նագեբի քաղաքները:
21 *Փրկուածները Սիոնի լեռից ոտքի*
կը կանգնեն՝
վրէժ լուծելու Եսաւի լեռից,
եւ կը հաստատուի Տիրոջ արքայու-
թիւնը»:

ՅՈՎՆԱՆ

Ներածութիւն

Յովնանի գրքում պատմւում է մի մարգարէի ձախորդութիւնների մասին, որը փորձում է չհնազանդուել Աստծու հրամանին, բայց իզուր: Արտակարգ կենդանի այս պատմութիւնը, իր զանազան մասերով, ունի գերազանցապէս ուսուցողական նպատակ: Դրանով էլ, որոշ իմաստով, այն համարւում է իսրայէլացի ժողովրդի իմաստութեան գանձարանի գոհարներից մէկը:

Յովնանի պատմութիւնն արտայայտում է մի քանի էական ճշմարտութիւններ: Դրանք հետեւեալներն են. Աստուած իր սէրը չի վերապահում միայն իսրայէլացիներին, այլ նաեւ՝ օտարներին: Այնուհետեւ, Նա միշտ պատրաստ է հրաժարուել իր սպառնալիքներից, երբ մարդիկ լսում են իր նախազգուշացումները եւ իրապէս փոխում իրենց վարմունքը: Եւ, վերջապէս, Նա բացարձակ տէրն է արարչագործութեան, մասնաւորապէս կեանքի ու մահուան, եւ մարգարէն իրաւունք չունի բնաւ սրտմտելու, երբ Աստուած ներում է շնորհում մեղաւորներին: Բացի այդ, Յովնանի գիրքը աշխոյժ սրամտութեամբ ցոյց է տալիս, թէ որո՛նք են այն դժուարութիւնները, փորձութիւններն ու կասկածները, որոնք կարող են երեւան գալ մի մարգարէի կեանքում եւ, հետեւաբար, ամէն մարդու կեանքում, որին մի առաքելութիւն է տրուած Աստծուց: Այս գիրքը մեզ ուսուցանում է նաեւ, որ Աստուած իր մարգարէին չի թողնում շփոթութեան եւ առանձնութեան մէջ, ոչ էլ թոյլ է տալիս, որ նա հեռանայ իրենից, որովհետեւ Աստուած պատրաստ է կրկին ու կրկին ասելու եւ բացատրելու, որ իր սէրը չի բացառում ոչ ոքի:

ՅՈՎՆԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՓԱԽՉԵԼ ՏԻՐՈՋԻՑ

1 Տէրը խօսեց Ամաթի որդի Յովնանի
հետ եւ ասաց. 2 «Ելի՛ր եւ գնա՛ Նինուէ
մեծ քաղաքը եւ քարոզի՛ր այնտեղ,
քանի որ նրա չարութեան համբաւը
հասաւ ինձ»: 3 Սակայն Յովնանը ելաւ
Տիրոջ ներկայութիւնից փախչելու
Թարսիս: Իջաւ Յոպպէ, գտաւ մի նաւ,
որը Թարսիս էր գնում, վճարեց գինը եւ
մտաւ նաւ՝ նրանց հետ նաւարկելու
դէպի Թարսիս՝ Տիրոջ ներկայութիւնից
հեռու:
4 Տէրը հողմ բարձրացրեց ծովում:
Մեծ փոթորիկ եղաւ ծովում, եւ նաւը
խորտակուելու վտանգի մէջ էր: 5 Նա-
ւավարները խիստ վախեցան, եւ
իւրաքանչիւրը օգնութեան էր կանչում
իր աստծուն: Նաւի վրայ եղած կա-
բասին գցեցին ծովը, որպէսզի նուա-
զեցնեն վտանգն իրենցից: Իսկ Յով-
նանը իջել էր նաւի մի խորշը, ննջում
էր եւ խոմփացնում: 6 Նաւապետը
մօտեցաւ նրան եւ ասաց. «Ի՞նչ ես
խոմփացնում, վե՛ր կաց, աղաչի՛ր քո
Տէր Աստծուն, թերեւս մեզ փրկի, եւ
մենք կորստի չմատնուենք»:
7 Եւ իւրաքանչիւրն ասաց իր ըն-
կերոջը. «Եկէ՛ք վիճակ գցենք եւ իմա-
նանք, թէ ում պատճառով են այս
չարիքները պատահում մեզ»: Վիճակ
գցեցին, եւ վիճակն ընկաւ Յովնանին:
8 Ասացին նրան. «Պատմի՛ր մեզ, թէ
ի՞նչն է այս չարիքների պատճառը.
ի՞նչ գործ ես անում, որտեղի՞ց ես
գալիս եւ ո՞ւր ես գնում, ո՞ր երկրից ես
կամ ո՞ր ժողովրդից»: 9 Ասաց նրանց.
«Ես Տիրոջ ծառան եմ, պաշտում եմ
երկնքի Տէր Աստծուն, որն ստեղծեց
ծովն ու ցամաքը»: 10 Մարդիկ շատ
վախեցան եւ ասացին նրան. «Այդ ի՞նչ
ես արել» (որովհետեւ իմացան, թէ
փախել է Տիրոջից, քանի որ պատմեց
նրանց): 11 Ասացին նրան. «Ի՞նչ
անենք քեզ, որ ծովը մեզ հանգիստ
թողնի» (քանի որ ծովն աւելի էր
ալեկոծուել եւ փոթորիկ էր բարձրաց-
նում նրանց վրայ): 12 Յովնանն ասաց
նրանց. «Ինձ ծովը գցեցէ՛ք, եւ ծովը կը
խաղաղուի, որովհետեւ ես գիտեմ, որ
ի՛մ պատճառով է այս փոթորիկը ձեզ
վրայ հասել»:
13 Մարդիկ ջանում էին նաւը ցա-
մաք վերադարձնել եւ չէին կարողա-
նում, քանի որ ծովն աւելի ու աւելի էր
ալեկոծուում ու սաստկանում նրանց
դէմ: 14 Աղաղակեցին Տիրոջը եւ
ասացին. «Ների՛ր, Տէ՛ր, մեզ կորստի
մի՛ մատնիր այս մարդու պատճառով
եւ անմեղ արիւն մի՛ բեր մեզ վրայ,
քանի որ դո՛ւ, Տէ՛ր, արեցիր, ինչպէս որ
կամեցար»: 15 Եւ Յովնանին առան ու
ծովը գցեցին: Ծովը դադարեց իր
ալեկոծութիւնից: 16 Եւ մարդիկ շատ
վախեցան Տիրոջից, զոհ մատուցեցին
Տիրոջը եւ ուխտեցին ծառայել նրան:

ՅՈՎՆԱՆԻ ԱՂՕԹՔԸ

2 Տէրը խոշոր կէտ ձկանը հրամայեց
կուլ տալ Յովնանին: Երեք ցերեկ եւ
երեք գիշեր Յովնանը կէտի փորում էր:
2 Յովնանը կէտի փորի միջից
աղօթեց Տէր Աստծուն եւ ասաց.
3 «Իմ նեղութեան մէջ ես աղօթեցի
իմ Տէր Աստծուն,
եւ նա լսեց իմ աղաչանքը դժոխքի
խորքից:
Տէ՛ր, լսի՛ր իմ ձայնը:
4 Ինձ գցեցիր ծովի խորքերը,
եւ ջրի հոսանքները պաշարեցին
ինձ:
5 Քո կոհակներն ու ալիքները թա-
փուեցին ինձ վրայ,
եւ ես մտածեցի, թէ մերժուել եմ քո
ներկայութիւնից.
արդեօք նորից պիտի տեսնե՞մ քո
սուրբ տաճարը:
6 Ջրերը թափուեցին ինձ վրայ
շունչս կտրելու աստիճան:
Խորունկ անդունդներ պաշարեցին
ինձ:
7 Գլուխս մտաւ լեռների փապար-
ների մէջ,
իջայ մի երկիր, որի նիգերը փակ են
յաւիտեան:
Ես կը փրկուեմ ապականութիւնից:
8 Երբ հոգիս տկարացաւ,
քե՛զ դիմեցի, Տէ՛ր իմ Աստուած.
մտաբերեցի Տիրոջը,
եւ թող իմ աղօթքները հասնեն քո

սուրբ տաճարը:
9 Նրանք, որ ունայն ու սուտ
աստուածներ էին պաշտում,
թողեցին իրենց երկիւղածութիւնը:
10 Իսկ ես օրհնութեան եւ խոստո-
վանանքի ձայնով
քեզ պիտի մատուցեմ այն զոհը, որ
ուխտեցի,
եւ կ՚արժանանամ Տիրոջ փրկու-
թեան»:
11 Եւ Տէրը հրամայեց վիշապ ձկանը,
եւ ձուկը նրան ցամաք նետեց:

ՅՈՎՆԱՆԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ՆԻՆՈՒԷՈՒՄ

3 Եւ Տէրը երկրորդ անգամ խօսեց
Յովնանի հետ եւ ասաց. 2 «Ելի՛ր, գնա՛
Նինուէ մեծ քաղաքը եւ այնտեղ
քարոզի՛ր ըստ նախկին պատգամի, որ
տուեցի քեզ»: 3 Յովնանը ելաւ ու
գնաց Նինուէ, ինչպէս Տէրն ասել էր
նրան: Նինուէն շատ մեծ քաղաք էր՝
երեքօրեայ ճանապարհի չափ: 4 Յով-
նանն սկսեց մուտք գործել քաղաք:
Երբ մի օրուայ ճանապարհ անցաւ,
քարոզեց եւ ասաց. «Եւս երեք օր, եւ
Նինուէն պիտի կործանուի»:
5 Նինուէացի մարդիկ հաւատացին
Աստծու պատգամին, պահեցողութիւն
յայտարարեցին եւ մեծից մինչեւ
փոքրը քուրձ հագան: 6 Լուրը հասաւ
Նինուէացիների թագաւորին: Սա ելաւ
իր գահից, հանեց իր պատմուճանը,
քուրձ հագաւ եւ նստեց մոխրի վրայ:
7 Թագաւորի ու նրա մեծամեծների
կողմից Նինուէում յայտարարուեց ու
ազդարարուեց, թէ մարդ եւ անասուն,
հօտ եւ արջառ թող ոչինչ չուտեն,
չճարակեն եւ ջուր չխմեն: 8 Եւ մարդ
ու անասուն քուրձ հագան, ի սրտէ ա-
ղօթեցին Աստծուն, բոլորը յետ կանգ-
նեցին իրենց չար ճանապարհներից եւ
անօրէնութիւններից, որ իրենց ձեռքով
էր կատարուում, եւ ասացին. 9 «Ով
գիտէ, թերեւս Աստուած միտքը փոխի
եւ յետ կանգնի իր խիստ բար-
կութիւնից, եւ կորստի չմատնուենք»:
10 Եւ Աստուած տեսաւ նրանց գործերը,
քանի որ բոլորը յետ էին կանգնել
իրենց չար ճանապարհներից. Աստուած
զղջաց այն չարիքների համար, որ
ասել էր, թէ կ՚անի նրանց. եւ չարեց:

ՅՈՎՆԱՆԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ Է, ԹԷ ԻՆՉՈՒ ՏԷՐԸ ԽՂՃԱՑ ՆԻՆՈՒԷԻՆ

4 Յովնանը մեծապէս տխրեց եւ
զղայնացաւ: 2 Աղօթեց Տէր Աստծուն
եւ ասաց. «Ո՛վ Տէր, ես այդ նոյն բանը
չասացի՞, երբ տակաւին իմ երկրում էի:
Այդ պատճառով էլ շտապեցի փախչել
Թարսիս, քանի որ գիտէի, որ դու
գթասիրտ ես ու ողորմած, համբերող
ես ու բազումողորմ եւ զղջում ես
չարիքների համար: 3 Արդ, Տէ՛ր, Տէ՛ր,
ա՛ռ իմ հոգին ինձնից, որովհետեւ ինձ
համար աւելի լաւ է մեռնել, քան կեն-
դանի լինել»: 4 Եւ Տէրն ասաց Յովնա-
նին. «Իսկապէս շա՞տ ես տխրել»:
5 Յովնանը դուրս ելաւ այդ քա-
ղաքից, նստեց քաղաքի դիմաց, իր
համար ամպհովանի պատրաստեց եւ
նստեց դրա տակ, մինչեւ որ տեսնի, թէ
ինչ պիտի պատահի քաղաքին: 6 Եւ
Աստուած հրամայեց դդմենուն, որը
բարձրացաւ Յովնանի գլխի վրայ՝
նրան հովանի դառնալու, զովացնելու
նրան եւ ազատելու իր տանջանք-
ներից: Յովնանը չափից շատ ուրա-
խացաւ դդմենու համար:
7 Եւ յաջորդ օրը վաղ առաւօտեան
Աստուած հրամայեց որդին, որը կերաւ
դդմենին, եւ այն չորացաւ: 8 Իսկ երբ
արեւը ծագեց, Աստուած հրամայեց
տապախառն խորշակ քամուն, եւ
արեւն ընկաւ Յովնանի գլխին: Սա
տանջւում, սրտնեղում էր եւ ասում.
«Ինձ համար աւելի լաւ է մահը, քան
իմ այս կեանքը»:
9 Եւ Աստուած ասաց Յովնանին.
«Իսկապէ՞ս խիստ ես տխրել դդմենու
համար»: Յովնանն ասաց. «Մահու
չափ տխրել եմ»:
10 Տէրն ասաց. «Դու ափսոսացիր
դդմենուն, որի համար ոչ մի ջանք
չթափեցիր, չսնեցիր այն. նա գիշերը
բուսնեց եւ միւս գիշեր կորաւ: 11 Իսկ
ես չխնայե՞մ Նինուէ մեծ քաղաքին,
որտեղ ապրում են աւելի քան հարիւր
քսան հազար մարդ, որոնք իրենց լաւն
ու վատը չիմացան, ինչպէս նաեւ շատ
կենդանիներ:

ՆԱՀՈՒՄ

Ներածութիւն

Նաւումի գրքի սկզբում յիշատակուած է ասորեստանեան կայսրութեան մայրաքաղաք Նինուէի անկումը, որի գերիշխանութեան տակ էին գտնւում իսրայէլացիները: Այս գիրքը գրուած է 663 թուականին (Ն. Ք.) ասորեստանցիների կողմից Թեբէի գրաւման եւ 612 թուականին (Ն. Ք.) բաբելոնացիների կողմից Նինուէի կործանման միջեւ ընկած ժամանակաշրջանում:

Գիրքը բաղկացած է երեք մասից.

Առաջին մասը ծառայում է որպէս ընդհանուր ներածութիւն եւ հաստատում է Աստծու զօրութիւնը: Նա է իշխում համայն արարչագործութեան վրայ եւ դատում աշխարհը:

Երկրորդ մասում յստակօրէն ցոյց է տրուած, որ այդ զօրութիւնը պիտի արտայայտուի Նինուէ քաղաքի կործանումով եւ դրա հետեւանքով Յուդայի երկրի բնակիչների ազատագրութեամբ (1. 9–2. 3):

Երրորդ մասում նկարագրուած է Նինուէի եւ նրա ներկայացրած իշխանութեան փլուզումը (2. 4–3. 19):

Նաւումը Նինուէի կործանումը ներկայացնում է որպէս հետեւանք Աստծու դատաստանի: Լինելով ոճիրներով եւ ցոփութեամբ լի գոռոզ մի քաղաք՝ Նինուէն հանդէս է գալիս որպէս խորհրդանշիչ մարդկային իշխանութեան՝ կառուցուած այնպիսի հիմքերի վրայ, որ ընդունելի չէ Աստծուն:

Նաւումի գրքի այժմէականութիւնը կայանում է այն ճշմարտութեան մէջ, թէ այդ կարգի ամէն իշխանութիւն անխուսափելիօրէն դատապարտուած է ոչնչանալու:

1 *Պատգամ Նինուէին: Նաւում Ելկեսացու տեսիլքի գիրքը:*

ՏԷՐԸ ԱՀԱՒՈՐ Է ԵՒ ԲԱՐԻ

2 *Տէր Աստուած նախանձոտ է եւ վրէժխնդիր,*
Տէրը վրէժխնդիր է բարկութեամբ,
Տէրը վրէժ է լուծում իր հակառակորդներից,
եւ ինքն է վերացնում իր թշնամիներին:
3 *Համբերատար է Տէրը,*
մեծ է նրա զօրութիւնը,
Տէրը ամենեւին չի արդարացնում մեղապարտին:
Նրա ճանապարհը հողմապտոյտով է եւ կործանումով.
քամին նրա ճին է, ամպերը՝ նրա ոտքերի փոշին:
4 *Սաստում է ծովը, ցամաքեցնում այն,*
չորացնում բոլոր գետերը:
Չորացան Բասանն ու Կարմելոսը,
Լիբանանի բոլոր ծաղիկները թառամեցին:
5 *Լեռները դողացին նրանից,*
բլուրները սասանուեցին,
խախտուեց երկիրը նրա առաջ,
ինչպէս նաեւ նրա բոլոր բնակիչները:
6 *Նրա բարկութեանն ո՞վ կը դիմանայ,*
ո՞վ կը կանգնի նրա զայրոյթի եւ սրտմտութեան դէմ:
Նրա զայրոյթը հալեցնում է իշխանութիւնները,
ժայռերը խորտակւում են նրա առաջ:
7 *Բարեհաճ է Տէրը նրանց նկատմամբ,*
ովքեր ապաւինում են նրան նեղ օրերին.
Նա ճանաչում է իրենից երկիւղ կրողներին:
8 *Հեղեղով վերջ կը տայ իր դէմ ըմբոստացածներին,*
եւ խաւարը կը հալածի նրա թշնամիներին:

ՊԱՏԳԱՄՆԵՐ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻՆ

9 *Ի՞նչ էք խորհում Տիրոջ դէմ.*
ինքն է վերջ տալու եւ կրկին անգամ վրէժ չի լուծի նեղութեան մէջ:
10 *Մինչեւ իրենց հիմքերը նրանք խոպան պիտի դառնան.*
բաղեղով պատուածի պէս պիտի սպառուեն
եւ լինեն ինչպէս չորացած եղէգ:
11 *Քեզնի՛ց պիտի դուրս գայ Տիրոջ դէմ չար խորհուրդը՝*
հակառակութեամբ չարիք խորհելու միտքը:
12 *Այսպէս ասաց Տէրը բազում ջրերի իշխանների մասին.*
«Այսպէս պիտի բաժանուեն նրանք,
եւ քո մասին այլեւս լուր չի լսուելու:
13 *Հիմա պիտի խորտակեմ քո գլխին կախուած նրա գաւազանը*
եւ քո կապանքները պիտի խզեմ»:
14 *Տէրը կը հրամայի քեզ համար,*
եւ այլեւս չի հռչակուի քո անունը.
«Պիտի ջնջեմ քանդակուած եւ ձուլածոյ կուռքերը քո աստծու տնից
եւ այն գերեզման պիտի դարձնեմ քեզ համար»:
15 *Ահա արագընթաց են աւետաբերի ոտքերը լեռների վրայ,*
որ խաղաղութիւն է աւետում:
Տօնի՛ր քո տօնը, Յուդայի՛ երկիր,
կատարի՛ր քո ուխտը,
քանի որ այլեւս քո միջով չի անցնելու անօրէնը քեզ հիւծելու համար:
Նա վախճանուեց, մաշուեց ու վերացաւ†:

ՊԱՏԳԱՄ ՆԻՆՈՒԷԻՆ

2 *Ելաւ նա, ով փչում է քո դէմքին*
եւ քեզ փրկում նեղութիւնից.
Հսկի՛ր ճանապարհը,
պնդացրո՛ւ մէջքդ, զօրացի՛ր մեծ ուժով.
2 *քանզի Տէրը վերադարձրեց Յակոբի հպարտութիւնը*
Իսրայէլի հպարտութեան նման,
քանի որ բոլորովին թօթափեցին նրանց եւ նրա ճիւղերը ապականեցին:
3 *Նրա զօրեղ մարդկանց զէնքը հզօր*

†Իմաստի յստակութեան համար այս համարում հետեւել եմ եբրայերէն բնագրին:

մարդիկ են,
որոնք խաղում էին կրակի հետ.
Նրանց կառքերի սանձերը կը փայլեն պատերազմի նախօրեակին.
Հեծեալները իրար կ'անցնեն ճանապարհներին
եւ հրապարակներում կը խառնուեն իրար:
4 Նրանց տեսքը կրակէ լամպերի նման է,
եւ նրանք փայլակի պէս այս ու այն կողմ են գնում:
5 Նրա մեծամեծները կը յիշեն եւ ցերեկը կը փախչեն,
կը տկարանան իրենց ճանապարհներին,
կը շտապեն դէպի պարիսպները
եւ կը պատրաստեն իրենց առաջապահներին:
6 Քաղաքների դռները բացուեցին,
արքունիքները կործանուեցին,
եւ Նրանց հարստութիւնը յայտնի դարձաւ:
7 Ինքը ելնում էր,
նաժիշտները գալիս էին նրա առաջ
եւ, ինչպէս աղաւնիներ, հառաչում էին իրենց սրտերում:
8 Նինուէի ջրերը նման էին աւազանի ջրերի.
Նրանք փախան քեզնից եւ տեղ չբռնեցին:
9 Ձկար մէկը, որ հսկէր.
յափշտակում էին արծաթը,
յափշտակում էին ոսկին,
եւ նրա զարդեղէնին չափ չկար:
Մանրացան աւելի քան նրա բոլոր ցանկալի սպասքները:
10 Սրտի սոսկում, թօթափում եւ ձգտում,
ծնկների թուլացում,
ցաւ ամէն մէջքի վրայ,
եւ բոլորի երեսները սեւացան պուտուկի նման:

ՆԻՆՈՒԷՆ ՆՄԱՆ Է ՊԱՐՏՈՒԱԾ ԱՌԻՒԾԻ

11 Ո՞ւր են առիւծների որջերն ու նրանց կորիւնների որսերը,
ո՞ւր գնաց մտաւ առիւծը.
չկար մէկը, որ վախեցնէր առիւծի կորիւնին:
12 Առիւծը բաւական որս արեց իր կորիւնների համար,
որս խեղդեց իր կորիւնների համար,
իր բոյնը լցրեց որսով
եւ իր որջը՝ յափշտակուած բաներով:
13 «Ահա ես քո դէմ եմ, – ասում է Ամենակալ Տէրը, –
ծխով կ'այրեմ քո զօրքերը,
սուրը կ'ուտի քո առիւծներին,
երկրից կը վերացնեմ քո որսը,
եւ այլեւս չեն լսուի քո դրծերը»:

ՍՊԱՆԴԻ ՄԱՏՆՈՒԱԾ ՈՃՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԸ

3 Ո՛վ արեան քաղաք,
բոլորովին սուտ,
անիրաւութեամբ լի,
ուր որսը պէտք է փնտռուի[†]:
2 Հարուածների ձայն,
անուի շարժման ձայն,
կառքերի շաչիւն,
հեծեալների դոփիւն,
3 զէնքի փայլ, սուսերի շող,
վիրաւորների թաւալգլոր անկում,
հաշիւ չկար նրա ժողովուրդներին:
Նրանք պիտի տկարանան իրենց մարմնով բազում պոռնկութեան պատճառով:
4 Գեղապանծ պոռնիկ,
կախարդների գլխաւոր,
որ վաճառում էր ազգը իր պոռնկութեամբ
եւ տոհմերը՝ իր կախարդանքներով:
5 «Ահա ես քեզ դէմ եմ, – ասում է Ամենակալ Տէր Աստուածը, –
պիտի բացեմ քո յետնամասը,
քօղ պիտի գցեմ քո դէմքին,
ազգերին ցոյց պիտի տամ քո ամօթը
եւ թագաւորութիւններին՝ քո անարգանքը:
6 Քեզ վրայ պիտի նետեմ քո պղծութիւններն ու աղտեղութիւնները
եւ խայտառակ պիտի անեմ քեզ:
7 Եւ այնպէս պիտի լինի,
որ ով տեսնի քեզ, պիտի իջնի եւ ասի.
"Խե՜ղճ Նինուէ, ո՞վ կը լինի, որ հեծեծի քեզ համար,
որտեղի՞ց մխիթարութիւն փնտռենք

[†]Եբրայերէն՝ այնտեղ որսը պակաս չէ:

քեզ համար:
8 Բաժի՛ն պատրաստիր, քնա՛ր լարիր, ո՛վ Ամոնի նահանգ,
որ բնակւում ես գետերի միջեւ՝ ջրերով շրջապատուած,
որի սկիզբը ծովն է,
եւ ջրերը՝ նրա պարիսպը:
9 Եթովպացիներն ու Եգիպտոսը նրա զօրութիւնն են,
եւ նա երբեք փախուստի չէր մատնուի.
լիբիացիները նրան օգնական դարձան:
10 Սակայն նա էլ սասանուելով գերի կը գնայ,
քարին կը խփեն նրա զաւակներին նրա ճանապարհների սկզբում,
նրա բոլոր թանկարժէք իրերի վրայ վիճակ կը գցեն
եւ նրա բոլոր մեծամեծները ձեռնակապերով կը կապուեն:
11 Եւ դու կը հարբես, կը յիմարանաս,
թշնամիներից քեզ համար ոտքի տեղ կը խնդրես:
12 Քո բոլոր ամրոցները նման են ծառի վրայ երեւացող թզի,
որ եթէ շարժուի, կ'ընկնի ուտողների բերանը:
13 Ահա քո ժողովուրդը կանանց նման կը լինի քո մէջ,
քո թշնամիների համար անպայման կը բացուեն քո երկրի դռները,
եւ կրակը կը լափի քո նիգերը:
14 Պաշարման համար ջո՛ւր լցրու եւ ամրացրո՛ւ քո ամրոցները.
մտի՛ր ցեխի մէջ, կոխոտի՛ր,
շաղախի՛ր այն յարդի հետ եւ պնդացրո՛ւ աւելի քան աղիւսը:
15 Այնտեղ կրակը կը լափի քեզ,
սուրը կը սպանի քեզ,
կ'ուտի քեզ ինչպէս մորեխը
եւ կը ծանրանայ ինչպէս ջորեակը:
16 Շատացրիր քո վաճառականները երկնքի աստղերի չափ,
եկաւ ջորեակը, թռաւ,
17 առաջ գնաց ինչպէս փոքրիկ մորեխը.
եւ քո խառնամբոխը նման էր մորեխի,
որ ցուրտ օրերին կպչում է ցանկապատին.
ծագեց արեւը, գնաց եւ չիմացուեց նրա տեղը:
18 Վա՜յ նրանց.
քո հովիւները ննջեցին,
Ասորեստանի թագաւորը կոտորեց քո զօրքերը,
քո ժողովուրդը չուեց լեռները,
չկար մէկը, որ մնար:
19 Թարախակալուեցին քո վէրքերը,
եւ քո անկումը բուժում չունի.
բոլոր նրանք, ովքեր լսեցին քո գոյժը,
ծափ կը զարնեն քեզ համար,
քանի որ ո՞ւմ վրայ չեկաւ քո չարութիւնը մշտապէս:

ԱՄԲԱԿՈՒՄ

Ներածութիւն

Ամբակումի գիրքը մեզ ցոյց է տալիս կերպարը մի մարգարէի, որն ապրել ու գործել է ճգնաժամային ժամանակաշրջանում: Նա մի մարդ է, որ տառապում է ուրիշների դժբախտութեամբ, դատապարտում է չարիքը, այդ մասին դիմում է Աստծուն եւ ուրախանում, երբ ստանում է Նրա պատասխանը: Այս գիրքը գրուել է հաւանաբար 7-րդ դարի վերջերին եւ 6-րդ դարի սկզբին (Ն. Ք.), այն ժամանակ, երբ բաբելոնացիները իրենց գերիշխանութիւնն էին հաստատել Մերձաւոր Արեւելքի վրայ, որտեղ իսրայէլական համայնքը անձկութեամբ մտածում էր իր ապագայի եւ Աստծու հետ ունեցած իր յարաբերութիւնների մասին:

Աստուած պատասխանում է իր մարգարէին, փոխանցելով նրան հետեւեալ պատգամը՝ ուղղուած ոչ միայն նրա ժամանակակիցներին, այլեւ բոլոր ժամանակների մարդկանց. լինել հաւատարիմ Աստծուն: Ահա այն, ինչը թոյլ է տալիս մարդուն ապրել եւ վստահութեամբ սպասել Աստծու միջամտութեանը:

Ծանր ու դժուարին ժամանակներում մարդիկ յաճախ են դիմել Ամբակումի գրքին՝ վերագտնելու համար այդ վստահութիւնը:

ԱՄԲԱԿՈՒՄԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Պատում, որ տեսաւ Ամբակում մարգարէն:*

ԱՄԲԱԿՈՒՄԻ ԳԱՆԳԱՏԸ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

2 Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր, աղօթեմ, բայց դու չլսես,
զրկուած՝ ձայն տամ քեզ, եւ դու չփրկես:
3 Ինչո՞ւ ինձ ջանք ու յոգնութիւն պատճառեցիր՝
թշուառութիւն եւ ամբարշտութիւն տեսնելու:
Իմ առաջ եղաւ դատաստանը,
եւ դատաւորը կաշառք էր առնում:
4 Այդ պատճառով օրէնքը խափանուեց,
եւ արդարութիւնը գլուխ չի գալիս.
քանի որ ամբարիշտը ճնշում է արդարին,
դրա համար էլ սխալ դատաստան էր լինում:

ԱՍՏԾՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ. ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

5 Տեսէ՛ք, արհամարհողնե՛ր, նայեցէ՛ք,
մեծապէ՛ս զարմացէք եւ չքուեցէ՛ք,
որովհետեւ մի բան պիտի անեմ ես ձեր օրերին,
որին չէք հաւատայ,
նոյնիսկ եթէ մէկը պատմի ձեզ:
6 Ահա ես կ'արթնացնեմ քաղդէացիներին՝
դաժան եւ արագընթաց մի ազգ,
որ արշաւում է երկրի լայնքով մէկ՝
ժառանգելու այն բնակավայրերը, որոնք իրը չեն:
7 Նա ահեղ է ու սարսափելի,
եւ նրա դատաստանը իր կողմից կը լինի,
ինքն է վճռում իր դատաստանը,
եւ իր իշխանութիւնը իրեն է պատկանում:
8 Ընձառիւծներից առաւել արագ կը վազեն նրանց ձիերը.
աւելի արագ, քան արաբական գայլերը,
նրանց զինեալները կ'ասպատակեն,
կը գան հեռուներից եւ կը սլանան,
ինչպէս արծիւն է հաճոյքով սլանում դէպի կերակուրը:
9 Նրանց դէմ կանգնող ամբարիշտների վերջը կը գայ:
Գերիներ կը կուտակի աւազի չափ:
10 Նա թագաւորների հետ զեխութիւն կ'անի,
բռնակալները նրան խաղալիք կը դառնան,
բոլոր ամրոցների հետ խաղ կ'անի,
հող կը կուտակի եւ կը գրաւի դրանք:
11 Այն ժամանակ կը փոխուի նրա միտքը,
նա անց կը կենայ եւ կը դառնայ բարեհաճ.
սա է իմ Աստծու զօրութիւնը:

ԱՄԲԱԿՈՒՄԸ ՆՈՐԻՑ Է ԳԱՆԳԱՏԻՈՒՄ

12 Արդարեւ, դու չե՞ս մեր Տէր Աստուածը սկզբից,
ուրեմն չենք մեռնի.
Տէ՛ր, նրան դատաստանի ենթարկեցիր եւ ստեղծեցիր ինձ,
որ յանդիմանեմ նրա խաղը:
13 Մաքուր է քո աչքը՝ չարիք տեսնելուց հեռու.
կատարուածին նայել չես կարող.
ինչո՞ւ նայեցիր արհամարհողներին եւ չնկատեցիր,
երբ ամբարիշտը կուլ էր տալիս արդարին:
14 Մարդկանց ծովի ձկների՞ պէս ես դարձնում
եւ սողունների՞ պէս, որոնք առաջնորդ չունեն:
15 Բաբելոնը նրանց կարթով հանեց,
ձգեց իր ցանցով եւ հաւաքեց իր ուռկաններով:
16 Այդ պատճառով կ'ուրախանայ եւ կը ցնծայ նրա սիրտը,
դրա համար զոհ կը մատուցի իր ուռկանին
եւ խունկ կը ծխի իր ցանցին,
քանի որ նա նրանցով ուռճացրեց իր բաժինը,
եւ իր կերակուրը ընտիր եղաւ:
17 Այդ պատճառով նա կը տարածի

իր ցանցը
եւ երբեք չի խնայի կոտորելու
ազգերին:

ԱՍՏՎՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՄԲԱԿՈՒՄԻՆ

2 Իմ պահակակէտում կը կանգնեմ,
կը բարձրանամ ժայռի վրայ եւ կը
տեսնեմ,
թէ ինչ կը խօսի ինձ հետ
եւ ինչ պատասխան կը տայ իմ
յանդիմանութեան:
2 Պատասխանեց ինձ Տէրը եւ ասաց.
«Պարզորոշ գրի՛ր այդ տեսիլքդ
տախտակի վրայ,
որպէսզի ով որ կարդայ, համարձակ
կարդայ.
3 որովհետեւ տեսիլքիդ կատարման
համար տակաւին ժամանակ կայ,
այն կը ծագի անպայման եւ ոչ
իզուր տեղը:
Բայց եթէ ուշանայ, համբերի՛ր,
որովհետեւ ինչ որ պիտի գայ, կը
գայ եւ չի ուշանայ:
4 Եւ եթէ որեւէ մէկը երկմտի,
իմ անձը բարեհաճ չի լինի նրա
նկատմամբ»:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎՃԻՌ

5 Արդարեւ արդարը հաւատքով
կ'ապրի,
իսկ կասկածողն ու արհամարհողը
ամբարտաւան մարդ է
եւ ոչինչ աւարտին չի հասցնի:
Ով իր հոգին ընդարձակում է
ինչպէս գերեզման
եւ անյագ է ինչպէս մահը,
իր շուրջը կը հաւաքի բոլոր հեթա-
նոսներին
եւ իր մէջ կ'ամփոփի բոլոր
ազգերին:
6 Արդարեւ, սրանք, այս բոլորը նրա
մասին պատմութիւններ չե՞ն յօրինի.
նրան կը մտցնեն երգերի մէջ եւ
կ'ասեն.
"Վա՜յ նրան, ով իւրացնում է այն,
ինչ իրենը չէ.
մինչեւ ե՞րբ նա այդքան շատ պիտի
ծանրացնի իր տանջողակները,
7 որովհետեւ յանկարծ կ'ելնեն նրան
ուտողները,
կը զարթնեն նրա դաւաճանները,
եւ դու աւար կը դառնաս նրանց
համար:
8 Քանի որ դու կողոպտեցիր բազում
ազգերի,
ժողովուրդների ամբողջ մնացորդա-
ցը քե՛զ կը կողոպտի
մարդկանց արեան, երկրի, քաղաքի
եւ նրա բոլոր բնակիչների ամ-
բարշտութեան համար:
9 Վա՜յ նրան, ով իր տան համար
ագահութիւն կ'անի
իր բոյնը բարձր տեղ կը դնի
չար ձեռքերից ազատելու համար:
10 Քո տան ամօթը հաստատեցիր.
ոչնչացրիր բազում ազգերի եւ դու
յանցանք գործեցիր.
11 քանի որ քարը հիմքից կ'աղա-
ղակի,
եւ որդը փայտի միջից այդ մասին
ձայն կը տայ:
12 Վա՜յ նրան, ով քաղաքը արեան
վրայ է կառուցում
եւ քաղաք է հաստատում անիրա-
ւութեամբ:
13 Այդ բոլորը Ամենակալ Տիրոջ
կողմից չի՞ լինում.
շատ ժողովուրդներ պակասեցին
կրակի պատճառով,
եւ շատ ազգեր նուազեցին,
14 որպէսզի երկիրը լցուի Տիրոջ
փառքի գիտութեամբ,
ինչպէս ծովերը ծածկող բազում
ջրերն են:
15 Վա՜յ նրան, ով ընկերոջը պղտոր
հրապոյրներով է արբեցնում,
արբեցնում է, որպէսզի նայի նրանց
մերկութեանը:
16 Փառքի փոխարէն անարգանքով
լիացար.
դու էլ խմի՛ր, շարժուի՛ր եւ դողա՛:
Պաշարեց քեզ Տիրոջ Աջի բաժակը,
եւ անարգութիւն կուտակուեց քո
փառքի վրայ.
17 քանի որ Լիբանանի ամբարշտու-
թիւնը կը ծածկի քեզ,
գազանների թշուառութիւնը կը
զարհուրեցնի քեզ՝
մարդկանց արեան, երկրի, քաղաքի
ու նրա բոլոր բնակիչների ամբարշտու-

թեան պատճառով:
18 Ինչ օգուտ ունի քանդակուած
արձանը,
երբ քանդակեցին, ձուլեցին այն.
սուտ երեւոյթ.
իսկ ստեղծողը յոյսը դրեց իր
ստեղծածի վրայ՝
իր համար անօգուտ կուռքեր շինե-
լով:
19 Վա՜յ նրան, ով փայտին ասում է՝
սթափուի՛ր եւ զարթնի՛ր,
իսկ քարին՝ բարձրացի՛ր,
մինչ դրանք աչքի առաջ գտնուող
երեւոյթ են՝
արծաթից ու ոսկուց կռած,
եւ բոլորովին շունչ չկայ դրանց մէջ:
20 Սակայն Տէրը իր սուրբ տաճարի
մէջ է,
եւ ամբողջ երկիրը թող վախենայ
նրանից:

ԱՄԲԱԿՈՒՄԻ ԱՂՕԹՔԸ

3 Ամբակում մարգարէի աղօթքը՝
երգով:
2 «Տէ՛ր, քո լուրը լսեցի եւ վախեցայ,
նայեցի քո գործերին եւ զար-
հուրեցի.
դու կը ճանաչուես երկու գազան-
ների միջեւ,
երբ տարիները մօտենան՝ կը յայտ-
նուես,
երբ ժամանակը հասնի՝ կ'երեւաս,
երբ իմ անձը բարկութիւնից խռո-
վուի՝ ողորմութիւն կը յիշես:
3 Աստուած Թեմանից կը գայ,
սուրբը՝ զով եւ անտառախիտ լեռից.
Նրա փառքը ծածկեց երկինքը,
Նրա օրհնութեամբ լցուեց երկիրը
(դադար):
4 Նրա ճառագայթները լոյսի պէս կը
լինեն,
եւ եղջիւրներ կային նրա ձեռքում:
Նա ուժգին սէր հաստատեց իր
զօրութեան նկատմամբ:
5 Նրա առջեւից լուրը կը գնայ
եւ դաշտ դուրս կը գայ նրանից
յետոյ:
6 Նա կանգնեց, եւ շարժուեց երկիրը.
նայեց, եւ հալուեցին ազգերը,
լեռները բռնութեամբ խորտակուե-
ցին,
եւ հալուեցին յաւերժական բլուր-
ներ:
7 Նրա ընթացքը յաւիտենական տե-
սայ,
զարհուրեցին եթովպացիների վրան-
ները
եւ Մադիամի երկրի վրանները:
8 Մի՞թէ գետերի դէմ ես բար-
կանում, Տէ՛ր,
քո բարկութիւնը գետերի՞ վրայ է
ընկնում,
կամ քո ասպատակութիւնը՝ ծովերի՞
վրայ,
որպէսզի բարձրանաս քո ձիու վրայ,
իսկ քո հեծնելը փրկութիւն է:
9 Շատ ձիգ կը լարես քո աղեղը
իշխանութեան դէմ,
– ասում է Տէրը, –
երկիրը գետերով պատռուեց:
10 Քեզ կը տեսնեն ժողովուրդները
եւ երկունքի ցաւեր կ'ունենան.
դու ես հաստատում ջրերի ըն-
թացքը:
Անդունդները ձայն տուեցին սաս-
տիկ բարձրութեամբ:
11 Բարձրացաւ արեգակը,
եւ լուսինը կանգնեց իր տեղում:
Քո նետերը կը թռչեն լոյսի մէջ,
եւ քո զէնքերի փայլը կը լինի փայ-
լատակումների պէս:
12 Սպառնալիքներով խոնարհեցրիր
երկիրը
եւ բարկութեամբ կը տկարացնես
ազգերին:
13 Ելար քո ժողովրդի փրկութեան
համար՝
փրկելու քո օծեալներին.
մահ բերեցիր անօրէնների գլխին.
կապանքներ բարձրացրիր ամբողջ
պարանոցն ի վեր (դադար):
14 Ապուշ դարձնելով խորտակեցիր
բռնակալների գլուխը:
Նրանք կը սասանուեն դրանից,
կ'արձակեն իրենց երասանները ինչ-
պէս գաղտագողի ուտող աղքատ:
15 Ծով հանեցիր քո ձիերը՝ շատ
ջրեր պղտորելու:
16 Նայեցի, եւ իմ սիրտը զարհուրեց
իմ շրթների աղօթքների ձայնից,
դող ընկաւ ոսկորներիս մէջ,

եւ փորս անհանգստացաւ ներսից:
Կը հանգստանամ նեղութեան օրը,
որպէսզի ելնեմ գնամ դէպի իմ պանդուխտ ժողովուրդը.
17 *քանզի եթէ անգամ թզենին իր պտուղը չտայ,*
որթատունկը ծնունդ չունենայ,
ձիթենին բերք չտայ,
դաշտերը կերակուր չտան,
հօտերը դադարեն արածելուց,
եւ մսուրների մէջ եզներ չլինեն,
18 *ես պիտի ուրախանամ Տիրոջով,*
ուրախանամ իմ փրկիչ Աստուծով:
19 *Տէր Աստուածն է իմ զօրութիւնը,*
նա կը հաստատի իմ ոտքերը մինչեւ վերջ
եւ ինձ բարձունք կը հանի՝ յաղթելու իր երգով»:

ՍՈՓՈՆԻԱ

Ներածութիւն

Սոփոնիա մարգարէի քարոզութիւնը սկիզբ է առել 7-րդ դարի վերջին (Ն. Ք.) եւ անկասկած նախորդել է Ամբակումի քարոզութեանը: Այն ժամանակ, երբ Սոփոնիան քարոզում էր ժողովրդի մէջ, Յոսիա թագաւորը հաւանաբար դեռ չէր իրականացրել իր կրօնական բարեկարգութիւնը, եւ Յուդայի թագաւորութիւնն ապրում էր իր պատմութեան ողբերգական պահերից մէկը: Մարգարէն պատասխանում է բոլոր նրանց, ովքեր հարց են տալիս իրենք իրենց, թէ Աստուած իսկապէս հետաքրքրո՞ւմ է մարդկանցով եւ առաջ տանո՞ւմ է պատմութիւնը: Նա յայտնում է, որ Աստծու միջամտութիւնը կատարուելու է բազմաթիւ ձեւերով. Աստուած գալու է դատելու Յուդայի երկրի եւ Երուսաղէմի բնակիչներին, նա կործանելու է Յուդայի երկրի հարեւան ժողովուրդներին, ապա վերականգնելու է Երուսաղէմը՝ այնտեղից վերջնականապէս արմատախիլ անելով չարիքը եւ խոնարհ ու աղքատ մի բնակչութիւն թողնելով այնտեղ ամբողջ մարդկութիւնը կերպարանափոխելու նպատակով:

Սոփոնիան ընդգծում է, որ իսրայէլացի ժողովուրդը չի կարող վերագտնել ճշմարիտ յարաբերութիւնը իր Աստծու հետ առանց իր միջից արմատապէս վերացնելու նրանց, ովքեր իրենց սեփական շահը վեր են դասում Աստծու պահանջներից: Նա առանձնակի համակրանք է տածում «երկրի խոնարհների» նկատմամբ:

ՍՈՓՈՆԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Տիրոջ պատգամը, որ հասաւ Եզեկիայի որդի, Ամարիայի որդի, Գոդոդիայի որդի, Քուսիի որդի Սոփոնիային՝ Յուդայի երկրի արքայի՝ Ամոնի որդի Յոսիայի ժամանակ:*

ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ

2 *«Ամէն ինչ կը պակասի երկրի երեսից», – ասում է Տէրը:*
3 *«Կը պակասի մարդ եւ անասուն,*
կը պակասեն երկնքի թռչուններն ու ծովի ձկները,
կը տկարանան ամբարիշտները,
եւ ես կը վերացնեմ անօրէններին երկրի երեսից», – ասում է Տէրը:

ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴԷՄ

4 *«Իմ ձեռքը կ'երկարեմ Յուդայի երկրի վրայ,*
Երուսաղէմի բոլոր բնակիչների վրայ
եւ կը վերացնեմ այդտեղից
Բահաղի անունն ու քրմերի անունները՝ քահանաներով հանդերձ,
5 *որոնք տանիքի վրայ երկրպագում են երկնքի զօրութիւններին,*
նրանք, որ երդւում էին Տիրոջ՝ իրենց արքայի անունով,
նրանք, որ խոտորւում էին Տիրոջից,
6 *նրանք, որ չէին փնտռում Տիրոջը,*
եւ նրանք, որ Տիրոջ կողմը չէին»:
7 *Վախեցէ՛ք Տէր Աստծուց,*
քանի որ մօտիկ է Տիրոջ օրը,
որովհետեւ Տէրը պատրաստեց իր զոհերը
8 *եւ հրաւիրեց իր հրաւիրեալներին:*
«Կը լինի այնպէս, որ Տիրոջ զոհի օրը կը պատժեմ իշխաններին,
թագաւորի տունը եւ բոլորին,
ովքեր օտար զգեստ են հագել:
9 *Այն օրը յայտնապէս կը պատժեմ բոլորին դռների շեմքերի առաջ,*
նրանց, որոնք իրենց Տէր Աստծու Տունը լցնում էին
ամբարշտութեամբ եւ նենգութեամբ:
10 *Այն օրը, – ասում է Տէրը, –*
աղաղակների ձայն կը լինի վիրաւորների† դռնից,
գոյժ՝ երկրորդ դռնից եւ մեծ բեկում՝ բլուրներից:
11 *Ողբացէ՛ք, Կոտորուածների թաղամասի բնակիչնե՛ր,*
քանի որ այդ ամբողջ ժողովուրդը նմանուեց քանանացիներին,
բնաջնջուեցին բոլորը,
ովքեր հպարտացել էին արծաթով:
12 *Այն օրը ճրագով կը խուզարկեմ Երուսաղէմը*
եւ կը պատժեմ այն տղամարդկանց,
որոնք արհամարհեցին իրենց պահպանութեանը յանձնուած իրերը
եւ որոնք ասում էին իրենց սրտում.
"Տէրը ո՛չ բարի գործ է անում եւ ո՛չ՝ չար":
13 *Կը խլուի նրանց զօրութիւնը,*
եւ նրանց տունը աւերակ կը դառնայ.
տներ կը շինեն, բայց չեն բնակուի դրանց մէջ,
այգիներ կը տնկեն, բայց չեն խմի դրանց գինին»:

ՏԻՐՈՋ ՕՐԸ

14 *Մօտ է Տիրոջ մեծ օրը,*
մօտ է եւ շատ շուտով կը գայ,
Տիրոջ օրուայ ձայնը խիստ է եւ դառն,
ուժեղն էլ կը զգայ,
15 *այն օրը բարկութեան օր է,*
նեղութեան եւ վտանգի օր,
թշուառութեան եւ կործանումի օր,
16 *խաւարի եւ մէգի օր,*
ամպի եւ մառախուղի օր,
շեփորի եւ աղաղակի օր
ամուր քաղաքների եւ բարձր աշտարակների դէմ:
17 *«Մարդկանց նեղութեան կը մատնեմ,*
եւ նրանք կոյրերի պէս կ'ընթանան,
քանի որ մեղանչեցին Տիրոջ դէմ
եւ նրա անունը դրեցին սնոտիների վրայ,
որոնք ոչնչով չկարողացան օգնել նրանց.
կը թափուի նրանց արիւնը հողի

†Եբրայերէն՝ ձկների դռնից ... եւ Մասեցայից:

նման
եւ նրանց մարմինը՝ աղբի պէս»:
18 *Նրանց արծաթն ու ոսկին նրանց չի կարողանայ փրկել Տիրոջ բարկութեան օրը,*
եւ նրա վրէժխնդրութեան կրակով կը մաշուի ամբողջ երկիրը,
որովհետեւ նա վախճան ու տագնապ կը բերի
երկրի բոլոր բնակիչների վրայ:

ԿՈՉ ԽՈՆԱՐՀՆԵՐԻՆ

2 *Հաւաքուեցէ՛ք եւ քննեցէ՛ք ձեզ, ո՛վ անզգամ ազգեր,*
2 *քանի դեռ չէք դարձել ինչպէս անցաւոր ծաղիկ,*
քանի դեռ չի եկել Տիրոջ բարկութեան եւ սրտմտութեան օրը:
3 *Փնտռեցէ՛ք Տիրոջը, երկրի բոլո՛ր խոնարհներ,*
իրաւո՛ւնք արէք, արդարութի՛ւն որոնեցէք
եւ պատասխա՛ն տուէք նրանց,
որովհետեւ Տիրոջ բարկութեան օրը պիտի թաքնուէք:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

4 *Գազան յափշտակուած կը լինի,*
Ասկաղոնը կ'աւերուի,
Ազոտոսը միջօրէին կը կործանուի,
եւ Ակկարոնը արմատից կը խլուի:
5 *Վա՜յ ձեզ, որ բնակւում էք ծովի եզերքում,*
Կրետէ կղզու բնակիչնե՛ր:
Տիրոջ այս պատգամը քո դէմ է, Քանա՜ն՝ երկիրդ այլազգիների.
«Ես կը զրկեմ քեզ բնակութիւնից,
6 *եւ Կրետէն հօտերի արօտավայր կը դառնայ եւ ոչխարների գոմ»:*
7 *Ծովեզերքը Յուդայի տան մնացորդներինը կը լինի,*
հօտերը այնտեղ կը ճարակեն,
եւ Յուդայի երկրի որդիների սիրոյն
նրանք գիշերը կ'իջեւանեն Ասկաղոնի տներում,
քանի որ նրանց այցի է եկել իրենց Տէր Աստուածը,
որ վերադարձրեց նրանց գերութիւնից:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

8 *«Լսեցի Մովաբի նախատինքը*
եւ ամոնացիների թշնամանքը,
որով նախատում էին իմ ժողովրդին
եւ գոռոզաբանում էին իմ սահմանների վրայ:
9 *Դրա համար եմ ես կենդանի,*
– ասում է Ամենակալ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, –
որ Մովաբը Սոդոմի պէս դառնայ,
ամոնացիները՝ Գոմորի պէս,
եւ Դամասկոսը՝ լքուած ինչպէս կալի շիւղը
եւ ապականուած յաւիտեան:
Իմ ժողովրդի մնացորդները կը յափշտակեն նրանց,
եւ իմ ժողովրդի մնացորդները կը ժառանգեն դրանք»:
10 *Եւ դա կը պատահի նրանց՝ իրենց հպարտութեան փոխարէն,*
քանի որ նախատեցին եւ վատաբանեցին Ամենակալ Տիրոջը:
11 *Տէրը սարսափազդու տեսքով կ'երեւայ նրանց,*
կը խորտակի ազգերի բոլոր աստուածներին,
եւ ազգերը կ'երկրպագեն նրան՝ իւրաքանչիւրն իր տեղից՝
ազգերի բոլոր կղզիներից:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՀԻՍԻՍԻ ԵՒ ՀԱՐԱՒԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

12 *«Դուք էլ՝ եթովպացինե՛ր, իմ սրից էք հարուածուելու:*
13 *Իմ ձեռքը կ'երկարեմ հիւսիսի վրայ*
եւ կը բնաջնջեմ ասորեստանցուն,
Նինուէն ապականութեան կ'ենթարկեմ՝
անապատի պէս անջրդի կը դարձնեմ,
14 *կ'արածեն նրա մէջ հօտերն ու երկրի բոլոր գազանները,*
գետնաբուծներն ու ոզնիները կ'ապրեն նրա տներում,
գազանները կ'ոռնան նրա նկուղներում,
եւ հաւալուսինները՝ նրա դռների մէջ,

քանի որ նրա գոռոզութիւնը մայրի
ծառի պէս բարձր է»:
15 Այսպէս է լինելու վրիժագործ
քաղաքը, որ ապրում էր յոյսով,
որ ասում էր իր մտքում.
«Ես եմ, եւ ոչ ոք չի լինի ինձնից յե-
տոյ»:
Ինչո՞ւ գազանների ճարակ դարձաւ
այն եւ ապականուեց:
Իւրաքանչիւր ոք, որ պիտի անցնի
նրա միջով,
պիտի սուլի եւ իր գլուխը շարժի:

ԸՆԴԴԷՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

3 Ո՛վ երեւելիդ՝ փրկեա՛լ քաղաք,
աղաւնի, որ ո՛չ ականջ դրեց Տիրոջ
ձայնին
եւ ո՛չ խրատն ընդունեց:
2 Ցոյսը չդրեց Տիրոջ վրայ եւ
Աստծուն չմօտեցաւ:
3 Նրա իշխանները առիւծի պէս
պիտի մռնչեն,
եւ նրա դատաւորները՝ արաբական
գայլերի պէս,
որոնք մինչեւ առաւօտ ոչինչ չեն
թողնում:
4 Նրա մարգարէները այսահար են,
արհամարհող:
Նրա քահանաները պղծում են
սրբութիւնները
եւ ամբարշտանում օրէնքը խախ-
տելով:
5 Սակայն արդար Տէրը նրա մէջ է եւ
անիրաւութիւն չի անի.
ամէն առաւօտ կանուխ իմ դատաս-
տանը ի յայտ կը բերի եւ չի թաքցնի,
6 պահանջելիս չի ճանաչում անի-
րաւութիւն,
երբեք անիրաւութիւն չի անի
եւ ապականութեամբ կը կործանի
ամբարտաւաններին:
Քանդուեցին նրանց աշտարակները:
«Կ՚աւերեմ նրանց ճանապարհները,
որպէսզի ոչ ոք այլեւս երբեք
դրանցով չգնայ:
Կը պակասեն նրանց քաղաքները
բնակիչներ չլինելու պատճառով:
7 Ասացի, թէ՝ «Վախեցէ՛ք ինձնից,
խրա՛տ լսեցէք եւ չէք մեռնի երկրի
երեսից ամբողջովին,
քանի դեռ կը պատժեմ նրանց:
Պատրաստուի՛ր, առաւօտեան վա՛ղ
արթնացիր.
ապականուեցին նրա բոլոր ար-
դիւնքները:
8 Դրա համար սպասի՛ր ինձ, -
ասում է Տէրը, - այն օրը,
երբ ոտքի կանգնեմ վկայելու:
Ազգերի դէմ իմ դատաստանը կը
լինի՝
բռնել թագաւորներին,
նրանց վրայ թափել իմ բարկու-
թիւնը,
իմ ամբողջ բարկութիւնն ու
սրտմտութիւնը,
քանի որ իմ վրէժխնդրութեան կրա-
կով պիտի մաշուի ամբողջ երկիրը:
9 Այն ժամանակ ժողովուրդներին
կը վերադարձնեմ իրենց լեզուն ըստ
ազգի,
որպէսզի բոլորը Տիրոջ անունը կան-
չեն,
որպէսզի նրանք ծառայեն նրան մէկ
լծի տակ:
10 Եթովպացիների գետերից այն
կողմ իմ ցրուածներին կ՚ընդունեմ,
եւ նրանք զոհ կը մատուցեն ինձ:
11 Այն օրը չես ամաչի քո բոլոր
գործերից,
որով ամբարշտացար իմ դէմ,
որովհետեւ այն ժամանակ քո միջից
պիտի հանեմ քո ամբարտաւան չարու-
թիւնը,
եւ այլեւս չես շարունակելու գոռո-
զանալ իմ սուրբ լերան վրայ:
12 Քեզ կը թողնեմ հեզ եւ խոնարհ
ժողովուրդ:
13 Իսրայէլի մնացորդները կը
վախենան Տիրոջ անունից,
անիրաւութիւն չեն անի,
սնոտի բաներ չեն խօսի,
եւ նրանց բերանում նենգ լեզու չի
գտնուի,
որովհետեւ նրանք կ՚արածեն եւ կը
մակաղեն,
եւ ոչ մէկը չի լինի, որ վախեցնի
նրանց»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

14 Հրճուի՛ր, դո՛ւստր Սիոնի,
բարձրաձայն աղաղակի՛ր, Երուսա-
ղէ՛մ,
ուրախացի՛ր եւ զուարճացի՛ր քո
ամբողջ սրտով, դո՛ւստր Երուսաղէմի,
15 որովհետեւ Տէրը վերացրեց քեզ-
նից քո անիրաւութիւնները,
Տէրը քեզ փրկեց քո թշնամիների
ձեռքից.
Իսրայէլի թագաւորը՝ Տէրը, քո մէջ
է,
եւ դու այլեւս չարիք չես տեսնի:
16 Այն ժամանակ Տէրը կ՚ասի Երու-
սաղէմին.
«Քաջալերուի՛ր, Սիո՛ն, թող
չթուլանան քո ձեռքերը:
17 Հզօրը՝ Տէր Աստուած, քո մէջ է եւ
կը փրկի քեզ,
ուրախութիւն կը բերի քեզ,
կը նորոգի քեզ իր սիրով
եւ ուրախ կը լինի քո մէջ զուար-
ճութեամբ, ինչպէս տօնի օրը:
Ես կը հաւաքեմ քո ցրուածներին:
18 Վա՜յ ով կը նախատի նրան:
19 Ահա թէ ինչ կ՚անեմ քեզ համար
այն ժամանակ.
կը փրկեմ ճնշուածին,
մերժուածին կ՚ընդունեմ
եւ նրանց պանծալի ու հռչակաւոր
կը դարձնեմ ամբողջ աշխարհում:
20 Նրանք կ՚ամաչեն ե՛ւ այն ժամա-
նակ, երբ բարիք կ՚անեմ ձեզ,
ե՛ւ այն ժամանակ, երբ կ՚ընդունեմ
ձեզ,
որովհետեւ անուանի եւ պանծալի
կը դարձնեմ ձեզ
երկրի բոլոր ազգերի մէջ՝
ձեր աչքերի առաջ փոխելով ձեր
գերութեան վիճակը», - ասում է Տէրը:

ԱՆԳԷ

Ներածութիւն

Այս գրքում յիշատակուած է Անգէ մարգարէի գործը, որը քարոզում է ի նպաստ Երուսաղէմի տաճարի վերականգնման, այն շրջանում, երբ հրեաներն արդէն կարողացել էին վերադառնալ Բաբելոնից, որտեղ աքսորուել էին 6-րդ դարի սկզբին: Գրքում ընդգրկուած են բազմաթիւ փոքր ճառեր, որոնք մարգարէի կողմից մեզ փոխանցուել են 520 թուականին (Ն. Ք.):

Աքսորից վերադարձած առաջին հրեաները ձեռնամուխ են լինում բաբելոնացիների կողմից աւերուած տաճարի վերականգնմանը: Սակայն նրանք շուտով յուսահատւում են: Այդ պատճառով մարգարէն յորդորում է ժողովրդի պատասխանատուներին վերսկսել ընդհատուած աշխատանքները: Անգէն արթնացնում է իր ունկնդիրների նախանձախնդրութիւնը՝ ասելով նրանց, որ ժողովրդի աղքատութեան եւ հնձի սակաւութեան պատճառը տաճարի աւերուած ու լքուած վիճակն է: Նա յայտնում է նրանց, որ, ըստ Աստծու խոստման, նոր տաճարն իր շքեղութեամբ ու փառքով կը գերազանցի կործանուած տաճարը, եւ նրա կառուցումը վերջ կը դնի պղծութեան ու թշուառութեան այն վիճակին, որի մէջ գտնւում է իսրայէլացի ժողովուրդը: Դաւթի սերնդից երկրի կառավարիչ Զորոբաբէլը այդ խոստման մէջ հրեայ ժողովրդի համար տեսնում է մի մեծ ապագայ:

ՏԻՐՈՋ ԽՕՍՔԸ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ

1 *Դարեհ արքայի երկրորդ տարում, վեցերորդ ամսում, որ ամսուայ առաջին օրն էր, Տիրոջ պատգամը հասաւ Անգէ մարգարէի միջոցով եւ ասաց.*
2 *«Խօսի՛ր Ցուդայի ազգից Սաղաթիէլի որդու՝ Զորոբաբէլի հետ, եւ մեծ քահանայ Յոսեդեկի որդու՝ Յեսուի հետ եւ ասա՛. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. այդ ժողովուրդն ասում է, թէ չի հասել Տիրոջ Տունը շինելու ժամանակը"»:* 3 *Տիրոջ պատգամը հասաւ Անգէ մարգարէի միջոցով եւ ասաց.* 4 *«Միայն ձե՞զ համար է եկել գմբեթաւոր տներում ապրելու ժամանակը, մինչ իմ Տունը աւերակ է:* 5 *Արդ, այսպէս է ասում Ամենակալ Տէրը. դարձրէ՛ք ձեր սիրտը դէպի ձեր ճանապարհները:* 6 *Շատ էիք վարում եւ քիչ էիք հաւաքում, ուտում էիք, բայց չէիք յագենում, խմում էիք, բայց յագուրդ չէիք ստանում, հագնում էիք, բայց չէիք տաքանում դրանցով, եւ ով իր վարձն էր հաւաքում, ծակ տոպրակների մէջ էր հաւաքում:* 7 *Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. դրէ՛ք ձեր սիրտը ձեր ճանապարհների վրայ:* 8 *Բարձրացէ՛ք լեռը, փա՛յտ կտրեցէք եւ շինեցէ՛ք Տունը. ես հաճոյք կը զգամ նրանով եւ կը փառաւորուեմ, – ասում է Տէրը:* 9 *Շատին սպասեցիք, եւ քիչը եղաւ, եւ ինչ որ դուք տուն տարաք, ես դուրս թափեցի: Այդ պատճառով այսպէս է ասում Ամենակալ Տէրը. «Քանի որ իմ Տունը աւերակ է, եւ դուք չտապում էք իւրաքանչիւրդ իր տունը,* 10 *դրա համար երկինքը կը զլանայ իր անձրեւը, իսկ երկիրը չի տայ իր բերքը:* 11 *Ես սուր կը բերեմ երկրի վրայ, ցորենի ու գինու վրայ, իւղի ու երկրի բոլոր բոյսերի վրայ, մարդկանց ու անասունների վրայ եւ նրանց ձեռքերի բոլոր վաստակների վրայ»:*

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀՆԱԶԱՆԴՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՁԱՅՆԻՆ

12 *Ցուդայի ազգից Սաղաթիէլի որդի Զորոբաբէլը, մեծ քահանայ Յոսեդեկի որդի Յեսուն եւ ժողովրդի բոլոր մնացածները լսեցին իրենց Տէր Աստծու ձայնը եւ Անգէ մարգարէի պատգամները, ինչպէս որ նրանց Տէր Աստուածը նրան ուղարկեց նրանց մօտ. եւ ժողովուրդը վախեցաւ Տիրոջից:* 13 *Տիրոջ պատգամաբեր Անգէն ասաց ժողովրդին. «Տէրն ասում է՝ ես ձեզ հետ եմ»:* 14 *Եւ Տէրն արթնացրեց Ցուդայի ազգից Սաղաթիէլի որդի Զորոբաբէլի ոգին, մեծ քահանայ Յոսեդեկի որդու՝ Յեսուի ոգին եւ ժողովրդի բոլոր մնացորդների ոգին. նրանք մտնում ու իրենց Ամենակալ Տէր Աստծու Տան գործն էին անում:*

ՆՈՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅՄԱՆՈՒԹԻՒՆԸ

2 *Վեցերորդ ամսի քսանչորսին, Դարեհ արքայի երկրորդ տարում, եօթներորդ ամսում, ամսի քսանմէկերորդ օրը,* 2 *Տէրը խօսեց Անգէ մարգարէի միջոցով եւ ասաց.* 3 *«Ասա՛ Ցուդայի ազգից Սաղաթիէլի որդի Զորոբաբէլին, մեծ քահանայ Յոսեդեկի որդի Յեսուին եւ ժողովրդի բոլոր մնացորդներին.* 4 *"Ո՞վ է ձեզանից տեսել այս Տունը իր նախկին փառքի մէջ, եւ հիմա ինչպիսի՞ն էք տեսնում այն՝ կարծես ոչինչ չլինի ձեր առջեւ:* 5 *Իսկ արդ, զօրացի՛ր դու, Զորոբաբէ՛լ, – ասում է Տէրը, – զօրացի՛ր, մեծ քահանայ Յոսեդեկի որդի Յեսո՛ւ, եւ թող զօրանայ այդ երկրի ամբողջ ժողովուրդը, – ասում է Տէրը. – գործի՛ անցէք, որովհետեւ ես ձեզ հետ եմ, – ասում է Ամենակալ Տէրը:* 6 *Քաջալերուեցէ՛ք, – ասում է Ամենակալ Տէրը, – այն խօսքով, որ ես կնքեցի ձեզ հետ Եգիպտացիների երկրից դուրս գալիս, եւ իմ Հոգով, որ կայ ձեր մէջ:* 7 *Դարձեալ պիտի սասանեմ երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը,* 8 *միաժամանակ պիտի ցնցեմ բոլոր ազգերին, այստեղ պիտի գան բոլոր ազգերի ընտիր-ընտիր ինչքերը, եւ ես պիտի լցնեմ այդ Տունը փառքով, – ասում է Ամենակալ Տէրը:* – 9 *Իմն է արծաթը, իմն է ոսկին, – ասում է Ամենակալ Տէրը,* – 10 *որպէսզի այդ Տան վերջին փառքը լինի աւելի մեծ, քան նախկին փառքը, – ասում է*

Ամենակալ Տէրը: Ես այս տեղին խաղաղութիւն պիտի տամ, – ասում է Ամենակալ Տէրը, – հոգո՛ւ խաղաղութիւն՝ որպէս փրկութիւն բոլոր նրանց, ովքեր կ՚աշխատեն վերականգնել այդ տաճարը»:

ՊԻՂԾ ԸՆԾԱՆԵՐԻ ԴԷՄ

11 *Իններորդ ամսի քսանչորսին, Դարեհի երկրորդ տարում, Տիրոջ պատգամը հասաւ Անգէ մարգարէին եւ ասաց.* 12 *«Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. հարցրո՛ւ օրէնքը այդ քահանաներից եւ ասա՛.* 13 *"Եթէ մի մարդ սրբագործուած միս տանի իր հագուստի քղանցքի մէջ, եւ իր հագուստը դիպչի հացին կամ թանին կամ գինուն կամ իւղին կամ բոլոր կերակուրներին, մի՞թէ դա կը սրբանայ"»: Քահանաները պատասխանեցին եւ ասացին՝ ո՛չ:* 14 *Եւ Անգէն ասաց. «Եթէ հոգով պիղծն ու անսուրբը մօտենայ բոլոր այդ բաներին, մի՞թէ դա կը պղծուի»: Քահանաները պատասխանեցին եւ ասացին. «Կը պղծուի»:* 15 *Պատասխանեց Անգէն եւ ասաց. «Այդպէս էլ այս ժողովուրդը, այդպէս էլ այս ազգը իմ առաջ, – ասում է Տէրը, – այդպէս էլ նրանց ձեռքերի բոլոր գործերը. ինչ որ մօտենայ այնտեղ, կը պղծուի նախկինում իրենց արած յափշտակութիւնների պատճառով. եւ նրանք կը մորմոքեն իրենց չար գործերի պատճառով, քանի որ դուք հրապարակաւ ատում էիք ձեզ յանդիմանողներին»:*

ՏԷՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

16 *«Եւ արդ, մտածեցէ՛ք, թէ այս օրուանից եւ աւելի առաջ, երբ դեռ Տիրոջ այդ տաճարի քարը քարի վրայ չէր դրուել, ո՞վ էիք դուք այն ժամանակ,* 17 *երբ ձեր ամանների մէջ քսան քոռ գարի էիք լցնում, բայց տասը քոռ էր լինում, ձեր հնձանների մէջ խաղող էիք լցնում՝ յիսուն մար գինի հանելու համար, բայց քսան էր լինում:* 18 *Հարուածեցի ձեզ անպտղութեամբ, խորշակով ու կարկտով, խորտակեցի ձեր ձեռքերի բոլոր գործերը, բայց դուք չդարձաք դէպի ինձ, – ասում է Տէրը:* – 19 *Մտածեցէ՛ք ձեր սրտում, թէ ինչ է լինելու այսօրուանից եւ յետոյ, իններորդ ամսուայ քսանչորսերորդ օրից եւ այն օրուանից, երբ դրուեց Տիրոջ այդ տաճարի հիմքը:* 20 *Մտածեցէ՛ք ձեր սրտում, գուցէ այնպէս լինի, որ ձեր կալի, որթատունկի, թզենու, նռնենու եւ ձիթենու վրայ բերք չլինի. այսօրուանից եւեթ ես պիտի օրհնեմ, որ լինի»:*

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԶՈՐՈԲԱԲԷԼԻՆ

21 *Տիրոջ պատգամը հասաւ նորից Անգէ մարգարէին ամսի քսանչորսին եւ ասաց.* 22 *«Ասա՛ Յուդայի ազգից Սաղաթիէլի որդի Զորոբաբէլին. դարձեալ պիտի սասանեմ երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը,* 23 *պիտի կործանեմ թագաւորների գահերը, պիտի խորտակեմ թագաւորների զօրութիւնը, պիտի կործանեմ կառքերն ու հեծեալներին: Երիվարներն ու նրանց հեծեալները պիտի ընկնեն իւրաքանչիւրն իր եղբօր սրով:* 24 *Այն օրը, – ասում է Ամենակալ Տէրը, – Սաղաթիէլի որդի Զորոբաբէ՛լ, ես քեզ՝ իմ ծառային, պիտի վերցնեմ եւ հաստատեմ որպէս կնիք, քանի որ դու հաճոյ եղար ինձ», – ասում է Ամենակալ Տէրը:*

ԶԱՔԱՐԻԱ

Ներածութիւն

Զաքարիայի գիրքը կարելի է կոչել նաեւ յոյսի գիրք: Յիրաւի, այս գիրքը մասնաւորապէս ցոյց է տալիս մեզ, թէ ինչպէս իսրայէլական համայնքի յոյսը ժամանակի ընթացքում դառնում է աւելի որոշակի:

Գիրքը ներկայացնում է երկու առանձին մասեր: Առաջին մասը (գլ. 1–8) պարունակում է 520-ից 518 թուականներին վերաբերող մարգարէութիւններ, որոնք արտասանուել են, բնականաբար, Անգէ մարգարէին ժամանակակից մի մարգարէի կողմից: Այս մարգարէութիւնները առաւելապէս տեսիլքների ձեւ ունեն: Դրանք հաստատում են, որ տաճարի վերակառուցումը, ինչպէս նաեւ Երուսաղէմի վերահաստատումը իր գլխաւոր դերի մէջ, նշում են մի նոր դարաշրջանի սկիզբը: Այդ դարաշրջանի սկզբնաւորումը նշելու համար Աստուած ընտրում է կառավարիչ Զորոբաբէլին եւ քահանայապետ Յեսուին: Իսրայէլացիների յոյսը աւելի ու աւելի պիտի կենտրոնանայ այն պահի սպասման վրայ, երբ Աստծու թագաւորութիւնը տարածուի ամբողջ երկրի վրայ: Միաժամանակ այդ յոյսը կապւում է Աստծու կողմից ընտրուած մի մարդու առաքելութեան հետ:

Զաքարիայի գրքի երկրորդ մասը (գլ. 9–14), որը գրուած է առաջինից աւելի ուշ, կանգ է առնում վերոյիշեալ երկու երեւոյթների վրայ: Այս մասում գիրքը տալիս է յատկանշական գծերն այն մարդու, որը հաստատելու է Աստծու թագաւորութիւնը՝ փոխնիփոխ ներկայացնելով նրան որպէս խոնարհ եւ յաղթական մի թագաւորի, որպէս մի հովուի կամ որպէս մահապարտ մի առաքեալի: Աւետարանիչները օգտագործել են այս գծերը՝ ներկայացնելու համար Յիսուսի անձն ու նրա առաքելութիւնը մասնաւորապէս այն դրուագներում, որոնք վերաբերում են նրա մահուանը (տե՛ս Մատթ. 21. 4–5, Մատթ. 26. 31, Մարկ. 14. 27, Յովհ. 19. 37):

ՏԻՐՈՋ ԽՕՍՔԸ ԶԱՔԱՐԻԱՅԻՆ

1 Դարեհ արքայի երկրորդ տարուայ ութերորդ ամսին Տիրոջ խօսքը հասաւ Ադդովի որդի Բարաքէի որդուն՝ Զաքարիա մարգարէին, եւ ասաց. 2 «Տէրը մեծ ցասումով բարկացաւ ձեր հայրերի վրայ: 3 Դու կ'ասես նրանց. այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Դարձէ՛ք դէպի ինձ, – ասում է Զօրութիւնների Տէրը, – եւ ես պիտի դառնամ դէպի ձեզ", – ասում է Զօրութիւնների Տէրը: 4 "Մի՛ եղէք ձեր հայրերի նման, որոնց պախարակում էին առաջին մարգարէները՝ ասելով, թէ այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Ե՛տ դարձէք ձեր բոլոր չար ճանապարհներից եւ ձեր չար ընթացքից": Բայց նրանք չլսեցին, ականջ չդրեցին՝ լսելու ինձ, – ասում է Տէրը: 5 Ո՞ւր են ձեր հայրերը, մարգարէները, միթէ յաւիտեա՞ն ապրեցին: 6 Բայց ընդունեցէ՛ք իմ խօսքերն ու իմ օրէնքները , որ ես իմ Հոգով պատուիրեցի իմ ծառաներին՝ մարգարէներին, եւ դրանք հասան ձեր հայրերին": Նրանք պատասխան տուեցին եւ ասացին. "Ինչպէս որ Ամենակալ Տէրը կարգադրել էր անել ըստ մեր ճանապարհների եւ ըստ մեր ընթացքի, այդպէս էլ արեց մեզ"»:

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՏԵՍԻԼՔՆԵՐԸ
ա) ՁԻԵՐԻ ՏԵՍԻԼՔԸ

7 Տասնմէկերորդ ամսի, որ նոյն ինքը Արաց ամիսն է, քսան եւ չորսին, Դարեհի երկրորդ տարում, Տիրոջ ձայնը հասաւ Ադդովի որդի Բարաքէի որդի Զաքարիա մարգարէին, որն ասաց. 8 «Գիշերը ես մի տեսիլք ունեցայ. ահա մի մարդ, որ աշխէտ ձի էր հեծած, կանգնած էր երկու անտառախիտ լեռների միջեւ, իսկ նրա յետեւում կային աշխէտ ձիեր՝ պուտաւոր եւ սպիտակ: 9 Ես ասացի. «Ի՞նչ են դրանք Տէ՛ր»: Եւ Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, ասաց. «Ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչ են դրանք»: 10 Պատասխանեց այն մարդը, որ կանգնած էր լեռների միջեւ, եւ ասաց ինձ. «Դրանք այն են, որոնց Տէրն ուղարկեց՝ շրջելու երկրում»: 11 Սրանք պատասխան տուեցին Տիրոջ Հրեշտակին, որ կանգնած էր լեռների միջեւ, եւ ասացին. «Շրջեցինք ամբողջ երկիրը, եւ ահա երկիրն ամբողջ բնակեցուած է եւ հանդարտ»: 12 Պատասխանեց Հրեշտակը եւ ասաց. «Տէ՛ր Ամենակալ, մինչեւ ե՞րբ չես ողորմելու Երուսաղէմին եւ Յուդայի երկրի քաղաքներին, որոնց այս եօթանասուն տարի է, ինչ անտես ես արել»: 13 Ամենակալ Տէրը պատասխանեց Հրեշտակին, որ խօսում էր ինձ հետ, ասում բարութեան եւ մխիթարութեան խօսքեր: 14 Եւ Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, ասաց.

«Աղաղակի՛ր եւ ասա՛.

այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

"Ես խիստ նախանձախնդիր եմ Երուսաղէմի եւ առաւել եւս Սիոնի համար,

15 եւ սաստիկ բարկացած եմ այն ազգերի դէմ,

որոնք միասին յարձակուեցին նրանց վրայ:

Այն բանի փոխարէն, որ ես փոքրինչ բարկացել էի նրանց դէմ,

նրանք միասին յարձակուեցին չարիքներ գործելու համար":

16 Դրա համար այսպէս է ասում Տէրը.

"Գթութեամբ կը դառնամ դէպի Երուսաղէմ,

եւ իմ տունը վերստին կը շինուի,

– ասում է Ամենակալ Տէրը –

վերստին սահման կը գծուի Երուսաղէմի չուրջ"»:

17 Եւ Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, ասաց.

«Աղաղակի՛ր եւ ասա՛.

այսպէս է ասում Տէրը. "Դարձեալ քաղաքները կը լցուեն բարութեամբ,

Տէրը կ'ողորմի Սիոնին

եւ նորից բարեհաճ կը լինի Երուսաղէմի հանդէպ"»:

բ) ԵՂՋԻՒՐՆԵՐԻ ՏԵՍԻԼՔԸ

18 Ես բարձրացրի իմ աչքերը եւ տեսայ. 19 ահա չորս եղջիւրներ. եւ ասացի Հրեշտակին, որ խօսում էր ինձ հետ. «Ի՞նչ են դրանք, Տէ՛ր»: Ասաց ինձ. «Դրանք այն եղջիւրներն են, որ ցիրուցան արին Յուդայի երկիրը եւ Իսրայէլը»: 20 Եւ Տէրը ցոյց տուեց ինձ չորս հիւսներ. 21 ես ասացի. «Իսկ դրանք ի՞նչ անելու են գալիս»: Ասաց ինձ. «Դրանք այն եղջիւրներն են, որոնք ցիրուցան արին Յուդայի երկիրը եւ խորտակեցին Իսրայէլը. եւ նրանցից ոչ ոք չբարձրացրեց իր գլուխը: Իսկ սրանք եկել են սրելու իրար դէմ այդ չորս եղջիւրները՝ այն ազգերը, որոնք եղջիւր բարձրացրին Տիրոջ երկրի վրայ եւ ցիրուցան արին այն»:

գ) ՉԱՓԵԼՈՒ ԼԱՐԻ ՏԵՍԻԼՔԸ

2 Բարձրացրի իմ աչքերը եւ տեսայ. ահա մի մարդ, որ իր ձեռքում ունէր երկրաչափի լար. 2 ասացի նրան. «Ո՞ւր ես գնում»: Ասաց ինձ. «Գնում եմ չափելու Երուսաղէմը եւ տեսնելու, թէ որքա՞ն է նրա լայնութիւնը եւ որքա՞ն՝ երկարութիւնը»: 3 Եւ ահա Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, կանգնած էր այնտեղ. մի ուրիշ Հրեշտակ ելաւ նրան ընդառաջ 4 եւ ասաց նրան. «Գնա՛, խօսի՛ր այդ երիտասարդի հետ եւ կ'ասես. "Երուսաղէմը իր մէջ եղող մարդկանց եւ անասունների առատութիւնից կը դառնայ պղտաւից"»:

5 «Ես հրեղէն պարիսպ կը լինեմ նրա շուրջը եւ կ'ապրեմ նրա մէջ իր փառքի համար», – ասում է Տէրը:

ՏԻՐՈՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՐԱՒԷՐ

6 «Հէ՛յ, հէ՛յ, փախէ՛ք հիւսիսի երկրից, – ասում է Տէրը, –

քանզի երկնքի չորս կողմերից

պիտի հաւաքեմ ձեզ, – ասում է Տէրը:

7 Դէպի Սիոն դիմելով՝ փրկեցէ՛ք ձեզ,

Բաբելոնի դստեր բնակիչնե՛ր»:

8 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը:

Փառքի յետեւից նա ուղարկեց ինձ այն ազգերի մէջ, որոնք կողոպտեցին ձեզ, քանի որ, ով որ մօտենում է ձեզ, նման է նրան, ով հարուածում է իր աչքի բիբին: 9 Ահաւասիկ ես իմ ձեռքը կը տարածեմ նրանց վրայ, նրանց ծառայեցնողները աւար կը դառնան, եւ դուք կ'իմանաք, թէ Ամենակալ Տէ՛րն ուղարկեց ինձ:

10 «Խնդա՛ եւ ուրախացիր, դո՛ւստր Սիոնի,

քանի որ ահա ես կը գամ

եւ կը բնակուեմ քո մէջ, – ասում է Տէրը, –

11 եւ այդ օրը շատ ազգեր կ'ապաւինեն Տիրոջը,

նրա ժողովուրդը կը դառնան ու կը բնակուեն քո մէջ»:

Երբ դա պատահի, դու կ'իմանաս, թէ Ամենակալ Տէ՛րն ուղարկեց ինձ քեզ մօտ: 12 Տէրը կը ժառանգի Յուդայի երկիրը որպէս իր բաժինը սուրբ երկրում, նա նորից բարեհաճ կը լինի Երուսաղէմի հանդէպ, 13 եւ ամէն մարմին երկիւղ կը կրի Տիրոջից, քանի որ նա արթնացել է իր սուրբ ամպերի միջից:

դ) ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԵՍԻԼՔԸ

3 Տէրը ցոյց տուեց ինձ Յեսու մեծ քահանային, որ կանգնած էր Տիրոջ Հրեշտակի առաջ. եւ սատանան կանգնած էր նրա աջ կողմում՝ նրան հակառակուելու համար: 2 Տէրն ասաց սատանային. «Տէրը կը սաստի քեզ, սատանա՛յ, Տէրը, որ ընտրեց Երուսաղէմը, կը սաստի քեզ. արդեօք նա կրակից փրկուած կիսախանձ մի փայտ չէ՞»: 3 Եւ Յեսուն, որ կեղտոտ հագուստներ էր հագել, կանգնած էր Տիրոջ Հրեշտակի առաջ: 4 Հրեշտակը պատասխան տուեց եւ ասաց նրանց, որոնք կանգնած էին նրա առաջ. «Հանեցէ՛ք կեղտոտ հագուստները նրա վրայից»: 5 Եւ ասաց նրան. «Ահա վերացրի քեզնից քո անօրէնութիւնները: Պարեգո՛տ հագցրէք նրան եւ սուրբ խո՛յր դրէք նրա գլխին»: Սուրբ խոյր դրեցին նրա գլխին եւ հագուստ հագցրին նրան: 6 Տիրոջ Հրեշտակը կանգնած էր: Տիրոջ Հրեշտակը վկայութիւն տուեց Յեսուին եւ ասաց.

7 այսպէս ասաց Ամենակալ Տէրը.

"Եթէ իմ ճանապարհներով գնաս
եւ պահես իմ հրամանները,
դու կը լինես դատաւորը իմ Տան.
եւ եթէ պահես իմ գաւիթները,
քեզ կը դարձնեմ մէկը նրանցից,
որոնք ահա շրջում են դրանց մէջ:
8 Բայց լսի՛ր, Յեսու մե՛ծ քահանայ,
դո՛ւ եւ քո մերձաւորները, որ նստած են քո առաջ,
քանզի նրանք գիտակ, կանխատես մարդիկ են:
9 Ահա ես բերում եմ իմ ծառային՝ Շառաւիղին,
քանի որ այն քարի վրայ, որ դրեցի Յեսուի դիմաց,
եօթը աչքեր կան.
ահա ես խորխորատ պիտի փորեմ, –
– ասում է Ամենակալ Տէրը, –
եւ պիտի շօշափեմ այդ երկրի ամբողջ անօրէնութիւնը մէկ օրում:
10 Այն օրը, – ասում է Ամենակալ Տէրը, – բոլորդ պիտի կանչէք,
իւրաքանչիւրն իր ընկերոջը,
որթատունկի եւ թզենու տակ"»:

Ե) ԱՇՏԱՆԱԿԻ ՏԵՍԻԼՔԸ

4 Եւ հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, դարձաւ եւ արթնացրեց ինձ, ինչպէս մարդ արթնանում է իր քնից, եւ ասաց ինձ. 2 «Ի՞նչ ես տեսնում դու»: Ես ասացի. «Ահա տեսնում եմ ոսկեձոյլ մի աշտանակ եւ նրա վրայ՝ գունդ. գնդի վրայ՝ եօթը ճրագ, ճրագների վրայ՝ եօթը բերաններ»: 3 Աշտանակի վրայ կային երկու ձիթենիներ, մէկը վառուած գնդի աջ կողմում եւ մէկը՝ ձախ կողմում: 4 Հրեշտակին, որ խօսում էր ինձ հետ, ես հարցրի եւ ասացի. «Ի՞նչ են դրանք, Տէ՛ր»: 5 Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, պատասխան տուեց եւ ասաց ինձ. «Գիտե՞ս ինչ են դրանք»: Ես ասացի. «Ո՛չ, Տէ՛ր»:

ԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԶՈՐՈԲԱԲԷԼԻՆ

6 Պատասխան տուեց Հրեշտակը եւ ասաց ինձ.
«Սա Տիրոջ խօսքն է Զորոբաբէլին՝
ասուած ոչ թէ մեծ զօրութեամբ եւ
ուժգնութեամբ, այլ իմ Հոգո՛վ,
– ասում է Ամենակալ Տէրը: –
7 Ո՞վ ես դու՝ մե՛ծ լեռ,
որ կանգնած ես Զորոբաբէլի առաջ,
ես կը հանեմ ժառանգութեան քարը՝
շնորհների հաւասարութիւն շնորհելու նրան»:
8 Տիրոջ խօսքը հասաւ ինձ եւ ասաց.
9 «Զորոբաբէլի ձեռքերը հիմք դցեցին այս Տանը
եւ նրա ձեռքերն էլ կը կանգնեցնեն դա»:
Երբ դա պատահի, դու կ'իմանաս, թէ Ամենակալ Տէ՛րն ուղարկեց ինձ քեզ մօտ: 10 Արդարեւ, ո՞վ է նա, որ արհամարհեց փոքր գործերը եւ պիտի խնդայ. պիտի տեսնեն անագէ քարը Զորոբաբէլի ձեռքին. սրանք են այն եօթը աչքերը, որ նայում են ամբողջ երկրին:
11 Ես հարցրեցի եւ ասացի նրան. «Իսկ ի՞նչ են երկու ձիթենիները, որ կան աշտանակի աջ եւ ձախ կողմերում»: 12 Կրկին հարցրի եւ ասացի նրան. «Ի՞նչ են ձիթենու այն երկու ոստերը, որոնք երկու ոսկեայ ճրագաբերանների՝ երկու խողովակների միջոցով հեղում են ոսկեգոյն իւղը»: 13 Ասաց ինձ. «Գիտե՞ս ինչ են դրանք»: Ես ասացի. «Ո՛չ, Տէ՛ր»: Եւ նա ասաց ինձ. «Դրանք պարարտութեան որդիներն են, որ կանգնած են ամբողջ աշխարհի Տիրոջ առաջ»:

Զ) ԹՌՉՈՂ ԳԵՐԱՆԴՈՒ ՏԵՍԻԼՔԸ

5 Դարձեալ բարձրացրի աչքերս եւ տեսայ. ահա մի թռչող գերանդի: 2 Հրեշտակն ասաց ինձ. «Ի՞նչ ես տեսնում»: Ասացի. «Թռչող գերանդի եմ տեսնում՝ քսան կանգուն երկարութեամբ եւ տասը կանգուն լայնութեամբ»: 3 Ասաց ինձ. «Դա այն անէծքն է, որ տարածւում է ամբողջ երկրի երեսին, որովհետեւ ամէն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործուի, եւ դրանով պիտի լինի բոլոր նրանց մահացու վրէժը, ովքեր սուտ են երդւում»: 4 «Ես պիտի հանեմ դա, – ասում է Ամենակալ Տէրը, – եւ այն պիտի մտնի գողերի տունը եւ

նրանց տունը, որոնք սուտ երդում են անում իմ անունով. պիտի մնայ նրանց տանը եւ պիտի սպառի այն, նրա փայտն ու քարերը»:

Է) ԿԱՊԱՐԷ ԿՇԵՌՔԻ ՏԵՍԻԼՔԸ

5 Եւ Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, վեր կացաւ եւ ասաց ինձ. «Նայի՛ր քո աչքով եւ տե՛ս այն, ինչ դուրս է գալիս»: 6 Ես ասացի. «Ի՞նչ է»: Ասաց ինձ. «Դա կշռաչափ է, որ ելնում է». եւ շարունակեց. «Դա նրանց անիրաւութիւնն է ամբողջ երկրով մէկ»: 7 Եւ ահա մի կապարէ կշեռք բարձրացաւ. մի կին նստած էր նրա մի թաթի մէջ: 8 Հրեշտակն ասաց. «Դա է անիրաւութիւնը»: Եւ նրան գցեց կշեռքի մէջ ու կապարէ քարը դրեց նրա բերանին: 9 Ես բարձրացրի իմ աչքերը եւ տեսայ. ահա երկու կանայք էին ելնում. հողմ կար նրանց թեւերի մէջ, եւ նրանց թեւերը յոպոպի թեւերի պէս էին: Նրանք կշեռքը բարձրացրին երկնքի ու երկրի միջեւ: 10 Ես ասացի Հրեշտակին, որ խօսում էր ինձ հետ. «Ո՞ւր են տանում նրանք կշեռքը»: 11 Նա ասաց ինձ. «Տանում են բաբելացիների երկիրը՝ նրանց համար տուն շինելու, տեղ պատրաստելու. եւ այն դնելու են այնտեղ՝ պատրաստուած իր տեղի վրայ»:

Ը) ՉՈՐՍ ԿԱՌՔԵՐԻ ՏԵՍԻԼՔԸ

6 Դարձեալ բարձրացրի աչքերս եւ տեսնում էի. ահա չորս կառքեր դուրս էին գալիս լեռների արանքից, եւ լեռները պղնձեայ լեռներ էին: 2 Առաջին կառքին լծուած էին աշխէտ ձիեր, երկրորդ կառքին՝ սեւ ձիեր, 3 երրորդ կառքին՝ սպիտակ ձիեր, եւ չորրորդ կառքին՝ պէսպէս, պուտաւոր ձիեր: 4 Ես հարցրի եւ ասացի Հրեշտակին, որ խօսում էր ինձ հետ. «Ի՞նչ են դրանք, Տէ՛ր»: 5 Հրեշտակը, որ խօսում էր ինձ հետ, պատասխան տուեց եւ ասաց. «Դրանք երկնքի չորս հողմերն են, որ ելնում են կանգնելու ամբողջ աշխարհի Տիրոջ առաջ»: 6 Այն կառքը, որին սեւ ձիեր էին լծուած, գնում էր դէպի Հիւսիսի երկիր, սպիտակ ձիերինը՝ նրա յետեւից, 7 աշխէտ ձիերինը գնում էր դէպի հարաւի երկիր, իսկ պուտաւոր ձիերինը ելնում ու ձգտում էր շրջել ամբողջ երկրում: Եւ Տէրն ասաց. «Գնացէ՛ք եւ շրջեցէ՛ք երկրով մէկ»: Եւ նրանք շրջեցին երկրով մէկ: 8 Տէրը ձայն տուեց եւ ասաց ինձ. «Ահա, նրանք, որ գնում են դէպի Հիւսիսի երկիր, հանգցրին իմ բարկութիւնը Հիւսիսի երկրի նկատմամբ»:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՍԻԱՅԻ ՊՍԱԿԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

9 Տիրոջ խօսքը հասաւ ինձ եւ ասաց. «Դու ինձ համար կը վերցնես գերութեան մէջ գտնուող այդ իշխաններից, պիտանի մարդկանցից ու գիտուններից 10 եւ այն օրը կը մտնես Սոփոնիայի որդի Յոսիայի տունը, որ եկել է Բաբելոնից: 11 Ոսկի եւ արծաթ կը վերցնես, պսակներ կը պատրաստես, կը դնես Յոսեդեկ մեծ քահանայի որդի Յեսուի գլխին 12 եւ կ'ասես նրան, թէ այսպէս ասաց Ամենակալ Տէրը.
"Ահա այն մարդը, որի անունը Շառաւիղ է,
նա պիտի ծագի իր արմատից
եւ պիտի շինի Տիրոջ տաճարը:
13 Նա քաջութիւն պիտի ստանայ,
պիտի նստի եւ տիրի իր աթոռին:
Նրա աջ կողմում պիտի լինի քահանայ
եւ խաղաղութեան խորհուրդ՝ երկուսի միջեւ:
14 Այդ պսակը պիտի լինի նրանց համար,
ովքեր ապաւինում են նրան, արժանի են նրան,
ովքեր ճանաչում են այն,
նաեւ Սոփոնիայի որդու շնորհների համար
եւ Տիրոջ տաճարի երգերի համար"»:
15 Եւ նրանք, ովքեր հեռու են, պիտի գան ու շինեն Տիրոջ տաճարը, եւ դուք պիտի իմանաք, թէ Ամենակալ Տէ՛րն ուղարկեց ինձ ձեզ մօտ: Այս բանը պիտի կատարուի, եթէ դուք ջանադիր ականջ դնէք ձեր Տէր Աստծու ձայնին:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՒԵՐՈՒՄԸ ՅԻՇԱՏԱԿՈՂ ԾՈՒՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

7 Դարեհ թագաւորի չորրորդ տարում, իններորդ ամսի՝ Քասղեւ ամսի չորրորդ օրը Տիրոջ խօսքը հասաւ Զաքարիային: 2 Բեթէլից Սարասար ու Աբուսադ թագաւորները եւ իրենց մարդիկ ուղարկուեցին աղաչելու Տիրոջը 3 եւ ասելու քահանաներին, որոնք Ամենակալ Տիրոջ տաճարում էին, նաեւ մարգարէներին, թէ մտա՞ւ այնտեղ հինգերորդ ամսում սրբութիւն անելու կարգը, որ անում էին շատ տարիներ: 4 Զօրութիւնների Տիրոջ խօսքը հասաւ ինձ եւ ասաց. 5 «Խօսի՛ր այդ երկրի ժողովրդի եւ քահանաների հետ եւ կ՝ասես. "Երբ դուք ծոմ էիք պահում եւ ողբում ահա եօթանասուն տարի շարունակ, հինգերորդ կամ եօթներորդ ամիսներին, մի՞թէ ինձ համար էիք ծոմ պահում. 6 երբ ուտում էիք եւ խմում, մի՞թէ դուք ձեզ համար չէիք ուտում եւ խմում"»:

7 Սրանք չե՞ն այն խօսքերը, որ խօսեց Տէրը իր նախկին մարգարէների միջոցով, երբ դեռ շէն էր Երուսաղէմը, բարիքներով լի, եւ բնակեցուած էին նրա շուրջը գտնուող թէ՛ լեռնային եւ թէ՛ դաշտային քաղաքները:

ԳԹՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍ

8 Տիրոջ խօսքը հասաւ Զաքարիային եւ ասաց.

9 այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Արդար դատո՛վ դատեցէք,

ողորմութի՛ւն եւ գթութի՛ւն արէք՝ իւրաքանչիւրն իր եղբօրը:

10 Մի՛ կեղեքէք այրուն, որբին, պանդխտին եւ տնանկին:

Թող ոչ ոք իր սրտում ոխ չպահի իր ընկերոջ դէմ՝

նրա գործած չարիքների համար»:

11 Բայց նրանք լսել չուզեցին, այլ յիմարաբար իրենց թիկունքը շրջեցին եւ ծանրացրին իրենց ականջները՝ չլսելու համար: 12 Նրանք իրենց սրտերը անհնազանդ դարձրին՝ չլսելու համար իմ օրէնքներն ու խօսքերը, որ ուղարկեց Ամենակալ Տէրն իր Հոգով՝ նախորդ մարգարէների միջոցով, ուստի մեծ բարկութիւն եղաւ Ամենակալ Տիրոջ կողմից:

13 «Եւ այնպէս պիտի լինի,

որ, օրինակ, ինչպէս մէկը խօսում,

եւ նրան չեն լսում,

այնպէս էլ նրանք պիտի կանչեն,

եւ ես չեմ լսելու նրանց»,

– ասում է Ամենակալ Տէրը:

14 «Նրանց պիտի ցրեմ բոլոր ազգերի մէջ, որոնց չեն ճանաչում,

եւ երկիրը պիտի աւերուի նրանցից յետոյ,

որովհետեւ ոչ ոք չի լինելու, որ դուրս ելնի եւ վերադառնայ:

Նրանք ընտրեալ երկիրը ապականութիւն դարձրին»:

ՏԷՐԸ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ ՍԻՈՆԻՆ

8 Ամենակալ Տէրը խօսքն ուղղեց ինձ եւ ասաց.

2 այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Ես նախանձով լցուեցի Երուսաղէմի համար,

մեծ խանդով նախանձեցի Սիոնի համար,

մեծ բարկութեամբ նախանձեցի նրա համար»:

3 Այսպէս է ասում Տէրը.

«Ես պիտի վերադառնամ Սիոն եւ բնակուեմ Երուսաղէմում,

Երուսաղէմը պիտի կոչեմ ճշմարիտ քաղաք,

եւ Ամենակալ Տիրոջ լեռը՝ Սուրբ լեռ»:

4 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Դարձեալ ծերունիներ եւ պառաւներ պիտի նստեն Երուսաղէմի հրապարակներում,

ապրած օրերի շատութիւնից՝

ամէն մէկը ցուպն իր ձեռքին:

5 Քաղաքի հրապարակները պիտի լցուեն տղաներով ու աղջիկներով,

որոնք պիտի խաղան նրա հրապարակներում»:

6 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Եթէ այդ ժողովրդի մնացորդների համար

այն օրերին դժուար որեւէ բան լինի,

ապա մի՞թէ ինձ համար էլ պիտի դժուար լինի դա»,

– ասում է Ամենակալ Տէրը:

7 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Ահա ես պիտի փրկեմ իմ ժողովրդին

արեւելեան երկրից եւ արեւմտեան երկրից,

8 Պիտի բերեմ նրանց եւ բնակեցնեմ Երուսաղէմում,

նրանք ինձ համար ժողովուրդ պիտի լինեն,

իսկ ես նրանց համար՝ Աստուած ճշմարտութեամբ եւ արդարութեամբ»:

9 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Ձեր ձեռքերը պիտի զօրանան,

դուք, որ այժմ լսում էք մարգարէների այս խօսքերը այն օրից ի վեր,

երբ նրանք եղել են Ամենակալ Տիրոջ տանը՝

նրա տաճարի հիմնարկէքը կատարելու

եւ ապա այն կառուցելու ժամանակ:

10 Այդ օրերից առաջ վարձ չէին տալիս մարդու՝

իր աշխատանքի համար,

եւ ոչ էլ յարգի էր վարձը անասունների համար,

խաղաղութիւն էլ չկար եկողի ու գնացողի համար՝

թշնամու տուած նեղութիւնից,

քանի որ ես թշնամացրել էի բոլոր մարդկանց՝

իւրաքանչիւրին հանելով իր ընկերոջ դէմ:

11 Բայց ես հիմա այդ ժողովրդի մնացորդների համար չեմ լինելու այնպէս,

ինչպէս առաջին օրերին էի,

– ասում է Ամենակալ Տէրը, –

այլ խաղաղութիւն եմ տալու նրան:

12 Այգին իր պտուղն է տալու,

հողը տալու է իր բերքը,

երկինքն իր ցօղն է տալու,

եւ ես իմ ժողովրդի մնացորդներին եմ տալու այս բոլորը իբրեւ ժառանգութիւն:

13 Ո՛վ Յուդայի տունդ եւ Իսրայէլի տունդ,

դուք, որ անէծք էիք ազգերի մէջ,

պիտի այնպէս լինի,

որ ես նոյնպէս ձեզ պիտի փրկեմ,

եւ դուք օրհնութիւն պիտի դառնաք.

քաջալերուեցէ՛ք, եւ թող զօրանան ձեր ձեռքերը»:

14 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Ինչպէս խորհեցի ձեզ չարչարել

(քանի որ ձեր հայրերը բարկացրին ինձ,

– ասում է Ամենակալ Տէրը,

եւ ես չզղջացի),

15 այնպէս էլ ես վերստին մտածել ու վճռել եմ

այս օրերին բարիք անել Երուսաղէմին եւ Յուդայի տանը:

Քաջալերուեցէ՛ք:

16 Սրանք են այն բաները, որ պիտի անէք.

Թող ամէն մէկը ճշմարտութիւնն ասի իր ընկերոջը.

խաղաղութեա՛ն դատաստան եւ արդա՛ր դատ արէք ձեր դռներին.

17 Թող ամէն մէկը իր սրտում չարիք չխորհի ընկերոջ դէմ.

մի՛ սիրէք սուտ երդումը,

որովհետեւ ես ատեցի այս բոլորը»,

– ասում է Ամենակալ Տէրը:

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՆ ՏՕՆԻ ՕՐԵՐ

18 Ամենակալ Տէրը խօսքն ուղղեց ինձ եւ ասաց.

19 այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Չորրորդ ամսի պահեցողութիւնը,

հինգերորդի պահեցողութիւնը,

եօթներորդի պահեցողութիւնը,

տասներորդի պահեցողութիւնը

խնդութեան, ուրախութեան եւ բարութեան տօներ պիտի դառնան Յուդայի տան համար,

բայց դուք ուրա՛խ եղէք եւ սիրեցէ՛ք ճշմարտութիւնն ու խաղաղութիւնը»:

20 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

«Դարձեալ շատ ժողովուրդներ եւ շատ քաղաքների բնակիչներ պիտի գան Երուսաղէմ.

21 մի քաղաքի բնակիչները պիտի հաւաքուեն

այլ քաղաքի բնակիչների մօտ եւ ասեն.

"Գնանք աղօթենք Տիրոջ առաջ

եւ խնդրենք Ամենակալ Աստծուն»:
Եւ այն ժամանակ ամէն մէկը պիտի
ասի. «Ես էլ եմ գալիս»:
22 Շատ ժողովուրդներ պիտի գան
Երուսաղէմ՝
Ամենակալ Տիրոջը խնդրելու,
որ իրենց հաշտեցնի Տիրոջ հետ»:
23 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
«Այն օրերին եթէ տասը մարդ
բռնեն տարբեր լեզուներով խօսող
ազգերից,
ապա նրանք էլ պիտի բռնեն մի
հրեայ տղամարդու փեշից եւ ասեն.
«Մենք գալիս ենք քեզ հետ,
որովհետեւ լսել ենք, որ Աստուած
քեզ հետ է»»:

ՀԱՐԵՒԱՆ ԱԶԳԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

9 Տիրոջ խօսքի պատգամը Սեդրաքի
երկրի մասին,
նրա զոհի՝ Դամասկոսի մասին:
Արդարեւ, Տէրը տեսնում է բոլոր
մարդկանց
եւ Իսրայէլի բոլոր ցեղերին,
2 նաեւ Եմաթի երկիրը, որ սահ-
մանակից է նրան,
Տիւրոսը եւ Սիդոնը, որոնք խիստ
արհամարհեցին իրեն:
3 Տիւրոսն իր համար ամրոց չինեց,
հողի պէս արծաթ դանձեց,
ճանապարհի կաւի պէս՝ ոսկի:
4 Ահա դրա համար էլ Տէրը պիտի
գրաւի այն,
պիտի խորտակի նրա զօրութիւնը
ծովի մէջ,
եւ քաղաքը պիտի կործանուի հրով:
5 Ասկաղոնը պիտի տեսնի դա եւ
սարսափի,
Գազան սաստիկ պիտի մորմոքուի,
Իսկ Ակկարոնը, իր գործած
յանցանքների պատճառով,
պիտի տագնապի ամօթահար:
Գազայից վերանալու է թագաւորը,
Ակկարոնը պիտի լինի անբնակ:
6 «Ազոտոսում պիտի բնակուեն
այլազգիներ,
եւ ես պիտի ոչնչացնեմ նրանց
գոռոզութիւնը:
7 Նրանց արիւնը պիտի դուրս
հանեմ իրենց բերանից,
նրանց գարշութիւնները՝ իրենց
ատամների միջից,
իսկ մնացածները պիտի լինեն իմ՝
Աստծուս բաժինը.
նրանք հազարապետներ պիտի
դառնան Յուդայի երկրում,
եւ Ակկարոնը պիտի լինի յեբու-
սացիների պէս:
8 Ես պարիսպ եմ դնելու իմ տան
համար,
որպէսզի անցնող ու դարձող չանց-
նի այն,
ոչ մի բռնակալ չհալածի նրանց,
քանի որ իմ աչքերն արդէն պիտի
լինեն նրանց վրայ»:

ՊԱՏԳԱՄ ՓՐԿՉԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

9 Ուրախացի՛ր խնդութեամբ,
դո՛ւստրդ Սիոնի,
կանչի՛ր ցնծութեամբ, դո՛ւստրդ
Երուսաղէմի,
ահա գալիս է քո թագաւորը քեզ
մօտ,
քո արդար, փրկագործ ու խոնարհ
թագաւորը՝
հեծած էշի, էշի քուռակի վրայ:
10 Կառքերը պիտի ոչնչանան
Եփրեմի երկրից,
երիվարները՝ Երուսաղէմից,
պատերազմողի աղեղը պիտի խոր-
տակուի,
եւ նա խաղաղութիւն պիտի բերի
մարդկանց ու ազգերին,
պիտի տիրի ջրերի վրայ՝ ծովից
մինչեւ ծով
եւ գետերից մինչեւ երկրի ծագերը:

ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

11 «Իսկ դու արեամբ կնքուած
ուխտի համար
պիտի արձակես քո գերիներին իրենց
անջուր գբից,
12 դուք պիտի ապրէք այդ ժողովրդի
ապահով վայրերում,
եւ ես քո պանդխտութեան մէկ
օրուայ փոխարէն
պիտի հատուցեմ քեզ կրկնակին:
13 Ես քեզ, ո՛վ Յուդայի երկիր,

ինձ համար պիտի լարեմ ինչպէս
աղեղ,
պիտի լցնեմ նաեւ Եփրեմի երկիրը,
իսկ քո որդիներին, ո՛վ Սիոն,
ոտքի պիտի հանեմ Յունաստանի
դէմ,
պիտի յեսանեմ քեզ ինչպէս ռազ-
միկի պողպատէ սուսեր»:
14 Տէրը վերակացու պիտի լինի
նրանց վրայ,
նրա նետը պիտի թռչի ինչպէս
փայլակ:
Տէրը, Ամենակալ Տէրը փող պիտի
փչի
եւ բարկութեամբ ու սպառնալիքնե-
րով պիտի գնայ նրանց դէմ:
15 Ամենակալ Տէրը պիտի պաշտ-
պանի նրանց,
պիտի ոչնչացնեն նրանց,
պիտի թաղեն նրանց պարսատիկի
քարերի տակ,
պիտի խմեն նրանց արիւնը ինչպէս
գինի,
եւ դաշտերը, զոհասեղանների նման,
պիտի լցուեն նրանցով:
16 Եւ այն օրը նրանց Տէր Աստուածը
պիտի փրկի նրանց՝ իր ժողովրդին,
ինչպէս ոչխարների,
որովհետեւ նրանք սուրբ քարեր են՝
ընկած այդ երկրում,
17 որովհետեւ ինչ բարիք որ կայ
այնտեղ, այդ ժողովրդինն է,
ինչ լաւ բան՝ նոյնպէս նրանն է.
երիտասարդների համար՝ ցորենի
հաց,
կոյսերի համար՝ անուշարար գինի:

ԽՆԴՐԵԼ ՏԻՐՈՋԻՑ ԵՒ ՈՉ ԿՈՒՌԲԵՐԻՑ

10 Անձրե՛ւ խնդրեցէք Տիրոջից ըստ
ժամանակի՝
բերքից առաջ եւ յետոյ:
Տէրը, որ հրաշքներ է գործում,
ձմռանը անձրեւ կը տայ նրանց,
եւ ամէն հանդում խոտ կը լինի:
2 Այն բանի համար, որ կախարդ-
ները անտեղի բաներ էին բարբառում,
գուշակները սուտ տեսիլքների ու
սին երազների մասին էին խօսում
եւ իզուր մխիթարում,
դրա համար էլ, ահա,
նրանք ցրուեցին հօտերի նման,
չարաչար ցաւերի դիպան,
եւ բժշկութիւն չկար նրանց համար:

ԳԵՐԵԶՄԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

3 «Իմ բարկութիւնը բորբոքուեց
հովիւների վրայ,
եւ ես պիտի նայեմ գառներին:
Տէրը՝ Ամենակալ Աստուածը, պիտի
այցելի Յուդայի տան իր հօտին,
պիտի պատրաստի նրան,
ինչպէս իր գեղեցիկ երիվարին՝
պատերազմի համար:
4 Նրանով է ճանաչուելու ինքը,
նրանով է յարդարելու իր ճամփան,
նրանով է բարձրացնելու իր աղեղը
եւ նրանով են ելնելու բոլոր նրանք,
որ հալածելու են իրեն:
5 Նրանք պիտի լինեն այնպիսի
պատերազմողներ,
որոնք պատերազմում, ճակատա-
մարտի մէջ,
ոտնակոխ պիտի անեն թշնա-
միներին այնպէս,
ինչպէս տրորում են ճանապարհի
կաւը,
որովհետեւ Տէրը նրանց հետ է:
Թշնամու հեծեալները պիտի ամա-
չեն իրենց երիվարների վրայ:
6 Ես պիտի զօրացնեմ Յուդայի
տունը,
պիտի փրկեմ նաեւ Յովսէփի տունը,
պիտի բնակեցնեմ նրանց,
որովհետեւ ես սիրեցի նրանց.
Նրանք պիտի դառնան այնպիսին,
կարծես ես նրանցից երես չեմ
դարձրել.
եւ որովհետեւ ես եմ նրանց Տէր
Աստուածը,
ես էլ պիտի լսեմ նրանց:
7 Եփրեմի տանը պիտի լինեն լաւ
պատերազմողներ,
նրանց սրտերը պիտի խնդան,
ինչպէս գինուց,
նրանց որդիները պիտի տեսնեն եւ
ուրախ լինեն,
նրանց սրտերը պիտի ցնծան Տիրոջ
համար:
8 Ես լուր պիտի տամ նրանց,
պիտի ընդունեմ նրանց,

որովհետեւ պիտի փրկեմ նրանց,
եւ նրանք պիտի բազմանան ինչպէս առաջ,
երբ մեծաթիւ էին:
9 Ես սերմերի պէս նրանց պիտի ցրեմ ազգերի մէջ,
եւ նրանք հեռաւոր վայրերում էլ պիտի յիշեն ինձ:
Պիտի ապրեն իրենց որդիների հետ
եւ նրանց հետ էլ պիտի վերադառնան:
10 Ես նրանց պիտի վերադարձնեմ Եգիպտացիների երկրից,
Ասորեստանից պիտի ընդունեմ նրանց,
նրանց Գաղաադ եւ Լիբանան պիտի բերեմ,
եւ ոչ մէկը չի պակասելու նրանցից:
11 Նրանք պիտի անցնեն նեղ ծովով,
ծովի ալիքները պիտի զարկեն նրանց,
պիտի ցամաքեն գետերի բոլոր խորքերը:
Այն ժամանակ պիտի վերանայ ասորեստանցիների գոռոզութիւնը,
եգիպտացիների իշխանութիւնը պիտի խորտակուի:
12 Իմ ժողովրդին ես պիտի զօրացնեմ յանուն իրենց Տէր Աստծու,
եւ նրանք պիտի պարծենան նրա անունով», – ասում է Տէրը:

ՄԵԾ ԱՒԵՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ. ԱՆԱՐԺԱՆ ՀՈՎԻՒՆԵՐ

11 Բա՛ց արա քո դռները, ո՛վ Լիբանան,
թող կրակը լափի քո մայրիները:
2 Թող ողբան նոճիները,
քանզի մայրիները տապալուեցին,
եւ մեծապէս թշուառացան մեծամեծ ծառերը:
Ողբացէ՛ք, ո՛վ Բասանի կաղնիներ,
քանզի քանդուեց ծառախիտ անտառը:
3 Ահա Հովիւների ողբալու ձայնը.
նսեմացել է նրանց մեծութիւնը:
Ահա առիւծների մռնչալու ձայնը.
ամայացել է Յորդանան գետի վեհութիւնը:
4 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
«Արածացրո՛ւ քո հօտերը, որ մորթոտուելու համար են. 5 նրանց գնողները կոտորում էին նրանց, վաճառում էին նրանց եւ ասում. "Թող օրհնեալ լինի Տէրը. մենք հարստացանք": Իսկ նրանց հովիւները բնաւ չէին ցաւում ոչխարների համար:
6 Դրա համար էլ ես այլեւս չեմ խնայելու այդ երկրի բնակիչներին, – ասում է Տէրը. – ահա ես մատնելու եմ մարդկանց իւրաքանչիւրին իր ընկերոջ ձեռքը, նաեւ իր թագաւորի ձեռքը, նրանք պիտի զարկեն իրար, իսկ ես ոչ մէկին չեմ փրկելու նրանց ձեռքից»:
7 Քանանացիների երկրում ես հովուութիւն պիտի անեմ այն հօտին, որ մորթոտուելու համար է, ինձ համար երկու գաւազան պիտի վերցնեմ, մէկը պիտի կոչեմ՝ Գեղեցկութիւն, իսկ երկրորդը՝ Վիճակ, եւ պիտի արածացնեմ հօտերը: 8 Մէկ ամսում ես վերացրի երեք հովիւներին, որովհետեւ իմ հոգին զզուել էր նրանցից, նրանց հոգիներն էլ զզուել էին ինձանից:
9 Ես, ահա, ասում եմ. "Ձեզ չեմ հովուելու. ով մեռնելու է՝ թող մեռնի, ով սատկելու է՝ թող սատկի: Մնացածներից ամէն մէկն էլ թող ուտի իր ընկերոջ մարմինը":
10 Ես պիտի վերցնեմ իմ գաւազանը՝ Գեղեցկութիւնը, պիտի նետեմ ցած՝ խզելու համար այն ուխտը, որ դրել եմ բոլոր ժողովուրդների հետ: 11 Այդ ուխտը պիտի խզուի այն օրը, եւ քանանացիները պիտի ճանաչեն իմ պահպանած հօտերը, քանզի սա Տիրոջ խօսքն է:
12 Ես նրանց ասացի. "Եթէ ձեր աչքին հաճելի է թւում, ապա տուէ՛ք իմ վարձը, իսկ եթէ՝ ոչ, ասացէ՛ք": Եւ նրանք կշռեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ»:
13 Տէրն ինձ ասաց. «Դու բովի մէջ գցիր դա, քննի՛ր, թէ այն փորձուա՞ծ է արդեօք այնպէս, ինչպէս ես, որ փորձուեցի նրանց կողմից իրենց համար»: Ես վերցրի երեսուն արծաթը եւ Տիրոջ Տանը գցեցի բովի մէջ: 14 Ես դէն գցեցի իմ երկրորդ գաւազանը՝ Վիճակը, քանդելու համար այն ուխտը, որ դրել էի Յուդայի երկրի եւ Իսրայէլի միջեւ:

15 Տէրը դարձեալ ինձ ասաց. «Դու հովուութիւն անելու համար վերցրո՛ւ մի տգէտ հովուի գործիքներ, 16 որովհետեւ ահա ես մի տգէտ հովիւ եմ դնելու այս երկրի վրայ: Նա չի հոգալու նիհար ոչխարների համար, ցրուածին չի փնտռելու, վիրաւորուածին չի բուժելու, առողջին չի խնամելու, այլ ուտելու է ընտիր ոչխարների միսը եւ փշրելու նրանց ոտքերի ոսկորները»:
17 Վա՛յ քեզ, ո՛վ անարժան հովիւ,
որ աչքաթող ես անում քո հօտը:
Թող սուրը կտրի նրա բազուկը,
թող հանի նրա աջ աչքը:
Թող անպատճառ չորանայ նրա բազուկը,
թող անպայման կուրանայ նրա աջ աչքը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԵՆԹԱՐԿԻՈՒՄ Է ԱՂԷՏՆԵՐԻ

12 Տիրոջ խօսքի պատգամը Իսրայէլի մասին:
Տէրը, որ տարածեց երկինքը
եւ գցեց երկրի հիմքերը,
որ մարդու մէջ հաստատեց նրա հոգին,
այսպէս է ասում.
2 «Ահա ես Երուսաղէմը պիտի դարձնեմ երերուն մի շեմք այն բոլոր ժողովուրդների համար, որոնք գտնուում են նրա շուրջը: Հրէաստանում էլ այդպէս է լինելու Երուսաղէմի պաշարման ժամանակ: 3 Այն օրը ես Երուսաղէմը որպէս մի քար պիտի դնեմ բոլոր հեթանոսների ոտքերի տակ, նրանք բոլորն էլ պիտի կոխոտեն այն, խիստ պիտի ծաղրեն, եւ նրա վրայ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը: 4 Այն օրը ես, – ասում է Տէրը, – կատաղութեան ախտով պիտի հարուածեմ նրանց երիվարներին, նրանց հեծեալներին էլ՝ խելագարութեամբ: Բայց ես իմ աչքերը պիտի բացեմ Յուդայի տան վրայ, իսկ բոլոր ազգերի երիվարներին պիտի հարուածեմ կուրութեամբ: 5 Յուդայի երկրի հազարապետները պիտի ասեն իրենց սրտում. "Մենք Երուսաղէմի բնակիչներին կը գտնենք իրենց Ամենակալ Տէր Աստծու ձեռքում": 6 Այն օրը Յուդայի երկրի հազարապետներին, իբրեւ կիսախանձ ճողեր, ես պիտի դնեմ կրակի փայտերի մէջ, իբրեւ հրավառ ջահեր պիտի դնեմ եղէգնի մէջ, նրանք աջից ու ձախից պիտի ուտեն շրջակայ բոլոր ժողովուրդներին, եւ Երուսաղէմը դարձեալ բնակելի պիտի լինի իր տեղում՝ Երուսաղէմում»:
7 Տէրը պիտի փրկի Յուդայի երկրի տոհմերը, ինչպէս առաջ, որպէսզի Դաւթի տան պարծանքը եւ Երուսաղէմի բնակիչների հպարտութիւնը բարձր չլինի Յուդայի երկրի համեմատ: 8 Այն օրը Ամենակալ Տէրը պիտի պաշտպանի Երուսաղէմի բնակիչներին, եւ ամենատկարը նրանց մէջ պիտի լինի Դաւթի պէս, իսկ Դաւթի տունը՝ Աստծու տան նման, Տիրոջ հրեշտակի պէս՝ նրանց առաջ:

ՀԱՄԱՏԱՐԱԾ ՍՈՒԳ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

9 «Այն օրը ես պիտի բնաջնջեմ այն բոլոր ազգերին, որոնք կը յարձակուեն Երուսաղէմի վրայ: 10 Շնորհի ու գթութեան հոգի պիտի հեղեմ Դաւթի տան եւ Երուսաղէմի բնակիչների վրայ. նրանք իրենց հայեացքը պիտի դարձնեն դէպի ինձ, պարելու փոխարէն լաց ու կոծ պիտի անեն, ինչպէս ողբում են սիրելի էակի վրայ, սուգ պիտի անեն, ինչպէս սգում են անդրանիկ զաւակի վրայ: 11 Այն օրը չափազանց մեծ սուգ պիտի լինի Երուսաղէմում, ինչպէս դաշտում կտրտուած նռնենիների վրայ եղած սուգը: 12 Պիտի հեկեկայ երկիրը՝ ամէն մի ազգատոհմ՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին, Դաւթի ազգատոհմը՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին, Նաթանի ազգատոհմը՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին, 13 Ղեւիի ազգատոհմը՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին, Սեմէիի ազգատոհմը՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին: 14 Այդպէս էլ մնացած բոլոր ազգատոհմերը, ամէն մէկն՝ առանձին, եւ նրանց կանայք՝ առանձին»:

ԿՈՒՌՔԵՐԻ ԵՒ ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

13 Այն օրը Դաւթի տան համար
պիտի բացուի ամէն մի վայր՝ նրա
փոփոխման ու մաքրման համար: 2 Այն
օրը Տէրը պիտի վերացնի կուռքերի
անունները երկրից, դրանք այլեւս
չպիտի յիշուեն. պիտի վերացնի երկրից
սուտ մարգարէներին եւ պիղծ
ոգիներին, 3 եւ եթէ որեւէ մէկը դեռեւս
մարգարէութիւն անի, նրա հայրն ու
մայրը, որ ծնել են նրան, թող ասեն՝
«Դու չպիտի ապրես, որովհետեւ Տիրոջ
անունից սուտ խօսեցիր»: Նրա հայրն
ու մայրը, որ ծնել են նրան, թող
արգելեն մարգարէութիւն անել: 4 Այն
օրը այդ մարգարէները պիտի ամաչեն
իրենց մարգարէութիւն անելու ժամա-
նակ՝ ամէն մէկն իր տեսիլքի համար,
որովհետեւ նրանք սուտ խօսեցին եւ
սուտ խօսելու պատճառով պիտի
հագնեն մազեղէն քրձեր: 5 Նրանցից
ամէն մէկը պիտի ասի. «Ես մարգարէ
չեմ, այլ հողագործ մարդ եմ, ինձ
մարդ է ծնել, եւ ես մարդ եմ իմ
մանկութիւնից ի վեր»: 6 Եւ երբ ես
նրան ասեմ՝ «Այդ ի՞նչ վէրքեր են քո
ձեռքերի մէջ», նա կ'ասի՝ «Դրանք այն
վէրքերն են, որ ես ստացել եմ իմ
սիրելի ազգի տանը»:

7 «Արթնացի՛ր, ո՛վ սուր, իմ հովուի վրայ
եւ նրա ընկեր տղամարդու վրայ,
– ասում է Ամենակալ Տէրը. –
ես պիտի հարուածեմ իմ հովուին,
եւ իմ հօտերը պիտի ցրուեն,
ես իմ ձեռքը պիտի դնեմ իմ
հովիւների վրայ:

8 Եւ այն օրը, – ասում է Տէրը, –
երկրում պիտի պակասի ժողովրդի
երկու երրորդը, իսկ մէկ երրորդը պիտի
մնայ նրա մէջ: 9 Այդ մէկ երրորդն էլ
ես պիտի անցկացնեմ հրի միջով, պիտի
հալեմ նրանց, ինչպէս արծաթն են
հալում, պիտի փորձեմ նրանց, ինչպէս
փորձում են ոսկին. այն ժամանակ
նրանք պիտի կանչեն իմ անունը, եւ ես
պիտի լսեմ նրանց ու ասեմ՝ "Սա է իմ
ժողովուրդը", իսկ նրանք պիտի ասեն՝
"Դու ես մեր Տէր Աստուածը"»:

ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՒ ՏԻՐՈՋ ԳԱԼՈՒՍՏԸ

14 Ահա գալիս է Տիրոջ օրը,
եւ քո աւարը պիտի բաժանուի քո
մէջ:

2 Պիտի հաւաքուեն բոլոր ազգերը
Երուսաղէմի դէմ պատերազմելու
համար,
քաղաքը պիտի գրաւուի,
տները պիտի կողոպտուեն,
եւ կանայք՝ պղծուեն.
քաղաքի կէսը գերութեան պիտի
տարուի,
բայց իմ ժողովրդի մի մասը պիտի
մնայ այնտեղ եւ չի բնաջնջուելու:

3 Տէրը պիտի ելնի ու պատերազմի
այդ բոլոր ազգերի դէմ,
պիտի պատերազմի, ինչպէս իր
համար ճակատամարտի օրը:

4 Այն օրը նրա ոտքերը պիտի
կանգնեն Ձիթենեաց լեռան վրայ՝
Երուսաղէմի դիմաց, արեւելեան
կողմը.
Ձիթենեաց լեռը պիտի պատռուի,
նրա մի կէսը՝ դէպի արեւելք,
նրա միւս կէսը՝ դէպի ծով.
նրանց միջեւ շատ մեծ վիհ պիտի
լինի,
եւ լեռան մի կէսը պիտի սահի դէպի
հիւսիս,
միւս կէսը՝ դէպի հարաւ:

5 Պիտի լցուի իմ լեռների ձորը,
եւ լեռների այդ ձորը պիտի տա-
րածուի մինչեւ Ասայէլ ու կցուի նրան,
պիտի լցուի այնպէս, ինչպէս լցուեց
երկրաշարժից՝
Յուդայի երկրի արքայ Օզիայի
օրերին:
Այն ժամանակ պիտի գայ ու հասնի
իմ Տէր Աստուածը,
եւ բոլոր սրբերը պիտի լինեն նրա
հետ:

6 Այն օրը լոյս չի լինելու,
այլ լինելու է ցուրտ ու պարզ օր:

7 Դա պիտի լինի միայն Տիրոջը
յայտնի օր.
ո՛չ ցերեկ պիտի լինի եւ ո՛չ էլ գիշեր,
այլ լոյս պիտի լինի միայն երե-
կոյեան:

8 Այն օրը կենդանի ջուր է բխելու
Երուսաղէմում,

նրա մի կէսը պիտի հոսի դէպի
առջեւի ծովը,
նրա միւս կէսը՝ դէպի յետեւի ծովը,
եւ այդպէս է լինելու ամառ ու
գարուն:

9 Տէրը թագաւոր պիտի լինի ամբողջ
երկրի վրայ.
այն օրը Տէրը միա՛կը պիտի լինի,
եւ նրա անունը պիտի լինի միա՛կը:

10 Ամբողջ երկիրը անապատից
պիտի վերածուի դաշտի՝
Գաբայից մինչեւ Ռեմոն՝ Երուսա-
ղէմի հարաւային կողմը,
Հռամը պիտի մնայ իր տեղը՝
Բենիամինի դռնից մինչեւ Առաջին
դուռը,
մինչեւ Անկիւնների դուռը,
Անամայէլի աշտարակից մինչեւ
թագաւորի հնձանները:

11 Նրա մէջ պիտի բնակուեն մար-
դիկ,
այլեւս նզովք չի լինելու,
եւ Երուսաղէմը պիտի դառնայ յու-
սալի:

12 Ահա սրանք են այն հարուած-
ները, որ Տէրը հասցնելու է բոլոր
ազգերին,
որոնք պատերազմեցին Երուսաղէմի
դէմ.
նրանց մարմինները պիտի հալուեն
իրենց ոտքերի վրայ կանգնած ժա-
մանակ,
նրանց աչքերը թարախի պէս պիտի
ծորեն իրենց ակնակապիճների մէջ,
եւ նրանց լեզուները պիտի նեխեն
իրենց բերաններում:

13 Այն օրը նրանց համար մեծ ահ
պիտի լինի Տիրոջից,
ամէն մէկը ձեռքը պիտի գցի
ընկերոջ ձեռքին,
ընկերը իր ձեռքը պիտի բարձրացնի
իր ընկերոջ վրայ:

14 Յուդայի երկիրը եւս պիտի
պատերազմի Երուսաղէմի դէմ,
պիտի կողոպտուի շրջակայ բոլոր
ազգերի հարստութիւնը՝
ոսկին ու արծաթը եւ մեծ թուով
հանդերձանք:

15 Այդպէս է լինելու նաեւ այն
հարուածը,
որով Տէրը հարուածելու է թէ՛
ձիերին ու ջորիներին,
թէ՛ միւս բոլոր անասուններին,
որոնք կը լինեն նրանց բանակների
մէջ:

16 Բոլոր նրանք, ովքեր մնացած կը
լինեն
Երուսաղէմի դէմ պատերազմած
ազգերից,
ամէն տարի պիտի գան երկրպա-
գելու թագաւորին՝ Զօրութիւնների
Տիրոջը,
պիտի գան Տաղաւարահարաց տօնը
տօնելու:

17 Եւ եթէ լինի այնպէս,
որ երկրի ազգերից որեւէ մէկը չգնայ
Երուսաղէմ՝
երկրպագելու թագաւորին՝ Զօրու-
թիւնների Տիրոջը,
ապա նա եւս պիտի գնայ:

18 Եթէ եգիպտացիների ազգատոհմը
նոյնպէս չգնայ,
ապա նրանց եւս հասնելու է այն
նոյն հարուածը,
որը պիտի հասնի բոլոր այն
ազգերին,
որոնք չեն գնայ Տաղաւարահարաց
տօնը տօնելու:

19 Սա՛ պիտի լինի եգիպտացիների
պատիժը
եւ պարտքն այն բոլոր ազգերի,
որոնք չեն գնայ Տաղաւարահարաց
տօնը տօնելու:

20 Այն օրը նոյնիսկ ձիերի սանձերի
վրայ գրուած պիտի լինի՝
"Սրբութիւն՝ նուիրուած Տիրոջը":
Տիրոջ տան կաթսաները պիտի լինեն
ինչպէս զոհասեղանի առջեւի տաշ-
տերը,

21 եւ Երուսաղէմում ու Յուդայի
երկրում ամէն մի կաթսայ
նուիրուած պիտի լինի Ամենակալ
Տիրոջը:
Բոլոր նրանք, ովքեր զոհ կը բերեն
ընծայելու,
պիտի վերցնեն այդ կաթսաներից՝
դրանց մէջ միսը եփելու համար.
եւ այն օրը, Զօրութիւնների Տիրոջ
Տանը այլեւս չի լինի ոչ մի քանանացի:

ՄԱՂԱՔԻԱ

Ներածութիւն

Մաղաքիայի գիրքը գրուել է 5-րդ դարի (Ն. Ք.) առաջին կէսին, Բաբելոնից հրեաների վերադառնալուց գրեթէ մէկ դար յետոյ: Գերութիւնից վերադառնալուց յետոյ իսրայէլական համայնքը աստիճանաբար ընկել էր անտարբերութեան եւ յուսահատութեան մէջ: Մաղաքիա մարգարէի քարոզութիւնից երեսուն կամ յիսուն տարի առաջ իսրայէլացիները, հետեւելով Անգէի եւ Զաքարիայի կոչերին, վերակառուցել էին Երուսաղէմի տաճարը 520-ից 515 թուականների ընթացքում: Սակայն դրանից յետոյ, կառավարիչ Զորոբաբէլի իշխանութեան օրօք, նրանք կորցրին ազգային վերազարթօնքի յոյսը: Եզրասի բարեփոխութիւնը (թերեւս շուրջ 440 թ.) տեղի չէր ունեցել դեռ: Ժողովրդի ինչպէս կրօնական, այնպէս էլ բարոյական վիճակը վատթարացել էր. պաշտամունքներն անտեսւում էին, ընծայաբերումների առթիւ խաբում էին Աստծուն, քահանաները իրենց առաքելութեան բարձրութեան վրայ չէին կանգնած, եւ Աստծու կողմից ժողովրդին տրուած օրէնքները չէին յարգւում: Մաղաքիա մարգարէի համար այս կացութիւնը առիթ է հանդիսանում յորդորելու քահանաներին եւ ժողովրդին, որ արմատապէս փոխեն իրենց վարքը: Նա յիշեցնում է նրանց Աստծու սէրը, բայց նաեւ նրա գալստեան եւ նրա դատաստանի մօտալուտ լինելը: Նա յայտնում է նրանց, որ Աստուած առաքելու է իր պատգամաբերին եւ մի մարգարէի, ինչպիսին Եղիան է:

ՏԻՐՈՋ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1 *Տիրոջ մարգարէական պատգամը Իսրայէլի մասին իր պատգամաբերի միջոցով:*
2 «Հաստատեցէ՛ք ձեր սրտում, որ ես սիրեցի ձեզ, - ասում է Տէրը. - դուք ասում էք՝ "Ինչո՞վ սիրեցիր մեզ": «Եսաւը Յակոբի եղբայրը չէ՞ր», -ասում է Տէրը. - ես սիրեցի Յակոբին, բայց Եսաւին ատեցի, 3 նրա սահմանները ամայութիւն դարձրի եւ նրա ժառանգութիւնը՝ անապատի բաժին: 4 Եթէ Եդոմն ասի, թէ՝ "Ահա կործանուեցինք, դառնանք եւ շինենք աւերուած քաղաքները", այն ժամանակ այսպէս կ'ասի Ամենակալ Տէրը. «Թող նրանք չինեն, իսկ ես կը կործանեմ, եւ նրանց սահմանները կը կոչուեն անօրէնութեան սահմաններ, իսկ ժողովուրդը, որի հետ Տէրը յաւիտեան պատերազմ պիտի մղի, կը կոչուի անօրէն»: 5 Ձեր աչքերը կը տեսնեն, եւ դուք իսկ կ'ասէք, թէ՝ "Տէրը բարձրացաւ Իսրայէլի սահմանների վրայ"»:

ՏԻՐՈՋ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆԸ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

6 «Որդին փառաւորում է Հօրը, եւ ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթէ ես Հայր եմ, ո՞ւր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ւր է իմ պատիւը, - ասում է Ամենակալ Տէրը -: Դուք, քահանանե՛ր, անարգում էք իմ անունը եւ ասում. "Ինչո՞վ անարգեցինք քո անունը". 7 դուք իմ սեղանին պիղծ հաց էք մատուցում եւ ասում. "Ինչո՞վ պղծեցինք այն": Ձեր այն խօսքով, թէ՝ "Տիրոջ սեղանը արհամարհուած է", եւ ինչ որ դրւում է նրա վրայ, արհամարհում էք: 8 Իսկ եթէ մի կոյր անասուն էք զոհ մատուցում, ապա չար գործ չէ՞ դա. եւ եթէ կաղ կամ հիւանդ անասուն էք զոհ մատուցում, ապա չար գործ չէ՞ դա: Լաւ, այն քո իշխանի՛ն մատուցիր, տես, թէ կ'ընդունի՞ քեզ կամ քեզ նկատի կ'առնի՞, - ասում է Ամենակալ Տէրը -: 9 Իսկ այժմ խնդրեցէ՛ք ձեր Աստծուն եւ հաշտեցրէ՛ք նրան ձեզ հետ. եթէ ձեր ձեռքով եղաւ դա, ապա որեւէ բան կ'առնե՞մ ձեզնից բարեհաճութեամբ, - ասում է Ամենակալ Տէրը -: 10 Ձեր առջեւ դռները կը փակուեն, եւ դուք զուր տեղը մի՛ մատեցէք իմ սեղանին, որովհետեւ յօժարակամ չեմ ձեր նկատմամբ, - ասում է Ամենակալ Տէրը, - եւ զոհ չեմ ընդունի ձեր ձեռքից: 11 Արեւածագից մինչեւ մայրամուտ իմ անունը փառաւորուած է ազգերի մէջ, եւ ամէն տեղ խունկ եւ սուրբ պատարագ է մատուցւում իմ անուան, որովհետեւ մեծ է իմ անունը հեթանոսների մէջ, - ասում է Ամենակալ Տէրը -: 12 Իսկ դուք պղծեցիք այն ձեր այն խօսքով, թէ՝ "Տիրոջ սեղանը պիղծ է, եւ այն կերակուրը, որ դրւում է նրա վրայ, արհամարհուած է": 13 Ասում էիք, թէ՝ "Դա տաժանքով է բերուած". ես այն քամուն կը տամ, - ասում է Ամենակալ Տէրը -: Եւ եթէ գողացուած, կաղ ու նիհար անասուն զոհ մատուցէք ինձ, կ'ընդունե՞մ դրանք ձեր ձեռքից, - ասում է Ամենակալ Տէրը -: 14 Թող անիծեալ լինի այն մարդը, որն ունեւոր է, իր հօտի մէջ որձ ունի եւ ուխտ է արել մատուցելու, սակայն արատաւորն է մատուցում Տիրոջը: Մինչդեռ ես յաղթող թագաւոր եմ, - ասում է Ամենակալ Տէրը, - եւ իմ անունը յայտնի է ազգերի մէջ»:

ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

2 «Եւ արդ, այս է իմ պատուիրանը ձեզ, քահանանե՛ր: 2 Եթէ չլսէք եւ չմտածէք փառք տալ իմ անուան, - ասում է Ամենակալ Տէրը, - ձեզ վրայ անէծք կ'ուղարկեմ, կ'անիծեմ ձեր օրհնութիւնները, կը նզովեմ դրանք, քամուն կը տամ ձեր օրհնութիւնները, եւ չեն մնայ ձեր մէջ, քանի որ դրանք չդրեցիք ձեր սրտերում: 3 Ահա ես որոշեցի թիկունքս դարձնել ձեզ, ձեր երեսին շաղ տալ ձեր աղտն ու կեղտը եւ ձեր տօների աղտեղութիւնը. ես այդպէս պիտի վերացնեմ ձեզ: 4 Այն ժամանակ դուք կ'իմանաք, որ ես ուղարկեցի ձեզ այս պատուէրը. որ իմ ուխտը զեւտացիների հետ է, - ասում է

Ամենակալ Տէրը: – 5 Իմ ուխտը Ղեւիի
հետ կեանքի եւ խաղաղութեան ուխտ
է, եւ ե՛ս նրան երկիւղ ներշնչեցի՝
վախենալու ինձանից, ակնածելու իմ
անունից: 6 Ճշմարիտ օրէնքն էր նրա
բերանում եւ անիրաւութիւն չգտնուեց
նրա շրթունքներին, նա խաղաղու-
թեամբ եւ ուղիղ ընթացաւ ինձ հետ եւ
շատերին անիրաւութիւնից դարձի բե-
րեց: 7 Արդարեւ, քահանայի շրթունք-
ները զգոյշ պիտի վարուեն գիտու-
թեան հետ, մարդիկ նրա բերանից
պիտի օրէնքներ խնդրեն, քանի որ նա
է Ամենակալ Տիրոջ պատգամաբերը:
8 Իսկ դուք խոտորուեցիք ճանապար-
հից, շատերին թուլացրիք օրէնքը պա-
հելուց եւ ապականեցիք Ղեւիի ուխտը,
– ասում է Ամենակալ Տէրը: – 9 Ուստի
ես ձեզ բոլոր ազգերից լքուած եւ
արհամարհուած դարձրի, քանի որ իմ
ճանապարհը չպահեցիք, այլ կեղծա-
ւորութիւն էիք անում օրէնքի առաջ»:

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

10 Արդարեւ, մէկ չէ՞ ձեր բոլորի
հայրը, մէկ Աստուած չհաստատե՞ց
ձեզ, ինչո՞ւ էք իւրաքանչիւրդ թոյլ
տալիս ձեր եղբօրը՝ պղծելու ձեր
հայրերի ուխտը: 11 Լքուեց Յուդայի
երկիրը, գարշելի բաներ արուեցին
Իսրայէլում եւ Երուսաղէմում, որով-
հետեւ Յուդայի երկիրը պղծեց Տիրոջ
սրբութիւնները նրանց ձեռքով, ում
սիրեց, եւ յարեց օտար աստուածներին:
12 Տէրը պիտի կործանի այն մարդուն,
որն այդպէս կ'անի, մինչեւ որ նա
հալածուի Յակոբի տնից եւ դադարի
Ամենակալ Տիրոջը զոհեր մատու-
ցելուց: 13 Ինչ որ ես ասում էի, ա՛յն
էիք անում. արցունքներով ծածկեցիք
իմ սեղանը, տանջանքի լաց ու ողբով:
Արժէ՞ արդեօք վերստին նայել ձեր
զոհաբերումին եւ կամ այն ընդունել
ձեր ձեռքերից: 14 Դուք ասացիք. «Ին-
չո՞ւ այդպէս»: Նրա համար, որ Տէրը
ուխտ դրեց քո եւ քո երիտասար-
դութեան օրերի կնոջ միջեւ, որին
թողեցիր. իսկ նա քո ուխտի ամուսինն
ու կինն էր: 15 Չէ՞ որ Տէրը ձեզ մէկ
մարմին եւ հոգի արեց նրա հետ: Եւ
ասացէ՛ք, թէ ուրիշ ի՞նչ է խնդրում
Աստուած, եթէ ոչ՝ զաւակ: Զգո՛յշ
վարուեցէք ձեր հոգու հետ. քո երի-
տասարդութեան օրերի կնոջը մի՛ թող:
16 «Իսկ եթէ ատելու պատճառով
արձակես նրան, ամբարշտութիւնը կը
ծածկի քո խորհուրդը, – ասում է
Իսրայէլի Տէր Աստուածը –: Զգո՛յշ
վարուեցէք եւ անհաւատարիմ մի՛
եղէք», – ասում է Ամենակալ Տէրը:
17 Դուք բարկացնում էք Աստծուն
ձեր խօսքերով եւ ասում էք՝ «Ինչո՞վ
բարկացրինք նրան»: Ձեր այն խօսքով,
թէ՝ «Ով որ չար գործ է անում, բարի է
համարւում Տիրոջ առաջ, Տէրը բարե-
հաճ է նրա նկատմամբ: Էլ ո՞ւր է
արդարութեան Աստուածը»:

3 «Ահա ես ուղարկում եմ իմ պատ-
գամաբերին, եւ նա կը տեսնի իմ ճա-
նապարհները՝ իմ առաջ. եւ յանկար-
ծակի իր տաճարը կը գայ Տէրը, որին
դուք փնտռում էք, եւ ուխտի պատ-
գամաբերը, որին կամենում էք դուք:
2 Ահա գալիս է, – ասում է Ամենակալ
Տէրը, – ո՞վ կը դիմանայ նրա մուտքի
օրուան, եւ կամ ո՞վ հանգիստ կը մնայ
նրա յայտնութեան ժամանակ, քանի
որ նա պիտի մտնի որպէս հալոցի բոց
եւ որպէս լուացարարների օճառ: 3 Նա
կը նստի ձուլելու եւ մաքրելու՝ որպէս
արծաթ եւ որպէս ոսկի, կը մաքրի
Ղեւիի որդիներին, կը հալեցնի նրանց
ոսկու նման եւ արծաթի պէս: Եւ այն
ժամանակ արդարութեամբ զոհ կը մա-
տուցեն Տիրոջը: 4 Յուդայի երկրի ու
Երուսաղէմի զոհաբերումը հաճելի կը
լինի Տիրոջը, ինչպէս վաղնջական օրե-
րին, ինչպէս առաջին տարիներին: 5 Ես
ձեզ վրայ պիտի գամ դատաստանով ու
արագ վկայ պիտի լինեմ կախարդների
եւ շնացող կանանց դէմ, նաեւ նրանց
դէմ, ովքեր սուտ երդում են անում իմ
անուամբ, որոնք կտրում են վարձկանի
վարձը, որոնք նեղում են այրիներին եւ
ծեծում որբերին, որոնք խեղաթիւրում
են պանդխտի իրաւունքը եւ որոնք չեն
վախենում ինձնից», – ասում է Ամե-
նակալ Տէրը:

ՏԱՍԱՆՈՐԴԻ ՎՃԱՐՈՒՄԸ

6 «Ահա ես եմ ձեր Տէր Աստուածը եւ
չեմ փոխուի: 7 Իսկ դուք, Յակոբի՛ որ-
դիներ, հեռու չէք մնում ձեր հայրերի
մեղքերից, խուսափում էք իմ օրէնք-
ներից եւ չէք պահում դրանք: Դարձէ՛ք
դէպի ինձ, եւ ես կը դառնամ դէպի
ձեզ, – ասում է Ամենակալ Տէրը: –
Դուք ասում էք. "Ինչո՞վ դառնանք":
8 Մարդ Աստծուն կը խաբի՞, քանի որ
դուք խաբեցիք ինձ եւ ասացիք, թէ՝
"Ինչո՞վ խաբեցինք քեզ": 9 Չէ՞ որ
տասանորդներն ու պտուղները ձեզ
մօտ են, եւ դուք չարութեամբ նա-
խանձում եւ խաբում էք ինձ: 10 Տարին
աւարտուեց, եւ ամբողջ բերքը հա-
ւաքեցիք ձեր շտեմարաններում. ձեր
տներում յափշտակութիւն կը լինի, ե՛տ
կանգնէք դրանից, – ասում է Ամե-
նակալ Տէրը –: Մի՞թէ չեմ բացի ձեզ
համար երկնքի պատուհանները եւ իմ
օրհնութիւնը լիառատ չեմ թափի ձեզ
վրայ: 11 Ուշադիր կը լինեմ ձեր կերա-
կուրների նկատմամբ, չեմ ապականի
ձեր երկրի բերքը, եւ չի փչանայ ձեր
որթատունկը այգում, – ասում է
Ամենակալ Տէրը –: 12 Բոլոր ազգերը
երանի կը տան ձեզ, քանի որ դուք կը
լինէք իմ ցանկալի երկիրը», – ասում է
Ամենակալ Տէրը:

ԱՍՏՈՒԱԾ ՆԵՐՈՒՄ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ

13 «Ծանր են ձեր խօսքերն ինձ
համար, – ասում է Տէրը –: 14 Դուք
ասում էք. "Ինչո՞վ բամբասեցինք
քեզ": Նրանով, որ ասում էիք, թէ՝
"Զուր է այն ամէնը, ինչ ծառայում է
Աստծուն, եւ ի՞նչ աւելի օգուտ եղաւ,
որ պահեցինք նրա հրահանգները եւ
պաղատանքով ընդառաջ գնացինք
Ամենակալ Տիրոջը: 15 Այժմ մենք
երանի ենք տալիս ուրիշներին. բարե-
կեցիկ են բոլոր նրանք, ովքեր
անօրէնութիւն են գործում, Աստծու
դէմ դուրս եկան եւ ապրեցին"»:

16 Այսպէս տրտնջացին Տիրոջից
երկիւղ կրողները, իւրաքանչիւրն իր
ընկերոջ հետ: Տէրը անսաց, լսեց եւ
յիշատակի գիրք գրեց Տիրոջից երկիւղ
կրողների առաջ եւ նրանց առաջ,
որոնք սարսում են նրա անունից: 17 Եւ
Ամենակալ Տէրն ասում է. «Նրանք իմը
կը լինեն այն օրը, երբ ես փրկութիւն
կ'անեմ, կը փայփայեմ նրանց, ինչպէս
հայրն է փայփայում իրեն բարու-
թեամբ ծառայած որդուն: 18 Դուք կը
դառնաք եւ կը տեսնէք այն տարբե-
րութիւնը, որ կայ արդարի ու անօրէնի,
Աստծուն ծառայածի եւ չծառայածի
միջեւ»:

ՏԻՐՈՋ ԳԱԼՍՏԵԱՆ ՕՐԸ

4 «Ահա պիտի գայ Տիրոջ օրը, հնոցի
նման բորբոքուած, եւ պիտի այրի
նրանց. բոլոր այլազգիներն ու ովքեր
անօրէնութիւն են գործում, պիտի վա-
ռուեն ինչպէս եղէգ այն օրը, որը պիտի
գայ, – ասում է Ամենակալ Տէրը, – եւ
նրանցից ոչ մի արմատ եւ ոչ մի ուռ չի
մնալու: 2 Բայց ձեզ՝ իմ անունից
երկիւղ կրողներիդ համար արդարու-
թեան արեգակը պիտի ծագի, բժշկու-
թիւն պիտի լինի նրա շողերի մէջ, եւ
դուք պիտի ելնէք ու խայտաք ինչպէս
կապից արձակուած հորթեր, 3 պիտի
տրորէք անօրէններին, եւ նրանք
մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի
տակ այն օրը, որ ես եմ պատրաստելու,
– ասում է Ամենակալ Տէրը: – 4 Ահա
ես ձեզ մօտ եմ ուղարկում Թեզբացի
Եղիային, նախքան որ կը գայ Տիրոջ
մեծ ու երեւելի օրը, 5 որպէսզի նա հօր
սիրտը դարձնի դէպի որդին, մարդու
սիրտը՝ դէպի իր ընկերը. չլինի այնպէս,
որ, գալով, հարուածեմ երկիրը միան-
գամից: 6 Ցիշեցէ՛ք իմ ծառայ Մովսէսի
օրէնքները, ինչպէս որ պատուիրեցի
նրան Քորէբում, յիշեցէ՛ք նրա բոլոր
հրամաններն ու պատուիրանները»:

ԵՐԵՄԻԱ

Ներածութիւն

Երեմիա մարգարէն այն մարդն է, որը, Պօղոս առաքեալից շատ առաջ, ապրել է Աստծու հետեւեալ խօսքով. «Իմ զօրութիւնն ամբողջանում է քո տկարութեան մէջ» (Բ Կորնթ. 12. 9):

Դեռեւս երիտասարդ հասակում Երեմիան Երուսաղէմում դառնում է Աստծու Խօսքի տարածողը (դա 626 թուականին էր (Ն. Ք.), Յոսիայի թագաւորութեան ժամանակ) եւ այդպիսին էլ նա մնում է աւելի քան քառասուն տարի, փոթորկալի մի ժամանակաշրջանում:

Ասորեստանի հզօրութիւնը սկսում է թուլանալ բաբելոնացիների անընդմէջ յարձակումների պատճառով: Օգտուելով դրանցից՝ Յոսիան ձեռք է գցում Իսրայէլի հին թագաւորութեան մի մասը: Սակայն 609 թուականին նա սպանւում է Մեգիդդոյում՝ ցանկանալով դէմ դուրս գալ Ասորեստանին օգնելու նպատակով եգիպտացիների ուղարկած բանակին: Եգիպտացիները գերեվարում են նրա որդի Շալլումին եւ նրա փոխարէն թագաւոր են նշանակում Յովակիմին: 597 թուականին Նաբուքոդոնոսորի զօրքերը հասնում են մինչեւ Երուսաղէմ եւ նրա բնակչութեան մի մասին աքսորում են Յովակինի հետ միասին, որը յաջորդել էր իր հօրը՝ Յովակիմին: Նրանք Դաւթի գահին են նստեցնում Սեդեկիային: Սա թոյլ մի թագաւոր լինելով՝ հեշտութեամբ ներգրաււում է բաբելոնացի տէրերի դէմ բորբոքուած ապստամբական շարժումների մէջ, որոնք աղէտալի հետեւանք են ունենում. մէկ տարուայ պաշարումից յետոյ Երուսաղէմը գրաււում է Նաբուքոդոնոսորի զօրքերի կողմից (587 թ. յուլիսին), որոնք կալանաւորում են Սեդեկիային, հրդեհում տաճարը եւ գերի տանում ապստամբութեան մասնակիցներին:

Նրանց մեկնումից յետոյ սպանւում է Գոդոդիան, որը Երուսաղէմում կառավարիչ էր նշանակուել բաբելոնացիների կողմից: Սպանդից ճողոպրած Յուդայի երկրի բնակիչները ապաստանում են Եգիպտոսում՝ բռնի իրենց հետ տանելով Երեմիա մարգարէին: Այստեղ էլ նա վախճանւում է:

Ինչպէս միւս մարգարէները, Երեմիան նոյնպէս այս ողբերգական իրադարձութիւնների մէջ տեսնում է Աստծու խստագոյն ազդարարութիւնները՝ ուղղուած իր անհաւատարիմ ժողովրդին, որի համար դժբախտութիւնից խուսափելու միակ միջոցը, ասում է Երեմիան, Աստծուն վերադառնալն է: Դադարեցնել թաքուն մեքենայութիւնները Եգիպտոսի հետ եւ ընդունել բաբելոնեան գերիշխանութեան փորձութիւնը: Այս պատճառով էլ Երեմիան մեղադրւում է դաւաճանութեան մէջ եւ ենթարկւում հալածանքների, որը մեծ վիշտ է պատճառում նրան, քանի որ նա խորունկ սիրով կապուած էր իր ժողովրդին:

Այդպէս էլ նա վերջացնում է իր կեանքը՝ ողբալով իր ժողովրդի դժբախտ ճակատագրի վրայ, բայց հաւատալով նրա յարութեանը, որը կարող էր իրականանալ միայն Աստծու հետ կնքուած մի «նոր դաշինքով»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 *Աստծու պատգամը, ուղղուած Քեղ-*
կիայի որդի Երեմիային, որը Բենիամինի
երկրում, Անաթոթում ապրող քահանա-
ներից էր: 2 Տէրը նրա հետ խօսեց
Հրէաստանի արքայ Ամոնի որդի Օսիայի
օրօք, վերջինիս թագաւորութեան տաս-
ներեքերորդ տարում, 3 նաեւ Հրէաս-
տանի արքայ Օսիայի որդի Յովակիմի
օրօք, մինչեւ Յուդայի երկրի արքայ
Օսիայի որդի Սեդեկիայի տասնմէկերորդ
տարուայ վերջը, մինչեւ Երուսաղէմի
բնակչութեան գերութիւնը, որ տեղի
ունեցաւ նոյն տարուայ հինգերորդ
ամսին:

ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԿՈՉՈՒՄԸ

4 Տէրը խօսքն ուղղեց ինձ եւ ասաց.
5 «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝
ես ընտրեցի քեզ,
եւ դեռ արգանդից դուրս չեկած՝
սրբացրի քեզ
ու հեթանոսների վրայ մարգարէ
կարգեցի»:
6 Իսկ ես ասացի.
«Տէ՛ր, ո՛վ դու Տէր, ահա ես նոյնիսկ
խօսել չգիտեմ,
քանզի մանուկ եմ»:
7 Տէրն ինձ ասաց.
«Մի՛ ասա, թէ՝ "Մանուկ եմ ես".
ում մօտ որ ուղարկեմ քեզ, բոլորի մօտ
էլ պիտի գնաս,
ու այն ամէնը, ինչ որ պատուիրեմ
քեզ, պիտի խօսես:
8 Զվախենաս նրանցից, – ասում է
Տէրը, – քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ
փրկելու համար»:
9 Եւ Տէրը, ձեռքն ինձ երկարելով,
հպեց բերանիս ու ասաց.
«Ահա իմ խօսքը քո բերանը դրեցի:
10 Ահա քեզ այսօր իշխանութիւն
տուի ազգերի ու թագաւորութիւնների
վրայ,
որպէսզի դրանք քանդես ու խոր-
տակես,
կործանես ու աւերես, կառուցես ու
հաստատես»:

ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ԳԱՒԱԶԱՆԸ ԵՒ ԵՌԱՃՈՂ ԿԱԹՍԱՆ

11 Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց.
«Ի՞նչ ես տեսնում, Երեմիա՛»:
Ես ասացի. «Ընկուզենու գաւազան եմ
տեսնում»:
12 Տէրն ինձ ասաց.
«Ճիշտ ես տեսնում.
ես արթուն հետեւում եմ,
որպէսզի իմ ասածները կատարուեն»:
13 Եւ Տէրը նորից խօսքն ինձ ուղղեց՝
ասելով.
«Ի՞նչ ես տեսնում»:
Ասացի. «Եռացող կաթսայ եմ տես-
նում՝ բերանը հիւսիսից դէպի այս
կողմ»:
14 Տէրն ինձ ասաց.
«Այս երկրի բնակիչների վրայ չարիք-
ները հիւսիսից են բորբոքուելու:
15 Ահա ես բոլոր թագաւորութիւն-
ներին միասին կանչելու եմ հիւսիսի
երկրից,
– ասում է Տէրը. – գալու են,
եւ ամէն մէկն իր գահն է հաստա-
տելու Երուսաղէմի դարպասների չեմե-
րին,
նրա շրջակայ բոլոր պարիսպների
վրայ
եւ Հրէաստանի բոլոր քաղաքների
վրայ:
16 Ես դատ ու դատաստանով եմ
խօսելու նրանց հետ՝
իրենց գործած բոլոր չարիքների
համար,
քանզի նրանք լքեցին ինձ եւ զոհեր
մատուցեցին օտար աստուածներին,
երկրպագեցին իրենց ձեռակերտ կուռ-
քերին:
17 Դու էլ զօտեպնդուի՛ր, գնա՛ եւ
ասա՛ նրանց այն ամէնը,
ինչ որ պատուիրելու եմ քեզ:
Զվախենաս նրանցից եւ քեզ չկորցնես
նրանց առաջ,
քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու
համար, – ասում է Տէրը:
18 Ահաւասիկ ես այսօր կանգնեցրի
քեզ ինչպէս ամուր քաղաք,

եւ ինչպէս երկաթէ սիւն եւ կամ
ինչպէս պղնձէ հզօր պարիսպ՝
ընդդէմ Հրէաստանի բոլոր թագաւոր-
ների,
նրա իշխանների, նրա քահանաների
ու երկրի ժողովրդի:
19 Նրանք պիտի կռուեն քեզ հետ,
բայց քեզ ոչ մի բան չպիտի կարո-
ղանան անել,
քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու
համար», – ասում է Տէրը:

ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ՄԵՂՔԸ

2 Տէրը խօսքն ուղղեց ինձ եւ ասաց.
«Գնա՛ երուսաղէմացիների ական-
ներին ձա՛յն տուր ու ասա՛.
2 Տէրն այսպէս է ասում.
"Քե՛զ յիշեցի, քո պատանութեան
խանդաղատանքն ու քո հարսնութեան
սէրը,
երբ դու ընթանում էիր Իսրայէլի սրբի
յետեւից† "»:
3 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի
սուրբը.
«Տիրոջ համար‡ իր պտուղներից
առաջինն է նա:
Բոլոր նրանք, ովքեր ուտելու են այն,
զղջալու են.
չարիքներ են հասնելու նրանց վրայ»,
– ասում է Տէրը:
4 Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Յակոբի
տուն եւ Իսրայէլի բոլո՛ր տոհմեր:
5 Այսպէս է ասում Տէրը.
«Ձեր հայրերն ի՞նչ վնասակար բան
գտան իմ մէջ,
որ հեռացան ինձնից եւ,
սնոտի աստուածների յետեւից գնա-
լով,
սնահաւատ դարձան:
6 Ձասացին էլ՝ "Ո՞ւր է Տէրը, որ մեզ
հանեց Եգիպտացիների երկրից
եւ առաջնորդեց մեզ անապատում,
անծայր ու անուղի, անջուր ու
անպտուղ երկրում,
մահուան ստուերների մէջ,
այն երկրում, որտեղով մարդ չէր
անցել,
եւ ուր չէր բնակուել մարդու որդին:
7 Տարաւ մեզ Քերմէլ՝ ուտելու նրա
պտուղն ու բարիքները".
Իսկ դուք մտաք ու ապականեցիք իմ
երկիրը, իմ ժառանգութիւնը պղծութեան
մատնեցիք:
8 Եւ քահանաները չհարցրին՝ "Ո՞ւր է
Տէրը":
Իմ օրէնսգէտներն ինձ չուզեցին ճա-
նաչել,
առաջնորդներն ապստամբեցին իմ
դէմ,
եւ մարգարէները Բահաղի անունով
մարգարէութիւն արին
ու անօգուտ աստուածների յետեւից
գնացին»:

ՏԻՐՈՋ ԴԱՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԷՄ

9 «Դրա համար էլ դեռ պիտի դատեմ
ձեզ, – ասում է Տէրը, –
պիտի դատեմ նաեւ ձեր որդոց
որդիներին:
10 Արդ, անցէ՛ք քետիմացիների†
կղզիներն ու նայեցէ՛ք,
մա՛րդ ուղարկեցէք նաեւ Կեդար ու
լա՛ւ տեղեկացէք,
տեսէք՝ եղե՞լ է այդպիսի բան.
11 ազգերն իրենց աստուածներին
փոխե՞լ են,
թէեւ նրանք աստուածներ էլ չեն,
բայց իմ ժողովուրդն իր փառքը
փոխանակեց նրանց հետ,
որոնցից օգուտ չի ունենալու:
12 Այդ բանի վրայ ապշեց երկինքը եւ
խիստ սոսկաց, – ասում է Տէրը, –
13 քանզի երկու չարիք գործեց իմ
ժողովուրդը.
ինձ՝ կենաց ջրի աղբիւրիս, լքեց եւ իր
համար ծակ փոսեր փորեց,

†Սրբայերէն՝ Անապատում, այն չցանուած երկրում, իմ յետեւից եկած ժամանակ, Ո՛ մանկութեան հաւատարմութիւնը եւ Ո՛ հարսնութեան սէրը յիշեցի:

‡Սրբայերէն՝ Իսրայէլը Տիրոջ համար սուրբ էր:

†Սրբայերէն՝ կիպրացիների:

որոնք ջուր չեն կարող պահել:
14 Միթէ Իսրայէլը ծառա՞յ է,
կամ Յակոբը՝ ստրո՞ւկ,
որ աւարի մատնուեցին:
15 Նրա վրայ մռնչացին եւ իրենց
ձայներն արձակեցին առիւծները,
որոնք աւերակ դարձրին նրա երկիրը:
Նրա քաղաքները, բնակիչներից թա-
փուր դառնալով, կործանուեցին:
16 Մեմփացիներն ու տափնացիները
ճանաչեցին քեզ ու ծաղրեցին†:
17 Միթէ դրա պատճառն այն չէ՞ր, –
ասում է քո Տէր Աստուածը, –
որ դու լքեցիր ինձ այն ժամանակ,
երբ քեզ բերում էի անապատի
ճանապարհով:
18 Եւ հիմա դու ո՞ւր, եգիպտացիների
ճանապարհն ուր.
ուզում ես Գեհոնի ջո՞ւրը խմել.
եւ կամ՝ դու ո՞ւր, ասորեստանցիների
ճանապարհն ուր.
ուզում ես գետերի ջո՞ւրը խմել:
19 Քո ապստամբութիւնը քեզ խրատ է
լինելու,
եւ քո չարութիւնները կշտամբելու են
քեզ:
Խելքի կը գաս ու կը տեսնես, որ քեզ
համար դառնաղէտ է ինձ լքելը,
– ասում է քո Տէր Աստուածը»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՈՐՊԷՍ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԿԻՆ

20 «Ես չհաւանեցի քեզ‡, – ասում է քո
Տէր Աստուածը:
Վաղուց խորտակեցիր քո լուծը,
խզեցիր քո կապանքներն ու ասացիր,
թէ՝
"Ձեմ ծառայի, այլ կը գնամ այնտեղ,
բոլոր բարձր բլուրների վրայ եւ բոլոր
ստուերախիտ ծառերի տակ,
կը զեխանամ պոռնկութեան մէջ":
21 Ես քեզ տնկեցի իբրեւ համակ
ազնիւ եւ պտղաբեր որթատունկ.
ինչո՞ւ ինձ համար դառնութեան փո-
խուեցիր,
ո՛վ դու, որթատո՛ւնկդ օտարացեալ:
22 Եթէ բորակով էլ լուացուես
եւ կամ օճառը ձեռքիցդ վար չգցես,
դարձեալ իմ առաջ քո անիրաւու-
թիւնների մէջ շաղախուած կը մնաս,
– ասում է Տէր Աստուածը:
23 Ինչպէ՞ս ես ասում, թէ՝
"Ձեմ պղծուել եւ չեմ գնացել Բահաղի
յետեւից":
Տե՛ս քո ընթացքը գերեզմաններում†
եւ իմացի՛ր, թէ ի՛նչ ես արել:
24 Ամէն երեկոյ նրա տուփանքի ձայնը
տարածուեց իր ճանապարհներին.
յաճախ նա այցելեց անապատի ջրե-
րին.
իր մարմնական ցանկութեան պատ-
ճառով այսահար դարձաւ:
Անձնատուր եղաւ իր կրքերին,
եւ ո՞վ է, որ յետ պիտի դարձնի նրան:
Բոլոր նրանք, ովքեր կը փնտռեն
նրան,
նեղութիւն չեն կրի.
իր ամսականի տառապանքների մէջ
կը գտնեն նրան:
25 Դարձրո՛ւ քո սիրտը ծուռ ճանա-
պարհից եւ քո կոկորդը՝ ծարաւից»:
Իսկ նա ասում է՝ "Ուժս տեղն է‡",
որովհետեւ նա սիրում էր օտար աս-
տուածներին եւ գնում նրանց յետեւից»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՄՕԹԱՆՔԸ

26 «Ինչպէս որ կ՝ամաչի գողը, երբ
բռնուի,
այնպէս էլ պիտի ամաչեն իսրայէ-
լացիները,
իրենք, իրենց թագաւորներն ու իրենց
իշխանները,
իրենց քահանաներն ու իրենց մար-
գարէները:
27 Նրանք փայտին ասացին, թէ՝ "Իմ
հայրն ես դու",
եւ քարին, թէ՝ "Դո՛ւ ծնեցիր ինձ":
Եւ նրանք ոչ թէ իրենց երեսները, այլ
թիկունքները դարձրին ինձ,

†Սրբայերէն՝ գլխիդ գագաթը ջախջախեցին:

‡Սրբայերէն՝ ինձ հաւատարիմ չեղար:

†Սրբայերէն՝ հոմտում:

‡Սրբայերէն՝ յոյս չկայ:

բայց իրենց փորձութեան ժամին
պիտի ասեն՝ "Արի փրկի՛ր մեզ":
28 Հապա ո՞ւր են քո այն աստուածները,
որոնց քեզ համար կերտեցիր.
քո թշուառութեան ժամանակ նրանք
թող ելնեն ու փրկեն քեզ:
Զէ՞ որ քո աստուածները նոյնքան էին, որքան քո քաղաքների թիւը,
ո՛վ Ցուդայի երկիր:
Զէ՞ որ Երուսաղէմի ճանապարհների թուով զոհեր էին մատուցում Բահաղին:
29 Այժմ ինչո՞ւ էք խօսում ինձ հետ,
որովհետեւ դուք բոլորդ ամբարշտացաք,
բոլորդ անօրէն եղաք իմ դէմ,
- ասում է Տէրը:
30 Զուր ծեծեցի ձեր որդիներին. դուք խրատ չառաք:
Սուրը կերաւ ձեր մարգարէներին,
առիւծի պէս յօշոտեց,
բայց դուք չզարհուրեցիք»:
31 Լսեցէ՛ք Տիրոջ պատգամը,
այսպէս է ասում Տէրը.
«Մի թէ ես Իսրայէլի համար անապա՞տ եղայ
կամ աւեր ու խոպանացեալ երկի՞ր†,
որ իմ ժողովուրդն ասաց.
"Անտէրունչ կը շրջենք, բայց քեզ մօտ չենք գայ":
32 Մի թէ հարսը կը մոռանա՞յ իր զարդը,
եւ կոյսն՝ իր լանջագեղ գօտին.
իսկ իմ ժողովուրդն երկար ժամանակ մոռացաւ ինձ:
33 Քո ճանապարհին ուրիշ ի՞նչ միջոցների պիտի դիմես՝ սիրոյ հաճոյք գտնելու համար.
բայց դու ոչ միայն այդպէս արեցիր,
այլեւ նոյնիսկ անզգամացար եւ պղծեցիր քո ճանապարհները:
34 Քո ձեռքերի մէջ յայտնաբերուեց թշուառ ու անմեղ մարդկանց արիւնը.
ոչ թէ վիհերում գտայ նրանց,
այլ բոլոր կաղնիների մօտ:
35 Դու ասացիր, թէ՝ "Անմեղ եմ, թող նրա բարկութիւնն ինձնից հեռանայ":

†Երրայերէն՝ մուք երկիր:

Ահաւասիկ ես դատաստան եմ տեսնելու քեզ հետ,
որովհետեւ դու ասացիր, թէ՝ չմեղանչեցի:
36 Դու արհամարհեցիր ինձ՝ միշտ կրկնելով քո ընթացքը†,
բայց դու Եգիպտոսի՛ց էլ պիտի ամաչես,
ինչպէս Ասորեստանից ամաչեցիր:
37 Այնտեղի՛ց էլ պիտի դուրս գաս՝ ձեռքերդ գլխիդ վրայ բռնած,
քանզի Տէրը մերժեց այն, որ քո յոյսն էր,
եւ նրանով այլեւս յաջողութիւն չպիտի գտնես»:

ԻՍՐԱՅԷԼԸ՝ ՊՈՌՆԿՈՒԼԻ

3 «Եթէ մարդն արձակի իր կնոջը,
եւ սա հեռանայ նրանից ու ամուսնանայ ուրիշ տղամարդու հետ,
ապա նորից յետ դայ նախկին մարդու մօտ,
արդեօք այդ կինը‡ ամբողջապէս պղծուած չի՞ լինի:
Իսկ դու պոռնկացար բազում առաջնորդների հետ
եւ վերադարձար ինձ մօտ, - ասում է Տէրը: -
2 Բարձրացրո՛ւ աչքերդ,
ուղիղ դէպի առա՛ջ նայիր եւ տե՛ս,
թէ քո ճանապարհներին ո՛ւր ասես որ պղծութեամբ չթթխմեցիր:
Ագռաւի պէս մենակ ու անօգնական՝
նստեցիր այդ ճանապարհներին
եւ քո պոռնկութիւններով ու չարութիւններով երկիրը պղծեցիր:
3 Ի գայթակղութիւն քեզ՝
բազում առաջնորդներ ունեցար,
պոռնիկ կնոջ կերպարանք առար եւ բոլորի մօտ կորցրիր քո ամօթը:
4 Զընդունեցիր ինձ իբրեւ տաճար,
իբրեւ Հայր եւ Իշխան քո կուսութեան:

†Երրայերէն՝ Ինչո՞ւ ճանապարհդ փոխելով այդման թափառում ես:

‡Երրայերէն՝ երկիրը:

5 "Մի թէ Տէրը յաւիտեան բարկացո՞ծ պիտի մնայ
եւ բարկութիւնն ընդմիշտ պիտի պահի՞".
- ահա այսպէս ասացիր դու,
գործեցիր այդ բոլոր չարիքները եւ զօրացար»:

ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿԻՐԸ ՊԷՏՔ Է ԶՂՋԱՆ

6 Օսիա արքայի օրօք Տէրն ինձ ասաց. «Տեսա՞ր, թէ ինչ արեց Իսրայէլի այդ բնակչութիւնը. գաղտնի գնաց եւ այնտեղ, բոլոր բարձր լեռների վրայ ու բոլոր սաղարթախիտ ծառերի տակ, պոռնկացաւ: 7 Այդքան պոռնկանալուց յետոյ ես նրան ասացի՝ "Ինձ մօ՛տ դարձիր", բայց չդարձաւ: Նրա ցոփութեանն ականատես եղաւ ուխտադրուժ Ցուդայի երկիրը: 8 Երբ Իսրայէլի բնակչութիւնն ամբողջովին տարուեց չնութեամբ եւ բռնուեց դրա մէջ, արձակեցի նրան, ապահարզանի թուղթ տուի ձեռքը, ու ես տեսայ, որ նրա ուխտադրուժ քոյրը՝ Ցուդան, չզարհուրեց, այլ գնաց ու ինքն էլ պոռնկացաւ: 9 Նա իր պոռնկութեամբ, որ չնչին բան էր համարում, երկիրը պղծեց՝ քարի ու փայտի հետ շնանալով: 10 Այս ամենից յետոյ, - ասում է Տէրը, - նրա ուխտադրուժ քոյր Ցուդան չդարձաւ դէպի ինձ ամբողջ սրտով, այլ՝ դարձաւ ստութեամբ: 11 Իսրայէլը, - ասում է ինձ Տէրը, - արդարացրեց իր ապստամբութիւնը՝ ուխտազանց Ցուդայի համեմատութեամբ: 12 Ահաւասիկ գնա՛ եւ այս պատգամները հռչակի՛ր Հիւսիսի կողմերում՝ ասելով.
"Ինձ մօ՛տ դարձիր, ո՛վ դու Իսրայէլի բնակիչ, - ասում է Տէրը: -
Ես ձեզ վրայ չեմ բարկանայ,
քանզի ես ողորմած եմ,
- ասում է Տէրը,
ձեր դէմ յաւիտեան ոխ չեմ պահի:
13 Բայց դու գիտակցի՛ր քո անօրէնութիւնները,
որովհետեւ դու ամբարշտացար քո Տէր Աստծու դէմ

եւ օտարների համար քո ճանապարհները տարածեցիր բոլոր սաղարթախիտ ծառերի տակ,
իսկ իմ ձայնը չլսեցիր, - ասում է Տէրը: -
14 Ինձնից հեռացա՛ծ որդիներ, դարձէ՛ք ինձ մօտ, որպէսզի ես ձեզ տիրեմ, - ասում է Տէրը: - Կ'առնեմ ձեզ, ամէն քաղաքից՝ մէկին եւ ամէն ցեղից՝ երկուսին, ու կը տանեմ ձեզ Սիոն: 15 Իմ սրտին հաճելի առաջնորդներ կը տամ ձեզ. թող նրանք իմաստութեամբ հովուութիւն անեն ձեզ: 16 Ու երբ երկրի վրայ այն օրերին դուք բազմանաք ու աճէք, - ասում է Տէրը, - այլեւս չեն ասելու՝ "Իսրայէլի Սուրբ Ուխտի տապանակը", չի յիշուելու այն, նրա անունն այնտեղ չի տրուելու, այլեւս չի փնտռուելու այն եւ չի վերաշինուելու: 17 Այն օրերին ու այն ժամանակ Երուսաղէմը Տիրոջ աթոռ են կոչելու. բոլոր ազգերը հաւաքուելու են Երուսաղէմում՝ Տիրոջ անունը մեծարելու եւ այլեւս չեն հետեւելու իրենց չար սրտերի խորհուրդներին: 18 Այն օրերին Իսրայէլի տունը միանալու է Ցուդայի տանը, եւ հիւսիսից† ու բոլոր գաւառներից միասին գալու են այն երկիրը, որն իբրեւ ժառանգութիւն տուի նրանց հայրերին"»:

ԱՆԱՌԱԿ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

19 Ես ասացի՝ թող լինի՛, Տէ՛ր:
«Ձեզ որդիներիս մէջ կարգել կամեցայ՝
ձեզ տալու համար ընտիր երկիրը՝
իբրեւ ազգերի Ամենակալ Աստծու մեծահռչակ ժառանգութիւն.
ասացի, որ հայր կոչես ինձ
եւ այլեւս երես չթեքես ինձնից:
20 Բայց ինչպէս կինն է անարգում իր ամուսնուն,
այնպէս էլ դու ինձ անարգեցիր, ո՛վ Իսրայէլի տուն, - ասում է Տէրը: -
21 Լացի ու պաղատանքի ձայնը

†Երրայերէն՝ հիւսիսի երկրից:

գուժեց իսրայէլացիների շուրթերից†,
քանզի անիրաւութիւն գործեցին
իրենց ճանապարհներին
եւ մոռացան իրենց սուրբ Աստուն:
22 Դարձէ՛ք, որդինե՛ր‡, եւ ես կը փա-
րատեմ ձեր ցաւը§ »:
Նրանք ասացին. «Ահա մենք կանք*,
քանզի դու ես մեր Տէր Աստուածը:
23 Արդարեւ, ունայն էին բլուրների եւ
բարձունքների բագինները
եւ նրանց զօրութիւնը.
Իսրայէլի տան փրկութիւնը մեր Տէր
Աստծու ձեռքին է:
24 Մեր մանկութիւնից ի վեր խայ-
տառակութիւնը սպառեց մեր հայրերի
վաստակը՝
նրանց հօտերն ու նախիրները,
նրանց տղաներին ու աղջիկներին:
25 Մենք մեր ամօթով քուն մտանք,
եւ մեր անարգանքները մեզ ծածկոց
եղան,
քանզի մենք եւ մեր հայրերը ման-
կութիւնից մինչեւ այսօր
մեր Աստծու առաջ մեղք գործեցինք
եւ մեր Տէր Աստծու ձայնը չլսեցինք»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՎԱՆԳ ՎԵՐԱԴԱՐՁԸ

4 «Եթէ Իսրայէլը դառնալու է դէպի
ինձ, թող դառնայ, - ասում է Տէր
Աստուած, -
եթէ յանուն Երուսաղէմի Աստծու նա
իր բերանից դուրս թափի գարշելի
աստուածների անունները,
վախենայ** ինձնից
2 եւ ճշմարտութեամբ, իրաւամբ ու
արդարութեամբ երդուի,
թէ՝ "Տէրը կենդանի է",
նրա կողմից պիտի օրհնուեն ազգերը
եւ նրանով արժանանան պարծան-
քի»:
3 Այսպէս է ասում Տէրը ձեզ՝ Յուդայի
երկրի մարդկանց
եւ Երուսաղէմի բնակիչներիդ.
«Հերկե՛ր հերկեցէք ձեզ համար,
փշերի մէջ մի՛ սերմանէք:
4 Յուդայի երկրի մարդի՛կ եւ Երու-
սաղէմի բնակիչնե՛ր,
ձեր Աստծո՛ւ համար թլփատուեցէք,
ձեր սրտի անթլփատութի՛ւնը թլփա-
տեցէք,
որովհետեւ գուցէ ձեր չար գործերի
պատճառով
իմ բարկութիւնն իբրեւ հուր ելնի ու
բորբոքուի,
եւ մէկը չգտնուի, որ հանգցնի այն»:

ԱՂԷՏԻ ՏԱԳՆԱՊ ՀՐԷԱՍՏԱՆՈՒՄ

5 «Գուժեցէ՛ք Հրէաստանի մէջ,
լուրը թող հասնի Երուսաղէմ,
ասացէ՛ք, փո՛ղ հնչեցրէք երկրով մէկ,
աղաղա՛կ բարձրացրէք, գոչեցէ՛ք,
հաւաքուեցէ՛ք եւ մտէ՛ք պարսպա-
պատ քաղաքները:
6 Ելէք փախէ՛ք դէպի Սիոն†,
շտապեցէ՛ք, մի՛ դանդաղէք,
որովհետեւ ես չարիք ու մեծ կոտորած
եմ բերելու հիւսիսից:
7 Առիւծն իր որջից դուրս եկաւ,
որպէսզի յօշոտի ազգերին,
շարժուեց ու ելաւ իր տեղից,
որպէսզի քո երկիրն աւերակ դարձնի:
Քո քաղաքները քանդուելու են՝
այնտեղ բնակիչ չլինելու պատճառով:
8 Դրա համար էլ քո՛ւրձ հագէք,
կոծեցէ՛ք ու ճի՛չ բարձրացրէք,
քանզի Տիրոջ ցասումն ու բարկու-
թիւնը յետ չդարձաւ ձեզնից:
9 Եւ այն օրը, - ասում է Տէրը, -
թագաւորն ու իշխանները սրտաբեկ
պիտի լինեն,
քահանաները պիտի յիմարանան,
մարգարէներն ապշեն»:
10 Ու ես ասում եմ.
«Ո՛վ Տէր Աստուած,
ուրեմն խաբելով խաբեցիր այդ
ժողովրդին ու Երուսաղէմին,

†Եբրայերէն՝ բլուրների վրայ:
‡Եբրայերէն՝ ապստամբ որդիներ:
§Եբրայերէն՝ ապստամբութիւնը:
*Եբրայերէն՝ Ահա մենք եմք գալիս:
**Եբրայերէն՝ եթէ Ո պղծութիւնները իմ աչ-
քից հեռացնես, այլեւս չես մոլորուի:

քանի որ ասացիր, թէ՝ "Խաղաղութիւն
պիտի լինի ձեզ",
մինչդեռ սուրը նրանց հոգուն դէմ է
առել:
11 Այն ժամանակ դու պիտի ասես այդ
ժողովրդին ու Երուսաղէմին.
"Սա անապատում քո մոլորութեան
համար է:
Իմ ժողովրդի դստեր ճանապարհը ո՛չ
մաքրութեան
եւ ո՛չ էլ սրբութեան համար էր:
12 Նրանց այդ յորդաբուխ շունչն է,
որ գալու է դէպի ինձ.
այսուհետեւ ես էլ նրանց հետ իմ
դատաստաններով եմ խօսելու"»:
13 Ահա նա ելնելու է ինչպէս ամպ.
նրա կառքը նման է մրրկի,
նրա երիվարներն աւելի արագընթաց
են, քան արծիւները:
Վա՛յ մեզ, որ թշուառացանք:
14 «Երուսաղէմ, լուա՛ քո սրտի
չարութիւնները, որ փրկուես.
քո ցաւալի խորհուրդները մինչեւ ե՞րբ
պիտի մնան քո մէջ:
15 Բօթաբեր ձայն է հնչում դրանից,
թշուառութեան աղաղակներ են
լսուելու Եփրեմի լեռից:
16 Ա՛յս բանը գուժեցէք ազգերին.
իմա՛ց տուէք, թէ գնդեր են գալիս
հեռաւոր երկրից.
ահա հասել են Երուսաղէմ.
նրանք իրենց ձայնն են արձակում
Հրէաստանի քաղաքների դէմ
17 եւ, ինչպէս ագարակի պահապան-
ներ,
շրջապատել են Հրէաստանը:
18 Դու անտեսեցիր ինձ, - ասում է
Տէրը. - քո ճանապարհներն ու քո
ընթա՛ցքը քեզ հասցրին այդ ամէնը:
Դա է քո չարութիւնը, ինչպէս եւ
դառնութիւնը, որ հասաւ սրտիդ»:

ԵՐԵՄԻԱՆ ՈՂԲՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՒԻՑ

19 Որովա՛յնս, որովայնս ցաւ է ընկել,
եւ հեծում են սրտիս զգայարանները:
Սիրտս ճմլւում է, եւ հոգիս
հանգստութիւն չունի,
որովհետեւ ես չեփորի ձայն լսեցի
եւ պատերազմի ու թշուառութեան
գոյժ:
20 Հարուած հարուածի վրայ եկաւ.
բողո՛ք բարձրացրէք, քանզի ողջ
երկիրն աւերակ դարձաւ,
վրանս յանկարծակի խորտակուեց,
եւ քանդուեցին վրանիս վարագոյր-
ները:
21 Մինչեւ ե՞րբ պիտի փախստա-
կաններ† տեսնեմ,
չեփորի ձայն լսեմ:
22 Իմ ժողովրդի իշխաններն ինձ
չճանաչեցին,
որովհետեւ նրանք ոչ թէ խելացի, այլ
անմիտ որդիներ են.
չարութիւն անելիս իմաստուն են,
իսկ բարի բան կատարել չգիտեն:

ԱՄԱՅԻ ԵՐԿՐԻ ՏԵՍԻԼՔԸ

23 Նայեցի երկրին՝ ամայի էր, ոչինչ
չկար,
նայեցի դէպի երկինք՝ եւ չկար նրա
լոյսը:
24 Նայեցի եւ տեսայ, որ լեռները
երերում էին,
եւ բոլոր բլուրները՝ սասանւում:
25 Նայեցի, բայց ահա մարդ չկար,
եւ երկնքի բոլոր թռչունները սար-
սափահար էին եղել:
26 Նայեցի եւ տեսայ, որ Կարմելոսն‡
աւերակ էր,
իսկ նրա բոլոր քաղաքները՝ հրի
մատնուած:
Տիրոջ պատճառով, նրա բարկութեան
ու ցասման պատճառով դրանք
ամայացան:
27 Այսպէս է ասում Տէրը.
«Աւերուելու է համայն երկիրը,
բայց ես չեմ բերելու նրա վախճանը:
28 Այս ամենի համար երկիրը սուգ
պիտի անի,

†Եբրայերէն՝ պատերազմի դրօշներ:
‡Եբրայերէն՝ պտղաբեր երկիրը:

եւ վերից երկինքը պիտի խաւարի,
որովհետեւ ե՛ս ասացի՝ եւ չեմ զղջալու,
ե՛ս ձեռնարկեցի՝ եւ յետ չեմ կանգնելու դրանից»:
29 Հեծեալների ձայնից եւ լարուած աղեղներնից ամբողջ երկիրը խոյս տուեց,
մարդիկ սողոսկեցին քարայրները,
թաքնուեցին անտառներում,
բարձրացան քարանձաւները.
բոլոր քաղաքները լքուեցին,
ու նրանց մէջ մարդ չի բնակւում:
30 Իսկ դու, թշուառակա՛ն, ի՞նչ ես անելու:
Եթէ կարմիր հագնես,
ոսկի զարդով զարդարուես ու քո աչքերին ծարիր քսես,
քո զարդարանքները զուր են լինելու:
Հոմանիներդ քեզ մերժեցին եւ հոգիդ առնել են ուզում:
31 Լսեցի՛ քո հեծեծանքը,
որը կարծես իր անդրանիկ որդուն ծնելու երկունքով բռնուած կնոջ ձայնը լինէր:
Սիոնի դստեր ձայնը պիտի նուազի,
յուսահատ՝ նա պիտի տարածի իր ձեռքերն ու ասի.
«Վա՜յ ինձ, որ հոգիս մահու չափ խոցուեց սպանուածների համար»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԵՂՔԸ

5 «Երուսաղէմի փողոցներով այս ու այն կո՛ղմ շարժուեցէք, նայեցէ՛ք,
իմացէ՛ք եւ փնտռեցէ՛ք նրա հրապարակներում.
եթէ այնտեղ գտնէք մի մարդ, որ արդար գործ անի
եւ լինի ճշմարտութեանը հետամուտ,
ապա ես թողութիւն կը տամ նրա բնակիչներին», - ասում է Տէրը: -
2 Եթէ նրանք նոյնիսկ ասեն, թէ կենդանի է Տէրը,
իրաւ որ սուտ երդուած կը լինեն:
3 Տէ՛ր, աչքերդ յառած ճշմարտութեանը՝ տանջեցիր նրանց,
բայց նրանք ցաւ չզգացին,
ոչնչացրիր նրանց, բայց խրատ ընդունել չկամեցան,
իրենց երեսներն ապառաժից աւելի կարծրացրին
եւ չուզեցին դարձի գալ:
4 Եւ ես ասացի՝ թերեւս աղքատ լինելով՝
անկարող եղան ճանաչելու Տիրոջ ճանապարհներն ու Աստծու օրէնքները.
5 գնամ հարուստների մօտ եւ նրանց հետ խօսեմ.
գուցէ նրանք գիտենան Տիրոջ ճանապարհն ու Աստծու օրէնքները:
Բայց ահաւասիկ նրանք էլ առհասարակ խորտակեցին լուծն ու խզեցին կապերը:
6 Դրա համար էլ անտառի առիւծը կոտորեց նրանց,
եւ գայլը ոչնչացրեց նրանց՝ հասնելով մինչեւ տները.
նրանց քաղաքներին սպառնաց ընձառիւծը,
եւ բոլորը, ովքեր այնտեղից դուրս կը գան՝
կ'ընկնեն իբրեւ դիակ,
քանզի իրենց ամբարշտութիւնները բազմացրին
եւ իրենց անհնազանդութեան մէջ զօրացան:
7 «Սրանցից որի՞ համար հաշտուեմ քեզ հետ.
քո որդիներն ինձ լքեցին եւ չաստուածներով երդուեցին.
ես կշտացրի նրանց,
բայց նրանք շնացան ու պոռնկանոցներում օթեւանեցին:
8 Նրանք դարձան իգամոլ ձիեր,
եւ ամէն մէկն իր ընկերոջ կնոջ վրայ էր վրնջում:
9 Այս ամենից յետոյ, - ասում է Տէրը, -
միթէ ես չե՞մ պատժելու,
կամ այդպիսի ազգից ես վրէժ չե՞մ լուծելու:
10 Բարձրացէ՛ք քաղաքի աշտարակների վրայ եւ կործանեցէ՛ք,
բայց խսպառ մի՛ աւերէք.
թողէ՛ք մնան նրա հիմքերը,
որովհետեւ դրանք Տիրոջն են[†]:
11 Ծիրաւի, Իսրայէլի տունը եւ Ցուդայի տունը չափազանց արհամարհեցին ինձ», - ասում է Տէրը:
12 Նրանք ստեցին իրենց Տիրոջը եւ ասացին.
"Բան չկայ, մեզ վրայ չարիքներ չեն գայ,
սուր ու սով չենք տեսնի:
13 Մեր մարգարէները քամի էին,
նրանք չունէին Տիրոջ պատգամը:
Այդպէս էլ թող լինի նրանց":
14 Դրա համար էլ այսպէս է ասում Ամենակալ Տէր Աստուածը.
«Քանի որ այդ բանը բարբառեցին,
ահաւասիկ իմ խօսքը քո բերանն եմ դնում իբրեւ կրակ,
թող լափի նրանց՝ այդ ժողովրդին ինչպէս փայտ:
15 Ո՛վ Իսրայէլի տուն, - ասում է Տէրը,-
ահա հեռուից ես ձեզ վրայ պիտի բերեմ մի ազգ, որ ուժեղ է ու հին,
ազգ, որի լեզուն լսած չէք լինի եւ խօսքը չէք հասկանայ:
16 Նրա կապարճները նման են բաց գերեզմանների:
Ամէնքն էլ զօրաւոր են.
17 ուտելու են ձեր հունձն ու հացը,
ուտելու են ձեր տղաներին ու աղջիկներին,
ուտելու են ձեր ոչխարն ու արջառը,
ուտելու են ձեր այգիները, թզենիներն ու ձիթենիները,
աւերելու են ձեր անառիկ քաղաքները.
ինչով որ դուք պարծենում էք,
սրով հիմնիվեր կործանելու են:
18 Բայց այն օրն էլ,
- ասում է քո Տէր Աստուածը, -
ձեզ ձեր վախճանին չեմ հասցնելու.
19 եւ երբ ասելու լինեն՝
"Մեր Տէր Աստուածն այս ամէնն ինչո՞ւ արեց մեզ",
կ'ասես նրանց. "Քանի որ ինձ լքեցիք
եւ ձեր երկրում ծառայեցիք օտար աստուածներին,
այդպէս էլ օտարներին էք ծառայելու մի երկրում, որը ձերը չի լինելու"»:

ԱՍՏՈՒԱԾ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

20 Այդ մասին իմա՛ց տուէք Յակոբի տանը,
թող լսելի դառնայ նաեւ Ցուդայի տանը. ասացէ՛ք.
21 «Լսեցէ՛ք այս բանը, յիմա՛ր եւ անմի՛տ ժողովուրդ,
որ աչքեր ունէք, բայց չէք տեսնում,
ականջներ ունէք բայց չէք լսում:
22 Միթէ ինձնից չէ՞ք երկնչում,
- ասում է Տէրը, -
իմ երեսից չէ՞ք դողում,
ես, որ աւազը ծովին սահման կարգեցի յաւիտենական հրամանով,
որ նա չանցնի դրանից,
ալեկոծուի, բայց չկարողանայ դուրս գալ,
նրա ալիքները մռնչան, բայց չկարողանան անցնել դրանից:
23 Այս ժողովուրդն անհնազանդ ու ըմբոստ սիրտ ունի.
խոտորուեցին ու անցան գնացին:
24 Իրենց մտքում իսկ չասացին.
"Վախեցէ՛ք մեր Տէր Աստծուց,
որը, ըստ մեր հնձի ժամանակի,
նրանից առաջ եւ յետոյ,
անձրեւ է տալիս մեզ եւ պահպանում է մեզ:
25 Մեր անօրէնութիւնե՛րը խախտեցին այդ կարգը,
եւ մեր մեղքերը մեզնից հեռացրին բարիքները":
26 Արդարեւ, իմ ժողովրդի մէջ գտնուեցին ամբարիշտներ
եւ, մարդկանց ոչնչացնելու համար,
թռչնորսների թակարդների պէս որոգայթներ ու ցանցեր լարեցին եւ որսում էին:
27 Ինչպէս որոգայթներն են լի թռչուններով,
այնպէս էլ նրանց տներն են լեցուն

[†]Սեբրայերէն՝ նրա պարիսպները վերացրէ՛ք, որովհետեւ դրանք Տիրոջը չեն պատկանում:

նենգութեամբ:
28 Դրա համար էլ նրանք հարստացան,
մեծացան, գիրացան ու պարարտացան
եւ չարութեամբ զանց առան իմ խօսքերը.
արդար դատաստան չարին,
որբի իրաւունքը չպաշտպանեցին, այրուն արդար դատով չդատեցին:
29 Այս ամենից յետոյ,
- ասում է Տէրը, -
միթէ ես չե՞մ պատժելու,
կամ այդպիսի ազգից ես վրէժ չե՞մ լուծելու:
30 Ցնմարութիւններ ու արհաւիրքներ[†] կատարուեցին երկրի վրայ:
31 Մարգարէները սուտ մարգարէութիւն են անում,
քահանաները ծափահարում են նրանց[‡],
եւ իմ ժողովուրդը սիրեց այդ:
Իսկ ի՞նչ էք անելու դրանից յետոյ»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՎ

6 Բենիամինի՛ որդիներ, արիացէ՛ք Երուսաղէմում,
փո՛ղ հնչեցրէք Թեկուէում
եւ ազդանշա՛ն դրէք Բեթաքարմայի վրայ,
որովհետեւ հիւսիսից յայտնուել են չարիքներ,
2 մեծ վնաս է լինելու քեզ՝ գեղեցկիդ եւ փափկացեալիդ,
վերանալու է քո փառքը, դո՛ւստր Սիոնի:
3 Հովիւներն իրենց հօտերով նրա մօտ են գալու
եւ իրենց վրաններն են խփելու նրա շուրջը,
իւրաքանչիւրը հովուելու է իր ձեռքով[§]:
4 Պատերազմի՛ պատրաստուեցէք նրա դէմ,
եկէք նրա դէմ ելնենք կէսօրին.
վա՛յ մեզ, որովհետեւ ցերեկն անցաւ,
եւ մեզ վրայ հասան երեկոյի ստուերները:
5 Եկէք գիշերով ելնենք եւ խորտակենք նրա հիմքերը:
6 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
«Ջարդեցէ՛ք նրա փայտաշէն տները,
զօ՛րք հանեցէ՛ք Երուսաղէմի դէմ[†],
որովհետեւ նա ամբողջապէս սուտ քաղաք է,
բռնութիւնն է իշխում նրա մէջ:
7 Ինչպէս գուբն է իր ջուրը պաղեցնում[‡],
այնպէս էլ նա է պաղեցնում իր չարութիւնները.
այնտեղ, նրա[§] յանդիման,
մշտապէս ամբարշտութիւն ու չարութիւն է լսւում:
Ցաւերով ու տանջանքներով պիտի խրատուես, Երուսաղէ՛մ:
8 Թող այնպէս չլինի, որ ես բաժանուեմ քեզնից,
չլինի, որ քեզ դարձնեմ մի անապատ երկիր,
ուր ոչ ոք երբեք չի բնակուել»:

ԻՍՐԱՅԷԼԸ ՊԻՏԻ ԱՒԵՐՈՒԻ

9 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
«Քաղեցէ՛ք, քաղեցէ՛ք,
Իսրայէլի այդ մնացորդներին ճռաքա՛ղ արէք
եւ նորից նոյն գործին դարձէք,
ինչպէս այգին քաղողն է դառնում դէպի իր գործը»:
10 Արդ, ո՞ւմ հետ խօսեմ
եւ ո՞ւմ մօտ վկայութիւն անեմ, որ լսի.
ահաւասիկ նրանց ականջներն անթլփատ են,
եւ նրանք չեն կարողանում լսել:

†Բրրայերէն՝ զարմանալի ու ահաւոր բաներ:
‡Բրրայերէն՝ հահանաները նրանց միջոցով են իշխում:
§Բրրայերէն՝ իր տեղում:

†Բրրայերէն՝ ծառե՛ր կտրեցէք եւ Երուսաղէմի դէմ պատնէշ կանգնեցրէք:
‡Բրրայերէն՝ թխեցնում:
§Բրրայերէն՝ իմ:

Ահա Տիրոջ խօսքը նրանց համար նախատինք եղաւ,
եւ այլեւս նրանց ախորժելի չի լինելու այն:
11 Ես լցուեցի բարկութեամբ ու զսպեցի այն իմ մէջ,
բայց նրանց չմեռցրի:
«Ես այն դուրս պիտի թափեմ տղաների վրայ,
նաեւ՝ երիտասարդների բազմութեան վրայ.
այր ու կին առհասարակ գերեվարուելու են,
ծերը եւ հասուն տարիք ունեցողները քշուելու են:
12 Նրանց տները, նրանց արտերի ու կանանց հետ միասին,
ընկնելու են օտարների ձեռքը,
քանզի, - ասում է Տէրը, -
պէտք է պատժեմ այդ երկրի բնակիչներին:
13 Նրանք, փոքրերից մինչեւ մեծերը, բոլորն էլ անօրէնութիւններ գործեցին[†],
քահանայից մինչեւ սուտ մարգարէն բոլորն էլ սուտ խօսեցին:
14 Իմ ժողովրդի դստեր վէրքերը նրանք բուժում էին արհամարհանքով[‡]
ու ասում՝ "Խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն".
բայց ո՞ւր է խաղաղութիւնը:
15 Խայտառակ եղան, որովհետեւ ձախողուեցին,
բայց ամօթի զգացում ունեցողների պէս չպատկառեցին
եւ իրենց կրած անարգանքի մասին չմտածեցին,
դրա համար էլ իրենց կործանումն են գտնելու[§],
եւ երբ իրենց պատժելու լինեմ՝
բնաջնջուելու են», - ասում է Տէրը:

ԻՍՐԱՅԷԼԸ ՄԵՐԺՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ

16 Այսպէս է ասում Տէրը.
«Կանգնեցէ՛ք ճանապարհների եւ դիտեցէ՛ք,
հարցրէ՛ք Տիրոջ յաւիտենական ճանապարհների մասին,
տեսէք, թէ ո՛րն է բարի ճանապարհը՝ գնացէ՛ք դրանով,
եւ քաւութիւն[†] կը գտնէք ձեր հոգիների համար:
Իսկ նրանք ասացին, թէ՝ չե՛նք գնայ:
17 Ձեզ վրայ հսկիչներ կարգեցի, լսեցէ՛ք փողի ձայնը:
Իսկ նրանք ասում են՝ չե՛նք լսի:
18 Այդ մասին իմացան ազգերը,
նաեւ նրանք, որ նրանց մէջ հովուութիւն էին անում հօտերին:
19 Լսի՛ր, երկի՛ր[‡], ահաւասիկ ես այդ ժողովրդի վրայ չարիքներ եմ բերելու՝
իբրեւ իրենց ապստամբութեան պտուղ,
որովհետեւ իմ խօսքերին չանսացին եւ իմ օրէնքը մերժեցին:
20 Ինչի՞ համար է խունկն այդ, որ բերում ես ինձ Սաբայից,
եւ կինամոնը՝ հեռաւոր երկրից.
ձեր ողջակէզներն ընդունելի չեն,
եւ ձեր զոհերն ինձ հաճելի չեն»:
21 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում.
«Ահաւասիկ ես հիւանդութիւն կը բերեմ այդ ժողովրդի վրայ,
հայրերն ու զաւակները միասին կը վարակուեն նրանով,
հարեւան ու ընկեր կը կորչեն միասին»:

ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՒԱՆՔ

22 Այսպէս է ասում Տէրը.
«Ահաւասիկ զօրք է գալիս հիւսիսից, մի մեծ ազգ:
Երկրի ծագերից յառնելու են բազում թագաւորներ,
23 աղեղնաւորներ ու նիզակակիրներ,
մի յանդուգն ու անողորմ ազգ:

†Բրրայերէն՝ ազահութեան յետեւից ընկան:
‡Բրրայերէն՝ հարեւանցի:
§Բրրայերէն՝ ընկածների մէջ:

†Բրրայերէն՝ հանգիստ:
‡Բրրայերէն՝ ազգե՛ր, լսեցէ՛ք, ժողովո՛ւրդ, գիտցի՛ր:

Նրա ձայնը նման է ալեկոծ ծովի
ձայնի:
Կառքերով ու երիվարներով ճակատա-
մարտ պիտի տայ,
ինչպէս կրակ՝ կազմ ու պատրաստ
պիտի պատերազմի քո դէմ†, ո՛վ
Սիոնի դուստր»:
24 Նրանց լուրն առանք,
եւ մեր ձեռքերը թուլացան.
ծննդկանի երկունքի պէս մեզ պա-
շարեցին նեղութիւնները:
25 Դուրս մի՛ գաք դէպի հանդերը
եւ մի՛ գնացէք ճանապարհներով,
որովհետեւ ամենուր թշնամիների սուրն‡
է շրջապատել:
26 «Իմ ժողովրդի դո՛ւստր,
քո՛ւրձ հագիր, մոխի՛ր ցանիր, սո՛ւգ
արա սիրելիի§ համար,
աղիողորմ լաց ու կո՛ծ արա,
որովհետեւ ձեզ վրայ թշուառութիւնը
յանկարծակի է գալու:
27 Ես քեզ, Երեմիա՛, կարգեցի պա-
շարուած ժողովուրդների համար որպէս
փորձիչ,
եւ դու պիտի իմանաս, երբ ես փորձեմ
նրանց ճանապարհները»:
28 Բոլորն անհնազանդ են եւ գնում
են կամակորութեամբ.
ինչպէս պղինձ եւ երկաթ՝
բոլորն էլ ապականուած են:
29 Փուքսերը ոչնչացան կրակից,
կապարն սպառուեց,
արծաթագործը զուր է չարչարւում:
Նրանց չարիքները չհալուեցին:
30 Խոտան արծա՛թ կոչեցէք նրանց,
որովհետեւ Տէրը նրանց խոտանեց:
Լսի՛ր Տիրոջ պատգամները, համա՛յն
Հրէաստան:

ԵՐԵՄԻԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

7 Ահա այն պատգամը, որ Տէրը տուեց
Երեմիային՝ ասելով. 2 «Կանգնի՛ր Տիրոջ
Տան դռան մօտ եւ այնտեղ յայտարա-
րի՛ր այս խօսքերը. կ'ասես. "Լսի՛ր Տիրոջ
խօսքը, ո՛ղջ Հրէաստան, դու, որ մտնում
ես այս դռներով՝ երկրպագելու Տիրո-
ջը"»: 3 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Աստուածն Իսրայէլի. «Ուղղեցէ՛ք
ձեր ընթացքն ու վարքը, եւ ես կը
բնակեցնեմ ձեզ այս վայրում: 4 Մի՛
ապաւինէք սուտ խօսքերին. նրանք, որ
ասում են՝ Տիրոջ տաճարն է, Տիրոջ
տաճարը, Տիրոջ տաճարը, բոլորովին ձեզ
չեն օգնի: 5 Եթէ իսկապէս ուղղէք ձեր
ընթացքն ու վարքը, եթէ այր մարդու եւ
նրա ընկերոջ միջեւ օրէնք ու արդա-
րութիւն պահէք, 6 օտարականին,
որբին ու այրուն չնեղէք, անմեղ արիւն չթա-
փէք այդտեղ եւ չարութեան չհան-
դիպելու համար օտար աստուածներին
չհետեւէք, 7 ապա ձեզ կը բնակեցնեմ
այդ վայրում, այն երկրում, որ յաւի-
տեանս յաւիտենից տուեցի ձեր հայ-
րերին: 8 Իսկ եթէ դուք սուտ խօսքերին
ապաւինէք, ինչից ոչ մի օգուտ չէք
ունենալու, 9 եւ գողանաք, սպանէք,
շնութիւն անէք, սուտ երդում տաք,
խնկարկէք Բահաղին, հետեւէք օտար
սուտ աստուածներին, որոնց չէք
ճանաչում, ապա ձեզ բաժին կը հասնի
չարիքը: 10 Ու դուք կը գաք, կը կանգնէք
իմ առաջ, այս Տան մէջ, որի վրայ իմ
անունն է դրուած, եւ կ'ասէք՝ "Հրաժա-
րուեցինք բոլոր այն գարշելի գործերը
կատարելուց†": 11 Միթէ ձեր աչքին
աւազակների քարա՞յր է դարձել իմ այս
Տունը, որի վրայ իմ անունն է դրուած:
Ահաւասիկ ես տեսայ, - ասում է Տէրը: -
12 Գնացէ՛ք Սելով՝ իմ այն տեղը, ուր
առաջ հաստատել էի իմ անունը, տեսէք,
թէ ինչպէ՛ս վարուեցի նրա հետ Իսրա-
յէլի իմ ժողովրդի չարութիւնների պատ-
ճառով: 13 Եւ հիմա, - ասում է Տէրը, -
քանի որ դուք այդ բոլոր գործերը
կատարեցիք, իսկ ես խօսեցի ձեզ հետ՝
կանխաւ իսկ ասելով այդ մասին, բայց
դուք ականջ չդրիք ինձ, կանչեցի ձեզ,
բայց պատասխան չտուիք ինձ, 14 ապա

†Երրայերէն՝ նրանք ձիեր պիտի հեծնեն՝ պատրաստ պատերազմի:

‡Երրայերէն՝ սուրն ու սարսափը:

§Երրայերէն՝ միամօրիկի:

†Երրայերէն՝ ազատուեցինք, որպէսզի այս բոլոր պղծութիւններն անենք:

այդ Տան հետ, որի վրայ դրուած է իմ
անունը, եւ որտեղ դուք ապաստան էք
գտել, նոյնն եմ անելու, ինչ արեցի
Սելովի հետ, նաեւ այն երկրի հետ, որ
տուեցի ձեզ եւ ձեր հայրերին: 15 Ձեզ իմ
աչքից գցելու եմ, ինչպէս գցեցի ձեր եղ-
բայրներին՝ Եփրեմի ամբողջ սերնդին»:

ԱՂՕԹՔ, ՈՐ ՄԵՐԺՈՒՄ Է ՏԷՐԸ

16 «Իսկ դու մի՛ աղօթիր այդ ժո-
ղովրդի համար, դրանց համար ողոր-
մութիւն մի՛ խնդրիր եւ մի՛ աղաչիր, իմ
առաջ մի՛ խոնարհուիր դրանց համար,
որովհետեւ քեզ չեմ լսելու: 17 Չե՞ս
տեսնում, թէ ինչե՛ր են կատարում
դրանք Ցուդայի երկրի քաղաքներում եւ
Երուսաղէմի ճանապարհներին. 18 նրանց
որդիները փայտ են հաւաքում, նրանց
հայրերը կրակ են վառում, իսկ նրանց
կանայք խմոր են հունցում, որպէսզի
երկնքի զօրութիւնների† համար կար-
կանդակ թխեն. ընծաներ են նուիրում
օտար աստուածներին, որպէսզի բար-
կացնեն ինձ: 19 Բայց միթէ ի՞նձ են
բարկացնում, - ասում է Տէրը, - թէ՞
իրենք իրենց, եթէ երեսի ամօթ ունե-
նան»: 20 Դրա համար էլ Տէրն այսպէս է
ասում. «Ահա իմ ցասումն ու բար-
կութիւնը կը թափեմ այդ տեղի վրայ,
մարդու եւ անասունի վրայ, ագարակի
ծառի վրայ, հողի բարիքների վրայ. թող
կրակը բորբոքուի ու չմարի»:
21 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. «Ձեր
ողջակէզները ձեր զոհերի հետ միասին
հաւաքեցէ՛ք եւ մի՛ս կերէք: 22 Ձեր
հայրերի հետ ոչինչ չխօսեցի եւ ոչ էլ
պատուէր տուեցի նրանց ողջակէզների
եւ զոհերի մասին այն օրը, երբ նրանց
հանեցի Եգիպտացիների երկրից: 23 Բայց
ա՛յս բանը պատուիրեցի նրանց՝ ասելով.
"Ակա՛նջ դրէք իմ ձայնին, եւ ես ձեզ
համար Աստուած կը լինեմ, իսկ դուք
ինձ համար կը լինէք ժողովուրդ եւ կը
գնաք իմ այն բոլոր ճանապարհներով,
որ ձեզ պատուիրեցի, որպէսզի լաւ լինի
ձեզ համար": 24 Սակայն նրանք ինձ
չլսեցին, նրանց ականջը չանսաց. հետե-
ւեցին իրենց չար սրտերի խորհուրդ-
ներին†: 25 Եւ այն օրից սկսած, երբ
նրանց հայրերը դուրս եկան Եգիպ-
տացիների երկրից, այն օրից մինչեւ
այսօր նրանք յետ գնացին եւ ոչ թէ
առաջ: Ու ես ձեզ մօտ ուղարկեցի իմ
բոլոր ծառաներին՝ մարգարէներին,
ուղարկեցի ամէ՛ն օր, առաւօտ կանուխ:
26 Սակայն նրանք չլսեցին ինձ, նրանց
ականջը չանսաց, եւ նրանք աւելի
անհնազանդ դարձան, քան իրենց
հայրերը: 27 Այս խօսքերը դու կ'ասես
նրանց, բայց քեզ չեն լսի, դու կը կանչես
նրանց, բայց քեզ պատասխան չեն տայ:
28 Ու դու կ'ասես նրանց. "Սա այն ազգն
է, որ չանսաց իր Տէր Աստծու ձայնին, ոչ
էլ խրատ ընդունեց: Հաւատքը նուազեց,
եւ ճշմարտութիւնը վերացաւ նրա
բերանից"»:

ԿՈՏՈՐԱԾ ԵՆՈՄԱՑԻՆԵՐԻ ՁՈՐՈՒՄ

29 «Կտրի՛ր մազերդ ու դէ՛ն նետիր,
շրթունքներդ թող ողբան‡,
որովհետեւ Տէրը խոտանեց ու մերժեց
այն ազգին,
որ այս բաներն էր անում§:
30 Արդարեւ, - ասում է Տէրը, -
Ցուդայի որդիները չարութիւն արին իմ
առաջ. իրենց գարշելի աստուածներին
կարգեցին իմ անունը կրող Տան մէջ,
որպէսզի պղծեն այն: 31 Նաեւ Ենոմա-
ցիների ձորում Տափեթին բագին կանգ-
նեցրին՝ իրենց տղաներին ու աղջիկ-
ներին կրակի մէջ այրելու համար,
մինչդեռ այդպիսի հրաման ես նրանց
չտուեցի եւ ոչ էլ մտքովս անցկացրի:
32 Ահա թէ ինչու գալու են օրեր, - ա-
սում է Տէրը, - երբ այլեւս չեն ասի Տա-
փեթի բագին կամ Ենոմացիների ձոր,
այլ՝ Սպանուածների ձոր եւ, տեղը չբա-

†Երրայերէն՝ բազուհու:

†Երրայերէն՝ չար սրտի կամակորութեամբ:

‡Երրայերէն՝ ողբա՛ բարձուցիչների վրայ:

§Երրայերէն՝ որի վրայ բարկացած էր:

*ւականացնելու պատճառով, թաղում են
կատարելու հէնց Տափեթում: 33 Այդ
ժողովրդի դիերը կերակուր պիտի դառ-
նան երկնքի թռչունների եւ երկրի
գազանների համար, եւ մարդ չի լինելու,
որ հալածի նրանց: 34 Ցուդայի երկրի
քաղաքներից եւ Երուսաղէմի փողոց-
ներից վերացնելու եմ խրախճանքի
ձայնը եւ ցնծացողների ձայնը, հարսի
ձայնը եւ փեսայի ձայնը, որպէսզի
երկիրը դառնայ անապատ»:*

ՄԵՂՔԵՒ ՊԱՏԻԺ

8 *«Այն ժամանակ, - ասում է Տէրը, -
Ցուդայի երկրի թագաւորների ոսկորները
եւ նրանց իշխանների ոսկորները, քա-
հանաների ոսկորները եւ մարգարէների
ոսկորները, նաեւ Երուսաղէմի բնակիչ-
ների ոսկորները պիտի հանեն իրենց
գերեզմաններից, 2 պիտի չորացնեն†
արեւի տակ, լուսնի եւ բոլոր աստղերի
տակ, երկնքի այն բոլոր զօրութիւնների
առաջ, որոնց սիրեցին ու ծառայեցին,
որոնց յետեւից ընթացան եւ որոնց
ապաւինեցին ու երկրպագեցին: Նրանք
լաց ու կոծի չեն արժանանալու, այլ
երկրի երեսին նշաւակ են լինելու‡, 3 քա-
նի որ մահը նախընտրեցին եւ ոչ թէ
կեանքը, իսկ այս չար ազգի մնա-
ցորդներին, որոնք պահպանուել են,
ամէն տեղ մնացածների հետ միասին
պիտի արտաքսեմ», - ասում է Զօրու-
թիւնների Տէրը:*

*4 «Ու դու կ'ասես նրանց՝ այսպէս է
ասում Տէրը.
"Նա, որ գլորւում է, միթէ չի՞ ելնում,
կամ նա, որ շեղւում է, յետ չի՞
դառնում":
5 Արդ, Երուսաղէմն այդ ժողովրդի
հետ ինչո՞ւ խոտորուեց ժպիրհ
խոտորումով.
իրենց կամակորութեան մէջ յամա-
ռեցին ու չցանկացան դարձի գալ:*

†Սրբայերէն՝ *ցրեն:*

‡Սրբայերէն՝ *նրանք չեն հաւաքուելու եւ չեն
թաղուելու, երկրի երեսին լինելու են ինչպէս
աղբ:*

*6 Ակա՞նջ դրէք եւ լսեցէ՛ք.
այդ բանը չեն ուզում խոստովանել†,
մարդ չկայ, որ զղջայ իր չարու-
թիւնների համար
եւ ասի, թէ՝ ի՞նչ գործեցի:
Արշաւողը կասեցրեց իր ընթացքը,
ինչպէս քրտինք մտած ձին է կանգ-
նում խրխնջալիս:
7 Արդ, արսին թռչունը‡ երկնքում
ժամանակի իր զգացողութիւնն ունի,
վայրի թռչուններ տատրակն ու ծի-
ծեռնակը չեն մոռանում իրենց վերա-
դարձի ժամանակը,
իսկ իմ ժողովուրդը չգիտակցեց Տիրոջ
օրէնքները»:*

ՍՈՒՏ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ

*8 «Ինչո՞ւ էք ասում, թէ՝ "Մենք
իմաստուն ենք,
եւ Աստծու օրէնքները մեր մէջ են".
ահա դրա համար էլ սուտ դուրս եկաւ
օրէնսգէտների կարգը,
9 իմաստուններն ամօթահար եղան,
զարհուրեցին ու պարտուեցին,
որովհետեւ անարգեցին Տիրոջ խօսքը:
Նրանց մէջ ի՞նչ իմաստութիւն կայ
որ:
10 Դրա համար էլ նրանց կանանց
ուրիշներին պիտի տամ,
իսկ նրանց ագարակները՝ օտար
ժառանգներին,
որովհետեւ նրանցից ամէն ոք,
փոքրից մինչեւ մեծերը, չափից աւելի
ագահութիւն է անում,
իւրաքանչիւրը, մարգարէից մինչեւ
քահանան՝ անիրաւութիւն:
11 Իմ ժողովրդի դստեր վէրքը նրանք
բուժում էին արհամարհանքով§ եւ
ասում.
"Խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն",
մինչդեռ խաղաղութիւն չկար:
12 Պիտի ամաչե՞ն, որ պղծութիւն*

†Սրբայերէն՝ *ականջ դրի ու տեսայ, որ նրանք
ուղիղ չեն խօսում:*

‡Ալեծանօթ թռչուն, թերեւս՝ արագիլ:

§Սրբայերէն՝ *հարեւանցի:*

*գործեցին:
Սակայն այդպէս էլ ամօթ ու ամաչել
չիմացան
եւ մտքներում պատկառանք չզգացին,
դրա համար էլ երբ իրենց պատժելու
լինեմ,
ընկածների հետ պիտի ընկնեն եւ
ուժասպառ լինեն†,
- ասում է Տէրը:
13 Նրանք հաւաքելու են իրենց
բերքը‡,
- ասում է Տէրը, -
բայց խաղող չի լինի նրանց այգի-
ներում,
ոչ էլ թուզ՝ նրանց թզենիների վրայ,
որոնց տերեւն անգամ պիտի թափուի§.
ինչ տուել եմ նրանց՝ պիտի գնայ
նրանցից»:
14 Իսկ հիմա մենք ինչո՞ւ նստենք.
հաւաքուեցէ՛ք՝ գնանք մտնենք ամուր
քաղաքները եւ այնտեղ մեռնենք,
քանզի մեր Տէր Աստուածը լքեց մեզ
եւ դառնութեան ջուր խմեցրեց մեզ*.
արդարեւ, մեղք գործեցինք նրա
հանդէպ:
15 Հաւաքուեցինք խաղաղութեան
համար, բայց բարութիւն չկար,
հաւաքուեցինք բժշկութեան համար,
բայց ահա տագնապ է:
16 Դանից մեզ հասաւ նրա արա-
գընթաց երիվարների ձայնը.
նրա նժոյգների խրխնջոցի ձայնից
ցնցուեց ողջ երկիրը:
Թող գայ եւ ուտի երկիրն իր ամէն
ինչով,
նրա քաղաքներն ու բնակիչներին:
17 «Ես ահաւասիկ ձեզ վրայ սպանիչ
օձեր եմ արձակելու,
որոնց վրայ թովչութիւնները չեն
ներգործելու,
- ասում է Տէրը, -
եւ որոնք պիտի խայթեն ձեզ՝*

†Սրբայերէն՝ *պիտի գլորուեն:*

‡Սրբայերէն՝ *նրանց բոլորովին պիտի
բնաջնջեմ:*

§Սրբայերէն՝ *պիտի թառամի:*

*Սրբայերէն՝ *այնտեղ լուռ մնանք, որովհետեւ
մեր Տէր Աստուածը մեզ լռեցրեց:*

*18 անբուժելի ցաւեր պատճառելով ձեր
տարակուսած սրտերին»:
19 Ահա եւ իմ ժողովրդի դստեր գոյժի
ձայնը լսւում է հեռաւոր երկրից.
"Միթէ Տէրը Սիոնում չէ՞,
կամ այնտեղ թագաւոր չկա՞յ":
«Ինչո՞ւ ինձ բարկացրին իրենց կուռ-
քերով ու սնոտի աստուածներով»:
20 Հնձի ժամանակն անցաւ,
ամառն անցաւ, բայց մենք չփրկուե-
ցինք:
21 Իմ ժողովրդի դստեր վէրքն ինձ
խորտակեց,
խաւարեցի անյուսութեամբ†,
հալումաշ եղայ, ինչպէս ծննդկանը՝
երկունքից:
22 Միթէ Գաղաադում դեղ չի՞
ճարւում,
կամ այնտեղ բժիշկ չկա՞յ.
իմ ժողովրդի դստեր համար ինչո՞ւ
բժշկութիւն չեղաւ:*

ՍՈՒՏԸ ԻՇԽՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

9 *Ո՞վ կը տար իմ գլխին ջուր
եւ իմ աչքերին՝ արտասուքի աղ-
բիւրներ,
որ ես զօր ու գիշեր ողբայի այս
ժողովրդին
եւ իմ ժողովրդի դստեր վիրաւոր-
ներին:
2 Ո՞վ կը տար ինձ անապատում մի
խղճուկ օթեւան,
որ ես թողնէի իմ ժողովրդին,
հեռանայի նրանից,
քանզի բոլորն էլ անխտիր շնացող են
եւ անարգների բազմութիւն:
3 «Նրանք լարեցին իրենց լեզուներն
ինչպէս աղեղ.
ստութի՛ւնը եւ ոչ թէ հաւատքը‡
զօրացաւ երկրի վրայ,
որովհետեւ նրանք չարութիւնից
չարութիւն գնացին
եւ ինձ չճանաչեցին, - ասում է Տէրը:*

†Սրբայերէն՝ *ապշութիւնը պատեց ինձ:*

‡Սրբայերէն՝ *ստութեան համար եւ ոչ թէ
ճշմարտութեան:*

4 Իւրաքանչիւրդ ձեր ընկերոջից զգո՛յշ եղէք
եւ յոյս մի՛ դրէք ձեր եղբայրների վրայ,
որովհետեւ ամէն եղբայր խաբելով խաբում է,
եւ ամէն բարեկամ ընթանում է նենգութեամբ:
5 Իւրաքանչիւրն այպանում է իր բարեկամին,
ճշմարտութիւն չեն խօսում.
Նրանց լեզուն սովորեց սուտ խօսել:
6 Նրանք զրկանքներ են պարգեւել
եւ չեն դադարել կուտակելուց վաշխ վաշխի վրայ
եւ նենգութիւն նենգութեան վրայ.
Նրանք չկամեցան ճանաչել ինձ», - ասում է Տէրը:
7 Դրա համար էլ այսպէս է ասում Աստուած՝ Զօրութիւնների Տէրը.
«Ահաւասիկ ես կրակով պիտի հալեմ նրանց
եւ պիտի փորձեմ նրանց,
որովհետեւ չարութիւնների պատճառով ուրիշ ինչպէ՞ս վարուեմ իմ ժողովրդի դստեր հետ:
8 Նրանց նենգաւոր լեզուները խոցոտող նետ են[†]:
Նրանց բերանի խօսքերը
իրենց ընկերոջ հետ խաղաղութեան մասին են խօսում,
իսկ նրանք իրենց սրտում թշնամութիւն ունեն:
9 Միթէ սրանց համար չե՞մ պատժելու նրանց,
- ասում է Տէրը, -
կամ այդպիսի ազգից ես վրէժխնդիր չե՞մ լինելու:
10 Կոծեցէ՛ք լեռների վրայ
եւ ձա՛յն բարձրացրէք անապատի բլուրների վրայ, ողբացէ՛ք,
որովհետեւ անցորդ մարդկանց բացակայութեան պատճառով
դրանք ամայացան եւ չեն լսում անասունների ձայները:
Երկնային թռչուններից մինչեւ անասունները բոլորը ցրուեցին ու գնացին:
11 Երուսաղէմը դերութեան եմ մատնելու
եւ այն տալու եմ վիշապներին բնակութեան համար[†],
իսկ Յուդայի երկրի քաղաքներն աւերածութեան եմ ենթարկելու,
այնպէս որ բնակիչներ չլինեն»:
12 Ով իմաստուն այր է, թող հասկանայ այս բանը,
եւ ում տրուած է Տիրոջ բերանի խօսքը,
թող նա մեզ պատմի, թէ ինչի՛ համար կորստեան դատապարտուեց երկիրը:
Լքուեց[‡] ինչպէս անապատ՝ անցորդներ չլինելու պատճառով:
13 Եւ Տէրն ինձ ասում է. «Քանի որ դրանք թողեցին իմ օրէնքը, որ դրել էի նրանց աչքի առաջ, եւ ականջ չդրեցին իմ ձայնին, 14 հետեւեցին իրենց չար սրտերի հաճոյքներին ու այն կուռքերին, որոնց հետեւել սովորեցրին իրենց հայրերը, 15 դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. «Ահաւասիկ այդ ժողովրդին կերակրելու եմ վտանգով[§] եւ խմեցնելու եմ դառնութեան ջուր: 16 Դրանց ցրելու եմ այն ազգերի մէջ, որոնց չէին ճանաչում ո՛չ իրենց հայրերը եւ ո՛չ էլ իրենք: Դրանց վրայ սուր եմ արձակելու, մինչեւ որ սրով կոտորեմ դրանց», - ասում է Զօրութիւնների Տէրը:

ԿՈՉ ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐԻՆ

17 Մտածեցէ՛ք եւ կանչեցէ՛ք լալական կանանց, որ գան,
եւ մարդ ուղարկեցէք՝ կանչելու վարժ եղերամայրերի.
Թող նրանք գուժեն*,
18 Թող ստիպեն, թող ողբան ձեզ վրայ:
Թող ձեր աչքերն արտասուք թափեն,

[†]Երրայերէն՝ Նրանց լեզուն մահաբեր նետ է:

[†]Երրայերէն՝ Երուսաղէմն աւերակների կոյտ եւ շնագայլերի բնակարան եմ դարձնելու:
[‡]Երրայերէն՝ այրուեց:
[§]Երրայերէն՝ օշինդրով:
*Երրայերէն՝ թող գան:

իսկ ձեր արտեւանունքները ջուր հոսեցնեն:
19 Սիոնում տարածուեց տխուր մի ձայն.
«Ինչպէ՞ս թշուառացանք ու խիստ ամաչեցինք,
որովհետեւ լքեցինք երկիրը, թողեցինք մեր բնակավայրերը[†]»:
20 Կանա՛յք, լսեցէ՛ք Տէր Աստծու պատգամները,
եւ թող ձեր ականջներն ընկալեն նրա բերանի խօսքերը:
Ձեր դուստրերին կոծե՛լ սովորեցրէք,
իսկ կինն իր ընկերոջը թող սովորեցնի ողբալ,
21 քանզի մահը ձեր պատուհաններով բարձրացաւ եւ մտաւ ձեր երկիրը[‡]՝
տներից դուրս՝ մանուկներին,
իսկ երիտասարդներին հրապարակներից ջնջելու համար:
22 Այսպէս է ասում Տէրը.
«Թող մարդկանց դիակները խայտառակութեան օրինակ[§] դառնան ձեր երկրի դաշտերի երեսին.
Թող լինեն ինչպէս խոտն է մնում հնձողից յետոյ,
եւ չի լինի մէկը, որ այն հաւաքի»:
23 Այսպէս է ասում Տէրը.
«Թող իմաստունն իր իմաստութեամբ չպարծենայ,
թող հզօրն իր զօրութեամբ չպարծենայ,
24 եւ թող մեծն իր մեծութեամբ չպարծենայ,
այլ պարծեցողը թող այս բանով պարծենայ՝
իմանալ եւ ճանաչել ինձ, թէ ես եմ Տէր Աստուածը,
որ երկրի վրայ իրաւ դատաստան,
ողորմութիւն ու արդարութիւն եմ անում,
որոնք հաճելի են ինձ, - ասում է Տէրը:
25 Ահա գալու են օրեր, - ասում է Տէրը, -
երբ ես պատժելու եմ անթլփատ մնացած բոլոր թլփատուածներին՝
26 Եգիպտոսին եւ Յուդայի երկրին, եղոմացիներին ու ամոնացիներին,
մովաբացիներին եւ երեսներն ածիլած բոլոր անապատաբնակներին:
Եթէ բոլոր ազգերն անթլփատ են մարմնով,
ապա Իսրայէլի ողջ տունն անթլփատ է իր սրտով»:

ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

10 Ո՛վ Իսրայէլի տուն, լսի՛ր Տիրոջ պատգամները, որ քեզ են ուղղուած:
2 Այսպէս է ասում Տէրը.
«Մի՛ սովորէք գնալ հեթանոսների ճանապարհներով
եւ մի՛ զարհուրէք երկնքի նշաններից,
որոնցից նրանք են վախենում:
3 Հեթանոսների բոլոր կուռքերը սնոտի բաներ են՝
անտառից կտրուած փայտ,
հիւսների ձեռքի գործեր,
4 արծաթով եւ ոսկով զարդարուած ձուլածոյ բաներ:
Մուրճերով եւ գամերով ամրացրել են դրանք, որ չշարժուեն.
յղկուած արծաթ են,
Թարսիսի բանուած արծաթ եւ ոսկի՝ բերուած Մեմփաթայից:
5 Ոսկերչի ձեռքը ճարտար վարպետի գործ է կատարել.
կապոյտ ու ծիրանի են հագցնում նրանց,
բայց նրանք չեն կարող գնալ,
այլ պէտք է բարձուելով տարուեն.
ոտքով մի քայլ էլ չեն փոխի,
ոչ էլ իրենք իրենց կարող են բարձրանալ այն բանի վրայ,
որով տանում են:
Մի՛ վախեցէք նրանցից,
որովհետեւ չարութիւն չեն անում,
բայց բարութիւն էլ չկայ նրանց մէջ:
6 Քեզ նման ոչ ոք չկայ, Տէ՛ր,
մեծ ես դու եւ մեծ է քո անունը

[†]Երրայերէն՝ մեր բնակարանները քանդուեցին:
[‡]Երրայերէն՝ ապարանքները:
[§]Երրայերէն՝ աղրի պէս:

զօրութեամբ:
7 Ո՞վ չի երկնչի քեզնից, ազգերի՛ թագաւոր,
դա քեզ է միայն վայել,
քանզի բոլոր հեթանոս իմաստունների
եւ նրանց բոլորը թագաւորների մէջ
ո՞վ է քեզ նման:
8 Թող միանգամից այրուեն,
թող սատակեն սրտերը սնոտի աստուածների,
9 որովհետեւ դրանք փայտ են,
Թարսիսից բերուած ընտիր արծաթ եւ ոսկի՝ Սոփաթայից:
Դրանք բոլորը վարպետների եւ ոսկերիչների ձեռքի գործն են.
դրանց կապուտակ ու ծիրանի զգեստները
բոլորը հնարամիտ վարպետների գործն են:
10 Իսկ մեր Տէր Աստուածը ճշմարիտ է,
կենդանի Աստուած է եւ յաւիտենական թագաւոր:
Նրա բարկութիւնից երկիրը կը շարժուի,
ազգերը չեն դիմանայ նրա բարկութեանը:
11 Այսպէս կ'ասէք նրանց.
«Այն աստուածները, որոնք երկինքն ու երկիրը չեն ստեղծել,
կորչելու են երկրից եւ այս երկնքի տակից»:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

12 Տէրն է, որ իր զօրութեամբ ստեղծեց երկիրը,
իր իմաստութեամբ հաստատեց տիեզերքը
եւ իր հանճարով տարածեց երկինքը:
13 Իր ձայնն արձակելիս՝ նա երկինքը լցնում է ջրերի առատութեամբ,
երկրի ծայրերից ամպեր է բարձրացնում,
իր փայլատակումներն անձրեւների վերածում,
հողմեր է հանում իր շտեմարաններից:
14 Ամէն մարդ, գիտութիւնից զրկուած, ապուշ դարձաւ,
իրենց արձանների պատճառով բոլոր ոսկերիչներն ամօթահար եղան,
որովհետեւ սուտ բաներ ձուլեցին,
եւ նրանց մէջ շունչ չկայ.
15 սնոտի ու խաբէական գործեր են դրանք:
Երբ նրանց այցելութեան գնան, նրանք կորստեան են մատնուելու:
16 Սակայն այդպիսին չէ Յակոբի բաժինը.
նրա բաժինը Նա է, ով ստեղծեց ամենայն ինչ,
որի ժառանգութեան շառաւիղն է Իսրայէլը,
եւ նրա անունը Զօրութիւնների Տէր է:

ՄՕՏԱԼՈՒՏ ԱՔՍՈՐ

17 Ո՛վ դու, որ բնակւում ես ընտրեալների մէջ†,
հեռուներից հաւաքի՛ր քո զօրութիւնը:
18 Այսպէս է ասում Տէրը. «Ահա ես նեղութիւնն իբրեւ խոչընդոտ քար եմ դնելու այդ երկրի բնակիչների ոտքերի տակ
եւ հալածելու եմ նրանց, որ չգտնուեն»:
19 Վա՜յ քո կործանումին, քանզի ցաւալի են քո վէրքերը.
իսկ ես ասում եմ. «Արդարեւ հէնց դրանք են իմ վէրքերը, որ վիճակուեցին ինձ.
20 խորանն իմ խորտակուեց, վերացաւ,
իմ վրանի բոլոր վարագոյրները քանդուեցին,
իմ որդիներն ու հօտերը ոչ մի տեղ չեն երեւում.
այլեւս չկայ իմ խորանի տեղը,
չկայ եւ իմ վարագոյրների տեղը»:
21 Հովիւները խելքի չեկան եւ Տիրոջը չփնտռեցին,
դրա համար էլ բոլոր հօտերը չճանաչեցին նրանց ու ցիրուցան եղան:

†Երրայերէն՝ ամրոցում:

22 Բօթաբեր ձայն է գալու եւ մեծ դղրդում՝ հիւսիսի երկրից,
որպէսզի Յուդայի երկրի քաղաքներն աւերածութեան ենթարկի
եւ դարձնի ջայլամների† կայան:
23 Գիտեմ, Տէ՛ր, որ մարդու ուղին իրենից կախուած չէ,
այր մարդն ի վիճակի չէ տնօրինելու իր ճանապարհի յաջողութիւնը:
24 Խրատի՛ր մեզ, Տէ՛ր,
բայց արդարութեամբ եւ ոչ թէ ցասմամբ,
որ մեզ սակաւաթիւ չդարձնես:
25 Քո բարկութիւնը թափիր հեթանոսների՝ վրայ,
որոնք չեն ճանաչում քեզ,
եւ այն ազգերի վրայ,
որոնք չճանաչեցին քո անունը,
որովհետեւ նրանք յօշոտեցին Յակոբին,
սպառեցին նրան, վախճանի հասցրին նրան
եւ աւերեցին նրա արօտավայրերը:

ՏԻՐՈՋ ՆԶՈՎՔԸ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԴԷՄ

11 Երեմիային ուղղելով իր խօսքը՝ Տէրն ասում է.
2 «Լսեցէ՛ք այս ուխտի պայմանը եւ յայտնեցէ՛ք Յուդայի երկրի մարդկանց ու Երուսաղէմի բնակիչներին:
3 Եւ կ'ասես նրանց. այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի. "Թող անիծեալ լինի այն մարդը, որը չի ընդունի այս ուխտի պայմանը, 4 որ աւանդել եմ ձեր հայրերին այն օրը, երբ նրանց հանում էի Եգիպտացիների երկրից՝ երկաթէ հնոցից. ասում եմ. 'Ակա՛նջ դրէք իմ ձայնին եւ, ինչ որ պատուիրեմ ձեզ, կատարեցէ՛ք ըստ ամենայնի, ու դուք իմ ժողովուրդը կը լինէք, իսկ ես՝ ձեր Աստուածը': 5 Կը հաստատեմ իմ երդումը, որ երդուեցի ձեր հայրերին՝ տալու նրանց այն երկիրը, որը, ինչպէս եւ այսօր, մեղր ու կաթ է բխեցնում"»:
Պատասխանեցի եւ ասացի. «Այո՛, Տէ՛ր, թող այդպէս լինի»:

†Երրայերէն՝ վիշապների:

6 Եւ Տէրն ինձ ասաց. «Այդ բոլոր խօսքերը յայտարարի՛ր այդտեղ, Յուդայի երկրի քաղաքներում ու Երուսաղէմից դուրս եւ ասա՛. "Լսեցէ՛ք այս ուխտի պատգամները եւ կատարեցէ՛ք դրանք": 7 Զէ՞ որ այն օրը, երբ ես նրանց հանեցի Եգիպտացիների երկրից, ու մինչեւ այսօր, ամէն առաւօտ կանուխ, ձեր հայրերին խստագոյնս խրատեցի եւ ասացի. 'Ակա՛նջ դրէք իմ ձայնին', բայց նրանք չլսեցին: 8 Ականջները շուռ տուեցին եւ բոլորը, իրենց յօժար սրտով, գնացին դէպի չարիքը: Եւ որովհետեւ ինչ որ պատուիրեցի նրանց անել՝ չարեցին, իմ այս ուխտի բոլոր խօսքերը կը կատարեմ նրանց նկատմամբ"»:
9 Եւ Տէրն ինձ ասաց. «Յուդայի երկրի մարդկանց եւ Երուսաղէմի այդ բնակիչների մէջ տեղ է գտել չարամտութիւնը:
10 Նրանք դարձ կատարեցին դէպի իրենց նախահայրերի մեղքերը, որոնք չէին կամենում հետեւել իմ խօսքերին: Ահաւասիկ նրանք գնում են օտար աստուածների յետեւից, որպէսզի ծառայեն նրանց: Իսրայէլի տունը եւ Յուդայի տունը խախտեցին իմ ուխտը, որ կապել էի նրանց հայրերի հետ»: 11 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում. «Ահաւասիկ ես չարիք կը բերեմ նրանց վրայ, որից չպիտի կարողանան դուրս գալ: Ինձ են կանչելու, բայց չեմ լսելու նրանց: 12 Յուդայի երկրի քաղաքներն ու Երուսաղէմի բնակիչները կը գնան, կը կանչեն իրենց աստուածներին, որոնց խունկ էին ծխում, բայց նրանցից փրկութիւն չի լինելու իրենց դժբախտութեան ժամանակ: 13 Քո աստուածները, Յուդայի՛ երկիր, թուով այնքան էին, որքան քո քաղաքները, եւ ըստ Երուսաղէմի փողոցների թուի, ամօթի բագիններ ու սեղաններ կանգնեցրիք՝ Բահաղին խունկ ծխելու համար: 14 Իսկ դու մի՛ աղօթիր այդ ժողովրդի համար, խնդրանքներով մի՛ աղաչիր ու պաղատիր դրանց համար, որովհետեւ երբ իրենց դժբախտութեան ժամանակ կանչեն ինձ՝ ես չպիտի լսեմ:

15 Իմ սիրելի ժողովրդի մասին եմ
ասում,
քանզի նա իմ տաճարի ներսում
պղծութիւն գործեց:
Միթէ աղօթքը եւ զոհերի միսը քեզ-
նից կը վերացնե՞ն քո չարիքները,
կամ թէ դրանցով դու կը փրկուե՞ս:
16 Տէրը քո անունը գեղատես ու
վարսաւոր† ձիթենի կոչեց:
Նրանց թլփատութեան ձայնից դու
մեծ նեղութեան մէջ ես.
անպէտքացան քո ոստերը‡:
17 Զօրութիւնների Տէր Աստուածը, որ
քեզ տնկեց, Իսրայէլի տան եւ Յուդայի
տան չարութիւնների պատճառով սպառ-
նաց պատժել քեզ. նրանք իրե՛նք իրենց
արեցին դա, որովհետեւ ինձ բարկաց-
նելու համար Բահաղի՛ն խնկարկեցին»:

ԴԱՒ ԵՐԵՄԻԱՅԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

18 Տէ՛ր, ճանաչե՛լ տուր ինձ, եւ ես կը
ճանաչեմ. այն ժամանակ կը տեսնեմ
նրանց գործերը: 19 Ես, իբրեւ անմեղ մի
գառ, որին մորթելու են տանում,
չիմացայ, որ իմ մասին չար խորհուրդ են
արել եւ ասում են. «Եկէք ոչնչացնենք
ծառն իր պտղով եւ նրան ջնջենք
ողջերի երկրից, թող նրա անունն այլեւս
չյիշուի»:
20 Զօրութիւնների՛ Տէր, դու, որ
արդար ես վարւում,
քննում ես երիկամներն ու սրտերը,
թող ես տեսնեմ, որ վրէժխնդիր ես
լինում նրանցից,
քանզի քե՛զ յանձնեցի իմ դատը:
21 Դրա համար էլ Տէրն այսպէս է
ասում Անաթոթի մարդկանց մասին,
որոնք քո անձն են փնտռում՝ ասելով.
«Մեզ համար[8] մի՛ մարգարէացիր, ապա
թէ ոչ կը մեռնես մեր ձեռքով»: 22 Ահա
թէ ինչու այսպէս է ասում Զօրութիւն-
ների Տէրը. «Ահաւասիկ ես պիտի
պատժեմ նրանց. նրանց երիտասարդ-
ները սրով պիտի սպանուեն, եւ տղա-
ներն ու աղջիկները սովից պիտի վախ-
ճանուեն: 23 Նրանցից ոչ ոք չի մնալու,
որովհետեւ Անաթոթի բնակիչներին
չարիք եմ բերելու այն տարին, երբ գամ
նրանց պատժելու»:

ԵՐԵՄԻԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

12 Արդար ես դու, Տէ՛ր,
բայց ես իմ դատը պէտք է պաշտ-
պանեմ
ու իմ իրաւունքի մասին խօսեմ.
ինչպէ՞ս է, որ ամբարիշտների բռնած
գործերը յաջողւում են,
եւ բոլոր նրանք, ովքեր արհամարհում
են ու անարգում,
երջանիկ դարձան:
2 Տնկեցիր նրանց, եւ նրանք արմատ
գցեցին,
որդիներ ունեցան, պտուղ տուեցին:
Դու, Տէ՛ր, նրանց շուրթերին ես,
սակայն հեռու ես նրանց սրտերից:
3 Դու, ո՛վ Տէր, գիտես ինձ,
տեսար ինձ եւ քո առաջ փորձեցիր իմ
սիրտը.
հաւաքի՛ր նրանց ինչպէս մորթելու
ոչխար
եւ, երբ նրանց սպանութեան օրը գայ,
զոհաբերի՛ր նրանց:
4 Երկիրը մինչեւ ե՞րբ պէտք է սուգ
պահի,
ու խոտն ամենուրեք չորանայ:
Անասուն ու թռչուն կոտորուեցին
երկրի բնակիչների չարութիւնների
պատճառով,
որովհետեւ ասացին, թէ՝
"Աստուած չի տեսնի մեր արարք-
ները†":
5 Քո ոտքերը վազում են, բայց քեզ
պիտի լքեն,
էլ ինչպէ՞ս պիտի մրցես ձիաւորների
հետ:
Եւ հիմա այս խաղաղ երկրի՞ վրայ ես
յոյսդ դրել.
իսկ ի՞նչ ես անելու, երբ Յորդանան
գետը բարձրանայ,
6 քանի որ քո եղբայրներն ու քո հօր
տունը՝
նրա՛նք անգամ դաւ նիւթեցին քո
դէմ,
նրա՛նք էլ աղաղակ բարձրացրին քո
յետեւից
եւ կուտակուեցին քո գլխին:
Մի՛ հաւատա նրանց, որովհետեւ
չարախօսում են քո մասին†:

ՏԻՐՈՋ ՎԻՇՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

7 Ես լքեցի իմ տունը,
թողեցի իմ ժառանգութիւնը
եւ իմ հոգու սիրելիին տուեցի իր
թշնամիների ձեռքը:
8 Իմ ժառանգութիւնն ինձ համար
դարձաւ անապատի առիւծ,
իր ձայնն ինձ վրայ բարձրացրեց,
դրա համար էլ ատեցի նրան:
9 Միթէ իմ ժառանգութիւնն ինձ
համար բորենու ո՞րջ է լինելու
կամ նրան շրջապատող քարանձա՞ւ‡.
շրջեցէ՛ք, հաւաքեցէ՛ք անապատի
բոլոր գազաններին,
որ գան այն ուտելու:
10 Բազում հովիւներ ապականեցին իմ
այգին,
ոտնատակ տուին իմ բաժինը,
իմ ցանկալի դաշտը խոպան անապատ
դարձրին.
11 այն ենթարկուեց աւերի ու
ապականութեան:
Ողջ երկիրն իմ պատճառով քայ-
քայուեց ու քանդուեց,
որովհետեւ իմ սրտին մօտ չհամարեցի
պարտահատոյց լինել,
եւ չկայ մէկը, որի սիրտը ցաւի դրա
համար:
12 Թշուառացած՝ մարդիկ անցան
անապատի բոլոր ճանապարհներով†,
քանզի երկրի մի ծայրից մինչեւ միւսը
Տիրոջ սուրն է մաշում,
ոչ մի մարմնի համար հանգիստ չկայ:
13 Ցորեն ցանեցիք, սակայն փուշ էք
հնձելու,
եւ ձեր անդաստանները օգուտ չեն
տալու ձեզ‡:
Ձեր հպարտութիւնն ամօթանքի է
փոխուելու այն նախատինքից,
որ կրելու էք Տիրոջ առաջ:

ՉԱՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐ

14 Այսպէս է ասում Տէրը բոլոր չար
հարեւանների մասին, որոնք ձեռք են
մեկնում իմ ժառանգութեանը, որ բաշ-
խեցի Իսրայէլի իմ ժողովրդին. «Ա-
հաւասիկ ես նրանց հեռացնելու եմ
իրենց երկրից, Յուդայի տունը եւս
հանելու եմ նրանց միջից: 15 Բայց
նրանց արտաքսելուց յետոյ ես նորից
պիտի դառնամ ու գթամ նրանց եւ
իւրաքանչիւրին բնակեցնեմ իր ժառան-
գութեան մէջ, ամէն մէկին՝ իր երկրում:
16 Եւ եթէ նրանք լաւ սովորեն իմ
ժողովրդի ճանապարհը, երդուեն իմ
անունով, թէ կենդանի է Տէրը, ինչպէս
որ սովորեցրին իմ ժողովրդին երդուել
Բահաղին, ապա նրանք կը հաստա-
տուեն իմ ժողովրդի մէջ: 17 Իսկ եթէ
դարձի չգան, ես կը ջնջեմ այդ ազգին,
կորստեան մատնելով՝ կը վերացնեմ
նրանց», – ասում է Տէրը:

ՓՏԱԹ ԳՕՏՈՒ ԴԱՍԸ

13 Այսպէս է ասում Տէրը. «Գնա՛ քեզ
համար ձե՛ռք բեր կտաւէ գօտի,
փաթաթի՛ր մէջքիդ, բայց ջրի միջով
չանցնես»: 2 Հետեւելով Տիրոջ խօսքին՝
ես ձեռք բերի մի գօտի ու փաթաթեցի
մէջքիս: 3 Տէրը, կրկին խօսքն ինձ

†Երրայերէն՝ բարեպտուղ:

‡Երրայերէն՝ նրա վրայ մեծ աղմուկով կրակ բորբոքեց, եւ նրա ոստերը սպառուեցին:

[8]Երրայերէն՝ Տիրոջ անունով:

†Երրայերէն՝ վախճանը:

†Երրայերէն՝ Թէկուզեւ նրանք քեզ լաւ բան ասեն:

‡Երրայերէն՝ գոյնզգոյն թռչունի նման եղաւ ինձ համար, գիշատիչ թռչունները նրա շուրջն են:

†Երրայերէն՝ անապատի բոլոր բլուրների վրայ աւարառուներ եկան:

‡Երրայերէն՝ աշխատանք թափեցին, սակայն օգուտ չպիտի տեսնեն Տիրոջ բուռն բարկութեան պատճառով:

ուղղելով, ասաց. 4 «Այդ գօտին, որ ձեռք բերեցիր, հանի՛ր քո մէջքից, վեր կաց գնա՛ Եփրատի ափը եւ դա թաքցրո՛ւ այնտեղ՝ ժայռի մի քարի խոռոչում»:
5 Ու ես գնացի եւ այն թաքցրի Եփրատի ափին, ինչպէս պատուիրել էր ինձ Տէրը:
6 Եւ ահա շատ օրեր անց Տէրն ինձ ասաց. «Վեր կաց գնա՛ Եփրատի ափը եւ վերցրո՛ւ այն գօտին, որը հրամայեցի քեզ այնտեղ թաքցնել»:
7 Գնացի Եփրատ գետի ափը, փորեցի եւ վերցրի գօտին այնտեղից, ուր այն թաղել էի. բայց, ահա, գօտին փտել էր եւ ոչ մի բանի պիտանի չէր: 8 Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց. 9 այսպէս է ասում Տէրը. «Այդպէս էլ ապականելու եմ Յուդայի երկրի հպարտութիւնը եւ Երուսաղէմի հպարտութիւնը, 10 քաղաքն ու իմ չար ժողովրդին, որոնք չէին ուզում ականջ դնել իմ խօսքերին, որոնք գնում են իրենց չար սրտերի ցանկութեամբ, ընթանում են օտար աստուածների յետեւից, որպէսզի ծառայեն նրանց եւ երկրպագեն. նրանք պիտի դառնան այդ գօտու պէս, որը ոչ մի բանի պիտանի չէ: 11 Ինչպէս որ գօտին պատում է մարդու մէջքը, այդպէս իմ շուրջը պատեցի Իսրայէլի այդ ամբողջ տունը եւ Յուդայի ամբողջ տունը, – ասում է Տէրը, – որպէսզի նրանք ինձ համար դառնան անուանի ժողովուրդ եւ պարծանք ու փառք. բայց նրանք չլսեցին ինձ»:

ԳԻՆՈՒ ՏԻԿԻ ԴԱՍԸ

12 «Այդ ժողովրդին կը յայտնես նաեւ հետեւեալ պատգամը. այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. "Ամէն մի տիկ գինով պէտք է լցուի: Եւ եթէ այնպէս լինի, որ քեզ ասեն, թէ՝ 'Միթէ մենք չե՞նք հասկանում ու չգիտե՞նք, որ ամէն մի տիկ գինով պիտի լցուի', 13 ապա կ'ասես նրանց. այսպէս է ասում Տէրը. "Ահա ես այդպէս պիտի լցնեմ ու հարբեցնեմ այդ երկրի բոլոր բնակիչներին եւ թագաւորներին՝ Դաւթի որդիներին, որոնք նստում են նրա աթոռին, քահանաներին ու մարգարէներին, Յուդայի երկրի ու Երուսաղէմի բոլոր բնակիչներին: 14 Ցրելու եմ դրանց՝ մարդն իր եղբօր, հայրն իր զաւակների հետ միասին, – ասում է Տէրը. – չեմ գթալու եւ չեմ խնայելու, առանց ողորմելու՝ դրանց բնաջնջելու եմ"»:

ՍԻՈՆԻ ԴՍՏԵՐ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

15 Լսեցէ՛ք, ունկնդի՛ր եղէք եւ մի՛ հպարտացէք,
քանզի Տէրը խօսեց:
16 Ձեր Տէր Աստծուն փա՛ռք տուէք,
քանի դեռ խաւարը չի պատել,
եւ ձեր ոտքերը խաւար լեռների վրայ չեն սայթաքել:
Լոյս պիտի ակնկալէք,
իսկ այնտեղ մահուան ստուերներ են.
ձեզ դնելու են խաւարի մէջ:
17 Եւ եթէ չլսէք նրան,
դառնութիւնից ձեր հոգու խորքում լաց պիտի լինէք,
արցունքը պիտի խեղդի ձեզ,
ձեր աչքերից արտասուք պիտի թափուի,
քանզի կործանուեց Տիրոջ հօտը:
18 Թագաւորին ու բռնակալներին† ասացէ՛ք. «Խոնարհուէ՛ք ու գետնի՛ն նստեցէք,
քանզի ձեր փառքի պսակն ընկաւ ձեր գլուխներից:
19 Հարաւի կողմի քաղաքները փակուեցին,
եւ ոչ ոք չկայ, որ բաց անի.
Յուդայի երկիրն ամբողջապէս գերուեց,
սպառուեց լիովին»:
20 «Բարձրացրո՛ւ քո աչքերը, Երուսաղէ՛մ,
եւ նայի՛ր հիւսիսից յարձակուողներին.
ո՞ւր է այն հօտը, որ տրուեց քեզ,
քո փառաւոր ոչխարներն ո՞ւր են:
21 Երբ քեզնից պահանջեն,
այն ժամանակ ի՞նչ պատասխան ես

†Սրբայերէն՝ բագուհուն:

տալու.
դու ինքդ սովորեցրիր նրանց, որ իշխեն քեզ վրայ:
Միթէ քեզ երկունքի ցաւերը չե՞ն բռնելու,
ինչպէս ծննդկան կնոջը:
22 Եւ եթէ քո սրտում ասես՝ «Ինչո՞ւ պատահեց այս բանը ինձ հետ»,
ապա դա եղաւ քո բազում անիրաւութիւնների պատճառով,
քանի որ քո քղանցքները բացուեցին քո յետեւից՝
խայտառակելով քեզ:
23 Թէ որ հնդիկը† փոխի իր մաշկը, ընձառիւծը՝ իր խայտուցները,
դուք էլ կը կարողանաք բարութիւն անել,
դուք, որ սովորել էք չարիք գործել:
24 Ես ցրելու եմ նրանց՝
անապատում հողմակոծ խուիլ նման:
25 Ինձ չհաւանելուդ համար այդ է քո մասն ու բաժինը,
քանզի մոռացար ինձ եւ յոյսդ դրեցիր սուտ աստուածների վրայ:
26 Ես պիտի մերկացնեմ քո յետեւը՝
փեղդ քաշելով քո գլխին ու երեսին,
որ երեւան քո ամօթոյքը,
27 քո շնութիւնն ու վրնջիւնը,
դու, որ քո պոռնկութեամբ խորթացար ինձնից:
Ես տեսայ քո գարշելի արարքները բագիններում ու անդաստաններում:
Վա՜յ քեզ, Երուսաղէ՛մ,
որ իմ յետեւից գալով՝ չես մաքրուելու:
Մինչեւ ե՞րբ ես այդպէս մնալու»:

ԵՐԱՇՏԸ

14 Տիրոջ խօսքը, որ նա ասաց Երեմիային երաշտի մասին:
2 «Սուգ մտաւ Հրէաստանը, նրա դռները մնացին թափուր,
խաւարը պատեց երկիրը,
եւ Երուսաղէմն աղաղակ բարձրացրեց:

†Սրբայերէն՝ երովպացին:

3 Նրանց մեծամեծներն իրենց երիտասարդներին ջրի ուղարկեցին.
նրանք եկան ջրհորները եւ ջուր չգտան.
իրենց ամանները դատարկ յետ բերեցին:
Ամաչեցին ու ամօթահար ծածկեցին իրենց գլուխները:
4 Երկրագործութիւնը դադարեց,
որովհետեւ հողն առանց անձրեւի մնաց.
մշակներն ամօթահար եղան,
ծածկեցին իրենց գլուխները:
5 Հանդում եղնիկները ձագ ծնեցին,
սակայն թողեցին իրենց ձագերին,
որովհետեւ բուսականութիւն չկար.
6 ցիռերը դաշտերում վիշապների† պէս օդ ծծեցին,
նրանց աչքերը դուրս ընկան,
որովհետեւ խոտ չկար»:
7 Թէպէտ մեր մեղքերը կանգնեցին մեր դէմ,
բայց դու, Տէ՛ր, վարուի՛ր յանուն քո անուան:
Բազում են մեր մեղքերը քո առաջ.
8 մեղք ենք գործել քո հանդէպ, ո՛վ յոյսդ Իսրայէլի:
Տէ՛ր, նեղութեան ժամին փրկի՛ր մեզ:
Ինչո՞ւ երկրի վրայ պանդխտի պէս եղար
կամ երկրի մի բնակչի պէս, որ իր իջեւանն է վերադառնում:
9 Միթէ դու քնած մի մա՞րդ ես,
կամ մի ա՞յր, որ զուրկ է փրկելու կարողութիւնից:
Բայց դու, Տէ՛ր, մեր մէջ ես,
եւ քո անունը դրուած է մեզ վրայ, մի՛ մոռացիր մեզ:
10 Այսպէս է ասում Տէրն այդ ժողովրդին. «Այդպէս սիրեցին նրանք թափառել ու իրենք իրենց չխնայեցին». եւ Աստուած բարեհաճ չեղաւ նրանց հանդէպ. այժմ պիտի յիշի նրանց անիրաւութիւնները եւ պիտի պատժի նրանց իրենց մեղքերի համար:
11 Տէրն ինձ ասում է.

†Սրբայերէն՝ շնագայլերի:

«Այն ժողովրդին բարիք անելու համար մի՛ աղօթիր: 12 Եթէ ծոմ էլ պահեն, ես չեմ լսելու նրանց խնդրանքները. եթէ ողջակէզներ ու զոհեր մատուցեն, դրան էլ հաճութիւն ցոյց չեմ տալու. սրով, սովով ու մահով պիտի սպառեմ նրանց»:

13 Իսկ ես ասում եմ.

«Ո՛վ դու, որ Տէր Աստուած ես, ահա մարգարէներն ասում են նրանց, թէ՝ "Սուր չէք տեսնելու, սով չի լինելու ձեր մէջ, քանզի ճշմարտութիւն ու խաղաղութիւն պիտի շնորհուեն երկրի եւ այդ տեղի վրայ"»:

14 Տէրն ինձ ասում է.

«Մարգարէներն իմ անունով սուտ մարգարէութիւն են անում. ես ո՛չ ուղարկել եմ նրանց, ո՛չ պատուէր եմ տուել նրանց եւ ո՛չ էլ խօսել եմ նրանց հետ. նրանք ձեզ մարգարէանում են սուտ տեսիլներ, սնոտի գուշակութիւններ ու հմայութիւններ եւ իրենց սրտի ցանկութիւնները»: 15 Դրա համար Տէրն այսպէս է ասում մարգարէների մասին. «Նրանք մարգարէութիւն են անում իմ անունով, բայց ես չեմ ուղարկել նրանց, ոչ էլ պատուիրել եմ նրանց, որ ասեն, թէ՝ "Սուր ու սով չպիտի լինի այս երկրում": Մահուան քայքայիչ հիւանդութեամբ եւ սրով ու սովով պիտի ոչնչանան այդ մարգարէները, 16 նաեւ այն ժողովուրդը, որի համար նրանք մարգարէանում են. նրանք սրից ու սովից ընկած պիտի մնան Երուսաղէմի ճանապարհներին, թէ՛ նրանք, թէ՛ նրանց կանայք եւ թէ՛ նրանց որդիներն ու դուստրերը. եւ նրանց թաղող չպիտի լինի. իրենց չարութիւնն իրենց վրայ պիտի թափեմ:

17 Կ'ասես նրանց նաեւ այս խօսքը.

"Զօր ու գիշեր ձեր աչքերից արտասո՛ւք թափեցէք,

եւ թող վերջ չլինի դրան,

քանզի իմ ժողովրդի կոյս աղջիկը մեծ կոտորածի,

ամենացաւագին հարուածների ենթարկուեց:

18 Դաշտ եմ դուրս գալիս՝

եւ ահա սրից վիրաւորուածներ,

քաղաք եմ մտնում՝

եւ ահա սովից տանջուողներ,

որովհետեւ մարգարէն ու քահանան գնացին իրենց չճանաչած երկիրը"»:

ՋՂՋՄԱՆ ԱՂԵՐՍԱՆՔ

19 Միթէ իսպառ երե՞ս թեքեցիր Յուդայի երկրից,

կամ նրանից բոլորովին հեռացա՞ւ քո հոգին.

ինչո՞ւ այնպէս հարուածեցիր մեզ,

որ բժշկութիւն չլինի մեզ համար:

Խաղաղութիւն ակնկալեցինք,

բայց բարի բան չկատարուեց,

սպասեցինք բժշկութեան ժամին,

բայց ահա խռովութիւն եղաւ:

20 Տէ՛ր, գիտակցեցինք մեր մեղքերը եւ մեր հայրերի անիրաւութիւնները,

քանզի մեղք գործեցինք քո առաջ:

21 Քո անուան համար մեղմի՛ր բարկութիւնդ,

կորստեան մի՛ մատնիր քո փառքի աթոռը.

յիշի՛ր, մի՛ խզիր քո ուխտը,

որ կապել ես մեզ հետ:

22 Հեթանոսական կուռքերի մէջ կա՞յ արդեօք մի կուռք,

որ անձրեւ բերի,

կամ թէ կարո՞ղ է երկինքը ինքն իրեն հեղեղ տեղալ.

այդ անողը միթէ դու ինքդ չե՞ս, ո՛վ Տէր Աստուած մեր,

եւ մենք քեզ վրայ ենք դնում մեր յոյսը,

քանզի դու ես այդ ամէնը կատարում:

ՊԱՏԻԺ ՄԱՆԱՍԷԻ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ

15 Տէրն ինձ ասում է.

«Եթէ Մովսէսն ու Սամուէլն իսկ իմ դիմաց կանգնեն, ես հոգով այդ ժողովրդի հետ չեմ լինի. այդ ժողովրդին հեռո՛ւ վանիր ինձնից, թող հեռանա՛: 2 Եւ եթէ պատահի, որ հարցնեն քեզ՝ ո՞ւր գնանք, կ'ասես նրանց. այսպէս է

ասում Տէրը.

"Ովքեր մահուան համար են՝ թող գնան դէպի մահ,

ովքեր սրի համար են՝ դէպի սուր,

ովքեր սովի համար են՝ դէպի սով,

իսկ ովքեր գերութեան համար են՝ դէպի գերութիւն":

3 Ես նրանցից վրէժ լուծելու համար պիտի դիմեմ չորս միջոցի, – ասում է Տէրը. – սրին՝ սպանելու համար, շներին՝ պատառոտելու համար, երկնքի թռչուններին եւ երկրի գազաններին՝ յօշոտելու եւ ոչնչացնելու համար: 4 Յուդայի երկրի թագաւոր Եզեկիայի որդի Մանասէի պատճառով եւ այն ամենի պատճառով, որ նա կատարեց Երուսաղէմում, նրանց պիտի մատնեմ աշխարհի բոլոր թագաւորութիւնների տանջանքին:

5 Ո՞վ կը խնայի քեզ, Երուսաղէ՛մ, կամ ո՞վ կը տրտմի քեզ համար,

եւ կամ ո՞վ կը դառնայ դէպի քեզ՝

հարցնելու քո խաղաղութեան մասին,

6 քանզի դու երես թեքեցիր ինձնից,

– ասում է Տէրը, –

եւ յետ ես գնալու:

Իմ ձեռքը պիտի երկարեմ քեզ վրայ

եւ պիտի կործանեմ քեզ:

7 Այլեւս նրանց չեմ լսի,

պիտի ցրեմ ու սփռեմ նրանց.

իմ ժողովուրդն անզաւակ մնաց դռներին,

որովհետեւ ես կորցրի իմ ժողովրդին՝

նրանց չարութեան պատճառով,

քանի որ նրանք չուղղուեցին:

8 Նրա չարիքներն աւելի բազմացան իմ շուրջը, քան ծովի աւազը:

Ե՛ւ նրանց վրայ, ե՛ւ իրենց մօր վրայ չարժեցի երիտասարդներին:

Միջօրէին նրանց շուրջը թշնամութիւն գցեցի.

յանկարծակի դող ու տագնապ եկաւ†:

9 Նա, որ եօթը զաւակ էր ծնել,

զրկանքների մատնուեց,

նրա հոգին նուաղեց.

միջօրէին նրա արեւը մայր մտաւ.

ամօթն ու նախատինքն են պատել նրան:

Նրանց մնացորդներին իրենց թշնամիների աչքի առաջ

սրի պիտի մատնեմ», – ասում է Տէրը:

ԵՐԵՄԻԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ ՏԻՐՈՋԸ

10 Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, մա՜յր իմ.

իբրեւ ո՞ւմ ծնեցիր ինձ.

իբրեւ մի մարդո՞ւ, որին երկրում ամենուրեք դատափետել են,

քաշքշել դատարան:

Ո՛չ ես եմ ինչ-որ բան պարտք,

ո՛չ էլ ուրիշն է ինձ որեւէ բան պարտք,

բայց ինձ անիծողներից իմ ուժն սպառուեց:

11 Թող որ նրանք յաջողութիւն գտնեն բարի բաների մէջ, Տէ՛ր,

թէպէտ նրանց փորձութեան ժամին

կամ նրանց նեղութեան ժամանակ

ես իմ թշնամիների հանդէպ բարիք չեմ գործել:

12 Երկաթի զօրութիւնը կարո՞ղ է ճանաչուել,

իսկ քո զօրութիւնը քաղաքի պղնձէ պարսպի զօրութեան պէս է:

13 «Բոլոր մեղքերիդ պատճառով

քո երկրի բոլոր սահմաններում քո գանձերը,

իբրեւ փրկանք, տալու եմ օտարներին:

14 Քեզ ծառայեցնելու եմ քո թշնամիներին

մի երկրում, որ դու չգիտես,

քանզի իմ բարկութիւնից կրակ է վառուում,

որ բորբոքուելու է ձեզ վրայ»:

15 Դու գիտես, Տէ՛ր,

յիշի՛ր ինձ, Տէ՛ր,

այցելի՛ր ինձ, փրկի՛ր ինձ իմ թշնամիներից.

ինձ համար մի՛ ուշացիր,

գիտցի՛ր, քեզ համար որքա՛ն նախատինք կրեցի

†Եբրայերէն՝ նրանց որբեւայրիներին ծովի աւազից աւելի բազմացրի իմ առաջ. կէսօրին նրանց վրայ կործանող պիտի բերեմ՝ մօր եւ իր զաւակների դէմ, յանկարծակի արհաւիրք ու սոսկում պիտի բերեմ նրանց վրայ:

քո խօսքերն արհամարհողներից:
16 *Մեռցրո՛ւ նրանց, եւ քո խօսքն ինձ՝ ուրախութիւն*
եւ իմ սրտի համար ցնծութիւն կը լինի,
քանզի քո անունը ինձ վրայ է դրուած,
ո՛վ Ամենակալ Տէր Աստուած:
17 *Մաղը անողների հետ ատեան չնստեցի,*
այլ երկիւղ կրելով քեզնից՝ նստում էի առանձին,
որովհետեւ դառնութեամբ էի լցուած:
18 *Ինչո՞ւ նրանք, որ ինձ տրտմութիւն են պատճառում, զօրանում են,*
իսկ իմ վէրքերն ահաւոր են.
ինչպէ՞ս պիտի բժշկուեմ:
Փոխուեցի ու վերածուեցի անհամ ջրի,
որի նկատմամբ չկայ հաւատ:
19 *Դրա համար էլ այսպէս է ասում Տէրը.*
«Եթէ նորից դարձի դաս,
քեզ կը պատսպարեմ,
եւ իմ աչքի առաջ կ'ապրես.
ու եթէ անարգի միջից դուրս հանես պատուականը,
կը լինես ինչպէս իմ բերանը,
ու եթէ նրանք վերադառնան դէպի քեզ,
եւ ոչ թէ դու նորից դառնաս դէպի նրանց,
20 *ես քեզ կը տամ այդ ժողովրդին իբրեւ պղնձէ ամուր պարիսպ.*
Նրանք պիտի կռուեն քեզ հետ,
բայց չեն կարողանայ սասանել քեզ,
քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու եւ պահպանելու համար,
- ասում է Տէրը, -
21 *ես քեզ կ'ազատեմ չար ձեռքերից,*
քեզ կը փրկեմ ժանտ ձեռքերից»,
- ասում է Տէր Աստուածն Իսրայէլի:

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՄԻԻԹԱՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿ ՉԵՆ ՏԱԼԻՍ

16 2 *«Քեզ համար կին մի՛ առնիր, եւ այդտեղ թող քեզ տղաներ ու աղջիկներ չծնուեն», 3 քանզի Տէրն այսպէս է ասում այն որդիների ու դուստրերի մասին, որ պիտի ծնուեն այդտեղ, նաեւ նրանց մայրերի մասին, որ պիտի ծնեն նրանց, ինչպէս եւ նրանց հայրերի մասին, որ այդ երկրում պիտի ունենան նրանց: 4 «Նրանք հիւանդութեամբ պիտի հիւծուեն ու մեռնեն. լաց ու կոծի չեն արժանանալու եւ ոչ էլ թաղման, այլ երկրի երեսին պիտի խայտառակուեն*[†]*. սրով պիտի ընկնեն ու սովից սպառուեն, իսկ նրանց դիակները երկնքի թռչուններին եւ երկրի գազաններին կեր պիտի դառնան»:*
5 *Այսպէս է ասում Տէրը.*
«Նրանց համար լաց մի՛ լինիր, նրանց համար ողբ ու կոծի մի՛ գնա եւ ոչ էլ նրանց վրայ սուգ պահիր, որովհետեւ իմ խաղաղութիւնը, ողորմութիւնն ու գթութիւնը յետ եմ վերցրել այդ ժողովրդից, - ասում է Տէրը: 6 Թէ՛ մեծերը եւ թէ՛ փոքրերը պիտի մեռնեն այդ երկրում. նրանց համար չեն կոծելու, նրանց համար արիւնբզիկ չեն լինելու եւ մազերը չեն փետելու. նրանք լացի չեն արժանանալու եւ ոչ էլ թաղման: 7 Նրանց սգոյ հացը մեռնողի վրայ մխիթարութեան համար կտրող չի լինելու, եւ ոչ էլ նրա հօր ու մօր յիշատակին մխիթարութեան բաժակ են խմելու: 8 Նրանց հետ կերուխումի նստելու համար խնջոյքի տուն մի՛ մտնիր». 9 քանզի այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Ահաւասիկ իմ աչքի առաջ եւ ձեր իսկ օրերում այդտեղից կը վերացնեմ ձայնը ցնծութեան եւ ձայնն ուրախութեան, ձայնը փեսայի եւ ձայնը հարսի: 10 Եւ երբ պատահի, որ այն ժողովրդին պատմես այս բոլոր պատգամների մասին, ու քեզ ասեն՝ "Այդ բոլոր մեծ չարիքների համար Տէրն ինչո՞ւ խօսեց մեր դէմ, ի՞նչ անիրաւութիւն կայ մեր մէջ կամ ի՞նչ մեղք, որ մեղանչած լինէինք մեր Տէր Աստծու առաջ", - 11 ապա կ'ասես նրանց. «Որովհետեւ ձեր հայրերը լքեցին ինձ, - ասում է Տէրը, - եւ գնացին օտար աստուածների յետեւից, ծառայեցին նրանց, երկրպագեցին նրանց, իսկ ինձ թողին եւ իմ օրէնքը չպահեցին: 12 Բայց դուք այնքան անզգամ եղաք՝ կատարեցիք աւելին, քան ձեր հայրերը. ահաւասիկ դուք իւրաքանչիւրդ ինձ չլսելու համար ընթանում էք ձեր չար սրտերի հաճոյքների յետեւից: 13 Այս երկրից ես ձեզ կը նետեմ մի երկիր, որը չգիտէք ո՛չ դուք եւ ո՛չ էլ ձեր հայրերը. այնտեղ օր ու գիշեր կը ծառայէք օտար աստուածներին, բայց ձեզ ողորմածութիւն չեն անի»:

[†]Երրայերէն՝ աղրի պէս պիտի լինեն:

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՔՍՈՐԻՑ

14 «Ահա այս պատճառով էլ օրեր են գալու, - ասում է Տէրը, - եւ այլեւս չեն ասի՝ "Կենդանի է Տէրը, որ իսրայէլացիներին հանեց Եգիպտացիների երկրից", 15 այլ կ'ասեն, թէ՝ "Կենդանի է Տէրը, որ իսրայէլացիներին հանեց հիւսիսի երկրից եւ այն բոլոր երկրներից, ուր արտաքսուել էին, ու նրանց վերստին կը պատսպարի իրենց երկրում, որը տուել էր նրանց հայրերին"»:

ԳԱԼԻՔ ՊԱՏՈՒՀԱՍԸ

16 «Ահաւասիկ ես կ'ուղարկեմ բազում ձկնորսների, - ասում է Տէրը, - եւ նրանք կ'որսան նրանց. այնուհետեւ կ'ուղարկեմ բազում որսորդների, եւ նրանք կ'որսան նրանց բոլոր լեռների վրայ, բոլոր բլուրների վրայ ու ժայռերի ծերպերից: 17 Իմ աչքը նրանց բոլոր ճանապարհներին է. նրանք իմ տեսողութիւնից չեն թաքնուել, ոչ էլ նրանց անիրաւութիւններն են ծածկուել իմ աչքերի առաջ: 18 Ես նախ նրանց կրկնակի կը հատուցեմ իրենց անիրաւութիւնների դիմաց, նաեւ նրանց մեղքերի դիմաց, որոնցով պղծեցին իմ երկիրը, իրենց գարշելի մեռելոտիներով եւ իրենց անօրէնութիւններով լցրին իմ ժառանգութիւնը»:
19 *Տէ՛ր, ո՛վ իմ զօրութիւն,*
իմ օգնութիւն եւ չար օրերի իմ ապաւէն.
աշխարհի ծայրերից հեթանոսները քեզ մօտ են գալու եւ ասելու.
«Ինչպէ՞ս էին սուտ կուռքեր ստեղծում մեր հայրերը,
իսկ նրանցից օգուտ չկար:
20 *Մի՞թէ մարդ ինքն իր համար աստուածներ կը շինի,*
բայց չէ՞ որ նրանք աստուածներ չեն»:
21 *«Դրա համար էլ այժմ ես նրանց ցոյց կը տամ իմ ձեռքը,*
ճանաչել կը տամ նրանց նաեւ իմ զօրութիւնը,
ու թող գիտենան, որ իմ անունը Տէր է»:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՄԵՂՔԵՐԸ ԵՒ ՊԱՏԻԺԸ

17 *«Ցուդայի երկրի մեղքերը գրուած են երկաթէ գրչով,*
ադամանդէ գրչածայրով,
որոնք փորագրուած պիտի լինեն նրանց սրտերի տախտակներին
եւ նրանց զոհասեղանների եղջիւրներին,
մինչեւ այն ժամանակ,
2 *քանի դեռ նրանց որդիները կը յիշեն իրենց մեղքերը*
եւ իրենց պաշտամունքի անտառները՝
վարսաւոր ծառերի տակ,
բարձր բլուրների եւ ամայի լեռների վրայ:
3 *Քո զօրութիւնը, քո բոլոր գանձերը*
եւ քո մեղսաբիթ բարձունքները,
քո բոլոր սահմանների մէջ, աւարի պիտի մատնեմ:
4 *Թող նկուն լինես ու զրկուես քո ժառանգութիւնից, որ քեզ տուեցի:*
Քո թշնամիների ձեռքով քեզ պիտի արտաքսեմ մի երկիր,
որը չգիտես դու,
քանզի իմ բարկութեան մէջ կրակ է վառուել
եւ այն յաւիտեան պիտի բորբոքուի»:

ՏԷՐՆ Է ՄԱՐԴՈՒ ԱՊԱՒԷՆԸ

5 *Այսպէս է ասում Տէրը.*
«Թող անիծեալ լինի այն մարդը,
որ իր յոյսը կը դնի մարդու վրայ՝
ապաւինելով նրա մարմնին ու բազկին,
իսկ նրա սիրտը կ'ապստամբի Տիրոջ դէմ:
6 *Նա կը լինի ինչպէս վայրի մոշին անապատում*
եւ, երբ բարիքը գայ, չի նկատի.
կը բնակուի անապատի աղուտներում,
մի աղտաղտուկ երկրում,
ուր երբեք չեն ապրի:
7 *Բայց թող օրհնեալ լինի այն մարդը,*
որ յոյսը Տիրոջ վրայ կը դնի,
որ Տէրը նրա յոյսը կը դառնայ:
8 *Նա կը լինի ինչպէս հոսող ջրերի մօտ աճած ծառ*
եւ իր արմատները կը ձգի դէպի ջրերի հոսանքը.
երբ տօթը հասնի՝ չի վախենայ.
Նրա սաղարթն անտառի պէս կը տարածուի իր շուրջը[†].
երաշտ տարուց չի վախենայ
եւ չի դադարի պտուղ տալուց:
9 *Սիրտը խոր է, քան ամէն բան*[‡].
մարդ արարած է, ո՞վ կարող է ճանաչել նրան:
10 *Ես՝ Տէրս, քննում եմ սրտերը*
եւ փորձում երիկամները,
որպէսզի իւրաքանչիւրին հատուցեմ ըստ իր ընթացքի
եւ ըստ իր գործերի արդիւնքի»:
11 *Կաքաւը ձայն տուեց,*
հաւաքեց նրանց, որոնց ինքը չէր ծնել.
այնպէս էլ նա, ով անարդար ճանապարհով հարստութիւն է դիզում,
իր օրերի կէսին պիտի թողնի այն
ու իր վախճանի ժամին պիտի զգայ իր անմտութիւնը:
12 *Ո՛վ Տէր, ակնկալութի՛ւն Իսրայէլի,*
դու, որ ի սկզբանէ բարձրացած ես մեր սրբարանի փառքի աթոռը,
13 *բոլոր նրանք, որ քեզ թողեցին, պիտի ամաչեն:*
Քեզնից հեռացածները պիտի կորչեն երկրի խորքում,
որովհետեւ լքեցին Տիրոջը՝ կենաց ջրի աղբիւրը:

ԵՐԵՄԻԱՆ ԽՆԴՐՈՒՄ Է ՏԻՐՈՋ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

14 *Բժշկի՛ր ինձ, Տէ՛ր,*
եւ ես բուժուած կը լինեմ,
փրկի՛ր ինձ, Տէ՛ր,
եւ ես փրկուած կը լինեմ,
քանզի դու ես իմ պարծանքը:
15 *Ահաւասիկ նրանք ինձ ասում են.*
«Ո՞ւր է Տիրոջ խօսքը,
թող այստեղ հասնի»:
16 *Իսկ ես չձանձրացայ գալ քո յետեւից*
եւ չցանկացայ մարդու համար աղէտալի օր:
Դու ինքդ իսկ գիտես,
որ ինչ իմ շուրթերից ելնում է,
այդ լինում է քո ներկայութեամբ:
17 *Ինձնից մի՛ օտարացիր,*
չար օրը խնայի՛ր դու ինձ:
18 *Իմ հալածիչնե՛րը թող ամօթահար լինեն,*
եւ ոչ թէ ես ամաչեմ,
նրա՛նք թող զարհուրեն,
եւ ոչ թէ ես զարհուրեմ.
սեւ օ՛ր բեր նրանց գլխին,
կրկնակի հարուածի ենթարկելով՝
կոտորի՛ր նրանց:

ՊԱՀԵԼ ՇԱԲԱԹ ՕՐԸ

19 *Այսպէս է ասում Տէրը.*
«Գնա կանգնի՛ր քո ժողովրդի դռներին, որտեղով մտնում ու ելնում են Յուդայի երկրի թագաւորները, նաեւ՝ Երուսաղէմի բոլոր դռներին. 20 *ու կ'ասես նրանց. "Լսեցէ՛ք Տիրոջ պատգամները, Յուդայի երկրի թագաւորնե՛ր, համա՛յն Հրէաստան եւ դուք, Երուսաղէմի բոլո՛ր բնակիչներ, որ մտնում էք այդ դռներով":* 21 *Այսպէս է ասում Տէրը. "Զգո՛յշ եղէք ձեր հոգիների համար. բեռներ մի՛ բարձէք շաբաթ օրը, Երուսաղէմի դռներով դուրս մի՛ ելնէք,* 22 *շաբաթ օրը ձեր տներից բեռներ մի՛ հանէք, ոչ մի գործ մի՛ արէք եւ շաբաթ օրը սո՛ւրբ պահեցէք, ինչպէս պատուիրեցի ձեր հայրերին:* 23 *Բայց նրանք չլսեցին, չխոնարհեցրին իրենց ականջները եւ աւելի խստապարանոց դարձան, քան իրենց հայրերը, որպէսզի չլսեն ինձ եւ խրատ չընդունեն:*
24 *Եւ եթէ լինի այնպէս, – ասում է Տէրը, – որ լաւ լսէք ինձ՝ շաբաթ օրը բեռ չբերէք այդ քաղաքի դռներով, շաբաթ օրը սուրբ պահէք, այդ օրը ոչ մի գործ չանէք,* 25 *ապա այդ քաղաքի դռներով ներս պիտի մտնեն թագաւորներ ու իշխաններ, որպէսզի նստեն Դաւթի աթոռին. նրանք պիտի բարձրանան իրենց կառքերն ու հեծնեն իրենց երիվարները, նրանք ու նրանց իշխանները, Յուդայի երկրի մարդիկ եւ Երուսաղէմի բնակիչները. եւ այդ քաղաքը յաւիտեան բնակուած պիտի լինի:* 26 *Ու ամէն կողմից Յուդայի երկրի քաղաքներից պիտի գան Երուսաղէմ, պիտի գան նաեւ Բենիամինի երկրից, դաշտերից, լեռնավայրերից եւ հարաւի կողմերից՝ բերելով ողջակէզներ, խունկ, ընծայ ու կնդրուկ եւ օրհնութիւն պիտի մատուցեն Տիրոջ Տան մէջ:* 27 *Իսկ եթէ ինձ չլսէք՝ շաբաթ օրը սուրբ չպահէք, շաբաթ օրը բեռներ բարձէք եւ մտնէք Երուսաղէմի դռներով, ապա կրակ կը վառեմ նրա դռներին, որն ամէն կողմից կը լափի Երուսաղէմն ու չի հանգչի»:*

ԵՐԵՄԻԱՆ ԲՐՈՒԻՏԻ ՏԱՆԸ

18 *Երեմիային ուղղելով իր խօսքը՝ Տէրն ասաց.*
2 *«Գնա իջի՛ր բրուտի տունը եւ այնտեղ կը լսես իմ խօսքերը»:*
3 *Ես իջայ բրուտի տունը, եւ ահա նա գործ էր անում քարերի վրայ*[†]: 4 *Ու մի աման, որը նա պատրաստում էր կաւից, ընկաւ նրա ձեռքից, բայց նա դարձեալ այն վերածեց մի ուրիշ ամանի, ինչպէս որ իր աչքին հաճելի թուաց անել:* 5 *Եւ Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց.* 6 *«Միթէ այդ բրուտի պէս չե՞մ կարող անել քեզ, ո՛վ Իսրայէլի տուն: Ահաւասիկ, – ասում է Տէրը, – ինչպէս այդ կաւն է բրուտի ձեռքին, այդպէս էլ դու ես իմ ձեռքին, ո՛վ դու Իսրայէլի տուն:*
7 *Եթէ վճիռ կարդամ մի ազգի կամ թագաւորութեան վախճանի մասին՝ նրանց վերացնելու, քանդելու եւ կործանելու համար,* 8 *եւ եթէ այն ազգը դարձի գայ իր չարութիւններից, որոնց մասին խօսեցի, – ես եւս կը զղջամ այն չարիքների համար, որ մտածեցի անել նրանց նկատմամբ:* 9 *Իսկ եթէ վճիռ կարդամ մի ազգի կամ թագաւորութեան մասին՝ նրան շէնացնելու եւ կանգուն պահելու համար,* 10 *բայց նրանք չարութիւն անեն իմ առաջ՝ ականջ չդնելով իմ ձայնին, – ես եւս կը զղջամ այն բարիքների համար, որ ասացի, թէ կ'անեմ նրանց:*
11 *Արդ, խօսի՛ր Յուդայի երկրի տղամարդկանց եւ Երուսաղէմի բնակիչների հետ. կ'ասես նրանց. "Այսպէս է ասում Տէրը. ահաւասիկ ձեր դէմ ես չարիքներ կը նիւթեմ, ձեր մասին չար խորհուրդներ կը խորհեմ. ամէն ոք թող դառնայ իր չար ընթացքից. ուղղեցէ՛ք ձեր ընթացքն ու ձեր ճանապարհները":*
12 *Բայց նրանք ասում են. "Մենք պիտի քաջ լինենք*[†]*, պիտի հետեւենք մեր ապստամբութիւններին, եւ իւրաքանչիւրոք իր չար սրտի հաճոյքները պիտի կատարի"»:*

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՐԺՈՒՄ Է ՏԻՐՈՋԸ

13 *Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում.*
«Այժմ հարցո՛ւմ արէք ազգերի մէջ՝
ո՞վ է լսել այնպիսի զարհուրելի բան,
որ իրօք կատարեց Իսրայէլի կոյսը:

[†]Եբրայերէն՝ նրա տերեւը միշտ կանաչ է:
[‡]Եբրայերէն՝ նենգաւոր է:

[†]Եբրայերէն՝ աշխատում էր ճախարակով:
[†]Եբրայերէն՝ անհնարին է:

14 Մի՞թէ կը ցամաքի՞ ջուրը ժայռի
ստինքներից,
կամ ձիւնը՝ Լիբանանից,
կամ թէ հողմի սաստկութիւնից ջրերը
բռնութեամբ յետ կը շրջուե՞ն[†]:
15 Մոռացաւ ինձ ժողովուրդն իմ.
զուր տեղը խունկ ծխեցին:
Իրենց վաղեմի ճանապարհներից
դուրս գալով՝
նրանք պիտի տկարանան՝ մտնելով
այն շաւիղները,
որոնցից ելք չկայ.
16 իրենց երկիրը պիտի ենթարկուի
յաւիտենական ապականութեան ու
սուլոցի:
Ամէնքն էլ, որ անցնելու են նրա
միջով,
պիտի զարմանան եւ շարժեն իրենց
գլուխները:
17 Ինչպէս տապախառն հողմ՝
ես նրանց ցրիւ եմ տալու իրենց
թշնամիների առաջ,
ծոծրա՛կս եւ ոչ թէ երեսս պիտի ցոյց
տամ նրանց իրենց կորստեան օրը»:

ԴԱՒ ԵՐԵՄԻԱՅԻ ԴԷՄ

18 Իսկ նրանք ասացին. «Եկէք մի բան
մտածենք Երեմիայի դէմ, քանզի օրէնքը
չի կորչի քահանայից, խորհուրդը՝
իմաստուններից եւ խօսքը՝ մարգարէից:
Եկէ՛ք նրան լեզուով ջախջախենք եւ
նրա բոլոր խօսքերին ականջ չդնենք»:
19 Լսի՛ր ինձ, Տէ՛ր,
անսա՛ իմ արդար ձայնին[‡].
20 արդեօք կարելի՞ է բարու փոխարէն
չար հատուցել.
նրանք միասին իմ անձի դէմ չար
բաներ խորհեցին[§]
ծածուկ պահելով իրենց մտատան-
ջութիւնները:
Ցիշի՛ր, թէ ինչպէս ես քո առաջ
կանգնեցի,
նրանց համար բարեխօսութիւն արեցի՝
քո բարկութիւնը նրանցից դարձնելու
համար:
21 Դրա համար էլ նրանց որդիներին
սովի՛ մատնիր,
հաւաքի՛ր ու սրի ձե՛ռքը տուր նրանց.
թող նրանց կանայք որդեզուրկ այ-
րիներ դառնան,
նրանց տղամարդիկ մահուամբ կո-
տորուեն,
իսկ նրանց երիտասարդները սրով
ընկնեն պատերազմի մէջ:
22 Նրանց տներում թող գոյժ լսուի,
երբ նրանց վրայ յանկարծակի աւա-
զակներ բերես,
որովհետեւ նրանք մտադրուեցին
բռնել ինձ
եւ իմ դէմ գաղտնի որոգայթներ լա-
րեցին:
23 Ո՛վ Տէր, դու, որ իմացար
ինձ մահ բերելու մասին նրանց բոլոր
դիտաւորութիւնները,
քաւութիւն չտա՛ս նրանց անիրա-
ւութիւններին,
քո աչքի առաջ նրանց մեղքերը
չջնջե՛ս,
թող նրանք հիւանդութեամբ տառա-
պեն քո առաջ,
նրանց հետ վարուի՛ր ինչպէս քո
բարկութեան ժամին:

ՓՇՐՈՒԱԾ ԿԱՒԻ ԿՈՒԺԸ

19 Այն ժամանակ Տէրն ինձ ասաց.
«Գնա քեզ համար ձե՛ռք բեր կաւից
չինուած մի կուժ, ժողովրդի աւագներից
եւ քահանաների աւագներից մարդի՛կ
վերցրու քեզ հետ, 2 բարձրացի՛ր նրանց
որդիների գերեզմանոցը[†], որը գտնւում է
Քարսիդի դռների մուտքի առաջ, եւ
յայտնի՛ր այնտեղ այն բոլոր բաները, որ
պիտի խօսեմ քեզ հետ: 3 Կ'ասես նրանց.
"Ո՛վ Յուդայի երկրի թագաւորներ,
Հրէաստանի մարդիկ եւ Իսրայէլի
բնակիչներ, լսեցէ՛ք Տիրոջ պատգամը:
Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝

†Սրբայերէն՝ Լիբանանի ժայռոտ լեռներից ձիւնը կը պակասի՞, կամ նրա լեռնային պաղ ջրերը կը ցամաքե՞ն:

‡Սրբայերէն՝ ինձ հետ վիճողների ձա՛յնը լսիր:

§Սրբայերէն՝ նրանք փոս փորեցին ինձ համար:

†Սրբայերէն՝ նեռմացիների ձորը:

Իսրայէլի Աստուածը. ահաւասիկ այդ
վայրի վրայ ես այնպիսի չարիքներ եմ
բերելու, որ ով որ լսի՝ ականջները
դժժան, 4 որովհետեւ նրանք լքեցին ինձ,
այս վայրն ինձ համար օտար դարձրին,
այստեղ խունկ ծխեցին օտար աս-
տուածներին, որոնց իրենք եւ իրենց
հայրերը չէին ճանաչում: Յուդայի երկրի
թագաւորներն այս վայրը լցրին ան-
մեղների արեամբ: 5 Բահաղին բագին-
ներ կանգնեցրին, որպէսզի իրենց
որդիներին, որպէս Բահաղի ողջակէզ-
ների, հրով այրեն, մի բան, որ ես չեմ
պատուիրել եւ չեմ ասել, ոչ էլ անցել է
իմ մտքով:
6 Դրա համար էլ, ահա, օրեր են
գալու, – ասում է Տէրը, – երբ այդ վայրի
անունն այլեւս չի կոչուելու Գլորման
վայր կամ Ենոմացիների գերեզման, այլ՝
Կոտորածի ձոր: 7 Այդտե՛ղ պիտի
խափանեմ Յուդայի երկրի խորհուրդը եւ
խորհուրդը Երուսաղէմի. սրով, ինչպէս
եւ նրանց հոգիները փնտռողների
ձեռքով նրանց դիտապաստ պիտի գցեմ
իրենց թշնամիների առաջ: Նրանց
դիակներն իբրեւ կերակուր պիտի տամ
երկնքի թռչուններին ու երկրի գազան-
ներին: 8 Այդ քաղաքն էլ պիտի մատնեմ
ապականութեան ու ենթարկեմ սուլոցի.
ամէն ոք, ով անցնի նրա միջով, պիտի
տրտմի եւ սուլի նրա կրած բոլոր
հարուածների համար: 9 Նեղութեան ու
պաշարման մէջ՝ նրանք ուտելու են
իրենց որդիների մարմինները եւ մար-
մինները դուստրերի, իւրաքանչիւրը՝ իր
ընկերոջ մարմինը: Նրանց պաշարելու
են իրենց թշնամիները, որոնք ցանկա-
նում էին տիրել նրանց հոգիներին:
10 Կը փշրես կուժն այն մարդկանց
առաջ, որ բարձրանալու են քեզ հետ,
11 ու կ'ասես նրանց. այսպէս է ասում
ինձ Զօրութիւնների Տէրը. "Նոյն կերպ էլ
պիտի խորտակեմ այդ ժողովրդին ու
այդ քաղաքը, ինչպէս որ փշրւում է
խեցեղէն ամանը, որն այլեւս չի կարող
վերականգնուել: Եւ թող նրանք
թաղուեն Տափեթում՝ թաղելու տեղ
չլինելու պատճառով: 12 Այդպէս պիտի
վարուեմ այդ վայրի հետ, – ասում է
Տէրը, – նաեւ բնակչութեան հետ, որ դրա
մէջ է՝ այդ քաղաքը մատնելով կոր-
ծանման: 13 Ու թող Երուսաղէմի տներն
ու Յուդայի երկրի թագաւորների տները
դառնան սպանութեան վայր այն
պղծութիւնների պատճառով, որ կատա-
րեցին բոլոր տներում, որտեղ, նրանց
տանիքների վրայ, խունկ էին ծխում
երկնքի բոլոր զօրութիւններին եւ
նուէրներ ընծայաբերում օտար աս-
տուածներին"»:
14 Երեմիան եկաւ Տափեթից, այն է՝
Գլորման վայրից, ուր ուղարկել էր նրան
Տէրը՝ մարգարէանալու այնտեղ: Նա
կանգնեց Տիրոջ Տան սրահում եւ ասաց
ամբողջ ժողովրդին.
15 «Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. "Ահաւասիկ
այս քաղաքի վրայ բերելու եմ ամենայն
չարիք, ինչպէս ասացի նրա մասին, նաեւ
սրա միւս բոլոր քաղաքների ու աւան-
ների վրայ, քանզի նրանք խստա-
պարանոց դարձան, որպէսզի չլսեն իմ
խօսքերը"»:

ԵՐԵՄԻԱՆ ԲԱԽԻՈՒՄ Է ՊԱՍՓՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԵՏ

20 Եմմերի որդին՝ Պասքոր քահանան,
որ Տիրոջ Տան հրամանատարն էր եւ
իշխանը, լսեց այդ խօսքերը Երեմիայից,
երբ սա մարգարէանում էր: 2 Պասքորը
հարուածեց Երեմիա մարգարէին եւ
արգելափակեց նրան բանտում, Բենիա-
մինի դարպասի մօտ, Տիրոջ Տան
վերնայարկում:
3 Իսկ երբ յաջորդ օրը Պասքորը
Երեմիային հանեց բանտից, Երեմիան
նրան ասաց. «Տէրը քո անունը կոչեց ոչ
թէ Պասքոր, այլ՝ Թափառական գերի[†]:
4 Արդարեւ, այսպէս է ասում Տէրը.
"Ահաւասիկ քեզ քո բոլոր բարեկամ-
ներով հանդերձ պիտի մատնեմ գե-
րութեան. նրանք պիտի ընկնեն իրենց
թշնամիների սրով, եւ քո աչքերը պիտի

†Սրբայերէն՝ ամէն կողմից վախ:

տեսնեն դա: Քեզ եւ Ցուդայի այդ
ամբողջ տունը պիտի տամ բաբե-
լացիների թագաւորի ձեռքը. թող գերի՛
տանեն նրանց Բաբելոն, թող կոտորե՛ն
նրանց սրով: 5 Այս քաղաքի ամբողջ
հարստութիւնը, նրա բոլոր վաստակ-
ները, նրա ողջ թանկարժէք անօթներն
ու Ցուդայի երկրի թագաւորի բոլոր
գանձերը պիտի տամ իրենց թշնամիների
ձեռքը, նրանք պիտի յափշտակեն,
առնեն դրանք ու տանեն Բաբելոն: 6 Իսկ
դու, Պասքո՛ր, դու եւ քո տան բոլոր
բնակիչները պիտի գերի գնաք Բաբելոն,
պիտի գնաք եւ այնտեղ մեռնէք ու
այնտեղ էլ թաղուէք, դու եւ քո բոլոր
բարեկամները, որոնց համար դու սուտ
մարգարէութիւն արեցիր"»:

ԵՐԵՄԻԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ ՏԻՐՈՋԸ

7 Տէ՛ր, խաբեցիր ինձ, ու ես խաբուեցի.
յաղթեցիր ու զօրացար:
Մաղր ու ծանակի առարկայ դարձայ,
օրս մթնեցրի ծաղրի մէջ,
8 որովհետեւ իմ դառն խօսքերով այպ
ու արհամարհանք վաստակեցի:
Իմ թշուառութեան պատճառով ես
բողոք եմ բարձրացնելու,
քանզի Տիրոջ խօսքն ինձ բերեց
նախատինք
եւ հանապազօրեայ ծաղրուծանակ:
9 Ես ասացի. «Չեմ տայ Տիրոջ
անունը,
այլեւս չեմ խօսի նրա անունից»:
Սակայն իմ սրտում կարծես կրակ
վառուեց,
բորբոքուեց ոսկորներիս մէջ,
ու ես ամէն կողմից լքուած մնացի,
չկարողացայ հանդարտուել:
10 Լսեցի շատերի պարսաւանքը,
որոնք հաւաքուել խռնուել էին իմ
շուրջը,
թէ՝ «Ո՛վ դուք բոլորդ, որ դրա
բարեկամներն էք,
եկէք յարձակուենք դրա վրայ,
մի հնարք հնարենք դրա դէմ,
գուցէ խաբուի, եւ մենք յաղթենք
ու մեր վրէժը լուծենք դրանից»:
11 Բայց Տէրն ինձ հետ էր որպէս
պատերազմող եւ ուժ էր տալիս:
Դրա համար էլ նրանք հալածեցին
ինձ,
բայց ոչ մի հնարք չկարողացան
գտնել,
խիստ ամօթով մնացին,
որովհետեւ անմիտ վարուեցին:
Նրանց անարգանքը թող յաւիտեանս
չմոռացուի:
12 Ո՛վ Զօրութիւնների Տէր, որ արդար
ես կշռում,
քննում ես սրտերն ու երիկամները,
այնպէս արա, որ տեսնեմ քո
վրէժխնդրութիւնը նրանցից.
չէ՞ որ իմ աղերսանքը ես քեզ
յայտնեցի:
13 Օրհնեցէ՛ք Տիրոջը, գովեցէ՛ք նրան,
քանզի նա տնանկի հոգին փրկեց
չարագործների ձեռքից:
14 Անիծեալ լինի այն օրը, երբ ես
ծնուեցի.
թող ուխտի օր չլինի այն օրը, երբ իմ
մայրը ծնեց ինձ:
15 Անիծեալ լինի այն մարդը,
որն աւետիս տուեց իմ հօրը
եւ ասաց, թէ՝ "Քեզ արու մանուկ
ծնուեց",
եւ ցնծութեամբ ուրախացրեց նրան:
16 Թող այդ մարդը դառնայ այն
քաղաքների պէս,
որոնք Տէրը բարկութեամբ կործանեց
եւ չզղջաց.
թող նա առաւօտները բօթ լսի,
իսկ միջօրէի ժամին՝ աղաղակ,
17 որովհետեւ Տէրը հէնց արգանդի
մէջ չսպանեց ինձ,
որպէսզի մայրն իմ ինձ համար
դառնար գերեզման
ու արգանդ յաւիտենական յղութեան:
18 Ինչո՞ւ այսպէս պատահեց,
որ ես դուրս ելայ արգանդից՝
տեսնելու վշտեր ու տառապանքներ,
եւ իմ օրերն ամօթալի վախճան
ունեցան:

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍԵԴԵԿԻԱՅԻ ՀԱՐՑԻՆ

21 Սա է Տիրոջ խօսքը՝ ուղղուած
Երեմիային, երբ Սեդեկիան վերջինիս
մօտ ուղարկեց Մելքիայի որդի Պաս-
քորին եւ Մասիայի որդի Սոփոնիա
քահանային՝ յայտնելով.
2 «Մեր մասին հարցրո՛ւ Տիրոջը,
որովհետեւ բաբելացիների Նաբուքոդո-
նոսոր արքան յարձակուեց մեզ վրայ.
գուցէ Տէրն ըստ իր բոլոր հրաշքների՝ մի
բան անի մեզ համար եւ վանի նրան
մեզնից»:
3 Իսկ Երեմիան նրանց ասաց. «Այս-
պէ՛ս ասացէք Սեդեկիային. 4 "Այսպէս է
ասում Տէր Աստուածն Իսրայէլի. ահա-
սիկ ես շուռ եմ տալու ձեր պա-
տերազմական զէնքերը, որ բռնել էք
ձեռքներիդ եւ նրանցով կուռում էք
բաբելացիների արքայի ու քաղդէա-
ցիների դէմ, որոնք պարսպի դրսից
պաշարել են ձեզ: Այդ զէնքերը հա-
ւաքելու եմ քաղաքի մէջ: 5 Ես էլ պիտի
պատերազմեմ ձեր դէմ՝ ձեռքս երկարած,
բազուկս բարձրացրած, սրտմտութեամբ,
բարկութեամբ ու մեծ ցասմամբ: 6 Այդ
քաղաքի բնակիչներին, մարդ թէ
անասուն, պիտի կոտորեմ սոսկալի
մահով, ու նրանք պիտի մեռնեն": 7 Իսկ
դրանից յետոյ, - ասում է Տէրը, -
Ցուդայի երկրի արքայ Սեդեկիային, իր
ծառաներին ու ժողովրդին, որ այդ
քաղաքի մէջ փրկուած կը լինեն մահից,
սրից ու սովից, պիտի մատնեմ
բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի
ձեռքը, իրենց թշնամիների ձեռքը, այն
մարդկանց ձեռքը, ովքեր հետամուտ էին
սպանելու նրանց. նրանք սրի սայրով
պիտի կոտորեն դրանց: Ես չեմ խնայելու
դրանց, չեմ ողորմելու դրանց եւ չեմ
գթալու դրանց": 8 Ու ժողովրդին կը
յայտնես. "Այսպէս է ասում Տէրը.
ահաւասիկ ես ձեր դիմաց դրել եմ
կեանքի ճանապարհը եւ մահուան
ճանապարհը: 9 Ով որ նստի այդ
քաղաքում, սրով, սովով ու մահով պիտի
մեռնի, իսկ նա, ով ելնի ու կանգնի
քաղդէացիների առաջ, որոնք պաշարել
են ձեզ, պիտի ապրի. նրա հոգին իրեն
պարգեւ† պիտի լինի, եւ նա ողջ պիտի
մնայ: 10 Երեսս դէպի այդ քաղաքը
դարձրի չարութի՛ւն անելու համար եւ ոչ
թէ բարութիւն, - ասում է Տէրը. - այդ
քաղաքը պիտի մատնուի բաբելացիների
թագաւորի ձեռքը, որը հրով պիտի այրի
դա"»:

ՏԻՐՈՋ ՊԱՏԳԱՄԸ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆԸ

11 Ո՛վ Ցուդայի երկրի թագաւորի
տուն եւ Դաւթի տուն,
լսեցէ՛ք Տիրոջ պատգամը:
12 Այսպէս է ասում Տէրը.
«Առաւօտից սկսած արդա՛ր դա-
տաստան արէք,
իրաւապա՛հ եղէք,
զրկուածին փրկեցէ՛ք նրան զրկողի
ձեռքից,
որպէսզի իմ բարկութիւնը չբորբոքուի
որպէս կրակ.
թէ չէ այն կը վառուի,
եւ ձեր անիրաւ ընթացքի պատճառով
ոչ ոք չի լինի, որ հանգցնի:
13 Ահա ես կանգնած եմ քո դէմ,
ո՛վ դու, որ բնակւում ես Տիւրոսի‡
ծործորներում ու դաշտերում,
- ասում է Տէրը. -
դուք էիք, որ ասում էիք.
"Ո՞վ կը զարհուրեցնի մեզ,
կամ ո՞վ կը մտնի մեր բնակատեղին":
14 Ըստ ձեր չար ընթացքի՝ ես կը
պատժեմ ձեզ,
- ասում է Տէրը, -
կրակ կը վառեմ ձեր անտառներում,
եւ նա ամէն ինչ կը լափի իր շուրջը»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆԸ

22 Այսպէս է ասում Տէրը.
«Գնա իջի՛ր Ցուդայի երկրի թա-
գաւորի տունը եւ այս խօսքը յայտնի՛ր
այնտեղ՝ ասելով. 2 "Լսի՛ր Տիրոջ
պատգամները, ո՛վ թագաւորդ Ցուդայի

†Երրայերէն՝ աւար:
‡Երրայերէն՝ վէմի:

երկրի, որ բազմում ես Դաւթի աթոռին,
դո՛ւ, նաեւ քո ծառաներն ու քո
ժողովուրդը, որոնք ներս են մտնում այս
դռներով": 3 Այսպէս է ասում Տէրը.
«Իրաւունք ու արդարութի՛ւն արէք,
կողոպտուածին փրկեցէ՛ք իրեն զրկողի
ձեռքից, պանդխտին, որբին ու այրուն
մի՛ բռնադատէք եւ ամբարիշտ մի՛
լինէք†, այդտեղ անմեղ արիւն մի՛
թափէք: 4 Եթէ այս բանը կատարէք,
ապա այդ տան դռներով ներս կը մտնեն
թագաւորներ, որոնք կը բազմեն Դաւթի
աթոռին եւ կը նստեն կառքեր ու կը
հեծնեն երիվարներ, թէ՛ իրենք եւ թէ՛
իրենց ծառաներն ու իրենց ժողովուրդը:
5 Իսկ եթէ չկատարէք այս բաները, ապա
ինքս ինձ երդւում եմ, – ասում է Տէրը, –
որ աւերակ պիտի դառնայ այդ տունը»:
6 Ահա այսպէս է ասում Տէրը Յուդայի
երկրի թագաւորի քո տան մասին.
«Գաղաա՛դ, դու ես ինձ համար
Լիբանանի բարձունքը,
բայց քեզ աւերակի ու անբնակ
քաղաքների պիտի վերածեմ:
7 Քո դէմ կը հանեմ աւերողներ՝
իւրաքանչիւրին իր տապարով,
որոնք կը կոտորեն քո ընտիր-ընտիր
մայրիները
եւ կը նետեն կրակի մէջ:
8 Բազում ազգեր կ'անցնեն այդ
քաղաքի միջով,
եւ իւրաքանչիւրն իր ընկերոջը կ'ասի.
"Այդ մեծ քաղաքի հետ Տէրն ինչո՞ւ
այդպէս վարուեց":
9 Ու կը պատասխանեն.
"Որովհետեւ թողեցին իրենց Աստծու
ուխտը,
երկրպագեցին օտար աստուածներին
ու ծառայեցին նրանց"»:
10 Լաց մի՛ լինէք մեռածի վրայ,
մի՛ ողբացէք նրան,
այլ լացելով լացէք նրա՛ վրայ,
ով կը հեռանայ եւ այլեւս չի դառնայ
ու չի տեսնի իր ժողովրդի երկիրը:
11 Այսպէս է ասում Տէրը Յոսիայի
որդի Յովակիմի մասին, որը թագաւորեց՝
յաջորդելով իր հայր Յոսիային եւ որը
այդտեղից դուրս էր եկել. «Նա այլեւս չի
վերադառնայ, 12 կը մեռնի այնտեղ,
որտեղ գերեցին նրան, այլեւս այս
երկիրը չի տեսնի»:
13 Վա՜յ նրան, ով կը կառուցի իր
տունը,
բայց ոչ արդարութեամբ,
եւ իր վերնայարկերը, բայց անիրաւ
կերպով:
Նրա մերձաւորը նրա համար ձրի
գործ կ'անի,
բայց նրա վարձը նա չի հատուցի
նրան:
14 Քեզ համար յարմարաւէտ տուն
չինեցիր՝
կառուցելով լուսամուտներով հովա-
սուն վերնատուն,
պատելով մայրի փայտի տախ-
տակներով եւ ծեփելով ձիւթով:
15 Եթէ դու մայրի փայտից կերտուած
քո հօր այս տան մէջ զայրացար,
ի՞նչ է, կարծում ես թագաւորելո՞ւ ես:
Թող ո՞չ ուտեն եւ ո՞չ խմեն,
որովհետեւ իրաւունքը, արդարու-
թիւնն ու բարութիւնը չճանաչեցին,
16 տնանկի իրաւունքը չպահեցին
եւ աղքատին չարդարացրին:
«Իսկ դա հէնց ինձ չճանաչել չի՞
նշանակում»,
– ասում է Տէրը:
17 Ահաւասիկ քո աչքերը եւ քո սիրտը
հակուած են ոչ թէ դէպի բարութիւն,
այլ՝ դէպի ագահութիւն,
դէպի անպարտ արիւնահեղութիւն,
դէպի անիրաւութիւն ու սպանութիւն:
18 Դրա համար էլ Տէրը Յուդայի
երկրի թագաւոր Յոսիայի որդի Յով-
ակիմի մասին այսպէս է ասում.
«Թող այդ մարդու վրայ չողբան եւ
չասեն՝ վա՜յ, վա՜յ եղբայր,
թող չկոծեն ու չասեն՝ վա՜յ, վա՜յ տէր,
վա՜յ, վա՜յ սիրելի:
19 Թող նա էշի թաղումով թաղուի,
թող նեխուի ու գցուի Երուսաղէմի
դարպասից այն կողմ»:

†Սրբայերէն՝ մի՛ յափշտակէ:

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՍԻՆ

20 Ե՛լ դէպի Լիբանան ու գուժի՛ր†,
ձայնդ արձակի՛ր դէպի Բասան,
աղաղա՛կ բարձրացրու ծովի այն
կողմը,
որովհետեւ քո բոլոր հոմանիները
միասին խորտակուեցին:
21 Խօսեցի քեզ հետ, երբ դու
սխալուեցիր‡
եւ ասացիր, թէ՝ քեզ չեմ լսի:
Քո մանկութիւնից սկսած դա է եղել
քո ճանապարհը,
քանզի ականջ չդրեցիր իմ ձայնին:
22 Քո բոլոր հովիւներին քամիները
պիտի քշեն,
ու քո բոլոր հոմանիները գերութեան
պիտի գնան,
որպէսզի այն ժամանակ ամաչես
եւ անարգուես քո բոլոր սիրելիներից:
23 Ո՛վ դու, որ Լիբանանում ես
բնակւում
եւ ամրացել ես մայրիների մէջ,
պիտի հեծեծես, երբ քեզ հասնեն
ցաւերն ու երկունքը,
ինչպէս ծննդկան կնոջը:

ՏԷՐԸ ԴԱՏՈՒՄ Է ՅԵՔՈՆԻԱՅԻՆ

24 «Կենդանի եմ ես, – ասում է Տէրը: –
Եթէ դու, Յուդայի երկրի արքայ
Յովակիմի որդի Յեքոնիա՛, իմ աջ ձեռ-
քին կնիք էլ դառնալու լինես, այդտեղից
էլ կը կորզեմ քեզ, 25 կը մատնեմ քեզ քո
անձը փնտռողների ձեռքը, նրա՛նց
ձեռքը, որոնց երեսից զարհուրում էիր,
բաբելացիների արքայ Նաբուքոդոնոսորի
ձեռքը եւ քաղդէացիների ձեռքը. 26 քեզ
ու քո մօրը կը նետեմ օտար երկիր, ուր
դու չես եղել, եւ դուք կը մեռնէք
այնտեղ: 27 Նրանք չեն վերադառնայ
այն երկիրը, ուր իրենք հոգով ուխտած
կը լինեն վերադառնալ, 28 քանզի ինքն
ու իր զաւակը ընկան օտար երկիր,
արհամարհուած բերանը տարագիր դար-
ձաւ, շպրտուելով անարգուեց Յեքոնիա
ասուած մարդը ինչպէս անպէտք ման,
շպրտուեց մի երկիր, որը չէր ճանաչում»:
29 Երկի՛ր, երկի՛ր, ո՛վ երկիր, լսի՛ր
Տիրոջ պատգամները: 30 Այսպէս է
ասում Տէրը. «Այդ մարդուն համարիր
տարագիր այր, թող նա իր տարիներին
սերունդ չտայ, թող նրա զաւակից
տղամարդ չաճի, որ նստի Դաւթի
աթոռին՝ իբրեւ Յուդայի երկրի տան
իշխան»:

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԵՒ ԱՐԴԱՐ ԹԱԳԱՒՈՐ

23 «Վա՜յ հովիւներին, որ կորցրին ու
ցրեցին քո արօտի ոչխարներին», –
ասում է Տէրը: 2 Ահա թէ ինչու Իսրայէլի
Տէր Աստուածն այսպէս է ասում այդ
հովիւների մասին, որ հովւում են իմ
ժողովրդին. «Դուք ցրեցիք իմ ոչխար-
ներին, հեռացրիք նրանց, չխնամեցիք
նրանց: Այժմ ահա ես վրէժ եմ լուծելու
ձեզնից՝ ըստ ձեր չար ընթացքի», –
ասում է Տէրը:
3 «Ես կ'ընդունեմ իմ ժողովրդի բոլոր
մնացորդներին ամէն մի երկրից, ուր
նրանց վտարել եմ, եւ նրանց կը
հաստատեմ իրենց արօտներում. 4 թող
աճեն ու բազմանան: Հովիւներ կը կար-
գեմ, որ հովուեն նրանց, եւ նրանք
այլեւս չեն վախենայ, չեն զարհուրի,
արհամարհուած չեն լինի», – ասում է
Տէրը:
5 «Ահա օրեր են գալու, – ասում է
Տէրը, –
ու ես Դաւթի համար ծնունդ եմ
տալու մի արդար շառաւիղի,
որ թագաւորելու է որպէս արքայ.
նա խելամիտ է լինելու,
իրաւունք ու արդարութիւն է պաշտ-
պանելու երկրի վրայ:
6 Նրա ժամանակ փրկուելու է Յու-
դայի երկիրը,
Իսրայէլը յոյսով է ապրելու:
Եւ նրա անունը, որով կոչելու է նրան
Տէրը, այս է՝ Յոսեդեկ, այսինքն՝
մարգարէների մէջ մեր արդարութիւնը:

†Սրեմիան իր խօսքն ուղղում է Երուսաղէմ
քաղաքին, որ այստեղ անձնաւորուած է:

‡Սրբայերէն՝ դու յաջողութեան մէջ էիր:

7 Ահա թէ ինչու օրեր են գալու, -
ասում է Տէրը, - երբ այլեւս չեն ասի, թէ՝
"Կենդանի է Տէրը, որն Իսրայէլի
ժողովրդին դուրս հանեց Եգիպտա-
ցիների երկրից", 8 այլ թէ՝ "Կենդանի է
Տէրը, որն Իսրայէլի բոլոր զաւակներին
դուրս հանեց հիւսիսի երկրից եւ այն
բոլոր երկրներից, ուր նրանց վտարել էր,
եւ վերստին պատսպարեց նրանց իրենց
երկրում"»:

ԵՐԵՄԻԱՆ ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ՄԱՍԻՆ

9 Մարգարէների համար սիրտս մէջս
կտոր-կտոր եղաւ,
ցնցուեցին բոլոր ոսկորներս.
ես դարձել եմ մի խեղճուած մարդ,
մի մարդ, որ գլուխը կորցրել է գինուց՝
Աստծու եւ նրա մեծավայելուչ փառքի
պատճառով[†],
10 քանզի երկիրը լցուել է շնացող-
ներով,
նզովքից երկիրը սուգ է բռնել,
անապատի արօտավայրերը չորացել
են.
չար է նրանց ընթացքը,
նրանց ուժն էլ այն չէ, ինչ պէտք է
լինի:
11 «Արդարեւ, մարգարէ ու քահանայ
պիղծ են դարձել.
իմ Տան մէջ անգամ ես տեսայ նրանց
չարութիւնները, - ասում է Տէրը: -
12 Ահա թէ ինչու նրանց ճանապարհը
իրենց համար սայթաքուն պիտի դառ-
նայ.
խաւարի մէջ պիտի գայթեն ու կոր-
ծանուեն,
որովհետեւ այն տարին, երբ պատ-
ժելու լինեմ,
չարիք պիտի բերեմ նրանց վրայ,
- ասում է Տէրը:
13 Նաեւ Շամրինի[‡] մարգարէների մէջ
տեսայ անօրէնութիւն,
քանզի Բահաղի անունից մարգա-
րէացան
եւ մոլորեցրին իմ ժողովրդին՝ Իսրա-
յէլի երկիրը:
14 Երուսաղէմի մարգարէների մէջ
աւելի զարհուրելի բաներ տեսայ,
քանզի նրանք շնանում ու գնում էին
սուտ աստուածների յետեւից
եւ զօրավիգ դառնում չար ձեռքերին,
որպէսզի ոչ մէկը յետ չդառնայ իր
չար ճանապարհից:
Ամէնքն ինձ համար Սոդոմ եղան,
իսկ նրա բնակիչները՝ Գոմոր»:
15 Դրա համար էլ Զօրութիւնների
Տէրն այսպէս է ասում մարգարէների
մասին.
«Ահաւասիկ ես դրանց ցաւեր եմ
տալու իբրեւ կերակուր,
դրանց խմեցնելու եմ լեղի ջուր,
որովհետեւ պղծութիւնն արար աշ-
խարհում տարածուեց Երուսաղէմի մար-
գարէներից»:
16 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Մի՛ լսէք այն մարգարէների խօս-
քերը,
որ ձեզ համար մարգարէութիւն են
անում.
դրանք փուչ բաներ են ասում ձեզ,
իրենց սրտի ցնորքներից են խօսում
եւ ոչ թէ Տիրոջ բերանից:
17 Տիրոջ խօսքի դէմ ըմբոստա-
ցածներին նրանք ասում են՝
"Խաղաղութի՛ւն լինի ձեզ".
բոլոր նրանց, ովքեր ընթանում են
ըստ իրենց կամակորութեան,
կամ իւրաքանչիւրին, ով ընթանում է
ըստ իր սրտի մոլորութեան,
ասում են՝ "Քո գլխին չարիք չի
գալու":
18 Իսկ ո՞վ հաւատարիմ մնաց Տիրոջ
խորհրդին
եւ անսաց ու հետեւեց նրա խօսքին:
Ո՞վ լսեց ու ականջ դրեց իմ[†]
խօսքին»:
19 Ահա մի դղրդոց, որ գալիս է
Տիրոջից,
նրա բարկութիւնը մրրկաշարժ պիտի

[†]Երրայերէն՝ սուրբ խօսքերի պատճառով:

[‡]Իմա՛ Սամարիայի

[†]Երրայերէն՝ նրա:

բարձրանայ ամբարիշտների վրայ,
20 պիտի դայ Տիրոջ ցասումը եւ
չնահանջի,
մինչեւ որ նա ի կատար ածի եւ
հաստատի իր սրտի փափագը.
եւ դա պիտի իմանան ու գիտակցեն
վերջին ժամանակներում:
21 «Ե՛ս չուղարկեցի այդ մար-
գարէներին,
սակայն նրանք գնում էին,
չխօսեցի նրանց հետ,
սակայն նրանք մարգարէութիւն էին
անում:
22 Եթէ իմ խորհրդին հաւատարիմ
մնային,
ապա իմ խօսքերը լսելի կը դարձնէին
իմ ժողովրդին,
յետ կը պահէին նրան իր չար
ճանապարհներից,
իր չար վարքից:
23 Ես մերձաւոր Աստուած եմ եւ ոչ թէ
հեռաւոր Աստուած, - ասում է Տէրը:
24 Եթէ մարդը թաքնուի թաքստոցում,
մի՞թէ ես նրան չեմ տեսնի,
- ասում է Տէրը:
Մի՞թէ երկինքն ու երկիրը ես չե՞մ
լցնում,
- ասում է Տէրը:
25 Ես լսեցի, թէ ինչ են խօսում
մարգարէները, որոնք սուտ մարգարէու-
թիւններ էին անում իմ անունով եւ
ասում՝ "Ես մի երազ, մի տեսիլ տեսայ":
26 Մինչեւ ե՞րբ պէտք է ստութիւնը
տեղ գտնի այդ մարգարէների սրտում,
որոնք մարգարէանում են. նրանք իրենց
սրտի ցանկութի՛ւնն են մարգարէանում,
27 մտածում են իրենց երազների միջո-
ցով, որ նրանցից ամէն մէկը պատմում է
իր ընկերոջը, մոռացութեան տալ իմ
ժողովրդին իմ օրէնքները, ինչպէս
նրանց հայրերը Բահաղի միջոցով մո-
ռացութեան տուին իմ անունը: 28 Այն
մարգարէն, որը երազ ունի, թող պատմի
իր երազը, իսկ ով որ իմ խօսքն ունի,
թող յայտնի իմ խօսքը ճշմարտութեամբ:
Ցորենի մօտ ի՞նչ է յարդը, - ասում է
Տէրը:
29 Իմ խօսքերն արդեօք կրակի նման
չե՞ն կամ մուրճի,
որ քար է կտրում:
30 Ահա դրա համար էլ ես դէմ եմ այդ
մարգարէներին, - ասում է Տէրը, -
նրանցից ամէն մէկն իմ խօսքերն է
գողանում: 31 Ահա ես դէմ եմ այդ
մարգարէներին, - ասում է Տէրը, -
որոնք իրենց լեզուից վանում են իմ
մարգարէութիւնը եւ իրենց քունն են
քնում[†]: 32 Ահա ես դէմ եմ այդ մար-
գարէներին, որոնք մարգարէանում են
սուտ երազներ, - ասում է Տէրը, - պատ-
մում են դրանց մասին եւ իրենց ստու-
թեամբ ու իրենց խաբէութեամբ մոլո-
րեցնում իմ ժողովրդին. բայց ես նրանց
չեմ ուղարկել, պատուէր չեմ տուել
նրանց, եւ նրանք որեւէ օգուտ չեն կա-
րող տալ այդ ժողովրդին, - ասում է
Տէրը:
33 Եւ եթէ այդ ժողովուրդը կամ որեւէ
մարգարէ եւ կամ քահանայ քեզ հարց
տան ու ասեն, թէ՝ "Ի՞նչ պատգամ է դա
Տիրոջ կողմից", ապա կ'ասես նրանց.
"Պատգամը ձեզ է վերաբերում, եւ ես
կործանելու եմ ձեզ", - ասում է Տէրը:
34 Մարգարէ լինի, քահանայ թէ ժո-
ղովուրդ, ով որ ասի՝ "Տիրոջ պատգամը",
այդ մարդուց եւ նրա ընտանիքից
վրէժխնդիր եմ լինելու: 35 Հապա ինչո՞ւ
ամէն ոք իր ընկերոջը եւ կամ ամէն մէկն
իր եղբօրը չի ասում նաեւ, թէ՝ "Ի՞նչ
պատասխան տուեց Տէրը, ի՞նչ խօսեց
Տէրը": 36 Այլեւս մի՛ անուանէք Տիրոջ
պատգամ, քանզի մարդու համար Տիրոջ
պատգամ է դառնում իր իսկ խօսքը:
Դուք աղաւաղել էք տուել կենդանի
Աստծու՝ Զօրութիւնների Տէր մեր Աստ-
ծու պատգամները: 37 Այսպէ՛ս ասացէք
մարգարէին. «Ի՞նչ պատասխան տուեց
քեզ Տէրը, ի՞նչ խօսեց Տէրը»: 38 Եթէ
Տիրոջ պատգամ էք ասելու, ապա դրա
համար Տէրն այսպէս է ասում. «Քանի
որ ասացիք այդ խօսքը՝ Տիրոջ պատգամ,
ես էլ ուղարկեցի ձեզ մօտ պատուիրելու՝
"Մի՛ ասէք Տիրոջ պատգամ": 39 Ահա թէ

[†]Երրայերէն՝ որոնք իրենց լեզուներն են գործի դնում եւ ասում՝ Նա ասաց:

ինչու ես ձեզ վերցնելու եմ իբրեւ աւար, իմ աչքի առաջ կործանելու եմ ե՛ւ ձեզ, ե՛ւ այդ քաղաքը, որ տուեցի ձեզ ու ձեր հայրերին: 40 Ձեզ վրայ յաւիտենական նախատինք եմ դնելու եւ յաւիտենական անարգանք, որ չեն մոռացուելու»:

ԵՐԿՈՒ ԿՈՂՈՎ ԹՈՒԶ

24 *Տէրն ինձ ցոյց տուեց թուզով լի երկու կողով, որոնք դրուած էին Տիրոջ տաճարի առաջ այն բանից յետոյ, երբ բաբելացիների արքայ Նաբուքոդոնոսորը Երուսաղէմից գերեց Ցուդայի երկրի արքայ Յովակիմի որդի Յեքոնիային, Ցուդայի երկրի իշխաններին, արհեստաւորներին, դարբիններին ու մեծամեծներին եւ տարաւ նրանց Բաբելոն: 2 Կողովներից մէկը լցուած էր անչափ քաղցր թուզով, ինչպիսին լինում է վաղահաս թուզը, իսկ երկրորդ կողովը՝ ժանտահամ թուզով, որն իր դառնութեան պատճառով չի ուտուում:*

Տէրն ինձ ասաց.

«Ի՞նչ ես տեսնում, Երեմիա՛»:

3 Ասացի. «Թուզ, քաղցր թուզ,

շատ քաղցր թուզ, նաեւ՝ ժանտ թուզ, անչափ ժանտ,

որ իր դառնութեան պատճառով չի ուտուում»:

4 Տէրը, խօսքն ուղղելով Երեմիային, ասաց. 5 «Այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի. ինչպէս այդ քաղցր թուզն է, այդպէս են ինձ համար Ցուդայի երկրի գերեալները, որոնց այդտեղից ուղարկեցի Քաղդէացիների երկիրը բարիք անելու համար. 6 եւ իմ աչքը պիտի պահեմ նրանց վրայ բարութեան համար, նրանց պիտի պատսպարեմ այս երկրում. պիտի կառուցեմ նրանց եւ ոչ թէ քանդեմ, պիտի տնկեմ նրանց եւ ոչ թէ արմատախիլ անեմ: 7 Ես նրանց այնպիսի սիրտ եմ տալու, որ ճանաչեն ինձ, թէ ես եմ Տէրը. թող նրանք ինձ համար ժողովուրդ լինեն, իսկ ես նրանց համար կը լինեմ Աստուած, որպէսզի նրանք իրենց ամբողջ սրտով ի՛նձ դառնան:

8 Իսկ ինչպէս այդ ժանտ թուզը, որն իր դառնութեան պատճառով չի ուտուում, այդ վիճակին պիտի մատնեմ Ցուդայի երկրի արքայ Սեդեկիային, նրա մեծամեծներին, Երուսաղէմում մնացածներին, այդ երկրում մնացածներին եւ Եգիպտոսում բնակուողներին: 9 Դրանց պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագաւորութիւնների մէջ՝ նախատինքի, անարգանքի, ատելութեան ու անէծքի արժանացնելով ամենուրեք, ուր էլ որ վտարեմ դրանց: 10 Դրանց վրայ պիտի ուղարկեմ սուր, սով ու մահ, մինչեւ որ անհետանան այն երկրից, որը տուեցի իրենց եւ իրենց հայրերին»:

ԹՇՆԱՄԻՆ ՀԻՍՈՒՍԻՑ

25 *Այս է Երեմիային ուղղուած խօսքը՝ Ցուդայի երկրի ժողովրդի մասին, ասուած Ցուդայի արքայ Յոսիայի որդի Յովակիմի չորրորդ տարում, որ համապատասխանում է բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի առաջին տարուն, – 2 այն խօսքը, որ յայտնեց Երեմիա մարգարէն Ցուդայի երկրի համայն ժողովրդին եւ Երուսաղէմի բնակիչներին՝ ասելով. 3 «Ցուդայի երկրի արքայ Ամոնի որդի Յոսիայի տասներեքերորդ տարուց մինչեւ այսօր, այսինքն՝ քսաներեք տարի, Տէրը խօսեց ինձ հետ, ու ես վաղ առաւօտից իսկ խօսում էի ձեզ հետ, ասում, բայց դուք չլսեցիք»: 4 «Վաղօրօք արձակեցի ու ձեզ մօտ ուղարկեցի իմ ծառաներին՝ մարգարէներին, բայց դուք չլսեցիք, չանսացիք ու ձեր ականջներով չլսեցիք: 5 Ասում էի. "Ամէնքդ դարձէ՛ք ձեր չար ճանապարհից, ձեր չար ընթացքից, որպէսզի բնակուէք այդ երկրում, որ յաւիտեանս յաւիտենից տուել եմ ձեզ ու ձեր հայրերին: 6 Զգնա՛ք օտար աստուածների յետեւից՝ նրանց ծառայելու եւ երկրպագելու համար, չբարկացնէ՛ք ինձ ձեր ձեռքի գործերով, որպէսզի չչարչարեմ ձեզ": 7 Բայց դուք ինձ չլսեցիք, – ասում*

է Տէրը, – քանզի բարկացրիք ինձ ձեր ձեռքի գործերով, որպէսզի չարչարեմ ձեզ»:

8 Դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը. «Քանի որ չհաւատացիք իմ խօսքերին, 9 ահա ես կ'ուղարկեմ, կ'առնեմ հիւսիսի բոլոր ցեղերին, – ասում է Տէրը, – նաեւ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքային՝ իմ ծառային, եւ նրանց կը բերեմ այդ երկրի վրայ, դրա բնակիչների վրայ, այն բոլոր ցեղերի վրայ, որ դրա շուրջն են, կը բնաջնջեմ դրանց, կը մատնեմ աւարի ու ապականութեան, սուլոցի ու յաւիտենական նախատինքի: 10 Դրանց միջից կը վերացնեմ ուրախութեան ձայնը եւ ձայնը ցնծութեան, փեսայի ձայնը եւ ձայնը հարսի, երկանքի ձայնը եւ լոյսը ճրագի: 11 Այդ ողջ երկիրը կը վերածուի աւերի ու ապականութեան, նրա բնակիչները եօթանասուն տարի կը ծառայեն այդ ցեղերին եւ բաբելացիների արքային: 12 Իսկ երբ լրանայ եօթանասուն տարին, վրէժխնդիր կը լինեմ բաբելացիների արքայից եւ այդ ազգից՝ իրենց անօրէնութիւնների համար, – ասում է Տէրը, – ինչպէս եւ Քաղդէացիների երկրից. դրանք կը դարձնեմ յաւիտենապէս ամայի: 13 Այդ ամբողջ երկրի վրայ կը բերեմ այն ամէնը, ինչ ասել եմ նրա մասին ըստ այն ամենի, ինչ գրուած է այս գրքում, որ մարգարէացել է Երեմիան բոլոր ազգերի մասին, որոնց ծառայել են նրանք: 14 Դրանք բազում ցեղեր են եւ մեծամեծ թագաւորութիւններ. նրանց ես պիտի հատուցեմ ըստ իրենց անօրէնութիւնների, ըստ իրենց ձեռքի գործերի»:

ՏԻՐՈՋ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ

15 Այսպէս է ասում ինձ Տէր Աստուածն Իսրայէլի. «Անխառն[†] գինու այս բաժակը վերցրո՛ւ իմ ձեռքից եւ խմեցրո՛ւ բոլոր ազգերին, որոնց մօտ կ'ուղարկեմ քեզ. 16 նրանք կը խմեն այն ցմրուր եւ խելքները կը թռցնեն այն սրի ահից, որ ես նրանց վրայ եմ ուղարկելու»:

17 Ես վերցրի բաժակը Տիրոջ ձեռքից եւ խմեցրի այն բոլոր ազգերին, որոնց մօտ ուղարկեց ինձ Տէրը՝ 18 Երուսաղէմին եւ Ցուդայի երկրի քաղաքներին, նրա թագաւորներին եւ նրա իշխաններին՝ մատնելու դրանք աւերի ու անապատի, սուլոցի ու անէծքի, ինչպէս որ այս օրերում են, 19 նաեւ եգիպտացիների արքայ Փարաւոնին, նրա պաշտօնեաներին եւ նրա մեծամեծներին, նրա ամբողջ ազգին եւ ամբողջ խառնիճաղանջ զօրքին, 20 նաեւ կղզու[†] բոլոր թագաւորներին եւ այլազգիների երկրի բոլոր թագաւորներին՝ Ասկաղոնին ու Գազային, Ակկարոնին ու Ազոտոսի մնացորդներին, 21 եդոմացիներին, մովաբացիներին եւ ամոնացիներին, 22 նաեւ Տիւրոսի բոլոր թագաւորներին, սիդոնացիների բոլոր թագաւորներին եւ այն կղզու թագաւորներին, որ գտնուում է ծովի միւս կողմում, 23 Դեդանին, Թեմանին, Բուկին եւ բոլոր նրանց, ովքեր երեսներն են ածիլում, 24 նաեւ արաբացիների բոլոր թագաւորներին եւ անապատում ապրող խառնիճաղանջ ցեղերի բոլոր թագաւորներին. 25 նաեւ Զամբրիի բոլոր թագաւորներին, Ելամի բոլոր թագաւորներին ու պարսից բոլոր թագաւորներին. 26 նաեւ միմեանցից հեռու կամ իրար մօտ հիւսիս-արեւելքի բոլոր թագաւորներին, ինչպես նաեւ երկրի բոլոր թագաւորներին, որոնք կան աշխարհի երեսին: Իսկ ամենավերջում պիտի խմի Սիսակ թագաւորը:

27 «Ապա կ'ասես նրանց. այսպէս է ասում Իսրայէլի Ամենակալ Տէր Աստուածը. "Պիտի խմէք ու հարբէք, յիմարանաք ու կործանուէք եւ ոտքի չէք կանգնելու այն սրի պատճառով, որ ես ուղարկելու եմ ձեզ վրայ": 28 Իսկ երբ այնպէս լինի, որ խմելու համար քո ձեռքից չկամենան ընդունել բաժակը, կ'ասես նրանց. այսպէս է ասում Զօրու-

[†]Սրբայերէն՝ իմ բարկութեան:

[†]Սրբայերէն՝ Հուսի երկրի:

Թիւնների Տէրը. “Խմելով պիտի հարբէք,
29 որովհետեւ չարչարանքի սկիզբը դնելու եմ այն քաղաքից, որի վրայ դրուած է իմ անունը: Իսկ դուք մաքո՞ւր պիտի դուրս գաք: Ո՛չ, մաքուր չէք դուրս գալու, քանզի ես սրի կոչ արձակեցի ամենքի դէմ, ովքեր բնակւում են երկրի վրայ”, – ասում է Զօրութիւնների Տէրը:
30 Դու էլ նրանց համար կը մարգարէանաս իմ այս բոլոր պատգամները եւ կ'ասես նրանց.
“Տէրն իր սուրբ բարձունքից հրաման պիտի տայ,
իր ձայնը, հրամանի իր խօսքը պիտի արձակի իր տեղից,
եւ նրանք, այգեկութ անողների պէս,
երկրի բոլոր բնակիչներին պատասխան պիտի տան,
թէ մահը վրայ հասաւ երկրից,
31 քանզի Տէրն ազգերի մէջ դատաստան պիտի տեսնի,
պիտի դատի ամէն մարդու,
եւ ամբարիշտները սրի են մատնուելու”», – ասում է Տէրը:
32 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
«Ահա չարիքները պիտի անցնեն մի ազգից միւսին,
երկրի ծագերից մեծ մրրիկ պիտի բարձրանայ,
33 եւ Աստծու ամէն օր աշխարհի մի ծայրից մինչեւ միւսը
պիտի գտնուեն Տիրոջ կողմից խոցուածներ:
Նրանք կոծի չեն արժանանալու,
չեն հաւաքուելու,
ինչպէս աղբ՝ թափուած են մնալու դաշտի երեսին:
34 Գո՛յժ բարձրացրէք եւ աղաղակեցէ՛ք, ո՛վ հովիւներ,
ողբացէ՛ք, ոչխարների հօտի խոյե՛ր,
որովհետեւ հասան ձեր մորթուելու եւ ցիրուցան լինելու օրերը.
պիտի զոհ գնաք ինչպէս ընտիր խոյեր†:
35 Հովիւները փախչելու տեղ չեն գտնելու,
իսկ ոչխարների հօտի խոյերը՝ փրկութիւն:
36 Ահա լսւում է հովիւների գոյժի ձայնը,
ոչխարների հօտի խոյերի աղաղակը,
քանզի Տէրը ոչնչացրեց նրանց արօտները:
37 Տիրոջ բարկութեան ու ցասման պատճառով
վերացաւ խաղաղութեան գեղեցկութիւնը:
38 Նրանք լքեցին երկիրը,
ինչպէս առիւծն՝ իր որջը,
եւ նրանց երկիրն անապատ դարձաւ
ահեղ սրի բարկութիւնից ու ցասումից,
Տիրոջ բարկութիւնից ու ցասումից»:

ԵՐԵՄԻԱՆ ՄԱՀՈՒԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

26 Այս է Տիրոջ խօսքը՝ ասուած Ցուդայի երկրի արքայ Յոսիայի որդի Յովակիմի Թագաւորութեան սկզբում. 2 այսպէս է ասում Տէրը.
«Կանգնի՛ր Տիրոջ Տան գաւթում եւ Ցուդայի երկրի ողջ ժողովրդին, որ երկրպագելու է գալիս Տիրոջ տունը, յայտնի՛ր այն բոլոր բաները, որ պատուիրեցի քեզ մարգարէանալու նրանց համար: Ոչ մի բան չպակասեցնես: 3 Թերեւս լսեն, ու ամէն մէկը յետ կանգնի իր չար ճանապարհից, ես էլ յետ կանգնեմ այն չարութիւններից, որ մտածում եմ անել նրանց՝ ի պատասխան իրենց չար ընթացքի»:
4 Ապա կ'ասես նրանց. այսպէս է ասում Տէրը. «Եթէ ինձ չլսէք, չընթանաք ձեզ համար կարգած իմ օրէնքով, 5 ականջ չդնէք իմ ծառայ մարգարէների խօսքերին, որոնց ես կանխաւ ուղարկեցի ձեզ մօտ, – ուղարկեցի, բայց դուք չլսեցիք, – 6 ապա այդ տունը կը դարձնեմ Սելոմի նման, իսկ այս քաղաքն աշխարհի բոլոր ցեղերի անէծքին կը դատապարտեմ»:
7 Տիրոջ Տան մէջ այս խօսքերն ասելիս՝ քահանաները, սուտ մարգարէներն ու ողջ ժողովուրդը լսեցին Երեմիային:

8 Իսկ երբ Երեմիան դադարեց խօսելուց՝ ամբողջ ժողովրդին ասելով ամէն բան այնպէս, ինչպէս նրան հրամայել էր Տէրը, նրան բռնեցին քահանաները, սուտ մարգարէներն ու ողջ ժողովուրդը եւ ասացին.
9 «Դու մահ պիտի գտնես, որովհետեւ Տիրոջ անունից մարգարէացար եւ ասացիր, թէ այս Տունը պիտի դառնայ Սելոմի նման, եւ այս քաղաքը պիտի ամայանայ բնակիչներից»:
Ժողովուրդը Տիրոջ Տան մէջ կուտակուեց Երեմիայի շուրջը: 10 Ցուդայի երկրի իշխանները, լսելով այս բաները, Թագաւորի պալատից եկան Տիրոջ Տունը եւ նստեցին Տիրոջ Տան նոր դարպասի առաջ: 11 Քահանաներն ու սուտ մարգարէներն իշխաններին եւ ողջ ժողովրդին ասացին.
«Այդ մարդը մահուան դատավճռի է արժանի, որովհետեւ, ինչպէս ձեր իսկ ականջներով լսեցիք, մարգարէացաւ այս քաղաքի մասին»:
12 Իսկ Երեմիան բոլոր իշխաններին եւ ողջ ժողովրդին ասաց.
«Տէրն ինձ ուղարկեց այս Տան եւ քաղաքի վերաբերեալ մարգարէանալու այն բոլոր խօսքերը, որ լսեցիք. 13 ուրեմն ձեր ճանապարհներին ու ձեր գործերին ուղի՛ղ ընթացք տուէք եւ ակա՛նջ դրէք ձեր Տէր Աստծու ձայնին, որպէսզի Տէրը յետ կանգնի այն չարութիւններից, որոնց մասին յայտնեց ձեզ: 14 Ես հաւասիկ ձեր ձեռքին եմ. վարուեցէ՛ք ինձ հետ, ինչպէս ձեզ համար օգտակար կամ լաւ կը համարէք†: 15 Բայց լա՛ւ իմացէք, որ եթէ դուք ինձ սպանէք, անմեղ արեան տակ պիտի ընկնէք դուք եւ այս քաղաքն ու իր բնակիչները, քանզի արդարեւ Տէրն ինձ ուղարկեց ձեզ մօտ՝ ձեր ականջին ասելու այս բոլոր խօսքերը»:
16 Այն ժամանակ իշխաններն ու ողջ ժողովուրդն ասացին քահանաներին եւ սուտ մարգարէներին.
«Այդ մարդը մահուան դատավճռի ենթակայ չէ, որովհետեւ Տէր Աստծու անունից խօսեց մեզ հետ»:
17 Երկրի ծերերից մի քանի մարդիկ ոտքի ելան եւ ասացին հաւաքուած ողջ ժողովրդին.
18 «Ցուդայի երկրի արքայ Եզեկիայի ժամանակ Միքիա Մորստացին մարգարէացել է եւ ասել Ցուդայի երկրի ամբողջ ժողովրդին.
“Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
Սիոնն, ինչպէս ագարակ,
արօրով պիտի հերկուի,
Երուսաղէմը պիտի վերածուի այգեպանների հիւղակների,
իսկ այդ Տան լեռը՝ մայրու անտառի”:
19 Բայց արդեօք Ցուդայի երկրի Եզեկիա արքան եւ համայն Հրէաստանը դրա համար նրան սպանեցի՞ն. մի՞թէ չվախեցա՞ն Տիրոջից ու չխնդրեցի՞ն Տիրոջը. եւ Տէրը հրաժարուեց այն բոլոր չարութիւններից, որ ասել էր նրանց դէմ: Իսկ մենք ինքներս մեծ չարիք ենք բերելու մեզ”»:
20 Մի մարդ էլ կար՝ կարիաթարիմցի Սամէայի որդի Ուրիան, որ մարգարէութիւն արեց Տիրոջ անունից. մարգարէութիւն արեց այս քաղաքի ու այս երկրի վերաբերեալ՝ յարեւ նման Երեմիայի բոլոր ասածներին: 21 Նրա բոլոր խօսքերը լսեցին Յովակիմ արքան, նրա բոլոր մեծամեծները եւ բոլոր իշխանները: Նրանք ուզում էին սպանել նրան: Ուրիան, լսելով, վախեցաւ ու փախաւ գնաց Եգիպտացիների երկիրը: 22 Իսկ Յովակիմ արքան մարդիկ ուղարկեց Եգիպտոս. նա Աքորորի որդի Եղնաթանին մի քանի մարդկանց հետ ուղարկեց Եգիպտոս: 23 Նրանք հանեցին նրան այնտեղից եւ բերին Յովակիմ արքայի մօտ. սա սրով սպանեց նրան եւ գցեց հասարակաց գերեզմանոցը:
24 Բայց Սափանի որդի Աքիկամի բազուկը Երեմիայի հետ էր, որ չլինի թէ նա ժողովրդի ձեռքը մատնուի, ու սպանեն նրան:

†Եբրայերէն՝ պատուական անօր:

†Եբրայերէն՝ ձեր աչքին պատշաճ ու շիտակ թուացողն արէ՛ք ինձ համար:

ԵՐԵՄԻԱՅԻ ԿՐԱԾ ԼՈՒԾՆ ՈՒ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ

27 Այս է Տիրոջ խօսքը՝ ասուած Երեմիային Ցուդայի երկրի արքայ Յովսիայի որդի Յովակիմի թագաւորութեան սկզբում:
2 Տէրն այսպէս է ասում ինձ.
«Քեզ համար կապանքներ ու լո՛ւծ պատրաստիր եւ գցի՛ր պարանոցդ:
3 Դրանցից ուղարկի՛ր նաեւ եդոմայեցիների թագաւորին եւ մովաբացիների թագաւորին, ամոնացիների թագաւորին, Տիւրոսի թագաւորին եւ սիդոնացիների թագաւորին՝ նրանց դեսպանների միջոցով, որոնք գալիս են Երուսաղէմ Ցուդայի երկրի արքայ Սեդեկիայի մօտ:
4 Նրանց կը պատուիրես յայտնելու իրենց տէրերին, թէ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. այսպէս կ'ասէք ձեր տէրերին.
5 «Ես իմ մեծ զօրութեամբ եւ յաղթ բազկով ստեղծեցի երկիրը, մարդկանց, անասուններին ու այն ամէնը, ինչ կայ երկրի երեսին. ես այն կը տամ նրան, ով հաճելի է իմ աչքին:
6 Արդ, ես ինքս բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի՝ իմ ծառայի ձեռքը տուեցի ամբողջ երկիրը, տուեցի նաեւ տափաստանների գազաններին, որ ծառայեն նրան:
7 Ու բոլոր ազգերը պիտի ծառայեն նրան, նաեւ նրա որդիներին եւ նրա որդոց որդիներին, մինչեւ որ գայ նրա եւ նրա երկրի վրայ իմ բարկանալու ժամանակը: Նրան պիտի ծառայեն բազում ազգեր եւ մեծամեծ թագաւորներ:
8 Իսկ եթէ լինեն ազգեր ու թագաւորութիւններ, որոնք չենթարկուեն բաբելացիների արքայ Նաբուքոդոնոսորին, անմիջապէս իրենց պարանոցները չդնեն բաբելացիների արքայի լծի տակ, այդպիսի ազգերին սրով, սովով ու մահուամբ պիտի պատժեմ, - ասում է Տէրը, - մինչեւ որ ոչնչացուեն նրա ձեռքով:
9 Եւ դուք մի՛ լսէք ձեր մարգարէներին ու ձեր գուշակներին, ձեր երազատեսներին ու ձեր վհուկներին, ձեր հաւահմաներին եւ ձեր կախարդներին, որոնք ձեզ ասում են, թէ՝ "Չենթարկուէ՛ք բաբելացիների արքային",
10 քանզի դրանք ձեզ համար սուտ մարգարէութիւն են անում, որպէսզի հեռացնեն ձեզ ձեր երկրից, որպէսզի ցրիւ տամ ձեզ, ու դուք կորչէք:
11 Իսկ այն ազգը, որն իր պարանոցը կը դնի բաբելացիների արքայի լծի տակ եւ կ'ենթարկուի նրան, կը թողնեմ իր երկրում, - ասում է Տէրը. - կը մշակի այն եւ կը բնակուի այնտեղ»:
12 Այս բոլոր բաները մէկ առ մէկ յայտնեցի նաեւ Ցուդայի երկրի արքայ Սեդեկիային՝ ասելով.
«Ձեր պարանոցները դրէ՛ք բաբելացիների արքայի լծի տակ, ծառայեցէ՛ք նրան ու նրա ազգին, որպէսզի ապրէք:
13 Ինչի՞ համար սրով, սովով ու մահով մեռնէք դու եւ քո ժողովուրդը, ինչպէս այն ազգը, որը չի ուզի ծառայել բաբելացիների արքային, եւ որի մասին խօսեց Տէրը:
14 Մի՛ լսէք այն մարգարէների խօսքերը, որոնք ձեզ ասում են, թէ՝ "Չենթարկուէ՛ք բաբելացիների արքային". նրանք սուտ մարգարէութիւն են անում ձեզ համար:
15 «Ե՛ս չեմ ուղարկել նրանց, - ասում է Տէրը, - իսկ նրանք իմ անունից սուտ մարգարէութիւն են անում, միայն թէ կորստի մատնեն ձեզ: Դուք էլ, ձեր մարգարէներն էլ, որ ձեզ համար անտեղի ու սուտ մարգարէութիւն են անում, կորստեան էք դատապարտուելու»:
16 Ինչ որ խօսեցի, կը յայտնես նաեւ քահանաներին ու համայն ժողովրդին, թէ այսպէս է ասում Տէրը.
«Ականջ մի՛ դնէք այն մարգարէների խօսքերին, որ մարգարէութիւն են անում ձեզ համար եւ ասում. "Ահա Տիրոջ Տան սպասքը այժմ եւեթ Բաբելոնից պիտի վերադարձուի": Բայց դա զուր են մարգարէանում ձեզ համար. ե՛ս չեմ ուղարկել նրանց:
17 Մի՛ լսէք նրանց, այլ ծառայեցէ՛ք բաբելացիների արքային, որպէսզի ապրէք: Ինչո՞ւ այս քաղաքն աւերակ դառնայ:
18 Եթէ մարգարէներ են, ու նրանց մէջ կայ Տիրոջ խօսքը, թող գան դէմս կանգնեն»:

Տէրն այսպէս է ասում. «Եւ մնացած սպասքը, որ չյափշտակեց բաբելացիների արքան, երբ Յեքոնիային գերի վարեց Երուսաղէմից, պիտի Բաբելոն տարուի», - ասում է Զօրութիւնների Տէրը:
«Իսկ այն սպասքի մասին, որոնք, - ասում է Զօրութիւնների Տէրը, - մնացին Տիրոջ Տանը եւ Ցուդայի երկրի թագաւորի տանը, Երուսաղէմից Բաբելոն նրանց չտարուելու մասին,
19 սիւների մասին, մեծ աւազանի մասին, խարիսխների ու անօթների մասունքների մասին, որ մնացին այս քաղաքում,
20 որոնք չյափշտակեց բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան, երբ ինքը Ցուդայի երկրի արքայ Յովակիմի որդի Յեքոնիային եւ Ցուդայի երկրի ու Երուսաղէմի ողջ ազատանուն գերի տարաւ Երուսաղէմից Բաբելոն, -
21 ահա այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, Տիրոջ Տանը, Ցուդայի երկրի թագաւորի տանը եւ Երուսաղէմում մնացած այդ սպասքի մասին.
22 «Թող դրանք Բաբելոն տարուեն ու այնտեղ մնան մինչեւ այն օրը, երբ այցելութիւն կը տամ նրանց»: Այսպէս է ասում Տէրը. «Դուրս կը հանեմ դրանք եւ կը վերադարձնեմ այստեղ»:

ԵՐԵՄԻԱՆ ԵՒ ԱՆԱՆԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ

28 Այդ նոյն տարում, Ցուդայի երկրի արքայ Սեդեկիայի թագաւորութեան սկզբում, չորրորդ տարուայ հինգերորդ ամսին, Ազորի որդին՝ սուտ մարգարէ Անանիան, որ Գաբաւոնից էր, Տիրոջ Տանը, քահանաների եւ ողջ ժողովրդի առաջ, ասաց ինձ, թէ
2 այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Բաբելացիների արքայի լուծը պիտի խորտակուի.
3 երկու տարուց յետոյ ես այստեղ պիտի վերադարձնեմ Տիրոջ Տան այն ամբողջ սպասքը, որ մի ժամանակ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան յափշտակել էր այստեղից եւ տարել Բաբելոն.
4 նաեւ Ցուդայի երկրի արքայ Յովակիմի որդի Յեքոնիային եւ Հրէաստանի բոլոր գերիներին, որոնք տարուեցին Բաբելոն, ես պիտի վերադարձնեմ այս վայրերը, - ասում է Տէրը, - թէ՛ Յեքոնիային եւ թէ՛ Ցուդայի երկրի գերեալներին, քանզի պիտի խորտակեմ բաբելացիների արքայի լուծը»:
5 Իսկ Երեմիա մարգարէն Տիրոջ Տանը գտնուող քահանաների ներկայութեամբ ամբողջ ժողովրդի առաջ ասաց սուտ մարգարէ Անանիային:
6 «Արդարեւ, թող այդպէս անի Տէրը. թող հաստատի քո խօսքը, որ մարգարէացար այս Տան սպասքը եւ բոլոր գերիներին Բաբելոնից այստեղ վերադարձնելու մասին:
7 Սակայն լսեցէ՛ք Տիրոջ պատգամները, որ ես կ'ասեմ ձեր ականջներին եւ ամբողջ ժողովրդի ականջներին:
8 Այն մարգարէները, որոնք ինձնից ու քեզնից առաջ միշտ էլ եղել են, բազում երկրների եւ մեծամեծ թագաւորութիւնների համար գուշակել են պատերազմ, չարիք ու մահ:
9 Իսկ այն մարգարէն, որ խաղաղութիւն է գուշակում, եւ այդ մարգարէի խօսքը կատարւում է, ապա այդ մարգարէին ընդունում են իբրեւ մէկին, որին իսկապէս Տէրն է ուղարկել նրանց մօտ»:
10 Այն ժամանակ Անանիա մարգարէն ողջ ժողովրդի առաջ Երեմիայի պարանոցից վերցրեց լուծը եւ խորտակեց:
11 Անանիան համայն ժողովրդի ներկայութեամբ ասաց. «Այսպէս է ասում Տէրը.
"Երկու տարուց յետոյ այսպէս պիտի խորտակուի բաբելացիների արքայ Նաբուքոդոնոսորի լուծը բոլոր ազգերի պարանոցներից"»:
12 Եւ Երեմիա մարգարէն գնաց իր ճանապարհով:
13 Այն բանից յետոյ, երբ Անանիա մարգարէն Երեմիա մարգարէի պարանոցից խորտակեց լուծը, Տէրը խօսքն ուղղեց Երեմիային՝ ասելով.
«Գնա խօսի՛ր Անանիայի հետ եւ ասա՛, թէ այսպէս է ասում Տէրը. "Փայտէ լուծը դու խորտակեցիր, բայց նրա փոխարէն ես երկաթէ լուծ պիտի շինեմ"»:

14 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Երկաթէ լուծ դրի այդ բոլոր ազգերի
պարանոցին՝ հպատակուելու բաբելա-
ցիների Նաբուքոդոնոսոր արքային. եւ
նրանք պիտի ծառայեն նրան. նաեւ
տափաստանների գազաններին ենթար-
կեցի նրան»:
15 Իսկ Երեմիա մարգարէն ասաց
Անանիա մարգարէին.
«Այժմ լսի՛ր, Անանիա՛. Տէրը քեզ չի
ուղարկել, եւ դու իզուր փուչ բաների
համար յոյս տուիր այդ ժողովրդին:
16 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում.
"Ահա ես վռնդելու եմ քեզ երկրի երեսից:
Այս տարուայ մէջ իսկ պիտի մեռնես
դու, որովհետեւ հակառակ բաներ խո-
սեցիր Տիրոջ անունից"»:
17 Եւ Անանիա մարգարէն նոյն այդ
տարուայ մէջ, եօթներորդ ամսին, մե-
ռաւ:

ԵՐԵՄԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐԻՆԵՐԻՆ

29 Սրանք են այն նամակի խօսքերը,
որ Երեմիա մարգարէն Երուսաղէմից
ուղարկեց գերութեան մէջ գտնուող ծե-
րերին, քահանաներին եւ սուտ մարգա-
րէներին: Սոյն նամակը յղուած էր
Բաբելոն՝ գերիներին եւ առհասարակ
ժողովրդին, որոնց Նաբուքոդոնոսորը
գերեվարեց Երուսաղէմից Բաբելոն, 2 Ցե-
քոնիա արքային եւ տիկնոջը, ներքի-
նիներին ու Ցուդայի երկրի իշխաններին,
ինչպէս եւ ողջ ազատանուն, արհես-
տաւորներին ու դարբիններին Երուսա-
ղէմից տանելուց յետոյ: 3 Նամակն
ուղարկուած էր Սափանի որդի Ելարիայի
եւ Քեղկիայի որդի Գամարիայի ձեռքով,
որոնց Սեդեկիա արքան Բաբելոն ուղար-
կեց բաբելացիների արքայ Նաբուքո-
դոնոսորի մօտ՝ յայտնելով.
4 «Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, գերիներիդ
մասին, որ Երուսաղէմից գերեվարուեցիք
Բաբելոն.
5 "Տնե՛ր շինեցէք եւ բնակուեցէ՛ք, այ-
գինե՛ր տնկեցէք եւ կերէ՛ք դրանց
պտուղները, 6 կի՛ն առէք, եւ թող ծնուեն
տղաներ ու աղջիկներ, ձեր տղաների
համար կի՛ն առէք, իսկ ձեր աղջիկներին
մարդո՛ւ տուէք, եւ թող ծնուեն տղաներ
ու աղջիկներ, բազմացէ՛ք այդտեղ եւ մի՛
նուազէք: 7 Խաղաղութեա՛մբ ապրեցէք
այդ երկրում†, ուր գերեվարել տուեցի
ձեզ, այդ երկրի համար աղո՛թք արէք
Տիրոջը, որովհետեւ նրա խաղաղու-
թեամբ ձեզ համար եւս խաղաղութիւն
կը լինի"»:
8 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Թող ձեզ չհրապուրեն ձեր սուտ
մարգարէները, որոնք ձեր մէջ են, նաեւ
ձեր գուշակները, ուշք մի՛ դարձրէք ձեր
երազներին, որ դուք տեսնում էք, 9 ո-
րովհետեւ նրանք սուտ մարգարէութիւն
են անում իմ անունից, իսկ ես նրանց
չեմ ուղարկել», – ասում է Տէրը:
10 Այսպէս է ասում Տէրը.
«Երբ որ մօտենայ Բաբելոնի եօթա-
նասուն տարին լրանալու ժամանակը, ես
այցի կը գամ ձեզ եւ կը հաստատեմ ձեր
մասին իմ բարի խօսքերը՝ վերադարձ-
նելու ձեզ այս վայրերը, 11 քանզի ե՛ս
միայն գիտեմ իմ մտադրութիւնները, որ
խորհում եմ եւ պիտի խորհեմ ձեր մա-
սին, – ասում է Տէրը. – խաղաղութեա՛ն
մտադրութիւն, եւ ոչ թէ չարութեան:
Դրանից յետոյ ես յոյս կը տամ ձեզ, 12 եւ
դուք կը կանչէք ինձ, կը գնաք եւ
կ'աղօթէք ինձ, ու ես կը լսեմ ձեզ: 13 Կը
փնտռէք ինձ եւ կը գտնէք, որովհետեւ
ինձ փնտռելու էք ձեր ամբողջ սրտով:
14 Ես կ'երեւամ ձեզ, – ասում է Տէրը, –
եւ կը վերացնեմ ձեր գերութիւնը. կը
հաւաքեմ ձեզ բոլոր ազգերի միջից եւ
բոլոր վայրերից, ուր ցրեցի ձեզ, – ասում
է Տէրը, – եւ կը վերադարձնեմ ձեզ
այնտեղ, որտեղից գերեվարել տուեցի
ձեզ, 15 քանի որ դուք ասելու էք, թէ՝
"Տէրը մեզ համար մարգարէներ կարգեց
նաեւ Բաբելոնում"»:
16 Այսպէս է ասում Տէրը թագաւորի

†Եբրայերէն՝ այն քաղաքի խաղաղութիւնը
փնտռեցէք:

մասին, որ նստում է Դաւթի աթոռին,
ամբողջ ժողովրդի մասին, որ բնակւում
է այդ քաղաքում, ձեր եղբայրների
մասին, որոնք ձեզ հետ գերութեան
չգնացին:
17 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Ահաւասիկ ես նրանց մէջ ուղարկում
եմ սով, սուր եւ մահ: Նրանց պիտի
դարձնեմ գարշ ու ժանտ թուզի պէս, որ
իր դառնութեան պատճառով չի ուտ-
ւում: 18 Նրանց պիտի հալածեմ սրով,
սովով ու մահով, նրանց պիտի մատնեմ
աշխարհի բոլոր թագաւորութիւնների
ցասումին, նզովքին, ապականութեանը,
սուլոցի ու նախատինքի՝ այն բոլոր ազ-
գերի մէջ, ուր պիտի ցրեմ նրանց, 19 ո-
րովհետեւ նրանք չանսացին իմ խօս-
քերին, – ասում է Տէրը. – ես նրանց մօտ
ուղարկեցի իմ ծառաներին՝ մարգա-
րէներին, կանխապէ՛ս ուղարկեցի, բայց
դուք չլսեցիք, – ասում է Տէրը: –
20 Իսկ դուք, բոլո՛ր գերիներդ, որոնց
ուղարկել եմ Երուսաղէմից Բաբելոն,
լսեցէ՛ք Տիրոջ խօսքը. 21 այսպէս է ասում
Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աս-
տուածը, Ուլկիի որդի Աքիաբի եւ Մասսի
որդի Սեդեկիայի մասին, որոնք սուտ
մարգարէացան իմ անունից.
«Ահաւասիկ ես նրանց կը յանձնեմ
բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի
ձեռքը, որը նրանց կը սպանի ձեր աչքի
առաջ: 22 Եւ նրանցից այս անէծքը կը
մնայ Ցուդայի երկրի բոլոր գերիների
մէջ, որոնք գտնւում են Բաբելոնում:
Նրանք պիտի ասեն՝ "Թող Տէրը քեզ անի
այնպէս, ինչպէս արեց Սեդեկիային եւ
Աքիաբին, որոնց բաբելացիների արքան
կրակի վրայ խորովեց": 23 Արդարեւ,
նրանք անօրէնութիւններ գործեցին
Իսրայէլում. շնութիւն էին անում հա-
մաքաղաքացիների կանանց հետ, իմ
անունից սուտ պատգամներ էին ասում,
որը նրանց չէի հրամայել. ես ինքս դրան
իրազեկ եւ վկայ եմ», – ասում է Տէրը:

ՍԱՄԷԱՅԻ ՆԱՄԱԿԸ

24 Կը յայտնես նաեւ ելիմացի Սա-
մէային, թէ այսպէս է ասում Զօրու-
թիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
25 «Դու իմ անունից նամակներ ես
ուղարկել Երուսաղէմ՝ ամբողջ ժո-
ղովրդին, – մինչդեռ իմ կողմից ես քեզ
չեմ ուղարկել, – նաեւ Մասսա քահանայի
որդի Սոփոնիային, ինչպէս եւ բոլոր
քահանաներին եւ ասել, 26 "Տէրը քեզ
քահանայ կարգեց Յովիդիա քահանայի
փոխարէն, որպէսզի Տիրոջ Տանը վերա-
կացու լինես ամէն մարդու վրայ, որ կը
մարգարէանայ, եւ ամէն մէկի վրայ, որ
գուշակութիւն կ'անի, ու նրանց բանտի
մէջ շղթայի զարնես: 27 Արդ, ինչո՞ւ
չպատուհասեցիք անաթոթացի Երեմիա-
յին, որ մարգարէութիւն է անում ձեզ
համար: 28 Նա մեզ լուր է ուղարկել Բա-
բելոն՝ ասելով, թէ՝ 'Հեռու է ժամանակը.
տնե՛ր կառուցեցէք եւ բնակուեցէ՛ք, այ-
գինե՛ր տնկեցէք եւ կերէ՛ք նրանց
պտուղները'"»:
29 Սոփոնիա քահանան Երեմիա մար-
գարէի ականջին ընթերցեց նամակը:
30 Եւ Տէրը, խօսքն ուղղելով Երեմիային,
ասաց.
31 «Լո՛ւր ուղարկիր բոլոր գերուած-
ներին եւ յայտնի՛ր. այսպէս է ասում
Տէրը ելիմացի Սամէայի մասին.
"Քանի որ Սամէան, որին ես չեմ
ուղարկել, մարգարէացաւ եւ ձեզ փուչ
բաների յոյս տուեց, 32 դրա համար էլ
Տէրն այսպէս է ասում. "Ահաւասիկ ես
դատաստան պիտի տեսնեմ ելիմացի
Սամէայի եւ նրա սերնդի հետ. նրանից
չի լինելու որեւէ մէկը, որ նստի ձեր մէջ՝
տեսնելու այն բարիքը, որ ես անելու եմ
ձեզ, – ասում է Տէրը, – քանզի նա
Աստծուն հակառակ խօսքեր ասաց"»:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

30 Այս է այն խօսքը, որ Տէրն ուղղեց
Երեմիային՝ ասելով.
2 «Այսպէս է ասում Տէր Աստուածն

Իսրայէլի. այն բոլոր բաները, որ քեզ
հրամայեցի, քեզ համար գրի՛ առ
մատեանի մէջ: 3 Ահա օրեր են գալու, -
ասում է Տէրը, - երբ Իսրայէլի իմ գերեալ
ժողովրդին, նաեւ Յուդայի երկրի ժո-
ղովրդին վերադարձնելու եմ. վերա-
դարձնելու եմ այն երկիրը, - ասում է
Տէրը, - որ տուեցի նրանց հայրերին,
որպէսզի տիրեն նրան»:
4 Սրանք են այն խօսքերը, որ խօսեց
Տէրը Իսրայէլի եւ Յուդայի երկրի մասին.
5 այսպէս է ասում Տէրը.
«Սարսափի ձայն պիտի լսէք,
ձայնը ահեղ գոյժի,
որից մարդկանց մէջքերը պիտի դո-
ղան,
եւ փրկութիւն ու հանգստութիւն
չպիտի լինի:
6 Հարցրէ՛ք ու տեսէ՛ք, թէ երբեւէ
արուն ծնե՞լ է.
հապա ինչո՛ւ ամէն տղամարդու
տեսնում եմ իր ձեռքերը մէջքին պահած,
ինչպէս ծննդկան կինը,
եւ բոլորի դէմքի գոյնը դալուկ
դարձած.
7 քանզի մեծ է այն օրը,
եւ նրա նմանը չկայ:
Դա Յակոբի համար սարսափելի
նեղութեան ժամանակ է լինելու,
բայց նա փրկուելու է դրանից:
8 Այն օրը, - ասում է Զօրութիւնների
Տէրը, - նրանց պարանոցից խորտակելու
եմ լուծը, խզելու եմ նրանց կապանք-
ները. նրանք այլեւս օտարներին հար-
կատու չեն մնալու, 9 այլ ծառայելու են
իրենց Տէր Աստծուն. նրանց համար
վերականգնելու եմ իրենց Դաւիթ ար-
քային:
10 Սակայն դու մի՛ երկնչիր,
ո՛վ իմ ծառայ Յակոբ,
- ասում է Տէրը, -
չզարհուրես, ո՛վ Իսրայէլ,
որովհետեւ ահաւասիկ քեզ ազատելու
եմ հեռաստանից,
իսկ քո սերնդին՝ իր գերութեան
երկրից:
Պիտի վերադառնայ Յակոբը,
հանգստութիւն պիտի գտնի ու
բարեկեցիկ կեանք ունենայ,
ոչ ոք չի լինի, որ զարհուրեցնի նրան:
11 Ահա ես քեզ հետ եմ, - ասում է
Տէրը, -
որպէսզի փրկեմ քեզ եւ կործանեմ
այն ազգերին,
որոնց մէջ ցրեցի քեզ:
Բայց քեզ չեմ ոչնչացնելու.
քեզ արդարութեամբ եմ պատժելու
եւ քաւութիւն տալով՝ անմեղ չեմ
համարելու քեզ»:
12 Այսպէս է ասում Տէրը.
«Սաստկացրի քո տառապանքը.
քո կրած հարուածները ցաւագին են,
13 քո դատը պաշտպանող չկայ:
Դու բժշկուեցիր քո ցաւերից,
բայց դա քեզ օգուտ չբերեց:
14 Քո բոլոր բարեկամները քեզ մո-
ռացան
եւ չեն հարցնում քո մասին:
Իբրեւ սոսկալի խրատ՝
ես թշնամական հարուածներ հասցրի
քեզ:
Քո բոլոր անօրէնութիւնների պատ-
ճառով բազմացան մեղքերդ:
15 Քո կրած հարուածների համար
ի՞նչ ես աղաղակ բարձրացրել:
Բայց ես քեզ չեմ ոչնչացնելու:
Բուռն են քո ցաւերը.
դրանք սաստկացան քո բազում
անօրէնութիւնների պատճառով,
դրանք քո մեղքերի՛ հետեւանքն են:
16 Սակայն ամէնքը, որ յօշոտում էին
քեզ,
իրե՛նք պէտք է յօշոտուեն,
քո բոլոր թշնամիները պիտի յօշոտեն
իրենց մարմինները:
Քո անօրէնութիւնները բազմացան ու
յաճախակի դարձան.
դրանք քո մեղքերի՛ հետեւանքն են:
Քեզ աւերողներն իրե՛նք պիտի աւերի
ենթարկուեն,
քո բոլոր աւարառուներին ես աւարի
պիտի մատնեմ:
17 Քո ցաւագին վէրքերին բժշկութիւն
պիտի բերեմ,
պիտի բժշկեմ քեզ, - ասում է Տէրը, -

որովհետեւ, Սիո՛ն, դու աստանդական
կոչուեցիր.
ասացին՝ "Դա է մեր որսը,
բայց ով որ փնտռի՝ չի գտնի նրան"»:
18 Այսպէս է ասում Տէրը.
«Ահաւասիկ ես Յակոբի վտարանդի
վրանները կը վերադարձնեմ,
ողորմած կը լինեմ նրա գերեալների
նկատմամբ.
քաղաքը կը վերաշինուի իր բար-
ձունքի վրայ†,
տաճարն իր կարգ ու կանոնով կը
վերականգնուի:
19 Այնտեղից կը ծաւալուի երգիչների
ու պարողների ձայնը:
Պիտի բազմացնեմ նրանց,
եւ նրանք չպիտի նուազեն,
պիտի տարածեմ նրանց,
եւ նրանք չպիտի թուլանան:
20 Նրանք առաջուայ պէս ելումուտ
պիտի անեն.
նրանց օրէնքներն իմ աչքին հաս-
տատուն պիտի դառնան:
Դատաստան պիտի կարգամ նրանց
նեղողների գլխին,
21 որոնց հանդէպ նրանք աւելի
զօրաւոր պիտի լինեն:
Իրենց իշխանը իրենց միջի՛ց պիտի
ելնի:
Պիտի հաւաքեմ նրանց,
ու նրանք պիտի վերադառնան ինձ
մօտ,
քանզի ո՞վ ինքն իրեն սիրտ կ'անի
դառնալ Տիրոջ մօտ,
- ասում է Տէրը: -
22 Դուք ինձ համար ժողովուրդ կը
լինէք,
իսկ ես ձեզ համար կը լինեմ
Աստուած»:
23 Ահա Տիրոջ բարկութիւնը ցասմամբ
որբեւռքուեց,
մրրիկի պէս բորբոքուեց նրա
բարկութիւնն ամբարիշտների վրայ:
24 Տիրոջ բարկութիւնն ու զայրոյթը
կը գան ու յետ չեն շրջուի,
մինչեւ որ նա կատարի իր սրտի
կամքը:
Վերջին օրերին դուք կը հասկանաք
դա»:

ՏԷՐԸ ԻՍՐԱՅԷԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՏՈՒՆ

31 «Այն ժամանակ, - ասում է Տէրը, -
ես Իսրայէլի ժողովրդի համար Աստուած
կը լինեմ, իսկ նա ինձ համար՝
ժողովուրդ»:
2 Այսպէս է ասում Տէրը.
«Այնտեղ, անապատում, նրանք
հանդիպեցին տապի
եւ սուսերով սպանողների»:
Հեռացէ՛ք, մի՛ սպանէք Իսրայէլը:
3 Հեռու-հեռուից նրան† երեւաց Տէրը.
«Յաւիտենական սիրով սիրեցի քեզ,
դրա համար էլ քեզ գթութեան ար-
ժանացրի:
4 Նորից պիտի շէնացնեմ քեզ,
ու դու վերստին պիտի բարգաւաճես,
ո՛վ կոյսդ Իսրայէլի:
Դարձեալ պիտի առնես քո թմբուկը
եւ խառնուես պարողների խմբերին:
5 Դարձեալ այգիներ պիտի տնկէք
Սամարիա լեռան վրայ,
տունկեր պիտի տնկէք եւ փառա-
բանէք,
6 քանզի հասել է օրը,
երբ Եփրեմի լեռներում պահակները
ձայնելու են.
"Եկէք ելնե՛նք Սիոն՝ մեր Տէր Աստծու
մօտ"»:
7 Այսպէս է ասում Տէրը.
«Ցնծացէ՛ք Յակոբի համար,
ուրա՛խ եղէք եւ կանչեցէ՛ք նրան,
որ ազգերի մէջ գլխաւորն է,
իմա՛ց տուէք, օրհնեցէ՛ք ու ասացէ՛ք.
"Տէրը փրկեց իր ժողովրդին՝ Իսրայէլի
մնացորդներին"»:
8 Ահա նրանց պիտի բերեմ ես հիւսիսի
երկրից,
աշխարհի ծագերից պիտի հաւաքեմ
նրանց՝ պասեքի տօնին.
նրանց մէջ մեծ բազմութեամբ որդի-
ներ պիտի ծնուեն,

†ՍրբայրէՀ՝ աւերակների վրայ:

†ՍրբայրէՀ՝ ինձ:

կոյրն ու կաղը, յղին եւ ծննդաբերուածը միահամուռ,
իբրեւ մեծ ժողովուրդ, պիտի վերադառնան այստեղ:
9 Նրանք լալով հեռացան†,
բայց ես մխիթարելով պիտի բերեմ նրանց՝
հանդիստ պարգեւելով ջրերի վտակների մօտ,
ուղիղ ճանապարհով,
որպէսզի չմոլորուեն նրա վրայ,
քանզի Իսրայէլի համար ես հայր եղայ,
եւ Եփրեմն իմ անդրանիկն է»:
10 Ո՛վ ազգեր, լսեցէ՛ք Տիրոջ պատգամները,
պատմեցէ՛ք հեռաւոր կղզիներում եւ ասացէ՛ք.
"Ով ցրեց Իսրայէլը,
նա էլ կը հաւաքի նրան եւ կը պահպանի,
ինչպէս նախրապանը՝ իր հօտը":
11 Տէրն ազատեց Յակոբին
եւ փրկեց նրան նրա վրայ բռնացողների ձեռքից:
12 Պիտի գան եւ ուրախանան,
պիտի ցնծան Սիոնի լեռան վրայ,
պիտի գան դէպի Տիրոջ բարիքները՝
ցորենի ու գինու,
բերքի ու հօտերի,
արջառի ու ոչխարի երկիրը.
նրանց անձերը պիտի լինեն պտղալից ծառի պէս,
այլեւս քաղց չպիտի զգան:
13 Այն ժամանակ կոյսերը պիտի ցնծան երիտասարդների շուրջպարի մէջ,
ծերերը պիտի խնդան:
Նրանց սուգը խնդութեան պիտի վերածեմ,
տրտմութիւնից ուրախութեան պիտի հասցնեմ նրանց:
14 Ղեւիի որդի քահանաների հոգիները զմայլանքով պիտի լցնեմ ու արբեցնեմ,
եւ իմ ժողովուրդը պիտի լիանայ իմ բարիքներով», – ասում է Տէրը:

†Երրայերէն՝ պիտի գան:

ՌԱՔԷԼԻ ՈՂԲԸ

15 Այսպէս է ասում Տէրը.
«Մի ձայն էր լսւում Ռամայում,
ողբ, լաց ու գոյժ.
Ռաքէլը ողբում էր իր որդիներին,
որդիների պատճառով չէր ուզում մխիթարուել,
քանի որ նրանք չկային»:
16 Այսպէս է ասում Տէրը.
«Թող քո անձը դադարի լաց լինելուց,
իսկ քո աչքերը՝ արտասուքից,
որովհետեւ քո գործերի համար վարձ կայ, – ասում է Տէրը:
Նրանք կը վերադառնան թշնամիների երկրից,
17 եւ վերջում քո յոյսը կ'իրականանայ, – ասում է Տէրը. –
քո որդիները կը վերաբնակուեն իրենց սահմաններում:
18 Լսեցի Եփրեմի այս ողբը. "Խրատեցիր ինձ, Տէ՛ր,
ու ես խրատուեցի, բայց չսովորեցի,
ինչպէս անվարժ արջառ:
Դարձրո՛ւ ինձ, եւ ես կը դառնամ,
քանզի դու իմ Տէր Աստուածն ես:
19 Իմ գերութիւնից յետոյ զղջացի.
երբ խելքի եկայ, իմ ամօթալի օրերի համար հոգոց հանեցի†
եւ քեզ ցոյց տուի, թէ իմ տղայութեան պատճառով նախատինք կրեցի":
20 Եփրեմն իմ սիրելի որդին է,
գուրգուրելի մանուկը.
Հէնց որ իմ խօսքը նրա մասին է լինում,
նորից յիշում եմ նրան:
Ահա թէ ինչու շտապում եմ նրա համար,
անչափ պիտի ողորմեմ նրան», – ասում է Տէրը:
21 «Ճանապարհ՛ը ինքդ քեզ, ո՛վ Սիոն,
արդարութեան վրէ՛ժ խնդրիր,
թիկո՛ւնք դարձրու քո ցանկութիւնից,
անցի՛ր քո ճանապարհը,
դարձի՛ր, ո՛վ կոյսդ Իսրայէլի,
նորի՛ց դարձիր դէպի քո սգաւոր

†Երրայերէն՝ իրաւ որ, դառնալուց յետոյ զղջացի եւ կրթուելուց յետոյ իմ ազդրին զարկի:

քաղաքները:
22 Մինչեւ ե՞րբ պիտի թափառես,
ո՛վ անարգուած դուստր.
չէ՞ որ Տէրը փրկութիւն է հաստատել նոր ստեղծած վայրում,
որպէսզի մարդիկ ազատագրուած՝ շրջեն այնտեղ† »:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ ՄԱՍԻՆ

23 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Յուդայի երկրում եւ նրա քաղաքներում,
երբ վերադարձնեմ նրա գերեալներին,
պիտի կրկնեն այս խօսքը.
"Օրհնեալ է Տէրն իր արդար ու սուրբ լեռան վրայ":
24 Եւ Հրէաստանի բնակիչները, իրենց քաղաքներով ու գործաւորներով հանդերձ, պիտի փարթամանան հօտերով,
25 քանզի ես արբեցրի բոլոր ծարաւ հոգիներին, բոլոր քաղցած հոգիներին լիացրի: 26 Ահա թէ ինչու արթնացայ ու նայեցի, եւ իմ քունն ինձ համար քաղցրացաւ»:
27 «Ահա օրեր են գալու, – ասում է Տէրը, – ու Իսրայէլի տունը եւ Յուդայի տունը սերմանելու եմ մարդու սերնդով եւ անասունի սերնդով: 28 Ու ինչպէս որ աչքերս բաց արի նրանց վրայ՝ խլելու եւ կործանելու, քանդելու, կորստեան մատնելու եւ չարչարելու համար, այդպէս էլ աչքերս պիտի բաց անեմ նրանց վրայ, – ասում է Տէրը, – կառուցելու եւ տնկելու համար: 29 Այն օրերին այլեւս չեն ասելու, թէ՝ "Հայրերն ազոխ կերան՝ որդիների ատամներն առան", 30 այլ իւրաքանչիւրն իր մեղքով պիտի մեռնի, եւ ով ազոխ է ուտելու՝ նրա՛ ատամներն են առնելու:
31 Ահաւասիկ օրեր են գալու, – ասում է Տէրը, – երբ նոր ուխտ եմ կապելու Իսրայէլի տան հետ եւ Յուդայի երկրի տան հետ: 32 Ոչ թէ ըստ այն ուխտի, որ մի օր ես ուխտեցի նրանց հայրերի հետ, երբ բռնեցի նրանց ձեռքից՝ դուրս հանելու համար նրանց Եգիպտացիների երկրից, բայց նրանք իմ ուխտին հաւատարիմ չմնացին, ու ես նրանց մասին հոգ չտարայ, – ասում է Տէրը, – 33 այլ ա՛յս ուխտն է, որ ուխտելու եմ Իսրայէլի տան հետ այն օրերից յետոյ, – ասում է Տէրը, – իմ օրէնքները նրանց մտքի մէջ եմ դրոշմելու, դրանք նրանց սրտերի մէջ եմ գրելու, նրանց համար Աստուած եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ: 34 Եւ այլեւս ամէն մէկն իր ընկերոջը չի սովորեցնելու, կամ ամէն մէկն իր եղբօրը չի ասելու, թէ՝ "Ճանաչէ՛ր Տիրոջը", քանզի ամէնքը՝ նրանց փոքրերից մինչեւ մեծերը, ճանաչելու են ինձ, – ասում է Տէրը, – որովհետեւ նրանց անիրաւութիւնները պիտի ներեմ եւ նրանց մեղքերն այլեւս չպիտի յիշեմ»:
35 Տէրը, որ արեւը հաստատեց ցերեկուայ լուսաւորութեան,
իսկ լուսինն ու աստղերը՝ գիշերուայ լուսաւորութեան համար,
աղաղակ տուեց ծովին,
ու նրա ալիքները շառաչում են.
Նա, որի անունը Տէր Ամենակալ է, այսպէս է ասում.
36 «Եթէ իմ աչքի առաջ այս օրէնքները դադարեն գործելուց,
ապա Իսրայէլի ազգն էլ,
– ասում է Տէրը, –
իմ աչքի առաջ ընդմիշտ պիտի դադարի ազգ լինելուց»:
37 Այսպէս է ասում Տէրը.
«Եթէ անգամ երկինքը դէպի վեր բարձրանայ,
իսկ երկրի յատակները դէպի վար խոնարհուեն,
ես դարձեալ չեմ անտեսի համայն Իսրայէլի ազգին այն ամենի համար,
որ նա կատարեց:
38 Ահա օրեր պիտի գան, – ասում է Տէրը, – երբ Անամայէլի աշտարակից մինչեւ Անկեան դուռը Տիրոջ համար քաղաք պիտի շինուի: 39 Եւ դեռ պիտի

†Երրայերէն՝ որովհետեւ Տէրը երկրի վրայ նոր բան ստեղծեց. կինը պիտի պաշտպանի տղամարդուն:

ձգուի չափալարը եւ նրանց առջեւով պիտի երկարի մինչեւ Գարեբի բլուրը՝ այն բոլորելով ընտիր քարերից չինուած պատով: 40 Եւ Փաքադիմի ու Մոխիրների ողջ ձորը, ողջ Սարեմոթը, մինչեւ Կեդրոնի ձորը, մինչեւ արեւելեան կողմի Ձիերի դռան անկիւնը, պէտք է դառնան Տիրոջ սրբութիւնը. եւ այս բոլորը այլեւս չեն յափշտակուելու եւ չեն աւերուելու մինչեւ յաւիտենութիւն»:

ԵՐԵՄԻԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒԱԾ Է ՍԵԴԵԿԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

32 Այս է այն խօսքը, որ Ցուդայի երկրի Սեդեկիա արքայի տասներորդ տարին, այն է՝ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի տասնութերորդ տարին, Տէրն ուղղեց Երեմիային: 2 Այն ժամանակ բաբելացիների արքայի զօրքը պաշարել էր Երուսաղէմը, իսկ Երեմիա մարգարէն կալանաւորուած էր Ցուդայի երկրի թագաւորի ապարանքի բանտի սրահում, որտեղ արգելափակել էր նրան Սեդեկիա արքան՝ ասելով. 3 «Ինչո՞ւ դու մարգարէութիւն ես անում եւ ասում, թէ այսպէս է ասում Տէրը՝ "Ահաւասիկ ես այս քաղաքը բաբելացիների թագաւորի ձեռքը պիտի յանձնեմ, նա պիտի վերցնի դա, 4 եւ Ցուդայի երկրի Սեդեկիա արքան չպիտի փրկուի քաղդէացիների ձեռքից, պիտի մատնուի բաբելացիների թագաւորի ձեռքը, դէմառդէմ պիտի խօսի նրա հետ, եւ իր աչքերը պիտի տեսնեն նրա աչքերը: 5 Սեդեկիան պիտի մտնի Բաբելոն եւ պիտի նստի այնտեղ, մինչեւ որ այցելութեան գամ իրեն, – ասում է Տէրը. – ինչո՞ւ էք մարտնչում քաղդէացիների դէմ, որից ոչ մի յաջողութիւն չէք ունենալու"»:

6 Եւ Տէրը, խօսքն ուղղելով Երեմիային, ասում է. 7 «Ահա քո հօրեղբայր Սելոմի որդի Անամայէլը քեզ մօտ է գալու եւ ասելու. "Դու քեզ համար գնի՛ր իմ ագարակը, որը գտնւում է Անաթոթում, որովհետեւ ազգակցութեան կարգով պատշաճ է, որ դո՛ւ առնես այն որպէս սեփականութիւն"»:

8 Եւ իմ հօրեղբայր Սելոմի որդի Անամայէլը, ըստ Տիրոջ խօսքի, ինձ մօտ բանտի սրահը եկաւ եւ ասաց ինձ. «Գնի՛ր իմ ագարակը, որը գտնւում է Անաթոթում, Բենիամինի երկրում, որովհետեւ քեզ է յարմար ձեռք բերել այդ ժառանգութիւնը, քանզի աւագը դու ես»:

Այն ժամանակ ես հասկացայ, որ դա Տիրոջ խօսքն է, 9 եւ իմ հօրեղբօր որդի Անամայէլից գնեցի ագարակը, որն Անաթոթում է: Նրա համար կշռեցի արծաթը՝ տասնեօթը սիկղ. 10 մուրհակ գրեցի ու կնքեցի, վկաներ դրեցի եւ արծաթը կշեռքով կշռեցի: 11 Ապա, ըստ հրամանի ու իրաւունքի, վերցրի սեփականութեան մասին կնքուած մուրհակն ու չկնքուածը 12 եւ սեփականութեան մասին մուրհակը իմ հօրեղբօր որդի Անամայէլի ներկայութեամբ այնտեղ գտնուողների աչքի առաջ տուեցի Մաասի որդի Ներիայի որդի Բարուքին: Բանտի սրահում նստած բոլոր հրեաների առաջ նրանք ստորագրեցին սեփականութեան մասին մուրհակը: 13 Ու նրանց առաջ պատուիրեցի Բարուքին՝ ասելով.

14 «Այսպէս է ասում Ամենակալ Տէրը, Իսրայէլի Աստուածը. "Վերցրո՛ւ այդ մուրհակները, սեփականութեան մասին կնքուած մուրհակը ու չկնքուած մուրհակը եւ դի՛ր խեցէ ամանի մէջ, որ պահպանուեն բազում օրեր"»:

15 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը, Իսրայէլի Աստուածը. "Այս երկրի մէջ տները, ագարակներն ու այգիները նորից պիտի գնուեն"»:

ԵՐԵՄԻԱՅԻ ԱՂՕԹՔԸ

16 Երբ սեփականութեան մասին մուրհակը յանձնեցի Ներիայի որդի Բարուքին, աղօթեցի Տիրոջը եւ ասացի.

17 «Տէ՛ր, ո՛վ դու Տէր, քո մեծ զօրութեամբ եւ քո յաղթ բազկով դու ստեղծեցիր երկինքն ու երկիրը. չկայ ոչ մի բան, որ կարողանայ թաքնուել քեզնից†: 18 Հազարաւոր սերունդների ողորմածութիւն ես անում եւ հայրերի մեղքերի պատիժը նրանցից յետոյ հատուցում ես նրանց որդիներին: Մե՛ծ եւ հզո՛ր Աստուած, քո անունը Զօրութիւնների Տէր է, 19 խորհուրդներով մեծ ես եւ գործերով՝ զօրաւոր: Ո՛վ դու Ամենակալ մեծանուն Տէր, քո աչքերը բաց են մարդկանց որդիների բոլոր ճանապարհների վրայ՝ իւրաքանչիւրին հատուցելու համար ըստ իր ճանապարհի եւ ըստ իր գործերի արդիւնքի:

20 Դու հրաշքներ ու սքանչելիքներ կատարեցիր Եգիպտացիների երկրում, նաեւ մինչեւ այժմ՝ Իսրայէլում ու ողջ աշխարհի մարդկանց մէջ, քեզ համար ստեղծեցիր մի անուն, որ կայ առ այսօր. 21 Իսրայէլի քո ժողովրդին դու դուրս հանեցիր Եգիպտացիների երկրից հրաշքներով ու սքանչելիքներով, հզօր ձեռքով ու յաղթ բազկով եւ մեծամեծ տեսիլքներով: 22 Նրանց տուեցիր այս երկիրը, ինչպէս երդուել էիր իրենց հայրերին՝ տալ նրանց մի երկիր, որ կաթ ու մեղր է բխեցնում: 23 Նրանք մտան եւ ժառանգեցին այն, բայց ականջ չդրին քո ձայնին եւ չընթացան ըստ քո հրամանների, եւ այն ամէնը, ինչ պատուիրեցիր նրանց անել, չկատարեցին, այլ արեցին այնպէս, որ այս բոլոր չարիքները եկան նրանց գլխին:

24 Եւ ահա զօրքն այս քաղաքի վրայ է հասել, որպէսզի այն գրաւի, ու քաղաքը մատնուել է քաղդէացիների ձեռքը, որոնք պատերազմում են նրա հետ սրի, սովի ու մահուան միջոցով: Ինչպէս ասել էիր, այդպէս էլ եղաւ. դու ինքդ էլ տեսնում ես: 25 Իսկ դու, Տէ՛ր, ասում ես ինձ, թէ՝ "Արծաթով քեզ համար ագարակ գնիր": Ես մուրհակ գրեցի ու կնքեցի եւ վկաներ դրեցի, բայց քաղաքը մատնուեց քաղդէացիների ձեռքը»:

26 Եւ Տէրը խօսքն ինձ ուղղեց՝ ասելով.

27 «Ահա ես բոլոր մարմնաւորների Տէր Աստուածն եմ. միթէ որեւէ բան ինձնից կարո՞ղ է թաքուն մնալ†»:

28 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում. «Այդ քաղաքը պիտի մատնուի քաղդէացիների ձեռքը եւ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի ձեռքը, որը պիտի գրաւի դա: 29 Պիտի գան քաղդէացիները, որպէսզի պատերազմեն այդ քաղաքի դէմ եւ հրով այրեն դա. պիտի կրակի մատնեն այն տները, որոնց տանիքներին խունկ էին ծխում Բահաղին ու զոհեր մատուցում օտար աստուածներին, որպէսզի ինձ դառնութիւն պատճառէին:

30 Իսրայէլացիներն ու Ցուդայի երկրի մարդիկ իրենց մանկութիւնից սկսած իմ աչքերի առաջ միմիայն չարիք էին գործում: Իսրայէլացիներն իրենց ձեռքի գործերով բարկացրին ինձ, – ասում է Տէրը: – 31 Այն օրից, ինչ չինեցի այդ քաղաքը, մինչեւ այսօր այն գոյութիւն ունեցաւ ինձ բարկացնելու եւ զայրացնելու համար. 32 իմ աչքի առաջ պէտք է ջնջել դա այն բոլոր չարիքների համար, որ ինձ դառնացնելու նպատակով կատարեցին Իսրայէլացիներն ու Ցուդայի երկրի մարդիկ, իրենք, իրենց թագաւորներն ու իրենց մեծամեծները, իրենց քահանաներն ու իրենց մարգարէները, Ցուդայի երկրի տղամարդիկ եւ Երուսաղէմի բնակիչները: 33 Նրանք իրենց թիկունքնե՛րը դարձրին ինձ եւ ոչ թէ երեսները: Սկզբից եւեթ ես սովորեցրի նրանց, սովորեցրի, բայց չուզեցին խրատ ընդունել: 34 Իրենց պղծութիւնները դրեցին այն Տան մէջ, որը կրում է իմ անունը: 35 Իրենց աղտեղութիւնների համար Ենոմացիների ձորում Բահաղին բագիններ կանգնեցրին, որպէսզի իրենց տղաներին ու աղջիկներին նուիրաբերեն Մողոքին, մի բան, որ ես չէի պատուիրել նրանց, եւ ոչ էլ մտքովս անցել էր կատարել տալ նրանց այդ պղծութիւնը՝ Ցուդայի երկիրը յանցանքի մէջ մեղադրելու համար»:

†Ուրայներէն՝ ոչ մի բան ինձ համար դժուար չէ:

†Ուրայներէն՝ միթէ ինձ համար դժուար բան կայ:

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՐԿԻՐԸ

36 Արդ, այսպէս է ասում Տէր Աստուած Իսրայէլի այդ քաղաքի վերաբերմամբ, որի մասին դու ասացիր, թէ մատնուեց բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի ձեռքը՝ սրի, սովի ու գերութեան: 37 «Ահա ես նրանց կը հաւաքեմ այն բոլոր երկրներից, ուր ցրիւ տուեցի նրանց իմ բարկութեամբ, զայրոյթով ու մեծ ցասումով. նրանց կը վերադարձնեմ այս վայրերը, յոյսով կը բնակեցնեմ նրանց, 38 նրանք ինձ համար ժողովուրդ կը լինեն, իսկ ես նրանց համար կը լինեմ Աստուած: 39 Եւ ես կը տամ նրանց մի այլ սիրտ ու հանապարհ՝ հանապազ երկնչելու ինձնից ի բարօրութիւն իրենց, իսկ իրենցից յետոյ՝ ի բարօրութիւն իրենց որդիների: 40 Նրանց հետ կը կնքեմ յաւիտենական ուխտ, որից չեմ հրաժարուի՝ բարութիւն անելով նրանց, եւ իմ երկիւղը կը դնեմ նրանց սրտերի մէջ, որպէսզի նրանք չապստամբեն իմ դէմ: 41 Բարութիւն անելու համար այդի կը դնեմ նրանց, հաւատով, իմ ամբողջ սրտով եւ իմ ամբողջ հոգով նրանց կը տնկեմ այս երկրում»:

42 Արդարեւ, այսպէս է ասում Տէրը. «Ինչպէս որ այդ ժողովրդի վրայ բերեցի այս բոլոր մեծամեծ չարիքները, այնպէս էլ նրա համար կը բերեմ բարիքներ, ինչպէս ասել էի դրանց մասին: 43 Նորից ագարակներ պիտի առնեն այդ երկրում, որի մասին դու ինքդ ասացիր, թէ թափուր է դարձել մարդ ու անասունից, որոնք մատնուել են քաղդէացիների ձեռքը: 44 Նրանք արծաթով ագարակներ պիտի գնեն, մուրհակներ պիտի գրեն եւ վկաներ կարգեն Բենիամինի երկրում եւ Երուսաղէմի շրջակայքում, Յուդայի երկրի քաղաքներում եւ լեռան քաղաքներում, Սեփելայի քաղաքներում եւ Նագեբի քաղաքներում, որովհետեւ նրանց պիտի վերադարձնեմ գերութիւնից», - ասում է Տէրը:

ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱՐ

33 Աստուած երկրորդ անգամ իր խօսքն ուղղեց Երեմիային, որ տակաւին փակուած էր բանտի սրահում, եւ ասաց. 2 այսպէս է ասում Տէրը, որ արարեց երկիրը, ստեղծեց եւ հաստատեց այն. Տէր է նրա անունը:

3 «Կանչի՛ր ինձ, եւ ես պատասխան կը տամ քեզ, կը պատմեմ քեզ մեծամեծ ու զօրաւոր բաների մասին, որ դու չգիտես»: 4 Այո՛, այսպէս է ասում Տէր Աստուած Իսրայէլի այս քաղաքի տների մասին եւ Յուդայի երկրի արքայի ապարանքի մասին, որոնք քանդուել են պատնէշներ եւ մարտկոցներ կառուցելու նպատակով, 5 որպէսզի եկողները մարտնչեն քաղդէացիների դէմ եւ լցնեն այն մարդկանց դիակներով, որոնց հարուածեցի իմ բարկութեամբ ու զայրոյթով եւ իմ երեսը չուռ տուի նրանցից նրանց բոլոր չարութիւնների պատճառով:

6 Ահաւասիկ ես պիտի բուժեմ նրանց վէրքերը, պիտի բժշկեմ նրանց. խաղաղութեան ձայնը եւ ապահովութիւն պիտի բերեմ նրանց: 7 Պիտի վերադարձնեմ Յուդայի երկրի եւ Երուսաղէմի գերեալներին ու վերականգնեմ նրանց իրենց նախկին վիճակի մէջ: 8 Նրանց պիտի մաքրեմ այն բոլոր անիրաւութիւններից, որ գործեցին իմ նկատմամբ, ու այլեւս չպիտի յիշեմ նրանց յանցանքները, որ կատարեցին իմ հանդէպ՝ ապստամբելով իմ դէմ: 9 Նրանք ինձ համար ուրախութիւն, օրհնանք ու պարծանք պիտի դառնան երկրի բոլոր ժողովուրդների առաջ, որոնք, իմանալով այն բոլոր բանների մասին, որ ես անելու եմ Երուսաղէմի եւ Յուդայի երկրի համար, երկիւղ պիտի կրեն ու դառնանան դրանց համար կատարած իմ բոլոր բարիքների եւ խաղաղութեան գործերի շնորհիւ»:

10 Այսպէս է ասում Տէրը.

«Այդ տեղում, որի մասին դուք ինքներդ ասում էք, թէ մարդկանցից ու անասուններից թափուր է, Յուդայի երկրի քաղաքներում եւ Երուսաղէմից դուրս, որոնք աւերակների են վերածուել, որովհետեւ չկան մարդիկ, չկան բնակիչներ, չկան անասուններ, — այդ նոյն տեղում դարձեալ պիտի հնչեն 11 ձայնն ուրախութեան եւ ձայնը ցնծութեան, ձայնը փեսայի եւ ձայնը հարսի, որոնք պիտի ասեն՝

"Գոհութի՛ւն մատուցեցէք Ամենակալ Տիրոջը,

քանզի քաղցր է նա,

եւ յաւիտենական է նրա ողորմութիւնը":

Օրհնութեան նուէրներ պիտի բերեն Տիրոջ Տունը, քանզի այդ երկրի գերեալներին առաջուայ վիճակին պիտի վերադարձնեմ», - ասում է Տէրը:

12 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.

«Մարդ ու անասունից զուրկ այդ աւերակ վայրում եւ դրա բոլոր քաղաքներում դարձեալ պիտի լինեն հովուական իջեւաններ ու ոչխարների հօտերի մակաղատեղիներ: 13 Լեռնային քաղաքներում, Սեփելայի քաղաքներում ու Նագեբի քաղաքներում, Բենիամինի երկրում, Երուսաղէմի շրջակայքում եւ Յուդայի քաղաքներում դարձեալ ոչխարների հօտեր են անցնելու դրանք հաշուողի ձեռքի տակով, - ասում է Տէրը: - 14 Ահա օրեր են գալու, - ասում է Տէրը, - եւ ես հաստատ կատարելու եմ իմ բարի խօսքերը, որ յայտնեցի Իսրայէլի տան մասին եւ Յուդայի տան մասին: 15 Այն օրերում եւ այն ժամանակ Դաւթի համար մի արդար շառաւիղ պիտի ծնեմ, որն իրաւունք ու արդարութիւն պիտի պաշտպանի երկրի վրայ: 16 Այն օրերում Յուդայի երկիրը պիտի փրկուի, եւ Երուսաղէմը յոյսով պիտի ապրի: Այս է այն անունը, որով նա պիտի կոչուի՝ "Տէրն է մեր արդարութիւնը"»:

17 Տէրն այսպէս է ասում.

«Դաւթի սերնդից Իսրայէլի տան գահին նստող մարդ չպիտի պակասի, 18 եւ դեւտացի քահանաներից իմ առաջ ամէն օր ողջակէզ մատուցող, զոհաբերութիւն անող եւ խունկ ծխող մարդ չպիտի պակասի»:

19 Տէրն իր խօսքն ուղղեց Երեմիա մարգարէին՝ ասելով. 20 այսպէս է ասում Տէրը.

«Եթէ կարողանաք խափանել ցերեկուայ իմ ուխտը եւ գիշերուայ իմ ուխտը այնպէս, որ ցերեկն ու գիշերը իրենց ժամանակին չլինեն, 21 ապա կը խափանուի նաեւ իմ ուխտը, որ կնքել եմ իմ ծառայ Դաւթի հետ, — նաեւ իմ պաշտօնեաների՝ դեւտացի քահանաների հետ, — թէ՝ չի ունենայ նա որդի, որ թագաւորի նրա գահի վրայ: 22 Ինչպէս որ անթուելի են երկնքի աստղերը, եւ անչափելի ծովի աւազը, այդպէս էլ պիտի բազմացնեմ իմ ծառայ Դաւթի սերունդը եւ դեւտացիներին՝ իմ պաշտօնեաներին»:

23 Տէրը, իր խօսքն ուղղելով Երեմիա մարգարէին, ասում է.

24 «Չե՞ս տեսնում՝ ի՞նչ է խօսում այդ ժողովուրդը՝ ասելով, թէ՝ "Աստուած, որ ընտրել էր երկու ազգատոհմերի, աչքից գցեց նրանց": Այդպիսով նրանք դայրացնում են իմ ժողովրդին, կարծես թէ նրանց համար նա այլեւս ազգ չէ»:

25 Այսպէս է ասում Տէրը. «Եթէ ցերեկուայ ու գիշերուայ, երկնքի ու երկրի մասին իմ ուխտը չեմ հաստատել, 26 ապա Յակոբի եւ իմ ծառայ Դաւթի սերունդը կ՝անարգե՞մ, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի սերնդի վրայ նրա սերնդից իշխան չե՞մ դնի. ո՛չ, ես նրանց գերեալներին պիտի վերադարձնեմ, պիտի ողորմեմ նրանց»:

ՊԱՏԴԱՄ ՍԵՂԵԿԻԱՅԻՆ

34 Երբ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան իր բոլոր զօրքերով, իր իշխանութեանը ենթակայ բոլոր թագաւորութիւններով ու բոլոր ժողովուրդներով պատերազմի ելաւ Երուսաղէմի եւ Յուդայի երկրի բոլոր քաղաքների դէմ,

Տէրը խօսքն ուղղեց Երեմիային՝ ասելով.
2 «Այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի. գնա՛ Յուդայի երկրի Սեդեկիա արքայի մօտ եւ ասա՛ նրան. այսպէս է ասում Տէրը. "Այդ քաղաքն անպայման պիտի մատնուի բաբելացիների արքայի ձեռքը, որը պիտի գրաւի ու հրով այրի այն: 3 Դու էլ նրա ձեռքից չպիտի փրկուես, անպայման պիտի բռնուես ու մատնուես նրա ձեռքը: Քո աչքերը պիտի տեսնեն նրա աչքերը, դէմառդէմ պիտի խոսես նրա հետ եւ գնաս Բաբելոն: 4 Բայց լսի՛ր Տիրոջ պատգամները, ո՛վ Յուդայի երկրի Սեդեկիա արքայ. այսպէս է ասում Տէրը քո մասին. 5 "Սրով չպիտի մեռնես, այլ խաղաղութեան մէջ պիտի մեռնես, եւ ինչպէս որ ողբացին[†] քո հայրերին՝ առաջին թագաւորներին, որոնք նախորդեցին քեզ, այնպէս էլ պիտի ողբան քեզ, թէ՝ 'Վա՜յ, վա՜յ տէր': Պիտի լացուկոծ անեն քեզ համար, քանզի չատ խիստ խօսեցի"», – ասում է Տէրը:
6 Երեմիա մարգարէն այս բոլոր բաները Երուսաղէմում յայտնեց Յուդայի Սեդեկիա արքային: 7 Իսկ բաբելացիների թագաւորի զօրքը կռուում էր Երուսաղէմի եւ Յուդայի երկրի մնացած բոլոր քաղաքների դէմ, Լաքիսի եւ Ազեկայի դէմ, որովհետեւ Յուդայի երկրի քաղաքների մէջ միայն սրանք էին մնացել որպէս ամուր քաղաքներ:

ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

8 Տէրն իր խօսքն ուղղեց Երեմիային այն բանից յետոյ, երբ Սեդեկիա արքան, ազատութեան կոչով, ուխտ կնքեց Երուսաղէմում եղած ամբողջ ժողովրդի հետ, 9 որպէսզի իւրաքանչիւր ոք՝ իր ծառային, եւ ամէն մէկն՝ իր աղախնին, լինի երբայեցի տղամարդ կամ երբայեցի կին, ազատութիւն տայ եւ արձակի նրանց, որպէսզի Յուդայի ազգատոհմից ոչ մի մարդ իր եղբօրը ծառայ չդառնայ:

[†]Երբայերէն՝ խուճկ ծխեցին:

10 Եւ բոլոր մեծամեծներն ու ամբողջ ժողովուրդը, որոնք ուխտ էին դրել ազատ արձակելու իւրաքանչիւրն՝ իր ծառային, եւ ամէն մէկն՝ իր աղախնին, լինի երբայեցի տղամարդ կամ երբայեցի կին, արձակեցին նրանց, որպէսզի նրանք այլեւս իրենց չծառայեն: 11 Լսեցին ու արձակեցին, իսկ յետոյ յետ կանդնեցին եւ նորից բերեցին իրենց ծառաներին ու աղախիններին, որոնց ազատ էին արձակել, եւ նրանց դարձրին ծառաներ ու աղախիններ:
12 Տէր Աստուած, խօսքն ուղղելով Երեմիային, ասաց.
13 «Այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի. ես ուխտ կնքեցի ձեր հայրերի հետ այն օրը, երբ նրանց փրկեցի Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից եւ ասացի, թէ՝ 14 "Երբ վեց տարին լրանայ, քո երբայեցի եղբօրը, որ քեզ կը վաճառուի եւ վեց տարի քեզ համար կ'աշխատի, քեզնից ազա՛տ արձակիր", բայց ձեր հայրերը չլսեցին ինձ, չխոնարհեցրին իրենց ականջները: 15 Այսօր նրանք յետ են դարձել, որպէսզի իմ աչքի առաջ անեն այն, ինչ հաճելի է ինձ, որ իւրաքանչիւրն ազատ յայտարարի իր ընկերոջը, իմ աչքի առաջ կատարեն ուխտն այն Տան մէջ, որի վրայ դրուած է իմ անունը: 16 Բայց դուք չրջուեցիք ու պղծեցիք իմ անունը, իւրաքանչիւրը դարձաւ իր ծառայի մօտ, ամէն մէկն՝ իր աղախնի մօտ, որոնց ձեր հոգու համար ազատ էիք արձակել, եւ ստիպեցիք, որ վերադառնան եւ ծառայ ու աղախին լինեն ձեզ»:
17 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում. «Դուք չլսեցիք ինձ, իւրաքանչիւրն իր եղբօրը, եւ ամէն մէկն իր մերձաւորին ազատ չյայտարարեց. ահա ես էլ ձեզ համար ազատութիւն պիտի հռչակեմ սրի, սովի ու մահուան միջոցով, – ասում է Տէրը. – 18 ձեզ պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագաւորութիւնների մէջ: Այն մարդկանց, որոնք խախտեցին իմ ուխտը եւ իմ առաջ կատարած իրենց ուխտի պատգամներին

հաւատարիմ չմնացին, հորթը[†] երկու մասի բաժանեցին եւ անցան նրա երկու մասերի միջով, 19 Յուդայի երկրի իշխաններին եւ Երուսաղէմի իշխաններին, ներքինիներին ու քահանաներին, նաեւ երկրի ամբողջ ժողովրդին, որոնք անցան հորթի երկու մասերի միջով, — 20 այդ մարդկանց ես տալու եմ իրենց թշնամիների ձեռքը, նրանց հոգիները պահանջողների ձեռքը, նրանց դիակներն իբրեւ կերակուր պիտի նետեմ երկնքի թռչուններին ու երկրի գազաններին: 21 Իսկ Հրէաստանի Սեդեկիա արքային ու նրա իշխաններին պիտի մատնեմ իրենց թշնամիների ձեռքը, նրանց հոգիները պահանջողների ձեռքը, բաբելացիների արքայի զօրքի ձեռքը, որ եկել հասել են նրանց վրայ: 22 Ահաւասիկ ես հրաման եմ տալու, – ասում է Տէրը, – եւ նրանց նորից արձակելու եմ այդ քաղաքի վրայ. նրանք պիտի պատերազմեն դրա դէմ, գրաւեն ու հրով այրեն այն: Յուդայի երկրի քաղաքներն իրենց բնակիչներից թափուր եմ դարձնելու»:

ՌԱՔԱԲԻՄԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԱՐՈՒՄ Է ԳԻՆԻ ԽՄԵԼՈՒՑ

35 Յուդայի երկրի արքայ Յոսիայի որդի Յովակիմի օրերին Տէրը իր խօսքն ուղղեց Երեմիային՝ ասելով.
2 «Գնա՛ Ռաքաբիմների տունը, կանչի՛ր նրանց, բե՛ր Տիրոջ Տան սրահներից մէկը եւ գինի՛ խմեցրու նրանց»:
3 Ու ես Քաբասինիայի որդի Երեմի որդի Յեզոնիային, նրա եղբայրներին ու նրա բոլոր որդիներին՝ Ռաքաբիմի ամբողջ գերդաստանը, 4 բերի Տիրոջ Տունը, Աստծու մարդ Գոդոդիայի որդի Անանի որդու սրահը, որը գտնուում էր իշխանների սրահի մօտ, մուտքի պահապան Սելոմի որդի Մասասի սրահի վերեւում: 5 Ռաքաբիմի որդիների առաջ դրեցի մի ման լիքը գինի ու բաժակներ եւ ասացի նրանց. «Խմեցէ՛ք այդ գինին»: 6 Նրանք ասացին. «Գինի չենք խմում, որովհետեւ մեր հայր Յոնադաբը՝ Ռեքաբի որդին, մեզ պատուիրել է ու ասել.
"Դուք եւ ձեր որդիները յաւիտեանս գինի մի՛ խմէք,
7 նաեւ տներ չշինէ՛ք,
սերմ չցանէ՛ք եւ այգիներ չտնկէ՛ք,
այլ ձեր բոլոր օրերում բնակուեցէ՛ք վրանների մէջ,
որպէսզի այդ երկրում, ուր դուք պանդուխտ էք,
բազմապատկուեն ձեր կեանքի օրերը":
8 Եւ մենք ամէն բանում, ինչ պատուիրել էր մեզ, ականջ դրինք մեր հայր Յոնադաբի՝ Ռեքաբի որդու ձայնին, — թէ՛ մենք եւ թէ՛ մեր կանայք, թէ՛ մեր տղաներն ու աղջիկները, — որ մեր բոլոր օրերում չխմենք գինի, 9 տներ չշինենք եւ չբնակուենք նրանց մէջ. մենք չունեցանք նաեւ այգիներ, հանդեր ու ցանքեր. 10 բնակուեցինք վրանների տակ եւ լսեցինք ու կատարեցինք այն ամէնը, ինչ պատուիրել էր մեզ մեր հայր Յոնադաբը»: 11 Բայց երբ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան մտաւ այս երկիրը, ասացինք՝ "Քաղդէացիների զօրքի պատճառով, ասորեստանցիների զօրքի պատճառով վեր կենանք գնանք Երուսաղէմ եւ այնտեղ ապրենք"»:
12 Եւ Տէրը խօսքն ինձ ուղղեց՝ ասելով.
13 «Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. գնա՛ եւ յայտնի՛ր Յուդայի երկրի մարդկանց ու Երուսաղէմի բնակիչներին. "Խրատ չէ՞ք առնում՝ հետեւելու համար իմ խօսքերին", – ասում է Տէրը: 14 Ռեքաբի որդի Յոնադաբի որդիները հաւատարիմ մնացին այն պատուիրանին, որ նա տուել էր իր որդիներին՝ գինի չխմել: Եւ նրանք չխմեցին մինչեւ օրս, որովհետեւ իրենց հօր պատուիրանը լսող եղան: Իսկ ես սկզբից եւեթ խօսեցի ձեզ հետ, բայց դուք չլսեցիք ինձ: 15 Ձեզ մօտ ուղարկեցի իմ բոլոր ծառաներին՝ մարգարէներին, կանխաւ ուղարկեցի, որ ամէնքդ յետ դառնաք ձեր չար

[†]Խօսքը վերաբերում է այն հորթին, որը զոհաբերում էին ուխտադրութեան ժամանակ: Բաժանուած երկու մասերի միջով անցնելը խորհրդանշում էր ուխտադրժութիւն:

ճանապարհից, աւելի բարի գործեր կատարէք, չհետեւէք օտար աստուածներին ու չծառայէք նրանց, որպէսզի բնակուէք այդ երկրում, որ տուեցի ձեզ ու ձեր հայրերին: Բայց դուք չխոնարհեցրիք ձեր ականջները եւ չլսեցիք ինձ: 16 Ռեքաբի որդի Յոնադաբի որդիները պահեցին իրենց հօր տուած պատուիրանը, իսկ այդ ժողովուրդը չլսեց ինձ»:

17 Դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.

«Ահաւասիկ ես Յուդայի երկրի եւ Երուսաղէմի բոլոր բնակիչների վրայ պիտի բերեմ այն բոլոր չարիքները, որոնց մասին խօսել էի, որովհետեւ ասացի նրանց, բայց չլսեցին, կանչեցի նրանց, բայց ինձ պատասխան չտուին»:

18 Իսկ Ռեքաբի տան մարդկանց այսպէս ասաց Երեմիան.

«Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.

"Քանի որ Ռեքաբի որդի Յոնադաբի որդիները հետեւեցին իրենց հօր պատուիրանին, հաւատարիմ մնացին նրա բոլոր հրամաններին՝ կատարելով այն ամէնը, ինչ որ նրանց պատուիրել էր իրենց հայրը, 19 դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. այս երկրի ողջ գոյութեան ընթացքում թող Ռեքաբի որդի Յոնադաբի որդիներից այր մարդ չպակասի՝ իմ առաջ կանգնելու համար"»:

ԲԱՐՈՒՔԸ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ Է ՄԱՏԵԱՆԸ

36 Յուդայի երկրի արքայ Յոսիայի որդի Յովակիմի չորրորդ տարում Տէրը խօսեց ինձ հետ՝ ասելով.

2 «Քեզ համար մատեա՛ն վերցրու եւ նրա մէջ գրի՛ր այն ամէնը, ինչ ասել եմ քեզ Իսրայէլի, Յուդայի երկրի եւ բոլոր ազգերի մասին՝ սկսած այն օրից, երբ խօսեցի քեզ հետ՝ Յուդայի երկրի արքայ Յոսիայի օրերից մինչեւ այժմ. 3 թերեւս Յուդայի տունն իմանայ այն բոլոր չարիքների մասին, որ մտածել եմ կատարել նրա նկատմամբ, որպէսզի իւրաքանչիւրը յետ դառնայ իր չար ճանապարհից, եւ ես քաւիչ լինեմ նրա անօրէնութիւններին ու նրա մեղքերին»:

4 Երեմիան կանչեց Ներիայի որդի Բարուքին, եւ Բարուքը Երեմիայի բերանից մատեանում գրի առաւ այն բոլոր խօսքերը, որ Տէրը յայտնել էր նրան:

5 Երեմիան Բարուքին պատուիրեց ու ասաց. «Ես կալանքի մէջ եմ եւ չեմ կարող մտնել Տիրոջ Տունը. 6 դու կը գնաս եւ այն, ինչ գրի առար իմ բերանից՝ Տիրոջ խօսքերը, պահեցողութեան օրը Տիրոջ Տանը այդ մատեանից կ'ընթերցես ի լուր ժողովրդի, կ'ընթերցես նաեւ ի լուր Յուդայի երկրի բոլոր մարդկանց, որոնք եկած կը լինեն իրենց քաղաքներից: 7 Թերեւս Տիրոջ առաջ նրանց սիրտը գութ ընկնի, եւ ամէնքն իրենց չար ճանապարհներից յետ դառնան, քանզի սաստիկ են զայրոյթն ու բարկութիւնը, որ Տէրն արտայայտեց այդ ժողովրդի դէմ»:

8 Եւ Ներիայի որդի Բարուքն ամէն ինչ կատարեց այնպէս, ինչպէս պատուիրել էր նրան Երեմիա մարգարէն՝ Տիրոջ Տան մէջ մատեանից ընթերցել Տիրոջ պատգամները: 9 Յուդայի երկրի արքայ Յոսիայի որդի Յովակիմի հինգերորդ տարում, իններորդ ամսին, Երուսաղէմի ամբողջ բնակչութիւնը, Յուդայի երկրի քաղաքներից Երուսաղէմ եկած համայն ժողովուրդը եւ Յուդայի տունը հաւաքուեցին Տիրոջ առաջ պահեցողութեան համար: 10 Իսկ Բարուքը Տիրոջ Տանը, Սափանիա ատենադպրի որդի Գամարիայի գաւթում, Տիրոջ Տան Նոր դարպասի մուտքի մօտ, ի լուր ամբողջ ժողովրդի մատեանից կարդաց Երեմիայի խօսքերը:

ԲԱՐՈՒՔԸ ՄԱՏԵԱՆԸ ԿԱՐԴՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

11 Երբ Սափանիայի որդի Գամարիայի որդի Միքիան այդ մատեանից լսեց Տիրոջ բոլոր պատգամները, 12 իջաւ թագաւորի տունը, ատենադպրի դիւանը, ուր նստած էին բոլոր իշխանները՝ Եղիսամա ատենադպիրը, Սամէայի որդի Դալիան, Աքոբորի որդի Եղնաթանը, Սափանիայի որդի Գամարիան, Անանիայի որդի Սեդեկիան եւ շատ ուրիշ իշխանաւորներ: 13 Միքիան նրանց հաղորդեց իր լսած այն բոլոր խօսքերը, որ մատեանից ընթերցել էր Բարուքը ի լուր ամբողջ ժողովրդի:

14 Այն ժամանակ բոլոր իշխանները Քուսիի որդի Սելոմի որդի Նաթանի որդի Յուդիին ուղարկեցին Բարուքի մօտ եւ յայտնեցին. «Այն մատեանը, որ ընթերցում էիր ի լուր ժողովրդի, ա՛ռ քո ձեռքը եւ ե՛կ այստեղ»: Ներիայի որդի Բարուքը մատեանն իր ձեռքն առաւ ու գնաց նրանց մօտ: 15 Նրան ասացին. «Հապա նորի՛ց կարդա, որ մենք էլ լսենք»: Եւ Բարուքը կարդաց, որ լսեն: 16 Իսկ երբ նրանք բոլոր պատգամները լսեցին, միմեանց հետ խորհուրդ արին† ու ասացին Բարուքին. «Մենք այդ բոլոր բաները կը հաղորդենք արքային»: 17 Բարուքին հարց տուին՝ ասելով. «Դէ մեզ պատմի՛ր՝ ո՞րտեղից գրեցիր այդ բոլոր խօսքերը, ո՞ւմ բերանից»: 18 Բարուքը նրանց պատասխանեց. «Երեմիայի՛ բերանից. նա՛ է ինձ պատմել այդ բոլոր բաները, իսկ ես թանաքով գրել եմ այս մատեանի մէջ»: 19 Իշխանները Բարուքին ասացին. «Գնա թաքնուի՛ր Երեմիայի հետ. թող ոչ ոք չիմանայ, թէ որտեղ էք գտնուում»:

ԹԱԳԱՒՈՐԸ ԱՅՐՈՒՄ Է ՄԱՏԵԱՆԸ

20 Մատեանը պահ տալով Եղիսամա ատենադպրի տանը՝ նրանք գնացին սրահ, արքայի մօտ, եւ արքային պատմեցին ամէն բան: 21 Իսկ արքան մատեանը բերելու ուղարկեց Յուդիին, որն այն բերեց Եղիսամա ատենադպրի տնից: Յուդին, ի լուր թագաւորի եւ ի լուր թագաւորի շուրջը գտնուող բոլոր իշխանների, ընթերցեց մատեանը: 22 Թագաւորը, որովհետեւ իններորդ ամիսն էր, նստած էր ձմեռային պալատում, իսկ նրա դիմաց գտնուում էր վառուող կրակարանը: 23 Ու երբ Յուդին ընթերցում էր երեք կամ չորս էջ, թագաւորը ատենադպրի զմելիով կտրում էր այն ու նետում կրակարանի կրակի մէջ, մինչեւ որ ամբողջ մատեանը կրակարանի բոցի մէջ ոչնչացաւ: 24 Թագաւորն ու նրա բոլոր պաշտօնեաները, որ լսեցին այդ բոլոր խօսքերը, չաղաչեցին‡ եւ չպատառոտեցին իրենց պատմուճանները: 25 Եղնաթանը, Դալիան եւ Գամարիան թէպէտ յուշեցին արքային չայրել մատեանը, բայց նա նրանց չլսեց: 26 Արքան հրաման տուեց արքայորդի Յերեմիէլին, Եսրիէլի որդի Սարէային եւ Աբդիէլի որդի Սեղեմիային, որ բռնեն Բարուք ատենադպրին եւ Երեմիա մարգարէին, սակայն սրանք հեռացան ու թաքնուեցին‡:

ԵՐԵՄԻԱՆ ՈՒՐԻՇ ՄԱՏԵԱՆ Է ԳՐՈՒՄ

27 Այն բանից յետոյ, երբ թագաւորն այրեց մատեանը, ուր Բարուքը Երեմիայի բերանից գրի էր առել նրա բոլոր խօսքերը, Տէրը խօսեց Երեմիայի հետ՝ ասելով.

28 «Նորից դու մի այլ մատեան վերցրո՛ւ եւ նրա մէջ գրի՛ր նախորդ բոլոր խօսքերը, որոնք տեղ էին գտել առաջին մատեանում, որ այրեց Յուդայի երկրի Յովակիմ արքան: 29 Իսկ Յուդայի երկրի Յովակիմ արքային էլ կ'ասես, թէ այսպէս է ասում Տէրը.

"Դու վառեցիր մատեանն այն եւ ասացիր՝ 'Ինչո՞ւ նրա մէջ գրեցիր ու յայտնեցիր, թէ բաբելացիների արքան պիտի ներխուժի ու ջնջի այս երկիրը, պիտի զրկի այն մարդ ու անասունից'"»:

30 Դրա համար էլ Տէրն այսպէս է ասում Յուդայի երկրի Յովակիմ արքայի մասին. «Նրա սերնդից մարդ չի մնալու,

†Սրբայերէն՝ վախեցած իրար նայեցին:

‡Սրբայերէն՝ բայց Տէրը նրանց պահեց:

որ նստի Դաւթի աթոռին, եւ նրանց դիակները ցերեկն ընկած պիտի մնան տօթի, իսկ գիշերը՝ ցրտի մէջ: 31 Իր անօրէնութիւնների համար պատժելու եմ նրան, նրա ցեղին ու նրա պաշտօնեաներին, նրանց վրայ, Երուսաղէմի բնակչութեան վրայ եւ Յուդայի երկրի վրայ բերելու եմ այն բոլոր չարիքները, որոնց մասին յայտնեցի նրանց, բայց նրանք չլսեցին»:

32 Եւ Երեմիան մի այլ մատեան վերցրեց ու յանձնեց Ներիայի որդուն՝ Բարուք ատենագրին, որը նրա մէջ Երեմիայի բերանից գրի առաւ այն մատեանի բոլոր խօսքերը, որ կրակի մէջ այրել էր Յուդայի երկրի արքայ Յովակիմը: Այդ մատեանի մէջ ուրիշ խօսքեր եւս աւելացան, առաւել, քան նախորդ խօսքերը:

ՍԵԴԵԿԻԱՆ ԱՂՕԹՔ Է ԽՆԴՐՈՒՄ ԵՐԵՄԻԱՅԻՑ

37 Յովակիմի որդի Յեքոնիայի փոխարէն թագաւորեց Յոսիայի որդի Սեդեկիան, որին Յուդայի երկրի վրայ թագաւոր կարգեց բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան: 2 Սա, իր ծառաներն ու երկրի ժողովուրդը եւս ականջ չդրին Տիրոջ խօսքերին, որ նա յայտնել էր Երեմիա մարգարէի միջոցով:

3 Սեղեմիայի որդի Յովաքազին եւ Մաասիայի որդի Սոփոնիային, որոնք քահանաներ էին, Սեդեկիա արքան ուղարկեց Երեմիա մարգարէի մօտ՝ ասելով. «Դու մեզ համար աղօթի՛ր մեր Տէր Աստծուն»:

4 Իսկ Երեմիան գնում գալիս էր ամբոխի մէջ. նրան բանտ չէին գցել: Այն ժամանակ Փարաւոնի զօրքը ելաւ Եգիպտացիների երկրից, որի մասին լսելով՝ քաղդէացիները, որոնք պաշարել էին Երուսաղէմը, հեռացան Երուսաղէմից: 5 Տէրը խօսեց Երեմիա մարգարէի հետ եւ ասաց. 6 «Այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի. այսպէս կ'ասէք Յուդայի երկրի արքային, որն ինձ մօտ է ուղարկել ձեզ՝ խնդրելու այս բանը. ահա Փարաւոնի զօրքը, որը եկել է ձեզ օգնութեան, նորից պիտի վերադառնայ Եգիպտոս, 7 իսկ քաղդէացիները կրկին պիտի վերադառնան այստեղ. պիտի պատերազմեն այս քաղաքի դէմ, պիտի գրաւեն եւ հրով պիտի այրեն այն»:

8 Այսպէս է ասում Տէրը. «Դուք ձեզ մի՛ խաբէք այն բանով, թէ՝ "Քաղդէացիները ելան հեռացան մեզնից": Նրանք ձեզնից ձեռք չեն քաշելու: 9 Անգամ եթէ ձեզ հետ կռուող քաղդէացիների ամբողջ զօրքը կոտորէք, այն վիրաւորները, որոնք մնալու են նրանցից, ամէն կողմից պիտի բորբոքուեն ու հրով այրեն այս քաղաքը»:

ԵՐԵՄԻԱՆ ՁԵՐԲԱԿԱԼԻՈՒՄ Է ԵՒ ԲԱՆՏԱՐԿՈՒՄ

10 Երբ քաղդէացիների բանակը եգիպտացիների զօրքերի ահից հեռացաւ Երուսաղէմից, 11 Երեմիան դուրս եկաւ Երուսաղէմից, որպէսզի գնայ Բենիամինի երկիրը եւ այնտեղ, ժողովրդի մէջ, գնի իր բաժին հողը: 12 Նա եկաւ հասաւ Բենիամինի դուռը: Այդտեղ մի մարդ† կար, որին հանդիպեց նա, անունը՝ Սարու, Անանիայի որդի Սեղեմիայի տղան: Սա բռնեց Երեմիա մարգարէին՝ ասելով. «Դու փախել ես եւ ուզում ես քաղդէացիների մօտ գնալ»: 13 Իսկ Երեմիան ասաց. «Սուտ ես ասում, ես չեմ փախչում քաղդէացիների մօտ»: Բայց նա չլսեց նրան: Սարուն Երեմիային ձերբակալեց եւ բերեց իշխանների մօտ: 14 Իշխանները զայրացան Երեմիայի վրայ, գանահարեցին ու բանտարկեցին նրան Յովնաթան ատենագրի ապարանքում, քանի որ սրա ապարանքը բանտի էին վերածել: 15 Երեմիան ընկաւ Այերինոթ, այն տունը, որտեղ գուբ‡ էր: Այդտեղ Երեմիան անցկացրեց երկար օրեր: 16 Սեդեկիա արքան մարդ ուղարկեց ու կանչեց նրան: Իր տան մէջ թագաւորը ծածուկ հարցրեց նրան՝ ասելով. «Տիրոջ կողմից որեւէ պատգամ չկա՞յ արդեօք»: Իսկ Երեմիան ասաց՝

†Երրայերէն՝ ոստիկան:

†Երրայերէն՝ խուցը:

այո՛, կայ: Ապա ասաց. «Բաբելացիների թագաւորի ձեռքը պիտի մատնուես: 17 Քո եւ քո պաշտօնեաների ու ժողովրդի հանդէպ ի՞նչ մեղք գործեցի, – ասաց Երեմիան Սեդեկիա թագաւորին, – որ դու ինձ բանտ ես նստեցրել: 18 Իսկ ո՞ւր են ձեր այն մարգարէները, որոնք մարգարէութիւն էին անում ու ասում, թէ բաբելացիների արքան չի գալու այս երկիրը՝ ձեզ վրայ: 19 Արդ, լսի՛ր, աղաչում եմ, տէ՛ր իմ արքայ, թող աղերսանքս հասնի քո սրտին. ինչո՞ւ ես ինձ նորից յետ դարձնում Յովնաթան ատենագրի տունը, որ այնտեղ մեռնեմ»:

20 Սեդեկիա արքան հրաման արձակեց, եւ նրան գցեցին բանտի գաւիթը: Նրան դրսից հացագործներն օրը մի նկանակ հաց էին տալիս, մինչեւ որ հացը քաղաքից բոլորովին կտրուեց: Եւ Երեմիան մնաց բանտի գաւթում:

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՆԵՏՈՒՄ ԵՆ ԳԲԻ ՄԷՋ

38 Մատթանի որդի Սափատիան, Պասքորի որդի Գոդողիան, Սեղեմիայի որդի Յովաքազը եւ Մելքիայի որդի Պասքորը լսեցին Երեմիայի խօսքերը, որ նա ասում էր ամբողջ ժողովրդին, թէ՝ 2 այսպէս է ասում Տէրը.

«Ով որ մնայ այս քաղաքում, սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի, իսկ ով գնայ քաղդէացիների մօտ, պիտի ապրի. նրա համար իր հոգին վերագտնուածի պէս պիտի լինի, նա պիտի փրկուի»:

3 Այսպէս է ասում Տէրը.

«Այդ քաղաքը պիտի մատնուի բաբելացիների թագաւորի զօրքի ձեռքը, պիտի գրաւեն դա»:

4 Եւ իշխաններն ասացին թագաւորին. «Թող սպանուի այս մարդը, որովհետեւ այդպիսով նա թուլացնում է բազուկները կռուող մարդկանց, որոնք մնացել են այս քաղաքում, եւ բազուկները ամբողջ ժողովրդի՝ այդպիսի խօսքեր ասելով նրան. այս մարդը ոչ թէ օգուտի եւ խաղաղութեան խօսքեր է ասում ժողովրդին, այլ՝ չարութեան»:

5 Իսկ Սեդեկիա արքան, ամենեւին ձեռնհաս չլինելով նրանց դէմ որեւէ բան անելու, ասաց. «Ահա նա ձեր ձեռքում է»:

6 Առան Երեմիային եւ նրան գցեցին թագաւորի որդի Մելքիայի գուբը, որ գտնուում էր բանտի գաւթում: Երեմիային պարաններով իջեցրին գուբը: Իսկ գբի մէջ բոլորովին ջուր չկար, այլ լոկ տիղմ էր: Երեմիան մնաց տիղմի մէջ:

7 Եթովպացի Աբդիմելէքը, ներքինի մի մարդ, որը թագաւորի ապարանքում էր, լսեց, որ Երեմիային գցել են գուբը: Արքան նստած էր Բենիամինի դռանը, 8 երբ թագաւորական ապարանքից նրա մօտ գնաց Աբդիմելէքը, խօսեց թագաւորի հետ ու ասաց. 9 «Տէ՛ր արքայ, այդպէս վարուելով Երեմիա մարգարէի հետ՝ այդ մարդիկ, ըստ ամենայնի, չարիք գործեցին, որովհետեւ նրան նետեցին գուբը, որի ներսում նա մեռնելու է: Դու չարիք գործեցիր՝ սովի միջոցով մահուան մատնելով Աստծու մարդուն, քանզի այս քաղաքում հաց չկայ»:

10 Թագաւորը Եթովպացի Աբդիմելէքին հրաման տուեց ու ասաց. «Այստեղից դու քեզ հետ վերցրո՛ւ երեսուն մարդ, մարգարէին հանեցէ՛ք այն գբից, որպէսզի չմեռնի»:

11 Աբդիմելէքն իր հետ վերցրեց մարդկանց, գնաց թագաւորի ապարանքը, գետնափոր գանձատունը, այնտեղից առաւ հին կապերտներ ու հին պարաններ† եւ դրանք իջեցրեց Երեմիայի մօտ, գբի մէջ:

12 Աբդիմելէք Եթովպացին Երեմիային ասաց. «Հին կապերտներն ու բրդերը դի՛ր քո թեւատակերին, պարանների տակ»: 13 Երեմիան այդպէս էլ արեց: Նրան պարաններով քաշեցին եւ հանեցին գբից: Երեմիան նստեց բանտի գաւթի մէջ:

†Երրայերէն՝ հին լաթեր:

ՍԵԴԵԿԻԱՆ ԴԻՄՈՒՄ Է ԵՐԵՄԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ

14 Սեդեկիա արքան մարդ ուղարկեց
եւ մարգարէին կանչեց իր մօտ, Ասսա-
լիսայի կացարանը, որը գտնւում էր
Տիրոջ տաճարի մէջ†: Արքան նրան
ասաց. «Մի բան պիտի հարցնեմ քեզ,
բայց չլինի թէ ինձնից պահես»: 15 Իսկ
Երեմիան թագաւորին ասաց. «Եթէ
պատմեմ քեզ, արդեօք ինձ մահով չե՞ս
մեռցնի, իսկ եթէ քեզ որեւէ խրատ տամ,
ինձ չե՞ս լսի»: 16 Սեդեկիա արքան
գաղտնի երդում տուեց նրան եւ ասաց.
«Կենդանի է Տէրը, որ մեր մէջ այս
չունչն է արարել. քեզ չեմ սպանելու եւ
չեմ մատնելու այն մարդկանց ձեռքը,
որոնք քո հոգին են պահանջում»: 17 Ե-
րեմիան նրան ասաց. այսպէս է ասում
Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աս-
տուածը. «Եթէ ելնես գնաս բաբելա-
ցիների արքայի զօրավարի մօտ, ապա քո
անձը ողջ կը մնայ, եւ այս քաղաքը
հրով չի այրուի, կ'ապրէք դու էլ, քո
տունն էլ: 18 Իսկ եթէ չգնաս
բաբելացիների արքայի իշխանների մօտ,
այս քաղաքը կը մատնուի քաղդէա-
ցիների ձեռքը, հրով կ'այրեն դա, ու դու
նրանց ձեռքից չես փրկուի»:
19 Սեդեկիա արքան Երեմիային ասաց.
«Ես կասկած ունեմ քաղդէացիների մօտ
փախած հրեաների նկատմամբ. գուցէ
ինձ մատնեն նրանց ձեռքը, եւ նրանք
ծաղրուծանակի ենթարկեն ինձ»: 20 Իսկ
Երեմիան ասաց. «Չեն մատնի քեզ,
սակայն լսի՛ր Տիրոջ խօսքերը, որ ես
յայտնում եմ քեզ. քեզ համար լաւ կը
լինի, եւ քո անձը կը փրկուի: 21 Իսկ եթէ
չկամենաս գնալ, ապա արդիւնքը կը
լինի այն բանը, ինչ Տէրն ինձ ցոյց է
տուել: 22 Ահաւասիկ այն բոլոր կանայք,
որոնք մնացել են քո՝ Յուդայի երկրի
թագաւորիդ տանը, պիտի տարուեն
բաբելացիների արքայի իշխանների մօտ:
Նրանք պիտի ասեն. "Մարդիկ, որոնք
քեզ հետ հաշտութեան մէջ էին, քեզ
խաբեցին եւ յաղթեցին, մոլորութեան
մէջ գցեցին քո ոտքերը եւ երես դարձրին
քեզնից: 23 Քո բոլոր կանանց ու որդի-
ներին պիտի հանեն տանեն քաղդէա-
ցիների մօտ, եւ դու էլ նրանց ձեռքից չես
փրկուելու, որովհետեւ բաբելացիների
թագաւորի ձեռքով պիտի բռնուես, իսկ
այս քաղաքը պիտի այրուի հրով"»:
24 Եւ թագաւորը նրան ասաց. «Ո՛վ
դու մարդ, թող ոչ ոք չիմանայ այդ
բաների մասին, թէ չէ կը մեռնես: 25 Իսկ
եթէ իշխանները լսեն, որ խօսեցի քեզ
հետ, եւ գան քեզ մօտ ու ասեն, թէ՝
"Պատմի՛ր մեզ՝ ի՛նչ խօսեցիր արքայի
հետ, մեզնից մի՛ թաքցրու, մենք քեզ
չենք սպանի" կամ թէ՝ "Արքան քեզ ի՞նչ
ասաց", — 26 ապա նրանց կ'ասես. "Ես
գուցէ աղերսեցի արքայի առաջ, որ ինձ
նորից յետ չդարձնի Յովնաթանի տունը,
որ այնտեղ մեռնեմ"»:
27 Եւ բոլոր իշխանները եկան Ե-
րեմիայի մօտ ու հարցուփորձ արին
նրան. նա պատմեց նրանց այն ամէնը,
ինչ պատուիրել էր նրան թագաւորը, ու
նրան հանգիստ թողին, որովհետեւ
ոչինչ յայտնի չդարձաւ: 28 Ու Երեմիան
նստեց բանտի դաւթում մինչեւ այն
ժամանակ, երբ Երուսաղէմը գրաւուեց:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԿՈՒՄԸ

39 Իսկ Երուսաղէմը գրաւուելու
ժամանակ, Յուդայի երկրի Սեդեկիա
արքայի իններորդ տարում, տասներորդ
ամսին, բաբելացիների Նաբուքոդոնոսոր
արքան ինքը իր ամբողջ զօրքով եկաւ
հասաւ Երուսաղէմ եւ պաշարեց այն:
2 Սեդեկիայի տասնմէկերորդ տարում,
չորրորդ ամսին, ամսի իններորդ օրը,
քաղաքը ճեղք տուեց, 3 եւ բաբելացիների
արքայի բոլոր զօրավարները՝ Ներգէլը,
Սարասարը, Սարմագադը, Նաբուսար-
սեքիմը, Ռափսարիսը եւ Ներգէլը, Սարա-
սարը, Ռաբմագը ու բաբելացիների ար-
քայի այլ իշխաններ, մտան եւ
բազմեցին միջին դռան առաջ:
4 Իսկ երբ Յուդայի երկրի Սեդեկիա
արքան եւ բոլոր կռուող մարդիկ տեսան
նրանց, գիշերով փախան եւ արքունի

†Եբրայերէն՝ Տիրոջ Տան երրորդ մուտքը:

այգու ճանապարհով, պարիսպների միջեւ
գտնուող դարպասով ելան քաղաքից,
դուրս եկան Արաբիայի ճանապարհը†:
5 Նրանց հետապնդեցին քաղդէացիների
զօրքերը եւ Երիքովի Արաբոթում‡ հա-
սան Սեդեկիային, բռնեցին նրան ու բե-
րին Եմաթի երկիրը՝ Դեբլաթա, բաբե-
լացիների Նաբուքոդոնոսոր արքայի ա-
ռաջ, որը նրա հետ դատաստան տեսաւ:
6 Բաբելացիների արքան Դեբլաթայում
Սեդեկիայի առաջ սպանեց նրա որդիներ-
ին: Բաբելացիների արքան նաեւ կո-
տորեց Յուդայի երկրի ողջ ազատանուն,
7 իսկ Սեդեկիայի աչքերը կուրացրեց,
կապեց նրան պղնձէ շղթաներով,
որպէսզի նրան տանեն Բաբելոն:
8 Քաղդէացիները հրով այրեցին թա-
գաւորի տունն ու ժողովրդի տները,
քանդեցին Երուսաղէմի պարիսպները:
9 Ժողովրդի մնացած մասին, քաղաքում
մնացածներին եւ իրենց կողմն ան-
ցածներին, ինչպէս եւ ժողովրդի
թափթփուկներին Նաբուզարդան դահ-
ճապետը քշեց Բաբելոն: 10 Աղքատ ու
ընչազուրկ ժողովրդին Նաբուզարդան
դահճապետը թողեց դարձեալ Յուդայի
երկրում եւ նոյն օրն իսկ նրանց տուեց
այգիներ ու ջրարբի հողեր:

ԵՐԵՄԻԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

11 Իսկ Երեմիային բաբելացիների Նա-
բուքոդոնոսոր արքան յանձնելով Նա-
բուզարդան դահճապետի ձեռքը՝ պա-
տուիրեց նրան ու ասաց. 12 «Վերցրո՛ւ
դրան, աչքդ պահի՛ր դրա վրայ. ոչ մի
վատ բան չանես դրան, այլ ինչ որ քեզ
ասի՝ կ'անես դրա համար»: 13 Ապա
Նաբուզարդան դահճապետին ու Նա-
բուսազաբան ներքինապետին, Ներգէ-
լին, Սարասարին, Ռոբոգոմին ու բաբե-
լացիների արքայի բոլոր մեծամեծներին
ուղարկեցին Երեմիայի մօտ, 14 նրան
հանեցին բանտից եւ յանձնեցին Սա-
փանի որդի Աքիկամի որդի Գոդոդիային.
նրան տարան մի տուն, եւ նա ապրում
էր ժողովրդի մէջ:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՄԵԼԷՔԻ ՄԱՍԻՆ

15 Մինչ Երեմիան բանտի դաւթում
նեղութեան մէջ էր, Տէրը խօսեց նրա
հետ եւ ասաց.
16 «Գնա յայտնի՛ր Աբդիմելէք Եթով-
պացուն, թէ այսպէս է ասում Զօրու-
թիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
"Ահա ես այդ քաղաքի մասին ասած իմ
խօսքը պիտի գործադրեմ չարիքի եւ ոչ
թէ բարիքի համար. դա պիտի կատարուի
այն օրը, քո աչքի առաջ: 17 Իսկ քեզ այդ
օրը պիտի փրկեմ, – ասում է Տէրը: – Քեզ
ոչ թէ պիտի տամ այն մարդկանց ձեռքը,
որոնցից դու երկնչում ես, 18 այլ
անպայման պիտի ազատեմ քեզ. դու
սրով չպիտի ընկնես, եւ քո անձը քեզ
համար պիտի լինի վերստին գտնուած,
քանզի դու յոյսդ ինձ վրայ դրիր"», –
ասում է Տէրը:

ԵՐԵՄԻԱՆ ՄՆՈՒՄ Է ԳՈԴՈԴԻԱՅԻ ՄՕՏ

40 Սա է այն խօսքը, որ Տէրն ուղղեց
Երեմիային այն բանից յետոյ, երբ Նա-
բուզարդան դահճապետը նրան ազատ
արձակեց Ռամայում: Նրան, ձեռքերը
շղթայակապ, վերցրին Երուսաղէմի եւ
Յուդայի երկրի բոլոր գերիների միջից,
որոնց քշում էին Բաբելոն: 2 Առաւ նրան
դահճապետն ու ասաց. «Քո Տէր Աս-
տուածն հէնց ա՛յս տեղի համար
բարբառեց այդ չարութիւնների մասին:
3 Տէրն սպառնաց եւ կատարեց այնպէս,
ինչպէս խօսել էր, քանզի մեղանչեցիք
Տիրոջ հանդէպ եւ ականջ չդրիք նրա
ձայնին, որի համար էլ այդ բանը
պատահեց ձեզ հետ: 4 Եւ ահա այժմ
արձակեցի քեզ այն կապանքներից,
որոնք քո ձեռքերին էին. եթէ քեզ
համար հաճելի ես գտնում ինձ հետ գալ
Բաբելոն՝ արի՛, աչք կը պահեմ քեզ
վրայ, իսկ եթէ քո աչքին վատ է թւում
ինձ հետ գալ Բաբելոն՝ մնա՛ այստեղ:

†Եբրայերէն՝ դաշտի ճանապարհը:
‡Եբրայերէն՝ դաշտում:

Ահա այս ամբողջ երկիրը բարիքներով քո առաջ է. ուր որ հաճելի է քեզ՝ այնտեղ էլ գնա՛: 5 Քանի դեռ ես այստեղ եմ, գնա՛ ում մօտ որ կամենում ես: Վերադարձի՛ր Սափանի որդի Աքիկամի որդի Գոդոդիայի մօտ, որին բաբելացիների արքան Հրէաստանի՝ քո երկրի վրայ իշխան կարգեց. նրա հետ կը բնակուես ժողովրդի մէջ: Իսկ եթէ չես ուզում, քո աչքին ուր որ դուր է գալիս գնալ՝ գնա՛»:

Ապա դահճապետը նրան պաշար ու պարգեւներ տուեց եւ արձակեց: 6 Երեմիան գնաց Մասեփա, Աքիկամի որդի Գոդոդիայի մօտ, եւ բնակուեց այնտեղ երկրում մնացած ժողովրդի մէջ:

ԳՈԴՈՂԻԱՆ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ
(Դ Թագ. 25. 22-24)

7 Բոլոր զօրքերի հրամանատարները, որոնք գտնուում էին դաշտում, իրենք ու իրենց զօրքերը լսեցին, որ բաբելացիների արքան երկրին վերակացու է կարգել Աքիկամի որդի Գոդոդիային՝ նրան յանձնելով տղամարդկանց ու կանանց եւ մեծաթիւ ժողովրդի, ինչպէս եւ երկրի բնակչութեան աղքատ մասին, որոնց չէր գաղթեցրել Բաբելոն: 8 Իրենց հետ եղած մարդկանցով Գոդոդիայի մօտ Մասեփա եկան Նաթանի որդի Իսմայէլը, Կարէի որդիներ Յովնանն ու Յովնաթանը, Թանաթէմի որդի Սարեան, Նետոփատի որդի Օփերի որդիներն ու Մաքաթիի որդի Յեզոնիան: 9 Սափանի որդի Աքիկամի որդի Գոդոդիան նրանց ու նրանց հետ եղած մարդկանց երդում տուեց ու ասաց. «Մի՛ վախեցէք քաղդէացի պաշտօնեաներից, ապրեցէ՛ք այս երկրում, հարկատո՛ւ դարձէք բաբելացիների արքային, եւ ձեզ համար լաւ կը լինի: 10 Ես էլ ահաւասիկ մնում եմ Մասեփայում, որպէսզի դէմ կանգնեմ այն քաղդէացիներին, որոնք կը յարձակուեն ձեզ վրայ: Իսկ դուք գինի ու միրգ մթերեցէ՛ք, ձեր ամանների մէջ իւղ կուտակեցէ՛ք եւ բնակուեցէ՛ք ձեր քաղաքներում, որոնք դուք քաջութեամբ պահեցիք»:

11 Եւ բոլոր հրեաները, որոնք Մովաբացիների երկրում էին եւ ամոնացիների մէջ, որոնք Եդոմում էին, ոմանք էլ՝ տարբեր երկրներում, լսեցին, որ բաբելացիների արքան ժողովրդի մի մասը թողել է Հրէաստանում եւ նրանց վրայ վերակացու է դրել Սափանի որդի Աքիկամի որդի Գոդոդիային, — 12 այդ բոլոր հրեաներն ամէն տեղից, ուր ցրուած էին, եկան Յուդայի երկիրը, Մասեփա, Գոդոդիայի մօտ, եւ չափազանց շատ գինի ու միրգ մթերեցին:

ԴԱՒԻ ԳՈԴՈՂԻԱՅԻ ԴԷՄ
(Դ Թագ. 25. 25-26)

13 Կարէի որդի Յովնանն ու զօրքերի բոլոր հրամանատարները եւս, որոնք ուրիշ տեղ էին գտնուում, Մասեփայում ներկայացան Գոդոդիային եւ ասացին նրան. 14 «Գիտե՞ս այն մասին, որ ամոնացիների Բայաելիս թագաւորը Նաթանի որդի Իսմայէլին ուղարկել է քեզ մօտ, որպէսզի սպանի քեզ»: Բայց Աքիկամի որդի Գոդոդիան չհաւատաց նրանց: 15 Ապա Կարէի որդի Յովնանը Մասեփայում Գոդոդիային գաղտնի ասաց. «Թո՛յլ տուր գնամ սպանեմ Նաթանի որդի Իսմայէլին, ու ոչ ոք թող չիմանայ. գուցէ մի օր նա սպանի քեզ, եւ հրեաները, որոնք հաւաքուած են քեզ մօտ, ցրուեն, ու Յուդայի երկրի մնացորդներն էլ կորչեն»: 16 Իսկ Աքիկամի որդի Գոդոդիան Կարէի որդի Յովնանին ասաց. «Մի՛ արա ինչպէս ասացիր, քանզի Իսմայէլի մասին դու սուտ խօսեցիր»:

ԳՈԴՈՂԻԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

41 Պատահեց այնպէս, որ եօթներորդ ամսին թագաւորազարմ Եղիսամայի որդի Նաթանի որդի Իսմայէլը թագաւորի պաշտօնեաների եւ տասը մարդու ուղեկցութեամբ եկաւ Մասեփա՝ Աքիկամի որդի Գոդոդիայի մօտ, եւ նրանք միասին հաց կերան Մասեփայում: 2 Ապա Նաթանի որդի Իսմայէլն իր հետ եղած տասը տղամարդկանցով վեր կացաւ, սրով հարուածեց Սափանի որդի Աքիկամի որդի Գոդոդիային եւ սպանեց նրան, որին բաբելացիների արքան երկրի վրայ վերակացու էր դրել: 3 Բոլոր հրեաներին եւս, որոնք Գոդոդիայի հետ Մասեփայում էին, ինչպէս նաեւ այնտեղ գտնուած բոլոր քաղդէացիներին, որոնք պատերազմող մարդիկ էին, Իսմայէլը կոտորեց:

4 Իսկ Գոդոդիայի սպանութեան յաջորդ օրը, երբ դեռ ոչ ոք այդ մասին չգիտէր, 5 Սիւքէմից, Սաղէմից եւ Շամրինից մարդիկ եկան, ութսուն տղամարդ, մօրուքները սափրած, զգեստները պատառոտած, կոծ անելով, ձեռքներին՝ ընծաներ եւ կնդրուկ, որպէսզի տանեն Տիրոջ Տունը: 6 Մասեփայում նրանց ընդառաջ ելաւ Նաթանի որդի Իսմայէլը. նա գնում էր ու լաց լինում: Իսկ երբ մօտեցաւ նրանց, ասաց. «Մտէ՛ք Աքիկամի որդի Գոդոդիայի մօտ»: 7 Հէնց որ քաղաքամէջ հասան, Նաթանի որդի Իսմայէլն իր հետ եղած մարդկանցով քաղաքի մէջ կոտորեց նրանց եւ լցրեց ջրհորը: 8 Այնտեղ տասը մարդ կար, որոնք ասացին Իսմայէլին. «Մեզ մի՛ սպանիր, որովհետեւ մենք դաշտում գանձեր ունենք՝ ցորեն ու գարի, մեղր ու իւղ»: Նա զիջեց, ընկերների միջից միայն նրանց չսպանեց: 9 Իսկ ջրհորը, որի մէջ Իսմայէլը լցրել էր այն բոլոր մարդկանց դիակները, որոնց կոտորել էր Գոդոդիայի պատճառով, մի մեծ ջրհոր էր, որը Իսրայէլի Բասսա արքայի վախից շինել էր Ասա արքան. Նաթանի որդի Իսմայէլն այն լցրեց սպանուածներով:

10 Իսմայէլը գերեվարեց Մասեփայում մնացած ամբողջ ժողովրդին եւ թագաւորի դուստրերին՝ Մասեփայում եղած ժողովրդի թափթփուկների հետ միասին, որոնց Նաբուզարդան դահճապետը յանձնել էր Աքիկամի որդի Գոդոդիային: Նաթանի որդի Իսմայէլը առաւօտ կանուխ ելաւ գնաց միւս կողմը՝ ամոնացիների մօտ:

11 Երբ Կարէի որդի Յովնանը եւ զօրքերի բոլոր հրամանատարները, որոնք նրա հետ էին, լսեցին այն բոլոր չարիքների մասին, որ գործել էր Նաթանի որդի Իսմայէլը, հաւաքեցին իրենց բոլոր զինուորներին 12 եւ շարժուեցին, որպէսզի գնան պատերազմ մղեն Նաթանի որդի Իսմայէլի դէմ: Նրան հանդիպեցին Գաբաւոնում, յորդ ջրերի մօտ: 13 Իսկ երբ Իսմայէլի հետ եղած ամբողջ ժողովուրդը նկատեց Կարէի որդի Յովնանին եւ բոլոր զօրապետներին, որ նրա հետ էին, ուրախացաւ: 14 Ամբողջ ժողովուրդը, որին Իսմայէլը գերել էր Մասեփայում, անցաւ նրանց կողմը, եկաւ Կարէի որդի Յովնանի մօտ: 15 Բայց Նաթանի որդի Իսմայէլը ութ տղամարդու հետ փրկուեց Յովնանի ձեռքից եւ ընկաւ ամոնացիների մօտ:

16 Ապա Կարէի որդի Յովնանն ու բոլոր զօրապետները, որ նրա հետ էին, Մասեփայից վերցրին ժողովրդի այն մասը, որ մնացել էր, ազատեցին նրանց Նաթանի որդի Իսմայէլի ձեռքից այն բանից յետոյ, երբ սա սպանեց Աքիկամի որդի Գոդոդիային, գաբաւոնացիների երկրից առան հզօր ու պատերազմող մարդկանց, կանանց, տղամարդկանց ու ներքինիներին, 17 գնացին ու կանգ առան Բերուութքամամ երկրում†, Բեթղահէմի դիմաց, որպէսզի քաղդէացիների երկիւղից անցնեն գնան Եգիպտացիների երկիրը: 18 Նրանք վախենում էին նրանցից, քանի որ Իսմայէլն սպանել էր Աքիկամի որդի Գոդոդիային, որին բաբելացիների արքան երկրի վրայ կառավարիչ էր կարգել:

ԵՐԵՄԻԱՆ ՅՈՐԴՈՐՈՒՄ Է ՁԳԱՂԹԵԼ ԵՐԿՐԻՑ

42 Բոլոր զօրապետները, Կարէի որդի Յովնանը, Օսէի որդի Յեզոնիան եւ ամբողջ ժողովուրդը, փոքրից մինչեւ

†Երրայերէն՝ գնացին եւ նստեցին Քիմհանայի պանդոկում:

մեծերը, մօտեցան ու ասացին Երեմիա մարգարէին. 2 «Թող մեր աղերսն ընդունելի լինի քո առաջ. մեզ համար, այս մնացորդացիս համար, աղօթի՛ր քո Տէր Աստծուն: Շատերից այս քչերս ենք մնացել, ինչպէս դու տեսնում ես մեզ քո աչքերով: 3 Թող քո Տէր Աստուածը մեզ ցոյց տայ ճանապարհը, որով ընթանանք, կամ այն բանը, որ կատարենք»:

4 Իսկ Երեմիա մարգարէն նրանց ասաց. «Լսեցի. ձեր խնդրանքի համար այժմ ես աղօթքի կը կանգնեմ մեր Տէր Աստծու առաջ, եւ Տէրն ինչ պատասխան որ տայ՝ կը յայտնեմ ձեզ, ոչ մի բան ձեզնից չեմ պահի»:

5 Իսկ նրանք Երեմիային ասացին. «Թող Տէրը մեզ համար արդար ու ճշմարիտ վկայ լինի, եթէ ամէն բան չանենք ըստ այն խօսքի, որ Տէրը կ'ուղարկի քեզ մեզ համար: Մենք այնպէս կ'անենք: 6 Մենք կ'անսանք մեր Տէր Աստծու ձայնին, որի մօտ ենք ուղարկում քեզ, այն բարի լինի թէ չար, որպէսզի մեզ համար լաւ լինի: Մենք կ'անսանք մեր Տէր Աստծու ձայնին»:

ՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՐԵՄԻԱՅԻՆ

7 Երբ անցել էր տասը օր, Աստուած խօսեց Երեմիայի հետ, 8 որը կանչեց Կարէի որդի Յովնանին, բոլոր զօրապետներին, որոնք նրա հետ էին, եւ ամբողջ ժողովրդին, փոքրից մինչեւ մեծերը, 9 ու ասաց նրանց.

«Այսպէս է ասում Տէր Աստուածն Իսրայէլի, որի մօտ ուղարկեցիք ինձ, որպէսզի գութ աղերսեմ նրա առաջ.

10 "Եթէ մնաք այս երկրում,
ձեզ կը շէնացնեմ եւ ոչ թէ կը քանդեմ,
ձեզ կը տնկեմ եւ ոչ թէ արմատախիլ կ'անեմ,
որովհետեւ մեղմացել եմ այն չարութիւնից,
որ ասացի, թէ ձեր նկատմամբ պիտի անեմ:
11 Մի՛ վախեցէք բաբելացիների
արքայից,
որից զարհուրած էիք,
չվախենաք նրանից, – ասում է Տէրը, –
քանզի ես ձեզ հետ եմ,
որպէսզի փրկեմ ձեզ եւ ազատեմ
նրանց ձեռքից:
12 Կը գթամ ձեզ, կ'ողորմեմ ձեզ
ու կը վերադարձնեմ ձեզ ձեր երկիրը:
13 Իսկ եթէ ասէք՝ "Չենք բնակուի այս
երկրում եւ չենք անսայ մեր Տէր Աստծու
ձայնին, 14 այլ կը գնանք Եգիպտացիների
երկիրը, որտեղ պատերազմ չենք տեսնի,
չեփորի ձայն չենք լսի, հացից քաղցած
չենք մնայ, եւ այնտեղ կ'ապրենք", — 15
ապա այդ մասին լսեցէ՛ք Տիրոջ պատգամները, ո՛վ Հրէաստանի մնացորդներ»: Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.

«Եթէ դուք երեսներդ շուռ տաք ու մտնէք Եգիպտոս,
որպէսզի այնտեղ բնակուէք,
16 ապա այն սուրը, որից դուք
վախենում էք,
այնտեղ, Եգիպտացիների երկրում,
պիտի գտնի ձեզ,
եւ այն սովը, որից տագնապում էք,
այնտեղ, Եգիպտացիների երկրում,
պիտի հասնի ձեզ,
եւ այնտեղ պիտի մեռնէք:
17 Բոլոր մարդիկ, որոնք կը դիմեն ու
կ'անցնեն Եգիպտացիների երկիրը,
որպէսզի բնակուեն այնտեղ,
սրով, սովով ու ժանտախտով պիտի
մեռնեն,
նրանցից ոչ ոք չպիտի կարողանայ
փրկուել այն չարիքներից,
որ բերելու եմ նրանց գլխին»:
18 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.

«Ինչպէս որ իմ զայրոյթն ու բարկութիւնը թափուեց Երուսաղէմի բնակիչների վրայ, նոյնպէս էլ իմ զայրոյթը պիտի թափուի ձեզ վրայ, երբ դուք մտնէք Եգիպտոս: Պիտի լինէք անապատում, վտարանդի, նզովուած ու նախատուած, այլեւս չպիտի տեսնէք այս վայրերը», 19 ինչպէս ասաց Տէրը

ձեզ՝ Յուդայի երկրի մնացորդներիդ, թէ՝ «Զմտնէ՛ք Եգիպտոս»: Բայց այժմ լա՛ւ իմացէք, այսօր ձեր առաջ վկայում եմ, 20 որ մեղք գործեցիք ձեր հոգու դէմ, քանի որ ինձ ուղարկեցիք ձեր Տէր Աստծու մօտ՝ ասելով. «Մեզ համար աղօթի՛ր մեր Տէր Աստծուն, եւ այն ամէնը, ինչ որ մեր Տէր Աստուածը խօսի քեզ հետ՝ նոյն ձեւով յայտնի՛ր մեզ, ու մենք կը կատարենք»: 21 Եւ ես յայտնեցի ձեզ այսօր, բայց դուք ձեր Տէր Աստծու ձայնին չանսացիք, որի համար նա ինձ ձեզ մօտ էր ուղարկել: 22 Արդ, իմացէ՛ք, որ սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնէք նոյն այն տեղում, ուր դուք կամենում էք գնալ ու բնակուել»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԵԳԻՊՏՈՍ

43 Երբ Երեմիան վերջացրեց ամբողջ ժողովրդին յայտնել նրա Տէր Աստծու բոլոր խօսքերը, որոնք նրան էր յղել Տէր Աստուած, 2 այն ժամանակ Օսէէի որդի Յեզոնիան, Կարէի որդի Յովնանը եւ բոլոր ամբարտաւան մարդիկ Երեմիային ասացին. «Դու սուտ ես խօսում. մեր Տէր Աստուածը քեզ չի ուղարկել մեզ մօտ ասելու, թէ՝ "Մի՛ մտնէք Եգիպտոս՝ այնտեղ բնակուելու համար", 3 այլ քեզ մեր դէմ է գրգռում Ներիայի որդի Բարուքը, որպէսզի մեզ մատնես քաղդէացիների ձեռքը, որ կոտորեն եւ գերի տանեն մեզ Բաբելոն»:

4 Կարէի որդի Յովնանը, բոլոր զօրապետներն ու ամբողջ ժողովուրդը չանսացին Տիրոջ ձայնին՝ բնակուելու Յուդայի երկրում: 5 Կարէի որդի Յովնանը եւ բոլոր զօրապետներն առան Յուդայի երկրի բոլոր մնացորդներին, որոնք Յուդայի երկրում ապրելու համար վերադարձել էին այն բոլոր ազգերի մօտից, ուր ցրուած էին նրանք, 6 տղամարդկանց, կանանց ու մանուկներին, թագաւորի դուստրերին եւ այն անձանց, որոնց Նաբուզարդան դահճապետը թողել էր Սափանի որդի Աքիկամի որդի Գոդոլիայի մօտ, ինչպէս եւ Երեմիա մարգարէին ու Ներիայի որդի Բարուքին, 7 եւ գնացին Եգիպտացիների երկիրը, որովհետեւ չանսացին Տիրոջ ձայնին, եւ հասան Տափնաս:

8 Տափնասում Տէրն իր խօսքն ուղղեց Երեմիային եւ ասաց.

9 «Դու մեծ–մեծ քարե՛ր վերցրու, թաղի՛ր Տափնասում, աղիւսատան թաքստոցի մէջ[†], Փարաւոնի ապարանքի մուտքի մօտ՝ ի տես Յուդայի երկրի մարդկանց, 10 եւ ասա՛ նրանց. այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. ահաւասիկ ես կ'ուղարկեմ ու կը բերեմ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքային՝ իմ ծառային, որն իր գահը պիտի կանգնեցնի այդ քարերի վրայ, որոնք դու թաքցրիր: Դրանց վրայ կանգնած՝ նա պիտի կապի իր զէնքերը, 11 պիտի գայ ու հարուած հասցնի Եգիպտացիների երկրին, ում մահ է վիճակուած՝ պիտի դատապարտի մահուան, ում գերութիւն՝ գերութեան, ում սուր՝ սրի: 12 Նրանց աստուածների տան մէջ կրակ պիտի գցի, պիտի այրի նրանց ու գերի տանի: Պիտի քրքրի Եգիպտացիների երկիրը, ինչպէս հովիւն է քրքրում իր հագուստները, եւ այդտեղից հանգիստ պիտի դուրս գայ: 13 Պիտի խորտակի Եգիպտացիների երկրում գտնուող Արեգ քաղաքի սիւները եւ նրանց աստուածների մեհեաններն այրի հրով»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ՏԻՐՈՋ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

44 Տէրը Երեմիայի միջոցով խօսեց բոլոր հրեաների մասին, որոնք բնակւում էին Եգիպտացիների երկրում, գտնւում էին Մագդոլում, Տափնասում, Մեմփիսում եւ Պաթուրէս երկրում, ու ասաց. 2 այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.

«Դուք ինքներդ գիտէք այն բոլոր չարիքները, որ բերեցի Երուսաղէմի վրայ

[†]Սրբայերէն՝ կաւի մէջ:

եւ ամբողջ Հրէաստանի քաղաքների
վրայ: 3 Ահա դրանք այսօր ամայի են
բնակիչներից այն չարութիւնների
պատճառով, որ նրանք կատարեցին ինձ
դառնացնելու համար, քանզի գնացին
խունկ ծխելու եւ պաշտելու օտար
աստուածներին, որոնց դուք եւ ձեր
հայրերը չէիք ճանաչում: 4 Ու ես միշտ
էլ կանխաւ ձեզ մօտ ուղարկեցի իմ բոլոր
ծառաներին՝ մարգարէներին եւ ասացի,
թէ՝ "Մի՛ անէք այդ պիղծ բաները, որ ես
ատում եմ": 5 Բայց նրանք չլսեցին ինձ
եւ չհնազանդուեցին, որ դարձի գան
իրենց չարութիւններից, խունկ չծխեն
օտար աստուածներին: 6 Եւ իմ բար-
կութիւնն ու զայրոյթը թափուեց ու
բորբոքուեց Ցուդայի երկրի քաղաք-
ներում եւ Երուսաղէմի հրապարակնե-
րում, որոնք աւեր ու անապատ դարձան,
ինչպէս այսօր են»:

7 Արդ, այսպէս է ասում Զօ-
րութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Ինչո՞ւ ձեր հոգիների առաջ մեծա-
մեծ մեղքեր էք գործում, որ Ցուդայի
երկրի միջից ջնջէք ձեր տղամարդուն,
կնոջն ու ծծկեր մանկանը, որ ձեզնից
որեւէ մէկը չմնայ, 8 ձեր ձեռքի
գործերով ինձ դառնութիւն պատճառէք
եւ Եգիպտացիների երկրում, ուր դուք
գնացել էք բնակուելու, խնկարկէք օտար
աստուածներին, որ բնաջնջուէք եւ
անէծքի ու նախատինքի առարկայ դառ-
նաք աշխարհի բոլոր ազգերի մէջ, 9 ո-
րովհետեւ դուք մոռացութեան չտուեցիք
ձեր հայրերի չար գործերը, Ցուդայի
երկրի թագաւորների չարութիւնները,
նրանց կանանց չարութիւնները, ձեր
չարութիւնները եւ ձեր կանանց չարու-
թիւնները, որ նրանք կատարեցին Ցու-
դայի երկրում եւ Երուսաղէմի հրա-
պարակներում: 10 Մինչեւ այսօր նրանք
յետ չկանգնեցին, չվախեցան եւ ոչ էլ
հաւատարիմ մնացին իմ օրէնքին ու
պատուիրաններին, որ դրեցի ձեր աչքի
առաջ եւ ձեր հայրերի աչքի առաջ»:

11 Դրա համար էլ այսպէս է ասում
Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աս-
տուածը.

«Ահա ես իմ երեսը դարձնում եմ
դէպի ձեզ՝ չարութեան համար, ոչնչաց-
նելու համար ամբողջ Ցուդայի երկիրը:
12 Պիտի առնեն Ցուդայի երկրի մնա-
ցորդներին, որոնք դիմեցին ու եկան
Եգիպտացիների երկիրը՝ այստեղ բնա-
կուելու համար, Եգիպտոսում եղած
բոլոր մնացորդներին պիտի կորստեան
մատնեն. պիտի սրի քաշուեն եւ սովից
բնաջնջուեն, փոքրից մինչեւ մեծերը
սրից պիտի ընկնեն ու սովից մեռնեն,
պիտի մատնուեն նզովքի ու կորստեան,
անէծքի ու նախատինքի: 13 Եւ նրանց,
որ Եգիպտոսում են բնակւում, պիտի
պատժեմ սրով, սովով ու մահով, ինչպէս
պատժեցի Երուսաղէմին. 14 եւ Ցուդայի
երկրի մնացորդներից, որոնք բնակւում
են Եգիպտացիների երկրում, ոչ ոք
չպիտի փրկուի, որ վերադառնայ Ցուդա-
յի երկիրը, ուր նրանք վերադառնալու եւ
այնտեղ բնակուելու յոյսն էին փայփա-
յում իրենց հոգում: Չպիտի վերադառ-
նան, բացի միայն փրկուածներից»:

15 Այն ժամանակ այն բոլոր տղա-
մարդիկ, որոնք գիտէին, որ իրենց
կանայք խունկ են ծխում օտար
աստուածներին, նաեւ այնտեղ եղած
բոլոր կանանց մեծ բազմութիւնն ու
ամբողջ ժողովուրդը, որ բնակւում էր
Եգիպտացիների երկրում, Պաթուրէսում,
պատասխան տուին Երեմիային եւ
ասացին. 16 «Մենք չենք լսի քո այդ
խօսքը, որ Տիրոջ անունից ասացիր մեզ,
17 բայց անպայման կը կատարենք ամէն
բան, ինչ ելաւ մեր բերանից. խունկ կը
ծխենք երկնքի թագուհուն, նրան
նուէրներ կ'ընծայենք, ինչպէս արել ենք
մենք ու մեր հայրերը, մեր թագա-
ւորներն ու մեր իշխանները Ցուդայի
երկրի քաղաքներում ու Երուսաղէմի
հրապարակներում, երբ առատ էինք
հացով, վայելքի մէջ էինք ու չարիք
չէինք տեսնում: 18 Իսկ երբ դադարեցինք
երկնքի թագուհուն խունկ ծխելուց եւ
նրան նուէրներ ընծայելուց, ամէն ինչի
կարօտ մնացինք եւ սրով ու սովով

կոտորուեցինք: 19 Երբ մենք, - աւե-
լացրին կանայք, - երկնքի թագուհուն
խունկ էինք ծխում եւ նրան նուէրներ
ընծայում, ինչ է, առանց մեր ամու-
սինների իմացութե՞ան էինք թխուածք
ու կարկանդակներ պատրաստում կամ
նուէրներ ընծայում նրան»:

20 Ժողովրդի բոլոր զօրաւոր մարդ-
կանց ու նրանց կանանց եւ ամբողջ
ժողովրդին, որոնք իրեն այդպիսի պա-
տասխան խօսք ասացին, Երեմիան
պատասխանեց ու ասաց.

21 «Արդեօք Տէրը չյիշե՞ց, նրա միտքը
չընկա՞ւ այդ խունկը, որ դուք ու ձեր
հայրերը, ձեր թագաւորները, ձեր
իշխաններն ու երկրի ժողովուրդը ծխում
էիք Ցուդայի երկրի քաղաքներում ու
Երուսաղէմի հրապարակներում: 22 Ձեր
չար արարքների եւ ձեր արած գարշելի
գործերի պատճառով Տէրը չկարողացաւ
համբերել, եւ ձեր երկիրը, բնակիչներից
զրկուած, դարձաւ աւերակ ու անապատ
եւ նզովքի առարկայ, ինչպէս այսօր է:
23 Այն բանի համար, որ դուք դրանց
խնկարկում էք եւ դրանով իսկ մե-
ղանչում Տիրոջ հանդէպ, չէք լսում
Տիրոջ ձայնը եւ չէք ընթանում ըստ նրա
օրէնքների, ըստ նրա ցուցումների եւ
հրամանների, դրա համար էլ ձեզ
վիճակուեցին այդ չարիքները, ինչպիսիք
այսօր էլ կան»:

24 Եւ Երեմիան ամբողջ ժողովրդին ու
բոլոր կանանց ասաց. «Լսեցէ՛ք Տիրոջ
պատգամները, Ցուդայի երկրի բոլո՛ր
մարդիկ, որ գտնւում էք Եգիպտացիների
երկրում. 25 այսպէս է ասում Զօրու-
թիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Դուք եւ ձեր կանայք ինչ որ ասացիք
ձեր բերաններով, այն էլ արեցիք ձեր
ձեռքերով. ասում էք, թէ՝ "Մեր դա-
ւանածը պիտի դաւանենք, խունկ պիտի
ծխենք երկնքի թագուհուն եւ նուէրներ
ընծայենք": Եւ դուք հաստատ մնացիք
ձեր դաւանութեանը եւ ճշտօրէն կա-
տարեցիք ձեր ուխտը: 26 Դրա համար էլ
լսեցէ՛ք Տիրոջ պատգամը, Ցուդայի
երկրի բոլո՛ր մարդիկ, որ բնակւում էք
Եգիպտացիների երկրում. «Ահա ես
երդուեցի իմ մեծ հոգով, - ասում է Տէրը
Աստուած, - որ եթէ իմ անունը նորից
հնչի Ցուդայի երկրի որեւէ մարդու
բերանից, եթէ ասեն, թէ՝ "Տէրը կենդանի
է Եգիպտացիների այս ամբողջ երկրում",
27 ապա ես կը ծառանամ դրանց դէմ՝
դրանց չարչարելու եւ ոչ թէ բարութիւն
անելու համար: Եւ Ցուդայի երկրի բոլոր
մարդիկ, որ ապրում են Եգիպտացիների
երկրում, պիտի կոտորուեն սրով ու
սովով, մինչեւ որ նուազեն: 28 Իսկ սրից
ազատուածները՝ սակաւաթիւ մարդիկ,
Եգիպտացիների երկրից պիտի վերա-
դառնան Ցուդայի երկիրը: Եւ Ցուդայի
երկրի բոլոր մնացորդները, որ բնակւում
են Եգիպտացիների երկրում, պիտի
իմանան, թէ ում խօսքն է հաս-
տատուելու՝ ի՞մը, թէ՞ իրենցը: 29 Եւ սա
թող ձեզ նշան լինի, - ասում է Տէրը, -
որ այստեղ ես ձեզ պատժելու պիտի
գամ, որպէսզի գիտենաք, որ իմ խօսքերը
ձեր նկատմամբ ի չարը պիտի կա-
տարուեն»: 30 Այսպէս է ասում Տէրը.
«Ահա ես եգիպտացիների արքայ Վա-
փառ փարաւոնին կը յանձնեմ իր
թշնամիների ձեռքը, իր հոգին պահան-
ջողների ձեռքը, ինչպէս որ Սեդեկիա
արքային տուեցի իր թշնամու եւ իր
հոգին պահանջողի՝ բաբելացիների Նա-
բուքոդոնոսոր արքայի ձեռքը»:

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԲԱՐՈՒՔԻՆ

45 Ահա այն խօսքը, որ Ցուդայի
երկրի արքայ Յոսիայի որդի Յովակիմի
չորրորդ տարում Երեմիա մարգարէն
յայտնեց Ներիայի որդի Բարուքին, որն
այն ժամանակ սոյն մատեանում
Երեմիայի բերանից գրի առաւ այս
բաները:

2 Այսպէս է ասում քո մասին Տէր
Աստուածն Իսրայէլի. «Ո՛վ Բարուք, 3 դու,
որ ասացիր, թէ՝ "Վա՛յ ինձ, վա՛յ ինձ,
քանզի Տէրն իմ ցաւերի վրայ տա-
ռապանք աւելացրեց, ես հեծեծանքով
քուն մտայ եւ հանգստութիւն չգտայ",
4 այսպէս կ'ասես նրան, թէ այսպէս է

ասում Տէրը.
«Ահա ինչ որ ես չինեցի,
ինքս քանդում եմ,
եւ ինչ որ ես տնկեցի,
ինքս եմ արմատախիլ անում՝ այս ամբողջ երկիրը:
5 Իսկ դու քեզ համար մեծ–մեծ բաներ ես խնդրում.
մի՛ խնդրիր, որովհետեւ, – ասում է Տէրը, –
ահա իւրաքանչիւր մարմնի ես չարիք եմ բերելու,
իսկ քո անձը ամենուրեք,
ուր էլ որ գնալու լինես,
քեզ եմ պարգեւելու իբրեւ փրկութիւն»:

ԵԳԻՊՏՈՍԸ ՊԱՐՏԻՒՈՒՄ Է ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԻՑ

46 Եգիպտոսի մասին

1 Ահա Երեմիա մարգարէին ուղղուած Տիրոջ խօսքը եգիպտական բոլոր ազգատոհմերի 2 եւ եգիպտացիների արքայ Նեքաւով փարաւոնի զօրաբանակի մասին, որը գտնուում էր Եփրատ գետի մօտ, Քարքամիսում, եւ որին Հրէաստանի Յոսիա արքայի որդի Յովակիմի չորրորդ տարում ջախջախեց բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան:
3 «Զէնք ու վահա՛ն վերցրէք,
մտէ՛ք մարտի մէջ,
4 պատրաստեցէ՛ք երիվարները,
ձի՛ հեծէք, ո՛վ սպառազինուածներ,
դրէ՛ք սաղաւարտները,
առա՛ջ ուղղեցէք գեղարդները,
հագէ՛ք ձեր զրահները:
5 Բայց այդ ի՞նչ է կատարւում.
դրանք, ահաւասիկ, զարհուրածներն են,
որ դէպի յետ են շարժւում,
որովհետեւ նրանց զօրաւոր մարդիկ ջախջախուեցին,
եւ իրենք փախուստի են դիմել,
իսկ դրանցից նրանք, որ չրջապատման մէջ ընկան,
չպիտի վերադառնան, – ասում է Տէրը: –
6 Ո՛չ արագաշարժը պիտի փախչի,
ո՛չ էլ հզօրը փրկուի.
հիւսիսի կողմերում, Եփրատ գետի մօտ,
նրանք ուժասպառ եղան ու կործանուեցին:
7 Ո՞վ է սա, որ բարձրացել է գետի պէս,
եւ ջրեր կուտակած գետերի պէս յորձանք է տալիս:
8 Եգիպտոսի ջրերը գետի պէս յորդել են,
գետի պէս ալեկոծուած են նրա ջրերը:
Դա Եգիպտոսն է, որ ասում է.
"Ես կ'ելնեմ ու կը ծածկեմ երկիրը,
կը կործանեմ քաղաքներն ու նրանց բնակիչներին:
9 Երիվարնե՛ր հեծէք,
կառքե՛ր լծեցէք, ելէ՛ք,
ո՛վ եթովպացի մարտիկներ եւ զինավառ լիբիացիներ,
վե՛ր կացէք, աղեղներդ լարեցէ՛ք,
ո՛վ լիդացիներ":
10 Այս օրը, ահա, մեր Տէր Աստծու վրէժխնդրութեան օրն է՝
իր թշնամիներից վրէժ առնելու համար:
Սուրը պիտի ուտի եւ յագենայ,
պիտի հարբի նրանց արիւնից,
որովհետեւ Զօրութիւնների Տիրոջ զոհը հիւսիսի երկրից պիտի լինի,
Եփրատ գետի ափին:
11 Գնա՛ Գաղաադ
եւ դեղ ու բալասա՛ն առ
եգիպտացիների կոյս դստեր համար.
իզուր ես շատացնում դեղորայքը.
ոչ մի տեղից քեզ օգուտ չկայ:
12 Ազգերը լսեցին քո գոյժը†,
եւ երկիրը լցուեց քո աղաղակով.
պատերազմողը պատերազմողի հետ բախուեց ու թուլացաւ,
եւ երկուսն էլ միասին ընկան»:

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ

13 Ահա այն խօսքը, որ Տէրը յայտնեց

†Երրայերէն՝ Ո՞ւ անարգանքի մասին:

Երեմիա մարգարէի միջոցով, երբ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան եկաւ հարուած հասցնելու Եգիպտացիների երկրին.
14 «Դուժեցէ՛ք Եգիպտոսում,
ձա՛յն արձակեցէք Մագդողում,
իմա՛ց տուէք Մեմփիսին,
ազդարարէ՛ք Տափնասին,
թէ՝ "Արի պատրա՛ստ եղիր,
որովհետեւ† սուրը կերաւ քո ճիւղերը,
15 քո ընտիր ցուլը փախուստ տուեց, չմնաց,
քանի որ Տէրը լքեց նրան":
16 Եւ բազմութիւնը տկարացաւ.
ամէն մէկն իր ընկերոջ մօտ ընկաւ:
Ապա ասացին.
"Եկէ՛ք հեթանոսի սրից իւրաքանչիւրս դառնանք դէպի մեր ժողովուրդը,
գնանք ամէն մէկս՝ իր երկիրը:
17 Եգիպտացիների Փարաւոն արքայի անունը կոչեցէ՛ք Սաոն, Եբիր եւ Մովեդ‡":
18 «Կենդանի եմ ես, – ասում է Տէրը, –
Զօրութիւնների թագաւոր է նրա անունը:
Ինչպէս գահաւանդակն է լեռների մէջ,
կամ ինչպէս Կարմելոսը՝ ծովում,
նա պէտք է գայ:
19 Գերութեան պատրաստութի՛ւն տես,
ո՛վ դուստր, բնակի՛չդ Եգիպտոսի,
քանզի Մեմփիսն աւերակ պիտի դառնայ,
եւ վայ պիտի տան նրան՝
այնտեղ բնակիչներ չլինելու պատճառով:
20 Եգիպտոսը զարդարուած ու գեղեցիկ երինջ է.
Նրա կործանումը հիւսիսից պիտի գայ:
21 Նրա վարձկանները նրա մէջ նման են պարարտ եզների,
ու նրանք էլ առհասարակ փախուստի պիտի դիմեն եւ չպիտի հանդարտուեն,
որովհետեւ նրանց վրայ եկաւ կործանման օրը,

†Երրայերէն՝ որովհետեւ Ո՞ւ շուրջը ...

‡Երրայերէն՝ աղմուկ, որ իր ժամանակն սպառեց:

եւ հասաւ վրէժխնդրութեան ժամանակը:
22 Նրանց ձայնը լինելու է ինչպէս օձի շչիւնը,
քանի որ նրանք աւազի միջով են գնալու:
Տապարակիրները նրա վրայ են գալու
որպէս անտառահատներ:
23 Կտրեցէ՛ք նրա ծառերը, – ասում է Տէր Աստուած, –
քանզի նրանց հաշիւը ոչ ոք չի կարող անել.
Նրանք մորեխից աւելի են բազմացել,
նրանց թիւ չկայ:
24 Ամօթով մնաց Եգիպտոսի դուստրը,
նա պիտի մատնուի հիւսիսի զօրքերի ձեռքը»:
25 Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածն ասում է. «Ահա ես վրէժխնդիր եմ լինելու նրա որդի Ամոնից, Փարաւոնից ու եգիպտացիներից, նրանց աստուածներից ու նրա թագաւորներից, Փարաւոնից ու նրան ապաւինողներից. 26 նրանց մատնելու եմ նրանց հոգիները պահանջողների ձեռքը, բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի ձեռքը ու նրա պաշտօնեաների ձեռքը, եւ այնուհետեւ նրանք կ'ապրեն ինչպէս առաջ, – ասում է Տէրը:
27 Բայց դու մի՛ վախեցիր, ո՛վ իմ ծառայ Յակոբ,
դու չպէտք է զարհուրես, ո՛վ Իսրայէլ,
քանզի ես ահա փրկելու եմ քեզ հեռաստանից,
իսկ քո սերունդը՝ նրանց գերութիւնից:
Պիտի վերադառնայ Յակոբը,
դադար պիտի առնի ու հանգիստ լինի,
եւ չի լինելու որեւէ մէկը, որ լակի նրան:
28 Իսկ դու մի՛ վախեցիր, ո՛վ իմ ծառայ Յակոբ, – ասում է Տէրը, –
որովհետեւ ես քեզ հետ եմ.
եթէ ես բնաջնջեմ այն բոլոր ազգերին,
որոնց մէջ ցրեցի քեզ,
քե՛զ, սակայն, չեմ բնաջնջելու:

Քեզ արդարութեամբ պիտի խրատեմ,
թէեւ լրիւ չպիտի արդարացնեմ»:

ՓԼՇՏԱՑԻՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

47 Այլազգիների մասին

1 Տիրոջ խօսքը այլազգիների† մասին՝
ուղղուած Երեմիա մարգարէին, երբ Փարաւոնը դեռ չէր աւերել Գազան:
2 Այսպէս է ասում Տէրը.
«Ահաւասիկ ջրեր են բարձրանում հիւսիսից,
որոնք յորդահոս հեղեղների վերածուելով՝
պիտի ողողեն երկիրն ամբողջութեամբ,
քաղաքն իր բնակիչներով:
Լաց ու կոծ պիտի անեն մարդիկ,
եւ երկրի բոլոր բնակիչները աղաղակ պիտի բարձրացնեն
3 ասպատակող հեծելազօրի զէնքերի ու ոտքերի ձայնից,
նրա կառքերի շաչիւնից
եւ դրանց անիւների շառաչից: Հայրերը չպիտի համարձակուեն շրջուել դէպի իրենց որդիները,
որովհետեւ նրանց ձեռքերը պիտի թուլանան
4 այն օրը, որը վրայ է հասնելու
բոլոր այլազգիներին կործանեան մատնելու համար:
Կործանեան պիտի մատնեմ նաեւ Տիւրն ու Մայդանը‡
եւ նրանց միւս բոլոր օգնականներին»:
Տէրը ոչնչացնելու է կղզիներում եւ Գամիրքում մնացած այլազգիներին§:
5 Գազայում այնպիսի սուգ պիտի լինի,
որ մարդիկ խուզեն իրենց գլուխները,
Ասկաղոնը պիտի ոչնչանայ,
ինչպէս եւ Ենակիմի մնացորդները:
6 Ո՛վ դու Տիրոջ սուր,
մինչեւ ե՞րբ պիտի կոտորես,
մինչեւ ե՞րբ դադար պիտի չառնես,
վերադարձի՛ր քո պատեանը,
հանգի՛ստ առ, յե՛տ կանգնիր:
7 Ինչպէ՞ս դադար առնի նա.
չէ՞ որ Տէրը հրամայեց նրան յարձակուել Ասկաղոնի եւ նրանց վրայ,
ովքեր մնացել էին ծովեզերքին:

ՄՈՎԱԲԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

48 Մովաբի մասին

1 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Վա՜յ Նաբաւին, որ կործանուեց,
Կարիաթիմն ամօթահար եղաւ, դրաւուեց.
ամօթահար եղաւ Մոսոգամբն ու պարտութեան մատնուեց:
2 Մովաբն այլեւս Եսեբոնում պարծենալու բան չունի:
Նրա մասին չարիք են որոճում,
թէ՝ "եկէք ազգի միջից նրան ոչնչացնենք,
թող լռի ու պապանձուի":
Հուրն† է շրջում քո յետեւից:
3 Օրոնայիմից լսւում է գուժկանների բօթը.
"Մովաբն աւերուեց ու մեծ կոտորածի ենթարկուեց":
4 Գո՛յժ տուէք Զոգորին,
քանզի Ալոթը ողբով լցուեց,
5 եւ լացով են բարձրանում Օրոնայիմի ճանապարհով:
Տագնապ ու կոտորածի բօթ լսեցի.
6 փախէ՛ք ու փրկեցէ՛ք ձեր անձերը
ու կը լինէք ինչպէս անապատի ցիռ:
7 Յոյսդ դրել էիր քո ամրոցների վրայ,
բայց պիտի վրայ հասնեն նեղութիւնները,
ու դու պիտի բռնուես:
Քամոսը գերի պիտի գնայ իր քրմերի ու իր իշխանների հետ:
8 Միանգամից կործանում պիտի հասնի բոլոր քաղաքներին,
մի քաղաք իսկ չպիտի փրկուի,

†Երրայերէն՝ փշոտացիների:

‡Երրայերէն՝ Սուր եւ Սայդա:

§Երրայերէն՝ Կափթոր կղզու բնակիչների մնացորդներին:

†Երրայերէն՝ սուրը:

բնակիչը պիտի ոչնչանայ,
դաշտեցին՝ բնաջնջուի»:
9 Այսպէս է ասում Տէրը.
«Մի ծաղիկ տուէք Մովաբին որպէս նշան,
որը տոչորուելով պիտի տոչորուի,
իսկ նրա բոլոր քաղաքները անապատի պիտի վերածուեն
բնակիչներ չլինելու պատճառով»:
10 Թող անիծեալ լինի նա, ով Տիրոջ գործը ծուլութեամբ կը կատարի,
թող անիծեալ լինի նաեւ նա, ով Տիրոջ սուրը արիւնից յետ կը պահի:

ՄՈՎԱԲԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

11 «Իր մանկութիւնից ի վեր Մովաբը հանգի՛ստ էր,
իր փառքին էր ապաւինել†,
ամանից ման չէր թափուել
եւ գերութեան չէր գնացել,
դրա համար էլ նրա համն իր մէջ էր մնացել,
եւ բոյրը չէր չքացել:
12 Ահա թէ ինչու օրեր պիտի գան, - ասում է Տէրը, -
ու ես մարդիկ պիտի ուղարկեմ նրա մօտ,
որոնք պիտի կուացնեն նրան,
նրա անօթները պիտի մանրեն ու նրա ամանները փշրեն:
13 Մովաբը պիտի ամաչի Քամոսից,
ինչպէս Իսրայէլի տունն ամաչեց Բեթէլից՝ իր ապաւէնից:
14 Ինչո՞ւ էք ասում, թէ՝ "Հզօր ենք,
կռուի մէջ զօրեղ տղամարդ ենք":
15 Կործանեան մատնուեց Մովաբն իր քաղաքներով,
եւ նրա ընտիր-ընտիր երիտասարդները գնացին մեռնելու,
- ասում է արքան, որի անունը Զօրութիւնների Տէր է:
16 Մովաբի օրհասը մօտ է,
եւ ձախորդութիւնները մեծ արագութեամբ նրա վրայ են գալիս:

17 Խղճացէ՛ք‡ նրան ամէն կողմից.
ամէնքդ, որ գիտէք նրա անունը, ասացէ՛ք.
"Ինչո՞ւ խորտակուեց գեղեցիկ ցուպը՝ մեծարանքի գաւազանը":
18 Խոնարհուի՛ր քո փառքից
եւ նստի՛ր խոնաւութեան մէջ, ո՛վ դու դուստր,
որ բազմել ես Դեբոնում,
քանզի Մովաբը կործանեան մատնուեց,
վրայ հասաւ քո ամրոցները կործանողը:
19 Դու, որ նստում ես Արովէրում,
կանգնի՛ր ճանապարհներին,
նայի՛ր եւ հարցրո՛ւ փախստականներին ու փրկուածներին,
ասա՛ "Ի՞նչ տեղի ունեցաւ":
20 Ամօթահար եղաւ Մովաբը,
որովհետեւ կործանուեց:
Ճչա՛ եւ աղաղակի՛ր,
գո՛յժ տուր Առնոնին,
թէ Մովաբը կործանուեց:
21 Դատաստանն է սպառնում Միսորի երկրին՝ 22 Քիլոնին, Յասսային, Մոփաթին, Դեբոնին եւ Նաբաւին, Դեբլաթեմի տանն 23 ու Կարիաթիմին, Գամոդի տանը եւ Մաւոնի տանը, 24 Կարիաւոթին, Բոսորին եւ Մովաբի երկրի հեռաւոր ու մօտիկ բոլոր քաղաքներին:
25 Զարդուեց Մովաբի եղջիւրը‡,
եւ նրա յանդգնութիւնը խորտակուեց», - ասում է Տէրը:

ՄՈՎԱԲԸ ԳԻՏԻ ԴԱՌՆԱՅ ԵԱՂՐԻ ԱՌԱՐԿԱՅ

26 Հարբեցրէ՛ք նրան,
որովհետեւ նա յոխորտաց Տիրոջ դէմ.
Մովաբը թող ծափ տայ§,
որպէսզի ինքն էլ խայտառակ լինի:
27 Արդեօք Իսրայէլը քեզ համար ծաղրի առարկայ չէ՞ր՝ գողութեան մէջ բռնուած,
երբ մարտնչում էիր նրա դէմ.
նրա կողմից դու պիտի գերուես:

†Երրայերէն՝ ողբացէ՛Ք:

‡Երրայերէն՝ բազուկը:

§Երրայերէն՝ փսխածի մէջ թաւալուի:

28 Մովաբի բնակիչները թողեցին
քաղաքները
եւ բնակուեցին քարերի ծերպերում.
նմանուեցին քարերի ծերպերում եւ
խոռոչների ճեղքերում բոյն դրած
աղաւնիներին:
29 Լսեցի Մովաբի գոռոզութեան
մասին,
քանզի նա խիստ գոռոզացաւ իր
վէսութեամբ,
խրոխտութեամբ ու ամբարտաւա-
նութեամբ,
մեծամիտ դարձաւ նա:
30 «Ես էլ իմացայ նրա արած գոր-
ծերը, – ասում է Տէրը: –
Միթէ ըստ նրա կարողութեան չէի՞ն
նրա բազուկները,
բայց նա այդպէս չգործեց:
31 Ահա թէ ինչու ճի՛չ բարձրացրէք
Մովաբի համար,
ամէն կողմից ողբացէ՛ք Մովաբին,
այն մարդկանց, որոնք խզում,
փետում ու մրում են իրենց մազերը:
32 Պիտի հառաչեմ ցաղերի լացով,
պիտի լաց լինենք քեզ համար,
ո՛վ դու Սաբեմի այգի:
Քո ճիւղերը տարածուեցին դէպի ծով,
հասան մինչեւ ցաղեր,
քո մրգերին եւ քո այգեքաղին
սպառնաց մահը:
33 Կարմելոսից եւ մովաբացիների
երկրից վերացան ուրախութիւնն ու
ցնծութիւնը:
Գինի կար քո հնձաններում.
այսուհետեւ առաւօտները խաղող
չպիտի ճմլեն,
եւ երեկոները հնձանահարների ձայն
չպիտի լսուի:
34 Եսեբոնի աղաղակը հասաւ մինչեւ
Ելելա եւ մինչեւ Յասսա.
նրանց քաղաքները,
Սեգորից մինչեւ Օրոնայիմ,
իրենց ձայնը բարձրացրին եւ
գուժեցին մինչեւ Սալէս,
որովհետեւ Եբերիմի ջուրն անգամ
տաքանալով ցամաքեց:
35 Կորստեան պիտի մատնեմ Մովաբը,
– ասում է Տէրը, –
որ բագիններն էր բարձրանում
եւ խնկարկում օտար աստուածներին:
36 Դրա համար էլ սիրտն իմ սրնգի
պէս կանչ է արձակում Մովաբի վրայ,
սիրտն իմ, իբրեւ շեփորի ձայն,
ուղղուած է այն մարդկանց,
որոնք ընկած են պատերի տակ:
Դրա համար էլ ինչ հարստութիւն որ
ունէր,
մարդկանց ձեռքով պիտի կորչի:
37 Բոլոր գլուխներն ամենուրեք պիտի
սափրուեն,
բոլոր մօրուքները կտրուեն,
բոլոր ձեռքերին կտրուածքներ պիտի
լինեն,
բոլոր մարմինները պիտի լինեն
քրձազգեաց:
38 Մովաբի բոլոր տանիքներին ու նրա
հրապարակներում
ամբողջովին լաց ու կոծ է լինելու:
Ես փշրեցի Մովաբը ինչպէս մի ման,
որ ոչ մի բանի պիտանի չէ», – ասում
է Տէրը:
39 Ինչպէ՛ս կործանուեց, ողբացէ՛ք,
ինչպէ՛ս դարձրեց նա իր թիկունքը.
ամաչեց, ծաղրելի դարձաւ,
եւ նրան քինախնդիր եղան իրեն
շրջապատողները»:

ՄՈՎԱԲԸ ՉԻ ԱՋԱՏՈՒԻ

40 Այսպէս է ասում Տէրը.
«Ահա արծուի նման թշնամին առաջ
պիտի սլանայ
եւ իր թեւերը տարածի Մովաբի վրայ:
41 Պիտի գրաւուի Կարիաւոթը,
պիտի նուաճուեն նրա ամրոցները,
եւ այն օրը Մովաբի զօրաւոր
մարդկանց սիրտը
պիտի դառնայ երկունքի մէջ գտնուող
կանանց սրտի պէս:
42 Մովաբը, իբրեւ ժողովուրդ, պիտի
կորչի,
որովհետեւ նա յոխորտաց Տիրոջ դէմ:
43 Վիհ, սարսափ ու որոգայթ պիտի
լինի քեզ համար,

ո՛վ դու, որ բնակւում ես Մովաբում.
44 ու նա, որ փախուստ է տալու
սարսափից,
պիտի ընկնի վիհը,
իսկ վիհից ելնողը պիտի բռնուի
որոգայթի մէջ,
քանզի այն տարին, երբ պատժելու
լինեմ Մովաբին,
ամէն ինչ նրա գլխին պիտի բերեմ, –
ասում է Տէրը:
45 Որոգայթից փախչողները հասան
Եսեբոնի տանիքների տակ,
բայց Եսեբոնից կրակ դուրս եկաւ,
ու Սեհոն քաղաքից՝ բոց,
լափեց Մովաբի իշխաններին
եւ փորձութեան ենթարկեց ամոնա-
ցիներին:
46 Վա՛յ քեզ, Մովա՛բ, որ կորցրիր
Քամոսի ժողովրդին,
քանզի նրա որդիներն ու դուստրերը
գերեվարուեցին:
47 Բայց վերջին օրերը, – ասում է
Տէրը, –
Մովաբի գերեալներին պիտի վերա-
դարձնեմ»:
Մովաբի դատաստանը մինչեւ այստեղ
է լինելու:

49 Ամոնացիների մասին

1 Այսպէս է ասում Տէրը.
«Միթէ Իսրայէլը որդիներ չունի՞
եւ կամ միթէ ժառանգորդ չունի՞:
Ինչո՞ւ Մեղքոմը տիրեց Գադի
հողերին,
ու Մեղքոմի ժողովուրդը նրա
քաղաքներում է բնակւում:
2 Դրա համար էլ, – ասում է Տէրը, –
օրեր են գալու,
երբ Ռաբոթում ամոնացիներին գոյժ
պիտի տամ քաղաքների մասին,
որոնք անապատ պիտի վերածուեն
ու անհետանան,
նրանց բագինները հրով պիտի
այրուեն,
եւ Իսրայէլը պիտի ստանայ իր
իշխանութիւնը, – ասում է Տէրը:
3 Աղաղակի՛ր, Եսեբո՛ն,
որովհետեւ Գեհը կործանուեց,
բողո՛ք բարձրացրէք, ո՛վ Ռաբայի
դուստրեր,
քո՛ւրձ հագէք, մոլեգնեցէ՛ք,
սգացէ՛ք եւ ցանկապատերի շուրջն
այս ու այն կո՛ղմ թափառեցէք,
որովհետեւ Մեղքոմն իր քրմերի ու
իշխանների հետ միասին գերի է գնում:
4 Ինչո՞ւ ես ցնծում քո խորանների
մէջ, ո՛վ Զեփ,
եւ քո դաշտերում, ո՛վ անզգամ
դուստր,
որ ապաւինել էիր քո գանձերին եւ
ասում էիր, թէ՝
"Ո՞վ պիտի գայ ինձ վրայ":
5 Ահա ամէն կողմից սարսափ պիտի
բերեմ քեզ՝
քո շուրջը բնակուողներից,
– ասում է Զօրութիւնների Տէրը. –
դուք ցրուելու էք ամէն կողմ,
ու ոչ ոք չի լինելու, որ հաւաքի
թափառականներին:
6 Դրանից յետոյ եմ վերադարձնելու
գերեալ ամոնացիներին», – ասում է
Տէրը:

Եդոմի մասին

7 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Այլեւս իմաստութիւն չկայ Թեմա-
նում,
հանճարեղները խելակորոյս եղան.
գնաց նրա իմաստութիւնը,
ծաղրի առարկայ դարձաւ նրա
երկիրը:
8 Գնացէ՛ք ապրելու թաքուն եւ
դժուարին տեղերում,
ո՛վ Դեդանի բնակիչներ,
որովհետեւ նրանց վրայ պիտի բերեմ
մի ժամանակ,
երբ գամ պատժելու նրանց:
9 Այգեկութ անողները վրայ հասան
եւ մնացորդներ չեն թողնելու քո մէջ,
ինչպէս գիշերուայ գողեր՝
իրենց ձեռքերը դնելու են նրանց
վրայ:
10 Ես կործանեցի Եսաւին եւ նրա

Թաքստեան տեղերը յայտնի դարձրի.
այլեւս նրանք չեն կարող թաքնուել:
Նրա զաւակը կորստեան մատնուեց
իր եղբօր եւ դրացու ձեռքով.
11 չկայ քո որբը, որ ապրի,
իսկ նրանց այրիներն ինձ վրայ էին յոյս դրել»:
12 Այսպէս է ասում Տէրը.
«Ահա նրանք, որոնք պէտք չէ որ խմէին բաժակը, բայց խմելով հարբեցին, իսկ դու բոլորովին անպատի՞ժ պիտի մնաս. դու չե՛ս արդարանայ, այլ խմելով պիտի հարբե՛ս, 13 քանզի ես իմ անձով երդուեցի, – ասում է Տէրը, – որ Եդոմի ժառանգութեան մէջ դու ապականութեան, նախատինքի, անապատի ու անէծքի պիտի վերածուես, իսկ քո բոլոր քաղաքները յաւիտեանս աւերակ պիտի դառնան»:
14 Լուր առայ Տիրոջից, որ սուրհանդակներ ուղարկեց ազգերի մօտ, թէ՝
«Հաւաքուեցէ՛ք ու գնացէ՛ք նրա վրայ,
պատերազմի՛ դուրս ելէք»,
15 որովհետեւ ահա մի փոքր ժամանակ եւս՝
եւ ես ազգերի մէջ, մարդկանց մէջ
քեզ կը դարձնեմ արհամարհուած:
16 Այդ բանը քո զլխին բերեց քո խայտառակութիւնը,
քո սրտի լրբութիւնը քեզ ստիպեց ժայռերի մէջ ծակամուտ լինել
եւ խլեց քո բարձրացած բլրի զօրութիւնը.
բայց եթէ արծուի պէս բարձրացնես քո բոյնը,
այնտեղից էլ կ'իջեցնեմ քեզ, – ասում է Տէրը:
17 Եդոմն անապատ պիտի դառնայ,
ամէն ոք, ով անցնի նրա միջով,
պիտի զարմանայ ու սուլի նրա կրած բոլոր աղէտների համար:
18 Ինչպէս Սոդոմն ու Գոմորը
եւ նրանց բնակիչները կործանուեցին, – ասում է Տէրը, –
այնպէս էլ մարդ չպիտի նստի նրա մէջ,
մարդու որդի չպիտի բնակուի նրա մէջ:
19 Ահա, իբրեւ առիւծ,
թշնամին Յորդանանի միջից դուրս պիտի գայ դէպի Եթեմմա վայրը,
որպէսզի արագօրէն հալածական դարձնեմ նրան այնտեղից:
Ո՞վ է այնտեղ ընտրեալը,
որ այցի գամ նրան,
կամ ո՞վ կը համարձակուի ելնել իմ դէմ,
ո՞վ է այն հովիւը, որ կը կանգնի իմ առջեւ»:
20 Լսեցէ՛ք, ուրեմն, Տիրոջ խորհուրդը,
որ նա խորհել է եդոմայեցիների մասին,
եւ նրա խորհուրդը, որ խորհել է Թեմանի բնակիչների մասին.
«Մի՞թէ չե՞ն խփում հօտի վերջին ոչխարներին,
որ գնան, կանգնած չմնան,
եւ հօտը չցրուի:
21 Նրա կործանման ձայնից երկիրը ցնցուեց,
բօթը հասաւ Կարմիր ծով,
լսուեց նրա աղաղակը:
22 Ահաւասիկ թշնամին պիտի երեւայ ինչպէս արծիւ,
պիտի սլանայ ու տարածի իր թեւերը նրա ամրոցների վրայ,
եւ այդ օրը Եդոմի զօրաւոր մարդկանց սիրտը պիտի դառնայ
երկունքի մէջ գտնուող կանանց սրտի պէս»:

Դամասկոսի մասին

23 «Ամաչեցին Եմաթն ու Արփաթը,
որովհետեւ չար լուր լսեցին,
տագնապի մատնուեցին ծովում,
զայրացան եւ չեն կարողանում հանգստանալ:
24 Դամասկոսը վհատուեց,
փախուստի դիմեց եւ կործանուեց.
դողը բռնեց նրան,
ցաւերն են այրում նրան,
ինչպէս ծննդկանին:
25 Ինչպէ՞ս է, որ նա չխնայեց իմ քաղաքը,
այն աւանը, որը ես սիրեցի:
26 Քո հրապարակներում պիտի ընկնեն երիտասարդները,
բոլոր կռուող մարդիկ պիտի զոհուեն այն օրը, – ասում է Զօրութիւնների Տէրը: –
27 Ես կրակ պիտի վառեմ Դամասկոսի պարսպի վրայ,
որը պիտի ճարակի Ադերի որդիների ապարանքները»:

Կեդարի մասին

28 Այսպէս է ասում Տէրը Թագուհու ապարանքի մասին, որին հարուած հասցրեց բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան.
«Եկէք յարձակուեցէ՛ք Կեդարի վրայ
եւ սպանեցէ՛ք Կեդէմի որդիներին:
29 Նրանց վրանները, նրանց ոչխարները պիտի խլեն,
նրանց շորերը, նրանց ամբողջ կահկարասին,
նրանց ուղտերի երամակները պիտի վերցնեն իրենց համար:
Աղաղա՛կ բարձրացրէք,
որ չորս կողմից նրանց կորուստ է սպառնում:
30 Արա՛գ փախէք,
ապրելու համար թաքստոցնե՛րը մտէք,
ո՛վ ապարանքի բնակիչներ, որովհետեւ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան ձեր մասին խորհուրդ է խորհել,
վճիռ է կայացրել ձեր դէմ:
31 Վե՛ր կաց, – ասում է Տէրը, –
գնա՛ այն ազգի վրայ,
որը խաղաղ ապրում է հանգստութեան մէջ,
որը ո՛չ դռներ ունի եւ ո՛չ էլ նիգեր,
ապրում է առանձին:
32 Թող նրանց ուղտերի երամակներն աւար դառնան,
նրանց ոչխարների բազմութիւնները ձեռքից գնան,
պիտի քշեմ,
քամու բերանը պիտի տամ երեսները ածիլածներին,
բոլոր կողմերից նրանց կործանում պիտի բերեմ, – ասում է Տէրը: –
33 Ապարանքը յաւիտեան պիտի վերածուի
ջայլամների բնակավայրի եւ անապատի,
մարդ չպիտի բնակուի այնտեղ,
հողածնի որդին այնտեղ չպիտի ապրի»:

Ելամի մասին

34 Յուդայի երկրի արքայ Սեդեկիայի թագաւորութեան սկզբում Տէրը Երեմիա մարգարէի միջոցով խօսեց Ելամի մասին եւ ասաց. 35 այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Ահա խորտակուեց Ելամի աղեղը՝
նրանց բռնապետութիւնը:
36 Երկրի չորս ծագերից չորս հողմ եմ բերելու Ելամի վրայ
եւ նրանց ցրիւ եմ տալու այդ չորս հողմերին:
Չի լինելու մի ազգ,
որի մօտ չհասնեն Ելամի թափառականները:
37 Նրանց պիտի սարսափեցնեմ իրենց թշնամիների առաջ,
որոնք պահանջում էին նրանց հոգիները:
Նրանց վրայ պիտի բերեմ իմ բարկութիւնն ու ցասումը,
– ասում է Տէրը, –
եւ իմ սուրը պիտի արձակեմ նրանց յետեւից,
մինչեւ որ այն սպառի նրանց:
38 Իմ աթոռը Ելամում պիտի դնեմ
եւ այնտեղից պիտի վերացնեմ թագաւորներին ու մեծամեծներին,
– ասում է Տէրը: –
39 Բայց ես վերջին օրերին Ելամի գերեալներին պիտի վերադարձնեմ», – ասում է Տէրը:
Ելամի մասին այս խօսքը յայտնուել է Սեդեկիայի թագաւորութեան սկզբին[†]:

[†]Երրայերէնը վերջին նախադասութիւնը չունի:

50 Բաբելացիների մասին

Ահա այն խօսքը, որ Տէրը Երեմիա մարգարէի միջոցով ասաց Բաբելոնի՝ քաղդէացիների երկրի մասին:
2 «Պատմեցէ՛ք ազգերին,
լո՛ւր տուէք, նշա՛ն արէք,
լսելի՛ դարձրէք,
մի՛ ծածկէք, ասացէ՛ք.
"Բաբելոնը գրաւուեց,
Բելը՝ այդ փափկասունն ու անվախը, ամօթով մնաց,
Մերոդաքը մատնուեց,
խայտառակուեցին նրա կուռքերը,
ամօթահար եղան նրա աստուածները":
3 Արդարեւ, հիւսիսից նրա վրայ յարձակուեց մի ազգ,
որը նրա երկիրն աւերակ պիտի դարձնի,
եւ ոչ ոք չպիտի բնակուի այնտեղ՝
մարդուց մինչեւ անասուն,
որովհետեւ բոլորը պիտի քանդուեն ու գնան»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

4 «Այն օրերին եւ այն ժամանակ, - ասում է Տէրը, -
պիտի գան Իսրայէլի որդիները,
նրանք եւ Յուդայի երկրի որդիները՝ միասին,
պիտի շրջեն ու լալով գան դէպի իրենց Տէր Աստուածը,
պիտի փնտռեն նրան,
5 մինչեւ Սիոն պիտի հարցնեն նրա ճանապարհի մասին,
դէպի այստեղ պիտի ուղղուեն,
պիտի գան ու ապաւինեն Տիրոջը.
չէ՞ որ ուխտը յաւիտենական է, եւ դրանք չպիտի մոռացուեն†:
6 Իմ ժողովուրդը նմանուեց կորած ոչխարների.
հովիւները լեռները քշեցին նրանց,
մոլորեցրին նրանց լեռ ու բլրի վրայ:
Նրանք գնացին ու մոռացան իրենց մակաղելու տեղերը,
7 եւ բոլոր նրանք, ովքեր գտնում էին, սպանում էին նրանց:
Նրանց թշնամիներն ասացին.
"Չպիտի ներենք նրանց†,
որովհետեւ մեղք գործեցինք Տիրոջ առաջ:
Արդարութեան արօտ է Տէրը,
որ հաւաքեց նրանց հայրերին":
8 Հեռացէ՛ք Բաբելոնի միջից,
Քաղդէացիների երկրից դո՛ւրս ելէք
եւ եղէ՛ք ինչպէս վիշապներ՝ ոչխարների հօտի առաջ:
9 Ահա ես ոտքի պիտի հանեմ
եւ հիւսիսի երկրից բաբելացիների վրայ պիտի բերեմ
մեծամեծ ազգերի բազմութիւններ,
որոնք ճակատ պիտի կազմեն նրա շուրջը,
եւ նա պիտի գրաւուի նոյնքան հաստատ,
որքան հմուտ պատերազմողի նետը, որ չի վրիպում:
10 Քաղդէացիների երկիրն աւարառութեան պիտի ենթարկուի, եւ նրա բոլոր աւարառուները պիտի յագենան, - ասում է Տէրը. -
դուք ուրախանում էիք եւ պարծենում՝
յափշտակելով իմ ժառանգութիւնը.
11 խայտում էիք, ինչպէս հորթերը՝ դալարիքի վրայ,
եւ ցուլերի պէս ոգորում իրար դէմ:
12 Ձեր քաղաքը՝ ձեր մայրը, խիստ ամօթահար եղաւ,
մայր, որ բարութեան մէջ էր:
Ահա նա Տիրոջ բարկութեան պատճառով ազգերի մէջ յետինը եղաւ՝
դարձաւ աւեր, անջուր երկիր եւ անապատ:
13 Նա բնակելի չպիտի լինի,
այլ ամբողջովին ապականութեան պիտի վերածուի,
եւ իւրաքանչիւր ոք, ով անցնի Բաբելոնով,
պիտի վշտանայ ու սուլի նրա բոլոր

†Սրբայերէն՝ եկէք Տիրոջը յարենք յաւիտենական ու անմոռաց ուխտով:

†Սրբայերէն՝ մենք յանցանք չունենք:

աղէտների համար:
14 Ճակա՛տ կազմեցէք Բաբելոնի շուրջը,
ո՛վ դուք բոլոր աղեղնաւորներ,
նետահարեցէ՛ք նրան,
մի՛ խնայէք ձեր նետերը,
որովհետեւ նա Տիրոջ դէմ մեղք գործեց:
15 Ցնծութեան աղաղա՛կ բարձրացրէք նրա շուրջը,
որովհետեւ թուլացան նրա ձեռքերը,
տապալուեցին աշտարակները,
եւ կործանուեցին նրա պարիսպները,
քանզի վրէժխնդրութիւնն Աստծուց է:
Վրէժխնդրի՛ր եղէք դրանից.
ինչպէս ինքն արեց՝ իրե՛ն արէք:
16 Բաբելացի այն զաւակին,
որը հնձի ժամանակ մանգաղ կ'առնի իր ձեռքը, սպանեցէ՛ք.
հեթանոսի† սրից իւրաքանչիւրը թող վերադառնայ դէպի իր ժողովուրդը,
ամէն մէկը թող փախչի դէպի իր երկիրը»:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

17 Իսրայէլը մոլորեալ ոչխար է,
առիւծներն են փախցրել նրան.
Նախ՝ նրան կերաւ ասորեստանցիների թագաւորը,
իսկ ապա բաբելացիների արքան կերաւ նրա ոսկորները:
18 Դրա համար էլ այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Ահաւասիկ ես վրէժխնդիր եմ լինելու բաբելացիների արքայից եւ նրա երկրից,
ինչպէս վրէժխնդիր եղայ ասորեստանցիների արքայից:
19 Իսկ Իսրայէլին նորից պատսպարելու եմ իր արօտավայրերում,
նա պիտի արածի Կարմելոսում, Բասանում,
Եփրեմի լեռան վրայ եւ Գաղաադում,
ու նրանց հոգիները պիտի յագուրդ

†Սրբայերէն՝ բռնաւորի:

ստանան:
20 Այն օրերին ու այն ժամանակ, - ասում է Տէրը, -
Իսրայէլի մօտ անօրէնութիւն պիտի փնտռեն,
բայց այլեւս այն չի լինելու,
պիտի փնտռեն նաեւ Յուդայի երկրի մեղքերը,
բայց չեն գտնելու,
քանզի ես երկրի վրայ պիտի լինեմ՝
քաւութիւն տալու համար նրանց անիրաւութիւններին»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՒԵՐԱԾՈՒԹԻՒՆԸ

21 «Դառն զայրոյթով յարձակուի՛ր նրա վրայ եւ վրէժխնդի՛ր եղիր նրա բնակիչներից:
Սուրն ու աւերածութիւնը թող հետապնդեն նրան, - ասում է Տէրը. -
ամէն ինչ արա՛ այնպէս,
ինչպէս պատուիրեցի քեզ:
22 Քաղդէացիների երկրից պատերազմի ձայն է լսւում.
մեծ կոտորած է:
23 Ինչպէ՛ս խորտակուեց ու փշրուեց ամբողջ երկրի մուրճը,
ինչպէ՛ս Բաբելոնը ազգերի մէջ աւեր դարձաւ:
24 Ասացի՝ "Կը յարձակուեն քեզ վրայ†,
դու կը բռնուես, ո՛վ Բաբելոն, եւ չես իմանայ".
ահա գտնուեցիր ու բռնուեցիր,
որովհետեւ Տիրոջ դէմ կանգնեցիր»:
25 Տէրը բաց արեց իր զինանոցը
եւ հանեց իր բարկութեան զէնքերը,
քանզի Զօրութիւնների Տէրն անելիք ունի քաղդէացիների երկրում:
26 Հասել է նրա ժամանակը,
բացէ՛ք նրա շտեմարանները,
խուզարկեցէ՛ք նրան քարայրների պէս
եւ սպանեցէ՛ք նրան.
թող նրանից մնացորդներ չլինեն:
27 Այրեցէ՛ք նրա բոլոր զաւակներին.
թող իջնեն սպանուելու համար.

†Սրբայերէն՝ ես դէմ որոգայթ լարեցի:

Վա՛յ նրանց, որովհետեւ հասել է
նրանց օրը,
նրանցից վրէժխնդիր լինելու ժամը:
28 Բաբելոնի երկրից փախածների ու
փրկուածների ձայնն է հնչում,
որ Սիոնում իմաց տայ մեր Տէր
Աստծու վրէժխնդրութեան մասին,
նրա տաճարի վրէժխնդրութեան
մասին:
29 Հրամա՛ն տուէք ամենքին գնալու
Բաբելոնի վրայ,
բոլոր աղեղնաւորներին, թէ՝ «Բանա՛կ
դրէք դրա շուրջը,
որպէսզի ոչ ոք այդտեղից չփրկուի:
Հատուցեցէ՛ք դրան ըստ իր գործերի,
իր ամբողջ կատարածի համեմա՛տ
դրան արէք,
որովհետեւ ընդդիմացաւ Տիրոջը՝
Իսրայէլի սուրբ Աստծուն»:
30 «Ահա թէ ինչու նրա երիտասարդ-
ները պիտի ընկնեն նրա հրապա-
րակներում,
նրա բոլոր կռուող մարդիկ պիտի
կոտորուեն այն օրը, – ասում է Տէրը: –
31 Ահա ես քեզ վրայ եմ գալու,
– ասում է Զօրութիւնների Տէրը, –
քե՛զ վրայ, ո՛վ դու ամբարտաւան,
որովհետեւ հասել է քո օրը,
քեզնից վրէժխնդիր լինելու ժամա-
նակը:
32 Հպարտութիւնդ տեղի պիտի տայ,
եւ դու պիտի կործանուես.
ոչ ոք քեզ չի բարձրացնելու:
Կրակ պիտի վառեմ քո անտառ-
ներում[†],
որ իր շուրջն եղած ամէն բան պիտի
լափի»:
33 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը.
«Բռնութեան ենթարկուեցին իսրայէ-
լացիները,
ինչպէս եւ Ցուդայի երկրի որդիները,
բոլո՛ր էլ, ովքեր գերեցին նրանց,
բռնութեամբ պահեցին ու չկամեցան
արձակել նրանց:
34 Նրանց հզօր փրկիչը, որի անունը
Տէր Ամենակալ է,
նրա ոսոխների հետ դատաստան
պիտի տեսնի,
որպէսզի վերացնի երկիրը եւ
զայրանայ Բաբելոնի բնակիչների վրայ:
35 Սուրը թող բարձրանայ քաղդէա-
ցիների վրայ, – ասում է Տէրը, –
Բաբելոնի բնակիչների վրայ,
նրա բոլոր մեծամեծների վրայ
ու նրա խորհրդականների վրայ:
36 Սուրը թող բարձրանայ նրա
գուշակների վրայ,
եւ թող վերանան նրանք.
թող բարձրանայ սուրը նրա
պատերազմողների վրայ,
եւ թող լքուեն նրանք:
37 Թող բարձրանայ սուրը նրա երի-
վարների ու կառքերի վրայ,
թող բարձրանայ սուրը նրանց
քաջամարտիկների վրայ,
այդտեղ եղած համայն խառնամբոխի
վրայ,
եւ թող նրանք դառնան կանանց
նման:
38 Թող բարձրանայ սուրը նրա
գանձերի վրայ,
եւ թող յափշտակուեն դրանք:
Թող բարձրանայ սուրը[†] նրա ջրերի
վրայ,
եւ թող ամաչեն[‡],
որովհետեւ իրենց երկիրը կուռքերի
երկիր է,
նաեւ թող բարձրանայ կղզիների՛
վրայ,
որոնցով նրանք պարծենում էին.
39 դրա համար էլ թող ճիւաղները
բնակուեն կղզիներում,
թող յուշկապարիկների դուստրերն
ապրեն այնտեղ,
թող այդ երկիրն այլեւս իսպառ
չվերաշինուի,
թող այնտեղ յաւիտեան այլեւս
բնակուող չլինի:
40 Ինչպէս Աստուած բնաջնջեց սոդո-
մացիների ու գոմորացիների երկիրը եւ
նրանց դրացիներին,
– ասում է Տէրը, –
այդպէս էլ թող այնտեղ մարդ
չբնակուի,
թող մարդու որդին չպանդխտի
այնտեղ:
41 Ահա հիւսիսից մի զօրագունդ է
գալիս, մի մեծ ազգ,
նաեւ բազում թագաւորներ ոտքի են
ելնելու երկրի ծայրերից՝
42 աղեղն ու նիզակը ձեռքներին:
Նրանք յանդուգն են ու անողորմ,
նրանց ձայնը որոտում է ինչպէս ծով,
ձիեր հեծած՝ նրանք պատրաստ են
կրակի պէս կռուի նետուելու քեզ վրայ,
ո՛վ բաբելացիների դուստր:
43 Բաբելացիների արքան երբ նրանց
լուրն առաւ,
նրա ձեռքերը թուլացան,
նեղութիւնը ծննդկան կնոջ երկունքի
պէս տագնապի մէջ գցեց նրան:
44 Ահա, իբրեւ առիւծ,
Յորդանան գետի յորձանքներից[†]
դուրս պիտի գայ դէպի եթամա վայրը,
որպէսզի արագօրէն հալածեմ նրան
այնտեղից
ու բոլոր երիտասարդներին ոտքի
հանեմ նրա դէմ:
Ո՞վ է ինձ նման,
ո՞վ կը համարձակուի ելնել իմ դէմ,
ո՞վ է այն հովիւը, որ կը կանգնի ինձ
հակառակ»:
45 Լսեցէ՛ք, ուրեմն, Տիրոջ խորհուրդը,
որ նա խորհել է Բաբելոնի մասին,
նրա խորհուրդը, որ խորհել է
քաղդէացի բնակչութեան մասին:
Միթէ չպիտի՞ ոչնչացնէք նրանց
հօտի գառներին,
միթէ նրանց արօտները չպիտի՞
ամայանան,
46 որովհետեւ Բաբելոնի կործանման
ձայնից երկիրը պիտի ցնցուի,
նրա բօթը պիտի լսուի հեթանոսների
մէջ:

[†]Երրայերէն՝ *հաղարների մէջ:*

[†]Երրայերէն՝ *հաւատներից:*

[†]Երրայերէն՝ *չորութիւն:*

[‡]Երրայերէն՝ *չորանան:*

ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՔԱՄԻ ԲԱԲԵԼՈՆԻ ԴԷՄ

51 Այսպէս է ասում Տէրը.
«Ահա ես Բաբելոնի վրայ եւ նրա
բնակիչների[†] վրայ պիտի բերեմ զայ-
րոյթով լցուած մի սիրտ,
կործանարար հողմ ու խորշակ:
2 Անարգողներ պիտի ուղարկեմ
Բաբելոն.
թող նախատեն նրան եւ ապականեն
նրա երկիրը,
քանզի Բաբելոնի վրայ նրա չար-
չարանքի օրը ամէն կողմից վայն է
գալու»:
3 Ով լարելու է, թող լարի իր աղեղը,
եւ ով զէնք ունի, թող վերցնի այն:
Մի՛ խնայէք նրա երիտասարդներին,
ոչնչացրէ՛ք նրա ողջ զօրութիւնը:
4 Վիրաւորները պիտի թափուեն
քաղդէացիների երկրում,
իսկ նրա շուրջը՝ խոցուածները,
5 քանզի Իսրայէլը եւ Ցուդայի երկիրը
իրենց Աստծուց եւ Տէր Ամենակալից
չայրիացան,
թէեւ նրանց երկիրն Իսրայէլի սրբերի
դէմ անօրէնութիւններով լցուեց:
6 Փախէ՛ք Բաբելոնի միջից,
թող ամէն մէկն իրեն փրկի,
որպէսզի չկործանուէք նրա անիրա-
ւութիւնների պատճառով,
քանզի հասել է ժամանակը,
երբ Տէրը նրանից վրէժխնդիր է
լինելու,
ինքն է հատուցելու նրա պատիժը:
7 Բաբելոնը Տիրոջ ձեռքին ոսկի բա-
ժակ է,
որն իր գինուց արբեցնում է ամբողջ
երկիրը.
խմեցին հեթանոսները,
դրա համար էլ շարժուեցին ազգերը,
8 եւ Բաբելոնը յանկարծակի վայր
ընկաւ ու փշրուեց:
Ողբացէ՛ք նրա վրայ,
նրա վէրքերին դե՛ղ արէք.
թերեւս բժշկուի:

[†]Երրայերէն՝ *իմ թշնամիների մէջ բնակուողների վրայ:*

9 Բժշկեցինք Բաբելոնին, բայց նա
չբժշկուեց,
թողնենք նրան եւ իւրաքանչիւրս
գնանք մեր երկիրը,
որովհետեւ նրա դատաստանը մինչեւ
երկինք հասաւ,
բարձրացաւ մինչեւ աստղերը,
10 եւ Տէրը նրա գլխին պատիժ բերեց† :
Եկէ՛ք Սիոնում պատմենք մեր Տէր
Աստծու գործերը:
11 Պատրաստեցէ՛ք աղեղները,
լցրէ՛ք կապարճները,
քանի որ Տէրն արթնացրեց մարերի
թագաւորի հոգին,
քանի որ նրա բարկութիւնը Բաբելոնի
վրայ է,
պիտի ջնջի նրան,
քանզի Տիրոջ վրէժխնդրութիւնն է
դա,
նրա տաճարի վրէժխնդրութիւնը:
12 Բաբելոնի պարիսպների վրայ դրօ՛շ
կանգնեցրէք,
պահպանո՛ւ կարգեցէք,
արթնացրէ՛ք առաջապահներին,
զէնքերը պատրաստեցէ՛ք,
քանզի Տէրը ձեռնամուխ եղաւ անելու
այն,
ինչ ասել է Բաբելոնի բնակիչների
մասին,
13 որոնք ապրում են յորդառատ ջրերի
մօտ
եւ նստում անթիւ գանձերի վրայ:
Հասել է քո վախճանը,
արդարեւ այն ստուգապէս քո փորն է
մտել:
14 Զօրութիւնների Տէրը երդուեց իր
բազկով,
թէ՝ «Քեզ լցնելու եմ զօրքով, ինչպէս
մորեխով,
եւ նրանք, որ քո մէջ են իջնելու,
աղաղակ են բարձրացնելու քեզ
վրայ»:

ՓԱՌԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

15 Նա իր զօրութեամբ ստեղծեց եր-
կիրը,
իր իմաստութեամբ հիմնեց տիեզերքը,
իր հանճարով տարածեց երկինքը,
16 իր հրամանով երկնքում տեղա-
ւորեց շառաչող ջրերի առատութիւնը.
նա երկրի ծագերից ամպեր է հանում
վեր,
փայլատակումներ առաջացնում անձ-
րեւների ժամանակ,
լոյս է հանում իր շտեմարաններից:
17 Իւրաքանչիւր մարդ խելակորոյս
դարձաւ,
բոլոր ոսկերիչներն իրենց կուռքերի
պատճառով ամօթահար եղան,
որովհետեւ սուտ բաներ ձուլեցին,
նրանց մէջ հոգի չկայ.
18 սնոտի ու խայտառակ գործեր են.
երբ ես իրենց այցելութեան գնամ,
կորստեան են մատնուելու:
19 Այդպիսին չէ Յակոբի բաժինը.
նրա բաժինը նա է, ով ստեղծեց
ամենայն ինչ,
եւ նրա անունը Զօրութիւնների Տէր է:

ԲԱԲԵԼՈՆԻ ՎԱԽՃԱՆԸ

20 «Դու ինձ համար ցիրուցան պիտի
անես պատերազմական զէնքերը,
իսկ ես քո միջոցով ցիրուցան պիտի
անեմ ազգերին,
քեզնով վերացնեմ թագաւորներին,
21 ոչնչացնեմ նրանց այրուձին,
քեզնով պիտի ոչնչացնեմ նրանց
կառքերն ու հեծեալներին:
22 Քո միջոցով պիտի ոչնչացնեմ
տղամարդուն ու կնոջը,
քեզնով ծերին ու երիտասարդին
պիտի ոչնչացնեմ,
քեզնով պիտի ոչնչացնեմ կտրիճին ու
կոյսին:
23 Քո միջոցով պիտի ոչնչացնեմ
հովուին ու նրա հօտը,
քեզնով հողագործին ու նրա հողա-
գործութիւնը պիտի ոչնչացնեմ,
քեզնով պիտի ոչնչացնեմ քո զօրա-
վարներին ու զօրագլուխներին:
24 Բաբելոնին եւ քաղդէացի բնա-
կիչներին պիտի պատժեմ այն բոլոր
չարիքների համար,
որ ձեր աչքի առաջ գործեցին Սիոնի
նկատմամբ, – ասում է Տէրը: –
25 Ահա ես քո դէմ եմ, ո՛վ դու
ապականիչ լեռ, – ասում է Տէրը, –
դու, որ ապականում էիր ամբողջ
երկիրը.
իմ ձեռքը քեզ վրայ եմ երկարելու
եւ քեզ ժայռերից ներքեւ եմ գլորելու,
քեզ վերածելու եմ խանձուած լեռան:
26 Եւ այլեւս քեզնից չեն վերցնելու
ո՛չ անկիւնաքար, ո՛չ էլ հիմքի քար,
որովհետեւ դու յաւիտեան պիտի
լինես ապականութեան մէջ, – ասում է
Տէրը:
27 Դրօ՛շ բարձրացրէք երկրի վրայ,
փո՛ղ փչեցէք բոլոր ազգերի մէջ,
զօրագնդե՛ր կանչեցէք նրա դէմ:
Իմ կողմից հրամա՛ն տուէք
Այրարատեան թագաւորութիւններին
եւ ասքանազեան գնդին,
նրա շուրջը նետաձիգ սարքե՛ր կանգ-
նեցրէք,
յարձակուեցէ՛ք նրանց վրայ:
Շարժուեց ու տանջուեց երկիրը,
որովհետեւ Բաբելոնի վրայ հասաւ
Տիրոջ խորհուրդը,
եւ երիվարները հասան ինչպէս մորե-
խի բազմութիւն:
28 Նրա վրա՛յ հրաւիրեցէք ազգերին
եւ մարերի թագաւորին,
նրանց զօրավարներին ու նրանց
բոլոր զօրագլուխներին,
երկրի բոլոր իշխանութիւններին՝
29 աւերածութեան ենթարկելու հա-
մար բաբելացիների երկիրը,
որպէսզի այնտեղ բնակութիւն չլինի:
30 Բաբելոնի քաջամարտիկները պա-
տերազմից յետ կանգնեցին,
մնացին պաշարման մէջ,
բեկուեց նրանց զօրութիւնը,
նրանք դարձան կանանց նման,
հրդեհի մատնուեցին նրանց տները,
ջարդուեցին դրանց փականքները:
31 Փախչողը փախչողի պիտի պա-
տահի,
գուժկանը պիտի հանդիպի գուժկանի՝
բօթը տալու բաբելացիների թա-
գաւորին,
թէ նրա քաղաքը գրաւուած է,
32 ելքերը բռնուած են չորս կողմից,
բնակիչները կրակի մէջ այրուել են,
իսկ պատերազմող մարդիկ խոյս են
տուել դէպի դարպասները»:
33 Այսպէս է ասում Զօրութիւնների
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
«Բաբելացիների տունը պիտի կալսուի
հասած օրանի նման,
մի քիչ եւս՝ եւ կը գայ նրա հնձի
ժամանակը»:
34 «Կերաւ ինձ, հասաւ ինձ վրայ,
բաժանեց ինձ բաբելացիների Նա-
բուքոդոնոսոր արքան,
ինձ դարձրեց կարծես մի դատարկ
աման,
վիշապի նման ինձ կուլ տուեց,
իր փորը լցրեց իմ փափկութիւններով:
35 Թող հեռանան իմ տանջանքները,
եւ ինձ հասած տառապանքները
հասնեն Բաբելոնին». — այսպէս պիտի
ասի Սիոնի բնակիչը:
«Իմ արիւնը քաղդէացի բնակիչների
վրա՛յ թող լինի». – այսպէս պիտի ասի
Երուսաղէմը:
36 Դրա համար էլ այսպէս է ասում
Տէրը.
«Ահա ես պիտի դատեմ քո ոսոխին
եւ պիտի առնեմ քո վրէժը,
պիտի աւերեմ նրա ծովը
եւ ցամաքեցնեմ նրա աղբիւրները:
37 Բաբելոնը բլուրների պիտի վերա-
ծուի, վիշապների բնակավայրի,
աւերածութեան ու սուլոցի պիտի
ենթարկուի,
բնակելի չպիտի լինի:
38 Նրանց բոլոր որդիները պատ-
բաստուեցին իբրեւ առիւծներ,
իբրեւ առիւծի կորիւններ.
39 իրենց տաք խշտիների մէջ՝ նրանց
արհաւիրք եմ բերելու,
հարբեցնելու եմ նրանց,
որ թմրեն ու ննջեն յաւիտենական
քնով

† Երրայերէն՝ մեր արդարութիւնը երեւան հանեց:

եւ չարթնանան, - ասում է Տէրը: -
40 Իջեցրո՛ւ, մորթելո՛ւ տար նրանց
ինչպէս ոչխարների,
ինչպէս խոյերի ու այծերի»:

ՈՂԲ ԲԱԲԵԼՈՆԻ ՎՐԱՅ

41 Ինչպէ՞ս պարտութեան մատնուեցիր, ո՛վ Սիսակ,
ինչպէ՞ս որսի պէս բռնուեցիր, ո՛վ դու պարծանքդ ամենայն երկրի:
Ինչպէ՞ս Բաբելոնն ամայացաւ հանուր ազգերի մէջ:
42 Իր ալիքների գոչիւնով ծովը բարձրացաւ Բաբելոնի վրայ,
եւ նա ծածկուեց:
43 Նրա քաղաքները դարձան աւեր,
անջուր երկիր ու անապատ,
ուր ոչ ոք չի բնակուի,
ուր մարդու որդին կանգ չի առնի:
44 «Բաբելոնում վրէժխնդիր պիտի լինեմ Բէլից,
եւ ինչ որ նա կուլ տուեց,
նրա բերանի՛ց պիտի հանեմ:
Ազգերն այլեւս նրա մօտ չեն հաւաքուի:
Բաբելոնի պարիսպներն էլ պիտի խորտակուեն:
45 Դո՛ւրս արի նրա միջից, ո՛վ իմ ժողովուրդ,
ամէն մէկդ ձեր ա՛նձը փրկեցէք Տիրոջ ցասումից ու բարկութիւնից:
46 Թող երբեք չահաբեկուեն ձեր սրտերը,
մի՛ վախեցէք այն լուրերից, որ կը լսէք երկրում,
որովհետեւ նոյն տարում պիտի գայ մի լուր,
իսկ յաջորդ տարում՝ այլ լուր,
եւ անիրաւութիւն պիտի լինի երկրում,
խայտառակութիւն՝ խայտառակութեան վրայ[†]:
47 Դրա համար էլ, ահա, օրեր պիտի գան, - ասում է Տէրը, -
երբ ես պիտի պատժեմ բաբելացիների կուռքերին,
եւ նրա ողջ երկիրն ամօթով պիտի մնայ,
նրա բոլոր վիրաւորները պիտի ընկնեն նրա մէջ:
48 Այն ժամանակ Բաբելոնի վրայ պիտի ցնծան երկինք ու երկիր
եւ նրանցում եղած ամէն ինչ,
քանի որ հիւսիսից պիտի գան նրան թշուառացնողները,
- ասում է Տէրը, -
49 եւ ամբողջ երկրի վիրաւորները պիտի ընկնեն Բաբելոնում»:

ԱՍՏՎՈՒ ՊԱՏԳԱՄԸ ԲԱԲԵԼՈՆԻ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ

50 Ելէ՛ք այդ երկրից, ո՛վ փրկուածներ,
մի՛ մնացէք, յիշեցէ՛ք Տիրոջը, ո՛վ դուք հեռաւորներ,
եւ թող Երուսաղէմը ձեր միտքը գայ:
51 Ամօթահար եղանք, որովհետեւ լսեցինք մեր նախատինքը,
մեր անարգանքը ծածկեց մեր երեսը,
այլազգիները Տիրոջ Տան մէջ մեր սրբարանները ներխուժեցին:
52 «Դրա համար էլ, ահա, օրեր են գալու, - ասում է Տէրը, -
ու ես վրէժխնդիր եմ լինելու նրա կուռքերից,
ամբողջ երկրում ընկնելու են վիրաւորները:
53 Եւ եթէ Բաբելոնը երկնքի պէս վեր բարձրանայ
եւ ամրացնի իր բարձր զօրութիւնը,
միեւնոյն է, իմ կողմից կործանողներ պիտի գան նրա համար», - ասում է Տէրը:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՒԵՐՈՒՄԸ

54 Բօթն է հնչում Բաբելոնում,
մեծ կոտորած է քաղդէացիների երկրում,
55 քանզի Տէրն աւերեց Բաբելոնը
եւ այնտեղից չքացրեց նրա բարձր ձայնը՝
նրա ալիքների գոչիւնը,
կարծես բազում ջրեր ձայնեցին նրա կործանման մասին:

[†]Երրայերէն՝ իշխան իշխանի դէմ:

56 Բաբելոնի վրայ հասաւ թշուառութիւնը[†],
նրա սպառազէնները բռնուեցին,
նրա աղեղնաւորները զարհուրեցին:
Զէ՞ որ Աստուած հատուցանող է,
Տէրն ինքը պիտի հատուցի նրա պատիժը
57 եւ սաստիկ հարբեցնի նրա զօրավարներին
ու նրա իմաստուններին,
նրա իշխաններին,
նրա զօրագլուխներին
ու նրա զօրաւոր մարդկանց.
Նրանք պիտի ննջեն յաւիտենական քնով եւ չարթնանան»,
- ասում է արքան, որի անունը Տէր Ամենակալ է: -
58 Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը.
«Լայն էր Բաբելոնի պարիսպը,
բայց նա կործանուելով պիտի կործանուի,
նրա բարձր դարպասները հրով պիտի այրուեն,
ժողովուրդները զուր չարչարուեցին,
եւ ազգերն սկզբից եւեթ պիտի ոչնչանային»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԲԱԲԵԼՈՆ

59 Այն խօսքը, որ Տէրը պատուիրեց Երեմիա մարգարէին՝ ասելու Մասսիայի որդի Ներիայի որդի Սարեային, երբ սա Ցուդայի երկրի Սեդեկիա արքայի կողմից, նրա թագաւորութեան չորրորդ տարում, գնում էր Բաբելոն: Սարեան նրա գանձապետն էր: 60 Երեմիան մի մատեանի մէջ նկարագրեց այն բոլոր չարիքները, որ գալու էին Բաբելոնի վրայ, այսինքն՝ Բաբելոնի մասին գրուած այս բոլոր բաները: 61 Երեմիան ասաց Սարեային. «Երբ Բաբելոն գնաս եւ նայես ու կարդաս այս բոլոր բաները, 62 կ'ասես. "Տէ՛ր, դու խօսեցիր այս վայրի մասին, որ բնաջինջ անես սա, որ այստեղ այլեւս բնակիչ չմնայ՝ մարդուց մինչեւ անասուն, որ յաւիտեան ամայութիւն լինի": 63 Իսկ երբ վերջացնես այդ մատեանի ընթերցումը, քար կը կապես դրան, կը գցես Եփրատի մէջ 64 ու կ'ասես. "Թող Բաբելոնն այսպէս ընկղմուի ու չբարձրանայ այն չարիքներից, որ ես բերելու եմ նրա վրայ"»:
Երեմիա մարգարէի խօսքերը մինչեւ այստեղ են հասնում:

[†]Երրայերէն՝ մի աւերող:

ՆԱԲՈՒԿՈԴՈՆՈՍՈՐԸ ԿԱՂԱՆԱՒՈՐՈՒՄ Է ՍԵԴԵԿԻԱՅԻՆ
(Դ Թագ. 24. 18 - 25. 7)

52 Այս խօսքերը Թագաւորութիւնների չորրորդ գրքից են.
1 Քսանմէկ տարեկան էր Սեդեկիա արքան, երբ թագաւոր դարձաւ: Տասնմէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: Նրա մօր անունն Ամիտաալ էր. սա դուստրն էր Երեմիայի, որը Լուբենայից էր: 2 Սեդեկիան Տիրոջ առաջ չարիք գործեց, ինչպէս Յովակիմն էր գործել: 3 Տէրը զայրացել էր Երուսաղէմի եւ Ցուդայի երկրի վրայ այն աստիճան, որ նրանց իր աչքից գցեց, եւ Սեդեկիան ապստամբեց բաբելացիների արքայի դէմ:
4 Իսկ նրա թագաւորութեան իններորդ տարում, տասներորդ ամսին, ամսի տասին, բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան իր ամբողջ զօրքով եկաւ Երուսաղէմ եւ պաշարեց այն: Նրա շուրջը քառակուսի քարերից պատնէշ պատնէշի վրայ կանգնեցրեց: 5 Մինչեւ Սեդեկիա արքայի տասնմէկերորդ տարին քաղաքն ընկաւ նեղութեան մէջ:
6 Իսկ չորրորդ ամսին, երբ ամսի ինն էր, քաղաքում սաստկացաւ սովը. հաց չկար, որ երկրի բնակչութիւնն ուտէր: 7 Քաղաքի պարիսպը ճեղք տուեց, բոլոր կռուող մարդիկ փախուստի դիմեցին եւ գիշերով, երբ քաղդէացիները քաղաքի շուրջն էին, ներքին եւ արտաքին պարիսպների մէջ ընկած դարպասի ճանապարհով, արքունի պարտէզի կողմով դուրս եկան քաղաքից եւ շարժուեցին

արաբացիների[†] ճանապարհով: 8 Քաղ-
դէացիների թագաւորի զօրքերը հե-
տապնդեցին եւ Երիքովից այն կողմ
հասան Սեդեկիա արքային, իսկ նրա բո-
լոր ծառաները թողեցին հեռացան նրա-
նից: 9 Բռնեցին թագաւորին եւ բերին
Դեբլաթա, Եմաթի երկիրը, բաբելա-
ցիների արքայի մօտ, որը նրա հետ դա-
տաստան տեսաւ: 10 Բաբելացիների ար-
քան Սեդեկիայի առաջ կոտորեց նրա
որդիներին, Դեբլաթայում կոտորեց նաեւ
Յուդայի երկրի բոլոր իշխաններին, 11 Սե-
դեկիայի աչքերը կուրացրեց եւ ձեռքերը
կապեց շղթաներով: Բաբելացիների
արքան տարաւ նրան Բաբելոն եւ մինչեւ
նրա մահուան օրը պահեց նրան ջրա-
ղացի մէջ[‡]:

ՏԻՐՈՋ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ
(Դ Թագ. 25. 8-17)

12 Հինգերորդ ամսին, ամսի տասին, —
դա բաբելացիների Նաբուքոդոնոսոր
արքայի տասնիններորդ տարին էր, —
բաբելացիների արքայի առջեւ նրա
սպասին կանգնող Նաբուզարդան դահ-
ճապետը եկաւ, 13 կրակի մատնեց Տիրոջ
Տունը եւ արքունի ապարանքները,
քաղաքի բոլոր տներն ու բոլոր մեծամեծ
դղեակները հրով այրեց, 14 իսկ քաղ-
դէացի բոլոր զօրքերը, որոնք եկել էին
դահճապետի հետ, Երուսաղէմի պա-
րիսպներն ամբողջապէս շուրջանակի
քանդեցին: 15 Բայց ժողովրդի չքաւոր
մասին ու թափթփուկներին, որոնք
մնացել էին քաղաքում, ինչպէս եւ
փախստականներին, որոնք փախել էին
բաբելացիների արքայի մօտ, եւ մնացած
բազմութեանը Նաբուզարդան դահճա-
պետը ձեռք չտուեց[§]: 16 Երկրի աղ-
քատների մի մասին Նաբուզարդան
դահճապետը թողեց՝ այգեգործներ ու
հողագործներ լինելու համար:
17 Տիրոջ Տան պղնձէ սիւներն ու
խարիսխները եւ պղնձէ մեծ աւազանը,
որ Տիրոջ Տան մէջ էր, քաղդէացիները
ջարդեցին եւ ամբողջ պղինձը տարան
Բաբելոն: 18 Դահճապետն առաւ նաեւ
եռոտանիներն ու վերնախարիսխները,
պսակներն ու տաշտերը, մսի պատա-
ռաքաղներն ու պղնձէ ամանեղէնը,
որոնցով սպասարկում էին: 19 Դահ-
ճապետն առաւ նաեւ կոնքերն ու թա-
զարները, քամիչներն ու աշտանակները,
խնկամաններն ու տուփերը. ո՛րը ոսկի
էր՝ վերցրեց իբրեւ ոսկի, ո՛րն արծաթ էր՝
իբրեւ արծաթ:
20 Սիւները երկուսն էին, պղնձէ մեծ
աւազանը՝ մէկը. իսկ աւազանի տակ
տասներկու ցուլեր կային, որոնք Տիրոջ
Տան մէջ չինել էր Սողոմոն արքան: Եւ
պղնձին ու պղնձէ բոլոր անօթներին
հաշիւ չկար: 21 Սիւներից ամէն մէկի
բարձրութիւնը երեսունհինգ[†] կանգուն
էր, որոնցից իւրաքանչիւրի չուրջը
տարածւում էր տասներկու կանգուն
երկարութեամբ շղթայ՝ չորս մատ հաս-
տութեամբ: 22 Նրանց գլխին պղնձէ
խոյակներ կային, ամէն մի խոյակի
բարձրութիւնը՝ հինգ կանգուն. մի
խոյակի մակերեսը շուրջանակի բոլորում
էին ցանցակերպ եւ նռնաձեւ զարդերը՝
համակ պղնձից: Նոյն ձեւի էր եւ
երկրորդ սիւնինը, տասներկու կանգուն-
ներից ամէն մի կանգունը՝ ութ նռնա-
զարդով: 23 Նռնազարդերի թիւը մի
կողմի վրայ իննսունվեց էր, իսկ բոլոր
նռնազարդերը շուրջանակի ցանցի վրայ
հարիւր հատ էին:

ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԳԵՐԻ Է ՏԱՐԻՈՒՄ ԲԱԲԵԼՈՆ
(Դ Թագ. 25. 18 - 21, 27 - 30)

24 Դահճապետը բռնեց Սարեային՝
գլխաւոր քահանային, Սոփոնիային՝
երկրորդ քահանային, ու երեք դռնա-
պանների: 25 Այդ քաղաքից ձերբակալեց
նաեւ մի ներքինու, որ պատերազմող
մարդկանց զօրապետն էր, եւ եօթը
անուանի մարդկանց, որոնք թագաւորի

[†]Երրայերէն՝ դաշտի:

[‡]Երրայերէն՝ բանտում:

[§]Երրայերէն՝ գերի տարաւ:

[†]Երրայերէն՝ տասնուք:

առջեւ նրա սպասին էին կանգնում եւ
որոնց գտան քաղաքում, ինչպէս եւ
ատենադպրին՝ զօրքի իշխանին, երկրի
ժողովրդի ատենադպրին ու երկրի բնակ-
չութիւնից վաթսուն մարդու, որոնց
գտան քաղաքում: 26 Նաբուզարդան
դահճապետն առաւ նրանց ու տարաւ
բաբելացիների արքայի մօտ, Դեբլաթա:
27 Բաբելացիների արքան մահուան դա-
տապարտեց նրանց ու սպանեց Դեբլա-
թայում, Եմաթի երկրում: Յուդայի
երկրի ժողովուրդը իր երկրից գերեվ-
արուեց:
28 Սա է այն ժողովուրդը, որին գերեց
Նաբուքոդոնոսոր արքան. եօթներորդ
տարում՝ երեք հազար քսաներեք հրեայ,
29 Նաբուքոդոնոսորի տասնութերորդ
տարում Երուսաղէմից տարան ութ հա-
րիւր երեսուներկու հոգի, 30 Նաբու-
քոդոնոսորի քսաներեքերորդ տարում
Նաբուզարդան դահճապետը հրեաներից
գերի տարաւ եօթը հարիւր քառա-
սունհինգ հոգի, բոլորը միասին՝ չորս
հազար վեց հարիւր հոգի:
31 Յուդայի երկրի արքայ Յովակիմի
գերութեան երեսունեօթներորդ տարին
էր, տասներկուերորդ ամիսը, ամսի
քսանչորսը, երբ բաբելացիների Ուլմա-
րոդաք արքան իր թագաւոր դարձած
տարին պատուի արժանացրեց Յուդայի
երկրի արքայ Յովակիմին. հանեց նրան
այն տնից, որտեղ նա գտնւում էր
հսկողութեան տակ, 32 նրա հետ
քաղցրութեամբ խօսեց եւ նրա բարձն
աւելի վեր դրեց, քան այն թագաւորների
բարձերը, որոնք Բաբելոնում նրա մօտ
էին: 33 Փոխեց բանտի նրա
պատմուճանը, եւ նա ինչքան ժամանակ
որ ապրեց՝ ամէն օր միշտ արքայի մօտ
էր հաց ուտում: 34 Նրա համար
սահմանուեց մշտական ռոճիկ, որը նրա
կեանքի ամբողջ ընթացքում,
բաբելացիների արքայի կողմից, տալիս
էին նրան օրըստօրէ՝ մինչեւ նրա
մահուան օրը:

ԲԱՐՈՒՔԻ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Բարուքի գիրքը մեզ ներկայանում է որպէս Երեմիա մարգարէի քարտուղարի երկը (վեցերորդ դարի սկզբին Ն. Ք.), սակայն այն խմբագրուած պէտք է լինի երկրորդ դարից առաջ: Այս գործը Բարուքի գրչին վերագրելը գրական մի հնարանք է, որ շատ սովորական է եղել այդ դարաշրջանում:

Գրուածքը բաղկացած է չորս անկախ մասերից, որոնք անհրաժեշտօրէն նոյն հեղինակին չեն պատկանում:

Առաջին մասը մի ներածութիւն է, ուր որոշակիօրէն նշւում է, թէ գիրքը (որը հրեայ աքսորականների կողմից Բաբելոնից է ուղարկուել) ինչպիսի պայմաններում պէտք է ընթերցուի Երուսաղէմում մեղքերի խոստովանութեան արարողութեան ժամանակ:

Երկրորդ մասը կազմում է հէնց մեղքերի խոստովանութեան հատուածը, որը ներշնչուած է Դանիէլի գրքից եւ որին յաջորդում է աստուածաշնչական բազմաթիւ մէջբերումներով զարդարուած մի աղերսանք:

Երրորդ մասը մի խորհրդածութիւն է Իմաստութեան մասին:

Չորրորդ եւ վերջին մասը Երուսաղէմին ուղղուած քաջալերական մի ճառ է:

1 Սրանք են այն թղթի խօսքերը, որ Բաբելոնում գրեց Բարուքը՝ Քեղկիայի որդի
Ասադի որդի Սեդեկիայի որդի Մասսի
որդի Ներիայի որդին, 2 հինգերորդ տարում, ամսի եօթներորդ օրը, այն ժամանակ, երբ քաղդէացիները գրաւեցին
Երուսաղէմը եւ հրով այրեցին այն: 3 Բարուքն այս նամակի խօսքերն ընթերցեց ի
լուր Յուդայի երկրի արքայ Յովակիմի
որդի Յեքոնիայի, նաեւ ի լուր համայն
ժողովրդի, որ եկել էր գրքի համար,
4 նաեւ ի լուր զօրքերի ու թագաւորների
որդիների, նաեւ ի լուր ծերերի եւ
ամբողջ ժողովրդի՝ փոքրից մինչեւ
մեծերը, ի լուր ամենքի, որ ապրում էին
Բաբելոնում, Սուդ գետի ափին. 5 լսելով՝
նրանք լաց էին լինում, պաս պահում եւ
աղօթում Տիրոջը: 6 Արծաթ հաւաքեցին,
ամէն մէկն՝ ըստ իր կարողութեան, 7 եւ
ուղարկեցին Երուսաղէմ՝ Սաղոմի որդի
Քեղկիայի որդի Յովակիմ քահանային
եւ միւս քահանաներին, որոնք նրա հետ
միասին Երուսաղէմում էին: 8 Միւսն
ամսի տասին Բարուքը Տիրոջ տաճարից
հանուած սպասքը վերցրեց՝ այն վերադարձնելու համար Յուդայի երկիր: Այդ
սպասքը պատրաստել էր Յուդայի արքայ Յոսիայի որդի Սեդեկիան. 9 երբ
բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան
Երուսաղէմում գերեց Յեքոնիային, իշխաններին, բանտապետներին, հզօրներին ու երկրի ժողովրդին, սպասքը
տարաւ Բաբելոն:

10 Նրանք ասացին. «Ահա ձեզ ուղարկում ենք արծաթ. մեղքերի քաւութեան
համար այդ արծաթով ողջակէզնե՛ր
գնեցէք եւ կնդրուկ՝ իբրեւ մեղքի զոհաբերութիւն, ընծանե՛ր վերցրէք, բարձրացրէ՛ք մեր Տէր Աստծու զոհասեղանի
վրայ: 11 Աղօ՛թք արէք բաբելացիների
Նաբուքոդոնոսոր արքայի կեանքի համար եւ նրա որդի Բաղդասարի կեանքի
համար, որպէսզի նրանց կեանքի օրերը
երկար լինեն ինչպէս երկրի վրայ,
այնպէս էլ՝ երկնքում: 12 Տէրը մեզ
զօրութիւն կը տայ եւ կը լուսաւորի մեր
աչքերը. կ'ապրենք բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի հովանու տակ,
նրա որդի Բաղդասարի հովանու տակ,
բազում օրեր կը ծառայենք նրանց եւ
նրանց մօտ չնորհ կը գտնենք: 13 Մեր
Տէր Աստծուն աղօ՛թք արէք նաեւ մեզ
համար, քանզի մեղանչեցինք մեր Տէր
Աստծու առաջ, ու մինչեւ այսօր մեզնից
չհեռացան Տիրոջ ցասումն ու բարկութիւնը:

14 Ընթերցեցէ՛ք այդ նամակը, որն
ուղարկեցինք ձեզ՝ տօն օրերին եւ լուր
օրերին հրապարակելով Տիրոջ Տանը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

15 Եւ կ'ասէք. "Մեր Տէր Աստծունն է
արդարութիւնը, իսկ մերը երեսի ամօթն
է, ինչպէս այս օրերին ամօթը Յուդայի
երկրի մարդունն է եւ Երուսաղէմի բնակիչներինը, 16 մեր թագաւորներինը եւ
մեր իշխաններինը, մեր քահանաներինը,
մեր մարգարէներինն ու մեր հայրերինը՝
Տիրոջ հանդէպ, 17 քանզի անհնազանդ
եղանք նրան, 18 ականջ չդրինք մեր Տէր
Աստծու ձայնին՝ ընթանալու ըստ այն
պատուիրանների, որ Տէրը տուեց մեզ":
19 Այն օրից, երբ Տէրը մեր հայրերին
հանեց Եգիպտացիների երկրից, մինչեւ
այսօր անհնազանդ եղանք մեր Տէր
Աստծուն՝ խուսափելով, որ չանսանք
նրա ձայնին: 20 Եւ, ինչպէս այսօր, մեզ
պատեցին չարիքն ու այն նզովքը, որ
Տէրը դրեց իր ծառայ Մովսէսի միջոցով,
երբ մեր հայրերին հանում էր Եգիպտացիների երկրից՝ մեզ պարգեւելու
համար այս երկիրը, որ բխեցնում է կաթ
ու մեղր: 21 Ձանսացինք մեր Տէր Աստծու ձայնին, մեզ մօտ ուղարկած մարգարէների բոլոր ասածներին, 22 իւրաքանչիւրս գնացինք ըստ մեր չար սրտի
խորհուրդների, պաշտեցինք օտար աստուածներին՝ չարիք գործելով մեր Տէր
Աստծու առաջ»:

ՏԷՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԳԵՐՈՒԹԻՆԻՑ

2 Տէրը կատարեց իր խօսքերը, որ ասաց մեր մասին, մեր դատաւորների մասին, որոնք դատում էին Իսրայէլին, մեր թագաւորների մասին, մեր իշխանների մասին, Իսրայէլի եւ Յուդայի երկրի մարդկանց մասին, 2 թէ մեզ վրայ բերելու է այնպիսի մեծամեծ չարիքներ, որպիսիք երբեք չեն եղել ողջ երկնքի ներքոյ եւ որպիսիք նա կատարեց Իսրայէլի նկատմամբ՝ ըստ Մովսէսի օրէնքներում գրուած այն խօսքերի, 3 թէ մենք ուտելու ենք մեր որդիների մարմինները, եւ հայրը՝ իր դստեր մարմինը: 4 Տէրը մեզ ստրուկ դարձրեց այն բոլոր թագաւորներին, որոնք մեր շուրջն էին, դատապարտեց նախատինքին ու աւերածութեանը շրջապատի բոլոր ժողովուրդների, որոնց մէջ ցրեց մեզ. 5 մենք ցած իջանք եւ ոչ թէ բարձրացանք, որովհետեւ մեղանչեցինք մեր Տէր Աստծու առաջ՝ չանսալով նրա ձայնին: 6 Մեր Տէր Աստծունն է արդարութիւնը, իսկ մերը եւ մեր հայրերինը՝ երեսի ամօթը, ինչպէս որ այսօր է: 7 Այն բոլոր չարիքները, որոնց մասին խօսեց Տէրը, եկան մեզ վրայ: 8 Մենք չպաղատեցինք Տիրոջ առաջ, որպէսզի ամէն մէկն իր չար սրտի խորհուրդներից յետ դառնար, 9 եւ չարութիւնը զարթնեց Տիրոջ մէջ, ու նա չարիքներ բերեց մեզ վրայ: Արդարեւ, Տէրն արդար է իր այն բոլոր գործերում, որ պատուիրել է մեզ, 10 բայց մենք չանսացինք նրա ձայնին՝ հետեւելու այն պատգամներին, որ Տէրը տուեց մեզ:

ԱՂԱՋԱՆՔ

11 Եւ արդ, ո՛վ Տէր Աստուած Իսրայէլի, դու էիր, որ հզօր ձեռքով, զարմանահրաշ գործերով ու սքանչելիքներով, մեծ զօրութեամբ ու բարձր բազկով քո ժողովրդին դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից եւ քեզ համար անուն ստեղծեցիր, ինչպէս այսօր: 12 Մենք մեղք գործեցինք, ամբարշտութիւն ու անիրաւութիւն կատարեցինք, ո՛վ Տէր Աստուած մեր, քո իրաւունքների դէմ: 13 Թող քո բարկութիւնը յետ դառնայ մեզնից, որովհետեւ մենք նուազեցինք հեթանոսների մէջ, ուր ցրեցիր մեզ: 14 Լսի՛ր, Տէ՛ր, մեր աղաչանքներն ու մեր խնդրանքները, յանուն քո անուան՝ փրկի՛ր մեզ եւ մեզ շնորհների՛ արժանացրու մեզ գերողների առաջ, 15 որպէսզի ամբողջ երկիրն իմանայ, որ դու ես մեր Տէր Աստուածը, քանզի Իսրայէլի վրայ եւ նրա ազգի վրայ քո անունն է կնքուած: 16 Տէ՛ր, նայի՛ր քո սուրբ տաճարից եւ յիշի՛ր մեզ: 17 Տէ՛ր, խոնարհեցրո՛ւ քո ականջը եւ լսի՛ր, բա՛ց քո աչքերը եւ տե՛ս. Տիրոջը փառք ու իրաւունք են մաղթում ոչ թէ դժոխքի մեռելները, որոնց հոգիները նրանց միջից առել են, 18 այլ անսահման տխրութեամբ տրտմած հոգիները, որոնք քայլում են կորացած ու հիւանդ. մարմրող աչքերն ու քաղցած հոգիներն են փառք ու արդարութիւն մաղթում քեզ:

19 Ո՛վ Տէր, ոչ թէ մեր հայրերի եւ մեր թագաւորների արդարութիւնից է, որ դուք ենք հայցում քո առաջ, Տէ՛ր Աստուած մեր, 20 այլ նրա համար, որ քո ցասումն ու քո բարկութիւնը բերեցիր մեզ վրայ, ինչպէս քո ծառաների՝ մարգարէների միջոցով խօսեցիր, թէ՝ 21 այսպէս է ասում Տէրը. «Խոնարհեցրէ՛ք ձեր պարանոցները եւ ծառայեցէ՛ք բաբելացիների արքային, եւ դուք կ՚ապրէք այն երկրում, որ տուել եմ ձեր հայրերին, 22 իսկ եթէ չանսաք Տիրոջ ձայնին՝ ծառայելու բաբելացիների արքային, ապա Յուդայի երկրի քաղաքներից եւ Երուսաղէմից դուրս ես կը վերացնեմ 23 ձայնն ուրախութեան եւ ձայնը ցնծութեան, ձայնը փեսայի եւ ձայնը հարսի, եւ այդ ամբողջ երկիրն ամայի կը դառնայ բնակչութիւնից»:

24 Բայց մենք չանսացինք քո ձայնին՝ ծառայելու բաբելացիների արքային, եւ դու ի կատար ածեցիր քո խօսքերը, որ յայտնեցիր քո ծառաների՝ մարգարէների միջոցով, թէ մեր թագաւորների ոսկորները եւ մեր հայրերի ոսկորները հանուելու են իրենց տեղից: 25 Եւ ահա դրանք թափուած են ցերեկուայ տօթին ու գիշերուայ ցրտին, իսկ իրենք իրենց վախճանը գտան չարաչար ցաւերով, սովով, սրով ու գերութեամբ: 26 Իսրայէլի տան եւ Յուդայի տան չարութեան պատճառով քո տաճարը, որը կոչւում է քո անունով, դու դարձրիր այնպիսին, ինչպիսին նա այսօր է:

27 Տէ՛ր Աստուած մեր, մեզ հետ վարուեցիր քո ամբողջ հեզութեամբ եւ քո ամբողջ մեծ գթութեամբ, 28 ինչպէս որ քո ծառայ Մովսէսի միջոցով խօսեցիր այն օրը, երբ դու Իսրայէլի որդիների առաջ պատուիրեցիր գրել քո օրէնքը եւ ասել. 29 «Եթէ դուք չլսէք իմ ձայնը, ապա ձեր բարձրագոչ շրինդը ազգերի մէջ, ուր ցրելու եմ ձեզ, պիտի իջնի ու նուազի: 30 Գիտեմ, որ ինձ չեն լսելու, որովհետեւ մի պնդաճակատ ժողովուրդ են, բայց իրենց պանդխտած երկրում սրտով դարձի պիտի գան 31 եւ իմանան, որ նրանց Տէր Աստուածը ես եմ: Նրանց սիրտ եմ տալու եւ ականջներ, որ լսեն: 32 Նրանք պիտի օրհնեն ինձ այն երկրում, ուր գերի են, պիտի յիշեն իմ անունը 33 ու պիտի հրաժարուեն իրենց կամակորութիւնից եւ իրենց չար արարքներից, որովհետեւ պիտի յիշեն իմ առաջ մեղք գործած իրենց հայրերի ճանապարհները: 34 Ես նրանց պիտի վերադարձնեմ այն երկիրը, որ երդուեցի տալ նրանց հայրերին՝ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին, ու նրանք պիտի տիրեն նրան: Պիտի բազմացնեմ նրանց, եւ նրանք չեն նուազելու: 35 Նրանց հետ յաւիտենական ուխտ պիտի հաստատեմ. ես նրանց համար Աստուած պիտի լինեմ, իսկ նրանք ինձ համար՝ ժողովուրդ, եւ այլեւս Իսրայէլի իմ ժողովրդին չեմ գաղթեցնի այն երկրից, որ տուել եմ նրանց»:

3 Տէ՛ր Ամենակալ, Աստուա՛ծ Իսրայէլի, չարչարուած անձերն ու յոգնած հոգիներն են աղաղակում առ քեզ: 2 Լսի՛ր, Տէ՛ր, եւ ողորմի՛ր. չէ՞ որ դու ողորմած Աստուած ես, ողորմի՛ր, որովհետեւ մեղք գործեցինք քո առաջ. 3 դու ապրում ես յաւիտեան, իսկ մենք կորստական ենք յաւիտեան: 4 Տէ՛ր Ամենակալ, Աստուա՛ծ Իսրայէլի, լսի՛ր աղօթքը Իսրայէլի մեռեալների եւ քո դէմ մեղանչողների որդիների, որոնք չանսացին իրենց Տէր Աստծու ձայնին, եւ չարիքները պատեցին մեզ: 5 Այժմ մի՛ յիշիր մեր հայրերի անիրաւութիւնները, այլ յիշի՛ր քո զօրութիւնը եւ քո անունը, 6 քանզի մեր Տէր Աստուածն ես դու, եւ մենք օրհնում ենք ենք քեզ, Տէ՛ր: 7 Չէ՞ որ դու նրա՛ համար քո երկիւղը մեր սրտերի մէջ դրեցիր, որ մենք կանչենք քո անունը եւ մեր գերութեան մէջ օրհնենք քեզ. մենք մեր սրտերից վանել ենք քո առաջ մեղք գործած մեր հայրերի անիրաւութիւնները: 8 Ահա մենք այսօր գտնուում ենք մեր գերութեան մէջ, ուր, մեր Տէր Աստծու դէմ ապստամբած մեր հայրերի անօրէնութիւնների պատճառով, իբրեւ նախատինք, նզովք ու հատուցում, ցրեցիր մեզ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՅՈՐԴՈՐ

9 Լսի՛ր, Իսրայէ՛լ, կեանքի պատգամները,
ակա՛նջ դրէք, որպէսզի ճանաչէք իմաստութիւնը:
10 Ի՞նչ պատահեց, Իսրայէ՛լ,
ինչպէ՞ս եղաւ, որ թշնամիներիդ երկրում ես:
11 Մերացար օտար երկրում,
խառնակուեցիր դիակների հետ,
դրուեցիր դժոխք իջածների կարգը,
12 թողեցիր իմաստութեան երկիրը:
13 Եթէ Աստծու ճանապարհով ընթանայիր,

խաղաղութեամբ կ'ապրէիր յաւիտենութեան մէջ:
14 *Սովորի՛ր՝ ո՛ւր է իմաստութիւնը,*
ո՛ւր է զօրութիւնը,
ո՛ւր է հանճարը,
միաժամանակ ճանաչի՛ր, թէ ո՛րն է երկարատեւ կեանքը,
ո՛րտեղ են աչքերի լոյսն ու խաղաղութիւնը:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆ ԱՆՄԱՏՉԵԼԻ

15 *Ո՞վ գտաւ իմաստութեան տեղը,*
ո՞վ հասաւ նրա գանձերին:
16 *Ո՞ւր են հեթանոսների իշխանները եւ նրանք,*
որ երկրի գազանների տիրակալներն էին,
17 *որ երկնքի թռչունների հետ էին ճախրում*
18 *եւ գանձում էին արծաթ ու ոսկի,*
որոնց վրայ յոյս դրեցին մարդիկ.
նրանց հարստութեանը չափ չկար.
ովքեր ջանք էին թափում արծաթ ու ոսկի կուտակելու,
նրանք իրենց գործով գոյութիւն չունեն,
19 *մահացան ու դժոխք իջան.*
նրանց փոխարէն ուրիշներն աշխարհ եկան:
20 *Երիտասարդները տեսան լոյսը եւ բնակուեցին երկրի վրայ,*
բայց իմաստութեան ճանապարհները չճանաչեցին,
21 *չգիտակցեցին նրա շաւիղները,*
չկանգնեցին իմաստութեան ճանապարհի վրայ:
Նրանց որդիներն այդ ճանապարհից հեռու մնացին:
22 *Իմաստութիւնը չլսուեց Քանանում*
եւ ոչ էլ երեւաց Թեմանում:
23 *Հագարի որդիները եւս իմաստութեան հետամուտ չեղան,*
Մերանի եւ Թեմանի վաճառականները,
առասպելախօսները եւ իմաստութեան քննիչները
իմաստութեան ճանապարհը չճանաչեցին,
նրանք չյիշեցին նրա շաւիղները:
24 *Ո՛վ Իսրայէլ, որքա՜ն մեծ է Աստծու Տունը,*
եւ որքա՜ն ընդարձակ՝ Նրա տիրապետութեան սահմանը.
25 *մեծ է, անեզր, բարձր ու անչափելի:*
26 *Այնտեղ սկզբում ծնուեցին անուանի հսկաները,*
որոնք վիթխարի էին եւ պատերազմների մէջ՝ հմուտ:
27 *Բայց Աստուած նրանց իր ընտրեալները չդարձրեց*
եւ ոչ էլ իմաստութեան ճանապարհ ցոյց տուեց նրանց:
28 *Նրանք կորստեան մատնուեցին,*
որովհետեւ իմաստութիւն չունէին,
ոչնչացան, որովհետեւ անմիտ էին:
29 *Ո՞վ ելաւ երկինք, առաւ իմաստութիւնն ու այն իջեցրեց ամպերից.*
30 *ո՞վ անցաւ ծովի այն կողմը եւ գտաւ այն,*
որ բերի ընտիր ոսկու փոխարէն:
31 *Չկայ մէկը, որ իմանայ նրա ճանապարհները,*
ո՛չ ոք, որ գիտակցի նրա շաւիղները:
32 *Բայց Նա, որ գիտէ ամէն ինչ,*
Նա՛ է ճանաչում իմաստութիւնը,
Նա՛ է իր իմաստութեամբ գտել այն,
Նա, ով ստեղծել է երկիրը յաւիտենական ժամանակների համար,
լցրել այն կենդանիներով եւ չորքոտանիներով,
33 *Նա, ով լոյսն է ուղարկում՝ եւ լոյսը գնում է,*
յետ է կանչում՝ եւ լոյսը դողալով հնազանդւում է նրան.
34 *աստղերը ծագել են՝ իւրաքանչիւրն իր տեղում, եւ ուրախացել.*
35 *Նա կանչում է աստղերին, ու նրանք ասում են՝*
«Ահա այստե՛ղ ենք»,
եւ զուարթօրէն ճառագում են իրենց Արարչի համար:
36 *Դա մեր Աստուածն է, որի հետ ոչ ոք չի կարող համեմատուել,*

37 *որը գտաւ իմաստութեան բոլոր ճանապարհները*
եւ դրանք տուեց իր ծառայ Յակոբին ու իր սիրեցեալ Իսրայէլին:
38 *Դրանից յետոյ իմաստութիւնը յայտնուեց երկրի վրայ ու շրջեց մարդկանց մէջ:*

4 *Իմաստութիւնը Աստծու պատուիրանների գիրքն է,*
Օրէնքն է, որ կայ յաւիտեան:
Բոլոր նրանք, ովքեր ընդունում են այն, պիտի ապրեն,
իսկ ովքեր թողնում են այն, պիտի մեռնեն:
2 *Դարձի՛ր, Յակո՛բ, եւ բռնի՛ր իմաստութիւնից՝*
նրա լոյսի ծագման իսկ պահին:
3 *Քո փառքն ուրիշին մի՛ տուր,*
եւ քո վաստակները՝ օտար ազգին:
4 *Երանի է մեզ, Իսրայէ՛լ,*
որովհետեւ գիտենք, թէ ի՛նչն է հաճելի Աստծուն:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ ԵՒ ՄԽԻԹԱՐՈՒՄ Է ԻՐ ՋԱՒԱԿՆԵՐԻՆ

5 *Քաջալերուի՛ր, ո՛վ իմ ժողովուրդ,*
յիշի՛ր, ո՛վ Իսրայէլ.
6 *ազգերին ծախուեցիք,*
բայց ոչ կործանուելու համար.
քանի որ դուք բարկացրիք Աստծուն,
մատնուեցիք հակառակորդներին:
7 *Զայրացրիք ձեր Արարչին,*
զոհեր մատուցեցիք դեւերին եւ ոչ թէ Աստծուն:
8 *Մոռացաք ձեր կերակրողին՝ յաւիտենական Աստծուն,*
տրտմութիւն պատճառեցիք եւ ձեր դայեակին՝ Երուսաղէմին,
9 *որը տեսաւ Աստծուց ձեզ վրայ եկած բարկութիւնը եւ ասաց.*
«Լսեցէ՛ք, ո՛վ Սիոնի պանդուխտներ,
Տէրն ինձ մեծ սգի մէջ դրեց.
10 *ես տեսայ իմ տղաների ու աղջիկների գերութիւնը,*
որի մէջ նրանց դրեց յաւիտենական Տէրը:
11 *Նրանց սնեցի ուրախութեամբ,*
բայց նրանց ճանապարհ դրի լացով ու սգով:
12 *Թող ոչ ոք չոտնահարի որբեւայրուս,*
որ շատերից միայնակ եմ մնացել.
Թափուր եմ մնացել իմ որդիների բազում մեղքերի պատճառով,
քանզի նրանք խոտորուեցին Աստծու օրէնքներից,
13 *չճանաչեցին նրա իրաւունքները, չգնացին Աստծու պատուիրանների ճանապարհներով*
եւ ոչ էլ բարձրացան նրա արդար խրատի շաւիղներով:
14 *Կը գան Սիոնի պանդուխտները*
ու կը յիշեն իմ տղաների եւ աղջիկների գերութիւնը,
որի մէջ նրանց դրեց յաւիտենական Տէրը:
15 *Նրանց վրայ բերեց մի հեռաւոր ազգի,*
մի լիրբ եւ այլալեզու ազգի,
որ չէր ակնածում ծերերից
եւ ոչ էլ ողորմում մանկանը:
16 *Նրանք տարան որբեւայրուս սիրելիներին,*
իսկ մնացածներիս զրկեցին դուստրերից:
17 *Ես ինչպէ՞ս կարող էի օգնել ձեզ:*
18 *Ով ձեզ վրայ չարիք բերեց,*
նա էլ կը փրկի ձեզ ձեր թշնամիների ձեռքից:
19 *Գնացէ՛ք, ո՛վ զաւակներ, գնացէ՛ք,*
քանզի ես մնացի աւերակ:
20 *Հանեցի խաղաղութեան պատմուճանը*
եւ հագայ իմ պաղատանքների քուրձը.
իմ օրերում աղաղակ բարձրացրի առ յաւիտենական Տէրը:
21 *Քաջալերուեցէ՛ք, ո՛վ զաւակներ,*
ձա՛յն տուէք Աստծուն,
եւ նա ձեզ կ'ազատի թշնամիների բռնութիւնից, նրանց ձեռքից:
22 *Ձեր փրկութեան համար ես յոյս*

դրեցի յաւիտենական Տիրոջ վրայ
եւ Սրբից ուրախ լուր առայ այն ողորմութեան մասին,
որ շուտով ձեզ է գալու ձեր յաւիտենական Փրկչից:
23 Ձեզ ճանապարհ դրի սգով ու լացով,
սակայն Աստուած յաւիտենապէս ձեզ ինձ է տալու
ցնծութեամբ եւ ուրախութեամբ:
24 Ինչպէս այժմ Սիոնի պանդուխտները տեսան ձեր գերութիւնը,
այնպէս էլ ընդհուպ պիտի տեսնեն Աստծու կողմից ձեր փրկութիւնը,
որ ձեզ է հասնելու յաւիտենական Տիրոջ մեծափառութեամբ ու լոյսով:
25 Ո՛վ զաւակներ,
Աստծուց ձեզ հասած բարկութեան հանդէպ համբերատա՛ր եղէք.
ձեր թշնամին հալածեց ձեզ,
բայց շուտով դուք կը տեսնէք նրա կործանումը
եւ ձեր ոտքը կը դնէք նրա պարանոցի վրայ:
26 Իմ փափկասուն զաւակները դաժան ճանապարհներ անցան,
քշուեցին ինչպէս թշնամիներից յափշտակուած հօտ:
27 Քաջալերուեցէ՛ք, ո՛վ զաւակներ,
եւ ձա՛յն տուէք Աստծուն,
որպէսզի Նա, որ ձեզ գերութեան տարաւ, յիշի ձեզ:
28 Ինչպէս որ ձեր մտքերով չեղուեցիք Աստծուց,
այդպէս էլ դուք տասնապատիկ պիտի դառնաք ու փնտռէք նրան,
29 որովհետեւ ով ձեզ վրայ չարիք բերեց,
նա էլ յաւիտենական ուրախութիւն պիտի բերի ձեզ՝ ձեր բարեկեցութեամբ հանդերձ»:

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՆ

30 Քաջալերուի՛ր, Երուսաղէ՛մ,
ով որ քո անունը դրեց, նա կը մխիթարի քեզ:
31 Վա՜յ նրանց, որ չարչարեցին քեզ
եւ խնդացին քո կործանման վրայ:
32 Վա՜յ այն քաղաքներին, որոնց ծառայեցին քո զաւակները,
վա՜յ նրան, ով ընդունեց քո որդիներին,
33 որովհետեւ ինչպէս որ նա խնդաց քո կործանման վրայ
եւ ուրախացաւ քո անկումով,
այնպէս էլ պիտի տրտմի իր աւերման համար:
34 Նրան պիտի զրկեմ բազում խրախճանքների ուրախութիւնից
եւ նրա պերճութիւնը սգի պիտի փոխեմ:
35 Բազում օրեր յաւիտենական Տիրոջ հուրը պիտի գայ նրա վրայ,
բազում ժամանակներ դեւերի բնակավայր պիտի լինի նա:
36 Նայի՛ր դէպի արեւելք, ո՛վ Երուսաղէմ,
եւ տե՛ս Աստծուց քեզ եկած ուրախութիւնը:
37 Ահա գալիս են քո որդիները,
որոնց ճանապարհ էիր դրել,
գալիս են՝ Սրբի խօսքով հաւաքուած արեւելքից մինչեւ արեւմուտք,
ուրախացած Աստծու փառքով:

5 Ո՛վ Երուսաղէմ,
հանի՛ր քո սգի ու լկանքի զգեստը
եւ յաւիտեա՛ն հագիր Աստծու փառքն ու վայելչութիւնը,
2 ա՛ռ քո վրայ Աստծու արդարութեան վերարկուն
եւ դի՛ր գլխիդ յաւիտենական Տիրոջ փառքի խոյրը,
3 որպէսզի Աստուած երկնքի ներքոյ ցոյց տայ քո ամբողջ պայծառութիւնը:
4 Աստծու կողմից քո անունը յաւիտեան կը կոչուի խաղաղութիւն,
արդարութիւն եւ աստուածպաշտութեան փառք:
5 Ելի՛ր, Երուսաղէ՛մ,
կանգնի՛ր բարձունքի վրայ,
նայի՛ր դէպի արեւելք

ու տե՛ս Սրբի խօսքով արեւելքից մինչեւ արեւմուտք հաւաքուած քո որդիներին,
որոնք ուրախացել են Աստծուց յիշուած լինելու համար:
6 Նրանք քեզնից հեռացան հետիոտն,
թշնամիներից քշուած,
բայց Աստուած նրանց քեզ մօտ է բերում փառքով,
ինչպէս թագաւորական գահ բարձրացածների:
7 Արդարեւ, Աստուած հրաման է արձակել,
որ բոլոր բարձր լեռները,
յաւերժական բլուրները խոնարհուեն,
ձորերը լցուեն,
որպէսզի երկիրը հարթուի,
Իսրայէլն Աստծու փառքով ապահով քայլի,
8 իսկ բոլոր անտառները
եւ ամէն մի անուշաբոյր ծառ
Աստծու հրամանով հովանի լինեն Իսրայէլին:
9 Աստուած պիտի առաջնորդի Իսրայէլին ուրախութեամբ,
իր փառքի լոյսով՝
իր ողորմութեամբ ու արդարութեամբ հանդերձ:

ՍՈՒՐԲ ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ՈՂԲԸ

Ներածութիւն

Այս գրքում զետեղուած հինգ բանաստեղծութիւնները, որ աւանդութիւնը Երեմիային է վերագրել, մէկ նիւթ ունեն միայն՝ Երուսաղէմի կործանումը, որը տեղի ունեցաւ 587 թուականին (Ն. Ք.) բաբելոնեան բանակի ուժեղ հարուածների ներքոյ: Այս աղէտը վերջ դրեց Յուդայի թագաւորութեանը որպէս անկախ պետութիւն: Միաժամանակ այս իրադարձութիւնը կարծես հերքումն է այն խոստման, որ մի ժամանակ տրուել էր Դաւիթ թագաւորին, թէ՝ «Քեզնից յետոյ քո սերնդից մէկը միշտ պիտի իշխի, որովհետեւ քո գերդաստանի թագաւորական իշխանութիւնը անխախտ պիտի մնայ» (Բ Թագ. 7. 16):

Այս աղէտը վերապրողները վերյիշում են այն ողբերգական իրադարձութիւնները, որոնց բովից անցան իրենք եւ փորձում են հասկանալ դրանք. ո՞վ է այս բոլոր սարսափների պատասխանատուն. Տէրը չի՞ վերաբերուել արդեօք որպէս իր ժողովրդի իսկական թշնամին: Այնուհանդերձ պարտուողները ընդունում են իրենց սեփական յանցանքները: Նրանք յիշում են նաեւ, որ «Տիրոջ բարութիւնները չեն սպառուել» եւ որ «Մեծ է նրա հաւատարմութիւնը»: Հէնց այդ էլ մնում է նրանց յուսոյ աղբիւրը, հակառակ աղէտալի իրականութեան:

ՍՈՒՐԲ ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ՈՂԲԸ

1 *Իսրայէլի գերութիւնից եւ Երուսաղէմի աւերածութիւնից յետոյ էր, երբ Երեմիան նստել լաց էր լինում եւ այս ողբերն ասում Երուսաղէմի վրայ.*

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ՝ ԼԱՊՈՒԱԾ ՈՐԲԵՒԱՅՐԻ

1 *ալեփ* *Ինչպէ՜ս զատուեց ու նստեց մենաւորիկ՝*
քաղաքը բազմամարդ,
տրտմութեամբ լցուած որբեւայրի մի կին դարձաւ հեթանոսների մէջ.
երկրի իշխանը հարկատու դարձաւ:
2 *բեթ* *Նա գիշերը դառնօրէն լաց եղաւ.*
արցունքներ կան նրա ծնօտներին:
Այդ օրը նրա սիրելիների մէջ չգտնուեց մէկը,
որ մխիթարիչ լինէր նրան.
բոլոր բարեկամներն անարգեցին նրան ու դարձան թշնամիներ:
3 *գամէլ* *Յուդայի երկիրը մատնուեց գերութեան,*
բաղում տառապանքների,
նեղութեան, ստրկութեան ու ծառայութեան.
Նա նստեց հեթանոսների մէջ եւ հանգիստ չգտաւ.
թշնամական պաշարման մէջ՝
բոլոր հալածիչները նրա վրայ հասան:
4 *դալեթ* *Սիոնի ճանապարհները սուգ բռնեցին,*
որովհետեւ նրա տարեկան տօներին եկողներ չկան:
Նրա դարպասներն ամայացան,
նրա քահանաները հեծում,
հառաչում ու հոգոց են հանում:
Նրա կոյսերը գերեվարուեցին,
իսկ ինքն էլ դառնացած է իր հոգում:
5 *հէ* *Նրան նեղողները՝ կանգնեցին նրա գլխին,*
նրա թշնամիներն ուրախութեան մէջ են,
քանի որ Տէրը խոնարհեցրեց նրան ծանր ամբարշտութեան համար.
նրա մանուկները, նեղողների առաջն ընկած, գերի քշուեցին:
6 *վաւ* *Սիոնի դուստրերի ամբողջ վայելչութիւնը վերացաւ.*
նրանց իշխանները նմանուեցին այն խոյերին,
որոնք կեր չեն գտնում.
նրանք իրենց այնքան ցանկալի իրերը տուեցին կերակուրների համար,
որպէսզի յագեցնեն իրենց մարմինները:
Գնում էին նրանք մտամոլոր,
նեղողների առաջն ընկած,
հալածիչներից քշուած:
7 *զէ* *Երուսաղէմը յիշեց իր տառապանքի օրը եւ օրն իր բաժանումի,*
թախծեց այն բոլոր փափագելի բաների համար,
որոնց արժանացել էր սկզբում:
Երբ ժողովուրդը թշնամիների ձեռքն ընկաւ,
ոչ ոք չկար, որ օգնէր նրան,
տեսան դա նրա ատելիները,
քամահրեցին ու ծաղրի առան նրա գերութիւնը:
8 *խէթ* *Մեղք գործեց Երուսաղէմը,*
դրա համար էլ նրան մեծարողները խայտառակեցին նրան,
քանզի տեսան նրա անարգանքը,
եւ նա ինքն էլ, շրջուելով, հոգոց էր հանում:
9 *թէթ* *Նրա պղծութիւնն իր ոտքերի առաջ էր,*
սակայն նա իր վախճանի մասին չմտածեց.
առատօրէն արցունք թափեց,
բայց ոչ ոք չկար, որ մխիթարէր նրան:
Նայի՛ր տառապանքներիս, ո՛վ Տէր,
քանզի թշնամիներս հպարտացան իմ դէմ:
10 *յոդ* *Թշնամին իր ձեռքը երկարեց իմ գանձերին:*
Ես տեսայ հեթանոսներին,
որոնք մտան քո սրբարանը,
մինչդեռ նրանց հրամայել էիր,

որ քո ժողովրդի սրբավայրը չմտնեն:
11 **քափ** Ամբողջ ժողովուրդը հաց էր
փնտռում ու հառաչում.
ամէն բան, ինչ թանկ էր նրան,
ծախսեց հացի համար, որպէսզի պահի
ինքն իրեն:
Նայի՛ր, ո՛վ Տէր, եւ տե՛ս,
որ ես դարձայ անարգուած ու
արհամարհուած:
12 **լամէք** Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, ո՛վ
անցորդներ,
յե՛տ դարձէք, նայեցէ՛ք, տեսէ՛ք՝
ինձ հասած ցաւերի նման ցաւեր
եղե՞լ են արդեօք.
Տէրը ձայնը բարձրացրեց ինձ վրայ[†]
եւ իր բարկութեան ու ցասման ժամին
խոնարհեցրեց ինձ:
13 **միմ** Իր բարձունքից կրակ ուղար-
կեց իմ ոսկորներին,
ցանց գցեց իմ ոտքերին եւ ինձ յետ
շպրտեց,
կործանեց իմ անձը՝ հանապազօրեայ
տառապանքի ու տրտմութեան մէջ:
14 **նուն** Տէրը կանխաւ ասաց ինձ իմ
ամբարշտութեան մասին,
իր ձեռքը գցեց եւ իմ պարանոցին
ծանրացրեց իր լուծը.
իմ զօրութիւնը տկարացաւ:
Տէրն ինձ մատնեց իմ ցաւերին, ու ես
չեմ կարողանում հանդարտուել:
15 **սամքաթ** Նա ջնջեց իմ միջից իմ
ընտիր-ընտիր զօրաւորներին,
իմ ընտրեալների կոտորածի ժամն
ազդարարեց.
Տէրը, ինչպէս հնձանում, ճզմեց
կոյսին՝ Ցուդայի երկրի դստերը:
16 **էյ** Ահա թէ ինչու ես ինձ տուել
եմ լացի:
Աչքն իմ արցունք թափեց,
քանզի նրանք, ովքեր իմ
մխիթարիչներն էին
եւ իմ հոգին ինձ էին վերադարձնում,
հեռու են ինձնից:
Իմ որդիները մատնուեցին կործան-
ման,
որովհետեւ թշնամիներս զօրացան:

17 **փէ** Սիոնն իր բազուկները տա-
րածեց առ Աստուած,
բայց չկար ոչ ոք, որ մխիթարէր
նրան:
Նրա շուրջը նրան նեղողներն են.
նրանց մէջ Երուսաղէմը դարձաւ մի
նողկալի կին:
18 **ծադէ** Արդար է Տէր Աստուած,
ես դառնացրի նրան:
Ո՛վ ժողովուրդներ, բոլորդ լսեցէ՛ք այս
եւ տեսէ՛ք իմ ցաւերը.
իմ օրիորդներն ու երիտասարդները
քշուեցին գերութեան:
19 **կոփ** Ես կանչեցի իմ սիրեկան-
ներին,
բայց նրանք արհամարհեցին ինձ.
իմ քահանաներն ու երէցներն այս-
տեղ, քաղաքի մէջ, մեռան.
կերակուր փնտռեցին, կենդանի մնա-
լու համար,
սակայն չգտնուեց:
20 **ռէշ** Նայի՛ր, Տէ՛ր, ես նեղութեան
մէջ եմ.
ոսկորներս հալումաշ եղան,
սիրտս մէջս տրորուեց, դառնացած
եմ[†]:
Դրսից սուրն ինձ անժառանգ
դարձրեց,
ինչպէս մահը՝ ներսից:
21 **շին** Լսեցէ՛ք, լսեցէ՛ք այս.
ես հեծում ու հառաչում եմ,
եւ ոչ ոք չկայ, որ մխիթարի ինձ:
Իմ բոլոր թշնամիներն իմացան
իմ վրայ եկած չարիքների մասին
եւ ուռնահարեցին ինձ,
քանզի դո՛ւ ստեղծեցիր այդ օրը,
դո՛ւ կանչեցիր այդ ժամանակը,
որ վայը գայ ինձ վրայ[‡]:
22 **թաւ** Բոլոր չար գործերը թող
կանգնեն քո առաջ,
եւ դու ճռաքա՛ղ արա նրանց այնպէս,
ինչպէս ճռաքաղ արիր ինձ իմ բոլոր
մեղքերի համար,
քանզի անթիւ են իմ հառաչանքները,
եւ սիրտն իմ լի է տրտմութեամբ:

[†]Երրայերէն՝ ինձ պատուհասեց:

[†]Երրայերէն՝ Բանգի ապստամբեցի:
[‡]Երրայերէն՝ ինչ որ որոշել ես՝ պիտի բերես, եւ նրանք ինձ նման են լինելու:

ՈՂԲ ԺՈՂՈՎՐԴԻ ԴՍՏԵՐ ՄԱՍԻՆ

2 1 **ալեփ** Ինչպէ՜ս խաւարեցրեց Տէրը
Սիոնի դստերը իր ցասումով ու բար-
կութեամբ,
Իսրայէլի փառքը երկնքից երկիր
նետեց
եւ չյիշեց իր ոտների պատուանդանը:
2 **բեթ** Իր ցասման ու բարկութեան
օրը
Տէրն անխնայ խորտակեց Յակոբի
տան գեղեցկութիւնը,
քանդեց ու չխնայեց,
կործանեց Յուդայի երկրի դստեր
ամրոցները երկրի վրայ,
անարգեց նրանց իշխաններին ու
թագաւորներին:
3 **գամէլ** Տէրն իր ցասման ու բարկու-
թեան օրը
փշրեց Իսրայէլի բոլոր եղջիւրները
եւ նրան յետ շպրտեց իր թշնամիների
առաջ:
Կրակը պատեց Յակոբի երկիրը,
լափեց ու ոչնչացրեց ամէն բան, ինչ
կար նրա շուրջը:
4 **դալեթ** Նրա գիրկը մտաւ իբրեւ
թշնամի,
իր աջը հաստատեց նրա վրայ
եւ սպանեց Սիոնի դստեր բոլոր սիրե-
լիներին,
իր ցասումն ու բարկութիւնը կրակի
պէս թափեց նրա վրայ:
5 **հէ** Տէրը, իբրեւ թշնամի, կործա-
նեց Իսրայէլը,
կործանեց նրա թագաւորներին,
կործանեց նրա բոլոր ամրոցները
եւ Յուդայի երկրի դստեր տառա-
պանքների վրայ տառապանքներ աւե-
լացրեց:
6 **վաւ** Այգու պէս հատեց նրա
խորանները,
վերացրեց նրա տարեկան տօները.
Տէրը մոռացութեան տուեց այն
տարեկան տօներն ու շաբաթները,
որ կատարում էր Սիոնը.
իր բարկութեան պահին մոնչալիս՝
տգնապի մատնեց թագաւորներին,
իշխաններին ու քահանաներին:
7 **զէ** Տէրը մերժեց իր զոհասեղանը,
հեռու վանեց իր սրբարանները,
կործանեց իր տաճարների պարիսպ-
ներն ու աշտարակները.
Տիրոջ Տան մէջ թշնամիները աղմկե-
ցին ու գոչեցին,
ինչպէս նրա տարեկան տօների
օրերին:
8 **խեթ** Սիոնի դստեր պարիսպն
ընկաւ ու կործանուեց.
լարը քաշեցին եւ բաց չթողեցին
իրենց ձեռքերից.
աշտարակները սուգ մտան,
եւ բոլոր պարիսպները ցնցուեցին ու
կործանուեցին:
9 **թեթ** Նրա դռները գետին տապա-
լեցին,
խորտակեցին նրա նիգերը:
Նրանց թագաւորներն ու իշխանները
հեթանոսների մէջ էին.
օրէնք ու մարգարէներ չկային,
չկային եւ նրանք, ովքեր տեսիլքներ
էին տեսնում Տիրոջ կողմից:
10 **յոդ** Ամէն ինչ իջաւ ու գետնին
հաւասարուեց:
Սիոնի դստեր ծերերը պապանձուեցին,
հող ցանեցին իրենց գլխին,
քուրձ հագան:
Երուսաղէմի իշխաններին գետին
տապալեցին:
11 **քափ** Իմ ժողովրդի դստեր կործան-
ման համար
արցունք թափելուց աչքերիս լոյսը
խաւարեց,
որովայնս տակնուվրայ եղաւ,
փառքս[†] լուծուեց հողի մէջ,
քանզի քաղաքի բոլոր փողոցներում
մեռնում են ծծկեր մանուկները:
12 **լամէք** Նրանք հաց ու գինի էին
խնդրում իրենց մայրերից,
մինչ քաղաքի մէջ ընկած ու ցրուած՝
մեռնում, իրենց հոգիներն էին
աւանդում:
13 **միմ** Քո մասին ի՞նչ վկայութիւն
բերեմ

[†]Երրայերէն՝ լեարդս:

կամ քեզ ո՞ւմ նմանեցնեմ,
դո՛ւստր Երուսաղէմի.
ո՞վ պիտի մխիթարի քեզ, Սիոնի կո՛յս աղջիկ.
ծանրացաւ քո վշտի բաժակը,
ո՞վ է, որ պիտի կարողանայ բժշկել քեզ:
14 **նուն** Մարգարէները զուր, խաբուսիկ ու անշահ տեսիլքներ տեսան քեզ համար
եւ քեզ չյայտնեցին քո անիրաւութիւնները,
որ կարողանայիր վերադառնալ քո գերութիւնից,
այլ քեզ տուեցին սնոտի առասպելներ
քո բնակավայրից հեռանալու մասին:
15 **սամքաթ** Բոլոր անցորդները ծափ զարկին,
սուլում էին ու շարժում իրենց գլուխները Սիոնի դստեր վրայ.
«Ա՞յս է այն քաղաքը, - ասում էին, -
որ ամբողջ երկրի փառքի պսակն էր եւ ուրախութիւնը»:
16 **փէ** Քո բոլոր թշնամիներն իրենց բերանները բացեցին քեզ վրայ,
սուլում էին եւ կրճտում իրենց ատամները՝ ասելով.
«Եկէք կո՛ւլ տանք սրան.
չէ՞ որ սա այն օրն է, որին սպասում էինք.
ահաւասիկ տեսանք, գտանք ու հասանք մենք նրան»:
17 **էյ** Տէրն ինչ խօսել էր՝ արեց,
կատարեց իր ասածները,
ինչ պատուիրել էր հին օրերում.
քանդեց ու չխնայեց,
քո թշնամիներին քեզ վրայ ծիծաղել տուեց
եւ բարձրացրեց քեզ նեղողների եղջիւրը:
18 **ծադէ** Նրանց սրտերը պիտի աղաղակեն
դէպի Սիոնի դստեր պարիսպները,
գիշեր ու ցերեկ հեղեղի պէս արցունք պիտի թափեն.
մի՛ լռիր, մի՛ դադարիր,
աչքդ արտասուքից թող հանգիստ չառնի:
19 **կոփ** Վե՛ր կաց խոստովանութեան,
գիշերը, քո պահեցողութեան սկզբին,
քո սիրտը, ինչպէս ջուր, թափի՛ր Տիրոջ առաջ,
ձեռքդ վե՛ր կարկառիր քո մանուկների հոգիների համար,
որոնք սովամահ էին լինում քո երթեւեկութեան բոլոր ճանապարհներին:
20 **րէշ** Տե՛ս, ո՛վ Տէր, նայի՛ր՝ ո՞ւմ այսպէս ճռաքաղ արիր,
որ կանայք ուտեն իրենց որովայնի պտուղը,
ճռաքաղ արիր, ներս տարար, տուիր խոհարարներին,
որ ներսում, Տիրոջ սրբարանի մէջ,
մորթեն ծծկեր մանուկներին,
քահանային ու մարգարէին:
21 **շին** Մերն ու տղան միասին վախճանուեցին ճանապարհների գլխին,
կոյսն ու երիտասարդը քշուեցին գերութեան.
քո բարկութեան օրը սրի քաշեցիր,
կոտորեցիր, մորթեցիր, կերակուր դարձրիր ու չխնայեցիր:
22 **թաւ** Պանդխտութեանս օրը, ինչպէս տարեկան տօներին,
հրաւիրեցիր, որ նրանք իմ շուրջը հաւաքուեն,
բայց ոչ ոք չգտնուեց, որ Տիրոջ ցասման ու բարկութեան ժամին
փրկուած կամ կենդանի մնացած լինէր,
մինչդեռ իմ բոլոր թշնամիներն ապրեցին ու բազմացան:

ԱՆՄԻԹԱՐ ՎՇՏԱՑԵԱԼԸ

3 1 **ալեփ** Ո՛վ զօրաւոր Աստուած, նայի՛ր իմ թշուառութեանը:
Իր ցասման գաւազանով նա տիրեց ինձ
2 ու ինձ վրայ խաւար բերեց եւ ոչ թէ լոյս,
3 նաեւ իր ձեռքն հանապազ իմ դէմ դարձրեց:
4 **բեթ** Նա մաշեց իմ մորթն ու

մարմինը,
իմ բոլոր ոսկորները փշրեց,
5 կուտակեց վրաս եւ պատեց իմ գլխի շուրջը,
6 առանց յապաղելու ինձ խաւարի մէջ նստեցրեց,
ինչպէս յաւիտենական մի մեռելի:
7 **գամէլ** Կուտակեց դրանք ինձ վրայ,
եւ ես այլեւս չեմ կարող խլրտալ,
պղնձի նման ծանրացրեց ինձ վրայ,
8 ու թէեւ ասացի, թէ պիտի կանչեմ ու աղաղակեմ,
սակայն նա փակել ու կապանք է դրել,
որ աղօթքներս իրեն չհասնեն:
9 **դալեթ** Իմ ճանապարհներին արգելքներ կանգնեցրեց,
խցանեց իմ շարժուելու շաւիղները,
ինձ խրտնեցրեց.
10 ինձ համար դարանակալ արջ եւ թաքնուած առիւծ դարձաւ.
11 հետապնդեց ինձ, հասաւ ու հալածեց,
ուժասպառ արեց ինձ, կործանեց ինձ:
12 **հէ** Մտաւ իմ գիրկը,
ինձ թիրախ դարձրեց ու լցրեց նետերով.
13 երիկամներս մէջտեղից կիսեց,
նետահարեց ինձ,
14 ծաղր դարձրեց իմ ժողովրդի համար
եւ խաղք ու խայտառակ յաւիտենապէս:
15 **վաւ** Ինձ լեղի տուեց ուտելու
եւ հարբեցրեց դառնութեամբ,
16 իմ ատամները քարերով փշրեց
եւ մոխիր տուեց ինձ ուտելու.
17 զրկեց իմ անձը հանգստութիւնից.
ես մոռացայ բարութիւնը.
18 կորաւ իմ արիութիւնը, եւ իմ յոյսը՝ առ Տէր:
19 **զէ** Ցիշեցի իմ թշուառութեան ու հալածանքի մասին.
20 միտքս եկան միայն դառնութիւնն ու բարկութիւնը,
հոգիս մէջս թուլացաւ.
21 այդ եմ մտաբերում եւ դրա համար էլ համբերում եմ:
22 **խէթ** Անսպառ են Տիրոջ ողորմութիւնները,
նրա գթութիւնները չեն նուազում:
23 Ամէն նոր առաւօտի հետ բազմանում է քո ճշմարտութիւնը, Տէ՛ր:
24 Իմ հոգին ասաց, թէ՝ «Նա իմ բաժինն է»,
ահա թէ ինչու յոյսս պէտք է դնեմ նրա վրայ:
25 **թէթ** Աստուած բարերար է նրանց հանդէպ,
ովքեր իրենց յոյսը դնում են նրա վրայ,
26 քանզի այն անձը, ով փնտռում եւ ճշմարտութեամբ† ապաւինում է նրան,
բարի է եւ Տիրոջ փրկութեամբ հանգստութիւն կը գտնի:
27 Մարդու համար լաւ է, եթէ իր մանկութիւնից կրի խոնարհութեան լուծը:
28 **յոդ** Միայնակ ու լռիկ նա կը նստի իր տանը,
որովհետեւ ինքն անձամբ յանձն առաւ քո լուծը:
29 Նա կը խոնարհուի՝ իր բերանով համբուրելու հողը,
որովհետեւ նրա համար յոյս կայ.
30 իր ծնօտները դէմ կը տայ հարուածողներին,
կը կրի շատ նախատինքներ,
31 բայց Տէրը նրան ընդմիշտ չի մերժի:
32 **քաֆ** Նա, ով տառապանքներ տուեց նրան,
ինքն էլ իր անսահման ողորմածութեամբ կ'ողորմի նրան.
33 Տէրը սրտով չի կամենում մարդկանց պատժել
եւ նուաստացնել մարդու որդիներին:
34 **լամէք** Երբ մէկը երկրի բոլոր կալանաւորներին իր ոտքերի տակ ստորացնում է
եւ մարդուն մատնում Տիրոջ դատաստանին,
35 երբ Բարձրեալի առաջ խեղաթիւրում է մարդու իրաւունքները,

†Երրայերէն՝ լուրեամբ:

36 երբ դատարանում անիրաւում է մարդուն,
— Տէրը չի՞ տեսնում:
37 միմ Նա չասա՞ց, թէ՝
«Այսպէս է ասում Տէրը», եւ կատարուեց:
Բարձրեալի բերանը չէ՞ր, որ պատուիրեց, թէ՝
38 «Այնտեղից ո՛չ չարիք պիտի դուրս գայ եւ ո՛չ էլ բարիք»:
39 Մարդը, կենդանի մարդը ինչո՞ւ է տրտնջում իր մեղքերի համար:
40 նուն Մեր ընթացքը քննութեան առնուեց ու յանդիմանուեց.
դառնա՛նք դէպի Տէրը,
41 մեր ձեռքերը մեր սրտերի հետ, կարկառենք դէպի երկնքի բարձունքները:
42 Մեղք գործեցինք, ամբարիշտ դարձանք,
դրա համար էլ մեր հանդէպ դու բարեհաճ չեղար:
43 սամքաթ Պատժելու եկար ցասումով ու բարկութեամբ
եւ հալածեցիր մեզ, կոտորեցիր ու չխնայեցիր.
44 երկինքն ամպերով ծածկեցիր,
որ մեր աղօթքները քեզ չհասնեն.
45 քամահրեցիր ու հեռացրիր մեզ,
հեթանոսների ամբոխի մէջ արհամարհուած ու անարգուած դարձրիր մեզ:
46 էյ Մեր բոլոր թշնամիների բերանները բացել տուիր մեր դէմ:
47 Ահ ու սարսափ եկաւ մեզ վրայ, աւեր ու կոտորած:
48 Իմ ժողովրդի դստեր կործանման պատճառով
մեր աչքերը ջրի հեղեղներ թափեցին:
49 Իմ աչքերը լցուեցին արցունքով,
50 բայց ես չեմ լռի եւ ականջ չեմ դնի,
մինչեւ որ երկնքից չյայտնուի եւ չտեսնի Տէրը:
51 փէ Իմ քաղաքների բոլոր դուստրերի չափ
աչքս արցունք է թափում իմ հոգու համար:
52 ծադէ Ինչպէս թռչնորսներ, իմ թշնամիները զուր տեղը ինձ որսացին,
53 իմ կեանքը գբի մէջ խեղդեցին,
քար դրին ինձ վրայ,
54 գլուխս ջրով հեղեղեցին,
ու ես ասացի, թէ՝ «Ահա կործանուեցի»:
55 կոփ Տառապանքի գբից քո անունը կանչեցի, Տէ՛ր,
56 եւ դու լսեցիր իմ ձայնը:
Քո ականջն իմ աղաչանքներից մի՛ ծածկիր,
ազատութի՛ւն տուր ինձ, փրկի՛ր ինձ:
57 Դու մօտեցար, որպէսզի ինձ օգնես,
եւ ասացիր, թէ՝ «Այն օրը, երբ ինձ կանչես, չվախենաս»:
58 րէշ Դա՛տ արա, ո՛վ Տէր, իմ հոգու դա՛տն արա:
Փրկեցիր իմ կեանքը,
59 տեսար իմ խռովքը,
իմ դատաստանն արիր, Տէ՛ր:
60 Տեսար իմ ողջ արդարութիւնը,
իմացար իմ բոլոր խորհուրդները:
61 շին Տէ՛ր, լսեցիր նախատինքներն ու իմ նկատմամբ ունեցած բոլոր դիտաւորութիւններն այն մարդկանց,
62 ովքեր իրենց շուրթերը հանապազ իմ դէմ են շարժում:
63 Իրենց խորհուրդներից ես հասկացայ,
թէ ինչու են նրանք նստում ու վեր կենում:
64 թաւ Նայի՛ր նրանց ամբարտաւան աչքերին, ո՛վ Տէր,
եւ նրանց արժանի հատուցումը նրանց գլխի՛ն բեր,
65 հատուցի՛ր նրանց ըստ իրենց սրտերի կարծրութեան,
66 քո ցասմամբ հալածի՛ր նրանց,
քո բարկութեամբ ոչնչացրո՛ւ նրանց երկնքի ներքոյ:

ՈՂԲ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

4 1 ալեփ Ինչպէ՛ս խամրեց ոսկին,
գունաթափուեց, սպիտակ արծաթը†,
նրանց թանկագին քարերը հալուեցին

†Երբայերէն՝ մաքուր ոսկին:

ու ցրուեցան
իրենց ճանապարհների խաչմերուկներում:
2 բեթ Սիոնի պատուական որդիները,
աւելի պատուական, քան թանկագին քարերը,
ինչպէ՛ս համարուեցին խեցեղէն ամաններ՝
բրուտների ձեռքի աշխատանք:
3 գամէլ Ինչպէս վիշապներ, նրանք մերկացրին իրենց ստինքները
եւ կաթ տուեցին իրենց կորիւններին.
իմ ժողովրդի որդիները տանջահար եղան,
եւ չկայ բժշկութիւն նրանց համար.
անապատի ջայլամների պէս տառապեցին նրանք:
4 դալեթ Մարաւից կաթնակեր մանուկների լեզուներն իրենց քիմքերին կպան.
երեխաները հաց խնդրեցին,
բայց նրանց հաց կտրող չեղաւ:
5 հէ Ովքեր կերակրով էին սնուել,
ճանապարհների վրայ սովամահ եղան,
ովքեր գրկերի մէջ գուրգուրանք ու գգուանք էին վայելել,
աղբանոցները գրկած՝ թաթաւեցին ու թաւալուեցին:
6 վաւ Իմ ժողովրդի դստեր մեղքերն աւելի շատացան,
քան կործանուած Սոդոմի անօրէնութիւնները.
նրանք փութով վեր էին կենում,
բայց նրանց ձեռքերի վաստակը ոչ մի տեղ չէր երեւում:
7 զէ Նրանց ազնուական իշխանները,
որոնք մաքուր էին,
ձեան պէս սպիտակ,
կաթի պէս անարատ,
փայլուն ինչպէս շափիւղայ, ակնեղէն,-
8 խէթ այժմ նրանց տեսքն ածուխի նման սեւացաւ,
ու ոչ ոք չէր ճանաչում նրանց.
նրանց դրել էին ճանապարհների խաչմերուկներում:
նրանց կաշին ոսկորներին էր կպել.
նրանք կոշտացել ու չորացած փայտ էին դարձել:
9 թէթ Սրից հասած վէրքերից
դիտապաստ ընկածներն աւելի բախտաւոր էին,
քան սովից մեռածները:
Խումբ-խումբ շարժւում էին վիրաւոր մարդիկ:
10 յոդ Գթասիրտ կանանց ձեռքերը եփեցին իրենց մանուկներին,
որոնք իմ ժողովրդի դստեր կործանման ժամանակ
նրանց համար կերակուր դարձան:
11 քափ Տէրն ի կատար ածեց իր ցասումն ու բարկութիւնը,
թափեց իր ցասումն ու բարկութիւնը
եւ կրակ բորբոքեց Սիոնում,
որը լափեց նրա հիմքերը:
12 լամէք Աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր երկրների թագաւորները չհաւատացին,
թէ թշնամին կարող է ներս մտնել Երուսաղէմի դարպասներից:
13 միմ Բայց դա տեղի ունեցաւ նրանց մարգարէների մեղքով,
նրանց քահանաների մեղքով,
քանզի նրանք այնտեղ թափում էին արդար մարդկանց արիւնը:
14 նուն Ճանապարհների գլխին ցնցուեց ու սասանուեց նրանց զօրութիւնը,
մեռածների արեամբ պղծուեցին ու թաթախուեցին այնպէս,
որ նրանց հագուստները հնարաւոր չէր մաքուր վիճակում նրանց վրայից հանել:
15 սամքաթ «Հեռո՛ւ կացէք,
պի՛ղծ անուանեցէք նրանց,
հեռո՛ւ մնացէք,
հեռո՛ւ մնացէք,
մի՛ մօտեցէք»:
Եւ նրանք շարժուեցին ու բարկացած հեռացան:
«Ասացէ՛ք հեթանոսներին,
որ նրանք այլեւս չշարունակեն ապրել նրանց մէջ»:

16 էյ Մեր կենդանութեան ժամանակ իսկ նուաղեցին մեր աչքերը իզուր օգնութիւն սպասելուց,
որովհետեւ զուր տեղը մենք նրանց հսկիչ էինք կարգել սնոտի բաների վրայ:
17 փէ Տէրն իր երեսը շրջել է նրանցից
եւ այլեւս չի նայելու նրանց:
Քահանաները չլսեցին ծերերին,
նրանց որդիների նկատմամբ անողորմ եղան:
Աչքներս պահած՝ նայում էինք այն ազգերին,
որոնք մեզ չէին կարող փրկել:
18 ծադէ Որսացին մեզ.
մի փոքր ժամանակ եւս,
եւ մեզ սպանած-բնաջնջած կը լինեն մեր քաղաքներից:
Հասել է ժամը, հասել է ժամանակը,
լրացան մեր օրերը,
լրացան ժամանակները:
19 կուփ Լեռների վրայ մեզ հալածողները թեթեւաշարժ են.
նրանք, ինչպէս երկնային արծիւներ,
ճախրեցին բարձր լեռների վրայ
եւ, անապատում դարան մտած, պաշարեցին մեզ:
20 րէշ Տէր Քրիստոսը† մեր անձի շունչն է.
իրենց ապականութեամբ նրանք պաշարեցին նրան,
մինչդեռ մենք մտածում էինք,
թէ կը նստենք նրա հովանու տակ
եւ կ'ապրենք հեթանոսների մէջ:
21 շին Ցնծա՛ եւ ուրախացի՛ր, ո՛վ եդոմայեցիների դուստր,
որ բնակւում ես օստացիների այդ երկրում,
քեզ էլ կը հասնի այս բաժակը.
կը կանգնես ու կը խմես,
կը խմես ու նորից կը վերադարձնես:
22 թաւ Քո անօրէնութիւնները պիտի վերջ գտնեն, Սիո՛ն,
եւ այլեւս դու չպիտի պատժուես.
բայց քեզ, ո՛վ Եդոմի դուստր,
քո մեղքերի համար Տէրը պատժելու եկաւ՝
յայտնի դարձնելով քո բոլոր ամբարշտութիւնները:

†Երրայերէն՝ օծեալը:

ԽՆԴՐԱՆՔ

5 Երեմիա մարգարէի աղօթքը

1 Ցիշի՛ր, Տէ՛ր, թէ ինչե՛ր կատարուեցին մեզ հետ,
նայի՛ր եւ տե՛ս մեր կրած նախատինքները:
2 Մեր ժառանգութիւնն անցաւ օտար ազգերին,
մեր տները՝ օտարականներին:
3 Որբ մնացինք մենք, հայր չկար մեզ համար,
մեր մայրերը մեր աչքի առաջ այրիացան:
4 Մեր ջուրը փողով խմեցինք,
եւ մեր փայտը գնելու հոգսը միշտ մեր վզին է ծանրացած:
5 Հալածական եղանք եւ հանգստութիւն չգտանք:
6 Եգիպտացիներն ու ասորաստանցիները ձեռք մեկնեցին՝
մեզ հացով կշտացնելու համար†:
7 Մեր հայրերը մեղք գործեցին,
նրանցից ոչ ոք հիմա չկայ,
եւ հայրերի մեղքը մենք ենք քաշում:
8 Մեզ վրայ տիրեցին ծառաները,
եւ այլեւս նրանց ձեռքից մեզ փրկող չկայ:
9 Անապատի սրի ահից եկէք մեր պաշարները ներս տանենք:
10 Սոսկալի սովի երեսից մեր կաշին հնացած թոնրի նման ճաք է տուել:
11 Կանանց խայտառակեցին Սիոնում,
իսկ կոյսերին՝ Յուդայի երկրի քաղաքներում:
12 Մերերին կախեցին իրենց բութ մատներից‡,
չխնայեցին նաեւ պառաւներին:
13 Ընտիր ու պատուական մարդիկ

†Երրայերէն՝ Մենք ձեռ մեկնեցինք եգիպտացիներին եւ ասորեստանցիներին՝ հացով կշտանալու համար:

‡Երրայերէն՝ իշխաններին կախեցին ձեռներից:

ողբում էին բարձրաձայն,
իսկ երիտասարդները, փայտածեծ արուելով, ուժասպառ եղան:
14 Մերերն այլեւս չէին նստում դարպասների մօտ,
իսկ ընտրեալ մարդիկ դադարեցին օրհնութիւններ երգելուց:
15 Մեր սրտերը զրկուեցին ուրախութիւնից,
եւ մեր օրհներգութիւններն ու պարերը փոխուեցին սգի:
16 Պսակը վայր ընկաւ մեր գլուխներից.
վա՜յ մեզ, վա՜յ մեզ, քանզի մենք մեղք գործեցինք:
17 Ահա թէ ինչու ցաւն առաւ մեր սրտերը,
ահա թէ ինչու մեր աչքերին խաւարը պատեց Սիոնի լերան վրայ,
18 որն աւերակ է դարձել,
եւ աղուէսներն են ելումուտ անում նրա սրահներում:
19 Տէ՛ր, դու կաս յաւիտեան,
եւ քո աթոռը մնում է սերնդից սերունդ:
20 Ինչո՞ւ իսպառ մոռացար մեզ,
պատժեցիր, թողեցիր ու երկար ժամանակով լքեցիր մեզ:
21 Ե՛տ դարձրու մեզ, ո՛վ Տէր,
եւ մենք կը վերադառնանք,
նորոգի՛ր մեզ, Տէ՛ր,
ինչպէս վաղնջական ժամանակներում:
22 Դու մերժելով մերժեցիր մեզ,
քո ցասումն ու բարկութիւնն անչափ բորբոքուեց մեզ վրայ:

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ներածութիւն

Դանիէլի գիրքը նախ պատմում է, թէ ինչպէս չորս երիտասարդ հրեաներ, որոնք ուրիշ հրեաների հետ գերի էին տարուել Նաբուքոդոնոսոր արքայի կողմից, անդրդուելիօրէն հաւատարիմ մնացին իրենց Աստծուն: Գրքի առաջին մասը պարունակում է իրարից բաւականին անկախ վեց պատմութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչպիսի անհաւոր ճնշումների, սպառնալիքների կամ պատիժների կարող էին ենթարկուել հրեաները իրենց հալածիչների կողմից: Այս մասում է զետեղուած Դանիէլի ծանօթ պատմութիւնը առիւծների գբում:

Երկրորդ մասում պատմւում է Աստծու կողմից Դանիէլին տրուած չորս տեսիլքների մասին: Այս տեսիլքները բացայայտում են բազմաթիւ օտար ազգերի գերիշխանութեան տակ գտնուող հրեայ ժողովրդի պատմութիւնը, մինչեւ Աստուած կ'ազատագրի նրանց եւ կը վերահաստատի նրանց թագաւորութիւնը:

Իր բնոյթով եւ ոճով այս գիրքը շատ նման է Նոր Կտակարանի վերջում գտնուող Յայտնութեան գրքին: Թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի գլխաւոր նպատակն է քաջալերել բոլոր ժամանակների հաւատացեալներին, որպէսզի յարատեւեն իրենց հաւատի մէջ, ինչպիսին էլ լինեն իրենց դիմագրաւելիք փորձութիւններն ու հալածանքները:

ԴԱՆԻԷԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

13† *Բաբելոնում բնակուող մի մարդ
կար. նրա անունը Յովակիմ էր. 2 նա
ամուսնացաւ Շուշան անունով մի կնոջ՝
Քեղկիայի դստեր հետ, որը շատ
գեղեցիկ էր եւ աստուածավախ: 3 Նրա
ծնողները արդար էին եւ իրենց դստերը
դաստիարակել էին Մովսէսի օրէնքնե-
րով: 4 Յովակիմը շատ հարուստ էր. նա
մի այգի ունէր իր ապարանքի մօտ:
Հրեաները հաւաքւում էին նրա տանը,
որովհետեւ նա բոլորից աւելի անուա-
նի էր: 5 Մի անգամ երեւացին այդ ժո-
ղովրդից երկու ծերուններ, որոնք այդ
տարուայ դատաւորներն էին, եւ որոնց
մասին Տէրն ասաց. «Անօրէնութիւնը
սկիզբ առաւ Բաբելոնից՝ ծեր դատա-
ւորներից, որոնք կոչուած էին ժո-
ղովրդին առաջնորդելու»: 6 Նրանք
մշտապէս լինում էին Յովակիմի տանը,
եւ բոլորը գալիս էին նրանց մօտ՝
դատաստանի: 7 Եւ կէսօրին, երբ ժողո-
վուրդը մեկնում էր, Շուշանը ներս էր
մտնում եւ զբօսնում իր ամուսնու այ-
գում: 8 Երկու ծերուններները միշտ տես-
նում էին նրան, որ նա այգի էր
մտնում ու զբօսնում, եւ ցանկացան
նրան: 9 Նրանք շեղեցին իրենց միտքը
ու թեքեցին իրենց աչքերը՝ երկինք
չնայելու եւ չյիշելու համար արդար
դատաստանները: 10 Երկուսն էլ
գրաւուել էին նրանով, բայց միմեանց
չէին պատմում իրենց ցաւերը, 11 որով-
հետեւ ամաչում էին խոստովանել իրենց
ցանկութիւնը, քանի որ ուզում էին լինել
նրա հետ 12 եւ շատ յաճախ սպասում
էին՝ նրան տեսնելու համար: 13 Նրանք
ասացին միմեանց. «Գնանք տուն,
որովհետեւ ճաշի ժամ է»: Ելան,
բաժանուեցին իրարից 14 եւ նորից եկան
նոյն տեղը միմեանց մօտ. իրար
հարցնելով ետ գալու պատճառը՝
նրանք խոստովանեցին իրենց ցանկու-
թիւնը: Ապա պայմանաւորուեցին, թէ
ե՛րբ կարող են նրան մենակ գտնել:*

15 *Եւ մի օր, երբ սպասում էին նրան,
նա եկաւ, մտաւ այգի ինչպէս երէկ եւ
նախորդ օրը՝ միայն թէ երկու
աղջիկների հետ: Նա ուզեց լողանալ
այնտեղ, այգում, որովհետեւ տօթ էր.
16 այնտեղ ոչ ոք չկար, բացի երկու
թաքնուած ծերուններից, որոնք սպա-
սում էին նրան: 17 Շուշանն ասաց
աղջիկներին. «Գնացէ՛ք, իւղ եւ օճառ
բերէ՛ք ինձ համար եւ փակեցէ՛ք այգու
դռները, որպէսզի լողանամ»: 18 Նրանք
արեցին, ինչպէս ասաց նրանց. փակե-
ցին այգու դռները եւ դուրս եկան՝
բերելու ինչ որ հրամայել էր նրանց:
Ծերուններին չտեսան, քանի որ
թաքնուած էին: 19 Եւ այնպէս եղաւ, որ
երբ աղջիկները դուրս եկան, երկու
ծերունները վեր կացան, գնացին
դէպի Շուշանը եւ ասացին. 20 «Ահա
այգու դռները փակ են, եւ չկայ ոչ ոք,
որ մեզ տեսնի, իսկ մենք ցանկանում
ենք քեզ. ուստի եկ համաձայնուի՛ր ու
եղի՛ր մեզ հետ, 21 ապա թէ ոչ քո
մասին մենք կը վկայենք, որ մի
պատանի կար քեզ հետ, եւ դրա համար
էլ աղջիկներին հեռացրիր քեզանից»:
22 Շուշանը հոգոց հանեց եւ ասաց.
«Տագնապ է պատել ինձ չորս կողմից.
եթէ այդպէս վարուեմ, այդ մահ է ինձ
համար, իսկ եթէ այդպէս չանեմ, չեմ
փրկուի ձեր ձեռքից: 23 Բայց աւելի լաւ
է, որ ես այդպէս չանեմ եւ չընկնեմ ձեր
ձեռքը, քան թէ մեղք գործեմ Տիրոջ
առաջ»: 24 Եւ Շուշանը բարձրաձայն
աղաղակեց, նրա հետ աղաղակեցին եւ
երկու ծերունները, 25 իսկ նրանցից
մէկը գնաց ու բացեց այգու դռները:
26 Երբ տնեցիները այգուց լսեցին ճիչը,
դռան կողմից ներս մտան՝ տեսնելու, թէ
ինչ է պատահել նրան: 27 Եւ երբ
ծերուններն ասացին իրենց խօսքը,
ծառաները շատ ամաչեցին, որովհետեւ
երբեք այդպիսի բաներ չէին ասուել
Շուշանի մասին:*

28 *Երբ յաջորդ առաւօտեան ժողո-
վուրդը եկաւ նրա ամուսնու՝ Յովակիմի
մօտ, եկան նաեւ երկու ծերունները
Շուշանի նկատմամբ անօրէն մտադրու-
թեամբ՝ սպանելու նրան, 29 եւ ասացին
ժողովրդի առաջ. «Մա՛րդ ուղարկեցէք
կանչելու Քեղկիայի դստերը՝ Շուշա-*

†Այս գլուխը պահպանուել է միայն յունարէն բնագրում, որտեղ այն համարակալուած է որպէս 13-րդ գլուխ: Հայկական աւանդութիւնն այն դնում է գրքի սկզբում, որովհետեւ այն վերաբերում է Դանիէլի մանկութեանը:

նին, որ Յովակիմի կինն է: Եւ նրանք մարդ ուղարկեցին: 30 Եկաւ Շուշանը, եկան նաեւ նրա ծնողները, նրա որդիներն ու բոլոր ազգականները: 31 Շուշանը շատ նազելի էր եւ տեսքով գեղեցիկ: 32 Եւ քանի որ ծածկուած էր շղարշով, անօրէնները հրամայեցին մերկացնել նրան, որպէսզի յագենան նրա գեղեցկութեամբ: 33 Լաց էին լինում իւրայիններն ու բոլոր նրանք, ովքեր ճանաչում էին նրան: 34 Ժողովրդի միջից վեր կացան երկու ծերունիները եւ իրենց ձեռքերը դրին նրա գլխին. 35 նա լաց լինելով նայեց դէպի երկինք, որովհետեւ նրա սիրտը ապաւինել էր Տիրոջը: 36 Երկու ծերունիներն ասացին. «Մինչ մենք մենակ զբօսնում էինք այգում, նա այնտեղ մտաւ երկու աղջիկների հետ, փակեց այգու դռներն ու արձակեց աղջիկներին: 37 Մի պատանի, որ թաքնուած էր, եկաւ նրա մօտ ու եղաւ նրա հետ, 38 իսկ մենք այգու անկիւնում էինք. երբ տեսանք անօրէնութիւնը, մօտեցանք նրանց եւ տեսանք նրանց իրար հետ լինելը: 39 Պատանուն չկարողացանք բռնել, որովհետեւ մեզանից աւելի ուժեղ էր. նա բացեց դուռը եւ դուրս փախաւ: 40 Սրան, որ բռնեցինք, հարցրինք, թէ ո՞վ էր պատանին: Նա չուզեց պատմել մեզ: Ահա այս ենք վկայում»: 41 Ատեանը հաւատաց նրանց՝ որպէս ժողովրդի աւագների եւ դատաւորների, եւ մահուան դատապարտեցին Շուշանին: 42 Շուշանը բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ո՛վ դու յաւիտենական, ծածկագէ՛տ Աստուած, որ գիտես ամէն ինչ՝ նախքան դրանց տեղի ունենալը: 43 Դու գիտես, որ սուտ են վկայում իմ մասին. ահա ես մեռնում եմ, ես, որ չեմ արել այն, ինչով նրանք ամբաստանում են ինձ: 44 Եւ Տէրը լսեց նրա ձայնը:

45 Մինչ նրան տանում էին սպանելու, Աստուած Սուրբ Հոգին արթնացրեց մի պատանու մէջ, որի անունն էր Դանիէլ: 46 Սա բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց. «Ես անպարտ եմ դրա արեան մեղքից»: 47 Ամբողջ ժողովուրդը շրջուեց դէպի նա. ասացին. «Այդ ի՞նչ խօսք է, որ դու ասացիր»: 48 Եւ նա կանգնեց նրանց մէջ ու ասաց. «Այդպէս անխե՞լք էք, Իսրայէլի՛ որդիներ. չէք քննում, ճշմարտութեանը հասու չէք լինում եւ դատապարտո՞ւմ էք Իսրայէլի դստերը: 49 Վերադարձէ՛ք ատեան, որովհետեւ դրանք սուտ վկայութիւն տուին նրա մասին»: 50 Եւ ժողովուրդը անմիջապէս վերադարձաւ: Ծերունիներն ասացին պատանուն. «Ե՛կ, նստի՛ր մեր մէջ եւ պատմի՛ր մեզ, որովհետեւ Աստուած աւագութիւն տուեց քեզ»: 51 Դանիէլը ասաց նրանց. «Բաժանեցէ՛ք դրանց իրարից եւ քննեցէ՛ք դրանց»: 52 Երբ նրանք հեռացան իրարից, կանչեց նրանցից մէկին եւ ասաց նրան. «Այ դո՛ւ, որ ծերացել ես չարութեան մէջ, այժմ քո մեղքերը, որ գործում էիր նախապէս, ահա եկան հասան իրենց վախճանին, 53 քանի որ դատերը անիրաւութեամբ էիր վարում, դատապարտում էիր անմեղներին եւ վնասարարներին ազատ արձակում, մինչդեռ Աստուած ասել էր, որ անմեղներին եւ արդարներին չսպանես: 54 Իսկ արդ, եթէ դրանց տեսար, ո՞ր ծառի տակ հասար դրանց, մինչ խօսում էին իրար հետ»: Եւ նա ասաց. «Հերձենու տակ»: 55 Դանիէլն ասաց. «Սուտդ գլխի՛դ դիպչի, լաւ ստեցիր: Ահա Աստծու հրեշտակը հրաման ստանալով՝ քեզ կը հերձի մէջտեղից»: 56 Եւ դուրս արեց նրան: Հրամայեց բերել միւսին եւ ասաց նրան. «Զաւա՛կ Քանանի եւ ոչ Յուդայի. նրա գեղեցկութիւնը հրապուրեց քեզ, եւ քո սիրտը տենչաց նրան: 57 Դուք այդպէս էիք վարւում Իսրայէլի դուստրերի հետ, եւ նրանք վախից տրւում էին ձեզ. Յուդայի այդ դուստրը, սակայն, յանձն չառաւ ձեր անօրէնութիւնը: 58 Իսկ արդ, ճի՛շտն ասա, երբ նրանք խօսում էին միմեանց հետ, ո՞ր ծառի տակ հասար նրանց»: Եւ նա ասաց. «Սղոցենու տակ»: 59 Դանիէլն ասաց նրան. «Քո սուտն էլ քո գլխին դիպչի, լաւ սուտ խօսեցիր: Ահա մերկ սուրը ձեռքին կանգնած է Աստծու հրեշտակը՝ քեզ մէջտեղից սղոցելու համար, որպէսզի սատկեցնի քեզ»: 60 Ամբողջ ժողովուրդը աղաղակեց բարձր ձայնով, օրհնեց Աստծուն, որ փրկում է իր վրայ յոյս դնողներին: 61 Եւ յարձակուեցին երկու ծերունիների վրայ, քանի որ Դանիէլը իրենց իսկ բերանով, որպէս սուտ վկաների, խայտառակեց նրանց: Եւ ըստ Մովսէսի օրէնքի նրանց հետ վարուեցին այնպէս, ինչպէս վարւում են նրանց հետ, ովքեր մտադրւում են չարութիւն անել իրենց ընկերոջը. 62 եւ սպանեցին նրանց: Այդ օրը արդար արիւնը փրկուեց: 63 Իսկ Քեղկիան եւ նրա կինը, Շուշանի ամուսին Յովակիմի եւ բոլոր ազգականների հետ, օրհնեցին Աստծուն իրենց դստեր՝ Շուշանի համար, քանի որ գարշելի ոչինչ չգտնուեց նրա մէջ: 64 Եւ Դանիէլը այդ օրը ու դրանից յետոյ մեծ եղաւ ժողովրդի առաջ:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼՔ

ԴԱՆԻԷԼԻ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
(1. 1–6. 28)

1 Յուդայի երկրի Յովակիմ արքայի թագաւորութեան երրորդ տարում բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքան եկաւ Երուսաղէմ 2 եւ պաշարեց այն: Տէրը Յուդայի երկրի Յովակիմ արքային եւ Աստծու Տան սպասքի մի մասը տուեց նրա ձեռքը: Նաբուքոդոնոսորը նրան տարաւ իր աստծու տունը՝ Սենաար, իսկ սպասքը դրեց իր աստծու գանձատունը: 3 Թագաւորը իր ներքինապետ Ասփանէզին ասաց, որ գերի իսրայէլացիների միջից, թագաւորական տոհմից եւ ազնուականներից 4 առանց արատի, դէմքով գեղեցիկ, ամէն իմաստութեան խելահաս, գիտութեանը հմուտ, խելացիութեամբ օժտուած եւ թագաւորական պալատում սպասաւորելու ունակ մանուկներ բերի եւ սովորեցնի նրանց քաղդէացիների լեզուն եւ դպրութիւնը: 5 Թագաւորը նրանց համար սահմանեց ամենօրեայ ուտելիքի բաժին արքայական սեղանից եւ այն գինուց, որ ինքն էր ըմպում, հրամայեց սնել նրանց երեք տարի եւ յետոյ կանգնեցնել թագաւորի առաջ: 6 Նրանց մէջ էին Յուդայի երկրի որդիներից Դանիէլը, Անանիան, Միսայէլը եւ Ազարիան: 7 Ներքինապետը Դանիէլին անուանեց Բաղդասար, Անանիային՝ Սեդրակ, Միսայէլին՝ Միսակ եւ Ազարիային՝ Աբեդնագով: 8 Դանիէլը որոշեց չճաշակել թագաւորի սեղանից եւ ոչ էլ խմել այն գինուց, որ նա էր խմում, եւ խնդրեց ներքնապետին թոյլ տալ, որ ինքը չուտի: 9 Աստուած այնպէս արեց, որ Դանիէլը գութ եւ շնորհ գտաւ ներքինապետի մօտ: 10 Ներքինապետն ասաց Դանիէլին. «Ես վախենում եմ իմ տէր արքայից, որ այդ կերակուրն ու ըմպելիքը սահմանեց ձեզ համար. թերեւս ձեր դէմքը աւելի դալուկ տեսնի, քան ձեզ հասակակից ուրիշ մանուկներինը, եւ դուք ինձ գլխով պարտական կը դարձնէք թագաւորի առաջ»: 11 Դանիէլն ասաց Ամելասադին, որին ներքինապետը վերակացու էր նշանակել Դանիէլի, Անանիայի, Միսայէլի եւ Ազարիայի վրայ. 12 «Արի՛ տասը օր փորձի՛ր քո ծառաներին, եւ թող մեզ ընդեղէն տան, որ ուտենք, եւ ջուր, որ խմենք: 13 Եւ կ'երեւան քեզ մեր եւ այն մանուկների գոյները, որոնք ուտում են թագաւորի սեղանից: Եւ ինչպէս որ դու տեսնես, ըստ այնմ էլ վարուի՛ր քո ծառաների հետ»: 14 Ամելասադն անսաց նրանց ու փորձեց նրանց տասն օր: 15 Երբ վերջացան տասը օրերը, նրանց դէմքերը նրան աւելի լաւ երեւացին, իսկ նրանք մարմնով աւելի հզօր, քան բոլոր այն մանուկները, որոնք ուտում էին թագաւորի սեղանից: 16 Ամելասադը վերցնում էր նրանց ընթրիքն ու խմելու գինին եւ չորս մանուկներին ընդեղէն էր տալիս: 17 Աստուած նրանց խելք եւ իմաստութիւն տուեց ամէն տեսակի դպրութեան եւ իմացութեան մէջ: Դանիէլը խելամուտ էր հասկանալու ամէն տեսակ տեսիլքներ ու երազներ: 18 Իսկ երբ ժամանակը լրացաւ, թագաւորը հրամայեց բերել նրանց: Ներքինապետը նրանց բերեց Նաբուքոդոնոսորի առաջ, եւ արքան խօսեց նրանց հետ: 19 Բոլորի մէջ չգտնուեց ոչ ոք, որ նման լինէր Դանիէլին, Անանիային, Միսայէլին եւ Ազարիային: 20 Եւ նրանք կանգնեցին թագաւորի առաջ: Իմաս-

տութեան ու գիտութեան այն բոլոր
բաների մասին, որ թագաւորը հարց-
նում էր նրանց, այդ բոլորի մէջ նրանց
գտնում էր տասնապատիկ առաւել,
քան բոլոր գիտուններին ու մոգերին,
որ նրա թագաւորութեան մէջ էին: 21 Եւ
Դանիէլը մնաց մինչեւ Կիւրոս արքայի
տարիները:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼՔ

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԱԶԸ

2 Իր թագաւորութեան երկրորդ տա-
րում Նաբուքոդոնոսորը երազ տեսաւ:
Նրա հոգին խռովուեց, ու քունը փա-
խաւ աչքերից: 2 Թագաւորն ասաց, որ
կանչեն իմաստուններին, մոգերին, կա-
խարդներին եւ աստղագուշակներին,
որպէսզի թագաւորին յայտնեն նրա
երազը: Նրանք եկան, կանգնեցին թա-
գաւորի առաջ, 3 եւ թագաւորն ասաց
նրանց. «Երազ տեսայ, եւ հոգիս
խռովուեց՝ երազս հասկանալու հա-
մար»: 4 Աստղագուշակները ասորերէն
լեզուով խօսեցին թագաւորի հետ եւ
ասացին. «Արքա՛յ, թող քո կեանքը
յաւիտեան լինի: Դու երազդ ասա՛ քո
ծառաներին, եւ մենք կը մեկնենք
այն»: 5 Արքան պատասխանեց եւ
ասաց աստղագուշակներին. «Իմ խօսքը
վճռական է. արդ, եթէ ինձ չյայտնէք
երազն ու նրա մեկնութիւնը, կորստի
կը մատնուէք, եւ ձեր տները աւերակ
կը դառնան, 6 իսկ եթէ երազն ու նրա
մեկնութիւնը յայտնէք ինձ, դուք
պարգեւներ, բազում ընծաներ եւ մեծ
պատիւ կը ստանաք ինձնից, միայն թէ
յայտնեցէ՛ք ինձ երազն ու նրա մեկ-
նութիւնը»: 7 Երկրորդ անգամ պա-
տասխանեցին նրան եւ ասացին. «Թող
արքան ասի երազը իր ծառաներին, եւ
մենք կը յայտնենք նրա մեկնու-
թիւնը»: 8 Արքան պատասխանեց եւ
ասաց. «Հաստատ գիտեմ, որ դուք
ուզում էք ժամավաճառ լինել, որով-
հետեւ տեսնում էք, որ իմ խօսքը
վճռական է: 9 Եթէ դուք երազը
չյայտնէք ինձ, ուրեմն համաձայնուել
էք սուտ եւ անճիշտ բաներ ասել ինձ,
մինչեւ որ ժամանակն անցնի: Ասացէ՛ք
ինձ իմ երազը, եւ կ'իմանամ, որ նրա
մեկնութիւնը նոյնպէս կը յայտնէք
ինձ»: 10 Աստղագուշակները նորից
պատասխանեցին թագաւորին եւ ասա-
ցին. «Երկրի վրայ չկայ մի մարդ, որ
կարողանայ յայտնել թագաւորի ուզած
բանը: Ոչ մի թագաւոր եւ իշխան
այդպիսի բան չի հարցնի իմաստունին,
մոգին եւ աստղագուշակին, 11 որով-
հետեւ այն բանը, որ թագաւորն է
հարցնում, ծանր բան է, եւ բացի
աստուածներից, որոնք մարմնաւոր-
ների մէջ չեն բնակւում, չկայ ոչ մէկը,
որ այն յայտնի թագաւորի առաջ»:

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԴԱՆԻԷԼԻՆ ԵՐԱԶԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

12 Այն ժամանակ թագաւորը մեծ
բարկութեամբ ու զայրոյթով հրամա-
յեց կոտորել բաբելացի բոլոր իմաս-
տուններին: 13 Հրաման արձակուեց, եւ
իմաստունները կոտորուում էին:
Փնտռում էին Դանիէլին եւ նրա
ընկերներին՝ սպանելու համար նրանց:
14 Այն ժամանակ Դանիէլը խոհեմ
եւ իմաստուն կերպով խորհրդակցեց
արքայի դահճապետի՝ թագաւորի իշ-
խան Արիոքի հետ, որ ելել կոտորում էր
բաբելացի իմաստուններին: Դանիէլը
հարցրեց նրան եւ ասաց. 15 «Ինչո՞ւ
արքայի կողմից արձակուեց այդ խիստ
հրամանը»: Եւ Արիոքը այդ բանը
յայտնեց Դանիէլին: 16 Դանիէլը մտաւ
արքայի մօտ եւ խնդրեց արքային, որ
նրան ժամանակ տայ, եւ ինքը դրա
մեկնութիւնը կը յայտնի թագաւորին:
17 Դանիէլը մտաւ իր տունը եւ բանը
յայտնեց իր ընկերներին՝ Անանիային,
Ազարիային եւ Միսայէլին: 18 Նրանք
գթութիւն էին խնդրում երկնքի
Աստծուց, որպէսզի նա Դանիէլին ու իր
ընկերներին կորստի չմատնի բաբելացի
այլ իմաստունների հետ: 19 Այն ժա-
մանակ գաղտնիքը Դանիէլին յայտ-
նուեց գիշերային տեսիլքում: Դանիէլը
օրհնեց երկնքի Աստծուն եւ ասաց.
20 «Թող օրհնեալ լինի Տիրոջ
անունը յաւիտեանս յաւիտենից,
որովհետեւ նրանն է իմաստութիւնը,
հանճարը եւ զօրութիւնը:

21 Նա է, որ փոփոխում է ժամերն ու
ժամանակները:
Թագաւորներ է կարգում եւ փոփո-
խում,
իմաստուններին իմաստութիւն է
տալիս
եւ խելամիտներին՝ իմացութիւն,
բացայայտում է խորին եւ ծածուկ
բաները,
22 գիտի, թէ ինչ կայ խաւարում,
եւ լոյսը նրա հետ է:
23 Գոհութիւն քեզ, մեր հայրերի՛
Աստուած,
օրհնում եմ քեզ, որովհետեւ ուժ եւ
իմաստութիւն տուեցիր ինձ
եւ յայտնեցիր ինձ այն, ինչ որ մենք
աղօթքներով խնդրեցինք քեզնից,
եւ բացատրեցիր ինձ թագաւորի
տեսիլքը»:

ԴԱՆԻԷԼԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐԻ ԵՐԱԶԸ

24 Դանիէլը մտաւ Արիոքի մօտ, որին
թագաւորը նշանակել էր՝ կոտորելու
Բաբելոնի իմաստուններին, եւ ասաց
նրան. «Մի՛ կոտորիր Բաբելոնի իմաս-
տուններին, այլ տա՛ր ինձ թագաւորի
առաջ, եւ ես թագաւորին կը յայտնեմ
երազի մեկնութիւնը»: 25 Այն ժամանակ
Արիոքը Դանիէլին շտապ տարաւ
թագաւորի առաջ եւ ասաց նրան.
«Հրէաստանից գերի բերուածների մէջ
գտայ մի մարդ, որ երազի մեկնութիւնը
պիտի յայտնի արքային»: 26 Թագաւորը
պատասխանեց Դանիէլին, որի անունն
էր Բաղդասար, եւ ասաց. «Կարո՞ղ ես
պատմել ինձ իմ տեսած երազն ու
յայտնել նրա մեկնութիւնը»: 27 Դա-
նիէլը պատասխանեց թագաւորին եւ
ասաց. «Այդ գաղտնիքը, որի մասին
հարցնում է արքան, իմաստունները,
մոգերը, հմայողներն ու բախտագու-
շակները արքային պատմել չեն կարող,
28 այլ երկնքում կայ Աստուած, որ
յայտնում է գաղտնիքները: Նա՛ ցոյց
տուեց Նաբուքոդոնոսոր արքային, թէ
ինչ պիտի լինի գալիք օրերում: Քո
երազն ու քո գլխում ծագած տեսիլքը,
որ դու տեսել ես անկողնում, այս է,
արքա՛յ. 29 քո մտածումները, թէ ինչ
պիտի լինի սրանից յետոյ, քեզ մտա-
տանջում էին քո անկողնում, եւ գաղտ-
նիքները բացայայտողը ցոյց տուեց
քեզ, թէ ինչ պիտի լինի այսուհետեւ:
30 Գաղտնիքը յայտնուեց ինձ ոչ այն
պատճառով, որ իմ մէջ աւելի իմաս-
տութիւն կայ, քան բոլոր բանականների
մէջ, այլ որպէսզի մեկնութիւնը ցոյց
տրուի արքային, եւ դու իմանաս քո
սրտի խորհուրդները: 31 Դու, արքա՛յ,
ահա թէ ինչ էիր տեսնում. քո առաջ
կանգնած էր մի արձան, մի վիթխարի
արձան, եւ նրա կերպարանքն ու տեսքը
ահաւոր էր: Այդ արձանը շատ
սարսափազդու էր: 32 Նրա գլուխը
մաքուր ոսկուց էր, նրա ձեռքերը,
կուրծքն ու բազուկները՝ արծաթից, նրա
մէջքն ու ազդրերը՝ պղնձից, 33 սրունք-
ները՝ երկաթից, ոտքերը՝ կէսը երկաթից
եւ կէսը խեցուց: 34 Դու նայում էիր, երբ
առանց ձեռք դիպչելու պոկուեց մի քար
եւ հարուածեց արձանի երկաթեայ եւ
խեցէ ոտքերին ու ամբողջովին փշրեց
դրանք: 35 Միաժամանակ բոլորովին
փշրուեցին խեցին ու երկաթը, պղինձը,
արծաթն ու ոսկին եւ դարձան ինչպէս
ամառուայ կալի փոշի. սաստիկ քամին
քշեց դրանք, ու տեղ չէր գտնուում
դրանց համար: Իսկ այն քարը, որ
հարուածեց արձանին, դարձաւ մեծ լեռ
ու լցրեց ամբողջ երկիրը: 36 Սա է
երազը: Իսկ այժմ թագաւորին ասենք
երազի մեկնութիւնը: 37 Դո՛ւ, ո՛վ
արքայ, արքայի՛ց արքայ, որին երկնքի
Աստուածը հզօր եւ փառաւոր թագա-
ւորութիւն տուեց: 38 Դո՛ւ, որի ձեռքը
տուեց մարդու որդիներին, վայրի գա-
զաններին, երկնքի թռչուններին ու ծովի
ձկներին, որտեղ էլ որ ապրում են
նրանք, եւ քեզ տէր կարգեց բոլորին:
39 Դու ես ոսկեայ գլուխը: Քեզանից
յետոյ ուրիշ թագաւորութիւն պիտի
բարձրանայ, որ պիտի լինի քո
թագաւորութիւնից ցածր: Ապա երրորդ՝
պղնձեայ թագաւորութիւնը պիտի տիրի
ամբողջ երկրին: 40 Իսկ չորրորդ
թագաւորութիւնը, որ երկաթի պէս
ամուր պիտի լինի, պիտի փշրի եւ
տրորի ամէն ինչ, ինչպէս երկաթն է
փշրում եւ տրորում ամէն բան: 41 Եւ
քանի որ ոտքերի մատների կէսը երկա-
թեայ եւ կէսը խեցուց էիր տեսնում

դու, ապա այդ թագաւորութիւնը պիտի բաժանուի, բայց եւ նրա մէջ երկաթեայ ուժ պիտի լինի, ինչպէս որ երկաթը խեցու հետ խառնուած էիր տեսնում: 42 Ոտքերի մատների մի մասը երկաթ էր եւ մի մասը՝ խեցի. ուրեմն թագաւորութեան մի մասը հզօր պիտի լինի, իսկ միւս մասը՝ դիւրաբեկ: 43 Իսկ այն, որ դու երկաթը խեցուն խառնուած էիր տեսնում, ապա այդպէս էլ խառն են լինելու մարդկային սերունդները, բայց չեն միաձուլուելու իրար, ինչպէս երկաթը չի զօդւում խեցուն:

44 Այդ թագաւորների ժամանակ երկնքի Աստուածը պիտի բարձրացնի մի թագաւորութիւն, որ յաւիտեանս չի կործանուելու, եւ այդ թագաւորութիւնը ուրիշ ազգի չի մնալու: Այն պիտի փոշիացնի ու վերացնի բոլոր թագաւորութիւնները եւ ինքը պիտի մնայ յաւիտեան: 45 Իսկ այն, որ դու տեսնում էիր, թէ լեռից առանց ձեռք դիպչելու քար պոկուեց եւ մանրեց խեցին, երկաթը, պղինձը, արծաթն ու ոսկին, ապա այդպէս էլ մեծն Աստուած ցոյց տուեց արքային, թէ ինչ պիտի լինի յետոյ: Ճշմարիտ է երազը եւ ճշգրիտ՝ նրա մեկնութիւնը»:

ԹԱԳԱՒՈՐԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ԴԱՆԻԷԼԻՆ

46 Այն ժամանակ Նաբուքոդոնոսոր արքան երեսի վրայ ընկաւ եւ երկրպագեց Դանիէլին, հրամայեց զոհեր ու անուշահոտ խնկեր մատուցել նրան: 47 Թագաւորն ասաց Դանիէլին. «Արդարեւ, ձեր Աստուածը աստուածների Աստուածն է, տէրերի Տէրը եւ թագաւորների Թագաւորը, որ բացայայտում է գաղտնիքները, քանի որ դու կարողացար յայտնել այդ գաղտնիքը»: 48 Եւ թագաւորը մեծարեց Դանիէլին, մեծամեծ ու բազում պարգեւներ տուեց նրան, Բաբելոնի վրայ կառավարիչ նշանակեց նրան եւ նախարարների իշխան՝ Բաբելոնի բոլոր իմաստունների վրայ: 49 Դանիէլը արքային խնդրեց, եւ արքան Սեդրակին, Միսակին եւ Աբեդնագովին գործավարներ նշանակեց բաբելացիների երկրի վրայ: Իսկ Դանիէլը մնաց արքայի պալատում:

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻԼՔ

ԹԱԳԱՒՈՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ Է ԵՐԿՐՊԱԳԵԼ ՈՍԿԵԱՅ ԱՐՁԱՆԻՆ

3 Իր թագաւորութեան տասնութերորդ տարում Նաբուքոդոնոսոր արքան պատրաստեց մի ոսկեայ արձան, որի բարձրութիւնը վաթսուն կանգուն էր, լայնութիւնը՝ վեց, եւ այն կանգնեցրեց բաբելացիների երկրում, Դէերա դաշտում: 2 Նա հրամայեց հաւաքել զօրավարներին, զօրագլուխներին եւ կուսակալներին, պետերին, իշխանաւորներին, գործակալներին եւ գաւառների բոլոր իշխաններին՝ գալու այն արձանի նաւակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուքոդոնոսոր արքան: 3 Հաւաքուեցին կուսակալները, զօրավարներն ու զօրագլուխները, պետերը, իշխանաւորները, մեծամեծները, գործակալներն ու գաւառների բոլոր իշխանները, եկան այն արձանի նաւակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուքոդոնոսոր արքան: Նրանք կանգնած էին այն արձանի առաջ, որ կանգնեցրել էր Նաբուքոդոնոսոր արքան: 4 Եւ մունետիկը կանչում էր բարձրաձայն ու ասում. «Ձեզ է ասւում, ազգե՛ր, ժողովուրդնե՛ր եւ լեզունե՛ր: 5 Երբ լսէք փողի, սրնգի, թմբուկի, քնարի, տաւղի եւ բոլոր տեսակի նուագարանների ձայնը, գետի՛ն ընկէք եւ երկրպագեցէ՛ք արձանին, որ կանգնեցրել է Նաբուքոդոնոսոր արքան: 6 Եւ նա, ով գետին չընկնի ու չերկրպագի, նոյն ժամին կը նետուի բորբոքուած կրակի հնոցը»: 7 Եւ այնպէս եղաւ, որ երբ ազգերը լսեցին փողի, սրնգի, տաւղի, նուագարանների եւ այլ տեսակի գործիքների ձայնը, բոլոր ազգերը, ժողովուրդները եւ լեզուները գետին էին ընկնում եւ երկրպագում ոսկեայ արձանին, որ կանգնեցրել էր Նաբուքոդոնոսոր արքան:

ԴԱՆԻԷԼԻ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՆ ՄՆՈՒՄ ՏԻՐՈՋԸ

8 Այն ժամանակ մօտեցան քաղ-

դէացի մարդիկ, Նաբուքոդոնոսորին չարախօսեցին հրեաների մասին եւ ասացին. 9 «Արքա՛յ, թող քո կեանքը յաւիտեան լինի, 10 դու հրամայեցիր, որ ամէն մարդ, երբ լսի փողի, սրնգի, քնարի, տաւղի, նուագարանների ու բոլոր տեսակի գործիքների ձայնը, 11 գետին ընկնի ու երկրպագի ոսկեայ արձանին, իսկ նա, ով այդպէս չի անի, պիտի նետուի բորբոքուած կրակի հնոցը: 12 Արդ, այստեղ կան հրեայ մարդիկ, որոնց դու նշանակեցիր Բաբելոնի գործերի վրայ՝ Սեդրակը, Միսակը եւ Աբեդնագովը, որոնք չհնազանդուեցին քո հրամանին, արքա՛յ. նրանք չեն պաշտում քո աստուածները, չեն երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկէ արձանին: 13 Այն ժամանակ Նաբուքոդոնոսորը բարկութեամբ եւ ցասումով հրամայեց բերել Սեդրակին, Միսակին եւ Աբեդնագովին: Եւ նրանց բերեցին թագաւորի առաջ: 14 Նաբուքոդոնոսորը նրանց ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ եւ Աբեդնագո՛վ, իսկապէ՞ս դուք իմ աստուածները չէք պաշտում եւ ոսկեայ արձանին, որ ես կանգնեցրի, չէք երկրպագում. 15 իսկ այժմ պատրա՛ստ եղէք, որ երբ լսէք փողի, սրնգի, թմբուկի, քնարի եւ ամէն տեսակ երաժիշտների ձայնակցութիւնը, գետին ընկնէք եւ երկրպագէք արձանին, որ ես կանգնեցրի. իսկ եթէ չերկրպագէք, նոյն ժամին կը նետուէք բորբոքուած կրակի հնոցը: Ո՞վ է այն աստուածը, որ կը փրկի ձեզ իմ ձեռքից»: 16 Սեդրակը, Միսակը եւ Աբեդնագովը պատասխանեցին Նաբուքոդոնոսոր արքային եւ ասացին. «Հարկ չկայ քեզ պատասխանել այդ բանի համար, արքա՛յ, 17 որովհետեւ մեր Աստուածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքուած կրակի հնոցից եւ ազատել մեզ քո ձեռքից: 18 Իսկ եթէ ոչ, թող քեզ յայտնի լինի, արքա՛յ, որ քո աստուածները մենք չենք պաշտում եւ չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկէ արձանին:

ԴԱՆԻԷԼԻ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՆԵՏՒՈՒՄ ԵՆ ՀՆՈՑԸ

19 Այն ժամանակ Նաբուքոդոնոսորը զայրոյթով լցուեց, բարկացաւ Սեդրակի, Միսակի եւ Աբեթնագովի վրայ եւ ասաց. «Եօթնապատիկ վառեցէ՛ք հնոցը, որպէսզի մինչեւ վերջ այրուեն սրանք: 20 Հինգ ուժեղ մարդիկ թող կապեն Սեդրակին, Միսակին եւ Աբեդնագովին եւ նետեն բորբոքուած կրակի հնոցը»: 21 Այն ժամանակ այդ մարդկանց կապեցին իրենց պատմուճաններով, անդրավարտիքներով, գլխի ապարօչներով, զանկապաններով եւ նետեցին բորբոքուած կրակի հնոցը, 22 որովհետեւ թագաւորի հրամանը աւելի ու աւելի էր սաստկանում, եւ հնոցը բորբոքւում էր եօթնապատիկ աւելի: 23 Իսկ նրանք երեքը՝ Սեդրակը, Միսակը եւ Աբեդնագովը կապուած ընկան հնոցի մէջ:

ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ԱԶԱՏՒՈՒՄ ԵՆ ՈՒ ՄԵԾԱՐՒՈՒՄ

24 Նրանք քայլում էին կրակի մէջ, օրհնում եւ գովում էին Տէր Աստծուն: 25 Ազարիան ելաւ, աղօթքի կանգնեց, կրակի մէջ բացեց բերանը եւ այսպէս ասաց. 26 «Օրհնեալ ես, Տէ՛ր, մեր հայրերի՛ Աստուած, յաւիտեանս գովեալ եւ փառաւորեալ է քո անունը, 27 որովհետեւ դու արդար ես այն ամենի մէջ, որ բերեցիր մեզ վրայ, քո բոլոր գործերը ճշմարիտ են, քո ճանապարհները՝ ուղիղ, եւ քո բոլոր դատաստանները՝ արդար. 28 դու ըստ ամենայնի արդար արեցիր այն, ինչ արեցիր մեր եւ մեր հայրերի սուրբ քաղաք Երուսաղէմի նկատմամբ, որովհետեւ ճշմարտութեամբ եւ արդար կերպով արեցիր այս բոլորը մեր մեղքերի պատճառով, 29 քանի որ քո դէմ ապստամբելով՝ մեղանչեցինք եւ անօրէնութիւն գործեցինք. մենք առաւել մեղանչեցինք նրանով, որ 30 քո պատուիրանները չլսեցինք: Զպահեցինք քո պատուիրանները եւ այնպէս չարեցինք, ինչպէս պատուիրեցիր մեզ, որպէսզի լաւ լինէր մեզ համար. 31 այն ամէնը ինչ բերեցիր մեզ վրայ եւ այն ամէնը, ինչ արեցիր մեր նկատմամբ, արդա՛ր դատաստանով արեցիր: 32 Մեզ մատնեցիր մեր անօրէն, խիստ եւ ապստամբ թշնամիների, բոլոր երկրների ամենից աւելի անիրաւ եւ չար թագաւորի ձեռքը:

33 Իսկ այժմ չենք կարող բանալ մեր բերանները, որովհետեւ մենք՝ քո պաշտօնեայ ծառաները, ամօթահար եղանք եւ նախատինք կրեցինք: 34 Բայց դու, յանուն քո անուան, մեզ իսպառ մի՛ լքիր, մի՛ ցրիր քո ուխտը 35 եւ մի՛ հեռացրու քո ողորմութիւնը մեզանից յանուն քո սիրելի Աբրահամի, յանուն քո Իսահակ ծառայի եւ յանուն քո սուրբ Իսրայէլի, 36 որոնց ասացիր, թէ պիտի բազմացնես նրանց որդիները երկնքի աստղերի չափ եւ այնքան, որքան աւազը ծովի ափին: 37 Արդ, Տէ՛ր, բոլոր ազգերից աւելի տկարացանք մենք եւ այսօր տառապում ենք ամբողջ աշխարհում մեր մեղքերի պատճառով: 38 Այժմ, այս ժամանակներում չկայ իշխան, մարգարէ եւ առաջնորդ, ո՛չ ողջակէզ, ո՛չ զոհ, ո՛չ զոհաբերութիւն, ո՛չ խունկ 39 եւ ո՛չ էլ քեզ երախայրիք մատուցելու տեղ՝ ողորմութիւն գտնելու համար: Այլ կոտրուած սրտով եւ տառապած հոգով թող ընդունելի լինենք 40 խոյերի եւ արջառների, ինչպէս նաեւ բիւրաւոր պարարտ գառների ողջակէզների նման. այդպէս թող լինի մեր զոհաբերումը այսօր քո առաջ եւ կատարեալ լինենք քեզանից յետոյ, որովհետեւ քեզ վրայ յոյս դնողները ամօթով չեն մնայ: 41 Արդ, գալիս ենք դէպի քեզ մեր ամբողջ սրտով, վախենում ենք մենք քեզանից, քո բարեհաճութիւնն ենք խնդրում. 42 ամօթով մի՛ թող մեզ, այլ մեզ հետ վարուիր ըստ քո հեզութեան, ըստ քո մեծ ողորմութեան, Տէ՛ր, 43 փրկի՛ր մեզ ըստ քո հրաշալի գործերի եւ փա՛ռք բեր քո անուանը: 44 Թող ամօթով մնան բոլոր նրանք, ովքեր չարիք են պատճառում քո ծառաներին. թող ամաչեն իրենց բոլոր բռնութիւններից, նրանց զօրութիւնը թող խորտակուի, 45 եւ թող ճանաչեն, որ դու ես միակ Տէր Աստուածը եւ փառաւորեալը ողջ տիեզերքում»:

46 Եւ նրանք՝ թագաւորի սպասաւորները, որ հնոց էին նետել նրանց, չէին դադարում բորբոքել այն նաւթով, ձէթով, վուշով եւ որթատունկի ճիւղերով: 47 Բոցը ելնում դիզւում էր հնոցից քառասուն եւ ինը կանգուն վեր, 48 պտտւում պատում էր հնոցի շուրջը եւ այրում էր, ում որ գտնում էր քաղդէացիներից: 49 Բայց Աստծու Հրեշտակը իջաւ կանգնեց հնոցի մէջ, Ազարիայի կողքին, կրակի բոցը թոթափեց հնոցից 50 եւ հնոցի մէջ դարձրեց այնպիսի հողմ, որ ցող է բերում, եւ կրակը ամենեւին չէր մօտենում նրանց, չէր տանջում եւ չէր նեղում նրանց: 51 Այն ժամանակ հնոցի մէջ երեքը, կարծես մէկ բերանով, օրհնում, գովում եւ փառաւորում էին Աստծուն ու ասում.

52 «Օրհնեալ ես դու Տէ՛ր, Աստուա՛ծ մեր հայրերի,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
Օրհնեալ է քո փառաւոր սուրբ անունը,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
53 Օրհնեալ ես քո փառքի սուրբ տաճարում,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
54 Օրհնեալ ես քո թագաւորութեան աթոռի վրայ,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
55 Օրհնեալ ես, որ նայում ես անդունդներին եւ նստում ես քերովբէների վրայ,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
56 Օրհնեալ ես, որ նստում ես երկնքում,
գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:
57 Օրհնեցէ՛ք Տիրոջ բոլոր գործերը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
58 Երկինքնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
59 Տիրոջ հրեշտակնե՛ր, օրհնեցէք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
60 Ջրե՛ր, որ վեր էք երկնքից, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան

յաւիտեան:
61 Տիրոջ բոլո՛ր զօրութիւններ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
62 Արե՛ւ եւ լուսի՛ն, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
63 Երկնքի բոլո՛ր աստղեր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
64 Անձրեւնե՛ր եւ ցողե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
65 Հողմե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
66 Հո՛ւր եւ տա՛պ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
67 Ցո՛ւրտ եւ սառնամանի՛ք, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
68 Եղեա՛մ եւ ձի՛ւն, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
69 Ցերեկնե՛ր եւ գիշերնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
70 Լո՛յս եւ խաւա՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
71 Ամպե՛ր եւ կայծակնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
72 Թող երկիրն օրհնի՛ Տիրոջը,
օրհնի եւ պանծացնի նրան յաւիտեան:
73 Լեռնե՛ր, բարձունքնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
74 Երկրի բոլոր բոյսեր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
75 Աղբիւրնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
76 Ծովե՛ր ու գետե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
77 Կէտե՛ր եւ ջրային բոլո՛ր կենդանիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
78 Երկնի թռչունները՝, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
79 Բոլո՛ր գազաններ եւ անասուններ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
80 Մարդո՛ւ որդիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
81 Իսրայէլը թող օրհնի Տիրոջը,
թող օրհնի եւ պանծացնի նրան յաւիտեան:
82 Քահանանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
83 Տիրոջ ծառանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
84 Արդարների շունչ ու հոգինե՛ր, օրհնեցէ՛ք Աստծուն,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
85 Սրբե՛ր եւ սրտով խոնարհնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
86 Անանիա՛, Ազարիա՛ եւ Միսայէ՛լ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան,
87 քանզի նա մեզ փրկեց դժոխքից, ազատեց մահուան ձեռքից,
88 փրկեց մեզ այս հնոցից, այս բորբոքուած բոցի միջից,

փրկեց մեզ այս կրակի միջից:
89 *Գոհութիւն մատուցենք Տիրոջը,*
քանզի քաղցր է նա,
քանզի յաւիտեան է ողորմութիւնը նրա:
90 *Տիրոջ բոլո՛ր պաշտօնեաներ, գոհութի՛ւն մատուցեցէք*
եւ օրհնեցէ՛ք աստուածների Աստծուն,
քանզի յաւիտեան է ողորմութիւնը նրա»:

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ԴԱՆԻԷԼԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

91 *Նաբուքոդոնոսորը երբ լսեց նրանց օրհնութիւնը, զարմացաւ. նա տագնապահար վեր կացաւ եւ ասաց իր մեծամեծներին. «Միթէ մենք կապուած երեք մարդ չնետեցի՞նք կրակի մէջ»: Նրանք ասացին թագաւորին. «Այո՛, ճիշտ ես ասում, արքա՛յ»:* 92 *Թագաւորն ասաց. «Բայց ես տեսնում եմ կապերից արձակուած չորս մարդ, որոնք քայլում են կրակի մէջ, որեւէ վնաս չեն կրել, իսկ չորրորդի տեսքը Աստծու որդու նման է»:* 93 *Այն ժամանակ Նաբուքոդոնոսորը մօտեցաւ հրաբորբոք հնոցի դռանը եւ ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ եւ Աբեդնագո՛վ, բարձրեալ Աստծու ծառանե՛ր, ելէ՛ք եւ եկէ՛ք»: Սեդրակը, Միսակն ու Աբեդնագովը դուրս ելան կրակի միջից:* 94 *Հաւաքուեցին նախարարները, կուսակալները, թագաւորի զօրավարներն ու զօրագլուխները, եւ տեսնում էին այն մարդկանց, որոնց մարմնին կրակը չէր վնասել, նրանց գլխի մազերը չէին խանձուել, նրանց անդրավարտիքները չէին գունաթափուել, եւ կրակի հոտ չկար նրանց վրայ:* 95 *Նաբուքոդոնոսոր թագաւորը նրանց առաջ երկրպագեց Տիրոջը, պատասխանեց եւ ասաց. «Օրհնեալ է Սեդրակի, Միսակի եւ Աբեդնագովի Աստուածը, որ ուղարկեց իր Հրեշտակին եւ փրկեց իր ծառաներին, որովհետեւ նրանք յոյս էին դրել նրա վրայ, անարգել էին թագաւորի խօսքը եւ մատնել իրենց մարմինը կրակին, որպէսզի չպաշտեն եւ չերկրպագեն բոլոր աստուածներին, այլ՝ միայն իրենց Աստծուն:* 96 *Արդ, ես հրաման եմ տալիս. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները, որոնք կը հայհոյեն Սեդրակի, Միսակի եւ Աբեդնագովի Աստծուն, կորստի պիտի մատնուեն, իսկ նրանց տները՝ յափշտակութեան, որովհետեւ չկայ այլ Աստուած, որ կարողանայ այսպէս փրկել»:*
97 *Այն ժամանակ թագաւորը Բաբելոնում առաւել եւս մեծարեց Սեդրակին, Միսակին եւ Աբեդնագովին, բարձր պատուի արժանացրեց նրանց եւ խնդրեց նրանց, որ իշխան լինեն այն բոլոր հրեաների վրայ, որ իր թագաւորութեան մէջ էին:*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԻԼՔ

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱԶԸ

4 98† *Նաբուքոդոնոսոր արքան՝ բոլոր ազգերին եւ լեզուներին, որոնք բնակւում են ամբողջ աշխարհում. «Թող բազմապատկուի՛ ձեր խաղաղութիւնը:*
99 *Հաճելի է ինձ պատմել, թէ որքան մեծ են եւ զօրաւոր այն նշաններն ու հրաշքները, որ Բարձրեալը ցոյց տուեց ինձ.* 100 *նրա թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, եւ նրա իշխանութիւնը՝ սերնդից սերունդ:*
1 *Ես՝ Նաբուքոդոնոսորս, ուրախ էի իմ տանը եւ զուարթ:* 2 *Երազ տեսայ, որ զարհուրեցրեց ինձ, եւ խռովուեցի իմ անկողնում: Իմ մտքի տեսիլքը տագնապեցրեց ինձ* 3 *եւ ստիպեց, որ ես հրամայեմ իմ առաջ բերել բաբելացի բոլոր իմաստուններին, որպէսզի երազի մեկնութիւնը յայտնեն ինձ:* 4 *Եւ ինձ մօտ եկան գուշակներ, մոգեր, հմայողներ ու աստղագուշակներ: Ես իմ երազը պատմեցի նրանց, բայց նրանք չյայտնեցին ինձ նրա մեկնութիւնը,* 5 *մինչեւ որ եկաւ Դանիէլը, որի անունը Բաղդասար էր ըստ իմ աստծու անուան, որովհետեւ Աստծու Սուրբ Հոգին կայ նրա մէջ: Նրան ես ասացի.* 6 *«Բաղդասա՛ր իշխան, իմացի՛ր այն, ինչ ես տեսայ: Գիտեմ, որ Աստծու Սուրբ Հոգին կայ քո մէջ, եւ բոլոր գաղտնիքները յայտնի են քեզ: Արդ, լսի՛ր դու իմ տեսած երազի, իմ տեսիլքի մասին, եւ նրա մեկնութիւնը կ'ասես ինձ:* 7 *Իմ անկողնում տեսնում էի, որ ահա կար մի ծառ հողի մէջ, եւ նա շատ-շատ բարձր էր.* 8 *ծառը մեծացաւ, զօրացաւ. նրա բարձրութիւնը հասաւ մինչեւ երկինք, եւ նրա լայնութիւնը՝ աշխարհի բոլոր կողմերը:* 9 *Նրա տերեւը գեղեցիկ էր, եւ նրա պտուղը՝ առատ: Բոլորի կերակուրը նրանից էր: Վայրի գազաններ էին ապրում նրա տակ, ճիւղերին հանգստանում էին երկնքի թռչունները, եւ նրանից էր կերակրւում ամէն մարմնաւոր արարած:* 10 *Իմ անկողնում, գիշերային տեսիլքում տեսնում էի, որ ահա երկնքից իջնում էր մի սուրբ Հրեշտակ,* 11 *խօսում էր բարձրաձայն եւ այսպէս ասում. «Կտրեցէ՛ք այդ ծառը, հատեցէ՛ք նրա ճիւղերը, թօթափեցէ՛ք դրա տերեւները, շա՛ղ տուէք դրա պտուղները, թող գազանները հեռանան նրա տակից, եւ թռչունները՝ նրա ճիւղերից:* 12 *Բայց նրա արմատի շառաւիղը թողէ՛ք հողում՝ երկաթէ եւ պղնձէ լարերով պատած, դալար մի վայրում. թող այն թրջուի երկնքի ցօղից, եւ նրա կենդանի մասը անապատի գազանների հետ երկրի խոտից բաժին ունենայ.* 13 *նրա մարդկային սիրտը թող փոխուի, եւ նրան տրուի գազանների սիրտ, եւ եօթը ժամանակներ թող անցնեն նրա վրայից:* 14 *Իմ խօսքը Հրեշտակի կողմից տրուած խօսք է, եւ իմ հարցումը՝ սրբերի պատգամ, որպէսզի ապրողները իմանան, թէ Բարձրեալն է տիրում մարդկանց թագաւորութեան վրայ, այն տալիս է, ում որ կամենայ, եւ մարդկանցից ամենաանարգին բարձրացնում է դրա վրայ:* 15 *Այս է երազը, որ տեսայ ես՝ Նաբուքոդոնոսոր արքան: Եւ դու, Բաղդասա՛ր, ասա՛ ինձ նրա մեկնութիւնը, որովհետեւ իմ թագաւորութեան բոլոր իմաստունները չկարողացան յայտնել ինձ նրա մեկնութիւնը, իսկ դու, Դանիէ՛լ, կարող ես, որովհետեւ Աստծու Սուրբ Հոգին կայ քո մէջ»:*

†98–100 համարները եբրայերէնում համարակալուած են որպէս 3-րդ գլխի վերջին համարներ:

ԴԱՆԻԷԼԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԵՐԱԶԸ

16 *Այն ժամանակ Դանիէլը, որի անունը Բաղդասար էր, ամփոփուեց մի պահ. նրա մտքերը խռովում էին նրան: Պատասխանեց նրան թագաւորը եւ ասաց. «Բաղդասա՛ր, երազն ու նրա մեկնութիւնը թող չտագնապեցնեն քեզ»: Բաղդասարը պատասխանեց եւ ասաց. «Տէ՛ր իմ, երազը թող քեզ ատողների համար լինի, եւ նրա մեկնութիւնը՝ քո թշնամիների:* 17 *Այն ծառը, որ տեսնում էիր մեծացած եւ զօրացած, եւ որի բարձրութիւնը հասնում էր մինչեւ երկինք, իսկ նրա լայնութիւնը՝ աշխարհի բոլոր կողմերը,* 18 *որի տերեւը գեղեցիկ էր, եւ պտուղը՝ առատ, բոլորի կերակուրը նրանից էր, որի տակ էին ապրում անապատի գազանները, եւ նրա ճիւղերին էին թառում երկնքի թռչունները, – այդ ծառը դո՛ւ ես, արքա՛յ:* 19 *Արդարեւ, դու մեծացար ու հզօրացար, քո մեծութիւնը բարձրացաւ, հասաւ մինչեւ երկինք, եւ քո տէրութիւնը՝ աշխարհի բոլոր ծագերը:* 20 *Իսկ այն, որ տեսնում էիր, արքա՛յ, թէ սուրբ Հրեշտակը իջնում էր երկնքից եւ ասում. "Կտրեցէ՛ք այդ ծառը եւ խորտակեցէ՛ք այն, բայց նրա արմատի շառաւիղը թողէ՛ք հողում՝ երկաթէ եւ պղնձէ լարերով պատած, դալար մի վայրում, թող այն թրջուի երկնքի ցօղից, եւ նրա կենդանի մասը լինի անապատի գազանների հետ, մինչեւ եօթը ժամանակներ անցնեն նրա վրայից": Սա՛ է նրա մեկնութիւնը, արքա՛յ.* 21 *Բարձրեալի դատաստանը հասել է իմ տէր արքայի վրայ.* 22 *քեզ պիտի վտարեն մարդկանց միջից, անապատի գազանների հետ պիտի բնակուես, եւ քեզ, ինչպէս արջառի, խոտ պիտի տան, երկնքի ցօղից պիտի թրջուես, եւ եօթը ժամանակներ պիտի անցնեն քո վրայից, մինչեւ որ ընդունես, թէ Բարձրեալն է տիրում մարդկանց թագաւորութեանը եւ այն պիտի տայ, ում որ կ'ամենայ:* 23 *Իսկ այն, որ ասաց, թէ ծառի արմատի շառաւիղը թողէ՛ք, դա քո թագաւորութիւնն է, որ պիտի մնայ քեզ, մինչեւ ճանաչես երկնաւոր Աստ-*

ծու իշխանութիւնը: 24 Դրա համար,
արքա՛յ, թող իմ խորհուրդը հաճելի
թուայ քեզ, քո մեղքերը քաւի՛ր ողոր-
մութեամբ, եւ քո անօրէնութիւնները՝
աղքատներին գթալով, թերեւս Աս-
տուած համբերատար լինի քո յան-
ցանքների նկատմամբ»:
25 Այս բոլորը պատահեց Նաբու-
քոդոնոսոր արքային տասներկու ամիս
յետոյ, 26 մինչ նա ճեմում էր իր
թագաւորական պալատում, Բաբելո-
նում: 27 Թագաւորն սկսեց խօսել եւ
ասաց. «Սա այն մեծ Բաբելոնը չէ՞, որ
ես կառուցեցի որպէս թագաւորութիւն
իմ կամքով ու զօրութեամբ՝ ի պատիւ իմ
փառքի»: 28 Մինչ խօսքը թագաւորի
բերանում էր, երկնքից ձայն լսուեց եւ
ասաց. «Քեզ եմ ասում, ո՛վ Նաբու-
քոդոնոսոր արքայ, քո թագաւորու-
թիւնը խլուած է քեզանից: 29 Մարդ-
կանց միջից պիտի հալածեն ու վտարեն
քեզ: Դու պիտի բնակուես անապատի
գազանների հետ, եւ որպէս արջառի՝
խոտով պիտի կերակրեն քեզ: Եօթը
ժամանակներ պիտի անցնեն քո
վրայից, մինչեւ ճանաչես, որ Բարձ-
րեալն է տիրում մարդկանց թագա-
ւորութեանը եւ այն պիտի տայ, ում որ
կ՚ամենայ»: 30 Հէնց նոյն ժամին այդ
բանը կատարուեց Նաբուքոդոնոսորի
հետ. նա հալածուեց ու վտարուեց
մարդկանց միջից, ինչպէս արջառ՝ նա
խոտ էր ուտում, եւ նրա մարմինը
թրջուեց երկնքի ցօղից, մինչեւ որ նրա
մազերը երկարեցին առիւծի մազերի
չափ, եւ նրա եղունգները՝ թռչունների
մագիլների պէս:

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐԸ ԱՂԱՔԻՆԻՈՒՄ Է

31 «Այդ օրերից յետոյ, ես՝ Նաբու-
քոդոնոսորս, իմ աչքերը բարձրացրի
դէպի երկինք, իմ միտքը վերադարձաւ
ինձ, օրհնեցի Բարձրեալին, գովեցի եւ
փառաւորեցի յաւիտենապէս կենդանի
Աստծուն, որովհետեւ նրա իշխանու-
թիւնը յաւիտենական իշխանութիւն է,
նրա տէրութիւնը՝ սերնդից սերունդ»:
32 Երկրի բոլոր բնակիչները ոչինչ են
համարւում: Նա ըստ իր կամքի է
գործում երկնքի ուժերի եւ երկրի
բնակիչների նկատմամբ, եւ չկայ մէկը,
որ ընդդիմանայ նրա ձեռքին եւ ասի՝
"Ի՞նչ արեցիր": 33 Այդ նոյն ժամանակ
միտքս վերադարձաւ ինձ, ես վերա-
դարձայ իմ թագաւորական պատուին,
իմ կերպարանքը վերադարձաւ ինձ, իմ
իշխաններն ու իմ մեծամեծները
խնդրեցին ինձ, ես նորից իմ թա-
գաւորութեան վրայ հաստատուեցի, եւ
իմ մեծութիւնն աւելացաւ առաւել եւս:
34 Արդ, ես՝ Նաբուքոդոնոսորս, օրհնում
եմ, փառաւորում եւ առաւել պան-
ծացնում երկնքի արքային, որովհետեւ
նրա բոլոր գործերը ճշմարիտ են, նրա
ուղիները՝ արդար, եւ բոլորին, ովքեր
կ՚ամբարտաւանանան, նա կարող է
խոնարհեցնել»:

ԲԱՂԴԱՍԱՐԻ ԿՈՉՈՒՆԳԸ

5 Բաղդասար արքան ընթրիք տուեց
իր մեծամեծներին՝ թուով հազար հո-
գու, նաեւ գինի՝ հազար հոգու համար:
2 Երբ Բաղդասարը հարբեց, հրամայեց
բերել արծաթեայ եւ ոսկեայ այն
սպասքը, որ նրա հայր Նաբուքոդո-
նոսորը աւար էր առել Երուսաղէմի
տաճարից, որպէսզի թագաւորը, նրա
մեծամեծները, նրա հարճերն ու կա-
նայք դրանցով խմեն: 3 Բերեցին
ոսկեայ եւ արծաթեայ սպասքը, որ
վերցուած էր Աստծու տաճարից, որ
Երուսաղէմում էր, եւ թագաւորն ու նրա
մեծամեծները, նրա հարճերն ու
կանայք խմում էին դրանցով: 4 Գինի
էին խմում եւ օրհնում էին ոսկեայ,
արծաթեայ, պղնձեայ, երկաթեայ,
փայտէ եւ քարէ աստուածներին, իսկ
յաւիտենական Աստծուն, որ իշխա-
նութիւն ունէր նրանց հոգիների վրայ,
չօրհնեցին: 5 Նոյն ժամին երեւացին
մարդու ձեռքի մատներ, որոնք գրում
էին թագաւորի տաճարի ծեփած պատի
վրայ՝ կանթեղի դիմաց: Թագաւորը
տեսնում էր թաթն այն ձեռքի, որ
գրում էր: 6 Այն ժամանակ թագաւորը
գոյնը գցեց, նրա մտքերը խռովում էին
նրան, նրա մէջքի յօդերը խախտւում
էին, եւ նրա ծնկերը միմեանց էին
բախւում: 7 Թագաւորը ուժգին աղա-
ղակով հրամայեց բերել մոգերին,

աստղագուշակներին, գիտուններին եւ
ասաց բաբելացիների իմաստուններին.
«Ով որ կարդայ այդ գրութիւնը եւ նրա
մեկնութիւնը յայտնի ինձ, ծիրանի
պիտի հագնի, իր պարանոցին պիտի
կրի ոսկեայ մանեակ եւ իմ թագա-
ւորութեան երրորդ մարդը պիտի
դառնայ»: 8 Բաբելացիների բոլոր
իմաստունները մտնում էին եւ չէին
կարողանում գրութիւնը կարդալ եւ ոչ
էլ նրա մեկնութիւնը յայտնել թա-
գաւորին: 9 Բաղդասար արքան խռո-
վուեց, եւ նրա երեսի գոյնը փոխուեց.
նրա մեծամեծները նոյնպէս խռովուե-
ցին նրա հետ: 10 Թագուհին մտաւ
խրախճանքի ապարանքը եւ ասաց.
«Արքա՛յ, ապրի՛ր յաւիտեան. թող քո
մտքերը չխռովեն քեզ, եւ քո երեսի
գոյնը չեղծուի, 11 որովհետեւ քո թա-
գաւորութեան ներքոյ կայ մի մարդ,
որի մէջ Աստծու Սուրբ Հոգին կայ. քո
հօր ժամանակ ուժ եւ իմաստութիւն
կար նրա մէջ եւ քո հայրը՝ Նաբու-
քոդոնոսոր արքան, նրան գուշակների,
մոգերի, աստղագուշակների եւ հմա-
յողների գլխաւոր կարգեց, 12 որով-
հետեւ նրա մէջ առաւել շատ է իմաս-
տութեան եւ հանճարի ոգին. նա մեկ-
նում է երազները, բացայայտում
առեղծուածները եւ լուծում է խրթին
բաները. դա Դանիէլն էր, եւ արքան
նրա անունը Բաղդասար դրեց: Արդ,
թող կանչեն նրան, եւ նա կը յայտնի
դրա մեկնութիւնը»:

ԴԱՆԻԷԼԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԳՐՈՒԹԻՒՆԸ

13 Այն ժամանակ Դանիէլին ներս
բերեցին թագաւորի առաջ, եւ թագա-
ւորը ասաց Դանիէլին. «Դո՞ւ ես Դա-
նիէլը՝ Հրէաստանի գերեվարուածներից
մէկը, որին բերեց իմ հայր Նաբու-
քոդոնոսորը: 14 Քո մասին լսեցի, որ
Աստծու Սուրբ Հոգին կայ քո մէջ, եւ
դու ունես աւելի ուժ, հանճար եւ
իմաստութիւն: 15 Արդ, ահա իմ առաջ
եկան իմաստուններ, մոգեր եւ հմա-
յողներ, որպէսզի այդ գրութիւնը կար-
դան եւ դրա մեկնութիւնը յայտնեն
ինձ, բայց չկարողացան մեկնել ինձ
համար: 16 Ես քո մասին լսեցի, թէ
կարող ես մեկնութիւններ տալ. արդ,
եթէ կարողանաս այդ գրութիւնը
կարդալ եւ դրա մեկնութիւնը տալ ինձ,
ծիրանի պիտի հագնես, ոսկեայ
մանեակ պիտի կրես քո պարանոցին եւ
իմ թագաւորութեան երրորդ մարդը
պիտի դառնաս»:
17 Եւ Դանիէլն ասաց թագաւորի
առաջ. «Քո պարգեւները թող քեզ
մնան, եւ քո տան պատիւը դու
ուրիշի՛ն տուր, իսկ ես այդ գրութիւնը
կը կարդամ եւ դրա մեկնութիւնը կը
յայտնեմ քեզ: 18 Արքա՛յ, Բարձրեալը
հզօրութիւն, թագաւորութիւն, պատիւ
եւ փառք տուեց քո հօրը՝ Նաբուքո-
դոնոսորին, 19 եւ այն հզօրութեան
պատճառով, որ տուեց նրան, բոլոր
ազգերը, ժողովուրդներն ու լեզուները
զարհուրելով դողում էին նրանից. նա
ում ուզում էր՝ հարուածում էր, ում
ուզում էր՝ սպանում, ում ուզում էր՝
բարձրացնում եւ ում ուզում էր՝ խո-
նարհեցնում: 20 Երբ գոռոզացաւ նրա
սիրտը, եւ նրա ոգին համարձակուեց
ամբարտաւանանալ, նա ընկաւ իր թա-
գաւորական աթոռից, պատիւը վերա-
ցաւ նրանից, 21 նա վտարուեց մարդ-
կանց միջից, գազանների սիրտ տրուեց
նրան, վայրի էշերի հետ էր նրա
բնակութիւնը, ինչպէս արջառի՝ խոտ
էին տալիս նրան, երկնքի ցօղից նրա
մարմինը թրջուեց, մինչեւ որ նա
ճանաչեց, թէ Բարձրեալն է տիրում
մարդկանց թագաւորութեանը եւ այն
կը տայ նրան, ում որ կամենայ: 22 Արդ,
դու՝ նրա որդի՛ Բաղդասար, քո սիրտը
չխոնարհեցրիր Աստծու առաջ, որից
այդ բոլորը ստանում էիր, 23 երկնքի
Աստծու դէմ գոռոզացար, նրա Տան
սպասքը բերին քո առջեւ, եւ դու, քո
մեծամեծները, քո հարճերն ու քո
կանայք գինի էիք խմում դրանցով,
օրհնում էիր ոսկեայ, արծաթեայ,
պղնձեայ, երկաթեայ, փայտէ եւ քարէ
աստուածներին, որոնք ո՛չ տեսնում են,
ո՛չ լսում եւ ո՛չ էլ իմանում, իսկ
Աստծուն, որի ձեռքում են քո շունչը եւ
քո բոլոր ճանապարհները, չփառաւո-
րեցիր: 24 Այդ պատճառով էլ նրա
կողմից ուղարկուեց ձեռքի թաթը եւ
գրեց այդ գրութիւնը. 25 ահա այս է

այն գրութիւնը, որ գրուած է. ՄԱՆԷ, ԹԷԿԷՂ, ՓԱՐԷՍ† : 26 Եւ սա է այդ բանի մեկնութիւնը. ՄԱՆԷ՝ Աստուած չափեց քո թագաւորութիւնը եւ վերջ տուեց դրան. 27 ԹԷԿԷՂ՝ կշեռքով կշռուեց եւ պակաս եղաւ. 28 ՓԱՐԷՍ՝ քո թագաւորութիւնը բաժանուեց եւ տրուեց մարերին ու պարսիկներին»: 29 Բաղդասարը հրաման տուեց, եւ նրան ծիրանի հագցրին ու ոսկեայ մանեակ դրին պարանոցին: Ապա նրան հռչակեցին իշխան՝ լինելու թագաւորութեան երրորդ մարդը: 30 Հէնց նոյն գիշերը սպանուեց քաղդէացիների Բաղդասար արքան:

31 Իսկ Դարեհ արքան, որ վաթսուներկու տարեկան էր, գրաւեց թագաւորութիւնը:

ԴԱՆԻԷԼԸ ԱՌԻՒԾՆԵՐԻ ԳԻՒ ՄԷՋ

6 Հաճելի թուաց Դարեհին, եւ նա իր թագաւորութեան մէջ հարիւր քսան նախարար նշանակեց, որպէսզի իր ողջ թագաւորութեան մէջ նախարարներ լինեն. 2 նա նրանց վրայ կարգեց երեք հրամանատարներ, որոնցից մէկը Դանիէլն էր, որպէսզի նրանք նախարարներին հրաման տան, եւ թագաւորը չծանրաբեռնուի: 3 Դանիէլը առաւելութիւն ունէր նրանց վրայ, որովհետեւ նրա մէջ աւելի բարձր հոգի կար, 4 ուստի թագաւորը նրան նշանակեց կառավարիչ իր ողջ թագաւորութեան վրայ: Հրամանատարներն ու նախարարները նախանձում էին եւ առիթ էին փնտռում մեղադրելու Դանիէլին: Բայց ոչ մի առիթ, յանցանք եւ մեղք չէին գտնում, որովհետեւ նա հաւատարիմ էր: 5 Հրամանատարներն ասացին. «Մենք Դանիէլի դէմ ոչ մի այլ բանում առիթ չենք գտնի, բացի նրա Աստծու օրէնքներից»: 6 Այն ժամանակ հրամանատարներն ու նախարարները կանգնեցին թագաւորի առաջ եւ ասացին նրան. «Դարե՛հ արքայ, թող կեանքդ յաւիտեան լինի. 7 քո թագաւորութեան մէջ գտնուող բոլոր զօրավարներն ու նախարարները, իշխաններն ու կուսակալները խորհուրդ արին արքունական համաձայնութեամբ հաստատելու եւ ամրացնելու մի ուխտ, որ, եթէ մինչեւ երեսուն օր որեւէ մէկը որեւէ բան խնդրի որեւէ աստծուց կամ մարդուց, բացի քեզնից, արքա՛յ, կը նետուի առիւծների գուբը: 8 Արդ, արքա՛յ, հաստատի՛ր ուխտը եւ հրամա՛ն գրիր, որպէսզի չանտեսուի մարերի եւ պարսիկների օրէնքը»: 9 Այն ժամանակ Դարեհ արքան պատուիրեց գրել հրամանը: 10 Դանիէլը երբ իմացաւ, որ հրաման է եղել, մտաւ իր տունը, իսկ նրա վերնատան պատուհանները բացուած էին դէպի Երուսաղէմ: Օրական երեք անգամ նա ծնրադրում էր եւ աղօթում, գոհութիւն էր յայտնում իր Աստծուն, ինչպէս առաջ էր անում: 11 Այն ժամանակ այդ մարդիկ գաղտնի դիտեցին եւ տեսան Դանիէլին, որ աղօթում էր եւ աղաչում իր Աստծուն: 12 Եկան եւ ասացին թագաւորին. «Արքա՛յ, դու ուխտ չհաստատեցի՞ր, թէ իւրաքանչիւր մարդ, որ մինչեւ երեսուն օր բան խնդրի որեւէ աստծուց կամ մարդուց, բացի քեզնից՝ արքայից, կը նետուի առիւծների գուբը»: Եւ արքան ասաց. «Ճշմարիտ է այդ խօսքը. մարերի ու պարսիկների հրամանը օրինական չէ խախտել»: 13 Այն ժամանակ պատասխանեցին թագաւորին եւ ասացին. «Դանիէլը, որ Հրէաստանի գերեվարուածներից մէկն է, չհնազանդուեց քո հրամանին, արքա՛յ, եւ օրական երեք անգամ բան է խնդրում իր Աստծուց»: 14 Այն ժամանակ, երբ թագաւորը լսեց այս խօսքը, շատ վշտացաւ Դանիէլի համար եւ ջանում էր փրկել նրան: Մինչեւ երեկոյ մտածում էր փրկել նրան: 15 Այն ժամանակ այդ մարդիկ ասացին թագաւորին. «Իմացի՛ր, արքա՛յ, որ օրինական չէ խախտել պարսիկների ու մարերի հրամանը եւ ամէն ուխտ ու դաշինք, որ արքան է հաստատում»:

16 Այն ժամանակ թագաւորը հրամայեց, եւ Դանիէլին բերին ու նրան նետեցին առիւծների գուբը: Արքան ասաց Դանիէլին. «Այն Աստուածը, որին դու յաճախ աղօթում ես, նա կը փրկի քեզ»: 17 Եւ բերեցին մի քար,

†Այսինքն՝ հաշուած, կշռուած, բաժանուած:

դրեցին գբի վրայ, եւ թագաւորը կնքեց այն իր մատանիով եւ մեծամեծների մատանիներով, որպէսզի այլ բան չպատահի Դանիէլին: 18 Թագաւորը գնաց իր տուն, պառկեց առանց ընթրիքի, խորտիկ չմատուցեցին նրան, եւ նրա քունը փախաւ: Աստուած փակեց առիւծների բերանը, եւ նրանք չյօշոտեցին Դանիէլին: 19 Այն ժամանակ արքան առաւօտեան լուսաբացին ելաւ, շտապ եկաւ առիւծների գուբը 20 եւ, երբ մօտեցաւ գբին, բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Դանիէ՛լ, կենդանի Աստծու ծառա՛յ, քո Աստուածը, որին դու յաճախ աղօթում էիր, կարողացա՞ւ արդեօք քեզ փրկել առիւծների բերանից»: 21 Եւ Դանիէլը ասաց արքային. «Արքա՛յ, թող կեանքդ յաւիտեան լինի. 22 իմ Աստուածն ուղարկեց իր Հրեշտակին եւ փակեց այս առիւծների բերանները, եւ նրանք չյօշոտեցին ինձ, որովհետեւ ես արդար գտնուեցի նրա առաջ, իսկ քո հանդէպ, արքա՛յ, ոչ մի մեղք չեմ գործել»: 23 Այն ժամանակ թագաւորը ներքնապէս ուրախացաւ, հրամայեց, որ Դանիէլին հանեն գբից: Դանիէլը հանուեց այդ գբից, եւ վէրք բոլորովին չգտնուեց նրա վրայ, որովհետեւ նա հաւատաց իր Աստծուն: 24 Թագաւորը հրամայեց, եւ բերեցին Դանիէլի դէմ չարախօսող մարդկանց, եւ նրանք, նրանց որդիներն ու նրանց կանայք գցուեցին առիւծների գուբը. դեռ գբի յատակին չէին հասել, երբ առիւծները յափշտակեցին նրանց եւ մանրեցին նրանց բոլոր ոսկորները: 25 Այն ժամանակ Դարեհ արքան հետեւեալը գրեց բոլոր ազգերի, ժողովուրդների եւ լեզուների մարդկանց, որ բնակւում էին ամբողջ աշխարհում. 26 «Թող շատանայ ձեր խաղաղութիւնը. իմ կողմից արուեց այս հրամանը իմ թագաւորութեան բոլոր իշխանութիւններին, որպէսզի երկնչեն եւ դողան Դանիէլի Աստծուց, որովհետեւ նա է կենդանի Աստուածը եւ կայ յաւիտեան. նրա արքայութիւնը չի կործանուի, եւ նրա տէրութիւնը կը մնայ մինչեւ վերջ: 27 Նա է, որ օգնական է լինում եւ փրկում, հրաշքներ է գործում երկնքում եւ երկրում, նա է, որ Դանիէլին փրկեց առիւծների բերանից»: 28 Եւ Դանիէլը յաջողութիւն էր գտնում Դարեհի եւ պարսիկ Կիւրոսի թագաւորութեան մէջ:

ԴԱՆԻԷԼԻ ՏԵՍԻԼՔԸ ՉՈՐՍ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7 Քաղդէացիների Բաղդասար արքայի առաջին տարում Դանիէլը երազ տեսաւ. գլխում մի տեսիլք երեւաց, երբ իր անկողնում էր, եւ նա գրի առաւ իր երազը: 2 «Ես՝ Դանիէլս, գիշերային տեսիլքում տեսնում էի, 3 որ, ահա, երկնքի չորս հողմերը բախում էին մեծ ծովը, եւ ծովից դուրս էին գալիս տարբեր կերպարանքով չորս մեծամեծ գազաններ: 4 Առաջինը նման էր թեւաւոր մատակ առիւծի, եւ նրա թեւերը արծուի թեւերի նման էին. ես նայում էի, մինչեւ որ նրա թեւերը թափուեցին, նա պարզ երեւաց գետնին եւ կանգնեց ինչպէս մարդը ոտքերի վրայ, ու մարդու սիրտ տրուեց նրան: 5 Իսկ ահա երկրորդ գազանը նման էր արջի, մի կողմ էր կանգնած եւ երեք կողոսկրեր կային բերանում՝ ժանիքների մէջ: Այսպէս էին ասում նրան. "Ելի՛ր, կե՛ր շատերի մարմինը": 6 Դրանից յետոյ նայում էի. եւ ահա տեսայ մի այլ գազան ընձի նման. նրա վրայ թռչունի չորս թեւեր կային. գազանը չորս գլուխ ունէր, եւ իշխանութիւն տրուեց նրան: 7 Դրանից յետոյ դարձեալ նայում էի. եւ ահա տեսայ չորրորդ գազանին, որ ահեղ, զարմանալի եւ առաւել հզօր էր. նրա ժանիքները երկաթեայ էին, ուտումմանրում էր եւ մնացորդները ոտքի տակ կոտրատում: Սա աւելի այլակերպ էր, քան նրանից առաջ բոլոր գազանները. տասը եղջիւր ունէր: 8 Ապշած նայում էի նրա եղջիւրներին. եւ ահա մի ուրիշ փոքրիկ եղջիւր էր դուրս գալիս դրանց միջից. նախկիններից երեք եղջիւրներ թափւում էին նրա առաջ. եւ ահա մարդու աչքերի պէս աչքեր կային այդ եղջիւրի վրայ, նաեւ մի բերան, որ մեծ-մեծ բաներ էր խօսում:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԱՆԸ

9 Նայում էի, մինչեւ որ աթոռներ դրուեցին, եւ մի Մերուինի նստում էր այնտեղ. նրա հագուստը ձեան պէս սպիտակ էր, նրա գլխի մազերը մաքուր էին գեղմի նման, նրա աթոռը՝ կրակի բոցի նման, եւ նրա անիւները՝ ինչպէս բորբոքուած կրակ: 10 Նրա առաջից հոսում էր կրակէ յորդ մի գետ, հազար-հազարաւորներ պաշտում էին նրան, եւ բիւր-բիւրաւորներ կային նրա առջեւ: Նա ատեան նստեց, եւ գրքերը բացուեցին: 11 Այն ժամանակ ես շարունակում էի նայել այն մեծամեծ խօսքերի պատճառով, որ այդ եղջիւրն էր խօսում, մինչեւ որ գազանը վերացաւ ու կորաւ, եւ նրա մարմինը տրուեց կրակին՝ այրուելու: 12 Միւս գազանների իշխանութիւնը վերացուեց, եւ կեանքի երկարութեան որոշակի ժամանակ տրուեց նրանց: 13 Գիշերային տեսիլքում տեսնում էի, որ, ահա, երկնքի ամպերի միջից գալիս էր մէկը մարդու Որդու նման եւ հասնում Մերուինուն. նա բերուեց նրա առջեւ: 14 Նրան իշխանութիւն, պատիւ եւ արքայութիւն տրուեց. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները պիտի ծառայեն նրան. նրա իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, որ չի անցնի, եւ նրա թագաւորութիւնը չի կործանուի:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼՔԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

15 Իմ հոգին սոսկաց իմ մարմնում, իմ՝ Դանիէլիս մէջ, եւ իմ գլխի տեսիլքը խռովեց ինձ: 16 Մօտեցայ այնտեղ գտնուողներից մէկին եւ խնդրում էի ճշմարտութիւնն իմանալ այդ բոլորի մասին: Նա ասաց ինձ ճշմարտութիւնը եւ յայտնեց ինձ այդ խօսքերի մեկնութիւնը:

17 Այդ չորս մեծամեծ գազանները նշանակում են, որ չորս թագաւորութիւններ պիտի բարձրանան երկրի վրայ: 18 Ապա բարձրեալ Աստծու սրբերը պիտի ելնեն եւ առնեն թագաւորութիւնը եւ պահեն այն յաւիտեանս յաւիտենից: 19 Քննում էի ճշմարտութիւնը չորրորդ գազանի մասին, որովհետեւ նա առաւել այլակերպ էր, քան բոլոր գազաններն ու յոյժ ահազդու. նրա ժանիքները երկաթեայ էին, եւ նրա մագիլները պղնձեայ, նա ուտում էր ու մանրում եւ մնացորդները կոտրատում ոտքերի տակ: 20 Նաեւ քննում էի ճշմարտութիւնը նրա գլխի տասը եղջիւրների մասին եւ այն միւսի մասին, որ ելնում եւ թափում էր երեք եղջիւրները, որ աչքեր ունէր եւ բերան, որ մեծ-մեծ բաներ էր խօսում, եւ նրա տեսքը առաւել մեծ էր, քան միւսներինը: 21 Տեսնում էի, որ այդ եղջիւրը պատերազմում էր սրբերի դէմ եւ յաղթում էր նրանց, 22 մինչեւ որ եկաւ Մերուինին եւ իրաւունք տուեց Բարձրեալի սրբերին. ժամանակը հասաւ, եւ սրբերը տիրեցին թագաւորութեանը: 23 Նա ասաց. "Չորրորդ գազանը նշանակում է, որ չորրորդ թագաւորութիւն պիտի լինի երկրում, որ այն աւելի մեծ պիտի լինի, քան բոլոր թագաւորութիւնները, կուլ պիտի տայ ամբողջ երկիրը, պիտի կոխոտի եւ հարուածի այն:

24 Իսկ նրա տասը եղջիւրները նշանակում են, որ տասը թագաւորներ պիտի բարձրանան, եւ նրանցից յետոյ պիտի բարձրանայ մէկ ուրիշը, որ աւելի չար պիտի լինի, քան բոլոր նախորդները, պիտի հպատակեցնի երեք թագաւորներին, 25 Բարձրեալի դէմ խօսքեր պիտի բարբառի, պիտի մոլորեցնի Բարձրեալի սրբերին, պիտի կարծի փոփոխել ժամանակներն ու օրէնքները, եւ դա պիտի յաջողուի նրան մինչեւ որոշ ժամանակ, ինչ-որ ժամանակներ եւ ժամանակների կէսը: 26 Ատեան պիտի հաւաքուի, պիտի փոխեն նրա իշխանութիւնը, պիտի ոչնչացնեն այն եւ իսպառ կորստի մատնեն: 27 Եւ երկնքի տակ գտնուող թագաւորութիւնն ու թագաւորների մեծութիւնը տրուեց Բարձրեալի սրբերին. նրա արքայութիւնը յաւիտենական արքայութիւն է, եւ բոլոր իշխանութիւնները պիտի ծառայեն եւ հնազանդուեն նրան: 28 Մինչեւ այստեղ է խօսքի վախճանը: Ինձ՝ Դանիէլիս, շատ էին խռովեցնում իմ մտքերը, փոխուեց իմ երեսի գոյնը, եւ ես այս բանը պահում էի իմ սրտի մէջ»:

ԴԱՆԻԷԼԻ ՏԵՍԻԼՔԸ ԽՈՅԻ ԵՒ ՔՕՉԻ ՄԱՍԻՆ

8 «Բաղդասար արքայի երրորդ տարում մի տեսիլք երեւաց ինձ: 2 Ես՝ Դանիէլս, առաջին տեսիլքից յետոյ, Էլամի երկրում գտնուող Շօշ ապարանքում էի, Ուբաղ գետի մօտ: 3 Բարձրացրի աչքերս եւ տեսայ, որ, ահա, մի խոյ կար Ուբաղ գետի դիմաց, եւ նրա եղջիւրները բարձր էին. մէկը բարձր էր միւսից, եւ այն, որ բարձր էր, յետոյ էր դուրս գալիս: 4 Տեսնում էի, որ խոյը ոգորում էր ծովի արեւմուտքի, հիւսիսի եւ հարաւի դէմ, ոչ մի գազան չէր կարող նրա դիմաց կանգնել, չկար մէկը, որ փրկուէր նրանից, նա անում էր այն, ինչ ուզում էր եւ հզօրանում: 5 Ես հետեւում էի ու մտածում: Եւ ահա մի քօշ գալիս էր արեւմուտքից երկրի վրայով եւ գետնին չէր դիպչում. քօշը ունէր մի եղջիւր իր աչքերի միջեւ: 6 Նա հասաւ եղջիւրաւոր խոյին, որին ես տեսնում էի Ուբաղի դիմաց, եւ յարձակուեց նրա վրայ իր ամբողջ ուժով: 7 Ես տեսայ նրան, որ հասաւ մինչեւ խոյը:

Նա կատաղեց, հարուածեց խոյին եւ խորտակեց նրա երկու եղջիւրները, իսկ խոյը ուժ չունէր նրան դիմադրելու:

Քօշը խոյին գետին գցեց, ոտքի կոխան արեց նրան, եւ չկար մէկը, որ խոյին ազատէր քօշից:

8 Քօշը մեծապէս հզօրացաւ, եւ հզօրանալիս խորտակուեց նրա մեծ եղջիւրը, որի տակից չորս այլ եղջիւրներ ելան՝ ուղղուած դէպի երկնքի չորս հողմերը: 9 Դրանցից մէկից ելաւ մի հզօր եղջիւր, առաւել հզօրացաւ դէպի հիւսիս, ուժ ստացաւ, 10 բարձրացաւ մինչեւ երկնքի զօրութիւնները եւ երկնքի զօրութեան ու աստղերի մի մասը նետեց երկրի վրայ եւ կոխոտեց դրանք այնքան ժամանակ, 11 մինչեւ որ զօրավարը փրկի գերութիւնը. նրանով զոհաբերումները խանգարուեցին, եւ այդպէս եղաւ, ու դա յաջողուեց նրան. սրբութիւնը խաթարուեց, 12 մեղքեր բարդուեցին զոհաբերումների վրայ, եւ արդարութիւնը վերացաւ երկրից. այդպէս արեց, եւ դա յաջողուեց նրան:

13 Ես լսեցի մի սրբից, որ խօսում էր. եւ մի այլ սուրբ, որ խօսում էր նրա հետ, ասաց. "Մինչեւ ե՞րբ այդ տեսիլքը պիտի մնայ. զոհաբերումները վերացել են, մեղքերը աւերներ են գործել, եւ սրբութիւնն ու զօրութիւնը կոխոտուել": 14 Եւ ասաց նրան. "Պիտի մնայ մինչեւ երեկոյ եւ մինչեւ վաղորդայն, մինչեւ հազար երկու հարիւր վաթսունութ օր, ապա պիտի սրբանայ սրբարանը"»:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼՔԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

15 «Եւ երբ ես՝ Դանիէլս, տեսիլքը տեսայ եւ փորձում էի խելամուտ լինել, ահա իմ առջեւ կանգնեց մի բան մարդու տեսքով, 16 եւ ես Ուբաղ գետի միջից մի մարդու ձայն լսեցի, որ կանչեց եւ ասաց. "Գաբրիէ՛լ, բացատրի՛ր նրան այդ տեսիլքը": 17 Եւ նա եկաւ կանգնեց այնտեղ, ուր ես էի կանգնած: Նրա գալու ժամանակ ես ապշեցի եւ ընկայ երեսիս վրայ: Նա ասաց ինձ. "Իմացի՛ր, մարդո՛ւ որդի, որ տեսիլքդ ժամանակի վախճանի մասին է": 18 Եւ մինչ նա խօսում էր ինձ հետ, յիմարացայ եւ երեսիս վրայ գետին ընկայ: Նա բռնեց ինձ, կանգնեցրեց ինձ ոտքերիս վրայ եւ ասաց ինձ. 19 "Ահա ես ցոյց կը տամ քեզ, թէ վերջում ինչ է լինելու երկրի վրայ, քանի որ տակաւին հեռու է վախճանը: 20 Եղջիւրաւոր այն խոյը, որ տեսնում էիր, պարսիկների եւ մարերի թագաւորն է. 21 եւ այն քօշը յոյների թագաւորն է, իսկ այն մեծ եղջիւրը, որ նրա աչքերի միջեւ էր, նոյն ինքն առաջին թագաւորն է: 22 Երբ նա խորտակուի, նրա տակ գտնուող միւս եղջիւրները՝ չորս թագաւորներ, կ'ելնեն նրա ազգից, բայց ոչ իրենց ուժով: 23 Նրանց թագաւորութիւնից յետոյ, երբ իրենց լրումին հասնեն նրանց մեղքերը, ժպիրհ երեսով մի թագաւոր պիտի բարձրանայ: Այս առեղծուածը խորհրդաւոր է, 24 եւ հզօր է նրա զօրութիւնը: Նա սքանչելի բաներ պիտի կործանի, եւ դա պիտի յաջողուի ու կատարուի, նա պիտի ոչնչացնի հզօրներին եւ սուրբ ժողովրդին. 25 նրան

յաջողուելու է լծի տակ դնել ուրիշ-
ներին, նենգութիւն նիւթել իր ձեռքով,
նա պիտի մեծամտանայ իր սրտում,
նենգութեամբ պիտի ապականի շատե-
րին, շատերին կորստի պիտի մատնի եւ
ձուլերի պէս պիտի մանրի իր ձեռքում:
26 Երեկոյեան եւ առաւօտեան տե-
սիլքը, որի մասին ասուեց, ճշմարիտ է,
եւ դու կնքի՛ր քո տեսիլքը, որովհետեւ
այն շատ օրերի համար է":
27 Եւ ես՝ Դանիէլս, ննջեցի եւ հի-
ւանդացայ: Ապա ելայ ու արքունի
գործը կատարեցի: Ես զարմացած էի
այդ տեսիլքից, եւ չկար մէկը, որ այն
բացատրէր»:

ԴԱՆԻԷԼԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵՂՔԸ

9 «Մարերի սերնդից Արշաւիրի որդու՝
Դարեհի առաջին տարում, որ թագա-
ւորեց քաղդէացիների թագաւորու-
թեան մէջ, 2 ես՝ Դանիէլս, խելամուտ
եղայ այն տարիների թուագրութեանը,
երբ Տիրոջ խօսքը հասաւ Երեմիա մար-
գարէին՝ Երուսաղէմի աւերման եօթա-
նասուներորդ տարում: 3 Ես երեսս
դարձրի դէպի իմ Տէր Աստուածը՝
խնդրելու համար աղօթքներով ու
աղաչանքներով, պահեցողութեամբ ու
քուրձ կրելով. 4 աղօթեցի Տէր Աստ-
ծուն, գոհութիւն յայտնեցի եւ ասացի.
"Ո՛վ Տէր Աստուած մեծ եւ սքանչե-
լագործ, որ պահում ես քո սիրելիների
ուխտն ու ողորմութիւնը, որոնք պա-
հում են քո պատուիրանները: 5 Մեղք
գործեցինք, անօրինացանք, անիրաւու-
թիւն արեցինք, ապստամբեցինք եւ
շեղուեցինք քո պատուիրաններից եւ
քո օրէնքներից, 6 չլսեցինք քո ծառա-
ներին՝ մարգարէներին, որոնք քո
անունով խօսեցին մեր թագաւորների,
մեր իշխանների, մեր հայրերի եւ երկրի
ամբողջ ժողովրդի հետ: 7 Քոնն է,
Տէ՛ր, արդարութիւնը, եւ մերն է ամօթն
այսօր մեր երեսին, Ցուդայի երկրի
մարդկանց, Երուսաղէմի բնակիչների
եւ Իսրայէլի բոլոր մերձաւորների ու
հեռաւորների ամօթը ամբողջ երկրում,
ուր ցրեցիր նրանց իրենց անհնա-
զանդութեան համար, քանզի նրանք
չհնազանդուեցին քեզ, Տէ՛ր: 8 Մերն է
ամօթը մեր երեսին, մեր թագաւորների,
մեր իշխանների եւ մեր հայրերի ամօ-
թը, քանզի մեղք գործեցինք, 9 իսկ մեր
Տէր Աստծունն է գթութիւնը եւ ներո-
ղամտութիւնը, որովհետեւ ապստամ-
բեցինք Տիրոջ դէմ, 10 չլսեցինք մեր
Տէր Աստծու ձայնը՝ հետեւելու համար
նրա օրէնքներին, որ դրեց մեր առաջ
իր ծառաների՝ մարգարէների միջոցով:
11 Ամբողջ Իսրայէլը զանց առաւ քո
օրէնքները եւ շեղուեց, որ չլսի քո
ձայնը, եւ անէծք ու երդում թա-
փուեցին մեզ վրայ, գրուած քո ծա-
ռայի՝ Մովսէսի օրէնքում, Տէ՛ր, քանի
որ մեղանչեցինք նրա դէմ: 12 Տէրը
հաստատեց իր խօսքերը, որ ասել էր
մեր մասին եւ մեր դատաւորների մա-
սին, որոնք դատում էին մեզ՝ բերելով
մեզ վրայ այնպիսի մեծամեծ չարիք-
ներ, որ չեն եղել ամբողջ երկնքի տակ,
ինչպէս որ եղան Երուսաղէմում:
13 Ինչպէս որ գրուած է Մովսէսի
օրէնքում, այդ բոլոր չարիքները եկան
մեզ վրայ, իսկ մենք չաղաչեցինք մեր
Տէր Աստծուն՝ յետ դառնալու մեր
հայրերի անիրաւութիւններից եւ խե-
լամուտ լինելու քո ամբողջ ճշմար-
տութեանը: 14 Մեր Տէր Աստուածը
բացեց իր աչքը մեր չարիքների վրայ
եւ դրանք բերեց մեզ վրայ, որովհետեւ
արդար է մեր Տէր Աստուածը իր այն
բոլոր գործերի մէջ, որ արեց մեր
հանդէպ, քանի որ չլսեցինք նրա
ձայնը: 15 Եւ արդ, Տէ՛ր Աստուած մեր,
որ հզօր ձեռքով քո ժողովրդին հա-
նեցիր Եգիպտացիների երկրից եւ քո
անունը փառաւորեցիր, իսկ մենք այսօր
մեղք գործեցինք եւ անօրինացանք:
16 Տէ՛ր, թող քո ողջ ողորմածութեամբ
անցնի քո զայրոյթը եւ վերանայ քո
բարկութիւնը քո քաղաքի՝ Երուսաղէմի
եւ քո սուրբ լերան վրայից, քանզի
մեղանչեցինք, եւ մեր հայրերի անօրի-
նութեան պատճառով Երուսաղէմը եւ
քո ամբողջ ժողովուրդը նախատինքի
ենթարկուեց բոլորի կողմից, որոնք
գտնուում են մեր շուրջը: 17 Արդ, Տէ՛ր
Աստուած մեր, լսի՛ր քո ծառայի
աղօթքներն ու խնդրանքները եւ ցոյց
տուր քո երեսը՝ յանուն քեզ, այն
սրբարանի մէջ, որ աւերուեց: 18 Խո-

նարհեցրո՛ւ, Աստուա՛ծ իմ, քո ականջը
եւ լսի՛ր ինձ. բա՛ց քո աչքերը եւ տե՛ս
ապականութիւնը մեր եւ քո քաղաքի,
որի վրայ դրուած է քո անունը, որով-
հետեւ մեր արդարութեան պատճառով
չէ, որ գութ ենք հայցում քեզնից, այլ՝
քո անբաւ գթութեան պատճառով, Տէ՛ր:
19 Լսի՛ր, Տէ՛ր, ների՛ր, Տէ՛ր, ունկնդրի՛ր,
Տէ՛ր, եւ մի՛ յապաղիր՝ յանուն քեզ,
Աստուա՛ծ իմ, քանզի քո անունով է
կոչւում քո քաղաքը:»

ԳԱԲՐԻԷԼԸ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

20 «Եւ մինչ ես խօսում էի ու աղո-
թում, խոստովանում էի իմ մեղքերը եւ
Իսրայէլի ժողովրդի մեղքերը եւ գութ
էի հայցում իմ Տէր Աստծուց սուրբ
լերան համար, 21 մինչ ես խօսում էի
աղօթքով, ահա Գաբրիէլը, մի մարդ,
որին տեսել էի նախորդ տեսիլքում,
թռաւ եւ մօտեցաւ ինձ՝ երեկոյեան
զոհաբերութեան ժամին, 22 խելամուտ
դարձրեց ինձ, խօսեց ինձ հետ եւ
ասաց.
"Դանիէ՛լ, այժմ եկայ խելք սովո-
րեցնելու քեզ: 23 Քո աղօթքի սկզբից
մի պատգամ տրուեց, եւ ես եկայ այն
յայտնելու քեզ, քանի որ դու սիրելի
մարդ ես: Արդ, մտածի՛ր այդ խօսքի
մասին եւ մի՛տքդ պահիր տեսիլքը:
24 Մէկ եօթանասունեօթնեակ է սահ-
մանուած քո ժողովրդի եւ սուրբ քա-
ղաքի վրայ, որպէսզի վերջ գտնեն
մեղքերը, աւարտուեն անօրէնու-
թիւնները, ջնջուեն անիրաւութիւնները,
ներուեն ամբարշտութիւնները, եւ գայ
յաւիտենական արդարութիւնը, որպէս-
զի իրականանայ տեսիլքն ու մարգա-
րէութիւնը, օծուի Սրբութիւն սրբոցը,
25 եւ դու իմանաս ու խելամուտ լինես
պատասխան տալու սկզբից ասուած
խօսքերին:
Երուսաղէմի շինուելուց մինչեւ ա-
ռաջին օծումը կայ եօթը եօթնեակ եւ
վաթսուներկու եօթնեակ, որպէսզի վե-
րաշինուեն հրապարակներն ու պա-
րիսպները եւ նորոգուեն ժամանակ-
ները: 26 Վաթսուներկու եօթնեակից
յետոյ կը վերանայ օծումը, արդա-
րութիւն չի լինի նրա մէջ, եւ քաղաքն ու
սրբարանը կ՝ապականուեն այն
առաջնորդով հանդերձ, որ պիտի գայ,
եւ դրանք պիտի ջնջուեն հեղեղով.
մինչեւ պատերազմի վախճանը նա
պիտի հաստատի ապականութիւնը եւ
զօրացնի շատերի ուխտը:
27 Մէկ եւ կէս եօթնեակում պիտի
դադարեցնի սեղաններն ու զոհաբե-
րութիւնները. ապականութիւնը պիտի
հասցնի մինչեւ վերջին ծայրը, մինչեւ որ
վախճան եւ տագնապ բերի այդ
ապականութեան եւ զօրացնի շատերի
ուխտը: Մէկ եւ կէս եօթնեակում պիտի
վերանան զոհերն ու ընծաները, աւե-
րածութեան պղծութիւնը պիտի մնայ
տաճարի վրայ, ու մինչեւ ժամանակի
վախճանը վերջ պիտի տրուի աւե-
րուածին"»:

ԴԱՆԻԷԼԻ ՎԵՐՋԻՆ ՄԵԾ ՏԵՍԻԼՔԸ

10 Պարսից Կիւրոս արքայի երրորդ
տարում պատգամ յայտնուեց Դա-
նիէլին, որը կոչւում էր Բաղդասար:
Ճշմարիտ է պատգամը. մեծ ուժ եւ
հանճար տրուեց նրան տեսիլքում:
2 «Այդ օրերին ես՝ Դանիէլս, երեք
շաբաթ սուգի մէջ էի: 3 Լաւ հաց
չկերայ, միս եւ գինի չմտաւ իմ բե-
րանը, իւղով չօծուեցի, մինչեւ որ վեր-
ջացան երեք շաբաթները: 4 Առաջին
ամսի քսանչորսերորդ օրը ես կանգնած
էի Տիգրիս, այն է՝ Դկլաթ մեծ գետի
ափին: 5 Բարձրացրի աչքերս, եւ ահա
փառահեղ հագնուած մի մարդ՝ մէջ-
քին Ոփազի ոսկուց մի գօտի կապած.
6 նրա մարմինը ծովագոյն էր, նրա
դէմքը փայլակի տեսք ունէր, նրա
աչքերը կրակի ճառագայթների պէս
էին, նրա բազուկներն ու զիստերը
փայլուն պղնձի տեսք ունէին, եւ նրա
խօսակցութեան ձայնը կարծես զօրքի
ձայն լինէր: 7 Միայն ես՝ Դանիէլս
տեսայ տեսիլքը. ինձ հետ եղող մար-
դիկ չտեսան տեսիլքը, այլ մեծ ահ
տիրեց նրանց, եւ նրանք զարհուրած
փախան: 8 Ես մենակ մնացի եւ տեսայ
այդ մեծ տեսիլքը, բայց իմ մէջ էլ ուժ
չմնաց, վայելչութիւնս ապականու-
թիւն դարձաւ, եւ ուժս չվերագտայ: 9 Ես
լսեցի նրա խօսքերի ձայնը եւ երբ լսում
էի նրա խօսքերը, քարացել մնացել էի՝

դէմքս գետին խոնարհած: 10 Եւ ահա նա, ձեռքը ձգելով դէպի ինձ, կանգնեցրեց ինձ ծնկներիս եւ ձեռքիս թաթերի վրայ 11 եւ ասաց ինձ. "Դանիէ՛լ, ա՛յր սիրելի, հասկացի՛ր խօսքերս, որ պիտի ասեմ ՝քեզ եւ մնա՛ քո տեղում, որովհետեւ այժմ ես ուղարկուած եմ քեզ մօտ":

Երբ նա այս բաներն էր ասում ինձ, ես դողալով ոտքի ելայ: 12 Նա ասաց ինձ. "Մի՛ վախեցիր, Դանիէ՛լ, որովհետեւ այն օրուանից, որ դու սիրտդ բացեցիր՝ խելամուտ լինելու եւ վիշտդ յայտնելու քո Աստծու առաջ, քո խօսքերը լսելի դարձան, եւ ես եկայ քո խօսքերի պատճառով: 13 Պարսից թագաւորութեան մի իշխան հակառակուում էր ինձ քսանմէկ օր, եւ ահա Միքայէլը՝ աւագ իշխաններից մէկը, եկաւ օգնելու ինձ. թողեցի նրան այնտեղ պարսից թագաւորութեան իշխանի հետ 14 եւ եկայ քեզ հասկացնելու, թէ վերջին օրերին ինչ դէպքեր պիտի պատահեն քո ժողովրդին, որովհետեւ տեսիլքդ գալիք օրերի համար է": 15 Եւ երբ նա այսպէս խօսում էր ինձ հետ, գետին ընկայ իմ երեսի վրայ եւ քարացել էի: 16 Եւ ահա նա, ինչպէս մարդու որդի, մօտենում էր իմ շրթունքներին. ես բացեցի բերանս, խօսեցի ու ասացի այն մարդուն, որ իմ դիմացն էր. "Տէ՛ր, երբ դու երեւացիր ինձ, աղիքներս գալարուեցին, ուժ չկար մէջս. 17 եւ ինչպէ՞ս կարող է քո ծառան, տէ՛ր, խօսել իմ Տիրոջ հետ: Ես այլեւս զօրութիւն չունեմ, եւ շունչ չմնաց իմ մէջ": 18 Նա էլ աւելի մօտեցաւ ինձ մարդու տեսքով, զօրացրեց ինձ եւ ասաց. 19 "Մի վախեցիր, ա՛յր սիրելի, խաղաղութի՛ւն քեզ, զօրացի՛ր եւ քա՛ջ եղիր": Երբ նա խօսում էր ինձ հետ, ես զօրացայ եւ ասացի. "Թող խօսի տէրը, քանի որ դու զօրացրիր ինձ": 20 Նա ասաց. "Գիտե՞ս թէ ինչու եկայ քեզ մօտ. այժմ վերադառնում եմ պատերազմելու պարսից իշխանի դէմ. ես գնում էի, իսկ յունաց իշխանը գալիս էր: 21 Բայց ես կը յայտնեմ քեզ, թէ ինչ է գրուած ճշմարիտ գրքերում. եւ նրանց դէմ ոչ մի այլ օգնական չունեմ, բացի ձեր Միքայէլ իշխանից":

ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ

11 "Ես Կիւրոսի առաջին իսկ տարում ամուր էի եւ ուժեղ: 2 Այժմ ես քեզ կը յայտնեմ ճշմարտութիւնը: Ահա երեք թագաւորներ պիտի բարձրանան Պարսից երկրում, եւ չորրորդը իր հարստութեամբ բոլորից աւելի մեծ պիտի լինի. նա իր հարստութեամբ հզօրանալուց յետոյ պիտի յարձակուի յունաց թագաւորութեան վրայ:

3 Հզօր մի թագաւոր պիտի բարձրանայ, պիտի տիրի շատ տէրութիւնների եւ պիտի անի, ինչ որ կամենայ. 4 եւ երբ բարձրանայ, նրա թագաւորութիւնը պիտի փշրուի, բաժանուի ու տրուի երկնքի չորս հողմերին: Եւ դա ոչ ըստ նրա վախճանի, ոչ իր տէրութեան պատճառով, որին տիրում էր, քանի որ պիտի խլուի նրա թագաւորութիւնը, իսկ ուրիշներինը պիտի մնայ իրենց: 5 Եւ պիտի զօրանայ Հարաւի թագաւորը, իշխաններից մէկը պիտի հզօրանայ նրանից աւելի եւ տիրի աւելի մեծ տէրութեան: 6 Տարիներ յետոյ նրանք պիտի մերձենան միմեանց: Հարաւի թագաւորի դուստրը պիտի գայ Հիւսիսի թագաւորի մօտ՝ նրա հետ դաշինք կնքելու, բայց չի պահպանուելու նրա բազկի զօրութիւնը, նրա սերունդը չի մնալու, եւ ինքն ու իրեն բերողները, նաեւ այն օրիորդն ու նա, որ խնամում էր նրան այդ ժամանակ, մահուան պիտի մատնուեն: 7 Նրա արմատի ընձիւղից պիտի բարձրանայ մէկը, նա ուժ պիտի ստանայ, պիտի մտնի Հիւսիսի թագաւորութեան հաստատութեան մէջ, պիտի գործի նրանց դէմ եւ պիտի զօրանայ: 8 Նա պիտի կործանի նրանց աստուածները իրենց ձուլածոյ կուռքերով հանդերձ, եւ նրանց ամբողջ սպասքը՝ ոսկեայ եւ արծաթեայ, աւար առնելով պիտի բերի Եգիպտոս. եւ ինքն առաւել հաստատուն պիտի լինի, քան Հիւսիսի թագաւորը, 9 պիտի մտնի Հարաւի թագաւորութեան մէջ եւ այնտեղից նորից պիտի վերադառնայ իր երկիրը: 10 Նրա որդիները զօրքի մեծ բազմութիւն պիտի հաւաքեն. նրանցից մէկը հեղեղի նման պիտի

յարձակուի, անցնի եւ մինչեւ նրա ամրոցը պիտի շարունակի պատերազմել†: 11 Եւ Հարաւի թագաւորը պիտի գազանանայ, պիտի ելնի ու պատերազմ տայ Հիւսիսի թագաւորի դէմ. սա մեծ զօրք պիտի գումարի, բայց զօրքը պիտի յանձնուի հակառակորդին: 12 Հարաւի թագաւորը պիտի գրաւի այդ բազմութիւնը, նա պիտի գոռոզանայ իր սրտում, շատերին պիտի կործանի, բայց չի յաղթելու: 13 Հիւսիսի թագաւորը պիտի վերադառնայ, աւելի զօրք պիտի բերի, քան առաջին անգամ, եւ որոշ ժամանակ անց պիտի գայ մտնի մեծ զօրքով եւ բազում ունեցուածքով: 14 Այդ ժամանակ շատերը պիտի յարձակուեն Հարաւի թագաւորի վրայ: Քո ժողովրդի մնացեալ որդիները ոտքի պիտի ելնեն՝ հաստատելու տեսիլքը, բայց պիտի տկարանան: 15 Հարաւի թագաւորը պիտի մտնի, հողապատնէշ պիտի բարձրացնի եւ պիտի գրաւի ամուր քաղաքներ, բայց Հարաւի թագաւորի բազուկները չեն դիմանալու. նրա ընտրեալները պիտի ապստամբեն, եւ նա ուժ չի ունենալու դիմադրելու նրանց. 16 եւ նա, ով կը մտնի նրա մօտ, կը կատարի նրա կամքը, եւ ոչ մէկը չի լինի, որ կանգնի նրա դէմ: Նա պիտի մնայ Սաբիմի երկրում, եւ երկիրը պիտի տառապի նրա ձեռքից: 17 Նա պիտի մտադրուի իր ուժով մտնելու նրա ամբողջ թագաւորութեան մէջ եւ իբր թէ ուղիղ մտքով պիտի անի ամէն ինչ նրա հետ: Երկիրն աւերելու դիտաւորութեամբ իր կանանց դուստրը պիտի տայ նրան, բայց այդ խարդաւանքը չի յաջողուելու նրա: 18 Նա իր երեսը պիտի դարձնի դէպի կղզիները, պիտի գրաւի շատերը եւ պիտի այրի այն իշխաններին, որոնք նախատեցին նրանց բնակիչներին, եւ նրանց նախատինքը պիտի վերադարձնի հէնց իրենց: 19 Նա զօրութեամբ պիտի վերադառնայ իր երկիրը, պիտի տկարանայ, ընկնի, եւ հետք չի մնալու նրանցից: 20 Նրա արմատից թագաւորութեան տունկ պիտի բարձրանայ եւ բռնութեամբ պիտի վերցնի թագաւորական փառքը, բայց այդ օրերին նա պիտի խորտակուի. 21 նա ո՛չ իր անձով եւ ո՛չ պատերազմով չի մնալու իր դիրքի վրայ, քանի որ արհամարհուեց: Նրան թագաւորական փառքի չարժանացրին, ոչ էլ յաջողութիւն եկաւ նրան. նա տարուեց թագաւորական գայթակղութիւններով: 22 Այն բազուկները, որոնք պիտի յարձակուեն, պիտի խորտակուեն նրա երեսից: Պիտի խորտակուի նաեւ ուխտի առաջնորդը. 23 նա նենգութիւն պիտի անի իր դաշնակիցների դէմ, պիտի ելնի եւ յաղթի նրանց քիչ մարդկանցով, 24 յաջողութեամբ շատ երկրներ պիտի գրաւի եւ անի այն, ինչ չարեցին նրա հայրերը, ոչ էլ նրա հայրերի հայրերը. աւարը, կողոպուտը եւ ունեցուածքը պիտի բաշխի նրանց եւ եգիպտացիների մասին էլ պիտի մտածի, մինչեւ ժամանակը գայ, 25 պիտի զարթնի նրա զօրութիւնը, եւ նրա սիրտը լցուի մեծ ուժով Հարաւի թագաւորութեան դէմ:

Հարաւի թագաւորը պատերազմի պիտի ելնի մեծ եւ շատ հզօր զօրքով եւ չի կարողանալու դիմադրել, որովհետեւ նրա դէմ դաւ պիտի նիւթեն. 26 պիտի ուտեն ինչ որ նրան է պատկանում, պիտի խորտակեն նրան, նրա զօրքը պիտի այրեն, եւ շատ վիրաւորներ պիտի ընկնեն: 27 Երկու թագաւորների սրտերում էլ մնալու է չարութիւնը, նոյն սեղանի շուրջը նրանք սուտ պիտի խօսեն, բայց այդ չի յաջողուելու, որովհետեւ դեռ ժամանակի վախճանը հասած չէ: 28 Նա պիտի վերադառնայ իր երկիրը մեծ հարստութեամբ՝ թշնամացած սրտով սուրբ ուխտի դէմ. այդպէս պիտի անի եւ վերադառնայ իր երկիրը: 29 Պիտի վերադառնայ ժամանակին, պիտի գայ Հարաւի դէմ, բայց վերջինս առաջինի նման չի լինելու: 30 Նրա զօրքի մէջ պիտի մտնեն կիտացիների բանակները, եւ նա պիտի թուլանայ ու պիտի վերադառնայ՝ բարկութեամբ լցուած սուրբ ուխտի դէմ. այդպէս պիտի անի եւ վերադառնայ ու նորից պիտի զօրք գումարի նրանց դէմ, որոնք լքեցին սուրբ ուխտը: 31 Սերունդներ պիտի ելնեն, պիտի բարձրանան նրանից,

†Մտքի յստակութեան համար այս համարում հետեւել ենք եբրայերէն բնագրին:

բռնութեամբ պիտի պղծեն սրբարանը,
պիտի վերացնեն ամենօրեայ զոհա-
բերութիւնները, պղծութեամբ պիտի
ապականեն այն, 32 եւ ուխտի այդ
ապականիչները գայթակղութիւն պի-
տի բերեն իրենց վրայ:
Բայց ժողովուրդը, որ ճանաչում է իր
Աստծուն, պիտի զօրանայ եւ ուխտը
կատարի. 33 եւ ժողովրդի խոհուն
մարդիկ շատերին խելամուտ պիտի
դարձնեն, թէեւ նրանք միառժամանակ
պիտի տկարանան սրով ու հրով,
գերութեամբ եւ յափշտակութեամբ:
34 Եւ երբ նրանք տկարանան, փոքր-ինչ
օգնութիւն պիտի գտնեն, շատերը պիտի
միանան նրանց իրենց գայ-
թակղութիւններով: 35 Խոհուն մարդ-
կանցից ոմանք պիտի տկարանան
նրանց փորձելու եւ ընտրելու համար, եւ
յայտնելու նրանց, որ այդպէս պիտի
լինի մինչեւ ժամանակի վախճանը,
որովհետեւ տակաւին ժամանակ կայ:
Թագաւորը պիտի անի, ինչ որ կամենում
է, 36 պիտի բարձրանայ եւ
մեծամտանայ բոլոր աստուածների
նկատմամբ, ամբարտաւան բաներ պիտի
բարբառի աստուածների Աստծու
մասին, եւ դա պիտի յաջողուի նրան,
մինչեւ որ անցնի իր բարկութիւնը,
քանի որ պիտի գայ բարկութեան վերջը:
37 Նա պիտի մտածի իրենց հայրերի
աստուածների մասին, կանանց
ցանկանալու մասին, չի մտածելու այլ
աստուածների մասին: 38 Նա պիտի
մեծամտանայ բոլորի նկատմամբ, պիտի
փառաւորի հզօր աստծուն իր գտնուած
տեղում եւ ա՛յն Աստծուն, որին
չճանաչեցին իր հայրերը. պիտի
փառաւորի նրան ոսկով, արծաթով,
թանկարժէք եւ գեղեցիկ զոհարներով:
39 Նա պիտի մնայ փախստականների
ամրոցներում՝ օտար աստծու հետ,
պիտի աւելացնի նրա փառքը, շատերին
պիտի հնազանդեցնի նրան եւ երկիրը
պիտի բաժանի իբրեւ պարգեւ: 40 Եւ
երբ ժամանակի վախճանը գայ, նա
պիտի կռուի Հարաւի թագաւորի դէմ:
Հիւսիսի թագաւորը կառքերով, հե-
ծեալներով ու բազում նաւերով զօրք
պիտի հաւաքի նրա դէմ, պիտի մտնի
նրա երկիրը, պիտի կործանի այն,
41 անցնի եւ մտնի Սաբայիմ երկիրը, եւ
շատերը պիտի տկարանան:
Սրանք են ահա, որ պիտի փրկուեն
նրա ձեռքից. Եդոմը, Մովաբը եւ ամո-
նացիների իշխանութիւնը: 42 Նա իր
ձեռքը պիտի երկարի դէպի երկիրը, եւ
Եգիպտացիների երկիրը չի փրկուելու:
43 Նա պիտի տիրի գաղտնի գանձ-
բանների ոսկուն եւ արծաթին, եգիպ-
տացիների, լիբիացիների եւ եթովպա-
ցիների ամրոցներում պահուած ամբողջ
թանկարժէք ակնեղէնին: 44 Բայց յետոյ
արեւելքից եկող լուրերն ու տագ-
նապները պիտի շտապեցնեն նրան, եւ
նա հիւսիսից պիտի արշաւի մեծ բար-
կութեամբ սպանելու շատերին: 45 Նա
իր վրանը պիտի խփի Եփադանոնում,
ծովերի եւ Սաբա սուրբ լերան միջեւ,
պիտի արշաւի դէպի նրա մի կողմը, եւ
ոչ ոք չի լինելու, որ փրկի նրան":

ՄԱՆՐ ԺԱՄԱՆԱԿԸ

12 "Այն ժամանակ պիտի ելնի Մի-
քայէլ մեծ իշխանը, որ քո ժողովրդի
որդիների գլխաւորն է: Պիտի լինի
նեղութեան ժամանակ, նեղութիւն,
որպիսին չի եղել այն օրից, երբ ժողո-
վուրդն առաջացաւ երկրի վրայ: Եւ այն
ժամանակ պիտի փրկուի քո ժողո-
վուրդը, ինչպէս որ այս բոլորի մասին
գրուած է գրքերում: 2 Երկրում, հողի
մէջ ննջածներից շատերը յարութիւն
պիտի առնեն, ոմանք յաւիտենական
կեանքի համար, եւ ոմանք յաւիտե-
նական նախատինքի ու ամօթի համար:
3 Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն
իբրեւ երկնակամարի լուսատուներ, իսկ
արդարներից շատերը առաւել եւս՝
իբրեւ յաւիտենական աստղեր: 4 Եւ դու,
Դանիէ՛լ, գաղտնի՛ պահիր այդ խօսքերը
եւ կնքի՛ր այդ գիրքը մինչեւ ժամանակի
վախճանը, մինչեւ շատերն ուսանեն, եւ
շատանայ իմաստութիւնը"»:

ԴԱՆԻԷԼԻ ՎԵՐՋԻՆ ՏԵՍԻԼՔԸ

5 «Ես՝ Դանիէլս, տեսայ, որ ահա
երկու հոգի կանգնած էին գետի այս եւ
այն կողմը, 6 նրանցից մէկն ասաց այն

մարդուն, որ սպիտակ կտաւից զգեստ
էր հագել եւ գետերի ջրերի վրայ էր
կանգնած. "Ե՞րբ է լինելու այդ զար-
մանահրաշ բաների վախճանը, որ դու
ասացիր": 7 Ես լսեցի այն մարդուց, որ
կտաւից զգեստ էր հագել եւ կանգնած
էր գետի ջրերի վրայ. նա բարձրացրեց
իր աջ ու ձախ ձեռքերը դէպի երկինք,
երդուեց յաւիտեան կենդանի Աստու-
ծով, թէ ժամանակին, ժամանակ-
ներում եւ ժամանակի կէսին կ'իմանան
այս բոլորը, երբ լիովին սպառուի սուրբ
ժողովրդի ձեռքի զօրութիւնը: 8 Ես
լսեցի, բայց չհասկացայ եւ ասացի.
"Տէ՛ր, ի՞նչ է դրանց վախճանը": 9 Նա
ասաց. "Գնա՛, Դանիէ՛լ, քանի որ փա-
կուած եւ կնքուած են խօսքերս մինչեւ
ժամանակի վախճանը: 10 Շատերը պիտի
ընտրուեն, սպիտականան, փորձուեն եւ
մաքրուեն, անօրէնները պիտի անօրէ-
նութիւն անեն, ամբարիշտները խելքի
չպիտի գան, 11 բայց իմաստունները
պիտի հասկանան ժամանակի յաճա-
խակի փոփոխման շնորհիւ: Աւերա-
ծութեան պղծութիւնը պիտի տեւի
հազար երկու հարիւր երեսունհինգ օր.
12 երանի նրան, ով կը համբերի եւ կը
հասնի հազար երեք հարիւր երեսուն-
հինգերորդ օրուան: 13 Իսկ դու արի
հանգստացի՛ր, որովհետեւ տակաւին
օրեր ու ժամեր կան մինչեւ վախճանի
կատարումը. դու կը հանգչես եւ վեր կը
կենաս քո ժամանակին, օրերի վեր-
ջում"»:

ԴԱՆԻԷԼԸ ԵՒ ԲԷԼԻ ՔՐՄԵՐԸ

14 65† Աստիագէս թագաւորը յաջոր-
դեց իր հայրերին, եւ պարսից Կիւրոս
թագաւորը առաւ նրա թագաւորու-
թիւնը: 1 Դանիէլը թագաւորի կեանքի
ընկերն էր եւ աւելի փառք էր վայե-
լում, քան նրա բոլոր բարեկամները:
2 Բաբելացիները Բէլ անունով մի
կուռք ունէին, եւ օրական նրան բաժին
էր ընկնում տասներկու արդու ընտիր
ալիւր, քառասուն ոչխար եւ վեց մար
գինի: 3 Թագաւորը պաշտում էր նրան
եւ միշտ գնում ու երկրպագում էր
նրան: Բայց Դանիէլը իր Աստծուն էր
երկրպագում: Թագաւորն ասաց նրան.
«Դու ինչո՞ւ չես երկրպագում Բէլին»:
4 Դանիէլն ասաց. «Որովհետեւ ձեռա-
կերտ կուռքեր չեմ պաշտում, այլ՝ կեն-
դանի Աստծուն, երկնքի եւ երկրի
Արարչին, որ իշխանութիւն ունի բոլոր
մարմնաւոր էակների վրայ»: 5 Թա-
գաւորն ասաց նրան. «Իսկ Բէլը քեզ
կենդանի Աստուած չի՞ թւում, չե՞ս
տեսնում, թէ ամէն օր որքան է ուտում
եւ խմում»: 6 Դանիէլն ասաց ծիծա-
ղելով. «Մի՛ խաբուիր, արքա՛յ, որով-
հետեւ նա ներսից կաւից է եւ դրսից
պղնձից. նա երբեք ո՛չ կերել է, ո՛չ էլ
խմել»: 7 Եւ թագաւորը բարկանալով՝
կանչեց նրա քրմերին եւ ասաց նրանց.
«Եթէ չասէք ինձ, թէ ով է ուտում այս
սեղանի ուտելիքները, մահով կը մեռ-
նէք, 8 իսկ եթէ ապացուցէք, թէ Բէլն է
ուտում այդ բոլորը, ապա կը մեռնի
Դանիէլը, քանի որ նա հայհոյեց
Բէլին»: Դանիէլն ասաց թագաւորին.
«Թող լինի ըստ քո ասածի»: 9 Բէլի
քրմերը եօթանասուն հոգի էին՝ չհա-
շուած կանանց եւ մանուկներին:
Թագաւորը Դանիէլի հետ եկաւ Բէլի
կռատունը: 10 Բէլի քրմերն ասացին.
«Ահաւասիկ մենք դուրս ենք գալիս.
իսկ դու, արքա՛յ, նրա առաջ դի՛ր այդ
կերակուրները եւ այդ գինին. խառն կը
դնես. փակի՛ր դռներն ու կնքի՛ր քո
մատանիով: 11 Եւ երբ առաւօտեան
գաս, եթէ այդ բոլորը կերուած չլինի
Բէլի կողմից, մենք կը մեռնենք, իսկ
եթէ ոչ՝ Դանիէլը, որ սուտ խօսեց մեր
մասին»: 12 Նրանք վստահ էին, քանի
որ սեղանի տակ գաղտնի մուտք էին
շինել եւ միշտ նրանով մտնում եւ
ուտում էին կերակուրները:
13 Եւ երբ նրանք դուրս ելան,
թագաւորը կերակուրները դրեց Բէլի
առաջ: Դանիէլը հրամայեց իր սպա-
սաւորին, մոխիր բերին եւ ցանեցին
ամբողջ մեհեանում միայն թագաւորի
ներկայութեամբ եւ դուրս գալով՝ փա-
կեցին դուռը, կնքեցին թագաւորի
մատանիով եւ գնացին: 14 Քրմերը,
իրենց սովորութեան համաձայն, գիշե-
րը ներս մտան իրենց կանանցով եւ

†Այս համարը կազմում է 13-րդ գլխի
վերջին համարը, որը գրաբարում դրուած է
14-րդ գլխի սկզբին:

երեխաներով, կերան ամէն ինչ, խմեցին եւ ոչինչ չթողեցին: 15 Թագաւորը առաւօտ կանուխ եկաւ Դանիէլի հետ եւ ասաց. 16 «Կնիքներն անխա՞խտ են, Դանիէ՛լ»:

Դանիէլն ասաց. «Անխախտ են, արքա՛յ»: 17 Եւ երբ դռները բացեցին, Թագաւորը նայեց սեղանին, բարձրաձայն գոչեց եւ ասաց. «Մեծ ես, ո՛վ Բէլ, եւ ոչ մի նենգութիւն չկայ քո մէջ»: 18 Դանիէլը ծիծաղեց, բռնեց Թագաւորին, որ ներս չմտնի, եւ ասաց. «Լա՛ւ նայիր այդ յատակին եւ տե՛ս ո՞ւմ հետքերն են դրանք»: 19 Թագաւորն ասաց. «Տեսնում եմ տղամարդկանց, կանանց եւ մանուկների հետքեր»: 20 Այն ժամանակ Թագաւորը, բարկանալով, բռնեց քրմերին, նրանց կանանց եւ որդիներին. նրան ցոյց տուեցին գաղտնի դուռը, որով մտնում էին եւ ուտում սպառում սեղանը: 21 Թագաւորը կոտորեց նրանց, իսկ Բէլին յանձնեց Դանիէլի ձեռքը, որը կործանեց նրան եւ նրա մեհեանը:

22 Կար նաեւ մի մեծ վիշապ, եւ բաբելացիները պաշտում էին նրան: Թագաւորն ասաց Դանիէլին. 23 «Մի՞թէ դրա մասին էլ կ'ասես, թէ պղնձից է. ահա դա կենդանի է, ուտում է եւ խմում, եւ չես կարող ասել, թէ դա կենդանի Աստուած չէ: Արդ, արի երկրպագի՛ր դրան»: 24 Դանիէլն ասաց նրան. «Ես իմ Տէր Աստծուն եմ երկրպագում, որովհետեւ նա է կենդանի Աստուածը, 25 բայց դու, արքա՛յ, իրաւո՛ւնք տուր ինձ, եւ ես առանց սրի ու գաւազանի կը սպանեմ այդ վիշապին»: Թագաւորն ասաց. «Թոյլ եմ տալիս քեզ»: 26 Դանիէլը վերցրեց իւղ, ճիւթ, ճարպ եւ մազ, եփեց միասին, գնդեր շինեց եւ գցեց վիշապի բերանը: Երբ վիշապը կերաւ՝ պայթեց: Դանիէլն ասաց. «Տեսէ՛ք, թէ ո՞ւմ էք պաշտում»: 27 Եւ երբ բաբելացիները լսեցին այդ, շատ բարկացան, եկան հաւաքուեցին Թագաւորի մօտ եւ ասացին. «Թագաւորը հրեայ է դարձել, կործանեց Բէլին, սպանեց վիշապին, կոտորեց քրմերին»:

28 Եւ երբ նրանք եկան, ասացին Թագաւորին. «Դանիէլին մեր ձե՛ռքը տուր, ապա թէ ոչ կը սպանենք քեզ եւ քո տոհմը»: 29 Երբ Թագաւորը տեսաւ, թէ շատ են տագնապեցնում իրեն, ստիպուած Դանիէլին տուեց նրանց ձեռքը: 30 Եւ նրանք նրան նետեցին առիւծների փոսը. Դանիէլն այնտեղ մնաց վեց օր: 31 Փոսի մէջ եօթը առիւծներ կային: Ամէն օր նրանց երկու մարդ եւ երկու անասուն էին տալիս ուտելու, բայց այդ օրը նրանց առջեւ ոչինչ չգցեցին, որպէսզի առիւծներն անմիջապէս ուտեն Դանիէլին:

32 Հրէաստանում կար Ամբակում անունով մի մարգարէ. սա թան եփեց, հաց բրդեց կերակուրի մէջ եւ հանդ էր գնում՝ իր մշակներին տանելու: 33 Տիրոջ հրեշտակն ասաց Ամբակումին. «Այդ ճաշը որ դու ունես, տա՛ր Բաբելոն՝ Դանիէլին, որը առիւծների փոսի մէջ է»: 34 Ամբակումն ասաց. «Տէ՛ր, ես Բաբելոնը չեմ տեսել եւ չգիտեմ, թէ ո՛ւր է փոսը»: 35 Հրեշտակը ձեռքը գցեց նրա գագաթին, բռնեց նրա գլխի մազերից եւ իր հոգու ամբողջ ուժով նրան տարաւ Բաբելոն, դրեց փոսի վրայ: 36 Ամբակումն աղաղակեց եւ ասաց. «Դանիէ՛լ, Դանիէ՛լ, արի վերցրո՛ւ այդ ճաշը, որ Աստուած ուղարկեց քեզ համար»: 37 Դանիէլն ասաց. «Ծիշեցի՛ր ինձ, Աստուա՛ծ, եւ ամօթով չթողեցիր քո սիրելիներին»: 38 Դանիէլը վեր կացաւ եւ կերաւ: Եւ Աստծու հրեշտակը նոյն ժամին Ամբակումին նորից տարաւ իր տեղը: 39 Թագաւորը եօթներորդ օրը եկաւ ողբալու Դանիէլի վրայ. եւ երբ եկաւ փոսի բերանի մօտ, նայեց եւ տեսաւ, որ Դանիէլը նստած էր. աղաղակեց բարձր ձայնով եւ ասաց. 40 «Մեծ ես, Դանիէլի Տէ՛ր Աստուած, եւ չկայ այլ աստուած քեզանից բացի»: 41 Նա Դանիէլին դուրս հանեց, իսկ վնասարարներին, որ ուզեցել էին կորստի մատնել նրան, նետեցին փոսի մէջ, եւ իսկոյն նրանք պատառոտուեցին Թագաւորի առաջ:

ԵԶԵԿԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ներածութիւն

Եզեկիէլը Երուսաղէմի տաճարի քահանաներից մէկն էր, որը 597 թուականին (Ն. Ք.) Նաբուքոդոնոսոր թագաւորի կողմից Երուսաղէմի առաջին գրաւումից յետոյ Բաբելոն աքսորուած իսրայէլացիներից էր: Դրանից մօտ չորս տարի յետոյ Աստուած նրան կանչում է, որպէսզի դառնայ իր մարգարէն: Աքսորավայրից Եզեկիէլը նախազգուշացումներ է անում ինչպէս Բաբելոն գերի տարուած հրեաներին, այնպէս էլ Երուսաղէմում մնացածներին: Երուսաղէմի գրաւումից եւ տաճարի կործանումից յետոյ, 587 թուականին (Ն. Ք.), նա այդ նախազգուշացումներին աւելացնում է մխիթարական եւ յուսադրիչ խօսքեր:

Եզեկիէլի գիրքը բաղկացած է չորս մեծ մասերից.

Առաջին մասում տեղ են գտել իսրայէլացիներին ուղղուած մի շարք մեղադրանքներ եւ սպառնալիքներ, նախքան Երուսաղէմի երկրորդ պաշարումը (գլ. 1–20):

Երկրորդ մասում Եզեկիէլը յայտնում է, որ Աստծու դատաստանը պիտի գործադրուի նմանապէս օտար ժողովուրդների վրայ, որոնք խաբել եւ ճնշել են իսրայէլացիներին (գլ. 25–32):

Երրորդ մասը, որը բաղկացած է Երուսաղէմի անկումից յետոյ արտասանուած խօսքերից, բացառապէս մխիթարանքի եւ սրտապնդման մի պատգամ է՝ ուղղուած Իսրայէլի ժողովրդին:

Չորրորդ մասում տրուած է Երուսաղէմի ապագայ տաճարի նկարագրութիւնը, ըստ մարգարէի տեսիլքի:

Որպէս քահանայ, Եզեկիէլը չափազանց մեծ կարեւորութիւն է տալիս տաճարին, սակայն միաժամանակ նա հաստատում է, որ Աստծու ներկայութիւնը կապուած չէ միայն Երուսաղէմի տաճարի սրբարանի հետ, այլ այն կարող է ներգործուն լինել նոյնիսկ Բաբելոնում: Ցայտարարելով, որ իւրաքանչիւր անհատ ինքն է լինելու պատասխանատու իր սեփական արարքների համար, նա հրաժարւում է իսրայէլական այն աւանդութիւնից, որը կապուած էր հաւաքական պատասխանատուութեան գաղափարի հետ: Հետեւաբար նա վճռականօրէն կանգ է առնում անձնական կեանքի վերանորոգման գաղափարի վրայ, սակայն յայտնելով, որ իսրայէլացի ժողովուրդը, հաւաքաբար վերանորոգուած եւ յարութիւն առած, պիտի վերադառնայ իր նախնիների երկիրը:

ԵԶԵԿԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԵԶԵԿԻԷԼԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼՔԸ
(1.1 - 7.27)

Բուզիի որդի Եզեկիէլ քահանայի տեսիլքը, որ նա տեսաւ քաղդէացիների երկրում, Քոբար գետի ափին

ԱՍՏՈՒՈՅ ԳԱՀԸ

1 *Երեսուներորդ տարում, չորրորդ ամսին, ամսուայ հինգերորդ օրը, ես Քոբար գետի ափին գերեվարուածների մէջ էի: Երկինքը բացուեց, եւ ես Աստծուն տեսայ մի տեսիլքի մէջ: 2 Ամսուայ հինգերորդ օրն էր. դա Յովակիմ*† *արքայի գերութեան հինգերորդ տարին էր: 3 Աստուած խօսեց Բուզիի որդու՝ Եզեկիէլ քահանայի հետ, քաղդէացիների երկրում, Քոբար գետի ափին:*

4 Եւ այնտեղ Տիրոջ ձեռքը հանգչեց ինձ վրայ, ու տեսայ, որ ահա հիւսիսից մի հողմ բարձրացած գալիս էր, մի մեծ ամպ էլ՝ նրա հետ: Շուրջը լոյս էր, որից հուր էր փայլատակում: Նրա մէջ թանկարժէք քարերի տեսքը կար, միջից՝ ճառագայթներ: 5 Դրա մէջ չորս կենդանի էակների կերպարանքներ կային: Եւ այս էր դրանց տեսքը. դրանք մարդու կերպարանք ունէին: 6 Ամէն մէկը չորս դէմք ունէր, ամէն մէկը՝ չորս թեւ: 7 Նրանց ազդրերն ուղիղ էին, ոտքերը՝ թեւաւոր. կճղակները նման էին հորթերի կճղակների, եւ դրանցից կայծեր էին թափւում, ինչպէս պղնձի փայլատակումներից: Նրանց թեւերն արագաշարժ էին: 8 Նրանց թեւերի տակ, չորս կողմերում, մարդկային ձեռքեր կային: Նրանց երեսները չորսն էին: Չորսի թեւերն էլ կցուած էին միմեանց: 9 Գնալիս երեսները յետ էին դարձնում. իւրաքանչիւրն իր դէմքի ուղղութեամբ էր ընթանում: 10 Նրանց չորսի էլ դէմքի տեսքը աջից մարդու եւ առիւծի կերպարանք ունէր, իսկ ձախից՝ եզան եւ արծուի կերպարանք. այս էր նրանց տեսքը: 11 Նրանց չորսի թեւերը տարածուած էին վերեւից. իւրաքանչիւր երկուսն իրար էին կցուած ու վերեւից զոյգ-զոյգ ծածկում էին նրանց մարմինները: 12 Եւ իւրաքանչիւրն իր դէմքի ուղղութեամբ էր ընթանում. դէպի ո՛ր կողմը որ հողմը† *փչում էր՝ նրանք այն կողմն էին գնում եւ ընթանալիս յետ շուռ չէին գալիս: 13 Կենդանի էակների մէջ բորբոքուած հրի պէս մի պատկեր կար, ասես շարժուող լապտերների պատկեր լինէր. կրակի լոյս կար, եւ այն կրակից փայլատակումներ էին սփռւում: 14 Եւ կենդանի էակներն արագ էին ընթանում ու թեթեւ պտտւում էին, արեգակի*‡ *պէս:*

15 Եւ ահա երկրի վրայ, չորս կենդանի էակների յետեւից մի անիւ էի տեսնում. անիւների կերպարանքն ու դրանց կառուցուածքը ոսկեքարի տեսքն ունէին: 16 Թէ՛ չորսի տեսքը, թէ՛ նրանց պատկերն ու կառուցուածքը այնպէս էին, որ կարծես թէ անուի մէջ անիւ էր պտտւում: 17 Նրանք իրենց դէմքերի չորս ուղղութեամբ էլ ընթանում էին ու յետ շուռ չէին գալիս: Բարձր էին: 18 Նայում էի նրանց ու տեսնում, որ նրանց թիկունքները, չորս կողմերում էլ, լիքն էին աչքերով: 19 Կենդանի էակներն ընթանալիս՝ անիւներն էլ նրանց հետ էին գնում, իսկ երբ երկրից բարձրանում էին, անիւներն էլ էին բարձրանում: 20 Դէպի ո՛ր կողմը որ գնում էին ամպն ու հողմը՝ կենդանի էակներն էլ էին ընթանում, եւ անիւները նրանց հետ բարձրանում էին, որովհետեւ այն անիւների մէջ կենդանի ոգի կար: 21 Երբ նրանք ընթանում էին, անիւներն էլ էին գնում, կանգնելիս կանգ առնում, երբ երկրից նրանք բարձրանում էին, անիւներն էլ էին նրանց հետ բարձրանում, որովհետեւ այն անիւների մէջ կենդանի ոգի կար: 22 Եւ կենդանի էակների գլխավերեւում երկնակամարի նման մի բան կար, որ բիւրեղի տեսք ունէր ու վերեւից տարածւում էր նրանց թեւերի վրայ: 23 Իսկ երկնակամարի ներքեւում նրանց թեւերը պարզուած սաւառնում էին իրար հետ. իւրաքանչիւրը երկուական թեւ, որ ծածկում էր իրենց մարմինները: 24 Երբ նրանք սաւառնում էին, լսում էի նրանց թեւերի ձայնը, ինչպէս յորդ ջրերի ձայն, ինչպէս

†Եբրայերէն՝ *Յովաքին:*

‡Եբրայերէն՝ *փայլակի:*

Սադայ† *Աստծու ձայնը: Իսկ երբ շարժւում էին, լսւում էր նրանց խօսքը, ինչպէս բանակի ձայնը: Երբ նրանք կանգ էին առնում, թեւերն էլ դադար էին առնում: 25 Եւ ահա, երբ նրանք կանգ էին առնում ու իրենց թեւերը բարձրացնում, նրանց գլխավերեւի երկնակամարից մի ձայն էր լսւում:*

26 Նրանց գլխավերեւի երկնակամարից է՛լ աւելի վեր կար գահի պէս մի բան, որ շափիւղայ ակի էր նմանւում, իսկ գահի վրայ՝ մարդու կերպարանքով մի բան: 27 Այդ կերպարանքի մէջ բազմագոյն ակի պէս մի պատկեր էի տեսնում, նրանից աւելի ներքեւ՝ շուրջանակի կրակի պատկեր, մէջքից վեր՝ արեգակի նմանութեամբ, իսկ մէջքից ներքեւ՝ կրակի: Եւ լոյսը, որ նրա շուրջը բոլորակ էր կազմել, ունէր ծիածանի տեսք, որ անձրեւային օրերին ամպերի մէջ է ձգւում: 28 Եւ այսպէս նրա շուրջը լոյսի ահագին մի տեսիլք կար:

ԱՍՏՈՒԱԾ ԵԶԵԿԻԷԼԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻ ՄՕՏ

2 *Այս տեսիլքը նման էր Տիրոջ փառքին: Երբ այն տեսայ՝ երեսս ի վայր ընկայ եւ լսեցի մի ձայն, որ խօսում էր ինձ հետ ու ասում. «Մարդո՛ւ որդի, ոտքի՛ կանգնիր, խօսելու եմ հետդ»: 2 Եւ Հոգին եկաւ վրաս, բարձրացրեց ինձ ու կանգնեցրեց ոտքերիս վրայ: 3 Ու լսում էի, որ նա խօսում էր հետս ու ասում. «Մարդո՛ւ որդի, ես քեզ ուղարկելու եմ այդ դառնացուցիչ Իսրայէլի տունը. նրանք իրենք եւ նրանց հայրերը դառնացրել են ինձ, անարգել են ինձ մինչեւ այսօր: 4 Ուստ մօտ որ ես քեզ ուղարկում եմ՝ պնդերես ու խստասիրտ որդիներ են. կ'ասես նրանց. "Այսպէս է ասում Տէր Աստուածը": 5 Եթէ պատահի, որ լսեն կամ սարսափեն*‡ *(քանի որ դառնացնողների տուն են) եւ կամ ամբողջովին ընդունեն, որ դու նրանց մարգարէն ես, – 6 դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, նրանցից չվախենաս ու նրանց տեսքից չսարսափես, որովհետեւ զայրանալով պիտի զայրանան ու քեզ վրայ պիտի յարձակուեն, քանի որ կարիճների մէջ բնակուելիս պիտի լինես դու: Նրանց խօսքերից չվախենաս ու նրանց տեսքից չսարսափես, որովհետեւ դառնացնողների տուն են: 7 Նրանց իմ խօսքերը կ'ասես. արդեօք պիտի լինի՞, որ լսեն կամ սարսափեն, քանի որ դառնացնողների տուն են, – 8 դու էլ, մարդո՛ւ որդի, անսա՛ այն խօսքերին, որ ասում եմ քեզ. դառնացնողների տան պէս դառնացնող մի՛ լինի, բա՛ց բերանդ ու կե՛ր, ինչ որ իբրեւ կերակուր տալիս եմ քեզ»: 9 Եւ տեսայ, որ ահա մի ձեռք էր երկարել դէպի ինձ ու դրա մէջ մի մագաղաթ կար: Բացեց այն իմ առաջ, ու դրա վրայ, ներքեւում ու վերեւում, գրուած էին ողբեր, աղաղակներ ու վայեր:*

3 *Եւ ասում էր ինձ. «Մարդո՛ւ որդի, ինչ որ դրա մէջ գտնես՝ կե՛ր. մանրմանր կե՛ր այդ մագաղաթը եւ գնա՛ ու խօսի՛ր իսրայէլացիների հետ»: 2 Բաց արեց բերանս ու իբրեւ կերակուր դրեց այդ մագաղաթը եւ ասաց ինձ. 3 «Մարդո՛ւ որդի, բերանդ թող ուտի, ու որովայնդ լցուի այդ մագաղաթով, որ քեզ տրուեց»: Կերայ այն, եւ բերանիս մեղրի քաղցրութիւն տուեց: 4 Եւ ասաց ինձ.«Մարդո՛ւ որդի, դու գնա՛ ու մտի՛ր Իսրայէլի տուն. նրանց մօտ իմ պատգամները պիտի հաղորդես, 5 որովհետեւ դու խրթնախօս եւ ծանրալեզու մի ժողովրդի մօտ չէ, որ ուղարկւում ես, այլ Իսրայէլի տուն, 6 ո՛չ բազում օտար կամ այլալեզու ժողովուրդների մօտ, ո՛չ էլ խրթին լեզու ունեցողների, որոնց խօսքը չես էլ լսում: Եթէ այդպիսիների մօտ էլ ուղարկէի քեզ, նրա՞նք անգամ պիտի լսէին քեզ: 7 Սակայն Իսրայէլի տունը պիտի չուզի քեզ լսել, որովհետեւ չի ուզում ինձ անսալ. ամբողջ Իսրայէլի ցեղը հակառակորդներ ու խստասիրտներ են: 8 Եւ ահա ես քո դէմքը կարծրացրել եմ նրանց դէմ. քո յաղթանակն էլ պիտի զօրացնեմ ընդդէմ նրանց հակառակութեան: 9 Եւ քո յաղթանակն ամէն ժամ վէմի պէս*

†Եբրայերէն՝ *էլ Շադա - Ամենազօր Աստուած:*

‡Եբրայերէն՝ *զանց առնեն:*

հաստատուն պիտի լինի: Մի՛ վախեցիր նրանցից ու մի՛ սարսափիր նրանց ներկայութիւնից, որովհետեւ նրանք դառնացնողների տուն են»:

10 Եւ Տէրն ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, այն բոլոր խօսքերը, որ ասացի քեզ, ականջներո՛վդ լսիր ու սրտիդ մէ՛ջ պահիր: 11 Եւ գնա՛ ու մտի՛ր քո ժողովրդի գերեալ զաւակների մէջ: Նրանց հետ կը խօսես ու կ՚ասես. "Այսպէս է ասում Տէր Աստուածը", լսեն նրանք, թէ չլսեն»:

12 Եւ Հոգին ինձ բարձրացրեց, ու ետեւիցս մեծ շարժման ձայն լսեցի. ասում էին. «Օրհնեալ է Տիրոջ փառքը՝ իր բնակատեղիում»: 13 Ու տեսայ, որ դա ձայնն էր միմեանց հետ սաւառնող կենդանի էակների թեւերի, ձայնը նրանց հետ պտտուող անիւների եւ ձայնը շարժման: 14 Տիրոջ Հոգին բարձրացրեց, բարձրացրեց ինձ, ու համբառնալով գնում էի՝ հետեւելով իմ հոգու մղումին: 15 Տիրոջ ձեռքն ինձ վրայ զօրաւոր եղաւ: Վերացած՝ մտայ գերեալների մէջ ու շրջեցի Քոբար գետի բնակիչների մօտ, որոնք այնտեղ էին: Ու դադար առնելով եօթը օր նստեցի նրանց մէջ:

ՏԷՐԸ ԵԶԵԿԻԷԼԻՆ ՊԱՀԱԿ Է ԿԱՐԳՈՒՄ
(Եզեկ. 33. 1-9)

16 Եօթը օր յետոյ Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 17 «Մարդո՛ւ որդի, ես քեզ դէտ կարգեցի Իսրայէլի այդ տանը. դու ինձնից պատգամներ ես լսելու եւ իմ անունից սպառնալու ես† նրանց: 18 Երբ անօրէնին ասեմ՝ ստոյգ պիտի մեռնես, դու այլեւս չես զգուշացնելու նրան, ոչ էլ ասելու ես անօրէնին, որ զգուշանայ, յետ դառնայ իր չար ճանապարհից ու ապրի: Այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, եւ նրա արիւնը քեզնից եմ պահանջելու: 19 Իսկ եթէ դու անօրէնին զգուշացնես, ու նա յետ չդառնայ իր անօրէնութիւնից եւ իր ճանապարհից, – այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, իսկ դու քեզ փրկելու ես: 20 Եւ երբ արդարն էլ իր արդար գործերից շեղուի ու յանցանքներ գործի, նրա գլխին տանջանքներ եմ բերելու. ինքը մեռնելու է, որովհետեւ նրա կատարած արդար գործերը չեն յիշուելու: Բայց քանի որ դու նրան չես զգուշացրել, նրա արիւնը քեզնից եմ պահանջելու: 21 Ապա եթէ դու զգուշացնես արդարին, որ նա մեղք չգործի, արդարն ապրելով պիտի ապրի, որովհետեւ զգուշացրել ես նրան. դու էլ քեզ պիտի փրկես»:

†Եբրայերէն՝ զգուշացնելու ես:

ԵԶԵԿԻԷԼԸ ԼՌՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԱՍՏԾՈՒ ԿՈՂՄԻՑ

22 Այնտեղ Տիրոջ ձեռքն ինձ վրայ հանգչեց, ու նա ասաց ինձ. «Վե՛ր կաց, դու էլ այն դաշտը ելի՛ր, այնտեղ քեզ հետ խօսելու եմ»: 23 Վեր կացայ ելայ այն դաշտը: Ահա այնտեղ էր իջել Տիրոջ փառքը, ինչպէս այն տեսիլքն ու փառքը, որ տեսել էի Քոբար գետի ափին: Երեսս ի վայր ընկայ: 24 Եւ Հոգին եկաւ վրաս ու ինձ ոտքերիս վրայ կանգնեցրեց: Խօսեց հետս ու ասաց. 25 «Մտի՛ր ու փակուի՛ր քո տանը: Մարդո՛ւ որդի, ահա քեզ վրայ կապանքներ են դրուած, ու քեզ դեռ կապելու են դրանցով. եւ դու դուրս չես գալու դրանց միջից: 26 Լեզուդ էլ կապելու եմ քո քիմքին, ու համր ես լինելու: Դու նրանց համար յանդիմանող մի մարդ չես լինելու, որովհետեւ նրանք դառնացնողների տուն են: 27 Ու երբ հետդ խօսեմ, բաց եմ անելու քո բերանը, եւ դու ասելու ես նրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէր Աստուածը": Ով որ լսելու է, թող լսի, իսկ ով որ արհամարհելու է, թող արհամարհի, քանի որ նրանք դառնացնողների տուն են»:

ԵԶԵԿԻԷԼԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

4 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, քեզ համար մի աղի՛ւս առ, այն դի՛ր քո առաջ: Դրա վրայ կը նկարես Երուսաղէմ քաղաքը, 2 շուրջը կը հաստատես նրա պաշարումը: Նրա շուրջը մարտական աշտարակներ կը շինես, կը շրջապատես պատնէշներով, շուրջը բանակներ կը կանգնեցնես ու նետաձիգներ կը դնես

չորս կողմը: 3 Քեզ համար երկաթէ մի վահան կ՚առնես եւ այն, իբրեւ երկաթէ պարիսպ, կը կանգնեցնես քո ու քաղաքի միջեւ: Դէմքդ էլ կ՚ուղղես դէպի այն, կը պաշարես այն, ու սա պաշարման մէջ կը լինի: Իսրայէլի զաւակների նշանն է դա:

4 Դու կը ննջես քո ձախ կողքի վրայ ու Իսրայէլի տան անիրաւութիւնները էլ կը դնես վրադ, ըստ այն օրերի թուի, որ ննջելու ես դրա վրայ. հարիւր իններսուն† օր կը կրես նրանց անիրաւութիւնները: 5 Ես քեզ եմ տուել նրանց երկու անիրաւութիւնները, օրերի թուով՝ հարիւր իններսուն† օր: Եւ դու կը կրես Իսրայէլի տան անիրաւութիւնները, 6 կ՚ամբողջացնես բոլորը միասին: Դարձեալ կը ննջես, աջ կողքիդ վրայ, եւ Ցուդայի տան անիրաւութիւնները կը կրես քառասուն օր. իւրաքանչիւր տարուայ դիմաց մէկ օր եմ սահմանել քեզ:

7 Դէմքդ կ՚ուղղես դէպի Երուսաղէմի պաշարումը, կը զօրացնես բազուկներդ եւ նրա վրայ մարգարէութիւններ կ՚անես: 8 Իսկ ես ահա քեզ վրայ կապանքներ եմ դրել, ու դու մի կողքիցդ միւսին չես դառնալու, մինչեւ չվերջանան արգելափակմանդ օրերը:

9 Իսկ դու քեզ համար ցորեն ու գարի ա՛ռ, ոսպ ու ոլոռ, կորեկ ու հաճար, դրանք դի՛ր խեցէ մի ամանի մէջ եւ քեզ համար հա՛ց պատրաստիր: Ու ըստ կողքիդ վրայ քո քնելու օրերի թուի՝ հարիւր իններսուն օր կ՚ուտես այն: 10 Կերակուրդ կշռով կ՚ուտես. օրը քսան սիկղ‡ որոշուած ժամերին կ՚ուտես դրանից: 11 Ջուրն էլ չափով կը խմես. մի փարչի վեցերորդ մասը որոշուած ժամերին կը խմես: 12 Կերակուրդ գարուց պատրաստուած նկանակի ձեւով կ՚ուտես. մարդկանց կղկղանքի վրայ կ՚եփես այն, նրանց աչքի առաջ: 13 Ու կ՚ասես. "Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. իսրայէլացիներն այսպէս են ուտելու իրենց հացը՝ իրենց պղծութեամբ, այն այլազգիների մէջ, ուր ցրելու եմ նրանց": 14 Եւ ես ասում եմ. «Քա՛ւ լիցի, Իսրայէլի Տէ՛ր Աստուած, եթէ հոգիս երբեւէ ապականուի պղծութիւնների մէջ. ես մեռելոտի կամ գազանից յօշոտուած անասունի միս ծննդիցս ի վեր մինչեւ այժմ երբեք չեմ կերել, ու բերանս էլ որեւէ պիղծ միս չի մտել»: 15 Եւ ասաց ինձ. «Ահա քեզ մարդու կղկղանքի փոխարէն արջառի քակոր եմ տուել. դրա վրայ կ՚եփես հացդ»:

16 Եւ Տէրն ինձ ասաց. «Մարդո՛ւ որդի, ահա ես վերացնում եմ Երուսաղէմում հացի պաշարը. թող հացը կշռով ու կարօտով ուտեն, ջուրն էլ չափով ու կարօտութեամբ խմեն, 17 որպէսզի կարօտ մնան հացի ու ջրի: Ու թող կործանուեն մարդն ու իր եղբայրը, հալումաշ լինեն իրենց անիրաւութիւնների մէջ»:

†Եբրայերէն՝ երեք հարիւր իններսուն:

‡Սիկղը հաւասար է շուրջ 200 գրամի:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺԵԼՈՒ Է ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԻՆ

5 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, յեսանով սրուած սուսեր ա՛ռ՝ վարսավիրների ածելուց աւելի սուր, ձե՛ռքդ առ այն, քաշի՛ր գլխիդ ու մօրուքիդ վրայով, ապա կշեռքն ա՛ռ ու կշռի՛ր այդ մազերը: 2 Մազի մէկ չորրորդ† մասը հրով կ՚այրես քաղաքի մէջ, երբ լրանան արգելափակմանդ օրերը, մէկ չորրորդ մասն էլ սրով կը կտրատես կը փռես քաղաքի շուրջը, իսկ մէկ չորրորդ մասն էլ քամուն կը տաս. ես սուր կը քաշեմ դրանց յետեւից: 3 Դրանցից մի փոքր մաս կ՚առնես, կը ծրարես ու կը դնես թիկնոցիդ մէջ: 4 Դրանցից էլի կը վերցնես կը գցես կրակի մէջ, կ՚այրես դրանք կրակի մէջ, եւ այնտեղից կրակ դուրս կը գայ:

5 Ու կ՚ասես բոլոր իսրայէլացիներին. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. այս այն Երուսաղէմն է, որ դրել եմ հեթանոսների եւ նրանց շուրջը գտնուող երկրների մէջ: 6 Քանի որ իմ դրած կանոնները փոխեցին հեթանոսների անիրաւութեան հետ, իմ հրամանները՝ իրենց շուրջը գտնուող երկրների օրէնքների հետ, մերժեցին իմ օրէնքներն ու իմ օրէնքներով չշարժուեցին, – 7 դրա համար այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Քանի որ պատճառները գալիս

†Եբրայերէն ամենուրեք՝ մէկ երրորդ:

են այն ազգերից, որոնք ձեր շուրջն են,
եւ դուք իմ օրէնքներով չշարժուեցիք, իմ
դրած կանոնները չկատարեցիք, չգոր-
ծեցիք նաեւ ըստ ձեր շուրջը գտնուող
հեթանոսների օրէնքների, – 8 ուստի
Ամենակալ Տէրն այսպէս է ասում. ահա
ես ձեզ դէմ եմ ու ձեր դատաստանը
պիտի անեմ ազգերի առաջ 9 եւ ձեր
պղծութիւնների պատճառով ձեզ պիտի
անեմ այն, ինչ երբեք չեմ արել ու
այլեւս դրա պէս ոչինչ չեմ անելու:
10 Դրա համար, Երուսաղէ՛մ, քո մէջ
հայրերը պիտի ուտեն որդիներին,
որդիներն էլ՝ հայրերին: Քո դատաս-
տանն եմ անելու եւ չորս հողմերին եմ
ցրելու քո բոլոր մնացորդներին: 11 Քա-
նի ես կենդանի եմ, – ասում է Ամե-
նակալ Տէրը, – եւ նրա համար, որ իմ
սրբութիւնները պղծեցիք ձեր բոլոր
գարշելի կուռքերով ու պիղծ պաշ-
տամունքներով, – ես մերժելու եմ ձեզ,
աչքս էլ ձեզ չի խնայելու, ոչ էլ
ողորմելու եմ ձեզ: 12 Ձեր մէկ չորրորդ
մասը համաճարակից է սպառուելու, քո
մէջ մէկ չորրորդ մասը սովից է մեռ-
նելու, միւս չորրորդ մասը չորս
հողմերին եմ ցրելու, իսկ մէկ չորրորդ
մասն էլ ձեր շուրջը սրից է ընկնելու.
սուր եմ քաշելու նրանց յետեւից: 13 Եւ
այսպէս նրանց վրայ իմ բարկութիւնը
յագուրդ է ստանալու, ու ես մխի-
թարուելու եմ: Եւ պէտք է իմանան, որ
ես՝ Տէրս, խօսեցի իմ վրէժխնդրութեամբ՝
յագուրդ տալու համար իրենց վրայ իմ
բարկութեան: 14 Երուսաղէ՛մ, ես քեզ
անապատի եմ վերածելու, քեզ դարձ-
նելու եմ քո շուրջը գտնուող հեթա-
նոսների նախատինքի առարկան, քո
շուրջը եղող գիւղերն էլ աւերակների եմ
վերածելու բոլոր անցորդների աչքերի
առաջ, 15 եւ դուք ողբալի ու եղկելի էք
լինելու, ծաղր ու ցուցանք՝ ձեր շուրջը
եղող ազգերի մէջ, երբ ես
սրտմտութեամբ ու վրէժխնդրութեան
ցասումով ձեզ հետ դատաստան տես-
նեմ: 16 Ես՝ Տէրս եմ ասում սա. երբ ես
սովի չար նետերս արձակեմ ձեզ վրայ՝
կ'ոչնչանաք: Դրանք կ'արձակեմ ձեզ
վրայ, սով կը բերեմ ձեր գլխին, կը
վերացնեմ ձեր հացի պաշարը, 17 ձեր
դէմ սով ու վայրի գազաններ կ'ու-
ղարկեմ եւ կը պատժեմ ձեզ. մահն ու
արիւնը կ'անցնեն ձեր վրայով, ձեր
շուրջն էլ սրածութիւն կ'անեմ, որով-
հետեւ ես՝ Տէրս եմ ասում դա"»:

ԸՆԴԴԷՄ ԿՌԱՊԱՇՏՆԵՐԻ

6 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2
«Մարդո՛ւ որդի, դէմդ ուղղի՛ր դէպի
Իսրայէլի այդ լեռները, մարգարէու-
թի՛ւն արա դրանց վրայ եւ ասա՛. 3 "Ի-
սրայէլի՛ լեռներ, լսեցէ՛ք Ամենակալ
Տիրոջ պատգամները: Այսպէս է ասում
Ամենակալ Տէրը լեռներին ու բլուր-
ներին, ձորերին ու դաշտերին. 'Ահա
սուր եմ քաշում ձեզ վրայ, ու ոչնչա-
նալու են ձեր բարձրադիր սրբավայրերը,
4 կործանուելու են ձեր խորանները,
խորտակուելու են ձեր մեհեանները. ու
գետին եմ փռելու ձեր սպանուածներին
ձեր կուռքերի առաջ: 5 Ձեր կուռքերի
առաջ վիրաւոր դիաթաւալ եմ անելու
իսրայէլացիներիդ ու ձեր ոսկորները
փռելու եմ ձեր խորանների շուրջը, 6 ձեր
բոլոր բնակավայրերում: Քաղաքներն
աւերուելու են, բարձրադիր սրբա-
վայրերը՝ ոչնչանալու, որպէսզի ջնջուեն
ու պակասեն ձեր խորանները, խոր-
տակուեն ու վերջ գտնեն ձեր կուռքերը,
վերանան ձեր մեհեանները, ջնջուեն ձեր
ձեռքերի գործերը, 7 ու ձեր մէջ
սպանուածներ ընկնեն: Պէտք է
իմանաք, որ ես եմ Տէրը:

8 Սակայն ազգերի մէջ ձեզանից սրից
ազատուածներ եմ թողնելու՝ օտար
երկրներում ցիր ու ցան: 9 Ու ազգերի
մէջ, ո՛ւր էլ որ գերուած լինեն նրանք,
ձեր ազատուածները պիտի յիշեն ինձ,
որ երդուեցի վրէժխնդիր լինել շնացած
ու իմ դէմ ապստամբած նրանց սրտին,
պոռնկացած աչքերին՝ նրանց չար
վարքի համար: Նրանք պիտի ծեծեն
իրենց երեսները այն չարիքների համար,
որ արել են իրենց բոլոր կռատներում,
իրենց ողջ կեանքի ընթացքում: 10 Ու
պէտք է իմանան, որ ես եմ Տէրը, եւ
իզուր չէ որ ասել եմ, թէ այս բոլոր չա-
րիքները նրանց հատուցելո՛ւ եմ": 11 Այս-
պէս է ասում Ամենակալ Տէրը. "Ձեռ-
քերով ծա՛փ զարկ, ոտքերով դոփի՛ր ու
վա՜յ-վա՜յ ասա Իսրայէլի տան գարշելի

գործերի ու չարիքների համար, որով-
հետեւ սրից, համաճարակից ու սովից են
ընկնելու: 12 Ով որ հեռու է՝ համա-
ճարակից է մեռնելու, իսկ ով մօտ է՝
սրից է ընկնելու. մնացածն ու պաշա-
րուածը սովից են մեռնելու: Այսպիսով
ես յագուրդ եմ տալու բարկութեանս:
13 Ու պէտք է իմանան, որ ես եմ Տէրը,
երբ ձեր սպանուածներն ընկնեն ձեր
կուռքերի առաջ, ձեր խորանների
շուրջը, բոլոր բլուրների ու լեռների
գագաթների վրայ, ինչպէս նաեւ բոլոր
սաղարթախիտ ծառերի, հաստատուն
կաղնիների տակ գտնուող կռատներում,
ուր խունկ էիք ծխում ձեր բոլոր
կուռքերին: 14 Ես ձեռքս իջեցնելու եմ
բոլորի վրայ եւ երկիրը մատնելու եմ
կործանման ու ոչնչացման, Դեբլաթի
անապատից մինչեւ ձեր բոլոր բնա-
կավայրերը: Պէտք է իմանաք, որ ես եմ
Տէրը"»:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄՕՏԱԼՈՒՏ ՎԱԽՃԱՆԸ

7 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
«Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, կ'ասես. 2 այս-
պէս է ասում Ամենակալ Տէրը. "Ի-
սրայէլացիների երկրիդ վախճանը հասել
է, վախճան է հասել երկրիդ չորս
կողմերին էլ. 3 ահա հասել է քո վախ-
ճանը: Բարկութիւնս ուղարկելու եմ քեզ
վրայ ու քո բռնած ճանապարհին
համապատասխան՝ վրէժ եմ լուծելու
քեզնից, հատուցել եմ տալու քեզ՝
քո բոլոր գարշելի արարքների համար:
4 Աչքս չի խնայելու քեզ, ոչ էլ ողոր-
մելու եմ, որովհետեւ քո վարքին համա-
պատասխան հատուցել եմ տալու քեզ,
եւ քո գարշելի գործերը երեւալու են քո
մէջ: Պէտք է իմանաս, որ ես եմ Տէրը":
5 Այսպէս է ասում Տէր Աստուած. "Ահա
մի չարիք, մի չարիք է վրայ հասել.
6 եկել է վախճանը, թեւածում է քեզ
վրայ: 7 Ահա տագնապն է համակել
քեզ, դու որ բնակուել ես այդ երկրում:
Հասել է ժամանակը, մօտեցել՝ օրը,
սակայն ոչ իրարանցումով, ոչ երկուն-
քով: 8 Այլ այժմ, շուտով թափելու եմ
քեզ վրայ զայրոյթս, ի կատար եմ
ածելու սրտմտութիւնս, դատաստան եմ
տեսնելու քեզ հետ՝ ըստ քո բռնած
ճանապարհի, հաշիւ եմ պահանջելու քո
բոլոր պիղծ պաշտամունքների համար:
9 Աչքս չի խնայելու քեզ, ոչ էլ
ողորմելու եմ, որովհետեւ ըստ քո բռնած
ճանապարհի հատուցել եմ տալու քեզ,
ու քո գարշելի գործերը երեւալու են քո
մէջ: Պէտք է իմանաս, որ ես եմ Տէրը, որ
հարուածում եմ քեզ: 10 Ահա եւ Տիրոջ
օրը. ահա հասել է վերջը: Եկել է
տագնապը, դալարել է գաւազանը.
գլուխ է բարձրացրել ամբարտաւա-
նութիւնը: 11 Խորտակելու եմ անօրէնի
չարութիւնը, սակայն ոչ իրարանցումով
ու փութով: Նրանց խելքը գլուխներին
չէ, ոչ էլ գեղեցկութիւն կայ նրանց մէջ:
12 Հասել է ժամանակը, ահա եկել է օրը:
Գնողը թող չուրախանայ, ոչ էլ
վաճառողը ողբայ, որովհետեւ Իսրայէլի
ամբողջ բազմութեան վրայ բարկու-
թիւնն է տիրում: 13 Ով որ գնելու է,
վաճառողին այլեւս չի դառնալու, ոչ էլ
նրանք կենդանի կեանքով են ապրելու,
որովհետեւ այս տեսիլքը նրանց ողջ
բազմութեանը չի վերադառնալու, եւ ոչ
մի մարդ իր կեանքի յոյսի մէջ չի
հաստատուելու: 14 Փող զարկեցիք ու
ամէն ինչ պատրաստեցիք: Սակայն ոչ
ոք չի լինելու, որ պատերազմի գնայ,
որովհետեւ բարկութիւնս իջել է
Իսրայէլի բազմութեան վրայ":

ՈՉ ՈՔ ՉԻ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՊԱՏԺԻՑ

15 "Սրով պատերազմը՝ դրսից, սովն
ու համաճարակը՝ ներսից: Ովքեր դրսում
են լինելու՝ սրով են վերջ գտնելու, իսկ
ովքեր քաղաքում՝ սովից ու համա-
ճարակից են մեռնելու: 16 Բայց դրանցից
փրկուելու են միայն նրանք, որ
փրկուելու էին, ու լեռների վրայ աղաւ-
նիների պէս անձանձրոյթ պիտի մնչեն-
հեծեծեն: Բոլորին էլ կոտորելու եմ,
իւրաքանչիւրին՝ ըստ իր անիրա-
ւութեան:

17 Ամէն ձեռք թուլանալու է,
ամէն երանք՝ խոնաւութեամբ ա-
պականուելու[†]:

18 Քուրձեր են առնելու իրենց վրայ.
մղձաւանջներ են համակելու նրանց:
Ամէն երեսի վրայ ամօթ պիտի լինի,

[†]Երրայերէն՝ ծնկերը ջրի պէս թուլանալու են:

ամէն գլուխ՝ սափրուած[†] *:*
19 *Նրանց արծաթն ընկած է մնալու*
հրապարակներում,
իսկ ոսկին արհամարհուելու է:
Տիրոջ բարկութեան օրը նրանց
արծաթն ու ոսկին չեն կարողանալու
փրկել նրանց:
Նրանց հոգիները չեն յագենալու,
ոչ էլ որովայնները՝ լցուելու են,
որովհետեւ տանջանքները նրանց են
տրուել անիրաւութիւնների պատճառով:
20 *Ընտիր-ընտիր զարդեր են դրել՝*
գոռոզութեամբ,
եւ դրանցից սարքել են գարշելի
պաշտամունքի կուռքեր:
Դրա համար էլ պղծութեան առար-
կայ եմ դարձնելու դրանք
21 *ու մատնելու եմ դրանք օտարների*
ձեռքը՝ յափշտակելու,
չարագործների ձեռքը՝ աւարի են-
թարկելու:
22 *Եւ պղծելու են դրանք:*
Երեսս չուռ եմ տալու նրանցից:
Պղծելու են իմ սրբարանը,
անխտիր մտնելու են այնտեղ,
պղծելու են այն,
խառնակութիւն են անելու,
23 *որովհետեւ երկիրը լցուել է նրանց*
արիւնալի դատաստաններով,
քաղաքներն էլ լի են անօրէնու-
թիւններով:
24 *Չար ազգեր եմ բերելու,*
եւ սրանք ժառանգելու են նրանց
տները:
Զսպելու եմ բռնութիւն գործած
նրանց ամբարտաւանութիւնը:
Պղծուելու են նրանց սրբավայրերը:
25 *Քաւութեան զոհ մատուցելով*[‡]
խաղաղութիւն են փնտռելու, բայց
չեն գտնելու:
26 *Դժբախտութիւնը դժբախտութեան*
վրայ է գումարուելու, գոյժը՝ գոյժի:
Մարգարէների մօտ տեսիլքներ են
փնտռելու,
քահանայի մօտ՝ ցանկալի օրէնքներ,
ծերերի մօտ՝ խորհուրդներ,
բայց չեն գտնելու:
27 *Սգալու է թագաւորը,*
վիշտ է կրելու իշխանը,
թուլանալու են երկրի ժողովրդի
ձեռքերը.
ըստ նրանց բռնած ճանապարհի
վարուելու եմ նրանց հետ
եւ ըստ նրանց չարիքների պատժելու
եմ նրանց:
Պէտք է իմանան, որ ես եմ Տէրը"»:

ԱՍՏԾՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼՔԸ ԵԶԵԿԻԷԼԻՆ
(8: 1-10: 22)

ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԱՍՏԾՈՒ ՏԱՃԱՐՈՒՄ

8 *Վեցերորդ տարում, հինգերորդ*
ամսին, ամսուայ հինգերորդ օրը, ես
նստած էի իմ տանը, Յուդայի երկրի
տան աւագներն էլ նստած էին իմ
առաջ: Ամենակալ Տիրոջ ձեռքը հանդ-
չեց վրաս, 2 *ու տեսնում էի մարդու*
նման մի կերպարանք, մէջքից ներքեւ՝
կրակ, մէջքից վեր՝ ասես օդի մէջ
տեսիլք, ասես երփներանգ ակ: 3 *Ձեռքի*
պէս մի բան պարզեց գցեց իմ գլխի
գագաթին. Հոգին բարձրացրեց ինձ
երկնքի ու երկրի միջեւ, տարաւ ինձ
Երուսաղէմ՝ Աստծու տեսութեան, ու
կանգնեցրեց Տիրոջ տան ներքին նա-
խագռան մօտ, որ դէպի հիւսիս է
նայում, եւ ուր գտնւում էր նախանձ
գրգռող կուռքը: 4 *Այնտեղ էր եւ*
Իսրայէլի Աստծու փառքը, ճիշտ այն
տեսիլքի պէս, որ տեսել էի դաշտում:
5 *Եւ ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի,*
նայի՛ր աչքերովդ դէպի հիւսիս»:
Աչքերս բարձրացրի դէպի հիւսիս, եւ
ահա հիւսիսային կողմում, խորանի
դռան վերեւում, մուտքի մօտ, որ դէպի
արեւելք էր նայում, կար նախանձի
կուռքը: 6 *Եւ ասաց ինձ. «Մարդո՛ւ*
որդի, տեսնո՞ւմ ես, թէ ի՛նչ մեծ
անօրէնութիւններ է գործում այստեղ
Իսրայէլի այդ տունը, որպէսզի հեռա-
նամ իմ սրբավայրերից: Սրանցից է՛լ
աւելի մեծ անօրէնութիւններ դարձեալ
կը տեսնես»:
7 *Եւ ինձ տարաւ գաւթի դռների*
առաջ. ահա պատի մէջ մի ծակ տեսայ:
8 *Եւ ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, փորի՛ր*
այդ պատը»: Փորեցի պատը: Եւ ահա
մի դուռ: 9 *Ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի,*

[†]Իբրեւ սգոյ նշան:
[‡]Եբրայերէն՝ *վրայ է հասնելու կործանումը:*

մտի՛ր, տե՛ս անօրէնութիւններն ու
չարիքները, որ դրանք այստեղ գործում
են»: 10 *Մտայ ու տեսայ ամէն տեսակ*
սողուն ու անասուն, սնոտի գարշանք-
ներ: Տեսայ եւ դրանց շուրջը քան-
դակուած՝ Իսրայէլի տան բոլոր կուռ-
քերը: 11 *Իսրայէլի տան նախնիներից*
եօթանասուն տղամարդիկ, որոնց մէջ էր
նաեւ Սափանի որդի Յեզոնիան, որ
կանգնած էր նրանց առջեւ: Իւրա-
քանչիւրի ձեռքում՝ բուրվառ: Խնկի
ծուխն էլ ամպի պէս բարձրանում
դիզւում էր: 12 *Եւ Տէրն ինձ ասաց.*
«Մարդո՛ւ որդի, տեսնո՞ւմ ես, թէ
Իսրայէլի այդ տան նախնիներն ինչե՛ր
են անում այստեղ, խաւարի մէջ,
իւրաքանչիւրն իր ծածուկ սենեակում:
Նրանք ասում են, թէ Տէրը լքել է
երկիրը, չի նայում երկրին»: 13 *Եւ*
ասաց ինձ. «Էլի ուրիշ աւելի մեծ
անօրէնութիւններ կը տեսնես, որ
գործում են դրանք»:
14 *Ու ինձ տարաւ Տիրոջ տան դռան*
առաջ, որ դէպի հիւսիս է նայում: Ահա
այնտեղ նստած էին կանայք ու ողբում
էին Թամուզին: 15 *Եւ ասաց ինձ.*
«Տեսնո՞ւմ ես այդ, մարդո՛ւ որդի. բայց
դեռ սրանից է՛լ աւելի մեծ չարա-
գործութիւններ կը տեսնես»: 16 *Եւ ինձ*
մտցրեց Տիրոջ տան ներքնասրահը: Ահա
Տիրոջ տաճարի դռների վերեւում,
խորանի ու պատշգամբի միջեւ, կային
մօտաւորապէս քսանհինգ մարդիկ,
որոնք թիկունքները շուռ էին տուել
Տիրոջ տաճարի կողմը, երեսները՝ դէպի
արեւելք ու երկրպագում էին արեւին:
17 *Նա ասաց ինձ. «Տեսա՞ր այդ,*
մարդո՛ւ որդի: Մի՞թէ փոքր բան է
Իսրայէլի այդ տան անօրէնութիւնը, որ
դրանք այստեղ գործում են, որպէսզի
այդ երկիրը լցուի անօրէնութիւններով,
ու դրանք բարկացնեն ինձ: Ահա
որթատունկի ճիւղն էլ քաշում են որպէս
արհամարհանքի[†] *նշան:* 18 *Ես էլ դրանց*
հետ բարկութեամբ եմ վարուելու.
գթասիրտ աչքով չեմ նայելու, ոչ էլ
ողորմելու եմ: Ականջիս գոռան էլ, չեմ
լսելու դրանց»:

[†]Եբրայերէն՝ *քաշում են իրենց քթին:*

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՊԱՏԺՈՒՄ Է

9 *Նա ականջիս բարձր ձայնով*
աղաղակեց ու ասաց. «Մօտեցել է այդ
քաղաքը պատժելու ժամը»: Ամէն մարդ
սպանութեան գործիք ունէր ձեռքին: 2
Ահա վեց մարդ էր գալիս դէպի հիւսիս
նայող բարձր դռան ճանապարհով՝
իւրաքանչիւրի ձեռքին տապար: Դրանց
մէջ էր նաեւ սքեմով մի մարդ՝ մէջքին
շափիւղաներով ականակալ գօտի[†] *:*
Մտան կանգնեցին պղնձէ զոհասեղանի
առաջ: 3 *Եւ Իսրայէլի Աստծու փառքը,*
որ տաճարում էր, քերովբէներից վեր օդ
բարձրացաւ: Կանչեց այն մարդուն, որ
սքեմ էր հագել ու մէջքին գօտի ունէր:
4 *Տէրն ասաց նրան. «Անցի՛ր Երուսաղէմ*
քաղաքի միջով ու նշա՛ն դիր այն մարդ-
կանց ճակատին, որ հեծում են ու հոգոց
հանում այդ վայրերում կատարուած
անօրէնութիւնների վրայ»: 5 *Միւսներին*
էլ ինձ լսելի ձեւով ասաց. «Նրա
յետեւից քաղա՛ք գնացէք ու կոտո-
րեցէ՛ք: 6 Գթասիրտ աչքով մի՛ նայէք.
մի՛ խղճաք ծերին ու մանկան, կոյսին ու
երիտասարդին: Կանանց էլ կոտորե-
ցէ՛ք-ջնջեցէ՛ք: Բայց ում վրայ որ նշան
կայ՝ չմօտենա՛ք: Սկսեցէ՛ք իմ սրբա-
րանից»: Եւ սկսեցին ծեր մարդկանցից,
որոնք տաճարի ներսում էին: 7 *Եւ ասաց*
նրանց. «Պի՛ղծ համարեցէք այդ տունը,
լցրէ՛ք այդ տունը դիակներով, ելէ՛ք,
հարուածեցէ՛ք, կոտորեցէ՛ք այդ քա-
ղաքը»:
8 *Եւ ես նայեցի ու տեսայ, որ*
կոտորում էին նրանց: Երեսս ի վայր
ընկայ, աղաղակեցի ու ասացի. «Վա՛յ
ինձ, Ամենակա՛լ Տէր. ահա դու ջնջում
ես Իսրայէլի այդ տան մնացորդներին՝
քո զայրոյթը Երուսաղէմի վրայ թա-
փելով»:
9 *Եւ Տէրն ասաց ինձ. «Իսրայէլի ու*
Յուդայի երկրի այդ տան անիրաւու-
թիւնները սաստիկ շատացան, որով-
հետեւ այդ երկիրը լցուեց ժողովուրդ-
ների բազմութեամբ, այդ քաղաքն էլ՝
անօրէնութեամբ ու պղծութեամբ,
որովհետեւ ասացին, թէ՝ "Տէրը լքել է
երկիրը, այլեւս չի նայում երկրին":
10 *Արդ, գթասիրտ աչքով չեմ նայելու,*

[†]Եբրայերէն՝ *մէջքին գրագրի թանամաման:*

ոչ էլ ողորմելու եմ, այլ ըստ նրանց ընթացած ճանապարհի էլ պիտի հատուցեմ նրանց»:

11 *Եւ ահա այն մարդը, որ սքեմ էր հագել ու մէջքին գօտի ունէր, պատասխանեց ու ասաց. «Արեցի, ինչպէս որ հրամայել էիր ինձ»:*

ՏԷՐԸ ՆՈՐԻՑ Է ԵՐԵՒՈՒՄ ԵԶԵԿԻԷԼԻՆ

10 *Ու ահա տեսնում էի, որ երկնքում, որ քերովբէների գլխավերեւում էր, շափիւղայ քարից շինուած գահի նմանուող մի բան կար:* 2 *Եւ ասաց սքեմ հագած մարդուն. «Մտի՛ր այդ անիւների մէջտեղը, քերովբէների տակ, բուռդ լցրո՛ւ այդ քերովբէների մէջտեղում եղող շիկացած ածուխներով ու դրանք ցանի՛ր քաղաքի վրայ»:* 3 *Եւ նա մտաւ իմ աչքի առաջ: Երբ մարդը մտնում էր, քերովբէները կանգնած էին տաճարի աջ կողմում. ծխի ամպն էլ լցրել էր ներքնասրահը:* 4 *Եւ այն քերովբէների վրայից օդի մէջ վեր բարձրացաւ Տիրոջ փառքը, որ տաճարում էր. տաճարը լցուեց ծխի ամպով, սրահն էլ լցուեց Տիրոջ փառքի լոյսով:* 5 *Եւ քերովբէների թեւերի ձայնը լսելի էր լինում մինչեւ արտաքին գաւիթը, ինչպէս Սաղայի Աստծու ձայնը, երբ նա խօսում էր:* 6 *Մինչ Աստուած հրահանգ էր տալիս սուրբ սքեմ հագած մարդուն ու ասում էր՝ «Կրա՛կ առ քերովբէների մէջտեղում եղող այդ անիւների միջից», –* 7 *սա մտաւ ու կանգնեց անիւների մէջտեղը: Եւ քերովբէներից մէկը ձեռքը մեկնեց կրակի մէջ, որ քերովբէների մէջտեղում էր, առաւ այն ու տուեց նրա ձեռքը: Եւ նա, որ սուրբ սքեմ էր հագել, առաւ այն ու այնտեղից դուրս եկաւ:* 8 *Նայում էի քերովբէներին ու նրանց թեւերի տակ տեսնում մարդու ձեռքի պէս մի բան:*

9 *Տեսնում էի նաեւ, որ ահա չորս անիւներ կային քերովբէների մօտ, ամէն մի քերովբէի ետեւում՝ մի անիւ: Եւ անիւների տեսքը նման էր կարկեհան ակի տեսքին:* 10 *Չորս անիւների տեսքն էլ այնպիսին էր, որ կարծես մի անիւը միւսի մէջ անցած լինէր:* 11 *Եւ երբ դրանք շարժւում էին, չորս կողմերից մէկի ուղղութեամբ էին ընթանում ու յետ շուռ չէին գալիս, որովհետեւ դէպի առաջ ո՛ր կողմ որ նայում էր գլուխը՝ նրա յետեւից էին ընթանում եւ միւսները ու յետ շուռ չէին գալիս:* 12 *Եւ նրանց բոլորի մարմինները՝ թէ՛ ձեռքերը, թէ՛ թեւերը, ինչպէս նաեւ անիւները, չորս կողմից լիքն էին աչքերով:* 13 *Հէնց ինքս լսեցի, որ անիւներին դիւրաթաւալ անունն էին տալիս:* 14 *Եւ քերովբէներից ամէն մէկը չորս դէմք ունէր. մէկը քերովբէի դէմք էր, երկրորդը՝ մարդու, երրորդը՝ առիւծի, իսկ չորրորդը՝ արծուի:* 15 *Ու քերովբէները վեր բարձրացան: Սա այն գազանն էր, որ տեսել էի Քոբար գետի ափին:* 16 *Երբ քերովբէները գնում էին, անիւներն էլ էին ընթանում նրանց յետեւից, իսկ երբ քերովբէները իրենց թեւերը բարձրացնում էին՝ երկրից վերանալու համար, անիւները յետ չէին դառնում, որովհետեւ նրանց հետ էին:* 17 *Երբ քերովբէները կանգ էին առնում, անիւներն էլ կանգ էին առնում, իսկ երբ քերովբէները վեր էին բարձրանում, անիւներն էլ էին վեր բարձրանում, որովհետեւ նրանց մէջ կենդանի ոգի կար:*

ՏԻՐՈՋ ՓԱՌՔԸ ԳՆՈՒՄ Է ՏԱՃԱՐԻՑ

18 *Եւ Տիրոջ փառքը տաճարի մուտքի գաւթից բարձրացաւ ու նստեց քերովբէների վրայ:* 19 *Քերովբէներն էլ բարձրացրին իրենց թեւերը, աչքերիս առաջ համբարձան երկրից, անիւներն էլ՝ նրանց յետեւից: Եւ կանգնեցին Տիրոջ տան շեմին, որ նայում էր դէպի արեւելք. Իսրայէլի Աստծու փառքն էլ նրանց վերեւում էր:* 20 *Այս այն կենդանի էակն էր, որին ես տեսել էի Քոբար գետի ափին Իսրայէլի Աստծուց ներքեւ ու իմացայ, որ դրանք քերովբէներ են:* 21 *Ամէն մէկը չորսական դէմք ունէր, ամէն մէկը՝ ութական*† *թեւ, թեւերի տակ՝ մարդու ձեռքերի նմանութեամբ ձեռքեր: Երեսներն էլ նման էին մարդու երեսի:* 22 *Սրանք այն երեսներն էին, որ ես տեսել էի Քոբար գետի ափին, Իսրայէլի Աստծու փառքի*

†Եբրայերէն՝ չորսական:

ներքեւ. հէնց նրանց տեսիլքն էր, նրանք էին. իւրաքանչիւրն իր դէմքի ուղղութեամբ էր ընթանում:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵԼՈՒ Է ԻՐ ԳՈՐԾԱԾ ՈՃԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

11 *Հոգին բարձրացրեց ինձ ու բերեց Տիրոջ տան դռան դիմաց, որ նայում էր դէպի արեւելք: Եւ ահա սրահի դռան առաջ մօտաւորապէս քսանհինգ մարդ կար: Նրանց մէջ տեսայ Յազերի որդի Յեզոնիային եւ Բանեայի որդի Փալտիային՝ ժողովրդի առաջնորդներին:*

2 *Տէրն ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, սրանք են այն մարդիկ, որոնք սնոտի բաներ են մտածում ու չար խրատներ տալիս այդ քաղաքում* 3 *եւ ասում են. "Այս տները նոր շինուած չեն, այլ այս քաղաքը մի կաթսայ է, մենք էլ՝ միս":* 4 *Դրա համար էլ մարգարէութի՛ւն արա դրանց վրայ, մարգարէութի՛ւն արա, մարդո՛ւ որդի»:* 5 *Տիրոջ Հոգին իջաւ վրաս ու ասաց ինձ. «Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Այսպէ՛ս ասացիք, Իսրայէլի՛ տուն, ու ես գիտեմ ձեր հոգու խորհուրդը:* 6 *Դուք բազմապատկեցիք ձեր դիակներն այդ քաղաքում ու դրա ճանապարհները լցրիք սպանուածներով:* 7 *Դրա համար էլ այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Ձեր դիակները, որ փռել էք այդտեղ, քաղաքում, դրանք միսն են, իսկ դա էլ՝ կաթսան: Ձեզ դուրս եմ բերելու դրա միջից:* 8 *Դուք վախենում էիք սրից, սուր եմ բերելու ձեզ վրայ, – ասում է Ամենակալ Տէրը: –* 9 *Ձեզ դուրս եմ բերելու դրա միջից ու մատնելու եմ օտարների ձեռքը,* 10 *դատաստան եմ տեսնելու ձեզ հետ, որպէսզի սրով էլ ընկնէք: Իսրայէլի լեռների վրայ եմ ձեզ դատելու, եւ դուք պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը:* 11 *Դա ձեզ համար կաթսայ չի լինելու, ոչ էլ դուք դրա մէջ՝ միս: Իսրայէլի լեռների վրայ եմ ձեզ դատելու, եւ պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը:* 12 *Դուք իմ արդարութեան ճանապարհով չընթացաք, հրամաններս չգործադրեցիք, այլ ձեր շուրջը գտնուող ազգերի սովորութիւններով շարժուեցիք"»:*

13 *Մինչ ես մարգարէութիւն էի անում, մեռաւ Բանեայի որդի Փալտիան: Երեսս ի վայր ընկայ ու բարձրաձայն աղաղակեցի՝ ասելով. «Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, Ամենակա՛լ Տէր, Իսրայէլի մնացորդների վախճանը հասցրիր»:*

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՀԱՒԱՔԻ ՅՐՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ

14 *Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.* 15 *«Մարդո՛ւ որդի, քո եղբայրների, քո գերուած հարազատների, Իսրայէլի ամբողջ տան վախճանը հասել է: Երուսաղէմի բնակիչները նրանց ասել են, թէ՝ "Հեռացէ՛ք Տիրոջից, որովհետեւ այս երկիրը մեզ է տրուած որպէս ժառանգութիւն":* 16 *Դրա համար ասա՛ նրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. Նրանց գցելու եմ ազգերի մէջ, սփռելու եմ ամբողջ երկրով մէկ: Մի փոքր ժամանակ սրբութիւն եմ լինելու նրանց մտած երկրում":* 17 *Ուստի ասա՛ նրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. Նրանց հաւաքելու եմ ազգերի միջից, մէկտեղելու եմ նրանց ա՛յն երկրներից, ուր սփռել էի նրանց, եւ նրանց եմ տալու Իսրայէլի երկիրը:* 18 *Նրանք մտնելու են այնտեղ, վերացնելու են այնտեղի բոլոր գարշելի կուռքերը, ինչպէս նաեւ բոլոր անօրէնութիւնները նրա միջից:* 19 *Եւ ուրիշ սիրտ եմ տալու նրանց, նոր հոգի եմ պարգեւելու նրանց, հանելու եմ քարէղէն սիրտը նրանց մարմիններից* 20 *եւ տալու եմ մարմնեղէն սիրտ, որպէսզի պատուիրաններիս համաձայն ընթանան, օրէնքներս պահեն ու կատարեն, ինձ համար ժողովուրդ լինեն, ես էլ իրենց համար՝ Աստուած:* 21 *Բայց գարշելի կուռքերին նուիրուած նրանց սրտի համար, նաեւ ա՛յն անօրէնութիւնների համար, որ գործել են, ա՛յն ընթացքի համար, որ ցոյց են տուել, պատիժ եմ բերելու նրանց գլխին"», – ասում է Ամենակալ Տէրը:*

ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌՔԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

22 *Քերովբէները բարձրացրին իրենց թեւերը, անիւներն էլ նրանց յետեւից*

բարձրացան, Իսրայէլի Աստծու փառքն էլ նրանց բոլորի վրայ էր, վերեւում:
23 Ու Տիրոջ փառքը քաղաքի միջից վեր բարձրացաւ, կանգ առաւ այն լեռան վրայ, որ քաղաքի դիմացն էր:
24 Ու Հոգին ինձ բարձրացրեց, բերեց քաղդէացիների երկիրը, գերիների մէջ՝ Աստծու Հոգու ցոյց տուած տեսիլքով: Այսպիսով ես սթափուեցի այն տեսիլքից, որ տեսել էի, ու խօսեցի գերիների առաջ այն բոլոր բաների մասին, որ Տէրն ինձ ցոյց էր տուել:

ԵԶԵԿԻԷԼԸ ԱՌՍՈՐ Է ԳՈՒՇԱԿՈՒՄ

12 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, դրանց անօրէնութիւնների մէջ ես դու բնակւում. աչքեր ունեն տեսնելու, բայց չեն տեսնում, ականջներ ունեն լսելու, բայց չեն լսում, քանի որ դառնացնողների տուն են:
3 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, քո գերութեան պատրաստութի՛ւնը տես, ցերեկը գերութեա՛ն գնա նրանց աչքի առաջ, քո տեղից ուրիշ տե՛ղ քոչիր նրանց աչքի առաջ, որ տեսնեն, քանի որ նրանք դառնացնողների տուն են: 4 Նրանց աչքի առաջ մէջտե՛ղ հանիր պատրաստութիւնդ, որ տեսել ես գերութեան համար: 5 Երեկոյեան նրանց առա՛ջ ելիր, ինչպէս գերին է ելնում, նրանց աչքի առաջ պատը ծակի՛ր ու դրա միջով սրանց առա՛ջ ելիր: 6 Կուզկուզ կը գնաս ու գաղտագողի դուրս կ'ելնես. գլխիդ շոր կը գցես, որ շուրջդ չտեսնես: Քեզ խորհրդանշան դարձրի Իսրայէլի տան համար»:
7 Եւ ամէն բան այնպէս արեցի, ինչպէս որ պատուիրել էր ինձ Տէրը. ցերեկը գերու հագուստ գցեցի վրաս, երեկոյեան իմ ձեռքով պատը փորեցի. ու նրանց աչքի առաջ գաղտագողի, կուզկուզ էի գնում: 8 Իսկ առաւօտեան Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 9 «Մարդո՛ւ որդի, Իսրայէլի տան՝ դառնացնողների տան զաւակները չասացի՞ն քեզ, թէ՝ "Այդ ի՛նչ ես անում": 10 Արդ, ասա՛ նրանց. "Այսպէս է ասում Տէր Աստուածը Երուսաղէմի իշխաններիդ ու առաջնորդներիդ, Իսրայէլի բոլոր զաւակներին, որ այնտեղ են բնակւում.
11 ես խորհրդանշան եմ ձեզ համար Երուսաղէմի մէջ. ինչպէս որ արել եմ քեզ՝ այնպէս էլ լինելու է նրանց հետ, որովհետեւ պանդխտութեան ու գերութեան են գնալու: 12 Իշխանն էլ նրանց մէջ կուզկուզ է գնալու, գաղտագողի է շրջելու, պատը փորելով է դուրս գալու, դէմքը ծածկելով է գնալու եւ շուրջը չի տեսնելու: 13 Ցանցս գցելու եմ նրա շուրջ, եւ նա բռնուելու է ուռկանիս մէջ: Տանելու եմ նրան Բաբելոն՝ քաղդէացիների երկիրը, բայց նա այդ երկիրը չի տեսնելու եւ այնտեղ էլ մեռնելու է:
14 Եւ նրա բոլոր օգնականներին, որոնք նրա շուրջն են, նրա բոլոր պաշտպաններին ցրելու եմ բոլոր հողմերին ու սուր եմ քաշելու նրանց յետեւից: 15 Եւ երբ ես նրանց ցրեմ ազգերի մէջ, սփռեմ երկրներով մէկ, պէտք է իմանան, որ ես եմ Տէրը: 16 Սակայն նրանցից սակաւաթիւ մարդկանց զերծ եմ թողնելու սովից, սրից ու համաճարակից, որպէսզի պատմեն իրենց բոլոր անօրէնութիւնները ա՛յն ազգերի մէջ, ուր որ մտնեն: Ու պէտք է իմանան, որ ես եմ Տէրը"»:

ԴՈՂԱՑՈՂ ՄԱՐԳԱՐԷԻ ՆՇԱՆԸ

17 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 18 «Մարդո՛ւ որդի, հացդ կարօտութեա՛մբ կեր եւ ջուրդ տանջանքներո՛վ ու նեղութեա՛մբ խմիր: 19 Եւ ասա՛ այդ երկրի ժողովրդին. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը Երուսաղէմի բնակիչներին. Իսրայէլի երկրում իրենց հացը կարօտութեամբ են ուտելու, իրենց ջուրը գարշանքով են խմելու, որպէսզի իրենց երկիրն ամբողջութեամբ կործանուի, որովհետեւ նրա բոլոր բնակիչներն ամբարշտութեան մէջ են: 20 Նրանց մարդաբնակ քաղաքներն էլ աւերուելու են, նրանց երկիրն էլ ապականութեան մէջ է լինելու: Պէտք է իմանան, որ ես եմ Տէրը"»:

ՏԻՐՈՋ ԽՕՍՔԸ ԻՐԱԿԱՆԱՆԱԼՈՒ Է

21 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 22 «Մարդո՛ւ որդի, այդ ի՞նչ ասացուածք է, որ ասւում է Իսրայէլի այդ

երկրում, թէ՝ "Հեռու են օրերը, ու չքացել են բոլոր տեսիլքները": 23 Ուստի ասա՛ նրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. խափանելու եմ այդ առակը, եւ Իսրայէլի զաւակներն այլեւս այդ առակը չեն արտասանելու, որովհետեւ պիտի ասես նրանց, որ մօտ են օրերն ու կատարուելու են բոլոր տեսիլքների պատգամները: 24 Այլեւս ոչ մի սուտ տեսիլք չի լինելու Իսրայէլում, ոչ էլ հաճոյական գուշակութիւններ՝ Իսրայէլի զաւակների համար: 25 Արդարեւ, ես՝ Տէրս ասացի այս խօսքերը, ասացի ու իրագործելու եմ դրանք, չեմ յետաձգելու, որովհետեւ, ո՛վ դառնացնողների տուն, ձեր օրերին է, որ ասել եմ այդ խօսքերը եւ իրագործելու եմ դրանք"», – ասում է Ամենակալ Տէրը:
26 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 27 «Մարդո՛ւ որդի, ահա Իսրայէլի այդ տունը՝ դառնացնողների տունն ասում է. "Դրա՝ Եզեկիէլի տեսած տեսիլքը, ինչ որ դա մարգարէանում է, բազմաթիւ օրեր յետոյ, հեռաւոր ժամանակներում է կատարուելու": 28 Դրա համար էլ ասա՛ դրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. իմ ասած խօսքերից շատ չի անցնելու, եւ ինչ որ ասել եմ՝ իրագործելու եմ"», – ասում է Ամենակալ Տէրը:

ԸՆԴԴԷՄ ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ

13 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, մարգարէութի՛ւն արա Իսրայէլի այդ մարգարէների դէմ, որ մարգարէանում են այնտեղ, եւ ասա՛ այդ մարգարէներին, որոնք իրենց սրտի ուզածի պէս են մարգարէանում. մարգարէացի՛ր ու ասա՛ նրանց. "Լսեցէ՛ք Տիրոջ պատգամները: 3 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. վա՛յ նրանց, որ այդպէս քմահաճօրէն են մարգարէանում, որ գնում են իրենց քմահաճոյքի յետեւից ու ոչինչ չեն տեսնում: 4 Ո՛վ Իսրայէլ, քո մարգարէներն այնպէս էին, ինչպէս աղուէսները՝ աւերակներում. նրանք հաստատուն չմնացին: 5 Հօտեր ժողովեցին Իսրայէլի քո տան վրայ, ու չհաստատուեցին այն խօսքերը, որ նրանք խօսում էին Տիրոջ անունից, 6 սուտ տեսիլքներ էին տեսնում, սնոտի գուշակութիւններ անում ու ասում էին՝ 'Այսպէս է ասում Տէրը': Բայց ես՝ Տէրս, չէի ուղարկել նրանց: Եւ սկսեցին ուրիշ խօսքեր էլ մէջտեղ գցել:
7 Չէ՞ որ սուտ տեսիլքներ էիք տեսել, սնոտի գուշակութիւններ արել, երբ ասում էիք, թէ այսպէս է ասել Տէրը: Բայց ես՝ Տէրս, չէի ասել: 8 Ուստի ասա՛. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. այն բանի համար, որ ձեր խօսքերը սուտ են, ձեր գուշակութիւնները՝ սնոտի, 9 ահա դրա համար ես իմ ձեռքը, – ասում է Ամենակալ Տէրը, – իջեցնելու եմ ձեզ վրայ, նաեւ ձեր մարգարէների վրայ, որոնք սուտ տեսիլքներ էին տեսնում ու սնոտի բաներ խօսում: Իմ ժողովրդի ժողովատեղիներում չպէտք է լինեն դրանք, ո՛չ պիտի յիշուեն Իսրայէլի տան գրքերում, ո՛չ էլ պիտի մտնեն Իսրայէլի երկիրը: Եւ պէտք է իմանան, որ ես եմ Ամենակալ Տէրը:
10 Եւ իմ ժողովրդին մոլորեցնելու համար ասում էին՝ խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն է. բայց խաղաղութիւն չէր լինում: Ժողովուրդը պատ էր կանգնեցնում, իսկ նրանք ծեփ էին քսում, որ փլուի: 11 Տէրն ասում է այդ ծեփողներին. "Դա անզգամութիւն է, քանի որ փուլ կը գայ. անձրեւ կը գայ ու կ'ողողի: Դրա որմնակալները ռմբաքարերով կը քարկոծեմ, ու կը խորտակուեն: Հողմ կը բարձրանայ ու կը տապալի: 12 Եւ Ահա խորտակուած է պատը. այն ժամանակ ձեզ չե՞ն ասի, թէ՝ 'Ո՛ւր է ձեր ծեփը, որով այն ծեփեցիք': 13 Արդ, այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Իմ սրտմտութեամբ հողմ եմ արձակելու, որ ամէն ինչ մէջտեղից վերացնի: Իմ բարկութեամբ անձրեւ է գալու՝ ողողելու համար: Ցասումով ռմբաքար ժայռեր եմ արձակելու դրա վրայ, որ կործանուի: 14 Գետնին եմ հաւասարեցնելու այն պատը, որ ծեփում էիք, եւ այն պիտի խորտակուի: Գետին եմ տապալելու այն, ու նրա հիմքերն են երեւալու: Ընկնելու եւ վերջ է գտնելու այն՝ մեղադրուելով: Պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը: 15 Սրտմտութիւնս եմ թափելու թէ՛ պատի, թէ՛ այն ծեփողների վրայ: Եւ այն պիտի խորտակուի:

*Եւ ասելու եմ ձեզ, որ պատն այլեւս
չկայ, ոչ էլ այն ծեփող Իսրայէլի
մարգարէները, 16 որոնք մարգարէանում
էին Երուսաղէմի մասին, նրա համար
խաղաղութիւն էին գուշակում, բայց
խաղաղութիւն չկար"», - ասում է
Ամենակալ Տէրը:*

ԸՆԴԴԷՄ ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՈՒՀԻՆԵՐԻ

*17 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, դարձրո՛ւ
դէմքդ քո ժողովրդի դուստրերի կողմը,
որոնք իրենց սրտի ուզածի պէս էին
մարգարէանում: Դու էլ մարգարէու-
թի՛ւն արա նրանց մասին ու ասա՛.
18 "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
վա՛յ նրանց, որ մոգական բարձիկներ են
կարում-կարկատում թեւի արմունկի
տակի համար եւ գլխաշորեր են
սարքում ամէն հասակի մարդկանց
գլխի համար՝ մոլորեցնելու նրանց
հոգիները, որովհետեւ մոլորուել են իմ
ժողովրդի հոգիները: 19 Խելքահան էին
անում նրանց, ինձ բամբասում էին իմ
ժողովրդի առաջ՝ մի բուռ գարու կամ մի
պատառ հացի համար, որպէսզի
սպանեն մարդկանց, որոնք մահապարտ
չէին, եւ կենդանի պահեն նրանց, ովքեր
պէտք չէ որ ապրէին: Խօսում էին
ժողովրդի ականջին, որ ախորժում է սին
խօսքերից: 20 Ուստի այսպէս է ասում
Տէր Աստուածը. "Ահա ես մոգական
բարձիկների դէմ եմ, որոնց մէջ
ամփոփում էիք ձեր հոգիները, եւ
պատռել-պոկելու եմ դրանք ձեր
թեւերից, առաքելու եմ այն մարդկանց,
ում դուք մոլորեցնում էիք՝ կործանելու
համար: 21 Պատառոտելու եմ ձեր
գլխաշորերը: Ազատելու եմ իմ
ժողովրդին ձեր ձեռքից, ու նրանք ձեր
բուռը հաւաքուած չեն լինելու: Պէտք է
իմանաք, որ ես եմ Տէրը: 22 Այն բանի
համար, որ անիրաւութեամբ խոտորում
էիք արդարի սիրտը (ե՛ս չէի մոլորեց-
նում), ինչպէս նաեւ նրա համար, որ
զօրացնում էիք անօրէնի բազուկը,
որպէսզի նա երբեք յետ չդառնայ իր
անօրէնութիւնից, իր չար ճանապարհից
ու ապրի, - 23 դրա համար այլեւս
ունայնութիւններ չէք գուշակելու,
հաճոյական գուշակութիւններ չէք
անելու: Փրկելու եմ իմ ժողովրդին ձեր
ձեռքից, ու պէտք է իմանաք, որ ես եմ
Տէրը"»:*

ԸՆԴԴԷՄ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

*14 Իսրայէլի աւագներից ոմանք եկան
ինձ մօտ ու առաջս նստեցին: 2 Եւ Տէրը
խօսեց ինձ հետ ու ասաց. 3 «Մարդո՛ւ
որդի, այդ մարդիկ իրենց մտադրու-
թիւնները† իրենց սրտի մէջ են դրել,
իրենց անիրաւութիւնների պատճառած
տանջանքները դրել են իրենց առջեւ:
Ե՞ս եմ տալու դրանց պատասխանը:
4 Ուստի դո՛ւ խօսիր դրանց հետ ու
ասա՛. "Այսպէս է ասում Ամենակալ
Տէրը. Իսրայէլի տնից ամէն ոք, ով իր
կռապաշտական մտադրութիւնները
սրտի մէջ դնի, իր անիրաւութիւնների
պատճառած տանջանքներն էլ՝ աչքի
առաջ եւ գայ մարգարէի մօտ՝ նրա
միջոցով ինձնից պատգամ հարցնելու, -
ես՝ Տէրս եմ նրան պատասխան տալու,
ըստ այն բանի, թէ ի՛նչ ունի իր մտքում,
5 որպէսզի իրենց վարքով, օտարացած
սրտով Իսրայէլի այդ տունը չխոտո-
րեցնեն ինձնից:
6 Ուստի ասա՛ Իսրայէլի այդ տանը.
"Այսպէս է ասում Տէրը, Ամենակալն
Աստուած. դարձէ՛ք, յե՛տ դարձէք ձեր
ճանապարհից, ձեր բոլոր ամբարշտու-
թիւններից, դարձրէ՛ք ձեր երեսները
դէպի ինձ: 7 Իսրայէլի այդ տնից կամ
եկուորներից ու պանդուխտներից ամէն
ոք, ով ինձնից օտարանայ եւ կռա-
պաշտական մտադրութիւնները սրտի
մէջ դնի, իր անիրաւութիւնների
պատճառած տանջանքները դնի իր
առջեւ ու գայ մարգարէի մօտ՝ նրա
միջոցով ինձնից պատգամ հարցնելու, -
ես՝ Տէրս եմ նրան պատասխան տալու,
ըստ այն բանի, թէ ի՛նչ ունի իր մտքում:
8 Երեսս դարձնելու եմ այդ մարդու դէմ,
խայտառակելու եմ նրան եւ վերացնելու
եմ իմ ժողովրդի միջից, որպէսզի
իմանաք, որ ես եմ Տէրը:
9 Եւ եթէ մի՛ մարգարէ խաբուի ու մի
բան խօսի, թէ իբր ես՝ Տէրս եմ
մոլորեցրել այդ մարգարէին, - ձեռքս
իջեցնելու եմ նրա վրայ ու ոչնչացնելու
եմ նրան Իսրայէլի իմ ժողովրդի միջից:
10 Եւ պատիժ են ստանալու ինչպէս
անիրաւութեան մասին հարցնողը,
այնպէս էլ մարգարէն, 11 որպէսզի
Իսրայէլի տունն ինձնից չմոլորուի,
այլեւս չպղծուեն իրենց բոլոր
յանցանքներով, իրենք ինձ համար
ժողովուրդ լինեն, ես էլ նրանց համար՝
Աստուած"», - ասում է Ամենակալ
Տէրը:*

ՈՉ ՄԻ ԲԱՆ ԱՐԳԵԼՔ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ ԱՍՏԾՈՒ
ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

*12 Աստուած խօսեց ինձ հետ ու
ասաց. 13 «Մարդո՛ւ որդի, եթէ մի երկիր
մեղանչելով մեղանչի իմ դէմ, ձեռքս
իջեցնելու եմ նրա վրայ, խորտակելու եմ
նրա հացի պաշարը, նրա վրայ սով եմ
արձակելու եւ նրա միջից վերացնելու եմ
մարդ ու անասուն: 14 Եւ եթէ այնտեղ
լինեն այն երեք մարդիկ՝ Նոյը, Ցոբն ու
Դանիէլը, նրանք իրենց արդարութեան
համար փրկուելու են», - ասում է
Ամենակալ Տէրը: -
15 «Եւ եթէ չար գազաններ արձակեմ
երկրի վրայ ու պատժեմ նրա
բնակիչներին, եւ այն աստիճան
ապականութիւն լինի, որ գազանների
պատճառով այնտեղից անցնել էլ չլինի,
16 բայց այդ մարդիկ այնտեղ լինեն, -
վկայ եմ ես, - ասում է Ամենակալ Տէրը,
- թէ տղաներ ու աղջիկներ էլ ունենան՝
բոլորն էլ չեն փրկուելու†, միայն նրանք
երեքն են փրկուելու, բայց երկիրը
ոչնչանալու է:
17 Եւ եթէ սրածեմ այն երկիրն ու
սրին ասեմ՝ "Անցի՛ր երկրի միջով",
նրանից վերացնեմ մարդ ու անասուն,
18 բայց այդ երեք մարդիկ այնտեղ
լինեն, - վկայ եմ ես, - ասում է Ամենա-
կալ Տէրը, - նրանք չեն փրկելու իրենց
տղաներին ու աղջիկներին, այլ իրենք
երեքն են միայն փրկուելու:
19 Եւ եթէ համաճարակ ուղարկեմ
այն երկիրը, սրտմտութիւնս թափեմ
նրա վրայ արիւնով՝ նրա միջից
վերացնելու համար մարդ ու անասուն,
20 բայց Նոյը, Ցոբն ու Դանիէլը այնտեղ
լինեն, - վկայ եմ ես, - ասում է Ամենա-
կալ Տէրը, - թէ տղաներ ու աղջիկներ էլ
ունենան նրանք՝ չեն փրկուելու, այլ
նրանք երեքը միայն իրենց արդա-
րութեամբ փրկելու են իրենց
հոգիները»:
21 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
«Եթէ Երուսաղէմի վրայ նոյնիսկ չորս
սաստիկ վրէժներս արձակեմ՝ սուրն ու
սովը, չար գազաններն ու համաճարակը՝
նրա միջից վերացնելու համար մարդ ու
անասուն, - 22 նրանում ողջ մնա-
ցածները դուրս են բերելու իրենց
տղաներերին ու աղջիկներին: Ահա
նրանք նրանց հետ դուրս են գալու ձեզ
մօտ, եւ դուք տեսնելու էք նրանց
ընթացքը, նրանց մտադրութիւնները:
Զղջալու էք այն չարիքի համար, որ ես
բերել եմ Երուսաղէմի վրայ, բոլոր
չարիքների համար, որ ես բերել եմ նրա
վրայ: 23 Ու նրանք մխիթարութիւն են
պատճառելու ձեզ, որովհետեւ տեսնելու
էք նրանց ընթացքը, նրանց մտադրու-
թիւնները եւ վերահասու էք լինելու, որ
զուր տեղը չեմ արել այն ամէնը, ինչ
արել եմ նրանց հետ», - ասում է
Ամենակալ Տէրը:*

Որթատունկի փայտի մասին

ԱՌԱԿ ՈՐԹԱՏՈՒՆԿԻ ՄԱՍԻՆ

*15 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Մարդո՛ւ որդի, ինչի՞ կը ծառայի
որթատունկի փայտը այն բոլոր ծառերի
ու ճիւղերի մէջ, որ կան անտառում:
3 Միթէ նրանից մի փայտ կ'առնե՞ն՝
որեւէ գործիք սարքելու համար, կամ
նրանից մի ցից կ'առնե՞ն՝ դրանից մի
ման կախելու համար: 4 Բայց քանի
որ այն հրոյ ճարակ է դառնում, քանի
որ տարէցտարի կրակը նրա արգատն
սպառում է, եւ որթատունկն իսպառ
վերանում է, - մի՞թէ այն որեւէ գործի
համար պիտանի կը լինի: 5 Թէկուզ եթէ
որթատունկը ձեռք չտուած՝ ամբող-
ջական լինի, դարձեալ ոչ մի բանի
պիտանի չէ, ուր մնաց երբ իսպառ հրոյ
ճարակ է դառնում. բոլորովին ոչ մի
բանի պիտանի չէ: 6 Ուստի ասա՛.
"Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.*

†Եբրայերէն՝ կուռքերը:

†Մտքի ճշգրտութեան համար այս համարում հետեւել ենք եբրայերէն բնագրին:

ինչպէս որ անտառի փայտերի միջից որթատունկի փայտը հրոյ ճարակ եմ դարձրել, այնպէս էլ Երուսաղէմի բնակիչներիդ հետ եմ վարուելու: 7 Երեսս ուղղելու եմ նրանց դէմ: Կրակից դուրս են գալու, բայց ուրիշ կրակի ճարակ են դառնալու: Ու երբ երեսս ուղղեմ նրանց դէմ, պէտք է իմանան, որ ես եմ Տէրը: 8 Եւ երկիրը կործանման եմ ենթարկելու այն բանի համար, որ յանցանքներ գործեցին"», - ասում է Ամենակալ Տէրը:

ԼՔԵԱԼ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

16 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, իրազե՛կ դարձրու Երուսաղէմին իր անօրէնութիւնների մասին եւ ասա՛. 3 "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը Երուսաղէմին. քո արմատն ու ծնունդը քանանացիների երկրից են. հայրդ ամորհացի է, մայրդ՝ քետացի հիթիթ: 4 Քո ծննդի ժամանակ, այն օրը, երբ ծնուեցիր, ոչ ոք պորտդ չկտրեց. քեզ սնուցող ստինքը չամրացրին. ջրով չլուացուեցիր՝ փրկուելու[†] համար, ոչ էլ աղով աղուեցիր. խանձարուրների մէջ չփաթաթուեցիր: 5 Աչքս էլ քեզ չխնայեց. քեզ չզգուշացրի այն ամենից, որ կարող են քեզ պատահել: Դաշտում չպրտուած էիր քո խոտորնակ մտքերի համար: Այն օրը, երբ դու ծնուեցիր, 6 մօտովդ անցայ ու քեզ արեան մէջ թաթախուած տեսայ: Ասացի քեզ՝ 'Կենդանացի՛ր արեանդ միջից. կեանքդ արիւնից է: 7 Աճի՛ր, քանի որ դաշտի բոյսի պէս աճեցրի քեզ': Աճեցիր եւ ուռճացար, եկար մտար քաղաքների այս քաղաքը: Ստինքներդ կազմաւորուեցին, մազերդ փարթամացան, բայց դու խայտառակ կերպով մերկ էիր: 8 Եւ եկայ հասայ քեզ ու տեսայ, որ ժամանակդ[‡] եկել է, ինչպէս նաեւ քեզ գաղթեցնողների ժամանակը: Թեւերս տարածեցի վրադ ու ծածկեցի խայտառակ մերկութիւնդ: Երդում արեցի եւ ուխտ կապեցի հետդ, - ասում է Ամենակալ Տէրը, - եւ դու իմը եղար: 9 Լուացի քեզ ջրով, մաքրեցի քեզ արիւնից ու օծեցի քեզ իւղով: 10 Պէսպէս հագուստներ հագցրի քեզ. երկնագոյնով զգեստաւորեցի, մէջքիդ բեհեզ գօտի կապեցի, վրադ սնդուս գցեցի: 11 Զարդեղէնով զարդարեցի քեզ. ձեռքիդ ապարանջաններ դրեցի, պարանոցիդ՝ քառամանեակ: 12 Քթիդ գինդեր ու ականջներիդ օղեր դրեցի, գլխիդ՝ փառապսակ: 13 Եւ դու զարդարուեցիր ոսկէ ու արծաթէ զարդերով: Հագուստդ բեհեզ էր, ընտիր կերպաս՝ ասեղնագործուած: Նաշիհ[†] կերար, իւղ ու մեղր, չափազանց գեղեցիկ եղար, փայփայուեցիր արքայական գուրգուրանքով: 14 Քո գեղեցկութեան համբաւը տարածուեց բոլոր ազգերի մէջ, որովհետեւ այն գեղեցկութիւնը, որով ստեղծել էի քեզ, կատարելապէս վայելուչ էր", - ասում է Ամենակալ Տէրը:

ՊՈՌՆԿԱՑԱԾ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

15 "Եւ դու քո գեղեցկութեամբ պանծալի եղար, շնացար քո հոմանիների հետ ու պոռնկութիւնդ տարածեցիր բոլոր անցորդների վրայ, որոնց հետ առաջ այդպիսի բաներ չէին պատահել: 16 Առար քո հագուստներից եւ դրանցից քեզ համար շինծու կուռքեր պատրաստեցիր: Պոռնկացար դրանց հետ, բայց այնտեղ չե՛ս մտնելու, որովհետեւ առաջ դրանք չկային ու այլեւս չեն լինելու: 17 Արծաթից ու ոսկուց զարդեղէնը, որ քեզ էի տուել, առար ու դրանից տղամարդու արձաններ պատրաստեցիր, պոռնկացար դրանց հետ: 18 Քո գեղեցիկ հագուստն առար ու նրանց վրայ գցեցիր, իմ իւղն ու խունկն էլ նրանց առաջ դրեցիր: 19 Հացն էլ, որ տուել էի քեզ, նաշիհը, իւղն ու մեղրը, որոնցով սնել էի քեզ, - որպէս անուշահոտութիւն նրանց առաջ դրեցիր: 20 Եւ դրանից յետոյ, - ասում է Ամենակալ Տէրը, - վերցրիր տղաներիդ ու դուստրերիդ, որոնց դու ինձ համար էիր ծնել, սպանեցիր ու զոհ մատուցեցիր: 21 Իբր թէ քիչ համարեցիր քո պոռնկանալը, զաւակներիս էլ նրանց քաւութեան զոհ դարձրիր, ընծայաբերեցիր: 22 Իսկ դա աւելի սաստիկ մի

[†]Եբրայերէն՝ մամրուելու:

[‡]Եբրայերէն՝ սիրոյ ժամանակդ:

[†]Ընտիր ալիւրից պատրաստուած նկանակ՝ հաց:

բան եղաւ, քան քո բոլոր պոռնկութիւններն ու պղծութիւնները: Ու չյիշեցիր քո մանկութեան օրերը, երբ մերկ էիր ու խայտառակ, արեանդ մէջ թաթախուած. այդ վիճակից էիր կենդանացել:

23 Եւ այդ բոլոր չարիքները եկան քո գլխին. վա՜յ, վա՜յ քեզ, - ասում է Ամենակալ Տէրը: - 24 Քեզ համար պոռնկութեան տուն շինեցիր, բագիններ կանգնեցրիր բոլոր հրապարակներում, 25 բոլոր ճանապարհների գլխին բարձրացրիր քո պոռնկատները, ապականեցիր դէմքիդ գեղեցկութիւնը, երանքդ բաց արիր ճանապարհի ամէն անցորդի առաջ ու սաստկացրիր պոռնկութիւնդ: 26 Պոռնկացար նաեւ քեզ սահմանակից եգիպտոսի մեծ առնանդամ ունեցող զաւակների հետ, պոռնկացար բազմապատիկ, որպէսզի ինձ զայրացնես: 27 Արդ, ես ձեռքս իջեցնելու եմ քեզ վրայ եւ քո սննդի վրայ, քեզ մատնելու եմ քեզ ատելի այլազգիների դուստրերի ձեռքը, որոնք չեղում էին քեզ քո ճանապարհից: 28 Ամբարշտութիւն արեցիր ու պոռնկացար նաեւ Ասորեստանի զաւակների հետ, սակայն չյագեցար: Խրուեցիր պոռնկութեանդ մէջ, բայց եւ այնպէս չյագեցար: 29 Շատացրիր դաշինքներդ՝ պոռնկանալով նաեւ քանանացիների ու քաղդէացիների երկրների հետ, սակայն եւ այնպէս դարձեալ չյագեցար: 30 Ինչպէ՞ս վարուեմ քո դուստրերի հետ, - ասում է Ամենակալ Տէրը, - այնքան բաներից յետոյ, որ արեցիր պոռնիկ կնոջ պէս. բազմիցս պոռնկացար անգամ դուստրերիդ հետ: 31 Պոռնկատներ կառուցեցիր բոլոր ճանապարհների գլուխներին եւ կոթողներ էիր կանգնեցնում բոլոր հրապարակներում: Դու մի պարզ պոռնիկ կին չեղար, որ վարձ է հաւաքում, 32 որովհետեւ ամէն պոռնիկ կին չէ, որ քեզ նման շնանում է իր ամուսնու հետ, ամուսնուց դրամ առնում ու վարձ տալիս իր հոմանիներին: 33 Բոլոր պոռնիկները վարձ են առնում իրենց համար, մինչդեռ դու ինքդ էիր վարձ տալիս տարփածուներիդ եւ նուէրներով հրապուրում էիր նրանց, որ գային քեզ մօտ բոլոր կողմերից՝ քեզ հետ շնանալու: 34 Եւ քեզ հետ, բոլոր պոռնկացող կանանց համեմատութեամբ, հակառակը տեղի ունեցաւ, ու ոչ ոք քեզ չհետեւեց, քանի որ նրանք իրենք էին տղամարդկանցից վարձ առնում, մինչդեռ դու ինքդ էիր տարփածուներիդ վարձ տալիս: Ու քեզ հետ հակառակը տեղի ունեցաւ":

ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՍԻՆ

35 "Ուստի, պոռնի՛կ, լսի՛ր, Տիրոջ պատգամները: 36 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. այն բանի համար, որ այլասերութեամբ թափեցիր քո դրամները, ու հոմանիներիդ առաջ բացայայտուեցին պոռնկութեանդ ամօթանքը, բոլոր պիղծ մտադրութիւններդ, ինչպէս նաեւ զաւակներիդ արեան համար, որ հոմանիներիդ էիր տալիս նրանց, - 37 ահա սրանց համար ես քո դէմ եմ հաւաքելու բոլոր հոմանիներիդ, որոնց հետ խառնակուել ես, քո դէմ եմ հանելու քո բոլոր սիրելիներին ու ատելիներին, հաւաքելու եմ նրանց եւ շրջապատել եմ տալու քեզ, յայտնելու եմ նրանց առաջ քո բոլոր չարագործութիւնները, ու նրանք տեսնելու են քո բոլոր խայտառակութիւնները: 38 Քեզնից վրէժ եմ լուծելու իբրեւ շնացողի ու արիւն թափողի. քո առաջ եմ դնելու քո թափած արիւնը, քո առաջ եմ դնելու զայրոյթի ու նախանձի արիւնը: 39 Քեզ նրանց ձեռքն եմ մատնելու, եւ նրանք կործանելու են քո պոռնկատները, քանդելու են քո կոթողները, մերկացնելու են քեզ քո զգեստներից, առնելու են քո փառապսակը եւ թողնելու են քեզ մերկ ու խայտառակուած: 40 Եւ ամբոխին քո դէմ են հանելու, քարերով քարկոծելու են քեզ ու քեզ կտոր-կտոր են անելու իրենց սրերով: 41 Հրով են այրելու տներդ, դատաստանդ են տեսնելու կանանց բազմութեան առաջ: Վերջ եմ տալու քո պոռնկութեանը, եւ դու այլեւս վարձ չես տալու տարփածուներիդ: 42 Բարկութիւնս թափելու եմ քեզ վրայ, ու այդպիսով քո հանդէպ վրէժխնդրութիւնս վերջ է գտնելու. հանգստանալու

եմ եւ այլեւս հոգ չեմ անելու: 43 Այն
բանի համար, որ չյիշեցիր մանկու-
թեանդ օրերը, այդ ամենի համար
տրտմեցնում էիր ինձ, - ես էլ ահա քո
բռնած ճանապարհի համար գլխիդ բերի
այս բաները, - ասում է Ամենակալ
Տէրը: - Այսպէս է որ ամբարշտութիւն
եւ անօրէնութիւններ գործեցիր":

ԵՐՈՒՍԱՂԷՄՆ ԱՒԵԼԻ ՎԱՏ Է, ՔԱՆ ՄԻՒՍ ՔԱՂԱՔՆԵՐԸ

44 Այս բոլորի համար է որ քո մասին
առակներ են փսփսում ու ասում, թէ՝
'Ինչպիսին որ մայրն է, այնպիսին էլ
աղջիկն է': 45 Արդ, դու այն աղջկայ
մայրն ես, որ վռնդեց ամուսնուն ու
զաւակներին, եւ քոյրն ես քո այն
քոյրերի, որոնք վռնդեցին ամուսին-
ներին ու զաւակներին: Ձեր մայրը
քետացի[†] էր, եւ ձեր հայրը՝ ամորհացի:
46 Ձեր աւագ քոյրը Շամրինն[‡] է, որ իր
դուստրերի հետ բնակւում է քո ձախ
կողմում, իսկ կրտսեր քոյրը՝ Սոդոմը, որ
իր դուստրերի հետ բնակւում է քո աջ
կողմում: 47 Սակայն դու նրանց
ճանապարհով չընթացար, ոչ էլ նրանց
անօրէնութիւններին հետեւեցիր, այլ դու
քո ընթացքի մէջ փոքր-ինչ աւելի առաջ
գնացիր: 48 Վկայ եմ, - ասում է
Ամենակալ Տէրը, - որ քո քոյրը՝ Սոդո-
մը, եւ նրա դուստրերը հազիւ թէ աւելին
արեցին, քան դու եւ քո դուստրերը:
49 Քո քրոջ՝ Սոդոմի անօրէնութիւնն այս
էր՝ ամբարտաւանութիւն, հացով լիա-
ցածութիւն, գինու մէջ յդփացածութիւն:
Մեղկ կեանք էին վարում ինքն էլ,
դուստրերն էլ: Դրա մէջ էին խրուած
ինքն էլ, դուստրերն էլ: Ձեռք չէին
մեկնում աղքատին ու տնանկին, 50 մե-
ծամտանում էին ու իմ առաջ անօ-
րէնութիւններ անում: Ու երբ դա
տեսայ՝ մէջտեղից վերացրի նրանց:
51 Շամրինն անգամ քո մեղքերի կէսը
չգործեց: Իսկ դու բազմապատկեցիր քո
անօրէնութիւնները աւելի, քան նրանք,
նաեւ արդարացրիր քո քոյրերին այն
անօրէնութեան մէջ, որ ինքդ էլ էիր
գործել: 52 Արդ, կրի՛ր տանջանքներն
այն բանի համար, որ փչացրիր
քոյրերիդ, որ անօրէնութիւններ գոր-
ծեցիր աւելի շատ, քան նրանք, որ
աւելի արդարացրիր նրանց, քան քեզ:
Արդ, ամաչի՛ր եւ կրի՛ր քո անարգանքն
այն բանի համար, որ քո քոյրերին
աւելի արդարացրիր, քան քեզ":

ՍՈԴՈՄՆ ՈՒ ՍԱՄԱՐԻԱՆ ԿԸ ՎԵՐԱԿԱՆԳՈՒԵՆ

53 Գերութիւնից յետ եմ դարձնելու
նրանց՝ քո քոյր Սոդոմին ու նրա
դուստրերին, յետ եմ դարձնելու քո քոյր
Շամրինին ու նրա դուստրերին. նրանց
հետ քեզ էլ եմ յետ դարձնելու, 54 որ-
պէսզի կրես քո տանջանքները եւ
անարգուես այն ամենի համար, ինչ
կատարել ես, որ ինձ բարկացնես: 55 Քո
քոյրը՝ Սոդոմն ու նրա դուստրերը
վերստին հաստատուելու են այն վի-
ճակի մէջ, որ էին ի սկզբանէ. Շամրինն
ու նրա դուստրերն էլ վերստին հաս-
տատուելու են այն վիճակի մէջ, որ էին
ի սկզբանէ. դու եւ քո դուստրերն էլ
հաստատուելու էք նոյն վիճակի մէջ, որ
էիք ի սկզբանէ: 56 Եւ քանի որ քո քոյր
Սոդոմը չէր յիշւում քո բերանում՝ քո
հպարտութեան օրերին, 57 քանի դեռ
չէին բացայայտուել չարագործութիւն-
ներդ, ինչպէս որ հիմա ես նախատւում
Ասորիքի ու նրա շուրջ գտնուող բոլոր
այլազգիների դուստրերի առաջ, -
58 ուրեմն քաղի՛ր քո ամբարշտու-
թիւնների ու անօրէնութիւնների
պտուղները"», - ասում է Տէրը:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՈՒԽՏ

59 «Ամենակալ Տէրն այսպէս է
ասում. "Քեզ հետ վարուելու եմ այնպէս,
ինչպէս դու ես վարուել, ինչպէս որ
անարգել ես ամէն բան ու զանց առել
իմ ուխտը: 60 Բայց ես յիշելու եմ
ուխտս, որ երիտասարդութեանդ օրերին
կապել էի քեզ հետ, յաւիտեան հաս-
տատ եմ պահելու այդ ուխտը: 61 Յի-
շելու եմ նաեւ քո ընթացած ճանա-
պարհը, եւ դու ամօթահար ես լինելու,
երբ միտքդ բերես քոյրերիդ՝ աւագներին
ու կրտսերներին: Նրանց տալու եմ քեզ
փորձութեան համար եւ ոչ թէ որպէս
դաշնակից: 62 Հաստատ եմ պահելու
քեզ հետ իմ ուխտը, եւ պէտք է
իմանաս, որ ես եմ Տէրը: 63 Որպէսզի
յիշես ու ամաչես ու քո կրած
անարգանքների պատճառով այլեւս
չհամարձակուես բերանդ բաց անել,
քաւութիւն պիտի տամ այն բոլոր
չարագործութիւններիդ, որ կատարել
ես"», - ասում է Ամենակալ Տէրը:

Առակ արծիւների մասին

ԱՐԾԻՒԸ ԵՒ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ

17 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Մարդո՛ւ որդի, մի պատմութի՛ւն
պատմիր, մի առա՛կ բեր Իսրայէլի այդ
տան մասին եւ ասա՛. 3 "Այսպէս է
ասում Ամենակալ Տէրը.
Մի արծիւ կար, մեծ, լայնատարած
թեւերով,
մագիլներով լեցուն:
Մտածեց Լիբանան մտնել,
ընտիր-ընտիր մայրիներից մատաղ
տունկեր վերցրեց
4 ու քանանացիների երկիրը տարաւ,
դրանք տնկեց պարսպապատ քաղա-
քում:
5 Վերցրեց նաեւ երկրի սերմից,
մանր-մանր ցանեց դաշտի երեսին,
կարգադրեց, որ առատօրէն ջրեն այդ
դաշտը:
6 Բուսաւ ու եղաւ վտիտ,
տեսքով փոքր որթատունկ.
վրան ոստեր երեւացին:
Նրա արմատները տակն էին:
Որթատունկը մեծացաւ,
ողկոյզներ տուեց,
իր շիւերն արձակեց:
7 Ապա երեւաց մի ուրիշ մեծ արծիւ՝
մեծաթեւ ու բազմամագիլ:
Եւ ահա այս որթատունկը սրան
փաթաթուեց,
արմատները սրա կողմը ձգուեցին,
ճիւղերն էլ՝ սրա տակ:
Ուղարկեց, որ այդ ամբողջ տունկը
ջրեն:
8 Գեղեցիկ դաշտում առատ ջրով
պիտի ուռճացուէր՝
ոստեր արձակելու, պտղաբերելու եւ
մեծ որթատունկ դառնալու համար":
9 Այս մասին ասա՛. "Այսպէս է ասում
Ամենակալ Տէրը.
Արդեօք որթատունկն ուռճանալո՞ւ
է:
Չէ՞ որ նրա նուրբ արմատներն ու
պտուղները նեխելու են,
ու նրա ոստերը՝ չորանալու:
Ո՛չ մեծ բազուկ է պէտք գալու
եւ ո՛չ էլ շատ մարդ՝
ձեռք գցելու եւ այն արմատախիլ
անելու համար:
10 Արդ, որթատունկն ուռճանալո՞ւ է:
Չի՛ փարթամանալու:
Չէ՞ որ խորշակը երբ մօտենայ,
չորանալու է ամբողջ բոյսը՝ իր
ոստերով"»:

ԱՌԱԿԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

11 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
12 «Մարդո՛ւ որդի, ասա Իսրայէլի այդ
տանը՝ դառնացողների տանը. չգի-
տէ՞ք, թէ այդ ի՛նչ բան էր, որ ձեզ
ասացի: Երբ բաբելացիների թագաւորը
Երուսաղէմ գայ, սրա թագաւորին ու
իշխաններին պիտի վերցնի ու տանի
նրանց իր մօտ՝ Բաբելոն: 13 Թագաւորի
զաւակներից մէկին պիտի առնի, ուխտ
պիտի դնի նրա հետ եւ նրան հա-
ւատարմութեան երդում անել պիտի
տայ: Երկրի իշխաններին էլ պիտի
վերացնի, որպէսզի թագաւորութիւնը
տկարանայ, 14 բոլորովին ոտքի
չկանգնի, նրա ուխտը պահի ու հա-
ւատարիմ մնայ դրան: 15 Պիտի
ապստամբի նրա դէմ՝ սուրհանդակներ
ուղարկելով Եգիպտոս, որպէսզի իրեն
ձիեր ու բազում զօրք տան: Բայց
յաջողութիւն ունենալո՞ւ է: Փրկուելո՞ւ
է նա, ով այսպիսի հակառակ բաներ է
անում, դրժում է ուխտը: Փրկուելո՞ւ է:
16 Վկայ եմ ես, - ասում է Ամենակալ
Տէրը, - որ ճիշտ այն տեղում, ուր
թագաւորը նրան թագաւոր դարձրեց,
ուր անարգեց ինձ տուած հաւատար-
մութեան երդումը եւ դրժեց նրա հետ իմ
կնքած ուխտը՝ հէնց Բաբելոնում մեռ-
նելու է: 17 Ոչ էլ Փարաւոնն իր մեծ
զօրութեամբ, բազում գնդերով պատե-
րազմելու է նրա դէմ: Բաբելոնի թագա-
ւորը պատնէշներ ու մարտկոցներ է
սարքելու, որպէսզի ոչնչացնի շատերին

[†] Հիթիթ:
[‡] Սամարիա:

այն բանի համար, 18 որ անարգեց երդումը, դրժեց ուխտը: Եւ ահա մատնել եմ նրա՝ Բաբելոնի թագաւորի ձեռքը, այս բոլորը բերել եմ նրա գլխին: Մի՞թէ փրկուելու է:

19 Այս մասին ասա՛. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

Վկայ եմ ես, -ասում է Ամենակալ Տէրը, -

ըստ իմ ուխտի, որ դրժել է,

եւ ըստ իմ երդման, որ անարգել է,

հատուցել եմ տալու նրան:

20 Նետելու եմ նրա վրայ ուռկանս,

եւ նա բռնուելու պաշարուելու է իմ կողմից:

Բերելու եմ նրան Բաբելոն, այնտեղ էլ դատաստան եմ տեսնելու հետը այն անիրաւութիւնների համար, որ գործել է իմ նկատմամբ: 21 Նաեւ բոլոր խուսափածները նրա բոլոր պատերազմներում սրով են ընկնելու, իսկ բոլոր մնացորդներին չորս հողմերին եմ ցրելու: Եւ պէտք է իմանաք, որ ես՝ Տէրս եմ ասել"»:

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

22 «Այս մասին այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

"Բարձրաւանդակի ընտիր-ընտիր մայրիներից մէկն առնելու եմ,

դրա կատարի ճիւղերից վերցնելու եւ խորն եմ տնկելու բարձր լեռան վրայ

23 եւ այն կախելու եմ Իսրայէլի բարձր, երեւացող լեռից:

Տնկելու եմ, եւ ոստեր է արձակելու այն,

պտուղ է տալու,

դառնալու է մի մեծ մայրի:

Նրա տակ հանգստանալու,

նրա հովանու տակ օթեւանելու են բոլոր գազաններն ու թռչունները:

Նրա ճիւղերը հաստատ են մնալու նրա վրայ:

24 Եւ դաշտի բոլոր ծառերը պէտք է իմանան,

որ ես՝ Տէրս եմ որ խոնարհեցնում եմ բարձրացած ծառը

կամ բարձրացնում խոնարհուած ծառը,

չորացնում եմ դալար ծառը

կամ դալարեցնում չորացած ծառը:

Ես՝ Տէրս եմ ասել սա, եւ անելու եմ"»:

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

18 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, ի՞նչ է նշանակում այն առածը, որ ասում են իսրայէլացիներիդ մէջ, թէ՝ "Հայրերն ազոխ են կերել, զաւակների ատամներն է առել": 3 Վկայ եմ ես, - ասում է Ամենակալ Տէրը, - Իսրայէլում այդ առածն այլեւս չի ասուելու, 4 որովհետեւ բոլորի հոգիներն էլ իմն են՝ ինչպէս հօրը, այնպէս էլ զաւակինը. ով որ մեղանչի, նա էլ պիտի մեռնի: 5 Բայց եթէ մէկն արդար է, գործադրում է օրէնքներս ու արդարութիւնը, 6 լեռների վրայ զոհաբերուածը չի ուտում, աչքը չի գցում Իսրայէլի տան կուռքերին, չի պղծում իր ընկերոջ կնոջը, իր կնոջն էլ դաշտանի ժամանակ չի մօտենում, ոչ մի մարդու հանդէպ բռնութիւն չի գործադրում, 7 պարտապանի աւանդը վերադարձնում է, յափշտակութիւն չի կատարում, իր հացը տալիս է քաղցածներին ու մերկին հագցնում է, 8 իր դրամը փոխ չի տալիս ու տոկոսով յետ չի պահանջում, ձեռք է քաշում անիրաւութիւնից, արդար դատաստան է տեսնում մարդու եւ նրա ընկերոջ միջեւ, 9 իմ հրամաններով է շարժւում, որպէսզի օրէնքներս պահի ու գործադրի, - այդպիսին արդար է, ապրելով պիտի ապրի, - ասում է Ամենակալ Տէրը:

10 Իսկ եթէ մէկը այլասերուած, արիւն թափող զաւակ է ծնել, մեղքեր է գործել, 11 իր արդար հօր ճանապարհով չի ընթացել, լեռների վրայ զոհաբերուածն է կերել, 12 պղծել է իր ընկերոջ կնոջը, բռնադատել աղքատին ու տնանկին, յափշտակութիւն կատարել, աւանդը չի վերադարձրել, աչքը գցել է չաստուածների պաշտամունքին, 13 անօրէնութիւն է գործել, իր դրամը փոխ է տուել եւ վաշխով ու տոկոսով յետ պահանջել, - այդպիսին, որ այս բոլոր անօրէնութիւններն է գործել, անշուշտ մեռնելու է, եւ նրա արիւնն իր

գլխին է գալու:

14 Եւ եթէ զաւակը ծնուի, տեսնի իր հօր գործած բոլոր մեղքերը, վախենայ եւ նոյն բաները չանի՝ 15 լեռների վրայ զոհաբերուածը չուտի, աչքը Իսրայէլի տան կուռքերին չգցի, 16 իր ընկերոջ կնոջը չպղծի, ոչ ոքի չբռնադատի, աւանդը չիւրացնի, յափշտակութիւն չկատարի, իր հացը տայ քաղցածներին ու մերկերին հագցնի, 17 անիրաւութիւնից ձեռք քաշի, վաշխ ու տոկոս չառնի, արդարութիւն գործի, իմ հրամաններով շարժուի, - այդպիսին իր հօր անիրաւութիւնների համար չի՛ մեռնելու, այլ ապրելով ապրելու է: 18 Բայց նրա հայրը, եթէ սաստիկ նեղել է, յափշտակել է ու կողոպտել եղբօրը, հակառակ գործեր կատարել իմ ժողովրդի մէջ, - մեռնելու է իր անիրաւութեան համար:

19 Ասում էք, թէ՝ "Ինչպէ՞ս է որ հօր անիրաւութիւնը որդուն չի պարտաւորեցնում": Քանի որ որդին ողորմածութիւն է արել ու արդարութիւն գործել, իմ բոլոր օրէնքները պահել ու գործադրել է, - ապրելով պիտի ապրի: 20 Ով որ մեղանչի, նա էլ պիտի մեռնի, իսկ որդին հօր մեղքը չպիտի կրի, ոչ էլ հայրը՝ իր որդու անիրաւութիւնները: Արդարի արդարութի՛ւնն է իր վրայ ընկնելու, անօրէնի անօրէնութիւնը՝ իր վրայ»:

ՅՈՐԴՈՐ ԲԱՐԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ

21 «Անօրէնը եթէ յետ կանգնի իր գործած անօրէնութիւններից ու պահի իմ բոլոր պատուիրանները, արդարութիւն գործի ու ողորմածութիւն անի, - ապրելով ապրելու է ու չի մեռնելու: 22 Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրաւութիւնները չեն յիշուելու, այլ իր գործած արդարութեան համար նա ապրելու է: 23 Մի՞թէ ես մեղաւորի մահն եմ տենչում, - ասում է Տէր Աստուածը, - եւ ոչ թէ այն, որ նա չար ճանապարհից յետ դառնայ ու ապրի: 24 Իսկ եթէ արդարն իր արդարութիւնից շեղուի, անարդարութիւն գործի, ըստ անօրէն մարդու կատարած բոլոր անօրէնութիւնների՝ նրա կատարած բոլոր արդար գործերն էլ չեն յիշուելու: Այն մեղքերի համար, որոնց մէջ նա ընկել է, եւ այն յանցանքների համար, որ գործել է, - դրանց մէջ էլ մեռնելու է:

25 Ասում էք, թէ Տիրոջ ճանապարհը ճիշտ չէ: Արդ, լսեցէ՛ք, ո՛վ իսրայէլացիներ: Մի՞թէ իմ ճանապարհն է, որ ճիշտ չէ: Չէ՞ որ ձեր ճանապարհները ճիշտ չեն: 26 Եթէ արդարն իր ճանապարհից շեղուի ու անիրաւութիւն գործի, մեռնելու է իր գործած անօրէնութեան մէջ: 27 Իսկ եթէ անօրէնը յետ կանգնի իր անօրէնութիւնից, օրէնքներս կատարի, արդարութիւն անի, - ինքն իր հոգին փրկելու է, 28 որովհետեւ տեսել ու յետ է դարձել իր կատարած բոլոր ամբարշտութիւններից: Ապրելով ապրելու է ու չի մեռնելու:

29 Բայց Իսրայէլի այդ տունն ասում է, թէ Տիրոջ ճանապարհը ճիշտ չէ: Մի՞թէ իմ ճանապարհն է, որ ճիշտ չէ, ո՛վ տունդ Իսրայէլի: Չէ՞ որ քո ճանապարհները ճիշտ չեն: 30 Ուստի Իսրայէլի այդ տանը, իւրաքանչիւրին ըստ իր բռնած ճանապարհի եմ դատաստան անելու, - ասում է Ամենակալ Տէրը: - Դարձէ՛ք, յե՛տ կանգնեցէք ձեր բոլոր ամբարշտութիւններից, եւ անիրաւութեան համար տանջանքների չէք մատնուի: 31 Դէ՛ն նետեցէք ձեզնից ձեր բոլոր ամբարշտութիւնները, որ կատարել էք իմ հանդէպ. ձեր մէջ նոր սիրտ ու նոր հոգի դրէք, կատարեցէ՛ք իմ բոլոր պատուիրանները: Ինչո՞ւ մեռնես, ո՛վ տունդ Իսրայէլի, - ասում է Տէրը: 32 Ցիրաւի, ես մեղանչածի մահը չեմ տենչում, - ասում է Ամենակալ Տէրը, - այլ նա թող յետ կանգնի իր չար ճանապարհներից ու փրկի իր հոգին: Արդ, եկէք ե՛տ դարձէք եւ ապրեցէ՛ք»:

Ողբ Իսրայէլի իշխանի վրայ

19 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ո՛ղբ ասա Իսրայէլի իշխանի վրայ: Ասա՛.

2 Ինչպէ՞ս եղաւ, որ մայրդ յայտնուեց առիւծների մէջ,

կորիւնդ առիւծների մէջ բազմացրեց իր կորիւններին:

3 Նրա կորիւնների մէջ մի կորիւն

հասակ նետեց, առիւծ դարձաւ,
սովորեց յափշտակել ու խլել, եղաւ մարդախողխող:
4 *Նրա մասին լսեցին ազգեր,*
բռնեցին նրան՝ սպանելու համար,
դնչակալով տարան Եգիպտացիների երկիրը:
5 *Մայր առիւծը տեսաւ, որ կորիւնը բաժանուեց իրենից,*
յոյսը կտրեց եւ իր կորիւններից մի ուրիշ կորիւն առիւծ դարձրեց:
6 *Սա շրջում էր առիւծների մէջ:*
Առիւծ դարձաւ, սովորեց յափշտակել ու խլել,
եղաւ մարդախողխող:
7 *Յանդգնութեամբ որս էր անում, քաղաքներ կործանում,*
իր մռնչոցով երկիրն ամբողջովին աւերում:
8 *Շրջակայ երկրներից ազգեր ելան նրա դէմ,*
թակարդներ լարեցին նրա շուրջ՝ սպանելու համար,
9 *դնչակալ հագցրին,*
վանդակի մէջ տարան բաբելացիների թագաւորի մօտ
ու բանտ դրեցին,
որպէսզի Իսրայէլի լեռների վրայ նրա ձայնն այլեւս չլսուի:
10 *Քո մայրը մի որթատունկ էր,*
նռնենու մի ծաղիկ՝ տնկուած հոսող ջրերի վրայ:
Նրա տունկն ու պտուղն ուռճացան
շնորհիւ առատ ջրերի:
11 *Նրա հզօր մականն իշխեց ազգի իշխանների վրայ.*
իր հասակով նա բարձրացաւ ծառաստանների մէջ:
Տեսաւ իր մեծութիւնը բազմաթիւ ճիւղերի մէջ,
12 *բարկութիւնից ջարդուեց ու գետին տապալուեց:*
Խորշակը չորացրեց նրա ճիւղերը:
Այսպիսով նրանից վրէժ լուծուեց,
ու չորացաւ նրա հզօր մականը:
Կրակն էլ ճարակեց այն:
13 *Եւ հիմա այն տնկեցին անապատում,*
անջրդի հողի վրայ:
14 *Կրակ ելաւ նրա ընտիր-ընտիր բներից*
ու ճարակեց այն:
Եւ նրանում հզօր մական չմնաց:
Ազգը ողբի առակ է դարձել,
ողբ էլ պիտի լինի»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլի տան աւագներին

20 *Եօթներորդ տարում, հինգերորդ ամսին, ամսուայ տասներորդ օրը, Իսրայէլի տան աւագներից մարդիկ եկան՝ հարցում անելու Տիրոջը, ու նստեցին իմ առաջ:*
2 *Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.*
3 *«Մարդո՛ւ որդի, խօսի՛ր Իսրայէլի այդ տան աւագների հետ ու ասա՛ դրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. հարցում անելո՞ւ էք գալիս ինձ մօտ: Վկայ եմ ես, ձեզ չեմ պատասխանելու",* – *ասում է Ամենակալ Տէրը:*
4 *Պատժե՞մ դրանց, մարդո՛ւ որդի. դրանց հայրերի մեղքերի վկայութիւնը դի՛ր դրանց առաջ:*
5 *Եւ ասա՛ դրանց. "Այսպէս է ասում Տէր Աստուածը. այն օրից, երբ աչքս քաղցրացաւ Իսրայէլի այդ տան վրայ, երբ յայտնուեցի Յակոբի այդ տան զաւակին, երբ յայտնուեցի Եգիպտացիների նրանց երկրում, ձեռք մեկնեցի նրանց ու ասացի. "Ես եմ ձեր Տէր Աստուածը",* – 6 *այն օրը ձեռք պարզեցի նրանց՝ դուրս բերելու համար Եգիպտացիների երկրից դէպի այն երկիրը, որ նրանց համար էի պատրաստել, մի երկիր, ուր կաթ եւ մեղր է բխում, որ աւելի քաղցր է, քան ուրիշ որեւէ երկրինը:*
7 *Եւ ասացի նրանց. "Իւրաքանչիւրը թող դէ՛ն նետի իր աչքերից գարշելի կուռքերը. Եգիպտացիների ճանապարհով ընթանալով՝ մի՛ պղծուէք: Ես եմ ձեր Տէր Աստուածը":*
8 *Սակայն նրանք ապստամբեցին իմ դէմ, չուզեցին ինձ անսալ: Իւրաքանչիւր ոք իր աչքերից գարշելի կուռքերը դէն չնետեց: Եգիպտացիների ճանապարհը չթողեցին: Ես էլ ասացի, որ սրտմտութիւնս եմ թափելու նրանց վրայ՝ Եգիպտացիների մէջ յագեցնելու համար նրանց դէմ զայրոյթս:*
9 *Բայց դա արեցի, որպէսզի անունս երբեք չպղծուի այն ազգերի մէջ, որոնց մէջ էին գտնուում դրանք: Յայտնուեցի նրանց մէջ՝ Եգիպտացիների երկրից դուրս բերելու համար նրանց:*
10 *Եւ նրանց դուրս բերեցի Եգիպտացիների երկրից, բերեցի անապատ,*
11 *տուեցի նրանց պատուիրաններս, ցոյց տուեցի նրանց օրէնքներս, որոնք գործադրելու դէպքում մարդ դրանցով կ'ապրի:*
12 *Շաբաթ*[†] *օրերս էլ տուեցի նրանց, որպէսզի նշան լինեն իմ ու նրանց միջեւ, եւ որպէսզի նրանք իմանան, որ ես եմ Տէրը, որ սրբագործում եմ նրանց:*
Եւ այն անապատում ասացի Իսրայէլի տանը. "Իմ հրամաններո՛վ շարժուեցէք", բայց չշարժուեցին: Ասացի. "Պահեցէ՛ք ու գործադրեցէ՛ք օրէնքներս, որոնք գործադրելու դէպքում մարդ դրանցով կ'ապրի":
13 *Սակայն Իսրայէլի տունն ինձ դառնացրեց անապատում: Իմ հրամաններով չշարժուեցին, զանց առան օրէնքներս, որոնք եթէ մէկը գործադրէր՝ դրանցով կ'ապրէր: Շաբաթ օրերս սաստիկ պղծեցին: Ու ասացի, որ անապատում սրտմտութիւնս թափելու եմ նրանց վրայ՝ ոչնչացնելու համար նրանց:*
14 *Եւ դա արեցի, որպէսզի անունս երբեք չպղծուի այն ազգերի առաջ, որոնց միջից, նրանց աչքերի առջեւ, դուրս բերեցի սրանց:*
15 *Եւ անապատում ձեռքս բարձրացրի նրանց վրայ՝ ամենեւին չտանելու համար նրանց այն երկիրը, որ յատկացրել էի նրանց, մի երկիր, ուր կաթ ու մեղր է բխում, որ աւելի քաղցր է, քան ուրիշ որեւէ երկրինը:*
16 *Այն բանի համար, որ զանց առան օրէնքներս, իմ հրամաններով չշարժուեցին, շաբաթներս պղծեցին եւ իրենց սրտի մտադրութիւնների յետեւից գնացին,* – 17 *աչքս խնայեց նրանց ու չջնջեց նրանց, անապատում վերջ չտուեցի նրանց:*
18 *Ու ասացի նրանց անապատում. "Ձեր հայրերի կրօնով մի՛ առաջնորդուէք, նրանց օրէնքները մի՛ պահէք, նրանց վարքով մի՛ խառնակուէք ու մի՛ պղծուէք:*
19 *Ես եմ ձեր Տէր Աստուածը, իմ հրամաններո՛վ շարժուեցէք, իմ օրէնքնե՛րը պահեցէք ու գործադրեցէ՛ք դրանք, շաբաթներս սո՛ւրբ պահեցէք,*
20 *եւ դա նշան կը լինի իմ ու ձեր միջեւ: Կ'իմանաք, որ ես եմ ձեր Տէր Աստուածը":*
21 *Նրանց զաւակներն էլ դառնացրին ինձ, իմ հրամաններով չշարժուեցին, հոգ չտարան գործադրելու օրէնքներս, որոնք գործադրելու դէպքում մարդ դրանցով կ'ապրի: Շաբաթներս էլ էին պղծում: Ես էլ ասացի, որ սրտմտութիւնս եմ թափելու նրանց վրայ անապատում՝ յագեցնելու համար նրանց դէմ զայրոյթս:*
22 *Բայց ես նրանց վրայից յետ քաշեցի ձեռքս, եւ դա արեցի, որպէսզի անունս երբեք չպղծուի այն ազգերի մէջ, որոնց միջից, նրանց աչքերի առջեւ, դուրս բերեցի սրանց:*
23 *Այն անապատում ես ձեռքս նրանց վրայ բարձրացրի՝ ազգերի մէջ նրանց սփռելու, երկրներով մէկ ցիրուցան անելու համար, քանի որ*
24 *օրէնքներս չգործադրեցին, պատուէրներս զանց առան, շաբաթներս պղծեցին, եւ իրենց աչքերն էլ իրենց հայրերի մտադրութիւնների վրայ էր:*
25 *Այդ էր պատճառը, որ նրանց տուեցի հրամաններ, որ բարի չէին, եւ օրէնքներ, որոնցով չէին կարող ապրել:*
26 *Նզովելու եմ նրանց՝ իրենց ընծաներով հանդերձ, այնպէս եմ անելու, որ ոչնչացնեմ նրանց բոլոր անդրանիկ ծնունդներին: Եւ պէտք է իմանան, որ ես եմ Տէրը»:*

ԱՍՏՈՒԱԾ ՎԵՐՋ Է ԴՆԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՒԱՊԱՇՏՈՒԹԵԱՆԸ

27 *«Ուստի խօսի՛ր Իսրայէլի այդ տան հետ, մարդո՛ւ որդի, ու ասա՛ դրանց. "Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. ձեր հայրերը սաստիկ բարկացրին ինձ իմ հանդէպ իրենց գործած մեղքերով.*
28 *նրանց տարայ այն երկիրը, որ երդուել էի նրանց տալ: Այնտեղ տեսան նրանք բոլոր բարձր բլուրները, սաղարթախիտ ծառերը, զոհեր մատուցեցին իրենց աստուածներին, իրենց զոհաբերութիւնների կարգը կատարեցին, ծխեցին իրենց անուշահոտ խունկը, ընծայաբերեցին իրենց նուէրները:*
29 *Եւ*

[†] Հանգստեան օրերը:

ասացի նրանց. “Այդ ի՞նչ աբբանա՝ բարձրադիր սրբավայր է, ուր դուք մտնում էք”: Եւ այն կոչուեց աբբանա†: Ու այդպէս է կոչւում մինչեւ այսօր:

30 Դրա համար էլ ասա՛ Իսրայէլի տանը. “Այսպէս է ասում Տէր Աստուածը. ձեր հայրերի անօրէնութեամբ ապականւում էք, նրանց գարշելի կուռքերի հետ պոռնկանում, 31 նուէրներ մատուցում, ձեր որդիներին ընծայաբերում էք աստուածներին՝ կրակի միջով անցկացնելով նրանց: Մինչեւ օրս պղծւում էք ձեր բոլոր մտածումների մէջ: Եւ ես ձեզ պատասխա՞ն եմ տալու, ո՛վ տունդ Իսրայէլի: Վկայ եմ ես, - ասում է Ամենակալ Տէրը, - ես ձեզ պատասխան չեմ տալու:

32 Եւ եթէ այդ բանը ձեր մտքով անցնում է, չի լինելու այնպէս, ինչպէս դուք էք ասում, թէ՝ “Մենք կը լինենք հեթանոսների կամ երկրի այն ազգերի նման, ովքեր ծառեր ու քարեր են պաշտում”:

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԺՈՒՄ Է ԵՒ ՆԵՐՈՒՄ

33 “Ուստի վկայ եմ ես, - ասում է Ամենակալ Տէրը, - հզօր ձեռքով, բարձրացած բազկով ու յորդացող ցասումով եմ թագաւորելու ձեզ վրայ: 34 Հանելու եմ ձեզ ազգերի միջից, դուրս եմ բերելու այն երկրներից, ուր դուք ցրուած էք, - հզօր ձեռքով, բարձրացած բազկով ու յորդացող ցասումով: 35 Բերելու եմ ձեզ ազգերի անապատը, դատի եմ նստելու ձեզ հետ երես առ երես, 36 ինչպէս որ այն անապատում դատի նստեցի ձեր հայրերի հետ, երբ նրանց դուրս հանեցի Եգիպտացիների երկրից: Այդպէս եմ դատելու ձեզ, - ասում է Տէրը, Ամենակալն Աստուած: 37 Ձեզ անց եմ կացնելու մականիս տակով, մտցնելու եմ իմ հետ ուխտ կապածների թուի մէջ 38 ու զատորոշելու եմ ձեր միջից ամբարիշտներին եւ ապստամբներին, որպէսզի նրանց հանեմ իրենց բնակած վայրերից, ու նրանք չմտնեն Իսրայէլի երկիրը: Պէտք է իմանաք, որ ես եմ Տէր Աստուածը:

39 Իսկ դուք, ո՛վ տունդ Իսրայէլի, այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած. նախ իւրաքանչիւրդ մի կո՛ղմ նետեցէք ձեր ընթացքը, ապա եւ լսեցէ՛ք ինձ, իմ սուրբ անունը մի՛ պղծէք ձեր նուէրներով, ձեր վարք ու բարքով, 40 որովհետեւ իմ սուրբ լեռան վրայ, Իսրայէլի բարձր լեռան վրայ, - ասում է Տէր Աստուած, - իսպառ ինձ է ծառայելու Իսրայէլի այդ ամբողջ տունը, այնտեղ եմ ընդունելու, այնտեղ եմ ուշադիր նայելու ձեր ընծաներին, ձեր բոլոր երախայրիքներն ընդունելու եմ ձեր սուրբ ընծաներով հանդերձ, նաեւ անուշահոտութիւնները՝ 41 ձեզ դուրս բերելու համար ժողովուրդների միջից եւ ընդունելու համար ձեզ այն երկրներից, ուր սփռուած էիք: Ու ձեր մէջ, ժողովուրդների դէմ յանդիման, սրբանալու եմ: 42 Պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը, երբ ձեզ տանեմ Իսրայէլի երկիրը, մի երկիր, որը երդուել եմ տալ ձեր հայրերին: 43 Եւ այնտեղ յիշելու էք ձեր բռնած ճանապարհն ու վարք ու բարքը, որոնցով պղծուեցիք դուք: Ձեր երեսներն էք ծածելու ձեր գործած բոլոր անիրաւութիւնների համար: 44 Պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը. այդպէս եմ անում, որպէսզի անունս չպղծուի ձեր չար ճանապարհների, ձեր ապականուած վարք ու բարքի պատճառով”», - ասում է Ամենակալ Տէրը:

ԿՐԱԿ ՀԱՐԱՒՈՒՄ

45 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 46 «Մարդո՛ւ որդի, դէմքդ ուղղի՛ր դէպի Թեման, նայի՛ր Դադոնի կողմը եւ մարգարէութի՛ւն արա Նագեբ իշխանի անտառի մասին: 47 Եւ կ'ասե՛ս Նագեբի անտառին. “Լսի՛ր Տիրոջ պատգամները, այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած. ահա ես քեզ վրայ կրակ եմ թափելու, եւ քեզանում ամէն ծառ՝ դալարն էլ, չորն էլ, նրան ճարակ է դառնալու. բորբոքուած բոցը չի հանգչելու, եւ նրա մէջ այրուելու են բոլոր մարդիկ՝ արեւելքից մինչեւ հիւսիս: 48 Եւ ամէն ոք պէտք է իմանայ, որ ես՝ Տէրս եմ վառել այն. եւ դա չի հանգչելու”»: 49 Ու ասում եմ. «Քա՛ւ լիցի, Տէ՛ր Աստուած»: Նրանք ինձ

† Եբրայերէն՝ բարձունք:

ասում են. «Չէ՞ որ դա առակ է, որ դու պատմում ես»:

ԱՍՏՈՒԾՈՒ ՍՈՒՐԸ

21 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Դրա համար մարգարէացի՛ր, մարդո՛ւ որդի, ու դէմքդ ուղղի՛ր Երուսաղէմի վրայ, նայի՛ր նրանց սրբավայրերին: Մարգարէութիւն կ'անես Իսրայէլի երկրի վրայ 3 եւ կ'ասես Իսրայէլի երկրին. “Այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած. ահա ես քո դէմ եմ: Մերկացնելու եմ սուրս իր պատեանից եւ քո միջից ոչնչացնելու եմ անիրաւին† ու անօրէնին: 4 Եւ քանի որ քո միջից ոչնչացնելու եմ անիրաւին ու անօրէնին, ուստի իմ սուրն իր պատեանից դուրս է գալու բոլոր մարդկանց վրայ՝ արեւելքից մինչեւ հիւսիս: 5 Եւ ամէն մարդ պէտք է իմանայ, որ ես՝ Տէրս եմ մերկացրել սուրս իր պատեանից, ու յետ տեղը չի դրուելու: 6 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, մէջքդ խոնարհած՝ հեծեծի՛ր, ցաւագի՛ն հեծեծիր նրանց առաջ: 7 Եւ եթէ քեզ հարցնեն՝ “Ինչո՞ւ ես հեծեծում”, կ'ասես. “Որովհետեւ մի բօթ լսեցի, եւ այն վրայ է հասնելու. բոլոր սրտերը կոտրուելու են, բոլոր ձեռքերը՝ թուլանալու, բոլոր անդամները՝ չորանալու, բոլոր շնչերը՝ կտրուելու, բոլոր զիստերը՝ խոնաւութեամբ ապականուելու: Ահա վրայ է հասնում, եւ այդպէս էլ լինելու է”», - ասում է Տէրը, Ամենակալն Աստուած:

8 Աստուած դարձեալ խօսեց ինձ հետ ու ասաց. 9 «Մարդո՛ւ որդի, կը մարգարէանաս ու կ'ասես. “Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

Սո՛ւր, սո՛ւր, սրուի՛ր ու զայրացի՛ր,
10 որպէսզի մեծ կոտորած անես:
Սրուի՛ր ու սրբուի՛ր,
պատրաստուի՛ր կոտորելու,
կոտորի՛ր, արհամարհի՛ր,
որդեա՛կ իմ, կտրի՛ր ամէն ծառ”»:
11 Եւ Տէրը տուեց սուրը՝ ձեռքում պատրաստ բռնելու:

Սուրը սրուած է եւ պատրաստ՝
ջարդարարի ձեռքը տալու համար:
12 Աղաղակի՛ր, ճի՛չ բարձրացրու, մարդո՛ւ որդի,
որովհետեւ այն սուրը կախուել է իմ ժողովրդի,
Իսրայէլի իշխանների վրայ:
Նրանք պանդուխտ են լինելու,
քանի որ սուրը կախուել է իմ ժողովրդի վրայ:
Ուստի ձեռքերովդ ծա՛փ զարկ,
որովհետեւ արդարացաւ ասածս:
13 Եւ ի՞նչ է, փրկուելո՞ւ է ազգը:
«Դա չի՛ լինելու», - ասում է Տէր Աստուածը:
14 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի,
մարգարէացի՛ր,
ձեռքերովդ ծա՛փ զարկ:
Դո՛ւ էլ սուր վերցրու,
որովհետեւ երրորդ սուրն սպանուածներինն է լինելու.
սուրը ծանրացել է սպանուածների վրայ
ու զարհուրեցնելու է նրանց,
15 որպէսզի նրանց սրտերը թուլանան,
նրանց բոլոր դռներին տկարները բազմանան,
որովհետեւ մատնուած են սրի քաշուելու:
Սուրը գեղեցկացել է փայլով
ու սպանելու համար պիտանի դարձել:
16 Շրջի՛ր, աջ ու ձա՛խ պտտուիր,
միեւնոյնն է, ո՛ւր էլ որ շուռ գաս՝
17 ես էլ այնտեղ եմ լինելու,
ծափ եմ զարնելու եւ թռչկոտելու եմ,
բարձրացնելու եմ ձայնս.
ես՝ Տէրս խօսեցի»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՍՈՒՐԸ

18 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 19 «Մարդո՛ւ որդի, քեզ համար երկո՛ւ ճանապարհ ընտրիր, ուր պիտի մտնի բաբելացիների արքայի սուրը, որովհետեւ երկուսն էլ նոյն աշխարհից են դուրս գալիս: Քաղաք տանող ճանապարհի գլխին ուղեցոյց նշա՛ն պատրաստիր: 20 Ճանապարհի սկզբին հաստատուի՛ր, պատրաստի՛ր, ճանապա՛րհ հարթիր, որ սուրը հասնի Ռաբոթ, ամոնացիներին, նաեւ Հրէաս-

†Եբրայերէն՝ արդարին:

տանի վրայ, նաեւ Երուսաղէմի վրայ, որ նրա մէջ է:
21 Բաբելացիների արքան գալու կանգնելու է հին ճանապարհի վրայ, երկու ճանապարհների գլխին՝ գաւազան գցելու†, կուռքերին հարցեր տալու, լեարդի վրայ գուշակութիւն անելու: 22 Նրա աջ ձեռքից հմայութիւններ են դուրս եկել՝ Երուսաղէմի դէմ պատնէշներ կանգնեցնելու, լիաբերան գոչելու, աղաղակ բարձրացնելու, դարպասները խոյահարելու, հող թափելու եւ մարտկոցներ շինելու»:

ԳՐՈՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴԷՄ

23 «Եւ դա երուսաղէմացիներին այնպէս է երեւալու, կարծես մէկն իրենց առաջ հմայութիւններ է անում. շաբաթուայ ընթացքում եօթն անգամ կրկնուելու է: Սակայն նա՝ բաբելացիների թագաւորն զգուշացնելու է սրանց, որ յիշեն իրենց անօրէնութիւնները»:
24 Ուստի այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած. «Նրա համար, որ սպառնացել էք ձեր անիրաւութիւններով, յայտնի են դարձել ձեր ամբարշտութիւնները, երեւան են եկել ձեր մեղքերը ձեր բոլոր ամբարշտութիւններով եւ ձեր ընթացքով, – այն բանի համար, որ դուք ինքներդ էք յիշեցրել, դրանց պատճառով էլ ոչնչանալու էք: 25 Դու էլ, Իսրայէլի պիղծ ու անօրէն իշխանդ, որի վախճանը եկել է անիրաւութեան ժամանակ, – 26 այսպէս է ասում քեզ Տէր Աստուած. "Վերցրո՛ւ խոյրդ, հանի՛ր պսակդ, որովհետեւ այդ այդպէս չի վերջանալու: Դու բարձրացածին խոնարհեցրել ես, խոնարհին՝ բարձրացրել: 27 Եւ հիմա ես‡ անիրաւութիւնը միւս անիրաւութիւնների վրայ եմ բարդելու: Այդ այդպէս չի մնալու, մինչեւ որ գայ նա, ում վայել է, եւ ես տալու եմ նրա ձեռքը"»

†Գուշակութիւններ անելու ձեւ է:
‡Եբրայերէն՝ տակնուվրայ, տակնուվրայ, տակնուվրայ եմ անելու այն, ու այլեւս գոյութիւն չի ունենալու:

ԳՐՈՂ ԱՄՈՆԱՑԻՆԵՐԻ ԴԷՄ

28 Ամոնացիներին: «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր ու ասա՛. "Այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած ամոնացիներին՝ նրանց նախատինքների համար.
Սուր սուսերը հանուած է սպանելու համար,
մերկացուած՝ վերջ տալու համար:
29 Զարթնի՛ր, որովհետեւ փայլում ես սին տեսիլքով,
սուտ հմայութիւններ ես անում՝ նրանց դէպի քեզ,
անօրէն վիրաւորների վզին քաշելու համար.
սրանց վախճանը հասել է՝
անիրաւութեան ժամանակի վախճանը:
30 Ցե՛տ դարձիր, մի՛ իջեւանիր այնտեղ, ուր ծնուել ես.
դարձեալ քո երկրում եմ քեզ դատելու,
31 քեզ վրայ թափելու եմ բարկութիւնս:
Իմ զայրոյթի հուրը փչելու եմ քեզ վրայ,
մատնելու եմ քեզ ձեռքը բարբարոս մարդկանց,
որոնք պղծութիւն են գործում:
32 Եւ հրոյ ճարակ ես դառնալու,
արիւնդ թափուելու է քո երկրում,
յիշատակդ էլ չի գտնուելու:
Ես՝ Տէրս խօսեցի"»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՃԻՐՆԵՐԸ

Իսրայէլացիներին

22 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, եթէ դատելու ես, դատի՛ր արիւնահեղութեան քաղաքը, 3 խայտառակի՛ր նրա բոլոր անօրէնութիւնները եւ ասա՛. "Այսպէս է ասում Տէրը, Ամենակալն Աստուած. ո՛վ քաղաք, որ արիւն է թափում իր մէջ, երբ իր ժամանակն է հասնում, իր ներսում խորհուրդներ է որոճում՝ ինքն իրեն ապականելու համար նրանց արիւնով: 4 Իզուր արիւն թափեցիր ու թաթախուեցիր, քո որոճացած խորհուրդներով ապականուեցիր: Քո օրերը մօտեցրիր եւ քո կեանքի վախճանին մօտեցար: Դրա համար է որ քեզ յանձնեցի նախատինքին ազգերի, ամօթանքներին բոլոր աշխարհների, 5 որոնք մօտ էին քեզ կամ քեզնից հեռու, որպէսզի այպանեն քեզ ու ասեն. "Դու՝ անուանի քաղաքդ, պղծութեան մատնուեցիր, որովհետեւ յաճախակի անօրէնութիւններ գործեցիր":
6 Ահա Իսրայէլի այդ տան իշխանները. քո մէջ իւրաքանչիւրն իր ազգի մերձաւորների հետ էր խառնակւում, որ արիւն թափէր. 7 քո մէջ հօրն ու մօրն էին անարգում, եկուորի ու պանդխտի հետ անիրաւութեամբ էին վարւում, որբին ու այրուն բռնադատում, 8 սրբութիւններս արհամարհում էին ու շաբաթներս պղծում քո մէջ: 9 Աւազակ մարդիկ կային քո մէջ, որ արիւն թափէին քո մէջ, լեռների վրայ էլ զոհեր մատուցէին քո մէջ եւ անմաքուր գործեր անէին: 10 Իրենց հօր ամօթն էին մէջտեղ հանում քո մէջ եւ պղծութեամբ դաշտանաւոր կնոջ էին բռնաբարում քո մէջ: 11 Իւրաքանչիւրն իր ընկերոջ կնոջն էր պղծում, իւրաքանչիւրն ամբարշտութեամբ իր հարսին էր պղծում, իւրաքանչիւրն իր քրոջը՝ իր հօր դստերն էր բռնաբարում քո մէջ: 12 Կաշառք էին վերցնում քո մէջ, որպէսզի արիւն թափէին, վաշխ ու տոկոս էին առնում քո մէջ: Եւ ես վերջ եմ տալու քո չարագործութիւններին՝ ըստ քո գործած բռնութեան, որովհետեւ մոռացել ես ինձ", – ասում է Տէր Աստուած:
13 "Ահա ծափ եմ զարնելու քո կատարած գործերին ի տես եւ ի տես քո մէջ կատարուած արիւնահեղութեան: 14 Պիտի դիմանա՞յ քո սիրտը, պիտի զօրանա՞ն քո ձեռքերն այն օրերին, երբ դրանք գլխիդ բերեմ: Ես՝ Տէրս եմ ասում, եւ անելու եմ: 15 Սփռելու եմ քեզ ազգերի մէջ, ցիր ու ցան եմ անելու երկրներով մէկ, եւ քո միջից պղծութիւնը պակասելու է: 16 Դա եմ ժառանգութիւն թողնելու քեզ ազգերի մէջ, եւ պէտք է իմանաք, որ ես եմ Տէրը"»:

ԱՍՏԾՈՒ ՋՏՈՂ ՓՈՒՌԸ

17 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 18 «Մարդո՛ւ որդի, ահա Իսրայէլի այդ տունն ինձ համար խառնուեց, ինչպէս հալոցում խառնւում են պղինձն ու երկաթը, անագը, կապարն ու արծաթը: 19 Ուստի ասա՛. "Այսպէս է ասում Տէր Աստուած. այն բանի համար, որ դուք բոլորդ էլ միախառնուեցիք, դրա համար ես ձեզ հաւաքելու եմ Երուսաղէմում, 20 ինչպէս որ մէկը հալոցում արծաթն ու պղինձը, երկաթն ու կապարը կը հաւաքի՝ նրա վրայ կրակ փչելու եւ ձուլելու համար: Նոյն ձեւով էլ ձեզ եմ հաւաքելու իմ բարկութեամբ 21 հաւաքելու եւ ձուլելու եմ ձեզ. ձեզ վրայ իմ բարկութեամբ հուր եմ փչելու, ու դուք ձուլուելու էք նրա մէջ. 22 ինչպէս որ արծաթն է ձուլւում քուրայում, այնպէս էլ դուք էք ձուլուելու դրա մէջ: Եւ պիտի իմանաք, որ ես՝ Տէրս եմ սրտմտութիւնս թափել ձեր վրայ"»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԵՂՔԸ

23 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 24 «Մարդո՛ւ որդի, ասա՛ դրան. "Դու այն երկիրն ես, որ չես թրջւում. քեզ վրայ անձրեւ չի կաթել զայրոյթի օրը: 25 Դու այն երկիրն ես, որի իշխաններն այնտեղ յափշտակելիս ու կողոպտելիս առիւծների պէս էին մռնչում. բռնութեամբ տնանկների մարմիններն էին յօշոտում եւ անիրաւութեամբ պատիւներ խլում: Եւ այրիները բազմացան քո մէջ: 26 Նրա քահանաներն անարգում էին օրէնքներս ու պղծում սրբութիւններս. սուրբը պիղծից չէին տարբերում, արատաւորը անարատից չէին ջոկում. իմ շաբաթներին աչք էին փակում եւ պղծում էին շաբաթներս իրենց մէջ: 27 Նրա իշխանները յափշտակիչ գայլերի պէս էին նրա մէջ՝ յափշտակելու եւ կողոպտելու, արիւն թափելու եւ մարդկանց կորստի մատնելու համար, որպէսզի իրենց սաստիկ ագահութեանը յագուրդ տային: 28 Նրա մարգարէները, որոնք կոծկում էին այդ մեղքերը, ընկնելու են, նրանք, որ սնոտի բաներ

էին գուշակում, ստուերներ տեսնում
եւ ասում էին, թէ այսպէս է ասում
Ամենակալ Տէրը, մինչդեռ Տէրը նման
բան չէր կարող խօսել: 29 Երկրի
ժողովրդին տառապեցնում էին անիրա-
ւութեամբ, յափշտակում ու կողոպտում.
աղքատին ու տնանկին բռնադատում
էին. պանդխտի հետ անիրաւութեամբ
էին վարւում: 30 Նրանց միջից մի մարդ
փնտռեցի, որ ուղիղ ընթանար,
զայրոյթիս պահին առջեւս յօժարակամ
կանգնէր, որպէսզի չջնջէի նրանց, բայց
չգտայ: 31 Եւ նրանց վրայ թափեցի
սրտմտութիւնս իմ զայրոյթի հրով՝
նրանց վրայ բարկութիւնս ի կատար
ածելու համար: Ըստ նրանց բռնած
ճանապարհի էլ նրանց գլխին բերեցի"»,
– ասում է Տէր Աստուած:

ՄԵՂԱՒՈՐ ՔՈՅՐԵՐԸ

23 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Մարդո՛ւ որդի, երկու կանայք կային՝
մի մօր դուստրեր. 3 իրենց երիտասարդ
հասակում պոռնկացան Եգիպտոսում:
Այնտեղ ճմռթուեցին նրանց ստինքները,
այնտեղ նրանք զրկուեցին իրենց
կուսութիւնից: 4 Աւագ դստեր անունը
Ողա էր, քրոջ անունը՝ Ողիբա: Նրանք
իմը եղան եւ տղաներ ու աղջիկներ
ծնեցին. սրանց անուններն էին,
Շամրիոնը՝ Ողա, Երուսաղէմինը՝
Ողիբա:

5 Ողան, իմը լինելով, պոռնկացաւ,
աչքը գցեց իր հոմանիների՝ ասորես-
տանցիների վրայ, որոնք նրա մօտ էին.
6 դրանք ծիրանի ու կարմիր հագածներ,
իշխաններ ու զօրագլուխներ, երի-
տասարդներ, ամէն ինչով ընտրեալներ,
երիվարներ հեծած սպառազէններ էին:
7 Ողան իր պոռնկութիւնը տարածեց
նրանց վրայ, Ասորեստանի բոլոր ընտ-
րեալ զաւակների վրայ, բոլոր նրանց
վրայ, որոնց յետեւից գնացել էր իր
բոլոր մտածումներով, ու պղծուեցաւ
արեց: 8 Եգիպտացիների երկրից բերած
իր պոռնկութիւնը չթողեց նա, որով-
հետեւ նրանց հետ խառնակւում էր
իր երիտասարդ ժամանակից. նրանք
էին սրան զրկել կուսութիւնից, ի-
րենց պոռնկութիւնը թափել նրա վրայ:
9 Դրա համար նրան մատնեցին իր
հոմանիների ձեռքը, ասորեստանցի-
ների ձեռքը, որոնց յետեւից էր գնում
նա: 10 Նրանք մէջտեղ հանեցին սրա
խայտառակութիւնը, վերցրին նրա
տղաներին ու աղջիկներին, իրեն սրով
սպանեցին: Եւ կատարուեց կանանց
խօսքը. նրանից վրէժ լուծեցին նրա
դուստրերի միջոցով:

11 Այս բանը տեսաւ նրա քոյր
Ողիբան, իր ապականուած ցանկա-
սիրութեան մէջ աւելի առաջ գնաց, քան
քոյրը, նաեւ պոռնկութեան մէջ աւելի
առաջ, քան քոյրը: 12 Գնաց ասորես-
տանցի իշխանների ու զօրավարների
յետեւից, որոնք նրա մօտ էին. դրանք
ազնիւ ծիրանիներ հագածներ, երիվար-
ներ հեծած սպառազէններ, ամէն ինչով
ընտրեալ երիտասարդներ էին: 13 Տե-
սայ, որ պղծութիւն էին անում. երկուսի
էլ ճանապարհը նոյնն էր: 14 Սա խրուեց
իր պոռնկութեան մէջ: Երբ պատերին
քաղդէացի տղամարդկանց պատկեր-
ներ էր տեսնում՝ նկարուած քերիչներով,
15 մէջքներին տեսակ-տեսակ գօտիներ,
գլուխներին՝ ներկուած խոյրեր
(խայտաբղէտ գոյներ էին ցոլանում
բոլորից էլ, ինչպէս լինում են Բաբելոնի
զաւակները քաղդէացիների երկրում,
իրենց երկրում), – 16 աչք էր դնում
նրանց վրայ՝ իր աչքերի հայեացքով,
սուրհանդակներ ուղարկում քաղդէացի-
ների երկիրը, նրանց մօտ: 17 Նրա մօտ
եկան Բաբելոնի զաւակները նրա
անկողնում հանգչելու, պղծեցին նրան
իր պոռնկութեան մէջ: Նա խառնակուեց
նրանց հետ. մարմինը յագեցաւ նրան-
ցից: 18 Բացայայտեց իր պոռնկութիւնը
եւ պատմեց իր ամօթը: Եւ ես հեռացայ
նրանից, ինչպէս հեռացել էի նրա
քրոջից: 19 Բայց դու սաստկացրիր
պոռնկութիւնդ, որ յիշեցնում էր երի-
տասարդութեանդ օրերը, երբ պոռնկու-
թիւն էիր անում Եգիպտոսում: 20 Աչքդ
գցեցիր էշերի ու ձիերի անդամներ
ունեցող քաղդէացիների վրայ: 21 Պատ-
ժելու եմ քեզ այն անիրաւութիւնների
համար, որոնք գործեցիր երիտասար-
դութեանդ օրերին քո օթեւանում,
Եգիպտացիների երկրում, ուր ճմռթուե-
ցին ստինքներդ, ու խախտուեց

կուսութիւնդ»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏԻԺԸ

22 «Ուստի, ո՛վ Ողիբա, այսպէս է
ասում Տէր Աստուածը. "Ահա քեզ վրայ
ոտքի եմ հանելու հոմանիներիդ,
որոնցից յագեցաւ ու զզուեց մարմինդ,
23 նրանց բերելու եմ, շրջապատել եմ
տալու քեզ, բերելու եմ նրանց՝
Բաբելոնի զաւակներին ու բոլոր
քաղդէացիներին, Փակուդին, Սուէին ու
Կուէին, Ասորեստանի բոլոր զա-
ւակներին էլ նրանց հետ՝ ընտիր
երիտասարդներին, իշխաններին, զօ-
րավարներին, երիվարներ հեծած
անուանի սպառազէններին: 24 Բոլորն էլ
քեզ վրայ են գալու հիւսիսից, ազգերի
մի բազմութիւն՝ կառքերով ու
անիւներով, սաղաւարտաւորներ ու
վահանաւորներ: Շուրջդ պահակներ են
դնելու: Քեզ դատելու եմ նրանց առաջ,
եւ նրանք վրէժ են լուծելու քեզնից
իրենց դատաստանով: 25 Քո դէմ պիտի
ուղղեմ նաեւ քո հանդէպ ունեցած իմ
վրէժխնդրութիւնը. նրանք քեզ հետ
վարուելու են իմ զայրոյթի չափով.
կտրելու են քիթդ ու ականջներդ եւ ինչ
որ մնայ քեզնից, սրով կոտորելու են.
վերցնելու են տղաներիդ ու
աղջիկներիդ, իսկ մնացածներին հրով են
ոչնչացնելու: 26 Վրայիցդ հանելու են
հագուստներդ ու քեզանից վերցնելու
են պարծանքիդ զարդերը: 27 Այսպիսով
առջեւդ եմ դնելու ամբարշտութիւնդ ու
պոռնկութիւնդ, որոնցով զբաղւում էիր
Եգիպտացիների երկրում: Եւ աչքդ
այլեւս չես բարձրացնելու դէպի նա,
այլեւս չես յիշելու Եգիպտոսը":

28 Ուստի այսպէս է ասում Տէր
Աստուածը. "Ահա քեզ մատնելու եմ
ատելիներիդ ձեռքը, որոնցից յագեցաւ
ու զզուեց մարմինդ: 29 Քեզ հետ
վարուելու են ատելութեամբ, վերցնելու
են ամբողջ վաստակդ ու աշխատանքդ:
Մերկ ես լինելու եւ խայտառակուած:
Մեջտեղ է գալու պոռնկութեանդ
ամօթը: Քո ամբարշտութիւնն ու
պոռնկութիւնն են գլխիդ բերելու դա,
30 մինչ պոռնկութիւն էիր անում
ազգերի հետ, պղծւում նրանց մտա-
ծումներում: 31 Քրոջդ ճանապարհով
ընթացար, եւ նրա բաժակը քո ձեռքն եմ
տալու":

Այսպէս է ասում Տէր Աստուած.
32 "Քրոջդ բաժակն ես ըմպելու,
մի խոր ու լայն բաժակ:
Ծաղր ու ծանակ ես դառնալու,
կատարելապէս հարբելու ես:
33 Բոլորովին թուլանալու ես:
Ըմպելու ես քո պոռնկութեան,
Շամրին քրոջդ բաժակը
եւ քամելու ես ցմրուր:
34 Մազերդ ես փետելու եւ ստինք-
ներդ ծծելու:
Ծոներն ու ամսագլուխները վերաց-
նելու եմ քեզանից.
այդ ե՛ս խօսեցի", – ասում է
Ամենակալ Տէրը: –
35 Ուստի այսպէս է ասում Ամենակալ
Տէրը. "Այն բանի համար, որ ինձ
մոռացար, յետեւդ գցեցիր, դո՛ւ էլ կրիր
ամբարշտութեանդ ու պոռնկութեանդ
պատիժը"»:

ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐԻՆ

36 Տէրն ինձ ասաց. «Մարդո՛ւ որդի,
երբ դատես Ողային ու Ողիբային,
նրանց կը պատմես իրենց անօրէնու-
թիւնները: 37 Նրանք շնացան, եւ արիւն
կայ նրանց ձեռքերին: Նրանք իրենց
մտքում էլ էին շնանում: Իրենց ծնած
զաւակներին բոցի միջով էին անցկաց-
նում: 38 Այն աստիճան բաներ արեցին
իմ դէմ, որ նոյն օրն իսկ սրբութիւններս
էին պղծում, շաբաթներս ապականում՝
39 կուռքերին զոհաբերելու համար
իրենց որդիներին: Նոյն օրը մտնում էին
իմ սրբավայրերը եւ պղծում էին դրանք:
Այսպէս էին վարւում իմ Տան մէջ:
40 Հեռուից եկած մարդիկ էլ, որոնց
որպէս սուրհանդակներ էին ուղարկել,
հէնց որ գալիս էին, բաղնիք էիր
մտնում, ծարիրով ու սնգոյրով շպար-
ւում էիր, 41 զարդեղէնով զարդարւում
ու նստում էիր զարդարուած
գահաւորակի վրայ: Սեղան էիր գցում
նրանց առջեւ, իմ խունկն ու իւղը
վերցնում էիր եւ զուարճանում նրանց
հետ: 42 Նրանք ներդաշնակ ձայնով
նուագում էին: Այդ մարդկանց կողքին՝

անապատից եկած ուրիշ բազմաթիւ գինեմոլ մարդիկ էլ կային: Ապրանչաններ էիր դնում նրանց ձեռքերին, պարծանքի պսակներ՝ նրանց գլխին:
43 Ես ասում էի՝ "Պոռնկական գործերով թող նրանց հետ չշնանայ", բայց նա պոռնկանում էր. 44 եւ նրա մօտ էին մտնում, ինչպէս պոռնիկ մի կնոջ մօտ: Նոյն ձեւով մտնում էին նաեւ Ողոլայի ու Ողոլիբայի մօտ՝ անօրէնութիւն գործելու: 45 Նրանք, որ արդար մարդիկ էին, վրէժ են լուծելու սրանցից, շնացածների հանդէպ լուծուող վրէժ եւ արեան վրէժ, որովհետեւ սրանք շնացողներ էին, եւ իրենց ձեռքերն արիւնոտ էին":
46 Այսպէս է ասում Տէր Աստուածը. "Զօ՛րք արձակիր, նրանց մէջ խռովութի՛ւն գցիր ու յափշտակութիւն, 47 զօրքերի քարերով քարկոծի՛ր նրանց, խոցոտի՛ր նրանց իրենց սրերով: Նրանց տղաներն ու աղջիկները թող կոտորուեն: Իսկ նրանց տները թող հրդեհեն: 48 Ամբարշտութիւնը վերացնելու եմ երկրից, եւ բոլոր կանայք խրատուելու են ու այլեւս չեն հետեւելու սրանց ամբարշտութեան: 49 Ձեր ամբարշտութիւնը ձեր առջեւն է գալու, ապա պատիժ էք կրելու ըստ ձեր մեղքերի ու մտածումների: Ու պէտք է իմանաք, որ ես եմ Տէր Աստուածը"»:

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ՝ ԺԱՆԳՈՏ ԿԱԹՍԱՅ

24 Տէրը խօսեց ինձ հետ իններորդ տարում, տասներորդ ամսին, ամսուայ տասներորդ օրը եւ ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, նշա՛ն արա, գրի՛ր քեզ մօտ այն օրը, երբ բաբելացիների թագաւորը յարձակուեց Երուսաղէմի վրայ. 3 ճիշտ այդ օրից այս առակը կը պատմես դառնացնողների տանն ու կ'ասես նրանց. "Այսպէս է ասում Տէր Աստուած.

Մի կաթսա՛յ շինիր,
շինի՛ր եւ մէջը ջո՛ւր լցրու:
4 Դի՛ր մէջը մսի բոլոր մասերը,
բոլոր յօշուած գեղեցիկ կտորները՝
ազդրն ու գիստը:
5 Ընտիր-ընտիր անասունների
կտրտուած ոսկորները կ'առնէք,
կաթսայի տակ կ'այրէք:
Թող եռայ, շատ եռայ,
նրա մէջ թող եփուեն ոսկորները":
6 Ահա այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

"Ո՛վ արիւնահեղ քաղաք,
կաթսայ՝ լի ժանգով.
ժանգն էլ նրա վրայից դեռ չի անցել:
Կտոր-կտոր մսեր դուրս է հանել դրանից.
վիճակ էլ չի գցել նրա վրայ,
7 որովհետեւ նրա արիւնը դեռ նրա մէջ է:
Սալաքարի վրայ եմ դրել այն,
այլ ոչ թէ գետին թափել՝
հողով ծածկելու համար,
8 մինչեւ որ իմ զայրոյթն ելնի՝
վրէժխնդրութիւն պահանջելու:
Արիւնն էլ դրել եմ սալաքարի վրայ, որ չծածկուի":
9 Դրա համար այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

"Վա՜յ քեզ, քաղա՛քդ արիւնների.
10 փայտն էլ եմ չատացնելու,
այրողն էլ բազմացնելու,
հուրն էլ բորբոքելու եմ,
որ միսը հալուի,
արգանակը թուլանայ, ոսկորները փխրուեն.
11 իր կրակի վրայ թող մնայ: Կրակը թող բորբոքուած լինի,
որ վառուի ու տաքանայ,
հալուի պղինձը,
նրա պղծութիւնն էլ՝ նրա մէջ:
Թող պակասի ու թուլանայ նրա ժանգը:
12 Բայց նրա ուժեղ ժանգը միջից թող դուրս չգայ, այլ իբրեւ ամօթանք մնայ արգանակի մէջ 13 այն բանի համար, որ պղծութեամբ էիր անում դու: Եւ դու չես մաքրուելու քո պղծութիւնից: Ինչպէ՞ս կարող ես մաքրուել, քանի դեռ չեմ յագեցրել քո հանդէպ իմ զայրոյթը:
14 Ես՝ Տէրս խօսեցի: Ու գալու է օրը, անելու եմ այդ ու չեմ խորշելու, ոչ էլ ողորմելու եմ կամ զղջալու, այլ ըստ քո բռնած ճանապարհի ու քո վարմունքի էլ պատժելու եմ քեզ", – ասում է Ամենակալ Տէրը: – "Ուստի քեզ պատժելու եմ ըստ քո թափած արեան, ըստ քո մտածումների եմ պատժելու

քեզ, ո՛վ պիղծդ ու անուանարկելդ, որ սաստկացրել ես ինձ դառնացնելը"»:

ԵԶԵԿԻԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ ՍՈՒԳԸ

15 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 16 «Մարդո՛ւ որդի, ահա ես պատերազմով վերացնում եմ քո աչքին ցանկալի եղածը, իսկ դու չկոծես ու չողբաս, քեզնից թող արցունք դուրս չգայ, 17 որովհետեւ հեծութիւնն արեան ու սուգի մէջ է: Թող վարսերդ չհիւսուեն, ոտքերդ կօշիկների մէջ լինեն, չմխիթարուես նրանց շուրթերի խօսքերով ու չուտես մարդկանց հացը»:
18 Առաւօտեան խօսեցի ժողովրդի հետ, ինչպէս որ պատուիրել էր ինձ Տէրը: Իսկ երեկոյեան կինս մեռաւ: Յաջորդ առաւօտեան այնպէս արեցի, ինչպէս որ Նա պատուիրել էր ինձ: 19 Եւ ժողովուրդն ասաց ինձ. «Չես պատմում մեզ, թէ այդ ի՞նչ ես անում»:
20 Ու ասացի նրանց. «Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 21 "Ասա՛ Իսրայէլի տանը. այսպէս է ասում Տէր Աստուած. ահա ես աւերելու եմ իմ սրբարանը՝ ձեր զօրութեան պարծանքը, ձեր աչքին ցանկալի եղածը, նաեւ այն, որին խնայում են ձեր հոգիները: Ձեզանից մնացած տղաներն ու աղջիկները սրով են ընկնելու: 22 Դուք էլ անելու էք այնպէս, ինչպէս ես եմ արել. նրանց բերանի խօսքերով չէք մխիթարուելու, 23 մարդկանց հացն էլ չէք ուտելու: Ձեր վարսերը լինելու են ձեր գլուխներին, կօշիկները՝ ձեր ոտքերին: Ձէք կոծելու եւ ողբալու, հալուելու-մաշուելու էք ձեր անիրաւութիւնների մէջ, եւ իւրաքանչիւրն իր եղբօրը չի մխիթարելու: 24 Եզեկիէլը ձեզ համար մի նշան է լինելու. ինչ որ ինքն անի, նրա օրինակով դուք էլ նոյնն էք անելու: Ու երբ դա կատարուի՝ պիտի իմանաք, որ ես եմ Ամենակալ Տէրը:
25 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի. չէ՞ որ այն օրը, երբ դրանցից վերացնեմ իրենց զօրութիւնը, հպարտութիւնն ու պարծանքը, իրենց աչքին ցանկալի եղածը, հոգիների հպարտութիւնը, նրանց տղաներին ու աղջիկներին, – 26 չէ՞ որ այդ օրը փրկուածը քեզ մօտ է գալու՝ քո ականջներին գոյժը հաղորդելու: 27 Այն օրը փրկուածի առջեւ բացուելու է բերանդ, խօսելու ես ու այլեւս համր չես մնալու, նրանց համար նշան ես լինելու. եւ պէտք է իմանան, որ ես եմ Տէրը"»

Մարգարէութիւն ամոնացիների դէմ

25 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, դարձրո՛ւ երեսդ ամոնացիների դէմ, մարգարէացի՛ր նրանց մասին ու ասա՛ ամոնացիներին. 3 "Լսեցէ՛ք Ամենակալ Տիրոջ պատգամները: Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. այն բանի համար, որ չարախնդացիք պղծուած սրբարանիս, ապականուած Իսրայէլի երկրի, գերութեան գնացած Յուդայի տան վրայ, – 4 այդ պատճառով ահա ես ձեզ մատնում եմ Կեդէմի† զաւակների ձեռքը որպէս ժառանգութիւն: Իրենց մեղքերով բնակուելու են քո մէջ, իրենց վրանները կանգնեցնելու են քո մէջ. նրանք ուտելու են քո միրգը, խմելու քո պարարտ հիւթը: 5 Ամոնացիների քաղաքը տալու եմ ուղտերին՝ արածելու, իսկ ամոնացիներին՝ արածող հօտերին: Պիտի իմանաք, որ ես եմ Տէրը: 6 Այսպէս է ասում Տէր Աստուած. "Այն բանի համար, որ ձեռքերովդ ծափ զարկիր ու ոտքերովդ դոփեցիր, հոգով ուրախացար Իսրայէլի երկրի վրայ, – 7 այդ պատճառով ահա ես ձեռքս գցելու եմ քեզ վրայ ու տալու եմ քեզ տարբեր ազգերի, որ քեզ յափշտակեն, ոչնչացնելու եմ քեզ ժողովուրդների միջից, կորստեան եմ մատնելու քեզ երկրների միջից: Ու պէտք է իմանաս, որ ես եմ Տէրը"»:
8 Մովաբի դէմ: «Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Այն բանի համար, որ Մովաբն ու Սէիրն ասացին, թէ ահա ինչպէս որ ազգերն են, այնպէս էլ Իսրայէլի եւ Յուդայի տունն է, – 9 այդ պատճառով ահա ես թուլացնելու եմ Մովաբի թիկունքը քաղաքների բարձրաւանդակների կողմից, ընտրագոյն երկիրը՝ Բեթի ու Ասիմոթի տունը, որ քաղաքի աղբիւրից աւելի վերեւ է, ծովեզերքի մօտերքը: 10 Կեդէմի զա-

†Արիւելի:

ւակներին էլ, նրանց վրայ աւելացրած նաեւ ամոնացիներին, տուել եմ նրան որպէս ժառանգութիւն, որպէսզի ամոնացիների յիշատակն ազգերի մէջ չմնայ: 11 Մովաբն էլ եմ պատժելու: Պէտք է իմանան, որ ես եմ Տէրը"»:

12 **Եդոմի դէմ:** «Այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Այն բանի համար, որ Եդոմը վրէժ լուծեց Յուդայի տնից, ոխակալ եղաւ ու վրէժ պահանջեց, – 13 այդ պատճառով այսպէս է ասում Ամենակալ Տէրը. ձեռքս գցելու եմ Եդոմի վրայ, ոչնչացնելու եմ դրա մէջ մարդ ու անասուն, անապատի եմ վերածելու այն, իսկ Թեմանից սկսած հալածեալները սրից են ընկնելու: 14 Եւ Եդոմը պատժելու եմ Իսրայէլի իմ ժողովրդի միջոցով. Եդոմի հետ վարուելու են իմ զայրոյթի ու սրտմտութեան համեմատ: Պիտի ճանաչեն իմ վրէժխնդրութիւնը"», – ասում է Ամենակալ Տէրը:

15 **Փղշտացիների դէմ:** «Այդ մասին այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Այն բանի համար, որ այլազգիները ոխակալ եղան, վրէժխնդիր եղան սրտմտութեամբ, դաժանութեամբ սպանեցին նրանց իսպառ, – 16 այդ պատճառով էլ այսպէս է ասում Ամենակալ Տէրը. ահա ես ձեռքս գցելու եմ այդ այլազգիների վրայ, ոչնչացնելու եմ այդ կրետացիներին, կորստեան եմ մատնելու այդ ծովեզերաբնակներին 17 ու նրանց պատժելու եմ մեծամեծ կշտամբանքներով ու զայրոյթով: Եւ պէտք է իմանան, որ ես եմ Ամենակալ Տէրը, երբ նրանց հանդէպ վրէժխնդիր լինեմ"»:

Տիւրոսի դէմ

26 Տասնմէկերորդ տարում, ամսուայ առաջին օրը, Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, այն բանի համար, որ Տիւրոսը չարախնդաց Երուսաղէմի վրայ ու ասաց. "Վա՜շ-վա՜շ, քանի որ կոտրուեց, կորաւ Երուսաղէմը, դէպի ինձ են դառնալու ազգերը, որովհետեւ շէն քաղաքն աւերուեց", – 3 այդ պատճառով այսպէս է ասում Ամենակալ Տէրը.

"Ահա ես քո դէմ եմ, Տիւրո՛ս,
քո դէմ եմ դուրս բերելու բազում ազգերի,
ինչպէս որ ծովը դուրս է գալիս իր ալիքներով:
4 Նրանք կործանելու են Տիւրոսի պարիսպները,
կործանելու են նրա աշտարակները:
Հողն էլ հոսեցնելու եմ նրա վրայից
ու այն դարձնելու եմ լերկ ապառաժ:
5 Ծովի մէջտեղում նա լինելու է ուռկաններ գցելու տեղ,
որովհետեւ ե՛ս խօսեցի",
– ասում է Տէր Աստուած: –
"Ազգերին նա աւար է դառնալու.
նրա արուարձանների բնակիչները ցամաքում սրով են սպանուելու:
6 Եւ նրանք պիտի իմանան, որ ես եմ Տէրը"»:

7 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
«Ահա ես հիւսիսից քո դէմ եմ բերելու, Տիւրո՛ս,
բաբելացիների թագաւոր Նաբուքոդոնոսորին,
որ արքայից արքայ է՝
կառքերով ու երիվարներով,
շատ ու շատ ազգերի գունդագունդ հեծեալներով:
8 Նա քո արուարձանների բնակիչներին դաշտում սրով է կոտորելու,
շուրջդ պահակ է դնելու եւ փոս փորելու,
պատնէշ ու ռազմական ամրոցներ է կանգնեցնելու,
9 իր գեղարդները քո դէմ է պահելու,
պարիսպներդ ու աշտարակներդ սրով է կործանելու:
10 Նրա հեծեալների բազմութիւնից դրանց փոշին ծածկելու է քեզ.
հեծեալների եւ նրանց անիւների ու կառքերի ձայնից
դղրդալու են պարիսպներդ,
երբ նա ներս մտնի քո դարպասներից, ինչպէս որ մէկը դաշտից քաղաք կը մտնի:
11 Իրենց երիվարների սմբակներով կոխոտելու են հրապարակներդ,
սրով կոտորելու են ժողովրդիդ,
գետին են տապալելու զօրաւոր ամրոցներդ:
12 Աւարելու են ամրոցներդ,
կողոպտելու՝ ունեցուածքդ, ինչքդ,
կործանելու են պարիսպներդ,
տապալելու՝ ցանկալի ապարանքներդ,
ծովն են թափելու քարերդ, փայտերդ ու հողդ:
13 Նա քայքայելու է քո բազմաթիւ երգիչների խմբերը,
եւ երգի ձայներ չեն լսուելու այլեւս քո մէջ:
14 Քեզ լերկ ժայռաստանի եմ վերածելու,
եւ լինելու ես ուռկաններ գցելու տեղ:
Այլեւս չես վերաշինուելու,
որովհետեւ ես խօսեցի», – ասում է Ամենակալ Տէրը: –
15 Այսպէս է ասում Տէր Աստուած Տիւրոսին.
«Չէ՞ որ քո կործանման ձայնից,
քո վիրաւորների հեծեծելուց,
քո մէջ սրի մերկանալուց դղրդալու են քո կղզիները,
16 եւ այդ ծովագնաց ազգերի բոլոր իշխաններն իջնելու են իրենց գահաւորակներից,
հանելու են գլուխներից իրենց խոյրերը,
մերկանալու են իրենց գոյնզգոյն հագուստներից,
տագնապելով տագնապելու են,
գետին են տապալուելու,
զարհուրելու են իրենց կործանման ժամանակ,
17 հոգոց են հանելու քեզ վրայ,
ողբալու եւ ասելու են.
"Ինչո՞ւ կորստեան մատնուեցիր,
քանդուեցիր ծովի մէջ, ո՛վ հոյակապ քաղաք,
որ զօրացել էիր ծովում,
դու եւ քո բնակիչները,
մինչ զարհուրեցնում էիր բոլոր բնակիչներիդ:
18 Կղզիներն իրենք են սարսափելու քո կործանման օրից.
ծովիդ կղզիները խռովուելու են քո բնաջնջման համար":
19 Այսպէս է ասում Տէր Աստուած. «Երբ քեզ՝ քաղաքդ աւերակ դարձնեմ, ինչպէս որ լինում են ամայաբնակ քաղաքները, երբ վիհերը բերեմ քեզ վրայ, ու քեզ առատ ջրեր ողողեն, –
20 քեզ էլ եմ իջեցնելու գերեզման իջածների մօտ, յաւիտենապէս ամբոխուածների մօտ: Քեզ բնակեցնելու եմ երկրի ընդերքներում, որպէս յաւիտենական աւերակ, յաւիտենապէս խորխորատ իջածների կողքին, որպէսզի այլեւս բնակելի չդառնաս, երկրի վրայ կենդանի չմնաս: 21 Կորստեան եմ մատնելու քեզ, եւ դու այլեւս գոյութիւն չես ունենալու: Փնտռուելու ես, բայց յաւիտեան չես գտնուելու»:

Ողբ Տիւրոսի վրայ

27 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, ողբա՛ Տիւրոսի վրայ, ասա՛ Տիւրոսին.
3 "Դու, որ բնակուել ես այդ ծովի մուտքին,
վաճառաշահ ազգերի բազմաթիւ կղզիներով,
այսպէս է ասում Տէր Աստուածը Տիւրոսին.
4 "Դու ասում էիր՝
'Ես եմ ինձ զարդարել իմ գեղեցկութեան զարդով,
Բէէլէմ ծովի սրտում':
Մինչդեռ քո զաւակներն են զարդարել քեզ:
5 Սանիր լեռից բերուած մայրիներն են դարձել քեզ ատաղձ,
նոճու տախտակներ են առնուել Լիբանանից՝
քեզ համար եղեւնափայտ կայմեր պատրաստելու,
6 Բասանից բերուած կաղնուց են շինել նաւերիդ դեկերը
եւ փղոսկրից՝ քո մեհեանները,
քետիմացիների կղզիներից բերուած նիւթերից՝
հովանաւոր ծառերով շրջապատուած ապարանքներդ,
7 Եգիպտոսից բերուած պաստառներով են գործուել բեհեզն ու դիպակը
որպէս փառաշուք թիկնոց,
ելիմացիների կղզիներից բերուած ծիրանի ու կապուտակ հանդերձն է եղել քո պաճուճանքի զարդը:
8 Քո իշխանները սիդոնացիներն են եղել,
քո նաւավարները՝ արադացիները:

Քո իմաստունները, Տիւրո՛ս, որ
ապրում էին քո մէջ,
նրանք են եղել քեզ համար
նաւապետներ,
9 ծեր մատենագէտներն ու իմաս-
տունները, որ ապրում էին քո մէջ,
նրանք են զօրացրել քեզ քո
խորհուրդներում:
Ծովի բոլոր նաւերն ու դրանց
նաւավարները են քեզ առաջնորդել
մինչեւ ծայրագոյն արեւմուտք:
10 Լիւդացիք ու լիբիացիք են եղել քո
զօրքն ու թիկունքը՝
պատերազմող ընտիր մարդիկ,
որոնք իրենց վահաններն ու սա-
զաւարտները քեզ մօտ են կախել,
եւ նրանք է, որ փառաւորել են քեզ:
11 Արադացիների զաւակներն է, որ
իրենց զօրքերով շրջապատել են
պարիսպներդ
ու պահպանել աշտարակներդ,
իրենց կապարճները շուրջանակի
կախել պարիսպներիդ վրայ:
Հէնց նրանք է, որ կատարեալ են
դարձրել գեղեցկութիւնդ:
12 Կարկեդոնացի վաճառականներն է,
որ քո ամբողջ հարստութիւնը՝ արծաթն
ու ոսկին, պղինձն ու երկաթը, անագն ու
կապարը բերել են քո շուկաները:
13 Յոյներն ու նրանց շուրջը գտնուող
ազգերն է, որ եղել են քո ստրկա-
վաճառները, պղնձէ անօթներ են բերել
քո շուկաները: 14 Թորգոմայ տնից մար-
դիկ է, որ ձիերով, հեծեալներով ու ջո-
րիներով լցրել են քո շուկաները: 15 Ռո-
դոսցիները՝ քո վաճառականները, կղզի-
ներից բերուած փղոսկրեայ ժանիքներով
աշխուժացրել են քո առեւտուրը, եւ դու
երթեւեկողներին, իբրեւ գին, մարդ-
կանցով ես վճարել: 16 Շուկաներդ
ճոխացել են քո հակերով. Ափեկից է
եկել անուշ խունկը, Թարսիսից՝ երփ-
ներանգ նարօտը: Ռամոթն ու Կարքովն
են լցրել քո շուկաները: 17 Հրէաստանն
ու Իսրայէլի զաւակները՝ քո վաճառա-
կանները, ցորենով ու խնկով, դարչինով
ու ընտիր-ընտիր մեղրով, իւղով ու
խէժով են լցրել քո շուկաների հակերը:
18 Դամասկոսից են քո բազմահարուստ
վաճառականները, քո մեծ հարստու-
թիւնը, Քելբոնից՝ գինին, Միլիտէից՝
բուրդը: 19 Դանը եւ Յաւանը Մէոզէնից
են գինի բերել քեզ՝ քո շուկաների
համար, Ասէլից են բերել երկաթապատ
անիւներ՝ քո շուկաների համար: 20 Քո
դեղանացի վաճառականներն են ընտիր
կառքեր բերել քեզ՝ ջորիներով հանդերձ:
21 Արաբներն ու Կեդարի բոլոր
իշխանները (նրանք էլ վաճառականներ
քո ձեռքի տակ) ուղտեր, խոյեր ու
գառներ են վաճառել քո մէջ: 22 Սաբան
ու Ռեգման (նրանք էլ քո վաճառա-
կանները) անուշահոտ իւղեր, թան-
կարժէք քարեր ու ոսկի են բերել քո
շուկաները: 23 Խառանը, Քանանն ու
Դադանը (նոյնպէս քո վաճառական-
ները), Սաբան, Ասուրն ու Քալմանը (քո
վաճառականները) 24 Մաքլիմի ու
Գալիմի վրայով քեզ ապրանքներ են
բերել՝ կարմիր ու կապուտակ պարեգօտ,
երփներանգ նարօտներ, պարաններով
հակաւորուած ընտիր գանձեր: 25 Քո
ուժեղ նոճէ նաւերով (նաւեր վաճա-
ռականութեան), որոնցով կատարւում էր
քո առեւտուրը, քո հակերի հարստու-
թեամբ լցուեցիր դու, սաստիկ ծան-
րացար:
26 Ծովի սրտում, յորդ ջրերում են
քշել քեզ նաւավարներդ, եւ հարաւային
հողմն է խորտակել քեզ ծովի սրտում:
27 Բայց քո հարստութիւնն էլ, քո
զօրքերն էլ, քո ու քո խառնիճաղանջ
ամբոխների վաստակն էլ, քո նա-
ւավարներն ու նաւապետներն էլ, քո ու
քո խառնիճաղանջ ամբոխների
խորհրդականներն էլ, քո մէջ եղած
բոլոր պատերազմող մարդիկ էլ, քո մէջ
բոլոր հաւաքուածներն էլ քո կործան-
ման օրն ընկնելու են ծովի խորքը:
28 Քո աղաղակի ձայնից նաւավարներդ
սաստիկ սարսափելու են եւ իջնելու են
իրենց նաւերից: 29 Քո բոլոր նաւա-
վարները, թիավար քո առաջապահները
ծովափին են կանգնելու 30 եւ աղա-
ղակելու են քեզ, կամ փոխելու են իրենց
ձայները եւ գուժելու են դառնօրէն, հող
են ածելու իրենց գլխին ու մոխիրների
մէջ են թաւալուելու, 31 ածիլելու
ճաղատացնելու են գլուխները, քուրձեր
են հագնելու եւ դառնացած սրտով լաց
են լինելու քեզ վրայ: 32 Նրանց
որդիները քեզ վրայ դառնօրէն կոծելու

են, ողբ են ասելու ու ողբ են երգելու՝
ասելով. 'Ո՞վ էր, որ Տիւրոսի պէս
լռեց-հանգաւ ծովում': 33 Ինչքա՞ն քեզ
վաստակ գտար այդ ծովից, լիացրիր
ազգերին քո հարստութեամբ, փառաւո-
րեցիր երկրի բոլոր թագաւորներին քո
շուկաների հակերով: 34 Իսկ հիմա
ջարդուեցիր այդ ծովում, ջրերի խոր-
քերում ընկան խորտակուեցին քո
շուկաներն ու քո մէջ բոլոր հաւա-
քուածները. ընկան քո բոլոր նաւա-
վարները. 35 տխրեցին քեզ համար
կղզիների բոլոր բնակիչները, եւ նրանց
թագաւորները խիստ զարհուրեցին,
երեսներն արցունքով ողողեցին քեզ
համար. 36 ազգերի վաճառականները
սարսափահար սուլելու են ի տես քեզ:
Կորստեան մատնուեցիր ու այլեւս
գոյութիւն չես ունենալու յաւիտեան"»,
- ասում է Տէր Աստուած:

Տիւրոսի իշխանի դէմ

28 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛
Տիւրոսի իշխանին. "Այսպէս է ասում
Տէր Աստուած. հակառակ նրան, որ
գոռոզացաւ քո սիրտն, ու ասացիր՝
'Աստուած եմ ես, աստուածային
բնակութեամբ ապրեցի ծովի սրտում',
սակայն մարդ ես դու, ոչ թէ Աստուած,
թէեւ սիրտդ ներկայացնում ես իբրեւ
Աստծու սիրտ: 3 Մի՞թէ դու աւելի
իմաստուն ես, քան Դանիէլը, կամ
մի՞թէ իմաստուններ են քեզ խրատել
իրենց հանճարով: 4 Մի՞թէ քո
իմաստութեամբ կամ խելքով ես քեզ
համար հարստութիւն դիզել եւ իբրեւ
գանձ ստացել ոսկի ու արծաթ: 5 Կամ
քո իմաստութեան եւ առեւտրիդ շա-
տութեա՞մբ ես մեծացրել հարստու-
թիւնդ, ու սիրտդ քո հարստութեա՞մբ է
փառաւորուել":
6 Ուստի այսպէս է ասում Տէր
Աստուածը. "Քանի որ քո սիրտը որպէս
Աստծու սիրտ ես ներկայացրել, 7 դրա
համար ահա ես օտար դաժան ազգեր եմ
բերելու քո դէմ, եւ նրանք իրենց թուրն
են իջեցնելու քեզ վրայ, քո գեղեցիկ
իմաստութեան վրայ եւ քո
գեղեցկութիւնը կորստեան են մատ-
նելու, 8 կործանելու են քեզ, ու
մահացու խոցուածների մահով ես
մեռնելու ծովի սրտում: 9 Մի՞թէ արիւ-
նարբուներիդ առաջ ասելու եւ կրկնելու
ես՝ Աստուած եմ ես: Բայց մարդ ես դու,
ոչ թէ Աստուած: 10 Եւ քո սպա-
նուածների ու անթլփատ մեռելների
առաջ ես մեռնելու օտարների ձեռքով,
որովհետեւ ես խօսեցի"», - ասում է
Ամենակալ Տէրը:

ՏԻՐՈՍԻ ԻՇԽԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

11 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
«Մարդո՛ւ որդի, ո՛ղբ ասա Տիւրոսի
իշխանի վրայ եւ ասա՛ նրան. 12 "Այս-
պէս է ասում Տէր Աստուած. դու
կատարեալ իմաստութեան նմուշ ես
եղել, գեղեցկութեան պսակ, 13 եղել ես
Աստծու դրախտի գգուանքներում, քեզ
վրայ կապել բոլոր թանկարժէք քարերը՝
սարդիոն ու տպազիոն, զմրուխտ ու
կարկեհան, շափիւղայ ու յասպիս,
արծաթ ու ոսկի, սուտակ, ակաթ, մե-
ղեսիկ, ոսկեքար, բիւրեղ, եղնգաքար.
ոսկով ես լցրել քո մէջ գտնուած գան-
ձարաններն ու շտեմարանները: 14 Այն
օրից, երբ ստեղծուել ես ու զգես-
տաւորուել՝ քերովբէին օծելիս, քեզ
Աստծու սուրբ լեռանն եմ յանձնել, եւ
հրէ քարերի մէջ ես յայտնուել: 15 Ա-
նարատ ես եղել քո օրերում, ստեղ-
ծուելուցդ ի վեր, մինչեւ որ
անիրաւութիւններ են երեւան եկել քո
մէջ: 16 Քո առեւտրի շատութիւնից՝
անիրաւութիւններով ես լցրել շտե-
մարաններդ. մեղանչել ու խփուել ես:
Վարսաւոր քերովբէն իջեցրել է քեզ
Աստծու լեռից, հրէ քարերի միջից:
17 Քո գեղեցկութեան մէջ՝ սիրտդ գո-
ռոզացել է, իմաստութիւնդ ապա-
կանուել՝ քո գեղեցկութեամբ հանդերձ:
Քո մեղքերի շատութեան համար գետին
եմ գցել քեզ, խայտառակել քեզ
թագաւորների առաջ: 18 Քո մեղքերի
շատութեամբ ու առեւտրիդ խարդա-
խութեամբ պղծել ես սրբավայրերդ:
Կրակ եմ հանելու քո միջից, նա էլ
ճարակելու է քեզ. քո երկրում, բոլոր
ականատեսների առաջ մոխիր եմ
դարձնելու քեզ: 19 Ու բոլոր նրանք, որ

*քեզ ճանաչեն ազգերի մէջ, տրտմելու են
քեզ համար, որովհետեւ կորստեան ես
մատնուել ու այլեւս յաւիտեան
գոյութիւն չես ունենալու՝»:*

20 *Սիդոնի դէմ: Տէրը խօսեց ինձ
հետ ու ասաց. 21 «Մարդո՛ւ որդի,
երեսդ ուղղի՛ր Սիդոնի կողմը, մարգա-
րէացի՛ր նրա մասին ու ասա՛. 22 "Այս-
պէս է ասում Ամենակալ Տէրը. ահա ես
քո դէմ եմ, Սիդո՛ն: Փառաւորուելու եմ
քո մէջ: Պիտի իմանաս, որ ես եմ Տէրը,
երբ քո դատաստանն անեմ: Եւ ես
սրբանալու եմ քո մէջ: 23 Քեզ վրայ
համաճարակ եմ ուղարկելու, քո հրա-
պարակներին՝ արիւն: Ու սպանուածներ
են ընկնելու քո մէջ, սրերով են
շրջապատելու քեզ: Եւ պէտք է իմանան,
որ ես եմ Տէրը: 24 Իսրայէլի տանն
այլեւս դառն տատասկներ չեն լինելու,
ոչ էլ ցաւոտ փշեր այն բոլոր մարդկանց
կողմից, որոնք չորս կողմից անարգեցին
նրանց: Եւ պէտք է իմանան, որ ես եմ
Ամենակալ Տէրը"»:*

ԻՍՐԱՅԷԼԸ ՊԻՏԻ ԱՊՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԷՋ

25 *Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
«Հաւաքելու եմ Իսրայէլի տունն այն
ազգերի միջից, ուր նրանք ցրուել էին:
Սրբանալու եմ նրանց մէջ, ազգերի ու
ժողովուրդների առաջ: Նրանք բնա-
կուելու են իրենց երկրում, որ տուել եմ
իմ ծառայ Յակոբին: Այնտեղ ապրելու
են ապահով. 26 տներ են շինելու եւ
այգիներ տնկելու, ապրելու են ապահով,
երբ դատաստան տեսնեմ այն բոլորի
հետ, որոնք չորս կողմից անարգեցին
նրանց: Եւ պիտի իմանան, որ ես եմ
նրանց Տէր Աստուածը, նրանց հայրերի
Աստուածը»:*

Եգիպտոսի ու եգիպտացիների արքայ Փարաւոնի մասին

29 *Տասներորդ տարում, տասներորդ
ամսին, ամսուայ առաջին օրը, Տէրը
խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ
որդի, երեսդ ուղղի՛ր եգիպտացիների
արքայ Փարաւոնի դէմ, մարգարէացի՛ր
նրա վրայ, ամբողջ Եգիպտոսի վրայ,
խօսի՛ր ու ասա՛. 3 "Այսպէս է ասում
Տէր Աստուած. ահա ես քո դէմ եմ,
եգիպտացիների արքա՛յ Փարաւոն, ո՛վ
վիշապ մեծ, որ նստում ես գետերի
միջեւ, որ ասում ես՝ 'Իմն են այս գե-
տերը, ես եմ ստեղծել սրանք': 4 Սանձ եմ
դնելու քո ծնօտներին, այդ գետի ձկները
կպցնելու եմ թեւերիդ, միջից քո այդ
գետերը դուրս եմ բերելու*†*, եւ գետիդ
բոլոր ձկները կպչելու են թեւերիդ: 5 Ա-
րագօրէն ոչնչացնելու եմ քեզ, նաեւ
գետիդ բոլոր ձկները: Դու կ'ընկնես
դաշտի երեսին ու չես հաւաքուի, այլեւս
չես ժողովուի, քանի որ քեզ որպէս
կերակուր եմ տուել երկրի գազաններին
ու երկնքի թռչուններին: 6 Եգիպտոսի
բոլոր բնակիչները պիտի իմանան, որ ես
եմ Տէրը, քանի որ Իսրայէլի այդ տան
համար եղեգնեայ գաւազան եղար, 7 ու
երբ քեզ վրայ յենւում էին, նրանց ձեռքն
էիր խրւում, իսկ երբ մէկը ձեռքը քեզ էր
մեկնում ու յենւում էր քեզ վրայ, այն
ժամանակ ջարդւում էիր ու կոտրում
նրանց բոլորի մէջքը"»:*

*8 Դրա համար այսպէս է ասում Տէր
Աստուած. "Ահա ես քո վրայ սուր եմ
բերելու, քո միջից կորցնելու եմ մարդ ու
անասուն, 9 եւ Եգիպտացիների այդ
երկիրը լինելու է կորստեան մատնուած
ու աւերակ: Պէտք է իմանաս, որ ես եմ
Տէրը: Այն բանի համար, որ ասում էիր՝
'Այս գետերն իմն են, ես եմ սրանք
ստեղծել', 10 դրա համար էլ ահա ես
կանգնած եմ քո եւ քո բոլոր գետերի
դէմ, եւ Եգիպտացիների այդ երկիրն
աւերածութեան, սրի ու կորստի եմ
մատնելու Մակդոդից ու Սուէէնից մին-
չեւ Եթովպացիների սահմանները: 11 Ե-
գիպտոսի վրայով մարդու ոտք չի
անցնելու, ոչ էլ անասունի կճղակ է
գնալու նրա վրայով, քառասուն տարի
մարդ չի ապրելու այնտեղ: 12 Այդ
երկիրը կորստեան եմ մատնելու աւերակ
երկրների մէջ, նրա քաղաքներն էլ՝
աւերուած քաղաքների մէջ: Ու դրանք
ապականութեան մէջ են լինելու
քառասուն տարի: Եգիպտացիներին
ցրելու եմ ազգերի մէջ, նրանց սփռելու
եմ երկրներով մէկ":*

*13 Այսպէս է ասում Տէր Աստուած.
"Քառասուն տարի յետոյ հաւաքելու եմ
եգիպտացիներին այն ազգերի միջից,
ուր ցրուած էին նրանք, 14 վե-
րադարձնելու եմ եգիպտացիներին
գերութիւնից ու բնակեցնելու եմ նրանց
Պաթուրէսի երկրում, այն երկրում,
որտեղից գերի էին քշուել: Եւ այնտեղ
գոյութիւն է ունենալու մէկ
իշխանութիւն, որ լինելու է բոլոր
իշխանութիւններից աւելի խեղճացած:
15 Այն լինելու է ամենանկունն ու չի
իշխելու ազգերի վրայ: Նրանց սակա-
ւաթիւ եմ դարձնելու, որպէսզի ազգերի
մէջ այլեւս չբազմանան: 16 Իսրայէլի
տան ապաւէնը չեն լինելու այլեւս՝
յիշելով իրենց անօրէնութիւնը, ու չեն
գնալու իրենց սրտի ուզածով: Պէտք է
իմանան, որ ես եմ Ամենակալ Տէրը"»:*

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐ ԱՐՔԱՆ ՏԻՐԵԼՈՒ Է ԵԳԻՊՏՈՍԻՆ

17 *Դարձեալ Եգիպտոսի մասին:
Քսաներեթներորդ տարում, առաջին
ամսին, առաջին օրը, Տէրը խօսեց ինձ
հետ ու ասաց. 18 «Մարդո՛ւ որդի,
բաբելացիների Նաբուքոդոնոսոր ար-
քան չարչարեց իր զօրքերին եւ ուղար-
կեց Տիւրոսի վրայ: Բոլոր գլուխները
ճաղատացել էին, բոլոր ուսերը՝ քեր-
ծուել: Տիւրոսի դէմ ինձ մատուցած
ծառայութեան համար ինքն էլ, զօրքերն
էլ վարձ չեն ստացել»: 19 Ուստի
այսպէս է ասում Տէր Աստուած. «Ահա
ես բաբելացիների Նաբուքոդոնոսոր
արքային եմ տալու Եգիպտացիների
երկիրը, եւ նա գերեվարելու է նրա
մարդկանց բազմութիւնը, աւարի է
մատնելու երկիրը, կողոպտելու նրա
ունեցուածքը. եւ դա լինելու է նրա
զօրքի վարձը: 20 Տիւրոսում ինձ
մատուցած ծառայութեան փոխարէն
նրան եմ տալու Եգիպտացիների երկիրը,
տալու եմ այն ամենի դիմաց, ինչ արել է
ինձ համար»: 21 Այսպէս է ասում Տէր
Աստուած. «Այն օրը, երբ ամբողջ
Իսրայէլի տան եղջիւրը բարձրանայ, քո
բերանն եմ դնելու իմ խօսքը: Ու պէտք
է իմանան, որ ես եմ Տէրը»:*

ՏԷՐԸ ՊԱՏԺԵԼՈՒ Է ԵԳԻՊՏՈՍԻՆ

30 *Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր ու
ասա՛. "Այսպէս է ասում Ամենակալ Տէր
Աստուած. 3 վա՛յ, վա՛յ ձեր օրին, քանզի
մօտ է Տիրոջ օրը՝ միգապատ օրը. հասել
է ժողովուրդների վախճանը: 4 Սուր է
գալու եգիպտացիների վրայ, ու
խռովութիւն է լինելու Եթովպիայի
կողմերում: Վիրաւորներ են ընկնելու
Եգիպտոսում, եւ գերեվարելու են նրա
բազմութիւնները, տապալելու՝ նրա
հիմքերը: 5 Պարսիկները, կրետացիները,
լիւդիացիներն ու լիբէացիները, բոլոր
խառնիճաղանջ ամբոխները, նաեւ
նրանք, որ այնտեղ իմ ուխտի զա-
ւակներից են, – սրով են կոտորուելու":
6 Այսպէս է ասում Ամենակալ Տէրը.
"Խորտակուելու են եգիպտացիների
պահապանները, իջնելու է նրանց
ամբարտաւան զօրութիւնը, Մակդոդից
մինչեւ Սուէէն սրով են ընկնելու
այնտեղ", – ասում է Ամենակալ Տէրը: –
7 "Եւ աւերուելու է երկրիրը
կործանուած երկրների մէջ, նրա
քաղաքներն էլ՝ աւերուած քաղաքների
մէջ: 8 Ու պէտք է իմանան, որ եմ եմ
Տէրը, երբ կրակ գցեմ Եգիպտացիների
երկրի վրայ: Խորտակուելու են նրա
բոլոր օգնականները: 9 Այն օրը
տագնապով հրեշտակներ են ելնելու իմ
կողմից՝ ոչնչացնելու Եթովպացիների
սին յոյսերը: Խռովութիւն է լինելու
նրանց մէջ՝ Եգիպտացիների վախճանի
օրը, քանի որ ահա այն հասել է":*

*10 Այսպէս է ասում Տէր Աստուած.
"Եգիպտացիների զօրքերը կորստեան եմ
մատնելու բաբելացիների արքայ
Նաբուքոդոնոսորի ձեռքով, ե՛ւ իրեն, ե՛ւ
իր ազգն էլ՝ հետը: 11 Հեթանոս
ազգերից չարագործներ են ուղար-
կուելու երկիրը կործանելու համար եւ
իջեցնելու են իրենց սրերը Եգիպտոսի
վրայ. երկիրը լցուելու է սպանուած-
ներով: 12 Նրանց գետերի տեղը չոր
անապատ եմ դարձնելու, երկիրը
մատնելու եմ չարագործների ձեռքը,
ամբողջ երկիրը այլազգիների ձեռքով
մատնելու եմ կորստի, որովհետեւ դա
ես՝ Տէրս եմ խօսել":*

†Եբրայերէն՝ *Քեզ գետերիդ միջից եմ հա-
նելու:*

13 Այսպէս է ասում Տէր Աստուած.
"Կործանելու եմ գարշելի կուռքերը,
վերջ եմ տալու մեմփացիների միջից
մեծամեծներին, Եգիպտացիների երկրից
էլ՝ իշխաններին. նրանք այլեւս չեն
լինի: Սարսափ եմ գցելու Եգիպ-
տացիների երկրի վրայ: 14 Կորստի եմ
մատնելու Պաթուրէս երկիրը, կրակ եմ
գցելու Տայեանի երկիրը, վրէժխնդիր եմ
լինելու դիոսպոլացիներից: 15 Զայրոյթս
թափելու եմ եգիպտացիների Սայիս
ամրոցի վրայ ու կորստի եմ մատնելու
մեմփացիների զօրագնդերը: 16 Կրակի
եմ մատնելու Եգիպտոսը. խռովուելով
խռովուելու է Սայիսը: Դիոսպո-
լացիների քաղաքը ճեղքուածք է տալու,
եւ ջրեր են բխելու: 17 Արեգ քաղաքի ու
Բուբաստի երիտասարդները սրով են
ընկնելու, իսկ նրանց կանայք գերի են
քշուելու: 18 Յերեկը խաւարելու է
Տափնասում, երբ այնտեղ փշրեմ ես
եգիպտացիների իշխանական մականը:
Եւ այն ժամանակ կորչելու են նրա
ամբարտաւան զօրքերը. մէգն է
ծածկելու այն: Նրա դուստրերն էլ գերի
են քշուելու: 19 Ես իմ դատաստանն եմ
անելու Եգիպտոսում, ու պէտք է
իմանան, որ ես եմ Տէրը"»:

ՏԷՐԸ ԶՕՐԱՑՆՈՒՄ Է
ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ԱՐՔԱՅԻ ԲԱԶՈՒԿԸ ՈՒԺԸ

20 Դարձեալ Եգիպտոսի մասին:
Տասնմէկերորդ տարում, առաջին ամ-
սին, ամսուայ եօթներորդ օրը, Տէրը
խօսեց ինձ հետ ու ասաց. 21 «Մարդո՛ւ
որդի, ես խորտակելու եմ եգիպտա-
ցիների Փարաւոն արքայի բազուկները,
եւ բուժուելու համար այլեւս չեն
փաթաթուելու դրանք, ո՛չ դեղ են
դնելու դրանց վրայ եւ ո՛չ էլ զօրանալու
են ձեռքը սուր առնելու համար»:
22 Ուստի այսպէս է ասում Տէր Աս-
տուած. «Ահա ես եգիպտացիների Փա-
րաւոն արքայի դէմ եմ. խորտակելու եմ
նրա հզօր, ջղոտ ու պիրկ բազուկները,
գցելու եմ սուրը նրա ձեռքից: 23 Ցրելու
եմ եգիպտացիներին ազգերի մէջ,
սփռելու եմ նրանց աշխարհով մէկ:
24 Զօրացնելու եմ բաբելացիների
արքայի բազուկները, եւ իմ սուրն էլ
տալու եմ նրա ձեռքը: Եւ նա այն
քաշելու է Եգիպտացիների երկրի վրայ,
աւարի է մատնելու այն եւ կողոպտելու:
25 Զօրացնելու եմ բաբելացիների
արքայի բազուկները, իսկ Փարաւոնի
բազուկները թուլանալու են: Պէտք է
իմանան, որ ես եմ Տէրը, երբ սուրս տամ
բաբելացիների արքայի ձեռքն ու բաց
թողնեմ նրան Եգիպտացիների երկրի
վրայ: 26 Ցրելու եմ եգիպտացիներին
ազգերի մէջ, սփռելու եմ նրանց
աշխարհով մէկ: Ու պէտք է իմանան
բոլոր եգիպտացիները, որ ես եմ Տէրը»:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՔԱՆ
ՀԱՄԵՄԱՏԻՈՒՄ Է ՄԱՅՐԻ ԾԱՌԻ ՀԵՏ

31 Տասնմէկերորդ տարում, երրորդ
ամսին, ամսուայ առաջին օրը, Տէրը
խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ
որդի, ասա՛ եգիպտացիների արքայ
Փարաւոնին ու նրա զօրքին. "Քո
ամբարտաւանութեան մէջ՝ քեզ ո՞ւմ
հետ ես համեմատում: 3 Ահա Ասուրը
նման է մի նոճու Լիբանանում՝ գեղեցիկ
ճիւղերով ու թաւ ոստերով, բարձրուղէշ.
ամպերի մէջ էր նրա կատարը: 4 Ջուրը
սնել էր նրան, անդունդները՝
բարձրացրել, նրա գետերը բերել էին իր
տունկերի շուրջը. նա իր ստուերախիտ
ճիւղերը տարածել էր ամբողջ դաշտով
մէկ: 5 Դրա համար էլ նա բարձրացաւ
աւելի վեր, քան դաշտի բոլոր ծառերը.
տարածուել էին նրա ոստերը,
բարձրացել՝ ճիւղերը շնորհիւ առատ
ջրերի: 6 Ու երբ նա տարածուել էր,
ճիւղերին բնակութիւն էին հաստատել
երկնքի բոլոր թռչունները, իսկ նրա
ոստերի տակ ձագեր հանել դաշտի
բոլոր գազանները. նրա հովանու ներքոյ
բնակութիւն էին հաստատել բազմաթիւ
ազգեր: 7 Ճիւղերի երկարութեան շնոր-
հիւ նա գեղեցկացել էր իր վեհութեամբ,
որովհետեւ նրա արմատներն էլ առատ
ջրերի մէջ էին: 8 Աստծու դրախտի
եղեւնին, կաղնին ու նոճին չէին հա-
ւասարւում նրա ճիւղերին, մայրիներն ու
սօսիները չէին նմանւում նրա ոստերին:
9 Աստծու դրախտի ոչ մի ծառ
գեղեցկութեամբ չէր նմանւում նրան,
որովհետեւ նա ստուերախիտ ոստեր

ունէր: Աստծու բերկրալից դրախտի
բոլոր ծառերը նախանձում էին նրան"»:
10 Ուստի այսպէս է ասում Տէր
Աստուած. «Այն բանի համար, որ խիստ
շատ բարձրացար, ճիւղերի ծայրերը
հասան ամպերին, ես տեսայ ամ-
բարտաւանութիւնդ, – 11 քեզ մատնեցի
ժողովուրդների իշխանի ձեռքը, եւ
նրանք կորստեան մատնեցին: 12 Դուրս
հանեցին նրան, ժողովուրդների միջից
ոչնչացրին օտար չարագործները, տա-
պալեցին լեռների վրայ: Նրա ոստերն
ընկան բոլոր ձորերը, տապալուեց նրա
բունը ամբողջ երկրի դաշտերով մէկ,
նրա հովանուց իջան բոլոր ազգերն ու
ցեղերը եւ գետնին հաւասարեցրին
նրան: 13 Ու երբ այն տապալուեց,
հանգիստ առան նրա վրայ երկնքի
բոլոր թռչունները, նրա բնի վրայ տեղ
գտան բոլոր վայրի գազանները, 14 որ-
պէսզի այլեւս իրենց մեծութեամբ
չյոխորտան ջրասուն բոլոր ծառերը, ոչ
էլ իրենց կատարներն արձակեն մինչեւ
ամպերը, չմնան իրենց գոռոզութեան
մէջ, ինչպէս նա, որ ջուր էր խմում:
Բոլորն էլ մահուան մատնուեցին երկրի
խորքերում, խորխորատ իջած մարդ-
կանց որդիների մօտ»: 15 Այսպէս է
ասում Տէր Աստուած. «Այն օրը, երբ նա
գերեզման իջաւ, անդունդները նրա
վրայ սգացին: Խափանեցի նրա գետերը,
խցանեցի յորդ ջրերը, ու տխրեց նրա
վրայ Լիբանանը. դաշտի բոլոր ծառերը
նրա պատճառով լքուած մնացին:
16 Նրա կործանման ձայնից ցնցուեցին
ազգերը, երբ գերեզման իջածների հետ
նրան էլ իջեցրի գուբը: Եւ սան-
դարամետում մխիթարեցին նրան բերկ-
րալից դրախտի բոլոր ծառերը, Լիբա-
նանի ընտիր ու գեղեցիկ ջրարբի
ծառերը: 17 Նրանք գերեզման իջան
հետը՝ սրից սպանուածներով հանդերձ:
Իսկ նրա զաւակները, որ բնակութիւն
էին հաստատել նրա հովանու ներքոյ,
զրկուելով իրենց կեանքից՝ բնաջնջուե-
ցին:
18 Ո՞ւմ հետ ես համեմատում քեզ քո
զօրութեամբ, փառքով ու մեծութեամբ՝
բերկրալից ծառերի մէջ: Իջի՛ր, ցա՛ծ
իջիր երկրի խորքը՝ քո դրախտի
բերկրալից ծառերի եւ սրով սպա-
նուածների հետ՝ անթլփատ ննջեցեալ-
ների մէջ: Այսպէս են լինելու նաեւ
Փարաւոնն ու նրա ամբողջ զօրքը», –
ասում է Տէր Աստուածը:

ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԸ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ Է
ԿՈԿՈՐԴԻԼՈՍԻ ՀԵՏ

32 Տասներկուերորդ տարում, տաս-
ներկուերորդ ամսին, ամսի առաջին օրը,
Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մար-
դո՛ւ որդի, ողբա՛ եգիպտացիների
արքայ Փարաւոնի վրայ ու ասա՛ նրան.
"Առիւծացար ազգերի մէջ
եւ վիշապի նմանուեցիր ծովում:
Մարտնչում էիր քո գետերի դէմ,
սմքակիր տակ պղտորում էիր ջրերը,
ոտնակոխ էիր անում գետերը":
3 Այսպէս է ասում Տէր Աստուած.
"Քեզ շրջապատելու եմ իմ թա-
կարդներով
ու հաւաքուած բազմաթիւ զօրքերով:
Քեզ դուրս եմ հանելու իմ կարթով,
գետնահար փռելու եմ քեզ երկրի
երեսին,
4 քեզնով լցուելու են դաշտերը:
Քեզ վրայ եմ իջեցնելու երկնքի բոլոր
թռչուններին,
քեզնով յագեցնելու՝ երկրի բոլոր
գազաններին:
5 Մարմինդ գցելու եմ լեռների վրայ
ու ձորերը լցնելու եմ քո արիւնով:
6 Երկիրը ողողուելու է քո աղտե-
ղութեամբ՝
լեռների վրայ քո զօրքերի բազ-
մութեան պատճառով:
Ձորերը լցուելու են քեզանով:
7 Երբ քո լոյսը հանգչի, երկինքը
քողով եմ ծածկելու,
խաւարեցնելու եմ նրա աստղերը,
արեգակը ծածկելու եմ ամպերով,
եւ լուսինն իր լոյսը չի տալու:
8 Քո վերեւում խաւարեցնելու եմ
բոլոր լուսատուները
եւ քեզ վրայ խաւար եմ բերելու",
– ասում է Տէր Աստուած: –
9 "Բազմաթիւ ժողովուրդների սիրտն
եմ զայրացնելու քո դէմ այն ժամանակ,
երբ ազգերի հետ քեզ գերութիւնից
դուրս բերեմ դէպի այն երկիրը,
որ դու չգիտես:

10 Քո պատճառով տրտմելու են բազմաթիւ ազգեր,
իսկ նրանց թագաւորները սաստիկ զարհուրելու են,
երբ սուրս թռչի նրանց դիմաց,
ու քո կործանման օրից նրանք սպասելու են իրենց կործանման»:
11 Ահա այսպէս է ասում Տէր Աստուած.
12 «Բաբելացիների արքայի սուրը հսկաների սրով հանդերձ գալու է քեզ վրայ,
եւ խորտակելու եմ քո զօրութիւնը:
Ազգերի բոլոր չարագործները գալու են ջնջելու եգիպտացիների ամբարտաւանութիւնը.
խորտակուելու է նրանց ամբողջ զօրութիւնը:
13 Ոչնչացնելու եմ նրա բոլոր կենդանիներին առատ ջրերի մէջ,
եւ դրանք չի պղտորելու մարդու ոտքը,
ոչ էլ կոխոտելու է անասունի կճղակը:
14 Ապա կանգ են առնելու նրա ջրերը,
իսկ գետերը իւղի պէս են հոսելու»,
– ասում է Ամենակալ Տէրը: –
15 «Երբ Եգիպտոսը կորստեան մատնեմ,
երկիրն էլ է ամբողջովին աւերուելու:
Երբ այնտեղից ցրեմ բոլոր բնակիչներին,
պիտի իմանան, որ ես եմ Տէր Աստուածը:
16 Ողբ է սա, եւ ողբալու են նրան.
ազգերի դուստրերն են ողբալու նրան,
ողբալու են Եգիպտոսի ու նրա ամբողջ զօրութեան վրայ»,
– ասում է Տէր Աստուած:
17 Ողբ Փարաւոնի ու Եգիպտոսի վրայ:
Տասներկուերորդ տարում, առաջին ամսին, ամսուայ տասնհինգերորդ օրը, Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
18 «Մարդո՛ւ որդի, ողբա՛ Եգիպտոսի զօրութեան վրայ:
Ազգերը նրա դուստրերին,
երկրի խորքում մեռածներին
19 վայելչութեան ջրերից իջեցնելու են խորխորատ իջածների մօտ:
20 Իջի՛ր, ննջի՛ր անթլփատների հետ, սպանուածների մէջ:
Սրով ընկնելու են նրա հետ,
եւ վերջ է գտնելու նրա ամբողջ զօրութիւնը:
21 Եւ հսկաներն ասելու են քեզ.
«Ե՛կ, իջի՛ր անդունդների խորքերը.
ումի՞ց էիր դու լաւ:
Իջի՛ր եւ հանգրուանի՛ր անթլփատների հետ,
սրից սպանուածների մէջ»:
22 Այնտեղ են Ասուրը եւ նրա ողջ ամբոխը,
բոլորն էլ սպանուածներ:
23 Այնտեղ՝ խորխորատի խորքերում է նրանց գերեզման տրուել,
ու բոլորը հաւաքուել են նրա շիրիմների շուրջը:
Սրից էին ընկել բոլոր սպանուածներն էլ,
որոնք անդունդների խորքերը դարձրին իրենց գերեզման:
Բոլորը հաւաքուել են նրա շիրիմների շուրջը:
Սրից էին ընկել բոլոր սպանուածներն էլ,
որոնք իրենց սարսափն էին տարածել ողջերի աշխարհի վրայ:
24 Այնտեղ էր Եղամը,
նրա ողջ զօրքը նրա գերեզմանի շուրջն էր:
Երկրի խորքերն անթլփատ են իջել բոլոր սրով սպանուածներն էլ,
որոնք իրենց սարսափն էին տարածել ողջերի աշխարհի վրայ:
Նրանք իրենց տանջանքներն ստացել են խորխորատ իջածների հետ,
սպանուածների մէջ:
25 Այնտեղ, նրա գերեզմանի շուրջն են գցուել Մոսոքն ու Թոբէլը
26 ու նրանց ամբողջ զօրքը՝ նրա բոլոր սպանուածները
(բոլորն էլ անթլփատներ, սրով սպանուած ընկածներ),
որոնք իրենց սարսաափն էին տարածել ողջերի աշխարհի վրայ:
27 Նրանք ննջել են յաւիտենապէս ընկած հսկաների հետ,
որոնք գերեզման էին իջել իրենց պատերազմական զէնքերով.

նրանց անիրաւութիւններն էլ դրուել են նրանց ոսկորների վրայ,
որովհետեւ զարհուրեցրել էին հսկաներին իրենց կենդանութեան ժամանակ:
28 Դու էլ ես անթլփատների մէջ գլորուել
ու ննջելու ես սրով սպանուածների մէջ:
29 Այնտեղ են Եդոմը,
նրա բոլոր թագաւորներն ու իշխանները,
որոնք իրենց զօրութեամբ հանդերձ ընկան սրի հարուածներից:
Նրանք էլ են ննջել խորխորատ իջած սպանուածների հետ:
30 Այնտեղ են հիւսիսի բոլոր իշխանները
(բոլորն էլ՝ Ասորեստանի զօրավարներ),
որոնք, սպանուած, գերեզման են իջել իրենց ահաւոր զօրութեամբ հանդերձ:
Նրանք եւս ամօթահար եւ անթլփատ ննջել են սրով սպանուածների հետ,
կրել իրենց տանջանքները խորխորատ իջածների հետ:
31 Փարաւոնը տեսնելու է նրանց եւ մխիթարուելու է
ի տես իր այն ողջ զօրքի, որ սպանուել է սրից.
այդպէս էլ կը լինի փարաւոնի եւ ամբողջ զօրքի հետ,
– ասում է Տէր Աստուած, –
32 քանզի նա իր սարսափն էր տարածել ողջերի աշխարհի վրայ:
Եւ փարաւոնը, նրա ողջ բազմութիւնն էլ իր հետ,
ննջելու է սրով սպանուած անթլփատների մէջ»,
– ասում է Տէր Աստուած:

ԱՍՏՈՒԱԾ ԵԶԵԿԻԷԼԻՆ ՊԱՀԱԿ Է ԿԱՐԳՈՒՄ
(Եզեկ. 3. 16-21)

Յակոբի որդիներին

33 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.
2 «Մարդո՛ւ որդի, խօսի՛ր քո ժողովրդի զաւակների հետ ու ասա՛ նրանց. «Մի երկիր կայ, որի վրայ սուր եմ բերելու: Եւ այդ երկրի ժողովուրդն իր միջից մի մարդ է ընտրելու, նրան պահակ կարգելու: 3 Սա տեսնելու է երկրի վրայ հասած սուրը, փող է փչելու եւ ազդարարելու է ժողովրդին: 4 Ժողովուրդը լաւ է լսելու փողի ձայնը, բայց չի զգուշանալու: Եւ սուրը հասնելու, բռնելու է նրան. թող նրա արիւնն իր գլխին լինի, 5 քանի որ փողի ձայնը լսել էր, բայց չէր զգուշացել: Թող նրա արիւնն իր գլխին լինի: Իսկ նա, ով զգուշացրել էր, փրկելու է ինքն իրեն: 6 Իսկ եթէ պահակը տեսնի վրայ հասած սուրը, բայց փողով նշան չտայ, ժողովուրդն էլ չզգուշանայ, – վրայ հասած սուրը բռնելու է նրանցից մէկին: Սա իր անօրէնութեան պատճառով է բռնուած լինելու. բայց սրա արիւնը պահակից եմ պահանջելու»:
7 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի. քեզ պահակ եմ կարգել Իսրայէլի այդ տան վրայ, եւ դու պիտի լսես իմ բերանի խօսքերը, իմ կողմից պիտի զգուշացնես նրանց: 8 Երբ ես մեղաւորին ասեմ՝ հաստատ կը մեռնես, իսկ դու չխօսես ու չզգուշացնես ամբարշտին իր ճանապարհից, ինքը՝ անօրէնն իր անօրէնութեան մէջ կը մեռնի, բայց նրա արիւնը քեզնից կը պահանջեմ: 9 Իսկ եթէ նախօրօք ասես ամբարշտին իր ճանապարհի մասին, որպէսզի յետ դառնայ դրանից, բայց նա յետ չկանգնի իր ճանապարհից, – ինքն իր ամբարշտութեան մէջ է մեռնելու, իսկ դու քո հոգին փրկելու ես»:

ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ՈՒԶՈՒՄ ԱՄԲԱՐՇՏԻ ՄԱՀԸ

10 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛ Իսրայէլի այդ տանը. «Այսպէս խօսեցէ՛ք ու ասացէ՛ք՝ մեր մոլորութիւններն ու անօրէնութիւնները մեր մէջ են, եւ մենք դրանց մէջ մաշւում ենք, ինչպէ՞ս ազատուենք»: 11 Ասա՛ նրանց. «Ամենակալ Տէրն ասում է՝ կենդանի եմ ես եւ ամբարշտի մահը չեմ ուզում, այլ՝ նրա յետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը: Դարձէ՛ք, յե՛տ դարձէք ձեր չար ճանապարհից, ինչո՞ւ մեռնէք, ո՛վ տունդ Իսրայէլի»:
12 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛ քո ժողովրդի զաւակներին. «Արդարի արդարութիւնը նրան չի փրկելու այն

օրը, երբ մոլորուի, անօրէնի անօրէնու-
թիւնն էլ նրան չի չարչարելու այն օրը,
երբ յետ կանգնի իր բոլոր անօրէնու-
թիւններից: Արդարը չի կարողանալու
ազատուել իր մեղքերի օրը: 13 *Երբ ես*
արդարին ասեմ՝ ապրելով ապրելու ես,
իսկ նա էլ, յոյսը դնելով իր արդա-
րութեան վրայ, անօրէնութիւն գործի, –
նրա բոլոր արդար գործերը չեն յի-
շուելու, այլ իր կատարած անօրէ-
նութեան համար մեռնելու է: 14 *Իսկ երբ*
ես ամբարշտին ասեմ՝ հաստատ
մեռնելու ես, բայց նա յետ կանգնի իր
մեղքերից, իրաւ դատաստան եւ արդար
գործ կատարի, 15 *պարտապանին յետ*
տայ գրաւը, վերադարձնի յափշտա-
կածը, ընթանայ կեանքի պատուիրան-
ներով, անիրաւութիւններ չգործի, –
հաստատ ապրելու է ու չի մեռնելու: 16
Նրա գործած բոլոր մեղքերը չեն
յիշուելու, որովհետեւ իրաւ դատաստան
ու արդար գործ է կատարել, դրա
համար էլ ապրելու է»:

17 *Քո ժողովրդի զաւակներն ասում*
են՝ Տիրոջ ճանապարհն ուղիղ չէ: Բայց
իրենց ճանապարհն է, որ ուղիղ չէ:
18 *Երբ արդարն իր արդար ճանա-*
պարհից շեղուի եւ անիրաւութիւններ
կատարի, դրանցից էլ մեռնելու է:
19 *Իսկ երբ մեղաւորը յետ կանգնի իր*
անօրէնութիւնից, իրաւ դատաստան ու
արդար գործ կատարի, դրանցով էլ
ապրելու է: 20 *Ա՞յս բանի համար է, որ*
ասում էք՝ Տիրոջ ճանապարհն ուղիղ չէ:
Ամէն մէկիդ ըստ ձեր բռնած
ճանապարհի եմ դատելու, ո՛վ տունդ
Իսրայէլի»:

ԵԶԵԿԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԱՒԵՐՈՒԱԾ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՍԻՆ

21 *Մեր գերութեան տասներկուերորդ*
տարում, տասներորդ ամսին, ամսուայ
հինգերորդ օրը, Երուսաղէմից ազա-
տուած մէկն ինձ մօտ եկաւ ու ասաց.
«Քաղաքը գրաւուած է»: 22 *Եւ երե-*
կոյեան, մինչեւ նրա գալը, Տիրոջ ձեռքը
ինձ վրայ էր. նա բաց արեց բերանս,
մինչ դեռ առաւօտ չէր եղել: Երբ
բերանս բաց արեցի, այլեւս չէի կարող
լուռ մնալ:

23 *Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.*
24 *«Մարդո՛ւ որդի, Իսրայէլի երկրի*
աւերակների բնակիչներն ասում են.
“Աբրահամը մէկ հոգի էր ու երկիրը
գրաւեց, իսկ հիմա մենք շատ ենք,
երկիրը մեզ է ժառանգութիւն տրուել,
չժառանգե՞նք այն”: 25 *Ուստի ասա՛*
նրանց. “Այսպէս է ասում Ամենակալ
Տէրը. քանի որ արիւնով էք կերակրւում,
աչքներդ գցում էք կուռքերին, արիւն
էք թափում, – դեռ ուզում էք երկի՞րն
էլ ժառանգել: 26 *Դա ձեզ համար սուր*
կը լինի, որովհետեւ պղծութիւններ էք
կատարել, իւրաքանչիւրն իր ընկերոջ
կնոջն է պղծել: Եւ դեռ ուզում էք
ժառանգե՞լ երկիրը”: 27 *Ուստի ասա՛*
նրանց. “Այսպէս է ասում Տէր Ա-
տուած. ես՝ Տէրս, կենդանի եմ, ովքեր որ
աւերակներում են՝ սրով են ընկնելու,
ովքեր որ դաշտերի երեսին են՝ անա-
պատի գազաններին կեր են տրուելու,
իսկ ովքեր որ պարիսպների տակ են
կամ քարայրերում՝ համաճարակից են
կոտորուելու: 28 *Երկիրն աւերակ եմ*
դարձնելու եւ կործանելու, եւ կորչելու է
նրա զօրութիւնը, որով նա յոխորտում
էր: Աւերուելու են Իսրայէլի լեռները, եւ
ոչ ոք չի լինելու, որ գնայ դրանց
վրայով: 29 *Ու պէտք է իմանան, որ ես*
եմ Տէրը: Նրանց երկիրն աւերակ եմ
դարձնելու իրենց կատարած բոլոր
գարշելի գործերի համար”»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԼՍՈՒՄ Է ՄԱՐԳԱՐԷԻ ԽՕՍՔԸ, ԲԱՅՑ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ

30 *«Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի. քո*
ժողովրդի զաւակները շրջում են,
քրթմնջում քո հասցէին պարիսպների
մօտ, պալատների դռներին եւ մէկը
միւսին, եղբայրն իր եղբօրն ասում է.
“Հաւաքուենք գնանք եւ լսենք Տիրոջ
կողմից ասուած պատգամները”: 31 *Հի-*
մա գալիս են քեզ մօտ, ինչպէս ժողո-
վուրդն է հաւաքւում. եւ իմ ժողովուրդը
նստելու է քո առաջ, լսելու է քո
խօսքերը, սակայն չի կատարելու
դրանք, որովհետեւ նրանց բերաններում
ստութիւնն է, եւ նրանց սրտերն իրենց
պղծութեանն են հետեւում: 32 *Դու*
նրանց համար կը լինես ինչպէս

քաղցրաբարբառ յօրինուած երգի ձայն.
կը լսեն խօսքերդ, բայց չեն կատարի: 33
Իսկ երբ օրը գայ, ու ասեն՝ “Ահա հասել
է”, կ՚իմանան, որ մարգարէ կար իրենց
մէջ»:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՀՈՎԻՒՆԵՐԻ ԴԷՄ

Իսրայէլի հովիւներին

34 *Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց.*
2 *«Մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր Իս-*
րայէլի այդ հովիւների վրայ, մար-
գարէացի՛ր ու ասա՛ այդ հովիւներին.
“Այսպէս է ասում Տէր Աստուած. ո՛վ
հովիւներդ Իսրայէլի, մի՞թէ հովիւներն
իրենք իրենց են արածացնում. չէ՞
որ հովիւները հօտեր են արածացնում:
3 *Ահա կաթը խմում էք, բուրդը*
հագնում, պարարտներին մորթում:
Բայց իմ հօտերը չէք արածացնում.
4 *տկարացածին չէք զօրացրել, հիւան-*
դացածին չէք բժշկել, չարչարուածին
չէք փայփայել, վիրաւորուածին չէք
փաթաթել, մոլորուածին յետ չէք
դարձրել, կորածին չէք փնտռել,
դիմացկունին տանջել էք: 5 *Իմ հօտերը*
ցրուել են, քանի որ հովիւներ չունէին,
եւ անապատի գազաններին կեր են
դարձել: 6 *Ցրուել են ու մոլորուել իմ*
հօտերը բոլոր լեռներով մէկ, բոլոր
բարձր բլուրներով մէկ. երկրի երեսով
մէկ ցրուել են իմ հօտերը: Եւ ոչ ոք չի
փնտռել, ոչ էլ մէկը յետ է դարձրել
նրանց: 7 *Ուստի, հովիւնե՛ր, լսեցէ՛ք*
Տիրոջ պատգամները. 8 *“Կենդանի եմ ես,*
– ասում է Ամենակալ Տէր Աստուած, –
այն բանի համար, որ իմ հօտերը աւարի
մատնուեցին, իմ հօտերն անապատի
գազաններին կեր դարձան, որովհետեւ
հովիւներ չկային, հովիւներն իմ հօտերը
չփնտռեցին, հովիւներն իրենք իրենց
բռեցին–պարարտացրին եւ իմ հօտերը
չարածացրին, – 9 դրա համար էլ
լսեցէ՛ք, հովիւնե՛ր, Տիրոջ պատ-
գամները: 10 *Այսպէս է ասում Տէր*
Աստուած. “Ահաւասիկ ես այդ հովիւ-
ներին դէմ եմ ու հօտերս վերցնելու եմ
դրանց ձեռքից, արգելելու եմ դրանց, որ
արածացնեն հօտերս, եւ այլեւս դրանք
չեն արածացնելու: Փրկելու եմ հօտերս
դրանց ձեռքից. այլեւս նրանք կերակուր
չեն լինելու դրանց համար”:

ՏԷՐԸ ՓՆՏՌՈՒՄ Է ԻՐ ՀՕՏԵՐԸ

11 *Այսպէս է ասում Տէր Աստուած.*
“Ահա ես ինքս եմ փնտռելու հօտերս,
այցելելու եմ դրանց: 12 *Ինչպէս որ*
հովիւն է իր հօտը փնտռում այն օրը,
երբ մէգ ու մառախուղ է լինում իր
ցրուած հօտերի վրայ, այնպէս էլ ես եմ
փնտռելու հօտերս, հաւաքելու եմ
դրանք այն բոլոր տեղերից, ուր ցրուած
էին մէգ ու մառախուղի օրը: 13 *Դրանք*
դուրս եմ բերելու ժողովուրդների միջից,
դրանք հաւաքելու եմ երկրներից,
դրանք տանելու եմ իրենց երկիրը,
14 *դրանք արածացնելու եմ Իսրայէլի*
լեռների վրայ, ձորերում ու երկրի բոլոր
բնակավայրերում: Բերկրալից արօտա-
վայրերում եմ արածացնելու դրանք,
Իսրայէլի բարձր լեռների վրայ: Այնտեղ
էլ լինելու են դրանց մակաղելու
տեղերը. այնտեղ են դաղար առնելու եւ
հանգստանալու բարութեան ու գրգան-
քի մէջ: Փարթամ արօտավայրերում են
արածելու դրանք, Իսրայէլի լեռների
վրայ: 15 *Հօտերս ես եմ արածացնելու,*
ես եմ հանգիստ տալու դրանց, ու պիտի
իմանան, որ ես եմ Տէրը”: 16 *Այսպէս է*
ասում Տէր Աստուած. “Կորածին
փնտռելու եմ, մոլորուածին՝ յետ դարձ-
նելու, վիրաւորուածին՝ փաթաթելու,
հիւծուածին՝ զօրացնելու. գէրին ու
հզօրին՝ պահելու: Բոլորին արածաց-
նելու եմ արդարութեամբ”:

ՏԷՐԸ ՊԻՏԻ ԴԱՏԻ ԻՐ ՈՉԽԱՐՆԵՐԻՆ

17 *“Դուք էլ, ի՛մ հօտեր, – այսպէս է*
ասում ձեզ Տէր Աստուած, – ահա ես
դատելու եմ ձեզ ոչխար առ ոչխար, խոյ
առ խոյ: 18 *Մի՞թէ ձեզ բաւարար չէին*
առաջներում ձեր արածած գեղեցիկ
արօտավայրերը, որ ձեզանից մնացած
կերը ոտքի տակ տրորում էիք. զուլալ
ջուրը խմում էիք ու մնացածը ոտքի
տակ պղտորում: 19 *Իսկ իմ հօտերը ձեր*
ոտնակոխ արածն էին ճարակում, ձեր
կճղակներից պղտորած ջրերը խմում:
20 *Ուստի այսպէս է ասում Տէր*
Աստուած. ահա ես դատ եմ անելու գէր

եւ նիհար ոչխարների միջեւ 21 Նրա համար, որ ձեր կողերով եւ ուսերով հարուածում էիք, ձեր եղջիւրներով պոզահարում ու չարչարում բոլոր թոյլերին, քշում էիք նրանց, մինչեւ որ հօտերս ցիրուցան եղան: 22 Ես փրկելու եմ հօտերս, ու այլեւս յափշտակութիւն չի լինելու: 23 Դատելու եմ խոյ առ խոյ ու նրանց վրայ մի հովիւ եմ կարգելու՝ իմ ծառայ Դաւթին, եւ նա հովուելու է նրանց: Նա է նրանց համար հովիւ լինելու, իսկ ես՝ Տէրս, լինելու եմ նրանց Աստուածը, 24 եւ իմ ծառայ Դաւիթն էլ՝ իշխան նրանց մէջ: Սա ես՝ Տէրս խօսեցի: 25 Դաւթի հետ խաղաղութեան դաշինք եմ կնքելու. չար գազաններին վերացնելու եմ երկրից: Եւ իմ հօտերը ապահով բնակուելու են անապատում եւ ննջելու են անտառներում: 26 Իմ լերան շուրջը նրանց օրհնութիւն եմ տալու, ձեզ էլ անձրեւ եմ տալու. եւ անձրեւներն օրհնաբեր են լինելու: 27 Ագարակի ծառերն իրենց պտուղներն են տալու, իսկ հողը տալու է իր զօրութիւնը: Իրենց երկրներում նրանք խաղաղ ու ապահով են բնակուելու: Եւ պէտք է իմանան, որ ես եմ Տէրը, երբ խորտակեմ նրանց վզի լուծը: Փրկելու եմ նրանց իրենց ստրկացնողների ձեռքից, 28 ու այլեւս նրանք աւար չեն դառնալու ժողովուրդների մէջ, այլեւս երկրի գազանները նրանց չեն ուտելու: Ապրելու են ապահով: Ոչ ոք նրանց չի սարսափեցնելու: 29 Նրանց համար խաղաղութեան տունկ եմ բարձրացնելու, ու երկրի վրայ նրանք սովից չեն հիւծուելու այլեւս եւ ոչ էլ նախատինք են կրելու ժողովուրդներից: 30 Եւ պէտք է իմանան, որ ես՝ Տէր Աստուածս, իրենց հետ եմ, եւ նրանք՝ իրենք էլ՝ Իսրայէլի տունը, իմ ժողովուրդն է, – ասում է Տէր Աստուածը: – 31 Դուք էլ, ի՛մ հօտեր, իմ արօտի՛ ոչխարներ, մարդիկ էք, ես էլ՝ ձեր Տէր Աստուած՝»», – ասում է Տէր Աստուած:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍԷԻՐԻ ԴԷՄ

Եդոմայեցիների մասին

35 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, դարձրո՛ւ երեսդ դէպի այդ Սէիր լեռը, մարգարէացի՛ր դրա վրայ ու ասա՛ դրան. 3 "Այսպէս է ասում Տէր Աստուած. ահա ես քեզ դէմ եմ, ո՛վ լեռդ Սէիր: Ձեռքս գցելու եմ քեզ վրայ, անապատի եմ վերածելու քեզ, աւերուելու ես դու, 4 քաղաքներդ էլ աւեր եմ դարձնելու: Դու աւերակ ես լինելու ու պիտի իմանաս, որ ես եմ Տէրը: 5 Այն բանի համար, որ յաւէտ թշնամի եղար ու դարանակալը, նստում էիր նենգութեամբ Իսրայէլի տանը թշնամիների սրի միջոցով, երբ նա նեղութեան մէջ էր, եւ երբ անիրաւութիւնը հասել էր իր վախճանին, – 6 ահա դրա համար էլ վկայ եմ ես, – ասում է Տէր Աստուած. քանի որ դու արեամբ մեղանչեցիր, արիւնն էլ հալածելու է քեզ. այն արիւնը, որ դու ատեցիր, հէնց նոյն արիւնն էլ հալածելու է քեզ: 7 Աւերակի ու անապատի եմ վերածելու Սէիր լեռդ, դրա վրայից վերացնելու եմ մարդ ու անասուն: 8 Լեռներդ լցնելու եմ քո սպանուածներով, նաեւ բլուրներդ ու ձորերդ, եւ սրից սպանուածները ընկնելու են քո բոլոր դաշտերում: 9 Քեզ յաւիտենապէս աւերակ եմ դարձնելու, ու քո քաղաքներն այլեւս չեն վերաշինուելու: Պիտի իմանաս, որ ես եմ Տէրը: 10 Այն բանի համար, որ ասել ես, թէ երկու ազգերն ու երկու երկրներն էլ իմն են լինելու, ես ժառանգելու եմ դրանք (թէեւ Տէրն էլ այնտեղ էր), – 11 դրա համար վկայ եմ ես, – ասում է Տէր Աստուած, – եւ քեզ հետ վարուելու եմ ըստ քո թշնամութեան, ըստ քո նախանձի, որով ատել ես նրանց: Եւ դու կը ճանաչես ինձ, երբ դատեմ քեզ: 12 Պիտի իմանաս, որ ես եմ Տէրը: Լսել եմ քո հայհոյանքի ձայնը, որ ասում էիր՝ 'Իսրայէլի աւերակ լեռները մեզ կերակուր են տրուած': 13 Քո բերանով մեծաբանել ես իմ հասցէին, վայրախօսել իմ մասին, եւ ես լսել եմ դրանք: 14 Այսպէս է ասում Տէր Աստուած. երբ արար աշխարհ ուրախութեան մէջ լինի՝ քեզ աւերակ եմ դարձնելու 15 այն բանի համար, որ ոտնահարեցիր ժառանգութիւնն Իսրայէլի տան, որ կործանուեց: 16 Նոյնն էլ քեզ եմ անելու, եւ դու

աւերակ ես դառնալու, ո՛վ լեռդ Սէիր, ամբողջ Եդոմն էլ ոչնչանալու է: Պէտք է իմանաս, որ ես եմ նրանց Տէր Աստուածը՝»»:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵԴՈՄԱՑԻՆԵՐԻ ԴԷՄ

Իսրայէլի լեռների մասին

36 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր լեռների վրայ եւ ասա՛ Իսրայէլի լեռներին. 2 "Լսեցէ՛ք Տիրոջ պատգամները: Այսպէս է ասում Տէր Աստուած. 'Այն բանի համար, որ թշնամին ձեր մասին ասել է՝ վա՛շ-վա՛շ, յաւերժական աւերակները մեզ ժառանգութիւն եղան, – 3 դրա համար մարգարէացի՛ր ու ասա՛՝ այսպէս է ասում Տէր Աստուած. 'Այն բանի համար, որ ձեր շուրջը գտնուող բոլոր ազգերի անարգանքին ենթարկուեցիք, տարագրուեցիք բազում ազգերի կողմից, ծաղրանքի առարկայ ու ազգերի նախատինք եղաք, – 4 դրա համար, ո՛վ Իսրայէլի լեռներ, լսեցէ՛ք Ամենակալ Տիրոջ պատգամները': Այսպէս է ասում Ամենակալ Տէր Աստուած լեռներին ու բլուրներին, անդունդներին ու ձորերին, կործանուած աւերակներին ու լքուած քաղաքներին, որոնք աւեր են դարձել ու ոտնակոխ եղել ձեր շուրջը գտնուող ժողովուրդների կողմից, – դրա համար այսպէս է ասում Տէր Աստուած. 5 'Զեմ կարող իմ զայրոյթի հրով չխօսել այլազգիների մասին, նաեւ բոլոր եդոմայեցիների մասին, որովհետեւ երկիրս տարագրեցին, ոտնահարելով անարգեցին մարդկանց, աւերի ու աւարի մատնեցին նրանց: 6 Ուստի մարգարէացի՛ր Իսրայէլի երկրի վրայ ու ասա՛ լեռներին ու բլուրներին, ձորերին ու դաշտերին. այսպէս է ասում Տէր Աստուած. "Ահա ես իմ նախանձով ու բարկութեամբ խօսեցի այն բանի համար, որ դուք հեթանոսներից նախատինք էք կրել": 7 Ուստի այսպէս է ասում Ամենակալ Տէրը. "Ձեռքս բարձրացնելու եմ ձեր շուրջը գտնուող ժողովուրդների վրայ. եւ նրանք իրենք իսկ կը կրեն իրենց անարգանքը": 8 Բայց, ո՛վ լեռներ Իսրայէլի, ձեր խաղողն ու բերքը Իսրայէլի իմ ժողովուրդն է ուտելու, որովհետեւ վերադառնալու ակնկալութիւն ունի: 9 Ահա ես նայելու եմ ձեզ. դուք մշակուելու եւ սերմանուելու էք: 10 Բազմացնելու եմ ձեր մէջ մարդ ու անասուն, առհասարակ Իսրայէլի տունն ամբողջովին: Վերաբնակեցուելու են քաղաքները, վերաշինուելու՝ աւերակները: 11 Բազմացնելու եմ ձեր մէջ մարդ ու անասուն. բազմանալու եւ աճելու են նրանք: Ձեզ էլ բնակեցնելու եմ, ինչպէս սկզբից կայիք. բարիք եմ անելու ձեզ, ինչպէս առաջ, ու պիտի իմանաք, որ ես եմ Տէրը: 12 Այնպէս պիտի անեմ, որ մարդիկ՝ Իսրայէլի իմ ժողովրդը, տիրեն ձեզ: Նրանք ժառանգելու են ձեզ. բնակավայր էք լինելու նրանց համար եւ այլեւս անզաւակ չէք մնալու նրանցից: 13 Այսպէս է ասում Տէր Աստուած. այն բանի համար, որ քեզ ասացի, թէ՝ դու մարդակեր երկիր ես ու քո ցեղից անզաւակ ես մնացել, – 14 դրա համար այլեւս մարդակեր չես լինելու եւ քո ցեղն այլեւս անզաւակ չես դարձնելու, – ասում է Տէր Աստուած: 15 Եւ ձեր մէջ այլեւս ազգերից անարգուածներ չեն լինելու, ժողովուրդներից այլեւս նախատինք չէք կրելու, ձեր ցեղն էլ այլեւս անզաւակ չի մնալու՝»», – ասում է Տէր Աստուած:

ՏԷՐԸ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ Է ԻՍՐԱՅԷԼԸ

16 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 17 «Մարդո՛ւ որդի, Իսրայէլի այդ տունը, որ բնակուել էր իր երկրում, իր ընթացքով, կուռքերով ու պղծութեամբ պղծել է այն. նրա ընթացքն իմ առաջն է եղել, ինչպէս դաշտանաւոր կնոջ պղծութիւնը: 18 Բարկութիւնս թափեցի դրանց վրայ այն արեան համար, որ թափել էին երկրում, նաեւ՝ որովհետեւ իրենց կուռքերով պղծել էին այն: 19 Նրանց ցրեցի ժողովուրդների մէջ, սփռեցի նրանց երկրից երկիր: Ըստ նրանց բռնած ճանապարհի ու մեղքերի էլ դատեցի նրանց: 20 Նրանք մտան հեթանոսների մէջ. ո՛ւր որ մտան, այնտեղ էլ պղծեցին իմ սուրբ անունը՝ ասելով նրանց, թէ Տիրոջ ժողովուրդն են

իրենք, բայց ելան նրա երկրից: 21 Ես խնայեցի նրանց յանուն իմ սուրբ անուան, որ պղծեցին Իսրայէլի տան զաւակները այն ազգերի մէջ, ուր մտան իրենք: 22 Ուստի ասա՛ Իսրայէլի այդ տանը. այսպէս է ասում Տէր Աստուած. "Ո՛վ տունդ Իսրայէլի, ձե՛զ համար չէ, որ անում եմ այս բոլորը, այլ՝ յանուն իմ սուրբ անուան, որ պղծեցիք այն ազգերի մէջ, ուր մտաք դուք: 23 Եւ ես մաքրելու եմ իմ մեծ անունը, որ պղծուել է այդ ազգերի մէջ, իմ անունը, որ դուք պղծեցիք դրանց մէջ: Եւ այդ ազգերը պիտի պիտի իմանան, որ ես եմ Տէրը, – ասում է Ամենակալ Տէրը, – երբ սրբագործուեմ ձեր մէջ, դրանց աչքի առաջ: 24 Ես վերցնելու եմ ձեզ հեթանոսների միջից, հաւաքելու եմ ձեզ բոլոր ազգերի միջից ու տանելու եմ ձեզ ձեր երկիրը: 25 Ձեզ վրայ սուրբ ջուր եմ ցանելու, եւ դուք մաքրուելու էք ձեր բոլոր պղծութիւններից. ձեր բոլոր կուռքերից մաքրելու եմ ձեզ: 26 Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մէջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղէն սիրտն ու մարմնեղէն սիրտ եմ տալու ձեզ. իմ հոգին եմ տալու ձեզ: 27 Եւ այնպէս եմ անելու, որ իմ արդարութեան ճանապարհով ընթանաք, օրէնքներս պահէք ու կատարէք դրանք, 28 բնակուէք այն երկրում, որ տուել էի ձեր հայրերին, ինձ համար ժողովուրդ լինէք, եւ ես ձեզ համար՝ Աստուած: 29 Ազատելու եմ ձեզ ձեր բոլոր պղծութիւններից: Դիմելու եմ ցորենին ու բազմացնելու եմ այն եւ ձեզ սովի չեմ մատնելու: 30 Շատացնելու եմ ծառերի պտուղներն ու հանդերի բերքը, որպէսզի ազգերի մէջ այլեւս սովի նախատինքը չստանաք: 31 Ցիշելու եմ ձեր չար ճանապարհներն ու ձեր ոչ բարի ընթացքը, եւ դուք զզուելու էք ձեր բոլոր անօրէնութիւններից ու գարշելի արարքներից: 32 Ձե՛զ համար չէ, որ անում եմ այս բաները, – ասում է Տէր Աստուած, – այլ թող յայտնի լինի ձեզ. ամաչեցէ՛ք ու քաշուեցէ՛ք ձեր բռնած ճանապարհից, ո՛վ տունդ Իսրայէլի: 33 Այսպէս է ասում Տէր Աստուած. "Այն օրը, երբ ձեզ մաքրեմ ձեր բոլոր անօրէնութիւններից, թէ՛ վերաշինուելու են աւերակները, թէ՛ վերաբնակեցնելու եմ քաղաքները, 34 եւ մշակուելու է աւերուած հողը, մինչ այն կործանուած էր անցորդների առաջ: 35 Եւ ասելու են. 'Աւերուած երկիրը բերկրալից պարտէզ է դարձել, աւերակ, կործանուած ու քանդուած քաղաքները, ամրացած, բազմել են': 36 Եւ ձեր շուրջը մնացած ժողովուրդները մէկընդմիշտ պիտի իմանան, որ ես եմ Տէրը, որ վերաշինել եմ աւերուած տեղերը, վերահաստատել կործանուածները: Ես՝ Տէրս ասացի սա, եւ անելու եմ: 37 Այսպէս է ասում Տէր Աստուած. "Ես դարձեալ այցի եմ գալու Իսրայէլի տանը՝ իրագործելու համար դրանք. բազմացնելու եմ մարդկանց՝ ոչխարների հօտերի պէս: 38 Եւ ինչպէս սուրբ ոչխարները, ինչպէս Երուսաղէմի ոչխարները՝ իրենց տօներին, այնպէս են լինելու աւերուած քաղաքները՝ հօտերով ու մարդկանցով լի: Ու պիտի իմանան, որ ես եմ Տէրը"»:

ՁՈՐԱՑԱԾ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՏԵՍԻԼՔԸ

Յարութեան մասին

37 Տիրոջ ձեռքը հանգչեց ինձ վրայ. բարձրացրեց ինձ Տիրոջ Հոգով, դրեց ինձ մի դաշտի մէջ, որ լի էր մարդկանց ոսկորներով: 2 Պտտեցրեց ինձ ոսկորների շուրջը: Դրանք շա՜տ-շատ էին դաշտի երեսին ու սաստիկ չորացած էին: 3 Նա ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, արդեօք կը կենդանանա՞ն այդ ոսկորները»: Ես ասացի. «Տէ՛ր Աստուած, այդ դու գիտես»: 4 Նա ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր այդ ոսկորների վրայ եւ ասա՛ դրանց. "Ձորացա՛ծ ոսկորներ, լսեցէ՛ք Տիրոջ պատգամները: 5 Այսպէս է ասում Տէր Աստուած այդ ոսկորներիդ. 'Ահա ես ձեզ վրայ կենդանի շունչ ե մ բերելու, 6 ձեզ ջղեր եմ տալու, ձեզ վրայ միս եմ բերելու եւ մաշկ քաշելու, իմ հոգին եմ տալու ձեզ, եւ դուք կենդանանալու էք: Եւ պիտի իմանաք, որ ես եմ Տէրը"»: 7 Ես մարգարէացայ, ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը: Ու երբ մարգարէացայ, մի ձայն լսեցի. յետոյ շարժում եղաւ. եւ ոսկորը ոսկորի հետ մօտեցաւ բոլոր յօդերին: 8 Տեսայ, որ ջղերն ու մսերը պատում էին ոսկորները, նրանց վրայ մաշկ էր ձգւում, բայց դրանց մէջ դեռ շունչ չկար: 9 Նա ասաց ինձ. «Մարգարէացի՛ր, մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր շնչի վրայ եւ ասա՛ շնչին. "Այսպէս է ասում Տէր Աստուած. 'Ե՛կ, ո՛վ շունչ, չորս հողմերից, ու փչի՛ր մեռելների վրայ, եւ նրանք կը կենդանանան'"»: 10 Ես մարգարէացայ, ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը: Ու շունչ մտաւ նրանց մէջ, եւ կենդանացան: Ելան կանգնեցին իրենց ոտքերի վրայ. դա բազմախուռն մի ժողովուրդ էր: 11 Եւ Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. «Մարդո՛ւ որդի, այդ ոսկորներն Իսրայէլի ամբողջ տունն են: Դրանք ասում են. "Չորացան մեր ոսկորները, մեր յոյսը կտրուեց, ու մենք մեռանք"»: 12 Ուստի մարգարէացի՛ր ու ասա՛ դրանց. "Այսպէս է ասում Տէր Աստուած. 'Ահա ես բաց եմ անելու ձեր գերեզմանները եւ հանելու եմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՛վ իմ ժողովուրդ: Տանելու եմ ձեզ Իսրայէլի երկիրը: 13 Ու պիտի իմանաք, որ ես եմ Տէրը, երբ բաց անեմ ձեր գերեզմաններն ու հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՛վ իմ ժողովուրդ: 14 Իմ հոգին տալու եմ ձեզ, եւ դուք կենդանանալու էք: Ձեզ դնելու եմ ձեր երկրում, եւ դուք պիտի իմանաք, որ ես եմ Տէրը: Ասացի ու կատարելու եմ'"», – ասում է Տէր Աստուած:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

15 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 16 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, քեզ համար մի գաւազա՛ն վերցրու եւ դրա վրայ գրի՛ր՝ Յուդային, Իսրայէլի զաւակներին ու նրանց մերձաւորներին: Մի երկրորդ գաւազան էլ կը վերցնես ու վրան կը գրես՝ Յովսէփին, մի գաւազանի վրայ էլ՝ Եփրեմին եւ Իսրայէլի բոլոր զաւակներին, որ աւելացել են նրանց վրայ: 17 Եւ կը կցես դրանք, իրար հետ կապելով, այնպէս որ լինեն մէկ գաւազան, որը քո ձեռքին կը լինի: 18 Եւ եթէ այնպէս լինի, որ քո ժողովրդի զաւակները քեզ ասեն. "Չե՞ս ասի մեզ, թէ այդ ի՞նչ է քո ձեռքին", – 19 կ'ասես նրանց, թէ այսպէս է ասում Տէր Աստուած. "Ահա ես վերցնելու եմ Յովսէփի այդ ազգին, որ Եփրեմի ձեռքին է, նաեւ Իսրայէլի ազգին ու նրա մերձաւորներին եւ նրանց տալու եմ Յուդայի ազգին: Եւ նրանք լինելու են, ու դա լինելու է մէկ գաւազան Յուդայի ձեռքին": 20 Իսկ այն գաւազանները, որոնց վրայ դու գրեցիր, լինելու են քո ձեռքին, նրանց աչքի առաջ: 21 Կ'ասես նրանց, թէ այսպէս է ասում Տէր Աստուած. "Ահա ես վերցնում եմ Իսրայէլի այդ տան զաւակներին ժողովուրդների միջից, որոնց մէջ մտել էին, հաւաքելու եմ նրանց իրենց շուրջը գտնուող բոլոր ազգերի միջից ու տանելու եմ Իսրայէլի երկիրը: 22 Նրանց դարձնելու եմ մէկ ազգ՝ իմ երկրում, Իսրայէլի լեռների վրայ. որպէս թագաւոր՝ մէկ իշխան է լինելու նրանց վրայ: Այլեւս երկու ազգերի բաժանուած չեն լինելու, ոչ էլ երկու թագաւորութիւնների են բաժանուելու, 23 որպէսզի այլեւս չպղծուեն իրենց կուռքերով, իրենց գարշելի արարքներով, իրենց ամէն տեսակ ամբարշտութիւններով: Նրանց փրկելու եմ իրենց բոլոր անօրէնութիւններից, որոնց մէջ մեղանչեցին, մաքրելու եմ նրանց, եւ նրանք ինձ համար ժողովուրդ են լինելու, եւ ես իրենց համար՝ Աստուած: 24 Եւ իմ ծառայ Դաւիթն իշխելու է նրանց վրայ, լինելու է մէկ հովիւ նրանց բոլորի համար, որպէսզի նրանք իմ պատուիրաններով ընթանան, օրէնքներս պահեն ու դրանք գործադրեն: 25 Ապրելու են իրենց երկրում, որ ես եմ տուել իմ ծառայ Յակոբին, եւ ուր բնակուել են նրանց հայրերը: Նրանք էլ են բնակուելու այնտեղ, նրանց որդիներն ու որդոց որդիներն էլ՝ յաւիտեան: Իմ ծառայ Դաւիթն էլ իշխելու է նրանց վրայ՝ յաւիտեան: 26 Խաղաղութեան դաշինք եմ կնքելու նրանց հետ, եւ այդ ուխտը յաւիտենական է լինելու նրանց հետ: Հաստատելու եմ նրանց ու բազմացնելու, սրբարանս էլ դնելու եմ նրանց մէջ՝ յաւիտենապէս: 27 Բնակութեանս տեղն էլ է իրենց մէջ լինելու. ես նրանց համար Աստուած եմ լինելու, եւ նրանք ինձ համար՝ ժողովուրդ: 28 Ազգերն էլ

պիտի իմանան, որ ես՝ Տէրս, կը մաքրեմ նրանց, երբ սրբարանս յաւիտենապէս լինի նրանց մէջ»:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԳՈԳԻ ԴԷՄ

Գոգի ու Մագոգի մասին

38 Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. 2 «Մարդո՛ւ որդի, երեսդ ուղղի՛ր Գոգի եւ Ռոսմեսոքի ու Թոբէլի իշխան Մագոգի երկրի դէմ եւ մարգարէացի՛ր նրա մասին, ասա՛ նրան. 3 "Այսպէս է ասում Տէր Աստուած. ահա ես քո դէմ եմ, ո՛վ իշխանդ Ռոսմեսոքի ու Թոբէլի, 4 ես պաշարելու եմ քեզ, սանձ եմ գցելու քո ծնօտներին, հաւաքելու եմ քեզ ու քո բոլոր զօրքերը, հեծեալներին ու երիվարները, բազում ազգերի զինավառուածներին ու սպառազինուածներին, վահանաւորներին, սաղաւարտաւորներին ու սուսերաւորներին, բոլորին միասին՝ 5 պարսիկներին ու եթովպացիներին, լիբիացիներին ու լիւդացիներին, բոլորին, որ սաղաւարտակիր են ու վահանաւոր, 6 Գոմերին ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են, Թորգոմայ տունը՝ հիւսիսի կողմերից, ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են, բազմաթիւ ազգերի էլ՝ քեզ հետ: 7 Պատրաստուի՛ր, պատրա՛ստ եղէք դու եւ քեզ մօտ հաւաքուած ամբողջ բազմութիւնը: Դու ինձ համար առաջապահ ես լինելու: 8 Պատրաստուի՛ր, որ բազում օրեր յետոյ, երբ գայ ժամանակների վախճանը, հասնէք սրից ապահով երկիրը՝ շատ ազգերի միջից հաւաքուելով Իսրայէլի երկրում, որ ամբողջովին աւերակ է դարձել: Նոյն ազգերի միջից հաւաքուելով՝ բոլորն էլ խաղաղութեամբ են ապրելու: 9 Ելնելու ես անձրեւի պէս, հասնելու ես ամպի պէս ու ծածկելու ես երկիրը: Դու եւ քո շուրջը գտնուող, քեզ հետ եղող բոլոր ազգերն էլ բազմամարդ էք լինելու": 10 Այսպէս է ասում Տէր Աստուած. "Այն օրը խոհեր են միտքդ գալու, 11 չար խորհուրդներ ես մտածելու եւ ասելու ես. 'Վեր կենամ ապահով երկրի վրայ, հասնեմ անհոգութեամբ հանգստացածների, խաղաղ ապրողների, բոլոր նրանց վրայ, ովքեր բնակւում են այն երկրում, որ ո՛չ պարիսպներ ունի, ո՛չ նիգեր, ո՛չ էլ դռներ. 12 աւար առնեմ, կողոպտեմ նրանց ունեցուածքը, ձեռքս գցեմ աւերուած ու վերաբնակեցուած երկրի, բազում ժողովուրդների միջից հաւաքուած ազգի, ունեցուածք ու դաստակերտ ձեռք բերածների, երկրի սրտում ապրողների վրայ': 13 Սաբան ու Դեդան, կարկեդոնացիների վաճառականները, բոլոր աւաններն ասելու են քեզ. "Արշաւում-գալիս ես աւար առնելու համար, ամբոխներ ես հաւաքել՝ արծաթն ու ոսկին վերցնելու, ունեցուածքները գերեվարելու, մեծ կողոպուտ կատարելու համար": 14 Ուստի մարգարէացի՛ր, մարդո՛ւ որդի, եւ ասա՛ Գոգին. "Այսպէս է ասում Տէր Աստուած. 'Մի՞թէ այն օրը, երբ Իսրայէլի իմ ժողովուրդը խաղաղութեամբ ապրելիս լինի, 15 դու զարթնելու ու գալու ես քո տեղից՝ հիւսիսի կողմերից, դու եւ քեզ հետ՝ երիվարներ հեծած բազմաթիւ ժողովուրդներ, բոլորն էլ բազում եւ բազում զօրագնդեր կազմած: 16 Դու վեր ես կենալու Իսրայէլի իմ ժողովրդի դէմ՝ ամպի նման ծածկելու երկիրը: Եւ դա լինելու է վերջին ժամանակներում. ես քեզ բերելու եմ իմ երկիրը, որ բոլոր ազգերն ինձ ճանաչեն, երբ սրբանամ քո մէջ, նրանց առաջ"':

ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻԺԸ ԳՈԳԻՆ

17 Այսպէս է ասում Տէր Աստուած Գոգին. "Դու նա ես, ում մասին խօսել եմ հին օրերից, իմ ծառաներից՝ Իսրայէլի իմ մարգարէներից մէկի միջոցով, այն օրերին ու տարիներին, երբ քեզ նրանց դէմ էի բերելու: 18 Եւ այն օրը, երբ Գոգը գայ Իսրայէլի երկրի դէմ, – ասում է Տէր Աստուած, – սաստկանալու է զայրոյթս, 19 նաեւ նախանձս՝ իմ բարկութեան հրով: Ասել եմ, որ այն օրն Իսրայէլի երկրի վրայ մեծ երկրաշարժ է լինելու. 20 ծովի ձկները, երկնքի թռչունները, դաշտերի գազանները, երկրի բոլոր սողունները, նաեւ երկրի երեսին գտնուող բոլոր մարդիկ դողալու են իմ դիմաց: Ճեղքուելու են լեռները, տապալուելու

են ձորերը, կործանուելու են երկրի բոլոր պարիսպները: 21 Սրի ահն եմ նրա վրայ բերելու, – ասում է Տէր Աստուած. – ամէն մարդու սուրն իր եղբօր դէմ է լինելու: 22 Նրա դատաստանն արիւնով ու համաճարակով եմ տեսնելու, անձրեւների հեղեղներով ու քարէ կարկուտներով. հուր ու ծծումբ եմ տեղալու նրա ու բոլոր նրանց վրայ, որ նրա հետ կը լինեն, բազմաթիւ ժողովուրդների վրայ, որ կը լինեն նրա հետ: 23 Այսպէս եմ ես ցոյց տալու իմ մեծութիւնը, սրբանալու եմ, փառաւորուելու ու ճանաչուելու ազգերի առաջ: Ու պիտի իմանան, որ ես եմ Տէրը"»:

ԳՈԳԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

39 «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր Գոգի մասին ու ասա՛. "Այսպէս է ասում Տէր Աստուած. ահա ես քեզ դէմ եմ, Գո՛գ, իշխա՛նդ Ռոսմեսոքի ու Թոբէլի: 2 Հաւաքելու եմ քեզ եւ առաջնորդելու եմ, հանելու եմ քեզ հիւսիսի կողմերից ու բերելու եմ քեզ Իսրայէլի լեռները: 3 Դէն եմ գցելու աղեղդ քո ձախ ձեռքից, նետերդ էլ՝ քո աջ ձեռքից: 4 Կործանելու եմ քեզ Իսրայէլի լեռների վրայ, եւ դու ու քո շուրջը բոլոր գտնուողներն էլ ընկնելու էք: Քեզ հետ եղած բոլոր ժողովուրդներն էլ կեր են դառնալու բոլոր գիշատիչ թռչուններին, կեր են դառնալու անապատի բոլոր գազաններին, 5 եւ դու ընկնելու ես դաշտերի երեսին, որովհետեւ ես եմ խօսել, – ասում է Տէր Աստուած: – 6 Հուր եմ ուղարկելու Մագոգի վրայ, եւ կղզիներն ապրելու են խաղաղութեամբ: Պիտի իմանան, որ ես եմ Տէր Աստուածը: 7 Անունս էլ սուրբ է ճանաչուելու Իսրայէլի իմ ժողովրդի մէջ ու այլեւս չի պղծուելու իմ սուրբ անունը: Երկրի բոլոր ազգերը պէտք է իմանան, որ ես եմ Իսրայէլի սուրբ Տէրը: 8 Ահա հասել է օրը, ու պիտի իմանաս, որ դա լինելու է, – ասում է Տէր Աստուած. – այս է այն օրը, որի մասին խօսել էի: 9 Եւ պիտի ելնեն Իսրայէլի քաղաքների բնակիչները, պիտի այրեն իրենց զէնքերը, նիզակներն ու ասպարները, նետերն ու աղեղների բեկորները, տէգերի բներն ու սուինների կոթերը. 10 եօթը տարի վառելու են իրենց կրակը. փայտ չեն վերցնելու դաշտերից, փայտ չեն կտրելու անտառներից, այլ զէնքերն են այրելու կրակի մէջ: Աւարելու են իրենց աւարառուներին, կողոպտելու՝ իրենց կողոպտիչներին", – ասում է Տէր Աստուած:

ԳՈԳԻ ԹԱՂՈՒՄԸ

11 «Այն օրը Գոգին ես Իսրայէլում տալու եմ գերեզմանի յայտնի տեղ, ծովի կողմերից եկածների շիրիմը. ձորափերի շուրջը գերեզման են շինելու ու այնտեղ թաղելու են Գոգին ու նրա բոլոր բազմութիւններին: Եւ շիրիմը կոչուելու է 'Գոգի հօտի գերեզման': 12 Իսրայէլի տան զաւակներն են թաղելու նրանց, որպէսզի մաքրուի երկիրը: 13 Եօթը ամիս շարունակ թաղելու են նրանց երկրի բոլոր ժողովուրդները: Եւ նրանց համար նշանաւոր է լինելու այն օրը, երբ ես փառաւորուելու եմ, – ասում է Տէր Աստուած: – 14 Եւ նոյն գործով զբաղուող մարդիկ հաւաքուելու են, որ գնան շրջեն երկրով մէկ, թաղեն երկրի երեսին մնացածներին եւ եօթը ամիս յետոյ երկիրը մաքրեն: 15 Ամէն ոք, ով անցնի երկրով, երբ մարդու ոսկոր տեսնի, նրա մօտ մի նշան է անելու, մինչեւ որ նրանք, ովքեր թաղում են, թաղեն այն 'Գոգի հօտի գերեզմանի' մէջ: 16 Քաղաքի անունն էլ Գերեզման է կոչուելու. ու երկիրը մաքրուելու է: 17 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, այսպէս է ասում Տէր Աստուած. "Ասա՛ բոլոր գիշատիչ թռչուններին, դաշտի բոլոր գազաններին. 'Հաւաքուեցէ՛ք ու եկէ՛ք, հաւաքուեցէ՛ք երկրի բոլո՛ր կողմերից իմ ողջակէզի համար, որ ես եմ զոհել, մեծ ողջակէզի, որ կատարում եմ Իսրայէլի լեռների վրայ, մի՛ս կերէք ու արի՛ւն խմեցէք: 18 Կերէ՛ք միսը հսկաների, խմեցէ՛ք արիւնը երկրի իշխանների, կերէ՛ք խոյերը, եզներն ու նոխազները, որովհետեւ բոլոր եզներն էլ պարարտ են: 19 Իմ զոհած ողջակէզների ճարպը կերէ՛ք յագենալու եւ արիւնը

խմեցէ՛ք հարբելո՛ւ աստիճան: 20 Դուք կը յագենաք իմ սեղանից, հեծեալներից, երիվարներից, հսկաներից ու պատերազմող բոլոր այրերից՝, - ասում է Տէր Աստուած:

21 *"Ես փառքս տալու եմ ձեզ, ու բոլոր ժողովուրդները տեսնելու են իմ արած դատաստանը, ձեռքս, որ դնելու եմ իրենց վրայ: 22 Եւ Իսրայէլի տան զաւակները պիտի իմանան, որ ես եմ իրենց Տէր Աստուածը՝ սկսած այն օրից եւ յետագայում":*

ՅԱԿՈԲԻ ՏՈՀՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ

23 *"Բոլոր ժողովուրդներն էլ պէտք է իմանան, որ իրենց մեղքերի պատճառով գերեվարուեցին Իսրայէլի տան զաւակները: Այն բանի համար, որ անարգեցին ինձ, ես երես դարձրի նրանցից, նրանց մատնեցի իրենց թշնամիների ձեռքը, ու բոլորն էլ սրից ընկան: 24 Նրանց պղծութիւնների ու անօրէնութիւնների համար արեցի այդ բոլորը եւ երես դարձրի նրանցից: 25 Դրա համար էլ այսպէս է ասում Տէր Աստուած. "Այժմ յետ եմ դարձնելու Յակոբի գերեվարուածներին, ողորմելու եմ Իսրայէլի տանը, նախանձախնդիր եմ լինելու իմ սուրբ անուան համար: 26 Եւ երբ նրանք անարգանք, անիրաւութիւն ստանան իրենց կատարած անիրաւութիւնների դիմաց, նրանց խաղաղութեամբ վերաբնակեցնելու եմ իրենց երկրում. ոչ ոք չի զարհուրեցնելու նրանց: 27 Երբ նրանց վերադարձնեմ ազգերի միջից, հաւաքեմ հեթանոսների երկրներից, սուրբ եմ լինելու նրանց մէջ, ազգերի առաջ: 28 Եւ պիտի իմանան, որ ես եմ իրենց Տէր Աստուածը, երբ նրանց յայտնուեմ ժողովուրդների մէջ: Նրանց հաւաքելու եմ իրենց երկիրն ու այլեւս ոչ մի տեղ նրանցից մարդ չեմ թողնելու: 29 Ոչ էլ այլեւս երես եմ դարձնելու նրանցից, որ զայրոյթս թափեմ Իսրայէլի տան վրայ"», - ասում է Տէր Աստուած:*

ԱՊԱԳԱՅ ՏԱՃԱՐԻ ՏԵՍԻԼՔԸ
(40.1 - 48.35)

Տաճարի շինուածքի մասին

40 *Մեր գերութեան քսանհինգերորդ տարում, առաջին ամսին, ամսուայ տասնմէկերորդ օրը, քաղաքի գրաւման տասնչորսերորդ տարում, Տիրոջ ձեռքը հանգչեց ինձ վրայ: 2 Աստուածային տեսիլքի մէջ նա ինձ բերեց Իսրայէլի երկիրն ու դրեց մի չափազանց բարձր լերան վրայ, իսկ դրա վրայ, դէմյանդիման կար քաղաքի պէս մի շինուածք: Ինձ ներս տարաւ: 3 Ահա մի մարդ կար այնտեղ, որի տեսքը փայլուն պղնձի նման էր: Ձեռքին շինարարի լար ու չափաձող ունէր: Ինքն էլ կանգնած էր դռան վրայ: 4 Մարդն ասաց ինձ. «Տեսար դու, մարդո՛ւ որդի: Արդ, աչքերովդ նայի՛ր, ականջներովդ լսի՛ր եւ մտքումդ հաստա՛տ պահիր այն ամէնը, ինչ քեզ ցոյց եմ տալու, որովհետեւ քեզ ցոյց տալու համար եմ այստեղ եկել: Եւ ինչ որ ինքդ տեսնես՝ ցոյց եմ տալու Իսրայէլի տանը»:*

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴՈՒՌԸ

5 *Ահա տաճարի շուրջը տեսայ փողոցներ†: Մարդու ձեռքին կար մի չափաձող վեց կանգուն ու մէկ թիզ երկարութեամբ: Պարսպի լայնութիւնը նա չափեց մէկ ձողի հաւասար, բարձրութիւնն էլ՝ մէկ ձողի հաւասար: 6 Մտաւ այն դռնից, որ արեւելք էր նայում եւ ունէր եօթը աստիճաններ: Չափեց դռան չորս կողմում եղած վեցական կամարների խուցերը. մէկ խուցի երկարութիւնը մէկ ձողի հաւասար էր, լայնութիւնն էլ՝ մէկ ձողի հաւասար. խուցերի միջի կամարները վեց կանգուն էին: 7 Երկրորդ խուցը լայնքով հաւասար էր մէկ ձողի, երկայնքով էլ՝ մէկ ձողի հաւասար. կամարը հինգ կանգուն էր: 8 Երրորդ խուցն էլ երկայնքով հաւասար էր մէկ ձողի, լայնքով էլ՝ հաւասար մէկ ձողի. դռան կամարը, գագաթի մօտ, ութ կանգուն էր: 9 Կամարներն էլ երկու*

†Եբրայերէն՝ *պարիսպներ:*

կանգուն էին, եւ դրանք ներքին դռան կամարներն էին: 10 Դռան խուցերն իրար դիմաց էին, երեքն այս կողմից, երեքը՝ միւս: Երեքն էլ մի չափի էին, կամարներն էլ՝ մի չափի՝ այս եւ միւս կողմերից: 11 Դռան մուտքի լայնութիւնը չափեց տասը կանգուն, երկարութիւնը՝ տասներեք կանգուն: 12 Դէմդիմաց գտնուող խուցերի թռիչքը մի կանգուն էր. մի կանգուն՝ այս կողմից, մի կանգուն՝ միւս կողմից: Երկու կողմերի խուցերը վեցական կանգուն էին: 13 Դուռը չափեց խուցի մի պատից միւսը. լայնքով քսանհինգ կանգուն էր. դուռը դռան վրայ էր: 14 Դռան կամարի թռիչքը, դռան շուրջը գտնուող խուցերի հետ, վաթսուն կանգուն էր: 15 Արտաքին գաւթից մինչեւ ներքին դուռը կամարի թռիչքը յիսուն կանգուն էր: 16 Նեղ լուսամուտներ կային ինչպէս խուցերի վրայ, այնպէս էլ գաւթի ներքին դռան կամարներին՝ չորս կողմը: Նաեւ լուսամուտներ միւս կամարներին՝ ներսից ու դրսից: Կամարների վերեւում, այս ու այն կողմերից, արմաւենիներ կային:

ԳԱՒԹԸ

17 *Նա ինձ ներքին գաւթը տարաւ: Ահա տեսայ դահլիճներ՝ սիւներով շրջանակուած, որոնք շինուած էին սրահների շուրջը: Շրջանակաձեւ սիւների միջեւ երեսուն դահլիճներ կային: 18 Սիւներն իրար դիմաց էին, դռների երկայնքով, 19 նաեւ շրջանակաձեւ սիւներ կային ներսում: Նա չափեց գաւթի լայնքը արտաքին դռնից մինչեւ ներքին դուռը, որ արեւելք էր նայում. հարիւր կանգուն էր:*

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՒՌԸ

20 *Նա ինձ հիւսիսային կողմը տարաւ: Ահա մի դուռ տեսայ, որ նայում էր արտաքին գաւթի հիւսիսին: Չափեց նրա երկարութիւնն ու լայնութիւնը, 21 նրա այս ու այն կողմը գտնուող խուցերը, կամարը, սիւնազարդ սրահներն ու արմաւենիները. եւ այն արեւելք նայող դռան չափն ունէր. յիսուն կանգուն երկարութիւնն էր, քսանհինգ կանգուն՝ լայնութիւնը: 22 Նրա լուսամուտները, կամարներն ու արմաւենիները արեւելք նայող դռան համեմատ էին: Եօթը աստիճաններ էին ելնում դէպի նա. ներսից կամարակապ էր: 23 Ներքին գաւթի դուռը նայում էր հիւսիսային դռանը, արեւելք նայող դռան նման: Նա գաւթը չափեց դռնից դուռ. հարիւր կանգուն էր:*

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԴՈՒՌԸ

24 *Նա ինձ հարաւային կողմը տարաւ: Ահա մի դուռ տեսայ, որ հարաւ էր նայում: Չափեց այն, նաեւ խուցերը, սիւնազարդ սրահները, կամարները, որոնք նոյն չափն ունէին, ինչպէս միւսները: 25 Նրա լուսամուտներն ու շրջանակաձեւ կամարներն էլ առաջինի լուսամուտների ու կամարների նման էին. երկարութիւնը՝ յիսուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսանհինգ կանգուն: 26 Դուռը եօթը աստիճաններ ունէր, ներսում՝ կամարներ եւ արմաւենիներ այս ու այն կողմերից՝ սիւնազարդ սրահների վրայ:*

ՆԵՐՍԻ ԳԱՒԹԸ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԴՈՒՌԸ

27 *Ներքին դուռը գաւթի դռան դիմաց էր եւ դէպի հարաւ էր նայում: Գաւթը նա դռնից դուռ չափեց. հարաւային կողմից լայնութիւնը հարիւր կանգուն էր: 28 Ինձ տարաւ ներքին դռան գաւթը, որ հարաւային կողմն էր նայում. չափեց հարաւ նայող դուռը, որ նոյն չափն ունէր. 29 նոյն չափին էին նաեւ խուցերը, կամարներն ու սիւնազարդ սրահները: Նրա շրջանակաձեւ լուսամուտների ու կամարների երկարութիւնը յիսուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսանհինգ: 30 Նրա շուրջը կամարներ էին, յիսուն կանգուն երկարութեամբ ու քսանհինգ կանգուն լայնութեամբ†: 31 Կամարներ կային եւ արտաքին գաւթում, կամարների վրայ՝ արմաւենիներ եւ սանդուղք եօթը աստիճաններով:*

†Եբրայերէն՝ համապատասխանաբար *հանհինգ* եւ *հինգ կանգուն:*

ՆԵՐՍԻ ԳԱՒԻԹԸ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴՈՒՌԸ

32 *Ինձ տարաւ դէպի այն դուռը, որ արեւելեան ճանապարհին էր նայում: Այն ունէր նախորդի չափը:* 33 *Չափեց նաեւ խուցերն ու կամարները, լուսամուտներն ու չորս կողմի կամարները. երկարութիւնը յիսուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսանհինգ:* 34 *Կամարներ կային ներսի գաւթում, արմաւենիներ՝ կամարների վրայ, այս ու այն կողմերից, նաեւ եօթը աստիճաններ:*

ՆԵՐՍԻ ԳԱՒԻԹԸ. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՒՌԸ

35 *Ինձ տարաւ դէպի հիւսիսային դուռը: Նոյն չափով չափեց* 36 *խուցերը, կամարներն ու սիւնազարդ սրահները, չորս կողմի լուսամուտներն ու կամարները. երկարութիւնը յիսուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսանհինգ:* 37 *Կամարներ կային արտաքին դռան վրայ, արմաւենիներ՝ կամարների վրայ, այս ու այն կողմից, նաեւ ութ աստիճաններ:*

ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՌԱՆ ՄՕՏ

38 *Նրա թէ՛ սրահները, թէ՛ նրանց մուտքերն ու կամարները երկրորդ դռան դիմաց էին, ուր ողջակէզներն էին լուանում:* 39 *Դռան կամարի տակ սեղաններ կային, երկուսն այս կողմում, երկուսը՝ միւս, որպէսզի դրանց վրայ մորթէին թէ՛ մեղքերի եւ թէ՛ յանցանքների համար զոհագործուող ողջակէզները:* 40 *Ողջակէզները լուանալու ջրի խողովակի հարաւային կողմը, այն դռան մուտքին, որ հիւսիս էր նայում, երկու սեղաններ կային, որ արեւելք էին նայում: Իսկ երկրորդ դռան հարաւային կողմից, դռան կամարների դիմաց, նոյնպէս երկու սեղաններ կային;* 41 *Արեւելեան կողմում՝ ութ սեղաններ, չորսը մի կողմում, չորսը՝ միւս, հարաւային դռան դիմաց: Այնտեղ՝ ողջակիզման ութ սեղանների վրայ էին մորթում զոհերն ու ողջակէզները:* 42 *Կոփածոյ քարերից էին ողջակիզման չորս սեղանները, կանգուն ու կէս երկարութեամբ, կանգուն ու կէս լայնութեամբ եւ կանգուն ու կէս*† *բարձրութեամբ, որպէսզի դրանց վրայ դնէին գործիքը, որով մորթում էին զոհերն ու ողջակէզները:* 43 *Ներսից, չորսբոլորը, թզաչափ քանդակուած եզրեր կային եւ սեղանի վրայ ծածկ՝ անձրեւից ու տապից պատսպարելու համար:* 44 *Ինձ տարաւ ներքին գաւիթը: Ներքին գաւիթն ունէր երկու պատշգամբ, մէկը հարաւային դռան կողմը, որ հիւսիս էր նայում եւ հարաւ դուրս բերում, միւսը՝ հիւսիսային դռան կողմը, որ հարաւ էր նայում ու հիւսիս դուրս բերում:* 45 *Նա ասաց ինձ. «Այս պատշգամբը, որ հարաւային կողմն է նայում, այն քահանաների համար է, որոնք տաճարի պահպանութիւնն են կատարում,* 46 *իսկ հիւսիս նայող պատշգամբը՝ այն քահանաների համար, որոնք խորանի ծառայութիւնն են կատարում: Դրանք Սադոկի որդիներն են, ղեւտացիների ցեղից, որոնք կարող են մօտենալ՝ Տիրոջը պաշտամունք մատուցելու»:*

ՆԵՐՍԻ ԳԱՒԻԹԸ ԵՒ ՏԱՃԱՐԸ

47 *Նա չափեց գաւիթը. երկարութիւնը հարիւր կանգուն էր, լայնութիւնն էլ՝ հարիւր կանգուն. այն քառակողմ էր: Տաճարի դիմաց խորանն էր:* 48 *Ինձ տարաւ դէպի տաճարի սիւնազարդ սրահը: Չափեց սիւնազարդ սրահի լայնութիւնը. մի կողմից հինգ կանգուն էր, միւս կողմից՝ հինգ կանգուն, մուտքի լայնութիւնը՝ տասնչորս կանգուն, դռան գլխի խոյակներն այս ու այն կողմերից՝ երեքական կանգուն:* 49 *Սիւնազարդ սրահի բարձրութիւնը քսան կանգուն էր, նրա լայնութիւնը՝ տասնմէկ: Տասը աստիճաններով էին բարձրանում այնտեղ. այս ու այն կողմերից երկու սիւներ ունէր:*

ՏԱՃԱՐԻ ՄՈՒՏՔԸ

41 *Նա ինձ տարաւ տաճար եւ չափեց նրա կամարը. լայնութիւնը մի կողմից վեց կանգուն էր, երկարութիւնը միւս կողմից՝ վեց կանգուն,* 2 *դռան*

†Եբրայերէն՝ մէկ կանգուն:

լայնութիւնը՝ տասը կանգուն, իսկ դռան խոյակներն այս ու այն կողմերից՝ հինգական կանգուն: Չափեց նաեւ դռան երկարութիւնը. քառասուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսան կանգուն: 3 *Մտաւ ներքին գաւիթը: Չափեց մուտքի կամարը. երկու կանգուն էր, մուտքը՝ վեց կանգուն, իսկ մուտքի գլխի խոյակներն այս ու այն կողմերից՝ եօթնական կանգուն:* 4 *Չափեց դռան երկարութիւնը. քառասուն կանգուն էր, լայնութիւնը՝ քսան կանգուն տաճարի առաջ: Եւ ասաց ինձ. «Սա է սրբութիւն սրբոցը»:*

ՏԱՃԱՐԻՆ ԿԻՑ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

5 *Նա չափեց տաճարի պատը. վեց կանգուն էր, տան կողքի տարածութիւնը, շուրջբոլորը՝ չորս կանգուն,* 6 *մի կողմից միւսը՝ երեսուներեք կանգուն: Տաճարի որմերի եւ բոլորաձեւ կից շինութիւնների միջեւ կար մի անջրպետ, որպէսզի նրանք, ովքեր ուզենային նայել ցած, ընկնէին ու երբեք չմօտենային տաճարի որմին:* 7 *Վերին դռան կողմերին, պատերի կողքերի միջեւ, տան շուրջը, վերին կողմում, մի լայն տարածութիւն կար, որպէսզի տան մէջ, վերեւից ու ներքեւից ընդարձակ տեղ լինէր, որտեղով ներքին յարկերից բարձրանային միջնայարկերը, այնտեղից էլ՝ վերնայարկերը:* 8 *Տեսայ նաեւ տան ձեղունի բարձրութիւնը. բոլորաձեւ մի անջրպետ կար, ձողին հաւասար, որը վեց կանգուն էր:* 9 *Արտաքին կողմի որմի հաստութիւնը հինգ կանգուն էր,* 10 *ամբողջ տաճարի եւ կից շինութիւնների պատշգամբների միջեւ ընկած բաց տարածութիւնը՝ քսան կանգուն:* 11 *Պատշգամբների մի դուռը հիւսիսային մի դռան միջանցքում էր, մի դուռն էլ՝ հարաւային կողմում: Ընդարձակ տեղի լայնութիւնը, միջանցքը լուսաւորելու համար, շուրջանակի հինգ կանգուն էր:*

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇԵՆՔԸ

12 *Բակի դիմաց գտնուող կից շինութիւնը, որ նայում էր դէպի ծովակողմ ճանապարհը, ունէր եօթանասուն կանգուն երկարութիւն. նրա պատի հաստութիւնը հինգ կանգուն էր, երկարութիւնը՝ իննսուն կանգուն:*

ՏԱՃԱՐԻ ՇԷՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԸ

13 *Նա չափեց տաճարի առաջը. երկարութիւնը հարիւր կանգուն էր: Խորշերը, անջրպետները եւ պատերը հարիւր կանգուն երկարութիւն ունէին:* 14 *Տաճարի առջեւի տարածութեան լայնութիւնը, նրա դիմացի խորշերը հարիւր կանգուն էին:*

ՏԱՃԱՐԻ ՇԷՆՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

15 *Չափեց նաեւ խորշերի դիմաց, տաճարի յետեւում գտնուող բաց տարածութեան երկարութիւնը. այդ տարածութիւնը եւ այս ու այն կողմերի խորշերը հարիւր կանգուն երկարութիւն ունէին:* 16 *Արտաքին տաճարը, անկիւնները ու կամարները, առաստաղները, երեք կողմերից, վանդակապատ լուսամուտներ ու լուսանցոյցներ ունէին՝ նայելու համար: Թէ՛ տաճարը եւ թէ՛ առհասարակ նրա առաստաղները, յատակից մինչեւ լուսամուտները, տախտակապատ էին: Լուսամուտները երեքտակ էին՝ նայելու համար,* 17 *ինչպէս ներսից, այնպէս էլ դրսից: Ամբողջ տաճարի վրայ, շուրջբոլորը, ներսից ու դրսից,* 18 *քերովբէներ էին քանդակուած ու արմաւենիներ. մի արմաւենին քերովբէների արանքում էր, երկու քերովբէները՝ իրար դիմաց:* 19 *Արմաւենիների մի կողմում քերովբէներից մէկի դէմքը մարդու դէմք էր, միւս կողմում երկրորդինը՝ առիւծի: Եւ այդպէս էր քանդակուած ամբողջ տաճարը, բոլոր կողմերից:* 20 *Յատակից մինչեւ առաստաղները քերովբէներ ու արմաւենիներ էին քանդակուած:* 21 *Սրբերն ու տաճարը թեւատարած էին ու քառանկիւնաձեւ բացուած:*

ՓԱՅՏԷ ՍԵՂԱՆԸ

22 *Սրբերի դէմ-յանդիման մի պատկեր կար՝ փայտէ խորանի նմանու-*

թեամբ, երեք կանգուն բարձրութեամբ, երկու կանգուն երկարութեամբ եւ երկու կանգուն լայնութեամբ, վրան՝ եղջիւրաձեւ զարդեր: Նրա թէ՛ յատակն ու թէ՛ պատերը փայտեայ էին: Նա ասաց ինձ. «Սա է Տիրոջ առջեւ եղած սեղանը»:

ԴՌՆԵՐԸ

23 Տաճարն ունէր երկու դուռ, սրբարանն էլ՝ երկու մուտք: Երկու դռներն էլ երկուական փեղկ ունէին. 24 երկու փեղկ՝ մէկ դուռը, երկու փեղկ՝ միւսը: 25 Նրանց վրայ, տաճարի մուտքերի վերեւում, քանդակուած էին քերովբէներ ու արմաւենիներ՝ ըստ սրբարանի քանդակների: Ազնիւ փայտէ մի կերտուածք կար կամարի դէմ-յանդիման, արտաքին կողմից: Նաեւ նեղ լուսամուտներ: 26 Այս ու այն կողմերից նա չափեց կամարի առաստաղները, տան կողմերն էլ՝ իրար հետ վերցրած:

ՍՐԲԱՋԱՆ ԵՐԿՈՒ ՇԷՆՔ ՏԱՃԱՐԻ ՄՈՏ

42 Նա դուրս բերեց ինձ արտաքին գաւիթը, դէպի արեւելք, հիւսիսի դռան դէմ-դիմաց, ու ներս տարաւ ինձ: Ես տեսայ հինգ պատշգամբներ՝ հիւսիսահայեաց միջանցքներով ու խորշերով, 2 հարիւր կանգուն երկարութեամբ ու յիսուն կանգուն լայնութեամբ, 3 նկարազարդուած ըստ ներքին սրահի դռան օրինակի: Դրանք չորս կողմը սիւներ ունեցող արտաքին բակի նման էին՝ երեք յարկերը դէմ առ դէմ դասաւորուած: 4 Պատշգամբների դէմ-յանդիման տասը կանգուն լայնութեամբ ու հարիւր կանգուն երկարութեամբ մի անցուղի կար, ճանապարհից մէկ կանգուն աւելի ներս. դրանց դռները դէպի հիւսիս էին նայում: 5 Անցուղիներ կային նաեւ վերնատներում, որովհետեւ սիւները չորս կողմում, ներքեւից վերեւ, խառն էին: Խառն էին նաեւ անջրպետները եւ շրջանաձեւ սիւները, անջրպետներն ու յենափայտերը, որովհետեւ եռայարկ էին: 6 Եւ պատշգամբների սիւների պէս սիւներ չկային. դրա համար ներքեւի կողմից միջանցքներ կային: Միջնայարկերն էլ գետնից յիսուն կանգուն բարձր էին: 7 Դրսից լոյս ունէին, ինչպէս որ արտաքին բակի պատշգամբները, որոնք նայում էին հիւսիսային պատշգամբների ճիշտ դիմացը, յիսուն կանգուն երկարութեամբ: 8 Արտաքին բակին նայող պատշգամբների երկարութիւնը յիսուն կանգուն էր, եւ դրանք իրար դիմաց էին, բոլորը միասին հարիւր կանգուն: 9 Արեւելեան մուտքի պատշգամբների դռները, որոնք արտաքին բակից մտնելու համար էին, 10 շինուած էին հարաւային կողմում առաջին անցուղու լուսամուտի համեմատ, հարաւին դէմ-յանդիման, միջանցքների ու հատուածների դիմաց: 11 Պատշգամբներն ու դրանց դիմացի անցուղիները հիւսիս տանող ճանապարհի պատշգամբի չափով էին, դրանց լայնութեամբ ու դրանց երկարութեամբ, դրանց ելքերի ու շրջանակների չափով, 12 նաեւ հիւսիսահայեաց պատշգամբների մուտքերի չափով, նաեւ հարաւահայեաց պատշգամբների մուտքերի չափով, նաեւ առաջին անցուղու մուտքի չափով, որպէսզի միջանցքներին ուղիղ լոյս տային, եւ հնարաւոր լինէր դրանց միջոցով գնալ դէպի արեւելք: 13 Նա ասաց ինձ. «Այն պատշգամբները, որ հիւսիս են նայում, նաեւ այն պատշգամբները, որ հարաւ՝ բաց տարածութեան կողմն են նայում, - դրանք սուրբ պատշգամբներ են, ուր ուտում էին Սադոկի քահանայ որդիները, որոնք կարող են մերձենալ Տիրոջ ամենասուրբ տեղերին: Այնտեղ են դնում սրբութիւն սրբոցը, մատուցում զոհերը՝ իրենց մեղքերի ու յանցանքների համար, որովհետեւ սուրբ է այդ տեղը, 14 ու ոչ ոք, բացի քահանաներից, չի մտնելու այնտեղ: Սրանք էլ այն սուրբ տեղից պէտք չէ որ դուրս գան արտաքին գաւիթը, որպէսզի ամէն անգամ որ Տիրոջ մերձենան՝ սուրբ մնան, ժողովրդին մօտենան իրենց պատմուճաններով, որոնցով պաշտամունք են մատուցում, որովհետեւ սուրբ են դրանք, այլ ժողովրդին մօտենալիս ուրիշ հանդերձներ հագնեն»:

ՏԱՃԱՐԻ ՏԱՐԱՇՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ

15 Այսպէս աւարտուեց տաճարի ներսի չափումը: Նա հանեց ինձ արեւելք նայող դռնով, չափեց տաճարի շուրջբոլորը: 16 Եկաւ կանգ առաւ հարաւային դռան մօտ, որ արեւելք էր նայում, չափեց հինգ հարիւր ձողաչափ: 17 Դարձաւ հիւսիսային կողմը, հիւսիսի դիմաց, չափեց հինգ հարիւր ձողաչափ: 18 Դարձաւ արեւմուտք, ծովի դիմաց, չափեց հինգ հարիւր ձողաչափ: 19 Դարձաւ հարաւային կողմը, հարաւի դիմաց, չափեց հինգ հարիւր ձողաչափ: 20 Չափեց տաճարի չորս կողմերի եւ պարիսպների արանքը նոյն չափով: Տաճարը սրբավայրերից եւ պարիսպներից անջրպետելու համար թողեց մի արանք, որ հինգ հարիւր կանգուն էր դէպի արեւելք եւ ունէր հինգ հարիւր կանգուն լայնութիւն

ՏԷՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՏԱՃԱՐ

43 Նա ինձ դուրս բերեց եւ հանեց այն դռան մօտ, որ արեւելք էր նայում: 2 Եւ ահա Իսրայէլի Աստծու փառքը գալիս էր արեւելքի ճանապարհով. բանակի ձայնը գալիս էր բազմութեան ձայնի արձագանքի պէս: Գետինը, չորս կողմից, լուսաւորուեց փառքի լոյսով: 3 Եւ տեսիլքը, որ ես էի տեսնում, նման էր այն տեսիլքին, որ ես տեսայ, երբ քաղաքն օծելու† էի մտնում: Իմ տեսած կառքի տեսիլքն էլ նման էր այն տեսիլքին, որ ես տեսայ Քոբար գետի մօտ: Երեսս ի վայր ընկայ ու խոնարհութիւն արեցի: 4 Տիրոջ փառքը արեւելք նայող դռնով տաճար մտաւ: 5 Հոգին ինձ բարձրացրեց ու տարաւ ներքին գաւիթը: Ահա տաճարը լի էր Տիրոջ փառքով: Ես էլ կանգնած էի այնտեղ: 6 Ահա մի ձայն այն տաճարից խօսում էր ինձ հետ: 7 Մի մարդ կար մօտս, որ ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, տեսա՞ր իմ գահաւորակի տեղը, իմ ոտնահետքերի տեղը. դրանցով է յաւիտեան ապրելու անունս Իսրայէլի մէջ: Իսրայէլի տան զաւակներն այլեւս չեն պղծելու իմ սուրբ անունը, ո՛չ իրենք, ո՛չ նրանց առաջնորդներն իրենց պոռնկութեամբ, ո՛չ էլ նրանց միջի իշխանները՝ իրենց սպանութիւններով, 8 երբ շեմս դնեմ նրանց շեմերի, սեմս՝ նրանց սեմերի մօտ: Նրանք պարիսպներ են կանգնեցրել իմ ու իրենց միջեւ, իրենց կատարած անօրէնութեամբ պղծել են իմ սուրբ անունը: Խորտակելու եմ նրանց իմ բարկութեամբ եւ սպանելով: 9 Գոնէ հիմա թող իրենց պոռնկութիւնը, իրենց իշխանների սպանութիւնն ինձնից հեռու պահեն: Եւ ես յաւիտեան բնակութիւն կը հաստատեմ նրանց մէջ: 10 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, Իսրայէլի տանը ցո՛յց տուր այդ տաճարը, ու թող յետ կանգնեն իրենց մեղքերից: Ցո՛յց տուր դրա պատկերը, ձեւն ու յօրինուածքը: 11 Եւ նրանք թող տանջանքներ ստանան իրենց կատարած ամէն ինչի համար: Նկարի՛ր այդ տաճարը, նրա կառուցուածքը, ելքը, մուտքն ու կահաւորանքը: Դրա բոլոր պատուիրաններն ու օրէնքները, կանոնները ցո՛յց տուր նրանց, գրի՛ր նրանց առաջ: Ու թող պահեն իմ բոլոր օրէնքներն ու պատուիրանները, կատարեն դրանք: 12 Լերան կատարի տան պատկերը, նրա չորս կողմերի սահմանները սրբութիւն սրբոց են: Այս է տաճարի օրէնքը»:

ԶՈՀԱՍԵՂԱՆԸ

13 Զոհասեղանի չափն այս է. մի կանգուն բարձրութիւնը, մի կանգուն ու չորս մատ՝ խորութիւնը, մի կանգուն՝ լայնութիւնը, մի թիզ՝ եզրերի շուրջ գտնուող պսակը: 14 Եւ այս է զոհասեղանի բարձրութիւնը. փորուածքի սկզբից մինչեւ մեծ քաւութիւնը† ներսից երկու կանգուն, մի կանգուն լայնութեամբ, փոքր քաւութիւնից մինչեւ մեծ քաւութիւնը՝ չորս կանգուն, մի կանգուն լայնութեամբ: 15 Զոհասեղանը՝ չորս կանգուն, բնից վեր մինչեւ եղջիւրները՝ մէկ կանգուն, 16 զոհասեղանը չորս կողմերից՝ տասներկուական կանգուն, լայնութեամբ ու երկարութեամբ քառակուսի: 17 Քաւութիւնը

†Եբրայերէն՝ կործանելու:

†Մեղքերի քաւութեան արարողութեանը ծառայող տապանակ ուխտի կափարիչը:

տասնչորս կանգուն երկարութեամբ էր, տասնչորս կանգուն լայնութեամբ, չորս կողմերից էլ հաւասար. նրան շրջապատող եզրերը՝ կէս կանգուն, շրջանակը՝ մէկ կանգուն: Աստիճաններն էլ արեւելեան էին:

ՔՈՀԱՍԵՂԱՆԻ ՕԳՈՒՄԸ

18 Տէրն ինձ ասաց. «Մարդո՛ւ որդի, այսպէս է ասում Տէր Աստուած. "Զոհասեղանը գործածելու օրուայ հրահանգները սրանք են. նրա վրայ ողջակէզ մատուցել, շուրջը արիւն ցողել: 19 Սադոկի որդուց սերած ղեւտացի քահանաներին, որոնք պաշտամունք մատուցելու համար ինձ կը մօտենան, – ասում է Տէր Աստուած, – մեղքերի քաւութեան համար նախիրից մի զուարակ կը տաս ողջակիզելու: 20 Թող վերցնեն սրա արիւնից, դնեն զոհասեղանի չորս եղջիւրներին, քաւութեան չորս անկիւններին էլ, ցանեն յատակի շուրջը ու դրանով սրբագործեն: 21 Թող վերցնեն մեղքերի համար ողջակիզուող զուարակը եւ այրեն տաճարում առանձնացուած մի տեղում, սրբարանից դուրս: 22 Երկրորդ օրը առանց արատի այծերից երկու նոխազ թող վերցնեն՝ իրենց մեղքերի համար, սրբագործեն զոհասեղանը, ինչպէս որ զուարակով սրբագործեցին: 23 Քաւութիւնը սրբագործելը վերջացնելուց յետոյ թող նախիրներից առանց արատի մի զուարակ մատուցեն, հօտից էլ՝ առանց արատի մի խոյ. դրանք մատուցեն Տիրոջ առաջ, 24 քահանաները դրանց վրայ աղ ցանեն ու տանեն ողջակիզելու Տիրոջ համար: 25 Թող եօթը օր անընդհատ իրենց մեղքերի համար մի նոխազ մատուցեն, նախիրներից՝ մի զուարակ, հօտերից՝ առանց արատի մի խոյ, 26 ու եօթը օր սրբագործեն զոհասեղանը, մաքրեն այն: Թող մաքրեն նաեւ իրենց ձեռքերը: 27 Երբ օրերն աւարտուեն, եւ երբ ութերորդ օրը լինի, քահանաները թող սեղանի վրայ անեն ձեր ողջակէզը, եւ դա թող լինի ձեր փրկութեան համար : Ես էլ կ'ընդունեմ ձեզ"», – ասում է Տէր Աստուածը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴՌԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

44 Նա ինձ յետ դարձրեց սրբարանի արտաքին դռնով, որ նայում էր դէպի արեւելք: Այն փակուած էր: 2 Տէրն ինձ ասաց. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացուելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպէսզի Իսրայէլի Տէր Աստուածը մտնի այդտեղով: Այն փակ է լինելու, 3 որովհետեւ առաջնորդ իշխանն է ներսում նստելու՝ Տիրոջ առաջ հաց ուտելու համար: Նա մտնելու է դռան կամարի տակի ճանապարհով եւ նոյն տեղով էլ դուրս է գալու»:

ՏԱՃԱՐ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4 Նա ինձ տարաւ մի դռնով, որ դէպի հիւսիս, տաճարի դիմաց էր նայում: Տեսնում էի՝ ահա Տիրոջ տունը լի էր Տիրոջ փառքով: Երեսս ի վայր ընկայ ու խոնարհութիւն արեցի: 5 Տէրն ինձ ասաց. «Մարդո՛ւ որդի, սրտի՛դ մէջ դիր, աչքերո՛վդ տես ու ականջներո՛վդ լսիր այն ամէնը, ինչ որ քեզ կ'ասեմ Տիրոջ տաճարի բոլոր հրահանգների ու նրա օրէնքների մասին: Դու սրտիդ մէ՛ջ կը պահես այդ տաճար մտնելու ու նրա սրբարանից ելնելու կարգը: 6 Կ'ասես Իսրայէլի տանը՝ խռովարարների այդ տանը. "Այսպէս է ասում Տէր Աստուած. Թող բաւական լինեն ձեր բոլոր անօրէնութիւնները, ո՛վ տունդ Իսրայէլի, 7 որ ձեր մէջ էք մտցրել այլազգիներին՝ սրտով անթլփատներին ու մարմնով անթլփատներին: Նրանք մտել են իմ սրբարանը եւ պղծել այն, մինչ դուք մատուցում էիք իմ հացը՝ ճարպով ու արիւնով: Դուք, որ զանց էք առնում ուխտս ձեր բոլոր անօրէնութիւններով, 8 չէք պահել ու պահպանել սրբավայրերս, այլազգիներին էք պահապան կարգել իմ սրբութիւնների սրբութեան վրայ"»:

ՂԵԻՏԱՑԻՆԵՐԸ ՀԵՌԱՑԻՈՒՄ ԵՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԻՑ

9 Ուստի այսպէս է ասում Տէր Աստուած. «Ոչ մի օտարածին զաւակ՝ սրտով անթլփատ ու մարմնով անթլփատ, չի մտնելու իմ սրբարանը, ոչ մէկն այն այլազգիների բոլոր

որդիներից, որ կան Իսրայէլի այդ տանը: 10 Նաեւ ղեւտացիները, որոնք ինձնից հեռացել են, երբ ժողովուրդը մոլորուել էր, մոլորուել-հեռացել իմ ճանապարհից՝ հետեւելով իրենց խորհուրդներին, – նրանք էլ են պատժուելու ըստ իրենց անօրէնութիւնների: 11 Նրանք իմ սրբարանում, այդ տան դռներին դռնապան ծառաներ են լինելու եւ տաճարի սպասաւորներ: Նրանք են մորթելու ժողովրդի ողջակէզներն ու զոհաբերութիւնները. նրանք են կանգնելու ժողովրդի առաջ՝ լինելով նրա սպասաւորները: 12 Այն բանի համար, որ իրենք սպասաւորներ էին նրանց կուռքերի առաջ, այդ անիրաւութեան համար էլ Իսրայէլի տունը տանջանքների է մատնուել: Դրա համար է որ ձեռքս բարձրացրի նրանց վրայ, – ասում է Տէր Աստուած, – եւ ըստ իրենց անիրաւութիւնների էլ նրանք պատժուելու են: 13 Թող ինձ չմերձենան նրանք, ինձ համար քահանայ չլինեն ու չդիպչեն ո՛չ Իսրայէլի զաւակների սրբութիւններին, ո՛չ էլ իմ ամենասուրբ բոլոր սրբութիւններին: Նրանք կրելու են իրենց անարգանքը իրենց արած մոլորութեան համար: 14 Նրանց պահապան են կարգել այն տան, նրա բոլոր գործերի, այն ամենի վրայ, ինչ անելու են այնտեղ»:

ՍԱԴՈԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ ԼԻՆԵԼՈՒ ԵՆ ՔԱՀԱՆԱՆԵՐ

15 «Իսկ ղեւտացի քահանաները՝ Սադոկի այն որդիները, որոնք պահպանել են իմ սրբութիւնները, երբ Իսրայէլի տունը մոլորուել-հեռացել էր իմ ճանապարհից, – նրանք մերձենալու են ինձ՝ պաշտամունք մատուցելու համար ինձ: Կանգնելու են իմ դիմաց եւ ինձ զոհեր, ճարպ ու արիւն են մատուցելու, – ասում է Տէր Աստուած: – 16 Նրանք մտնելու են իմ սրբարանը, մերձենալու են սեղանիս՝ ինձ պաշտամունք մատուցելու, եւ պահպանութիւն են անելու: 17 Երբ նրանք ներքին գաւթի դռնով մտնեն, պէտք է կտաւէ պատմուճաններ հագած լինեն եւ իրենց պաշտամունքը մատուցելու ժամանակ բրդեղէն հագած չպէտք է լինեն՝ սկսած ներքին գաւթի դռնից: 18 Գլուխներին կտաւէ խոյրեր են ունենալու, սրունքներին՝ կտաւէ անդրավարտիքներ: Ծանր հագնուած չպէտք է լինեն: 19 Ու երբ դուրս գան արտաքին գաւիթ՝ ժողովրդի մօտ, հանելու են իրենց պատմուճանները, որոնցով պաշտամունք են մատուցում, դնելու են դրանք սուրբ սենեակը եւ հագնելու են ուրիշ պատմուճաններ, որպէսզի ժողովրդին իրենց պատմուճաններով չսրբագործեն: 20 Գլուխները չեն ածիլելու, մազերը չեն նօսրացնելու. պիտի ծածկելու են իրենց գլուխները: 21 Ներքին գաւիթ մտնելիս ոչ մի քահանայ գինի թող չխմի: 22 Որբեւայրի կամ արձակուած կնոջն իրենց կին թող չառնեն, այլ՝ Իսրայէլի տան ծնունդ կոյսերի կամ քահանայից մնացած որբեւայրու: 23 Եւ իմ ժողովրդին թող սովորեցնեն ընտրութիւն կատարել սրբի ու պղծուածի, անարատի ու արատաւորուածի միջեւ: 24 Արեան դատաստանի ժամանակ նրանք քննիչ թող լինեն, ըստ իմ օրէնքների դատաստան անեն եւ ըստ իմ կանոնների իրաւունք գործադրեն: Բոլոր տօներին իմ օրէնքներն ու հրահանգները թող պահեն, շաբաթներս սուրբ պահեն: 25 Մարդու դիակի մօտ թող չգան, որ չպղծուեն, բացի հօր կամ մօր, որդու կամ դստեր, եղբօր կամ չամուսնացած քրոջ դիակից: 26 Եւ այն սրբագործելուց յետոյ պէտք է հաշուել եօթը օր. 27 ո՛ր օրը որ ներքին գաւիթը, սրբավայրը մտնեն՝ պաշտամունք մատուցելու, քաւութեան զոհ թող մատուցեն, – ասում է Տէր Աստուած: – 28 Նրանք ուրիշ ժառանգութիւն չեն ունենալու, քանի որ ես եմ նրանց համար ժառանգութիւն. Իսրայէլի զաւակների մէջ նրանց կալուածք թող չտրուի, քանի որ ես եմ նրանց համար ժառանգութիւն: 29 Նրանք են ուտելու զոհերը՝ մեղքերի համար լինեն դրանք թէ յանցանքի, ու Իսրայէլի բոլոր նուէրները նրանցն են լինելու: 30 Բոլոր առաջին պտուղները, ձեր բոլոր պտուղների երախայրիքը քահանաներինն են լինելու: Ձեր առաջին բերքը քահանային էք տալու, որպէսզի ձեր տներն օրհնի: 31 Քահանաները չեն ուտելու որեւէ մեռելոտի,

լինի գազան, յօշոտած թռչուն կամ անասուն»:

ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐ

45 *«Եւ երբ ձեր մէջ հողի, իբրեւ ժառանգութեան, համար վիճակ գցէք ու բաժանէք, այդ հողից Տիրոջ համար առանձնացնելու էք սուրբ նուէրը՝ քսանհինգ հազար ձողաչափ երկարութեամբ ու տասը հազար ձողաչափ լայնութեամբ, այնպէս որ բոլոր սահմաններում չորս կողմերից էլ նուիրագործուած լինի: 2 Դրանից սրբարանինն է լինելու հինգ հարիւրական ձողաչափ՝ չորս կողմերից, բաց տարածութիւնների շուրջն էլ՝ յիսունական կանգուն: 3 Այս տարածքից չափուելու է քսանհինգ հազար ձողաչափ երկարութեամբ, տասը հազար ձողաչափ լայնութեամբ մի բաժին. այնտեղ է լինելու սրբութիւն սրբոցը: 4 Նուիրուած հողից բաժին է լինելու նաեւ այն քահանաներին, որոնք սրբատեղիում պաշտամունք են մատուցում, նաեւ նրանց, ովքեր մօտենում են ինձ պաշտամունք մատուցելու: Նրանց համար, նրանց սուրբ տան համար տեղ է առանձնացուած լինելու՝ 5 երկարութիւնը քսանհինգ հազար ձողաչափ, լայնութիւնը՝ տասը հազար: Ղեւտացիների համար էլ, որոնք ծառայութիւն են անում տաճարում, քաղաքում բնակութեան համար կալուածք է լինելու: 6 Բնակութեան համար քաղաքին տալու ես հինգ հազար ձողաչափ լայնութեամբ եւ քսանհինգ հազար ձողաչափ երկարութեամբ տարածութիւն՝ ըստ Իսրայէլի ամբողջ տնից սրբարանին տրուած երախայրիքների»:*

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԱԼՈՒԱԾՔԸ

7 *Առաջնորդին էլ է տրուելու հող քաղաքի նստավայրում, սրբարանի դիմաց, քաղաքի բնակավայրերի դէմյանդիման, ծովի կողմը, ծովից էլ՝ դէպի արեւելք. երկարութիւնը՝ ըստ մէկ բաժնի սահմանների դէպի ծովակողմը, լայնութիւնը՝ ըստ հողի մէկ բաժնի սահմանների դէպի արեւելք:* 8 *Եւ դա նրա համար լինելու է իր կալուածքն Իսրայէլում: Եւ իշխանները չեն բռնանալու այլեւս իսրայէլացիների՝ իմ ժողովրդի վրայ. բաժանուած հողն էլ Իսրայէլի տունն է ժառանգելու սերնդից սերունդ»:*

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

9 *Այսպէս է ասում Տէր Աստուած. «Բաւական է ձեզ, ո՛վ իշխաններդ Իսրայէլի: Արդ, հեռո՛ւ վանեցէք անիրաւութիւնն ու զրկանքը, օրէնքով ու արդարութեա՛մբ վարուեցէք, հեռո՛ւ տարէք բռնութիւնն իմ ժողովրդից», - ասում է Տէր Աստուած: - 10 «Արդա՛ր չափով չափեցէք. ձեր կշեռքը թող լինի արդար, չափը՝ արդար, կապիճը*՝ արդար: 11 Կապիճը թող նոյնը լինի՝ տալիս թէ առնելիս: Գրիւի† մէկ տասներորդը մէկ կապիճ կը լինի. մէկ տասներորդ գրիւը՝ կապիճը, իր կշռով հաւասար կը լինի մէկ արդուի‡: 12 Քսան դանգը§, հաւասար կը լինի մէկ սիկղի, իսկ քսանհինգ սիկղը՝ ձեր մէկ մնասին**: 13 Եւ սա կը լինի այն նուէրը, որ դուք կը բաժանէք. գրիւի մէկ վեցերորդ մաս ցորեն, արդուի մէկ վեցերորդ մաս գարի: 14 Ձէթի վերաբերեալ հրահանգն այս է. մի քսեստ*** մէկ տասներորդ սափոր իւղ (քանի որ տասը քսեստը մէկ սափոր է): 15 Տասը ոչխարից մէկը նուէր կը լինի Իսրայէլի բոլոր հօտերից՝ ձեր քաւութեան եւ փրկութեան զոհերի ու ողջակէզների համար», - ասում է Տէր Աստուած: - 16 «Երկրիդ ամբողջ ժողովուրդը պէտք է տայ այս նուէրները Իսրայէլի առաջնորդներին: 17 Առաջնորդի ձեռքով պէտք է կատարուեն ողջակէզները, զոհերն ու սպանդը՝ տօներին, ամսագլուխներին, շաբաթներին: Եւ Իսրայէլի այդ տան բոլոր տօներին նա պէտք է մատուցի զոհերն ու ողջակէզները՝ մեղքերի համար ու փրկութեան, սրբագործելու համար Իսրայէլի այդ տունը»:*

†Սորուն նիւթ չափելու աման:
‡Կշռաչափ:
§Կշռաչափ:
*Կշռաչափ եւ դրամի միաւոր:
**Մանրադրամ:
***Կշռաչափ:

ՍՐԲԱՐԱՆԻ ՍՐԲԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԸ
(Ելք 12. 1-20, Ղեւտ. 23. 33-43)

18 *Այսպէս է ասում Տէր Աստուած. «Առաջին ամսին, ամսուայ առաջին օրը, նախրից առանց արատի մի զուարակ կ'առնէք՝ սրբարանը սրբագործելու համար:* 19 *Քահանան կ'առնի սրբագործման արիւնից, կը ցանի տան սեմերին, տաճարի չորս անկիւններին, զոհասեղանի վրայ, ներքին գաւթի դռան սեմերին:* 20 *Այսպէս կ'անի ամսուայ եօթներորդ օրը՝ տաճարը սրբագործելու համար բոլոր անգիտակցաբար եւ պարզամտօրէն մեղանչածներից:* 21 *Առաջին ամսին, ամսուայ տասնչորսերորդ օրը, ձեզ համար զատկի օր կը լինի. եօթը օր բաղարջ կ'ուտէք:* 22 *Առաջնորդն այդ օրը իր ու իր տան համար, երկրի ամբողջ ժողովրդի համար արջառներից մի զուարակ կը զոհաբերի մեղքերի թողութեան համար:* 23 *Տօնի եօթը օրերին ողջակէզներ կը մատուցեն Տիրոջը. եօթը զուարակ, առանց արատի եօթը խոյ՝ եօթը օր շարունակ, օր օրի, մեղքերի քաւութեան համար՝ այծերից էլ մէկ նոխազ օր օրի:* 24 *Զոհ մատուցուող իւրաքանչիւր զուարակի եւ խոյի հետ պէտք է բերել մէկ քսեստ ձէթի ալիւր եւ մէկ քսեստ իւղ՝ հաց պատրաստելու համար:* 25 *Երրորդ ամսին, ամսուայ տասնհինգերորդ օրը, այն եօթը օրերի պէս տօն կը կատարեն մեղքերի քաւութեան համար՝ նոյնպիսի ողջակէզներով, ձէթի ալիւրով ու ձէթով»:*

ՅԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՄԱՐ

46 *Այսպէս է ասում Տէր Աստուած. «Ներքին գաւթի դուռը, որ արեւելք է նայում, վեց լուր օրերին փակ կը լինի, իսկ շաբաթ օրը կը բացուի: Ամսագլխի օրն էլ կը բացուի:* 2 *Առաջնորդը կը մտնի արտաքին կամարի դռնով ու կը կանգնի դռան սեմին: Քահանաները նրա համար ողջակիզում կը կատարեն, զոհ կը մատուցեն նրա փրկութեան համար: Ինքը կ'երկրպագի դռան սեմին ու դուրս կը գայ:* 3 *Մինչեւ երեկոյ դուռը չի փակուի: Երկրի ժողովուրդն էլ շաբաթ օրերն ու ամսագլուխներին կ'երկրպագի դռան մուտքի առաջ, Տիրոջ առաջ:* 4 *Եւ այն ողջակէզները, որ շաբաթ օրերը առաջնորդը կը մատուցի Տիրոջը, կը լինեն՝ առանց արատի վեց գառ,* 5 *եփուած մաննա† խոյի ու գառների հետ, զոհեր ու նուէրներ՝ ըստ իր սրտի ուզածի, եւ մէկ քսեստ իւղ՝ հացի հետ:* 6 *Իսկ ամսամտի օրը կը մատուցի առանց արատի մի զուարակ, որ լինի հորթեր ծնած կովի ձագ (վեց գառներն ու խոյն էլ պէտք է լինեն առանց արատի):* 7 *Կը մատուցի նաեւ ազնիւ ալիւր՝ զուարակի հետ, ազնիւ ալիւր ու մաննա՝ խոյի ու գառների հետ, ինչպէս որ ինքը կը կամենար տալ, ազնիւ ալիւրի հետ էլ՝ իւղ:* 8 *Առաջնորդը մտնելիս՝ կամարի դռնով կը մտնի, նոյն դռնով էլ դուրս կը գայ:* 9 *Իսկ երբ երկրի ժողովուրդը տօներին մտնի Տիրոջ առաջ երկրպագելու, ով հիւսիսային դռնով մտնի, հարաւային դռնով դուրս կը գայ, իսկ ով հարաւային դռնով մտնի, հիւսիսային դռնով դուրս կը գայ: Չի վերադառնայ այն դռնով, որով մտել էր, այլ հակառակ դռնով դուրս կը գայ:* 10 *Առաջնորդն էլ, նրանց մէջ, մտնելիս՝ նրանց հետ կը մտնի, ելնելիս էլ նրանց հետ դուրս կը գայ:* 11 *Տօներին ու հաւաքոյթներին կը լինի՝ եփուած մաննա զուարակի հետ, մաննա՝ խոյի ու գառների հետ, ինչպէս ինքը կը կամենար տալ. մէկ քսեստ իւղ էլ՝ հացի հետ:* 12 *Ապա առաջնորդը Տիրոջը կը մատուցի խոստովանութեան ու կամաւոր փրկութեան ողջակէզները, իր համար բաց կ'անի արեւելք նայող դուռը եւ կը մատուցի փրկութեան համար իր ողջակէզները նոյն ձեւով, ինչպէս կատարում էր շաբաթ օրերին: Ապա դուրս կը գայ եւ իր ելնելուց յետոյ կը փակի դռները:*

13 *Նա Տիրոջը, որպէս ողջակէզ, կը մատուցի մէկ տարեկան առանց արատի մի ամլիկ գառ, եւ դա կ'անի ամէն օր*

†Բառաբանները բացատրում են՝ *անարիւն պատարագ, նուէր, ընծայ:* Ուրիշ բարգմանութիւններ պարզապէս տալիս են *միս:*

վաղ առաւօտեան: 14 Դրա հետ, վաղ առաւօտեան, կը մատուցի նաեւ մաննա արդուի չափի մէկ վեցերորդ մասով եւ քսեստի մէկ երրորդի չափով իւղ՝ ազնիւ ալիւրին խառնելու համար: Մաննայի ընծայումը Տիրոջը յաւիտենական հրահանգ է. 15 ամէն օր վաղ առաւօտեան պէտք է մատուցուի գառը, մաննան ու իւղը, որպէս մշտնջենական ողջակէզ»:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՐԴԻՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

16 Այսպէս է ասում Տէր Աստուած. «Եթէ իշխանն իր որդիներից որեւէ մէկին պարգեւ տայ իր ժառանգութիւնից, դա նրա որդիների ժառանգական կալուածքը կը լինի: 17 Իսկ եթէ իր ժառանգութիւնից պարգեւ տայ իր ծառաներից մէկին, դա նրանը կը լինի մինչեւ թողութեան տարին, ապա նորից կը վերադարձուի իշխանին: Բայց նրա որդիների ժառանգութիւնը նրանցը կը լինի: 18 Առաջնորդը չպէտք է իր ժողովրդի ժառանգութիւնից վերցնի՝ նրան բռնադատելով, այլ իր կալուածքներից ու իր ժառանգութիւնից պէտք է աւանդ թողնի իր որդիներին, որպէսզի իմ ժողովուրդը չցրուի՝ իւրաքանչիւրն իր բնակավայրից»:

ՏԱՃԱՐԻ ԽՈՀԱՆՈՑՆԵՐԸ

19 Նա ինձ հարաւային դռնով տարաւ դէպի քահանաների սուրբ պատշգամբը, որ հիւսիս է նայում: Եւ ահա մի առանձնացուած տեղ կար: 20 Նա ասաց ինձ. «Սա է այն տեղը, ուր քահանաները եփելու են զոհերի միսը՝ յանցանքների ու մեղքերի թողութեան համար: Այնտեղ են եփելու նաեւ մաննան՝ ամենեւին դուրս չգալով արտաքին գաւիթը ժողովրդին սրբագործելու համար»: 21 Նա ինձ դուրս բերեց արտաքին գաւիթը, պտտեցրեց գաւթի չորս բոլորը: Ահա տեսայ գաւիթներ ու գաւիթներ՝ սրահի չորս կողմերին: 22 Փոքր գաւիթը քառասուն կանգուն երկարութիւն եւ երեսուն կանգուն լայնութիւն ունէր: Չորսն էլ մի չափի էին, չորսի շուրջն էլ պատշգամբներ կային: 23 Խոհանոցներ էլ կային պատշգամբի տակ, չորս կողմերին: 24 Նա ինձ ասաց. «Սրանք խոհանոցներ են, ուր տաճարի սպասաւորները ժողովրդի մատուցած զոհերի միսն են եփում»:

ՏԱՃԱՐԻ ԱՂԲԻՒՐԸ

47 *Նա ինձ բերեց տաճարի դռան առաջ: Ահա տաճարի արեւելեան կողմի վարագոյրների տակից ջուր էր դուրս գալիս եւ հոսում դէպի արեւելք, որովհետեւ տաճարի ճակատային մասը դէպի արեւելք էր նայում. իսկ ջուրը գալիս էր տաճարի հիւսիսային կողմից՝ աջից դէպի զոհասեղանի կողմը: 2 Ինձ դուրս բերեց հիւսիսային դռնով ու դրսից պտտեցրեց արտաքին դռան չորս կողմը, որ արեւելք էր նայում: Ահա ջուրը հոսում էր աջ կողմից: 3 Երբ դուրս եկայ, մարդը ելաւ իմ դիմաց. ձեռքին չափ ունէր: Իր չափով հազար ձողաչափ չափեց ու անցաւ ջրի, յորդ ջրի միջով: 4 Դարձեալ հազար ձողաչափ չափեց իր չափով ու անցաւ ջրի միջով: Ջուրը մինչեւ նրա երանքներն էր հասնում: Նա հազար ձողաչափ չափեց իր չափով ու անցաւ ջրի միջով: Ջուրը մինչեւ գօտկատեղն էր հասնում: 5 Իր չափով նա հազար ձողաչափ չափեց հոսանքը ու չէր կարողանում անցնել, որովհետեւ ջուրը հեղեղի յորձանք էր տալիս, որի միջով ոչ ոք չէր կարող անցնել: 6 Նա ասաց ինձ. «Տեսա՞ր, մարդո՛ւ որդի»: Ու ինձ յետ դարձրեց, տարաւ գետի ափը: 7 Երբ շրջում էի այնտեղ, ահա գետափին, այս ու այն կողմերին, բազմաթիւ տնկած ծառեր տեսայ: 8 Նա ասաց ինձ. «Այս ջուրը, որ դէպի արեւելք՝ գալիլիացիների կողմն է դուրս գալիս, իջնում է Արաբիա ու գալիս է մինչեւ ծով՝ ջրերի ելքը, եւ ջրերը դարձնում բուժիչ: 9 Ամէն շնչաւոր էակ, բոլոր նրանք, որոնց վրայ այս գետը գայ, ապրելու են: Այնտեղ շատ ձուկ է բազմանալու, որովհետեւ այս ջուրը հասնելով այնտեղ՝ լինելու է բուժիչ: Կենդանանալու եւ ապրելու է ամէն ոք, ում վրայ հասնի այս գետը: 10 Նրա մէջ կանգնելու են ձկնորսներ՝*

Ենգադիայից մինչեւ Ենգադիք: Ուռկանները գցելու տեղեր են լինելու. նրա ձկներն էլ մեծ ծովի ձկների պէս շատ, խիստ շատ են լինելու: 11 Բայց նրա դուրս գալու, ծանծաղելու եւ յորդելու տեղերում ջրերը առողջարար չեն լինելու, այլ թողնուելու են աղ ունենալու համար: 12 Գետի մօտերքը, ափերի այս ու այն կողմերում, պտղատու ծառեր են բուսնելու, որոնք չեն ծերանալու, պտուղն էլ նրանց վրայից չի պակասելու: Հէնց սկզբից էլ դալար ճիւղեր են արձակելու, որովհետեւ գետի ջրերը սուրբ վայրերից են դուրս գալիս: Նրանց պտուղը սնունդ է լինելու, տերեւը՝ բուժիչ»:

ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

13 Այսպէս է ասում Տէր Աստուած. «Սրանք են երկիրը ժառանգելու այն սահմանները, նաեւ այն յաւելեալ բաժինը, որ ժառանգութիւն են թողնելու իսրայէլացիների տասներկու սերունդներին: 14 Այն ժառանգութիւն է ստանալու ամէն ոք, եղբօր պէս, որովհետեւ ես, ձեռքս բարձրացրած, երդուել էի ձեր հայրերին յանձնել այն: Եւ այժմ երկիրը ձեզ է հասնում որպէս ժառանգութեան բաժին: 15 Սրանք են երկրի սահմանները դէպի հիւսիս. Մեծ ծովից, որ իջնում 16 ու բաժանում է դէպի Հելլադայի, Եմաթի, Բերոթի, Սաբարսիմի ճանապարհը, Դամասկոսի ու Եմաթի սահմանների միջեւ, – լինելու են Աւնանի բնակավայրերը, որ աւրանցիների սահմաններում են: 17 Սրանք են հիւսիսային սահմանները, որ գտնուում են ծովի կողմից, Աւնանի հանգրուանից, Դամասկոսի սահմաններից եւ Եմաթից հիւսիս՝ արեւելքի դէմ-դիմաց: 18 Դրանք ընկած են աւրանցիների եւ Դամասկոսի միջեւ, գաղաադացիների եւ Իսրայէլի միջեւ, իսկ Յորդանան գետը արեւելեան կողմից սահման է ծովի եւ Արմաւաստանի† միջեւ: Սա արեւելքն է: 19 Հարաւային սահմաններն անցնում են Թեմանի հարաւով, Արմաւաստանից մինչեւ Մարիբոթ Կադէսի ջրերը, որ թափւում են Մեծ ծովը: Սա հարաւային բաժինն է, հարաւի կողմից: 20 Եւ Մեծ ծովի այս բաժինը, որի սահմանը հասնում է մինչեւ Եմաթի ճանապարհի դիմաց, մինչեւ նրա մուտքը, – հէնց սա էլ Եմաթի արեւմուտքն է: 21 Դուք երկիրը բաժանելու էք նրանց միջեւ. 22 վիճակ կը գցէք Իսրայէլի ցեղերի՝ ձեր եւ եկուորների ու ձեր մէջ գտնուող պանդուխտների միջեւ, որոնք ձեր մէջ զաւակներ են ունեցել: Իսրայէլի զաւակների մէջ սրանք ձեզ համար երկրածինների պէս են լինելու. ձեզ հետ են ապրելու, ժառանգութիւնից են օգտուելու Իսրայէլի ցեղերի մէջ: 23 Նրանք ձեր մէջ գտնուող պանդուխտների պէս պանդուխտներ են լինելու, եւ դուք նրանց ժառանգութիւն էք տալու», – ասում է Տէր Աստուած:

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԵՕԹԸ ՑԵՂԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

48 *«Սրանք են ցեղերի սահմանները. հիւսիսից սկսած, զառիթափի կողմով, որ բաժանում է Եմաթի ճանապարհը եւ Աւնանի հանգրուանը, Դամասկոսի հիւսիսային սահմանն է՝ Եմաթի կողմից: Դրանց արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Դանի ցեղին: 2 Դանի սահմաններից դէպի արեւելք, մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Ասերի ցեղին: 3 Ասերի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Նեփթաղիմի ցեղին: 4 Նեփթաղիմի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Մանասէի ցեղին: 5 Մանասէի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Եփրեմի ցեղին: 6 Եփրեմի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Ռուբէնի ցեղին: 7 Ռուբէնի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի Յուդայի ցեղին: 8 Յուդայի սահմաններից, արեւելեան կողմից մինչեւ արեւմուտք՝ քսանհինգ ձողաչափ երկարութեամբ եւ տասը հազար ձողաչափ լայնութեամբ, թող լինի ձեր սրբավայրի հողամասը՝ իբրեւ բաժիններից մէկը, որտեղ կը լինի սրբարանը,*

†Իսրայէլի հարաւում գտնուող Թամար քաղաքը:

9 մի ընծայ՝ նուիրուած Տիրոջը, քսան-
հինգ հազար ձողաչափ երկարութեամբ
ու տասը հազար ձողաչափ լայ-
նութեամբ: 10 Քահանաների սրբատե-
ղիներին նուիրուած հողամասը կը լինի
հարաւային կողմում քսանհինգ հազար
ձողաչափ երկարութեամբ, արեւ-
մուտքում՝ տասը հազար ձողաչափ
լայնութեամբ, արեւելքում՝ տասը
հազար ձողաչափ լայնութեամբ, իսկ
հիւսիսում՝ քսանհինգ հազար ձողաչափ
երկարութեամբ մի բաժին: Դրանց
մէջտեղում կը լինի սրբարանը: 11 Այս
բաժինը Սադոկի որդիներից՝ սրբագոր-
ծուած քահանաներինը կը լինի, որոնք
Տիրոջ Տտան պահպանութիւնն են կա-
տարում, որոնք չմոլորուեցին իսրայէ-
լացիների մոլորութեամբ, ինչպէս մո-
լորուեցին ղեւտացիները: 12 Ղեւտա-
ցիների սահմաններից ընծայուած
հողերի այս բաժինն ամենասուրբ մասը
կը լինի: 13 Իսկ քահանաներին
սահմանակից ղեւտացիների բաժինը, կը
լինի քսանհինգ հազար ձողաչափ
երկարութեամբ ու տասը հազար
ձողաչափ լայնութեամբ: 14 Դա չի
վաճառուի նրանց կողմից, ոչ էլ կը
մասնատուի: Հողի առաջին բերքից չի
վերցուի, որովհետեւ այն Տիրոջն է
նուիրուած: 15 Բայց քսանհինգ հա-
զարից մնացած հինգ հազար լայ-
նութեամբ հողամասը քաղաքի դրսի
պատուարը կը լինի, իբրեւ բնակավայր
ու ազատ տարածութիւն: Քաղաքը դրա
մէջտեղում կը լինի: 16 Սրանք են նրա
չափերը. հիւսիսային կողմից՝ չորս
հազար հինգ հարիւր ձողաչափ,
հարաւային կողմից՝ չորս հազար հինգ
հարիւր, արեւելեան կողմից՝ չորս
հազար հինգ հարիւր եւ արեւմտեան
կողմից՝ չորս հազար հինգ հարիւր:
17 Քաղաքի ազատ տարածքը կը լինի.
հիւսիսի ուղղութեամբ՝ երկու հարիւր
յիսուն ձողաչափ, հարաւի ուղղու-
թեամբ՝ երկու հարիւր յիսուն, արեւելքի
ուղղութեամբ՝ երկու հարիւր յիսուն եւ
արեւմուտքի ուղղութեամբ՝ երկու
հարիւր յիսուն: 18 Իսկ մնացած այն
տարածութիւնը, որ մօտ է սրբատե-
ղիներին նուիրուած հողամասին, կ'ու-
ենենայ արեւելքի ուղղութեամբ՝ տասը
հազար ձողաչափ երկարութիւն, արեւ-
մուտքի ուղղութեամբ՝ տասը հազար:
Դա ընծայ կը լինի սրբատեղիներին:
Նրա բերքը քաղաքի գործաւորի համար
հաց կը լինի. 19 Իսրայէլի բոլոր ցեղերից
քաղաքի գործաւորներն էլ կը մշակեն
այն: 20 Եւ քաղաքի բնակելի վայրերից
դուք, որպէս սրբավայրի ընծայ, կ'ա-
ռանձնացնէք քառակուսի մի տարա-
ծութիւն՝ քսանհինգ հազար ձողաչափ
քսանհինգ հազարի վրայ: 21 Դրանից
աւելացածն էլ իշխանինը կը լինի: Նոյն
տեղից, իբրեւ ընծայ սրբատեղիին, քա-
ղաքավայրում, նրա դիմաց, քսանհինգ
հազար ձողաչափ երկարութեամբ մի
բաժին կը լինի մինչեւ արեւելեան կողմի
սահմանները. իսկ դրա դիմաց,
արեւմտեան կողմը, քսանհինգ հազար
ձողաչափ երկարութեամբ մի բաժին էլ
կը լինի իշխանի բաժնին մօտ: Եւ դա
ընծայ կը լինի սրբատեղիներին.
տաճարի սրբարանը կը լինի նրա
մէջտեղում, 22 որպէս ղեւտացիների
ժառանգութիւն: Քաղաքի բնակատե-
ղիից մի տարածութիւն իշխաններինը կը
լինի. Յուդայի երկրի սահմանների ու
Բենիամինի երկրի սահմանների միջեւ
բաժին կը յատկացուի իշխանին»:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԻՆԳ ՑԵՂԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

23 «Ինչ վերաբերում է մնացած ցե-
ղերին, ապա արեւելեան կողմերից
մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի
Բենիամինի ցեղին: 24 Բենիամինի
սահմաններից, արեւելեան կողմերից
մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի
Շմաւոնի ցեղին: 25 Շմաւոնի սահ-
մաններից, արեւելեան կողմերից մինչեւ
արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի
Իսաքարի ցեղին: 26 Իսաքարի սահ-
մաններից, արեւելեան կողմերից մինչեւ
արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի
Զաբուղոնի ցեղին: 27 Զաբուղոնի
սահմաններից, արեւելեան կողմերից
մինչեւ արեւմուտք՝ մէկ բաժին կը լինի
Գադի ցեղին: 28 Գադի սահմաններից
մինչեւ հարաւ, Թեմանից ու Ռաբոթ
Կադէսի ջրերից մինչեւ Մեծ ծովը կը
լինի մէկ ժառանգութեան սահման:
29 Ահա սա է այն երկիրը, որ վիճակով

բաժանելու էք Իսրայէլի ցեղերին, եւ
սրանք են նրանց բաժինները», - ասում
է Տէր Աստուած: -

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴՌՆԵՐԸ

30 «Այժմ քաղաքի ելքի ու մուտքի
դռների մասին. դրանցից հիւսիսային
կողմի դռները չորս հազար հինգ հարիւր
ձողաչափ են: 31 Քաղաքի դռները կը
լինեն Իսրայէլի ցեղերի անուններով:
Երեք դուռ հիւսիսային կողմում. մի
դուռը՝ Ռուբէնի անունով, մի դուռը՝
Յուդայի եւ մի դուռը՝ Ղեւիի: 32
Արեւելքի ուղղութեամբ էլ դռները չորս
հազար հինգ հարիւր ձողաչափ են:
Երեք դուռ. մի դուռը՝ Յովսէփի
անունով, մի դուռը՝ Բենիամինի եւ մի
դուռը՝ Դանի: 33 Հարաւի ուղղութեամբ
էլ դռները չորս հազար հինգ հարիւր
ձողաչափ են: Երեք դուռ. մի դուռը՝
Շմաւոնի անունով, մի դուռը՝ Իսաքարի
եւ մի դուռը՝ Զաբուղոնի: 34 Արեւ-
մուտքի ուղղութեամբ էլ դռները չորս
հազար հինգ հարիւր ձողաչափ են:
Երեք դուռ. մի դուռը՝ Գադի անունով,
մի դուռը՝ Ասերի եւ մի դուռը՝ Նեփ-
թաղիմի: 35 Ընդհանուր չրջագիծը՝
տասնութ հազար ձողաչափ: Եւ այդ
օրից քաղաքի անունը կը լինի "Տէրն
այնտեղ է"»:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Ներածութիւն

Մատթէոսի մօտ գտնում ենք այն գլխաւոր գծերը, որ ներկայացուած են Մարկոսի աւետարանում.

— Յովհաննէս-Մկրտչի պատգամը.

— Յիսուսի մկրտութիւնն ու փորձութիւնը.

— Յիսուսի գործունէութիւնը Գալիլիայում, որտեղ նա քարոզում է, ուսուցանում բազմութիւններին եւ բժշկում հիւանդներին.

— Յիսուսի ճանապարհորդութիւնը դէպի Երուսաղէմ.

— Յիսուս Երուսաղէմում մնում է կարճ ժամանակ՝ ընդամէնը մէկ շաբաթ, որ աւարտւում է նրա դատապարտութեամբ, խաչելութեամբ, նրա յարութեան մեծ անակնկալով եւ յետմահու նրա երեւումով:

Սակայն Մատթէոսը սկզբում մի երկար նախաբան է նուիրում Յիսուսի ազգաբանութեանը, նրա ծննդին եւ մանկութեանը: Այս մասում ցոյց է տրուած, թէ ով է այն Յիսուսը, որին աւետարանիչը հետեւելու է իր աւետարանը շարադրելու ամբողջ ընթացքում: Նա խոստացուած Թագաւոր-Փրկիչն է, բայց նաեւ՝ «Էմմանուէլը» (Աստուած մեզ հետ), Նա, որի միջոցով իրագործւում է այն, ինչ Աստուած յայտնել էր Հին Կտակարանում:

Մատթէոսի աւետարանն ունի նաեւ այն առանձնայատկութիւնը, որ այնտեղ հինգ մեծ ճառերի մէջ խմբաւորուած է Յիսուսի վարդապետութեան կարեւոր մէկ մասը. 1) «Լեռան քարոզը» (գլ. 5–7), 2) Յիսուսի տուած պատուէրներն այն մարդկանց, որոնք պիտի աւետեն երկնային Թագաւորութեան գալուստը (գլ. 10), 3) այդ Թագաւորութեան խորհուրդը՝ ներկայացուած եօթը առակներով (գլ. 13), 4) ինչպէս պէտք է ապրել եղբայրների հետ այդ Թագաւորութեան մէջ (գլ. 18), 5) ինչպէս պէտք է սպասել Թագաւորութեան վերջնական յաղթանակին (գլ. 24–25):

Մատթէոսի աւետարանում Յիսուս հանդէս է բերուած որպէս մի մեծ ուսուցիչ, որ իշխանութիւն ունի օրէնքը բացատրելու եւ բաց անելու այդ Թագաւորութեան նոր աշխարհը եւ այնտեղ մտնողներին բերելու այն վարդապետութիւնը, որի կարիքն ունեն նրանք՝ դառնալու համար դրա վկաները այլ մարդկանց մօտ:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Գիրք ազգաբանութեան Յիսուս
Քրիստոսի՝ Դաւթի որդու, Աբրահամի
որդու:
2 Աբրահամը ծնեց Իսահակին. Իսա-
հակը՝ Յակոբին. Յակոբը ծնեց Յու-
դային եւ նրա եղբայրներին. 3 Յուդան
ծնեց Փարեսին եւ Զարային՝ Թա-
մարից. Փարեսը ծնեց Եզրոնին. Եզրոնը
ծնեց Արամին. 4 Արամը ծնեց Ամի-
նադաբին. Ամինադաբը ծնեց Նաասո-
նին. Նաասոնը ծնեց Սաղմոնին. 5 Սա-
ղմոնը ծնեց Բոոսին՝ Ռաքաբից. Բոոսը
ծնեց Օբէդին՝ Հռութից. Օբէդը ծնեց
Յեսսէին. 6 Յեսսէն ծնեց Դաւիթ
արքային:
Դաւիթը ծնեց Սողոմոնին՝ Ուրիայի
կնոջից. 7 Սողոմոնը՝ Ռոբովամին. 8 Ռո-
բովամը ծնեց Աբիային. Աբիան ծնեց
Ասափին. Ասափը ծնեց Յոսափատին.
Յոսափատը ծնեց Յորամին. Յորամը
ծնեց Օզիային. 9 Օզիան ծնեց Յովա-
թամին. Յովաթամը ծնեց Աքազին.
Աքազը ծնեց Եզեկիային. 10 Եզեկիան
ծնեց Մանասէին. Մանասէն ծնեց
Ամոսին. 11 Ամոսը ծնեց Յոսիային.
Յոսիան ծնեց Յեքոնիային եւ նրա
եղբայրներին՝ Բաբելոնում գերութեան
ժամանակ:
12 Բաբելոնում գերութիւնից յետոյ
Յեքոնիան ծնեց Սաղաթիէլին. 13 Սա-
ղաթիէլը ծնեց Զորոբաբէլին. Զորոբա-
բէլը ծնեց Աբիուդին. Աբիուդը ծնեց
Եղիակիմին. 14 Եղիակիմը ծնեց Ազո-
րին. Ազորը ծնեց Սադոկին. Սադոկը
ծնեց Աքինին. Աքինը ծնեց Եղիուդին.
15 Եղիուդը ծնեց Եղիազարին. Եղիա-
զարը ծնեց Մատթանին. 16 Մատթանը
ծնեց Յակոբին. Յակոբը ծնեց Յովսէ-
փին՝ Մարիամի մարդուն, որի նշա-
նածն էր կոյս Մարիամը†, որից ծնուեց
Յիսուս, որ անուանուեց Քրիստոս:
17 Արդ, Աբրահամից մինչեւ Դաւիթը
բոլոր սերունդները՝ տասնչորս սե-
րունդ. եւ Դաւթից մինչեւ Բաբելոնի
մէջ գերութիւնը՝ տասնչորս սերունդ.
Բաբելոնի մէջ գերութիւնից մինչեւ
Քրիստոս՝ տասնչորս սերունդ:

†Լաւագոյն յունարէն բնագրերը չունեն *որի նշանածն էր կոյս Մարիամը* բառերը: Յունարէն բնագիր այսուհետեւ՝ յուն. բն.:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

18 Յիսուս Քրիստոսի ծնունդը այս-
պէս եղաւ. նրա մայրը՝ Մարիամը, որ
Յովսէփի նշանածն էր, նախքան
նրանց՝ իրար մօտենալը, Սուրբ Հոգուց
յղիացած գտնուեց: 19 Եւ Յովսէփը՝
նրա մարդը, քանի որ արդար էր եւ չէր
կամենում նրան խայտառակել, մտա-
ծեց առանց աղմուկի արձակել նրան:
20 Եւ մինչ նա այս բանի մասին էր
մտածում, ահա Տիրոջ հրեշտակը
երազի մէջ երեւաց նրան եւ ասաց.
«Յովսէ՛փ, Դաւթի՛ որդի, մի՛ վախեցիր
քեզ մօտ առնելու Մարիամին՝ քո կնո-
ջը, որովհետեւ նրա մէջ ծնուածը
Սուրբ Հոգուց է: 21 Նա մի որդի պիտի
ծնի, եւ նրա անունը Յիսուս պիտի
դնես, քանի որ նա պիտի փրկի իր
ժողովրդին՝ իր մեղքերից»: 22 Սակայն
այս ամէնը եղաւ, որպէսզի կատարուի,
ինչ որ Տիրոջ կողմից ասուել էր Եսայի
մարգարէի բերանով. 23 «Ահա կոյսը
պիտի յղիանայ եւ մի որդի պիտի ծնի,
եւ նրան պիտի կոչեն Էմմանուէլ, որ
նշանակում է Աստուած մեզ հետ»:
24 Եւ Յովսէփը քնից արթնանալով՝
արեց, ինչպէս հրամայել էր իրեն Տիրոջ
հրեշտակը, եւ իր կնոջն առաւ իր մօտ:
25 Բայց նրա հետ չյարաբերուեց,
մինչեւ Մարիամը ծնեց իր անդրանիկ†
որդուն եւ նրա անունը դրեց Յիսուս:

ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

2 Երբ Յիսուս ծնուեց Հրէաստանի
Բեթղեհէմ քաղաքում, Հերովդէս ար-
քայի օրով, ահա արեւելքից մոգեր
եկան Երուսաղէմ եւ ասացին. 2 «Ո՞ւր է
հրեաների արքան, որ ծնուեց, որով-
հետեւ նրա աստղը տեսանք արե-
ւելքում եւ եկանք նրան երկրպա-
գելու»: 3 Եւ երբ Հերովդէս արքան լսեց
այս, խռովուեց, նրա հետ՝ եւ Երուսա-
ղէմի ամբողջ ժողովուրդը: 4 Եւ հա-
ւաքելով բոլոր քահանայապետներին
ու ժողովրդի օրէնսգէտներին՝ հարցրեց
նրանց, թէ ո՞ւր պիտի ծնուի
Քրիստոսը: 5 Եւ նրանք ասացին նրան.
«Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում,

†Յունարէնը չունի *իր անդրանիկ* բառերը:

որովհետեւ մարգարէի միջոցով այսպէս է գրուած. 6 «Եւ դու, Բեթղեհէ՛մ,
Յուդայի՛ երկիր, Յուդայի քաղաքների
մէջ փոքրագոյնը չես. քեզնից մի իշ-
խան պիտի ելնի ինձ համար, որ պիտի
հովուի իմ ժողովրդին՝ Իսրայէլին»:
7 Այն ժամանակ Հերովդէսը գաղտ-
նի կանչեց մոգերին եւ նրանցից
ստուգեց աստղի երեւալու ժամանակը:
8 Եւ նրանց Բեթղեհէմ ուղարկելով՝
ասաց. «Գնացէ՛ք ստոյգ իմացէք ման-
կան մասին եւ երբ գտնէք, տեղե-
կացրէ՛ք ինձ, որպէսզի ես էլ գնամ
երկրպագեմ նրան»: 9 Եւ նրանք երբ
թագաւորից լսեցին այս, գնացին: Եւ
ահա այն աստղը, որ տեսել էին արե-
ւելքում, առաջնորդեց նրանց, մինչեւ
որ եկաւ կանգնեց այն տեղի վրայ,
ուր մանուկն էր: 10 Աստղը տեսնելուն
պէս չափազանց ուրախացան: 11 Եւ
երբ այն տունը մտան, տեսան ման-
կանը իր մօր՝ Մարիամի հետ միասին
եւ ընկան ու երկրպագեցին նրան. եւ
բանալով իրենց գանձատուփերը՝ նրան
նուէրներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ
եւ զմուռս: 12 Եւ երազի մէջ Աստծուց
հրաման առնելով չվերադառնալ Հե-
րովդէսի մօտ, այլ ճանապարհով
գնացին իրենց երկիրը:

ՓԱԽՈՒՍՏ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ

13 Եւ երբ նրանք այնտեղից գնացին,
ահա Տիրոջ հրեշտակը երազի մէջ
երեւաց Յովսէփին ու ասաց. «Վե՛ր
կաց, վերցրո՛ւ այդ մանկանը եւ նրա
մօրը ու փախի՛ր Եգիպտոս. եւ այնտեղ
մնա՛ մինչեւ որ քեզ ասեմ. քանի որ
Հերովդէսը փնտռում է այդ մանկանը
կորստեան մատնելու համար»: 14 Եւ
նա վեր կացաւ, առաւ մանկանն ու
նրա մօրը, գիշերով, եւ գնաց Եգիպտոս
ու այնտեղ մնաց մինչեւ Հերովդէսի
մահը, 15 որպէսզի կատարուի մարգա-
րէի բերանով Տիրոջ կողմից ասուածը,
թէ՝ Եգիպտոսի՛ց պիտի կանչեմ իմ
Որդուն:

ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

16 Այն ժամանակ, երբ Հերովդէսը
տեսաւ, որ մոգերից խաբուեց, սաստիկ
բարկացաւ եւ մարդ ուղարկեց ու
կոտորեց այն բոլոր մանուկներին, որ
Բեթղեհէմում եւ նրա սահմաններում
էին գտնուում եւ երկու տարեկան ու
դրանից ցած էին՝ ըստ այն ժամանակի,
որն ստուգել էր մոգերից: 17 Այն ժա-
մանակ կատարուեց Երեմիա մարգարէի
բերանով ասուածը, թէ՝ Ռամայում մի
ձայն գուժեց. ողբ ու լաց ու սաստիկ
կոծ. 18 Ռաքէլը լալիս էր իր զաւակ-
ների վրայ եւ չէր ուզում մխիթարուել,
քանի որ նրանք այլեւս չկային:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵԳԻՊՏՈՍԻՑ

19 Երբ Հերովդէսը վախճանուեց,
ահա Տիրոջ հրեշտակը երազի մէջ երե-
ւաց Յովսէփին Եգիպտոսում եւ ասաց.
20 «Վե՛ր կաց, վերցրո՛ւ այդ մանկանն
ու իր մօրը եւ վերադարձի՛ր Իսրայէլի
երկիրը, որովհետեւ մեռան նրանք, որ
այդ մանկան մահն էին ուզում»: 21 Եւ
Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն
ու մօրը եւ եկաւ Իսրայէլի երկիրը:
22 Իսկ երբ լսեց, թէ Արքեղայոսը թա-
գաւորել է Հրէաստանի վրայ իր հօր՝
Հերովդէսի փոխարէն, վախեցաւ այն-
տեղ գնալ. եւ երազի մէջ հրաման առ-
նելով՝ գնաց Գալիլիայի կողմերը 23 եւ
եկաւ բնակուեց Նազարէթ կոչուող
քաղաքում, որպէսզի կատարուի մար-
գարէների խօսքը, թէ՝ Նազովրեցի պի-
տի կոչուի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 1. 1-8, Ղուկ. 3. 1-18, Յովհ. 1. 19-28)

3 Այն օրերին Յովհաննէս Մկրտիչը
գալիս է քարոզելու Հրէաստանի անա-
պատում եւ ասում. 2 «Ապաշխարեցէ՛ք,
որովհետեւ երկնքի արքայութիւնը մօ-
տեցել է»: 3 Սա՛ է այն մարդը, որի
մասին Եսայի մարգարէի բերանով ա-
սուեց. «Անապատում կանչողի ձայնն
է, պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը
եւ հարթեցէ՛ք նրա շաւիղները»: 4 Եւ
ինքը՝ Յովհաննէսը, ուղտի մազից
զգեստ ունէր եւ կաշուէ գօտի՝ իր մէջ-
քին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու
վայրի մեղր: 5 Այն ժամանակ նրա մօտ

էին գնում բոլոր երուսաղէմացիները,
ամբողջ Հրէաստանն ու Յորդանանի
շրջակայքի ժողովուրդը, 6 մկրտուում
էին նրանից Յորդանան գետում եւ
խոստովանում էին իրենց մեղքերը:
7 Եւ նա տեսնելով սադուկեցիներից եւ
փարիսեցիներից շատերին, որոնք եկել
էին իր մկրտութեանը, ասաց նրանց.
«Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ սովորեց-
րեց փախչել վերահաս բարկութիւնից:
8 Այսուհետեւ ապաշխարութեան ար-
ժանի գործեր կատարեցէ՛ք. 9 եւ մի՛
յաւակնէք ասել դուք ձեզ, թէ՝ Աբրա-
համը մեր հայրն է. ասում եմ ձեզ, որ
Աստուած կարող է այս քարերից էլ
Աբրահամի որդիներ դուրս բերել.
10 որովհետեւ կացինն ահա ծառերի
արմատին է դրուած: Ամէն ծառ, որ
բարի պտուղ չի տայ, կտրուում եւ
կրակն է գցուում: 11 Ես ձեզ ջրով եմ
մկրտում ապաշխարութեան համար,
բայց ով գալիս է ինձնից յետոյ, ինձ-
նից աւելի հզօր է, եւ ես արժանի չեմ
հանելու նրա կօշիկները. նա կը մկրտի
ձեզ Սուրբ Հոգով եւ հրով. նա, 12 որի
քամհարը իր ձեռքում է, եւ կը մաքրի
իր կալը, ցորենը կը հաւաքի իր շտե-
մարանում եւ յարդը կ'այրի անշէջ
կրակով»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 1. 9-11, Ղուկ. 3. 21-22)

13 Այն ժամանակ Յիսուս Գալիլիա-
յից Յորդանան եկաւ, Յովհաննէսի
մօտ՝ նրանից մկրտուելու: 14 Իսկ Յով-
հաննէսն ընդդիմացաւ նրան ու ասաց.
«Ի՛նձ պէտք է, որ քեզնից մկրտուեմ,
եւ դու ի՞նձ մօտ ես գալիս»: 15 Յիսուս
պատասխանեց եւ ասաց նրան. «Թո՛յլ
տուր հիմա, որովհետեւ այսպէս վայել
է, որ մենք կատարենք Աստծու ամէն
արդարութիւն»: Եւ ապա նրան թոյլ
տուեց: 16 Եւ երբ Յիսուս մկրտուեց,
իսկոյն ջրից դուրս ելաւ. եւ ահա
երկինքը բացուեց նրան, եւ նա տեսաւ
Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպէս
աղաւնի եւ գալիս էր իր վրայ: 17 Եւ
ահա՝ մի ձայն երկնքից, որ ասում էր.
«Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ
ամբողջ բարեհաճութիւնը»:

ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ
(Մարկ. 1. 12-13, Ղուկ. 4. 1-13)

4 Դրանից յետոյ Յիսուս անապատ
տարուեց Հոգուց՝ սատանայից փոր-
ձուելու: 2 Եւ քառասուն օր ու քառա-
սուն գիշեր ծոմ պահեց, ապա քաղց
զգաց: 3 Եւ փորձիչը՝ սատանան, մօ-
տենալով նրան՝ ասաց. «Եթէ Աստծու
Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց
լինեն»: 4 Նա պատասխանեց եւ ասաց.
«Գրուած է՝ միայն հացով չի ապրի
մարդ, այլ՝ այն ամէն խօսքով, որ
դուրս է գալիս Աստծու բերանից»:
5 Ապա սատանան նրան տարաւ
սուրբ քաղաքը եւ կանգնեցրեց նրան
տաճարի աշտարակի վրայ ու ասաց
նրան. 6 «Եթէ Աստծու Որդին ես, քեզ
այստեղից ցա՛ծ գցիր, որովհետեւ
գրուած է՝ իր հրեշտակներին պատուի-
րուած է քո մասին, եւ ձեռքերի վրայ
պիտի վերցնեն քեզ, որպէսզի երբեք քո
ոտքը քարին չխփես»: 7 Յիսուս դար-
ձեալ նրան ասաց. «Գրուած է՝ քո Տէր
Աստծուն պիտի չփորձես»:
8 Սատանան նորից նրան առաւ
տարաւ մի շատ բարձր լեռան վրայ եւ
ցոյց տուեց նրան աշխարհի բոլոր
թագաւորութիւններն ու դրանց փառ-
քը եւ նրան ասաց. 9 «Այս բոլորը քեզ
կը տամ, եթէ գետին ընկնելով ինձ
պաշտես»:
10 Այն ժամանակ Յիսուս նրան ա-
սաց. «Ետե՛ւս† գնա, սատանա՛, որով-
հետեւ գրուած է՝ պիտի երկրպագես քո
Տէր Աստծո՛ւն եւ միայն նրա՛ն պիտի
պաշտես»: 11 Ապա սատանան նրան
թողեց. եւ ահա հրեշտակներ մօտեցան
ու ծառայում էին նրան:

ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ
(Մարկ. 1. 14-15, Ղուկ. 4. 14-15)

12 Եւ երբ Յիսուս լսեց, թէ Յով-
հաննէսը բանտարկուել է, մեկնեց
գնաց Գալիլիա: 13 Եւ թողնելով Նա-
զարէթը՝ եկաւ բնակուեց Կափառնա-
ումում, ծովեզերքի մօտ, Զաբուղոնի
եւ Նեփթաղիմի սահմաններում, 14 որ-
պէսզի կատարուի Եսայի մարգարէի

†Լաւագոյն յուն. բն. չունեն ետեւս բառը:

բերանով ասուած խօսքը. 15 «Երկի՛ր Զաբուղոնի եւ երկի՛ր Նեփթաղիմի, ճանապա՛րհ ծովի, միւս ա՛փը Յորդանանի, Գալիլիա՛ հեթանոսների, 16 խաւարի մէջ նստած ժողովուրդը մեծ լոյս տեսաւ. եւ լոյս ծագեց նրանց վրայ, որ նստում էին մահուան երկրի եւ ստուերների մէջ»: 17 Դրանից յետոյ Յիսուս սկսեց քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցել է»:

ՁԿՆՈՐՍՆԵՐԻՑ՝ ԱՌԱՔԵԱԼՆԵՐ
(Մարկ. 1. 16-20, Ղուկ. 5. 1-11)

18 Մինչ Յիսուս Գալիլիայի ծովեզերքով քայլում էր, տեսաւ երկու եղբայրների՝ Սիմոնին, որ Պետրոս էր կոչւում, եւ նրա եղբայր Անդրէասին. ծովի մէջ ուռկան էին գցում, քանի որ ձկնորսներ էին: 19 Եւ նրանց ասաց. «Իմ յետեւի՛ց եկէք, եւ ես ձեզ մարդկանց որսորդներ պիտի դարձնեմ»: 20 Եւ նրանք իսկոյն թողնելով ուռկանները՝ գնացին նրա յետեւից: 21 Եւ այնտեղից առաջ գնալով, տեսաւ երկու այլ եղբայրների՝ Զեբեդէոսի որդի Յակոբոսին եւ նրա եղբայր Յովհաննէսին, մինչ նաւակի մէջ էին իրենց հօր՝ Զեբեդէոսի հետ միասին եւ իրենց ուռկանները կարգի էին բերում. եւ նրանց էլ կանչեց: 22 Նրանք իսկոյն թողնելով նաւակը եւ իրենց հօրը՝ գնացին նրա յետեւից:

23 Եւ Յիսուս շրջում էր Գալիլիայի բոլոր կողմերը, ուսուցանում էր նրանց ժողովարաններում, քարոզում էր արքայութեան Աւետարանը եւ բժշկում ժողովրդի մէջ եղած բոլոր հիւանդութիւններն ու բոլոր ախտերը: 24 Եւ նրա համբաւը տարածուեց ամբողջ Ասորիքում. եւ նրա մօտ բերեցին բոլոր հիւանդներին, որոնք տառապում էին պէսպէս ցաւերով ու տանջանքներով. ե՛ւ դիւահարների, ե՛ւ լուսնոտների, ե՛ւ անդամալոյծների. եւ նրանց բժշկեց: 25 Եւ Գալիլիայից, Դեկապոլսից, Երուսաղէմից, Հրէաստանից եւ Յորդանանի միւս կողմից բազում ժողովուրդ նրա յետեւից էր գնում. եւ բժշկեց նրանց:

ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ

5 Եւ տեսնելով ժողովրդի բազմութիւնը՝ բարձրացաւ լեռան վրայ: Եւ երբ այնտեղ նստեց, նրա մօտ եկան իր աշակերտները. 2 եւ նա սկսեց նրանց ուսուցանել ու ասել.

ԵՐԱՆԻՆԵՐ
(Ղուկ. 6. 20-23)

3 – Երանի՛ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:
4 – Երանի՛ սգաւորներին, որովհետեւ նրանք պիտի մխիթարուեն:
5 – Երանի՛ հեզերին, որովհետեւ նրանք երկիրը պիտի ժառանգեն:
6 – Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարաւն ունեն արդարութեան, որովհետեւ նրանք պիտի յագենան:
7 – Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն պիտի գտնեն:
8 – Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն:
9 – Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն:
10 – Երանի՛ նրանց, որ հալածւում են արդարութեան համար, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:
11 – Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ իմ պատճառով ձեր մասին ամէն տեսակ չար խօսք՝ սուտ ասեն: 12 Ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպէս հալածեցին մարգարէներին, որոնք ձեզնից առաջ են եղել:

ԵՐԿՐԻ ԱՂԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍԸ
(Մարկ. 9. 49, Ղուկ. 14. 34-35)

13 «Դո՛ւք էք երկրի աղը. սակայն եթէ աղը անհամանայ, ինչո՞վ այն կ՚աղուի. այնուհետեւ ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կը թափուի եւ մարդկանց ոտքի կոխան կը լինի: 14 Դո՛ւք էք աշխարհի լոյսը. մի

քաղաք, որ լեռան վրայ է կանգնած, չի կարող թաքնուել: 15 Եւ ճրագ վառելով կաթսայի տակ չեն դնում, այլ՝ աշտանակի վրայ, եւ նա լոյս է տալիս բոլոր նրանց, որ տան մէջ են: 16 Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդկանց առաջ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է»:

ՕՐԷՆՔԻ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

17 «Մի՛ կարծէք, թէ Օրէնքը կամ մարգարէներին ջնջելու եկայ. չեկայ ջնջելու, այլ՝ լրացնելու: 18 Ճշմարիտ եմ ասում ձեզ. մինչեւ որ երկինք ու երկիր անցնեն, մի յոտ իսկ, – որ մի նշանախեց է, – Օրէնքից եւ մարգարէներից չի անցնի, մինչեւ որ այս բոլորը կատարուի: 19 Ով որ այս պատուիրաններից, փոքրերի՛ց անգամ մի բան կը ջնջի եւ մարդկանց այդպէ՛ս կ՚ուսուցանի, երկնքի արքայութեան մէջ փոքր պիտի համարուի. իսկ ով կը կատարի եւ կ՚ուսուցանի, երկնքի արքայութեան մէջ նա մեծ պիտի համարուի: 20 Բայց ասում եմ ձեզ, որ, եթէ ձեր արդարութիւնը աւելի չլինի, քան օրէնսգէտներինը եւ փարիսեցիներինը, երկնքի արքայութիւնը չէք մտնի:

21 Լսել էք, թէ ինչ ասուեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետեւ, ով որ սպանի, ենթակայ կը լինի դատաստանի: 22 Իսկ ես ձեզ ասում եմ, թէ՝ ամէն մարդ, որ զուր տեղը† բարկանում է իր եղբօր վրայ, ենթակայ կը լինի դատաստանի, եւ ով որ իր եղբօրն ասի՝ յիմար, ենթակայ կը լինի ատեանի, եւ ով որ իր եղբօրն ասի՝ ապուշ, ենթակայ կը լինի գեհենի կրակին: 23 Եթէ սեղանի վրայ քո ընծան մատուցելու լինես եւ այնտեղ յիշես, թէ քո եղբայրը քո դէմ մի ոխ ունի, 24 քո ընծան թո՛ղ սեղանի առաջ եւ գնա՛ նախ հաշտուի՛ր քո եղբօր հետ եւ ապա ե՛կ քո ընծան մատուցի՛ր: 25 Եթէ մէկը քեզ հետ խնդիր ունի եւ քեզ դատի է կանչում, մինչ նրա հետ դեռ ճանապարհին ես, եղի՛ր իրաւախոհ կանխաւ. գուցէ նա քեզ դատաւորին յանձնի, եւ դատաւորը՝ դահճին, ու դու բանտ նետուես: 26 Ճշմարիտ եմ ասում քեզ, այնտեղից դուրս չես գայ, մինչեւ չվճարես վերջին դահեկանը:

27 Լսել էք, թէ ինչ ասուեց. «Մի՛ շնանար». 28 իսկ ես ձեզ ասում եմ. ամէն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում: 29 Եթէ քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն եւ դէ՛ն գցիր քեզնից. որովհետեւ քեզ համար լաւ է, որ քո անդամներից մէկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն: 30 Եւ եթէ քո աջ ձեռքը քեզ գայթակղեցնում է, կտրի՛ր այն եւ դէ՛ն գցիր քեզնից. որովհետեւ քեզ համար լաւ է, որ քո անդամներից մէկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն: 31 Արդարեւ ասուել է. «Ով որ արձակի իր կնոջը, թող նրան արձակման թուղթը տայ»: 32 Իսկ ես ձեզ ասում եմ. ամէն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկութեան պատճառի, նա՛ է, որ նրան շնութեան է մղում. եւ ով որ արձակուածին է առնում, շնանում է:

33 Լսել էք դարձեալ, թէ ինչ ասուեց նախնիներին. «Երդմնազանց մի՛ լինիր, այլ արա՛ Տիրոջն այն, ինչ երդուել ես»: 34 Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենեւի՛ն չերդուել. ո՛չ երկնքի վրայ, որովհետեւ Աստծու աթոռն է, 35 ո՛չ երկրի վրայ, որովհետեւ նրա ոտքերին պատուանդան է, եւ ո՛չ Երուսաղէմի վրայ, որովհետեւ մեծ Արքայի քաղաքն է: 36 Եւ քո գլխով էլ չերդուես, որովհետեւ չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սեւ դարձնել: 37 Այլ ձեր խօսքը լինի՝ այո՝ այո, եւ ոչը՝ ոչ. որովհետեւ դրանից աւելին չարից է:

38 Լսել էք՝ ինչ ասուեց. «Աչքի փոխարէն՝ աչք եւ ատամի փոխարէն՝ ատամ»: 39 Իսկ ես ձեզ ասում եմ. չարին հակառակ չկանգնե՛լ. այլ եթէ մէկը քո աջ ծնօտին ապտակ տայ, նրան մի՛ւսն էլ դարձրու: 40 Եւ եթէ մէկը կամենայ քեզ բռնադատել եւ քո շապիկն առնել, նրան քո բաճկո՛նն էլ թող: 41 Եւ եթէ մէկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ

†Յուն. լաւ բն. չուենն զուր տեղը բառերը:

երկո՛ւ էլ գնա: 42 Տո՛ւր նրան, ով
քեզնից խնդրում է. եւ ով կամենում է
քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու
նրանից:
43 Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց.
«Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ատես
քո թշնամուն»: 44 Իսկ ես ձեզ ասում
եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհ-
նեցէ՛ք ձեզ անիծողներին, բարութի՛ւն
արէք ձեզ ատողներին† եւ աղօթեցէ՛ք
նրանց համար, որ չարչարում են ձեզ
եւ հալածում, 45 որպէսզի որդիները
լինէք ձեր Հօր, որ երկնքում է. քանի որ
նա իր արեգակը ծագեցնում է չարերի
եւ բարիների վրայ եւ անձրեւ է թա-
փում արդարների եւ մեղաւորների
վրայ: 46 Եթէ սիրէք միայն նրանց,
որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ
է. չէ՞ որ մաքսաւորներն‡ էլ նոյնն են
անում: 47 Եւ եթէ միայն ձեր բարեկամ-
ներին ողջոյն տաք, ի՞նչ աւելի բան էք
անում. չէ՞ որ մաքսաւորներն ու
մեղաւորները նոյնն են անում: 48 Արդ,
կատարեա՛լ եղէք դուք, ինչպէս որ ձեր
երկնաւոր Հայրն է կատարեալ»:

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ՝ ԳԱՂՏՆԱԲԱՐ

6 «Զգո՛յշ եղէք, որ ձեր ողորմու-
թիւնը§ մարդկանց առջեւ չանէք, որ-
պէս թէ այն լինէր ի ցոյց նրանց.
այլապէս վարձ չէք ընդունի ձեր
Հօրից, որ երկնքում է: 2 Այլ երբ
ողորմութիւն անես, փող մի՛ հնչեցրու
քո առջեւ, ինչպէս անում են կեղ-
ծաւորները ժողովարաններում եւ
Հրապարակներում, որպէսզի փառաւո-
րուեն մարդկանցից: Ճշմարիտ եմ
ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:
3 Այլ երբ դու ողորմութիւն անես, թող
քո ձախ ձեռքը չիմանայ, թէ ինչ է
անում քո աջը, 4 որպէսզի քո ողոր-
մութիւնը ծածուկ լինի, եւ քո Հայրը,
որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը
հատուցի քեզ յայտնապէս* »:

†Լաւագոյն յուն. բն. չունեն օրհնեցէ՛ք... ատողներին նախադասութիւնները:
‡Լաւագոյն յուն. բն. մաքսաւորները բառի փոխարէն ունի հեթանոսները:
§Այսինքն՝ կրօնական պարտաւորութիւնը:
*Լաւագոյն յուն. բն. չունեն յայտնապէս բառը:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ
(Ղուկ. 11. 2-4)

5 «Եւ երբ աղօթես, չլինե՛ս կեղ-
ծաւորների նման, որոնք սիրում են
ժողովարաններում եւ Հրապարակների
անկիւններում աղօթքի կանգնել, որ-
պէսզի մարդկանց երեւան. ճշմարիտ եմ
ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:
6 Այլ դու երբ աղօթես, մտի՛ր քո սե-
նեակը, փակի՛ր քո դռները եւ ծածո՛ւկ
աղօթիր քո Հօրը, եւ քո Հայրը, որ տես-
նում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի
քեզ յայտնապէս:
7 Աղօթք անելիս չատախօս մի՛ լի-
նէք ինչպէս հեթանոսները, որովհետեւ
նրանք կարծում են, թէ իրենց շատ
խօսքերի պատճառով լսելի կը լինեն:
8 Արդ, նրանց չնմանուէ՛ք, որովհետեւ
ձեր Հայրը գիտէ, թէ ինչ է ձեզ պէտք,
նախքան որ դուք նրանից մի բան
ուզէք: 9 Եւ արդ, դուք այսպէ՛ս աղո-
թեցէք».

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

«Հա՛յր մեր, որ երկնքում ես. սո՛ւրբ
թող լինի քո անունը. 10 քո թագա-
ւորութի՛ւնը թող գայ. քո կա՛մքը թող
լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում
է՛. 11 մեր հանապազօրեայ հացը տո՛ւր
մեզ այսօր. 12 եւ ների՛ր մեզ մեր յան-
ցանքները, ինչպէս որ մենք ենք նե-
րում նրանց, որ յանցանք են գործում
մեր դէմ. 13 եւ մի՛ տար մեզ փոր-
ձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից.
որովհետեւ քո՛նն է թագաւորութիւնը
եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս.
ամէն† :
14 Եթէ դուք մարդկանց ներէք
իրենց յանցանքները, ձեր երկնաւոր
Հայրն էլ ձեզ կը ների: 15 Իսկ եթէ
դուք մարդկանց չներէք իրենց յան-
ցանքները, ձեր Հայրն էլ ձե՛զ չի ների
ձեր յանցանքները»:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

16 «Երբ ծոմ պահէք, տրտմերես մի՛

†Յունարէնը չունի որովհետեւ... ամէն նախադասութիւնը:

լինէք կեղծաւորների նման, որոնք
իրենց երեսները այլանդակում են,
որպէսզի մարդկանց այնպէս երեւան,
թէ ծոմ են պահում. ճշմարիտ եմ
ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:
17 Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո
գլուխը եւ լուա՛ քո երեսը, 18 որպէսզի
չերեւաս մարդկանց որպէս ծոմ պահող,
այլ քո Հօրը՝ գաղտնաբար. եւ քո
Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է,
կը հատուցի քեզ»:

ՁՇՄԱՐԻՏ ԳԱՆՁԸ
(Ղուկ. 12. 33-34, 11. 34-36)

19 «Գանձեր մի՛ դիզէք ձեզ համար
երկրի վրայ, ուր ցեց եւ ժանգ ոչնչաց-
նում են, եւ ուր գողեր պատերն են
ծակում ու գողանում, 20 այլ գանձեր
դիզեցէ՛ք ձեզ համար երկնքում, որտեղ
ո՛չ ցեց եւ ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, եւ
ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու
գողանում. 21 քանի որ, ուր ձեր գան-
ձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կը
լինեն:
22 Մարմնի ճրագը աչքն է. եթէ քո
աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը
լուսաւոր կը լինի: 23 Իսկ եթէ քո աչքը
պղտոր է, քո ամբողջ մարմինը խաւար
կը լինի: Եւ արդ, եթէ քո մէջ եղած
լոյսը խաւար է, ապա խաւարը՝ որչա՛փ
եւս աւելի»:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՄԱՄՈՆԱՅ
(Ղուկ. 16. 13, 12. 22-31)

24 «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ
ծառայել. կա՛մ մէկին կ'ատի եւ միւսին
կը սիրի, կա՛մ մէկին կը մեծարի եւ
միւսին կ'արհամարհի. չէք կարող
ծառայել Աստծուն եւ՝ մամոնային»:

ԱՊԱՒԻՆՈՒՄ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆԸ

25 «Դրա համար ասում եմ ձեզ. ձեր
կեանքի համար հոգ մի՛ արէք, թէ ի՛նչ
պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, եւ
ոչ էլ ձեր մարմնի համար, թէ ի՛նչ
պիտի հագնէք. չէ՞ որ կեանքը աւելին
է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան
զգեստը: 26 Նայեցէ՛ք երկնքի թռչուն-
ներին. ո՛չ վարում են, ո՛չ հնձում եւ
ո՛չ էլ շտեմարանների մէջ հաւաքում.
եւ ձեր երկնաւոր Հայրը կերակրում է
նրանց. չէ՞ որ դուք աւելին էք, քան
նրանք: 27 Եւ արդ, ձեզնից ո՞վ կարող
է հոգս անելով՝ իր հասակի վրայ մէկ
կանգուն աւելացնել: 28 Եւ հագուստի
համար ինչո՞ւ էք հոգս անում. նայե-
ցէ՛ք վայրի շուշանին, ինչպէ՛ս է
աճում. ո՛չ ջանք է թափում եւ ո՛չ
հիւսում: 29 Ասում եմ ձեզ, որ Սողո-
մոնն իսկ, իր ամբողջ փառքի մէջ,
չհագնուեց նրանցից մէկի նման:
30 Իսկ եթէ դաշտի միջի խոտին, որ
այսօր կայ եւ վաղը հնոց կը նետուի,
այդպէ՛ս է հագցնում Աստուած, որ-
քա՛ն եւս առաւել՝ ձե՛զ, թերահա-
ւատնե՛ր: 31 Այսուհետեւ հոգ մի՛ արէք
ու մի՛ ասէք՝ ի՛նչ պիտի ուտենք կամ
ի՛նչ պիտի խմենք կամ ի՛նչ պիտի
հագնենք, 32 որովհետեւ հեթանոսներն
են այդ բոլորը որոնում. քանի որ ձեր
երկնաւոր Հայրը գիտէ, թէ այդ բոլորը
ձեզ պէտք է: 33 Նախ խնդրեցէ՛ք
Աստծու արքայութիւնը եւ նրա արդա-
րութիւնը, եւ այդ բոլորը Աստուած ձեզ
աւելիով կը տայ: 34 Այսուհետեւ հոգ
մի՛ արէք վաղուայ մասին, որովհետեւ
վաղուայ օրը իր մասին կը հոգայ.
օրուայ հոգսը բաւ է օրուայ համար»:

ՄԻ՛ ԴԱՏԻՐ
(Ղուկ. 6. 37-38, 41-42, 11. 9-13)

7 «Մի՛ դատէք, որ Աստծուց չդա-
տուէք. 2 որովհետեւ ինչ դատաստա-
նով, որ դատէք, նրանով էք
դատուելու. եւ ինչ չափով, որ չափում
էք, նրանով պիտի չափուի ձեզ համար:
3 Ինչո՞ւ քո եղբօր աչքի մէջ շիւղը
տեսնում ես, իսկ քո աչքի մէջ գերանը
չես տեսնում. 4 կամ ինչպէ՞ս քո
եղբօրն ասում ես՝ թո՛ղ որ հանեմ այդ
շիւղը քո աչքից, եւ ահա քո աչքում
գերան կայ: 5 Կեղծաւո՛ր, նախ հանի՛ր
քո աչքից այդ գերանը եւ ապա յստակ
կը տեսնես՝ քո եղբօր աչքից շիւղը
հանելու համար:
6 Մի՛ տուէք սրբութիւնը շներին. եւ
ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛
գցէք, որպէսզի դրանք ոտքի կոխան

չանեն եւ դառնալով ձեզ չպատառոտեն:
7 Խնդրեցէ՛ք Աստծուց, եւ նա կը տայ ձեզ, փնտռեցէ՛ք եւ կը գտնէք, բախեցէ՛ք, եւ կը բացուի ձեր առաջ. 8 որովհետեւ, ով որ ուզի, ստանում է, ով որ փնտռի, գտնում է, եւ ով որ բախի, նրա առաջ կը բացուի: 9 Ձեզնից ո՞վ է այն մարդը, որից իր որդին եթէ հաց ուզի, միթէ քա՞ր կը տայ նրան. 10 եւ կամ եթէ ձուկ ուզի, միթէ օ՞ձ կը տայ նրան: 11 Արդ, եթէ դուք, որ չար էք, գիտէք ձեր որդիներին բարի պարգեւներ տալ, որքա՜ն եւս առաւել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կը տայ նրանց, որ նրանից ուզում են»:

ՈՍԿԷ ՕՐԷՆՔ

12 «Այն ամէնը, ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպէս եւ դո՛ւք արէք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրէնքն ու մարգարէները»:

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ
(Ղուկ. 13. 24)

13 «Մտէ՛ք նեղ դռնով. ինչքա՜ն լայն է դուռը եւ ընդարձակ՝ ճանապարհը, որ դէպի կորուստ է տանում, եւ բազմաթիւ են նրանք, որ մտնում են դրանով: 14 Ինչքա՜ն անձուկ է դուռը եւ նեղ՝ ճանապարհը, որ տանում է դէպի կեանք, եւ սակաւաթիւ են նրանք, որ գտնում են այն»:

ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ
(Ղուկ. 6. 43-44)

15 «Զգո՛յշ եղէք սուտ մարգարէներից, որոնք մօտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից յափշտակող գայլեր են: 16 Իրենց գործերի՛ց կը ճանաչէք նրանց. միթէ փշերից խաղող եւ տատասկից թուզ կը քաղե՞ն: 17 Այսպէս, ամէն բարի ծառ բարի պտուղ է տալիս, եւ չար ծառ չար պտուղ է տալիս: 18 Լաւ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ վատ ծառը՝ լաւ պտուղ տալ: 19 Ամէն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրւում եւ կրակն է նետւում: 20 Ուրեմն՝ իրենց գործերի՛ց կը ճանաչէք նրանց»:

ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ
(Ղուկ. 13. 25-27, 6. 47-49)

21 «Ոչ ամէն մարդ, որ ինձ «Տէ՛ր, Տէ՛ր» է ասում, երկնքի արքայութիւն կը մտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հօր, որ երկնքում է: 22 Այն օրը շատերն ինձ պիտի ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունով մարգարէացանք եւ քո անունով դեւեր հանեցինք եւ քո անունով բազում զօրաւոր գործեր արեցինք»: 23 Եւ այն ժամանակ ես նրանց պիտի ասեմ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացէք ինձանից դուք ամէնքդ, որ անօրէնութիւն էք գործում»:

24 Ով որ լսում է իմ այս խօսքերը եւ կատարում է դրանք, կը նմանուի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրայ. 25 անձրեւները թափուեցին, եւ գետերը յորդեցին, հողմերը փչեցին եւ զարկեցին այդ տանը, բայց չկործանուեց, որովհետեւ ժայռի վրայ էր հաստատուած: 26 Իսկ ով որ լսում է իմ այս խօսքերը եւ դրանք չի կատարում, կը նմանուի մի յիմար մարդու, որ իր տունը շինեց աւազի վրայ. 27 անձրեւները թափուեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին եւ զարկեցին տանը, եւ նա ընկաւ. եւ նրա կործանումը շատ մեծ եղաւ»:

28 Երբ Յիսուս այս բոլոր խօսքերն աւարտեց, ժողովուրդը զարմանում էր նրա վարդապետութեան վրայ. 29 որովհետեւ ուսուցանում էր ինչպէս մէկը, որ հեղինակութիւն ունի եւ ոչ թէ՝ ինչպէս օրէնսգէտները:

ԲՈՐՈՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 1. 40-45, Ղուկ. 5. 12-16)

8 Երբ Յիսուս իջաւ լեռից, նրա յետեւից շատ ժողովուրդ գնաց: 2 Եւ ահա մի բորոտ մօտենալով՝ նրան երկրպագում էր ու ասում. «Տէ՛ր, եթէ կամենաս, կարող ես ինձ մաքրել»: 3 Յիսուս իր ձեռքը երկարեց, դիպցրեց նրան եւ ասաց. «Կամենում եմ, մաքրուի՛ր»: Եւ իսկոյն բորոտութիւնը նրանից մաքրուեց: 4 Եւ Յիսուս նրան ասաց. «Զգո՛յշ եղիր, ոչ ոքի չասես, այլ գնա՛ դու քեզ ցո՛յց տուր քահանային եւ մատուցի՛ր Մովսէսի հրամայած ընծան՝ նրանց իբրեւ վկայութիւն»:

ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ԾԱՌԱՅԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Ղուկ. 7. 1-10)

5 Կապառնայում մտնելիս նրան մօտեցաւ մի հարիւրապետ. աղաչում էր նրան 6 եւ ասում. «Տէ՛ր, ծառաս տանը անդամալոյծ ընկած է եւ չարաչար տանջւում է»: 7 Յիսուս նրան ասաց. «Ես կը գամ եւ կը բժշկեմ նրան»: 8 Հարիւրապետը պատասխանեց եւ ասաց. «Տէ՛ր, ես արժանի չեմ, որ դու իմ յարկի տակ մտնես. այլ խօսքո՛վ ասա, եւ իմ ծառան կը բժշկուի. 9 քանի որ ես էլ իշխանութեան տակ եղող մարդ եմ, ինձ ենթակայ զինուորներ ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, եւ գնում է, եւ մի ուրիշին, թէ՝ ե՛կ, եւ գալիս է. եւ իմ ծառային, թէ՝ արա՛ այս, եւ անում է»: 10 Երբ Յիսուս այս լսեց, զարմացաւ եւ իր հետ գնացողներին ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, Իսրայէլի մէջ իսկ այսպիսի հաւատ չգտայ երբեք: 11 Բայց ասում եմ ձեզ, որ արեւելքից եւ արեւմուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայութեան մէջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի հետ. 12 իսկ արքայութեան որդիները պիտի ելնեն† արտաքին խաւարը. այնտեղ պիտի լինի լաց եւ ատամների կրճտում»: 13 Եւ Յիսուս Հարիւրապետին ասաց. «Գնա՛, եւ ինչպէս հաւատացիր, այնպէս թող լինի քեզ»: Եւ այդ նոյն ժամին նրա ծառան առողջացաւ:

ԲԺՇԿՈՒՄՆԵՐ ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄՈՒՄ
(Մարկ. 1. 29-34, Ղուկ. 4. 38-40, 9. 57-62)

14 Յիսուս Պետրոսի տունը գալով՝ տեսաւ, որ նրա զոքանչը տաքութեան մէջ պառկած էր: 15 Բռնեց նրա ձեռքից, եւ ջերմութիւնը նրան թողեց. ոտքի կանգնեց եւ ծառայում էր նրանց:
16 Երբ երեկոյ եղաւ, նրա մօտ բազում դիւահարներ բերեցին, եւ նա խօսքով դեւերին հանեց ու բոլոր հիւանդներին բժշկեց, 17 որպէսզի կատարուի Եսայի մարգարէի բերանով ասուած խօսքը. «Նա մեր հիւանդութիւնները իր վրայ վերցրեց եւ մեր ցաւերը կրեց»:
18 Յիսուս իր շուրջը բազում ժողովուրդ տեսնելով՝ հրամայեց միւս կողմ գնալ: 19 Եւ մի օրէնսգէտ, մօտենալով, ասաց նրան. «Վարդապե՛տ, ես էլ քո յետեւից կը գամ, ուր էլ որ գնաս»: 20 Յիսուս նրան ասաց. «Աղուէսները որջ ունեն, եւ երկնքի թռչունները՝ բոյն. բայց մարդու Որդին մի տեղ չունի, որ իր գլուխը դնի»: 21 Եւ իր աշակերտներից մէկն ասաց. «Տէ՛ր, ինձ թո՛յլ տուր, որ գնամ նախ իմ հօրը թաղեմ»: 22 Յիսուս նրան ասաց. «Դու իմ յետեւի՛ց արի եւ թո՛յլ տուր, որ մեռեալնե՛րը թաղեն իրենց մեռելներին»:

ՓՈԹՈՐԿԻ ԽԱՂԱՂԵՑՈՒՄ
(Մարկ. 4. 35-41, Ղուկ. 8. 22-25)

23 Երբ նա նաւակ մտաւ, նրա յետեւից գնացին իր աշակերտները: 24 Եւ ահա ծովի վրայ մեծ փոթորիկ առաջացաւ, այնքան, որ նաւակը ծածկուեց ալիքներից: Իսկ ինքը ննջում էր: 25 Եւ աշակերտները մօտենալով՝ վեր կացրին նրան ու ասացին. «Տէ՛ր, փրկի՛ր մեզ, որովհետեւ կորչում ենք»: 26 Նրանց ասաց. «Ինչո՞ւ էք վախկոտ, թերահաւատնե՛ր»: Այն ժամանակ, վեր կենալով, սաստեց հողմերին եւ ծովին, ու մեծ խաղաղութիւն եղաւ: 27 Եւ մարդիկ զարմացան ու ասում էին. «Ինչպիսի՛ մէկն է սա, որ հողմերն ու ծովը հնազանդւում են սրան»:

ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 5. 1-20, Ղուկ. 8. 26-39)

28 Եւ երբ այն կողմ, գերգեսացիների երկիրն անցաւ, նրան պատահեցին գերեզմաններից ելած երկու դիւահար, այնքան սաստիկ կատաղած, որ այդ

†Յուն. լաւ բն. պիտի ելնեն-ի փոխարէն ունեն պիտի գցուեն:

ճանապարհով որեւէ մէկը չէր կարող անցնել: 29 Եւ ահա նրանք աղաղակեցին ու ասացին. «Ի՞նչ կայ մեր եւ քո միջեւ, Յիսո՛ւս, Որդի՛ Աստծու, մեզ տարաժամ տանջելո՞ւ եկար»: 30 Եւ նրանցից քիչ հեռու արօտական խոզերի մի երամակ կար: 31 Եւ դեւերը աղչում էին նրան ու ասում. «Թէ մեզ այստեղից հանես, մեզ թո՛յլ տուր գնալ խոզերի երամակը»: 32 Եւ նա նրանց ասաց՝ գնացէ՛ք: Դեւերը դուրս ելնելով՝ գնացին խոզերի երամակ: Եւ ամբողջ երամակը դարաւանդից դիմեց դէպի ծով, ու ջրերի մէջ սատկեցին: 33 Իսկ խոզարածները փախան եւ քաղաք գնալով՝ պատմեցին ամէն ինչ, նաեւ՝ դիւահարների դէպքը: 34 Եւ ահա ամբողջ քաղաքը Յիսուսին ընդառաջ ելաւ. երբ նրան տեսան, աղաչեցին, որ իրենց սահմաններից հեռու գնայ:

ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 2. 1-12, Ղուկ. 5. 17-26)

9 Եւ նաւակ մտնելով՝ Յիսուս անցաւ ծովի միւս կողմը. եւ եկաւ իր քաղաքը: 2 Եւ ահա նրա մօտ բերեցին մի անդամալոյծ, որ պառկած էր մահճի մէջ: Յիսուս նրանց հաւատը տեսնելով՝ ասաց անդամալոյծին. «Քո մեղքերը քեզ ներուած են»: 3 Եւ ահա օրէնսգէտներից ոմանք իրենց մտքում ասացին՝ դա հայհոյում է: 4 Եւ Յիսուս իմանալով նրանց մտածումները՝ նրանց ասաց. «Ինչո՞ւ դուք ձեր սրտերում չար բան էք խորհում. 5 ի՞նչն է դիւրին. ասել՝ քեզ ներուա՞ծ են քո մեղքերը, թէ՞ ասել՝ վե՛ր կաց եւ քայլի՛ր: 6 Արդ, որպէսզի իմանաք, որ մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը ներելու, – ասաց նա այդ ժամանակ անդամալոյծին, – վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛ քո տունը»: 7 Եւ նա վեր կենալով՝ իր տունը գնաց: 8 Երբ ժողովուրդը այս տեսաւ, զարմացաւ†. եւ փառաւորում էր Աստծուն՝ մարդկանց այսպիսի իշխանութիւն տուողին:

†Լաւագոյն յուն. բն. զարմացաւ բառի փոխարէն ունեն վախեցաւ:

ՄԱՏԹԷՈՍԻ ԿՈՉՈՒՄԸ
(Մարկ. 2. 13-17, Ղուկ. 5. 27-32)

9 Եւ Յիսուս այնտեղով անցնելով՝ տեսաւ Մատթէոս անունով մի մարդու, որ նստել էր մաքսատանը, ու նրան ասաց. «Իմ յետեւի՛ց արի»: Եւ նա վեր կենալով՝ գնաց նրա յետեւից: 10 Եւ երբ Յիսուս նրա տանը սեղան էր նստել, ահա բազմաթիւ մաքսաւորներ ու մեղաւորներ եկան բազմեցին Յիսուսի եւ նրա աշակերտների հետ: 11 Երբ փարիսեցիները այդ տեսան, ասացին նրա աշակերտներին. «Ինչո՞ւ է ձեր վարդապետը մաքսաւորների ու մեղաւորների հետ ուտում»: 12 Իսկ Յիսուս, երբ լսեց, նրանց ասաց. «Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին: 13 Գնացէ՛ք, սովորեցէ՛ք, թէ ինչ է նշանակում՝ ողորմութիւն եմ կամենում եւ ոչ՝ զոհ. քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղաւորներին:

ՎԵՑ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 2. 18-22, Ղուկ. 5. 33-39)

14 Այն ժամանակ Յովհաննէսի աշակերտները մօտեցան նրան եւ ասացին. «Ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները յաճախ ծոմ ենք պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»: 15 Յիսուս նրանց ասաց. «Միթէ կարելի՞ բան է, որ հարսանքաւորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է. բայց կը գան օրեր, երբ փեսան նրանցից կը վերցուի, եւ ապա ծոմ կը պահեն: 16 Ոչ ոք չօգտագործուած կտաւի կտորը հնացած ձորձի վրայ չի կարկատի, քանի որ այն իր լրիւ չափով կը պատռի կը հանի զգեստից, եւ պատռուածքը աւելի վատ կը լինի: 17 Ոչ էլ նոր գինին հին տիկերի մէջ են դնում. ապա թէ ոչ տիկերը կը պատռուեն. ե՛ւ գինին դուրս կը թափուի, ե՛ւ տիկերը կը փչանան. այլ նոր գինին նոր տիկերի մէջ են լցնում, եւ երկուսն էլ պահւում են»:

ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԿԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 5. 21-43, Ղուկ. 8. 40-56)

18 Մինչ Յիսուս նրանց այս բաներն էր ասում, ահա մի իշխանաւոր, մօտենալով, երկրպագեց նրան ու ասաց. «Իմ դուստրը հէնց նոր մեռաւ, սակայն գայիր եւ քո ձեռքը նրա վրայ դնէիր, եւ նա կը կենդանանար»: 19 Յիսուս վեր կացաւ եւ իր աշակերտների հետ միասին գնաց նրա յետեւից:

20 Եւ ահա տասներկու տարուց ի վեր արիւնահոսութիւն ունեցող մի կին, յետեւից մօտենալով Յիսուսին, դիպաւ նրա զգեստի քղանցքին, 21 քանի որ մտքում ասում էր. «Եթէ միայն դիպչեմ նրա զգեստին, կը փրկուեմ»: 22 Իսկ Յիսուս, երբ դարձաւ ու նրան տեսաւ, ասաց. «Քաջալերուի՛ր, դո՛ւստր, քո հաւա՛տը քեզ փրկեց»: Եւ նոյն ժամին կինը բժշկուեց:

23 Երբ Յիսուս իշխանաւորի տունը եկաւ եւ տեսաւ փողհարներին ու մեծ ամբոխ, 24 նրանց ասաց. «Հեռո՛ւ գնացէք, որովհետեւ այդ աղջիկը ոչ թէ մեռած է, այլ ննջում է». 25 եւ նրանք ծաղրում էին նրան: Եւ երբ ամբոխը դուրս ելաւ, նա ներս մտաւ, բռնեց նրա ձեռքից, եւ աղջիկը վեր կացաւ: 26 Եւ այս լուրը ամբողջ այդ երկրով մէկ տարածուեց:

ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐԻ ԵՒ ՀԱՄՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ

27 Եւ մինչ Յիսուս անցնում էր այն տեղով, երկու կոյրեր գնացին նրա յետեւից. նրանք աղաղակում էին ու ասում. «Ողորմի՛ր մեզ, Դաւթի՛ Որդի»: 28 Երբ նա տուն եկաւ, կոյրերը մօտեցան նրան: Յիսուս նրանց ասաց. «Հաւատո՞ւմ էք, որ ես այդ բանը ձեզ կարող եմ անել»: Նրանք ասացին նրան՝ այո՛, Տէ՛ր: 29 Այն ժամանակ դիպաւ նրանց աչքերին եւ ասաց. «Ըստ ձեր հաւատի թող լինի ձեզ»: 30 Եւ բացուեցին նրանց աչքերը: Եւ Յիսուս նրանց խստիւ պատուիրեց եւ ասաց. «Զգո՛յշ կացէք, ոչ ոք չիմանայ»: 31 Իսկ նրանք ելան եւ նրա համբաւը տարածեցին ամբողջ այդ երկրում:

32 Եւ երբ նրանք դուրս եկան, ահա նրա մօտ բերեցին մի համր, դիւահար մարդ: 33 Եւ երբ դեւը դուրս եկաւ, համրը խօսեց. եւ ժողովուրդը զարմացաւ ու ասաց. «Այսպիսի բան Իսրայէլում երբեք տեսնուած չէ»: 34 Իսկ փարիսեցիներն ասում էին. «Դա դեւերի իշխանի միջոցով է հանում դեւերին»:

35 Եւ Յիսուս շրջում էր բոլոր քաղաքներում եւ գիւղերում, ուսուցանում նրանց ժողովարաններում, քարոզում արքայութեան Աւետարանը եւ բժշկում էր ժողովրդի բոլոր ախտերն ու հիւանդութիւնները: 36 Եւ տեսնելով ժողովրդի բազմութիւնը՝ Յիսուս գթաց նրանց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած, ինչպէս ոչխարներ, որոնք հովիւ չունեն: 37 Այն ժամանակ իր աշակերտներին ասաց. «Հունձը առատ է, իսկ մշակները՝ սակաւ: 38 Արդ, աղաչեցէ՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ հանի իր հնձի համար»:

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 3. 13-19, 6. 7-13, Ղուկ. 6. 12-16, 9. 1-6)

10 Եւ նա իր մօտ կանչելով իր տասներկու աշակերտներին՝ նրանց իշխանութիւն տուեց պիղծ դեւերի վրայ՝ հանելու դրանք եւ բժշկելու ամէն ցաւ եւ ամէն հիւանդութիւն: 2 Եւ տասներկու առաքեալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչուածը, եւ նրա եղբայրը Անդրէաս, 3 Զեբեդէոսի որդի Յակոբոս եւ նրա եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Ալփէոսի որդի Յակոբոս եւ Ղեբէոս†, որ Թադէոս կոչուեց, 4 Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեց նրան: 5 Նրանց Տասներկուսին Յիսուս ուղարկեց, պատուիրեց նրանց ու ասաց. «Հեթանոսների շրջաններով չգնաք եւ սամարացիների որեւէ քաղաքը չմտնէք, 6 այլ աւելի շուտ գնացէ՛ք Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ: 7 Եւ երբ գնաք, քարոզեցէ՛ք եւ ասացէ՛ք. «Երկնքի արքայութիւնը մօտեցել է»: 8 Հիւանդներին

†Լաւագոյն յուն. բն. ունեն Ալփէոսի որդի Յակորոս եւ Թադէոս:

բժշկեցէ՛ք†, բորոտներին մաքրեցէ՛ք,
դեւերին հանեցէ՛ք, ձրի առաք, ձրի էլ
տուէ՛ք: 9 Մի՛ ունեցէք ո՛չ ոսկի, ո՛չ
արծաթ եւ ո՛չ էլ պղինձ դրամ՝ ձեր
գօտիների մէջ. 10 ո՛չ պարկ՝ ճանա-
պարհի համար. ո՛չ երկու զգեստ, ո՛չ
կօշիկներ եւ ո՛չ էլ ցուպ. որովհետեւ
մշակն արժանի է իր կերակրին: 11 Որ
քաղաքը կամ գիւղը մտնէք, հարցրէ՛ք,
թէ ո՞վ է այնտեղ արժանաւորը, եւ
այնտեղ մնացէ՛ք, մինչեւ որ այդտեղից
դուրս ելնէք: 12 Եւ երբ այն տունը
մտնէք, ողջո՛յն տուէք նրան ու ասա-
ցէ՛ք. «Ողջո՛յն այս տանը»: 13 Եթէ
տունն արժանի է, ձեր ողջոյնը նրա
վրայ թող իջնի. իսկ եթէ արժանի չէ,
ձեր ողջոյնը ձեզ թող վերադառնայ:
14 Եւ եթէ մի քաղաք չընդունի ձեզ եւ
չլսի ձեր խօսքերը, այդ քաղաքից դուրս
գնալիս՝ ձեր ոտքերից փոշին թօթա-
փեցէ՛ք: 15 Ճշմարիտ եմ ասում ձեզ,
սոդոմացիների եւ գոմորացիների երկրի
համար աւելի հեշտ պիտի լինի դա-
տաստանի օրը, քան այդ քաղաքի
համար»:

ՎԵՐԱՀԱՍ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԴԷՄ
(Մարկ. 13. 9-13, Ղուկ. 21. 12-17, 12. 2-9)

16 «Ահա ես ձեզ ուղարկում եմ որ-
պէս ոչխարներ՝ գայլերի մէջ: Այսու-
հետեւ խորագէ՛տ եղէք օձերի պէս եւ
միամիտ՝ աղաւնիների նման: 17 Զգու-
շացէ՛ք մարդկանցից, որովհետեւ պիտի
մատնեն ձեզ ատեանների եւ պիտի
տանջեն ձեզ իրենց ժողովարաններ-
ում. 18 ձեզ պիտի տանեն կուսակալ-
ների ու թագաւորների առաջ իմ պատ-
ճառով, որ իմ մասին վկայութիւն տաք
նրանց եւ հեթանոսներին: 19 Բայց երբ
ձեզ մատնեն, հոգ մի՛ արէք, թէ
ինչպէս կամ ինչ պիտի խօսէք, որով-
հետեւ այդ ժամին ձեզ կը տրուի այն,
ինչ պիտի խօսէք. 20 քանի որ ոչ թէ
դուք էք, որ պիտի խօսէք, այլ ձեր Հօր
Հոգին, որ պիտի խօսի ձեր միջոցով:
21 Եղբայրն իր եղբօրը մահուան պիտի
մատնի, եւ հայրը՝ որդուն: Եւ որդիները
հայրերի դէմ պիտի ելնեն ու նրանց
պիտի սպանեն: 22 Եւ իմ անուան հա-
մար բոլորից պիտի ատուէք. իսկ ով
մինչեւ վերջ համբերի, նա պիտի
փրկուի:
23 Եւ երբ ձեզ հալածեն այս քա-
ղաքում, կը փախչէք դէպի մէկ ուրիշը.
եւ եթէ ձեզ դրանից էլ հալածեն, կը
փախչէք դէպի այն միւսը†: Ճշմարիտ
եմ ասում ձեզ, Իսրայէլի քաղաքները
դեռ վերջացրած պիտի չլինէք, նախ-
քան մարդու Որդու գալը: 24 Աշակերտը
աւելին չէ, քան վարդապետը, եւ ոչ էլ
ծառան՝ քան իր տէրը: 25 Աշակերտին
հերիք է, եթէ լինի իր վարդապետի
նման, եւ ծառային՝ իր տիրոջ նման.
եթէ տանտիրոջը Բէեղզեբուղ կոչեցին,
որչա՜փ եւս առաւել՝ նրա ընտանիքը:
26 Այսուհետեւ նրանցից չվախենաք,
որովհետեւ չկայ ծածուկ բան, որ
չյայտնուի, եւ գաղտնի բան, որ չի-
մացուի: 27 Ինչ ձեզ ասում եմ խաւարի
մէջ, դուք ասացէք լոյսի՛ մէջ. եւ ինչ
լսում էք ականջի մէջ փսփսուքով,
հրապարակեցէ՛ք տանիքների վրայից:
28 Եւ մի՛ վախեցէք նրանցից, որ մար-
մինն են սպանում, բայց հոգին սպա-
նել չեն կարող. այլ դուք առաւել վա-
խեցէ՛ք նրանից, ով կարող է գեհենի
մէջ կորստեան մատնել հոգին եւ մար-
մինը: 29 Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ
դահեկանի է վաճառւում, բայց նրան-
ցից մէկն անգամ առանց ձեր Հօր
գետին չի ընկնում. 30 եւ ձեր գլխի
մազերը բոլորն իսկ հաշուուած են:
31 Արդ, մի՛ վախեցէք, քանի որ բազում
ճնճղուկներից լաւ էք դուք: 32 Ով որ
ինձ կը խոստովանի մարդկանց առաջ,
ես էլ կը խոստովանեմ նրան իմ Հօր
առաջ, որ երկնքում է: 33 Եւ ով ինձ
կ՝ուրանայ մարդկանց առաջ, ես էլ
նրան կ՝ուրանամ իմ Հօր առաջ, որ
երկնքում է»:

ՍՈՒՐ, ԽԱՉ ԵՒ ՆԵՂՈՒԹԻՒՆ
(Ղուկ. 12. 51-53, 14. 26-27, Մարկ. 9. 40)

34 «Մի՛ կարծէք, թէ եկայ խաղա-
ղութիւն հաստատելու երկրի վրայ. չե-
կայ հաստատելու խաղաղութիւն, այլ՝
սուր. 35 քանի որ եկայ, որ բաժանեմ

†Յուն. բառերը աւելացնում է՝ մեռելներին յարութիւն տուէք:

†Յուն. լաւ բն. չունեն այս վերջին նախադասութիւնը:

որդուն իր հօրից, եւ դստերը՝ իր մօրից,
եւ հարսին՝ իր կեսուրից: 36 Մարդու
թշնամիները իր տնեցիները կը լինեն:
37 Ով իր հօրը եւ կամ մօրը ինձնից
աւելի է սիրում, ինձ արժանի չէ. ով իր
որդուն կամ դստերը ինձնից աւելի է
սիրում, ինձ արժանի չէ: 38 Եւ ով իր
խաչը չի վերցնում ու իմ յետեւից չի
գալիս, ինձ արժանի չէ: 39 Ով որ իր
անձը գտնում է, այն կը կորցնի. եւ ով
իր անձը կորցրեց ինձ համար, այն կը
գտնի: 40 Ով ձե՛զ է ընդունում, ի՛նձ է
ընդունում, եւ ով ի՛նձ է ընդունում,
ընդունում է ինձ ուղարկողի՛ն: 41 Ով
մարգարէին ընդունում է իբրեւ մար-
գարէի, մարգարէի վարձ կը ստանայ.
ով արդարին ընդունում է իբրեւ ար-
դարի, արդարի վարձ կը ստանայ: 42 Եւ
ով այս փոքրիկներից մէկին միայն մի
բաժակ սառը ջուր կը տայ խմելու
իբրեւ աշակերտ, ճշմարիտ եմ ասում
ձեզ, իր վարձը չպիտի կորցնի»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ
(Ղուկ. 7. 18-35)

11 Եւ երբ Յիսուս վերջացրեց իր
տասներկու աշակերտներին պատուէր
տալը, այնտեղից գնաց՝ քարոզելու եւ
ուսուցանելու շրջակայ քաղաքներում:
2 Իսկ Յովհաննէսը, երբ բանտում
լսեց Քրիստոսի գործերի մասին, ու-
ղարկեց իր աշակերտներին եւ նրանց
միջոցով ասաց նրան. 3 «Դո՞ւ ես, որ
գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք»:
4 Յիսուս պատասխան տուեց նրանց եւ
ասաց. «Գնացէք պատմեցէ՛ք Յով-
հաննէսին, ինչ որ դուք լսեցիք եւ
տեսաք. 5 կոյրերը տեսնում են, կա-
ղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրւում,
խուլերը՝ լսում, մեռելները՝ յառնում, եւ
աղքատներին քարոզւում է Աւետա-
րանը: 6 Եւ երանի՛ է նրան, ով իմ
պատճառով չի գայթակղւում»:

ՅԻՍՈՒՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՍԻՆ

7 Երբ Յովհաննէսի աշակերտները
գնացին, Յիսուս սկսեց ժողովրդին
ասել Յովհաննէսի մասին. «Ի՞նչ տես-
նելու ելաք անապատում. հողմից շար-
ժուող եղէ՞գ: 8 Հապա ի՞նչ տեսնելու
ելաք. փափուկ զգեստներով զարդա-
րուած մա՞րդ. ահա նրանք, որ փափուկ
բաներ են հագել, թագաւորների պա-
լատներում են: 9 Ապա ի՞նչ տեսնելու
ելաք. մի մարգարէ՞. այո՛, ասում եմ
ձեզ. առաւե՛լ քան մի մարգարէ, 10 ո-
րովհետեւ նա է, որի մասին գրուած է.
«Ահա ես կ՝ուղարկեմ իմ պատգա-
մաւորին քո առջեւից, որ քո առաջ քո
ճանապարհը պատրաստի»: 11 Ճշմա-
րիտ եմ ասում ձեզ, կանանցից
ծնուածների մէջ Յովհաննէս Մկրտչից
աւելի մեծը չի ելել. բայց երկնքի
արքայութեան մէջ ամենից յետինը
նրանից մեծ է: 12 Յովհաննէս Մկրտչի
օրերից մինչեւ այժմ երկնքի արքայու-
թիւնը բռնադատւում է. եւ հզօրներն
են յափշտակում այն, 13 քանի որ ամ-
բողջ Օրէնքը եւ մարգարէները մար-
գարէացան մինչեւ Յովհաննէսը: 14 Եւ
եթէ ուզում էք ընդունել, Յովհաննէ՛սն
է Եղիան, որ գալու է: 15 Ով լսելու
ականջ ունի, թող լսի: 16 Ո՞ւմ նմա-
նեցնեմ այս սերնդին. նման է նա
մանուկների, որոնք նստած են հրա-
պարակներում, կանչում են իրենց
ընկերներին եւ ասում. 17 ձեզ համար
փող հնչեցրինք, բայց չպարեցիք. ձեզ
համար ողբ երգեցինք, բայց դուք լաց
ու կոծ չարեցիք: 18 Եկաւ Յովհաննէսը.
ո՛չ ուտում էր եւ ո՛չ խմում. եւ ասա-
ցին՝ նրա մէջ դեւ կայ: 19 Եկաւ մարդու
Որդին. ուտում է եւ խմում. եւ ասում
են՝ ահա ուտող եւ խմող մարդ, բարե-
կամ՝ մաքսաւորների եւ մեղաւորների.
բայց իմաստութիւնը արդարացուեց իր
որդիների կողմից»†:

ՎԱՅԵՐ ՉԱՊԱՇԽԱՐՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԻՆ
(Ղուկ. 10. 13-15)

20 Այն ժամանակ նա սկսեց պա-
րսաւել այն քաղաքները, որոնց մէջ
նրա բազում զօրաւոր գործերը տեղի
ունեցան, բայց նրանք չապաշխա-
րեցին: 21 «Վա՜յ քեզ, Քորազին, վա՜յ
քեզ, Բեթսայիդա. որովհետեւ եթէ
Տիւրոսում եւ Սիդոնում տեղի ունեցած

†Լաւագոյն յուն. բն. իր որդիների կողմից բառերի փոխարէն ունեն իր գործադրողների կողմից:

լինէին այն զօրաւոր գործերը, որ ձեր մէջ արուեցին, վաղուց արդէն քուրջով եւ մոխրով ապաշխարած կը լինէին: 22 *Բայց ասում եմ ձեզ, Տիւրոսի եւ Սիդոնի երկրի համար աւելի տանելի կը լինի դատաստանի օրը, քան ձեզ համար:* 23 *Եւ դո՛ւ, Կափառնայո՛ւմ, միթէ մինչեւ երկի՞նք պիտի բարձրանաս. ո՛չ, պիտի իջնես մինչեւ դժոխք. որովհետեւ եթէ Սոդոմում եղած լինէին այս զօրաւոր գործերը, որ եղան քո մէջ, արդարեւ մինչեւ այսօր նրանք կանգուն կը լինէին:* 24 *Բայց ասում եմ ձեզ, որ սոդոմացիների երկրի համար դատաստանի օրը աւելի տանելի կը լինի, քան քեզ համար»:*

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԱՒՈՐ ՀՕՐԸ
(Ղուկ. 10. 21-22)

25 *Այն ժամանակ Յիսուս պատասխան տուեց եւ ասաց. «Գոհութիւն եմ յայտնում քեզ, Հա՛յր, Տէ՛ր երկնքի եւ երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից եւ գիտուններից ու յայտնեցիր մանուկներին:* 26 *Այո՛, Հա՛յր, քանի որ այսպէս հաճելի եղաւ քեզ:* 27 *Ամենայն ինչ տրուեց ինձ իմ Հօրից. եւ ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթէ ոչ՝ Հայրը. եւ ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ՝ Որդին, եւ նա, ում Որդին ուզենայ յայտնել:* 28 *Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ:* 29 *Իմ լուծը ձեր վրայ վերցրէ՛ք եւ սովորեցէ՛ք ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեզ համար հանգիստ պիտի գտնէք,* 30 *որովհետեւ իմ լուծը քաղցր է եւ իմ բեռը՝ թեթեւ»:*

ՇԱԲԱԹ ՕՐՈՎ ՊՈԿՈՒԱՄ ՀԱՍԿԵՐ
(Մարկ. 2. 23-28, Ղուկ. 6. 1-5)

12 *Յիսուս, շաբաթ օրով, անցաւ արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին եւ սկսեցին հասկ պոկել եւ ուտել:* 2 *Փարիսեցիները երբ այս տեսան, Յիսուսին ասացին. «Ահա քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինաւոր չէ»:* 3 *Եւ նա նրանց ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ ինչ արեց Դաւիթը, երբ քաղց զգաց նա եւ նրանք, որ նրա հետ էին:* 4 *Թէ ինչպէս մտաւ Աստծու տունը եւ կերաւ առաջաւորութեան հացը, որն ուտել օրէնք չէր ո՛չ նրա եւ ո՛չ էլ նրա հետ եղողների համար, այլ միայն՝ քահանաների համար:* 5 *Կամ թէ Օրէնքում չէ՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը եւ անմեղ են:* 6 *Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մէկը կայ:* 7 *Եւ եթէ իմանայիք, թէ ի՞նչ է՝ ողորմութիւն եմ կամենում եւ ոչ՝ զոհ, ապա դուք անպարտներին չէիք դատապարտի.* 8 *ուրեմն մարդու Որդին շաբաթ օրուայ տէրն է»:*

ՁՈՐԱՑԱԾ ՁԵՌՔԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 3. 1-6, Ղուկ. 6. 6-11)

9 *Յիսուս այստեղից մեկնելով՝ եկաւ նրանց ժողովարանը:* 10 *Այնտեղ կար մի մարդ, որի ձեռքը գօսացած էր: Յիսուսին հարցրին ու ասացին. «Շաբաթ օրը թոյլատրելի՞ է բժշկել». որպէսզի նրան ամբաստանեն:* 11 *Եւ նա ասաց նրանց. «Ո՞վ է ձեզնից այն մարդը, որ մի ոչխար ունենայ, եւ դա շաբաթ օրն ընկնի փոսի մէջ, միթէ չի՞ բռնի ու վեր հանի այն:* 12 *Իսկ արդ, մարդը ոչխարից որքա՜ն եւս առաւել է. ապա ուրեմն, պէտք է շաբաթ օրը բարիք գործել»:* 13 *Այն ժամանակ մարդուն ասաց՝ ձեռքդ երկարի՛ր. եւ նա երկարեց. եւ առողջացաւ գօսացած ձեռքը, ինչպէս միւսը:* 14 *Իսկ փարիսեցիները դուրս գալով՝ նրա դէմ խորհուրդ արին, թէ ինչպէս կորստեան մատնեն նրան:* 15 *Երբ Յիսուս այդ իմացաւ, այդտեղից մեկնեց: Նրա յետեւից գնաց շատ ժողովուրդ, եւ նա բոլորին բժշկեց:* 16 *Եւ խստիւ պատուիրեց նրանց, որ իր մասին ոչ ոքի բան չասեն,* 17 *որպէսզի կատարուի այն, ինչ որ ասուեց Եսայի մարգարէի բերանով.*

18 «Ահա իմ ծառան, որին ընտրեցի,
եւ իմ սիրելին, որին հոգիս հաւանեց.
Նրա վրայ իմ հոգին պիտի դնեմ,

եւ նա հեթանոսներին դատաստան պիտի յայտարարի.
19 Նա ո՛չ պիտի հակառակի եւ ո՛չ էլ պիտի աղաղակի.
հրապարակներում նրա ձայնը ոչ մէկը չպիտի լսի.
20 ջախջախուած եղէգը նա չպիտի փշրի
եւ առկայծ պատրոյգը չպիտի հանգցնի,
մինչեւ որ արդարութիւնը յաղթանակի հասցնի.
21 եւ նրա անուան վրայ հեթանոսները յոյս պիտի դնեն»:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ԲԷԵԶԷԲՈՒԼԸ
(Մարկ. 3. 22-30, Ղուկ. 11. 14-23, 6. 43-45)

22 *Այն ժամանակ նրա մօտ բերուեց կոյր ու համր մի դիւահար, եւ նա բժշկեց նրան, այնպէս որ համրն ու կոյրը խօսում էր ու տեսնում:* 23 *Ամբողջ ժողովուրդը զարմացաւ եւ ասում էր. «Միթէ սա՞ է Քրիստոսը՝ Դաւթի Որդին»:* 24 *Բայց երբ փարիսեցիները լսեցին, ասացին. «Նա դեւերին այլ կերպ չի հանում, եթէ ոչ Բէեզեբուղի՝ դեւերի իշխանի միջոցով»:* 25 *Երբ Յիսուս նրանց մտածումներն իմացաւ, նրանց ասաց. «Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերւում է, եւ ինքն իր մէջ բաժանուած ամէն քաղաք կամ տուն կանգուն չի մնայ.* 26 *եւ եթէ սատանան սատանային հանում է, ուրեմն՝ ինքն իր մէջ բաժանուեց. արդ, նրա թագաւորութիւնը ինչպէ՞ս կարող է կանգուն մնալ:* 27 *Եւ եթէ ես Բէեզեբուղով եմ հանում դեւերին, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. դրա համար էլ նրանք կը լինեն ձեր դատաւորները:* 28 *Իսկ եթէ Աստծու Հոգով եմ հանում դեւերին, ուրեմն Աստծու արքայութիւնը հասել է ձեր վրայ:* 29 *Կամ՝ ինչպէ՞ս կարող է մէկը մտնել հզօր մի մարդու տունը եւ յափշտակել նրա գոյքերը, եթէ նախ չկապի հզօրին եւ ապա նրա տունը կողոպտի:* 30 *Ով ինձ հետ չէ՝ իմ դէմ է, եւ ով ինձ հետ չի հաւաքում՝ ցրում է»:*

ՄԵՂՔ ԵՒ ՀԱՅՀՈՅԱՆՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԴԷՄ

31 *«Դրա համար ասում եմ ձեզ. ամէն մեղք եւ հայհոյանք կը ներուեն մարդկանց, բայց Հոգու դէմ հայհոյանքը չպիտի ներուի:* 32 *Եւ ով որ մարդու Որդու դէմ խօսք ասի, նրան պիտի ներուի, բայց ով ասի Սուրբ Հոգու դէմ, նրան չպիտի ներուի ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ էլ հանդերձեալում:* 33 *Կա՛մ ծառը բարի արէք, եւ նրա պտուղն էլ բարի կը լինի, կա՛մ ծառը չար արէք, եւ նրա պտուղն էլ չար կը լինի. քանի որ իր պտղից է ծառը ճանաչւում:* 34 *Իժերի՛ ծնունդներ, դուք, որ չար էք, ինչպէ՞ս կը կարողանաք բարի բաներ խօսել, քանի որ բերանը սրտի լիութիւնից է, որ խօսում է:* 35 *Բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ:* 36 *Բայց ասում եմ ձեզ, թէ մարդիկ իրենց խօսած ամէն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիւ պիտի տան,* 37 *որովհետեւ՝ քո խօսքերով պիտի արդարանաս եւ քո խօսքերով պիտի դատապարտուես»:*

ՆՇԱՆԻ ՀԱՅՑՈՒՄ
(Մարկ. 8. 11-12, Ղուկ. 11. 29-32)

38 *Այն ժամանակ օրէնսգէտներից եւ փարիսեցիներից ոմանք նրան պատասխան տուեցին ու ասացին. «Վարդապե՛տ, քեզնից մի նշան ենք կամենում տեսնել»:* 39 *Նա պատասխան տուեց նրանց ու ասաց. «Չար եւ շնացող ազգը նշան է փնտռում. այլ նշան չի տրուի նրան, բայց միայն Յովնան մարգարէի նշանը.* 40 *որովհետեւ, ինչպէս Յովնանը երեք օր ու երեք գիշեր կէտի փորի մէջ էր, նոյնպէս եւ մարդու Որդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր:* 41 *Նինուէի մարդիկ դատաստանի ժամանակ այս ազգի դէմ պիտի դուրս գան եւ պիտի դատապարտեն նրան, քանի որ նրանք Յովնանի քարոզութեամբ ապաշխարեցին. եւ ահաւասիկ այստեղ Յովնանից մեծը կայ:* 42 *Հարաւի Դշխոն*† *դատաստանի ժամանակ պիտի դուրս գայ այս ազգի դէմ եւ պիտի դատապարտի նրան, որովհետեւ նա երկրի ծագերից եկաւ լսելու Սողոմոնի իմաստութիւնը. եւ ահա այստեղ Սողոմոնից մեծը կայ»:*

†Ըստ Գ Թագ. 10. 1-10՝ Եթովպիայի Սաբա թագուհին:

ՊԻՂԾ ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ
(Ղուկ. 11. 24-26)

43 «Սակայն պիղծ ոգին դուրս է
ելնում մարդուց, շրջում է անջրդի
վայրերում, հանգիստ է որոնում եւ չի
գտնում: 44 Այն ժամանակ ասում է՝
դառնամ իմ տունը, որտեղից դուրս
եկայ. եւ գալիս է ու այն գտնում դա-
տարկ՝ մաքրուած ու կարգի բերուած:
45 Այն ժամանակ գնում եւ վերցնում է
իր հետ իրենից աւելի չար եօթը այլ
ոգիներ եւ մտնում բնակւում է
այնտեղ. եւ այդ մարդու վերջը լինում
է աւելի վատ, քան առաջ էր. այսպէս
պիտի լինի եւ այս չար սերնդին»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
(Մարկ. 3. 31-35, Ղուկ. 8. 19-21)

46 Մինչ Յիսուս դեռ խօսքն ուղղում
էր բազմութեանը, ահա նրա մայրն ու
նրա եղբայրները կանգնած էին դրսում
եւ ուզում էին խօսել նրա հետ: 47 Եւ
մէկն ասաց նրան. «Ահա քո մայրն ու
քո եղբայրները դրսում կանգնած են եւ
ուզում են քեզ հետ խօսել»: 48 Նա այդ
ասողին պատասխանեց ու ասաց. «Ո՞վ
է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղ-
բայրները»: 49 Եւ իր ձեռքը երկարելով
դէպի իր աշակերտները՝ ասաց. «Ահա՛
իմ մայրը եւ իմ եղբայրները. 50 որով-
հետեւ, ով կատարում է կամքը իմ Հօր,
որ երկնքում է, նա՛ է ինձ եղբայր եւ
քոյր եւ մայր»:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ
(Մարկ. 4. 1-12, Ղուկ. 8. 4-10)

13 Այդ օրը Յիսուս տնից դուրս
գալով՝ նստեց ծովեզերքին: 2 Եւ նրա
մօտ շատ ժողովուրդ հաւաքուեց, այն-
պէս որ նա նաւակ մտաւ ու նստեց. իսկ
ամբողջ ժողովուրդը կանգնած էր
ծովեզերքին: 3 Եւ նրանց հետ առակ-
ներով շատ բաներ էր խօսում եւ ասում.
4 «Ահա մի սերմնացան ելաւ
սերմանելու. եւ երբ նա սերմանում էր,
մի մաս սերմ ընկաւ ճանապարհի
եզերքին, եւ երկնքի թռչունը եկաւ եւ
այն կերաւ: 5 Եւ ուրիշ մի մաս ընկաւ
ապառաժի վրայ, ուր շատ հող չկար. եւ
իսկոյն բուսաւ, քանի որ հողը խորու-
թիւն չունէր. 6 երբ արեւը ծագեց,
խանձուեց. եւ քանի որ արմատներ
չկային, չորացաւ: 7 Եւ ուրիշ մի մաս
ընկաւ փշերի մէջ, ու փշերը բարձ-
րացան եւ այն խեղդեցին: 8 Եւ մէկ
ուրիշ մաս ընկաւ պարարտ հողի վրայ
եւ պտուղ տուեց. կար որ մէկին՝
հարիւր. եւ կար որ մէկին՝ վաթսուն. եւ
կար որ մէկին՝ երեսուն: 9 Ով լսելու
ականջ ունի, թող լսի»:

10 Եւ աշակերտները մօտենալով՝
նրան ասացին. «Ինչո՞ւ ես առակներով
խօսում նրանց հետ»: 11 Նա պատաս-
խանեց եւ ասաց նրանց. «Քանի որ
ձե՛զ է տրուած իմանալ երկնքի ար-
քայութեան խորհուրդները, իսկ նրանց
տրուած չէ. 12 որովհետեւ՝ ով ունի,
նրան պիտի տրուի եւ պիտի աւելա-
ցուի, իսկ ով չունի, նրանից պիտի
վերցուի ունեցածն էլ: 13 Նրանց հետ
առակներով եմ խօսում նրա համար, որ
նայում են եւ չեն տեսնում, լսում են եւ
չեն իմանում ու չեն հասկանում: 14 Եւ
նրանց վրայ կատարւում է Եսայու
մարգարէութիւնը, որ ասում է՝ պիտի
լսէք, պիտի լսէք ու պիտի չիմանաք,
պիտի նայէք, պիտի նայէք ու պիտի
չտեսնէք. 15 որովհետեւ այս ժողովրդի
սիրտը կարծրացաւ, եւ իրենց ականջ-
ներով ծանր են լսում. եւ փակեցին
իրենց աչքերը, որպէսզի երբեք աչքե-
րով չտեսնեն ու ականջներով չլսեն եւ
սրտով չիմանան եւ դարձի չգան, ու
ես նրանց չբժշկեմ: 16 Բայց երանի՜ է
ձեր աչքերին, որ տեսնում են, ու ձեր
ականջներին, որ լսում են: 17 Ճշմարիտ
եմ ասում ձեզ, որ շատ մարգարէներ ու
արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ
դուք տեսնում էք, բայց չտեսան, եւ
լսել՝ ինչ որ դուք լսում էք, բայց
չլսեցին»:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 4. 13-20, Ղուկ. 8. 11-15)

18 «Եւ արդ, լսեցէ՛ք դուք սերմնա-
ցանի առակը. 19 ամէն մէկից, ով լսում
է արքայութեան խօսքը եւ չի հաս-
կանում, չարը գալիս է եւ յափշտակում
նրա սրտում սերմանուածը. դա այն է,

որ ճանապարհի եզերքին սերմանուեց:
20 Եւ որ ապառաժի վրայ սերմանուեց,
այն է, որ երբ լսում է խօսքը, իսկոյն
ուրախութեամբ էլ ընդունում է այն:
21 Բայց քանի որ ինքն իր մէջ ար-
մատներ չունի, այլ մի որոշ ժամանակի
համար է հաւատում, երբ խօսքի
համար նեղութիւն եւ հալածանքներ
լինեն, իսկոյն սայթաքում ընկնում է:
22 Իսկ որ փշերի մէջ սերմանուեց, այն
է, որ լսում է խօսքը, բայց աշխարհիս
հոգսերը եւ հարստութեան պատրանք-
ները խեղդում են խօսքը, եւ սա լինում
է անպտուղ: 23 Իսկ որ լաւ հողի մէջ
սերմանուեց, այն է, որ երբ լսում է
խօսքը եւ հասկանում, պտուղ է տալիս.
կայ որ մէկի դիմաց՝ հարիւր, կայ որ
մէկի դիմաց՝ վաթսուն եւ կայ որ մէկի
դիմաց՝ երեսուն»:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԸ

24 Նա մէկ ուրիշ առակ էլ նրանց
առաջ դրեց ու ասաց. «Երկնքի
արքայութիւնը նմանուեց մի մարդու,
որ իր արտի մէջ բարի սերմ սերմանեց:
25 Եւ երբ մարդիկ քնի մէջ էին, նրա
թշնամին եկաւ եւ ցանած ցորենի վրայ
որոմ ցանեց ու գնաց: 26 Եւ երբ ցորենը
բուսաւ ու պտուղ տուեց, ապա երեւաց
եւ այն որոմը: 27 Տանտիրոջ ծառաները
մօտեցան ու ասացին նրան. «Տէ՛ր, չէ՞
որ քո արտի մէջ դու բարի սերմ
սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է այդ
որոմը»: 28 Եւ տէրն ասաց նրանց.
«Թշնամի մարդ է արել այդ»: Ծառա-
ները նրան ասացին. «Կամենո՞ւմ ես,
որ գնանք ու քաղենք հանենք այն»:
29 Եւ տէրը նրանց ասաց. «Ո՛չ, մի
գուցէ որոմը քաղելիս, ցորենն էլ նրա
հետ արմատախիլ անէք: 30 Թողէ՛ք, որ
երկուսն էլ միասին աճեն մինչեւ
հունձը, եւ հնձի ժամանակ ես հնձող-
ներին կ՚ասեմ՝ նախ այդ որոմը քա-
ղեցէ՛ք եւ դրանից խուրձեր կապեցէ՛ք
այրելու համար, իսկ ցորենը հաւա-
քեցէ՛ք իմ շտեմարանների մէջ»:

ՄԱՆԱՆԵԹԻ ՀԱՏԻԿԻ ԵՒ ԹԹԽՄՈՐԻ ԱՌԱԿԸ
(Մարկ. 4. 30-34, Ղուկ. 13. 18-21)

31 Նրանց առաջ նա մէկ ուրիշ առակ
էլ դրեց ու ասաց. «Երկնքի արքա-
յութիւնը նման է մանանեխի հատիկի,
որ մի մարդ, առնելով, սերմանեց իր
արտի մէջ: 32 Այն փոքր է, քան բոլոր
սերմերը. սակայն երբ աճում է, բոլոր
բանջարներից աւելի է մեծանում ու
ծառ է լինում, այն աստիճան, որ
երկնքի թռչունները գալիս են ու նրա
ճիւղերի վրայ հանգստանում»:

33 Նա մէկ ուրիշ առակ էլ պատմեց
նրանց ու ասաց. «Երկնքի արքայու-
թիւնը նման է թթխմորի, որ մի կին,
առնելով, դրեց երեք չափ ալիւրի մէջ,
մինչեւ որ ամբողջը խմորուեց»:

34 Այս բոլորը Յիսուս առակներով
պատմեց բազմութեանը եւ առանց ա-
ռակի ոչինչ չէր ասում նրանց, 35 որ-
պէսզի կատարուի մարգարէի կողմից
ասուածը. «Իմ բերանը առակներով
պիտի բանամ եւ աշխարհի սկզբից ի
վեր ծածկուած բաները պիտի
յայտնեմ»:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

36 Այն ժամանակ Յիսուս արձա-
կելով ժողովրդին՝ տուն եկաւ. աշա-
կերտները մօտեցան նրան ու ասացին.
«Մեկնի՛ր մեզ համար արտի որոմների
առակը»: 37 Նա պատասխանեց եւ
ասաց. «Այն, որ սերմանում է բարի
սերմը, մարդու Որդին է, 38 իսկ արտը
այս աշխարհն է. բարի սերմը նրանք
են, որ արքայութեան որդիներն են,
իսկ որոմը չարի որդիներն են. 39 եւ
թշնամին, որ այն ցանեց, սատանան է.
իսկ հունձը այս աշխարհի վախճանն է,
եւ հնձողները հրեշտակներ են: 40 Ինչ-
պէս որոմը հաւաքւում է եւ կրակի մէջ
այրւում, այնպէս կը լինի այս աշ-
խարհի վախճանին: 41 Մարդու Որդին
կ՚ուղարկի իր հրեշտակներին, եւ
նրանք կը հաւաքեն նրա արքայու-
թիւնից բոլոր գայթակղութիւնները եւ
նրանց, որոնք անօրինութիւն են գոր-
ծում: 42 Եւ կը գցեն նրանց բոցավառ
հնոցի մէջ. այնտեղ կը լինի լաց եւ
ատամների կրճտում: 43 Այն ժամանակ
արդարները երկնքի արքայութեան մէջ
կը ծագեն ինչպէս արեգակը: Ով լսելու
ականջ ունի, թող լսի»:

ԱՅԼ ԱՌԱԿՆԵՐ

44 «Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է արտի մէջ թաքցուած գանձի, որ մի մարդ, գտնելով, նորից թաքցնում է. եւ ուրախութիւնից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը եւ այդ արտը գնում է:

45 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է մի վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտներ էր որոնում. 46 եւ գտնելով մի թանկարժէք մարգարիտ՝ գնաց վաճառեց իր ամբողջ ունեցածը եւ այդ մարգարիտը գնեց:

47 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է ծով նետուած ուռկանի, որ ամէն տեսակ բան է հաւաքել. 48 երբ լցուել էր, այն ցամաք հանելով եւ նստելով՝ լաւերը մի առ մի հաւաքեցին ամանների մէջ, իսկ անպէտքը դուրս գցեցին: 49 Այնպէս էլ կը լինի այս աշխարհի վախճանին: Հրեշտակները կ'ելնեն եւ չարերին արդարների միջից կը բաժանեն 50 ու կը գցեն նրանց բոցավառ հնոցի մէջ. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում»:

51 Յիսուս իր աշակերտներին ասաց. «Այս բոլորը իմացա՞ք»: Նրան ասացին՝ այո՛, Տէ՛ր: 52 Եւ Յիսուս նրանց ասաց. «Դրա համար երկնքի արքայութեանն աշակերտած ամէն օրէնսգէտ նման է տանուտէր մարդու, որ իր գանձից հանում է նորը եւ հինը»:

ՅԻՍՈՒՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՆԱԶԱՐԷԹ
(Մարկ. 6. 1-6, Ղուկ. 4. 16-30)

53 Երբ Յիսուս այս առակները վերջացրեց, այնտեղից մեկնեց: 54 Եւ գալով իր գաւառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպէս որ նրանք զարմանում ու ասում էին. «Սրան որտեղի՞ց են այս իմաստութիւնը եւ զօրութեան գործերը: 55 Սա հիւսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչւում. եւ սրա եղբայրները՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն եւ Յուդա: 56 Եւ սրա քոյրերը բոլորը մեզ մօտ չե՞ն. եւ արդ, որտեղի՞ց է սրան այս բոլորը»: 57 Եւ նրանով գայթակղւում էին: Իսկ Յիսուս նրանց ասաց. «Չկայ անարգուած մարգարէ, բայց միայն՝ իր գաւառում եւ իր տանը»:

58 Եւ նրանց անհաւատութեան պատճառով այնտեղ զօրաւոր շատ գործեր չարեց:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԳԼԽԱՏՈՒՄԸ
(Մարկ. 6. 14-29, Ղուկ. 9. 7-9)

14 Այն ժամանակ Հերովդէս չորրորդապետը լսեց Յիսուսի համբաւը եւ իր ծառաներին ասաց. 2 «Նա՛ է Յովհաննէս Մկրտիչը. մեռելներից յարութիւն է առել, եւ դրա համար նրա միջոցով զօրաւոր գործեր են լինում»:

3 Արդարեւ Հերովդէսը ձերբակալել էր Յովհաննէսին, նրան կապել եւ բանտի մէջ էր դրել իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի պատճառով. 4 որովհետեւ Յովհաննէսը նրան ասում էր. «Օրինաւոր չէ, որ դու նրան իբրեւ կին ունենաս»: 5 Եւ կամենում էր նրան սպանել, բայց վախենում էր ժողովրդից, քանի որ նրան որպէս մարգարէ էին ընդունում: 6 Եւ երբ Հերովդէսի ծննդեան տարեդարձը հասաւ, Հերովդիայի դուստրը հրաւիրեալների առաջ պարեց. եւ հաճելի թուաց Հերովդէսին. 7 ուստի եւ՝ նա երդումով խոստացաւ նրան տալ, ինչ էլ որ ուզի: 8 Եւ նա, առաջուց խրատուած լինելով իր մօրից, ասաց. «Տո՛ւր ինձ այստեղ, սկուտեղի վրայ, Յովհաննէս Մկրտչի գլուխը»: 9 Եւ թագաւորը տխրեց, բայց երդման եւ սեղանակիցների պատճառով հրամայեց նրան տալ այդ: 10 Եւ մարդ ուղարկեց, գլխատել տուեց Յովհաննէսին բանտի մէջ: 11 Եւ նրա գլուխը բերուեց սկուտեղով ու տրուեց աղջկան: Եւ սա տարաւ այն իր մօրը: 12 Իսկ Յովհաննէսի աշակերտները եկան վերցրին մարմինը եւ թաղեցին. եւ եկան պատմեցին Յիսուսին:

ՀԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մարկ. 6. 30-44, Ղուկ. 9. 10-17, Յովհ. 6. 1-14)

13 Երբ Յիսուս այդ լսեց, այնտեղից նաւակով առանձին գնաց մի ամայի տեղ: Երբ ժողովրդի բազմութիւնը լսեց այս, քաղաքներից հետիոտն նրա

յետեւից գնաց: 14 Եւ երբ նա ցամաք ելաւ, տեսաւ բազում ժողովուրդ, գթաց նրանց եւ բժշկեց նրանց հիւանդներին:

15 Երեկոյեան դէմ, աշակերտները մօտեցան նրան եւ ասացին. «Այս տեղը ամայի է, եւ օրը տարաժամել է. արձակի՛ր այդ ժողովրդի բազմութիւնը, որպէսզի գնայ շրջակայ գիւղերը իր համար ուտելիք գնի»: 16 Եւ Յիսուս ասաց. «Հարկ չկայ, որ նրանք գնան, դո՛ւք նրանց ուտելու բան տուէք»: 17 Եւ նրանք ասացին նրան. «Այստեղ ուրիշ բան չունենք, բացի հինգ նկանակից եւ երկու ձկից»: 18 Եւ նրանց ասաց. «Այստե՛ղ բերէք այդ»: 19 Եւ հրամայեց ժողովրդի բազմութիւնը նստեցնել խոտի վրայ. եւ վերցնելով հինգ նկանակն ու երկու ձկները՝ նայեց դէպի երկինք, օրհնեց, կտրեց եւ նկանակները աշակերտներին տուեց. իսկ աշակերտները՝ ժողովրդին: 20 Բոլորը կերան ու յագեցան: Եւ տասներկու սակառ լիքը կտորտանքների մնացորդներ վերցրին: 21 Եւ նրանք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաներին:

ՅԻՍՈՒՍ ՔԱՅԼՈՒՄ Է ԾՈՎԻ ՎՐԱՅՈՎ
(Մարկ. 6. 45-52, Յովհ. 6. 15-21)

22 Եւ նա իսկոյն իր աշակերտներին ստիպեց նաւակ մտնել եւ առաջանալ դէպի միւս կողմը, մինչեւ որ ինքը ժողովրդի բազմութիւնն արձակի: 23 Եւ երբ ժողովրդի բազմութիւնն արձակեց, առանձին լեռ բարձրացաւ աղօթելու համար: Եւ երբ երեկոյ եղաւ, այնտեղ էր, մենակ:

24 Նաւակը ցամաքից մղոններով հեռացել էր՝ դէս ու դէն քշուելով ալիքներից, քանի որ քամին դիմացից էր: 25 Եւ գիշերուայ ուշ ժամին Յիսուս եկաւ նրանց մօտ՝ քայլելով ծովի վրայ: 26 Երբ աշակերտները նրան տեսան ծովի վրայ քայլելիս, տագնապահար եղան եւ ասացին. «Ինչ-որ ուրուական է». ու սարսափից աղաղակեցին: 27 Յիսուս իսկոյն խօսեց նրանց հետ ու ասաց. «Սրտապնդուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախեցէք»: 28 Պետրոսը նրան պատասխանեց ու ասաց. «Տէ՛ր, եթէ դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով քեզ մօտ գալ»: 29 Եւ նա ասաց՝ արի՛: Եւ Պետրոսը նաւակից իջնելով՝ քայլեց ջրի վրայով ու եկաւ Յիսուսի մօտ: 30 Սակայն տեսնելով ուժգին քամին՝ վախեցաւ: Եւ երբ սկսեց սուզուել, աղաղակեց ու ասաց. «Տէ՛ր, փրկի՛ր ինձ»: 31 Եւ իսկոյն Յիսուս երկարեց իր ձեռքը, բռնեց նրան ու ասաց. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր»: 32 Եւ երբ նրանք նաւակ բարձրացան, քամին հանդարտուեց: 33 Եւ նրանք, որ նաւակի մէջ էին, մօտեցան, երկրպագեցին նրան ու ասացին. «Արդարեւ Աստծու Որդին ես դու»:

ԲԺՇԿՈՒՄՆԵՐ ԳԵՆՆԵՍԱՐԷԹՈՒՄ
(Մարկ. 6. 53-56)

34 Եւ կտրել անցնելով՝ ցամաք ելան Գեննեսարէթում: 35 Եւ երբ այդ տեղի մարդիկ նրան ճանաչեցին, մարդ ուղարկեցին ամբողջ գաւառով մէկ ու բոլոր հիւանդներին նրա մօտ բերեցին: 36 Եւ աղաչում էին նրան, որ գոնէ միայն նրա զգեստի քղանցքներին դիպչեն. եւ նրանք, որ մի անգամ դիպան, բժշկուեցին:

ՎԷՃ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ
(Մարկ. 7. 1-23)

15 Այն ժամանակ Յիսուսին մօտեցան փարիսեցիներ ու օրէնսգէտներ, որոնք Երուսաղէմից էին, եւ ասացին. 2 «Ինչո՞ւ քո աշակերտները նախնիների աւանդութիւնը զանց են անում, քանի որ, երբ հաց են ուտում, ձեռքները չեն լուանում»: 3 Նա պատասխան տուեց եւ ասաց նրանց. «Իսկ դուք ինչո՞ւ զանց էք անում Աստծու պատուիրանը՝ ձեր աւանդութեան պատճառով. 4 քանի որ Աստուած ասաց. "Մեծարի՛ր քո հօրը եւ մօրը". 5 եւ ով վատաբանում է հօրը կամ մօրը, մահուամբ պիտի պատժուի: 6 Իսկ դուք ասում էք. ով իր հօրը կամ մօրը ասի, թէ՝ այն, ինչ ինձնից օգտուելու ես, Աստծուն ընծայ է, այլեւս չի մեծարի իր հօրը կամ իր մօրը. ուրեմն՝ Աստծու

խօսքը արհամարհում էք ձեր աւանդութեան պատճառով: 7 Կեղծաւորնե՛ր,
Եսային լաւ է մարգարէացել ձեր վրայ
եւ ասել. 8 "Այս ժողովուրդը շրթունք-
ներով է ինձ մեծարում, բայց իրենց
սիրտը հեռացած բաժանուած է ինձ-
նից. 9 զուր են ինձ պաշտում. մարդ-
կանց կողմից պատուիրուած վար-
դապետութիւններ են ուսուցանում"»:
10 Եւ Յիսուս իր մօտ կանչելով ժո-
ղովրդին՝ ասաց. «Լսեցէ՛ք եւ իմացէ՛ք.
11 ոչ թէ՝ ինչ որ բերանով է մտնում,
ա՛յն է պղծում մարդուն, այլ ինչ որ
ելնում է բերանից՝ ա՛յն է պղծում
մարդուն»: 12 Այն ժամանակ նրա
աշակերտները մօտեցան եւ ասացին
նրան. «Գիտե՞ս, որ փարիսեցիները,
երբ այդ խօսքը լսեցին, գայթակղուե-
ցին»: 13 Նա պատասխանեց նրանց եւ
ասաց. «Ամէն տունկ, որ իմ երկնաւոր
Հայրը չի տնկել, արմատախիլ պիտի
արուի: 14 Թողէ՛ք նրանց. կոյրեր են,
կոյրերի առաջնորդ. երբ կոյրն է
առաջնորդում կոյրին†, սխալւում է, եւ
երկուսն էլ փոսն են ընկնում»:
15 Պետրոսը պատասխան տուեց նրան
եւ ասաց. «Այս առակը բացատրի՛ր
մեզ»: 16 Յիսուս ասաց. «Դեռեւս դո՞ւք
էլ անհասկացող էք. 17 չէ՞ք իմանում,
թէ ամէն ինչ, որ բերան է մտնում,
որովայն է գնում եւ դուրս է ելնում:
18 Իսկ ինչ ելնում է բերանից, սրտից է
գալիս, եւ ա՛յն է մարդուն պղծում,
19 քանի որ սրտից է, որ ելնում են չար
խորհուրդներ, սպանութիւններ, շնու-
թիւններ, պոռնկութիւններ, գողու-
թիւններ, սուտ վկայութիւններ, հայ-
հոյանքներ: 20 Այս բոլորն են, որ
պղծում են մարդուն. իսկ անլուայ
ձեռքերով ուտելը մարդուն չի
պղծում»:

ՔԱՆԱՆԱՅԻ ԿՆՈՋ ՀԱՒԱՏԸ
(Մարկ. 7. 24-30)

21 Յիսուս այդտեղից ելնելով՝ գնաց
Տիւրոսի եւ Սիդոնի կողմերը: 22 Եւ
ահա, այդ շրջաններից եկած
քանանացի մի կին աղաղակում էր ու
ասում. «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, Դաւթի՛
Որդի, աղջիկս չարաչար դիւահարւում
է»: 23 Բայց նա նրան պատասխան
չտուեց, եւ նրա աշակերտները մօտե-
նալով՝ աղաչում էին նրան ու ասում.
«Արձակի՛ր նրան, որովհետեւ մեր յե-
տեւից աղաղակում է»: 24 Նա պա-
տասխան տուեց եւ ասաց. «Այլ տեղ
չեմ ուղարկուած, եթէ ոչ Իսրայէլի
տան կորուսեալ ոչխարների մօտ»:
25 Իսկ կինը մօտենալով՝ երկրպագում
էր նրան ու ասում. «Տէ՛ր, օգնի՛ր ինձ»:
26 Նա պատասխանեց նրան եւ ասաց.
«Լաւ չէ մանուկների հացն առնել ու
շներին գցել»: 27 Եւ նա ասաց. «Այո՛,
Տէ՛ր, որովհետեւ շներն էլ կերակրւում
են իրենց տիրոջ սեղանից ընկած
փշրանքներով»: 28 Այն ժամանակ
նրան պատասխանեց եւ ասաց. «Ո՛վ
կին, մեծ է քո հաւատը, թող քեզ լինի՝
ինչպէս որ կամենում ես»: Եւ նրա
դուստրը նոյն ժամին բժշկուեց:
29 Եւ Յիսուս մեկնելով այդտեղից՝
եկաւ Գալիլիայի ծովեզերքը եւ, լեռը
բարձրանալով, նստեց այնտեղ:
30 Նրան մօտեցաւ բազում ժողովուրդ.
նրանց մէջ կային կաղեր, կոյրեր,
համրեր, հաշմուածներ եւ ուրիշ
շատեր: Սրանց բերին գցեցին նրա
ոտքերի առջեւ, եւ նա նրանց բժշկեց.
31 այնպէս որ, ժողովուրդը զարմանում
էր՝ տեսնելով, որ համրերը խօսում են,
կաղերը՝ քայլում, հաշմանդամները՝
բժշկւում, կոյրերը՝ տեսնում. եւ փառք
էին տալիս Իսրայէլի Աստծուն:

ՀԱՑԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մարկ. 8. 1-10)

32 Եւ Յիսուս իր մօտ կանչելով
աշակերտներին՝ ասաց. «Խղճում եմ
այս ժողովրդին, որովհետեւ ահա երեք
օր է, որ ինձ մօտ են եւ բան չունեն, որ
ուտեն. եւ նրանց չեմ կամենում սոված
արձակել. գուցէ ճանապարհին ուժաս-
պառ լինեն»: 33 Աշակերտները նրան
ասացին. «Իսկ այժմ, այս ամայու-
թեան մէջ որտեղի՞ց է մեզ այնչափ
հաց՝ այսքան ժողովուրդ կշտացնելու
համար»: 34 Եւ Յիսուս նրանց ասաց.
«Քանի՞ նկանակ ունէք»: Եւ նրանք
ասացին՝ եօթը, եւ մի քանի ձուկ: 35 Եւ

†Յուն. լաւ բն. չունեն կոյրին բառը:

նա հրամայեց ժողովրդին, որ նստեն
գետնի վրայ: 36 Եւ վերցնելով եօթը
նկանակն ու ձկները՝ գոհութիւն
յայտնեց Աստծուն եւ կտրեց ու տուեց
աշակերտներին, եւ նրանք էլ՝ ժո-
ղովրդին: 37 Բոլորը կերան ու յագե-
ցան. եւ եօթը լիքը զամբիւղ կտոր-
տանքների մնացորդներ վերցրին: 38 Եւ
նրանք, որ կերան, մօտ չորս հազար
հոգի էին՝ չհաշուած կանանց ու
երեխաներին: 39 Երբ նա ժողովրդի
բազմութիւնը արձակեց, նաւակ բարձ-
բացաւ ու եկաւ Մագդաղիայի սահ-
մանները:

ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՑՈՒՄ ՅԻՍՈՒՍԻՑ
(Մարկ. 8. 11-13, Ղուկ. 12. 54-56)

16 Փարիսեցիներն ու սադուկեցի-
ները մօտեցան ու փորձելով՝ նրանից
ուզում էին, որ ցոյց տայ իրենց երկ-
նային մի նշան†: 2 Իսկ նա պատաս-
խան տուեց եւ ասաց նրանց. 4 «Չար եւ
շնացող մի սերունդ նշան է ուզում, եւ
սակայն նրան նշան չպիտի տրուի,
բացի Յովնան մարգարէի նշանից»: Եւ
նրանց թողեց ու գնաց:

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐԻ ԹԹԽՄՈՐԸ
(Մարկ. 8. 14-21)

5 Աշակերտներն էլ գնացին ծովի
այն կողմը, բայց մոռացան հաց վերց-
նել: 6 Յիսուս նրանց ասաց. «Տեսէ՛ք,
զգո՛յշ եղէք սադուկեցիների եւ փարի-
սեցիների խմորից»: 7 Աշակերտները
իրենց մէջ խորհում էին ու ասում. «Ո-
րովհետեւ հաց չենք վերցրել»: 8 Յի-
սուս այդ իմացաւ ու ասաց. «Թե-
րահաւատնե՛ր, ինչո՞ւ էք ձեր մտքում
խորհում, թէ հաց չունէք: 9 Դեռեւս
չէ՞ք իմանում եւ չէ՞ք յիշում հինգ
նկանակը, որ կերակրեց հինգ հազա-
րին. եւ քանի՞ սակառ վերցրիք. 10 ոչ էլ
եօթը նկանակը՝ չորս հազարին. եւ
քանի՞ սակառ վերցրիք: 11 Արդ, ինչ-
պէ՞ս չէք իմանում, թէ հացի համար
չէ, որ ձեզ ասացի՝ զգոյշ լինել փարի-
սեցիների եւ սադուկեցիների խմորից»:
12 Այն ժամանակ իմացան, թէ չէր
ասել, որ զգուշանան խմորից, այլ՝
փարիսեցիների եւ սադուկեցիների
ուսուցումից:

ՅՇՄԱՐԻՏ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 8. 27-30, Ղուկ. 9. 18-21)

13 Եւ Յիսուս Փիլիպպեան Կեսարիա-
յի կողմերը գնալով՝ հարցրեց աշա-
կերտներին ու ասաց. «Մարդիկ իմ
մասին† ի՞նչ են ասում, ո՞վ է մարդու
Որդին»: 14 Եւ նրանք ասացին. «Մէկը,
թէ՝ Յովհաննէս Մկրտիչը, եւ ուրիշներ՝
Եղիան, իսկ ոմանք, թէ՝ Երեմիան, կամ
մարգարէներից մէկը»: 15 Յիսուս
նրանց ասաց. «Իսկ դուք իմ մասին
ի՞նչ էք ասում, ո՞վ եմ ես»: 16 Սիմոն
Պետրոսը պատասխանեց ու ասաց.
«Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու
Որդին»: 17 Յիսուս պատասխանեց եւ
նրան ասաց. «Երանի՜ է քեզ, Սիմո՛ն,
Յովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը
եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ՝ իմ
Հայրը, որ երկնքում է: 18 Եւ ես քեզ
ասում եմ, որ դու վէմ ես, եւ այդ վէմի
վրայ պիտի շինեմ իմ եկեղեցին, ու
դժոխքի դռները այն չպիտի յաղթա-
հարեն: 19 Եւ քեզ պիտի տամ երկնքի
արքայութեան բանալիները, եւ ինչ որ
մի անգամ կապես երկրի վրայ,
կապուած պիտի լինի երկնքում: Եւ ինչ
որ արձակես երկրի վրայ, արձակուած
պիտի լինի երկնքում»: 20 Այն ժամա-
նակ խստիւ պատուիրեց աշակերտ-
ներին, որ ոչ ոքի չասեն, թէ ինքն է
Քրիստոսը:

ՅԻՍՈՒՍԻ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 8. 31-9. 1, Ղուկ. 9. 22-27)

21 Դրանից յետոյ Յիսուս սկսեց
յստակօրէն յայտնել աշակերտներին,
թէ պէտք է, որ ինքը Երուսաղէմ գնայ,
բազում չարչարանքներ կրի եւ անար-

†Լաւագոյն յուն. բն. չունեն իմ մասին բառերը:

գուի քահանայապետներից, օրէնս-
գէտներից, ժողովրդի ծերերից, սպա-
նուի եւ երրորդ օրը յարութիւն առնի:
22 Եւ Պետրոսը նրան մի կողմ տա-
նելով՝ սկսեց վիճել նրա հետ ու ասել.
«Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ քեզ չի
պատահի»: 23 Եւ նա դառնալով Պետ-
րոսին՝ ասաց. «Ետե՛ւս գնա, սատա-
նա՛յ, դու գայթակղութիւն ես ինձ
համար. որովհետեւ քո խորհուրդը
Աստծունը չէ, այլ՝ մարդկանցը»:

ՅԻՍՈՒԻՍԻՆ ՀԵՏԵՒԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24 Այն ժամանակ Յիսուս իր աշակ-
երտներին ասաց. «Եթէ մէկը կամենում
է հետեւել ինձ, թող ուրանայ իր անձը,
վերցնի իր խաչը եւ գայ իմ յետեւից.
25 որովհետեւ ով կամենայ իր անձը
փրկել, այն կը կորցնի. եւ ով ինձ
համար իր անձը կորցնի, կը գտնի այն:
26 Ի՞նչ օգուտ կ'ունենայ մարդ, եթէ
այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր
անձը կործանի: Կամ՝ մարդ իր անձի
փոխարէն ի՞նչ փրկանք պիտի տայ.
27 քանի որ մարդու Որդին գալու է իր
Հօր փառքով՝ իր հրեշտակների հետ
միասին. եւ այն ժամանակ իւրա-
քանչիւրին կը հատուցի ըստ իր գոր-
ծերի: 28 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ
այստեղ գտնուողների մէջ կան ոմանք,
որոնք մահը չեն ճաշակի, մինչեւ որ
չտեսնեն մարդու Որդուն՝ եկած իր
արքայութեամբ»:

ՅԻՍՈՒԻՍԻ ՊԱՅՄԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 9. 2-12, Ղուկ. 9. 28-36)

17 Եւ վեց օր յետոյ Յիսուս իր հետ
վերցրեց Պետրոսին, Յակոբոսին եւ նրա
եղբօրը՝ Յովհաննէսին եւ նրանց հա-
նեց, առանձին, մի բարձր լեռ 2 եւ
նրանց առաջ պայծառակերպուեց. եւ
նրա դէմքը փայլեց ինչպէս արեգակը.
եւ նրա զգեստները դարձան սպիտակ
ինչպէս լոյսը: 3 Եւ ահա նրանց երե-
ւացին Մովսէսն ու Եղիան, որ խօսում
էին նրա հետ: 4 Պետրոսը պատասխան
տուեց եւ ասաց Յիսուսին. «Տէ՛ր, լաւ է,
որ մենք այստեղ ենք. եթէ կամենաս,
երեք տաղաւարներ չինենք, մէկը՝ քեզ
համար, մէկը՝ Մովսէսի, մէկն էլ՝
Եղիայի»: 5 Եւ մինչ նա դեռ խօսում էր,
ահա մի լուսաւոր ամպ նրանց վրայ
հովանի եղաւ. ամպից մի ձայն եկաւ
ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին,
որին հաւանեցի, դրա՛ն լսեցէք»: 6 Երբ
աշակերտները այս լսեցին, իրենց երեսի
վրայ ընկան եւ սաստիկ վախեցան:
7 Եւ Յիսուս, մօտենալով, դիպաւ նրանց
ու ասաց. «Ոտքի՛ ելէք եւ մի՛ վախե-
ցէք»: 8 Նրանք աչքները բարձրացրին
եւ Յիսուսից բացի ոչ ոքի չտեսան:
9 Եւ մինչ լեռից իջնում էին, Յիսուս
նրանց պատուիրեց ու ասաց. «Այդ
տեսիլքը մարդու չասէք, մինչեւ որ
մարդու Որդին մեռելներից յարութիւն
առնի»: 10 Աշակերտները նրան հարց-
րին եւ ասացին. «Հապա ինչո՞ւ օրէնս-
գէտներն ասում են, թէ նախ Եղիան
պիտի գայ»: 11 Յիսուս պատասխանեց
եւ ասաց նրանց. «Եղիան կը գայ եւ կը
վերահաստատի ամէն ինչ. 12 բայց ձեզ
ասում եմ, որ Եղիան արդէն իսկ եկել է.
բայց նրան չճանաչեցին, այլ, ինչ որ
կամեցան, արեցին նրան. նոյնպէս եւ
մարդու Որդին նրանց ձեռքով չարչա-
րուելու է»: 13 Այն ժամանակ աշա-
կերտները հասկացան, թէ Յովհաննէս
Մկրտչի մասին էր ասել իրենց:

ԼՈՒՍՆՈՏ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 9. 13-28, Ղուկ. 9. 37-44)

14 Երբ ժողովրդի մէջ եկան, մի
մարդ մօտեցաւ, ծնկի եկաւ եւ ասաց.
«Տէ՛ր, ողորմի՛ր իմ որդուն, որովհետեւ
լուսնոտութիւնից է տառապում եւ չա-
րաչար տանջւում է. շատ անգամ կրա-
կի մէջ է ընկնում եւ երբեմն՝ ջրի մէջ:
15 Նրան քո աշակերտների մօտ տա-
րայ, եւ չկարողացան բժշկել»: 16 Յի-
սուս պատասխան տուեց ու ասաց. «Ո՛վ
անհաւատ եւ մոլորուած սերունդ,
մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ,
մինչեւ ե՞րբ ձեզ պիտի հանդուրժեմ.
նրան ինձ մօ՛տ բեր»: 17 Եւ Յիսուս
նրան սաստեց, դեւը նրանից դուրս
եկաւ, եւ մանուկը հէնց այդ րոպէից
բժշկուեց: 18 Այն ժամանակ աշակերտ-
ները, առանձին, մօտեցան եւ Յիսուսին
ասացին. «Մենք ինչո՞ւ այն հանել

չկարողացանք»: 19 Եւ Յիսուս նրանց
ասաց. «Ձեր թերահաւատութեան
պատճառով. ճշմարիտ եմ ասում ձեզ,
եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ
ունենաք, այս լեռանը կ'ասէք՝ տեղա-
փոխուի՛ր այստեղից այնտեղ, եւ կը
տեղափոխուի. եւ որեւէ բան ձեզ
համար անհնարին չի լինի: 20† Բայց
այս տեսակ դեւը այլ կերպ դուրս չի
ելնում, եթէ ոչ աղօթքով ու
ծոմապահութեամբ»:

ՎԵՐՍՏԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ
(Մարկ. 9. 29-31, Ղուկ. 9. 44բ-45)

21 Եւ մինչ նրանք Գալիլիայում դեռ
շրջում էին, Յիսուս իր աշակերտներին
ասաց. «Մարդու Որդին մատնուելու է
մարդկանց ձեռքը, 22 ու նրան պիտի
սպանեն, եւ նա երրորդ օրը յարութիւն
պիտի առնի»: Եւ նրանք շատ
տխրեցին:

ՏԱՃԱՐԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԸ

23 Երբ նրանք Կափառնայում եկան,
երկդրամեան տուրքը պահանջողները
մօտեցան Պետրոսին եւ ասացին. «Ձեր
վարդապետը երկդրամեանը չի՞ տա-
լիս»: Եւ Պետրոսն ասաց՝ այո՛: 24 Եւ
երբ տուն մտան, Յիսուս կանխեց նրան
ու ասաց. «Քեզ ինչպէ՞ս է թւում,
Սիմո՛ն. ազգերի թագաւորները հար-
կերը կամ տուրքը՝ ումի՞ց են առնում,
իրենց որդիների՞ց, թէ՞ օտարներից»:
25 Եւ երբ ասաց՝ օտարներից, Յիսուս
նրան ասաց. «Ապա ուրեմն որդիներն
ազատ են: 26 Բայց որպէսզի նրանց
չգայթակղեցնենք, գնա՛ ծով ու կարթ
գցի՛ր, եւ առաջին ձուկը, որ դուրս
կ'ելնի, վերցրո՛ւ ու բա՛ց նրա բերանը
եւ մի արծաթ դրամ կը գտնես. այն
ա՛ռ եւ իմ ու քո տեղ նրանց կը տաս»:

ՄԵԾԸ՝ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(Մարկ. 9. 32-36, 41-47, Ղուկ. 9. 46-48, 17. 1-2)

18 Այն օրը աշակերտները մօտեցան
Յիսուսին եւ ասացին. «Մեզնից ո՞վ է
մեծ երկնքի արքայութեան մէջ»: 2 Եւ
Յիսուս իր մօտ կանչեց մի մանուկ,
կանգնեցրեց նրան նրանց մէջ 3 ու
ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ
չդառնաք ու չլինէք մանուկների պէս,
երկնքի արքայութիւնը չէք մտնի:
4 Արդ, ով իր անձը խոնարհեցնում է
ինչպէս այս մանուկը, երկնքի արքա-
յութեան մէջ նա՛ է մեծ: 5 Եւ ով որ իմ
անունով մի այսպիսի մանուկ ընդու-
նելու լինի, ի՛նձ կ'ընդունի: 6 Եւ ով որ
ինձ հաւատացող այս փոքրիկներից
մէկին գայթակղեցնի, նրա համար լաւ
կը լինի, որ նրա պարանոցից էշի
երկանաքար կախուի, եւ նա սուզուի
ծովի խորքը: 7 Վա՜յ աշխարհին՝ գայ-
թակղութիւնների պատճառով. գայ-
թակղութիւններ պէտք է որ գան, բայց
վա՜յ այն մարդուն, որի միջոցով կը
գայ գայթակղութիւնը: 8 Եթէ քո
ձեռքը կամ ոտքը քեզ գայթակղեցնում
է, կտրի՛ր այն եւ դէ՛ն գցիր քեզնից.
լաւ է, որ դու մէկ ձեռքով կամ կաղ
մտնես կեանք, քան երկու ձեռք ու
երկու ոտք ունենաս եւ յաւիտենական
կրակի մէջ ընկնես: 9 Եւ եթէ քո աչքն
է գայթակղեցնում քեզ, հանի՛ր այն եւ
դէ՛ն գցիր քեզնից. լաւ է, որ դու միա-
կանի մտնես կեանք, քան երկու աչք
ունենաս եւ ընկնես գեհենի կրակը:
10 Զգո՛յշ եղէք, որ այս փոքրիկներից
մէկին չարհամարհէք. ասում եմ ձեզ,
որ երկնքում նրանց հրեշտակները
մշտապէս տեսնում են երեսն իմ Հօր,
որ երկնքում է. 11† որովհետեւ մարդու
Որդին եկաւ փրկելու կորածը»:

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԸ
(Ղուկ. 15. 3-7)

12 «Ձեզ ինչպէ՞ս է թւում. եթէ մի
մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ
նրանցից մէկը մոլորուի, իննսունինը
ոչխարը լեռան վրայ չի՞ թողնի ու
գնայ որոնելու մոլորուածին: 13 Եւ եթէ
պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ
ասում ձեզ, թէ նրա վրայ աւելի
կ'ուրախանայ, քան իննսունինների
վրայ, որ մոլորուած չեն: 14 Այսպէս՝
իմ երկնաւոր Հօր կամքը չէ, որ այս
փոքրիկներից մէկը կորչի»:

†Լաւագոյն յուն. բն. չունեն այս համարը:

†Լաւագոյն յուն. բն. չունեն այս համարը:

ԱՆՅԻՇԱՁԱՐՈՒԹԻՒՆ

15 «Եթէ եղբայրդ քո դէմ մեղանչի, գնա յանդիմանի՛ր նրան, երբ դու եւ նա մենակ էք. եթէ քեզ լսի, քո եղբօրը շահեցիր: 16 Իսկ եթէ քեզ չլսի, ա՛ռ քեզ հետ մէկին եւ կամ երկուսին, որպէսզի երկու կամ երեք վկաների բերանով հաստատուի ամէն ինչ: 17 Իսկ եթէ նրանց էլ չլսի, կ՚ասես հաւատացեալների ժողովում. իսկ եթէ նրանց էլ չլսի, թող նա քեզ համար լինի ինչպէս հեթանոսը եւ մաքսաւորը: 18 Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակէք երկրի վրայ, թող արձակուած լինի երկնքում: 19 Դարձեալ ձեզ ասում եմ. եթէ ձեզնից երկուսը միաբանուեն երկրի վրայ որեւէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կը կատարուի նրանց համար իմ Հօր կողմից, որ երկնքում է. 20 որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ»:

21 Այն ժամանակ Պետրոսը մօտեցաւ նրան ու ասաց. «Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի, պէտք է ներեմ նրան. մինչեւ եօ՞թն անգամ»: 22 Յիսուս նրան ասաց. «Քեզ չեմ ասում, թէ՝ մինչեւ եօթն անգամ, այլ՝ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:

ԱՆԽԻՂՃ ՊԱՐՏԱՏԷՐ ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿը

23 «Այսպէս, երկնքի արքայութիւնը նմանւում է մի թագաւորի, որ կամեցաւ ծառաների հետ իր հաշիւները կարգադրել:

24 Եւ երբ սկսեց հաշիւն ընդունել, նրա մօտ բերուեց տասը հազար քանքարի† մի պարտապան: 25 Եւ քանի որ նա վճարելու բան չունէր, նրա տէրը հրամայեց վաճառել նրան եւ նրա կնոջն ու որդիներին եւ այն ամէնը, ինչ նա ունէր, եւ պարտքը հատուցել: 26 Եւ ծառան գետին ընկնելով՝ երկրպագում էր նրան եւ ասում. «Համբերո՛ղ եղիր իմ հանդէպ, եւ բոլորը կը վճարեմ քեզ»: 27 Այդ ծառայի տէրը, գթալով, արձակեց նրան եւ պարտքը նրան չնորհեց: 28 Իսկ ծառան դուրս ելնելով՝ գտաւ իր ծառայակիցներից մէկին, որ իրեն հարիւր դահեկան պարտք էր: Եւ նրան բռնելով՝ խեղդում էր ու ասում. «Վճարի՛ր ինձ, ինչ որ պարտք ես»: 28 Իսկ ծառայակիցը, ընկնելով նրա ոտքերը, աղաչում էր նրան եւ ասում. «Համբերո՛ղ եղիր իմ հանդէպ, եւ կը վճարեմ քեզ»: 30 Իսկ սա չէր կամենում. գնաց նրան բանտ նետել տուեց, մինչեւ որ պարտքը վճարէր: 31 Նրա ծառայակիցները, երբ տեսան եղածը, շատ տրտմեցին եւ եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամէնը, ինչ եղել էր: 32 Այն ժամանակ տէրը կանչեց նրան եւ ասաց. «Չա՛ր ծառայ, քո ամբողջ պարտքը քեզ չնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ. 33 իսկ պէտք չէ՞ր, որ դու էլ գթայիր քո ծառայակցին, ինչպէս ես էլ քեզ գթացի»: 34 Եւ նրա տէրը բարկանալով՝ նրան յանձնեց դահիճներին, մինչեւ որ հատուցէր բոլոր պարտքերը: 35 Նոյնը պիտի անի ձեզ եւ իմ Հայրը, որ երկնքում է, եթէ ձեզանից իւրաքանչիւրը սրտանց չների իր եղբօրը՝ նրա յանցանքները»:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 10. 1-12)

19 Եւ երբ Յիսուս աւարտեց այս խօսքերը, Գալիլիայից տեղափոխուեց եւ եկաւ Հրէաստանի սահմանները, Յորդանանի միւս կողմը: 2 Եւ նրա յետեւից բազում ժողովուրդ գնաց, եւ այնտեղ նրանց բժշկեց: 3 Եւ փարիսեցիները, մօտենալով նրան, փորձեցին եւ ասացին. «Օրինա՞ւո՞ր է, որ մէկն իր կնոջը արձակի ամէն մի յանցանքի պատճառով»: 4 Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ նա, ով սկզբից ստեղծեց, արու եւ էգ արեց նրանց եւ ասաց. 5 դրա համար տղամարդը պիտի թողնի հօրը եւ մօրը ու պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը մէկ մարմին պիտի լինեն: 6 Ապա ուրեմն՝ ոչ թէ երկու, այլ մէկ մարմին են: Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի»: 7 Նրան ասացին. «Իսկ Մովսէսը ինչո՞ւ մեզ պատուիրեց ապահարզանի թուղթ տալ ու արձակել»: 8 Յիսուս նրանց ասաց. «Մովսէսը ձեր խստասրտութեան պատճառով ձեզ թոյլ տուեց արձակել ձեր կանանց, բայց սկզբից այդպէս չի եղել: 9 Սակայն ասում եմ ձեզ, թէ ով իր կնոջն արձակում է, եւ դա պոռնկութեան պատճառով չէ, եւ ուրիշին է առնում, շնանում է. շնանում է եւ նա, ով արձակուածին է առնում»‡: 10 Իր աշակերտները նրան ասացին. «Եթէ այդպիսին է պարագան մարդու եւ կնոջ համար, լաւ է չամուսնանալ»: 11 Եւ նա նրանց ասաց. «Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ՝ նրանք, որոնց տրուած է. 12 որովհետեւ կան ներքինիներ, որոնք իրենց մօր որովայնից այդպէս են ծնուել. կան ներքինիներ էլ, որոնք մարդկանց կողմից են ներքինի դարձել. ներքինիներ էլ կան, որոնք երկնքի արքայութեան համար իրենք իրենց ներքինիներ են դարձրել. ով կարող է տանել, թող տանի»:

ՅԻՍՈՒՍ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
(Մարկ. 10. 13-16, Ղուկ. 18. 15-17)

13 Այն ժամանակ նրա մօտ մանուկներ բերուեցին, որ նրանց վրայ ձեռք դնի ու աղօթք անի. իսկ նրա աշակերտները սաստում էին բերողներին: 14 Յիսուս ասաց. «Թո՛յլ տուէք այդ մանուկներին եւ մի՛ արգելէք, որ նրանք ինձ մօտ գան, որովհետեւ երկնքի արքայութիւնը այդպիսիներինն է»: 15 Եւ նրանց վրայ ձեռք դրեց ու այդտեղից գնաց:

ՀԱՐՈՒՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ
(Մարկ. 10. 17-31, Ղուկ. 18. 18-30)

16 Եւ ահա մէկը մօտենալով նրան՝ ասաց. «Բարի՛§ վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ յաւիտենական կեանքն ունենամ»: 17 Եւ նա նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարու մասին հարցնում. մէ՛կ է բարին. եթէ կամենում ես յաւիտենական կեանքը մտնել, պահի՛ր պատուիրանները»: 18 Նա ասաց. «Որո՞նք»: Յիսուս նրան ասաց. «Մի սպանիրը, մի շնանարը, մի գողանարը, սուտ մի վկայիրը, 19 քո հօրն ու մօրը մեծարիրը եւ քո ընկերոջը քո անձի պէս պիտի սիրեսը»: 20 Երիտասարդը նրան ասաց. «Այդ բոլորը իմ մանկութիւնից ի վեր պահել եմ. արդ, էլ ի՞նչ բանով պակաս եմ դեռ»: 21 Յիսուս նրան ասաց. «Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա վաճառի՛ր քո ունեցուածքը ու տո՛ւր աղքատներին. եւ երկնքում գանձեր կ՚ունենաս. եւ դու արի՛ իմ յետեւից»: 22 Երբ երիտասարդը այս խօսքը լսեց, տրտմած գնաց. որովհետեւ շատ հարստութիւն ունէր:

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

23 Յիսուս աշակերտներին ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ հարուստը դժուարութեամբ կը մտնի երկնքի արքայութիւնը: 24 Դարձեալ ասում եմ ձեզ՝ աւելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թէ հարուստը՝ Աստծու արքայութիւնը»: 25 Երբ աշակերտները այս լսեցին, շատ զարմացան ու ասացին. «Իսկ ո՞վ կը կարողանայ փրկուել»: 26 Յիսուս նրանց նայեց եւ ասաց. «Մարդկանց համար այդ անկարելի է, բայց Աստծու համար ամէն ինչ կարելի է»:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻՆ ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

27 Այն ժամանակ Պետրոսը պատասխան տուեց ու ասաց նրան. «Ահա՛ւասիկ, մենք թողեցինք ամէն բան եւ եկանք քո յետեւից. արդ, մենք ի՞նչ կ՚ունենանք»: 28 Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ դուք, որ եկաք իմ յետեւից, երկրորդ գալստեան, երբ որ մարդու Որդին իր փառքի աթոռին կը նստի, դուք էլ կը նստէք տասներկու աթոռների վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու ցեղերին: 29 Եւ ամէն ոք, որ թողել է տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր,

†10.000 քանքարը մի աշխատաւորի 15 տարուայ վարձն էր:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն այս վերջին նախադասութիւնը:

§Լաւագոյն յուն. բն. չունեն բարի բառը:

կամ մայր, կամ կին†, կամ որդիներ,
կամ ագարակներ՝ իմ անուան համար,
հարիւրապատիկ պիտի ստանայ եւ
յաւիտենական կեանքը պիտի ժառան-
գի: 30 Շատ առաջիններ վերջին պիտի
լինեն, եւ վերջիններ՝ առաջին»:

ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

20 «Երկնքի արքայութիւնը նման է
մի տանուտէրի, որ առաւօտեան ելաւ
իր այգու համար մշակներ վարձելու:
2 Եւ մշակների օրավարձը մէկ դահե-
կան սակարկելով՝ նրանց ուղարկեց իր
այգին: 3 Եւ առաւօտեան ժամը ինի
մօտ դուրս ելնելով՝ տեսաւ ուրիշների,
որ պարապ կանգնել էին հրապա-
րակում: 4 Նրանց էլ ասաց. «Դո՛ւք էլ
գնացէք իմ այգին, եւ ինչ որ արժան է,
կը տամ ձեզ»: 5 Նրանք եւս գնացին:
Եւ դարձեալ դուրս ելնելով կէսօրին ու
կէսօրից յետոյ ժամը երեքի մօտ՝ նոյն
ձեւով արեց: 6 Եւ ժամը հինգի մօտ
դուրս ելնելով՝ գտաւ ուրիշների, որ
պարապ կանգնել էին. նրանց ասաց.
«Ինչո՞ւ էք այստեղ ամբողջ օրը պա-
րապ կանգնել»: 7 Նրան ասացին. «Ո-
րովհետեւ մեզ ոչ ոք չվարձեց»: Նրանց
ասաց. «Դո՛ւք էլ գնացէք այգին, եւ
ինչ որ արժան է, կը ստանաք»: 8 Եւ
երբ երեկոյ եղաւ, այգու տէրը իր գոր-
ծավարին ասաց. «Կանչի՛ր մշակներին
եւ տո՛ւր նրանց վարձը՝ սկսած վեր-
ջիններից մինչեւ առաջինները»: 9 Երբ
եկան ժամը հինգի մօտ վարձուած-
ները, իւրաքանչիւրը մէկ դահեկան
ստացաւ: 10 Առաջիններն էլ գալով՝
կարծում էին, թէ աւելի կը ստանան,
բայց նրանք էլ իւրաքանչիւրը մէկ
դահեկան ստացան: 11 Երբ առան,
տրտնջում էին տանտիրոջից ու ասում.
12 «Դրանք՝ այդ վերջինները, մէկ ժամ
գործ արեցին, իսկ դու դրանց հաւա-
սար արեցիր մեզ, որ տարանք օրուայ
ծանրութիւնը եւ տօթը»: 13 Նա
պատասխանեց նրանցից մէկին եւ
ասաց. «Ընկե՛ր, քեզ չեմ զրկում. չէ՞ որ
ինձ հետ մէկ դահեկանի սակարկեցիր.
14 ստացի՛ր քոնը եւ գնա՛. այս վերջին-
ներին կամենում եմ տալ որքան եւ
քեզ. 15 միթէ իրաւունք չունե՞մ իմ
ունեցածի հետ վարուելու, ինչպէս
կամենում եմ: Կամ թէ՝ նախանձո՞ւմ
ես, որ ես առատաձեռն եմ»: 16 Այս-
պէս, վերջինները առաջին պիտի լինեն,
եւ առաջինները՝ վերջին. որովհետեւ
բազում են կանչուածները, բայց սա-
կաւ են ընտրեալները»:

ԿՐԿԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ
(Մարկ. 10. 32-34, Ղուկ. 18. 31-34)

17 Երբ Յիսուս Երուսաղէմ էր բարձ-
րանում, Տասներկուսին առանձին իր
հետ վերցրեց եւ ճանապարհին ասաց
նրանց. 18 «Ահաւասիկ Երուսաղէմ ենք
բարձրանում, եւ մարդու Որդին պիտի
մատնուի քահանայապետերին ու
օրէնսգէտներին. եւ նրան մահուան
պիտի դատապարտեն 19 ու նրան
հեթանոսներին պիտի մատնեն՝
ծաղրուելու, ծեծուելու եւ խաչը հա-
նուելու համար, սակայն նա երրորդ
օրը յարութիւն պիտի առնի»:

ՅԱԿՈԲՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՄՕՐ ԽՆԴՐԱՆՔԸ
(Մարկ. 10. 35-45)

20 Այն ժամանակ նրան մօտեցաւ
Զեբեդէոսի որդիների մայրը՝ իր որ-
դիների հետ միասին. նա երկրպագում
էր ու նրանից մի բան ուզում: 21 Եւ նա
նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում»: Կինն
ասաց նրան. «Ասա՛, որ սրանք՝ իմ այս
երկու որդիները, նստեն քո արքա-
յութեան մէջ, մէկը՝ քո աջ կողմում եւ
միւսը՝ ձախ կողմում»: 22 Յիսուս պա-
տասխանեց եւ ասաց. «Չէք իմանում՝
ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն
բաժակը, որը ես խմելու եմ. կամ՝
մկրտուել այն մկրտութեամբ, որով ես
մկրտուելու եմ»: Նրան ասացին՝ կա-
րող ենք: 23 Յիսուս նրանց ասաց. «Իմ
բաժակը կը խմէք, եւ այն մկրտու-
թեամբ, որով ես մկրտւում եմ, կը
մկրտուէք, բայց նստեցնել իմ աջ եւ
ձախ կողմերում՝ ես չէ, որ կը տամ, այլ
այդ նրանց համար է, որոնց տրուած է
իմ Հօրից»: 24 Եւ տասը աշակերտները,
այս լսելով, բարկացան երկու եղբայր-
ների վրայ: 25 Յիսուս նրանց իր մօտ

†Յուն. լաւ բն. չունեն կամ կին բառերը:

կանչեց ու ասաց. «Գիտէք, որ ազգերի
իշխանաւորները տիրում են ազգերի
վրայ, եւ մեծամեծները իշխում են
նրանց վրայ: 26 Ձեր մէջ եւս չպէտք է
այդպէս լինի. այլ ձեզնից ով կը
կամենայ մեծ լինել, ձեր ծառան պիտի
լինի. 27 եւ ձեզնից ով կը կամենայ
առաջին լինել, ձեր ծառան պիտի լինի.
28 ինչպէս որ մարդու Որդին չեկաւ
ծառայութիւն ընդունելու, այլ ծառա-
յելու եւ իր անձը տալու որպէս
փրկանք շատերի փոխարէն»:

ԵՐԻՔՈՎԻ ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 10. 46-52, Ղուկ. 18. 35-43)

29 Եւ երբ նրանք Երիքովից դուրս
էին գալիս, Յիսուսի յետեւից բազում
ժողովուրդ գնաց: 30 Եւ ահա երկու
կոյրեր նստած էին ճանապարհի եզեր-
քին: Երբ լսեցին, թէ Յիսուս անցնում
է, աղաղակեցին ու ասացին. «Ողորմի՛ր
մեզ, Յիսո՛ւս, Դաւթի՛ Որդի»: 31 Եւ
ամբոխը յանդիմանեց նրանց, որ լռեն:
Իսկ նրանք առաւել եւս աղաղակում
էին ու ասում. «Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր,
Դաւթի՛ Որդի»: 32 Յիսուս տեղում
կանգ առաւ, կանչեց նրանց եւ ասաց.
«Ի՞նչ էք կամենում, որ ձեզ անեմ»:
33 Նրան ասացին. «Որ մեր աչքերը
բացուեն, Տէ՛ր»: 34 Եւ գթալով՝ Յիսուս
դիպաւ նրանց աչքերին, եւ նրանք իս-
կոյն տեսան ու գնացին նրա յետեւից:

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Մարկ. 11. 1-11, Ղուկ. 19. 28-40, Յովհ. 12. 12-19)

21 Երբ Երուսաղէմին մօտեցան եւ
եկան Բեթփագէ, Ձիթենեաց լեռան
մօտ, այն ժամանակ Յիսուս իր
աշակերտներից երկուսին ուղարկեց ու
նրանց ասաց. 2 «Գնացէ՛ք այդ գիւղը,
որ ձեր դիմացն է, եւ այնտեղ կը
գտնէք կապուած մի էշ եւ նրա հետ՝ մի
քուռակ. արձակեցէ՛ք բերէք ինձ: 3 Եւ
եթէ մէկը ձեզ բան ասի, կ'ասէք, որ
Տիրոջը պէտք են. եւ նա իսկոյն դրանք
կ'ուղարկի»: 4 Բայց այս բոլորը եղաւ,
որպէսզի կատարուի մարգարէի խօսքը,
որ ասում է. 5 «Ասացէ՛ք Սիոնի դստե-
րը, ահա դէպի քեզ է գալիս քո թա-
գաւորը՝ հեզ եւ նստած էշի ու էշի
քուռակի վրայ»: 6 Աշակերտները գնա-
ցին եւ արեցին, ինչպէս Յիսուս իրենց
հրամայել էր. 7 եւ էշն ու քուռակը
բերեցին, նրանց վրայ զգեստներ գցե-
ցին. եւ նա նստեց դրանց վրայ: 8 Եւ
բազում ժողովուրդ իրենց զգեստները
փռեցին ճանապարհի վրայ, իսկ ուրիշ-
ներ ծառերից ճիւղեր էին կտրում ու
սփռում ճանապարհի վրայ: 9 Առաջից
եւ յետեւից գնացող ժողովրդի բազ-
մութիւնը աղաղակում էր ու ասում.
«Օրհնութի՛ւն Դաւթի Որդուն, օրհ-
նեա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անու-
նով, օրհնութի՛ւն՝ բարձունքներում»:
10 Եւ երբ նա մտաւ Երուսաղէմ,
ամբողջ քաղաքը դղրդաց, եւ ասում
էին՝ ո՞վ է սա: 11 Իսկ ժողովրդի
բազմութիւնն ասում էր. «Սա Յիսուս
մարգարէն է, որ Գալիլիայի Նազարէթ
քաղաքից է»:

ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՃԱՌՈՂ ԱՆՁՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ
(Մարկ. 11. 15-19, Ղուկ. 19. 45-48, Յովհ. 2. 13-22)

12 Եւ Յիսուս մտաւ տաճար ու դուրս
հանեց բոլոր նրանց, որ տաճարի մէջ
վաճառում ու գնումներ էին անում. նա
շուռ տուեց լումայափոխների սեղան-
ներն ու աղաւնեվաճառների աթոռ-
ները: 13 Եւ նրանց ասաց. «Գրուած է՝
իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի,
իսկ դուք աւազակների որջ էք արել
այդ»:
14 Տաճարի մէջ կոյրեր եւ կաղեր
Յիսուսին մօտեցան, եւ նա բժշկեց
նրանց: 15 Երբ քահանայապետներն ու
օրէնսգէտները տեսան այն սքանչե-
լիքները, որ նա արեց, եւ մանուկներին,
որ տաճարի մէջ աղաղակում էին ու
ասում՝ օրհնութի՛ւն Դաւթի Որդուն,
բարկացան. 16 եւ ասացին նրան.
«Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում»:
Յիսուս նրանց ասաց. «Այո՛, դուք չէ՞ք
կարդացել, թէ՝ երեխաների ու ծծկեր-
ների բերանով օրհնութիւն կատարե-
ցիր»: 17 Եւ նրանց թողնելով՝ ելաւ
քաղաքից դուրս, դէպի Բեթանիա. եւ
այնտեղ գիշերեց:

ԱՆԻԾՈՒԱԾ ԹԶԵՆԻՆ
(Մարկ. 11. 12-14, 20-24)

18 Եւ առաւօտեան երբ քաղաք վերադարձաւ, քաղց զգաց: 19 Եւ ճանապարհի վրայ մի թզենի տեսնելով՝ եկաւ դէպի այն եւ նրա վրայ ոչինչ չգտաւ, այլ միայն՝ տերեւ: Եւ թզենուն ասաց. «Այսուհետեւ քեզնից յաւիտեան պտուղ թող չլինի»: Եւ նոյն պահին թզենին չորացաւ: 20 Երբ աշակերտները այս տեսան, զարմացան ու ասացին. «Ինչպէ՞ս թզենին իսկոյն չորացաւ»: 21 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ հաւատ ունենաք եւ չերկմտէք, ոչ միայն կ'անէք այդ թզենուն պատահածը, այլ թէկուզ եւ այդ լեռանն ասէք՝ ելի՛ր ու ծովն ընկիր, այն կը կատարուի: 22 Եւ ամէն ինչ, որ ուզէք աղօթքի մէջ հաւատով, կը ստանաք»:

ՀԱՐՑ ՅԻՍՈՒՍԻՆ՝ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 11. 27-33, Ղուկ. 20. 1-8)

23 Եւ երբ տաճար եկաւ, մինչ ուսուցանում էր, նրան մօտեցան քահանայապետները, ժողովրդի ծերերը եւ ասացին. «Ի՞նչ իշխանութեամբ ես այդ անում, եւ ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը»: 24 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Ես էլ ձեզ մի բան հարցնեմ. եթէ ինձ ասէք, ես էլ ձե՛զ կ'ասեմ, թէ ինչ իշխանութեամբ եմ այս անում: 25 Յովհաննէսի մկրտութիւնը որտեղի՞ց էր՝ երկնքի՞ց, թէ՞՝ մարդկանցից»: Նրանք իրար մէջ խորհուրդ էին անում ու ասում. «Եթէ ասենք՝ երկնքից, մեզ կ'ասի՝ իսկ ինչո՞ւ չհաւատացիք նրան. 26 իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից վախենում ենք, որովհետեւ բոլորն էլ Յովհաննէսին որպէս մարգարէ են ընդունում»: 27 Պատասխանեցին Յիսուսին ու ասացին՝ չգիտենք: Նա էլ նրանց ասաց. «Ես էլ ձեզ չեմ ասի, թէ ինչ իշխանութեամբ եմ այս անում»:

ԱՌԱԿ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 «Բայց ինչպէ՞ս է ձեզ թւում. մի մարդ երկու որդի ունէր: Առաջինին մօտենալով՝ նա ասաց. «Որդեա՛կ, գնա՛ այսօր աշխատի՛ր այգում»: 29 Սա պատասխանեց ու ասաց. «Գնում եմ, տէ՛ր». ու չգնաց: 30 Մօտեցաւ միւսին էլ եւ նոյնն ասաց: Սա պատասխանեց ու ասաց. «Չեմ ուզում»: Բայց յետոյ զղջաց եւ գնաց այգին: 31 Արդ, երկուսից ո՞վ կատարեց հօր կամքը»: Նրանք ասացին՝ վերջինը: Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մաքսաւորներ ու պոռնիկներ ձեզնից առաջ պիտի հասնեն արքայութիւն, 32 որովհետեւ Յովհաննէսը արդարութեան ճանապարհով եկաւ, եւ նրան չհաւատացիք. իսկ մաքսաւորներ ու պոռնիկներ հաւատացին նրան. եւ դուք այդ տեսաք եւ յետոյ էլ չզղջացիք, որ նրան հաւատայիք»:

ՉԱՐ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿը
(Մարկ. 12. 1-12, Ղուկ. 20. 9-19)

33 «Լսեցէ՛ք մի այլ առակ. մի տանուտէր կար, որ այգի տնկեց եւ այն ցանկապատեց ու նրա մէջ հնձան փորեց եւ աշտարակ շինեց. ապա այն վարձու տուեց մշակներին եւ գնաց հեռու երկիր: 34 Երբ պտղի ժամանակը մօտեցաւ, իր ծառաներին ուղարկեց այն մշակների մօտ, որպէսզի բերքից իր բաժինը առնեն: 35 Իսկ մշակները նրա ծառաներին բռնելով՝ մէկին տանջեցին, մէկին սպանեցին, մէկին քարկոծեցին: 36 Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց՝ թուով աւելի, քան առաջինները: Եւ սրանց էլ նոյնն արեցին: 37 Յետոյ նրանց մօտ ուղարկեց իր որդուն ու ասաց՝ թերեւս իմ այս որդուց ամաչեն: 38 Իսկ մշակները, երբ տեսան որդուն, իրենց մտքում ասացին՝ սա է ժառանգը, եկէք սպանենք սրան եւ սրա ժառանգութիւնը մենք սեփականացնենք: 39 Եւ նրան բռնեցին հանեցին այգուց դուրս եւ սպանեցին: 40 Արդ, երբ այգու տէրը գայ, այդ մշակներին ի՞նչ կ'անի»: 41 Նրանք ասացին նրան. «Չարերին չարաչար կ'ոչնչացնի եւ այգին կը տայ այլ մշակների, որոնք նրան կը տան պտուղներն իրենց ժամանակին»:

42 Յիսուս նրանց ասաց. «Սուրբ Գրքերում երբեւիցէ չէ՞ք կարդացել՝ այն վէմը, որ կառուցողները անարգեցին, նա՛ է, որ եղաւ անկիւնաքար. Տիրոջից եղաւ այս, եւ մեր աչքին սքանչելի է: 43 Դրա համար ասում եմ ձեզ, որ ձեզնից կը վերցուի Աստծու արքայութիւնը եւ կը տրուի այն ազգին, որ պտղաբեր կը դարձնի այն: 44† Եւ ով այս վէմի վրայ ընկնի, կը փշրուի, եւ ում վրայ այն ընկնի, նրան կը ճզմի»: 45 Երբ քահանայապետները եւ օրէնսգէտներ ու փարիսեցիներ նրա առակները լսեցին, իմացան, որ իրենց համար ասաց: 46 Եւ ուզում էին նրան բռնել, բայց վախեցան ժողովրդից, քանի որ իբրեւ մարգարէ էին ընդունում նրան:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԻ ԱՌԱԿը
(Ղուկ. 14. 15-24)

22 Յիսուս դարձեալ պատասխանեց եւ առակներով ասաց նրանց. 2 «Երկընքի արքայութիւնը նմանուեց մի թագաւորի, որ իր որդու համար հարսանիք արեց: 3 Եւ ուղարկեց իր ծառաներին՝ հրաւիրուածներին հարսանիքի կանչելու. ու նրանք չուզեցին գալ: 4 Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց՝ ասելով. «Հրաւիրուածներին ասացէ՛ք՝ ահա իմ ճաշկերոյթը պատրաստեցի. իմ զուարակները եւ իմ պարարտ անասունները մորթուած են, ու ամէն ինչ պատրաստ է, եկէ՛ք հարսանիքի»: 5 Սակայն նրանք, բանի տեղ չդնելով, գնացին՝ մէկն իր ագարակը, մէկն իր առեւտրին. 6 ուրիշներ էլ բռնեցին նրա ծառաներին, անպատուեցին ու սպանեցին: 7 Իսկ թագաւորը երբ լսեց, բարկացաւ եւ իր զօրքն ուղարկեց ու բնաջնջեց սպանողներին եւ այրեց նրանց քաղաքը: 8 Ապա իր ծառաներին ասաց. «Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածները արժանի չէին: 9 Արդ, գնացէ՛ք հրապարակները եւ ում որ գտնէք, կանչեցէ՛ք հարսանիքի»: 10 Եւ ծառաները ճանապարհների վրայ ելնելով՝ հաւաքեցին բոլոր նրանց, ում գտան՝ ե՛ւ չարերին, ե՛ւ բարիներին. եւ հարսանիքը լցուեց հրաւիրուածներով: 11 Եւ երբ թագաւորը ներս մտաւ հրաւիրուածներին նայելու, այնտեղ տեսաւ մի մարդու, որ հարսանիքի զգեստ չէր հագել, ու նրան ասաց. 12 «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունէիր, ինչպէ՞ս այստեղ մտար»: Եւ նա պապանձուեց: 13 Այն ժամանակ թագաւորը ծառաներին ասաց. «Կապեցէ՛ք դրա ոտքերն ու ձեռքերը եւ դո՛ւրս հանեցէք դրան, արտաքին խաւարը. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում. 14 որովհետեւ կանչուածները բազում են, իսկ ընտրեալները՝ սակաւ»:

ԿԱՅՍՐԻՆ ՏՐՈՒԵԼԻՔ ՏՈՒՐՔԸ
(Մարկ. 12. 13-17, Ղուկ. 20. 20-26)

15 Այն ժամանակ փարիսեցիները գնացին խորհուրդ արեցին նրա մասին, թէ ինչպէս խօսքերով նրան որոգայթ լարեն: 16 Եւ նրա մօտ ուղարկեցին իրենց աշակերտներից ոմանց՝ հերովդէսականների հետ միասին եւ ասացին. «Վարդապե՛տ, գիտենք, որ ճշմարտախօս ես եւ Աստծու ճանապարհը ճշմարտութեամբ ես ուսուցանում. եւ ոչ մէկից չես քաշւում ու ոչ մի մարդու աչառութիւն չես անում: 17 Արդ, ասա՛ մեզ, ինչպէ՞ս է քեզ թւում. պէ՞տք է հարկ տալ կայսրին, թէ՞՝ ոչ»: 18 Յիսուս հասկացաւ նրանց խորամանկութիւնն ու ասաց. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորնե՛ր, 19 ինձ հարկի դահեկա՛ն ցոյց տուէք»: Եւ նրանք մի դահեկան բերեցին: 20 Եւ նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: 21 Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացէ՛ք, տուէ՛ք կայսրինը՝ կայսեր եւ Աստծունը՝ Աստծուն»: 22 Երբ այս լսեցին, զարմացան եւ թողեցին նրան ու գնացին:

ՀԱՐՑ՝ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 12. 18-27, Ղուկ. 20. 27-40)

23 Նոյն օրը նրան մօտեցան սադուկեցիները, որոնք ասում էին, թէ յա-

†Յուն. լաւ թն. չունեն այս համարը:

րութիւն չկայ. հարց տուեցին նրան ու
ասացին. 24 «Վարդապե՛տ, Մովսէսն
ասաց, որ՝ եթէ մէկն անժառանգ մեռ-
նի, նրա եղբայրը նրա կնոջը պիտի
առնի եւ իր եղբօրը զաւակ հասցնի:
25 Մեզ մօտ եօթը եղբայրներ կային.
առաջինը կին առաւ ու ապա մեռաւ. եւ
որովհետեւ զաւակ չունէր, կնոջն իր
եղբօրը թողեց: 26 Նոյնպէս եւ երկ-
րորդը եւ երրորդը, մինչեւ եօթներորդը:
27 Բոլորից յետոյ կինն էլ մեռաւ:
28 Արդ, յարութեան ժամանակ եօթից
ո՞ւմ կին կը լինի նա, քանի որ բոլորն
էլ նրան իբրեւ կին ունեցան»: 29 Ցի-
սուս պատասխանեց նրանց ու ասաց.
«Մոլորուածնե՛ր, ո՛չ Գրքերն էք հաս-
կանում եւ ո՛չ էլ Աստծու զօրութիւնը.
30 որովհետեւ յարութեան ժամանակ
ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու
գնում, այլ կը լինեն՝ ինչպէս հրեշ-
տակները երկնքում: 31 Բայց մեռել-
ների յարութեան մասին չէ՞ք կար-
դացել Աստծուց ձեզ ասուածը. 32 ե՛ս
եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի
Աստուածը եւ Յակոբի Աստուածը. եւ
Աստուած՝ մեռելների Աստուածը չէ,
այլ՝ կենդանիների»: 33 Երբ ժողո-
վուրդը այս լսեց, զարմացաւ նրա
ուսուցման վրայ:

ԱՄԵՆԱՄԵԾ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ
(Մարկ. 12. 28-34, Ղուկ. 10. 25-28)

34 Իսկ փարիսեցիները երբ լսեցին,
թէ նա պապանձեցրեց սադուկեցի-
ներին, ի մի հաւաքուեցին. 35 եւ
նրանցից մէկը նրան փորձելով՝ հարց-
րեց ու ասաց. 36 «Վարդապե՛տ, Օրէնքի
մէջ ո՞ր պատուիրանն է մեծ»: 37 Եւ
Յիսուս նրան ասաց. «Պիտի սիրես քո
Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո
ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով:
38 Այս է մեծը եւ առաջին պատուի-
րանը. 39 եւ երկրորդը սրա նման է.
պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս քո
անձը: 40 Այս երկու պատուիրաններից
են կախուած ամբողջ Օրէնքը եւ
մարգարէները»:

ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻ ԵՒ ՏԷՐ ԴԱՒԻԹԻ
(Մարկ. 12. 35-37, Ղուկ. 20. 41-44)

41 Եւ երբ փարիսեցիները հաւա-
քուեցին, Յիսուս նրանց հարցրեց ու
ասաց. 42 «Ի՞նչ կարծիք ունէք Քրիս-
տոսի մասին, ո՞ւմ որդին է»: Նրան
ասացին՝ Դաւիթի: 43 Յիսուս նրանց
ասաց. «Իսկ Դաւիթն ինչպէ՞ս նրան
Սուրբ Հոգով կոչում է Տէր եւ ասում է.
44 «Տէրն իմ տիրոջն ասաց՝ նստի՛ր իմ
աջ կողմում, մինչեւ որ քո թշնա-
միներին դնեմ քո ոտքերի տակ իբրեւ
պատուանդան»: 45 Իսկ եթէ Դաւիթը
նրան Տէր է կոչում, ինչպէ՞ս նրա
որդին կը լինի»: 46 Եւ ոչ ոք նրան մի
բառ պատասխան չկարողացաւ տալ:
Եւ այդ օրուանից ոչ ոք չէր համար-
ձակւում նրան մի որեւէ բան հարցնել:

ՕՐԷՆՍԳԷՏՆԵՐԻ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
(Մարկ. 12. 38-40, Ղուկ. 11. 39-42, 44, 20. 45-46)

23 Այն ժամանակ Յիսուս խօսեց
ժողովրդին եւ իր աշակերտներին ու
ասաց. 2 «Մովսէսի աթոռի վրայ
նստեցին օրէնսգէտներն ու փարի-
սեցիները. 3 ամէն ինչ, որ նրանք ձեզ
ասեն, արէ՛ք եւ պահեցէ՛ք, բայց մի՛
արէք ըստ նրանց գործերի, քանի որ
ասում են, բայց չեն անում: 4 Ծանր ու
դժուարակիր† բեռներ են կապում եւ
դնում մարդկանց ուսերի վրայ, բայց
իրենց մատով անգամ չեն կամենում
շարժել դրանք: 5 Եւ իրենց բոլոր
գործերն անում են՝ ի ցոյց մարդկանց.
լայնացնում են իրենց գրապանակ-
ները‡ եւ երկարացնում են իրենց
զգեստների ծոպերը§: 6 Սիրում են
ընթրիքների ժամանակ պատուոյ տե-
ղերը, ժողովարաններում՝ նախապա-
տիւ աթոռները եւ հրապարակներում
ողջոյններ առնել 7 ու մարդկանցից
կոչուել՝ ռաբբի, որ նշանակում է
ուսուցիչ: 8 Բայց դուք որեւէ մէկին

†Յուն. լաւ բն. չունեն դժուարակիր բառը:

‡Գրապանակները փոքր տուփեր էին, որոնց մէջ մագաղաթի մի կտորի վրայ գրուած էին լինում հատուածներ Օրէնքից:

§Բարեպաշտութեան յատուկ նշան (Տե՛ս Թուոց 15. 37-41):

ուսուցիչ մի՛ կոչէք, որովհետեւ ձեր
ուսուցիչը մէկ է, եւ դուք բոլորդ
եղբայրներ էք: 9 Եւ երկրի վրայ ոչ
մէկին ձեզ հայր մի՛ կոչէք, որովհետեւ
մէ՛կ է ձեր Հայրը, որ երկնքում է: 10 Եւ
ուսուցիչներ չկոչուէք, որովհետեւ
Քրիստոս է ձեր ուսուցիչը: 11 Եւ
ձեզնից մեծը ձեր սպասաւորը պիտի
լինի: 12 Ով իր անձը բարձրացնում է,
կը խոնարհուի. եւ ով խոնարհեցնում է
իր անձը, կը բարձրանայ:

13 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օ-
րէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
երկնքի արքայութիւնը փակում էք
մարդկանց առաջ. դուք չէք մտնում եւ
մտնողներին էլ թոյլ չէք տալիս, որ
մտնեն:

15 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օ-
րէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
շրջում էք ծովի ու ցամաքի վրայ՝
անգամ մէկին նորահաւատ դարձնելու
համար, եւ երբ նա այդպիսին է դառ-
նում, նրան ձեզանից կրկնակի անգամ
աւելի գեհենի որդի էք դարձնում:

16 Վա՛յ ձեզ, կո՛յր առաջնորդներ,
որ ասում էք՝ ով որ երդուի տաճարի
վրայ, այդ երդումը ոչինչ չի նշա-
նակում. բայց ով որ երդուի տաճարի
մէջ եղած ոսկու վրայ, պարտաւորւում
է այն կատարել: 17 Ցիմարնե՛ր եւ
կոյրե՛ր, ի՞նչն է մեծ՝ ոսկի՞ն, թէ՞
տաճարը, որ սրբացնում է ոսկին: 18 Եւ՝
ով որ երդուի սեղանի վրայ, այդ
երդումը ոչինչ չի նշանակում. բայց ով
որ երդուի նրա վրայ գտնուող ընծայի
վրայ, պարտաւորւում է այն կատարել:
19 Ցիմարնե՛ր եւ† կոյրե՛ր, ի՞նչն է մեծ՝
ընծա՞ն, թէ՞ սեղանը, որ սրբագործում
է ընծան: 20 Իսկ արդ, ով որ երդուեց
սեղանի վրայ, երդուած կը լինի նրա
վրայ եւ այն ամենի վրայ, որ սեղանի
վրայ է: 21 Եւ ով երդուեց տաճարի
վրայ, երդուած կը լինի նրա եւ նրա
մէջ բնակուող Աստծու վրայ: 22 Եւ ով
երդուեց երկնքի վրայ, երդուած կը
լինի Աստծու աթոռի եւ նրա վրայ
նստողի վրայ:

23 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օրէնս-
գէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
տալիս էք անանուխի եւ սամիթի ու
չամանի տասանորդը, բայց թողել էք
օրէնքի ամենից կարեւորները՝ արդա-
րադատութիւնը, ողորմութիւնը եւ
հաւատը. հարկ էր այս անել եւ այն
չթողնել: 24 Կո՛յր առաջնորդներ, որ
մժղուկները քամում էք եւ ուղտերը
կուլ էք տալիս:

25 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օ-
րէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
բաժակի ու պնակի դուրսը մաքրում էք,
մինչ ներսից նրանք լի են ձեր
գողութեամբ եւ անժուժկալութեամբ:
26 Կո՛յր փարիսեցի, նախ մաքրի՛ր բա-
ժակի եւ պնակի ներսը, որպէսզի
դրանց դուրսն էլ մաքուր լինի:

27 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օ-
րէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
նման էք սպիտակեցրած գերեզման-
ների, որոնք դրսից գեղեցիկ են երե-
ւում, մինչ ներսից լի են մեռելների
ոսկորներով եւ ամենայն ապականու-
թեամբ: 28 Նոյնպէս եւ դուք, դրսից
մարդկանց արդար էք երեւում, մինչ
ներսից լի էք կեղծաւորութեամբ եւ
անօրէնութեամբ:

29 Վա՛յ ձեզ կեղծաւորներիդ՝ օ-
րէնսգէտներիդ եւ փարիսեցիներիդ, որ
մարգարէների շիրիմներն էք շինում եւ
արդարների գերեզմաններն էք զար-
դարում ու ասում էք. 30 «Եթէ մենք
մեր հայրերի օրօք լինէինք, մարգարէ-
ների սպանութեանը մասնակից չէինք
լինի»: 31 Ապա ուրեմն դուք ինքներդ
ձեր մասին վկայում էք, թէ որդիներն
էք նրանց, որոնք կոտորում էին
մարգարէներին: 32 Ուրեմն դուք էլ
լրացրէ՛ք ձեր հայրերի արածը»:

ՈՃԻՐ ԵՒ ՊԱՏԻԺ

33 «Օձե՛ր, իժերի՛ ծնունդներ, ինչ-
պէ՞ս պիտի փախչէք գեհենի դա-
տապարտութիւնից: 34 Դրա համար
ահա ես ձեզ մօտ ուղարկում եմ
մարգարէներ, իմաստուններ ու օրէնս-
գէտներ. նրանցից ոմանց դուք պիտի
սպանէք եւ խաչը պիտի հանէք.
նրանցից ոմանց էլ պիտի տանջէք ձեր
ժողովարաններում ու քաղաքից քա-
ղաք պիտի հալածէք, 35 որպէսզի ձեր
վրայ ընկնի մեղքը երկրի վրայ

†Յուն. լաւ բն. չունեն յիմարներ եւ բառերը:

թափուած ամէն արդար արեան՝
արդար Աբէլի արիւնից մինչեւ արիւնը
Բարաքիայի որդի Զաքարիայի, որին
սպանեցիք տաճարի եւ զոհասեղանի
միջեւ: 36 Ճշմարիտ եմ ասում ձեզ, այս
բոլորը պիտի գայ այս սերնդի վրայ»:

ՈՂԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
(Ղուկ. 13. 34-35)

37 «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ
կոտորում էիր մարգարէներին եւ քա-
կոծում էիր քեզ մօտ ուղարկուած-
ներին. քանի՛ անգամ կամեցայ հաւա-
քել քո մանուկներին, ինչպէս հաւն է
հաւաքում իր ձագերին թեւերի տակ,
բայց չկամեցաք: 38 Ահա ձեր տունը
աւերակ կը թողնուի ձեզ. 39 բայց ձեզ
ասում եմ, որ այսուհետեւ ինձ այլեւս
չէք տեսնի, մինչեւ որ ասէք՝ օրհնեա՛լ
է նա, որ գալիս է Տիրոջ անունով»:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
(Մարկ. 13. 1-3, Ղուկ. 21. 5-7)

24 Յիսուս տաճարից դուրս ելած՝
գնում էր. եւ աշակերտները մօտեցան՝
նրան ցոյց տալու տաճարի շինու-
թիւնները: 2 Եւ նա պատասխանեց ու
նրանց ասաց. «Տեսնո՞ւմ էք այդ
ամէնը. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ-
տեղ չպիտի մնայ քար քարի վրայ, որ
չքանդուի»: 3 Եւ մինչ դեռ նստած էր
Ձիթենեաց լերան վրայ, աշակերտները
առանձին մօտեցան նրան ու ասացին.
«Ասա՛ մեզ, այդ ե՞րբ կը լինի, եւ կամ
քո գալստեան ու այս աշխարհի
վախճանի նշանն ի՞նչ կը լինի»:

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ
(Մարկ. 13. 4-13, Ղուկ. 21. 7-19)

4 Յիսուս պատասխանեց եւ ասաց
նրանց. «Զգո՛յշ եղէք, գուցէ մէկը ձեզ
խաբի. 5 որովհետեւ շատերը կը գան իմ
անունով ու կ'ասեն, թէ՝ ես եմ
Քրիստոսը. եւ շատերին կը մոլորեցնեն:
6 Լսելու էք պատերազմների ձայներ եւ
պատերազմների լուրեր. զգո՛յշ եղէք,
չխռովուէք, որովհետեւ պէտք է, որ
այդ ամէնը լինի, բայց դա դեռ
վախճանը չէ: 7 Ազգ ազգի դէմ պիտի
ելնի, եւ թագաւորութիւն՝ թագաւորու-
թեան դէմ, եւ պիտի լինեն սով, հա-
մաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ:
8 Սակայն այս ամէնը սկիզբն է
երկանց: 9 Այն ժամանակ ձեզ նեղու-
թեան պիտի մատնեն եւ պիտի սպա-
նեն ձեզ. եւ իմ անուան պատճառով
բոլոր ազգերի կողմից ատելի պիտի
լինէք: 10 Եւ այն ժամանակ շատերը
պիտի գայթակղուեն եւ միմեանց
պիտի մատնեն ու միմեանց պիտի
ատեն: 11 Եւ բազում սուտ մարգա-
րէներ պիտի ելնեն ու շատերին պիտի
մոլորեցնեն: 12 Եւ անօրինութեան
շատանալուց՝ շատերի սէրը պիտի
ցամաքի: 13 Բայց ով մինչեւ վերջ
համբերեց, նա պիտի փրկուի: 14 Եւ
արքայութեան այս Աւետարանը պիտի
քարոզուի ամբողջ աշխարհում՝ ի
վկայութիւն բոլոր հեթանոսների. եւ
ապա պիտի գայ վախճանը»:

ՄԵԾ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 13. 14-23, Ղուկ. 21. 20-24)

15 «Արդ, երբ տեսնէք սարսափելի
սրբապղծութիւնը, - որի մասին ա-
սուած է Դանիէլ մարգարէի միջոցով†,
- որ հաստատուած է սուրբ վայրում
(ով ընթերցում է, թող հասկանայ),
16 այն ժամանակ, ովքեր Հրէաս-
տանում կը լինեն, թող փախչեն լեռ-
ները. 17 եւ ով տանիքի վրայ կը լինի,
իր տնից բան վերցնելու համար թող
ցած չիջնի. 18 եւ ով հանդում կը լինի,
իր վերնազգեստը վերցնելու համար
թող յետ չդառնայ: 19 Բայց վա՛յ այդ
օրերին յղիներին ու ստնտուներին:
20 Աղօթեցէ՛ք, որ ձեր փախուստը չլինի
ձմրանը եւ ոչ էլ շաբաթ օրը. 21 որով-
հետեւ այդ ժամանակ մեծ նեղութիւն
պիտի լինի, որպիսին չի եղել աշխարհի
արարչագործութեան սկզբից մինչեւ
այժմ եւ այլեւս չի էլ լինի: 22 Եւ եթէ
այդ օրերը չկարճեցուէին, ոչ մի մար-
մին չէր ազատուի. բայց ընտրեալների
պատճառով այդ օրերը պիտի կար-
ճեցուեն: 23 Այն ժամանակ եթէ մէկը
ձեզ ասի՝ ահա՛ Քրիստոսը այստեղ է

†Տե՛ս Դանիէլ 9. 27, 11. 31, 12. 11:

կամ այնտեղ, չհաւատաք նրան. 24 ո-
րովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ
մարգարէներ պիտի ելնեն եւ մեծամեծ
նշաններ ու զարմանալի գործեր պիտի
ցոյց տան՝ Աստծու ընտրեալներին
անգամ մոլորեցնելու աստիճան, եթէ
հնար լինի: 25 Ահա ձեզ առաջուց
ասացի: 26 Ապա եթէ ձեզ ասեն՝ ահա՛
անապատի մէջ է, չելնէք, կամ թէ՝
ահա՛ մառանում է, չհաւատաք. 27 ո-
րովհետեւ ինչպէս փայլակը, որ ելնում
է արեւելքից եւ երեւում է մինչեւ
արեւմուտք, մարդու Որդու գալուստը
այնպէս կը լինի: 28 Ուր որ դիակն է,
այնտե՛ղ կը հաւաքուեն արծիւները»:

ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ
(Մարկ. 13. 24-27, Ղուկ. 21. 25-28)

29 «Այդ օրերի նեղութիւնից ան-
միջապէս յետոյ, արեգակը պիտի խա-
ւարի, եւ լուսինը իր լոյսը չպիտի տայ,
եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու
երկնքի զօրութիւններ պիտի շարժուեն:
30 Եւ ապա երկնքի վրայ մարդու Որդու
նշանը պիտի երեւայ, ու այդ ժամանակ
երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի
անեն եւ պիտի տեսնեն մարդու
Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի
վրայով՝ զօրութեամբ եւ բազում
փառքով: 31 Եւ նա պիտի ուղարկի իր
հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի
հաւաքեն նրա ընտրեալներին չորս
կողմերից՝ երկնքի ծագերից մինչեւ
միւս ծագերը»:

ԹՋԵՆՈՒ ԴԱՍԸ
(Մարկ. 13. 28-31, Ղուկ. 21. 29-33)

32 «Թզենո՛ւց սովորեցէք առակը.
որովհետեւ, երբ նրա ոստերը կակղեն,
եւ տերեւը ցցուի, կ'իմանաք, որ ամառը
մօտ է: 33 Նոյնպէս եւ դուք՝ երբ այս
բոլորը տեսնէք, իմացէ՛ք, թէ մօտ է
նա, դռների առաջ: 34 Ճշմարիտ եմ
ասում ձեզ, որ այս սերունդը չպիտի
անցնի, մինչեւ որ այս ամէնը կատա-
րուի: 35 Երկինք եւ երկիր պիտի
անցնեն, բայց իմ խօսքերը չպիտի
անցնեն»:

ՉՍՊԱՍՈՒԱԾ ՕՐԸ ԵՒ ԺԱՄԸ
(Մարկ. 13. 32-37, Ղուկ. 17. 26-30, 34-36)

36 «Բայց այդ օրուայ եւ ժամուայ
մասին ոչ ոք չգիտէ. ո՛չ երկնքի
հրեշտակները եւ ո՛չ էլ Որդին, այլ՝
միայն Հայրը: 37 Եւ ինչպէս Նոյի
օրերն էին, այնպէս պիտի լինի մարդու
Որդու գալստեանը. 38 որովհետեւ,
ինչպէս որ ջրհեղեղից առաջ եղած
օրերն էին, - երբ ուտում էին եւ խմում,
կին էին առնում ու մարդու էին գնում,
մինչեւ այն օրը, երբ Նոյը տապանը
մտաւ, 39 ու նրանք բան չիմացան
մինչեւ որ ջրհեղեղը եկաւ ու վերցրեց
տարաւ բոլորին, - այնպէս պիտի լինի
մարդու Որդու գալստեանն էլ: 40 Այն
ժամանակ, եթէ դաշտի մէջ երկու հոգի
լինեն, մէկը պիտի վերցուի, եւ միւսը
պիտի թողնուի: 41 Եւ եթէ երկու կին
աղան մի երկանքի վրայ, մէկը պիտի
վերցուի, եւ միւսը պիտի թողնուի:
42 Արթո՛ւն կացէք, որովհետեւ չգիտէք,
թէ ո՛ր ժամին կը գայ ձեր Տէրը:
43 Ա՛յս իմացէք. եթէ տանտէրը գիտե-
նար, թէ ո՛ր ժամին գող կը գայ, կը
հսկէր եւ չէր թողնի, որ իր տունը
ծակեն: 44 Դրա համար դուք էլ պատ-
րա՛ստ եղէք, որովհետեւ այն ժամին,
երբ չէք սպասում, մարդու Որդին կը
գայ»:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԾԱՌԱՆԵՐ
(Ղուկ. 12. 41-48)

45 «Իսկ ո՞վ է այն հաւատարիմ եւ
իմաստուն ծառան, որին իր տէրը իր
ծառաների վրայ կարգեց՝ իր ժամին
կերակուր տալու համար նրանց: 46 Ե-
րանի՛ է այն ծառային, որին տէրը,
գալով, կը գտնի այդպէս արած:
47 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նրան կը
կարգի իր ամբողջ ունեցուածքի վրայ:
48 Իսկ եթէ չար ծառան իր մտքում
ասի՝ իմ տէրը ուշանում է գալ, 49 եւ
սկսի իր ծառայակիցներին հարուածել
եւ հարբեցողների հետ ուտի եւ խմի,
50 եւ այդ ծառայի տէրը գայ այն օրը,
երբ չէր սպասում, եւ այն ժամին, երբ
չէր իմանում, 51 նրան կը սպանի եւ
կեղծաւորների վախճանին կ'արժա-

նացնի. այնտեղ կը լինի լաց ու ատամների կրճտում»:

ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

25 *«Այն ժամանակ երկնքի արքայութիւնը պիտի նմանեցուի տասը կոյսերի, որոնք իրենց լապտերներն առած՝ փեսային եւ հարսին դիմաւորելու ելան: 2 Նրանցից հինգը յիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն: 3 Յիմարները լապտերներն առան, բայց իրենց հետ պահեստի ձէթ չվերցրին: 4 Իսկ իմաստունները իրենց լապտերների հետ միասին ամաններով ձէթ վերցրին: 5 Եւ երբ փեսան ուշացաւ, ամէնքն էլ նիրհեցին եւ քուն մտան: 6 Եւ կէսգիշերին ձայն լսուեց՝ ահա՛ փեսան գալիս է, նրան դիմաւորելո՛ւ ելէք: 7 Այն ժամանակ բոլոր կոյսերը վեր կացան եւ իրենց լապտերները կարգի բերեցին: 8 Յիմարները իմաստուններին ասացին. "Ձեր այդ իւղից տուէ՛ք մեզ, որովհետեւ ահա մեր լապտերները հանգչում են": 9 Իմաստունները պատասխան տուեցին եւ ասացին. "Գուցէ թէ՛ մեզ եւ թէ՛ ձեզ չբաւականացնի, ուստի գնացէ՛ք վաճառողների մօտ եւ ձեզ համար գնեցէ՛ք": 10 Երբ նրանք գնացին, որ գնեն, փեսան եկաւ, եւ ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակուեց: 11 Յետոյ եկան միւս կոյսերն էլ ու ասացին. "Տէ՛ր, տէ՛ր, բա՛ց արա": 12 Նա պատասխան տուեց ու ասաց. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում": 13 Արթո՛ւն կացէք, որովհետեւ չգիտէք ո՛չ օրը եւ ո՛չ էլ ժամը»:*

ԵՐԵՔ ԾԱՌԱՆԵՐԻ ԱՌԱԿԸ
(Ղուկ. 19. 11-27)

14 «Նոյնպէս, մի մարդ, հեռու երկիր գնալիս, կանչեց իր ծառաներին եւ իր ունեցուածքը նրանց տուեց. 15 մէկին տուեց հինգ քանքար†, միւսին՝ երկու եւ մի ուրիշին՝ մէկ. իւրաքանչիւրին ըստ իր կարողութեան. եւ գնաց: 16 Ով հինգն առաւ, իսկոյն գնաց, դրանով գործ արեց եւ հինգ եւս շահեց: 17 Նոյնպէս նա էլ, որ երկուսն առաւ, երկու եւս շահեց: 18 Իսկ ով մէկն առաւ, գնաց հողը փորեց եւ իր տիրոջ դրամը թաքցրեց: 19 Շատ ժամանակ անց, այն ծառաների տէրը եկաւ եւ նրանց հետ հաշիւ տեսաւ: 20 Ով հինգ քանքար էր առել, մօտենալով՝ հինգ քանքար եւս տուեց ու ասաց. "Տէ՛ր, հինգ քանքար տուիր ինձ. արդ, ահաւասիկ վրան հինգ քանքար եւս շահեցի": 21 Իր տէրը նրան ասաց. "Ապրե՛ս, բարի՛ եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ կը կարգեմ քեզ. մտի՛ր քո տիրոջ ուրախութեան մէջ": 22 Ով երկու քանքարն էր առել, նա էլ մօտեցաւ ու ասաց. "Տէ՛ր, ինձ երկու քանքար տուիր, ահաւասիկ երկու այլ քանքար եւս, որ դրանց վրայ շահեցի": 23 Իր տէրը նրան ասաց. "Ապրե՛ս, բարի՛ եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ կը կարգեմ քեզ. մտի՛ր քո տիրոջ ուրախութեան մէջ": 24 Մօտեցաւ նաեւ նա, որ մէկ քանքար էր առել, ու ասաց. "Տէ՛ր, գիտէի, որ դու մի խիստ մարդ ես, հնձում ես, ինչ որ չես սերմանել, եւ հաւաքում ես այնտեղից, ուր չես ցանել. 25 վախեցայ. գնացի եւ թաքցրի քո այս քանքարը հողի մէջ: Արդ, ահա՛ւասիկ, քոնը՝ քեզ": 26 Տէրը պատասխան տուեց եւ ասաց նրան. "Ձա՛ր եւ ծո՛յլ ծառայ, գիտէիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, եւ հաւաքում այնտեղից, ուր չեմ ցանել. 27 դու պէտք է իմ այդ դրամը լումայափոխների մօտ դնէիր, եւ ես, գալով, տոկոսով միասին պահանջէի այն, ինչ որ իմն է: 28 Արդ, դրանից առէ՛ք այդ քանքարը եւ տուէ՛ք նրան, ով տասը քանքար ունի. 29 քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրուի եւ ունեցածը պիտի աւելացուի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցուի: 30 Իսկ այդ անպիտան ծառային հանեցէ՛ք դուրս, արտաքին խաւարը. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում"»:

†Տե՛ս Մատթէոս 18. 24:

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

31 «Արդ, երբ որ մարդու Որդին գայ իր փառքով եւ բոլոր հրեշտակները՝ իր հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի գահի վրայ, 32 ու նրա առաջ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը, եւ նա նրանց միմեանցից պիտի զատի, ինչպէս մի հովիւ, որ զատում է ոչխարները այծերից: 33 Եւ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին: 34 Այն ժամանակ թագաւորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. "Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. 35 որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, եւ ինձ ջուր տուիք՝ խմելու. օտար էի, եւ ինձ ձեր մէջ առաք, 36 մերկ էի, եւ ինձ հագցրիք, հիւանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ ինձ այցի եկաք": 37 Այն ժամանակ արդարները պիտի պատասխանեն նրան ու ասեն. "Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարաւ եւ ջուր տուեցինք. 38 ե՞րբ տեսանք քեզ օտար եւ մեր մէջ առանք, կամ՝ մերկ եւ հագցրինք. 39 ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ ու եկանք քեզ այցի": 40 Թագաւորը պիտի պատասխանի ու ասի նրանց. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ՝ ի՛նձ համար արեցիք": 41 Այն ժամանակ նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. "Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար. 42 որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք, ծարաւ էի, եւ ինձ ջուր չտուիք, 43 օտար էի, եւ ինձ ձեր մէջ չառաք, մերկ էի, եւ ինձ չհագցրիք, հիւանդ էի ու բանտի մէջ, եւ ինձ տեսնելու չեկաք": 44 Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն ու ասեն. "Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ ու քեզ չծառայեցինք": 45 Այն ժամանակ պիտի պատասխանի նրանց ու ասի. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետեւ այս փոքրերից մէկին ա՛յդ չարեցիք, ինձ համար էլ չարեցիք":

46 Եւ նրանք պիտի գնան դէպի յաւիտենական տանջանք, իսկ արդարները՝ յաւիտենական կեանք»:

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԴԷՄ
(Մարկ. 14. 1-2, Ղուկ. 22. 1-2, Յովհ. 11. 45-53)

26 *Երբ Յիսուս այս բոլոր խօսքերը վերջացրեց, իր աշակերտներին ասաց. 2 «Գիտէք, որ երկու օր յետոյ զատիկ է, եւ մարդու Որդին պիտի մատնուի խաչը ելնելու համար»:*

3 Այն ժամանակ քահանայապետները եւ օրէնսգէտներն ու ժողովրդի ծերերը հաւաքուեցին Կայիափա անունով քահանայապետի դահլիճը 4 եւ խորհուրդ արեցին, որպէսզի նենգութեամբ բռնեն Յիսուսին ու սպանեն: 5 Բայց ասում էին. «Ո՛չ այս տօնին, որպէսզի ժողովրդի մէջ խռովութիւն չլինի»:

ՕԾՈՒՄ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ
(Մարկ. 14. 3-9, Յովհ. 12. 1-8)

6 Երբ Յիսուս եկաւ Բեթանիա, բորոտ Սիմոնի տունը, 7 նրան մօտեցաւ մի կին, որ մի շիշ թանկարժէք իւղ ունէր, եւ թափեց այն նրա գլխին, մինչ նա սեղան էր նստել: 8 Երբ աշակերտներն այս տեսան, բարկացան ու ասացին. «Ինչի՞ համար է անուշահոտ իւղի այդ վատնումը, 9 քանի որ կարելի էր մեծ գնով վաճառել այդ եւ տալ աղքատներին»: 10 Յիսուս իմացաւ ու նրանց ասաց. «Ինչո՞ւ էք նեղութիւն տալիս այդ կնոջը. նա իմ հանդէպ մի բարի գործ կատարեց. 11 աղքատներին ամէն ժամ ձեզ հետ ունէք, բայց ինձ միշտ ձեզ հետ չէք ունենայ: 12 Իմ մարմնի վրայ այդ իւղը թափելով՝ նա իմ թաղուելը կանխանչեց: 13 Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Աւետարանը քարոզուի, պիտի պատմուի դրա յիշատակին, նաեւ ինչ որ դա արեց»:

ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ
(Մարկ. 14. 10-11, Ղուկ. 22. 3-6)

14 Այն ժամանակ Տասներկուսից մէկը՝ Ցուդա Իսկարիովտացի կոչուածը, գնաց քահանայապետների մօտ ու ասաց. 15 «Ի՞նչ կը կամենաք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ»: Եւ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան: 16 Դրանից յետոյ նա առիթ էր որոնում, որ նրան մատնի նրանց:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ
(Մարկ. 14. 12-25, Ղուկ. 22. 7-23, Յովհ. 13. 21-30, Ա Կորնթ. 11. 23-25)

17 Եւ Բաղարջակերաց տօնի առաջին օրը աշակերտները մօտեցան Յիսուսին եւ ասացին. «Ո՞ւր ես կամենում՝ պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը, որ ուտես»: 18 Եւ Յիսուս նրանց ասաց. «Գնացէ՛ք քաղաք այսինչ անձի մօտ եւ նրան ասացէ՛ք. "Վարդապետն ասում է՝ իմ ժամանակը մօտեցել է, քեզ մօտ եմ անելու զատիկը իմ աշակերտների հետ միասին"»: 19 Եւ աշակերտները արեցին, ինչպէս Յիսուս իրենց հրամայեց, ու պատրաստեցին զատկական ընթրիքը:

20 Եւ երբ երեկոյ եղաւ, տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել: 21 Եւ մինչ նրանք դեռ ուտում էին, նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մէկն ինձ մատնելու է»: 22 Եւ նրանք խիստ տխրեցին. նրանցից իւրաքանչիւրն սկսեց ասել նրան. «Միթէ ե՞ս եմ, Տէ՛ր»: 23 Նա պատասխան տուեց ու ասաց. «Ով իր ձեռքն ինձ հետ պնակի մէջ մտցրեց, նա՛ է ինձ մատնելու: 24 Մարդու Որդին կը գնայ այս աշխարհից, ինչպէս նրա մասին գրուած է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կը մատնուի մարդու Որդին: Աւելի լաւ կը լինէր նրա համար, եթէ այդ մարդը ծնուած չլինէր»: 25 Ցուդան, որ մատնելու էր նրան, պատասխանեց ու ասաց. «Միթէ ե՞ս եմ, Վարդապե՛տ»: Նրան ասաց՝ դու ասացիր:

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

26 Եւ մինչ նրանք դեռ ուտում էին, Յիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց եւ տուեց աշակերտներին ու ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»: 27 Եւ բաժակ վերցնելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. 28 «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր† ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար: 29 Բայց ասում եմ ձեզ, այսուհետեւ ես այլեւս որթատունկի բերքից չեմ խմի մինչեւ այն օրը, երբ ձեզ հետ կը խմեմ նորը իմ Հօր արքայութեան մէջ»:

30 Եւ օրհներգեցին ու ելան Ձիթենեաց լեռը:

ԱՂՕԹՔ ԳԵԹՍԵՄԱՆԻՈՒՄ
(Մարկ. 14. 27-42, Ղուկ. 22. 31-46, Յովհ. 13. 36-38)

31 Այն ժամանակ Յիսուս նրանց ասաց. «Դուք ամէնքդ այս գիշեր իմ պատճառով գայթակղուելու էք. որովհետեւ գրուած է, թէ՝ հովուին պիտի հարուածեմ, եւ հօտի ոչխարները պիտի ցրուեն: 32 Եւ իմ յարութիւն առնելուց յետոյ, ձեզնից առաջ պիտի գնամ Գալիլիա»: 33 Պետրոսը պատասխանեց եւ ասաց նրան. «Թէպէտ եւ ամէնքը քո պատճառով գայթակղուեն, սակայն ես չեմ գայթակղուի»: 34 Յիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ այս գիշեր, դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ ինձ պիտի ուրանաս»: 35 Պետրոսը նրան ասաց. «Թէ քեզ հետ մեռնել իսկ ինձ հասնի, քեզ չեմ ուրանայ»: Նոյնն ասացին բոլոր աշակերտներն էլ:

36 Այն ժամանակ Յիսուս նրանց հետ եկաւ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, եւ նրանց ասաց. «Նստեցէ՛ք այդտեղ, մինչեւ որ գնամ աղօթեմ»: 37 Եւ իր հետ վերցնելով Պետրոսին եւ Զեբեդէոսի երկու որդիներին՝ սկսեց տրտմել եւ տագնապել: 38 Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս տխուր է մահու չափ. այստե՛ղ մնացէք եւ ինձ հետ հսկեցէ՛ք»: 39 Եւ մի փոքր առաջ գնալով՝ ընկաւ իր երեսի վրայ, աղօթեց ու ասաց. «Հա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու»: 40 Նա եկաւ աշակերտների մօտ եւ նրանց քնի մէջ գտաւ ու Պետրոսին ասաց. «Այդպէ՛ս, չկարողացա՞ք մէկ ժամ արթուն մնալ ինձ հետ: 41 Արթո՛ւն մնացէք եւ աղո՛թք արէք, որպէսզի փորձութեան մէջ չընկնէք. հոգիս† յօժար է, բայց մարմինս՝ տկար»: 42 Դարձեալ, երկրորդ անգամ, Յիսուս գնաց աղօթքի կանգնեց ու ասաց. «Հա՛յր իմ, եթէ կարելի չէ, որ այս բաժակը ինձնից հեռու անցնի, ապա այն կը խմեմ. քո կա՛մքը թող լինի»: 43 Եւ գալով՝ դարձեալ նրանց քնի մէջ գտաւ, որովհետեւ նրանց աչքերը ծանրացել էին: 44 Թողեց նրանց ու երրորդ անգամ գնաց աղօթքի կանգնեց. եւ դարձեալ նոյն խօսքն ասաց: 45 Այն ժամանակ եկաւ աշակերտների մօտ ու նրանց ասաց. «Ննջեցէ՛ք այսուհետեւ ու հանգստացէ՛ք, քանի որ ահա ժամը հասել է, եւ մարդու Որդին մեղաւորների ձեռքն է մատնւում: 46 Վե՛ր կացէք գնանք այստեղից. որովհետեւ ահա հասաւ նա, ով ինձ մատնելու է»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 14. 43-50, Ղուկ. 22. 47-53, Յովհ. 18. 3-12)

47 Եւ մինչ նա դեռ այսպէս խօսում էր, ահա Ցուդան՝ Տասներկուսից մէկը, եկաւ. ու նրա հետ՝ քահանայապետների եւ ժողովրդի ծերերի կողմից բազում ամբոխ՝ սրերով ու մահակներով: 48 Եւ նա, որ նրան մատնելու էր, նրանց նշան էր տուել ու ասել. «Ում հետ ես համբուրուեմ, նա՛ է, նրան կը բռնէք»: 49 Եւ սա իսկոյն մօտենալով Յիսուսին՝ ասաց. «Ողջո՛յն, Վարդապե՛տ». ու նրա հետ համբուրուեց: 50 Իսկ Յիսուս նրան ասաց. «Ընկե՛ր, սրա՞ համար դու եկար»: Այն ժամանակ, մօտենալով, ձեռք բարձրացրին Յիսուսի վրայ ու նրան բռնեցին: 51 Եւ ահա Յիսուսի հետ գտնուողներից մէկը ձեռքը երկարեց եւ իր սուրը հանեց ու հարուածեց քահանայապետի ծառային եւ նրա ականջը կտրեց պոկեց: 52 Այն ժամանակ Յիսուս նրան ասաց. «Քո սուրը ետ դիր իր տեղը, որովհետեւ, ովքեր սուր են վերցնում, սրով կ'ընկնեն: 53 Եւ կամ կարծո՞ւմ ես, թէ չեմ կարող իմ Հօրն աղաչել, որ նա հիմա ինձ համար այստեղ հասցնի հրեշտակների աւելի քան տասներկու գնդեր: 54 Էլ ինչպէ՞ս պիտի կատարուէին Սուրբ Գրքերում գրուածները, թէ՝ այսպէս պէտք է լինի»:

55 Այն ժամանակ Յիսուս ամբոխին ասաց. «Սրերով եւ մահակներով իմ դէմ էք ելել՝ բռնելու ինձ իբրեւ մի աւազակի՞: Միշտ ձեզ մօտ, տաճարում նստում էի եւ ուսուցանում, ու ինձ չբռնեցիք. 56 բայց այս բոլորը եղաւ, որպէսզի մարգարէների Գրուածքները կատարուեն»: Այն ժամանակ աշակերտները բոլորն էլ թողեցին նրան ու փախան:

ՅԻՍՈՒՍ ԿԱՅԻԱՓԱՅԻ ԱՌԱՋ
(Մարկ. 14. 53-65, Ղուկ. 22. 54-55, 63-67, Յովհ. 18. 13-14, 19-24)

57 Իսկ նրանք բռնելով Յիսուսին՝ տարան Կայիափա քահանայապետի մօտ, ուր օրէնսգէտներն ու ծերերը հաւաքուել էին: 58 Եւ Պետրոսը հեռուից նրան հետեւելով՝ գնաց մինչեւ քահանայապետի գաւիթը եւ ներս մտնելով՝ սպասաւորների հետ նստեց՝ տեսնելու համար վախճանը: 59 Իսկ քահանայապետներն ու ամբողջ ատեանը Յիսուսի մասին սուտ վկայութիւն էին փնտռում, որպէսզի նրան սպանեն, 60 բայց ներկայացող բազում սուտ վկաների մէջ չէին գտնում այն: Յետոյ առաջ եկան երկու սուտ վկաներ. 61 ասացին. «Սա ասում էր՝ Աստծու տաճարը կարող եմ քանդել եւ երեք օրում չինել»: 62 Եւ քահանայապետը վեր կենալով՝ նրան ասաց. «Պատասխան չե՞ս տալիս, քո մասին ի՞նչ ամբաստանութիւն են անում դրանք»: 63 Եւ Յիսուս լուռ էր մնում: Քահանայապետը խօսեց եւ նրան ասաց. «Երդուեցնում եմ քեզ կենդանի

†Լաւագոյն յուն. բն. չունեն նոր բառը:

†Ցուցարէնը՝ հոգին ... մարմինը:

Աստուծով, որ մեզ ասես, թէ դո՞ւ ես
Քրիստոսը՝ Աստծու Որդին»: 64 Յիսուս
նրան ասաց. «Դու ասացիր: Բայց
ասում եմ ձեզ. այսուհետեւ մարդու
Որդուն կը տեսնէք նստած ամենազօր
Աստծու աջ կողմում եւ եկած երկնքի
ամպերի վրայով»: 65 Այն ժամանակ
քահանայապետը պատռեց իր զգեստ-
ներն ու ասաց. «Հայհոյեց, էլ ինչի՞ են
պէտք մեզ վկաներ. ահա հիմա լսեցիք
նրա հայհոյանքը: 66 Ի՞նչ է ձեր
կամքը»: Նրանք պատասխանեցին ու
ասացին՝ մահապարտ է: 67 Այն
ժամանակ թքեցին նրա երեսին,
բռունցքով հարուածեցին նրան, եւ
ոմանք էլ ապտակեցին նրան ու ասա-
ցին. 68 «Մարգարէացի՛ր մեզ, դո՛ւ,
Քրիստո՛ս, ո՞վ է, որ քեզ հարուածեց»:

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ
(Մարկ. 14. 66-72, Ղուկ. 22. 56-62, Յովհ. 18. 15-18, 25-27)

69 Իսկ Պետրոսը նստած էր դուրսը՝
գաւթում. մի աղախին մօտեցաւ նրան
ու ասաց. «Դո՛ւ էլ գալիլիացի Յիսուսի
հետ էիր»: 70 Նա ուրացաւ բոլորի
առաջ ու ասաց. «Չգիտեմ՝ դու ինչ ես
խօսում»: 71 Եւ երբ նա գաւթից դուրս
ելաւ, նրան տեսաւ մի այլ կին եւ
այնտեղ կանգնածներին ասաց. «Սա էլ
Յիսուս Նազովրեցու հետ էր»: 72 Եւ
դարձեալ նա երդումով ուրացաւ, թէ՝
այդ մարդուն չեմ ճանաչում: 73 Եւ մի
քիչ յետոյ այնտեղ գտնուողները,
մօտենալով, Պետրոսին ասացին. «Իրօք,
դու էլ նրանցից ես, քանի որ քո
խօսուածքն էլ քեզ յայտնի է անում»:
74 Այն ժամանակ նա սկսեց նզովք
կարդալ ու երդուել, թէ՝ այդ մարդուն
չեմ ճանաչում: Եւ իսկոյն աքաղաղը
կանչեց: 75 Եւ Պետրոսը յիշեց Յիսուսի
խօսքը, որ նա ասել էր, թէ՝ դեռ
աքաղաղը չկանչած՝ երեք անգամ ինձ
պիտի ուրանաս: Եւ դուրս ելնելով՝
դառնապէս լաց եղաւ:

ՅԻՍՈՒՍ ՏԱՐՈՒՄ Է ՊԻՂԱՏՈՍԻ ՄՕՏ
(Մարկ. 15. 1, Ղուկ. 23. 1-2, Յովհ. 18. 28-32)

27 Երբ առաւօտ եղաւ, բոլոր քա-
հանայապետները եւ ժողովրդի ծերերը
խորհուրդ արեցին Յիսուսի դէմ՝ նրան
սպանելու համար: 2 Նրան կապեցին,
առան գնացին եւ յանձնեցին պոն-
տացի Պիղատոս կուսակալի ձեռքը:

ՅՈՒԴԱՅԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
(Գործք. 1. 18-19)

3 Այն ժամանակ Յուդան, որ Յի-
սուսին մատնել էր, տեսնելով, որ
Յիսուս դատապարտուեց, զղջաց, եր-
ծաթ դրամները վերադարձրեց քահա-
նայապետներին եւ ժողովրդի ծերերին
ու ասաց. 4 «Մեղանչեցի, որովհետեւ
արդար արիւն մատնեցի»: Իսկ նրանք
ասացին. «Մեր հոգը չէ, դո՛ւ գիտես»:
5 Եւ արծաթ դրամները նետեց տաճարի
մէջ եւ հեռացաւ ու գնաց ինքն իրեն
կախեց: 6 Իսկ քահանայապետները
արծաթ դրամները վերցնելով՝ ասացին.
«Օրինաւոր չէ դրանք ընդունել տա-
ճարի գանձանակի մէջ, քանի որ
արեան գին են»: 7 Եւ խորհուրդ
անելով՝ դրանով գնեցին բրուտի
ագարակը՝ որպէս գերեզման օտարների
համար: 8 Այդ պատճառով այդ
ագարակը կոչուել է Արեան ագարակ՝
մինչեւ այսօր: 9 Այն ժամանակ
կատարուեց, ինչ ասուել էր Երեմիա
մարգարէի բերանով. «Եւ առան
երեսուն կտոր արծաթը՝ վաճառուածի
գինը, որ նշանակուել էր իսրայէլացի-
ներից, 10 եւ այն տուեցին բրուտի
ագարակի համար, ինչպէս Տէրը ինձ
հրամայել էր»:

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ
(Մարկ. 15. 2-5, Ղուկ. 23. 3-5, Յովհ. 18. 33-38)

11 Եւ Յիսուս կանգնեց կուսակալի
առաջ. կուսակալը հարցրեց նրան ու
ասաց. «Դո՞ւ ես հրեաների թագա-
ւորը»: Եւ Յիսուս ասաց. «Դու ես
ասում»: 12 Իսկ երբ նա ամբաս-
տանւում էր քահանայապետների ու
ծերերի կողմից, ոչինչ չպատասխանեց:
13 Այն ժամանակ Պիղատոսը նրան
ասաց. «Չե՞ս լսում, ինչքան դրանք քո
դէմ են վկայում»: 14 Եւ նրան
չպատասխանեց եւ ոչ մի բան, այնպէս
որ կուսակալը շատ զարմացաւ:

ՅԻՍՈՒՍԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԱՀՈՒԱՆ
(Մարկ. 15. 6-15, Ղուկ. 23. 13-25, Յովհ. 18. 39-19. 16)

15 Սակայն կուսակալը սովորութիւն
ունէր տօնի առիթով ժողովրդի համար
արձակել մի բանտարկեալ, ում նրանք
կամենային: 16 Այն ժամանակ ունէին
մի նշանաւոր բանտարկեալ, որի անու-
նը Յեսու Բարաբբա էր: 17 Երբ հաւա-
քուեցին, Պիղատոսը նրանց ասաց.
«Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ
ձեզ համար արձակեմ. Յեսու Բա-
րաբբայի՞ն, թէ՞ Յիսուսին՝ Քրիստոս
կոչուածին». 18 քանի որ Պիղատոսը
գիտէր, որ նախանձից մատնել էին
նրան:
19 Եւ մինչ նա ատեան էր նստում,
իր կինը նրան լուր ուղարկեց ու ասաց.
«Քո եւ այդ արդարի միջեւ ոչինչ չկայ,
որովհետեւ այսօր երազումս նրա
պատճառով գլխովս շատ բաներ ան-
ցան»: 20 Իսկ քահանայապետներն ու
ծերերը համոզեցին ժողովրդին, որ
Բարաբբային ուզեն եւ Յիսուսին
կորստեան մատնեն: 21 Կուսակալը
պատասխան տուեց ու ասաց նրանց.
«Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ
ձեզ համար արձակեմ»: 22 Եւ նրանք
ասացին՝ Բարաբբային: Պիղատոսը
նրանց ասաց. «Իսկ ի՞նչ անեմ Յի-
սուսին՝ Քրիստոս կոչուածին»: 23 Ա-
մէնքը ասացին՝ թող խաչուի: Եւ նա
ասաց. «Ի՞նչ չար բան արեց»: Եւ
նրանք առաւել եւս աղաղակում էին ու
ասում՝ թող խաչուի: 24 Եւ Պիղատոսը
տեսնելով, թէ ոչինչ չի օգնում, այլ է՛լ
աւելի խռովութիւն է լինում, ջուր
վերցնելով՝ լուաց ձեռքերը ժողովրդի
առաջ ու ասաց. «Այդ արդարի[†] արիւ-
նից ես անմասն եմ. դո՛ւք գիտէք»:
25 Ամբողջ ժողովուրդը պատասխանեց
ու ասաց. «Դրա արիւնը՝ մեր վրայ եւ
մեր որդիների վրայ»: 26 Այն ժամա-
նակ Պիղատոսը նրանց համար արձա-
կեց Բարաբբային եւ Յիսուսին գանա-
կոծել տալով՝ տուեց նրանց ձեռքը, որ
խաչուի:

[†]Լաւագոյն յուն. բն. արդարի փոխարէն
ունեն մարդու:

ՋԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԾԱՂՐԸ ԵՒ ՆԱԽԱՏԻՆՔԸ
(Մարկ. 15. 16-20, Յովհ. 19. 2-3)

27 Այն ժամանակ կուսակալի զի-
նուորները Յիսուսին վերցրին տարան
ապարանք եւ ամբողջ գունդը նրա
գլխին հաւաքեցին: 28 Մերկացրին
նրան եւ նրա վրայ կարմիր վեր-
նազգեստ գցեցին: 29 Եւ փշերից պսակ
պատրաստելով՝ դրեցին նրա գլխին եւ
մի եղէգ՝ նրա աջ ձեռքին. նրա առաջ
ծնկի գալով՝ ծաղրում էին ու ասում.
«Ողջո՛յն, հրեաների՛ թագաւոր»: 30 Եւ
թքելով նրա վրայ՝ եղէգն առնում էին
ու խփում նրա գլխին: 31 Եւ երբ նրան
ծաղրուծանակի ենթարկեցին, նրա
վրայից հանեցին քղամիդը ու նրան
հագցրին իր զգեստը. եւ տարան նրան
խաչը հանելու:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉՈՒԵԼԸ
(Մարկ. 15. 21-32, Ղուկ. 23. 26-43, Յովհ. 19. 17-27)

32 Եւ դուրս ելնելով՝ գտան
կիւրենացի մի մարդ՝ Սիմոն անունով,
ու նրան ստիպեցին, որ նա խաչը կրի:
33 Եւ հասնելով Գողգոթա կոչուած
տեղը, որ նշանակում է կառափնա-
տեղի, 34 Յիսուսին լեղի խառնած գինի
տուեցին խմելու, եւ երբ համտեսեց,
չկամեցաւ խմել: 35 Եւ նրան խաչը
հանելով՝ բաժանեցին նրա զգեստները՝
վիճակ գցելով, որպէսզի կատարուի
այն խօսքը, որ ասուեց մարգարէի
կողմից. «Իմ զգեստները բաժանեցին
իրենց մէջ եւ իմ պատմուճանի վրայ
վիճակ էին գցում»: 36 Ու նստած՝
նրան պահպանում էին: 37 Եւ նրա
գլխի վերեւը դրեցին նրա յանցապար-
տութեան գիրը, թէ՝ սա՛ է Յիսուսը՝
հրեաների թագաւորը: 38 Միեւնոյն
ժամանակ նրա հետ խաչը հանեցին
երկու աւազակներ՝ մէկը նրա աջից, եւ
միւսը՝ ձախից:
39 Եւ մօտով անցնողները հայհոյում
էին նրան, շարժում էին գլուխներն ու
ասում. 40 «Վա՛հ, դու որ քանդում էիր
տաճարը եւ երեք օրից այն շինում,
փրկի՛ր քեզ. եթէ Աստծու Որդի ես,
իջի՛ր այդ խաչից»: 41 Նոյնպէս եւ
քահանայապետները, օրէնսգէտներով

ու ծերերով հանդերձ, ծաղրում էին
նրան ու ասում. 42 «Ուրիշներին փրկեց,
ինքն իրեն չի կարողանում փրկել.
եթէ† Իսրայէլի թագաւոր է, հիմա թող
այդ խաչից իջնի. եւ դրան կը
հաւատանք: 43 Եթէ դա յոյսը դրել էր
Աստծու վրայ, թող նա այժմ դրան
փրկի, եթէ ուզում է դրան. քանի որ
ասաց, թէ՝ Աստծու Որդի եմ»: 44 Նրա
հետ խաչուած աւազակներն էլ էին
նոյն ձեւով նախատում նրան:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀԸ
(Մարկ. 15. 33-41, Ղուկ. 23. 44-49, Յովհ. 19. 28-30)

45 Եւ կէսօրին ամբողջ երկրի վրայ
խաւար եղաւ մինչեւ ժամը երեքը:
46 Ժամը երեքի մօտ Յիսուս բարձր
ձայնով գոչեց ու ասաց. «Էլի՛, Էլի՛,
լա՞մա սաբաքթանի», այսինքն՝ Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թո-
ղեցիր ինձ: 47 Այնտեղ կանգնածներից
ոմանք, երբ լսեցին, ասացին. «Դա
Եղիային է կանչում»: 48 Եւ նրանցից
մէկը իսկոյն վազեց, քացախով թա-
թախուած սպունգ վերցրեց եւ մի
եղէգի վրայ անցկացնելով՝ տուեց
նրան, որ խմի: 49 Իսկ ուրիշներ ասում
էին. «Թո՛ղ, տեսնենք, թէ Եղիան կը
գա՞յ, որ դրան փրկի»:
50 Եւ Յիսուս դարձեալ բարձր ձայ-
նով աղաղակեց եւ հոգին աւանդեց:
51 Եւ ահա տաճարի վարագոյրը
վերեւից մինչեւ ներքեւ երկուսի
պատռուեց, եւ երկիրը շարժուեց, եւ
ժայռեր ճեղքուեցին, 52 եւ գերեզ-
մանները բացուեցին, եւ ննջեցեալ
սրբերի բազում մարմիններ յարութիւն
առան 53 ու նրա յարութիւնից յետոյ
գերեզմաններից ելնելով մտան սուրբ
քաղաքը եւ շատերին երեւացին:
54 Իսկ հարիւրապետը եւ նրանք, որ
իր հետ Յիսուսին պահպանում էին,
երբ տեսան երկրաշարժը եւ պատա-
հածները, սաստիկ վախեցան ու ասա-
ցին. «Արդարեւ, Աստծու Որդի էր սա»:
55 Այնտեղ շատ կանայք կային,
որոնք կանգնած հեռուից նայում էին
եւ որոնք Գալիլիայից եկել էին
Յիսուսի յետեւից՝ նրան ծառայելու
համար. 56 Նրանց մէջ էին Մարիամ
Մագդաղենացին, Յակոբի եւ Յովսէի
մայր Մարիամը եւ Զեբեդէոսի որ-
դիների մայրը:

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ
(Մարկ. 15. 42-47, Ղուկ. 23. 50-56, Յովհ. 19. 38-42)

57 Երբ երեկոյ եղաւ, եկաւ Յովսէփ
անունով արիմաթիացի մի մեծահա-
րուստ մարդ, որ Յիսուսին աշակերտել
էր: 58 Սա Պիղատոսի մօտ գնալով՝
Յիսուսի մարմինը խնդրեց: Այն ժա-
մանակ Պիղատոսը հրամայեց, որ
մարմինը տրուի: 59 Եւ Յովսէփը, մար-
մինն առնելով, պատեց մաքուր կտա-
ւով 60 եւ դրեց նոր գերեզմանի մէջ, որ
փորել էր տուել ժայռի մէջ: Եւ մի մեծ
քար, որպէս կափարիչ, գերեզմանի
դռան առաջ գլորեց ու գնաց: 61 Այն-
տեղ էր Մարիամ Մագդաղենացին եւ
միւս Մարիամը. նրանք նստած էին
գերեզմանի դիմաց:

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

62 Եւ հետեւեալ օրը, որ ուրբաթի
յաջորդ օրն է, քահանայապետներն ու
փարիսեցիները հաւաքուեցին Պիղա-
տոսի մօտ ու ասացին. 63 «Տէ՛ր, յի-
շեցինք, թէ այն մոլորեցնողը, քանի
կենդանի էր, ասում էր, թէ՝ երեք օրից
յարութիւն պիտի առնեմ: 64 Արդ,
հրամայի՛ր, որ մինչեւ երեք օր գերեզ-
մանի ապահովութեանը հոգ տարուի.
գուցէ աշակերտները գիշերով† գան եւ
գողանան նրան ու ժողովրդին ասեն,
թէ՝ մեռելներից յարութիւն առաւ. եւ
վերջին մոլորութիւնը աւելի վատ լինի,
քան առաջինը»: 65 Պիղատոսը նրանց
ասաց. «Զինուորներ ունէք. գնացէ՛ք
ապահովութեանը հոգ տարէք, ինչպէս
որ գիտէք»: 66 Եւ նրանք գնացին գե-
րեզմանի ապահովութեանը հոգ տա-
նելու եւ վէմը կնքեցին՝ զինուորներ
նշանակելով:

†Լաւագոյն յուն. բն. չունեն եթէ բառը:

†Յունարէնը չունի գիշերով բառը:

ԹԱԿՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
(Մարկ. 16. 1-10, Ղուկ. 24. 1-12, Յովհ. 20. 1-10)

28 Շաբաթ օրուայ երեկոյեան, երբ
կիրակին լուսանում էր, Մարիամ
Մագդաղենացին եւ միւս Մարիամը
եկան գերեզմանը տեսնելու: 2 Եւ ահա
մեծ երկրաշարժ եղաւ, որովհետեւ
Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝
մօտեցաւ, դռնից վէմը մի կողմ գլորեց
ու նստեց նրա վրայ: 3 Նրա տեսքը
փայլակի նման էր, ու նրա զգեստը՝
սպիտակ, ինչպէս ձիւնը: 4 Նրա ահից
պահապանները խռովուեցին եւ մեռել-
ների պէս եղան: 5 Հրեշտակը խօսեց ու
կանանց ասաց. «Դուք մի՛ վախեցէք,
գիտեմ, որ փնտռում էք Յիսուսին, որ
խաչուեց. 6 այստեղ չէ նա, քանի որ
յարութիւն առաւ, ինչպէս ինքն ասել
էր. եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը, ուր պառ-
կած էր: 7 Եւ իսկոյն գնացէ՛ք, ասացէ՛ք
նրա աշակերտներին, թէ յարութիւն
առաւ. եւ ահա նա ձեզնից առաջ
գնում է Գալիլիա. այնտեղ նրան կը
տեսնէք: Ահա ասացի ձեզ»: 8 Եւ
իսկոյն, ահով եւ մեծ ուրախութեամբ,
գերեզմանից դուրս ելնելով՝ վազեցին
աշակերտներին պատմելու:
9 Եւ յանկարծ Յիսուս նրանց դի-
մացը ելաւ ու ասաց՝ ողջո՛յն ձեզ. եւ
նրանք մօտենալով՝ նրա ոտքերին
փարուեցին ու երկրպագեցին նրան:
10 Այն ժամանակ Յիսուս նրանց ասաց.
«Մի՛ վախեցէք. գնացէ՛ք ասացէք իմ
եղբայրներին, որ գնան Գալիլիա եւ
այնտեղ ինձ տեսնեն»:
11 Երբ նրանք գնացին, ահա զի-
նուորներից ոմանք քաղաք եկան ու
քահանայապետներին պատմեցին այն
բոլորը, ինչ որ պատահել էր: 12 Եւ
նրանք ծերերի հետ միասին հաւա-
քուելով՝ խորհուրդ արեցին, շատ դրամ
տուեցին զինուորներին ու ասացին.
13 «Կ՚ասէք, թէ նրա աշակերտները,
գիշերով գալով, գողացան նրան, մինչ
մենք քնի մէջ էինք: 14 Եւ եթէ այդ
լուրը կուսակալին հասնի, մենք նրան
կը գոհացնենք եւ ձեզ հոգսից կ՚ազա-
տենք»: 15 Եւ նրանք դրամն առնելով՝
արեցին այնպէս, ինչպէս որ իրենց
սովորեցրել էին: Եւ այս զրոյցը տարա-
ծուած է հրեաների մէջ մինչեւ այսօր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ
(Մարկ. 16. 14-18, Ղուկ. 24. 36-49,
Յովհ. 20. 19-23, Գործք 1. 6-8)

16 Իսկ տասնմէկ աշակերտները
գնացին Գալիլիա, այն լեռը, ուր
Յիսուս իրենց հետ ժամադրուել էր:
17 Երբ նրան տեսան, երկրպագեցին
նրան, իսկ ոմանք երկմտեցին: 18 Եւ
Յիսուս մօտենալով՝ խօսեց նրանց հետ
ու ասաց. «Ինձ է տրուած ամէն իշխա-
նութիւն երկնքում եւ երկրի վրայ.
ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ
ձեզ եմ ուղարկում: 19 Գնացէ՛ք ուրեմն
աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին,
նրանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդու եւ
Սուրբ Հոգու անունով: 20 Ուսուցա-
նեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ
որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ
հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխար-
հի վախճանը»:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Ներածութիւն

Չորս աւետարանների մէջ Մարկոսի աւետարանը ամենից կարճն է եւ, ամենայն հաւանականութեամբ, ամենից հինը:

Առաջին իսկ տողերից նա ներկայացնում է Յիսուսին որպէս Աստծու Որդի: Բայց այս զարմանալի տիտղոսը, որ բազմաթիւ առիթներով հաստատւում է աւետարանի ամբողջ շարադրանքում, պէտք է գաղտնի մնայ, հէնց Յիսուսի կամքի համաձայն:

Սակայն երբ հանդէս է գալիս այսպիսի մի Պատգամախօս, իւրաքանչիւր ոք պէտք է նրան ընդունի արժանավայել կերպով: Նախապատրաստել Աստծու ժողովրդին այդ բանի համար. ահա այս է պարտականութիւնը Յովհաննէս Մկրտչի, որից ուրիշների նման Յիսուս եւս մկրտւում է:

Այնուհետեւ, առանձնութեան մէջ փորձութեան մի շրջան անցկացնելուց յետոյ, Յիսուս սկսում է իր հանրային գործունէութիւնը: Մարկոսը յաճախ է ընդգծում Յիսուսի հեղինակութիւնը ինչպէս մարդկանց կանչելու ժամանակ, որպէսզի իրեն հետեւեն, այնպէս էլ երբ նա ուսուցանում է բազմութիւններին կամ բժշկում հիւանդներին:

Իր պատմութեան երկրորդ մասում Մարկոսը ցոյց է տալիս, թէ ինչպէս Յիսուս գնում է դէպի իր չարչարանքները, դէպի մահն ու յարութիւնը, որ սպասում են նրան Երուսաղէմում: Այդ մասին նա երեք անգամ յայտնում է իր աշակերտներին, բայց առանց հասկացուելու նրանցից: Աւելի յաճախ նա խօսում է ինքն իր մասին՝ իրեն կոչելով մարդու Որդի, սակայն առաւել եւս մեծ է նրա անձի շուրջ եղած խորհուրդը:

Երուսաղէմում, որտեղ նա մուտք է գործում ցնծութեան բացականչութիւնների ներքոյ, տաճարից վոնդում է վաճառք անողներին եւ բախւում Իսրայէլի կրօնական պետերի հակադրութեանը: Դա նրա համար ահիթ է լինում վերջին անգամ ուսուցանելու իր հակառակորդներին, ժողովրդի բազմութեանը, իր աշակերտներին:

ԺԴ եւ ԺԵ գլուխները նուիրուած են Յիսուսի վերջին երկու օրերին: Այս գլուխներում են շարադրուած մասնաւորապէս վերջին ընթրիքի պատմութիւնը իւրայինների հետ, երբ նա բաժանում է նրանց հետ հացը եւ գինին, նրա առանձին աղօթքը Գեթսեմանիի պարտէզում, նրա ձերբակալութիւնը, դատապարտութիւնը, խաչելութիւնը եւ գերեզման դրուելը: Նրա մահուան երրորդ օրը, սակայն, կանայք գալիս ու նրա գերեզմանը դատարկ են գտնում: Նրանք իմանում են, որ նա մահուանից անցել է դէպի կեանք եւ սարսափահար փախչում են:

Մարկոսի աւետարանն ընթերցելուց յետոյ արդեօք, հռոմէացի սպայի նման, մեր ընթերցողներն էլ կ'ընդունե՞ն, որ Յիսուս Նազովրեցին «իսկապէս Որդին էր Աստծու»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 3. 1-12, Ղուկ. 3. 1-18, Յովհ. 1. 19-28)

1 *Յիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու Աւետարանի սկիզբը: 2 Ինչպէս որ գրուած է մարգարէների գրքերում*†*. «Ահաւասիկ ես ուղարկում եմ իմ պատգամաւորին քո առաջից, որ կը պատրաստի քո ճանապարհը քո առաջ»: 3 Անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը եւ հարթեցէ՛ք նրա շաւիղները»:*

4 Յովհաննէսը մկրտում էր անապատում եւ քարոզում ապաշխարութեան մկրտութիւն՝ մեղքերի թողութեան համար: 5 Ամբողջ Հրէաստանը եւ բոլոր երուսաղէմացիները գնում էին նրա մօտ եւ մկրտւում նրանից Յորդանան գետում՝ խոստովանելով իրենց մեղքերը: 6 Եւ Յովհաննէսը հագել էր ուղտի մազից զգեստ եւ մէջքին՝ կաշուէ գօտի. եւ նրա կերակուրն էր մորեխ եւ վայրի մեղր: 7 Նա քարոզում էր եւ ասում. «Իմ յետեւից կը գայ ինձնից աւելի հզօրը, որի առաջ արժանի չեմ խոնարհուելու՝ նրա կօշիկների կապերն արձակելու համար: 8 Ես ձեզ մկրտեցի ջրով, իսկ նա ձեզ կը մկրտի Սուրբ Հոգով»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 3. 13-4. 11, Ղուկ. 3. 21-22, 4. 1-13)

9 Այն օրերին Յիսուս եկաւ Գալիլիայի Նազարէթ քաղաքից եւ Յովհաննէսից մկրտուեց Յորդանանում: 10 Եւ նոյն ժամին, երբ ջրից դուրս էր գալիս, տեսաւ երկինքը՝ պատռուած, եւ Աստծու Հոգին, որպէս աղաւնի, որ իջնում էր իր վրայ: 11 Երկնքից մի ձայն եկաւ, որն ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը»:

12 Եւ անմիջապէս Հոգին նրան հանեց տարաւ դէպի անապատ: 13 Եւ նա այնտեղ էր քառասուն օր՝ փորձուելով սատանայից: Եւ նա գազանների հետ էր, իսկ հրեշտակները ծառայում էին նրան:

†Յունարէնն ունի Եսայի Մարգարէի մէջ:

ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ
(Մատթ. 4. 12-22, Ղուկ. 4. 14-15, 5. 1-11)

14 Յովհաննէսի բանտարկուելուց յետոյ Յիսուս Գալիլիա եկաւ. քարոզում էր Աստծու Աւետարանը եւ ասում. 15 «Ժամանակը հասել է, եւ մօտեցել է Աստծու արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»: 16 Երբ նա անցնում էր Գալիլիայի ծովեզրով, տեսաւ Սիմոնին եւ նրա եղբայր Անդրէասին, որոնք ուռկանները ծովն էին գցել, որովհետեւ ձկնորսներ էին: 17 Եւ Յիսուս նրանց ասաց. «Իմ յետեւի՛ց եկէք, եւ ես ձեզ կը դարձնեմ մարդկանց որսորդներ»: 18 Եւ իսկոյն ուռկանները թողնելով՝ գնացին նրա հետ: 19 Այստեղից մի քիչ առաջ գնալով՝ տեսաւ Զեբեդէոսի որդի Յակոբոսին եւ նրա եղբայր Յովհաննէսին. սրանց էլ տեսաւ իրենց նաւակի մէջ, մինչ ուռկաններն էին կարգի բերում: 20 Եւ կանչեց նրանց. եւ նրանք իսկոյն նաւակի մէջ թողնելով իրենց հօրը՝ Զեբեդէոսին, վարձկան ձկնորսների հետ միասին, գնացին նրա յետեւից:

ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Ղուկ. 4. 31-37)

21 Եւ մտան Կափառնայում: Եւ Յիսուս նոյն շաբաթ օրն իսկ ժողովարան մտնելով՝ ուսուցանում էր նրանց: 22 Եւ նրանք զարմանում էին նրա քարոզութեան վրայ, որովհետեւ նրանց ուսուցանում էր իշխանութեամբ եւ ոչ՝ ինչպէս օրէնսգէտները: 23 Արդ, նրանց ժողովարանում մի մարդ կար՝ պիղծ ոգուց բռնուած, որն աղաղակեց եւ ասաց. 24 «Թո՛յլ տուր, ի՞նչ ես ուզում մեզնից, Յիսո՛ւս Նազովրեցի. մեզ կորստեան մատնելո՞ւ եկար. գիտենք քեզ, թէ ով ես դու, Աստծու Սուրբն ես»: 25 Յիսուս սաստեց նրան ու ասաց. «Ձայնդ կտրի՛ր եւ դո՛ւրս ել դրանից»: 26 Եւ պիղծ ոգին սաստիկ ցնցեց դիւահարին եւ բարձրաձայն աղաղակելով՝ դուրս ելաւ նրանից: 27 Եւ ամէնքը զարմացան, այնպէս որ հարցնում էին իրար եւ ասում. «Այս ի՞նչ

նոր վարդապետութիւն է, որ իշխանութեամբ պիղծ ոգիներին էլ է սաստում, եւ նրանք հնազանդւում են նրան»: 28 Եւ նրա համբաւը տարածուեց Գալիլիայի բոլոր կողմերում:

ՋԱՆԱՋԱՆ ԲԺՇԿՈՒՄՆԵՐ
(Մատթ. 8. 14-17, Ղուկ. 4. 38-45)

29 Եւ ժողովարանից դուրս ելնելով†, անմիջապէս եկաւ Սիմոնի եւ Անդրէասի տունը՝ Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ: 30 Սիմոնի զոքանչը տաքութեան մէջ պառկած էր. իսկոյն ասացին նրա մասին Յիսուսին: 31 Եւ նա մօտենալով՝ նրա ձեռքը բռնեց եւ նրան ոտքի կանգնեցրեց. եւ տենդը նրան թողեց. եւ նա ծառայում էր նրանց:

32 Երբ երեկոյ եղաւ, արեւի մայր մտնելու ժամանակ, նրա մօտ էին բերում բոլոր հիւանդներին եւ դիւահարներին: 33 Եւ ամբողջ քաղաքը հաւաքուել էր դռների առաջ: 34 Եւ նա տեսակ-տեսակ հիւանդութիւններից բազում հիւանդներ բժշկեց եւ բազում դեւեր հանեց. եւ թոյլ չէր տալիս դեւերին խօսել, որովհետեւ գիտէին նրան, որ Քրիստոսն է‡:

35 Եւ առաւօտեան մօտ, լոյսը բացուելուց առաջ, վեր կացաւ եւ ելաւ գնաց ամայի մի տեղ ու այնտեղ աղօթում էր: 36 Նրա յետեւից նրան փնտռելու գնաց Սիմոնը եւ նրանք, որ նրա հետ էին: 37 Եւ երբ գտան նրան, ասացին. «Ամէնքը փնտռում են քեզ»: 38 Եւ նրանց ասաց. «Եկէ՛ք գնանք այլ մօտակայ գիւղաքաղաքներ եւս, որպէսզի այնտեղ էլ քարոզեմ, որովհետեւ հէնց դրա համար եմ եկել»: 39 Եւ ամբողջ Գալիլիայում նրանց ժողովարաններում քարոզում եւ դեւեր էր հանում:

ԲՈՐՈՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 8. 1-4, Ղուկ. 5. 12-16)

40 Նրա մօտ եկաւ մի բորոտ. նա ծնկի եկած աղաչում էր եւ ասում. «Տէ՛ր, եթէ կամենաս, կարո՞ղ ես ինձ մաքրել»: 41 Իսկ Յիսուս գթալով՝ ձեռքը երկարեց, դիպաւ նրան եւ ասաց. «Կամենում եմ, մաքրուի՛ր»: 42 Եւ երբ նրան այս ասաց, բորոտութիւնը նրանից իսկոյն գնաց, եւ նա մաքրուեց: 43 Եւ Յիսուս իսկոյն դուրս հանեց նրան եւ խստիւ պատուիրեց. 44 «Զգո՛յշ եղիր, ոչ ոքի բան չասես, այլ գնա՛, քեզ քահանային ցո՛յց տուր եւ մաքրուելուդ համար ընծայ տուր այն, ինչ հրամայել էր Մովսէսը՝ նրանց համար իբրեւ վկայութիւն»: 45 Բայց նա դուրս գնալով՝ սկսեց եռանդուն կերպով քարոզել եւ լուրը տարածել այն աստիճան, որ Յիսուս չէր կարողանում այլեւս յայտնապէս քաղաք մտնել, այլ դուրսը, ամայի տեղերում էր մնում. եւ բոլոր կողմերից ժողովուրդը նրա մօտ էր գալիս:

ԱՆԴԱՄԱԼՈՅՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 9. 1-8, Ղուկ. 5. 17-26)

2 Մի քանի օր յետոյ, երբ նա դարձեալ Կափառնայում մտաւ, լուր տարածուեց, թէ տանն է. 2 եւ շատեր հաւաքուեցին, այնպէս որ այլեւս տեղ չմնաց, ոչ իսկ դռան առջեւ: Եւ նրանց քարոզում էր Աստծու խօսքը: 3 Եւ եկան նրա մօտ՝ բերելով մի անդամալոյծի, որին տանում էին չորս հոգով: 4 Եւ երբ ամբոխի պատճառով Յիսուսին չկարողացան մօտենալ, քանդեցին երդիկը այն տան, ուր գտնւում էր նա. եւ բացելով առաստաղը, իջեցրին այն մահիճը, որի մէջ էր անդամալոյծը: 5 Եւ Յիսուս, տեսնելով նրանց հաւատը, անդամալոյծին ասաց. «Որդեա՛կ, քո մեղքերը քեզ† ներուած են»: 6 Օրէնսգէտներից մի քանիսը, որ նստած էին այնտեղ, իրենց մտքում խորհում էին. 7 «Այս ի՞նչ է խօսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերին թողութիւն տալ, եթէ ոչ՝ միայն Աստուած»: 8 Եւ Յիսուս իր հոգում իմացաւ, որ այնպէս են խորհում իրենց մտքում. ուստի ասաց. «Ինչո՞ւ ձեր մտքում այդ էք խորհում. 9 ո՞րն է աւելի դիւրին. անդամալոյծին ասե՞լ՝ քո մեղքերը քեզ ներուած են, թէ՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ եւ գնա՛ քո տունը: 10 Բայց որպէսզի իմանաք, որ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի ներելու մեղքերը, – ասաց նա անդամալոյծին, – 11 քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ռ քո մահիճը եւ գնա՛ քո տունը»: 12 Եւ վեր կացաւ ու անմիջապէս վերցնելով մահիճը՝ բոլորի առաջ դուրս ելաւ, այնպէս որ ամէնքը զարմացան եւ փառք էին տալիս Աստծուն ու ասում . «Այսպիսի բան երբեք չենք տեսել»:

ՂԵՒԻԻ ԿՈՉՈՒՄԸ
(Մատթ. 9. 9-13, Ղուկ. 5. 27-32)

13 Եւ նա դարձեալ ծովեզերք գնաց. եւ ամբողջ ժողովուրդը նրա մօտ էր գալիս, եւ նա ուսուցանում էր նրանց: 14 Եւ մինչ նա անցնում էր, տեսաւ Ալփէոսի որդի Ղեւիին, որ մաքսատանը նստած գործի վրայ էր, ու նրան ասաց՝ արի՛ իմ յետեւից: Եւ Ղեւին վեր կացաւ գնաց նրա յետեւից: 15 Եւ երբ Յիսուս նրա տանը սեղան նստեց, բազում մաքսաւորներ եւ մեղաւորներ էլ Յիսուսի ու նրա աշակերտների հետ սեղան նստեցին, որովհետեւ շատերն էին նրա յետեւից գնում: 16 Իսկ օրէնսգէտներն ու փարիսեցիները երբ տեսան, որ նա մաքսաւորների եւ մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին. «Ինչո՞ւ էք մեղաւորների ու մաքսաւորների հետ ուտում եւ խմում»†: 17 Երբ Յիսուս լսեց, նրանց ասաց. «Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին. եւ ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին»:

ՎԷՃ ԾՈՄԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 9. 14-17, Ղուկ. 5. 33-39)

18 Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ էին պահում. եկան եւ նրան ասացին. «Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»: 19 Եւ Յիսուս նրանց ասաց. «Միթէ կարելի՞ է, որ հարսնաքաւորները ծոմ պահեն, երբ փեսան նրանց հետ է. այնքան ժամանակ, որ փեսան իրենց հետ է, պէտք չէ, որ ծոմ պահեն: 20 Բայց կը գան օրեր, երբ փեսան նրանցից կը վերցուի, եւ ապա այն օրը նրանք էլ ծոմ կը պահեն: 21 Նոր, չօգտագործուած կտաւի կտորը ոչ ոք հնացած զգեստի վրայ չի կարկատի, ապա թէ ոչ նոր կտորը ամբողջութեամբ հին զգեստից կը պոկուի, եւ պատռուածքը աւելի վատ կը լինի: 22 Եւ ոչ ոք հին տիկերի մէջ նոր գինի չի լցնի, ապա թէ ոչ նոր գինին կը պայթեցնի տիկերը, գինին կը թափուի, եւ տիկերը կը փչանան: Այլ նո՛ր գինին նո՛ր տիկերի մէջ պէտք լցուի:

ՇԱԲԱԹ ՕՐՈՎ ՊՈԿՈՒԱԾ ՀԱՍԿԵՐ
(Մատթ. 12. 1-8, Ղուկ. 6. 1-5)

23 Մի շաբաթ օրով նա անցնում էր ցորենի արտերի միջով: Եւ նրա աշակերտները գնալու ժամանակ սկսեցին հասկ պոկել եւ ուտել: 24 Եւ փարիսեցիները նրան ասացին. «Տե՛ս, քո աշակերտները շաբաթ օրով ի՞նչ են անում, մի բան, որ օրինաւոր չէ»: 25 Յիսուս նրանց ասաց. «Դուք երբեւիցէ չէ՞ք կարդացել, թէ ինչ արեց Դաւիթը, երբ կարիք ունեցաւ եւ քաղց զգաց ինքը եւ նրանք, որ իր հետ էին. 26 թէ ինչպէս Աբիաթար քահանայապետի օրով մտաւ Աստծու տունը եւ կերաւ առաջաւորութեան հացը՝ տալով նաեւ նրանց, որ իր հետ էին. մի բան, որ, բացի քահանաներից, ուրիշների համար օրինաւոր չէր ուտել»: 27 Եւ ասաց նրանց. «Շաբաթ օրը մարդո՛ւ համար է, եւ ոչ թէ մարդը՝ շաբաթ օրուայ համար. 28 ապա ուրեմն՝ մարդու Որդին տէրն է եւ շաբաթ օրուայ»:

ՁՈՐԱՑԱԾ ՁԵՌՔԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 12. 9-14, Ղուկ. 6. 6-11)

3 Եւ նա նորից ժողովարան մտաւ. այնտեղ կար մի մարդ, որի ձեռքը չորացած էր: 2 Եւ նրան ուշադրութեամբ դիտում էին՝ տեսնելու, թէ

†Յուն. լաւ բն. ունեն նրանք բողնելով ժողովարանը...

‡Յունարէնը չունի որ Քրիստոսն է:

†Լաւագոյն յուն. բն. չունեն քեզ բառը:

†Լաւագոյն յուն. բն. չունեն եւ խմում բառերը:

*չաբաթ օրով նրան կը բժշկի՞, որպէսզի
ամբաստանեն նրան: 3 Եւ Յիսուս
ասաց այն մարդուն, որի ձեռքը չորա-
ցած էր. «Վե՛ր կաց, մէջտե՛ղ արի»:
4 Ապա ասաց նրանց. «Շաբաթ օրով
ի՞նչ բան է օրինաւոր անել. բարի
գո՞րծ գործել, թէ՞ չարիք անել. մի
հոգի՞ ազատել, թէ՞ կորստեան մատ-
նել»: Եւ նրանք լռեցին: 5 Եւ Յիսուս,
ցասումով լցուած, նայելով նրանց եւ
տրտմելով նրանց սրտի կուրութեան
համար, ասաց մարդուն. «Երկարի՛ր
ձեռքդ»: Եւ նա երկարեց, ու նրա ձեռ-
քը առողջացաւ: 6 Փարիսեցիները
հերովդէսականների հետ իսկոյն դուրս
ելան եւ խորհուրդ էին անում նրա
դէմ, թէ ինչպէս նրան կորստեան
մատնեն:*

ԲԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍԻ ԵՏԵՒԻՑ

*7 Իսկ Յիսուս իր աշակերտների հետ
միասին գնաց ծովեզերք: Եւ Գալի-
լիայից բազում ժողովուրդ էր գնում
նրա յետեւից. 8 նաեւ Հրէաստանից,
Երուսաղէմից†, Յորդանանի միւս կող-
մից, ինչպէս նաեւ Տիւրոսի եւ Սիդոնի
շրջակայքից բազում ժողովուրդ, երբ
լսում էր, թէ նա ինչքան բան է անում,
գալիս էր նրա մօտ: 9 Եւ նա իր աշա-
կերտներին ասաց, որ իր համար մի
նաւակ պատրաստ լինի ամբոխի պատ-
ճառով, որպէսզի իրեն չնեղեն: 10 Քա-
նի որ շատերին բժշկեց, ուստի ամէն
տեսակ հիւանդութիւններ ունեցող
մարդիկ գալիս էին, խռնւում նրա
շուրջը, որպէսզի դիպչեն նրան: 11 Եւ
պիղծ ոգիները, երբ տեսնում էին
նրան, ընկնում էին նրա առաջ, աղա-
ղակում էին ու ասում. 12 «Դու Աստծու
Որդի ես»: Իսկ նա խստիւ պատուիրում
էր նրանց, որ իր ինքնութիւնը
չյայտնեն:*

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 10. 1-4, Ղուկ. 6. 12-16)

*13 Յիսուս լեռը բարձրացաւ եւ իր
մօտ կանչեց նրանց, որոնց ինքը
կամեցաւ. եւ նրանք գնացին նրա մօտ:
14 Նա նշանակեց Տասներկուսին, որ իր
շուրջը լինեն, եւ նրանց քարոզելու
ուղարկի, 15 ու նրանք իշխանութիւն
ունենան ցաւեր բուժելու եւ դեւեր
հանելու: 16 Եւ Սիմոնի անունը Պետրոս
դրեց 17 եւ Զեբեդէոսի որդու՝ Յակոբոսի
ու նրա եղբօր՝ Յովհաննէսի անունները
դրեց Բաներեգէս, որ նշանակում է՝
Որոտման որդիներ: 18 Նաեւ՝ Անդրէա-
սին եւ Փիլիպպոսին եւ Բարթողո-
մէոսին եւ մաքսաւոր Մատթէոսին եւ
Թովմասին եւ Ալփէոսի որդի Յակո-
բոսին եւ Թադէոսին եւ Սիմոն Կանա-
նացուն† 19 եւ Յուդա Իսկարիովտա-
ցուն, որը եւ նրան մատնեց:*

*20 Նրանք տուն վերադարձան. եւ
ժողովուրդը նորից եկաւ նրանց հետ,
այնպէս որ նրանք հաց ուտելու
անգամ ժամանակ չունեցան: 21 Եւ երբ
Յիսուսի իւրայինները լսեցին, ելան
եկան նրան բռնելու, որովհետեւ
կարծում էին, թէ խելքը կորցրել է:*

ՅԻՍՈՒՍ ԵՒ ԲԷԵԶԵԲՈՒԼԸ
(Մատթ. 12. 22-32, Ղուկ. 11. 14-23, 12. 10)

*22 Իսկ Երուսաղէմից իջած օրէնս-
գէտներն ասում էին, թէ դրա մէջ
Բէեզեբուղ կայ, եւ դեւերի իշխանի
ձեռքով է հանում դեւերին: 23 Եւ նա
իր մօտ կանչելով նրանց՝ առակներով
էր խօսում նրանց հետ. «Ինչպէ՞ս կա-
րող է սատանան սատանային դուրս
հանել: 24 Եւ արդ, եթէ մի թագաւո-
րութիւն ինքն իր մէջ բաժանուի, այդ
թագաւորութիւնը չի կարող կանգուն
մնալ: 25 Եւ եթէ մի տուն ինքն իր մէջ
բաժանուի, այդ տունը չի կարող
կանգուն մնալ: 26 Եւ եթէ սատանան
ինքն իր դէմ դուրս գայ եւ բաժանուած
լինի, չի կարող կանգուն մնալ, այլ
նրա վախճանը հասել է: 27 Ոչ ոք չի
կարող հզօրի տունը մտնելով՝ նրա
ունեցածը կողոպտել, եթէ նախ չկա-
պոտի հզօրին. եւ ապա միայն կը
կողոպտի նրա տունը: 28 Ճշմարիտ եմ*

†Լաւագոյն յուն. բն. *Երուսաղէմից* բառից յետոյ աւելացնում են *եւ Եդոմից:*

†*Կանանացի* արամերէն նշանակում է նախանձայոյզ: Այսպէս էին կոչւում հրէական կրօնա-քաղաքական մի կուսակցութեան անդամները, որոնք պայքարում էին հռոմէացիների դէմ:

*ասում ձեզ, որ մարդկանց որդիներին,
որքան էլ հայհոյեն, ամէն մեղք եւ
հայհոյանք կը ներուի. 29 բայց ով որ
հայհոյի Սուրբ Հոգուն, յաւիտեանս
թողութիւն չի ունենայ, այլ նա
յանցապարտ պիտի մնայ յաւիտե-
նական մեղքով»: 30 Այսպէս խօսեց,
որովհետեւ ասում էին՝ նրա մէջ պիղծ
դեւ կայ:*

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
(Մատթ. 12. 46-50, Ղուկ. 8. 19-21)

*31 Եկան նրա եղբայրներն ու մայրը
եւ դրսում կանգնած՝ մարդ ուղար-
կեցին ու կանչեցին նրան: 32 Եւ այն-
տեղ ժողովուրդը նստել էր նրա շուրջը:
Եւ երբ ասացին նրան՝ «Ահա՛ւասիկ քո
մայրն ու քո եղբայրները դրսում են եւ
քեզ են ուզում, 33 նրանց պատաս-
խանեց եւ ասաց. «Ո՞վ է իմ մայրը
կամ՝ իմ եղբայրները»: 34 Ապա նայեց
իր շուրջը, իր աշակերտներին, որոնք
նստած էին, եւ ասաց. «Ահա՛ւասիկ իմ
մայրը եւ իմ եղբայրները. 35 որով-
հետեւ, ով Աստծու կամքն է կա-
տարում, նա՛ է իմ եղբայրը եւ քոյրը եւ
մայրը»:*

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ
(Մատթ. 13. 1-9, Ղուկ. 8. 4-8)

4 *Նորից նա սկսեց ուսուցանել ծո-
վեզերքի մօտ, եւ նրա շուրջը խռնուեց
բազում ժողովուրդ, այնպէս որ նա
մտաւ ու նստեց մի նաւակի մէջ, ծովի
վրայ, մինչ ամբողջ ժողովուրդը ծովե-
զերքին շուրջանակի բռնել էր ցամաքը:
2 Եւ նա առակներով նրանց շատ բան
էր ուսուցանում եւ նրանց ասում իր
քարոզութեան մէջ. 3 «Լսեցէ՛ք, ահա-
ւասիկ մի սերմանող սերմանելու ելաւ:
4 Եւ պատահեց, որ սերմանելու ժա-
մանակ սերմի մի մասն ընկաւ ճանա-
պարհի եզերքը, եւ թռչունները եկան
ու կերան այն: 5 Ուրիշ մի մաս ընկաւ
ապառաժի վրայ, որտեղ շատ հող
չկար. եւ շուտով բուսաւ, որովհետեւ
հողը խորը չէր. 6 բայց երբ արեւը
ծագեց, խանձուեց. եւ քանի որ ար-
մատներ չունէր, չորացաւ: 7 Մի ուրիշ
մաս ընկաւ փշերի մէջ. փշերը բարձ-
րացան եւ խեղդեցին այն, եւ պտուղ
չտուեց: 8 Իսկ մի ուրիշ մաս էլ ընկաւ
լաւ հողի վրայ, բուսնելով աճեց ու
պտուղ տուեց. մէկի դիմաց՝ երեսուն,
մէկի դիմաց՝ վաթսուն եւ մէկի դիմաց՝
հարիւր»: 9 Եւ ասում էր. «Ով որ լսելու
ականջ ունի, թող լսի»:*

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 13. 10-23, Ղուկ. 8. 9-15)

*10 Եւ երբ առանձին մնաց, նրա
շուրջը եղողները, աշակերտների հետ
միասին, հարցրին նրան այս առակի
մասին: 11 Եւ նրանց ասաց. «Ձեզ է
տրուած իմանալ Աստծու արքայու-
թեան խորհուրդները, բայց նրանց
համար, որ ձեզնից դուրս են, ամէն ինչ
առակներով կը լինի, 12 որպէսզի
նայելով հանդերձ չտեսնեն եւ լսելով
հանդերձ չիմանան, որ մի գուցէ
երբեւէ դարձի գան, եւ իրենց ներուի»:*

*13 Եւ ասաց նրանց. «Այս առակը
չէ՞ք հասկանում, ապա ինչպէ՞ս պիտի
հասկանաք բոլոր առակները: 14 Նա,
որ սերմանում է, Աստծու խօսքն է
սերմանում: 15 Ճանապարհի եզերքին
սերմանուածները այն մարդիկ են,
որոնք լսում են խօսքը, եւ սատանան
գալիս է եւ դուրս է հանում նրանց
սրտերի մէջ սերմանուած խօսքը: 16 Ա-
պառաժի վրայ սերմանուածները այն
մարդիկ են, որ, երբ լսում են խօսքը,
իսկոյն ուրախութեամբ ընդունում են
այն, 17 եւ որովհետեւ իրենց մէջ ար-
մատներ չունեն, այլ մի որոշ ժամա-
նակի համար են, երբ խօսքի պատճա-
ռով նեղութիւն կամ հալածանք է
վրայ հասնում, իսկոյն գայթակղւում
են: 18 Իսկ նրանք, որ սերմանուեցին
փշերի մէջ, այն մարդիկ են, որ լսում
են խօսքը, 19 սակայն այս աշխարհի
հոգսերը եւ հարստութեան պատրանք-
ները ներխուժում եւ խեղդում են խօս-
քը, եւ այն անպտուղ է լինում: 20 Եւ
լաւ հողի մէջ սերմանուածները այն
մարդիկ են, որ լսում են խօսքը եւ
ընդունում ու պտուղ են տալիս. մէկի
դիմաց՝ երեսուն, մէկի դիմաց՝ վաթ-
սուն եւ մէկի դիմաց՝ հարիւր»:*

ԱՅԼ ԱՌԱԿՆԵՐ
(Մատթ. 13. 31-32, Ղուկ. 8. 16-18, 13. 18-19)

21 Եւ նրանց ասաց. «Միթէ ճրագը բերւում է, որ կաթսայի կամ մահճի տա՞կ դրուի: Չէ՞ որ աշտանակի վրայ է դրւում: 22 Արդ, ծածուկ բան չկայ, որ չյայտնուի, եւ գաղտնի բան չի եղել, որ ի յայտ չգայ: 23 Թէ մէկը լսելու ականջ ունի, թող լսի»: 24 Եւ նրանց ասաց. «Զգո՛յշ եղէք, թէ ինչ էք լսում, եւ ինչ որ լսում էք, աւելին կը տրուի ձեզ. ինչ չափով, որ չափում էք, նոյնով Աստուած պիտի չափի ձեզ համար: 25 Ով որ ունի, նրան պիտի տրուի. իսկ ով որ չունի, նրանից պիտի վերցուի, ինչ էլ որ նա ունի»:

26 Եւ ասում էր. «Այսպէ՛ս է Աստծու արքայութիւնը. որպէս թէ մի մարդ հողի մէջ սերմեր ցանի. 27 եւ նա ննջի թէ վեր կենայ, գիշեր եւ ցերեկ, սերմերը կը բուսնեն ու կ'աճեն, 28 եւ նա չի իմանայ, թէ հողը ինքն իրենից բերք է տալիս. նախ՝ խոտը, ապա՝ հասկը եւ ապա՝ ատոք ցորենը հասկի մէջ: 29 Սակայն երբ սերմը իր պտուղը տայ, իսկոյն մանգաղ է ուղարկում, որովհետեւ հնձի ժամանակը հասել է»:

30 Եւ ասում էր. «Ինչի՞ նմանեցնենք Աստծու արքայութիւնը կամ ի՞նչ օրինակով ներկայացնենք այն. 31 նման է մանանեխի հատիկին, որը, երբ սերմանուում է հողի մէջ, աւելի մանր է լինում, քան երկրի վրայ եղող բոլոր սերմերը. 32 իսկ երբ սերմանուի, բուսնում եւ լինում է աւելի մեծ, քան ամէն տունկ, եւ արձակում է մեծ ճիւղեր, այնքան, որ երկնքի թռչունները նրա հովանու տակ կարող են բնակուել»: 33 Եւ այնպիսի առակներով էր նրանց ասում խօսքը, որ կարողանային հասկանալ: 34 Եւ առանց առակի նրանց հետ ոչինչ չէր խօսում, բայց իր աշակերտների համար առանձին ամէն ինչ մեկնում էր:

ՓՈԹՈՐԿԻ ԽԱՂԱՂԵՑՈՒՄԸ
(Մատթ. 8. 23-27, Ղուկ. 8. 22-25)

35 Այդ նոյն օրը, երեկոյեան դէմ, աշակերտներին ասաց. «Եկէ՛ք անցնենք ծովի միւս կողմը»: 36 Թողնելով ժողովրդին՝ նրան իրենց հետ տարան նաւակով, ինչպէս նաեւ՝ միւս նաւակները, որ նրա հետ էին: 37 Եւ մեծ հողմամրրիկ բարձրացաւ ու ալիքները նաւակի մէջ էր թափում, այնպէս որ նաւակը գրեթէ լցւում էր: 38 Իսկ ինքը նաւախելի կողմը բարձի վրայ ննջում էր. նրան արթնացրին եւ ասացին. «Վարդապե՛տ, քեզ համար բնաւ հոգ չէ՞, որ ահա մենք կորչում ենք»: 39 Եւ նա, արթնանալով, սաստեց հողմին եւ ասաց ծովին. «Դադարի՛ր, լռի՛ր»: Եւ հողմը դադարեց, ու մեծ խաղաղութիւն եղաւ: 40 Եւ նրանց ասաց. «Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. դեռեւս հաւատ չունէ՞ք»: 41 Եւ նրանք սաստիկ վախեցան եւ միմեանց ասում էին. «Ո՞վ է արդեօք սա, որ թէ՛ հողմը, թէ՛ ծովը հնազանդւում են սրան»:

ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՒԱՀԱՐԸ
(Մատթ. 8. 28-34, Ղուկ. 8. 26-39)

5 Եւ Յիսուս եկաւ ծովի հանդիպակաց կողմը, գերգեսացիների երկիրը: 2 Եւ երբ նա նաւակից դուրս ելաւ, գերեզմաններից նրա դէմն ելաւ մի մարդ, որին բռնել էր մի պիղծ ոգի, 3 եւ որի բնակութեան տեղն իսկ գերեզմանների մէջ էր: Եւ ոչ ոք նրան շղթաներով անգամ չէր կարող կապել, 4 որովհետեւ շատ անգամ ոտնակապերով եւ շղթաներով կապուած էր, բայց շղթաները փշրել էր ու ոտնակապերը՝ ջարդել: Ոչ ոք նրան չէր կարողանում զսպել, 5 որովհետեւ միշտ, գիշեր ու ցերեկ, գերեզմաններում եւ լեռներում, աղաղակում էր եւ ինքն իրեն քարերով ծեծում: 6 Երբ նա Յիսուսին հեռուից տեսաւ, առաջ վազեց ու երկրպագեց նրան. 7 բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, Յիսո՛ւս, բարձրեալ Աստծո՛ւ Որդի: Երդուեցնում եմ քեզ Աստուծով, ինձ մի՛ տանջիր». 8 քանի որ Յիսուս նրան ասում էր. «Պի՛ղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց»: 9 Եւ նրան հարցրեց. «Անունդ ի՞նչ է»: Եւ նա ասաց նրան. «Իմ անունը Լեգէոն է, քանի որ բազում ենք»: 10 Իսկ պիղծ ոգիները սաստիկ աղաչում էին նրան, որ այդ շրջանից դուրս չուղարկի իրենց: 11 Եւ այնտեղ, լեռան լանջին, խոզերի մի մեծ երամակ կար, որ արածում էր: 12 Բոլոր դեւերը աղաչեցին նրան եւ ասացին. «Մեզ խոզերի մէջ ուղարկիր, որ մտնենք նրանց մէջ»: 13 Եւ նա հրամայեց նրանց: Երբ պիղծ ոգիները դուրս ելան, մտան խոզերի մէջ, եւ երամակը, թուով մօտ երկու հազար, դարաւանդից դիմեց դէպի ծովը. եւ խեղդուեցին ծովում: 14 Խոզարածները փախան եւ քաղաքում ու ագարակներում պատմեցին. եւ մարդիկ դուրս ելան տեսնելու, թէ ի՛նչ էր կատարուել: 15 Եկան Յիսուսի մօտ եւ տեսան դիւահարին, որ նստել էր՝ հագնուած եւ զգաստացած, նրան, որ լեգէոն ունէր. եւ զարհուրեցին: 16 Եւ ովքեր որ տեսել էին, պատմեցին նրանց, թէ ինչ պատահեց այսահարին եւ ինչ՝ խոզերին: 17 Եւ սկսեցին աղաչել Յիսուսին, որ հեռանայ իրենց սահմաններից: 18 Եւ երբ նաւակ մտաւ, դիւահարը նրան աղաչում էր, որ նրա հետ լինի: 19 Բայց Յիսուս նրան թոյլ չտուեց, այլ ասաց. «Գնա՛ քո տունը հարազատներիդ մօտ եւ պատմի՛ր նրանց այն ամէնը, ինչ Տէրը քեզ արեց եւ թէ ինչպէս խղճաց քեզ»: 20 Եւ նա գնաց ու սկսեց տարածել Դեկապոլսում, ինչ որ Յիսուս իր համար արել էր: Եւ ամէնքը զարմանում էին:

ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԿԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 9. 18-26, Ղուկ. 8. 40-56)

21 Եւ երբ Յիսուս նաւակով նորից ծովի միւս կողմն անցաւ, նրա մօտ հաւաքուեց բազում ժողովուրդ: Եւ ինքը ծովեզրին էր: 22 Ահա եկաւ ժողովրդապետներից մէկը, որի անունը Յայրոս էր. եւ երբ տեսաւ նրան, նրա ոտքերն ընկաւ. 23 սաստիկ աղաչում էր նրան ու ասում, որ իր դուստրը մահամերձ է, եւ որ նա գայ ու նրա վրայ իր ձեռքը դնի, որպէսզի առողջանայ եւ ապրի: 24 Եւ Յիսուս գնաց նրա հետ. նրա յետեւից գնում էր նաեւ բազում ժողովուրդ եւ նեղում էր նրան:

25 Եւ մի կին կար, որ տասներկու տարուց ի վեր արիւնահոսութիւն ունէր: 26 Նա շատ էր տառապել բազմաթիւ բժիշկների ձեռքից եւ իր ամբողջ ունեցուածքը ծախսել էր, բայց որեւէ օգուտ չէր գտել, այլ է՛լ աւելի վատացել էր: 27 Նա երբ լսեց Յիսուսի մասին, եկաւ ամբոխի մէջ նրա յետեւից եւ ձեռքը դիպցրեց նրա զգեստին, 28 որովհետեւ մտքում խորհում էր. «Եթէ միայն դիպչեմ նրա զգեստներին, կը բժշկուեմ»: 29 Եւ իսկոյն նրա արեան աղբիւրը չորացաւ, եւ իր մարմնի մէջ զգաց, որ տանջանքներից բժշկուեց: 30 Եւ Յիսուս իսկոյն ինքն իր մէջ իմանալով իրենից դուրս ելած զօրութիւնը, դարձաւ դէպի ամբոխը եւ ասաց. «Ո՞վ դիպաւ իմ զգեստներին»: 31 Եւ աշակերտները նրան ասացին. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ, եւ ասում ես, թէ՝ ո՞վ դիպաւ իմ զգեստներին»: 32 Եւ նա շուրջն էր նայում՝ տեսնելու, թէ ո՛վ այդ արեց: 33 Եւ այդ կինը, զարհուրած ու դողալով նրա համար, որ գաղտնի էր արել, – որովհետեւ գիտէր, թէ ինչ կատարուեց իր հետ, – եկաւ ընկաւ նրա առաջ եւ ամէն ինչ ստուգութեամբ ասաց: 34 Եւ Յիսուս նրան ասաց. «Դո՛ւստր, քո հաւատը քեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ եւ քո տանջանքներից բժշկուած եղիր»:

35 Մինչ Յիսուս այս բանն էր խօսում, ժողովրդապետի տնից ոմանք եկան եւ ասացին. «Քո դուստրը մեռաւ, էլ ի՞նչ ես նեղութիւն տալիս Վարդապետին»: 36 Իսկ Յիսուս, երբ լսեց ասուած խօսքը, ժողովրդապետին ասաց. «Մի՛ վախեցիր, այլ միայն հաւատա՛»: 37 Եւ ոչ ոքի թոյլ չտուեց իր հետ գնալ, այլ միայն՝ Պետրոսին, Յակոբոսին եւ նրա եղբօրը՝ Յովհաննէսին: 38 Յիսուս ժողովրդապետի տունը եկաւ եւ տեսաւ մի մեծ ամբոխ, լացուկոծ անողներ եւ աղմուկ-աղաղակ: 39 Ապա ներս մտնելով՝ նրանց ասաց. «Ինչո՞ւ էք խռովուած ու լաց էք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է»: 40 Սակայն նրանք ծաղրում էին նրան: Իսկ նա, ամենքին դուրս հանելով, վերցրեց իր հետ

մանկան հօրն ու մօրը եւ նրանց, որ իր
հետ էին, եւ մտաւ այնտեղ, ուր
պառկած էր մանուկը: 41 Եւ բռնելով
մանկան ձեռքից՝ ասաց նրան՝ Տա-
լի՛թա, կո՛ւմի, որ նշանակում է՝
աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց:
42 Եւ աղջիկը իսկոյն վեր կացաւ ու
քայլում էր, քանի որ մօտ տասներկու
տարեկան էր: Եւ ամէնքը մեծապէս
զարմացան: 43 Իսկ նա նրանց խստիւ
պատուիրեց, որ ոչ ոք այդ բանը
չիմանայ. ու ասաց, որ նրան ուտելու
բան տան:

ՅԻՍՈՒՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՆԱԶԱՐԷԹ
(Մատթ. 13. 53-58, Ղուկ. 4. 16-30)

6 Եւ այնտեղից ելաւ եկաւ իր
գաւառը. եւ իր աշակերտները գնում
էին նրա յետեւից: 2 Երբ շաբաթ օր
եղաւ, սկսեց ժողովարանում ուսու-
ցանել. եւ շատերը, երբ լսում էին
նրան, զարմանում էին նրա վարդա-
պետութեան վրայ եւ ասում. «Այս
բաները որտեղի՞ց են սրան, կամ ի՞նչ է
այս իմաստութիւնը, որ տրուած է
սրան, որ սրա ձեռքով այսպիսի
զօրաւոր գործեր կատարուեն: 3 Սա
հիւսնի տղան† եւ Մարիամի որդին չէ՞
միթէ, Յակոբոսի եւ Յովսէի ու
Յուդայի եւ Սիմոնի եղբայրը. եւ սրա
քոյրերը այստեղ մեզ մօտ չե՞ն»: Եւ
նրանով գայթակղւում էին: 4 Եւ
Յիսուս նրանց ասաց. «Մարգարէն
յարգուած անձ է, բայց ոչ իր
գաւառում, իր ազգատոհմի եւ իր տան
մէջ»: 5 Եւ չէր կարողանում այնտեղ
որեւէ զօրաւոր գործ կատարել, այլ քիչ
թուով հիւանդների վրայ ձեռք դնելով՝
նրանց բժշկում էր: 6 Եւ նա զար-
մանում էր նրանց անհաւատութեան
վրայ:

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 10. 5-15, Ղուկ. 9. 1-6)

Եւ շրջում էր շրջակայ գիւղերում եւ
ուսուցանում: 7 Նա իր մօտ կանչեց
Տասներկուսին եւ սկսեց ուղարկել
նրանց երկու-երկու ու պիղծ ոգիների
վրայ նրանց իշխանութիւն տուեց:
8 Նրանց պատուիրեց, որ ճանապարհի
համար գաւազանից բացի այլ բան
չվերցնեն. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ
գօտիների մէջ, 9 այլ հագնեն հողա-
թափներ. եւ ասաց. «Աւելորդ պարեգօտ
մի՛ վերցրէք»: 10 Եւ ասում էր նրանց.
«Ինչ տուն որ մտնէք, այնտեղ օթե-
ւանեցէ՛ք, մինչեւ որ այնտեղից ելնէք:
11 Եւ ուր որ ձեզ չեն ընդունի ու ձեզ
չեն լսի, երբ որ այնտեղից ելնէք, ձեր
ոտքերի փոշին թա՛փ տուէք՝ իբրեւ
նրանց դէմ վկայութիւն»: 12 Եւ նրանք
ելան ու քարոզում էին, որպէսզի
մարդիկ ապաշխարեն: 13 Եւ բազում
դեւեր էին հանում, բազում հիւանդ-
ների օծում էին իւղով ու նրանց
բժշկում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԼԽԱՏՈՒՄԸ
(Մատթ. 14. 1-12, Ղուկ. 9. 7-9)

14 Եւ Հերովդէս արքան լսեց այս
բաները, որովհետեւ Յիսուսի անունը
յայտնի էր դարձել. եւ նա† ասաց.
«Յովհաննէս Մկրտիչը յարութիւն է
առել մեռելներից, եւ դրա համար զօ-
րութիւններ են գործւում նրա միջո-
ցով»: 15 Ուրիշներ ասում էին, թէ՝
Եղիան է. իսկ միւսները, թէ՝ մարգարէ
է կամ թէ՝ մարգարէների նման մէկը:
16 Երբ Հերովդէսը այս լսեց, ասաց.
«Յովհաննէսը, որի գլուխը կտրեցի ես,
սա նա՛ է. մեռելներից յարութիւն է
առել»:
17 Արդարեւ, ինքը՝ Հերովդէսն էր
մարդ ուղարկել, ձերբակալել էր Յով-
հաննէսին, կապել նրան ու բան-
տարկել՝ իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝
Հերովդիայի պատճառով, քանի որ
Հերովդէսը նրան իրեն կին էր դարձրել,
18 եւ քանի որ Յովհաննէսը Հերով-
դէսին ասում էր. «Քո եղբօր կնոջը քեզ
կին առնելը օրինաւոր չէ»: 19 Եւ
Հերովդիան ոխ էր պահել նրա դէմ ու
ուզում էր նրան սպանել տալ, բայց չէր
կարողանում, 20 որովհետեւ Հերովդէսը
վախենում էր Յովհաննէսից, քանի որ

†Յուսարէնն ունի՝ սա հիւսնը չէ՞, որդին Մարիամի ...

†Լաւագոյն յուն. բն. Նա բառի փոխարէն ունեն ժողովուրդը:

նրան գիտէր որպէս արդար եւ սուրբ
մարդու, եւ նրան հովանաւորում էր ու
նրան անսալով՝ շատ բաներ էր անում
եւ քաղցրութեամբ լսում էր նրան:
21 Սակայն մի յարմար օր եկաւ, երբ
Հերովդէսը իր ծննդեան տարեդարձի
ընթրիքն էր տալիս իր նախարար-
ներին, Գալիլիայի մեծամեծներին եւ
հազարապետներին: 22 Եւ երբ Հերով-
դիայի դուստրը ներս մտաւ եւ սկսեց
պարել, դուր եկաւ Հերովդէսին եւ
սեղանակիցներին. թագաւորը աղջկան
ասաց. «Ուզի՛ր ինձնից, ինչ որ կա-
մենում ես, եւ քեզ կը տամ»: 23 Եւ
երդուեց նրան շատ անգամ, թէ՝ դու
ինձնից ինչ էլ որ ուզես, կը տամ քեզ,
մինչեւ իսկ իմ թագաւորութեան կէսը:
24 Աղջիկը դուրս գնալով իր մօրն
ասաց՝ ի՞նչ ուզեմ: Եւ սա ասաց՝
Յովհաննէս Մկրտչի գլուխը: 25 Եւ
աղջիկը շտապով վերստին մտնելով
թագաւորի մօտ՝ ասաց. «Ուզում եմ, որ
հիմա ինձ տաս սկուտեղի վրայ
Յովհաննէս Մկրտչի գլուխը»: 26 Եւ
թագաւորը սաստիկ տրտմեց, բայց իր
երդումների եւ հրաւիրեալների պատ-
ճառով չուզեց նրան մերժել: 27 Եւ
թագաւորը իսկոյն դահիճ ուղարկեց ու
հրամայեց բերել Յովհաննէսի գլուխը:
Եւ սա գնաց գլխատեց նրան բանտում
28 ու նրա գլուխը սկուտեղով բերեց եւ
տուեց աղջկան, եւ աղջիկը տարաւ
տուեց իր մօրը: 29 Երբ Յովհաննէսի
աշակերտները լսեցին, եկան վերցրին
մարմինը եւ դրեցին գերեզմանի մէջ:

ՀԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մատթ. 14. 13-21, Ղուկ. 9. 10-17, Յովհ. 6. 1-14)

30 Առաքեալները հաւաքուեցին Յի-
սուսի մօտ ու նրան պատմեցին այն
ամէնը, ինչ որ արել էին եւ ուսու-
ցանել: 31 Եւ Յիսուս նրանց ասաց.
«Եկէ՛ք դուք առանձին մի ամայի տեղ
ու մի քիչ հանգստացէ՛ք». որովհետեւ
եկող-գնացողները շատ էին. եւ հաց
ուտելու անգամ ժամանակ չունէին:
32 Եւ նաւակով գնացին մի ամայի
տեղ՝ առանձին: 33 Սակայն մարդիկ
տեսան նրանց, որ գնում էին, եւ
շատերը ճանաչեցին նրանց ու բոլոր
քաղաքներից հետիոտն, խուռներամ
այնտեղ վազեցին եւ մօտեցան
նրանց†: 34 Եւ նա նաւակից դուրս
ելնելով՝ մեծ ամբոխ տեսաւ ու գթաց
նրանց, որովհետեւ նման էին ոչխար-
ների, որոնք հովիւ չունեն. եւ սկսեց
նրանց ուսուցանել շատ բաներ:
35 Երբ շատ ժամեր անցան, աշա-
կերտները, մօտենալով, ասացին. «Սա
ամայի տեղ է, մինչ օրը դեռ չի վեր-
ջացել, 36 արձակի՛ր այս ժողովրդին,
որպէսզի գնան շրջակայքի ագարակ-
ներում եւ գիւղերում իրենց համար
ուտելիք գնեն, որովհետեւ այստեղ
ուտելու բան չունեն»: 37 Նա պատաս-
խանեց նրանց եւ ասաց. «Դո՛ւք նրանց
ուտելիք տուէք»: Ասացին նրան.
«Գնանք գնե՞նք երկու հարիւր դահե-
կանի հաց եւ նրանց տանք ուտելու»:
38 Ասաց նրանց. «Քանի՞ նկանակ
ունէք, գնացէք տեսէ՛ք»: Երբ իմացան,
նրան ասացին. «Հինգ նկանակ եւ
երկու ձուկ»: 39 Եւ նա հրամայեց
խումբ-խումբ նստեցնել նրանց դալար
խոտի վրայ: 40 Եւ դաս-դաս նստեցին,
տեղ-տեղ՝ հարիւր, տեղ-տեղ՝ յիսուն:
41 Եւ նա վերցնելով հինգ նկանակը եւ
երկու ձկները՝ նայեց դէպի երկինք,
օրհնեց, մանրեց նկանակները եւ տուեց
աշակերտներին, որպէսզի դնեն նրանց
առաջ: Եւ երկու ձկներն էլ բաժանեց
բոլորին: 42 Կերան եւ յագեցան 43 եւ
տասներկու սակառ լիքը կտորտանք-
ները վերցրին, ինչպէս նաեւ՝ ձկներից:
44 Եւ նրանք որ կերան, մօտ հինգ
հազար հոգի էին:

ՅԻՍՈՒՍ ՔԱՅԼՈՒՄ Է ԾՈՎԻ ՎՐԱՅՈՎ
(Մատթ. 14. 22-33, Յովհ. 6. 15-21)

45 Իսկոյն եւեթ Յիսուս շտապեցրեց
աշակերտներին, որ նաւակ մտնեն եւ
իրենից առաջ գնան հանդիպակաց
կողմը՝ դէպի Բեթսայիդա, մինչեւ ինքը
ժողովրդին արձակէր: 46 Եւ բաժա-
նուելով նրանցից՝ լեռ բարձրացաւ
աղօթք անելու: 47 Երբ երեկոյ եղաւ,
նաւակը ծովի մէջտեղում էր, իսկ ինքը՝
ցամաքի վրայ: 48 Եւ տեսաւ նրանց, որ

†Լաւագոյն յուն. բն. եւ մօտեցան նրանց-ի փոխարէն ունեն նրանցից առաջ անցան:

հողմակոծ էին լինում թիավարելիս,
որովհետեւ քամին նրանց հակառակ
կողմից էր. գիշերուայ ուշ ժամին նա
գալիս էր նրանց մօտ՝ ծովի վրայ
քայլելով, եւ ուզում էր նրանցից առաջ
անցնել գնալ: 49 Երբ նրանք տեսան,
որ քայլում է ծովի վրայ, կարծեցին,
թէ մի ուրուական է, եւ աղաղակ
բարձրացրին, 50 որովհետեւ ամէնքը
տեսան նրան եւ խռովուեցին: Եւ նա
իսկոյն խօսեց նրանց հետ ու ասաց.
«Քաջալերուեցէ՛ք, ե՛ս եմ, մի՛ վա-
խեցէք»: 51 Եւ նա նաւակ բարձրացաւ
նրանց մօտ, եւ քամին դադարեց: Եւ
նրանք առաւել եւս ապշել էին իրենց
մտքում ու սաստիկ զարմանում էին,
52 քանի որ մտքները բթացած լինելով՝
չէին հասկացել նաեւ այն, ինչ
վերաբերում էր հացի բազմացմանը:

ԲԺՇԿՈՒՄՆԵՐ ԳԵՆՆԵՍԱՐԷԹՈՒՄ
(Մատթ. 14. 34-36)

53 Երբ դիմացի կողմն անցան,
Գեննեսարէթի ցամաքը ելան: 54 Եւ
երբ նաւակից դուրս ելան, տեղի
մարդիկ իսկոյն ճանաչեցին: 55 Եւ ամբողջ գաւառում այս ու
այն կողմ վազելով՝ սկսեցին մահճ-
ներով հիւանդներ բերել այնտեղ, ուր
լսում էին, թէ նա գտնւում է: 56 Եւ ուր
որ մտնում էր՝ գիւղեր, քաղաքներ թէ
ագարակներ, հրապարակներում դնում
էին ախտերով տառապողներին եւ
աղաչում նրան, որ գոնէ իր զգեստի
քղանցքներին դիպչեն: Եւ ովքեր մի
անգամ դիպան, բժշկուեցին:

ՎԷՃ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(Մատթ. 15. 1-9)

7 Եւ նրա մօտ հաւաքուեցին
փարիսեցիներն ու օրէնսգէտներից
ոմանք, որոնք եկել էին Երուսաղէմից:
2 Նրանք տեսնելով, որ նրա աշա-
կերտներից ոմանք անմաքուր ձեռքե-
րով, այսինքն՝ անլուայ հաց էին
ուտում, բամբասեցին, 3 որովհետեւ
փարիսեցիները եւ բոլոր հրեաները,
եթէ ձեռքները մի լաւ չլուանան, հաց
չեն ուտում, քանի որ հների աւան-
դութիւնը պահում են: 4 Նաեւ՝ շու-
կայից տուն մտնելով՝ եթէ նախ
չլուացուեն, չեն ուտում: Եւ ուրիշ շատ
բաներ էլ կան, որ աւանդաբար պա-
հում են. ինչպէս՝ բաժակների, սափոր-
ների, պղնձէ ամանների ու մահիճների
լուացումներ: 5 Ահա ինչու փարի-
սեցիները եւ օրէնսգէտները հարց
տուեցին նրան. «Ինչո՞ւ քո աշա-
կերտները նախնիների աւանդութեան
համաձայն չեն շարժւում, այլ
անմաքուր ձեռքերով են հաց ուտում»:
6 Նա պատասխանեց եւ ասաց նրանց.
«Եսային լաւ մարգարէացաւ ձեր՝
կեղծաւորներիդ մասին՝ ասելով. "Այս
ժողովուրդը ինձ շրթներո՛վ է մեծա-
րում, բայց նրանց սրտերը ինձնից
հեռու են. 7 ի զուր են ինձ պաշտում.
ուսուցանում են վարդապետութիւն-
ներ, որ մարդկանց պատուիրածներն
են": 8 Աստծու պատուիրանը թողած՝
մարդկանց աւանդութիւնն էք պա-
հում»: 9 Ապա աւելացրեց. «Աստծու
պատուիրանը լաւ էք անարգում,
որպէսզի ձե՛ր աւանդութիւնը հաս-
տատէք. 10 որովհետեւ Մովսէսն ասում
է. "Պատուի՛ր քո հօրն ու մօրը. եւ ով որ
չարախօսի իր հօր կամ մօր մասին,
մահուամբ թող պատժուի": 11 Իսկ
դուք ասում էք. "Եթէ մէկը հօրը կամ
մօրն ասի. 'Ինչ ինձնից պիտի օգտուես,
Կորբան է', (այսինքն՝ Աստծուն տալու
ընծայ), 12 դրանով իսկ այլեւս թոյլ
չէք տալիս, որ նա իր հօր կամ մօր
համար որեւէ բան անի, 13 եւ այդպէս
անարգում էք Աստծու խօսքը նոյն
աւանդութեամբ, որ դուք փոխանցում
էք միմեանց: Եւ սրա նման ուրիշ շատ
բաներ էք անում»:

ՄԱՔՈՒՐԸ ԵՒ ԱՆՄԱՔՈՒՐԸ
(Մատթ. 15. 10-20)

14 Եւ նա ամբողջ ժողովրդին իր մօտ
կանչելով՝ ասաց նրանց. «Ամէնքդ
ինձ լսեցէ՛ք եւ իմացէ՛ք. 15 չկայ որեւէ
բան, որ մարդու մէջ դրսից մտնելով
կարողանայ նրան պղծել. այլ այն, ինչ
ելնում է նրանից, ա՛յն է, որ պղծում է
մարդուն: 16† Ով ականջներ ունի

†Լաւագոյն յուն. բն. չունեն այս համարը:

լսելու, թող լսի»:
17 Եւ երբ ամբոխից բաժանուելով
տուն մտաւ, աշակերտները այդ առակի
մասին նրան հարցրին: 18 Եւ նրանց
ասաց. «Դո՞ւք էլ այդպէս անմիտ էք,
չէ՞ք իմանում, թէ ամէն բան, որ դրսից
մարդու մէջ է մտնում, չի կարող նրան
պղծել, 19 որովհետեւ ոչ թէ նրա սիրտն
է մտնում, այլ՝ որովայնը եւ դուրս է
ելնում ու մաքրում բոլոր կերածները»:
20 Եւ ասում էր. «Ինչ որ մարդուց
դուրս է գալիս, ա՛յն է, որ պղծում է
մարդուն, 21 որովհետեւ ներսից,
մարդկանց սրտից են ելնում չար
խորհուրդները՝ շնութիւն, պոռնկու-
թիւն, 22 գողութիւն, սպանութիւն,
ագահութիւն, չարութիւն, նենգութիւն,
գիշութիւն, չար նախանձ, հայհոյանք,
ամբարտաւանութիւն, անզգամութիւն:
23 Այս բոլոր չարիքները ներսից են
ելնում եւ պղծում մարդուն»:

ՓԻՒՆԻԿԵՑԻ ԿՆՈՋ ՀԱՒԱՏԸ
(Մատթ. 15. 21-28)

24 Եւ այնտեղից վեր կացաւ եկաւ
Տիւրոսի ու Սիդոնի† սահմանները. եւ
մի տուն մտնելով՝ չէր ուզում, որ որեւէ
մէկն իմանայ իր այնտեղ լինելը, սա-
կայն չկարողացաւ թաքնուած մնալ:
25 Նրա մասին լսեց մի կին, որի
դուստրը տառապում էր պիղծ ոգուց.
սա եկաւ ընկաւ նրա ոտքերը: 26 Այս
կինը հեթանոս էր, փիւնիկ-ասորի
ազգից. աղաչում էր նրան, որ իր
աղջկանից դեւը հանի: 27 Եւ Յիսուս
նրան ասաց. «Թո՛յլ տուր, որ նախ
մանուկները կշտանան, քանի որ լաւ չէ
մանուկների հացը առնել եւ շների
առաջ գցել»: 28 Կինը պատասխանեց
եւ ասաց. «Տէ՛ր, շներն էլ մանուկների
սեղանի փշրանքներից են կե-
րակրւում»: 29 Եւ նա ասաց նրան.
«Այդ խօսքիդ համար գնա՛, դեւը քո
աղջկանից դուրս ելաւ»: 30 Կինը գնաց
իր տունը եւ դեւին ելած գտաւ, իսկ
աղջկան՝ պառկած մահճի վրայ:

ԽՈՒԼ-ՀԱՄՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ

31 Եւ դարձեալ դուրս ելնելով

†Յունարէնը չունի ու Սիդոնի բառերը:

Տիւրոսի եւ Սիդոնի սահմաններից,
եկաւ Գալիլիայի ծովեզերը, Դեկապոլսի
սահմաններից ներս: 32 Նրա առաջ
բերեցին մի խուլ ու համր մարդ եւ
աղաչեցին, որ իր ձեռքը դնի նրա
վրայ: 33 Եւ Յիսուս նրան ամբոխից մի
կողմ տանելով՝ իր մատները դրեց նրա
ականջների մէջ եւ այնտեղ թքեց.
ապա բռնեց նրա լեզուից. 34 դէպի
երկինք նայեց, հոգոց հանեց եւ ասաց՝
Եփփաթա, որ նշանակում է՝ բացուի՛ր:
35 Եւ իսկոյն նրա լսողութիւնը բա-
ցուեց, եւ լեզուի կապանքներն ընկան,
եւ խօսում էր ուղիղ: 36 Եւ նա նրանց
պատուիրեց, որ ոչ ոքի չասեն. բայց
ինչքան էլ նա պատուիրում էր նրանց,
նրանք է՛լ աւելի էին տարածում: 37 Եւ
աւելի ու աւելի էին զարմանում եւ
ասում. «Սա ամէն ինչ լաւ արեց,
որովհետեւ խուլերին լսել է տալիս եւ
համրերին՝ խօսել»:

ՀԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մատթ. 15. 32-39)

8 Այդ օրերին ժողովուրդը դարձեալ
շատ էր, եւ ուտելու բան չունէին:
Յիսուս կանչեց իր աշակերտներին եւ
ասաց նրանց. 2 «Սիրտս ցաւում է այս
ժողովրդի համար, որովհետեւ արդէն
երեք օր է, որ ինձ մօտ են. եւ բան
չունեն, որ ուտեն: 3 Եթէ նրանց իրենց
տներն արձակեմ քաղցած, ճանապար-
հին ուշագնաց կը լինեն, որովհետեւ
նրանցից ոմանք հեռուներից են եկել»:
4 Աշակերտները նրան պատասխա-
նեցին եւ ասացին. «Որտեղի՞ց կարող
ես նրանց հացով կշտացնել այս ամայի
վայրում»: 5 Եւ նա հարցրեց նրանց.
«Քանի՞ նկանակ հաց ունէք»: Եւ
նրանք ասացին՝ եօթը: 6 Եւ նա հրա-
մայեց ժողովրդին նստել գետնի վրայ.
եւ վերցնելով եօթը նկանակները՝
գոհութիւն յայտնեց Աստծուն, կտրեց
եւ տուեց աշակերտներին, որ դնեն
ժողովրդի առաջ. եւ նրանք հացը
ժողովրդի առաջ դրեցին: 7 Եւ քիչ
թուով ձկներ էլ ունէին. եւ նա այդ եւս
օրհնեց ու հրամայեց նրանց առաջ
դնել: 8 Կերան եւ կշտացան եւ եօթը

զամբիւղ աւելացած կտորտանքներ
վերցրին: 9 Եւ նրանք, որ կերան, մօտ
չորս հազար հոգի էին. եւ նրանց
արձակեց:

ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՑՈՒՄ ՅԻՍՈՒՍԻՑ
(Մատթ. 16. 1-4)

10 Եւ իսկոյն աշակերտների հետ
նաւակ մտնելով՝ եկաւ Դաղմանունայի
կողմերը: 11 Եկան փարիսեցիները եւ
սկսեցին վիճել նրա հետ եւ նրան
փորձելով՝ երկնքից նշան էին ուզում
նրանից: 12 Եւ նա իր հոգում զայ-
րացաւ եւ ասաց. «Ինչո՞ւ է այս սե-
րունդը նշան ուզում. ճշմարիտ եմ
ասում ձեզ, որ այս սերնդին նշան չի
տրուի»: 13 Թողեց նրանց, նորից նա-
ւակ մտաւ եւ գնաց ծովի միւս կողմը:

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՀԵՐՈՎԴԷՍԱԿԱՆՆԵՐԻ ԹԹԽՄՈՐԸ
(Մատթ. 16. 5-12)

14 Եւ աշակերտները մոռացան հաց
վերցնել. սակայն միայն մէկ նկանակ
ունէին իրենց նաւակի մէջ: 15 Եւ նա
պատուիրեց նրանց ու ասաց. «Զգո՛յշ
եղէք փարիսեցիների խմորից եւ
հերովդէականների† խմորից»: 16 Իսկ
նրանք իրենց մէջ խորհում էին եւ
ասում՝ հաց չունենք: 17 Յիսուս իմա-
ցաւ նրանց խորհուրդը եւ նրանց
ասաց. «Թերահաւատնե՛ր, ինչո՞ւ էք
ձեր սրտերում խորհում, թէ հաց չու-
նէք. դեռ չէ՞ք հասկանում եւ չէ՞ք յի-
շում. ապշութի՞ւն է ձեր մտքերը
պատել: 18 Աչքեր ունէք եւ չէ՞ք տես-
նում, ականջներ ունէք եւ չէ՞ք լսում
եւ դեռ չէ՞ք հասկանում ու չէ՞ք յի-
շում. 19 երբ հինգ նկանակը բաժանեցի
հինգ հազար հոգու, կտորտանքներով
լի քանի՞ սակառ վերցրիք»: Եւ նրան
պատասխանեցին՝ տասներկու: 20 «Եւ
երբ եօթը նկանակը չորս հազար հոգու
բաժանեցի, կտորտանքների քանի՞
զամբիւղ լիքը վերցրիք»: Եւ նրանք
պատասխանեցին՝ եօթը: 21 Եւ նա
նրանց ասաց. «Ապա ուրեմն ինչպէ՞ս
չէք հասկանում»:

†Յունարէնը հերովդէականների բառի փո-
խարէն ունի Հերովդէսի:

ԲԵԹՍԱՅԻԴԱՅԻ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ

22 Եկան Բեթսայիդա. եւ նրա առաջ
բերեցին մի կոյրի ու աղաչում էին, որ
դիպչի նրան: 23 Եւ նա բռնելով կոյրի
ձեռքից՝ գիւղից դուրս հանեց. նրա
աչքերը թքով թրջեց եւ ձեռքը նրա
վրայ դրեց. եւ հարցնում էր կոյրին, թէ
բան տեսնո՞ւմ է: 24 Նա բացեց աչքերը
եւ ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ
շրջում են ինչպէս ծառեր»: 25 Նա
կրկին ձեռքերը դրեց նրա աչքերի
վրայ. կոյրը իր աչքերը բացեց եւ
տեսնում էր. բժշկուեց եւ ամէն ինչ
յստակ տեսնում էր: 26 Նրան իր տունն
արձակեց եւ ասաց. «Գիւղ մի՛ մտիր,
այլ գնա՛ քո տունը, իսկ երբ գիւղ
մտնես, գիւղում ոչ ոքի չասես† »:

ՃՇՄԱՐԻՏ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 16. 13-20, Ղուկ. 9. 18-21)

27 Եւ Յիսուս իր աշակերտների հետ
միասին ելաւ գնաց Փիլիպպեան Կե-
սարիայի գիւղերը. եւ ճանապարհին
աշակերտներին հարցնում էր եւ ասում.
«Մարդիկ ի՞նչ են ասում իմ մասին՝
ո՞վ եմ ես»: 28 Նրանք պատասխան
տուեցին եւ ասացին. «Յովհաննէս
Մկրտիչը, եւ ոմանք՝ Եղիան, իսկ
ուրիշներ՝ մարգարէներից մէկը»:
29 Նրանց ասաց. «Իսկ դուք ի՞նչ էք
ասում իմ մասին՝ ո՞վ եմ ես»: Պետրոսը
պատասխան տուեց եւ ասաց նրան.
«Դու Քրիստոսն ես»: 30 Եւ նա խստիւ
պատուիրեց նրանց, որ իր մասին
մարդու բան չասեն:

ՅԻՍՈՒՍԻ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆԸ
ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 16. 21-28, Ղուկ. 9. 22-27)

31 Եւ սկսեց ուսուցանել աշակերտ-
ներին, թէ մարդու Որդին պէտք է
բազում չարչարանքներ կրի, անարգուի
երէցներից ու քահանայապետներից եւ
օրէնսգէտներից, մեռնի եւ երրորդ օրը
յարութիւն առնի: 32 Եւ այս խօսքը
ասաց բացայայտօրէն. եւ Պետրոսը

†Լաւագոյն յուն. բն. այս նախադասութեան
փոխարէն ունեն «Նոյնիսկ գիւղ մի՛ գնա»:

նրան մի կողմ տանելով՝ սկսեց յան-
դիմանել նրան: 33 Իսկ նա դարձաւ
տեսաւ աշակերտներին, սաստեց Պետ-
րոսին ու ասաց. «Ետե՛ւս գնա, սատա-
նա՛յ, որովհետեւ դու Աստծո՛ւ բաները
չես խորհում, այլ՝ մարդկանցը»:
34 Եւ նա իր մօտ կանչելով ժո-
ղովրդին, աշակերտների հետ միասին,
ասաց նրանց. «Եթէ մէկը կամենում է
գալ իմ յետեւից, թող ուրանայ իր
անձը, թող վերցնի իր խաչը եւ գայ իմ
յետեւից, 35 որովհետեւ ով կամենում է
ազատել իր անձը, այն պիտի կորցնի.
իսկ ով կորցնի իր անձը Աւետարանի
համար†, պիտի ազատի այն: 36 Ի՞նչ
օգուտ է մարդուն, եթէ ամբողջ
աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի.
37 որովհետեւ մարդ ի՞նչ ունի տալու
իր անձի փոխարէն: 38 Ով որ ամօթ
համարի ինձ եւ իմ խօսքերը այս
շնացող եւ մեղաւոր ազգի մէջ, մարդու
Որդին էլ նրան պիտի ամաչեցնի, երբ
գայ փառքովն իր Հօր եւ սուրբ
հրեշտակների»: 39 Եւ նրանց ասաց.
«Ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ նրան-
ցից, որ այստեղ են, կան ոմանք, որոնք
մահ չպիտի ճաշակեն, մինչեւ որ
տեսնեն Աստծու արքայութիւնը՝ զօ-
րութեամբ եկած»:

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 17. 1-13, Ղուկ. 9. 28-36)

9 Վեց օր յետոյ Յիսուս իր հետ
վերցրեց Պետրոսին, Յակոբոսին եւ
Յովհաննէսին ու առանձին նրանց
հանեց մի բարձր լեռան վրայ եւ
նրանց առաջ պայծառակերպուեց: 2 Եւ
նրա զգեստները փայլուն, խիստ
սպիտակ դարձան, այնպէս որ երկրի
վրայ ոչ մի լուացք անող չի կարող
այդքան սպիտակեցնել: 3 Եւ նրանց
երեւաց Եղիան՝ Մովսէսի հետ մէկտեղ,
ու նրանք խօսում էին Յիսուսի հետ:
4 Պետրոսը Յիսուսին ասաց. «Ռաբբի՛,
լաւ է, որ մենք այստեղ լինենք եւ երեք
տաղաւարներ շինենք, մէկը՝ քեզ,
մէկը՝ Մովսէսի եւ մէկն էլ՝ Եղիայի
համար»: 5 Սակայն չգիտէր, թէ ինչ էր
խօսում, որովհետեւ զարհուրած էին:

†Յուն. լաւ բն. ունեն ինձ համար եւ
Աւետարանի համար:

6 Եւ մի ամպ նրանց վրայ հովանի
եղաւ. ամպից մի ձայն եկաւ, որ ասում
էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, դրա՛ն
լսեցէք»: 7 Եւ յանկարծակի այս ու այն
կողմ նայելով՝ այլեւս ոչ մի տեղ ոչ
ոքի չտեսան, այլ միայն Յիսուսին՝
իրենց հետ: 8 Եւ մինչ լեռնից իջնում
էին, նա պատուիրեց նրանց, որ իրենց
տեսածը մարդու չպատմեն, մինչեւ որ
մարդու Որդին մեռելներից յարութիւն
առնի: 9 Նրանք այս խօսքը իրենց
մտքում պահում էին եւ միմեանց
հարցնում էին, թէ ի՞նչ է մեռելներից
յարութիւն առնելը: 10 Ապա հարցրին
նրան ու ասացին. «Այն ի՞նչ է, որ
օրէնսգէտներն ասում են, թէ նախ
Եղիան պէտք է գայ»: 11 Նա պատաս-
խանեց նրանց եւ ասաց. «Եղիան նախ
պիտի գայ եւ ամէն բան կարգի պիտի
դնի. իսկ ինչո՞ւ մարդու Որդու մասին
գրուած է, որ շատ չարչարանքներ
պիտի կրի ու անարգուի: 12 Բայց ես
ասում եմ ձեզ, որ Եղիան եկաւ, եւ
նրան արեցին, ինչ որ կամեցան,
ինչպէս որ գրուած է նրա մասին»:

ԼՈՒՍՆՈՏ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 17. 14-21, Ղուկ. 9. 37-44ա)

13 Եւ աշակերտների մօտ գալով՝
նրանց շուրջը տեսաւ մեծ բազմութիւն
եւ օրէնսգէտներ, որոնք վիճում էին
նրանց հետ: 14 Եւ իսկոյն ամբողջ
ժողովուրդը, երբ տեսաւ նրան, զար-
մացաւ եւ, ընդառաջ վազելով, ողջոյն
էր տալիս նրան: 15 Յիսուս աշակերտ-
ներին հարցրեց. «Ինչի՞ մասին էիք
վիճում նրանց հետ»: 16 Ժողովրդի
միջից մէկը պատասխանեց եւ ասաց.
«Վարդապե՛տ, քեզ մօտ բերեցի որդուս,
որին մի համր չար ոգի բռնել է. 7 եւ
ուր պատահում է, նրան գետին է
զարկում. փրփրում է, ատամներն է
կրճտացնում եւ ապա չորանում մնում
է: Քո աշակերտներին ասացի, որ հա-
նեն, բայց չկարողացան հանել այն»:
18 Նա պատասխանեց նրանց եւ ասաց.
«Ո՛վ անհաւատ սերունդ, մինչեւ ե՞րբ
ձեզ հետ պիտի լինեմ, մինչեւ ե՞րբ ձեզ
պիտի հանդուրժեմ. բերէ՛ք նրան ինձ
մօտ»: 19 Եւ նրան բերեցին իր մօտ: Երբ

չար ոգին նրան տեսաւ, իսկոյն ուժգին
ցնցեց տղային, որը, գետին ընկնելով,
թաւալւում էր ու փրփրում: 20 Յիսուս
հարցրեց նրա հօրը եւ ասաց. «Ինչքա՞ն
ժամանակ է անցել այն օրուանից, ինչ
այդ նրան պատահել է»: Եւ նա ասաց.
«Մանկութիւնից: 21 Շատ անգամ չար
ոգին կրակի եւ ջրի մէջ է նետում
նրան, որ կործանի. արդ, եթէ մի կերպ
կարող ես, օգնի՛ր մեզ, Տէ՛ր, գթալով
մեզ»: 22 Եւ Յիսուս նրան ասաց.
«Ասացիր՝ եթէ կարող ես. ամէն ինչ
հնարաւոր է նրա համար, ով հաւա-
տում է»: 23 Երեխայի հայրը իսկոյն
աղաղակեց եւ ասաց. «Հաւատում եմ,
օգնի՛ր իմ անհաւատութեանը»: 24 Երբ
Յիսուս տեսաւ, որ ժողովուրդը իրար
վրայ է հաւաքւում, սաստեց պիղծ
ոգուն եւ ասաց. «Դո՛ւ, հա՛մր եւ խո՛ւլ
ոգի, ես հրամայում եմ քեզ, դո՛ւրս ելիր
նրանից եւ այլեւս չմտնես դրա մէջ»:
25 Եւ չար ոգին ճչաց, ուժգին ցնցեց
նրան ու դուրս ելաւ. եւ պատանին
մեռելի պէս եղաւ, այն աստիճան, որ
շատերը ասացին, թէ մեռաւ: 26 Յիսուս
բռնեց նրա ձեռքից, բարձրացրեց
նրան, եւ նա ոտքի կանգնեց: 27 Եւ երբ
Յիսուս տուն մտաւ, աշակերտները, ա-
ռանձին, հարցրին նրան. «Ինչո՞ւ մենք
չկարողացանք հանել դրան»: 28 Եւ նա
նրանց ասաց. «Այդ տեսակը ուրիշ
բանով չի ելնի, եթէ ոչ ծոմա-
պահութեամբ† ու աղօթքով»:

ԿՐԿԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹՅԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 17. 22-23, Ղուկ. 9. 44բ-45)

29 Այնտեղից ելնելով՝ նրանք անց-
նում էին Գալիլիայի միջով, եւ Յիսուս
չէր կամենում, որ որեւէ մէկն իմանայ,
30 քանի որ իր աշակերտներին ուսու-
ցանում էր եւ նրանց ասում. «Մարդու
Որդին մատնուելու է մարդկանց ձեռ-
քը, նրանք պիտի սպանեն նրան. եւ
երբ նա սպանուի, երրորդ օրը յա-
րութիւն պիտի առնի»: 31 Բայց նրանք
չէին հասկանում այդ խօսքը եւ վա-
խենում էին նրան հարցնել:

†Յունարէնը չունի ծոմապահութեամբ բառը:

ՄԵԾԸ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(Մատթ. 18. 1-5, Ղուկ. 9. 46-48)

32 Եկաւ Կափառնայում եւ, երբ
տուն մտաւ, աշակերտներին հարցրեց.
«Ճանապարհին իրար հետ ինչի՞ մա-
սին էիք վիճում»: 33 Եւ նրանք լուռ
էին մնում, որովհետեւ ճանապարհին
իրար հետ վիճում էին, թէ ո՛վ է մեծը:
34 Եւ երբ նստեց, կանչեց Տասներ-
կուսին ու նրանց ասաց. «Եթէ մէկն
ուզում է առաջին լինել, բոլորից վեր-
ջինը եւ բոլորի սպասաւորը պիտի
լինի»: 35 Եւ մի մանուկ վերցնելով՝
կանգնեցրեց նրանց մէջ եւ նրան իր
գիրկն առնելով՝ նրանց ասաց. 36 «Ով
այսպիսի մանուկներից մէկին ընդու-
նում է իմ անունով, ինձ է ընդունում,
եւ ով ինձ է ընդունում, ոչ թէ ինձ է
ընդունում, այլ նրան, ով ինձ
ուղարկեց»:

ՈՎ ՄԵՐ ԴԷՄ ՉԷ, ՄԵԶ ՀԵՏ Է
(Ղուկ. 9. 49-50)

37 Յովհաննէսը պատասխանեց եւ
ասաց. «Վարդապե՛տ, տեսանք մէկին,
որը քո անունով դեւեր էր հանում,
բայց մեզ հետ չէր շրջում, եւ արգե-
լեցինք նրան»: 38 Եւ նա ասաց.
«Արգելք մի՛ եղէք նրան, որովհետեւ
չկայ մէկը, որ իմ անունով զօրաւոր
գործեր անի ու կարողանայ ինձ հայ-
հոյել. 39 քանզի ով մեզ հակառակ չէ,
նա մեր կողմն է: 40 Եւ ով որ ձեզ մի
բաժակ ջուր խմեցնի յանուն այն
բանի, որ դուք Քրիստոսինն էք,
ճշմարիտ եմ ասում ձեզ, իր վարձը
չպիտի կորցնի»:

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 18. 6-9, Ղուկ. 17. 1-2)

41 «Եւ ով որ ինձ հաւատացող այս
փոքրիկներից մէկին գայթակղեցնի,
նրա համար աւելի լաւ կը լինէր, եթէ
նրա պարանոցից կախուած լինէր էշի
մի երկանաքար, եւ ծով գցուէր: 42 Եւ
եթէ քեզ գայթակղեցնում է քո ձեռքը,
կտրիր դէ՛ն գցիր քեզնից, որովհետեւ

քեզ համար աւելի լաւ է խեղուած
մտնել յաւիտենական կեանքը, քան թէ
երկու ձեռք ունենալ ու գնալ գեհեն,
անշէջ կրակի մէջ: 44 Եւ եթէ քո ոտքն
է գայթակղեցնում քեզ, կտրի՛ր,
քեզնից դէ՛ն գցիր այն. լաւ է, որ դու
կաղ մտնես յաւիտենական կեանքը,
քան թէ երկու ոտք ունենաս ու գեհեն
ընկնես: 46 Եւ եթէ քո աչքն է
գայթակղեցնում քեզ, քաշիր հանի՛ր
այն. լաւ է, որ դու մէկ աչքով մտնես
Աստծու արքայութիւնը, քան թէ երկու
աչք ունենաս ու ընկնես գեհեն, 47 ուր
նրանց որդը չի մեռնում, եւ կրակը չի
հանգչում, 48 որովհետեւ ամէն ինչ
կրակով պիտի աղուի: 49 Աղը լաւ բան
է. բայց եթէ աղը անհամանայ, ինչո՞վ
պիտի համեմուի. արդ, դուք ձեր մէ՛ջ
ունեցէք աղը եւ իրար հետ խաղա-
ղութե՛ամբ ապրեցէք»:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 19. 1-12, Ղուկ. 16. 18)

10 Յիսուս այնտեղից վեր կացաւ
եկաւ Հրէաստանի սահմանները, Յոր-
դանանի միւս կողմը. եւ ժողովուրդը
դարձեալ գնում խռնւում էր նրա
շուրջը, եւ նա, ինչպէս սովոր էր, նորից
ուսուցանում էր նրանց:
2 Իսկ փարիսեցիները մօտեցան եւ
նրան փորձելով՝ հարց տուին ու
ասացին. «Օրինաւո՞ր է, որ մարդ իր
կնոջն արձակի»: 3 Նա պատասխան
տուեց նրանց եւ ասաց. «Մովսէսը ձեզ
ի՞նչ պատուիրեց»: 4 Եւ նրանք
ասացին. «Մովսէսը հրաման տուեց
արձակելու թուղթ գրել եւ արձակել»:
5 Յիսուս պատասխանեց եւ ասաց
նրանց. «Ձեր խստասրտութեան
պատճառով գրեց այդ պատուիրանը,
6 մինչդեռ արարչագործութեան
սկզբից Աստուած արու եւ էգ ստեղծեց
նրանց»: 7 Եւ ասաց. «Դրա համար
տղամարդը պիտի թողնի իր հօրն ու
մօրը եւ պիտի գնայ իր կնոջ յետեւից:
8 Եւ երկուսը մի մարմին պիտի լինեն,
եւ այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին:
9 Արդ, ինչ որ Աստուած միացրեց,
մարդը թող չբաժանի»: 10 Եւ աշա-
կերտները տան մէջ դարձեալ նոյնը
հարցրին նրան: 11 Եւ նրանց ասաց.
«Եթէ մի մարդ արձակի իր կնոջը եւ
ուրիշին առնի, շնութիւն արած կը
լինի: 12 Եւ մի կին եթէ թողնի իր
ամուսնուն եւ ուրիշ մարդու կին լինի,
շնութիւն արած կը լինի»:

ՅԻՍՈՒՍ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
(Մատթ. 19. 13-15, Ղուկ. 18. 15-17)

13 Եւ նրան մանուկներ էին բերում,
որպէսզի ձեռքը դնի նրանց վրայ: Իսկ
աշակերտները յանդիմանում էին
նրանց, ովքեր բերում էին: 14 Երբ
Յիսուս այս տեսաւ, բարկանալով սաստ-
եց նրանց† եւ ասաց. «Թո՛յլ տուէք
այդ մանուկներին գալ ինձ մօտ եւ
արգելք մի՛ եղէք նրանց, որովհետեւ
Աստծու արքայութիւնը այդպիսի-
ներինն է: 15 Ճշմարիտ եմ ասում ձեզ,
ով Աստծու արքայութիւնը չընդունի
որպէս մանուկ, նրա մէջ չի մտնելու»:
16 Եւ նա վերցնելով նրանց իր գիրկը՝
նրանց վրայ ձեռքը դրեց եւ օրհնեց
նրանց:

ՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԸ
(Մատթ. 19. 16-30, Ղուկ. 18. 18-30)

17 Երբ նա այնտեղից ճանապարհ
ընկաւ, ահա մեծահարուստ մէկը առաջ
վազելով ծնկի իջաւ, հարցրեց նրան ու
ասաց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պէտք
է անեմ, որ յաւիտենական կեանքը
ժառանգեմ»: 18 Եւ Յիսուս նրան
ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում.
բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստուած:
19 Պատուիրանները գիտես. մի՛ շնա-
նար, մի՛ սպանիր, մի՛ գողանար, սուտ
մի՛ վկայիր‡, պատուի՛ր քո հօրն ու
մօրը»: 20 Նա պատասխանեց եւ ասաց
նրան. «Վարդապե՛տ, այդ բոլորը իմ
մանկութիւնից ի վեր արել եմ. արդ,
ի՞նչ եմ պակաս թողել»: 21 Եւ Յիսուս
նրան նայելով՝ սիրեց նրան եւ ասաց.
«Քեզ մէ՛կ բան է պակասում. եթէ
կամենում ես կատարեալ լինել, գնա
վաճառի՛ր ինչ որ ունես ու աղքատ-

†Յուն. լաւ բն. չունեն սաստեց նրանց բառերը:

‡Յուն. լաւ բն. սուտ մի՛ վկայիր-ից յետոյ ունեն մի՛ զրկիր:

ների՛ն տուր եւ երկնքում գանձեր կ'ունենաս. եւ վերցրո՛ւ խաչդ եւ արի՛ իմ յետեւից»: 22 Եւ մարդը այդ խօսքի վրայ խոժոռուած՝ գնաց տրտում, որովհետեւ շատ հարուստ էր:

23 Եւ Յիսուս այս կողմ, այն կողմ նայելով՝ ասաց իր աշակերտներին. «Ինչքա՜ն դժուարին է Աստծու արքայութիւն մտնել նրանց համար, որ հարստութիւն ունեն»: 24 Եւ աշակերտները զարմացած էին նրա խօսքերի վրայ. իսկ Յիսուս դարձեալ պատասխանեց նրանց եւ ասաց. «Զաւակնե՛րս, ինչքա՜ն դժուար է Աստծու արքայութիւն մտնել նրանց համար, որ իրենց յոյսը դրել են հարստութեան վրայ†: 25 Աւելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակից անցնի, քան թէ մի մեծահարուստ Աստծու արքայութիւնը մտնի»: 26 Եւ աշակերտները առաւել եւս էին զարմանում ու միմեանց ասում. «Ապա ուրեմն ո՞վ կարող է փրկուել»: 27 Նայելով նրանց՝ Յիսուս ասաց. «Մարդկանց համար այդ անհնար է, բայց ո՛չ Աստծու համար»:

28 Պետրոսն սկսեց նրան ասել. «Ահաւասիկ մենք թողել ենք ամէն բան եւ եկել ենք քո յետեւից»: 29 Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկայ մէկը, որ թողած լինի տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ որդիներ, կամ ագարակներ ինձ համար կամ Աւետարանի համար եւ այժմ, 30 այս ժամանակի մէջ հարիւրապատիկը չստանայ՝ տներ եւ եղբայրներ եւ քոյրեր եւ մայրեր եւ որդիներ եւ ագարակներ՝ հալածանքներ կրելով հանդերձ, եւ այն աշխարհում, որ գալու է՝ յաւիտենական կեանք: 31 Սակայն շատեր, որ առաջին են, պիտի լինեն վերջին, իսկ վերջիններ՝ առաջին»:

ՎԵՐՍՏԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 20. 17-19, Ղուկ. 18. 31-34)

32 Եւ Երուսաղէմ ելնելու ճանապարհի վրայ էին. Յիսուս աշակերտներից աւելի առաջ էր գնում. իսկ նրանք, որ նրա յետեւից էին գնում, զարմացած էին ու վախենում էին: Եւ նա նորից վերցնելով Տասներկուսին՝ առանձին, սկսեց ասել նրանց, թէ ինչ բաներ պիտի պատահեն իրեն: 33 «Ահա ելնում ենք Երուսաղէմ. եւ մարդու Որդին պիտի մատնուի քահանայապետներին ու օրէնսգէտներին, եւ նրան մահուան պիտի դատապարտեն ու հեթանոսներին պիտի յանձնեն. 34 նրան պիտի ծաղրեն. նրան պիտի ծեծեն ու նրա վրայ պիտի թքեն. եւ պիտի սպանեն. եւ երրորդ օրը† նա յարութիւն պիտի առնի»:

ԶԵԲԵԴԷՈՍԻ ՈՐԴԻՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ
(Մատթ. 20. 20-28)

35 Զեբեդէոսի որդիները՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը, գնացին նրա մօտ եւ ասացին նրան. «Վարդապե՛տ, ինչ որ քեզնից պիտի խնդրենք, կամենում ենք, որ անես մեզ համար»: 36 Եւ նա նրանց ասաց. «Ի՞նչ էք կամենում ինձնից, որ անեմ ձեզ համար»: 37 Եւ նրանք ասացին նրան. «Շնո՛րհ արա մեզ, որ նստենք մէկս՝ քո աջում եւ միւսս՝ ձախում, քո փառքի մէջ»: 38 Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Չէք իմանում, թէ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտուել այն մկրտութեամբ, որով ես մկրտուելու եմ»: 39 Եւ նրանք ասացին նրան. «Կարող ենք»: Եւ Յիսուս նրանց ասաց. «Այն բաժակը, որ ես խմելու եմ, կը խմէք, եւ այն մկրտութիւնը, որով ես մկրտուելու եմ, նրանով կը մկրտուէք, 40 բայց իմ աջում եւ ձախում նստեցնելը ես չէ, որ պիտի տամ, այլ տրուելու է նրանց, որոնց համար պատրաստուած է»: 41 Այդ լսելով՝ տասը առաքեալները սկսեցին բարկանալ Յակոբոսի եւ Յովհաննէսի վրայ: 42 Յիսուս նրանց իր մօտ կանչեց եւ ասաց. «Գիտէք, որ հեթանոսների մէջ իշխանաւորներ համարուածները տիրում են նրանց. եւ նրանց մեծամեծներն իշխում են նրանց վրայ. 43 ձեր մէջ այդպէս չպէտք է լինի. այլ ձեզնից ով կամենայ մեծ լինել, թող լինի ձեր սպասաւորը. 44 եւ ձեզնից ով կամենայ առաջին լինել, բոլորին ծառայ թող լինի. 45 որովհետեւ մարդու Որդին էլ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու եւ տալու իր անձը որպէս փրկանք շատերի փոխարէն»:

ԿՈՅՐ ԲԱՐՏԻՄԷՈՍԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 20. 29-34, Ղուկ. 18. 35-43)

46 Եւ եկան Երիքով: Եւ մինչ նա Երիքովից դուրս էր գալիս իր աշակերտներով եւ բազում ժողովրդով, Տիմէի որդին՝ կոյր Բարտիմէոսը, նստել մուրում էր ճանապարհի եզրին: 47 Երբ լսեց, թէ անցնողը Յիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել եւ ասել. «Դաւթի՛ Որդի, Յիսո՛ւս, ողորմի՛ր ինձ»: 48 Եւ շատերը նրան սաստում էին, որ լռի, իսկ նա առաւել եւս աղաղակում էր. «Դաւթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»: 49 Յիսուս կանգնեց եւ հրամայեց, որ նրան կանչեն: Կոյրին կանչեցին եւ նրան ասացին. «Քաջալերուի՛ր, վե՛ր կաց, կանչում է քեզ»: 50 Եւ նա, դէն գցելով իր զգեստները, վեր կացաւ եկաւ Յիսուսի մօտ: 51 Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ»: Կոյրը նրան ասաց. «Վարդապե՛տ, աչքերս թող բացուեն»: 52 Եւ Յիսուս նրան ասաց. «Գնա՛, քո հաւատը քեզ փրկեց»: Եւ իսկոյն նրա աչքերը բացուեցին, եւ ճանապարհին գնում էր նրա յետեւից:

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Մատթ. 21. 1-11, Ղուկ. 19. 28-40, Յովհ. 12. 12-19)

11 Երբ մօտեցան Երուսաղէմին, Բեթփագէին եւ Բեթանիային, Զիթենեաց լերան մօտ, նա ուղարկեց աշակերտներից երկուսին եւ նրանց ասաց. 2 «Դուք գնացէ՛ք այդ գիւղը, որ ձեր դիմացն է. եւ հէնց որ այնտեղ մտնէք, կը գտնէք մի կապուած աւանակ, որի վրայ ոչ մի մարդ արարած չի նստել. արձակեցէ՛ք այն եւ բերէ՛ք: 3 Եւ եթէ մէկը ձեզ ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք արձակում», կ'ասէք. «Տիրոջը պէտք է». եւ նա իսկոյն դրան այստեղ կ'ուղարկի»: 4 Գնացին եւ գտան աւանակը՝ կապուած դռան մօտ, դրսում, փողոցի մէջ, եւ այն արձակեցին: 5 Եւ այնտեղ կանգնածներից ոմանք ասացին նրանց. «Ի՞նչ էք անում, ինչո՞ւ էք այդ աւանակն արձակում»: 6 Եւ նրանք նրանց ասացին, ինչպէս Յիսուս ասել էր. ու նրանց թոյլ տուին: 7 Աւանակը բերեցին Յիսուսի մօտ. եւ դրա վրայ զգեստներ գցեցին, եւ Յիսուս նստեց դրա վրայ: 8 Եւ շատեր իրենց զգեստները փռում էին ճանապարհին. եւ ուրիշներ ծառերից ճիւղեր էին կտրում ու գցում ճանապարհի վրայ: 9 Եւ նրանք, որ առաջից ու յետեւից էին գնում, աղաղակում էին եւ ասում. «Ովսաննա՜ Բարձրեալին, օրհնեա՜լ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով. 10 օրհնեա՜լ լինի մեր հօր՝ Դաւթի թագաւորութիւնը, որ գալիս է: Խաղաղութի՛ւն՝ երկնքում եւ փա՜ռք՝ բարձունքներում»: 11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ, գնաց տաճար ու նայեց իր շուրջը, ամէն ինչի վրայ. եւ որովհետեւ երեկոյի ժամ էր, բարձրացաւ Բեթանիա՝ Տասներկուսի հետ միասին:

ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ
(Մատթ. 21. 18-19)

12 Յաջորդ օրը, մինչ Բեթանիայից դուրս էին գալիս, Յիսուս քաղցած էր: 13 Եւ հեռուից մի տերեւալից թզենի տեսնելով՝ եկաւ, որ թերեւս նրա վրայ մի բան գտնի. եւ երբ նրան մօտեցաւ, ոչինչ չգտաւ, այլ միայն՝ տերեւ, որովհետեւ տակաւին թզի ժամանակը չէր: 14 Յիսուս խօսքը թզենուն ուղղեց եւ ասաց. «Էլ քեզնից ոչ ոք պտուղ չուտի յաւիտեան»: Եւ նրա աշակերտները լսում էին:

ՏԱՃԱՐՈՒՄ ԱՌԵՒՏՈՒՐ ԱՆՈՂՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ
(Մատթ. 21. 12-17, Ղուկ. 19. 45-48, Յովհ. 2. 13-22)

15 Եկան Երուսաղէմ. եւ Յիսուս տաճար մտնելով՝ սկսեց դուրս հանել տաճարում գտնուող վաճառողներին ու

†Յուն. լաւ բն. չունեն նրանց համար, որ ... հարստութեան վրայ նախադասութիւնը:

†Յունարէնը երրորդ օրը-ի փոխարէն ունի երեք օրից յետոյ:

գնորդներին եւ լումայափոխների սեղանները ցրեց ու աղաւնեվաճառների աթոռները շուռ տուեց. 16 եւ չէր թողնում, որ որեւէ մէկը տաճարի միջով նոյնիսկ որեւէ բան անցկացնի: 17 Եւ ուսուցանում էր նրանց ու ասում. «Գրուած է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղօթքի տուն է կոչուելու, իսկ դուք այն դարձրել էք աւազակների որջեր»: 18 Քահանայապետներն ու օրէնսգէտները լսեցին այս եւ մի միջոց էին փնտռում, թէ ինչպէս կորստեան մատնեն նրան, բայց վախենում էին նրանից, որովհետեւ ամբողջ ժողովուրդը զարմացած էր նրա ուսուցման վրայ: 19 Երբ երեկոյ եղաւ, քաղաքից դուրս ելան:

ԹԶԵՆՈՒ ԴԱՍԸ. ՀԱՒԱՏ ԵՒ ԱՂՕԹՔ
(Մատթ. 21. 20-22)

20 Յաջորդ օրը, առաւօտեան, մինչ նոյն ճանապարհից էին անցնում, թզենին արմատից չորացած տեսան: 21 Պետրոսը յիշեց եւ ասաց նրան. «Ռաբբի՛, ահաւասիկ թզենին, որին անիծեցիր, չորացել է»: 22 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Եթէ Աստծու հանդէպ հաւատ ունենաք, 23 ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ այս լերանն ասի՝ ե՛լ եւ ծո՛վն ընկիր, եւ իր սրտում չկասկածի, այլ հաւատայ, թէ ինչ որ ասում է, կը լինի, նա ինչ էլ ասի, կը կատարուի: 24 Դրա համար ասում եմ ձեզ. ամէն ինչ, որ աղօթք անելով խնդրէք եւ հաւատաք, թէ կը ստանաք[†], կը տրուի ձեզ: 25 Եւ երբ աղօթքի կանգնէք, թէ մէկի դէմ մի բան ունէք, ներեցէ՛ք, որպէսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր յանցանքները»[‡]:

[†]Յունարէնը *եւ հաւատամ, թէ կը ստանամ*-ի փոխարէն ունի *հաւատացէմ, թէ ստացել էմ այն:*

[‡]Յունարէն մի շարք ձեռագրերում վկայուած է հետեւեալ նախադասութիւնը 26-րդ համարի տակ. «Իսկ եթէ դուք չներէք, ձեր Հայրն էլ, որ երկնքում է, չի ների ձեզ ձեր յանցանքները»:

ՀԱՐՑ ՅԻՍՈՒՍԻՆ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 21. 23-27, Ղուկ. 20. 1-8)

27 Դարձեալ Երուսաղէմ եկան. եւ մինչ նա այնտեղ, տաճարում շրջում էր, նրա մօտ եկան քահանայապետները, օրէնսգէտները եւ ծերերը 28 ու ասացին նրան. «Ի՞նչ իշխանութեամբ ես դու այդ անում, եւ ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը»: 29 Յիսուս պատասխան տուեց եւ ասաց նրանց. «Ես էլ ձե՛զ մի բան հարցնեմ, պատասխանեցէ՛ք ինձ, եւ ես ձեզ կ'ասեմ, թէ ինչ իշխանութեամբ եմ այս անում: 30 Յովհաննէսի մկրտութիւնը երկնքի՞ց էր, թէ՞՝ մարդկանցից. պատասխանեցէ՛ք ինձ»: 31 Նրանք իրար միջեւ խորհում էին ու ասում. «Եթէ ասենք՝ երկնքից, մեզ կ'ասի՝ իսկ ինչո՞ւ նրան չհաւատացիք. 32 իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից ենք վախենում». որովհետեւ բոլորը գիտէին, թէ Յովհաննէսը մարգարէ էր: 33 Պատասխան տուեցին եւ Յիսուսին ասացին՝ չգիտենք. եւ Յիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «Ես էլ ձե՛զ չեմ ասի, թէ ինչ իշխանութեամբ եմ այս անում»:

ՁԱՐ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ
(Մատթ. 21. 33-46, Ղուկ. 20. 9-19)

12 Եւ սկսեց նրանց հետ առակներով խօսել եւ ասել. «Մի մարդ այգի տնկեց եւ նրա շուրջը ցանկապատ քաշեց, հնձանի փոս փորեց եւ աշտարակ շինեց. ու այն յանձնեց մշակներին եւ գնաց ուրիշ երկիր: 2 Երբ ժամանակը հասաւ, մշակների մօտ մի ծառայ ուղարկեց, որ այդ մշակներից վերցնի այգու պտղից: 3 Եւ մշակները նրան բռնելով՝ ծեծեցին ու ձեռնունայն արձակեցին: 4 Դարձեալ նա մի ուրիշ ծառայ ուղարկեց, եւ նրա էլ գլխին հարուածեցին եւ անարգելով արձակեցին: 5 Եւ վերստին մէկ ուրիշին ուղարկեց. սրան էլ՝ սպանեցին. եւ ուրիշ շատերին ուղարկեց. ոմանց ծեծում էին, ոմանց՝ սպանում: 6 Դեռեւս նա մի սիրելի որդի ունէր. վերջում նրան ուղարկեց նրանց մօտ՝ ասելով. "Թերեւս իմ այս որդուց ամաչեն":

7 Իսկ մշակները երբ տեսան, որ նա գալիս է, իրար ասացին. "Ժառանգը սա է, եկէք սպանենք սրան, եւ ժառանգութիւնը մերը թող լինի": 8 Եւ բռնելով նրան՝ սպանեցին ու հանեցին գցեցին այգուց դուրս: 9 Արդ, այգու տէրը ի՞նչ կ'անի. կը գայ եւ կը սպանի մշակներին ու այգին ուրիշների ձեռքը կը յանձնի: 10 Դուք չէ՞ք կարդացել Գրքի այն խօսքը, թէ՝ "Այն քարը, որ կառուցողները անարգեցին, նա՛ եղաւ անկիւնաքար": 11 Տիրոջ կողմից եղաւ այս, եւ մեր աչքին սքանչելի է»:

12 Եւ նրանք միջոց էին փնտռում՝ նրան ձերբակալելու, բայց ժողովրդից վախեցան, որովհետեւ հասկացան, թէ նա առակը իրենց մասին ասաց: Եւ թողեցին նրան ու գնացին:

ԿԱՅՍՐԻՆ ՏՐՈՒԵԼԻՔ ՏՈՒՐՔԸ
(Մատթ. 22. 15-22, Ղուկ. 20. 20-26)

13 Եւ նրա մօտ ուղարկեցին փարիսեցիներից եւ հերովդէսականներից ոմանց, որպէսզի նրան խօսքով որսան: 14 Եւ նրանք եկան ու նենգութեամբ հարց էին տալիս եւ ասում. «Վարդապե՛տ, գիտենք, որ դու ճշմարտասէր ես եւ չես քաշւում ոչ ոքից, որովհետեւ մարդկանց աչառութիւն չես անում, այլ ճշմարտութեամբ Աստծու ճանապարհն ես ուսուցանում. արդ, ասա՛ մեզ, օրինաւո՞ր է հարկ տալ կայսրին, թէ՞ ոչ. տա՞նք, թէ՞ չտանք»: 15 Յիսուս իմացաւ նրանց կեղծաւորութիւնը եւ ասաց. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորնե՛ր. ինձ մի դահեկա՛ն բերէք, որ տեսնեմ»: 16 Եւ նրանք բերեցին: Եւ նրանց ասաց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը»: Եւ նրանք ասացին նրան՝ կայսրինը: 17 Յիսուս պատասխան տուեց եւ ասաց նրանց. «Գնացէ՛ք, տուէ՛ք կայսրինը՝ կայսեր եւ Աստծունը՝ Աստծուն»: Եւ զարմացան նրա վրայ:

ՀԱՐՑ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 22. 23-33, Ղուկ. 20. 27-40)

18 Նրա մօտ եկան սադուկեցիները, որոնք ասում են, թէ՝ յարութիւն չկայ. հարց էին տալիս եւ ասում. 19 «Վարդապե՛տ, Մովսէսը մեզ համար գրել է. "Եթէ մէկի եղբայրը մեռնի եւ կին թողնի, բայց որդի չթողնի, թող նրա եղբայրը առնի նրա կնոջը եւ իր եղբօր համար զաւակ հաստատի": 20 Արդ, մեզ մօտ եօթը եղբայրներ կային. առաջինը կին առաւ եւ մեռաւ ու զաւակ չթողեց. 21 եւ երկրորդը նոյն կնոջն առաւ ու մեռաւ. եւ նա էլ զաւակ չթողեց: Նոյն ձեւով նաեւ երրորդը առաւ նոյն կնոջը: 22 Եւ եօթն էլ զաւակ չթողեցին. ամենքից յետոյ մեռաւ նաեւ կինը: 23 Արդ, յարութեան ժամանակ, երբ յարութիւն առնեն, նրանցից ո՞ւմ կինը կը լինի. քանի որ եօթն էլ նրան կին առան»: 24 Յիսուս պատասխան տուեց եւ ասաց նրանց. «Հէնց դրա համար չէ՞, որ մոլորուած էք. քանի որ չգիտէք Գրքերը եւ ոչ էլ՝ Աստծու զօրութիւնը. 25 որովհետեւ, երբ մեռելներից յարութիւն առնեն, ո՛չ տղամարդիկ կին կ'առնեն եւ ո՛չ էլ կանայք մարդու կը գնան, այլ կը լինեն հրեշտակների նման, որ երկնքում են: 26 Իսկ գալով մեռելներին, թէ յարութիւն են առնում, դուք չէ՞ք կարդացել Մովսէսի գրքում, մորենու դրուագում, թէ ինչպէս Աստուած ասաց նրան. "Ե՛ս եմ, - ասում է, - Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը": 27 Իսկ Աստուած մեռելների Աստուածը չէ, այլ՝ ողջերի. ուստի, դուք խիստ մոլորուած էք»:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ
(Մատթ. 22. 34-40, Ղուկ. 10. 25-28)

28 Օրէնսգէտներից մէկը, մօտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին. երբ նա տեսաւ, թէ Յիսուս նրանց պատասխանը լաւ տուեց, հարցրեց նրան եւ ասաց. «Ո՞ր պատուիրանն է առաջինը»: 29 Եւ Յիսուս ասաց նրան. «Ամենից առաջինն է՝ "Լսի՛ր, Իսրայէ՛լ, մեր Տէր Աստուածը միակ Տէրն է. 30 եւ դու պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով եւ քո ամբողջ զօրութեամբ". սա՛ է առաջին պատուիրանը: 31 Եւ երկրորդը նման է սրան. "Դու

պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պէս». չկայ ուրիշ պատուիրան աւելի մեծ, քան սրանք»: 32 Եւ օրէնսգէտը նրան ասաց. «Լաւ է, Վարդապե՛տ, ճշմարտութեամբ ասացիր, թէ Աստուած մէկ է, եւ բացի նրանից, ուրիշ Աստուած չկայ. 33 եւ նրան ամբողջ սրտով, ամբողջ զօրութեամբ, ամբողջ մտքով սիրելը, ինչպէս եւ ընկերոջն իր անձի պէս սիրելը առաւել է, քան ողջակէզները եւ զոհերը»: 34 Եւ Յիսուս տեսնելով, թէ նա իմաստութեամբ պատասխան տուեց, նրան ասաց. «Հեռու չես Աստծու արքայութիւնից»: Եւ այլեւս ոչ ոք չէր համարձակւում նրան բան հարցնել:

ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻ ԵՒ ՏԷՐ ԴԱՒԹԻ
(Մատթ. 22. 41-46, Ղուկ. 20. 41-44)

35 Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «Ինչպէ՞ս են ասում օրէնսգէտները, թէ Քրիստոս Դաւթի Որդի է, 36 մինչ Դաւիթն ինքը Սուրբ Հոգով ասում է. "Տէրն իմ Տիրոջն ասաց. Նստի՛ր իմ աջում, մինչեւ որ քո թշնամիներին քո ոտքերի համար պատուանդան դնեմ": 37 Արդ, եթէ Դաւիթն ինքն իսկ նրան Տէր է կոչում, ինչպէ՞ս նրա Որդին կը լինի»: Եւ շատ ժողովուրդ նրան լսում էր սիրով:

ՕՐԷՆՍԳԷՏՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
(Մատթ. 23. 1-36, Ղուկ. 20. 45-47)

38 Եւ սովորեցնելով՝ նա իր ուսուցման ընթացքում ասում էր. «Զգո՛յշ եղէք այդ օրէնսգէտներից, որ ուզում են աչքի զարնող զգեստներով ման գալ, հրապարակներում յարգանքի ողջոյններ որոնել, 39 ժողովարաններում՝ առաջին աթոռները եւ ընթրիքների ժամանակ՝ պատուոյ տեղերը: 40 Նրանք ուտում են այրիների տները, ցուցադրաբար երկարացնում են աղօթքները, որպէսզի աւելի խիստ դատաստան ընդունեն»:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ
(Ղուկ. 21. 1-4)

41 Յիսուս կանգնած էր գանձանակի դիմաց. դիտում էր, թէ ինչպէս ժողովուրդը պղինձ դրամ է գցում գանձանակի մէջ: Եւ շատ մեծահարուստներ շատ բան գցեցին: 42 Մի այրի կին եկաւ եւ երկու լումայ գցեց, որ մի գրոշ է: 43 Եւ Յիսուս իր մօտ կանչելով իր աշակերտներին՝ նրանց ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքաւոր այրին աւելի շատ գցեց, քան գանձանակի մէջ միւս բոլոր դրամ գցողները, 44 քանի որ ամէնքը իրենց աւելորդից գցեցին, իսկ նա, իր չքաւորութիւնից, գցեց ամէն ինչ, որ ունէր՝ իր ամբողջ ապրուստը»:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 24. 1-2, Ղուկ. 21. 5-6)

13 Երբ նա տաճարից դուրս էր գալիս, իր աշակերտներից մէկը նրան ասաց. «Վարդապե՛տ, տե՛ս ինչպիսի՛ քարեր են սրանք, եւ ինչպիսի՛ շինուածք»: 2 Յիսուս նրան պատասխան տուեց եւ ասաց. «Տեսնո՞ւմ ես այդ բոլոր շինութիւնները. ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դրանց քարը քարի վրայ չպիտի թողնուի, որ չքանդուի»:

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ
(Մատթ. 24. 3-14, Ղուկ. 21. 7-19)

3 Եւ մինչ նստած էր նա Ձիթենեաց լերան վրայ, տաճարի դիմաց, Պետրոսն ու Յակոբոսը եւ Յովհաննէսն ու Անդրէասը, առանձին, հարցրին նրան. 4 «Ասա՛ մեզ, ե՞րբ պիտի լինի այդ, եւ ի՞նչ կը լինի նշանը, երբ կատարուելու լինի այդ բոլորը»:

5 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Զգո՛յշ կացէք, ոչ ոք ձեզ չխաբի, 6 որովհետեւ շատեր պիտի գան իմ անունով եւ պիտի ասեն՝ ե՛ս եմ Քրիստոսը, եւ շատերին պիտի մոլորեցնեն: 7 Սակայն երբ լսէք պատերազմների ձայներ կամ պատերազմների լուրեր, չխռովուէք, որովհետեւ այդ պէտք է որ լինի, բայց դեռ

աշխարհի վախճանը չէ: 8 Ազգ ազգի դէմ պիտի ելնի եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, եւ տեղ-տեղ երկրաշարժներ պիտի լինեն, սով եւ համաճարակ ու խռովութիւններ. բայց այդ բոլորը սկիզբն է երկանց: 9 Եւ դեռ ձեզ էլ պիտի մատնեն ատեանների, եւ ժողովարանների մէջ պիտի տանջուէք. եւ ինձ համար կուսակալների ու թագաւորների առաջ պիտի կանգնէք՝ ի վկայութիւն նրանց: 10 Բայց նախ պէտք է, որ Աւետարանը քարոզուի բոլոր հեթանոսների մէջ: 11 Եւ երբ ձեզ տանեն յանձնելու, առաջուց հոգ մի՛ արէք եւ մի՛ մտածէք, թէ ինչ պիտի խօսէք, այլ, ինչ որ ձեզ տրուի այդ նոյն ժամին, ա՛յն խօսեցէք, որովհետեւ դո՛ւք չէք, որ պիտի խօսէք, այլ՝ Սուրբ Հոգին: 12 Եղբայրն իր եղբօրը մահուան պիտի մատնի, եւ հայրը՝ որդուն. եւ որդիները հայրերի դէմ պիտի ելնեն ու պիտի սպանեն նրանց: 13 Եւ իմ անուան համար բոլորից պիտի ատուէք. բայց ով որ մինչեւ վերջ համբերի, նա կը փրկուի»:

ՄԵԾ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 24. 15-28, Ղուկ. 21. 20-24)

14 «Եւ երբ տեսնէք սարսափելի պղծութիւնը՝ տեղ գտած այնտեղ, ուր չպէտք է լինէր (ով կարդում է, թող իմանայ), այն ժամանակ նրանք, որ Հրէաստանում են, լեռները թող փախչեն. 15 եւ ով տանիքի վրայ է, թող չիջնի եւ տուն չմտնի՝ այնտեղից բան վերցնելու. 16 եւ ով արտի մէջ է, թող ետ չդառնայ՝ իր զգեստները վերցնելու: 17 Բայց վա՜յ յղիներին եւ ստնտուներին այն օրերին: 18 Աղօթեցէ՛ք, որ ձմեռ ժամանակ չլինի դա: 19 Այդ օրերը պիտի լինեն օրեր այնպիսի նեղութիւնների, որոնց նմանը չի եղել երբեք արարչագործութեան սկզբից մինչեւ այժմ եւ չի էլ լինի: 20 Եւ եթէ Աստուած այդ օրերը իր ընտրեալների համար չկարճէր, ոչ մի մարդ չէր ազատուի. բայց նա իր ընտրեալների պատճառով, - որոնց ընտրեց, - կարճեց այդ օրերը: 21 Այն ժամանակ եթէ մէկը ձեզ ասի, թէ՝ "Ահա՛ այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ", չհաւատաք. 22 որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելնեն եւ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցոյց տան՝ մոլորեցնելու նպատակով, եթէ հնար լինի, նոյնիսկ ընտրեալներին: 23 Բայց դուք զգո՛յշ եղէք. ահա առաջուց ձեզ ամէն ինչ ասացի»:

ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ
(Մատթ. 24. 29-31, Ղուկ. 21. 25-28)

24 «Բայց այդ օրերին, այդ նեղութիւնից յետոյ, արեգակը պիտի խաւարի, եւ լուսինն իր լոյսը չպիտի տայ: 25 Եւ աստղերը երկնքից վայր պիտի թափուեն, եւ երկնքում զօրութիւնները պիտի շարժուեն: 26 Եւ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զօրութեամբ եւ բազում փառքով: 27 Եւ այն ժամանակ պիտի ուղարկի իր հրեշտակներին ու պիտի հաւաքի իր ընտրեալներին չորս կողմերից, երկրի ծագերից մինչեւ երկնքի ծագերը»:

ԹԶԵՆՈՒ ԴԱՍԸ
(Մատթ. 24. 32-35, Ղուկ. 21. 29-33)

28 «Բայց դուք այդ թզենո՛ւց սովորեցէք առակը. հէնց որ նրա ոստերը կակղեն, եւ նրա վրայ տերեւ դուրս գայ, իմանում էք, որ ամառը մօտ է. 29 նոյնպէս եւ դուք. երբ այս բոլորը կատարուած տեսնէք, իմացէ՛ք, որ նա մօտ է, դռների առջեւ:

30 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ չի անցնի այս սերունդը, մինչեւ որ այս բոլորը կատարուեն: 31 Երկինք ու երկիր կ՚անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի»:

ՁՍԳԱՍՈՒԱԾ ՕՐԸ ԵՒ ԺԱՄԸ
(Մատթ. 24. 36-44)

32 «Սակայն այդ օրուայ եւ ժամի մասին ոչ ոք չգիտէ. ո՛չ հրեշտակները երկնքում եւ ո՛չ էլ՝ Որդին, այլ միայն՝ Հայրը:

33 Զգո՛յշ եղէք, հսկեցէ՛ք ու

աղօթեցէ՛ք, քանի որ չգիտէք, թէ ե՛րբ
է ժամանակը. 34 ինչպէս հեռու երկիր
գնացած մի մարդ, որ կը թողնի իր
տունը եւ իր ծառաներին իշխանութիւն
կը տայ եւ իւրաքանչիւրին՝ իր գործը,
եւ դռնապանին կը պատուիրի, որ
արթուն լինի: 35 Արդ, արթո՛ւն կացէք,
որովհետեւ չգիտէք, թէ տանտէրը ե՛րբ
կը գայ՝ երեկոյեա՞ն, թէ՞ կէսգիշերին,
աքլորականչի՞ն, թէ՞ առաւօտեան դէմ:
36 Գուցէ յանկարծակի գալով՝ ձեզ քնի
մէջ գտնի: 37 Բայց ինչ որ ձեզ եմ
ասում, ամենքին եմ ասում՝ արթո՛ւն
կացէք»:

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԴԷՄ
(Մատթ. 26. 1-5, Ղուկ. 22. 1-2, Յովհ. 11. 45-53)

14 Եւ երկու օր յետոյ զատիկ էր ու
Բաղարջակերաց տօնը. քահանայա-
պետները եւ օրէնսգէտները հնար էին
որոնում, թէ ինչպէս նրան նեն-
գութեամբ բռնելով սպանեն: 2 Բայց
ասում էին. «Ո՛չ այս տօնին, որպէսզի
ժողովրդի մէջ խռովութիւն չլինի»:

ՕԾՈՒՄ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ
(Մատթ. 26. 6-13, Յովհ. 12. 1-8)

3 Եւ մինչ նա Բեթանիայում էր,
բորոտ Սիմոնի տանը սեղան նստած,
եկաւ մի կին, որ հետն ունէր նարդոսի
ազնիւ, մեծարժէք իւղի մի շիշ. եւ շիշը
կոտրելով՝ իւղը թափեց Յիսուսի
գլխին: 4 Աշակերտները զայրացան եւ
ասացին†. «Այդ իւղը ինչո՞ւ այսպէս
պիտի կորչէր. 5 կարելի էր այդ անու-
շահոտ իւղը վաճառել աւելի քան երեք
հարիւր դահեկանի եւ տալ աղքատ-
ներին»: Եւ խիստ զայրանում էին կնոջ
վրայ: 6 Եւ Յիսուս նրանց ասաց.
«Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նե-
ղութիւն տալիս, որովհետեւ նա ինձ
համար մի բարի գործ արեց: 7 Ամէն
ժամ աղքատներին ձեզ հետ ունէք եւ
երբ ուզենաք, կարող էք նրանց բարիք
անել: Բայց ինձ ամէն ժամ ձեզ հետ
չ՛ունէք: 8 Դա, ինչ որ կարող էր, արեց.
առաջուց խնկաւետեց իմ մարմինը ի
նշան պատանքուելու: 9 Ճշմարիտ եմ
ասում ձեզ, ուր էլ քարոզուի այս
Աւետարանը ամբողջ աշխարհում, ինչ
որ նա արեց, այդ եւս պիտի պատմուի
նրա յիշատակի համար»:

†Յուն. լաւ բն. ունեն Եւ կային ոմանք, որ սրտմտութեամբ իրենք իրենց մէջ ասում էին:

ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՏՆԵԼՈՒ ՅԻՍՈՒՍԻՆ
(Մատթ. 26. 14-16, Ղուկ. 22. 3-6)

10 Եւ Յուդա Իսկարիովտացին՝ Տաս-
ներկուսից մէկը, գնաց քահանայա-
պետների մօտ, որ Յիսուսին մատնի
նրանց: 11 Երբ նրանք լսեցին, ուրա-
խացան եւ խոստացան նրան դրամ
տալ. եւ նա առիթ էր փնտռում, թէ
ինչպէս յարմար ժամանակ մատնի
նրան:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ
(Մատթ. 26. 17-25, Ղուկ. 22, 7-14, 21-23, Յովհ. 13. 21-30)

12 Եւ Բաղարջակերաց տօնի առա-
ջին օրը, երբ զատկի գառն էին մոր-
թում, աշակերտները նրան ասացին.
«Ո՞ւր ես ուզում գնանք պատրաս-
տենք, որ զատկական ընթրիքն ուտես»:
13 Եւ նա աշակերտներից երկուսին ու-
ղարկեց ու նրանց ասաց. «Գնացէ՛ք
այն քաղաքը եւ երբ այն քաղաքը
մտնէք, կը պատահի ձեզ մի մարդ, որ
ուսին ջրի սափոր ունի. գնացէ՛ք նրա
յետեւից: 14 Եւ նա ո՛ր տունը որ մտնի,
տանտիրոջը կ՛ասէք. "Վարդապետն
ասում է՝ ո՞ւր է այն իջեւանը, ուր իմ
աշակերտների հետ զատկական ընթ-
րիքը պիտի ուտեմ": 15 Եւ նա ձեզ ցոյց
կը տայ զարդարուած մի վերնատուն.
այնտե՛ղ պատրաստեցէք մեզ հա-
մար»: 16 Եւ նրա աշակերտները գնա-
ցին պատրաստելու. եկան այն քաղաքը
եւ գտան՝ ինչպէս որ նա իրենց ասել
էր. ու զատկական ընթրիքը պատ-
րաստեցին:

17 Երբ երեկոյ եղաւ, նա եկաւ Տաս-
ներկուսի հետ միասին: 18 Եւ երբ սե-
ղան նստեցին ու դեռ ուտում էին,
Յիսուս ասաց. «Ճշմարիտ եմ ասում
ձեզ, որ ձեզանից մէկը մատնելու է
ինձ. նա, որ ինձ հետ իսկ ուտում է»:
19 Եւ նրանք սկսեցին տրտմել ու ասել

մէկը միւսի յետեւից՝ միթէ ե՞ս եմ. եւ
միւսը՝ թէ՝ միթէ ե՞ս եմ: 20 Նա
պատասխան տուեց եւ ասաց. «Տաս-
ներկուսիցդ մէկը, որ ձեռքը ինձ հետ
մտցրեց պնակի մէջ: 21 Ճիշտ է, մար-
դու Որդին կը գնայ այս աշխարհից,
ինչպէս որ նրա մասին գրուած է. բայց
վա՛յ այն մարդուն, որի ձեռքով
մարդու Որդին կը մատնուի. լաւ կը
լինէր նրան, եթէ այդ մարդը ծնուած
անգամ չլինէր»:

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
(Մատթ. 26. 26-30, Ղուկ. 22. 14-20, Ա Կորնթ. 11. 23-25)

22 Եւ մինչ դեռ ուտում էին, Յիսուս
հաց վերցնելով՝ օրհնեց եւ կտրեց,
տուեց նրանց ու ասաց. «Առէ՛ք, ա՛յս է
իմ մարմինը»: 23 Եւ բաժակը վերց-
նելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց
նրանց, եւ բոլորն էլ նրանից խմեցին:
24 Եւ Յիսուս ասաց նրանց. «Ա՛յս է
Նոր† Ուխտի իմ արիւնը, որ կը թափուի
շատերի համար: 25 Ճշմարիտ եմ ասում
ձեզ, որ այլեւս որթատունկի բերքից
չեմ խմելու մինչեւ այն օրը, երբ կը
խմեմ նոր գինին Աստծու արքա-
յութեան մէջ»:

26 Եւ գոհութիւն մատուցելուց յե-
տոյ ելան Ձիթենեաց լեռը:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 26. 31-35, Ղուկ. 22. 31-34, Յովհ. 13. 36-38)

27 Եւ Յիսուս նրանց ասաց. «Այս
գիշեր ամէնքդ գայթակղուելու էք իմ
պատճառով, որովհետեւ գրուած է.
"Պիտի հարուածեմ հովուին, եւ ոչ-
խարները պիտի ցրուեն": 28 Բայց իմ
յարութիւնից յետոյ ձեզնից առաջ
Գալիլիա պիտի գնամ»: 29 Պետրոսը
պատասխանեց եւ ասաց նրան. «Թէ-
կուզ բոլորն էլ գայթակղուեն, բայց ես
չեմ գայթակղուի»: 30 Եւ Յիսուս նրան
ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ
դու այս գիշեր իսկ, դեռ աքաղաղը
չկանչած‡, երեք անգամ պիտի ուրա-
նաս ինձ»: 31 Իսկ Պետրոսն առաւել
եւս պնդում էր ու ասում. «Թէ քեզ հետ
մեռնել իսկ հարկ լինի, քեզ չեմ ուրա-
նայ»: Եւ ամէնքն էլ նոյնն էին ասում:

†Յուն. լաւ բն. չունեն Նոր բառը:

‡Յուն. լաւ բն. ունեն երկու անգամ չկանչած:

ԱՂՕԹՔ ԳԵԹՍԵՄԱՆԻՈՒՄ
(Մատթ. 26. 36-46, Ղուկ. 22. 39-46)

32 Եկան այն տեղը, որը Գեթսեմանի
էր կոչւում: Եւ նա աշակերտներին
ասաց. «Նստեցէ՛ք այստեղ, մինչեւ ես
աղօթեմ»: 33 Եւ նա իր հետ վերցրեց
Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհան-
էսին եւ սկսեց տխրել ու տագնապել:
34 Այն ժամանակ նրանց ասաց.
«Տխուր է հոգիս մեռնելու աստիճան.
մնացէ՛ք այստեղ եւ արթո՛ւն կացէք»:
35 Եւ փոքր-ինչ առաջ գնալով՝ երեսի
վրայ ընկաւ գետին. եւ աղօթում էր,
որ, եթէ կարելի է, այդ ժամը իրենից
հեռանայ: 36 Եւ ասում էր. «Աբբա՛,
Հա՛յր, ամէն ինչ քեզ կարելի է. այս
բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ
թէ ինչպէս ե՛ս եմ կամենում, այլ՝ ինչ-
պէս դո՛ւ ես կամենում»: 37 Եւ Յիսուս
եկաւ ու նրանց քնած գտաւ. եւ Պետ-
րոսին ասաց. «Սիմո՛ն, ննջո՞ւմ ես.
չկարողացա՞ր մէկ ժամ արթուն մնալ:
38 Արթո՛ւն կացէք եւ աղօթեցէ՛ք, որ-
պէսզի փորձութեան մէջ չընկնէք:
Հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»:
39 Եւ նորից գնաց, աղօթքի կանգնեց
ու նոյն բաներն ասաց: 40 Կրկին ան-
գամ դարձաւ այնտեղ եւ նրանց քնի
մէջ գտաւ. որովհետեւ նրանց աչքերը
ծանրացել էին, եւ չէին իմանում, թէ
ինչ պատասխան տան նրան: 41 Եր-
րորդ անգամ եկաւ եւ նրանց ասաց.
«Քնեցէ՛ք այսուհետեւ եւ հանգստա-
ցէ՛ք, քանի որ վախճանը հասել է†.
եկաւ ժամը, եւ ահա մարդու Որդին
մատնւում է մեղաւորների ձեռքը:
42 Օ՛ն, վե՛ր կացէք գնանք, որովհետեւ
ահա մօտեցաւ նա, ով ինձ մատնելու
է»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԵԼԸ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵԼԸ
(Մատթ. 26. 47-56, Ղուկ. 22. 47-53, Յովհ. 18. 3-12)

43 Եւ մինչ նա դեռ խօսում էր այս
բաները, եկաւ Յուդա Իսկարիովտացին՝

†Լաւագոյն յուն. բն. Բանի որ վախճանը հասել է-ի փոխարէն ունեն բաւական է. հասել է ժամը:

Տասներկուսից մէկը, եւ իր հետ՝ սրերով, մահակներով զինուած ամբոխ՝ ուղարկուած քահանայապետների, օրէնսգէտների ու ծերերի կողմից: 44 Մատնիչը նրանց նշան էր տուել ասելով՝ ում հետ ես համբուրուեմ, նա՛ է, բռնեցէ՛ք նրան եւ տարէ՛ք զգուշութեամբ: 45 Եւ մօտենալով նրան՝ իսկոյն ասաց. «Ռաբբի՛, Ռաբբի՛». եւ համբուրեց նրան: 46 Եւ նրանք ձեռք դրեցին նրա վրայ ու բռնեցին: 47 Ապա նրա շուրջը գտնուողներից մէկը սուրը քաշեց եւ զարկեց քահանայապետի ծառային ու նրա ականջը կտրեց: 48 Յիսուս դարձաւ եւ ասաց նրանց. «Սրերով եւ մահակներով դուրս էք եկել ինձ բռնելու որպէս աւազակի՞: 49 Ես միշտ ձեզ մօտ էի եւ ուսուցանում էի տաճարում. եւ ինձ չբռնեցիք. բայց այս եղաւ, որպէսզի մարգարէների Գրուածքները կատարուեն»: 50 Այն ժամանակ աշակերտները բոլորն էլ լքեցին նրան եւ փախան: 51 Եւ մի երիտասարդ գնում էր նրա յետեւից՝ իր մերկ մարմնի վրայ մի սաւան գցած: Երիտասարդները նրան բռնեցին, 52 եւ նա թողնելով հագի կտորը՝ մերկ փախաւ նրանցից:

ՅԻՍՈՒՍ ԿԱՅԻԱՓԱՅԻ ԵՒ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ
(Մատթ. 26. 57-68, Ղուկ. 22. 54-55, 63-71, Յովհ. 18. 13-14, 19-24)

53 Եւ Յիսուսին տարան Կայիափա քահանայապետի մօտ. եւ նրա հետ հաւաքուած էին բոլոր քահանայապետները, օրէնսգէտներն ու ծերերը: 54 Իսկ Պետրոսը հեռուից նրա յետեւից գնաց մինչեւ ներս, քահանայապետի գաւիթը: Եւ նստած էր սպասաւորների մօտ ու տաքանում էր կրակի բոցի առջեւ: 55 Իսկ քահանայապետներն ու ամբողջ ատեանը մի որեւէ վկայութիւն էին փնտռում Յիսուսի դէմ, որպէսզի նրան սպանեն, բայց չէին գտնում. 56 քանի որ նրա դէմ շատեր սուտ վկայութիւն էին տալիս, բայց վկայութիւնները իրար նման չէին: 57 Ոմանք վեր կենալով՝ սուտ էին վկայում նրա դէմ ու ասում. 58 «Մենք լսեցինք դրանից, երբ ասում էր. "Ես կը քանդեմ այս ձեռակերտ տաճարը եւ երեք օրում կը շինեմ մէկ ուրիշը՝ անձեռակերտ"»: 59 Բայց եւ այնպէս նրանց վկայութիւնը նոյնանման չէր: 60 Ապա քահանայապետը կանգնելով մէջտեղում՝ Յիսուսին հարց տուեց ու ասաց. «Ոչինչ չե՞ս պատասխանում. այդ ինչե՞ր են վկայում դրանք քո դէմ»: 61 Եւ նա միայն լուռ էր մնում ու պատասխան չէր տալիս: Քահանայապետը կրկին անգամ հարցրեց նրան ու ասաց. «Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնեալ Աստծու Որդին»: 62 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Դու ասացիր, թէ ես եմ. բայց պիտի տեսնէք մարդու Որդուն՝ ամենազօր Աստծու աջ կողմում նստած եւ երկնքի ամպերի վրայով եկած»: 63 Եւ քահանայապետը իսկոյն պատռեց իր պատմուճանը եւ ասաց. «Էլ ի՞նչ պէտք են մեզ վկաներ: 64 Ահա ամէնքդ դրա բերանից լսեցիք հայհոյութիւնը. ձեզ ինչպէ՞ս է թւում ...»: Եւ ամէնքը դատապարտեցին նրան, թէ մահապարտ է: 65 Եւ ոմանք սկսեցին թքել նրա երեսին, շորով գլուխը ծածկել, բռունցքով խփել ու ասել. «Մարգարէացի՛ր մեզ, Քրիստո՛սդ, այն ո՞վ է, որ քեզ խփեց»†: Եւ սպասաւորները ապտակում էին նրան:

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ
(Մատթ. 26. 69-75, Ղուկ. 22. 56-62, Յովհ. 18. 15-18, 25-27)

66 Եւ մինչ Պետրոսը դեռ ներքեւում, գաւթում էր, քահանայապետի մի աղախինը եկաւ եւ տեսաւ նրան տաքանալիս: 67 Նայեց նրան ու ասաց. «Դու էլ Յիսուս Նազովրեցու հետ էիր»: 68 Նա ուրացաւ եւ ասաց. «Չեմ ճանաչում նրան եւ չգիտեմ՝ ինչ ես ասում դու»: Եւ երբ նա դրսի գաւիթը ելաւ, աքաղաղը կանչեց: 69 Աղախինը նորից տեսաւ նրան եւ սկսեց իր շուրջը գտնուողներին ասել. «Սա էլ նրանցից է»: 70 Եւ Պետրոսը դարձեալ ուրացաւ: Փոքր-ինչ յետոյ, նորից, նրանք, որ շուրջը կանգնել էին, ասացին Պետրոսին. «Իրօք, դու էլ նրանցից ես, քանի որ գալիլիացի ես, եւ քո խօսուածքն էլ նման է»: 71 Եւ նա սկսեց նզովք կարդալ, երդուել եւ ասել. «Չեմ ճանաչում այն մարդուն, որի մասին դուք խօսում էք»: 72 Եւ հէնց նոյն ժամին աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Եւ Պետրոսը յիշեց այն խօսքը, որ Յիսուս ասել էր իրեն, թէ՝ «Աքաղաղը դեռ երկու անգամ չկանչած՝ դու երեք անգամ ինձ պիտի ուրանաս». եւ սկսեց լալ:

†Յուն. լաւ. բն. այս նախադասութեան փոխարէն ունեն միայն մարգարէացիր բառը:

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ
(Մատթ. 27. 1-2, 11-26, Ղուկ. 23. 1-5, 13-25, Յովհ. 18. 28-38, 19. 1ա-16)

15 Եւ իսկոյն, վաղ առաւօտեան, ծերերի եւ օրէնսգէտների հետ միասին, քահանայապետները եւ ամբողջ ատեանը խորհուրդ անելով՝ կապեցին Յիսուսին եւ տարան յանձնեցին Պիղատոսին: 2 Պիղատոսը հարցրեց նրան եւ ասաց. «Դո՞ւ ես հրեաների թագաւորը»: Յիսուս պատասխան տուեց նրան եւ ասաց. «Դու ասում ես»: 3 Եւ քահանայապետները նրան շատ էին ամբաստանում, բայց նա ոչինչ չէր պատասխանում: 4 Իսկ Պիղատոսը դարձեալ հարցրեց նրան. «Ոչ մի պատասխան չե՞ս տալիս. տե՛ս, ինչքա՜ն են քեզ ամբաստանում»: 5 Եւ Յիսուս, այնուհետեւ, էլ ոչինչ չպատասխանեց, այնպէս որ Պիղատոսը շատ զարմացաւ:

6 Սակայն տօնի առիթով Պիղատոսը նրանց համար արձակում էր մի կալանաւոր, ում որ նրանք ուզում էին: 7 Եւ Բարաբբա անունով մէկը կար՝ բանտարկուած այն խռովարարների հետ, որոնք խռովութեան ժամանակ մի մարդ էին սպանել: 8 Ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել† եւ պահանջել, որ, ինչպէս սովորութիւն էր անել, Բարաբբայի՛ն արձակի: 9 Պիղատոսը պատասխանեց եւ ասաց նրանց. «Ուզո՞ւմ էք, որ հրեաների արքային արձակեմ ձեզ համար». 10 քանի որ նա գիտէր, թէ նախանձի՛ց մատնեցին նրան քահանայապետները, 11 որոնք եւ ամբոխին համոզեցին, որ Բարաբբայի՛ն արձակի իրենց համար: 12 Պիղատոսը դարձեալ խօսք առաւ եւ ասաց նրանց. «Իսկ ի՞նչ էք ուզում, որ անեմ հրեաների արքային»: 13 Եւ նրանք, քահանայապետներից դրդուած, դարձեալ աղաղակեցին. «Խա՛չը հանիր դրան»: 14 Պիղատոսը նրանց ասաց. «Ի՞նչ չար բան է արել նա»: Եւ նրանք առաւել եւս աղաղակում էին ու ասում. «Խա՛չը հանիր դրան»: 15 Իսկ Պիղատոսը, որովհետեւ ուզեց ամբոխին գոհացնել, նրանց համար Բարաբբային արձակեց: Իսկ Յիսուսին ծեծել տալով՝ նրանց ձեռքը յանձնեց, որպէսզի խաչը հանուի:

†Լաւագոյն յուն. բն. ունեն Ամբոխը ոտի կանգնեց եւ սկսեց ...

ՓՇԷ ՊՍԱԿ
(Մատթ. 27. 27-31, Յովհ. 19. 2-3)

16 Եւ զինուորները նրան ներսի գաւիթը տարան, ուր պալատի բակն էր. մէկտեղ կանչեցին ամբողջ գունդը, 17 եւ նրան հագցրին կարմիր քղամիդ եւ ծիրանի ու նրա գլխին փշերից պատրաստուած պսակ դրեցին 18 եւ սկսեցին նրան ողջոյն տալ ու ասել. «Ողջո՛յն քեզ, հրեաների թագաւո՛րդ»: 19 Եւ եղէգով հարուածում էին նրա գլխին, թքում էին երեսին ու ծնկի գալով՝ երկրպագում էին նրան: 20 Եւ նրան ծաղրուծանակի ենթարկելուց յետոյ, քղամիդն ու ծիրանին հանեցին եւ նրան իր զգեստները հագցրին ու դուրս տարան, որ խաչը հանեն նրան:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉՈՒԵԼԸ
(Մատթ. 27. 32-44, Ղուկ. 23. 26-43, Յովհ. 19. 17-27)

21 Եւ ստիպեցին Սիմոն Կիւրենացուն՝ Ալեքսանդրի եւ Ռուփոսի հօրը, որը ագարակից էր գալիս ու այդ տեղով էր անցնում, որ Յիսուսի խաչափայտը կրի: 22 Եւ նրան տարան Գողգոթա, մի տեղ, որ թարգմանւում է կառափնատեղի: 23 Զմուռսով խառնուած գինի տուին նրան, բայց նա չվերցրեց:

24 Եւ նրան խաչը հանեցին: Եւ նրա հագուստները բաժանեցին՝ դրանց վրայ վիճակ գցելով, թէ ով ի՛նչ պիտի վերցնի: 25 Առաւօտեան ժամը ինն էր,

երբ նրան խաչեցին: 26 Եւ կար նրա դատապարտութեան մասին գրութիւն՝
գրուած այսպէս. «Հրեաների թագաւորն է»: 27 Եւ նրա հետ խաչեցին
երկու աւազակներ, մէկը՝ նրա աջում եւ միւսը՝ ձախում: 28† Եւ կատարուեց
գրուածը, թէ՝ «Անօրէնների հետ դասուեց»: 29 Եւ ովքեր անցնում էին,
հայհոյում էին նրան, շարժում իրենց գլուխները եւ ասում. «Վա՜հ, որ
քանդում էիր տաճարը եւ երեք օրում չինում, 30 ազատի՛ր ինքդ քեզ եւ իջի՛ր
այդ խաչից»: 31 Նոյնպէս եւ քահանայապետները, իրենք իրենց մէջ,
օրէնսգէտների հետ միասին, ծաղր էին անում ու ասում. «Ուրիշներին ազատեց,
ինքն իրեն չի կարողանում ազատել: 32 Այդ Քրիստոսը՝ Իսրայէլի այդ
թագաւորը, թող այժմ իջնի խաչից, որպէսզի տեսնենք եւ հաւատանք
դրան»: Եւ նրա հետ խաչուածներն էլ նախատում էին նրան:

ՅԻՍՈՒԻՍԻ ՄԱՀԸ
(Մատթ. 27. 45-56, Ղուկ. 23. 44-49, Յովհ. 19. 28-30)

33 Երբ կէսօր եղաւ, խաւար պատեց
ամբողջ երկիրը, մինչեւ ժամը երեքը:
34 Եւ ժամը երեքին Յիսուս բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Էլի՜, Էլի՜, լա՞մա սաբաքթանի», որ թարգմանւում է՝ Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ
իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ: 35 Եւ նրանցից ոմանք, որ նրա շուրջն էին
կանգնել, երբ լսեցին այդ, ասացին.
«Եղիային է կանչում»: 36 Եւ մէկը
առաջ վազելով՝ սպունգը թաթախեց
քացախի մէջ, անցկացրեց եղէգի
ծայրին, տուեց նրան, որ խմի, ու
ասաց. «Թողէ՛ք տեսնենք, արդեօք
Եղիան կը գա՞յ նրան իջեցնելու»:
37 Եւ Յիսուս բարձր ձայն արձակեց
ու հոգին աւանդեց: 38 Եւ տաճարի
վարագոյրը վերեւից մինչեւ ներքեւ
երկուսի պատռուեց: 39 Եւ այնտեղ
կանգնած հարիւրապետը տեսնելով,
թէ ինչպէս նա աղաղակեց եւ հոգին
աւանդեց, ասաց. «Իրօք այս մարդը
Աստծու Որդի էր»: 40 Կային եւ
կանայք, որոնք դիտում էին հեռուից:
Նրանց մէջ էին Մարիամ Մագդաղենացին, Կրտսեր Յակոբոսի եւ Յովսէի
մայրը՝ Մարիամը, ինչպէս եւ Սաղոմէն,
41 որոնք, երբ Յիսուս Գալիլիայում էր,
նրա յետեւից էին գնում եւ ծառայում
նրան. կային նաեւ շատ այլ կանայք,
որոնք նրա հետ Երուսաղէմ էին ելել:

ՅԻՍՈՒԻՍԻ ԹԱՂՈՒՄԸ
(Մատթ. 27. 57-61, Ղուկ. 23. 50-56, Յովհ. 19. 38-42)

42 Եւ երբ երեկոյ եղաւ, – քանի որ
ուրբաթ էր, եւ շաբաթամուտն էր
սկսւում, – 43 արիմաթիացի Յովսէփը,
որ մի պարկեշտ մարդ էր ու հրեաների
ժողովի անդամ եւ որ ինքն էլ Աստծու
արքայութեանն էր սպասում, համարձակուեց մտնել Պիղատոսի մօտ եւ
ուզեց Յիսուսի մարմինը: 44 Եւ Պիղատոսը զարմացաւ, որ Յիսուս այդչափ
շուտ էր մեռել. եւ իր մօտ կանչելով
հարիւրապետին՝ հարցրեց նրան ու
ասաց. «Իրօք այդչափ շո՞ւտ մեռաւ»:
45 Երբ այդ ստուգեց հարիւրապետից,
մարմինը շնորհեց Յովսէփին: 46 Եւ
Յովսէփը կտաւ գնեց ու նրան իջեցնելով՝ պատեց այդ կտաւով ու դրեց մի
գերեզմանի մէջ, որ փորուած էր ժայռի
մէջ: Եւ մի քար գլորեց գերեզմանի
դռան առաջ: 47 Իսկ Մարիամ Մագդաղենացին եւ Յակոբոսի ու Յովսէի
մայր Մարիամը տեսան այն տեղը, ուր
նա դրուեց:

ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 28. 1-8, Ղուկ. 24. 1-12, Յովհ. 20. 1-10)

16 Եւ երբ շաբաթն անցաւ, Մարիամ
Մագդաղենացին, Յակոբոսի մայր
Մարիամը եւ Սաղոմէն գնացին խնկի
պատրաստութիւն տեսան, որպէսզի
գան եւ օծեն նրա մարմինը: 2 Եւ կիրակի օրը, առաւօտեան, արեւածագին
եկան գերեզման: 3 Եւ ասում էին
միմեանց. «Քարը գերեզմանի դռնից
մեզ համար ո՞վ պիտի գլորի»: 4 Եւ
նայեցին ու տեսան, որ գերեզմանից
քարը գլորուած էր. եւ այն շատ մեծ
էր: 5 Եւ ներս, գերեզման մտնելով՝
տեսան մի երիտասարդի, որ նստած էր

†Ցուցարէնը չունի այս համարը:

աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած. եւ զարհուրեցին: 6 Եւ նա ասաց
նրանց. «Մի՛ վախեցէք, դուք Յիսուսին
էք փնտռում՝ խաչուած Նազովրեցուն.
նա յարութիւն առաւ, այստեղ չէ:
Ահաւասիկ այն տեղը, ուր նրան դրել
էին: 7 Բայց գնացէք ասացէ՛ք նրա
աշակերտներին եւ Պետրոսին, թէ՝ ահա
նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա.
այնտե՛ղ կը տեսնէք նրան, ինչպէս ձեզ
ասել էր»: 8 Եւ երբ այս լսեցին, ելան ու
փախան գերեզմանից, քանի որ սարսափահար էին եղել. եւ ոչ ոքի բան
չասացին, որովհետեւ վախենում էին:

ՅԱՐՈՒՑԵԱԼ ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ
(Մատթ. 28. 9-10, Ղուկ. 24. 13-35, Յովհ. 20. 11-18)

9 Կիրակի առաւօտեան յարութիւն
առած լինելով՝ Յիսուս նախ երեւաց
Մարիամ Մագդաղենացուն, որից եօթը
դեւ էր հանել: 10 Եւ սա գնաց ու
պատմեց նրանց, որ Յիսուսի հետ էին
եւ դեռեւս սգում ու լաց էին լինում:
11 Երբ նրանք լսեցին, թէ նա կենդանի
է եւ երեւացել է Մարիամին, չհաւատացին:
12 Յետոյ Յիսուս այլ կերպարանքով
երեւաց նրանց, որոնք հանդ էին
գնում: 13 Սրանք էլ եկան ու պատմեցին ուրիշների. բայց նրանք էլ չհաւատացին:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ
(Մատթ. 28. 16-20, Ղուկ. 24. 36-49,
Յովհ. 20. 19-23, Գործք 1. 6-8)

14 Յետոյ, մինչ Տասնմէկը սեղան
էին նստել, Յիսուս նրանց երեւաց եւ
յանդիմանեց նրանց իրենց անհաւատութեան եւ խստասրտութեան համար, որովհետեւ չէին հաւատացել
նրանց, որոնց ինքը երեւացել էր՝
մեռելներից յարութիւն առած:
15 Եւ նրանց ասաց. «Գնացէ՛ք
ամբողջ աշխարհով մէկ եւ քարոզեցէ՛ք
Աւետարանը բոլոր մարդկանց: 16 Ով
հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի,
եւ ով չհաւատայ, պիտի դատապարտուի: 17 Սրանք են նշանները, որոնք
պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անունով դեւեր պիտի
հանեն, լեզուներ պիտի խօսեն, 18 իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն, եւ
եթէ մահացու թոյն խմեն, դա նրանց
չպիտի վնասի. հիւանդների վրայ ձեռք
պիտի դնեն եւ բժշկեն»:

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ
(Ղուկ. 24. 50-53, Գործք 1. 9-11)

19 Եւ ինքը Տէր Յիսուս, նրանց հետ
խօսելուց յետոյ, դէպի երկինք վերացաւ եւ նստեց Հօր աջ կողմը: 20 Իսկ
նրանք ելան ու քարոզեցին Աւետարանը ամբողջ աշխարհում՝ Տիրոջ գործակցութեամբ. եւ իրենց ուղեկցող բոլոր նշաններով հաստատում էին
Խօսքը:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Ներածութիւն

Մատթէոսի նման Ղուկասը եւս իր աւետարանը ներկայացնում է ըստ այն ընդհանուր ծրագրի, որ կազմել էր Մարկոսը իր աւետարանի համար: Այսպէս՝

- Յովհաննէս Մկրտչի միջնորդութիւնը որպէս նախակարապետ Յիսուսի. սրան յաջորդում է Յիսուսի մկրտութիւնն ու փորձութիւնը:
- Յիսուսի հանրային գործունէութիւնը Գալիլիայում, որտեղ նա քարոզում է եւ բժշկում հիւանդներին:
- Յիսուսի ճանապարհորդութիւնը Գալիլիայից Երուսաղէմ: Սակայն Ղուկասն այստեղ բազմաթիւ լրացումներ է անում Մարկոսի պատմութեան վրայ, ինչպէս, օրինակ, բարի սամարացու, անմիտ մեծահարուստի, անառակ որդու առակները եւ այլն, ինչպէս նաեւ մի շարք պատմութիւններ, ինչպիսին է Յիսուսի այցելութիւնը Մարթային եւ Մարիամին:
- Յիսուսի գործունէութիւնը Երուսաղէմում, որը վերջանում է նրա չարչարանքով ու մահով:
- Գրքի աւարտական մասում մասնաւորապէս շարադրուած է, թէ ինչպէս յարուցեալ Յիսուս Էմմաուսում երեւում է աշակերտներին, նախքան իր համբարձումը:

Սակայն, ի տարբերութիւն Մարկոսի, մի կարճ նախաբանից յետոյ Ղուկասն իր գիրքն սկսում է Յիսուսի եւ Յովհաննէս Մկրտչի ծննդին նուիրուած մի նախաշաւիղով: Այս մասում են զետեղուած Յիսուսի ծննդեան աւետման, Յովհաննէս Մկրտչի ծննդի, Յիսուսի ծննդի եւ հովիւների այցի պատմութիւնները, ինչպէս նաեւ Մարիամի, Զաքարիայի, Սիմէոն ծերունու օրհներգութիւնները: Նախաշաւիղում Ղուկասն արդէն արտայայտում է այն, ինչ էական մասն է կազմում իր վկայութեան. այն է՝ Յիսուսի աստուածային ծագումն ու նրա իսրայէլական խոր արմատները եւ այն մեծ անկիւնադարձը, որ նրա գալուստն է ներկայացնում ամբողջ մարդկութեան համար: Ղուկասն այստեղ ցոյց է տալիս նաեւ այն առանձնայատուկ սէրը, որ Աստուած տածում է փոքրերի, խոնարհների, անտեսուածների, կանանց, աղքատների, օտարների նկատմամբ:

Չորս աւետարանների մէջ Ղուկասի աւետարանը ամենից աւելի յունական դրոշմ ունի: Նկատի ունենալով այն ընթերցողների շրջանակը, որոնք բաւարար չափով տեղեակ չեն իսրայէլական առանձնայատուկ աւանդոյթներին, նա աշխատում է, որ իր խօսքը լինի յստակ, եւ ձգտում է բացատրել այն ամէնը, ինչ կարող է տարօրինակ թուալ նրանց: Այսօրուայ մարդու համար Ղուկասի աւետարանը, անտարակոյս, ամենից աւելի մատչելի աւետարանն է:

ՆԱԽԱԲԱՆ

1 Քանի որ շատերը ձեռնարկեցին
շարադրել մեզանում կատարուած
դէպքերի պատմութիւնը, 2 ինչպէս մեզ
աւանդեցին նրանք, որ սկզբից Խօսքի
ականատեսներն ու սպասաւորները
եղան, 3 ես էլ, որ սկզբից ստուգու-
թեամբ հետամուտ էի եղել ամէն բանի,
կամեցայ կարգով քեզ գրել, ո՛վ գե-
րազանցդ Թէոփիլէ, 4 որպէսզի ճա-
նաչես ճշմարտութիւնն այն խօսքերի,
որոնց աշակերտեցիր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՒԵՏՈՒՄԸ

5 Հրէաստանի Հերովդէս թագաւորի
օրով, Աբիայի քահանայական ընտա-
նիքից Զաքարիա անունով մի քա-
հանայ կար, որի կինը Ահարոնի
դստերից էր. նրա անունը Եղիսաբեթ
էր: 6 Եւ երկուսն էլ Աստծու առաջ
արդար էին ու անարատ կերպով ըն-
թանում էին Տիրոջ բոլոր պատուի-
րանների եւ օրէնքների ճանապարհով:
7 Նրանք որդի չունէին, որովհետեւ
Եղիսաբեթը ամուլ էր, եւ երկուսն էլ
իրենց առաջացած տարիքում էին:
8 Եւ մինչ Զաքարիան Աստծու առ-
ջեւ իր քահանայական պաշտօնն էր
կատարում, իր կարգի օրերը հասած
լինելով՝ 9 ըստ քահանայութեան
օրէնքի նրան վիճակուեց մտնել Տիրոջ
տաճարը եւ խնկարկել: 10 Եւ խնկար-
կութեան ժամին ժողովրդի ամբողջ
բազմութիւնը դրսում աղօթքի էր
կանգնած: 11 Եւ Տիրոջ հրեշտակը
երեւաց նրան՝ խնկերի սեղանի աջ
կողմում կանգնած: 12 Երբ Զաքարիան
նրան տեսաւ, խռովուեց, եւ վախ
ընկաւ նրա մէջ: 13 Տիրոջ հրեշտակը
նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքա-
րիա՛, որովհետեւ քո աղօթքը լսելի
եղաւ. քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կը
ծնի քեզ, եւ նրա անունը Յովհաննէս
կը դնես: 14 Նա քեզ համար
ուրախութիւն եւ ցնծութիւն կը լինի,
եւ շատերը կ'ուրախանան իր ծննդով,
15 որովհետեւ նա Տիրոջ առաջ մեծ կը
լինի, գինի եւ օղի չի խմի եւ մօր
որովայնից սկսած Սուրբ Հոգով կը
լցուի 16 եւ Իսրայէլի որդիներից շա-
տերին կը դարձնի դէպի իրենց Տէր
Աստուածը: 17 Նա Եղիայի հոգով եւ
զօրութեամբ պիտի գնայ նրա առաջից,
որպէսզի հայրերի սրտերը որդիներին
դարձնի ու անհնազանդներին՝ ար-
դարների իմաստութեանը՝ Տիրոջ հա-
մար պատրաստ մի ժողովուրդ կազմե-
լու»: 18 Եւ Զաքարիան ասաց հրեշ-
տակին. «Ես ի՞նչ կերպ կ'իմանամ այդ,
քանի որ ես ծեր եմ, եւ կինս էլ առա-
ջացած տարիքում է»: 19 Հրեշտակը
նրան պատասխանեց եւ ասաց. «Ես
Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստծու
առաջ. ես ուղարկուեցի խօսելու քեզ
հետ եւ այդ բանը քեզ աւետելու: 20 Եւ
ահա՛, դու համր կը լինես եւ չես
կարողանայ խօսել մինչեւ այն օրը, երբ
այդ կատարուի, քանի որ դու չհաւա-
տացիր իմ խօսքերին, որ կ'իրականան
իրենց ժամանակին»:
21 Իսկ ժողովուրդը սպասում էր
Զաքարիային. զարմանում էին, որ
տաճարում նա ուշանում է: 22 Եւ երբ
նա դուրս եկաւ, չէր կարողանում խօսել
նրանց հետ: Եւ նրանք իմացան, թէ
տաճարում տեսիլք էր տեսել. եւ նա
նշանացի էր խօսում նրանց հետ ու
մնում էր պապանձուած: 23 Եւ երբ
պաշտամունքի իր օրերը լրացան, գնաց
իր տունը: 24 Այդ օրերից յետոյ նրա
կինը՝ Եղիսաբեթը յղիացաւ: Հինգ
ամիս նա թաքցնում էր ինքն իրեն եւ
ասում. 25 «Այս ի՛նչ բան արեց Տէրը
ինձ իմ այս օրերին, երբ նայեց ինձ
վրայ՝ վերացնելով իմ նախատինքը
մարդկանց միջից»:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՒԵՏՈՒՄԸ

26 Վեցերորդ ամսին Գաբրիէլ հրեշ-
տակը Աստծու կողմից ուղարկուեց
Գալիլիայի մի քաղաքը, որի անունը
Նազարէթ էր, 27 մի կոյսի մօտ, որ
նշանուած էր Յովսէփ անունով մի
մարդու հետ՝ Դաւթի տնից: Եւ այդ
կոյսի անունը Մարիամ էր: 28 Եւ
հրեշտակը, գալով նրա մօտ, ասաց.
«Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը
քեզ հետ է»: 29 Իսկ նա այս խօսքերի
վրայ խռովուեց եւ մտքում խորհում

էր, թէ ինչ բան էր այս ողջոյնը: 30 Եւ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար: 31 Եւ ահա՛ դու կը յղիանաս եւ կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես: 32 Նա մեծ կը լինի եւ Բարձրեալի որդի կը կոչուի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա Հօր՝ Դաւթի աթոռը, եւ նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, 33 ու նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ»: 34 Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպէ՞ս այդ կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: 35 Հրեշտակը պատասխանեց եւ նրան ասաց. «Սուրբ Հոգին կը գայ քո վրայ, եւ Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետեւ նա, որ քեզնից է ծնուելու, սուրբ է եւ Աստծու որդի կը կոչուի: 36 Եւ ահա քո ազգական Եղիսաբեթը. նա եւս յղի է իր ծերութեան մէջ, եւ այս՝ յղիութեան վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչուած. 37 որովհետեւ Աստծու համար անկարելի բան չկայ»: 38 Եւ Մարիամն ասաց. «Ահաւասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խօսքի համաձայն լինի ինձ»: Եւ հրեշտակը հեռացաւ նրանից:

ՄԱՐԻԱՄԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

39 Այդ օրերին Մարիամը վեր կացաւ եւ շտապով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներից մէկը, 40 մտաւ Զաքարիայի տունը ու Եղիսաբեթին ողջոյն տուեց: 41 Եւ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջոյնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, եւ Եղիսաբեթը լցուեց Սուրբ Հոգով 42 եւ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնեա՛լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՛լ է քո որովայնի պտուղը: 43 Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ. 44 որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում: 45 Եւ երանի՛ նրան, որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմից իրեն ասուածները կը կատարուեն»:

ՄԱՐԻԱՄԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

46 Եւ Մարիամն ասաց.
«Իմ անձը կը փառաւորի Տիրոջը,
47 եւ իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստուծով,
48 որովհետեւ նա իր հայեացքը դարձրեց իր աղախնի
խոնարհութեան վրայ:
Եւ ահա, այսուհետեւ բոլոր սերունդները ինձ երանի կը տան,
49 որովհետեւ ամենազօր Աստուած մեծամեծ գործեր արեց
ինձ համար,
եւ նրա անունը սուրբ է:
50 Նրա ողորմութիւնը սերնդից սերունդ իր երկիւղածների
վրայ է:
51 Նա իր բազուկով զօրութիւն ի գործ դրեց,
ցրեց ամբարտաւաններին իրենց սրտի խորհուրդներով.
52 հզօրներին տապալեց իրենց աթոռներից
եւ բարձրացրեց խոնարհներին:
53 Քաղցածներին լիացրեց բարիքներով
եւ մեծահարուստներին ձեռնունայն արձակեց:
54 Նա պաշտպան կանգնեց իր ծառայի՝ Իսրայէլին,
յիշելով իր ողորմութիւնները,
55 ինչպէս ասել էր մեր հայրերին՝
Աբրահամին եւ նրա սերնդին, յաւիտեան»:
56 Մարիամը գրեթէ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մօտ եւ դարձաւ իր տունը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԹԼՓԱՏՈՒՄԸ

57 Եղիսաբեթի ծննդաբերելու ժամանակը լրացաւ, եւ նա մի որդի ծնեց. 58 եւ նրա շուրջը գտնուողներն ու նրա ազգատոհմը լսեցին, որ Տէրն իր մեծ ողորմութիւնը ցոյց տուեց նրա հանդէպ, եւ ուրախանում էին նրա հետ:

59 Եւ ութերորդ օրը եկան մանկանը թլփատելու. եւ նրան իր հօր անունով Զաքարիա էին կոչում: 60 Բայց նրա մայրը պատասխանեց եւ ասաց. «Ո՛չ, այլ Յովհաննէս պէտք է կոչուի»: 61 Նրան ասացին. «Սակայն քո ազգատոհմի մէջ չկայ մէկը, որի անունը Յովհաննէս լինի»: 62 Նշանացի ակնարկեցին նրա հօրը, թէ ի՛նչ կը կամենայ նրան կոչել: 63 Իսկ նա մի տախտակ ուզեց եւ վրան գրեց. «Դրա անունը Յովհաննէս է»: Եւ բոլորը զարմացան: 64 Եւ իսկոյն նրա բերանը բացուեց ու նրա լեզուն՝ նոյնպէս. եւ խօսում էր ու օրհնում Աստծուն: 65 Եւ ահ ընկաւ բոլորի մէջ, որ լսեցին այս,

եւ նրանց մէջ, որ բնակւում էին նրանց շուրջը: Եւ Հրէաստանի ամբողջ լեռնակողմում այս բոլոր բաները պատմւում էին: 66 Եւ բոլոր լսողները պահում էին իրենց սրտում այս ամէնը եւ ասում էին. «Արդեօք ի՞նչ կը լինի այս մանուկը»: Եւ Տիրոջ ձեռքը նրա հետ էր:

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

67 Զաքարիան՝ նրա հայրը, Սուրբ Հոգով լցուեց, մարգարէացաւ եւ ասաց.
68 «Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը
որ այցի եկաւ մեզ եւ փրկութիւն բերեց իր ժողովրդին:
69 Եւ իր ծառայ Դաւթի տնից մեզ համար մի հզօր փրկիչ
հանեց,
70 ինչպէս որ խօսել էր սրբերի բերանով,
որոնք հին դարերում նրա մարգարէներն էին.
71 փրկութիւն՝ մեր թշնամիներից եւ բոլոր մեզ ատողների
ձեռից՝
72 ողորմութիւն անելու համար մեր հայրերին եւ յիշելու իր
սուրբ ուխտը.
73 այն երդումը, որ արել էր մեր հօրը՝ Աբրահամին,
74 որպէսզի թշնամիների ձեռից փրկուած՝
կարողանանք առանց երկիւղի ծառայել նրա առաջ,
75 սրբութեամբ եւ արդարութեամբ,
մեր կեանքի բոլոր օրերում:
76 Եւ դո՛ւ, ո՛վ մանուկ, Բարձրեալի մարգարէն պիտի
կոչուես,
որովհետեւ պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու նրա
ճանապարհները,
77 տալու նրա ժողովրդին փրկութեան գիտութիւնը՝
նրանց մեղքերի թողութեան համար,
78 մեր Աստծու գթառատ ողորմութեան շնորհիւ,
որով բարձունքից արեգակը մեզ կ'այցելի ծագելու նրանց
վրայ,
79 որոնք նստած են խաւարի եւ մահուան ստուերների մէջ,
ուղղելու մեր ոտքերը դէպի խաղաղութեան
ճանապարհները»:
80 Եւ մանուկը աճում ու զօրանում էր հոգով եւ մնում էր ամայի տեղերում՝ մինչեւ Իսրայէլում նրա երեւալու օրը:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՀՈՎՒՒՆԵՐԻ ԱՅՑԸ
(Մատթ. 1.18-25)

2 Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելաւ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: 2 Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ, երբ Կիւրենիոսը կուսակալ էր Ասորիքում: 3 Եւ բոլորը գնում էին արձանագրուելու մարդահամարի՝ իւրաքանչիւրն իր քաղաքում: 4 Յովսէփն էլ Դաւթի տնից եւ ազգատոհմից լինելով՝ Գալիլիայի Նազարէթ քաղաքից ելաւ գնաց դէպի Հրէաստան՝ Դաւթի քաղաքը, որը Բեթղեհէմ է կոչւում, 5 մարդահամարի մէջ արձանագրուելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանուած էր եւ յղի էր: 6 Եւ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը լրացան, 7 եւ նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մէջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մէջ, որովհետեւ իջեւանում նրանց համար տեղ չկար:

8 Եւ այդ շրջանում բացօթեայ բնակուող հովիւներ կային, որոնք իրենց հօտերի գիշերային պահպանութիւնն էին անում: 9 Եւ Տիրոջ հրեշտակը երեւաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու նրանք սաստիկ վախեցան: 10 Եւ հրեշտակը ասաց նրանց. «Մի՛ վախեցէք, որովհետեւ ահա ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետում, որը ամբողջ ժողովրդինը կը լինի. 11 որովհետեւ այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է: 12 Եւ սա՛ ձեզ համար նշան կը լինի. խանձարուրով փաթաթած եւ մսուրի մէջ դրուած մի մանուկ կը գտնէք»: 13 Եւ յանկարծակի այդ հրեշտակի հետ երեւաց երկնային զօրքերի մի բազմութիւն, որ օրհնում էր Աստծուն ու ասում. 14 «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրայ խաղաղութի՛ւն եւ հաճութի՛ւն՝ մարդկանց մէջ»[†]: 15 Եւ երբ հրեշտակները նրանցից հեռանալով երկինք բարձրացան, հովիւներն ասացին միմեանց. «Եկէ՛ք գնանք մինչեւ Բեթղեհէմ եւ տեսնենք, թէ ի՛նչ բան է այս եղածը, որ Տէրը մեզ ցոյց տուեց»: 16 Եւ նրանք շտապով եկան ու գտան Մարիամին ու Յովսէփին եւ մսուրի մէջ դրուած մանկանը: 17 Եւ ճանաչեցին նրան այն

[†]Լաւագոյն յուն. բն. ունեն ... եւ խաղաղութիւն երկրի վրայ մարդկանց մէջ, որոնց նա սիրեց:

խօսքից, որ իրենց ասուել էր մանկան մասին: 18 *Եւ բոլոր լսողները զարմանում էին այն բաների վրայ, որ հովիւները ասացին իրենց:* 19 *Իսկ Մարիամը այս բոլոր ասուածները պահում էր իր մէջ եւ իր սրտում խորհում:* 20 *Եւ հովիւները վերադարձան. փառաւորում եւ օրհնում էին Աստծուն այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպէս իրենց պատմուել էր:*

ՅԻՍՈՒՍԻ ԹԼՓԱՏՈՒՄԸ ԵՒ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

21 *Եւ երբ ութ օրերը լրացան, եւ նա թլփատուեց, նրա անունը Յիսուս դրուեց, ինչպէս հրեշտակի կողմից կոչուել էր, երբ դեռ չէր յղացուել մօր որովայնում:*

22 *Երբոր նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսէսի Օրէնքի համաձայն՝ նրան Երուսաղէմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար,* 23 *ինչպէս գրուած էր Տիրոջ Օրէնքում. «Ամէն արու զաւակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչուի»:* 24 *Եւ Տիրոջ Օրէնքում ասուածի համաձայն՝ ընծայ պէտք է տալ մի զոյգ տատրակ կամ աղաւնու երկու ձագ:*

ՍԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԱՅՈՒՄԸ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

25 *Արդ, Երուսաղէմում Սիմէոն անունով մի մարդ կար, եւ այդ մարդը արդար ու աստուածավախ էր եւ ակնկալում էր Իսրայէլի մխիթարութիւնը. եւ Սուրբ Հոգին էր նրա մէջ:* 26 *Եւ Սուրբ Հոգուց հրամայուած էր իրեն մահ չտեսնել, մինչեւ որ տեսնէր Տիրոջ Օծեալին:* 27 *Նա Հոգով առաջնորդուած՝ եկաւ տաճարը, եւ երբ ծնողները բերին Յիսուս մանկանը՝ նրա վրայ կատարելու ինչ որ օրէնքի սովորութեան համաձայն էր,* 28 *Սիմէոնը նրան իր գիրկն առաւ, օրհնեց Աստծուն եւ ասաց.*

29 «Այժմ, ո՛վ Տէր,
խաղաղութե՛մբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խօսքի.
30 որովհետեւ աչքերս տեսան փրկութիւնը քո,
31 որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ,
32 լոյս, որ կը լինի յայտնութիւն հեթանոսների համար
եւ փառք՝ Իսրայէլի քո ժողովրդի համար»:

33 *Եւ նրա հայրն ու մայրը զարմացած էին այն խօսքերի համար, որ ասում էին նրա մասին:* 34 *Սիմէոնը նրանց օրհնեց եւ ասաց նրա մօրը՝ Մարիամին. «Ահա՛ սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրացման եւ նշան՝ հակառակութեան:* 35 *Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպէսզի բազում սրտերի խորհուրդներ յայտնի դառնան»:*

ԱՆՆԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԱՅՈՒՄԸ

36 *Եւ այնտեղ կար մի մարգարէուհի՝ Աննա անունով՝ Փանուէլի դուստրը, Ասերի ազգատոհմից. սա տարիքով շատ առաջացած էր եւ ամուսնու հետ միայն եօթը տարի էր ապրել՝ սկսած իր կուսութիւնից:* 37 *Նա մօտ ութսունչորս տարեկան մի այրի էր, որ չէր հեռանում տաճարից, այլ ծոմապահութեամբ եւ աղօթքով գիշերցերեկ ծառայում էր Աստծուն:* 38 *Սա եւս նոյն ժամին վեր կացաւ եկաւ, գոհութիւն էր մատուցում Տիրոջը եւ խօսում էր մանկան մասին բոլոր նրանց հետ, որոնք Երուսաղէմի փրկութեանն էին սպասում:*

39 *Եւ երբ ամէն ինչ կատարեցին Տիրոջ Օրէնքի համաձայն, վերադարձան Գալիլիա, իրենց քաղաքը՝ Նազարէթ:* 40 *Եւ մանուկը աճում ու զօրանում էր՝ լի իմաստութեամբ. եւ Աստծու շնորհները նրա վրայ էին:*

ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՄԷՋ

41 *Արդ, նրա ծնողները ամէն տարի, Զատկի տօնին, Երուսաղէմ էին գնում:* 42 *Եւ երբ նա տասներկու տարեկան եղաւ, տօնի սովորութեան համաձայն՝ Երուսաղէմ ելան:* 43 *Եւ երբ տօնական օրերը լրացան, ու նրանք վերադարձան, մանուկ Յիսուսը մնաց Երուսաղէմում, եւ նրա ծնողները այդ չիմացան:* 44 *Կարծում էին, թէ նա իրենց ուղեկիցների հետ է. մի օրուայ չափ ճանապարհ եկան եւ նրան փնտռեցին*

ազգականների ու ծանօթների մէջ: 45 *Ու երբ չգտան, Երուսաղէմ վերադարձան՝ նրան փնտռելու համար:* 46 *Եւ երեք օր յետոյ նրան գտան տաճարում. վարդապետների հետ նստած՝ նա լսում էր նրանց եւ հարցեր էր տալիս:* 47 *Եւ բոլորը, որ նրան լսում էին, զարմանում էին նրա իմաստութեան եւ պատասխանների վրայ:* 48 *Երբ ծնողները նրան տեսան, հիացան. իսկ մայրը նրան ասաց. «Որդի՛, այս ի՞նչ արեցիր դու մեզ. ահաւասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտռում»:* 49 *Եւ նա պատասխանեց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտռում, չգիտէի՞ք, թէ ես Հօրս տանը պէտք է լինեմ»:* 50 *Բայց նրանք չհասկացան այն խօսքը, որ նա իրենց ասաց:* 51 *Եւ Յիսուս նրանց հետ իջաւ ու Նազարէթ գնաց. եւ նա հնազանդ էր նրանց: Եւ նրա մայրը այս բոլոր բաները պահում էր իր սրտում:*

52 *Իսկ Յիսուս զարգանում էր իմաստութեամբ, հասակով եւ շնորհով Աստծու ու մարդկանց առջեւ:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 3. 1-12, Մարկ. 1. 1-8, Յովհ. 1. 19-28)

3 *Տիբերիոս կայսեր իշխանութեան տասնհինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Հրէաստանի, եւ Հերովդէսը՝ չորրորդապետ Գալիլիայի, եւ նրա եղբայր Փիլիպպոսը՝ չորրորդապետ Իտուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լիւսանիասը՝ չորրորդապետ Աբիլենէի,* 2 *եւ Աննայի ու Կայիափայի քահանայապետութեան օրով, Աստծու խօսքը լսելի եղաւ Զաքարիայի որդի Յովհաննէսին անապատում:* 3 *Եւ նա եկաւ Յորդանանի կողմը ապաշխարութեան մկրտութիւն քարոզելու՝ մեղքերի թողութեան համար,* 4 *ինչպէս գրուած է Եսայի մարգարէի պատգամների գրքում.*

«Անապատում կանչողի ձայնն է.
պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը,
հարթեցէ՛ք նրա շաւիղները:
5 Բոլոր ձորերը թող լցուեն,
բոլոր լեռներն ու բլուրները խոնարհուեն,
դժուարին ճանապարհները հեշտ թող դառնան,
առապարները՝ հարթ ճանապարհներ.
6 եւ ամէն մարդ կը տեսնի Աստծու փրկութիւնը»:

7 *Եւ այն ժողովրդին, որ եկել էր իրենից մկրտուելու, ասում էր. «Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել բարկութիւնից, որ գալու է:* 8 *Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղներ տուէ՛ք եւ մի՛ սկսէք ասել, թէ Աբրահամին ունենք իբրեւ հայր. այս ասեմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերից անգամ դուրս բերել Աբրահամի որդիներ:* 9 *Բայց ահաւասիկ կացինը ծառերի արմատի վրայ է. ամէն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրւում եւ կրակն է նետւում»:* 10 *Ժողովուրդը նրան հարցնում էր եւ ասում. «Իսկ արդ, ի՞նչ պիտի անենք»:* 11 *Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Ով որ երկու զգեստ ունի, մէկը թող տայ նրան, որ չունի, եւ ով որ ուտելիք ունի, նոյն ձեւով թող անի»:* 12 *Մաքսաւորներն էլ եկան մկրտուելու եւ հարցրին նրան. «Վարդապե՛տ, մե՛նք ինչ անենք»:* 13 *Նա ասաց նրանց. «Ձեզ հրամայուածներից աւելին մի՛ վերցրէք»:* 14 *Զինուորները նոյնպէս հարցնում էին նրան. «Իսկ մե՛նք ինչ անենք»: Նա ասաց նրանց. «Ոչ ոքի մի՛ նեղէք, ոչ ոքի մի՛ զրպարտէք, ձեր ռոճիկը թող ձեզ բաւարար լինի»:*

15 *Ժողովուրդը սպասման մէջ էր, եւ բոլորն իրենց սրտում Յովհաննէսի մասին հարց էին տալիս, թէ՝ միթէ սա՞ է Քրիստոսը:* 16 *Նա պատասխանեց բոլորին ու ասաց. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց գալիս է ինձնից աւելի զօրաւորը, որի կօշիկները հանելու արժանի չեմ ես. նա ձեզ կը մկրտի Սուրբ Հոգով եւ հրով.* 17 *նրա քամհարը իր ձեռքում է՝ մաքրելու իր կալը, հաւաքելու ցորենը իր շտեմարանում, իսկ յարդը կ՚այրի անշէջ կրակով»:* 18 *Նա շատ ուրիշ մխիթարիչ խօսքերով բարի լուրն էր աւետում ժողովրդին:*

19 *Բայց Հերովդէս չորրորդապետը, յանդիմանուած լինելով Յովհաննէսի կողմից, իր եղբօր կնոջ՝ Հերովդիայի պատճառով եւ այն բոլոր չարիքների համար, որ Հերովդէսը գործել էր,* 20 *այդ բոլորի վրայ աւելացրեց եւ այն, որ Յովհաննէսին բանտարկեց:*

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 3. 13-17, Մարկ. 1. 9-11)

21 *Եւ ամբողջ ժողովրդի մկրտուելուց յետոյ, Յիսուս եւս մկրտուեց ու երբ աղօթքի կանգնեց, երկինքը բացուեց,* 22 *եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսքով, որպէս աղաւնի իջաւ նրա վրայ. եւ երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը»:*

ՅԻՍՈՒՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 1. 1-18)

23 *Եւ ինքը Յիսուս շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսեց իր գործունէութիւնը: Եւ, ինչպէս կարծում էին, որդին էր Յովսէփի, եւ սա՝ Յակոբի, եւ սա՝ Հեղիի, եւ սա՝ Մատաթէի,* 24 *եւ սա՝ Ղեւիի, եւ սա՝ Մեղքիի, եւ սա՝ Յաննէի, եւ սա՝ Յովսէփի,* 25 *եւ սա՝ Մատթէի, եւ սա՝ Ամոսի, եւ սա՝ Նաւումի, եւ սա՝ Էսղիի, եւ սա՝ Նանգէի,* 26 *եւ սա՝ Մաաթի, եւ սա՝ Մատաթէի, եւ սա՝ Սեմէիի, եւ սա՝ Յոսէքէի, եւ սա՝ Յոդայի,* 27 *եւ սա՝ Յովնանէի, եւ սա՝ Ռէսայի, եւ սա՝ Զորոբաբէլի, եւ սա՝ Սաղաթիէլի, եւ սա՝ Ներիի,* 28 *եւ սա՝ Մեղքիի, եւ սա՝ Ադդէի, եւ սա՝ Կոսամի, եւ սա՝ Ելմոդադի, եւ սա՝ Երէի,* 29 *եւ սա՝ Յեսուի, եւ սա՝ Եղիազարի, եւ սա՝ Յորամի, եւ սա՝ Մատթէի, եւ սա՝ Ղեւիի,* 30 *եւ սա՝ Սիմէոնի, եւ սա՝ Յուդայի, եւ սա՝ Յովսէփի, եւ սա՝ Յովնամի, եւ սա՝ Եղիակիմի,* 31 *եւ սա՝ Մելէի, եւ սա՝ Մեննէի, եւ սա՝ Մատաթայի, եւ սա՝ Նաթանի, եւ սա՝ Դաւթի,* 32 *եւ սա՝ Յեսսէի, եւ սա՝ Օբէդի, եւ սա՝ Բոոսի, եւ սա՝ Սաղմանի, եւ սա՝ Նաասոնի,* 33 *եւ սա՝ Ամինադաբի, եւ սա՝ Արամի, եւ սա՝ Ադմէի, եւ սա՝ Առնէի, եւ սա՝ Եսրոնի, եւ սա՝ Փարէսի, եւ սա՝ Յուդայի,* 34 *եւ սա՝ Յակոբի, եւ սա՝ Իսահակի, եւ սա, Աբրահամի, եւ սա՝ Թարայի, եւ սա՝ Նաքորի,* 35 *եւ սա՝ Սերուգի, եւ սա՝ Ռագաւի, եւ սա՝ Փաղեկի, եւ սա՝ Եբերի, եւ սա՝ Սաղայի,* 36 *եւ սա՝ Կայնանի, եւ սա՝ Արփաքսադի, եւ սա՝ Սէմի, եւ սա՝ Նոյի, եւ սա՝ Ղամէքի,* 37 *եւ սա՝ Մաթուսաղայի, եւ սա՝ Ենոքի, եւ սա՝ Յարեդի, եւ սա՝ Մաղաղայէլի, եւ սա՝ Կայնանի,* 38 *եւ սա՝ Ենոսի, եւ սա՝ Սէթի, եւ սա՝ Ադամի, եւ սա՝ Աստծու:*

ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ
(Մատթ. 4. 1-11, Մարկ. 1. 12-13)

4 *Եւ Յիսուս Սուրբ Հոգով լի վերադարձաւ Յորդանանից. եւ Հոգով անապատ առաջնորդուեց* 2 *ու քառասուն օր փորձուեց սատանայից: Չկերաւ եւ չխմեց այն օրերին. եւ երբ քառասուն օրերը լրացան, քաղց զգաց:*

3 *Եւ սատանան նրան ասաց. «Եթէ Աստծու Որդի ես, այդ քարին ասա՛, որ հաց լինի»:* 4 *Յիսուս նրան պատասխանեց եւ ասաց. «Գրուած է. "Միայն հացով չէ, որ կ'ապրի մարդ, այլ Աստծու ամէն խօսքով"»*[†]*:*

5 *Եւ սատանան տանելով նրան մի բարձր լեռ, մի վայրկեանում նրան ցոյց տուեց աշխարհի բոլոր թագաւորութիւնները:* 6 *Եւ սատանան նրան ասաց. «Քեզ կը տամ այս ամբողջ իշխանութիւնը եւ սրանց փառքը, որովհետեւ ինձ է տրուած, եւ ում որ կամենամ, կը տամ այն:* 7 *Արդ, եթէ դու իմ առաջ ընկած երկրպագես, բոլորը քոնը կը լինի»:* 8 *Յիսուս պատասխանեց նրան եւ ասաց. «Գրուած է. "Քո Տէր Աստծո՛ւն պիտի երկրպագես եւ նրա՛ն միայն պիտի պաշտես"»:*

9 *Եւ տարաւ նրան Երուսաղէմ, կանգնեցրեց տաճարի աշտարակի վրայ ու ասաց նրան. «Եթէ Աստծու Որդի ես, քեզ այստեղից ցա՛ծ գցիր,* 10 *որովհետեւ գրուած է. "Իր հրեշտակներին պատուիրուած է քո մասին, որ քեզ պահեն.* 11 *եւ իրենց ձեռքերի վրայ կը բռնեն քեզ, որ քո ոտքը երբեք քարին չխփես"»:* 12 *Յիսուս պատասխանեց նրան եւ ասաց. «Ասուած է. "Քո Տէր Աստծուն պիտի չփորձես"»:* 13 *Եւ սատանան կատարած լինելով բոլոր փորձութիւնները՝ նրանից միառժամանակ հեռու մնաց:*

[†]Լաւագոյն յուն. բն. չունեն այլ՝ Աստծու ամէն խօսքով բառերը:

ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ
(Մատթ. 4. 12-17, Մարկ. 1. 14-15)

14 *Եւ Յիսուս Հոգու զօրութեամբ վերադարձաւ Գալիլիա, ու գաւառի բոլոր կողմերում նրա համբաւը տարածուեց:* 15 *Եւ նա ուսուցանում էր նրանց ժողովարաններում՝ փառաւորուելով բոլորից:*

ՅԻՍՈՒՍ ՆԱԶԱՐԷԹՈՒՄ
(Մատթ. 13. 53-58, Մարկ. 6. 1-6)

16 *Եւ եկաւ Նազարէթ, ուր նա սնուել մեծացել էր. եւ ըստ իր սովորութեան՝ շաբաթ օրը ժողովարան մտաւ:* 17 *Եւ նրան տուին Եսայի մարգարէի գիրքը. եւ նա վեր կացաւ ընթերցելու. եւ երբ գիրքը բացեց, գտաւ այն տեղը, ուր գրուած էր.* 18 *«Տիրոջ Հոգին իմ վրայ է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին աւետարանելու, սրտով բեկեալներին բժշկելու,* 19 *գերիներին ազատում քարոզելու եւ կոյրերին՝ տեսողութիւն, կեղեքուածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու»:*

20 *Եւ փակելով գիրքը՝ տուեց պաշտօնեային ու նստեց. եւ ժողովարանում գտնուողների բոլորի աչքերը նրա վրայ էին սեւեռուած:* 21 *Սկսեց ասել նրանց. «Այսօր այս գրուածքները կատարուեցին, երբ լսում էիք ձեր ականջներով»:* 22 *Եւ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խօսքերի վրայ ու ասում. «Սա Յովսէփի որդին չէ՞»:* 23 *Եւ նա ասաց նրանց. «Անշուշտ, ինձ այս առածը կ'ասէք. "Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ": Այն ամէնը, ինչ արել ես Կափառնայումում, որչափ որ լսեցինք, արա՛ եւ այստեղ, քո գաւառում»:* 24 *Եւ նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարէն ընդունելի չէ իր քաղաքում:* 25 *Արդարեւ, ասում եմ ձեզ, որ Եղիայի օրով Իսրայէլում բազում այրիներ կային, երբ երկինքը փակուեց երեք տարի ու վեց ամիս, եւ ամբողջ երկրի վրայ մեծ սով եղաւ:* 26 *Սակայն նրանցից ոչ մէկի մօտ Եղիան չուղարկուեց, այլ միայն՝ մի այրի կնոջ՝ սիդոնացիների Սարեփթա քաղաքում:* 27 *Նաեւ՝ Իսրայէլում Եղիսէ մարգարէի օրով բազում բորոտներ կային, եւ սակայն նրանցից ոչ մէկը չմաքրուեց, այլ միայն՝ Նէեման ասորին»:* 28 *Երբ այս լսեցին, ժողովարանում բոլորը լցուեցին բարկութեամբ.* 29 *եւ վեր կենալով՝ նրան քաղաքից դուրս հանեցին ու տարան մինչեւ դարաւանդը այն լերան, որի վրայ շինուած էր իրենց քաղաքը, որպէսզի նրան գահավէժ անեն:* 30 *Իսկ նա, անցնելով նրանց միջով, գնաց:*

ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մարկ. 1. 21-28)

31 *Եւ իջաւ Գալիլիայի Կափառնայում քաղաքը ու շաբաթ օրերը ուսուցանում էր նրանց:* 32 *Նրա ուսուցման վրայ զարմանում էին, որովհետեւ նրա խօսքը լի էր հեղինակութեամբ:* 33 *Եւ ժողովարանում մի մարդ կար, որին բռնել էր մի պիղծ դեւի չար ոգին. սա բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց.* 34 *«Թո՛ղ տուր մեզ, Յիսո՛ւս Նազովրեցի, ի՞նչ ես ուզում մեզնից. մեզ կորստեան մատնելո՞ւ եկար. գիտենք, թէ ով ես, Աստծու Սուրբն ես դու»:* 35 *Յիսուս սաստեց նրան եւ ասաց. «Պապանձուի՛ր եւ դո՛ւրս ելիր դրանից»: Դեւը մէջտեղում գետին զարկեց նրան եւ դուրս ելաւ նրանից ու որեւէ վնաս չտուեց նրան:* 36 *Եւ բոլորին զարմանք պատեց. իրար հետ խօսում էին ու ասում. «Ի՞նչ խօսք է այս, որ իշխանութեամբ եւ զօրութեամբ սաստում է պիղծ ոգիներին, եւ դրանք դուրս են գալիս»:* 37 *Եւ նրա հռչակը տարածւում էր գաւառի շրջակայքի բոլոր տեղերում:*

ՋԱՆԱՋԱՆ ԲԺՇԿՈՒՄՆԵՐ
(Մատթ. 8. 14-17, Մարկ. 1. 29-34)

38 *Եւ նա ժողովարանից դուրս գալով՝ մտաւ Սիմոնի տունը:* 39 *Սիմոնի զոքանչը բարձր ջերմութեան մէջ տառապում էր: Նրա համար Յիսուսին աղաչեցին:* 40 *Նա կանգնեց նրա մօտ, սաստեց ջերմին, եւ ջերմը թողեց*

նրան: Հիւանդը անմիջապէս ոտքի
ելաւ եւ սպասարկում էր նրանց:
41 Եւ երբ արեւը մայր էր մտնում,
բոլոր նրանք, որոնք պէսպէս ցաւերով
հիւանդներ ունէին, նրա մօտ էին
բերում նրանց. եւ նա նրանցից իւ-
րաքանչիւրի վրայ ձեռք էր դնում ու
նրանց բժշկում: 42 Շատերի միջից
դեւեր էլ էին ելնում, աղաղակում եւ
ասում. «Դո՛ւ ես Աստծու Որդին»: Եւ
նա սաստում էր ու թոյլ չէր տալիս
նրանց խօսել. որովհետեւ գիտէին, թէ
նա Քրիստոսն է:

ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ
(Մարկ. 1. 35-39)

43 Եւ երբ օրը լուսացաւ, նա ելաւ
գնաց մի ամայի տեղ, իսկ ժողովուրդը
փնտռում էր նրան. եկան մինչեւ նրա
մօտ եւ չէին թողնում նրան, որ հեռա-
նայ իրենցից: 44 Եւ նա նրանց ասաց.
«Աստծու արքայութիւնը ես ուրիշ
քաղաքների էլ պիտի աւետարանեմ,
որովհետեւ դրա համար իսկ ուղար-
կուեցի»: 45 Եւ նա քարոզում էր գա-
լիլիացիների† ժողովարաններում:

ՉԿՆՈՐՍՆԵՐԻՑ ԱՌԱՔԵԱԼՆԵՐ
(Մատթ. 4. 18-22, Մարկ. 1. 16-20)

5 Եւ մինչ ժողովուրդը խռնւում էր
նրա շուրջը՝ լսելու Աստծու խօսքը, նա
կանգնած էր Գեննեսարէթի ծովակի
ափին: 2 Եւ տեսաւ երկու նաւակներ, որ
կանգնած էին ծովակի եզերքին. եւ
ձկնորսները դրանց միջից դուրս եկած՝
ուռկաններն էին լուանում: 3 Նա
մտաւ նաւակներից մէկի մէջ, որ Սիմո-
նինն էր, եւ խնդրեց նրան, որ
ցամաքից փոքր-ինչ հեռացնի այն.
նստեց ու նաւակի միջից ուսուցանում
էր ժողովրդին: 4 Եւ երբ դադարեց
խօսելուց, ասաց Սիմոնին. «Քշիր տա՛ր
դէպի խորերը, եւ ձեր ուռկանները
գցեցէ՛ք որսալու համար»: 5 Սիմոնը
պատասխանեց եւ նրան ասաց. «Վար-
դապե՛տ, ամբողջ այս գիշեր չարչա-
րուեցինք եւ ոչինչ չբռնեցինք, բայց քո
խօսքի համար ուռկանները կը գցենք»:
6 Երբ այդ արեցին, մեծ քանակու-
թեամբ ձկներ բռնեցին, այն աստիճան,
որ նրանց ուռկանները պատռւում էին:
7 Նրանք նշան էին անում միւս նա-
ւակի մէջ եղող իրենց որսակիցներին,
որ գան իրենց օգնեն: Եւ նրանք եկան,
եւ երկու նաւակներն էլ լցուեցին սու-
զուելու աստիճան: 8 Երբ Սիմոն Պետ-
րոսն այս տեսաւ, Յիսուսի ծնկներին
ընկաւ եւ ասաց. «Ինձնից հեռո՛ւ գնա,
Տէ՛ր, որովհետեւ ես մեղաւոր մարդ
եմ». 9 քանի որ վախը պատել էր նրան
եւ բոլորին, որ նրա հետ էին, իրենց
բռնած ձկների քանակի պատճառով.
10 նոյնպէս եւ՝ Զեբեդէոսի որդիներին՝
Յակոբոսին եւ Յովհաննէսին, որոնք
Սիմոնի որսակիցներն էին. եւ Յիսուս
Սիմոնին ասաց. «Մի՛ վախեցիր, այ-
սուհետեւ դու մարդկա՛նց պիտի որսաս
կեանքի համար»: 11 Եւ նաւակը ցա-
մաք հանելով՝ թողեցին ամէն ինչ ու
նրան հետեւեցին:

ԲՈՐՈՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 8. 1-4, Մարկ. 1. 40-45)

12 Եւ երբ նա հասաւ քաղաքներից
մէկը, բորոտութեամբ պատած մի
մարդ, Յիսուսին տեսնելով, երեսի վրայ
ընկած՝ աղաչեց նրան եւ ասաց. «Տէ՛ր,
եթէ կամենաս, կարո՛ղ ես ինձ մաք-
րել»: 13 Նա մեկնեց իր ձեռքը, դիպաւ
նրան եւ ասաց. «Կամենում եմ,
մաքրուի՛ր»: Եւ իսկոյն բորոտութիւնը
գնաց նրանից: 14 Յիսուս պատուիրեց
նրան ոչ ոքի չասել, այլ՝ «Գնա՛, -
ասաց, - դու քեզ ցո՛յց տուր քահա-
նային եւ ընծայ տուր քո մաքրուելու
համար, ինչպէս որ հրամայել էր
Մովսէսը՝ ի վկայութիւն նրանց»: 15 Եւ
նրա համբաւը աւելի ու աւելի էր
տարածւում. եւ բազում ժողովուրդ էր
հաւաքւում լսելու նրան ու իրենց
հիւանդութիւնից բժշկուելու: 16 Իսկ
նա խոյս էր տալիս դէպի ամայի տեղեր
եւ աղօթքի էր կանգնում:

ԱՆԴԱՄԱԼՈՅՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 9. 1-8, Մարկ. 2. 1-12)

17 Մի օր ինքն ուսուցանում էր, իսկ
փարիսեցիներն ու օրէնքի վարդապետ-

†Լաւագոյն յուն. բն. գալիլիացիների բառի
փոխարէն ունեն Յուդայի բառը:

ները, որոնք հաւաքուել էին Գալիլիա-
յի եւ Հրէաստանի բոլոր քաղաքներից
ու Երուսաղէմից, նստած էին. եւ Տիրոջ
զօրութիւնը նրա հետ էր ու նրա միջո-
ցով բժշկում էր: 18 Եւ ահա մարդիկ
մահիճով մի մարդ բերեցին, որ անդա-
մալոյծ էր, եւ ուզում էին նրան ներս
մտցնել ու դնել նրա առաջ: 19 Եւ երբ
ամբոխի պատճառով նրան ներս
մտցնելու միջոց չգտան, բարձրացան
տանիք եւ կտուրի բացուածքից նրան
վար կախեցին ու մահիճով հանդերձ
իջեցրին մէջտեղ, Յիսուսի առաջ:
20 Տեսնելով նրանց հաւատը՝ Յիսուս
ասաց նրան. «Ո՛վ մարդ, թող քո մեղ-
քերը քեզ ներուեն»: 21 Օրէնսգէտներն
ու փարիսեցիները սկսեցին խորհել եւ
ասացին. «Ո՞վ է սա, որ հայհոյանքներ
է ասում. ո՞վ կարող է ներել մեղքերը,
եթէ ոչ՝ Աստուած միայն»: 22 Յիսուս,
գիտենալով նրանց մտածումները,
պատասխանեց նրանց եւ ասաց. «Ի՞նչ
էք մտմտում ձեր սրտերում. 23 ո՞րն է
աւելի հեշտ, ասել՝ քեզ ներուած լինեն
քո մեղքե՞րը, թէ՞ ասել՝ վե՛ր կաց եւ
քայլի՛ր: 24 Բայց որպէսզի իմանաք,
թէ մարդու Որդին իշխանութիւն ունի
երկրի վրայ մեղքերը ներելու (ասաց
անդամալոյծին)՝ քե՛զ եմ ասում, վե՛ր
կաց, վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛ քո
տունը»: 25 Եւ իսկոյն բոլորի առաջ վեր
կենալով՝ իր վրայ առաւ այն, ինչի
վրայ ինքը պառկել էր, գնաց իր տունը
եւ փառաւորում էր Աստծուն: 26 Բոլո-
րին զարմանք պատեց, եւ փառաւորում
էին Աստծուն: Ահով լցուեցին եւ
ասում էին. «Այսօր արտասովոր բաներ
տեսանք»:

ՂԵՒԻԻ ԿՈՉՈՒՄԸ
(Մատթ. 9. 9-13, Մարկ. 2. 13-17)

27 Դրանից յետոյ, դուրս ելաւ այն-
տեղից եւ տեսաւ մի մաքսաւորի, որի
անունը Ղեւի էր, եւ որը մաքսատանը
նստած՝ գործի վրայ էր: Յիսուս նրան
ասաց. «Իմ յետեւից արի՛»: 28 Եւ նա
թողնելով ամէն ինչ, վեր կացաւ գնաց
նրա յետեւից: 29 Եւ Ղեւին իր տան մէջ
նրան մեծ ընդունելութիւն տուեց,
եւ մեծ թուով մաքսաւորներ եւ ուրիշ-
ներ նրանց հետ սեղան էին նստել:
30 Փարիսեցիները եւ օրէնսգէտները
տրտնջում էին Յիսուսի դէմ իր աշա-
կերտների մօտ ու ասում. «Ինչո՞ւ էք
մաքսաւորների եւ մեղաւորների հետ
ուտում եւ խմում»: 31 Յիսուս պատաս-
խանեց նրանց եւ ասաց. «Առողջներին
բժիշկներ պէտք չեն, այլ՝ հիւանդ-
ներին: 32 Ես չեմ եկել արդարներին
կանչելու, այլ՝ մեղաւորներին՝ ապաշ-
խարութեան»:

ՎԷՃ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 9. 14-17, Մարկ. 2. 18-22)

33 Եւ նրանցից ոմանք ասացին
նրան. «Ինչո՞ւ Յովհաննէսի, ինչպէս
եւ փարիսեցիների աշակերտները ծոմ
են պահում յաճախ եւ աղօթք անում,
իսկ քո աշակերտները ուտում են ու
խմում»: 34 Եւ նա ասաց նրանց.
«Միթէ կարո՞ղ էք հարսանքաւոր-
ներին հրամայել, որ ծոմ պահեն,
որքան ժամանակ որ փեսան նրանց
հետ է: 35 Կը գան օրեր, երբ որ փեսան
նրանցից կը վերցուի, ապա այդ օրերին
ծոմ կը պահեն»: 36 Եւ նրանց մի առակ
էլ ասաց. «Ոչ ոք հնացած ձորձի վրայ
նոր զգեստից կտոր չի դնի, ապա թէ
ոչ՝ ե՛ւ նորը կը պատռուի, ե՛ւ նոր
զգեստից վերցրած կտորը չի յարմա-
րուի հնի հետ: 37 Եւ ոչ ոք նոր գինին
հին տիկերի մէջ չի լցնի, ապա թէ ոչ՝
նոր գինին հին տիկերը կը պայթեցնի.
գինին կը թափուի, եւ տիկերը կը
փչանան: 38 Այլ՝ նոր գինին նոր տի-
կերի մէջ պէտք է լցուի, եւ երկուսն էլ
կը պահուեն†: 39 Եւ ոչ ոք, երբ հինը
խմի, նորը կ'ուզենայ, որովհետեւ կ'ա-
սի, թէ՝ հինը աւելի լաւն է»:

ՇԱԲԱԹ ՕՐՈՎ ՊՈԿՈՒԱԾ ՀԱՍԿԵՐ
(Մատթ. 12. 1-8, Մարկ. 2. 23-28)

6 Առաջին ամսուայ երկրորդ շաբաթ
օրը‡, երբ նա անցնում էր արտերի
միջով, նրա աշակերտները հասկ էին
պոկում, շփում իրենց ափի մէջ եւ

†Լաւագոյն յուն. բն. չունեն եւ երկուսն էլ
կը պահուեն նախադասութիւնը:

‡Յուն. լաւ բն. ունեն մի շաբաթ օր ...

ուտում: 2 Եւ փարիսեցիներից ոմանք
ասացին նրանց. «Ինչո՞ւ էք անում
այն, ինչ օրինաւոր չէ անել շաբաթ
օրով»: 3 Յիսուս նրանց պատասխանեց
եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ
ինչ արեց Դաւիթը, երբ քաղց զգաց
ինքը եւ նրանք, որ նրա հետ էին. 4 թէ
ինչպէս նա մտաւ Աստծու տունը,
կերաւ առաջաւորութեան հացը եւ
տուեց նրանց, որ իր հետ էին. մինչդեռ,
բացի քահանայապետներից, ոչ ոքի չէր
թոյլատրուած ուտել այն»: 5 Եւ Յի-
սուս նրանց ասաց. «Մարդու Որդին
նաեւ շաբաթ օրուայ տէրն է»:

ՁՈՐԱՑԱԾ ՁԵՌՔԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 12. 9-14, Մարկ. 3. 1-6)

6 Եւ մի ուրիշ շաբաթ օր նա մտաւ
ժողովարան եւ ուսուցանում էր. եւ
այնտեղ կար մի մարդ, որի աջ ձեռքը
չորացած էր: 7 Օրէնսգէտներն ու փա-
րիսեցիները հետեւում էին՝ տեսնելու,
թէ արդեօք շաբաթ օրը կը բժշկի՞.
որպէսզի նրան ամբաստանելու համար
բան գտնեն: 8 Եւ նա գիտէր նրանց
մտածումները: Չորացած ձեռքով մար-
դուն ասաց. «Վե՛ր կաց, մէջտե՛ղ արի»:
Նա վեր կացաւ կանգնեց: 9 Յիսուս
նրանց ասաց. «Ես ձեզ մի բան հարց-
նեմ. շաբաթ օրը ի՞նչ բան է օրինաւոր
անել՝ բարի՞ գործ անել, թէ՞՝ չար
գործ, մի հոգի՞ փրկել, թէ՞ կորստեան
մատնել»: 10 Եւ իր շուրջը բոլորի վրայ
զայրագին նայելով՝ ասաց նրան.
«Ձեռքդ երկարի՛ր». եւ նա երկարեց, եւ
նրա չորացած ձեռքը առողջացաւ միւ-
սի նման: 11 Նրանք լցուեցին կատա-
ղութեամբ եւ միմեանց հետ խօսում
էին, թէ ի՞նչ անեն Յիսուսին:

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 10. 1-4, Մարկ. 3. 13-19)

12 Եւ այդ օրերին Յիսուս լեռ բարձ-
րացաւ աղօթելու եւ ամբողջ գիշերն
անցկացրեց Աստծուն աղօթելով: 13 Եւ
երբ լոյսը բացուեց, կանչեց իր աշա-
կերտներին եւ ընտրեց նրանցից տաս-
ներկուսին, որոնց եւ առաքեալներ
անուանեց. 14 Սիմոնին, որին էլ Պետ-
րոս կոչեց, եւ Անդրէասին՝ նրա եղբօրը,
Յակոբոսին, Յովհաննէսին, 15 Փիլիպ-
պոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին,
Թովմասին, Ալփէոսի որդի Յակոբոսին,
Սիմոնին՝ Նախանձայոյզ կոչուածին,
16 Յակոբի որդի Յուդային եւ Իսկա-
րիովտացի Յուդային, որը եւ մատնիչ
եղաւ:

ԲԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍԻ ՅԵՏԵՒԻՑ
(Մատթ. 4. 23-25)

17 Եւ նրանց հետ միասին իջաւ մի
տափարակ տեղ, ուր նրա աշակերտ-
ների խումբը եւ ամբողջ Հրէաստանից
ու Երուսաղէմից եւ այն կողմերից եւ
Տիւրոսի ու Սիդոնի ծովեզրից 18 շատ
մեծ բազմութիւն եկել էր լսելու նրան
եւ բժշկուելու իրենց հիւանդութիւն-
ներից: Եւ պիղծ ոգիներից տառապող-
ները բժշկւում էին: 19 Եւ ամբողջ ժո-
ղովուրդն ուզում էր նրան դիպչել,
որովհետեւ նրանից մեծ զօրութիւն էր
դուրս գալիս եւ բժշկում բոլորին:

ԵՐԱՆԻՆԵՐ ԵՒ ՎԱՅԵՐ
(Մատթ. 5. 1-12)

20 Եւ Յիսուս աչքերը բարձրացրեց
իր աշակերտների վրայ ու ասաց.
- Երանի՛ հոգով† աղքատներիդ, ո-
րովհետեւ Աստծու արքայութիւնը ձերն
է:
21 - Երանի՛ նրանց, որ քաղցած են
այժմ, որովհետեւ պիտի յագենան:
- Երանի՛ նրանց, որ այժմ լալիս են,
որովհետեւ պիտի ծիծաղեն:
22 - Երանի՛ է ձեզ, երբ որ մարդիկ
ձեզ ատեն եւ երբ որ ձեզ մերժեն եւ
նախատեն ու մարդու Որդու պատճա-
ռով ձեր մասին չար անուն հանեն:
23 Ուրախացէ՛ք այդ օրը եւ ցնծացէ՛ք,
որովհետեւ ձեր վարձը մեծ է
երկնքում. նրանց հայրերը նոյն ձեւով
էին վարւում մարգարէների հանդէպ:
24 - Բայց վա՛յ ձեզ՝ հարուստներիդ,
որովհետեւ դուք ձեր մխիթարութիւնը
ստացել էք:
25 - Վա՛յ ձեզ, որ այժմ յագեցած
էք, որովհետեւ քաղցած պիտի մնաք:

†Յունարէնը չունի հոգով բառը:

- Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք,
որովհետեւ պիտի սգաք ու պիտի լաք:
26 - Վա՛յ ձեզ, երբ որ բոլոր մարդիկ
լաւ խօսեն ձեր մասին, որովհետեւ
նրանց հայրերը սուտ մարգարէներին
այդպէս էին անում:

ՍԷՐ՝ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ
(Մատթ. 5. 38-48, 7. 12[ա])

27 «Բայց ասում եմ ձեզ, դո՛ւք, որ
լսում էք ինձ. սիրեցէ՛ք ձեր թշնամի-
ներին, ձեզ ատողներին բարութի՛ւն
արէք. 28 օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին,
ձեզ նեղողների համար աղօթեցէ՛ք:
29 Ով խփում է քո ծնօտին, նրան
մի՛ւսն էլ մօտեցրու. եւ ով որ քեզնից
քո բաճկոնը բռնի է վերցնում, նրան
մի՛ արգելիր, որ վերցնի շապիկդ էլ:
30 Ամէն մարդու, որ քեզնից ուզում է,
տո՛ւր, եւ ինչ որ մէկը քեզնից վերցնի,
ետ մի՛ պահանջիր: 31 Եւ ինչպէս
կամենում էք, որ անեն ձեզ մարդիկ,
այնպէս արէ՛ք եւ դուք նրանց: 32 Եւ
եթէ դուք ձեզ սիրողներին սիրէք, ո՞րն
է ձեր արած շնորհը, որովհետեւ մե-
ղաւորներն էլ են սիրում իրենց սիրող-
ներին: 33 Եւ եթէ ձեր բարերարներին
բարութիւն անէք, ո՞րն է ձեր արած
շնորհը, որովհետեւ մեղաւորներն էլ
նոյնն են անում: 34 Եւ եթէ փոխ էք
տալիս նրանց, որոնցից յետ առնելու
ակնկալութիւն ունէք, ո՞րն է ձեր ա-
րած շնորհը, որովհետեւ մեղաւորներն
էլ են փոխ տալիս մեղաւորներին,
որպէսզի նոյն չափով յետ առնեն:
35 Բայց դուք սիրեցէ՛ք ձեր թշնամի-
ներին եւ բարութի՛ւն արէք ձեզ ա-
տողներին ու փո՛խ տուէք նրան, ումից
յետ առնելու ակնկալութիւն չունէք:
Եւ ձեր վարձը շատ կը լինի, եւ դուք
Բարձրեալի որդիները կը լինէք, որով-
հետեւ նա բարեհաճ է չարերի եւ ապե-
րախտների հանդէպ: 36 Գթասի՛րտ
եղէք, ինչպէս որ ձեր Հայրը գթասիրտ
է»:

ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԴԱՏԵԼԸ
(Մատթ. 7. 1-5)

37 «Մի՛ դատէք, որ Աստծուց չդա-
տուէք, մի՛ դատապարտէք, եւ չպիտի
դատապարտուէք, ներեցէ՛ք, եւ ներում
պիտի գտնէք Աստծուց, 38 տուէ՛ք, եւ
պիտի տրուի ձեզ. ձեր գոգը պիտի
լցնեն առա՛տ չափով՝ թաթաղուն,
շարժուն, զեղուն. այն չափով, որով
չափում էք, նո՛ւյն չափով պիտի
չափուի ձեզ համար»:
39 Նրանց մի առակ էլ ասաց. «Մի-
թէ կարո՞ղ է կոյրը կոյրին առաջ-
նորդել. չէ՞ որ երկուսն էլ փոսը
կ'ընկնեն: 40 Աշակերտը մեծ չէ, քան
իր վարդապետը. ամէն կատարեալ
աշակերտ իր վարդապետի պէս կը լինի:
41 Ինչո՞ւ քո եղբօր աչքի միջի չիւղը
տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը
չես նշմարում: 42 Եւ կամ՝ ինչպէ՞ս
կարող ես եղբօրդ ասել՝ եղբա՛յր, թող
որ քո աչքից այդ չիւղը հանեմ, իսկ
դու քո աչքի միջի գերանը չես տես-
նում: Կեղծաւո՛ր, նախ քո աչքից
գերանը հանի՛ր եւ ապա լաւ կը տես-
նես՝ քո եղբօր աչքից չիւղը հանելու
համար»:

ՊՏՂԻՑ Է ՃԱՆԱՉՈՒՄ ԾԱՌԸ
(Մատթ. 7. 16-20, 12. 33-35)

43 «Որովհետեւ չկայ բարի ծառ, որ
չար պտուղ տայ. եւ դարձեալ՝ չկայ
չար ծառ, որ բարի պտուղ տայ. 44 ո-
րովհետեւ իւրաքանչիւր ծառ իր
պտղից է ճանաչւում:
Փշերից թուզ չեն քաղում եւ ոչ էլ
մորենուց՝ խաղող: 45 Բարի մարդը իր
սրտի բարի գանձերից բարին է բխեց-
նում, իսկ չար մարդը՝ չարն է բխեց-
նում. որովհետեւ սրտի աւելցուկից է,
որ խօսում է նրա բերանը»:

ԵՐԿՈՒ ՏՆԵՐԸ
(Մատթ. 7. 24-27)

46 «Ինչո՞ւ ինձ «Տէ՛ր, Տէ՛ր» էք
կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չէք անում:
47 Ամէն մարդ, որ ինձ է գալիս եւ
լսում է իմ խօսքերն ու կատարում
դրանք, ձեզ ցոյց տամ, թէ ում է
նման: 48 Նման է տուն շինող այն
մարդուն, որ հողը փորեց ու խորացրեց
եւ հիմքը դրեց ժայռի վրայ†. եւ երբ

†Լաւագոյն յուն. բն. չունեն եւ հիմքը դրեց ...

հեղեղ բարձրացաւ, գետը զարկեց տանը եւ չկարողացաւ շարժել այն, որովհետեւ նրա հիմքը ժայռի վրայ էր հաստատուած: 49 Իսկ ով իմ խօսքերը լսում է եւ չի կատարում, նման է այն մարդուն, որ հողի վրայ առանց հիմքի տուն է շինում. գետը զարկեց, եւ այն իսկոյն փուլ եկաւ, եւ այդ տան կործանումը մեծ եղաւ»:

ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ՀԱՒԱՏԸ
(Մատթ. 8. 5-13)

7 Եւ երբ Յիսուս վերջացրեց իր բոլոր խօսքերը, եւ ժողովուրդը նրան լսեց, Կափառնայում մտաւ: 2 Այնտեղ մի հարիւրապետի ծառայ, որ շատ սիրելի էր նրա համար, ծանր հիւանդացել էր եւ մեռնելու մօտ էր: 3 Երբ լսեց Յիսուսի մասին, հրեաներից աւագներին ուղարկեց, որ աղաչեն նրան, որպէսզի գայ եւ բժշկի իր ծառային: 4 Եւ նրանք Յիսուսի մօտ գալով՝ թախանձագին աղաչում էին նրան եւ ասում. «Արժանի է նա, որին այս շնորհը պիտի անես, 5 որովհետեւ նա սիրում է մեր ազգը եւ ժողովարանը նա՛ շինեց մեզ համար»: 6 Յիսուս գնաց նրանց հետ. երբ տնից շատ հեռու չէր, հարիւրապետը նրա մօտ բարեկամներ ուղարկեց՝ ասելով. «Տէ՛ր, նեղութիւն մի՛ կրիր, որովհետեւ արժանի չեմ, որ իմ յարկի տակ մտնես. 7 դրա համար էլ ինձ արժանի չհամարեցի քեզ մօտ գալու. այլ՝ խօսքով ասա՛, եւ իմ ծառան կը բժշկուի. 8 որովհետեւ ինքս էլ իշխանութեան ենթակայ մարդ եմ, իմ ձեռքի տակ զինուորներ ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, եւ գնում է, իսկ միւսին, թէ՝ արի՛, եւ գալիս է, եւ իմ ծառային, թէ՝ արա՛ այս բանը, եւ նա անում է»: 9 Եւ երբ Յիսուս այս լսեց, զարմացաւ. դարձաւ ժողովրդին, որ հետեւում էր իրեն, եւ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իսրայէլի մէջ անգամ այսչափ հաւատ չգտայ»: 10 Պատգամաւորները տուն վերադարձան եւ հիւանդ ծառային գտան բժշկուած:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

11 Հետեւեալ օրը Յիսուս գնում էր մի քաղաք, որ Նային էր կոչւում. նրա հետ էին գնում նաեւ իր աշակերտները եւ բազում ժողովուրդ: 12 Երբ քաղաքի դարպասին մօտեցաւ, ահա դուրս էր բերւում մի մեռել, միակ որդին իր մօր, որ մի այրի կին էր. եւ քաղաքից բազում ժողովուրդ նրա հետ էր: 13 Երբ Տէրը կնոջը տեսաւ, խղճաց նրան եւ ասաց. «Մի՛ լար»: 14 Մօտենալով՝ դագաղին դիպաւ: Դագաղը տանողները կանգ առան: Եւ նա ասաց. «Քե՛զ եմ ասում, ո՛վ պատանի, վե՛ր կաց»: 15 Մեռելը վեր կացաւ, նստեց եւ սկսեց խօսել: Եւ Յիսուս նրան մօրը տուեց: 16 Եւ ահը պատեց բոլորին. փառաւորում էին Աստծուն եւ ասում. «Մի մեծ մարգարէ է յայտնուել մեր մէջ», եւ՝ «Աստուած այցելութիւն է տուել իր ժողովրդին բարութեամբ»: 17 Եւ նրա մասին այս զրոյցը տարածուեց ամբողջ Հրէաստանում եւ երկրի բոլոր կողմերում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԸ
(Մատթ. 11. 2-19)

18 Եւ Յովհաննէսին այս բոլորի մասին պատմեցին իր աշակերտները: 19 Եւ Յովհաննէսն իր աշակերտներից մի երկուսին իր մօտ կանչեց ու նրանց ուղարկեց Տիրոջ մօտ՝ ասելու. "Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք"»: 20 Եւ այդ մարդիկ գալով նրա մօտ՝ ասացին. «Յովհաննէս Մկրտիչը մեզ ուղարկեց քեզ մօտ եւ ասում է. "Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք"»: 21 Եւ նոյն ժամին նա շատերին բժշկեց հիւանդութիւններից, ցաւերի հարուածներից, չար ոգիներից եւ բազմաթիւ կոյրերի տեսողութիւն շնորհեց: 22 Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Գնացէք պատմեցէ՛ք Յովհաննէսին, ինչ որ դուք տեսաք եւ լսեցիք. որ կոյրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները մաքրւում են, խուլերը՝ լսում, մեռելները յարութիւն են առնում, աղքատները Բարի լուրն են լսում. 23 եւ երանի՛ նրան, որ իմ պատճառով չի գայթակղուի»:

24 Եւ երբ Յովհաննէսի պատգամաւորները գնացին, նա սկսեց ժողովրդին խօսել Յովհաննէսի մասին. «Ի՞նչ տեսնելու համար դուրս եկաք անապատ. քամուց շարժուող մի եղէ՞գ: 25 Հապա ի՞նչ տեսնելու համար դուրս եկաք. փափուկ զգեստներով զարդարուած մի մա՞րդ. ահաւասիկ նրանք, որ փառաւոր զգեստներով են եւ փափուկ կենցաղով են ապրում, արքունիքներում են լինում: 26 Հապա ի՞նչ տեսնելու համար դուրս եկաք. մի մարգարէ՞. այո՛, ասում եմ ձեզ, առաւել քան մի մարգարէ. 27 որովհետեւ Յովհաննէսը նա է, որի մասին գրուած է. "Ահա քո առաջից ուղարկում եմ իմ պատգամաւորին, որպէսզի քո առաջ քո ճանապարհը պատրաստի": 28 Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնուածների մէջ չկայ աւելի մեծ մարգարէ, քան Յովհաննէսը. բայց Աստծու արքայութեան մէջ ամենափոքրը աւելի մեծ է, քան թէ նա»:

29 Եւ երբ ամբողջ ժողովուրդը լսեց, նոյնպէս եւ մաքսաւորները, ընդունեցին Աստծու արդարութիւնը՝ մկրտուելով Յովհաննէսի մկրտութեամբ: 30 Իսկ փարիսեցիները եւ օրինականները իրենց հոգիներում Աստծու խորհուրդն անարգեցին նրանով, որ Յովհաննէսից չմկրտուեցին:

31 «Արդ, ո՞ւմ նմանեցնեմ այս սերնդի մարդկանց, եւ ո՞ւմ են նման: 32 Նրանք նման են մանուկների, որոնք նստում են հրապարակներում, ձայն են տալիս միմեանց եւ ասում. "Փող զարկեցինք ձեզ համար, եւ չպարեցիք. ողբ ասացինք, եւ դուք լաց չեղաք": 33 Եկաւ Յովհաննէս Մկրտիչը, չէր ուտում եւ չէր խմում. եւ դուք ասացիք՝ նրա մէջ դեւ կայ: 34 Եկաւ մարդու Որդին. ուտում է եւ խմում. եւ դուք ասում էք. "Ահա ուտող եւ խմող մի մարդ, մաքսաւորների եւ մեղաւորների բարեկամ": 35 Եւ իմաստութիւնը արդարացուեց իր որդիներից»:

ՄԵՂԱՒՈՐ ԿՆՈՋ ՀԱՒԱՏԸ

36 Փարիսեցիներից մէկը աղաչում էր նրան, որ իր հետ ճաշ ուտի. եւ նա մտնելով փարիսեցու տունը՝ սեղան նստեց: 37 Եւ քաղաքում մի մեղաւոր կին կար. երբ նա իմացաւ, որ փարիսեցու տանը սեղան է նստել, մի շիշ ազնիւ իւղ բերելով, 38 կանգնեց Յիսուսի յետեւ, նրա ոտքերի մօտ. եւ լաց էր լինում ու սկսեց արտասուքներով թրջել նրա ոտքերը եւ իր գլխի մազերով սրբում էր. համբուրում էր նրա ոտքերը եւ այդ իւղով օծում: 39 Իսկ փարիսեցին, որ նրան հրաւիրել էր, տեսնելով այդ, իր մտքում ասում էր. «Եթէ սա մարգարէ լինէր, ապա կ'իմանար, թէ ով կամ ինչպիսի մի կին է մօտենում իրեն, որովհետեւ նա մեղաւոր է»: 40 Յիսուս պատասխանեց նրան եւ ասաց. «Սիմո՛ն, քեզ ասելու բան ունեմ»: Եւ սա ասաց. «Ասա՛, Վարդապե՛տ»: Եւ Յիսուս ասաց. 41 «Մի փոխատու երկու պարտապաններ ունէր. մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ունէր, իսկ միւսը՝ յիսուն: 42 Եւ քանի որ նրանք հատուցելու ոչինչ չունէին, երկուսին էլ պարտքը շնորհեց. հիմա ասա՛, ո՞վ աւելի շատ կը սիրի նրան»: 43 Սիմոնն ասաց. «Ինձ այնպէս է թւում, թէ նա՞ ում աւելի շատը շնորհուեց»: Եւ Յիսուս ասաց նրան. «Ուղի՛ղ դատեցիր»: 44 Եւ դառնալով կնոջ կողմը՝ Սիմոնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջը. մտայ քո տունը, ոտքերիս համար ջուր չտուիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց իմ ոտքերը եւ իր մազերով սրբեց: 45 Դու ինձ մի համբոյր էլ չտուիր, սակայն սա ահա տուն մտնելուցս ի վեր չի դադարում ոտքերս համբուրելուց: 46 Դու իւղով իմ գլուխը չօծեցիր, սա անուշ իւղով ոտքերս օծեց: 47 Դրա համար քեզ ասում եմ. իր անհամար մեղքերը կը ներուեն սրան, որովհետեւ ուժգին սիրեց. քանզի ում շատ է ներուում, շատ է սիրում, եւ ում սակաւ՝ սակաւ»: 48 Եւ ասաց այն կնոջը. «Քո մեղքերը քեզ ներուած են»: 49 Եւ նրանք, որ նրա հետ սեղան էին նստել, սկսեցին ասել իրենց մտքում. «Ո՞վ է սա, որ մեղքերին թողութիւն է տալիս»: 50 Եւ նա ասաց այդ կնոջը. «Քո հաւա՛տը քեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ»:

ԲԱՐԵՊԱՇՏ ԿԱՆԱՅՔ

8 Դրանից յետոյ Յիսուս շրջում էր
քաղաքներում եւ գիւղերում, քարոզում
էր եւ աւետարանում Աստծու արքա-
յութիւնը: Եւ նրա հետ էին Տաս-
ներկուսը 2 եւ մի քանի կանայք, որոնք
բժշկուել էին չար ոգիներից ու հիւան-
դութիւններից. Մարիամը, որ կոչւում
էր Մագդալենացի, եւ որից եօթը դեւ
էր դուրս եկել, 3 Յովհաննան՝ Հերով-
դէսի վերակացուի՝ Քուզայի կինը, եւ
Շուշանն ու շատ ուրիշներ, որոնք
իրենց ունեցուածքից մատակարարում
էին նրան[†]:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ
(Մատթ. 13. 1-9, Մարկ. 4. 1-9)

4 Երբ շատ ժողովուրդ եւ բազմաթիւ
քաղաքներից նրա մօտ եկածներ
հաւաքուեցին, առակով նրանց ասաց.
5 «Մի սերմնացան ելաւ սերմեր ցանե-
լու: Եւ երբ նա սերմանում էր, մի մաս
սերմ ընկաւ ճանապարհի եզերքը եւ
ոտնակոխ եղաւ, եւ երկնքի թռչուն-
ները այն կերան: 6 Եւ ուրիշ մի մաս
ընկաւ ապառաժի վրայ. երբ բուսաւ,
չորացաւ՝ խոնաւութիւն չլինելու պատ-
ճառով: 7 Եւ ուրիշ մի մաս ընկաւ փշե-
րի մէջ. եւ փշերը նրա հետ բուսնելով՝
այն խեղդեցին: 8 Եւ ուրիշ մի մաս
ընկաւ լաւ ու պարարտ հողի վրայ եւ,
բուսնելով, հարիւրապատիկ պտուղ
տուեց»: Երբ այս խօսեց, ասաց. «Ով որ
լսելու ականջ ունի, թող լսի»:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 13. 10-23, Մարկ. 4. 10-20)

9 Աշակերտները նրան հարցնում
էին, թէ այդ առակն ի՞նչ է նշա-
նակում: 10 Եւ նա ասաց. «Ձեզ տրուած
է գիտենալ Աստծու արքայութեան
խորհուրդները, իսկ ուրիշներին՝ առակ-
ներով, որպէսզի նայեն, բայց չտեսնեն,
լսեն, բայց չիմանան:
11 Իսկ առակը այս է նշանակում.
սերմը Աստծու խօսքն է: 12 Որոնք որ
ճանապարհի եզերքին են, այդ նրանք
են, որ լսում են, եւ ապա սատանան
գալիս հանում է խօսքը նրանց սրտից,
որպէսզի չհաւատան եւ չփրկուեն:
13 Եւ որոնք որ ապառաժի վրայ են,
այդ նրանք են, որ, երբ լսեն, խնդու-
թեամբ են ընդունում խօսքը, բայց
արմատ չեն բռնում. սրանք միառժա-
մանակ հաւատում են, իսկ փորձու-
թեան ժամանակ՝ հեռանում: 14 Իսկ
այն, որ փշերի մէջ ընկաւ, այդ նրանք
են, որ, երբ լսում են խօսքը, աշխարհի
հոգսերով, հարստութեամբ եւ զուար-
ճութեամբ զբաղուած լինելով՝ խեղդ-
ւում ու անպտուղ են լինում: 15 Իսկ
այն, որ պարարտ հողի վրայ է, նրանք
են, որ բարի եւ զուարթագին սրտով
լսելով խօսքը՝ ընդունում են այն եւ
յարատեւելով պտուղ են տալիս»:

ՃՐԱԳԻ ԱՌԱԿԸ
(Մարկ. 4. 21-25)

16 «Ո՛չ ոք ճրագ չի վառի եւ կաթ-
սայի տակ չի թաքցնի կամ մահճի տակ
չի դնի, այլ կը դնի աշտանակի վրայ,
որպէսզի, ովքեր մտնեն, լոյսը տեսնեն:
17 Մածուկ ոչինչ չկայ, որ չյայտնուի,
ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի եւ ի
յայտ չգայ: 18 Այսուհետեւ զգո՛յշ
եղէք, թէ ինչպէս էք դուք լսում. որով-
հետեւ ով որ ունի, նրան կը տրուի, իսկ
ով որ չունի, եւ այն, ինչ որ նա կար-
ծում է, թէ ունի, կը վերցուի նրանից»

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
(Մատթ. 12. 46-50, Մարկ. 3. 31-35)

19 Նրա մօտ եկան իր մայրն ու
եղբայրները եւ չէին կարողանում
նրան մօտենալ բազմութեան պատ-
ճառով: 20 Իմաց տուին նրան եւ ասա-
ցին. «Քո մայրը եւ քո եղբայրները
դրսում կանգնել են եւ ուզում են քեզ
տեսնել»: 21 Եւ նրանց ասաց. «Իմ
մայրը եւ եղբայրները սրանք են, որ
Աստծու խօսքը լսում են եւ կա-
տարում»:

ՐՆՈՒԹԵԱՆ ՏԷՐԸ
(Մատթ. 8. 23-27, Մարկ. 3. 35-41)

22 Մի օր ինքը նաւակ նստեց իր
աշակերտների հետ եւ նրանց ասաց.
«Եկէ՛ք ծովակի միւս կողմն անցնենք»:
Եւ գնացին: 23 Մինչ նաւարկում էին,
նա քուն մտաւ: Եւ ծովակի վրայ քա-
մու մի մրրիկ իջաւ. ծովը ուռչում էր,
նաւակը ջրով լցնում. եւ նրանք տագ-
նապի էին մատնուել: 24 Մօտեցան
արթնացրին նրան եւ ասացին. «Վար-
դապե՛տ, Վարդապե՛տ, ահա կորչում
ենք»: Եւ նա վեր կենալով՝ սաստեց
քամուն ու աղմկայոյզ կոհակներին, եւ
նրանք հանդարտուեցին, եւ խաղա-
ղութիւն տիրեց: 25 Եւ նրանց ասաց.
«Ո՞ւր է ձեր հաւատը»: Եւ նրանք
սարսափած՝ զարմացան եւ ասում էին
միմեանց. «Ո՞վ է արդեօք սա, որ հող-
մերին ու ջրերին անգամ հրաման է
տալիս, եւ դրանք հնազանդւում են
սրան»:

ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՒԱՀԱՐԸ
(Մատթ. 8. 28-34, Մարկ. 5. 1-20)

26 Ապա նաւարկեցին իջան գերգե-
սացիների երկիրը, որը Գալիլիայի
հանդիպակաց կողմն է: 27 Եւ երբ նա
ցամաք ելաւ, նրան պատահեց քաղա-
քից մի մարդ, որի մէջ դեւեր կային.
նա երկար ժամանակ հագուստ չէր
հագել եւ ոչ էլ տան մէջ էր բնակուել,
այլ՝ գերեզմանների: 28 Եւ տեսնելով
Յիսուսին՝ աղաղակեց, ընկաւ նրա
առաջ եւ բարձր ձայնով ասաց. «Ի՞նչ
ես ուզում ինձնից, Յիսո՛ւս, բարձրեալ
Աստծու Որդի, աղաչում եմ քեզ, ինձ
մի՛ տանջիր». 29 որովհետեւ Յիսուս
հրաման էր տալիս պիղծ ոգուն, որ
դուրս գայ այդ մարդուց, քանի որ շատ
անգամ տիրացել էր նրան, եւ նա
կապւում էր շղթաներով, պահւում էր
երկաթների մէջ, բայց կոտրում էր
կապանքները եւ դեւից քշւում էր
անբնակ վայրեր: 30 Յիսուս հարցրեց
նրան եւ ասաց. «Անուն դ ի՞նչ է»: Եւ
նա ասաց. «Լեգէոն». որովհետեւ նրա
մէջ շատ դեւեր էին մտել. 31 աղաչում
էին նրան, որ հրաման չտայ իրենց, որ
անդունդ գնան: 32 Եւ այնտեղ մեծ
թուով խոզերի մի երամակ կար, որ
արածում էր լեռան վրայ: Աղաչեցին
նրան, որ հրաման տայ իրենց՝ գնալ
մտնել նրանց մէջ: Եւ նա թոյլատրեց
նրանց, 33 եւ դեւերը դուրս եկան այդ
մարդուց ու մտան խոզերի մէջ. եւ
երամակը գահաւանդից դիմեց դէպի
ծովակ ու խեղդուեց: 34 Երբ խոզա-
րածները տեսան պատահածները, փա-
խան եւ պատմեցին քաղաքում ու
ագարակներում: 35 Եւ երբ մարդիկ
դուրս եկան կատարուածները տեսնելու
եւ եկան Յիսուսի մօտ ու գտան այն
մարդուն, որից դեւերը ելել էին, – որը
հագնուած եւ զգաստացած՝ նստած էր
Յիսուսի ոտքերի մօտ, – վախեցան:
36 Նրանք, որ ականատես էին եղել,
պատմեցին նրանց, թէ ինչպէս
փրկուեց դիւահարը: 37 Եւ գերգեսա-
ցիների երկրի շրջակայքում գտնուող
ամբողջ բնակչութիւնը աղաչում էր
Յիսուսին՝ հեռու գնալ իրենց սահ-
մաններից, որովհետեւ մեծ վախով
տագնապում էին: Եւ նա նաւակ նստե-
լով՝ վերադարձաւ: 38 Այն մարդը, որից
դեւերը դուրս էին եկել, աղաչում էր
նրան, որ ինքը նրա հետ շրջի: Բայց
Յիսուս արձակեց նրան եւ ասաց.
39 «Վերադարձի՛ր քո տունը եւ պատ-
մի՛ր, ինչ որ Աստուած արեց քեզ
համար»: Նա գնաց քաղաք եւ տարա-
ծում էր այն, ինչ Յիսուս արեց իրեն:

ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԿԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 9. 18-26, Մարկ. 5. 21-43)

40 Եւ երբ Յիսուս վերադարձաւ ծովի
միւս կողմը, ժողովուրդը նրան լաւ
ընդունեց, որովհետեւ ամէնքը նրան
սպասում էին: 41 Եւ ահա եկաւ մի
մարդ, որի անունը Յայրոս էր, եւ որը
ժողովրդապետ էր: Յիսուսի ոտքերն
ընկնելով՝ նա աղաչում էր նրան, որ իր
տունը մտնի, 42 որովհետեւ նա մօտ
տասներկու տարեկան մի միամօրիկ
դուստր ունէր, որ մահամերձ էր: Եւ
երբ Յիսուս գնում էր, ժողովուրդը
նրան նեղում էր: 43 Եւ մի կին, որ
տասներկու տարուց ի վեր արիւնա-
հոսութիւն ունէր եւ հնար չէր եղել
նրան որեւէ մէկից բժշկուել, 44 յետեւից
մօտեցաւ եւ դիպաւ նրա զգեստի
քղանցքին, եւ նոյն ժամին նրա արիւ-

†Լաւագոյն յուն. բն. Նրան-ի փոխարէն ունեն Նրանց:

նահոսութիւնը դադարեց: 45 Եւ Յիսուս
ասաց. «Ո՞վ էր, որ ինձ դիպաւ»: Եւ
երբ բոլորը ուրանում էին, Պետրոսը եւ
նրա հետ եղողները ասացին† . «Վար-
դապե՛տ, ժողովուրդն է, որ սեղմում ու
նեղում է քեզ»: 46 Եւ Յիսուս ասաց.
«Մէկն ինձ դիպաւ, որովհետեւ զգացի,
որ ինձնից զօրութիւն դուրս եկաւ»:
47 Երբ կինը տեսաւ, որ այդ ծածուկ
չմնաց նրանից, դողալով եկաւ եւ
ընկաւ նրա առաջ ու ամբողջ ժողովրդի
առջեւ պատմեց, թէ ինչ բանի համար
դիպաւ նրան եւ թէ ինչպէս իսկոյն
բժշկուեց: 48 Եւ նա ասաց. «Քաջա-
լերուի՛ր, դո՛ւստր, քո հաւատը փրկեց
քեզ, գնա՛ խաղաղութեամբ»:
49 Եւ մինչ նա խօսում էր, ժո-
ղովրդապետի տնից մէկն եկաւ եւ
Յայրոսին ասաց. «Աղջիկդ մեռաւ,
յոգնութիւն մի՛ պատճառիր դրան»:
50 Իսկ երբ Յիսուս լսեց, նրան պա-
տասխանեց եւ ասաց. «Մի՛ վախեցիր,
միայն հաւատա՛, եւ նա կ'ապրի»: 51 Եւ
նրա տունը մտնելով՝ ոչ ոքի չթողեց
ներս մտնել, բացի Պետրոսից, Յակո-
բոսից, Յովհաննէսից եւ երեխայի
հօրից ու մօրից: 52 Ամէնքը լալիս եւ
ողբում էին նրա վրայ: Եւ նա ասաց.
«Լաց մի՛ եղէք, որովհետեւ մեռած չէ,
այլ ննջում է»: 53 Իսկ նրանք ծաղրում
էին նրան, որովհետեւ գիտէին, որ
մեռած էր: 54 Եւ ամենքին դուրս հա-
նելով՝ բռնեց նրա ձեռքից, գոչեց եւ
ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մա-
նուկ»: 55 Եւ նրա հոգին վերադարձաւ,
եւ մանուկը իսկոյն կանգնեց: Եւ Յի-
սուս հրամայեց, որ նրան ուտելու բան
տան: 56 Եւ նրա ծնողները զարմացած
մնացին, իսկ նա պատուիրեց, որ ոչ ոքի
չասեն, ինչ որ եղել էր:

ՏԱՍՆԵՐԿՈՒԻՍ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 10. 5-15, Մարկ. 6. 7-13)

9 Եւ նա կանչելով տասներկու առա-
քեալներին՝ նրանց զօրութիւն եւ
իշխանութիւն տուեց բոլոր դեւերի
վրայ, նաեւ՝ բժշկելու հիւանդութիւն-
ները: 2 Եւ ուղարկեց նրանց քարոզելու
Աստուծոյ արքայութիւնը եւ բժշկելու
ախտերով վարակուածներին: 3 Եւ
ասաց նրանց. «Ճանապարհի համար
ոչինչ մի՛ վերցրէք. ո՛չ գաւազան եւ ո՛չ
մախաղ, ո՛չ հաց եւ ո՛չ արծաթ դրամ.
երկու հագուստ մի՛ ունեցէք. 4 որ
տունն էլ մտնէք, այնտե՛ղ գիշերեցէք
եւ ապա այնտեղից գնացէ՛ք: 5 Եւ
նրանք, որ ձեզ չեն ընդունի, որպէս
վկայութիւն նրանց դէմ՝ ձեր ոտքերի
փոշին թօթափեցէ՛ք, երբ այդ քաղա-
քից դուրս ելնէք»: 6 Եւ նրանք ելան եւ
շրջում էին քաղաքներում ու գիւղե-
րում, աւետարանում էին եւ բժշկում
ամէն տեղ:

ՀԵՐՈՎԴԷՍԸ ԵՒ ՅԻՍՈՒՍ
(Մատթ. 14. 1-12, Մարկ. 6. 14-29)

7 Հերովդէս չորրորդապետը լսեց այս
բոլոր գործերը եւ զարմանում էր
ոմանց ասածի վրայ, 8 թէ՝ Յովհան-
նէսը մեռելներից յարութիւն է առել,
իսկ ոմանց ասածի վրայ, թէ՝ Եղիան
յայտնուեց, եւ ուրիշների՝ թէ՝ նախկին
մարգարէներից մէկը յարութիւն է
առել: 9 Հերովդէսն ասաց. «Յովհան-
նէսին ես գլխատեցի, իսկ սա ո՞վ է, որի
մասին այսպիսի բաներ եմ լսում»: Եւ
ուզում էր նրան տեսնել:

ՀԱՑԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մատթ. 14. 13-21, Մարկ. 6. 30-44, Յովհ. 6. 1-14)

10 Առաքեալները վերադարձան եւ
Յիսուսին պատմեցին այն ամէնը, ինչ
որ արեցին. եւ նա նրանց հետն առ-
նելով՝ քաշուեց առանձնացաւ ամայի
մի տեղ, մօտակայքը մի քաղաքի, որ
Բեթսայիդա էր կոչւում: 11 Եւ երբ
ժողովուրդը իմացաւ, գնաց նրա յետ-
եւից. եւ նա ընդունելով նրանց՝ խօս-
ում էր նրանց հետ Աստծու արքա-
յութեան մասին. եւ որոնք որ բժշկուե-
լու կարիք ունէին, բժշկում էր նրանց:
12 Եւ օրն սկսեց տարաժամել:
Տասներկուսը մօտեցան եւ նրան ասա-
ցին. «Արձակի՛ր այս ժողովրդին, որ-
պէսզի գնան շրջակայ գիւղերը եւ
ագարակները, հանգստանան եւ կերա-
կուր գտնեն, որովհետեւ այստեղ
ամայի վայրում ենք»: 13 Նա ասաց
նրանց. «Դո՛ւք տուէք նրանց ուտելու
բան»: Եւ նրանք ասացին. «Մենք
հինգ նկանակից եւ երկու ձկից աւելին
չունենք, եթէ չգնանք եւ այս ժո-
ղովրդի համար բաւարար ուտելիք
չգնենք». 14 որովհետեւ շուրջ հինգ
հազար մարդ կար: Նա աշակերտ-
ներին ասաց. «Նստեցրէ՛ք դրանց
խումբ-խումբ, յիսուն-յիսուն»: 15 Եւ
այդպէս արեցին ու ամենքին նստեց-
րին: 16 Եւ նա վերցնելով հինգ նկա-
նակը եւ երկու ձուկը՝ նայեց դէպի
երկինք, օրհնեց, կտրեց եւ աշակերտ-
ներին տուեց, որպէսզի ժողովրդի
առաջ դնեն: 17 Ամէնքը կերան եւ
յագեցան. իսկ կտորտանքները վերց-
րին՝ տասներկու սակառ լիքը:

ՁՇՄԱՐԻՏ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 16. 13-19, Մարկ. 8. 27-29)

18 Եւ երբ նա առանձին աղօթքի էր
կանգնել, նրա հետ էին նաեւ իր
աշակերտները: Նրանց հարցրեց եւ
ասաց. «Ժողովուրդը իմ մասին ի՞նչ է
ասում. ո՞վ եմ»: 19 Եւ նրանք պատաս-
խանեցին եւ ասացին. «Յովհաննէս
Մկրտիչը. եւ ոմանք, թէ՝ Եղիան, իսկ
ուրիշներ, թէ՝ նախնիներից մի մար-
գարէ յարութիւն է առել»: 20 Ասաց
նրանց. «Դո՛ւք իմ մասին ի՞նչ էք
ասում. ո՞վ եմ»: Պետրոսը պատաս-
խանեց եւ ասաց. «Աստծու Քրիս-
տոսը»: 21 Նա սաստեց նրանց եւ
պատուիրեց ոչ ոքի չասել այդ:

ՅԻՍՈՒՍԻ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆԸ
ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 16. 20-28, Մարկ. 8. 31-39)

22 Ապա ասաց. «Մարդու Որդին
պէտք է շատ չարչարուի եւ անարգուի
քահանայապետներից եւ ծերերից ու
օրէնսգէտներից. եւ սպանուի ու երրորդ
օրը յարութիւն առնի»:
23 Եւ ամենքին ասում էր. «Եթէ
մէկը կամենում է իմ յետեւից գալ, թող
ուրանայ իր անձը եւ իր խաչը
մշտապէս վերցնի եւ գայ իմ յետեւից.
24 որովհետեւ, ով որ կամենայ իր անձը
փրկել, այն պիտի կորցնի, իսկ ով որ իր
անձը ինձ համար կորցնի, այն պիտի
փրկի: 25 Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ
աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի
ու տուժի. 26 որովհետեւ, ով որ ինձ եւ
իմ խօսքերը ամօթ կը համարի, նրան
մարդու Որդին էլ ամօթահար պիտի
անի, երբ գայ իր եւ Հօր եւ սուրբ
հրեշտակների փառքով:
27 Բայց, արդարեւ, ասում եմ ձեզ,
թէ այստեղ գտնուողների մէջ կան
ոմանք, որոնք մահ չպիտի ճաշակեն,
մինչեւ որ չտեսնեն Աստծու արքայու-
թիւնը»:

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 17. 1-8, Մարկ. 9. 1-7)

28 Եւ այս խօսքերից մօտ ութ օր
յետոյ, իր հետ վերցնելով Պետրոսին,
Յակոբոսին եւ Յովհաննէսին, նա լեռ
ելաւ աղօթքի կանգնելու: 29 Եւ երբ
աղօթքի էր կանգնած, նրա երեսի
տեսքը այլակերպուեց, նրա զգեստը
փոխուեց եւ փայլուն-սպիտակ դար-
ձաւ: 30 Եւ ահա երկու մարդիկ խօսում
էին նրա հետ: Նրանք Մովսէսն ու
Եղիան էին, 31 որոնք փառքով
երեւալով՝ խօսում էին նրա վախճանի
մասին, որ տեղի պիտի ունենար
Երուսաղէմում: 32 Իսկ Պետրոսը եւ նրա
հետ գտնուողները քնի ծանրութեան
տակ՝ արթնացան ու տեսան նրա
փառքը եւ երկու մարդկանց, որոնք
նրա մօտ կանգնած էին: 33 Եւ երբ
դրանք նրանից հեռանում էին, Պետ-
րոսը Յիսուսին ասաց. «Վարդապե՛տ,
լաւ է, որ մենք այստեղ ենք. երեք
տաղաւար շինենք, մէկը՝ քեզ, մէկը՝
Մովսէսի եւ մէկը՝ Եղիայի համար»: Եւ
չէր իմանում, թէ ինչ էր խօսում: 34 Եւ
երբ այս ասում էր, մի ամպ եկաւ ու
նրանց վրայ հովանի եղաւ. եւ երբ
նրանք ամպի տակ ընկան, վախեցան:
35 Ամպից մի ձայն եկաւ, որ ասում էր.
«Դա՛ է իմ ընտրեալ Որդին, լսեցէ՛ք
դրան»: 36 Եւ մինչ խօսքի ձայնը դեռ
գալիս էր, Յիսուս միայնակ գտնուեց.
եւ նրանք լսեցին ու այդ օրերին ոչ ոքի
չպատմեցին իրենց տեսածներից եւ ոչ
մի բան:

†Լաւագոյն յուն. բն. Պետրոսը եւ նրա հետ եղողները ասացին-ի փոխարէն ունեն միայն Պետրոսն ասաց:

ԼՈՒՍՆՈՏ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 17. 14-22, Մարկ. 9. 13-26)

37 Յաջորդ օրը, երբ նրանք իջնում էին լեռնից, Յիսուսին ընդառաջ գնաց մի մեծ բազմութիւն: 38 Եւ ահա ժողովրդի միջից մի մարդ աղաղակեց եւ ասաց. «Վարդապե՛տ, աղաչում եմ քեզ, նայի՛ր իմ որդուն, որովհետեւ իմ մէկ հատիկն է. 39 ահա չար ոգին դէսուդէն է զարնւում նրա մէջ եւ յանկարծ գոչում է. եւ նրան սաստիկ ցնցում է, թաւալեցնում, փրփրեցնում եւ, խորտակելով նրան, հազիւ է հեռանում նրանից: 40 Ես քո աշակերտներին աղաչեցի, որ հանեն չար ոգուն, բայց նրանք չկարողացան»: 41 Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Ո՛վ անհաւատ եւ մոլորուած սերունդ, մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ եւ ձեզ հանդուրժեմ. բե՛ր այստեղ քո որդուն»: 42 Եւ մինչդեռ նա մօտենում էր, դեւը գետին խփեց նրան ու ցնցեց: 43 Յիսուս սաստեց պիղծ ոգուն, բժշկեց մանկանը եւ տուեց նրան նրա հօրը: 44 Եւ ամէնքը զարմանում էին Աստծու մեծագործութիւնների վրայ: Եւ մինչդեռ բոլորը զարմանում էին այն ամենի վրայ, որ նա կատարում էր, նա իր աշակերտներին ասաց. «Ձեր ականջների մէջ պահեցէ՛ք դուք այս խօսքերը. որ մարդու Որդին մատնուելու է մարդկանց ձեռքը»: 45 Սակայն նրանք չէին ըմբռնում այս խօսքը, եւ դա ծածկուած էր նրանցից, որ չիմանան. եւ վախենում էին այդ խօսքի մասին հարց տալ նրան:

ՃՇՄԱՐԻՏ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 18. 1-5, Մարկ. 9. 32-36)

46 Աշակերտների մէջ մի վէճ առաջ եկաւ, թէ արդեօք իրենցից ո՛վ է մեծ: 47 Երբ Յիսուս իմացաւ նրանց սրտի խորհուրդները, վերցրեց մի մանուկ, կանգնեցրեց նրանց մէջ իր մօտ 48 եւ ասաց նրանց. «Ով որ այս մանկանը ընդունի իմ անունով, ինձ է ընդունում. իսկ ով որ ինձ ընդունի, ընդունում է ինձ ուղարկողին. որովհետեւ, ով որ ձեր մէջ փոքրագոյնն է, նա՛ է մեծ»:

ՈՎ ՄԵՐ ԴԷՄ ՉԷ, ՄԵՋ ՀԵՏ Է
(Մարկ. 9. 37-39)

49 Յովհաննէսը պատասխանեց եւ ասաց. «Վարդապե՛տ, տեսանք մէկին, որ քո անունով դեւեր էր հանում, եւ արգելեցինք նրան, որովհետեւ մեզ հետ չի շրջում»: 50 Յիսուս ասաց նրանց. «Մի՛ արգելէք նրան, որովհետեւ, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է»:

ՎԱՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՍԱՄԱՐԻԱՅԻ ՄԻ ԳԻՒՂՈՒՄ

51 Եւ երբ աշխարհից նրա վերանալու օրերը լրանում էին, հաստատապէս որոշեց գնալ Երուսաղէմ: 52 Եւ իրենից առաջ պատգամաւորներ ուղարկեց, որոնք, երբ գնացին, մտան սամարացիների մի գիւղ՝ նրա համար պատրաստութիւն տեսնելու: 53 Բայց սրանք չընդունեցին նրան, որովհետեւ նա ուղեւորւում էր դէպի Երուսաղէմ: 54 Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը, այդ տեսան, ասացին. «Տէ՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, եւ երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց»: 55 Նա դարձաւ սաստեց նրանց եւ ասաց. «Գիտէք ի՛նչ հոգուց էք դուք. 56 որովհետեւ մարդու Որդին չեկաւ մարդկանց հոգիները կորստեան մատնելու, այլ՝ փրկելու»† : Եւ մի ուրիշ գիւղ գնացին:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Մատթ. 8. 19-22)

57 Եւ մինչդեռ նրանք գնում էին, ճանապարհի վրայ մէկը նրան ասաց. «Կը գամ քո յետեւից, ինչ տեղ էլ գնաս»: 58 Յիսուս նրան ասաց. «Աղուէսները որջեր ունեն, եւ երկնքի թռչունները՝ հանգստանալու տեղ, բայց մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի»:

59 Մի ուրիշի էլ ասաց. «Արի՛ իմ յետեւից»: Եւ սա ասաց. «Տէ՛ր, հրաման տուր ինձ՝ գնալ նախ թաղել իմ հօրը»: 60 Յիսուս նրան ասաց. «Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա՛ քարոզիր Աստծու արքայութիւնը»:

61 Մէկ ուրիշն էլ ասաց. «Քո յետեւից կը գամ, Տէ՛ր, բայց նախ թո՛յլ տուր ինձ, որ հրաժեշտ տամ իմ տանը»: 62 Յիսուս նրան ասաց. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրայ կը դնի եւ ապա յետ կը նայի, եթէ յարմար է Աստծու արքայութեանը»:

ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

10 Այնուհետեւ Տէրը նշանակեց ուրիշ եօթանասուներկու հոգի եւս եւ նրանց իրենից առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր ինքը գնալու էր: 2 Եւ նրանց ասաց. «Հունձն առատ է, իսկ մշակները՝ սակաւ: Արդ, խնդրեցէ՛ք հնձի տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար: 3 Գնացէ՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրեւ գառներ գայլերի մէջ: 4 Մի՛ վերցրէք ո՛չ քսակ, ո՛չ մախաղ, ո՛չ կօշիկներ եւ ճանապարհին ոչ ոքի ողջոյն մի՛ տուէք: 5 Որ տունը մտնէք, նախ ասացէ՛ք. «Խաղաղութի՛ւն այս տանը». 6 եթէ այնտեղ կայ խաղաղասէր մարդ, ձեր խաղաղութիւնը նրա վրայ կը հանգչի. ապա թէ ոչ՝ ձե՛զ կը վերադառնայ: 7 Նոյն տանը գիշերեցէ՛ք, կերէ՛ք եւ խմեցէ՛ք նրանց ունեցածից, որովհետեւ մշակը արժանի է իր վարձին. տնից տուն մի՛ տեղափոխուէք: 8 Ո՛ր քաղաքը որ մտնէք եւ ձեզ ընդունեն, կերէ՛ք, ինչ որ ձեր առաջ դնեն: 9 Եւ բժշկեցէ՛ք դրա մէջ եղած հիւանդներին եւ նրանց ասացէ՛ք. "Մօտեցել է ձեզ Աստծու արքայութիւնը": 10 Իսկ ո՛ր քաղաքը որ մտնէք եւ ձեզ չընդունեն, երբ դուրս գաք նրա հրապարակները, ասացէ՛ք. 11 "Ձեր քաղաքից մեր ոտքերին կպած փոշին անգամ թօթափում ենք ձեր վրայ. բայց իմացէ՛ք, որ մօտեցել է Աստծու արքայութիւնը": 12 Ասում եմ ձեզ, որ սոդոմայեցիների համար դատաստանի օրը աւելի տանելի պիտի լինի, քան այն քաղաքի համար»:

ՎԱՅԵՐ ՉԱՊԱՇԽԱՐՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԻՆ
(Մատթ. 11. 20-24)

13 «Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, որովհետեւ եթէ Տիւրոսում եւ Սիդոնում եղած լինէին այն զօրաւոր գործերը, որ կատարուեցին ձեր մէջ, արդարեւ վաղուց իսկ քուրձերի մէջ ու մոխրի վրայ նստած՝ ապաշխարած կը լինէին: 14 Բայց Տիւրոսի եւ Սիդոնի համար, դատաստանի ժամանակ, աւելի տանելի կը լինի, քան ձեզ համար: 15 Եւ դու, Կափառնայո՛ւմ, որ մինչեւ երկինք ես բարձրացել, պիտի իջնես մինչեւ դժոխք: 16 Ով որ ձեզ լսում է, ինձ է լսում, եւ ով որ ձեզ է մերժում, ինձ է մերժում, եւ ով որ ինձ է մերժում, ինձ ուղարկողին է մերժում, եւ ով որ ինձ է լսում, լսում է նրան, ով ինձ ուղարկեց»:

ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

17 Եօթանասուներկուսը վերադարձան խնդութեամբ եւ ասացին. «Տէ՛ր, դեւերն էլ են մեզ հնազանդւում քո անունով»: 18 Եւ նրանց ասաց. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպէս փայլակը: 19 Ահա ձեզ իշխանութիւն տուի կոխելու օձերի, կարիճների եւ թշնամու ամբողջ զօրութեան վրայ: Եւ ձեզ բոլորովին չեն վնասելու: 20 Բայց մի՛ ուրախացէք այն բանի համար, որ դեւերը ձեզ հնազանդւում են, այլ ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկնքում»:

ՅԻՍՈՒՍԻ ԲԵՐԿՐԱՆՔԸ
(Մատթ. 11. 25-27, 13. 16-17)

21 Նոյն ժամին Յիսուս ցնծաց Սուրբ Հոգով եւ ասաց. «Գոհութի՛ւն քեզ, Հա՛յր, Տէ՛ր երկնքի եւ երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից ու գիտուններից եւ յայտնեցիր մանուկներին. այո՛, Հա՛յր, որովհետեւ այսպէս հաճելի եղաւ քեզ: 22 Ամէն ինչ ինձ տրուեց իմ Հօրից. եւ ոչ ոք չգիտէ, թէ

†Յուն. լաւ բն. չուներ եւ ասաց. «Գիտէք ի՛նչ ... այլ՝ փրկելու» նախադասութիւնը:

ո՛վ է Որդին, եթէ ոչ՝ Հայրը, եւ թէ՝ ո՛վ է Հայրը, եթէ ոչ՝ Որդին եւ նա, ում կը կամենայ Որդին յայտնել»:

23 *Եւ դառնալով աշակերտներին՝ առանձին ասաց. «Երանի՛ այն աչքերին, որ կը տեսնեն այն, ինչ դուք տեսնում էք:* 24 *Ասում եմ ձեզ, որ բազում մարգարէներ եւ թագաւորներ կամեցան տեսնել այն, ինչ դուք տեսնում էք, բայց չտեսան, եւ լսել՝ ինչ դուք լսում էք, բայց չլսեցին»:*

ՄԵԾ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

25 *Եւ ահա օրինականներից մէկը վեր կացաւ, փորձում էր նրան եւ ասում. «Վարդապե՛տ, ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»:* 26 *Եւ նա նրան ասաց. «Օրէնքում ի՞նչ է գրուած, ինչպէ՞ս ես ընթերցում»:* 27 *Սա պատասխանեց եւ ասաց. «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ զօրութեամբ եւ քո ամբողջ մտքով. եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս քո անձը»:* 28 *Եւ Յիսուս նրան ասաց. «Ճիշտ պատասխան տուեցիր, այդ արա՛ եւ կը փրկուես»:*

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ

29 *Եւ նա կամենալով ինքն իրեն արդարացնել, ասաց Յիսուսին. «Իսկ ո՞վ է իմ ընկերը»:* 30 *Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Մի մարդ Երուսաղէմից Երիքով էր իջնում եւ ընկաւ աւազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրաւորեցին եւ կիսամեռ թողեցին ու գնացին:* 31 *Պատահեց, որ մի քահանայ նոյն ճանապարհով իջնի. նրան տեսաւ եւ թողեց անցաւ.* 32 *նոյնպէս եւ մի ղեւտացի նոյն տեղով անցնելիս, տեսաւ եւ թողեց անցաւ:* 33 *Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկաւ նոյն տեղով նրա մօտ եւ տեսնելով նրան՝ գթաց:* 34 *Եւ մօտենալով՝ կապեց նրա վէրքերը, վրան ձէթ ու գինի ածեց եւ դնելով նրան իր գրաստի վրայ՝ տարաւ մի իջեւան եւ խնամեց նրան:* 35 *Եւ յաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջեւանատիրոջը երկու դահեկան հանեց տուեց եւ ասաց. «Խնամի՛ր նրան եւ ինչ որ ծախսես դրա վրայ, իմ միւս անգամ գալուն կը հատուցեմ քեզ»:* 36 *Արդ, ըստ քեզ, այդ երեքից ո՞րը մերձաւորի պէս վերաբերուեց նրան, ով աւազակների ձեռքն էր ընկել»:* 37 *Եւ սա ասաց. «Նա, ով նրան բարիք արեց»: Յիսուս նրան ասաց. «Գնա՛ եւ դու նո՛յն ձեւով արա»:*

ԱՅՑ ՄԱՐԹԱՅԻՆ ԵՒ ՄԱՐԻԱՄԻՆ

38 *Եւ մինչ նրանք գալիս էին, Յիսուս մտաւ մի գիւղ, եւ Մարթա անունով մի կին նրան ընդունեց իր տան մէջ:* 39 *Եւ սա մի քոյր ունէր, որի անունը Մարիամ էր, որ եկաւ նստեց Տիրոջ ոտքերի առաջ եւ լսում էր նրա խօսքերը:* 40 *Իսկ Մարթան, որ զբաղուած էր տնային շատ գործերով, եկաւ կանգնեց նրա մօտ եւ ասաց. «Տէ՛ր, քեզ փոյթ չէ՞, որ քոյրս ինձ մենակ է թողել ծառայութեան գործի մէջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ»:* 41 *Յիսուս պատասխանեց ու ասաց. «Մարթա՛, Մարթա՛, դու հոգս ես անում եւ շատ բաներով ես զբաղուած,* 42 *բայց այստեղ քիչ*[†] *բան է պէտք. Մարիամը ընտրել է լաւ մասը, որ նրանից չպիտի վերցուի»:*

ՅԻՍՈՒՍ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՂՕԹԵԼ
(Մատթ. 6. 9-13, 7. 7-11)

11 *Եւ եղաւ որ Յիսուս մի տեղ աղօթքի էր կանգնած. եւ երբ վերջացրեց, նրա աշակերտներից մէկն ասաց նրան. «Տէ՛ր, մեզ աղօթել սովորեցրո՛ւ, ինչպէս Յովհաննէսը սովորեցրեց իր աշակերտներին»:* 2 *Նա նրանց ասաց. «Երբ աղօթքի կանգնէք, ասացէ՛ք.*

Հայր մեր[‡], սուրբ թող լինի քո անունը.
քո արքայութիւնը թող գայ:
3 Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ ամէն օր:
4 Եւ մեր մեղքերը մեզ ների՛ր,
ինչպէս մենք էլ ներում ենք ամէն մարդու,
որ յանցանք է գործում մեր դէմ.
եւ մի՛ տար մեզ փորձութեան»:

[†]Յուն. լաւ բն. *միչ* բառի փոխարէն ունեն մէկ:
[‡]Յունարէն մի շարք ձեռագրեր աւելացնում են՝ *որ երկնքում ես:*

5 *Եւ Յիսուս նրանց ասաց. «Ձեզնից ո՞վ է, որ բարեկամ ունենայ, գնայ նրա մօտ կէսգիշերին եւ ասի նրան. բարեկա՛մ, ինձ երեք նկանակ փո՛խ տուր,* 6 *որովհետեւ իմ բարեկամը ճանապարհից եկաւ ինձ մօտ, եւ ես նրա առաջ դնելու ոչինչ չունեմ:* 7 *Իսկ նա ներսից պատասխանի եւ ասի. "Ինձ նեղութիւն մի՛ տուր, որովհետեւ դռները փակուած են, եւ երեխաներս ինձ հետ անկողնում են, չեմ կարող վեր կենալ եւ քեզ հաց տալ":* 8 *Ասում եմ ձեզ, եթէ բարեկամութեան համար էլ վեր չկենայ եւ հաց չտայ նրան, նրա թախանձանքի՛ պատճառով վեր կենալով կը տայ նրան, ինչ որ պէտք է:*

9 *Եւ ես ասում եմ ձեզ. խնդրեցէ՛ք, եւ Աստծուց կը տրուի ձեզ. փնտռեցէ՛ք, եւ կը գտնէք, բախեցէ՛ք, եւ կը բացուի ձեզ համար,* 10 *որովհետեւ, ով որ խնդրում է, առնում է, ով որ փնտռում է, գտնում է, եւ ով որ բախում է, բացւում է նրա առաջ:* 11 *Ձեզնից ո՞վ է այն հայրը, որի որդին եթէ ձուկ ուզի, միթէ ձկան փոխարէն օ՞ձ կը տայ նրան.* 12 *եւ կամ ձու ուզի, միթէ կարի՞ճ կը տայ նրան:* 13 *Իսկ եթէ դուք, որ չար էք, գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներին, որչա՛փ եւս առաւել ձեր երկնաւոր Հայրը բարիքներ*[†] *կը տայ նրանց, որոնք ուզում են իրենից»:*

ՅԻՍՈՒՍ ԵՒ ԲԷԵԶԶԵԲՈՒԼԸ
(Մատթ. 12. 22-30, Մարկ. 3. 22-27)

14 *Եւ Յիսուս մի համր դեւ էր հանում. եւ երբ դեւը ելաւ, համրը խօսեց. եւ ամբողջ ժողովուրդը զարմացաւ:* 15 *Եւ նրանցից ոմանք ասացին. «Դա դեւերին հանում է դեւերի իշխան Բէեզզեբուղի միջոցով»:* 16 *Իսկ ուրիշներ փորձում էին նրան եւ երկնքից նշան էին ուզում նրանից:* 17 *Իսկ նա իմանալով նրանց մտածումները՝ ասաց նրանց. «Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերւում է, եւ ինքն իր մէջ բաժանուած ամէն տուն՝ կործանւում:* 18 *Արդ, եթէ սատանան էլ ինքն իր մէջ բաժանուեց, նրա թագաւորութիւնը ինչպէ՞ս կարող է կանգուն մնալ. որովհետեւ իմ մասին ասում էք, թէ՝ "Դա դեւերին հանում է դեւերի իշխան Բէեզզեբուղի միջոցով":* 19 *Եթէ ես դեւերին հանում եմ Բէեզզեբուղի միջոցով, ձեր հետեւորդները ինչո՞վ պիտի հանեն. դրա համար նրա՛նք պիտի լինեն ձեր դատաւորները:* 20 *Իսկ եթէ Աստծու մատով եմ հանում դեւերին, ապա Աստծու արքայութիւնը հասել է ձեր վրայ:* 21 *Երբոր զինուած հզօր մի մարդ պահպանում է իր տունը, նրա ինչքը ապահով է:* 22 *Բայց եթէ նրանից աւելի հզօրը գայ նրա վրայ եւ յաղթի նրան, նրանից կը հանի այն զէնքերը, որոնց վրայ յոյս էր դրել, եւ նրա աւարը կը բաժանի:* 23 *Ով ինձ հետ չէ, հակառակ է ինձ, եւ ով ինձ հետ չի հաւաքում, ցրում է»:*

ՊԻՂԾ ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ
(Մատթ. 12. 43-45)

24 *«Երբ պիղծ դեւը ելնում է մարդուց, չրջում է անջրդի տեղերում, հանգիստ է փնտռում. եւ երբ չի գտնում, ասում է՝ "Վերադառնամ իմ տունը, որտեղից ելայ":* 25 *Եւ գալիս է ու գտնում այն՝ մաքրուած եւ կարգի բերուած:* 26 *Այն ժամանակ գնում եւ վերցնում է իրենից աւելի չար եօթը այլ դեւեր եւ մտնում, բնակւում է այնտեղ. եւ այն մարդու վերջին վիճակը լինում է աւելի վատ, քան նախկինը»:*

ՃՇՄԱՐԻՏ ԵՐԱՆՈՒԹԻՆԸ

27 *Եւ մինչդեռ Յիսուս այս բանն էր խօսում, ժողովրդի միջից մի կին ձայն բարձրացրեց եւ ասաց. «Երանի՛ է այն կնոջը, որ յղացաւ եւ դիեցրեց քեզ»:* 28 *Եւ նա ասաց. «Մանաւանդ երանի՛ է նրանց, որ լսում են Աստծու խօսքը եւ կը պահեն»:*

ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՑՈՒՄ ՅԻՍՈՒՍԻՑ
(Մատթ. 12. 38-42)

29 *Եւ երբ ժողովուրդը նրա շուրջը խռնուեց, սկսեց ասել. «Այս սերունդը չար սերունդ է. նշան է ուզում, եւ*

[†]Լաւագոյն յուն. բն. *բարիքներ*-ի փոխարէն ունեն *Սուրբ Հոգին:*

նրան երկնքից այլ նշան չի տրուի,
բացի Յովնանի նշանից. 30 որովհետեւ,
ինչպէս Յովնանը նշան եղաւ Նի-
նուէացիների համար, նոյնպէս մարդու
Որդին նշան կը լինի այս սերնդի
համար: 31 Հարաւի դշխոն դատաս-
տանի ժամանակ վեր պիտի կենայ այս
սերնդի մարդկանց հետ եւ պիտի դա-
տապարտի նրանց, որովհետեւ նա երկ-
րի ծագերից եկաւ լսելու Սողոմոնի
իմաստութիւնը. եւ ահա Սողոմոնից
մեծը կայ այստեղ: 32 Նինուէի մարդիկ
դատաստանի ժամանակ վեր պիտի կե-
նան այս սերնդի հետ եւ պիտի դատա-
պարտեն նրան, որովհետեւ Յովնանի
քարոզութեան վրայ ապաշխարեցին. եւ
ահա Յովնանից մեծը կայ այստեղ»:

ՄԱՐՄՆԻ ԼՈՅՍԸ
(Մատթ. 5. 15, 6. 22-23)

33 «Ոչ ոք ճրագ վառելով ծածուկ
տեղ չի դնի, այլ կը դնի աշտանակի
վրայ, որպէսզի մտնողը լոյս տեսնի:
34 Մարմնի ճրագը աչքն է. երբ աչքը
առողջ է, ամբողջ մարմինը լուսաւոր
կը լինի, իսկ երբ աչքը պղտոր է,
մարմինն էլ խաւար կը լինի: 35 Արդ,
զգո՛յշ եղիր, գուցէ այն լոյսը, որ քո
մէջ է, խաւար լինի: 36 Եթէ քո ամբողջ
մարմինը լուսաւոր է, եւ նրա մէջ
խաւարի մաս չկայ, ամէն ինչ այնպէս
լուսաւոր կը լինի, ինչպէս երբ ճրագը
իր շողերով լուսաւորի քեզ»:

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՕՐԷՆԳԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
(Մատթ. 23. 1-36, Մարկ. 12. 38-40)

37 Եւ մինչդեռ նա խօսում էր այս
բաները, մի փարիսեցի աղաչում էր
նրան, որ իր մօտ ճաշի: Եւ նա մտնե-
լով՝ սեղան նստեց: 38 Երբ փարիսեցին
տեսաւ, զարմացաւ, որովհետեւ Յիսուս
ճաշից առաջ չլուացուեց: 39 Տէրը նրան
ասաց. «Այժմ դուք՝ փարիսեցիներդ,
բաժակի եւ պնակի արտաքինն էք
մաքրում, իսկ ձեր ներքինը լի է
յափշտակութեամբ եւ չարութեամբ:
40 Անմիտնե՛ր, չէ՞ որ նա, ով արտա-
քինը ստեղծեց, նաեւ ներքինը ստեղ-
ծեց: 41 Բայց տեսէ՛ք, թէ ինչն է իսկա-
պէս արժան. ողորմութի՛ւն տուէք, եւ
ահա ձեր ամէն ինչը մաքուր կը լինի:
42 Բայց վա՛յ ձեզ՝ փարիսեցիներիդ,
որ տասանորդ էք տալիս անանուխի,
փեգենայի եւ ամէն տեսակ բանջա-
րեղէնի, բայց զանց էք անում Աստծու
արդարութիւնն ու սէրը. այս բաները
պէտք էր անել, բայց միւսները զանց
չանել: 43 Վա՛յ ձեզ՝ փարիսեցիներիդ,
որ ժողովարաններում բարձր գահերն
էք սիրում եւ հրապարակներում՝ առա-
ջին ողջոյնները ստանալ: 44 Վա՛յ ձեզ,
որ անյայտ գերեզմանների պէս էք.
մարդիկ քայլում են նրանց վրայով եւ
չգիտեն»: 45 Օրէնսգէտներից մէկը
պատասխանեց եւ ասաց նրան. «Վար-
դապե՛տ, այդ բաներն ասելով՝ մեզ էլ
ես նախատում»: 46 Եւ նա ասաց.
«Վա՛յ ձե՛զ եւս, օրէնսգէտնե՛ր, որ
մարդկանց դժուարակիր բեռներ էք
բարձում, բայց դուք ինքներդ մէկ
մատով իսկ բեռներին չէք դիպչում:
47 Վա՛յ ձեզ, որ մարգարէներին շի-
րիմներ էք շինում, իսկ ձեր հայրերը
նրանց սպանեցին: 48 Դրանով իսկ
դուք վկայում էք, թէ կամակից էք ձեր
հայրերի գործերին, որովհետեւ նրանք
կոտորեցին մարգարէներին, իսկ դուք
նրանց գերեզմաններ էք շինում:
49 Դրա համար Աստծու իմաստու-
թիւնն ասաց. նրանց մէջ մարգարէներ
եւ առաքեալներ կ'ուղարկեմ, եւ նրան-
ցից ոմանց պիտի սպանեն եւ հալածեն,
50 որպէսզի այդ սերնդից պահանջուի
արիւնը բոլոր մարգարէների՝ թա-
փուած աշխարհի սկզբից՝ 51 Աբէլի
արիւնից մինչեւ արիւնը Զաքարիայի,
որը կորստեան մատնուեց խորանի եւ
տաճարի միջեւ. այո՛, ասում եմ ձեզ,
պիտի պահանջուի՛ այդ սերնդից:
52 Վա՛յ ձեզ՝ օրէնսգէտների՛դ, որ
թաքցնում էք գիտութեան բանալի-
ները. դուք չէք մտնում եւ մտնող-
ներին էլ արգելում էք»:
53 Եւ երբ այս բոլորը նրանց ասաց
ամբողջ ժողովրդի առաջ, ամօթահար
եղան. եւ օրէնսգէտներն ու փարի-
սեցիները սկսեցին խիստ չարանալ եւ
բանավէճի բռնուել նրա հետ՝ շատ բա-
ների համար: 54 Եւ սպասում էին նրա

բերանից ինչ-ինչ խօսքեր որսալ, որ-
պէսզի չարախօսեն նրա մասին:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ
(Մատթ. 10. 26-31)

12 Մինչ Յիսուսի շուրջը բիւրաւոր
ժողովուրդ հաւաքուեց՝ իրար կոխո-
տելու աստիճան, նա սկսեց նախ իր
աշակերտներին ասել. «Նախ դուք ձեզ
զգո՛յշ պահեցէք փարիսեցիների խմո-
րից, որ կեղծաւորութիւնն է, 2 որով-
հետեւ չկայ ծածուկ բան, որ չյայտ-
նուի, եւ գաղտնի բան, որ չիմացուի,
3 քանի որ, ինչ որ խաւարի մէջ ասէք,
լսելի պիտի լինի լոյսի մէջ. եւ ինչ որ
շտեմարաններում փսփսաք ականջնե-
րի մէջ, պիտի քարոզուի տանիքների
վրայ: 4 Բայց ասում եմ ձեզ՝ իմ սի-
րելիներին, մի՛ զարհուրէք նրանցից, որ
մարմինն են սպանում եւ դրանից յետոյ
աւելի բան անել չեն կարող, 5 այլ
ցոյց կը տամ ձեզ, թէ ումի՛ց պէտք է
վախենաք: Վախեցէ՛ք նրանից, ով
սպանելուց յետոյ գեհեն նետելու իշ-
խանութիւն ունի: Այո՛, ասում եմ ձեզ,
վախեցէ՛ք նրանից: 6 Չէ՞ որ հինգ
ճնճղուկը երկու դահեկանի է վաճառ-
ւում, եւ նրանցից ոչ մէկը Աստծու
առաջ մոռացուած չէ: 7 Նոյնիսկ ձեր
գլխի բոլոր մազերը հաշուուած են. մի՛
վախեցէք, որովհետեւ դուք շատ աւելի
յարգի էք, քան ճնճղուկները»:

ԴԱՒԱՆԵԼ ՅԻՍՈՒՍԻՆ
(Մատթ. 10. 32-33, 12. 32, 10. 19-20)

8 «Ասում եմ ձեզ, ով որ մարդկանց
առաջ խոստովանի ինձ, մարդու Որդին
էլ նրան կը խոստովանի Աստծու
հրեշտակների առաջ: 9 Իսկ ով որ
մարդկանց առաջ ինձ կ'ուրանայ,
Աստծու հրեշտակների առաջ պիտի
ուրացուի: 10 Եւ ով որ մարդու Որդու
դէմ բան ասի, նրան պիտի ներուի,
բայց ով որ Սուրբ Հոգուն հայհոյի,
նրան չպիտի ներուի: 11 Իսկ երբ ձեզ
տանեն ժողովարանների, կառավարիչ-
ների եւ իշխանաւորների առաջ, մի՛
մտահոգուէք, թէ ինչպէս կամ ինչ
պատասխան պիտի տաք եւ կամ ինչ
պիտի ասէք, 12 որովհետեւ Սուրբ Հոգին
նոյն ժամին կը սովորեցնի ձեզ, թէ ինչ
պէտք է խօսել»:

ԱՆՄԻՏ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԸ

13 Ժողովրդի միջից մէկը նրան
ասաց. «Վարդապե՛տ, ասա եղբօրս, որ
ժառանգութիւնը ինձ հետ բաժանի»:
14 Եւ նա նրան ասաց. «Ո՛վ մարդ, ինձ
ո՞վ դատաւոր կամ բաժանարար կար-
գեց ձեր վրայ»: 15 Ապա ժողովրդին
ասաց. «Տեսէք, որ զգոյշ լինէք ամէն
տեսակ ագահութիւնից, որովհետեւ
մարդու կեանքը իր կուտակած
հարստութեան մէջ չէ»: 16 Եւ նրանց
մի առակ պատմեց ու ասաց. «Մի
մեծահարուստի արտերը առատ բերք
տուեցին. 17 եւ նա խորհեց իր մտքում
ու ասաց. "Տեսնեմ ինչ կարող եմ անել,
քանի որ բերքս կուտակելու տեղ չկայ:
18 Գիտեմ, – ասաց նա, – թէ ինչ պէտք
է անեմ. կը քանդեմ իմ շտեմարանները
եւ աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ
կը հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ
բարիքները. 19 ու ինքս ինձ կ'ասեմ՝ ո՛վ
մարդ, շատ տարիների համար ամբա-
րուած բազում բարիքներ ունես, հան-
գի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ
եղիր"»: 20 Աստուած նրան ասաց.
"Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ քեզ-
նից պահանջելու են, իսկ ինչ որ
պատրաստել ես, ո՞ւմն է լինելու":
21 Նոյնպէս է նաեւ նա, ով իր անձի
համար գանձ կը հաւաքի եւ Աստուծով
չի հարստանայ»:

ՀՈԳՍ ԵՒ ԱՆՁԿՈՒԹԻՆ
(Մատթ. 6. 25-34)

22 Եւ իր աշակերտներին ասաց.
«Դրա համար էլ ասում եմ ձեզ. հոգ
մի՛ արէք ձեր հոգու համար, թէ ինչ էք
ուտելու, ոչ էլ մարմնի համար, թէ ինչ
էք հագնելու, 23 որովհետեւ հոգին
առաւել է, քան կերակուրը, եւ մար-
մինը՝ քան հագուստը: 24 Նայեցէ՛ք
ագռաւներին, որոնք ո՛չ սերմանում են
եւ ո՛չ հնձում, որոնք ո՛չ շտեմարաններ
ունեն եւ ո՛չ էլ ամբարներ, բայց
Աստուած կերակրում է նրանց. որքա՞ն

եւս առաւել ձեզ, որ չատ աւելի յարգի
էք, քան թռչունները: 25 Ձեզնից ո՞վ,
հոգս անելով, կը կարողանայ իր
հասակի վրայ մէկ կանգուն աւե-
լացնել: 26 Արդ, եթէ փոքր բանի մէջ
անկարող էք, այլ բաների համար
ինչո՞ւ էք հոգս անում: 27 Նայեցէ՛ք
շուշանին՝ ինչպէս է աճում. ո՛չ
աշխատում է եւ ո՛չ հիւսում: Ասում եմ
ձեզ՝ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի
մէջ նրանցից մէկի նման չհագնուեց:
28 Իսկ եթէ խոտը, որ այսօր բաց
դաշտի մէջ է, իսկ վաղը հնոց է
նետուելու, Աստուած այդպէ՛ս է
հագցնում, որչա՛փ եւս առաւել ձեզ
պիտի հագցնի, թերահաւատնե՛ր: 29 Եւ
դուք մի՛ մտահոգուէք, թէ ի՛նչ էք
ուտելու կամ ի՛նչ էք խմելու, եւ մի՛
մտատանջուէք, 30 որովհետեւ այդ
ամէնը աշխարհի հեթանոսներն են, որ
փնտռում են: Իսկ ձեր Հայրը գիտէ, որ
այդ ամէնը պէտք է ձեզ: 31 Այլ դուք
հետամո՛ւտ եղէք Աստծու արքայու-
թեանը, եւ այդ ամէնը աւելիով կը
տրուի ձեզ»:

ՓՈՔՐԻԿ ՀՕՏԸ
(Մատթ. 6. 19-21)

32 «Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հօտ,
որովհետեւ ձեր Հայրը հաճեց տալ ձեզ
արքայութիւնը: 33 Վաճառեցէ՛ք ձեր
ինչքերը եւ ողորմութիւն տուէք. եւ
ձեզ համար չինեցէ՛ք չհնացող քսակ-
ներ եւ անհատնում գանձեր երկնքում,
ուր ո՛չ գողն է մօտենում, եւ ո՛չ ցեցը՝
փչացնում. 34 որովհետեւ, ուր որ ձեր
գանձն է, այնտեղ եւ ձեր սրտերը կը
լինեն»:

ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ ՏԻՐՈՋ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

35 «Թող ձեր գօտիները մէջքներիդ
պնդուած լինեն, եւ ճրագներդ՝ վա-
ռուած: 36 Եւ դուք նմանուեցէ՛ք այն
ծառաներին, որոնք սպասում են իրենց
տիրոջը, թէ ե՛րբ կը վերադառնայ
հարսանիքից, որպէսզի, երբ գայ եւ
բախի դուռը, իսկոյն բաց անեն: 37 Ե-
րանի՛ այն ծառաներին, որոնց արթուն
կը գտնի տէրը, երբ գայ: Ճշմարիտ եմ
ասում ձեզ, որ նա գօտի կը կապի
մէջքին, սեղան կը նստեցնի նրանց եւ
կ'անցնի նրանց սպասարկելու: 38 Եւ
եթէ տէրը գայ կէսգիշերին եւ կամ
աւելի ուշ ու գտնի նրանց այդպէս,
երանելի են այդ ծառաները: 39 Բայց
այն էլ իմացէ՛ք, որ եթէ տանտէրը
գիտենար, թէ ո՞ր ժամին գող կը գայ,
թոյլ չէր տայ, որ իր տունը կտրեն:
40 Դուք էլ պատրաստ եղէք, որով-
հետեւ այն ժամին, երբ չէք սպասի, կը
գայ մարդու Որդին»:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՏՆՏԵՍԸ
(Մատթ. 24. 45-51)

41 Պետրոսն ասաց. «Տէ՛ր, մե՞զ
համար ասացիր այդ առակը, թէ՞
բոլորի համար»: 42 Եւ Տէրն ասաց.
«Ո՞վ է այն հաւատարիմ եւ իմաստուն
տնտեսը, որին իր տէրը իր ծառաների
վրայ վերակացու կարգեց՝ ժամանա-
կի՛ն կերակուր տալու համար: 43 Երա-
նի՛ է այն ծառային, որին իր տէրը, երբ
որ գայ, այդպէս արած կը գտնի:
44 Արդարեւ, ասում եմ ձեզ, որ նրան
իր բոլոր ինչքերի վրայ վերակացու կը
կարգի: 45 Իսկ եթէ այդ ծառան իր
սրտում ասի՝ "Իմ տէրը ուշանում է
գալ", եւ սկսի ծեծել ծառաներին եւ
աղախիններին, ուտել, խմել եւ հարբել,
46 այդ ծառայի տէրը կը գայ այն օրը,
երբ նա չէր սպասում, եւ այն ժամին,
որ չէր իմանում. նրան մէջքից երկու
կտոր կ'անի եւ նրա բաժինը անհա-
ւատների հետ կը դնի: 47 Իսկ այն
ծառան, որ գիտէ իր տիրոջ կամքը,
բայց նրա կամքի համաձայն չի պատ-
րաստի, շատ ծեծ կ'ուտի: 48 Եւ այն
ծառան, որ չգիտէ իր տիրոջ կամքը եւ
ծեծի արժանի գործ է կատարում, քիչ
ծեծ կ'ուտի. նրան, ում շատ է տրուած,
նրանից շատ էլ կ'ուզուի, եւ ում շատ է
վստահուած, նրանից աւելին կը պա-
հանջեն»:

ՀՈՒՐ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄ
(Մատթ. 10. 34-36)

49 «Երկրի վրայ կրակ գցելու եկայ.
եւ ինչքա՜ն եմ կամենում, որ արդէն
իսկ բորբոքուած լինի: 50 Եւ մի

մկրտութիւն ունեմ մկրտուելու եւ
ինչպէ՜ս եմ շտապում, որ կատարուի:
51 Կարծում էք, թէ երկրին խաղաղու-
թի՞ւն տալու եկայ. ո՛չ, ասում եմ ձեզ,
այլ՝ բաժանում. 52 որովհետեւ մէկ
տան մէջ այսուհետեւ հինգ հոգի
իրարից բաժանուած պիտի լինեն.
երեքը՝ երկուսի դէմ, եւ երկուսը՝ երեքի:
53 Հայրը պիտի բաժանուի որդու դէմ,
եւ որդին՝ հօր, մայրը՝ աղջկայ դէմ, եւ
աղջիկը՝ մօր, կեսուրը՝ հարսի դէմ, եւ
հարսը՝ իր կեսրոջ»:

ԿԱՆԽԱՏԵՍԵԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ
(Մատթ. 16. 2-3, 5. 25-26)

54 Ժողովրդին էլ ասաց. «Երբ տես-
նէք, որ արեւմուտքից ամպ է ելնում,
իսկոյն կ'ասէք, թէ՝ անձրեւ կը գայ:
Այդպէս էլ լինում է: 55 Եւ երբ հարաւի
քամին փչի, կ'ասէք, թէ՝ խորշակ կը
լինի: Եւ այդպէս էլ լինում է: 56 Կեղ-
ծաւորնե՛ր, երկնքի եւ երկրի երե-
ւոյթները քննել գիտէք, իսկ այս ներ-
կայ ժամանակը ինչպէ՞ս չէք քննում:
57 Ինչո՞ւ դուք անձնապէս արժանին
չէք ընտրում: 58 Երբ քո թշնամու հետ
գնաս իշխանի մօտ, ճանապարհին հա-
շիւդ մաքրի՛ր, որ նրանից ազատուես,
որովհետեւ գուցէ նա քեզ քարշ տայ
դատաւորի մօտ, եւ դատաւորը քեզ
բանտապահի ձեռքը յանձնի, եւ բան-
տապահն էլ՝ բանտ նետի: 59 Ասում եմ
քեզ, այնտեղից դուրս չես գայ, մինչեւ
որ չվճարես վերջին գրոշը»:

ԿՈՉ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

13 Այդ նոյն ժամանակ ոմանք եկան
եւ պատմեցին նրան այն գալիլիա-
ցիների մասին, որոնց արիւնը Պիղա-
տոսը խառնեց իրենց զոհերի արեան
հետ: 2 Նա պատասխանեց նրանց եւ
ասաց. «Կարծո՞ւմ էք, թէ այն գալի-
լիացիները, որոնք այդպիսի պատա-
հարների ենթարկուեցին, աւելի մե-
ղաւոր էին քան բոլոր գալիլիացիները:
3 Ո՛չ, ասում եմ ձեզ, սակայն, եթէ
չապաշխարէք, ամէնքդ էլ նոյնպէս
պիտի կորչէք: 4 Կամ նրանք՝ այն
տասնուութ մարդիկ, որոնց վրայ Սիլո-
վամում աշտարակը փուլ եկաւ եւ
սպանեց նրանց, կարծում էք, թէ աւելի
մեղապա՞րտ էին, քան Երուսաղէմում
բնակուող բոլոր մարդիկ: 5 Ո՛չ, ասում
եմ ձեզ, սակայն եթէ չապաշխարէք,
ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք»:

ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ

6 Պատմեց եւ այս առակը. «Մի
մարդ իր այգում մի թզենի էր տնկել.
եւ երբ պտղի ժամանակը հասաւ, նա
եկաւ նրա վրայ պտուղ փնտռելու ու
չգտաւ: 7 Այգեգործին ասաց. «Ահա
երեք տարի է, որ գալիս եմ այդ թզենու
վրայ պտուղ փնտռելու եւ չեմ գտնում.
արդ, կտրի՛ր այդ. ինչո՞ւ է հողն զբա-
ղեցնում»: 8 Այգեգործը պատասխանեց
եւ ասաց. «Տէ՛ր իմ, նրան այս տարի էլ
թո՛ղ, մինչեւ որ նրա շուրջը փորեմ եւ
աղբ գցեմ. 9 գուցէ թէ պտուղ տայ.
ապա թէ ոչ՝ մի տարուց յետոյ կը
կտրես այդ»:

ԿՈՒՉ ԵԿԱԾ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒՄԸ ՇԱԲԱԹ ՕՐՈՎ

10 Եւ մի շաբաթ օր Յիսուս մի ժողո-
վարանում ուսուցանում էր: 11 Եւ ահա
այնտեղ կար մի կին, որին չար դեւը
տասնուութ տարի բռնած էր պահում. եւ
կուչ էր եկած ու ամենեւին վեր նայել
չէր կարողանում: 12 Եւ Յիսուս նրան
տեսնելով՝ կանչեց իր մօտ եւ ասաց.
«Ո՛վ կին, բժշկուած ես քո հիւանդու-
թիւնից»: 13 Եւ ձեռքը դրեց նրա վրայ,
ու նոյն ժամին հիւանդը ուղղուեց եւ
Աստծուն փառք էր տալիս: 14 Ժո-
ղովրդապետը բարկացաւ, թէ ինչո՛ւ
Յիսուս շաբաթ օրով բուժեց. եւ ասաց
ժողովրդին. «Վեց օր կայ, երբ արժան
է գործել, ա՛յդ օրերին եկէք բուժուեցէք
եւ ոչ թէ շաբաթ օրը»: 15 Տէրը նրան
պատասխանեց եւ ասաց. «Կեղծաւոր-
նե՛ր, ձեզնից իւրաքանչիւր ոք շաբաթ
օրով իր եզը կամ էշը մսուրից չի՞
արձակում եւ չի՞ տանում ջուր տալու:
16 Իսկ սա Աբրահամի դուստրն էր,
որին սատանան ահա տասնուութ տարի
է, ինչ կապել էր, - արժանի չէ՞ր միթէ
շաբաթ օրով արձակել նրան կապանք-
ներից»: 17 Եւ երբ այս ասաց, ամա-

չեցին նրանք, որոնք հակառակում էին նրան. իսկ ամբողջ ժողովուրդը ուրախանում էր այն բոլոր փառաւոր գործերի համար, որ կատարւում էին Յիսուսի կողմից:

ՄԱՆԱՆԵԽԻ ՀԱՏԻԿԻ ԱՌԱԿը
(Մատթ. 13. 31-33, Մարկ. 4. 30-32)

18 Եւ ասաց. «Ինչի՞ նման է Աստծու արքայութիւնը, եւ ինչի՞ նմանեցնեմ այն: 19 Նման է մանանեխի հատիկին, որ մի մարդ վերցրեց եւ նետեց իր պարտէզը: Սա աճեց եւ ծառ եղաւ, եւ երկնքի թռչունները ապրում էին նրա ճիւղերի վրայ»:

ԹԹԽՄՈՐԻ ԱՌԱԿը
(Մատթ. 13. 33)

20 Եւ դարձեալ ասաց. «Ինչի՞ նմանեցնեմ Աստծու արքայութիւնը. 21 նման է այն խմորին, որ մի կին, վերցնելով, խառնեց երեք գրիւ ալիւրի մէջ, մինչեւ որ ամբողջը խմորուեց»:

ՆԵՂ ԴՈՒՌԸ
(Մատթ. 7. 13-14, 21-23)

22 Եւ Յիսուս շրջում էր քաղաքներով ու գիւղերով եւ ուսուցանում էր: Երբ ճանապարհ էր ընկել դէպի Երուսաղէմ, 23 մէկը նրան ասաց. «Տէ՛ր, սակաւաթի՞ւ են նրանք, որ փրկուելու են»: 24 Եւ նա նրանց ասաց. «Ջանացէ՛ք մտնել նեղ դռնով. ասում եմ ձեզ, որ շատերը կ'ուզենան մտնել, բայց չեն կարողանայ: 25 Այն բանից յետոյ, երբ տանտէրը մտնի եւ դուռը փակի, դուք, դրսում կանգնած, կը սկսէք դուռը բախել եւ ասել. "Տէ՛ր, տէ՛ր, բա՛ց մեզ համար". իսկ նա պատասխանելով կ'ասի ձեզ. "Չգիտեմ, թէ որտեղից էք": 26 Այն ժամանակ կը սկսէք ասել. "Մենք քո առաջ կերանք եւ խմեցինք, եւ դու հրապարակներում ուսուցանեցիր": 27 Եւ տանտէրը կ'ասի. "Ասում եմ՝ ձեզ չգիտեմ, թէ որտեղից էք. հեռացէ՛ք ինձնից դուք՝ բոլոր անիրաւ մշակներդ": 28 Այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում, երբ տեսնէք Աբրահամին, Իսահակին, Յակոբին եւ բոլոր մարգարէներին Աստծու արքայութեան մէջ, իսկ ձեզ՝ դուրս հանուած: 29 Եւ կը գան մարդիկ արեւելքից եւ արեւմուտքից, հիւսիսից եւ հարաւից ու կը բազմեն Աստծու արքայութեան մէջ: 30 Եւ ահա վերջիններ կան, որ առաջին կը լինեն, եւ առաջիններ՝ որ կը լինեն վերջին»:

ԱՂՈՒԷՍ ՀԵՐՈՎԴԷՍԸ

31 Նոյն օրը մի քանի փարիսեցիներ մօտեցան եւ ասացին նրան. «Վե՛ր կաց, գնա՛ այստեղից, որովհետեւ Հերովդէսն ուզում է քեզ սպանել»: 32 Եւ Յիսուս նրանց ասաց. «Գնացէք ասացէ՛ք այն աղուէսին, թէ ահա դեւեր եմ հանում, բուժումներ եմ կատարում այսօր եւ վաղը, իսկ երրորդ օրը գործս կ'աւարտեմ: 33 Բայց պէտք է այսօր, վաղը եւ միւս օրը գնալ. որովհետեւ մարգարէն պէտք չէ, որ Երուսաղէմից դուրս կորստեան մատնուի»:

ՈՂԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
(Մատթ. 23. 37-39)

34 «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորում էիր մարգարէներին եւ քարկոծում էիր քեզ մօտ ուղարկուածներին. քանի՛ քանի՛ անգամ կամեցայ հաւաքել քո որդիներին, ինչպէս հաւը իր ձագերին՝ թեւերի տակ, բայց դու չկամեցար: 35 Ահա ձեր տունը ձեզ պիտի թողնուի աւերակ. բայց ասում եմ ձեզ, որ ինձ այլեւս չէք տեսնի, մինչեւ որ չասէք՝ "Օրհնեա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով"»:

ՋՐԳՈՂՈՎ ՀԻՒԱՆԴԻ ԲԺՇԿՈՒՄԸ ՇԱԲԱԹ ՕՐՈՎ

14 Երբ մի շաբաթ օր նա մտաւ փարիսեցիների իշխանաւորներից մէկի տունը հաց ուտելու, նրանք դիտում էին նրան: 2 Եւ ահա այնտեղ, նրա առաջ ջրգողով հիւանդ մի մարդ կար: 3 Յիսուս պատասխանեց օրէնսգէտներին ու փարիսեցիներին եւ ասաց. «Շաբաթ օրով բժշկելը օրինաւո՞ր է, թէ՞՝ ոչ»: 4 Նրանք լուռ մնացին: Յիսուս նրան բռնելով՝ բուժեց եւ արձակեց: 5 Եւ նրանց ասաց. «Ձեզնից ո՞ւմ եզը կամ էշը ընկնի ջրհորի մէջ, նա իսկոյն այն չի հանի շաբաթ օրով»: 6 Եւ այդ մասին նրան պատասխան տալ չկարողացան:

ԴԱՄ՝ ԽՆՋՈՅԳԻ ՀՐԱՒԻՐՈՒԱԾՆԵՐԻՆ

7 Հրաւիրուածներին էլ մի առակ ասաց՝ տեսնելով, թէ ինչպէս նրանք պատուոյ տեղերն էին ընտրում: 8 Նրանց ասաց. «Երբ մէկը քեզ հարսանիքի կամ հրաւէրքի կանչի, առաջին տեղը մի՛ նստիր, գուցէ քեզնից աւելի պատուական մէկը նրա կողմից կանչուած լինի: 9 Եւ քեզ ու նրան կանչողը գայ ու քեզ ասի՝ "Սրան տե՛ղ տուր": Եւ ապա սկսես ամօթով վերջին տեղը գրաւել: 10 Այլ, երբ հրաւիրուես, գնա բազմի՛ր վերջին տեղը, որպէսզի, երբ քեզ կանչողը գայ եւ քեզ ասի՝ "Բարեկա՛մ, աւելի վե՛ր մօտեցիր", այն ժամանակ քո սեղանակիցների առաջ դու փառաւորուես. 11 որովհետեւ նա, ով ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհուի, եւ նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանայ»:

ՀՐԱՒԻՐՈՒԱԾՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

12 Իրեն հրաւիրողին էլ ասաց. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին եւ ո՛չ էլ քո հարուստ հարեւաններին, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն, եւ քեզ հատուցում լինի: 13 Այլ, երբ ընդունելութիւն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին 14 եւ երանելի կը լինես, որովհետեւ փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եւ դրա փոխարէն քեզ կը հատուցուի արդարների յարութեան օրը»:

ՄԵԾ ԽՆՋՈՅԳԻ ԱՌԱԿը
(Մատթ. 22. 1-10)

15 Երբ սեղանակիցներից մէկը այս լսեց, ասաց նրան. «Երանի՛ նրան, ով ճաշ կ'ուտի Աստծու արքայութեան մէջ»: 16 Եւ Յիսուս ասաց. «Մի մարդ ընթրիք սարքեց եւ հրաւիրեց շատերին: 17 Եւ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց՝ կանչելու հրաւիրուածներին, թէ՝ "Եկէ՛ք, որովհետեւ ահա ամէն ինչ պատրաստ է": 18 Եւ ամէնքը մէկ-մէկ սկսեցին հրաժարուել: Առաջինն ասաց. "Ագարակ գնեցի եւ պէտք է, որ գնամ տեսնեմ. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր": 19 Եւ միւսն ասաց. "Հինգ լուծ եզներ գնեցի. գնում եմ դրանք փորձելու. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր": 20 Իսկ միւսն ասաց. "Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ": 21 Եւ ծառան եկաւ ու իր տիրոջը պատմեց այս: Այդ ժամանակ, բարկանալով, տանտէրն իր ծառային ասաց. "Իսկոյն դո՛ւրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները եւ աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին բեր մտցրո՛ւ այստեղ": 22 Եւ ծառան ասաց. "Տէ՛ր, ինչ հրամայեցիր՝ կատարուեց եւ էլի տեղ կայ": 23 Եւ տէրը ծառային ասաց. "Դո՛ւրս եկ ճանապարհներն ու ցանկապատների առաջ եւ մարդկանց այստեղ մտցրո՛ւ, որպէսզի տունս լցուի": 24 Ասում եմ ձեզ, որ այդ հրաւիրուածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»:

ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ՀԵՏԵՒՈՐԴը
(Մատթ. 10. 37-38)

25 Եւ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. նա դարձաւ եւ ասաց նրանց. 26 «Եթէ մէկը ինձ մօտ գայ եւ չնախընտրի ինձ իր հօրից ու մօրից, կնոջից ու որդիներից, եղբայրներից ու քոյրերից, նոյնիսկ իր անձից անգամ, չի կարող իմ աշակերտը լինել. 27 որովհետեւ, ով որ չվերցնի իր խաչը եւ իմ յետեւից չգայ, չի կարող իմ աշակերտը լինել: 28 Ձեզնից ո՞վ, եթէ կամենայ աշտարակ շինել, նախ նստելով չի հաշուի իր ծախսերը, թէ աւարտելու համար բաւական դրամ ունի՞, 29 որպէսզի, գուցէ, երբ հիմը դնի եւ չկարողանայ աւարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել 30 եւ

ասել, թէ՝ "Այս մարդը սկսեց կառուցել
եւ չկարողացաւ աւարտել": 31 Կամ ո՞ր
թագաւորը, եթէ գնայ պատերազմելու
մի այլ թագաւորի դէմ, նախ չի նստի
եւ խորհի, թէ տասը հազարով կը
կարողանա՞յ դիմադրել նրան, որ իր
վրայ քսան հազարով է գալիս: 32 Ապա
թէ ոչ, մինչ սա դեռ հեռու է, պատ-
գամաւորութիւն ուղարկելով՝ խաղա-
ղութիւն կը խնդրի: 33 Արդ, այսպէս էլ՝
ձեզնից ով որ իր ամբողջ ունե-
ցուածքից չհրաժարուի, չի կարող իմ
աշակերտը լինել»:

ԱՆՀԱՄ ԱՂԸ

(Մատթ. 5. 13, Մարկ. 9. 49)

34 «Աղը լաւ բան է, բայց եթէ աղն
էլ անհամանայ, ինչո՞վ այն պիտի
համեմուի: 35 Ո՛չ հողի համար է պի-
տանի եւ ո՛չ էլ՝ պարարտանիւթի, այլ՝
դուրս թափելու: Ով որ ականջ ունի
լսելու, թող լսի»:

ԿՈՐԱԾ ՈՉԽԱՐԻ ԵՒ ԿՈՐԱԾ ԴՐԱՄԻ ԱՌԱԿԸ

(Մատթ. 18. 12-14)

15 Եւ բոլոր մաքսաւորներն ու մե-
ղաւորները նրա մօտն էին, որպէսզի
լսեն նրան: 2 Փարիսեցիներն ու օրէնս-
գէտները տրտնջում էին եւ ասում.
«Ինչո՞ւ է սա ընդունում մեղաւոր-
ներին եւ ուտում նրանց հետ»:
3 Յիսուս նրանց այս առակն ասաց.
4 «Ձեզնից ո՞վ է այն մարդը, որ, երբ
հարիւր ոչխար ունենայ եւ կորցնի
նրանցից մէկը, արօտավայրում չի
թողնի իննսունիններին եւ չի գնայ
կորածի յետեւից, մինչեւ որ այն գտնի:
5 Եւ երբ այն գտնի, կը դնի այն իր
ուսերի վրայ խնդութեամբ 6 եւ կը
գնայ տուն, կը կանչի բարեկամներին
եւ հարեւաններին ու նրանց կ'ասի.
ուրախացէ՛ք ինձ հետ, որովհետեւ
գտայ իմ կորած ոչխարը: 7 Ասում եմ
ձեզ, որ այսպէս ուրախութիւն կը լինի
երկնքում մի մեղաւորի համար, որն
ապաշխարում է, քան իննսունինը ար-
դարների համար, որոնց ապաշխա-
րութիւն պէտք չէ: 8 Կամ՝ ո՞վ է այն
կինը, որ, երբ տասը դրամ ունենայ եւ
մի դրամ կորցնի, ճրագ չի վառի եւ չի
աւլի տունը փութով ու չի փնտռի,
մինչեւ որ գտնի: 9 Եւ երբ գտնի, կը
կանչի բարեկամներին եւ հարեւան-
ներին ու կ'ասի. "Ուրախացէ՛ք ինձ
հետ, որովհետեւ գտայ իմ կորցրած
դրամը": 10 Ասում եմ ձեզ, Աստծու
հրեշտակների առաջ այսպէս ուրախու-
թիւն կը լինի մէկ մեղաւորի համար,
որն ապաշխարում է»:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒԻ ԱՌԱԿԸ

11 Եւ ասաց. «Մի մարդ երկու որդի
ունէր. 12 նրանցից կրտսերը հօրն
ասաց. "Հա՛յր, տո՛ւր քո ունեցուածքից
ինձ ընկնող բաժինը": Եւ նա ունե-
ցուածքը բաժանեց նրանց: 13 Քիչ օրեր
յետոյ, կրտսեր որդին, փողի վերածելով
ամէն ինչ, գնաց հեռու աշխարհ եւ
այնտեղ վատնեց իր ունեցուածքը,
որովհետեւ անառակ կեանքով էր ապ-
րում: 14 Եւ երբ ամէն ինչ սպառեց, այդ
երկրում սաստիկ սով եղաւ, եւ նա
սկսեց չքաւոր դառնալ: 15 Գնաց դիմեց
այդ երկրի քաղաքացիներից մէկին, եւ
սա ուղարկեց նրան իր ագարակը՝
խոզեր արածեցնելու: 16 Եւ նա ցան-
կանում էր իր որովայնը լցնել եղջե-
րենու պտղով, որ խոզերն էին ուտում,
բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս:
17 Ապա խելքի եկաւ եւ ասաց. "Քանի՛
վարձու աշխատաւորներ կան իմ հօր
տանը, որ առատ հաց ունեն, եւ ես
այստեղ սովամահ կորչում եմ: 18 Վեր
կենամ գնամ իմ հօր մօտ եւ նրան
ասեմ. Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու
քո առաջ 19 եւ այլեւս արժանի չեմ քո
որդին կոչուելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ
քո աշխատաւորներից մէկը": 20 Եւ
վեր կացաւ եկաւ իր հօր մօտ. եւ մինչ
դեռ հեռու էր, հայրը տեսաւ նրան եւ
գթաց. վեր կացաւ եւ վազեց նրան ըն-
դառաջ, ընկաւ նրա պարանոցով եւ
համբուրեց նրան: 21 Եւ որդին ասաց
նրան. "Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ
եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո
որդին կոչուելու": 22 Հայրը իր ծա-
ռաներին ասաց. "Անմիջապէս հանե-
ցէ՛ք նրա նախկին պատմուճանը եւ
հագցրէ՛ք նրան, մատանին նրա մատը
դրէք եւ նրա ոտքերին՝ կօշիկներ.

23 բերէ՛ք պարարտ եզը, մորթեցէ՛ք,
ուտենք եւ ուրախ լինենք, 24 որով-
հետեւ իմ այս որդին մեռած էր եւ
կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց".
եւ սկսեցին ուրախանալ: 25 Իսկ նրա
աւագ որդին ագարակում էր. եւ մինչ
գալիս էր եւ տանը մօտեցաւ, լսեց
երգերի եւ պարերի ձայնը. 26 եւ իր մօտ
կանչելով ծառաներից մէկին՝ հարցրեց,
թէ այդ ի՞նչ է: 27 Եւ սա նրան ասաց.
"Քո եղբայրը եկել է, եւ քո հայրը
մորթեց պարարտ եզը, որովհետեւ ողջ
առողջ ընդունեց նրան": 28 Նա բար-
կացաւ եւ չէր ուզում ներս մտնել. իսկ
հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր
նրան: 29 Որդին պատասխանեց եւ
ասաց հօրը. "Այս քանի՛ տարի է, որ
ծառայում եմ քեզ եւ երբեք քո
հրամանները զանց չեմ արել. ինձ
երբեք մի ուլ չտուիր, որ բարեկամ-
ներիս հետ ուրախութիւն անէի: 30 Երբ
եկաւ քո այդ որդին, որը քո ունե-
ցուածքը կերաւ պոռնիկների հետ,
պարարտ եզը նրա համար մորթեցիր":
31 Հայրը նրան ասաց. "Որդեա՛կ, դու
միշտ ինձ հետ ես, եւ ամէն ինչ, որ իմն
է, քոնն է. 32 բայց պէտք էր ուրախ
լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս
եղբայրը մեռած էր եւ կենդանացաւ,
կորած էր եւ գտնուեց"»:

ԱՆԻՐԱՒ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

16 Եւ Յիսուս իր աշակերտներին ա-
սաց. «Մի մեծահարուստ մարդ կար, որ
մի տնտես ունէր. եւ նրա մասին ամ-
բաստանութիւն եղաւ, որպէս թէ վատ-
նում է իր տիրոջ ունեցուածքը: 2 Տէրը
կանչեց նրան եւ ասաց. "Այս ի՞նչ եմ
լսում քո մասին. տո՛ւր քո տնտեսու-
թեան հաշիւը, որովհետեւ այլեւս
տնտես լինել չես կարող": 3 Տնտեսը իր
մտքում ասաց. "Ի՞նչ պէտք է անեմ,
քանի որ իմ տէրը տնտեսութիւնս ինձ-
նից վերցնում է. հողի վրայ աշխատել
չեմ կարող, մուրալ ամաչում եմ: 4 Գի-
տեմ, թէ ինչ պիտի անեմ, որպէսզի,
երբ տնտեսութիւնիցս հեռացուեմ, ըն-
դունեն ինձ իրենց տները": 5 Եւ իր
տիրոջ պարտապաններից իւրաքան-
չիւրին մէկ առ մէկ իր մօտ կանչելով՝
առաջինին ասում է՝ "Իմ տիրոջը ինչ-
քա՞ն պարտք ունես": 6 Եւ սա ասում է՝
"Հարիւր տակառիկ ձէթ". եւ տնտեսը
նրան ասում է՝ "Ա՛ռ քո մուրհակը եւ
նստի՛ր ու անմիջապէս գրի՛ր՝ յիսուն":
7 Ապա դարձեալ միւսին ասում է՝ "Դու
ինչքա՞ն պարտք ունես". եւ սա ասաց՝
"Հինգ հարիւր պարկ ցորեն": Տնտեսը
նրան ասաց՝ "Ա՛ռ քո մուրհակը եւ
նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարիւր": 8 Եւ
տէրը գովեց անիրաւ տնտեսին, որով-
հետեւ հնարամտութեամբ գործեց,
քանի որ այս աշխարհի որդիները
աւելի հնարամիտ են, քան լոյսի որ-
դիները իրենց սերնդի մէջ»:

ԴՐԱՄԻ ԽԵԼԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9 «Եւ ես ձեզ ասում եմ. անիրաւ
մամոնայից ձեզ համար բարեկամներ
արէք, որպէսզի, երբ այն պակասի,
յաւիտենական յարկերի տակ ընդունեն
ձեզ: 10 Քիչ բանի մէջ հաւատարիմը
շատի մէջ էլ հաւատարիմ է. իսկ քչի
մէջ անիրաւը, շատի մէջ էլ անիրաւ է:
11 Արդ, եթէ անիրաւ մամոնայի մէջ
հաւատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կը
վստահի ճշմարիտը: 12 Եւ եթէ օտա-
րինը եղող բանի մէջ հաւատարիմ
չեղաք, ձերը ո՞վ կը տայ ձեզ: 13 Ոչ մի
ծառայ երկու տիրոջ ծառայել չի կա-
րող. որովհետեւ, եթէ մէկին ատի,
միւսին կը սիրի. կամ եթէ մէկին
մեծարի, միւսին էլ կ'արհամարհի: Ձէք
կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ
մամոնային»:

ԸՆԴԴԷՄ ԱՐԾԱԹԱՍԷՐ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ

(Մատթ. 11. 12-13, 5. 31-32, Մարկ. 10. 11-12)

14 Երբ փարիսեցիները լսում էին այս
բոլորը, նրան պախարակում էին, քանի
որ արծաթասէր էին: 15 Եւ նրանց
ասաց. «Դուք էք, որ մարդկանց առաջ
ձեզ արդար էք ձեւացնում, սակայն
Աստուած ձեր սրտերը գիտէ. որով-
հետեւ այն, որ մարդկանց առաջ
բարձր է, Աստծու առաջ զզրելի է:
16 Օրէնքն ու մարգարէները մինչեւ
Յովհաննէսն էին. այնուհետեւ աւե-
տարանւում է Աստծու արքայութիւնը,

եւ ամէն ոք բռնի է ուզում ձեռք բերել այն: 17 Աւելի հեշտ է, որ երկինք ու երկիր անցնեն, քան թէ օրէնքից մէկ նշանախեց ընկնի: 18 Ով որ իր կնոջն արձակում է եւ մի ուրիշին առնում, շնանում է. իսկ ով որ արձակուածին է առնում, շնանում է»:

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿը

19 «Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում եւ ամէն օր առատապէս ուրախութիւն էր անում: 20 Եւ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վէրքերով ծածկուած: 21 Եւ ցանկանում էր լցնել իր որովայնը այն փշրանքներով, որոնք թափւում էին մեծահարուստի սեղանից: Եւ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վէրքերը: 22 Երբ աղքատը մեռաւ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. մեծահարուստն էլ մեռաւ եւ թաղուեց: 23 Եւ դժոխքում, մինչ սա տանջանքների մէջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռուից տեսաւ Աբրահամին եւ Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած: 24 Եւ նա աղաղակեց ու ասաց. "Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ եւ ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով եւ զովացնի լեզուս, որովհետեւ այս տապից պապակում եմ": 25 Եւ Աբրահամը նրան ասաց. "Որդեա՛կ, յիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կեանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները. այժմ սա այստեղ մխիթարւում է, իսկ դու այդտեղ պապակում ես: 26 Եւ այս բոլորից բացի, մեծ վիհ կայ մեր եւ ձեր միջեւ. եթէ ուզենան այստեղից ձեզ մօտ անցնել, չեն կարողանայ. ոչ էլ այդտեղից մէկը կարող է մեզ մօտ անցնել": 27 Մեծահարուստն ասաց. "Արդ, աղաչում եմ քեզ, հա՛յր, որ Ղազարոսին ուղարկես իմ հօր տունը, – 28 որտեղ ես հինգ եղբայրներ ունեմ, – որպէսզի նրանց վկայութիւն տայ, որ նրանք էլ չգան տանջանքների այս վայրը": 29 Եւ Աբրահամն ասաց. "Նրանք ունեն Մովսէս եւ մարգարէներ, թող նրա՛նց լսեն": 30 Եւ նա ասաց. "Ո՛չ, հա՛յր Աբրահամ. բայց եթէ մեռելներից մէկը նրանց մօտ գնայ, նրանք կ'ապաշխարեն": 31 Եւ Աբրահամը նրան ասաց. "Եթէ Մովսէսին եւ մարգարէներին չեն լսում, մեռելներից մէկն էլ եթէ յարութիւն առնի, չպիտի համոզուեն"»:

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 18. 6-7, 21-22, Մարկ. 9. 41)

17 Յիսուս ասաց նաեւ իր աշակերտներին. «Անկարելի է, որ գայթակղութիւն չգայ, բայց վա՛յ նրան, որի ձեռքով կը գայ: 2 Նրա համար լաւ կը լինէր, եթէ իր պարանոցից երկանաքար վէմ կախուէր, եւ նա ծովը գցուէր, քան թէ այս փոքրիկներից մէկին գայթակղեցնէր: 3 Զգո՛յշ եղէք ձեր անձերի համար»:

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԱՆՅԻՇԱՁԱՐՈՒԹԻՒՆ

«Եթէ քո եղբայրը մեղանչի, սաստի՛ր նրան. եւ եթէ զղջայ, ների՛ր նրան: 4 Եւ եթէ եօթն անգամ մեղանչի քո դէմ եւ եօթն անգամ դառնայ քեզ եւ ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան»:

ՀԱՒԱՏԻ ՈՒԺԸ

5 Եւ առաքեալները Տիրոջն ասացին. «Աւելացրո՛ւ մեր հաւատը»: 6 Եւ Տէրն ասաց. «Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ ունենաք եւ այս թթենուն ասէ՛ք՝ "Արմատախի՛լ եղիր եւ տնկուի՛ր ծովի մէջ", նա՛ իսկ կը հնազանդուի ձեզ»:

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ԾԱՌԱՅԵԼ

7 «Իսկ ձեզնից ո՞վ, որ հողագործ կամ հովիւ ծառայ ունի, երբ սա ագարակից տուն մտնի, նրան կ'ասի իսկոյն՝ "Անցի՛ր սեղան նստիր". 8 այլ նրան չի՞ ասի՝ "Պատրաստի՛ր, ինչ ընթրելու եմ, եւ գօտի կապած՝ ծառայի՛ր ինձ, մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ ապա կ'ուտես եւ կը խմես դու": 9 Մի՞թէ տէրը շնորհապա՞րտ կը լինի այդ ծառային, որ իր բոլոր հրամանները կատարեց: 10 Նոյնպէս եւ դուք, երբ կատարէք այն բոլորը, որ ձեզ հրամայուած է, ասացէք, թէ՝ "Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտաւոր էինք անել, ա՛յն արեցինք"»:

ՏԱՍԸ ԲՈՐՈՏՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԵԼԸ

11 Եւ մինչ նա դէպի Երուսաղէմ էր գնում, անցնում էր Սամարիայի եւ Գալիլիայի միջով: 12 Եւ երբ մի գիւղ էր մտնում, նրան հանդիպեցին տասը բորոտներ, որոնք հեռու կանգնեցին, 13 բարձրացրին իրենց ձայնը եւ ասացին. «Յիսո՛ւս վարդապետ, ողորմի՛ր մեզ»: 14 Եւ երբ նրանց տեսաւ, ասաց նրանց. «Գնացէ՛ք դուք ձեզ քահանաներին ցոյց տուէք»: Երբ գնում էին, նոյն ժամին մաքրուեցին: 15 Նրանցից մէկը, երբ տեսաւ, թէ բժշկուեց, վերադարձաւ եւ բարձր ձայնով փառաւորում էր Աստծուն. 16 երեսի վրայ ընկաւ Յիսուսի ոտքերի առաջ եւ շնորհակալութիւն էր յայտնում նրան. եւ ինքը սամարացի էր: 17 Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Սրանք տասն էլ չմաքրուեցի՞ն. իսկ արդ, իննը ո՞ւր են, 18 որ չվերադարձան՝ փառք տալու համար Աստծուն, բացի միայն այս օտարազգի մարդուց»: 19 Եւ ասաց նրան. «Վե՛ր կաց գնա, որովհետեւ քո հաւատը քեզ փրկեց»:

ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԳԱԼՈՒՍՏԸ
(Մատթ. 24. 23-28, 37-41)

20 Երբ փարիսեցիների կողմից հարց տրուեց, թէ ե՞րբ պիտի գայ Աստծու արքայութիւնը, նա պատասխանեց եւ ասաց. «Աստծու արքայութիւնը դրսից տեսանելի կերպով չի գալիս, 21 եւ չեն ասի, թէ՝ ահաւասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետեւ ահա Աստծու արքայութիւնը ներսում, ձեր մէջ է»:

22 Իսկ իր աշակերտներին ասաց. «Կը գան օրեր, երբ դուք կ'ուզենաք մարդու Որդու օրերից մէկը տեսնել, եւ չէք տեսնի: 23 Եւ եթէ ձեզ ասեն, թէ՝ "Ահաւասիկ այստեղ է կամ այնտեղ", մի՛ շտապէք գնալու, 24 որովհետեւ, ինչպէս որ փայլակը երկնքի ներքեւից փայլատակելով՝ երկնքի երեսը լուսաւորում է, այնպէս էլ կը լինի մարդու Որդին՝ իր օրում: 25 Բայց նախ նա պէտք է շատ չարչարուի եւ մերժուի այս սերնդից: 26 Եւ ինչպէս եղաւ Նոյի օրով, այնպէս կը լինի եւ մարդու Որդու օրով: 27 Ուտում էին, խմում, կին էին առնում եւ մարդու էին գնում, մինչեւ այն օրը, երբ Նոյը տապան մտաւ, եւ ջրհեղեղը եկաւ ու բոլորին կորստեան մատնեց: 28 Նոյնպէս, ինչպէս Ղովտի օրով էլ եղաւ. ուտում էին, խմում, առնում էին ու վաճառում, տնկում էին, շինում: 29 Եւ այն օրը, երբ Ղովտը Սոդոմից դուրս ելաւ, երկնքից կրակ եւ ծծումբ տեղաց ու բոլորին կորստեան մատնեց: 30 Նոյն ձեւով է լինելու այն օրն էլ, երբ մարդու Որդին է յայտնուելու:

31 Այն օրը, ով որ տանիքում է, եւ իր կարասին՝ տանը, թող չիջնի առնելու այն. եւ ով որ հանդում է, նոյնպէս թող յետ չդառնայ: 32 Յիշեցէ՛ք Ղովտի կնոջը: 33 Ով որ ուզի իր անձը փրկել, պիտի կորցնի այն, իսկ ով որ կորցնի իր անձը, պիտի փրկի այն: 34 Ասում եմ ձեզ, այն գիշերը, եթէ երկու հոգի լինեն մի մահճի մէջ, մէկը պիտի վերցուի, իսկ միւսը՝ թողնուի: 35 Եւ եթէ երկու կին միասին աղալիս լինեն, մէկը պիտի վերցուի, իսկ միւսը՝ թողնուի: Եւ եթէ հանդում երկու հոգի լինեն, մէկը պիտի վերցուի, իսկ միւսը՝ թողնուի»[†]: 36 Պատասխան տուին եւ ասացին նրան. «Որտե՞ղ, Տէ՛ր»: 37 Եւ նա ասաց նրանց. «Ուր որ մարմինն է, այնտեղ էլ կը հաւաքուեն արծիւները»:

ԱՆԻՐԱՒ ԴԱՏԱՒՈՐԻ ԵՒ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԱՌԱԿը

18 Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թէ նրանք ամէն ժամ պէտք է աղօթեն ու չձանձրանան: 2 Ասաց. «Մի քաղաքում մի դատաւոր կար. Աստծուց չէր վախենում եւ մարդկանցից չէր ամաչում: 3 Եւ նոյն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մօտ եւ ասում. "Իմ ոսոխի դէմ իմ դատը տես": 4 Եւ դատաւորը երկար ժամանակ չէր ուզում. դրանից յետոյ իր մտքում ասաց. "Թէեւ Աստծուց չեմ վախենում եւ մարդկանցից չեմ ամա-

[†]Լաւագոյն յուն. բն. չունեն «եւ եթէ հանդում ... թողնուի» նախադասութիւնը:

չում, 5 բայց այն բանի համար, որ այրի կինը ինձ յոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպէսզի անընդհատ չգայ եւ ինձ չանհանգստացնի»: 6 Եւ Տէրն ասաց. «Լսեցէ՛ք, թէ ինչ էր ասում անիրաւ դատաւորը: 7 Իսկ Աստուած արդարութիւն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք գիշեր եւ ցերեկ աղաղակում են. եւ նրանց հանդէպ միայն համբերատա՞ր կը լինի: 8 Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իսկոյն արդարութիւն կ'անի. իսկ երբ մարդու Որդին գայ, արդեօք երկրի վրայ հաւատ կը գտնի՞»:

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ

9 Այս առակն էլ ասաց ոմանց, որոնք իրենք իրենցով պարծենում էին, թէ արդար են, եւ արհամարհում էին ուրիշ շատերին: 10 «Երկու մարդ տաճար ելան աղօթքի կանգնելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: 11 Փարիսեցին կանգնած էր մեկուսի եւ, ինքն իրեն, այս աղօթքն էր ասում. "Աստուած իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպէս՝ յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, եւ կամ ինչպէս այս մաքսաւորը. 12 այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում եւ տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից": 13 Իսկ մաքսաւորը կանգնած էր մեկուսի եւ չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը եւ ասում. "Աստուա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղաւորիս": 14 Ասում եմ ձեզ, սա՝ ինչաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը. որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի»:

ՅԻՍՈՒՍ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
(Մատթ. 19. 13-15, Մարկ. 10. 13-16)

15 Մանուկներին էլ մօտեցնում էին նրան, որպէսզի նրանց դիպչի. երբ աշակերտները այդ տեսան, սաստեցին բերողներին: 16 Իսկ Յիսուս կանչելով մանուկներին իր մօտ՝ ասաց. «Թո՛յլ տուէք այդ մանուկներին, որ ինձ մօտ գան, եւ մի՛ արգելէք նրանց, որովհետեւ այդպիսիներինն է Աստծու արքայութիւնը: 17 Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ Աստծու արքայութիւնը չընդունի ինչպէս մի մանուկ, այնտեղ չի մտնի»:

ՀԱՐՈՒՍՏ ԻՇԽԱՆԱՒՈՐԸ
(Մատթ. 19. 16-30, Մարկ. 10. 17-31)

18 Մի իշխանաւոր նրան հարցրեց եւ ասաց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պիտի անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: 19 Յիսուս նրան ասաց. «Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում. ոչ ոք բարի չէ, այլ միայն՝ Աստուած: 20 Պատուիրանները գիտես՝ մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր, մեծարի՛ր քո հօրը եւ մօրը»: 21 Եւ նա ասաց. «Այդ բոլորը պահել եմ իմ մանկութիւնից»: 22 Երբ Յիսուս այս լսեց, ասաց նրան. «Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես, վաճառի՛ր եւ տո՛ւր աղքատներին եւ երկնքում գանձեր կ'ունենաս, եւ արի՛ իմ յետեւից»: 23 Երբ նա այս լսեց, տրտմեց, որովհետեւ չափազանց հարուստ էր:

24 Երբ Յիսուս նրան տեսաւ տրտմած, ասաց. «Ինչքա՜ն դժուարութեամբ Աստծու արքայութիւնը կը մտնեն նրանք, որոնք հարստութիւն ունեն: 25 Աւելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակից անցնի, քան թէ մի մեծահարուստ Աստծու արքայութիւնը մտնի»: 26 Եւ նրանք, որ լսեցին, ասացին. «Իսկ ո՞վ կարող է փրկուել»: 27 Եւ նա ասաց. «Ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարաւոր է»:

28 Եւ Պետրոսն ասաց. «Ահա մենք մեր ամէն ինչը թողեցինք եւ եկանք քո յետեւից»: 29 Եւ Յիսուս ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկայ մէկը որ թողած լինի տունը, կամ ծնողներին, կամ եղբայրներին, կամ կնոջը, կամ զաւակներին՝ Աստծու արքայութեան համար, 30 եւ այս ներկայ ժամանակում բազմապատիկ չստանայ ու յաւիտենական կեանքը չժառանգի այն աշխարհում, որ գալու է»:

ԿՐԿԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 20. 17-19, Մարկ. 10. 32-34)

31 Եւ Տասներկուսին, առանձին, մի կողմ տանելով՝ նրանց ասաց. «Ահա՜սիկ ելնում ենք դէպի Երուսաղէմ, եւ մարգարէների միջոցով մարդու Որդու մասին բոլոր գրուածները պիտի կատարուեն. 32 որովհետեւ նա պիտի մատնուի հեթանոսներին եւ պիտի ծաղրուի. 33 նրան պիտի ձաղկեն ու սպանեն, եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնի»: 34 Եւ առաքեալները այս բոլորից ոչինչ չիմացան, այլ խօսքը նրանցից ծածկուած էր, եւ ասուածները չէին ըմբռնում:

ԵՐԻՔՈՎԻ ԿՈՅՐ ՄՈՒՐԱՑԿԱՆԻ ԲԺՇԿՈՒՄԸ
(Մատթ. 20. 29-34, Մարկ. 10. 46-52)

35 Եւ երբ նա մօտենում էր Երիքովին, ճանապարհի վրայ նստել էր մի կոյր մուրացկան: 36 Երբ սա լսեց, որ ժողովուրդը անցնում է, հարցրեց, թէ՝ այդ ի՞նչ է: 37 Եւ նրան պատմեցին, թէ անցնում է Յիսուս Նազովրեցին: 38 Նա աղաղակեց եւ ասաց. «Յիսո՛ւս, Դաւթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»: 39 Եւ առջեւից գնացողները սաստեցին նրան, որ լռի: Իսկ նա առաւել եւս աղաղակում էր. «Դաւթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»: 40 Յիսուս տեղում կանգնեց եւ հրամայեց իր մօտ բերել նրան. եւ երբ կոյրը մօտեցաւ, նրան հարցրեց եւ ասաց. 41 «Ի՞նչ ես կամենում դու, որ ես քեզ համար անեմ»: Եւ սա ասաց. «Որ բացուեն աչքերս, եւ տեսնեմ, Տէ՛ր»: 42 Եւ Յիսուս նրան ասաց. «Նայի՛ր. քո հաւատը քեզ փրկեց»: 43 Եւ իսկոյն կոյրը տեսաւ. գնում էր Յիսուսի յետեւից եւ փառք էր տալիս Աստծուն: Եւ ամբողջ ժողովուրդը տեսնելով այս՝ Աստծուն գոհութիւն էր տալիս:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ԶԱԿՔԷՈՍ ՄԱՔՍԱՊԵՏԸ

19 Եւ Յիսուս մտել էր Երիքով ու շրջում էր: 2 Եւ ահա մի մարդ, Զակքէոս անունով, որ մաքսապետ էր ու մեծահարուստ, 3 ուզում էր տեսնել, թէ ո՛վ է Յիսուս, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում, որովհետեւ կարճահասակ էր: 4 Եւ առաջ վազելով՝ բարձրացաւ ժանտաթզենու վրայ, որպէսզի տեսնի նրան, որովհետեւ նա հէնց այդտեղով էր անցնելու: 5 Երբ այդ տեղը եկաւ, Յիսուս վեր նայեց եւ ասաց. «Զակքէո՛ս, շտապիր իջի՛ր այդտեղից, որովհետեւ այսօր պէտք է, որ ես քո տանը գիշերեմ»: 6 Զակքէոսը շտապեց իջաւ եւ նրան ընդունեց ուրախութեամբ: 7 Երբ ամէնքը այս տեսան, տրտնջում էին եւ ասում, թէ մեղաւոր մարդու մօտ մտաւ գիշերելու: 8 Իսկ Զակքէոսը եկաւ կանգնեց եւ ասաց Տիրոջը. «Տէ՛ր, ահա իմ ինչքերի կէսը կը տամ աղքատներին, եւ եթէ որեւէ մէկին զրկել եմ, քառապատիկ կը հատուցեմ»: 9 Եւ Յիսուս նրան ասաց. «Այսօր այս տան համար փրկութիւն եղաւ, քանի որ սա եւս Աբրահամի որդի է, 10 որովհետեւ մարդու Որդին եկաւ փնտռելու եւ փրկելու կորածին»:

ՏԱՍԸ ՄՆԱՍՆԵՐԻ† ԱՌԱԿը
(Մատթ. 25. 14-30)

11 Եւ մինչ նրանք լսում էին այս, Յիսուս մի առակ էլ աւելացրեց նրա համար, որ ինքը մօտենում էր Երուսաղէմին, եւ նրանք կարծում էին, թէ Աստծու արքայութիւնը շուտով յայտնուելու է: 12 Նա ասաց. «Մի ազնուական մարդ գնաց հեռու աշխարհ՝ իր թագաւորութիւնը ստանալու եւ վերադառնալու համար: 13 Եւ կանչելով իր ծառաներին՝ նրանց տասը մնաս տուեց եւ ասաց. "Շահարկեցէ՛ք դրանք, մինչեւ որ գամ": 14 Բայց նրա համաքաղաքացիները ատում էին նրան. պատգամաւորներ ուղարկեցին նրա յետեւից եւ ասացին. "Մենք չենք կամենում, որ դա մեր վրայ թագաւորի": 15 Եւ ազնուականը վերադարձաւ՝ իր թագաւորութիւնն ստացած, եւ կանչեց այն ծառաներին, որոնց տուել էր դրամը, որպէսզի իմանայ, թէ ով ինչ էր շահել: 16 Եկաւ առաջինը եւ ասաց. "Տէ՛ր, քո

†Մէկ մնասը հաւասար էր մէկ հնչուն ոսկու:

մէկ մնասը տասը մնաս բերեց”: 17 Եւ տէրը նրան ասաց. “Ազնիւ եւ բարի ծառայ, քանի որ այդ փոքր բանի մէջ հաւատարիմ եղար, իշխանութիւն ունեցիր տասը քաղաքների վրայ”: 18 Եկաւ երկրորդը եւ ասաց. “Քո մէկ մնասը հինգ մնաս բերեց”: 19 Տէրը նրան ասաց. “Դու էլ՝ հինգ քաղաքների վրայ”: 20 Միւսն էլ եկաւ եւ ասաց. “Տէ՛ր, ահա քո մնասը, որ թաշկինակի մէջ ծրարած պահում էի. 21 վախենում էի քեզնից, որովհետեւ խիստ մարդ ես. վերցնում ես, ինչ որ չես դրել, եւ հնձում ես, ինչ որ չես սերմանել”: 22 Եւ տէրը նրան ասաց. “Հէնց քո բերանով քեզ պիտի դատեմ, անհաւատարի՛մ ծառայ. գիտէիր, որ ես մի խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ չեմ դրել եւ հնձում եմ՝ ուր չեմ սերմանել: 23 Հապա ինչո՞ւ իմ դրամը լումայափոխներին չտուիր, որպէսզի ես, գալով, տոկոսներով միասին պահանջէի այն”: 24 Եւ սպասաւորներին ասաց. “Վերցրէ՛ք դրանից մէկ մնասը եւ տարէ՛ք տուէք նրան, ով տասը մնաս ունի”: 25 Եւ ծառաները ասացին նրան. “Տէ՛ր, արդէն նա տասը մնաս ունի՛”: 26 – Ասում եմ ձեզ, թէ՝ “Ով որ ունի, նրան պիտի տրուի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցուի եւ այն, ինչ որ ունի: 27 Բայց իմ այն թշնամիներին, որոնք չէին կամենում, որ ես թագաւորեմ իրենց վրայ, բերէ՛ք այստեղ եւ սպանեցէ՛ք իմ առաջ”»: 28 Եւ երբ այս ասաց, առաջ գնաց՝ Երուսաղէմ ելնելու համար:

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Մատթ. 21. 1-11, Մարկ. 11. 1-11, Յովհ. 12. 12-19)

29 Եւ երբ մօտեցաւ Բեթփագէին եւ Բեթանիային, այն լերան մօտ, որ կոչւում է Ձիթենեաց, ուղարկեց իր աշակերտներից երկուսին 30 եւ ասաց. «Գնացէ՛ք այն գիւղը, որ մեր դիմացն է. երբ այնտեղ մտնէք, կը գտնէք կապուած մի աւանակ, որի վրայ ոչ մի մարդ երբեք չի նստել. արձակեցէ՛ք այն եւ բերէ՛ք: 31 Եւ եթէ մէկը ձեզ հարցնի, թէ ինչու էք արձակում, նրան այսպէս ասացէք. “Իր տիրոջը պէտք է”»: 32 Երբ գնացին նրանք, որ ուղարկուել էին, գտան այնպէս, ինչպէս ասել էր նրանց. աւանակը կար: 33 Եւ մինչ աւանակն արձակում էին, նրա տէրերը ասացին նրանց. «Աւանակն ինչո՞ւ էք արձակում»: 34 Եւ աշակերտները ասացին. «Իր տիրոջը պէտք է»: 35 Եւ այն բերին Յիսուսի մօտ. զգեստներ գցեցին նրա վրայ եւ Յիսուսին նստեցրին: 36 Եւ մինչ նա առաջանում էր, մարդիկ իրենց զգեստները փռում էին ճանապարհի վրայ: 37 Եւ երբ նա մօտեցաւ Ձիթենեաց լերան զառիվայրին, աշակերտների ամբողջ բազմութիւնը ուրախութեամբ եւ բարձրաձայն սկսեց օրհնել Աստծուն՝ կատարուած բոլոր զօրութիւնների համար, որ տեսան: 38 Եւ ասում էին. «Օրհնեա՛լ է այդ թագաւորը, որ գալիս է Տիրոջ անունով. խաղաղութի՛ւն երկնքում եւ փա՛ռք բարձունքներում»:

39 Իսկ փարիսեցիներից ոմանք ամբոխի միջից ասացին նրան. «Վարդապե՛տ, սաստի՛ր քո աշակերտներին»: 40 Նա պատասխանեց եւ ասաց. «Ասում եմ ձեզ, որ եթէ դրանք լռեն էլ, այդ քարերը կ՝աղաղակեն»:

ՈՂԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

41 Եւ երբ մօտեցաւ, տեսնելով քաղաքը՝ լաց եղաւ նրա վրայ եւ ասաց. 42 «Գոնէ այս օրերին գիտենայի՛ր դու քո խաղաղութիւնը. բայց այժմ ծածկուեց քո տեսողութիւնից. 43 որովհետեւ օրեր պիտի գան վրադ, երբ թշնամիներդ քո շուրջը պատնէշ պիտի կանգնեն եւ պիտի պաշարեն քեզ, պիտի նեղեն քեզ բոլոր կողմերից 44 ու հիմնայատակ պիտի անեն քեզ եւ սպանեն քո մէջ քո որդիներին. եւ քարը քարի վրայ բնաւ չպիտի թողնեն, քանի որ քո այցելութեան ժամանակը չճանաչեցիր»:

ՏԱՃԱՐՈՒՄ ԱՌԵՒՏՈՒՐ ԱՆՈՂՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ
(Մատթ. 21. 12-17, Մարկ. 11. 15-19, Յովհ. 2. 13-22)

45 Եւ տաճար մտնելով՝ սկսեց դուրս հանել աղաւնեվաճառներին ու գնողներին եւ լումայափոխների սեղանները

ցրեց 46 ու ասաց նրանց. «Գրուած է՝ “Իմ տունը պէտք է աղօթքի տուն լինի”, իսկ դուք աւազակների որջերի էք վերածել այդ»: 47 Եւ նա ամէն օր նրանց ուսուցանում էր տաճարում, իսկ քահանայապետները, օրէնսգէտները եւ ժողովրդի գլխաւորները հնար էին փնտռում նրան կորստեան մատնելու, 48 բայց չէին գտնում, թէ ինչ անեն, որովհետեւ ամբողջ ժողովուրդը, նրանով տարուած, լսում էր նրան:

ՀԱՐՑ ՅԻՍՈՒՍԻՆ՝ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 21. 23-27, Մարկ. 11. 27-33)

20 Եւ այն օրերից մէկում, մինչ տաճարում ուսուցանում էր ժողովրդին եւ աւետարանում, վրայ հասան քահանայապետներն ու օրէնսգէտները՝ ծերերով հանդերձ, 2 եւ ասացին նրան. «Ասա՛ մեզ, ի՞նչ իշխանութեամբ ես դու անում այդ, կամ ո՞վ է, որ քեզ տուեց այդ իշխանութիւնը»: 3 Յիսուս պատասխան տուեց նրանց եւ ասաց. «Ես էլ ձեզ մի բան հարցնեմ, եւ դուք ինձ ասացէ՛ք. 4 Յովհաննէսի մկրտութիւնը երկնքի՞ց էր, թէ՞՝ մարդկանցից»: 5 Եւ նրանք իրենց մտքում խորհեցին եւ ասացին. 6 «Եթէ ասենք՝ երկնքից էր, կ՝ասի՝ իսկ ինչո՞ւ չհաւատացիք նրան. եւ եթէ ասենք՝ մարդկանցից, ամբողջ ժողովուրդը մեզ կը քարկոծի, որովհետեւ իրենց մտքում Յովհաննէսի մասին հաստատ համոզում կայ, թէ նա մարգարէ է»:

7 Եւ պատասխան տուեցին, թէ չգիտեն որտեղից է: 8 Եւ Յիսուս նրանց ասաց. «Ես էլ ձե՛զ չեմ ասի, թէ ինչ իշխանութեամբ եմ անում այս»:

ՁԱՐ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ
(Մատթ. 21. 33-46, Մարկ. 12. 1-12)

9 Եւ սկսեց ժողովրդին ասել այս առակը. «Մի մարդ այգի տնկեց եւ այն յանձնեց մշակներին, իսկ ինքը երկար ժամանակով ճանապարհորդութեան գնաց: 10 Եւ յարմար ժամանակին մշակների մօտ մի ծառայ ուղարկեց, որպէսզի այգու պտղից իր բաժինը տան նրան. իսկ մշակները ծեծեցին նրան ու ձեռնունայն արձակեցին: 11 Տէրը դարձեալ մէկ ուրիշ ծառայ եւս ուղարկեց. նրանք սրան եւս ծեծեցին, անարգեցին եւ ձեռնունայն ճամբու դրին: 12 Ապա ուղարկեց նաեւ մի երրորդի. նրանք սրան էլ վիրաւորեցին եւ այգուց դուրս հանեցին: 13 Այգու տէրն ասաց. “Ի՞նչ անեմ. ուղարկեմ իմ սիրելի որդուն, թերեւս նրանից կը պատկառեն”: 14 Երբ մշակները նրան տեսան, իրար հետ խորհուրդ արին եւ ասացին. “Սա՛ է ժառանգը, սպանենք սրան, որպէսզի ժառանգութիւնը մերը լինի”: 15 Եւ նրան այգուց դուրս հանեցին ու սպանեցին: Արդ, այգու տէրը նրանց ի՞նչ կ՝անի: 16 Չէ՞ որ կը գայ ու կորստեան կը մատնի այդ մշակներին եւ այգին ուրիշներին կը տայ»: 17 Երբ այս լսեցին, ասացին. «Քա՛ւ լիցի»: Եւ Յիսուս նրանց նայելով՝ ասաց. «Իսկ ի՞նչ է այն, որ գրուած է, թէ՝ “Այն վէմը, որ անարգեցին շինողները, նա՛ է, որ անկիւնաքար եղաւ”: 18 Ով որ այս վէմին բախուի, կը խորտակուի, եւ ում վրայ որ այն ընկնի, կը ճզմի նրան»: 19 Եւ օրէնսգէտներն ու քահանայապետները նոյն պահին ուզում էին նրա վրայ ձեռք դնել, բայց ժողովրդից վախեցան, որովհետեւ հասկացան, թէ այն առակը իրենց մասին ասաց:

ԿԱՅՍՐԻՆ ՏՐՈՒԵԼԻՔ ՏՈՒՐՔԸ
(Մատթ. 22. 15-22, Մարկ. 12. 13-17)

20 Եւ ապա յարմար առիթի սպասեցին եւ ուղարկեցին խաբեբաներ, որոնք իրենք իրենց, կեղծաւորութեամբ, արդար էին ձեւացնում, որպէսզի նրան խօսքերով բռնեն՝ մատնելու համար պետութեան եւ իշխանութեան կուսակալին: 21 Հարցրին նրան եւ ասացին. «Վարդապե՛տ, գիտենք, որ ճիշտ ես խօսում ու ուսուցանում եւ աչառութիւն չես անում, այլ ճշմարտութեամբ Աստծու ճանապարհն ես սովորեցնում: 22 Օրինաւո՞ր է մեզ համար կայսրին հարկ տալ, թէ՝ ոչ»: 23 Եւ նկատելով նրանց խորամանկութիւնը՝ ասաց նրանց. 24 «Ցո՛յց տուէք ինձ դահեկանը»: Եւ նրանք ցոյց տուին: 25 Եւ

նա՝ ասաց. «Ո՞ւմ պատկերը եւ գիրը
ունի դա»: Պատասխանեցին եւ ասա-
ցին՝ կայսրինը: Եւ նա նրանց ասաց.
«Արդ, գնացէ՛ք տուէք կայսրինը՝ կայ-
սեր, իսկ Աստծունը՝ Աստծուն»: 26 Եւ
չկարողացան նրան խօսքերով բռնել
ժողովրդի առաջ ու զարմանալով նրա
պատասխանի վրայ՝ լռեցին:

ՀԱՐՑ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 22. 23-33, Մարկ. 12. 18-27)

27 Սադուկեցիներից ոմանք, որոնք
հակառակում էին, թէ յարութիւն չկայ,
մօտենալով հարցրին նրան եւ ասացին.
28 «Վարդապե՛տ, Մովսէսը մեզ համար
գրել է. "Եթէ մէկի եղբայրը, որը կին
ունի, մեռնի, եւ նա անժառանգ լինի,
թող նրա եղբայրը առնի այդ կնոջը եւ
իր եղբօր համար զաւակ հասցնի": 29
Արդ, եօթը եղբայրներ կային. առա-
ջինը կին առաւ եւ անժառանգ մեռաւ:
30 Նրան առաւ նաեւ երկրորդը. եւ նա
էլ անժառանգ մեռաւ: 31 Նրան առաւ
նաեւ երրորդը. եւ նոյն ձեւով՝ եօթն էլ
... Եւ ժառանգներ չթողեցին: 32 Մե-
ռաւ եւ կինը: 33 Արդ, յարութեան
ժամանակ նրանցից ո՞ւմ կինը կը լինի,
որովհետեւ եօթն էլ նրան կին առան»:
34 Յիսուս պատասխանեց նրանց եւ
ասաց. «Այս աշխարհի որդիները կին
են առնում եւ մարդու են գնում. 35 իսկ
նրանք, որոնք արժանի կը լինեն այն
աշխարհին հասնելու եւ մեռելներից
յարութիւն առնելու, ո՛չ կին են
առնում եւ ո՛չ էլ մարդու են գնում,
36 քանի որ այլեւս մեռնել անգամ չեն
կարող, որովհետեւ հրեշտակների նման
են եւ Աստծու որդիներ, քանի որ
յարութեան որդիներ են: 37 Իսկ թէ
մեռելները յարութիւն են առնում,
Մովսէսն էլ այդ գուշակեց մորենու
օրինակի մէջ, ինչպէս որ ասում է
Տիրոջ մասին՝ "Աստուած Աբրահամի,
Աստուած Իսահակի եւ Աստուած
Յակոբի": 38 Իսկ Աստուած մեռելների
Աստուածը չէ, այլ՝ ողջերի, որովհետեւ
բոլորը նրա համար կենդանի են»:
39 Օրէնսգէտներից ոմանք նրան պա-
տասխանեցին եւ ասացին. «Վարդա-
պե՛տ, լա՛ւ ասացիր»: 40 Եւ այլեւս ոչ
ոք չէր համարձակւում նրան որեւէ
բան հարցնել:

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ԵՒ ՏԷՐ ԴԱՒԹԻ
(Մատթ. 22. 41-46, Մարկ. 12. 35-37)

41 Յիսուս նրանց էլ ասաց.
«Քրիստոսի համար ինչպէ՞ս են ասում,
թէ Դաւթի որդին է. 42 քանի որ
Դաւիթն ինքը Սաղմոսների գրքում
ասում է. "Տէրն ասաց իմ Տիրոջը՝
նստի՛ր իմ աջ կողմում, 43 մինչեւ որ քո
թշնամիներին ոտքերիդ պատուանդան
դնեմ": 44 Իսկ արդ, եթէ Դաւիթը նրան
Տէր է կոչում, Նա ինչպէ՞ս նրա որդին
կը լինի»:

ՕՐԷՆՍԳԷՏՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
(Մատթ. 23. 1-36, Մարկ. 12. 38-40)

45 Եւ մինչ ամբողջ ժողովուրդը
լսում էր, ասաց իր աշակերտներին.
46 «Զգուշացէ՛ք օրէնսգէտներից, որոնք
ուզում են պատմուճաններով շրջել եւ
սիրում են ողջոյններ ընդունել հրա-
պարակներում ու առաջին աթոռները
գրաւել ժողովարաններում եւ պատուոյ
տեղերը նստել ընթրիքների ժամանակ,
47 որոնք իւրացնում են այրիների
տները եւ ձեւականօրէն երկարում են
իրենց աղօթքները: Նրանք աւելի
խիստ դատավճիռ պիտի ստանան»:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ
(Մարկ. 12. 41-44)

21 Եւ Յիսուս նայեց ու տեսաւ մե-
ծահարուստներին, որոնք տաճարի
գանձանակի մէջ իրենց նուէրներն էին
գցում: 2 Տեսաւ եւ մի աղքատ այրի
կնոջ, որ երկու լումայ գցեց այնտեղ:
3 Եւ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ,
որ այդ աղքատ այրին աւելի գցեց,
քան բոլորը: 4 Նրանք ամէնքը իրենց
կուտակածներից գցեցին Աստծուն
տրուած† նուէրների մէջ, իսկ նա իր
կարօտութեան մէջ իր ունեցած ամ-
բողջ ապրուստը գցեց»:

†Լաւագոյն յուն. բն. չունեն Աստծուն տրուած բառերը:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 24. 1-3, Մարկ. 13. 1-3)

5 Եւ երբ ոմանք տաճարի մասին
ասում էին, թէ գեղեցիկ քարերով եւ
աշտարակներով է զարդարուած, նա
ասաց. 6 «Այդ բոլորը, որ տեսնում էք,
պիտի գան օրեր, երբ այնտեղ չպիտի
թողնուի քար քարի վրայ, որ չքան-
դուի»: 7 Հարցրին նրան եւ ասացին.
«Վարդապե՛տ, ե՞րբ կը լինի այդ, եւ
ի՞նչ կը լինի նշանը, երբ այդ պա-
տահելու լինի»:

ՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ
(Մատթ. 24. 4-14, Մարկ. 13. 4-13)

8 Եւ նա ասաց. «Զգո՛յշ կացէք,
չխաբուէք. որովհետեւ շատերը պիտի
գան իմ անունով եւ պիտի ասեն թէ՝ ես
եմ Քրիստոսը, եւ թէ՝ ժամանակը
մօտեցաւ. նրանց յետեւից չգնաք: 9 Եւ
երբ լսէք պատերազմների եւ խռովու-
թիւնների մասին, չզարհուրէք. որով-
հետեւ պէտք է, որ նախ այդ բաները
պատահեն. բայց աշխարհի վախճանը
շուտով չի լինելու»: 10 Այն ժամանակ
ասաց նրանց. «Ազգ ազգի դէմ պիտի
ելնի, եւ թագաւորութիւն՝ թագա-
ւորութեան դէմ. 11 եւ մեծ երկրա-
շարժներ ու տարբեր տեղերում սով ու
ժանտախտ պիտի լինեն. պիտի լինեն
արհաւիրքներ եւ մեծամեծ նշաններ
երկնքից: 12 Բայց այս բոլորից առաջ
ձեր վրայ ձեռք պիտի դնեն եւ պիտի
հալածեն, ժողովարանների ու բան-
տերի պիտի մատնեն ձեզ եւ կուսա-
կալների ու թագաւորների առաջ պիտի
տանեն ձեզ իմ անունն համար: 13 Եւ
ձեզ համար այդ պիտի լինի առիթ
վկայութեան: 14 Արդ, ձեր մտքում
դրէք սա. նախօրօք մի՛ մտահոգուէք
պատասխան տալու համար, 15 որով-
հետեւ ես ձեզ կը տամ բերան եւ իմաս-
տութիւն, որին չեն կարողանայ հա-
կառակել կամ պատասխան տալ ձեր
բոլոր հակառակորդները: 16 Դուք պի-
տի մատնուէք ե՛ւ ծնողներից, ե՛ւ
եղբայրներից, ե՛ւ ազգականներից, ե՛ւ
բարեկամներից, ու ձեզնից ոմանց
պիտի սպանեն: 17 Եւ պիտի ատուէք
բոլորից իմ անուան համար: 18 Բայց
ձեր գլխից մի մազ անգամ չպիտի
կորչի: 19 Եւ ձեր համբերութեամբ
պիտի շահէք ձեր հոգիները»:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 24. 15-21, Մարկ. 13. 14-19)

20 «Բայց երբ տեսնէք Երուսաղէմը՝
շրջապատուած զօրքերով, այն ժամա-
նակ իմացէ՛ք, որ նրա աւերումը մօտ է:
21 Այն ժամանակ նրանք, որ Հրէաս-
տանում են, թող փախչեն լեռները, եւ
նրանք, որ Երուսաղէմի մէջ են, թող
խոյս տան, իսկ նրանք, որ գաւառ-
ներում են, թող քաղաք չմտնեն, 22 ո-
րովհետեւ դրանք վրէժխնդրութեան
օրեր են, որպէսզի կատարուեն բոլոր
գրուածները: 23 Բայց այն օրերին վա՛յ
է յղիներին եւ ստնտուներին, որով-
հետեւ մեծ տագնապ պիտի լինի երկրի
վրայ եւ բարկութիւն՝ այս ժողովրդի
հանդէպ: 24 Նրանք սրի պիտի քա-
շուեն, գերի պիտի տարուեն բոլոր հե-
թանոսներից. եւ Երուսաղէմը ոտքի կո-
խան պիտի լինի ազգերից, մինչեւ որ
լրանան հեթանոսների ժամանակ-
ները»:

ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ
(Մատթ. 24. 29-31, Մարկ. 13. 24-27)

25 «Եւ նշաններ պիտի լինեն արե-
գակի, լուսնի եւ աստղերի վրայ: Եւ
երկրի վրայ պիտի լինի հեթանոսների
տագնապ՝ ծովի եւ խռովութեան նման
ահեղ ձայնի պատճառով, 26 աշխարհի
վրայ գալիք պատահարների վախից եւ
նախազգացումից մարդիկ պիտի մեռ-
նեն, որովհետեւ երկնքի զօրութիւն-
ները պիտի շարժուեն: 27 Եւ այն ժա-
մանակ պիտի տեսնեն մարդու Որդուն
եկած՝ ամպերի վրայ, զօրութեամբ եւ
մեծ փառքով: 28 Եւ երբ սկսուի այս
բանը լինել, վե՛ր կացէք եւ ձեր գլուխ-
ները բարձրացրէ՛ք, որովհետեւ մօտ է
ձեր փրկութիւնը»:

ԹԶԵՆՈՒ ԴԱՍԸ. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՍՏԵԱՆ ՊԱՀԸ
(Մատթ. 24. 32-35, Մարկ. 13. 28-31)

29 Եւ նրանց ասաց մի առակ.
«Նայեցէ՛ք թզենուն եւ ամէն մի ծառի.
30 երբ իրենց բողբոջը ցոյց են տալիս,
տեսնում էք այն ու ղրանից իմանում էք, որ մօտ է ամառը: 31 Նոյնպէս եւ դուք, երբ տեսնէք այս բոլորը կատարուած, իմացէ՛ք, որ Աստծու արքայութիւնը մօտ է: 32 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերունդը չպիտի անցնի, մինչեւ որ այս բոլորը կատարուի: 33 Երկինքը եւ երկիրը կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի»:

ՁՍՊԱՍՈՒԱԾ ՕՐԸ ԵՒ ԺԱՄԸ

34 «Զգո՛յշ եղէք ինքներդ ձեզնից.
գուցէ ձեր սրտերը ծանրանան զեխութեամբ եւ հարբեցողութեամբ ու աշխարհիկ հոգսերով. եւ յանկարծակի հասնի ձեր վրայ այն օրը. 35 որովհետեւ այդ օրը որոգայթի նման պիտի հասնի այն ամենքի վրայ, որոնք բնակւում են երկրագնդի ամբողջ երեսին: 36 Արթո՛ւն կացէք այսուհետեւ, ամէն ժամ աղօ՛թք արէք, որպէսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, եւ արժանի լինէք կանգնելու մարդու Որդու առաջ»:
37 Եւ ցերեկը ուսուցանում էր տաճարի մէջ, իսկ գիշերները ելնում էր, մնում այն լերան վրայ, որը կոչւում էր Զիթենեաց: 38 Եւ ամբողջ ժողովուրդը առաւօտները վաղ շտապում էր նրա մօտ՝ տաճարում նրան լսելու համար:

ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՏՆԵԼՈՒ ՅԻՍՈՒՍԻՆ
(Մատթ. 26. 1-5, 14-16, Մարկ. 14. 1-2, 10-11, Յովհ. 11. 45-53)

22 Մօտեցաւ Բաղարջակերաց տօնը, որը կոչւում էր Պասէք: 2 Իսկ քահանայապետներն ու օրէնսգէտները հնար էին փնտռում, թէ ինչպէս սպանեն նրան, բայց վախենում էին ժողովրդից:
3 Ապա սատանան մտաւ Իսկարիովտացի կոչուած Յուդայի մէջ, որ Տասներկուսի թւում էր: 4 Սա գնաց բանակցեց քահանայապետների, օրէնսգէտների եւ ժողովրդի իշխանաւորների հետ†, որ Յիսուսին նրանց մատնի: 5 Նրանք ուրախացան եւ խոստացան նրան արծաթ տալ: 6 Եւ նա յանձն առաւ ու պատեհ առիթ էր փնտռում՝ նրան մատնելու նրանց՝ ամբոխից մեկուսի:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ
(Մատթ. 26. 17-30, Մարկ. 14. 12-26, Յովհ. 13. 21-30, Ա Կորնթ. 11. 23-25)

7 Եկաւ Բաղարջակերաց օրը, երբ օրէնք էր մորթել Պասէքը: 8 Եւ նա ուղարկեց Պետրոսին եւ Յովհաննէսին ու ասաց. «Գնացէ՛ք, պատրաստեցէ՛ք մեզ համար Պասէքի ընթրիքը, որ ուտենք»: 9 Եւ նրանք ասացին. «Ո՞ւր ես ուզում, որ պատրաստենք»: 10 Եւ նրանց ասաց. «Ահա՛, երբ քաղաք մտնէք, ձեզ կը հանդիպի մի մարդ՝ ջրի սափորը բարձած. գնացէ՛ք նրա յետեւից այն տունը, ուր նա կը մտնի: 11 Եւ կ'ասէք տանտիրոջը. "Վարդապետը քեզ ասում է՝ ո՞ւր է այն հիւրասրահը, որտեղ աշակերտներիս հետ պիտի ուտեմ Պասէքի ընթրիքը": 12 Եւ նա ձեզ ցոյց կը տայ զարդարուած մի մեծ վերնատուն, եւ այնտեղ կը պատրաստէք»:
13 Եւ աշակերտները գնացին գտան, ինչպէս որ իրենց ասել էր. եւ պատրաստեցին Պասէքը:
14 Եւ երբ ժամը հասաւ, սեղան նստեց, եւ տասներկու առաքեալներն էլ՝ իր հետ: 15 Եւ նրանց ասաց. «Յոյժ ցանկացայ այս Պասէքի ընթրիքը ուտել ձեզ հետ, քանի դեռ չեմ չարչարուել: 16 Բայց ասում եմ ձեզ, թէ այլեւս չեմ ուտելու սրանից, մինչեւ որ Պասէքը կատարուի Աստծու արքայութեան մէջ»: 17 Եւ, բաժակը վերցնելով, գոհութիւն յայտնեց Աստծուն եւ ասաց. «Առէ՛ք այս եւ բաժանեցէ՛ք ձեր մէջ. 18 ասում եմ ձեզ, թէ այսուհետեւ որթատունկի բերքից չեմ խմելու, մինչեւ որ գայ Աստծու արքայութիւնը»:
19 Եւ հաց վերցնելով՝ գոհութիւն

†Այսինքն՝ տաճարի պահակագնդի պետերի հետ:

յայտնեց Աստծուն, կտրեց, տուեց նրանց եւ ասաց. «Այս է իմ մարմինը, որ շատերի համար† է տրուած. այս արէ՛ք իմ յիշատակի համար»: 20 Նոյնպէս եւ բաժակը վերցրեց ընթրիքից յետոյ եւ՝ ասաց. «Այս բաժակը նոր Ուխտ է իմ արիւնով՝ ձեզ համար թափուած:
21 Բայց ահաւասիկ իմ մատնիչի ձեռքը ինձ հետ այս սեղանի վրայ է: 22 Եւ մարդու Որդին աշխարհից կը գնայ ըստ սահմանուածի, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կը մատնուի»: 23 Եւ նրանք սկսեցին հարցնել իրար մէջ, թէ իրենցից ո՛վ է, որ այդ անելու է:

ՄԵԾԸ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

24 Եւ նրանց մէջ հակաճառութիւն առաջացաւ, թէ իրենցից ո՛վ պիտի մեծ համարուի: 25 Եւ նա նրանց ասաց. «Ազգերի թագաւորները տիրում են իրենց ժողովուրդների վրայ, եւ նրանք, որ իշխում են նրանց վրայ, բարերարներ են կոչւում: 26 Բայց դուք այդպէս չլինէք, այլ՝ ով որ մեծ է ձեր մէջ, թող լինի ինչպէս կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպէս սպասաւորը: 27 Ո՞վ է մեծ. սեղան նստո՞ղը, թէ՞ սպասաւորը: Չէ՞ որ՝ սեղան նստողը: Բայց ես ձեր մէջ եմ իբրեւ սպասաւոր»:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻՆ ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

28 «Եւ դուք էք, որ իմ փորձութիւնների մէջ ինձ հետ էիք մնում մինչեւ այժմ: 29 Եւ ես խոստանում եմ ձեզ, – ինչպէս եւ իմ Հայրը ինձ խոստացաւ տալու արքայութիւնը, – 30 որ ուտէք եւ խմէք իմ սեղանից իմ արքայութեան մէջ եւ նստէք տասներկու գահերի վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու ցեղերը»:

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Մատթ. 26. 31-35, Մարկ. 14. 27-31, Յովհ. 13. 36-38)

31 Եւ Տէրն ասաց. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել: 32 Բայց ես աղօթեցի քեզ համար, որպէսզի քո հաւատը չպակասի, եւ դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին»: 33 Եւ Պետրոսն ասաց. «Տէ՛ր, պատրաստ եմ քեզ հետ գնալ ե՛ւ բանտ, ե՛ւ դէպի մահ»:
34 Եւ նա նրան ասաց. «Ասում եմ քեզ, Պետրո՛ս, այսօր դեռ աքաղաղը կանչած չպիտի լինի, մինչեւ որ դու երեք անգամ ուրանաս՝ ասելով, թէ ինձ չես ճանաչում»:

ՔՍԱԿ, ՄԱԽԱՂ ԵՒ ՍՈՒՐ

35 Եւ նրանց ասաց. «Երբ ուղարկեցի ձեզ առանց քսակի, մախաղի եւ կօշիկների, մի՞թէ որեւէ բանի կարօտ մնացիք»: 36 Եւ նրանք ասացին՝ եւ ո՛չ մի բանի: Ապա ասաց. «Իսկ այժմ՝ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նոյնպէս եւ՝ մախաղ. իսկ ով որ չունի, թող վաճառի իր վերարկուն եւ իր համար սուր գնի: 37 Բայց ասում եմ ձեզ, այս եւս, որ գրուած է, պէտք է, որ կատարուի իմ վրայ, թէ՝ "Անօրէնների հետ դասուեց". որովհետեւ, ինչ որ ինձ համար է գրուած, կատարուելու վրայ է»: 38 Եւ նրանք ասացին. «Տէ՛ր, ահաւասիկ այստեղ երկու սուր կայ»: Եւ նրանց ասաց. «Բաւական են»:

ԱՂՕԹՔ ՁԻԹԵՆԵԱՑ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ
(Մատթ. 26. 36-46, Մարկ. 14. 32-42)

39 Եւ Յիսուս ըստ իր սովորութեան ելաւ գնաց Զիթենեաց լեռը. նրա յետեւից գնացին եւ աշակերտները: 40 Երբ տեղ հասաւ, ասաց նրանց. «Աղօթքի՛ կանգնեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք»: 41 Եւ ինքը հեռացաւ նրանցից մօտ մի քարընկեց, ծնրադրեց, աղօթում էր եւ ասում. 42 «Հա՛յր, եթէ կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ իմ կամքը, այլ քո՛նը թող լինի»: 43† Եւ նրան երկնքից երեւաց մի հրեշտակ եւ ուժ էր տալիս նրան. նա տագնապի մէջ էր եւ ամբողջ հոգով էր աղօթում: 44† Եւ նրանից քրտինքը հոսում էր արեան կաթիլների նման՝ չիթ-չիթ գետին թա-

†Ցուցարէնն ունի ձեզ համար:

†Ցուց. լաւ բն. չունեն այս համարները:

*փուելով: 45 Եւ վեր կենալով աղօթքից՝
եկաւ աշակերտների մօտ, նրանց քնած
գտաւ տրտմութիւնից 46 եւ նրանց
ասաց. «Ինչո՞ւ էք քնել. վե՛ր կացէք,
աղօթեցէ՛ք, որպէսզի փորձութեան մէջ
չընկնէք»:*

ՅԻՍՈՒԻՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 26. 47-56, Մարկ. 14. 43-50, Յովհ. 18. 3-11)

*47 Եւ մինչ նա դեռ խօսում էր, ահա
երեւաց մի ամբոխ. եւ նա, որ Յուդա էր
կոչւում, Տասներկուսից մէկը, առաջ-
նորդում էր նրանց. երբ Յուդան մօտե-
ցաւ Յիսուսին, համբուրեց նրան,
որովհետեւ այն նշանն էր տուել
նրանց, թէ՝ "Ում հետ ես համբուրուեմ,
նա՛ է, նրա՛ն բռնեցէք": 48 Յիսուս
նրան ասաց. «Յուդա՛, համբուրելո՞վ
ես մատնում մարդու Որդուն»: 49 Երբ
նրա շուրջը գտնուողները տեսան
եղածը, նրան ասացին. «Տէ՛ր, սրով
նրանց հարուածե՞նք»: 50 Եւ աշա-
կերտներից մէկը հարուածեց քահա-
նայապետի ծառային եւ կտրեց դէն
գցեց նրա աջ ականջը: 51 Յիսուս
պատասխանեց եւ ասաց. «Թո՛յլ տուէք,
բաւ է եղածը»: Եւ դիպչելով ականջին՝
այն բժշկեց: 52 Եւ իր վրայ եկած
քահանայապետներին, տաճարի իշխա-
նաւորներին եւ ծերերին ասաց. «Ինչ-
պէս աւազակի՞ վրայ էք գալիս սրերով
ու մահակներով. 53 միշտ ձեզ հետ էի
տաճարում, եւ դուք ինձ վրայ ձեռք
չերկարեցիք. սակայն ա՛յս է ձեր ժամը
եւ խաւարի իշխանութեան զօրու-
թիւնը»:*

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ
(Մատթ. 26. 57-58, 69-75, Մարկ. 14. 53-54, 66-72,
Յովհ. 18. 12-18, 25-27)

*54 Եւ բռնելով նրան՝ տարան եւ
մտցրին քահանայապետի տունը. իսկ
Պետրոսը հեռուից գնում էր նրա յե-
տեւից: 55 Երբ գաւթի մէջ կրակ վառե-
ցին եւ նստեցին շուրջը, Պետրոսն էլ
նստեց նրանց մէջ: 56 Մի աղախին
տեսաւ նրան կրակի լոյսի մօտ նստած,
հայեացքը սեւեռեց նրան եւ ասաց.
«Սա էլ էր նրանցից, որ նրա հետ
էին»» 57 Իսկ Պետրոսն ուրացաւ ու
ասաց. «Ես նրան չեմ ճանաչում, ո՛վ
կին»: 58 Եւ քիչ յետոյ մէկ ուրիշը
տեսաւ նրան եւ ասաց. «Դո՛ւ էլ նրան-
ցից ես»: Պետրոսն ասաց. «Ո՛վ մարդ,
ես նրանցից չեմ»: 59 Եւ երբ մի ժամ էլ
անցաւ, մէկ ուրիշը վիճում էր եւ
ասում. «Ճիշտ որ սա էլ նրա հետ էր,
որովհետեւ գալիլիացի է»: 60 Պետրոսն
ասաց. «Ո՛վ մարդ, չգիտեմ այդ ի՛նչ ես
խօսում»: Եւ նոյն պահին, մինչ նա
այս ասում էր, աքաղաղը կանչեց:
61 Տէրը դարձաւ եւ նայեց Պետրոսին.
եւ Պետրոսը յիշեց Տիրոջ խօսքը, որ
ասել էր իրեն. «Դեռ աքաղաղը չկան-
չած՝ երեք անգամ պիտի ուրանաս, թէ
ինձ չես ճանաչում»: 62 Եւ Պետրոսը
դուրս ելնելով՝ դառնօրէն լաց եղաւ:*

ՅԻՍՈՒՍԻ ՁԱՂԿՈՒՄԸ
(Մատթ. 26. 67-68, Մարկ. 14. 65)

*63 Եւ այն մարդիկ, որ նրան պահ-
պանում էին, ծիծաղում էին նրա վրայ
եւ խփում, 64 ծածկում էին նրա երեսը
եւ տանջում, հարցնում էին նրան եւ
ասում. «Մարգարէացի՛ր՝ ո՞վ է, որ քեզ
խփեց»: 65 Եւ հայհոյելով՝ ուրիշ շատ
բաներ էլ էին ասում նրա երեսին:*

ՅԻՍՈՒՍ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ
(Մատթ. 26. 59-66, Մարկ. 14. 55-64, Յովհ. 18. 19-24)

*66 Եւ երբ լոյսը բացուեց, հաւաքուեց
ժողովրդի ծերակոյտը՝ քահանայա-
պետներ եւ օրէնսգէտներ, եւ Յիսուսին
քաշեցին բերին իրենց ատեանի առաջ
եւ ասացին. «Եթէ դու ես Քրիստոսը,
ասա՛ մեզ»: 67 Նրանց ասաց. «Եթէ
ձեզ ասեմ իսկ, չէք հաւատայ: 68 Եւ
եթէ ես ձեզ հարցնեմ, ինձ պատաս-
խան չէք տայ կամ չէք արձակի ինձ†:
69 Բայց սրանից յետոյ մարդու Որդին
պիտի նստի Աստծու զօրութեան
աջին»:*

*70 Եւ ամէնքը միասին ասացին.
«Ուրեմն դու Աստծու Որդի՞ն ես»: Եւ
նա նրանց ասաց. «Դուք ասում էք, թէ
ես եմ»: 71 Եւ նրանք ասացին. «Էլ ի՞նչ
վկայութիւն է պէտք մեզ, որովհետեւ
մենք ինքներս լսեցինք նրա բերանից»:*

†Յուն. լաւ բն. չունեն կամ չէք արձակի ինձ բառերը:

ՅԻՍՈՒՍ ԲԵՐԻՈՒՄ է ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ
(Մատթ. 27. 1-2, 11-14, Մարկ. 15. 1-5, Յովհ. 18. 28-38)

*23 Եւ նրանց ամբողջ բազմութիւնը,
վեր կենալով, նրան տարաւ Պիղատոսի
մօտ: 2 Եւ սկսեցին ամբաստանել նրան
եւ ասել. «Գտանք սրան, որ մոլորեց-
նում էր մեր ազգը, արգելում էր
կայսրին հարկեր տալ եւ ինքն իր մա-
սին ասում էր, թէ՝ Քրիստոսն է, թա-
գաւոր»: 3 Իսկ Պիղատոսը հարցրեց
նրան եւ ասաց. «Հրեաների թագաւորը
դո՞ւ ես»: Նա պատասխանեց նրան եւ
ասաց. «Դու ասացիր»: 4 Պիղատոսը
քահանայապետներին եւ ժողովրդին
ասաց. «Այս մարդու մէջ ես որեւէ
յանցանք չեմ գտնում»: 5 Իսկ նրանք
պնդում էին եւ ասում, թէ ըմբոս-
տութեան է մղում ժողովրդին, քարո-
զում է ամբողջ Հրէաստանում՝ Գալի-
լիայից սկսած մինչեւ այստեղ: 6 Իսկ
Պիղատոսը, երբ լսեց Գալիլիայի մա-
սին, հարցրեց, թէ այդ մարդը գա-
լիլիացի՞ է: 7 Եւ երբ իմացաւ, թէ
Հերովդէսի իշխանութիւնից է, յանձ-
նեց, որ նրան տանեն Հերովդէսի մօտ,
որովհետեւ այդ օրերին նա էլ Երու-
սաղէմում էր:*

ՅԻՍՈՒՍ ՀԵՐՈՎԴԷՍԻ ԱՌԱՋ

*8 Եւ երբ Հերովդէսը տեսաւ Յիսու-
սին, շատ ուրախացաւ, որովհետեւ եր-
կար ժամանակից ի վեր ցանկանում էր
նրան տեսնել, քանի որ յաճախ լսում
էր նրա մասին եւ ակնկալութիւն ունէր
նրա ձեռքով կատարուած որեւէ նշան
տեսնել: 9 Հերովդէսը նրան հարց-
աքննեց շատ խօսքերով, իսկ Յիսուս
նրան ոչ մի պատասխան չտուեց:
10 Քահանայապետներն ու օրէնսգէտ-
ները վեր էին կենում եւ նրան բուռն
կերպով ամբաստանում: 11 Հերոդէսն
էլ, իր զօրականներով հանդերձ, ար-
համարհեց նրան եւ ծիծաղելով նրա
վրայ՝ սպիտակ զգեստներ հագցնել
տուեց նրան ու վերստին յանձնեց, որ
տանեն նրան Պիղատոսի մօտ:*

*12 Եւ Պիղատոսն ու Հերովդէսը այդ
օրերին բարեկամներ եղան, որովհետեւ
առաջ իրար թշնամիներ էին:*

ՅԻՍՈՒՍ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ է ՄԱՀՈՒԱՆ
(Մատթ. 27. 15-26, Մարկ. 15. 6-15, Յովհ. 18. 39-19. 16)

*13 Պիղատոսը կանչեց քահանայա-
պետներին, իշխանաւորներին եւ ժո-
ղովրդին ու ասաց. 14 «Այս մարդուն
բերեցիք ներկայացրիք ինձ, որպէս ժո-
ղովրդին մոլորեցնողի. եւ ահաւասիկ
ձեր առաջ դատաքննութիւն արեցի եւ
այս մարդու մէջ չգտայ մէկն այն
յանցանքներից, որոնցով դուք ամբաս-
տանում էք նրան: 15 Եւ ոչ էլ՝ Հերով-
դէսը, որի մօտ հրամայեցի, որ Յիսու-
սին տանեն‡: 16 Արդ, նա մահուան
արժանի ոչինչ չի արել, նրան գանա-
հարել կը տամ եւ կ'արձակեմ» 17‡ (ո-
րովհետեւ հարկաւոր էր իւրաքանչիւր
տօնի առթիւ մի բանտարկեալ արձակել
նրանց համար): 18 Եւ նրանք ամբողջ
բազմութեամբ աղաղակում էին եւ
ասում. «Նրան վերացրո՛ւ եւ արձակի՛ր
մեզ համար Բարաբբային» 19 (որը քա-
ղաքում պատահած մի խռովութեան
եւ սպանութեան համար բանտարկուել
էր): 20 Պիղատոսը նորից սկսեց խօսել,
որովհետեւ կամենում էր Յիսուսին
արձակել: 21 Եւ նրանք կրկին աղաղա-
կում էին ու ասում. «Խա՛չը հանիր
նրան»: 22 Եւ նա երրորդ անգամ ասաց
նրանց. «Ի՞նչ չար բան է արել սա. նրա
վրայ մահուան արժանի որեւէ յան-
ցանք չգտայ. սրան գանահարել կը
տամ եւ կ'արձակեմ»: 23 Իսկ նրանք
բարձրաձայն ստիպում էին եւ ուզում,
որ նրան խաչը հանի: Եւ նրանց ու
քահանայապետների ձայները աւելի
ուժեղանում էին: 24 Եւ Պիղատոսը հա-
ւանութիւն տուեց, որ նրանց պահանջը
կատարուի: 25 Նա արձակեց Բարաբ-
բային, որը խռովութեան եւ սպանու-
թեան համար բանտ էր նետուած, եւ
որին էլ հենց ուզում էին. իսկ Յիսու-
սին յանձնեց նրանց կամքին:*

‡Յուն. լաւ բն. ունեն . . . *Բանի որ նա նրան յետ ուղարկեց մեզ մօտ:*

‡Լաւագոյն յուն. բն. չունեն այս համարը:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 27. 32-44, Մարկ. 15. 21-32, Յովհ. 19. 17-27)

26 Երբ նրան առան գնացին, բռնեցին Սիմոն Կիւրենացի անունով մէկին, որը հանդից էր գալիս. նրա վրայ դրեցին խաչը, որ այն բերի Յիսուսի յետեւից: 27 Եւ նրա յետեւից գնում էր ժողովրդի մի մեծ բազմութիւն եւ կանայք, որոնք կոծում էին ու ողբում նրան: 28 Յիսուս դարձաւ եւ ասաց նրանց. «Երուսաղէմի՛ դուստրեր, ինձ վրայ լաց մի՛ եղէք, այլ լա՛ց եղէք ձեր եւ ձեր որդիների վրայ, 29 որովհետեւ օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն՝ "Երանի՛ չբեր կանանց եւ նրանց, որոնք բնաւ չծնեցին եւ չդիեցրին": 30 Այն ժամանակ մարդիկ պիտի սկսեն ասել լեռներին, թէ՝ ընկէ՛ք մեր վրայ, եւ բլուրներին, թէ՝ ծածկեցէ՛ք մեզ, 31 որովհետեւ, երբ դալա՛ր փայտին այսպէս անեն, չորի՛ն ինչ կը պատահի»:

32 Ուրիշ երկու չարագործներ էլ բերեցին՝ նրա հետ սպանելու համար:

33 Երբ հասան Գագաթ կոչուած տեղը, այնտեղ նրան խաչը հանեցին. եւ չարագործներին էլ՝ մէկին աջ կողմը, միւսին ձախ կողմը՝ խաչեցին: 34 Եւ Յիսուս ասաց. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում»: Եւ նրա զգեստները բաժանելու համար վիճակ գցեցին: 35 Իսկ ժողովուրդը դիտում էր. իշխանաւորները նրանց հետ միասին ծաղրում էին նրան եւ ասում. «Ուրիշներին ազատեց, թող ինքն իրեն էլ ազատի, եթէ դա է Քրիստոսը՝ Աստծու ընտրեալ Որդին»: 36 Զինուորներն էլ ծաղրում էին նրան. առաջ էին գալիս, քացախ էին մատուցում նրան եւ ասում. 37 «Եթէ դու ես հրեաների թագաւորը, փրկի՛ր ինքդ քեզ»: 38 Եւ նրա խաչի վրայ մի գրութիւն կար՝ գրուած յունարէն, լատիներէն եւ եբրայերէն գրերով†, թէ՝ սա՛ է հրեաների արքան:

39 Իսկ կախուած չարագործներից մէկը հայհոյում էր նրան եւ ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ եւ մեզ»: 40 Նրա ընկերը նրան սաստելով՝ պատասխան տուեց եւ ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նոյն պատիժն ես կրում: 41 Եւ մենք իրաւացիօրէն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որեւէ վատ բան չի արել»: 42 Եւ ասաց Յիսուսին. «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր, երբ գաս քո թագաւորութեամբ»: 43 Եւ Յիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀԸ
(Մատթ. 27. 45-56, Մարկ. 15. 33-41, Յովհ. 19. 28-30)

44 Եւ համարեա կէսօր էր. եւ խաւար եղաւ ամբողջ երկրի վրայ մինչեւ ժամը երեքը. արեգակը խաւարեց: 45 Եւ տաճարի վարագոյրը մէջտեղից պատռուեց: 46 Եւ Յիսուս բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին»: Երբ այս ասաց, հոգին աւանդեց:

47 Եւ հարիւրապետը, տեսնելով ինչ որ պատահեց, փառաւորեց Աստծուն եւ ասաց. «Իսկապէս այս մարդը արդար էր»: 48 Եւ ամբողջ ժողովուրդը, որ եկել էր ու դիտում էր այս տեսարանն ու կատարուածը, ծեծում էր կուրծքը եւ վերադառնում: 49 Նրա բոլոր ծանօթներն էլ կանգնել էին հեռուում. եւ կանայք, որոնք Գալիլիայից նրա յետեւից էին եկել, տեսնում էին այս բաները:

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ
(Մատթ. 27. 57-61, Մարկ. 15. 42-47, Յովհ. 19. 38-42)

50 Եւ ահա Յովսէփ անունով մի մարդ կար հրեաների Արիմաթէ քաղաքից: Նա հրեաների խորհրդի անդամ էր, բարեգործ եւ արդար մի մարդ 51 (սա չէր միաբանել նրանց մտադրութիւններին ու գործերին): Եւ ինքն էլ էր սպասում Աստծու թագաւորութեանը: 52 Սա Պիղատոսի մօտ գալու ուզեց Յիսուսի մարմինը: 53 Եւ նրան խաչից իջեցնելով՝ փաթաթեց պատանքով ու դրեց վիմափոր գերեզմանի մէջ, որտեղ բնաւ ոչ ոք չէր դրուած: 54 Եւ օրը ուրբաթ էր, ու լուսանում էր

†Լաւագոյն յուն. բն. յունեն գրուած յունարէն, լատիներէն եւ եբրայերէն գրերով բառերը:

շաբաթը:

55 Եւ Յովսէփի յետեւից գնում էին կանայք, որոնք Գալիլիայից էին եկել Յիսուսի հետ. նրանք տեսան գերեզմանը, եւ թէ ինչպէս նրա մարմինը այնտեղ դրուեց: 56 Վերադարձան, խնկեր եւ իւղեր պատրաստեցին ու շաբաթ օրը, օրէնքի համաձայն, հանգիստ արեցին:

ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 28. 1-10, Մարկ. 16. 1-8, Յովհ. 20. 1-10)

24 Բայց կիրակի օրը, առաւօտեան շատ վաղ, կանայք գերեզման եկան՝ բերելով իրենց պատրաստած խնկերը. նրանց հետ եւ ուրիշ կանայք: 2 Եւ քարը գերեզմանից գլորած գտան 3 ու ներս մտնելով՝ Տէր Յիսուսի մարմինը չգտան: 4 Եւ մինչ նրանք զարմացած էին այդ բանի վրայ, ահա լուսաւոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մօտ: 5 Եւ երբ կանայք զարհուրեցին ու իրենց երեսը գետին խոնարհեցրին, մարդիկ ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մէջ էք փնտռում: 6 Այստեղ չէ, այլ՝ յարեաւ: Յիշեցէ՛ք՝ ինչպէս խօսեց նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր. 7 ասում էր, թէ պէտք է, որ մարդու Որդին մեղաւոր մարդկանց ձեռքը մատնուի, խաչուի եւ երրորդ օրը յարութիւն առնի»: 8 Եւ նրանք յիշեցին նրա խօսքերը: 9 Եւ վերադարձան ու պատմեցին այս ամէնը Տասնմէկին եւ բոլոր միւսներին: 10 Եւ Մարիամ Մագդաղենացին, Յովհաննան, Յակոբի մայր Մարիամը եւ նրանց հետ ուրիշ կանայք էին, որ այս բաները պատմեցին առաքեալներին: 11 Բայց նրանց խօսքերը բարբաջանք թուացին աշակերտներին, եւ չէին հաւատում նրանց: 12 Սակայն Պետրոսը վեր կացաւ եւ վազեց դէպի գերեզման, նայեց ու տեսաւ, որ կտաւները միայն կային: Եւ գնաց՝ մտքում զարմացած, թէ ինչ էր եղել:

ԷՄՄԱՒՈՒՍԻ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ
(Մարկ. 16. 12-13)

13 Եւ ահա նոյն օրը աշակերտներից երկուսը գնում էին մի գիւղ, որի անունը Էմմաուս էր, եւ որը Երուսաղէմից հեռու էր մօտ տասնմէկ կիլոմետր: 14 Եւ նրանք միմեանց հետ խօսում էին կատարուած բոլոր անցուդարձերի մասին: 15 Եւ մինչ նրանք խօսում էին ու վիճում, ինքը՝ Յիսուս մօտեցաւ ու գնում էր նրանց հետ: 16 Բայց նրանց աչքերը բռնուած էին, որպէսզի նրան չճանաչեն: 17 Եւ նրանց ասաց. «Այդ ի՞նչ բաներ են, որոնց համար քայլելիս վիճում էք միմեանց հետ եւ տրտմած էք»: 18 Նրանցից մէկը, որի անունը Կղէոպաս էր, ասաց նրան. «Երուսաղէմում միայն դո՛ւ ես, որ չես իմացել, թէ ինչեր կատարուեցին այնտեղ այս օրերին»: 19 Եւ նրանց ասաց՝ ի՞նչ: Եւ նրանք ասացին Յիսուս Նազովրեցու մասին, որ եղաւ մարգարէ մարդ, հզօր՝ գործերով եւ խօսքերով, Աստծու եւ ամբողջ ժողովրդի առաջ, 20 եւ թէ ինչպէս մեր քահանայապետները եւ իշխանաւորները նրան մատնեցին մահուան դատաստանի ու խաչը հանեցին նրան: 21 Մենք ակնկալում էինք, թէ նա է, որ փրկելու է Իսրայէլը. սակայն, այս բոլորով հանդերձ, այս երրորդ օրն է, որ այդ բաները կատարուեցին: 22 Այլ նաեւ մեզ զարմացրին մեր միջից մի քանի կանայք, որոնք վաղ առաւօտեան գերեզման էին գնացել 23 եւ նրա մարմինը չէին գտել. նրանք եկան եւ ասացին, թէ նաեւ մի տեսիլ էլ էին տեսել հրեշտակների, որոնք ասում էին նրա մասին, թէ կենդանի է: 24 Ապա մեզնից ոմանք էլ գերեզման գնացին եւ գտան այնպէս, ինչպէս կանայք ասել էին: Բայց նրան չտեսան: 25 Եւ նա ասաց նրանց. «Ո՛վ անմիտ եւ թուլասիրտ մարդիկ, որ դժուարանում էք հաւատալ այն ամենին, որ ասացին մարգարէները: 26 Չէ՞ որ Քրիստոս պէտք է նոյն այդ չարչարանքները կրէր եւ այնպէս մտնէր իր փառքի մէջ»: 27 Եւ սկսած Մովսէսից ու բոլոր մարգարէներից՝ մեկնում էր նրանց այն բոլորը, ինչ գրուած է իր մասին բոլոր Գրքերում: 28 Երբ մօտեցան այն գիւղին, ուր գնում էին, Յիսուս պատճառ բռնեց, թէ ինքը գնալու է աւելի

հեռու տեղ: 29 Իսկ նրանք չատ
ստիպեցին նրան ու ասացին. «Մեզ
մօտ գիշերիր, որովհետեւ երեկոյ է, եւ
օրը տարաժամել է»: Եւ նա ներս մտաւ՝
նրանց հետ այնտեղ գիշերելու: 30 Եւ
երբ նա սեղան նստեց նրանց հետ, հաց
վերցնելով՝ օրհնեց, կտրեց այն եւ
տուեց նրանց: 31 Եւ նրանց աչքերը
բացուեցին ու ճանաչեցին նրան, իսկ
ինքը նրանց աչքին անտեսանելի եղաւ:
32 Եւ նրանք ասացին միմեանց. «Մեր
սրտերն էլ միթէ չէի՞ն ճմլւում մեր
մէջ, մինչ նա ճանապարհին խօսում էր
մեզ հետ. եւ ինչպէ՛ս էր մեզ բա-
ցատրում Գրքերը»: 33 Ապա անմիջա-
պէս վեր կացան ու Երուսաղէմ վերա-
դարձան եւ հաւաքուած գտան
Տասնմէկին եւ նրանց հետ եղածներին,
34 որոնք ասում էին, թէ՝ «Իսկապէս
յարեաւ Տէրը եւ երեւաց Սիմոնին»:
35 Իսկ երկուսը պատմեցին այն, ինչ
պատահել էր ճանապարհին, եւ թէ
ինչպէ՛ս Յիսուս իրեն ճանաչել էր
տուել նրանց՝ հաց կտրելու ժամանակ:

ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ է ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻՆ
(Մատթ. 28. 16-20, Մարկ. 16. 14-18, Յովհ. 20. 19-23, Գործք. 1. 6-8)

36 Մինչ դեռեւս նրանք այս էին
խօսում, Յիսուս ինքը եկաւ կանգնեց
նրանց մէջ եւ ասաց. «Խաղաղութի՛ւն
ձեզ, ես եմ, մի՛ վախեցէք»: 37 Իսկ
նրանք զարհուրած վախենում եւ
կարծում էին, թէ մի ոգի են տեսնում:
38 Եւ նրանց ասաց. «Ինչո՞ւ էք
խռովուած, եւ ինչո՞ւ ձեր սրտերում
կասկածներ են ծագում. 39 տեսէ՛ք իմ
ձեռքերն ու ոտքերը, որովհետեւ նոյն
ինքն ես եմ. շօշափեցէ՛ք ինձ եւ
տեսէ՛ք, որովհետեւ ոգին մարմին եւ
ոսկորներ չունի. ինչպէս տեսնում էք,
ես ունեմ»: 40 Եւ այս ասելով՝ ցոյց
տուեց նրանց իր ձեռքերն ու ոտքերը:
41 Եւ մինչ դեռեւս ուրախութիւնից
չէին հաւատում եւ զարմացած էին,
ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան
ունէ՞ք»: 42 Եւ նրանք տուին նրան
խորոված ձկան մի կտոր եւ մեղրա-
խորիսխ† : 43 Եւ նա առաւ կերաւ նրանց
առաջ, իսկ մնացածները տուեց նրանց
ու ասաց. 44 «Սրանք այն խօսքերն են,
որ խօսեցի ձեզ հետ, մինչ ձեզ հետ էի,
թէ՝ պէտք է կատարուեն այն ամէնը,
որ գրուած են իմ մասին Մովսէսի
օրէնքում, մարգարէների մէջ եւ սաղ-
մոսներում»: 45 Այն ժամանակ բացեց
նրանց մտքերը, որ հասկանան Գրքե-
րը: 46 Եւ ասաց նրանց. «Այսպէս պէտք
է չարչարուէր Քրիստոս, յարութիւն
առնէր մեռելներից երրորդ օրը, 47 եւ
քարոզուէր նրա անունով ապաշխա-
րութիւն եւ մեղքերի թողութիւն բոլոր
ազգերի մէջ՝ Երուսաղէմից սկսած:
48 Եւ այս բաների վկաներ էք դուք:
49 Եւ ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ
Հօր խոստումը, իսկ դուք նստեցէ՛ք
Երուսաղէմ քաղաքում, մինչեւ որ
երկնքից զօրութեամբ զգեստա-
ւորուէք»:

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ
(Մարկ. 16. 19-20, Գործք. 1. 9-11)

50 Ապա նրանց տարաւ հանեց մին-
չեւ Բեթանիա եւ, բարձրացնելով իր
ձեռքերը, օրհնեց նրանց: 51 Եւ մինչ
նա օրհնում էր նրանց, բաժանուեց
նրանցից եւ դէպի երկինք էր վերա-
նում: 52 Իսկ նրանք երկրպագեցին
Յիսուսին եւ մեծ ուրախութեամբ
վերադարձան Երուսաղէմ: 53 Եւ միշտ
տաճարում էին, գովաբանում եւ օրհ-
նաբանում էին Աստծուն:

†Լաւագոյն յուն. բն. չունեն եւ մեղրախորիսխ բառերը:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Ներածութիւն

Չորս աւետարանների մէջ Յովհաննէսի աւետարանը ամենից ինքնատիպն է: Եթէ նկատի չունենանք Յիսուսի չարչարանքների պատմութիւնը, այստեղ միւս աւետարանների հետ ընդհանուր շատ քիչ տարրեր կը գտնենք: Դրան հակառակ, Յովհաննէսի աւետարանը միակն է, որտեղ յիշատակուած են որոշ դրուագներ, որոնք չկան միւս աւետարաններում, ինչպէս՝ Կանայի հարսանիքը, Յիսուսի հանդիպումները Նիկոդէմոսի, սամարացի կնոջ, Բեթեզդայի անդամալոյծի, ի ծնէ կոյրի հետ եւ այլն:

Իր առաջաբանում, որն ունի բանաստեղծական ձեւ, Յովհաննէսը Յիսուսին ներկայացնում է որպէս Աստծու յաւերժական Բանը (խօսքը), որը մարմնանալով գալիս է ապրելու մարդկանց հետ՝ նրանց մէջ դառնալով խորհրդանիշ կեանքի, լոյսի եւ ճշմարտութեան:

Յովհաննէսի աւետարանը կարելի է բաժանել երկու մեծ մասերի: Առաջին մասում նախ հանդէս են գալիս Յովհաննէս Մկրտիչը, նրա աշակերտ Անդրէասը, ինչպէս եւ Փիլիպպոսն ու Նաթանայէլը, որոնք արտայայտում են, իւրաքանչիւրն իր ձեւով, ինչ որ բացայայտել են Յիսուսի անձի մէջ: Այնուհետեւ պատմւում է Յիսուսի զանազան հանդիպումների եւ նրա գործած եօթը հրաշքների մասին, որ աւետարանիչը ներկայացնում է որպէս «նշաններ»՝ դրանով ընդգծելով այն միտքը, թէ էականը դրանց իմաստը հասկանալն է: Յովհաննէսն այս առաջին մասն աւարտում է կատարուածի մասին մի տեսակ հաշուեկշռով եւ Յիսուսի պատգամի ամփոփումով:

Երկրորդ մասում Յիսուս իր աշակերտներին տալիս է իր վերջին յանձնարարութիւնները, որոնք, որոշ իմաստով, կազմում են նրա հոգեւոր կտակը: Ապա, իր աղօթքով, նա պատրաստւում է դիմագրաւել մահը եւ իր Հօրն է վստահում նրանց, ում պիտի թողնի իր ետեւում: Յիշատակելով Յիսուսի ձերբակալութիւնը, դատապարտութիւնը եւ մահը խաչի վրայ, ապա նաեւ թափուր գերեզմանի յայտնաբերումը, Յովհաննէսը վերամիաւորում է միւս աւետարանների պատմութեան գլխաւոր գծերը: Զատկի օրը նշանաւորւում է նրանով, որ յարուցեալ Յիսուս երեւում է Մարիամ Մագդաղենացուն, յետոյ իր աշակերտներին, մասնաւորապէս՝ Թովմասին:

ԻԱ գլուխը գրքի եզրակացութիւնից յետոյ արուած մի յաւելուած է: Այդ եզրակացութեամբ բացայայտուած է աւետարանի նպատակը. այն է՝ ընթերցողներին քայլ առ քայլ բերել այն բանին, որ նրանք Յիսուսի անձի մէջ ճանաչեն խոստացուած Մեսիային՝ Աստծու Որդուն:

ԵՒ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵՒ

1 Սկզբից† էր Բանը, եւ Բանը
Աստծու մօտ էր, եւ Բանը Աստուած էր:
2 Նա սկզբից Աստծու մօտ էր: 3 Ամէն
ինչ նրանով եղաւ. եւ առանց նրան
չեղաւ ոչինչ, որ եղել է: 4 Կեանքը
նրանով էր‡: Եւ այդ կեանքը մարդ-
կանց համար լոյս էր: 5 Եւ լոյսը խա-
ւարի մէջ լուսաւորում է, եւ խաւարը
նրան չնուաճեց:
6 Կար մի մարդ՝ Աստծուց ուղար-
կուած. նրա անունը՝ Յովհաննէս: 7 Սա
եկաւ որպէս վկայ, որպէսզի վկայի
լոյսի մասին, որ բոլորը նրա միջոցով
հաւատան: 8 Ինքը լոյսը չէր, այլ եկել
էր, որ վկայի լոյսի մասին:
9 Այդ լոյսն էր ճշմարիտ լոյսը, որ
լուսաւորում է ամէն մարդու, որ գալու
է աշխարհ: 10 Նա աշխարհի մէջ էր, եւ
աշխարհը նրանով եղաւ, սակայն աշ-
խարհը նրան չճանաչեց: 11 Իւրային-
ների մօտ եկաւ, բայց իւրայինները
նրան չընդունեցին: 12 Իսկ ովքեր
նրան ընդունեցին, նրանց իշխանու-
թիւն տուեց լինելու Աստծու որդիներ,
նրանց, որոնք իր անունը կը հա-
ւատան: 13 Նրանք ո՛չ արիւնից, ո՛չ
մարմնի կամքից եւ ոչ էլ մարդու
կամքից, այլ Աստծուց ծնուեցին: 14 Եւ
Բանը մարմին եղաւ ու բնակուեց մեր
մէջ, եւ տեսանք նրա փառքը, նման
այն փառքի, որ Հայրն է տալիս Մի-
ածնին՝ լի շնորհով ու ճշմարտութեամբ:
15 Յովհաննէսը վկայում էր նրա
մասին, աղաղակում եւ ասում. «Սա՛ է,
որի մասին ասացի: Նա, որ իմ յետեւից
էր գալու, ինձնից մեծ եղաւ, որով-
հետեւ ինձնից առաջ կար»: 16 Մենք
բոլորս նրա լրիւութիւնից ստացանք
շնորհ՝ շնորհի փոխարէն. 17 որովհետեւ
օրէնքը Մովսէսի միջոցով տրուեց, իսկ
շնորհը եւ ճշմարտութիւնը Յիսուս
Քրիստոսի միջոցով եղան:
18 Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել,
բացի միայն միածին Որդուց§, որ Հօր
ծոցում է. նա՛ յայտնեց Նրան:

†Այսինքն՝ աշխարհի ստեղծագործութիւնից առաջ:
‡Այսինքն՝ կեանքը նրանով սկիզբ առաւ:
§Լաւագոյն յուն. բն. ունեն միակ Աստուածը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 3. 1-12, Մարկ. 1. 1-8, Ղուկ. 3. 1-18)

19 Եւ Յովհաննէսի վկայութիւնը
այս է. երբ հրեաները† Երուսաղէմից
քահանաներ ու ղեւտացիներ ուղար-
կեցին նրա մօտ, որպէսզի հարցնեն
նրան՝ դու ո՞վ ես, 20 նա խոստովանեց
առանց վարանելու. խոստովանեց, թէ՝
ես Քրիստոսը չեմ: 21 Ու նրան հարց-
րին՝ իսկ դու ո՞վ ես, Եղիա՞ն ես: Եւ նա
ասաց՝ ո՛չ, չեմ: Իսկ դու մարգարէ՞ն
ես: Նա պատասխանեց՝ ո՛չ: 22 Իսկ
ասա՛ մեզ՝ դու ո՞վ ես, որպէսզի պա-
տասխան տանենք նրանց, որոնք մեզ
ուղարկեցին. ի՞նչ ես ասում քո մասին:
23 Նա ասաց. «Ես անապատում կան-
չողի ձայնն եմ, հարթեցէ՛ք Տիրոջ ճա-
նապարհը, ինչպէս ասաց Եսայի մար-
գարէն»: 24 Եւ եկողները փարիսե-
ցիների կողմից էին: 25 Նրանք
հարցրին նրան ու ասացին. «Իսկ դու
ինչո՞ւ ես մկրտում, եթէ դու չես Քրիս-
տոսը, ոչ էլ Եղիան եւ ոչ էլ մարգա-
րէն»: 26 Յովհաննէսը պատասխան
տուեց նրանց ու ասաց. «Ես ձեզ
մկրտում եմ ջրով. ձեր մէջ կայ մէկը,
որին դուք չէք ճանաչում, 27 որ գալու է
իմ յետեւից, եւ որի կօշիկների կապերը
արձակելու արժանի չեմ ես»: 28 Այս
բանը պատահեց Բեթաբարայում, Յոր-
դանանի միւս կողմում, ուր գտնւում
էր Յովհաննէսը եւ մկրտում:

ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ

29 Հետեւեալ օրը նա տեսաւ Յիսու-
սին, որ գալիս էր դէպի իրեն, ու ասաց.
«Ահա՛ Գառն Աստուծոյ, որ վերացնում
է աշխարհի մեղքը: 30 Սա՛ է նա, որի
մասին ես ասում էի՝ իմ յետեւից գալիս
է մէկը, որ ինձնից մեծ եղաւ, որով-
հետեւ ինձնից առաջ կար: 31 Եւ ես
չէի ճանաչում նրան, բայց որպէսզի
յայտնի լինի Իսրայէլին, դրա համար
ես եկայ ջրով մկրտելու»: 32 Յովհան-
նէսը վկայեց եւ ասաց. «Տեսայ Հոգին,
որ իջնում էր երկնքից որպէս աղաւնի
եւ հանգչում նրա վրայ: 33 Եւ ես չէի
ճանաչում նրան. սակայն նա, ով ինձ

†Այսինքն՝ հրեայ առաջնորդները:

ուղարկեց ջրով մկրտելու, նա ինձ
ասաց. «Ում վրայ տեսնես, որ Հոգին
իջնում եւ մնում է, նա՛ է, որ մկրտում
է Սուրբ Հոգով»: 34 Եւ ես տեսայ ու
վկայեցի, թէ սա՛ է Աստծու Որդին»:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

35 Հետեւեալ օրը դարձեալ այնտեղ
կանգնած էր Յովհաննէսը. նաեւ՝ իր
աշակերտներից երկուսը: 36 Եւ նայելով
Յիսուսին, որ անցնում գնում էր,
ասաց. «Ահաւասիկ Քրիստոսը՝ Գառն
Աստուծոյ»: 37 Երկու աշակերտները
նրանից լսեցին, ինչ որ խօսեց, եւ
գնացին Յիսուսի յետեւից: 38 Երբ
Յիսուս յետ դարձաւ եւ տեսաւ նրանց,
որ գալիս էին իր յետեւից, ասաց
նրանց. «Ի՞նչ էք ուզում»: Նրանք
ասացին նրան. «Ռաբբի՛ (որ թարգ-
մանւում է՝ վարդապետ), ո՞ւր է քո
օթեւանը»: 39 Նա նրանց ասաց. «Եկէ՛ք
եւ տեսէ՛ք»: Եկան եւ տեսան, թէ
որտեղ էր նրա օթեւանը. եւ այն օրը
նրա մօտ գիշերեցին, որովհետեւ մօտ
ժամը չորսն էր: 40 Սիմոն Պետրոսի եղ-
բայր Անդրէասը մէկն էր այն երկու-
սից, որոնք լսեցին Յովհաննէսի ասածը
եւ գնացին Յիսուսի յետեւից: 41 Սա
նախ գտնում է իր եղբայր Սիմոնին ու
նրան ասում է. «Գտանք Մեսիային»
(որ թարգմանւում է՝ Քրիստոս): 42 Սա
նրան տարաւ Յիսուսի մօտ: Նայելով
նրան՝ Յիսուս ասաց. «Դու Յովնանի
որդի Սիմոնն ես. դու պիտի կոչուես
Կեփաս» (որ թարգմանւում է՝ Պետրոս):

ՓԻԼԻՊՊՈՍԻ ԵՒ ՆԱԹԱՆԱՅԷԼԻ ԿՈՉՈՒՄԸ

43 Յաջորդ օրը Յիսուս որոշեց գա-
լիլիա մեկնել. գտաւ Փիլիպպոսին ու
նրան ասաց. «Արի՛ իմ յետեւից»: 44 Եւ
Փիլիպպոսը Բեթսայիդայից էր, Անդ-
րէասի եւ Պետրոսի քաղաքից: 45 Փի-
լիպպոսը գտնում է Նաթանայէլին ու
նրան ասում. «Ում մասին որ Մովսէսը
օրէնքի մէջ եւ մարգարէները գրել են,
գտանք նրան՝ Յիսուսին՝ Յովսէփի որ-
դուն, Նազարէթ քաղաքից»: 46 Նա-
թանայէլը նրան ասաց. «Իսկ կարելի՞
է, որ Նազարէթից մի որեւիցէ լաւ բան
դուրս գայ»: Փիլիպպոսը նրան ասաց.
«Արի՛ եւ տե՛ս»: 47 Երբ Յիսուս տեսաւ
Նաթանայէլին, որ իր մօտ էր գալիս,
ասաց նրա մասին. «Ահա՛ իսկական մի
իսրայէլացի, որի մէջ նենգութիւն
չկայ»: 48 Նաթանայէլը նրան ասաց.
«Որտեղի՞ց ես ինձ ճանաչում»: Յիսուս
պատասխանեց եւ ասաց նրան. «Փի-
լիպպոսը դեռ քեզ չկանչած, երբ թզե-
նու տակ էիր, տեսայ քեզ»: 49 Նաթա-
նայէլը պատասխան տուեց նրան ու
ասաց. «Ռաբբի՛, դո՛ւ ես Աստծու
Որդին, դո՛ւ ես Իսրայէլի թագաւորը»:
50 Յիսուս պատասխան տուեց նրան ու
ասաց. «Նրա համա՞ր ես հաւատում,
որ քեզ ասացի, թէ՝ թզենու տակ տե-
սայ քեզ. դրանից շատ աւելի մեծ բա-
ներ պիտի տեսնես»: 51 Եւ ասաց նրան.
«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,
պիտի տեսնէք երկինքը բացուած եւ
Աստծու հրեշտակներին՝ բարձրանալիս
եւ իջնելիս մարդու Որդու վրայ»:

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

2 Գալիլիա հասնելու երրորդ օրը Կա-
նա քաղաքում հարսանիք կար: Եւ Յի-
սուսի մայրը այնտեղ էր: 2 Հարսանիքի
հրաւիրուեցին նաեւ Յիսուս եւ իր
աշակերտները: 3 Եւ երբ գինին պակա-
սեց, մայրը Յիսուսին ասաց. «Գինի
չունեն»: 4 Եւ Յիսուս նրան ասաց.
«Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ
ժամանակը դեռ չի հասել»: 5 Նրա
մայրը սպասաւորներին ասաց. «Ինչ որ
ձեզ ասի, արէ՛ք»: 6 Այնտեղ կային
քարէ վեց թակոյկներ՝ հրեաների
սովորութեան համաձայն մաքրուելու
համար. նրանցից իւրաքանչիւրը շուրջ
հարիւր լիտր տարողութիւն ունէր:
7 Յիսուս նրանց ասաց. «Լցրէ՛ք այդ
թակոյկները ջրով»: Եւ լցրին բերանը-
բերան: 8 Եւ ասաց նրանց. «Հիմա
վերցրէ՛ք եւ տարէ՛ք սեղանապետին»:
Եւ նրանք տարան: 9 Եւ երբ սեղա-
նապետը ճաշակեց գինի դարձած ջուրը
ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց
սպասաւորները, որոնք ջուր լցրին, գի-
տէին), 10 խօսեց փեսայի հետ ու ասաց.
«Ամէն մարդ նախ ընտիր գինին է

մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»: 11 Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան:

12 Սրանից յետոյ Յիսուս Կափառնայում իջաւ իր մօր եւ իր եղբայրների հետ†. եւ այնտեղ մնաց միայն մի քանի օր:

ՏԱՃԱՐՈՒՄ ԱՌԵՒՏՈՒՐ ԱՆՈՂՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ
(Մատթ. 21. 12-13, Մարկ. 11. 15-17, Ղուկ. 19. 45-46)

13 Հրեաների զատիկը մօտ էր, եւ Յիսուս Երուսաղէմ եկաւ: 14 Եւ տաճարի մէջ գտաւ նրանց, որ վաճառում էին արջառներ, ոչխարներ եւ աղաւնիներ, ինչպէս նաեւ՝ լումայափոխներ, որ նստած էին: 15 Եւ չուանից խարազան շինեց ու բոլորին տաճարից դուրս հանեց. նաեւ՝ ոչխարներն ու արջառները. իսկ լումայափոխների պղնձադրամները ցիր ու ցան արեց եւ նրանց սեղանները շուռ տուեց: 16 Իսկ աղաւնի վաճառողներին ասաց. «Դրանք այստեղից վերցրէ՛ք եւ իմ Հօր Տունը վաճառատան մի՛ վերածէք»: 17 Նրա աշակերտները յետոյ յիշեցին, որ գրուած է. «Քո Տան նկատմամբ իմ նախանձախնդրութիւնը ինձ պիտի ուտի»:

18 Հրեաները նրան ասացին. «Ի՞նչ նշան ցոյց կը տաս մեզ, թէ իրաւունք ունես այդ բանն անելու»: 19 Պատասխանեց նրանց Յիսուս եւ ասաց. «Քանդեցէ՛ք այդ տաճարը, եւ երեք օրուայ ընթացքում այն կը վերականգնեմ»: 20 Հրեաները նրան ասացին. «Քառասունվեց տարում շինուեց այս տաճարը, իսկ դու երե՞ք օրում այն վերականգնում ես»: 21 Բայց նա իր մարմնի տաճարի մասին էր խօսում: 22 Իսկ երբ մեռելներից յարութիւն առաւ, նրա աշակերտները յիշեցին, թէ այդ է, որ ասել էր. եւ հաւատացին Գրքին ու այն խօսքին, որ Յիսուս ասել էր:

†Յունարէնն աւելացնում է եւ աշակերտների:

ԵՐՈՒՍԱՂԷՄԵԱՆ ՕՐԵՐ

23 Եւ երբ Յիսուս զատկի տօնին Երուսաղէմում էր գտնուում, շատեր հաւատացին նրան, քանի որ տեսնում էին այն նշանները, որ կատարում էր: 24 Բայց Յիսուս անձամբ վստահութիւն չունէր նրանց նկատմամբ, որովհետեւ ինքն ամենքին ճանաչում էր 25 եւ կարիք չկար, որ որեւէ մէկը վկայէր մարդու մասին, քանի որ ինքն արդէն գիտէր, թէ ինչ կար մարդու հոգու մէջ:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՆԻԿՈԴԵՄՈՍԸ

3 Եւ փարիսեցիների մէջ Նիկոդեմոս անունով մի մարդ կար, որ հրեաների իշխանաւոր էր: 2 Սա գիշերով եկաւ նրա մօտ ու նրան ասաց. «Ռաբբի՛, գիտենք, որ Աստծուց ես եկել որպէս վարդապետ, որովհետեւ ոչ ոք չի կարող կատարել այն նշանները, որ դու ես անում, եթէ Աստուած նրա հետ չլինի»: 3 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը վերստին չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը տեսնել»: 4 Նիկոդեմոսը նրան ասաց. «Ինչպէ՞ս կարող է ծնուել մի մարդ, որ ծեր է. միթէ կարելի՞ է իր մօր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնուել»: 5 Յիսուս պատասխան տուեց եւ ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել. 6 որովհետեւ մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի: 7 Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պէտք է ձեզ վերստին ծնուել. 8 որովհետեւ քամին ուր ուզում է՝ փչում է, եւ նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպէս է եւ ամէն ոք, որ Հոգուց է ծնուած»: 9 Նիկոդեմոսը հարցրեց նրան. «Այդ ինչպէ՞ս կարող է լինել»: 10 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Դո՛ւ ես Իսրայէլի վարդապետ եւ այդ չգիտե՞ս: 11 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, խօսում ենք, ինչ որ գիտենք, եւ վկայում ենք, ինչ

որ տեսել ենք, եւ մեր վկայութիւնը չէք ընդունում: 12 Իսկ արդ, եթէ երկրաւոր բաներ ասացի ձեզ, եւ չէք հաւատում, ապա ինչպէ՞ս պիտի հաւատաք, եթէ երկնաւոր բաներ ասեմ:

13 Արդ, ոչ ոք երկինք չի ելել, եթէ ոչ նա, որ իջաւ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր: 14 Եւ ինչպէս որ Մովսէսը անապատում բարձրացրեց օձը†, այնպէս էլ մարդու Որդին պէտք է բարձրանայ, 15 որպէսզի, ով նրան հաւատում է, յաւիտենական կեանքն ընդունի. 16 քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տուեց, որպէսզի, ով նրան հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը. 17 որովհետեւ Աստուած իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպէսզի աշխարհը նրանով փրկուի: 18 Ով նրան հաւատում է, չպիտի դատապարտուի, եւ ով նրան չի հաւատում, արդէն իսկ դատապարտուած է, քանի որ Աստծու միածին Որդու անունը չհաւատաց: 19 Եւ դատաստանը այսպէ՛ս իսկ է. որ լոյսը եկաւ աշխարհ, սակայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին, քան լոյսը, որովհետեւ իրենց գործերը չար էին. 20 որովհետեւ, ով չարիք է գործում, ատում է լոյսը եւ չի գալիս դէպի լոյսը, որպէսզի նրա գործերը իր երեսովը չտան: 21 Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դէպի լոյսը, որպէսզի նրա գործերը յայտնի լինեն, թէ Աստուծով կատարուեցին»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՎԵՐՋԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

22 Այնուհետեւ Յիսուս եւ իր աշակերտները Հրէաստանի երկիրը եկան, եւ նա այնտեղ շրջում էր նրանց հետ ու մկրտում: 23 Յովհաննէսն էլ մկրտում էր Այենոնում, Երուսաղէմի մօտ, որովհետեւ այնտեղ շատ ջրեր կային, եւ մարդիկ գալիս ու մկրտւում էին, 24 քանի դեռ Յովհաննէսին չէին բանտարկել:

25 Եւ Յովհաննէսի աշակերտների ու մի հրեայի միջեւ մաքրութեան մասին մի հարց ծագեց: 26 Նրանք եկան Յովհաննէսի մօտ եւ նրան ասացին. «Ռաբբի՛, նա, որ Յորդանանի միւս կողմում քեզ հետ էր, եւ որի մասին դու վկայեցիր, ահաւասիկ նա մկրտում է, եւ ամէնքը գալիս են նրա մօտ»: 27 Յովհաննէսը պատասխանեց եւ ասաց. «Մարդն իրենից որեւէ բան անել չի կարող, եթէ նրան ի վերուստ՝ երկնքից այդ տրուած չէ: 28 Դուք ինքներդ էք վկայում ինձ, որ ձեզ ասացի. ես Քրիստոսը չեմ, այլ ուղարկուած եմ նրա առաջից: 29 Ով հարս ունի, նա՛ է փեսան. իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապէս ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ, այս ուրախութիւնը, որ իմն է, կատարեալ է: 30 Պէտք է, որ նա մեծանայ, իսկ ես՝ նուազեմ»:

Ի ՎԵՐՈՒՍՏ ԵԿՈՂԸ

31 «Նա, որ ի վերուստ է գալիս, վեր է ամենքից. նա, որ այս երկրից է, երկրաւոր է եւ երկրաւոր բաների մասին է խօսում: 32 Նա, որ երկնքից է գալիս, վկայում է, ինչ որ տեսել ու լսել է, սակայն նրա վկայութիւնը ոչ ոք չի ընդունում: 33 Ով ընդունում է նրա վկայութիւնը, հաստատած կը լինի, որ Աստուած ճշմարիտ է, 34 քանի որ նա, ում Աստուած ուղարկեց, Աստծու խօսքերն է խօսում. որովհետեւ Աստուած Հոգին տալիս է առանց չափի: 35 Հայրը սիրում է Որդուն եւ ամէն ինչ տուել է նրա ձեռքը: 36 Ով հաւատում է Որդուն, ընդունում է յաւիտենական կեանքը, իսկ ով չի հնազանդւում Որդուն, կեանք չի տեսնի, այլ նրա վրայ կը մնայ Աստծու բարկութիւնը»:

ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

4 Երբ Յիսուս իմացաւ, որ փարիսեցիները լսել են, թէ ինքն աւելի շատ աշակերտներ է դարձնում եւ մկրտում, քան Յովհաննէսը 2 (թէպէտեւ ոչ թէ Յիսուս ինքն էր մկրտում, այլ՝ նրա աշակերտները), 3 թողեց Հրէաստան երկիրը եւ վերստին եկաւ Գալիլիա: 4 Եւ անհրաժեշտ էր, որ նա անցնէր

†Տե՛ս Թուոց 21. 9:

Սամարիայով: 5 Նա գալիս է Սամարիայի մի քաղաքը, որի անունն էր Սիւքար, մօտիկ այն գիւղին, որ Յակոբը տուել էր իր որդուն՝ Յովսէփին: 6 Եւ այնտեղ Յակոբի աղբիւրը կար: Եւ Յիսուս ճանապարհից յոգնած՝ նստեց աղբիւրի մօտ. կէսօր էր:

7 Սամարիայից մի կին է գալիս ջուր հանելու. Յիսուս նրան ասում է. 8 «Ինձ խմելու ջուր տուր» (քանի որ նրա աշակերտները գնացել էին քաղաք, որպէսզի ուտելիք գնեն): 9 Սամարացի կինը նրան ասում է. «Դու, որ հրեայ ես, ինչպէ՞ս ինձնից՝ սամարացի կնոջից, խմելու ջուր ես ուզում» (որովհետեւ հրեաները սամարացիների հետ երբեք չփում չեն ունենում): 10 Յիսուս նրան պատասխանեց եւ ասաց. «Եթէ դու գիտենայի՛ր Աստծու պարգեւները, եւ թէ ով է, որ քեզ ասում է՝ "Ինձ խմելու ջուր տուր", գուցէ ինքդ արդարեւ նրանից կ'ուզէիր, եւ նա քեզ կենդանի ջուր կը տար»: 11 Կինը նրան ասաց. «Տէ՛ր, սակայն դու դոյլ իսկ չունես, եւ այս ջրհորը խորն է. ուրեմն դու որտեղի՞ց կ'ունենաս կենդանի ջուր: 12 Մի՞թէ դու աւելի մե՞ծ մէկն ես, քան մեր Հայրը՝ Յակոբը, որ այս ջրհորը մեզ տուել է եւ ինքն էլ խմել է սրանից. նաեւ՝ իր որդիներն ու իր հօտերը»:

13 Յիսուս նրան պատասխանեց եւ ասաց. «Ով որ այս ջրից խմի, նորից կը ծարաւի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, յաւիտեան չպիտի ծարաւի: 14 Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բխող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար»: 15 Կինը ասաց նրան. «Տէ՛ր, տո՛ւր ինձ այդ ջուրը, որպէսզի չծարաւեմ եւ այստեղ չգամ ջուր հանելու»: 16 Յիսուս նրան ասաց. «Գնա՛, ամուսնուդ կանչի՛ր եւ արի՛ այստեղ»: 17 Կինը պատասխան տուեց նրան եւ ասաց. «Ամուսին չունեմ»: Յիսուս նրան ասաց. «Լա՛ւ ասացիր, թէ՝ ամուսին չունեմ, 18 որովհետեւ հինգ մարդ ես փոխել եւ ում հետ, որ այժմ ապրում ես, քո ամուսինը չէ. այդ ճիշտ ասացիր»: 19 Կինը նրան ասաց. «Տէ՛ր, ինձ թւում է, թէ դու մարգարէ ես: 20 Մեր հայրերը այս լերան վրայ երկրպագութիւն արեցին, իսկ դուք ասում էք, թէ միայն Երուսաղէմն է այն տեղը, ուր արժան է երկրպագել»: 21 Յիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, հաւատա՛ ինձ, որ կը գայ ժամանակը, երբ ո՛չ այս լերան վրայ եւ ո՛չ էլ Երուսաղէմում կ'երկրպագեն Հօրը: 22 Դուք երկրպագում էք նրան, ում չգիտէք, իսկ մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք, որովհետեւ փրկութիւնը հրեաներից է: 23 Բայց կը գայ ժամանակը, եւ արդէն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կ'երկրպագեն Հօրը հոգով եւ ճշմարտութեամբ, քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: 24 Հոգի է Աստուած, եւ նրա երկրպագուները պէտք է հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագեն»:

25 Կինը ասաց նրան. «Գիտեմ, որ Մեսիան՝ Քրիստոս կոչուածը, կը գայ. երբ նա գայ, մեզ ամէն ինչ կը պատմի»: 26 Յիսուս նրան ասաց. «Այդ ես եմ, որ խօսում եմ քեզ հետ»: 27 Եւ այդ խօսքի վրայ նրա աշակերտները եկան եւ զարմանում էին, որ նա խօսում էր այդ կնոջ հետ, բայց նրանցից ոչ ոք չասաց, թէ՝ ի՞նչ ես ուզում կամ ի՞նչ ես խօսում նրա հետ: 28 Կինը թողեց իր սափորը եւ քաղաք գնաց ու ասաց մարդկանց. 29 «Եկէք տեսէ՛ք մի մարդու, որ ինձ ասաց այն բոլորը, ինչ արել եմ. արդեօք նա՞ է Քրիստոսը»: 30 Նրանք ելան քաղաքից եւ գալիս էին նրա մօտ:

31 Եւ մինչ նրանք դեռ չէին եկել, աշակերտներն աղաչում էին նրան ու ասում. «Ռաբբի՛, հա՛ց կեր»: 32 Նա ասաց նրանց. «Ես ունեմ ուտելու կերակուր, որ դուք չգիտէք»: 33 Աշակերտները իրար մէջ ասում էին՝ արդեօք մէկը դրան ուտելու բա՞ն է բերել: 34 Յիսուս նրանց ասաց. «Իմ կերակուրն այն է, որ կամքը կատարեմ նրա՛, ով ինձ ուղարկել է, եւ կատարեմ նրա գործը: 35 Չէ՞ որ դուք էք ասում, թէ չորս ամիս եւս կայ, որ հունձը գայ. ահա ես ձեզ ասում եմ. բարձրացրէ՛ք ձեր աչքերը եւ տեսէ՛ք արտերը, որ սպիտակել են եւ հասել հնձի համար: 36 Եւ ով հնձում է, վարձ է ստանում ու

յաւիտենական կեանքի համար պտուղ է կուտակում, որպէսզի սերմանողն ու հնձողը հաւասարապէս ցնծան: 37 Հէնց սրանով է ճշմարիտ այն խօսքը, թէ՝ ա՛յլ է սերմանողը եւ ա՛յլ՝ հնձողը: 38 Ես ուղարկեցի ձեզ հնձելու այն, որի վրայ աշխատանք չէիք թափել. ուրիշներ աշխատանք թափեցին, իսկ դուք նրանց վաստակի մէջ մտաք»:

39 Եւ սամարացիների այդ քաղաքից շատեր հաւատացին նրան այն կնոջ խօսքի համար, որ վկայեց, թէ՝ ինձ ասաց այն բոլորը, ինչ ես արել էի:

40 Իսկ երբ սամարացիները նրա մօտ եկան, աղաչում էին, որ իրենց մօտ մնայ. եւ նա այնտեղ մնաց երկու օր: 41 Ուրիշ շատեր էլ նրան հաւատացին՝ իր խօսքի համար. 42 եւ կնոջն ասում էին. «Այսուհետեւ քո խօսքերի համար չէ, որ հաւատում ենք, որովհետեւ մենք ինքներս լսեցինք նրանից եւ գիտենք, թէ նա՛ է ճշմարտապէս Փրկիչն աշխարհի»:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐԻ ՈՐԴՈՒ ԲԺՇԿՈՒՄԸ

43 Եւ երկու օր յետոյ նա ելաւ այնտեղից եւ գնաց Գալիլիա. 44 քանի որ Յիսուս ինքն իսկ վկայել էր, թէ մարգարէն իր գաւառում պատիւ չունի: 45 Սակայն, երբ նա Գալիլիա եկաւ, գալիլիացիները նրան ընդունեցին, որովհետեւ նրանք եւս տեսել էին այն բոլոր նշանները, որ նա արեց Երուսաղէմում՝ տօնի ժամանակ, քանի որ նրանք էլ էին եկել տօնին:

46 Յիսուս դարձեալ եկաւ Գալիլիայի Կանա քաղաքը, ուր ջուրը գինու էր վերածել: Պալատական մի պաշտօնատար կար, որի որդին հիւանդ էր Կափառնայումում: 47 Երբ նա լսեց, թէ Յիսուս Հրէաստանից Գալիլիա է եկել, եկաւ նրա մօտ եւ աղաչում էր, որ Կափառնայում իջնի ու իր որդուն բժշկի, քանի որ մերձիմահ էր: 48 Յիսուս նրան ասաց. «Եթէ նշաններ եւ զարմանալի գործեր չտեսնէք, չէք հաւատում»: 49 Պաշտօնատարը նրան ասաց. «Տէ՛ր, իջի՛ր, քանի դեռ իմ որդին չի մեռել»: 50 Յիսուս նրան ասաց. «Գնա՛, քո որդին կենդանի է»: Եւ մարդը հաւատաց Յիսուսի ասած խօսքին ու գնաց: 51 Եւ մինչդեռ նա իջնում էր, նրա ծառաները ընդառաջ ելան նրան, աւետիս տուեցին եւ ասացին, թէ նրա տղան կենդանի է: 52 Նա հարցրեց նրանց, թէ ո՞ր ժամին ապաքինուեց: Նրան ասացին. «Երէկ, յետմիջօրէի ժամը մէկին ջերմը նրան թողեց»: 53 Հայրը գիտակցեց, որ այդ ժամին էր, երբ Յիսուս նրան ասաց՝ քո որդին կենդանի է: Եւ հաւատաց ինքը, ու իր ամբողջ ընտանիքը: 54 Այս դարձեալ երկրորդ նշանն է, որ արեց Յիսուս՝ Հրէաստանից Գալիլիա գալուց յետոյ:

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԱՒԱԶԱՆԻ ԱՆԴԱՄԱԼՈՅՏԻ ԲԺՇԿՈՒՄԸ

5 Դրանից յետոյ հրեաների տօնն էր, եւ Յիսուս Երուսաղէմ ելաւ: 2 Եւ Երուսաղէմում, Ոչխարների աւազանի մօտ մի տեղ կար, որ եբրայերէն անուանւում էր Բեթհեզդա՝ հինգ սրահներով, 3 որոնց մէջ պառկած էր մի մեծ բազմութիւն հիւանդների, կոյրերի, կաղերի եւ գօսացածների, որոնք սպասում էին ջրերի խառնուելուն: 4 Եւ Տիրոջ հրեշտակը ժամանակ առ ժամանակ իջնում էր աւազանը եւ ջրերը խառնում. եւ ով ջրերի խառնուելու ժամանակ առաջինն էր իջնում, բժշկւում էր՝ հիւանդութիւնից նշան անգամ չպահելով†:

5 Այնտեղ կար մի մարդ, որ երեսունութ տարուց ի վեր հիւանդ էր: 6 Երբ Յիսուս տեսաւ, որ նա պառկած ընկած է, եւ իմացաւ, որ դա շատ ժամանակից ի վեր էր, նրան ասաց. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: 7 Հիւանդը պատասխանեց նրան. «Տէ՛ր, ոչ ոք չունեմ, որ, երբ ջրերը խառնուեն, ինձ աւազանի մէջ իջեցնի. եւ մինչ ես դանդաղում եմ, մէկ ուրիշն ինձնից աւելի առաջ է իջնում»: 8 Յիսուս նրան ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛»: 9 Եւ մարդը առողջացաւ‡, վեր կացաւ, վերցրեց իր մահիճը եւ

†Յունարէնը չունի որոնք սպասում էին ... նշան անգամ չպահելով հատուածը:

‡Լաւագոյն յուն. բն. ունեն իսկոյն առողջացաւ:

ման էր գալիս. եւ այն օրը շաբաթ էր:
10 *Հրեաները բժշկուած մարդուն ասացին. «Շաբաթ օր է եւ օրինաւոր չէ, որ վերցնես մահիճդ»:* 11 *Նա նրանց ասաց. «Նա, որ ինձ բժշկեց, նա՛ ինձ ասաց՝ վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛»:*
12 *Նրան հարցրին ու ասացին. «Ո՞վ է այն մարդը, որ քեզ ասաց՝ վերցրո՛ւ քո մահիճը եւ շրջի՛ր»:* 13 *Իսկ բժշկուածը չէր իմանում, թէ ո՛վ է նա, որովհետեւ Յիսուս այդտեղից ամբոխի պատճառով հեռացել էր:* 14 *Այնուհետեւ Յիսուս նրան գտաւ տաճարում ու ասաց նրան. «Ահաւասիկ առողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպէսզի մի աւելի չար բան չպատահի քեզ»:* 15 *Մարդը գնաց եւ հրեաներին պատմեց, թէ՝ Յիսուս էր, որ ինձ բժշկեց:*

16 *Եւ հրեաները Յիսուսին հալածում էին նրա համար, որ շաբաթ օրով էր անում այդ բաները:* 17 *Սակայն Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Իմ Հայրը մինչեւ այժմ գործում է, ուրեմն ես եւս գործում եմ»:* 18 *Դրա համար հրեաները առաւել եւս ուզում էին նրան սպանել, որովհետեւ ոչ միայն չէր պահում շաբաթը, այլ նաեւ Աստծուն կոչում էր իր Հայրը եւ իր անձը Աստծուն հաւասար էր դասում:*

ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

19 *Յիսուս ասաց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի կարող անել, այլ անում է այն, ինչ տեսնում է, թէ Հայրը կատարում է, որովհետեւ ինչ որ Հայրն է անում, նոյնը նրա նման եւ Որդին է գործում,* 20 *քանի որ Հայրը սիրում է Որդուն, եւ այն ամէնը, ինչ ինքն է անում, ցոյց է տալիս նրան. եւ նրան ցոյց կը տայ սրանից շատ աւելի մեծ գործեր, որոնց վրայ դուք կը զարմանաք.* 21 *որովհետեւ, ինչպէս որ Հայրը յարութիւն է տալիս մեռելներին եւ կենդանացնում է, նոյնպէս եւ Որդին կենդանացնում է՝ ում կամենայ:* 22 *Սակայն Հայրը ոչ մէկին չի դատում, այլ ամէն դատաստան տուել է իր Որդուն,* 23 *որպէսզի ամէնքը պատուեն Որդուն, ինչպէս պատուում են Հօրը: Ով Որդուն չի պատուում, չի պատուում եւ Հօրը՝ նրան առաքողին:*
24 *Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ով իմ խօսքը լսում է ու հաւատում է նրան, ով ինձ առաքեց, ընդունում է յաւիտենական կեանքը եւ չի դատապարտուում, այլ մահուանից կեանք անցաւ:* 25 *Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ կը գայ ժամանակ, եւ արդէն իսկ եկել է, երբ մեռելները կը լսեն Աստծու Որդու ձայնը, եւ նրանք, որ կը լսեն, կ'ապրեն,* 26 *որովհետեւ, ինչպէս Հայրն ինքն իր մէջ կեանք ունի եւ կեանք է տալիս, նոյնպէս եւ Որդուն տուեց ինքն իր մէջ կեանք ունենալ եւ տալ:* 27 *Եւ նրան իշխանութիւն տուեց դատաստան անելու, քանի որ մարդու Որդի է.* 28 *դրա վրայ ինչո՞ւ էք զարմանում, որովհետեւ կը գայ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կը լսեն նրա ձայնը* 29 *եւ դուրս կը գան. ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար:*

30 *Ես ինքս ինձնից ոչինչ անել չեմ կարող, այլ, ինչպէս լսում եմ Հօրից՝ դատում եմ, եւ իմ դատաստանը արդար է, որովհետեւ ոչ թէ իմ կամքն եմ որոնում, այլ նրա կամքը, ով ինձ առաքեց»:*

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ

31 *«Եթէ ես եմ վկայում իմ մասին, իմ վկայութիւնը հաւաստի չէ:* 32 *Ուրիշն է, որ վկայում է իմ մասին. եւ դուք գիտէք, որ հաւաստի է այն վկայութիւնը, որ նա վկայեց իմ մասին:*
33 *Յովհաննէսի մօտ դուք մարդ ուղարկեցիք, եւ նա վկայեց ճշմարտութիւնը:* 34 *Բայց ես մարդկանցից չէ, որ վկայութիւն եմ առնում, այլ այս ասում եմ, որ դուք փրկուէք:* 35 *Յովհաննէսն էր ճրագը, որ վառուած էր եւ լոյս էր տալիս, եւ դուք կամեցաք միառժամանակ ցնծալ նրա լոյսով:*
36 *Բայց ես աւելի մեծ վկայութիւն ունեմ, քան Յովհաննէսինը. այն գործերը, որ Հայրն ինձ տուեց, որ կատարեմ, այդ նոյն գործերն իսկ, որ անում*

եմ, վկայում են իմ մասին, թէ Հայրն է ուղարկել ինձ: 37 *Եւ Հայրը, որ ինձ ուղարկեց, նա՛ է վկայել իմ մասին. դուք ո՛չ նրա ձայնն էք երբեւէ լսել եւ ո՛չ էլ նրա երեսն էք տեսել:* 38 *Եւ ո՛չ էլ նրա խօսքն ունէք ձեր մէջ բնակուած, որովհետեւ, ում նա ուղարկեց, դուք նրան չէք հաւատում:* 39 *Քննեցէ՛ք Գրքերը, քանի որ կարծում էք, թէ նրանցով յաւիտենական կեանք կ'ունենաք: Բայց այդ Գրքերն իսկ վկայում են իմ մասին, որովհետեւ դուք կարծում էք, թէ յաւիտենական կեանք ունէք:* 40 *Եւ դուք չէք կամենում դէպի ինձ գալ, որպէսզի կեանք ունենաք:*
41 *Ես մարդկանցից փառք չեմ առնում:* 42 *Բայց գիտեմ ձեզ, որ Աստծու հանդէպ սէր չունէք ձեր մէջ:* 43 *Ես եկայ իմ Հօր անունով, եւ ինձ չէք ընդունում: Եթէ ուրիշ մէկը գայ իր անունով, նրան կ'ընդունէք:* 44 *Դուք ինչպէ՞ս կարող էք հաւատալ, քանի որ իրարից էք փառք առնում եւ չէք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս:* 45 *Մի՛ կարծէք, որ ես Հօր մօտ ձեզ պիտի ամբաստանեմ. կայ մէկը, որ որպէս ամբաստանող կը կանգնի ձեր դէմ՝ Մովսէ՛սը, որի վրայ դուք յոյս էք դրել.* 46 *որովհետեւ, եթէ դուք հաւատայիք Մովսէսին, կը հաւատայիք այդ դէպքում ուրեմն եւ ինձ, քանի որ նա հէնց իմ մասին է գրել.* 47 *իսկ եթէ նրա գրածներին չէք հաւատում, իմ խօսքերին ինչպէ՞ս պիտի հաւատաք»:*

ՀԱՑԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մատթ. 14. 13-21, Մարկ. 6. 30-44, Ղուկ. 9. 10-17)

6 *Այնուհետեւ Յիսուս Գալիլիայի՝ Տիբերական ծովի հանդիպակաց կողմն անցաւ.* 2 *եւ նրա յետեւից բազում ժողովուրդ էր գնում, որովհետեւ տեսնում էին այն նշանները, որ նա կատարում էր հիւանդների վրայ:* 3 *Յիսուս լեռ բարձրացաւ եւ նստեց այնտեղ իր աշակերտների հետ:* 4 *Եւ մօտ էր զատիկը՝ հրեաների տօնը:*

5 *Յիսուս իր աչքերը վեր բարձրացրեց եւ տեսաւ, որ բազում ժողովուրդ է գալիս իր մօտ: Փիլիպպոսին ասաց. «Որտեղի՞ց հաց պիտի գնենք, որ դրանք ուտեն»:* 6 *Այս ասում էր՝ նրան փորձելու համար, բայց ինքը գիտէր, թէ ինչ էր անելու:* 7 *Փիլիպպոսը նրան պատասխանեց. «Երկու հարիւր դահեկանի հաց դրանց չի բաւարարի, թէկուզ եւ իւրաքանչիւր ոք մի կտոր վերցնի»:* 8 *Նրա աշակերտներից մէկը՝ Անդրէասը, Սիմոն Պետրոսի եղբայրը, ասաց նրան.* 9 *«Այստեղ մի պատանի կայ, որ հինգ գարեհաց ունի եւ երկու ձուկ. բայց այդքանն ի՞նչ է այսչափ մարդկանց համար»:*
10 *Յիսուս ասաց. «Նստեցրէ՛ք մարդկանց»: Այնտեղ առատ խոտ կար: Եւ շուրջ հինգ հազար մարդիկ նստեցին:*
11 *Եւ Յիսուս հացն առաւ ու գոհութիւն յայտնեց Աստծուն եւ բաշխեց նստածներին: Նոյն ձեւով եւ ձկներից՝ որչափ որ կամեցան:* 12 *Եւ երբ կշտացան, աշակերտներին ասաց. «Հաւաքեցէ՛ք այդ մնացած կտորները, որպէսզի ոչ մի բան չկորչի»:* 13 *Հաւաքեցին եւ լցրին տասներկու սակառ այն հինգ գարեհացի կտորտանքով, որ ավելացել էր ուտողներից:* 14 *Իսկ մարդիկ, երբ տեսան այն նշանները, որ նա արեց, ասացին. «Սա՛ է ճշմարիտ մարգարէն, որ աշխարհ էր գալու»:*

15 *Երբ Յիսուս իմացաւ, որ գալու են իրեն բռնել տանելու, որպէսզի իրեն թագաւոր անեն, դարձեալ միայնակ դէպի լեռը գնաց:*

ՅԻՍՈՒՍ ՔԱՅԼՈՒՄ Է ԾՈՎԻ ՎՐԱՅՈՎ
(Մատթ. 14. 22-33, Մարկ. 6. 45-52)

16 *Եւ երբ երեկոյ եղաւ, նրա աշակերտները ծովեզերք իջան:* 17 *Եւ նաւակ նստելով՝ գալիս էին դէպի ծովի միւս կողմը, դէպի Կափառնայում: Եւ երբ մութն ընկաւ, Յիսուս դեռ իրենց մօտ չէր եկել.* 18 *եւ ծովը հողմի ուժգին փչելուց փոթորկւում էր:* 19 *Երբ շուրջ հինգ կամ վեց կիլոմետր թիավարելուց յետոյ տեսան Յիսուսին, որ քայլում էր ծովի վրայով եւ նաւակին մօտեցել էր, սաստիկ վախեցան:* 20 *Եւ նա ասաց նրանց. «Ես եմ, մի՛ վախեցէք»:* 21 *Եւ ուզում էին նրան նաւակի մէջ առնել. եւ նաւակը շուտով հասաւ այն տեղը, ուր գնում էին:*

ՅԻՍՈՒՍ՝ ԿԵՆԱՑ ՀԱՑ

22 Յաջորդ օրը, ժողովուրդը, որ մնացել էր ծովի այն կողմը, տեսաւ, որ այնտեղ այլ նաւակ չկայ, բացի միայն մէկից†, որի մէջ մտել էին Յիսուսի աշակերտները, իսկ Յիսուս իր աշակերտների հետ նաւակ չէր մտել, այլ միայն իր աշակերտներն էին գնացել: 23 Սակայն Տիբերիայից ուրիշ նաւակներ էլ գալիս էին մօտ այն տեղին, ուր հացն էին կերել‡: 24 Ուրեմն, երբ ժողովուրդը տեսաւ, որ Յիսուս այդտեղ չէ եւ ոչ էլ՝ նրա աշակերտները, նաւակներ նստեցին եւ եկան Կափառնայում՝ Յիսուսին փնտռելու: 25 Եւ երբ նրան գտան ծովի միւս կողմում, ասացին նրան. «Ռաբբի՛, ե՞րբ եկար այստեղ»: 26 Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք ինձ փնտռում էք ոչ թէ նրա համար, որ նշաններ տեսաք, այլ որովհետեւ կերաք այն հացից եւ կշտացաք: 27 Գնացէք աշխատեցէ՛ք ոչ թէ կորստեան ենթակայ կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է յաւիտենական կեանքի համար, եւ որը մարդու Որդին կը տայ ձեզ, քանի որ նրան իր կնիքով հաստատել է Հայրը՝ Աստուած»: 28 Նրան ասացին. «Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք»: 29 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Աստծու ուզած գործը ա՛յս է. որ հաւատաք նրան, ում նա ուղարկեց»: 30 Նրան ասացին. «Ի՞նչ նշան կ'անես, որ տեսնենք եւ հաւատանք, ի՞նչ գործ կը գործես: 31 Մեր հայրերը անապատում մանանան կերան, ինչպէս որ գրուած է. "Երկնքից նրանց հաց տուեց ուտելու"»: 32 Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Մովսէսը չէ, որ ձեզ երկնքից հաց տուեց, այլ իմ Հայրն է, որ տալիս է ձեզ ճշմարիտ հացը երկնքից. 33 որովհետեւ Աստծուց է այն հացը, որ իջնում է երկնքից եւ կեանք է տալիս աշխարհին»: 34 Նրան ասացին. «Տէ՛ր, ամէն ժամ տո՛ւր մեզ այդ հացը»: 35 Յիսուս նրանց ասաց. «Ես եմ կենաց հացը. ով դէպի ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի: 36 Բայց ես ձեզ ասել եմ, թէ ինձ տեսաք եւ չէք հաւատում: 37 Բոլոր նրանք, ում Հայրն ինձ տալիս է, կը գան ինձ մօտ, եւ ով որ ինձ մօտ կը գայ, դուրս չեմ անի. 38 որովհետեւ ես երկնքից իջայ ոչ թէ իմ կամքը կատարելու համար, այլ՝ կամքը նրա, ով ինձ ուղարկեց:

39 Այս է կամքը իմ Հօր, որ ինձ ուղարկեց. բոլոր նրանք, ում Հայրն ինձ տուել է, նրանցից ոչ մէկին չկորցնեմ, այլ վերջին օրը յարութիւն առնել տամ նրանց: 40 Այս է իմ Հօր կամքը. ամէն ոք, ով տեսնի Որդուն եւ հաւատայ նրան, ունենայ յաւիտենական կեանք. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել տամ»:

41 Հրեաները տրտնջում էին նրանից, որովհետեւ ասել էր՝ ե՛ս եմ երկնքից իջած հացը: 42 Եւ ասում էին. «Սա Յիսուսը չէ՞՝ Յովսէփի որդին, որի Հօրն ու մօրը մենք ճանաչում ենք: Իսկ արդ, ինչպէ՞ս է ասում՝ ես երկնքից իջայ»: 43 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Մի՛ քրթմնջէք իրար մէջ. 44 ոչ ոք չի կարող գալ դէպի ինձ, եթէ նրան չձգի Հայրը, որ ինձ ուղարկեց, եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել կը տամ: 45 Մարգարէների գրքերում գրուած է. "Եւ ամէնքը Աստծուց ուսած կը լինեն": Ամէն ոք, որ լսում է Հօրից եւ ուսանում է, գալիս է դէպի ինձ: 46 Սակայն ոչ ոք Հօրը չի տեսել, այլ միայն նա, որ Աստծուց է, նա՛ է տեսել Հօրը: 47 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ով հաւատում է, ունենում է յաւիտենական կեանքը: 48 Ես եմ կենաց հացը: 49 Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան: 50 Այս է երկնքից իջած հացը, որպէսզի, ով որ սրանից ուտի, չմեռնի: 51 Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. 52 թէ մէկն այս հացից ուտի, յաւիտենապէս կ'ապրի. եւ այն հացը, որ ես կը տամ, իմ մարմինն է, որը ես կը տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ»:

†Յունարէնը ունի ... որ այնտեղ կար միայն մէկ նաւակ ...

‡Յուն. լաւ բն. աւելացնում են երբ որ Տէրը գոհութիւն էր մատուցել:

53 Հրեաները իրար հետ բուռն կերպով վիճում էին եւ ասում. «Սա ինչպէ՞ս կարող է իր մարմինը մեզ տալ՝ ուտելու»: 54 Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ չուտէք մարդու Որդու մարմինը եւ չըմպէք նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ: 55 Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել պիտի տամ, 56 քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնը՝ ճշմարիտ ըմպելիք: 57 Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արիւնը, կը բնակուի իմ մէջ, եւ ես՝ նրա մէջ: 58 Ինչպէս Հայրը, որ ինձ ուղարկեց, ապրում է, ես էլ ապրում եմ Հօր միջոցով. եւ ով ուտում է ինձ, նա էլ կ'ապրի իմ միջոցով: 59 Այս է հացը, որ երկնքից է իջած. ոչ այնպէս, ինչպէս մանանան, որը ձեր† հայրերը կերան եւ մեռան. ով այս հացն ուտում է, կ'ապրի յաւիտեան»: 60 Նա այս բաներն ասաց Կափառնայումի մէջ ժողովարանում ուսուցանելիս: 61 Եւ աշակերտներից շատերը, երբ լսեցին, ասացին. «Խիստ է այդ խօսքը. ո՞վ կարող է այն լսել»: 62 Յիսուս երբ ինքն իրենից իմացաւ, որ իր աշակերտները դրա համար տրտնջում են, նրանց ասաց. «Այդ ձեզ գայթակղեցնո՞ւմ է. 63 իսկ արդ, եթէ տեսնէք մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, ուր առաջ էր ...»:

ՀՈԳԻՆ Է ԿԵՆԴԱՆԱՐԱՐ

64 «Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել: Այն խօսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է եւ կեանք: 65 Բայց ձեր մէջ կան ոմանք, որ չեն հաւատում»: Քանի որ Յիսուս սկզբից գիտէր, թէ ովքեր են նրանք, որ չեն հաւատում, եւ ով է նա, որ մատնելու է իրեն, ասաց. 66 «Դրա համար ձեզ ասացի, թէ ոչ ոք չի կարող գալ ինձ մօտ, եթէ այդ իմ Հօրից տրուած չէ նրան»:

67 Դրա վրայ՝ նրա աշակերտներից շատերը յետ քաշուեցին եւ այլեւս նրա հետ չէին շրջում: 68 Յիսուս տասներկու աշակերտներին ասաց. «Միթէ դո՞ւք էլ ուզում էք գնալ»: 69 Սիմոն Պետրոսը նրան պատասխանեց. «Տէ՛ր, ո՞ւմ մօտ պիտի գնանք: Դու յաւիտենական կեանքի խօսքեր ունես: 70 Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ Աստծու Որդին†»: 71 Յիսուս նրանց պատասխանեց. «Չէ՞ որ ես եմ ընտրել ձեզ՝ Տասներկուսիդ. եւ ձեզանից մէկը սատանայ է»: 72 Նա խօսում էր Իսկարիովտացու՝ Սիմոնի որդի Յուդայի մասին, որովհետեւ հէնց նա էր մատնելու նրան. եւ Տասներկուսից մէկն էր:

ՅԻՍՈՒՍԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՒԱՏՈՒՄ

7 Դրանից յետոյ Յիսուս շրջում էր Գալիլիայում, քանի որ չէր կամենում Հրէաստանում շրջել, որովհետեւ հրեայ առաջնորդները ուզում էին սպանել նրան:

2 Հրեաների Տաղաւարահարաց տօնը մօտ էր: 3 Եւ նրա եղբայրներն ասացին նրան. «Այստեղից անցիր գնա՛ Հրէաստան, որպէսզի քո աշակերտներն էլ տեսնեն այն գործերը, որ դու անում ես. 4 որովհետեւ չկայ մէկը, որ թաքուն գործի եւ դեռ ուզենայ իրեն համարձակ ներկայացնել. եթէ այդ գործերն անում ես, ուրեմն յայտնի՛ր քեզ աշխարհին». 5 քանի որ եղբայրներն իսկ դեռեւս չէին հաւատացել նրան: 6 Յիսուս նրանց ասաց. «Իմ ժամանակը դեռ չի հասել, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է: 7 Աշխարհը չի կարող ձեզ ատել, բայց ինձ ատում է, որովհետեւ ես վկայում եմ աշխարհի մասին, թէ մարդկանց գործերը չար են: 8 Դուք գնացէ՛ք այդ տօնին, ես այդ տօնին չեմ գնում, որովհետեւ իմ ժամանակը դեռ չի լրացել»: 9 Երբ այս ասաց, ինքը մնաց այնտեղ, Գալիլիայում: 10 Երբ նրա եղբայրները գնացին, ապա ինքն էլ գնաց տօնին, բայց ոչ յայտնապէս, այլ՝ թաքուն:

ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆԻՆ

11 Իսկ հրեաները նրան փնտռում

†Յունարէնը չունի ձեր բառը:

†Յունարէնը դու ես Քրիստոսը՝ Աստծու Որդին – ի փոխարէն ունի դու ես Աստծու Սուրբը:

էին այդ տօնի ժամանակ եւ ասում էին՝ ո՞ւր է նա: 12 Եւ ժողովրդի բազմութեան մէջ նրա մասին քրթմնջիւն կար. ոմանք ասում էին՝ լաւն է, ուրիշներ ասում էին՝ չէ, ընդհակառակը, ժողովրդին մոլորեցնում է: 13 Եւ հրեայ առաջնորդների վախի պատճառով ոչ ոք նրա մասին համարձակ չէր խօսում:

14 Տօնակատարութեան կէսին Յիսուս տաճար ելաւ եւ ուսուցանում էր: 15 Հրեաները զարմանում էին ու ասում. «Սա ինչպէ՞ս գիտէ Գրուածքները, քանի որ բնաւ չի սովորել»: 16 Յիսուս նրանց պատասխան տուեց ու ասաց. «Իմ ուսուցումն իմը չէ, այլ՝ նրանը, ով ինձ ուղարկեց: 17 Եթէ մէկը ուզում է նրա կամքը կատարել, կ'իմանայ այս ուսուցման մասին, թէ Աստծո՞ւց է արդեօք, թէ՞ ես ինքս ինձնից եմ խօսում: 18 Ով ինքն իրենից է խօսում, իր համար է փառք փնտռում, իսկ ով փնտռում է նրա՛ փառքը, ով իրեն ուղարկել է, նա ճշմարիտ է, եւ նրա մէջ սուտ բան չկայ: 19 Օրէնքը ձեզ Մովսէսը չտուե՞ց, բայց ձեզնից ոչ ոք Օրէնքը չի կատարում: 20 Ինչո՞ւ էք ուզում ինձ սպանել»: Ժողովուրդը պատասխան տուեց ու ասաց. «Քո մէջ դեւ կայ, ո՞վ է ուզում քեզ սպանել»: 21 Յիսուս պատասխան տուեց նրանց ու ասաց. «Մի գործ արեցի, եւ ամէնքդ զարմացել էք: 22 Մովսէսը դրա համար ձեզ տուեց թլփատութիւնը (թէեւ այդ ոչ թէ Մովսէսից էր, այլ՝ հայրերից): 23 Եւ շաբաթ օրով մարդ էք թլփատում: Իսկ արդ, եթէ մարդը շաբաթ օրով թլփատւում է, որպէսզի Մովսէսի Օրէնքը չխախտուի, իմ վրա՞յ էք բարկացած, որ շաբաթ օրով մի ամբողջ մարդ բժշկեցի: 24 Աչքներիդ երեւացածի պէս մի՛ դատէք, այլ ուղի՛ղ դատաստան արէք»:

ՎԷՃ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ

25 Երուսաղէմացիներից ոմանք ասում էին. «Սա չէ՞ նա, որին ուզում էին սպանել: 26 Իսկ ահաւասիկ բացայայտօրէն խօսում է, եւ դրան բան չեն ասում. գուցէ արդարեւ իշխանաւորներն էլ ճանաչեցին, թէ սա՛ է Քրիստոսը: 27 Բայց մենք սրան գիտենք, թէ որտեղից է. իսկ Քրիստոս երբ որ գայ, ոչ ոք չի գիտենայ, թէ որտեղից է»: 28 Յիսուս աղաղակեց տաճարի մէջ, ուսուցանում էր եւ ասում. «Ե՛ւ ինձ գիտէք, ե՛ւ գիտէք որտեղից եմ. ինքս ինձ չեմ եկել, այլ ճշմարիտ է նա, ով ինձ ուղարկեց. նա, որին դուք չգիտէք: 29 Ես գիտեմ նրան, որովհետեւ նրանից իսկ եմ, եւ նա՛ ուղարկեց ինձ»: 30 Ուզում էին նրան բռնել, բայց ոչ ոք նրա վրայ ձեռք չդրեց, որովհետեւ նրա ժամանակը դեռ չէր հասել:

31 Սակայն բազմութեան միջից շատերը հաւատացին նրան եւ ասում էին. «Երբ Քրիստոսը գայ, միթէ աւելի՞ նշաններ պիտի անի, քան սա է անում† »:

ՅԻՍՈՒՍ ՅԱՅՏՆՈՒՄ Է ԻՐ ՄՕՏԱԼՈՒՏ ՄԵԿՆՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻՑ

32 Եւ փարիսեցիները նրա մասին ժողովրդի մէջ եղած քրթմնջիւնները լսեցին. եւ քահանայապետներն ու փարիսեցիները սպասաւորներ ուղարկեցին, որպէսզի բռնեն նրան: 33 Յիսուս ասաց. «Մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ եւ ապա գնում եմ նրա մօտ, ով ինձ ուղարկեց: 34 Ինձ կը փնտռէք եւ չէք գտնի, եւ ուր ես եմ գնում, դուք չէք կարող գալ»: 35 Հրեայ առաջնորդներն իրար ասում էին. «Իսկ դա ո՞ւր պիտի գնայ, որ մենք դրան չգտնենք. միթէ հեթանոսների մէջ ցրուած հրեաների՞ մօտ պիտի գնայ եւ հեթանոսնե՞ր պիտի ուսուցանի: 36 Ի՞նչ է այն խօսքը, որ նա ասաց՝ կը փնտռէք ինձ եւ չէք գտնի, եւ ուր ես եմ գնում, դուք չէք կարող գալ»:

ԿԵՆԴԱՆԻ ՋՐԻ ԱՂԲԻՒՐԸ

37 Մեծ տօնի վերջին օրը Յիսուս կանգնած էր եւ աղաղակում էր՝ ասելով. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ եւ խմի: 38 Ով ինձ հաւատում է, – ինչպէս Գիրքն է ասում, – նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի

†Լաւագոյն յուն. բն. ունեն *հաւ այս մարդն արեց:*

բխեն»: 39 Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հաւատացողները. քանի որ Հոգին դեռեւս չկար, որովհետեւ Յիսուս դեռ փառաւորուած չէր:

ԿՐԿԻՆ ՎԷՃ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՁԻ ՇՈՒՐՋ

40 Ժողովրդից ոմանք, երբ լսում էին այս խօսքերը, ասում էին՝ սա՛ է ճշմարիտ մարգարէն. 41 ուրիշներն ասում էին՝ սա՛ է Քրիստոսը. իսկ դեռ ուրիշներ ասում էին՝ միթէ Քրիստոս Գալիլիայի՞ց է գալու. 42 չէ՞ որ Գիրքն ասում է, թէ Քրիստոս գալու է Դաւթի սերնդից եւ Բեթղեհէմ գիւղից, որտեղից Դաւթն էր: 43 Եւ ժողովրդի մէջ նրա պատճառով պառակտում եղաւ: 44 Եւ նրանցից ոմանք ուզեցին բռնել նրան, բայց ոչ ոք նրա վրայ ձեռք չդրեց:

45 Իսկ սպասաւորները վերադարձան քահանայապետների եւ փարիսեցիների մօտ. եւ սրանք նրանց ասացին. «Ինչո՞ւ նրան այստեղ չբերեցիք»: 46 Սպասաւորները պատասխանեցին ու ասացին. «Ոչ մի մարդ երբեք այնպէս չի խօսել, ինչպէս այն մարդը»† : 47 Փարիսեցիները ասացին. «Միթէ դո՞ւք էլ էք մոլորուել: 48 Միթէ իշխանաւորներից կամ փարիսեցիներից որեւէ մէկը հաւատա՞ց նրան, 49 բացի այն խաժամուժ ամբոխից, որ օրէնք չգիտէ եւ նզովեալ է»: 50 Նիկոդեմոսը, որ նախապէս գիշերով եկել էր նրա մօտ եւ նրանցից մէկն էր, նրանց ասաց. 51 «Միթէ մեր օրէնքը դատապարտո՞ւմ է մարդուն, եթէ նախ նրանից լսած եւ կամ իմացած չլինի, թէ ինչ է գործել նա»: 52 Նրան պատասխանեցին ու ասացին. «Միթէ դո՞ւ էլ Գալիլիայից ես. քննի՛ր ու տե՛ս, որ Գալիլիայից մարգարէ դուրս չի գալիս»:

ՇՆԱՑՈՂ ԿԻՆԸ

8 ‡ Ապա ամէն ոք իր տունը գնաց:

†Լաւագոյն յուն. բն. ունեն *այս մարդը:*

‡Մի շարք յունարէն ձեռագրերում *Ապա ամէն ոք իր տունը գնաց* նախադասութիւնը դրուած է որպէս է գլխի 53 համար: Յունարէնը է գլխի 53 համարը եւ Ը գլխի մինչեւ 11 համարը զանց է առնում կամ դնում է այլ տեղ:

Իսկ Յիսուս գնաց Ձիթենեաց լեռը: 2 Առաւօտեան նորից տաճար եկաւ. ամբողջ ժողովուրդը գալիս էր նրա մօտ, եւ ինքն ուսուցանում էր նրանց: 3 Օրէնսգէտներն ու փարիսեցիները բերեցին շնութեան մէջ բռնուած մի կին եւ նրան մէջտեղ կանգնեցնելով՝ ասացին Յիսուսին. 4 «Ցանցանքի մէջ բռնուած այս կինը յայտնապէս շնացել է, 5 իսկ Օրէնքում Մովսէսը մեզ պատուիրել է այսպիսիներին քարկոծել. արդ, դու դրա մասին ի՞նչ ես ասում»: 6 Նրանք այս ասում էին՝ նրան փորձելու համար, որպէսզի նրան ամբաստանելու պատճառ ունենան: Իսկ Յիսուս, ցած նայելով, մատով գետնի վրայ գրում էր: 7 Իսկ երբ նրան ստիպեցին հարցնելով, վեր նայեց ու նրանց ասաց. «Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրայ»: 8 Եւ դարձեալ ցած նայելով՝ գետնի վրայ գրում էր: 9 Եւ այս լսելով՝ մէկ առ մէկ ելնում գնում էին՝ տարիքաւորներից մինչեւ փոքրերը: Եւ Յիսուս միայն մնաց ու կինը՝ կանգնած նրա առաջ: 10 Յիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ո՞ւր են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: 11 Եւ սա ասաց՝ ո՛չ, Տէ՛ր: Եւ Յիսուս ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանչիր»:

ՅԻՍՈՒՍ ԼՈՅՍՆ ԱՇԽԱՐՀԻ

12 Յիսուս դարձեալ խօսեց ժողովրդի հետ ու ասաց. «Ես եմ աշխարհի լոյսը. ով իմ յետեւից է գալիս, խաւարի մէջով չի քայլի, այլ կ'ընդունի կենաց լոյսը»: 13 Փարիսեցիները նրան ասացին. «Դու քո անձի մասին ես վկայում, եւ քո վկայութիւնը հաւաստի չէ»: 14 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Թէպէտ ես վկայում եմ իմ անձի մասին, իմ վկայութիւնը ճշմարիտ է, որովհետեւ գիտեմ, թէ որտեղից եկայ եւ ուր եմ գնում: Բայց դուք չգիտէք՝ որտեղից եմ գալիս կամ ուր եմ գնում: 15 Դուք ըստ մարմնի էք դատում, ես ոչ ոքի չեմ դատում. 16 Թէկուզ եւ մէկին դատեմ էլ, իմ դատաստանը ճշմարիտ է, որովհետեւ մենակ չեմ, այլ՝ ես եմ եւ ինձ հետ է նաեւ իմ Հայրը, որ ինձ ուղար-

կեց: 17 Եւ ձեր օրէնքում իսկ գրուած է,
թէ երկու մարդու վկայութիւնը ճշմա-
րիտ է: 18 Ես նա եմ, որ վկայում եմ իմ
մասին, եւ վկայում է իմ մասին Հայրը,
որ ինձ ուղարկեց»: 19 Նրան ասացին.
«Ո՞ւր է քո Հայրը»: Յիսուս պատաս-
խան տուեց եւ ասաց նրանց. «Ո՛չ ինձ
էք ճանաչում եւ ո՛չ էլ իմ Հօրը. եթէ
ինձ ճանաչէիք, թերեւս իմ Հօրն էլ կը
ճանաչէիք»:

20 Յիսուս այս խօսքերը խօսեց գան-
ձատանը, երբ ուսուցանում էր տաճա-
րում. սակայն ոչ ոք նրան չբռնեց,
որովհետեւ նրա ժամը դեռ չէր հասել:

ԱՋԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՀԱՒԱՏ ՀՐԵԱՆԵՐԻՆ

21 Յիսուս դարձեալ նրանց ասաց.
«Ես գնում եմ, եւ դուք ինձ կը փնտռէք
եւ ձեր մեղքերի մէջ կը մեռնէք, քանի
որ, ուր ես եմ գնում, դուք չէք կարող
գալ»: 22 Հրեաները ասացին. «Մի թէ
անձնասպանութե՞ան կը դիմի, քանի
որ ասում է, թէ՝ ուր ես եմ գնում, դուք
չէք կարող գալ»: 23 Եւ նրանց ասաց.
«Դուք այս ներքեւից էք, իսկ ես՝ այն
վերեւից. դուք այս աշխարհից էք, ես
այս աշխարհից չեմ: 24 Բայց ասացի
ձեզ, որ ձեր մեղքերի մէջ կը մեռնէք.
արդարեւ, եթէ չհաւատաք, որ ես
եմ, կը մեռնէք ձեր մեղքերի մէջ»:
25 Նրան ասացին՝ ո՞վ ես դու: Յիսուս
նրանց ասաց. «Նա, որ սկզբից եւեթ
խօսում էր ձեզ հետ: 26 Շատ բաներ
ունեմ ձեր մասին խօսելու եւ դատելու:
Բայց նա, ով ինձ ուղարկեց, ճշմարիտ
է. եւ ես, ինչ որ լսել եմ նրանից, ա՛յն
եմ խօսում աշխարհում»: 27 Եւ նրանք
չիմացան, թէ Հօր մասին էր ասում
իրենց:

28 Յիսուս նրանց ասաց. «Երբ մար-
դու Որդուն բարձրացնէք, այն ժամա-
նակ պիտի իմանաք, թէ ես եմ. եւ ես
ինքս ինձնից ոչինչ չեմ անում, այլ՝
ինչպէս իմ Հայրն ինձ սովորեցրեց,
ա՛յն եմ խօսում: 29 Եւ ով ինձ ուղար-
կեց, ինձ հետ է. ինձ միայնակ չթողեց,
որովհետեւ ես միշտ անում եմ, ինչ որ
նրան է հաճելի»:

30 Երբ այս բաները խօսեց, շատերը
հաւատացին նրան:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ՝ ԱԶԱՏԱՐԱՐ

31 Եւ Յիսուս հաւատացեալ Հրեա-
ներին ասաց. «Եթէ դուք իմ ուսուց-
մանը հաւատարիմ մնաք, իմ ճշմարիտ
աշակերտները կը լինէք: 32 Եւ կը
ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմար-
տութիւնը ձեզ կ՚ազատի»: 33 Նրան
պատասխանեցին ու ասացին. «Աբրա-
համի որդիներ ենք եւ երբեք ոչ ոքի
չենք ծառայել. ինչպէ՞ս ես ասում, թէ՝
ազատ կը լինէք»: 34 Յիսուս պատաս-
խանեց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ
եմ ասում ձեզ, թէ ամէն ոք, որ մեղք է
գործում, մեղքին ծառայ է: 35 Եւ ծա-
ռան յաւիտեան տան մէջ չի մնում,
իսկ որդին յաւիտեան մնում է: 36 Իսկ
արդ, եթէ Որդին ձեզ ազատի, ճշմար-
տապէս ազատ կը լինէք: 37 Գիտեմ, որ
Աբրահամի որդիներ էք, բայց ուզում
էք ինձ սպանել, որովհետեւ իմ խօսքը
տեղ չունի ձեր մէջ: 38 Ես խօսում եմ
այն, ինչ տեսայ իմ Հօր մօտ, իսկ դուք
անում էք, ինչ ձեր հօրից էք լսել»:
39 Նրան պատասխանեցին ու ասացին.
«Մեր Հայրը Աբրահամն է»: Յիսուս
նրանց ասաց. «Եթէ Աբրահամի որդի-
ներ լինէիք, Աբրահամի գործերը կը
գործէիք: 40 Իսկ այժմ ուզում էք
սպանել մի մարդու՝ ինձ, որ ձեզ
ասացի ճշմարտութիւնը, որը լսել եմ իմ
Հօրից. այդպիսի բան Աբրահամը չա-
րեց. 41 դուք ձեր հօր գործերն էք
անում»: Նրան ասացին. «Մենք
պոռնկութիւնից չենք ծնուել. մեր
Հայրը մէկ է՝ Աստուած»: 42 Յիսուս
նրանց ասաց. «Եթէ Աստուած ձեր
Հայրը լինէր, ինձ իրապէս կը սիրէիք,
որովհետեւ ես Աստծուց ելայ ու եկայ.
եւ ոչ թէ ինքս ինձ եկայ, այլ նա՛
ուղարկեց ինձ: 43 Ինչո՞ւ դուք իմ
խօսածը չէք հասկանում. որովհետեւ
իմ խօսքը չէք կարող լսել: 44 Դուք հօր
կողմից սատանայի զաւակներ էք, եւ
ձեր հօր ցանկութիւններն էք ուզում
կատարել, թէեւ նա ի սկզբանէ մար-
դասպան էր եւ ճշմարտութեան մէջ
չմնաց, որովհետեւ նրա մէջ ճշմար-
տութիւն չկար: Երբ որ նա սուտ խօսի,
ինքն իրենից է խօսում, քանի որ նա
սուտ է եւ ստի հայր: 45 Իսկ ես, որ

ճշմարտութիւնն եմ ասում, ինձ չէք
հաւատում: 46 Ձեզնից ո՞վ կը յան-
դիմանի ինձ մեղքի համար. եթէ
ճշմարիտ եմ ասում ձեզ, ինձ ինչո՞ւ
չէք հաւատում: 47 Ով Աստծուց է,
Աստծու խօսքերն է լսում, իսկ դուք չէք
լսում նրա համար, որ Աստծուց չէք»:
48 Հրեաները պատասխանեցին եւ ա-
սացին նրան. «Մենք լաւ չե՞նք ասում,
թէ՝ սամարացի ես դու, եւ քո մէջ դեւ
կայ»: 49 Յիսուս պատասխանեց եւ
ասաց. «Իմ մէջ դեւ չկայ, այլ պատ-
ուում եմ իմ Հօրը, իսկ դուք անարգում
էք ինձ: 50 Ես իմ փառքը չեմ փնտռում.
կայ մէկը, որ այն փնտռում է եւ դա-
տում: 51 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում
ձեզ. եթէ մէկը իմ խօսքը պահի, մահ
չի տեսնի յաւիտեան»: 52 Հրեաները
նրան ասացին. «Այժմ իմացանք, որ քո
մէջ դեւ կայ: Աբրահամը մեռաւ, նաեւ՝
մարգարէները, իսկ դու ասում ես, թէ՝
ով իմ խօսքը պահի, յաւիտեան մահ չի
ճաշակի: 53 Մի թէ դու աւելի մե՞ծ ես,
քան մեր Հայրը՝ Աբրահամը, որ մեռաւ.
մեռան եւ մարգարէները. արդ, դու
քեզ ո՞ւմ տեղ ես դնում»: 54 Յիսուս
պատասխանեց. «Եթէ ես փառաւորեմ
իմ անձը, իմ փառքը ոչինչ է. Հայրն է,
որ ինձ փառաւորում է, եւ որի մասին
դուք ասում էք, թէ՝ մեր Աստուածն է.
55 ու չէք ճանաչում նրան: Բայց ես
ճանաչում եմ նրան. եւ եթէ ասեմ, թէ
նրան չեմ ճանաչում, ձեզ նման
ստախօս կը լինեմ. բայց ես ճանաչում
եմ նրան եւ նրա խօսքը պահում եմ:
56 Աբրահամը՝ ձեր Հայրը, ցանկացաւ
իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսաւ
եւ ուրախացաւ»: 57 Հրեաները նրան
ասացին. «Դեռ յիսուն տարեկան չկաս
դու եւ Աբրահամի՞ն ես տեսել»: 58 Յի-
սուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմա-
րիտ եմ ասում ձեզ, ես ե՛մ, նախքան
Աբրահամի լինելը»: 59 Նրանք քարեր
վերցրին, որ գցեն նրա վրայ, բայց
Յիսուս խոյս տուեց եւ տաճարից ելաւ
գնաց:

Ի ԾՆԷ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ

9 Եւ մինչ անցնում էր, ի ծնէ կոյր մի
մարդու տեսաւ. 2 իր աշակերտները
հարցրին նրան եւ ասացին. «Ռաբբի՛,
մեղքը ո՞ւմն է, որ կոյր է ծնուել,
սրա՞նն է, թէ՞ հօրն ու մօրը»: 3 Յիսուս
պատասխանեց. «Ո՛չ դրա մեղքն է եւ
ոչ էլ իր հօր ու մօր, այլ՝ որպէսզի դրա
վրայ Աստծու գործերը յայտնի լինեն:
4 Եւ քանի դեռ ցերեկ է, ես պէտք է
կատարեմ† գործերը նրա, ով ինձ ու-
ղարկեց. կը գայ գիշերը, երբ ոչ ոք չի
կարող գործել: 5 Քանի դեռ աշխար-
հում եմ, աշխարհի լոյսն եմ»: 6 Երբ
այս ասաց, թքեց գետնին եւ թքով կաւ
շինեց, եւ կաւը ծեփեց կոյրի աչքերի
վրայ ու ասաց նրան. 7 «Գնա՛ լուա-
ցուիր Սիլոամի աւազանի մէջ» (որ
թարգմանւում է՝ առաքուած): Գնաց
լուացուեց, եկաւ եւ տեսնում էր: 8 Իսկ
հարեւանները եւ նրանք, որ նախապէս
տեսել էին նրան, որ մուրացիկ էր,
ասում էին. «Սա չէ՞ր, որ նստում էր եւ
մուրում»: 9 Ոմանք ասում էին՝ նա է.
ուրիշներ ասում էին՝ ո՛չ, բայց նման
է նրան: Իսկ ինքն ասում էր՝ ես եմ:
10 Նրան ասացին. «Իսկ ինչպէ՞ս բա-
ցուեցին քո աչքերը»: 11 Նա պատաս-
խանեց. «Մի մարդ, որին ասում են՝
Յիսուսն է, կաւ շինեց եւ ծեփեց իմ
աչքերը եւ ինձ ասաց. "Գնա՛ Սիլոամ
եւ լուացուի՛ր": Գնացի, լուացուեցի եւ
տեսնում եմ»: 12 Նրան ասացին՝ ո՞ւր է
նա: Նրանց ասաց՝ չգիտեմ: 13 Նրան,
որ մի ժամանակ կոյր էր, բերին փա-
րիսեցիների մօտ 14 (օրը շաբաթ էր, երբ
Յիսուս կաւ շինեց եւ կոյրի աչքերը
բացեց): 15 Փարիսեցիներն էլ կրկին
հարցրին նրան. «Ինչպէ՞ս ես տես-
նում»: Եւ նա նրանց ասաց. «Կաւ դրեց
աչքերիս վրայ, եւ լուացուեցի ու տես-
նում եմ»: 16 Փարիսեցիներից ոմանք
ասացին. «Այդ մարդը Աստծուց չէ,
քանի որ շաբաթ օրը չի պահում»:
Ոմանք ասում էին. «Իսկ մեղաւոր մի
մարդ ինչպէ՞ս կարող է այսպիսի
նշաններ կատարել»: Եւ նրանց մէջ
պառակտում կար: 17 Դարձեալ կոյրին
ասացին. «Դո՛ւ ինչ ես ասում նրա մա-
սին, քանի որ նա քո աչքերը բացեց»:
Եւ նա ասաց՝ մարգարէ է: 18 Եւ Հրեա-
ները չէին հաւատում, թէ նա կոյր էր,

†Յուն. լաւ բն. ունեն մեզ պէտք է կա-
տարեմք:

եւ բացուեց, մինչեւ որ կանչեցին աչքերը բացուածի ծնողներին, 19 հարցրին նրանց ու ասացին. «Սա՞ է ձեր որդին, որի մասին ասում էիք, թէ՝ կոյր ծնուեց. իսկ այժմ ինչպէ՞ս է, որ տեսնում է»: 20 Նրա ծնողները պատասխանեցին եւ ասացին. «Գիտենք, որ սա մեր որդին է, եւ որ կոյր ծնուեց. 21 բայց թէ այժմ ինչպէ՛ս է, որ տեսնում է, չգիտենք, կամ թէ՝ ո՛վ բացեց դրա աչքերը, մենք չգիտենք. հէնց իրե՛ն հարցրէք. ինքն արդէն չափահաս է. իր մասին ինքը թող խօսի»: 22 Նրա ծնողները այսպէս ասացին, որովհետեւ հրեաներից վախենում էին, քանի որ հրեաները երդուել էին, որ, եթէ մէկը նրան Քրիստոս խոստովանի, հեռացուի ժողովարանից: 23 Դրա համար է, որ նրա ծնողներն ասացին. «Ինքն արդէն չափահաս է, հէնց իրե՛ն հարցրէք»: 24 Նորից կրկին անգամ կանչեցին այդ մարդուն, որ կոյր էր, եւ նրան ասացին. «Աստծուն փա՛ռք տուր. մենք գիտենք, որ այն մարդը մեղաւոր է»: 25 Իսկ նա ասաց. «Թէ մեղաւոր է, ես չգիտեմ, բայց այն գիտեմ, որ կոյր էի եւ հիմա տեսնում եմ»: 26 Դարձեալ ասացին նրան. «Քեզ ի՞նչ արեց, քո աչքերը ինչպէ՞ս բացեց»: 27 Նրանց պատասխանեց. «Նոր ձեզ ասացի, եւ չէք լսում, ինչո՞ւ էք ուզում նորից լսել. միթէ դո՞ւք էլ էք կամենում նրան աշակերտել»: 28 Նրանք նախատում էին նրան ու ասում. «Դո՛ւ եղիր նրան աշակերտ. մենք Մովսէսի աշակերտներն ենք: 29 Մենք գիտենք, որ Աստուած Մովսէսի հետ խօսեց. իսկ սրան չգիտենք, թէ որտեղից է»: 30 Մարդը պատասխանեց նրանց եւ ասաց. «Զարմանալին էլ այն է, որ դուք չգիտէք, թէ նա որտեղից է, եւ սակայն իմ աչքերը բացեց: 31 Գիտենք, որ Աստուած մեղաւորներին չի լսում, բայց եթէ մէկը աստուածապաշտ է եւ նրա կամքը կատարում է, նրան լսում է: 32 Աշխարհի սկզբից ոչ ոք չի լսել, թէ մէկը ի ծնէ կոյր ծնուած կոյրի աչքերը բացած լինի: 33 Եթէ այդ մարդը Աստծուց չլինէր, որեւէ բան անել չէր կարող»: 34 Պատասխանեցին եւ ասացին նրան. «Ամբողջովին մեղքի մէջ ես ծնուած եւ դու մեր գլխին վարդապե՞տ ես դարձել»: Եւ նրան դուրս հանեցին:

ՀՈԳՈՒ ԿՈՒՐՈՒԹԻՒՆԸ

35 Յիսուս լսեց, թէ նրան դուրս են հանել. եւ երբ նրան գտաւ, ասաց. «Դու Աստծու† Որդուն հաւատո՞ւմ ես»: 36 Նա պատասխան տուեց եւ ասաց. «Տէ՛ր, ո՞վ է, որ նրան հաւատամ»: 37 Յիսուս նրան ասաց. «Ե՛ւ տեսար նրան, ե՛ւ նա է, ով խօսում է քեզ հետ»: 38 Ու նա ասաց. «Հաւատում եմ, Տէ՛ր»: Եւ երկրպագեց նրան:

39 Եւ Յիսուս ասաց. «Դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, եւ ովքեր տեսնում են, կուրանան»: 40 Փարիսեցիներից ոմանք, որ Յիսուսի հետ էին, այդ լսեցին ու նրան ասացին. «Միթէ մե՞նք էլ կոյր ենք»: 41 Յիսուս նրանց ասաց. «Եթէ կոյր լինէիք, դուք մեղք չէիք ունենայ, բայց հիմա ասում էք, թէ՝ տեսնում ենք. եւ ձեր մեղքը ձեր մէջ հաստատ է մնում»:

ԼԱՒ ՀՈՎԻՒԸ

10 «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով ոչխարների փարախը դռնով չի մտնում, այլ ուրիշ տեղով է բարձրանում, նա գող է եւ աւազակ. 2 իսկ ով դռնով է մտնում, հովիւ է ոչխարների: 3 Դռնապանը նրա համար բացում է դուռը, եւ ոչխարները լսում են նրա ձայնը. նա իր ոչխարներին անուններով է կանչում եւ նրանց դուրս է հանում: 4 Եւ երբ իր բոլոր ոչխարներին հանի, նրանց առջեւից է գնում, եւ ոչխարները հետեւում են նրան, որովհետեւ ճանաչում են նրա ձայնը: 5 Օտարի յետեւից չեն գնայ, այլ կը փախչեն նրանից, որովհետեւ չեն ճանաչում օտարների ձայնը»:

6 Յիսուս նրանց այս առակն ասաց, իսկ նրանք չէին իմանում, թէ ինչ էր այն, որ նա իրենց ասում էր: 7 Դարձեալ Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ես եմ ոչխարների դուռը: 8 Բոլոր նրանք, որ

†Ցուցարէնը Աստծու բառի փոխարէն ունի մարդու:

ինձնից առաջ եկան, գողեր էին ու աւազակներ, ուստի ոչխարները նրանց չլսեցին: 9 Ես եմ դուռը. եթէ մէկը իմ միջով մտնի, կը փրկուի. կը մտնի ու կ'ելնի եւ ճարակելու բան կը գտնի: 10 Գողը գալիս է միայն, որպէսզի գողանայ, սպանի եւ կորստեան մատնի. ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ՝ առաւել եւս ունենան:

11 Ես եմ լաւ հովիւը. լաւ հովիւը իր կեանքն է տալիս ոչխարների համար: 12 Իսկ վարձկանը, որ հովիւ չէ, եւ ոչխարներն էլ իրենը չեն, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին եւ փախչում է: Եւ գայլը յափշտակում է նրանց ու ցրում է. 13 քանի որ վարձկան է, եւ ոչխարների համար հոգ չի անում: 14 Ես եմ լաւ հովիւը. եւ ճանաչում եմ իմ ոչխարներին ու ճանաչւում նրանցից: 15 Ինչպէս Հայրը ինձ ճանաչում է, ես էլ ճանաչում եմ Հօրը. եւ իմ կեանքը կը տամ իմ ոչխարների համար: 16 Ես ունեմ նաեւ այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն. նրանց եւս պէտք է այստեղ բերեմ. եւ իմ ձայնը պիտի լսեն. եւ պիտի լինի մի հօտ եւ մի հովիւ: 17 Նրա համար է իմ Հայրն ինձ սիրում, որ ես իմ կեանքն եմ տալիս, որպէսզի վերստին այն առնեմ: 18 Այն ինձնից ոչ ոք չի վերցնի, այլ ես ինքս եմ այն տալիս. իշխանութիւն ունեմ այն տալու եւ իշխանութիւն ունեմ վերստին այն առնելու. այս պատուէրը իմ Հօրից ստացայ»:

19 Այս խօսքերի պատճառով հրեաների մէջ դարձեալ պառակտում եղաւ: 20 Եւ նրանցից շատերն ասում էին. «Նրա մէջ դեւ կայ եւ մոլեգնում է. ինչո՞ւ էք նրան լսում»: 21 Ոմանք էլ ասում էին. «Սրանք դիւահարի խօսքեր չեն, միթէ դեւը կարո՞ղ է կոյրի աչքերը բանալ»:

ՅԻՍՈՒՍ՝ ՈՐԴԻ ԱՍՏԾՈՒ

22 Այն ժամանակ Երուսաղէմում տաճարի Նաւակատիքի տօն էր, եւ ձմեռ էր: 23 Եւ Յիսուս շրջում էր տաճարի մէջ, Սողոմոնի սրահում: 24 Հրեաները նրա շուրջը հաւաքուեցին ու ասացին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դու ես Քրիստոսը, համարձակ ասա՛ մեզ»: 25 Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Ձեզ ասացի, եւ ինձ չէք հաւատում. այն գործերը, որ ես անում եմ իմ Հօր անունով, դրանք վկայում են իմ մասին: 26 Բայց դուք չէք հաւատում, որովհետեւ իմ ոչխարներից չէք. 27 իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, եւ ես ճանաչում եմ նրանց. եւ նրանք գալու են իմ յետեւից. 28 եւ ես նրանց կը տամ յաւիտենական կեանք. եւ նրանք չեն կորչի յաւիտեան. եւ ոչ ոք նրանց իմ ձեռքից չի յափշտակի: 29 Իմ Հայրը, որ նրանց ինձ տուեց, ամենից մեծ է. եւ իմ Հօր ձեռքից ոչ ոք չի կարող ոչինչ յափշտակել: 30 Ես եւ իմ Հայրը մի ենք»:

31 Հրեաները քարեր վերցրին, որ նրան քարկոծեն: 32 Յիսուս պատասխանեց նրանց. «Բազում բարի գործեր ցոյց տուի ձեզ իմ Հօրից. դրանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծում»: 33 Հրեաները նրան պատասխանեցին. «Քեզ բարի գործի համար չենք քարկոծում, այլ հայհոյութեան համար եւ նրա համար, որ դու մարդ ես, բայց ինքդ քեզ Աստծու տեղ ես դնում»: 34 Յիսուս նրանց պատասխանեց. «Ձեր օրէնքում չէ՞, որ գրուած է. "Ես ասացի, թէ աստուածներ էք"»: 35 Իսկ եթէ աստուածներ է կոչում նրանց, որոնց ուղղուած էր Աստծու խօսքը (եւ հնարաւոր չէ, որ Գիրքը ջնջուի), 36 ուրեմն՝ ո՛ւմ Հայրը սրբացրեց եւ աշխարհ ուղարկեց, դուք ասում էք, թէ՝ հայհոյում ես, նրա համար, որ ասացի, թէ՝ Աստծու Որդի եմ: 37 Եթէ իմ Հօր գործերը չեմ անում, ինձ մի՛ հաւատացէք: 38 Իսկ եթէ անում եմ, թէ ինձ էլ չէք հաւատում, գործերի՛ն հաւատացէք, որպէսզի իմանաք եւ ճանաչէք, որ Հայրը իմ մէջ է, եւ ես՝ Հօր մէջ»:

39 Դարձեալ ուզում էին նրան բռնել, բայց նա նրանց ձեռքից դուրս պրծաւ: 40 Եւ վերստին գնաց Յորդանանի միւս կողմը, այնտեղ, ուր Յովհաննէսն էր նախապէս գտնուում եւ մկրտում. եւ այնտեղ էր մնում:

41 Շատեր նրա մօտ եկան եւ ասում էին. «Յովհաննէսը որեւէ նշան չարեց, բայց այն ամէնը, որ Յովհաննէսն ասել էր նրա մասին, ճշմարիտ էր»: 42 Եւ այնտեղ շատերը հաւատացին նրան:

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

11 Եւ մի հիւանդ կար, Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի եւ նրա քոյր Մարթայի գիւղից: 2 Սա այն Մարիամն էր, որ իւղով օծեց Տիրոջը եւ իր մազերով սրբեց նրա ոտքերը: Եւ սրա եղբայր Ղազարոսը հիւանդ էր: 3 Սրա քոյրերը նրա մօտ մարդ ուղարկեցին եւ ասացին. «Տէ՛ր, ահաւասիկ նա, ում դու սիրում էիր, հիւանդացել է»: 4 Երբ Յիսուս լսեց, ասաց. «Այդ հիւանդութիւնը մահաբեր չէ, այլ Աստծու փառքի համար է, որպէսզի դրանով Աստծու Որդին փառաւորուի»: 5 Յիսուս սիրում էր Մարիամին, նրա քրոջը՝ Մարթային, եւ Ղազարոսին: 6 Լսելուց յետոյ, թէ Ղազարոսը հիւանդացել է, նա տակաւին երկու օր մնաց այնտեղ, ուր գտնուում էր: 7 Ապա դրանից յետոյ իր աշակերտներին ասաց. «Եկէ՛ք վերստին գնանք Հրէաստան»: 8 Աշակերտները նրան ասացին. «Ռաբբի՛, հրեաները դեռ նոր էին ուզում քեզ քարկոծել, եւ նորից այնտե՞ղ ես գնում»: 9 Յիսուս պատասխանեց. «Ցերեկը տասներկու ժամ չունի՞. եթէ մէկը ցերեկն է քայլում, չի սայթաքում, որովհետեւ այս աշխարհի լոյսը տեսնում է, 10 իսկ եթէ մէկը գիշերն է քայլում, սայթաքում է, որովհետեւ հետը լոյս չունի»: 11 Այս բաներն ասելուց յետոյ նորից ասաց նրանց. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»: 12 Աշակերտները նրան ասացին. «Տէ՛ր, եթէ ննջել է, ապա կ'առողջանայ»: 13 Բայց Յիսուս նրա մահուան մասին էր ասում, մինչդեռ նրանց այնպէս թուաց, թէ նա քնով ննջելու մասին է խօսում: 14 Այն ժամանակ Յիսուս նրանց յայտնապէս ասաց. «Ղազարոսը մեռաւ. 15 բայց ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի. որպէսզի դուք ինձ հաւատաք: Արդ, եկէ՛ք գնանք նրա մօտ»: 16 Թովմասը, որ երկուորեակ էր կոչւում, աշակերտակիցներին ասաց. «Եկէ՛ք մենք էլ գնանք, որ նրա հետ մեռնենք»: 17 Յիսուս եկաւ, նրան գտաւ չորս օրից ի վեր գերեզմանի մէջ: 18 Եւ Բեթանիան Երուսաղէմի մօտ էր շուրջ երեք կիլոմետր: 19 Հրեաներից շատերը եկել էին Մարթայի եւ Մարիամի մօտ, որպէսզի նրանց մխիթարեն իրենց եղբօր մահուան համար: 20 Երբ Մարթան լսեց, որ Յիսուս գալիս է, նրան ընդառաջ գնաց. իսկ Մարիամը տանը նստած էր: 21 Մարթան Յիսուսին ասաց. «Տէ՛ր, եթէ դու այստեղ եղած լինէիր, իմ եղբայրը մեռած չէր լինի. 22 բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ էլ որ Աստծուց ուզես, Աստուած քեզ կը տայ»: 23 Յիսուս նրան ասաց. «Քո եղբայրը յարութիւն կ'առնի»: 24 Մարթան նրան ասաց. «Գիտեմ, որ յարութեան ժամանակ վերջին օրը յարութիւն կ'առնի»:

ՅԻՍՈՒՍ՝ ԿԵԱՆՔ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

25 Յիսուս նրան ասաց. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատում է ինձ, թէպէտ եւ մեռնի, կ'ապրի. 26 եւ ով կենդանի է ու ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնի: Հաւատո՞ւմ ես այս բանին»: 27 Նա ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, ես հաւատում եմ, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու»: 28 Եւ այս ասելուց յետոյ, գնաց գաղտնաբար կանչեց իր քրոջը՝ Մարիամին եւ ասաց. «Վարդապետն է եկել եւ քեզ է կանչում»: 29 Երբ նա լսեց, իսկոյն վեր կացաւ եւ եկաւ նրա մօտ: 30 Յիսուս դեռ գիւղ չէր հասել, այլ դեռեւս այն տեղում էր, ուր Մարթան նրան ընդառաջ էր ելել: 31 Իսկ այն հրեաները, որ նրա հետ տանն էին եւ նրան մխիթարում էին, երբ տեսան Մարիամին, որ վեր կացաւ իսկոյն ու գնաց, իրենք եւս նրա յետեւից գնացին. կարծում էին, թէ գերեզման է գնում, որ այնտեղ լաց լինի: 32 Իսկ Մարիամը, երբ եկաւ այնտեղ, ուր Յիսուս կանգնած էր, ու տեսաւ նրան, ընկաւ նրա ոտքերն ու ասաց.

«Տէ՛ր, եթէ այստեղ եղած լինէիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»: 33 Երբ Յիսուս տեսաւ, որ նա լալիս է, եւ նրա հետ եղող հրեաներն էլ լալիս են, սաստիկ խռովուեց իր հոգում եւ ասաց. 34 «Ո՞ւր դրիք նրան»: Նրան ասացին. «Տէ՛ր, արի՛ եւ տե՛ս»:

ԵՒ ՅԻՍՈՒՍ ԱՐՏԱՍՈՒԵՑ...

35 Եւ Յիսուս արտասուեց: 36 Հրեաներն ասացին. «Տեսէ՛ք ինչքան էր սիրում նրան»: 37 Նրանցից ոմանք ասում էին. «Սա, որ կոյրի աչքերը բացեց, չէ՞ր կարող նաեւ այնպէս անել, որ սա չմեռնէր»: 38 Յիսուս, դարձեալ խռովուելով ինքն իր մէջ, եկաւ գերեզմանը: Սա մի քարայր էր, որի վրայ մի քար էր դրուած: 39 Եւ Յիսուս ասաց. «Այդ քարը մի կողմ դրէք»: Մարթան՝ մեռածի քոյրը, նրան ասաց. «Տէ՛ր, հիմա արդէն նեխած կը լինի, քանի որ չորս օրուայ է»: 40 Յիսուս նրան ասաց. «Քեզ չասացի՞. եթէ հաւատաս, կը տեսնես Աստծու փառքը»: 41 Երբ քարը վերցրին, Յիսուս աչքերը վեր բարձրացրեց ու ասաց. «Հա՛յր, գոհութիւն եմ տալիս քեզ, որ ինձ լսեցիր. 42 եւ ես գիտէի, որ ամէն ժամ լսում ես ինձ, բայց այս անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի համար, որպէսզի հաւատան, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր»: 43 Երբ այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց. «Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս արի»: 44 Եւ մեռելը ելաւ՝ կապուած ոտքերով, ձեռքերը երիզով ամրացուած եւ երեսը վարշամակով պատած: Եւ Յիսուս նրանց ասաց. «Արձակեցէ՛ք դրան եւ թողէ՛ք, որ գնայ»: 45 Հրեաներից շատերը, որոնք եկել էին Մարիամենց մօտ, երբ տեսան, ինչ որ Յիսուս արեց, հաւատացին նրան: 46 Իսկ նրանցից ոմանք գնացին փարիսեցիների մօտ եւ պատմեցին նրանց, ինչ որ Յիսուս արեց:

ՀՐԵԱՆԵՐԻ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒՍԻՆ ՍՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մատթ. 26. 1-5, Մարկ. 14. 1-2, Ղուկ. 22. 1-2)

47 Քահանայապետներն ու փարիսեցիները ատեան գումարեցին եւ ասացին. «Ի՞նչ անենք, քանի որ այդ մարդը բազում նշաններ է անում: 48 Եթէ նրան այնպէս թողնենք, ամէնքը կը հաւատան նրան, եւ հռոմէացիները կը գան ու կը վերացնեն մեր ազգն ու մեր սրբավայրը»: 49 Նրանցից մէկը՝ Կայիափա անունով, որ այդ տարուայ քահանայապետն էր, նրանց ասաց. 50 «Դուք ոչինչ չգիտէք, ոչ իսկ խորհել էք, թէ մեզ համար† աւելի լաւ է, որ մէկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ ամբողջ ազգը կորչի»: 51 Այս բանը նա ինքն իրենից չասաց, այլ, քանի որ այդ տարուայ քահանայապետն էր, մարգարէացաւ, որ Յիսուս մեռնելու էր ազգի համար: 52 Եւ ոչ միայն ազգի համար, այլ՝ որպէսզի նաեւ Աստծու ցրուած որդիներին ի մի հաւաքի:

53 Ապա այն օրուանից խորհուրդ արեցին, որ նրան սպանեն: 54 Եւ Յիսուս այնուհետեւ այլեւս համարձակ չէր շրջում հրեաների մէջ, այլ այնտեղից գնաց մի շրջան, որ մօտ էր անապատին. գնաց մի քաղաք, որի անունն էր Եփրայիմ, եւ իր աշակերտների հետ այդտեղ էր մնում:

ՋԱՏԻԿԸ ՄՕՏ Է

55 Եւ հրեաների զատիկը մօտ էր. եւ այդ գաւառից շատերը Երուսաղէմ բարձրացան զատկից առաջ, որպէսզի իրենք իրենց մաքրեն: 56 Յիսուսին փնտռում էին. եւ մինչ տաճարի մէջ էին, միմեանց ասում էին. «Ինչպէ՞ս է ձեզ թւում, արդեօք այս տօնին չի՞ գայ»: Քահանայապետներն ու փարիսեցիները հրահանգել էին, որ, եթէ մէկն իմանայ, թէ նա որտեղ է, յայտնի, որպէսզի նրան ձերբակալեն:

ՕԾՈՒՄ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ

(Մատթ. 26. 6-13, Մարկ. 14. 3-9)

12 Իսկ Յիսուս զատկից վեց օր առաջ եկաւ Բեթանիա, ուր ապրում էր մեռած‡ Ղազարոսը, որին մեռելներից

†Լաւագոյն յուն. բն. ունեն ձեզ համար:
‡Լաւագոյն յուն. բն. չունեն մեռած բառը:

վեր էր կացրել: 2 Եւ այնտեղ նրան
ընթրիք տուին. սպասարկում էր Մար-
թան, իսկ Ղազարոսը նրա հետ սեղան
նստածներից մէկն էր: 3 Իսկ Մարիամը
մի լիտր ազնիւ նարդոսի թանկարժէք
իւղ վերցնելով՝ օծեց Յիսուսի ոտքերը.
եւ իր մազերով էլ սրբում էր նրա
ոտքերը. եւ տունը լցուեց իւղի բուր-
մունքով: 4 Աշակերտներից մէկը՝ Յու-
դա Իսկարիովտացին, որ մատնելու էր
նրան, ասաց. 5 «Ինչո՞ւ այդ իւղը
չվաճառուեց երեք հարիւր արծաթ
դահեկանի եւ չտրուեց աղքատներին»:
6 Նա այս ասաց ոչ թէ նրա համար, որ
աղքատների համար էր հոգում, այլ
որովհետեւ գող էր եւ գանձարկղը
ինքն էր պահում, եւ ինչ որ այնտեղ
դրուում էր, ինքն էր վերցնում: 7 Յիսուս
ասաց նրան. «Թո՛յլ տուէք նրան,
որպէսզի իմ թաղման օրուայ համար
պահի այդ: 8 Աղքատներին ամէն ժամ
ձեզ հետ ունէք: Ինձ միշտ ձեզ հետ
չունէք»:

9 Երբ հրեաներից բազում ժողո-
վուրդ իմացաւ, որ նա այնտեղ է, եկաւ.
ոչ միայն Յիսուսի պատճառով, այլ՝
որպէսզի տեսնի նաեւ Ղազարոսին,
որին մեռելներից վեր էր կացրել:
10 Քահանայապետները խորհուրդ ա-
րեցին, որ Ղազարոսին էլ սպանեն,
11 քանի որ շատերը հեռանում էին
հրեաներից եւ հաւատում էին Յի-
սուսին† :

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

(Մատթ. 21. 1-11, Մարկ. 11. 1-11, Ղուկ. 19. 28-40)

12 Յաջորդ օրը, ժողովրդի բազ-
մութիւնը, որ զատկի տօնին էր եկել,
երբ լսեց, թէ Յիսուս Երուսաղէմ է
գալիս, 13 արմաւենիների ճիւղեր վերց-
րեց եւ Յիսուսին ընդառաջ ելաւ:
Աղաղակում էին ու ասում. «Ովսան-
նա՛, օրհնեա՛լ լինես դու, որ գալիս ես
Տիրոջ անունով, ո՛վ թագաւոր Իսրա-
յէլի»: 14 Եւ Յիսուս մի էշ գտնելով,
նստեց նրա վրայ, ինչպէս որ գրուած է.
15 «Մի՛ վախեցիր, ո՛վ դուստրդ Սիոնի,
ահա քո թագաւորը գալիս է՝ նստած
մի էշի քուռակի վրայ»: 16 Եւ նրա
աշակերտները սկզբում այն չհասկա-
ցան, բայց երբ Յիսուս փառաւորուեց,
այն ժամանակ յիշեցին, թէ այդ նրա
մասին էր գրուած, եւ իրենք այդ էին
արել նրան: 17 Իսկ ժողովուրդը, որ
նրա հետ էր, վկայում էր, որ Ղազա-
րոսին հէնց գերեզմանից կանչեց եւ
նրան մեռելներից կենդանացրեց: 18 Եւ
դրա համար էլ նրան ընդառաջ ելաւ
ժողովուրդը, որովհետեւ լսել էին, որ
այդ նշաններն էր արել: 19 Իսկ փա-
րիսեցիները միմեանց ասում էին.
«Տեսնում էք, որ ոչ մի օգուտ չէք
ստանում. ահաւասիկ ամբողջ աշխար-
հը նրա յետեւից գնաց»:

ՓԱՌԱՒՈՐՈՒՄ ՄԱՀՈՒԱՄԲ

20 Այնտեղ կային նաեւ որոշ թուով
հեթանոսներ՝ նրանց մէջ, որ Երուսա-
ղէմ էին եկել, որպէսզի տօնի ժամա-
նակ երկրպագութիւն անեն: 21 Նրանք
մօտեցան Փիլիպպոսին, որ Գալիլիայի
Բեթսայիդա քաղաքից էր. աղաչում
էին նրան ու ասում. «Տէ՛ր, ուզում ենք
Յիսուսին տեսնել»: 22 Փիլիպպոսը
եկաւ եւ Անդրէասին ասաց: Անդրէասը
եւ Փիլիպպոսն էլ Յիսուսին ասացին:
23 Եւ Յիսուս նրանց պատասխանեց ու
ասաց. «Հասաւ ժամը, որ փառաւորուի
մարդու Որդին:

24 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում
ձեզ. եթէ ցորենի հատիկը հողի մէջ
ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը
կը մնայ, իսկ եթէ մեռնի, բազում
արդիւնք կը տայ: 25 Ով սիրում է իր
անձը, կը կորցնի այն, իսկ ով այս
աշխարհում իր անձն ատում է, այն կը
պահի յաւիտենական կեանքի համար:
26 Եթէ մէկն ինձ ծառայի, իմ յետեւից
կը գայ. եւ ուր ես եմ, այնտեղ կը լինի
եւ իմ ծառան. եթէ մէկը ինձ ծառայի,
նրան կը պատուի իմ Հայրը:

27 Բայց այժմ հոգիս խռովուած է.
եւ ի՞նչ ասեմ. Հա՛յր, փրկի՛ր ինձ այս
ժամից: Բայց ես հէնց այս բանի
համար եմ եկել այս ժամին: 28 Հա՛յր,
փառաւորի՛ր քո անունը»: Երկնքից մի
ձայն եկաւ. «Ե՛ւ փառաւորեցի, եւ
դարձեա՛լ պիտի փառաւորեմ»: 29 Եւ

†Յուճարէնն աւելացնում է Ղազարոսի պատճառով:

ժողովուրդը, որ կանգնած էր ու լսում
էր, ասում էր, թէ՝ որոտմունք է լինում:
Ոմանք էլ ասացին. «Նրա հետ մի
հրեշտակ խօսեց»: 30 Յիսուս պատաս-
խանեց ու ասաց. «Այս ձայնը ինձ
համար չէ, որ եկաւ, այլ՝ ձեզ համար:
31 Հիմա՛ է այս աշխարհի դատաս-
տանը, հիմա՛ է, որ այս աշխարհի
իշխանը դուրս կը նետուի: 32 Եւ երբ ես
բարձրանամ երկրից, ամենքին դէպի
ինձ կը ձգեմ»: 33 Այս ասում էր նշելու
համար, թէ ի՛նչ մահով էր մեռնելու:
34 Ժողովուրդը նրան պատասխանեց.
«Օրէնքից մենք լսել ենք, թէ Քրիստոս
յաւիտեան կը մնայ, իսկ դու ինչպէ՞ս
ես ասում, թէ մարդու Որդին պէտք է
բարձրանայ. ո՞վ է այդ մարդու Որ-
դին»: 35 Յիսուս նրանց ասաց. «Մի
փոքր ժամանակ եւս լոյսը ձեզ հետ է.
քայլեցէ՛ք, քանի դեռ լոյսն ունէք,
որպէսզի խաւարը ձեզ չկլանի, քանի
որ, ով քայլում է խաւարի մէջ, չի
իմանում, թէ ուր է գնում: 36 Քանի
դեռ լոյսը ձեզ հետ ունէք, հաւատա-
ցէ՛ք լոյսին, որպէսզի լոյսի որդիներ
լինէք»: Յիսուս այս խօսեց եւ գնաց
նրանցից թաքնուեց:

ՀՐԵԱՆԵՐԻ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ

37 Թէպէտ եւ նա այնքան նշաններ
էր արել նրանց առաջ, նրանք չէին
հաւատում նրան, 38 որպէսզի կատա-
րուէր Եսայի մարգարէի խօսքը, որ ա-
սաց. «Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր տուած
լուրին, եւ Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտ-
նուեց»: 39 Չէին կարողանում հաւա-
տալ եւ այն բանի համար, որ Եսային
վերստին ասում է. 40 «Նրանց աչքերը
կուրացրեց եւ նրանց սրտերը կարծ-
րացրեց, որպէսզի աչքերով չտեսնեն ու
սրտերով չիմանան եւ դարձի չգան, ու
ես նրանց չբժշկեմ»: 41 Եսային այս
ասաց, որովհետեւ տեսաւ նրա փառքը
եւ խօսեց նրա մասին: 42 Բայց մինչեւ
անգամ հրեայ իշխանաւորներից շա-
տեր հաւատացին նրան, բայց փարի-
սեցիների պատճառով չէին յայտնում,
որպէսզի ժողովարանից դուրս չհա-
նուեն. 43 քանի որ մարդկանցից
տրուած փառքը աւելի սիրեցին, քան
Աստծուց տրուած փառքը:

ԱՇԵԹԱՐՀԻ ԼՈՅՍԸ

44 Յիսուս աղաղակում էր ու ասում.
«Ով ինձ է հաւատում, ինձ չէ, որ հա-
ւատում է, այլ նրան, ով ինձ ուղար-
կեց: 45 Եւ ով ինձ է տեսնում, տեսնում
է նրան, ով ինձ ուղարկեց: 46 Ես որպէս
լոյս եկայ աշխարհ, որպէսզի ամէն ոք,
որ ինձ հաւատում է, խաւարում
չմնայ: 47 Եւ եթէ մէկը լսի իմ խօսքերը
եւ չպահի դրանք, ես նրան չեմ դա-
տապարտի, քանի որ չեկայ, որ աշ-
խարհը դատապարտեմ, այլ՝ որպէսզի
փրկեմ աշխարհը: 48 Ով անարգում է
ինձ եւ իմ խօսքերը չի ընդունում, կայ
մէկը, որ նրան դատում է. այն խօսքը,
որ ես խօսեցի, դա՛ պիտի դատապարտի
նրան վերջին օրը, 49 որովհետեւ ես
ինքս ինձնից չխօսեցի, այլ Հայրը, որ
ինձ ուղարկեց, նա՛ ինձ պատուիրեց,
թէ ի՛նչ պիտի ասեմ եւ ի՛նչ պիտի խո-
սեմ: 50 Եւ գիտեմ, որ այն պատուի-
րանը յաւիտենական կեանք է: Արդ,
ինչ որ ես եմ խօսում, այնպէս եմ
խօսում, ինչպէս Հայրն ինձ ասաց»:

ՈՏՆԼՈՒԱՅ

13 Զատկի տօնից առաջ Յիսուս
իմացաւ, որ հասել է իր ժամը, որպէսզի
այս աշխարհից Հօր մօտ փոխադրուի.
սիրեց իւրայիններին, որ այս աշխար-
հում են, խսպառ սիրեց նրանց: 2 Եւ
ընթրիքի ժամանակ, երբ սատանան
արդէն իսկ Սիմոնի որդի Իսկարիով-
տացի Յուդայի սրտի մէջ դրել էր, որ
մատնի նրան, 3 Յիսուս իմացաւ, որ
Հայրը ամէն բան իր ձեռքն էր յանձ-
նել, եւ որ ինքը Աստծուց էր ելել եւ
Աստծու մօտ էր գնում: 4 Նա վեր կա-
ցաւ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց
զգեստները եւ մի սրբիչ վերցնելով՝
մէջքին կապեց: 5 Եւ ապա ջուր վերց-
նելով՝ ածեց կոնքի մէջ եւ սկսեց իր
աշակերտների ոտքերը լուանալ եւ
սրբել մէջքին կապած սրբիչով: 6 Մո-
տեցաւ Սիմոն Պետրոսին, եւ սա ասաց
նրան. «Տէ՛ր, դո՞ւ ես իմ ոտքերը լուա-
նում»: 7 Յիսուս պատասխանեց նրան
ու ասաց. «Ինչ որ ես անում եմ, դու
հիմա չես իմանում, բայց յետոյ կ'ի-
մանաս»: 8 Պետրոսը նրան ասաց. «Իմ

ոտքերը յաւիտեան չես լուանայ»: Յիսուս պատասխանեց. «Եթէ քեզ չլուանամ, ինձ հետ մաս չունես»: 9 Սիմոն Պետրոսն ասաց նրան. «Տէ՛ր, ոչ թէ միայն իմ ոտքերը, այլեւ իմ ձեռքերն ու գլուխն էլ լուա՛»: 10 Յիսուս նրան ասաց. «Լուացուածին ուրիշ բան պէտք չէ, բայց միայն ոտքերը լուանալ, քանի որ ամբողջութեամբ մաքուր է. եւ դուք մաքուր էք, բայց ոչ բոլորդ»: 11 Քանի որ նա գիտէր նրան, ով իրեն մատնելու էր, դրա համար ասաց. «Բոլորդ չէ, որ մաքուր էք»: 12 Եւ երբ նրանց ոտքերը լուաց, վերցրեց իր զգեստները եւ դարձեալ սեղան նստեց ու ասաց նրանց. «Գիտէ՞ք, թէ այդ ինչ արեցի ձեզ: 13 Դուք ինձ Վարդապետ եւ Տէր էք կոչում. եւ լաւ էք անում, քանի որ իսկապէս ե՛մ. 14 իսկ արդ, եթէ ես՝ Տէրս եւ Վարդապետս, լուացի ձեր ոտքերը, դուք էլ պարտաւոր էք միմեանց ոտքերը լուանալ. 15 որովհետեւ մի օրինակ տուի ձեզ, որ, ինչպէս ես ձեզ արեցի, դուք էլ նոյն ձեւով անէք:

16 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ծառան աւելի մեծ չէ, քան իր տէրը, եւ ոչ էլ ուղարկուածը՝ աւելի մեծ, քան նա, ով նրան ուղարկեց: 17 Եթէ այս բաները գիտէք, առաւել երանելի էք, եթէ դրանք կատարէք: 18 Ձեր բոլորի համար չէ, որ ասում եմ, որովհետեւ ես գիտեմ նրանց, որոնց ընտրել եմ, այլ որպէսզի կատարուի գրուածը, թէ՝ ով ինձ հետ հաց էր ուտում, իմ դէմ դարձաւ. 19 հէնց այժմուանից ասում եմ ձեզ, քանի դեռ չի եղել, որպէսզի, երբ որ լինի, հաւատաք, որ ես եմ: 20 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ ընդունի նրան, ում ես կ՚ուղարկեմ, ինձ է ընդունում, եւ ով ինձ է ընդունում, ընդունում է նրան, ով ինձ ուղարկեց»:

ՅԻՍՈՒՍԻ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Մատթ. 26. 20-25, Մարկ. 14. 17-21, Ղուկ. 22. 21-23)

21 Երբ Յիսուս այս բաներն ասաց, խռովուեց իր հոգում, վկայեց ու ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մէկն ինձ մատնելու է»: 22 Աշակերտներն իրար էին նայում տարակուսելով, թէ ո՛ւմ մասին է ասում: 23 Եւ աշակերտներից մէկը, որին Յիսուս սիրում էր, նստել էր նրա մօտ: 24 Սիմոն Պետրոսը սրան ակնարկ արեց՝ հարցնելով, թէ այդ ո՛ւմ մասին է ասում: 25 Եւ սա Յիսուսի կրծքովն ընկաւ ու ասաց նրան. «Տէ՛ր, ո՞վ է»: 26 Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Նա է, որի համար ես այս պատառը կը թաթախեմ եւ կը տամ իրեն»: Եւ թաթախելով պատառը՝ տալիս է Իսկարիովտացի Յուդային: 27 Եւ երբ նա պատառն առաւ, սատանան մտաւ նրա մէջ: Յիսուս նրան ասաց. «Հիմա ինչ որ անելու ես, իսկոյն արա՛»: 28 Եւ սեղանակիցներից ոչ ոք չիմացաւ, թէ նա ինչի՛ համար այդ նրան ասաց. 29 որովհետեւ ոմանք կարծում էին, թէ, քանի որ Յուդան էր գանձանակը պահում, Յիսուս նրան ասաց. «Գնի՛ր, ինչ որ մեզ տօնի ժամանակ պէտք է» եւ կամ՝ որ մի բան տայ աղքատներին: 30 Իսկ նա պատառը վերցնելով՝ իսկոյն դուրս ելաւ: Եւ գիշեր էր ...

ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

31 Եւ երբ նա դուրս ելաւ, Յիսուս ասաց. «Այժմ մարդու Որդին փառաւորուեց, եւ Աստուած փառաւորուեց նրանով, 32 քանի որ, եթէ Աստուած փառաւորուեց նրանով, Աստուած էլ նրան կը փառաւորի իրենով. եւ իսկոյն կը փառաւորի նրան:

33 Որդեակնե՛րս, մի քիչ ժամանակ դեռ ձեզ հետ եմ. ինձ պիտի փնտռէք, եւ ինչպէս ասացի հրեաներին՝ ուր ես եմ գնում, դուք չէք կարող գալ, - այժմ այդ ձեզ էլ եմ ասում:

34 Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեա՛նց սիրեցէք: 35 Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն էք»:

ՅԻՍՈՒՍ ԳՈՒՇԱԿՈՒՄ Է ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ

(Մատթ. 26. 31-35, Մարկ. 14. 27-31, Ղուկ. 22. 31-34)

36 Սիմոն Պետրոսը նրան ասաց. «Տէ՛ր, ո՞ւր ես գնում»: Յիսուս պատասխանեց. «Ուր ես եմ գնում, դու այժմ իմ յետեւից չես կարող գալ, բայց յետոյ կը գաս իմ յետեւից»: 37 Պետրոսը նրան ասաց. «Տէ՛ր, ինչո՞ւ այժմ չեմ կարող քո յետեւից գալ. այժմուանից իսկ իմ կեանքը քեզ համար կը տամ»: 38 Յիսուս պատասխանեց. «Ինձ համար կեա՞նքդ կը տաս. ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, աքաղաղը դեռ կանչած չի լինի, երբ դու երեք անգամ ինձ ուրացած կը լինես»:

ՅԻՍՈՒՍ՝ ՃԱՆԱՊԱՐՀ, ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

14 Ապա Յիսուս ասաց իր աշակերտներին. «Թող ձեր սրտերը չխռովուեն. հաւատացէ՛ք Աստծուն, հաւատացէ՛ք եւ ինձ: 2 Իմ Հօր տան մէջ բազում օթեւաններ կան. թէ չէ ես ձեզ կ՚ասէի, թէ գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու. 3 եւ եթէ գնամ եւ ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձեալ կը գամ եւ ձեզ կը վերցնեմ ինձ մօտ, որպէսզի, ուր ես լինեմ, դուք եւս այնտեղ լինէք: 4 Եւ թէ ուր եմ գնում, այդ գիտէք, գիտէք եւ ճանապարհը»:

5 Թովմասը նրան ասաց. «Տէ՛ր, չգիտենք՝ ուր ես գնում, ուրեմն ինչպէ՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը»: 6 Յիսուս նրանց ասաց. «Ես եմ Ճանապարհը եւ Ճշմարտութիւնը եւ Կեանքը: Ոչ ոք չի գայ Հօր մօտ, եթէ ոչ՝ ինձանով: 7 Եթէ ինձ ճանաչէիք, ապա կը ճանաչէիք եւ իմ Հօրը. այսուհետեւ կը ճանաչէք նրան. եւ տեսել էք նրան»:

8 Փիլիպպոսն ասաց նրան. «Տէ՛ր, Հօրը մեզ ցո՛յց տուր, եւ այդ բաւական է մեզ»: 9 Յիսուս նրան ասաց. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպո՛ս, եւ ինձ չճանաչեցի՞ր. ով ինձ տեսաւ, տեսաւ Հօրը. իսկ դու ինչպէ՞ս ես ասում, թէ՝ Հօրը մեզ ցո՛յց տուր: 10 Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ իմ մէջ: Այն խօսքերը, որ ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ խօսում, այլ Հայրը, որ բնակւում է իմ մէջ, նա՛ է անում գործերը: 11 Հաւատացէ՛ք ինձ, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ իմ մէջ. եթէ ոչ՝ գոնէ գործերի՛ համար հաւատացէք ինձ: 12 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ ով հաւատում է ինձ, ինքն էլ կ՚անի այն գործերը, որ ես եմ անում. եւ դրանցից աւելի մեծերը կ՚անի, որովհետեւ ես գնում եմ Հօր մօտ: 13 Եւ ինչ որ ուզէք իմ անունով, այն կ՚անեմ, որպէսզի Հայրը փառաւորուի Որդու միջոցով† »:

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

15 «Եթէ ինձ սիրում էք, կը պահէք իմ պատուիրանները. 16 եւ ես պիտի աղաչեմ Հօրը, եւ նա մի այլ Մխիթարիչ պիտի տայ ձեզ, որպէսզի յաւիտեան ձեզ հետ բնակուի. 17 Ճշմարտութեան Հոգին, որին այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետեւ նրան չի տեսնում եւ նրան չի ճանաչում, բայց դուք ճանաչում էք նրան, որովհետեւ ձեզ մօտ պիտի բնակուի եւ ձեր մէջ պիտի լինի: 18 Ձեզ որբ չեմ թողնի, կը գամ ձեզ մօտ: 19 Մի փոքր ժամանակ եւս, եւ այս աշխարհը ինձ չի տեսնի, բայց դուք ինձ կը տեսնէք, որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի էք լինելու: 20 Այն օրը դուք պիտի իմանաք, որ ես իմ Հօր մէջ եմ, եւ դուք՝ իմ մէջ. ու ես՝ ձեր մէջ: 21 Ով իմ պատուիրաններն ընդունում եւ դրանք պահում է, նա՛ է, որ ինձ սիրում է. եւ ով ինձ սիրում է, պիտի սիրուի իմ Հօրից. ես էլ նրան պիտի սիրեմ եւ ինձ պիտի յայտնեմ նրան»:

22 Յուդան (ոչ Իսկարիովտացին) ասաց նրան. «Տէ՛ր, ինչպէ՞ս եղաւ, որ քեզ պիտի յայտնես մեզ եւ ոչ թէ աշխարհին»: 23 Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Եթէ մէկը սիրում է ինձ, իմ խօսքը կը պահի, եւ իմ Հայրը նրան կը սիրի. եւ մենք նրա մօտ կը գանք ու նրա մօտ կ՚օթեւանենք: 24 Եւ ով ինձ չի սիրում, իմ խօսքերը չի պահում. եւ իմ խօսքը, որ լսում էք, իմը չէ, այլ՝ Հօրը, որ ինձ ուղարկեց: 25 Այս բաները ասացի ձեզ, մինչ ձեզ հետ եմ: 26 Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին

†Լաւագոյն յուն. բն. 14 համարի տակ ունեն նաեւ հետեւեալ նախադասութիւնը. Եթէ իմ անունով խնդրէք որեւէ բան, կ՚անեմ այն:

Հայրը կ'ուղարկի իմ անունով, նա ձեզ ամէն բան կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ ես ասացի ձեզ»:

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

27 *«Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպէս, ինչպէս այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովուեն, եւ չվախենաք:* 28 *Լսեցիք, որ ձեզ ասացի, թէ՝ գնում եմ եւ կը գամ ձեզ մօտ. եթէ ինձ սիրէիք, ապա դուք ուրախ պիտի լինէիք, որ ես Հօր մօտ եմ գնում, որովհետեւ իմ Հայրը մեծ է, քան ես:* 29 *Եւ հիմա ասացի ձեզ, երբ դեռ չի եղել, որպէսզի, երբ լինի, հաւատաք:* 30 *Այլեւս երկար չեմ խօսի ձեզ հետ. գալիս է աշխարհի իշխանը եւ իմ վրայ ոչ մի իշխանութիւն չունի:* 31 *Իսկ որպէսզի աշխարհը գիտենայ, որ ես սիրում եմ Հօրը, այնպէս եմ անում, ինչպէս որ Հայրը պատուիրեց ինձ. դե՛հ, վե՛ր կացէք գնանք այստեղից»:*

ՅԻՍՈՒՍ՝ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒՆԿ

15 *«Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է:* 2 *Ամէն ճիւղ, որ իմ վրայ է եւ պտուղ չի տալիս, նա կտրում է այն. եւ այն ամէնը, որ պտուղ է տալիս, էտում է, որպէսզի առաւել եւս պտղաբեր լինի:* 3 *Դուք արդէն իսկ մաքուր էք այն խօսքի համար, որ ձեզ ասացի:* 4 *Մնացէ՛ք իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ. ինչպէս ճիւղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթէ որթատունկի վրայ հաստատուած չլինի, նոյնպէս եւ դուք՝ եթէ իմ վրայ հաստատուած չլինէք:* 5 *Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը: Ով բնակւում է իմ մէջ, եւ ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց ինձ ոչինչ անել չէք կարող:* 6 *Եթէ մէկը իմ վրայ հաստատուած չէ, նա ճիւղի նման դուրս կը նետուի եւ կը չորանայ, եւ այն կը հաւաքեն ու կրակը կը նետեն, եւ կ'այրուի:* 7 *Եթէ իմ մէջ մնաք, եւ իմ խօսքերն էլ մնան ձեր մէջ, ինչ որ ուզենաք, խնդրեցէ՛ք Աստծուց, եւ ձեզ կը տրուի:* 8 *Իմ Հայրը փառաւորուած կը լինի նրանով, որ դուք շատ պտուղ տաք եւ իմ աշակերտները լինէք:*

9 *Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի. իմ սիրոյ մէջ հաստատո՛ւն մնացէք:* 10 *Եթէ իմ պատուիրանները պահէք, կը մնաք իմ սիրոյ մէջ, ինչպէս ես իմ Հօր պատուիրանները պահեցի եւ մնում եմ նրա սիրոյ մէջ:* 11 *Այս բաները ձեզ ասացի, որպէսզի իմ ուրախութիւնը ձեր մէջ լինի, եւ ձեր ուրախութիւնը լիակատար լինի:*

12 *Այս է իմ պատուէրը. որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ:* 13 *Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար:* 14 *Դուք իմ բարեկամներն էք, եթէ անէք այն, ինչ ես ձեզ պատուիրում եմ:* 15 *Այլեւս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետեւ ծառան չգիտէ, թէ տէրն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետեւ այն բոլորը, ինչ իմ Հօրից լսեցի, յայտնեցի ձեզ:* 16 *Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի եւ ձեզ կարգեցի, որ դուք գնաք եւ պտղաբեր լինէք, եւ ձեր պտուղը մնայ, եւ ինչ էլ որ իմ անունով Հօրից խնդրէք, ձեզ տայ:* 17 *Այս եմ ձեզ պատուիրում. որ սիրէք միմեանց»:*

ԱՇԽԱՐՀԻ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ

18 *«Եթէ աշխարհը ձեզ ատում է, իմացէ՛ք, որ նախ ինձ է ատել:* 19 *Եթէ այս աշխարհից լինէիք, աշխարհն արդէն, որպէս իրենը, ձեզ սիրած կը լինէր. բայց որովհետեւ այս աշխարհից չէք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ ատում է:* 20 *Յիշեցէ՛ք այն խօսքը, որ ես ձեզ ասացի, թէ՝ ծառան մեծ չէ, քան իր տէրը. եթէ ինձ հալածեցին, ապա ձեզ էլ կը հալածեն. եթէ իմ խօսքը պահեցին, ապա ձերն էլ կը պահեն:* 21 *Բայց նոյն բաները ձեզ պիտի անեն իմ անուան համար, որովհետեւ չեն ճանաչում նրան, ով ինձ ուղարկել է:* 22 *Եթէ ես եկած եւ նրանց հետ խօսած չլինէի, նրանք որեւէ մեղք ունեցած չէին լինի. բայց հիմա իրենց մեղքի համար ոչ մի արդարացում չկայ:* 23 *Ով ինձ է ատում, ատում է եւ իմ Հօրը.* 24 *եթէ ես նրանց մէջ արած չլինէի այն գործերը, որ ուրիշ ոչ ոք չարեց, նրանք որեւէ մեղք չէին ունենայ. բայց այժմ տեսան գործերը եւ ատեցին թէ՛ ինձ, թէ՛ իմ Հօրը:* 25 *Եւ այդ նրա համար, որ կատարուի նրանց օրէնքում գրուած այն խօսքը, թէ՝ առանց պատճառի ինձ ատեցին:* 26 *Բայց երբ գայ Մխիթարիչը, որին ես ձեզ կ'ուղարկեմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, նա՛ կը վկայի իմ մասին.* 27 *կը վկայէք եւ դուք, որովհետեւ սկզբից ինձ հետ էք»:*

16 *«Այս բաները ասացի ձեզ, որպէսզի գայթակղութիւնից յետ մնաք:* 2 *Իրենց ժողովարաններից դուրս պիտի հանեն ձեզ. մինչեւ իսկ ժամանակը կը գայ, երբ, ով ձեզ սպանի, պիտի համարի, թէ Աստծուն պաշտամունք է մատուցում:* 3 *Եւ այդ բանը պիտի անեն ձեզ էլ*†*, որովհետեւ չճանաչեցին ո՛չ Հօրը եւ ո՛չ էլ ինձ:* 4 *Սակայն այս բաները ձեզ ասացի, որպէսզի երբ ժամանակը գայ, յիշէք, որ ես ձեզ ասել եմ: Այս բաները սկզբից ձեզ չասացի, քանի որ ձեզ հետ էի»:*

ՄԽԻԹԱՐԻՉԻ ԳԱԼՈՒՍՏԸ

5 *«Բայց այժմ ես գնում եմ ինձ ուղարկողի մօտ, եւ ձեզնից ոչ ոք ինձ չի հարցնում, թէ՝ ո՞ւր ես գնում:* 6 *Բայց որովհետեւ ձեզ այս բաներն ասացի, տրտմութիւնը լցրեց ձեր սրտերը:* 7 *Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ. լաւ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետեւ, եթէ ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մօտ չի գայ. իսկ եթէ գնամ, նրան կ'ուղարկեմ ձեզ մօտ:* 8 *Եւ նա գալով՝ պիտի ապացուցի աշխարհին, որ նա սխալ է մեղքի եւ արդարութեան հարցում եւ դատաստանի հարցում:* 9 *Մեղքի հարցում՝ որովհետեւ ինձ չեն հաւատում.* 10 *արդարութեան հարցում՝ որովհետեւ իմ Հօր մօտ եմ գնում, եւ այլեւս ինձ չէք տեսնի.* 11 *դատաստանի հարցում՝ որովհետեւ այս աշխարհի իշխանը դատապարտուած է:*

12 *Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չէք կարող տանել:* 13 *Երբ որ գայ նա՝ Ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ կ'առաջնորդի ձեզ. որովհետեւ ոչ թէ ինքն իրենից կը խօսի, այլ ինչ լսի, այն կը խօսի. եւ գալիք բաների մասին կը պատմի ձեզ:* 14 *Նա ինձ պիտի փառաւորի, որովհետեւ ինչ որ առնում է ինձանից, կը յայտնի ձեզ:* 15 *Ամէն ինչ որ Հայրն ունի, իմն է. դրա համար ձեզ ասացի, թէ ինչ որ առնում է ինձանից, կը յայտնի ձեզ»:*

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՃՈՒՈՂ ՎԻՇՏԸ

16 *«Մի փոքր ժամանակ, եւ այլեւս ինձ չէք տեսնի. եւ ապա մի քիչ եւս՝ եւ ինձ նորից կը տեսնէք. եւ ես գնում եմ Հօր մօտ»:*

17 *Աշակերտներից ոմանք միմեանց ասում էին. «Ի՞նչ է այս, որ մեզ ասում է, թէ՝ մի քիչ եւս, եւ ինձ չէք տեսնի. եւ դարձեալ, թէ՝ մի քիչ եւս, եւ ինձ կը տեսնէք եւ թէ՝ ես գնում եմ իմ Հօր մօտ»:* 18 *Եւ ասում էին. «Ի՞նչ է այն «մի քիչ եւս»-ը. չենք հասկանում, թէ ինչ է խօսում»:* 19 *Յիսուս իմացաւ, որ ուզում են իրեն հարց տալ, եւ նրանց ասաց. «Դրա՞ համար էիք միմեանց հարցնում, որ ասացի, թէ՝ մի փոքր ժամանակ, եւ ինձ չէք տեսնի. եւ դարձեալ՝ մի քիչ եւս, եւ կը տեսնէք ինձ:* 20 *Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք պիտի լաք եւ պիտի ողբաք, իսկ աշխարհը ուրախ պիտի լինի. դուք պիտի տրտմէք, բայց ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի:* 21 *Երբ կինը ծննդաբերում է, նրա համար տրտմութիւն է, որովհետեւ նրա ժամը հասած է. բայց երբ մանկանը ծնի, այլեւս չի յիշում նեղութիւնը՝ ուրախութեան պատճառով, որ աշխարհում մի մարդ ծնուեց:* 22 *Դուք էլ այժմ տրտմութիւն ունէք, բայց ես դարձեալ ձեզ պիտի տեսնեմ, ու ձեր սրտերը ուրախ պիտի լինեն. եւ ձեր ուրախութիւնը ոչ ոք ձեզնից*

†Յուն. լաւ բն. ունեն նրանք պիտի անեն այս, որովհետեւ . . .

չպիտի խլի: 23 Եւ այն օրը ինձ ոչինչ
չպիտի հարցնէք: Ճշմարիտ, ճշմարիտ
եմ ասում ձեզ, որ, ինչ իմ անունով իմ
Հօրից ուզէք, պիտի տայ ձեզ: 24 Մին-
չեւ հիմա իմ անունով ոչինչ չխնդրե-
ցիք. խնդրեցէ՛ք եւ պիտի ստանաք,
որպէսզի ձեր ուրախութիւնը լիակա-
տար լինի»:

ԵՍ ՅԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՀԻՆ

25 «Այս բաները առակներով ասացի
ձեզ. պիտի գայ ժամանակ, երբ այլեւս
առակներով չպիտի խօսեմ ձեզ հետ,
այլ յայտնապէս Հօր մասին պիտի
պատմեմ ձեզ: 26 Այն օրը իմ անունով
պիտի խնդրէք. եւ ձեզ չեմ ասում, թէ՝
ե՛ս պիտի աղաչեմ Հօրը ձեզ համար,
27 քանի որ Հայրը ինքն իսկ սիրում է
ձեզ. որովհետեւ դուք սիրեցիք ինձ եւ
հաւատացիք, որ ես Աստծուց ելայ:
28 Ելայ Հօրից եւ եկայ աշխարհ. դար-
ձեալ թողնում եմ աշխարհը եւ գնում
Հօր մօտ»:

29 Աշակերտները նրան ասացին.
«Ահա հիմա բացայայտ ես խօսում եւ
ոչ մի առակ չես ասում: 30 Հիմա
գիտենք, որ ամէն ինչ գիտես, եւ պէտք
չկայ, որ մէկը քեզ բան հարցնի. դրա
համար հաւատում ենք, որ Աստծուց
ելար»: 31 Յիսուս պատասխանեց
նրանց եւ ասաց. «Այժմ հաւատո՞ւմ
էք. 32 ահա պիտի գայ ժամանակ եւ
արդէն իսկ եկել է, երբ պիտի ցրուէք
իւրաքանչիւրդ իր տեղը, եւ ինձ
միայնակ պիտի թողնէք. սակայն ես
միայնակ չեմ, որովհետեւ Հայրն ինձ
հետ է: 33 Այս բաները ասացի ձեզ,
որպէսզի ինձնով խաղաղութիւն ունե-
նաք: Այստեղ, աշխարհում նեղութիւն
պիտի ունենաք, սակայն քաջա-
լերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի
աշխարհին»:

ԱՂՕԹՔ ԱՌ ՀԱՅՐ

17 Յիսուս երբ այս բաները խօսեց,
աչքերը երկինք բարձրացրեց եւ ասաց.
«Հա՛յր, հասել է ժամը, փառաւորի՛ր քո
Որդուն, որպէսզի քո Որդին էլ քեզ
փառաւորի. 2 ինչպէս որ նրան իշխա-
նութիւն տուեցիր բոլոր մարդկանց
վրայ, որպէսզի յաւիտենական կեանք
տայ այն ամենքին, որ նրան տուեցիր:
3 Յաւիտենական կեանքը այս է. որ
ճանաչեն քեզ միակ ճշմարիտ Աս-
տուած, նաեւ Յիսուս Քրիստոսին, որ
դու ուղարկեցիր: 4 Ես քեզ փառաւորե-
ցի երկրի վրայ. լրացրի այն գործը, որն
ինձ տուիր, որ անեմ. 5 եւ դու այժմ
փառաւորի՛ր ինձ, Հա՛յր, քեզ մօտ եղող
այն փառքով, որ ունէի քեզ մօտ՝
նախքան աշխարհի լինելը: 6 Քո
անունը յայտնեցի այն մարդկանց,
որոնց ինձ տուեցիր աշխարհից. նրանք
քոնն էին, եւ ինձ տուեցիր նրանց, ու
նրանք քո խօսքը պահեցին: 7 Հիմա
իմացան, որ այն ամէնը, ինչ ինձ
տուիր, ես նրանց տուեցի. 8 եւ նրանք
ընդունեցին ու ճշմարտութեամբ ճա-
նաչեցին, որ ես քո մօտից ելայ. եւ
նրանք հաւատացին, որ դո՛ւ ուղար-
կեցիր ինձ: 9 Արդ, ես նրանց համար եմ
աղաչում. ես չեմ աղաչում աշխարհի
համար, այլ՝ նրանց համար, որոնց դու
ինձ տուեցիր, որովհետեւ նրանք քոնն
են: 10 Եւ ինչ որ իմն է, բոլորը քոնն է,
եւ ինչ որ քոնն է, այն իմն է, ու ես
նրանց մէջ փառաւորուած եմ:

11 Եւ ես այլեւս աշխարհի մէջ չեմ,
իսկ նրանք աշխարհի մէջ են. եւ ես
դէպի քեզ եմ գալիս: Սո՛րբ Հայր, պա-
հի՛ր նրանց քո անունով, որով ինձ
տուեցիր, որպէսզի լինեն մի, ինչպէս
մենք էլ մի ենք: 12 Մինչ աշխարհում
նրանց հետ էի, ես պահում էի նրանց
քո անունով, որով ինձ տուեցիր. եւ ես
պահեցի. ու նրանցից ոչ ոք չկորաւ,
բացի կորստեան դատապարտուած
մարդուց, որպէսզի գրուածը կատա-
րուի: 13 Բայց հիմա քեզ մօտ եմ գալիս
եւ այս բաները խօսում եմ աշխարհում,
որպէսզի նրանք իրենց մէջ իմ լիա-
կատար ուրախութիւնն ունենան: 14 Ես
նրանց տուի քո խօսքը, եւ աշխարհը
նրանց ատեց, որովհետեւ նրանք աշ-
խարհից չեն, ինչպէս ես էլ աշխարհից
չեմ:

15 Այս աղաչում եմ ոչ թէ նրա հա-
մար, որ նրանց վերացնես աշխարհից,
այլ որպէսզի նրանց պահես չարից:
16 Նրանք այս աշխարհից չեն, ինչպէս
ես էլ աշխարհից չեմ: 17 Սրբացրո՛ւ

նրանց քո ճշմարտութեամբ, որով-
հետեւ քո խօսքը ճշմարտութիւն է:
18 Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշ-
խարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշ-
խարհ: 19 Եւ ես ինձ սրբացնում եմ
նրանց համար, որպէսզի նրանք էլ
սրբացուեն ճշմարտութեամբ:

20 Սակայն միայն նրանց համար չէ,
որ աղաչում եմ, այլեւ նրանց խօսքի
միջոցով բոլոր ինձ հաւատացողների
համար, 21 որպէսզի ամէնքը մի լինեն.
ինչպէս դու, Հա՛յր, իմ մէջ, եւ ես՝ քո
մէջ, որպէսզի նրանք էլ մեր մէջ լինեն,
եւ որպէսզի աշխարհն էլ հաւատայ, թէ
դո՛ւ ուղարկեցիր ինձ: 22 Եւ ես տուեցի
նրանց այն փառքը, որ դու ինձ տուե-
ցիր, որպէսզի մի լինեն, ինչպէս եւ
մենք մի ենք: 23 Ես՝ նրանց մէջ, եւ
դու՝ իմ մէջ, որպէսզի կատարեալ լինեն
միութեան մէջ: Եւ աշխարհը գիտենայ,
որ դո՛ւ ուղարկեցիր ինձ. եւ ես սիրեցի
նրանց, ինչպէս դու ինձ սիրեցիր:
24 Հա՛յր, ում որ† ինձ տուիր, կամենում
եմ, որ, ուր ես եմ, նրանք էլ ինձ հետ
լինեն, որպէսզի տեսնեն իմ փառքը, որ
դու ինձ տուեցիր, քանի որ ինձ սիրե-
ցիր՝ նախքան աշխարհի լինելը: 25 Ար-
դա՛ր Հայր, թէեւ աշխարհը քեզ չճա-
նաչեց, բայց ես քեզ ճանաչեցի, եւ
իմացան նրանք, որ դու ես ինձ ուղար-
կել: 26 Եւ ճանաչեցրի նրանց քո
անունը ու պիտի ճանաչեցնեմ, որպէս-
զի այն սէրը, որով ինձ սիրեցիր, նրանց
մէջ լինի, եւ ես՝ նրանց մէջ»:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՆԸ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՆԸ
(Մատթ. 26. 47-56, Մարկ. 14. 43-50, Ղուկ. 22. 47-53)

18 Երբ Յիսուս այսպէս խօսեց, աշա-
կերտներով հանդերձ ելաւ գնաց
Կեդրոնի ձորի միւս կողմը. այնտեղ մի
պարտէզ կար, ուր մտան ինքը եւ իր
աշակերտները: 2 Յուդան էլ, որ նրան
մատնելու էր, գիտէր այն տեղը, որով-
հետեւ Յիսուս ու իր աշակերտները
շատ անգամ այնտեղ հաւաքուել էին:
3 Եւ Յուդան իր հետ վերցնելով գունդը
եւ պահակներ՝ ուղարկուած քահա-
նայապետներից ու փարիսեցիներից,
այնտեղ եկաւ ջահերով, լապտերներով
ու զէնքերով: 4 Իսկ Յիսուս իր վրայ
եկող այս ամէնը տեսնելով՝ դուրս ելաւ
ու նրանց ասաց. «Ո՞ւմ էք փնտռում»:
5 Նրան պատասխանեցին՝ Յիսուս Նա-
զովրեցուն: Յիսուս նրանց ասաց՝ ես
եմ: Նրանց հետ էր եւ Յուդան, որ
մատնում էր նրան: 6 Երբ Յիսուս
ասաց՝ ես եմ, յետ-յետ գնացին եւ գե-
տին ընկան: 7 Դարձեալ նրանց հարց-
րեց՝ ո՞ւմ էք փնտռում: Նրանք ասա-
ցին՝ Յիսուս Նազովրեցուն: 8 Յիսուս
նրանց պատասխանեց. «Ձեզ ասացի,
թէ՝ ես եմ. արդ, եթէ ինձ էք փնտռում,
նրանց թո՛յլ տուէք գնալ». 9 որպէս-
զի կատարուի խօսքը, որ ասել էր, թէ՝
նրանց, որոնց ինձ տուեցիր, նրանցից
եւ ոչ մէկին չկորցրի: 10 Իսկ Սիմոն
Պետրոսը, որովհետեւ սուր ունէր, քա-
շեց այն եւ զարկեց քահանայապետի
ծառային ու նրա աջ ականջը կտրեց:
Եւ այն ծառայի անունը Մաղքոս էր:
11 Յիսուս Պետրոսին ասաց. «Այդ
սուրդ նորից իր պատեանի մէջ դիր.
այն բաժակը, որ Հայրն է ինձ տուել,
չպիտի՞ խմեմ»:

ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՋ
(Մատթ. 26. 57-58, Մարկ. 14. 53-54, Ղուկ. 22. 54)

12 Իսկ գունդը, հազարապետը եւ
հրեաների պահակները բռնեցին Յի-
սուսին եւ կապեցին: 13 Եւ նախ նրան
տարան Աննայի մօտ, որը Կայիափայի՝
այդ տարուայ քահանայապետի աներն
էր: 14 Սա այն Կայիափան էր, որ
հրեաներին խրատ տուեց, թէ աւելի
լաւ է, որ ժողովրդի համար մէկ մարդ
մեռնի:

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ
(Մատթ. 26. 69-75, Մարկ. 14. 66-72, Ղուկ. 22. 55-62)

15 Եւ Յիսուսի յետեւից գնում էին
Սիմոն Պետրոսը եւ միւս աշակերտը: Եւ
քանի որ այդ աշակերտը քահանա-
յապետին ծանօթ էր, Յիսուսի հետ
մտաւ քահանայապետի տան գաւիթը:
16 Իսկ Պետրոսը կանգնել էր դռան
մօտ, դուրսը: Միւս աշակերտը, որ
ծանօթ էր քահանայապետին, դուրս
ելաւ, դռնապանին ասաց եւ Պետրոսին

†Լաւագոյն յուն. ընթ. ուենեն ինչ որ:

ներս մտցրեց: 17 Այն աղջիկը, որ դռնապանն էր, Պետրոսին ասաց. «Մի՞թէ դու էլ այդ մարդու աշակերտներից ես»: Եւ նա ասաց՝ ո՛չ, չեմ: 18 Այնտեղ կային ծառաներ եւ պահակներ, որոնք խարոյկ էին արել եւ տաքանում էին, քանի որ ցուրտ էր: Պետրոսն էլ նրանց հետ կանգնել էր ու տաքանում էր: 19 Իսկ քահանայապետը հարց տուեց Յիսուսին նրա աշակերտների եւ վարդապետութեան մասին: 20 Յիսուս նրան պատասխանեց. «Ես բացայայտ ասացի բոլորին. ես միշտ ուսուցանել եմ ժողովարանում եւ տաճարի մէջ, ուր հաւաքւում էին բոլոր հրեաները. եւ ծածուկ ոչինչ չեմ խօսել: 21 Ինձ ինչո՞ւ ես հարցուփորձ անում. հարցուփորձ արա նրանց, ովքեր լսել են, թէ ես նրանց հետ ինչ եմ խօսել. ահա՛, նրանք գիտեն, թէ ինչ եմ ասել»: 22 Երբ նա այս ասաց, այնտեղ կանգնած պահակներից մէկը մի ապտակ տուեց Յիսուսին ու ասաց. «Այդպէ՞ս ես պատասխան տալիս քահանայապետին»: 23 Եւ Յիսուս նրան ասաց. «Եթէ վատ խօսեցի, վկայի՛ր վատի մասին, իսկ եթէ լաւ՝ ինձ ինչո՞ւ ես խփում»: 24 Եւ Աննան նրան կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտ: 25 Եւ Սիմոն Պետրոսը այնտեղ կանգնած էր ու տաքանում էր. նրան ասացին. «Մի՞թէ դու էլ նրա աշակերտներից ես»: Նա ուրացաւ եւ ասաց՝ ո՛չ, չեմ: 26 Եւ քահանայապետի ծառաներից մէկը՝ նրա՛ ազգականը, որի ականջը Պետրոսը կտրել էր, ասաց. «Չէ՞ որ ես ինքս տեսայ քեզ նրա հետ պարտէզում»: 27 Պետրոսը դարձեալ ուրացաւ. եւ իսկոյն մի աքաղաղ կանչեց:

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ
(Մատթ. 27. 1-2, 11-31, Մարկ. 15. 1-20, Ղուկ. 23. 1-5, 13-25)

28 Կայիափայի տնից Յիսուսին տարան կուսակալի ապարանքը: Այգաբաց էր: Բայց նրանք ապարանք չմտան, որպէսզի չպղծուեն եւ որպէսզի զատկական ընթրիքը կարողանան ուտել: 29 Ուստի Պիղատոսն ինքը դուրս ելաւ նրանց մօտ եւ ասաց. «Այս մարդու մասին ի՞նչ ամբաստանութիւն էք ներկայացնում»: 30 Նրան պատասխանեցին եւ ասացին. «Եթէ այս մարդը չարագործ չլինէր, ապա նրան քո ձեռքը չէինք մատնի»: 31 Պիղատոսը նրանց ասաց. «Դուք վերցրէ՛ք նրան եւ ձեր օրէնքի համաձայն նրան դատեցէ՛ք»: Հրեաները նրան ասացին. «Մեզ համար որեւէ մէկին սպանել օրինաւոր չէ» 32 (որպէսզի կատարուի Յիսուսի այն խօսքը, որ նա ասաց՝ նշելով, թէ ինչ մահով էր ինքը մեռնելու): 33 Պիղատոսը դարձեալ ապարանք մտաւ, կանչեց Յիսուսին եւ ասաց նրան. «Դո՞ւ ես հրեաների թագաւորը»: 34 Յիսուս պատասխանեց. «Դու քեզնի՞ց ես այդ ասում, թէ ուրիշներ իմ մասին քեզ ասացին»: 35 Պիղատոսը պատասխանեց. «Միթէ ես էլ հրեա՞յ եմ. քո ազգը եւ քահանայապետները մատնեցին քեզ իմ ձեռքը. դու ի՞նչ ես արել»: 36 Յիսուս պատասխանեց. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ. եթէ իմ թագաւորութիւնը այս աշխարհից լինէր, իմ հետեւորդները կը մարտնչէին արդէն, որպէսզի հրեաների ձեռքը չմատնուեմ. բայց, արդ, իմ թագաւորութիւնը այստեղից չէ»: 37 Պիղատոսը նրան ասաց. «Թէ որ այդպէս է, ուրեմն դու թագաւո՞ր ես»: Յիսուս նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ թագաւոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնուել եմ եւ դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպէսզի ճշմարտութեան համար վկայեմ: Ամէն մարդ, որ ճշմարտութիւնից է, իմ ձայնը լսում է»: 38 Պիղատոսը նրան ասաց. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Երբ այս ասաց, դարձեալ դուրս ելաւ, հրեաների մօտ, ու ասաց նրանց. «Ես նրա մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում: 39 Բայց դուք սովորութիւն ունէք, որ զատկին ձեզ համար մի բանտարկեալ արձակեմ. արդ, ուզո՞ւմ էք, որ ձեզ համար արձակեմ հրեաների թագաւորին»: 40 Բոլորը աղաղակեցին եւ ասացին՝ ո՛չ դրան, այլ՝ Բարաբբային: Եւ այն Բարաբբան աւազակ էր:

19 Այն ժամանակ Պիղատոսը հրամայեց Յիսուսին վերցնել եւ նրան

գանակոծել: 2 Իսկ զինուորները փշէ պսակ շինելով՝ դրեցին նրա գլխին ու նրան ծիրանի զգեստ հագցրին: 3 Եւ գալիս էին նրա մօտ ու ասում՝ ողջո՛յն, հրեաների՛ արքայ: Եւ նրան ապտակում էին: 4 Պիղատոսը դարձեալ դուրս ելաւ ու ասաց նրանց. «Ահա նրան դուրս, ձեզ մօտ եմ բերում, որպէսզի իմանաք, թէ ես նրա մէջ որեւէ յանցանք չեմ գտնում»: 5 Յիսուս դուրս ելաւ. եւ փշէ պսակ ունէր եւ ծիրանի զգեստ: Եւ նրանց ասաց. «Ահա ձեր մարդը՝ ձեզ»: 6 Երբ քահանայապետներն ու պահակները նրան տեսան, աղաղակ բարձրացրին եւ ասացին. «Խա՛չը հանիր, խա՛չը հանիր դրան»: Պիղատոսը նրանց ասաց. «Դո՛ւք առէք նրան ձեր մէջ եւ ինքնե՛րդ խաչը հանեցէք, քանի որ ես դրա մէջ որեւէ յանցանք չեմ գտնում»: 7 Հրեաները նրան պատասխանեցին. «Մենք օրէնք ունենք, եւ ըստ մեր օրէնքի պէտք է նա մեռնի, որովհետեւ իրեն Աստծու Որդի դարձրեց»: 8 Երբ Պիղատոսը այս խօսքերը լսեց, աւելի եւս վախեցաւ: 9 Դարձեալ, մի անգամ եւս մտաւ ապարանքը եւ Յիսուսին ասաց՝ որտեղի՞ց ես դու: Եւ Յիսուս նրան պատասխան չտուեց: 10 Պիղատոսը նրան ասաց. «Ինձ հետ չե՞ս խօսում, չգիտե՞ս, որ իշխանութիւն ունեմ քեզ խաչը հանելու. եւ իշխանութիւն ունեմ քեզ ազատ արձակելու»: 11 Յիսուս պատասխանեց. «Դու իմ վրայ ոչ մի իշխանութիւն էլ չէիր ունենայ, եթէ քեզ ի վերուստ տրուած չլինէր. դրա համար էլ, ով ինձ քո ձեռքը մատնեց, նրա մեղքը աւելի մեծ է»:

12 Սրանից յետոյ Պիղատոսը ուզում էր նրան ազատ արձակել: Իսկ հրեաները աղաղակում էին ու ասում. «Եթէ դրան արձակես, կայսրին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագաւոր է կոչում, հակառակ է կայսեր»: 13 Իսկ երբ Պիղատոսը այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերեց, նստեց բեմի վրայ, այն տեղը, որ Քարայատակ էր կոչւում, իսկ եբրայերէն՝ Կապպաթա: 14 Զատկի նախօրէն էր, եւ կէսօրուայ մօտ էր: Եւ նա հրեաներին ասաց. «Ահա ձեր թագաւորը՝ ձեզ»: 15 Իսկ նրանք աղաղակում էին. «Վերացրո՛ւ մեր միջից, վերացրո՛ւ մեր միջից եւ խա՛չը հանիր նրան»: Պիղատոսը նրանց ասաց. «Ես ձեր թագաւորին խա՞չը հանեմ»: Քահանայապետները պատասխանեցին. «Չունենք մենք այլ թագաւոր, բացի կայսրից»: 16 Այն ժամանակ Յիսուսին յանձնեց նրանց ձեռքը, որպէսզի խաչը հանուի:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 27. 32-44, Մարկ. 15. 21-32, Ղուկ. 23. 26-43)

17 Եւ նրանք առան Յիսուսին եւ տարան: Եւ խաչափայտը նա ինքն էր վերցրել եւ բարձրացնում էր այն տեղը, որի անունն էր Գագաթ, իսկ եբրայերէն կոչւում էր Գողգոթա, 18 որտեղ եւ խաչը հանեցին նրան ու նրա հետ երկու ուրիշների՝ այս եւ այն կողմից, իսկ մէջտեղում՝ Յիսուսին: 19 Պիղատոսը մի տախտակ էլ գրեց եւ դրեց խաչի վրայ. եւ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի՝ հրեաների թագաւոր»: 20 Այդ տախտակը հրեաներից շատերը կարդացին, որովհետեւ այն տեղը, ուր Յիսուս խաչուեց, քաղաքին մօտ էր (եւ գրուած էր եբրայերէն, լատիներէն եւ յունարէն): 21 Հրեաների քահանայապետները Պիղատոսին ասացին. «Մի՛ գրիր՝ հրեաների թագաւոր, այլ՝ ինչ նա ասաց՝ թագաւոր եմ հրեաների»: 22 Պիղատոսը պատասխանեց. «Ինչ գրեցի, գրեցի»:

23 Իսկ զինուորները, երբ Յիսուսին խաչը հանեցին, վերցրին նրա զգեստները եւ չորս մաս արեցին. իւրաքանչիւր զինուորի՝ մէկ մաս: Իսկ քանի որ պատմուճանը առանց կարի էր, վերեւից ներքեւ ամբողջովին հիւսած շուրջանակի, 24 ուստի միմեանց ասացին. «Այդ չպատռենք, այլ դրա վրայ վիճակ գցենք, ում որ ելնի», որպէսզի կատարուի գրուածը, որ ասում է. «Իմ զգեստները բաժանեցին իրար մէջ եւ իմ պատմուճանի վրայ վիճակ գցեցին»: Զինուորներն այս բանն արեցին:

25 Իսկ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նրա մայրը եւ նրա մօրաքոյրը՝

Կղէոպասի կին Մարիամը եւ Մարիամ Մագդաղենացին: 26 Երբ Յիսուս տեսաւ մօրը եւ այն աշակերտին, որ մօտ էր կանգնած, որին նա սիրում էր, մօրն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: 27 Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եւ այդ պահից աշակերտը նրան իր մօտ առաւ:

28 Այնուհետեւ Յիսուս, գիտենալով, թէ ահա ամէն ինչ կատարուած է, որպէսզի կատարուի գրուածը, ասաց՝ ծարաւ եմ: 29 Եւ այնտեղ քացախով լի մի ման կար. զինուորները լեղախառն† քացախով մի սպունգ թրջեցին եւ այն դրին եղէգի ծայրին ու մօտեցրին նրա բերանին: 30 Երբ Յիսուս լեղախառն քացախը բերանն առաւ, ասաց. «Ամէն ինչ կատարուած է»: Եւ գլուխը կախելով՝ հոգին աւանդեց:

ԳԵՂԱՐԴԻ ՀԱՐՈՒԱԾԸ

31 Իսկ քանի որ ուրբաթ էր, որպէսզի մարմինները չմնան խաչի վրայ մինչեւ շաբաթ օրը, – որովհետեւ այն շաբաթը տօնական մեծ օր էր, – հրեայ առաջնորդները Պիղատոսին աղաչեցին, որ կոտրեն նրանց սրունքները եւ վերցնեն նրանց: 32 Զինուորները եկան եւ առաջինի սրունքները կոտրեցին, նոյնպէս եւ միւսինը, որ նրա հետ խաչ էր հանուել: 33 Բայց երբ եկան Յիսուսի մօտ եւ տեսան, որ նա արդէն մեռած էր, նրա սրունքները չկոտրեցին, 34 այլ զինուորներից մէկը տէգով խոցեց նրա կողը, եւ իսկոյն արիւն եւ ջուր ելաւ: 35 Եւ ով այս բանը տեսաւ, վկայեց. եւ նրա վկայութիւնը ճշմարիտ է, եւ նա գիտէ, որ ճշմարիտ է ասում, որպէսզի դուք էլ հաւատաք: 36 Այս պատահեց, որպէսզի կատարուի գրուածը, թէ՝ նրա ոսկորը չպիտի փշրուի: 37 Եւ դարձեալ միւս գրուածն ասում է. «Պիտի նայեն նրան, ում խոցեցին»:

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ
(Մատթ. 27. 57-61, Մարկ. 15. 42-47, Ղուկ. 23. 50-56)

38 Այնուհետեւ Յովսէփը, որ արիմաթիացի էր եւ Յիսուսի թաքուն աշակերտն էր Հրեաների վախի պատճառով, Պիղատոսին աղաչեց, որ Յիսուսի մարմինը վերցնի: Եւ Պիղատոսը հրաման տուեց. ուստի Յովսէփն ու Նիկոդեմոսը եկան եւ նրան վերցրին: 39 Նիկոդեմոսը, որ առաջին անգամ գիշերով Յիսուսի մօտ էր եկել, բերեց մօտ հարիւր լիտր զմուռս՝ հալուէի հետ խառնուած: 40 Վերցրին Յիսուսի մարմինը եւ պատեցին կտաւներով՝ խնկերով հանդերձ, ինչպէս որ հրեաների սովորութիւնն էր՝ պատել: 41 Եւ այն տեղում, ուր նա խաչուեց, պարտէզ կար. եւ այդ պարտէզում՝ մի նոր գերեզման, որի մէջ երբեք որեւէ մէկը չէր դրուած: 42 Եւ քանի որ գերեզմանը մօտ էր, հրեաների ուրբաթի պատճառով, այնտե՛ղ դրեցին Յիսուսի մարմինը:

†Յունարէնը չունի լեղախառն բառը:

ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
(Մատթ. 28. 1-8, Մարկ. 16. 1-8, Ղուկ. 24. 1-12)

20 Եւ կիրակի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտեան արշալոյսին գերեզման է գալիս եւ տեսնում է, որ քարը գերեզմանի դռնից վերցուած է: 2 Ապա վազում է եւ գալիս Սիմոն Պետրոսի եւ այն միւս աշակերտի մօտ, որին Յիսուս սիրում էր, ու նրանց ասում է. «Տիրոջը վերցրել են գերեզմանից, եւ չգիտենք, թէ ո՛ւր են դրել նրան»: 3 Պետրոսը եւ միւս աշակերտը ելան եւ գերեզման էին գալիս: 4 Երկուսով միասին վազում էին, բայց միւս աշակերտը առաջ անցաւ Պետրոսից եւ աւելի շուտ վազեց ու առաջինը գերեզման եկաւ: 5 Եւ կռանալով՝ տեսաւ, որ կտաւները այնտեղ էին, բայց ներս չմտաւ: 6 Եկաւ նաեւ Սիմոն Պետրոսը, որ նրա յետեւից էր գալիս. մտաւ գերեզմանը եւ տեսաւ, որ կտաւները այնտեղ էին, 7 եւ վարշամակը, որ նրա գլխին էր, միւս կտաւների հետ չէր, այլ առանձին ծալուած՝ մի կողմ էր: 8 Այն ժամանակ մտաւ եւ միւս աշակերտը, որ աւելի առաջ էր եկել գերեզման. տեսաւ ու հաւատաց. 9 քանի որ դեռ չէին հասկացել գրուածքը, թէ՝ մեռելներից պէտք է յարութիւն առնի: 10 Աշակերտները, վերադառնալով, գնացին իրենց տեղերը:

ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ Է ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՑՈՒՆ
(Մատթ. 28. 9-10, Մարկ. 16. 9-11)

11 Բայց Մարիամը կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում. եւ մինչ դեռ լաց էր լինում, կռացաւ դէպի գերեզմանը 12 եւ տեսաւ երկու հրեշտակներ՝ սպիտակների մէջ, որոնք նստել էին՝ մէկը՝ սնարին, եւ միւսը՝ ոտքերի մօտ, այնտեղ, ուր Յիսուսի մարմինն էր եղել: 13 Եւ նրան ասացին. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս»: Նա նրանց ասաց. «Որովհետեւ իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են, եւ չգիտեմ՝ նրան ուր են դրել»: 14 Երբ այս ասաց, դէպի յետեւի կողմը դարձաւ եւ տեսաւ Յիսուսին, որ կանգնած էր. բայց չէր իմանում, թէ Յիսուսն է: 15 Յիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտռում»: Նրան այնպէս թուաց, թէ պարտիզպանն է. եւ ասաց նրան. «Տէ՛ր, եթէ դու ես նրան վերցրել, ասա՛ ինձ՝ ուր ես դրել նրան, որպէսզի ես նրան վերցնեմ»: 16 Յիսուս նրան ասաց՝ Մարիա՛մ: Եւ նա դարձաւ ու եբրայերէն նրան ասաց՝ Ռաբբունի՛ (որ թարգմանւում է՝ վարդապետ): 17 Յիսուս նրան ասաց. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի որ դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»: 18 Մարիամ Մագդաղենացին եկաւ ու աշակերտներին պատմեց, թէ ինքը Տիրոջը տեսել է, եւ նա իրեն այս բաներն է ասել:

ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ
(Մատթ. 28. 16-20, Մարկ. 16. 14-18, Ղուկ. 24. 36-49)

19 Նոյն կիրակի օրուայ երեկոյեան աշակերտները հաւաքուած էին մի տան մէջ, որի դռները փակուած էին հրեաների վախի պատճառով: Յիսուս եկաւ, կանգնեց նրանց մէջտեղն ու նրանց ասաց. «Խաղաղութի՛ւն ձեզ»: 20 Այս ասելով՝ նրանց ցոյց տուեց իր ձեռքերը եւ կողը. եւ աշակերտներն ուրախացան, երբ տեսան Տիրոջը: 21 Նա դարձեալ նրանց ասաց. «Խաղաղութի՛ւն ձեզ. ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»: 22 Երբ այս ասաց, նրանց վրայ փչեց եւ ասաց. «Առէ՛ք Սուրբ Հոգին: 23 Եթէ մէկի մեղքերը ներէք, նրանց ներուած կը լինի. եթէ մէկի մեղքերը չներէք, ներուած չի լինի»:

ԱՆՀԱՒԱՏ ԹՈՎՄԱՍԸ

24 Իսկ Թովմասը՝ Տասներկուսից մէկը՝ Երկուորեակ կոչուածը, նրանց հետ չէր, երբ Յիսուս եկաւ: 25 Միւս աշակերտները նրան ասացին, թէ՝ Տիրոջը տեսանք: Եւ նա նրանց ասաց. «Եթէ չտեսնեմ նրա ձեռքերի վրայ մեխերի նշանը եւ իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը նրա կողի մէջ չխրեմ, չեմ հաւատայ»:

26 Ութ օր յետոյ աշակերտները դարձեալ ներսում էին. եւ Թովմասը՝ նրանց հետ: Յիսուս եկաւ փակ դռներով, կանգնեց մէջտեղ ու ասաց՝ խաղաղութի՛ւն ձեզ: 27 Ապա Թովմասին ասաց. «Բե՛ր քո մատները եւ դի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռքերը. եւ բե՛ր քո ձեռքը ու մտցրո՛ւ իմ կողի մէջ. անհաւատ մի՛ եղիր, այլ՝ հաւատացեալ»: 28 Թովմասը պատասխան տուեց ու նրան ասաց՝ Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ: 29 Յիսուս նրան ասաց. «Որովհետեւ դու ինձ տեսար, հաւատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսել եւ սակայն կը հաւատան»:

ՍՈՅՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

30 Իր աշակերտների առաջ Յիսուս բազում այլ նշաններ էլ արեց, որոնք այս գրքում գրուած չեն: 31 Այլ այսքանը գրուեց, որ դուք հաւատաք, թէ Յիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին. նաեւ՝ որպէսզի հաւատաք ու նրա անունով յաւիտենական կեանքն ընդունէք:

ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ

21 Սրանից յետոյ Յիսուս դարձեալ
իրեն յայտնեց իր աշակերտներին Տի-
բերիայի ծովեզերքի մօտ. եւ յայտնեց
այսպէս. 2 միասին էին Սիմոն Պետ-
րոսը, Թովմասը՝ երկուորեակ կոչուածը,
Նաթանայէլը, որ Գալիլիայի Կանա
քաղաքից էր, Զեբեդէոսի որդիները
եւ աշակերտներից ուրիշ երկու հոգի:
3 Սիմոն Պետրոսը նրանց ասաց.
«Գնում եմ ձուկ որսալու»: Նրան
ասացին. «Մենք էլ ենք գալիս քեզ
հետ»: Գնացին եւ նաւակը մտան. եւ
այդ գիշեր ոչինչ չբռնեցին: 4 Երբ
առաւօտ եղաւ, Յիսուս կանգնած էր
ծովի եզերքին. բայց աշակերտները
չիմացան, որ Յիսուսն է: 5 Յիսուս
նրանց ասաց. «Տղանե՛ր, ուտելու բան
չունէ՞ք»: Նրան պատասխանեցին՝ ո՛չ:
6 Նրանց ասաց. «Ուռկանը գցեցէ՛ք
նաւակի աջ կողմը եւ կը գտնէք»:
Գցեցին. եւ ձկների բազմութիւնից
չէին կարողանում այն դուրս քաշել:
7 Այն աշակերտը, որին Յիսուս սիրում
էր, Պետրոսին ասաց՝ Տէրն է: Երբ
Սիմոն Պետրոսը լսեց, թէ Տէրն է,
հագուստը վրան գցեց, քանի որ մերկ
էր, եւ իրեն նետեց ծովի մէջ: 8 Միւս
աշակերտներն էլ նաւակով եկան. եւ
քանի որ ցամաքից հեռու չէին, այլ
երկու հարիւր կանգունի չափ միայն,
քաշում էին ուռկանը ձկներով հան-
դերձ: 9 Երբ ցամաք ելան, տեսան
վառուած ածուխի մի կրակատեղ՝ մի
ձուկ նրա վրայ եւ հաց: 10 Յիսուս
նրանց ասաց. «Բերէ՛ք այն ձկներից,
որ դուք հիմա որսացիք»: 11 Սիմոն
Պետրոսը նաւակ մտաւ եւ ցամաք
քաշեց ուռկանը, որ լիքն էր հարիւր
յիսուներեք մեծ-մեծ ձկներով:
Թէեւ այնչափ բան կար, բայց ուռ-
կանը չպատռուեց: 12 Յիսուս նրանց
ասաց՝ եկէք ճաշեցէ՛ք: Եւ աշակերտ-
ներից ոչ ոք չէր համարձակւում հարց-
նել, թէ՝ դու ո՞վ ես, որովհետեւ գի-
տէին, որ Տէրն է: 13 Եկաւ Յիսուս,
առաւ հացը եւ տուեց նրանց. նոյնպէս
եւ ձուկը: 14 Այս երրորդ անգամն էր,
որ Յիսուս երեւաց իր աշակերտներին՝
մեռելներից յարութիւն առնելուց յետոյ:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՊԵՏՐՈՍԸ

15 Եւ երբ ճաշեցին, Յիսուս Սիմոն
Պետրոսին ասաց. «Սիմո՛ն, որդի՛ Յով-
նանի, սիրո՞ւմ ես ինձ աւելի, քան
դրանք»: Սա ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր,
եւ դու գիտես, որ սիրում եմ քեզ»:
Նրան ասաց՝ արածացրո՛ւ իմ գառ-
ներին: 16 Դարձեալ ասաց նրան. «Սի-
մո՛ն, որդի՛ Յովնանի, սիրո՞ւմ ես
ինձ»: Նա ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, եւ
դու գիտես, որ սիրում եմ քեզ»: Նրան
ասաց՝ արածացրո՛ւ իմ ոչխարներին:
17 Երրորդ անգամ նրան ասաց. «Սի-
մո՛ն, որդի՛ Յովնանի, սիրո՞ւմ ես
ինձ»: Պետրոսը տխրեց, որ երրորդ
անգամ իրեն ասաց, թէ՝ սիրո՞ւմ ես
ինձ: Ու նրան պատասխանեց. «Տէ՛ր,
դու ամէն ինչ գիտես. դու ինքդ ճանա-
չում ես բոլորին եւ գիտես, թէ սիրում
եմ քեզ»: Յիսուս նրան ասաց. «Արա-
ծացրո՛ւ իմ ոչխարներին: 18 Ճշմարիտ,
ճշմարիտ եմ ասում քեզ, որ մինչ դու
երիտասարդ էիր, ինքդ էիր գոտիդ
կապում եւ գնում էիր՝ ուր եւ
կամենում էիր. սակայն երբ ծերանաս,
ձեռքերդ վեր կը բարձրացնես, եւ
ուրիշները քեզ գոտի կը կապեն ու կը
տանեն՝ ուր չես կամենայ»: 19 Այս
ասաց, նշելով, թէ ինչ մահով նա պիտի
փառաւորի Աստծուն: Եւ երբ այս
ասաց, աւելացրեց՝ արի՛ իմ յետեւից:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԸ

20 Պետրոսը դարձաւ եւ տեսաւ, որ
այն աշակերտը, ում Յիսուս սիրում էր,
գալիս է յետեւից. նա, որ ընկել էր նրա
կրծքովն ու ասել. «Տէ՛ր, ո՞վ է, որ
մատնելու է քեզ»: 21 Պետրոսը, նրան
տեսնելով, ասաց Յիսուսին. «Տէ՛ր, իսկ
սա ի՞նչ կը լինի»: 22 Յիսուս նրան
ասաց. «Եթէ ես կամենում եմ, որ դա
ապրի, մինչեւ որ ես գամ, այդ քեզ
ի՞նչ հոգ, դու արի՛ իմ յետեւից»: 23 Եւ
այս խօսքը տարածուեց եղբայրների
մէջ. եւ կարծեցին, թէ այն աշակերտը
չպիտի մեռնի: Բայց Յիսուս նրան

չասաց, թէ չպիտի մեռնի, այլ թէ՝ ես
կամենում եմ, որ դա ապրի, մինչեւ որ
ես գամ: 24 Այս աշակերտն է, որ
վկայում է այս բաների մասին, որ եւ
գրեց իսկ դրանք. եւ գիտենք, որ
նրա վկայութիւնը ճշմարիտ է: 25 Բայց
ուրիշ շատ բաներ էլ կան, որ Յիսուս
արեց, որոնք, եթէ մէկը մէկ առ մէկ
գրած լինէր, կարծում եմ, թէ աշխարհն
իսկ բաւական չէր լինի պարփակելու
այդ գրքերը, եթէ դրանք գրուած
լինէին:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Ներածութիւն

«Գործք Առաքելոց»-ը համարւում է Ղուկասի գրքի երկրորդ հատորը: Առաջին գրքում՝ իր աւետարանում, Ղուկասը սահմանափակւում էր Յիսուսի երկրային կեանքի ժամանակի մէջ: Յիսուսի համբարձումից յետոյ Քրիստոսի ներկայութիւնը իր աշակերտների մէջ փոխում է իր բնոյթը. նրանք այլեւս նրան չեն տեսնում մարմնաւոր աչքերով: Այսպէս է, որ «Գործք»-ը սկզբնաւորում է Եկեղեցու ժամանակաշրջանը: Յիսուս այնտեղ ներկայ է լինում իր Հոգով, որը եւ ոգեշնչում է աշակերտներին:

Այս պատմութիւնը լեցուն է կեանքով: Դրքում մենք հանդիսատես ենք լինում քրիստոնէական համայնքների ծննդին հրէական միջավայրում, ինչպիսին է Երուսաղէմը, կամ ոչ հրէական միջավայրում, ինչպիսիք են՝ Անտիոքը, Կորնթոսը կամ Փիլիպպէն: Այստեղ մենք հետեւում ենք Պօղոս առաքեալի առաքելական երկար ճանապարհորդութիւններին: Տեսնում ենք վերջապէս այն բազում դժուարութիւնները, որոնց հանդիպում է երիտասարդ Եկեղեցին, եւ թէ ինչպէս կարողանում է յաղթահարել դրանք Տիրոջ Հոգու շնորհիւ:

Գրքի աղբիւրների թւում առաջին հերթին նշենք այն, ինչ կարող ենք կոչել «Ղուկասի օրագիրը»: Այստեղ Ղուկասը առաջին դէմքով պատմում ու նկարագրում է իրենց ճանապարհորդութիւնը Տրովադայից Փիլիպպէ, ապա մինչեւ Երուսաղէմ, որտեղ ձերբակալւում է Պօղոսը եւ, վերջապէս, Կեսարիայից դէպի Հռոմ, որտեղ Պօղոսը երկու տարի սպասում է մինչեւ իր դատուելը:

Հէնց սկզբից հեղինակը յստակօրէն յայտնում է, թէ ինչ ծրագրով է կազմել իր գիրքը.

- Սկզբնական Եկեղեցու առաջին քայլերը Երուսաղէմում Յիսուսի համբարձումից յետոյ.
- Աւետարանի տարածումը երկրի մնացած մասում.
- Աւետարանի տարածումը Միջերկրականեան աշխարհում մինչեւ Հռոմ՝ կայսրութեան մայրաքաղաքը:

«Գործք Առաքելոց»-ում յիշատակուած դէպքերը ճանապարհ են բացում այն ծրագրին, որ բոլոր ժամանակների Եկեղեցին պարտաւոր է իրականացնել. դա Յիսուս Քրիստոսի Աւետարանի քարոզութիւնն է ամբողջ մարդկութեանը, երկրի մէկ ծայրից միւսը:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ՆԱԽԱԲԱՆ

1 *Առաջին պատմութիւնը գրի առայ, ո՛վ Թէոփիլէ, այն բոլոր բաների մասին, ինչ Յիսուս սկսեց անել եւ ուսուցանել սկզբից 2 մինչեւ այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով պատուէր տուեց առաքեալներին, որոնց ինքն ընտրել էր, եւ երկինք վերացաւ: 3 Նա իր չարչարանքներից յետոյ իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացոյցներով՝ քառասուն օրերի ընթացքում երեւալով նրանց եւ խօսելով Աստծու արքայութեան մասին: 4 Եւ մի օր նրանց հետ հաց ուտելիս պատուէր տուեց նրանց, որ Երուսաղէմից չմեկնեն, այլ սպասեն Հօր խոստումին, «որը, - ասաց, - լսեցիք ինձնից. 5 որովհետեւ Յովհաննէսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ յետոյ պիտի մկրտուէք Սուրբ Հոգով»:*

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

6 Նրանք, մօտենալով, հարցրին նրան եւ ասացին. «Տէ՛ր, այս ժամանակո՞ւմ է, որ վերահաստատելու ես Իսրայէլի թագաւորութիւնը»: 7 Յիսուս նրանց ասաց. «Ձեզ տրուած չէ իմանալ այն ժամերը եւ ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանութեան մէջ. 8 այլ, երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրայ, զօրութիւն պիտի առնէք եւ ինձ վկաներ պիտի լինէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում ու Սամարիայում եւ մինչեւ երկրի ծայրերը»:

9 Եւ երբ այս խօսքերն ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացաւ, եւ ամպը նրան ծածկեց նրանց աչքերից: 10 Եւ մինչ իրենց աչքերը յառած նայում էին նրա երկինք գնալուն, ահա նրանց երեւացին սպիտակ զգեստների մէջ երկու մարդիկ, որոնք եւ ասացին. 11 «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում էք երկնքին. այս Յիսուսը, որ ձեր միջից երկինք վերացաւ, պիտի գայ նոյն ձեւով, ինչպէս տեսաք նրա երկինք գնալը»:

ԱՌԱՔԵԼՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

12 Ապա Երուսաղէմ վերադարձան Զիթենեաց կոչուող լեռից, որ Երուսաղէմին մօտ է շաբաթ օրն անցնելիք մի ճանապարհի չափ[†]: 13 Եւ երբ քաղաք մտան, բարձրացան վերնատունը, որտեղ եւ բնակւում էին Պետրոսն ու Յակոբոսը, Յովհաննէսն ու Անդրէասը, Փիլիպպոսն ու Թովմասը, Բարթողոմէոսն ու Մատթէոսը, Ալփէոսի որդի Յակոբոսն ու Նախանձայոյզ Շմաւոնը եւ Յակոբոսի որդի Յուդան: 14 Սրանք բոլորը, միասիրտ, յարատեւօրէն աղօթքի մէջ էին կանանց եւ Յիսուսի մօր՝ Մարիամի ու նրա եղբայրների հետ:

ՄԱՏԹԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

15 Եւ այն օրերին Պետրոսը վեր կացաւ եղբայրների մէջ (եւ այնտեղ հաւաքուեր քսան հոգու չափ հաւատացեալների բազմութիւն կար) եւ ասաց. 16 «Ո՛վ եղբայրներ, պէտք է, որ կատարուէր գրուածը, ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ասել էր Դաւթի բերանով Յուդայի մասին, որ Յիսուսին բռնողներին առաջնորդ եղաւ. 17 որովհետեւ նա մեզ հետ մեր խմբի մէջ էր. եւ նրան էլ վիճակուած էր այս սպասաւորութիւնը: 18 Սա իր անիրաւութեան վարձով մի ագարակ գնեց եւ ուռչելով[‡] մէջտեղից պատռուեց, ու նրա ամբողջ փորը դուրս թափուեց: 19 Եւ այս բանը յայտնի եղաւ բոլոր նրանց, որոնք Երուսաղէմում են բնակւում, այնպէս որ մինչեւ իսկ այն ագարակը կոչուեց իրենց բարբառով Ակեղդամա, այսինքն՝ Արեան ագարակ. 20 որովհետեւ սաղմոսների գրքում գրուած է. «Թող նրա տունը աւերակ լինի, եւ չգտնուի մէկը, որ նրա մէջ բնակուի». եւ՝ «Նրա պաշտօնը թող ուրիշն առնի»: 21 Արդ, մէկն այս մարդկանցից, որոնք մեզ ուղեկցում էին այն ամբողջ ժամանակ, երբ Յիսուս երկրի վրայ մեզ հետ էր, - 22 սկսած Յովհաննէսի մկրտութիւնից

[†]Շաբաթ օրուայ ճանապարհ, այսինքն՝ մօտ մէկ կիլոմետր ճանապարհ:

[‡]Յունարէնը *ուռչելով*-ի փոխարէն ունի *գլխիվայր ընկնելով*:

մինչեւ այն օրը, երբ մեր միջից երկինք
վերացաւ, - պէտք է, որ նա մեզ հետ
վկայ լինի նրա յարութեանը»: 23 Եւ
ներկայացրին երկուսին՝ Յովսէփին,
որին Բարսաբա էին կոչում, եւ որ
վերանուանուեց Յուստոս, ու Մատա-
թիային: 24 Եւ աղօթք անելով՝ ասա-
ցին. «Տէ՛ր, դու որ գիտես բոլորի սրտե-
րը, ցո՛յց տուր այս երկուսից մէկին,
որին ընտրեցիր, 25 որպէսզի առնի
վիճակն այն պաշտօնի եւ առաքե-
լութեան, որից Յուդան ընկաւ իր տեղը
գնալու համար»: 26 Եւ նրանց համար
վիճակ գցեցին. վիճակը ելաւ Մատա-
թիային, եւ սա դասուեց տասնմէկ
առաքեալների հետ:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

2 Երբ Պենտեկոստէի օրերը լրացան,
բոլորը միասիրտ, միատեղ էին: 2 Եւ
յանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝
սաստիկ հողմից եկած ձայնի նման. եւ
լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած
էին: 3 Եւ նրանց երեւացին բաժա-
նուած լեզուներ, նման բոցեղէն լեզու-
ների, որոնք եւ նստեցին նրանցից
իւրաքանչիւրի վրայ: 4 Եւ բոլորը
լցուեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խո-
սել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ
Հոգին նրանց խօսել էր տալիս: 5 Եւ
կային Երուսաղէմում բնակուող հրեա-
ներ, երկիւղած մարդիկ, եկած երկնքի
տակ ապրող բոլոր ազգերից: 6 Եւ երբ
այս ձայնը լսուեց, բազմութիւնը հա-
ւաքուեց ու խռնուեց, որովհետեւ լսում
էին, որ նրանք խօսում էին իրենցից
իւրաքանչիւրի լեզուով: 7 Ամէնքը
հիանում էին եւ զարմանում. ու
միմեանց ասում էին. «Չէ՞ որ սրանք
բոլորը, որ խօսում են, գալիլիացիներ
են. 8 բայց ինչպէ՞ս է, որ մենք նրանց
լսում ենք մեր իւրաքանչիւրի
բարբառով, որ ծնուած օրից խօսում
ենք: 9 Մենք՝ պարթեւներ, մարեր եւ
իլամացիներ, եւ նրանք, որ բնակւում
են Միջագետքում, Հրէաստանում† եւ
Գամիրքում, Պոնտոսում եւ Ասիայում,
10 Փռիւգիայում եւ Պամփիւլիայում,
Եգիպտոսում եւ Կիւրենիայի հարեւան
Լիբէայի շրջաններում, եւ Հռոմից
եկածներ՝ 11 թէ՛ հրեաներ եւ թէ՛
հրէութեան դարձածներ, կրետացիներ
ու արաբներ, - լսում ենք, որ նրանք
խօսում են մեր լեզուներով Աստծու
մեծագործութիւնների մասին»: 12 Բո-
լորը զարմանում էին եւ միմեանց
ասում. «Ի՞նչ կարող է լինել սա»:
13 Իսկ ուրիշներ, ծաղրելով, ասում էին.
«Նոր գինուց հարբած են»:

ՊԵՏՐՈՍԻ ՃԱՌԸ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՕՐԸ

14 Պետրոսը, Տասնմէկի հետ վեր
կենալով, բարձրացրեց իր ձայնը եւ
ասաց. «Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք
ամէնքդ, որ Երուսաղէմում էք բնակ-
ւում, այս ձեզ յայտնի թող լինի, եւ իմ
խօսքերին ակա՛նջ դրէք. 15 սրանք
հարբած չեն, ինչպէս դուք էք կար-
ծում, քանի որ դեռ առաւօտեան ժամը
ինն է. 16 այլ՝ այս ա՛յն է, որ ասուեց
Յովէլ մարգարէի բերանով.

17 "Եւ պիտի լինի սրանից յետոյ, վերջին օրերին,
- ասում է Աստուած,-
որ իմ Հոգուց պիտի թափեմ ամէն մարդու վրայ,
եւ ձեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարէանան.
ձեր երիտասարդները տեսիլներ
եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:
18 եւ իմ ծառաների ու իմ աղախինների վրայ
այն օրերին իմ Հոգուց պիտի թափեմ,
եւ նրանք պիտի մարգարէանան:
19 Եւ վերը, երկնքում զարմանալի գործեր պիտի ցոյց տամ,
իսկ ներքեւում, երկրի վրայ՝ նշաններ.
արիւն եւ հուր եւ ծխի մրրիկ.
20 արեգակը խաւար պիտի դառնայ,
եւ լուսինը՝ կարմիր, ինչպէս արիւն,
մինչեւ դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երեւելի օրը:
21 Եւ պիտի լինի այնպէս, որ ամէն ոք,
որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկուի":

22 Ո՛վ իսրայէլացիներ, լսեցէ՛ք այս
խօսքերը. Յիսուս Նազովրեցուն՝ այն
մարդուն, որին Աստուած ձեզ ներկա-
յացրեց զօրութեամբ, նշաններով ու
զարմանալի գործերով, որ Աստուած
նրա միջոցով արեց ձեր մէջ, ինչպէս
դուք իսկ գիտէք այդ, 23 Աստծու
սահմանած խորհրդով եւ կանխագի-
տութեամբ անօրէնների ձեռքը մատ-
նելով՝ խաչափայտի վրայ գամեցիք եւ
սպանեցիք. 24 նրան Աստուած յարու-
թիւն տուեց՝ քանդելով մահուան կա-
պանքները, քանի որ կարելի չէր, որ
մահը իշխէր նրան: 25 Ինքը Դաւիթը
Յիսուսի մասին ասում է.

"Նախապէս Տիրոջը միշտ ժամ տեսնում էի իմ առաջ,
որովհետեւ նա իմ աջում է, որպէսզի չասասանուեմ.
26 դրա համար իմ սիրտը ուրախ եղաւ,
եւ իմ լեզուն ցնծաց,
եւ իմ մարմինն էլ պիտի ապրի յոյսով,
27 որովհետեւ իմ անձը գերեզմանում չես թողնելու
եւ ոչ էլ թոյլ ես տալու, որ քո սրբի մարմինը ապականուի.
28 ինձ ցոյց տուիր կեանքի ճանապարհները,
քաղցրութեամբ† լցրեցիր ինձ քո ներկայութեան
ուրախութեամբ":

29 Ո՛վ եղբայրներ, պէտք է վստա-
հութեամբ ասել Դաւիթ նահապետի
մասին, որ ե՛ւ մեռաւ, ե՛ւ թաղուեց, ու
նրա գերեզմանը կայ մեր մէջ մինչեւ
այսօր. 30 բայց որովհետեւ նա մար-
գարէ էր եւ գիտէր, որ Աստուած նրան
երդուելով խոստացաւ նրա որովայնի
պտղից մէկին նստեցնել իր գահի
վրայ, 31 ուստի կանխօրօք գիտենալով՝
խօսեց Քրիստոսի յարութեան մասին,
թէ՝

"Նրա անձը գերեզմանում չթողնուեց,
եւ ոչ էլ նրա մարմինը ապականութիւն տեսաւ":

32 Այս Յիսուսին է, որ Աստուած
յարութիւն տուեց, որին մենք ամէնքս
վկայ ենք. 33 Աստծու աջ ձեռքով
բարձրանալով, Սուրբ Հոգու խոստումը
ընդունելով Հօրից՝ սփռեց այս, որ դուք
այժմ տեսնում էք ու լսում. 34 որով-
հետեւ Դաւիթը, որ երկինք չէր ելել,
ինքն իսկ ասում է.

"Տէրն ասաց իմ Տիրոջը՝
նստի՛ր իմ աջ կողմը,
35 մինչեւ որ քո թշնամիներին ոտքերիդ տակ
իրրեւ պատուանդան դնեմ":

36 Արդ, Իսրայէլի ամբողջ տունը
վստահօրէն թող իմանայ, որ Աստուած
նրան ե՛ւ Տէր, ե՛ւ Օծեալ արեց, այն
Յիսուսին, որին դուք խաչեցիք»:

ԱՌԱՋԻՆ ՆՈՐԱԴԱՐՁՆԵՐԸ

37 Այս լսելով՝ ներկաները զղջացին
իրենց սրտերում եւ ասացին Պետրոսին
եւ միւս առաքեալներին. «Ի՞նչ պիտի
անենք, եղբայրնե՛ր»: 38 Պետրոսը
նրանց ասաց. «Ապաշխարեցէ՛ք, եւ
ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի
Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղ-
քերի թողութեան համար, եւ պիտի
ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը. 39 ո-
րովհետեւ խոստումը ձեզ համար է,
ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների
համար, որոնց կը կանչի մեր Տէր
Աստուածը»: 40 Եւ Պետրոսը ուրիշ շատ
խօսքերով վկայութիւն էր բերում,
մխիթարում նրանց ու ասում. «Ազա-
տեցէ՛ք ձեր անձերը այս խոտորեալ
սերնդից»: 41 Ոմանք յօժարութեամբ
ընդունելով նրա խօսքը՝ մկրտուեցին.
եւ այն օրը նրանք մօտ երեք հազար
հոգով աւելացան:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

42 Եւ նրանք յարատեւում էին
առաքեալների ուսուցման, հաղորդու-
թեան, հացի բեկման ու աղօթքների
մէջ: 43 Ամէն մարդու վրայ ընկել էր
ահ եւ երկիւղ, եւ առաքեալների ձեռ-
քով բազում նշաններ եւ զարմանալի
գործեր էին կատարւում: 44 Հաւա-
տացեալներն ամէնքը միասին էին, եւ
ինչ որ ունէին, հասարակաց էր.
45 նրանք վաճառում էին իրենց կա-
լուածքներն ու ինչքերը եւ բաժանում
էին բոլորին՝ ում ինչ որ պէտք լինէր:
46 Ամէն օր, միասիրտ, վաղ գնում էին
տաճար, տներում էին հացը կտրում եւ
ուրախութեամբ ու սրտի պարզու-
թեամբ էին կերակուր ուտում: 47 Օրհ-
նում էին Աստծուն եւ ամբողջ ժո-
ղովրդի մէջ յարգանք էին վայելում:
Եւ Տէրը օրէցօր փրկուածներին նրանց
թուի վրայ աւելացնում էր:

Ի ՄՆԷ ԿԱՂԻ ԲԺՇԿՈՒՄԸ

3 Պետրոսը եւ Յովհաննէսը տաճար
էին բարձրանում կէսօրից յետոյ ժամը
երեքի աղօթքի համար: 2 Եւ մօրից կաղ
ծնուած մի մարդ կար, որին միշտ
վերցնում էին ու դնում տաճարի այն
դռանը, - որ կոչւում էր Գեղեցիկ, -
որպէսզի նա տաճար մտնողներից
ողորմութիւն խնդրի: 3 Սա տեսնելով

†Տերտուղիանոս եւ Օգոստինոս հայրերն ասում են՝ Հրէաստան բառը պէտք է փոխարինել Հայաստան բառով:

†Յունարէնը չունի քաղցրութեան բառը:

Պետրոսին եւ Յովհաննէսին, որոնք տաճար էին մտնում, աղաչում էր, որ ողորմութիւն ստանայ: 4 Պետրոսը նրան նայեց Յովհաննէսի հետ եւ ասաց. «Նայի՛ր մեզ»: 5 Նա դարձաւ դէպի նրանք եւ ակնկալում էր նրանցից մի բան ստանալ: 6 Եւ Պետրոսն ասաց. «Արծաթ եւ ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, քեզ կը տամ. յանուն Նազովրեցի Յիսուս Քրիստոսի վե՛ր կաց եւ քայլի՛ր»†: 7 Եւ բռնելով նրա աջ ձեռքից՝ վեր կացրեց նրան. եւ իսկոյն ամրացան նրա ազդրերն ու սրունքները‡: 8 Նա վեր ցատկեց եւ սկսեց քայլել ու նրանց հետ տաճար մտաւ. քայլում էր եւ վազվզում ու օրհնում Աստծուն: 9 Եւ ամբողջ ժողովուրդը տեսաւ նրան քայլելիս եւ Աստծուն օրհնելիս: 10 Եւ նրան ճանաչեցին, թէ նա էր, որ նստում էր տաճարի Գեղեցիկ դռան մօտ ողորմութիւն ստանալու համար. եւ եղած նշանի վրայ զարմանքով լցուեցին:

ՊԵՏՐՈՍԻ ՃԱՌԸ ՏԱՃԱՐԻ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԲԱԿՈՒՄ

11 Եւ մինչ նա Պետրոսին եւ Յովհաննէսին բաց չէր թողնում, ամբողջ ժողովուրդը, զարմացած, վազեց նրանց մօտ դէպի այն բակը, որ կոչւում էր Սողոմոնի բակ: 12 Երբ Պետրոսն այս բանը տեսաւ, ժողովրդին ասաց. «Ո՛վ Իսրայէլացիներ, այս բանի վրայ ինչո՞ւ էք զարմացել կամ ինչո՞ւ ակնապիշ մեզ էք նայում, որպէս թէ մեր անձի զօրութեամբ կամ քաջութեամբ† քայլել տուած լինէինք դրան: 13 Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը, մեր հայրերի Աստուածը փառաւորեց իր Որդուն՝ Յիսուսին, որին դուք մատնեցիք եւ Պիղատոսի առաջ ուրացաք, երբ նա որոշել էր նրան ազատ արձակել: 14 Եւ դուք Սրբին ու Արդարին ուրացաք ու խնդրեցիք, որ մի մարդասպան շնորհուի ձեզ. 15 եւ սպանեցիք կեանքի Առաջնորդին, որին Աստուած մեռելներից յարութիւն տուեց. եւ այդ բանին մենք իսկ վկայ ենք: 16 Յիսուսի անուան զօրութի՛ւնը բժշկեց այս մարդուն, որին տեսնում էք եւ ճանաչում, որովհետեւ նրա անունը հաւատաց: Եւ Յիսուսի միջոցով եղած հաւա՛տն է, որ սրան տուեց այս առողջութիւնը՝ ձեր բոլորի ներկայութեամբ: 17 Եւ արդ, եղբայրնե՛ր, գիտեմ, որ անգիտութեամբ արեցիք դուք, ինչպէս եւ ձեր իշխանաւորները, 18 բայց ինչպէս որ Աստուած նախօրօք յայտնել էր բոլոր մարգարէների բերանով իր Քրիստոսի չարչարուելը, այդպէս էլ կատարեց: 19 Արդ, ապաշխարեցէ՛ք եւ դարձի՛ եկէք ձեր մեղքերը ջնջելու համար, 20 որպէսզի հանգստի ժամանակները գան Տիրոջ ներկայութիւնից, եւ որպէսզի նա ուղարկի Յիսուսին, որ ձեզ համար վաղօրօք սահմանուած է Քրիստոս, 21 որին երկինքը պէտք է ընդունի մինչեւ բոլոր բաների վրայ հաստատուելու ժամանակները, այն բաների, որոնց մասին Աստուած խօսեց իր սուրբ մարգարէների բերանով:

22 Մովսէսը մեր հայրերին† ասաց. "Ձեր Տէր‡ Աստուածը ձեր եղբայրների միջից ինձ նման մի մարգարէ պիտի հանի ձեզ համար. նրան պիտի լսէք ամէն ինչում, ինչ էլ որ նա ձեզ ասի. 23 եւ ամէն մարդ, որ այդ մարգարէին չլսի, ժողովրդի միջից պիտի բնաջնջուի": 24 Եւ Սամուէլից սկսած՝ բոլոր մարգարէներն էլ, որ խօսեցին, պատմեցին նաեւ այս օրերի մասին: 25 Դուք էք որդիները մարգարէների եւ այն ուխտի, որն ուխտեց Աստուած մեր§ հայրերի հետ ու ասաց Աբրահամին. "Երկրի բոլոր ազգերը քո սերնդով պիտի օրհնուեն": 26 Աստուած նախ ձեզ համար յարութիւն տուեց իր Որդուն եւ ուղարկեց նրան, որ օրհնի ձեզ՝ իւրաքանչիւրիդ յետ դարձնելու համար ձեր չար գործերից»:

†Լաւագոյն յուն. բն. չունեն *վե՛ր կաց* եւ բառերը:
‡Յունարէն՝ *նրա ոտի բաթերը* եւ կոճերը:
†Յունարէն՝ *բարեպաշտութեամբ*:
†Լաւագոյն յուն. բն. չունեն *մեր հայրերին* բառերը:
‡Յուն. լաւ բն. չունեն *Տէր* բառը:
§Յուն. լաւ բն. ունեն *ձեր* բառը:

ՊԵՏՐՈՍԸ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԸ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

4 Եւ մինչ նրանք խօսքն ուղղում էին ժողովրդին, նրանց վրայ հասան քահանաները եւ տաճարի իշխանաւորներն ու սադուկեցիները, 2 զայրացած, որ նրանք ժողովրդին ուսուցանում էին եւ, յանձին Յիսուսի, մեռելների յարութեան մասին էին պատմում: 3 Նրանց ձերբակալեցին եւ բանտարկեցին մինչեւ յաջորդ օրը, որովհետեւ երեկոյեան դէմ էր: 4 Իսկ խօսքը լսողներից շատերը հաւատացին, եւ հաւատացեալների թիւը հասաւ չուրջ հինգ հազարի:

5 Յաջորդ օրը Երուսաղէմում հաւաքուեցին նրանց իշխանաւորները, երէցներն ու օրէնսգէտները, 6 Աննա քահանայապետը եւ Կայիափան, Յովհաննէսը, Ալեքսանդրոսը եւ բոլոր նրանք, որ քահանայական ցեղից էին: 7 Եւ առաքեալներին մէջտեղ կանգնեցնելով՝ հարցաքննում էին. «Ի՞նչ զօրութեամբ կամ ո՞ւմ անունով արեցիք դուք այդ բժշկութիւնը»: 8 Այն ժամանակ Պետրոսը, Սուրբ Հոգով լցուած, ասաց նրանց. «Ո՛վ իշխանաւորներ ժողովրդի եւ երէցնե՛ր Իսրայէլի, 9 օրինաւո՞ր բան է այսօր դատել մեզ մի տկար մարդու հանդէպ եղած բարիքի համար, թէ ինչո՛վ նա բժշկուեց: 10 Թող յայտնի լինի ձեզ բոլորիդ եւ Իսրայէլի ամբողջ ժողովրդին, որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով, որին դուք խաչեցիք, եւ որին Աստուած մեռելներից յարութիւն տուեց, նրանո՛վ ահա սա առողջացած՝ կանգնել է ձեր առաջ:

11 "Սա՛ է այն վէմը, ձեզնից՝ շինողներիցդ անարգուած,
որ անկիւնաքար եղաւ":

12 Եւ ուրիշ մէկի միջոցով փրկութիւն չկայ, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդկանց տրուած այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկուենք»:

13 Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութեանն ի տես եւ վերահասու լինելով, թէ նրանք տգէտ եւ անուս մարդիկ են, զարմացան, որովհետեւ ճանաչում էին նրանց, որ Յիսուսի հետ էին. 14 եւ տեսնում էին նաեւ բժշկուած մարդուն, որ կանգնած էր նրանց հետ եւ չէին կարողանում որեւէ պատասխան տալ: 15 Եւ նրանց հրամայելով, որ ատեանից դուրս ելնեն, խորհրդակցեցին միմեանց հետ եւ ասացին. 16 «Ի՞նչ պիտի անենք այս մարդկանց, քանի որ նրանց միջոցով աչքի ընկնող նշան կատարուեց. երուսաղէմի բոլոր բնակիչներին արդէն յայտնի է, եւ մենք չենք կարող ուրանալ: 17 Բայց որպէսզի ժողովրդի մէջ առաւել չտարածուի, սպառնանք նրանց, որ ոչ մի մարդու այդ անունով այլեւս չխօսեն»: 18 Եւ նրանց կանչելով՝ պատուիրեցին Յիսուսի անունով ամենեւին չխօսել եւ չուսուցանել: 19 Իսկ Պետրոսն ու Յովհաննէսը պատասխանեցին եւ ասացին նրանց. «Եթէ Աստծու առաջ արդար է առաւել ձե՛զ լսել, քան Աստծուն, ինքնե՛ր դրդոշեցէք: 20 Իսկ մենք չենք կարող չասել, ինչ որ տեսել ենք եւ լսել»: 21 Նրանք, սպառնալով, արձակեցին նրանց՝ ոչ մի միջոց չգտնելով, թէ ինչպէ՞ս պատժեն նրանց՝ ժողովրդի պատճառով. որովհետեւ բոլորը փառաւորում էին Աստծուն՝ կատարուած բաների համար, 22 քանի որ այն մարդը, որի վրայ բժշկութեան այս նշանը կատարուեց, աւելի քան քառասուն տարեկան էր:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԱՂՕԹՔԸ ՀԱԼԱԾԱՆՔԻ ԺԱՄԻՆ

23 Եւ այնտեղից ազատ արձակուելով՝ առաքեալները եկան իւրայինների մօտ ու պատմեցին, թէ իրենց ինչ բաներ ասացին քահանայապետներն ու երէցները: 24 Եւ նրանք լսելով՝ իրենց ձայնը բարձրացրին առ Աստուած ու ասացին. «Դո՛ւ, Տէ՛ր Աստուած, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը եւ ծովը եւ այն ամէնը, ինչ նրանց մէջ կայ, 25 Սուրբ Հոգու միջոցով մեր հօր՝ Դաւթի՝ քո ծառայի բերանով ասացիր.

"Ինչո՞ւ խռովուեցին հեթանոսները,
եւ ժողովուրդները սին բաների մասին խորհեցին.
26 երկրի թագաւորները իրար մօտ եկան,
եւ ժողովրդի իշխանները միասին հաւաքուեցին
Տիրոջ եւ նրա Օծեալի դէմ":

27 Արդարեւ, քո սուրբ Որդու՝ Յիսուսի դէմ, որին դու օծեցիր, այս քաղաքում հաւաքուեցին Հերովդէսը եւ

Պոնտիոս Պիղատոսը՝ հեթանոսների եւ Իսրայէլի ժողովուրդների հետ, 28 անելու այնչափ, որչափ քո ձեռքը եւ քո կամքը նախապէս սահմանել էին, որ լինի: 29 Եւ արդ, Տէ՛ր, նայի՛ր նրանց սպառնալիքներին եւ քո ծառաներին ամենայն համարձակութեամբ քո խօ՛սքը խօսել տուր. 30 եւ երբ քո ձեռքը մեկնես բժշկութեան համար, նաեւ նշաններ եւ զարմանալի գործեր լինեն քո սուրբ Որդու՝ Յիսուսի անունով»:

31 Եւ մինչ նրանք աղօթքի մէջ էին, շարժուեց այն տեղը, ուր նրանք հաւաքուած էին: Ամէնքը լցուեցին Սուրբ Հոգով. ու համարձակութեամբ Աստծու խօսքն էին խօսում:

ԱՄԷՆ ԻՆՉ ՀԱՍԱՐԱԿԱՑ

32 Եւ հաւատացեալների բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի էր: Եւ նրանցից ոչ ոք չէր ասում, թէ իր ինչքերը իրենն են, այլ ամէն ինչ նրանց համար հասարակաց էր: 33 Եւ առաքեալները մեծ զօրութեամբ վկայութիւն էին տալիս Տէր Յիսուս Քրիստոսի յարութեան մասին: Ու նրանց բոլորի վրայ մեծամեծ շնորհներ կային: 34 Եւ նրանց մէջ ոչ ոք մի բանի կարօտ չէր, որովհետեւ, ովքեր գիւղերի կամ ապարանքների տէր էին, վաճառում էին դրանք եւ վաճառուածի գումարը բերում 35 ու դնում էին առաքեալների ոտքերի առաջ, եւ նրանք բաշխում էին իւրաքանչիւրին՝ ում ինչքան պէտք էր լինում:

ԲԱՌՆԱԲԱՍԻ ԱՋՆԻՒ ԱՐԱՐՔԸ

36 Յովսէփը, որ ղեւտացի էր, ծագումով՝ կիպրացի, որը առաքեալներից Բառնաբաս կոչուեց (որ թարգմանւում է մխիթարութեան որդի), մի արտ ունէր. 37 նա վաճառեց այն եւ գումարը բերեց դրեց առաքեալների ոտքերի առաջ:

ԱՆԱՆԻԱՅԻ ԵՒ ՍԱՓԻՐԱՅԻ ԿԵՂՄԻՔԸ

5 Իսկ Անանիա անունով մի մարդ, իր կնոջ՝ Սափիրայի հետ միասին, մի ագարակ վաճառեց 2 եւ նրա գումարից մի մաս կնոջ գիտութեամբ թաքցրեց եւ միւս մասը բերեց դրեց առաքեալների ոտքերի առաջ: 3 Պետրոսն ասաց. «Անանիա՛, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստէիր Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից թաքցնէիր. 4 չէ՞ որ քանի կար, քոնն էր այն, եւ վաճառելիս՝ քո տնօրինութեան տակ էր. ինչպէ՞ս եղաւ, որ քո սրտի մէջ այս բաները դրեցիր. մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն»: 5 Եւ Անանիան, այս խօսքերը լսելով, ընկաւ եւ շունչը փչեց. եւ մեծ վախ ընկաւ բոլոր նրանց վրայ, որ այս բանը լսեցին: 6 Երիտասարդները ոտքի ելան, պատանքեցին նրան ու տարան թաղեցին: 7 Եւ շուրջ երեք ժամ անցաւ. եւ նրա կինը, որ չգիտէր, թէ ինչ էր եղել, ներս մտաւ: 8 Պետրոսը նրան դիմեց եւ ասաց. «Ասա՛ դու ինձ, այդչա՞փ գնով ագարակը վաճառեցիք»: Եւ նա ասաց. «Այո՛, այդչափ»: 9 Եւ Պետրոսը նրան ասաց. «Ինչի՞ համար է, որ դուք միաբանեցիք փորձելու համար Տիրոջ Հոգին. ահա այն մարդիկ, որ թաղեցին քո ամուսնուն, դռան մօտ են. քեզ էլ դուրս կը հանեն»: 10 Եւ նա իսկոյն ընկաւ նրա ոտքերի առաջ եւ շունչը փչեց:

Երիտասարդները ներս մտան եւ նրան մեռած գտան, եւ հանեցին թաղեցին իր ամուսնու մօտ: 11 Եւ մեծ վախ ընկաւ ամբողջ եկեղեցու ու բոլոր նրանց վրայ, որ այս բանը լսեցին:

ԲԱԶՈՒՄ ՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՋԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾԵՐ

12 Եւ առաքեալների ձեռքով բազում նշաններ ու զարմանալի գործեր էին լինում ժողովրդի մէջ. եւ բոլորը, միասիրտ, Սողոմոնի սրահի մէջ էին: 13 Ուրիշներից ոչ ոք չէր համարձակւում մօտենալ նրանց, իսկ ժողովուրդը նրանց յարգում էր: 14 Եւ աւելի ու աւելի էին շատանում Տիրոջը հաւատացողները՝ տղամարդկանց եւ կանանց բազմութիւնը. 15 այնքան, որ հիւանդներին հանում էին հրապարակները եւ դնում պատգարակներով ու իրենց մահիճներով, որպէսզի Պետրոսի անցնելու ժամանակ գոնէ նրա

ստուերը հասնի նրանցից մէկին: 16 Եւ շրջակայ քաղաքներից բազմութիւնը հաւաքւում էր Երուսաղէմ. բերում էին հիւանդներ եւ պիղծ ոգիներից տանջուածներ, որոնք բոլորն էլ բժշկւում էին:

ՀԱԼԱԾԱՆՔ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

17 Քահանայապետը եւ բոլոր նրանք, որ նրա հետ էին, սադուկեցիների խումբը, նախանձով լցուեցին առաքեալների դէմ. 18 եւ ելան ձեռք դրեցին առաքեալների վրայ ու նրանց հրապարակաւ բանտ† դրին: 19 Ապա Տիրոջ հրեշտակը գիշեր ժամանակ բացեց բանտի դռները եւ նրանց դուրս հանելով՝ ասաց. 20 «Գնացէք կանգնեցէ՛ք տաճարի մէջ եւ ասացէ՛ք ժողովրդին այս կենարար պատգամը»: 21 Եւ երբ այս լսեցին, առաւօտեան մտան տաճարը եւ ուսուցանում էին: Եկաւ քահանայապետը, եւ նրանք, որ նրա հետ էին. ի մի հաւաքեցին ատեանը եւ իսրայէլացիների ամբողջ ծերակոյտը. եւ մարդ ուղարկեցին բանտ՝ առաքեալներին բերելու: 22 Երբ սպասաւորները գնացին, նրանց բանտում չգտան. վերադարձան, պատմեցին ու ասացին. 23 «Բանտը ամենայն զգուշութեամբ փակուած գտանք, իսկ պահապաններին՝ դռանը կանգնած. բացեցինք, բայց ներսում ոչ ոքի չգտանք»: 24 Երբ տաճարի իշխանաւորները եւ քահանայապետները այս խօսքերը լսեցին, զարմանում էին դրանց վրայ, թէ արդեօք այդ ի՛նչ պէտք է եղած լինի: 25 Եւ մէկը եկաւ նրանց պատմեց. «Ահա այն մարդիկ, որոնց դուք բանտն էիք դրել, տաճարում կանգնած՝ ժողովրդին ուսուցանում են»: 26 Այն ժամանակ իշխանաւորը, սպասաւորների հետ գնալով, նրանց բերեց առանց բռնութեան, որովհետեւ վախենում էին ժողովրդից, որ չքարկոծուեն:

ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

27 Եւ բերելով նրանց՝ ատեանի առաջ կանգնեցրին: Քահանայապետը հարցաքննեց նրանց 28 եւ ասաց. «Ձեզ խստիւ չպատուիրեցի՞նք միթէ՝ չուսուցանել այն անունով†. եւ սակայն ահա հիմա Երուսաղէմը լցրիք ձեր ուսմունքով. եւ այն մարդու արեան պատասխանատուութիւնը ուզում էք մեր վրայ գցել»:

29 Պատասխան տուեցին Պետրոսն ու առաքեալները եւ ասացին. «Պէտք է առաւել Աստծուն հնազանդուել, քան մարդկանց: 30 Մեր հայրերի Աստուածը յարութիւն տուեց Յիսուսին, որին դուք սպանեցիք՝ խաչափայտից կախելով: 31 Աստուած նրան բարձրացրեց իր աջ ձեռքով որպէս առաջնորդ եւ փրկիչ՝ Իսրայէլին տալու համար ապաշխարութիւն եւ մեղքերի թողութիւն: 32 Այս բաների համար նրա վկաները մենք ենք եւ Սուրբ Հոգին, որը Աստուած տուեց իրեն հնազանդուողներին»: 33 Եւ երբ նրանք այս լսեցին, սաստիկ զայրացան ու խորհուրդ էին անում նրանց սպանել:

ԳԱՄԱՂԻԷԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

34 Մի փարիսեցի, որի անունը Գամաղիէլ էր, օրէնուսոյց եւ ամբողջ ժողովրդից պատուուած մարդ, ատեանի մէջ ոտքի ելաւ եւ հրամայեց, որ առաքեալներին մի փոքր ժամանակով դուրս հանեն. 35 ապա նրանց ասաց. «Ո՛վ իսրայէլացիներ, զգո՛յշ եղէք, թէ այս մարդկանց ի՛նչ պէտք է անէք: 36 Այս օրերից առաջ մէջտեղ ելաւ Թեւդասը, որն իր մասին ասում էր, թէ ինքը երեւելի մէկն է. եւ նրան յարեցին թուով մօտ չորս հարիւր մարդիկ. նա սպանուեց, եւ բոլոր նրանք, որ նրա հետ միաբանել էին, բաժան-բաժան եղան, ու նրանցից ոչինչ չմնաց: 37 Դրանից յետոյ, մարդահամարի օրերին, մէջտեղ ելաւ Յուդա Գալիլացին եւ շատ ժողովուրդ ապստամբեցրեց իր յետեւից. նա էլ կորաւ. եւ բոլոր նրանք, որ նրա հետ համաձայնել էին‡, ցիրուցան եղան: 38 Արդ, այժմ

†Ցուցարէնը՝ հասարակաց բանտ:

†Ցուն. լաւ բն. ունեն Ձեզ խստիւ պատուիրեցինք չուսուցանել . . .

‡Լաւագոյն յուն. բն. Նրա հետ համաձայնել էին-ի փոխարէն ունեն հետեւեցին նրան:

ասում եմ ձեզ, հեռո՛ւ մնացէք այդ մարդկանցից եւ բա՛ց թողէք նրանց, որովհետեւ եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կը քանդուի. 39 իսկ եթէ Աստծուց է, չէք կարող դրանք ձախողեցնել. մի գուցէ աստուածամարտ էլ դառնաք»: 40 Ժողովականները հաւանութիւն տուեցին նրան եւ առաքեալներին կանչելով, գանահարեցին նրանց ու պատուիրեցին, որ Յիսուսի անունով այլեւս չխօսեն. եւ արձակեցին նրանց: 41 Իսկ նրանք ատեանի առաջից գնացին ուրախանալով, որովհետեւ Տիրոջ անուան համար անարգանքի էին արժանացել: 42 Եւ ամէն օր, տաճարում թէ տներում, չէին դադարում ուսուցանել եւ աւետարանել Յիսուս Քրիստոսին:

ԵՕԹԸ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

6 Այն օրերին, երբ աշակերտները բազմացան, յունախօս հրեաները տրտնջացին եբրայախօս հրեաների դէմ, որովհետեւ իրենց այրիները ամենօրեայ նպաստի բաշխման ժամանակ անտեսւում էին: 2 Տասներկուսը կանչեցին աշակերտների բազմութիւնն ու ասացին. «Մեզ հաճելի չէ թողնել Աստծու խօսքի քարոզութիւնը եւ սեղաններ սպասարկել: 3 Եղբայրնե՛ր, ընտրեցէ՛ք ձեր միջից բարի համբաւ ունեցող եօթը մարդու†, որոնց կը նշանակենք այդ ծառայութիւնների համար. 4 իսկ մենք աղօթքի եւ խօսքի քարոզութեանը նուիրուենք»: 5 Այս խօսքը հաճելի թուաց բոլոր հաւատացեալներին. եւ ընտրեցին Ստեփանոսին, որ հաւատով եւ Սուրբ Հոգով լցուած մի մարդ էր, եւ Փիլիպպոսին, Պրոքորոնին, Նիկանորային, Տիմոնային, Պարմենային, Նիկողայոսին, որ անտիոքցի մի նորադարձ էր. 6 նրանց կանգնեցրին առաքեալների առաջ եւ, աղօթք անելով, նրանց վրայ ձեռք դրեցին: 7 Եւ Աստծու խօսքը աճում էր, ու աշակերտների թիւը Երուսաղէմում մեծապէս շատանում էր: Եւ քահանաներից շատեր հնազանդւում էին հաւատին:

†Յունարէնն աւելացնում է՝ Սուրբ Հոգով եւ իմաստութեամբ լի:

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

8 Ստեփանոսը, շնորհներով եւ զօրութեամբ լցուած մի մարդ, ժողովրդի մէջ զարմանալի գործեր եւ մեծամեծ նշաններ էր անում: 9 Ոմանք այն ժողովարանից, որ կոչւում էր լիբիացիների†, կիւրենացիների եւ ալեքսանդրիացիների ժողովարան, եւ ոմանք, որ Կիլիկիայից ու Ասիայից էին, Ստեփանոսի հետ վիճելու ելան: 10 Բայց նրանք չէին կարողանում դէմ կանգնել այն իմաստութեանը եւ Հոգուն, որով խօսում էր նա: 11 Այն ժամանակ հրապուրեցին մի քանի մարդկանց, որ ասեն. «Լսեցինք դրա հայհոյական խօսքեր ասելը Մովսէսի եւ Աստծու դէմ»: 12 Եւ գրգռեցին ժողովրդին, քահանաներին ու օրէնսգէտներին. եւ յարձակուելով Ստեփանոսի վրայ՝ յափշտակեցին նրան ու տարան ատեան: 13 Եւ բերեցին կանգնեցրին սուտ վկաներ, որոնք ասում էին. «Այս մարդը չի դադարում հայհոյական խօսքեր ասել այս սուրբ տեղի եւ օրէնքի դէմ. 14 լսեցինք դրա բերանից, որ ասում էր, թէ՝ "Յիսուս Նազովրեցին ինքը պիտի քանդի այս տաճարը եւ փոխի այն օրէնքը, որ Մովսէսը մեզ տուեց"»: 15 Եւ բոլոր նրանք, որ նստած էին ատեանում, նրան նայելով՝ տեսան, որ նրա երեսը հրեշտակի երեսի նման էր:

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՃԱՌԸ

7 Քահանայապետն ասաց Ստեփանոսին. «Իսկապէս դա այդպէ՞ս է»: 2 Եւ նա ասաց. «Եղբայրե՛ր եւ հայրե՛ր, լսեցէ՛ք ինձ. փառքի Աստուածը երեւաց մեր հօրը՝ Աբրահամին, մինչ նա դեռ Միջագետքում էր, եւ նրան խառնում դեռ չէր բնակեցրել, ու ասաց նրան. 3 "Դո՛ւրս ել քո երկրից եւ քո տոհմից ու արի՛ այն երկիրը, որ քեզ ցոյց կը տամ": 4 Այն ժամանակ Աբրահամը ելնելով քաղդէացիների երկրից՝ բնակուեց Խառանում. եւ նրա հօր մահից յետոյ այնտեղից Աստուած փոխադրեց պանդխտեցրեց նրան այս երկիրը, ուր դուք այժմ բնակւում էք: 5 Այստեղ նրան եւ ոչ մի ժառանգութիւն չտուեց, ոչ իսկ մի ոտնաչափ տեղ, բայց խոստացաւ նրան այս տեղը տալ բնակութեան համար եւ իրենից յետոյ՝ նրա սերնդին, երբ դեռ նա որդի չունէր: 6 Աստուած այսպէս խօսեց. "Նրա սերունդը օտար երկրում պանդուխտ պիտի լինի, եւ նրան ծառայ պիտի դարձնեն ու չորս հարիւր տարի պիտի չարչարեն: 7 Եւ այն ազգին, որին նրանք ծառայ պիտի դառնան, ես պիտի դատեմ, – ասում է Աստուած, – եւ սրանից յետոյ պիտի ելնեն ու պիտի պաշտեն ինձ այս տեղում": 8 Եւ նրան թլփատութեան ուխտ տուեց, ու ապա նա ծնեց Իսահակին եւ թլփատեց նրան ութերորդ օրը. եւ Իսահակը՝ Յակոբին, Յակոբն էլ՝ տասներկու նահապետներին: 9 Եւ նահապետները, Յովսէփին նախանձելով, նրան վաճառեցին, որ Եգիպտոս տարուի. բայց Աստուած նրա հետ էր 10 ու ազատեց նրան իր բոլոր նեղութիւններից. եւ նրան շնորհներ ու իմաստութիւն տուեց Եգիպտոսի Փարաւոն թագաւորի առաջ. եւ նրան իշխան կարգեց եգիպտացիներին եւ նրա ամբողջ տան վրայ: 11 Եւ սով եղաւ ամբողջ Եգիպտոսում ու Քանանում. եւ մեծ նեղութիւն կար, եւ մեր հայրերը ուտելիք չէին գտնում: 12 Եւ Յակոբը լսելով, թէ Եգիպտոսում ուտելիք կայ, նախ ուղարկեց մեր հայրերին, 13 իսկ երկրորդ անգամ Յովսէփը իր եղբայրներին ծանօթութիւն տուեց իր մասին, եւ Փարաւոնին յայտնի եղաւ նրա ազգատոհմը: 14 Յովսէփը մարդ ուղարկեց եւ բերել տուեց Յակոբին՝ իր հօրը եւ ամբողջ ազգատոհմին՝ եօթանասունհինգ հոգի: 15 Եւ Յակոբը Եգիպտոս իջաւ, որտեղ եւ վախճանուեցին ինքը եւ մեր հայրերը:

16 Նրանց մարմինները փոխադրուեցին Սիւքէմ եւ դրուեցին այն քարայրի մէջ, որն Աբրահամը արծաթով գնել էր Եմորի որդիներից՝ Սիւքէմում: 17 Երբ մօտեցաւ աւետեաց ժամանակը, որ Աստուած խոստացել էր Աբրահամին, ժողովուրդը Եգիպտոսում աճեց եւ բազմացաւ, 18 մինչեւ որ Եգիպտոսում ելաւ մի ուրիշ թագաւոր, որ չէր ճանաչում Յովսէփին: 19 Նա հնարքներ բանեցրեց ընդդէմ մեր ազգի եւ չարչարեց մեր հայրերին՝ նրանց զաւակներին ընկեցիկ անել տալով, որ չապրեն: 20 Այդ ժամանակում ծնուեց նաեւ Մովսէսը, որն Աստծու առաջ վայելուչ էր եւ որն իր հօր տանը մեծացաւ երեք ամիս. 21 եւ երբ նրան ընկեցիկ արեցին, Փարաւոնի դուստրը նրան վերցրեց եւ նրան մեծացրեց որպէս իրեն որդեգիր: 22 Մովսէսը եգիպտացիների ամբողջ իմաստութեամբ կրթուեց եւ զօրաւոր էր իր խօսքերով եւ գործերով: 23 Երբ նրա քառասուն տարին լրացաւ, նրա սրտում ընկաւ իր եղբայրների՝ իսրայէլացիների մէջ շրջելու միտքը: 24 Եւ նա մի անիրաւուած իսրայէլացու տեսնելով՝ զայրացաւ եւ զրկուածի վրէժը լուծեց եգիպտացուն սպանելով: 25 Մտածում էր, թէ իր եղբայրները կ'իմանան, որ Աստուած իր ձեռքով նրանց փրկութիւն է տալու. բայց նրանք չիմացան: 26 Եւ յաջորդ օրը հանդիպեց երկու իսրայէլացիների, երբ նրանք կռիւ էին անում, եւ նրանց ստիպեց խաղաղութիւն անել ու ասաց. "Ո՛վ մարդիկ, եղբայրներ էք, ինչո՞ւ էք միմեանց անիրաւում": 27 Իսկ նա, ով անիրաւում էր ընկերոջը, մերժեց նրան ու ասաց. "Քեզ ո՞վ իշխան եւ դատաւոր կարգեց մեր վրայ. 28 մի՞թէ ինձ էլ սպանել ես ուզում, ինչպէս որ երէկ սպանեցիր եգիպտացուն": 29 Եւ այս խօսքերի վրայ, Մովսէսը փախաւ ու պանդուխտ եղաւ Մադիամի երկրում, ուր ծնուեցին նրա երկու որդիները: 30 Երբ քառասուն տարիներ անցան, Սինա լեռան անապատում նրան երեւաց Տիրոջ հրեշտակը՝ մի մորենու կրակի բոցերի մէջ: 31 Եւ Մովսէսը այս տեսնելով՝ զարմացաւ տեսիլքի վրայ, ու երբ նա մօտենում էր նայելու, հասաւ Տիրոջ ձայնը. 32 "Ես եմ քո հայրերի Աստուածը, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը": Եւ Մովսէսը, զարհուրած, չէր համարձակւում նայել: 33 Եւ Տէրը նրան ասաց. "Քո

†Յունարէնը՝ լիբերտինացիների, որ բարգմանւում է ազատագրեալների:

ոտքերի կօշիկները հանի՛ր, որովհետեւ այն տեղը, որի վրայ դու կանգնել ես, սուրբ հող է: 34 *Ես աչքովս տեսայ Եգիպտոսում իմ ժողովրդի չարչարանքները, լսեցի նրանց հառաչանքը եւ իջայ նրանց փրկելու: Այժմ արի՛, քեզ պիտի ուղարկեմ Եգիպտոս":*
35 *Այն Մովսէսին, որին ուրացան եւ ասում էին՝ "Ո՞վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց", նրա՛ն Աստուած որպէս իշխան եւ փրկիչ ուղարկեց հրեշտակի միջոցով, որ երեւաց Մովսէսին մորենու մէջ:* 36 *Նա՛ դուրս հանեց նրանց՝ նշաններ եւ զարմանալի գործեր անելով Եգիպտացիների երկրում եւ Կարմիր ծովում ու անապատում՝ քառասուն տարիներ:* 37 *Ա՛յս Մովսէսն է, որ ասաց իսրայէլացիներին. "Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրների միջից ինձ նման մի մարգարէ պիտի հանի ձեզ համար, նրա՛ն լսեցէք":* 38 *Ա՛յս Մովսէսն է, որ անապատում հաւաքուած ժողովրդի եւ այն հրեշտակի միջեւ էր, որ Սինա լերան վրայ խօսեց նրա հետ եւ մեր հայրերի հետ. նա՛ է, որ կենարար պատգամներ ընդունեց՝ մեզ տալու համար:* 39 *Մեր հայրերը չուզեցին հնազանդուել նրան, այլ նրան մերժեցին ու իրենց սրտերով դէպի Եգիպտոս դարձան* 40 *եւ Ահարոնին ասացին. "Մեզ համար աստուածներ կերտի՛ր, որ գնան մեր առաջից. որովհետեւ այն Մովսէսը, որ մեզ Եգիպտացիների երկրից հանեց, չգիտենք, թէ ինչ պատահեց նրան":* 41 *Եւ այդ օրերին մի հորթ ձուլեցին ու կուռքին զոհեր մատուցեցին. եւ իրենց ձեռքի գործերով էին ուրախանում:* 42 *Ուրեմն, Աստուած էլ երես դարձրեց եւ նրանց մատնեց երկնքի աստղերի պաշտամունքին, ինչպէս որ գրուած էլ է մարգարէների գրքում.*

"Միթէ անապատում քառասուն տարի
զոհեր ու պատարագնե՞ր մատուցեցիք ինձ, Իսրայէլի՛ տուն.
43 այլ դուք վերցրիք Մոլոքի վրանը
եւ Հռեմփա աստծու աստղը
եւ այն պատկերները, որ քանդակեցիք
նրանց երկրպագելու համար.
ահա ինչո՛ւ ես ձեզ պիտի փոխադրեմ
թաբելացիների երկրի միւս կողմը":

44 *Անապատում մեր հայրերի հետ էր վկայութեան խորանը. ինչպէս նա, որ խօսեց Մովսէսի հետ, հրաման տուեց չինել այն ըստ այն օրինակի, որ ինքը տեսել էր:* 45 *Եւ մեր հայրերն էլ, այն առնելով, բերեցին, երբ Յեսուի հետ գրաւեցին այն ազգերի երկիրը, որոնց Աստուած վտարեց մեր հայրերի առջեւից:* 46 *Այսպէս էր մինչեւ Դաւթի օրերը, երբ նա Աստծու առաջ շնորհ գտաւ ու խնդրեց, որ Յակոբի Աստծու*† *համար մի բնակարան կառուցի:* 47 *Իսկ Սողոմոնն էլ նրա համար մի տուն շինեց.* 48 *սակայն Բարձրեալը բնակւում է ոչ թէ ձեռակերտ տաճարների մէջ, այլ, ինչպէս մարգարէն է ասում.*

49 "Երկի՛նքն է իմ աթոռը,
եւ երկիրը՝ պատուանդանն իմ ոտքերի:
Ինչպիսի՞ տուն պիտի շինէիք ինձ, - ասում է Տէրը, -
կամ ինչպիսի՞ տեղ՝ իմ հանգստեան համար.
50 չէ՞ որ իմ ձեռքն է շինել այս բոլորը":

51 *Կամակորնե՛ր, որոնց սիրտն ու ականջները փակ են Աստծու կոչին, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակում էք. ինչպէս որ ձեր հայրերն էին, այնպէս էլ՝ դուք:* 52 *Ձեր հայրերը մարգարէներից որի՞ն չհալածեցին: Եւ սպանեցին նրանց, որոնք նախօրօք պատմեցին Արդարի գալստեան մասին, որի մատնիչներն ու սպանողները եղաք դուք այժմ,* 53 *դուք, որ հրեշտակների հրամանների միջոցով օրէնքն ստացաք, բայց այն չպահեցիք»:*

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՔԱՐԿՈԾՈՒՄԸ

54 *Եւ այս բաները լսելով՝ ժողովականները սրտներում զայրանում էին եւ նրա վրայ ատամներն էին կրճտացնում:* 55 *Եւ նա լի էր Սուրբ Հոգով. նայեց երկինք ու տեսաւ Աստծու փառքը եւ Յիսուսին, որ կանգնած էր Աստծու աջ կողմը. եւ ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացուած եւ մարդու Որդուն, որ կանգնած է Աստծու աջ կողմը»:*

56 *Նրանք բարձրաձայն աղաղակելով փակեցին իրենց ականջները եւ բոլորը միասին նետուեցին նրա վրայ:* 57 *Եւ քաղաքից դուրս հանելով՝ նրան*

†Յուն. լաւ բն. ունեն *Յակոբի տան համար:*

քարկոծեցին. եւ վկաներն իրենց զգեստները դրեցին Սաւուղ անունով մի երիտասարդի ոտքերի առջեւ: 58 *Եւ քարկոծում էին Ստեփանոսին, որը աղօթում էր եւ ասում. «Տէ՛ր Յիսուս, ընդունի՛ր իմ հոգին»:* 59 *Նա ծնկի եկաւ, բարձր ձայնով աղաղակեց. «Տէ՛ր, սա մեղք մի՛ համարիր դրանց»: Եւ երբ այս ասաց, մեռաւ: Սօղոսն էլ համաձայն էր նրա սպանութեանը:*

8 *Եւ այն օրը Երուսաղէմի եկեղեցու դէմ մեծ հալածանք տեղի ունեցաւ. ու բոլորը, բացի առաքեալներից, ցրուեցին Հրէաստանի եւ Սամարիայի գիւղերը:* 2 *Եւ աստուածավախ մարդիկ թաղեցին Ստեփանոսին եւ նրա վրայ մեծ ողբ արեցին:*

ՍՕՂՈՍԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԼԱԾԻՉ

3 *Իսկ Սօղոսը եկեղեցուն շատ վնաս էր հասցնում. տնից տուն էր մտնում, դուրս էր քաշում տղամարդկանց եւ կանանց ու մատնում բանտարկութեան:*

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՍԱՄԱՐԻԱՅՈՒՄ

4 *Եւ նրանք, որ ցրուած էին, շրջելով աւետարանում էին խօսքը:* 5 *Իսկ Փիլիպպոսը, Սամարիա քաղաքն իջնելով, Քրիստոսին էր քարոզում նրանց:* 6 *Ժողովրդի բազմութիւնը միասիրտ ունկնդրում էր Փիլիպպոսի խօսքերը, երբ լսում եւ տեսնում էր այն նշանները, որ նա անում էր,* 7 *որովհետեւ շատ դիւահարներից պիղծ ոգիները բարձրաձայն աղաղակելով՝ դուրս էին ելնում:* 8 *Եւ բազում անդամալոյծներ եւ կաղեր բժշկւում էին.* 9 *եւ այդ քաղաքում մեծ ուրախութիւն եղաւ:*

ՍԻՄՈՆ ՄՈԳԸ

Սիմոն անունով մի մարդ կար, որ այդ քաղաքում նախապէս մոգութիւն էր անում եւ զարմացնում սամարացի ժողովրդին՝ իր մասին ասելով, թէ ինքը մեծ մէկն է. 10 *փոքրից մինչեւ ամենամեծերը նրան էին նայում ու ասում. «Սա՛ է Աստծու զօրութիւնը, որ մեծ է կոչւում»:* 11 *Հիացումով էին նայում նրան, որովհետեւ երկար ժամանակ մոգութիւններով իրենց զարմացրել էր:* 12 *Բայց երբ հաւատացին Փիլիպպոսին, որն Աստծու արքայութեան եւ Յիսուս Քրիստոսի անուան մասին էր աւետարանում, բոլորը՝ տղամարդիկ եւ կանայք, մկրտուեցին:*
13 *Ինքը Սիմոնը եւս հաւատաց եւ, մկրտուելով, միշտ Փիլիպպոսի հետ էր լինում. ու տեսնելով այն նշանները եւ մեծամեծ զօրութիւնները, որ կատարւում էին, զարմանում էր:*

14 *Երբ Երուսաղէմում գտնուող առաքեալները լսեցին, թէ Սամարիայում էլ ընդունել են Աստծու խօսքը, նրանց մօտ ուղարկեցին Պետրոսին եւ Յովհաննէսին,* 15 *որոնք, իջնելով, աղօթում էին նրանց համար, որպէսզի ստանան Սուրբ Հոգին.* 16 *քանի որ մինչեւ այն ժամանակ նրանցից ոչ մէկի վրայ Սուրբ Հոգին դեռ չէր իջել, այլ միայն մկրտուել էին Տէր Յիսուսի անունով:* 17 *Այն ժամանակ ձեռքները դրեցին նրանց վրայ, եւ նրանք Սուրբ Հոգին ստացան:*

18 *Սիմոնը տեսնելով, թէ առաքեալների ձեռք դնելով Սուրբ*† *Հոգին տրւում է, փող տուեց ու ասաց.* 19 *«Ինձ էլ տուէք այս իշխանութիւնը, որպէսզի, ում վրայ որ ձեռքս դնեմ, Սուրբ Հոգին ստանայ»:* 20 *Պետրոսը նրան ասաց. «Քո արծաթը թող քեզ հետ կորչի, քանի որ կարծեցիր, թէ Աստծու պարգեւները կարելի է փողով ստանալ.* 21 *դու այդ բանում մաս ու բաժին չունես, քանի որ քո սիրտը Աստծու առաջ ուղիղ չէ:* 22 *Դու քո այդ չարութեան համար ապաշխարի՛ր եւ աղաչի՛ր Տիրոջը, թերեւս քո սրտի նենգ խորհուրդները քեզ ներուեն.* 23 *քանի որ մաղձի դառնութեան եւ անիրաւութեան կապանքների մէջ եմ տեսնում քեզ»:* 24 *Սիմոնը պատասխանեց. «Ինձ համար դո՛ւք աղաչեցէք Տիրոջը, որպէսզի այն բոլորից, ինչ դուք ասացիք, իմ վրայ ոչինչ չգայ»:*
25 *Եւ նրանք վկայութիւն տալով՝*

†Յուն. լաւ բն. չունեն *Սուրբ* բառը:

խօսեցին Աստծու խօսքը ու վերադարձան Երուսաղէմ: Եւ սամարացիների շատ գիւղերում աւետարանում էին:

ՓԻԼԻՊՊՈՍԸ ԵՒ ԵԹՈՎՊԱՑԻ ՆԵՐՔԻՆԻՆ

26 Տիրոջ հրեշտակը Փիլիպպոսին ասաց. «Վե՛ր կաց եւ գնա՛ դու հարաւի կողմը՝ այն ճանապարհով, որ իջնում է Երուսաղէմից Գազա, որ անապատ է»: 27 Նա վեր կացաւ ու գնաց: Եւ ահա եթովպացի մի ներքինի, եթովպացիների Կանդակա թագուհու պաշտօնեաներից մէկը, որ նրա բոլոր գանձերի վերակացուն էր ու Երուսաղէմ երկրպագելու էր եկել, 28 վերադառնալիս, իր կառքի մէջ նստած, Եսայի մարգարէ էր ընթերցում: 29 Սուրբ Հոգին Փիլիպպոսին ասաց. «Առաջացի՛ր եւ այդ կառքի մօտ գնա»: 30 Եւ Փիլիպպոսը առաջ վազելով՝ լսեց, որ նա Եսայի մարգարէ էր ընթերցում. 31 ու ասաց. «Հասկանո՞ւմ ես արդեօք, ինչ որ ընթերցում ես»: Իսկ նա ասաց. «Ինչպէ՞ս կը կարողանամ հասկանալ, եթէ մէկն ինձ չառաջնորդի»: Եւ խնդրեց Փիլիպպոսին, որ բարձրանայ ու իր մօտ նստի: 32 Եւ նրա ընթերցած գրքի հատուածն այս էր.

«Մորթուելու տարուեց նա ինչպէս մի ոչխար.
եւ ինչպէս անմռունչ գառն իր բուրդը խուզողի առաջ,
այնպէս էլ նա իր բերանը չի բացում.
33 իր խոնարհութեան պատճառով
նրա դատաստանը տեղի չունեցաւ.
եւ նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի.
քանի որ նրա կեանքը երկրից վերացուած է»†:

34 Ներքինին հարցրեց Փիլիպպոսին. «Խնդրում եմ քեզ, մարգարէն ո՞ւմ մասին է ասում այս. ի՞նչ մասին, թէ՞ մէկ ուրիշի»: 35 Փիլիպպոսը բացեց իր բերանը եւ այդ գրքից սկսելով՝ Յիսուսին աւետարանեց նրան: 36 Երբ իրենց ճանապարհն էին գնում, հասան մի ջրի մօտ: Եւ ներքինին ասաց. «Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտուել»: 37‡ Եւ նա ասաց նրան. «Եթէ քո ամբողջ սրտով հաւատում ես, կարելի է»: Նա պատասխան տուեց ու ասաց. «Հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոս Աստծու Որդին է»: 38 Եւ ներքինին հրամայեց կառքը կանգնեցնել. երկուսով ջուրն իջան. ե՛ւ Փիլիպպոսը, ե՛ւ ներքինին: Եւ Փիլիպպոսը մկրտեց նրան: 39 Երբ ջրից դուրս ելան, Սուրբ Հոգին իջաւ ներքինու վրայ. եւ Տիրոջ հրեշտակը յափշտակեց տարաւ Փիլիպպոսին, ու ներքինին այլեւս նրան չտեսաւ: Եւ իր ճանապարհն էր գնում ուրախութեամբ. 40 իսկ Փիլիպպոսը իրեն գտաւ Ազոտոսում: Եւ, շրջելով, աւետարանում էր բոլոր քաղաքներին, մինչեւ որ եկաւ Կեսարիա:

†Տե՛ս Եսայի 53. 7-8:

‡Յունարէնը չունի այս համարը:

ՍՕՂՈՍԻ ԴԱՐՁԸ
(Գործք 22. 6-16, 26. 12-18)

9 Սօղոսը դեռ Տիրոջ աշակերտներին սպառնալու եւ նրանց սպանելու կրքով լցուած†՝ քահանայապետի մօտ եկաւ 2 եւ նրանից նամակներ խնդրեց, Դամասկոսում ժողովարաններին ուղղուած, որպէսզի, եթէ գտնի այդ ճանապարհին հետեւող որեւէ մէկին, տղամարդ թէ կին, կապուած Երուսաղէմ բերի: 3 Եւ նա գնալիս, երբ մօտեցաւ Դամասկոսին, յանկարծակի նրա շուրջը երկնքից մի լոյս փայլատակեց: 4 Եւ երբ գետին ընկաւ, լսեց մի ձայն, որ իրեն ասում էր. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ»: 5 Եւ նա ասաց. «Ո՞վ ես դու, Տէ՛ր»: Եւ ձայնն ասաց. «Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես:‡ 7 Ոտքի՛ կանգնիր եւ այդ քաղաքը մտի՛ր, ու քեզ կ'ասուի, թէ դու ի՛նչ պէտք է անես»: Իսկ նրան ուղեկցող մարդիկ անշշունջ կանգնած էին. միայն նրա ձայնն էին լսում, բայց ոչինչ չէին տեսնում: 8 Սօղոսը գետնից վեր կացաւ, սակայն բաց աչքերով իսկ ոչ ոքի չէր տեսնում: Նրա ձեռքից բռնած մտցրին Դամասկոս: 9 Եւ երեք օր այնտեղ էր, բայց չէր տեսնում. ո՛չ կերաւ, ո՛չ էլ խմեց:

10 Դամասկոսում Անանիա անունով մի աշակերտ կար. նրան տեսիլքի մէջ Տէրն ասաց՝ Անանիա՛: Սա ասաց՝

†Յունարէնը ունի՝ Տիրոջ աշակերտների դէմ սպառնալիք եւ մահ շնչելով . . .

‡Որոշ ձեռագրեր 6-րդ համարի տակ ունեն. Եւ նա սարսափած ու պապանձուած ասաց. «Տէ՛ր, ի՞նչ ես ուզում, որ անեմ»: Եւ Տէրը նրան ասաց . . .

այստեղ եմ, Տէ՛ր: 11 Եւ Տէրը նրան ասաց. «Ոտքի՛ կանգնիր ու գնա՛ այն փողոցով, որ Ուղիղ է կոչւում, եւ Յուդայի տանը կը փնտռես Սօղոս անունով Տարսոնացուն, որ դեռ աղօթքի մէջ է»: 12 Եւ նա տեսիլքի մէջ տեսաւ Անանիա անունով մի մարդու, որ մտաւ եւ ձեռքը դրեց իր վրայ, որպէսզի տեսնի: 13 Անանիան պատասխանեց. «Տէ՛ր, շատերից լսեցի այդ մարդու մասին, թէ որքան չարիքներ է արել Երուսաղէմում քո սրբերին. 14 եւ այստեղ էլ քահանայապետներից իշխանութիւն ունի կապանքի տակ պահելու բոլոր նրանց, որ քո անունն են կանչում»: 15 Տէրը նրան ասաց. «Գնա՛ դու, որովհետեւ նա ինձ համար ընտրեալ անօթ է՝ իմ անունը տանելու հեթանոսների, թագաւորների եւ իսրայէլացիների առաջ. 16 քանի որ ես ինքս եմ նրան ցոյց տալու, թէ նա ինչքան պէտք է չարչարուի իմ անուան համար»: 17 Անանիան գնաց եւ մտաւ այն տունը. ու ձեռքը դնելով նրա վրայ՝ ասաց. «Սաւո՛ւղ եղբայր, վե՛ր նայիր. Տէ՛րն ինձ ուղարկեց՝ Յիսուսը, որը քեզ երեւաց այն ճանապարհի վրայ, որով գալիս էիր, որպէսզի տեսնես ու լցուես Սուրբ Հոգով»: 18 Եւ իսկոյն նրա աչքերից թեփերի պէս բաներ ցած ընկան. ապա տեսաւ, ոտքի ելաւ ու մկրտուեց: 19 Եւ սնունդ ընդունելով՝ զօրացաւ ու Դամասկոսում մի քանի օր աշակերտների հետ էր:

ՍՕՂՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ

20 Եւ անմիջապէս ժողովարաններում Յիսուսի՛ն քարոզեց՝ ասելով, թէ նա՛ է Աստծու Որդին: 21 Բոլոր նրանք, որ լսում էին, զարմանում էին ու ասում. «Սա չէ՞ր, որ Երուսաղէմում հալածում էր նրանց, ովքեր կանչում էին Քրիստոսի անունը, եւ այստեղ էլ նոյն բանի համար էր եկել, որպէսզի նրանց կապանքի տակ պահած տանի քահանայապետներին»: 22 Բայց Սօղոսը առաւել եւս էր զօրանում եւ նեղն էր դնում այն հրեաներին, որոնք Դամասկոսում էին բնակւում, եւ ապացուցում էր, թէ սա՛ է Քրիստոսը: 23 Բազում օրեր անցնելուց յետոյ հրեաները խորհուրդ արեցին նրան սպանելու: 24 Նրանց նենգութիւնը Սօղոսին յայտնի դարձաւ, քանի որ գիշեր-ցերեկ քաղաքի դռները պահւում էին, որպէսզի նրան սպանեն: 25 Իսկ աշակերտները գիշերով վերցրին նրան եւ, պարսպից ցած կախելով, վանդակի մէջ դրած իջեցրին†:

ՍՕՂՈՍԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

26 Երբ Սօղոսը Երուսաղէմ եկաւ, փորձում էր աշակերտներին յարել, բայց ամէնքը վախենում էին նրանից. չէին հաւատում, թէ իսկապէս աշակերտ էր դարձել: 27 Բայց Բառնաբասը նրան վերցրեց եւ բերեց առաքեալների մօտ ու նրանց պատմեց, թէ ինչպէս ճանապարհին նա տեսել էր Տիրոջը, խօսել էր նրա հետ եւ թէ Դամասկոսում էլ Յիսուսի անունով համարձակ քարոզել: 28 Եւ Սօղոսը աշակերտների հետ էր եւ Երուսաղէմում՝ շրջում էր նրանց հետ ու համարձակ քարոզում Տիրոջ անունով: 29 Խօսում ու վիճում էր յունախօս հրեաների հետ, որոնք հետամտում էին նրան սպանել: 30 Եղբայրները, այս բանն իմանալով, նրան Կեսարիա իջեցրին եւ ուղարկեցին Տարսոն:

31 Սակայն եկեղեցին ամբողջ Հրէաստանում, Սամարիայում ու Գալիլիայում խաղաղութեան մէջ էր եւ, ամրանալով ու ընթանալով Տիրոջ երկիւղով, Սուրբ Հոգու մխիթարութեամբ աճում էր:

ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻ ԲԺՇԿՈՒՄԸ ԼԻԻԴԴԱՅՈՒՄ

32 Եւ պատահեց, որ Պետրոսը, բոլորի մէջ շրջելիս, իջաւ նաեւ այն սրբերի մօտ, որոնք բնակւում էին Լիւդդայում: 33 Եւ այնտեղ գտաւ մի մարդու, որի անունը Ենեա էր, եւ որը ութ տարուց ի վեր անդամալոյծ լինելով՝ մահճի մէջ պառկած էր: 34 Պետրոսը նրան ասաց. «Ենեա՛, Տէր Յիսուս Քրիստոսը քեզ բժշկում է, վե՛ր

†Տե՛ս Բ Կորնթ. 11. 32-33:

կաց եւ յարդարի՛ր քո անկողինը»: Եւ նա իսկոյն վեր կացաւ: 35 Եւ բոլոր նրանք, որ Լիւդդայում եւ Սարոնայում էին ապրում, տեսան նրան եւ իրենք էլ դէպի Տէրը դարձան:

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՅԱՌՆՈՒՄԸ

36 Եւ Յոպպէում աշակերտ եղած մի կին կար՝ Տաբիթա անունով, որ թարգմանաբար կոչւում է Այծեմնիկ. սրա կեանքը լի էր բարի գործերով եւ ողորմութիւններով, որ նա կատարում էր: 37 Պատահեց, որ այն օրերին նա հիւանդացաւ ու մեռաւ. նրան լողացրին եւ դրեցին վերնատունը: 38 Եւ Լիւդդան Յոպպէին մօտիկ էր. երբ աշակերտները լսեցին, թէ Պետրոսը այնտեղ է, երկու մարդ ուղարկեցին նրա մօտ՝ աղաչելու, որ անյապաղ իրենց մօտ գայ: 39 Եւ Պետրոսը վեր կացաւ ու եկաւ նրանց հետ: Երբ հասաւ, նրան վերնատուն բարձրացրին: Ու բոլոր այրիները շրջապատեցին նրան. լալիս էին եւ ցոյց տալիս, թէ որքան հագուստներ եւ զգեստներ էր կարել տուել Այծեմնիկը իրենց համար: 40 Պետրոսը բոլորին դուրս հանելով՝ ծնրադրեց, աղօթք արեց եւ, դառնալով մարմնին, ասաց. «Տաբիթա՛, յանուն Տէր Յիսուս Քրիստոսի վե՛ր կաց կանգնիր»: Եւ նա բացեց իր աչքերը ու Պետրոսին տեսնելով՝ ուղիղ նստեց: 41 Պետրոսը ձեռքը մեկնեց նրան ու վեր կացրեց: Կանչեց սրբերին ու այրիներին. եւ նրանց առաջ կենդանի կանգնեցրեց նրան: 42 Եւ ամբողջ Յոպպէում այս յայտնի դարձաւ, եւ շատերը հաւատացին Տիրոջը: 43 Պետրոսը շատ օրեր մնաց Յոպպէում՝ կաշեգործ ոմն Սիմոնի մօտ:

ՊԵՏՐՈՍԸ ԵՒ ԿՈՌՆԵԼԻՈՍԸ

10 Կեսարիայում Կոռնելիոս անունով մի մարդ կար, մի հարիւրապետ «Իտալական» կոչուող գնդից. 2 նա իր ամբողջ ընտանիքով բարեպաշտ եւ աստուածավախ լինելով՝ շատ ողորմութիւններ էր անում ժողովրդի մէջ եւ միշտ Աստծուն աղօթում էր: 3 Կէսօրից յետոյ ժամը երեքի մօտ տեսիլքի մէջ նա յայտնապէս տեսաւ Աստծու հրեշտակին, որ մտաւ իր մօտ ու իրեն ասաց՝ Կոռնելիո՛ս: 4 Եւ նա, երբ նրան նայեց, զարհուրեց ու ասաց՝ ի՞նչ է, Տէ՛ր: Եւ հրեշտակը նրան ասաց. «Քո աղօթքներն ու քո ողորմութիւնները, յիշատակուելով, Աստծու առաջ ելան: 5 Եւ արդ, մարդիկ ուղարկի՛ր Յոպպէ եւ կանչի՛ր ոմն Սիմոնի, որ Պետրոս է կոչւում. 6 նա մնում է կաշեգործ Սիմոնի մօտ, որի տունը ծովին մօտ է»: 7 Երբ իր հետ խօսող հրեշտակը գնաց, կանչեց ծառաներից երկուսին եւ իր սպասաւորներից բարեպաշտ մի զինուորի 8 ու նրանց ամէն բան պատմելով՝ Յոպպէ ուղարկեց:

9 Յաջորդ օրը, մինչ նրանք ճանապարհին էին եւ մօտեցել էին քաղաքին, Պետրոսը կէսօրին տանիք բարձրացաւ աղօթելու: 10 Նա քաղց զգաց եւ ուտել էր ուզում: Եւ մինչ ճաշ էին պատրաստում, յափշտակութեան մէջ ընկաւ. 11 եւ տեսնում էր երկինքը բացուած եւ չորս ծայրերից կախուած մի ինչ-որ անօթ, ինչպէս մի մեծ սփռոց, որ իջաւ նստեց երկրի վրայ: 12 Նրա մէջ կային երկրի բոլոր չորքոտանիները, գազանները, սողունները եւ երկնքի թռչունները: 13 Եւ նրան հասաւ մի ձայն. «Վե՛ր կաց, Պետրո՛ս, մորթի՛ր եւ կե՛ր»: 14 Եւ Պետրոսն ասաց. «Քա՛ւ լիցի, Տէ՛ր, որովհետեւ երբեք պիղծ եւ անմաքուր բան չեմ կերել»: 15 Ձայնը նրան կրկին անգամ հասաւ. «Ինչ որ Աստուած մաքուր է դարձրել, դու պիղծ մի՛ համարիր»: 16 Այս պատահեց երեք անգամ, եւ սփռոցը երկինք վերացաւ: 17 Եւ մինչ Պետրոսը մտքում զարմացած էր, թէ տեսած տեսիլքն ի՛նչ է, ահա Կոռնելիոսի կողմից ուղարկուած մարդիկ հարցրին Սիմոնի տան մասին, կանգնեցին դռանը, 18 ձայն տուեցին ու հարցրին. «Սիմոնը, որ Պետրոս է կոչւում, այստե՞ղ է օթեւանել»: 19 Եւ մինչ Պետրոսը դեռ մտորում էր տեսիլքի մասին, Հոգին նրան ասաց. «Ահաւասիկ ինչ-որ† մարդիկ քեզ փնտռում են. 20 ուստի դու

†Յուն. լաւ բն. *ինչ-որ* բառի փոխարէն ունեն *երկու* բառը:

վե՛ր կաց, իջի՛ր եւ առանց երկմտելու գնա՛ նրանց հետ, որովհետեւ նրանց ես եմ ուղարկել»: 21 Եւ երբ Պետրոսը նրանց մօտ իջաւ, ասաց. «Ում փնտռում էք, ահա ես եմ. ի՞նչ բանի համար էք եկել»: 22 Եւ նրանք ասացին. «Կոռնելիոս հարիւրապետը՝ մի արդար եւ աստուածավախ մարդ, որ ամբողջ հրեայ ազգի կողմից վկայուած է, սուրբ հրեշտակից հրաման ստացաւ քեզ կանչելու իր տունը եւ քեզնից լսելու, ինչ որ ասելու ես»: 23 Նա ներս կանչեց նրանց եւ իր մօտ օթեւան տուեց:

Յաջորդ օրը Պետրոսը վեր կացաւ գնաց նրանց հետ. Յոպպէում գտնուող եղբայրներից ոմանք եւս նրա հետ գնացին: 24 Հետեւեալ օրը մտան Կեսարիա: Եւ Կոռնելիոսը նրանց սպասում էր՝ կանչած լինելով իր ազգականներին եւ մտերիմ բարեկամներին: 25 Եւ երբ Պետրոսը ներս մտաւ, Կոռնելիոսը նրան ընդառաջ ելաւ ու նրա ոտքերն ընկնելով երկրպագում էր: 26 Պետրոսը կանգնեցրեց նրան ու ասաց. «Ոտքի՛ ելիր, ես ինքս էլ մարդ եմ»: 27 Եւ նրա հետ խօսելով՝ ներս մտաւ ու այնտեղ շատերին հաւաքուած գտաւ: 28 Նրանց ասաց. «Դուք ինքներդ գիտէք, թէ ինչպէս կարելի չէ հրեայ մարդու համար օտարազգու հետ շփուել կամ նրան մօտենալ. բայց Աստուած ինձ ցոյց տուեց, որ մարդկանցից ոչ մէկին չպէտք է պիղծ կամ անմաքուր համարեմ. 29 դրա համար էլ առանց առարկութեան եկայ, երբ կանչուեցի: Բայց այժմ հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ բանի համար ինձ կանչեցիք»: 30 Եւ Կոռնելիոսն ասաց. «Սրանից չորս օր առաջ, այս ժամին, մինչ ժամը երեքի աղօթքն էի անում իմ տանը, ահա սպիտակ զգեստներով մի մարդ եկաւ կանգնեց իմ առաջ ու ասաց. 31 "Կոռնելիո՛ս, քո աղօթքները լսելի եղան, եւ քո ողորմութիւնները յիշուեցին Աստծու առաջ: 32 Արդ, մարդ ուղարկի՛ր Յոպպէ եւ կանչի՛ր Սիմոնին, որ Պետրոս է կոչւում. նա օթեւանել է կաշեգործ ոմն Սիմոնի տանը, ծովի մօտ: Նա կը գայ եւ կը խօսի քեզ հետ"†: 33 Եւ ես իսկոյն մարդ ուղարկեցի քեզ մօտ. դու լաւ արեցիր, որ եկար: Այժմ մենք բոլորս կանգնած ենք Աստծու առաջ՝ լսելու այն ամէնը, ինչ քեզ հրամայուած է Տիրոջից»:

ՊԵՏՐՈՍԻ ՃԱՌԸ ԿՈՌՆԵԼԻՈՍԻ ՏԱՆԸ

34 Պետրոսը բերանը բացեց եւ ասաց. «Ճշմարտութեամբ վերահասու եմ եղել, թէ Աստծու կողմից աչառութիւն չկայ, 35 այլ՝ բոլոր ազգերի մէջ ով երկնչում է նրանից եւ արդարութիւն է գործում, ընդունելի է նրան: 36 Այս խօսքը նա ուղարկեց իսրայէլացիներին՝ աւետելով խաղաղութիւն Յիսուս Քրիստոսի միջոցով. սա է բոլորի Տէրը: 37 Դուք ինքներդ գիտէք այդ խօսքը, որը տարածուեց Գալիլիայից սկսած ամբողջ Հրէաստանում այն մկրտութիւնից յետոյ, որը քարոզեց Յովհաննէսը. 38 գիտէք Յիսուսին, որ Նազարէթից էր, որին Աստուած օծեց Սուրբ Հոգով եւ զօրութեամբ, եւ որը շրջեց բարիք անելով եւ սատանայից բոլոր բռնուածներին բժշկելով, որովհետեւ Աստուած նրա հետ էր: 39 Եւ մենք վկայում ենք այն բոլորը, որ Հրէաստանում եւ Երուսաղէմում արեց նա, եւ որին սպանեցին՝ խաչափայտից կախելով: 40 Երրորդ օրը Աստուած նրան յարութիւն տուեց եւ թոյլ տուեց, որ նա երեւայ՝ 41 ոչ թէ ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ վկաներիս, որ առաջուց Աստծուց ընտրուած էինք եւ որ կերանք ու խմեցինք նրա հետ մեռելներից նրա յարութիւն առնելուց յետոյ: 42 Եւ նա պատուիրեց մեզ քարոզել ժողովրդին եւ վկայութիւն տալ, թէ ի՛նքն է Աստծուց սահմանուած դատաւորը, որ դատելու է կենդանիներին եւ մեռածներին: 43 Բոլոր մարգարէները նրա մասին վկայում են, որ բոլոր նրան հաւատացողները նրա անունով մեղքերի թողութիւն կը ստանան»:

ՀԵԹԱՆՈՍՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

44 Եւ մինչ Պետրոսը դեռ այս

†Յուն. լաւ բն. չունեն այս վերջին նախադասութիւնը:

բաներն էր ասում, Սուրբ Հոգին իջաւ բոլոր նրանց վրայ, ովքեր այս խօսքը լսում էին: 45 Ծագումով հրեայ հաւատացեալները, որոնք Պետրոսի հետ էին եկել, զարմացան, որ հեթանոսների վրայ եւս Սուրբ Հոգու շնորհները հոսում են. 46 որովհետեւ լսում էին, որ նրանք լեզուներ էին խօսում եւ փառաբանում Աստծուն: 47 Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց. «Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտուեն սրանք, որոնք եւս Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս եւ մենք»: 48 Եւ հրամայեց նրանց մկրտուել յանուն Յիսուս Քրիստոսի: Այն ժամանակ նրան աղաչեցին, որ մի քանի օր այնտեղ մնայ:

ՊԵՏՐՈՍԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

11 Առաքեալները եւ Հրէաստանի կողմերում գտնուող եղբայրները լսեցին, որ հեթանոսների մէջ էլ են ընդունել Աստծու խօսքը: 2 Բայց երբ Պետրոսը Երուսաղէմ ելաւ, հրէութիւնից դարձած հաւատացեալները մեղադրում էին նրան եւ ասում. 3 «Չթլփատուած մարդկանց մօտ մտաւ եւ նրանց հետ կերաւ»: 4 Եւ Պետրոսն սկսեց հերթով պատմել նրանց ու ասաց. 5 «Ես Յոպպէ քաղաքում աղօթում էի եւ յափշտակութեան մէջ մի տեսիլք տեսայ. իջնում էր մի անօթ, մեծ սփռոցի նման, չորս ծայրերից երկնքից կախուած, որ հասաւ մինչեւ ինձ մօտ: 6 Մինչ ակնապիշ նայում էի դրան, տեսայ երկրի չորքոտանիները, գազանները, սողունները եւ երկնքի թռչունները: 7 Եւ լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր. "Վե՛ր կաց, Պետրո՛ս, մորթի՛ր եւ կե՛ր": 8 Բայց ես ասացի. "Քա՛ւ լիցի, Տէ՛ր, որովհետեւ երբեք իմ բերանը պիղծ եւ անմաքուր բան չի մտել": 9 Երկրորդ անգամ երկնքից ձայնն ինձ պատասխանեց. "Ինչ որ Աստուած մաքուր է դարձրել, դու այն պիղծ մի՛ համարիր": 10 Այս պատահեց երեք անգամ, եւ վերստին ամէն ինչ երկինք վերացաւ: 11 Եւ ահա այն պահին երեք մարդ, որ Կեսարիայից ինձ մօտ էին ուղարկուած, եկան եւ կանգնեցին այն տան առաջ, ուր ես գտնուում էի: 12 Եւ Հոգին ինձ ասաց, որ գնամ նրանց հետ առանց երկմտելու: Ինձ հետ եկան նաեւ այս վեց եղբայրները, եւ մենք մտանք այն մարդու տունը: 13 Եւ նա մեզ պատմեց, թէ ինչպէս իր տանը տեսել է հրեշտակին, որ իրեն ասել է. "Յոպպէ մարդ ուղարկի՛ր եւ Պետրոս կոչուած Սիմոնին կանչի՛ր, 14 որ քեզ պիտի ասի խօսքեր, որոնցով պիտի փրկուես դու, նաեւ՝ քո ամբողջ տունը": 15 Եւ երբ սկսեցի խօսել, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ, ինչպէս որ իջել էր մեր վրայ սկզբում: 16 Յիշեցի Տիրոջ խօսքը, որ ասում էր. "Յովհաննէսը մկրտեց ջրով, բայց դուք կը մկրտուէք Սուրբ Հոգով": 17 Արդ, եթէ Աստուած միեւնոյն պարգեւը նրանց եւս տուել է, ինչպէս եւ մեզ, երբ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք, ես ինչպէ՞ս կարող էի Աստծուն արգելք լինել»: 18 Այս բանը լսելով՝ լռեցին եւ փառաւորում էին Աստծուն ու ասում. «Ուրեմն Աստուած հեթանոսներին եւս դէպի կեանք տանող ապաշխարութիւն տուեց»:

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՏԻՈՔՈՒՄ

19 Ստեփանոսի դէմ կատարուած հալածանքի պատճառով ցրուածները հասան մինչեւ Փիւնիկէ, մինչեւ Կիպրոս ու Անտիոք. նրանք ոչ ոքի չէին քարոզում խօսքը, այլ՝ միայն հրեաներին: 20 Եւ նրանց միջից որոշ մարդիկ՝ կիպրացիներ եւ կիւրենացիներ, Անտիոք մտնելով, յոյներին էին դիմում՝ աւետարանելով Տէր Յիսուսին: 21 Եւ Տիրոջ զօրութիւնը նրանց հետ էր: Հաւատացեալների մի բազմութիւն դէպի Տէրը դարձաւ: 22 Նրանց մասին այս լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցուն: Եւ Բառնաբասին ուղարկեցին մինչեւ Անտիոք: 23 Երբ սա եկաւ եւ տեսաւ Աստծու շնորհները, ուրախացաւ եւ յորդորում էր բոլորին, որպէսզի նրանք յօժար սրտով յարած մնան Տիրոջը. 24 ըստ որում նա բարի, Սուրբ Հոգով եւ հաւատով լցուած մարդ էր. եւ Տիրոջը յարածների վրայ բազում ժողովուրդ աւելացաւ: 25 Ապա Բառնաբասը ելաւ գնաց Տարսոն՝ Սօղոսին փնտռելու եւ, նրան գտնելով, բերեց Անտիոք: 26 Ու նրանք երկուսով մի ամբողջ տարի հաւաքւում էին եկեղեցու մէջ եւ ուսուցանում էին շատ շատերին: Եւ առաջին անգամ Անտիոքում էր, որ աշակերտածներին «քրիստոնեաներ» անուանեցին:

ՆՊԱՍՏ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

27 Այն օրերին Երուսաղէմից մարգարէներ իջան Անտիոք: 28 Նրանցից մէկը, որի անունը Ագաբոս էր, վեր կենալով, Հոգու միջոցով կանխանշեց, որ ամբողջ աշխարհում մեծ սով է լինելու, որը եւ եղաւ Կղոդէոս կայսեր օրով: 29 Եւ Անտիոքի աշակերտները որոշեցին, որ աշակերտների կողմից, այնքան, որքան նրանցից իւրաքանչիւրը կարող էր, նպաստ ուղարկեն Հրէաստանում բնակուող եղբայրների համար, 30 ինչ որ արդարեւ արեցին՝ Բառնաբասի եւ Սօղոսի ձեռքով ուղարկելով եկեղեցու երէցներին:

ՅԱԿՈԲՈՍԸ՝ ՍՊԱՆՈՒԱԾ, ՊԵՏՐՈՍԸ՝ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

12 Այդ ժամանակներում Հերովդէս թագաւորը ձեռնարկեց եկեղեցուց ոմանց չարչարելու գործին 2 եւ Յովհաննէսի եղբօրը՝ Յակոբոսին, սրով սպանեց: 3 Երբ տեսաւ, որ այդ հաճելի է հրեաներին, աւելի առաջ գնաց եւ Պետրոսին էլ բռնեց: Բաղարջակերաց օրերն էին. 4 երբ նրան բռնեց, բանտ դրեց եւ իւրաքանչիւրը չորս զինուորից բաղկացած չորս խմբի յանձնեց, որ նրան պահեն. եւ ուզում էր զատկից յետոյ նրան դուրս հանել՝ դատելու ժողովրդի առջեւ: 5 Պետրոսը բանտում մնում էր հսկողութեան ներքոյ. իսկ եկեղեցում նրա համար անդադար աղօթքներ էին արւում առ Աստուած:

ՊԵՏՐՈՍԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԲԱՆՏԻՑ

6 Եւ երբ Հերովդէսն ուզեց նրան դուրս բերել, այն գիշեր Պետրոսը, կրկնակի շղթաներով կապուած, երկու զինուորների միջեւ քնած էր. իսկ պահապանները դռան առաջ բանտը պահպանում էին: 7 Եւ ահա Տիրոջ հրեշտակը եկաւ, կանգնեց մօտը, ու մի լոյս ծագեց այդ տեղի վրայ: Ապա բոթեց Պետրոսի կողերը, նրան վեր կացրեց՝ ասելով. «Իսկոյն վե՛ր կաց»: Եւ շղթաներն ընկան նրա ձեռքից: 8 Եւ հրեշտակը նրան ասաց. «Գօտիդ կապի՛ր եւ հողաթափները ոտքերդ գցի՛ր»: Եւ նա այնպէս արեց: Ապա նրան ասաց. «Զգեստներդ վրադ գցի՛ր եւ արի՛ իմ յետեւից»: 9 Եւ նա ելնելով գնում էր նրա յետեւից ու չէր իմանում, թէ հրեշտակի միջոցով պատահածը իրական է, որովհետեւ կարծում էր, թէ տեսիլք է տեսնում: 10 Եւ երբ նրանք անցան առաջին պահականոցից եւ ապա երկրորդից, եկան մինչեւ երկաթեայ դուռը, որը հանում էր քաղաք: Դուռը իրեն-իրեն բացուեց նրանց առջեւ. եւ, մի փողոց մտնելով, անցան նրա միջով. ապա հրեշտակը իսկոյն նրանից հեռացաւ: 11 Երբ Պետրոսը ուշքի եկաւ, ասաց. «Այժմ ճշմարտապէս գիտեմ, որ Տէրն ուղարկեց իր հրեշտակին եւ ինձ փրկեց Հերովդէսի ձեռքից եւ հրեայ ժողովրդի ամէն ակնկալութիւնից»: 12 Եւ ուշքի եկած լինելով՝ եկաւ Մարիամի՝ Մարկոս կոչուած Յովհաննէսի մօր տունը. այնտեղ հաւաքուել էին շատերն ու աղօթք էին անում: 13 Տան դուռը բախելիս՝ Ռոդէ անունով մի աղախին մօտեցաւ եւ ականջ էր դնում: 14 Եւ ճանաչելով Պետրոսի ձայնը՝ ուրախութիւնից դուռը չբացեց, այլ ներս վազելով պատմեց, թէ Պետրոսը դռանը կանգնած է: 15 Նրանք ասացին նրան՝ գժուել ես: Իսկ աղախինը առաւել եւս պնդում էր, թէ այդպէս է: Ապա նրանք ասացին՝ նրա հրեշտակն է: 16 Իսկ Պետրոսը շարունակում էր թակել դուռը: Երբ բացեցին, տեսան նրան ու զարմացան: 17 Եւ նա ձեռքով նրանց նշան էր անում, որ լռեն. եւ պատմեց, թէ ինչպէս Տէրը իրեն հանեց բանտից: Ապա ասաց. «Այս բաները պատմեցէ՛ք Յակոբոսին եւ եղբայրներին»: Եւ ինքը ելաւ գնաց այլ տեղ: 18 Եւ երբ առաւօտ եղաւ, զինուորների մէջ մեծ խռովութիւն ընկաւ, թէ արդեօք Պետրոսն ի՛նչ

եղաւ: 19 Իսկ Հերովդէսը, երբ նրան
փնտռեց ու չգտաւ, պահակներին հար-
ցաքննելուց յետոյ հրամայեց սպանել
նրանց: Ապա Պետրոսը Հրէաստանից
Կեսարիա իջաւ ու այնտեղ էր մնում:

ՀԱԼԱԾԻՉԻ ՄԱՀԸ

20 Եւ Հերովդէսը ցասումով էր
լցուած տիւրոսցիների եւ սիդոնացի-
ների դէմ: Նրանք միաբանուած՝ եկան
նրա մօտ եւ համոզելով Բղաստոսին՝
թագաւորի սենեկապետին, խաղաղու-
թիւն խնդրեցին, քանի որ իրենց երկի-
րը նրա երկրից էր կերակրւում: 21 Եւ
որոշուած օրը Հերովդէսը թագաւո-
րական զգեստ էր հագել եւ ատեան էր
նստել ու հրապարակաւ խօսում էր
նրանց հետ: 22 Իսկ ամբոխը աղաղա-
կում էր. «Աստուած է, որ խօսում է եւ
ոչ թէ մարդ»: 23 Եւ անմիջապէս
հրեշտակը հարուածեց նրան, որովհե-
տեւ Աստծուն փառք չտուեց. եւ որդերի
կեր դառնալով՝ մեռաւ:
24 Իսկ Աստծու խօսքը աճում ու
բազմանում էր:
25 Բառնաբասն ու Սօղոսը, երբ
իրենց պաշտօնը կատարեցին, Երուսա-
ղէմից վերադարձան: Իրենց հետ
վերցրել էին նաեւ Յովհաննէսին, որ
Մարկոս էր կոչւում:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍՈՒՄ

4 Ուստի նրանք, Սուրբ Հոգուց ու-
ղարկուած, իջան Սելեւկիա ու այն-
տեղից նաւարկեցին դէպի Կիպրոս: 5 Եւ
Սալամինա հասնելով՝ հրեաների ժո-
ղովարաններում Աստծու խօսքն էին
քարոզում: Որպէս օգնական ունէին
նաեւ Յովհաննէսին: 6 Շրջելով ամ-
բողջ կղզին մինչեւ Պափոս՝ այնտեղ
գտան մի ոմն մոգի, որ մի հրեայ սուտ
մարգարէ էր, եւ որի անունը Բա-
ր-Յեսուս էր. 7 սա բդեշխի փոխանորդ
Սերգէոս Պօղոսի հետ էր ապրում, որը
մի իմաստուն մարդ էր: Սերգէոսը
աղաչելով Բառնաբասին եւ Սօղոսին,
ուզում էր լսել Աստծու խօսքը: 8 Բայց
նրանց դէմ դուրս եկաւ Եղիմաս մոգը
(որովհետեւ նրա անունը այսպէս է
թարգմանւում) եւ ուզում էր բդեշխի
փոխանորդին հաւատից շեղել: 9 Իսկ
Սօղոսը, որը եւ Պօղոսն է, Սուրբ Հոգով
լցուած, նայեց նրան ու ասաց. 10 «Ո՛վ
դու, որ լի ես ամէն նենգութեամբ ու
խորամանկութեամբ, որդի՛ սատանայի,
թշնամի՛ ամէն արդարութեան: Տիրոջ
ուղիղ ճանապարհները չեղելուց չե՞ս
դադարի: 11 Եւ արդ, ահա Տիրոջ ձեռքը
քեզ վրայ է. եւ կոյր կը լինես, որ
միառժամանակ արեւ չտեսնես»: Եւ
անմիջապէս նրա վրայ մէգ ու խաւար
իջաւ. եւ խարխափելով՝ առաջնոր-
դողներ էր փնտռում: 12 Այն ժամանակ
բդեշխի փոխանորդը, պատահածները
տեսնելով, հաւատաց՝ զարմանալով
Տիրոջ վարդապետութեան վրայ:

ՊՕՂՈՍԸ ԵՒ ԲԱՌՆԱԲԱՍԸ ՊԻսԻԴԵԱՆ ԱՆՏԻՈՔՈՒՄ

13 Պափոսից խարիսխ վերցնելով՝
Պօղոսը եւ իր հետ եղողները եկան
Պամփիւլիայի Պերգէ քաղաքը: Յով-
հաննէսը, նրանցից բաժանուելով,
Երուսաղէմ վերադարձաւ, իսկ նրանք,
առաջ գնալով, 14 Պերգէից եկան
Պիսիդեան Անտիոք քաղաքը. եւ շա-
բաթ օրը, ժողովարան մտնելով, նստե-
ցին: 15 Եւ Օրէնքի ու մարգարէների
ընթերցումից յետոյ, ժողովարանի
պետերը նրանց մօտ մէկին ուղարկեցին
ու ասացին. «Եղբայրնե՛ր, եթէ ունէք

մխիթարանքի խօսքեր ժողովրդին, խո-
սեցէ՛ք»:

ՊՕՂՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՀՐԵԱՆԵՐԻՆ

16 Պօղոսը ոտքի կանգնեց, ձեռքը
շարժեց ու ասաց. «Ո՛վ իսրայէլացիներ,
եւ դո՛ւք, որ Աստծուց երկնչում էք,
լսեցէ՛ք. 17 Իսրայէլի այս ժողովրդի
Աստուածը ընտրեց մեր հայրերին եւ
Եգիպտացիների երկրում, պանդխտու-
թեան ժամանակ, ժողովրդին բարձ-
րացրեց եւ հզօր բազուկով նրանց այն-
տեղից հանեց: 18 Եւ շուրջ քառասուն
տարի ժամանակով անապատում
նրանց կերակրեց: 19 Եւ Քանանու երկ-
րում եօթը ազգեր խորտակելով՝ նրանց
հողը որպէս ժառանգութիւն տուեց
նրանց: 20 Եւ դրանից յետոյ չորս
հարիւր յիսուն տարի նրանց տուեց
դատաւորներ՝ մինչեւ Սամուէլ մարգա-
րէն: 21 Եւ այնուհետեւ թագաւոր
խնդրեցին. ու Աստուած թագաւոր
տուեց նրանց Բենիամինի ցեղից Կիսի
որդուն՝ Սաւուղին, քառասուն տարի:
22 Եւ երբ նրան փոխեց, նրանց համար
մէջտեղ բերեց Դաւթին որպէս թա-
գաւոր, որի մասին եւ վկայելով՝ ասաց.
«Գտայ Յեսսէի որդի Դաւթին՝ իմ
սրտով մի մարդու, որը պիտի կատարի
իմ ամբողջ կամքը»: 23 Աստուած, ըստ
իր խոստման, սրա սերնդից յարուցեց
Իսրայէլի համար† մի փրկիչ՝ Յիսուսին:
24 Նրա գալստից առաջ, նրա առջեւից
գնացողը՝ Յովհաննէսը, Իսրայէլի ամ-
բողջ ժողովրդին քարոզել էր ապաշ-
խարել եւ մկրտուել: 25 Եւ երբ Յով-
հաննէսը իր գործունէութեան ըն-
թացքն աւարտեց, ասաց. "Իմ մասին
ի՞նչ էք կարծում, ո՞վ եմ. ես Քրիստոսը
չեմ, այլ ահա իմ յետեւից գալիս է նա,
որի ոտքերի կօշիկներն արձակելու
արժանի չեմ": 26 Եղբայրնե՛ր, Աբրա-
համի տոհմի որդինե՛ր եւ ձեր մէջ
նրանք, որ Աստծուց երկնչում են,
ձե՛զ‡ ուղարկուեց փրկութեան այս
խօսքը. 27 բայց Երուսաղէմում բնա-
կուողները եւ նրանց իշխանաւորները
չճանաչեցին Յիսուսին եւ նրան դա-
տապարտելով՝ կատարեցին մարգարէ-
ների խօսքը, որ ամէն շաբաթ ընթեր-
ցում էին: 28 Եւ մահուան արժանի ոչ
մի յանցանք չգտնելով՝ Պիղատոսին
խնդրեցին սպանել նրան: 29 Եւ երբ
կատարեցին այն ամէնը, ինչ նրա
մասին գրուած էր, խաչափայտից
իջեցնելով նրան՝ գերեզման դրեցին:
30 Բայց Աստուած մեռելներից յարու-
թիւն տուեց նրան, որ բազում օրեր
երեւաց նրանց, 31 որոնք նրա հետ Գա-
լիլիայից Երուսաղէմ էին բարձրացել եւ
որոնք այժմ իսկ ժողովրդի առաջ նրա
վկաներն են: 32 Եւ մենք ձեզ աւետա-
բանում ենք այն խոստումը, որ
արուած էր մեր հայրերին, 33 եւ Աս-
տուած նոյնը կատարեց մեզ՝ նրանց
որդիների համար՝ յարութիւն տալով
Յիսուսին, ինչպէս գրուած է երկրորդ
սաղմոսում.

"Դու իմ Որդին ես,
եւ ես այսօր ծնեցի քեզ":

34 Եւ որ նրան յարութիւն տուեց
մեռելներից ու այլեւս ապականութեան
չի դառնալու, այդ մասին այսպէս է
ասում.

"Ձեզ պիտի տամ
Դաւթին խոստացուած վստահելի սրբութիւնները":

35 Ուստի եւ մի ուրիշ տեղ էլ ասում
է.

«Քո Սրբին ապականութիւն տեսնել չես տայ»:

36 Սակայն Դաւիթը իր սերնդի ժա-
մանակ ծառայեց եւ Աստծու կամքով
վախճանուեց ու աւելացաւ իր հայրերի
վրայ, եւ նրա մարմինը ապականու-
թիւն տեսաւ: 37 Բայց Յիսուս, որին
Աստուած յարութիւն տուեց, ապակա-
նութիւն չտեսաւ: 38 Եղբայրնե՛ր, թող
ձեզ յայտնի լինի, որ նրանով է ձեզ
համար մեղքերի թողութիւն աւետա-
բանւում. 39 եւ այն ամենից, որոնցից
չկարողացաք Մովսէսի օրէնքով ար-
դարանալ, նրանով կ'արդարանայ, ով
հաւատում է: 40 Զգո՛յշ կացէք, գուցէ
ձեր գլխին գայ այն, ինչ ասուած է
մարգարէների գրուածքներում.

41 "Տեսէ՛ք, արհամարհողնե՛ր,
եւ զարմացէ՛ք ու չմուեցէ՛ք.
որովհետեւ ես ձեր օրերում մի գործ եմ կատարելու,
այնպիսի մի գործ, որին չպիտի հաւատամ,

†Լաւագոյն յուն. բն. ունեն բերեց Իսրայէլին:

‡Լաւագոյն յուն. բն. ձեզ բառի փոխարէն ունեն մեզ:

եթէ մէկը ձեզ պատմի այն"»:

42 Եւ երբ Բառնաբասն ու Պօղոսը այնտեղից ելան, աղաչում էին, որ միւս շաբաթ էլ նոյն բաներն ասեն իրենց: 43 Եւ երբ ժողովուրդը ցրուեց, հրեաներից եւ հրէութեան դարձած աստուածապաշտներից շատերը գնում էին Պօղոսի եւ Բառնաբասի յետեւից, որոնք խօսում էին նրանց հետ ու համոզում նրանց, որ շարունակեն մնալ Աստծու շնորհի մէջ: 44 Եւ երբ յաջորդ շաբաթ օրը եկաւ, գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեց Աստծու խօսքը լսելու: 45 Երբ հրեաները այդ բազմութիւնը տեսան, նախանձով լցուեցին եւ, Պօղոսի ասածներին ընդդիմախօսելով, հայհոյում էին: 46 Իսկ Պօղոսն ու Բառնաբասը համարձակ կերպով ասում էին. «Նախ ձեզ պէտք է Աստծու խօսքը խօսէինք. բայց քանի որ դուք այն մերժում էք եւ ձեզ արժանի չէք համարում յաւիտենական կեանքի, ահա մենք դառնում ենք դէպի հեթանոսները. 47 որովհետեւ Տէրը մեզ այսպէս պատուիրեց.

"Քեզ դրեցի որպէս հեթանոսների լոյս,
որպէսզի դու փրկութեան միջոց լինես
մինչեւ երկրի ծագերը"»:

48 Այս բանը լսելով՝ հեթանոսները ուրախացան եւ փառաւորում էին Տիրոջ խօսքը. եւ ովքեր սահմանուած էին յաւիտենական կեանքի համար, հաւատացին: 49 Եւ Աստծու խօսքը ամբողջ գաւառում տարածւում էր: 50 Բայց հրեաները աստուածապաշտ եւ երեւելի կանանց ու քաղաքի գլխաւորներին գրգռեցին եւ, Պօղոսի ու Բառնաբասի դէմ հալածանք յարուցելով, իրենց սահմաններից նրանց դուրս հանեցին: 51 Իսկ նրանք, իրենց ոտքերի փոշին նրանց վրայ թափ տալով, եկան Իկոնիոն: 52 Եւ աշակերտները լցուեցին ուրախութեամբ եւ Սուրբ Հոգով:

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ԻԿՈՆԻՈՆՈՒՄ

14 Իկոնիոնում Պօղոսն ու Բառնաբասը միասին էին մտնում հրեաների ժողովարանը եւ նոյն ձեւով խօսում, այնպէս որ թէ՛ հրեաների եւ թէ՛ հեթանոսների մի մեծ բազմութիւն հաւատաց: 2 Բայց չհաւատացող հրեաները հեթանոսների մտքերը եւս չարացրին եղբայրների դէմ: 3 Նրանք երկար ժամանակ շրջում էին եւ համարձակ խօսում. եւ Տէրը վկայում էր իր շնորհի խօսքի մասին՝ թոյլ տալով, որ նրանց ձեռքով նշաններ եւ զարմանալի գործեր լինեն: 4 Եւ քաղաքի բազմութեան մէջ պառակտում առաջ եկաւ. ոմանք հրեաների կողմն էին, եւ ոմանք՝ առաքեալների: 5 Երբ հեթանոսներն ու հրեաները իրենց իշխանաւորներով միասին նրանց անարգելու եւ քարկոծելու դիմեցին, 6 նրանց լուր տրուեց, եւ փախան Լիկայոնացիների Լիւստրա եւ Դերբէ քաղաքներն ու շրջակայ գաւառը եւ այնտեղ էին աւետարանում:

Ի ԾՆԷ ԿԱՂԻ ԲԺՇԿՈՒՄԸ ԼԻՒՍՏՐԱՅՈՒՄ

7 Եւ Լիւստրայում մի մարդ կար՝ նստած, ոտքից տկար, ի ծնէ կաղ, որը երբեք չէր քայլել: 8 Սա լսեց Պօղոսի խօսքերը, որը, նրան նայելով եւ տեսնելով, թէ փրկութեան հաւատ ունի, 9 բարձրաձայն ասաց. «Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով քեզ եմ ասում. կանգնի՛ր քո ոտքերի վրայ ուղիղ»: Եւ նա վեր ցատկեց ու վազվզում էր: 10 Եւ ժողովրդի բազմութիւնը, տեսնելով այն, ինչ Պօղոսն արեց, իր ձայնը բարձրացրեց եւ լիկայոներէն ասաց. «Աստուածներ, մարդկանց կերպարանքով, իջան մեզ մօտ»: 11 Եւ Բառնաբասին Դիոս էին կոչում, իսկ Պօղոսին՝ Հերմէս, քանի որ նա էր խօսքն առաջնորդողը: 12 Իսկ քաղաքի մուտքին կանգնած Դիոսի քուրմը, ցուլեր եւ պսակներ հասցնելով դռան մօտ, կամենում էր զոհ մատուցել բազմութեան հետ միասին: 13 Իսկ Բառնաբաս եւ Պօղոս առաքեալները, երբ այդ լսեցին, իրենց զգեստները պատառոտելով՝ ամբոխի միջից դուրս վազեցին†. աղաղակում էին եւ ասում. 14 «Ո՛վ մարդիկ, այդ ի՞նչ էք անում դուք. մենք էլ բնութեամբ ձեզ նման մարդիկ ենք, որ ձեզ աւետարանում

†Յուն՝ արեանը՝ դէպի ամբոխը վազեցին:

ենք, որպէսզի այդպիսի ունայնութիւններից դառնաք դէպի կենդանի Աստուածը, որն ստեղծեց երկինքը եւ երկիրը եւ ծովը եւ ամէն ինչ, որ նրանց մէջ կայ: 15 Նա անցեալ ժամանակներում բոլոր հեթանոս ազգերին թոյլ տուեց, որ գնան իրենց ճանապարհներով: 16 Եւ սակայն նա իրեն առանց վկայութեան չթողեց, այլ իր բարերարութեամբ երկնքից ձեզ անձրեւներ տուեց ու պտղաբեր եղանակներ՝ լիացնելով ձեզ կերակուրներով, իսկ ձեր սրտերը՝ ուրախութեամբ»: 17 Եւ այս ասելով՝ հազիւ հանդարտեցրին ժողովրդի բազմութիւնը, որ իրենց զոհ չմատուցեն, այլ իւրաքանչիւրը գնայ իր տեղը†:

18 Եւ մինչ նրանք շրջում եւ ուսուցանում էին, Անտիոքից եւ Իկոնիոնից եկան հասան հրեաներ, որոնք Պօղոսի եւ Բառնաբասի հետ համարձակութեամբ վիճելով՝ խաբեցին‡ ժողովրդին, որ հեռու մնան նրանցից: Եւ ասում էին. «Ոչ մի ճշմարիտ բան չեն ասում, այլ ամէն ինչ ստում են»: Եւ Պօղոսին քարկոծելով՝ քարշ տուին քաղաքից դուրս ու նրան մեռած էին համարում: 19 Եւ երբ աշակերտները նրան շրջապատեցին, վեր կացաւ եւ քաղաք մտաւ ու յաջորդ օրն իսկ Բառնաբասի հետ միասին ելաւ գնաց Դերբէ:

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

20 Այդ քաղաքում աւետարանելուց եւ շատերին աշակերտ դարձնելուց յետոյ, վերադարձան Լիւստրա, Իկոնիոն եւ Անտիոք՝ 21 աշակերտածների սրտերը ամրացնելով եւ յորդորելով, որպէսզի հաստատ մնան հաւատի մէջ: Եւ ասում էին. «Բազում նեղութիւններ կրելով է, որ մենք պէտք է մտնենք Աստծու արքայութիւնը»: 22 Նրանց համար իւրաքանչիւր եկեղեցու վրայ երէցներ ձեռնադրեցին, պահեցողութեամբ հանդերձ աղօթք արեցին եւ նրանց յանձնեցին Տիրոջը, որին հաւատացել էին: 23 Պիսիդիայի մէջ շրջելով՝ եկան Պամփիւլիա: 24 Եւ Պերգէում

†Յուն. լաւ բն. չունեն այլ իւրաքանչիւրը գնայ իր տեղը նախադասութիւնը:
‡Յուն. լաւ բն. ունեն համոզեցին:

եւս Տիրոջ խօսքը քարոզելուց յետոյ իջան Ատտալիա: 25 Այնտեղից էլ նաւարկելով՝ գնացին Անտիոք, որտեղից էլ յանձնուած էին Աստծու շնորհներին այն գործի համար, որ կատարեցին: 26 Եւ երբ եկան ու հաւաքեցին եկեղեցին, պատմեցին, թէ Աստուած նրանց հետ ինչքան բաներ արեց եւ թէ ինչպէս հեթանոսների առաջ հաւատի դուռը բացեց: 27 Եւ երկար ժամանակ շրջում էին աշակերտների հետ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

15 Հրէաստանից իջել էին ոմանք Անտիոք եւ եղբայրներին ուսուցանում էին. «Մովսէսի օրէնքի համաձայն, եթէ չթլփատուէք, չէք կարող փրկուել»: 2 Եւ երբ Պօղոսի եւ Բառնաբասի ու նրանց միջեւ շատ հակառակութիւն եւ վէճ առաջացաւ, վճռեցին, որ Պօղոսն ու Բառնաբասը եւ նրանցից ոմանք այդ խնդրի համար Երուսաղէմ բարձրանան, առաքեալների եւ երէցների մօտ: 3 Եկեղեցու կողմից ճանապարհ դրուելուց յետոյ, նրանք շրջելով անցան Փիւնիկէի եւ Սամարիայի միջով եւ պատմեցին հեթանոսների դարձի մասին՝ մեծ ուրախութիւն պատճառելով բոլոր եղբայրներին:

4 Եւ երբ Երուսաղէմ հասան, եկեղեցու առաքեալների ու երէցների կողմից ընդունուեցին. պատմեցին, թէ Աստուած ինչ բաներ արեց իրենց միջոցով: 5 Փարիսեցիների հերձուածից մի քանի հաւատացեալներ վեր կացան ու ասացին. «Դրանց պէտք է թլփատել եւ պատուիրել, որ պահեն Մովսէսի օրէնքը»:

6 Եւ առաքեալներն ու երէցները հաւաքուեցին այս բանը քննութեան առնելու համար: 7 Եւ շատ վէճ լինելուց յետոյ, Պետրոսը ոտքի կանգնեց ու նրանց ասաց. «Եղբայրնե՛ր, դուք ինքներդ գիտէք, որ ձեր մէջ առաջին օրերից Աստուած ինձ ընտրեց, որ հեթանոսները իմ բերանով Աւետարանի խօսքը լսեն եւ հաւատան: 8 Եւ սրտագէտ Աստուած նրանց վկայեց՝ Սուրբ Հոգին տալով նրանց այնպէս, ինչպէս տուեց մեզ: 9 Եւ նրանց ու մեր միջեւ

ոչ մի խտրութիւն չդրեց՝ հաւատով մաքրելով նրանց սրտերը: 10 *Արդ, ինչո՞ւ էք փորձում Աստծուն՝ աշակերտների վզին դնելով մի լուծ, որը ո՛չ մեր հայրերը եւ ո՛չ էլ մենք կարողացանք տանել:* 11 *Այլ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով հաւատում ենք, որ կը փրկուենք, ինչպէս եւ նրանք»:*

12 *Ամբողջ ժողովը լռեց. ապա լսում էին Բառնաբասի ու Պողոսի պատմելը, թէ Աստուած նրանց ձեռքով ինչքան նշաններ եւ զարմանալի գործեր կատարեց հեթանոսների մէջ:*

13 *Երբ նրանք լռեցին, Յակոբոսը, խօսք առնելով, ասաց.* «*Եղբայրնե՛ր, լսեցէ՛ք ինձ.* 14 *Շմաւոնը պատմեց, թէ ինչպէս Աստուած առաջուց հոգածութիւն ցոյց տուեց՝ հեթանոսներից իր անունով մի ժողովուրդ ունենալու համար:* 15 *Եւ այդ բանում մարգարէների խօսքերը համընկնում են իրար, ինչպէս որ գրուած է.*

16 *"Սրանից յետոյ կը վերադառնամ*
եւ կը շինեմ Դաւթի փուլ եկած տունը
եւ նրա աւերակները վերստին կը շինեմ
ու կը վերականգնեմ այն,
17 *որպէսզի Տիրոջը փնտռեն մնացած մարդիկ,*
ինչպէս եւ բոլոր հեթանոսները,
որոնց վրայ դրուած է իմ անունը",

– ասում է Տէրը, նա, որ անում է այս բոլորը: 18 *Ի յաւիտենից յայտնի են Տիրոջը իր բոլոր գործերը:* 19 *Դրա համար ես էլ ինձ իրաւունք եմ վերապահում չնեղել նրանց, ովքեր հեթանոսներից դառնում են Աստծուն,* 20 *այլ գրել նրանց, որ խորշեն կուռքերին զոհուած կերակուրներից եւ պոռնկութիւնից*†*, խեղդամահ արուած կենդանիներից եւ արիւնից.* 21 *քանի որ Մովսէսը, առաջին սերունդներից սկսած, իւրաքանչիւր քաղաքում իր քարոզիչներն ունի, եւ նա ամէն շաբաթ օր ժողովարանում ընթերցւում է»:*

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹ

22 *Այն ժամանակ առաքեալներին եւ երէցներին, ամբողջ եկեղեցու հետ միասին, հաճելի թուաց, որ իրենց միջից ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պողոսի եւ Բառնաբասի հետ. Յուդային՝ Բարսաբա կոչուածին եւ Շիղային, որոնք գլխաւորներն էին*†*:* 23 *Եւ եղբայրներին նրանց միջոցով գրեցին հետեւեալը. «Առաքեալները, երէցները եւ եղբայրները Անտիոքում, Սիրիայում եւ Կիլիկիայում հեթանոսներից եղող եղբայրներիդ ողջոյն են յղում:* 24 *Քանի որ լսեցիք, թէ ոմանք, իբրեւ թէ մեզնից, որոնց մենք հրաման չենք տուել, խռովեցրել են ձեզ խօսքերով եւ խախտել են ձեր մտքերը՝ ասելով, թէ պէտք է թլփատուել եւ օրէնքը պահել*‡*,* 25 *ուստի, հաճելի թուաց մեզ՝ միատեղ հաւաքուածներիս, ուղարկել ձեզ մօտ ընտրուած մարդկանց՝ մեր սիրելիներին, Բառնաբասի ու Պողոսի հետ,* 26 *մարդիկ, որոնք իրենց անձը նուիրեցին մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար:* 27 *Արդ, ուղարկեցինք Յուդային եւ Շիղային, որ նրանք էլ խօսքով նոյնը պատմեն.* 28 *որովհետեւ հաճելի թուաց Սուրբ Հոգուն եւ մեզ՝ աւելի ոչ մի բեռ չդնել ձեր վրայ, բացի այս կարեւորներից.* 29 *այն է՝ հեռու մնալ կուռքերին զոհուած կերակուրներից եւ արիւնից, խեղդամահ արուած կենդանիներից ու պոռնկութիւնից*§*. ձեզ դրանցից հեռու պահելով՝ լաւ կ'անէք: Ողջ եղէք»:*

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ ԱՆՏԻՈՔՈՒՄ

30 *Եւ նրանք մեկնելով՝ ճանապարհ դրուեցին եւ Անտիոք իջան ու ժողովրդին հաւաքելով՝ նամակը տուեցին:* 31 *Եւ նրանք ընթերցելով՝ այդ մխիթարութեան համար ուրախացան:* 32 *Յուդան եւ Շիղան, քանի որ նրանք էլ մարգարէներ էին, բազում խօսքերով յորդորեցին եղբայրներին եւ ամրապնդեցին նրանց:* 33 *Եւ միառժամանակ այնտեղ մնալով՝ եղբայրների կողմից խաղաղութեամբ յետ ուղարկուեցին առաքեալների մօտ:* 34† *Սակայն Շիղային հաճելի թուաց այնտեղ մնալ:* 35 *Իսկ Պողոսն ու Բառնաբասը շրջում էին Անտիոքում եւ շատ ուրիշների հետ ուսուցանում ու աւետարանում էին Աստծու խօսքը:*

†Լաւագոյն յուն. բն. ունեն *որ խորշեն անպարկեշտութիւնից, խեղդամահ արուածից եւ արիւնից:*

†Յուսարէնը՝ գլխաւորներն էին եղբայրների մէջ:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն ասելով, թէ պէտք է թլփատուել եւ օրէնքը պահել նախադասութիւնը:

§Լաւագոյն յուն. բն. *պոռնկութիւնից* բառի փոխարէն ունեն *անպարկեշտութիւնից:*

†Լաւագոյն յուն. բն. չունեն այս համարը:

ՊՈՂՈՍԻ ԵՒ ԲԱՌՆԱԲԱՍԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

36 *Իսկ մի քանի օր յետոյ Պողոսը Բառնաբասին ասաց. «Վերադառնանք եւ շրջենք եղբայրների մէջ բոլոր այն քաղաքներում, որտեղ քարոզեցինք Տիրոջ խօսքը՝ տեսնելու, թէ ինչ վիճակում են»:* 37 *Բառնաբասն ուզում էր Մարկոս կոչուած Յովհաննէսին էլ հետը տանել,* 38 *բայց Պողոսը չէր ուզում, որ Պամփիւլիայում իրենցից հեռացած եւ գործի համար իրենց հետ չեկած մէկին իրենց հետ տանեն:* 39 *Եւ նրանց մէջ դժտութիւն առաջացաւ, այնքան, որ իրարից բաժանուեցին. Բառնաբասը Մարկոսին վերցնելով՝ նաւարկեց դէպի Կիպրոս:* 40 *Իսկ Պողոսը Շիղային ընտրելով՝ ճանապարհ ընկաւ՝ եղբայրների կողմից յանձնուելով Աստծու շնորհին.* 41 *Եւ շրջում էր Ասորիքի եւ Կիլիկիայի կողմերում ու ամրապնդում էր եկեղեցիները:*

ՊՈՂՈՍԸ, ՇԻՂԱՆ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍԸ

16 *Պողոսը եկաւ հասաւ Դերբէ եւ Լիւստրա: Եւ այնտեղ Տիմոթէոս անունով մի աշակերտ կար, հաւատացեալ հրեայ կնոջ եւ հեթանոս հօր որդի,* 2 *որը վկայուած էր լիւստրացի եւ իկոնիացի եղբայրների կողմից:* 3 *Պողոսն ուզեց նրան իր հետ տանել ու վերցրեց թլփատեց նրան՝ այդ տեղերում գտնուող հրեաների պատճառով, քանի որ բոլորը գիտէին, թէ նրա հայրը հեթանոս էր:* 4 *Երբ անցնում էին քաղաքներով, նրանց յանձնարարում էին պահել Երուսաղէմում գտնուող առաքեալների եւ երէցների կողմից պատուիրուած հրամանները:* 5 *Այսպէս, եկեղեցիները ամրապնդւում էին հաւատի մէջ ու օրէցօր նրանց թիւն աւելանում էր:*

ԱՌԱՔԵԼԱՆԵՐԸ ԿՏՐՈՒՄ-ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ

6 *Շրջեցին Փռիւգիայում եւ Գաղատիայի կողմերում՝ Սուրբ Հոգուց արգելուելով, որ Ասիայի նահանգում խօսքը չքարոզեն:* 7 *Բայց երբ Միւսիայի մօտերքը եկան, փորձում էին Բիւթանիա գնալ, սակայն Յիսուսի Հոգին նրանց թոյլ չտուեց:* 8 *Ուստի, Միւսիայի միջով անցնելով, Տրովադա իջան:* 9 *Գիշերը Պողոսին մի տեսիլք երեւաց. մի մակեդոնացի մարդ կանգնել աղաչում էր նրան ու ասում. «Մակեդոնիա անցի՛ր եւ օգնի՛ր մեզ»:* 10 *Եւ երբ նա այդ տեսիլքը տեսաւ, իսկոյն ուզեցինք առաջ գնալ դէպի Մակեդոնիա՝ հետեւութիւն անելով, որ Տէրը մեզ հրաւիրեց, որ նրանց աւետարանենք:*

ԼԻԴԻԱՅԻ ԴԱՐՁԸ

11 *Տրովադայից դուրս գալով՝ ուղիղ գնացինք դէպի Սամոթրակէ եւ յաջորդ օրը՝ Նոր քաղաք.* 12 *այնտեղից էլ՝ Փիլիպպէ, որ Մակեդոնիայի առաջին գաւառի մէկ քաղաքն էր՝ Կողովնիա*†*: Այնտեղ, քաղաքում մի քանի օր մնացինք:* 13 *Շաբաթ օրը քաղաքից դուրս ելանք դէպի գետափ, ուր հրեաները սովոր էին աղօթք անել: Եւ նստած խօսում էինք հաւաքուած կանանց հետ:* 14 *Եւ Լիդիա անունով աստուածավախ մի կին, որ Թիւատիր քաղաքից էր եւ ծիրանի զգեստներ վաճառող, լսում էր. եւ նրա սիրտը Տէրն ինքն էր բացել՝ անսալու Պողոսի խօսքերին:* 15 *Եւ երբ որ մկրտուեցին ինքը եւ իր տունը, նա աղաչեց եւ ասաց. «Եթէ ինձ Տիրոջ հաւատացող էք համարում, իմ տունը մտէ՛ք եւ օթեւանեցէ՛ք»: Եւ ստիպելով՝ մեզ տարաւ:*

ՊՈՂՈՍԻ ԵՒ ՇԻՂԱՅԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՓԻԼԻՊՊԷՈՒՄ

16 *Եւ մինչ մենք աղօթելու էինք գնում, մեզ հանդիպեց մի աղախին, որին մի հարցուկ՝ չար ոգի էր բռնել.*

†Այսինքն՝ հռոմէացի գաղութարարների բաղմը:

սպ գուշակութիւններով իր տէրերին մեծ օգուտ էր տալիս: 17 Նա Պողոսի եւ մեր յետեւից ընկած՝ աղաղակում էր ու ասում. «Այս մարդիկ Բարձրեալն Աստծու ծառաներն են, որ ձեզ պատմում են փրկութեան ճանապարհները»: 18 Եւ շատ օրեր էր անում այդ բանը: Պողոսը, զայրանալով, դարձաւ եւ չար ոգուն ասաց. «Յիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ, որ դրա միջից դուրս ելնես»: Եւ նոյն ժամին չար ոգին ելաւ: 19 Երբ նրա տէրերը տեսան, որ իրենց շահի աղբիւրը կորուեց, Պողոսին եւ Շիղային բռնելով՝ քաշեցին դէպի հրապարակը, իշխանաւորների առաջ 20 ու նրանց բերելով զօրագլուխների մօտ՝ ասացին. «Այս մարդիկ մեր քաղաքները խռովեցնում են. իրենք հրեաներ են 21 եւ մեզ քարոզում են օրէնքներ, որ օրինաւոր չէ մեզ համար ո՛չ ընդունել եւ ո՛չ էլ գործադրել, քանի որ հռոմէացիներ ենք»: 22 Եւ ամբոխը թափուեց նրանց վրայ. զօրագլուխները պատռեցին նրանց զգեստները եւ հրամայեցին նրանց գանահարել: 23 Եւ նրանց շատ վէրքեր հասցնելուց յետոյ բանտարկեցին ու բանտապետին պատուիրեցին, որ նրանց զգուշութեամբ պահի: 24 Սա այսպիսի հրաման ստանալով՝ նրանց ներսի բանտը նետեց ու նրանց ոտքերը կոճղի մէջ ամրացրեց:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ

25 Եւ գիշերուայ կէսին Պողոսն ու Շիղան աղօթում էին ու օրհնում Աստծուն: Կալանաւորները նրանց ականջ էին դնում: 26 Եւ յանկարծակի մեծ ցնցում եղաւ, այնպէս որ բանտի հիմքերը շարժուեցին, եւ իսկոյն բոլոր դռները բացուեցին, ու բոլորի կապանքները քանդուեցին: 27 Երբ բանտապետը արթնացաւ եւ բանտի դռները բացուած տեսաւ, սուրը քաշեց եւ ուզում էր ինքն իրեն սպանել՝ կարծելով, որ բանտարկեալները փախել են: 28 Բայց Պողոսը բարձր ձայնով կանչեց ու ասաց. «Դու քեզ վնաս մի՛ հասցրու, քանի որ բոլորս այստեղ ենք»: 29 Նա լոյս խնդրեց ու ներս խուժեց. եւ զարհուրած ընկաւ Պողոսի եւ Շիղայի առաջ. 30 եւ նրանց դուրս բերելով՝ ասաց. «Տի՛րք իմ, ես ի՞նչ պէտք է անեմ, որ փրկուեմ»: 31 Եւ նրանք ասացին. «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին եւ կը փրկուես դու եւ քո ամբողջ տունը»: 32 Եւ նրան ու բոլոր նրանց, որ նրա տանն էին, քարոզեցին Տիրոջ խօսքը: 33 Եւ գիշերուայ նոյն ժամին տարաւ նրանց, վէրքերից լուաց, եւ ինքն ու իւրայինները բոլորն էլ անմիջապէս մկրտուեցին: 34 Եւ նրանց բերելով իր տունը՝ նրանց առաջ սեղան դրեց. եւ իր ամբողջ տնով ուրախացաւ Աստծուն հաւատացած լինելու համար: 35 Երբ առաւօտ եղաւ, զօրագլուխները պատուիրակ ուղարկեցին ու ասացին. «Արձակի՛ր այդ մարդկանց»: 36 Եւ բանտապետը Պողոսին տեղեկացրեց այս խօսքերը. «Զօրագլուխները մարդ են ուղարկել, որ ազատ արձակուէք: Ուստի, դո՛ւրս եկէք եւ գնացէ՛ք խաղաղութեամբ»: 37 Իսկ Պողոսը նրանց ասաց. «Հրապարակաւ գանահարեցին մեզ՝ հռոմէացի անմեղ մարդկանցս, եւ բանտ դրեցին ու հիմա թաքուն-թաքո՞ւն են մեզ դուրս հանում. ո՛չ, այդպէս չի լինի. այլ հէնց իրենք թող գան եւ դուրս հանեն մեզ»: 38 Եւ պատուիրակները այս խօսքերը տեղեկացրին զօրագլուխներին, որոնք, երբ լսեցին, թէ հռոմէացիներ են, զարհուրեցին եւ եկան աղաչեցին նրանց: 39 Եւ երբ նրանց դուրս հանեցին, խնդրեցին նրանց, որ իրենց քաղաքից գնան: 40 Եւ նրանք, բանտից դուրս գալով, մտան Լիդիայի մօտ եւ, եղբայրներին տեսնելով, մխիթարեցին նրանց ու մեկնեցին:

ՅՈՒՋՈՒՄՆԵՐ ԹԵՍԱՂՈՆԻԿԷՈՒՄ

17 Եւ Ամփիպոլիս ու Ապողոնիա քաղաքների միջով անցնելով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր հրեաների ժողովարան կար: 2 Եւ ըստ իր սովորութեան, Պողոսը մտաւ նրանց մօտ եւ երեք շաբաթ օրեր նրանց հետ խօսեց Գրքերից: 3 Բաց էր անում Գրքերը եւ նրանց ապացուցում, թէ Քրիստոս պէտք է չարչարուէր եւ մեռելներից յարութիւն առնէր. եւ ասում էր. «Նա՛ է Քրիստոսը՝ Յիսուսը, որին ես քարոզում եմ ձեզ»: 4 Եւ նրանցից ոմանք համոզուեցին ու յարեցին Պողոսին եւ Շիղային: Բացի դրանցից, կային նաեւ աստուածապաշտ հեթանոսներ եւ թուով ոչ սակաւ երեւելի կանայք: 5 Իսկ հրեաները նախանձեցին եւ վերցնելով գռեհիկ, անօրէն մի քանի մարդկանց՝ ամբոխ կազմեցին եւ քաղաքը յուզեցին. եւ Յասոնի տան առաջ կուտակուելով՝ ուզում էին Պողոսին եւ Շիղային հրապարակ տանել: 6 Եւ երբ նրանց չգտան, Յասոնին եւ եղբայրներից ոմանց քարշ տուին քաղաքապետների մօտ՝ բողոք բարձրացնելով, թէ՝ «Սրանք, որ աշխարհը յուզեցին, այստեղ էլ են հասել, 7 եւ Յասոնը նրանց ընդունել է. եւ սրանք բոլորը կայսեր հրամաններին հակառակ են գործում. մի ոմն Յիսուսի մասին ասում են, թէ թագաւոր է»: 8 Եւ գրգռեցին ժողովրդին ու քաղաքապետներին, որ այս բաները լսում էին: 9 Բայց երաշխիք ստանալով Յասոնից եւ ուրիշներից՝ արձակեցին նրանց:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԲԵՐԻԱՅՈՒՄ

10 Բայց եղբայրները գիշերով շտապ ճանապարհ դրեցին դէպի Բերիա Պողոսին եւ Շիղային, որոնք, երբ այստեղ հասան, գնացին հրեաների ժողովարանը, 11 քանի որ սրանք աւելի ազնիւ մարդիկ էին, քան թէ Թեսաղոնիկէում եղածները: Սրանք ամենայն յօժարութեամբ ընդունեցին խօսքը. ամբողջ ժամանակ քննում էին գրուածքները՝ իմանալու, թէ այդ բաները այդպէ՞ս են: 12 Նրանցից շատերը հաւատացին, ինչպէս նաեւ թուով ոչ սակաւ յոյն երեւելի կանայք եւ տղամարդիկ: 13 Բայց Թեսաղոնիկէի հրեաները երբ իմացան, թէ Բերիայում էլ Պողոսի կողմից քարոզուեց Աստծու խօսքը, այնտեղ էլ եկան՝ ժողովրդի բազմութիւնը յուզելու ու գրգռելու: 14 Այն ժամանակ եղբայրները Պողոսին իսկոյն ուղարկեցին, որ գնայ մինչեւ ծովեզր, իսկ Շիղան եւ Տիմոթէոսը մնացին այնտեղ: 15 Եւ ովքեր Պողոսին տանում էին, նրան հասցրին մինչեւ Աթէնք եւ, Շիղային ու Տիմոթէոսին ուղղուած պատուէր ստանալով, որ շտապ նրա մօտ գան, իրենք վերադարձան:

ՊՈՂՈՍԸ ԱԹԷՆՔՈՒՄ

16 Եւ մինչ Պողոսը Աթէնքում նրանց էր սպասում, նրա հոգին իր մէջ զայրանում էր, երբ տեսնում էր քաղաքը կռապաշտութեան մէջ: 17 Եւ ժողովարանում դիմում էր հրեաներին ու յոյն աստուածապաշտ մարդկանց, իսկ հրապարակներում էլ ամէն օր՝ ում որ հանդիպում էր: 18 Էպիկուրեան եւ ստոյիկեան փիլիսոփաներից ոմանք, ձեռ առնելով, վիճում էին նրա հետ. ոմանք էլ ասում էին. «Այս շաղակրատն ի՞նչ է ուզում ասել»: Իսկ ուրիշներն էլ, թէ՝ «Երեւում է, որ ինչոր օտար աստուածութիւնների քարոզիչ է», քանի որ նա Յիսուսին ու յարութիւնն էր աւետարանում: 19 Եւ նրան բռնեցին տարան Արիսպագոսի† առջեւ ու ասացին. «Կարո՞ղ ենք իմանալ, թէ ի՞նչ է այդ նոր վարդապետութիւնը, որը դու քարոզում ես: 20 Օտարոտի բաներ ես մատուցում մեր ականջներին. ուզում ենք իմանալ, թէ դրանք ի՛նչ բաներ կը լինեն» 21 (որովհետեւ աթենացիք բոլորը, ինչպէս նաեւ օտար եկուորները այլ բանով չէին զբաղւում, քան միայն ասելով կամ լսելով մի աւելի նոր խօսք):

ՊՈՂՈՍԻ ՃԱՌԸ ԱՐԻՍՊԱԳՈՍԻ ՄԷՋ

22 Պողոսը կանգնեց Արիսպագոսի մէջտեղում եւ ասաց. «Աթենացինե՛ր, տեսնում եմ, որ դուք ըստ ամենայնի ջերմեռանդ հաւատասէր էք, 23 քանի որ շրջելով եւ տեսնելով ձեր պաշտածները՝ գտայ նաեւ մի բագին, որի վրայ գրուած էր՝ «Անծանօթ Աստծուն». ում դուք առանց ճանաչելու էք պաշտում, ես նոյնն եմ քարոզում ձեզ: 24 Աստուած, որ ստեղծեց այս աշխարհը եւ այն ամէնը, որ նրա մէջ կայ, նա՛ է Տէրը երկնքի եւ երկրի. 25 Նա ձեռա-

†Արէսի բլուրը, որտեղ աթենացիների երեւելիները հաւաքւում էին ժողովի:

կերտ տաճարներում չի բնակւում, ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտւում, որպէս թէ մի բանի կարօտ լինէր: Նա՛ է տալիս ամէն բանի կեանք եւ շունչ եւ ամէն ինչ: 26 Մէկ արիւնից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակուեն ամբողջ երկրի վրայ, հաստատեց նախակարգեալ ժամանակները եւ դրեց նրանց բնակութեան սահմանները, 27 որ փնտռեն Աստծուն ու խարխափելով թերեւս գտնեն նրան. թէեւ նա մեզնից իւրաքանչիւրիցս հեռու չէ, 28 քանի որ նրանով ապրում ենք եւ շարժւում ենք եւ կանք, ինչպէս ձեր բանաստեղծներից ոմանք ասացին, թէ՝ մենք նրա զարմից ենք: 29 Եւ արդ, որովհետեւ Աստծու զարմն ենք, չպէտք է խորհենք, թէ աստուածայինը նման է ոսկուն կամ արծաթին կամ քարին, որոնք ճարտարութեամբ եւ մարդու խելքով են քանդակուած: 30 Բայց Աստուած, անգիտութեան ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատուիրում մարդկանց, որ ամէն ոք ապաշխարի†. 31 քանի որ սահմանել է մի օր, երբ աշխարհը արդարութեամբ պիտի դատի այն մարդու ձեռքով, որի միջոցով որոշեց հաւաստիք տալ ամենքին՝ նրան մեռելներից յարութիւն տալով»:

32 Երբ լսեցին մեռելների յարութեան մասին, ոմանք ծաղրի էին ենթարկում. ոմանք էլ ասում էին. «Մի ուրիշ անգամ կը լսենք քեզնից այդ մասին»: 33 Եւ ապա Պօղոսը նրանց միջից ելաւ գնաց: 34 Իսկ մի քանի մարդիկ, յարելով նրան, հաւատացին. նրանց թւում էր նաեւ Դիոնեսիոս Արիսպագացին եւ Դամարիս անունով մի կին եւ սրանց հետ ուրիշներ:

ԿՈՐՆԹՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

18 Սրանից յետոյ Պօղոսը Աթէնքից մեկնելով՝ եկաւ Կորնթոս. 2 եւ այնտեղ գտաւ Ակիւղաս անունով մի հրեայի, ծագումով պոնտացի, որը իր կնոջ՝ Պրիսկիղայի հետ նոր էր եկել Իտալիայից, համաձայն Կղոդէոս կայսեր հրամանի, որով բոլոր հրեաները Հռոմից պէտք է հեռանային: Եւ գնաց միացաւ նրանց: 3 Եւ որովհետեւ արհեստակից էր, նրանց մօտ մնաց եւ աշխատում էր, քանի որ արհեստով վրանագործներ էին: 4 Նա ամէն շաբաթ օր քարոզում էր ժողովարանում եւ համոզում հրեաներին ու հեթանոսներին: 5 Երբ Շիղան եւ Տիմոթէոսը Մակեդոնիայից իջան եկան, Պօղոսը հոգու կողմից մղւում էր վկայութեամբ փաստելու հրեաներին, թէ Յիսուսն է Քրիստոսը: 6 Եւ երբ նրանք ընդդիմացան եւ հայհոյեցին, զգեստները թափ տուեց ու ասաց. «Ձեր արիւնը ձեր գլուխը. ես անպարտ եմ. սրանից յետոյ հեթանոսներին եմ գնում»: 7 Եւ այնտեղից գնալով՝ մտաւ մէկի տունը, որի անունը Տիտոս Յուստոս էր, մի աստուածապաշտ մարդ, որի տունը ժողովարանին կից էր: 8 Կրիսպոս ժողովրդապետը հաւատաց Տիրոջը իր ամբողջ տնով: Նաեւ կորնթացիներից շատերը նրան լսելով՝ հաւատացին եւ մկրտուեցին: 9 Եւ Տէրը գիշերը մի տեսիլքի մէջ Պօղոսին ասաց. «Մի՛ վախեցիր, այլ խօսի՛ր եւ մի՛ լռիր, 10 քանի որ ես քեզ հետ եմ. եւ ոչ մէկը քո դէմ չպիտի ելնի քեզ չարչարելու համար, քանի որ այս քաղաքում ես բազում ժողովուրդ ունեմ»: 11 Եւ նա այնտեղ մնաց մէկ տարի եւ վեց ամիս՝ ուսուցանելով նրանց Աստծու խօսքը:

ՊՕՂՈՍՆ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

12 Աքայեցիների բդեշխի փոխանորդ Գաղիոնի ժամանակ հրեաները, միաբանուելով, Պօղոսի դէմ ելան եւ նրան ատեան բերեցին: 13 Նրանք ասում էին. «Սա տարհամոզում է մարդկանց, որ օրէնքին հակառակ եղանակով Աստծուն պաշտեն»: 14 Եւ երբ Պօղոսը պատրաստւում էր բանալու իր բերանը, Գաղիոնը հրեաներին ասաց. «Ո՛վ հրեաներ, եթէ որեւէ անիրաւութիւն կամ մի չարանենգ խարդախութիւն եղած լինէր, պատեհ էր, որ ես ձեզ անսայի. 15 բայց եթէ խնդիրներ կան խօսքի կամ անունների եւ կամ ձեր օրէնքների մասին, դուք ինքնե՛րդ քննեցէք, քանի որ այդպիսի բաների դատաւոր լինել չեմ ուզում»: 16 Եւ նրանց ատեանից դուրս արեց: 17 Եւ բոլոր յոյները ժողովրդապետ Սոսթենէսին բռնելով՝ ատեանի առաջ ծեծում էին, եւ Գաղիոնը այդ մասին բնաւ հոգ չէր անում:

†Յունարէնում՝ ...որ ամէն մարդ ամէն տեղ ապաշխարի:

ՊՕՂՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԱՆՏԻՈՔ

18 Իսկ Պօղոսը դեռ շատ օրեր մնալով՝ եղբայրներից հրաժեշտ առաւ եւ նաւարկեց դէպի Ասորիք: Նրա հետ էին նաեւ Պրիսկիղան եւ Ակիւղասը: Նա Կենքրայում գլուխը խուզել էր, քանի որ ուխտ էր արել: 19 Եւ Եփեսոս հասնելով՝ նրանց այնտեղ թողեց եւ ինքը ժողովարան մտնելով՝ խօսքն ուղղեց հրեաներին: 20 Եւ նրան աղաչեցին, որ երկար ժամանակ այնտեղ մնայ. բայց նա յանձն չառաւ, 21 այլ հրաժեշտ տուեց նրանց ու ասաց. «Աստծու կամքով նորից կը գամ ձեզ մօտ»: 22 Եւ Եփեսոսից մեկնեց ու իջաւ Կեսարիա. դրանից յետոյ ելաւ վեր, երուսաղէմ եւ ողջոյն տուեց եկեղեցուն. ապա իջաւ Անտիոք: 23 Միառժամանակ այնտեղ մնալուց յետոյ ելաւ հերթով շրջելու գաղատացիների երկիրը եւ Փռիւգիան՝ ամրապնդելով բոլոր աշակերտածներին:

ԱՊՈՂՈՍԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ ԵՓԵՍՈՍՈՒՄ

24 Ապողոս անունով մի հրեայ, ծագումով ալեքսանդրիացի, եկաւ հասաւ Եփեսոս. սա մի ճարտարախօս մարդ էր եւ հմուտ՝ Գրքերին: 25 Տեղեակ էր նա Տիրոջ ճանապարհին եւ հոգով եռում էր. խօսում եւ ճշմարտութեամբ ուսուցանում էր Յիսուսի մասին: Գիտէր միայն Յովհաննէսի մկրտութիւնը: 26 Սա սկսեց ժողովարանում համարձակօրէն խօսել: Նրան լսելով՝ Ակիւղասը եւ Պրիսկիղան նրան իրենց մօտ առան եւ ճշմարտագոյնս բացատրեցին նրան Աստծու ճանապարհը: 27 Երբ նա կամեցաւ Աքայիա գնալ, եղբայրները քաջալերեցին նրան եւ գրեցին աշակերտներին, որ նրան ընդունեն: Երբ նա այնտեղ հասաւ, Աստծու շնորհիւ շատ օգտակար եղաւ հաւատացեալներին, 28 քանի որ հրեաներին բուռն կերպով յանդիմանում էր՝ Գրքերի միջոցով հրապարակաւ ապացուցելով, թէ Յիսո՛ւսն է Քրիստոսը:

ՊՕՂՈՍԸ ԵՓԵՍՈՍՈՒՄ

19 Եւ մինչ Ապողոսը դեռ Կորնթոսում էր, Պօղոսը շրջեց վերին կողմերը եւ իջաւ Եփեսոս ու այնտեղ մի քանի աշակերտներ գտնելով՝ նրանց ասաց. 2 «Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին ընդունեցի՞ք»: Նրանք ասացին. «Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կայ»: 3 Եւ նա ասաց. «Ուրեմն ինչո՞վ մկրտուեցիք»: Նրանք ասացին. «Յովհաննէսի մկրտութեամբ»: 4 Եւ Պօղոսն ասաց. «Յովհաննէսը ապաշխարել եւ մկրտուել քարոզեց ամբողջ ժողովրդին եւ ասում էր, թէ, ով գալու է իրենից յետոյ, նրա՛ն թող հաւատան. այն է՝ Յիսուս Քրիստոսին»: 5 Եւ երբ այս լսեցին, մկրտուեցին Տէր Յիսուսի անունով: 6 Եւ երբ Պօղոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ. լեզուներ էին խօսում եւ մարգարէանում: 7 Նրանք շուրջ տասներկու հոգի էին:

ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

8 Եւ Պօղոսը ժողովարան մտնելով՝ երեք ամիս համարձակ խօսում էր, քարոզում եւ Աստծու արքայութեան մասին համոզում նրանց: 9 Երբ ոմանք խստասիրտ էին մնում եւ ընդդիմանում՝ բազմութեան առաջ վարկաբեկելով Տիրոջ ճանապարհը, նրանցից բաժանուեց, աշակերտներին զատեց եւ խօսում էր ամէն օր Տիւրան անունով մէկի դպրանոցում: 10 Այս տեւեց երկու տարի, այնպէս որ ասիացի, հրեայ եւ հեթանոս բոլոր բնակիչները լսեցին Տիրոջ խօսքը:

ՀՐԵԱՅ ԵՐԴՈՒԵՑՆՈՂՆԵՐԸ

11 Աստուած ոչ սակաւ զօրաւոր գործեր էր անում Պօղոսի միջոցով. 12 մինչեւ իսկ նրա քրտինքը չո-

բացրած† թաչկինակներ կամ վարշամակներ էին տանում հիւանդների մօտ, եւախտերը հեռանում էին նրանցից. եւ չար ոգիները դուրս էին գալիս: 13 Շրջիկ հրեաներից ոմանք, որ երդուեցնողներ‡ էին, յանդգնեցին Տէր Յիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրայ՝ ասելով. «Երդուեցնում եմ ձեզ Յիսուսով, որին քարոզում է Պօղոսը»: 14 Այս անողները ոմն Սկեւոս հրեայ քահանայապետի եօթը որդիներն էին: 15 Չար ոգին պատասխանեց ու նրանց ասաց. «Յիսուսին գիտեմ եւ Պօղոսին ճանաչում եմ. բայց դուք ո՞վ էք»: 16 Եւ այն մարդը, որի մէջ չար ոգի կար, վազեց նրանց վրայ եւ երկուսին էլ բռնելով՝ գետին զարկեց նրանց. այնպէս որ նրանք մերկ եւ վիրաւոր փախան այդ տնից: 17 Եւ այս բանը յայտնի դարձաւ Եփեսոսում բնակուող բոլոր հրեաներին եւ հեթանոսներին: Եւ նրանց բոլորի մէջ ահ ընկաւ. եւ Տէր Յիսուսի անունը փառաւորուում էր: 18 Եւ հաւատացեալներից շատերը գալիս խոստովանում էին ու պատմում իրենց արարքները: 19 Եւ կախարդութեամբ զբաղուողներից շատերը բերում էին իրենց գրքերը եւ բոլորի առաջ այրում. նրանց գինը հաշուեցին եւ գտան, որ յիսուն հազար արծաթ դահեկան էր:

20 Եւ այսպէս Աստծու խօսքը աճում էր ու զօրանում:

21 Եւ երբ այս բաները կատարուեցին, Պօղոսը մտադրուեց շրջել Մակեդոնիայում եւ Աքայիայում ու ապա գալ Երուսաղէմ: Ասում էր. «Իմ այնտեղ գնալուց յետոյ պէտք է, որ ես Հռոմն էլ տեսնեմ»: 22 Իր պաշտօնեաներից երկուսին՝ Տիմոթէոսին եւ Երաստոսին ուղարկեց Մակեդոնիա, իսկ ինքը որոշ ժամանակ մնաց Ասիայի նահանգում:

ԱՐՏԱԹԱԳՈՐԾՆԵՐԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆԸ ԵՓԵՍՈՍՈՒՄ

23 Այդ ժամանակ Տիրոջ ճանապարհի մասին բաւական մեծ խռովութիւն առաջ եկաւ: 24 Դեմետրիոս անունով մի արծաթագործ Արտեմիս դիցուհու մեհեանի արծաթէ մանրաքանդակներն էր պատրաստում եւ վարպետներին ոչ քիչ շահ էր բերում: 25 Ժողովելով նրանց եւ նոյն արուեստի մասնագէտներին՝ ասաց. «Ո՛վ մարդիկ, դուք ինքներդ գիտէք, որ մեր շահը այս գործից է, 26 եւ տեսնում էք ու լսում, որ ոչ միայն եփեսացիներից, այլեւ գրեթէ ամբողջ Ասիայի նահանգից այս Պօղոսը բազում ժողովուրդ համոզելով, դարձի է բերել՝ ասելով, թէ դրանք, որ ձեռքով են շինուած, աստուածներ չեն: 27 Եւ սրա վտանգն է ոչ միայն այն, որ մեր կողմը պիտի արհամարհուի, այլ նաեւ այն, որ Արտեմիս մեծ դիցուհու մեհեանը ոչինչ պիտի համարուի, այն աստիճան, որ պիտի քանդուի նաեւ մեծութիւնը նրա, որին ամբողջ Ասիան եւ աշխարհն է պաշտում»: 28 Երբ այս լսեցին, լցուեցին բարկութեամբ. աղաղակում էին ու ասում. «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»: 29 Քաղաքը լցուեց խռովութեամբ. բոլորը միասին դիմեցին դէպի թատրոն, քարշ տալով Գայիոս եւ Արիստարքոս Մակեդոնացիներին՝ Պօղոսի ուղեկիցներին: 30 Բայց երբ Պօղոսն ուզեց մտնել ամբոխի մէջ, աշակերտները նրան չթողեցին: 31 Ասիացի պետերից ոմանք էլ, որ նրա բարեկամներն էին, նրա մօտ մարդ ուղարկեցին եւ աղաչեցին, որ թատրոնում չերեւայ: 32 Իսկ ուրիշներ էլ այլ բան էին աղաղակում, քանի որ նրանց ժողովը խառնաշփոթութեան մէջ էր. եւ նրանցից շատերը չէին իմանում, թէ ինչի համար են հաւաքուել: 33 Ապա ամբոխից ոմանք բազմութեան միջից դուրս քաշեցին Ալեքսանդրոսին. եւ երբ հրեաները նրան առաջ բերեցին, Ալեքսանդրոսը շարժեց ձեռքը եւ ուզում էր պատասխանել ամբոխին: 34 Երբ իմացան, որ մարդը հրեայ է, բոլորը միաձայն մօտ երկու ժամ աղաղակում էին. «Մեծ է Արտեմիսը եփեսացիների»: 35 Քաղաքի գլխաւոր քարտուղարը լռեցրեց ամբոխին ու ասաց. «Ո՛վ եփեսացիներ, իսկ ո՞վ է

†Ցուցարէնը՝ նրա մարմնին դած:

‡Երդուեցնող կոչւում էին այն մարդիկ, որոնք հալածում էին չար ոգիները Աստծու անունը պարունակող երդումի մի բանաձեւով:

մարդկանցից նա, որ չգիտէ մեծ Արտեմիս դիցուհու եւ Դիոպետէոսի՝ եփեսացիների մեհենազարդ այս քաղաքը: 36 Եւ որովհետեւ այդ անուշչտ այդպէս է, դուք պէտք է հանդարտուէք եւ յանդգնութեամբ ոչինչ չանէք: 37 Դուք այստեղ բերեցիք այդ մարդկանց, որոնք ո՛չ մեհեան կողոպտողներ են եւ ո՛չ էլ՝ մեր դիցուհուն հայհոյողներ: 38 Իսկ եթէ Դեմետրիոսը եւ նրա հետ եղող վարպետները մէկի դէմ որեւէ բան ունեն, ատեան թող գնան. դատաւորներ կան, թող նրանց առաջ ամբաստանութիւն անեն: 39 Բայց եթէ մի այլ բանի մասին խնդիր կայ, թող օրինաւոր ժողովում դա վճռուի. 40 որովհետեւ մեզ համար էլ վտանգ կայ, որ մեղադրուենք այսօրուայ այս կռուի պատճառով, որ տեղի ունեցաւ առանց որեւէ յանցանքի առկայութեան, եւ դրա համար չպիտի կարողանանք պատասխան տալ այս հաւաքոյթի համար»: Եւ այս ասելով՝ ժողովն արձակեց:

ՊՕՂՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

20 Երբ ամբոխը հանդարտուեց, Պօղոսը կանչեց աշակերտներին ու նրանց յորդորելով՝ հրաժեշտի ողջոյն տուեց եւ ելաւ գնաց Մակեդոնիա: 2 Այդ կողմերում շրջելուց եւ նրանց բազում խօսքերով յորդորելուց յետոյ եկաւ Յունաստան: 3 Մօտ երեք ամիս այնտեղ անցկացնելուց յետոյ, մինչ կամենում էր Ասորիք բարձրանալ, հրեաների կողմից նրա դէմ դաւ նիւթուեց. ուստի խորհեց Մակեդոնիայով վերադառնալ: 4 Եւ մինչեւ Ասիա† նրա հետ էին գնում Պիւռոսի որդի Սոսիպատրոս Բերիացին, Թեսաղոնիկեցիներից՝ Արիստարքոսը եւ Սեկունդոսը, Գայիոս Դերբացին ու Տիմոթէոսը եւ ասիացիներ Տիւքիկոսն ու Տրոփիմոսը: 5 Սրանք առաջ էին գնացել եւ Տրովադայում մեզ էին սպասում: 6 Իսկ մենք Բաղարջակերաց տօնի օրերից յետոյ նաւարկեցինք Փիլիպպէից ու հինգ օրից հասանք Տրովադա, նրանց մօտ. այնտեղ կանգ առանք եօթը օր:

†Ցուց. լաւ բն. չունեն եւ մինչեւ Ասիա բառերը:

ՊՕՂՈՍԸ ՏՐՈՎԱԴԱՅՈՒՄ. ԵՒՏԻՔՈՍԻ ՅԱՐՈՒՄԸ

7 Եւ շաբաթ օրը†, մինչ հաւաքուել էինք հացը կտրելու, Պօղոսը, որ յաջորդ օրը մեկնելու էր, խօսում էր նրանց հետ. եւ նա խօսքը երկարեց մինչեւ կէսգիշեր: 8 Եւ այն վերնատանը, ուր հաւաքուած էինք, բազում լապտերներ կային: 9 Իսկ Եւտիքոս անունով մի երիտասարդ նստել էր պատուհանին ու խոր քնի մէջ էր ընկել: Երբ Պօղոսը խօսելը երկարաձգեց, նա, խոր քնից թուլացած, երրորդ յարկից ցած ընկաւ. ու վերցրին նրան մեռած: 10 Պօղոսը, ցած իջնելով, ընկաւ նրա վրայ, նրան իր գիրկը վերցրեց ու ասաց. «Մի՛ խռովուէք, քանի որ սրա հոգին վրան է»: 11 Յետոյ վեր ելաւ, հացը կտրեց ու կերաւ. եւ մինչեւ առաւօտ շատ բաներ եւս խօսեց ու ապա ելաւ գնաց: 12 Իսկ պատանուն կենդանի ներս բերեցին եւ շատ մխիթարուեցին:

ՏՐՈՎԱԴԱՅԻՑ ԴԷՊԻ ՄԻԼԵՏՈՆ

13 Եւ մենք նաւ մտնելով՝ ուղղուեցինք դէպի Ասոն. յոյս ունէինք այնտեղից Պօղոսին նորից վերցնել, որովհետեւ այդպէս էր պատուիրել, ըստ որում ինքը ցամաքով էր գնալու: 14 Եւ երբ նա մեզ հանդիպեց Ասոնում, նրան առնելով եկանք Միտիլինէ: 15 Եւ այնտեղից նաւարկելով՝ յաջորդ օրը գնացինք Քիոսի դիմացը, իսկ միւս օրը հասանք Սամոս եւ հետեւեալ օրը եկանք Միլետոն, 16 որովհետեւ Պօղոսը մտադիր էր նաւարկել Եփեսոսի մօտով, որպէսզի Ասիայում ժամանակ չկորցնի, քանի որ շտապում էր Պենտեկոստէի օրը Երուսաղէմ հասնել, եթէ այդ նրան յաջողուէր:

ՊՕՂՈՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ ԵՓԵՍՈՍԻ ԵՐԷՑՆԵՐԻՆ

17 Եւ Միլետոնից Եփեսոս մարդ ուղարկելով՝ կանչեց եկեղեցու երէցներին. 18 եւ երբ նրանք եկան նրա մօտ, նրանց ասաց. «Դուք ինքներդ գիտէք,

‡Ցուցարէնը՝ շաբաթուայ առաջին օրը, այսինքն՝ կիրակի:

թէ առաջին օրուանից ի վեր, երբ Ասիա
եկայ, ամբողջ ժամանակ ձեզ հետ
միասին ինչպէս ապրեցի՝ 19 ծառայելով
Տիրոջը ամենայն խոնարհութեամբ եւ
բազում արտասուքով ու փորձութիւն-
ներով, որ հրեաների նենգութիւնների
պատճառով ինձ պատահեցին: 20 Ինչ-
պէ՞ս բնաւ չվարանեցի ձեզ պատմելու
օգտակար բաներից եւ ուսուցանելու
ձեզ հրապարակաւ եւ տանը. 21 վկա-
յութիւն տուի հրեաներին եւ հեթա-
նոսներին Աստծու առաջ ապաշխարե-
լու եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
հանդէպ հաւատի մասին: 22 Արդ, ահա
ես, Սուրբ Հոգու մղումով, Երուսաղէմ
եմ գնում. իսկ թէ այնտեղ ինձ ի՛նչ է
պատահելու, այդ չգիտեմ. 23 միայն թէ
Սուրբ Հոգին ամէն քաղաքի մէջ ինձ
վկայում է ու ասում. "Կապանքներ
ու նեղութիւններ են սպասում քեզ":
24 Բայց ես ինքս իմ անձը ոչ մի բանով
այնքան յարգի չեմ համարում, որքան
այն, որ ուրախութեամբ կատարեմ իմ
ընթացքը եւ այն պաշտօնը, որ Տէր
Յիսուսից ստացայ՝ Աստծու շնորհը
աւետարանելու: 25 Եւ արդ, ահա ես
գիտեմ, որ դուք ամէնքդ, որոնց մէջ ես
շրջեցի՝ քարոզելու Աստծու արքայու-
թիւնը, իմ երեսն այլեւս չէք տեսնելու.
26 դրա համար այսօր ձեր առաջ
վկայում եմ, որ ես մաքուր եմ բոլորիդ
արիւնից, 27 որովհետեւ չքաշուեցի ձեզ
յայտնելու Աստծու կամքը ամբողջու-
թեամբ: 28 Զգո՛յշ եղէք ինքներդ ձեր
եւ ամբողջ հօտի համար, որի վրայ
Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝
հովուելու համար Տիրոջ ժողովրդին,
որին նա փրկեց իր արիւնով: 29 Սա-
կայն ես գիտեմ, որ իմ մեկնելուց յետոյ
ձեր մէջ կը գան յափշտակիչ գայլեր,
որոնք չեն խնայի հօտին: 30 Ձեր միջից
էլ դուրս կը գան մարդիկ, որ թիւր բա-
ներ կը խօսեն՝ աշակերտներին իրենց
յետեւից քարշ տալու համար: 31 Դրա
համար էլ արթո՛ւն կացէք եւ յիշեցէ՛ք,
որ ամբողջ երեք տարի, գիշեր-ցերեկ,
առանց դադարի իւրաքանչիւրիդ մէկ-
մէկ՝ արտասուքներով խրատեցի: 32 Եւ
արդ, ձեզ յանձնում եմ Աստծուն եւ
նրա շնորհի խօսքին, նրան, որ կարող է
բարձրացնել եւ ձեզ ժառանգութիւն
տալ՝ բոլոր սրբերի հետ: 33 Ձեզնից ոչ
ոքի արծաթը կամ ոսկին կամ զգեստը
չցանկացայ. 34 դուք ինքներդ գիտէք,
որ իմ եւ ինձ հետ եղողների կա-
րիքները հոգացին այս ձեռքերը: 35 Ես
իմ օրինակով ամէն ինչ ձեզ ցոյց
տուեցի, որովհետեւ այդպէս պէտք է
աշխատել եւ դարմանել հիւանդներին
ու յիշել Տէր Յիսուսի խօսքը, որ ինքն
իսկ ասաց. "Երանելի՛ է մանաւանդ
տալը, քան առնելը"»: 36 Այս բաներն
ասելուց յետոյ բոլորի հետ մէկտեղ
ծնկի գալով՝ սկսեց աղօթել: 37 Բոլորն
էլ շատ լաց եղան եւ Պօղոսի վզովն
ընկնելով՝ համբուրում էին նրան:
38 Մորմոքւում էին մանաւանդ նրա
այն խօսքի վրայ, թէ այլեւս իր երեսը
չեն տեսնելու: Եւ նրան ուղեկցեցին
մինչեւ նաւը:

ՊՕՂՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

21 Եւ երբ մենք նրանցից բաժա-
նուեցինք ու նաւ ելանք, ուղիղ դիմացը
գնալով՝ եկանք Կով. յաջորդ օրը՝ Ռո-
դոն, այնտեղից էլ՝ Պատարա: 2 Այն-
տեղ գտնելով մի նաւ, որ Փիւնիկէ
էր գնում, բարձրացանք ու գնացինք:
3 Երբ Կիպրոսը երեւաց, այն թողեցինք
ձախ կողմը, նաւարկեցինք դէպի
Ասորիք եւ իջանք Տիւրոս, քանի որ
նաւն այնտեղ իր բեռներն էր թա-
փելու: 4 Եւ գտնելով աշակերտներին՝
եօթը օր այնտեղ մնացինք. նրանք
Սուրբ Հոգու միջոցով Պօղոսին ասում
էին, որ Երուսաղէմ չբարձրանայ: 5 Եւ
երբ մենք այդ օրերը անցկացրինք,
ելանք գնացինք. նրանք բոլորը, կա-
նանց եւ որդիների հետ միասին, մին-
չեւ քաղաքից դուրս մեզ ճանապարհ
դրեցին. եւ ծովեզրին, ծնկի գալով,
աղօթեցինք: 6 Ապա միմեանց հրա-
ժեշտ տալով՝ մենք նաւ ելանք, իսկ
նրանք վերադարձան իրենց տեղերը:
7 Եւ մեր նաւարկութիւնը շարունա-
կելով Տիւրոսից՝ հասանք Պտողեմա-
յիդա ու եղբայրներին ողջոյն տալուց
յետոյ մէկ օր նրանց մօտ մնացինք:
8 Յաջորդ օրը այնտեղից դուրս գալով՝
եկանք Կեսարիա եւ, մտնելով տունը
Փիլիպպոս աւետարանչի, որ եօթը

սարկաւագներից մէկն էր, օթեւա-
նեցինք նրա մօտ: 9 Նա ունէր չորս
կոյս աղջիկներ, որոնք մարգա-
րէուհիներ էին: 10 Եւ երբ շատ օրեր
մենք այնտեղ մնացինք, Հրէաստանից
Ագաբոս անունով մի մարգարէ իջաւ:
11 Եւ մեզ մօտ գալով՝ վերցրեց Պօղոսի
գօտին, կապեց ինքն իր ոտքերն ու
ձեռքերը եւ ասաց. «Այսպէս է ասում
Սուրբ Հոգին. այն մարդուն, որի գօտին
է այս, հրեաները նրան այսպէ՛ս պիտի
կապեն Երուսաղէմում եւ յանձնեն հե-
թանոսների ձեռքը»: 12 Երբ այս
լսեցինք, մենք եւ այնտեղ գտնուող-
ները աղաչեցինք, որ նա Երուսաղէմ
չբարձրանայ: 13 Այն ժամանակ Պօ-
ղոսը պատասխանեց ու ասաց. «Ի՞նչ
էք անում, ինչո՞ւ էք լաց լինում եւ իմ
սիրտն էլ ճմլում, ես Տէր Յիսուս Քրիս-
տոսի անուան համար Երուսաղէմում
ոչ միայն կապուելու, այլեւ մեռնելու
պատրաստ եմ»: 14 Եւ երբ նա չանսաց,
լռեցինք. ասացինք՝ Տիրոջ կամքը թող
լինի:

15 Այդ օրերից յետոյ պատրաս-
տուեցինք եւ Երուսաղէմ բարձրացանք:
16 Մեզ հետ եկան նաեւ կեսարացի մի
քանի աշակերտներ, որոնք մեզ տա-
նում էին կիպրացի ոմն Մնասոնի մօտ,
որը նախապէս աշակերտ էր, եւ որի
տանը օթեւանելու էինք:

ՊՕՂՈՍԻ ԱՅՑԸ ՅԱԿՈԲՈՍԻՆ

17 Եւ երբ մենք Երուսաղէմ մտանք,
եղբայրները մեզ խնդութեամբ ընդու-
նեցին: 18 Յաջորդ օրը Պօղոսը մեզ հետ
Յակոբոսի մօտ մտաւ. եկան եւ բոլոր
երէցները: 19 Ողջունելով նրանց՝ նա
մի առ մի պատմեց այն բաները, որ
Աստուած նրա ծառայութեան միջոցով
արեց հեթանոսների մէջ: 20 Եւ նրանք,
լսելով, փառաւորում էին Աստծուն ու
նրան ասում. «Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր,
հազարաւոր հաւատացեալ հրեաներ
կան, եւ բոլորն էլ նախանձախնդիր են
օրէնքին: 21 Բայց քո մասին իրազեկ
եղան, թէ հեթանոսների մէջ գտնուող
բոլոր հրեաներին ուսուցանում ես
հրաժարուել Մովսէսի օրէնքից. ասում
ես, որ նրանք իրենց որդիներին
չթլփատեն եւ կրօնի աւանդութիւն-
ների համաձայն չգնան: 22 Արդ, ի՞նչ
պէտք է լինի. հաստատապէս կը լսեն,
որ եկել ես: 23 Ուրեմն, արա՛ այն, ինչ
քեզ ասում ենք. մեզ մօտ կան չորս
ուխտադիր մարդիկ. 24 նրանց քեզ հետ
ա՛ռ եւ նրանց հետ միասին մաքրուի՛ր.
եւ նրանց ծախսը քեզ վրայ վերցրու,
որ իրենց գլուխները ածիլեն: Այսպէս
ամէնքը իմանան, որ քեզ վերաբերող
այն բաները, որոնց մասին իրազեկ են
եղել, ոչինչ են, եւ, ընդհակառակը, դու
էլ համաձայն ես օրէնքը պահելու:
25 Գալով հաւատացեալ հեթանոսնե-
րին՝ մենք ուղարկել ենք մեր որոշումը,
որ այդպիսի բաներ չպահեն նրանք,
այլ միայն զգուշանան կուռքերին մա-
տուցուած զոհերից ու արիւնից եւ
խեղդամահ արուած կենդանուց եւ
պոռնկութիւնից»†: 26 Այն ժամանակ
Պօղոսը իր հետ վերցրեց այդ մարդ-
կանց եւ յաջորդ օրը, նրանց հետ
մաքրուելուց յետոյ, տաճար մտաւ՝
յայտնելու մաքրման օրերի աւարտի
մասին. որից յետոյ, նրանցից իւրա-
քանչիւրի համար զոհ մատուցուեց:

ՊՕՂՈՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԱՐՈՒՄ

27 Սակայն երբ եօթնօրէքը կատա-
րելու մօտ էին, ասիացի հրեաները
նրան տաճարի մէջ տեսնելով՝ նրա
շուրջը հաւաքեցին ամբողջ ամբոխը, եւ
ձեռքները նրա վրայ դնելով՝ աղա-
ղակում էին. 28 «Ո՛վ իսրայէլացիներ,
օգնեցէ՛ք, այս մարդն է, որ, հակառակ
ժողովրդի եւ օրէնքի ու այս սրբավայ-
րի, ամենուր ամենքին ուսուցանում է.
մինչեւ իսկ հեթանոսներին տաճար
մտցրեց եւ այս սուրբ տեղը պղծեց»:
29 Ըստ որում առաջուց նրա հետ քա-
ղաքում տեսել էին Տրոփիմոս Եփեսա-
ցուն եւ կարծում էին, թէ Պօղոսը նրան
տաճար մտցրեց: 30 Ամբողջ քաղաքը
շարժուեց, եւ ժողովուրդը խռնուեց.
բռնելով Պօղոսին՝ քարշ տուեցին տա-
ճարից դուրս. եւ իսկոյն դռները փա-

†Յուն. լաւ բն. ունեն մենք մի նամակ ուղարկեցիք մեր որոշման հետ, որ նրանք հեռու պէտք է մնան կուռքերին մատուցուած զոհերից եւ արիւնից, խեղդամահ արուածից ու անպարկեշտութիւնից:

կուեցին: 31 Նրան ուզում էին սպանել:
Գնդի հազարապետին լուր հասաւ, թէ
ամբողջ Երուսաղէմը յուզման մէջ է:
32 Սա իսկոյն զինուորներ եւ հարիւ-
րապետներ առնելով իր հետ՝ շարժուեց
նրանց վրայ: Եւ նրանք, տեսնելով
հազարապետին ու զինուորներին, դա-
դարեցին Պօղոսին ծեծելուց: 33 Այն
ժամանակ հազարապետը, մօտենալով,
բռնեց նրան եւ հրամայեց նրան կապել
կրկնակի շղթաներով. եւ հարցնում էր,
թէ՝ ով է եւ ինչ է արել: 34 Ամբոխի մէջ
այլեւայլ մարդիկ նրա մասին այլ բա-
ներ էին աղաղակում: Երբ նա ամբոխի
աղմկի պատճառով ստուգութիւնը
չկարողացաւ իմանալ, հրամայեց նրան
զօրանոց տանել: 35 Երբ աստիճան-
ներին հասաւ, այնպէս եղաւ, որ ամբո-
խի բռնութեան պատճառով զինուոր-
ները նրան բարձրացնեն եւ տանեն,
36 քանի որ ժողովրդի բազմութիւնը
յետեւից էր գնում՝ աղաղակելով՝ մա՛հ
դրան:

ՊՕՂՈՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

37 Եւ մինչ Պօղոսը զօրանոց էր
մտնելու, հազարապետին ասաց. «Կա-
րելի՞ է ինձ խօսել քեզ հետ»: Եւ նա
ասաց. «Ծունարէն գիտե՞ս. 38 չլինի թէ
դու ես այն եգիպտացին, որ սրանից
օրեր առաջ ապստամբեցիր եւ անա-
պատ հանեցիր չորս հազար սուսերա-
ւոր մարդկանց»: 39 Պօղոսն ասաց. «Ես
հրեայ մարդ եմ, կիլիկեցիների Տարսոն
քաղաքից, ոչ աննշան քաղաքի
քաղաքացի. աղաչում եմ քեզ, ինձ
հրամա՛ն տուր, որ իմ խօսքն ուղղեմ
այդ ժողովրդին»:
40 Եւ երբ նա հրաման տուեց, Պօ-
ղոսը, աստիճանների վրայ կանգնած,
ձեռքը շարժեց դէպի ժողովուրդը: Երբ
կատարեալ լռութիւն տիրեց, սկսեց
խօսել եբրայերէն լեզուով եւ ասաց.

ՊՕՂՈՍԻ ՃԱՌԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ՝ ՀՐԵԱՆԵՐԻՆ

22 «Եղբայրնե՛ր եւ հայրե՛ր, այժմ
լսեցէ՛ք ինձ, որ տամ իմ պաշտպա-
նողականը»: 2 Երբ լսեցին, որ եբրա-
յերէն լեզուով դիմեց իրենց, առաւել
եւս հանդարտուեցին եւ լռեցին: 3 Եւ
նա ասաց. «Ես հրեայ մարդ եմ՝
ծնուած Կիլիկիայի Տարսոն քաղաքում,
եւ դաստիարակուել եմ այստեղ, այս
քաղաքում, Գամալիէլի ոտքերի մօտ,
կրթուած ըստ հայրենի օրէնքի ճշմար-
տութեան: Նախանձայոյզ էի Աստծու
հանդէպ, ինչպէս դուք բոլորդ՝ այսօր:
4 Ես այս ճանապարհը հալածեցի մին-
չեւ ի մահ՝ կապելով եւ բանտերի
մատնելով տղամարդկանց եւ կանանց,
5 ինչպէս ինձ վկայ են քահանայա-
պետը եւ ամբողջ ծերակոյտը, որոնցից
եղբայրներին ուղղուած նամակներ էլ
առնելով՝ Դամասկոս էի գնում եղ-
բայրների մօտ՝ այնտեղից եւս կա-
պեալներ բերելու համար Երուսաղէմ,
որ պատժուեն: 6 Եւ մինչ գնում էի եւ
մօտեցայ Դամասկոսին, կէսօրուայ ժա-
մանակ յանկարծ երկնքից սաստիկ լոյս
փայլատակեց իմ շուրջը. 7 եւ ես գետին
ընկայ. լսեցի մի ձայն, որն ինձ ասում
էր. "Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ
հալածում": 8 Եւ ես պատասխանեցի.
"Ո՞վ ես, Տէ՛ր": Եւ ինձ ասաց. "Ես
Նազովրեցի Յիսուսն եմ, որին դու
հալածում ես": 9 Ինձ հետ եղողները
եւս լոյսը տեսնում էին, բայց չէին
լսում այն ձայնը, որ ինձ հետ խօսում
էր: 10 Եւ ես ասացի. "Ի՞նչ պէտք է
անեմ, Տէ՛ր": Եւ Տէրն ինձ ասաց. "Վե՛ր
կաց եւ գնա՛ Դամասկոս, եւ այնտեղ
քեզ կը պատմուի այն բոլորի մասին,
որ հրամայուած է քեզ անել": 11 Եւ
քանի որ այդ լոյսի փայլից չէի
տեսնում, ինձ հետ եղողները, ձեռքիցս
բռնելով, առաջնորդեցին ինձ, եւ
Դամասկոս մտայ: 12 Եւ Անանիա
անունով մի մարդ՝ երկիւղած ըստ
օրէնքի եւ վկայուած Դամասկոսում
բնակուող բոլոր հրեաների կողմից,
13 եկաւ կանգնեց ինձ մօտ ու ասաց.
"Սաւո՛ւղ եղբայր, վերե՛ւ նայիր": 14 Եւ
ես իսկոյն դէպի վեր նրա՛ն նայեցի: Եւ
ինձ ասաց. "Մեր հայրերի Աստուածը
առաջուց ընտրեց քեզ, որ ճանաչես
նրա կամքը եւ տեսնես Արդարին ու
լսես նրա բերանից ձայնը, 15 որպէսզի
բոլոր մարդկանց մօտ նրա վկան լինես
այն բաների համար, որ տեսար եւ
լսեցիր: 16 Արդ, ինչո՞ւ ես յապաղում,

վե՛ր կաց, մկրտուի՛ր եւ լուա՛ քո մեղ-
քերը՝ նրա անունը կանչելով": 17 Եւ
երբ ես վերադարձայ Երուսաղէմ եւ
տաճարում աղօթում էի, մտայափշտա-
կութեան մէջ ընկայ. 18 տեսայ նրան,
որն ինձ ասում էր. "Շտապի՛ր, իսկոյն
Երուսաղէմից դո՛ւրս ել, քանի որ իմ
մասին քո վկայութիւնը չեն ընդու-
նելու": 19 Եւ ես ասացի. "Տէ՛ր, իրենք
իսկ գիտեն, թէ ես էի, որ բանտարկել
եւ բոլոր ժողովարաններում դանա-
կոծել էի տալիս քեզ հաւատացող-
ներին: 20 Եւ երբ թափւում էր քո
վկայի՝ Ստեփանոսի արիւնը, ես ինքս
էի, որ նրա մօտ էի կանգնել եւ
համաձայն էի լինում նրա սպանմանը.
եւ նրան սպանողների զգեստներն էի
պահում": 21 Եւ նա ինձ ասաց. "Գնա՛,
որովհետեւ ես քեզ պէտք է ուղարկեմ
հեռաւոր հեթանոսների մօտ"»:

ՊՕՂՈՍԸ՝ ՀՌՈՄԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ

22 Մինչեւ այս խօսքը նրան
ունկնդրում էին. ապա բարձրացրին
իրենց ձայները եւ ասացին. «Երկրից
վերացրո՛ւ այդպիսի մէկին, որովհետեւ
այդպիսին չպէտք է ապրի»: 23 Եւ մինչ
նրանք աղաղակում էին, զգեստները
հանում գցում էին եւ փոշին օդի մէջ
ցանում, 24 հազարապետը հրամայեց,
որ նրան զօրանոց մտցնեն. եւ ասաց.
«Ծեծելով հարցաքննեցէ՛ք նրան,
որպէսզի իմանամ, թէ ինչ յանցանքի
համար էին նրա դէմ այդպէս աղաղա-
կում»: 25 Երբ նրան թոկերով պինդ
կապեցին, Պօղոսն ասաց հարիւրա-
պետին, որ վերակացուն էր. «Հռոմէա-
ցի եւ չդատուած մարդուն օրինաւո՞ր
է, որ դուք ծեծէք»: 26 Երբ հարիւ-
րապետը այս լսեց, մօտեցաւ հազարա-
պետին, զեկուցեց եւ ասաց. 26 «Ի՞նչ ես
ուզում անել, քանի որ այս մարդը
հռոմէական քաղաքացի է»: 27 Հա-
զարապետը մօտեցաւ եւ նրան ասաց.
«Ասա՛ ինձ, դու հռոմէացի՞ ես»: Եւ նա
ասաց՝ այո՛: 28 Հազարապետը ի պա-
տասխան ասաց. «Ես ի գին մեծ գու-
մարի եմ ստացել այդ քաղաքացիու-
թիւնը»: Իսկ Պօղոսն ասաց. «Ես
ծննդով իսկ քաղաքացի եմ»: 29 Եւ
իսկոյն նրանից հեռացան նրանք, որ
նրան պիտի ծեծէին: Ինքը հազարա-
պետն էլ վախեցաւ, երբ իմացաւ, թէ
հռոմէացի է, մանաւանդ որ նրան
կապանքի տակ էլ էր առել:

ՊՕՂՈՍԸ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

30 Յաջորդ առաւօտ հազարապետը
ուզելով ճշմարիտն իմանալ, թէ հրեա-
ների ամբաստանութիւնն ինչ է, կա-
պերից արձակեց Պօղոսին եւ հրամայեց
կանչել քահանայապետներին ու ամ-
բողջ ատեանը եւ, Պօղոսին իջեցնելով,
կանգնեցրեց նրանց մէջ:

23 Պօղոսը հայեացքն ուղղելով ա-
տեանին՝ ասաց. «Եղբայրնե՛ր, ես ամե-
նայն ուղղամտութեամբ եմ կեանք
վարել Աստծու առաջ մինչեւ այսօր»:
2 Անանիա քահանայապետը հրամա-
յեց սպասաւորներին, որ խփեն նրա
բերանին: 3 Այն ժամանակ Պօղոսը
նրան ասաց. «Աստուած է քեզ խփելու,
սպիտակեցրա՛ծ պատ. եւ դու նստում
ես, որ օրէնքի համաձայն ինձ դատես,
մինչդեռ հրամայում ես, որ օրէնքից
դուրս ինձ հարուածեն»: 4 Շուրջը
կանգնողներն ասացին. «Աստծու քա-
հանայապետի՞ն ես հայհոյում»: 5 Եւ
Պօղոսն ասաց. «Չգիտէի, եղբայրնե՛ր,
որ քահանայապետ է, քանի որ գրուած
է՝ քո ժողովրդի իշխանին չպիտի
հայհոյես»: 6 Երբ Պօղոսն իմացաւ, որ
ատեանի մի կողմում սադուկեցիներն
են, իսկ միւսում՝ փարիսեցիները, աղա-
ղակեց. «Եղբայրնե՛ր, ես փարիսեցի եմ
ու որդի փարիսեցու. այժմ ես դատւում
եմ նաեւ մեռելների յարութեան յոյսի
համար»: 7 Եւ երբ այս ասաց, փա-
րիսեցիների եւ սադուկեցիների միջեւ
ճեղքուածք առաջ եկաւ, եւ բազմու-
թիւնը պառակտուեց, 8 որովհետեւ
սադուկեցիներն ասում էին՝ յարութիւն
չկայ. ո՛չ էլ հրեշտակ եւ ո՛չ Հոգի. իսկ
փարիսեցիները ընդունում էին երկուսն
էլ: 9 Եւ մեծ աղմուկ եղաւ. փա-
րիսեցիների կողմից օրէնուսոյցներից
ոմանք ոտքի ելան եւ հակառակում
էին՝ ասելով. «Այս մարդու մէջ ոչ մի

չարութիւն չենք գտնում, այլ թերեւս նրա հետ Հոգի կամ մի հրեշտակ խօսած լինի»: 10 Եւ երբ խռովութիւնը սաստկացաւ, հազարապետը, վախենալով, որ գուցէ նրանք Պօղոսին պատառ-պատառ կ'անեն, զինուորներին հրամայեց իջնել եւ նրանց միջից նրան վերցնել ու տանել զօրանոց: 11 Յաջորդ օրուայ գիշերը Տէրը կանգնեց նրա մօտ ու ասաց. «Քաջալերուի՛ր, Պօղո՛ս, որովհետեւ, ինչպէս ինձ համար վկայեցիր Երուսաղէմում, նոյն ձեւով պէտք է, որ դու Հռոմում եւս վկայես»:

ՀՐԵԱՆԵՐԻ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՊՕՂՈՍԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

12 Եւ երբ առաւօտ եղաւ, որոշ թուով հրեաներ ժողով անելով՝ նզովեցին իրենք իրենց, որ, մինչեւ Պօղոսին չսպանեն, ո՛չ ուտեն եւ ո՛չ էլ խմեն: 13 Եւ քառասունից աւելի էին նրանք, որոնք իրար հետ այս երդումն էին արել: 14 Սրանք մօտեցան քահանայապետներին եւ երէցներին ու ասացին. «Նզովելով նզովեցինք մեզ, որ բան չճաշակենք, մինչեւ Պօղոսին չսպանենք. 15 բայց դուք հազարապետին, ատեանի հետ միասին, իմա՛ց տուէք, որ նա ձեզ մօտ իջեցնի նրան, որպէս թէ նրա մասին ուզում էք աւելի ճշգրիտ բաներ իմանալ. իսկ մենք, նախքան նրա մօտենալը, պատրաստ ենք նրան սպանելու»: 16 Եւ Պօղոսի քրոջ որդին, լսելով այս դաւադրութիւնը, եկաւ զօրանոց ու Պօղոսին պատմեց: 17 Եւ Պօղոսը, իր մօտ կանչելով հարիւրապետներից մէկին, ասաց. «Այս պատանուն հազարապետի մօտ տա՛ր, որովհետեւ նրան հաղորդելու բան ունի»: 18 Եւ նա նրան առաւ եւ տարաւ հազարապետի մօտ ու ասաց. «Կալանաւորուած Պօղոսն ինձ կանչեց եւ խնդրեց այս պատանուն քեզ մօտ բերել. քեզ ասելու բան ունի»: 19 Հազարապետը նրա ձեռքից բռնելով՝ մի կողմ գնաց եւ հարցրեց. «Ինձ հաղորդելու ի՞նչ ունես»: 20 Նա ասաց. «Հրեաները միաբանուեցին խնդրելու քեզ, որ վաղը Պօղոսին ատեան իջեցնես, իբր թէ ուզում են նրա վերաբերեալ աւելի ճշգրիտ հարցաքննութիւն անել: 21 Արդ, դու նրանց չլսես, քանի որ նրանցից աւելի քան քառասուն մարդ դարան են մտել եւ նզովել են իրենք իրենց, որ ո՛չ ուտեն եւ ո՛չ էլ խմեն, մինչեւ որ նրան չսպանեն: Այժմ պատրաստ են եւ քո հրամանին են սպասում»: 22 Ապա հազարապետը արձակեց պատանուն՝ նրան պատուիրելով. «Ոչ ոքի մի՛ ասա, թէ այս բաներն ինձ տեղեկացրիր»:

ՊՕՂՈՍԸ ՏԱՐԻՈՒՄ Է ԿԵՍԱՐԻԱ

23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց ու ասաց. «Պատրաստեցէ՛ք երկու հարիւր զինուորներ, գիշերուայ ժամը երեքից, որպէսզի գնան մինչեւ Կեսարիա. նաեւ՝ եօթանասուն հեծեալներ եւ երկու հարիւր նիզակաւորներ, 24 ինչպէս եւ պատրաստի գրաստներ, որ Պօղոսին իջեցնեն եւ ապահով հասցնեն Ֆելիքս կուսակալի մօտ»: 25 Եւ գրեց մի նամակ, որի բովանդակութիւնը հետեւեալն է. 26 «Կլօդիոս Լիւսիաս՝ գերազանց Ֆելիքս կուսակալին ողջո՛յն. 27 այս մարդուն հրեաները բռնել էին, եւ նրանց կողմից սպանուելու մօտ էր նա. իմանալով, որ հռոմէացի է, ես զինուորներով վրայ հասայ եւ նրան ազատեցի: 28 Կամենալով գիտենալ այն յանցանքը, որի համար նրան ամբաստանում էին, նրան իջեցրի նրանց ատեանը: 29 Գտայ, որ նա իրենց օրէնքին վերաբերող մի խնդրի համար էր ամբաստանուած ու մահուան կամ կալանքի արժանի որեւէ յանցանք չուներ: 30 Երբ այս մարդու հանդէպ նրանց կողմից նիւթուած դաւն ինձ տեղեկացուեց, նրան ուղարկեցի քեզ մօտ եւ հրամայեցի, որ ամբաստանողներն էլ խօսեն նրա մասին քո առաջ. ո՛ղջ եղիր»:

31 Եւ հետեւակ զինուորները, հրամանի համաձայն, Պօղոսին առնելով՝ գիշերով տարան Անտիպատրիս: 32 Եւ յաջորդ օրը, թողնելով հեծեալներին, որ նրա հետ գնան, զօրանոց վերադարձան: 33 Նրանք մտան Կեսարիա եւ նամակը կուսակալին տալով՝ Պօղոսին էլ կանգնեցրին նրա առաջ: 34 Նա երբ կարդաց, հարցրեց, թէ ո՞ր նահանգից է. եւ ստուգելով, որ Կիլիկիայից է, ասաց. 35 «Քեզ կը լսեմ, երբ քեզ ամբաստանողներն էլ գան»: Եւ հրամայեց պահել նրան Հերովդէսի ապարանքում:

ԴԱՏ ՊՕՂՈՍԻ ԴԷՄ

24 Եւ հինգ օր յետոյ Անանիա քահանայապետը մի քանի ծերերի եւ Տերտիւղոս անունով մի ճարտասան մարդու հետ իջաւ եկաւ: Սրանք Պօղոսի մասին կուսակալին ներկայացրին իրենց ամբաստանութիւնը: 2 Եւ երբ նրան կանչեցին, Տերտիւղոսն սկսեց ամբաստանել ու ասել. «Այս ազգը բազում խաղաղութիւն է գտել քո շնորհիւ եւ գործերի կարգաւորութիւն՝ քո խնամքի պատճառով: 3 Ամէն բանի համար եւ ամենուրեք քեզնից շնորհակալ ենք, ո՛վ գերազանցդ Ֆելիքս, եւ մեծապես գոհ: 4 Բայց որպէսզի աւելորդ յոգնութիւն չպատճառեմ քեզ, աղաչում եմ, որ քո ներողամտութեամբ մեզ կարճիկարճով լսես: 5 Մենք գտանք, որ այս մարդը ամբողջ աշխարհում գտնուող բոլոր հրեաների ապականողն ու խռովեցնողն է եւ Նազովրեցիների հերձուածի առաջնորդը: 6 Սա տաճարն իսկ փորձեց պղծել. նրան բռնեցինք եւ ըստ մեր օրէնքի ուզեցինք դատել: 7 Եկաւ Լիւսիաս հազարապետը ու մեծ բռնութեամբ մեր ձեռքից յափշտակեց 8 եւ հրամայեց, որ նրան ամբաստանողներն էլ քեզ մօտ գան: Նրան դու ինքդ կրկին դատելով կը կարողանաս վերահասու լինել այն ամենին, ինչի համար մենք նրան ամբաստանում ենք»: 9 Հրեաներն էլ համաձայն գտնուեցին ու ասացին՝ այդպէս է:

ՊՕՂՈՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

10 Երբ կուսակալը նրան գլխով արեց, որ խօսի, Պօղոսը պատասխանեց. «Գիտեմ, որ շատ տարիներից ի վեր դու այս ազգի կուսակալն ես, ուստի իմ խնդրի մասին յօժարութեամբ պատասխան եմ տալիս. 11 ինչպէս որ կարող ես գիտենալ, տասներկու օրից աւելի չէ, ինչ ես Երուսաղէմ եմ բարձրացել երկրպագութիւն անելու համար: 12 Ինձ ո՛չ տաճարում են որեւէ մէկի հետ գտել խօսելիս եւ կամ շուրջս բազմութիւն հաւաքելիս, ո՛չ ժողովարաններում եւ ո՛չ էլ քաղաքում. 13 ո՛չ էլ կարող են քեզ այժմ ապացուցել այն, ինչի համար ինձ ամբաստանում են: 14 Բայց այս խոստովանում եմ քեզ, թէ համաձայն այն ճանապարհի, որը ասում են՝ հերձուած է, այնպէ՛ս եմ պաշտում իմ հայրենի Աստծուն՝ հաւատալով այն ամենին, որ գրուած է Օրէնքում եւ մարգարէների մէջ: 15 Յոյս ունեմ առ Աստուած, որ, ինչպէս դրանք էլ են ակնկալում, յարութիւն է լինելու արդարների եւ մեղաւորների: 16 Դրա համար ինքս էլ ճիգ եմ անում, որ Աստծու եւ մարդկանց առաջ միշտ մաքուր խղճմտանք ունենամ: 17 Բազում տարիներից յետոյ եկայ օգնութիւն անելու իմ ազգին եւ զոհեր մատուցեցի, 18 որոնցով սրբուած էի, երբ ինձ գտան տաճարում, որտեղ ո՛չ բազմութեան հետ էի եւ ո՛չ էլ խռովարար ամբոխի: 19 Այդ ասիացի հրեաներից ոմանք իրե՛նք պէտք է գային քո առաջ եւ ամբաստանէին ինձ, եթէ իմ դէմ մի բան ունենային. 20 եւ կամ հէնց սրանք թող ասեն, թէ ի՞նչ անիրաւութիւն են գտել իմ մէջ, մինչ ատեանի առաջ էի կանգնած, 21 բացի միայն գուցէ իմ այն խօսքից, որ ասացի բարձրաձայն, երբ նրանց մէջ կանգնել էի. "Մեռելների յարութեան համար է, որ ես այսօր ձեզնից դատւում եմ"»:

ՊՕՂՈՍԸ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

22 Ֆելիքսը նրանց գործը յետաձգեց, քանի որ աւելի ստոյգ գիտէր այդ ճանապարհի մասին, եւ ասաց. «Մինչեւ Լիւսիաս հազարապետը այստեղ իջնի, ձեր գործը կը յետաձգեմ»: 23 Եւ հարիւրապետին հրամայեց նրան պահել, բայց որոշ չափով ազատ. եւ նրա իւրայիններից ոչ ոքի չարգելել, որ նրան ծառայեն:

24 Մի քանի օր յետոյ Ֆելիքսը եկաւ իր կնոջ՝ Դրուսիլլայի հետ, որը հրեայ

էր. կանչեց Պողոսին եւ նրանից լսեց ի Յիսուս Քրիստոս եղած հաւատի մասին: 25 Եւ մինչ Պողոսը խօսում էր արդարութեան, ժուժկալութեան եւ գալիք դատաստանի մասին, Ֆելիքսը, զարհուրած, ասաց. «Դու առայժմ գնա՛. երբ ժամանակ ունենամ, քեզ կը կանչեմ»: 26 Միաժամանակ ակնկալում էր, որ Պողոսից իրեն դրամ կը տրուի. դրա համար յաճախ կանչելով նրան՝ խօսում էր նրա հետ: 27 Երկու տարին լրանալուց յետոյ Ֆելիքսի փոխարէն Փեստոս Պորկիոսը եկաւ: Ֆելիքսը, կամենալով հրեաներին շնորհ անել, Պողոսին կալանքի տակ թողեց:

ՊՈՂՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՅՍՐԻՆ

25 Երբ Փեստոսը իշխանութեան գլուխ անցաւ, երեք օր յետոյ Կեսարիայից Երուսաղէմ բարձրացաւ: 2 Քահանայապետներն ու հրեաների գլխաւորները նրան զեկոյց տուին Պողոսի մասին եւ, 3 նրանից շնորհ խնդրելով, աղաչում էին, որ նրան Երուսաղէմ կանչի, մինչ իրենք ծուղակ էին պատրաստել՝ ճանապարհին նրան սպանելու համար: 4 Իսկ Փեստոսը պատասխանեց, թէ նա Կեսարիայում կը պահուի, եւ թէ ինքն էլ շուտով այնտեղ է գնալու. ապա ասաց. 5 «Ձեզնից ովքեր կը կարողանան, ինձ հետ թող իջնեն, եւ եթէ այդ մարդու վրայ որեւէ յանցանք կայ, նրան թող ամբաստանեն»: 6 Եւ ոչ աւելի քան ութ կամ տասը օր այդտեղ մնալուց յետոյ եկաւ իջաւ Կեսարիա. եւ յաջորդ օրը, ատեան նստելով, հրամայեց, որ Պողոսին բերեն: 7 Երբ նա եկաւ, նրա շուրջը բոլորուեցին Երուսաղէմից իջած հրեաները. եւ նրա վրայ բարդում էին բազում եւ ծանր յանցանքներ, որ չէին կարողանում ապացուցել, 8 քանի որ Պողոսը պատասխանում էր. «Ոչնչով յանցաւոր չեմ ո՛չ հրեաների օրէնքի, ո՛չ տաճարի, ո՛չ էլ կայսեր դէմ»: 9 Բայց Փեստոսը, կամենալով հրեաներին շնորհ անել, Պողոսին ասաց. «Ուզո՞ւմ ես Երուսաղէմ բարձրանալ եւ այդ խնդիրների համար այդտեղ դատուել իմ առաջ»: 10 Պողոսն ասաց. «Կանգնած եմ կայսեր ատեանի առաջ, ուր եւ պէտք է դատուեմ: Հրեաներին ոչ մի անիրաւութիւն չեմ արել, ինչպէս ինքդ էլ քաջ գիտես. 11 ուրեմն եթէ յանցաւոր եմ եւ մահուան արժանի գործ եմ արել, մեռնելուց չեմ վախենայ: Իսկ եթէ ոչինչ չկայ այն մեղադրանքների մէջ, որոնցով սրանք ինձ ամբաստանում են, ոչ ոք չի կարող ինձ որպէս շնորհ յանձնել դրանց: 12 Կայսրի՛ն եմ բողոքում»: 12 Այն ժամանակ Փեստոսը իր խորհրդականների հետ խօսելուց յետոյ պատասխանեց. «Կայսրին բողոքեցիր, կայսեր մօտ պիտի գնաս»:

ՊՈՂՈՍԸ ԱԳՐԻՊՊԱՍ ԱՐՔԱՅԻ ԱՌԱՋ

13 Մի քանի օր անցնելուց յետոյ Ագրիպպաս արքան եւ Բերենիկէն Կեսարիա եկան՝ Փեստոսին ողջունելու: 14 Եւ երբ այնտեղ շատ օրեր էին անցկացրել, Փեստոսը արքային տեղեկացրեց Պողոսի մասին ու ասաց. «Այստեղ Ֆելիքսի կողմից կալանքի տակ առնուած մի մարդ կայ մնացած, 15 որի մասին, երբ Երուսաղէմ գնացի, քահանայապետները եւ հրեաների գլխաւորներն ինձ տեղեկացրին: Ինձնից խնդրում էին, որ նրան մահուան վճիռ տամ: 16 Նրանց պատասխանեցի. "Հռոմէացիների սովորութիւնը չէ որեւէ մէկին որպէս շնորհ յանձնել ուրիշ մէկի, մինչեւ որ ամբաստանեալը իր դիմացը չունենայ մեղադրողներին եւ ամբաստանութեան դէմ պատասխան տալու պատեհութիւնը չստանայ": 17 Եւ երբ այստեղ եկան, ոչնչով չուշացրի, այլ յաջորդ օրն իսկ ատեան նստելով՝ հրամայեցի, որ մարդուն բերեն: 18 Նրա դէմ ներկայացող ամբաստանողները մէջտեղ չէին բերում չարագործութեան ոչ մի յանցանք, որոնց մասին ես կասկած ունէի. 19 այլ ինչ-ինչ խնդիրներ ունէին նրա հետ իրենց պաշտամունքին վերաբերող, ինչպէս նաեւ մի ոմն մեռած Յիսուսի վերաբերեալ, որի մասին Պողոսն ասում էր, թէ կենդանի է: 20 Երբ այսպիսի խնդիրների քննութեան համար տարակուսանքի մէջ ընկայ, նրան ասացի, թէ կը կամենա՞ր Երուսաղէմ գնալ եւ այդ խնդիրների համար այնտեղ դատուել: 21 Բայց երբ Պողոսը բողոքեց, որ ինքը պէտք է պահուի Նորին Գերազանցութեան վճռին ներկայանալու համար, հրամայեցի պահել նրան, մինչեւ որ կայսեր մօտ ուղարկեմ»: 22 Ագրիպպասը Փեստոսին ասաց. «Ես էլ կը կամենայի այդ մարդուն լսել»: Փեստոսն ասաց. «Վաղը կը լսես»:

23 Եւ յաջորդ օրը, երբ Ագրիպպասը եւ Բերենիկէն փառաւոր հանդէսով եկան եւ հազարապետների ու քաղաքի պատուաւոր մարդկանց հետ ատեան մտան, Փեստոսը հրամայեց, որ Պողոսին բերեն: 24 Փեստոսն ասաց. «Ագրիպպա՛ս արքայ եւ բոլոր մարդիկդ, որ մեզ հետ էք, սրան տեսնում էք. հրեաների ամբողջ ժողովուրդը թէ՛ Երուսաղէմում եւ թէ՛ այստեղ սրա մասին ամբաստանութիւն էին անում ինձ մօտ եւ աղաղակում, թէ՝ չպէտք է կենդանի մնայ: 25 Բայց ես վերահասու եղայ, թէ դա մահուան արժանի ոչինչ չի արել. ինքն էլ բողոքած լինելով մարդկանցից Գերազանցին՝ խորհեցի, որ ուղարկեմ նրան: 26 Դրա մասին իմ տիրոջը՝ կայսրին ստոյգ բան չունեմ գրելու. այդ պատճառով նրան ձեր առաջ բերեցի եւ, մանաւանդ, քո՛ առաջ, Ագրիպպա՛ս արքայ, որպէսզի վերստին քննութիւն կատարելով՝ կարողանամ մի բան գրել, 27 քանի որ ինձ անպատեհ բան է թւում ուղարկել մի բանտարկեալի եւ նրա մասին որեւէ յանցանք չնշել»:

ՊՈՂՈՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԳՐԻՊՊԱՍԻ ԱՌԱՋ

26 Եւ Ագրիպպասը Պողոսին ասաց. «Քեզ թոյլատրուած է, որ քո մասին խօսես»: Այն ժամանակ Պողոսը, ձեռքը երկարելով, պատասխանեց. 2 «Հրեաների՝ իմ մասին արած բոլոր ամբաստանութիւնների համար, Ագրիպպա՛ս արքայ, ինձ երանելի եմ համարում, քանի որ այսօր քո առաջ եմ պատասխան տալու, 3 մանաւանդ նրա համար, որ գիտակ էլ ես հրեաների բոլոր կրօնական սովորութիւններին եւ խնդիրներին. այդ պատճառով աղաչում եմ, որ համբերութեամբ ինձ լսես: 4 Բոլոր հրեաները տեղեակ են իմ կեանքին իմ մանկութիւնից ի վեր, որը հէնց սկզբից անցել է Երուսաղէմում իմ ազգի մէջ: 5 Նրանք վաղուց գիտեն, եթէ կամենան վկայել, որ ես որպէս փարիսեցի ապրել եմ մեր կրօնական խստագոյն օրէնքների համաձայն: 6 Եւ այժմ դատւում եմ, կանգնած ատեանի առաջ, Աստծուց մեր հայրերին տրուած խոստումի յոյսի համար: 7 Ջերմեռանդութեամբ գիշեր ու ցերեկ պաշտամունք կատարելով՝ մեր տասներկու ցեղերը յուսացել են դրան հասնել: Այդ յոյսի՛ համար, ո՛վ արքայ, ես էլ ամբաստանւում եմ հրեաների կողմից: 8 Ձեզ ինչո՞ւ է անհաւատալի թւում, որ Աստուած մեռելներին յարութիւն կը տայ: 9 Ես ինքս էլ պատշաճ էի համարում շատ բան Նազովրեցի Յիսուսի անունը հակառակ գործել, 10 ինչ որ արեցի իսկ Երուսաղէմում. քահանայապետներից իշխանութիւն ստանալով՝ սրբերից շատերին ես բանտարկում էի եւ նրանցից սպանուելու ենթակայ եղողների համար հաւանութիւն էի տալիս: 11 Եւ բոլոր ժողովարաններում շատ անգամ նրանց պատժելով՝ բռնադատում էի, որ հայհոյեն: Առաւել եւս մոլեգնելով նրանց դէմ՝ հալածում էի նրանց մինչեւ օտար քաղաքներ»:

ՊՈՂՈՍԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ
(Գործք 9. 1-11, 22. 6-16)

12 «Ըստ այսմ, երբ քահանայապետների իշխանութեամբ եւ հրամանով Դամասկոս էի գնում, 13 կէսօրին, ճանապարհին, ո՛վ արքայ, տեսայ, որ երկնքից արեգակի լուսաւորութիւնից առաւել ուժեղ մի լոյս փայլատակեց իմ շուրջը եւ նրանց շուրջը, որ ինձ հետ էին գնում: 14 Եւ երբ մենք բոլորս գետին ընկանք, լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր եբրայերէն լեզուով. "Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում. քեզ համար խիստ դժուար է խթանի դէմ աքացել": 15 Եւ ես ասացի. "Ո՞վ ես, Տէ՛ր": Տէրն ասաց. "Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես. 16 վե՛ր կաց ու կանգնի՛ր ոտքերիդ

վրայ. ես քեզ երեւացի նրա համար, որ
քեզ նշանակեմ պաշտօնեայ եւ վկայ
այն բոլորի համար, որոնց մէջ ինձ
տեսար եւ այն բաների համար, որոն-
ցով պիտի երեւամ քեզ. 17 ես քեզ կը
փրկեմ ժողովրդից եւ հեթանոսներից,
որոնց մէջ քեզ կ'ուղարկեմ, 18 որպէսզի
բանաս նրանց աչքերը, նրանց դարձ-
նես խաւարից դէպի լոյս եւ սատանայի
իշխանութիւնից՝ դէպի Աստուած, որ-
պէսզի նրանք մեղքերի թողութիւն
ստանան եւ սրբերի հետ ժառանգու-
թեան բաժին՝ իմ հանդէպ ունեցած
հաւատով": 19 Ուստի, ո՛վ Ագրիպպաս
արքայ, ես երկնային տեսիլքին ան-
հնազանդ չդտնուեցի, 20 այլ նախ
բոլոր նրանց, որ Դամասկոսում էին ու
Երուսաղէմում եւ Հրէաստանի բոլոր
գաւառներում, ապա նաեւ հեթանոս-
ներին քարոզեցի, որ զղջան եւ դառ-
նան կենդանի Աստծուն ու ապաշ-
խարութեան արժանի գործեր անեն:
21 Դրա համար հրեաները, տաճարում
ինձ բռնելով, փորձեցին սպանել: 22 Սա-
կայն Աստծուց օգնութիւն հասաւ, եւ
ես մինչեւ այսօր ողջ մնացի՝ վկայելով
փոքրին եւ մեծին, ոչինչ չասելով այն
բաներից դուրս, ինչ մարգարէներն ու
Մովսէսն են խօսել լինելիք դէպքերի
մասին. 23 թէ՝ Քրիստոս չարչարուելու
է. թէ՝ մեռելներից առաջին յարութիւն
առնողը լոյս է աւետարանելու ժո-
ղովրդին եւ հեթանոսներին»:

ԿՈՉ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏԻ

24 Երբ նա այս պատասխանը տուեց,
Փեստոսը բարձր ձայնով ասաց.
«Ցնորւում ես, Պօղո՛ս, քո մեծ հմտու-
թիւնը քեզ խելացնորութեան է տա-
նում»: 25 Իսկ Պօղոսն ասաց. «Չեմ
ցնորւում, ո՛վ Գերազանցդ Փեստոս,
այլ զգաստութեան եւ ճշմարտութեան
խօսքեր եմ արտասանում. 26 արքան
այս բաներին գիտակ իսկ է, դրա
համար համարձակ եմ խօսում, քանի
որ յանձն չեմ առնում այս բոլորից
որեւէ բան քեզնից ծածկել, որովհետեւ
մի որեւէ խուլ անկիւնում չէ, որ այս
բանը գործուած է: 27 Ագրիպպա՛ս ար-
քայ, մարգարէներին հաւատո՞ւմ ես.
գիտեմ, որ հաւատում ես»: 28 Եւ Ագ-
րիպպասը Պօղոսին ասաց. «Քիչ է
մնում՝ ինձ էլ համոզես, որ քրիստո-
նեայ դառնամ»† : 29 Եւ Պօղոսն ասաց.
«Կը խնդրէի Աստծուն, որ, վաղ թէ ուշ,
ոչ միայն դու, այլ բոլոր նրանք, որ
այսօր ինձ լսում են, լինեն այնպիսին,
ինչպիսին ես ինքս եմ, բացի այս
կապանքներից»:

30 Արքան ոտքի ելաւ, ինչպէս եւ կու-
սակալը, Բերենիկէն եւ բոլոր նրանք,
որ նրանց հետ նստել էին: 31 Եւ մինչ
գնում էին, իրար հետ խօսում էին ու
ասում. «Մահուան կամ կապանքների
արժանի ոչինչ չի անում այս մարդը»:
32 Իսկ Ագրիպպասը Փեստոսին ասաց.
«Կարելի էր ազատ արձակել այս մար-
դուն, եթէ կայսրին բողոքած չլինէր»:

ՊՕՂՈՍԻ ՆԱՒԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՀՌՈՄ

27 Երբ մեզ հրամայուեց նաւարկել
դէպի Իտալիա, Պօղոսին եւ մի քանի
այլ կալանաւորների յանձնեցին Սե-
բաստեան գնդից‡ մի հարիւրապետի,
որի անունը Ցուլիոս էր. 2 եւ բարձ-
բանալով ադրամինտական մի նաւ, որ
Ասիայի կողմերն էր գնալու, ճանա-
պարհ ընկանք: Մեզ հետ էր նաեւ
Մակեդոնիայից Թեսաղոնիկեցի Արիս-
տարքոսը: 3 Յաջորդ օրը իջանք Սիդոն:
Եւ Ցուլիոսը, Պօղոսի հանդէպ մարդա-
սիրութիւն ցուցաբերելով, նրան հրա-
ման տուեց գնալ բարեկամների մօտ
խնամք ստանալու: 4 Այնտեղից դուրս
գալով, քանի որ քամին հակառակ
կողմից էր, նաւարկեցինք Կիպրոսի
մօտով աւելի ցած: 5 Ապա Կիլիկիայի
եւ Պամփիւլիայի մէջտեղում, բաց ծովի
միջով նաւարկելուց յետոյ իջանք Լի-
կիայի Միւռա քաղաքը: 6 Եւ այնտեղ
հարիւրապետը գտնելով ալեքսան-
դրեան մի նաւ, որ Իտալիա էր գնում,
մեզ այնտեղ մտցրեց: 7 Եւ բազում
օրեր դանդաղ նաւարկելուց յետոյ
դժուարութեամբ հասանք մինչեւ
Կնիդիայի մօտերքը. եւ երբ քամին
թոյլ չտուեց մեզ, նաւարկեցինք Կրե-
տէի եզերքով ներքեւ, մինչեւ Սաղմո-

†Լաւագոյն յուն. բն. ունեն Քիչ է մնում, որ ինձ էլ Քրիստոնեայ դարձնես:

‡Այսինքն՝ կայսերական գնդից:

նիայի մօտերքը: 8 Նրա եզերքով
դժուարութեամբ անցնելուց յետոյ,
հասանք մի տեղ, որ կոչւում էր
Գեղեցիկ նաւահանգիստ, եւ որին կից
էր Ղասէա քաղաքը:

ՓՈԹՈՐԻԿԸ ԵՒ ՆԱՒԱՐԵԿՈՒԹԻՒՆԸ

9 Եւ քանի որ շատ ժամանակ էր
անցել, եւ նաւարկելն էլ վտանգաւոր
կը լինէր, մինչեւ իսկ ծոմապահութեան
օրերն էլ արդէն անցել էին, Պօղոսը
նրանց խրատ տուեց եւ ասաց. 10 «Մար-
դի՛կ, տեսնում եմ, որ այս նաւար-
կութիւնը չարիքով եւ բազում վնասով
է լինելու ոչ միայն բեռների եւ նաւի
համար, այլեւ մեր անձերի»: 11 Բայց
հարիւրապետը նաւապետին եւ նաւա-
տիրոջն աւելի էր լսում, քան Պօղոսի
խօսքերը: 12 Երբ նաւահանգիստը ձմե-
ռելու համար անյարմար թուաց, շա-
տերը խորհեցին այնտեղից հեռանալ,
որպէսզի մի գուցէ կարողանան հասնել
Փիւնիկէ քաղաքը եւ ձմեռել Կրետէի
այդ նաւահանգստում, որը նայում էր
դէպի հարաւակողմը եւ ցամաքամասը:
13 Եւ երբ հարաւի մեղմ քամին փչեց,
կարծեցին, թէ կը հասնեն այնտեղ, ուր
դիմում էին: Եւ† նաւարկելով՝ Կրետէի
եզերքի մօտով անցան: 14 Ոչ շատ
ժամեր յետոյ նաւի շուրջը բարձրացաւ
մի կատաղի քամի, որ կոչւում է Եւրա-
ցիկլոն‡ : 15 Երբ նաւը քշուեց եւ քամու
դէմ չկարողացաւ պայքարել, տեղի
տուեցինք եւ գնում-գալիս էինք: 16 Եւ
դիմելով դէպի մի կղզի, որը Կլօդա էր
կոչւում, դժուարութեամբ կարողա-
ցանք բռնել մակոյկը, որը նաւի վրայ
քաշեցինք. 17 ապա օգնութեան միջոց-
ներ օգտագործելով՝ նաւը ներքեւից
կապեցին. վախենալով, որ գուցէ յոր-
ձանուտի մէջ ընկնեն, առագաստը
իջեցրին. եւ այնպէս գնում-գալիս էին:
18 Եւ քանի որ մենք ամենասաստիկ
տագնապի մէջ էինք, յաջորդ առաւօտ
բեռները ծովը թափեցին: 19 Իսկ եր-
րորդ օրը իրենք իրենց ձեռքերով նաւի
գործիքները ծովը նետեցին: 20 Երբ
բազում օրեր ո՛չ արեւ եւ ո՛չ էլ աստղեր
էին երեւում, ու փոթորիկն էլ նոյն
սաստկութեամբ շարունակւում էր, մեր
փրկութեան ամէն յոյս վերացել էր:
21 Եւ որովհետեւ շատ օրեր քաղցած
էին, Պօղոսը, կանգնելով նրանց մէջ,
ասաց. «Ո՛վ մարդիկ, դուք ինձ պէտք է
անսայիք ու Կրետէից չելնէիք եւ այս
չարիքն ու վնասը չքաշէիք: 22 Արդ,
ձեզ խրատում եմ, որ քաջալերուէք,
որովհետեւ, բացի նաւից, ձեզնից եւ ոչ
մէկի կեանքին վնաս չպիտի հասնի.
23 որովհետեւ այս գիշեր Աստծու
հրեշտակը, որին պատկանում եմ ես ու
ծառայում, երեւաց ինձ ու ասաց. 24 "Մի՛
վախեցիր, Պօղո՛ս, դու կայսեր առաջ էլ
պէտք է ներկայանաս. եւ ահա բոլոր
նրանց, որ այդ նաւի մէջ քեզ հետ են,
Աստուած քեզ է շնորհել": 25 Դրա հա-
մար էլ քաջալերուեցէ՛ք, մարդի՛կ, ո-
րովհետեւ հաւատ ունեմ Աստծու վրայ,
թէ կը լինի այնպէս, ինչպէս որ ինձ
ասուեց: 26 Միայն թէ՝ մենք պէտք է
մի կղզի ընկնենք»:

27 Երբ տասնչորսերորդ գիշերը
եղաւ, եւ մենք Ադրիական անդունդ-
ների վրայ դեռ օրօրւում էինք, գիշե-
րուայ կէսին նաւավարները կարծեցին,
թէ ցամաք են հասել: 28 Ջրի խորու-
թիւնը չափող գունդը ցած գցելով՝
երեսունեօթը մետր խորութիւն գտան.
որոշ տարածութիւն կտրելուց յետոյ
նորից գցեցին եւ քսանութ մետր
գտան: 29 Վախենալով, թէ մի գուցէ
խութերով տեղ կ'ընկնեն, յետեւի կող-
մից չորս խարիսխներ ցած գցեցին.
անձկութեամբ տենչում էին, որ այգը
բացուի: 30 Բայց նաւավարները ուզում
էին նաւից փախչել. ուստի մակոյկը
ծով իջեցրին այն պատճառաբանու-
թեամբ, որ իբր թէ առջեւի կողմից էլ
են խարիսխներ գցելու: 31 Պօղոսը հա-
րիւրապետին եւ զինուորներին ասաց.
«Եթէ դրանք նաւի մէջ չմնան, դուք
ազատուել չէք կարող»: 32 Այն ժամա-
նակ զինուորները մակոյկի պարան-
ները կտրեցին ու դէն գցեցին: 33 Եւ
երբ այգը բացուելու մօտ էր, Պօղոսը
բոլորին խնդրեց, որ կերակուր ուտեն՝
ասելով. «Այս տասնչորսերորդ օրն է,

†Ցուցարէնը աւելացնում է՝ խարիսխները վեր քաշեցին:

‡Եւրացիկլոն՝ յունարէն բառ, որ նշանակում է հիւսիս-արեւելեան քամի:

որ դուք քաղցած՝ սպասումով էք անցկացնում եւ դեռ ոչինչ չէք կերել:
34 Դրա համար աղաչում եմ ձեզ, որ կերակուր ուտէք, քանի որ դա հէնց ձեր փրկութեան համար է. որովհետեւ ձեզնից ոչ ոքի գլխից մազ իսկ չի կորչելու»: 35 Եւ երբ այս ասաց, հաց վերցրեց, բոլորի առաջ Աստծուն գոհութիւն տուեց, կտրեց եւ սկսեց ուտել: 36 Ամէնքը քաջալերուեցին. եւ իրենք էլ կերակուր կերան: 37 Նաւի մէջ բոլորս երկու հարիւր եօթանասունվեց հոգի էինք: 38 Երբ կերակրով յագեցան, ցորենը ծովը թափելով՝ նաւը թեթեւացրին:

39 Եւ երբ այգը բացուեց, երկիրը չէին ճանաչում, բայց նշմարում էին մի ծովախորշ, որ ծովափ կարող էր լինել. եւ խորհում էին, թէ հնար լինէր նաւը այնտեղ հասցնել եւ փրկել†: 40 Ուստի խարիսխները յատակից կտրելով՝ ծովի մէջ բաց թողեցին, ղեկերի կապերը թուլացրին, առագաստը բացեցին ու քամուն տուեցին՝ դէպի ծովի ափի կողմը: 41 Ընկնելով երկու ծովերի միջեւ գտնուող մի ծանծաղուտ՝ նաւը ծռեցին. եւ նաւի առաջակողմը յատակին խրուելով, անշարժ մնաց, իսկ յետեւի կողմը ալիքների սաստկութիւնից ջարդուփշուր էր լինում: 42 Այն ժամանակ զինուորները խորհուրդ արեցին, որ կալանաւորներին սպանեն, որպէսզի ոչ ոք չլողայ ու փախչի: 43 Սակայն հարիւրապետը նրանց խորհրդին արգելք եղաւ, որովհետեւ ուզում էր Պողոսին ազատել. ուստի հրամայեց, որ, ովքեր կարող են լողալ, նախ նրանք ջուրը նետուեն, 44 իսկ միւսները՝ ոմանք տախտակների վրայ, ոմանք էլ նաւի այլ բեկորների վրայ ցամաք ելնեն: Եւ այսպէս ամէնքը, փրկուելով, ցամաք ելան:

ՊՈՂՈՍԸ ՄԵԼԻՏԻՆԷՈՒՄ (ՄԱԼԹԱ ԿՂԶՈՒՄ)

28 Երբ արդէն փրկուած էինք, այն ժամանակ իմացանք, թէ այն կղզու անունը Մելիտինէ էր: Եւ բարբարոս բնակիչները‡ մեր հանդէպ չափից աւելի մարդասիրութիւն ցոյց տուին. 2 խարոյկ վառեցին եւ մեզ բոլորիս ընդունեցին՝ տեղացող անձրեւի եւ ցրտի պատճառով: 3 Եւ երբ Պողոսը բաւականին շատ չոր ճիւղեր հաւաքեց եւ խարոյկի վրայ դրեց, մի իժ կրակի տաքութեան պատճառով դուրս գալով՝ կախուեց նրա ձեռքից: 4 Եւ երբ բարբարոսները գազանին նրա ձեռքից կախուած տեսան, միմեանց ասացին. «Ուրեմն մարդասպան է այս մարդը, որը թէպէտ ծովից փրկուեց, բայց Արդարութիւնը նրան թոյլ չտուեց, որ ապրի»: 5 Ապա Պողոսը գազանին կրակի մէջ թափ տուեց, եւ իրեն ոչ մի վատ բան չպատահեց. 6 իսկ նրանք սպասում էին, որ նա կ'ուռչի կամ կ'ընկնի ու յանկարծակի կը մեռնի: Շատ սպասելուց յետոյ, երբ տեսան, որ նրան որեւէ վնաս չհասաւ, նորից խօսքը դարձրին եւ ասում էին. «Սա մի աստուած է»: 7 Այդ տեղի շրջակայքում գտնւում էին ագարակները Պոպլիոս անունով մի մարդու, որ կղզու գլխաւորն էր. սա երեք օրով մեզ իր մօտ ընդունեց եւ սիրով հիւրընկալեց: 8 Եւ պատահեց, որ Պոպլիոսի հայրը, ջերմով եւ փորլուծութեամբ հիւանդացած, անկողին ընկնի: Պողոսը նրա մօտ մտաւ եւ աղօթելով ձեռքը նրա վրայ դրեց ու նրան բժշկեց: 9 Եւ երբ այս պատահեց, ուրիշ հիւանդներ էլ, որ կղզում կային, գալիս էին ու բժշկւում: 10 Սրանք մեծ պատիւներով պատուեցին մեզ, եւ երբ գնում էինք, ինչ որ պէտք էր, տուեցին:

ՄԵԼԻՏԻՆԷԻՑ ՀՌՈՄ

11 Եւ երեք ամիս յետոյ բարձրացանք դիոսկուրեանների† նշանը կրող ալեքսանդրեան մի նաւ, որը ձմեռել էր կղզում: 12 Եւ Սիրակուսա իջնելով՝ երեք օր մնացինք: 13 Այնտեղից գնալով՝ հասանք Ռեգիոն. եւ երբ մի օր յետոյ հարաւի քամին փչեց, երկու օրում եկանք Պատիոլոս, 14ուր եւ գտանք եղբայրների, որոնք աղաչեցին, որ եօթը օր մնանք իրենց մօտ: Եւ ապա

†Լաւագոյն յուն. բն. ունեն նաւը եգերբ բերել:

‡Յոյները բարբարոս էին կոչում այն մարդկանց, որոնք յունարէն չէին խօսում:

†Դիոսկուրոս՝ յունական դիցաբանութեան մէջ երկուորեակ չաստուած:

ելանք Հռոմ: 15 Եւ այնտեղից, մեր մասին լսած լինելով, եղբայրները մեզ ընդառաջ եկան մինչեւ Ապփիոսի հրապարակը եւ Երեք կրպակները: Պողոսը նրանց տեսնելով՝ գոհութիւն տուեց Աստծուն ու քաջալերուեց:

ՊՈՂՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՀՌՈՄՈՒՄ

16 Եւ երբ Հռոմ մտանք, հրաման տրուեց Պողոսին, որ առանձին բնակուի իր պահապան զինուորի հետ միասին: 17 Եւ երեք օր յետոյ նա հրաւիրեց հրեաների գլխաւորներին. եւ երբ սրանք եկան, նրանց ասաց. «Եղբայրնե՛ր, ես ժողովրդին կամ հայրենի սովորութեանը հակառակ ոչինչ գործած չլինելով հանդերձ՝ որպէս Երուսաղէմից մի կալանաւոր, մատնուեցի Հռոմէացիների ձեռքը, 18 որոնք, երբ ինձ դատեցին, ուզեցին ազատ արձակել, որովհետեւ իմ մէջ մահուան արժանի ոչ մի յանցանք չգտան: 19 Բայց երբ հրեաները հակառակ խօսեցին, հարկ եղաւ կայսրին բողոքել. բայց ոչ նրա համար, որ իմ ազգի դէմ չարախօսելու բան ունէի: 20 Այս պատճառով է, որ խնդրեցի ձեզ՝ տեսնելու եւ խօսելու համար, քանի որ Իսրայէլի յոյսի համար է, որ այս շղթաների մէջ եմ գտնւում»: 21 Եւ նրանք ասացին նրան. «Մենք քո մասին Հրէաստանից ոչ մի նամակ չենք ստացել. մեր եղբայրներից էլ ոչ ոք չի եկել ու վատ բան չի պատմել կամ խօսել քո մասին: 22 Բայց խնդրում ենք քեզնից լսել, թէ ի՛նչ ես խորհում, քանի որ այդ հերձուածի մասին մեզ արդէն յայտնի է, որ ամենուրեք նրա դէմ հակառակութիւն կայ»:

ՊՈՂՈՍԻ ԿՈՉԸ ՀՌՈՄՈՒՄ ՀՐԵԱՆԵՐԻՆ

23 Որոշակի օրուայ համար Պողոսի հետ ժամադրուելուց յետոյ, նրա մօտ՝ նրա բնակարանը եկան բազում մարդիկ, որոնց նա առաւօտից մինչեւ երեկոյ բացատրում էր Աստծու արքայութիւնը եւ նրանց համոզում էր Յիսուսի մասին՝ վկայութիւն բերելով Մովսէսի օրէնքից եւ մարգարէներից: 24 Ոմանք համոզւում էին նրա խօսքերին. ուրիշներ էլ չէին հաւատում: 25 Եւ իրար մէջ անհամաձայն լինելով՝ թողնում գնում էին, երբ Պողոսն ասաց այս մի խօսքն էլ. «Սուրբ Հոգին Եսայի մարգարէի բերանով լաւ խօսեց մեր† հայրերին՝ 26 ասելով.

"Գնա՛ ժողովրդի մօտ ու ասա՛՝
լսելով պիտի լսէք ու չպիտի իմանամ,
եւ տեսնելով պիտի տեսնէք ու չպիտի տեսնէք.
27 որովհետեւ այդ ժողովրդի սիրտը կարծրացել է,
եւ իրենց ականջներով ծանր են լսում
ու իրենց աչքերը փակել են,
որպէսզի երբեմ աչքերով չտեսնեն
ու ականջներով չլսեն
եւ հոգով չիմանան եւ դարձի չգան,
ու ես էլ դրանց չբժշկեմ":

28 Եւ արդ, թող ձեզ յայտնի լինի, որ Աստծու այս փրկութիւնը ուղարկուեց հեթանոսներին, եւ նրանք կը լսեն»: 29 Եւ երբ այս ասաց, նրա մօտից դուրս գնացին հրեաները, որոնք իրենք իրենց մէջ էլ շատ վէճեր ունէին:

ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

30 Եւ ամբողջ երկու տարի Պողոսն ապրեց իր ծախսով: 31 Եւ ընդունում էր բոլոր նրանց, որ գալիս էին իր մօտ: 32 Քարոզում էր Աստծու արքայութիւնը եւ ամենայն համարձակութեամբ անարգել ուսուցանում էր Տէր Յիսուս Քրիստոսի մասին:

†Լաւագոյն յուն. բն. մեր բառի փոխարէն ունեն ձեր բառը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Քրիստոսի մահուանից եւ յարութիւնից քիչ տարիներ անց՝ թւում է, թէ քրիստոնեայ դարձած հրեաները, ինչպէս՝ Ակիւղասը եւ Պրիսկիղան, սկսել էին տարածել Աւետարանը Հռոմում: Դրա շնորհիւ այնտեղ արդէն հաստատուել էր քրիստոնէական առաջին Եկեղեցիներից մէկը, մինչ Պօղոսը քարոզում էր Ասորիքում, Փոքր Ասիայում եւ Յունաստանում: Աստուած յանձնարարել էր Պօղոսին գնալ «մինչեւ աշխարհի ծայրը»: Ահա թէ ինչու նա ցանկանում էր գնալ նաեւ Հռոմ: Իր ճանապարհորդութիւնը նախապատրաստելու համար նա մի նամակ է գրում այդ քաղաքի քրիստոնեաներին, որոնցից մի խումբ հաւաքւում էր Պրիսկիղայի եւ Ակիւղասի տանը:

Պօղոսն իր այս նամակում բացատրում է այնտեղի քրիստոնեաներին, թէ ինքն ինչպէս է հասկանում ոչ հրեայ ժողովրդի առաքեալի իր դերը: Նրա նամակում ամբողջական եւ սպառիչ կերպով շարադրուած է նրա պատգամը, որ նա ամփոփում է հետեւեալ տողերի մէջ. «Աւետարանը Աստծու զօրութիւն է՝ ի փրկութիւն բոլոր հաւատացեալների. նախ՝ հրեաների, ապա նաեւ՝ ոչ հրեաների» (1. 16–17):

Հրեաների եւ ոչ հրեաների յարաբերութեան հարցը կարեւոր նշանակութիւն ունէր առաջին քրիստոնեաների համար: Այս հարցին մենք հանդիպում ենք նաեւ Պօղոս առաքեալի այլ գրուածքներում: Նա հաստատում է, որ Քրիստոսի Աւետարանը ուղղուած է բոլոր մարդկանց առանց բացառութեան, եւ որ Աստուած փրկում է իրեն հաւատացող ամէն մոլորուած մարդու՝ ով որ էլ լինի նա:

Այնուհետեւ Պօղոսը քննութեան է առնում այն իսրայէլացիների հարցը, որոնք առժամապէս մերժում էին Քրիստոսին: Նա հաստատում է, որ այդ մերժումը չի կարող արգելք հանդիսանալ Աստծու ծրագրին, որի շնորհը յաղթանակելու է ի վերջոյ:

Եզրափակելով՝ Պօղոսը յայտնում է դէպի Հռոմ իր ճանապարհորդութեան ծրագիրը եւ իր նամակն աւարտում զանազան եղբայրների ողջոյններն ուղարկելով Հռոմի քրիստոնեաներին:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ Յիսուս Քրիստոսի ծառան, կոչումով առաքեալ, ընտրուած քարոզելու Աստծու Աւետարանը, 2 որ նա առաջուց խոստացել էր իր մարգարէների միջոցով սուրբ գրուածքներում 3 իր Որդու մասին, որը մարմնով սերում էր Դաւթի սերնդից եւ 4 որը, զօրութեամբ, Աստծու Որդի էր սահմանուած ըստ Սուրբ Հոգու՝ մեռելներից իր յարութեամբ, – մեր Տէր Յիսուս Քրիստոսը, 5 որի միջոցով ստացանք առաքեալ լինելու շնորհ՝ իր անուան համար հաւատի հնազանդութեան բերելու բոլոր հեթանոսներին, 6 որոնց թւում էք եւ դուք՝ կանչուածներդ Յիսուս Քրիստոսին. 7 ամենքիդ, որ Հռոմում էք, Աստծու սիրելիներիդ, կանչուած սրբերիդ, ձեզ շնո՛րհ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:

ՊՕՂՈՍԸ ԵՒ ՀՌՈՄԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

8 Նախ՝ ձեր բոլորի համար գոհութիւն եմ մատուցում իմ Աստծուն, Յիսուս Քրիստոսի միջոցով, նրա համար որ ձեր հաւատը պատմւում է ամբողջ աշխարհով մէկ: 9 Վկայ է ինձ Աստուած, որին պաշտում եմ ես իմ հոգով նրա Որդու Աւետարանի քարոզութեամբ, 10 թէ ինչպէս եմ անդադար յիշում ձեզ՝ ամենայն ժամ իմ բոլոր աղօթքներում աղաչելով, որ թերեւս երբեւէ ինձ յաջողուի, Աստծու կամքով, գալ ձեզ մօտ. 11 որովհետեւ խիստ կարօտել եմ ձեզ տեսնել, որպէսզի ձեզ փոխանցեմ որոշ հոգեւոր շնորհներ՝ ամրապնդելու ձեզ, 12 այսինքն՝ միխթարակից լինելու ձեզ հասարակաց հաւատի համար, որ իմն է, ինչպէս եւ ձերը: 13 Չեմ կամենում, եղբայրնե՛ր, որ դուք անտեղեակ լինէք, թէ շա՛տ անգամ կամեցայ գալ ձեզ մօտ, որպէսզի ձեր մէջ էլ որեւէ պտուղ գտնեմ, ինչպէս այլ հեթանոսների մէջ, բայց այդ արգելուեց ինձ մինչեւ այժմ:

14 Ես պարտական եմ ե՛ւ յոյներին ու բարբարոսներին, ե՛ւ իմաստուններին ու անգէտներին. 15 այդպէս էլ, որչափ իմ ուժերը ներեն, ես պատրաստ եմ յօժարութեամբ աւետարանելու նաեւ ձեզ, որ Հռոմում էք:

16 Որովհետեւ ամօթ չեմ համարում աւետարանելը, քանի որ այն Աստծու զօրութիւնն է՝ ի փրկութիւն բոլոր հաւատացեալների. նախ՝ հրեայի, ապա եւ՝ հեթանոսի. 17 որովհետեւ Աստծու արդարութիւնը, որ հաւատից է, հաւատի՛ համար է յայտնւում, ինչպէս որ գրուած է, թէ՝ արդարը հաւատով է ապրելու:

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՆՑ ՔՐԻՍՏՈՍԻ

18 Արդարեւ Աստծու բարկութիւնը երկնքից յայտնուելու է մարդկանց ամբողջ անհաւատութեան եւ անիրաւութեան վրայ, քանի որ նրանք ճշմարտութիւնը անիրաւութեամբ են բռնած պահում: 19 Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, յայտնուած է նրանց, քանզի Աստուած ինքը յայտնեց այն նրանց. 20 արդարեւ ի սկզբանէ աշխարհի Աստծու աներեւոյթ յատկութիւնները, այն է՝ նրա մշտնջենաւորութիւնը եւ զօրութիւնը† եւ աստուածութիւնը, իմանալի կերպով տեսանելի են նրա ստեղծածների մէջ. այնպէս որ, ամենեւին արդարանալ չեն կարող. 21 որովհետեւ ճանաչեցին Աստծուն, բայց իբրեւ Աստուած չփառաւորեցին կամ գոհութիւն չմատուցեցին նրան, այլ իրենց մտածումների մէջ նանրացան, եւ նրանց սրտերը անմտութեամբ խաւարեցին: 22 Իրենք իրենց իմաստունների տեղ էին դնում եւ յիմարացան: 23 Եւ անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի եւ թռչունների եւ չորքոտանիների եւ սողունների:

ԱՍՏԾՈՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՎՐԱՅ

24 Դրա համար, ըստ իրենց սրտերի ցանկութեան, Աստուած նրանց մատնեց պղծութեան, որ անարգեն իրենց մարմինները իրենք իրենց մէջ. 25 նրանք փոխանակեցին Աստծու

†Յունարէնը՝ մշտնջենաւոր զօրութիւնը:

ճշմարտութիւնը ստով, հնազանդուեցին ու պաշտեցին արարածներին եւ ոչ Արարչին, որ օրհնեալ է յաւիտեանս: Ամէն:

26 Ահա թէ ինչու Աստուած նրանց մատնեց անարգ կրքերի. որովհետեւ նրանց էգերը բնական կարիքները փոխանակեցին անբնական կարիքներով: 27 Նոյնպէս եւ արուները, թողնելով էգի հանդէպ բնական կարիքները, իրենց ցանկութիւններով բորբոքուեցին միմեանց հանդէպ. արուները արուների հետ խայտառակութիւն էին գործում եւ փոխարէնը իրենք իրենց անձերի մէջ ընդունում էին իրենց մոլորութեան հատուցումը:

28 Եւ քանի որ չկամեցան ճանաչել Աստծուն, Աստուած նրանց մատնեց անարգ մտքերի, որ անվայել բաներ անեն՝ 29 լցուած լինելով ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, կատարեալ նախանձով, սպանութեամբ, կռուազանցութեամբ, նենգութեամբ, չարասրտութեամբ. 30 բանսարկու, չարախօս, աստուածատեաց, նախատող, հպարտ, ամբարտաւան, պոռոտախօս, չարահնար, ծնողատեաց, 31 անմիտ, ուխտադրուժ, անագորոյն, անգութ, անողորմ. 32 նրանք գիտէին Աստծու արդար դատաստանը, թէ այսպիսի բաներ գործողները մահուան են արժանի. եւ ոչ միայն նրանք, որ անում են այդ բաները, այլ նաեւ նրանք, որ գործողներին հաւանութիւն են տալիս:

ԱՍՏԾՈՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

2 Ուստի, ո՛վ մարդ, դու, որ դատում ես, չես արդարանալու. այն բանի համար, որ ընկերոջդ ես դատում, դրանով իսկ ինքդ քեզ ես դատապարտում. քանի որ դու նոյնն ես անում, ինչի համար որ դատում ես նրան:

2 Քանզի գիտենք, որ Աստծու դատաստանը ճշմարտութեամբ է գործադրւում նրանց նկատմամբ, ովքեր այսպիսի բաներ են գործում: 3 Իսկ արդ, ո՛վ մարդ, դու, որ դատում ես նրանց, ովքեր այդպիսի բաներ են գործում, եւ դու էլ նոյնն ես գործում, կարծո՞ւմ ես, թէ ազատուելու ես Աստծու դատաստանից: 4 Եթէ արհամարհում ես նրա բարութեան առատութիւնը եւ ներողամտութիւնն ու համբերութիւնը, չգիտե՞ս, որ Աստծու բարութիւնը քեզ ապաշխարութեան է տանում: 5 Եւ քո խստասրտութեամբ ու անզիղջ սրտով քո անձի դէմ բարկութիւն ես դիզում բարկութեան օրուայ եւ Աստծու արդար դատաստանի յայտնութեան օրուայ համար. 6 Աստծու, որ հատուցում է իւրաքանչիւրին ըստ իր գործերի. 7 յաւիտենական կեանք՝ նրանց, որ բարի գործերի մէջ, իրենց յարատեւ համբերութեամբ, փնտռում են փառք, պատիւ եւ անմահութիւն, 8 իսկ նրանց, որ հակառակողներ են եւ ճշմարտութեան դէմ ապստամբողներ ու անիրաւութեան յետեւից գնացողներ՝ բարկութիւն եւ զայրոյթ, 9 նեղութիւն եւ անձկութիւն՝ ամէն մարդու, որ չարիք է գործում, նախ՝ հրեայի եւ ապա՝ հեթանոսի, 10 իսկ փառք, պատիւ եւ խաղաղութիւն՝ իւրաքանչիւրին, որ բարին է գործում, նախ՝ հրեայի եւ ապա՝ հեթանոսի. 11 որովհետեւ Աստծու առաջ աչառութիւն չկայ:

ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ՝ ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՈՎ

12 Բոլոր նրանք, որ մեղանչեցին առանց օրէնք ունենալու, առանց օրէնքի էլ կը կորչեն. իսկ նրանք, որ օրէնք ունենալով մեղանչեցին, օրէնքով էլ կը դատուեն 13 (որովհետեւ օրէնքը լսողները չեն, որ արդար են Աստծու առաջ, այլ օրէնքը կատարողնե՛րը պիտի արդարացուեն: 14 Եւ ուրեմն հեթանոսները, որ օրէնք չունեն, բնականօրէ՛ն են օրէնքի գործերը կատարում. նրանք, օրէնք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրէնք են: 15 Նրանք ցոյց են տալիս, թէ Աստծու օրէնքի պահանջները գրուած են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայութեամբ եւ իրենց խորհուրդների մէջ միմեանց մեղադրելով կամ արդարացնելով), – 16 այն օրը, երբ Աստուած

պիտի դատի մարդկանց գաղտնի գործերը, ըստ իմ աւետարանի, Յիսուս Քրիստոսի միջոցով:

ՀՐԵԱՆԵՐԻ ՄԵՂԱՆՉՈՒՄԸ ՕՐԷՆՔԻ ԴԷՄ

17 Ահա եւ դու, որ հրեայ ես կոչւում եւ յենուել ես օրէնքին ու պարծենում ես Աստուծով, 18 դու, որ գիտես նրա կամքը եւ ընտրում ես բարին ու կրթուած ես ըստ օրէնքի, 19 դու, որ վստահ ես քո անձի վրայ՝ առաջնորդ լինելու կոյրերին, լոյս՝ խաւարի մէջ եղողներին, 20 խրատող՝ անմիտներին, ուսուցիչ՝ մանուկներին, քանի որ վստահ ես, թէ ունես օրէնքի մէջ գիտութեան եւ ճշմարտութեան կատարեալ պատկերացումը . . . 21 Իսկ արդ, դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում. քարոզում ես՝ չգողանալ, գողանում ես. 22 ասում ես՝ չշնանալ, շնանում ես. գարշում ես մեհեաններից, տաճարներն ես կողոպտում. 23 օրէնքով պարծենում ես՝ օրէնքը խախտելով Աստծուն ես անարգում. 24 որովհետեւ Աստծու անունը ձեր պատճառով հեթանոսների մէջ հայհոյւում է, ինչպէս որ գրուած էլ է:

ՃՇՄԱՐԻՏ ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆԸ

25 Թլփատութիւնն օգուտ կ'ունենայ, եթէ օրէնքը պահես, իսկ եթէ օրէնքը խախտող ես, քո թլփատութիւնը անթլփատութիւն կը լինի. 26 ուրեմն եթէ անթլփատ մարդը օրէնքի իրաւունքները պահի, նրա անթլփատութիւնը արդեօք թլփատութիւն չի՞ համարուի: 27 Եւ ի բնէ անթլփատ մարդը, օրէնքը կատարելով, պիտի դատի քե՛զ, որ, գրաւոր օրէնքն ունենալով եւ թլփատուած լինելով հանդերձ, մեղանչել ես օրէնքի դէմ. 28 որովհետեւ բուն հրեան նա չէ, որ արտաքուստ է երեւում, եւ ոչ էլ բուն թլփատութիւնը՝ արտաքուստ եղածը՝ մարմնականը: 29 Այլ հրեան նա է, որ ներքուստ է, եւ թլփատութիւնը սրտի թլփատութիւնն է՝ ըստ հոգու եւ ոչ թէ ըստ գրի, եւ որի գովքը մարդկանցից չէ, այլ՝ Աստծուց:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՒԱՏՈՎ

3 Արդ, ո՞րն է հրեայի առաւելութիւնը, կամ թլփատութիւնից ի՞նչ օգուտ. 2 շատ բան՝ ամէն տեսակէտներով: Նախ՝ այն, որ Աստծու պատգամները նրանց վստահուեցին: 3 Իսկ արդ, եթէ ոմանք հաւատարիմ չգտնուեցին, միթէ նրանց անհաւատութիւնը Աստծու հաւատարմութիւնը խափանե՞ց: 4 Քա՛ւ լիցի: Արդ, թող Աստուած ճշմարիտ լինի, իսկ ամէն մարդ՝ սուտ, ինչպէս որ գրուած էլ է, թէ՝

«Արդար լինես քո խօսքերում
եւ յաղթես, երբ դատում են քեզ†»:

5 Բայց եթէ մեր անիրաւութիւնը ցայտուն է դարձնում Աստծու արդարութիւնը, ի՞նչ ասենք. անիրա՞ւ է Աստուած, որ բարկութիւն է թափում: 6 Որպէս մարդ եմ խօսում: Քա՛ւ լիցի, ապա թէ ոչ Աստուած ինչպէ՞ս կը դատի աշխարհը. 7 արդարեւ, եթէ իմ ստով Աստծու ճշմարտութիւնը աւելանում է ի փառս նրա, էլ ինչի՞ համար եմ ես դատւում իբրեւ մեղաւոր: 8 Ուրեմն, ահա թէ ինչպէս են նախատում մեզ, եւ ինչպէս ոմանք մեր մասին ասում են իբր թէ ասած լինենք՝ չարի՛ք գործենք, որպէսզի բարին գայ. նրանք արժանի են իրենց դատապարտութեան:

ՈՉ ՄԷԿ ՄԱՐԴ ԱՐԴԱՐ Է

9 Եւ արդ, ինչո՞վ ենք առաւել. արդարեւ եւ ոչ մի բանով. որովհետեւ աւելի վերեւ էլ հաստատեցինք հրեաների եւ հեթանոսների՝ ամենքի էլ մեղքի տակ լինելը: 10 Ինչպէս գրուած էլ է.

«Ոչ ոք արդար չէ, ոչ իսկ մէկ հոգի:
11 Եւ չկայ մէկը, որ հասկացող լինի,
եւ չկայ մէկը, որ փնտռի Աստծուն:
12 Բոլորը միասին խոտորուեցին եւ անպէտ դարձան.
չկայ մէկը, որ բարութիւն անի, ոչ ոք, ոչ իսկ մէկ հոգի:
13 Նրանց կոկորդը բաց գերեզման է.
իրենց լեզուներով խաբեայ դարձան.
նրանց շրթունքների տակ իժերի թոյն կայ.
14 նրանց բերանները լի են անէծքներով եւ դառնութեամբ.

†Սաղմոս 50. 6:

15 Նրանք վազում են արիւն թափելու համար.
16 Նրանց ճանապարհներին կործանում
եւ թշուառութիւն կայ.
17 եւ նրանք խաղաղութեան ճանապարհը չիմացան.
18 Նրանց աչքերի առաջ չկայ Աստծու երկիւղը»† :

19 *Բայց գիտենք, որ, ինչ օրէնքն ասում է, ասում է նրանց, որ օրէնքի տակ են, որպէսզի ամէն բերան փակուի, եւ ամբողջ աշխարհը Աստծու դատապարտութեան տակ դրուի,* 20 *քանի որ ոչ մի մարդկային էակ օրէնքի գործերով չպիտի արդարացուի նրա առաջ, քանզի օրէնքի միջոցով է մեղքի ճանաչումը:*

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՏԻՑ է

21 *Բայց հիմա առանց օրէնքի էլ Աստծու արդարութիւնը յայտնուած է՝ օրէնքի եւ մարգարէների վկայութեամբ.* 22 *որովհետեւ Աստծու արդարութիւնը ի Յիսուս Քրիստոս եղած հաւատի միջոցով է բոլոր հաւատացողների համար. չկայ ոչ մի խտրութիւն.* 23 *որովհետեւ բոլորն էլ մեղք գործեցին եւ զրկուեցին Աստծու փառքից,* 24 *բայց նրա շնորհիւ ձրի արդարացան Քրիստոս Յիսուսի միջոցով եղած փրկութեամբ:* 25 *Որովհետեւ Աստուած, նրա արեամբ, հաւատի միջոցով, որպէս քաւութիւն էր նախասահմանել՝ յայտնելով իր արդարութեան, ի թողութիւն աւելի առաջ, Աստծու համբերութեան ժամանակ գործուած մեղքերի,* 26 *յայտնելով իր արդարութեան ներկայ ժամանակում, յայտնելով այն բանի, որ ինքն արդար է եւ կ'արդարացնի նրան, ով Յիսուսին է հաւատում:* 27 *Իսկ արդ, ո՞ւր է մնում պարծենալը. ի չիք դարձաւ. ի՞նչ օրէնքով. գործերի՞ օրէնքով. ո՛չ, այլ հաւատի օրէնքով.* 28 *որովհետեւ մենք ընդունում ենք, որ մարդը հաւատով է արդարանում առանց օրէնքի գործերի:* 29 *Աստուած միայն հրեաների՞նն է եւ հեթանոսների՞նը՝ ո՞չ. այո՛, հեթանոսներինն էլ է.* 30 *քանի որ մէ՛կ Աստուած կայ, որ արդարացնում է հաւատի միջոցով եղած թլփատութիւնը, ուրեմն եւ՝ անթլփատութիւնն էլ՝ նոյն հաւատով:* 31 *Արդ, այս հաւատով միթէ ի չի՞ք ենք դարձնում օրէնքը. քա՛ւ լիցի. ընդհակառակն, օրէնքն ենք հաստատում:*

ԱԲՐԱՀԱՄԻ ՕՐԻՆԱԿԸ

4 *Իսկ արդ, ի՞նչ կարող ենք ասել Աբրահամի՝ ըստ մարմնի մեր նախահօր մասին.* 2 *որովհետեւ, եթէ Աբրահամը գործերով էր արդարացուած, պարծենալու պատճառ ունէր, բայց ոչ Աստծու առաջ:* 3 *Իսկ ի՞նչ է ասում Գրուածքը.*

«Հաւատաց Աբրահամն Աստծուն,
եւ այդ որպէս արդարութիւն համարուեց նրա համար»† :

4 *Բայց ով գործ է անում, նրա վարձը որպէս շնորհ չի դիտուում, այլ՝ որպէս պարտք.* 5 *իսկ նա, ով գործ չի անում, բայց հաւատում է նրան, ով արդարացնում է մեղաւորին, այդպիսի մէկի հաւատը համարւում է որպէս արդարութիւն:* 6 *Այսպէս էլ Դաւիթը երանի է տալիս այն մարդուն, որին Աստուած արդար է համարում առանց նայելու նրա գործերին.*

7 «Երանի՛ նրանց, որոնց անօրէնութիւնները ներուեցին,
եւ որոնց մեղքերը ծածկուեցին:
8 Երանի՛ է այն մարդուն, որի մեղքերը Տէրը նրան մեղք չի
համարում»‡ :

9 *Արդ, այս երանութիւնը թլփատուածների՞նն է, թէ՞ նաեւ՝ չթլփատուածներինը. քանզի ասում ենք, թէ՝ Աբրահամի հաւատը որպէս արդարութիւն համարուեց:* 10 *Արդ, ինչպէ՞ս համարուեց. մինչեւ թլփատութի՞ւնը, թէ՞ թլփատութիւնից յետոյ: Ոչ թէ թլփատութեան ժամանակ, այլ՝ անթլփատութեան:* 11 *Եւ նա ստացաւ թլփատութիւնը իբրեւ նշան, իբրեւ կնիք այն հաւատի արդարութեան, որ ունէր անթլփատութեան ժամանակ, որպէսզի նա հայր լինի բոլոր հաւատացեալներին, որ դեռեւս անթլփատ են՝ այդ իրենց եւս որպէս արդարութիւն համարուելու համար,* 12 *եւ լինի նաեւ հայր թլփատուածների ոչ միայն նրա համար, որ նրանք թլփատուած*

†Սաղմոս 14. 1-3, 5. 10, 139. 4, 10. 7: Եսայի 59. 7: Առակ. 1. 16: Սաղմոս 35. 2:

†Ծննդոց 15. 6:
‡Սաղմոս 31. 1-2:

են, այլ նաեւ նրա համար, որ գնում են մեր հայր Աբրահամի՝ չթլփատուած ժամանակուայ հաւատի հետքերով:

ԽՈՍՏՈՒՄ ՀԱՒԱՏԻ ՄԻՋՈՑՈՎ

13 *Արդարեւ, Աբրահամին եւ նրա սերնդին աշխարհը ժառանգելու խոստումը եղաւ ոչ թէ օրէնքի, այլ՝ հաւատի արդարութեան միջոցով.* 14 *քանի որ, եթէ ժառանգները նրանք են, որ օրէնքի ուժով են ժառանգ, ապա ընդունայն է հաւատը եւ դատարկ՝ խոստումը.* 15 *որովհետեւ օրէնքը բարկութիւն է առաջ բերում. ուր չկայ օրէնք, չկայ եւ օրինազանցութիւն:* 16 *Ահա թէ ինչու հաւատից է խոստումը, որպէսզի դա ըստ շնորհի լինի եւ որպէսզի խոստումը ի զօրու լինի Աբրահամի ամբողջ սերնդի համար, ոչ միայն այն սերնդի համար, որ օրէնքի ուժով է ժառանգ, այլեւ բոլոր նրանց համար, որոնք ունեն հաւատը Աբրահամի, որը մեր բոլորի հայրն է.* 17 *ինչպէս որ գրուած էլ է. «Քեզ կարգեցի հայր բազում ազգերի»† : Նա հայր է Աստծու առաջ, որին հաւատաց, թէ կենդանացնում է մեռելներին եւ չեղած բաները գոյութեան է կոչում:*

ԱԲՐԱՀԱՄԻ ՀԱՒԱՏԸ

18 *Աբրահամը, որ անյուսութեան մէջ էր, յոյսով հաւատաց, որ ինքը կը լինի բազում ազգերի հայր, ինչպէս որ ասուել էր, թէ՝ այսպէ՛ս պիտի լինի քո սերունդը:* 19 *Եւ նա չերկմտեց իր հաւատի մէջ, թէպէտ նայեց իր մարմնին արդէն իբրեւ մեռած մարմնի, - քանի որ հարիւր տարեկանի մօտ էր, - եւ Սառայի մեռած արգանդին:* 20 *Բայց Աստծու խոստման վրայ չերկմտեց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատով, փառք տուեց Աստծուն* 21 *եւ հաստատապէս համոզուեց իր մտքում, թէ նա, որ խոստացաւ, կատարելու կարո՛ղ է:* 22 *Դրա համար այդ նրան որպէս արդարութիւն համարուեց:*

23 *Արդ, միայն Աբրահամի համար չէ, որ գրուած է, թէ այս բանը նրա համար արդարութիւն համարուեց.* 24 *այլ համարուելու է եւ մե՛զ համար, որ հաւատում ենք Նրան, որ մեռելներից յարութիւն տուեց Յիսուսին՝ մեր Տիրոջը,* 25 *որ մահուան մատնուեց մեր յանցանքների համար եւ յարութիւն առաւ, որ մեզ արդարացնի:*

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ

5 *Ուրեմն, հաւատով արդարացուած, խաղաղութիւն ունենանք*† *Աստծու հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսով,* 2 *որի միջոցով էլ կարողացանք, հաւատով, մերձենալ այն շնորհին, որի մէջ եւ կանք ու պարծենում ենք Աստծու փառքի յոյսով:* 3 *Եւ ոչ միայն այսքանը. այլեւ պարծենում ենք մեր նեղութիւնների մէջ եւս, քանզի գիտենք, որ նեղութիւնները համբերութիւն են բերում,* 4 *համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս:* 5 *Յոյսը երբեք չի ամաչեցնում, որովհետեւ Աստծու սէրը սփռուած է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրուեց մեզ.* 6 *արդարեւ, մինչդեռ տկար էինք, Քրիստոս, ճիշտ ժամանակին, մեզ՝ մեղաւորներիս համար մեռաւ.* 7 *որովհետեւ արդար մարդու համար հազիւ թէ մէկը մեռնի, բայց բարի մարդու համար թերեւս մէկը համարձակուի մեռնել:* 8 *Աստուած իր սէրը մեր հանդէպ յայտնեց նրանով, որ, մինչդեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզ համար մեռաւ:* 9 *Այժմ, որ մենք արդարացուած ենք նրա արեամբ, որչա՜փ եւս առաւել նրանով փրկուած պիտի լինենք այդ բարկութիւնից.* 10 *որովհետեւ, եթէ, մինչ թշնամի էինք, հաշտուեցինք Աստծու հետ նրա Որդու մահուամբ, որչա՜փ եւս առաւել, երբ արդէն հաշտուած ենք, փրկուած պիտի լինենք նրա կեանքով:* 11 *Եւ ոչ միայն այսքանը. այլ նաեւ պարծենում էլ ենք Աստուծով մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով, որով եւ հաշտութիւնն իսկ ընդունեցինք:*

†Յուն. լաւ բն. *խաղաղութիւն ունենանք*-ի փոխարէն ունեն *խաղաղութիւն ունենք:*

ՄԷԿ ՄԱՐԴՈՎ՝ ՄԵՂՔ, ՄԷԿ ՄԱՐԴՈՎ՝ ՓՐԿՈՒԹԻՒՆ

12 Ինչպէս որ մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետեւ բոլորն էլ մեղանչեցին. 13 քանզի մինչեւ օրէնքը մեղքը աշխարհում կար. բայց մեղքը մեղք չի համարւում, ուր չկայ օրէնք. 14 սակայն մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսէս նոյնիսկ նրանց վրայ, որոնք Ադամի յանցանքի նման յանցանք չգործեցին, Ադամի, որը օրինակն է նրա, որ գալու էր: 15 Բայց շնորհն այնպէս չէ, ինչպէս յանցանքը. որովհետեւ, եթէ մէկի յանցանքով շատեր մեռան, որչա՜փ եւս առաւել Աստծու շնորհները եւ պարգեւները մէ՛կ մարդու՝ Յիսուս Քրիստոսի շնորհով աւելացան շատերի մէջ: 16 Եւ այս պարգեւները այնպէս չեն, ինչպէս որ է մէկ մարդու մեղքի հետեւանքը. որովհետեւ մէկի մեղքի դատաստանը դատապարտութիւն բերեց, իսկ շնորհը գործուած շատ մեղքերի արդարութիւն բերեց. 17 արդարեւ, եթէ մէկ մարդու յանցանքով մահը թագաւորեց միայն այդ մէկով, որչա՜փ եւս առաւել նրանք, որ շնորհի առատութիւն եւ արդարութեան պարգեւներ են ստանում, կեանքի մէջ պիտի թագաւորեն միակ Յիսուս Քրիստոսի միջոցով: 18 Ապա ուրեմն, ինչպէս մէկ մարդու յանցանքով բոլոր մարդիկ դատապարտութեան մատնուեցին, նոյնպէս եւ մէկի արդարութեամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կեանքի արդարութեան շնորհին. 19 որովհետեւ, ինչպէս մէկ մարդու անհնազանդութեամբ շատ մեղաւորներ եղան, նոյնպէս եւ մէկի հնազանդութեամբ շատ արդարներ պիտի լինեն: 20 Բայց օրէնքը մէջտեղ ընկաւ, որպէսզի յանցանքները բազմանան. որովհետեւ, ուր որ մեղքը շատացաւ, շնորհն առաւել եւս շատացաւ: 21 Ինչպէս որ մեղքը թագաւորեց մահուան մէջ, նոյնպէս եւ շնորհը պիտի թագաւորի արդարութեամբ մինչեւ յաւիտենական կեանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:

ՔՐԻՍՏՈՍՈՎ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ

6 Իսկ արդ, ի՞նչ ասենք. մնա՞նք մեղքի մէջ, որպէսզի շնորհը բազմանայ: 2 Քա՛ւ լիցի: Մենք, որ մեռանք մեղքի նկատմամբ, ինչպէ՞ս տակաւին ապրենք նրա մէջ: 3 Կամ չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք: 4 Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով. 5 որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ: 6 Այս իմացէ՛ք, որ մեր միջի հին մարդը խաչուեց նրա հետ, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, եւ այլեւս մենք չծառայենք մեղքին. 7 որովհետեւ, ով մեռնում է, ազատ է մեղքից: 8 Իսկ եթէ մեռանք Քրիստոսի հետ, հաւատում ենք, թէ նրա հետ էլ կ՚ապրենք: 9 Գիտենք, թէ Քրիստոս մեռելներից յարութիւն առած լինելով՝ այսուհետեւ չի մեռնի, եւ մահը նրան այլեւս չի տիրի. 10 որովհետեւ նա, որ մեռաւ, մեղքի համար մեռաւ մէկընդմիշտ, եւ նա, որ կենդանի է, կենդանի է Աստծու համար: 11 Նոյնպէս եւ դուք ձեզ մեռած համարեցէ՛ք մեղքի համար, բայց կենդանի՝ Աստծու համար, մեր Տէր Քրիստոս Յիսուսով:

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՄԵՂՔԻՆ, ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆԸ

12 Այսուհետեւ մեղքը թող չթագաւորի ձեր մահկանացու մարմիններին՝ հնազանդեցնելու ձեզ իր ցանկութիւններին: 13 Եւ ձեր մարմնի անդամները, որպէս անիրաւութեան գործիք, ի ծառայութիւն մեղքի մի՛ պատրաստէք, այլ յանձնեցէ՛ք ձեզ՝ ի ծառայութիւն Աստծու, որպէս մեռելներից կենդանի դարձածներ, իսկ ձեր մարմնի անդամները՝ արդարութեան գործիքներ՝ ի ծառայութիւն Աստծու, 14 որպէսզի մեղքը ձեզ չտիրի. քանզի օրէնքի տակ չէք, այլ՝ շնորհի:

15 Իսկ արդ, ի՞նչ: Մե՞ղք գործենք, որովհետեւ օրէնքի տակ չենք, այլ՝ շնորհի: Քա՛ւ լիցի: 16 Չգիտէ՞ք, թէ ում համար, որ դուք ձեզ ծառայութեան մէջ էք դնում հնազանդութեան համար, ծառայ էք, ում որ հնազանդւում էք. եթէ՝ մեղքին՝ մահուան† է տանում, իսկ եթէ՝ Աստծու հնազանդութեանը՝ արդարութեան: 17 Բայց գոհութիւն Աստծու. մեղքի ծառաներ էիք, բայց ի սրտէ հնազանդուեցիք այնպիսի վարդապետութեան, որ ձեզ աւանդուեց: 18 Արդ, մեղքից ազատագրուածներդ ծառայեցէ՛ք արդարութեան: 19 Մարդկայնօրէն եմ ասում՝ ձեր մարդկային տկարութեան պատճառով. եւ ինչպէս որ ձեր մարմնի անդամները տուեցիք անօրինութեանը, որպէս ծառաներ պղծութեան եւ անօրինութեան, նոյնպէս եւ այժմ ձեր մարմնի անդամները տուէ՛ք սրբութեան համար՝ որպէս ծառաներ արդարութեան. 20 որովհետեւ, մինչ մեղքի ծառաներն էիք, ազատ էիք արդարութեան հանդէպ:

ՄԵՂՔԻ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

21 Իսկ արդ, ի՞նչ պտուղ ունէիք ան ժամանակ, որի համար այժմ ամաչում էք. որովհետեւ դրանց վախճանը մահ է: 22 Բայց այժմ, ազատուած մեղքից եւ ծառայ դարձած Աստծուն՝ ձեր պտուղն էք տալիս սրբութեամբ, եւ նրա վախճանը կեանք է յաւիտենական. 23 քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի միջոցով:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՕՐԷՆՔԻՑ

7 Կամ թէ չգիտէ՞ք, եղբայրնե՛ր, – որովհետեւ օրէնքին գիտակ մարդկանց եմ ասում, – որ օրէնքը տիրում է մարդուն այնքան ժամանակ, քանի նա կենդանի է. 2 ինչպէս որ ամուսնացած կինը օրէնքով կապուած է իր մարդուն, քանի դեռ սա կենդանի է. իսկ եթէ մարդը մեռնի, իր մարդուն կապող օրէնքից արձակուած է: 3 Ապա ուրեմն, մինչ մարդը կենդանի է, շուն կը կոչուի, եթէ ուրիշ մարդու կին լինի. իսկ եթէ մարդը մեռնի, ազատ է այդ օրէնքից եւ շուն չի համարուի, եթէ ուրիշ մարդու կին լինի: 4 Այսպէս էլ դուք, եղբայրնե՛ր, օրէնքի հանդէպ մեռած էք Քրիստոսի մարմնով, որպէսզի լինէք ուրիշինը, նրանը, որ մեռելներից յարութիւն է առել, որպէսզի պտղաբեր լինենք Աստծու համար. 5 քանզի, մինչ մարմնական ցանկութիւնների համեմատ էինք ապրում, մեղքի կրքերը, որ օրէնքից մղում էին ստանում, զօրանում էին մեր մարմնի անդամների մէջ՝ մեզ առաջնորդելու համար մահուան: 6 Բայց այժմ բեռնաթափուեցինք օրէնքից, քանզի մեռա՛նք այն բանի նկատմամբ, որով բռնուած էինք, որպէսզի ծառայենք Հոգու նորոգութեամբ եւ ո՛չ գրուածքի հնութեամբ:

ՕՐԷՆՔԻ ԴԵՐԸ

7 Իսկ արդ, ի՞նչ ասենք. օրէնքը մե՞ղք է: Քա՛ւ լիցի. բայց մեղքը չէի ճանաչի այլ կերպ, քան օրէնքով. եւ ցանկութիւնը չէի ճանաչի, եթէ օրէնքը ասած չլիներ՝ մի՛ ցանկացիր: 8 Մեղքը պատուիրանով առիթ գտաւ եւ իմ մէջ առաջ բերեց ամենայն ցանկութիւն, որովհետեւ առանց օրէնքի մեղքը մեռած է: 9 Կար ժամանակ, որ ես էլ առանց օրէնքի կենդանի էի, բայց, երբ պատուիրանն ինձ հասաւ, մեղքը կենդանացաւ, 10 եւ ես մեռայ. եւ նոյն այն պատուիրանը, որ կեանքի համար էր, իմ մահուան պատճառ եղաւ. 11 որովհետեւ մեղքը պատուիրանով առիթ գտաւ, խաբեց ինձ, դրանով էլ սպանեց: 12 Այսպէս ուրեմն, օրէնքը սուրբ է, պատուիրանն էլ՝ սուրբ եւ արդար ու բարի:

ՄԱՐԴԸ ՄԵՂՔԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

13 Իսկ արդ, բարի՞ն մահ եղաւ ինձ համար. քա՛ւ լիցի. այլ մեղքը, օգտագործելով ինչ որ բարի է, ինձ մահ

†Յուն. լաւ բն. ունեն . . . մեղքին, որն առաջնորդում է մահուան:

պատճառեց, որպէսզի պատուիրանի միջոցով մեղքը յայտնուի որպէս մեղք իր իսկական սաստկութեամբ: 14 Գիտենք, որ օրէնքը հոգեւոր է. իսկ ես մարմնաւոր եմ՝ մեղքին վաճառուած. 15 քանի որ չեմ իմանում, ինչ որ գործում եմ. ոչ թէ այն եմ անում, ինչ որ ուզում եմ, այլ գործում եմ այն, ինչ որ ատում եմ. 16 ապա եթէ անում եմ այն, ինչ որ չեմ կամենում, դրանով իսկ վկայում եմ, թէ օրէնքը բարի է: 17 Իսկ արդ, ե՛ս չէ, որ գործում եմ այն, այլ՝ իմ մէջ բնակուող մեղքը: 18 Գիտեմ, որ ոչ մի բարի բան չի բնակւում իմ մէջ, այսինքն՝ իմ մարմնի մէջ, որովհետեւ կամենալը կար իմ մէջ, իսկ բարին գործելը՝ ոչ. 19 որովհետեւ ոչ թէ անում եմ բարին, որ կամենում եմ, այլ գործում եմ չարը, որը չեմ կամենում: 20 Իսկ եթէ անում եմ այն, ինչ որ չեմ կամենում, այլեւս ե՛ս չէ, որ անում եմ այն, այլ՝ իմ մէջ բնակուող մեղքը: 21 Եւ արդ, գտնում եմ այն բանի օրէնքը, որ, երբ ես ուզում եմ բարին գործել, իմ դէմ չարն է ելնում. 22 հաճելի է ինձ Աստծու օրէնքը՝ ներքին մարդու տեսակէտից, 23 բայց իմ մարմնի անդամների մէջ տեսնում եմ այլ օրէնք, որ պայքարում է իմ մտքի օրէնքին հակառակ եւ ինձ գերի է դարձրել մեղքի օրէնքին, որ կայ իմ մարմնի անդամների մէջ: 24 Ի՜նչ խղճալի մարդ եմ ես: Ո՞վ կը փրկի ինձ այս մարմնից, որ ինձ մահուան է տանում: 25 Բայց գոհութիւն Աստծու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով: Ապա ուրեմն ես ինքս իմ մտքով ծառայում եմ Աստծու օրէնքին, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

ԱՋԱՏԱԳՐՈՒՄ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՑՈՎ

8 Եթէ այդպէս է, այլեւս ոչ մի դատապարտութիւն չկայ նրանց համար, որոնք Քրիստոս Յիսուսի մէջ են. 2 որովհետեւ Քրիստոս Յիսուսով կեանք տուող հոգու օրէնքը ինձ փրկեց մեղքի եւ մահուան օրէնքից. 3 քանզի, ինչ որ անհնար էր օրէնքի համար, որ տկարանում էր մարմնի պատճառով, Աստուած հնարաւոր դարձրեց. առաքեց իր Որդուն մեղանչական մարմնի նմանութեամբ եւ մեղքի համար ու մարմնի մէջ դատապարտեց մեղքը, 4 որպէսզի օրէնքի արդարութիւնը կատարուի մեր մէջ, մեր, որ ոչ թէ ըստ մարմնի ենք ընթանում, այլ՝ ըստ հոգու. 5 արդարեւ նրանք, որ ըստ մարմնի են, մարմնինն են խորհում, իսկ նրանք, որ ըստ հոգու են, հոգունը. 6 քանի որ մարմնաւոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը կեանք եւ խաղաղութիւն. 7 քանզի մարմնաւոր խորհուրդը թշնամութիւն է առ Աստուած, որովհետեւ չի հնազանդւում Աստծու օրէնքին. եւ նա ոչ իսկ կարող է: 8 Նրանք, որ մարմնի իշխանութեան տակ են, չեն կարող հաճելի լինել Աստծուն: 9 Բայց դուք մարմնի իշխանութեան տակ չէք, այլ՝ հոգու, եթէ Աստծու Հոգին բնակուած է ձեր մէջ: Ապա եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, նա նրան չի պատկանում: 10 Իսկ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար, եւ հոգին կենդանի է արդարութեան համար: 11 Եթէ ձեր մէջ բնակւում է Նրա Հոգին, ով յարութիւն տուեց Յիսուսին մեռելներից, ապա եւ, ով յարութիւն տուեց Քրիստոսին մեռելներից, կը կենդանացնի ձեր մահկանացու մարմինները ձեր մէջ բնակուող իր Հոգով:

12 Այսպէս, ուրեմն, եղբայրնե՛ր, մարմնին չէ, որ պարտական ենք՝ ըստ մարմնի ապրելով. 13 որովհետեւ, եթէ ըստ մարմնի ապրէք, կը մեռնէք. իսկ եթէ Հոգով մարմնի գործերը սպանէք, կ՚ապրէք. 14 որովհետեւ նրանք, որ առաջնորդւում են Աստծու Հոգով, նրա՛նք են Աստծու որդիներ. 15 քանի որ չստացաք ծառայութեան հոգին վերստին երկիւղի մէջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրութեան հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր: 16 Նոյն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստծու որդիներ ենք. 17 եւ եթէ որդիներ ենք, ապա եւ՝ ժառանգներ. ժառանգներ Աստծու եւ ժառանգակիցներ Քրիստոսի. եթէ իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու եւ փառքին:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

18 Ինձ այնպէս է թւում, թէ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատուելու գալիք փառքի հետ, որ յայտնուելու է մեզ. 19 որովհետեւ ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը, 20 քանի որ ստեղծուածները ունայնութեանը հնազանդուեցին (ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստուած հնազանդեցրեց նրանց) 21 այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար. 22 քանզի գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են մինչեւ այժմ. 23 եւ ոչ միայն այսչափ. այլ եւ մենք իսկ, որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք եւս մեր մէջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրութեանը՝ մեր մարմնի փրկութեանը. 24 որովհետեւ յոյսով փրկուեցինք. իսկ տեսանելի յոյսը յոյս չէ, քանի որ մի բան, որ մէկը տեսնում է, էլ ինչո՞ւ յուսայ. 25 իսկ եթէ յոյս ունենք մի բանի, որը չենք տեսնում, ուրեմն՝ համբերութեամբ սպասում ենք դրան: 26 Նոյնպէս եւ Հոգին օգնութեան է հասնում մեր տկարութիւններին. որովհետեւ մենք աղօթում ենք եւ չգիտենք, թէ ինչպէս արժան է աղօթել. բայց Հոգին ինքը բարեխօս է լինում մեզ անմռունչ հառաչանքով: 27 Իսկ՝ նա, ով քննում է սրտերը, գիտէ, թէ ինչ խորհուրդ ունի Հոգին, քանի որ ըստ Աստծու կամքի է բարեխօսում սրբերի համար:

28 Բայց գիտենք, թէ ամէն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն, որոնք եւ կանչուեցին նրա նախասահմանումով. 29 որովհետեւ նրանց, որ առաջուց գիտէր, նախասահմանեց կերպարանակից լինելու իր Որդու պատկերին, որպէսզի նա լինի անդրանիկը բազում եղբայրների մէջ. 30 եւ որոնց որ նախասահմանել էր, նրանց էլ կանչեց. եւ որոնց որ կանչեց, նրանց էլ արդարացրեց. եւ որոնց որ արդարացրեց, նրանց էլ փառաւորեց:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՅ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ

31 Իսկ արդ, ի՞նչ ասենք այս մասին: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կը լինի մեզ հակառակ: 32 Նա, որ իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց նրան, էլ ինչպէ՞ս մեզ չի շնորհելու ամենայն ինչ նրա հետ մէկտեղ: 33 Ո՞վ է, որ մեղադրելու է Աստծու ընտրեալներին. Աստուած է, որ արդարացնում է: 34 Իսկ արդ, ո՞վ է, որ դատապարտելու է: Քրիստոս Յիսուս է, որ մեռաւ, մանաւանդ որ յարութիւն էլ առաւ. եւ Աստծու աջում է եւ բարեխօս է մեզ համար: 35 Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թէ՞ անձկութիւնը, թէ՞ հալածանքը, թէ՞ սովը, թէ՞ մերկութիւնը, թէ՞ վտանգները, թէ՞ սուրը, 36 ինչպէս գրուած էլ է.

«Քեզ համար ենք մեռնում ամէն օր.
համարուեցինք որպէս ոչխար սպանդի համար»† :

37 Բայց այս բոլորից է՛լ աւելի յաղթական ենք դուրս գալիս նրա միջոցով, ով սիրեց մեզ. 38 որովհետեւ վստահ եմ, թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ գալիքները եւ ո՛չ զօրութիւնները, 39 ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով:

ԻՍՐԱՅԵԼԻ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

9 Ճշմարիտն եմ ասում Քրիստոսով եւ չեմ ստում, – խղճմտանքս է ինձ վկայում Սուրբ Հոգով, 2 որ մեծ տրտմութիւն է ինձ եւ անհատնում ցաւ՝ իմ սրտին, – 3 որովհետեւ ես ինքս երդումով փափագում էի նզովուել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար, 4 որ իսրայէլացիներն են. նրանցն է որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրէնսդրութիւնը, պաշտամունքը եւ

†Սաղմոս 43. 23:

խոստումը. 5 նրանցն են նահապետները, նրանցից է նաեւ Քրիստոս՝ ըստ մարմնի. եւ նա՛ է բոլորի վրայ յաւիտեանս օրհնեալ Աստուած: Ամէն:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՀԱԻԱՏԱՐԻՄ ԻՐ ԽՈՍՏՄԱՆԸ

6 Կարելի չէ, որ Աստծու խօսքը գետնին մնայ. որովհետեւ ոչ բոլոր նրանք, որ Իսրայէլի ցեղից են, իսրայէլացիներ են: 7 Ոչ էլ բոլորը, որ Աբրահամի սերնդից են, որդիներ են. այլ՝ «Իսահակի անունո՛վ քո սերունդը պիտի կոչուի»†, 8 այսինքն թէ՝ մարմնի որդինե՛րը չեն, որ Աստծու որդիներ են, այլ խոստման որդիներն են համարւում որպէս սերունդ. 9 քանզի այս է խոստումը, որ ասում է, թէ՝ «Այս ժամանակում պիտի գամ, եւ Սառան որդի պիտի ունենայ»‡: 10 Եւ ոչ միայն այսչափ. այլ նաեւ Ռեբեկան, որ յղացաւ մեր հայր Իսահակից նոյն անկողնում. 11 որովհետեւ, քանի դեռ տղաները չէին ծնուել, եւ քանի դեռ բարի կամ չար բան չէր գործուել (որպէսզի Աստծու ծրագիրը ըստ ընտրութեան հաստատուի 12 ոչ թէ գործերից, այլ՝ նրանից, ով կոչեց), – նրան ասուեց, թէ աւագը կրտսերին պիտի ծառայի. 13 ինչպէս գրուած էլ է, թէ՝ «Յակոբին սիրեցի եւ Եսաւին ատեցի»§:

14 Իսկ արդ, ի՞նչ ասենք. միթէ կա՞յ անարդարութիւն Աստծուց: Քա՛ւ լիցի. 15 որովհետեւ ասում է Մովսէսին. «Պիտի ողորմեմ, ում ողորմելու եմ. եւ պիտի գթամ, ում գթալու եմ»: 16 Ուրեմն դա կախում չունի նրանից, ով կամենում է եւ ոչ էլ նրանից, ով ջանում է, այլ՝ Աստծուց, որ ողորմում է. 17 քանզի գրուածքն ասում է Փարաւոնին, թէ՝ «Նրա համար քեզ գրգռեցի, որպէսզի ցոյց տամ իմ զօրութիւնը քեզնով, եւ իմ անունը հռչակուի ամբողջ երկրով մէկ»: 18 Ապա ուրեմն, ողորմում է՝ ում ուզում է, եւ կարծրացնում է սիրտը նրա՝ ում ուզում է:*

†Մն.Նդոց 21. 12:
‡Մն.Նդոց 18. 10:
§Մն.Նդոց 25. 23:
*Ելք 9. 16:

ԱՍՏՄՈՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

19 Իսկ արդ, կ՚ասես, թէ՝ էլ ինչո՞ւ է մեղադրում, քանի որ նրա կամքին ոչ ոք չի հակառակում: 20 Արդ, դու ո՞վ ես, ո՛վ մարդ, որ հակառակում ես Աստծուն. միթէ ստեղծուածը կ՚ասի՞ իր ստեղծողին, թէ՝ ինչո՞ւ այդպէս ստեղծեցիր ինձ. 21 բրուտը իշխանութիւն չունի՞ կաւի վրայ նոյն զանգուածից անօթ չինելու, մէկը՝ պատուական, իսկ միւսը՝ հասարակ: 22 Եթէ Աստուած ուզեցաւ բարկութիւնը ցոյց տալ եւ յայտնի դարձնել իր զօրութիւնը, նա, որ համբերեց մեծ համբերատարութեամբ կորստեան համար պատրաստուած բարկութեան առարկայ անօթների հանդէպ, 23 որպէսզի յայտնի դարձնի իր փառքի հարստութիւնը ողորմութեան արժանացած անօթների վրայ, որոնց պատրաստեց փառքի համար, 24 եւ որոնց՝ մեզ, կանչեց ոչ միայն հրեաների միջից, այլ նաեւ՝ հեթանոսների . . .

25 Ինչպէս եւ ասում է Օսէի գրքում.

«Նրան, որ իմ ժողովուրդը չէր,
ինձ ժողովուրդ պիտի կոչեմ,
եւ չսիրուածը՝ սիրեցեալ.
26 եւ այնպէս պիտի լինի, որ այն տեղում,
որտեղ ասուեց նրանց, թէ՝
դուք իմ ժողովուրդը չէք,
այդ նոյն տեղում նրանք կենդանի Աստծու որդիներ պիտի
կոչուեն»†:

27 Եսային աղաղակում է Իսրայէլի մասին, թէ՝

«Եթէ Իսրայէլի որդիների թիւը լինի
ինչպէս ծովի աւազը,
մի փոքր թուով մնացորդ պիտի մնայ նրանցից.
28 որովհետեւ, վճռական եւ անյապաղ,
մի բան է կատարուելու արդարութեամբ.
այդ վճռական բանը Տէրն է կատարելու երկրի վրայ»‡:

29 Եւ ինչպէս ասում է Եսային.

«Եթէ զօրութեանց Տէրը մեզ սերունդ թողած չլինէր,
կը լինէինք ինչպէս Սոդոմը
եւ կը նմանուէինք Գոմորին»§:

†Օսէ 2. 25 եւ 2. 1:
‡Յունարէնը չունի *արդարութեամբ այդ վճռական բանը Տէրն է կատարելու երկրի վրայ* նախադասութիւնը:
§Եսայի 1. 9:

ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԸ

30 Իսկ արդ, ի՞նչ ասենք. այն, որ հեթանոսները, որոնք արդարութեան յետեւից չէին գնում, հասան արդարութեան. այն արդարութեան, որ հաւատից է. 31 իսկ Իսրայէլը գնում է օրէնքի արդարութեան յետեւից, բայց այդ օրէնքի արդարութեանը չհասաւ: 32 Ինչո՞ւ. որովհետեւ ոչ թէ հաւատին հետամուտ էր, այլ՝ օրէնքի† գործերին. քանի որ նրանք գայթակղութեան վէմին բախուելով՝ սայթաքեցին: 33 Ինչպէս գրուած էլ է.

«Ահաւասիկ դնում եմ Սիոնի մէջ
քար գայթակղութեան
եւ վէմ գլորման.
եւ ամենայն ոք, որ հաւատայ նրան, չի ամաչելու»‡:

ՀԱՒԱՏԻ ԵՒ ՕՐԷՆՔԻ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

10 *Եղբայրնե՛ր, իմ սրտի փափագը եւ աղօթքը առ Աստուած՝ նրանց§ փրկութեան համար են. 2 քանզի վկայում եմ նրանց համար, թէ նախանձախնդրութիւն ունեն Աստծու հանդէպ, բայց՝ անգիտութեամբ. 3 որովհետեւ նրանք չգիտակցելով Աստծու արդարութիւնը եւ իրենց արդարութիւնը հաստատել ուզելով՝ Աստծու արդարութեանը չհնազանդուեցին: 4 Արարեւ, Քրիստոսն է օրէնքի վախճանը բոլոր հաւատացեալների արդարացման համար:*

5 Մովսէսը գրում է այն արդարութեան մասին, որ օրէնքից է. եթէ մարդը կատարի այն, նրանով կ՚ապրի: 6 Իսկ հաւատից եղող արդարութեան մասին այսպէս է ասում. «Քո սրտում մի՛ ասա՝ ո՞վ է երկնելու երկինք»: Այսինքն՝ Քրիստոսին իջեցնելու համար: 7 Կամ՝ «Ո՞վ է իջնելու անդունդ»: Այսինքն՝ Քրիստոսին վեր հանելու համար մեռելներից: 8 Իսկ ի՞նչ է ասում Գիրքը. «Մօտ է խօսքը քեզ, քո բերանում եւ քո սրտում»: Այսինքն՝ հաւատի խօսքը, որը քարոզում ենք. 9 որովհետեւ, եթէ քո բերանով Յիսուսին Տէր խոստովանես եւ քո սրտում հաւատաս, թէ Աստուած նրան յարութիւն տուեց մեռելներից, կը փրկուես. 10 քանի որ արդարանալու համար սրտով էք հաւատում եւ փրկութեան համար խոստովանում բերանով. 11 քանզի Գիրքն ասում է. «Ամենայն ոք, որ հաւատայ նրան, չի ամաչելու». 12 որովհետեւ չկայ խտրութիւն հրեայի եւ հեթանոսի, քանզի նո՛յն Տէրը բոլորինն է, հանող բոլորին, որոնք կանչում են նրան. 13 որովհետեւ ամենայն ոք, որ Տիրոջ անունը կանչի, կը փրկուի:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ՝ ԱՍՏՈՒԾՈՎ

14 Իսկ ինչպէ՞ս կանչեն նրան, ում չհաւատացին. կամ՝ ինչպէ՞ս հաւատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպէ՞ս լսեն առանց մէկի քարոզելուն. 15 կամ՝ ինչպէ՞ս քարոզեն, եթէ չառաքուեցին: Ինչպէս գրուած էլ է.

«Ի՞նչ գեղեցիկ են ոտքերը խաղաղութեան
աւետարանիչների†
եւ բարի բաների աւետիս տուողների»‡:

16 Բայց ոչ բոլորը հնազանդ եղան աւետարանին: Եսային աղաղակում է. «Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր քարոզութեանը»: 17 Ապա ուրեմն հաւատը լսուածից է, եւ լսուածը՝ Քրիստոսի խօսքից:

18 Բայց ասում եմ. «Միթէ չլսեցի՞ն, մանաւանդ որ նրանց ձայնը ամբողջ երկիրը բռնեց, եւ նրանց խօսքը հասաւ աշխարհի ծագերին»: 19 Դարձեալ ասում եմ. «Միթէ Իսրայէլը չհասկացա՞ւ»: Նախ՝ Մովսէսն ասում է.

«Ես ձեզ նախանձոտ եմ դարձնելու
ոչինչ չարժող ժողովրդով
եւ բարկացնելու եմ անմիտ ազգով»:

20 Իսկ Եսային համարձակւում էլ է եւ ասում.

«Գտնուած եղայ նրանց, ովքեր ինձ չէին փնտռում,
յայտնուեցի նրանց, ովքեր իմ մասին չէին հարցնում»:

21 Իսկ Իսրայէլի մասին ասում է.

«Ամբողջ օրը իմ ձեռքերը երկարեցի
մի անհնազանդ եւ հակառակող ժողովրդի»:

†Յունարէնը չունի *խաղաղութեան աւետարանիչների* բառերը:
‡Եսայի 52. 7:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄՆԱՑՈՐԴԱՑԸ

11 Իսկ արդ, հարցնում եմ՝ միթէ մերժե՞ց Աստուած իր ժողովրդին: Քա՛ւ լիցի. քանզի ես էլ իսրայէլացի եմ՝ Աբրահամի սերնդից, Բենիամինի ցեղից: 2 Աստուած չմերժեց իր ժողովրդին, որին նախապէս ճանաչել էր: Կամ՝ չգիտէ՞ք ինչ է ասում Գիրքը Եղիայի մասին. թէ ինչպէս է նա գանգատւում Աստծուն Իսրայէլի դէմ. 3 «Տէ՛ր, կոտորեցին քո մարգարէներին եւ կործանեցին քո սեղանները. ե՛ս մնացի միայն, եւ իմ կեանքն են ուզում»: 4 Իսկ ի՞նչ է ասում նրան պատասխանը. «Թողեցի ինձ, – ասում է, – եօթը հազար մարդ, որոնք Բահաղին չծնրադրեցին»: 5 Նոյնպէս եւ ներկայ ժամանակում մնացորդներ կան ըստ ընտրութեան շնորհի: 6 Իսկ եթէ շնորհից է, այլեւս գործերից չէ. ապա թէ ոչ շնորհն այլեւս շնորհ չի լինի: 7 Իսկ արդ, ինչ որ Իսրայէլը փնտռում էր, դրան չհասաւ. բայց ընտրուածները հասան, իսկ մնացածները կուրացան, 8 – ինչպէս գրուած է՝ Աստուած նրանց յիմարութեան հոգի տուեց, աչքեր, որոնցով չպիտի տեսնեն, եւ ականջներ, որոնցով չպիտի լսեն, – մինչեւ ներկայ ժամանակները: 9 Եւ Դաւիթն ասում է.

«Թող նրանց սեղանները լինեն որոգայթ եւ խայծ,
գայթակղութիւն եւ հատուցում նրանց:
10 Թող խաւարեն նրանց աչքերը, որպէսզի չտեսնեն,
եւ նրանց թիկունքը մշտապէս ծռած պահիր»:

11 Իսկ արդ, ասում եմ. «Միթէ նրա՞ համար յանցանք գործեցին, որ կործանուեն»: Քա՛ւ լիցի. այլ նրանց յանցանքով է, որ եկաւ փրկութիւն հեթանոսներին, որպէսզի նախանձ գցի նրանց մէջ: 12 Իսկ եթէ նրանց յանցանքը աշխարհի համար հոգեկան հարստութիւն է, եւ նրանց նուաստութիւնը՝ հոգեկան հարստութիւն հեթանոսների համար, որչա՛փ եւս առաւել կը լինի նրանց բոլորի փրկութիւնը:

13 Բայց ասում եմ ձեզ՝ հեթանոսներիդ. որքան ժամանակ որ հեթանոսների առաքեալ եմ, փառաւորում եմ իմ պաշտօնը, 14 որպէսզի թերեւս նախանձ գցեմ նրանց մէջ, որոնք իմ մարմնից են, եւ փրկեմ նրանցից ոմանց. 15 որովհետեւ, եթէ նրանց մերժուելը հաշտութիւն է աշխարհին, ապա ի՞նչ է լինելու ընդունուելը, եթէ ոչ՝ կենդանութիւն մեռելներից:

16 Իսկ եթէ երախայրիքը սուրբ է, սուրբ է եւ զանգուածը. եւ եթէ արմատը սուրբ է, սուրբ են նաեւ ճիւղերը: 17 Եթէ ճիւղերից մի քանիսը կտրուեցին, եւ դու, որ մի վայրի ձիթենի էիր, պատուաստուեցիր նրանց վրայ եւ հաղորդակից եղար արմատին եւ ձիթենու պարարտութեանը, մի պարծեցի՛ր այդ ճիւղերի դէմ: 18 Իսկ եթէ պարծենաս, իմացի՛ր, որ ոչ թէ դու ես արմատը վեր բռնում. այլ արմատը՝ քեզ: 19 Իսկ արդ, կ'ասես. «Ճիւղերը կոտորուեցին, որ ես պատուաստուեմ»: 20 Շա՛տ բարի: Իրենց անհաւատութեան պատճառով կոտորուեցին, իսկ դու հաւատով հաստատ մնացիր: Մի՛ հպարտացիր, այլ վախեցիր, 21 որովհետեւ, եթէ Աստուած բուն ճիւղերին չխնայեց, գուցէ երբեք քեզ էլ չխնայի: 22 Արդ, տե՛ս Աստծու բարութիւնը եւ խստութիւնը. խստութիւն՝ կործանուածների հանդէպ եւ Աստծու բարութիւն՝ քո հանդէպ, եթէ մնաս նոյն բարութեան մէջ. ապա թէ ոչ դու էլ կը կտրուես, կը նետուես: 23 Իսկ նրանք, որ նոյն անհաւատութեան մէջ չեն մնայ, կը պատուաստուեն. որովհետեւ Աստուած կարո՛ղ է վերստին պատուաստել նրանց. 24 քանի որ, եթէ դու ի բնէ վայրի ձիթենուց կտրուեցիր եւ, քո բնութեանը հակառակ, բարի ձիթենու վրայ պատուաստուեցիր, որչա՛փ եւս առաւել նրանք, որ բուն իսկ ճիւղերն են, կը պատուաստուեն իրենց ձիթենու վրայ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

25 Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգէտ լինէք այս խորհրդին, – որպէսզի դուք ձեզ իմաստունի տեղ չդնէք, – թէ կուրութիւն եկաւ Իսրայէլի մէկ մասի վրայ եւ կը տեւի, մինչեւ միւս ժողովուրդների ամբողջութիւնը փրկուի, 26 եւ ապա ամբողջ Իսրայէլը կը փրկուի, ինչպէս գրուած էլ է.

«Սիոնից պիտի գայ Փրկիչը
եւ Յակոբի սերնդից պիտի հեռացնի ամբարշտութիւնները.
27 եւ այս կը լինի իմ ուխտը նրանց հետ,
երբ կը վերացնեմ նրանց մեղքերը»:

28 Աւետարանիս համաձայն նրանք թշնամիներ են ձեր օգտի համար, բայց ընտրութեան տեսակէտից, սիրելիներ՝ իրենց հայրերի պատճառով, 29 քանզի Աստծու պարգեւը եւ կոչը անդառնալի են. 30 արդարեւ, ինչպէս դուք էլ մի ժամանակ անհնազանդ էիք Աստծուն եւ հիմա ողորմութիւն գտաք նրանց անհնազանդութեամբ, 31 նոյնպէս եւ նրանք այժմ անհնազանդ եղան ձեր այդ ողորմութեան պատճառով, որպէսզի իրենք էլ իրենց հերթին ողորմութիւն գտնեն. 32 քանի որ Աստուած բոլորին էլ արգելափակեց անհաւատութեան մէջ, որպէսզի բոլորին էլ ողորմի:

ՕՐՀՆԵՐԳ ԱՍՏԾՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

33 Օ՜, խորութիւն Աստծու հարստութեան, իմաստութեան եւ գիտութեան: Ինչքա՜ն անքննելի են նրա դատաստանները, եւ անզննելի՝ նրա ճանապարհները:

34 «Արդարեւ, ո՞վ իմացաւ Տիրոջ միտքը,
կամ ո՞վ խորհրդատու եղաւ նրան,
35 կամ ո՞վ նրան փոխ տուեց,
որ փոխարէնը առնի նրանից»:

36 Քանի որ նրանից, նրանով եւ նրա համար է ամէն բան: Նրան փա՜ռք յաւիտեանս: Ամէն:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

12 Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ողորմութեամբ Աստծու, որ պատրաստէք ձեր մարմինները որպէս զոհ կենդանի, սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը†: 2 Եւ այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ, որպէսզի դուք քննէք լաւը, եւ թէ ի՛նչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը:

3 Աստծու ինձ տուած շնորհով այս եմ ասում ձեզնից իւրաքանչիւրին. դուք ձեզ աւելի մի՛ գնահատէք, քան ինչ որ է ձեր արժանիքը. այլ իւրաքանչիւրդ ձեր մասին խորհեցէ՛ք զգաստութեամբ, այն հաւատի չափով, որ Աստուած բաժանեց: 4 Ինչպէս մի մարմնի մէջ բազում անդամներ ունենք, եւ բոլոր անդամները նոյն գործը չեն անում, 5 այդպէս եւ մենք, թուով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց իւրաքանչիւրս միմեանց անդամ ենք: 6 Բայց մենք ունենք տեսակ-տեսակ պարգեւներ, ըստ այն շնորհների, որ տրուած են մեզ. եթէ մարգարէութեան շնորհ է՝ ըստ հաւատի չափի. 7 եթէ ծառայութեան՝ թող ծառայի. եթէ մէկն ուսուցանում է, թող ուսուցանի. 8 եթէ յորդորում է՝ թող յորդորի. ով առատաձեռն է՝ թող անի զուարթութեամբ. ով վերակացու է՝ փութաջանութեամբ. ով ողորմում է՝ խնդութեամբ:

9 Սէր՝ առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու յետեւից. 10 եղբայրասիրութեան մէջ՝ միմեանց հանդէպ լինել գթասիրտ. պատիւ տալու մէջ՝ միմեանց գերազանցել. 11 ջանասիրութեան մէջ չլինել թուլասիրտ. հոգո՛վ եռացէք. Տիրո՛ջը ծառայեցէք. 12 յոյսո՛վ ուրախացէ՛ք. նեղութեան համբերեցէ՛ք, յաճախակի աղօթեցէ՛ք. 13 հաղորդակի՛ց եղէք սրբերի կարիքներին. հետամո՛ւտ եղէք հիւրասիրութեան: 14 Օրհնեցէ՛ք ձեզ հալածողներին. օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք. 15 ուրախացողների հետ ուրախանալ. լացողների հետ լալ. 16 համերա՛շխ եղէք միմեանց հետ. մի՛ մեծամտացէք, այլ խոնա՛րհ եղէք խոնարհների հանդէպ. դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրէք. 17 մէկի չարի փոխարէն չար մի՛ հատուցէք. խորհեցէ՛ք բարին՝ բոլոր մարդկանց առաջ. 18 ինչ չափով հնարաւոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղութիւն պահեցէ՛ք. 19 ինքներդ վրէժխնդիր մի՛ եղէք, սիրելինե՛ր, այլ թո՛յլ տուէք, որ Աստծու բարկութիւնը կատարի այն. որովհետեւ գրուած է. «Իմն է վրէժխնդրութիւնը, եւ ես կը հատուցեմ», – ասում է Տէրը. 20 այլեւ՝ «Եթէ քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, եւ եթէ՝ ծարաւ, ջո՛ւր տուր նրան. այս անելով՝ կրակի

†Այսինքն՝ ճշմարիտ պաշտամունքը:

կայծեր կը կուտակես նրա գլխին»:
21 *Թոյլ մի՛ տուր, որ չարը յաղթի քեզ,*
այլ բարիո՛վ յաղթիր չարին:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

13 *Ամէն մարդ, որ իշխանութեան*
տակ է, թող հպատակի նրան. քանզի
չկայ իշխանութիւն, որ Աստծուց չլինի.
եւ եղած իշխանութիւնները Աստծուց
են կարգուած: 2 *Հետեւաբար, ով հա-*
կառակում է իշխանութեանը, Աստծու
հրամանին է հակառակում. եւ նրանք,
որ հակառակում են, իրենց դատաս-
տանն են ընդունում. 3 *քանի որ իշ-*
խանաւորները վախ չեն ազդում բարի
գործերի համար, այլ՝ չար գործերի:
Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանութիւ-
նից. բարի՛ն գործիր եւ նրանից գով-
սանք կը ստանաս, 4 *որովհետեւ նա*
Աստծու պաշտօնեայ է քեզ՝ բարի գոր-
ծերի համար. իսկ եթէ չար գործես,
վախեցի՛ր. քանի որ սուրը մէջքին ի
զուր չէ կապուած. Աստծու սպասաւոր
է նա, վրէժխնդիր՝ բարկութեան
համար, նրա դէմ, որ չարն է գործում.
5 *դրա համար պէտք է հնազանդուել*
ոչ միայն բարկութեան համար, այլ
նաեւ խղճմտանքի պատճառով. 6 *ահա*
թէ ինչու հարկեր էք վճարում. որով-
հետեւ նրանք Աստծու սպասաւորներ
են՝ այդ բանին կանխապէս նշանա-
կուած: 7 *Արդ, հատուցեցէ՛ք իւրաքան-*
չիւրին իրենց պարտքերը. որին հարկ՝
հարկը, որին մաքս՝ մաքսը, որին եր-
կիւղ՝ երկիւղը, որին պատիւ՝ պատիւը:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍԷՐ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՊԱՐՏՔ

8 *Եւ ոչ ոքի պարտապան մի՛ մնա-*
ցէք, բացի միմեանց սիրելուց, քանի որ,
ով սիրում է ընկերոջը, կատարում է
օրէնքը: 9 *Մի՛ շնացիրը, մի՛ սպանիրը,*
մի՛ գողացիրը, սուտ մի՛ վկայիրը†*, մի՛*
ցանկացիրը եւ ուրիշ ինչ պատուիրան
էլ որ կայ, այս խօսքի մէջ է բովան-
դակւում, թէ՝ սիրի՛ր քո ընկերոջը
ինչպէս քո անձը. 10 *սէրն իր ընկերոջը*
չար բան չի անի. սէրն է օրէնքի
լրումը:
11 *Այս էլ իմացէ՛ք ներկայ ժամա-*
նակիս մասին, որովհետեւ հիմա ճիշտ
ժամն է, որ մենք քնից զարթնենք.
քանի որ փրկութիւնն այժմ մեզ աւելի
մօտ է, քան երբոր մենք հաւատացինք:
12 *Գիշերն անցաւ, եւ ցերեկը մօտեցաւ.*
ուրեմն դէ՛ն գցենք խաւարի գործերը
եւ հագնենք լոյսի զրահը. 13 *շար-*
ժուենք առաքինութեամբ, ինչպէս ցե-
րեկով, ո՛չ անառակութիւններով եւ
հարբեցողութեամբ, ո՛չ պոռնկութեամբ
եւ պղծութեամբ, ո՛չ նախանձով եւ
կռուազանցութեամբ. 14 *զգեստաւոր-*
ուեցէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսով եւ
մարմնին խնամք մի՛ տարէք ցան-
կութիւնները գոհացնելու համար:

ՉԴԱՏԵԼ ԵՂԲՕՐԸ

14 *Հաւատի մէջ տկարացածին ըն-*
դունեցէ՛ք՝ ո՛չ երկմիտ տարակու-
սանքով: 2 *Մէկը հաւատում է, թէ*
կարելի է ուտել ամէն բան. իսկ ով
տկար է հաւատի մէջ, բանջարեղէն է
ուտում. 3 *ով ուտում է, թող չար-*
համարհի նրան, որ չի ուտում. իսկ ով
չի ուտում, թող չդատի նրան, ով
ուտում է, քանզի Աստուած նրան
ընդունեց: 4 *Դու ո՞վ ես, որ դատում ես*
ուրիշի ծառային. կանգնած լինի, թէ
ընկած՝ իր տիրոջ համար է. բայց նա
կը կանգնի, որովհետեւ կարո՛ղ է Տէրը
նրան կանգուն պահել: 5 *Մէկը բարձր*
է դասում օրը՝ օրից, իսկ միւսը՝ բոլոր
օրերը՝ հաւասար. իւրաքանչիւր ոք թող
շարժուի, ինչպէս ինքն է դատում: 6 *Ով*
օրուայ վրայ է ուշ դնում, Տիրոջ հա-
մար է այդ անում. եւ ով օրուայ վրայ
ուշ չի դնում, Տիրոջ համար է, որ ուշ
չի դնում. եւ ով ուտում է, Տիրոջ
համար է ուտում եւ գոհութիւն է
յայտնում Աստծուն. եւ ով չի ուտում,
Տիրոջ համար չի ուտում եւ գոհութիւն
է յայտնում Աստծուն: 7 *Արդարեւ,*
մեզնից ոչ ոք իր համար չի ապրում եւ
իր համար չի մեռնում. 8 *եթէ ապրում*
ենք, Տիրոջ համար ենք ապրում. եւ
եթէ մեռնում ենք, Տիրոջ համար ենք
մեռնում: Եւ արդ, ապրենք թէ մեռ-
նենք, Տիրոջն ենք. 9 *քանզի այս բանի*

†Լաւագոյն յուն. բն. չունեն *սուտ մի՛ վկայիրը* բառերը:

համար իսկ Քրիստոս մեռաւ ու կեն-
դանացաւ, որպէսզի մեռելներին եւ
կենդանիներին հաւասարապէս տիրի:
10 *Դու ինչո՞ւ ես դատում քո եղբօրը,*
կամ ինչպէ՞ս ես արհամարհում քո
եղբօրը, քանի որ բոլորս էլ կանգնելու
ենք Քրիստոսի ատեանի առաջ, 11 *ո-*
րովհետեւ գրուած է.

«Կենդանի եմ ես,- ասում է Տէրը,-
որպէսզի ամէն ծունկ ինձ ծնրադրի
եւ ամէն լեզու Աստծուն դաւանի»†:

12 *Ապա ուրեմն՝ մեզնից իւրա-*
քանչիւր ոք Աստծուն հաշիւ է տալու
իր համար:

ՄԻ՛ ԳԱՅԹԱԿՂԵՑՐՈՒ ԵՂԲՕՐԴ

13 *Ուստի, միմեանց չդատենք. աւելի*
շատ այս բանը դրէք ձեր մտքում՝
եղբօր առաջ գայթակղութեան քար
չդնել: 14 *Այս գիտեմ եւ վստահ եմ*
Քրիստոս Յիսուսով, որ ինքն իրենից
չկայ պիղծ բան, այլ, ով կարծում է,
թէ մի բան պիղծ է, այդ իր համար է
պիղծ. 15 *որովհետեւ, եթէ ուտելիքի*
համար քո եղբայրը տրտմում է, այլեւս
սիրով չես վարւում: Քո ուտելիքով
կորստեան մի՛ մատնիր նրան, որի
համար մեռաւ Քրիստոս: 16 *Ձեր բարին*
թող առիթ չծառայի չարախօսութեան,
17 *որովհետեւ Աստծու արքայութիւնը*
ուտելիք եւ ըմպելիք չէ, այլ՝ արդա-
րութիւն եւ խաղաղութիւն եւ խնդու-
թիւն Սուրբ Հոգով. 18 *որովհետեւ, ով*
այս ձեւով ծառայում է Քրիստոսին,
հաճելի է Աստծուն եւ գովելի՝ մարդ-
կանց առաջ: 19 *Ապա ուրեմն՝ հետա-*
մուտ լինենք խաղաղութեան եւ շինու-
թեան՝ միմեանց հանդէպ: 20 *Ուտելիքի*
համար Աստծու գործը մի՛ քանդիր.
ամենայն ինչ մաքուր է, բայց վատ է
այն մարդու համար, որ ուտում է կաս-
կածամտութեամբ: 21 *Լաւ է չուտել միս*
եւ չխմել գինի, ոչ էլ անել մի բան,
որով քո եղբայրը գայթակղւում է կամ
սայթաքում կամ տկարանում‡*:* 22 *Դու,*
արդարեւ, հաւատ ունես. պահի՛ր այն
քեզ համար Աստծու առաջ: Երանի՛
նրան, ով չի դատապարտում իր
անձը նրանով, որ փորձում է ընկե-
րոջը. 23 *բայց ով կասկածում է, թէպէտ*
եւ ուտում է, դատապարտուած է, քանի
որ այդ ըստ հաւատի չէ, որովհետեւ
ամենայն ինչ, որ հաւատից չէ, մեղք է:
24† *Այլ նրան, որ կարո՛ղ է ձեզ*
հաստատուն պահել ըստ իմ այս աւե-
տարանի եւ ըստ քարոզութեան Յիսուս
Քրիստոսի, ըստ այն յայտնութեան
խորհրդի, որ յաւիտենից ծածկուած էր,
25† *իսկ այժմ յայտնուած է մար-*
գարէական գրուածքների միջոցով
մշտնջենաւոր Աստծու հրամանի հա-
մաձայն եւ ծանուցուած է բոլոր հե-
թանոսներին, հաւատի հնազան-
դութեան համար, 26† *միակ իմաստուն*
Աստծուն, Յիսուս Քրիստոսի միջոցով,
նրան փառք յաւիտեանս: Ամէն:

ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

15 *Մենք, որ ուժեղ ենք հաւատի*
մէջ, պարտաւոր ենք թոյլերի տկա-
րութիւնը տանել եւ միայն մե՛զ հա-
մար հաճելի չլինել. 2 *այլ մեզնից*
իւրաքանչիւր ոք թող ընկերոջը հաճե-
լի լինի ի շինութիւն բարի գործերի.
3 *քանզի Քրիստոս էլ ոչ թէ միայն*
իրեն հաճելի եղաւ, այլ, ինչպէս եւ
գրուած է. «Քեզ նախատողների նա-
խատինքներն իմ վրայ ընկան»‡*:* 4 *Ու-*
րեմն, ինչ որ գրուեց, գրուեց, որ մենք
սովորենք, որպէսզի համբերութեամբ
եւ գրքերի պարգեւած մխիթարու-
թեամբ յոյսը ընդունենք: 5 *Եւ թող*
համբերութեան եւ ամենայն մխիթա-
րութեան Աստուածը ձեզ շնորհ տայ,
որ դուք համախոհ լինէք միմեանց ըստ
Յիսուս Քրիստոսի, 6 *որպէսզի միասիրտ*
եւ միաբերան փառաւորէք Աստծուն՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը:

ԱՌԵՏԱՐԱՆԸ՝ ՍԱՀՄԱՆՈՒՄԱ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՆ

7 *Ուստի, ընդունեցէ՛ք միմեանց,*
ինչպէս որ Քրիստոս ընդունեց ձեզ ի
փառս Աստծու:
8 *Ասեմ նաեւ, թէ Քրիստոսի՝*

†Եսայի 45. 23:
‡Յուն. լաւ բն. չունեն *ոչ էլ . . . կամ տկարանում* նախադասութիւնը:

†Յունարէնում այս գլխի տակ չկան 24, 25, 26 համարները կամ դրուած են այլ տեղ:
‡Սաղմոս 69. 9:

թլփատուածներին սպասաւոր լինելը Աստծու ճշմարտութեան համար էր՝ հաստատուն դարձնելու համար հայրերին տրուած խոստումը: 9 Նաեւ հեթանոսները փառաւորում են Աստծուն նրա ողորմութեան համար. ինչպէս գրուած էլ է.

«Դրա համար հեթանոսների մէջ գոհութիւն պիտի տամ քեզ
եւ քո անուան համար սաղմոս պիտի երգեմ»:

10 Եւ դարձեալ ասում է, թէ՝

«Հեթանոսնե՛ր, ուրախացէ՛ք նրա ժողովրդի հետ»:

11 Եւ դարձեալ թէ՝

«Բոլո՛ր հեթանոսներ, օրհնեցէ՛ք Տիրոջը
եւ գովեցէ՛ք նրան, բոլո՛ր ժողովուրդներ»:

12 Եւ դարձեալ Եսային ասում է.

«Պիտի գայ Յեսսէի արմատը,
եւ նա, որ պիտի կանգնի, իշխան է հեթանոսներին.
նրա վրայ յոյս պիտի դնեն հեթանոսները»:

13 Թող յոյսի Աստուածը լիացնի ձեզ ամենայն ուրախութեամբ եւ խաղաղութեամբ†, որպէսզի Սուրբ Հոգու զօրութեամբ դուք յոյսով առատանաք:

ՊՕՂՈՍԸ՝ ԱՌԱՔԵԱԼ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ

14 Եղբայրնե՛ր իմ, ես ինքս էլ հաստատ համոզուած եմ ձեր մասին, որ դուք էլ լի էք բարութեամբ, լի էք կատարեալ գիտութեամբ, կարող էք եւ միմեանց խրատել. 15 բայց աւելի համարձակ գրեցի ձեզ, եղբայրնե՛ր, փոքրիշատէ, իբրեւ յիշեցում ձեզ, այն շնորհի համար, որ տրուած է ինձ Աստծուց: 16 Ես հեթանոսների մէջ Յիսուս Քրիստոսի սպասաւորն եմ՝ ցանկալի դարձնելու Աստծու Աւետարանը, որպէսզի հեթանոսները ընդունելի ընծայ լինեն Աստծուն՝ նուիրագործուած Սուրբ Հոգով:

17 Ուրեմն, պարծենալու բան ունեմ Յիսուս Քրիստոսով առ Աստուած. 18 քանզի չեմ համարձակւում խօսել մի բան, որը արած չլինի Քրիստոս իմ միջոցով հեթանոսների հնազանդութեան համար՝ խօսքերով եւ գործերով, 19 նշանների եւ զարմանալի գործերի զօրութեամբ, Սուրբ Հոգու զօրութեամբ. այնպէս որ Երուսաղէմից սկսած եւ շրջելով մինչեւ Լիւրիկացիների կողմերը՝ ես լրիւ տարածեցի Քրիստոսի Աւետարանը. 20 այսպէս՝ ջանացի աւետարանել այնտեղ, ուր Քրիստոսի անունը չէր տրուած, որպէսզի չլինի թէ կառուցեմ ուրիշի դրած հիմքի վրայ, այլ՝ ինչպէս որ գրուած է.

21 «Նրանք, որոնց չպատմուեց նրա մասին, պիտի տեսնեն,
եւ նրանք, որոնք չէին լսել, պիտի հասկանան»:

ՊՕՂՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

22 Ահա թէ ինչու շատ անգամ արգելուեց ինձ գալ ձեզ մօտ: 23 Բայց այժմ ինձ համար այլեւս տեղ չկայ քարոզելու այս կողմերում. եւ բազում տարիներից ի վեր խիստ փափագ ունեմ ձեզ մօտ գալու. 24 երբ անցնեմ Իսպանիա, յոյս ունեմ, անցնելիս, ձեզ տեսնել ու ձեր կողմից ճանապարհ դրուել այնտեղ, եթէ, նախքան այդ, փոքրիշատէ ձեզանով կշտանամ: 25 Բայց այժմ գնում եմ Երուսաղէմ՝ ծառայելու սրբերին, 26 քանզի հաճելի թուաց մակեդոնացիներին եւ աքայեցիներին հանգանակութեամբ օգնել այն աղքատ սրբերին, որ գտնւում են Երուսաղէմում:

27 Հաճելի թուաց, քանզի պարտական իսկ են նրանց. որովհետեւ, եթէ հեթանոսները նրանց հոգեւոր բարիքներին հաղորդակից եղան, պարտաւոր են նաեւ մարմնաւոր կարիքներին մասնակից լինել: 28 Արդ, այս բանը կատարելով եւ հաւաքուած արդիւնքը յանձնելով նրանց, ձեր մօտով կ'անցնեմ Իսպանիա: 29 Այս գիտեմ, որ, երբ ձեզ մօտ գամ, Քրիստոսի Աւետարանի օրհնութեան լիութեամբ կը գամ:

30 Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսով եւ Հոգու սիրով՝ մարտակից լինել ինձ, ինձ համար Աստծուն ուղղուած աղօթքների մէջ, 31 որպէսզի ազատուեմ հաւատի դէմ ապստամբներից, որ Հրէաստանում են, եւ որպէսզի Երուսաղէմի իմ ծառայութիւնը ընդունելի լինի սրբերին. 32 այսպէս, ուրախութեամբ գալով ձեզ մօտ Աստծու կամքով, հանգստանամ ձեզ հետ: 33 Եւ թող խաղաղութեան Աստուածը լինի ձեզ բոլորիդ հետ: Ամէն:

†Յունարէնը աւելացնում է՝ ձեր հաւատի համաձայն:

ՈՂՋՈՅՆՆԵՐ

16 Ցանձնարարում եմ ձեզ Փիբէին՝ մեր քրոջը, որը սպասաւորն է Կենքրայի եկեղեցու, 2 որպէսզի Տիրոջ անունով ընդունէք նրան, ինչպէս վայել է սրբերին, եւ հոգ տանէք նրան, ինչ կարիքների համար էլ դիմի ձեզ. քանզի ինքը եւս հոգատար եղաւ շատերին եւ ինձ էլ: 3 Ողջունեցէ՛ք Պրիսկէին եւ Ակիւղասին՝ իմ գործակիցներին ի Քրիստոս Յիսուս, 4 որոնք իմ անձի համար վտանգեցին իրենց գլուխը, եւ որոնցից միայն ե՛ս չէ, որ շնորհակալ եմ, այլեւ՝ հեթանոսների բոլոր եկեղեցիները: 5 Ողջունեցէ՛ք եւ նրանց առտնին եկեղեցին: Ողջունեցէ՛ք Եպենտոսին՝ իմ սիրելիին, որ ասիացիների պտուղն է ի Քրիստոս: 6 Ողջունեցէ՛ք Մարիին, որ բազում յոգնութիւններ կրեց ձեզ համար: 7 Ողջունեցէ՛ք Անդրոնիկոսին եւ Յունիային՝ իմ ազգականներին եւ բանտակիցներին, որոնք երեւելիներ են առաքեալների մէջ եւ որոնք ինձնից առաջ իսկ դարձան ի Քրիստոս: 8 Ողջունեցէ՛ք Ամպղիային՝ իմ սիրելիին ի Տէր: 9 Ողջունեցէ՛ք Ուրբանոսին՝ իմ գործակցին ի Տէր եւ՝ Ստաքէսին՝ իմ սիրելիին: 10 Ողջունեցէ՛ք Ապեղէսին, որ ընտրեալն է ի Տէր: 11 Ողջունեցէ՛ք նրանց, որ Արիստաբուղոսի ընտանիքից են: Ողջունեցէ՛ք Հերոդիոնին՝ իմ ազգականին: Ողջունեցէ՛ք նրանց, որ Նարկէսի ընտանիքից են ի Տէր: 12 Ողջունեցէ՛ք Տրիփոսին եւ Տրիփոնին՝ Տիրոջ գործի համար վաստակ ունեցողներին: Ողջունեցէ՛ք սիրելի Պերսիդէին, որ Տիրոջ համար բազում յոգնութիւններ կրեց: 13 Ողջունեցէ՛ք Ռուփոսին՝ ընտրեալին ի Տէր, եւ նրա մօրը, որ իմ մայրն էլ է: 14 Ողջունեցէ՛ք Ասիւնկրիտոսին, Փլեգոնտին, Երմասին, Պատրոբային, Երմէսին եւ այն եղբայրներին, որ նրանց հետ են: 15 Ողջունեցէ՛ք Փիղոլոգոսին եւ Յուլիային, Ներէոսին ու նրա քրոջը եւ Ողիմպիային ու այն բոլոր սրբերին, որ նրանց հետ են: 16 Ողջունեցէ՛ք միմեանց սուրբ համբոյրով: Քրիստոսի բոլոր եկեղեցիները ողջունում են ձեզ:

ՎԵՐՋԻՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

17 Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ո՛ւշ դրէք այնպիսիներին, որ հերձուածներ եւ գայթակղութիւններ են առաջ բերում այն վարդապետութիւնից դուրս, որը դուք սովորել էք. եւ խորշեցէ՛ք նրանցից, 18 որովհետեւ այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ՝ իրենց որովայնին. եւ քաղցրախօսութեամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը: 19 Ձեր այդ հնազանդութիւնը ծանօթ է բոլորին. եւ արդ, ուրախ եմ ձեզ համար. բայց ուզում եմ, որ դուք իմաստուն լինէք բարի գործերի համար եւ հեռու մնաք չարից: 20 Եւ խաղաղութեան Աստուածը շուտով պիտի խորտակի Սատանային ձեր ոտքերի տակ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ:

21 Ողջունում է ձեզ Տիմոթէոսը՝ իմ եղբայրը եւ գործակիցը. ողջունում են նաեւ Ղուկիոսը, Յասոնը եւ Սոսիպատրոսը՝ իմ ազգականները: 22 Ողջունում եմ ձեզ ի Տէր եւ ես՝ Տերտիոսս, որ այս թուղթը գրեցի: 23 Ողջունում է ձեզ Գայիոսը՝ իմ եւ ամբողջ եկեղեցու հիւրընկալը: Ողջունում է ձեզ Երաստոսը՝ քաղաքիս գլխաւորը, եւ Կուարտոս եղբայրը:

24 Այլ նրան, որ կարո՛ղ է ձեզ հաստատուն պահել ըստ իմ այս աւետարանի եւ ըստ քարոզութեան Յիսուս Քրիստոսի, ըստ այն յայտնութեան խորհրդի, որ յաւիտենից ծածկուած էր, 25 իսկ այժմ յայտնուած է մարգարէական գրքերի միջոցով մշտնջենաւոր Աստծու հրամանի համաձայն եւ ծանուցուած է բոլոր հեթանոսներին, հաւատի հնազանդութեան համար, 26 միակ իմաստուն Աստծուն, Յիսուս Քրիստոսի միջոցով, նրան փառք յաւիտեանս: Ամէն:

27 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ բոլորիդ հետ†:

†Այս նախադասութիւնը որոշ ձեռագրերում դրուում է № 23-ից յետոյ: Իսկ լաւագոյն յուն. բն. այդ չունեն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Առաքելական իր երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ Պօղոսը տասնութ ամիս անցկացրեց Յունաստանի Կորնթոս քաղաքում: Այն եկեղեցական համայնքը, որ նա այնտեղ հաստատեց, բաղկացած էր մեծ մասամբ համեստ միջավայրերի պատկանող նախկին հեթանոսներից:

Այն ժամանակ Կորնթոսը գտնւում էր շատ բարգաւաճ վիճակում շնորհիւ իր երկու նաւահանգիստների. քաղաքում ծաղկում էին ապրում վաճառականութիւնը, մշակութային կեանքը, աշխոյժ գործունէութիւն էին ծաւալում փիլիսոփայական եւ կրօնական հոսանքները: Սակայն այնտեղ մեծապէս տարածուել էր նաեւ անբարոյականութիւնը: Քրիստոնէական նոր համայնքն այսպիսով ենթակայ էր ամէն տեսակ ազդեցութիւնների: Նման վիճակը բնականաբար չէր կարող լուրջ մտահոգութիւններ չպատճառել Պօղոս առաքելին:

Արդարեւ, իր մեկնումից յետոյ, Պօղոսը բազմաթիւ առիթներով համայնքին վերաբերող մտահոգիչ լուրեր էր ստացել եւ այդ պատճառով ստիպուած էր եղել առնուազն չորս թղթեր ուղարկել Կորնթոսի քրիստոնեաներին ուղղուած: Դրանցից երկուսը, որ հասել են մեզ, գրուել են առաքելի երրորդ ճանապարհորդութեան ընթացքում, առաջինը՝ Եփեսոսից, երկրորդը՝ նմանապէս Եփեսոսից կամ Մակեդոնիայից:

Կորնթացիներին ուղղուած իր առաջին թղթում Պօղոսը, ողջոյնի եւ երախտագիտութեան կարճ խօսքերից յետոյ, հաղորդում է իր եղբայրներին, որ յաղթահարեն իրենց միջեւ եղած բաժանումները, համայնքից դուրս վանեն անբարոյականութիւնը եւ իրենց վէճերն ու անհամաձայնութիւնները հեթանոսների դատարանների առաջ չտանեն: Նա նաեւ մի քանի որոշակի հրահանգներ է տալիս նորադարձ քրիստոնեաներին, թէ ինչպէս պէտք է վարուեն իրենց մտերիմների հետ, որից յետոյ պատասխանում է իր հետ թղթակցողների առաջադրած զանազան հարցերին.

- Ամուսնութեան հարց.
- Կուռքերին մատուցուած զոհերի միսն օգտագործելու եւ ընդհանուր առմամբ հեթանոսութեան նկատմամբ դիրք ճշտելու հարց.
- Քրիստոնէական հաւաքոյթներին եւ Տիրոջ ընթրիքին վերաբերող հարց.
- Սուրբ Հոգու շնորհներին վերաբերող հարց.
- Մեռելների յարութեան հարց եւ այլն:

Կեանքի այս բոլոր հարցերի մասին Պօղոս առաքեալն արտայայտւում է առանց դոյզն չափով իսկ բարոյագէտի յաւակնութիւն դրսեւորելու: Նա ցոյց է տալիս, որ Քրիստոսի հանդէպ հաւատարմութիւնը եւ միմեանց նկատմամբ եղբայրական սէրը թոյլ են տալիս լուծել այդ հարցերը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ Աստծու կամքով Յիսուս
Քրիստոսի առաքեալը լինելու կո-
չուածը, եւ Սոսթենէս եղբայրը, 2 Աստ-
ծու այդ եկեղեցուն, որ Կորնթոսում է,
Քրիստոս Յիսուսին նուիրուածներիդ,
սուրբ լինելու կոչուածներիդ, բոլորի
հետ միասին, որոնք ամէն տեղ պաշ-
տում են անունը մեր Տէր Յիսուս
Քրիստոսի, որ նրանց եւ մեր Տէրն է,
3 չնո՛րհ ձեզ եւ խաղաղութիւն մեր Հայր
Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՈՅ

4 Ամէն ժամ գոհութիւն եմ յայտ-
նում իմ Աստծուն ձեզ համար եւ
Աստծու շնորհների համար, որ տրուած
են ձեզ Քրիստոս Յիսուսով. 5 որով-
հետեւ ամէն բանի մէջ դուք նրանով
հարստացաք՝ ամէն խօսքով եւ ամե-
նայն գիտութեամբ, 6 ինչպէս որ Աստ-
ծու վկայութիւնն իսկ հաստատուեց
ձեր մէջ: 7 Դուք պակաս չլինէք եւ ոչ
մի շնորհից՝ սպասելով մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յայտնութեանը: 8 Նա, որ
հաստատ կը պահի ձեզ մինչեւ
վախճանը, անարատ՝ մինչեւ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի գալու օրը: 9 Հա-
ւատարիմ է Աստուած, որից կանչուե-
ցիք հաղորդակից լինելու նրա Որդուն՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԿՈՐՆԹՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ

10 Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր,
մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով,
որ բոլորդ էլ նոյն խօսքը ունենաք. եւ
ձեր մէջ բաժանումներ չլինեն. քանզի
հաստատ էիք նոյն մտքի եւ նոյն
մտածման մէջ: 11 Եղբայրնե՛ր, ձեր
մասին Քղուէի տնեցիներից ինձ տե-
ղեկացուեց, թէ հակառակութիւններ
կան ձեր մէջ: 12 Եւ արդ, ասում եմ.
ձեզնից իւրաքանչիւրն ասում է՝ ես
Պօղոսեան եմ, եւ միւսը, թէ՝ ես Ապո-
ղոսեան, եւ միւսը, թէ՝ ես՝ Կեփասեան,
եւ միւսը թէ՝ ես՝ Քրիստոսեան. 13 իսկ
արդ, միթէ բաժանուա՞ծ է Քրիստոս.
միթէ Պօղո՞սը խաչուեց ձեզ համար.
կամ՝ Պօղոսի՞ անունով մկրտուեցիք:
14 Գոհութիւն եմ յայտնում իմ Աստ-
ծուն, որ ձեզնից ոչ ոքի չմկրտեցի, այլ
միայն՝ Կրիսպոսին եւ Գայիոսին, 15 որ-
պէսզի ոչ ոք չասի, թէ իմ անունով էք
մկրտուել: 16 Ստեփանոսի ընտանիքն
էլ մկրտեցի: Չգիտեմ ամենեւին ուրիշ
մէկին, որ մկրտած լինեմ:

ՔՐԻՍՏՈՍ՝ ԱՍՏՈՒՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

17 Քանզի Քրիստոս ինձ չուղարկեց
մկրտելու, այլ՝ աւետարանելու, ոչ թէ
խօսքերի ճարտարութեամբ, որպէսզի
Քրիստոսի խաչը ընդունայն չլինի. 18 ո-
րովհետեւ կորստեան մատնուածների
համար խաչի քարոզութիւնը յիմա-
րութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս
համար՝ Աստծու զօրութիւն. 19 քանի
որ գրուած է. «Պիտի կործանեմ իմաստ-
ունների իմաստութիւնը եւ հանճա-
րեղների մտածումները պիտի արհա-
մարհեմ»† : 20 Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր՝
բանգէտը, ո՞ւր՝ այս աշխարհի քննողը:
Չէ՞ որ Աստուած յիմարացրեց այս աշ-
խարհի իմաստութիւնը. քանզի աշ-
խարհն իր իմաստութեամբ չճանաչեց
Աստծուն նրա իմաստութեամբ: 21 Աստ-
ուած էլ հաճեց փրկել հաւատացեալ-
ներին այդ քարոզութեան յիմարու-
թեամբ:

22 Իսկ որովհետեւ հրեաները նշան
են հայցում, եւ հեթանոսները իմաս-
տութիւն են փնտռում, 23 մենք քարո-
զում ենք խաչուած Քրիստոսին՝ ի
գայթակղութիւն հրեաների եւ ի յիմա-
րութիւն հեթանոսների. 24 բայց նրանց
համար, որ կանչուած են, հրեաներ թէ
հեթանոսներ, Քրիստոսը Աստծու զօ-
րութիւնն ու Աստծու իմաստութիւնն
է. 25 որովհետեւ Աստծու յիմարն աւելի
իմաստուն է, քան մարդկային իմաս-
տութիւնը, եւ Աստծու տկարն աւելի
զօրեղ է, քան մարդկային զօրութիւնը:
26 Իրաւ որ, եղբայրնե՛ր, ձեր իսկ
կոչումին նայեցէ՛ք. ըստ մարմնի՝ ոչ
շատ իմաստուններ, ոչ շատ հզօրներ եւ
ոչ շատ ազնուականներ կանչուեցին.
27 բայց Աստուած ընտրեց այս

†Եսայի 29. 14:

աշխարհի յիմարներին, որպէսզի ամաչեցնի իմաստուններին. եւ Աստուած ընտրեց այս աշխարհի տկարներին, որպէսզի ամաչեցնի հզօրներին. 28 եւ Աստուած աշխարհի ոչ-տոհմիկներին, արհամարհուածներին եւ ոչինչներին ընտրեց, որպէսզի իրենք իրենց մի բան կարծողներին ոչնչի վերածի. 29 որպէսզի ոչ մի մարդկային էակ չպարծենայ Աստծու առաջ. 30 որովհետեւ նրանո՛վ դուք կաք Քրիստոս Յիսուսի մէջ, որը եղաւ մեզ համար Աստծուց եկած իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն, 31 որպէսզի, ինչպէս գրուած էլ է. «Նա, ով պարծենում է, թող պարծենայ Տիրոջով»:

ՊՕՂՈՍԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՆԹՈՍՈՒՄ

2 Եւ ես, եղբայրնե՛ր, թէպէտ եւ եկայ ձեզ մօտ, բայց ոչ թէ յայտնելու ձեզ Աստծու վկայութիւնը† իմաստութեան խօսքի գերազանցութեամբ. 2 որովհետեւ իմ մտքում չեմ դրել իմանալ ձեր մէջ այլ բան, եթէ ոչ՝ միայն Յիսուս Քրիստոսին եւ նոյն ինքը խաչուածին: 3 Եւ ես տկարութեամբ, երկիւղով եւ սաստիկ դողով եղայ ձեզ հետ. 4 եւ իմ խօսքը եւ քարոզութիւնը իմաստութեան ճարտար խօսքերով չէին, այլ Սուրբ Հոգու համոզիչ զօրութեամբ, 5 որպէսզի ձեր հաւատը չլինի մարդկանց իմաստութեամբ, այլ՝ Աստծու զօրութեամբ:

ԱՍՏՈՒՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

6 Իմաստութիւնը քարոզում ենք հոգեպէս կատարեալներին, իմաստութիւն, որ այս աշխարհինը չէ, ոչ էլ այս աշխարհի՝ կործանման սահմանուած իշխանների իմաստութիւնը, 7 այլ քարոզում ենք Աստծու խորհրդաւոր, թաքուն իմաստութիւնը, որը ծածկուած է մարդկանցից եւ որն Աստուած սահմանել էր մեր փառքի համար նախքան յաւիտեանները. 8 եւ այս աշխարհի իշխաններից ոչ մէկը չճանաչեց այն. որովհետեւ, եթէ ճանաչուած լինէր, արդարեւ փառքի Տիրոջը չէին խաչի. 9 այլ, ինչպէս գրուած էլ է.

«Ինչ որ աչքը չտեսաւ, եւ ականջը չլսեց,
եւ մարդու սիրտը չընկալ,
Աստուած այն պատրաստեց իր սիրելիների համար»† :

10 Բայց Աստուած մեզ յայտնեց այն իր Հոգով. որովհետեւ Հոգին քննում է ամէն ինչ, նոյնիսկ՝ Աստծու խորունկ ծրագրերը. 11 քանզի մարդկանցից ո՞վ է, որ բան գիտէ մարդու մասին, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ նրա մէջ է: Նոյնպէս եւ ոչ ոք չգիտէ Աստծու խորհուրդները, եթէ ոչ՝ Աստծու Հոգին: 12 Ուրեմն մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առանք, այլ՝ այն Հոգին, որ Աստծուց է, որպէսզի ճանաչենք այն, որ Աստծուց շնորհուեց մեզ: 13 Եւ ինչ որ յայտնում ենք, ոչ թէ ճարտար խօսքերի մարդկային ուսուցումով է, այլ՝ Հոգու վարդապետութեամբ. հոգեւոր բաները հոգեւոր խօսքերով ենք բացատրում. 14 քանզի ոչ հոգեւոր մարդը Աստծու Հոգուց եկած ճշմարտութիւնները չի ընդունում, որովհետեւ այդ յիմարութիւն է նրա համար. եւ չի կարող հասկանալ, քանզի հոգեւոր կերպով են քննւում դրանք: 15 Իսկ հոգեւոր մարդը քննում է ամէն ինչ. եւ ինքը ոչ ոքից չի քննւում: 16 Իսկ արդ, ո՞վ իմացաւ Տիրոջ մտածումը, որ խորհուրդ տայ նրան. բայց մենք ունենք Քրիստոսի մտածումը:

ԱՍՏԾՈՒ ԾԱՌԱՆԵՐԸ

3 Եւ ես, եղբայրնե՛ր, չկարողացայ խօսել ձեզ հետ՝ իբրեւ հոգեւորների հետ, այլ խօսեցի իբրեւ մարմնաւորների հետ: 2 Իբրեւ մանուկներ ի Քրիստոս կաթ տուեցի ձեզ եւ ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք. եւ հիմա էլ կարող չէք, քանզի դեռ մարմնաւոր էք: 3 Հիմա էլ ձեր մէջ կան կռիւ եւ նախանձ. չէ՞ որ մարմնաւոր էք եւ մարդկայնօրէն էք ընթանում: 4 Երբ ձեզնից մէկն ասում է՝ ես Պօղոսեան եմ, եւ միւսը, թէ՝ ես՝ Ապողոսեան, մարմնաւոր մարդիկ չէ՞ք: Իսկ արդ, ո՞վ է Պօղոսը, կամ՝ ո՞վ է Ապողոսը. պաշտօնեաներ, որոնցով

†Ցուն. լաւ բն. ունեն ես չեկայ յայտնելու . . .

†Ցուցարէնը՝ իրեն սիրողների համար:

հաւատացիք. եւ իւրաքանչիւրն այն է, ինչ որ Տէրը տուեց նրան:

6 Ես տնկեցի, Ապողոսը ջուր տուեց, բայց Աստուա՛ծ աճեցրեց: 7 Այնպէս որ՝ մի բան չէ՛ նա, ով տնկեց, ոչ էլ մի բան է նա, ով ջուր տուեց, այլ՝ նա, ով աճեցրեց՝ Աստուած: 8 Ով որ տնկեց, եւ ով որ ջուր տուեց, մի են, բայց իւրաքանչիւր ոք իր վարձը կը ստանայ ըստ իր վաստակի. 9 որովհետեւ Աստծուն գործակից ենք. Աստծու այգին էք, Աստծու կառոյցն էք: 10 Որպէս իմաստուն ճարտարապետ, հիմքը դրեցի ըստ Աստծու այն շնորհի, որ տրուած է ինձ. բայց ուրիշն է, որ կառուցում է. սակայն իւրաքանչիւր ոք թող զգոյշ լինի, թէ ինչպէս է կառուցում. 11 որովհետեւ ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրուած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոսն է:

12 Եթէ մէկը այս հիմքի վրայ կառուցի ոսկով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով, իւրաքանչիւրի գործը յայտնի կը լինի. որովհետեւ դատաստանի օրը այդ պիտի երեւայ, քանի որ կրակո՛վ յայտնի պիտի լինի. 13 եւ իւրաքանչիւրի գործը, ինչպէս որ է, կրա՛կը պիտի փորձի. 14 եթէ մէկի կառուցած գործը մնայ, նա վարձ պիտի ստանայ. 15 եւ եթէ մէկի գործը այրուի, նա պիտի տուժի, թէեւ ինքը պիտի փրկուի, բայց նման մէկին, որ կարծես կրակի միջով անցած լինէր:

16 Չգիտէ՞ք, որ Աստծու տաճար էք դուք, եւ Աստծու Հոգին է բնակւում ձեր մէջ: 17 Եթէ մէկն Աստծու տաճարն ապականի, Աստուած էլ նրան պիտի ապականի. որովհետեւ սուրբ է Աստծու տաճարը, որը դուք էք:

18 Թող ոչ ոք ինքն իրեն չխաբի: Եթէ ձեզնից մէկը կարծում է, թէ ինքը իմաստուն է այս աշխարհում, յիմար թող լինի, որպէսզի իմաստուն դառնայ. 19 որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է Աստծու առաջ. քանզի գրուած է, թէ՝ ինքն է, որ բռնում է իմաստուններին իրենց խորագիտութեան մէջ: 20 Եւ դարձեալ, թէ՝ Տէրը գիտէ իմաստունների մտածումները, որ ընդունայն են: 21 Ուրեմն մարդկանցից† ոչ ոք չպարծենայ, որովհետեւ ձերն է ամէն ինչ՝ 22 թէ՛ Պօղոսը, թէ՛ Ապողոսը, թէ՛ Կեփասը, թէ՛ աշխարհ, թէ՛ կեանք, թէ՛ մահ, թէ՛ այն բաները, որ կան, թէ՛ լինելիքները. ամէն ինչ ձերն է. 23 դուք Քրիստոսինն էք, իսկ Քրիստոս՝ Աստծունը:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԸ

4 Այսպէս, մարդիկ թող համարեն մեզ իբրեւ սպասաւորներ Քրիստոսի եւ տնտեսներ Աստծու խորհուրդների: 2 Արդ, տնտեսների մէջ փնտռւում է նա, թէ ո՛վ հաւատարիմ կը գտնուի: 3 Բայց ինձ համար արժէք չունի դատուած լինել ձեզնից կամ նոյնիսկ՝ մարդկանցից. եւ ես ինքս ինձ էլ չեմ դատում, 4 որովհետեւ ինքս իմ մասին բան չգիտեմ. բայց սրանով չեմ արդարանում, որովհետեւ նա, որ դատում է ինձ, Տէրն է: 5 Ուրեմն ժամանակից առաջ մի՛ դատէք, մինչեւ գայ Տէրը, որ ի լոյս է հանելու խաւարի գաղտնիքները եւ յայտնի է դարձնելու սրտերի խորհուրդները. եւ ապա իւրաքանչիւրը գովասանք պիտի ստանայ Աստծուց:

6 Եղբայրնե՛ր, ձեզ համար այս բանը օրինակ բերեցի իմ անձով եւ Ապողոսի անձով, որպէսզի մեզնից սովորէք աւելի բան չիմանալ, քան ինչ որ կայ գրուածքներում, որպէսզի ոչ մի մարդ, աւելի քան ընկերը, չգոռոզանայ ընկերոջ վրայ: 7 Իսկ արդ, ո՞վ է, որ պիտի քննի քեզ‡ : Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես. եւ եթէ ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պէս:

8 Արդէն իսկ յագեցած էք եւ արդէն հարուստ դարձած. թագաւոր դարձաք առանց մեզ. եւ երանի թէ թագաւորէիք, որպէսզի մենք էլ թագաւորէինք ձեզ հետ: 9 Ինձ այնպէս է թւում, թէ մեզ՝ առաքեալներիս, Աստուած վերջիններ դարձրեց, որպէս մահապարտների. որովհետեւ տեսարան դարձանք աշխարհին եւ հրեշտակներին ու մարդկանց: 10 Մենք՝ յիմարներ Քրիստոսի պատճառով, եւ դուք՝ իմաս-

†Ցուցարէնը՝ մարդկանցով:

‡Ցուցարէնը՝ Ով է նա, որ ուրիշներից տարբեր է անում քեզ:

տուններ Քրիստոսով. մենք՝ թոյլեր, եւ դուք՝ հզօրներ. դուք՝ փառաւորուածներ, եւ մենք՝ անարգներ: 11 Մինչեւ այսօր ե՛ւ քաղցած մնացինք, ե՛ւ ծարաւեցինք, ե՛ւ մնացինք մերկ, ե՛ւ բռնցքահարուեցինք, ե՛ւ մնացինք անկայան. 12 եւ չարաչար աշխատեցինք մեր ձեռքերով. նախատում էին մեզ՝ օրհնում էինք, հալածում էին՝ դիմանում էինք, 13 հայհոյում էին՝ աղօթում էինք. առակ-նշաւակ եղանք ամբողջ աշխարհին, ջնջոց՝ բոլորի համար մինչեւ այժմ:

14 Ոչ թէ ձեզ ամօթով թողնելու համար եմ գրում այս, այլ խրատում եմ ձեզ իբրեւ սիրելի որդիներ: 15 Թէպէտ եւ բիւր դաստիարակներ ունէք Քրիստոսով, բայց ոչ՝ բազում հայրեր. որովհետեւ Քրիստոս Յիսուսի Աւետարանով ե՛ս ծնեցի ձեզ: 16 Արդ, աղաչում եմ ձեզ, նմանուեցէ՛ք ինձ: 17 Դրա համար ձեզ մօտ ուղարկեցի Տիմոթէոսին, որ իմ սիրելի որդին է եւ հաւատարիմ՝ ի Տէր, որպէսզի յիշեցնի ձեզ իմ ճանապարհները ի Քրիստոս Յիսուս, ինչպէս որ ամենուրեք ուսուցանում եմ բոլոր եկեղեցիներում:

18 Ոմանք հպարտացել են, որպէս թէ ես ձեզ մօտ չեմ գալու. 19 բայց գալու եմ շուտով, եթէ Տէրը կամենայ. եւ տեղեակ կը լինեմ ոչ թէ հպարտացողների խօսքերին, այլ՝ նրանց զօրութեանը. 20 որովհետեւ Աստծու թագաւորութիւնը ոչ թէ խօսքերով է, այլ՝ զօրութեամբ: 21 Արդ, ինչպէ՞ս էք ուզում. գաւազանո՞վ գամ ձեզ մօտ, թէ՞ սիրոյ հեզութեան, արդարութեան եւ խոնարհութեան Հոգով[†]:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՐՆԹՈՍՈՒՄ

5 Ներկայումս լսում ենք, թէ պոռնկութիւն կայ ձեր մէջ, եւ այնպիսի պոռնկութիւն, որ հեթանոսների մէջ իսկ չկայ, որպէս թէ մէկն ապրի իր հօր կնոջ հետ[‡]: 2 Եւ դուք հպարտանում էք. աւելին. չէք էլ սգում, որպէսզի վերանար ձեր միջից նա, ով այդ արարքը կատարեց. 3 ես, թէպէտեւ մարմնով հեռու եմ, բայց հոգով՝ մօտ. իսկ ես, որպէս թէ մօտ լինէի, դատեցի նրան, որ այդպիսի բան գործեց, – 4 յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, երբ դուք եւ իմ հոգին միասին կը հաւաքուէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեամբ հանդերձ, – 5 մատնեցէ՛ք այդպիսի մէկին Սատանային՝ նրա մարմնի կորստեան համար, որպէսզի նրա հոգին ապրի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրում: 6 Լաւ չեն ձեր այդ պարծանքները. չգիտէ՞ք, թէ մի փոքր թթխմոր ամբողջ զանգուածը խմորում է: 7 Մաքրեցէ՛ք, դէ՛ն նետեցէք հին խմորը, որպէսզի նոր զանգուած լինէք, առանց թթխմորի. քանզի Քրիստոս՝ մեր զատիկը, մորթուեց: 8 Ուրեմն, տօն կատարենք ոչ թէ հին խմորով եւ չարութեան ու անզգամութեան խմորով, այլ՝ ստուգութեան[†] եւ ճշմարտութեան անթթխմոր հացով:

9 Գրեցի ձեզ այդ թղթի մէջ, որ չխառնակուէք պոռնիկների հետ. 10 եւ ոչ միայն այս աշխարհի պոռնիկների կամ ագահների կամ յափշտակողների կամ կռապաշտների հետ. ապա թէ ոչ պարտաւոր պիտի լինէիք աշխարհից իսկ դուրս գալ: 11 Բայց արդ, ձեզ գրեցի, որ չխառնակուէք. եթէ եղբայր կոչուած մէկը պոռնիկ լինի, կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբասող, կամ հարբեցող, կամ յափշտակող, այդպիսի մէկի հետ հաց էլ չուտէք: 12 Իմ ի՞նչ գործն է դատել նաեւ դրսիններին. չէ՞ որ ներսիններին դուք էք դատում: 13 Իսկ դրսիններին Աստուած է դատելու: Վերացրէ՛ք չարը ձեր միջից:

ԴԱՏԱՍՏԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԴԷՄ

6 Ձեզնից մէկը, եթէ խնդիր ունենայ իր ընկերոջ հետ, կը համարձակուի՞ դատուել անիրաւների առաջ, թէ՞ սրբերի առաջ. 2 չգիտէ՞ք, թէ սրբերն են դատում աշխարհը: Եւ եթէ ձեզնով է դատւում աշխարհը, ապա արժանի չէ՞ք չնչին բաներ դատելու: 3 Զգիտէ՞ք, թէ մենք հրեշտակներին էլ ենք դատելու, ուր մնաց թէ՝ երկրաւորներին: 4 Իսկ դուք, երբ այս հարցերի մասին վէճեր ունէք, որպէս եկեղեցու դատաւորներ նստեցնում էք մարդկանց, որոնք անարժէք են: 5 Ցամօթ ձեզ եմ ասում: Ձեր մէջ չկա՞յ այնչափ իմաստուն մէկը, որ կարողանայ արդար դատ անել իր եւ եղբօր միջեւ: 6 Բայց եղբայրը եղբօր դէմ է դատւում, այն էլ՝ անհաւատների առջեւ: 7 Եւ արդ, բոլորովին վատթար բան է ձեզ համար, որ դատաստաններ էլ կան ձեր մէջ: Ինչո՞ւ ինքներդ զրկանք չէք կրում եւ առաւել եւս ինքներդ նեղութիւն չէք քաշում. 8 այլ դուք էք զրկում եւ նեղում. այն էլ՝ նոյնիսկ եղբայրներին: 9 Զգիտէ՞ք, թէ անիրաւներն Աստծու արքայութիւնը չեն ժառանգում. մի՛ խաբուէք. ո՛չ պոռնիկներ, ո՛չ կռապաշտներ, ո՛չ շնացողներ, 10 ո՛չ իգացողներ, ո՛չ արուամոլներ, ո՛չ գողեր, ո՛չ ագահներ, ո՛չ հարբեցողներ, ո՛չ բամբասողներ, ո՛չ էլ յափշտակողներ Աստծու արքայութիւնը չպիտի ժառանգեն: 11 Եւ դուք, գոնէ ոմանք, այդպիսիք էիք. բայց լուացուեցիք, մաքրուեցիք, արդարացուեցիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով եւ մեր Աստծու Հոգով:

ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԳՈՐԾԱԾԵՑԷ՛Ք ԱՍՏԾՈՒ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ

12 Ամէն ինչ ինձ արտօնուած է, բայց ոչ ամէն բան՝ օգտակար: Ամէն ինչ ինձ արտօնուած է, բայց պէտք չէ, որ որեւէ բանի իշխանութեան տակ լինեմ: 13 Ուտելիքը որովայնի եւ որովայնը ուտելիքի համար է: Բայց Աստուած ե՛ւ այս, ե՛ւ այն պիտի կործանի. սակայն մարմինը ոչ թէ պոռնկութեան, այլ Տիրոջ համար է, եւ Տէրը՝ մարմնի համար: 14 Բայց Աստուած, որ Տիրոջը յարութիւն տուեց, ձեզ էլ յարութիւն պիտի տայ իր զօրութեամբ: 15 Զգիտէ՞ք, թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Արդ, Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնիկի՞ անդամներ ենք դարձնելու: Քա՛ւ լիցի: 16 Զգիտէ՞ք, թէ, ով մերձենում է պոռնիկին, նրա հետ մէկ մարմին է դառնում: «Կը լինեն, – ասում է Գիրքը, – երկուսը մէկ մարմին»[†]: 17 Եւ ով մերձենում է Տիրոջը, մէ՛կ հոգի է դառնում նրա հետ:18 Փախէ՛ք պոռնկութիւնից: Ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուրս է. իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դէմ է մեղք գործում: 19 Զգիտէ՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, եւ որն ստացել էք Աստծուց. եւ դուք ձեր տէրը չէք, 20 քանզի մե՛ծ գնով գնուեցիք: Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների մէջ:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

7 Այժմ, այն բաների մասին, որ ինձ գրել էիք: Լաւ է տղամարդու համար կին արարածին չմերձենալ: 2 Բայց, չպոռնկանալու համար, իւրաքանչիւր մարդ թող իր կինը ունենայ, եւ ամէն կին՝ իր մարդը: 3 Թող մարդը կնոջ հանդէպ իր պարտքը կատարի, նոյն ձեւով եւ կինը՝ իր մարդու հանդէպ. 4 որովհետեւ կինն իր մարմնի տէրը չէ, այլ՝ մարդը: Նոյնպէս եւ՝ մարդը իր մարմնի տէրը չէ, այլ՝ կինը: 5 Մի՛ զրկէք միմեանց, այլ միայն այն դէպքում, եթէ միառժամանակ համաձայն էք, որ աղօթքի նուիրուէք. եւ վերստին միմեա՛նց դարձէք, որպէսզի Սատանան ձեզ չփորձի ձեր անժուժկալութեան պատճառով: 6 Այս ասում եմ թոյլ տալով եւ ոչ թէ հրաման տալով. 7 որովհետեւ ուզում եմ, որ ամէն մարդ լինի այնպէս, ինչպէս ես եմ. բայց իւրաքանչիւր ոք իր շնորհն ունի Աստծուց, մէկն՝ այսպէս, իսկ միւսն՝ այնպէս: 8 Սակայն ամուրիներին եւ այրիներին ասում եմ. լաւ է նրանց համար, եթէ մնան այնպէս, ինչպէս ես եմ: 9 Իսկ եթէ ժուժկալութիւն չունեն, թող ամուսնանան. որովհետեւ լաւ է ամուսնանալ, քան կրքով այրուել: 10 Իսկ ամուսնացեալներին ոչ թէ ես, այլ Տէրն է պատուիրում. թող կինը ամուսնուց

†Յունարէնը ունի միայն՝ սիրով եւ հեզութեան Հոգով:

‡Երկրորդ Օրէնք 22. 30:

†Յունարէնը ստուգութիւն բառի փոխարէն ունի՝ անկեղծութիւն:

†Ծննդոց 2. 24:

չբաժանուի: 11 Իսկ եթէ բաժանուի,
թող առանց ամուսնու մնայ կամ
վերստին իր մարդու հետ հաշտուի. եւ
մարդը իր կնոջը թող չթողնի:
12 Բայց միւսներին ես եմ պա-
տուիրում, ոչ թէ Տէրը. եթէ մի եղբայր
անհաւատ կին ունենայ, եւ նրան հա-
ճելի լինի ապրել նրա հետ, նրան թող
չթողնի: 13 Եւ մի կին, եթէ անհաւատ
մարդ ունենայ, եւ նա ուզենայ ապրել
նրա հետ, իր մարդուն թող չթողնի.
14 որովհետեւ անհաւատ մարդը իր
կնոջո՛վ սուրբ է. սուրբ է եւ անհաւատ
կինը իր մարդո՛վ. ապա թէ ոչ՝ ձեր
որդիները պիղծ կը լինեն. մինչդեռ
հիմա սուրբ են: 15 Իսկ եթէ անհաւատը
ուզում է բաժանուել իր կողակցից, թող
բաժանուի. քանի որ այսպիսի դէպքում
հաւատացեալ եղբօր կամ քրոջ վրայ
հարկադրանք չկայ. քանզի Աստուած
մեզ խաղաղութեան կոչեց: 16 Ի՞նչ գի-
տես, դո՛ւ, կի՛ն, թէ քո մարդուն փրկե-
լու ես. կամ ի՞նչ գիտես, դո՛ւ, մա՛րդ,
թէ քո կնոջը փրկելու ես. 17 միայն թէ՝
ամէն մէկին Տէրը ինչ ձեւով որ բաժին
տուեց, եւ իւրաքանչիւրին Աստուած
ինչպէս որ կանչեց, թող նա այնպէս էլ
ընթանայ: Եւ բոլոր եկեղեցիներում
այսպէս եմ պատուիրում:

ԱՊՐԻՐ ԻՆՉՊԷՍ ԱՍՏՈՒԱԾ ՔԵԶ ԿՈՉԵԼ Է

18 Եթէ թլփատուած մէկը հաւատի
կանչուեց, թող չփորձուի ծածկել թլ-
փատութեան նշանները: Եթէ անթլ-
փատութեան վիճակի մէջ գտնուող
մէկը կանչուեց, թող չթլփատուի. 19 ո-
րովհետեւ թլփատուածութիւնն ոչինչ
է. անթլփատուածութիւնն էլ ոչինչ է,
այլ միայն կարեւոր է Աստծու պա-
տուիրանների պահպանումը: 20 Բայց
իւրաքանչիւր ոք, ինչ կոչման մէջ որ
էր, երբ կանչուեց, թող նրանում էլ
մնայ: 21 Ծառա՞յ էիր, երբ կոչուեցիր.
դու հոգ մի՛ արա, այլ, եթէ կարո-
ղանաս իսկ ազատ լինել, քեզ այդպէս
լաւ կը լինի. 22 որովհետեւ, ով Տիրոջով
ծառայ է կանչուած, Տիրոջ կողմից
ազատուած է. նոյնպէս եւ՝ ով ազատ է
կոչուած, Քրիստոսի ծառան է: 23 Մե՛ծ
գնով գնուեցիք: Մարդկանց ծառաներ
մի՛ եղէք: 24 Եղբայրնե՛ր, իւրաքան-
չիւրը, ինչ կոչման մէջ որ կոչուեց, թող
նոյնի մէջ էլ մնայ Աստծու առաջ:

ԿՈՒՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

25 Իսկ կոյսերի մասին Տիրոջից
հրաման չունեմ. բայց խրատ եմ տա-
լիս, որպէս Տիրոջից ողորմութիւն գտած
մէկի, որ վստահելի է: 26 Կարծում եմ,
թէ այսպէս լաւ է. այն նեղութեան
պատճառով, որ ներկայումս կայ. մար-
դու համար լաւ է, որ այսպէս լինի:
27 Կապուա՞ծ ես կնոջ հետ. մի՛ փոր-
ձուիր արձակուել: Զե՞ս կապուած. կին
մի՛ փնտրիր. 28 սակայն եթէ ամուս-
նանաս, մեղք գործած չես լինի. եւ եթէ
կոյսն ամուսնանայ, մեղք գործած չի
լինի: Բայց այդպիսիները մարմնի նե-
ղութիւն են ունենալու. իսկ ես պիտի
խնայէի ձեզ: 29 Բայց այս եմ ասում,
եղբայրնե՛ր, թէ այսուհետեւ ժամա-
նակը կարճ է: Նրանք, որ կին ունեն,
այնպէս ապրեն, որպէս թէ՝ ունեցած
չլինէին. 30 եւ նրանք, որ լաց են
լինում, որպէս թէ՝ լացած չլինէին. եւ
նրանք որ ուրախանում են, որպէս թէ՝
ուրախացած չլինէին. եւ նրանք, որ
բան են գնում, որպէս թէ՝ ունեցած
չլինէին. 31 եւ նրանք, որ աշխարհիկ
կեանք են վարում, որպէս թէ՝ վայելած
չլինէին. որովհետեւ այս աշխարհը,
այնպէս, ինչպէս որ է, անցնելու վրայ
է: 32 Այլ ուզում եմ, որ դուք առանց
հոգսի լինէք. որովհետեւ, ով կին չունի,
հոգում է, թէ ինչպէս հաճելի լինի
Տիրոջը: 33 Իսկ ով կին ունի, աշխարհի
մասին է հոգում, թէ ինչպէս հաճելի
լինի իր կնոջը: 34 Եւ այսպէս տար-
բերւում են իրարից ամուսնացած կինը
եւ կոյսը. քանի որ կոյսը հոգում է
Տիրոջ գործերի մասին, որպէսզի սուրբ
լինի մարմնով եւ հոգով: Իսկ ամուս-
նացած կինը հոգում է աշխարհի մա-
սին, թէ ինչպէս հաճելի լինի իր
մարդուն: 35 Եւ այս ձեր օգտի համար
եմ ասում. ոչ թէ ձեզ ճնշելու համար,
այլ պարկեշտութեան եւ Տիրոջը բոլո-
րանուէր ծառայելու համար: 36 Իսկ
եթէ մէկը ամօթ զգայ իր կոյս նշա-
նածի համար, եւ եթէ իր կրքի չափն

անցել է, – եւ դա բնական է, – թող
անի, ինչ ցանկանում է. մեղք չի գոր-
ծի՝ թող ամուսնանայ: 37 Իսկ ով հա-
մոզուած է իր սրտում եւ կարող է
իշխել իր կամքին ու ներքնապէս որո-
շել է կոյս թողնել իր նշանածին, լաւ է
անում, վտանգ չկայ նրան այդ բա-
նում: 38 Իսկ ով որ ամուսնանում է[†] իր
կոյս նշանածի հետ, լաւ է անում. իսկ
ով որ չի ամուսնանում, առաւել եւս
լաւ է անում:
39 Կինը կապուած է իր մարդուն
մինչեւ այնքան ժամանակ, որ իր
մարդը կենդանի է: Իսկ երբ նրա
մարդը մեռնի, ազատ է ամուսնանալու՝
ում հետ ուզենայ, բայց միայն
Տիրոջով: 40 Սակայն առաւել երանելի
է, եթէ մնայ այնպէս, ըստ իմ խրատի:
Ես այնպէս եմ կարծում, թէ իմ մէջ էլ
Աստծու Հոգի կայ:

ԿՈՒՌՔԵՐԻՆ ԱՐՈՒԱԾ ԶՈՀԵՐԻ ՄԱՍԻՆ

8 Իսկ այժմ, կուռքերին արուած
զոհերի մասին: Ոմանք ասում են՝ այդ
մասին մենք անհրաժեշտը գիտենք.
գիտութիւնը հպարտացնում է, բայց
սէրը՝ հաստատում: 2 Եթէ մէկը կար-
ծում է, թէ բան գիտէ, դեռ չգիտէ իսկ
ինչպէս պէտք է գիտենալ: 3 Բայց ով
սիրում է Աստծուն, նա ճանաչուած է
նրանից: 4 Իսկ ինչ վերաբերում է
կուռքերին զոհ արուածները ուտելուն,
գիտենք, որ այս աշխարհում կուռքերը
ոչինչ են. որովհետեւ չկայ ուրիշ Աս-
տուած, բացի միակ Աստծուց, 5 թէ-
պէտեւ այսպէս կոչուած աստուածներ
կան թէ՛ երկնքում եւ թէ՛ երկրի վրայ.
արդարեւ, կան բազում աստուածներ եւ
բազում տէրեր: 6 Բայց մեզ համար
միայն մէ՛կ Աստուած կայ, Հայր, որ
ստեղծել է ամէն բան, եւ մենք ապրում
ենք նրանով. եւ՝ միայն մէ՛կ Տէր
Յիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղ-
ծուեց ամէն ինչ, եւ մենք ապրում ենք
նրանով:
7 Բայց բոլորի մէջ այս գիտութիւնը
չկայ[‡]: Ոմանք, մինչեւ այժմ վարժուած
լինելով, կուռքերին զոհ արուածը իբ-
րեւ զոհաբերուած են ուտում, եւ որով-
հետեւ նրանց խղճմտանքը տկար է,
պղծւում են: 8 Եւ ուտելիքը չէ, որ մեզ
Աստծու առաջ է կանգնեցնելու: Եթէ
չուտենք, ոչնչով չենք պակասի, եւ եթէ
ուտենք, ոչնչով չենք աւելանայ: 9 Բայց
զգո՛յշ եղէք, գուցէ ձեր այդ ազատու-
թիւնը գայթակղութիւն լինի տկար-
ների համար: 10 Եթէ մէկը տեսնի քեզ՝
այդ գիտութիւնը ունեցողիդ, սեղան
նստած մեհեանում, արդարեւ, նա, որի
խղճմտանքը տկարութեամբ է պատած,
վերստին չի՞ քաջալերուի կուռքերին
զոհաբերուածն ուտելու: 11 Եւ տկար
եղբայրը, որի համար Քրիստոս մեռաւ,
կորստեան կը մատնուի քո գիտութեան
պատճառով: 12 Եւ այսպէս, յանցանք
գործելով եղբայրների դէմ եւ վիրա-
ւորելով տկարների խղճմտանքը, դուք
Քրիստոսի հանդէպ մեղանչում էք: 13
Ուստի, եթէ ուտելիքը պիտի գայ-
թակղեցնի իմ եղբօրը, յաւիտեան միս
չեմ ուտի, որպէսզի իմ եղբօրը չգայ-
թակղեցնեմ:

ԱՌԱՔԵԱԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

9 Զէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ առաքեալ
եմ, չէ՞ որ իմ աչքերով տեսայ Տէր
Յիսուս Քրիստոսին, չէ՞ որ դուք էք իմ
գործը ի Տէր: 2 Թէպէտեւ ուրիշների
համար առաքեալ չեմ, բայց յամենայն
դէպս ձեզ համար առաքեալ եմ. որով-
հետեւ իմ առաքելութեան կնիքն իսկ
էք դուք ի Տէր: 3 Ուր որ ինձ հար-
ցաքննեն, իմ պատասխանը այս է. 4 մի-
թէ իշխանութիւն չունե՞նք ուտելու եւ
խմելու: 5 Մի՞թէ իշխանութիւն չու-
նե՞նք մեզ հետ ման ածելու մեր հա-
ւատացեալ կանանց, ինչպէս որ միւս
առաքեալները, Տիրոջ եղբայրները եւ
Կեփասը անում են: 6 Միայն ես եւ
Բառնաբա՞սը պարտաւոր ենք մեր
ապրուստի համար աշխատելու: 7 Ո՞վ
երբեւէ զինուորութիւն կ'անի իր ծախ-
սով: Ո՞վ այգի կը տնկի եւ նրա պտղից
չի ուտի: Ո՞վ հօտ կ'արածացնի եւ
հօտի կաթից չի խմի: 8 Մի՞թէ մարդ-
կայնօրէ՞ն եմ ասում այս բանը. կամ

†Այլ թարգմանութիւն՝ ամուսնացնում է:
‡Լաւագոյն յուն. բն. ունեն բոլորը այս գիտութիւնը չունեն:

թէ՝ օրէնքն էլ այս նոյնը չի՞ ասում:
9 Մովսէսի իսկ օրէնքում գրուած է.
«Կալում աշխատող եզան դունչը չկա-
պես»†: Միթէ միայն եզների՞ համար
էր հոգ անում Աստուած: 10 Չէ՞ որ մեզ
համար է ասում. քանի որ մեզ համար
գրուեց այդ. ով վարուցանք է անում,
պէտք է յոյսով վարուցանք անի, եւ ով
կալսում է՝ վայելելու յոյսով: 11 Եթէ
մենք ձեր մէջ հոգեւոր բաներ սեր-
մանեցինք, մեծ բա՞ն է, եթէ ձեզնից
մարմնաւոր բաներ հնձենք: 12 Եթէ
ուրիշներ ձեր վրայ ունեցած իշխա-
նութեամբ վայելում են այդ բաները,
որչա՛փ եւս առաւել՝ մենք: Բայց այս
իշխանութիւնը ի գործ չդրինք, այլ
ամէն ինչի համբերում ենք, որպէսզի
Աւետարանին որեւէ արգելք չլինի:
13 Չգիտէ՞ք, թէ նրանք, որ տաճարում
պաշտօնավարում են, տաճարից էլ ու-
տում են: Եւ նրանք, որ սեղանի սպա-
սաւորներն են, սեղանից էլ վայելում
են: 14 Նոյնպէս եւ Տէրը Աւետարանը
քարոզողներին հրամայեց, որ Աւետա-
րանից էլ ապրեն: 15 Բայց ես սրանցից
եւ ոչ մի բան ի գործ չդրի. ոչ էլ գրեցի
այս բաները, որ իմ հանդէպ էլ այդպէս
լինի: Լաւ է, որ ես աւելի շուտ մեռնեմ,
քան մէկն իմ պարծանքը ընդունայն
համարի. 16 որովհետեւ, եթէ աւետա-
րանում եմ, այդ ինձ համար պարծանք
չէ, քանզի պարտաւորութիւն է դրուած
իմ վրայ: Բայց վա՛յ է ինձ, եթէ
չաւետարանեմ: 17 Եթէ կամովին եմ
անում այդ, վարձ կայ ինձ համար, իսկ
եթէ՝ ակամայ, ծանր պարտականու-
թիւն է ինձ յանձնուած: 18 Եւ արդ,
ի՞նչ է իմ վարձը. այն՝ որ աւետարա-
նելիս Աւետարանը ձրի տամ, որպէսզի
աւետարանելու մէջ ունեցած իմ իշխա-
նութիւնը չարաշահած չլինեմ. 19 թէ-
պէտեւ ազատ էի բոլորից, բայց իմ անձը
դրի բոլորի ծառայութեան համար, որ-
պէսզի շահեմ շատերին: 20 Հրեաների
հետ եղայ ինչպէս հրեայ, որպէսզի
շահեմ հրեաներին: 21 Եղայ օրէնքի
տակ, ինչպէս օրէնքի տակ եղածները.
ոչ թէ նրա համար, որ օրէնքի տակ էի,
այլ որպէսզի շահեմ նաեւ նրանց, որ
օրէնքի տակ են: Օրէնքի տակ չեղող-
ների հետ եղայ ինչպէս օրէնքի տակ
չեղող մարդ, ոչ թէ նրա համար, որ
Աստծու օրէնքին ենթակայ չէի, այլ՝
Քրիստոսի՛ օրէնքի տակ էի, որպէսզի
շահեմ օրէնքի տակ չեղողներին: 22 Ե-
ղայ տկարների հետ ինչպէս տկար,
որպէսզի շահեմ տկարներին: Բոլորի
հետ ամէն ինչ եղայ, որպէսզի թերեւս
փրկեմ ոմանց: 23 Այս բոլորն անում եմ
Աւետարանի համար, որպէսզի մասնա-
կից լինեմ նրան:

24 Չգիտէ՞ք, թէ նրանցից, որ ասպարէզում վազում են, – թէեւ բոլորն են վազում, – միայն մէկն է առնում յաղթութեան մրցանակը: Այնպէ՛ս վազեցէք, որ հասնէք դրան: 25 Ով մրցում է, ամէն ինչում ժուժկալ է լինում. նրանք՝ որպէսզի կորնչելի պսակն առնեն, իսկ մենք՝ անկորնչելին: 26 Արդ, ես ճիշտ այսպէ՛ս եմ վազում, ոչ թէ աննպատակ. այնպէս չեմ կռփահարում, իբրեւ թէ քամի ծեծէի, 27 այլ ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը եւ հնազանդեցնում այն, որպէսզի գուցէ ես ինքս խոտելի չլինեմ այն բանում, որ քարոզեցի ուրիշներին:

ՉՓՈՐՁԵԼ ԱՍՏՈՒՈՒՆ, ԻՆՉՊԷՍ ՓՈՐՁԵՑ ԻՍՐԱՅԷԼԸ

10 Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ ան-
գիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ
ամպի առաջնորդութեան տակ էին եւ
բոլորն էլ ծովով անցան. 2 եւ բոլորը,
հետեւելով Մովսէսին, մկրտուեցին
ամպ ու ծովի մէջ. 3 եւ բոլորն էլ նոյն
հոգեւոր ուտելիքը կերան, 4 եւ բոլորն
էլ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին,
որովհետեւ խմում էին հոգեւոր այն
վէմից, որ գնում էր նրանց հետ եւ այն
վէմը ինքը՝ Քրիստոսն էր: 5 Բայց
նրանցից շատերը չէ, որ հաճելի եղան
Աստծուն, քանզի անապատում ընկան
մեռան: 6 Եւ այն որպէս օրինակ եղաւ
մեզ համար, որպէսզի չար բաների
ցանկացող չլինենք, ինչպէս որ ցան-
կացան նրանք: 7 Եւ չլինենք կռա-
պաշտներ, ինչպէս նրանցից ոմանք.
ինչպէս գրուած է. «Նստեց ժողովուրդը
ուտելու եւ խմելու, եւ նրանք վեր կա-
ցան զուարճանալու»: 8 Եւ չպոռնկա-
նանք, ինչպէս նրանցից ոմանք
պոռնկացան, եւ մի օրում ընկան
քսանչորս հազարը†: 9 Եւ չփորձենք
Տիրոջը, ինչպէս փորձեցին նրանցից
ոմանք եւ կոտորուեցին օձերից: 10 Եւ
չտրտնջանք, ինչպէս տրտնջացին
նրանցից ոմանք եւ կորստեան մատ-
նուեցին մահուան հրեշտակից: 11 Եւ
այս բոլորը‡ իբրեւ օրինակ պատահեց
նրանց հետ, բայց որպէս խրատ գրուեց
մեզ համար, մեզ, որոնց համար հասել
է յաւիտեանների վախճանը:

12 Այսպէս ուրեմն՝ ով կարծում է,
թէ կանգնած է հաստատ, թող զգոյշ
լինի, գուցէ թէ ընկնի: 13 Ձեր վրայ ոչ
մի փորձութիւն չի եկել, բացի մարդ-
կանցից եկածից§: Բայց հաւատարիմ է
Աստուած, որ ձեզ աւելի փորձութեան
մէջ չի գցելու, քան կարող էք տանել.
այլ՝ փորձութեան հետ փրկութեան ելք
էլ է ցոյց տալու, որպէսզի կարողանաք
համբերել:

14 Ուստի, իմ սիրելինե՛ր, փախէ՛ք
կռապաշտութիւնից: 15 Ասում եմ ձեզ
իբրեւ գիտակից մարդկանց. ինքնե՛րդ
դատեցէք, ինչ ասում եմ: 16 Օրհնու-
թեան բաժակը, որն օրհնում ենք, արդ-
արեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի
արեան. հացը, որը կտրում ենք, արդ-
արեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի
մարմնի. 17 որովհետեւ մի հաց, մի մար-
մին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ
միակ հացից ենք վայելում: 18 Նկատի
առէք մարմնաւոր Իսրայէլը. չէ՞ որ
նրանք, որ ուտում են զոհից, մաս-
նակից են սեղանին: 19 Իսկ արդ, ահա
ինչ եմ ասում. կուռքերին զոհաբե-
րուածը մի բա՞ն է. եւ կամ՝ կուռքն
ինքնին մի բա՞ն է: 20 Ո՛չ, ինչ որ
հեթանոսները զոհում են, դեւերին են
զոհում եւ ոչ՝ Աստծուն: Չեմ ուզում,
որ դուք դեւերին հաղորդակից լինէք.
քանզի չէք կարող խմել ե՛ւ Տիրոջ
բաժակը, ե՛ւ դեւերի բաժակը: 21 Եւ չէք
կարող վայելել ե՛ւ Տիրոջ սեղանից, ե՛ւ
դեւերի սեղանից: 22 Կամ թէ՝ ուզում
ենք Տիրոջ նախա՞ն ձը գրգռել. մի՞թէ
աւելի զօրեղ ենք, քան նա:

†Երկրորդ Օրէնք 25. 4:

†Յունարէնը՝ բաներեբ հազարը:
‡Լաւագոյն յուն. բն. չունեն բոլորը բառը:
§Յունարէնը՝ մարդկային փորձութիւնից:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

23 Ամէն ինչ ինձ թոյլատրելի է,
բայց ամէն բան չէ, որ օգտակար է.
ամէն ինչ ինձ թոյլատրելի է, բայց
ամէն ինչ չէ, որ հաւատը հաստատում
է: 24 Ոչ ոք միայն իր օգուտը թող
չփնտռի, այլ՝ նաեւ ընկերոջինը: 25 Կե-
ր է՛ք ամէն ինչ, որ վաճառւում է
սպանդանոցում, եւ խղճմտանքի պատ-
ճառով խորութիւն մի՛ դրէք. 26 որով-
հետեւ՝ «Տիրոջն է երկիրն իր ամբող-
ջութեամբ»:

27 Եթէ անհաւատներից մէկը ձեզ
հրաւիրի, եւ դուք ուզենաք գնալ, այն
ամէնը, որ ձեր առաջ կը դրուի, կերէ՛ք
եւ խղճմտանքի պատճառով խորու-
թիւն մի՛ դրէք: 28 Իսկ եթէ մէկը ձեզ
ասի, թէ՝ «Այդ զոհ է արուած», մի՛
կերէք այն մարդու պատճառով, ով
իմաց տուեց ձեզ, եւ նրա խղճմտանքի
պատճառով. 29 խօսքս ոչ թէ ձեր
խղճմտանքի մասին է, այլ՝ ընկերոջ:
Բայց ինչո՞ւ իմ ազատութիւնը պիտի
կաշկանդուի ուրիշի խղճմտանքի պատ-
ճառով: 30 Եթէ ես գոհութիւն յայտ-
նելով վայելում եմ, ինչո՞ւ հայհոյւեմ
նրա համար, որ գոհութիւն եմ
յայտնում:

31 Արդ, ուտէք թէ խմէք, կամ ինչ էլ
անէք, ամէն ինչ արէ՛ք Աստծու փառքի
համար. 32 դայթակղութեան պատճառ
մի՛ եղէք հրեաներին եւ հեթանոս-
ներին եւ Աստծու եկեղեցուն. 33 ինչպէս
որ ե՛ս բոլորին ամէն ինչում հաճելի եմ
լինում ու չեմ փնտռում իմ օգուտը,
այլ՝ շատերինը, որպէսզի փրկուեն:

ՏՂԱՄԱՐԴԸ ԵՒ ԿԻՆԸ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

11 Նմանուեցէ՛ք ինձ, ինչպէս որ ես՝
Քրիստոսին: 2 Գովում եմ ձեզ, որ
յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում
էք աւանդած բաները, ինչպէս որ
աւանդեցի ձեզ: 3 Ուզում եմ, որ դուք
իմանաք, թէ ամէն մարդու գլուխը
Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ
Քրիստոսի գլուխը՝ Աստուած: 4 Ամէն
տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ
մարգարէանայ եւ գլուխը ծածկած

պահի, անպատուում է իր գլուխը: 5 Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի. 6 քանզի, եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը: Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի: 7 Պէտք չէ, որ տղամարդը իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու. իսկ կինը ի՛ր մարդու փառքն է. 8 որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց. 9 քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար: 10 Դրա համար կինը պարտաւոր է քօղ† դնել գլխին, հրեշտակների պատճառով: 11 Բայց կինն առանց մարդու եւ մարդն առանց կնոջ չկան ի Տէր. 12 որովհետեւ, ինչպէս որ կինը մարդուց է, այնպէս եւ մարդը՝ կնոջ միջոցով, եւ ամէն ինչ՝ Աստծուց: 13 Եւ դուք ինքնե՛րդ դատեցէք. վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ: 14 Եւ բնութիւնն իսկ չի՞ ուսուցանում ձեզ, որ, եթէ մարդը երկար մազերով է, այդ անարգանք է իրեն. 15 բայց կինը, եթէ երկար մազերով է, այդ պատիւ է իրեն. որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան: 16 Իսկ եթէ մէկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները:

ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԸ

(Մատթ. 26. 26-29, Մարկ. 14. 22-25, Ղուկ. 22. 14-20)

17 Բայց այս բանը պատուիրում եմ, ոչ որպէսզի ձեզ գովեմ. որովհետեւ ոչ թէ դէպի լաւը, այլ դէպի վատթարն են գնում ձեր հաւաքոյթները: 18 Նախ՝ երբ ի մի վայր էք ժողովւում եկեղեցում, լսում եմ, թէ բաժանումներ կան ձեր մէջ. եւ մասամբ հաւատացի: 19 Բայց պէտք է, որ հերձուածներ էլ լինեն ձեր մէջ, որպէսզի ձեր միջից նրանք, որ ընտիր մարդիկ են, երեւան:

†Յունարէնը քօղ բառի փոխարէն ունի իշխանութիւն բառը (թանի որ քօղը խորհրդանշան է իշխանութեան):

20 Եւ արդ, երբ դուք միասին հաւաքւում էք, Տիրոջ տունը ձեզ համար հաց ուտելու տեղ չէ†. 21 որովհետեւ իւրաքանչիւր ոք առաջ է ընկնում իր ընթրիքն ուտելու. մէկը՝ քաղցած է, իսկ միւսը՝ արդէն հարբած: 22 Միթէ տներ չունէ՞ք ուտելու եւ խմելու համար: Կամ՝ Աստծու եկեղեցի՞ն էք արհամարհում եւ ամաչեցնում չքաւորներին: Ի՞նչ ասեմ, գովե՞մ ձեզ դրա համար: Չեմ գովում. 23 որովհետեւ ես ընդունեցի Տիրոջից, ինչ որ աւանդեցի ձեզ. այն՝ որ Տէր Յիսուս, այն գիշերը, երբ մատնուեց, հաց վերցրեց, 24 գոհութիւն մատուցեց, կտրեց եւ ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է. արէ՛ք այս իմ յիշատակի համար»: 25 Նոյն ձեւով էլ ընթրիքից յետոյ վերցրեց բաժակը եւ ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է իմ արիւնով. արէ՛ք այս իմ յիշատակի համար, քանի անգամ էլ որ խմէք»: 26 Քանի անգամ որ այս հացն ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմեցէ՛ք Տիրոջ մահը, մինչեւ որ նա գայ:

27 Ահա թէ ինչու, ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանօրէն‡, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին եւ արեանը: 28 Թող մարդ նախ ինքն իրե՛ն փորձի եւ ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. 29 որովհետեւ, ով ուտում է եւ խմում անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում եւ խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը: 30 Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շատերն էլ մեռած են. 31 որովհետեւ, եթէ մե՛նք մեզ քննէինք, ապա չէինք դատապարտուի: 32 Իսկ եթէ դատւում ենք, Տիրոջից խրատւում ենք, որպէսզի աշխարհի հետ չդատապարտուենք:

33 Եղբայրնե՛ր, ուրեմն, երբ ի մի հաւաքուէք ուտելու, սպասեցէ՛ք միմեանց: 34 Իսկ եթէ մէկը քաղցած լինի, իր տանը թող ուտի, որպէսզի դատապարտութե՛ան համար հաւաքուած

†Յունարէնը ունի՝ այդ տէրունական ընթրիքի ուտել չէ:

‡Յուն. լաւ բն. այս համարում չունեն անարժանօրէն եւ Տիրոջ բառերը:

չլինէք: Իսկ մնացած պատուէրները, երբ որ գամ, այն ժամանակ կը հաղորդեմ:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՇՆՈՐՀՆԵՐԸ

12 Գալով հոգեւոր շնորհներին, եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ չգիտենաք: 2 Գիտէք, որ, մինչ հեթանոսներ էիք, ինչպէ՛ս էիք գնում-գալիս անխօս կուռքերի մօտ: 3 Ուստի յայտնում եմ ձեզ, որ ոչ ոք, ով Աստծու Հոգով է խօսում, չի ասի, թէ՝ «Նզովեալ է Յիսուս». եւ ոչ ոք չի կարող ասել՝ «Յիսուս Տէր է», եթէ ոչ՝ Սուրբ Հոգով:

4 Թէեւ կան շնորհների զանազանութիւններ, բայց պարգեւող Հոգին նոյնն է: 5 Թէեւ կան զանազան պաշտօններ, բայց բոլորն էլ Տիրոջն են ծառայում: 6 Թէեւ կան գործելու զանազան կարողութիւններ, բայց նոյնն է Աստուած, որ գործում է ամէն բան ամենքի մէջ: 7 Բայց իւրաքանչիւրին տրուած է Հոգու յայտնութիւն՝ իւրաքանչիւրի օգուտի համար: 8 Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգուց, 9 միւսին՝ հաւատ՝ նոյն Հոգով, միւսին՝ բժշկումների շնորհ՝ նոյն Հոգով†, 10 միւսին՝ զօրաւոր գործերի կարողութիւններ, միւսին՝ մարգարէութիւն, միւսին՝ հոգիները զանազանելու շնորհ, միւսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խօսելու շնորհ, միւսին՝ լեզուների թարգմանութեան շնորհ: 11 Բայց այս ամէնը միեւնոյն Հոգին է առաջացնում եւ բաժանում իւրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է:

ՄԻ ՄԱՐՄԻՆ, ԲԱՅՑ՝ ԲԱԶՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

12 Ինչպէս մէկ է մարմինը եւ ունի բազում անդամներ, եւ մարմնի այդ բազում անդամները բոլորը մէկ մարմին են, այնպէս էլ՝ Քրիստոս. 13 քանզի մէ՛կ Հոգով մէ՛կ մարմին լինելու համար մկրտուեցինք մենք ամէնքս՝ թէ՛ հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ. եւ բոլորս էլ

†Լաւագոյն յուն. բն. նոյն Հոգով բառերի փոխարէն ունեն միակ Հոգով:

այդ մէ՛կ Հոգին խմեցինք: 14 Այսպէս, մարմինը մէկ անդամ չէ, այլ՝ բազում: 15 Եթէ ոտքն ասի՝ քանի որ ձեռք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց: 16 Եւ եթէ ականջն ասի՝ քանի որ աչք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց. 17 եթէ ամբողջ մարմինը աչք լինէր, ո՞ւր կը մնար ականջը. եւ եթէ ամբողջ մարմինը ականջ լինէր, ո՞ւր կը մնար հոտոտելիքը: 18 Բայց արդ, Աստուած դրեց անդամները, նրանցից ամէն մէկը՝ մարմնի մէջ, ինչպէս որ կամեցաւ: 19 Իսկ եթէ ամբողջը մէկ անդամ լինէր, ո՞ւր կը մնար մարմինը: 20 Բայց արդ, բազում անդամներ կան, սակայն՝ մէկ մարմին: 21 Աչքը չի կարող ասել ձեռքին, թէ՝ ինձ պէտք չես. եւ կամ նոյն ձեւով գլուխը՝ ոտքերին, թէ՝ ինձ պէտք չէք: 22 Եւս առաւել, մարմնի այն անդամները, որ թւում է, թէ աւելի տկար են, կարեւորնե՛րն են. 23 եւ նրանք, որ թւում է, թէ մարմնի համար աւելի անարգ են, առաւելագո՛յն պատիւ ենք անում նրանց. եւ մեր ամօթոյքները առաւել եւս անհրաժեշտ է պարկեշտութեամբ ծածկել: 24 Բայց մեր պարկեշտ անդամները այդ չեն պահանջում: Որովհետեւ Աստուած կազմեց մարմինը եւ նուազ պատուաւորին առաւել պատիւ տուեց, 25 որպէսզի մարմնի մէջ բաժանումներ չլինեն, այլ որպէսզի այդ անդամները նոյն հոգը տանեն միմեանց նկատմամբ: 26 Եւ եթէ մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները. եւ եթէ մի անդամը փառաւորւում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները:

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՄԱՐՄԻՆԸ

27 Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամներ՝ նրա անդամներից: 28 Եւ ում որ Աստուած կարգեց եկեղեցու մէջ, սրանք են. նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ ուսուցանողներ, ապա՝ զօրաւոր գործեր կատարելու շնորհներ, ապա՝

բժշկելու շնորհներ, օգնելու, կառավարելու շնորհներ, տեսակ-տեսակ լեզուներ խօսելու շնորհներ, լեզուների թարգմանութեան շնորհներ[†]: 29 Միթէ բոլո՞րն էլ առաքեալներ են. միթէ բոլո՞րն էլ մարգարէներ են. միթէ բոլո՞րն էլ ուսուցանողներ են. միթէ բոլո՞րն էլ զօրութիւններ գործողներ են. 30 միթէ բոլո՞րն էլ բժշկելու շնորհ ունեն. միթէ բոլո՞րն էլ լեզուներ են խօսում. միթէ բոլո՞րն էլ թարգմանում են:

31 Բայց դուք նախանձախնդիր եղէք լաւագոյն շնորհներին: Եւ ես առաւել լաւ ճանապարհ ցոյց կը տամ ձեզ:

ՕՐՀՆԵՐԳ ՍԻՐՈՅ

13 Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ զոզանջում են: 2 Եւ եթէ մարգարէութիւն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: 3 Եւ եթէ իմ ամբողջ ունեցածքը տամ աղքատներին եւ իմ այս[‡] մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ: 4 Սէրը համբերող է, քաղցրաբարոյ է. սէրը չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում, 5 անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկութեամբ չի գրգռւում, չար բան չի խորհում, 6 անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ. 7 ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում, ամէն բանի համբերում: 8 Սէրը երբեք չի անհետանում. թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան. թէ լեզուներ՝ պիտի լռեն. թէ գիտութիւն՝ պիտի անցնի. 9 քանզի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում: 10 Իսկ երբ գայ կատարեալը, շատից քիչը կ'անհետանայ:

11 Մինչ երեխայ էի, խօսում էի ինչպէս երեխայ, խորհում էի ինչպէս երեխայ, դատում էի ինչպէս երեխայ. իսկ երբ տղամարդ դարձայ, երեխայական բաները մի կողմ թողեցի: 12 Այժմ տեսնում ենք աղօտ, ինչպէս պատկերը հայելու մէջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դէմառդէմ: Այժմ շատից քիչը գիտեմ, իսկ այն ժամանակ կը գիտենամ՝ ինչպէս որ Նա ճանաչեց ինձ:

13 Բայց արդ, մնում են հաւատ, յոյս, սէր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագոյնը սէրն է:

ԿՐԿԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՇՆՈՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14 Սիրոյ հետամո՛ւտ եղէք եւ առաւել եւս նախանձախնդի՛ր եղէք հոգեւոր շնորհներին, մանաւանդ մարգարէութիւն անելու. 2 որովհետեւ, ով որ լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստծու հետ. քանզի չկայ մէկը, որ հասկանայ իրեն, բայց նա Հոգով արտայայտում է խորհուրդներ: 3 Իսկ նա, ով մարգարէանում է, մարդկանց հետ է խօսում ի շինութիւն, ի մխիթարութիւն եւ ի սփոփանք: 4 Ով լեզուներ է խօսում, ինքն իրեն է հաստատում, իսկ ով մարգարէանում է, ամրացնում է եկեղեցի՛ն: 5 Կամենում եմ, որ դուք ամէնքդ էլ լեզուներ խօսէք. աւելին՝ որ մարգարէանաք. որովհետեւ նա, ով մարգարէանում է, աւելի լաւ է, քան նա, ով լեզուներ է խօսում. միայն թէ նա թող բացատրի, որպէսզի եկեղեցին ամրանայ:

6 Իսկ այժմ, եղբայրնե՛ր, թէ գամ ձեզ մօտ լեզուներ խօսելով, ինչո՞վ օգտակար կը լինեմ ձեզ, եթէ չխօսեմ կա՛մ յայտնութեամբ, կա՛մ գիտութեամբ, կա՛մ մարգարէութեամբ, կա՛մ վարդապետութեամբ: 7 Այնպէս, ինչպէս որ անշունչ գործիքները ձայն ածեն, լինի փող թէ քնար. որովհետեւ, եթէ տարբեր ձայներ չարձակեն, ինչպէ՞ս պիտի իմացուի, թէ փողն է զարկում, կամ քնարն է հնչում. 8 քանզի եթէ շեփորը անորոշ ձայն արձակի, ո՞վ կը պատրաստուի պատերազմի: 9 Նոյնպէս եւ դուք. եթէ լեզուներով յստակ չդարձնէք խօսքը, ինչպէ՞ս կը հասկացուի խօսուածը. որովհետեւ դրանով դուք նման կը լինէք մի մարդու, որ օդի մէջ է խօսում: 10 Այնչափ լեզուների տեսակներ կան աշխարհում, բայց չկայ ոչինչ աննշանակ: 11 Իսկ արդ, եթէ չգիտենամ լեզուի նշանակութիւնը, օտար կը լինեմ նրա համար, ով կը խօսի ինձ հետ. եւ նա, ով կը խօսի ինձ հետ, օտար կը լինի ինձ համար: 12 Այսպէս էլ՝ դուք, քանի որ նախանձախնդիր էք հոգեւոր շնորհների, ջանացէ՛ք առաւել եւս հարստանալ նոյն շնորհներով ի շինութիւն եկեղեցու:

13 Ուստի, նա, ով լեզուներ է խօսում, թող աղօթի, որ կարողանայ էլ մեկնել: 14 Եթէ աղօթում եմ օտար լեզուով, իմ հոգին է աղօթում, բայց իմ միտքը անպտուղ է: 15 Իսկ արդ, ի՞նչ. պիտի աղօթեմ հոգով, պիտի աղօթեմ նաեւ մտքով: Սաղմոս պիտի ասեմ հոգով, սաղմոս պիտի ասեմ եւ մտքով: 16 Ապա թէ ոչ, եթէ հոգով օրհնաբանես, նա, ով անգէտ մարդու վիճակում է, քո գոհաբանութեան ժամանակ ինչպէ՞ս ասի. «Ամէն». քանզի, ինչ որ դու ասում ես, նա չի հասկանում. 17 թէեւ դու լաւ ես գոհութիւն մատուցում, բայց ընկերդ հոգեպէս չի հաստատուում:

18 Գոհութիւն Աստծու. ձեր բոլորից աւելի շատ լեզուներ եմ խօսում. 19 բայց, որպէսզի ուրիշներին էլ սովորեցնեմ, եկեղեցու մէջ կամենում եմ հինգ խօսք խօսել խելքով, քան բազում խօսքեր՝ լեզուով:

20 Եղբայրնե՛ր, մտքով երեխայ մի՛ եղէք, այլ եղէ՛ք երեխայ չարութիւն գործելու մէջ, բայց մտքով եղէ՛ք չափահաս. 21 քանզի օրէնքի մէջ էլ գրուած է.

«Օտար լեզուներով եւ օտարոտի շրթունքներով
պիտի խօսեմ այդ ժողովրդի հետ,
սակայն եւ այնպէս չպիտի լսեն ինձ»:

22 Ապա ուրեմն, լեզուները նշան են. բայց ոչ հաւատացեալների, այլ՝ անհաւատների համար. իսկ մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ՝ հաւատացեալների: 23 Իսկ եթէ ամբողջ եկեղեցին ի մի վայր հաւաքուի, եւ բոլորն էլ լեզուներ խօսեն, եւ այնտեղ մտնեն անգէտներ ու անհաւատներ, չե՞ն ասի, թէ՝ դուք գժուել էք: 24 Իսկ եթէ բոլորն էլ մարգարէանան, եւ այնտեղ մի անհաւատ կամ անգէտ մտնի, կը յանդիմանուի բոլորից եւ բոլորից կը հարցապնդուի, 25 ու նրա սրտի գաղտնիքները յայտնի կը լինեն. եւ ապա երեսի վրայ ընկած՝ կ'երկրպագի Աստծուն ու կը խոստովանի, թէ՝ արդարեւ ձեր մէջ է Աստուած:

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ

26 Եւ արդ, ի՞նչ անել, եղբայրնե՛ր: Երբ ի մի վայր հաւաքուէք, ձեզնից իւրաքանչիւրը՝ շնորհ ունենայ սաղմոս երգելու թէ ուսուցանելու, Աստծու յայտնութիւնը բերելու թէ լեզուներով խօսելու, կամ խօսուածը թարգմանելու, թող այդ բոլորը լինի ի շինութիւն եկեղեցու: 27 Թէ լեզուներ են խօսում, – երկու կամ ամենաշատը երեք հոգի, – թող մէկ-մէկ խօսեն, եւ թող մէկն էլ թարգմանի: 28 Իսկ եթէ չլինի մէկը, որ թարգմանի, թող լուռ մնան եկեղեցում. իրենց մտքում եւ Աստծու հետ թող խօսեն: 29 Բայց թող երկու կամ երեք մարգարէներ խօսեն մէկ-մէկ, իսկ միւսները թող քննեն: 30 Իսկ եթէ նստածներից մէկը մի յայտնութիւն ունի անելու, առաջինը թող լռի. 31 քանզի կարող էք բոլորդ էլ մէկ առ մէկ մարգարէանալ, որպէսզի բոլորն էլ սովորեն եւ բոլորն էլ մխիթարուեն. 32 քանի որ մարգարէութեան հոգին ենթարկւում է մարգարէացողին. 33 որովհետեւ Աստուած խռովութեան Աստուածը չէ, այլ՝ խաղաղութեան:

34 Ինչպէս որ է Աստծու բոլոր եկեղեցիներում, կանայք թող լուռ մնան եկեղեցու մէջ, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպէս օրէնքն էլ ասում է: 35 Իսկ եթէ ուզենան մի բան սովորել, տանը թող իրենց մարդկանց հարցնեն. քանզի կին արարածի

†Յունարէնը չունի լեզուների թարգմանութեան շնորհներ բառերը:

‡Յուն. լաւ բն. չունեն այս բառը:

համար անպատեհ է խօսել եկեղեցում:
36 Մի՞թէ ձեզնի՞ց ելաւ Աստծու խօսքը
եւ կամ թէ միայն ձե՞զ հասաւ: 37 Իսկ
եթէ մէկը ինքն իրեն կարծում է
մարգարէ կամ տէր՝ հոգեւոր չնորհի,
թող իմանայ, թէ ինչ որ գրեցի ձեզ,
Տիրոջ պատուիրաններն են: 38 Իսկ եթէ
մէկն անգիտանայ դրանք, նա թող
անտեսուի եկեղեցուց:
39 Ուրեմն, եղբայրնե՛ր, նախան-
ձախնդի՛ր եղէք մարգարէանալու եւ
լեզուներ խօսելը մի՛ արգելէք. 40 եւ ձեր
ամէն ինչը պարկեշտութեամբ եւ ըստ
կարգի թող լինի:

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

15 Եղբայրնե՛ր, յիշեցնեմ ձեզ իմ
Աւետարանը, որը քարոզեցի ձեզ, որը
եւ ընդունեցիք, եւ որի մէջ հաստատ
էք մնում. 2 նրանով կը փրկուէք էլ,
եթէ ամուր պահէք այն խօսքերը, որ
քարոզեցի ձեզ. այլապէս ի զուր
հաւատացած կը լինէք. 3 որովհետեւ ես
ձեզ աւանդեցի նախ այն, ինչը ես ինքս
ընդունեցի. թէ՝ Քրիստոս մեռաւ մեր
մեղքերի համար՝ ըստ Գրքերի 4 եւ թէ՝
թաղուեց եւ թէ՝ յարութիւն առաւ
երրորդ օրը՝ ըստ Գրքերի 5 եւ երեւաց
Կեփասին եւ ապա՝ Տասներկուսին. 6 ա-
պա երեւաց միանգամից աւելի քան
հինգ հարիւր եղբայրների, որոնցից
շատերը կան մինչեւ այժմ. ոմանք էլ՝
ննջեցեալ եղան: 7 Եւ ապա երեւաց
Յակոբոսին, ապա՝ բոլոր առաքեալ-
ներին: 8 Ամենից յետոյ երեւաց եւ ինձ՝
անարգիս†, 9 որովհետեւ ես իսկ եմ
առաքեալների տրուպը. ես որ
առաքեալ կոչուելու արժանի իսկ չեմ,
քանի որ հալածեցի Աստծու եկեղեցին:
10 Բայց Աստծու շնորհով եմ, ինչ որ
եմ, եւ իմ մէջ եղած նրա շնորհները
իզուր չանցան, այլ նրանցից բոլորից
աւելի աշխատեցի. բայց ոչ թէ ես,
այլ Աստծու շնորհը, որ ինձ հետ էր:
11 Արդ, թէ՛ ես եւ թէ՛ նրանք այսպէս
քարոզեցինք, եւ դուք այսպէս հաւա-
տացիք: 12 Իսկ եթէ քարոզւում է, թէ
Քրիստոս մեռելներից յարութիւն է
առել, ձեզնից ոմանք ինչպէ՞ս են
ասում, թէ մեռելների յարութիւն չկայ:
13 Եթէ մեռելների յարութիւն չկայ,
ապա եւ Քրիստոս յարութիւն չի առել:
14 Եւ եթէ Քրիստոս յարութիւն չի
առել, ի զուր է մեր քարոզութիւնը, ի
զուր է եւ ձեր հաւատը: 15 Եւ Աստծու
սուտ վկաները եղած կը լինենք, քանի
որ Աստծու մասին վկայեցինք, թէ
յարութիւն տուեց Քրիստոսին. արդա-
րեւ, եթէ յարութիւն չառնէին մեռել-
ները, նրան յարութիւն չէր տայ: 16 Իսկ
եթէ մեռելները յարութիւն չեն առ-
նում, ապա Քրիստոս էլ յարութիւն չի
առել: 17 Եւ եթէ Քրիստոս յարութիւն
չի առել, ի զուր է ձեր հաւատը. եւ
տակաւին նոյն մեղքերի մէջ էք: 18 Իսկ
արդ, նրանք, որ ննջեցին ի Քրիստոս,
կորա՞ն արդեօք: 19 Եթէ միայն այս
կեանքի համար ենք յոյս դրել ի Քրիս-
տոս, ողորմելի ենք, քան բոլոր մար-
դիկ: 20 Բայց արդ, մեռելներից յա-
րութիւն է առել Քրիստոս՝ ննջե-
ցեալների առաջին պտուղը. 21 քանզի
մի մարդով մահ եղաւ եւ մի մարդով՝
մեռելների յարութիւն: 22 Ինչպէս
Ադամով բոլորը մեռնում են, նոյնպէս
եւ Քրիստոսով ամէնքը պիտի կեն-
դանանան՝ 23 իւրաքանչիւրն իր հեր-
թին. նախ՝ Քրիստոս, եւ ապա՝
քրիստոսականները՝ նրա գալստեանը.
24 եւ ապա գալու է վախճանը, երբ որ
նա տայ թագաւորութիւնը Աստծու եւ
Հօր ձեռքը, երբ որ կործանած լինի
բոլոր իշխանութիւնները եւ ամէն պե-
տութիւն եւ զօրութիւն. 25 որովհետեւ
նա պէտք է թագաւորի, մինչեւ որ
բոլոր թշնամիներին դնի իր ոտքերի
տակ: 26 Վերջին թշնամին, որ պիտի
կործանուի, մահն է. եւ Աստուած
«ամէն ինչ հնազանդեցրեց՝ դնելով
նրա ոտքերի տակ»†: 27 Բայց երբ
ասում է, թէ՝ ամէն ինչ նրան
հնազանդուել է, յայտնի է, թէ բացի
նրանից, ով ամէն ինչ հնազանդեցրեց
նրան: 28 Իսկ երբ ամէն ինչ նրան
հնազանդ լինի, այն ժամանակ եւ
ինքը՝ Որդին կը հնազանդուի նրան, ով
ամէն ինչ հնազանդեցրեց նրան,
որպէսզի Աստուած ամէն ինչ լինի

†Ցուցարէնը անարգ բառի փոխարէն ունի միժած բառը:

†Սաղմոս 8. 7:

ամենքի մէջ:
29 Ապա թէ ոչ, ի՞նչ պիտի անեն
նրանք, որ մկրտուեցին մեռելների
համար, եթէ, արդարեւ, մեռելները
յարութիւն չեն առնում. ինչո՞ւ ուրեմն
մկրտւում են նրանց համար: 30 Ինչո՞ւ
մենք էլ նեղութիւն ենք կրում ամէն
ժամ: 31 Եղբայրնե՛ր, երդւում եմ այն
պարծանքով, որ ունեմ ձեր հանդէպ
մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ ես
մեռնում եմ ամէն օր: 32 Եթէ մարդ-
կա՛նց համար Եփեսոսում գազա-
նամարտի բռնուած լինէի, ինձ ի՞նչ
օգուտ կը լինէր, եթէ մեռելները յարու-
թիւն չեն առնում, «ուտենք, խմենք,
քանզի վաղը մեռնելու ենք»: 33 Մի՛
խաբուէ՛ք. վատ խօսքերը† ապականում
են լաւ բարքերը: 34 Սթափուեցէ՛ք
արդար մարդկանց նման եւ մեղք մի՛
գործէք. որովհետեւ ոմանք չունեն
Աստծու ճանաչումը: Ցամօթ ձեզ եմ
ասում այս:

ՅԱՐՈՒՑԵԱԼՆԵՐԻ ՄԱՐՄԻՆԸ

35 Բայց մէկը կ'ասի՝ ինչպէ՞ս են
յարութիւն առնում մեռելները. կամ՝
ի՞նչ մարմնով պիտի գան: 36 Անմի՛տ,
ինչ որ դու սերմանում ես, չի կեն-
դանանայ, եթէ չմեռնի: 37 Եւ ինչ որ
սերմանում ես, սերմանուածը այն նոյն
մարմինը չէ, որ ծնուելու է, այլ՝ մի
մերկ հատիկ, լինի ցորենի թէ այլ
սերմերի: 38 Եւ Աստուած նրան մար-
մին է տալիս, ինչպէս որ կամենում է.
եւ սերմերից իւրաքանչիւրին՝ իր մար-
մինը: 39 Ամէն մարմին նոյն մարմինը
չէ. այլ է մարմինը մարդկանց եւ այլ է
մարմինը անասունների, այլ է մար-
մինը թռչունների եւ այլ է մարմինը
ձկների: 40 Կան նաեւ երկնաւոր
մարմիններ եւ երկրաւոր մարմիններ.
բայց այլ է փառքը երկնաւորների եւ
այլ է փառքը երկրաւորների, 41 այլ է
փառքը արեգակի, այլ է փառքը լուսնի
եւ այլ է փառքը աստղերի. եւ մի աստղ
փառքով առաւել է, քան մի ուրիշ
աստղ: 42 Այսպէս է նաեւ մեռելների
յարութիւնը. սերմանւում է ապակա-
նութեամբ եւ յարութիւն է առնում
առանց ապականութեան. 43 սերմանւ-
ւում է անարգութեամբ եւ յարութիւն է
առնում փառքով. սերմանւում է
տկարութեամբ եւ յարութիւն է առնում
զօրութեամբ. 44 սերմանւում է շնչաւոր
մարմին եւ յարութիւն է առնում
հոգեւոր մարմին. եթէ կայ շնչաւոր
մարմին, կայ եւ՝ հոգեւոր: 45 Այսպէս
էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը,
եղաւ կենդանի շունչ. վերջին Ադամը՝
կենդանարար հոգի»: 46 Բայց ոչ նախ
հոգեւորը, այլ՝ շնչաւորը եւ ապա՝
հոգեւորը: 47 Առաջին մարդը՝ երկրից,
հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝
երկնքից: 48 Ինչպէս հողեղէնն է,
նոյնպէս եւ հողեղէններն են, եւ ինչ-
պէս երկնաւորը, նոյնպէս եւ՝ երկ-
նաւորները: 49 Եւ ինչպէս որ կրեցինք
հողեղէնի պատկերը, նոյնպէս եւ պիտի
կրենք երկնաւորի պատկերը:
50 Բայց այս եմ ասում, եղբայրնե՛ր,
որ մարմին եւ արիւն Աստծու թա-
գաւորութիւնը ժառանգել չեն կարող.
ոչ էլ ապականութիւնը անապա-
կանութիւն է ժառանգում:
51 Արդ, մի խորհուրդ եմ յայտնում
ձեզ. բոլորս էլ պիտի ննջենք, բայց ոչ
թէ իսկապէս բոլորս†. 52 պիտի նորո-
գուենք յանկարծակի, մի ակնթար-
թում, վերջին փողի ժամանակ, քանզի
փողը պիտի հնչի, եւ մեռելները յա-
րութիւն պիտի առնեն առանց ապա-
կանութեան, եւ մենք պիտի նորո-
գուենք. 53 որովհետեւ պէտք է, որ այս
ապականացու մարմինը անապակա-
նութիւն կրի, եւ այս մահկանացու
գոյութիւնը հագնի անմահութիւն:
54 Եւ երբ այս մահկանացու գոյու-
թիւնը հագնի անմահութիւն, եւ այս
ապականացու մարմինը՝ անապակա-
նութիւն, այն ժամանակ կը կատարուի
այն խօսքը, որ գրուեց.

«Մահը կուլ գնաց յաղթութեան:
55 Ո՞ւր է, մա՛հ, քո յաղթութիւնը,
ո՞ւր է, գերեզման‡, քո խայթոցը»:
56 Մահի խայթոցը մեղքն է, եւ
մեղքի զօրութիւնը՝ օրէնքը: 57 Բայց,

‡Ցուցարէնը խօսքերը բառի փոխարէն ունի ընկերները բառը:

†Ցուցարէնը ունի բոլորս չէ, որ պիտի ննջենք, բայց բոլորս պիտի նորոգուենք:

‡Լաւագոյն յուն. բն. գերեզման բառի փոխարէն ունեն մահ բառը:

գոհութիւն Աստծու, որ տուեց մեզ յաղթութիւնը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

58 Ուրեմն, եղբայրնե՛ր իմ սիրելի, հաստատո՛ւն մնացէ՛ք, անշա՛րժ եղէք, ամէն ժամ աւելի՛ն եղէք Տիրոջ գործի մէջ. իմացէ՛ք, որ ձեր վաստակը ի զուր չէ Տիրոջ առաջ:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՂՋՈՅՆՆԵՐ, ՎԵՐՋԻՆ ՄԱՂԹԱՆՔ

16 Իսկ ինչ վերաբերում է սրբերին տրուող նպաստին, դուք եւս այնպէս արէք, ինչպէս պատուիրեցի Գաղատիայի եկեղեցիներին: 2 Շաբաթուայ իւրաքանչիւր առաջին օրը, ձեզանից իւրաքանչիւր ոք իր համար թող հաւաքի, ինչքան որ յաջողուի իրեն, 3 որպէսզի, երբ գամ, այն ժամանակ նպաստների հանգանակութիւն չլինի: Այլ, երբ գամ, ում որ արդէն յարմար էք համարել, գրութիւններով դրանց կ՚ուղարկեմ՝ ձեր ընծաները տանելու Երուսաղէմ: 4 Իսկ եթէ պէտք լինի, որ ես էլ գնամ, թող ինձ հետ գան: 5 Ձեզ մօտ կը գամ, երբ անցնեմ Մակեդոնիայով (քանզի Մակեդոնիայով պիտի անցնեմ միայն). 6 եւ եթէ յարմար լինի, ձեզ մօտ կը մնամ կամ կը ձմեռեմ, որ դուք ճանապարհ դնէք ինձ, ուր էլ գնալու լինեմ. 7 որովհետեւ չեմ ուզում ձեզ հիմա հարեւանցի տեսնել. յոյս ունեմ մի որոշ ժամանակ մնալ ձեզ մօտ, եթէ Տէրը կամենայ: 8 Բայց այժմ կը մնամ Եփեսոսում մինչեւ Պենտեկոստէի օրը. 9 քանի որ ինձ համար աշխատանքի մեծ եւ կարեւոր դուռ է բացուած, իսկ հակառակորդները շատ են:

10 Արդ, եթէ Տիմոթէոսը գայ, տեսէք, որ աներկիւղ լինի ձեր մէջ, որովհետեւ Տիրոջ գործն է անում, ինչպէս ինքս էլ: 11 Ոչ ոք նրան թող չարհամարհի. եւ նրան ճանապա՛րհ դրէք խաղաղութեամբ, որ գայ ինձ մօտ, քանզի սպասում եմ նրան եղբայրներով հանդերձ: 12 Ինչ վերաբերում է եղբայր Ապողոսին, շատ խնդրեցի նրան, որ գայ ձեզ մօտ եղբայրներով հանդերձ. բայց, արդարեւ, ցանկութիւն չունի, որ այժմ գայ, այլ կը գայ, երբ յարմար ժամանակ գտնի:

13 Արթո՛ւն կացէք, հաստատո՛ւն մնացէք հաւատի մէջ, քա՛ջ եղէք, զօրացէ՛ք: 14 Ձեր ամէն ինչը սիրով թող լինի:

15 Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, գիտէք Ստեփանոսի եւ Փորտունատոսի ընտանիքը, որոնք Աքայիա նահանգի առաջին պտուղներն են եւ իրենց նուիրեցին սրբերի ծառայութեանը: 16 Դուք էլ հնազա՛նդ եղէք այդպիսիներին եւ ամէն մէկին, որ գործակից եւ ծառայակից է նրանց: 17 Ուրախացայ, որ Ստեփանոսը, Փորտունատոսը եւ Աքայիկոսը եկան, որովհետեւ ձեր պակասութիւնը նրանք լցրին. 18 քանզի հանգստացրին իմ հոգին եւ ձերը: Արդ, գնահատեցէ՛ք այդպիսիներին:

19 Ձեզ ողջունում են Ասիայի եկեղեցիները: Մեծապէս ողջունում են ձեզ ի Տէր Ակիւղասը եւ Պրիսկիլան իրենց տան մէջ եղող եկեղեցիով հանդերձ: 20 Ձեզ ողջունում են բոլոր եղբայրները: Ողջո՛յն տուէք միմեանց սուրբ համբոյրով:

21 Այս ողջոյնի գիրը իմ ձեռքինն է՝ Պողոսինը: 22 Եթէ մէկը չի սիրում Տէր Յիսուսին, նզովեալ թող լինի. Մարան աթա†: 23 Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ լինի: 24 Եւ իմ սէրը ձեզ ամենքիդ հետ ի Քրիստոս Յիսուս: Ամէն:

†Արամերէն նշանակում է՝ Տէրը շուտով կը գայ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Այս երկրորդ թղթում ի յայտ են գալիս շատ աւելի լարուած յարաբերութիւններ Պօղոս առաքեալի եւ Կորնթոսի քրիստոնեաների միջեւ: Նրանցից ոմանք լրջօրէն վիրաւորել էին նրան եւ նոյնիսկ կասկածի տակ էին առնում նրա առաքեալ լինելու օրինաւորութիւնն ու հեղինակութիւնը: Պօղոսը ուժգնօրէն հարկադրւում էր նրանց, սակայն չհրաժարուելով իր սէրն արտայայտել կորնթացիների նկատմամբ եւ իր անկեղծ ցանկութիւնը՝ հաշտուելու նրանց հետ: Նա իր ուրախութիւնն էր յայտնում ամէն անգամ, երբ լաւագոյն լուրեր էր ստանում Կորնթոսից:

Յիշատակելուց յետոյ այն լուրջ վտանգները, որ անձնապէս ստիպուած է եղել դիմագրաւել Եփեսոսում, նա յիշեցնում է նաեւ այն դժուարութիւնները, որոնց հանդիպել է կորնթացիների հետ իր յարաբերութիւնների ընթացքում՝ ընդգծելով Յիսուս Քրիստոսի առաքեալի պարտականութեան կարեւորութիւնը: Այսպիսով նա բացատրում է, թէ ինչու ինքը ստիպուած է եղել խստութիւն ցուցաբերել իր նախորդ թղթում եւ իր ուրախութիւնն է արտայայտում, որ այդ խստութիւնը տուել է դրական արդիւնք:

Յուդայի երկրի քրիստոնեաների համար կատարուող մի նուիրատուութեան առիթով նա կորնթացիներին կոչ է անում լինել առատաձեռն, որովհետեւ, ասում է նա, «դուք գիտէք շնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի. նա, որ հարուստ էր, ձեզ համար աղքատացաւ, որպէսզի դուք նրա աղքատութեամբ հարստանաք»:

Թղթի շարունակութեան մէջ զգացւում է շարադրանքի շեշտի յստակ փոփոխութիւն. Պօղոսը խստօրէն դատապարտում է նրանց, ովքեր մեղադրում են իրեն, որ ճշմարիտ առաքեալ չէ: Թուղթն աւարտւում է եղբայրական, բայց համառօտ մի եզրակացութեամբ:

Այս թղթի անձնական եւ երբեմն էլ կրքոտ ու խիստ շեշտը մեզ չպէտք է յանգեցնի սխալ եզրակացութեան. Պօղոս առաքեալը չի ձգտում պաշտպանել իր սեփական անձը եւ ոչ էլ անձնական մի տեսակէտ, որին կարող էր առանձնապէս կապուած լինել: Եթէ նա այդքան վճռականօրէն պայքարում է ճանաչել տալու համար առաքեալի իր հեղինակութիւնը, ապա դա նրա համար է, որ Աւետարանն ամբողջապէս ընդունուի, եւ Քրիստոսը իրապէս ճանաչուի որպէս Տէր:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստծու կամքով, եւ Տիմոթէոս եղբայրը, Կորնթոսում գտնուող Աստծու եկեղեցուն, Աքայիայի բոլոր կողմերում եղող բոլոր սրբերով հանդերձ. 2 շնո՛րհ ընդ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:

3 Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Հայրը գթութիւնների եւ Աստուած ամենայն մխիթարութեան, 4 որ մխիթարում է մեզ մեր բոլոր նեղութիւնների մէջ, որպէսզի մենք էլ կարող լինենք մխիթարելու նրանց, որոնք ամէն տեսակ նեղութիւնների մէջ են, այն մխիթարութեամբ, որով մենք ենք մխիթարւում Աստծուց. 5 որովհետեւ ինչքան որ շատ բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, նոյնքան եւ Քրիստոսի միջոցով մեր մխիթարութիւնն էլ առաւել կը լինի. 6 քանզի, եթէ նեղութիւն ենք կրում, այդ՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: Եւ եթէ մխիթարւում ենք, այդ՝ ձեր այն մխիթարութեան համար է, որ համբերութեամբ կրել է տալիս այն չարչարանքները, որոնցով եւ մենք ենք չարչարւում: 7 Եւ ձեր հանդէպ մեր յոյսը հաստատուն է, քանզի գիտենք, որ մասնակից էք ինչպէս չարչարանքներին, այնպէս էլ մխիթարութեանը. 8 որովհետեւ, եղբայրնե՛ր, ուզում եմ, որ դուք գիտենաք Ասիայում մեզ պատահած այն նեղութեան մասին, որը մեր կարողութիւնից աւելի ծանր տարանք, մինչեւ իսկ կեանքից մեր յոյսը կտրելու աստիճան. 9 եւ մենք մեր անձի վրայ իսկ կրեցինք մահուան վճիռը, որպէսզի մենք չապաւինենք մեզ, այլ՝ Աստծուն, որ յարութիւն է տալիս մեռելներին, 10 որ այդպիսի մահուանից փրկեց մեզ եւ կը փրկի. 11 քանզի յոյս ունենք, թէ դեռ պիտի փրկի՝ մեզ համար ձեր արած աղօթքների օգնութեամբ, որպէսզի շատեր այդ աղօթքների միջոցով առատօրէն մեզ տրուած շնորհները տեսնելով՝ գոհութիւն տան Աստծուն մեզ համար:

ՊՕՂՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

12 Քանզի մեր պարծանքն այս է. մեր խղճմտանքի վկայութիւնը. այն՝ որ սրբութեամբ ու Աստծու ճշմարտութեամբ եւ ոչ մարմնաւոր իմաստութեամբ, այլ Աստծու շնորհով ենք ընթացել աշխարհում, իսկ առաւել եւս՝ ձեր հանդէպ. 13 որովհետեւ ձեզ այլ բան չենք գրում, քան այն, ինչ կարդում եւ հասկանում էք. եւ յոյս ունեմ, թէ մինչեւ վերջը կը հասկանաք, 14 ինչպէս որ փոքրիշատէ հասկացաք նաեւ մեզ, որ ձեր պարծանքն ենք, ինչպէս եւ դուք՝ մերը՝ մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը:

15 Եւ այս վստահութեամբ էի կամենում նախ գալ ձեզ մօտ, որպէսզի դուք կրկին շնորհ ընդունէք, 16 եւ ձեզնից գնալ Մակեդոնիա ու վերադառնալով Մակեդոնիայից՝ գալ ձեզ մօտ եւ ձեր կողմից ճանապարհ դրուել դէպի Հրէաստան: 17 Իսկ եթէ այս բանը մտածեցի, միթէ փոփոխամտութեա՞մբ վարուեցի. եւ կամ՝ ինչ որ մտածում եմ, մարդկայի՞ն շարժառիթներով եմ մտածում, այնպէս որ իմ կողմից թող այո՛ն լինի այո, եւ ոչը՝ ոչ: 18 Վկայ է Աստուած, որ ձեզ հասած մեր խօսքը այո եւ ոչ չէ միաժամանակ. 19 քանզի Աստծու Որդին՝ Յիսուս Քրիստոս, որ քարոզուեց ձեր մէջ մեր միջոցով՝ իմ, Սիղուանոսի եւ Տիմոթէոսի, չեղաւ թէ՛ այո եւ թէ՛ ոչ, այլ Նա «այո՛ն» եղաւ Աստծու. 20 որովհետեւ Աստծու այնչա՛փ խոստումները այո՛ն եղան Նրա մէջ. դրա համար էլ Նրանով է, որ ասում ենք ԱՄԷՆ՝ Աստծու փառքի համար: 21 Եւ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին եւ օծեց մեզ, Աստուած է, 22 որ մեզ կնքեց էլ եւ Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ:

23 Եւ ես Աստծուն եմ վկայ կանչում իմ անձի համար, որ ձեզ խնայելու համար է, որ այլեւս չեկայ Կորնթոս. եւ ձեր հաւատի վրայ չենք իշխում, այլ գործակից ենք ձեր այդ շնորհներին†, քանի որ հաւատով հաստատուն էք:

2 Բայց այս բանը որոշեցի, որ ուրիշ անգամ տրտմութեամբ ձեզ մօտ չգամ. 2 որովհետեւ, եթէ ե՛ս տրտմեցնեմ ձեզ, էլ ո՞վ է, որ կ'ուրախացնի ինձ, եթէ ոչ նրանք, որոնց տրտմութիւն պատճառեցի ես: 3 Եւ այն, ինչ գրեցի, գրեցի նրա համար, որ, երբ գամ, տրտմութիւն չկրեմ այնտեղից, որտեղ պէտք է, որ ես ուրախանայի. վստահ եմ ձեր բոլորի վրայ, որ իմ ուրախութիւնը ձեր բոլորինն է. 4 որովհետեւ բազում վշտերի եւ սրտի նեղութեան պատճառով ձեզ գրեցի առատ արտասուքներով, ոչ որպէսզի տրտմէք, այլ իմանաք իմ սէրը, որն ունեմ առաւել չափով ձեր հանդէպ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

5 Իսկ եթէ մէկը տրտմեցրեց, ոչ թէ միայն ինձ տրտմեցրեց, այլ, որպէսզի չչափազանցեմ, որոշ չափով նաեւ՝ ձեզ բոլորիդ: 6 Այնպիսի մէկի համար բաւական է այն պատիժը, որը տրուեց շատերից. 7 այնպէս որ, դրան հակառակ, դուք պէտք է ներէք նրան եւ մխիթարէք, որպէսզի չափազանց տրտմութիւնից չխորտակուի նա: 8 Ուստի, աղաչում եմ ձեզ նրա հանդէպ վերստին սէ՛ր ցոյց տալ: 9 Հէնց դրա համար էլ գրեցի, որպէսզի ձեզ փորձեմ, թէ ամէն ինչում հնազա՞նդ էք, 10 որովհետեւ, եթէ մէկին ներէք, ես էլ կը ներեմ, քանի որ, եթէ ներեմ, ինչ որ ներեմ, ձեզ համար է՝ ի դէմս Քրիստոսի, 11 որպէսզի չլինի, թէ Սատանան առաւելութիւն ունենայ մեր վրայ, քանզի անտեղեակ չենք նրա մտադրութիւններին:

ՊՕՂՈՍԻ ԱՆՁԿՈՒԹԻՒՆԸ ՏՐՈՎԱԴԱՅՈՒՄ

12 Երբ ես հասայ Տրովադա Քրիստոսի Աւետարանի քարոզութեան համար, գտայ, որ ինձ համար դուռը բաց էր ի Տէր, 13 բայց իմ հոգում հանգիստ չունեցայ. եւ որովհետեւ ես այնտեղ չգտայ իմ եղբօրը՝ Տիտոսին, ուստի, հրաժեշտ տալով նրանց, գնացի Մակեդոնիա:

ՅԱՂԹԱՆԱԿ ՔՐԻՍՏՈՍՈՎ

14 Արդ, գոհութիւն Աստծու, որ Քրիստոս Յիսուսով մեզ միշտ յաղթութեան է տանում եւ իր գիտութեան բուրմունքը մեզնով սփռում է ամէն տեղ, 15 քանի որ Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ՝ ե՛ւ փրկուածների մէջ, ե՛ւ կորստեան մատնուածների մէջ. 16 ոմանց՝ մահուան հոտ, որ տանում է դէպի մահ եւ ոմանց՝ կենդանութեան բոյր, որ տանում է դէպի կեանք: Եւ ո՞վ է կարող այս բանն անել. 17 քանզի նման չենք ուրիշների, որ Աստծու խօսքի վաճառքով են զբաղւում, այլ, իբրեւ անկեղծ մարդիկ, իբրեւ Աստծու կողմից ուղարկուածներ, խօսում ենք Քրիստոսով Աստծու առաջ:

ՆՈՐ ՈՒԽՏԻ ՊԱՇՏՕՆԵԱՆ

3 Այսպէս, վերստին սկսենք մենք մեզ յանձնարարել. թէպէտեւ մեզ, ինչպէս ոմանց, պէտք չեն յանձնարարական թղթեր՝ ներկայացնելու ձեզ եւ կամ՝ պահանջելու ձեզնից. 2 այլ մեր թղթերը դուք էք՝ գրուած մեր սրտերում, ճանաչուած եւ կարդացուած բոլոր մարդկանցից: 3 Յայտնի էք որպէս Քրիստոսի թղթեր՝ մեզնից հոգացուած եւ գրուած ոչ թէ թանաքով, այլ կենդանի Աստծու Հոգով, ոչ թէ քարեղէն տախտակների վրայ, այլ սրտի մարմնեղէն տախտակների վրայ:

4 Այսպիսի մի վստահութիւն ունենք առ Աստուած՝ Քրիստոսի միջոցով. 5 մենք անձամբ մեզնից որեւէ բան խորհելու կարող չենք, այլ Աստծուց է մեր կարողութիւնը, 6 որը եւ կարող դարձրեց մեզ նոր Ուխտի պաշտօնեաներ լինելու՝ ոչ թէ գրով, այլ հոգով, քանի որ օրէնքը, որ գիր է, սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում: 7 Արդ, եթէ քարեղէն տախտակների վրայ գրով դրոշմուած

†Յունարէնը ունի ձեր ուրախութեան:

մահուան ծառայող օրէնքը տրուեց այնպիսի փառքով, որ իսրայէլացիները չկարողացան նայել Մովսէսի երեսին՝ նրա երեսից ճառագայթող փառքի պատճառով, որ վաղանցուկ էր, 8 որ-չա՞փ եւս առաւել հոգու ծառայութիւնը փառքով կը լինի. 9 արդարեւ, եթէ օրէնքը, որ դատապարտելու պաշտօնն ունէր, փառաւոր էր, որչա՞փ եւս առաւել փառաւոր կը լինի հոգին, որ արդարացնելու պաշտօն ունի. 10 քանի որ այն, որ փառաւոր էր, անփառունակ դարձաւ նրա՛ առաջ, որի փառքը գերազանց էր. 11 որովհետեւ, եթէ, ինչ որ վաղանցուկ էր, տրուեց փառքով, որչա՞փ եւս առաւել փառաւոր կը լինի այն, որ գալու էր: 12 Եւ արդ, քանի որ այսպիսի յոյս ունենք, մեծ համարձակութիւն ենք ունենում մեր վարմունքի մէջ. 13 եւ ոչ Մովսէսի նման, որ քող էր գցում իր երեսին, որպէսզի իսրայէլացիները չտեսնեն այն փառքը, որ վաղանցուկ էր: 14 Բայց նրանց միտքը կուրացաւ. քանի որ մինչեւ այսօր նոյն քողը ձգուած մնում է Հին Կտակարանի ընթերցուածների վրայ եւ չի վերանում, որովհետեւ Քրիստոսի միջոցով է վերացուելու: 15 Եւ մինչեւ այսօր, երբ Մովսէս են կարդում, նոյն վարագոյրը մնում է նրանց սրտերի վրայ: 16 Իսկ երբ դառնան Տիրոջը, ապա վարագոյրը կը վերացուի, 17 որովհետեւ Տէրն ինքը Հոգին է. ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է: 18 Եւ մենք բոլորս բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը ինչպէս հայելու մէջ, նոյն պատկերով ենք նորոգւում փառքից փառք, որպէս թէ Տիրոջ Հոգով:

ՀՈԳԵՒՈՐ ԳԱՆՁ ԿԱՒԻԷ ԱՆՕՔՆԵՐԻ ՄԷՋ

4 Քանի որ ունենք այս պաշտօնը Աստծու ողորմութեամբ, չենք տկարանում. 2 այլ հրաժարուեցինք ամօթալի խորհուրդներից, որպէսզի խորամանկութեամբ չընթանանք եւ Աստծու խօսքը չենեղափոխենք, այլ ճշմարտութիւնը յայտնելով՝ մենք մեզ յանձնում ենք բոլոր մարդկանց խղճմտանքին՝ Աստծու առաջ: 3 Եւ եթէ մեր Աւետարանը ծածկուած իսկ է, ծածկուած է կորստեա՛ն մատնուածների համար, 4 որոնց՝ այդ անհաւատների մտքերը այս աշխարհի աստուածը կուրացրեց, որպէսզի նրանց մէջ չծագի Քրիստոսի Աւետարանի փառքի լոյսը, Քրիստոսի, որ պատկերն է աներեւոյթ Աստծու: 5 Ոչ թէ մենք մեզ ենք քարոզում, այլ՝ Յիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, իսկ մեզ՝ որպէս ծառաներ ձեզ՝ Քրիստոսի համար. 6 որովհետեւ Աստուած է, որ ասաց. «Խաւարից թող լոյս ծագի». եւ նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտութեան լոյսը, որը ճառագայթում է Յիսուս Քրիստոսի դէմքից:

7 Այսուհետեւ այս գանձերն ունենք կաւէ ամանների մէջ, որպէսզի զօրութեան գերազանցութիւնը Աստծուց լինի եւ ոչ մեզնից: 8 Ամէն կողմից ճնշուած, բայց ոչ ընկճուած, կարօտեալ, բայց ոչ յուսահատ, 9 հալածուած, բայց ոչ լքուած, չարչարուած, բայց ոչ մեռած: 10 Ամէն ժամ մեր մարմինների մէջ կրում ենք Յիսուսի մահը, որպէսզի Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մարմինների մէջ. 11 քանզի, քանի դեռ կենդանի ենք, միշտ մահուան ենք մատնւում Յիսուսի համար, որպէսզի Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մահկանացու մարմինների մէջ: 12 Այնպէս որ, մահը զօրանում է մեր մէջ, իսկ կեանքը՝ ձեր մէջ: 13 Արդ, հաւատի նոյն հոգին ունենք, ինչպէս գրուած էլ է. «Հաւատացի, դրա համար էլ խօսեցի»: Եւ մենք հաւատում ենք, դրա համար էլ խօսում ենք: 14 Այս գիտենք, թէ նա, ով յարութիւն տուեց Յիսուսին, մեզ էլ յարութիւն կը տայ Յիսուսի հետ եւ ձեզ հետ միասին կը կանգնեցնի իր առաջ. 15 քանզի ամէն ինչ ձեզ համար է, որպէսզի շատերի գոհութեամբ առատացած շնորհը աւելանայ ի փառս Աստծու:

ԱՊՐԵԼ ՀԱՒԱՏՈՎ

16 Դրա համար էլ չենք տկարանում. այլ, թէպէտեւ մեր այս արտաքին մարդը քայքայւում է, բայց մեր

ներքին մարդը նորոգւում է օրըստօրէ. 17 որովհետեւ մեր թեթեւ նեղութեան առժամանակեայ յաճախանքը մեր մէջ առաջ է բերում յաւիտենական փառք, որ գերազանցում է ամէն ինչ. 18 քանզի չենք նայում տեսանելի բաներին, այլ՝ անտեսանելիներին, որովհետեւ տեսանելիները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները՝ յաւիտենական:

5 Քանզի գիտենք, որ, եթէ մեր այս հողեղէն տունը, որ մեր մարմինն է, աւերուի, Աստծուց շինուած անձեռակերտ յաւիտենական տուն ունենք երկնքում: 2 Եւ այս մարմնի մէջ հառաչում ենք, որովհետեւ փափագում ենք երկնքի բնակութիւնը հագնել: 3 Միայն թէ, երբ այն հագնենք, մերկ չլինենք. 4 քանի որ, մինչ այս հողեղէն տան մէջ ենք, հառաչում ենք ծանր բեռան տակ, որովհետեւ չենք ուզում մերկանալ այս մարմնից, այլ՝ երկնային հագնել սրա վրայ, որպէսզի, ինչ որ մահկանացու է, կլանուի կեանքից: 5 Եւ Աստուած է, որ մեզ պատրաստում է այս փոփոխութեանը, նա, որ տուեց մեզ Հոգու առհաւատչեան:

6 Արդ, ամէն ժամ քաջութիւն ունենք եւ գիտենք, որ ինչքան երկար մնանք այս մարմնի մէջ, օտարանում ենք Տիրոջից 7 (որովհետեւ հաւատով ենք ընթանում եւ ոչ թէ երեւոյթների վրայ հիմնուած): 8 Եւ վստահութիւն ունենք ու առաւել եւս հաճելի է մեզ դուրս գալ այս մարմնից եւ մտնել Աստծու մօտ: 9 Ուստի հոգ ենք տանում, որ, մնանք թէ դուրս գանք, հաճելի լինենք միայն նրան. 10 քանզի մենք բոլորս Քրիստոսի ատեանի առաջ պիտի ներկայանանք, որպէսզի իւրաքանչիւրն ստանայ, ինչ որ արել է աւելի առաջ իր մարմնով՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար:

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

11 Իսկ արդ, գիտենալով Տիրոջ երկիւղի չափը՝ ջանում ենք համոզել մարդկանց. սակայն յայտնի ենք Աստծու առաջ. եւ ես յոյս ունեմ, որ ձեր խղճմտանքի առաջ էլ յայտնի կը լինենք: 12 Ոչ թէ մենք մեզ կրկին ենք յանձնարարում ձեզ, այլ առիթ ենք տալիս ձեզ՝ մեզնով պարծենալու համար, որպէսզի պատասխան ունենաք նրանց դէմ, որոնք աչքին երեւացածով են պարծենում եւ ոչ թէ սրտում եղածով. 13 որովհետեւ, եթէ մենք ցնորուել ենք էլ, Աստծու համար է այն. եւ եթէ զգաստ ենք, ձեզ համար է այն. 14 որովհետեւ Քրիստոսի սէրն ստիպում է մեզ քննելու† այս բանը, որ, եթէ մէկը բոլորի փոխարէն մեռաւ, ապա ուրեմն բոլորը մեռած էին. 15 եւ նա մեռաւ բոլորի համար, որպէսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն, այլեւ նրա համար, ով մեռաւ եւ յարութիւն առաւ իրենց համար: 16 Այսուհետեւ մենք ոչ ոքի չենք ճանաչում ըստ մարմնի. որովհետեւ, թէպէտեւ ըստ մարմնի ճանաչում էինք Քրիստոսին, բայց այժմ այլեւս նոյն ձեւով չենք ճանաչում: 17 Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է. որովհետեւ հինն անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ‡: 18 Եւ ամէն ինչ Աստծուց է, որ հաշտեցրեց մեզ իր հետ, Քրիստոսի միջոցով, եւ մեզ տուեց հաշտութեան պաշտօնը:

19 Քանզի Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհը հաշտեցրեց իր հետ եւ հաշուի չառաւ նրանց մեղքերը ու տուեց մեզ հաշտութեան խօսքը: 20 Արդ, պատգամաւորներ ենք Քրիստոսի, որպէս թէ ինքն Աստուած մեզնով կոչ ուղղէր ձեզ. աղաչում ենք յանուն Քրիստոսի, որ հաշտուէք Աստծու հետ. 21 որովհետեւ նրան, ով մեղքը չէր ճանաչել, Աստուած մեզ համար մեղաւոր արեց, որպէսզի մենք նրանո՛վ Աստծու արդարները լինենք:

6 Ուստի, Աստծուն գործակից լինելով՝ աղաչում ենք, որ դուք Աստծու շնորհն ի զուր ընդունած չլինէք. 2 որովհետեւ ասում է.

†Յունարէնը բնել բառի փոխարէն ունի համոզուել բառը:

‡Յուն. լաւ բն. ունեն եւ ահա նորը եկաւ:

«Ընդունելի ժամանակում լսեցի քեզ
եւ փրկութեան օրում օգնեցի քեզ»†:

Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը: 3 *Եւ ոչ մի առիթով պատճառ մի՛ եղէք, որ մեր պաշտօնը չարատաւորուի.* 4 *այլ, բոլոր դէպքերում, դուք ձեզ‡ ներկայացրէ՛ք իբրեւ Աստծու պաշտօնեաներ՝ ցոյց տալով մեծ համբերութիւն նեղութիւնների մէջ, վշտերի մէջ, չարչարանքների մէջ,* 5 *հարուածների տակ, բանտերում, խռովութիւնների մէջ, տքնութիւնների մէջ, հսկումների մէջ, ծոմապահութեան մէջ,* 6 *սրբութեամբ, գիտութեամբ, համբերութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգով, անկեղծ սիրով,* 7 *ճշմարտութեան խօսքով, Աստծու զօրութեամբ, արդարութեան զէնքով՝ յարձակուելու եւ պաշտպանուելու համար,* 8 *փառքով եւ անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանքով, իբրեւ թէ մոլորեցնողներ, բայց ճշմարտութիւնից չշեղուածներ,* 9 *իբրեւ թէ անծանօթներ, բայց բոլորից ճանաչուածներ, իբրեւ թէ մահամերձներ, բայց եւ ահաւասիկ կենդանի ենք, իբրեւ թէ պատժուածներ, բայց ոչ մահապարտներ,* 10 *իբրեւ թէ տրտմածներ, բայց եւ շարունակ ուրախ ենք, իբրեւ թէ տնանկներ, բայց եւ շատերին ենք հարստացնում, իբրեւ թէ ոչինչ չունենք, բայց՝ ունենք ամէն ինչ:*

11 *Կորնթացիներ՛ը, մեր բերանները բաց են պատգամելու համար ձեզ, եւ մեր սրտերը՝ լայն:* 12 *Մենք չէ՛, որ նեղում ենք ձեզ, այլ դուք ձեր սրտերում էք նեղւում:* 13 *Արդ, դուք էլ նոյն հատուցումն անելով, – որդիների տեղ եմ դնում ձեզ, – լայնօրէն բա՛ց արէք ձեր սրտերը:*

ՉԳՈՒՇԱՑՈՒՄ ԿՌԱՎԱՇՏՈՒԹԻՒՆԻՑ

14 *Անհաւատներին լծակից մի՛ եղէք, որովհետեւ ի՞նչ կապ ունի արդարութիւնը անօրէնութեան հետ. եւ կամ ի՞նչ յարաբերութիւն լոյսի եւ խաւարի միջեւ.* 15 *եւ կամ ի՞նչ միաբանութիւն Քրիստոսի եւ Բելիարի միջեւ. կամ ի՞նչ առնչութիւն ունի հաւատացեալը անհաւատի հետ.* 16 *կամ ի՞նչ նմանութիւն ունի Աստծու տաճարը մեհեանների հետ: Արդարեւ, կենդանի Աստծու տաճար էք դուք, ինչպէս ասաց Աստուած.*

«Պիտի բնակուեմ նրանց մէջ ու պիտի ընթանամ նրանց միջով
եւ նրանց Աստուածը պիտի լինեմ,
եւ նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը:
17 Դրա համար դո՛ւրս եկէք նրանց միջից
եւ հեռո՛ւ մնացէք,- ասում է Տէրը,-
եւ մի՛ դիպէք պիղծ բաներին.
18 եւ ես պիտի ընդունեմ ձեզ.
եւ ես պիտի լինեմ ձեզ համար հայր.
եւ դուք պիտի լինէք ինձ համար որդիներ եւ դուստրեր»,-
ասում է Ամենակալ Տէրը:

ՊՕՂՈՍԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԶՂՋՄԱՆ ԱՌԻԹՈՎ

7 *Սիրելինե՛ր, եւ որովհետեւ այս խոստումն ունենք, մաքրենք մենք մեզ մարմնի եւ հոգու ամէն պղծութիւնից, կատարեալ դարձնենք սրբութիւնը Աստծու երկիւղով:* 2 *Հանդուրժեցէ՛ք մեզ, որովհետեւ ոչ ոքի չվնասեցինք, ոչ ոքի չապականեցինք եւ ոչ ոքի չզրկեցինք:* 3 *Ձեզ դատապարտելու համար չեմ ասում, քանի որ առաջ էլ ասացի, թէ մեր սրտերում էք՝ լինի ձեզ հետ մեռնելու թէ ապրելու համար:*

4 *Մեծ վստահութիւն ունեմ ձեր հանդէպ. մեծապէս հպարտ եմ ձեզնով. լի եմ մխիթարութեամբ. մեր բոլոր նեղութիւնների մէջ լցուած եմ ուրախութեամբ.* 5 *որովհետեւ, երբ մենք Մակեդոնիա հասանք, ոչ մի բանով հանգիստ չունեցանք, այլ ամէն կողմից նեղութիւն կրեցինք, քանի որ դրսից պայքարներ էին, իսկ ներսից՝ արհաւիրքներ:* 6 *Բայց Աստուած, որ մխիթարում է խոնարհներին, մխիթարեց մեզ Տիտոսի գալով.* 7 *ոչ միայն նրա գալով, այլեւ այն մխիթարութեամբ, որով մխիթարուել էր նա ձեզ մօտ՝ պատմելով մեզ ձեր տենչանքը, ձեր լացուկոծը, ձեր նախանձախնդրութիւնը իմ հանդէպ, այնպէս որ ես է՛լ աւելի ուրախ եղայ:* 8 *Եւ եթէ ձեզ տխրեցրի էլ այդ թղթով, չեմ զղջում դրա համար, թէպէտեւ զղջացել էի. որովհետեւ տեսնում եմ, որ այդ թուղթը առժամանակ տխրեցրել է ձեզ:* 9 *Արդ, ուրախ եմ. ոչ որովհետեւ տրտմեցիք, այլ որովհետեւ ապաշխարութեան համար տրտմեցիք, քանի որ ըստ Աստծու ուզածի տրտմեցիք, այնպէս որ մեզնից ոչ մի բանով վնաս չկրեցիք.* 10 *որովհետեւ տրտմութիւնը, ըստ Աստծու ուզածի, ապաշխարութիւն է առաջ բերում փրկութեան համար, որը զղջում չի պատճառում. իսկ աշխարհի տրտմութիւնը մահ է առաջ բերում:* 11 *Արդ, քանի որ ըստ Աստծու ուզածի տրտմեցիք, այդ բանը ի՞նչ փութկոտութիւն արթնացրեց մեր մէջ, կամ ի՞նչ արդարացում կամ սաստ կամ երկիւղ կամ տենչանք կամ նախանձախնդրութիւն կամ վրէժխնդրութիւն. արդարեւ ամէն ինչում դուք ձեզ ցոյց տուիք, թէ մաքուր էք այդ հարցում:* 12 *Ապա ուրեմն, եթէ ես ձեզ գրեցի էլ, չգրեցի զրկանք պատճառողի եւ ոչ էլ զրկանք կրողի համար, այլ որպէսզի յայտնի լինի Աստծու առաջ մեր նկատմամբ ձեր ունեցած հոգածութիւնը:* 13 *Ահա թէ ինչու մխիթարուած ենք: Մեր մխիթարութեան վրայ առաւել եւս ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, քանզի նրա հոգին ձեզնից՝ բոլորիդ հանգիստ էր գտել:* 14 *Եւ եթէ ձեզանով մի փոքր պարծեցայ նրա առաջ, չամաչեցի. այլ, ինչպէս ամէն ինչ ճշմարտութեամբ խօսեցինք ձեզ հետ, նոյնպէս եւ Տիտոսի առաջ մեր պարծանքը ճշմարիտ եղաւ:* 15 *Եւ նրա գորովանքը առաւել մեծ է ձեր հանդէպ, երբ յիշեցնում էր† մեզ բոլորի հնազանդութիւնը, թէ ինչպէս երկիւղով եւ դողով էք ընդունել նրան:* 16 *Եւ արդ, ուրախ եմ, որ ամէն ինչում վստահութիւն ունեմ ձեր վրայ:*

ՏԱԼ ԱՌԱՏԱՁԵՌՆՕՐԷՆ

8 *Եղբայրնե՛ր, ձեզ ցոյց եմ տալիս Աստծու այն շնորհը, որ տրուած է Մակեդոնիայի եկեղեցիներին.* 2 *որովհետեւ, հակառակ իրենց կրած նեղութեանն ու մեծ փորձութեանը, նրանց ուրախութիւնն անսահման եղաւ, եւ իրենց ծանր աղքատութեան մէջ նրանք մեծ առատաձեռնութիւն ցուցաբերեցին.* 3 *քանզի իրենց կարողութեան համեմատ եւ նոյնիսկ իրենց կարողութիւնից էլ աւելի յօժար կամքով իրենց տուածի մասին եմ վկայում.* 4 *բազում աղաչանքներով աղաչում էին, որ մեզ տան այն ընծաները եւ պաշտօնի մասնակցութիւնը, որ սրբերի համար է:* 5 *Եւ ոչ միայն այնչափ, որչափ ակնկալում էինք, այլ իրենք իրենց եւս նուիրեցին՝ նախ Տիրոջը եւ ապա մեզ՝ Աստծու կամքով:* 6 *Աղաչեցինք Տիտոսին, որ, ինչպէս սկսել էր աւելի առաջ, նոյն ձեւով եւ աւարտին հասցնի ձեր մէջ այդ շնորհը եւս:* 7 *Եւ ինչպէս ամէն ինչում հարուստ էք հաւատով, խօսքով, գիտութեամբ, ամենայն փութաջանութեամբ եւ այն սիրով, որ կայ ձեր մէջ մեր հանդէպ, նայեցէք, որ այդ շնորհի մէջ էլ հարուստ լինէք:* 8 *Հրաման տալով չէ, որ ասում եմ, այլ ուրիշների փութաջանութիւնը տեսնելով՝ ձեր սիրոյ անկեղծութիւնն եմ փորձում,* 9 *քանզի գիտէք շնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացաւ, նա, որ հարուստ էր, որպէսզի դուք նրա աղքատութեամբ հարստանաք:* 10 *Եւ այս բանի վրայ մի խրատ եմ տալիս, քանի որ դա ձեր օգտի համար է. դուք, որ առաջինը սկսեցիք ոչ միայն անել այդ գործը, այլեւ այն կամենալ դեռեւս անցեալ տարուանից:* 11 *Բայց արդ, աւարտի՛ն հասցրէք այն, որովհետեւ ինչպիսի յօժար կամքով որ սկսեցիք, կատարեցէ՛ք այն ձեր ունեցուածքի չափով.* 12 *քանզի, եթէ առաջուց յօժարութիւնը կայ, տրուածը ընդունելի է ըստ տուողի ունեցածի եւ ոչ թէ ըստ չունեցածի.* 13 *ոչ թէ ուրիշներին հանգստութիւն եմ կամենում, իսկ ձեզ՝ նեղութիւն, այլ թող լինի հաւասարութեամբ.* 14 *ներկայ դէպքում ձեր առատութիւնը թող լցնի նրանց պակասութիւնը, որ նրանց առատութիւնն էլ լցնի ձեր պակասութիւնը, որպէսզի հաւասարութիւն*

†Եսայի 49. 8:

‡Յունարէնը ձեզ բառի փոխարէն ունի մեզ:

†Յունարէնը՝ երբ յիշում էր:

լինի.՝ 15 ինչպէս գրուած էլ է, թէ՝
«Ով շատը հաւաքեց, ոչինչ աւելի չունեցաւ,
իսկ ով՝ փիչը, նրանը չպակասեց»† :

ՏԻՏՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

16 *Բայց, գոհութիւն Աստծուն, որ ձեզ համար մեր ունեցած փութաջանութիւնը դրեց նաեւ Տիտոսի սրտում, 17 որ իմ աղաչանքներն ընդունեց եւ առաւել քան յօժարութեամբ շտապեց գալ ձեզ մօտ: 18 Եւ նրա հետ ուղարկեցինք այս եղբօրը, որի համբաւը Աւետարանի քարոզութեան մէջ բոլոր եկեղեցիներին ծանօթ է: 19 Եւ ոչ միայն այսչափ. այլեւ, նշանակուելով եկեղեցիների կողմից, ճանապարհորդութեան ընկեր դարձաւ մեզ՝ մասնակցելու այն նպաստներին, որ մատուցւում են մեր կողմից Տիրոջ փառքի համար եւ մեր յօժար կամքով: 20 Բայց այս բանում զգուշանում էլ էինք, որ չլինի, թէ մէկը արատաւորի այն ծառայութիւնը, որ մատուցւում է մեր կողմից. 21 քանզի բարին ենք մտածում գործել ոչ միայն Տիրոջ առաջ, այլեւ մարդկանց առաջ: 22 Եւ ուղարկեցինք նրանց հետ մեր եղբօրը, որին փորձեցինք շատ բաների մէջ՝ շատ անգամ փութաջան գտնելով նրան. եւ այժմ նա է՛լ աւելի փութաջան է ձեր հանդէպ իր ունեցած մեծ վստահութեամբ: 23 Իսկ եթէ խօսք լինի Տիտոսի մասին, նա իմ հաւասարն է եւ իմ գործակիցը ձեր մէջ: Գալով մեր եղբայրներին, նրանք եկեղեցիների կողմից ուղարկուածներ են եւ Քրիստոսի փառքը: 24 Եւ արդ, բոլոր եկեղեցիների առաջ նրանց նկատմամբ ցո՛յց տուէք ձեր սիրոյ եւ ձեր հանդէպ մեր պարծանքի ապացոյցը:*

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

9 *Սրբերին ի նպաստ եղած օգնութեան մասին աւելորդ է, որ ձեզ գրեմ, 2 որովհետեւ գիտեմ ձեր յօժարակամութիւնը, որով ձեր մասին պարծեցել եմ մակեդոնացիների մօտ, թէ՝ «Աքայեցիները անցեալ տարուանից պատրաստ են այդ օգնութեանը»: Եւ ձեր նախանձախնդրութիւնը շատերին խթանեց: 3 Եղբայրներին էլ ուղարկեցինք, որպէսզի այս հարցում ձեր հանդէպ մեր ունեցած պարծանքը ի զուր չլինի, այլ, ինչպէս ասում էլ էի, որ առաւել պատրաստ գտնուէք: 4 Չլինի թէ, երբ մակեդոնացիները մեզ հետ գան եւ ձեզ անպատրաստ գտնեն, մե՛նք ամօթով մնանք այդ պարծանքի համար, չասելու համար՝ դուք: 5 Արդ, կարեւոր համարեցի խնդրել եղբայրներին, որ աւելի առաջ գան ձեզ մօտ եւ առաջուց պատրաստեն նախապէս ձեր խոստացած նուէրը, որպէսզի պատրաստ լինի այն իբրեւ սրտաբուխ նուէր եւ ոչ թէ ժլատութեամբ եղած ընծայ. 6 քանզի, ով որ մի բան սերմանում է խնայելով, խնայողութեամբ էլ կը հնձի. եւ ով առատաձեռնօրէն է սերմանում, առատութեամբ էլ կը հնձի: 7 Իւրաքանչիւրը թող տայ, ինչպէս յօժար է սրտով եւ ոչ թէ հարկադրաբար եւ տրտմութեամբ. որովհետեւ Աստուած սիրում է զուարթառատ տուրքը: 8 Եւ Աստուած կարող է ամէն շնորհ շատացնել ձեր մէջ, որպէսզի ամէն ինչում ամենայն ժամ ամենայն բաւականութիւն ստանալով՝ առատանաք բոլոր բարի գործերում, 9 ինչպէս գրուած էլ է.*
«Սփռեց եւ տուեց աղքատներին.
Նրա արդարութիւնը մնում է յաւիտեան»† :
10 Եւ Աստուած, որ սերմ է պարգեւում սերմնացաններին եւ ուտելու հաց, պիտի պարգեւի եւ պիտի բազմացնի նաեւ ձեր սերմնացուն եւ պիտի աճեցնի ձեր արդարութեան պտուղները: 11 Ամէն ինչում դուք պիտի հարստանաք ամենայն առատութեամբ, որ մեր միջոցով շնորհակալութեան զգացում է առաջ բերելու Աստծու հանդէպ. 12 որովհետեւ այս պաշտօնիս ծառայութիւնը ոչ միայն սրբերի կարիքները լրացնելու համար է, այլեւ շատերի միջոցով Աստծու հանդէպ շնորհակալութիւնը աւելացնելու համար: 13 Այս ծառայութեան փորձով շատերը պիտի փառաւորեն Աստծուն՝ Քրիստոսի Աւետարանը

†Եւր 16. 18:

†Սաղմոս 111. 9:

խոստովանելու հնազանդութեան եւ այն առատաձեռնութեան համար, որով հաղորդակից էք անում նրանց եւ ամենքին: 14 Եւ նրանց աղօթքները ձեզ համար են. քանզի անձկագին սիրում են ձեզ Աստծու այն առատ շնորհների համար, որ կան ձեր մէջ: 15 Եւ գոհութիւն Աստծուն՝ նրա անպատում շնորհների համար:

ՊՕՂՈՍԸ՝ ՊԱՇՏՊԱՆ ԻՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ

10 *Եւ աղաչում եմ ձեզ Քրիստոսի հեզութեամբ եւ քաղցրութեամբ, ես ինքս՝ Պօղոսը, որ իբրեւ թէ խոնարհ մէկն եմ, երբ ձեր մէջ եմ, բայց երբ հեռու եմ ձեզանից, համարձակ եմ ձեր հանդէպ: 2 Աղաչում եմ, որ մօտ գտնուելիս էլ չլինի, թէ համարձակ լինեմ այդ նոյն վստահութեամբ կամ յանդուգն գտնուեմ ոմանց նկատմամբ, որ մեր մասին կարծում են, թէ մարդկային շարժառիթներից ենք մղւում. 3 որովհետեւ, թէպէտեւ մարմնի մէջ ենք ապրում, բայց մարդկային նկատումներից մղուած չէ, որ պայքարում ենք 4 (քանի որ պայքարելու մեր զէնքը մարմնաւոր չէ այլ՝ Աստծու կողմից տրուած զօրաւոր զէնք է՝ քանդելու համար ամրութիւնները). 5 քանդում ենք գաղտնի մտածումները, Աստծու գիտութեան դէմ գոռոզացած ամէն ծառացում եւ գերելով բոլոր մտքերը՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին 6 եւ պատրաստ ենք վրէժխնդիր լինելու ամէն անհնազանդութեան համար, որպէսզի ձեր հնազանդութիւնն էլ կատարեալ լինի:*

7 Իւրաքանչիւրին դիտեցէ՛ք ըստ արտաքին տեսքի. եթէ մէկն իր մէջ վստահ է, թէ ինքը Քրիստոսինն է, այս բանն էլ թող խորհի իր մտքում, թէ, ինչպէս ինքը Քրիստոսինն է, նոյնպէս եւ՝ մենք. 8 որովհետեւ, եթէ նոյնիսկ աւելի պարծենամ մեր այն իշխանութեան համար, որը տուեց մեզ Տէրը ձեր շինութեան եւ ոչ թէ ձեզ կործանելու համար, ոչնչով չեմ ամաչելու, 9 որպէսզի ձեր մէջ թղթերով ահ գցող մէկը չթուամ: 10 Ասում են՝ այս թղթերը ծանր են ու խիստ, իսկ նրա մարմնի տեսքը տկար է, եւ խօսքը՝ արհամարհելի: 11 Այդ ասողը թող իմանայ, թէ, ինչպիսին որ ենք հեռուից այդ թղթերի խօսքերով, նոյնպիսին կը լինենք նաեւ մօտիկից՝ գործերով. 12 արդարեւ, չենք համարձակւում մենք մեզ համեմատել եւ հաւասարեցնել ոմանց, որոնք գովաբանում են իրենք իրենց, բայց չեն հասկանում, որ իրենցով են չափում իրենք իրենց եւ իրենցով են համեմատում իրենց: 13 Իսկ մենք պարծենում ենք ոչ թէ չափից դուրս, այլ՝ ըստ չափի այն կանոնի, որը Աստուած մեզ բաժանեց, որպէսզի հասնենք մինչեւ ձեզ: 14 Եւ մենք առաջ չենք գցում մեզ, որպէս թէ ձեզ մօտ հասած չլինէինք, քանզի Քրիստոսի Աւետարանով մենք առաջինը հասանք ձեզ մօտ: 15 Եւ սահմանուած չափից դուրս չենք պարծենում ուրիշի աշխատանքով, այլ յոյս ունենք, որ ձեր հաւատի աճումով, ըստ մեր գործի չափի, առաւել կը մեծանանք ձեզնով՝ 16 ձեզնից այն կողմ էլ աւետարանելու համար՝ առանց պարծենալու ուրիշի կատարած գործերով. 17 բայց ով պարծենում է, թող Տիրոջո՛վ պարծենայ. 18 քանի որ ոչ թէ նա է ընտրեալը, ով ինքն իրեն է գովաբանում, այլ՝ նա, ում Տէրն է գովում:

ՊՕՂՈՍԸ ԵՒ ՍՈՒՏ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

11 *Լաւ կը լինէր, եթէ մի փոքր հանդուրժէիք իմ անմտութիւնը. եւ անշուշտ կը հանդուրժէք. 2 ձեզ համար նախանձախնդիր եմ Աստծու նախանձախնդրութեամբ. որովհետեւ ձեզ նշանեցի մի մարդու՝ որպէս մի անբիծ կոյս Քրիստոսին ներկայացնելու համար: 3 Բայց երկիւղ եմ կրում, թէ մի գուցէ, ինչպէս օձն իր խորամանկութեամբ խաբեց Եւային, ձեր միտքը ապականուի ու շեղուի Քրիստոսի հանդէպ ձեր ունեցած պարզամտութիւնից†. 4 որովհետեւ,*

†Յուն. լաւ բն. ունեն ... ձեր միտքը շեղուի ի Քրիստոս եղած անկեղծ եւ մաքուր նուիրումից ...

եթէ որեւէ մէկը գայ ու քարոզի մի ուրիշ Քրիստոս, որին մենք չքարոզեցինք, կամ առնէք ուրիշ հոգի, որը չառաք մեզնից, կամ ուրիշ աւետարան, որը չընդունեցիք մեզնից, շատ լաւ պիտի անսայիք նրան: 5 Բայց ես այնպէս եմ կարծում, թէ ոչ մի բանով պակաս չեմ գերընտիր առաքեալներից: 6 Թէպէտեւ անվարժ եմ խօսքի մէջ, բայց ոչ՝ գիտութեամբ. սակայն ամէն ինչում մեր գիտութիւնը ամբողջովին ցոյց տուինք ձեզ: 7 Եւ մի մե՞ղք գործեցի, որ ինքս ինձ խոնարհեցրի, այն էլ նրա համար, որ դուք բարձրանաք, քանի որ Աստծու Աւետարանը ձրի աւետարանեցի ձեզ: 8 Ուրիշ եկեղեցիներ կողոպտեցի՝ թոշակ առնելով, որպէսզի ձե՛զ ծառայեմ: 9 Եւ երբ եկայ ձեզ մօտ, թէպէտեւ կարիքի մէջ էի, ձեզնից ոչ ոքի բեռ չեղայ. քանի որ իմ կարիքները հոգացին Մակեդոնիայից եկած եղբայրները: Եւ ամէն կերպ, առանց ձեզ բեռ լինելու, ինքս ինձ պահեցի եւ պիտի պահեմ, 10 որովհետեւ իմ մէջ կայ Քրիստոսի ճշմարտութիւնը: Այս պարծանքը չի վերանայ ինձնից Աքայիայի կողմերում էլ: 11 Ինչո՞ւ: Նրա համար, որ չե՞մ սիրում ձեզ: Աստուած գիտէ այդ: 12 Ինչ որ անում եմ ես, ինչ որ անելու եմ, նրա համար է, որ վերացնեմ պատճառաբանութիւնները նրանց, որ պատճառ են փնտռում, որպէսզի պարծենան, թէ իրենք էլ իբր մեզ նման աշխատում են. 13 որովհետեւ այդպիսիները՝ սուտ առաքեալներ, նենգաւոր մշակներ, կերպարանաւորւում են Քրիստոսի առաքեալների կերպարանքով. 14 եւ դա զարմանալի բան չէ. քանզի ինքը՝ Սատանան էլ է կերպարանաւորւում որպէս լուսոյ հրեշտակ: 15 Եւ տարօրինակ չէ, որ նրա պաշտօնեաներն էլ կերպարանաւորուեն որպէս արդարութեան պաշտօնեաներ, որոնց վախճանը կը լինի ըստ իրենց գործերի:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻ ՏԱՌԱՊԱՆՔԸ

16 Դարձեալ ասում եմ. ոչ ոք ինձ յիմար թող չհամարի, – կամ գոնէ իբրեւ յիմար ընդունեցէք ինձ, – որպէսզի ես էլ մի փոքր պարծենամ: 17 Եւ ինչ որ խօսում եմ, ոչ թէ ըստ Տիրոջ ուզածի եմ խօսում, այլ՝ որպէս մի յիմար, որ պարծենալու վիճակի մէջ է գտնւում: 18 Եւ որովհետեւ շատերն են պարծենում մարդկային նկատումներից առաջնորդուած, ես էլ եմ պարծենալու: 19 Դուք՝ իմաստուններդ, անմիտներին սիրով էք հանդուրժում, 20 քանի որ հանդուրժում էք, եթէ մէկը խաբում է ձեզ, եթէ մէկը ծառայի տեղ է դնում ձեզ, եթէ մէկն ուտում է ձեր ունեցուածքը, եթէ մէկը վերցնում է, ինչ որ ձերն է, եթէ մէկը յոխորտում է, եթէ մէկը հարուածում է ձեր երեսին: 21 Ամաչելով եմ ասում, որպէս թէ մենք տկարացած լինէինք երբեւէ. ով ինչ բանի մէջ համարձակուի պարծենալ (յիմարութեամբ եմ ասում), ես էլ եմ համարձակուելու: 22 Եբրայեցիներ՞ն են՝ ես էլ. իսրայէլացիներ՞ն են՝ ես էլ. 23 Աբրահամի՞ սերունդ են՝ ես էլ. Քրիստոսի՞ պաշտօնեաներ են (առաւել յանդգնութեամբ կ'ասէի, թէ)՝ ես առաւե՛լ եւս: Եթէ վաստակով՝ առաւել. եթէ գանակոծութեամբ՝ առաւե՛լ եւս. եթէ բանտարկութեամբ՝ աւելի՛ քան նրանք. եթէ մահուան վտանգով՝ բազում անգամ: 24 Հրեաներից, հինգ անգամ, քառասունից մէկով պակաս ծեծ կերայ. 25 երեք անգամ ձաղկուեցի. մէկ անգամ քարկոծուեցի. երեք անգամ նաւաբեկութեան ենթարկուեցի. մէկ ցերեկ եւ մէկ գիշեր ծովի անդունդներում տառապեցի: 26 Ճանապարհորդութիւնների ընթացքում բազո՛ւմ անգամ վտանգներ՝ գետերից. վտանգներ՝ աւազակներից. վտանգներ՝ ազգակիցներից. վտանգներ՝ հեթանոսներից. վտանգներ՝ քաղաքում. վտանգներ՝ անապատում. վտանգներ՝ ծովում. վտանգներ՝ սուտ եղբայրներից: 27 Բազում անգամ եղայ աշխատանքների եւ յոգնութիւնների մէջ՝ յաճախ անքուն մնալով, քաղցի եւ ծարաւի մէջ, առանց մի պատառ հացի, այլեւ՝ ցրտի մէջ ու մերկութեան: 28 Մէկ կողմ թողած այլ նեղութիւններ եւ դեռ այն, որ շարունակ ամբոխն իմ վրայ էր

կուտակւում†. կային եւ բոլոր եկեղեցիների հոգսերը: 29 Կա՞յ տկար մէկը, որի հետ ես էլ տկարացած չլինեմ. կա՞յ գայթակղուած մէկը, որի համար իմ սիրտը այրուած չլինի:

30 Եթէ պարծենալ է պէտք, իմ տկարութեանը վերաբերող բաներով պիտի պարծենամ: 31 Աստուած եւ մեր Տէր Յիսուսի Հայրը, որ օրհնեալ է յաւիտեանս, գիտէ, որ չեմ ստում: 32 Դամասկոսում Արետաս արքայի կառավարիչը հսկողութեան տակ էր պահում Դամասկոս քաղաքը՝ ինձ բռնելու համար. 33 բայց պատուհանից զամբիւղով ինձ կախեցին պարսպից ներքեւ, եւ ես փախայ նրա ձեռքից:

ՊՕՂՈՍԻ ԵՐԿՆԱՅԻՆ ՏԵՍԻԼՔԸ

12 Արդ, ես պէ՛տք է պարծենամ, թէեւ ոչ մի օգուտ չունի պարծենալը: Սակայն պիտի պատմեմ ձեզ Տիրոջ տեսիլքների եւ յայտնութիւնների մասին: 2 Գիտեմ մի մարդու ի Քրիստոս, որ տասնչորս տարի առաջ (թէ մարմնով էր՝ չգիտեմ, եւ թէ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստուա՛ծ գիտէ) յափշտակուեց մինչեւ երրորդ երկինք: 3 Եւ գիտեմ այդպիսի մարդու (թէ մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստուա՛ծ գիտէ), 4 որ յափշտակուեց մինչեւ դրախտ եւ լսեց անպատում խօսքեր, որ մարդս արտօնուած չէ խօսել: 5 Այդպիսի մէկով պիտի պարծենամ. բայց ես ինձնո՛վ չպիտի պարծենամ, այլ միայն՝ իմ տկարութիւններով. 6 որովհետեւ, եթէ ուզենամ էլ պարծենալ, յիմարի մէկը չեմ լինի. քանզի ճշմարիտն եմ ասում. բայց հրաժարւում եմ ասելուց. գուցէ մէկը աւելի համարում ունենայ իմ մասին, քան ինչ որ տեսնում է իմ մէջ կամ լսում է ինձնից: 7 Եւ որպէսզի այդ յայտնութիւնների առատութեամբ չհպարտանամ, ինձ տրուեց մարմնի խայթ, Սատանայի մի պատգամաւոր, որ բռնցքահարի ինձ, որպէսզի չգոռոզամտանամ: 8 Եւ դրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան ինձնից հեռացնի: 9 Բայց ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բաւ է, որովհետեւ իմ զօրութիւնը տկարութեան մէջ է ամբողջական դառնում»: Եւ արդ, լաւ էլ է, որ ես պարծենամ իմ տկարութիւններով, որպէսզի իմ մէջ բնակուի Քրիստոսի զօրութիւնը: 10 Դրա համար գոհունակութեամբ համակերպւում եմ տկարութիւններին, նախատինքներին, վշտերին, հալածանքներին եւ նեղութիւններին՝ Քրիստոսի համար. որովհետեւ, երբ տկար եմ, այն ժամանակ եմ զօրաւոր: 11 Ցիմար եղայ պարծենալով, քանզի դո՛ւք ստիպեցիք. որովհետեւ պէտք էր, որ ես ձեզնից վկայութիւն ստանայի, թէ ոչնչով պակաս չգտնուեցի, քան գերընտիր առաքեալները, թէպէտեւ ես ոչինչ եմ: 12 Սակայն ձեզանում առաքեալի նշաններ գործուեցին ամենայն համբերութեամբ՝ նշաններով, սքանչելիքներով եւ զօրութիւններով: 13 Եւ արդ, ինչո՞վ պակաս մնացիք այլ եկեղեցիներից, եթէ ոչ նրանով, որ ես ձեզ բեռ չեղայ: Ներեցէ՛ք ինձ այդ յանցանքը:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

14 Ահա՛ւասիկ այս երրորդ անգամ պատրաստւում եմ գալ ձեզ մօտ եւ ձեզ բեռ չեմ լինի. որովհետեւ ձեր ունեցածը չէ որ փնտռում եմ, այլ՝ ձեզ. քանի որ որդինե՛րը պարտաւոր չեն հայրերի համար գանձ դիզել, այլ՝ հայրե՛րը որդիների համար: 15 Բայց ես ինքնայօժար կերպով կը ծախսեմ եւ կը ծախսուեմ ձեզ համար, թեկուզ եւ, հակառակ ձեզ շատ սիրելուս, ձեզնից քիչ սիրուեմ:

16 Ասենք թէ՝ ես բեռ չեղայ ձեզ. որովհետեւ խորագէտ էի, խորամանկութեամբ բռնեցի ձեզ: 17 Մի՞թէ ձեզնից օգո՞ւտ քաղեցի նրանցով, որոնց առաքեցի ձեզ մօտ: 18 Խնդրեցի Տիտոսին եւ նրա հետ այն եղբօրն էլ ուղարկեցի: Մի՞թէ Տիտոսը ձեր ունեցածին ա՞չք տնկեց: Նոյն ոգով չընթացա՞նք, նոյն շաւիղներով չքայլեցի՞նք:

19 Դարձեալ՝ կարծում էք, թէ ձեր առջեւ մենք մե՞զ ենք պաշտպանում:

†Յունարէնն ունի՝ կուտակում ամենօրեայ հոգսերը:

Աստծու առաջ Քրիստոսով ենք խօսում, որ ամէն ինչ ձեր շինութեան համար է, սիրելինե՛ր: 20 Սակայն վախենում եմ, որ, երբ գամ, գուցէ ձեզ չգտնեմ այնպէս, ինչպէս ես կամենում եմ, եւ ես էլ ձեզ համար լինեմ այնպէս, ինչպէս դուք չէիք կամենայ: Գուցէ դարձեալ լինեն վէճեր, նախանձ, բարկութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, բամբասանքներ, գոռոզութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ: 21 Երբ գամ, գուցէ դարձեալ իմ Աստուածն ինձ նկուն դարձնի ձեր առաջ, եւ սուգ անեմ նախապէս մեղանչած շատերի համար, որոնք չեն ապաշխարել իրենց գործած պղծութեան, պոռնկութեան եւ վաւաշոտութեան համար:

ՅՈՐԴՈՐ ԻՆՔՆԱՁԱՆԱՁՄԱՆ ԵՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԱՆ

13 *Այս երրորդ անգամն է, որ գալու եմ ձեզ մօտ, որպէսզի երկու կամ երեք վկաների բերանով հաստատուի ամէն բան: 2 Առաջ ասել եմ եւ դարձեալ կանխաւ ասում եմ, որպէս թէ երկրորդ անգամ ներկայ լինեմ ձեր մէջ, թէեւ այժմ հեռուից գրում եմ նախապէս յանցանք գործածներին եւ բոլոր միւսներին. եթէ դարձեալ գամ, չեմ խնայելու ձեզ, 3 որ ապացոյց էք փնտռում, թէ ինձնով Քրիստոս է որ ձեզ հետ խօսում է, Քրիստոս, որ հզօր է ձեր մէջ եւ ոչ թէ տկար: 4 Թէպէտեւ նա խաչուեց մեր տկարութեան պատճառով†, բայց կենդանի է Աստծու զօրութեամբ: Եւ մենք էլ թէեւ տկարանում ենք նրա համար†, բայց կենդանի կը լինենք նրա հետ Աստծու զօրութեամբ:*

5 Քննեցէ՛ք դուք ձեզ՝ տեսնելու, թէ նոյն հաւատի մէ՞ջ էք. փորձեցէ՛ք դուք ձեզ. չգիտէ՞ք, թէ Քրիստոս Յիսուս ձեր մէջ է, այլապէս կը լինէիք անպիտան: 6 Բայց յոյս ունեմ, թէ կ'իմանաք, որ մենք անպիտան չենք: 7 Եւ աղաչում ենք Աստծուն, որ չարը ձեզ բան չանի‡. ո՛չ որպէսզի մենք ընտիր երեւանք, այլ որպէսզի դուք բարին գործէք, հոգ չէ, թէ մենք անպիտան թուանք. 8 քանի որ չենք կարող հակառակել ճշմարտութեանը, այլ պաշտպան ենք ճշմարտութեան: 9 Ուրախ ենք, երբ մենք տկար ենք, եւ դուք զօրաւոր էք: Նոյն բանի համար էլ աղօթում ենք, որ դուք հաստատուն լինէք: 10 Ուստի հեռուից գրում եմ այս բանը, որ, երբ գամ, խստութեամբ չվարուեմ Տիրոջ ինձ տուած իշխանութեամբ, որ շինելու համար է եւ ոչ՝ քանդելու:

11 Եւ վերջապէս, եղբայրնե՛ր, ո՛ղջ եղէք, հաստատո՛ւն մնացէք, միխթարուեցէ՛ք, միաբա՛ն եղէք, խաղաղութի՛ւն արէք. եւ խաղաղութեան ու սիրոյ Աստուածը թող լինի ձեզ հետ: 12 Ողջո՛յն տուէք միմեանց սուրբ համբոյրով. բոլոր սրբերը ողջունում են ձեզ: 13 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

†Յունարէնն ունի՝ *խաչուեց տկարութեամբ:*

†Լաւագոյն յուն. բն. ունեն *եւ մենք թէպէտեւ տկար ենք նրանով ...*

‡Յունարէնը ունի՝ *... որ դուք չարութիւն չգործէք:*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Քրիստոսից առաջ երրորդ դարում Գալիական կելտերը առաջացել էին մինչեւ Փոքր Ասիա եւ հաստատուել այնտեղ: Նրանց յետնորդները՝ գաղատացիները, զբաղեցնում էին այժմեան Անկարա քաղաքի մօտ գտնուող շրջանը: Նրանցից ոմանց Պօղոս առաքեալը դարձրեց դէպի Քրիստոսի Աւետարանը իր առաքելական երկրորդ եւ երրորդ ճանապարհորդութիւնների ժամանակ:

Սակայն Պօղոսից յետոյ այդ շրջանները այցելեցին այլ մարդիկ: Սրանք ուսուցանում էին, որ ծագումով ոչ հրեայ քրիստոնեաները պէտք է ենթարկուեն հրէական օրէնքին եւ մասնաւորապէս պէտք է թլփատուեն: Պօղոսի համար այս պահանջը հակառակ էր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Աւետարանին. դա գաղատացի քրիստոնեաներին դնում էր հոգեւոր ստրկութեան վիճակում: Երբ նա իմացաւ (հաւանաբար Եփեսոսում), որ նրանք պատրաստ էին, որպէս պատգամ, ընդունելու իր հակառակորդների պահանջը, նրանց գրեց այս կրքոտ թուղթը:

Իր եղբայրներին վերադարձնելու համար դէպի միակ «Բարի լուրը», Պօղոսն այս թղթում նախ խօսում է իր անձնական փորձառութիւնների մասին. յիշատակում է իր դարձը դէպի քրիստոնէութիւն, Երուսաղէմի Եկեղեցու ղեկավարների համաձայնութիւնն այն մասին, որ ծագումով ոչ հրեայ քրիստոնեաները չպէտք է ենթարկուեն հրէական օրէնքին. իր տարակարծութիւնը Պետրոս առաքեալի հետ այդ որոշման գործադրութեան վերաբերեալ: Թղթի այս մասում Պօղոսը պաշտպանում է առաքեալի իր հեղինակութիւնը՝ նշելով, որ աւետարանելու պարտականութիւնը իրեն վստահուել է Տիրոջից:

Այնուհետեւ, յենուելով Հին Կտակարանի վրայ, նա բացատրում է, որ հրէական օրէնքներին ենթարկուելով չէ, որ մարդ հասնում է փրկութեան, այլ միայն հաւատալով Յիսուս Քրիստոսին:

Թղթի վերջում Պօղոսը կոչ է անում գաղատացիներին, որ ապրեն ազատ՝ Սուրբ Հոգու առաջնորդութեան ներքոյ, որովհետեւ Հոգին մարդու մէջ առաջ է բերում ամէն տեսակ նոր տրամադրութիւններ, առաջին հերթին՝ սէր:

Իւրաքանչիւր Եկեղեցի, իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր է լսել այդ կոչը եւ պատասխանել դրան ի խորոց սրտի՝ ազատագրուելու համար ամէն ստրկութիւնից:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ առաքեալ, ո՛չ մարդկանց կողմից եւ ո՛չ էլ մարդու միջոցով, այլ Յիսուս Քրիստոսի միջոցով եւ Հայր Աստծու, որ յարութիւն տուեց նրան մեռելներից, – 2 եւ բոլոր եղբայրները, որ ինձ հետ են, Գաղատիայի եկեղեցիների՛դ. 3 շնո՛րհ ընդ ձեզ եւ խաղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսից, 4 որ իր անձը տուեց մեր մեղքերի համար, որպէսզի մեզ փրկի ներկայ այս չար աշխարհից ըստ Աստծու եւ մեր Հօր կամքի, 5 նրան փա՛ռք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՄԻԱԿ ԲԱՐԻ ԱՒԵՏԻՍԸ

6 Զարմանում եմ, որ այդպէս շուտ լքում էք նրան, ով Քրիստոսի շնորհով կանչեց ձեզ եւ դառնում էք դէպի ուրիշ աւետարան. 7 բայց ուրիշ աւետարան չկայ. կան ոմանք, որ խռովութիւն են սերմանում ձեր մէջ եւ ուզում են շուռ տալ Քրիստոսի Աւետարանը: 8 Եթէ նոյնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ աւետարանի ձեզ աւելին, քան այն, որ մենք աւետարանեցինք ձեզ, նզովեա՛լ լինի: 9 Ինչպէս աւելի առաջ էլ ասացինք, հիմա էլ դարձեալ ասում եմ. «Եթէ մէկն աւետարանի ձեզ աւելին, քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովեա՛լ լինի»: 10 Արդ, մարդկա՞նց եմ ձգտում հաճոյացնել, թէ՞ Աստծուն. կամ մարդկանց հաճելի լինե՞լ եմ ուզում: Եթէ ջանայի մարդկանց հաճելի լինել, ապա Քրիստոսին ծառայ չէի լինի:

ՊՕՂՈՍԻ ԿԱՆՉՈՒԻԼԸ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

11 Յայտնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, թէ այն Աւետարանը, որ ես ձեզ աւետարանեցի, մարդկային Աւետարան չէ. 12 քանզի ես մարդուց չառայ այն, ոչ էլ որեւէ մէկից սովորեցի, այլ՝ Յիսուս Քրիստոսի մի յայտնութիւնից. 13 արդարեւ, դուք լսած կը լինէք հրէութեան մէջ եղածս ժամանակ երբեմնի իմ ընթացքի մասին, թէ ինչքա՛ն էի հալածում Աստծու եկեղեցին եւ քանդում էի այն. 14 եւ հրէութեան մէջ աւելի՛ առաջ էի գնացել, քան իմ շատ հասակակիցները, որոնք իմ սերնդից էին. շատ աւելի նախանձախնդիր էի իմ հայրենի աւանդութիւններին: 15 Բայց, երբ կամեցաւ Աստուած (նա ընտրել էր ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց իր շնորհների միջոցով) 16 յայտնել ինձանով իր Որդուն, որպէսզի աւետարանեմ նրան հեթանոսների մէջ, այն ժամանակ, իսկոյն, ոչ մէկի խորհրդին չդիմեցի, 17 ոչ էլ Երուսաղէմ բարձրացայ նրանց մօտ, որ ինձնից առաջ առաքեալներ էին, այլ գնացի Արաբիա եւ վերադարձայ Դամասկոս: 18 Ապա, երեք տարի յետոյ, ելայ Երուսաղէմ՝ տեսնելու Պետրոսին եւ տասնհինգ օր նրա մօտ մնացի: 19 Առաքեալներից ոչ ոքի չտեսայ, բացի Յակոբոսից՝ Տիրոջ եղբօրից: 20 Եւ ինչ որ գրում եմ ձեզ, – ահա՛ւասիկ Աստծու առաջ եմ ասում, – չեմ ստում: 21 Ապա եկայ Ասորիք եւ Կիլիկիայի կողմերը. 22 եւ ես անձնապէս անծանօթ էի եկեղեցիների† հաւատացեալներին, որոնք, թլփատուած լինելով, դարձել էին ի Քրիստոս. 23 բայց լսած էին, թէ՝ «Նա, որ մեզ այն ժամանակ հալածում էր, այժմ քարոզում է այն հաւատը, որը մի ժամանակ քանդում էր»: 24 Եւ ինձնով փառաւորում էին Աստծուն:

ՊՕՂՈՍԸ ԵՒ ՄԻԻՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

2 Այնուհետեւ, տասնչորս տարի յետոյ, նորից ելայ Երուսաղէմ Բառնաբասի հետ՝ ինձ հետ վերցնելով նաեւ Տիտոսին: 2 Եւ այնտեղ ելայ ինձ պատահած մի յայտնութեան հետեւանքով. եւ նրանց ներկայացրի այն Աւետարանը, որը քարոզում էի հեթանոսների մէջ մասնաւորապէս նրանց, որոնք երեւելիներ էին համարւում, այն մտածումով, որ մի գուցէ իմ ընթացքը ի զուր է եղել եւ կամ ի զուր է: 3 Եւ Տիտոսն իսկ, որ ինձ հետ էր, թէեւ հեթանոս, չպարտաւորուեց թլփատուել՝ հակառակ ներս սպրդած

†Յունարէնը ասում է Հրէաստանի եկեղեցիների:

սուտ եղբայրներին. 4 նրանք սպրդել մտել էին՝ լրտեսելու մեր այն ազատութիւնը, որ ունենք Քրիստոս Յիսուսով, որպէսզի մեզ ծառայ դարձնեն. 5 նոյնիսկ, ժամանակաւորապէս, չանսացինք հնազանդուել նրանց, որպէսզի Աւետարանի ճշմարտութիւնը հաստատ մնայ ձեր մէջ: 6 Ինչ վերաբերում է երեւելիներին (թէ նրանք երբեւիցէ մի բան եղել են, իմ հոգը չէ, քանզի Աստուած մարդկանց աչառութիւն չի անում), այդ երեւելիները նման որեւէ բան չիմացրին ինձ: 7 Այլ, դրան հակառակ, երբ տեսան, թէ հեթանոսների աւետարանն ի՛նձ է վստահուած, ինչպէս Պետրոսին՝ հրեաների աւետարանը 8 (որովհետեւ նա, որ Պետրոսին յաջողեցրեց առաքելութիւն հրեաների մէջ, ինձ էլ յաջողեցրեց առաքելութիւն հեթանոսների մէջ), 9 երբ Յակոբոսը, Կեփասը եւ Յովհաննէսը, որոնք սիւներ էին համարւում, իմացան այն շնորհների մասին, որ տրուած էին ինձ, հաւանութեան ձեռք մեկնեցին ինձ եւ Բառնաբասին, որպէսզի մենք գնանք հեթանոսների մէջ, իսկ իրենք՝ հրեաների մէջ. 10 միայն թէ նրանք խնդրեցին, որ յիշենք աղքատներին. եւ ես հոգ տարայ այդ նոյն բանն անելու:

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ ԱՆՏԻՈՔՈՒՄ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ՄԻՋԵՒ

11 Եւ երբ Կեփասն† Անտիոք եկաւ, ընդդիմացայ նրան, որովհետեւ մեղադրելի ընթացքի մէջ էր. 12 քանզի, մինչ Յակոբոսի շրջանակից ոմանք դեռ չէին եկել, նա հեթանոսների հետ էր ուտում անխտիր, իսկ երբ եկան, բաժանուեց եւ մի կողմ քաշուեց՝ վախենալով թլփատութեան կողմնակիցներից: 13 Եւ ուրիշ հրեաներ էլ կեղծաւորութիւն արեցին նրա հետ. մինչեւ իսկ Բառնաբասը ներքաշուեց նրանց կեղծաւորութեան մէջ: 14 Իսկ երբ տեսայ, որ ուղիղ չեն ընթանում Աւետարանի ճշմարտութեամբ, բոլորի առաջ Կեփասին ասացի. «Եթէ դու, որ հրեայ ես, հեթանոսի նման ես ապրում եւ ոչ հրեայի նման, ինչո՞ւ ես ստիպում հեթանոսներին, որ հրեայի նման լինեն»:

†Կեփասը Պետրոսի անուան արամերէն ձեւն է, որ նշանակում է ժայռ:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ՀԱՒԱՏՈՎ ԵՒ ՈՉ ԳՈՐԾԵՐՈՎ

15 Իսկ մենք, որ իսկական հրեաներ ենք եւ ոչ թէ այդ հեթանոս մեղաւորներից, 16 գիտենք, որ մարդ չի արդարանայ օրէնքի գործերով, այլ միայն՝ Յիսուս Քրիստոսի հաւատով. եւ մենք հաւատացինք Քրիստոս Յիսուսին, որպէսզի արդարանանք Քրիստոսի հաւատով եւ ո՛չ թէ օրէնքի գործերով. քանի որ ոչ մի մարդկային էակ չի արդարացուելու օրէնքի գործերով: 17 Իսկ եթէ Քրիստոսով արդարանալ ուզելով՝ մեղաւոր գտնուեցինք, ապա ուրեմն Քրիստոս մեղքի՞ն ծառայեց. քա՛ւ լիցի. 18 որովհետեւ, եթէ ինչ որ ես քանդեցի, նոյնը վերստին չինեմ, ապա ինքս ապացուցած կը լինեմ, որ մեղաւոր եմ. 19 քանի որ ես օրէնքի տակ մեռայ օրէնքի համար, որպէսզի ապրեմ Աստծու համար: 20 Քրիստոսի հետ խաչը ելայ. կենդանի եմ այսուհետեւ. բայց ոչ թէ ես, այլ իմ մէջ ապրում է Քրիստոս: Իսկ հիմա որ կենդանի եմ մարմնով, Աստծու Որդու հաւատո՛վ եմ ապրում, որ սիրեց ինձ եւ իրեն մահուան մատնեց ինձ համար: 21 Եւ ես Աստծու շնորհը չեմ անարգում, քանի որ, եթէ արդարութիւնը օրէնքից է, ապա Քրիստոս ի զուր մեռաւ:

ՕՐԷՆՔ ԿԱՄ ՀԱՒԱՏ

3 Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՞վ հրապուրեց ձեզ, որոնց աչքերի առաջ Յիսուս Քրիստոս նկարագրուեց խաչը ելած: 2 Ա՛յս բանն եմ միայն ուզում իմանալ ձեզնից. օրէնքի գործերո՞վ Հոգին ընդունեցիք, թէ՞ հաւատի քարոզութեամբ: 3 Այդչափ անմի՞տ էք. սկսեցիք Հոգով, իսկ հիմա մարմնո՞վ էք վերջացնում: 4 Եւ այդքան փորձութիւններ ի զո՞ւր անցան ձեր գլխով, – եթէ անշուշտ ի զուր էին: 5 Իսկ արդ, նա, որ Հոգին բաշխեց ձեզ եւ

զօրութիւններ գործեց ձեր մէջ, օրէնքի գործերո՞վ էր, թէ՞ հաւատի քարոզութեամբ: 6 Այսպէս՝ «Աբրահամը հաւատաց Աստծուն, եւ այդ նրան համարուեց որպէս արդարութիւն»†: 7 Գիտէ՞ք արդեօք, որ Աբրահամի որդիները նրանք են, որոնք այդ հաւատից են: 8 Սուրբ Գիրքը կանխատեսում էր, թէ Աստուած հեթանոսներին հաւա՛տով է արդարացնելու. նախապէս խոստացաւ Աբրահամին, թէ՝ «Բոլոր ազգերը քեզնով են օրհնուելու»: 9 Այսպէս ուրեմն, նրանք, որ հաւատից են, օրհնւում են հաւատացեալ Աբրահամի հետ:

10 Նրանք, որ օրէնքի գործադրողներն են, անէծքի տակ են, քանզի գրուած է, թէ՝ «Անիծեալ է ամէն մարդ, որ օրէնքի գրքում եղած բոլոր գրուածները չի պահում եւ չի գործադրում»†: 11 Որ օրէնքով ոչ ոք չի արդարանայ Աստծու առաջ, այդ քաջ յայտնի է, որովհետեւ՝ «Արդարը, - ասում է, - հաւատով է ապրելու»: 12 Իսկ օրէնքը հաւատից չէ. բայց ով կատարի այն, նրանով կ'ապրի: 13 Քրիստոս մեզ վերստին գնեց օրէնքի անէծքից՝ անէծք դառնալով մեզ համար (որովհետեւ գրուած է, թէ՝ «Անիծեալ է այն մարդը, որը կախուած է փայտից»), 14 որպէսզի Աբրահամի օրհնութիւնը Քրիստոս Յիսուսով գայ հեթանոսների վրայ, եւ որպէսզի Սուրբ Հոգու խոստումը մենք ընդունենք հաւատով:

ՕՐԷՆՔ ԵՒ ԽՈՍՏՈՒՄ

15 Եղբայրնե՛ր, մարդկայնօրէն եմ ասում. նոյնիսկ մարդկանց հաստատած կտակը ոչ ոք չի կարող խափանել եւ ոչ էլ նրա վրայ մի այլ բան աւելացնել: 16 Արդ, խոստումը Աբրահամի՛ն արուեց եւ նրա շառաւիղին. չի ասում՝ շառաւիղներին, չակնարկելու համար շատերին, այլ ակնարկում է մէկին՝ «Եւ քո զաւակին», որ Քրիստոսն է: 17 Ահա՛ թէ ինչ եմ ասում. այն կտակը, որ նախապէս հաստատուել էր Աստծու կողմից Քրիստոսով†, դրանից չորս հարիւր երեսուն տարի յետոյ դրուած օրէնքը չի կարող խախտել, որպէսզի չխափանուի խոստումը: 18 Եթէ ժառանգութիւնը օրէնքից է, ապա այլեւս խոստումից չէ. բայց Աստուած Աբրահամին խոստումո՛վ շնորհեց այն:

ՕՐԷՆՔԻ ԴԵՐԸ

19 Իսկ արդ, ինչի՞ համար է օրէնքը. օրէնքը տրուեց յանցանքների պատճառով, մինչեւ որ գար այն զաւակը, որին եղած խոստումը հրեշտակների կողմից տրուեց միջնորդի միջոցով: 20 Իսկ միջնորդը ենթադրում է երկու կողմ, մինչդեռ Աստուած մէ՛կ է: 21 Եւ արդ, օրէնքը Աստծու խոստումներին հակառա՞կ է. քա՛ւ լիցի. որովհետեւ, եթէ օրէնքը, որ տրուած է, կարո՛ղ լինէր կեանք տալ, ապա հաստատապէս արդարութիւնը օրէնքից կը լինէր: 22 Բայց Սուրբ Գիրքը ամէն ինչ դրեց մեղքի տակ, որպէսզի խոստումը Յիսուս Քրիստոսի հաւատով տրուի հաւատացողներին: 23 Քանի դեռ հաւատը չէր եկել, օրէնքի տակ փակուած էինք մնում՝ սպասելով գալիք այն հաւատին, որ յայտնուելու էր մեր մէջ: 24 Այսպէս՝ օրէնքը դաստիարակ եղաւ՝ մեզ Քրիստոս Յիսուսին բերելու, որպէսզի հաւատով արդարանանք: 25 Իսկ երբ հաւատը եկաւ, էլ դաստիարակի ձեռքի տակ չենք. 26 քանզի բոլորդ էլ Աստծու որդիներ էք հաւատով ի Յիսուս Քրիստոս: 27 Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք. 28 ուրեմն խտրութիւն չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս: 29 Իսկ եթէ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամի սերունդ էք, ժառանգներ՝ ըստ խոստման:

†Ծննդոց 15. 6:
†Երկրորդ Օրէնք 27. 26:
†Լաւագոյն յուն. բն. չունեն Քրիստոսով բառը:

ՕՐԷՆՔԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ԱՍՏԾՈՒ ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ

4 Այս բանն եմ ասում. որքան ժամանակ որ ժառանգը երեխայ է, աւելին չէ, քան ծառան, թէպէտեւ ամէն ինչի տէր է: 2 Բայց նա խնամակալների եւ վերակացուների ձեռքի տակ է մինչեւ հօր սահմանած ժամանակը: 3 Նոյնպէս եւ մենք. մինչ երեխայ էինք, բնութեան տարերային ուժերին էինք ծառայում: 4 Իսկ երբ ժամանակը իր լրումին հասաւ, Աստուած ուղարկեց իր Որդուն, որը ծնուեց կնոջից եւ մտաւ օրէնքի տակ՝ 5 փրկելու համար նրանց, որ օրէնքի տակ էին, որպէսզի մենք որդեգրութիւն ընդունենք: 6 Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած մեր սրտերի մէջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր: 7 Ուստի, ծառայ չես, այլ՝ որդի, եւ եթէ որդի ես, ապա եւ՝ ժառանգ Աստծու†:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀՈԳՍԵՐ

8 Այն ժամանակ, մինչ Աստծուն չէիք ճանաչում, ծառայում էիք նրանց, որոնք ի բնէ աստուածներ չէին. 9 իսկ այժմ որ ճանաչեցիք Աստծուն, մանաւանդ որ Աստուած էլ ճանաչեց ձեզ, ինչպէ՞ս էք վերադառնում նորից դէպի տկար ու խեղճ տարերային ուժերը, որոնց, նորից, ուզում էք ձեզ դերի դարձնել: 10 Պահում էք յատուկ օրեր, ամիսներ, եղանակներ եւ տարիներ: 11 Վախենում եմ, որ մի գուցէ ի զուր եմ աշխատել ձեզ համար:

12 Եղէ՛ք՝ ինչպէս ես, քանզի ես էլ ձեզ նման եղայ, եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ. դուք ինձ ոչ մի վնաս չէք տուել: 13 Դուք գիտէք, որ տկար մարմնով աւետարանեցի ձեզ առաջին անգամ, 14 եւ չանարգեցիք ու չարհամարհեցիք այն փորձութիւնները, որ կրում էի իմ մարմնի վրայ‡. այլ իբրեւ Աստծու հրեշտակ ընդունեցիք ինձ, իբրեւ Քրիստոս Յիսուս: 15 Իսկ արդ, ո՞ւր է ձեր երանութիւնը: Վկայում եմ ձեզ. եթէ հնար լինէր, ձեր աչքերը կը հանէիք ու կը տայիք ինձ: 16 Հիմա ինչո՞ւ թշնամի դարձայ ձեզ, որ ճիշտը խօսեցի: 17 Նրանք բարի դիտաւորութեամբ չէ, որ հետաքրքրւում են ձեզանով, այլ ուզում են արգելք լինել ձեզ, որպէսզի նախանձախնդիր լինէք իրե՛նց համար: 18 Բայց լաւ է մի՛շտ նախանձախնդիր լինել բարի բաներին եւ ոչ թէ միայն այն ժամանակ, երբ ձեր մէջ եմ, 19 որդեակնե՛րս, դուք, որոնց համար վերստին երկունքի մէջ եմ, մինչեւ որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ: 20 Կ'ուզենայի այժմ լինել ձեզ մօտ եւ փոխել իմ խօսելու ձեւը, որովհետեւ տարակոյսի մէջ եմ ձեզ համար:

ՀԱԳԱՐԻ ԵՒ ՍԱՌԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

21 Ասացէ՛ք ինձ, դուք, որ ուզում էք լինել օրէնքի տակ, օրէնքը չէ՞ք կարդացել. 22 որովհետեւ գրուած է, թէ՝ «Աբրահամը երկու որդի ունէր, մէկը՝ ծնուած աղախնից եւ մէկը՝ ազատ կնոջից»: 23 Բայց նա, որ աղախնից էր, մարմնական ծնունդ էր, իսկ նա, որ ազատ կնոջից էր, ծնուել էր խոստման համաձայն: 24 Սա այլաբանութիւն է, որովհետեւ սրանք երկու կտակարաններն են. մէկը՝ Սինա լեռից՝ ծնուած ծառայութեան համար. դա Հագարն է. 25 քանզի Հագարը Սինա լեռն է Արաբիայում եւ համապատասխանում է ներկայ Երուսաղէմին, որ իր որդիներով հանդերձ ծառայ է: 26 Իսկ Վերին Երուսաղէմը, որը մեր բոլորի† մայրն է, ազատ է. 27 որովհետեւ գրուած է.

«Ուրա՛խ եղիր, ամո՛ւլ, դու, որ չէիր ծնում.
գոչի՛ր եւ աղաղակի՛ր, դո՛ւ, որ երկունքի ցաւ չէիր քաշել.
որովհետեւ լքուածիդ զաւակներն աւելի են,
քան ամուսին ունեցող կնոջ զաւակները»‡:

28 Արդ, մենք, եղբայրնե՛ր, խոստման որդիներ ենք, Իսահակի նման: 29 Եւ ինչպէս այն ժամանակ նա, որ մարմնական ծնունդ էր, հալածում էր նրան, որ ըստ հոգու էր ծնուել, այդպէս է եւ այժմ: 30 Եւ ի՞նչ է ասում Գիրքը. «Հեռո՛ւ վանիր այդ աղախնուն

†Լաւագոյն յուն. բն. չունեն Աստծու բառը:
‡Լաւագոյն յուն. բն. ունեն ... եւ չանարգեցիք ու չարհամարհեցիք իմ մարմինը, որ ձեր փորձութիւնը եղաւ ...
†Լաւագոյն յուն. բն. չունեն բոլորի բառը:
‡Եսայի 54. 1:

եւ դրա որդուն, որպէսզի այդ աղախնի
որդին ազատի որդուն ժառանգակից
չլինի»†: 31 Դրա համար, եղբայրնե՛ր,
աղախնի որդիներ չենք, այլ՝ ազատի,
այն ազատութեամբ, որով Քրիստոս
մեզ ազատ դարձրեց‡:

ՄԻ՛ ԿՈՐՑՐԷՔ ՁԵՐ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

5 Ուրեմն, պի՛նդ կացէք եւ վերստին
ծառայութեան լծի տակ մի՛ մտէք:
2 Ահա՛ւասիկ ես՝ Պօղոսը, ձեզ ասում
եմ, որ, եթէ թլփատուէք, Քրիստոս ձեզ
ոչնչով չի օգնի: 3 Վկայում եմ թլփա-
տուող ամէն մարդու, որ պարտաւոր է
ամբողջ օրէնքը կատարել: 4 Դուք, որ
օրէնքով էք արդարանում, Քրիստոսից
կտրուած էք, շնորհից ընկած. 5 որով-
հետեւ մենք Հոգու միջոցով հաւատից
ենք սպասում արդարութեան յոյսը.
6 քանի որ նա, ով միացած է Քրիստոս
Յիսուսին, ո՛չ թլփատուած լինելը
արժէք ունի եւ ո՛չ անթլփատ լինելը,
այլ՝ հաւատը, որ սիրով է գործում:
7 Լաւ էր ձեր ընթացքը, ո՞վ ձեզ կա-
սեցրեց, որ չհնազանդուէք ճշմար-
տութեանը: 8 Այս թելադրանքը նրա-
նից չէ, ով ձեզ կանչում է: 9 Մի փոքր
թթխմոր խմորում է ամբողջ զան-
գուածը: 10 Իսկ ես վստահ եմ ձեր վրայ
Տիրոջով, թէ ուրիշ կերպ չէք խորհում.
եւ ով ձեր միտքը խռովում է, դա-
տաստան կը կրի՝ ո՛վ էլ լինի: 11 Իսկ
ես, եղբայրնե՛ր, եթէ թլփատութիւն էի
քարոզում, ինչո՞ւ եմ դեռ հալածւում:
Ապա ուրեմն խաչի գայթակղութիւնը
խափանուած է: 12 Երանի՛ թէ ար-
մատախիլ լինէին նրանք, որ ձեր
միտքը խռովում են:

13 Եղբայրնե՛ր, դուք կոչուած էք
ազատութեան. միայն թէ ձեր ազա-
տութիւնը սոսկ մարմնի ցանկութիւն-
ների համար չլինի, այլ սիրո՛վ
ծառայեցէք միմեանց. 14 որովհետեւ
ամբողջ օրէնքը այս մէկ խօսքի մէջ է
ամփոփւում. «Պիտի սիրես քո ընկե-
րոջը, ինչպէս՝ ինքդ քեզ»§: 15 Իսկ եթէ
միմեանց խածոտէք եւ յօշոտէք, զգո՛յշ
եղէք, գուցէ թէ միմեանց ոչնչացնէք:

ՀՈԳԻՆ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

16 Բայց ասում եմ ձեզ. Հոգո՛վ
ընթացէք եւ մարմնի ցանկութիւնը մի՛
կատարէք, 17 քանի որ մարմինը Հոգու
հակառակն է ցանկանում, իսկ Հոգին՝
մարմնի հակառակը: Եւ քանի որ
սրանք միմեանց հակառակ են, մի՛
արէք այն, ինչ ուզում էք: 18 Իսկ եթէ
Հոգով էք առաջնորդւում, ապա օրէնքի
տակ չէք. 19 որովհետեւ մարմնի գոր-
ծերը յայտնի են. այսինքն՝ շնութիւն,
պոռնկութիւն, պղծութիւն, վաւաշո-
տութիւն, 20 կռապաշտութիւն, կա-
խարդութիւն, թշնամութիւն, կռիւ,
նախանձ, բարկութիւն, հակառակու-
թիւններ, երկպառակութիւններ, բա-
ժանումներ, 21 չար նախանձ, սպանու-
թիւններ, հարբեցողութիւններ, անա-
ռակութիւններ եւ սրանց նման ուրիշ
բաներ: Այժմ ասում եմ ձեզ, ինչպէս որ
առաջուց էլ ասում էի, թէ նրանք, որ
այսպիսի բաներ են գործում, Աստծու
արքայութիւնը չեն ժառանգելու: 22 Իսկ
Հոգու պտուղն այս է՝ սէր, խնդու-
թիւն, խաղաղութիւն, համբերութիւն,
23 քաղցրութիւն, բարութիւն, հաւա-
տարմութիւն, հեզութիւն, ժուժկալու-
թիւն. այսպիսի բաներին օրէնք չկայ:
24 Իսկ նրանք, որ քրիստոսեաններ են,
խաչն են հանում իրենց մարմինները՝
կրքերով եւ ցանկութիւններով հան-
դերձ: 25 Եթէ ապրում ենք Հոգով, ըստ
Հոգու էլ ընթանանք: 26 Եւ սնապարծ
չլինենք՝ միմեանց գրգռելով եւ
միմեանց նախանձելով:

ԿՐԵԼ ՄԻՄԵԱՆՑ ԲԵՌԸ

6 Եղբայրնե՛ր, եթէ ձեզնից մէկը ինչ-
որ յանցանքի մէջ բռնուի յանկարծ,
դուք, որ հոգեւոր էք, վերահաստատէ՛ք
նրան հեզութեան ոգով. զգո՛յշ եղէք
ինքներդ ձեր նկատմամբ, որպէսզի
դուք էլ փորձութեան չենթարկուէք:
2 Միմեանց բեռը կրեցէ՛ք եւ այդպիսով
կատարեցէ՛ք Քրիստոսի օրէնքը: 3 Եթէ

†Մնացեալ 21. 10:

‡Լաւագոյն յուն. բն. «...այն ազատութեամբ, որով Քրիստոս մեզ ազատ դարձրեց» հատուածը միացնում են 6 գլխի 1-ին համարին:

§Ղեւտ. 19. 18:

մէկը կարծում է, թէ ինքը մի բան է, եւ
սակայն չէ, ինքն իրեն է խաբում:
4 Թող իւրաքանչիւր ոք կշռադատի իր
գործը եւ ապա՝ ինքն իր վրա՛յ միայն
պարծենայ եւ ոչ թէ ընկերոջ հետ
համեմատուելով. 5 որովհետեւ իւրա-
քանչիւր ոք իր բեռն է կրելու:

6 Աշակերտը թող մասնակից անի
ուսուցչին բոլոր բարի բաներում:
7 Չխաբուէք. Աստուած չի ծաղրւում,
8 որովհետեւ, ինչ որ մարդս սերմանում
է, նոյնը եւ կը հնձի. ով սերմանում է
իր մարմնի համար, այդ մարմնից էլ կը
հնձի ապականութիւն. իսկ ով Հոգու
համար է սերմանում, այդ Հոգուց էլ կը
հնձի յաւիտենական կեանք: 9 Իսկ
բարին գործելուց չձանձրանաք, որով-
հետեւ յարմար ժամանակին պիտի
հնձենք, եթէ չթուլանանք: 10 Ահա թէ
ինչու, քանի դեռ ժամանակ կայ,
բարին գործենք բոլորի հանդէպ,
մանաւանդ հաւատի մէջ մեր հարա-
զատների հանդէպ:

ԽԱՉԻ ՊԱՐԾԱՆՔԸ

11 Տեսէք, թէ ինչպիսի՛ գրերով
գրեցի ձեզ իմ այս ձեռքով. 12 որովհե-
տեւ նրանք, որ ցանկանում են ըստ
մարմնի լաւ մարդ երեւալ, նրա՛նք են
ստիպում ձեզ, որ թլփատուէք: Միայն
թէ Քրիստոսի խաչի յետեւից չգնան†.
13 քանզի նրանք, որ թլփատուած են,
օրէնքը չեն պահում, բայց ուզում են,
որ դուք թլփատուէք, որպէսզի ձեր
մարմնո՛վ պարծենան:

14 Սակայն քա՛ւ լիցի, որ ես պար-
ծենամ այլ բանով, քան միայն մեր
Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով
աշխարհը խաչուած է ինձ համար, ես
էլ՝ աշխարհի համար. 15 որովհետեւ
Յիսուս Քրիստոսով ո՛չ թլփատութիւնն
է մի բան եւ ո՛չ էլ՝ անթլփատութիւնը,
այլ՝ նոր արարած լինելը: 16 Եւ թող
խաղաղութիւն ու ողորմութիւն լինի
բոլոր նրանց վրայ, որ ապրում են այս
կանոնի համաձայն, ինչպէս նաեւ
Աստծու Իսրայէլի վրայ: 17 Այսուհե-
տեւ թող ոչ ոք ինձ նեղութիւն չտայ,
որովհետեւ ես իմ մարմնի մէջ եմ
կրում Քրիստոսի չարչարանքները‡:
18 Եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր հոգու հետ լինի:
Ամէն:

†Յունարէնը՝ Քրիստոսի խաչի համար չհայածուեն:

‡Յունարէնը՝ ... Քրիստոսի վէրքերի նշանները կրում եմ իմ մարմնի վրայ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Մեր թուագրութեան առաջին դարի կէսերին քրիստոնէական Եկեղեցիների թիւը արագօրէն աճում էր Փոքր Ասիայում: Քրիստոնէական համայնքները յարաբերութեան մէջ էին մէկը միւսի հետ, իսկ Եփեսոսի համայնքը դրանց մէջ որոշ հեղինակութիւն էր վայելում: Արդարեւ, Պօղոս առաքեալը երեք տարի մնացել էր այդ քաղաքում առաքելական իր երրորդ ճանապարհորդութեան ժամանակ: Եփեսացիներին ուղղուած թուղթը գրելիս Պօղոսը բանտում էր գտնւում: Դրա համար էլ այս թուղթը փիլիպպեցիներին, Փիլիմոնին, կողոսացիներին ուղղուած միւս թղթերի հետ միասին դասւում է այսպէս կոչուած «ազատազրկման շրջանի» թղթերի շարքը:

Նրա լայնընդգրկուն ուսուցումը մտածել է տալիս, որ այս թուղթը վերաբերում է ընթերցողների շատ աւելի լայն մի շրջանակի, քան առանձին տեղական մի համայնքի: Թղթի կենտրոնական թեման է Աստծու յաւիտենական ծրագիրը, որի նպատակն է «միայն Քրիստոսով բովանդակել ամէն ինչ. ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրայ» (1.10):

Բացի մի կարճ նախաբանից եւ մի համառօտ եզրակացութիւնից, թղթում Պօղոսի պատգամը բաժանւում է երկու գլխաւոր մասերի:

Առաջին մասում արտայայտելուց յետոյ իր հիացմունքն այն ամենի նկատմամբ, ինչ Աստուած արել է Յիսուս Քրիստոսի միջոցով, հեղինակը զարգացնում է միութեան թեման՝ ցոյց տալով, թէ ինչպէս Աստուած եւ՛ հրեաներին, եւ՛ ոչ հրեաներին միախառնել է մէկ ժողովրդի մէջ, որ իր ժողովուրդն է:

Երկրորդ մասում առաքեալը իր ընթերցողներին կոչ է անում ապրելու այդ միութիւնը իրենց նոր կեանքին արժանի ձեւով, Յիսուս Քրիստոսի հետ միութեան մէջ: Դա պահանջում է որոշակի պարտաւորութիւններ ուրիշների հետ իրենց ունեցած յարաբերութիւններում՝ թէ՛ քրիստոնէական համայնքում, թէ՛ ընտանիքում եւ թէ՛ հասարակութեան մէջ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

ՊՕՂՈՍԻ ԱՂՕԹՔԸ

1 *Պօղոսը՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստծու կամքով, Եփեսոսում եղած սրբերին եւ հաւատացեալներին ի Քրիստոս. 2 շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:*

ՀՈԳԵՒՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ

3 Օրհնեալ է Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ օրհնեց մեզ ի Քրիստոս ամենայն հոգեւոր օրհնութեամբ, երկնային աշխարհում. 4 Նա ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ անարատ լինենք նրա առաջ սիրով: 5 Նախասահմանեց մեզ որդեգրութեան Յիսուս Քրիստոսի միջոցով, ըստ իր կամքի հաճութեան: 6 Գովենք նրան այն փառքի համար, որով երջանկացրեց† մեզ իր Սիրելիով: 7 Նրանո՛վ է, որ ունենք փրկութիւն, նրա արեան միջոցով՝ մեղքերի թողութիւն, ըստ իր շնորհի մեծութեան չափի, 8 որ եւ առատացաւ մեր մէջ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: 9 Ծանաչեցրեց մեզ, ինչպէս հաճելի էր իրեն, իր կամքի խորհուրդները. նա դրանք նախապէս սահմանած էր Նրանով, 10 որպէսզի, ժամանակների լրումին, ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրայ, ամէն ինչ Քրիստոսով բովանդակուի: 11 Նրանով է, որ ժառանգեցինք մեզ վիճակուած բաժինը, ըստ առաջադրութեան Աստծու, որ ամէն ինչ յաջողեցնում է իր կամքի խորհուրդների համաձայն. 12 մենք՝ նախապէս Քրիստոսին յուսացողներս, նախասահմանուած եղանք գովելու նրա փառքը: 13 Նրանով է, որ դուք էլ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան Աւետարանը, որին հաւատալով կնքուեցիք խոստացուած Սուրբ Հոգով, 14 որ մեր ժառանգութեան առհաւատչեան է մինչեւ այն օրը, երբ կատարելապէս կը տիրանանք փրկութեանը՝ ի գովութիւն նրա փառքի:

†Յունարէնը ունի լիացրեց:

15 Ուստի ես էլ, երբ լսեցի ձեր հաւատի մասին, որ ունէք ի Տէր Յիսուս, եւ սիրոյ մասին, որ ունէք բոլոր սրբերի հանդէպ, 16 չեմ դադարում գոհութիւն յայտնել ձեզ համար՝ յիշելով ձեզ իմ աղօթքներում, 17 որպէսզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ Հայրը փառքի, ձեզ տայ իմաստութեան եւ յայտնութեան հոգի իրեն ճանաչելու համար: 18 Նա լուսաւոր պիտի դարձնի ձեր սրտի աչքերը, որպէսզի մենք հասկանանք, թէ ի՛նչ է նրա կոչման յոյսը, ի՛նչ է նրա ժառանգութեան փառքի մեծութիւնը սրբերի մէջ 19 եւ ի՛նչ է նրա զօրութեան գերազանց մեծութիւնը: 20 Նա իր ամենակարող զօրութիւնը ցոյց տուեց Քրիստոսով, երբ նրան յարութիւն տուեց մեռելներից եւ նստեցրեց իր աջ կողմում, երկնքի մէջ՝ 21 ամէն իշխանութեան, պետութեան, զօրութեան ու տէրութեան վրայ, այլեւ ամէն անուան վրայ, որ տրւում է ոչ միայն այս աշխարհում, այլ նաեւ հանդերձեալում: 22 Նա ամէն ինչ հնազանդեցրեց Յիսուսի ոտքերի տակ եւ նրան հաստատեց, իբրեւ գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ, 23 եկեղեցի, որ նրա մարմինն է, լրումը նրա, ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ:

ՄԱՀԻՑ ԴԷՊԻ ԿԵԱՆՔ

2 *եւ դուք մեռած էիք ձեր մեղքերի ու յանցանքների մէջ, 2 որոնցում մի ժամանակ ընթանում էիք ըստ այս աշխարհի սովորութեան՝ հնազանդուելով օդում տիրող իշխանի այն ոգուն, որ այժմ ներգործում է ապստամբող մարդկանց մէջ: 3 Նրանց թւում եւ մենք բոլորս մի ժամանակ ապրում էինք մեր մարմնի կրքերով եւ կատարում մարմնի ու մտքի ցանկութիւնները. եւ իսկապէս Աստծու բարկութեան արժանի մարդիկ էինք ուրիշների նման:*

4 Բայց Աստուած, որ առատ է ողորմութեամբ, իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, 5 մինչ մեռած էինք մեր մեղքերի

մէջ, մեզ կենդանացրեց Քրիստոսով† (որովհետեւ շնորհով փրկուեցինք):
6 Նրա հետ յարութիւն տուեց մեզ եւ
նրա հետ նստեցրեց երկնքում Քրիս-
տոս Յիսուսով, 7 որպէսզի գալիք բոլոր
դարերում ցոյց տայ իր շնորհի անչա-
փելի մեծութիւնը մեր նկատմամբ՝
քաղցրութեամբ ի Քրիստոս Յիսուս.
8 որովհետեւ Աստծու շնորհով
փրկուածներ էք հաւատի միջոցով. եւ
այս ձեզնից չէ, այլ պարգեւն է
Աստծու, 9 ոչ էլ ձեր գործերից է,
որպէսզի ոչ ոք չպարծենայ. 10 որով-
հետեւ նրա արարածներն ենք՝ Քրիս-
տոս Յիսուսով ստեղծուածներ բարի
գործերի համար, որոնց համար էլ
Աստուած առաջուց պատրաստեց մեզ,
որպէսզի դրանք կատարենք:

ՄԷԿ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ

11 Ուստի եւ՝ դուք յիշեցէ՛ք, որ մի
ժամանակ հեթանոսներ էիք մարմնով,
այսինքն՝ անթլփատ էիք (այդպէս էիք
կոչւում մարմնի վրայ ձեռքով կա-
տարուած թլփատութիւն չունենալու
պատճառով), 12 քանի որ այն ժամա-
նակ առանց Քրիստոսի էիք եւ հեռա-
ցած Իսրայէլի քաղաքացիութիւնից,
օտարացած խոստման ուխտերից եւ ոչ
մի յոյս չունէիք ու առանց Աստծու
էիք աշխարհում: 13 Իսկ այժմ, Յիսուս
Քրիստոսի միջոցով, դուք, որ մի
ժամանակ հեռացած էիք, մերձաւորներ
եղաք Քրիստոսի արեամբ, 14 որով-
հետեւ նա է մեր խաղաղութիւնը, նա,
որ երկուսը մէկ դարձրեց†. քանդեց իր
մարմնի մէջ միջնորմը՝ թշնամու-
թիւնը, 15 եւ հրամաններով տրուած
պատուիրանների օրէնքը ջնջեց, որ-
պէսզի իրենով երկուսին դարձնի մի
նոր մարդ եւ խաղաղութիւն հաստատի
16 ու իր խաչով հաշտեցնի երկուսին
մէկ մարմնի մէջ Աստծու հետ. քան-
զի թշնամութիւնն սպանեց իր խաչով:
17 Եւ եկաւ խաղաղութիւն աւետարա-
նեց ձեզ՝ հեռու եղողներիդ, եւ խաղա-
ղութիւն՝ մօտ եղողներիդ. 18 որով-
հետեւ նրանով է, որ երկուսս էլ արտօ-
նութիւն ունենք մերձենալու Հօրը մէ՛կ
Հոգով: 19 Ապա ուրեմն, օտար եւ պան-
դուխտ չէք, այլ՝ համաքաղաքացի
սրբերին եւ ընտանի՝ Աստծուն, 20 կա-
ռուցուած առաքեալների եւ մարգարէ-
ների հիմքի վրայ, որի անկիւնաքարը
Քրիստոս Յիսուսն է: 21 Նրա վրայ
ներդաշնակութեամբ հաստատուած
ամբողջ կառոյցը Տիրոջով վերաճում է
մի սուրբ տաճարի, 22 որի մէջ դուք էլ
նրա հետ կառուցւում էք որպէս բնա-
կարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով:

ՊՕՂՈՍԸ՝ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ԱՌԱՔԵԱԼ

3 Ահա թէ ինչու ես՝ Պօղոսը, ձեզ՝
հեթանոսներիդ համար Յիսուս Քրիս-
տոսի բանտարկեալն եմ: 2 Թերեւս
դուք լսած լինէք Աստծու շնորհի
տնտեսութեան մասին, որ տրուեց ինձ
ձեզ համար. 3 որովհետեւ յայտնու-
թեա՛մբ ցոյց տրուեց ինձ խորհուրդը,
ինչպէս աւելի վերեւ գրեցի ձեզ
համառօտակի, 4 որպէսզի կարող լինէք
ընթերցել եւ տեսնել իմ իմացութիւնը
Քրիստոսի խորհրդի մէջ, 5 խորհուրդ,
որ այլ սերունդների մարդկանց որ-
դիներին ցոյց չտրուեց, ինչպէս այժմ
այն յայտնուեց իր սուրբ առաքեալ-
ներին եւ մարգարէներին Սուրբ Հոգու
միջոցով, 6 որպէսզի հեթանոսները
Քրիստոս Յիսուսի միջոցով ժառան-
գակից, նոյն մարմնի անդամ եւ նրա
խոստմանը հաղորդակից լինեն Աւե-
տարանով: 7 Եւ այդ Աւետարանին ես
սպասաւոր եղայ ըստ Աստծու շնորհի
այն պարգեւների, որ տրուեցին ինձ
նրա զօրութեան ներգործութեամբ 8 (ես,
որ յետինն եմ բոլոր սրբերի, ինձ
տրուեց այս շնորհը)՝ աւետարանելու
հեթանոսներին Քրիստոսի անքնին
մեծութիւնը 9 եւ բոլորին լուսաւորելու,
որպէսզի գիտենան, թէ ի՛նչ է այն
խորհրդի տնտեսութիւնը, որ ծած-
կուած էր ի յաւիտենից Աստծու մօտ,
որ ստեղծեց ամէն ինչ, 10 որպէսզի
եկեղեցու միջոցով յայտնի լինի այժմ
երկնային իշխանութիւններին եւ պե-
տութիւններին Աստծու բազմապատիկ
իմաստութիւնը, 11 նրա յաւիտենական

†Յուն. լաւ բն. ունեն մեզ կենդանացրեց Քրիստոսի հետ միասին:
†Այսինքն՝ հրեայի եւ հեթանոսի հակամարտութիւնը:

նախասահմանութեան համաձայն, որ
նա իրագործեց Տէր Յիսուս Քրիստոսի
միջոցով: 12 Մենք էլ համարձակու-
թիւն եւ արտօնութիւն ունենք մերձե-
նալու Աստծուն այն վստահութեամբ,
որ ունենք Յիսուս Քրիստոսին հաւա-
տալով: 13 Ուստի աղաչում եմ, որ
չընկճուէք ձեզ համար մեր† կրած նե-
ղութիւնների պատճառով, նեղութիւն-
ներ, որ մեր‡ փառքն են:

ՃԱՆԱՉԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԷՐԸ

14 Ահա թէ ինչու ծնկի եմ գալիս
մեր Տէր Յիսուս Քրիստոսի§ Հօր առաջ,
15 որից իր անունն է ստանում ամէն
ազգատոհմ երկնքում եւ երկրի վրայ,
16 որպէսզի դուք, ըստ իր փառքի
մեծութեան, իր Հոգու միջոցով զօրու-
թեամբ ամրանաք ներքնապէս. 17 այն-
պէս որ, ձեր հաւատի միջոցով,
Քրիստոս բնակուի ձեր սրտերում, եւ
դուք սիրոյ մէջ արմատաւորուած ու
հաստատուած լինէք. 18 եւ կարողա-
նաք հասկանալ բոլոր սրբերի հետ, թէ
ի՛նչ է լայնութիւնը, երկարութիւնը,
բարձրութիւնը եւ խորութիւնը, 19 այ-
սինքն՝ ճանաչէք Քրիստոսի սէրը, որ
գերազանց է, քան ամէն գիտութիւն,
որպէսզի լցուէք Աստծու լրիւ ամբող-
ջութեամբ: 20 Ուրեմն, նրան, որ կարո՛ղ
է աւելին անել, առաւել առատու-
թեամբ, քան այն ամէնը, ինչ մենք
խնդրում ենք եւ մտածում, ըստ այն
զօրութեան, որ գործում է մեր մէջ, -
21 նրան փա՛ռք եկեղեցում Քրիստոս
Յիսուսով, բոլոր ժամանակներում,
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԲՈԼՈՐՍ՝ ՄԷԿ ՄԱՐՄԻՆ

4 Արդ, աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ
համար բանտարկուածս, որ ընթանաք
այնպէս, ինչպէս վայել է այն կոչ-
մանը, որին կոչուեցիք. 2 կատարեալ
խոնարհութեամբ, հեզութեամբ եւ
համբերութեամբ հանդուրժեցէ՛ք մի-
մեանց սիրով, 3 ջանացէ՛ք պահել
հոգու միութիւնը խաղաղութեան
կապով. 4 մէ՛կ մարմին եւ մէ՛կ հոգի,
ինչպէս որ մէ՛կ է ձեր յոյսը, որին
Աստուած կոչեց մեզ: 5 Մէ՛կ Տէր կայ,
մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն, 6 մէ՛կ
Աստուած, Հա՛յր բոլորի, որ է բոլորի
վրայ, բոլորի հետ եւ մեր բոլորի մէջ:
7 Բայց մեզնից իւրաքանչիւրին
տրուած է շնորհ ըստ Քրիստոսի պար-
գեւած չափի. 9 դրա համար էլ ասում է.

«Ելաւ բարձունքը,
գերիների բազմութիւն գերեվարեց
եւ մարդկանց պարգեւներ տուեց»†:

9 «Ելաւ»-ն ի՞նչ է, եթէ ոչ այն, որ
իջաւ նախ երկրի ստորին կողմը: 10 Նա,
որ իջաւ, նոյն ինքն է, որ բարձրացաւ
երկինքներից աւելի վեր, որպէսզի լցնի
ամբողջ տիեզերքը: 11 Նա շնորհ տուեց
ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝
մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչ-
ներ, ոմանց՝ հովիւներ եւ ուսուցիչներ՝
12 հաստատելու համար սրբերին իրենց
պաշտօնի կատարման մէջ, ի շինու-
թիւն Քրիստոսի մարմնի, 13 մինչեւ որ
մենք բոլորս հասնենք հաւատի կա-
տարեալ միութեանն ու Աստծու Որդու
ճանաչմանը, կատարեալ մարդու աս-
տիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի
հասակի չափը: 14 Այնպէս որ, այսու-
հետեւ չլինենք երեխաներ, որոնք տա-
րուբերուում ու քշւում են վարդա-
պետութեան բոլոր հոսքերից, մարդ-
կանց խաբեբայութեամբ, որոնք խորա-
մանկութեամբ, խաբելով մոլորեցնում
են. 15 այլ ճշմարտութեամբ ապրելով
սիրոյ մէջ, ամէն բան աճեցնենք նրա՛
մէջ, որ գլուխն է՝ Քրիստոս: 16 Նրա-
նից է կախուած ամբողջ մարմինը,
իրար ամրօրէն միացած զանազան
յօդերով, այնպէս որ, երբ մարմնի
իւրաքանչիւր մասը գործում է ինչպէս
որ պէտք է, ամբողջ մարմինը աճում է
եւ կառուցւում սիրոյ մէջ:

ՔՐԻՍՏՈՍՈՎ ՆՈՐ ԿԵԱՆՔ

17 Արդ, այս բանն եմ ասում եւ
վկայում Տիրոջով. դուք այլեւս չընթ-

†Յուն. բառերը մեր բառի փոխարէն ունի իմ:
‡Յունարէնը մեր բառի փոխարէն ունի ձեր:
§Լաւագոյն յուն. բն. չունեն մեր Տէր Յիսուս Քրիստոսի բառերը:
†Սաղմոս 68. 19:

թանաք այնպէս, ինչպէս որ այլ հեթանոսներն են ընթանում իրենց մտքի ունայնութեամբ. 18 նրանց մտքերը մթագնուած են, եւ իրենք օտարացած են Աստծու կեանքից՝ իրենց մէջ եղած տգիտութեան պատճառով, որն իրենց սրտի կուրութեան հետեւանքն է: 19 Նրանք իրենց յոյսը կտրեցին եւ ագահութեամբ անձնատուր եղան անառակութեան եւ ամէն տեսակ պիղծ գործերի: 20 Բայց դուք այսպէս չսովորեցիք Քրիստոսին. 21 թէպէտեւ լսել էք նրա մասին եւ սովորել նրանից, թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը. 22 հեռո՛ւ վանեցէք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականուած է խաբեպատիր ցանկութիւններով. 23 նորոգուեցէ՛ք ձեր մտքով եւ հոգով 24 ու հագէ՛ք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ: 25 Ուստի դէ՛ն գցեցէք ստախօսութիւնը. իւրաքանչիւրը թող իր ընկերոջն ասի ճշմարտութիւնը, որովհետեւ միմեանց անդամներ ենք: 26 Թէ բարկանաք էլ, մեղք մի՛ գործէք. արեգակը ձեր բարկութեան վրայ թող մայր չմտնի. 27 եւ Սատանային տեղի մի՛ տուէք: 28 Ով գողանում էր, այլեւս թող չգողանայ, այլ մանաւանդ թող աշխատի իր ձեռքերով բարիք արտադրել, որպէսզի կարո՛ղ լինի տալու նրան, ով կարիքի մէջ է: 29 Ոչ մի տգեղ խօսք ձեր բերանից թող չելնի, այլ միայն բարի խօսքը, որ շինիչ է եւ օգտակար, որպէսզի շնորհով լցուի նա, ով այն լսում է: 30 Եւ մի՛ տրտմեցրէք Աստծու Սուրբ Հոգին, որով կնքուեցիք փրկութեան օրուայ համար: 31 Ամէն դառնութիւն, բարկութիւն, զայրոյթ, աղաղակ եւ հայհոյութիւն թող վերանայ ձեզնից՝ իրենց չարութեամբ հանդերձ: 32 Միմեանց հետ եղէ՛ք քաղցր, գթած՝ ներելով միմեանց, ինչպէս որ Աստուած ներեց մեզ† Քրիստոսով:

ԱՌՐԵԼ ՈՐՊԷՍ ԼՈՒՍՈՅ ՈՐԴԻՆԵՐ

5 Նմանուեցէ՛ք Աստծուն, որպէս սիրելի զաւակները, 2 եւ ընթացէ՛ք սիրով, ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ եւ իր անձը մատնեց մեզ համար որպէս անուշահոտ պատարագ եւ զոհ Աստծուն: 3 Հեռո՛ւ ձեզնից պոռնկութիւն եւ ամէն տեսակ պղծութիւն կամ ագահութիւն. դրանց անունն իսկ թող չյիշուի ձեր մէջ, ինչպէս որ վայել է սրբերին. 4 եւ հեռո՛ւ ձեզնից զազրախօսութիւն կամ յիմար խօսք կամ խեղկատակութիւն, որ վայել չեն. այլ, մանաւանդ, գոհութիւն թող մատուցուի Աստծուն: 5 Այս բանն իմացէ՛ք, թէ ամէն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ մարդ, որ կռապաշտ է, Աստծու եւ Քրիստոսի թագաւորութեան մէջ ժառանգութիւն չունի: 6 Մնոտի խօսքերով թող ոչ ոք ձեզ չխաբի, որովհետեւ դրա համար է, որ գալիս է Աստծու բարկութիւնը անհնազանդ մարդկանց վրայ: 7 Ուրեմն՝ նրանց մասնակից մի՛ եղէք, 8 որովհետեւ, թէպէտեւ մի ժամանակ խաւար էիք, հիմա լոյս էք ի Տէր. ընթացէ՛ք ինչպէս լուսոյ որդիներ. 9 քանզի լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: 10 Ստուգեցէ՛ք, թէ ո՛րն է հաճելի Տիրոջը. 11 եւ խաւարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղէք, այլ մանաւանդ մերկացրէ՛ք դրանք, 12 որովհետեւ, ինչ որ նրանք գործում են ծածուկ, այդ մասին խօսելն իսկ ամօթ է. 13 այլ ամէն ինչ բացայայտուելով՝ լոյսով յայտնի է լինում, քանզի ամէն ինչ, որ յայտնի է, լոյս է: 14 Դրա համար էլ ասում է.

«Վե՛ր կաց դու, որ ննջում ես,
կանգնի՛ր մեռելների միջից,
եւ Քրիստոս պիտի լուսաւորի քեզ»†:

15 Տեսէք, թէ ինչպիսի զգուշութեամբ պէտք է ընթանաք. ոչ թէ ինչպէս անմիտներ, այլ՝ ինչպէս իմաստուններ. 16 ժամանակն օգտագործեցէ՛ք, քանզի օրերը չար են. 17 դրա համար անմիտ մի՛ եղէք, այլ իմացէ՛ք, թէ ի՛նչ է Տիրոջ կամքը: 18 Եւ մի՛ հարբէք գինով. դրա մէջ զեխութիւն

†Մէջբերում անծանօթ մի գրուածքից, հաւանաբար՝ հնագոյն քրիստոնէական մի օրհներգից:

†Յունարէնն հնագոյն ձեռագրերը մեզ բառի փոխարէն ունեն ձեզ:

կայ. այլ մանաւանդ լցուեցէք Հոգո՛վ, 19 որպէսզի խօսէք միմեանց հետ սաղմոսներով, օրհներգութիւններով եւ հոգեւոր երգերով, որպէսզի երգէք եւ ձեր սրտերում սաղմոս ասէք Տիրոջը: 20 Գոհութի՛ւն յայտնեցէք ամէն ժամ ամէն ինչի համար Հօրը եւ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՈՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

21 Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով: 22 Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, 23 որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի: 24 Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում: 25 Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, 26 որ սրբացնի աւազանի մաքրութեամբ† խօսքով, 27 որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ անարատ: 28 Նոյն ձեւով մարդիկ պարտաւոր են սիրել իրենց կանանց իբրեւ իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում. 29 որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում եւ խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին. 30 քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից‡: 31 «Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը պիտի լինեն մէկ մարմին»§: 32 Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերեալ: 33 Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նո՛յնը արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, եւ կինը երկնչի իր մարդուց:

†Յունարէնն ունի՝ աւազանի ջրով:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն նրա մարմնից եւ նրա ոսկորներից բառերը:

§Մնացոդ 2. 24:

ՈՐԴԻՆԵՐ ԵՒ ԾՆՈՂՆԵՐ

6 Որդինե՛ր, հնազա՛նդ եղէք ձեր ծնողներին ի Տէր, որովհետեւ դա է ճիշտը: 2 Պատուի՛ր քո հօրն ու մօրը, – որ առաջին պատուիրանն է՝ տրուած խոստումով†, – 3 որպէսզի լաւ լինի քեզ համար, եւ երկար կեանք ունենաս երկրի վրայ: 4 Հայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, այլ մեծացրէ՛ք նրանց Տիրոջ խրատով եւ ուսումով:

ԾԱՌԱՆԵՐ ԵՒ ՏԷՐԵՐ

5 Ծառանե՛ր, հնազա՛նդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին ահով եւ դողով եւ անկեղծ սրտով, ինչպէս հնազանդէք Քրիստոսին. 6 ո՛չ թէ հսկողութեան տակ ծառայելով, որպէս մարդահաճոյ անձեր, այլ՝ որպէս Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամքը‡: 7 Ցօժարութեա՛մբ ծառայեցէք, ինչպէս պիտի ծառայէիք Տիրոջը եւ ոչ թէ՝ մարդկանց: 8 Իմացէ՛ք, որ իւրաքանչիւր ոք՝ թէ՛ ծառայ եւ թէ՛ ազատ, ինչ բարի բան որ անի, նոյնն էլ կը ստանայ Տիրոջից: 9 Եւ դուք, տէրե՛ր, նո՛յնն արէք նրանց հանդէպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացէ՛ք, որ ե՛ւ նրանք, ե՛ւ դուք Տէր ունէք երկնքում, եւ նրա առաջ աչառութիւն չկայ:

ՀՈԳԵՒՈՐ ՄԱՐՏ

10 Եւ վերջապէս, զօրացէ՛ք Տիրոջով եւ նրա զօրութեան կարողութեամբ. 11 եւ Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարանքներին. 12 որովհետեւ մեր պատերազմը մարմնի եւ արեան հետ չէ, այլ՝ իշխանութիւնների հետ, պետութիւնների հետ, այս խաւար աշխարհի տիրակալների հետ եւ երկնքի տակ եղող չար ոգիների հետ: 13 Ուստի առէ՛ք Աստծու սպառազինութիւնը, որպէսզի կարողանաք չար օրում դէմ կանգնել չարին. 14 եւ երբ

†Եւ՛ Ելք 20. 12:

‡Յունարէնն աւելացնում է սրտանց կատարելու Աստծու կամքը:

ամէն ինչ կատարէք, հաստատո՛ւն կացէք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մէջքերը գօտեպնդած ճշմարտութեամբ, եւ հագած արդարութեան զրահը՝ 15 ձեր ոտքերը ամրացրէ՛ք խաղաղութեան Աւետարանի պատրաստութեամբ: 16 Եւ այս բոլորի վրայ, առէ՛ք հաւատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: 17 Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խօսքը: 18 Ամենայն աղօթքներով եւ աղաչանքներով ամէն ժամ աղօթեցէ՛ք Հոգով. եւ այդ բանի մէջ հսկեցէ՛ք անխոնջ յարատեւութեամբ եւ աղաչանքներով բոլոր սրբերի համար, 19 նաեւ ինձ համար, որպէսզի ինձ խօսք տրուի իմ բերանը բանալու համարձակութեամբ՝ ցոյց տալու համար Աւետարանի խորհուրդը, 20 որի պատգամաւորն եմ ես այս կապանքներով, որպէսզի իմ այս վիճակում համարձակուեմ խօսել, ինչպէս որ պարտաւոր եմ խօսել:

ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

21 Բայց որպէսզի դուք էլ գիտենաք իմ մասին, թէ ինչ եմ անում, Տիւքիկոս սիրելի եղբայրը եւ Տիրոջ հաւատարիմ պաշտօնեան ձեզ ամէն ինչ կը տեղեկացնի այդ մասին. 22 նրան ուղարկեցի ձեզ մօտ, որպէսզի դուք տեղեակ լինէք մեր մասին, եւ նա մխիթարի ձեր սրտերը: 23 Խաղաղութի՛ւն եղբայրներին եւ սէ՛ր հաւատով հանդերձ՝ Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: 24 Շնո՛րհ բոլոր նրանց, որոնք սիրում են մեր Տէր Յիսուս Քրիստոսին անեղծութեամբ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Եւրոպայի առաջին քաղաքը, որտեղ Պօղոս առաքեալը քարոզեց Քրիստոսի Աւետարանը, Փիլիպպէն է, որը գտնւում է Մակեդոնիայի հռոմէական նախկին նահանգում (Յունաստանի հիւսիս-արեւելեան կողմը): Առաքելական իր երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ Պօղոսն այնտեղ հիմնեց մի Եկեղեցի: Մի քանի տարի անց, մինչ նա բանտարկուած էր (ըստ ոմանց՝ Եփեսոսում, ըստ ուրիշների՝ Կեսարիայում կամ Հռոմում), մի թուղթ ուղարկեց փիլիպպեցիներին՝ գրուած առանձնապէս ջերմ տոնով: Նա ցանկանում էր շնորհակալութիւն յայտնել նրանց այն նուէրների համար, որ նրանք ուղարկել էին իրեն Եպափրոդիտոսի միջոցով, երբ ինքը կարիքի մէջ էր գտնւում: Նա ուզում էր նաեւ քաջալերել նրանց, որպէսզի հաւատարիմ մնան Քրիստոսին եւ չհրապուրուեն կեղծ վարդապետութիւններով, որոնք սպրդում էին իրենց համայնքից ներս:

Թղթի սկզբում Պօղոսը իր ուրախութիւնն ու երախտագիտութիւնն է արտայայտում՝ մտածելով փիլիպպեցիների մասին: Այնուհետեւ տեղեկութիւններ է տալիս իր անձնական կեանքի վերաբերեալ: Գտնուելով անորոշ մի ապագայի առաջ՝ դրսեւորում է ամբողջական վստահութիւն, որ նա ստանում է Յիսուս Քրիստոսից նրա հետ ունեցած հաղորդակցութեան շնորհիւ: Նա քաջալերում է փիլիպպեցիներին, որ հաստատ մնան իրենց հաւատի մէջ եւ ձգտեն միմեանց հետ լինել միաբան՝ մշտապէս ցուցաբերելով խոնարհութիւն եւ ծառայութեան ոգի, որոնք գալիս են Յիսուս Քրիստոսից:

Մինչեւ Պօղոսին նորից տեսնելը, փիլիպպէցիների պատուէրով Եպափրոդիտոսը եւ Պօղոսի մարտակից ընկեր Տիմոթէոսը պահպանում են կապը առաքեալի եւ Փիլիպպէի համայնքի միջեւ:

Այնուհետեւ Պօղոսը իր ընթերցողներին խստիւ զգուշացնում է ճշմարիտ Աւետարանին անհաւատարիմ մարդկանցից: Նա փիլիպպեցիներին հրաւիրում է հետեւելու իրեն՝ հաստատամտութեամբ եւ աներկիւղ առաջ ընթանալու համար դէպի քրիստոնէական կեանքի վեհ նպատակը, այն է՝ դառնալ նման Յիսուս Քրիստոսի: Թուղթն աւարտւում է քաջալերութիւններով, շնորհակալութիւններով եւ ողջոյններով:

Այս թուղթը կոչուել է «ուրախութեան թուղթ», որովհետեւ ուրախութեան թեման կարմիր թելի նման անցնում է նամակի մէջ մէկ ծայրից միւսը: Այդ ուրախութիւնը կապուած է Քրիստոսին հաւատարիմ լինելու զգացման հետ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը եւ Տիմոթէոսը՝ ծառաները Յիսուս Քրիստոսի, բոլոր սրբերին ի Քրիստոս Յիսուս, որ Փիլիպէի կողմերում են՝ եպիսկոպոսներով եւ սարկաւագներով հանդերձ: 2 Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՕԹՔ

3 Գոհութիւն եմ յայտնում իմ Աստծուն ամէն անգամ, երբ ձեզ յիշում եմ իմ բոլոր աղաչանքներում. 4 ձեզ բոլորիդ համար աղօթում եմ խնդութեամբ՝ 5 առաջին օրուանից մինչեւ այժմ Աւետարանին ձեր ունեցած մասնակցութեան համար: 6 Վստահ եմ այն բանում, թէ ով որ ձեր մէջ սկսեց բարի գործերը, աւարտին կը հասցնի մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը: 7 Ինչպէս որ ճշմարիտ է թւում ինձ այդպէս խորհել ձեր բոլորի մասին, քանի որ ես ձեզ ունեմ իմ սրտում, դուք, որ իմ կապանքների եւ Աւետարանի պաշտպանութեան ու հաստատման մէջ բոլորդ ինձ եղած շնորհին բաժնեկից եղաք: 8 Վկայ է ինձ Աստուած, թէ ինչպէ՛ս եմ կարօտել ձեզ բոլորիդ Քրիստոս Յիսուսի գորովով: 9 Եւ ահա այս աղօթքն եմ անում. թող ձեր սէրը աւելի եւ աւելի առատանայ գիտութեան եւ ամենայն իմաստութեան մէջ, 10 որպէսզի դուք լաւն ընտրէք, հաստատուն մնաք եւ առանց գայթակղութեան լինէք Քրիստոսի օրուայ համար՝ 11 լցուած արդարութեան պտուղներով, Յիսուս Քրիստոսի միջոցով, ի փառս եւ ի գովութիւն Աստծու:

ՔՐԻՍՏՈՍ ԿԵԱՆՔ

12 Ուզում եմ, որ գիտենաք, եղբայրնե՛ր, թէ ինչ որ ինձ պատահեց, աւելի շուտ Աւետարանի առաջընթացին ծառայեց. 13 նոյնիսկ իմ կապանքները, որ Քրիստոսի համար են, յայտնի եղան պալատի ամբողջ անձնակազմին եւ միւս բոլոր տեղերում, 14 ինչպէս նաեւ Տիրոջը միացած շատ եղբայրներին, որոնք, քաջալերուած իմ կապանքներով, առաւել եւս համարձակ գտնուեցին՝ առանց երկիւղի քարոզելու Աստծու խօսքը: 15 Ոմանք՝ նախանձից եւ հակառակութիւնից դրդուած, իսկ ոմանք բարի մտադրութեամբ է, որ Քրիստոս են քարոզում. 16 ոմանք էլ՝ սիրուց մղուած, քանզի գիտեն, որ կանգնած եմ Աւետարանի պաշտպանութեան համար. 17 իսկ ոմանք Քրիստոսի մասին պատմում են հակառակութեան համար եւ ոչ թէ մաքուր սրտով, կարծելով, թէ նեղութիւններ են աւելացնում իմ կապանքների վրայ: 18 Բայց ինչ փոյթ. ինչ ձեւով էլ լինի, թէ՛ միտումնաւոր եւ թէ՛ ճշմարտութեամբ, Քրիստոսն է քարոզւում. եւ սրա համար ուրախ եմ ես, այլեւ պիտի շարունակեմ ուրախանալ. 19 որովհետեւ գիտեմ, որ դա ծառայելու է իմ փրկութեանը՝ ձեր աղաչանքներով եւ Յիսուս Քրիստոսի Հոգու օգնութեամբ, 20 ըստ իմ ակնկալութեան եւ յոյսի, որպէսզի ոչնչով ամօթով չմնամ, այլ լինեմ կատարելապէս համարձակ, եւ ինչպէս միշտ, նաեւ այժմ, մեծարուի Քրիստոս իմ մարմնի մէջ թէ՛ իմ ապրելով եւ թէ՛ մեռնելով. 21 քանի որ ինձ համար կեանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ: 22 Ապա եթէ այս մարմնի կեանքը արդիւնաւոր գործի համար է, ես չգիտեմ, թէ ո՞րն ընտրեմ: 23 Ճնշուած եմ երկուսից էլ. մարմնից դուրս գալը եւ Քրիստոսի հետ լինելը աւելի լաւ եմ համարում. 24 իսկ մնալ այս մարմնի մէջ՝ առաւել կարեւոր է ձեզ համար: 25 Եւ համոզուած եմ ու գիտեմ, որ կը մնամ եւ կ'ապրեմ ձեզ բոլորիդ հետ, որ դուք զարգանաք եւ ուրախ լինէք հաւատի մէջ, 26 որպէսզի ինձնով ձեր պարծանքը առաւել լինի Քրիստոս Յիսուսով, երբ ես վերստին գամ ձեզ մօտ:

27 Միայն թէ Աւետարանին արժանի ձեւով ընթացէ՛ք, որպէսզի ձեզ տեսնելու գամ թէ հեռու լինեմ, լսեմ ձեր մասին, որ հաստատուն էք մնացել մէ՛կ հոգով եւ որպէս մէ՛կ շունչ պայքարում էք Աւետարանի հաւատի համար. 28 եւ ոչնչով մի՛ վախեցէք հակառակորդներից. դա ապացոյց է նրանց կորստեան եւ ձեր փրկութեան: 29 Եւ դա Աստծուց է, որ շնորհուեց ձեզ Քրիստոսի համար, որպէսզի ոչ միայն հաւատաք նրան, այլեւ նրա համար չարչարուէք՝ 30 մղելով նոյն պատերազմը, որն իմ մէջ տեսաք եւ այն լսում էք ինձնից:

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

2 Արդ, եթէ կայ մխիթարութիւն Քրիստոսով, եթէ կայ սիրոյ սփոփանք, եթէ կայ Հոգու հաղորդութիւն, եթէ կայ գթութիւն եւ ողորմութիւն, ուրեմն՝ 2 կատարեա՛լ դարձրէք իմ ուրախութիւնը. նո՛յն բանը խորհեցէք, նո՛յն սէրն ունեցէք ձեր մէջ, եղէ՛ք միաշունչ, միախորհուրդ: 3 Մի՛ արէք որեւէ բան հակառակութեան ոգով, ոչ էլ որեւէ բան՝ սնապարծութեամբ, այլ խոնարհութեամբ մէկդ միւսին աւելի լա՛ւ համարեցէք, քան ինքներդ ձեզ: 4 Միայն ձեր շահը մի՛ փնտռէք, այլ իւրաքանչիւր ոք՝ ընկերոջ շահն էլ: 5 Ձեզանից իւրաքանչիւրը թող խորհի այն, ինչ որ կայ Քրիստոս Յիսուսի մէջ, 6 որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հաւասար լինելը յափշտակութիւն† չհամարեց, 7 այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով եւ մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ 8 հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահուան՝ խաչի վրայ: 9 Դրա համար էլ Աստուած նրան առաւել բարձրացրեց եւ նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամէն անուն, 10 որպէսզի Յիսուս Քրիստոսի անունով խոնարհուի ամէն ծունկ՝ լինի թէ՛ երկնաւորների, թէ՛ երկրաւորների եւ թէ՛ սանդարամետականների. 11 եւ ամէն լեզու խոստովանի, թէ Յիսուս Քրիստոս Տէ՛ր է՝ ի փառս Հայր Աստծու:

ԼՈՅՍԻ ՆՄԱՆ ՓԱՅԼԵԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ

12 Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպէս‡ միշտ հնազանդուել էք, երբ եկել եմ ձեզ մօտ, այնպէս էլ հնազա՛նդ եղէք առաւել եւս այժմ, երբ հեռու եմ ձեզանից. ահով եւ դողով դուք ձեր փրկութեան համար աշխատեցէ՛ք. 13 որովհետեւ Աստուած է, որ յաջողեցնում է ձեր մէջ կամենալը եւ կատարելը իր հաճութեան համար: 14 Ամէն ինչ արէ՛ք առանց տրտնջալու եւ առարկելու, 15 որպէսզի լինէք անբիծ եւ անարատ, Աստծու որդիներ, անմեղներ՝ կամակոր եւ խոտորուած ազգի մէջ, ուր պիտի փայլէք ինչպէս լուսատուներն աշխարհում՝ 16 ձեր մէջ պահելով կեանքի խօսքը, որ պիտի լինի իմ պարծանքը Քրիստոսի օրուայ համար, որպէսզի ընդունայն ընթացած եւ ընդունայն աշխատած չլինեմ: 17 Թէկուզ եւ ձեր հաւատին իբրեւ պատարագ եւ զոհ ընծայուեմ, ուրախ եմ եւ մասնակից ձեր բոլորի հրճուանքին: 18 Նոյնպէս եւ դուք հրճուեցէ՛ք եւ մասնակի՛ց եղէք իմ ուրախութեանը:

ՏԻՄՈԹԷՈՍԻ ԵՒ ԵՊԱՓՐՈԴԻՏՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

19 Բայց յոյս ունեմ ի Տէր Յիսուս՝ Տիմոթէոսին շուտափոյթ ուղարկելու ձեզ մօտ, որպէսզի իմ սիրտն էլ հանգիստ լինի, երբ ձեր մասին բան իմանամ. 20 որովհետեւ ոչ ոք չունեմ նրա նման սրտակից, որ հարազատի պէս հոգայ ձեր մասին, 21 քանզի բոլորն էլ իրե՛նց շահն են փնտռում եւ ո՛չ Յիսուս Քրիստոսինը: 22 Բայց նրա փորձուած լինելը դուք էլ գիտէք, որովհետեւ ինձ հետ Աւետարանին ծառայեց այնպէս, ինչպէս որդին՝ հօրը: 23 Արդ, մտադիր եմ ուղարկել սրան, երբ որ իմ վիճակը պարզ լինի: 24 Եւ յոյս ունեմ ի Տէր, որ ինքս էլ կը գամ շուտով: 25 Բայց անհրաժեշտ համարեցի ձեզ մօտ ուղարկել Եպափրոդիտոս եղբօրը՝ իմ գործակցին եւ մարտակցին, որ դուք ուղարկել էիք իմ կարիքները հոգալու համար, 26 քանի որ ինքն էլ շատ կարօտել է ձեզ եւ ցանկանում է ձեզ բոլորիդ տեսնել. նա մտահոգուած էր, որ դուք լսել էիք, թէ ինքը հիւանդացել է: 27 Եւ արդարեւ

†Ա.յսինքն՝ յափշտակութեամբ ձեռք բերելիք բան:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն *ինչպէս* բառը:

հիւանդացաւ մերձիմահ. բայց Աստուած ողորմեց նրան. ոչ միայն նրան, այլեւ՝ ինձ, որպէսզի տրտմութեան վրայ տրտմութիւն չկրեմ: 28 Արդ, շտապ ուղարկեցի նրան, որպէսզի, նրան տեսնելով, կրկին ուրախ լինէք, եւ ես չտրտմեմ: 29 Ընդունեցէ՛ք նրան ի Տէր ամենայն ուրախութեամբ եւ այդպիսիներին պատուական անձեր համարեցէ՛ք, 30 քանի որ նա Տիրոջ գործի համար մինչեւ մահուան դուռը հասաւ՝ իր կեանքն իսկ վտանգելով, որպէսզի ինձ ծառայելու հարցում ձեր պակասը լրացնի:

ՓՐԿՈՒԻԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԻՆ

3 Ուրեմն, իմ եղբայրնե՛ր, ուրա՛խ եղէք ի Տէր. նոյն բաները ձեզ գրելն ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար մեծ ապահովութիւն է: 2 Զգուշացէ՛ք շներից, զգուշացէ՛ք չար մշակներից, զգուշացէ՛ք թլփատութեան կողմնակիցներից. 3 քանզի իսկական թլփատութիւնը մենք ենք, որ Աստծուն ծառայում ենք Հոգով եւ պարծենում ենք Քրիստոս Յիսուսով, իսկ մարմնով չենք պարծենում, 4 թէեւ ինքս էլ մարմնի վրայ նոյն վստահութիւնն ունեմ: Եթէ մէկը կարծում է, որ ինքն այլ կերպ վստահութիւն ունի մարմնի վրայ, ես՝ առաւե՛լ եւս. 5 թլփատուել եմ ութերորդ օրը, Իսրայէլի ցեղից եմ, Բենիամինի սերնդից, եբրայեցի՝ եբրայեցի ծնողներից, ըստ օրէնքի՝ փարիսեցի, 6 ըստ նախանձախնդրութեան՝ հալածում էի եկեղեցին, ըստ օրէնքի արդարութեան՝ անբասիր: 7 Բայց ինչ որ ինձ համար շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար: 8 Եւ ամէն բան, արդարեւ, վնաս եմ համարում մեր Տէր Յիսուս Քրիստոսի գերազանց գիտութեան համար: Նրա համար ամէն ինչից զրկուեցի, – եւ այդ բոլորը աղբ եմ համարում, – որպէսզի շահեմ Քրիստոսին 9 եւ գտնուեմ նրա մէջ. ո՛չ թէ նրա համար, որ ունենամ իմ արդարութիւնը, որ օրէնքից է, այլ Քրիստոսի հաւատից եղած արդարութիւնը, որ Աստծուց եկող արդարութիւնն է՝ հաւատով, 10 որպէսզի ճանաչեմ նրան եւ նրա յարութեան զօրութիւնը ու մասնակից լինեմ նրա չարչարանքներին, կերպարանակից՝ նրա մահուան, 11 որպէսզի հասնեմ մեռելներից յարութիւն առնելուն:

ԱՌԱՋԴԷՊԻ ՆՊԱՏԱԿ

12 Ոչ թէ արդէն հասել եմ նպատակին կամ արդէն կատարեալ եմ, այլ հետամուտ եմ, որ հասնեմ դրան, որի համար էլ բռնուած եմ Քրիստոս Յիսուսից: 13 Եղբայրնե՛ր, ես ինքս ինձ նպատակին հասած չեմ համարում. բայց խնդիրն այն է, որ յետեւում մնացածները մոռացած՝ ձգտում եմ դէպի իմ առջեւում եղածները. 14 ուշադիր վազում եմ աստուածային կոչմանս նպատակէ՛ն՝ Քրիստոս Յիսուսով: 15 Ուրեմն, դուք բոլորդ, որ կատարեալ էք, այս բանը խորհեցէ՛ք. եթէ ուրիշ բան խորհէք, Աստուած ձեզ ա՛յդ էլ կը յայտնի: 16 Միայն թէ ինչի որ հասանք, նո՛յնը խորհենք եւ նո՛յն կանոնի համաձայն ընթանանք†: 17 Եղբայրնե՛ր, նմանուեցէ՛ք ինձ եւ լա՛ւ նայեցէք այնպիսիներին, որ նոյն ձեւով են ընթանում, ինչպէս մենք, որ օրինակ ենք ձեզ համար. 18 որովհետեւ շատերը, – որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ եւ այժմ էլ լալով եմ ասում, – ընթանում են որպէս թշնամիներ Քրիստոսի խաչի. 19 նրանց վախճանը կորուստ է. նրանց աստուածը իրենց որովայնն է, եւ փառքը՝ իրենց ամօթը: Նրանք միայն երկրաւոր բաներն են խորհում: 20 Իսկ մեր քաղաքացիութիւնը երկնքում է, որտեղից եւ ակնկալում ենք Փրկչին՝ Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, 21 որ նորոգելու է մեր խոնարհ մարմինը, որպէսզի այն կերպարանակից լինի իր փառաւոր մարմնին, այն զօրութեամբ, որ կարող է հնազանդեցնել ամէն բան իր իշխանութեանը:

†Լաւագոյն լուս. բն. այս նախադասութեան փոխարէն ունեն՝ միայն թէ ճշմարիտ պահենք այն, ինչի որ հասել ենք:

ՎԵՐՋԻՆ ՅՈՐԴՈՐՆԵՐ

4 Ուրեմն, իմ սիրելի՛ եւ ցանկալի՛ եղբայրներ, որ իմ ուրախութիւնն ու պսակն էք, այսպէս հաստատո՛ւն մնացէք ի Տէր, սիրելինե՛ր:

2 Խնդրում եմ Եւոդիային եւ խնդրում եմ Սիւնտիքին, որ նոյն խորհուրդն ունենան ի Տէր: 3 Այո՛, քեզ էլ եմ աղաչում, իմ հարազատ լծակից, դո՛ւ էլ օգնիր նրանց, որոնք աւետարանի համար պայքարեցին ինձ հետ Կղեմէսի եւ իմ միւս գործակիցների հետ միասին. նրանց անունները կեանքի գրքի մէջ են: 4 Միշտ ուրա՛խ եղէք Տիրոջով, դարձեալ եմ ասում՝ ուրա՛խ եղէք: 5 Թող ձեր հեզութիւնը յայտնի լինի բոլոր մարդկանց: Տէրը մօտ է: 6 Հոգ մի՛ արէք, այլ աղօթքներով եւ աղաչանքներով ձեր խնդրանքները գոհաբանութեամբ յայտնի թող լինեն Աստծուն: 7 Եւ Աստծու խաղաղութիւնը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով:

8 Եւ վերջապէս, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարտութեամբ է, ինչ որ՝ պարկեշտութեամբ, ինչ որ՝ արդարութեամբ, ինչ որ՝ սրբութեամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ՝ առաքինութեամբ, ինչ որ՝ գովութեամբ, – ա՛յն խորհեցէք: 9 Ինչ որ ուսանեցիք, ընդունեցիք, լսեցիք եւ տեսաք իմ մէջ, ա՛յն արէք: Եւ խաղաղութեան Աստուածը թող լինի ձեզ հետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

10 Ես չափազանց ուրախ եղայ Տիրոջով, որ դուք էլ էք մտածել հոգ տանել իմ մասին, ինչպէս արդէն հոգում էիք ինձ համար, բայց առիթ չէիք ունենում: 11 Կարիքի մէջ լինելու համար չէ, որ ասում եմ այս բանը, քանի որ ես սովոր եմ գոհ լինել իմ վիճակից: 12 Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատութեան մէջ լինել: Ամէն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թէ՛ կուշտ լինել, թէ՛ քաղցած մնալ, թէ՛ առատութեան մէջ լինել, թէ՛ զրկանք կրել: 13 Ամէն ինչի կարող եմ նրա՛՝ շնորհիւ, ով ինձ զօրացրեց: 14 Բայց դուք լաւ արեցիք, որ օգնեցիք ինձ նեղութեանս մէջ: 15 Դուք էլ գիտէք, փիլիպեցինե՛ր, որ Աւետարանի քարոզութեան սկզբում, երբ ես ելայ Մակեդոնիայից, ո՛չ մի եկեղեցի տալու եւ առնելու հարցում չօգնեց ինձ, բացի ձեզնից, 16 որ մէկերկու անգամ իմ կարիքների համար օգնութիւն ուղարկեցիք Թեսաղոնիկէ: 17 Ոչ թէ նուէրներ եմ փնտռում, այլ փնտռում եմ այն պտուղը, որ աւելանալու է ձեր հաշուին: 18 Իսկ ես ամէն ինչ առել եմ եւ առատութեան մէջ եմ. լիացած եմ Եպափրոդիտոսի միջոցով ձեզնից ստացածս նուէրով, որ անուշահոտութիւն է, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի: 19 Եւ իմ Աստուածը կը լցնի ձեր կարիքները իր հարստութեան չափով, փառքով, Քրիստոս Յիսուսի միջոցով: 20 Արդ, Աստծուն եւ մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

21 Ողջունեցէ՛ք բոլոր սրբերին ի Քրիստոս Յիսուս: 22 Ողջունում են ձեզ այն եղբայրները, որ ինձ հետ են: 23 Ողջունում են ձեզ բոլոր սրբերը, մանաւանդ նրանք, որ Կայսրի տնից են: 24 Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեր հոգու հետ լինի: Ամէն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Կողոսիան Փոքր Ասիայի քաղաքներից մէկն էր, որ գտնւում էր Եփեսոսից շուրջ 200 կիլոմետր հեռու, դէպի արեւելք: Ցայտնի չէ, թէ Պօղոսը երբեւէ այցելե՞լ է այդ քաղաքը: Նրա ծառայակիցներից մէկը՝ Եպափրասը, որ կողոսացի էր, առաջինը ինքն էր Աւետարանը քարոզել այնտեղ:

Երբ Պօղոսը բանտում էր գտնւում (հաւանաբար Հռոմում), Եպափրասը գնացել էր նրա մօտ՝ յայտնելու, որ կողոսացիները մի նոր վարդապետութեան տարածիչների ազդեցութեան տակ էին ընկել: Ըստ այդ մարդկանց ուսուցման, Աստծուն ճանաչելու եւ փրկուելու համար հարկաւոր էր պաշտամունք մատուցել ինչ-որ հոգեւոր զօրութիւնների, ենթարկուել որոշ ծէսերի (ինչպիսին էր թլփատութիւնը) եւ խստիւ պահպանել մի շարք կանոններ, որոնք վերաբերում էին կերակուրներին, խմիչքներին եւ այլն: Հէնց որ Պօղոսը տեղեկանում է այդ մտահոգիչ կացութեան մասին, մի թուղթ է գրում կողոսացիներին՝ յիշեցնելու համար նրանց, որ Աստծու կողմից շնորհուած փրկութիւնը ի Քրիստոս լիովին բաւարար է: Նա իր թուղթն հաւանաբար ուղարկում է Տիւքիկոսի եւ Օնեսիմոսի միջոցով:

Թղթի առաջին մասում, մի կարճ ողջոյնից եւ Աստծուն ուղղուած մի աղօթքից յետոյ, առաքեալը ակնյայտ կերպով ցոյց է տալիս, որ Քրիստոսին է պատկանում բարձրագոյն իշխանութիւնը. նա գերիվեր է բոլոր հոգեւոր զօրութիւններից. նա է միակ գլուխը Եկեղեցու:

Այնուհետեւ Պօղոսը զգուշացնում է կողոսացիներին հեռու մնալ այն բոլոր մոլորութիւններից, որ ոմանք տարածում են իրենց համայնքում:

Թղթի վերջին մասում, անդրադառնալով կեանքի գործնական կողմերին, նա յորդորներ է տալիս նրանց այն մասին, թէ ինչպիսի վարմունք պէտք է ունենան քրիստոնէական համայնքում, ընտանիքում եւ հասարակութեան մէջ:

Թուղթը եզրափակւում է մի շարք անձնական պատգամներով եւ առաքեալի ձեռքով գրուած ողջոյնի խօսքով:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 *Պօղոսը՝ առաքեալը Յիսուս Քրիս-*
տոսի՝ Աստծու կամքով, եւ Տիմոթէոս
եղբայրը՝ 2 Կողոսիայում եղող սրբերին
եւ հաւատացեալ եղբայրներին ի
Քրիստոս: 3 Շնո՛րհ ձեզ եւ խա-
ղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր
Յիսուս Քրիստոսից:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Գոհութիւն ենք յայտնում Աստծուն
եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը՝
միշտ ձեզ համար աղօթք անելով, 4 լսե-
լով ձեր հաւատի մասին ի Տէր
Քրիստոս Յիսուս եւ սիրոյ մասին, որ
ունէք բոլոր սրբերի հանդէպ, 5 այն
յոյսի համար, որ պահուած է ձեզ
երկնքում: Այդ յոյսի մասին նախապէս
լսել էք Աւետարանի ճշմարտութեան
խօսքով, 6 որ հասաւ մինչեւ ձեզ. եւ թէ
ինչպէս այն աճում ու պտղաբերում է
ամբողջ աշխարհում, ինչպէս եւ ձեր
մէջ, այն օրից, երբ լսեցիք ու
ճշմարտութեամբ ճանաչեցիք Աստծու
շնորհը 7 եւ ինչպէս ուսանեցիք մեր
սիրելի ծառայակից Եպափրասից, որը
Յիսուսի հաւատարիմ ծառան է ձեզ
համար 8 եւ որը պատմեց մեզ այն
սէրը՝ որ Հոգին տուեց ձեզ:

9 Դրա համար մենք էլ՝ այն օրուա-
նից, երբ լսեցինք այդ, չենք դադարում
ձեզ համար աղօթելուց եւ Աստծուն
աղաչանքներ մատուցելուց, որպէսզի
լցուէք նրա կամքի գիտութեամբ՝
ունենալով կատարեալ իմաստութիւն
եւ հոգեւոր իմացութիւն՝ 10 ապրելու
համար Տիրոջն արժանի եւ ամէն
ինչում նրան հաճելի ձեւով, բոլոր
բարի գործերում պտղաբեր լինելու եւ
Աստծու գիտութեամբ աճելու համար՝
11 զօրացած նրա ամբողջ ուժով, նրա
փառքի զօրութեամբ, կատարեալ համ-
բերութեամբ եւ յարատեւութեամբ:

12 Գոհութիւն Հօրը, որ մեզ արժա-
նացրեց մասնակից լինելու լուսաբնակ
սրբերի վիճակին. 13 նա փրկեց մեզ
խաւարի իշխանութիւնից եւ մեզ փո-
խադրեց արքայութիւնն իր սիրելի
Որդու, 14 որով փրկութիւն ունենք նրա
արեամբ եւ մեղքերի թողութիւն՝ նրա
մարմնով†:

ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻՆ

15 *Նա պատկերն է աներեւոյթ*
Աստծու, անդրանիկը բոլոր արարած-
ների. 16 որովհետեւ նրանով ստեղ-
ծուեց այն ամէնը, ինչ որ երկնքում է
եւ ինչ որ՝ երկրի վրայ, ինչ որ երեւում
է եւ ինչ որ չի երեւում. թէ՛ գահեր, թէ՛
տէրութիւններ, թէ՛ պետութիւններ,
թէ՛ իշխանութիւններ, - ամէն ինչ
նրանո՛վ եւ նրա՛ համար ստեղծուեց.
17 եւ նա կար առաջ, քան ամէն ինչ.
եւ ամէն ինչ նրանո՛վ է կանգնած
հաստատ: 18 Եւ նա՛ է գլուխը մարմնի,
որ եկեղեցին է. նա՛, որ սկիզբ է,
անդրանիկը՝ մեռելների միջից, որպէս-
զի ինքը լինի ամէն ինչում նախա-
պատիւը. 19 որովհետեւ Աստուա-
ծութեան լրիւ ամբողջութիւնը նրա՛
մէջ հաճեց բնակուել 20 եւ նրանո՛վ
հաշտեցնել ամէն ինչ իր հետ՝ խա-
ղաղութիւն անելով խաչի վրայ
թափած իր արեամբ ե՛ւ երկրի վրայ, ե՛ւ
երկնքում եղածների համար:

21 Եւ ձեզ, որ մի ժամանակ օտա-
րացած եւ թշնամացած էիք Նրան ձեր
մտածումներով եւ չար գործերով,
այժմ, 22 ահա՛ւասիկ, հաշտեցրեց ձեզ
իր իսկ մարմնով եւ իր մահուամբ,
որպէսզի ներկայացնի ձեզ Աստծու
առաջ սուրբ, անբիծ եւ անարատ, 23 ե-
թէ ամուր ու անսասան մնաք հաւատի
մէջ եւ անխախտ՝ յոյսի մէջ այն
Աւետարանի, որ լսեցիք եւ որ քարո-
զուեց երկնքի տակ գտնուող բոլոր
արարածներին, եւ որին ես՝ Պօղոսը,
սպասաւոր եղայ:

ՊՕՂՈՍԻ ՍՏԱՆՁՆԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

24 *Եւ այժմ ուրախ եմ ձեզ համար*
կրած իմ չարչարանքների համար եւ
լրացնում եմ իմ մարմնի մէջ
Քրիստոսի նեղութիւնների պակասը
իր մարմնի համար, որ է եկեղեցին.
25 դրան ես՝ Պօղոսը, սպասաւոր եղայ
ըստ Աստծու տնտեսութեան, որ

†Յունարէնը չունի ... նրա մարմնով բառերը:

տրուեց ինձ՝ ձեր մէջ կատարելապէս
քարոզելու Աստծու խօսքը, 26 այն
խորհուրդը, որ ծածկուած էր դարերից
եւ սերունդներից, եւ որ այժմ յայտ-
նուեց իր սրբերին. 27 Աստուած ուզեց
ցոյց տալ նրանց, թէ փառքի ինչ
ճոխութիւն կայ այս խորհրդի մէջ
հեթանոսների համար. եւ այդ խոր-
հուրդը այս է. Քրիստոս՝ փառքի յոյսը,
ձեր մէջ: 28 Այդ Քրիստոսն ենք
քարոզում մենք, յորդորում ենք ամէն
մարդու եւ ուսուցանում ամէն մարդու
ամենայն հոգեւոր իմաստութեամբ,
որպէսզի ամէն մարդու կատարեալ
դարձնենք ի Քրիստոս Յիսուս, 29 որի
համար եւ աշխատում ու պայքարում
եմ ըստ նրա այն ուժի, որ գործում է
իմ մէջ զօրութեամբ:

2 Ուզում եմ, որ դուք գիտենաք, թէ
ինչպիսի նեղութիւն եմ կրում ձեզ
համար եւ լաւոդիկեցիների համար եւ
բոլոր նրանց համար, որոնք իմ երեսը
չեն տեսել անձնապէս, 2 որպէսզի
մխիթարուեն նրանց սրտերը, մէկտե-
ղուեն սիրով եւ հասնեն կատարեալ
իմաստութեան ճոխութեանը՝ ճանա-
չելու համար Աստծու խորհուրդը, որ
յայտնուած է ի Քրիստոս Յիսուս, 3 որի
մէջ պահուած են գիտութեան եւ ի-
մաստութեան բոլոր գանձերը: 4 Եւ այս
բանն ասում եմ, որպէսզի ոչ ոք ձեզ
չմոլորեցնի պատիր խօսքերով. 5 որով-
հետեւ, թէպէտեւ հեռու եմ մարմնով,
բայց հոգով ձեզ հետ եմ. ուրախանում
եմ, երբ տեսնում եմ ձեր բարի վարքը
եւ ձեր հաւատի ամրութիւնը ի
Քրիստոս Յիսուս:

ԿԵԱՆՔԻ ԼԻՈՒԹԻՆԸ ՔՐԻՍՏՈՍՈՎ

6 Արդ, ինչպէս որ ընդունեցիք
Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը, այնպէս էլ
ընթացէ՛ք նրանով՝ 7 արմատաւորուած
եւ կառուցուած նրա վրայ, հաստատ
մնալով հաւատի մէջ, ինչպէս որ
ուսանեցիք, որպէսզի աճէք նրա մէջ
գոհութեամբ:

8 Զգո՛յշ եղէք, չլինի թէ մէկը ձեզ
գրաւի ճարտարամտութեամբ եւ սնոտի
խաբեբայութեամբ. դրանք մարդկային
աւանդութեան եւ բնութեան տարերա-
յին ուժերի վրայ են հիմնուած եւ ոչ
Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդա-
պետութեան վրայ. 9 քանի որ նրա մէջ
է բնակւում Աստուածութեան ամբողջ
լիութիւնը մարմնապէս: 10 Դուք էլ էք
լցուած նրանով, որ գլուխն է ամէն
իշխանութեան եւ պետութեան. 11 նրա-
նով դուք անձեռագործ թլփատու-
թեամբ թլփատուեցիք հաւատով՝ մեր-
կանալով մեղանչական մարմնից
Քրիստոսի թլփատութեամբ. 12 թա-
ղուելով նրա հետ մկրտութեան մէջ՝
դրանով իսկ նրա հետ յարութիւն
առաք Աստծու զօրութեանը հաւատա-
լով, որը նրան յարութիւն տուեց
մեռելներից: 13 Եւ ձեզ, որ մի ժա-
մանակ մեռել էիք մեղքերի եւ ձեր
մարմնի անթլփատութեան մէջ, կեն-
դանացրեց իր հետ: 14 Նա ներեց մեզ
մեր բոլոր յանցանքները եւ ոչնչացրեց
հրամաններով հաստատուած այն
պարտամուրհակը, որ մեր դէմ էր,
վերացրեց այն մէջտեղից եւ մեխեց
խաչափայտին: 15 Իշխանութիւններին
եւ պետութիւններին զինաթափ արեց,
հրապարակաւ խայտառակեց՝ նրանց
պարտութեան մատնելով Քրիստոսի
միջոցով՝ նրա յարութեամբ:

16 Ուրեմն, թող ոչ ոք ձեզ չդա-
տապարտի ուտելու կամ խմելու, տօ-
նական օրերի, նորալուսնի կամ շաբա-
թի հարցում, 17 որոնք գալիք բաների
ստուերներն են. բուն մարմինը Քրիս-
տոսն է: 18 Թող ձեզ չխաբի ոչ ոք, որին
հաճելի է, խոնարհ ձեւանալով, հրեշ-
տակներին պաշտամունք մատուցելով,
դեռ չտեսած բաներին միջամուխ լինել-
լով, անտեղի հպարտանալ մարմնա-
կան մտածումներով: 19 Այդպիսին չի
կարող կապուած լինել գլխին՝ Քրիս-
տոսին, որից ամբողջ մարմինը, յոդե-
րով եւ յօդակապերով հաղորդակցուած
եւ միակցուած, իր աճումն է ստանում
այն աճումով, որ Աստծուց է:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ ՔՐԻՍՏՈՍՈՎ

20 Եթէ մեռաք Քրիստոսի հետ եւ
այս աշխարհի տարերքի իշխանու-

թիւնից դուրս եկաք, էլ ինչո՞ւ աշ-
խարհում ապրող էակների նման
հետեւում էք կանոններին՝ ասելով.
21 «Մի՛ մօտեցիր, մի՛ ճաշակիր, մի՛
դիպչիր», 22 քանի որ այդ բոլորը,
գործածուելով, ապականւում են՝ ըստ
մարդկանց պատուիրանների եւ վար-
դապետութեան: 23 Նրանք կարող են
իմաստուն ձեւանալ իրենց ինքնակամ
կրօնով, խոնարհութեամբ եւ իրենց
մարմնի խստակեցութեամբ. բայց այդ
բոլորը մարմնական ցանկութիւնները
զսպելու համար ոչ մէկ արժէք չեն
ներկայացնում:

3 Եթէ յարութիւն առաք Քրիստոսի
հետ, ապա փնտռեցէ՛ք վերին բաները,
այնտեղ, ուր Քրիստոս նստած է
Աստծու աջ կողմը: 2 Վերի՛ն բաների
մասին խորհեցէք եւ ո՛չ թէ այն, որ
այստեղ՝ երկրի վրայ է, 3 քանզի մեռած
էք, եւ ձեր կեանքը պահուած է
Քրիստոսի հետ՝ Աստծու մօտ: 4 Իսկ
երբ Քրիստոս՝ ձեր կեանքը, յայտնուի,
այն ժամանակ դուք էլ նրա հետ կը
յայտնուէք փառքով:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ

5 Սպանեցէ՛ք ուրեմն ձեր երկրաւոր
ցանկութիւնները. դէ՛ն գցեցէք
պոռնկութիւն, պղծութիւն, յոռի կրքեր,
չար ցանկութիւն եւ ագահութիւն, որ
կռապաշտութիւն է: 6 Դրա համար է,
որ անհնազանդ որդիների վրայ գալիս
է Աստծու բարկութիւնը: 7 Դուք էլ էիք
մի ժամանակ ընթանում այդ մեղ-
քերով, երբ ապրում էիք դրանց մէջ:
8 Այժմ դուք եւս թօթափեցէ՛ք այդ
բոլորը՝ բարկութիւն, զայրոյթ, չարու-
թիւն, հայհոյութիւն եւ խեղկատա-
կութիւն՝ ձեր բերաններից: 9 Մի՛ ստէք
միմեանց. հանեցէ՛ք ձեր վրայից հին
մարդուն իր գործերով 10 եւ հագէ՛ք
նորը, այն, որ նորոգուած է գի-
տութեամբ, ըստ իր Արարչի պատկերի.
11 այլեւս չկայ հրեայ, ոչ էլ հեթանոս,
թլփատութիւն եւ անթլփատութիւն,
բարբարոս, սկիւթացի, ծառայ, ազատ,
այլ՝ Քրիստոս, որ ամէն ինչ է ամէն
բանի մէջ: 12 Որպէս Աստծու
ընտրեալներ, սրբեր եւ սիրելիներ,
հագէ՛ք, ուրեմն, գութ, ողորմութիւն,
քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզու-
թիւն, համբերատարութիւն՝ 13 հան-
դուրժելով միմեանց, ներելով միմեանց,
եթէ մէկը միւսի դէմ գանգատ ունի.
ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց
ձեզ†, նոյն ձեւով արէ՛ք եւ դուք: 14 Եւ
այս բոլորի վրայ հագէ՛ք սէրը, որ
կապն է կատարելութեան: 15 Եւ ձեր
սրտերում թող հաստատուի Քրիստոսի
խաղաղութիւնը, որին եւ կոչուեցիք
մէկ մարմնով. եւ գոհութի՛ւն մա-
տուցեցէք:

16 Թող Քրիստոսի խօսքը բնակուի
ձեր մէջ առատապէս, որ կատարեալ
իմաստութեամբ ուսուցանէք եւ խրա-
տէք միմեանց՝ սաղմոսներով, օրհներ-
գութիւններով, հոգեւոր երգերով եւ
երախտագիտութեամբ օրհնելով ձեր
սրտերում Աստծուն: 17 Եւ ինչ որ անէք
խօսքով եւ գործով, բոլորն արէ՛ք Տէր
Յիսուսի անունով. գոհութի՛ւն մա-
տուցեցէք նրանով Աստծուն եւ Հօրը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

18 Կանա՛յք, հնազա՛նդ եղէք ձեր
մարդկանց, ինչպէս որ վայել է ի Տէր:
19 Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց եւ
մի՛ դառնացրէք նրանց: 20 Որդինե՛ր,
ամէն ինչում հնազա՛նդ եղէք ձեր
ծնողներին, որովհետեւ հաճելին այդ է
Տիրոջ առաջ: 21 Հայրե՛ր, մի՛ զայ-
րացրէք ձեր որդիներին, որ չյու-
սալքուեն: 22 Ծառանե՛ր, ամէն ինչում
հնազա՛նդ եղէք ձեր մարմնաւոր տէ-
րերին, ոչ թէ մարդահաճոյ կերպով,
ցուցադրական ծառայութեամբ, այլ
սրտի անկեղծութեամբ՝ երկիւղ կրելով
Տիրոջից: 23 Ինչ որ անէք, արէք
սրտա՛նց, որպէս թէ Տիրոջ համար էք
անում եւ ոչ թէ՝ մարդկանց համար:
24 Իմացէ՛ք, որ Տիրոջից պիտի ստանաք
ձեր ժառանգութեան հատուցումը,
քանզի Տէր Քրիստոսին էք ծառայում:
25 Իսկ անիրաւը պիտի պատժուի ըստ
իր անիրաւութեան, քանի որ Աստծու
առաջ աչառութիւն չկայ:

†Յուն. լաւ բն. ունեն ... ինչպէս Տէրը ներեց ձեզ ...

4 Տէրե՛ր, ծառաների հետ վարուեցէ՛ք ուղղամտութեամբ եւ արդարութեամբ. իմացէ՛ք, որ դուք էլ Տէր ունէք երկնքում:

ՅՈՐԴՈՐ ԱՂՕԹՔԻ ԵՒ ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ

2 Ցաճա՛խ աղօթեցէք՝ աղօթքի մէջ արթուն մնալով գոհութեամբ: 3 Միաժամանակ աղօթեցէք եւ մե՛զ համար, որպէսզի Աստուած բացի մեր առաջ խօսքի դուռը՝ յայտնելու խորհուրդը Քրիստոսի, որի համար էլ կապանքների մէջ եմ, 4 որպէսզի յայտնի դարձնեմ նրան՝ խօսելով այնպէս, ինչպէս որ պէտք է խօսեմ:

5 Իմաստութեա՛մբ վարուեցէք դրսեցիների հետ՝ օգտագործելով ժամանակը: 6 Եւ ձեր խօսքը թող լինի միշտ լի Տիրոջ շնորհով, որպէս թէ աղով համեմուած լինի, որպէսզի դուք իմանաք, թէ ինչպէ՛ս պէտք է պատասխան տաք իւրաքանչիւրին:

7 Իսկ ինչ վերաբերում է ինձ, այդ բոլորի մասին ձեզ կը պատմի Տիւքիկոսը՝ սիրելի եղբայրը եւ հաւատարիմ պաշտօնեան եւ իմ ծառայակիցը ի Տէր. 8 նրան ձեզ մօտ ուղարկեցի այդ բանի համար, որպէսզի իմանաք մեր մասին, եւ նա մխիթարի ձեր սրտերը. 9 նրան ուղարկեցի հաւատարիմ եւ սիրելի եղբօր՝ Օնեսիմոսի հետ միասին, որ ձեզնից է: Նրանք ձեզ կը պատմեն ամէն բան, որ կատարւում է այստեղ:

ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

10 Ձեզ ողջունում է Արիստարքոսը՝ իմ բանտակիցը, ինչպէս նաեւ Բառնաբասի եղբօրորդի Մարկոսը (որի մասին հրահանգ ունէք, որ, եթէ ձեզ մօտ գայ, ընդունէք նրան). 11 ողջունում է նաեւ Յիսուսը՝ Յուստոս կոչուածը. սրանք թլփատուածներից են. սրա՛նք միայն գործակից եղան ինձ Աստծու արքայութեան համար եւ նոյնիսկ մխիթարութիւն եղան ինձ համար: 12 Ողջունում է ձեզ Եպափրասը՝ ձեզնից մէկը. Քրիստոս Յիսուսի այս ծառան միշտ տքնաջան աղօթում է ձեզ համար, որպէսզի մնաք կատարեալ եւ գործադրէք Աստծու կամքը ամէն բանի մէջ: 13 Վկայում եմ նրա մասին, որ շատ հոգածութիւն ունի ձեր եւ Լաւոդիկեցիների համար եւ բոլոր նրանց համար, որ Երապոսլում են: 14 Ողջունում է ձեզ Ղուկասը՝ բժիշկը եւ սիրելին, ինչպէս նաեւ Դեմասը: 15 Ողջունեցէ՛ք այն եղբայրներին, որ գտնւում են Լաւոդիկիայում. եւ Նիմփային ու նրա տնական եկեղեցուն: 16 Եւ երբ այս թուղթն ընթերցուի ձեզ մօտ, այնպէս արէք, որ Լաւոդիկեցիների եկեղեցում էլ ընթերցուի. եւ Լաւոդիկեցիներին ուղարկուած թուղթն էլ դո՛ւք ընթերցեցէք: 17 Եւ ասացէ՛ք Արքիպպոսին. «Զգո՛յշ եղիր այն սպասաւորութեան համար, որ ընդունեցիր Տիրոջով, որպէսզի այն կատարես»: 18 Այս ողջոյնը իմ՝ Պօղոսիս ձեռքով է: Իմ կապանքները պահեցէ՛ք ձեր մտքում: Շնո՛րհ՝ ձեզ հետ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Թեսաղոնիկէն Մակեդոնիայի հռոմէական նահանգի մայրաքաղաքն էր՝ Յունաստանի հիւսիս-արեւելեան կողմում: Առաքելական իր երկրորդ ճանապարհորդութեան ընթացքում է, որ Պօղոս առաքեալը այցելեց այդ քաղաքը Փիլիպպէից հեռանալուց յետոյ: Նա այնտեղ հաստատեց քրիստոնէական մի համայնք, բայց երկար չկարողացաւ մնալ հրէական գաղութի մի մասի հակառակութեան պատճառով: Ստիպուած լինելով թողնել Թեսաղոնիկէն՝ նա այնտեղից անցաւ Բերիա: Աւելի ուշ, երբ նա Կորնթոսում էր գտնւում, նրա գործակից Տիմոթէոսը միացաւ նրան եւ տեղեկութիւններ տուեց Թեսաղոնիկէի կացութեան մասին: Այն ժամանակ Պօղոսը գրեց թեսաղոնիկեցիներին ուղղուած իր առաջին թուղթը հէնց Կորնթոսից: Մասնագէտներն ընդհանրապէս ընդունում են, որ այս թուղթը Նոր կտակարանի հնագոյն գրուածքն է եւ այն տեղադրում են Քրիստոսից յետոյ 50-ական թուականների շուրջ:

Թեսաղոնիկէից ստացուած լուրերը ուրախացնում են առաքեալին: Նա գոհութիւն է յայտնում Աստծուն, որ թեսաղոնիկեցիները լաւ օրինակ են տալիս այդ շրջանում գտնուող միւս համայնքներին: Յիշեցնելով հանդերձ նրանց մէջ իր իսկ կատարած աշխատանքը՝ նա միաժամանակ ասում է, թէ ինչքա՜ն կը ցանկանար վերստին տեսնել նրանց: Նա նրանց թելադրում է ոչ միայն յարատեւել քրիստոնէական կեանքի մէջ, այլ նաեւ՝ առաջ ընթանալ: Միւս կողմից՝ նա պատասխանում է այն հարցերին, որոնք առաջադրւում են մեռելների յարութեան եւ Քրիստոսի փառաւոր գալստեան մասին: Նա աւարտում է իր թուղթը զանազան յանձնարարութիւններով եւ ողջոյններով:

Այս թուղթը կը լուսաբանի բոլոր նրանց, ում մտահոգում է ժամանակների վախճանի հեռանկարը: Արդարեւ, այն կը յիշեցնի հաւատացեալներին, որ էականը վկայելն է այն մասին, որ այժմ իրենք պատկանում են լոյսի աշխարհին, իսկ ինչ վերաբերում է ապագային, հարկաւոր է ոգեւորուել այն յոյսով, որ ժամանակը կը գայ (կարեւոր չէ թուականը), երբ իրենք կը լինեն «մշտապէս Տիրոջ հետ»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը, Սիղուանոսը եւ Տիմոթէոսը՝ Թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն՝ մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս Քրիստոսով: 2 Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն:

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՀԱՒԱՏԸ

Միշտ գոհութիւն ենք յայտնում Աստծուն ձեզ համար՝ բոլորիդ յիշատակելով մեր աղօթքներում, 3 անդադար յիշելով ձեր հաւատի գործը, սիրոյ վաստակը եւ յոյսի համբերութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աստծու եւ մեր Հօր առաջ: 4 Սիրելի՛ եղբայրներ, գիտցէ՛ք, որ ընտրուել էք Աստծու կողմից. 5 մեր Աւետարանը միայն խօսքերով չքարոզուեց ձեզ, այլ նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգով եւ կատարեալ վստահութեամբ. գիտէք նաեւ, թէ ինչպիսի ընթացք ունեցանք ձեր մէջ ձեզ համար: 6 Եւ դուք, նմանուելով մեզ եւ Տիրոջը, ընդունեցիք խօսքը բազում նեղութեան մէջ Սուրբ Հոգու ուրախութեամբ՝ 7 օրինակ հանդիսանալով բոլոր հաւատացեալներին, որոնք Մակեդոնիայում եւ Աքայիայում են. 8 ձեզնից հնչեց Աստծու խօսքը ոչ միայն Մակեդոնիայում եւ Աքայիայում, այլեւ առ Աստուած ձեր ունեցած հաւատը սփռուեց ամէն տեղ, այնպէս որ մեզ պէտք չէ մի որեւէ բան խօսել այդ մասին, 9 քանի որ մարդիկ իրենք իսկ պատմում են մեր մասին. թէ ինչպէս եղաւ մեր մուտքը ձեր մէջ, եւ թէ ինչպէս կուռքերից դարձաք առ Աստուած՝ ծառայելու համար կենդանի եւ ճշմարիտ Աստծուն 10 եւ սպասելու երկնքից նրա Որդու գալստեան, որին յարութիւն տուեց նա մեռելներից, Յիսուսին, որ պիտի փրկի մեզ վերահաս բարկութիւնից:

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԷՈՒՄ

2 Եղբայրնե՛ր, դուք ինքներդ գիտէք, որ իզուր չեղաւ մեր մուտքը ձեր մէջ, 2 այլ, նախապէս չարչարուելով եւ անարգուելով Փիլիպէում, – ինչպէս որ դուք էլ գիտէք, – մեր Աստուծով համարձակուեցինք պատմել ձեզ Աստծու Աւետարանը մեծ ընդդիմութեան հանդիպելով. 3 որովհետեւ մեր յորդորը ո՛չ մոլորութիւնից է, ո՛չ պղծութիւնից եւ ո՛չ էլ նենգամտութիւնից: 4 Այլ, ինչպէս ընտրուեցինք Աստծուց՝ հաւատարիմ լինելու Աւետարանին, այնպէս էլ խօսում ենք՝ հաճելի լինելու համար ոչ թէ մարդկանց, այլ՝ Աստծուն, որ քննում է մեր սրտերը. 5 շողոքորթութեան խօսքեր երբեք չգործածեցինք ձեզ մօտ, ինչպէս որ դուք էլ գիտէք. եւ ոչ էլ եղանք ձեր մէջ ագահութիւնից մղուած, ինչպէս որ Աստուած էլ վկայ է. 6 եւ փառք չփնտռեցինք մարդկանցից, ո՛չ ձեզնից եւ ո՛չ էլ ուրիշներից: 7 Կարո՛ղ էինք, որպէս Քրիստոսի առաքեալներ, ծանրութիւն դառնալ ձեզ, բայց համեստ եղանք ձեր մէջ, ինչպէս մի դայեակ, որ մանուկներ է խնամում: 8 Նոյն ձեւով մենք էլ գթացինք ձեզ. յօժար էինք ձեզ տալ ոչ միայն Աստծու Աւետարանը, այլեւ մեր անձը, քանի որ մեր սիրելիներն էիք եղել: 9 Եղբայրնե՛ր, յիշեցէ՛ք մեր վաստակը եւ ջանքը, երբ գիշեր-ցերեկ աշխատում էինք ձեզնից որեւէ մէկի վրայ ծանրութիւն չլինելու համար. եւ ձեզ քարոզում էինք Աստծու Աւետարանը: 10 Վկայ էք դուք ինքներդ, վկայ է նաեւ Աստուած, թէ ինչպէս սրբութեամբ, արդարութեամբ եւ անբասիր կերպով վարուեցինք ձեզ՝ հաւատացեալներիդ հետ. 11 ինչպէս գիտէք էլ, ձեզնից իւրաքանչիւրին, ինչպէս հայրը՝ որդիներին, 12 մխիթարում էինք եւ սփոփում ու վկայութիւն էինք տալիս, որ դուք ընթանաք Աստծուն արժանի կերպով, որը կանչեց† ձեզ իր արքայութեանը եւ փառքին:

13 Ահա թէ ինչու մենք շարունակ գոհութիւն ենք տալիս Աստծուն նրա համար, որ, մեզնից Աստծու խօսքի լուրն առնելով, այն ընդունեցիք ոչ որպէս մարդկանց խօսք, այլ՝ ճշմարտապէս, որպէս Աստծու խօսք, որ ներգործում է նաեւ ձեր՝ հաւատացեալ-

†Ցուն. լաւ բն. ունեն ... որ կանչում է ...

նե՛րիդ մէջ. 14 որովհետեւ դուք, եղբայրնե՛ր, նմանուեցիք Աստծու այն եկեղեցիներին, որ Հրէաստանում են ի Քրիստոս Յիսուս, քանի որ դուք էլ ձեր ազգակիցների կողմից նոյն չարչարանքներով չարչարուեցիք, ինչպէս որ նրանք՝ հրեաներից, 15 որոնք եւ սպանեցին Տէր Յիսուսին եւ մարգարէներին ու հալածեցին մեզ եւ Աստծու աչքից ելան ու բոլոր մարդկանց հակառակորդ եղան: 16 Արգելում էին մեզ քարոզել հեթանոսներին՝ նրանց փրկութեան համար, որպէսզի ամէն ժամ լցնեն իրենց մեղքի չափը. սակայն նրանց վրայ բարկութիւնը հասել է իսպառ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

17 Իսկ մենք, եղբայրնե՛ր, թէպէտեւ միառժամանակ դէմքով զրկուած մնացինք ձեզնից, բայց՝ ո՛չ սրտով. առաւել եւս շտապեցինք տեսնել ձեր երեսները մեծ ցանկութեամբ: 18 Դրա համար, ես՝ Պօղոսը, մէկ անգամ եւ նոյնիսկ երկու անգամ կամեցայ գալ ձեզ մօտ, բայց Սատանան արգելք եղաւ մեզ. 19 քանզի ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը կամ մեր պարծանքի պսակը, եթէ ոչ՝ դո՛ւք ի Տէր, Յիսուս Քրիստոսի առաջ, նրա գալստեան ժամանակ. 20 որովհետեւ դո՛ւք էք մեր փառքը եւ ուրախութիւնը:

ՏԻՄՈԹԷՈՍԻ ԱՌԱՔՈՒՄԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԷ

3 Ի վերջոյ, չհամբերեցինք այլեւս, որովհետեւ բարւոք թուաց մեզ միայնակ մնալ Աթէնքում. 2 բայց ուղարկեցինք Տիմոթէոսին՝ մեր եղբօրն ու Աստծու եւ Քրիստոսի Հօր Աւետարանի մեր գործակցին† ամրապնդելու ձեզ եւ մխիթարելու ձեր հաւատի համար, 3 որպէսզի չսասանուէք այս նեղութիւնների մէջ. դուք ինքներդ իսկ գիտէք, որ այս բանի համար ենք սահմանուած, 4 քանի որ, մինչ ձեզ մօտ էինք, առաջուց ասում էինք ձեզ, թէ նեղութիւններ են հասնելու մեր վրայ. ինչպէս որ եղաւ իսկ. եւ դուք գիտէք այդ: 5 Դրա համար էլ ես այլեւս չկարողանալով համբերել, մարդ ուղարկեցի՝ իմանալու ձեր հաւատի մասին, այն մտավախութեամբ, որ փորձիչը ձեզ էլ փորձած լինի, եւ իզուր լինի մեր տարած աշխատանքը:

6 Բայց հիմա, երբ Տիմոթէոսը ձեր մօտից մեզ մօտ եկաւ եւ ձեր հաւատի ու սիրոյ աւետիսը տուեց մեզ, որ միշտ մեր բարի յիշատակն էք պահում ձեր մտքում եւ որ ցանկանում էք մեզ տեսնել, ինչպէս եւ մենք՝ ձեզ, 7 դրա համար, եղբայրնե՛ր, մխիթարուեցինք ձեզնով, ձեր ունեցած հաւատով մեր բոլոր վշտերի եւ նեղութիւնների մէջ. 8 եւ այժմ կենդանի կը լինենք, եթէ դուք հաստատ մնաք Տիրոջով: 9 Ի՞նչ գոհութիւն կարող ենք մատուցել Աստծուն ձեզ համար այն ամբողջ ուրախութեան պատճառով, որով ուրախանում ենք ձեզ համար Աստծու առաջ. 10 գիշեր-ցերեկ թախանձագին աղօթում ենք, որ տեսնենք ձեր երեսը եւ լրացնենք ձեր հաւատի պակասը: 11 Եւ ինքն Աստուած ու մեր Հայրը եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս թող ուղղի մեր ճանապարհները դէպի ձեզ. 12 եւ ինքը Տէրը թող աճեցնի եւ առատացնի ձեր սէրը, որ ունէք միմեանց հանդէպ եւ բոլորի հանդէպ, ինչպէս եւ մենք՝ ձեր հանդէպ: 13 Թող նա ամրացնի ձեր սրտերը, անարատ սրբութեամբ, Աստծու եւ մեր Հօր առաջ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան ժամանակ՝ իր բոլոր սրբերով հանդերձ:

ԱՍՏԾՈՒՆ ՀԱՃԵԼԻ ԿԵԱՆՔ

4 Ուրեմն, եղբայրնե՛ր, աղաչում ենք ձեզ եւ յորդորում Քրիստոս Յիսուսով, որ ինչպէս սովորեցիք մեզնից, այնպէս ընթանաք եւ հաճելի լինէք Աստծուն. եւ այդպէս էլ ընթանում էք, որպէսզի աւելի ու աւելի առաջ գնաք նոյն բանի մէջ: 2 Եւ գիտէք, թէ ինչպիսի պատուէրներ տուեցինք ձեզ Տէր Յիսուսով. 3 որովհետեւ Աստծու կամքը ա՛յս է. որ դուք սուրբ լինէք, հեռու մնաք պոռնկութիւնից. 4 ձեզնից իւրաքանչիւր ոք գիտենայ իր մարմինը պահել սրբութեամբ ու պատուով 5 եւ ոչ թէ

†Լաւագոյն լուն. բն. ունեն ... եւ Աստծու պաշտօնեային Քրիստոսի Աւետարանում:

ցանկութեան կրքով, ինչպէս այլ հեթանոսներ, որ չեն ճանաչում Աստծուն: 6 Թող ոչ ոք այդ բանում չափը չանցկացնի եւ չդիպչի իր եղբօր պատուին, քանզի այդ բոլոր բաների համար Տէրը վրէժխնդիր է, ինչպէս որ առաջուց ասացինք ձեզ եւ վկայեցինք. 7 արդարեւ, Աստուած չկոչեց մեզ պղծութեան, այլ՝ սրբութեան: 8 Ահա թէ ինչու, ով անարգում է այս բանը, մարդո՛ւն չի անարգում, այլ՝ Աստծուն, որը եւ Սուրբ Հոգին տուեց ձեզ:

9 Իսկ եղբայրասիրութեան մասին պէտք չէ ձեզ բան գրել, քանի որ դուք ինքներդ իսկ Աստծուց էք սովորել միմեանց սիրել. 10 որովհետեւ այդ նոյնն անում էք բոլոր եղբայրների հանդէպ, որ գտնւում են Մակեդոնիայի բոլոր կողմերում: Եղբայրնե՛ր, խնդրում եմ ձեզ, որ առաւել եւս աճէք եւ առաջ գնաք, 11 ապրէք խաղաղ եւ իւրաքանչիւրդ ձեր գործով զբաղուէք ու աշխատէք ձեր ձեռքերով, ինչպէս որ պատուիրել ենք ձեզ, որպէսզի պարկեշտութեամբ վարուէք դրսեցիների հետ եւ ոչ մի բանի կարօտ չլինէք:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԻՐՈՋ ԳԱԼՈՒՍՏԸ

12 Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգէտ լինէք ննջեցեալների մասին, որպէսզի չտխրէք, ինչպէս ուրիշները, որոնք յոյս չունեն: 13 Եթէ հաւատում ենք, թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, այդպէս էլ Աստուած Յիսուսի միջոցով ննջեցեալներին ետ կեանքի պիտի բերի նրա հետ: 14 Մենք այս բանն ասում ենք Տիրոջ խօսքով. եթէ մենք ողջ մնանք մինչեւ Տիրոջ գալուստը, չպիտի կանխենք ննջեցեալներին, 15 որովհետեւ Տէրն ինքը, ազդարարութեան նշանով, հրեշտակապետի ձայնով եւ Աստծու շեփորով պիտի իջնի երկնքից, եւ Քրիստոսով մեռածները առաջինը յարութիւն պիտի առնեն. 16 ապա եւ մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, նրանց հետ միասին պիտի յափշտակուենք-տարուենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում եւ այդպէս մշտապէս Տիրոջ հետ պիտի լինենք: 17 Ուրեմն, միխիթարեցէ՛ք միմեանց այս խօսքերով:

ԱՐԹՈՒՆ ԵՒ ՊԱՏՐԱՍՏ ՏԻՐՈՋ ԳԱԼՍՏԵԱՆ

5 Եղբայրնե՛ր, բայց ժամերի եւ ժամանակների մասին կարիք չկայ ձեզ գրելու, 2 որովհետեւ դուք ինքներդ իսկ ստոյգ գիտէք, թէ Տիրոջ օրը այնպէս է հասնում, ինչպէս գողը՝ գիշերով: 3 Երբ ասեն, թէ՝ խաղաղութիւն եւ ապահովութիւն է, այն ժամանակ յանկարծակի կը հասնի նրանց կործանումը, ինչպէս լինում է յղի կնոջ երկունքը. եւ նրանք չեն փրկուելու: 4 Իսկ դուք, եղբայրնե՛ր, խաւարի մէջ չէք, որ այն օրը ձեր վրայ հասնի՝ ինչպէս գողը. 5 որովհետեւ դուք բոլորդ լուսոյ որդիներ էք եւ ցերեկուայ որդիներ: Գիշերինը չենք, խաւարինը չենք: 6 Ուրեմն չքնենք մնանք, ինչպէս՝ ուրիշները, այլ արթուն եւ զգաստ լինենք. 7 որովհետեւ, ովքեր ննջում են, գիշերն են ննջում, եւ ովքեր հարբում են, գիշերն են հարբում. 8 իսկ մենք, որ ցերեկուայ որդիներ ենք, արթո՛ւն լինենք եւ սիրոյ ու հաւատի զրահները հագնենք եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դնենք. 9 որովհետեւ Աստուած մեզ չնախասահմանեց բարկութեան համար, այլ՝ փրկութիւնը ժառանգելու համար՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով. 10 նա մեռաւ մեզ համար, որպէսզի արթուն լինենք թէ ննջենք, նրա հետ միասի՛ն ապրենք: 11 Ուստի միխիթարեցէ՛ք եւ ամրապնդեցէ՛ք միմեանց, ինչպէս որ արդէն անում էք:

ՎԵՐՋԻՆ ՅՈՐԴՈՐՆԵՐ ԵՒ ԲԱՐԵՒՆԵՐ

12 Եղբայրնե՛ր, աղաչում ենք ձեզ, որ ճանաչէք եւ գնահատէք ձեր վաստակաւորներին, Տիրոջ կողմից ձեր վրայ նշանակուած վերակացուներին, ինչպէս նաեւ ձեզ խրատողներին. 13 եւ առաւելագոյն սիրոյ արժանի համարեցէ՛ք նրանց՝ իրենց աշխատանքի համար: Խաղաղութի՛ւն ունեցէք միմեանց միջեւ: 14 Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ. խրատեցէ՛ք ստահակներին, քաջալերեցէ՛ք երկչոտներին, օգնակա՛ն եղէք տկարներին, համբերատա՛ր եղէք բոլորի հանդէպ: 15 Զգո՛յշ եղէք, չլինի թէ մէկը չարին չարով հատուցի. միշտ միմեանց հանդէպ եւ բոլորի հանդէպ բարին գործելու հետամո՛ւտ եղէք: 16 Ուրա՛խ եղէք միշտ, 17 անդադար աղօթեցէ՛ք, 18 ամէն ինչում գոհութի՛ւն մատուցեցէք, որովհետեւ ա՛յդ է Աստծու կամքը ձեզ համար ի Քրիստոս Յիսուս: 19 Մի՛ հանգցրէք Հոգին, 20 մի՛ արհամարհէք մարգարէութիւնները, 21 փորձեցէ՛ք ամէն ինչ, բարին ամո՛ւր պահեցէք, 22 հեռո՛ւ մնացէք բոլոր չար բաներից:

23 Եւ խաղաղութեան Աստուածն ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապէս, եւ ձեր ամբողջ հոգին, շունչը եւ մարմինը թող անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստը: 24 Հաւատարիմ է նա, որ կոչեց ձեզ. նա է դարձեալ, որ նոյնը պիտի անի:

25 Եղբայրնե՛ր, աղօթեցէ՛ք նաեւ մեզ համար: 26 Ողջունեցէ՛ք բոլոր եղբայրներին սուրբ համբոյրով: 27 Երդուել եմ տալիս ձեզ Տիրոջով, որ ընթերցէք այս թուղթը բոլոր սուրբ† եղբայրներին: 28 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ:

†Լաւագոյն յուն. բն. չունեն սուրբ բառը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Թեսաղոնիկեցիներին ուղղուած երկրորդ թղթում Պօղոս առաքեալը վերստին կանգ է առնում այն նիւթի վրայ, որն արդէն շօշափել էր առաջին թղթում. դա Քրիստոսի փառաւոր գալստեան մասին առաջադրուած հարցն էր: Այս նիւթը շարունակում էր յուզել Թեսաղոնիկէի քրիստոնեաներին: Արդարեւ, նրանցից ոմանք պնդում էին, որ այդ օրը եկել հասել է արդէն, ուրիշները մերժում էին՝ աշխատելով պատճառաբանել, որ ժամանակների վախճանը մօտալուտ է, եւ հետեւաբար ապրում էին աշխատասէր, գործունեայ եղբայրների հաշուին: Թղթի նպատակն էր, ուրեմն, սրբագրել նրանց սխալ գաղափարները, որոնք տագնապի էին մատնել Թեսաղոնիկէի Եկեղեցին:

Առաքեալը նախ գոհութիւն է յայտնում Աստծուն այն հաւատի եւ սիրոյ համար, որ ցուցաբերում էին Թեսաղոնիկէի քրիստոնեաները: Միեւնոյն ժամանակ նա Տիրոջից խնդրում է յարատեւութիւն շնորհել նրանց այն ծառայութեան մէջ, որին կոչուել էին նրանք: Անմիջապէս յետոյ նա կանգ է առնում թղթի գլխաւոր թեմայի, այսինքն՝ Քրիստոսի փառաւոր գալստեանը վերաբերող ուսուցման վրայ: Այդ գալուստը տեղի չի ունենալու մինչեւ որ չյայտնուի «Չարը»՝ այն խորհրդաւոր անձը, որն իր ծայրագոյն աստիճանին է հասցնելու ըմբոստութիւնը Աստծու դէմ եւ հակառակութիւնը Քրիստոսին: Չարի զօրութեան սանձազերծման դիմաց, անհրաժեշտ է, որ հաւատացեալները անխախտ մնան Աւետարանի նկատմամբ իրենց հաւատարմութեան մէջ եւ չդադարեն բնաւ աղօթելուց: Այնուհետեւ առաքեալը ազդու շեշտով մեղադրում է ծոյլերին՝ հակադրելով նրանց այն եղբայրների օրինակը, որոնք աշխատում են, որպէսզի ոչ ոքի վրայ ծանրութիւն չլինեն:

Թուղթն աւարտւում է մի կարճ օրհնութեամբ եւ ողջոյններով:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը, Սիղուանոսը եւ Տիմոթէոսը՝ Թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն՝ մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս Քրիստոսով: 2 Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:

ԴԱՏԱՍՏԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍՏԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3 Եղբայրնե՛ր, պարտաւոր ենք միշտ գոհութիւն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպէս որ արժանի իսկ է, քանի որ աւելի ու աւելի է աճում ձեր հաւատը, եւ շատանում է ձեզնից իւրաքանչիւրի սէրը միմեանց հանդէպ, 4 այնպէս որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերութեան եւ հաւատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների եւ նեղութիւնների մէջ, որոնց դուք համբերում էք: 5 Դրանք ապացոյց են Աստծու արդար դատաստանի, որպէսզի դուք արժանի լինէք Աստծու արքայութեանը, որի համար էլ նեղութիւն էք կրում: 6 Եւ արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղութիւն հատուցուի, 7 իսկ ձեզ՝ նեղութիւն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկնքից՝ իր հրեշտակների զօրքով՝ 8 կրակի բոցով վրէժ լուծելու համար նրանցից, որոնք չեն ճանաչում Աստծուն եւ չեն հնազանդւում մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին. 9 նրանց պատիժը պիտի լինի յաւիտենական կործանումը՝ հեռու Տիրոջ ներկայութիւնից եւ նրա փառաւոր զօրութիւնից, 10 երբ նա գայ այն օրը՝ փառաւորուելու իր սրբերի մէջ, հիացմունքի արժանի դառնալու բոլոր հաւատացեալների մէջ (քանի որ մեր վկայութեանը հաւատացիք): 11 Ահա թէ ինչու միշտ աղօթում ենք ձեզ համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի դարձնի ձեր կոչմանը, մինչեւ լրացնի ձեր բոլոր փափագները եւ հաւատի գործերը՝ զօրութեամբ, 12 որպէսզի փառաւորուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը ձեր մէջ, եւ դուք փառաւորուէք նրա մէջ՝ մեր Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհի համաձայն:

ՉԱՐԸ

2 Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան եւ նրա մօտ մեր հաւաքուելու համար 2 դուք իսկոյն չխռովուէք ձեր մտքում եւ չզարհուրէք ո՛չ հոգով, ո՛չ խօսքով, ո՛չ էլ թղթերով՝ իբր թէ մեր կողմից գրուած, որպէս թէ արդէն եկած հասած լինի Տիրոջ օրը: 3 Թող ոչ ոք ձեզ չխաբի եւ ոչ մի ձեւով. որովհետեւ այն օրը չի գալու, եթէ նախ ապստամբութիւնը չգայ, եւ չյայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին՝ 4 հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրայ, որ կոչւում է աստուած կամ պաշտամունքի առարկայ, մինչեւ այն աստիճան, որ նա նստի Աստծու տաճարում եւ ինքն իրեն ցոյց տայ, թէ Աստուած է: 5 Չէ՞ք յիշում, որ, մինչ ձեզ հետ էի դեռ, ասում էի այդ բանը: 6 Եւ այժմ դուք ինքներդ գիտէք, թէ ինչն է նրան յետ պահում, որ այդ հակառակորդը ինքն իրեն յայտնի անի մինչեւ ժամանակը գայ. 7 որովհետեւ անօրէնութեան այդ խորհրդաւոր ուժը արդէն գործի վրայ է. բայց այդ պիտի չյայտնուի մինչեւ այն ժամանակ, երբ մէջտեղից կը վերացուի նա, որ այժմ նրան յետ է պահում: 8 Եւ ապա պիտի յայտնուի Անօրէնը, որին Տէր Յիսուս պիտի կործանի իր բերանի շնչով եւ պիտի ոչնչացնի իր յայտնութեամբ իր գալստեան ժամանակ: 9 Նրա՝ Անօրէնի գալուստը Սատանայի ներգործութեամբ է, ամենայն զօրութեամբ, նշաններով, 10 խաբեբայական զօրաւոր գործերով եւ անիրաւութեան բոլոր պատրանքներով կորստեան մատնուածների վրայ. եւ այդ ամէնը այն բանի փոխարէն, որ չընդունեցին ճշմարտութեան սէրը, որպէսզի փրկուեն: Դրա համար էլ Աստուած նրանց պիտի ուղարկի զօրաւոր մի մոլորութիւն, որ նրանք հաւատան ստին 11 եւ դատապարտուեն բոլոր

նրանք, որ չհաւատացին ճշմարտութեանը եւ հաճոյք գտան անօրէնութեան մէջ:

ԸՆՏՐԵԱԼՆԵՐ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

12 *Իսկ մենք, Տիրոջից սիրուած եղբայրնե՛ր, պարտաւոր ենք միշտ գոհութիւն մատուցել Աստծուն ձեզ համար, որովհետեւ Աստուած սկզբից ընտրեց մեզ*†*, որ փրկուենք Հոգու սրբացումով եւ ճշմարտութեան հաւատով,* 13 *որին եւ կանչեց ձեզ մեր աւետարանումով փրկուելու եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքին տիրանալու համար:*

14 *Ուրեմն, եղբայրնե՛ր, հաստա՛տ մնացէք եւ պի՛նդ պահեցէք այն աւանդութիւնները, որ սովորեցիք թէ՛ խօսքով եւ թէ՛ մեր թղթով.* 15 *եւ ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս եւ մեր Հայրը՝ Աստուած, որ սիրեց մեզ եւ մեզ տուեց յաւիտենական մխիթարութիւն եւ բարի յոյս, իբրեւ շնորհ,* 16 *թող մխիթարի եւ հաստատ պահի ձեր սրտերը ամէն բարի խօսքի եւ գործի մէջ:*

ԱՂՕԹԵՑԷ՛Ք ՄԵԶ ՀԱՄԱՐ

3 *Վերջապէս, եղբայրնե՛ր, աղօթեցէ՛ք մեզ համար, որպէսզի Տիրոջ խօսքը առաջ գնայ եւ փառաւորուի ամէն տեղ, ինչպէս որ ձեզ մօտ է,* 2 *որպէսզի փրկուենք անօրէններից եւ անզգամ մարդկանցից, քանի որ բոլորը չէ, որ հաւատ ունեն:* 3 *Բայց հաւատարիմ է Տէրը. նա կը զօրացնի ձեզ ու կը պահի չարից:* 4 *Վստահ ենք Տիրոջով ձեր վրայ, թէ, ինչ որ պատուիրեցինք ձեզ, ե՛ւ անում էք, ե՛ւ կ'անէք:* 5 *Եւ Տէրը թող ուղղի ձեր սրտերը դէպի Աստծու սէրը եւ դէպի Քրիստոսի համբերութիւնը:*

ԳՈՐԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՆ

6 *Եղբայրնե՛ր, պատուիրում եմ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որ դուք հեռու մնաք ամէն մի եղբօրից, որ ծոյլ կեանքով է ապրում եւ ոչ ըստ այն օրինակի, որն ընդունեցիք մեզնից*†. 7 *որովհետեւ ինքներդ գիտէք, թէ որչա՛փ դուք պէտք է նմանուէք մեզ, քանի որ ձեզ մօտ երբեք չծուլացանք* 8 *եւ ոչ ոքի հացը ձրի չկերանք, այլ ջանքով եւ վաստակով զօր ու գիշեր աշխատում էինք՝ ձեզնից ոչ մէկի վրայ ծանրութիւն չլինելու համար.* 9 *ոչ թէ նրա համար, որ իշխանութիւն չունէինք, այլ որպէսզի մենք մեզ օրինակ դարձնենք ձեզ, որ մեզ նմանուէք.* 10 *քանի դեռ ձեզ մօտ էինք, այս բանն էինք պատուիրում ձեզ. թէ՝ ով չի ուզում աշխատել, թող հաց էլ չուտի:* 11 *Արդ, ձեզնից ոմանց մասին լսում ենք, թէ ծոյլ կեանքով են ապրում, որեւէ գործ չեն անում, այլ ծոյլ-ծոյլ շրջում են՝ դատարկ բաներով հետաքրքրուելով:* 12 *Այդպիսիներին պատուիրում ենք եւ յորդորում Տէր Յիսուս Քրիստոսով, որ աշխատեն հանդարտութեամբ եւ իրե՛նց հացն ուտեն:* 13 *Իսկ դուք, եղբայրնե՛ր, մի՛ յոգնէք բարիք անելուց:* 14 *Իսկ եթէ որեւէ մէկը չհնազանդուի այս թղթի մէջ մեր ասած խօսքին, նկատի՛ ունեցէք նրան եւ մի՛ յարաբերուէք նրա հետ, որպէսզի ամօթով մնայ:* 15 *Բայց նրան որպէս թշնամի մի՛ համարէք, այլ խրատեցէ՛ք որպէս եղբայր:*

ՎԵՐՋԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՂՋՈՅՆ

16 *Եւ խաղաղութեան Տէրն ինքը թող միշտ խաղաղութիւն տայ ձեզ ամէն ինչում: Տէրը ձեզ բոլորիդ հետ լինի:* 17 *Այս ողջոյնը իմ՝ Պօղոսիս ձեռքով է, որ, որպէս նշան, կայ իմ բոլոր թղթերում. այսպէս եմ գրում ես:* 18 *Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ բոլորիդ հետ լինի:*

---

†Յուն. լաւ բն. աւելացնում են ձեզ որպէս երախայրիք բառերը:

†Յուն. լաւ բն. ունեն ... որ նրանից ընդունեցին.

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ

Ներածութիւն

Տիմոթէոսի մայրը քրիստոնէութիւնն ընդունած մի հրէուհի էր, իսկ հայրը՝ յոյն: Պօղոս առաքեալը առաջին անգամ նրան հանդիպել է Փոքր Ասիայի Լիւստրա քաղաքում առաքելական իր երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ: Հանդիպումից յետոյ Տիմոթէոսը դառնում է առաքեալի ամենամօտիկ գործակիցներից մէկը, ուղեկցում է նրա առաքելական բազմաթիւ ուղեւորութիւնների ժամանակ եւ զանազան առիթներով յանձնարարութիւններ ստանում նրանից՝ պատասխանատու ձեռնարկումներ կատարելու այնպիսի համայնքներում, որոնց վիճակը մտահոգութիւն էր պատճառում: Դրա համար է, որ նրա անունը յաճախ է յիշատակւում «Գործք Առաքելոց»-ում կամ Պօղոսի թղթերում: Տիմոթէոսին ուղղուած երկու թղթերը եւ Տիտոսին ուղղուած թուղթը աւանդաբար կոչւում են «Հովուական թղթեր», որովհետեւ դրանցում ցուցումներ են տրուած «հովիւներին» կամ Եկեղեցու պատասխանատուներին:

Տիմոթէոսին ուղղուած առաջին թուղթը շօշափում է երեք գլխաւոր կէտեր.

Ամենից առաջ յանձնարարւում է Եկեղեցուն զգուշանալ կեղծ վարդապետութիւններից եւ հրէական ու հեթանոսական խառնուրդ այն գաղափարներից, որ ոմանք աշխատում են տարածել քրիստոնեաների մէջ: Այդ կեղծ վարդապետութիւնները յենւում են այն հաւատալիքի վրայ, որ նիւթական աշխարհը վատ է, եւ մարդ կարող է փրկութեան հասնել միայն գաղտնի մի ճանաչողութեամբ, որը վերապահուած է խորհրդագէտ մարդկանց: Բացի դրանից, այդ կեղծ վարդապետութիւնները յանձնարարում են հեռու մնալ որոշ կերակուրներից եւ հրաժարուել ամուսնութիւնից:

Այնուհետեւ թղթում տրուած են որոշ հրահանգներ, որոնք վերաբերում են պաշտամունքին, Եկեղեցու կազմակերպմանը եւ նրա գլխաւոր պատասխանատուների վարուեցողութեանը:

Վերջում մի շարք խորհուրդներ են ուղղուած Տիմոթէոսին, թէ նա ինչ ձեւով պէտք է կատարի իր պաշտօնը եւ ինչպէս պէտք է զբաղուի հաւատացեալների տարբեր խմբերով, որպէսզի լինի «Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ»:

Պօղոսը այս թղթում Եկեղեցուց եւ նրա ղեկավարներից չի պահանջում կոյր հնազանդութիւն, այլ՝ այնպիսի մի յանձնառութիւն, որ արմատաւորուած լինի Քրիստոսի անձի փառաբանութեան եւ երկրպագութեան մէջ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ առաքեալը Յիսուս Քրիս-
տոսի, ըստ հրամանի մեր Փրկիչ Աստ-
ծու եւ Յիսուս Քրիստոսի, որ մեր յոյսն
է. 2 Տիմոթէոսին՝ հաւատի մէջ սիրելի†
որդուն շնո՛րհ, ողորմութի՛ւն, խա-
ղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Տէր
Յիսուս Քրիստոսից:

ՋԳՈՒՇԱՑՈՒՄ ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

3 Ինչպէս խնդրեցի քեզ, երբ գնում
էի Մակեդոնիա, մնա՛ Եփեսոսում,
որպէսզի պատուէր տաս, որ ոմանք
օտար ուսմունք չուսուցանեն 4 եւ չկա-
պուեն առասպելներին ու անվերջա-
նալի տոհմաբանութիւններին, որոնք
մանաւանդ պատճառ կը լինեն վէճերի,
բայց չեն ծառայում Աստծու ծրագրե-
րին, որոնք հաւատի վրայ են հիմ-
նուած. 5 քանզի պատուիրանի գլխա-
ւորը սէրն է՝ բխած սուրբ սրտից, բարի
խղճմտանքից եւ անկեղծ հաւատից,
6 որոնցից վրիպեցին ոմանք՝ խոտո-
րուելով խօսքերի ունայնութեան մէջ:
7 Ուզում են օրէնքի վարդապետներ
լինել. իրենք իսկ չեն իմանում՝ ինչ են
խօսում, ոչ էլ հասկանում այն բաները,
որոնց վրայ պնդում են: 8 Գիտենք, որ
օրէնքը լաւ է, եթէ մէկն այն գործադրի
օրինաւոր կերպով: 9 Բայց այս բանը
թող իմանայ, որ արդարների համար
չէ օրէնքը, այլ՝ անօրէնների եւ
անհնազանդների, ամբարիշտների եւ
մեղաւորների, անմաքուրների եւ պիղ-
ծերի, հայր ու մայր անարգողների‡,
մարդասպանների, 10 պոռնիկների, ա-
րուամոլների, մարդագողերի, ստախօս-
ների, սուտ երդուողների, այլեւ ամէն
բանի համար, որը հակառակ է ողջա-
միտ վարդապետութեան, 11 վարդա-
պետութիւն, որ համապատասխանում
է երանելի Աստծու փառաւոր Աւե-
տարանին, որին եւ հաւատարիմ եղայ
ես:

†Յունարէնը սիրելի բառի փոխարէն ունի հարազատ բառը:

‡Յունարէնը՝ ... հայր եւ մայր ծեծողների:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՍՏԾՈՒ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

12 Շնորհակալութիւն նրան, որ զօ-
րացրեց ինձ մեր Տէր Քրիստոս Յի-
սուսի միջոցով†, որը վստահելի համա-
րեց ինձ այս սպասաւորութեանը կար-
գելու, 13 ինձ, որ նախապէս հայհոյիչ
էի, հալածիչ եւ անարգող. բայց ես
ողորմութիւն գտայ, որովհետեւ այդ
բանն անում էի անգիտութեան եւ
անհնազանդութեան մէջ գտնուելով.
14 եւ մեր Տիրոջ շնորհը շատացաւ ինձ
համար այն հաւատով եւ սիրով, որ է ի
Քրիստոս Յիսուս: 15 Վստահելի եւ
ամենայն ընդունելութեան արժանի է
այս խօսքը, թէ՝ Քրիստոս Յիսուս
աշխարհ եկաւ՝ փրկելու մեղաւորներին,
որոնց գլուխը ես եմ: 16 Եւ ողոր-
մութիւն գտայ նրա համար, որ Յիսուս
Քրիստոս նախ իմ մէջ ցոյց տուեց իր
ամբողջ համբերութիւնը, որպէս
օրինակ նրանց, որ պիտի հաւատան
իրեն յաւիտենական կեանքի համար.
17 նաեւ յաւիտենութեան թագաւորին,
որ անեղծ եւ աներեւոյթ է, միա՛կ
Աստծուն փա՛ռք եւ պատի՛ւ յաւի-
տեանս յաւիտենից: Ամէն:

18 Որդեա՛կ իմ Տիմոթէոս, աւանդում
եմ քեզ այս պատուիրանը, քո մասին
նախապէս եղած մարգարէութիւնների
համաձայն, որպէսզի նրանցով դու
մղես բարի պատերազմը, 19 պահես
հաւատը բարի խղճմտանքով, որը
ոմանք հեռու վանելով իրենցից՝ նա-
ւաբեկութեան ենթարկուեցին հաւատի
մէջ. 20 դրանց թւում են Հիմենոսը եւ
Աղեքսանդրոսը, որոնց մատնեցի Սա-
տանային, որպէսզի խրատուեն չհայ-
հոյել:

ԱՂՕԹԵԼ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

2 Արդ, ամենից առաջ աղաչում եմ
աղօթք անել, խնդրել, պաղատել, գո-
հութիւն մատուցել բոլոր մարդկանց
համար, 2 մանաւանդ թագաւորների եւ
բոլոր իշխանաւորների համար, որպէս-
զի խաղաղութեամբ եւ հանդարտու-
թեամբ վարենք մեր կեանքը, կատա-
րեալ աստուածապաշտութեամբ եւ

†Յունարէնն ունի՝ Շնորհակալութիւն Քրիստոս Յիսուս մեր Տիրոջը:

սրբութեամբ†. 3 ա՛յդ է բարին եւ
ընդունելին մեր Փրկչի՝ Աստծու առաջ:
4 Նա կամենում է, որ բոլոր մարդիկ
փրկուեն եւ հասնեն ճշմարտութեան
գիտութեանը. 5 քանզի մէ՛կ Աստուած
կայ եւ մէ՛կ միջնորդ՝ Աստծու եւ
մարդկանց միջեւ. Յիսուս Քրիստոս՝
մարդը, 6 որ տուեց ինքն իրեն որպէս
փրկանք բոլորի համար՝ ի վկայութիւն
իր ժամանակների. 7 դրա համար ես
կարգուեցի որպէս քարոզիչ եւ առա-
քեալ (ճշմարիտ եմ ասում Քրիստոսով‡
եւ չեմ ստում), եղայ վարդապետ հե-
թանոսների՝ հաւատով եւ ճշմար-
տութեամբ:

8 Ուզում եմ, որ տղամարդիկ
աղօթեն ամէն տեղ, սուրբ ձեռքեր
բարձրացնեն դէպի վեր, առանց բար-
կութեան եւ երկմտութեան:

9 Նոյնպէս եւ կանայք, համեստ
զարդարանքով, ակնածութեամբ եւ
պարկեշտութեամբ թող զարդարուեն.
ոչ թէ մարգարտով ընդելուզուած ոս-
կեայ հիւսքերով կամ պճնազարդ
զգեստներով, 10 այլ՝ բարի գործերով,
ինչպէս վայել է աստուածապաշտու-
թիւնը յանձն առած կանանց: 11 Կին
արարածը թող ուսանի լռութեամբ,
կատարեալ հնազանդութեամբ: 12 Եւ
ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը
ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղա-
մարդու վրայ, այլ թող լուռ մնայ.
13 որովհետեւ նախ Ադամը ստեղծուեց
եւ ապա՝ Եւան: 14 Եւ Ադա՛մը չխա-
բուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք
գործեց: 15 Բայց նա պիտի ապրի
որդեծնութեան համար, եթէ պարկեշ-
տութեամբ մնայ հաւատի, սիրոյ եւ
սրբութեան մէջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

3 Հաւաստի է այս խօսքը, թէ՝ ով
եպիսկոպոսութեան է ձգտում, ձգտում
է բարի գործի: 2 Եպիսկոպոսը պէտք է
անարատ լինի, մէ՛կ կնոջ մարդ, հեզ§,
խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, ուսու-
ցանելու ընդունակ, 3 ոչ նախատող†, ոչ
բռնացող, այլ՝ հանդարտաբարոյ, ոչ
կռուազան, ոչ փողասէր, այլ՝ այն-
պիսին, 4 որ իր իսկ տանը լաւ վե-
րակացու լինի, ունենայ որդիներ,
որոնք հնազանդութեան մէջ լինեն
կատարեալ պարկեշտութեամբ 5 (իսկ
եթէ մէկն իր տունը կառավարել
չիմանայ, հապա ինչպէ՞ս Աստծու
եկեղեցուն խնամակալ կը լինի), 6 ոչ
նորադարձ, որպէսզի, գոռոզանալով,
Սատանային վիճակուած դատապար-
տութեան մէջ չընկնի. 7 այլ նա պէտք
է ունենայ բարի վկայութիւն նաեւ
դրսեցիներից, որպէսզի չլինի թէ ընկնի
նախատինքի տակ եւ Սատանայի
որոգայթների մէջ:

ՍԱՐԿԱՒԱԳԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

8 Նմանապէս եւ սարկաւագները թող
լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խօսող, ոչ
գինեսէր, ոչ շահամոլ, 9 այլ թող
պահեն հաւատի խորհուրդը մաքուր
խղճով: 10 Նախ իրենք թող փորձի
ենթարկուեն եւ եթէ անմեղադրելի
գտնուեն, ապա պաշտօն կատարեն:
11 Նոյնպէս եւ նրանց կանայք թող
լինեն պարկեշտ, ոչ չարախօս, հեզ,
հաւատարիմ ամէն ինչում: 12 Սար-
կաւագները թող մէ՛կ կնոջ մարդ
լինեն, իրենց որդիներին եւ իրենց
տները լաւ կառավարեն, 13 որովհետեւ
այն սարկաւագները, որ լաւ են ծա-
ռայում, իրենց համար շահում են բարի
աստիճան եւ մեծ համարձակութիւն
կ'ունենան ի Քրիստոս Յիսուս իրենց
ունեցած հաւատի մէջ:

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

14 Քեզ գրում եմ այս բանը, որով-
հետեւ յոյս ունեմ, որ շուտով կը գամ:
15 Իսկ եթէ ուշանամ, դու կ'իմանաս,
թէ ինչպէս պէտք է վարուես Աստծու
տան մէջ, որ կենդանի Աստծու
եկեղեցին է՝ սիւն եւ հաստատութիւն
ճշմարտութեան: 16 Եւ յայտնապէս
մեծ է աստուածապաշտութեան խոր-

†Յունարէնը սրբութեամբ բառի փոխարէն ունի պարկեշտութեամբ:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն Քրիստոսով բառը:

§Յունարէնը հեզ բառի փոխարէն ունի զգաստ բառը:

†Յունարէնը ունի հարբեցող:

հուրդը, որ յայտնուեց մարմնով, արդարացաւ Հոգով, երեւաց հրեշտակներին, քարոզուեց հեթանոսների մէջ, հաւատալի եղաւ աշխարհում եւ երկինք վերացաւ փառքով:

ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

4 *Եւ Սուրբ Հոգին յայտնապէս ասում է, թէ վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հաւատից եւ իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների վրայ եւ դեւերի վարդապետութիւնների վրայ՝ 2 տարուած ստախօսների կեղծաւորութեամբ, որոնց խղճմտանքը խարանուած է, 3 որոնք արգելում են ամուսնանալ եւ հեռու են պահում այն կերակուրներից, որ Աստուած ստեղծեց, որպէսզի հաւատացեալները եւ ճշմարտութեան վերահասու եղողները գոհութեամբ վայելեն. 4 որովհետեւ Աստծու բոլոր ստեղծածները լաւ են, եւ խոտան բան չկայ, մանաւանդ երբ դրանք գոհութեամբ են ընդունւում. 5 քանի որ Աստծու խօսքով եւ աղօթքով ամէն բան մաքրւում է:*

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԼԱՒ ԾԱՌԱՆ

6 Այս խրատը տալով եղբայրներին՝ Քրիստոս Յիսուսի մի բարի պաշտօնեայ կը լինես՝ սնուած հաւատի խօսքերով եւ այն բարի վարդապետութեամբ, որին հետամուտ իսկ եղար. 7 բայց պիղծ խօսքերից եւ պառաւական առասպելներից հրաժարուի՛ր. եւ դու քեզ մարզի՛ր աստուածապաշտութեամբ, 8 որովհետեւ մարմնի մարզումը քիչ բանի է օգտակար, մինչ աստուածապաշտութիւնը օգտակար է ամէն ինչի. եւ նա ունի կեանքի աւետիսը, ա՛յս կեանքի եւ հանդերձեալի: 9 Ճիշտ է այս խօսքը եւ արժանի է ամենայն ընդունելութեան, 10 որովհետեւ այս բանի համար իսկ տքնում ենք եւ նախատինքներ կրում†. քանի որ մեր յոյսը դրել ենք կենդանի Աստծու վրայ, որ Փրկիչն է բոլոր մարդկանց, մանաւանդ՝ հաւատացեալների:

11 Պատուիրի՛ր այդ եւ ուսուցանի՛ր. 12 թող ոչ ոք քո երիտասարդութիւնը չարհամարհի, այլ օրինա՛կ եղիր հաւատացեալներին խօսքով, վարմունքով, սիրով, հաւատով, մաքրութեամբ: 13 Մինչեւ իմ գալը, հետամտի՛ր Աստծու խօսքը ընթերցել, յորդորել եւ ուսուցանել հաւատացեալներին: 14 Զանց մի՛ առ այն շնորհը, որ քո մէջ է, որ տրուեց քեզ մարգարէութեամբ, երէցների ձեռնադրումով: 15 Այդ բանի վրայ մտածի՛ր եւ յարատեւի՛ր դրանում, որպէսզի քո առաջադիմութիւնը յայտնի լինի բոլորին: 16 Զգո՛յշ եղիր քո նկատմամբ եւ քո ուսուցման նկատմամբ. եւ յարատեւի՛ր դրանում: Եթէ այդ բանն անես, կը փրկես ե՛ւ քեզ, ե՛ւ նրանց, որ լսում են քեզ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

5 *Մերին խստութեամբ մի՛ յանդիմանի՛ր, այլ յորդորի՛ր որպէս քո հայրը. երիտասարդներին յորդորի՛ր որպէս եղբայրներ, 2 պառաւներին՝ որպէս մայրեր, դեռատի կանանց՝ որպէս քոյրեր, կատարեալ մաքրութեամբ:*

3 Ցարդի՛ր այն այրիներին, որ իսկապէս այրիներ են: 4 Իսկ եթէ մի այրի որդիներ եւ թոռներ ունի, նախ նրանք թող սովորեն իրենց տան հանդէպ բարի վերաբերմունք ցոյց տալ եւ իրենց ծնողների արածի փոխարէն նրանց հատուցել, որովհետեւ ա՛յն է բարին եւ ընդունելին Աստծու առաջ: 5 Իսկ ով իսկապէս այրի է եւ մենակ է ապրում ու իր յոյսը դրել է Աստծու վրայ, թող յարատեւող լինի աղօթքի եւ աղաչանքների մէջ զօր ու գիշեր: 6 Իսկ մեղկասէր այրին կենդանուոյն մեռած է: 7 Այս բանը պատուիրի՛ր, որ անարատ լինեն: 8 Իսկ եթէ մէկը իւրայիններին եւ մանաւանդ ընտանիքին խնամք չի տանում, հաւատն ուրացել է եւ աւելի չար է, քան անհաւատը: 9 Այրիների թւում կը համարուի այն այրին, որ վաթսուն տարեկանից պակաս չէ, մէ՛կ մարդու կին է եղել 10 ու բարի գործերով է վկայուել, որ երեխաներ է մեծացրել, որ հիւրեր է ընդունել, որ սրբերի ոտքերն է լուացել, որ նեղութեան մէջ գտնուողներին է հասել, որ ամէն բարի գործի հետամուտ է եղել: 11 Բայց երիտասարդ այրի կանանց հաշուի մի՛ առ, որովհետեւ հեշտասիրութեան անձնատուր լինելով՝ Քրիստոսի դէմ են ելնում եւ ամուսնանալ են ուզում. 12 իսկ դատաստան են ընդունում նրա համար, որ առաջին հաւատն արհամարհեցին: 13 Միաժամանակ եւ անգործութեան են վարժւում՝ շրջելով տնից տուն. եւ ոչ միայն դատարկապորտներ են, այլեւ շատախօս եւ աւելորդ հետաքրքրասէր. եւ խօսում են բաներ, որ պէտք չէ խօսել: 14 Ուզում եմ, որ այդ երիտասարդ կանայք ամուսնանան, որդիներ ծնեն, տնարար լինեն եւ հակառակորդին առիթ չտան նախատինքի, 15 քանի որ արդէն իսկ նրանցից ոմանք շեղուել են՝ Սատանայի յետեւից գնալով: 16 Եթէ հաւատացեալ մէկը այրիներ ունի, թող նրանց օգնի, որ եկեղեցին բեռի տակ չընկնի եւ նա կարողանայ օգնել իսկապէ՛ս այրիներին:

ԵՐԷՑՆԵՐ

17 Այն երէցները, որոնք լաւ վերակացու են, կրկնակի պատուի արժանի թող լինեն. մանաւանդ նրանք, որ տքնում են խօսքով եւ ուսուցանելով. 18 քանզի Սուրբ Գիրքն ասում է. «Կալ անող եզան դունչը մի՛ կապիր» եւ՝ «Մշակն արժանի է իր վարձին»: 19 Երէցի մասին ամբաստանութիւն մի՛ ընդունիր, բացի այն դէպքից, երբ դա երկու կամ երեք վկաներով լինի: 20 Իսկ մեղանչողներին յանդիմանի՛ր բոլորի առաջ, որպէսզի միւսներն էլ վախենան: 21 Պարտաւորեցնում եմ քեզ Աստծու եւ Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ հրեշտակների առաջ, որ այս բոլորը պահես առանց նախապաշարումի՝ աչառութեամբ ոչինչ չանելով: 22 Ձեռքերդ շտապով որեւէ մէկի վրայ մի՛ դիր եւ ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքո՛ւր պահիր:

23 Այսուհետեւ միմիայն ջուր մի՛ խմիր, այլ մի քիչ գինի էլ խառնիր՝ քո ստամոքսի եւ յաճախակի տկարութիւնների պատճառով:

24 Կան մարդիկ, որոնց մեղքերը յայտնի են նախքան որեւէ դատաստանի ենթարկուելը. մարդիկ էլ կան, որոնց մեղքերը յետոյ են յայտնի դառնում: 25 Նոյն ձեւով եւ յայտնի են բարի գործերը. եւ այն գործերը, որ յայտնի չեն, թաքնուած մնալ չեն կարող:

ԾԱՌԱՆԵՐ

6 *Բոլոր նրանք, ովքեր ծառայութեան լծի տակ են, նրանցից իւրաքանչիւրը թող իր տէրերին պատուի արժանի համարի, որպէսզի Աստծու անունն ու վարդապետութիւնը չանարգուի: 2 Իսկ նրանք, որ հաւատացեալ տէրեր ունեն, թող չարհամարհեն, որ նրանք եղբայրներ են, այլ աւելի լաւ ծառայեն, քանի որ հաւատացեալներ են եւ սիրելի եղբայրներ, որոնք յանձն են առել բարերարութիւնը:*

ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Այս բանն ուսուցանի՛ր եւ յորդորի՛ր: 3 Իսկ եթէ մէկն այլ բան ուսուցանի եւ չանսայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերին եւ այն վարդապետութեանը, որ աստուածապաշտութեան համապատասխան է, 4 այդպիսին գոռոզամիտ է եւ ոչինչ չգիտէ, այլ բռնուած է հակառակութեան խօսքեր եւ խնդիրներ առաջացնելու հիւանդութեամբ, որոնցից առաջ են գալիս նախանձ, կռիւ, հայհոյութիւններ, չար կասկածներ, խարդախութիւններ 5 մտքով ապականուած եւ ճշմարտութիւնից հեռացած մարդկանց միջեւ, որոնք շահի աղբիւր են համարում աստուածապաշտութիւնը: Բայց դու այդպիսիներից հեռո՛ւ պահիր քեզ†:

6 Իրօք, աստուածապաշտութիւնը շահի մեծ աղբիւր է նրանց համար,

†Յուն. լաւ բն. ունեն ... տմենում ենք եւ մարտնչում:

†Յունարէնը չունի այս վերջին նախադասութիւնը:

ովքեր գոհ են իրենց վիճակից. 7 որովհետեւ ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողանանք տանել: 8 Այլ ունենք կերակուր եւ հանդերձներ ու դրանցով էլ բաւականանք: 9 Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձութեան, որոգայթի եւ բազում անմիտ ու վնասակար ցանկութիւնների մէջ, որոնք ընկղմում-տանում են մարդկանց դէպի կործանում եւ դէպի կորուստ, 10 որովհետեւ բոլոր չարիքների արմատը փողասիրութիւնն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորուեցին հաւատից եւ իրենք իրենց գցեցին բազում ցաւերի մէջ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

11 Իսկ դու, ո՛վ մարդ Աստծու, փախի՛ր այդ բաներից եւ գնա՛ արդարութեան, աստուածապաշտութեան, հաւատի, սիրոյ, համբերութեան եւ հեզութեան յետեւից: 12 Հաւատի բարի մա՛րտը մղիր եւ պի՛նդ կառչիր յաւիտենական կեանքից, որին կանչուեցիր եւ բարի դաւանութիւնը դաւանեցիր բազում վկաների առաջ: 13 Պատուիրում եմ քեզ Աստծու ներկայութեամբ, որը կեանք է տալիս ամէն ինչի, եւ Յիսուս Քրիստոսի առաջ, որը Պոնտացի Պիղատոսի առաջ վկայեց բարի դաւանութիւնը, 14 որ դու պահես պատուիրանը անբիծ, անարատ, մինչեւ յայտնութիւնը Յիսուս Քրիստոսի, 15 որին իր ժամանակում յայտնի պիտի անի Երանելին եւ միակ Հզօրը, Թագաւորների Թագաւորը եւ տէրերի Տէրը, 16 նա, որ միայն ի՛նքն ունի անմահութիւնը եւ բնակւում է անմատչելի լոյսի մէջ, որ մարդկանցից ոչ ոք չի տեսել եւ ոչ էլ կարող է տեսնել. նրան պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս: Ամէն:

ՅՈՐԴՈՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ

17 Այս աշխարհի հարուստներին պատուիրի՛ր, որ չհպարտանան եւ չապաւինեն սնոտի հարստութեանը, այլ՝ Աստծուն, որ մեզ առատապէս ամէն ինչ տալիս է վայելելու համար. 18 պատուիրի՛ր բարիք գործել, բարի գործերով հարստանալ, լինել առատաձեռն, բարեսէր, իրենց ունեցածից ուրիշին էլ բաժին հանել՝ 19 իրենց համար բարի հիմք դնելով հանդերձեալում, որպէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը:

20 Ո՛վ Տիմոթէոս, պահի՛ր աւանդը՝ հեռու մնալով պիղծ եւ նորահնար խօսքերից, հակառակութիւնից եւ խաբեպատիր գիտութիւնից†*, 21 որը ոմանք յանձն առնելով՝ շեղուեցին հաւատից: Շնո՛րհ քեզ հետ:*

†Յունարէնն ասում է *խաբեպատիր գիտութեան վէճերից:*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ

Ներածութիւն

Տիմոթէոսին ուղղուած երկրորդ թուղթը յայտնի է, որ գրուել է Հռոմում: Պօղոսն այնտեղ դատապարտուած էր առանձնապէս խիստ բանտարգելութեան եւ ինքն իրեն բոլորովին մեկուսացած էր զգում: Հասած լինելով իր առաքելութեան աւարտին՝ նա այս թղթում իր յանձնարարութիւններն է տալիս նրան, ով նրա համար եղել էր կաթոգին սիրով լի մի գործակից:

Պօղոսը նախ գոհութիւն է յայտնում Աստծուն Տիմոթէոսի սիրոյ եւ հաւատի համար: Նկատի ունենալով, թէ ապագայում ինչպիսի ծանր տառապանքների եւ հակառակութիւնների են հանդիպելու Աւետարանին ծառայողները, նա Տիմոթէոսին պատուիրում է փորձութեան մէջ լինել ամուր եւ քաջութեամբ մարտնչել «որպէս հաւատարիմ զինուոր Յիսուս Քրիստոսի», զգուշանալ նրանցից, ովքեր յարուցում են սին վէճեր եւ բանակռիւներ, որոնք ոչ մի բանի չեն ծառայում եւ մարդուն հեռացնում են հաւատից: Նա յորդորում է նրան՝ հետեւելու իր օրինակին եւ հաւատարիմ մնալու այն ուսմունքին, որը համապատասխանում է Սուրբ Գրուածքներին, որոնց ինքը ծանօթացել է իր երիտասարդ տարիներից սկսած: Թղթի վերջում առաքեալը նկարագրում է իր անձնական ծանր վիճակը՝ միաժամանակ երախտագիտութիւն յայտնելով Տիրոջը, որ պահպանել է իրեն:

Պօղոս առաքեալն ասում է, որ ինքը մինչեւ վերջ մղել է բարի մարտը Աւետարանի ծառայութեան համար: Բոլոր ժամանակների նրա ընթերցողներն էլ հրաւիրւում են, առանց վախենալու վերահաս դժուարութիւններից, մղելու միեւնոյն բարի մարտը հաւատի, համբերութեան, սիրոյ եւ յարատեւութեան համար:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պօղոսը՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստծու կամքով, ըստ կեանքի խոստման, որ Քրիստոս Յիսուսի մէջ է, 2 սիրելի որդի Տիմոթէոսին. շնո՛րհ, ողորմութի՛ւն, եւ խաղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Տէր Քրիստոս Յիսուսից:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՋԱԼԵՐԱՆՔ

3 Գոհութիւն եմ մատուցում Աստծուն, որին ծառայում եմ մաքուր խղճով ինչպէս իմ նախնիները, երբ իմ աղօթքներում գիշեր-ցերեկ անդադար քեզ եմ յիշում: 4 Յիշելով քո արտասուքները՝ բուռն ցանկութիւն ունեմ քեզ տեսնելու, որպէսզի լցուեմ ուրախութեամբ: 5 Մտաբերում եմ այն անկեղծ հաւատը, որ քո մէջ է, որը նախապէս կար քո տատի՝ Լաւոդիայի եւ քո մօր՝ Եւնիկէի մէջ. վստահ եմ, որ քո մէջ էլ կայ: 6 Ուստի յիշեցնում եմ քեզ, որ վերարծարծես Աստծու շնորհը, որ տուի քեզ՝ իմ ձեռքերը դնելով քեզ վրայ, 7 որովհետեւ Աստուած մեզ երկչոտութեան ոգի չտուեց, այլ՝ զօրութեան, սիրոյ եւ զգաստութեան: 8 Ուստի ամօթ մի՛ համարիր վկայել մեր Տիրոջը, ոչ էլ ինձ՝ նրա կապեալին. այլ մասնակի՛ց եղիր Աւետարանի համար եղած չարչարանքներին, զօրութեամբ Աստծու, 9 որ փրկեց մեզ եւ կոչեց սուրբ կոչումով՝ ոչ ըստ մեր գործերի, այլ ըստ իր նախասահմանութեան եւ շնորհի, որ տրուեց մեզ յաւիտենական ժամանակներից առաջ ի Քրիստոս Յիսուս, 10 բայց յայտնուեց այժմ մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի երեւալով. նա, որ կործանեց մահը եւ լուսաւոր դարձրեց կեանքն ու անմահութիւնը Աւետարանի միջոցով, 11 Աւետարան, որին քարոզիչ կարգուեցի ես եւ առաքեալ ու վարդապետ հեթանոսների†: 12 Ահա թէ ինչու այս չարչարանքներն եմ կրում, բայց ամօթ չեմ համարում, քանզի գիտեմ, թէ ո՛ւմ եմ հաւատացել եւ վստահ եմ, որ նա կարո՛ղ է իմ աւանդը պահել մինչեւ այն օրը: 13 Որպէս օրինակ ունեցիր այն ողջամիտ խօսքերը, որոնք ինձնից լսեցիր՝ այն հաւատով եւ սիրով, որ ունեն Քրիստոս Յիսուսին միանալով հաւատացողները: 14 Պահի՛ր բարի աւանդը մեր մէջ բնակուող Սուրբ Հոգու միջոցով:

15 Այս բանը իմացի՛ր, որ մեզնից հեռացան բոլոր նրանք, որ Ասիայից էին, որոնց թւում են Փիգեղոսը եւ Հերմոգենէսը: 16 Թող Աստուած ողորմած լինի Օնեսիփորոսի ընտանիքին, որովհետեւ նա ինձ շատ անգամ հանգստացրեց եւ իմ կապանքները ամօթ չհամարեց. 17 այլ, երբ Հռոմ եկաւ, եռանդագին փնտռեց ինձ ու գտաւ 18 (տայ Տէրը, որ նա ողորմութիւն գտնի Տիրոջից այն օրը). եւ թէ ինչքա՜ն ինձ ծառայութիւն մատուցեց Եփեսոսում, այդ դու ինքդ քաջ գիտես:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՋԻՆՈՒՈՐԸ

2 Եւ դու, որդեա՛կ իմ, զօրացի՛ր Քրիստոս Յիսուսի շնորհով: 2 Եւ ինչ որ լսեցիր ինձնից բազում վկաներով, աւանդի՛ր այն հաւատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին էլ ուսուցանել:

3 Վշտակի՛ց եղիր Քրիստոս Յիսուսի տառապանքներին որպէս նրա բարի զինուորը: 4 Ոչ ոք, զինուոր դառնալով, չի զբաղուի աշխարհիկ կեանքի գործերով, որպէսզի զօրավարին հաճելի լինի: 5 Եւ եթէ մէկը մրցամարտիկ է, պսակ չի ստանայ, եթէ ըստ օրէնքի չմարտնչի: 6 Եւ չարաչար աշխատող հողագո՛րծը նախ պէտք է վայելի պտղից: 7 Իմացի՛ր՝ ինչ ասում եմ: Թող Տէրը քեզ իմաստութիւն տայ ամէն ինչում: 8 Յիշի՛ր մեռելներից յարութիւն առած Քրիստոս Յիսուսին՝ Դաւթի ցեղից, իմ քարոզած Աւետարանի համաձայն, 9 որի համար չարչարւում եմ եւ շղթայուած իսկ եմ, ինչպէս չարագործը. բայց Աստծու խօսքը շղթայուած չէ: 10 Դրա համար ամէն ինչի համբերում եմ ընտրեալների սիրուն, որպէսզի նրանք էլ հասնեն փրկութեան եւ երկնային փառքին, որ Քրիստոս Յիսուսի միջոցով է:

†Յուն. լաւ բն. չունեն հեթանոսների բառը:

11 Ճիշտ է այս խօսքը, թէ՝
«Եթէ Քրիստոսի հետ մեռանք, նրա հետ էլ պիտի ապրենք.
12 եթէ համբերենք, նրա հետ էլ պիտի թագաւորենք.
եւ եթէ ուրանանք, նա էլ մե՛զ պիտի ուրանայ.
13 եւ եթէ հաւատարիմ չմնանք, նա հաւատարիմ է մնում,
որովհետեւ ինքն իրեն ուրանալ չի կարող»†:

ՓՈՐՁՈՒԱԾ ՄՇԱԿԸ

14 Այս բաները յիշեցրո՛ւ նրանց՝ վկայութիւն տալով Աստծու առաջ, որ բանակռիւներ չմղեն, որոնք ոչ մի բանի օգտակար չեն, այլ կործանում են լսողներին: 15 Ջանա՛ Աստծու առաջ ներկայացնել քեզ փորձուած, որպէս մի մշակ, որ ամօթով չի մնում, ճշմարտութեան խօսքը ուղիղ ներկայացնող: 16 Բայց պիղծ բաներից եւ սնոտի խօսքերից հեռո՛ւ մնա, քանի որ դրանց անձնատուր եղողները աւելի ու աւելի առաջ են գնում ամբարշտութիւնների մէջ, 17 եւ նրանց խօսքերը քաղցկեղի նման ճարակ են գտնում: Նրանց թւում են Հիմենոսը եւ Փիղետոսը, 18 որոնք շեղուեցին ճշմարտութիւնից եւ ասում են, թէ մեռելների յարութիւնը արդէն իսկ եղել է. նրանք կործանում են ոմանց հաւատը: 19 Բայց Աստծու հաստատուն հիմքը կանգուն է մնում եւ ունի այս կնիքը, թէ՝ «Տէրը ճանաչեց նրանց, որ իրն են»‡. նաեւ՝ «Անիրաւութիւնից հեռու լինի ամենայն ոք, ով կրում է Տիրոջ անունը»§: 20 Մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեայ եւ արծաթեայ անօթներ են լինում, այլ նաեւ՝ փայտեայ եւ խեցէ: Կան այնպիսիք, որոնք պատուաւոր գործածութեան համար են, կան էլ, որ ոչ պատուաւոր գործածութեան համար են: 21 Եթէ մէկն ինքն իրեն մաքրի այդպիսի բաներից, կը լինի պատուաւոր անօթ՝ սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջը, պատրաստուած ամէն բարի գործի համար: 22 Երիտասարդական ցանկութիւններից փախի՛ր եւ գնա՛ արդարութեան, հաւատի, սիրոյ, խաղաղութեան եւ սրբութեան յետեւից նրանց հետ, որոնք մաքուր սրտով աղօթում են Տիրոջ անունով: 23 Բայց յիմար եւ անմիտ վէճերից խուսափի՛ր. իմացի՛ր, որ դրանցից կռիւներ են ծնւում: 24 Այսպէս ուրեմն՝ Տիրոջ ծառան պէտք չէ որ կռիւ անի, այլ բոլորի հանդէպ լինի հեզահամբոյր, ուսուցանող, անոխակալ՝ 25 հանդարտութեամբ խրատելու համար հակառակողներին, որ թերեւս Աստուած նրանց ապաշխարութիւն տայ, որպէսզի ճանաչեն ճշմարտութիւնը 26 եւ զգաստանալով՝ ազատուեն Սատանայի որոգայթներից, որոնց մէջ բռնուած են նրա կամքը կատարելու պատճառով:

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ

3 Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, 2 երբ մարդիկ պիտի լինեն անձնասէր, փողասէր, հպարտ, ամբարտաւան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, 3 անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, անբարեսէր, 4 մատնիչ, յանդուգն, մեծամիտ, աւելի շատ հեշտասէր, քան աստուածասէր, 5 մարդիկ, որ ունեն աստուածապաշտութեան կերպարանք, սակայն ուրացել են նրա զօրութիւնը: Նաեւ խորշի՛ր նրանցից, 6 քանզի նրանց մէջ կան այնպիսիք, որ մտնում են տնից տուն եւ գերում են մեղքերով ծանրաբեռն կանանց†, որոնք տարուած են պէսպէս ցանկութիւններով. 7 կանայք, որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն կարող հասնել ճշմարիտ գիտութեանը: 8 Եւ ինչպէս Յանէսն ու Յամբրէսը հակառակուեցին Մովսէսին, այնպէս էլ սրանք հակառակւում են ճշմարտութեանը. ապականուած մտքով մարդիկ, անպէտք՝ հաւատի մէջ: 9 Բայց նրանք աւելի առաջ գնալ երբեք չեն կարող, քանի որ իրենց յիմարութիւնը յայտնի կը լինի բոլորին, ինչպէս որ եղաւ այդ երկուսինը:

†Փառաբանական երգ, որ երգում էին քրիստոնեայ մարտիրոսները:

‡Թուեր 16. 5:

§Ենսայի 26. 13:

†Յունարէնն աւելացնում է տկարամիտ բառը:

ՅՈՐԴՈՐՆԵՐ

10 Իսկ դու հետեւեցիր իմ վարդապետութեանը, իմ վարմունքին, կամեցողութեանը, հաւատին, համբերատարութեանը, սիրուն, համբերութեանը 11 եւ այն հալածանքներին ու չարչարանքներին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում եւ Լիւստրայում. գիտես, թէ ինչպիսի՛ հալածանքների ենթարկուեցի, բայց Տէրն ինձ փրկեց այդ բոլորից: 12 Եւ բոլոր նրանք, որ ուզում են աստուածապաշտութեամբ ապրել Քրիստոս Յիսուսով, հալածանքների մէջ պիտի լինեն: 13 Իսկ չար եւ խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան. իրենք մոլորուած՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին: 14 Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մէջ, որ սովորեցիր եւ որին հաւատարիմ եղար. գիտես, թէ ումից ես սովորել, 15 որովհետեւ մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է:

16 Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար:

ՈՂՋԱՄԻՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒՄԸ

4 Այս բանն եմ վկայել տալիս Աստծու եւ Յիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին եւ մեռածներին՝ իր յայտնութեան օրը, երբ գայ իր արքայութեամբ: 2 Եւ դու քարոզի՛ր Աստծու խօսքը, շարունա՛կ յայտարարիր այն, ժամանակին լինի թէ տարաժամ, յանդիմանի՛ր, սաստի՛ր, յորդորի՛ր՝ կատարեալ համբերատարութեամբ ուսուցանելով. 3 քանզի պիտի գայ ժամանակ, երբ չպիտի անսան ողջամիտ վարդապետութեանը, այլ, իւրաքանչիւրն ըստ իր ցանկութիւնների, ուսուցանողներ պիտի հաւաքի իր շուրջը՝ իր ականջներին հաճելի բաներ լսելու մարմաջով. 4 եւ նրանք ականջները պիտի դարձնեն ճշմարտութիւնից ու պիտի մոլորուեն գնան առասպելների յետեւից: 5 Իսկ դու արթո՛ւն եղիր ամէն ինչում, նեղութիւնների մէջ համբերի՛ր, աւետարանչի գործե՛ր արա, լիուլի կատարի՛ր քո պաշտօնը:

ԲԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱԽՃԱՆԸ

6 Իսկ ես զոհաբերուելու եմ, եւ իմ մեկնումի ժամանակը հասել է: 7 Պատերազմեցի բարի պատերազմը, աւարտեցի ընթացքս, պահեցի հաւատը: 8 Եւ հիմա ինձ է սպասում արդարութեան պսակը, որը, որպէս հատուցում, ինձ պիտի տայ Տէրը՝ արդար Դատաւորը, այն օրը. եւ ոչ միայն ինձ, այլ նաեւ բոլոր նրանց, որ սիրեցին նրա յայտնուելը:

ՎԵՐՋԻՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

9 Ջանա՛ իսկոյն գալ ինձ մօտ, 10 որովհետեւ Դեմասն ինձ լքեց եւ աշխա՛րհը սիրեց. նա գնաց Թեսաղոնիկէ, Կրեսկէսը՝ Գալիլիա†, Տիտոսը՝ Դաղմատիա: 11 Ղուկասն է միայն ինձ հետ: Մարկոսին վերցնելով՝ քեզ հետ բե՛ր, որովհետեւ նա ինձ պէտք է ծառայութեան համար: 12 Տիւքիկոսին ուղարկեցի Եփեսոս: 13 Տրովադայում թողեցի վերարկուն, Կարպոսի մօտ. երբ գաս, հետդ բե՛ր այն. բե՛ր նաեւ գրքերը, մանաւանդ՝ մագաղաթները: 14 Աղեքսանդրոսը‡ բազում չարչարանքներ պատճառեց ինձ: Թող Տէրը նրան հատուցի ըստ իր գործերի: 15 Նրանից դո՛ւ էլ զգուշացիր, որովհետեւ մեր խօսքերին շատ հակառակուեց: 16 Առաջին ատեանի ժամանակ ոչ ոք ինձ թիկունք չկանգնեց. բոլորը լքեցին ինձ: Այդ թող նրանց յանցանք չհամարուի: 17 Բայց Տէրն օգնեց ինձ եւ զօրացրեց ինձ, որպէսզի ինձնով հաստատուի քարոզութիւնը, եւ բոլոր հեթանոսները լսեն այն: Առիւծի բերանից փրկուեցի ես: 18 Տէրն ինձ կ'ազատի բոլոր չար գործերից եւ կը հասցնի իր երկնային արքայութեանը. նրան փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

19 Ողջունի՛ր Պրիսկային եւ Ակիւղասին. նաեւ՝ Օնեսիփորոսի ընտանիքին: 20 Երաստոսը մնաց Կորնթոսում: Տրոփիմոսին հիւանդ վիճակում թողեցի Մելիտոսում: 21 Աշխատի՛ր գալ նախքան ձմեռը: Քեզ ողջունում են Եբուղոսը, Պուդէսը, Ղինոսը, Կլոդիան ու բոլոր եղբայրները: 22 Տէր Յիսուս Քրիստոս լինի քո հոգու հետ: Աստծու շնորհը քեզ հետ:

†Լաւագոյն յուն. բն. Գալիլիա-ի փոխարէն ունեն Դաղատիա:

‡Ցուցարէնն ունի դարձեալ Աղեքսանդրոսը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՏԻՏՈՍԻՆ

Ներածութիւն

Տիտոսը ոչ հրէական ծագումով մի քրիստոնեայ էր: Նա եղել էր Պօղոսի մերձաւոր գործակիցներից մէկը եւ կարեւոր դեր էր խաղացել առաքեալի հետ կորնթացիներին հաշտեցնելու գործում: Այն ժամանակ, երբ այս թուղթը ուղղւում էր նրան, նա գտնւում էր Կրետէում: Առաքեալը յանձնարարել էր նրան՝ վերահսկելու այդ կղզու Եկեղեցու գործունէութիւնն ու կազմակերպումը:

Թղթի սկզբում ամփոփ կերպով տրուած է առաքեալի պատգամը: Առաջին գլուխը նուիրուած է Եկեղեցու պատասխանատուներից պահանջուող յատկութիւններին: Երկրորդ գլխում խորհուրդներ են տրւում Տիտոսին այն մարդկանց վերաբերեալ, որոնց հետ նա ամենօրեայ շփման մէջ է Եկեղեցում. ծերունիներ, հասակաւոր կանայք (որոնք իրենց հերթին պէտք է ուսուցանեն աւելի երիտասարդ կանանց), երիտասարդ տղամարդիկ, ստրուկներ եւ այլ: Երրորդ գլուխը յիշեցնում է քրիստոնեաների պարտականութիւնները՝ ապրել խաղաղ, խուսափել բաժանումներից, եւ աւարտւում է զանազան անձնական յանձնարարութիւններով ու ողջոյններով:

Ընթերցողը հեշտութեամբ կը նկատի, որ այս թղթի պատգամը բացառապէս Տիտոսի անձին եւ նրա աշխատանքին չի վերաբերում: Այստեղ շօշափուած հարցերը այնպիսիք են, որոնք կարող են տեւապէս առաջադրուել Եկեղեցում. օրինակ եկեղեցական համայնքների կազմակերպման հարցը կամ այն հարցը, թէ ինչպէս պէտք է վարուեն այդ համայնքին մաս կազմող պատասխանատու ղեկավար անձինք, հաւատացեալները եւ այլն:

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 *Պօղոսը՝ ծառայ Աստծու եւ առաքեալ Յիսուս Քրիստոսի, որ կոչուած է բերելու Աստծու ընտրեալներին հաւատի եւ ճշմարտութեան գիտութեանը, որ աստուածապաշտութեամբ է 2 եւ յաւիտենական կեանքի յոյսով, որը խոստացաւ անսուտն Աստուած յաւիտենական ժամանակներից առաջ, 3 բայց յայտնեց իր խօսքը իր ժամանակին՝ քարոզութեամբ, որին ես հաւատարիմ եղայ ըստ մեր Փրկիչ Աստծու հրամանի. 4 Տիտոսին՝ հասարակաց հաւատի մէջ իմ սիրելի որդուն, շնո՛րհ եւ խաղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Փրկիչ Քրիստոս Յիսուսից:*

ՏԻՏՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԿՐԵՏԷՈՒՄ

5 Դրա համար իսկ քեզ թողեցի Կրետէում, որպէսզի, ինչ պակաս բան որ կայ, ուղղես եւ իւրաքանչիւր քաղաքում երէցներ կարգես, ինչպէս որ ես պատուիրեցի քեզ: 6 Կարգես մի այնպիսի մարդու, որ լինի անբասիր, մէ՛կ կնոջ մարդ, ունենայ հաւատացեալ որդիներ, որոնք անառակութեան մէջ ամբաստանուած կամ անհնազանդ չլինեն, 7 քանի որ պէտք է, որ եպիսկոպոսն անբասիր լինի, որպէս Աստծու տնտես. ոչ յանդուգն, ոչ բարկացող, ոչ անարգող†, ոչ կռուաբար, ոչ շահասէր, 8 այլ՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, 9 ամուր կապուած վարդապետութեան հաւատի խօսքին, որպէսզի կարողանայ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ եւ կշտամբել հակառակորդներին. 10 քանզի անհնազանդներ շատ կան, դատարկախօսներ, մոլորեցնողներ, մանաւանդ եթէ հրէութիւնից դարձածներից են. 11 նրանց բերանը պէտք է փակել. նրանք կործանում են բոլոր ընտանիքները եւ շահամոլութեան համար ուսուցանում են այնպիսի բաներ, որ պէտք չէ ուսուցանել:

12 Նրանցից մէկը, իրենց իսկ մարգարէն, ասաց. «Կրետացիները մշտապէս ստախօսներ են, չար գազաններ, դատարկապորտներ»: 13 Եւ ստոյգ է այս վկայութիւնը. ուստի նրանց խստագոյնս կշտամբի՛ր, որպէսզի առողջ լինեն հաւատի մէջ 14 եւ չնայեն հրէական առասպելներին եւ ճշմարտութիւնից շեղուած մարդկանց հրահանգներին: 15 Ամէն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար, բայց պիղծերի եւ անհաւատների համար ոչ մի բան մաքուր չէ: Եւ նրանց միտքն ու խղճմտանքը պղծուած են: 16 Խոստովանում են, որ գիտեն Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են նրան. պիղծ են, անհնազանդ եւ ամէն բարի գործի համար՝ անպէտք:

ՈՂՋԱՄԻՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

2 *Բայց դու սովորեցրո՛ւ այն, ինչ որ վայել է ողջամիտ վարդապետութեանը. 2 որ ծերերը լինեն զգաստ, պարկեշտ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատի, սիրոյ, համբերութեան, ժուժկալութեան† մէջ: 3 Պառաւ կանայք նոյնպէս լինեն զգաստ եւ սրբերին վայել վարմունք ունենան. ոչ բանսարկու, ոչ գինեմոլ, այլ՝ բարեխրատ, 4 որ խրատեն դեռատի կանանց՝ սիրելու իրենց մարդկանց, լինելու որդեսէր, 5 խոհեմ, մաքրակենցաղ, տնարար, բարեգործ, հնազանդ իրենց մարդկանց, որպէսզի Աստծու խօսքը եւ վարդապետութիւնը չանարգուի: 6 Երիտասարդներին նոյնպէս յորդորի՛ր լինել խոհեմ, 7 քո անձը բոլորին օրինակ դարձրո՛ւ բարի գործերի համար, ուսուցման մէջ պահի՛ր անեղծութիւն, սրբութիւն, պարկեշտութիւն, 8 ողջամիտ խօսք՝ պարսաւանքի տեղի չտուող, որպէսզի, ով որ հակառակուի, ամօթով մնայ եւ մեր մասին ասելու որեւէ չար բան չունենայ: 9 Յորդորի՛ր ծառաներին, որ հնազանդ լինեն իրենց տէրերին եւ ամէն ինչում լինեն հաճելի նրանց. ոչ հակառակուող, 10 ոչ շորթող, այլ ցոյց տան կատարեալ հաւատարմութիւն՝ բարութեամբ, որպէսզի մեր Փրկչի՝*

†Յունարէնում պակասում է *ժուժկալութիւն* բառը:

†Յունարէնն ունի՝ *հարբեցող*:

Աստծու վարդապետութիւնը ամէն ինչում զարդարեն:

ՓՐԿՉԱԿԱՆ ՇՆՈՐՀԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

11 *Քանզի Աստուած իր շնորհը յայտնեց որպէս փրկութեան միջոց բոլոր մարդկանց,* 12 *շնորհ, որ խրատում է մեզ, որ մերժենք ամբարշտութիւնը եւ աշխարհիկ ցանկութիւնները, այս աշխարհում ապրենք զգաստութեամբ, աստուածապաշտութեամբ* 13 *եւ ակնդէտ սպասենք երանելի յոյսին եւ փառքի յայտնութեանը մեծն Աստծու եւ մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի,* 14 *որ իր անձը տուեց մեզ համար, որպէսզի մեզ փրկի ամէն անօրէնութիւնից եւ մաքրի որպէս իրեն սեփական ժողովուրդ՝ նախանձախնդիր բարի գործերի:* 15 *Այս բաները խօսի՛ր, յորդորի՛ր եւ յանդիմանի՛ր ամենայն խստութեամբ, որպէսզի չլինի մէկը, որ քեզ արհամարհի:*

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐՔ

3 *Յիշեցրո՛ւ նրանց, որ իշխանութիւններին եւ պետութիւններին հնազանդուեն եւ հպատակուեն, բոլոր բարի գործերի համար պատրաստ լինեն.* 2 *ոչ ոքի չչարախօսեն, չլինեն կռուարար, այլ՝ հեզահամբոյր, բոլոր մարդկանց հանդէպ քաղցրութեամբ վերաբերուեն.* 3 *որովհետեւ մի ժամանակ մենք էլ էինք անմիտ, անհնազանդ, մոլորուած, ծառայում էինք ցանկութիւնների եւ պէսպէս անառակութիւնների. չարութեամբ եւ նախանձով էինք ապրում, ատելի էինք եւ ատում էինք միմեանց:*

4 *Իսկ երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրութիւնը եւ մարդասիրութիւնը յայտնուեց,* – 5 *ոչ այն արդարութեան գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմութեան համաձայն,* – *փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու,* 6 *որ Աստուած թափեց մեր վրայ առատութեամբ մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի միջոցով,* 7 *որպէսզի, նրա շնորհով արդարացուած, ժառանգներ լինենք յաւիտենական կեանքի յոյսով:*

8 *Ճիշտ է այս խօսքը, եւ ուզում եմ, որ դու հաստա՛տ մնաս սրանում, որպէսզի Աստծուն հաւատացողները ջանք թափեն բարի գործեր կատարելու, քանի որ ա՛յդ է բարի եւ օգտակար՝ մարդկանց համար:* 9 *Բայց հեռո՛ւ վանիր յիմար վէճերը, տոհմաբանութիւնները, հակաճառութիւններն ու օրէնքի շուրջ եղող կռիւները, որովհետեւ դրանք անօգուտ են եւ սնոտի:* 10 *Հեռացի՛ր հերձուածող մարդուց՝ մէկ կամ երկու անգամ նրան խրատելուց յետոյ.* 11 *իմացի՛ր, որ շեղուած է այդպիսին եւ մեղանչում է՝ ինքն իսկ դատապարտելով իրեն:*

ՎԵՐՋԻՆ ՅՈՐԴՈՐՆԵՐ

12 *Երբ քեզ մօտ ուղարկեմ Արտեմասին կամ Տիւքիկոսին, շտապի՛ր գալ ինձ մօտ Նիկոպոլիս, քանի որ մտադիր եմ այնտեղ ձմեռել:* 13 *Օրէնսգէտ Զենոնին եւ Ապողոսին շուտով ճանապարհի՛ր, այնպէս որ նրանք ոչ մի բանի պակասը չզգան:* 14 *Եւ մերոնք էլ թող սովորեն հետամուտ լինել բարի գործերի, կարեւոր պէտքերի մէջ, որպէսզի անպտուղ չլինեն:* 15 *Ողջունում են քեզ բոլոր նրանք, որ ինձ հետ են: Ողջունի՛ր հաւատի մէջ մեզ սիրողներին: Շնո՛րհ՝ ձեզ բոլորիդ:*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՄՈՆԻՆ, ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԵՒ ԱՊՓԻԱՅԻՆ

Ներածութիւն

Փիլիմոնը քրիստոնէական հաւատքին դարձած կարեւոր մի անձնաւորութիւն էր եւ, անկասկած, կողոսացիների Եկեղեցու անդամներից մէկը: Նա Պօղոս առաքեալի բարեկամներից էր, ունէր Օնեսիմոս անունով մի ստրուկ, որ փախել էր իր մօտից: Ցայտնի չէ, թէ Օնեսիմոսը ինչպիսի հանգամանքներում էր յարաբերութիւնների մէջ մտել Պօղոսի հետ, որն այդ շրջանում բանտում էր գտնւում: Փաստն այն է, որ նա եւս քրիստոնեայ էր դարձել: Պօղոսը որոշում է յետ ուղարկել նրան իր տիրոջ՝ Փիլիմոնի մօտ, որին եւ ուղղում է այս թուղթը՝ խնդրելով, որ ընդունի նրան ոչ այլեւս որպէս ստրուկ (փախստական ստրուկն այդ ժամանակ ենթարկւում էր շատ ծանր պատժի), այլ որպէս հաւատակից եղբայր:

Թղթի սկզբում Պօղոսը Փիլիմոնին եւ նրա ընկերներին ողջունելուց յետոյ գոհութիւն է յայտնում Աստծուն Փիլիմոնի հաւատի եւ նրա նախանձախնդրութեան համար: Ապա ներկայացնում է իր խնդրանքը ի նպաստ Օնեսիմոսի, որը վերստին պիտի միանար իր տիրոջը: Ողջոյնների բաժնում, որով աւարտւում է այս թուղթը, հանդիպում ենք բազմաթիւ մարդկանց անունների, որոնք յիշատակուած են նաեւ կողոսացիներին ուղղուած թղթում: Նրանցից մէկն է, օրինակ, Արքիպպոս սարկաւագը: Հնարաւոր է, որ Օնեսիմոսը իր հետ Կողոսիա բերած լինէր կողոսացիներին եւ Փիլիմոնին ուղղուած երկու թղթերը:

Թղթում առկայ է այն նրբանկատութիւնը, որով առաքեալը դիմում է իր բարեկամ Փիլիմոնին: Նա ոչ մի հրաման չի տալիս նրան, ոչինչ չի պարտադրում, չի ժխտում նոյնիսկ Օնեսիմոսի վրայ նրա ունեցած իրաւունքները: Բայց յիշեցնում է նրան (ինչպէս եւ բոլոր նրանց, ովքեր կարդում են այս թուղթը), թէ ինչպէս Քրիստոսի սէրը մի նոր լոյսով է լուսաւորում ու կերպարանափոխում մարդկային բոլոր յարաբերութիւնները:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՓԻԼԻՄՈՆԻՆ ԵՒ ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԵՒ ԱՊՓԻԱՅԻՆ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Պողոսը՝ բանտարկեալը Յիսուս
Քրիստոսի, եւ Տիմոթէոս եղբայրը,
սիրելի Փիլիմոնին՝ մեր գործակցին, 2 եւ
Ապփիա քրոջը, մեր զինակից Արքիպ-
պոսին եւ տնական եկեղեցուդ: 3 Շնո՛րհ
ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր
Աստծուց եւ տէր Յիսուս Քրիստոսից:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՕԹՔ

4 Գոհութիւն եմ մատուցում իմ
Աստծուն՝ իմ աղօթքներում միշտ յի-
շատակելով քեզ, 5 երբ լսում եմ քո
հաւատի եւ սիրոյ մասին, որ ունես Տէր
Յիսուսի եւ բոլոր սրբերի հանդէպ, 6 որ-
պէսզի քո հաղորդակցութիւնը հաւա-
տին արգասաւոր լինի ճանաչելու այն
ամբողջ բարին, որ կայ ձեր մէջ Քրիս-
տոս Յիսուսով: 7 Մեծ ուրախութիւն եւ
մխիթարութիւն ունեցայ՝ լսելով քո
սիրոյ մասին, քանի որ սրբերի սրտերը
քեզնով հանգստանում են, եղբա՛յր:

ՊՕՂՈՍԻ ԽՆԴՐԱՆՔԸ Ի ՆՊԱՍՏ ՕՆԵՍԻՄՈՍԻ

8 Չնայած մեծ համարձակութիւն
ունեմ Քրիստոսով հրամայելու քեզ
անել, ինչ որ պէտք է, 9 սակայն սէրը
ստիպում է ինձ, որ աղաչեմ ես՝
ծերացած Պողոսը եւ այժմ նաեւ բան-
տարկեալը Յիսուս Քրիստոսի: 10 Աղա-
չում եմ քեզ իմ որդու՝ Օնեսիմոսի
համար, որի հոգեւոր հայրը եղայ ես
իմ կապանքների մէջ. 11 նա մի
ժամանակ պիտանի չէր քեզ, բայց
այժմ պիտանի է թէ՛ քեզ եւ թէ՛ ինձ:
12 Նրան յետ ուղարկեցի քեզ մօտ. եւ
դու ընդունի՛ր նրան որպէս իմ սրտի
հատորը†. 13 նրան ուզում էի ինձ մօտ
պահել, որպէսզի քո փոխարէն ծառայի
ինձ Աւետարանի համար իմ կրած
կապանքների մէջ: 14 Բայց առանց քո
կամքի ոչինչ չուզեցի անել, որպէսզի
քո բարի գործը հարկադրանքով չլինի,
այլ՝ յօժարակամ: 15 Եւ թերեւս նա
հեռացաւ միաւժամանակ նրա համար,
որ ընդմի՛շտ ունենաս նրան 16 այլեւս
ոչ իբրեւ ծառայ, այլ աւելի վեր, քան
ծառան, որպէս մի սիրելի եղբայր. եթէ
նա ինձ համար սիրելի է, որչա՛փ եւս
առաւել կը լինի քեզ համար՝ թէ՛ իբրեւ
ստրուկ եւ թէ՛ իբրեւ եղբայր Տիրոջով:
17 Եթէ ինձ ընկերակից ես համարում
քեզ, ընդունի՛ր նրան, ինչպէս ինձ
կ'ընդունէիր: 18 Եւ եթէ մի անի-
րաւութիւն է արել քո դէմ կամ մի բան
է պարտք քեզ, այն իմ վրա՛յ հաշուիր:
19 Ես՝ Պողոսը, իմ ձեռքո՛վ գրեցի, ես կը
հատուցե՛մ, որպէսզի չասեմ քեզ, թէ
դու էլ քո ա՛նձն ես ինձ պարտական:
20 Այո՛, եղբա՛յր, քո փոխարէն ե՛ս
ուրախանամ Տիրոջով: Մխիթարի՛ր իմ
սիրտը Քրիստոսով: 21 Քո հնազան-
դութեանը վստահելով է, որ գրեցի
քեզ, քանզի գիտեմ, որ կ'անես աւելին,
քան ինչ ասում եմ:

ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

22 Միաժամանակ ինձ համար էլ
մնալու մի տեղ պատրաստի՛ր, քանի որ
յոյս ունեմ, որ ձեր աղօթքներով կը
շնորհուեմ ձեզ: 23 Ձեզ ողջունում է
Եպափրասը՝ իմ գերութեան ընկերը ի
Քրիստոս Յիսուս, 24 ինչպէս նաեւ
Մարկոսը, Արիստարքոսը, Դեմասը եւ
Ղուկասը՝ իմ գործակիցները: 25 Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեր
հոգու հետ:

---

†Լաւագոյն յուն. բն. ունեն ...որին յետ ուղարկեցի ձեզ մօտ՝ ի՛մ իսկ սիրտը ուղարկելով:

ԹՈՒՂԹ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ

Ներածութիւն

Ով որ ուշադրութեամբ կարդայ այս թուղթը, այն տպաւորութիւնը կ'ունենայ, որ գտնւում է աւելի շուտ մի քարոզի կամ մի ճառի առաջ, քան բառիս բուն իմաստով՝ մի նամակի: Միշտ է, 13-րդ գլխի վերջին համարները, ողջոյնների մասերով հանդերձ, մտածել են տալիս ինչ-որ նամակի աւարտի մասին, սակայն սկզբի մասում ոչ մի տեղեկութիւն չի տրւում այս գրուածքի ո՛չ հեղինակի եւ ո՛չ էլ հասցէատիրոջ վերաբերեալ: Հնարաւոր է, թէեւ ոչ ստոյգ, որ այս «թուղթը» ուղարկուած լինի Իտալիայից: Յամենայն դէպս այն հասցէագրուած է այն քրիստոնեաներին, որոնք ժողովրդականութիւն չէին վայելում, եւ որոնց հակառակորդների թիւը գնալով աճում էր, այն աստիճան, որ նրանք ցանկանում էին հեռանալ քրիստոնէական հաւատից: Հեղինակը քաջալերում է նրանց, որ հաստատ մնան այդ հաւատի մէջ՝ ապացուցելով նրանց Քրիստոսի անձի եւ գործի առաւելութիւնը մարդու փրկութեան հետ առնչուող ամէն հարցում:

Հէնց սկզբից թուղթը հաստատում է, որ Աստուած վերջնականապէս յայտնուեց մեզ իր Որդու՝ Յիսուս Քրիստոսի անձի մէջ: Մի քանի ազդու կոչերով ընդմիջուած այս գրուածքում կարելի է առանձնացնել երկու գլխաւոր մասեր.

Առաջին մասում բացայայտուած է Քրիստոսի գերազանց մեծութիւնը. նա գերիվեր է ոչ միայն մարգարէներից, այլեւ՝ հրեշտակներից, Մովսէսից, Յեսուից. որպէս նոր ուխտի միակ Քահանայապետ, նա գերիվեր է հին ուխտի բոլոր քահանայապետներից. մէկ անգամ առ միշտ կատարուած նրա զոհագործումը գերիվեր է հին Իսրայէլի բազմաթիւ զոհագործութիւններից:

Երկրորդ մասը նախ քաջալերում է ունկնդիրներին, որպէսզի յարատեւեն հաւատի մէջ: Այս մասում է գտնւում Հին Կտակարանի հաւատացեալների օրինակին վերաբերող հոչակաւոր հատուածը, ապա այն հրաւէրը, որով թելադրւում է հայեացքները մշտապէս յառած պահել Յիսուս Քրիստոսի վրայ, որպէսզի հնարաւոր լինի նրա նման համբերութեամբ տանել հակառակութիւնները: Վերջին մի քանի յանձնարարութիւններից եւ ազդարարութիւններից յետոյ հեղինակը աւարտում է իր թուղթը օրհնութեամբ եւ ողջոյններով:

ԱՍՏՈՒԱԾՈՒ ԽՕՍՔԸ ԻՐ ՈՐԴՈՒ ՄԻՋՈՑՈՎ

1 Աստուած բազմապիսի ձեւերով եւ այլազան օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. 2 այս վերջին օրերին մեզ հետ խօսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամէն ինչի, եւ որի միջոցով ստեղծեց տիեզերքը: 3 Նա, որ լոյսն է նրա փառքի եւ բուն պատկերը նրա էութեան, որ իր խօսքի զօրութեամբ հաստատ է պահում տիեզերքը: Նա մեր մեղքերի մաքրումը կատարելուց յետոյ, նստեց Աստծու մեծութեան աջ կողմում՝ բարձունքներում:

ՈՐԴԻՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՑ ՄԵԾ Է

4 Նա այնչափ գերազանց եղաւ հրեշտակներից, որ նրանցից շատ աւելի անուն ժառանգեց: 5 Արդարեւ, հրեշտակներից որի՞ն երբեւէ ասաց.

«Դու ես իմ որդին,
ես այսօր ծնեցի քեզ»:

Եւ դարձեալ.

«Ես նրան հայր կը լինեմ,
իսկ նա ինձ որդի կը լինի»:

6 Եւ դարձեալ, երբ անդրանկին աշխարհ է մտցնում, ասում է.

«Թող երկրպագեն նրան Աստծու բոլոր հրեշտակները»:

7 Իսկ հրեշտակների մասին էլ ասում է.

«Նա իր հրեշտակներին հոգիներ դարձրեց
եւ իր ծառաներին՝ կրակի բոց»:

8 Իսկ Որդու մասին ասում է.

«Աստուա՛ծ, քո աթոռը յաւիտեանս յաւիտենից է.
քո արքայութեան գաւազանը՝ ուղղութեան գաւազան:
9 Դու սիրեցիր արդարութիւնը եւ ատեցիր անօրէնութիւնը.
դրա համար, Աստուա՛ծ, քո Աստուածը քեզ օծեց
ուրախութեան իւղով՝
աւելի քան քո ընկերներին»:

10 Նաեւ՝

«Դո՛ւ, Տէ՛ր, սկզբից երկիրը հիմնեցիր,
եւ քո ձեռքերի գործն են երկնքները:
11 Նրանք կորստեան պիտի մատնուեն, բայց դու կաս եւ մնում ես:
Բոլորը պիտի մաշուեն որպէս ձորձեր եւ որպէս վերարկու.
12 պիտի ոլորես դրանք հագուստի պէս.
եւ նրանք պիտի ոլորուե՞ն† :
Բայց դու միշտ նոյնն ես, եւ քո տարիները չեն պակասելու»:

†Յունարէնն ունի ... պիտի փոխուեն:

13 Հրեշտակներից որի՞ն երբեւէ ասաց.

«Նստի՛ր իմ աջ կողմում, մինչեւ որ քո թշնամիներին
քո ոտքերին պատուանդան դարձնեմ»:

14 Չէ՞ որ բոլորն էլ սպասաւորող հոգիներ են, որոնք ուղարկւում են ի սպասաւորութիւն նրանց, որ ժառանգելու են փրկութիւնը:

ՄԵԾ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

2 Ահա թէ ինչու մենք պէտք է աւելի եւս ուշադիր լինենք ասուած խօսքերին, որպէսզի երբեք դրանցից չտարուենք դէպի կորուստ, 2 որովհետեւ, եթէ այն խօսքը, որ հրեշտակների միջոցով ասուեց, հաստատուն մնաց, եւ ամէն յանցանք ու անհնազանդութիւն արդար պատիժ ստացան, 3 մենք ինչպէ՞ս պիտի ազատուենք, եթէ անհոգ գտնուենք այնպիսի փրկութեան հանդէպ, որ նախ հռչակուեց Տիրոջ կողմից եւ ապա հաստատուեց մեզ համար նրանց միջոցով, որ լսել էին այն. 4 Աստուած էլ այն վկայեց նշաններով, զօրաւոր գործերով, ամէն տեսակ զօրութիւններով եւ Սուրբ Հոգու շնորհներով, որոնք տրուեցին իր կամքի համաձայն:

ՓՐԿՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ ԵՒ ՈՉ ԹԷ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՎ

5 Քանզի հրեշտակներին չէ, որ հնազանդեցրեց գալիք աշխարհը, որի մասին մենք խօսում ենք: 6 Մէկը վկայում է մի տեղ եւ ասում է.

«Մարդն ի՞նչ է, որ յիշես նրան,
կամ՝ մարդու որդին ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց տաս
նրա հանդէպ:
7 Նրան հրեշտակներից մի փոքր ցած իջեցրիր.
Փառքով եւ պատուով պսակեցիր նրան
եւ քո ձեռաց գործերի վրայ կարգեցիր նրան.†
8 ամէն ինչ հնազանդեցրիր նրա ոտքերի ներքեւ»‡ :

Արդ, ամէն ինչ հնազանդեցնելով՝ նրան չհնազանդող ոչինչ չթողեց. սակայն այժմ դեռ ամէն ինչ նրան հնազանդուած չենք տեսնում: 9 Բայց տեսնում ենք փառքով եւ պատուով

†Յուն. լաւ բն. չունեն ... եւ քո ձեռաց գործերի վրայ կարգեցիր նրան նախադասութիւնը:
‡Սաղմոս 8. 5–7:

պսակուած Յիսուսին, որ մի փոքր հրեշտակներից աւելի ցածր էր դասուել մահուան չարչարանքները յանձն առնելու պատճառով, որպէսզի Աստծու շնորհով բոլորի համար մահը ճաշակի. 10 որովհետեւ վայել էր, որ Աստուած (նրա համար եւ նրանով է ամէն բան) կատարեալ դարձնի Յիսուսին չարչարանքների միջոցով, որպէսզի բազում որդիներ մասնակցեն նրա փառքին, քանի որ Յիսուս է նրանց դէպի փրկութիւն առաջնորդողը: 11 Քանզի նա, որ սրբացնում է, եւ նրանք, որ սրբացւում են, բոլորն էլ մէկի՛ց են. ահա թէ ինչու ամօթ չի համարում եղբայրներ անուանել նրանց եւ ասել.

12 «Քո անուան մասին պիտի պատմեմ իմ եղբայրներին,
քո ժողովրդի հաւաքոյթի մէջ պիտի գովաբանեմ քեզ»† :

13 Եւ դարձեալ.

«Ես յոյսս պիտի դնեմ նրա վրայ»:

Եւ դարձեալ.

«Ահա՛սիկ ես եւ իմ զաւակները, որոնց Աստուած ինձ տուեց»‡ :

14 Արդ, որովհետեւ զաւակները հաղորդակից եղան արեան եւ մարմնին, ինքն էլ մարդկային բնութեամբ մասնակից եղաւ նրանց, որպէսզի իր մահով կործանի նրան, որ մահուան իշխանութիւն ունէր, այսինքն՝ Սատանային, 15 եւ ազատի նրանց, որ, մահուան երկիւղով, միշտ գերութեան վիճակում էին: 16 Ահա թէ ինչու նա օգնելու համար երբեք հրեշտակներին ձեռք չերկարեց, այլ՝ Աբրահամի սերնդին: 17 Ուստի, պէտք էր, որ նա ամէն ինչով եղբայրներին նմանուէր, որպէսզի ողորմած լինէր եւ հաւատարիմ քահանայապետ Աստծու առաջ իր ծառայութեան մէջ՝ քաւելու համար ժողովրդի մեղքերը. 18 որովհետեւ, ինչպէս որ ինքն իսկ չարչարուեց՝ փորձութեան մատնուելով, այնպէս էլ կարո՛ղ է օգնել փորձութեան ենթարկուածներին:

ՔՐԻՍՏՈՍ՝ ԳԵՐԱԶԱՆՑ, ՔԱՆ ՄՈՎՍԷՍԸ

3 Ուստի, սո՛ւրբ եղբայրներ, որ մասնակից էք երկնաւոր կոչմանը, նայեցէ՛ք Յիսուս Քրիստոսին, որին Աստուած ուղարկեց՝ լինելու Քահանայապետն այն հաւատի, որ խոստովանում ենք մենք. 2 նա հաւատարիմ էր իր Արարչին, որ նրան կարգեց այս պաշտօնին, ինչպէս որ Մովսէսն էլ հաւատարիմ եղաւ նրա ամբողջ տան մէջ. 3 որովհետեւ նա առաւել փառքի արժանի եղաւ, քան Մովսէսը, ինչպէս որ տունը կառուցողն աւելի պատիւ ունի, քան տունը. 4 արդարեւ, ամէն տուն, որ կառուցւում է, որեւէ մէկի կողմից է կառուցւում, իսկ ով ամէն բան արարեց, Աստուած է: 5 Մովսէսը հաւատարիմ եղաւ նրա ամբողջ տան մէջ որպէս ծառայ՝ վկայելու համար ասուելիք խօսքերը. 6 իսկ Քրիստոս իբրեւ որդի՝ նրա տան վրայ: Նրա տունը մենք իսկ ենք, միայն թէ վստահութիւնը եւ յոյսի պարծանքը մինչեւ վերջ հաստատ† պահենք:

ԱՍՏՈՒԱԾՈՂՈՎՐԴԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ ՀԱՆԳԻՍՏԸ

7 Դրա համար էլ Սուրբ Հոգին այսպէս է ասում.

«Այսօր, եթէ նրա ձայնը լսէք,
8 մի՛ կարծրացրէք ձեր սրտերը ձեր հայրերի պէս,
որոնք Աստծուն բարկացրին փորձութեան օրը անապատում,
9 ուր նրանք փորձեցին ինձ, քննեցին ինձ,
թէեւ տեսան իմ գործերը ամբողջ քառասուն տարի:
10 Ուստի զզուանք զգացի այդ սերնդից եւ ասացի.
"Սրտով միշտ մոլորուած են,
եւ նրանք չիմացան իմ ճանապարհները".
11 այնպէս որ երդուեցի իմ բարկութեան մէջ՝ ասելով,
թէ երբեք չպիտի մտնեն իմ հանգստի մէջ»‡ :

12 Եղբայրնե՛ր, տեսէ՛ք, ձեզանից որեւէ մէկի մէջ թող երբեք չլինի չար ու անհաւատ սիրտ եւ ապըստամբի կենդանի Աստծու դէմ: 13 Բայց յորդորեցէ՛ք միմեանց ամէն օր, քանի այդ Այսօրը դեռ առջեւում է, որպէսզի ձեզնից ոչ ոք չկարծրանայ մեղքի խաբէութեամբ. 14 ահա մասնակից եղանք Քրիստոսին, միայն թէ հաստատ պահենք այն վստահութիւնը, որ ունեցել ենք սկզբից, 15 քանի որ ասուած է.

«Այսօր եթէ նրա ձայնը լսէք,
մի՛ կարծրացրէք ձեր սրտերը,

†Յուն. լաւ բն. չունեն մինչեւ վերջ հաստատ բառերը:
‡Թուեր 14. 21–23:

†Սաղմոս 21. 22 եւ 22. 23:
‡Եսայի 8. 18:

ինչպէս բարկութեան ժամանակ»† :
16 Քանզի ովքե՞ր էին, որ լսեցին եւ դառնացրին նրան. չէ՞ որ բոլոր նրանք, ովքեր դուրս էին եկել Եգիպտոսից Մովսէսի միջոցով: 17 Ումի՞ց զզուանք զգաց քառասուն տարի. չէ՞ որ յանցանք գործածներից, որոնց ոսկորներն ընկան այնտեղ, անապատում: 18 Ո՞ւմ երդուեց, որ չպիտի մտնեն իր հանգստի մէջ, եթէ ոչ՝ անհնազանդներին: 19 Եւ տեսնում ենք, որ նրանք չկարողացան մտնել իրենց անհաւատութեան պատճառով:

4 Զգո՛յշ լինենք ուրեմն, որ նրա հանգստի մէջ մտնելու խոստումից, որ տրուած է մեզ, ձեզնից որեւէ մէկը չզրկուի. 2 քանզի աւետուած է, ինչպէս եւ նրանց: Բայց խօսքը լսելը չօգնեց անապատում եղողներին, որոնք հաւատով չլսեցին այն: 3 Իսկ մենք, որ հաւատացինք, մտնելու ենք այդ հանգստի մէջ, ինչպէս որ նա ասաց.

«Ինչպէս երդուեցի իմ բարկութեան մէջ ասելով,
թէ չպիտի մտնեն իմ հանգստի մէջ»‡,

թէեւ նրա գործերը աշխարհի սկզբից կատարուած էին: 4 Քանզի մի տեղ եօթներորդ օրուայ մասին այսպէս է ասուած.

«Եւ հանգստացաւ Աստուած եօթներորդ օրը իր բոլոր գործերից»§ :

5 Եւ այստեղ դարձեալ ասում է, թէ՝ չպիտի մտնեն իմ հանգստի մէջ: 6 Եւ արդ, քանի որ ոմանց արգելուել էր* մտնել նրա մէջ, եւ նրանք էլ, որոնց նախապէս աւետուել էր, չմտան անհնազանդութեան պատճառով, 7 դարձեալ նա մի ուրիշ օր է սահմանում, Այսօրը. երկար ժամանակ յետոյ ասում է, ինչ որ Դաւթի բերանով ասուել է աւելի առաջ.

«Այսօր եթէ նրա ձայնը լսէք,
մի՛ կարծրացրէք ձեր սրտերը»:

8 Որովհետեւ, եթէ Յեսուն դրանց հանգիստ տուած լինէր, ապա դրանից յետոյ Աստուած ուրիշ օրուայ մասին չէր խօսի: 9 Արդ, ուրեմն, Աստծու ժողովրդի համար դեռ մնում է մի ուրիշ հանգստի օր. 10 որովհետեւ, ով մտնում է նրա հանգստի մէջ, նա հանգստանում է իր գործերից, ինչպէս Աստուած էլ հանգստացաւ իր գործերից:

11 Ջանանք, ուրեմն, մտնել այդ հանգստի մէջ, որպէսզի որեւէ մէկը նոյնօրինակ անհնազանդութեան մէջ չընկնի:

ՔՐԻՍՏՈՍ՝ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

12 Կենդանի է Աստծու խօսքը, ազդու եւ աւելի հատու, քան ամէն մի երկսայրի սուր. եւ կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, յօդերի եւ ողնածուծի բաժանման սահմանը. նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները: 13 Եւ նրա առաջ չկայ անտեսանելի արարած, այլ ամէն ինչ պարզ ու յստակ է նրա աչքերի առաջ. նրա մասին են մեր այս խօսքերը: 14 Ուրեմն, ունենք երկինքներով անցած մի մեծ Քահանայապետ՝ Յիսուսին՝ Աստծու Որդուն, ուստի ամուր պահենք մեր դաւանած հաւատը. 15 քանզի ոչ թէ ունենք մի քահանայապետ, որ կարող չլինի չարչարակից լինել մեր տկարութեանը, այլ՝ մի Քահանայապետ, որ մեզ նման փորձուած է ամէն ինչում, բայց առանց մեղքի է: 16 Ուրեմն, համարձակութեամբ մօտենանք նրա շնորհի աթոռին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհ գտնենք այն ժամանակ, երբ օգնութեան կարիք ունենք:

5 Ամէն մի քահանայապետ, մարդկանց միջից ընտրուելով, պաշտօն ունի մարդկանց կողմից Աստծու հետ յարաբերութեան մէջ լինելու, որպէսզի ընծաներ եւ զոհեր մատուցի մեղքերի համար: 2 Նա որոշ չափով միայն կարող է չարչարակից լինել տգէտներին եւ մոլորուածներին, քանի որ ինքն էլ տկարութեամբ պատած մարդ է. 3 դրա համար պէտք է, որ նա, ինչպէս ժողովրդի, այնպէս էլ իր համար ընծաներ մատուցի մեղքերի համար:

4 Եւ որեւէ մէկը ոչ թէ ինքն իրենից է առնում այս պատիւը, այլ առնում է նա, ով Աստծուց է կանչուած, ինչպէս որ՝ Ահարոնը: 5 Նոյնպէս եւ Քրիստոս ոչ թէ ինքն իրեն մեծարեց քահանայապետ դառնալու համար, այլ նա, ով նրան ասաց.

«Դու ես իմ որդին,
ես այսօր ծնեցի քեզ»:

6 Ինչպէս որ մի ուրիշ տեղ էլ ասում է.

«Դու յաւիտեան քահանայ ես,
ըստ Մելքիսեդեկի կարգի»:

7 Նա էր, որ մարմնի մէջ եղած իր օրերում աղօթքներ եւ պաղատանքներ էր մատուցում ուժգին գոչումով եւ արտասուքներով նրան, ով կարող էր փրկել իրեն մահուանից: Եւ նա լսելի եղաւ իր բարեպաշտութեան համար: 8 Թէպէտեւ Որդի էր, բայց իր չարչարանքների միջոցով հնազանդութիւն սովորեց. 9 եւ կատարեալ դառնալով՝ բոլոր իրեն հնազանդուողներին յաւիտենական փրկութեան պատճառ դարձաւ 10 եւ Աստծուց անուանուեց յաւիտեանների Քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՀԱՒԱՏԸ ԼՔԵԼՈՒ ՎՏԱՆԳԻՑ

11 Այս մասին մենք շատ խօսք ունենք ասելու, բայց դրանք դժուար է բացատրել, քանզի թուլամիտ եղաք հասկանալու մէջ: 12 Հակառակ այն բանի, որ դուք ժամանակի ընթացքում ուսուցիչներ պէտք է լինէիք, բայց ահա հարկաւոր է, որ դուք սովորէք, թէ ի՛նչ են Աստծու պատգամի նախատարրերը. եւ դուք կաթի կարիք ունէք եւ ոչ թէ պինդ կերակրի. 13 քանի որ, ով կաթնակեր է, անգիտակ է արդարութեան խօսքին, քանզի երեխայ է. 14 իսկ պինդ կերակուրը հասուն մարդկանց համար է, որոնց զգայարանները, քանի որ նրանք չափահաս են, վարժ են լաւը եւ վատը որոշելու մէջ:

6 Ուստի, Քրիստոսի մասին եղած նախագիտելիքները թողնելով՝ դանք չափահասներին սահմանուած ուսուցման՝ առանց վերստին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարելու, դէպի Աստուած հաւատի, 2 մկրտութիւնների վարդապետութեան, ձեռնադրութեան, մեռելների յարութեան եւ յաւիտենական դատաստանի վրայ: 3 Եւ արդ, այս բանը պիտի անենք, եթէ Աստուած թոյլ տայ. 4 որովհետեւ մէկ անգամ մկրտուածների համար†, – որ ճաշակեցին երկնաւոր պարգեւներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, 5 Աստծու գեղեցիկ խօսքի վայելքն ունեցան եւ գալիք աշխարհի զօրութիւնները ճանաչեցին, – 6 եթէ սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարութեամբ նորոգուել, որովհետեւ նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն եւ դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում. 7 քանզի այն հողը, որ խմում է շատ անգամ իր վրայ թափուած անձրեւը եւ օգտակար արդիւնքներ է տալիս նրանց, որոնց համար մշակւում է, Աստծուց օրհնութիւն է ստանում: 8 Իսկ եթէ փուշ եւ տատասկ է տալիս, նա անպէտք է եւ արժանի է անէծքի. եւ նրա վախճանը այրուելն է:

9 Սիրելինե՛ր, թէպէտեւ այսպէս եմ խօսում, բայց վստահ եմ ձեր վրայ, որ լաւագոյն ուղու վրայ էք, մանաւանդ որ այն առաջնորդում է փրկութեանը: 10 Անարդար չէ Աստուած, որ մոռանայ ձեր գործերը եւ սէրը, որ ցոյց տուեցիք իր անունով, քանի որ ծառայում էիք սրբերին եւ ծառայում էք մինչեւ այժմ: 11 Եւ մենք ցանկանում ենք, որ ձեզնից իւրաքանչիւրը նոյն փութաջանութիւնը ցուցաբերի, որպէսզի հաստատ մնայ ձեր յոյսը մինչեւ վերջ: 12 Չենք ուզում, որ դուք ծուլանաք, այլ նմանուէք նրանց, որ հաւատով եւ համբերութեամբ ժառանգեցին խոստումները:

ԱՍՏԾՈՒ ՀԱՍՏԱՏ ԽՈՍՏՈՒՄԸ

13 Երբ Աստուած Աբրահամին իր խոստումը տուեց, – քանի որ չկար աւելի մեծ մէկը, որ նրանով երդուէր, –

*Սաղմոս 95. 7:
‡Սաղմոս 95. 11:
§Ծննդոց 2. 2:
*Յունարէնն ունի՝ ոմանք այնտեղ պիտի մտնեն:

†Յունարէնն ունի՝ լուսաւորուածների:

14 Նա ինքն իր վրայ երդուեց եւ ասաց.
«Այո՛, օրհնելով պիտի օրհնեմ քեզ
եւ բազմացնելով պիտի բազմացնեմ քեզ»† :
15 Եւ այսպէս, համբերատար լինելով, Աբրահամը հասաւ խոստմանը:
16 Արդարեւ, մարդիկ երդւում են նրանով, ով մեծ է իրենցից. եւ նրանց մէջ եղած ամէն հակառակութեան վերջնական վճիռը երդումն է:
17 Ահա թէ ինչու Աստուած, կամենալով առաւել եւս ցոյց տալ իր նպատակի անփոփոխ լինելը խոստման ժառանգորդներին, օգտագործեց երդումը, 18 որպէսզի երկու անփոփոխելի բաներով, որոնք ցոյց են տալիս, թէ անհնար է, որ Աստուած սուտ խօսած լինի, մենք հաստատուն մխիթարութիւն ունենանք. մենք, որ ապաստան գտանք՝ կառչելու հանդերձեալ յոյսից,
19 որը հաստատուն եւ անշարժ խարիսխ է մեզ համար. յոյս, որ թափանցում է վարագոյրից այն կողմ,
20 ուր մեր նախակարապետը՝ Յիսուս, մտաւ մեզ համար՝ լինելով յաւիտենական Քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

7 Քանզի այս Մելքիսեդեկը Թագաւոր էր Սաղեմի, բարձրեալ Աստծու քահանայ, որ Աբրահամին ընդառաջ ելաւ, երբ նա վերադառնում էր թագաւորների կոտորածից, եւ օրհնեց նրան.
2 եւ Աբրահամը ամէն ինչից տասանորդներ տուեց նրան. «Մելքիսեդեկ» նախ թարգմանւում է՝ արդարութեան թագաւոր, ապա՝ թագաւոր Սաղեմի, այսինքն՝ թագաւոր խաղաղութեան:
3 Նա անհայր, անմայր էր, առանց ազգատոհմի. ո՛չ օրերի սկիզբ ունէր եւ ո՛չ կեանքի վախճան. նմանուելով Աստծու Որդուն՝ նա կայ ու մնում է մշտնջենապէս քահանայ:
4 Արդ, տեսէ՛ք, թէ ինչպիսի մէկն էր սա, որին Աբրահամ նահապետն էլ տասանորդներ տուեց աւարից:
5 Եւ Ղեւիի զաւակներից նրանք, որ քահանայութիւն են ստանում, իրաւունք ունեն, ըստ օրէնքի, տասանորդ վերցնելու ժողովրդից, այսինքն՝ իրենց եղբայրներից, թէկուզ եւ վերջիններս Աբրահամի զաւակներ լինեն:
6 Իսկ նրանց ազգատոհմից չհամարուածը տասանորդ վերցրեց Աբրահամից եւ օրհնեց նրան, ով ընդունել էր խոստումը:
7 Արդ, ամէն հակաճառութիւնից վեր է այն, որ օրհնողն աւելի բարձր է, քան օրհնուողը:
8 Եւ այստեղ մահկանացու մարդիկ են տասանորդներ առնում, բայց այնտեղ՝ նա, ով վկայում է, թէ կենդանի է:
9 Եւ ինչպէս խօսքի կարգ է ասել, Ղեւին իսկ, որ տասանորդներ էր առնում, Աբրահամի միջոցով տասանորդ տալու ենթարկուեց,
10 որովհետեւ նա դեռ իր հօր կողում էր, երբ Մելքիսեդեկը նրան ընդառաջ ելաւ:

ՂԵՒՏԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

11 Իսկ արդ, եթէ կատարելութիւնը ղեւտացիների քահանայութեան միջոցով էր լինում (քանի որ ժողովուրդը նրանով էր օրէնք ստացել), ի՞նչ կարիք կար այլեւս, որ մի այլ քահանայ երեւան գար, ըստ Մելքիսեդեկի կարգի, չասելու համար՝ ըստ Ահարոնի կարգի,
12 որովհետեւ քահանայութիւն փոփոխուելով՝ պէտք էր, որ օրէնքի փոփոխութիւն էլ լինէր:
13 Եւ նա, ում մասին այսպէս է ասւում, պատկանում էր այլ ցեղի, որից ոչ ոք երբեք սեղանի ծառայութեան մասնակից չեղաւ:
14 Արդ, յայտնի իսկ է, թէ մեր Տէրը սերում է Յուդայի ցեղից. այդ ցեղից եղած քահանաների մասին Մովսէսը ոչինչ չի ասել:
15 Եւ առաւել եւս յայտնի է, թէ Մելքիսեդեկի նմանութեամբ երեւալու է մի այլ քահանայ,
16 որը ըստ մարմնաւոր պատուիրանի չէ, որ եղաւ քահանայ, այլ՝ ըստ անվախճան կեանքի զօրութեան:
17 Արդարեւ վկայուեց, թէ՝
«Դու յաւիտեան քահանայ ես,
ըստ Մելքիսեդեկի կարգի»:
18 Առաջին պատուիրանը արհամարհուեց իր տկարութեան եւ անօգտակարութեան պատճառով, – 19 քանզի օրէնքը կատարեալ ոչինչ չարեց, – եւ նրա տեղ մտաւ լաւագոյն մի յոյս, որով մօտենում ենք Աստծուն:
20 Այն չափով, որ Յիսուս երդումով քահանայ եղաւ (որովհետեւ կան ոմանք, որ առանց երդումի են քահանաներ կարգուել,
21 բայց սա՝ երդումով, նրա՛ ձեռքով, ով ասաց նրան.
«Երդուեց Տէրը եւ էլ չի զղջայ.
դու յաւիտեան քահանայ ես»),
22 այդ նոյն չափով Յիսուս երաշխաւոր եղաւ լաւագոյն մի ուխտի:
23 Եւ այսպէս, շատ քահանաներ եղան, որովհետեւ մահը արգելք էր լինում, որ նրանք տեւապէս քահանայ մնան:
24 Իսկ սա, յաւիտենական լինելու պատճառով, ունի անանց քահանայութիւն:
25 Ուստի եւ կարո՛ղ է իր միջոցով Աստծուն մօտեցողներին մէկընդմիշտ փրկել. քանի որ նա միշտ կենդանի է՝ բարեխօս լինելու նրանց համար:
26 Արդարեւ, մեզ պէտք էր ճիշտ այսպիսի մի քահանայապետ՝ սուրբ, անմեղ, անարատ, զատուած մեղաւորներից եւ բարձրացած աւելի վեր, քան երկինքները,
27 որը, ինչպէս այլ քահանայապետներ, պէտք չունի նախ իր մեղքերի համար զոհեր մատուցելու եւ ապա՝ ժողովրդի մեղքերի համար. իսկ Քրիստոս մէկ անգամ առ միշտ կատարեց այդ բանը, քանի որ ինքը իրե՛ն պատարագ մատուցեց:
28 Օրէնքը քահանայապետներ է կարգում տկարութիւններով պատած մարդկանց, իսկ երդման խօսքը, որ օրէնքից յետոյ է գալիս, կարգում է Որդուն, որ յաւիտեան կատարեալ է:

ՅԻՍՈՒՍ ՄԵՐ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

8 Եւ իմ ասած խօսքերի գլխաւորն այս է. այնպիսի քահանայապետ ունենք, որ նստեց երկինքներում Մեծութեան աթոռի աջ կողմում
2 որպէս պաշտօնեայ սրբարանի եւ ճշմարիտ խորանի, որ Տէ՛րը կանգնեցրեց եւ ոչ թէ մարդը:
3 Ամէն մի քահանայապետ զոհեր եւ պատարագներ մատուցելու համար է սահմանուած, ուստի պէտք է, որ նա էլ մի բան ունենայ, որ մատուցի,
4 քանզի, եթէ նա երկրի վրայ լինէր, թերեւս քահանայ չլինէր իսկ, քանի որ կան քահանաներ, որ պատարագ են մատուցում ըստ օրէնքի.
5 նրանց սպասաւորութիւնը երկնաւոր բաների նմանութիւնն ու ստուերն է միայն, ինչպէս որ Մովսէսին էլ հրամայուեց, երբ նա պիտի կանգնեցնէր վկայութեան խորանը. «Տե՛ս, – ասում է, – ամէն ինչ կ'անես ըստ այն օրինակի, որ ցոյց տրուեց քեզ լերան վրայ»:
6 Բայց արդ, Յիսուս աւելի բարձր սպասաւորութեան էլ հասաւ, քանի որ միջնորդ է առաւել լաւ ուխտի, ուխտ, որ լաւագոյն խոստումների վրայ հիմնուեց.
7 եթէ առաջինը անթերի լինէր, ապա երկրորդի համար տեղ չէր փնտռուի:
8 Եւ ահա մեղադրում է նրանց եւ ասում.
«Ահաւասիկ օրեր պիտի գան, - ասում է Տէրը, -
եւ Իսրայէլի տան հետ ու Յուդայի տան հետ
նոր ուխտ պիտի կատարեմ,
9 բայց ոչ նման այն ուխտի, որ կնքեցի նրանց
հայրերի հետ այն օրը,
երբ նրանց ձեռքից բռնեցի՝ Եգիպտոսից
դուրս հանելու համար:
Եւ որովհետեւ նրանք չմնացին իմ ուխտի մէջ,
ես էլ անհոգ եղայ նրանց հանդէպ,
- ասում է Ամենակալ Տէրը:
10 Բայց ա՛յս է այն ուխտը, որը պիտի կնքեմ
Իսրայէլի տան հետ
այն օրերից յետոյ, - ասում է Տէրը:
Իմ օրէնքները պիտի դնեմ նրանց մտքի մէջ
եւ նրանց սրտո՛ւմ պիտի գրեմ դրանք.
եւ ես նրանց համար Աստուած պիտի լինեմ,
եւ նրանք ինձ ժողովուրդ պիտի լինեն:
11 Եւ իւրաքանչիւրն այլեւս չպիտի ուսուցանի իր
համաքաղաքացուն,
ոչ էլ՝ իւրաքանչիւրն իր եղբօրը.
եւ պիտի չասեն, թէ՝ ճանաչի՛ր Տիրոջը,
որովհետեւ պիտի ճանաչեն ինձ բոլորը՝
նրանց փոքրերից մինչեւ ամենամեծերը.
12 քանզի պիտի ներեմ նրանց անիրաւութիւնները
եւ նրանց մեղքերն ու անօրինութիւնները
այլեւս չպիտի յիշեմ»:
13 Արդ, նոր ուխտի մասին խօսելով՝ նա հին դարձրեց առաջինը. եւ ինչ հնանում է ու ծերանում, մօտ է անհետանալու:

†Ծննդոց 22. 17:

ԵՐԿՐԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

9 Առաջին ուխտն էլ ունէր պաշտամունքի կանոններ եւ երկրային սրբարան. 2 քանզի առաջին խորանը պատրաստուեց այսպէս. նրա մէջ կային աշտանակը, սեղանը եւ առաջաւորութեան հացը. այս մասը կոչւում է Սրբութիւն: 3 Եւ երկրորդ վարագոյրի յետեւում էր այն խորանը, որ կոչւում էր Սրբութիւնների Սրբութիւն, 4 որտեղ դրւում էր ոսկէ բուրվառը եւ ներսից ու դրսից ոսկով պատած կտակարանների արկղը, որի մէջ կար ոսկէ սափորը՝ լի մանանայով, եւ Ահարոնի գաւազանը, որ ծաղկեց, եւ ուխտի տախտակները. 5 եւ նրա վրայ կանգնած էին փառքի քերովբէները, որ հովանի էին անում քաւութեան սեղանի վրայ. դրանց մասին այժմ մէկ առ մէկ խօսելու կարիք չկայ:

6 Եւ այս ամէնը այսպէս էր դասաւորուած. քահանաները միշտ առաջին խորանն էին մտնում՝ պաշտամունք կատարելու. 7 իսկ երկրորդ խորանը տարին մէկ անգամ միայն քահանայապետն էր մտնում, եւ այդ անում էր ոչ առանց զոհի արեան, 8 որ մատուցում էր իր եւ ժողովրդի մեղքերի համար: Սրանով Սուրբ Հոգին ցոյց էր տալիս, որ սրբարանի ճանապարհը յայտնուած չէ, քանի դեռ հաստատուն է մնում առաջին խորանը. 9 դա խորհրդանշան է ներկայ ժամանակի համար, երբ ընծայւում էին պատարագներ եւ զոհեր, որոնք չէին կարող կատարեալ դարձնել զոհաբերողների խղճմտանքը, այլ դրանք կապուած էին միայն կերակուրների, ըմպելիների 10 եւ պէսպէս լուացումների հետ, որոնք մարմնական ծիսակատարումներ էին՝ ի զօրու մինչեւ բարեփոխման ժամանակները:

11 Իսկ Քրիստոս, որ եկաւ որպէս գալիք բարիքների Քահանայապետ, անցնելով մեծ, կատարեալ եւ անձեռակերտ խորանով, այսինքն՝ ո՛չ այս աշխարհի արարածների կողմից շինուած, 12 ո՛չ էլ նոխազների եւ զուարակների արիւնով, մի անգամ ընդմիշտ իր իսկ արեամբ մտաւ սրբարան՝ յաւիտենական փրկութիւն ապահովելով. 13 որովհետեւ, եթէ ցուլերի եւ նոխազների արիւնը եւ երինջների շաղ տրուած մոխիրը մաքրում են պղծուածներին մարմնի մաքրութեան համար, 14 որչա՜փ եւս առաւել արիւնը Քրիստոսի, – որ յաւիտենական Հոգու միջոցով ինքն իրեն որպէս անարատ պատարագ մատուցեց Աստծուն, – կը մաքրի ձեր խղճմտանքը մեռած գործերից, որպէսզի ծառայէք կենդանի Աստծուն:

15 Ահա թէ ինչու նա նոր ուխտի միջնորդ է, քանի որ իր մահը առաջին ուխտի ժամանակ գործուած յանցանքների քաւութեան համար եղաւ, որպէսզի կանչուածները յաւիտենական ժառանգութեան խոստումն ստանան. 16 որովհետեւ, ուր որ կտակ կայ, կտակարարի մահը պէտք է հաստատուի, 17 քանի որ կտակը յետ մահու է ուժի մէջ. ապա թէ ոչ ինչպէ՞ս ուժի մէջ կը լինի այն, քանի դեռ կտակարարը կենդանի է: 18 Ուստի եւ առաջին ուխտը առանց արեան չէր նուիրագործուի. 19 երբ բոլոր պատուիրանները Մովսէսի կողմից ծանուցուեցին ժողովրդին, նա, վերցնելով ցուլերի եւ նոխազների արիւնը ջրի եւ կարմիր բրդի ու զոպայի հետ, ցանեց հէնց օրէնքի գրքի եւ ամբողջ ժողովրդի վրայ 20 եւ ասաց. «Սա է արիւնը կտակի, որն Աստուած ձեզ պատուիրեց»†: 21 Ապա արիւնը նոյնպէս ցանեց խորանի եւ պաշտամունքի ամբողջ սպասքի վրայ: 22 Եւ գրեթէ ամէն ինչ արիւնով էր մաքրւում ըստ օրէնքի, եւ առանց արիւն թափելու թողութիւն չէր լինում:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐԿՆԱՅԻՆ ՍՐԲԱՐԱՆ

23 Եթէ պէտք էր, որ երկնաւոր բաների օրինակները այսպիսի ծէսերով մաքրուէին, ապա բուն իսկ երկնաւորները պէտք է մաքրուէին դրանցից էլ աւելի լաւ զոհերով. 24 քանզի Քրիստոս ոչ թէ ճշմարտութեան օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտաւ, այլ՝ բուն իսկ երկինքը, որպէսզի մեզ

†Ելք 24. 8:

համար ներկայանայ Աստծու առաջ: 25 Ոչ թէ նրա համար, որ շատ անգամ ինքն իրե՛ն պատարագ մատուցի, ինչպէս քահանայապետը, որ Սրբութիւնների Սրբութիւնն էր մտնում ամէն տարի իրը չեղած արիւնով. 26 այլապէս նա բազում անգամ պէտք է չարչարուէր աշխարհի սկզբից ի վեր: Բայց այժմ, դարերի վախճանին, նա մէկ անգամ ընդմիշտ յայտնուեց՝ իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար: 27 Եւ ինչպէս որ մարդկանց սահմանուած է մէ՛կ անգամ մեռնել եւ այնուհետեւ՝ դատաստան, 28 նոյնպէս եւ Քրիստոս մէ՛կ անգամ որպէս պատարագ մատուցուեց՝ շատերի մեղքերը վերացնելու համար. իսկ երկրորդ անգամ, առանց մեղքի, պիտի յայտնուի նրանց, որոնք սպասում են իրեն՝ հաւատով փրկուելու համար:

10 Արդարեւ, գալիք բարիքների ստուերն էր օրէնքը եւ ոչ թէ իրողութիւնների բուն կերպարանքը. այն նոյն պատարագները, որ մատուցում էին տարէցտարի, չէին կարող կատարեալ դարձնել մատուցողներին, 2 ապա թէ ոչ՝ նրանք կը դադարէին մատուցելուց, քանի որ պաշտամունք մատուցողները մի անգամ ընդմիշտ մաքրուած լինելով՝ այնուհետեւ մեղքի համար ոչ մի խղճահարութիւն չէին ունենայ: 3 Սակայն նրանք տարէցտարի այդ պատարագներով վերստին մեղքի յիշողութեան տակ էին մնում, 4 քանի որ նոխազների եւ ցուլերի արիւնը չէր կարող վերացնել մեղքերը: 5 Դրա համար էլ Քրիստոս, երբ աշխարհ մտաւ, ասաց.

«Զոհեր եւ պատարագներ չցանկացար,
այլ մի մարմին պատրաստեցիր ինձ համար† :
6 Ողջակէզներ եւ մեղքերի համար արուած զոհեր ինձ
հաճելի չեղան‡ :
7 Այն ժամանակ ասացի, թէ՝ ահա՛սապիկ եկայ՝
քո կամքը կատարելու, ո՛վ Աստուած (ինչպէս իմ մասին
գրուած է օրէնքի գրքում)»:
8 Աւելի վերեւ ասում է, թէ՝
«Զոհեր, պատարագներ, ողջակէզներ եւ մեղքերի համար
արուած զոհեր ինձ հաճելի չեղան եւ չուզեցիր (քանզի, որոնք
ընծայւում էին ըստ օրէնքի)»:
9 Ապա ասում է.
«Ահա՛սապիկ գալիս եմ քո կամքը կատարելու, ո՛վ
Աստուած»:

Հերքում է առաջինը, որ հաստատի երկրորդը: 10 Այդ կամքով էլ մենք սրբուեցինք Յիսուս Քրիստոսի մարմնի մէկընդմիշտ պատարագումով:

11 Եւ ամէն մի քահանայապետ ամէն օր կանգնում է պաշտամունք մատուցելու համար եւ շատ անգամ է մատուցում նոյն զոհերը, որոնք երբեք չեն կարող մեղքերը վերացնել:

12 Իսկ Յիսուս միայն մէ՛կ պատարագ մատուցեց մեղքերի համար եւ մշտնջենապէս նստեց Աստծու աջ կողմում. 13 եւ այնուհետեւ սպասում է, մինչեւ որ իր թշնամիները դրուեն իր ոտքերի ներքոյ. 14 քանզի միայն մէ՛կ պատարագով կատարեալ դարձրեց մաքրուածներին մշտնջենապէս:

15 Արդ, Սուրբ Հոգին էլ վկայում է մեզ աւելի վերեւ ասուածից յետոյ, թէ՝
16 «Սա է այն ուխտը, որը պիտի կնքեմ նրանց հայրերի հետ
այն օրերից յետոյ,- ասում է Տէրը.-
իմ օրէնքները պիտի դնեմ նրանց սրտերի մէջ
եւ դրանք պիտի գրեմ նրանց մտքերում»:
17 Ապա ասում է, թէ՝
«Նրանց մեղքերը եւ նրանց անօրէնութիւնները այլեւս
չպիտի յիշեմ»† :
18 Իսկ ուր որ թողութիւն կայ, այլեւս մեղքի համար պատարագ պէտք չէ:

ՄՕՏԵՆԱՆՔ ԱՍՏՈՒՆ

19 Եղբայրնե՛ր, ուրեմն համարձակութիւն ունենք Յիսուսի արեամբ մտնելու սրբարանից ներս 20 այն նոր եւ կենդանի ճանապարհով, որ նա բացեց մեզ համար վարագոյրի միջով, որ է իր մարմինը. 21 եւ մեծ քահանայ ունենալով Աստծու տան վրայ՝ 22 մօտենանք ճշմարիտ սրտով, հաւատի լիութեամբ՝ սրտներս մաքրած չար խղճմտանքից եւ մեր մարմինը լուացած մաքուր ջրով: 23 Ամուր պահենք անխախտ յոյսի դաւանութիւնը, քանի որ հաւատարիմ է նա, ով խոստացաւ.

†Սաղմոս 40. 7-9:
‡Ղեւտ. 4. 14:

†Երեմիա 31. 33-34:

24 եւ հոգ տանենք միմեանց՝ սիրոյ եւ
բարի գործերի յորդորելով 25 եւ զանց
չառնենք մէկտեղ հաւաքուելը, ինչպէս
որ սովոր են անել ոմանք, այլ խրա-
խուսենք միմեանց, եւ այդ այնքան
աւելի, որքան տեսնում էք Տիրոջ
օրուայ մօտենալը:
26 Քանզի եթէ կամաւոր կերպով
ենք մեղանչում ճշմարտութիւնն իմա-
նալուց եւ ընդունելուց յետոյ, ուրեմն
մեղքերի քաւութեան համար այլեւս
ուրիշ զոհ չի մնում. 27 այլ մնում է
դատաստանի ահեղ սպասումը եւ կրա-
կի կատաղութիւնը, որ լափելու է Աստ-
ծու հակառակորդներին: 28 Մովսէսի
օրէնքը արհամարհած մէկին անողոր-
մաբար սպանում էին երկու կամ երեք
մարդու վկայութեամբ: 29 Իսկ որչա՜փ
աւելի խիստ պատժի արժանի պիտի
համարէք նրան, ով ոտնահարել է
Աստծու Որդուն եւ անմաքուր հա-
մարել նոր ուխտի արիւնը, որով
մաքրուել է ինքը եւ անարգել շնորհի
Հոգին: 30 Արդարեւ, ճանաչում ենք
նրան, ով ասաց. «Իմն են վրէժխնդ-
րութիւնները, եւ ես պիտի հատուցեմ»,
– ասում է Տէրը: Եւ դարձեալ. «Տէրը
պիտի դատի իր ժողովրդին»: 31 Ահա-
ւոր է ընկնել կենդանի Աստծու ձեռքը:
32 Արդ, յիշեցէ՛ք առաջին օրերը, երբ
դեռ հազիւ լուսաւորուած, բազում
տքնութիւնների եւ չարչարանքների
համբերեցիք՝ 33 մերթ նախատինքների
եւ նեղութիւնների մէջ խայտառա-
կուելով, մերթ այդպիսի բաներ կրող-
ների վիճակին մասնակից լինելով.
34 քանզի ե՛ւ բանտարկուածներին կա-
րեկից եղաք, ե՛ւ ձեր ունեցուածքի
յափշտակումը ուրախութեամբ ընդու-
նեցիք, քանի որ գիտէիք, թէ ձեզ
համար լաւագոյն հարստութիւն ունէք
երկնքում, ուր այն միշտ մնում է:
35 Արդ, մի՛ կորցրէք ձեր վստա-
հութիւնը, որի մէջ մեծ վարձատրու-
թեան հատուցում կայ: 36 Ձեզ համ-
բերութիւն է պէտք, որպէսզի, Աստծու
կամքը կատարելով, հասնէք նրա
խոստմանը, 37 քանի որ՝

«Մի փոքր, շատ փոքր ժամանակ եւս,
եւ գալու է նա, ով պիտի գայ
եւ չպիտի ուշանայ:
38 Արդ, իմ արդարը պիտի ապրի հաւատով.
եւ եթէ մէկը երկմիտ է,
իմ հոգին նրան չպիտի հաւանի»:
39 Բայց մենք, երկմտելով, ոչ թէ
կորստեան ենք մատնւում, այլ հաւա-
տով հասնում ենք հոգիների փրկու-
թեան:

ՆԱԽՆԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՒԱՏԸ

11 Ի՞նչ է հաւատը, եթէ ոչ՝ յու-
սացուած բաների հաստատումը եւ
ապացոյցն այն բաների, որոնք չեն
երեւում. 2 քանզի նախնիք հաւատո՛վ
վկայութիւն ընդունեցին:
3 Հաւատո՛վ ենք իմանում, որ աշ-
խարհներն ստեղծուել են Աստծու
խօսքով՝ անտեսանելի բաներից տես-
անելիներ դառնալով:
4 Հաւատո՛վ էր, որ Աբէլը Աստծուն
աւելի լաւ զոհ մատուցեց, քան Կա-
յէնը, որով էլ վկայութիւն ստացաւ, որ
արդար է. քանի որ նրա մատուցած
զոհերի՛ համար տրուեց նրան վկա-
յութիւն Աստծուց: Նա, թէպէտեւ հա-
ւատով մեռաւ, սակայն խօսում է դեռ:
5 Հաւատո՛վ Ենոքը փոխադրուեց
երկինք, որպէսզի մահ չճաշակի. եւ նա
ոչ մի տեղ չգտնուեց, քանի որ
Աստուած նրան տարել էր: Եւ նախքան
իր տարուելը, նրան վկայութիւն էր
տրուել, որ ինքը հաճելի էր Աստծուն:
6 Բայց առանց հաւատի անհնար է
հաճելի լինել Աստծուն, քանի որ նա,
ով մօտենում է Աստծուն, պէտք է
հաւատայ, որ Աստուած կայ եւ
վարձահատոյց է լինում նրանց, ովքեր
փնտռում են իրեն:
7 Հաւատո՛վ է, որ Նոյը, պատգամ
ստանալով դեռեւս անտեսանելի բաներ-
ի մասին, վախից բռնուած՝ իր ըն-
տանիքի փրկութեան համար տապանը
պատրաստեց, որով եւ դատապարտեց
աշխարհը եւ ժառանգորդ եղաւ այն
արդարութեան, որ հաւատից է:
8 Հաւատո՛վ է, որ Աբրահամը, երբ
կանչուեց, հնազանդուեց եւ գնաց այն
տեղը, որն ստանալու էր որպէս ժա-
ռանգութիւն. ելաւ գնաց. եւ չգիտէր՝
ուր էր գնում:
9 Հաւատո՛վ նա պանդուխտ դար-

ձաւ աւետեաց երկրում, ինչպէս օտա-
րութեան մէջ, վրաններով տակ բնա-
կուեց Իսահակի եւ Յակոբի հետ միա-
սին, որոնք ժառանգակից էին նոյն
խոստման. 10 քանզի սպասում էր հիմ-
քերով հաստատուած քաղաքին, որի
ճարտարապետը եւ արարիչը Աստուած
է:
11 Հաւատո՛վ ինքը Սառան էլ, որ
ամուլ էր, որդեծնութեան սերմն ստա-
նալու զօրութիւնը ունեցաւ եւ ծնեց
առաջացած տարիքում, քանի որ հա-
ւատարիմ համարեց նրան, ով խոս-
տացաւ այդ բանը: 12 Ուստի մէկից,
այն էլ տարիքն առած մի մարդուց,
ծնուեցին սերունդներ այնքան շատ,
որքան երկնքի աստղերը եւ անթիւ
անհամար աւազը ծովի ափին:
13 Հաւատի՛ մէջ մեռան սրանք
բոլորը եւ՝ դեռեւս խոստումները չստա-
ցած. բայց հեռուից տեսան այդ խոս-
տումները եւ ցնծացին ու խոստովա-
նեցին, թէ իրենք օտար եւ պանդուխտ
են երկրի վրայ: 14 Բոլոր նրանք, որ
այսպիսի բաներ են խօսում, յայտնի են
անում, թէ մի հայրենի երկիր են
փնտռում. 15 քանզի եթէ յիշէին այն
երկիրը, որտեղից իրենք ելան, ժա-
մանակ ունէին նորից դառնալու
այնտեղ: 16 Ցիրաւի, մի աւելի լաւ տեղ
են տենչում, այսինքն՝ երկնաւոր մի
վայր: Ահա թէ ինչու Աստուած ամօթ
չի համարում նրանց Աստուածը
կոչուել, քանի որ քաղաք պատրաստեց
նրանց համար:
17 Հաւատո՛վ է, որ Աբրահամը, իր
փորձութեան մէջ, Իսահակին որպէս
զոհ մատուցեց. եւ նա, ով խոստումն
էր ընդունել, իր միամօրիկ որդուն էր
որպէս զոհ մատուցում: 18 Աբրահամին
ասուած էր, թէ՝ «Իսահակո՛վ քեզ
սերունդ պիտի տրուի»: 19 Աբրահամը
իր մտքում մտածեց, թէ Աստուած
կարո՛ղ է մեռելներից էլ յարութիւն
տալ Իսահակին: Ուստի եւ, որպէս
նախօրինակ այդ բանի, նա յետ
ստացաւ իր որդուն:
20 Հաւատո՛վ Իսահակը օրհնեց
Յակոբին եւ Եսաւին՝ գալիք բաների
յոյսով:
21 Հաւատո՛վ օրհնեց Յակոբը իր
մեռնելու ժամանակ Յովսէփի որդիներ-
ից ամէն մէկին եւ երկրպագեց Աստ-
ծուն՝ իր գաւազանի ծայրին յենուած:
22 Հաւատո՛վ յիշեց Յովսէփը իր
կեանքի վախճանին իսրայէլացիների
ելքը եւ իր ոսկորների վերաբերեալ
պատուէր տուեց:
23 Հաւատո՛վ է, որ, երբ Մովսէսին
ծնեցին, նրա ծնողները երեք ամիս
թաքցրին նրան, քանզի տեսան կայ-
տառ մանկանը եւ չվախեցան թագա-
ւորի հրամանից: 24 Հաւատո՛վ է, որ
Մովսէսը, երբ մեծացաւ, մերժեց Փա-
րաւոնի դստեր որդի կոչուել. 25 նախ-
ընտրեց չարչարուել Աստծու ժողովրդի
հետ, քան միառժամանակ մեղապարտ
հաճոյքներ վայելել. 26 կարեւոր հա-
մարեց Քրիստոսի կրած նախատինք-
ները, քան Եգիպտոսի գանձերի առա-
տութիւնը. որովհետեւ, աչքերը յառած,
վարձատրութեան էր սպասում:
27 Հաւատո՛վ թողեց Եգիպտոսը եւ
չէր վախենում թագաւորի ցասումից,
քանզի համբերեց, որպէս թէ անտեսա-
նելին էր տեսնում: 28 Հաւատո՛վ կա-
տարեց զատիկը եւ արեան շաղ տալը,
որպէսզի անդրանիկներին սպանողը
չմօտենայ նրանց:
29 Հաւատո՛վ անցան նրանք Կար-
միր ծովով, որպէս թէ ցամաք երկիր
լինէր, մինչ եգիպտացիները, նոյնը
փորձելով, խեղդուեցին:
30 Հաւատո՛վ ընկան Երիքովի պա-
րիսպները, երբ նրանք եօթը օր շրջեցին
նրանց շուրջը:
31 Հաւատո՛վ է, որ անհաւատների
հետ կորստեան չմատնուեց պոռնիկ
Ռախաբը, որ խաղաղութեամբ ընդու-
նել էր լրտեսներին:
32 Եւ արդ, դեռ ի՞նչ ասեմ, քանի որ
ժամանակը բաւական չէր լինի պատ-
մելու Գեդէոնի, Բարակի, Սամսոնի,
Յեփթայէի, Դաւթի եւ Սամուէլի ու
միւս մարգարէների մասին, 33 որոնք
հաւատո՛վ պարտութեան մատնեցին
թագաւորութիւններ, գործեցին արդա-
րութիւն, հասան խոստմանը, փակեցին
առիւծների բերաններ, 34 հանգցրին
կրակի զօրութիւնը, փրկուեցին սրի
բերանից, զօրացան տկարութիւնից

յետոյ, կտրիճներ եղան պատերազմի մէջ, յաղթեցին օտար բանակների. 35 կանայք յարութեան միջոցով վերստացան իրենց մեռելներին, ուրիշներ չարչարանքի ենթարկուեցին՝ մերժելով ազատութիւն ձեռք բերել, որպէսզի հասնեն լաւագոյն յարութեան. 36 եւ ուրիշներ ենթարկուեցին տանջանքների եւ գանահարութիւնների, կապանքների եւ բանտերի. 37 քարկոծուեցին, սղոցուեցին, փորձութեան ենթարկուեցին, սրով սպանուելով մեռան, թափառեցին ոչխարների եւ այծերի մորթիներով ծածկուած. ապրեցին կարիքի մէջ, նեղութեան մէջ, չարչարանքների մէջ 38 (մարդիկ, որոնց այս աշխարհը արժանի չէր), մոլորուած՝ անապատում, լեռներում, քարայրներում եւ երկրի խորշերում:

39 Եւ սրանք ամէնքը հաւատի մէջ վկայուած լինելով հանդերձ, չընդունեցին խոստումը: 40 Աստուած մեզ համար աւելի լաւն էր նախատեսել, որպէսզի առանց մեզ դրանք չկատարուեն:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ՀԱՅՐԸ

12 Ուրեմն մենք էլ, որ մեր շուրջը վկաների այսչափ բազմութիւն ունենք, դէ՛ն գցենք ամէն հպարտութիւն† եւ ծանր մեղք‡, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ. 2 նայենք Յիսուսին՝ հաւատի զօրագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրուած ուրախութեան համար յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը եւ նստեց Աստծու աթոռի աջ կողմում:

3 Ապա ուրեմն՝ մտաբերեցէ՛ք Յիսուսին, որ այսպէս համբերեց իր հանդէպ մեղաւորների ունեցած հակառակութեանը, որպէսզի չլինի թէ յոգնէք եւ յուսալքուէք, 4 դուք, որ կռուի մէջ դեռ արիւն թափելու չափ չհակառակուեցիք մեղքին 5 եւ մոռացաք այն յորդորը, որ ուղղուած է ձեզ իբրեւ որդիների.

«Որդեակ իմ, Տիրոջ խրատը մի՛ անարգիր
եւ մի՛ վհատուիր, երբ յանդիմանուես նրանից,
6 Քանի որ Տէրը, ում սիրում է՝ խրատում է,
պատժում է ամէն մի որդու, որին ընդունում է»† :

7 Թէ խրատին համբերող էք, Աստուած ձեզ կը մօտենայ իբրեւ որդիների: Ո՞րն է այն որդին, որին հայրը չի խրատում. 8 որովհետեւ, եթէ մնաք առանց խրատի, որին բոլորն են բաժնեկից, ապա խորթ էք եւ ոչ թէ հարազատ որդի. 9 յիրաւի, եթէ պատկառում ենք մեր մարմնաւոր հայրերից, որոնք մեզ խրատում են, որչա՜փ եւս առաւել պէտք է հնազանդուենք հոգիների Հօրը, որ ապրենք. 10 քանի որ սրանք մի փոքր ժամանակ եւ ըստ իրենց կամեցողութեան են խրատում, իսկ Նա՝ մեր օգտի համար, որպէսզի հաղորդակից լինենք նրա սրբութեանը: 11 Ամէն խրատ տուեալ պահին ուրախութիւն չի թւում, այլ՝ տրտմութիւն, բայց յետոյ արդարութեան խաղաղաբար պտուղն է հատուցում նրանով դաստիարակուածներին:

12 Ուստի ամրացրէ՛ք թուլացած ձեռքերը եւ կթոտած ծնկները. 13 քայլեցէ՛ք ուղիղ արահետներով, որպէսզի, ով կաղ է, չգլորուի, այլ մանաւանդ՝ բժշկուի:

ՊԱՏԻԺ ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

14 Բոլորի հետ ջանացէ՛ք ապրել խաղաղութեամբ եւ սրբութեամբ, առանց որի ոչ ոք Տիրոջը չպիտի տեսնի. 15 զգո՛յշ եղէք, չլինի, թէ որեւէ մէկը զրկուի Աստծու շնորհից. դառնութեան արմատը, աճելով, թող ոչ ոքի նեղութիւն չտայ, եւ նրանով շատերը չպղծուեն. 16 եւ չլինի, թէ որեւէ մէկը լինի պոռնիկ եւ պիղծ, ինչպէս Եսաւը, որը մի ման կերակրի դիմաց անդրանկութիւնը վաճառեց: 17 Գիտէք, որ, թէեւ նա յետոյ ուզեց ժառանգել օրհնութիւնները, բայց մերժուեց, քանի որ ապաշխարութեան հնարաւորութիւն չգտաւ, հակառակ նրան, որ արտասուքներով փնտռեց այն:

18 Դուք չէք մօտեցել շօշափելի լեռանը, որ կրակով էր այրւում եւ

†Առակներ 3. 11, Երկրորդ Օրէնք 8. 5:

պատած էր մէգով, մառախուղով, խաւարով եւ մթութեամբ, 19 ուր փողն էր հնչում եւ պատգամների ձայնը, այնպէս որ, ովքեր այն լսեցին, աղաչեցին, որ խօսքը չկրկնուի իրենց համար, 20 քանի որ չէին դիմանում այն հրամանին, թէ՝ թէկուզ եւ գազան մօտենայ լեռանը, կը քարկոծուի: 21 Եւ այնպէս ահազդու էր տեսիլքը, որ Մովսէսն ասում էր. «Սարսափում եմ եւ դողում»: 22 Բայց դուք մօտեցել էք Սիոն լեռանը եւ կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, 23 երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին, բոլորի դատաւոր Աստծուն, կատարելութեան հասած արդարների հոգիներին 24 եւ Յիսուսին՝ նոր ուխտի միջնորդին, եւ նրա արեան հեղումին, որ աւելի խօսուն է, քան արիւնն Աբէլի:

25 Զգո՛յշ եղէք, չլինի թէ հրաժարուէք Նրանից, ով խօսում է. որովհետեւ, եթէ նրանք երկրի վրայ Աստծու պատգամները տուող Մովսէսին մերժելով չազատուեցին, որչա՜փ եւս առաւել չպիտի ազատուենք մենք, եթէ թիկունք դարձնենք երկնքից խօսողին, 26 որի ձայնը երկիրը շարժեց այն ժամանակ, իսկ այժմ այս խոստումն է անում եւ ասում. «Մի անգամ էլ պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլ նաեւ՝ երկինքը»: 27 Եւ «մի անգամ էլ»-ը ցոյց է տալիս, որ շարժուած բաները պիտի փոփոխուեն, որպէսզի անշարժ բաները մնան հաստատուն: 28 Դրա համար, քանի որ անշարժ թագաւորութիւն ենք ընդունում, ամուր պահենք շնորհը եւ այդ շնորհով էլ ծառայենք Աստծուն՝ իրեն հաճելի ձեւով՝ ահով եւ դողով, 29 քանզի մեր Աստուածը ոչնչացնող կրակ է† :

ԻՆՉՊԷՍ ՀԱՃԵԼԻ ԼԻՆԵԼ ԱՍՏՈՒՈՒՆ

13 Եղբայրասիրութիւնը թող հաստատ մնայ ձեր մէջ: 2 Մի՛ մոռացէք օտարասիրութիւնը, որովհետեւ դրա շնորհիւ ոմանք հրեշտակներ հիւրընկալեցին առանց իմանալու: 3 Յիշեցէ՛ք բանտարկեալներին, որպէս թէ դուք բանտարկուած լինէք նրանց հետ. յիշեցէ՛ք նաեւ չարչարուածներին, քանի որ դուք էլ մարմնաւոր էք: 4 Ամուսնութիւնն ըստ ամենայնի յարգելի է, եւ ամուսնական անկողինը՝ սուրբ: Եւ Աստուած պիտի դատի շնացողներին եւ պոռնիկներին: 5 Փողասիրութիւնը թող տեղ չունենայ ձեր մէջ, եւ ինչ որ ձեռք էք բերել, բաւարա՛ր համարեցէք, քանզի ինքն իսկ ասաց. «Քեզ չպիտի թողնեմ եւ ոչ էլ պիտի լքեմ»: 6 Այնպէս որ, համարձակ լինենք եւ ասենք.

«Տէ՛րն է իմ օգնականը,
եւ ես չպիտի երկնչեմ,
մարդն ինձ ի՞նչ կարող է անել»† :

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

7 Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծու խօսքն ասացին: Նայելով նրանց կեանքի ընթացքի վախճանին՝ հետեւո՛ղ եղէք նրանց հաւատին: 8 Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան: 9 Տեսակտեսակ եւ օտարոտի ուսմունքների մէջ մի՛ տարուբերուէք, քանզի լաւ է շնորհո՛վ ամրացնել սիրտը եւ ոչ թէ կերակրով, որով ոչ մի օգուտ չստացան նրանք, որ այդպէս ընթացան: 10 Մենք ունենք մի սեղան, որից ճաշակելու իրաւունք չունեն նրանք, ովքեր խորանին են ծառայում. 11 քանի որ այն անասունները, որոնց արիւնը քահանայապետի ձեռքով սրբարանն էր բերւում մեղքերի քաւութեան համար, այդ անասունների մարմինները այրւում էին բանակատեղիից դուրս: 12 Դրա համար էլ Յիսուս, որպէսզի իր արեամբ մաքրի ժողովրդին, չարչարուեց դռնից դուրս: 13 Արդ, եկէ՛ք բանակատեղիից դուրս ելնենք նրան ընդառաջ՝ յանձն առնելով կրել նրա կրած նախատինքները. 14 քանզի չունենք մի մնայուն քաղաք այստեղ, երկրի վրայ, այլ փնտռում ենք գալիք քաղաքը: 15 Արդ, նրա միջոցով Աստծուն միշտ մատուցենք օրհնութեան պատարագ, այսինքն՝ նրա անունը դաւանող մեր շրթների պտուղը: 16 Մի՛ մոռացէք բարեգործութիւնը եւ ձեր

†Երկրորդ Օրէնք 4. 24:

‡Սաղմոս 117. 6:

ունեցած բարիքներին միմեանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՛ պատարագներն են հաճելի Աստծուն:

17 *Լսեցէ՛ք ձեր առաջնորդներին եւ հնազանդուեցէ՛ք նրանց, որովհետեւ նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիւ են տալու ձեր փոխարէն. եւ նրանք ուրախութեամբ թող անեն այդ բանը եւ ո՛չ հոգոց հանելով, քանի որ այն ձեր օգտի համար չէ:*

18 *Աղօթեցէ՛ք մեզ համար, որովհետեւ հաստատ գիտենք, որ մաքուր խղճմտանք ունենք. ուզում ենք ամէն ինչում բարի ընթացք ցոյց տալ:* 19 *Եւ առաւել եւս եմ աղաչում, որ այդ բանն անէք, որպէսզի աւելի շուտ դառնամ ձեզ մօտ:*

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ

20 *Եւ խաղաղութեան Աստուածը, որ մեռելների միջից յարութիւն առնել տուեց մեր Տէր Յիսուսին, որը յաւիտենական ուխտի արիւնով ոչխարների մեծ հովիւն է,* 21 *ձեզ հաստատ թող պահի բարի գործերի մէջ, որպէսզի կատարէք իր կամքը. եւ մեր մէջ թող կատարի իրեն հաճելի եղող բաները Յիսուս Քրիստոսի միջոցով, որին փա՛ռք յաւիտեանս: Ամէն:*

22 *Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ անսալ յորդորի այս խօսքերին, մանաւանդ որ համառօտակի գրեցի ձեզ:* 23 *Եւ իմացէ՛ք, որ մեր եղբայրը՝ Տիմոթէոսը, բանտից ազատուել է: Եթէ շուտով գայ, նրա հետ միասին պիտի տեսնեմ ձեզ:* 24 *Ողջունեցէ՛ք ձեր բոլոր առաջնորդներին եւ բոլոր սրբերին. ձեզ ողջունում են նրանք, որ Իտալիայի կողմերից են:* 25 *Շնո՛րհ ձեզ բոլորիդ:*

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Յակոբոս առաքեալի թուղթը պարունակում է մի քանի գործնական ցուցումներ՝ ուղղուած «աշխարհով մէկ սփռուած համայն իսրայէլացի ժողովրդին»: Յակոբոսը (որի մէջ ոմանք տեսնում են Տիրոջ եղբօրը) կենդանի եւ առոյգ լեզուով, տպաւորիչ պատկերներով գրում է այս թուղթը քրիստոնեաներին՝ դատապարտելով նրանց վերաբերմունքը ինչպէս իրենց փոխադարձ յարաբերութիւններում, այնպէս էլ ոչ քրիստոնեաների նկատմամբ:

Շօշափուող նիւթերը յաջորդում են միմեանց չշաղկապուած, որի պատճառով հնարաւոր չէ դրանք յստակօրէն ի մի բերել: Յակոբոսը նախ ոգեկոչում է իմաստութիւնը՝ ասելով, որ այն գալիս է Աստծուց եւ, հետեւաբար, պէտք է լի հաւատով խնդրուի նրանից: Դրանից յետոյ նրա հրահանգները յաջորդաբար վերաբերում են աղքատութեանն ու հարստութեանը, փորձութիւններին ու փորձանքներին, ճշմարիտ կրօնին, որը պէտք է արտայայտուի գործերով: Հեղինակը այնուհետեւ դատապարտում է ամէն տեսակի խտրականութիւն համայնքի մէջ, ապա քննութեան է առնում մի նիւթ, որ կարող ենք համարել նրա թղթի հիմնական թեման, այն է՝ կապը հաւատի եւ գործերի միջեւ: Արտայայտիչ համեմատութիւններով լի մի հատուածում նա մատնացոյց է անում լեզուի միջոցով գործուած չարիքները: Ապա կրկին անցնում է ճշմարիտ իմաստութեանը վերաբերող թեմային: Խստագոյնս կշտամբում է այն անձանց, որոնք պատճառ են դառնում կռիւների ու վէճերի, որոնք բարեկամ են աշխարհիկ հաճոյքներին անձնատուր մարդկանց, որոնք իրենք իրենց իրաւունք են վերապահում դատելու իրենց եղբայրներին: Նա յարձակւում է նաեւ բանուորներին շահագործող հարուստների վրայ:

Աւարտելով իր թուղթը՝ Յակոբոս առաքեալը յանձնարարում է համբերութիւն, յարատեւ աղօթք եւ փոխադարձ հոգեւոր օգնութիւն:

Քրիստոնեաներին ուղղուած այսպիսի մի շրջաբերական նամակով առաջադրուած պահանջը յստակ է. բաւական չէ տեսականօրէն հաւատալ Աւետարանին, հարկաւոր է, որ հաւատն արտայայտուի առանձին մի վերաբերմունքով, որովհետեւ «հաւատն առանց գործերի մեռած է»:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Յակոբոսը՝ Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի ծառան, սփիւռքում եղող տասներկու ցեղերիդ՝ ողջո՛յն:

ՀԱՒԱՏ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

2 Եղբայրնե՛ր, ամենայն ուրախութեան արժանի՛ համարեցէք, երբ տեսակ-տեսակ փորձութիւնների մէջ ընկնէք. 3 իմացէ՛ք, որ ձեր հաւատի փորձը համբերութիւն է առաջ բերում, 4 իսկ համբերութիւնը թող դրսեւորուի լիութեամբ, որպէսզի անթերի եւ կատարեալ լինէք, ոչ մի բանով պակաս չլինէք:

5 Իսկ եթէ ձեզնից մէկը իմաստութեամբ թերի լինի, թող խնդրի Աստծուն, – որ բոլորին այն տալիս է առատապէս եւ չի յանդիմանում, – եւ նրան կը տրուի: 6 Միայն թէ նա հաւատո՛վ թող խնդրի եւ թող չերկմտի, որովհետեւ, ով երկմիտ է, նման է ծովի հողմակոծ եւ տարուբերուող ալիքներին: 7 Այդպիսի մարդը թող չակնկալի Աստծուց որեւէ բան ստանալ, 8 քանի որ երկմիտ մարդը իր արած բոլոր քայլերում անհաստատ է:

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

9 Աղքատ եղբայրը թող պարծենայ, երբ Աստուած բարձրացնում է իրեն, 10 իսկ հարուստը թող պարծենայ, երբ Աստուած խոնարհեցնում է իրեն, քանի որ հարստութիւնը պիտի անցնի ինչպէս խոտածաղիկը. 11 որովհետեւ արեւը ծագեց՝ խորշակով հանդերձ եւ չորացրեց խոտը, նրա ծաղիկն ընկաւ, ու նրա վայելուչ տեսքը կորաւ. նոյնպէս եւ հարուստը պիտի թառամի՝ իր շահերով հանդերձ†: 12 Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձութեան. որովհետեւ, եթէ փորձութեան մէջ հաստատ լինի, կը ստանայ կեանքի պսակը, որը Տէրը խոստացաւ իրեն սիրողներին:

†Յունարէնում ունի ... իր ընթացքի մէջ:

ՓՈՐՁ ԵՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

13 Ոչ ոք, երբ փորձութեան մէջ լինի, թող չասի. «Աստծուց եմ փորձւում», քանի որ Աստուած չարից չի փորձւում եւ ինքն էլ չի փորձում ոչ ոքի: 14 Իւրաքանչիւր ոք փորձւում է՝ հրապուրուելով եւ խաբուելով իր ցանկութիւններից: 15 Այնուհետեւ ցանկութիւնը, յղանալով, մեղք է ծնում, եւ մեղքը, հասունանալով, մահ է ծնում: 16 Իմ սիրելի՛ եղբայրներ, մի՛ խաբուէք, 17 քանի որ ամէն բարի շնորհ եւ ամէն կատարեալ պարգեւ վերեւից է՝ իջած լոյսի Հօրից, որի մէջ չկայ փոփոխում կամ էլ փոփոխման ստուեր: 18 Նա իր կամքով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով, որպէսզի մենք լինենք իր ստեղծածների պտուղը:

ԱՍՏԾՈՒ ԽՕՍՔԸ ԼՍՈՂՆԵՐ ԵՒ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

19 Իմ սիրելի՛ եղբայրներ, իմացէ՛ք այս բանը. թող ամէն մարդ արագ լինի լսելու մէջ, ծանր՝ խօսելու մէջ եւ ծանր՝ բարկանալու մէջ. 20 որովհետեւ մարդու բարկութիւնը Աստծու արդարութիւնը չի կատարում: 21 Ահա թէ ինչու, դէ՛ն գցելով ամենայն աղտեղութիւն եւ չարիքի աւելցուկ, հեզութե՛մբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կարող է փրկել ձեր հոգիները: 22 Խօսքը կատարողնե՛ր եղէք եւ ոչ թէ միայն այն լսողներ համարեցէք դուք ձեզ†. 23 քանի որ, եթէ մէկը միայն լսող լինի խօսքը եւ ոչ կատարող, նա նման է մի մարդու, որ ակնապիշ դիտում է հայելու մէջ իր բնական դէմքը: 24 Նայելով՝ տեսնում է ինքն իրեն, անցնում գնում է եւ անմիջապէս մոռանում, թէ ինչպիսին էր ինքը: 25 Իսկ ով աչքերը յառած նայում է ազատութեան կատարեալ օրէնքին եւ դրա մէջ էլ յարատեւում, նա լսում է, չի մոռանում, այլ այն կատարում է. այդպիսի մէկը իր արածի մէջ երանութիւն կը գտնի:

26 Եթէ մէկն ուզում է բարեպաշտ լինել եւ չի սանձահարում իր լեզուն,

†Յունարէնում աւելացնում է՝ դում ձեզ խաբելով:

այլ զբաղեցնում է իր սիրտը, այդպիսի մէկի համար զուր է բարեպաշտութիւնը: 27 Սուրբ եւ անարատ բարեպաշտութիւնը Աստծու եւ Հօր առաջ այս է. այցելել որբերին եւ այրիներին իրենց նեղութեան մէջ, անարատ պահել իր անձը աշխարհից:

ԱՆԱՁԱՌ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՆԴԷՊ

2 Եղբայրնե՛ր իմ, աչառութեամբ մի՛ պահէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ փառքի Տիրոջ հաւատը: 2 Եթէ ձեր ժողովատեղին մտնի մի մարդ, որ ունենայ ոսկի մատանի եւ շքեղ զգեստներ, եւ այնտեղ մտնի նաեւ մի աղքատ՝ կեղտոտ զգեստներով, 3 եւ դուք նայէք նրան, ով շքեղ զգեստներ ունի եւ ասէք՝ «Դու նստի՛ր այստեղ, պատուոյ տեղը», իսկ աղքատին, թէ՝ «Ոտքի՛ կանգնիր դու այդտեղ», կամ թէ՝ «Եկ նստի՛ր իմ պատուանդանի մօտ», 4 այդ դէպքում դուք ձեր մէջ աչառութիւն արած չէ՞ք լինի եւ չար խորհուրդների դատաւորներ չէ՞ք լինի:

5 Լսեցէ՛ք ինձ, իմ սիրելի՛ եղբայրներ, չէ՞ որ Աստուած ընտրեց այս աշխարհի աղքատներին, որոնք հարուստ են հաւատով եւ ժառանգորդներ այն արքայութեան, որը նա խոստացաւ իրեն սիրողներին: 6 Իսկ դուք անարգում էք աղքատներին: Հարուստները չե՞ն, որ հարստահարում են ձեզ. հէնց նրանք էլ ձեզ դատարան են քարշ տալիս: 7 Նրանք չե՞ն, որ հայհոյում են այն բարի անունը, որով կոչուած էք դուք: 8 Ապա եթէ կատարէք արքայական օրէնքը Սուրբ Գրքի համաձայն, թէ՝ «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս ինքդ քեզ», լաւ էք անում: 9 Իսկ եթէ աչառութիւն էք անում, մեղք էք գործում՝ դատապարտուելով օրէնքից որպէս օրինազանցներ: 10 Նա, ով պահում է ամբողջ օրէնքը եւ միայն մէկ բանով սայթաքում, պարտապան կը լինի ամբողջ օրէնքին. 11 որովհետեւ նա, ով ասաց, թէ՝ «Չպիտի սպանես», նաեւ ասաց, թէ՝ «Եւ չպիտի շնանաս», քանզի, եթէ չսպանես, բայց շնանաս, յանցաւոր կը լինես օրէնքի առաջ: 12 Այնպէ՛ս խօսեցէք եւ այնպէ՛ս գործեցէք, որպէս թէ ազատութեան օրէնքով էք դատուելու, 13 քանի որ անողորմ դատաստան է լինելու նրա հանդէպ, ով ողորմած չի եղել. քանզի ողորմածութիւնը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց:

ՀԱՒԱՏ ԵՒ ԳՈՐԾ

14 Եղբայրնե՛ր իմ, օգուտն ի՞նչ է, եթէ մէկն ասի, թէ հաւատ ունի, սակայն հաւատն արտայայտող գործեր չունենայ: Մի՞թէ հաւատը նրան կը կարողանա՞յ փրկել: 15 Եթէ մի եղբայր կամ քոյր մերկ լինեն կամ օրուայ ուտելիքի կարօտ, 16 եւ ձեզնից մէկը նրանց ասի՝ «Գնացէ՛ք խաղաղութեամբ, տաքացէ՛ք եւ յագեցէ՛ք», եւ դուք նրանց չտաք մարմնին անհրաժեշտ բաները, ի՞նչ օգուտ է: 17 Նոյնպէս եւ հաւատը. եթէ նա գործեր չունի, առանձինն մեռած է: 18 Բայց թերեւս մէկն ասի. «Դու հաւատ ունես, իսկ ես՝ գործեր. ցո՛յց տուր ինձ քո հաւատը առանց գործերի, եւ ես քեզ ցոյց կը տամ իմ հաւատը գործերով»: 19 Դու հաւատում ես, որ մէկ է Աստուած. լաւ ես անում: Դեւերն էլ են հաւատում եւ դողում: 20 Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հաւատը դատարկ բան է առանց գործերի: 21 Աբրահամը՝ մեր հայրը, չէ՞ որ գործերով արդարացաւ՝ սեղանի վրայ հանելով իր որդուն՝ Իսահակին, որպէս զոհ: 22 Տեսնո՞ւմ ես, որ հաւատը գործակից եղաւ նրա գործերին եւ գործերով էլ հաւատը կատարեալ դարձաւ: 23 Եւ կատարուեց Գրուածը, որն ասում է. «Աբրահամը հաւատաց Աստծուն, եւ այդ նրան որպէս արդարութիւն համարուեց, եւ նա Աստծուն բարեկամ կոչուեց»†:

24 Տեսնո՞ւմ էք, որ գործերով է արդարանում մարդ եւ ոչ թէ միայն հաւատով: 25 Այդպէս էլ պոռնիկ Ռախաբը գործերով չարդարացա՞ւ, երբ ընդունեց լրտեսներին եւ արձակեց նրանց այլ ճանապարհով: 26 Ինչպէս որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպէս էլ մեռած է հաւատը առանց գործերի:

†Մնդոց 15. 6:

ԸՆԴԴԷՄ ԱՆՍԱՆՁ ԼԵԶՈՒԻ

3 Եղբայրնե՛ր իմ, շատերդ ուսուցանողներ լինելու չձգտէք: Իմացէ՛ք, որ մեծ դատաստան ենք ընդունելու, 2 քանի որ բոլորս էլ շատ ենք մեղանչում: Եթէ մէկը խօսքով չի մեղանչում, նա կատարեալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ամբողջ մարմինը: 3 Տե՛ս, թէ ինչպէս սանձեր ենք դնում ձիերի բերանը, որ նրանք մեզ հնազանդուեն. եւ նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք: 4 Ահա՛ւասիկ եւ նաւերը. ի՜նչ հսկայ բաներ են, սաստիկ հողմերից քշւում են, բայց փոքր մի ղեկով ուղղւում են ո՛ր կողմը որ նաւավարի սիրտն ուզում է: 5 Այսպէս էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում: Ահա թէ մի փոքր կրակ ինչպիսի՜ անտառներ է հրդեհում: 6 Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրաւութեան. մեր անդամների մէջ է հաստատուած լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը եւ կրակով վառում մեր ամբողջ կեանքը, բորբոքուած գեհենի կրակով: 7 Գազանների, թռչունների եւ սողունների ամէն տեսակ եւ ինչ որ կայ ծովի մէջ, հնազանդուած է եւ հնազանդւում է մարդկային բնութեանը, 8 բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին եւ մահաբեր թոյնով լցուածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել: 9 Նրանով օրհնում ենք Տիրոջը եւ Հօրը եւ նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծուեցին Աստծու նմանութեամբ: 10 Նոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւններ եւ անէծքներ: Եղբայրնե՛ր իմ, պէտք չէ, որ այդ այդպէս լինի: 11 Միթէ մի աղբիւր նոյն ակից քաղցր եւ դառն ջուր կը բխեցնի՞: 12 Եղբայրնե՛ր իմ, միթէ կարելի՞ է, որ թզենին ձիթապտուղ տայ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս աղուտ տեղից քաղցր ջուր չի կարելի ստանալ:

ԵՐԿՐԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

13 Ձեր մէջ ո՞վ է իմաստուն եւ խելացի. թող նա, բարի ընթացքով, ցոյց տայ իմաստութեամբ եւ հեզութեամբ կատարած իր գործերը: 14 Իսկ եթէ ձեր սրտերում դառն նախանձ եւ հակառակութիւն ունէք, մի՛ պարծեցէք, որ սուտ էք հանում ճշմարտութիւնը: 15 Այս իմաստութիւնը ի վերուստ չէ իջած, այլ՝ երկրաւոր է, մարմնաւոր եւ դիւային. 16 որովհետեւ, ուր հակառակութիւն եւ նախանձ կայ, այնտեղ կայ անկարգութիւն եւ ամէն չար բան: 17 Իսկ վերին իմաստութիւնը նախ՝ սուրբ է եւ ապա՝ խաղաղարար, հեզ, բարեացակամ, լի ողորմածութեամբ եւ բարի գործերով, մաքուր խղճմտանքով, առանց կեղծաւորութեան: 18 Արդարութեան պտուղը խաղաղութեամբ է սերմանւում նրանց համար, ովքեր խաղաղութիւն են անում:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

4 Այդ որտեղի՞ց պատերազմներ եւ որտեղի՞ց կռիւներ ձեր մէջ. չէ՞ որ ձեր այն ցանկութիւններից, որոնք կռիւ են մղում ձեր անդամների մէջ: 2 Ցանկանում էք, բայց չունէք, ուստի եւ՝ սպանում էք, նախանձում եւ չէք կարողանում ձեռք բերել ձեր ուզածը. պայքարում էք, կռւում եւ ձեռք չէք բերում, որովհետեւ չէք խնդրում: 3 Խնդրում էք եւ չէք ստանում, որովհետեւ չարամտօրէն էք խնդրում, որպէսզի այն ծառայեցնէք ձեր ցանկութիւններին: 4 Շնացողնե՛ր, չգիտէ՞ք, որ սէրը այս աշխարհի հանդէպ՝ թշնամութիւն է Աստծու դէմ, քանի որ, ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կ'անի: 5 Կամ թէ՝ առ ոչինչ էք համարում, ինչ որ Գիրքն ասում է.

«Աստուած նախանձախնդրութեամբ
պահանջում է այն հոգին,
որ բնակեցրեց մեր մէջ»:

6 Եւ այդ նրա համար, որ է՛լ աւելի շնորհ տայ. դրա համար ասում է.

«Տէրն ամբարտաւաններին հակառակ է,
բայց խոնարհներին շնորհ է տալիս»† :

7 Հնազանդուեցէ՛ք ուրեմն Աստծուն

†Առակներ 3. 34:

եւ դիմադրեցէ՛ք Սատանային, ու նա կը փախչի ձեզանից: 8 Մօտեցէ՛ք Աստծուն, եւ նա կը մերձենայ ձեզ: Մեղաւորնե՛ր, մաքրեցէ՛ք ձեր ձեռքերը. երկմիտնե՛ր, ուղղեցէ՛ք ձեր սրտերը. 9 տառապեցէ՛ք, սգացէ՛ք եւ լացէ՛ք. ձեր ծիծաղը սուգի թող վերածուի, եւ ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան: 10 Խոնա՛րհ եղէք Տիրոջ առաջ, եւ նա ձեզ կը բարձրացնի:

11 Եղբայրնե՛ր, միմեանց մի՛ բամբասէ՛ք. ով բամբասում է իր եղբօրը կամ դատում է իր եղբօրը, չարախօսում է օրէնքի մասին եւ դատում է օրէնքը. իսկ եթէ օրէնքն ես դատում, օրէնքը պահող չես, այլ՝ դատաւոր: 12 Կայ մէ՛կ Օրէնսդիր եւ Դատաւոր, որ կարող է փրկել եւ կործանել. դու ո՞վ ես, որ դատում ես քո մերձաւորին:

ՁԳՈՒՇԱՑՈՒՄ ՊԱՐԾԵՆԱԼՈՒՑ

13 Այժմ նրանց մասին, որ ասում են. «Այսօր կամ վաղը կը գնանք այսինչ քաղաքը, մէկ տարի կը մնանք այնտեղ, կը վաճառենք եւ կը վաստակենք»: 14 (Այսպէս էք ասում դուք, որ ոչինչ չգիտէք վաղուայ մասին. որովհետեւ ի՞նչ է ձեր կեանքը. յիրաւի մի մշուշ է այն, որ մի պահ երեւում է եւ ապա անհետանում): 15 Մինչդեռ դուք ասելու էք. «Եթէ Տէրը կամենայ, եւ ապրենք, կ'անենք այս կամ այն բանը»: 16 Բայց արդ, պարծենում էք ձեր ամբարտաւանութեամբ: Այսպիսի ամէն պարծանք չար է: 17 Ով որ գիտէ, թէ ինչ է բարին, եւ չի անում, նրա համար այդ մեղք է:

ԱՋԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ

5 Ուրեմն այժմ, հարուստնե՛ր, լացէ՛ք եւ ողբացէ՛ք այն թշուառութիւնների համար, որ գալու են ձեր գլխին. 2 որովհետեւ ձեր հարստութիւնը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, 3 եւ ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած. եւ նրանց ժանգը ձեր դէմ որպէս վկայութիւն պիտի լինի եւ պիտի ուտի ձեր մարմինը՝ ինչպէս կրակը. վերջին օրերի՛ համար գանձեր դիզեցէք: 4 Ահա՛ւասիկ, ձեր դաշտերը մշակած մշակների վարձը ձեզ մօտ պահեցիք. ձեր կողմից զրկուածն աղաղակում է, եւ հնձուորների բողոքը հասաւ Ամենակալ Տիրոջ ականջին: 5 Մեղկ կեանքով ապրեցիք երկրի վրայ եւ շուայտացաք ու ձեր սրտերը պարարտացրիք մորթուելու օրուայ համար: 6 Զրկեցիք, սպանեցիք արդարին, որը ձեզ չէր հակառակում:

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՕԹՔ

7 Եղբայրնե՛ր իմ, համբերո՛ղ եղէք մինչեւ Տիրոջ գալուստը: Մշակն ահա համբերութեամբ սպասում է երկրի պատուական պտղին, մինչեւ որ ստանայ առաջին եւ վերջին անձրեւը: 8 Համբերեցէ՛ք եւ դուք, ամրացրէ՛ք ձեր սրտերը, քանի որ Տիրոջ գալուստը մօտեցել է: 9 Մի՛ տրտմեցրէ՛ք միմեանց, եղբայրնե՛ր, որպէսզի չդատուէք: Ահա՛ւասիկ դատաւորը դռանն է: 10 Եղբայրնե՛ր, չարչարանքների եւ համբերութեան որպէս օրինակ ունեցէք մարգարէներին, որոնք խօսեցին Տիրոջ անունով: 11 Ահա՛ երանի ենք տալիս համբերողներին: Լսել էք Յոբի համբերութեան մասին եւ տեսել, ինչ որ Տէրը նրան արեց վերջում, քանի որ Տէրը բազմագութ է եւ ողորմած:

12 Ամէն բանից առաջ, եղբայրե՛ր իմ, մի՛ երդուէք ո՛չ երկնքով, ո՛չ երկրով, ո՛չ էլ այլ երդումով. այլ ձեր այո՝ թող լինի՝ այո, եւ ոչը՝ ոչ, որպէսզի կեղծաւորութեան պատճառով չընկնէք† :

13 Ձեզնից մէկը վշտի՞ մէջ է ընկել, թող աղօթի. մէկը բերկրանքի՞ մէջ է, սաղմոս թող ասի. 14 հիւա՞նդ է ձեզնից մէկը, թող կանչի եկեղեցու երէցներին, եւ նրանք նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: 15 Եւ հաւատով եղած աղօթքը կը փրկի հիւանդին, ու Տէրը նրան ոտքի կը կանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի: 16 Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէ՛ք եւ միմեանց համար

†Յունարէնում՝ դատաստանի տակ չընկնէք:

աղօ՛թք արէք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է: 17 Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակայ. նա աղօթեց, ու երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց: 18 Ապա դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, ու երկիրը բուսցրեց իր պտուղը:

19 Եղբայրնե՛ր իմ, եթէ ձեզնից մէկը շեղուի ճշմարտութեան ճանապարհից, իսկ մէկ ուրիշը նրան յետ բերի, 20 թող իմանայ, որ, ով մեղաւորին իր մոլորութեան ճանապարհից յետ է բերում, կը փրկի նրա հոգին մահուանից եւ կը ծածկի մեղքերի մի ամբողջ բազմութիւն:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Պետրոս առաքեալի առաջին թուղթը ուղղուած է Փոքր Ասիայի հիւսիսային եւ արեւելեան հինգ շրջաններում ցրուած քրիստոնեաներին: Այն համայնքները, որոնց մաս էին կազմում այդ քրիստոնեաները, հիմնուել էին Պողոսի կամ նրա գործակիցների կողմից: Ամենայն հաւանականութեամբ հեղինակն այս թուղթը նրանց գրել է Հռոմից (նա այդ քաղաքն անուանում է Բաբելոն): Այն ակնարկութիւնները, որ նա անում է նրանց վիճակի մասին, ցոյց է տալիս, որ նրանք արհամարհւում եւ զանազան չարագործութիւնների մէջ մեղադրւում էին իրենց հեթանոս հարեւանների կողմից, որի պատճառով էլ մշտապէս գտնւում էին հալածանքի սպառնալիքի տակ: Ահա թէ ինչու առաքեալն իր թղթում աշխատում է վերականգնել նրանց քաջութիւնը՝ նրանց հայեացքը դարձնելով Յիսուս Քրիստոսի անձի վրայ, որի տառապանքներն էին այժմ բաժանում նրանք:

Փառաբանական մի աղօթքի մէջ, որը յաջորդում է ողջոյնի խօսքին, Պետրոսը յիշեցնում է իր ընթերցողներին, թէ ինչպէս Աստուած փրկեց եւ կենդանի յոյս տուեց նրանց Յիսուս Քրիստոսի մահուամբ եւ յարութեամբ: Նա քաջալերում է նրանց, որ լինեն շրջահայեաց եւ ապրեն առաքինի կեանքով: Ներշնչուելով Քրիստոսի օրինակից՝ նրանք պէտք է իրենց հաւատարմութիւնն արտայայտեն նրա պատգամների նկատմամբ իրենց վարուեցողութեամբ եւ փորձութիւնների դիմաց իրենց վերաբերմունքով: Թղթում այնուհետեւ գործնական խորհուրդներ են տրւում՝ իրենց քաղաքացիական պարտականութիւնների, ծառայի եւ տիրոջ յարաբերութիւնների, ամուսինների փոխադարձ յարգանքի, համայնքի կեանքի եւ հեթանոսների հանդէպ որդեգրուելիք վարմունքի մասին:

Վերջում հեղինակը մի քանի յանձնարարութիւններ է տալիս նաեւ համայնքի մեծերին (կամ պատասխանատուներին), երիտասարդներին եւ բոլոր հաւատացեալներին ուղղեալ, որպէսզի բոլորն էլ հաստատ մնան տառապանքի մէջ՝ ապաւինելով Աստծու խոստումներին: Թուղթն աւարտւում է ողջոյնի մի քանի խօսքերով:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 *Պետրոսը՝ առաքեալը Յիսուս Քրիստոսի, ձեզ՝ պանդուխտներիդ, որ Պոնտոսի, Գաղատիայի ու Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի սփիւռքում էք, 2 ընտրեալներիդ՝ ըստ Հայր Աստծու կանխագիտութեան, Հոգու սրբագործումով՝ հնազանդուելու համար Յիսուս Քրիստոսին եւ սրբագործուելու նրա արեան հեղումով. շնորհը եւ խաղաղութիւնը թող շատանան ձեր վրայ:*

ԳՈՀՈՒԹԻՒՆ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԻ ՀԱՄԱՐ

3 *Օրհնեա՛լ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ իր առատ ողորմութեամբ մեզ վերստին ծնեց կենդանի յոյսի համար՝ մեռելներից Յիսուս Քրիստոսի յարութեամբ. 4 ծնեց անեղծ եւ անարատ ու անթառամ ժառանգութեան համար, որ պահուած է երկնքում ձեզ համար, 5 ձեզ, որ Աստծու զօրութեամբ պահուած էիք հաւատով՝ փրկութեան համար, որ պատրաստ է յայտնուելու վերջին ժամանակներում: 6 Ուրախանում էք դրանով դուք, որ այժմ դէպքերի բերումով, այլ եւ այլ փորձութիւններով փոքր-ինչ տրտմած էք, 7 որպէսզի ձեր հաւատի փորձը, որ առաւել արժէքաւոր է, քան կորստեան ենթակայ ոսկին, որ կրակով է փորձուած, դառնայ գովքի, փառքի ու պատուի առարկայ յայտնութեան ժամանակ Յիսուս Քրիստոսի, 8 որին չէք տեսել, բայց սիրում էք եւ որին այժմ էլ չէք տեսնում, բայց հաւատում էք նրան եւ ուրախ էք անպատմելի ու փառաւոր խնդութեամբ՝ 9 ձեռք բերելով ձեր հաւատի պսակումը՝ հոգիների փրկութիւնը:*

10 Այդ փրկութեան համար է, որ փնտռտուքներ կատարեցին եւ քննեցին մարգարէները, որոնք մարգարէանում էին այն շնորհի մասին, որ վիճակուած էր ձեզ: 11 Քննում էին, թէ ո՛ր եւ ինչպիսի՛ ժամանակի մասին էր ծանուցում իրենց մէջ եղող Քրիստոսի Հոգին, որ նախ վկայում էր Քրիստոսի չարչարանքների մասին եւ դրանից յետոյ՝ նրա փառքի մասին: 12 Աստուած նրանց յայտնեց նաեւ, որ ոչ թէ իրենց համար, այլ մեզ համար էին տրուած այդ պատգամները, որոնք այժմ պատմուեցին ձեզ նրանց միջոցով եւ աւետարանուեցին Սուրբ Հոգով, որն ուղարկուեց երկնքից. մի բան, որ կը ցանկանային հրեշտակները գոնէ աղօտ կերպով տեսնել:

ԿՈՉ՝ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԵԼՈՒ

13 Ուստի, գօտեպնդելով ձեր միտքը, զգաստ, կատարեալ յոյսով սպասեցէ՛ք Յիսուս Քրիստոսի յայտնութեան ժամանակ ձեզ հասանելիք շնորհին: 14 Իբրեւ հնազանդ որդիներ, մի՛ կերպարանուէք նախկին, ձեր անգիտութեան ժամանակուայ ցանկութիւններով. 15 այլ, նման այն Սրբին, որ ձեզ կանչեց, դուք էլ ձեր ամբողջ կեանքով սո՛ւրբ եղէք. 16 քանի որ գրուած է.

«Սո՛ւրբ եղէք, որովհետեւ սուրբ եմ ես»:

17 Եւ եթէ Հայր էք կոչում նրան, որ առանց աչառութեան դատում է իւրաքանչիւրին ըստ գործերի, ապա երկիւղո՛վ ապրեցէք այս աշխարհում ձեր պանդխտութեան ժամանակ: 18 Իմացէ՛ք, որ ապականացու արծաթեղէնով եւ ոսկեղէնով չէ, որ փրկուեցիք ձեր հայրենաւանդ ունայն ընթացքից, 19 այլ՝ թանկագին արեամբ Քրիստոսի, որ անբիծ եւ անարատ է, ինչպէս մի գառ. 20 նա, որ նախասահմանուած էր նախքան աշխարհի ստեղծումը եւ երեւաց ժամանակների վախճանին ձեզ համար, ձեզ, 21 որ նրա միջոցով հաւատացիք Աստծուն, որը յարութիւն տուեց նրան մեռելներից եւ փառաւորեց, որպէսզի ձեր հաւատը եւ յոյսը լինեն Աստծու վրայ:

22 Արդ, մաքրեցէ՛ք դուք ձեզ՝ հնազանդուելով ճշմարտութեանը, առանց կեղծաւորութիւն խառնելու եղբայրասիրութեան մէջ՝ մաքուր սրտով ջերմօրէն սիրելով միմեանց: 23 Վերածնուեցէ՛ք ոչ թէ ապականութեան ենթակայ սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական

խօսքով. 24 քանզի՝

«Ամէն մարմին նման է խոտի,
եւ մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի.
խոտը չորանում է, ծաղիկն էլ թափւում,
25 բայց Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան»[†]:

Այսինքն՝ այն խօսքը, որ աւետարանուեց ձեզ:

ԿԵՆԴԱՆԻ ՎԷՄԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԱԶԳԸ

2 *Ուրեմն, դէ՛ն գցելով ամէն չարութիւն, ամէն նենգութիւն, կեղծաւորութիւններ, նախանձ եւ ամէն չարախօսութիւն, 2 որպէս նորածին երեխաներ, մի՛շտ փափագող եղէք բանական եւ անխարդախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք փրկութեան համար, 3 քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը:*

4 Մօտեցէ՛ք նրան՝ կենդանի Վէմին, որը, թէպէտ մարդկանցից անարգուած, բայց Աստծու առաջ ընտրեալ եւ թանկագին է: 5 Եւ դուք, իբրեւ կենդանի վէմեր, կառուցւում էք որպէս հոգեւոր տաճար, որպէս անարատ քահանայութիւն, որպէսզի Յիսուս Քրիստոսի միջոցով մատուցէք հոգեւոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն. 6 քանզի Գրքում էլ կայ, թէ՝

«Ահա՛ւասիկ ընտիր վէմ եմ դնում Սիոնի մէջ,
թանկագին անկիւնամար.
եւ ով նրան հաւատայ, ամօթով չպիտի մնայ»[‡]:

7 Ուրեմն, ձեզ՝ հաւատացեալներիդ համար՝ թանկագին վէմ, իսկ անհաւատներին՝

«Այն վէմը, որն անարգեցին շինողները,
ա՛յն եղաւ անկիւնամար»[§]:

8 Ինչպէս նաեւ՝

«Վէմ գլորման եւ վէմ գայթակղութեան»,

որով գայթակղւում են խօսքին անհնազանդ եղողները. եւ նրանք հէնց այդ բանի համար էլ սահմանուած էին: 9 Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ, որպէսզի ձեր առաքինութիւնները նուիրէք նրան, ով խաւարից ձեզ կանչեց իր սքանչելի լոյսին: 10 Դուք, որ մի ժամանակ ժողովուրդ չէիք, բայց այժմ Աստծու ժողովուրդն էք. դուք, որ ողորմութիւն չէիք գտել, այժմ ողորմութիւն գտաք:*

ԱՊՐԵԼ ՈՐՊԷՍ ԱՍՏԾՈՒ ԾԱՌԱՆԵՐ

11 Սիրելինե՛ր, աղաչում եմ ձեզ, իբրեւ պանդուխտների եւ օտարականների, որ հեռու մնաք մարմնաւոր ցանկութիւններից, որոնք պայքարում են հոգու դէմ, 12 եւ ցոյց տաք ձեր պարկեշտ վարքը հեթանոսների մէջ, որպէսզի այն բանում, որ ձեզ բամբասում են իբրեւ չարագործների, դրա մէջ իսկ տեսնելով ձեր բարի գործերը՝ փառաւորեն Աստծուն նրա այցելութեան օրը:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

13 Ի սէր Տիրոջ հնազա՛նդ եղէք մարդկային ամէն իշխանութեան՝ թէ՛ թագաւորին, որպէս գերագոյն հեղինակութիւն ունեցող մէկի, 14 թէ՛ կառավարիչներին, որպէս նրանից ուղարկուածների, այն բանի համար, որ նրանք չարագործներին պատժում են, իսկ օրէնքը պահողներին՝ գովում. 15 որովհետեւ Աստծու կամքը այն է, որ բարեգործները պապանձեցնեն անխելք մարդկանց տգիտութիւնը: 16 Ապրեցէ՛ք որպէս ազատներ եւ ազատութիւնը իբրեւ չարիքի պատրուակ մի՛ բռնէք, այլ ապրեցէ՛ք որպէս Աստծու ծառաներ: 17 Յարգեցէ՛ք բոլորին, սիրեցէ՛ք եղբայրութիւնը, վախեցէ՛ք Աստծուց, պատուեցէ՛ք թագաւորներին:

ՔՐԻՍՏՈՍԻ ՁԱՐՁԱՐԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

18 Ծառանե՛ր, ամէն ինչում երկիւղով հնազա՛նդ եղէք տէրերին, ոչ միայն բարիներին եւ հեզաբարոներին, այլեւ դաժաններին, 19 քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մէկը յանիրաւի վիշտ է կրում բարի խղճով.

†Եսայի 40. 6–8:
‡Եսայի 28. 16:
§Սաղմոս 117. 22, Մատթ. 21. 42:
*Յունարէնն ունի՝ որպէսզի հոչակէք նրա առաքինութիւնները ...

20 քանզի ի՞նչ երախտիք կ՚ունենաք, եթէ, մեղանչելուց յետոյ, տանջուէք եւ համբերէք: Իսկ եթէ բարիք գործէք եւ չարչարուէք ու համբերէք, այդ շնորհ է Աստծու մօտ. 21 որովհետեւ այդ բանի համար իսկ կոչուեցիք, քանի որ Քրիստոս էլ ձեզ համար մեռաւ† եւ ձեզ օրինակ թողեց, որ իր հետքերով գնաք. 22 նա, որ մեղք չգործեց, եւ նրա բերանում նենգութիւնը տեղ չգտաւ. 23 նա, որ նախատուելով՝ փոխարէնը չնախատեց, չարչարուելով՝ չսպառնաց, այլ յանձնուեց արդարութեամբ դատողին. 24 նա, որ մեր մեղքերը իր մարմնով բարձրացրեց խաչափայտի վրայ, որպէսզի մենք, զերծ լինելով մեղքերից, ապրենք արդարութեան համար. նա, որի վէրքերով բժշկուեցիք դուք: 25 Մոլորեալ ոչխարների պէս էիք, իսկ այժմ դարձաք դէպի ձեր հոգիների Հովիւը եւ Տեսուչը:

ԿԱՆԱՅՔ ԵՒ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

3 Այսպէս էլ դուք, կանա՛յք, հնազա՛նդ եղէք ձեր մարդկանց, որպէսզի, եթէ նրանցից ոմանք չհնազանդուեն Խօսքին, իրենց կանանց ընթացքի շնորհիւ եւ առանց խօսքի իսկ շահուած լինեն՝ 2 նկատի ունենալով ձեր պարկեշտ ընթացքը՝ լի երկիւղածութեամբ: 3 Թող ձեր արտաքի՛նը զարդարուած չլինի հիւսքերով, ոսկեհուռ վարսակալներով կամ պճնագեղ զգեստներով, 4 այլ սրտի ներսի՛ մարդը՝ հեզ եւ հանդարտ հոգու անեղծութեամբ, ինչ որ շատ աւելի արժէք է ներկայացնում Աստծու առաջ. 5 մի ժամանակ այսպէ՛ս էին իրենք իրենց զարդարում Աստծու վրայ յոյս դրած կանայք, որոնք հնազանդուում էին իրենց մարդկանց. 6 այդպէս էր Սառան, որը հնազանդ էր Աբրահամին եւ նրան իր տէրն էր կոչում. եւ դուք նրա զաւակները եղաք. նրանք բարեգործ էին եւ չէին սարսափում եւ ո՛չ մի բանից‡:

†Լաւագոյն յուն. բն. մեռաւ բառի փոխարէն ունեն չարչարուեց:

‡Յունարէնն ունի՝ եթէ դուք բարեգործ լինէք եւ որեւէ երկիւղ չունենաք, նրա որդիները կը լինէք:

7 Նոյնպէս եւ տղամարդիկ թող իմաստութեամբ ապրեն իրենց կանանց հետ, յարգեն նրանց, իբրեւ դիւրաբեկ անօթի, իբրեւ կեանքի շնորհի ժառանգակիցների, որպէսզի ձեր աղօթքներին արգելք եղող բաներ չլինեն:

ՉԱՐՉԱՐԱՆՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

8 Եւ, ամենագլխաւորը, եղէ՛ք համախորհուրդ, կարեկից, եղբայրասէր, ազնուագութ, խոնարհ. 9 չարի փոխարէն չար մի՛ հատուցէ՛ք, կամ նախատինքի փոխարէն՝ նախատինք, այլ, ընդհակառակը, օրհնեցէ՛ք, որովհետեւ այդ բանին իսկ կոչուեցիք, որպէսզի ժառանգէք օրհնութիւնը. 10 արդարեւ՝

«Ով ուզում է կեանքը սիրել եւ լաւ օրեր տեսնել,
թող լռեցնի իր լեզուն չար բաներ ասելուց
եւ իր շրթունքները՝ նենգութիւն խօսելուց.
11 թող յետ հաշուի չարից եւ բարին անի,
թող խաղաղութիւն փնտռի եւ գնայ նրա յետեւից,
12 որովհետեւ Տիրոջ աչքը արդարների վրայ է,
եւ նրա ականջները բաց՝ նրանց աղօթքին.
բայց Տիրոջ երեսը չարագործների դէմ է»†:

13 Եւ ո՞վ է, որ պիտի չարչարի ձեզ, եթէ դուք նախանձախնդիր լինէք բարուն: 14 Իսկ եթէ արդարութեան համար չարչարուէք էլ, երանի՛ է ձեզ: Բայց նրանց երկիւղից մի՛ վախեցէք եւ մի՛ խռովուէք, 15 այլ Տիրոջը՝ նոյն ինքը Քրիստոսին սո՛ւրբ պահեցէք ձեր սրտերում. պատրա՛ստ եղէք հեզութեամբ եւ երկիւղածութեամբ պատասխան տալու ամէն մարդու, որ կը հարցնի ձեր մէջ եղած յոյսի պատճառը: 16 Մաքուր խղճմտանք ունեցէ՛ք, որպէսզի այն բանով, որ չարախօսում են ձեր մասին, ամօթահար լինեն նրանք, որ բամբասում են ձեր բարի ընթացքը ի Քրիստոս. 17 որովհետեւ աւելի լաւ է բարեգործութիւն անելով չարչարուել, եթէ այդ է Աստծու կամքը, քան չարիք գործել:

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

18 Արդարեւ, մեր բոլորի համար, մեղքերի պատճառով, մէկ անգամ

†Սաղմոս 34. 13–17:

մեռաւ եւ ինքը Քրիստոս՝ Արդարը՝ անարդարների համար, որպէսզի մեզ մօտեցնի Աստծուն. նա թէպէտեւ մարմնով մեռաւ, բայց կենդանի է Հոգով, 19 որով եւ գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին, 20 որոնք մի ժամանակ ապստամբել էին, երբ Աստծու համբերատարութիւնը երկարաձգուում էր նրանց համար մինչեւ Նոյի օրերը, երբ տապանն էր շինուում: Այդ օրերին քչեր, այսինքն՝ ութ հոգի փրկուեցին ջրից: 21 Մկրտութիւնն էլ, ըստ նոյն օրինակի, ապրեցնում է ձեզ (ոչ թէ մարմնի կեղտը հեռացնելու համար, այլ որպէս մաքուր խղճով յանձնառութիւն առ Աստուած) Յիսուս Քրիստոսի յարութեան միջոցով: 22 Գնացած լինելով երկինք՝ նա Աստծու աջ կողմում է: Եւ նրան հնազանդուում են հրեշտակները, իշխանութիւններն ու զօրութիւնները:

ՓՐԿՈՒԱԾ ԿԵԱՆՔԵՐ

4 Քանի որ Քրիստոս մարմնով չարչարուեց մեզ համար†, դուք եւս զինուեցէ՛ք նոյն մտքով. որովհետեւ, ով մարմնով չարչարուում է, դադարում է մեղանչելուց, 2 որպէսզի մարմնի մէջ մնացած ժամանակ այլեւս ոչ թէ ըստ մարդկային ցանկութիւնների, այլ ըստ Աստծու կամքի ապրի. 3 քանզի բաւական է մեզ կեանքի անցած ժամանակը, երբ ընթացանք հեթանոսների կամքի համաձայն՝ զեխութիւններով, յոռի ցանկութիւններով, գինեմոլութիւններով, անառակութիւններով, հարբեցողութիւններով, անօրէն կռապաշտութիւններով: 4 Եւ նրանք տարօրինակ են գտնում, որ դուք չէք ընթանում նոյն անկարգ զեխութեամբ. եւ հայհոյում են ձեզ: 5 Նրանք հաշիւ պիտի տան նրան, ով պատրաստ է դատելու կենդանիներին եւ մեռածներին. 6 քանի որ սրա համար իսկ քարոզուեց Աւետարանը նաեւ մեռելներին, որպէսզի մարդկանց նման դատուեն մարմնով եւ կենդանի լինեն Հոգով Աստծու նման:

†Լաւագոյն յուն. բն. չունեն մեզ համար բառերը:

ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԲԱՐԻ ՏՆՏԵՍՆԵՐԸ

7 Ամէն ինչի վախճանը մօտեցել է: Զգաստացէ՛ք ուրեմն եւ արթո՛ւն եղէք աղօթքի համար: 8 Ամէն ինչից առաջ միմեանց միջեւ ամուր սէ՛ր ունեցէք, քանի որ սէրը ծածկում է մեղքերի շատութիւնը: 9 Հիւրասէ՛ր եղէք միմեանց հանդէպ առանց տրտնջալու: 10 Իւրաքանչիւր ոք ինչպիսի շնորհ որ ընդունել է, ուրիշի հանդէպ թող նոյնը մատակարարի որպէս բարի տնտես Աստծու պէսպէս շնորհների: 11 Եթէ մէկը խօսի, թող այդ լինի Աստծու պատգամների նման: Եթէ մէկը մատակարարի, թող այդ լինի այն զօրութիւնից, որն Աստուած շնորհում է, որպէսզի ամէն ինչում Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի միջոցով, որին փա՛ռք եւ զօրութի՛ւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՉԱՐՉԱՐՈՒԵԼ ԻԲՐԵԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

12 Սիրելինե՛ր, տարօրինակ մի՛ համարէք այն այրող նեղութիւնը, որ ձեզ փորձելու համար է, որպէս թէ մի տարօրինակ բան պատահած լինէր ձեզ: 13 Այլ, որպէս Քրիստոսի չարչարանքներին մասնակիցներ, ուրա՛խ եղէք, որպէսզի նրա փառքի յայտնութեան ժամանակ էլ ցնծաք եւ ուրախանաք: 14 Իսկ եթէ նախատուէք էլ Քրիստոսի անուան համար, երանելի՛ էք, քանի որ փառքի եւ զօրութեան անունը† եւ Աստծու Հոգին է հանգչում ձեր վրայ: 15 Ձեզնից ոչ ոք թող չտանջուի որպէս մարդասպան կամ որպէս գող կամ որպէս չարագործ կամ որպէս ուրիշի գործին խառնուող. 16 իսկ եթէ տանջուում է որպէս քրիստոնեայ, թող չամաչի, այլ փառաւորի Աստծուն այդ անուամբ, 17 քանի որ ժամանակն է, որ սկսուի դատաստանը Աստծու տնից. որովհետեւ, եթէ այն նախ մեզնից սկսուի, ապա ի՞նչ վախճան կը լինի նրանց, ովքեր չհնազանդուեցին Աստծու Աւետարանին: 18 Եւ եթէ արդարը հազիւ է

†Լաւագոյն յուն. բն. չունեն եւ զօրութեան անունը բառերը:

փրկուելու, ապա ամբարիշտը կամ մեղաւորը էլ ո՞ւր պիտի մնայ: 19 *Հետեւաբար նրանք, որ չարչարւում են ըստ Աստծու կամքի, բարեգործութիւն անելով թող իրենց հոգիները յանձնեն հաւատարիմ Ստեղծողին:*

ՅՈՐԴՈՐ ԵՐԷՑՆԵՐԻՆ

5 *Ուրեմն՝ աղաչում եմ երէցներին, ես էլ նոյնպէս լինելով երէց ու վկայ Քրիստոսի չարչարանքների եւ մասնակից գալիք փառքի յայտնութեան.* 2 *արածեցրէ՛ք Աստծու այդ հօտը, որ ձեզ է յանձնուած, վերակացու լինելով ոչ թէ հակառակ ձեր կամքին, այլ՝ յօժարակամ, ըստ Աստծու. ոչ թէ շահախնդրութեամբ, այլ՝ յօժարութեամբ.* 3 *ոչ թէ տիրելով նրանց, որ բաժին են ընկած ձեզ, այլ օրինակ լինելով հօտին,* 4 *որպէսզի, երբ Հովուապետը երեւայ, փառքի անթառամ պսակն ընդունէք:*

ՅՈՐԴՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

5 *Նոյնպէս եւ դուք, երիտասարդնե՛ր, հնազա՛նդ եղէք ծերերին. բոլորդ միմեանց հանդէպ խոնարհութի՛ւն ունեցէք, քանի որ «Աստուած հակառակ է ամբարտաւաններին, իսկ խոնարհներին տալիս է շնորհ»*† *:* 6 *Խոնարհուեցէ՛ք Աստծու հզօր ձեռքի տակ, որպէսզի ժամանակին նա ձեզ բարձրացնի:* 7 *Ձեր բոլոր հոգսերը նրա վրայ գցեցէ՛ք, որովհետեւ նա է, որ հոգում է ձեր մասին:*

8 *Արթո՛ւն եղէք, հսկեցէ՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ Սատանան, մռնչում է առիւծի պէս, շրջում եւ փնտռում է, թէ ո՛ւմ կուլ տայ:* 9 *Դիմադրեցէ՛ք նրան՝ հաստատուն լինելով հաւատի մէջ. իմացէ՛ք, որ ձեր եղբայրներն էլ աշխարհում կրում են նոյն չարչարանքները:*

10 *Եւ բոլոր շնորհների Աստուածը, - որ ձեզ կոչեց իր յաւիտենական փառքին Քրիստոս Յիսուսի միջոցով, որին մի փոքր ժամանակ չարչարակից պիտի լինէք, - թող վերականգնի, զօրացնի, հաստատահիմն դարձնի ձեզ:* 11 *Նրան իշխանութի՛ւն եւ փա՛ռք յաւիտեանս: Ամէն:*

ՎԵՐՋԻՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱԺԵՇՏ

12 *Սիղուանոսի միջոցով, որ հաւատարիմ եղբայր է, ինչպէս ես եմ կարծում, մի փոքր բան գրեցի ձեզ՝ յորդորելու եւ վկայելու համար, որ Աստծու ճշմարիտ շնորհն ա՛յս է. դրանում հաստա՛տ մնացէք:*

13 *Ձեզ ողջունում է Բաբելոնում գտնուող եկեղեցին, որ ընտրուած է ձեզ նման, ինչպէս նաեւ՝ իմ որդի Մարկոսը:* 14 *Ողջունեցէ՛ք միմեանց սուրբ համբոյրով: Խաղաղութիւն ձեզ բոլորիդ, որ Քրիստոս Յիսուսի մէջ էք: Ամէն:*

†Առակներ 3. 34:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Այս թուղթն ուղղուած է քրիստոնեաներին ընդհանրապէս: Հեղինակի հիմնական մտահոգութիւնն է եղել մաքառել Աւետարանին հակառակ վարդապետութիւններ տարածողների դէմ, որոնք սպրդել էին Եկեղեցուց ներս: Նրանց ուսուցման գլխաւոր վտանգներից մէկը բարեկարգ կեանքի խանգարումն էր: Նրանց հակազդելու միակ ձեւը ամբողջապէս կապուած մնալն էր Աստծու եւ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ ճանաչողութեանը այնպէս, ինչպէս այն փոխանցուել էր մեզ նրանց կողմից, ովքեր իրենց սեփական աչքերով էին տեսել Յիսուս Քրիստոսին եւ լսել նրա ուսուցումը:

Իր թղթի սկզբում, ողջոյնի կարճ խօսքից յետոյ, հեղինակը կանգ է առնում քրիստոնէական կեանքի համար կարեւոր մի շարք յատկութիւնների եւ Աստծուց ստացուած կոչին հաւատարիմ մնալու անհրաժեշտութեան վրայ, համաձայն այն անձանց վկայութեան, որոնք տեսել են Տիրոջը: Այնուհետեւ նա խստիւ դատապարտում է կեղծ վարդապետութիւններ տարածողների գործունէութիւնն ու ընթացքը: Մատնանշելով նրանց ուսուցման դատապարտելի կողմերից մէկը՝ նա ասում է, որ նրանք ծաղրում էին Քրիստոսի գալստեանը սպասողներին եւ պնդում էին, որ դա տեղի չի ունենալու: Ի պատասխան նրանց, հեղինակը հաստատում է, որ եթէ քրիստոսի գալուստն ուշանում է , ապա դա Աստծու համբերութեան պատճառով է, որը առիթ է տալիս շատերին դեռեւս ընդունելու փրկութիւնը:

Կեանքում երբեք չեն պակասել կեղծ ուսմունքի տարածիչներ: Պետրոս առաքեալի երկրորդ թղթի պատգամը, հետեւաբար, մշտապէս այժմէական է: Նա քաջալերում է հաւատացեալներին, որ առաջ ընթանան Տիրոջը ճանաչելու իրենց ձգտման մէջ, որպէսզի չմոլորուեն անկայուն տեսութիւններով:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ 1, 2

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 *Սիմոն Պետրոսը՝ ծառան եւ առաքեալը Յիսուս Քրիստոսի՝ ձե՛զ, որ մեզ հետ հասաք նոյն պատուական հաւատին՝ մեր Աստծու եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի արդարութեամբ: 2 Շնո՛րհ ձեզ, եւ թող շատանայ խաղաղութիւնը Աստծու եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի մասին ձեր ունեցած գիտութեամբ:*

ԱՍՏԾՈՒ ԿՈՉԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

3 Արդարեւ, նրա աստուածային զօրութիւնը մեզ շնորհեց ամէն ինչ, որ վերաբերում է կեանքին եւ աստուածապաշտութեանը՝ ճանաչեցնելով մեզ նրան, ով կանչեց մեզ իր փառքին եւ առաքինութեանը: 4 Դրանցով մեծամեծ եւ թանկագին խոստումներ պարգեւուեցին մեզ, որպէսզի հաղորդակից լինէք աստուածային բնութեանը եւ հեռու մնաք այս աշխարհի ցանկութիւններից եւ ապականութիւններից: 5 Եւ այս բանի համար իսկ ամէն ջանք գործադրելով՝ ձեր հաւատով առաքինութիւն ձեռք բերէք, առաքինութեամբ՝ գիտութիւն, 6 գիտութեամբ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեամբ՝ համբերատարութիւն, համբերատարութեամբ՝ աստուածապաշտութիւն, 7 աստուածապաշտութեամբ՝ եղբայրասիրութիւն, եղբայրասիրութեամբ էլ՝ սէր: 8 Երբ դուք այս շնորհներն ունենաք եւ սրանցով հարստանաք, սրանք ձեզ դատարկ եւ անպտուղ չեն թողնի մեր Տէր Յիսուս Քրիստոսի մասին ձեր ունեցած գիտութեան մէջ: 9 Իսկ նա, ում մէջ այս բաները չկան, կոյր է կամ կարճատես եւ մոռացութեան տուած իր նախկին յանցանքներից մաքրուած լինելը: 10 Ուստի, եղբայրնե՛ր, առաւե՛լ ջանացէք, որպէսզի բարի գործերով† ձեր կոչումը եւ ընտրութիւնը հաստատ պահէք: Այս բանն անելով՝ երբեք յանցանքի մէջ չէք ընկնի, 11 քանի որ այսպիսով լայնօրէն մուտք պիտի շնորհուի ձեզ դէպի մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի յաւիտենական արքայութիւնը:

12 Ահա թէ ինչու պատրաստ եմ միշտ յիշեցնելու ձեզ այս բաները, առաւել եւս՝ գիտակներին եւ այդ ճշմարտութեանը վերահասու եղածներին ու նրանում հաստատուածներին, 13 քանի որ իրաւունք եմ համարում, – քանի դեռ այս մարմնի մէջ եմ, – արթուն պահել ձեզ յիշեցումներով: 14 Գիտեմ, որ շուտով մերկանալու եմ այս մարմնից, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսն ինձ յայտնեց: 15 Եւ շտապում եմ միշտ ձեզ յորդորել, որպէսզի այս աշխարհից իմ մեկնելուց յետոյ էլ վերյիշէք այս բաները:

ՔՐԻՍՏՈՍԻ ՓԱՌՔԻ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐ

16 Ոչ թէ հնարովի առասպելների յետեւից գնալով է, որ ձեզ ճանաչեցրինք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութիւնը եւ գալուստը, այլ մենք իսկ ականատես եղանք նրա մեծութեանը. 17 քանի որ նա Հայր Աստծուց ստացաւ փառք եւ պատիւ, երբ մեծավայելուչ փառքից եկաւ այս ձայնը, թէ՝ «Դա է իմ սիրելի որդին, որն ունի իմ ամբողջ հաճութիւնը»: 18 Եւ երկնքից եկող այս ձայնը լսեցինք մենք իսկ, որ նրա հետ էինք սուրբ լերան վրայ:

19 Ունենք նաեւ մարգարէական աւելի հաստատուն խօսքը, – որին եթէ անսաք, լաւ կ'անէք, – իբրեւ ճրագ, որ լոյս է տալիս մութ տեղում՝ մինչեւ որ լուսանայ օրը, եւ արուսեակը ծագի ձեր սրտերում:

20 Բայց նախ այս բանն իմացէ՛ք, որ Գրքերի ամէն մի մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի, 21 քանի որ մարգարէութիւնը ոչ թէ ըստ մարդկանց կամքի տրուեց երբեւէ, այլ Սուրբ Հոգուց մղուած է, որ խօսեցին Աստծու սուրբ մարդիկ:

ԸՆԴԴԷՄ ՍՈՒՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

2 *Եղան նաեւ սուտ մարգարէներ ժողովրդի մէջ, ինչպէս որ այժմ էլ ձեր մէջ կարող են լինել սուտ ուսուցիչներ, որոնք, սպրդեցնելով, կորստաբեր հերձուածներ են ներմուծելու եւ, ուրանալով Տիրոջը, որ իրենց գնեց, իրենց վրայ արագահաս կորուստ են բերելու: 2 Եւ շատեր պիտի գնան նրանց անառակութիւնների յետեւից. եւ այդ պատճառով ճշմարտութեան ճանապարհը պիտի անարգուի: 3 Եւ ընչաքաղցութեամբ, մտացածին խօսքերով ձեզ պիտի շահագործեն. բայց նրանց դատապարտութիւնը սկզբից յայտնի է, եւ նրանց կործանումը չպիտի ուշանայ:*

4 Քանզի Աստուած չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խաւարի կապանքներով գցեց տարտարոսը, որպէսզի նրանք պահուեն դատաստանի օրուայ համար: 5 Նա չխնայեց նաեւ հին աշխարհին, երբ ամբարիշտների աշխարհի վրայ ջրհեղեղը բերեց՝ փրկելով միայն ութ հոգու, այդ թւում նաեւ Նոյին՝ արդարութեան քարոզչին: 6 Նոյնպէս նա սոդոմացիների եւ գոմորացիների քաղաքները մոխրի վերածելով դատապարտեց՝ օրինակ ծառայեցնելով նրանց ապագայի ամբարիշտների համար: 7 Եւ նա փրկեց արդար Ղովտին, որ ձանձրացել էր նրանց անառակ, անկարգ ընթացքից 8 (որովհետեւ արդարը, բնակուելով նրանց մէջ, ականատես եւ ականջալուր էր լինում նրանց անօրէն ընթացքին՝ ամէն օր տանջելով իր արդար հոգին): 9 Տէրը գիտէ աստուածապաշտներին փրկել փորձութիւնից, իսկ անիրաւներին պահել դատաստանի օրուայ համար՝ տանջանքների մատնելու նրանց, 10 մանաւանդ մարմնի պիղծ ցանկութիւնների յետեւից գնացողներին, Աստծու իշխանութիւնն արհամարհողներին, ինքնահաւանների, յանդուգնների, որոնք չեն վախենում երկնային փառաւոր էակներին հայհոյելուց, 11 այն դէպքում, երբ հրեշտակները, որոնք զօրութեամբ եւ կարողութեամբ աւելի մեծ են իրենցից, նրանց դէմ հայհոյալից դատապարտութիւն չեն բերում Տիրոջ առաջ:

12 Բայց այս մարդիկ, անբան անասունների նման (որոնք ի բնէ որսի եւ մորթուելու համար են), հայհոյում են իրենց չիմացած բաների դէմ. եւ իրենց ապականութեան մէջ էլ պիտի կործանուեն տանջուելով՝ 13 որպէս վարձատրութիւն իրենց անիրաւութեան. սրանք օրը ցերեկով իրենց ցանկութեանը յագուրդ տալը հաճոյք են համարում. կեղտոտներ եւ արատաւորներ, որոնք հաճոյք են ստանում իրենց խաբեբայութիւնների մէջ՝ ձեզ խրախճանակից լինելով: 14 Աչքեր ունեն պոռնկութեամբ լեցուն աչքերի նման, անպակաս են մեղքերից, խաբում են տատանուողների հոգիները, ունեն ագահութեամբ բռնուած սիրտ. անէծքի՛ որդիներ: 15 Թողնելով ուղիղ ճանապարհը՝ մոլորուեցին, ընթանալով Բէորի որդի Բաղաամի ճանապարհով, որը անիրաւութեան վարձը սիրեց: 16 Եւ այդ այն Բաղաամի, որ իր անօրէնութեան համար յանդիմանութիւն ստացաւ, երբ անխօս էշը մարդկային լեզուով խօսելով՝ արգելք եղաւ մարգարէին, որ չկատարի այդ անօրէնութիւնը: 17 Սրանք ցամաքած աղբիւրներ են եւ մրրիկից քշուած մառախուղներ. խաւարի աղջամուղջները յաւիտեան նրա՛նց համար են պահուած. 18 քանզի մեծախօս եւ սնոտի բաներ բարբառելով՝ անառակութիւններով, մարմնի ցանկութիւններով խաբում են նրանց, որոնք ստուգապէս† փախել էին մոլորութեան մէջ թափառողներից: 19 Սրանց ազատութիւն են խոստանում, մինչ իրենք ծառայ են ապականութեանը, քանի որ մարդ ինչից որ յաղթուում է, նրան էլ ծառայ է. 20 որովհետեւ, եթէ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով աշխարհի պղծութիւններից փախչելուց յետոյ դարձեալ նոյն բաներով բռնուեն մնան, նրանց վախճանը կը լինի աւելի վատ, քան առաջին վիճակը. 21 քանի որ աւելի լաւ էր նրանց համար, եթէ բնա՛ւ ճանաչած չլինէին արդարութեան ճանապարհը, քան այն, որ ճանաչեցին եւ յետ կանգնեցին այն սուրբ

†Լաւագոյն յուն. բն. չունեն բարի գործերով բառերը:

†Յուն. լաւ բն. ստուգապէս բառի փոխարէն ունեն հազիւ:

պատուիրանից, որ աւանդուեց նրանց:
22 *Նրանց յարմար է գալիս այն իմաստուն, ճշմարիտ առածը, թէ՝ «Շունը վերստին է դառնում իր փսխածին» եւ թէ՝ «Լուացուած խոզը վերստին է թաւալւում տիղմի մէջ»:*

ՏԻՐՈՋ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ԹՈՒՂԹԸ

3 *Սիրելինե՛ր, գրում եմ ձեզ այս երկրորդ թուղթը, որով ձեր մաքուր մտքերն եմ արթնացնում յիշեցման համար.* 2 *յիշեցէ՛ք սուրբ մարգարէների կողմից նախապէս ասուած պատգամները, ինչպէս նաեւ ձեր առաքեալների կողմից ասուած Տիրոջ եւ Փրկչի պատուիրանները:* 3 *Բայց նախ այս բանն իմացէ՛ք, որ վերջին օրերին պիտի գան արհամարհողներ, ծաղրողներ, որոնք պիտի ընթանան ըստ իրենց ցանկութիւնների.* 4 *եւ պիտի ասեն. «Ո՞ւր է նրա գալստեան խոստումը, քանի որ նախահայրերի ննջելուց յետոյ ամէն ինչ այն նոյն ձեւով է մնում, ինչպէս էր արարչագործութեան սկզբից»:* 5 *Եւ այս բանը ուզողները մոռացութեան են տուել այն, որ ի սկզբանէ եղել է երկինքը, եւ երկիրը՝ ջրերից, եւ՝ ջրերը, որ մնում են հաստատ Աստծու խօսքով.* 6 *դրա համար էլ այն ժամանակուայ աշխարհը ապականուելով կործանուեց ջրհեղեղով:* 7 *Իսկ այժմ երկինք եւ երկիր պահուած են այդ նոյն խօսքով, վերապահուած են կրակին դատաստանի օրուայ եւ ամբարիշտ մարդկանց կործանման օրուայ համար:*

8 *Բայց այս եւս ձեզնից ծածկուած չլինի, սիրելինե՛ր, որ Տիրոջ համար մէկ օրը՝ ինչպէս հազար տարի է, եւ հազար տարին՝ ինչպէս մէկ օր:* 9 *Տէրը չի ուշացնի իր խոստումը, ինչպէս կարծում են ոմանք, թէ ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդէպ. քանզի չի ուզում, որ որեւէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամէնքը ապաշխարեն:* 10 *Բայց Տիրոջ օրը պիտի գայ ինչպէս մի գող, երբ երկինքը պիտի անցնի չքանայ շառաչիւնով, եւ տարերքը, հրով կիզուած, պիտի լուծուի, եւ երկիրն ու ինչ գործեր, որ կան նրա վրայ, յայտնի պիտի լինեն:*

ՆՈՐ ԵՐԿԻՆՔ, ՆՈՐ ԵՐԿԻՐ

11 *Եւ քանի որ այս ամէնն այսպէս պիտի լուծուի, ուրեմն ինչպիսի՛ մարդիկ պէտք է լինէք դուք. սուրբ վարմունքով եւ աստուածապաշտ ընթացքով՝* 12 *սպասելով եւ հասնել ջանալով Տիրոջ օրուայ գալստեան, երբ հրավառ երկինքը պիտի չքանայ, եւ տարերքը հրկիզուելով պիտի հալուի:* 13 *Բայց մենք, Աստծու խոստման համաձայն, աչքներս յառած սպասում ենք նոր երկնքի եւ նոր երկրի, որոնցում արդարութիւնն է բնակւում:*

ՅՈՐԴՈՐ ԵՒ ՓԱՌԱՒԱՆՈՒԹԻՒՆ

14 *Ուստի, սիրելինե՛ր, սպասելով այս բաներին, ջա՛նք թափեցէք, որ Նա գտնի ձեզ անբիծ եւ անարատ, խաղաղութեան մէջ:* 15 *Եւ Տիրոջ համբերատարութիւնը փրկութի՛ւն համարեցէք, ինչպէս որ մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ գրեց ձեզ, ըստ Աստծուց իրեն շնորհուած իմաստութեան,* 16 *եւ ինչպէս որ իր բոլոր թղթերում էլ խօսում է դրանց մասին. դրանց մէջ կան ինչ-ինչ դժուարիմաց բաներ, որ անուսներն ու տատանուողները ծուռ են մեկնում. նրանք այդպէս են մեկնում նաեւ բոլոր Գրուածքները՝ իրենց անձերի կորստեան համար:* 17 *Դուք ուրեմն, սիրելինե՛ր, իբրեւ նախապէս տեղեակ դարձած մարդիկ, զգուշացէ՛ք, որ անառակ մոլորութեամբ տարուած՝ չկորցնէք ձեր վստահութիւնը:* 18 *Աճեցէ՛ք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի շնորհով եւ գիտութեամբ: Նրան փա՛ռք թէ՛ այժմ եւ թէ՛ մինչեւ յաւիտենութեան օրը: Ամէն:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Աւանդութիւնը Յովհաննէս առաքեալին վերագրում է երեք թղթեր, թէեւ դրանց մէջ նրա անունը բնաւ յիշատակուած չէ: Այդ թղթերից առաջինը մեզ ոչ մի տեղեկութիւն չի տալիս նրա հեղինակի մասին եւ ոչ էլ այն մասին, թէ ում է ուղղուած այն: Այսուհանդերձ նրա մէջ առկայ որոշ երեւոյթներ թոյլ են տալիս պատկերացում ունենալ այն քրիստոնէական համայնքների կացութեան մասին, որոնց ուղղուած է այդ թուղթը: Ինչպէս առաջին դարի երկրորդ կէսի ուրիշ շատ համայնքներ, քրիստոնէական այդ համայնքները եւս ենթարկուել էին հոգեւոր կամ կրօնական մի շարք շարժումների ազդեցութեանը, որոնք շեղւում էին ճշմարիտ քրիստոնէական հաւատից: Ահա թէ ինչու թղթում հեղինակը հետապնդում է կրկնակի նպատակ. առաջին՝ քաջալերել իր թղթերցողներին, որ մնան Աստծու եւ նրա Որդի Յիսուս Քրիստոսի հետ իսկական հաղորդութեան մէջ, որը պէտք է դրսեւորուի միմեանց նկատմամբ եղբայրական սիրոյ յարաբերութիւններով, եւ երկրորդ՝ պայքարել միաժամանակ կեղծ վարդապետութեան դէմ, որը վտանգի է ենթարկում հաւատացեալների հաւատարմութիւնը Աւետարանին:

Հեղինակը հրաւիրում է ընթերցողներին ապրելու լոյսի մէջ, որովհետեւ Աստուած ինքը լոյս է: Դրա համար նրանք պէտք է գործադրեն սիրոյ պատուիրանը: Դրանից յետոյ նա յայտնում է, որ երեւան են եկել Քրիստոսի մեծ հակառակորդներ, ստախօս մարդիկ, որոնք ժխտում են, թէ Յիսուսը Քրիստոսն է: Ապա նա յիշեցնում է, թէ ինչն է յատկանշական Աստծու ճշմարիտ զաւակների համար. դա նրանց վարած արդար կեանքն է, նրանց սէրը միմեանց նկատմամբ, հաւատարմութիւնը Յիսուս Քրիստոսին: Յոյց տալուց յետոյ, թէ ինչպէս պէտք է տարբերել սխալը ճշմարտից, հեղինակը վերստին կանգ է առնում սիրոյ թեմայի վրայ՝ նշելով, որ Աստծուն պատկանել՝ նշանակում է սիրել, որովհետեւ Աստուած սէր է: Նա աւարտում է իր թուղթը՝ նկարագրելով յաղթական հաւատը եւ ամփոփելով թղթում շօշափուած գլխաւոր կէտերը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ 1, 2

ՆԱԽԱԲԱՆ

1 Խօսում ենք Նրա մասին, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ակնատես իսկ եղանք, որին նայեցինք, եւ որին մեր ձեռքերը շօշափեցին, այսինքն՝ կենաց Բանը: 2 Նա նոյն ինքը կեանք էր, որ յայտնուեց, մենք այն տեսանք, վկայում ենք եւ պատմում ենք ձեզ այն յաւիտենական կեանքի մասին, որ Հօր մօտ էր եւ յայտնուեց մեզ: 3 Ինչ որ տեսանք եւ լսեցինք, պատմում ենք ձեզ, որպէսզի դուք էլ հաղորդակից լինէք Նրան մեզ հետ, ինչպէս որ մենք հաղորդութիւն ունենք Հօր հետ եւ նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ: 4 Եւ այս բանը գրում ենք ձեզ, որպէսզի ձեր† ուրախութիւնը կատարեալ լինի:

ԱՍՏՈՒԱԾ ԼՈՅՍ Է. ՔԱՅԼԵՆՔ ԼՈՅՍԻ ՄԷՋ

5 Եւ այս է այն պատգամը, որը լսեցինք Նրանից եւ պատմում ենք ձեզ. Աստուած լոյս է, եւ նրա մէջ խաւար չկայ, բոլորովի՛ն չկայ: 6 Եթէ ասենք, թէ հաղորդութեան մէջ ենք նրա հետ, բայց քայլենք խաւարի մէջ, ստում ենք եւ ճշմարտութիւնը չենք կատարում: 7 Իսկ եթէ լոյսի մէջ ենք քայլում, ինչպէս որ ինքն է լոյսի մէջ, հաղորդութեան մէջ ենք լինում միմեանց հետ, եւ նրա Որդու՝ Յիսուսի արիւնը մաքրում է մեզ ամէն մեղքից:

8 Եթէ ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, եւ ճշմարտութիւն չկայ մեր մէջ: 9 Իսկ եթէ խոստովանենք մեր մեղքերը, հաւատարիմ է նա եւ արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու եւ մաքրելու համար մեզ ամէն անիրաւութիւնից:

10 Եթէ ասենք՝ «Չենք մեղանչել», ստում ենք հանում Նրան, եւ Նրա խօսքը մեր մէջ չէ:

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ԲԱՐԵԽՕՍՆ Է

2 Որդեակնե՛ր իմ, այս բանը գրում եմ ձեզ, որպէսզի չմեղանչէք. իսկ եթէ մէկը մեղանչի, Աստծու առաջ բարեխօս ունենք Յիսուս Քրիստոսին՝ Արդարին եւ Անարատին. 2 եւ նա՛ է քաւութիւնը մեր մեղքերի, եւ ոչ միայն մեր մեղքերի, այլեւ՝ ամբողջ աշխարհի:

3 Եթէ նրա պատուիրանները պահենք, դրանով իսկ գիտենք, թէ ճանաչեցինք նրան: 4 Ով ասում է, թէ՝ ճանաչեցի նրան, բայց նրա պատուիրանները չի պահում, սուտ է, եւ նրա մէջ ճշմարտութիւն չկայ: 5 Իսկ ով պահում է նրա խօսքը, Աստծու սէրը նրա մէջ ճշմարտապէս կատարեալ է. եւ սրանով ենք ճանաչում, որ Նրա մէջ ենք: 6 Ով ասում է, թէ ինքը Նրա մէջ է բնակւում, պարտաւոր է այնպէս ընթանալ, ինչպէս որ Նա էր ընթանում:

ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

7 Սիրելինե՛ր, ոչ թէ մի նոր պատուիրան եմ գրում ձեզ, այլ՝ հին պատուիրանը, որն ի սկզբանէ ունէիք: Եւ հին պատուիրանը այն խօսքն է, որը լսեցիք: 8 Այսուհանդերձ նոր պատուիրան եմ գրում ձեզ, որ ճշմարիտ է նրա մէջ եւ ձեր մէջ. քանի որ ահա խաւարն անցնում է, եւ ճշմարիտ լոյսն արդէն իսկ երեւում է: 9 Ով ասում է, թէ ինքը լոյսի մէջ է եւ ատում է իր եղբօրը, սուտ է եւ խաւարի մէջ է տակաւին: 10 Ով սիրում է իր եղբօրը, բնակւում է լոյսի մէջ, եւ նրա մէջ գայթակղութիւն չկայ: 11 Իսկ ով ատում է իր եղբօրը, խաւարի մէջ է, խաւարի մէջ է շրջում եւ չգիտէ, թէ ուր է գնում, որովհետեւ խաւարը կուրացրել է նրա աչքերը:

ՁՍԻՐԵԼ ԱՇԽԱՐՀԸ

12 Որդեակնե՛ր, գրում եմ ձեզ, որովհետեւ ձեր մեղքերը ներուած են ձեզ նրա անուան սիրուն: 13 Հայրե՛ր, գրում եմ ձեզ, որովհետեւ դուք ճանաչեցիք նրան, ով ի սկզբանէ կայ: Երիտասարդնե՛ր, գրում եմ ձեզ, որովհետեւ դուք յաղթեցիք չարին: 14 Պատանինե՛ր, գրեցի ձեզ, որովհետեւ դուք

†Լաւագոյն յուն. բն. ձեր բառի փոխարէն ունեն մեր:

ճանաչեցիք Հօրը: Հայրե՛ր, գրեցի ձեզ, որովհետեւ դուք ճանաչեցիք նրան, ով ի սկզբանէ կայ: Երիտասարդնե՛ր, գրեցի ձեզ, որովհետեւ դուք ուժեղ էք, եւ Աստծու խօսքը բնակւում է ձեր մէջ. եւ դուք յաղթեցիք չարին: 15 Մի՛ սիրէք աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մէջ կայ: 16 Եթէ մէկը սիրում է աշխարհը, Հօր սէրը նրա մէջ չէ, քանի որ այն ամէնը, ինչ աշխարհի մէջ կայ, մարմնի ցանկութիւն է, աչքերի ցանկութիւն եւ ա՛յս կեանքի ամբարտաւանութիւն, որ Հօրից չէ, այլ՝ այս աշխարհից: 17 Թէ՛ այս աշխարհն է անցնում, թէ՛ ցանկութիւնը: Իսկ ով կատարում է Աստծու կամքը, մնում է յաւիտեան:

ՆԵՌԸ՝ ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

18 Որդեակնե՛ր, վերջին ժամանակն է: Եւ ինչպէս լսել էք, Նեռը գալու է. բայց արդէն իսկ եկել են բազում նեռեր. դրանից էլ կարող ենք իմանալ, որ վերջին ժամանակն է: 19 Մե՛ր միջից ելան նրանք, բայց մեզնից չէին, որովհետեւ, եթէ մեզնից լինէին, ապա մեր մէջ էլ կը մնային: Բայց մեզնից ելան, որպէսզի յայտնի լինէր, թէ նրանք ամէնքը մեզնից չեն: 20 Իսկ դուք օծում ունէք Սրբից եւ ամէն բան գիտէք: 21 Գրեցի ձեզ ոչ թէ որովհետեւ ճշմարտութիւնը չգիտէք, այլ որովհետեւ գիտէք այն. գիտէք նաեւ այն, որ ամենայն ստախօսութիւն ճշմարտութիւնից չէ: 22 Իսկ ո՞վ է ստախօսը, եթէ ոչ նա, ով ուրանում է, թէ Յիսուսը Քրիստոսն է: Նա՛ է Նեռը, ով ուրանում է Հօրը եւ Որդուն: 23 Ամէն մարդ, որ ուրանում է Որդուն, իր մէջ չունի նաեւ Հօրը: Իսկ ով խոստովանում է Որդուն, նա իր մէջ ունի նաեւ Հօրը: 24 Ինչ որ դուք լսեցիք ի սկզբանէ, թող բնակուի ձեր մէջ. որովհետեւ, եթէ ձեր մէջ բնակուի այն, ինչ որ ի սկզբանէ լսեցիք, դո՛ւք եւս կը բնակուէք Որդու եւ Հօր մէջ: 25 Եւ այս է այն խոստումը, որը նա խոստացաւ մեզ, այն է՝ յաւիտենական կեանքը:

26 Այս բանը գրեցի ձեզ, որպէսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: 27 Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք նրանից, թող բնակուի ձեր մէջ. եւ կարիք չկայ, որ մէկը ձեզ ուսուցանի: Այլ եղէ՛ք այնպէս, ինչպէս որ նրա օծումն ուսուցանում է ձեզ ամէն ինչի մասին, որ ճշմարիտ է եւ ոչ ստուտ. եւ ինչպէս նա ուսուցանեց ձեզ, մնացէ՛ք նրա մէջ:

28 Իսկ այժմ, որդեակնե՛ր, մնացէ՛ք նրա մէջ, որպէսզի, երբ նա յայտնուի, վստահութիւն ունենանք եւ նրա գալստեան ժամանակ նրանից չամաչենք. 29 քանի որ դուք գիտէք, թէ նա արդար է, ապա իմացէ՛ք, որ ամէն ոք, որ արդարութիւն է անում, նրանից է ծնուած:

ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆԵՐԸ

3 Տեսէ՛ք ինչպիսի սէր շնորհեց մեզ Հայրը, որպէսզի մենք կոչուենք Աստծու որդիներ. աշխարհը մեզ չի ճանաչում նրա համար, որ նրան էլ չճանաչեց:

2 Սիրելինե՛ր, այժմ Աստծու որդիներ ենք. եւ դեռ յայտնի էլ չէ, թէ ինչ ենք լինելու: Գիտենք, որ, երբ նա յայտնուի, լինելու ենք նրա նման, քանի որ նրան տեսնելու ենք այնպէս, ինչպէս նա կայ: 3 Եւ ամէն ոք, որ այս յոյսն ունի իր մէջ†, մաքրում է ինքն իրեն, ինչպէս որ նա՛ է մաքուր: 4 Ամէն ոք, ով մեղք է գործում, նաեւ անօրէնութիւն է անում. եւ մեղքը ինքնին անօրէնութիւն է: 5 Եւ գիտենք, որ նա այն պատճառով յայտնուեց, որպէսզի վերացնի մեղքերը. բայց նրա մէջ մեղք չկայ: 6 Ամէն ոք, ով բնակւում է նրա մէջ, չի մեղանչում. եւ ամէն ոք, ով մեղանչում է, ո՛չ տեսել է նրան եւ ո՛չ էլ ճանաչել: 7 Որդեակնե՛ր, թող ոչ ոք ձեզ չխաբի. ով արդարութիւն է անում, արդար է, ինչպէս որ նա՛ է արդար: 8 Եւ ով մեղք է գործում, այդ՝ Սատանայից է, քանի որ Սատանան մեղանչող է ի սկզբանէ: Աստծու Որդին հէնց նրա համար յայտնուեց, որ քանդի Սատանայի գործերը: 9 Ամէն ոք, ով Աստծուց է ծնուած, մեղք չի գործում, որովհետեւ Նրա սերմը մնում է նրա մէջ. չի էլ կարող մեղանչել,

†Յունարէնն ունի՝ նրա վրայ:

որովհետեւ Աստծուց է ծնուած: 10 Սրանո՛վ են տարբերւում միմեանցից Աստծու որդիները եւ Սատանայի որդիները:
Ամէն ոք, ով արդարութիւն չի գործում, Աստծուց չէ. նոյնպէս նա՝ ով չի սիրում իր եղբօրը:

ՍԻՐԵԼ ՄԻՄԵԱՆՑ

11 Քանզի այս է այն պատուիրանը, որ լսեցիք ի սկզբանէ՝ որ սիրե՛նք միմեանց. 12 ոչ ինչպէս Կայէնը, որ չարից էր եւ սպանեց իր եղբօրը: Եւ ինչո՞ւ սպանեց նրան. որովհետեւ իր գործերը չար էին, իսկ եղբօր գործերը՝ բարի: 13 Եւ մի՛ էլ զարմացէք, եղբայրնե՛ր, որ աշխարհը ատում է ձեզ: 14 Մենք գիտենք, որ մահուանից դէպի կեանք անցանք, քանզի սիրում ենք մեր եղբայրներին: Իսկ ով չի սիրում եղբօրը, մնում է մահուան մէջ: 15 Ամէն ոք, ով ատում է եղբօրը, մարդասպան է. եւ գիտենք, որ ամէն մարդասպան իր մէջ յաւիտենական կեանք չունի: 16 Սէրը նրանո՛վ ճանաչեցինք, որ Յիսուս իր կեա՛նքը տուեց մեզ համար. մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կեանքը: 17 Ով այս աշխարհի բարիքներից ունենայ եւ տեսնի իր եղբօրը մի բանի կարօտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծու սէրը ինչպէ՞ս կարող է բնակուել նրա մէջ:

18 Որդեակնե՛ր, խօսքերով եւ լեզուո՛վ չսիրենք, այլ՝ գործով եւ ճշմարտութեամբ: 19 Եւ հէնց դրանո՛վ ճանաչած կը լինենք, որ ճշմարտութիւնից ենք, եւ Նրա առաջ կանգնելու վստահութիւն կ'ունենանք մեր սրտերը: 20 Եթէ մեր սրտերը դատապարտեն մեզ, մենք գիտենք, թէ Աստուած աւելի մեծ է, քան մեր սրտերը. եւ նա գիտէ ամէն բան: 21 Սիրելինե՛ր, եթէ մեր սրտերը մեզ չդատապարտեն, համարձակութիւն կ'ունենանք Աստծու առաջ. 22 եւ ինչ էլ որ հայցենք, կը ստանանք նրանից, որովհետեւ պահում ենք նրա պատուիրանները եւ կատարում նրան հաճելի բաները: 23 Եւ նրա պատուիրանը այս է. որ հաւատանք իր Որդու՝ Յիսուս Քրիստոսի անունը եւ սիրենք միմեանց, ինչպէս որ նա՛ պատուիրեց մեզ: 24 Եւ ով պահում է նրա պատուիրանները, բնակւում է Աստծու մէջ, եւ Աստուած՝ նրա մէջ: Եւ մեր մէջ Աստծու բնակուելը իմանում ենք Սուրբ Հոգու միջոցով, որը նա տուեց մեզ:

ՁՇՄԱՐԻՏ ԵՒ ՍՈՒՏ ՀՈԳԻՆԵՐ

4 Սիրելինե՛ր, մի՛ հաւատացէք ամէն մի հոգու, այլ փորձեցէ՛ք հոգիները, թէ արդեօք Աստծո՞ւց են, որովհետեւ բազում սուտ մարգարէներ են երեւան եկել աշխարհում: 2 Եւ մենք սրանո՛վ ենք ճանաչում Աստծու Հոգին. ամէն մի հոգի, որ դաւանում է Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց է: 3 Եւ ամէն մի հոգի, որ չի դաւանում Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց չէ†: Եւ այդ հոգին Նեռինն է, որի մասին լսել էք, թէ գալու է, եւ արդէն իսկ աշխարհում է: 4 Դուք Աստծուց էք, որդեակնե՛ր, եւ յաղթեցիք նրանց, որովհետեւ Հոգին, որ ձեր մէջ է, աւելի մեծ է, քան նա, որ կայ աշխարհի մէջ: 5 Նրանք աշխարհից են. դրա համար էլ աշխարհի բաների մասին են խօսում. եւ աշխարհը լսում է նրանց: 6 Մենք Աստծուց ենք. ով Աստծուն ճանաչում է, լսում է մեզ, իսկ ով Աստծուց չէ, չի լսում մեզ: Սրանից է, որ ճանաչում ենք ճշմարտութեան Հոգին եւ խաբէութեան հոգին:

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

7 Սիրելինե՛ր, սիրենք միմեանց, քանի որ սէրն Աստծուց է. եւ ամէն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնուած եւ ճանաչում է Աստծուն: 8 Իսկ նա, ով չի սիրում, չի ճանաչում Աստծուն, քանի որ Աստուած սէր է: 9 Եւ սրանո՛ւմ երեւաց Աստծու սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի նրանով կենդանի լինենք: 10 Սրանո՛ւմ է սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ նա՛ սիրեց մեզ եւ ուղարկեց իր Որդուն մեր մեղքերի քաւութեան համար: 11 Սիրելինե՛ր, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա մենք եւս պարտաւոր ենք սիրել միմեանց:

12 Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել: Եթէ միմեանց սիրենք, Աստուած բնակւում է մեր մէջ. եւ նրա սէրը մեր մէջ կատարեալ է: 13 Սրանո՛վ գիտենք, թէ մենք նրա մէջ ենք բնակուած, եւ նա էլ՝ մեր մէջ. այն, որ նա իր Հոգուց տուեց մեզ: 14 Եւ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն ուղարկեց իր Որդուն՝ աշխարհի Փրկիչ լինելու: 15 Նա, ով խոստովանի, թէ Յիսուսն է Աստծու Որդին, Աստուած բնակւում է նրա մէջ, եւ նա՝ Աստծու մէջ: 16 Եւ մենք հաւատացինք ու ճանաչեցինք Աստծու սէրը, որ նա ունի մեր հանդէպ: Աստուած սէր է. եւ ով սիրոյ մէջ է ապրում, բնակւում է Աստծու մէջ, եւ Աստուած բնակւում է նրա մէջ: 17 Աստծու հանդէպ եթէ սէրը կատարեալ է մեր մէջ, ուրեմն վստահութիւն կ'ունենանք դատաստանի օրը նրա դիմաց կանգնելու. որովհետեւ, ինչպէս որ նա է, այնպէս էլ մենք ենք այս աշխարհում: 18 Սիրոյ մէջ երկիւղ չկայ. եւ կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը, որովհետեւ երկիւղը տանջանքի ենթակայ է. եւ ով երկնչում է, կատարեալ չէ սիրոյ մէջ: 19 Սիրենք Աստծուն†, որովհետեւ առաջինը նա՛ սիրեց մեզ: 20 Եթէ մէկն ասի, թէ սիրում է Աստծուն, եւ ատի իր եղբօրը, սուտ է խօսում. ով չի սիրում իր եղբօրը, որին տեսնում է, ինչպէ՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել: 21 Եւ նրանից ունենք այս պատուիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պէտք է սիրի նաեւ իր եղբօրը:

ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՆԴԷՊ

5 Ամէն ոք, ով հաւատում է, թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնուած. եւ ամէն ոք, ով սիրում է ծնունդ տուողին, սիրում է նաեւ նրանից ծնուածին: 2 Սրանո՛վ ենք ճանաչում, թէ սիրում ենք Աստծու Որդուն‡, երբ սիրենք Աստծուն եւ կատարենք նրա պատուիրանները. 3 քանզի ա՛յս է Աստծու հանդէպ մեր սէրը. որ պահենք նրա պատուիրանները: 4 Եւ նրա պատուիրանները ծանր չեն, քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, յաղթում է աշխարհին: Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատը: 5 Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

6 Սա է, որ եկաւ ջրով, Հոգով§ եւ արեամբ՝ Յիսուս Քրիստոսը. ոչ միայն ջրով, այլեւ արեամբ եւ ջրով: 7 Եւ Հոգին է, որ վկայում է, որովհետեւ հէնց Հոգին է ճշմարտութիւնը: 8 Սրանք երեքը միասին են վկայում՝ Հոգին, ջուրը եւ արիւնը. եւ երեքը վկայութեան մէջ մէ՛կ են: 9 Եթէ ընդունում ենք մարդկանց վկայութիւնը, Աստծու վկայութիւնն, ինչ խօսք, աւելի մեծ է: Ա՛յս է Աստծու վկայութիւնը. այն, որ նա վկայեց իր Որդու համար:

10 Ով հաւատում է Աստծու Որդուն, նա իր մէ՛ջ իսկ ունի այս վկայութիւնը. ով չի հաւատում Աստծու Որդուն§, սուտ է հանում Աստծուն, քանի որ չի հաւատում ա՛յն վկայութեանը, որն Աստուած վկայեց իր Որդու համար: 11 Եւ ա՛յս իսկ է վկայութիւնը. այն, որ Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ՝ այն կեանքն է, որ նրա Որդու մէջ է: 12 Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաեւ կեանքը. եւ ով չի ընդունում Աստծու Որդուն, չի ընդունում նաեւ կեանքը:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

13 Այս բաները գրեցի ձեզ, որպէսզի գիտենք, թէ յաւիտենական կեանք

†Լաւագոյն յուն. բն. ունեն. եւ ամէն մի հոգի, որ չի խոստովանում Յիսուսին, Աստծուց չէ:

†Լաւագոյն յուն. բն. չունեն Աստծուն բառը:

†Յունարէնն ունի՝ Աստծու որդիներին:

‡Լաւագոյն յուն. բն. չունեն Հոգով բառը:

§Լաւագոյն յուն. բն. ունեն ով չի հաւատում Աստծուն ...:

ունէք, եւ թէ՝ հաւատում էք Աստծու Որդու անունը:
14 *Եւ ա՛յս է այն վստահութիւնը, որն ունենք մենք նրա հանդէպ. այն, որ ի՛նչ էլ խնդրենք ըստ նրա կամքի, նա մեզ կը լսի.* 15 *եւ քանի որ գիտենք, թէ նա լսում է մեր խնդրանքները, ապա գիտենք նաեւ, որ կը ստանանք այն խնդրանքները, որ հայցեցինք նրանից:*
16 *Եթէ մէկը տեսնի, որ իր եղբայրը գործել է մի մեղք, որ մահացու չէ, թող խնդրի, եւ Աստուած մահացու մեղք չգործողին կեանք կը շնորհի. մեղք կայ, որ մահացու է. դրա՛ մասին չեմ ասում, որ խնդրես:* 17 *Ամենայն անիրաւութիւն մեղք է. բայց մեղք կայ, որ մահացու է:*
18 *Գիտենք, որ, ով Աստծուց է ծնուած, չի մեղանչում, եւ ով Աստծուց է ծնուած, պահում է ինքն իրեն, եւ չարը նրան չի մօտենում:* 19 *Գիտենք, որ Աստծուց ենք, եւ ամբողջ աշխարհը չարի մէջ է:* 20 *Եւ գիտենք, որ Աստծու Որդին եկաւ եւ մեզ տուեց խելք, որպէսզի ճանաչենք նրան, ով Ճշմարիտն է. եւ մենք Ճշմարտի՝ նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք. որովհետեւ նա՛ է ճշմարիտ Աստուած եւ յաւիտենական կեանք:* 21 *Որդեակնե՛ր, հեռո՛ւ պահեցէք դուք ձեզ կռապաշտութիւնից:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Թղթի հեղինակը ինքն իրեն ներկայացնում է պարզապէս «Երէց» բառով: Բայց նրա արտայայտուելու եղանակը ենթադրել է տալիս, որ նա առանձնայատուկ հեղինակութիւն է վայելել այն մարդկանց մօտ, որոնց ուղղուած է այս թուղթը:Նա դիմում է «ընտրեալ Կիւրիային եւ նրա որդիներին», մի արտայայտութիւն, որ, անկասկած, վերաբերում է տեղական մի Եկեղեցու եւ նրա անդամներին:

Նա քաջալերում է իր ընթերցողներին, որ ապրեն ճշմարտութեան եւ սիրոյ մէջ: Նրանց զգուշացնում է այն մարդկանցից, որոնց տարածած գաղափարները համանման են այն գաղափարներին, որոնց դէմ պայքարել էր ինքը իր առաջին թղթով: Նա այս թուղթն աւարտում է՝ յայտնելով իր հաւանական այցելութիւնը եւ փոխանցելով մի քոյր Եկեղեցու ողջոյնները:

Ինչպէս Յովհաննէսի առաջին թուղթը, այս մէկը եւս հրաւէր է ուղղում իր ընթերցողներին, որ արթուն լինեն եւ յարատեւեն ճշմարիտ հաւատի մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 *Երէցիցս՝ ընտրեալ Տիրուհուն եւ*
նրա որդիներին, նրան, որին ես սիրում
եմ ճշմարտութեամբ. եւ ոչ թէ միայն
ես, այլ նաեւ բոլոր նրանք, որոնք
գիտակ են ճշմարտութեանը, 2 որով-
հետեւ այն ճշմարտութիւնը, որ հաս-
տատուած է մեր մէջ, ձեզ հետ էլ է. եւ
դուք յաւիտենապէս մեզ հետ էք:
3 *Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս*
Քրիստոսից՝ Հօր Որդուց, շնո՛րհ, ողոր-
մութի՛ւն, խաղաղութի՛ւն ձեզ՝ ճշմար-
տութեամբ եւ սիրով:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԷՐ

4 *Զափազանց ուրախ եղայ, որ*
գտայ քո որդիներից ոմանց, որոնք
ընթանում են ճշմարտութեամբ, ըստ
այն պատուիրանի, որն ստացանք Հօ-
րից: 5 *Եւ այժմ աղաչում եմ քեզ, ո՛վ*
Տիկին, որ սիրենք միմեանց. ոչ թէ մի
նոր պատուիրան եմ գրում քեզ, այլ
այն, ինչ որ ի սկզբանէ ունէինք: 6 *Եւ*
ա՛յս է սէրը. որ ընթանանք ըստ նրա
պատուիրանների: Եւ ա՛յս է պատուի-
րանը, որ ի սկզբանէ լսեցիք, որպէսզի
ըստ այնմ էլ ընթանաք:
7 *Բազում մոլորեցնողներ են երեւան*
եկել աշխարհում. ով որ չի խոստո-
վանում Յիսուս Քրիստոսին՝ մարմնով
եկած, նա մոլորեցնող է եւ Նեռ:
8 *Զգո՛յշ եղէք ինքներդ ձեր հան-*
դէպ, որպէսզի չկորցնէք ինչ որ վաս-
տակեցիք, այլ ստանաք բովանդակ
վարձը: 9 *Ամէն ոք, ով առաջ է անց-*
նում եւ չի մնում Քրիստոսի վարդա-
պետութեան մէջ, չի ճանաչում Աստ-
ծուն: Ով մնում է վարդապետութեան
մէջ, նա ընդունում է ե՛ւ Որդուն, ե՛ւ
Հօրը: 10 *Եթէ մէկը գայ ձեզ մօտ եւ այս*
վարդապետութիւնը չունենայ, նրան
տուն մի՛ ընդունէք եւ նրան մի՛
ողջունէք: 11 *Ով այդպիսի մէկին ասի՝*
ողջո՛յն, մասնակից կը լինի նրա չար
գործերին:

ՎԵՐՋԱԲԱՆ

12 *Շատ բան ունէի ձեզ գրելու, բայց*
չուզեցի գրել թղթով եւ թանաքով,
քանի որ յոյս ունեմ անձամբ գալ ձեզ
մօտ եւ դէմառդէմ խօսել, որպէսզի մեր
ուրախութիւնը կատարեալ լինի:
13 *Քեզ ողջունում են քո ընտրեալ*
քրոջ որդիները: Շնո՛րհ ընդ ձեզ†:

†Լաւագոյն յուն. բն. չունեն *Շնո՛րհ ընդ ձեզ* նախադասութիւնը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Այս թուղթը, որ գրուել է նոյն «Երէցի» կողմից, ուղղուած է ոմն Գայոսի: Մենք ոչինչ չգիտենք այս վերջինիս մասին, բացի նրանից, որ նա հաւատարիմ է եղել ճշմարտութեանը: Սրա վերաբերմունքը հակապատկերն է Դիոտրեփէսի վերաբերմունքի, որը համայնքի ազդեցիկ անդամներից մէկն էր, զրպարտել է «Երէցին» եւ թերացել հիւրընկալութեան պարտականութիւնների մէջ:

Հեղինակը գովում է Գայոսին նրա հաւատարմութեան եւ հաւատացեալներին նրա մատուցած ծառայութիւնների համար: Նա գանգատւում է Դիոտրեփէսի վարմունքից, ապա նշում մի ուրիշ քրիստոնեայի՝ Դեմետրիոսի բարի համբաւը եւ վերջում յայտնում իր այցելութեան մասին եւ փոխանցում բարեկամների ողջոյնները:

Թղթում արտայայտուած է այն միտքը, որ հիւրընկալութիւնը եղբայրներին վերապահուած ջերմ ընդունելութիւնը ճշմարտութեան նկատմամբ սիրոյ եւ հաւատարմութեան մի ձեւ է:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Երէցիցս՝ սիրելի Գայիոսին, որին ես
սիրում եմ ճշմարտութեամբ: 2 Սի-
րելի՛ս, աղօթում եմ քո բոլոր գործերի
յաջողութեան եւ քո առողջութեան
համար. այնպէս, ինչպէս որ քո հոգին
էլ յաջողութեան մէջ է:

ԳԱՅԻՈՍԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

3 Շատ ուրախացայ, երբ եղբայրները
եկան եւ վկայեցին քո ճշմարտութեան
մասին, այն, թէ ինչպէ՛ս ես դու
ընթանում ճշմարտութեամբ: 4 Ձունեմ
աւելի մեծ ուրախութիւն, քան այն,
երբ լսում եմ, թէ իմ որդիները
ճշմարտութեամբ են ընթանում: 5 Սի-
րելի՛ս, հաւատարմութեամբ ես գոր-
ծում. ինչ որ անում ես եղբայրների
համար, նոյնը արա՛ նաեւ օտարների
համար, 6 որոնք վկայեցին քո սիրոյ
մասին եկեղեցու առաջ: Նրանց Աստ-
ծուն հաճելի ճանապարհի վրայ դնե-
լով՝ բարի գործ արած կը լինես, 7 քանի
որ նրանք Քրիստոսի՛ անուան համար
ճանապարհ ելան եւ ոչ մի օգնութիւն
չստացան հեթանոսներից: 8 Ուրեմն՝
մենք պարտաւոր ենք ընդունել այդ-
պիսիներին, որպէսզի գործակից լինենք
ճշմարտութեանը:

ԴԻՈՏՐԵՓԷՍ ԵՒ ԴԵՄԵՏՐԻՈՍ

9 Եկեղեցուն գրել եմ. բայց Դիոտրե-
փէսը, որ իրեն միւսներից առաջ է
դցում, չի ընդունում մեզ: 10 Դրա
համար, եթէ գամ, պիտի յիշեցնեմ այն
գործերը, որ նա արել է: Չար խօս-
քերով, չատախօսելով տանջում է մեզ:
Եւ այսքանով չգոհանալով՝ ոչ միայն
ինքը չի ընդունում եղբայրներին,
այլեւ արգելք է հանդիսանում նրանց,
ովքեր ընդունում են. եւ այդպի-
սիներին եկեղեցուց դուրս էլ է հանում:
11 Սիրելի՛ս, մի՛ նմանուիր չարին, այլ՝
բարուն. ով բարին է գործում, Աստծուց
է. եւ ով չարիք է գործում, նա երբեք
Աստծուն չի տեսել:
12 Դեմետրիոսի մասին վկայում են
բոլորը, եկեղեցին եւ ինքը՝ ճշմար-
տութիւնը. վկայում ենք նաեւ մենք. եւ
դու գիտես, որ մեր վկայութիւնը
ճշմարիտ է:

ՎԵՐՋԱԲԱՆ

13 Շատ բան ունէի քեզ գրելու, բայց
չեմ ուզում գրել թղթով եւ թանաքով,
14 քանի որ յոյս ունեմ շուտով տեսնել
քեզ եւ դէմառդէմ խօսել: 15 Խաղա-
ղութի՛ւն քեզ: Քեզ ողջունում են
սիրելիները: Ողջունի՛ր մեր սիրելի-
ներին, իւրաքանչիւրին՝ առանձին-
առանձին:

ՅՈՒԴԱ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

Ներածութիւն

Յուդա առաքեալի թուղթը ուղղուած է ոչ թէ առանձին մի համայնքի, այլ քրիստոնեաներին ընդհանրապէս: Նրա պատգամը նման է Պետրոս առաքեալի երկրորդ թղթի պատգամին. երկուսն էլ պայքարում են այն մարդկանց դէմ, որոնք տարածում են կործանարար վարդապետութիւններ եւ աչքի են ընկնում իրենց անբարոյութեամբ:

Մի կարճ նախաբանից յետոյ հեղինակը զայրոյթով յարձակւում է կեղծ վարդապետութիւններ տարածողների դէմ, որոնք թափանցել էին Եկեղեցուց ներս, եւ յայտնում է, որ նրանք բոլորն էլ պիտի արժանանան երկնային խստագոյն դատաստանի: Միւս կողմից՝ նա յորդորում է հաւատացեալներին, որ հաստատ մնան իրենց հաւատի մէջ: Թուղթն աւարտւում է մի փառաբանութեամբ՝ ուղղուած «միակ Աստծուն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին»:

Եթէ այս թուղթը մի կողմից վեր է հանում ստի զօրութեան ահազդեցիկ բնոյթը, միւս կողմից, դրան հակառակ, ընդգծում է այն օգնութիւնն ու յոյսը, որ ունեն քրիստոնեաները ի Յիսուս Քրիստոս՝ Սուրբ Հոգու միջոցով:

ՅՈՒԴԱ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ՈՂՋՈՅՆ

1 Յուդան՝ ծառան Յիսուս Քրիստոսի եւ եղբայրը Յակոբոսի, հեթանոսներիդ†, որ սիրուած էք Հայր Աստծուց, պահուած եւ ընտրուած Յիսուս Քրիստոսի համար. 2 Թող ողորմութիւնը, խաղաղութիւնը եւ սէրը առատ լինեն ձեզ համար:

ՍՈՒՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

3 Սիրելինե՛ր, ամէն ջանք յանձն էի առնում գրելու ձեզ մեր հասարակաց փրկութեան մասին. հարկ համարեցի գրել ձեզ եւ աղաչել, որ պայքարէք հաւատի համար, այն հաւատի, որ մի անգամ ընդմիշտ աւանդուեց սրբերին. 4 քանի որ ձեր մէջ սողոսկել են ոմանք, որ վաղուց իսկ սահմանուած էին սոյն դատապարտութեան համար, ամբարիշտ մարդիկ, որ մեր Աստծու շնորհը վերածեցին անառակութեան եւ ուրացան մեր միակ Իշխանին եւ Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին:

5 Կ'ուզենայի ձեզ յիշեցնել, - թէեւ դուք այդ բոլորը գիտէք, - որ Աստուած նախ իր ժողովրդին փրկեց Եգիպտոսից. իսկ ապա կորստեան մատնեց անհաւատներին: 6 Եւ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ լքեցին իրենց բնակութեան տեղը, յաւիտենական կապանքներով խաւարի մէջ պահեց դատաստանի մեծ օրուայ համար, 7 ինչպէս Սոդոմն ու Գոմորը եւ նրանց շուրջը եղող քաղաքները, որոնք այդ նոյն ձեւով պոռնկացան՝ անբնական կրքերի յետեւից ընկնելով եւ յաւիտենական կրակի դատաստանն ընդունելու օրինակ դարձան բոլորին:

8 Նոյն ձեւով էլ, սրանք եւս, քնի մէջ զառանցելով, մարմին են պղծում, Աստծու իշխանութիւնն արհամարհում, երկնային փառաւոր էակներին հայհոյում, 9 այն դէպքում, երբ Միքայէլ հրեշտակապետը, բանսարկու Սատանայի հետ, Մովսէսի մարմնի մասին վիճելիս, չհամարձակուեց հայհոյալից խօսքերով դատապարտել նրան, այլ ասաց. «Թող Տէրը քեզ սաստի»: 10 Իսկ սրանք հայհոյում են այն բանի դէմ, որ չգիտեն. եւ ինչ բաներ, որ բնազդով գիտեն, ինչպէս անբան անասունը, նրանցով էլ ապականւում են:

11 Վա՜յ նրանց, որոնք Կայէնի ճանապարհով ընթացան եւ ըստ Բաղամի մոլորութեան՝ սայթաքեցին վարձի յետեւից ընկնելով եւ կորան Կորխի պէս իրենց ըմբոստութեան պատճառով: 12 Նրանք ատելի բանսարկուներ են, որոնք ընթանում են իրենց ցանկութիւնների յետեւից՝ իրենց սէրերով եւ խարդախութեամբ, մասնակից են լինում սիրոյ ճաշին՝ անպատկառօրէն իրենք իրենց պարարտացնելու համար. սրանք հողմակոծ անջուր ամպեր են, պտղակորոյս ծառեր, անպտուղ, կրկնակի մեռած, արմատախիլ եղած. 13 ծովի կատաղի ալիքներ, որ միշտ փրփրում թափում են իրենց սեփական ամօթը. մոլոր աստղեր, որոնց համար է պահուած յաւիտենական խաւարի վիհը:

14 Նրանց մասին մարգարէացել է նաեւ Ենոքը՝ եօթներորդը Ադամից սկսած, եւ ասել. «Ահա՛ւասիկ եկաւ Տէրը բիւրաւոր սուրբ հրեշտակներով՝ 15 դատաստան տեսնելու բոլորի համար եւ յանդիմանելու բոլոր ամբարիշտներին իրենց այն գործերի համար, որ ամբարշտութեամբ գործեցին, եւ այն բոլոր խիստ խօսքերի համար, որ նրա դէմ ասացին մեղաւորները եւ ամբարիշտները»: 16 Սրանք տրտնջացողներ են եւ բանսարկուներ, որոնք հետամուտ են իրենց սեփական ցանկութիւններին. նրանց բերանները ամբարտաւան խօսքեր են բարբառում, իսկ իրենք երեսպաշտութիւն են անում շահի համար:

17 Բայց դուք, սիրելինե՛ր, յիշեցէ՛ք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալների կողմից նախապէս ասուած խօսքերը: 18 Նրանք ձեզ ասում էին, թէ՝ «Վերջին ժամանակներում պիտի լինեն ծաղրող մարդիկ, որոնք պիտի տարուեն իրենց ամբարիշտ ցանկութիւններով»: 19 Սրանք նշաւակելի†, մարմնասէր մարդիկ են, որ չունեն Հոգին:

†Յունարէնը չունի հեթանոսներիդ բառը:

†Յունարէնն ունի՝ բաժանող:

20 Իսկ մենք, սիրելինե՛ր, մեր անձերը կառուցենք հաւատի սրբութեամբ, աղօթենք Սուրբ Հոգով, 21 պահենք մենք մեզ Աստծու սիրով՝ սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը յաւիտենական կեանքի համար: 22 Կշտամբեցէ՛ք նրանց, որ դատապարտուած են†. 23 փրկեցէ՛ք նրանց՝ խլելով կրակից: Իսկ ուրիշներին ողորմեցէ՛ք երկիւղով՝ դատապարտելով նոյնիսկ այն պատմուճանը, որ աղտոտուած է նրանց մարմնից:

ՓԱՌԱՔԱՆՈՒԹԻՒՆ

24 Արդ, ով կարո՛ղ է պահել ձեզ անարատ ու անբիծ եւ կանգնեցնել ձեզ իր փառքի առաջ անխառն ցնծութեամբ, 25 նրան՝ միա՛կ Աստծուն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը, փա՛ռք, մեծութի՛ւն, զօրութի՛ւն եւ իշխանութի՛ւն բոլոր ժամանակներից առաջ, ե՛ւ այժմ, ե՛ւ բոլոր ժամանակներում: Ամէն:

†Յունարէնն ունի՝ ողորմեցէ՛ք երկմիտներին:

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Ներածութիւն

Յովհաննէս առաքեալը՝ Աստուածաշնչի վերջին գրքի հեղինակը, այստեղ ներկայացնում է մի շարք եղելութիւններ, որոնք յայտնուել են իրեն Յիսուս Քրիստոսի միջոցով: Նա պատմում է, թէ ինչ է տեսել ինքը, երբ «Հոգին եղել է իր մէջ»: Իր այս գիրքը գրելիս նա աքսորուած է եղել Փոքր Ասիայի արեւելեան կողմում գտնուող Պատմոս փոքրիկ կղզում: Նա այնտեղ աքսորուել է այն պատճառով, որ Աւետարանն է քարոզել այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հռոմի կայսրը հալածելիս է եղել քրիստոնեաներին: Գիրքը գրուել է Փոքր Ասիայի եօթը Եկեղեցիների համար, որոնք հաստատուած էին այն շրջանում, ուր գտնւում է այժմեան Զմիւռնիա նաւահանգիստը:

Քրիստոնեաները հալածւում էին այն պատճառով, որ ճանաչում էին միայն մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսին: Ահա այս տագնապալի ժամանակաշրջանում է, որ Յովհաննէսը նրանց համար գրում է այս գիրքը, որպէսզի ամրացնի նրանց մէջ հաւատը եւ յոյսը: Գիրքը բաղկացած է մեծ մասամբ տեսիլքներից եւ յայտնութիւններից, որոնք արտայայտուած են խորհրդանշական եւ պատկերաւոր լեզուով, որը Հին Կտակարանին վարժուած հաւատացեալները կարող էին աւելի հեշտութեամբ հասկանալ, մինչ ուրիշների համար այն կը մնար խորհրդաւոր մի բան: Յովհաննէսի նկարագրած տեսիլքները այլազան են, բոլորն էլ պտտւում են միեւնոյն թեմայի շուրջը: Նրանց մանրամասնութիւնների մեկնութիւնները տարբերւում են իրարից ըստ մեկնիչների, սակայն գրքի հիմնական հաստատումը յստակ է. ի հակադրութիւն չարի ուժերի ժամանակաւոր յաղթանակի, ամբողջական եւ վերջնական յաղթանակը, Աստծու համար եւ իւրայինների համար, տանելու է Յիսուս Քրիստոս՝ մեր միակ Տէրը եւ Փրկիչը:

Գրքի սկզբում Յովհաննէսն իրեն ներկայացնում է որպէս յարուցեալ Քրիստոսի պատգամաբերը:

Իր պատգամի առաջին մասում նա յիշատակում է, թէ ինչպիսի հանգամանքներում է տեղի ունեցել իր առաջին տեսիլքը, որի ընթացքում Յիսուս նրան յանձնարարում է նամակներ գրել Փոքր Ասիայի եօթը Եկեղեցիներին: Այնուհետեւ Յովհաննէսն իրեն տեսնում է երկինք փոխադրուած, որտեղ նրա աչքին երեւում են յաջորդական տեսիլքներ. երկնային արքունիքը եւ արքունական անձնակազմը, որ երկրպագում էր Աստծուն եւ Յիսուս Քրիստոսին. գիրքը եւ նրա եօթը կնիքները. եօթը փողերը. վիշապը եւ երկու գազանները. գառը եւ 144.000 փրկեալները. դատաստանի ժամը ազդարարող հրեշտակները. Աստծու ցասման եօթը սկաւառակները. Բաբելոնի անկումը, գազանի, կեղծ մարգարէի եւ սատանայի պարտութիւնը. նոր երկինքը, նոր երկիրը եւ նոր Երուսաղէմը: Գիրքն աւարտւում է հանդիսաւոր մի ազդարարութեամբ եւ յարուցեալ Քրիստոսի հետեւեալ խոստումով. «Գալիս եմ շուտով»:

Այսօրուայ ընթերցողները աւելի լաւ կը հասկանան այս գրքի բովանդակութիւնը, եթէ չփորձուեն նրա մէջ փնտռել չարագուշակ մի ապագայի մանրամասնութիւնները: Հեղինակի մտադրութիւնը հաւատացեալներին վախեցնել չէ բնաւ, այլ նրանց քաջութիւն ներշնչել դժուարին ժամանակներում: Յայտնութեան գրքի տեսիլքները սահմանուած են հաւատացեալներին ըմբռնել տալու Քրիստոսի գործի եւ նրա յարութեան բոլոր հետեւանքները՝ նրան հետեւող մարդկանց ներկայի եւ ապագայի համար:

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ

1 *Յայտնութիւն Յիսուս Քրիստոսի, որի միջոցով Աստուած ցոյց տուեց իր ծառաներին, ինչ որ լինելու է շուտով. եւ իմացրեց այն՝ իր հրեշտակի միջոցով ուղարկելով իր ծառայ Յովհաննէսին, 2 որը վկայեց Աստծու խօսքը եւ Յիսուս Քրիստոսի վկայութիւնը. ինչ որ տեսաւ, ինչ որ կար եւ ինչ որ լինելու էր այնուհետեւ: 3 Երանի՛ նրանց, որ կարդում են այս մարգարէութեան խօսքերը եւ երանի՛ նրան, ով լսում եւ պահում է այն, ինչ որ գրուած է նրա մէջ. որովհետեւ մօտ է ժամանակը:*

ՈՂՋՈՅՆ ԱՍԻԱՅԻ ԵՕԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ

4 Յովհաննէսից՝ Ասիայում գտնուող եօթը եկեղեցիներին: Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն նրանից, որ է, որ էր, եւ որը գալու է. նաեւ՝ Հոգու եօթը զօրութիւններից†*, Հոգու, որ նրա աթոռի առաջ է. 5 եւ Յիսուս Քրիստոսից՝ հաւատարիմ վկայից, որ անդրանիկն է մեռելների միջից եւ իշխանը երկրի թագաւորների. նա, որ սիրեց մեզ եւ արձակեց մեր մեղքերի կապանքները իր արեամբ 6 եւ մեզ թագաւորներ ու քահանաներ դարձրեց Աստծու եւ իր Հօր համար. նրան փա՛ռք եւ զօրութի՛ւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

7 Ահա՛ւասիկ նա, որ գալու է ամպերի հետ, եւ նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը, նաեւ նրանք, որ խոցեցին նրան. եւ երկրի բոլոր ազգերը պիտի ողբան նրա վրայ: Այո՛, Ամէն: 8 «Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան», – ասում է Տէր Աստուածը, – նա, որ է, որ էր եւ որ գալու է. Ամենակալը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵՍԻԼՔԸ

9 Ես՝ Յովհաննէսը՝ ձեր եղբայրը եւ Յիսուս Քրիստոսի միջոցով ձեր վիճակակիցը նեղութեան, թագաւորութեան եւ համբերութեան, եղայ այն կղզում, որ կոչւում է Պատմոս՝ Աստծու խօսքի եւ Յիսուս Քրիստոսի վկայութեան համար: 10 Կիրակի օրը Հոգին եկաւ ինձ վրայ, եւ իմ յետեւից լսեցի փողի ձայնի նման մի բարձր ձայն, որ ասում էր ինձ. «Ես եմ Ալֆան եւ Օմեղան, Առաջինը եւ Վերջինը. 11 ինչ որ տեսնում ես, գրի՛ր գրքում եւ տո՛ւր, որ տանեն եօթը եկեղեցիներին, որ գտնւում են Եփեսոսում, Զմիւռնիայում, Պերգամոնում, Թիւատիրում, Սարդիկէում, Փիղադեղփիայում եւ Լաւոդիկիայում»: 12 Դարձայ այդ ձայնի կողմը՝ տեսնելու համար, թէ ո՞վ է ինձ հետ խօսողը: Եւ իմ դառնալու ժամանակ տեսայ եօթը ոսկէ ճրագակալներ. 13 եւ եօթը ճրագակալների մէջտեղում՝ մէկին, նման մարդու Որդուն՝ մինչեւ ոտքերը հասնող երկար պատմուճան հագած եւ կրծքին ոսկէ գօտի կապած. 14 եւ նրա գլուխն ու մազերն էին ինչպէս սպիտակ բուրդ եւ ինչպէս ձիւն. եւ նրա աչքերը՝ ինչպէս կրակի բոց. 15 եւ նրա ոտքերը՝ նման հնոցի մէջ ծխացող հրաշէկ պղնձի. եւ նրա ձայնը՝ ինչպէս առատահոս ջրերի ձայն: 16 Եւ իր աջ ձեռքում ունէր եօթը աստղեր. նրա բերանից ելնում էր սրած երկսայրի սուր, եւ նրա երեսը փայլում էր ինչպէս ճառագայթող արեգակը:

17 Եւ երբ տեսայ նրան, ընկայ նրա ոտքերին ինչպէս մեռել. եւ իր աջը դրեց իմ վրայ ու ասաց ինձ. «Մի՛ վախեցիր, ես եմ Սկիզբը եւ Վախճանը, 18 ես եմ կեանքը, ես եմ, որ մեռայ. եւ ահա՛ւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից»: Ամէն: «Եւ ունեմ մահուան ու դժոխքի փականքները: 19 Գրի՛ր, ինչ որ դու տեսնում ես, ինչ որ կայ եւ ինչ որ այսուհետեւ սահմանուած է, որ լինի: 20 Բացատրեմ խորհուրդը այն եօթը աստղերի, որ դու տեսար իմ աջ ձեռքին, ինչպէս եւ եօթը ոսկէ ճրագակալները. եօթը աստղերը եօթը եկեղեցիների հրեշտակներն են, եւ եօթը ճրագակալները եօթը եկեղեցիներն են»:

ՊԱՏԳԱՄ ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

2 *«Եփեսոսի եկեղեցու հրեշտակին գրի՛ր. «Այսպէս է ասում նա, որ եօթը*

†Յունարէնում պակասում է զօրութիւններ բառը:

աստղեր ունի իր աջ ձեռքում եւ շրջում
է եօթը ոսկէ աշտանակների միջեւ:
2 Գիտեմ քո գործերը, քո աշխա-
տանքները, քո համբերութիւնը եւ որ
չես կարող տանել չարերին. փորձեցիր
նրանց, որ իրենք իրենց մասին ասում
են, թէ առաքեալներ են, բայց չեն. եւ
գտար, որ նրանք սուտ են խօսում: 3 Եւ
համբերեցիր ու վշտացար իմ անուան
համար եւ տանջուեցիր†: 4 Բայց քո
դէմ ասում եմ՝ թողեցիր քո առաջին
սէրը: 5 Ցիշի՛ր այժմ որտեղի՛ց որ
ընկար, ապաշխարի՛ր եւ քո նախկին
գործերն արա՛, ապա թէ ոչ ես իսկոյն
կը գամ եւ կը շարժեմ քո աշտա-
նակներն իրենց տեղերից, եթէ չա-
պաշխարես: 6 Արդ, այս գործերն արա՛,
որպէսզի ատես Նիկողայոսի գործերը,
որին ատում եմ ես: 7 Ով ականջ ունի
լսելու, թող լսի, ինչ որ Հոգին ասում է
եկեղեցիներին. ով յաղթի, ես նրան
թոյլ կը տամ ուտելու կեանքի ծառից,
որ գտնւում է Աստծու դրախտի մէջ»:

ՊԱՏԳԱՄ ՋՄԻՒՌՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

8 «Գրի՛ր նաեւ Զմիւռնիայի եկեղե-
ցու հրեշտակին. «Այսպէս է ասում
Անսկիզբը եւ Անվախճանը‡, որ մեռաւ
եւ կենդանացաւ. 9 տեսայ քո գործերը,
նեղութիւնը եւ աղքատութիւնը (իսկ քո
աղքատութիւնը հարստութիւն պիտի
դառնայ), նաեւ հայհոյութիւնը նրանց,
որ իրենք իրենց մասին ասում էին, թէ
հրեաներ են, բայց այլ բան չէին, քան
Սատանայի ժողովուրդ: 10 Մի՛ երկնչիր
այն բանի համար, որ պիտի չարչա-
րուես. ահա բանտարկուն պատրաստ է
ձեզնից մի քանիսին բանտ նետելու,
որպէսզի փորձուէք եւ տասը օր նեղու-
թիւն կրէք. եղի՛ր հաւատարիմ մինչեւ
մահ, եւ ես քեզ կեանքի պսակը պիտի
տամ: 11 Ով ականջ ունի լսելու, թող
լսի, ինչ որ Սուրբը հոգին ասում է
եկեղեցիներին. ով յաղթի, չպիտի
վնասուի երկրորդ մահից»:

†Յունարէնը տանջուեցիր բառի փոխարէն
ունի թոյլացար:

‡Յունարէնն ունի՝ Առաջինը և Վերջինը:

ՊԱՏԳԱՄ ՊԵՐԳԱՄՈՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

12 «Գրի՛ր նաեւ Պերգամոնի եկեղե-
ցու հրեշտակին. «Այսպէս է ասում նա,
ով սրած երկսայրի սուրն ունի. 13 տե-
սայ քո գործերը եւ գիտեմ, որ բնակ-
ւում ես այնտեղ, ուր Սատանայի
աթոռն է. բայց պահում ես իմ անունը.
նաեւ չուրացար իմ հաւատը այն օրը,
երբ Անտիպաս անունով իմ վկան
հաւատարիմ եղաւ ինձ. եւ որովհետեւ
վկայ էր իմ հաւատարիմը, սպանուեց
ձեր մէջ, այնտեղ, ուր Սատանան է
բնակւում: 14 Բայց քո դէմ մի փոքր
բան ունեմ ասելու. այն, որ քեզ մօտ
կայ վարդապետութիւնը Բաղաամի,
այն մարդու, որ Բաղակին սովորեցրեց
գայթակղութիւն դնել իսրայէլացիների
առաջ, որպէսզի նրանք ուտեն
կուռքերին զոհուած միս եւ պոռնկա-
նան: 15 Նոյնպէս եւ դու ունես Նիկո-
ղայոսեանների վարդապետութիւնը, որ
ես ատում եմ: 16 Արդ, ապաշխարի՛ր,
ապա թէ ոչ իսկոյն կը գամ եւ կը
մարտնչեմ նրանց դէմ իմ բերանի
սրով: 17 Ով ականջ ունի լսելու, թող
լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղե-
ցիներին. ով յաղթի, նրան թոյլ կը
տամ, որ ուտի թաքցուած մանանայից,
եւ կը տամ նրան սրբութեան գիրքը† ու
գրուած մի նոր անուն, որ ոչ ոք չգիտի,
բացի նրանից, ով այն ընդունում է»:

ՊԱՏԳԱՄ ԹԻՒԱՏԻՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

18 «Գրի՛ր նաեւ Թիւատիրի եկեղեցու
հրեշտակին. «Այսպէս է ասում Աստծու
Որդին, որի աչքերը նման են կրակի
բոցի, եւ նրա ոտքերը՝ շիկացած պղնձի.
19 տեսայ քո գործերը, սէրը, հաւատը
եւ քո ծառայութիւնը համբերութեամբ,
քանի որ քո վերջին գործերն աւելի
շատ են, քան առաջինները: 20 Բայց
շատ բան ունեմ ասելու քո դէմ. այն,
որ դու հանդուրժեցիր Յեզաբէլին՝ այդ
կնոջը, որ ինքն իրեն մարգարէ է
անուանում եւ մոլորութիւն ուսուցա-
նում իմ ծառաներին, որ պոռնկանան
եւ ուտեն կուռքերին զոհուածի միս:
21 Եւ նրանց ժամանակ տուի ապաշ-

†Յունարէնն ունի՝ սպիտակ խիճ:

խարելու իրենց պոռնկութեան համար,
բայց չապաշխարեցին: 22 Ահա՛ասիկ,
ես հնո՛ցն† եմ գցում նրան, իսկ նրա
գործակիցներին, որոնց հետ նա
շնացաւ՝ մեծամեծ նեղութիւնների մէջ,
եթէ չապաշխարեն իրենց գործերի‡
համար: 23 Եւ պիտի կոտորեմ նրանց
որդիներին, եւ բոլոր եկեղեցիները
պիտի իմանան, որ ե՛ս եմ, որ զննում
եմ երիկամներն ու սրտերը եւ հա-
տուցելու եմ ձեզ՝ իւրաքանչիւրիդ ըստ
իր գործերի§: 24 Բայց ասում եմ ձեզ,
դուք, որ Թիւատիրում էք եւ չէք
պահում այս վարդապետութիւնը,
դուք, որ չիմացաք, – ինչպէս ասում են,
– Սատանայի ծածուկ մտքերը. ձեր
վրայ ուրիշ ծանրութիւն չպիտի դնեմ,
25 այլ, ինչ որ ունէք, պահեցէ՛ք, մինչեւ
որ ես գամ: 26 Եւ ով յաղթի ու իմ
գործերը պահի մինչեւ վերջ, նրան
իշխանութիւն պիտի տամ ազգերի
վրայ. 27 եւ նա նրանց պիտի հովուի
երկաթէ գաւազանով ու նրանց պիտի
փշրի ինչպէս բրուտի անօթ: 28 Նոյն-
պէս եւ ե՛ս ստացայ իշխանութիւնը իմ
Հօրից: Եւ նրանց պիտի տամ առա-
ւօտեան աստղը: 29 Ով ականջ ունի,
թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկե-
ղեցիներին»:

ՊԱՏԳԱՄ ՍԱՐԴԻԿԷԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

3 «Գրի՛ր նաեւ Սարդիկէի եկեղեցու
հրեշտակին. «Այսպէս է ասում նա, ով
ունի Աստծու եօթը Հոգիները եւ եօթը
աստղերը. տեսայ քո գործերը, դու, որ
կենդանի եղողի անուն ունես, բայց
մեռած ես: 2 Արթո՛ւն եղիր եւ զօրացի՛ր
այսուհետեւ, քանի որ մօտ ես մեռ-
նելու*. քանզի քո գործերը Աստծու
առաջ կատարեալ չգտայ: 3 Արդ, յի-
շի՛ր, թէ ինչպէ՛ս լսեցիր խօսքը. եւ
պահի՛ր այն ու ապաշխարի՛ր. իսկ եթէ
չարթնանաս, կը գամ ինչպէս գող, եւ
իմ գալուստը քեզ մօտ ոչ ոք չի
իմանայ: 4 Սակայն Սարդիկէում մի
քանի հոգի ունես, որոնք չկեղտոտեցին
իրենց զգեստները եւ շրջում են
սպիտակ զգեստների մէջ, որոնց
արժանի եղան: 5 Ով յաղթի, այսպէս
սպիտակ կը հագնի, եւ նրա անունը չի
ջնջուի կեանքի գրքից. եւ նրա անունը
պիտի խոստովանեմ իմ Հօր առաջ եւ
նրա հրեշտակների առաջ: 6 Ով ականջ
ունի, թող լսի, ինչ որ Հոգին ասում է
եկեղեցիներին»:

ՊԱՏԳԱՄ ՓԻՂԱԴԵԼՓԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

7 «Գրի՛ր նաեւ Փիղադեղփիայի
եկեղեցու հրեշտակին. «Այսպէս է
ասում Սուրբը, Ճշմարիտը, որ ունի
Դաւթի բանալին. բաց է անում, եւ
չկայ մէկը, որ փակի. եւ փակում է, ու
չկայ մէկը, որ բաց անի. 8 տեսայ քո
գործերը. ահա քո առաջ դրի բաց
դուռը, որը ոչ ոք չի կարող փակել,
քանի որ, թէեւ քիչ զօրութիւն ունես,
բայց պահեցիր իմ խօսքերը եւ չու-
րացար իմ անունը: 9 Ահա՛ասիկ ես
յանձնում եմ քեզ Սատանայի ժողովից
եղողներին. նրանք իրենց մասին
ասում են, թէ հրեաներ են, բայց չեն.
եւ ստում են. պիտի այնպէս անեմ
նրանց, որ գան եւ երկրպագեն քո
ոտքերի առաջ ու իմանան, որ ես
սիրեցի քեզ: 10 Քանի որ պահեցիր իմ
համբերութեան խօսքը, ես էլ քե՛զ
պիտի պահեմ քո փորձութեան ժամին,
որ պիտի գայ ամբողջ տիեզերքի վրայ՝
փորձութեան ենթարկելու երկրի երե-
սին բոլոր ապրողներին: 11 Ահա շու-
տով գալիս եմ. պահի՛ր ինչ որ ունես,
որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը: 12 Ով
յաղթի, նրան իմ Աստծու տաճարին
սիւն պիտի դարձնեմ. եւ նա այլեւս
այնտեղից դուրս չի գալու. եւ նրա
վրայ պիտի գրեմ իմ Աստծու անունը
եւ իմ Աստծու քաղաքի անունը, Նոր
Երուսաղէմի, որ իջնելու է երկնքից, իմ
Աստծուց, եւ նրա† անունը նոր է: 13 Ով
ականջ ունի, թող լսի, ինչ որ Հոգին
ասում է եկեղեցիներին»:

†Յունարէնը հնոց բառի փոխարէն ունի հիւանդութեան մահին:

‡Լաւագոյն յուն. բն. իրենց բառի փոխարէն ունեն նրա:

§Լաւագոյն յուն. բն. ունեն՝ ... իւրաքանչիւրիդ ըստ ձեր գործերի:

*Յունարէնն ունի՝ հաստատի՛ր մնացածները, որոնք մեռնելու վրայ են:

†Յունարէնը նրա բառի փոխարէն ունի իմ:

ՊԱՏԳԱՄ ԼԱՒՈԴԻԿԷԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

14 «Գրի՛ր նաեւ Լաւոդիկէի եկեղեցու հրեշտակին. «Այսպէս է ասում Ամէնը՝ հաւատարիմ եւ ճշմարիտ վկան՝ Աստծու արարածների Սկիզբը. 15 գիտեմ քո գործերը, դու, որ ո՛չ սառն ես եւ ո՛չ տաք. երանի դու սառն լինէիր եւ կամ տաք. 6 իսկ դու գաղջ ես՝ ո՛չ տաք, ո՛չ էլ սառն. հիմա պիտի փսխեմ քեզ իմ բերանից, 17 քանի որ ասում ես. «Հպարտ եմ եւ առաւել հարստացայ ու ոչ մի բանի կարօտ չեմ». բայց չգիտես, թէ ողորմելի ես դու, թշուառ եւ աղքատ, մերկ եւ կոյր: 18 Արդ, մի խորհուրդ տամ քեզ. ա՛ռ, գնի՛ր ինձնից կրակի բովով անցած ոսկի, որ հարստանաս. գնի՛ր սպիտակ զգեստներ, որ հագնես, որպէսզի քո մերկութեան անվայելչութիւնը չերեւայ, եւ քո աչքերին դեղ դի՛ր, որ տեսնես: 19 Ում սիրում եմ ես, նրան յանդիմանում եմ եւ խրատում: Նախանձախնդի՛ր եղիր ուրեմն եւ ապաշխարի՛ր: 20 Ահա՛ւասիկ ես դռան առաջ եմ եւ բախում եմ. եթէ մէկը ականջ դնի իմ ձայնին եւ բաց անի դուռը, կը մտնեմ նրա մօտ եւ կ՚ընթրեմ նրա հետ, եւ նա՝ ինձ հետ: 21 Ով յաղթի, նրան թոյլ կը տամ նստելու ինձ հետ իմ աթոռին, ինչպէս որ ես յաղթեցի եւ նստեցի իմ Հօր աթոռին: 22 Ով ականջ ունի, թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին»:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ

4 Եւ սրանից յետոյ տեսայ, որ ահա երկնքի դռները բացուած էին. եւ առաջին փողի ձայնը, որ լսեցի, խօսում էր ինձ հետ ու ասում. «Ելի՛ր այստեղ, եւ քեզ ցոյց պիտի տամ, ինչ որ ապագայում լինելու է»: 2 Եւ խսկոյն Հոգին բռնեց ինձ: Եւ ահա տեսայ մի աթոռ այնտեղ, երկնքում. 3 եւ աթոռի վրայ նստել էր մէկը՝ յասպիս եւ սարդիոն քարերի տեսքով. 4 եւ քահանաներ աթոռի շուրջ՝ զմրուխտի տեսքով. եւ այդ աթոռի շուրջ՝ քսանչորս աթոռներ, իսկ աթոռների վրայ նստել էին քսանչորս երէցներ՝ սպիտակ զգեստներ հագած եւ իրենց գլուխների վրայ՝ ոսկէ պսակներ: 5 Եւ այդ աթոռից ելնում էին փայլատակումներ, ձայներ եւ որոտներ. եւ աթոռի առաջ կային բորբոքուած կրակի եօթը ջահեր, որ Աստծու եօթը Հոգիներն են: 6 Եւ աթոռի առաջ՝ ապակէ ծով, նման սպիտակ բիւրեղի, եւ աթոռի մէջտեղում ու աթոռի շուրջը՝ չորս կենդանիներ՝ առջեւից ու յետեւից աչքերով լի: 7 Եւ առաջին կենդանին նման էր առիւծի. եւ երկրորդ կենդանին՝ նման ցլի. եւ երրորդ կենդանին ունէր մարդու դէմք, իսկ չորրորդ կենդանին նման էր թռչող արծուի: 8 Եւ չորս կենդանիները, որոնցից ամէն մէկը չուրջանակի ունէր վեց թեւ եւ ներսից լի էր աչքերով, զօր ու գիշեր չէին դադարում ասելուց. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Ամենակա՛լ Տէր Աստուած, դու, որ Է-ն ես եւ ես եւ որ գալու ես»: 9 Եւ երբ կենդանիները փառք եւ պատիւ եւ գոհութիւն էին մատուցում աթոռի վրայ նստածին՝ յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին, 10 քսանչորս երէցներն ընկնում էին աթոռի վրայ նստածի առաջ եւ երկրպագում յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին եւ իրենց պսակները դնում էին աթոռի առաջ ու ասում. 11 «Մեր սուրբ Տէ՛ր Աստուած, արժանի ես ընդունելու փառք եւ պատիւ եւ զօրութիւն, որովհետեւ դո՛ւ ստեղծեցիր բոլորը, եւ քո կամենալո՛վ ստեղծուեցին ու գոյութիւն ունեն»:

ԿՆՔՈՒԱԾ ԳԻՐՔԸ ԵՒ ԳԱՌԸ

5 Տեսայ նաեւ աթոռի վրայ նստողի աջ ձեռքում մի գիրք՝ գրուած ներսից եւ դրսից ու կնքուած եօթը կնիքով: 2 Եւ տեսայ մի զօրաւոր հրեշտակ, որ կանչում էր բարձր ձայնով. «Ո՞վ է արժանի բաց անելու գիրքը եւ քանդելու նրա կնիքները»: 3 Եւ ոչ ոք կար, ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրայ, ո՛չ էլ երկրի տակ, որ կարողանար բանալ գիրքը, որովհետեւ չէին տեսել այն†:

†Յունարէնում ունի՝ ոչ էլ նայել նրան:

4 Եւ ես ուժգին լաց էի լինում, քանի որ չգտնուեց մէկը, որ արժանի լինէր բաց անելու գիրքը եւ նայելու նրա մէջ: 5 Եւ երէցներից մէկն ինձ ասաց. «Լաց մի՛ եղիր. ահա՛ յաղթեց առիւծը, որ Յուդայի ցեղից է, Դաւթի արմատից, որ բաց է անելու գիրքը եւ քանդելու է նրա եօթը կնիքները»: 6 Եւ տեսայ, որ աթոռի եւ չորս կենդանիների ու երէցների միջեւ կար մի Գառ՝ մորթուած. նա ունէր եօթը եղջիւր եւ եօթը աչք, որ Աստծու եօթը Հոգիներն են՝ ուղարկուած ամբողջ երկրով մէկ: 7 Եւ նա եկաւ վերցրեց գիրքը աթոռի վրայ նստողի աջ ձեռքից: 8 Եւ երբ առաւ գիրքը, չորս կենդանիներն ու քսանչորս երէցներն ընկան Գառան առաջ. եւ իւրաքանչիւրն ունէր քնար եւ խնկով լի ոսկէ բուրվառ, որ սրբերի աղօթքներն են:

9 Եւ նոր երգեր էին երգում ու ասում. «Արժանի ես առնելու այդ գիրքը եւ բաց անելու դրա կնիքները, քանի որ մորթուեցիր եւ գնեցիր մեզ Աստծու համար, քո արիւնով, բոլոր ցեղերից եւ լեզուներից ու հեթանոսների բազմութիւններից: 10 Եւ նրանց թագաւորներ ու քահանաներ դարձրիր մեր Աստծուն, որպէսզի թագաւորեն երկրի վրայ»: 11 Տեսայ նաեւ ու լսեցի ձայնը բազում հրեշտակների, որոնք կանգնած էին աթոռի եւ չորս կենդանիների ու քահանաների շուրջը. եւ նրանց թիւը բիւր բիւրաւոր եւ հազար հազարաւոր էր: 12 Նրանք ասում էին բարձր ձայնով. «Արժանի է այդ մորթուած Գառը ընդունելու մեծութիւն, իմաստութիւն, զօրութիւն, պատիւ, փառք եւ օրհնութիւն»: 13 Լսեցի նաեւ, որ երկնքում, երկրի վրայ եւ ծովում եղած բոլոր արարածները, ինչպէս նաեւ դրանց մէջ եղած ամէն ինչ ասում էին. «Նա, որ նստած է աթոռի վրայ, ինչպէս եւ Գառը, թող օրհնեալ, բարձրացեալ եւ փառաւորեալ լինի յաւիտեանս յաւիտենից»: 14 Եւ չորս կենդանիներն ասում էին՝ Ամէն: Եւ երէցներն ընկնում էին նրա առաջ ու երկրպագում:

ԵՕԹԸ ԿՆՔՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

6 Տեսայ նաեւ, որ Գառը բացեց եօթը կնիքներից մէկը. եւ չորս կենդանիներից մէկից լսեցի մի ձայն, նման որոտի ձայնի, որ ասում էր՝ գալիս եմ†: 2 Եւ ահա տեսայ մի սպիտակ ձի. եւ նա, ով հեծել էր նրա վրայ, աղեղ ունէր. եւ նրան պսակ տրուեց. եւ եկաւ յաղթողը, որ յաղթի:

3 Եւ երբ բացեց երկրորդ կնիքը, մի ձայն լսեցի երկրորդ կենդանուց, որ ասում էր՝ գալիս եմ‡: 4 Եւ ելաւ ուրիշ, մի կարմիր ձի. եւ ով հեծել էր նրա վրայ, նրան արտօնուած էր վերացնել խաղաղութիւնը երկրից, որպէսզի միմեանց սպանեն: Եւ նրան տրուեց մի մեծ սուր:

5 Եւ երբ բացեց երրորդ կնիքը, մի ձայն լսեցի երրորդ կենդանուց, որ ասում էր՝ գալիս եմ§: Եւ տեսայ ահա մի սեւ ձի. եւ ով նստել էր նրա վրայ, իր ձեռքին կշեռք ունէր: 6 Եւ չորս կենդանիների միջից ձայն լսեցի. «Մի կապիճ ցորեն՝ մէկ դենարի, եւ երեք կապիճ գարի՝ մէկ դենարի*. եւ ձէթ ու գինուն վնաս չտաս»:

7 Եւ երբ բացեց չորրորդ կնիքը, չորրորդ կենդանուց լսեցի մի ձայն, որ ասում էր՝ գալիս եմ**: 8 Եւ տեսայ ահա դեղնաւուն մի ձի. եւ ով նստել էր նրա վրայ, ունէր Մահը. եւ Դժոխքը գնում էր նրա յետեւից: Եւ նրան իշխանութիւն տրուեց աշխարհի մէկ չորրորդ մասի վրայ կոտորած անելու սրով, սովով, մահով եւ երկրի գազաններով:

9 Եւ երբ բացեց հինգերորդ կնիքը, խորանի տակ տեսայ հոգիներն այն բոլոր մարդկանց, որոնք սպանուել էին Աստծու խօսքի եւ այն վկայութեան համար, որ պահում էին: 10 Նրանք ասում էին բարձր ձայնով. «Սո՛ւրբ եւ

†Լաւագոյն յուն. բն. գալիս եմ-ի փոխարէն ունեն արի՛ եւ տե՛ս:

‡Լաւագոյն յուն. բն. գալիս եմ-ի փոխարէն ունեն արի՛:

§Լաւագոյն յուն. բն. գալիս եմ-ի փոխարէն ունեն արի՛:

*Մէկ դենարը բանուորի մէկ օրուայ աշխատավարձն էր:

**Լաւագոյն յուն. բն. գալիս եմ-ի փոխարէն ունեն արի՛:

ճշմարի՛տ Տէր, մինչեւ ե՞րբ պիտի
չդատես եւ մեր արեան վրէժը չլուծես
երկրի բնակիչներից»: 11 Եւ նրանց
տրուեցին սպիտակ զգեստներ. եւ
ասուեց նրանց, որ մի փոքր ժամանակ
հանգստանան, մինչեւ որ ամբողջա-
նան իրենց ծառայակիցներն ու իրենց
եղբայրները, որոնք չուտով մահուան
պիտի ենթարկուեն, ինչպէս իրենք:
12 Եւ երբ բացեց վեցերորդ կնիքը,
տեսայ, որ մեծ երկրաշարժ եղաւ. եւ
արեգակը սեւ դարձաւ ինչպէս այծի
մազից հիւսուած կարպետը, եւ լուսինն
ամբողջովին դարձաւ ինչպէս արիւն:
13 Եւ երկնքի աստղերը թափուեցին
երկրի վրայ ինչպէս տերեւը թզենու†,
որ ուժգին շարժւում է հողմից. 14 եւ
երկինքը գալարուեց ինչպէս մագա-
ղաթեայ գիրք. եւ բոլոր լեռներն ու
կղզիները շարժուեցին իրենց տեղից:
15 Եւ երկրի թագաւորներն ու իշխան-
ները, հազարապետներն ու մեծամեծ-
ները, հզօրներն ու բոլոր ծառաները ու
բոլոր ազատները թաքնուեցին քա-
րայրներում եւ ժայռերի ծերպերում:
16 Եւ լեռներին ասում էին՝ ընկէ՛ք մեր
վրայ, եւ բլուրներին, թէ՝ ծածկեցէ՛ք
մեզ. 17 որովհետեւ եկաւ նրա բարկու-
թեան մեծ օրը. եւ ո՞վ կարող է
կանգնել նրա առաջ:

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԷՍ ԱՍՏՄՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

7 Եւ դրանից յետոյ տեսայ չորս
հրեշտակներ, որոնք կանգնել էին
երկրի չորս անկիւններին եւ պահել էին
երկրի չորս հողմերը, որպէսզի հողմ
չփչի ո՛չ երկրի, ո՛չ ծովի եւ ո՛չ էլ
ծառերի վրայ: 2 Եւ տեսայ մի ուրիշ
հրեշտակ, որ ելաւ արեւելքից եւ ունէր
կենդանի Աստծու կնիքը. եւ բարձր
ձայնով աղաղակեց այն չորս հրեշ-
տակներին, որոնց իշխանութիւն էր
տրուած վնասելու երկրին եւ ծովին:
3 Եւ ասում էր. «Վնաս մի՛ տուէք
երկրին. ո՛չ ծովին, ո՛չ ծառերին. սպա-
սեցէ՛ք, մինչեւ որ կնիք դնեմ իմ
Աստծու ծառաների վրայ»: 4 Եւ լսեցի,
որ կնքուածների թիւը հարիւր քառա-
սունչորս հազար է՝ իսրայէլացիների
բոլոր ցեղերից կնքուած. 5 Ցուդայի
ցեղից՝ տասներկու հազար կնքուած,
Ռուբէնի ցեղից՝ տասներկու հազար
կնքուած, Գադի ցեղից՝ տասներկու
հազար կնքուած, 6 Ասերի ցեղից՝
տասներկու հազար կնքուած, Նեփթա-
ղիմի ցեղից՝ տասներկու հազար
կնքուած, Մանասէի ցեղից՝ տասներկու
հազար կնքուած, 7 Շմաւոնի ցեղից՝
տասներկու հազար կնքուած, Ղեւիի
ցեղից՝ տասներկու հազար կնքուած,
Իսաքարի ցեղից՝ տասներկու հազար
կնքուած, 8 Զաբուղոնի ցեղից՝ տաս-
ներկու հազար կնքուած, Յովսէփի
ցեղից՝ տասներկու հազար կնքուած,
Բենիամինի ցեղից՝ տասներկու հազար
կնքուած:

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԷՍ ԸՆՏՐԵԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹԻՒՆ

9 Եւ դրանից յետոյ տեսայ մի մեծ
բազմութիւն, – որին թիւ չկար, – բոլոր
հեթանոսներից եւ բոլոր ազգերից,
բոլոր լեզուներից եւ բոլոր ժողովուրդ-
ներից, որոնք կանգնած էին աթոռի
առաջ եւ Գառան առաջ՝ իրենց վրայ
սպիտակ զգեստներ գցած եւ արմաւե-
նու ճիւղեր իրենց ձեռքերին: 10 Բարձր
ձայնով աղաղակում էին եւ ասում.
«Փրկութիւնը մեր Աստծո՛ւնն է, որ
նստում է աթոռի վրայ, ինչպէս եւ՝
Գառա՛նը»: 11 Եւ բոլոր հրեշտակները
կանգնած էին աթոռի եւ երէցների ու
չորս կենդանիների շուրջը եւ երեսի
վրայ ընկնում էին աթոռի առաջ ու
երկրպագում էին Աստծուն՝ 12 ասելով.
«Ամէն: Օրհնութի՛ւն, փա՛ռք, իմաս-
տութի՛ւն, գոհութի՛ւն, պատի՛ւ, զօրու-
թի՛ւն եւ կարողութի՛ւն մեր Տէր Աստ-
ծուն յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:
13 Եւ երէցներից մէկն ինձ ասաց.
«Սրանք, որ սպիտակ զգեստներ են
հագել, ովքե՞ր են եւ կամ որտեղի՞ց են
գալիս»: 14 Ես նրան ասացի. «Տէ՛ր,
գիտես դու»: 14 Եւ նա ինձ ասաց.
«Սրանք նրանք են, որ գալիս են մեծ
նեղութիւններից եւ իրենց զգեստները
լուացին ու սպիտակեցրին Գառան
արիւնով: 15 Այդ պատճառով են
նրանք կանգնած Աստծու աթոռի
առաջ եւ զօր ու գիշեր պաշտում են

†Յունարէնում՝ խակ պտուղ:

նրան իր տաճարի մէջ: Եւ նա, որ
նստում է աթոռի վրայ, բնակւում է
նրանց մէջ: 16 Ո՛չ քաղց են զգալու, ո՛չ
էլ ծարաւելու են. եւ նրանց չի վնա-
սելու ո՛չ արեգակը, ո՛չ էլ տօթը: 17 Եւ
Գառը, որ իր աթոռի մէջտեղում է,
պիտի հովուի նրանց ու պիտի առաջ-
նորդի նրանց դէպի կեանքի աղբիւրը
կենդանի ջրի, քանզի Աստուած նրանց
աչքերից սրբեց ամէն արտասուք»:

ԵՕԹԸ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ՝ ԵՕԹԸ ՓՈՂԵՐՈՎ

8 Եւ երբ բացեց եօթներորդ կնիքը,
երկնքում լռութիւն եղաւ մօտ կէս
ժամ: 2 Եւ տեսայ եօթը հրեշտակներ,
որ կանգնած էին Աստծու առաջ. եւ
նրանց եօթը փող տրուեց: 3 Եւ մի
ուրիշ հրեշտակ եկաւ ու կանգնեց
խորանի մօտ. նա ունէր ոսկէ խնկա-
ման. եւ նրան շատ խունկ տրուեց,
որպէսզի աղօթք մատուցի բոլոր
սրբերին ոսկէ խորանի վրայ, աթոռի
առաջ: 4 Եւ հրեշտակների ձեռքերից
խնկի ծուխը, ինչպէս աղօթք սրբերի,
ելաւ Աստծու առաջ: 5 Եւ հրեշտակը
խնկամանը լցրեց խորանի կրակից ու
այն գցեց երկրի վրայ. եւ եղաւ որոտ եւ
ձայներ եւ փայլատակում եւ մեծ
երկրաշարժ: 6 Եւ եօթը հրեշտակները,
որ ունէին եօթը փողերը, պատ-
րաստուեցին դրանք հնչեցնելու:

ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ՓՈՂԵՐԸ

7 Եւ առաջին հրեշտակը հնչեցրեց
փողը. եւ եղաւ կարկուտ եւ հուր՝
արիւնով խառնուած. եւ գցուեց երկրի
վրայ. եւ երկրի մէկ երրորդ մասը
այրեց. այրեց եւ ծառերի մէկ երրորդ
մասը. այրեց եւ ամբողջ դալար խոտը:
8 Փող հնչեցրեց նաեւ երկրորդ
հրեշտակը. եւ մի բան, ինչպէս մի մեծ
հրդեհուած լեռ, ընկաւ ծովը, եւ ծովի
մէկ երրորդ մասը արիւն դարձաւ. 9 եւ
ծովային կենդանիների մէկ երրորդ
մասը կոտորուեց, եւ կենդանի ինչ
չունչ որ կար, ոչնչացաւ:
10 Փող հնչեցրեց նաեւ երրորդ
հրեշտակը. եւ երկնքից ընկաւ մի մեծ
աստղ՝ հրաբորբոք ինչպէս ջահ. եւ
ընկաւ գետերի ու աղբիւրների մէկ
երրորդ մասի վրայ: 11 Եւ աստղի
անունն էր Դառնութիւն. եւ ջրի
դառնութիւնից շատեր մեռան:
12 Փող հնչեցրեց նաեւ չորրորդ
հրեշտակը. եւ զարկուեց արեգակի մէկ
երրորդ մասը, լուսնի մէկ երրորդ մասը
եւ աստղերի մէկ երրորդ մասը: Եւ
խաւարեց նրանց մէկ երրորդ մասը,
նոյնպէս եւ՝ գիշերուայ մէկ երրորդ
մասը:
13 Եւ տեսայ ու լսեցի երկնքի մէջ
թռչող հրեշտակի ձայնը, որ ասում էր
բարձր ձայնով. «Վա՜յ, վա՜յ, վա՜յ
երկրի վրայ բնակուողներին, երբ կը
հնչի նաեւ միւս երեք փողերի ձայնը,
որը պիտի հնչեցնեն հրեշտակները»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՂԸ

9 Փող հնչեցրեց նաեւ հինգերորդ
հրեշտակը. եւ տեսայ, որ մի աստղ
ընկաւ երկնքից: Եւ նրան տրուեց
անդունդների գրի բանալին: 2 Գրից
ծուխ էր բարձրանում, ինչպէս մեծ
հնոցի ծուխը: Խաւարեց արեգակը,
ինչպէս նաեւ՝ օդը: 3 Գրից մորեխ էր
դուրս գալիս երկրի վրայ. եւ նրանց
տրուեց զօրութիւն՝ նման կարիճի
խայթոցների զօրութեան. 4 եւ նրանց
ասուեց, որ չվնասեն երկրի խոտին, ոչ
էլ ծառերին, այլ միայն՝ երկրային այն
մարդկանց, որոնք իրենց ճակատի
վրայ չունեն Աստծու կնիքը: 5 Եւ
նրանց հրաման տրուեց, որ չսպանեն
նրանց, այլ հինգ ամիս չարչարեն. եւ
նրանց չարչարանքը նման էր կարիճի
խայթոցների, երբ նա խայթում է
մարդուն: 6 Եւ այն օրերին մարդիկ
մահը պիտի փնտռեն, բայց չպիտի
գտնեն, պիտի ուզենան մեռնել, բայց
մահը պիտի փախչի նրանցից: 7 Եւ
մորեխը նման էր պատերազմի պատ-
րաստուող ձիուն. եւ նրանց գլուխների
վրայ կարծես ոսկէ պսակ կար. նրանց
երեսները նման էին մարդու երեսների,
8 եւ նրանց մազերը՝ կնոջ մազերի, եւ
նրանց ատամները՝ առիւծի ատամ-
ների: 9 Եւ նրանք ունէին զրահներ,
որոնք նման էին երկաթէ զրահների.

եւ նրանց թեւերի ձայնը նման էր կառք քաշող բազում ձիերի ձայնին, որոնք արշաւում են պատերազմի: 10 Նրանք ունէին պոչեր՝ նման կարիճների պոչերի, եւ խայթոցներ՝ իրենց պոչերին. եւ իշխանութիւն ունէին հինգ ամիս չարչարելու մարդկանց: 11 Եւ իրենց վրայ որպէս թագաւոր ունէին դժոխքի հրեշտակին. եւ նրա անունը եբրայերէն Աղբադոն էր, որ հայերէն լեզուով կոչւում է՝ Կորուստ: 12 Ահա՛ւասիկ անցաւ մէկ վայը, եւ գալու են դեռ երկու վայեր:

ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՂԸ

13 Փող հնչեցրեց նաեւ վեցերորդ հրեշտակը. եւ այն չորս կենդանիներից, որ Աստծու խորանի առաջ էին, լսեցի մի ձայն†, 14 որ ասում էր վեցերորդ հրեշտակին, որը փող ունէր. «Եփրատ գետի վրայ կապուած չորս հրեշտակներին արձակի՛ր»: 15 Եւ արձակուեցին չորս հրեշտակները, որոնք պատրաստ կանգնած էին ժամուայ, օրուայ, ամսուայ եւ տարուայ համար, որպէսզի սպանեն մարդկութեան մէկ երրորդ մասը: 16 Եւ նրանց հեծեալ զօրքերի քանակը բիւր բիւրաւոր եւ հազար հազարաւոր էր. իմացայ նրանց թիւը: 17 Եւ տեսիլքում տեսայ ձիեր ու նրանց վրայ՝ հեծեալներ, որոնք ունէին հրէ զրահներ եւ ծծմբով հրդեհուած յակինթներ. եւ ձիերի գլուխները նման էին առիւծների գլուխների. եւ նրանց բերանից ելնում էր կրակ, ծուխ եւ ծծումբ: 18 Եւ մարդկութեան մէկ երրորդ մասը կոտորուեց այս հարուածներից՝ այն կրակից, ծխից եւ ծծմբից, որ ելնում էին նրանց բերանից. 19 որովհետեւ ձիերի զօրութիւնը իրենց բերաններում է եւ իրենց պոչերի վրայ. եւ նրանց պոչերը նման էին օձի. եւ ունէին գլուխներ, որոնցով սպանում էին անիրաւներին: 20 Եւ մարդկութեան մնացած մասը, որ չմեռաւ այս հարուածներից, չապաշխարեց, ոչ էլ յետ կանգնեց իր ձեռքի գործերից՝ դեւերին եւ ոսկէ, արծաթէ, պղնձէ, քարէ եւ փայտէ կուռքերին երկրպագելուց, կուռքեր, որոնք ոչ տեսնել կարող են, ո՛չ լսել եւ ո՛չ էլ քայլել: 21 Եւ նրանք չապաշխարեցին իրենց մարդասպանութիւնից, կախարդութիւնից, պոռնկութիւնից եւ գողութիւնից:

ՀՐԵՇՏԱԿԸ ԵՒ ԳՐՔՈՅԿԸ

10 Տեսայ նաեւ մի այլ զօրաւոր հրեշտակ, որ իջնում էր երկնքից՝ ամպի մէջ փաթաթուած եւ իր գլխին՝ ծիածան. եւ նրա երեսը նման էր արեգակի, իսկ նրա ոտքերը՝ հրեղէն սիւների: 2 Եւ նա իր ձեռքում ունէր մի բացուած գրքոյկ. նա իր աջ ոտքը դրեց ծովի վրայ, իսկ ձախը՝ ցամաքի վրայ: 3 Եւ աղաղակեց բարձր ձայնով, ինչպէս մռնչում է առիւծը. եւ երբ աղաղակեց, եօթը որոտները թնդացին իրենց ձայներով. 4 եւ երբ եօթը որոտները թնդացին, ուզում էի գրել. բայց երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ծածկի՛ր, ինչ որ խօսեցին եօթը որոտները եւ մի՛ գրիր»: 5 Եւ այն հրեշտակը, որին տեսել էի եւ որն իր ոտքը դրել էր ծովի վրայ, իսկ միւս ոտքը՝ ցամաքի վրայ, իր աջ ձեռքը բարձրացրեց երկինք. 6 նա երդուեց Նրանով, որ յաւիտեան կենդանի է, որ ստեղծեց երկիրը եւ ինչ որ կայ նրա մէջ†, թէ այլեւս չկայ ժամանակ. 7 այլ այն օրը, երբ եօթներորդ հրեշտակը իր փողը հնչեցնի, պիտի կատարուի Աստծու խորհուրդը, որ աւետարանուեց իր ծառաների՝ մարգարէների միջոցով:

8 Եւ այն ձայնը, որ լսել էի երկնքից, դարձեալ խօսեց ինձ հետ եւ ասաց. «Գնա՛, ա՛ռ այն գրքոյկը, որը, բացուած, իր ձեռքում ունի հրեշտակը եւ կանգնած է ծովի ու ցամաքի վրայ»: 9 Եւ ես, գնալով հրեշտակի մօտ, նրանից խնդրեցի գրքոյկը. եւ նա ինձ ասաց. «Ա՛ռ սա եւ կե՛ր, եւ քո որովայնում դառն պիտի դառնայ այն, իսկ քո բերանում՝ քաղցր ինչպէս մեղր»: 10 Եւ հրեշտակից վերցրի բացուած գրքոյկը ու կուլ տուի. եւ իմ բերանում մեղրի պէս էր այն. իսկ երբ կերայ, իմ որովայնը դարձաւ դառն: 11 Եւ հրեշտակն ինձ ասաց. «Պէտք է, որ դու վերստին մարգարէանաս ժողովուրդների, այլ ազգերի, լեզուների եւ երկրի թագաւորների մասին»:

ԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐԸ

11 Այնուհետեւ ինձ տրուեց չափելու մի եղէգ, որ նման էր գաւազանի. եւ հրեշտակը կանգնած էր ու ասում էր ինձ. «Վե՛ր կաց եւ չափի՛ր Աստծու տաճարն ու զոհասեղանը եւ հաշուի՛ր այն երկրպագողներին, որ նրա մէջ են: 2 Իսկ այն գաւիթը, որ տաճարից դուրս է, թո՛ղ այն եւ մի՛ չափիր, քանի որ այն տրուել է հեթանոսներին: Նրանք քառասուներկու ամիս սուրբ քաղաքը ոտքի կոխան պիտի դարձնեն: 3 Եւ իմ երկու վկաներին պիտի պատուիրեմ, որ մարգարէանան հազար երկու հարիւր վաթսուն օրեր՝ քուրձ հագած»: 4 Սրանք երկու ձիթենիներն ու երկու ճրագներն են, որ կան Աստծու առաջ՝ երկրի վրայ: 5 Եւ ովքեր ուզենան նրանց վնասել, կրակ պիտի ելնի նրանց բերանից եւ պիտի լափի իրենց թշնամիներին: Եւ ովքեր ուզենան նրանց վնասել, այսպէս պիտի կործանուեն: 6 Երկու վկաներն իշխանութիւն ունեն փակելու երկինքը, որպէսզի իրենց մարգարէութեան օրերում անձրեւ չտեղայ. իշխանութիւն ունեն եւ ջրերի վրայ՝ դրանք արիւն դարձնելու, ինչպէս նաեւ հարուածելու երկրին բոլոր հարուածներով, քանի անգամ որ կամենան: 7 Եւ երբ նրանք աւարտեն իրենց վկայութեան բոլոր օրերը, այն ժամանակ անդունդներից ելնող գազանը պիտի պատերազմի նրանց դէմ, պիտի յաղթի եւ պիտի սպանի նրանց: 8 Եւ նրանց դիակը ընկած պիտի մնայ իրենց մեծ քաղաքի հրապարակների մէջ, որ խորհրդանշականօրէն կոչւում է Սոդոմ եւ Եգիպտոս, ուր եւ խաչուեց նրանց Տէրը: 9 Եւ նրանց պիտի տեսնեն բոլոր ցեղերն ու ժողովուրդները եւ բոլոր լեզուներն ու ազգերը, որովհետեւ նրանց դիակը ընկած պիտի մնայ երեք օր. եւ թոյլ չպիտի տան, որ նրանց ոսկորները թաղեն գերեզմաններում: 10 Եւ երկրի վրայ բնակուողները պիտի ուրախանան ու ցնծան նրանց մահուան վրայ, նոյնիսկ ընծաներ եւ նուէրներ պիտի տանեն միմեանց, որովհետեւ այս երկու մարգարէները երկրի բնակիչներին պիտի չարչարեն:

11 Երեքուկէս օր յետոյ կենդանութեան հոգին Աստծուց պիտի մտնի նրանց մէջ, եւ նրանք պիտի վեր կենան կանգնեն իրենց ոտքերի վրայ: Եւ ահ ու մեծ երկիւղ ընկաւ բոլոր նրանց վրայ, ովքեր տեսան նրանց: 12 Եւ լսեցի մի բարձր ձայն, որ ասում էր նրանց. «Վե՛ր ելէք, եկէ՛ք այստեղ»: Եւ նրանք ելան երկինք՝ ամպերով. եւ իրենց թշնամիները տեսան նրանց: 13 Այդ իսկ ժամին մեծ երկրաշարժ եղաւ, եւ քաղաքի մէկ տասներորդ մասը գետնի տակ թաղուեց. երկրաշարժից մեռաւ եօթը հազար մարդ: Դրանից յետոյ բոլորի մէջ մեծ ահ առաջացաւ. եւ փառք էին տալիս երկնաւոր Աստծուն: 14 Ահա՛ւասիկ անցաւ երկրորդ վայը, եւ երրորդ վայը գալու է շուտով:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՓՈՂԸ

15 Եւ երբ եօթներորդ հրեշտակը փող հնչեցրեց, երկնքում լսուեց մի ձայն, որն ասաց. «Ամբողջ տիեզերքի թագաւորութիւնը եղաւ մեր Տիրոջը եւ իր Օծեալինը. եւ նա պիտի թագաւորի բոլորի վրայ յաւիտեանս յաւիտենից»: 16 Եւ քսանչորս երէցները, որ նստած էին իրենց գահերին, Աստծու առաջ, ընկան իրենց երեսների վրայ, երկրպագեցին Տէր Աստծուն ու ասացին. 17 «Գոհութիւն ենք մատուցում քեզ, Ամենակա՛լ Տէր Աստուած, դու, որ է-ն ես եւ ես, ձեռքդ առար քո մեծ զօրութիւնը եւ թագաւորեցիր: 18 Հեթանոսները զայրացան. բայց հասաւ քո բարկութիւնը, ժամանակը՝ դատելու մեռելներին, տալու վարձը քո ծառաներին՝ մարգարէներին եւ սրբերին, քո անունից վախեցողներին, փոքրերին ու մեծերին եւ ոչնչացնելու երկրի կործանիչներին»:

19 Եւ երկնքում բացուեց Աստծու

†Յուն. լաւ բն. ունեն. եւ Աստծու առաջ եղած ոսկէ խորանի չորս եղջիւրներից լսեցի մի ձայն, որ ...

†Յունարէնն աւելացնում է ... որ ստեղծեց երկինքը եւ ինչ որ կայ նրա մէջ ... եւ ծովը եւ ինչ որ կայ նրա մէջ:

տաճարը, ու երեւաց Աստծու տապանակը իր տաճարի մէջ. եւ եղան փայլատակումներ, ձայներ, որոտներ, երկրաշարժներ եւ՝ ուժեղ կարկուտ:

ԿԻՆԸ ԵՒ ՎԻՇԱՊԸ

12 Եւ երկնքում մեծ նշան երեւաց. մի կին՝ արեգակն իր վրայ առած, լուսինն իր ոտքերի տակ եւ իր գլխի վրայ մի պսակ՝ տասներկու աստղերից: 2 Նա յղի էր ու ճչում էր երկունքի մէջ եւ բազում ցաւերով մօտ էր ծնելու: 3 Եւ երկնքում երեւաց մի այլ նշան. ահա հրակարմիր մի մեծ վիշապ, որ ունէր եօթը գլուխ եւ տասը եղջիւր. նրա գլուխների վրայ կար եօթը խոյր: 4 Եւ նրա պոչը քաշում տանում էր երկնքի աստղերի մէկ երրորդ մասը. ու դրանք գցեց երկրի վրայ: Վիշապը կանգնած էր այն կնոջ առաջ, որ ծնելու վրայ էր, որպէսզի, երբ կինն իր որդուն ծնի, կուլ տայ նրան: 5 Եւ կինը ծնեց մի արու զաւակ, որ իշխելու էր բոլոր ազգերի վրայ երկաթէ գաւազանով: Եւ նրա որդին յափշտակուեց տարուեց Աստծու եւ նրա գահի մօտ: 6 Եւ կինը փախաւ դէպի անապատ, ուր նրան տեղ էր պատրաստուել Աստծու կողմից, որպէսզի այնտեղ կերակրուի հազար երկու հարիւր վաթսուն օր:

ՄԻՔԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՎԻՇԱՊԻ ԴԷՄ

7 Եւ երկնքում պատերազմ եղաւ: Միքայէլը եւ իր հրեշտակները կռւում էին վիշապի դէմ. վիշապը կռւում էր իր զօրքերով, 8 բայց նրանք չկարողացան դիմադրել. եւ երկնքում նրանց համար տեղ չգտնուեց: 9 Եւ ընկաւ մեծ վիշապը՝ առաջին օձը, որ կոչւում է Բէեղզեբուզ եւ Սատանայ եւ որ մոլորեցրեց ամբողջ աշխարհը. եւ նրա հետ ընկան նաեւ նրա հրեշտակները:

10 Եւ երկնքից լսեցի մի բարձր ձայն, որ ասում էր. «Այժմ եկաւ մեր Աստծու զօրութիւնը, փրկութիւնն ու արքայութիւնը եւ նրա Օծեալի իշխանութիւնը, որովհետեւ ընկաւ մեր եղբայրների դէմ չարախօսողը, նա, ով Աստծու առաջ նրանց մասին չարախօսում էր գիշեր-ցերեկ: 11 Մեր եղբայրները յաղթեցին նրան Գառան արիւնով եւ նրա վկայութեան† խօսքով: Եւ չհամաձայնեցին վիշապի հետ նոյնիսկ ի գին իրենց մահուան: 12 Դրա համար թող ուրախ լինի երկինքը եւ բոլոր նրանք, որ բնակւում են նրա մէջ. վա՜յ ձեզ, երկի՜ր եւ ծո՛վ, որովհետեւ ձեր մէջ ընկաւ բանսարկուն մեծ ցասումով, քանի որ նա քիչ ժամանակ ունի ապրելու»:

ՎԻՇԱՊԸ ԵՒ ԿԻՆԸ

13 Եւ երբ վիշապը տեսաւ, թէ ինքը երկիր ընկաւ, հետապնդեց այն կնոջը, որ արու զաւակ էր ծնել: 14 Եւ կնոջը տրուեց մեծ արծուի երկու թեւ, որպէսզի թռչի անապատ, իր տեղը, այնտեղ, ուր, հեռու օձից, կերակրւում էր երեք եւ կէս տարի: 15 Ապա օձը իր բերանից հեղեղի պէս ջուր թափեց կնոջ յետեւից, որպէսզի նրան ընկղմի: 16 Եւ երկիրն օգնեց կնոջը. բացեց իր բերանը եւ կուլ տուեց այն ջուրը, որը վիշապը թափել էր իր բերանից: 17 Եւ վիշապը զայրացաւ կնոջ դէմ ու գնաց պատերազմելու ընդդէմ նրա միւս զաւակների, որոնք պահում էին Աստծու պատուիրանները եւ վկայում էին Յիսուսին: 18 Եւ նա կանգնեց ծովի աւազի վրայ:

ԵՐԿՈՒ ԳԱԶԱՆՆԵՐԸ

13 Եւ տեսայ, որ ծովից մի գազան էր ելնում. նա ունէր եօթը գլուխ եւ տասը եղջիւր. նրա եղջիւրների վրայ կար տասը խոյր, իսկ նրա գլուխների վրայ՝ հայհոյալից մի անուն: 2 Եւ այն գազանը, որին տեսայ, նման էր յովազի, իսկ նրա ոտքերը նման էին արջի ոտքերի, եւ նրա բերանը՝ առիւծի բերանի: Եւ վիշապը նրան տուեց իր զօրութիւնը, իր գահը եւ մեծ իշխանութիւն: 3 Գազանի գլուխներից մէկը մահացու վիրաւորուած էր. բայց նրա մահացու վէրքը առողջանում էր. եւ ամբողջ երկիրը զարմացաւ գազանի վրայ, քանի որ վիշապը տուեց նրան իր

†Յուն՝ իրենց տուած վկայութեան ...

թագաւորութիւնը: 4 Եւ երկրպագեցին վիշապին, որ իր իշխանութիւնը տուել էր գազանին. եւ ասացին. «Ո՞վ է նման այս գազանին, կամ ո՞վ կը կարողանայ կռուել դրա դէմ»: 5 Եւ նրան տրուեց բերան՝ խօսելու մեծ-մեծ բաներ եւ հայհոյութիւն: Եւ քառասուներկու ամիս նրան իշխանութիւն տրուեց: 6 Եւ նա իր բերանը հայհոյանքով բացեց Աստծու դէմ եւ հայհոյեց նրա անունը, նրա խորանը† եւ երկնային բնակավայրը: 7‡ Եւ նրան իշխանութիւն տրուեց բոլոր ազգերի եւ լեզուների ու ժողովուրդների վրայ, 8 որպէսզի նրան երկրպագեն բոլոր նրանք, որ բնակւում են երկրի երեսին, եւ որոնց անունները աշխարհի սկզբից գրուած չեն մորթուած Գառան կեանքի գրքում: 9 Ովքեր ականջ ունեն լսելու, թող լսեն, 10 քանզի կան ոմանք, որոնք պիտի գերեվարուեն, կան ոմանք, որոնք սրով պիտի մեռնեն, եւ կան ոմանք, որոնք ինքնասպան պիտի լինեն: Այստե՛ղ է ահա սրբերի համբերութիւնը եւ հաւատը:

11 Եւ տեսայ մի ուրիշ գազան, որ ելնում էր երկրից եւ ունէր երկու եղջիւրներ՝ նման գառան եղջիւրների, եւ խօսում էր՝ ինչպէս վիշապը: 12 Եւ նա առաջին գազանի ամբողջ իշխանութիւնն էր ի գործ դնում նրա առաջ եւ ստիպում էր, որ երկիրն ու նրա բոլոր բնակիչները երկրպագեն առաջին գազանին, մինչեւ որ առողջանայ նրա մահացու վէրքը: 13 Եւ բազում նշաններ էր կատարում ու երկնքից կրակ էր իջեցնում երկրի վրայ մարդկանց աչքերի առաջ. 14 եւ մոլորեցնում էր երկրի վրայ բնակուողներին այն նշաններով, որ թոյլատրուած էին, որ նա կատարէր գազանի առաջ: Երկրի բնակիչները նրան ասացին. «Կերտի՛ր արձանն այն գազանի, որ կենդանի մնաց սրի վէրքերից»: 15 Եւ նրան իշխանութիւն տրուեց, որպէսզի շունչ տայ գազանի արձանին, որ արձանը

†Յուն՝ խորան բառի փոխարէն ունի երկնքի բնակիչներին:

‡Լաւագոյն յուն. բն. այս համարի տակ ունեն. «Նաեւ թոյլատրուեց կռուել սրբերի դէմ եւ յաղթել նրանց. եւ նրան իշխանութիւն տրուեց ...»:

խօսի, եւ երկրի բոլոր բնակիչները երկրպագեն նրան, իսկ ով չերկրպագի գազանի արձանին, նրան սպանի†. 16 Եւ ստիպի բոլորին՝ փոքրերին եւ մեծամեծներին, հարուստներին եւ աղքատներին, ազատներին ու ծառաներին, որ դրոշմ դնեն նրանց աջ ձեռքի եւ ճակատի վրայ: 17 Եւ ոչ ոք չկարողանայ գնել ու վաճառել, եթէ չունենայ գրի դրոշմը եւ գազանի անունն ու նրա անուան թիւը: 18 Այստե՛ղ է ահա իմաստութիւնը: Ով խելք ունի, թող հաշուի գազանի թիւը, որ մարդու անուան թիւ է. եւ նրա անուան թիւը այս է՝ վեց հարիւր վաթսունվեց:

ԳԱՌԸ ԵՒ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

14 Եւ ես տեսայ. ահա Գառը կանգնած էր Սիոն լերան վրայ. եւ նրա հետ՝ հարիւր քառասունչորս հազար հոգի, որոնք նրա եւ նրա Հօր անունն ունէին գրուած իրենց ճակատների վրայ: 2 Եւ երկնքից մի ձայն լսեցի, որ նման էր առատահոս ջրերի եւ ուժեղ որոտի ձայնի. եւ իմ լսած ձայնը նման էր իրենց քնարները հնչեցնող քնարահարների նուագի ձայնին: 3 Նրանք նոր երգեր էին երգում գահի առաջ, չորս կենդանիների առաջ եւ երէցների առաջ. եւ ոչ ոք չի կարող սովորել նրանց երգերը, այլ միայն՝ այն հարիւր քառասունչորս հազարը, որոնք փրկուած են երկրից: 4 Սրանք այն մարդիկ են, որոնք չխառնակուեցին կանանց հետ եւ կոյսեր են. սրանք գնում են Գառան յետեւից, ուր էլ նա գնայ: Սրանք ընտրուեցին մարդկանց միջից Աստծու եւ Գառան առաջ: 5 Եւ սրանց բերանում սուտ խօսք չգտնուեց, որովհետեւ անբիծ են:

ԵՐԵՔ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

6 Եւ տեսայ երկնքի մէջ թռչող մի ուրիշ հրեշտակ, որ յաւիտենական

†Յուն. լաւ բն. համար 15-ի տակ ունեն. «Եւ նրան իշխանութիւն տրուեց, որպէսզի շունչ տայ գազանի արձանին, եւ որպէսզի արձանը խօսի, այնպէս որ պատճառ դառնայ, որ սպանուեն բոլոր նրանք, որոնք չեն երկրպագի գազանի արձանին»:

աւետիս ունէր քարոզելու երկրի վրայ
բոլոր ազգերին եւ լեզուներին†: 7 Եւ
նա ասում էր բարձր ձայնով. «Վա-
խեցէ՛ք Աստծուց եւ փա՛ռք տուէք
նրան, որովհետեւ եկել է նրա դատաս-
տանի ժամը. եւ երկրպագեցէ՛ք երկնքի
եւ երկրի եւ ծովի ու ջրերի աղբիւրների
Արարչին»:
8 Եւ մի երկրորդ հրեշտակ գալիս է
նրա յետեւից եւ ասում. «Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծն Բաբելոնը գինու հարբեցո-
ղութիւնից, ցասումից եւ իր պոռնկու-
թիւնից, նա, որ հարբեցրեց բոլոր
ազգերին»: 9 Եւ մի երրորդ հրեշտակ
գալիս էր նրանց յետեւից եւ բարձր
ձայնով ասում. «Ով որ երկրպագեց
գազանին ու նրա արձանին եւ կամ
նրա նշանի դրոշմն առաւ իր ճակատին
կամ իր աջ ձեռքի վրայ, 10 այդպիսին
պիտի խմի Աստծու ցասման բաժակից,
որ անխառն լցուած է նրա բարկու-
թեան բաժակի մէջ, եւ նա պիտի
տանջուի, հրով եւ ծծմբով, Աստծու ու
Գառան առաջ: 11 Եւ նրանց ծուխը
պիտի բարձրանայ յաւիտեանս յաւի-
տենից. եւ գիշեր ու ցերեկ հանգիստ
չպիտի ունենան նրանք, ովքեր
երկրպագեցին գազանին, երկրպագե-
ցին արձանին եւ առան նրա դրոշմն ու
անունը»: 12 Եւ այստե՛ղ է ահա սրբերի
համբերութիւնը, որոնք պահում են
Աստծու պատուիրանները եւ Յիսուսի
հանդէպ իրենց հաւատը: 13 Եւ
երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր
ինձ. «Գրի՛ր. երանի՛ այն մեռելներին,
որոնք այժմուանից իսկ ննջեցին ի
Տէր: Հոգին այս բանն է ասում՝
հանգստացան իրենց տքնութիւնից, եւ
միայն իրենց գործերի արդիւնքը հե-
տեւեց իրենց»:

ԱԶԳԵՐԻ ՀՈՒՆՁԸ ԵՒ ԱՅԳԵԿՈՒԹԸ

14 Ապա ես տեսայ մի սպիտակ ամպ.
եւ ամպի վրայ նստել էր մէկը՝ նման
մարդու Որդուն. նա իր գլխին ունէր
ոսկէ պսակ, եւ իր ձեռքին՝ սրած
գերանդի:
15 Եւ մի ուրիշ հրեշտակ ելաւ
երկնքից, աղաղակեց բարձր ձայնով եւ
ասաց. «Դո՛ւ, որ նստած ես այդ ամպի
վրայ, շարժի՛ր քո այդ գերանդին եւ
հնձի՛ր, որովհետեւ եկաւ հնձի ժա-
մանակը. եւ երկրի հունձն էլ հասած
է»: 16 Եւ նա, ով նստել էր ամպի վրայ,
շարժեց իր գերանդին երկրի վրայ ու
հնձեց երկրի բոլոր բնակիչներին:
17 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս ելաւ
երկնքում գտնուող տաճարից. եւ սա էլ
ունէր սրած գերանդի: 18 Եւ զոհա-
սեղանից դուրս ելաւ մի ուրիշ հրեշ-
տակ, որ իշխանութիւն ունէր կրակի
վրայ. նա բարձր ձայնով աղաղակեց
այն հրեշտակին, որ սրած գերանդի
ունէր, ու ասաց. «Քաղի՛ր ողկոյզները
երկրի այգուց, քանի որ խաղողը հասել
է այգում»: 19 Եւ հրեշտակը նետեց իր
գերանդին երկրի վրայ, քաղեց նրա
խաղողը եւ գցեց Աստծու մեծ հնձանի
մէջ†: 20 Եւ հնձանը կոխոտուեց
քաղաքից դուրս. եւ հնձանից արիւնը
հոսում ու բարձրանում էր մինչեւ ձիու
սանձերը. եւ նրա երկարութիւնը երեք
հարիւր կիլոմետր էր:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒՀԱՍՆԵՐԸ

15 Եւ տեսայ երկնքում մեծ եւ
զարմանահրաշ մի այլ նշան. տեսայ
եօթը հրեշտակներ, որոնք ունէին
վերջին եօթը պատուհասները, քանի որ
Աստծու բարկութիւնը դրանցով էր
աւարտւում: 2 Տեսայ նաեւ ապակէ
ծովի նման մի բան՝ խառնուած կրա-
կով. եւ նրանք, որ յաղթեցին գա-
զանին, նրա արձանին, նրա անուան
թուին եւ նրա դրոշմին, կանգնած էին
ապակէ ծովի վրայ եւ ունէին Աստծու
քնարները. 3 նրանք Աստծու առաջ
երգում էին Մովսէսի երգերը եւ Գա-
ռան երգերը՝ ասելով. «Տէ՛ր Աստուած
Ամենակալ, մեծամեծ եւ սքանչելի են
քո գործերը, արդար ու ճշմարիտ են քո
ճանապարհները, դո՛ւ, Թագաւո՛րդ
բոլոր ազգերի: 4 Եւ ո՞վ է, որ չի
երկնչելու եւ չի փառաւորելու քո սուրբ
անունը, որովհետեւ դու ես միայն
սուրբ եւ արժանի երկրպագութեան.

†Յունարէնն աւելացնում է՝ ցեղերին եւ ժողովուրդներին:

†Յունարէնն ունի՝ Աստծու ցասման մեծ հնձանի մէջ:

բոլոր ազգերը պիտի գան եւ պիտի
երկրպագեն քո առաջ, Տէ՛ր, երբոր քո
արդարութիւնը յայտնուի»:
5 Եւ ապա տեսայ, որ բացուեց
վկայութեան խորանի տաճարը, որ
երկնքում էր: 6 Եւ տաճարից դուրս էին
ելնում եօթը հրեշտակներ, որոնք
ունէին եօթը պատուհասները. նրանք
հագել էին մաքուր ու փայլուն կտաւ
եւ իրենց կրծքի շուրջը կապել էին ոսկէ
գօտիներ: 7 Եւ չորս կենդանիների
կողմից եօթը հրեշտակներին տրուեցին
եօթը սկաւառակներ՝ լի ցասումովն
Աստծու, որ կենդանի է յաւիտեանս
յաւիտենից: 8 Եւ տաճարը լցուեց
Աստծու փառքի եւ նրա զօրութեան
ծխով: Եւ ոչ ոք չէր կարող մտնել
տաճարը, մինչեւ աւարտուեցին եօթը
հրեշտակների եօթը պատուհասները:

ԱՍՏԾՈՒ ՑԱՍՄԱՆ ԵՕԹԸ ՍԿԱՒԱՌԱԿՆԵՐԸ

16 Եւ տաճարից լսեցի մի բարձր
ձայն, որ ասում էր եօթը հրեշտակ-
ներին. «Գնացէ՛ք, Աստծու ցասման
եօթը սկաւառակները թափեցէ՛ք երկրի
վրայ»:
2 Առաջին հրեշտակը գնաց եւ իր
սկաւառակի պարունակութիւնը թա-
փեց երկրի վրայ. եւ չար պալարներ
գոյացան այն մարդկանց վրայ, որ
ունէին գազանի դրոշմը ու երկրպա-
գում էին նրա արձանին:
3 Երկրորդ հրեշտակն իր սկաւառակը
թափեց ծովի մէջ. եւ ջրերը փոխուեցին
ու դարձան ինչպէս մեռելի արիւն: Եւ
ծովի մէջ եղած ամէն կենդանի
արարած սատկեց:
4 Երրորդ հրեշտակն իր սկաւառակը
թափեց գետերի եւ ջրերի աղբիւրների
մէջ. եւ նրանք արիւն դարձան: 5 Եւ
լսեցի հրեշտակից, որ ասում էր. «Ար-
դար է նա, որ Է-ն է եւ է եւ սուրբ է իր
գործերում, քանի որ այսպէ՛ս դա-
տաստան արեց. 6 որովհետեւ սրբերի
արիւնը եւ մարգարէների արիւնը թա-
փեցին ամբարիշտները, դրա համար էլ
արիւն խմել տուեց նրանց, մի բան,
որին արժանի էին»: 7 Ապա լսեցի այդ
զոհասեղանից մի ձայն, որ ասում էր.
«Այո՛, Տէ՛ր Աստուած Ամենակալ,
արդար ու ճշմարիտ են քո դատաս-
տանները»:
8 Չորրորդ հրեշտակն իր սկաւառ-
ակից թափեց արեւի վրայ: 9 Եւ նրան
թոյլատրուեց մարդկանց խորշակահար
անել կրակով. եւ մարդիկ այրուեցին
սաստիկ տապից: Նրանք հայհոյեցին
Աստծուն, որ իշխանութիւն ունի այս
պատուհասների վրայ, եւ սակայն չա-
պաշխարեցին, չփառաբանեցին Աստ-
ծուն:
10 Հինգերորդ հրեշտակն իր սկա-
ւառակից թափեց գազանի գահի վրայ.
եւ գազանի թագաւորութիւնը խաւար
դարձաւ. մարդիկ ցաւից իրենց լեզու-
ներն էին կծոտում: 11 Եւ իրենց ցաւերի
ու դառն ախտի պատճառով հայհո-
յեցին երկնքի Աստծուն, եւ սակայն
չապաշխարեցին իրենց գործերից:
12 Վեցերորդ հրեշտակն իր սկաւա-
ռակից թափեց մեծ Եփրատ գետի
վրայ. եւ ցամաքեցին նրա ջրերը, որ-
պէսզի ճանապարհ պատրաստուի Արե-
ւելքի թագաւորին: 13 Եւ տեսայ, որ
վիշապի բերանից, գազանի բերանից եւ
սուտ մարգարէի բերանից ելնում էին
երեք անմաքուր ոգիներ՝ նման գոր-
տերի. 14 քանզի նրանք դիւական
ոգիներ էին, որոնք նշաններ էին
գործում, գնում էին ամբողջ աշխարհի
թագաւորների մօտ՝ նրանց պատերազ-
մի հաւաքելու Ամենակալ Տիրոջ մեծ
օրուայ համար (քանզի այսպէս ասաց
Տէրը. 15 «Ահա՛ գալիս եմ ինչպէս գող.
երանի՛ նրանց, որ արթուն են եւ
պահում են իրենց զգեստները, որպէս-
զի մերկ ման չգան, եւ իրենց ամօ-
թոյքները չերեւան»): 16 Ապա ոգիները
թագաւորներին հաւաքեցին մի տեղ,
որ եբրայերէն կոչւում է Արմագեդոն:
17 Եօթներորդ հրեշտակն իր սկա-
ւառակից թափեց օդի մէջ. եւ երկնքից
ու գահից ելաւ մի բարձր ձայն, որ
ասում էր. «Եղա՛ւ»: 18 Եւ իսկոյն եղան
փայլատակումներ, ձայներ եւ որոտ-
ներ. եւ եղաւ մի մեծ երկրաշարժ, որ-
պիսին չի եղել մարդու ստեղծուելուց ի
վեր: 19 Եւ մեծ քաղաքը երեք մասի
բաժանուեց. եւ ընկան ազգերի քա-
ղաքները. եւ Աստուած յիշեց մեծ
Բաբելոնը եւ դրան տուեց իր սաստիկ

բարկութեան գինու բաժակը: 20 Եւ բոլոր կղզիները հեռու փախան, ու մէջտեղից վերացան լեռները: 21 Մարդկանց վրայ երկնքից թափուեց խոշոր կարկուտ՝ յիսուն կիլոգրամ կշռով: Եւ մարդիկ հայհոյեցին Աստծուն, – որ երկնքում է, – կարկուտի պատուհասի համար, քանի որ պատուհասը մեծ էր եւ սաստիկ:

ԿԱՐՄԻՐ ԳԱԶԱՆԻ ՎՐԱՅ ՆՍՏԱԾ ԿԻՆԸ

17 Եւ եկաւ մէկը եօթը հրեշտակներից, որոնք եօթը սկաւառակներ ունէին, խօսեց ինձ հետ եւ ասաց. «Ե՛կ այստեղ, եւ քեզ ցոյց պիտի տամ դատաստանը այն մեծ պոռնկի†, որ նստում է շատ ջրերի վրայ. 2 նրա հետ պոռնկութիւն արեցին երկրի թագաւորները, եւ նրա պոռնկութեան գինուց հարբեցին երկրի բնակիչները»: 3 Եւ հրեշտակը առաւ տարաւ ինձ անապատ՝ Հոգով. եւ տեսայ մի կին, որ նստել էր մի կարմիր գազանի վրայ, որի մարմինը ծածկուած էր հայհոյալից գրութիւններով: Եւ այն գազանը, որին տեսայ, ունէր եօթը գլուխ եւ տասը եղջիւր: 4 Կինը հագել էր ծիրանի ու կարմիր հագուստ եւ զարդարուած էր ոսկով, մարգարտով եւ թանկագին քարերով. նա իր ձեռքին բռնել էր ոսկէ բաժակ, որը լի էր իր գարշելի եւ անմաքուր պոռնկութեամբ: 5 Եւ նրա ճակատին կար գրուած խորհրդաւոր մի անուն. «Մեծն Բաբելոն, մա՛յր երկրի պոռնիկների եւ գարշելիների»: 6 Եւ տեսայ այդ կնոջը՝ հարբած սրբերի արիւնից եւ բոլոր վկաների արիւնից: Եւ տեսնելով նրան՝ մեծապէս զարմացայ: 7 Հրեշտակն ինձ ասաց. «Ինչո՞ւ զարմացար, ես քեզ կ'ասեմ իմաստը կնոջ եւ այդ գազանի, որը կրում է նրան եւ որն ունի եօթը գլուխ եւ տասը եղջիւր»:

ԳԱԶԱՆԻ ԵՒ ՊՈՌՆԿԻ ԻՄԱՍՏԸ

8 «Եւ այդ գազանը, որին տեսար, որ կար, բայց այլեւս չկայ, պատրաստ է

†Այստեղ ակնարկւում է մեծ քաղաք Բաբելոնին, որը գտնւում էր բազմաթիւ գետերի եզերքում:

ելնելու անդնդից՝ գնալու համար դէպի կորուստ: Եւ բոլոր նրանք, որոնք բնակւում են երկրի վրայ, եւ որոնց անունները գրուած չէին կեանքի գրքում աշխարհի սկզբից, զարմացան, որ դու տեսնում էիր գազանին, որ կար, այլեւս չկայ, բայց վերստին գալը մօտ է:

9 Այստե՛ղ է ահա, որ պէտք է իմաստութիւն ունեցող միտք ունենալ: Եօթը գլուխները եօթը լեռներն են, որոնց վրայ նստել էր կինը: Նրանք նաեւ եօթը թագաւորներն են. 10 թագաւորները, որոնք եօթն էին, նրանցից հինգը ընկան, մէկը ապրեց, մէկն էլ դեռ չի եկել. եւ երբ գայ, մնալու կարճ ժամանակ կ'ունենայ: 11 Եւ այն գազանը, որ կար, բայց այլեւս չկայ, նա էլ ութերորդ թագաւորն է. բայց նա այն եօթից մէկն է եւ դէպի կորուստ է գնալու:

12 Եւ այն տասը եղջիւրները, որ տեսար, տասը թագաւորներ են, որոնք դեռեւս թագաւորութիւն չեն ստացել, բայց կը ստանան եւ մի ժամով իշխան կը լինեն. նրանք իշխանութիւն կը ստանան գազանի հետ: 13 Սրանք միակամ են եւ իրենց զօրութիւնն ու իշխանութիւնը տալիս են գազանին: 14 Եւ սրանք պատերազմելու են Գառան դէմ, եւ Գառը նրանց յաղթելու է, քանի որ նա Տէրն է տէրերի եւ Թագաւորը՝ թագաւորների. եւ ովքեր նրա հետ են, կանչուածներ են, ընտրեալներ եւ հաւատարիմներ»:

15 Նաեւ հրեշտակն ասաց ինձ. «Եւ այն ջրերը, որ տեսար, եւ ուր նստած էր պոռնիկը, ժողովուրդներ են, բազմութիւններ, ազգեր եւ լեզուներ: 16 Եւ գազանի տասը եղջիւրները, որ տեսար, դրանք պիտի տեսնեն պոռնկին, պիտի ատեն նրան, պիտի ուտեն նրա մարմինը եւ պիտի այրեն նրան կրակով. 17 քանզի Աստուած այս բանը դրեց նրանց սրտում. որ նրանք լինեն միակամ եւ թագաւորութիւնը տան գազանին, մինչեւ որ կատարուի Աստծու խօսքը: 18 Եւ այն կինը, որին տեսար, մեծ քաղաքն է, որ թագաւորում է երկրի թագաւորների վրայ»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՈՒՄԸ

18 Այնուհետեւ տեսայ մի ուրիշ հրեշտակ, որ իջնում էր երկնքից եւ ունէր մեծ իշխանութիւն. եւ նրա փառքից երկիրը լուսաւորուեց: 2 Նա աղաղակեց բարձր ձայնով եւ ասաց. «Ընկա՛ւ մեծն Բաբելոնը, որ եղել էր բնակավայր դեւերի, արգելանոց ամէն տեսակ պիղծ ոգիների ու ամուր բանտ ամէն տեսակ անմաքուր եւ ատելի ոգիների†, 3 քանի որ նրա կատաղի պոռնկութեան գինուց հարբեցին բոլոր ազգերը եւ երկրի թագաւորները, որոնք պոռնկութիւն արեցին նրա հետ: Եւ երկրի վաճառականները հարստացան նրա անչափ զեխութիւնից»:

4 Ապա երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ելէ՛ք դրա միջից, ժողովո՛ւրդ իմ, որպէսզի մասնակից չլինէք դրա մեղքերին եւ չընդունէք դրա պատուհասները, 5 քանի որ դրա մեղքերը դիզուեցին հասան մինչեւ երկինք: Աստուած յիշեց դրա ամբարիշտ արարքները: 6 Եւ նա պիտի հատուցի դրան, ինչպէս որ մեզ հատուցեց: Եւ դա կրկնակին պիտի ստանայ իր գործերի փոխարէն: Եւ դուք կրկնակի՛ խառնեցէք նրա համար այն բաժակը, որի մէջ դա խառնեց ձեզ համար: 7 Որչափ փառաւորեց ինքն իրեն եւ ապրեց զեխութեամբ, այդչափ դրան սո՛ւգ հատուցեցէք, քանի որ իր սրտում ասում էր. «Միշտ նստած եմ որպէս թագուհի եւ երբեք այրի չեմ»: 8 Դրա համար միայն մէկ օրում դրա վրայ պիտի հասնեն պատուհասներ՝ մահ, սուգ եւ սով. եւ դա պիտի այրուի կրակով, քանզի հզօր է Տէր Աստուածը, որ դատապարտեց դրան: 9 Եւ դրա վրայ պիտի լան ու պիտի ողբան երկրի թագաւորները, որոնք պոռնկացան եւ զուարճացան դրա հետ. նրանք պիտի հեծեծեն, երբ տեսնեն դրա տանջանքների այրման ծուխը. 10 դրա տանջանքների երկիւղից հեռու պիտի կանգնեն եւ ասեն. «Վա՛յ քեզ, մեծ քաղաք Բաբելոն, հզո՛ր քաղաք, մէկ ժամում եկաւ հասաւ քո դատաստանը»: 11 Եւ երկրի

†Յունարէնը *ոգիներ* բառի փոխարէն ունի *թռչուններ*:

վաճառականները պիտի ողբան ու սգան քո վրայ, քանի որ նրանց ապրանքների հակերը ոչ ոք չի գնում: 12 Եւ չեն լինելու քեզնից ստացուող շահերը ոսկու, արծաթի, թանկարժէք քարերի, մարգարտի, բեհեզի, ծիրանու, ոսկեթել կերպասի եւ որդան կարմրի. ոչ ոք չի գնելու խնկի ամէն փայտ, փղոսկրեայ ամէն անօթ, ազնիւ փայտից, պղնձից, երկաթից եւ մարմարից ամէն անօթ, 13 կինամոն, ամէն տեսակ խունկ եւ անուշահոտ իւղ, կնդրուկ, գինի, ձէթ, ազնիւ ալիւր եւ ցորեն, եւ ամէն ունեցուածք՝ արջառ ու ոչխար, երիվարներ ու կառքեր, որ վայել են մարդկանց մարմիններին եւ հոգիներին: 14 Եւ քո մարմնին ցանկալի ամէն բան գնա՛ց քեզնից, նաեւ՝ ամէն լուսափայլ վայելչութիւն. պարարտութիւնը, գիրութիւնը եւ փառաւորութիւնը գնաց քեզնից. եւ այլեւս չես գտնելու դրանք: 15 Եւ այս բոլորով հարստացած բոլոր վաճառականները քո տանջանքների երկիւղից հեռու պիտի կանգնեն քեզնից եւ լալով ու սուգ անելով պիտի ասեն. 16 «Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք, որ հագել էիր բեհեզ, ծիրանի եւ որդան կարմիր ու կրում էիր ոսկէ զարդարանքներ, թանկարժէք քարեր եւ մարգարիտներ, 17 մէկ ժամում քո այնչափ հարստութիւնը վատնուեց»:

ՆԱՒԱՎԱՐՆԵՐԻ ՈՂԲԸ

Եւ ամէն նաւավար ու բոլոր նրանք, որ նաւարկում են տարբեր տեղեր, ամէն նաւաստի եւ բոլոր ձկնորսները, որ ուռկան են գցում, հեռու պիտի կանգնեն լալով, 18 պիտի աղաղակեն՝ տեսնելով նրա այրման ծուխը, ու ասեն. «Ո՞ր քաղաքն էր նման այս մեծ քաղաքին»: 19 Եւ հող պիտի ցանեն իրենց գլուխներին, գուժկանի բարձր ձայնով, լալով ու սգալով պիտի ասեն. «Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք, որով հարստանում էինք ամէնքս, նաւեր ունէինք ծովերում շնորհիւ քո ճոխութեան. ինչպէ՞ս կործանուեցիր մէկ ժամում»:

20 Երկի՛նք, սո՛ւրբ առաքեալներ եւ մարգարէնե՛ր, ուրախացէ՛ք դրա վրայ, քանի որ Աստուած դրա հանդէպ ձեր դատաստանը տեսաւ:

ՀՐԵՇՏԱԿԻ ԽՈՍՏՈՒՄԸ

21 Ապա մի հզօր հրեշտակ առաւ մի քար, նման մի մեծ երկանաքարի, ու գցեց ծովի մէջ՝ ասելով. «Այսպէս, արձակուելով պիտի ընկնի մեծ քաղաք Բաբելոնը եւ այլեւս գոյութիւն չպիտի ունենայ: 22 Եւ քնարահարների ու երաժիշտների, սրնգահարների եւ փողհարների ու թմբկի ձայն այլեւս երբեք չպիտի լսուի քո մէջ†. 23 եւ ճրագի լոյս այլեւս երբեք չպիտի երեւայ քո մէջ. եւ երկանքի ձայն, փեսայի ձայն ու հարսի ձայն այլեւս երբեք չպիտի լսուի քո մէջ, ոչ էլ ձայնը քո վաճառականների, որոնք երկրի փառաւորներն ու մեծամեծներն էին եւ որոնք զուարճանում էին քո մէջ, քանի որ բոլոր ազգերը մոլորուեցին քո թունաւոր կախարդութեամբ: 24 Եւ քո մէջ գտնուեց ամբողջ արիւնը մարգարէների, սրբերի, ինչպէս նաեւ երկրի վրայ սպանուած բոլոր մարդկանց»:

ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԵՐ

19 Այնուհետեւ լսեցի՝ ինչպէս բազմութեան մի բարձր ձայն երկնքում, որ ասում էր. «Ալէլուիա՛, փրկութի՛ւն եւ փա՛ռք եւ պատի՛ւ եւ զօրութի՛ւն մեր Աստծուն, 2 որովհետեւ ճշմարիտ եւ արդար են նրա դատաստանները, քանի որ նա դատեց մեծ պոռնիկին իր պոռնկութեան մէջ եւ նրանից լուծեց իր ծառաների արեան վրէժը»: 3 Եւ կրկին անգամ օրհներգեցին ու ասացին. «Ալէլուիա՛. եւ նրա ծուխը բարձրանում է յաւիտեանս յաւիտենից»: 4 Եւ ծնկի եկան քսանչորս երէցներն ու չորս կենդանիները եւ երկրպագեցին փառքի գահի վրայ նստած Աստծուն՝ ասելով. «Ամէն. Ալէլուիա՛»:

†Յուն. լաւ բն. աւելացնում են. «Եւ որեւէ արհեստի մի արհեստաւոր այլեւս չպիտի գտնուի Քո մէջ»:

ԳԱՌԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԸՆԹՐԻՔԸ

5 Եւ գահից մի ձայն ելաւ, որ ասում էր. «Օրհնեցէ՛ք մեր Աստծուն, նրա բոլոր ծառանե՛րդ, եւ դո՛ւք, որ երկնչում էք նրանից, փոքրե՛ր եւ մեծե՛ր»: 6 Եւ լսեցի մի ձայն՝ ինչպէս ձայնը մի մեծ բազմութեան, ինչպէս ձայնը շատ ջրերի եւ ինչպէս ձայնը ուժեղ որոտի, որ ասում էր դարձեալ. «Ալէլուիա՛. քանզի թագաւորեց մեր Ամենակալ Աստուածը: 7 Ուրախանանք եւ ցնծանք ու փառք տանք նրան, քանի որ հասաւ Գառան Հարսանիքի ժամը, եւ կինը՝ նրա հարսը, պատրաստուեց. 8 հարսին տրուեց հագնելու սպիտակ, մաքուր եւ լուսափայլ բեհեզ»: Եւ այդ բեհեզը խորհրդանշում է սրբերի արդարութիւնը: 9 Եւ երէցներից մէկն ինձ ասաց. «Գրի՛ր այս բանը. երանելի՛ են բոլոր նրանք, որ կանչուած են Գառան հարսանիքի ընթրիքին»: 10 Եւ ես ընկնելով նրա ոտքերի առաջ՝ երկրպագեցի նրան. եւ նա ինձ ասաց. «Լսի՛ր, մի՛ ընկիր իմ առաջ, քանզի ես էլ ծառայակիցն եմ քո եւ քո եղբայրների, որոնք վկայում են Յիսուս Քրիստոսին: Տէր Աստծո՛ւն միայն երկրպագիր. քանզի Յիսուսի հաստատումով է այդ տեսիլքը եւ այդ մարգարէութեան հոգին, քանի որ Յիսուսի մասին վկայութիւնը, որ մարգարէների մէջ էր, Սուրբ Հոգով է»:

ՍՊԻՏԱԿ ՁԻԱՒՈՐԸ

11 Ապա տեսայ երկինքը բացուած. եւ ահա մի սպիտակ ձի. ով հեծել էր նրա վրայ, կոչւում է Հաւատարիմ եւ Ճշմարիտ. նա արդարութեամբ է դատում ու պատերազմում: 12 Նրա աչքերը նման էին կրակի բոցի, եւ նրա գլխի վրայ կային բազում պսակներ: Նա ունէր գրուած մի անուն, որը ոչ ոք չգիտէ, այլ միայն՝ ինքը: 13 Եւ իր վրայ գցել էր արիւնով ներկուած մի զգեստ. նրա անունն էր՝ Բանն Աստծու: 14 Եւ երկնքի զօրավարներ ու երկնքի զօրքեր ձիերով գնում էին նրա յետեւից՝ հագած մաքուր եւ սպիտակ բեհեզներ: 15 Եւ նրա բերանից ելնում էր սրած

սուր, որպէսզի նրանով հարուածի ազգերին. եւ նա պիտի իշխի նրանց վրայ երկաթէ մականով. նա պիտի կոխոտի Ամենակալ Աստծու ցասման գինու հնձանը: 16 Եւ իր պատմուճանի ու իր մարմնի մասերի վրայ† կար գրուած մի գրութիւն՝ Թագաւոր թագաւորների եւ Տէր տէրերի:

17 Տեսայ նաեւ մի ուրիշ հրեշտակ, որ կանգնած էր արեգակի վրայ. նա աղաղակեց բարձր ձայնով՝ երկնքի մէջ թռչող բոլոր թռչուններին ասելով. «Եկէք հաւաքուեցէ՛ք Աստծու մեծ ընթրիքին. 18 եւ պիտի ուտէք թագաւորների մարմիններ, հզօրների մարմիններ եւ երիվարների ու նրանց վրայ նստած ամենայն հեծեալների մարմիններ, մարմիններ ազատների եւ ծառաների, մեծի եւ փոքրի»:

19 Ապա տեսայ գազանին, երկրի թագաւորներին եւ նրանց զօրքերին՝ հաւաքուած, որպէսզի պատերազմ մղեն ընդդէմ նրա, ով հեծել էր սպիտակ ձիու վրայ, նաեւ ընդդէմ նրա զօրքի: 20 Եւ բռնուեց գազանը ու նրա հետ եղող սուտ մարգարէն, որ նրա առաջ նշաններ էր գործում. դրանցով մոլորեցնում էր նրանց, որոնց ստիպել էր առնել գազանի դրոշմը եւ երկրպագուներ էր դարձրել իր արձանին: Եւ նրանց կենդանի գցեցին ծծմբով այրուող կրակէ լճի մէջ: 21 Մնացածները մեռան ձիու վրայ հեծնողի սրից, որը ելնում էր նրա բերանից: Եւ բոլոր թռչունները յագեցան նրանց մարմիններից:

ՀԱԶԱՐԱՄԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

20 Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ, որ իջնում էր երկնքից եւ իր ձեռքին ունէր դժոխքի փականքներն ու մեծ շղթաներ: 2 Եւ բռնեց վիշապին՝ հին օձին, որ է բանսարկուն եւ Սատանան. եւ հազար տարով կապեց նրան: 3 Նրան գցեց դժոխքի անդունդների մէջ եւ փակեց ու կնիք դրեց նրա վրայ, որպէսզի այլեւս երբեք չմոլորեցնի ազգերին, մինչեւ որ լրանայ հազար տարին: Եւ այնուհետեւ պէտք է, որ նա արձակուի մի փոքր ժամանակով:

4 Տեսայ նաեւ գահեր. նստեցին դրանց վրայ. եւ նրանց իշխանութիւն տրուեց դատելու եւ ընտրելու այն հոգիներին, որոնք Յիսուսին եւ Աստծու խօսքին իրենց տուած վկայութեան համար չարչարուել էին. նաեւ նրանց հոգիներին, որոնք չերկրպագեցին գազանին եւ չստացան նրա դրոշմը իրենց ճակատների, ոչ էլ իրենց աջ ձեռքի վրայ. եւ նրանք նորից կեանք ստացան ու թագաւորեցին Քրիստոսի հետ հազար տարի: 5 Եւ սրանից յետոյ մեռելներից ոչ ոք չկենդանացաւ, մինչեւ կը լրանար հազար տարին: Ա՛յս է մեռելների առաջին յարութիւնը: 6 Երանի՛ այն սրբերին, որոնք բաժին ունեն առաջին յարութեան մէջ: Սրանց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի. նրանք պիտի լինեն քահանաներ Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի ու նրա հետ պիտի թագաւորեն հազար տարի:

ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

7 Հազար տարի յետոյ հրեշտակը պիտի արձակի Սատանային եւ պիտի հանի բանտից. եւ սա պիտի ելնի ու պիտի մոլորեցնի բոլոր ազգերին երկրի չորս կողմերում. Գոգը եւ Մագոգը ձեռքը պիտի առնի՝ դրանցով հաւաքելու համար բոլոր զօրքերը, որ պատերազմեն. եւ նրանց թիւը՝ ինչպէս ծովի աւազը. 8 նրանք պիտի դուրս գան երկրի ամբողջ լայնքով եւ պիտի շրջապատեն սրբերի բանակներն ու սիրելի քաղաքը: 9 Եւ երկնքից, Աստծու մօտից կրակ պիտի իջնի ու պիտի լափի նրանց եւ նրանց զօրագլխին՝ Սատանային, որը մոլորեցրեց նրանց. նա նրանց պիտի գցի կրակի եւ ծծմբի ծովի մէջ, 10 ուր գտնուում էին գազանը եւ սուտ մարգարէն. եւ նրանք պիտի չարչարուեն զօր ու գիշեր:

11 Տեսայ նաեւ մի մեծ, սպիտակ գահ եւ նրան, ով նստել էր դրա վրայ. նրա ներկայութիւնից երկինք ու երկիր երկիւղ կրեցին ու փախան. եւ նրանց համար տեղ չգտնուեց: 12 Եւ տեսայ մեռելներ, մեծ ու փոքր, որոնք

†Յուն՝ արքէնն ունի ազգրի վրայ:

կանգնել էին գահի առաջ. եւ բաց արուեցին գրքեր. բացուեց նաեւ մի այլ գիրք՝ կեանքի գիրքը: Եւ մեռելները դատուեցին ըստ գրուածքների՝ իրենց գործերի համաձայն: 13 Ծովը տուեց իր մեռելներին, մահն ու դժոխքն էլ՝ իրենց մեռելներին. եւ իւրաքանչիւրը դատուեց ըստ իր գործերի: 14 Մահը եւ դժոխքը նետուեցին կրակէ լճի մէջ†: 15 Եւ նա, որի անունը կեանքի գրքում գրուած չգտնուեց, գցուեց կրակէ լճի մէջ:

ՆՈՐ ԵՐԿԻՆՔ, ՆՈՐ ԵՐԿԻՐ

21 Ապա տեսայ նոր երկինք ու նոր երկիր, քանզի առաջին երկինքն ու երկիրը անցել էին. եւ այլեւս ծով չկար: 2 Եւ տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղէմը, որ իջնում էր Աստծուց եւ երկնքից՝ զարդարուած ու պատրաստուած, ինչպէս հարսը իր փեսայի համար: 3 Եւ երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ահա՛ւասիկ Աստծու խորանը, որ մարդկանց մէջ է. նա պիտի բնակուի նրանց հետ, եւ նրանք պիտի լինեն նրա ժողովուրդը, եւ նա էլ՝ նրանց Աստուածը. 4 եւ պիտի սրբի նրանց աչքերից ամէն արտասուք. եւ այլեւս մահ չկայ. ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւ եւ ո՛չ չարչարանք, քանի որ առաջինն անցաւ»:

ԽՈՍՏՈՒՄԸ

5 Եւ գահի վրայ նստողն ինձ ասաց. «Ահա՛ւասիկ ամէն բան նոր եմ դարձնում»: Ապա ինձ ասաց. «Գրի՛ր, այս խօսքերը ճշմարիտ եւ վստահելի են»: 6 Դարձեալ ինձ ասաց. «Եղաւ. ես Ալֆան եւ Օմեգան եմ, Սկիզբը եւ Վախճանը. ես ծարաւածներին ձրի պիտի տամ կեանքի ջրի աղբիւրից: 7 Ով յաղթի, պիտի ժառանգի այս ամէնը. եւ ես նրանց համար Աստուած պիտի լինեմ, եւ նրանք ինձ համար պիտի լինեն որդիներ: 8 Իսկ գալով ծոյլերին ու անհաւատներին, ոճրագործներին եւ պոռնիկներին, կախարդներին եւ կռապաշտներին, հմայողներին եւ բոլոր ստախօսներին՝ ամբարիշտներին, նրանց բաժինը ծծմբով եւ հրով այրուող լճի մէջ է, որ երկրորդ մահն է»:

ՆՈՐ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

9 Եւ ինձ մօտ եկաւ մէկն այն եօթը հրեշտակներից, որոնք ունէին եօթը սկաւառակներ՝ լցուած եօթը վերջին պատուհասներով. եւ նա խօսեց ինձ հետ ու ասաց. «Ե՛կ, քեզ պիտի ցոյց տամ հարսին՝ Գառան կնոջը»: 10 Եւ առաւ տարաւ ինձ, Հոգով, դէպի մի բարձր ու մեծ լեռ եւ ցոյց տուեց ինձ մեծ եւ սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը, որ իջել էր երկնքից, Աստծու մօտից: 11 Այն ունէր Աստծու փառքը. եւ նրա մէջ կար մի լուսաւորութիւն՝ նման թանկագին գոհարեղէնի, ինչպէս բիւրեղեայ եւ կենդանի յասպիս քարը: 12 Եւ նրա պարիսպները մեծ ու բարձր էին, ունէր տասներկու դուռ. տասներկու դռներին՝ տասներկու հրեշտակներ. նրանցից իւրաքանչիւրի անունը գրուած էր դռների վրայ, ըստ Իսրայէլի տասներկու ցեղերի անունների: 13 Արեւելեան կողմից՝ երեք դուռ, հիւսիսային կողմից՝ երեք դուռ, հարաւային կողմից՝ երեք դուռ, եւ արեւմտեան կողմից՝ երեք դուռ: 14 Եւ քաղաքի պարիսպն ունէր տասներկու հիմքեր. նրանց վրայ՝ Գառան տասներկու առաքեալների տասներկու անունները: 15 Եւ նա, ով խօսում էր ինձ հետ, իր ձեռքում ունէր ոսկէ եղէգ, որպէսզի չափի քաղաքը եւ նրա դռներն ու նրա պարիսպները: 16 Եւ քաղաքը քառակուսի էր. որչափ որ նրա երկարութիւնն էր, նոյնչափ էլ՝ նրա լայնութիւնը. բարձրութիւնն էլ՝ նոյնը: Նրա երկարութեան չափը շուրջ երկու հազար հինգ հարիւր կիլոմետր էր, նրա լայնութիւնն ու բարձրութիւնը՝ միաչափ խորանարդ: 17 Հրեշտակը չափեց նաեւ նրա պարիսպը, որի բարձրութիւնը եօթանասուն մետր էր. հրեշտակի գործածած չափը մարդկանց գործածած չափն էր: 18 Եւ քաղաքի պարիսպների շինուածքը յասպիս քարից էր, իսկ քաղաքը՝ մաքուր ոսկի՝

†Յունարէնն աւելացնում է՝ այս է երկրորդ մահը:

նման մաքուր ու պայծառ ապակու: 19 Եւ քաղաքի հիմքերը ամէն տեսակ թանկագին քարերից էին: Պարսպի առաջին հիմքը՝ յասպիս, երկրորդը՝ շափիւղայ, երրորդը՝ կարկեհան, չորրորդը զմրուխտ, 20 հինգերորդը՝ եղնգաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝ տպազիոն, տասներորդը՝ քրիւսոպրասոս, տասնմէկերորդը՝ յակինթ, տասներկուերորդը՝ մեղեսիկ: 21 Եւ կային տասներկու դռներ՝ տասներկու միաձեւ մարգարիտներից. ամէն մի դուռ մէկ մարգարտից էր: Եւ քաղաքի տարածքը մաքուր ոսկի էր՝ նման պայծառ ապակու:

22 Եւ քաղաքի մէջ տաճար չտեսայ, քանզի Ամենակալ Տէր Աստուածն էր տաճար նրա մէջ, նաեւ՝ Գառը: 23 Եւ քաղաքին պէտք չէին արեգակ ու լուսին, որպէսզի լուսաւորեն այն. քանզի Աստծու փառքն էր լուսաւորում քաղաքը ամէն ժամ, եւ Գառը ճրագ էր նրա մէջ: 24 Եւ ազգերը ընթանում էին նրա լոյսով, ու երկրի թագաւորները լոյս էին հագնում նրա փառքից: 25 Նրա դռները չէին փակւում զօր ու գիշեր, այլ միշտ բաց էին. եւ գիշեր չէր լինում նրա մէջ. 26 այն փառք ու պատիւ էր ազգերին: 27 Եւ այնտեղ չպիտի մտնի ոչ մի չարակամ, պիղծ եւ ստախօս մարդ, այլ պիտի մտնեն միայն նրանք, որոնց անունները գրուած են Գառան կեանքի գրքում:

ԿԵՆԴԱՆԻ ՋՐԻ ԳԵՏԸ ԵՒ ԿԵՆԱՑ ԾԱՌԸ

22 Հրեշտակն ինձ ցոյց տուեց նաեւ սառնորակ կենդանի ջրի մաքուր մի գետ, որ բխում էր Աստծու եւ Գառան գահից ու գնում էր քաղաքի հրապարակների միջով: 2 Գետի եզերքին, մէկ եւ միւս կողմում, կար կենաց ծառ, որ տալիս էր տասներկու անգամ պտուղ. ամէն ամիս՝ իր պտուղը. եւ ծառի տերեւը ազգերի բուժման համար էր:

3 Եւ այնտեղ այլեւս նզովք չի լինելու. Աստծու եւ նրա Գառան գահը գտնւում էր նրա մէջ. եւ նրա ծառաները պաշտում էին նրան. 4 նրանք տեսնում էին նրա դէմքը, եւ նրա անունը գրուած էր իրենց ճակատների վրայ: 5 Եւ այնտեղ գիշեր չկար. այնտեղ ոչ մի կարիք չկար ճրագի եւ արեւի լոյսի, քանզի Տէր Աստուածը լուսաւորում էր նրանց. եւ նրանք պիտի թագաւորեն յաւիտեանս յաւիտենից:

ՅԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ

6 Հրեշտակն ինձ ասաց. «Այս խօսքերը վստահելի են եւ ճշմարիտ. սուրբ մարգարէների Տէր Աստուածը իր հրեշտակին ուղարկեց իր այդ ծառայի մօտ՝ ցոյց տալու այն, ինչ որ շուտով լինելու է»: 7 «Ահա գալիս եմ շուտով: Երանի՜ նրան, ով պահում է այս մարգարէութեան խօսքը»:

8 Եւ ես՝ Յովհաննէսը, լսեցի եւ տեսայ այս բոլորը. եւ երբ լսեցի ու տեսայ, ծնկի եկայ եւ երկրպագեցի այն հրեշտակին, որ ցոյց էր տալիս ինձ այս բոլորը: 9 Բայց նա ասաց ինձ. «Իմ առաջ ծնկի մի՛ իջիր եւ մի՛ երկրպագիր, քանզի ես էլ ծառայակիցն եմ քո եւ քո եղբայրների, որոնք պահում են այս գրքի մարգարէութեան խօսքը: Երկրպագիր Աստծո՛ւն»:

10 Եւ դարձեալ ինձ ասաց. «Այս գրքի մարգարէական խօսքերը կնքուած մի՛ պահիր, քանզի ժամանակը մօտ է: 11 Նա, ով ամբարիշտ է, թող ամբարշտութիւն անի, ով կեղտոտ է, թող կեղտոտ լինի, ով արդար է, թող արդարութիւն անի եւ ով սուրբ է, թող սուրբ լինի»: 12 «Ահա գալիս եմ շուտով, եւ ինձ հետ են իմ վարձերը, որպէսզի հատուցեմ իւրաքանչիւրին ըստ իր գործերի: 13 Ես եմ Ալֆան եւ Օմեգան, Սկիզբը եւ Վախճանը, Առաջինը եւ Վերջինը»:

14 Երանելի՜ են նրանք, որ պահում են նրա պատուիրանները†: Նրանք իրաւունք ունեն ուտելու կենաց ծառից եւ մտնելու քաղաքի դռներով: 15 Իսկ շներն ու կախարդները, մարդասպաններն ու կռապաշտները եւ բոլոր նրանք, որ սիրում են սուտը, դուրս պիտի նետուեն»:

†Լաւագոյն յուն. բն. այս նախադասութեան փոխարէն ունեն. «Երանելի՜ են նրանք, որ լուանում են իրենց զգեստները»:

ՎԵՐՋԱԲԱՆ

16 «Ես՝ Յիսուսը, ուղարկեցի իմ հրեշտակին, որ այս բանը վկայի ձեզ՝ եկեղեցիներիդ: Ես արմատ եւ սերունդ եմ Դաւթից, պայծառ աստղը առաւօտի, 17 Հոգին եւ Փեսան, որ գալու եմ»:

Եւ ով լսում է, թող ասի՝ ե՛կ: Եւ թող գայ, ով ծարաւ է. նաեւ՝ ով ուզում է առնել կենաց ջուրը՝ ձրի»:

18 Վկայում եմ ես՝ Յովհաննէսը, ամէն մէկին, ով լսում է այս գրքի մարգարէութեան խօսքերը. եթէ մէկը բան աւելացնի սրա վրայ, Աստուած էլ նրա վրայ պիտի աւելացնի այս գրքում գրուած եօթը պատուհասները. 19 եւ եթէ մէկը բան պակասեցնի այս գրքի մարգարէութեան խօսքերից, Աստուած պիտի պակասեցնի եւ պիտի կտրի նրա բաժինը կենաց ծառից եւ սուրբ քաղաքից՝ ինչպէս որ գրուած է այս գրքում: 20 Ով այս մասին վկայեց, ասաց. «Ես գալիս եմ շուտով»: Ամէն: Ե՛կ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս:

21 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը լինի բոլոր սրբերի վրայ: Ամէն: